ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

I

ԵՐԵՎԱՆ



Yours Sincerely

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ա

ՀԱՏՈՐ

Ա–Դ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ–1971

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ.

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Է. Բ. ԱՂԱՅԱՆ, Մ. Մ. ՄԿՐՅԱՆ, ԷՄ. Ա. ՊԻՎԱԶՅԱՆ

Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան», որ լույս է ընծայել Երևանի պետական համալսարանը 1926—1935 թթ. ապակետիպ, յոթ հատորով, այժմ վերահրատարակվում է տպարանային եղանակով—չորս հատորով: Աշխատության բնագրում կատարված է միայն մեկ փոփոխություն՝ հավելվածային (7-րդ) հատորի նյութը ներմուծված է համապատասխան մասերում:

Առաջին հատորը հրատարակության են պատրաստել դոց. Հ. Պետրոսյանը, դոց. Պ. Շարաբխանյանը (Ա և Բ տառեր) և պրոֆ. է. Աղայանը (Դ և Գ տառեր): Խմբագրությունը կատարել է պրոֆ. է. Աղայանը:

ГР. АЧАРЯН

7—1—5
71—52

ЭТИМОЛОГИЧЕСКИЙ КОРЕННОЙ СЛОВАРЬ
АРМЯНСКОГО ЯЗЫКА

Том I

Издательство Ереванского университета
Ереван—1971

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ «ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ»

Հրաչյա Աճառյանը սովետական հայագիտության ավագ սերնդի խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է. գիտելիքների հսկայական պաշարով, բազմակողմանիությամբ ու խորությամբ և գիտական արտակարգ բեղմնավորությամբ նա 20-րդ դարի հայագիտության բացառիկ դեմքերից մեկն էր, որ երկայական ավանդ է թողել հայագիտության գանձարանում: Նրա «Հայ բարբառագիտություն», «Հայոց լեզվի պատմություն», «Հայոց գրերը», հայոց լեզվի «Վիճակառ բեռականություն», «Հայոց անձնանունների բառարան» և ուրիշ շատ աշխատություններից յուրաքանչյուրը ներկայացնում է հայագիտության մեկ բնագավառի ամփոփիչ ուսումնասիրություն ու ճանապարհ: Սակայն այդ բոլորի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Հայերեն արմատական բառարանը». իր բնույթով այդ բառարանը պատկանում է ստուգաբանական բառարանների տիպին և, իրև այդպիսին, ինդոեվրոպական առանձին լեզուների ստուգաբանական բառարանների թվում լավագույններից մեկն է: Բայց Հր. Աճառյանի այս բառարանը իր կառուցվածքով ու ընդգրկած նյութով դուրս է գալիս ստուգաբանական բառարանների սովորական շրջանակներից և ստանում ընդհանուր բառագիտական-ստուգաբանական բառարանի բնույթ: Ինչպես հեղինակն իր առաջաբանում հանգամանորեն բացատրում է, բառարանի յուրաքանչյուր բառահոդվածը բաղկացած է հինգ բաժնից, որոնցից առաջինն է բառագիտությունը: Այս բաժինը ներկայացնում է հայերեն արմատական բառերը՝ բեռականական, իմաստաբանական ու կիրառական լիակատար ընդությամբ, հայ հին մատենագրության մեջ իրենց գործածությունների վկայություններով հանդերձ: Հեղինակը իր առջև նպատակ է դրել այս բաժնում ի մի բերել այս կամ այն բառի բեռականական ձևերի (հոլովում, խոնարհում ևն), բառակազմական հիմքերի, իմաստների, գործածությունների նշգրտումն ու լիակատար նկարագրությունը, և օգտագործելով հայագիտական ուսումնասիրությունների բոլոր արդյունքները, ինչպես և իր սեփական հետազոտությունների վրա հենվելով, կարողացել է տալ յուրաքանչյուր արմատի սպառիչ բառագիտական նկարագրությունը: Ինքնին հասկանալի է, որ այս բաժնի համար հեղինակին անհրաժեշտ է եղել ամեն մի բառի կապակցությամբ դիմել հայ հին մատենագրության տվյալներին, տպագիր ու ձեռագիր հուշարձանների, ներառյալ նաև հայերեն արձանագրությունների, ողջ նյութի ընական օգտագործմանը, լեզվաբանական ու բանասիրական-ձեռագրագիտական հմուտ վերլուծությունների միջոցով նշգրտել յուրաքանչյուր բառի իմաստային, կիրառական, ձևական-ձևաբանական առանձնահատկությունները և դրանով իսկ գիտականորեն ճիշտ բնութագրել յուրաքանչյուր բառ: Այս բաժնի համար նա լիովին ընդգրկել

է հայերեն ու օտարալեզու ամբողջ հայագիտական բառաֆենական հետազոտություններ և դրանց ֆենադատական մշակումով հասել իր ժամանակի համար առավել ստուգված ու ճշգրիտ հետևությունների: Բառարանի այս բաժինը, որ հաջորդ՝ ստուգաբանական բաժնի հիմքն է հանդիսանում, կարելի է դիտել իբրև մի ամբողջական բառագիտական հետազոտություն և անվանել «Ամփոփումն հայկական բառաֆենության», քան որում այս բաժնում ամփոփված է այն ամենը, ինչ որ կատարված էր մինչև բառարանի հրատարակությունը հայկական բառաֆենության բնագավառում, դրան ավելացրած հեղինակի սեփական ֆենություններ, ինչպես և առանձին հայագետների կողմից բանավոր կերպով (իր բնորոշումով՝ «անձնական») կամ գրավոր (նամակներով) հայտնված առանձին դիտողություններ, նկատառումներն ու տեղեկություններ:

Բառահոդվածների հաջորդ բաժինը, որ բառարանի բուն մասն է կազմում, հայերեն բառերի ստուգաբանությունն է: Ինչպես հայտնի է, հայերեն ստուգաբանական առաջին ամփոփիչ ուսումնասիրությունը պատկանում է Պոլ դը Լագարդին, իր «Armenische Studien» («Հայկական ուսումնասիրություններ», Դյոթինգե, 1877) աշխատության մեջ Լագարդը ֆենության է առնում հայերեն բառերի բոլոր առաջարկված ստուգաբանությունները և գիտական վերլուծություններով հաստատում դրանք կամ մերժում՝ գիտական զանազան նկատառումներով: Լագարդի այս աշխատությունը, որ պարունակում է հայերեն 2413 բառերի ստուգաբանությունը, հայագիտության մեջ դիտվում է որպես հայերենի առաջին ստուգաբանական բառարանը: Հաջորդ այդպիսի աշխատությունը պատկանում է Հայնրիխ Հյուբշմանին: Իր «Armenische Grammatik» («Հայերենի ֆերականություն», Ստրասբուրգ, Ա մաս, 1895, Բ մաս, 1897) գրքում Հյուբշմանը առանձին հատվածներում տալիս է հայերենի իրանական, արաբական, հունական փոխառությունների և բնիկ (հնդեվրոպական) հայերեն բառերի ցանկերը՝ գիտական համակողմանի ֆենությամբ: Այս երկու աշխատություններն էլ, թեև իրենց ժամանակի համար լիակատար, բայց մեր ժամանակում արդեն բավականաչափ թերի էին: Հր. Աճառյանն էր, որ կարողացավ լրացնել այդ թերին՝ ի մի հավաքելով հայերենի ստուգաբանության բնագավառում կուտակված ամբողջ նյութը և սպառիչ ամբողջությամբ ներկայացնել հայերենի ստուգաբանությունը: Այս բաժնի գիտական արժեքն, ամենից առաջ, առաջարկված ստուգաբանությունները որոշակի գիտական սկզբունքներով ֆենության առնելն ու վավերացնելը կամ մերժելն է: Հեղինակը, որ հնդեվրոպական լեզվաբանության լավագույն մասնագետն էր մեր իրականության մեջ, իր բոլոր ֆենությունները կատարում է երիտհերականների (հայագիտության մեջ՝ Հյուբշմանի) սահմանած հնչյունական օրենքների ու իմաստային համապատասխանությունների սկզբունքով. նրա համար որպես ստուգաբանության նշգրտության չափանիշ է ծառայում հայերենին հատուկ հնչյունական օրենքների անխախտելիությունն ու դրանց հետևողական գործադրությունը: Սա նրան հնարավորություն է տալիս հիշյա կերպով կողմնորոշվելու հայ և օտարազգի գիտնականների կողմից առաջարկված բազմաթիվ ստուգաբանությունների գիտական գնահատության մեջ և այս բաժնում ներառելու այն ստուգաբանությունները միայն, որոնք կարելի է գիտականորեն ստույգ համարել: Այս բոլորին ավելանում է, վերջապես, նաև այն, որ ինքը՝ հեղինակը, նույնպես իր կողմից ստուգաբանել է բազմաթիվ հայերեն բառեր: Այդ ստուգաբանությունների թիվն է, հեղինակի հաշվումնե-

րով, 1604, որից 136-ը՝ բնիկ հայերեն (այսինքն՝ ինդեվրոպական ծագումով) բառեր: Որպեսզի այս բաժնի արժեքը և ինքնուկի կատարած հսկայական աշխատանքը պարզ լինի, կարելի է բերել հետևյալ վիճակագրական տեղեկությունը. իր հիշյալ աշխատության մեջ Պոլ դը Լագարդը, ի մի հավաքելով բոլոր հայագետների ստուգաբանությունները և ավելացնելով իր սեփականը, տալիս է հայերեն 2413 ստուգաբանված բառերի մի ցանկ. Հյուբշմանը, վերահայելով թե՛ այդ, թե՛ դրա հրատարակությունից հետո առաջարկված ստուգաբանությունները և ավելացնելով իրենը, հայերեն վավերական ստուգաբանությունների թիվը իջեցնում է 1971-ի. Հր. Աճառյանի այս բառարանում ստուգաբանված բառերի թիվն է 5062, այսինքն՝ երկու և կես անգամ ավելի: Իսկ սա վկայում է այն մասին, որ Հր. Աճառյանը, բացի իր ստուգաբանություններից, կարողացել է սպառիչ կերպով ներառել նաև այն բազմաթիվ ստուգաբանությունները, որոնք առաջարկվել են բազմաթիվ հայագետների կողմից՝ Հյուբշմանի աշխատության հրատարակությունից հետո: Սրանով, ահա, այս բառարանի ստուգաբանական բաժինը դառնում է հայերենի ստուգաբանության լիակատար հավաքածուն, որ արտացոլում է մինչև բառարանի հրատարակության ժամանակաշրջանի սպառիչ պատկերը: Թե ինչ մասնավոր չափանիշներ է գործադրել առանձին բառերի ստուգաբանությունը ճիշտ կամ անճիշտ համարելու համար, մանրամասնորեն բացատրվում է հեղինակի առաջաբանում: Բավական է ասել, որ այս բառարանում իբրև ստույգ ընդունված ստուգաբանություններ գրեթե առանց վերապահության ընդունվում են ինդեվրոպաբանության մեջ:

Բառահոդվածների երրորդ բաժինը ստուգաբանությունների պատմությունն է. այս բաժնում հեղինակը ժամանակագրական հաջորդականությամբ հիշում է տվյալ բառի մասին եղած այն բոլոր ստուգաբանական փորձերն ու գիտական հետազոտությունները, որոնք կարելի է գտնել հայ հին մատենագրության, հայ և օտարալեզու լեզվաբանական-բառագիտական ուսումնասիրությունների ու ստուգաբանական բառարանների մեջ: Այս բաժնի գիտական արժեքը չափազանց մեծ է լեզվաբանության, մասնավորապես ստուգաբանության պատմության համար: Այստեղ հավաքված են ամեն մի բառի մասին եղած բոլոր կարգի ստուգաբանական դիտողությունները. այն բոլոր դեպքերում, երբ տվյալ բառի ստուգաբանությունն արդեն հայտնի է և բերված է երկրորդ բաժնում, բնականաբար այս բաժնի տվյալներն ունեն միայն պատմական տեղեկությունների արժեք. սակայն այն դեպքերում, երբ տվյալ բառի ստուգաբանությունը դեռևս հայտնի չէ, այդ տեղեկություններն ստանում են գիտական կարևոր արժեք: Հաճախ է պատահում, որ այս կամ այն ստուգաբանությունը, որ իր ժամանակին մերժվել է որևէ պատճառով (տվյալների պակաս, բառի պատմության թերի լուսաբանություն, համեմատվող զուգահեռների ոչ բավարար մեկնաբանություն և այլն), նոր տեղեկությունների ու տվյալների հաշվառումով հավաստվում է, ուստի և այն, ինչ իր ժամանակին համարվել է անստույգ կամ անընդունելի, այդ նոր տվյալներով նոր էլ արժեքավորում է ստանում:

Այս երեք բաժիններից բացի, բառահոդվածներն ունեն ևս երկու բաժին՝ հայերեն բառարմատների բարբառային ձևերի և հայերենից կատարված փոխառությունների բաժինները, որոնք նույնպես մեծ նշանակություն ունեն լեզվաբանական ուսումնասիրությունների համար:

Ինչպես տեսնում ենք, Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան» համեստ վերնագիրը կրող այս բառարանն իրականում հայերեն բառերի մի ճանրագիտարան է, որ բազմակողմանի կերպով լուսաբանում է հայերեն արմատական բառերի ծագումն ու պատմությունը:

Իր ընդգրկած հարուստ ու բազմակողմանի նյութով բառարանը հայ լեզվաբանության, մասնավորապես ստուգաբանության, և հայերենի բառաճնության բանասիրական-ձեռագրագիտական հետազոտությունների մի անսպառ գանձարան է, և աննեարին է պատկերացնել որևէ բառագիտական հետազոտություն, առանց այս բառարանի պարունակած նյութերը լիովին հաշվի առնելու:

Անշուշտ, աննրաժեշտ է նկատի առնել, որ բառարանի լույս ընծայումից հետո անցած ավելի քան 35 տարիների ընթացքում հրատարակվել են հայ հին մատենագրության բազմաթիվ հուշարձանների հննական, ճշգրտված տեքստեր, հայ վիմագրության ժողովածուներ, բառագիտական-բառաճնական հետազոտություններ, որոնց մեջ շատ ու շատ կասկածելի, անստույգ ու աղավաղված բառերի ճշգրիտ ձևերի վերականգնումով մեծ թվով բառեր նոր մեկնաբանություն են ստացել: Նույն ժամանակաշրջանում հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության վիթխարի առաջընթացը և, մանավանդ, նորագույն հննություններով հնդեվրոպական նախալեզվի ներքին պատմության լուսաբանությունը մեծ թափով առաջ է մղել հնդեվրոպական լեզուների, այդ թվում և հայերենի, ստուգաբանությունը: Հասկանալի է, որ բառարանի օգտագործման ժամանակ այս բոլորը պետք է հաշվի առնել: Ըպետք է մոռանալ, որ «Արմատական բառարանը» արտացոլում է որոշակի ժամանակաշրջանի ստուգաբանություններն մակարդակը, ուստի և՝ սպառիչ լինելով այդ ժամանակաշրջանի համար, չի կարող սպառիչ լինել մեր օրերի համար: Բավական է հիշել, որ հենց ինքը՝ Հր. Աճառյանը, «Արմատական»-ի հրատարակությունից հետո ստուգաբանել է ավելի քան երկու տասնյակ հայերեն բառեր: Որպես ընդհանուր ելակետ պետք է հիշել, որ «Արմատական բառարանը» ամփոփում է այն ամենը, ինչ որ կատարված է հայ բառաճնության ու ստուգաբանության բնագավառում մինչև 1935 թվականը: Իսկ այդ նշանակում է, որ յուրաքանչյուր գիտնական-հայագետ, որը զբաղվում է կամ զբաղվելու է հայկական բառաբրնությամբ կամ ստուգաբանությամբ, ինքը պետք է կարողանա լիովին տեղյակ լինել այն ամենին, ինչ որ կատարված է 1935 թվականից հետո: Հասկանալի է նաև, որ այս նկատառումները ոչնչով չեն նսեմացնում «Արմատական»-ի գիտական արժեքը. Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» եղել է և է հայ բառարանագրության ու բառագիտության գլուխգործոցը, և որքան էլ գիտությունը հարստանա նորանոր հետազոտություններով, նա, այնուամենայնիվ, կպահպանի իր վիթխարի նշանակությունը բառագիտական-ստուգաբանական ուսումնասիրությունների համար:

Պրոֆ. Է. Բ. ԱՂԱՅԱՆ

ՀԻՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ Խ. Մ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՀԱՅԵՐԷՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԱՆ

ԴՐԱՑ

Հ. Ա Ճ Ե Մ Ե Ա Ն

(ԵՐԵՒԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՄ)

ԵՐԵՒԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԸՊԵԿՈՒԹԻՒՆ № 10
1926

Ազգային հրատարակության անվանաթերթը

ՅԱՒԱՍՏԱՆ

Ներկայ աշխատութիւնս ամբողջական ցանկն է հայերէն լեզուի արմատների, իրենց բացատրութեամբ և ստուգաբանութեամբ միասին։

Իւրաքանչիւր արմատի վրայ խօսում է հետևեալ հինգ բաժնով.

Ա. բաժին.—Գաղափարութիւն. այս բաժնում իրար ետևից դրում են՝

1. Արմատը (ամբողջովին գլխատառ գրուած)։

Արմատ ասուածը կարող ենք մի քանի տեսակ ըմբռնել։ Առնենք օրինակի համար վեց բառ. Արեւելք, բարախել, արեգակնագոս, մայր, անդունդ, հնոց: Առաջինը ամէն մի բանիմաց մարդ էլ դիտէ, որ կազմուած է արեւ և ել-ից բառերից։ Երկրորդ բառի կազմութիւնը առաջին անգամից պարզ չի երևում, բայց մի քիչ վերլուծական ոգի և հայ լեզուի կազմութեան ո՛չ մեծ ծանօթութիւն բաւական են ըմբռնելու բառի կազմութեան եղանակը և կրկնաւորը իր մասերին բաժանելով՝ գտնելու պարզ արմատը, որ է բախ: Երրորդը շատերին յայտնի է, որ օտար փոխառութիւն է. շատեր նոյնպէս, առանց յունագէտ լինելու, կարող են լուծել բառը արք և եպիսկոպոս մասերին, որովհետև երկու ձևերը առանձին էլ գործածուած են հայերէնի մէջ։ Յունարէնի տարրական ծանօթութիւնն էլ բաւական է եպիսկոպոս բառն էլ վերլուծելու և տեսնելու՝ որ այս էլ կազմուած է եպի «վրայ» և սկոպ «տեսնել» բառերից։ Չորրորդը՝ մայր մեզ համար անլուծելի է երևում, բայց, հնդևրոպագէտները այս էլ վերլուծելով՝ գտնում են, որ կազմուած է մա պարզականից։ Այսպէս նաև անդունդ և հնոց բառերը, որոնք հատարակ ըմբռնողութեամբ արմատ են երևում, իրապէս կազմուած են *դուեղ «յատակ» և *հուռ «կրակ» բառերից, որոնք թէև գործածական չեն հայերէնի մէջ, բայց նախաւոր շրջանում գոյութիւն ունեցել են։

Ուրեմն այս վեց տիպի բառերից, որ վերը ներկայացրինք, ոչ մէկն էլ արմատ չէ և նրանց իսկական արմատներն են — արեւ, ել, բախ, արբ, եպի, սկոպ, մա, դուեդ, հուռ:

Այսպէս մտածելով սակայն, մենք կանգնած կլինինք սխալ ճանապարհի վրայ։ Լեզուի իրական արմատները ա՛յն բառերն են միայն, որոնց անկախ գոյութեան գիտակից են նոյն լեզուն միայն խօսող անհատները. և ընդհակառակը արմատ չեն միայն ա՛յն բառերը, որոնց վերլուծումը ըմբռնելի է նոյն լեզուի կազմութեան ընդհանուր և սովորական օրէնքներով։ Արմատները քարացած ձևեր են լեզուի մի որոշ վայրկեանին և ածանցներն են միայն նոյն վայրկեանի կենդանի և շարժուն ձևերը։ Աւելի թանձրացեալ լեզուով խօսելով՝ արմատ են այն բառերը, որոնք նոյն լեզուի մէջ կարող են խօսողի կամքի համեմատ և ուզած ժամանակ գումարուիլ և բազմապատկուիլ, բայց չեն կարող հանուիլ ու բաժանուիլ։

Այս տեսակէտով մօտենալով երկրորդ անգամ վերի բառերին, կտեսնենք, որ սրանցից արեւելք և բաբախել ձևերն են միայն ածանց, իսկ միւս չորսը արմատ են։ Արեւելքը ածանց է, որովհետև հայերէնի կենդանի լեզուին միայն ծանօթ հայը՝ արդէն իսկոյն կարող է ըմբռնել նրա կազմութիւնը։ Աւելի դժուար է բաբախել բառի խնդիրը. բայց ո՛չ այնպէս դժուար, որ նոյնիսկ հասարակ ընթերցողը կարող չլինի իմանալ, որ մի ածանց ձև է այն և կազմուած է բախ արմատի կրճատ կրկնութեամբ։ Արեգպիսկոպոս արմատ է, որովհետև հայերը բոլորովին պատրաստ ձևի տակ փոխ են առել այն յունարէնից և հայերէնում անկարելի է վերլուծել եպի և սկոպ մասերին։ Վերջապէս մայր բոլորովին արմատ է, որովհետև պատկանում է հնդեւրոպական նախաւոր շրջանին, ուր դեռ հայ, յոյն, լատին և այլ բաժանումները գոյութիւն չունէին։ Գրեթէ նոյնը կարելի է ասել նաև աղբիւր և ճնոց բառերի համար։

Այս դատողութիւններից առաջնորդուած՝ իբր արմատ ենք դրել ուրեմն բացի առաջին երկուսից, միւս բոլոր չորս ձևերը։

Արմատների այսպիսի ըմբռնումը գործնական տեսակէտով շատ օգտակար է անշուշտ բառարանս գործածողների համար, որոնք այսպէսով երկար և շատ անգամ անյաջող թարթափումների պէտք չպիտի ունենան իրենց փնտռածը գտնելու համար այնտեղ։

Կայ սակայն մի խնդիր, որ ներքին է և արմատների ձևը որոշելու համար անհրաժեշտ։ Ի՞նչպէս պէտք է ներկայացնել օրինակի համար իջանել, լուցանել, կաշկանդել բառերը։ Մենք գիտենք, որ սրանք ածանց բառեր են և նրանց իսկական արմատներն են էջ, լոյց, կաշկանդ։ Առաջինը՝ էջ, իբրև առանձին բառ էլ գոյութիւն ունի, «իջուածք, իջնելու գործողութիւնը» նշանակութեամբ, որից փոխաբերաբար յառաջացել է «դրքի երես» իմաստը. գտնում է նաև բազմաթիւ բարդների մէջ, ինչպէս վայրէջ, ելեւէջ, անէջ, էջմիածին են։ Երկրորդը՝ լոյց, իբրև բառ առանձին գործածութիւն չունի. բայց կարող ենք գտնել նախ իբրև լուցանել բայի հրամայականը՝ լո՛յց «վառի՛ր» (անկախաբար գործածուած) և երկրորդ՝ զանազան բարդութեանց ծայրը, ինչ. ճրագալոյց, կրակալոյց։ Երրորդը՝ կաշկանդ, ո՛չ իբր առանձին բառ գոյութիւն ունի և ո՛չ էլ որևէ բարդութեան մէջ երևան է գալիս (չենք հաշւում անկաշկանդ, որ նոր գրականի մէջ շինուած մի բառ է և հին լեզուի համար նշանակութիւն չունի)։ Արդ՝ արմատական ինչ ձևի տակ ներկայացնել այս բառերը։ Պատշաճ համարեցի առաջինը դնել պարզապէս էջ, քանի որ առանձին գոյութիւն ունեցող բառ է. երկրորդը դրի լոյց ձևի տակ, բայց իսկոյն աւելացնելով մօտը «արմատ առանձին անգործածական», իսկ երրորդը դրի կաշկանդել ձևի տակ։ Միևնոյն ժամանակ, ի նկատի ունենալով, որ ընթերցողներից ոմանք կարող են դժուարանալ մի բառի պարզ արմատը գտնելու, ուստի աւելորդ չհամարեցի ամէն կասկածելի պարագայի նշանակել երկու ձևերն էլ. այսպէս՝ «իջանել տե՛ս էջ», «լուցանել տե՛ս լոյց»։ Ըստ այսմ բոլոր նրանք, որ ուզում են բառարանիս մէջ որևէ բառ փնտռել, պիտի աշխատին նրա ըստ կարելւոյն պարզ (արմատական) ձևը գտնել և այդ ձևի տակ միայն որոնել բառարանում։

Ա՛ն, ո՛ն և նման բացատրութիւններ, որոնք ընդհանուր են բոլոր լեզուներին, չեմ առած բառարանիս մէջ։

2. Հոլովման եւ խոնարհման ձեւերը.—*Սրանք դրուած են արմատից անմիջապէս յետոյ։ Այստեղ առանձին ուշադրութիւն եմ դարձրած հոլովման վրայ, որ ներկայացնում է բառի բունը և մեծ կարևորութիւն ունի հայերէնի հնագոյն վիճակը քննութեան առնելու համար։ Հայերէնի հոլովման այս կարևորութիւնը ո՛չ մատնանշուած և ո՛չ շահագործուած է տակաւին։ Այս գործը կմնայ ապագայ ուսումնասիրողներին։ Բառարաններն էլ առանձին ուշադրութիւն չեն դարձրած այս կէտի վրայ. նրանք աշխատել են միայն տալ որևէ հոլովական ձև, շատ անգամ մի քանիսը, դիւրութիւն տալու համար գրաբար շարադրողներին, որոնք չեն իմանում, թէ այս ինչ բառը ի՛նչպէս պէտք է հոլովվել։ Առնելով մասնաւորապէս Հայկազեան բառարանը, տեսնում ենք, որ սովորաբար ամէն բառի դէմ դրած է հոլովական ձևեր, բայց դրանցից շատերը կեղծ են. այսինքն հին վկայութեամբ վաւերացուած չեն, այլ ենթադրաբար այնպէս դրուած։ Ես սկզբունքով դրի մի՛միայն այն հոլովումները, որոնք գոյութիւն ունէին Ոսկեդարեան հայերէնում։ Սրա համար իբր աղբիւր գործածեցի նախ Հայկազեան բառարանի մէջ յիշուած վկայութիւնները. երկրորդ՝ Երուսաղէմի Համաբարբառը, որ Ս. Գրքի վկայութեանց ամբողջական (թէև բաւական թերի) հաւաքածուն է. և երրորդ՝ իմ ընթերցումները, որով շատ բառերի ոսկեդարեան հոլովումը երևան եկաւ։ Ուր որ առաջին երկու աղբիւրները (Հայկազեան բառարանը և Համաբարբառը) բաւական էին բառի հոլովումը գտնելու՝ հոլովման համար վկայութիւն չդրի. բայց ուր որ իմ ընթերցումներից օգտուեցայ, անպատճառ նշանակեցի այս կամ այն հոլովաձևի գործածութեան տեղը։ Օր. կապերա բառի դէմ Նոր Հայկազեան բառարանը դնում է ի հոլովում. բայց վկայութեանց մէջ կայ միայն սեռ. կապերտի և բզն. կապերտէ, որոնք բաւական չեն ի հոլովում երևան հանելու։ Կարելի էր ենթադրել նաև ի–ա հոլովում։ Ուստի նշանակել եմ կապերտիւ Սիր. գ. կոր. 122, որ իմ ընթերցումների արդիւնքն է։ Այսպէս շատ բազմաթիւ տեղեր։ Հասկանալի է, թէ որքան ծանր գործ էր ամբողջ ոսկեդարեան մատենագրութիւնը կարդալ և հոլովներ ջոկել. այս պատճառաւ զանազան բառերի հոլովումը կարելի չեղաւ ճշտել։ Պատահում է, որ Ոսկեդարեան հայերէնի մէջ էլ հոլովական զանազան ձևեր գործածուած լինին միևնոյն բառի համար. սրանք էլ ջոկ ջոկ նշանակեցի։ Ոսկեդարից յետոյ հայերէն բառերի հոլովումը մեծապէս փոխուեցաւ. սրանք առանձին խտրութեամբ նշանակեցի՝ ասելով օր. յետնաբար ի հոլովում են։ Երբ սակայն ո՛չ Հայկազեանի վկայութիւնները, ո՛չ Համաբարբառը և ո՛չ էլ իմ ընթերցումները չարդարացրին Հայկազեանի նշանակած հոլովումները, այն ժամանակ դրի Հայկազեանի հոլովումը՝ ամէն անգամ նշանակելով «ըստ ՆՀՔ, բայց առանց վկայութեան». կամ թէ «կայ միայն այսինչ հոլովական ձևը»։*

3. Բառի նշանակութիւնը *(դրուած միշտ չակերտների մէջ).*— *Այստեղ հետևել եմ սովորաբար Նոր Հայկազեան բառարանին՝ նկատի առնելով նաև նրա տուած վկայութիւնները։ Ուր որ պէտք էր՝ ուղղեցրի նաև Առձեռն բառարանի տուած նոր նշանակութիւնները։ Տեղ տեղ իմ ընթերցումներն էլ երևան հանեցին նոր նշանակութիւններ։ Թէ բառը նոր գրականում տարբեր իմաստ է ստացած, կարևոր համարեցի այդ էլ նշանակել, ուր որ պէտք և կարելի էր նոր նշանակութեանց զարգացման ճանապարհներն էլ ցոյց տալով։*

Բայց կսխալի ընթերցողը, եթէ կարծի կամ սպասի գտնել բառարանիս մէջ բառերի բոլոր առումները կամ նշանակութեանց բոլոր երթութիւնները և նրանց բացատրութիւնը օրինակներով. ինչպէս նաև ոճեր, դարձուածներ և ասութիւններ: Իմ աշխատութիւնը բացատրական բառարան չէ: Այդ նպատակի համար պէտք է դիմել Հայկազեան բառարանին և նոր հրատարակելի Մալխասեան բացատրական բառարանին:

4. Վկայութիւնները.— Սրանք երկու նպատակ ունին. նախ որոշել բառի գործածութեան ժամանակը, երկրորդ՝ ճշտել նրա նշանակութեան երթութիւնները: Երկրորդը մեր նպատակից դուրս լինելով՝ աւելորդ էր մեզ համար ամէն բառի դէմ մէջ բերել վկայութիւնները ամբողջ նախադասութեամբ: Կարևոր էր միայն բառերի գործածութեան ժամանակը. այս պատճառով բաւական համարեցի դնել միայն վկայութեանց տեղերը (Ագաթ., Բուզ. ևն): Այս մասին էլ բնականաբար իմ գլխաւոր աղբիւրն եղաւ Նոր Հայկազեան բառարանը, ուր իւրաքանչիւր բառի դէմ դրուած են բազմաթիւ վկայութիւններ: Բնականաբար այդ վկայութիւնները զանազան դարերից են: Հայկազեան բառարանի յօրինման ժամանակ պիտութեան պահանջները տարբեր էին: Բառարանի հեղինակները թէև կարող էին, թայց աւելորդ էին համարած ամէն անգամ տալ բառի ամենահին (ոսկեդարեան) վկայութիւնը. այնպէս որ շատ անգամ պատահում են բառեր, որոնք թէև ոսկեդարեան են, բայց Հայկազեան բառարանի մէջ Ոսկեդարից վկայութիւն չունին: Այսպէս, օրինակի համար մսիլ, մռսիլ Հայկազեան բառարանի մէջ վկայութիւններ ունին 3Հ. կթ. Սարգ. յուդ. բ. և Ոսկիփ. անուններով. բայց չկայ հնագոյն Ոսկեդարեան վկայութիւնը՝ Ոսկ. փիլ. 456. «Եթէ ցուրտ մսէր ղմարմինն»: Եպերանք բառի դէմ կան վկայութիւններ՝ 3Հա. Փիլ. իմաստ. և լին. Նար. Լմբ. պարզ. անուններով. ո՛չ մէկը ոսկեդարեան չէ. մինչդեռ Ոսկեդարից ունինք Վեցօր. 48 (Արդ որչափ պատճառս եպերանաց պահեցիր յինէն). Եփր. եւ. 191 (Բարձրէ զեպերանսն յայնմանէ, որ արդարութեամբն խնդրեաց զվրէժն). Բզ. 431: Ես առաջինները մի կողմ թողնենք և յիշենք երկրորդ վկայութիւնները: Պարուսակ բառի դէմ Նոր Հայկազեանը ունի 7 վկայութիւն (Պրպմ. Նիւս. Պիտ. Բրս. արբեց.) բայց պակասում է Կոչ. 228 ոսկեդարեան վկայութիւնը (Կաւ զանգեալ՝ աշաց պարուսակս և առագաստս և ճաճանչս ծնանէր), որ ես աւելացրի: Այսպէս են նաև սաւմի, խաղոց, օշինդր, պար (մեղուաց), բաջաղիլ, բազմաճոյղ, երեր, դառնաթոյն, խայտաբղետութիւն, կռան ևն ևն: Ուրիշ դէպքերում Հայկազեանի առած սակաւաթիւ Ոսկեդարեան վկայութեանց վրայ աւելորդ չհամարեցի աւելացնել նաև նորերը. համմտ. տատրակ, համակ, հոռի, աֆաղաղ, յղփացուցանել, դարբին, բրբուր, կամաւ ևն բառերը:

Բառերի Ոսկեդարեան վկայութիւնները ի հարկին գտնելու կամ աւելացնելու համար պէտք էր ուրիշն, որ դիմէի իմ սեփական աշխատութեան: Ես իմ ընթերցումները տուին բազմաթիւ նոր վկայութիւններ վկայութեան կանչուած գրքերի մէջ առաջին տեղը բռնում է Ս. Գիրքը, որ շատ յաճախ յիշուած է: Երբ որևէ բառ մէկ քանի անգամ է գործածուած Ս. Գրքում, աւելորդ համարեցի մանրամասն նշանակել և բաւականացայ միայն ՍԳր. համառօտագրութեամբ: Իսկ երբ գործածութիւնը եղած է շատ սահմանափակ թուով (1, 2 կամ 3 անգամ), լաւ համարեցի գործածուած տեղերը մանրամասն նշանակել. ինչ. Եզեկ. բ. 4 ևն: Ս. Գրքից յետոյ գալիս են Եղնիկ,

Ագաթանգեղոս, Բուզանդ, Կորիւն են են, մինչև Հայերէնի յետին ժամանակները հասնող գրութեանց շատ երկար մի շարք, որոնց ցուցակը իրենց համառօտագրութեամբ և իմ գործածած լատադոյն հրատարակութեանց յիշատակութեամբ տալիս եմ առանձին ցանկով։ Այս ցանկը հին հայ մատենագրութեան բոլոր արտադրութեանց ամփոփումն է։ Երբ վկայութիւնները Հայկազեան բառարանից են բերում, մանրամասն տեղերը կամ էջերը չեմ նշանակած. օր. բծիծ Նոնն. էջ 36 կամ աղակատաճ Նշն. 164 են։ Իսկ երբ իմ ընթերցումների միջոցով գտնուած կամ հաստատուած են, մանրամասն նշանակած եմ տեղերը կամ իմ մատնանիշ արած լատադոյն հրատարակութեանց էջերը։ Նմանապէս, երբ բառերը շատ քիչ (1—2) անգամ են գործածուած, գործածութեան տեղի հետ դրել եմ նաև վկայութիւնը՝ ամբողջ նախադասութեամբ։

5. Ածանցներ.— Արմատի վկայութիւններից յետոյ գնում եմ նոյն արմատից յառաջացած կարևոր բառերը՝ իրենց վկայութեամբ։ Սրա նպատակն է նախ՝ ցոյց տալ, թէ նոյն արմատը ի՛նչ կենսունակութիւն ունի հայ լեզուի մէջ. կղզիացած և քիչ գործածական մի ձե՞ւ է, թէ աճած ու զարգացած բառ։ Այս բանը կարևոր է մանաւանդ ա՛յն պարագային, երբ արմատը առանձին անգործածական է և ածանցների մէջ միայն պահուած է։ Կարևոր է յատկապէս ա՛յն պարագային, երբ բառը օտար լեզուից է փոխառեալ. սրանով պիտի երևայ, թէ այդ փոխառութիւնը Թարգմանչի անկարութեան կամ քմահաճոյքի արդի՞նքն է, թէ ժողովրդի ձեռքով տեղի ունեցած։ Թարգմանիչների ձեռքով եղած փոխառութիւնները բնականաբար մէկ-երկու տեղ միայն գործածուած կլինին և առհասարակ ածանցներ չեն ունենում և կամ շատ քիչ կարող են ունենալ։ Ընդհակառակը, ժողովրդական փոխառութիւնները բազմաթիւ վկայութիւններով հաստատուած և զանազան ածանցներով աճած են լինում։ Համեմատել օրինակի համար եկեղեցի և սերաստէս։

Ածանցների երկրորդ նպատակն է ցոյց տալ, թէ արմատը ի՛նչ կերպարանափոխութիւններ կամ ի՛նչ թեքումներ է կրում բառակազմութեան միջոցին։ Առհասարակ արմատները իրենց իսկական վիճակը անփոփոխ պահում են. ինչպէս նաց, որ իր բոլոր ածանցների մէջ էլ երևում է միայն և միայն նաց ձևով։ Աւելի շատ են այն արմատները, որոնք հայերէնի սղման և ամփոփման օրէնքներին են ենթարկուում. ինչպէս ջուր՝ որ սղուելով ածանցման մէջ դառնում է ջր-, և սէր՝ որ ամփոփուելով դառնում է սիր-։ Վերոյիշեալ երկու պարագաներումն էլ ածանցման ձևերի մասին առանձին յիշատակութիւն անել աւելորդ էր. միայն յատուկ ուշադրութիւն եմ դարձրել տալու ածանց ձևերի այնպիսի մի խումբ, ուր արմատը երևան գայ բառի թէ՛ սկիզբը, թէ՛ մէջը և թէ՛ մանաւանդ վերջը։ Բառասկզբի բարդութիւնները շատ դիւրին է գտնել բառարանների մէջ. բայց լեզուաբանները յաճախ պէտք են դգում ունենալու ձևերի տակ բառավերջի բարդութիւնները, որոնք բառարաններից հաւաքել շատ աւելի դժուար է։ Այս պէտքը լրացնելու որոշ չափով պիտի նպաստեն մեր դրած բառավերջի ածանցները, որոնք դիտմամբ միւսներից աւելի առատ են։

Կան սակայն արմատներ, որոնք ածանցման ժամանակ շատ այլազան թեքումների են ենթարկուում։ Ընդհակառակը, կան բառեր, որոնք անսասան են սղման և ամփոփման օրէնքներին։ Այս թեքումները և այս բացառու-

թիւնները մի առ մի յիշել և նրանց կազմութիւնը ուսումնասիրել Արմատական բառարանիս նպատակներից մէկն է եղած. համմտ. երեք *(*երեք-, երեքրն, երի-, երե-, երր-, եռ-*), մի (*մի-, մե-, մու-, միակ, միայն, մեն-, մին-, միմեանք, միւս*), տուն (*տուն, տե-, տաճ-*) և։*

6. Տարբեր գրչութիւնները.—*Թէ՛ արմատական և թէ՛ ածանցական բառերը շատ անգամ պատահում է, որ մեր ներկայ լեզուի ընդունած ձևից տարբեր ձևերով գրուած լինին հին ձեռագրերի մէջ։ Սրանցից ոմանք անշուշտ հասարակ սխալներ են, բայց առհասարակ իրենց ուղղագրական սխալի մէջ ներկայացնում են մի առանձին գաւառականի յատուկ հնչումը և հետևաբար առանձնապէս կարևոր են հայերէնի հին բարբառների ուսումնասիրութեան համար։ Այս պատճառով մասնաւոր ջանք եմ գործ դրել հաւաքելու գրքիս մէջ իւրաքանչիւր բառի տարբեր գրչութիւնները, յիշելով նաև նրանց գործածուած տեղերը։ Այն ձևերը, որոնց դէմ գործածութեան տեղը նշանակուած չէ, քաղուած են Հայկազեան բառարանից, իսկ նրանք, որոնց տեղը և էջը նշանակուած է, քաղուած են տպագրեալ օրինակներից։ Բայց երբ որևէ սխալ գրչութեան դէմ յիշում է որևէ հեղինակ, պէտք չէ քնաւ կարծել, թէ սխալը գոյութիւն ունէր ճիշտ այդ հեղինակի լեզուում, այլ նրա ձեռագրի այս կամ այն արտագրութեան մէջ, որի ժամանակն ու հանգամանքները տուգել մնում է քննողներին։*

Կան բառեր, որոնց սխալ ձևն է ընդունուած լեզուի մէջ, իսկ ճիշտը մնում է ձեռագրերում՝ իբր տարբերակ։ Այսպէս օր. «փուշ» իմաստով ունինք բորկոնիմ, բորկունիմ, բարկէնիմ *ձևերը՝ գործածուած ընդամէնը մի անգամ։ Յունարէնի և երբայեցերէնի համեմատութիւնից երևում է, որ լաւագոյնն է* բարկէնիմ։ *Բայց ես չէի կարող թողնել* բորկոնիմը *և դնել* բարկէնիմ, *որովհետև մեր լեզուի մէջ ընդունուած պաշտօնական ձևը այս չէ։ Այս կամ այն պատճառով Հայկազեան բառարանը գրել և տարածել է* բորկոնիմ, *որին պէտք է հետևէի ես էլ։ Աւելի ծանր է* երիզ *բառի խնդիրը։ Քննութիւնները ցոյց են տալիս, որ* երիզ *բառ չկայ. պէտք է լինի* երէզ։ *Բայց ես ստիպուած էի գրել* երիզ, *որովհետև սա է ընդունուած լեզուի մէջ։ Եթէ բառը դնէի* երէզ *ձևով, ընթերցողը, որ բառը փնտռում է իր և ամէնքի գիտցած ձևով և ո՛չ թէ իմ իմացածով, անշուշտ չպիտի գտնէր այն։ Ի՞նչ պիտի լինէր ընթերցողի դրութիւնը, եթէ օր. շագանակ բառը իր ճշտուած ձևի տակ գնէի։ Սակայն բառը ընդունուած (թեկուզ սխալ) ձևի տակ նշանակելուց յետոյ, բնականաբար քննութեան եմ առել և պարզել նաև նրա ճիշտ ձևը։*

ՄԱՆՕՐ.—Ամբողջ այս առաջին բառագիտական բաժնի համար իմ աղբիւրները եղան հետևեալ բառարանները.—

1. Մխիթար Աբբայի Բառգիրք Հայկազեան լեզուի. 3 հտ. Վենետիկ, 1769 (=ՀՀԲ)։

2. Աւետիքեան, Սիւրմէլեան և Աւգերեան, Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի. 2 հտ. Վենետիկ 1836—7. Հայերէն լեզուի ամէնից կատարեալ բառարանն է (=ՆՀԲ)։

3. Զախչախեան, Բառագիրք Հայ-իտալ. Վենետիկ 1837. Նախորդից ոչ նուազ, բառերի նշանակութեան կողմից նրանից աւելի կատարեալ մի գործ է (=ՋԲ)։

4. Փէշտըմալճեան Գ., Բառգիրք Հայկազեան լեզուի. 2 հտ. Պօլիս 1844. կազմուած է ՆՀԲ-ի վրայից, բայց ունի մի խումբ նոր յաւելումներ. գործածութիւնը զգուշալի (=ՓԲ)։

5. Աւգերեան Մ. վրդ., Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի. Բ տպ. Վենետիկ 1865. ՆՀԲ-ից 5000 բառ աւելի ունի, դժբախտաբար, իբրև առձեռն, առանց վկայութեան (=ԱԲ)։

6. Ալիշան Հ. Ղ., Հայբուսակ կամ Հայկական բուսաբառութիւն. Վենետիկ 1895. հայերէն լեզուի բուսաբանական բառերի բառարանն է, թէև գիտական տեսակէտով անբաւարար (=ՀԲուս.)։

7. Գաբամաճեան Ս., Նոր Բառագիրք հայերէն լեզուի. Բ տպ. Պօլիս 1910 (=ԳԲ կամ Գար. բառ.)։

8. Քաջունի Հ. Մ., Բառգիրք Արուեստից և Գիտութեանց և Գեղեցիկ դպրութեանց, հտ. Ա և Բ ֆրանս.—հայ., հտ. Գ հայ—ֆրանս. Վենետիկ 1892. սխալաշատ և զգուշալի աշխատութիւն, որ նախապէս որոշել էի չօգտագործել. զանազան պատճառներով սկսայ օգտագործել Հ տառից սկսեալ. նախորդ մասերի մէջ գտնուած կարևոր նորութիւնները գնում եմ ցաւելուածի մէջ։

9. Ներսէսովիչ Աստուածատուր, Dictionarium latino-armenum, Հռոմ. 1695։

10. Rivola Fr., Dictionarium armeno-latinum, Paris 1633.

11. Տիրոյեան Հ. Աբ., Հանրագրութիւն, Վենետ. 1907. պարունակում է հայերէն հոմանիշների ճոխ բառարան. ունի նաև մի խումբ հետաքրքրական նոր բառեր, որոնց աղբիւրը յայտնի չէ։

12. Béguinot և Տիրացուեան, Contributo alla flora dell'Armenia, Venezia 1912. հայ բուսաբանական բառերի բառարանն է, առանց այբուբենական կարգի, լատին գիտական անուանակոչութեանց հետ միասին։ Շարունակ հետևել եմ իրեն՝ բոյսերի գիտական անունը ճշտելու համար։

13. Կոյլաւ, Բառագիրք գերմաներէն-հայերէն. Վիեննա 1889։

14. Նորայր, Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն. Պօլիս 1884. հոյակապ գործ, որ ո՛չ թէ լոկ ֆրանսերէն բառարան է, այլ և հաւաքածոյ բազմաթիւ գաւառական, միջին հայերէն և նոր աշխարհիկ բառերի. առանձին վկայութիւններով ճշտուած և ստուգաբանուած են բազմաթիւ հին հայերէն անստոյգ բառեր։

Այս բոլորը սակայն բաւական հեռու են հայ լեզուի բոլոր գանձերը պարփակելուց։

Հայ լեզուի մատենագրութիւնը կարելի է բաժանել հինգ շրջանի.—ոսկեդարեան շրջան, յետ-ոսկեդարեան կամ յետին հայերէնի շրջան, ստորին կամ միջին հայերէնի շրջան, գաւառական հայերէն, նոր կամ աշխարհաբար հայերէնի շրջան։ Այս հինգ շրջաններից առաջին երկուսի բառերն են միայն հաւաքուած յիշեալ բառարանների մէջ։ Ստորին հայերէնի բառարան բնաւ չկայ։ Գաւառական հայերէնի համար հրատարակուած են Սահակ վրդ. Ամատունու «Հայոց բառ ու բանը» (Վաղարշապատ 1912) և իմ «Գաւառական բառարանը» (Թիֆլիս 1913). առաջինը պարունակում է 14,000 բառ, երկրորդը 30,000։ Բայց ես կարծում եմ, թէ այս թիւը դեռ կարելի է հասցնել մինչև 50,000։ Հաւաքուած չեն նոյնպէս նոր աշխարհաբար լեզուի բառերը (շոգենաւ, աւտոմոբիլ, սակագին են), որոնց թիւը կարելի է դնել մինչև 10,000։ Ի նկատի ունենալով իրերի այս վիճակը, ստիպուած էի ես էլ սահմանափակուիլ առաջին երկու (ոսկեդարեան և յետին) շրջանների հայերէնի բառամթերքով։ Պակաս չափով միայն կարելի եղաւ օգտագործել միւս շրջան-

ների լեզուն։ Այսպէս օրինակի համար Վաստակոց գրքից, Մխիթար Հերացուց, Կոստանդին Երզնկացուց, Քուշակից, Առաքել Սիւնեցուց, Սմբատ Պատմիչից և ուրիշներից դուրս բերի մի կարևոր մեքենք միջին հայերէն բառերի։ Այս կողմից առանձնապէս հարուստ է Նորայրի ֆրանսահայ բառարանը, որից քաղել եմ յատուկ խնամքով բոլոր միջին հայերէն բառերը (Նորայրի մօտ նշանակուած U = ստորին հայերէն)։ Բայց յատուկ ջանք գործ դրի իւրաքանչիւր արմատի դէմ գնելու նրանից յօրինուած նորակերտ աշխարհաբար բառերը, ինչ որ անշուշտ օգտակար պիտի լինի նոր հայերէնի լիակատար բառարան կազմելու պարագային։ Սրանց թիւը իմ բառարանի մէջ հասաւ 4050-ի։

Սակայն թէ՛ Հայկազեան բառարանը և թէ՛ Առձեռնը (վերջինս ունի 56,410 բառ) կատարեալ չեն նաև առաջին երկու շրջանների բառամթերքի կողմից։ Չհաշուելով այն բազմաթիւ երկերը, որոնք երևան եկան և հրատարակուեցան 1865 թուականից այս կողմ, նկատեցի որ հներին ծանօթ գրքերից շատերն էլ ամբողջապէս բառաքաղուած չեն։ Հազար անգամ պըրպտուած Նարեկի կամ Մխիթար Գօշի Առակների մէջ անտես մնացած բառեր գտայ։ Այս հանդամանքը ստիպեց ինձ անձամբ և առանձին ուշադրութեամբ կարդալ ծայրէ ի ծայր ամբողջ հին հայ մատենագրութիւնը և հաւաքել նորագիւտ բառերը։ Այս բառերի մի մասը հրատարակուեցաւ առանձին հատորիկներով (ինչ. Հայերէն նոր բառեր նորագիւտ Մնացորդաց Գրոց մէջ, Վիեննա 1908; Հայերէն նոր բառեր Տիմոթէոս Կուղի Հակաճառութեան մէջ, Վիեննա 1909; Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, 2 հտ. Վենետիկ 1913—1922)։ Թէ՛ սրանց մէջ հրատարակուած և թէ՛ սրանցից դուրս մնացած նորագիւտ բառերս ներմուծեցի Արմատական բառարանիս մէջ, շատ անգամ մօտին նշանակելով «նորագիւտ բառ» (կամ «չունի ՆՀԲ» և կամ «չունի ԱԲ»), որպէսզի սրանով դիւրութիւն տուած լինիմ նրանց, որոնք ապագային լիակատար հայերէն բառարանի կազմութեան պիտի ձեռնարկեն։ Նորագիւտ բառերիս թիւը հասնում է 2000-ի։ Հ. Ակինեան, իր Քննադատութեան մէջ Արմատական բառարանիս (ՀԱ 1930, էջ 486—7) պահանջում է, որ այս նորագիւտ բառերը ևս ստուգէի էջմիածնի և Երևանի ձեռագրատների 8000 ձեռագրերի վրայ։ Բայց ինչո՞ւ չստուգէի նաև Վիեննայի, Վենետիկի, Երուսաղէմի, Նոր-Ջուղայի, Պօլսի Անտոնեան միաբանութեան և այլ տասնեակ հազարաւոր ձեռագրերի վրայ։ Եւ ինչո՞ւ միայն այդ նորագիւտ բառերը ստուգէի և ո՛չ թէ ամբողջ հայերէն բառերը։ Լաւ կլինէր անշուշտ։ Բայց կարելի՞ է մի մարդուց այդքան բան պահանջել։ Այդ գործը թողնում եմ ապագայ հայերէնագէտներին, քանի որ նիւթը արդէն պատրաստ է։

Այստեղ առանձնապես պէտք է յիշել «Բառգիրք Հայոց արարեալ ի Ս. էջմիածին, երեմիայ վարդապետի», տպ. ի յԱլիկօռնայ 1698։ Այս գիրքը 344 էջից բաղկացեալ կոկիկ մի աշխատութիւն է և իւրաքանչիւր երեսում ունենալով 30 տող, պարունակում է շուրջ 10,000 բառ։ Կայ նաև գրքիս Բ տպագրութիւնը (Պոլիս 1729), որ առաջինի հետ տառացի նոյն է, ինչպէս հաստատեցի ամբողջ գիրքը ծայրէ ի ծայր նամեմատելով. իսկ էջ 536—575 Դէորգ Դպրի ձեռքով գրուած են մի քանի յաւելուածներ, որոնք առել եմ բառարանիս մէջ։

Այս բառարանի մէջ (=Բռ. երեմ.) կան այնպիսի բառեր, որոնք ես-

պատ անծանօթ են մեզ՝ մեր ձեռքը հասած մատենագրութեան մէջ գործածուած չլինելու պատճառաւ։ Այս բառերը, իբրև հետաքրքրական նորադիւտ բառեր, անշուշտ պէտք էր առնել բառարանիս մէջ։ Բայց ինչո՞ւ այդպէս չէին արած ո՛չ ՆՀՔ, ո՛չ ՋՔ և ո՛չ իսկ ԱԲ։— Մանրամասն քննելուց յետոյ աշխատութիւնը, տեսայ որ մեծագոյն մասամբ վրիպակների մի հաւաքածոյ է այն։ Օրինակ՝ էջ 202 կայ «մակնատակ՝ խնդիրէն ըմպանակ կամ խոր» բառը. դատայ, որ այս բառը գործածուած է Սրբեցւոյ Ջարշարանաց ճառի մէջ (տպ. Գիրք և ճառ հոգեշահ, Պօլիս ՌՃՀԱ, էջ 185). կնճեաց գնա մակնատակ։ Բայց սա մի աղաւաղեալ ընթերցուած է, որ պէտք է կարդալ կնճեաց գնամակն կոտակ (հմմտ. բառարանիս մէջ մակնատակ բառի տակ)։ Սրանով մակնատակ բառը դառնում է սուտ ու սխալ մի ենթադրութիւն և դրկում է գոյութիւնից։— էջ 72 կարդում ենք «դանթիւն. դանթիան կամ մութն», որ ուրիշ բան չի կարող լինել, եթէ ոչ դանդիոն «խաւար» բառը։ Սրանից հետևում է, որ հեղինակը իր ձեռքն անցած գրչագիրների սխալներն էլ առած է իբր ուղիղ և դրած իր բառացանկի մէջ։ Ըստ այսմ՝ էջ 171 հակադակ «հակառակ» բառը պարզապէս գրչագրական սխալ է՝ ո և դ տառերի նմանութիւնից յառաջացած։ Հեղինակը շատ անգամ անփոյթ է բառերի քերականական ձևերը որոշելու. այսպէս էջ 96 «զակումբ. մաշկեա՛ բաղմական օրինուածով շինեալ», էջ 98 «զաստր. անդամ», էջ 102 «զծամակալս. որ է մաղկալ», էջ 108 «էքս. արարածք»,— պէտք է հասկանալ՝ ակումբ, ազդր (ինչպէս որ էջ 7 ունի «աղդր. անդամ»), ծամակալ, է կամ էմ (հայցական, յոգնակի կամ տառասխալ գրուած)։

Տպագրական վրիպակների կողմից շատ հարուստ է դիրքը. օրինակ՝ էջ 205 կարդում ենք «մասն. բոլոր. ի հարուած. կամ. կտոր», որից հետևում է, թէ մասն նշանակում է «1. բոլոր. 2. հարուած. 3. կտոր»։ Բայց այս բոլորը սխալ է։ Ամբողջ տողը պէտք է կարդալ «մասն. բոլորի հատուած կամ կտոր», որով 1 և 2 անգոյ իմաստները կջնջուին։ Էջ 7 ունինք «ալաւուն. բաղմատաղ»։ Այստեղ տպագրական ու գրչագրական սխալները իրար են միանում։ Պէտք է կարդալ «ալաւունք. բաղմաստեղք», ինչպէս գիտենք Ճառընտրից (տե՛ս բառարանիս մէջ)։ Զարմանալի մի օրինակ է էջ 219 «Յաղթր. 'ի զատի», որից անշուշտ ոչինչ չի հասկացվում։ Բայց որքա՞ն կփոխուի խնդիրը, եթէ վրիպակները ուղղելով կարդանք «յաղդր. 'ի զատի», որով կունենանք պարզապէս հյ. «աղդր. պիտս» բառը։— էջ 49 բառաֆլուաֆի բառը կայ, որ մեկնում է «սպիտակէ իբրև գկիր»։ Այս անիմանալի բառը կպարզուի մի քանի տող վերև դրուած մէկ ուրիշ բառով, որ է «բարակ. փայլակն կամ նուրբ. որ է լուալիք. խպիտակ իբրև գկիր». նշանակում է թէ ուզում է մեկնել լուացքի բորակը, որ և բարակ ձևով է գործածուում։ —էջ 322 ունի «փառան. կարկուտ կամ կորկոտի ճուալ», որ հանած պիտի լինի Փիլ. լին. 205 «փառան մեկնի կարկուտ կամ կորկոտիճ» հատուածից. այստեղ կորկոտիճ բառը դարձրել է կորկոտի ճուալ!

Հեղինակը տալիս է նաև բաղմաթիւ եբրայական յատուկ անունների և հասարակ գոյականների նշանակութիւնը, որ հին հեղինակներից է քաղում։ Եթէ հայերէն ծանօթ բառերը այնպէս այլանդակուած են, ի՞նչ պիտի լինին օտար եբրայական բառերը, որոնցով լցուած է գիրքը։ Այսպէս՝ միևնոյն զաբարիայ բառը, որ էջ 99 մեկնում է «յիշատակ տեառն», էջ 104 լինում է «Զբրեայ. յիշատակ տեառն» և մի քիչ վերը «Զբրայ. յիշատակ տեառն»։ Եբր.

բոյոս էջ 56 մեկնուած է «զօրութիւն», էջ 57 «բոյոս. զօրութիւն. ի զօրութենէ», էջ 52 «բաւող. զօրութիւն. կամ ի զօրութենէ», էջ 47 «բայօղ (անշուշտ նախապէս բայօզ). զօրութիւն. ի զօրութենէ», թերևս նաև նոյնից ածական կազմուած՝ էջ 47 «բայական. դուզնաքեայ քաջութիւն», էջ 51 «բացական. դուզնաքեայ քաջութիւնս»։— էջ 283 գնում է «սեդրակ. անվայր», որ անշուշտ հանել է վարդանի Դանիէլի մեկնութիւնից (բ. էջ 246, ուր դրում է անվար, բայց ոչ անվայր)։ Նոյն հեղինակից առած պիտի լինի՝ էջ 3 արեթեազովմ բառը, որի նշանակութիւնը մոռացել է դնել, իսկ վարդան (նոյն էջ) մեկնում է «գովաշատ»։ Յատուկ անունները ես չեմ վերցրած բառարանիս մէջ։

Թէ որքան տգէտ է հեղինակը, այդ երևում է նոյն իսկ ամենահասարակ բառերի մէջ. օր. էջ 94 «Ու արդումի ալիւր», իբր թէ մի բառ լինէր, մեկնում է «բաղարճ»!

Այս բոլորից հետևում է, թէ պէտք է շատ զգուշութեամբ վերաբերուիլ սոյն բառագրքի հետ և նրա յիշած ձևերը իբր ճշմարտութիւն չընդունիլ։ Այսպէս արի ես էլ և բառերը ուշադիր քննելուց յետոյ, եթէ կեղծ չգտայ, անցկացրի իմ բառարանի մէջ, այն էլ միշտ իբր կասկածելի և անստոյգ։

Հ. Ակինեան (ՀԱ 1930, էջ 492) այստեղ էլ պահանջում է, որ ես մըտնէի Երևանի և Էջմիածնի ձեռագրատները, բոլոր ձեռագիր հին բառարանները պրպտէի, իրար հետ համեմատէի, «և փորձէի վերականգնել հին բնագիրը Հնոգիրներու ուսումնասիրութեամբ»։ Քննէի նաև արաբերէն-պարսկերէն-հայերէն բառագիրքը, որին հանդիպել է Էջմիածին և որից բառեր կարող էին ներս առնուած լինել Երեմիայի բառգրքում։ Շատ դեղեցիկ ցանկութիւն արդարև և այնքան գեղեցիկ, որ չեմ կարող նրա իրագործումը չխնդրել Վիեննայի միաբանութեան բազմաշխատ անդամներից։

ՄԱՆՕՐ.— Երեմիայի կամ Հին բառարանի ուսումնասիրութիւնը և բնագրի վերականգնումը իր վրայ վերցրեց երկու տարի առաջ՝ մեր համալսարանի ասպիրանտ, այժմ դասախօս Արարատ Ղարիբեանը։ Բայց այսպիսի գործերը երկար տարիների աշխատանք են պահանջում։

Այս բոլորից յետոյ պարտք եմ համարում ուղղացնել, թէ կսխալին նաև նրանք, որոնք կկարծեն, թէ հայերէն ամէն բառ պէտք է գտնեն բառարանիս մէջ։ Սա Արմատական բառարան է. և ամէն բառ՝ որ արմատ է և կամ արմատ լինելու երևոյթն ունի, այո՛, անպատճառ պէ՛տք է գտնուի բառարանիս մէջ։ Չգտնուիլը թերութիւն է։ Բայց ոչ-արմատական բառերը, ածանց կամ բարդութիւն, կարևոր դէպքերում միայն տեղ ունին այստեղ։ Իսկ նրանց ամբողջական հաւաքումը Հայկազեան և Մալխասեան բառարանների գործն է։ Սխալւում է նաև Ակինեան, երբ իր քննադատութեան մէջ (ՀԱ 1930, էջ 486) գրում է թէ «նա ուղած է ամէն բառ, որ տպագիր՝ հրապարակի վրայ եղած է, ներս առնել իր բառագրքին մէջ. և՛ հին, և՛ նոր բառ, և՛ բարդութիւն։ Արդիւնքն է որ ոչ հինը ներկայացուած է լրիւ և ոչ նորը ամբողջութեամբ։ Ու առած է ամէն բառ, և՛ ուղիղ և՛ տարակուսական, և՛ բնիկ և՛ օտար փոխառութիւններ, որոնք կիրառուած են հազուադէպ և հասած են շարատանջ։ Ասով խճողուած են բառարանին էջերը անլուր, բարբարոս բառերով։ Այս անխտիր հաւաքումը բառերու կարող են միայն շփոթցնել մտքերը։ Յաճախ այս անպէտ բառերուն կը նուիրուին երկար էջեր, ստուգաբանելու անոնց ծագումը»։ Այս տողերից երևում է, որ գրողը Արմա-

տական բառարանի մասին ճիշտ գաղափար չունի։ Ո՛չ մի արմատական բառարան չի կարող նպատակ ունենալ հաւաքելու բոլոր բառերը, բարդութիւն են։ Դա կլինէր սովորական բառարան։ Եւ ի զուր է վերագրել ինձ էլ ամէն բառ ներս առնելու անճիշտ նպատակը։ Ո՛չ հինն եմ ուզում ներկայացնել լրիւ, ո՛չ նորը, ո՛չ միջին հայերէնը և ո՛չ էլ գաւառականը. այլ միայն և միայն սրանց արմատները՝ լրիւ և ամբողջութեամբ։ Նոյնպէս գիտական բառարանի համար չկայ խտրութիւն բնիկի և օտարի, հազուագիւտի և սովորականի։ Նոյն իսկ հազուագիւտ բառերը շատ աւելի կարևոր և արժէքաւոր են։ Որքան սքանչելի՜ է սուխ «ամուլ» բառը, որ միայն երկու անգամ է գործածուած հայ մատենագրութեան մէջ և այն էլ նոր երևան եկաւ։ Չեմ հասկանում, թէ ի՛նչ է նշանակում «անլուր, բարբարոս բառ»։ Գիտական բառարանի հինց նպատակն է այդ «անլուր, բարբարոս» բառերը բացատրել և եթէ իրօք անլուր ու բարբարոս են, ցոյց տալ։ Եթէ ո՛չ Արմատական բառարանի մէջ, հապա որտե՞ղ պիտի սովորին մարդիկ, թէ նրանք անլուր են ու բարբարոս։ Ակինեան ուզում է, որ այդ «տարակուսական, անսովոր, հազուագիւտ և փոխառեալ բառերը» ամփոփուէին «առանձին հատորի մը մէջ», որպէսզի պիտուներ շարունակ մէկ այս հատորի, մէկ այն հատորի մէջ որոնումներ անէր և սրանով իր թանկագին ժամանակը պարապ տեղը վատնէր։ Յիշեցնեմ, որ ամենավերջին Արմատական բառարանի մէջ էլ (Ernout-Meillet, Dict. étym. de la langue latine, Paris 1932) այդպիսի անսուտդ և անսովոր բառերը յիշուած են իրենց հերթին առանց խտրութեան. օր. էջ 863 scaua: ζυγός. Mot de gloss. sans ex., inexpliqué: Եւ այս դրողն է Meillet, գիտէշ և բծախնդիր գիտնական!

Պէտք չէ շփոթել Արմատական բառարանը դպրոցական բառգրքերի հետ։

Ե. բաժին.—Ստուգաբանութիւն. բառարանիս հիմնական և կարևոր մասն է. սկսում է = նշանով. մանրամասն դրում է արմատի ծագումը։

Ծագման կողմից բառերը երկու զլխաւոր խմբի են բաժանւում. բնիկ հայերէն բառեր և օտար փոխառութիւններ։ Բնիկ հայերէն են կոչւում այն բառերը, որոնք մեզ ժառանգութիւն են մնացած ուղղակի հնդեւրոպական նախալեզուից և կազմում են հայերէնի ամենահին տարերքը։ Որովհետև բուն հայ լեզուաբանութեան նպատակը այս խմբի բառերի ուսումնասիրութիւնն է, ուստի ես էլ այս մասը ըստ կարելւոյն ընդարձակ և երկար բռնեցի։ Նախ դրել եմ բառի հնդեւրոպական մայր ձևը (=հնխ.), յետոյ նրանից յառաջացած համապատասխան ձևերը զանազան քոյր լեզուների մէջ, որոնք մեր ցեղակիցներն են, կարգով՝ սկսեալ ամենից արևելեան լեզուներից յաջորդաբար մինչև արևմտեան լեզուները։ Լեզուաբանների համար աւելորդ էր անշուշտ մի առ մի յիշատակել նաև ծագման նորագոյն շրջանների վրայ գտնուող լեզուների ձևերը (ինչպէս՝ ֆրանսերէն, իտալերէն, անգլերէն, գերմաներէն, ռուսերէն, լեհերէն, քրդերէն, զաղայերէն, նոր պարսկերէնի բարբառներ են), սակայն ի նկատի ունենալով հայ ընթերցողների պահանջը, որոնք աւելի ծանօթ են նորագոյն լեզուներին, աւելորդ չհամարեցի սրանք էլ յիշատակել հին և մայր լեզուների կողքին։ Այսպէսով տաճկահայը պիտի գտնէ իրեն ծանօթ ֆրանսերէնը, կովկասահայը՝ ռուսերէն և գերմաներէն,

ամերիկահայը՝ անգլերէն ևն, և բոլորն էլ այս լեզուների միջոցով հայերէնը պիտի կապեն հնագոյն լեզուներին։ Ուշադրութիւն դարձրի յատկապէս իրանեան ճիւղի վրայ և նրան պատկանող լեզուների ձևերը մի առ մի յիշեցի, համեմատութեան միջոց տալու համար նրանց, որոնք հայերէնը դեռ արխական լեզու են ուզում համարել, և անուղղակի կերպով ցոյց տալու, թէ ի՛նչքան հեռու են արխական ձևերը մեր հայկական բնիկ բառերից։

Որևէ լեզուի բառերի քննութեան ժամանակ լեզուաբանները բաւականանում են համապատասխան ցեղակից ձևերը նշանակելով և նրանց փոխադարձ կապակցութիւնը որոշելով. այսպէս օր. հյ. տուն=յն.δόμος=լտ. domus ևն. նոյն իսկ շատ յաճախ կարիք չեն զգում երևան հանել նախալեզուական ձևը։ Իսկ նախալեզուական ձևի ծագումը կամ ստուգաբանութիւնը իրենց նպատակից դուրս է. դա պատկանում է ընդհանուր լեզուաբանութեան և հնդևրոպագէտ լեզուաբանին. այսպէս օր. թէ հնխ. dōm- «տուն» յառաջանում է dem- «շինել, կառուցանել» արմատից և թէ այս dem- արմատն էլ գալիս է dē- «կապել» պարզ արմատից։ Ես ամէն անգամ անհրաժեշտ համարեցի դնել նախալեզուական ձևը։ Հայագէտների համար աւելորդ և գործիս բուն կոչումից դուրս էր նաև հնդևրոպական մայր լեզուի բառերի ուսումնասիրութիւնը և նրանց ծագման քննութիւնը, որ պատկանում է ընդհանուր լեզուաբանութեան։ Սակայն մտածելով, որ Արմատական բառարանս պիտի գործածէն մեծ մասամբ ոչ-իսոր մասնագէտ հայ ընթերցողներ, միւս կողմից նկատելով, որ այս պէտքը լրացնող ուրիշ հայերէն աշխատութիւն չկայ և երբէք էլ ապասելի չէ որ լինի, ուստի աւելորդ չհամարեցի դնել նաև սրանք։ Այսպէսով ամէն մի բնիկ հայերէն բառի դէմ դրուած եղաւ նրա համապատասխան հնդևրոպական մայր ձևի համառօտ պատմութիւնը։

Այս բոլորի համար ի մէջ այլոց իբրև գլխաւոր աղբիւր գործածել եմ բոլոր հնդևրոպական մայր լեզուների լաւագոյն արմատական բառարանները, որոնք են՝ Walde, Boisacq, Berneker, Kluge, Horn, Trautmann, Walde-Pokorny, Ernout-Meillet. այս բոլորի ընդարձակ խորագիրը տե՛ս համառօտագրութեանց ցանկում։

Այս գրքերի համապատասխան էջերը կանոնաւոր կերպով յիշում եմ ամէն մի բառի քննութեան ժամանակ։ Վերջին երկու գործերը հրատարակուեցան գործիս տպագրութեան ընթացքում. օգտուեցի որքան կարելի էր, իսկ մնացեալը դնում եմ Յաւելուածի մէջ։

Ծառայ փոխառութիւնները մի քանի տեսակի են բաժանւում. կան փոխառութիւններ իրանեան հին ու նոր լեզուներից, ասուրերէնից (Ասորեստանի լեզուն), խալդերէնից (հին Հայաստանի բնիկների լեզուն), վրացերէնից, ասորերէնից, յունարէնից, երրայեցերէնից, արաբերէնից, լատիներէնից, հին ֆրանսերէնից և թուրք-թաթարական լեզուներից։ Իւրաքանչիւրը պէտք եղած ձևով բացատրուած է, սակայն երկար կանգ առնելով մանաւանդ իրանեան բառերի վրայ՝ վերև յիշուած պատճառներով։ Այստեղ էլ լեզուաբանը բաւականանում է փոխառեալ բառի դէմ դնելով մայր ձևը և աւելի այն կողմ գնալու կարիք չի զգում։ Այսպէս, բաւական է ասել, թէ կոկորդիլոս փոխառեալ է յն. κροκόδιλος բառից, իսկ թէ այս յունարէն բառն էլ ի՛նչ ծագում ունի (=κροκό-δριλος «քարերի որդ»), դա հայագէտի գործը չէ, այլ

յունագէտին։ Բայց ես, որպէսզի կասկած չմնայ թէ իրօք ո՛ր լեզուն որից է փոխ առել և որովհետև նոյնպիսի մայր ձևերը բացատրող ուրիշ բառարան չունինք մեր մէջ, կարևոր համարեցի տալ նաև փոխառու լեզուի բառի ստուգաբանութիւնը (արմատը կամ քերականական կազմութիւնը)։ Երբ փոխառութիւնը միջազգային է և մեզ հետ նաև ուրիշ լեզուներ էլ մասնակից են փոխառութեան, ասելորդ չհամարեցի թուել նաև սրանք։

Կան մարդիկ, որոնք որևիցէ օտարազգի բառ յիշած կամ վկայութեան կոչած ժամանակ՝ շատ անգամ կարևոր են համարում բառարանի էջը յիշել։ Ես այս բանը բոլորովին ասելորդ համարեցի. ամէն բառ ամէն կանոնաւոր բառարանի մէջ պիտի գտնուի։ Բացառութիւն համարեցի միայն հաղուագիւտ բառերը և սակաւածանօթ լեզուների ձևերը, որոնք իրենց տեղերով յիշել եմ՝ ասելի վստահութիւն ներշնչելու համար։ Կամուսի արաբերէն բառարանի էջերը միշտ նշանակել եմ, որովհետև այս բառարանի սիստեմը բոլորովին տարբեր լինելով, այնտեղ բառ գտնելը առանձին դիտութիւն և վարժութիւն է պահանջում։ Կովկասեան երեսունի չափ լեզուների բառերը քաղել եմ գլխաւորապէս Erckert-ի Die Sprachen der kaukasischen Stammes գործից, որի էջերը ամէն անգամ յիշել ասելորդ համարեցի։

Բնիկ և փոխառեալ բառերի այս երկու մեծ խմբերից յետոյ կան չորս ուրիշ խմբեր էլ, որոնք թէև համեմատաբար մեծ չեն, բայց պէտք ունին այստեղ բացատրուելու։ Սրանցից առաջինն է բնաձայն բառերի խումբը։ Բնաձայն ենք կոչում այն բառերը, որոնք նշանակում են ներքին հոգեկան մի աղաղակ կամ արտաքին նիւթական մի աղմուկ, և ձայնով էլ իրր թէ իրենց նշանակած նիւթի պատկերն են. ինչ. հնչել, ճռնչել, ղղնչել, բրչալ, հառաչել են։ Այսպիսի բնաձայն բառերով շատ ճոխ են թէ՛ մեր հին լեզուն, թէ՛ նոր աշխարհաբարը և թէ՛ գաւառական բարբառները։ Նախապէս կարծում էին, թէ այս բոլոր բառերը առանձին ու անկախ ձևեր են։ Հանդէս Ամսօրեայի մէջ (1899, էջ 202—5) առանձին մի ուսումնասիրութիւն եմ հրատարակել, ուր ցոյց եմ տուել թէ այս բոլորի մէջ կազմութեան մի ընդհանուր սկզբունք կայ և թէ նրանց բոլորի զուտ արմատներն են նախաձայն ն, ճ, շ, ր են։ Այս մեկնութեամբ բնաձայնները դառնում են միջարկութիւն կամ ձայնարկութիւն, որով այլևս իրրև առանձին արմատ իրաւունք չունին համեմատուելու այս կամ այն լեզուի հետ, իբր ցեղակից։

Երկրորդ խումբը կազմում են այն բառերը, որոնք կարող ենք մէկ բառով կոչել հայակերտ։ Սրանք կրկնութեամբ, ածականների յաւելումով կամ ձայնդարձներով կազմուած ձևեր են, որոնց թէև կազմութիւնը յայտնի է, բայց բուն արմատները մեկնուած չեն և այս կամ այն խմբի մէջ մտնելու համար դիտութեան անդրադարձ հետազօտութեանց են սպասում։ Այսպէս օր. դողդոջ, խծկել, կամակոր բառերը կազմուած են դող, խից, կոր արմատներից, սակայն այս վերջինները չունին իրենց մեկնութիւնը։ Եթէ մի օր ապացուցուի, որ խից արմատը կովկասեան փոխառութիւն է կամ կոր արմատը հնդեւրոպական ծագում ունի, բնականաբար սրանց հետ նաև խծկել փոխառութիւն և կամակոր բնիկ հայ պիտի համարուին։ Բայց մինչև այդ օրը սրանք և սրանց նմանները առկախ պիտի մնան։ Ճիշտ խօսելով այս կարգի բառերը արմատ չեն և ընթերցողների դիւրութեան համար դրուած են արմատների շարքը։

Երրորդ խումբը կազմում են անստոյգ բառերը, որոնք հայ մատենա-

գրութեան մէջ հազիւ երբեմն գործածուած ձևերն են։ Շատ անգամ սրանք անստոյգ են նշանակութեան կողմից. այսինքն չգիտենք, թէ ի՛նչ նշանակութեամբ են գործածուած. ուրիշ դէպքերում յայտնի չէ նրանց բուն ձևը, որովհետև զանազան ձեռագրեր զանազան ընթերցուածներով են աւանդում կամ աղբիւրն է անվստահելի։ Սրանք էլ պէտք ունին լաւագոյն ձեռագրերի յայտնութեան կամ անդրադոյն քննութեանց՝ պարզուելու և որոշուելու համար։

Ոմանց համար այսպիսի բառերի թուումը աւելորդ էր. «Թերևս աննպատակ նկատուի գիտական բառագրքիս մէջ անստոյգ բառերու կուտակումը» (Ակինեան)։ Բայց ճիշտ չէ այս հայեացքը։ Աննպատակ և վնասակար պիտի լինէր այդպիսի բառերի թուումը որևէ գործնական, դպրոցական կամ առձեռն բառարանի մէջ, որովհետև տեղիք պիտի տար սխալ ձևերի տարածմանն։ Ընդհակառակը այսպիսի գիտական գործի մէջ ճիշտ տեղն էր հաւաքելու նաև այդ կարգի բառերը, նրանց անստուգութիւնը երևան հանելու և եթէ կարելի էր՝ ստուգելու, ուղղելու կամ մերժելու։ Մնացեալը ճշտել ժամանակի գործն է։

Չորրորդ խումբը կազմում են այն սակաւաթիւ բառերը, որոնք թէև բառարաններում յիշուած են, բայց իսկապէս ուրիշ բան չեն, եթէ ոչ աղճատուած ձեռագրերի սխալ գրչութեանց կամ աուտ ենթադրութեան արդիւնք, որոնք նորագիւտ լաւագոյն ձեռագրերի ընթերցմամբ կամ բանասիրական քննութիւններով փոխուած կամ ջնջուած են։ Այս կարգի բառերը կոչում ենք աուտ կամ չինծու, ինչպէս են օր. ևաճակ «կացին», խորանգ «ղկռտոց», խորի «ընթերցող», փաճդուրակ «հիւան» են։

Այս վեց խմբից դուրս կայ նաև հայերէն բառերի շատ աւելի աւտար մի թիւ, որ մնում է առանց մեկնութեան կամ ո՛չ-վերջնական աւտագրանութեամբ։

Որպէսզի ընթերցողը մէկ անգամից տեսնէ, թէ իր փնտռած բառը ի՛նչ խմբի է պատկանում, արմատի սկիզբը (առաջին բաժնի մէջ) դրի պայմանական նշաններ, հետևեալ ձևով.

\+ ցոյց է տալիս բնիկ հայ բառերը.

* օտար փոխառեալ բառերը.

o բնաձայն բառերը.

— հայակերտ բառերը.

[ ] աուտ ու չինծու բառերը.

Անստոյգ բառերը յիշատակուած են յատկապէս. իսկ դեռ չմեկնուած բառերը մնում են առանց նշանի։

Աուտագրանական բաժնում իմ գլխաւոր և հիմնական առաջնորդս եղաւ Hübschmann, Armeischen Grammatik, Leipzig 1895—7, որ հայ լեզուաբանութեան հիմնաքարն է։ Այս աշխատութեան մեզ վերաբերեալ մասը ամբողջապէս ներմուծուած է իմ բառարանիս մէջ։ Եւ որպէսզի ամէն մի աուտագրանութիւն հեղինակաւոր վճռով հաստատուած լինի, աուտագրանութեան վերջում ամէն անգամ յիշում եմ թէ Հիւբշման ընդունե՛լ է այդ աուտագրանութիւնը իր գրքի այսինչ էջում։

1895—7 թուականներից յետոյ սակայն հրատարակուեցան նորանոր աուտագրանութիւններ՝ Meillet-ի, Lidén-ի, Pedersen-ի և այլ հայագէտների կողմից (նոյն իսկ Հիւբշման հրատարակեց նոր աուտագրանութիւններ)։ Սրան-

ցից ինչ որ գիտութեան համար ընդունելի է համարում՝ անց եմ կացրել բառարանիս մէջ, սակայն առանց կարողանալու հաստատել Հիւբշմանի ստորագրութեամբ։

«Անշուշտ ամէն ստուգաբանական մեկնութիւն, նոյն իսկ անոնք, որոնք ներկայացուած են ստոյգ, չեն անվիճելի», ասում է Ակինեան իր քննադատութեան մէջ (ՀԱ. 1930, 485)։ Կարծում եմ, որ այս խօսքերը պէտք է առնել հակառակ իմաստով։ Ստուգաբանութիւններ կան, որոնք թերևս ընդունելի և իրր ստոյգ պիտի համարուէին, բայց մոտենալով նրանց շատ մեծ զգուշութեամբ, յաճախ չեմ անցկացրել ուղիղ ստուգաբանութիւնների շարքը։ Դրանցից մի քանիսը աւելի յետոյ նորանոր ապացոյցներով հաստատելով՝ մտցրել եմ Յաւելուածի մէջ։

Հիւբշմանի մահից յետոյ հայ լեզուաբանութեան մեծագոյն հեղինակութիւնը եղաւ Meillet, լեզուաբանութեան ուսուցիչս, որ և այսօր ընդհանուր լեզուաբանութեան համաշխարհային հեղինակ է։ 35 տարիների թղթակցութեամբ բազմատեսակ ցուցումներ եմ ստացել իրանից, իր միջոցով ձշտել բազմաթիւ ստուգաբանութիւններ, ստացել իր հաւանութիւնը կամ մերժումը, որ և յաճախ յիշատակում եմ բառարանիս մէջ։

Այսքան զգուշաւորութիւնից յետոյ, կարծում եմ, որ իրր ուղիղ նշանակուած ստուգաբանութիւնները իրօք կարելի է ստոյգ համարել։

Գիտուններէ առաջարկած ստուգաբանութիւններից դուրս, ինքս էլ ունիմ բազմաթիւ ստուգաբանութիւններ, մի մասը արդէն հրատարակուած զանազան տեղեր, մի մասը անտիպ։ Այն ստուգաբանութիւնները, որոնք այժմ անձիշտ եմ համարում, զրուած են պատմականի շարքում, իսկ այն ստուգաբանութիւնները, որոնք ենթարկել եմ Հիւբշմանի և Մէյյէի հաւանութեան, և կամ քննութեան խիստ բովից անցկացնելով կարծում եմ թէ համապատասխան են գիտութեան պահանջներին, համարձակուել եմ դնել ուղիղ ստուգաբանութեանց շարքը, բայց նշանակելով միշտ Աճ. ստորագրութեամբ, առ ի զգուշութիւն ընթերցողների։ Այս ստուգաբանութիւնների թիւն է 1604 (մեծ թիւ, բայց դրանցից միայն 136-ը բնիկ հայ, իսկ մնացեալը փոխառեալ կամ բնաձայն լինելով, քանակը մեծապէս փոքրանում է)։

Ապագան ցոյց պիտի տայ, թէ սրանցից ո՛րքանն է ընդունելի։ Քննելի են յատկապէս այն ստուգաբանութիւններս, որոնք + կամ * նշանով չեն նշանակուած։

Գ. բաժին. — Ստուգաբանութեանց պատմութիւնը. բառարանիս այս բաժինը շատերի համար աւելորդ է։ Բայց որովհետև ես սկզբունք էի դրել Բ բաժնի մէջ առնել միայն գիտութեան կողմից վաւերացուած կամ վաւերանալի ստուգաբանութիւնները, բնականաբար պէտք էր մի բաժին էլ յատկացնել նրանց, որոնք դեռ անստոյգ և տատամսոտ են, բայց կարող են թերևս յետոյ մի նոր օրէնքի զօրութեամբ վաւերական դառնալ։ Միւս կողմից կարևոր համարեցի նշանակել իւրաքանչիւր ճիշտ ստուգաբանութեան հեղինակը։ Բայց շատ անգամ հեղինակն էլ մէկը չէր, այլ իրար յաջորդող և իրար լրացնող հեղինակների մի շարք։ Պէտք էր մի առ մի սրանք էլ յիշատակել։ Այս պարագաները ի նկատի առնելով՝ մտածեցի աւելի ընդարձակել ծրագիրը և տալ հայերէն ստուգաբանութեանց ամբողջական պատմութիւնը։

Որոշեցի ուրեմն ամփոփել բոլոր այն բառաքննական քննութիւնները, որոնք հնագոյն ժամանակներից սկսեալ մինչև այսօր տեղի են ունեցել հայ կամ օտար հեղինակների կողմից։ Այսպիսի մի աշխատութիւն կատարել է Lagarde, Armenische Studien, Göttingen 1877, բայց շատ աւելի կարճ մի տեսմանում, այն է Schröder-ից սկսած մինչև 1877, և այն էլ միայն եւրոպացի հայագէտները ի նկատի առնելով։

Իմ ծրագիրս աւելի մեծ էր. ես իմ շրջանակի մէջ առի՝

1. Այն բոլոր տուգաբանութիւնները և բառական քննութիւնները, որոնք մեր հին մատենագիրներ ը՝ սկսեալ 5 դարից, առիթ են ունեցել յիշելու իրենց մատենագրութեանց մէջ։ Այս մատենագիրներից յիշելու արժանի են Եղնիկ, Խորով Անձևացի, Ներսէս Լամբրոնացի, Գր. Տաթևացի, Վարդան, Գր. Մագիստրոս և հին քերականների մի խումբ։ Տարակոյս չկայ, որ այս տուգաբանութեանց մեծագոյն մասը սուտ ու սխալ բաներ են, և ամենաչնչին մասը միայն գիտական հշմարտութիւն ունի։ Բայց հայ լեզուաբանութեան պատմութեան համար առանձին հետաքրքրութիւն ունի հին հայ գիտունների հայեացքը հայ լեզուի կազմութեան մասին. և այս տեսակէտով այս կարգի տուգաբանութեանց հաւաքումը կարող է օգտակար լինել։ Ապագային է մնում դասաւորել ու ամփոփել դրանք, և կարելի եզրակացութիւնները դուրս բերել։

2. Այն բոլոր տուգաբանութիւնները, որ հայագիտութեան հնագոյն ներկայացուցիչները՝ սկսեալ ԺԸ դարից մինչև Նոր Հայկազեան բառարանի հրատարակութիւնը, տուել են իրենց զանազան աշխատութեանց մէջ։ Այս կարգին են պատկանում Schröder (1711), Յակոբ Վիլլոտ (1714), Վիսթոնեանք (1736), Մխիթար Աբբա (1769), Հ. Մկ. Աւգերեան (1816), Հ. Յ. Աւգերեան (1821), Գէորգ Դպիր (1826), Ինճիճեան, Նոր Հայկազեան բառարան են։ Սրանց մէջ առանձնապէս յիշատակութեան արժանի են Գէորգ Դպիր (=ԳԴ) և ՆՀԲ։ Առաջինը տուած է հազարի չափ հայ և պարսիկ բառերի ուղիղ համեմատութիւններ. երկրորդը ցոյց տուած է նոյնպէս հազարաւոր հայ փոխառութիւններ իրանեան, արաբ, եբրայեցի, յոյն և լատին լեզուներից։ Այս տուգաբանութիւնները այնուհետև դարձան ամէն հայագէտի սեփականութիւն. Lagarde իր աշխատութեան մէջ աւելորդ է համարում յիշատակել սրանք, որով հարիւրաւոր բառերի տուգաբանութեան հեղինակի իրաւունքը իրեն կամ ուրիշ եւրոպացի հայագէտների է անցած։ Ես չեմ ուզեցել այդպէս անարդար լինել և առանձին խնամքով բոլոր հին հեղինակների կատարած գործը մի առ մի յիշատակել եմ։

3. ՆՀԲ-ի հրատարակութիւնից անմիջապէս յետոյ սկսում է եւրոպացի հայագէտների անընդհատ շարքը. Petermann, Windischmann, Gosche, Böttticher կամ Lagarde, Müller և ուրիշները՝ հնդեւրոպական լեզուաբանութեան սկզբունքների վրայ հիմնուած տալիս են հարիւրաւոր հայ բառերի նոր տուգաբանութիւններ։ Սրանց լիակատար ցանկը ունի Lagarde իր վերոյիշեալ աշխատութեան մէջ. նոյնը ամբողջութեամբ պիտի գտնէ ընթերցողը նաև ներկայ աշխատութեան մէջ։

Բայց այստեղ կայ մի փոքրիկ տարբերութիւն իմ և Lagarde-ի միջև։ Ամէն մէկ տուգաբանութեան դէմ՝ Lagarde յիշում է ո՛չ միայն նրա առաջին հեղինակը, այլ նաև բոլոր այն հեղինակները, որ այդ բառը յիշատակած են,

նրանց բոլոր գործերի անունները, ամէն մէկ էջը մի առ մի՝ տողերով հանդերձ։ Այսպէս, հայր բառի դէմ յիշում է Petermann, Grammatica ling. arm. էջ 26՝ տող 22, էջ 33՝ տող 13, էջ 153՝ տող 22, Windischmann, Die Grundlage der arm. էջ 22՝ տող 26, էջ 25՝ տող 17, Gosche, De ariana ling. էջ 14, Böttticher, Horae aramaicae, էջ 36՝ տող 67, Vergleichung der arm. Consonanten, ZDMG 1850, էջ 357՝ տող 142, Arica, էջ 64՝ տող 37, Lagarde, Zur Urgeschichte der Armenier, էջ 121՝ տող 856, Spiegel, Huzw. 191, Müller, SWAW հա. 35, էջ 194, 198; հա. 38, էջ 583, 585, 589, 590; հա. 44, էջ 552, 556, 560; հա. 64, էջ 453; Pictet, Orig. ind. հա. 2, էջ 348, Müller, Kuhns und Schleichers Beiträgen, հա. 2, էջ 490; հա. 3, էջ 90, 91; Spiegel, BVS, հա. 5, էջ 369, Lagarde, Gesammelte Abhandlungen, էջ 9, տող 18, Patkanoff, Recherches sur la formation de la langue arm. JAP 1870, հա. 2, էջ 165, Ascoli—Schweizer ZVS հա. 17, էջ 136 և 141; Hübschmann KZ հա. 23, էջ 19, 33, 35, 406։—Եւ այսպէս ամէն բառի դիմաց։ Ըստ իս այսպիսի մանրամասն և ամբողջական յիշատակութիւն անտեղի և աւելորդ էր։ Ես բաւականացայ միայն յիշելով առաջին հեղինակների անունը և ա՛յն տեղը, ուր առաջին անգամ երևացել է ստուգաբանութիւնը։ Այսպէս, հայր բառի համար ամբողջ վերի յիշատակութեանց փոխարէն դրի միայն «Ուղիղ մեկնութիւնը ունի նախ Peterm. 28, 33, 153 և յետոյ Windisch. 22, 25, Gosche 14, Böttich. Horae aram. 36, 67 եւն։ Տողերը, միևնոյն հեղինակի երկրորդ, երրորդ են երկերի յիշատակութիւնը իսպառ յապաւուած են։ Այս պարագային ինքնին հասկանալի է որ բոլորովին աւելորդ էր յիշել նաև այն յետին հեղինակներին, որոնք իրենց նախորդների տուած մեկնութիւնները կրկնում են շարունակ՝ իրենց զանազան լեզուաբանական քննութեանց մէջ։

4. Հիւբշման 1875 թուին հրատարակեց իր դարագլուխ կազմող յօդուածը՝ Über die Stellung des Armenischen im Kreise der indogerm. Sprachen (KZ թերթում, հա. 23, էջ 5—42)։ Այս յօդուածով հայ լեզուաբանութիւնը մտնում էր մի նոր շրջան. հայերէնը՝ որ մինչև այն ժամանակ կարծում էր արիական լեզու, այնուհետև դառնում էր անկախ մի ճիւղ՝ հնդևրոպական լեզուախմբի մէջ։ Հայերէն բառերի մէջ բացւում էր մի մեծ խաիր. զանազանւում էին բնիկ հայերէն բառեր և փոխառեալ արիական բառեր, որոնց համար առանձին ձայնական հիշատ օրէնքներ էին որոշում։ Պէտք էր վերաքննել ամբողջ նախկին գիտունների աշխատանքը։ Հիւբշման այս գործը կատարեց նախ մասամբ իր վերոյիշեալ յօդուածում, յետոյ աւելի կանոնաւոր Armenische Studien աշխատութեան մէջ (Leipzig 1883)։ Սկրուտեցաւ կռիւը նախկին գիտունների և Հիւբշմանի միջև. Lagarde և Müller (թէև իրար մէջ անհամաձայն) հին գիտութեան աւերակներին պաշտպան մնացին. իսկ նոր երիտասարդ ուժերը Հիւբշմանի դպրոցին յարեցան։ Կռիւը վերջացաւ հների պարտութեամբ. և այսօր գիտութեան մէջ ընդունուած է միայն Հիւբշմանի դպրոցը։ Ոչ Հիւբշմանի դպրոցին աշակերտ չէ, նա գիտութեան գաւակ չէ։ Վերջապէս Հիւբշման ինքը ամփոփեց իր և իր հետեւորդների նոր աշխատութեանց արդիւնքը՝ Armenische Grammatik անուն գործի մէջ (Leipzig 1895—7), որ, ինչպէս ասացի, հայ լեզուաբանութեան պատուանդանն է։

Այն նոր հայագէտների մէջ, որ Հիւբշմանի հետ և նրանից յետոյ գործեցին ու գործում են, յիշատակութեան արժանի են մասնաւորապէս Bugge, Meillet, Pedersen, Lidén, Scheftelowitz, Patrubány, Petersson. Չեմ յիշում նուազ կարևորները։ Սրանց բոլորի գործերը, որոնք հրատարակուած են եղել մինչև գործիս տպագրութիւնը՝ առանձին գրքերով կամ զանազան հանդէսներում, ամփոփած, նրանց տուած հազարաւոր ստուգաբանութիւնները (բոլորը անխտիր) ժամանակագրական կարգով դասաւորած՝ յիշատակել եմ։

Ստուգաբանութեանց այսպիսի մի ամփոփում առաջին անգամն է, որ լոյս է տեսնում։

5. Եւրոպացի հայագէտներից դուրս՝ կան նաև բազմաթիւ հայ գրողներ, որոնք զբաղուած են հայ լեզուաբանութեամբ և սկսած Ազդարարից մինչև այսօր՝ լցրել են ամբողջ հայ մատենագրութիւնը իրենց գրքերով և զանազան յօդուածներով։ Սրանց միջից մի-երկուսը միայն գիտուն անուան արժանի են, ինչպէս Պատկանեան, Տէրվիշեան, Այտնեան. միւսները հնագոյն պատուելիական դպրոցի խեղճ ու կրակ ներկայացուցիչներ, լեզուաբանութեան տարրական կանոններին անգիտակ, արտադրել են անհամ ձաբրտուքներ։ Այս կարգին են պատկանում Հիւնքեարպէչէնտեան (իր հռչակաւոր Ստուգաբանական բառարանով, այլանդակութեան գլուխ գործոցն է), Մ. Մաներեան, Ս. Կուրտիկեան, Դ. Սարգիսեան, Յ. Վ. Յակոբեան, Դ. Խաչունց և ուրիշ շատ շատերը, մինչև նորագոյն «գիտուններըն»։

Թէև այս հեղինակների առաջարկած ստուգաբանութիւնները գիտական արժէքից դուրկ, բայց ես ամբողջութեան համար պարտք եմ համարել կատարեալ խղճմտութեամբ թերթել բոլոր ուսումնասիրութիւնները, աչքից անցկացնել բովանդակ հայ լրագրութիւնը՝ սկզբից մինչև այժմ և առաջարկուած բոլոր ստուգաբանութիւնները անխտիր հաւաքել այստեղ, առանց ուշադրութիւն դարձնելու նրանց անգիտականութեան վրայ։ Ամբողջական ուսումնասիրութիւններ և առանձին գրքեր բառաքաղել դիւրին էր. բայց լրագրութի՞ւնը...։

Այս գործը արդարև շատ ծանր էր և նրանք միայն պիտի կարողանան ղգալ գործի ծանրութիւնը, որոնք երբ և իցէ առիթ ունեցել են հայ լրագրութիւնը թերթելու։ Աշխարհիս ո՛չ մի անկիւնում չկայ հայ լրագրութեան ամբողջական մի հաւաքածոյ։ Վիեննայի Մխիթարեանց գրադարանը, որ իր լրութեամբ ամենապատուաւոր տեղն է բռնում և 40 տարուց ի վեր յատուկ ջանք է գործ դնում իր հաւաքածոն լրացնելու, բազմաթիւ պակասներ ունի։ Ալդարարը աշխարհում 3 օրինակ միայն կայ։ Տաճկաստանում Սահմանադրութեան հռչակմամբ ամէն մի քաղաք իր թերթը կամ թերթերը ունեցաւ, յաճախ խմորատիպ։ Արտասահմանի հեռաւոր անկիւններում բազմաթիւ թերթեր հրատարակուեցան, յաճախ քաղաքական, որոնց մուտքը ցարական իշխանութեան ժամանակ արգիլուած էր խստիւ 1914 թուից սկսած՝ յարաբերութեանց պակասումը արտասահմանի հետ և այլ նման պատճառներ չթողեցին, որ այս կէտում ցանկալի կատարելութեան հասնէի։ Անկարելի եղաւ ամբողջ նիւթը սպառել. բայց այնու ամենայնիւ իմ բազմաթիւ ճամբորդութիւններս երկրից երկիր ու քաղաքից քաղաք, յատուկ հետամտութիւնս թերթերի հաւաքածոներ պրպտելու որտեղ և ում մօտ էլ որ լինի, միջոց տուին ինձ անթիւ քանակութեամբ թերթեր տեսնելու և նիւթ քաղելու։ Մնացեալը հաւաքել ապագայի գործ է։ Օգտագործած գրքերիս և

յօդուածներիս լիակատար ցուցակը այնքան մեծ է (3800 անուն), որ անյարմար համարեցի կցել բառարանիս. կազմում է առանձին գիրք (Հայ լեզուաբանական Մատենագիտութիւն), որ պատրաստ է արդէն և տպագրութեան լոյսին է սպասում։

Մի քանի աշխատութիւն միայն՝ հակառակ լիակատար լինելու փափագիս, անհնար եղաւ գործածել։ Այսպէս են օր. 1) Ջրպետի (Cirbied) Քերականութիւնը (Paris 1823).—2) Ellis, The armenian origin of the Etruscans, (London 1841).—3) Ա. Բ. «Աստուած, հայ և Արմենիա բառերուն ստուգաբանութիւնը» (Պօլիս 1913)։ Այս աշխատութիւնները այնքան անգիտակ մեթոդով կազմուած գործեր են, որ քննադատութեան սահմաններից էլ ա՛յն կողմ են անցնում։ Օրինակ՝ Ջրպետը միևնոյն ար արմատից է հանում այր, հայր, մայր, հոյր, որձ, որդ, մարդ, մարտ, արբ, արգ, յարգ, արմ, զարմ. մարմին, բարմ, արեւ, յար, բար, բարբ, չար, արփ (էջ 98).— արգանդ մեկնում է անդ, արտ յարգելի.— մոլար՝ մոլի այր (էջ 101).—դժոխ՝ դաժան ոխ.—տիտան՝ մեծն(տի) տան.—դեսպան՝ դրսի պահապան (էջ 687)։ Եւ այսպիսի հարիւրաւոր բառեր։

Սրա նման է Ellis, որ հայերէն բառերը այլ ընդ այլոյ համեմատում է հորուակերէն զանազան կասկածելի բառերի հետ։ Սրա նման է Սանտալճեան, Les inscriptions cunéiformes Urartiques (Վենետիկ 1901), որ հայերէն բառերը խալդերէնի հետ է նոյնացնում։ Նաև նման աւելի նոր աշխատութիւններ հայ-խալդական համեմատութեանց։

Աւելորդ եմ համարում խօսիլ Ա. Բ.-ի նրախօսական աշխատութեան մասին։

Դարձեալ պէտք է շեշտեմ, որ աշխատութեանս սոյն երրորդ բաժինը ընդհանրապէս ճշմարիտ գիտական արժէքից զուրկ, լեզուաբանների համար անպէտք ու աւելորդ է։ Սրա համար էլ դրուած է նեղ սիւնակով, ծանօթութեան նման, որով երկիւղ չկայ, որ սխալը իրրև ուղիղ անցնի։ Սակայն նա պատմական նշանակութիւն ունի։ Նա կարևոր և շատ կարևոր է նրանց համար, որոնք հայ լեզուի ստուգաբանութեանց պատմութեամբ են զբաղւում, և իրրև մի շտեմարան՝ իր մէջ է պարունակում հայ բառերի վրայ արտրուած բոլոր ստուգաբանութիւնները։ Նա մեր կեանքի համար էլ շատ գործնական նշանակութիւն ունի։ Մեր տնաբոյս «լեզուաբան»-ներից շատերը յաճախ նոր նոր ստուգաբանութիւններ են մտորում։ Մտորումը դեռ յանցանք չէ. ոմանք նոյն իսկ համարձակւում են այդ բանները հրատարակութեան տալ! և նոյն իսկ շատ լուրջ թերթերում (տե՛ս Հանդէս Ամսօրեայ)։ Ստուգաբանութեանց պատմութիւնը յաճախ ցոյց պիտի տայ, թէ իրենց թարթափումները ուրիշների կողմից էլ են տեղի ունեցած, կամ հրատարակուած են և յետոյ լռութեան դատապարտուած, և կամ թէ արդէն ուղիղ ստուգաբանութիւնը կայ։ Եւ այս բանը անշուշտ զգուշացուցիչ միջոց պիտի լինի նրանց համար՝ հրաժարուելու սխալ ու անօգուտ մտածութիւններից։ Այս խօսքս մասամբ նաև եւրոպացի հայագէտների համար է։

Ստուգաբանութեանց պատմութեան առթիւ մի քանի ցուցումներ կարևոր եմ համարում։— Ստուգաբանութիւնները շարուած են իրենց հրատարակութեան ժամանակագրական կարգով և ո՛չ թէ հեղինակների գասաւորութեամբ։ Ուստի և միևնոյն հեղինակի զանազան գործերը և զանազան յօդուածները անհրաժեշտաբար իրար չեն յաջորդում։ Առանձին հոգ եմ տա-

րել յիշելու իւրաքանչիւր ուղիղ մեկնութեան հեղինակը։ Ուղիղ մեկնութիւն եմ կոչում գիտականօրէն ճիշտ կամ ընդունելի այն ստուգաբանութիւնը, որ յիշուած է լինում երկրորդ բաժնում. և երբ ժամանակագրական կարգը հասնում է այն հեղինակին, որ առաջին անգամ տուել է այդ մեկնութիւնը և յետոյ ուրիշ գիտուններ ընդունել կամ նուիրագործել են, կարճ խօսքով ասում եմ «Ուղիղ մեկնութիւնը տուաւ այսինչը», առանց մանրամասն յիշելու համեմատեալ բառերը, որովհետև արդէն ընդարձակօրէն յիշուած են Բ բաժնում։ Բայց այստեղ «ուղիղ մեկնութիւն» բառերը պէտք է առնել ո՛չ թէ բացարձակ, այլ յարաբերական մտքով։ Ուղիղ մեկնութիւնը Հիւբշմանից է սկսւում։ Երբ 1826 թուին Գէորգ Դպիր հյ. պատկեր բառը համեմատում է պրս. փէյքէր ձևի հետ, ուղիղ համեմատութիւն է տալիս արդարև, բայց ո՛չ այն մտքով, ինչ որ ընդունուած է այժմ լեզուաբանութեան մէջ։ Գէորգ Դպիր չգիտէր ո՛չ այն՝ թէ ի՛նչպէս է կազմուած բառը (իրանեան pati—մասնիկով՝ kar—արմատից) և ո՛չ էլ ա՛յն՝ թէ այս բառը հայերը պարթեւական շրջանին փոխ են առել տիրող լեզուից։ Այս բանները շատ յետոյ են յայտնուած. փոխառութեանց և բնիկ բառերի խնդիրը Հիւբշմանն է լուծել։ Նոյնը պէտք է հասկանալ նաև ՆՀՒ-ի, Petermann-ի, Lagarde-ի, Müller-ի և սրիշ շատ շատերի ստուգաբանութեանց համար անխտիր։ Սխալ ստուգաբանութիւնները առհասարակ չեմ քննադատած։ Ինքնին հասկանալի է արդէն, որ նրանք սխալ են, քանի որ չեն անցած երկրորդ բաժնի մէջ։ Քննադատել եմ միայն այն ստուգաբանութիւնները, որոնք ճշմարիտ լինելու երևոյթն ունին և կարող են խաբել անուշադիր ընթերցողներին։

Ստուգաբանութեանց պատմութեան, երբեմն նաև ուղիղ ստուգաբանութեանց համար օգտուած եմ նաև անտիպ գործերից։ Թարագաշեանի, Ա. Խաչատրեանի, Մէյյէի, Հիւբշմանի և ուրիշների հետ ունեցած անձնական ծանօթութիւնս և թղթակցութիւններս շատ արդիւնք են տուած ինձ։ Յատկապէս, ինչպէս վերը յիշեցի, իմ ուսուցիչ Մէյյէի հետ ունեցած թղթակցութիւնս 1898 թուից սկսեալ մինչև այժմ անընդհատ, շատ արդիւնաւէտ է եղած։ Այս բոլոր պարագաների մէջ ազբիւրը յիշատակելու համար փակագծի մէջ դնում եմ «անձնականս», այսինքն անձնական ծանօթութեամբ իմացուած և ո՛չ թէ գրքերից քաղուած։ Ամէնից յետոյ կարևոր եմ համարած յիշել ա՛յն բառերը, որոնք զանազան լեզուների, մինչև չինարէնի և ճապոներէնի մէջ, պատահաբար նմանութիւն ունին հայերէնի հետ և իրապէս ոչինչ են։ Այս էլ ի զգուշութիւն մոլորամիտ «լեզուաքննիչ»-ների։

Դ. բաժին.— Գաւառական ձևեր. բառարանիս իւրայատուկ մասերից մէկն է այս բաժինը, որ սկսւում է Գ-ից. համառօտագրութեամբ։ Այս բաժնում դասաւորել եմ իւրաքանչիւր արմատի ստացած ձևերը մեր զանազան գաւառական բարբառներում։

Գաւառական բարբառները, որոնց թիւը իմ Բարբառագիտութեան մէջ 31 եմ դրած (այժմ աւելի), մեծաւ մասամբ չեն քննուած։ Ճշմարիտ է որ կան հարիւրաւոր բնագիրներ զանազան գրքերի և թերթերի մէջ՝ գրեթէ ամէն բարբառով էլ, բայց սրանք առհասարակ զուրկ են գիտական արժանիքից (յատկապէս տառադարձութեան անհարազատութեան պատճառով) և գրուած են գրաբար հայերէնի ուղղագրութեամբ։ Այս պարագային աւելորդ բան էր ինձ համար՝ օգտուիլ այդ բոլոր գրուածքներից կամ նրանց վրայ հիմնուած ենթադրութիւններ անել։ Պէտք էր դիմել սեփական աշխատու-

բեան։ Ճամբորդելով քաղաքից քաղաք (Նոր Ջուղայից մինչև Ռոտոսթօ)՝ կա՛մ տեղի վրայ և կա՛մ տեղացի գիտակ անձերի աջակցութեամբ կազմեցի 30 գաւառականի (բարբառ և ենթաբարբառ) ամբողջ բառացանկը, որ ներմուծել եմ այստեղ։

Այդ գաւառականներն են՝

Ա. Ում ճիւղ

Երև.=Երևանի բարբառ. վերցրել եմ Քանաքեռ գիւղի խօսուածքը՝ տեղի վրայ. բառացանկս կազմել եմ աջակցութեամբ գիւղի երկու ամենահին ծերունիների, որոնք են՝ Պապան բիձա Արարատեան (ծն. 1840 թ. հայրն ու պապն էլ բնիկ Քանաքեռցի) և Յակոբ Ղազարեան (ծն. 1850 թ.). ամբողջ աշխատանքի ժամանակ գործակցում և հետևում էին ինձ նաև մեր համալսարանի Պատմա-լեզուաբանական բաժնի երեք ուսանող, բնիկ Քանաքեռցի՝ + Բաղդասար Գէորգեան, Եղիշէ Գասպարեան և Սամուէլ Սաղաթէլեան (երեքն էլ հայերէնի ուսուցիչ)։

Տփ.=Տփղիսի բարբառ. այս բարբառի բառերը դուրս եմ բերել Ախվէրդեանի, Սունդուկեանի և Գ. Տէր-Աղէքսանդրեանի գործերից, որոնք ըստ կարելւոյն գիտական ճշտութեամբ են։ Ամբողջը սակայն վերաքննել և ուղղել է մեր համալսարանի դասախօսներից Գէորգ Ասատուր, բնիկ Թիֆլիսեցի (ծն. 1868)։ Իր աջակցութեամբ է նաև որ հայագէտ Томсонъ կազմել է Թիֆլիսի հայերէն բարբառի ուսումնասիրութիւնը (այն ժամանակ Գէորգ Ասատուրեան)։

Ղրբ.=Ղարաբաղի բարբառ. կազմել եմ 1899 թուին էջմիածնում՝ Նաջի սրկ. Մահտեսի-Բաբայեանի աջակցութեամբ (Վարանդայի Գիշի գիւղից)։ Օգնել է նաև Ճեմարանի ուսանող (այժմ ուսուցիչ Նոր-Նախիջևանում) Աւետիս Տէր-Յարութիւնեան (Թաղոտ գիւղից)։ Ամբողջը ստուգել և լրացրել եմ տեղի վրայ՝ երկու տարի իբրև ուսուցիչ թեմական դպրանոցի մնալով Շուշում և մի քանի տարի շարունակ ամառները անցկացնելով այդ տեղ։ Մեծապէս օգտուել եմ կնոջս՝ + Արուսեակ Աճառեանի ցուցմունքներից, որ բնիկ Շուշեցի էր։

Գոր.=Գորիսի (Զանգեզուր) ենթաբարբառ, որի բոլոր ձևերը հայթայթել է ինձ Տէր-Դաւթեան Զաքարիա, 1899 թուին, Ճեմարանի բարձր խմբի ուսանողներից։

Շմ.=Շամախիի բարբառ. ուսումնասիրել եմ Նոր-Նախիջևանում 1911—1916 թուերին՝ թատերագիր Ալ. Աբէլեանի հետ, որ բնիկ Շամախեցի է և շատ լաւ ծանօթ իր մայրենի բարբառին, որով գրում էլ է։

Ջղ.=Նոր-Ջուղայի բարբառ. բառարանը կազմեցի Նոր-Ջուղայում (Սպահան) 1919 թուին, աջակցութեամբ բնիկ Նոր-Ջուղայեցի, Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանից շրջանաւարտ և Նոր-Ջուղայի հայոց դպրոցների հայերէնի և անգլերէնի ուսուցիչ՝ Յովհաննէս Տէր-Գրիգորեանի։ Ամբողջ բառացանկը վերաքննեց ու լրացրեց Տիգրան Աբգարեանց, բնիկ Նոր-Ջուղայեցի, վաղեմի ուսուցիչ հայոց լեզուի և հայոց պատմութեան, որ նոյնպէս կազմած ունի Նոր-Ջուղայի հայոց բարբառի ուսումնասիրութիւնը և բառարանը։

Ագլ.=Ագուլիսի բարբառ. ուսումնասիրել եմ նախ 1899—1900 թուերին էջմիածնում, բնիկ Ագուլեցի ուսուցիչ Մարտիրոս Հախնազարեանի հետ։

երկրորդ անգամ Թաւրիզում՝ 1921 թուին, Ներքին-Ագուլեցի բժիշկ Արիստակէս Զարգարեանցի հետ, որ յայտնի է Ագուլիսի բարբառի իր մեծ հմտութեամբ։

Բ. Կր ճիւղ

Կր.=Կարնոյ բարբառ. ուսումնասիրել եմ Թաւրիզում՝ 1905 թուին, բնիկ Կարնեցի ուսուցիչ Գէորգ Չիլինգիրեանի հետ։

Ախց.=Ախալցխայի ճիւղը՝ Կարնոյ բարբառի. ամբողջ բառացանկը կազմել եմ բառարանիս տպագրութեան հետ զուգընթաց՝ 1926—32 թուերին, Երևանում, աջակցութեամբ մեր համալսարանի դասախօս ինժեներ Արսէն Մանանդեանի (ծն. 1879 թ.) և իւր մօր Տիկին Աննա Մանանդեանի (ծն. 1854 թ.). երկուսն էլ բնիկ Ախալցխացի. ընտանեկան խօսակցութեան մէջ մայրենի բարբառը մինչև այժմ պահում են հարազատութեամբ։

Մշ.=Մշոյ բարբառ. բառացանկիս ա, բ, գ տառերը պատրաստել եմ Պարիզում՝ 1897—8 թուերին, աջակցութեամբ Տիգրան Դիմաքսեանի (Մշոյ Կառնէն գիւղից, նախկին աշակերտ Պօլսի Կեդրոնական Վարժարանի, բարբառը պահում էր հարազատութեամբ)։ Մնացեալը պատրաստեցի Երևանում՝ 1927 թուին, աջակցութեամբ Մուշ քաղաքացի հայկաբան ուսուցիչ Նազարէթ Մարտիրոսեանի, որ մինչև 35 տարեկան հասակը եղել է Մուշում և 1915 թուին գաղթել է Կովկաս։ Պօլիս չէ պանդխտած։ Հեղինակ է «Տարօնի բանահիւսութեան» և «Մշոյ բարբառի բառարանի»։

Ալշ.=Ալաշկերտի ենթաբարբառ. բառացանկիս ա, բ, գ տառերը գրի եմ առել էջմիածնում 1899 թուին՝ աջակցութեամբ գրաշար Գարեգինի, որ կարծեմ Խաստուր գիւղից էր և գիտական տառադարձութեան մեթոդին տեղեակ։ Մնացեալը պատրաստել եմ 1928 թուին Երևանում, աջակցութեամբ Յակոբ Յարութիւնեանի, Խաստուր գիւղից, ծն. 1889 թ. աւարտել է էջմիածնի Ճեմարանը և Գերմանական համալսարանի փիլիսոփայական բաժինը. դասախօս մեր համալսարանում։

Վն.=Վանայ բարբառ. պատրաստել եմ էջմիածնում 1898—1902 թուերին, Ճեմարանի բարձր լսարանների վանեցի ուսանողների աջակցութեամբ։ Սրանցից առանձնապէս յիշատակելի են Համազասպ Բաղէշցեան և Գալուստ Խաչէնդէրեան։ Ճեմարանը աւարտելուց յետոյ՝ վերջինը Թաւրիզում մեծապէս աջակցել է ինձ պատրաստելու համար Վանայ բարբառի քերականութիւնը։

Ոզմ.=Ոզմիի ենթաբարբառ. ուսումնասիրել եմ էջմիածնում 1899 թուին, Ոզմեցի մի նորեկ գաղթականի վրայ, որ բացի իր մայրենի բարբառից ուրիշ լեզու չգիտէր։ Դժբախտաբար բառարանս հասաւ մինչև ևաւակատիք բառը և այնուհետև Ոզմեցիս անհետացաւ։

Մկ.=Մոկաց ենթաբարբառ. բառացանկս կազմել եմ Երևանում 1926 թ. աջակցութեամբ Համբարձում Գալստեանի, Մոկսի Դաշտ թաղից (քաղաքից միայն $^1/_2$ kil. հեռու), ծն. 1890 թուին, աւարտած մեր համալսարանի Պատմա-լեզուագրական բաժինը, այժմ դասախօս բանֆակում։—Մոկս եղած ժամանակ օգնել է նաև Օրբելիին՝ կազմելու ենթաբարբառիս ուսումնասիրութիւնը։

Տիգ.=Տիգրանակերտի բարբառ. ուսումնասիրել եմ Պօլսում՝ 1910

թուին, նորեկ երկու Տիգրանակերտցիների հետ (մին ուսուցիչ և միւսը բժշկական ուսանող). երկուսի էլ խօսակցական լեզուն Տիգրանակերտի բարբառն էր. գրական լեզուին քիչ էին ծանօթ։

Խրբ.=Խարբերդի բարբառ. ուսումնասիրել եմ էջմիածնում, 1900 թուին, Խարբերդցի բժիշկ Անդրանիկ Յակոբեանի աջակցութեամբ։

Համշ.=Համշէնի բարբառ. ուսումնասիրել եմ 1910 թուին Տրապիզոնում՝ Մալացի, Ապկիոնցի, Կիւշանացի և Ճօշարացի բազմաթիւ գիւղացիների և ուսուցիչների աջակցութեամբ։

Զթ.=Զէյթունի ենթաբարբառ. ուսումնասիրել եմ Պօլսում, 1910 թուին՝ Ազգային Կեդրոնական Վարժարանի բարձրագոյն դասարանի աշակերտներ՝ Օննիկ Մահտեսեանի և իշխանորդի Յ. Նաղուպեանի աջակցութեամբ. երկուսն էլ բնիկ Զէյթունցի. առաջինը Պօզպայիր կամ Շորվայեան թաղից, երկրորդը Ղարղըլար կամ Նաղուպեան թաղից։ Այս երկու թաղերը ներկայացնում են երկու տարբեր տիպ. ըստ այսմ մէջ բերած ձևերս էլ սովորաբար կրկին են. առաջինը Շորվայեան թաղի տիպն է, երկրորդը Նաղուպեան թաղի։ Գլխաւոր զանազանութիւնը r=յ և o=n ձայնափոխութեանց մէջ է։ Երբ գրուած է միայն մէ՛կ ձև, ուրեմն այդ ձևը ընդհանուր է երկու տիպերին։ Իսկ երբ միևնոյն թաղը երկու տարբեր ձև ունի, այդ ձևերը միացրել եմ կամ շաղկապով։

Հճ.=Հաճինի ենթաբարբառ. ուսումնասիրել եմ Երևանում, 1924 թուին, համալսարանի Պատմա-գրական բաժնի 3-րդ կուրսի ուսանող՝ Հաճնցի Արամ Գնդունիի (Թուիչեան) հետ, աշխատակցութեամբ նաև իր քրոջ՝ Թագուհի Գնդունիի։

Սվեդ.=Սուեդիայի բարբառ (Ասորիք). ուսումնասիրել եմ Երևանում, Սվեդիայից նոր եկած Մասիս Փանոսեանի հետ (գրաշար Պետհրատում, յետոյ վարիչ Ղարաբիլիսայի տպարանի և այժմ ուսանող), որ իր մայրենի բարբառը շատ լաւ գիտէր։ Դժբախտաբար մեր բառացանկը սկսում է միայն կ տառից։ Նախորդ Ա—Ծ տառերի բառերը դնում եմ Յաւելուածիս վերջի մասում։

Ակն.=Ակնայ բարբառ, այս բարբառով դրուած բոլոր բառերը քաղել եմ Մ. Մաքսուդեանի Le parler arménien d'Akn (Paris 1912) *անուն աշխատութիւնից, ուր գաւառական ձևերը եւրոպական գիտական տառադարձութեամբ գրուած լինելով՝ պէտք է ներկայացնէին հարազատ հնչումը։*

Սեբ.=Սեբաստիոյ բարբառ. պատրաստել եմ Երևանի մէջ՝ 1929 թուին. բառանիւթս տուել է Սուրէն Ալթունեան, բնիկ Սեբաստիա քաղաքից, ծն. 1902 թ. Երևան է եկել 1925 թ. Պօլիս շատ քիչ էր պանդխտել. ուսանող Պետ. համալսարանի (Տեխֆակ), այժմ ինժեներ. լեզուն պահում էր հարազատօրէն։

Ասլ.=Ասլանբէգի ենթաբարբառ. ուսումնասիրել եմ 1897—8 թուերին, Պարիզում, Ասլանբէգցի երիտասարդ Ա. Նալբանդեանի աշխատակցութեամբ։ Այս ենթաբարբառը գրեթէ ամէն բաղաձայնով վերջացող բառերի համար երկու ձև ունի. ա. բացարձակ ձեւ, որ բառի անկախ ձևն է (ինչ. հաց, մարք է) և բ. փոփոխեալ ձեւ, որ բառի վերջին բաղաձայնի կրճատմամբ կամ թեթևացմամբ է կազմւում. ինչ. հաս չէ «հաց չէ». մար՝ չունի «մարդ չունի»։ (Սրանց մասին աւելի ընդարձակ տե՛ս իմ Քննութիւն Ասլանբէգի բարբառին, Վենետ. 1898)։ Ներկայ աշխատութեանս մէջ Ասլան-

բէգի ենթաբարբառի դէմ աւելորդ չեմ համարած դնել միշտ կրկին ձևերը, որոնցից առաջինը բացարձակ ձևն է, երկրորդը՝ փոփոխեալ ձևը։

Պլ.=Պօլսի բարբառ. իմ մայրենի բարբառս է, ինքս լինելով բնիկ Պօլսեցի, Սամաթիա թաղից, ծն. 1876 թ.։

Ռ.=Ռոտոսթոյի բարբառ. պատրաստեցի 1910 թ. Ռոտոսթոյի մէջ՝ հայկաբան և բանասէր Տիգրան Պաղտիկեանի աշխատակցութեամբ։

Ննխ.=Նոր-Նախիջևանի բարբառ. պատրաստել եմ տեղի վրայ՝ 1907—1917 թուերին, տասնամեայ պանդխտութեանս մէջ, աջակցութեամբ պլխատորապէս ուսուցիչ Սերովբէ Ջաթալպաշեանի։

Սչ.=Սուչավայի բարբառ. պատրաստել եմ էջմիածնի մէջ՝ 1898 թուին, Սուչավացի Կարապետ Կայնայեանի հետ, որ Սուչավայի հայ ժողովրդի կողմից ուղարկուած էր էջմիածին՝ Սուչավայի բահանայ ձեռնադրուելու համար։

Գ. Ել ճիւղ

Մրղ.=Մարաղայի բարբառ. պատրաստել եմ Թաւրիզի մէջ 1905—6 թուերին՝ Մարաղացի երկու հասուն աշակերտներիս՝ Պետրոս Հայրապետեանի և Գրիգոր Մնացականեանի աջակցութեամբ։ 1920 թ. անցնելով Մարաղա, նոյն աշխատութիւնը տեղի վրայ քննել և լրացրել եմ (տե՛ս իմ Քննութիւն Մարաղայի բարբառի, Երևան 1926, էջ 3—6)։

Սլմ.=Սալմաստի բարբառ. պատրաստել եմ Թաւրիզում՝ 1920 թ. Աշոտ քհ. Պօղոսեանի և իր ամբողջ ընտանիքի աջակցութեամբ։

Հւր.=Հաւարիկի բարբառ. այս բարբառով հնած բառերը հաւաքել եմ Գր. Տէր-Պօղոսեանի ուսումնասիրութիւնից (Բանբեր 1921—2, էջ 160—177). հեղինակը ծանօթ է գիտական ուղղագրութեան մեթոդներին, ուստի նրա տուած ձևերին կարելի էր վստահիլ։

Յիշուած 30 բարբառներից 15-ը այժմ ջնջուած են և հետևաբար նրանց բառարանը՝ գիտական ճշտութեամբ գրուած՝ բաւական կարևոր պէտք է համարել գիտութեան համար։

Այս բոլոր բարբառների ներկայացրած ձևերը դասաւորել եմ կանոնաւորապէս, որչափ որ կարելի էր տարբեր ուղղութեամբ ընթացող զանազան բարբառների ձևերը մի գծի վրայ դասաւորել։ Ամէնից սկիզբը դրւում են այն բարբառային ձևերը, որոնք ամէնից աւելի մօտ են գրաբարին. քանի հեռանան մայր ձևից, այնքան էլ հեռու կդրուին. ամէնից վերջը եկող ձևերը ամէնից աւելի տարբերուներն են. միևնոյն ձևը ներկայացնող բարբառները շարուած են պարզ այբուբենական կարգով։

Բացի վերոյիշեալ 30 բարբառներից, որոնց բառերը լիովին ներկայացուած են այստեղ, երբեմն յիշատակւում են նաև զանազան ուրիշ բարբառների և ենթաբարբառների ձևեր, եթէ առանձին կարևորութիւն ընծայում են։ Այս բոլոր դասառականների ցանկը դրուած է գրքիս սկիզբը՝ իրենց համառօտագրութեամբ։ Եթէ բառարանիս մէջ համառօտագրութիւնը դրուած է բարբառային ձևից առաջ, նշանակում է թէ բարբառային ձևը իմ կողմից ստուգուած գիտական ուղղագրութեամբ է. իսկ եթէ չետոյ է դրուած՝ ուղղագրութիւնը ստուգուած չէ և կամ որ նոյն է՝ գրական ձևով է։ Օրինակի համար ճիշ բառի տակ յիշւում են «Երև. Սլմ. Վն. ճշալ», բայց նաև «ճեռնշել, ճճշել Արբ. Եւդ. Հմ. ճիճչ Ննխ». առաջինը ճիշտ բարբառային արտա-

սանութեամբ է, երկրորդը և երրորդը գրականի ոճով՝ առանց ցոյց տալու թէ ճ, ե տառերը իսկապէս ի՛նչպէս են արտասանւում (ճ, ջ թէ՞ ջ՛)։

Գաւառական ձևերի մէջ յիշւում են նաև այն հայերէն բառերը, որ Թրքախօս հայերը պահած են դեռ՝ իբրև յիշատակ կամ մնացորդ իրենց երբեմնի մայրենի լեզուից։ Սրանցից էլ սակայն առել եմ միայն նրանք, որ որոշ տեսակէտով հետաքրքրական են. միւսները թողել եմ՝ յատկապէս տառադարձութեան անճշտութեան պատճառով։

Վերջապէս դրւում են միևնոյն արմատից յառաջացած զանազան գաւառական նորակերտ բառերը՝ առանց սակայն յատուկ ուշադրութիւն դարձնելու իւրաքանչիւրի բարբառային ճիշտ արտասանութեան։

Գաւառական ձևերի թւումը՝ բացի բարբառի ուսումնասիրութեան և գրաբար արմատի ծագման քննութեան նպաստելուց, կարևոր է նաև նրանով, որ գործնական կերպով ցոյց է տալիս, թէ գրաբար արմատը ի՛նչ չափով է պահուած ժողովրդական կենդանի լեզուի մէջ։ Կան որ բոլորովին կորած են (սրանք բնականաբար գաւառական ձև չունին, ինչպէս օր. բեղմն, գաղիշ, բաշկիճակ), միւսները քիչ տեղ միայն պահուած են (օր. հիւս (ձևան), հիւր, ոստիկ, որոնք կենդանի են դեռ Երև. Բլ. Խոջ. Մշ. Մկ. Սլմ. Ոզմ. Վն. Տփ.), վերջապէս երրորդ խումբը հայութեան մեծագոյն մասի մէջ պահուած է (օր. հաց, ջուր, գինի ևն)։ Նորակերտ գաւառական բառերի հաւաքումը նպատակ ունի ցոյց տալու, թէ կենդանի մնացած ձևերն էլ ի՛նչ աստիճանի կենդանութիւն ունին բարբառներում։

Ը. բաժին.—Հայերէնից փոխառեալ բառեր. այս վերջին բաժինը, որ սկսւում է ՓՈՒԽ. համաոստագրութեամբ, գրքիս ամենից իրաւատուկ մասն է, և նպատակ ունի պարզելու հայերէնի ազդեցութիւնը շրջակայ օտար լեզուների վրայ։

Գիտունները առհասարակ զբաղուել են ուսումնասիրելով հայերէնի ծագումը, զարգացումը և նրա կրած ազդեցութիւնը օտարներից։ Մ՛չ մէկը չի հետաքրքրուած, թէ հայերէնն էլ ուրիշների վրայ ի՛նչ ազդեցութիւն է գործել։ Առանձին ուշադրութեամբ հետաքրքրուելով այս կարևոր խնդրով, ես առաջին անգամ Պօլսում 1893 թուին սկսեցի ուսումնասիրել լազերէնը, որ դիր և գրականութիւն չունի։ Բնիկների հետ յարաբերութեան մէջ մտնելով՝ վերջապէս կազմեցի լազերէնի Բառարանը և Քերականութիւնը, որ հրատարակեցի Պարիզում (H. Adjarian, Etude sur la langue laze, տպտ. MSL., հտ. X, 1897—8)։ Այստեղ ամփոփուած են նաև Klaproth-ի, Rosen-ի և Erckert-ի աշխատութիւնները։ Ինձնից 12 տարի յետոյ հրատարակուեց Մաո լազերէն քերականութիւնը (СПет. 1910), իհարկէ շատ աւելի լիակատար ձևով։ Լազերէնի մէջ գտած մի խումբ փոխառեալ հայ բառերս՝ քաջալեր եղան ինձ շարունակելու քննութիւններս նաև կովկասեան ուրիշ լեզուների վրայ։ Ուսումնասիրեցի վրացերէնը և Ջուբինովի բառարանից դուրս բերեցի հարիւրաւոր հայերէն փոխառութիւններ, որոնց վրայ ձայնաբանական մի յօդուած էլ հրատարակեցի Արարատի մէջ (1898 թ.)։ Վրացերէնից յետոյ անցայ ուտիերէնի, չերքէզերէնի և Թուրքերէնի մէջ էլ գտայ մի խումբ հայերէն փոխառութիւններ. բայց սրանք երկու նոր խնդիր երևան հանեցին. նախ՝ թէ Փոքր-Ասիոյ և Հայաստանի Թուրք բարբառները ի՛նչ փոխառութիւններ ունին հայերէնից. երկրորդ՝ թէ տաճիկ լեզուի մէջ երևցած

մի քանի շատ յատկանշական փոխառութիւնները (ինչ. իւղ, օրինակ, փեթակ) իրօք հայերէնի՞ց են փոխառեալ, թէ պատահական նմանութիւն ունին։ Առաջին կէտի համար կոչ կարդացի Բիւրակն թերթի մէջ (1898, էջ 385—7) և ահա իրար եռանից մի քանի բառահաւաքներ հրատարակեցին իրենց ժողովածուները, որոնց մէջ կային հարիւրաւոր բառեր, որ թուրքերէնը փոխ էր առած հայերէնից։ Երկրորդ կէտի համար դիմեցի Ալթայական լեզուախմբին պատկանող զանազան լեզուների քննութեան, ստուգելու համար նրանց մէջ նոյն թուրք բառերը կա՞ն և ի՛նչ ձև կամ ի՛նչ ծագում ունին, հետևաբար փոխառութիւնը իրակա՞ն է, թէ սուտ։

Ալթայական լեզուախմբին դրացի է Ուգրո-ֆիննական լեզուախումբը, որ առաջ նրա հետ ցեղակից էր համարւում։ Հիմայ այս կարծիքը ընդունուած չէ։ Բայց կան մի քանի հայերէն բառեր, որոնք ֆիննականին մօտենում են։ Այս ենթադրութիւնը պատճառ եղաւ, որ այս լեզուախմբի վրայ էլ ուշադրութիւն դարձնէի։

Թուրքերէնը և առհասարակ արևելեան լեզուները բաւական զօրեղ ազդեցութիւն են գործել եւրոպական լեզուների վրայ։ Այս ազդեցութիւնները երևան հանելու համար կան մի քանի ընտիր եւրոպական աշխատութիւններ։ Մտածելով, որ ազդող թուրքերէն բառերը կարող էին նախապէս հայերէնից փոխառեալ լինել, կարևոր համարեցի այս տեսակէտով մօտենալ նաև նոյն կարգի եւրոպական աշխատութեանց. և արդարև յուսախաբ չեղայ. գտայ նրանց մէջ էլ բառեր, որոնք թուրքերէնի մէջ հայերէնից փոխ առնուելուց յետոյ, թուրքերէնի միջոցով տարածուել էին եւրոպական լեզուների մէջ։ Սրանք անուղղակի փոխառութիւններ են հայերէնից։

Վերջապէս կարևոր էր քննել մեր մերձ դրացիների լեզուները. քրդերէն, եբրայեցերէն, արաբերէն, ասորերէն, ինչպէս նաև գնչուների լեզուն, որ հայերէնից բաւական ազդուած է։ Առաջինը կատարեցի Justi-ի քրդերէն բառարանի վրայ, երկրորդը Gesenius-ի բառարանի վրայ։ Քրդերէնը գրականութիւն չունէր. մեծագոյն գործը, որ քրդերէն լեզուով տպագրուած է, Ահմարանի թարգմանութիւնն է (տպ. Պօլիս 1857) և չետոյ ամբողջ Նոր Կտակարանը (Փէյմանէ նօ է խօիյէ մա Իսա էլ Մէսիհ, էր Ըստամպօլտա, 1872)։ Ամբողջ այս գրքերը ուշադրութեամբ կարդալով հաւաքեցի և վկայութիւններով դրի այն բոլոր բառերը, որոնք հայերէնից փոխառեալ էին։ Թէև այս գրքերը Ամերիկեան Աստուածաշնչական ընկերութեան ձեռքով են տպուած, բայց հայի ձեռքով և հայերէն Նոր Կտակարանի վրայից թարգմանուած լինելով՝ թարգմանութեան մէջ ներմուծուել են այնպիսի հայերէն բառեր, որոնց քրդական համազօրը չկայ. այսպէս՝ ողջակէզ, երէց, հերետիկոս, աւետարանիչ, ասպարէզ են։ Ամբողջութեան համար յիշեցի նաև այս բառերը, թէև սրանք իրապէս քուրդ լեզուի մէջ գործածական չեն։

Գնչուերէնը քննեցի Paspati-ի և Vaillant-ի գործերի վրայ։ Հայ բոշաերէնի համար լաւագոյն գործը Finck-ի աշխատութիւնն է, որ նոյնպէս ամբողջովին բառաքաղել եմ։

Արաբերէնի համար ձեռք առի Qamus-ի լայնածաւալ եռահատոր արաբերէնից թուրքերէն բառարանը, որ իր ընդարձակութեամբ Հայկազեանի 6 հատորին կհասնի։ Վեց ամիս տևեց այս աշխատութեան մանրամասն ընթերցումը։

Ասորերէնի համար գործածեցի Brockelmann-ի բառարանը. իսկ նոր

ասորերէնի համար գործածեցի Калашев-*ի ասորերէն-ռուսերէն և ռուսերէն-ասորերէն բնդարձակ բառարանը, որ հրատարակուած է* Сборн. матер... Кавказа, *հտ. 20, էջ 1—420 և որ ներկայացնում է Ուրմիոյ շրջանում և Կովկասում խօսուած նոր ասորերէն լեզուն։*

Առանձնապէս կարևոր էր քննել Փոքր-Ասիոյ (Կապադովկիոյ) յունարէն բարբառը, որ նոյնպէս փոխառութիւններ ունէր հայերէնից։ Այս մասին մի պատուական աշխատութիւն ունի Կարոլիդէս, որի գործը թարգմանուած է նաև հայերէնի (տե՛ս Նարեիմ, *Կապադովկիոյ գաւառին հին լեզուն և նորա ալդի յունարէն գաւառաբարբառը. Մաղիկ 1891—3)։ Բայց թարգմանութիւնը կիսատ է. ես վերցրի յոյն բնագիրը, որ մեծ դժուարութեամբ կարելի եղաւ ձեռք բերել։*

Մտորև տալիս եմ այն բոլոր բառարանների և այլ աշխատութեանց ցուցակը, որ կարդացել եմ ծայրից ծայր՝ որոնելու համար հայերէնից փոխառեալ բառերը։ Ապագայ աշխատաւորներին է մնում շարունակել այս գործը և հասցնել իր վախճանին։

Աբրիկեան Մ.— Բառագիրք երեքլեզուեան, տաճկ. հայ. գաղղ. Պօլիս, 1888 և 1892։

Adjarian H.—Etude sur la langue laze, Paris 1898 *(MSL, հտ. X)*:

Adjarian H.— Recueil de mots kurdes en dialecte de Novo-Bayazet, MSL *16, էջ 349—383.*

Ahlquist A.—Die Kulturwörter der westfinnischen Sprachen, Helsingfors 1875.

Ahlquist A.— Über die Sprache der Nord-Ostjaken, Helsingfors 1880.

Ahlquist A.—Versuch einer Mokscha-Mordwinischen Grammatik. S. Petersburg 1861.

Աւթանտիլեանց — Համառօտութիւն հայկական քերականութեան Ուտեայց լեզուի, արարեալ ի Կարապետ Նուաստագոյն շնչին դպրէ Ղահրամանեան Աւթանտիլեանց տաշրուլաղցւոյ, յաշակերտութենէ աստուածահաճոյ Յովսեփայ վարդապետի. 1842 (Bibl. nat. supp. arm. 66. *գործածել եմ Կ. Բասմաջեանի արտագրութիւնը, որ բարի եղաւ իմ տրամադրութեանս տակ դնելու)։*

Böhtlingk.—Über die Sprache der jakuten. S. Peters. 1851 *(ընդարձակ գործ)։*

Brockelmann.—Lexicon Syriacum, Berlin 1895.

Brosset.—Aperçu général de la langue géorgienne, JAs. Paris 1834, *հտ. XIV, էջ 369—405 (ասում է թէ աչքից է անց կացրել Աւգերեանի բառարանը և գտել է 250 վրացի բառ. Վախտանգի աշխատութեան մէջ կայ 150 հայ. արաբ. և պրս. փոխառեալ բառ)։*

Будаговъ А.—Сравнительный словарь турецко-татарскихъ нар. *2 հտ.* С. Петер. 1869.

Castren.—Grundzüge einer tungusischen Sprachlehre. S. Peters. 1856.

Castren.—Versuch einer ostjakischen Sprachlehre. S. Peters. 1858.

Castren.—Versuch einer koibalischen und karagassischen Sprachlehre. S. Peters. 1857.

Erckert R.—Die Sprachen der Kaukasischen Stammes. Wien 1895 *(կով-*

կասեան 30-ի չափ լեզուների բառարանն է. ժժբախտաբար սխալներով լի)։

Gesenius W.—Hebräisches und Aramäisches Handwörterbuch. Leipzig 1910.

Justi-Jaba.—Dictionnaire kurde-français. S. Péters. 1879.

Калашевъ А.—Айсорско-Русскій словарь (Сборн. матер.. Кавказа, *հա. 20, էջ 241—420, նոյնը ունի նաև ռուս.-աւոր. բառարան, անդ՝ էջ 1—239,—Ուրմիոյ և Կովկասի մէջ խօսուած աւորերէնի բառարանն է, որից քաղած բառերս համաձօտապրել եմ «ն. աւօր.» ձևով)։ Կարապետեան Պ. Զէքի.—«Մեծ» բառարան օսմաներէնէ հայերէն. Պոլիս 1912.*

Καρολιδου Π.—Γλωσσαριον τσγκριτικον ελληνοκαππαδοκικων λεξεων. *Զմիւռնիա 1885*

Klaproth.—Kaukasische Sprachen, Halle-Berlin 1814.

Klaproth.—Asia polyglotta. Paris 1823.

Klaproth.—Vocabulaire géorgien-français. Paris.

Latham.—Elements of comparative philology. London 1862. *(Կովկասեան լեզուների վրայ է խօսում էջ 268—282).*

Loewe L.—A. Dictionary of the circassian language. 1854.

Marcel Devic L.—Dictionnaiere étymologique des mots français d'origine orientale. Paris 1876.

Марръ Н.—Грамматика чанскаго (лазского) языка. С. Петер. 1910.

Gustav Meyer.—Türkische Studien. SWAW *հա. 128 (1893).*

Miklosich F.—Die Türkischen Elemente in den südost- und osteuropäischen Sprachen. Wien 1889—90.

Miklosich F.—Die Fremdwörter in den slawischen Sprachen, Wien 1867.

Мохира М. В.—Кумыкско-русскій Словарь. *տե՛ս* Сбор. матер... Кавказа, *հա. 17 (1899), էջ 45—95.*

Muss-Arnolt.—Assyrisch-englisch-deutsches Handwörterbuch, Berlin 1905.

Պայազատ Արգար.— Բառարան ուտիերէն (անտիպ).

Paspati.—Etudes sur les Tchinghianés ou Bohémiens de l'Empire ottoman. Constantinople 1870 *(գնչուերէն ընդարձակ բառարան է)։*

Pavet de Courteille.—Dictionnaire Turk-oriental. Paris 1870.—*Զաղաթայերէնի բառարանն է, որ կազմուած է ابو شقه կոչուած հին ձեռագրից. սա Նէվայիի (+ 1500) գործերի բառարանն է և կազմուած է ԺՉ դարում. ալս գիրքը* Véliaminof-Zernof *հրատարակեց նախ՝* Dictionnaire Tchaghataï-turc *անունով. նոյնի համաձօտութիւնը տպուեցաւ Պոլիս, իսկ* P. de Courteille *օգտուելով նաև ուրիշ աղբիւրներից՝ պատրաստեց վերոյիշեալ գործը։*

Qamus.— *բուն անունն է* القاموس المحيط al-qāmūs al-muhīt *(համաձարած անգունդք ծովու). բ. տպ. Պոլիս 1250. Թուրքերէն և արաբերէն բացատրութեամբ. 3 ձեռագր հատոր, ընդամէնը 2855 մեծադիր էջ։*

Radloff.—Versuch eines Wörterbuches der Türk-dialecte. S. Peters. 1893.

Rosen.—Über die Sprache der Lazen. Berlin 1843.
Shaw R. B.— A Sketch of the turki language as spoken in eastern Turkistan (Kàshgar and Yarkand). Calcutta 1880.
Schiefner A.—Versuch über die Sprache der Uden, C. Петер. 1863.
Schiefner A.—Versuch einer jenissei-ostjakischen und kottischen Sprachlehre. Peters. 1858.
Schiefner A.—Wörterverzeichnisse aus den samojedischen Sprachen. Peters. 1855.
Tchoubinoff.—Dictionnaire Céorgien-russe-francais. Péters. 1840. *Անիկ նաև սրա նոր տպագրութիւնը միայն վրաց-ռուս.*
Vaillant J. A.—Grammaire, dialogues et vocabulaire de la langue des Bohémiens ou Cigains. Paris 1868.
Vámbery.—Čagataische Sprachstudien, enthaltend grammatikalishen Umriss, Chrestomathie und Wörterbuch. Leipzig 1867.
Vámbery.—Etymologisches Wörterbuch der Türko-tatarischen Sprachen. Leipzig 1878.—*Համեմատական ոճով քննուած են ույղուր, չաղաթայ, օսմանեան, Կազանի, Աստրախանի, Քիւրքմէն, Ալթայի, չուվաշ, կոյբալ-կարագաս և նաբուխ լեզուները։*

1934 յունվ. 8
Երևան

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա

(Հին հայ մատենագրութիւն)

(* աստղանիշները ոսկեդարեան)

Աբգ.	տե՛ս ՍԳր.
Աբեղկ.	Վարք Աբերկիոսի եպիսկոպոսի. տե՛ս Ակինեան, Նիւթեր հայ վկայաբանութեան, Վիեննա 1914, էջ 1—32։
Աբր. կրեմ.	Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց և նաղարշահին Պարսից. Վղրշպտ. 1870 (իբրև յաւելուած ունի նաև մի կոնդակ և Պատմութիւն Անւոյ՝ նոյն հեղինակից).—ԺՀ դար։
Աբր. մամիկ.	Աբրահամ Մամիկոնէից նախկոպոսի Թուղթ առ Վաչագան և Պատմութիւն վասն ժողովոյն Եփեսոսի. հրատ. Հ. Բ. Սարգիսեան, Վիեննա. 1899.—Զ դար։
Ագադ.	Ագաթոն կամ Ագադրոն, յԱնյաղթ փիլիսոփայի ասացեալ վասն ժամանակին որ յայտնելոց է... հրատ. Բազմ. 1913, էջ 396—400։
*Ագաթ.	Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց. Տփղիս 1909։
Ագապ.	Արուեստ գրութեան յորդորական գլխոցն Ագապետոսի սարկաւագի. հրատ. Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, հտ. բ, էջ 160—199։
Ադամ.	Առաքել Սիւնեցի, Ադամգիրք. հրատ. Հ. Մ. Պոտուրեան, Վիեննաիկ 1907 (ԺԸ դար).
Աթ., Աթան.	Սրբոյն Աթանասի Աղէքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք և քնդիմաս(ա)նութիւնք. Վիեննաիկ 1899.
Աթան. սղմ.	Աթանասի եպիսկոպոսապետի Աղէքսանդրացւոյ Սաղմոսաց մեկնութիւն. Պօլիս 1801, էջ 5—53։
Աթ. անտ.	Վարք սրբոյ հօրն մերոյ Անտոնի արբայի, ըստ հին թարգմանութեան, համառօտեալ ի ճառընտիրս (ըստ ՆՀԲ)։
Աթ. համբ. խչ. կուս.	Ճառ ի համբարձումն Քրիստոսի կամ ի վերացումն Տեառն և ի խաչն, ի Կոյսն և ի Ստեփաննոս. թարգմանութիւն միջին կամ անհարթ։ Կայ և հանդանակ նորա նոր թարգմանութեամբ ի լատինէ (ըստ ՆՀԲ)։
Ախտարք	Անպէտ գրութիւն անպիտան ձեռվ ի վերայ բախտից և վիճակաց ըստ գուշակական աստղահմայութեանց, աւտր բնախօսութեանց և որոց ի նոցին սակի են (ըստ ՆՀԲ)։
Ածաբ. ծն.	Ծննական ճառք և բեմբասացութիւնք Գրիգորի աստուածաբանի, գրեալք ուրոյն կամ սփռեալք ի ճառընտիրս. որպէս ի Ծնունդ և ի Մկրտութիւն Տեառն, ի Պասեքն կամ ի Պասքայն, ի Նոր կիրակէն, ի Պենտեկոստէն, ի Խաչն, և ի պենտեկ. խչ. Մակաբայեցիս, և ի Կիպրիանոս, և Յաղագս կարկտի, և Աղքատասիրութեան, մակար. որպէս և ի Մեկնութիւն ի ժողովոյն, գործ առաջին թարգմանչաց՝ քաջ հայկիպր. կարկտ. կարան՝ խառն ընդ հելլենախօսութեան (ըստ ՆՀԲ)։—Տե՛ս և ճառընտ., Գր. աղք. ժղ. ևն։ ածաբ. ծն., Գր. աքանչ. ծն. քս.։
Ածազգ.	տե՛ս Իգնատ. քզ.
Աղեքս.	տե՛ս Պտմ. աղեքս.
Աղթամ.	Գրիգոր Աղթամարցի և իր տաղերը. հրատ. Կ. Կոստանեանց. Թիֆլիս 1898 (ԺԶ դար)։
Ամբ.	տե՛ս ՍԳր.

Ամիրտ. Ամիրտովլաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ ևն. (ըստ ՀԲուս).—ԺԲ դար։

Ամովս. տե՛ս ՍԳր.

Այրիվ. Մխիթար Այրիվանեցի, Նորագիւտ արձանագրութիւն և երկեր, հրտր. Գ. արք. Յովսէփեանց, Երուսաղէմ 1931.

Անան. գիտ. Անանիա Շիրակացի, զանազան գիտական գրուածքներ. հրտր. Գ. Տէր-Մկրտչեան, Վաղարշապատ 1896.—է դար։

Անան. եկեղ. Անանիայի վարդապետի Նարեկացւոյ՝ հօրեղբօր մօր սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, ճառ ի վերայ եկեղեցւոյ՝ պերճ և փառացի ոճով, հանդերձ անտուվոր բարդութեամբք բառից, ուղղեալ ընդդէմ Բանդրակեցւոց (ըստ ՆՀԲ).—Ժ դար։

Անան. զղջ. կամ քհ., ի յհ. մկ., ի յովն., ի պետր. Անանիայ քահանայի (Շիրակացւոյ կարծեցեալ յոմանց) խրատ առ քահանայս, և վասն խոնարհութեան, և յորդորական բան վասն զղջման և արտասուաց պարզ և վայելուչ ոճով։ Եւ Անանիայի ուրումն վարդապետի բանք ի Յովհաննէս Մկրտիչ, ի Պետրոս առաքեալ և ի Յովնան ևն. լաւ ևս ոճով (ըստ ՆՀԲ տե՛ս և յաջորդը)

Անան. թրգ. Անանիա թարգմանիչն և իւր գրական գործոց նմոյշներ. հրտր. Հ. Բ. վրդ. Սարգիսեան, Վենետ. 1899.—Սրա մէջ. էջ 1—14 «Ընթանելոյն Անանիայի Հայոց վարդապետի ի խորհուրդ Յովնանու մարգարէիս», որ ըստ ՆՀԲ յիշուած է Անան. նին. և Անան. յովն. ձևերով։

Անան. ժամնկ. Անանիա Շիրակացւոյ ժամանակագրութիւնն է. ըստ ՆՀԲ համառօտագրուած Շիր. քրոն.։ Հրատարակուած է Վենետիկ 1904 «Անանուն ժամանակագրութիւն խմբագիր յօրինեալ յէ դարուս» վերնագրով. հրտր. Հ. Բ. Սարգիսեան։

Անան. խոստ. Անանիա Նարեկացի, Գիր խոստովանութեան. Վրշպտ. 1892 (արտատպ. Արարատից, 1892, էջ 6—18).—Ժ դար։

Անան. շիր. տե՛ս Շիր.

Անան. սանահն. տե՛ս Սանահն.

Անան. քեր. Անանուն մեկնիչ Քերականին. հրտր. Քր. քեր. էջ 127—156.

Անգ. տե՛ս ՍԳր.

Անթիպատր. Անթիպատրոսի Բոստրացւոց եպիսկոպոսի քանի մը ճառք թարգմանեալ միջակ ոճով ի կարգի ճառընտրաց (ըստ ՆՀԲ)։

Անկ. գիրք առաք. Անկանոն գիրք առաքելականք. հրատ. Վենետիկ 1904.

Անկ. գիրք հին կտ. Անկանոն գիրք հին կտակարանաց. հրատ. Վենետիկ 1896.

Անկ. գիրք նոր կտ. Անկանոն գիրք նոր կտակարանաց. հրատ. Վենետիկ 1898։

Անյ. բարձր. Դաւիթ Անյաղթի ճառ ի ս. խաչն, որի սկիզբն է Բարձրացուցէք. տե՛ս նաև Դիւտ. և Դաւ. անյ.

Անյ. հց. իմ. Հարցուածով պիտառութիւն (ըստ ՆՀԲ).

Անյ. պորփ.
Անյ. ստորոգ.
Անյ. պերիարմ.
Անյ. վերլծ. արիստ
Անյ. առածք

Լուծմունք հինգ ձայնից Պորփիւրի, և Ստորգութեանց, և Պերիարմենիասի, և Վերլուծական գրոց Արիստոտէլի ... ի սոսին վերածին և Առածք հինգ վասն սահմանի և բաժանման և նկատումն Արիստոտէլի (ըստ ՆՀԲ).—տե՛ս և Սահմ., Քեր., Դաւ. անյ.

Անսիզք Անտիոքայ. Բրգմ. Սմբատ Գունդստապլի՝ ֆրանսերէն լեզուից, նախ քան 1265 թ. (միջին հայերէն լեզուով). Վենետ. 1876։

Աշխ. «Նշանակս է աննշան առ մեզ, զի այսպէս դնի ի հատուածս բառարանի Ստեփաննոսի Լեհացւոյ» (ըստ ՆՀԲ)։

Առակ. տե՛ս ՍԳր.

Առաք. Գիրք Առաքինութեանց, անդրածեցեալ ի լաթինականէն ի հայ բարբառ (ԺԴ դար). հրտր. Մխիթար Աբբայ. Վենետ. 1721 (ըստ ՆՀԲ թարգմանիչն է Յակոբ Ջահկեցի)։

Առաք. լծ. սահմ. Լուծմունք յաղագս Սահմանացս Դաւթի Անյաղթ փիլիսոփայի՝ Տէր Առաքելի ... աշակերտի... Գրիգոր Տաթևացւոյ. հրտր. Դաւիթ Անյաղթի կից՝ էջ 147—648. մնացեալը պակաս էր. Թուի տպ. Մատրաս 1797.—ԺԲ դար։

Առաք. կենդ. Վասն երկոտասան կենդանակերպիցն.... (տաղ) սասցեալ ի յԱռաքել վարդապետէ. տպ. յՆորզն. երկն. էջ 62—73.—ԺԲ դար։

Առաք. նար. — Տէր Առաքել վարդապետի ասացեալ ներբողեան ի Ս. Գրիգոր Նարեկացին, տե՛ս Նարեկ. Զմիւռնիա 1870, էջ 473—6։

Առաք. պտմ. — Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ Պատմութիւն (1662 թ.), հրտր. Վաղարշապատ 1884.

Առաք. տաթև. — Առաքել վարդապետի Ներբողեան առ քաջ հռետորն... մեծն Գրիգոր Տաթևացի. տե՛ս Տաթև. ամ. էջ 716—9.—ԺՆ դար։

Առ որս. — Գիրք ճառից Ս. Գրիգորի Աստուածաբանի Նազիանզացւոյ (ըստ ՆՀԲ. տե՛ս նաև Ածաբ.)։

Ասար. — Բժշկարան Ասար Սեբաստացւոյ (ըստ Հրուս.)—ԺԷ դար։

Ասող. — Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական. հրտր. Մալխասեան. Պետերբ. 1885։ [Սրա կորած Ե և Զ գլուխները իբր քէ գտել և հրատարակել է Ա. Տէր-Միքէլեան, Արրտ. 1892, էջ 749—54. բայց այդ գլուխները արդէն կան].—ԺԱ դար։

Ասոր. դատ. — Ասորական Դատաստանագիրք, հրտր. Ա. վրգ. Ղևոնեանց, Էջմիածին 1917։

Արիստ աշխ. կամ առաք. կամ առորգ. ևն — Գործք Արիստոտելի փիլիսոփայի Ստագիրացւոյ, թարգմանեալք ի Դաւիթ Անյաղթէ, կամ մասամբ յառաչեցն քան զնա՝ Երկոքին թուղթքն առ Մեծն Աղեքսանդր՝ վասն Աշխարհի և վասն Առաքինութեանց, են ըստ բաւականին հայկարան և ընտիր. իսկ Առորգութիւնքն, Պերիարմենիասն, և որ ի սոցին սակի, են անպէտ և անշուք հիլլենարանութիւն նիւթական (ըստ ՆՀԲ)։

Արիստակ. գրչ.= Գրչ. արիստակ. — Արհեստ գրչութեան Արիստակեայ ուրումն՝ ի պէտս ուղղագրութեան տառից և բառից, իբրև մասն Քերականութեան, յիշատակեալ և յերկնկացոյն, որպէս երիցագոյն քան զինքն ժամանակաւ (ըստ ՆՀԲ)։—ԺԲ դար։

Արիստ. լատ. — տե՛ս Լատ.

Արիստակ.մկրտ. Արիստակ. նաւակ. — Հատ Արիստակիսի ուրումն վարդապետի (նիւթ չիցէ Լատինվերացին) ի Մկըրտութիւն Տեառն և ի փոխութիւն անապատի կամ յուիօրևայ նաւակատիս գինի յայտնութեան՝ վայելուչ և կարգաւոր ոճով (ըստ ՆՀԲ)։

*Արիստիդ. — Խօսք Սրբոյն Արիստիդեայ իմաստասիրի Աթենացւոյ. Վենետիկ 1878 (տրից էջ 5—12 ոսկեդարեան, էջ 14—22 յետին)։

Արծր. — Բովմայ Արծրունւոյ Պատմութիւն. Պետերբ. 1887։ (Այստեղ իբր վ գլուխ եմ նշանակել էջ 262—8 թերթերը, որոնք տպագրեալի մէջ գրուած են իբրև Իթ գլխի շարունակութիւնը)։—Թ դար։

Արձ. — Արձանագրութիւն (Մօտին գրուած թուականը և աղբիւրը)։

Արշ., Արշար. — Գրիգորիսի Արշարունեաց կամ Աշարունեաց եպիսկոպոսի ի է դարու, Մեկնութիւն ընթերցուածոց, մանաւանդ ճրագալուցի ծննդեան և յարութեան, ընտիր և ճարտարախօս հայկաբանութեամբ (ըստ ՆՀԲ, տե՛ս և Լծ. կոչ.)։

Աւետ. — Աւետարան։

Բարիզ. յհ. մկ. — Բարիզայ Աղեքսանդրու հայրապետի ճառ պանծալի ի գլխատումն Յովհաննու Մկրտչի՝ վայելուչ թարգմանութեամբ (ըստ ՆՀԲ)։

Բանք աղ. — Բանք վասն խաղող աղուէսուն և չարութեան նորա. տե՛ս Վրդ. առ. III. էջ 179—192։

Բանք իմ. — Բանք խրատուց նախնի իմաստասիրաց (է դար). Սոփերք Ա հտ. Վենետ. 1853.

Բար. — Բարուախօս (=Նախիմ. բարոյ. ըստ ՆՀԲ). հրատար. Վրդն. առ. III. էջ 131—175.

Բարուք. — տե՛ս ՍԲր.

Բենիկ. — Աղօթք Յովհաննու Վանանդեցւոյ Բենիկ կոչեցեալ վարդապետի. Սոփերք ԻԱ հտ. Վենետ. 1861.

Բժշ. — Բժշկարան (զանազան դարերից). ըստ ՆՀԲ։

Բնլ. ճշմ. — Բանալի ճշմարտութեան (Քրիստոնէական Պաւլիկեանց), գրեալ 1782 թ. հրատարակեց անգլ. թարգմանութեամբ Conybeare, Key of truth, Oxford 1898.

*Բուզ. — Պատմութիւն Բուզանդ Փաւստոսի. Վենետ. 1889.

Բո. հին — տե՛ս Հին բո.

Բո. ստեփ. լեհ. — տե՛ս Ստեփ. լեհ.

Բրս. մրկ. — Մեկնութիւն Ս. Աւետարանին, որ ըստ Մարկոսի, արարեալ երանելւոյն

Բարսղի... Ճոն կոչեցեալոյ. Պօլիս 1826.—ԺԹ դար։

Բրս. հց. կամ ճգն. կրօն. կանոն. — Ս. Բարսղի մեծի Կեսարացւոյ Գիրք Հարցմունց, և Ճգնողականաց, և Սահմանք և կանոնք կրօնաւորականք (ըստ ՆՀՔ)։

Բրս. պհ. — Ճառ գեղեցիկ ի Մեծ պահս, ուրոյն յայլոց բանից ի վերայ պահոց (ըստ ՆՀՔ)։

Բրս. սղ. Քղք. ապաշխ. գոհ. ողորմ. արբնց. վաշխ. մախ. չար. ընչեղ. գորդ. յուդիտ. ծն. տեառն ընդ առաջ ևն. — Այն են մեկնութիւնք այլ և այլ Սաղմոսաց, պէսպէս թուղթք, ճառք ապաշխարութեան, գոհութեան, ողորմութեան և աղօթից, ճառք ընդդէմ արբեցողաց, վաշխի, մախանաց, չարեաց, ընչեղաց, և ի Գորդիոս վկայն, և ի Ցուդիտայ, և այլ ճառք ի տօնս տէրունականս ըստ ճառընտրաց (ըստ ՆՀՔ)։

Բրս. հալեաց. կամ չիսկզբանէ. քարոզ. աղ. ևն — Ճառ ի վերայ բանին Մովսեսի. Հայեա՛ց յանձն քո, կամ զգոյշ լեր անձին քում. և ի սկիզբն Աւետարանին Յովհաննու. և գանձք կամ աղօթք ի կարդի հին Մաշտոցաց կամ ճաշոցաց (ըստ ՆՀՔ)։

Գագիկ առ Ռոմանոս — Այն է Թուղթ Գագկայ Ա. արքայի Արծրունեաց՝ գրեալ առ Ռոմանոս կայսր յունաց, ըստ յառաջ բերելոյ Մատթէոսի Ուռհայեցւոյ (ըստ ՆՀՔ. տես Ուռհ. և Գիրք Թղ. ձր).—ժ դար։

Գաղ. — տե՛ս ՍԳր.

Գաղիան. — Հատընտիր բառք բժշկարանին Գաղիանոսի կամ Գաղենոսի մեծանուն բժշկապետի, ի յունականէ... Թարգմանեալ և մեկնեալ ի հայ բարբառ (ըստ ՆՀՔ)։

Գամագտ. — տե՛ս Մագ.

Գանձ. Գնձ. — Հաւաքումն եկեղեցական երգոց՝ որ գանձք կամ քարոզք կոչին (ըստ ՆՀՔ)։

Գառն. — Աղօթամատոյց Յովհաննու վարդապետի Գառնեցւոյ. Վենետիկ 1911. տե՛ս և Յհ. գառն.—ԺԴ դար։

Գեննադ. — Գեննադեայ պատրիարգին յունաց ի Կոստանդինուպոլիս ի ե դարու՝ ճառ ի նինուէացիս ևն (ըստ ՆՀՔ)։

Գերմ. Քղք. — Թուղթ Ս. Գերմանոսի պատրիարգին յունաց... զոր ասի Թարգմանեալ... Ստեփաննոս Սիւնեցի (ըստ ՆՀՔ).—Ը դար։

Գէորգ գրչ. — Արհեստ գրչութեան Գէորգեայ վարդապետի՝ զոյգ ընդ գրչութեան Արիստակեայ՝ յիշատակեալ և ի Քեր. երգն. (ըստ ՆՀՔ).—ԺԴ դար։

Գէ. եա. — Գէորգեայ... վրդ. Մեկնութիւն մարգարէութեանն Եսայեայ (ըստ ՆՀՔ).—ԺԴ դար։

Գիրք առաք. — տե՛ս Առաք.

Գիրք Քղ. — Գիրք Քղթոց, Թիֆլիս 1901 (ՍՋ Քղթի սկիզբը, որ պակասում է, տե՛ս Յճխ. էջ 300)։

Գիրք հերձ. — Գիրք հերձուածոց. հրտր. Միսրան. Արրտ. 1892, էջ 93—114։

Գիրք մոլութ. — տե՛ս Մոլութ.

Գիւտ Քղք. առ վաչէ — Թուղթ նրանելւոյն Գիւտայ... առ Վաչէ Աղուանից արքայ... ի կարդի պատմութեան Մ. Կաղանկատուացւոյ (ըստ ՆՀՔ).—Ե դար։

Գիւտ նշ. Քագ. — Գիւտ նշխարաց Քագէոսի առաքելոյ. Սոփերք հտ. Ը, էջ 85—97. Վենետիկ 1853։

Գծ., Գործ. — տե՛ս ՍԳր.

*Գոր. և շմ. — Ագաթանգեղոսի աղբիւրներից, յիշատակ դատակնքաց Գորիա և Շմոնի վկայից. հրտր. Միսրան. Վղրշպտ. 1896։

Գր. ածար. ծն. — տե՛ս Ճառընտ.

Գր. աղքամ. — տե՛ս Աղքամ.

Գր. եր. — Գրիգոր երէցի շարայարութիւն ժամանակագրութեան Մատթէոսի Ուռհայեցւոյ. տե՛ս Ուռհ. էջ 369—429. ապ. Վղրշպտ. 1898.—ԺԲ դար։

Գր. լուս. — տե՛ս Յճխ.

Գր. կթ. — Գրիգորիսի կաթուղիկոսի Բան պիտանի. հրտր. Արրտ. 1892, էջ 1097—9։

Գր. հր. — Այն է հրահանգք հաւատոյ և բարի վարուց... զոր իրաւամբք ոմանք դասեն ի կարգ Նարեկի, և այլք տպտամ քաղուն զմականունն, և ոչինչ անյարմար դատին Գրիգորի Սկևռացւոյ (ըստ ՆՀՔ)։

Գր. մաշկ. — տե՛ս Մաշկ.

Գր. Նար. մատ. — Գրիգորի Նարեկայ Վանից վանականի Մատենագրութիւնք. Վենետիկ 1840, ժ դար.—պարունակում է՝

—Նար. — Նարեկ մատեան ողբերգութեանց. էջ 1—268;

—Նար. երգ. — Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի. էջ 269—367.

—Նար. խչ. — Պատմութիւն և ներբող Ապարանից Ս. խաչին, էջ 371—406.

—Նար. կուս. — Գովեստ երգաբանութեան Տիրուհւոյ կամ Գովեստ կուսի. էջ 407—423.

—Նար. առաք. — Ներբողեան գովեստի ի համօրէն գունդս Առաքելոցն. էջ 424—438.

—Նար. մծբ. — Բան նուիրական գովեստի ի մեծ և յերջանիկ հայրապետն ի Ս. Յակոբ եպս... Մծբին քաղաքի, էջ 439—454;

— Նար. գնձ. — Գանձք, էջ 455—463;

—Նար. տաղ. — Տաղք, էջ 464—482;

—Նար. խր. — Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ և մաքուր վարուց առաքինութեան. էջ 483—533 (երկբայելի);

—Նար. յովէդ. — Մեկնութիւն ՃՈ՛Վ է դաւ-ի (ըստ ՆՀԲ);

Գր. սկևռ. — տե՛ս Սկևռ.

Գր. սրկ. լս. — Գրիգորի սարկաւագապետի Ներբող ի Ս. Գր. Լուսաւորիչ. Սոփերք հտ. Դ. տպ. Վենետիկ 1853.—ԺԲ դար;

Գր. սքանչ. — Ճառք զանազանք Ս. Գրիգորի Սքանչելագործի Նէոկեսարիոյ եպիսկոպոսի յԴ դարու, գտեալք ի Ճառընտիրս (ըստ ՆՀԲ);

*Գր. սքանչ. ծն. քս. — Գրիգորի Սքանչելագործի խօսք ի Ծնունդն Քրիստոսի. Հրատ. ՀԱ 1912, էջ 469—476 (արտատպ. Վարդանեան, Դասական մանր բնագրեր, Վիեննա 1913, էջ 18—41);

Գր. տղ. — Գրիգորի Տղայի Նամականի. Վենետիկ 1865 (=ըստ ՆՀԲ Գր. տղ. Քղթ.).—ԺԲ դար;

Գր. տղ. ԼՀմ. — Ոտանաւոր Ողբ ի վերայ առման Երուսաղէմի ի Սալահադինայ... յամի 1187 (ըստ ՆՀԲ);

Գրիգ. ժմ. — Գրիգորի ուրումն Քարեխ տաճկաց. Ժամանակագրութիւն 1703 Քուից. տե՛ս Սամ. անեց. էջ 200—203;

Գրչ. արիստ. — տե՛ս Արիստակ. գրչ.

Դամասկ. — Ս. Յովհաննու Դամասկացւոյ՝ հզօր վարդապետի յունաց ի Ը դարու,...գործ իմաստասիրական և աստուածաբանական, թարգմանեալ մասամբ ի ձեռն Սիմէոնի ուրումն քահանայի ի վրաց լեզուէ ի հայ բարբառ... կայ և լոկ իմաստասիրական մասն գործոց Դամասկացւոյ՝ լաւ ևս թարգմանեալ ի յունէ ի հայ ի ձեռն Բագարատայ Մամիկոնեան, այլ քաղուածով համառօտեալ (ըստ ՆՀԲ);

Դան. — տե՛ս ՍԳր.

Դան. — տե՛ս ՍԳր.

Դաւ. անյ. — Դաւիթ Անյաղթի գործերը. տպ. Կորին, Մամբրէ, Դաւիթ հաւաքածոյի մէջ. Վենետ. 1833;

Դաւ. բան. — Դաւիթ փիլիսոփայի Բան հաւատոյ ևն. Արրատ. 1906, էջ 261—272;

Դաւ. բէգ. — Ընտիր Պատմութիւն Դաւիթ Բէգին և պատերազմաց հայոցն ևս փառանու. (ԺԸ դար). Վղրշապտ. 1871;

Դաւ. սալաձ. — տե՛ս Սալաձ.

Դաւ. սղմ. — Դաւիթ փիլիսոփայի Յաղագս Սաղմոսաց Դաւթի. տպ. Պօլիս 1801, իբր շարունակութիւն Աբեան. սղմ. էջ 71—165;

Դաւ. քեր. — Դաւիթ փիլիսոփայի Մեկնութիւն Քերականի. տե՛ս Քր. քեր. էջ 79—124;

Դաւան. — Two armenian Creeds (երկուքդաւանութիւն). հրատ. Ակինեան, տպտ. Harvard-theological Review, հտ. 23, 1931 թ.

Դիոն. երկն. եկեղ. ածայ. քղթ. ևն. — Ս. Դիոնեսիոսի Արիսպագացւոյ յԱթենայ... գիրք յաղագս երկնային քահանայապետութեանց, այսինքն դասակարգութեան հրեշտակաց, և յաղագս եկեղեցական քահանայապետութեան, այսինքն բովանդակ լրման կարգաց եկեղեցւոյ, և յաղագս Աստուածային անուանց, իմա՛ աստղգելեաց Աստուծոյ, և խորհրդական աստուածաբանութեան՝ ըստ յայտնութեան եղելոյ առ մարգարէս և առ առաքեալս... և քուղք առ զանազանս Թարգմանութիւն

Ստեփաննոսի Սիւնեցւոյ... իսկ նոր թարգմանութիւնն Ստեփաննոսի Հհոացւոյ ի լատինէ... Այլ թուղթն Դիոնեսիոսի առ Տիտոս վասն փոխման Կուսին, որ կայ ի ճառընտիրս, է հնագոյն թարգմանութիւն նախնեաց (ըստ ՆՀՔ, տե՛ս և յաջորդը)։

Դիոն. ննջ. Դիոնեսիոսի Արիսպագացւոյ Պատասխանի թղթոյն Տիտոսի եպս. Կրետացւոյ, յաղագս ննջման Ս. Աստուածածնի. հրտր. Սրուանձտեան, Հնոց և նորոց, Պօլիս 1874, էջ 110—115։

Դիոն. թրակ. տե՛ս Թրակ. քեր.

Դիւան. Դիւան Հայոց Պատմութեան. հտ. ԺԱ, Մանր մատենագիրք, ԺԵ—ԺԹ դար. Թիֆլիս 1912։

Դրնղ. Ժամանակագրութիւն Դրիգոր վրդ. Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ. Երուսաղէմ 1915։

Եբր. } տե՛ս ՍԳր.
Եղեկ. }

*Եղն. Եղնկայ Կողբացւոյ՝ Բագրեւանդայ եպիսկոպոսի եղած աղանդոց. Վենետիկ ՌՄՀՆ.

Եղն. երէց. Նշանագիր կարգաց բանից եղնկայն երիցու. հրտր. Սամ. անեց. էջ 266—268 (է դար)։

Եղն. խրատ. Եղնկայ վարդապետի խրատք (որ և տես Նեղոս). հրտր. եղն. էջ 299—313։

Եղր. } տե՛ս ՍԳր.
Ել. }

Եղիշ. մատ. Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք. Վենետ. 1859 (Ե դար). պարունակում է՝

— Եղիշ. Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. էջ 5—158։

— Եղիշ. միանձ. կամ խր. Բան խրատու յաղագս միանձանց. էջ 159—165.

— Եղիշ. յհս. Մեկնութիւն Յհաւսյ. էջ 167—178.

— Եղիշ. դտ. Մեկնութիւն Դատաւորաց, էջ 178—189.

— Եղիշ. հյր. մեր. Յաղօթսն որ ասէ Հայր մեր որ յերկինս, էջ 199—206.

— Եղիշ. մկրտ. Ի մկրտութիւնն Քրիստոսի, էջ 207—212.

— Եղիշ. այլակ. Ի Քարոզ լերին յայտնութիւն Տեառն առ Պետրոսեանց, էջ 213—239.

— Եղիշ. երէց. (Նոյնը տպուած է նաև Սոփերք ԺՀ, էջ 5—68 «Եղիշէի քահանայի Ճառ յայլակերպութիւն Տեառն»։ ՆՀՔ այս ճառը յիշում է «Եղիշ. երէց» համառօտագրութեամբ և կարծում է թէ վարդանանց պատմիչինն է)։

— Եղիշ. մատն. Ճառ ի խորհուրդ մատնութեան Տեառն, էջ 240—262.

— Եղիշ. չրչր. Ճառ ի չարչարանսն Քրիստոսի, էջ 263—278.

— Եղիշ. խաչել. Ճառ ի խաչելութիւնն Քրիստոսի, էջ 278—291.

— Եղիշ. թղմ. Ճառ ի թաղումն Քրիստոսի, էջ 291—300։

— Եղիշ. յար. Ճառ ի յարութիւնն Քրիստոսի, էջ 300—310.

— Եղիշ. երկ. Ճառ յերկուսն Տեառն աշակերտաց, էջ 310—328.

— Եղիշ. տիք. Ճառ յերկուսն Տեառն առ Տիբերեայ ծովուն, էջ 328—345.

— Եղիշ. առաք. Ճառ ի քարոզութիւն առաքելոց, էջ 345—354.

— Եղիշ. գալ. Ճառ վասն գատաստանին և միւսանգամ գալստեանն, էջ 355—6.

— Եղիշ. ննջ. Վասն յիշատակաց Մեռելոց ի կանոնաց գրոց, էջ 357—362.

— Եղիշ. կանոն. Կանոնք վասն դիւահարաց, էջ 363—368.

— Եղիշ. հոգ. Ճառ վասն հոգւոց մարգկան, էջ 369—376.

Եղիշ. ևս. Մեկնութիւն մարգարէութեան Եսայեայ (ըստ ՆՀՔ).

Եղիշ. ծն. Մեկնութիւն գրոցն Ծննդոց (ըստ ՆՀՔ).

Եղիշ. հրց. Եղիշէի վարդապետի Հարցմունք և պատասխանիք ի գիրս Ծննդոց. Վիեննա 1924.

Եպիփ. բարոյ. Ս. Եպիփանու կիպրացւոյ՝ համառօտեալ բարգմ. գրոցն, որ յաղագս բարոյից կենդանեանց և անկանց պատուականաց (տե՛ս Բար.)։

Եպիփ. Բաղ. կամ Բղմ. Նորին ի Բաղումն Տեառն. տե՛ս և Ճառընտ.

Եպիփ. յար. Նորին ի յարութիւն Տեառն (ըստ ՆՀՔ).

Եպիփ. կիպր. — Եպիփանի եպիսկոպոսի Կիպրացւոց Վասն նախապատիւ եկեղեցեաց (հլ. և յն.), հրտր. Ֆինկ, Թիֆլիս 1902.

Եպիփ. կիպր. ազ. — Եպիփանու եպիսկոպոսի Կիպրացւոյ Յաղագս երգոց Սաղմոսարանի (Սաղմոսի սկզբում, տե՛ս ՍԳր. տպ. Վենետիկ 1860, էջ 565—6). որ և առանձին գրքով՝ Պօլիս 1801, իբր շարունակութիւն Աթան. սղմ. էջ 55—69. (վերջին երեք էջը չունի Վենետկի աստուածաշունչը)։

Եպիփ. ծն. — Նորին Մեկնութիւն գրոցն Ծննդոց և Աւետարանի մինչև ի սկիզբն քարոզութեան Քրիստոսի. հին և ընտիր թարգմանութիւն (ըստ ՆՀԲ)։

Ես. — տե՛ս ՍԳր.

Ես. նչ. — տե՛ս Նչ.

Ես. պտմ. — Եսայի Աղուանից կաթողիկոսի Հասան-Ջալալեանց, Պատմ. համառօտ Աղուանից երկրի (1723 թ.) Երուսաղէմ 1868։

Եսթ. — տե՛ս ՍԳր.

Երազ. — Երազահան (ԺԴ դար). (ըստ ՆՀԲ).

Երգ. } տե՛ս ՍԳր.
Երեմ. }

Երզն. երկն. — Յովհաննու Երզնկացւոյ (ԺԴ դար) Յաղագս երկնից. տպ. Նախիջևան 1792 (էջ Բ—20).

Երզն. երկն. ուս. — Յովհաննու Երզնկացւոյ Յաղագս երկնային զարդուց ուսանաւոր. անդ՝ էջ 21—62.

Երզն. Ընդդ. — Յովհաննու վրդ. Երզնկացւոյ բան համառօտ բաղեալ յԱնանիայի վարդապետի գրոցն որ ընդդէմ Ընդդրակեցւոց. Արրտ. 1914, էջ 921—4.

Երզն. Ժ. խորան. — Յովհաննու Երզնկացւոյ Մեկնութիւն ասակս տասն խորանացն. տե՛ս Շնորհ. մտթ. էջ 5—15։

Երզն. յո. — Յովհաննէս վրդ. Երզնկացւոյ ասացուած ներբողական գովեստի ի Ս. Լուսաւորիչն Հայոց. Սոփերք հտ. ե, էջ 83—164. Վենետիկ 1853 (տե՛ս և Ներր. յորդ.)։

Երզն. խրատ. — Նորին խրատական վարդապետութիւն ի պէտս քահանայից և ժողովրդոց (ըստ ՆՀԲ)։

Երզն մտթ. — Մեկնութիւն Ս. Աւետարանին, որ ըստ Մատթէոսի (շարայարութիւն Ն. Շնորհալւոյ). տե՛ս Շնորհ. մտթ. էջ 107—625։

Երզն. պտճռ. — Նախադրութիւն բանի ի ցոյցս պատճառի հաւաքման մեկնութեան քերականին... Յովհաննու Երզնկացւոյ. տե՛ս Բր. քեր. էջ 82—91 (ներածութիւն).—Համմտ. նաև Երզն. քեր.։

Երզն. քեր. — Մեկնութիւն քերականութեան՝ կրկին. համառօտն... և բնդարձակն... (ըստ ՆՀԲ)։

*Եւագր. — Ս. Հօրն Եւագրի Պոնտացւոյ Վարք և մատենագրութիւնք. հրտր. Հ. Բ. Սարգիսեան, Վենետ. 1907 (մի մասը ոսկեդարեան)։

*Եւթաղ. — Մատենագրութիւնք Եւթաղի (ե դար), Վիեննա 1930։—Տե՛ս և ՍԳր.

Եւկղիդ. — Եւկղիդեայ կամ Եւկլիտիայ երկրաչափի... յաղագս Տարերաց երկրաչափութեանն... Բրգմ. երևի լինել Գրիգորի Մագիստրոսի (ըստ ՆՀԲ).—ԺԱ դար։

*Եւս. եմիս. — Եւսեբեայ Եմեսացւոյ դասական մնացորդները. հրտր. ՀԱ 1921, էջ 129—146 և 292—7։

*Եւս. աւետ.= } Եւսեբեայ Կեսարացւոյ Թուղթ առ Կարպիանոս վասն համաբարբառոյն Աւե-
*Եսս. կարպ. } տարանաց. յոյն բնագրով հրտր. Վարդանեան, ՀԱ 1928, էջ 291—302 և 387—400. արտատպ. իբր յաւել Եւթաղի, էջ 213—257։

*Եւս. պտմ. — Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ. Վենետիկ 1877.

*Եւս. քր. — Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանակագրութիւն (Քրոնիկոն). Վենետիկ 1818։

Եփես. — տե՛ս ՍԳր.

*Եփր. մատ. — Ս. Եփրեմի մատենագրութիւնք (ե դար. ոսկեդարեան, նաև ոչ-ոսկեդարեան. խառն.) Վենետիկ 1836.—Չորս հատոր. պարունակում է՝

— Եփր. ծն. — * Տնտութիւն յաղագս մեկնութեան Արարածոց. Ա. էջ 1—131.

— Եփր. ել. — * Մեկնութիւն Ելից. Ա. էջ 133—196.

— Եփր. դևտ. — * Մեկնութիւն Դևտացւոց. Ա. էջ 197—226.

— Եփր. Թուց — * Մեկնութիւն Թուոց. Ա. էջ 227—262.
— Եփր. օրին. — * Մեկնութիւն երկրորդ օրինաց. Ա. էջ 263—295.
— Եփր. յես. — * Մեկնութիւն Յեսուայ. Ա. էջ 297—322.
— Եփր. դտ. — * Մեկնութիւն Դատաւորաց. Ա. էջ 323—347.
— Եփր. թգ. — * Մեկնութիւն Ա և Բ թագաւորութեանց. Ա. էջ 349—412, Մեկնութիւն Գ և Դ թագաւորութեանց. Ա. էջ 413—460.
— Եփր. մն(աց). — * Մեկնութիւն Ա և Բ մնացորդաց. Ա. էջ 461—495.
— Եփր. համառ. — * Մեկնութիւն Աւետարանի համառօտաբար. Բ. էջ 5—260.
— Եփր. աւետ. — * Թարգմանութիւն Աւետարանի. Բ. էջ 261—345.
— Եփր. մրգ. — Ի մարգարիտն յայտնութեան. Բ. էջ 347—362 (ՆՀՔ խառնում է նախորդի հետ)։
— Եփր. յար. — Ցաղագս յարութեան. Բ. էջ 363—368.
— Եփր. փնս. — Ցաղագս որ ոչնի ղհարան, փեսայ նա է. Բ. էջ 369—429 (ՆՀՔ խառնում է Եփր. համառ. և աւետ.)։
— Եփր. հռ. — * Մեկնութիւն Թղթոյն Պօղոսի առ Հռովմայեցիս. Գ. էջ 4—50.
— Եփր. ա. կոր. — * Առ Կորնթացիս առաջին. Գ. էջ 51—85.
— Եփր. բ. կոր. — * Առ Կորնթացիս երկրորդ. Գ. էջ 86—115.
— Եփր. գ. կոր. — * Առ Կորնթացիս երրորդ. Գ. էջ 116—123.
— Եփր. գաղ. — * Առ Գաղատացիս. Գ. էջ 124—137.
— Եփր. եփես. — * Առ Եփեսացիս. Գ. էջ 138—153.
— Եփր. փիլիպ. — * Առ Փիլիպեցիս. Գ. էջ 154—164.
— Եփր. կող(ոս). — * Առ Կողոսացիս. Գ. էջ 165—173.
— Եփր. ա. թես. — * Առ Թեսաղոնիկեցիս առաջին. Գ. էջ 174—183.
— Եփր. բ. թես. — * Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ. Գ. էջ 184—193.
— Եփր. եբր. — * Թուղթ առ Հերրայեցիս. Գ. էջ 194—233։
— Եփր. ա. տիմ. — * Առ Տիմոթէոս առաջին. Գ. էջ 234—246.
— Եփր. բ. տիմ. — * Առ Տիմոթէոս երկրորդ. Գ. էջ 247—258.
— Եփր. տիտ. — * Թուղթ առ Տիտոս. Գ. էջ 259—265.
— Եփր. ծն. քս. — Ի Ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. Հտ. Դ. էջ 5—8, և Ներբողեան ասացեալ ի Ծնունդն Քրիստոսի Դ. էջ 9—34.
— Եփր. անընդ. — Ի գալուստն Տեառն ի տաճարն քառասնօրեայ և ի ծերունին Սիմէոն. Դ. էջ 35—44.
— Եփր. արմատ. — Ի գալուստն Փրկչին յերուսաղէմ և ի սուրբ տօնն բարեբանութեան. Դ. էջ 45—60 (ՆՀՔ դնում է նաև Եփր. ծղկդրդ. կամ Եփր. գալստ. ձևերով)։
— Եփր. յար. — Ի յարութիւն Փրկչին մերոյ. Դ. էջ 61—62.
— Եփր. այլակ. — Յայլակերպութիւն Տեառն. Դ. էջ 63—68.
— Եփր. խչ. — Ներբողեան ասացեալ ի Ս. Խաչն աստուածընկալ. Դ. էջ 69—78 (Պարիզի ղրշագրում ընծայուած է Կիւրեղ Ալէքսանդրացուն. ՆՀՔ քէն ցանկում դնում է Եփր. խչ., բայց վկայութիւնների մէջ դնում է Կիւրդ. խչ.)։
— Եփր. ճն. — Ճննովք և յեղիա. Դ. էջ 79—97 (ՆՀՔ շփոթում և շատ անգամ դնում է Եփր. աւետ.)։
— Եփր. յովս. — Առ Յովսէփ. Դ. էջ 98—106 (ՆՀՔ նախորդի պէս).
— Եփր. նին. — Ցապաշխարութիւնն Նինուէացւոց. Դ. էջ 107—124.
— Եփր. մակաբ. — Ի յիշատակի սրբոյ Մակաբայեցւոցն ասացեալ վասն կերակրոց զոր ուտեն հաւատացեալքն առողջ մտօք. Դ. էջ 125—128.
— Եփր. յհ. մկ. — Ներբողեան ասացեալ պատմագրաբար ի ս. Յովհաննէս Կարապետն և Մկրտիչ Յիսուսի Քրիստոսի և ի կաքաւումն Հերովդիադայ. Դ. էջ 129—142։
— Եփր. ստեփ. — Ի Ս. Ստեփանոս Նախավկայն Քրիստոսի. Դ. էջ 143—149.
— Եփր. վկ. արև. — տե՛ս վարը առանձին.
— Եփր. մեռ. — Ի յարութիւն մեռելոց. Դ. էջ 153—158.
— Եփր. դատաս. — Վասն դատաստանին և միւսանգամ գալստեան. Դ. էջ 159—167.
— Եփր. պհ. — Ցաղագս ապաշխարութեան ի պահս քառասնորդաց. Դ. էջ 168—178, և Յորդորումն պահոց, Դ. էջ 179—183.
— Եփր. ապաշխ. — Յորդորումն ապաշխարութեան. Դ. էջ 184—195 (ՆՀՔ դնում է Վրք. հց. կամ Եփր. գղջ.).

— Եփր. երաշտ. Յայն ճառէն որ վասն երաշտի և վշխատուաց. Դ. էջ 196—210 (ՆՀՔ դնում է երբեմն Եփր. երաշտ. և երբեմն Եփր. աւետար).

— Եփր. քն. Վասն քնոյ և արթնութեան. Դ. էջ 211—2.

— Եփր. հակ. Ի նոյն գրոց վասն հակողաց. Դ. էջ 213—4 (ՆՀՔ դնում է Ճառընտ).

— Եփր. խոն. Յաղագս խոնարհութեան. Դ. էջ 215—219.

— Եփր. մաքր. Վասն խորհրդոց մաքրութեան. Դ. էջ 220—223 (ՆՀՔ դնում է Եփր. խրատ.)

— Եփր. խր. Վասն պահոց և աղօթից. Դ. էջ 224—5.

— Եփր. աղ. Սրբոյն սրբոյ Եփրեմի խորին Ասորւոյ Աղօթք. Դ. էջ 227—276.

— Եփր. զղջ. Ճառ զղջման. Դ. էջ 277—279.

— Եփր. կտ. Ի կտակէն. Դ. էջ 279—280.

— Եփր. ննջ. Վասն ննջեցելոց. Դ. էջ 280—281.

*Եփր. գծ. Սուրբն Եփրեմ. Մեկնութիւն Գործոց առաքելոց. Վիեննա 1921.

Եփր. խոստ. Սրբոյն Աթանասի և Ս. Աբրայ Եփրեմի ասացեալ խոստովանութիւն. տե՛ս Գիրք աղօթից Եփրեմի Խուրին Ասորւոյ. Երուսաղէմ 1870, էջ 11—31.

*Եփր. յոբ. Սրբոյն Եփրեմի մեկնութիւն և սկիզբն Յորայ. ՀԱ 1912, էջ 666—674, արտատպ. Վարդանեան, Դասական մանր բնագիրներ, Վիեննա 1913, էջ 63—94.

*Եփր. վկ. արև. Եփրեմի Ասորւոյ Վկայք արևելից. էջմիածին 1921 (հրտր. Գալուստ Տ. Մկրտչեանի). սրա մէկ մասն է միայն՝ Պատմութիւն վարուց Ս. Շմաւոնի եպիսկոպոսի և ճառ ի վկայսն Արևելից. Վենետ. 1854 (Սոփերք հտ. Ի). իսկ սրա էջ 73—83 հատուածի համառօտութիւնն է Եփր. մատ. հտ. Դ. էջ 150—152։

Եփր. վս. ծն. Եփրեմի վասն ծննդեան. հրտր. Մատ, Тексты и разс. հտ. I.

Եօթնագր. Եօթնագրեանք կամ համարողական արհեստ... ի պէտս ախտարաց և իմաստակաց (ըստ ՆՀՔ)։

Զատկ. Վասն մոլորման զատկին բանք. Արրտ. 1892, էջ 963—973։

Զաք. տե՛ս ՍԳր.

Զգօն տե՛ս Մծբ.

Զեն. կամ Զենոբ. Զենոբ Գլակ. Պատմութիւն Տարօնոյ. Վենետիկ 1832.—է դար։

Զեն. անտ. Պատմութիւն Զենովբայ եպիսկոպոսի զոր արաբեալ է վասն Անտոնի և Կրօնիդեայ. Սոփերք, հտ. ժ, էջ 59—73. Վենետ. 1854. (քաղուած է բառացի նախորդից, բացի էջ 59—60, որ և բառաքաղել եմ ես էլ).—է դար։

*Զեն. գազիր. Զենոբ Գազիրացի և իր դասական մնացորդները. հրտր. ՀԱ 1922, էջ 73—79 (ե դար)։

*Զեն. յուդ. Երանելւոյն Զենոբայ Ս. եպիսկոպոսի ասացեալ ի մեծի չորեքշաբաթի աւուրն ընդդէմ Յուդայի մատնչի. Իւքիւտար 1855։—Աւելի լաւ հրատարակութիւն ունին ՀԱ 1921, 549—554 և Բազմ. 1922, բ. 7—10։

Զքր. տե՛ս ՍԳր.

Զքր. եպս. Զաքարիա եպս. Արտազու յիշատակագրութիւնք եպիսկոպոսաց Արտազու և Կեսարիոյ (1330 թուից. հանուած է Յովհաննէս Մաղարթեցուց և Ստեփաննոս Տարօնացուց). տպ. Սամ. անեց. էջ 279—283. տե՛ս Արրտ. 1869, էջ 103։

Զքր. ժործոր. Զաքարիայի եպս. Ժործորեցւոյ ի սկիզբն ԺՀ դարու թուղթ առ Յովհաննէս Օրբէլեան Սիւնեաց եպս. (ըստ ՆՀՔ)։

Զքր. կթ. Երանելւոյն Զաքարիայի հայոց կաթողիկոսի՝ ի Ը. դարու՝ բազմադիմի ճառք ի վերայ տէրունական տօնից և մեկնողականք Ս. Գրոց (ըստ ՆՀՔ)։

Զքր. սարկ. Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն (1699 թուից). Վղրշպտ. 1870.

Էլ. արիստ. Էլիասի իմաստասիրի Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի. հրտր. Յ. Մանանդեան, Պետերբ. 1911։

*Էր ընդ եղր. Հանդիսատ երանելւոյն Յովհաննու. հրտր. Հ. Յ. Դաթըրճեան Վիեննա 1877։

Էֆիմ. Գրգուկ, որ կոչի Էֆիմէրտէ. Յ-րգ տպ. Վենետիկ 1796 (թարգմ. Սարգիս արքեպս. Սահաֆեանի)—ԺԷ դար։

Թագ.
Թես. } տե՛ս ՍԳր.

Թէոդ(որ) Թէոդորոսի Քոթենաւորի (է դար) ճառք երեք. տե՛ս ՅՀ. խմբագր. Վենետ.

1833, էջ 145—182. այն է՝

—Թէոդ. մայրագ. Ընդդէմ Մայրագոմացոյն. էջ 147—158.

— Թէոդ. խշ. Ներբողեան ի Ս. խաչն աստուածընկալ. էջ 159—171.

— Թէոդ. կոս. Դավեստ ի Ս. Աստուածածինն և ի միշտ կոյսն Մարիամ. էջ 172—182.

Թէոփիլ. սկհ. և խ. մկ. Ճառք երկու ի վերայ պահոց և ի քառասուն մանկունս Սերաստիոյ, յորինուածք հին մաւենագրի, որ մնայ յերկբայս՝ հայազգի՞ իցէ, եթէ յունազգի. և այն յորո՛ւմ դարու (ըստ ՆՀՔ)։

Թլկր. Յովհաննէս Թլկուրանցին և իւր տաղերը. (ԺԵ—ԺՋ դար). հրտր. Կ. Կոստանեանց, Թիֆլիս 1892։

Թղթ. բար. տե՛ս ՍԳր.

Թղթ. դաշ. Դաշանց թուղթ. հրտր. Կ. Վ. Շահնազարեանց, Պարիս 1862, իբր յաւելուած «Դաշանց Քղքոց քննութիւնն ու հերքումը» գրքի, էջ 11—30։

*Թղ. պրոկղ. Թուղթ Պրոկղեայ եպիսկոպոսի առ Ս. Սահակ Հայրապետ Հայոց և առ Ս. Մաշտոց. հրտր. ՀԱ 1921, էջ 12—25.

Թոմմ. արծր. տե՛ս Արծր.

Թոմմ. մեծոր. տե՛ս Մեծոր.

Թուղց. տե՛ս ՍԳր.

Թր. քեր. Աբուսահլ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնութիւնք նորին. հրտր. Ադոնց. կամ Թրակ. քեր. Պետրոգրադ 1915, էջ 1—66. (Զ դար)։

Ժղ. ժող. տե՛ս ՍԳր.

Ժմ. Ժամագիրք Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ. Վզրշապ. 1903.

Ժմ. յն. Ժամագիրք և երգարան հայ հռոմոց՝ ի վաղուց թարգմանեալ ի հայ (ըստ ՆՀՔ)։

Ժղ. կամ Ժող. շիրակ. և հռոմկլ. Գործք և պատմութիւնք յաւուրս Ժողովոյն Շիրակվանու ի Բ դարու և Ժողովոյն Հռոմկլայու ի ԺԲ դարու (ըստ ՆՀՔ)։

Ժողովածու տե՛ս Ոսկեփորիկ.

*Իգնատ. Թղ. Թուղթք Կ. Իգնատիոսի աստուածազգեաց մարտիրոսի Անտիոքայ եպիսկոպոսի. Պօլիս 1783 (ՆՀՔ յիշում է Ածազգ. ձևով)։

Իգնատ. զկ. Մեկնութիւն Ս. Աւետարանին Ղուկասու՝ Իգնատիոսի վարդապետի. 1824 Համանփաշայ խան (Պօլիս).— ԺԲ դարու

Իմ(աստ). տե՛ս ՍԳր.

Իսիւք. յոր. Յսիքիոսի երիցու Երուսաղէմացւոյ Մեկնութիւն Յոբայ. Վենետ. 1913.

Իսիւք. կթ. Իսիքիոսի հատուածք Մեկնութեան կաթողիկէ Թղթոց. անդ՝ էջ 291—2.

Իսիւք. ածած. Իսիքիոսի յամենասբ. Աստուածածինն և ի միշտ կոյսն Մարիամ. անդ՝ էջ 293—303։

Իրեն. հերձ. Իրենիոսի ընդդէմ հերձուածոց. գերմ. թրգմ. Irenaeus, Gegen die Häretiker, Leipzig 1910.

Իրեն. ցոյցք Իրենիոսի ծոյցք առաքելական քարոզութեանն. գերմ. թրգմ. Des hl. Irenäus Schrift zum Erweise d. apost. Verk. Leipzig 1907.

Իրեն. փղոր. Իրենեայ ընդդէմ Փղորինոսի Թղթոյն հատուածք. հրտր. ՀԱ 1912, էջ 354.

*Լաբուրք. Լաբուրենայ թուղթ Աբգարու (=Ղեռուբնա Եդեսացի). Վենետ. 1868.

Լաստ. Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերտցւոյ. Վենետիկ 1844.—ԺԱ դար.

Լաստ. ընթերց. Մեկնութիւն ընթերցուածոց=Արիստակ? (ըստ ՆՀՔ).

Լծ. ածար.
Լծ. գր. ածար. ծն. } տե՛ս Ճառընտ.

Լծ. կաղր. Լուծմունք Եւագրի (ըստ ՆՀՔ).—1354 թուին։

Լծ. կոչ. Գրիգորի վրդ. Արշարունեաց եպիսկոպոսի արարեալ Մեկնութիւն ընթերցուածոցն Կիւրղի Երուսաղէմացւոյ. տպ. Պօլիս 1727, իբր յաւել. Կիւրղ. կոչ. ընծ.—այսպէս է համաձայնում ՆՀՔ սոյն գիրքը. համմ. մազակաձաչ 75, քանոտ 74, հոսանել 184, 185, հրձածեալ 7. պրշակ 80, սրմայլ, սրմակերպ 110, նէեստ 110—111, խորխ 144։ Սակայն ուրիշ է Արշ. որ տե՛ս։

Լծ. նաթ. Լուծմունք և բացայայտութիւնք բառից և բանից խրթնաժամուկ խորոց աղօթից... Նարեկացւոյ. տպագրած է ի վերջն Նարեկացւոյ. հրտր. Պօլիս ԲՃՄ=1700, էջ 145—216։

Լծ. պրպմ. Գրիգորի աշակերտի Յոհաննու Որոտնեցւոյ... Լուծումն Պարապմանց սրբոյն Կիւրղի. տպ. Պարապմանց գրոց վերջը, Պօլիս 1717, էջ 529—800.— ԺԴ դար.

Լծ. սահմ. Լուծմունք Սահմանացն Դաւթի Անյաղթ փիլիսոփայի. տպ. Պօլիս 1731՝ Գիրք Սահմանաց, էջ 206—286։

Լծ. փիլ. Լուծմունք Փիլոնի (ըստ ՆՀԲ).

Լմբ. Ներսէսի Լամբրոնացւոյ Աաենաբանութիւն, Թուղթ առ Լևոն Ճառ Հայրարձման և Ճառ Հոգևկալտեան. տպուած են Գրիգոր Տղայի նամակներում, Վենետ. 1865. վերջին Ճառը նաև տպ. Ճաշոց, Վղրշպտ. 1872, էջ 466—474 (ըստ ՆՀԲ համառօտագրեալ Լմբ. առ. հմբ. առիպ. առ լև).— ԺԲ դար։

Լմբ. աճած. Ներբողեան ի վերափոխումն ամէնօրհնեալ Աստուածածնին, առաջեալ ի Ներսիսէ. հրատ. ՀԱ 1925, 355—66 և 442—462։ (Նո՞յն է ՆՀԲ Լմբ. վերափոխ).

Լմբ. անառ. Ս. Ներսէսի եպիսկոպոսի Տարսոնի յառակս տէրունի, Յանառակ որդին. հրատ. ՀԱ 1928, էջ 127—135, 311—319։

Լմբ. առակ. Ն. Լամբրոնացւոյ Տեսութիւն Առակաց Սողոմոնի. գերմ. թրգմ. Erklärung der Spruchwörter Salomos, հրատ. Max. Leipzig 1919—21։

Լմբ. բննդ. կամ Լմբ. դր. պապ. Պարզ թարգմանութիւն ի յունէ կամ ի լատինէ, տրամախօսութիւն Մեծին Գրիգորի պապին, և Կանոնք սրբոյն Բենեդիկտոսի, յորմէ Ճառն խոնարհութեան ըստ մասին տպագրեալ է ի Հարանց վարս (ըստ ՆՀԲ)։

Լմբ. էր ընդ եգր. Տեսութիւն աղօթից պատմութեան բանից ննջման աստուածարան աւետարանչին Յոհաննու, արարեալ Ներսէսի Լամբրոնացւոյ. [Մեկնութիւն Հանգրստեան Յովհաննու, էր ընդ եգբարս]. տպ. Պօլիս 1736 (մեր Հանրային գրադարանի օրինակում պակաս էին էջ 19—20 և 29—30, որ չեմ տեսել)։

Լմբ. ժր. մարդ. Մեկնութիւն սրբոց երկոտասան մարգարէից, արարեալ երանելւոյն Ներսիսի Լամբրոնացւոյ... տպ. Պօլիս 1825. պարունակում է Ովս.=Մեկնութիւն Ովսեայ էջ 5—60, Ամովս.=Մեկն. Ամովսայ էջ 60—85, Միք.=Մեկն. Միքիայ էջ 85—104, Յովել.=Մեկն. Յովելեայ էջ 104—115, Աբդ=Մեկն. Աբդիու էջ 116—119, Յովն.=Մեկն. Յովնանու էջ 119—129, Նաւում.=Մեկն. Նաւումայ էջ 129—137, Ամբ. Ամբակ.=Մեկն. Ամբակումայ էջ 137—155, Սոփոն=Մեկն. Սոփոնիայ էջ 157—166, Անգ.=Մեկն. Անգեայ էջ 166—175, Զաք.=Մեկն. Զաքարիայ էջ 175—228, Մաղաք.=Մեկնութ. Մաղաքեայ էջ 229—241։

Լմբ. ժղ. Մեկնութիւն ժողովողի. հրատ. Max, Erklärung d. Versammlers (Predigers), Leipzig 1929։

Լմբ. իմաստ. Մեկնութիւն Իմաստութեան Սողոմոնի (ըստ ՆՀԲ).

Լմբ. հաւատ. Ն. Լամբրոնացւոյ Մեկնութիւն Հաւատամքի. հրատ. ի խորհրդածութիւն Սրբազան Պատարագի. Երուսաղէմ 1842, էջ 52—65 (պակասում է Վենետկի հրատարակութեան մէջ՝ որ է Լմբ. մատ.—ըստ ՆՀԲ=Լմբ. հանգ).

Լմբ. մատ. Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և Մեկնութիւն խորհրդոյ պատարագին. Վենետիկ 1847 (=Լմբ. պտրգ. ըստ ՆՀԲ)։

Լմբ. յայտ. Մեկնութիւն Յայտնութեան Ս. Աւետարանչին Յովհաննու, արարեալ Տ. Անգրէի և Արիստասայ եպիսկոպոսացն Կեսարու. թրգմ. ի յոյն բնագրէ և սրբոգրեալ Տ. Ներսէսի արքեպս. Տարսոնի Կիլիկեցւոց. Երուսաղէմ 1855.

Լմբ. շն(որհ). Ն. Լամբրոնացւոյ Գովեստ ներբողական յաղագս վարուց... Ներսիսի Կայեցւոյ. տպուած է ի Թուղթ ընդհանրական Ն. Շնորհալւոյ, էջմիածին 1865, էջ 461—497։

Լմբ. ոսկ. Ն. Լամբրոնացւոյ... Պատասխանի Ոսկան արքեպիսկոպոսի Հռոմայ ի մեծն Անտիոք. տպ. ի խորհրդածութիւն Ս. Պատարագի, Երուսաղէմ 1842, էջ 21—27 յաւել.

Լմբ. սղ. Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի. դործ մեծահատոր (ըստ ՆՀԲ).

Լմբ. տաղ. Տաղք ի տօնս սրբոց և ի տէրունականս... յայտնի են և գեղեցիկ շարականք (ըստ ՆՀԲ)։

Լմբ. տնտես. Հատ ի Տնտեսն՝ ըստ Ղուկայ (ըստ ՆՀԲ).

Լմբ. օր. Քաղաքային Օրէնք Ներսիսի Լամբրոնացւոյ. հրտր. Բասմաչեան, Պարիս 1907 (նոյն է Ասոր. դատ.)։

Խիկար. Խրատք պիտանիք և օգտակարք, զոր ասացեալ է Խիկարայ իմաստնոյ. տե՛ս Պղնձ. էջ 92—136։ (Լաւագոյն հրատարակութիւն է համարում Conybeare, The story of Ahikar, London 1898, *ոչ չեմ տեսած*)։

Խլաթ. յիշ. Յիշատակարան աղէտից Գր. Խլաթեցւոյ. Վղրշպտ. 1897 (արտատ. Արարատից)։—Ժե դար։

Խոսր. Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն ժամակարգութեան (կարգադրեալ Մովսէսի գիտնական վարդապետի). Պոլիս 1840 (ըստ ՆՀԲ Խոսր կամ ի գիրս խոսր.) ԺԹ դար։

Խոսր. պտրգ. Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն աղօթից Պատարագին. Վենետիկ 1869.—Ժ դար։

Խոսրովիկ. Խոսրովկայ Բարգմանչի Հայոց Հատուած մը. հրտր. Տաշեան, Մատեն. մանր ուսումն. հտ. Ա, էջ 69—75.

Խրվկ. Խոսրովիկ Բարգմանիչ. հրտր. Գ. վ. Յովսէփեան, Վղրշպտ. 1899.—Ը դար.

Խրվկ. քոս. Բան վարդապետութեան յաղագս քառասնորդացն, ասացեալ տեառն Խոսրովայ. հրտր. ՀԱ 1904, էջ 310—316.—Ը դար.

Խոր. մատ. Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք. ր. տպ. Վենետ. 1865. պարունակում է՝

— Խոր. Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. էջ 1—277, որի հետ ուր հարկն է համեմատել եմ նրա քննական հրատարակութիւնը՝ Թիֆլիս 1913 (Մ. Աբեղեան, անուանապէս նաև Ս. Յարութիւնեան)։

— Խոր. պտմ. ածած. Թուղթ Սահակայ Արծրունեաց իշխանի առ Արանելի վարդապետն Մ. Խորենացի և պատասխանի թղթոյն Սահակայ... վասն փոխման Աստուածածնին... կամ թէ յումմէ բերաւ ի Հայս. էջ 281—296։

— Խոր. պտմ. հռիփ. Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանց, էջ 297—303.

— Խոր. ճառ հռիփ. Ի յիշատակի Ս. Հռիփսիմեայ... Ներբողեան. էջ 304—325.

— Խոր. վարդ. Յաղագս Վարդավառին խորհրդոյ. էջ 326—338.

— Պիտ. Յաղագս պիտոյից. էջ 339—581.

— Խոր. աշխ. Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ, էջ 583—616։ Առանձին հրատարակութիւն ունի Պատկ. Армянская географія, СП 1877, ռուս թարգմանութեամբ և բազմաթիւ մեկնութիւններով։ Ուրիշ խմբագրութիւն է Սուքրեան հրատ. Վենետ. 1881, ֆրանսերէն թարգմանութեամբ միասին։

Խոր. բնութ. Երանելոյն մեծի Քերթողահօրն Մովսէսի եպս. յաղագս ի յոլովից կատարեալ կենդանի, ընդէ՞ր մի բնութիւն. տես Սամ. անեց. էջ 255—261։

Խոր. իմաստ. Մովսեսի Խորենացւոյ Բան իմաստութեան. տես Թր. քեր. էջ 64—65 (ներածութիւն)։

Խոր. տպնկ. Ի մեծի աւուր տապանակին երանելւոյն Մովսէսի Խորենացւոյ սուրբ և ընտրեալ վարդապետի արարեալ որ ի Կարինաքարիմ որ բերէ զտօն վարդավառի. Սոփերք, հտ. ԺՀ էջ 71—86. Վենետ. 1854.

Մն. տե՛ս ՍԳր.

Կալիսթ. տե՛ս Պտմ. աղեքս.

Կամրկ. Սիմէոն Կամրկապցի (ԺէԴար). ունի բուսաբանական բառեր (ըստ ՀՒռա)։

Կամրջ. Սամուէլի Կամրջաձորեցւոյ... տօնական բանք իբրու մեկնութիւն ընթերցուածոց (ըստ ՆՀԲ).—Ժ դար։

Կանոն. Կանոնագիրք Հայոց. հրտր. Արսէն Ղլտճեան, Թիֆլիս 1914 (ուր որ էջերը չեն նշանակուած՝ աղբիւրը ՆՀԲ է).—մի մասը ոսկեդարեան։

**Կանոն առաք.* Վարդապետութիւն առաքելոց. Անվաւերական կանոնաց մատեանը. հրտր. Տաշեան, Վիեննա 1896, էջ 289—358 (Ե դար)։

Կանոնք Թադէի (Թ դարշ). հրտր. անդ՝ էջ 392—425.

*Կանոնք սահ. Կանոնք Ս. Սահակայ (տպուած նաև Կանոն.) Սոփերք, հտ. Բ. էջ 69—134. Վենետ. 1753.

Կեչառ. Ներշաւուր Կեչառուեցւոյ Բարառնութիւնք ի մահն Աղեքսանդրի. տե՛ս Կալիխթ.=Պտմ. աղեքս. էջ 187—198 (ԺՆ դար).

Կեչառ. աղեքս. տե՛ս Պտմ. աղեքս.

Կիր. (պտմ.) Կիրակոս Գանձակեցւոյ Պատմութիւն. Վենետիկ 1865 (ԺԴ դար)։

Կիր. ը խ.
Կիր. երզն. խր.
Կիր. Հ.
Կիրակոս վարդապետի Երզնկացւոյ կամ Արևելցւոյ... տեսութիւն ութ խորհրդոց մահուչափ մեղաց՝ ըստ ընթացից Նեղոսի և Եւագրի, որպէս և ուրոյն բացատրութիւն հարիւրհկաց Եւագրի, և այլ հառ խրատական, և Յաչմաւուրք հայոց՝ իւիք իւիք յապաւմամբ և յաւելուածով։ Սորա է և շաբաթանն Արևելք գերարփին (ըստ ՆՀՒ).—ԺԴ/ԺԴ դար։

Կիւրիոն առ արր. Թղթակցութիւն ի մէջ Կիւրիոնի վրաց կաթողիկոսի և Աբրահամու հայոց կաթողիկոսի (ըստ ՆՀՒ).—տե՛ս Ուխտ. և Դիրք Քղ. (Զ դար)։

Կիւրղ. դանձ. Ս. Կիւրղի Աղեքսանդրացւոյ Դիրք Դանձուց՝ զօրաւոր ձեռնարկութեամբք ընդդէմ Արիանոսաց, Նեստորեանց և Հոգեմարտից. հին թարգմանութիւն ընտիր (ըստ ՆՀՒ)։

Կիւրղ. հանդ. և թղթ. Մեկնութիւն Նիկիական հանգանակի կամ հաւատոյ իրրու թուղթ առ միայնակեացս. թո՛ղ զայլ թուղթս նորա առ զանազանս (ըստ ՆՀՒ)։

Կիւրղ. խչ. տե՛ս Եփր. խչ.

Կիւրղ. կուս. Ճառ ի վերայ ս. կուսի Աստուածամօր (ըստ ՆՀՒ)։

*Կիւրղ. ծն. եւ... մինչև թգ. և մն. Մեկնութիւն Աստուածաշունչ Ս. գրոց, ընտիր թարգմանութեամբ նախնեաց (ըստ ՆՀՒ)։

Կիւրղ. կոստ. Կիւրղի Երուսաղէմացւոյ Թուղթ առ Կոստանդ կայսր. տե՛ս Լծ. կոչ. էջ 197—201 (նոյնը նաև Ճաշոցում.—ՆՀՒ դնում է Կիւրղ. Եպմ. Թղթ.)։

Կիւրղ. ղկ. (Կիւրղի Աղեքսանդրացւոյ) Մեկնութիւն Աւետարանին ըստ Ղուկասու (ըստ ՆՀՒ)։

Կլիմաք. Յովհաննու Կլիմաքեայ կամ Կլիմաքոսի ի Զ դարու... դիրք կրօնաւորական առաքինութեանց՝ ըստ անուանն իւրում Սանդուխք կոչեցեալ... թարգմանութիւնն յանյայտ ժամանակի (ըստ ՆՀՒ)։

Կղկնտ. Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից. տպ. Մոսկվա 1860 (միահատոր հրտր. Էմինի) և Փարիզ 1860 (երկհատոր հրտր. Շահնազարեանի). հետևել եմ Էմինի գլխահամարներին, բայց նշանակել եմ նաև Փարիզի տպագրութեան տարբերակները —Ժ դար։

Կնիք հաւ. Կնիք հաւատոյ. տպ. Էջմիածին 1914.—Է դար։

*Կոդր. Թուղթ Յակորու առ Կոդրատոս. հրտր. Տաշեան, Վարդապետութիւն առաքելոց (=Կանոն առաք.), էջ 386—391 (Ե դար)։

Կող. տե՛ս ՍԳր.

*Կոչ. Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան. Վիեննա 1832 (Ե դար)։

Կոստ. երզն. Կոստանդնի երզնկացի և իւր քերթուածները. հրտր. Հ. Մ. Պոտուրեան. Վենետիկ 1905 (ԺԴ դար)։

Կոր. ա. բ. տե՛ս ՍԳր.

*Կոր(իւն) Կորիւն վարդապետի Պատմութիւն Ս. Մեսրոպայ (տե՛ս Կորիւն, Մամբրէ, Դաւիթ). Վենետ. 1833 (Ե դար)։

Կորիւն (փոքր) Կորիւն վարդապետի Պատմութիւն Ս. Մեսրովբայ. Սոփերք, հտ. ԺԱ. Վենետիկ 1854։

Կրպտ. ոտ. Կարապետ վարդապետի ուսանաւոր ի խրատ մանկանց ի վերայ այբ-բենի (ըստ ՆՀՒ).—ԺԴ/ԺԵ դար։

Կրպտ. սարգ. Կարապետ վարդապետի Ճառաչաբանութիւն և նախազրութիւնք Սարգսի Շնորհալւոյ Մեկնութեան եօթանց Քղթոց կաթուղիկեայց. տե՛ս Սարգիս Շնորհալի, Գոլիս 1826—8, էջ 5—9 և 673—691 (ԺԴ դար)։

Հ. Հ=Յ. տե՛ս Յայտաւուրք (ըստ ՆՀՒ)։

Հ. կիրակ. Յայտաւուրք Կիրակոս վարդապետի Արևելցւոյ (ըստ ՆՀՒ)։

Համամ. առկ. — Համամայ արևելեան վարդապետի ի Թ և ժ դարու, Մեկնութիւն առակացն Սողոմոնի (ըստ ՆՀՔ)։

Համամ. յովէդ. — Որպէս և յո՞վ է դա գլուխն Յովբայ (ըստ ՆՀՔ)։

Համամ. քեր. — Համամայ արևելցւոյ Մեկնութիւն քերականին. հրտր. Թր. քեր. էջ 253—285։

Հայնէլ. — Գիրք Հայնէլի վարուց, որ ասի. Հարանց վարք. 1702.

Հարցնափառ. կամ Փառեր. — Գործ նախնեաց՝ որպէս համառօտ հարցեր կամ շարականներ, գտեալ ի հին գիրս երգոց (ըստ ՆՀՔ).

Հաւաք. — Հաւաքաբան անուանց կաթուղիկոսաց Աղթամարայ. տպ. էջմիածին 1916։

Հիթ. ժմնկ. — Ժամանակագրութիւնք պարոն Հիթմոյ. տպուած է ի Հիթում պատմիչ Թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ Հ. Մ. Աւգերեան, Վենետ. 1842, էջ 77—86.—ՆՀՔ համառօտագրում է Հիթմ. պատմ.—1307 թուիցն։

Հիթմ. ոտ. — Ոտանաւոր արքային Հիթմոյ երկրորդի՝ իբրև յիշատակարան Աստուածաշնչի գրելոյ յիւր պէտս, ուրցրի և վէճն Սոսղատկի (ըստ ՆՀՔ)։

Հիրձ. — Հիրձուածողք երեսիք. հրտր. Տաշեան. Մատենդ. մանր ուսումն. հտ. Ա. էջ 115—146. Վիեննա 1895.

Հին բռ. — Հաւաքումն բառից ի գրչագիր համառօտ բառագիրս, գործ ԺԴ և ԺԴ դարուց (ըստ ՆՀՔ)։

Հին լծ. եւագր. — Ընդարձակ լուծումն գրոց Եւագրի ի Գրիգորէ Սկևռացւոյ, ուրոյն ի համառօտ լուծմանց յետնոց (ըստ ՆՀՔ).—ԺԴ դար։

Հին. քեր. — Զանազան քերականական գրուածքներ (ըստ ՆՀՔ)։

Հռ. Հռովմ. Հռոմք. — տե՛ս ՍԳր.

Հց. աթ. — տե՛ս Աթան։

Զաք. — Սահմանք Զաքարիայ ժողովոյ. Շողակաթ, էջ 22—46։

Վերուբ. — տե՛ս Վարուբ.

Վհ(ոնդ) — Պատմութիւն Վահնդեայ մեծի վարդապետի Հայոց. Պետերբ. 1887 (Ը դար)։

Վեստ. Վկ. Վուկ. — տե՛ս ՍԳր.

Ճառընտ. — ՆՀՔ դնում է Ճ. համառօտագրութեամբ զանազան ձեռագիր Ճառընտիրներ։ Ես գործածել եմ Գիրք և Ճառ հոգեշահ արարեալ յուղղափառ և յաստուածաբան վարդապետաց. Պոլիս ՌՃՀԱ=1722. պարունակում է՝

— Գր. ածաբ. ծն. — Ճառ Գրիգորի աստուածաբանի ասացեալ ի ս. Մնունդն Քրիստոսի. էջ 7—28։

— Լծ. գր. ածաբ. ծն. — Լուծմունք նորին. էջ 29—48.

Սիր. ոնընդ. — անդ, էջ 49—65. (տե՛ս Սիր. մատ. Դ. էջ 35—44)։

— Մծբ. աստղ. — Յակոբայ Մծբնայ եպս. Ճառ յաղագս աստեղն և մոգուցն և մանկանցն Բեթղեհեմի. էջ 66—125.

— Սրճ. ղզր. — Յակոբայ Սրճոյ եպս. Ճառ ի գալուստ Փրկչին ի Բեթանիա և ի յարութիւնն Ղազարու. էջ 126—143.

— Սիր. արմաւ. — անդ, էջ 144—170 (տե՛ս Սիր. մատ. Դ. էջ 45—60)։

— Սրճ. չրշր. — Յակոբայ Սրճոյ եպս. Ճառ ի յօր մեծի ուրբաթին չարչարանաց Տեառն... և յաւազակն. էջ 170—203.

— Նիւս. բաղ. — Գրիգորի Նիւսացւոյ Ճառ ի Բաղումն Տեառն Յիսուսի Քրիստոսի և ի Յովսէփ Արեմաթացին. էջ 204—227.

— Սալիփ. բաղ. — Սալիփեանու Կիլիկացւոյ Ճառ ի Ս. Բաղումն Քրիստոսի և ի Յովսէփ Արեմաթացին. էջ 228—257.

— Սրճ. յար. — Յակոբայ Սրճոյ եպս. Ճառ ի ս. յարութիւնն Տեառն Յիսուսի Քրիստոսի և ի վինուրան որք պահէին զգերեզման նորա. էջ 258—288.

— Սրճ. զատկ. — Յակոբայ Սրճոյ եպս. Ճառ ի Ս. Զատիկն Քրիստոսի. էջ 289—302.

— Սիր. յհ. մկ. — Անդ. էջ 303—323 (տե՛ս Սիր. մատ. Դ. էջ 129—142)։

— Սրճ. նոր. կիր. — Յակոբայ Սրճոյ եպս. Ճառ ի նոր կիրակէն և ի Ս. Առաքեալ Թովմաս. էջ 324—344.

— Սրճ. համբ. — Յակոբայ Սրճոյ եպս. Ճառ ի համբարձումն. էջ 345—370.

— Սրճ. խորհ. — Յակոբայ Սրճեցւոյ Ճառ յաղագս հին խորհրդոյ և օրինակաց Տեառն մերոյ, որ ի մարգարէսն և ի նահապետսն գուշակեցաւ. էջ 371—387.

— Սրճ. տապան. Յակոբայ Սրճեցւոյ Ճառ ի խորհուրդ տապանակին. էջ 388—410.
— Եփր. այլակ. անդ, էջ 411—426 (տես Եփր. մատ. Դ. էջ 63—68).
Սրճ. ածած. Յակոբայ Սրճեցւոյ Ներբողեան ի ննջումն Ս. Աստուածածնին. էջ 427—441 (սրան յաջորդում են Դաւիթ Անյաղթի խաչի ճառը և Տեսիլ Ս. Սահակայ, որ տե՛ս Դաւ. անյ. և Փարպ.)։
Ճշ. Ճաշոց գիրք Հայաստանեայց եկեղեցւոյ. Վաղարշապատ 1872.
Մագ. Գրիգոր Մագիստրոս (ԺԱ դար), որի գործերն են՝
Մագ. Թղ. Գրիգոր Մագիստրոսի Թղթերը. հրատ. Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապոլ 1910.
Մագ. ատ. Տաղասացութիւնք Գր. Մագիստրոսի Պահլաւունւոյ. Վենետ. 1868, որի մէջ են՝
Մագ. Մեծ են Մեծ են գործք աստուածային, էջ 1—79.
Մագ. Խչ. Ներբողեան ի ս. Խաչն քրիստոսընկալ. էջ 80—88 (մնացեալը տե՛ս Մագ. Թղ.)։
Մագ. քեր. Գր. Մագիստրոսի Մեկնութիւն քերականին. տե՛ս Արուեստ Դիոնիսեայ քերականի. Պետրոգրադ 1915, էջ 223—249։
Մագ. գամագտ. Դրիգորի Մագիստրոսի Գամագտականի ամբողջական լուծում. Հ. Գ. Մէնէվիշեան, Վիեննա 1912 (արտատպ. ՀԱ 1911)։
Մակ. տե՛ս ՍԳր.
Մահ մարգ. կամ նահապ. (Եպիփանու) Համառօտ պատմութիւն կատարման սրբոց մարգարէից կամ նահապետաց (ըստ ՆՀԲ)։
Մաղաք. տե՛ս ՍԳր.
Մաղաք. ար. Մաղաքիայ արեղայի Պատմութիւն վասն ապին նետողաց. Պետերբ. 1870. (Նոյն թուին տպուեց նաև Երուսաղէմում «Պատմութիւն քաթարաց», վարդան պատմչի անունով, ուելի ընտիր, որ և համեմատութեան առիթ).— ԺԳ դար։
Մամբր. Մամբրէի վերծանողի Ճառք. (տե՛ս Կորիւն, Մամբրէ, Դաւիթ). Վենետ. 1833.—աւելի լաւ է տպ. Բ. 1894—ե դար.
Մամիկ. Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ. Վենետ. 1832.—է դար։
Մայրագ. Յովհան Մայրագոմեցւոյ Ճառք. Շողակաթ, էջ 114—136.—է դար։
Մանաս. տե՛ս ՍԳր.
Մանդ. Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի Ճառք. ը տպ. Վենետիկ 1860 (ե դար).
Մանդ. սիր. Յովհան Մանդակունի, Ճաղագս սիրոյ և սրբութեան, որով պտղաբերին արարածք. հրատ. Գ. Տ. Մկրտչեան, Վղրշպտ. 1903 (արտատպ. Արարատից՝ 1903, էջ 562—784)։
Մանրուս. Մանրուսումն, հրատ. Արարատ 1894։
Մաշկ. Գիրք աղօթից ղղեականաց՝ Գրիգորի իմաստասէր վարդապետի Մաշկուտի (+1114).—(ըստ ՆՀԲ)։
Մաշտ. Մաշտոց (փոքր) յորում աւանդին սրբազան արարողութիւնք աղջիկ. էջմիածին 1894.
Մ. Մաշտ. Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ. տպ. Պոլիս 1807.
Մ. Մաշտ. (1714) Մայր Մաշտոց. տպ. Պոլիս 1714.
Մաշտ. կիլիկ. Մաշտոցի մէջ Կիլիկեան յաւելուածներ (ըստ ՆՀԲ)։
Մաշտ. ջահկ. Մաշտոց լատինացւոց Քարոզմանեալ յՈնիբոռաց Ջահկեցւոց՝ ի ԺԴ դարու (ըստ ՆՀԲ)։
Մարաթ. Վարդանայ Մարաթացւոյ ծերունւոյ ի ԺԴ կամ ԺԴ դարու Աղօթամատոյց գիրք ի պէտս տնօրինական տեղեաց Երուսաղէմի (ըստ ՆՀԲ).
Մարթին. Այն է Ջրա Մարթին՝ Փոյթ պատմիչ կոչեցեալ, որ ճառէ զկայսերաց և զքահանայապետաց Հռովմայ՝ անհարթ ոճով ի լատին բարբառ... ոչինչ ընդհատ է և հայ թարգմանութիւնն ներսեսի Պալիանց ունիքոռի ի ԺԴ դարու (ըստ ՆՀԲ)։
Մարտ. ղրիմ. Մարտիրոս Ղրիմեցի և իր քերթուածները. հրատ. Պատուրեան, Պուքրէշ 1924—30 (չեմ տեսած).—ԺԷ դար.

Մաքս. ի դիոն. Ս. Մաքսիմոս արքայ Կոստանդինուպօլսեցի ի է դարու, քաջ մեկնիչ գրոց Ս. Դիոնեսիոսի Արիսպագացւոյ. թարգմանեալ զոյգ ընդ նմին մատենի ի Ը դարու ի Ստեփաննոսէ Սիւնեցւոյ (ըստ ՆՀՔ)։

Մաքս. եկեց. Նշանակութիւնք կամ խորհրդածութիւնք ի վերայ եկեղեցւոյ, թարգմանեալ անհնեթէ և անիմանալի ոճով յանյայտ ժամանակի՝ թերևս ի հայ հեռումոց (ըստ ՆՀՔ)։

Մեծոփ. Թուվմա վրդ. Մեծոփեցւոյ Պատմութիւն Լանկթամուրայ և յաջորդաց իւրոց. Փարիզ 1860 (ԺԸ դար)։

Մեծոփ. յիշ(ատ). Թուվմա Մեծոփեցու յիշատակարանը (հրտր. Կ. Կոստանեանց). Թիֆլիս 1892 (ԺԸ դար)։

Մեկն. ընթերց. տե՛ս Արշ. Ճ. իմ. լատ. և յն. կոչ.

Մեկն. ծն. Մեկնութիւն գրոցն ծննդոց՝ որպէս շղթայ հաւաքեալ ի բանից նախնեաց (ըստ ՆՀՔ)։

Մեկն. կթղ. տե՛ս Սարգ. և Շնորհ.

Մեկն. ղևտ. Մեկնութիւն գրոցն Ղևտացւոց՝ շղթայ, ի յունէ թարգմանեալ ի վաղուց՝ անհարթ հայկաբանութեամբ (ըստ ՆՀՔ)։

Մեկն. ղկ. Մեկնութիւն Աւետարանին Ղուկայ՝ շղթայ հաւաքեալ ի ձեռն իմաստուն վարդապետի ուրումն ղկնի Իգնատիոսի՝ ի դրոց յունաց և հայոց (ըստ ՆՀՔ)։

Մեսր. եր. Պատմութիւն Ս. Ներսէսի Պարթևի հայոց հայրապետի. Սոփերք, հտ. Զ. Վենետ. 1853.—Ժ դար։

Մեսր. տաթև. Մեսրոպ վարդապետի ասացեալ ոտանաւոր առ Ս. Գր. Տաթևացի. հրտր. Տաթև. ամ. էջ 719—20.—ԺՆ դար։

Միխ. ատ. Միխայէլի Ասորւոյ ժամանակագրութիւն. Երուսաղէմ 1870 (ԺԴ դար. Բրգմ. 1246 թ)։

Մին. համդ. Մինաս վարդապետի Համդենցւոյ Ազգաբանութիւն Հայոց. Վղրշպտ. 1870.

Միս. խշ. Երանելոյն Միսայէլի եպիսկոպոսի Մեծի կոդմանցն և Քուստիփաննեայ նահանգին ի Ս. խաչն Քրիստոսի (ըստ ՆՀՔ Միսայ. խշ.). հրտր. Բազմ. 1911, էջ 258—265.—Ի դար։

Միք. տե՛ս ՍԳր.

Մխ. աղ. Համառօտութիւն աղօթից... Մխիթարայ Գօշի...ասացեալ ի Ս. Պատարագին. հրտր. Նարեկ, Զմիւռնիա 1870, էջ 468—72։

Մխ. այրիվ. Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական. Ս. Պետերբ. 1867։—ԺԴ դար։

Մխ. անեց. Մխիթարայ Անեցւոյ Պատմութիւն. հրտր. Ք. Պատկանեան, Պետերբ. 1879. իբր յաւելուած Սերէոսի.—ԺՐ դար։

Մխ. ապար. Մխիթարայ ապարանցւոյ կամ Ծրա Մխիթարչի յԱպարանիր գիղէ և ի վանաց Քահկեցւոց ունիթորաց, ի սկիզբն ԺՆ դարու, ինքնագիր Տրամախօսութիւն կամ վիճաբանութիւն ի վերայ հաւատոյ և կրօնից (ըստ ՆՀՔ)։

Մխ. առ. Առակք Մխիթարայ Գօշի և Ոզիմպիանու. Վենետ. 1854.—ԺՐ դար։

Մխ. բժշ. տե՛ս Մխ. հեր.

Մխ. դտ. Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց. հրտր. Վ. Ժվ. Բաստամեան. Վղրշպ. 1880.—ԺՐ դար։

Մխ. երեմ. Մեկնութիւն նորին ի Մարգարէութիւնն Երեմիայ (ըստ ՆՀՔ)։

Մխ. հեր. Մխիթարայ բժշկապետի Հերացւոյ Քերմանց Մխիթարութիւն. Վենետ. 1832.—ԺՐ դար։

**Մծբ.* Գիրք որ կոչի Զգօն, արարեալ Ս. Յակոբայ երից երանելոյ հայրապետին Մծբին քաղաքի. Պօլիս 1824 (Ե դար)։

Մծբ. աստղ. տե՛ս Ճառընտ.

Մկ. մեծոփ. Պատմութիւն հաւատոյ և համառօտ Մխիթար վարդապետի. տե՛ս Մխիթար Սասնեցի, հրտր. Գ. վ. Յովսէփեան, Վղրշպտ. 1899, արտատպ. Արարատից էջ 27—32.—ԺԴ դար։

**Մնաց.* Նորագիւտ Գիրք Մնացորդաց. հրտր. Խալաթեան. Մոսկ. 1899. տե՛ս և ՍԳր.

Մոլութ. Գիրք մոլութեանց, անդրածեցեալ ի լաթինականէն ի հայ բարբառ. դորձ Ունիթորաց ԺԴ դարու. հրտր. Մխիթար արբա, Վէնէտիկ 1720։

Մովս. երգն. Մովսէսի վրդ. Երգնկացւոյ յաւելուածք ի Մեկնութիւն ժամագրոց՝ որ ի Խոսրովայ, ի ԺԴ թերևս դարու, և այլ գործ ընդարձակ որպէս տօնական՝ Ոսկիփորիկ անուանեալ ի յօրինողէն (ըստ ՆՀԲ)։

Մովս. քերթ. տե՛ս Խոր. Պիտ. Քեր. Քերթ.

Մտթ. տե՛ս ՍԳր.

Մտթ. ևագր. Մատթէոս վարդապետի... Դիրք ուիթն խորհրդոց մեղաց արարեալ Ս. Հօրն Եւագրեալ. Պօլիս 1750.—ԺԴ դար։

Մտթ. ներբ. Նորին Ներբողեան ողբերգաբար, ոգեալ ի թաղումն... Գրիգորի (Տաթևացւոյ)... անդ, էջ 148—185.—ԺԴ դար։

Մտթ. գծ. Նորին Մեկնութիւն Գործոց առաքելոց, որից մի հատուած՝ անդ. էջ 187—190.—ԺԴ դար։

Մրկ. տե՛ս ՍԳր.

Յայսմ. Յայսմաւուրք. տպ. Պօլիս 1706.

*Յայտ. Յայտնութեանն Յովհաննու հին հայ թրգմ. Երուսաղէմ 1905—1911. տե՛ս և ՍԳր.

Յես. տե՛ս ՍԳր.

*Յերոն. Յերոնիմեայ վանն ի քսան և չերկուս գիրս առ ի Հերրայեցւոց զպատմութիւնն բաժանելոյ. Վիեննա 1920 (արտատպ. ՀԱ).—Ե դար.

Յիշատ. Յիշատակարաններ զանազան ձեռագրերի, որոնք հրատարակուած են զանազան գրքերում. ամէն անգամ յիշատակելով տեղը. ինչ. Հնոց և Նորոց, էջ 116—134 են են։

Յիշ. թաթ. Յիշատակ սուրբ հօրն Թաթևոյ, Վարոսի և Թովմասու, Սուփերք, հտ. ԺԱ. էջ 47—59. Վիեննա. 1854։

Յկ. տե՛ս ՍԳր.

Յակ. Խոխ. Յակոբ Խոխաթեցւոյ Ոդր ի վերայ երկրին Օլախաց. ՀԱ 1932, էջ 337—348։

Յկ. կր. Յակովբ Կարնեցի, Տնղագիր Վերին Հայոց. Վղրշպտ. 1903.—ԺԷ դար։

Յկ. զրիմ. տե՛ս Տոմար.

ՅԿ. տե՛ս ՍԳր.

ՅԿ. արճիշ. Յօհաննու Արճիշեցւոյ Մեկնութիւն առաւել խորհրդոյ ս. պատարագին. էջմիածին 1860.—ԺԴ դար։

ՅԿ. գառն. Յովհաննէս Գառնեցւոյ աղօթք. տե՛ս Գիրք աղօթից Սիրեմի Խուրին Ասորւոյ, Երուսաղէմ 1870, էջ 181—5, 200—3, 220—3, 240—3, 263—9, 284—7, 303—8։ Առանձին տպուած է Վիեննա. 1911, որ տե՛ս Գառն. —ԺԴ դար։

ՅԿ. երզն. տե՛ս Երզն։

ՅԿ. երուս. Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի թուղթը առ Աբաս Աղուանից կաթուղիկոս. Վղրշպտ. 1896.

ՅԿ. իմ(աստ). Յովհաննու իմաստասիրի Օձնեցւոյ Մատենագրութիւնք (Ը գար). Վիեննա. 1833. պարունակում է.

— ՅԿ. իմ. ատ. Աւետարանութիւն. էջ 1—33.

— ՅԿ. իմ. պաւլ. Նորին ընդդէմ Պաւղիկեանց. էջ 34—47.

— ՅԿ. իմ. երև. Նորից ընդդէմ Երևութականաց. էջ 48—80.

— ՅԿ. իմ. նկեղ. Նորին յաղագս կարգաց եկեղեցւոյ. էջ 81—100, 109—114, 117—144.

— ՅԿ. իմ. միաշ. Նորին վասն մեծի աւուր միաշաբաթին. էջ 101—106.

— ՅԿ. իմ. յիշատ. Նորին յիշատակարան կանոնաց. էջ 115—6.

ՅԿ. իմ. խոստ. Յովհաննու իմաստասիրի Խոստովանութիւն անշարժ յուսոյ. Վղրշպտ. 1896.

ՅԿ. կթ. Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի. բ տպ. Երուսաղէմ 1867.—Ի դար.

ՅԿ. կթ. հյր. Շարից հայրապետացն հայոց յայտարարութիւն. երանելւոյն Յովհաննիսի կաթողիկոսի Հայոց. տպ. Սամ. անեց. էջ 272—277.—Ի դար։

Յհնսկ. Յոհաննիսիկ վարդապետի Համառօտ պատմութիւն անցից անցելոց ի վերին կողմանս Հայաստանի, ըստ կարգի ժամանակագրութեան (1572—1600 թ.)—տպ. Սամ. անեց. էջ 185—199։

Ցղ. մովս. և գաւթի Ցաղագս սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի և Դաւթի. տե՛ս Հնոց և Նորոց, հրատ. Սրուանձտ. Պօլիս 1874, էջ 39—87.

ՑՃխ. Ս. Հօրն մերոյ Երանելւոյն Գրիգորի յուսուցչի Ցաճախապատում ճառք. Վղրշպտ. 1894—6.

Յոթ.
Յովէլ.
Յովն. } տե՛ս ՍԳր.

Յովնաթ. Նաղաշ Յովնաթան աշուղը և Յովնաթան Յովնաթանեան նկարիչը. հրատ. Զօպանեան, Փարիզ 1910.—ԺԸ դար։

Յովսիմ. Վկայաբանութիւն Ս. Յովսիմեանց. հրատ. Հ. Բ. Սարգիսեան, Վենետ. 1919.

Յուդ.
Յուդթ. } տե՛ս ՍԳր.

Յս. որդ. Ն. Շնորհալւոյ Յիսուս Որդի, տե՛ս Շնորհ. չփ. էջ 7—166.

Նանայ. Նանայի Ասորւոց վարդապետի Մեկնութիւն Յովհաննու աւետարանին. Վենետիկ 1920 (Բ դար)։

Նար. տե՛ս Գր. նար. մատ.

Նաւում.
Նեեմ. } տե՛ս ՍԳր.

Նեղ. դոքս. Նեղոսի Դոքսապատի կարդագրութիւն պատրիարքական աթոռոցն. Վաղարշապատ. 1902.

Նեղոս. Խրատք Նեղոսի. հրատ. Վրք. հց. Բ. էջ 637—725։

Նեմես. բն. տե՛ս Նիւս. բն.

Ներր. յորդ. Ներրողեան յորդիս և ի թառունս Ս. Լուսաւորչին. Սոփերք, հտ. ժ, էջ 5—45. Վենետ. 1854 (Նոյն գրուածքը ՆՀՌ անխտրաբար յիշում է Երզն. լս.—համմտ. պատճառասէր՝ էջ 8. ծիրանափառ՝ էջ 9, քաջմեծածան՝ էջ 12)։

Ներս. արեղ. Ներսէս արեղայ կամ կրօնաւոր քահանայ, քնորդի Համբրենացւոյն. յորոյ ի խնդրոյ արար Սկևռացին զներրող սրբոյն, և ինքն գրեաց պիշատակ իրացս ի սկիզբն և ի կատարած Ներրողենին (ըստ ՆՀՌ).—ԺՌ դար։

Ներս. մոկ. Ներսէս Մոկացի, նորոգիչ Լիմն անապատի ի սկզբան ԺԷ դարու, որոյ են ոտանաւորք ի վերայ Երուսաղէմի և ոտանաւոր ի վերափոխումն կուսին (ըստ ՆՀՌ)։

Նիւս. բն. Նեմեսիոսի Եմեսացւոյ (կամ Գրիգորի Նիւսացւոյ) Յազագս բնութեան մարդոյ. Վենետիկ 1889—91.—Ը գար։

Նիւս. բաղ. տե՛ս Ճառընտ.

Նիւս. երգ. երան. ատեփ. Ս. Գրիգորի Նիւսացւոյ... Մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի, և ապրոյն, ինն երանութեանց, յորում փակի և ներրոզ ի Ստեփաննոս Նախավկայն. հին թարգմանութիւն՝ միջակ ոճով (ըստ ՆՀՌ)։

Նիւս. թլսդ. աքանչ. Պատմական գովեստ ի Թէոդորոս զօրավարն և ի Գրիգոր աքանչելագործ. նոյնպէս հին թարգմանութիւն (ըստ ՆՀՌ)։

Նիւս. կուս. Գիրք ի գովեստ կուսութեան կամ կուսական վիճակի, նովին գոգցես ոճով. եթէ չիցէ առաւել հին թարգմանութիւն (ըստ ՆՀՌ)։

Նիւս. մկ. բեթղ. մելիտ. Ճառք ի կոտորած մանկանցն Բեթղեհեմի... և ի Մելիտոս հայրապետ (ըստ ՆՀՌ)։

Նխ. Նախադրութիւնք ամենայն Աստուածաշունչ գրոց.

Նհպտք. հայոց Նահապետք, թագաւորք և իշխանք Հայոց. հրատ. Հնոց և Նորոց, Սրուանձտեանց, Պօլիս 1874, էջ 88—109.

Նղշ. Մկրտիչ Նաղաշ և իր տաղերը. հրատ. Կ. Կոստանեանց, Վղրշպտ. 1898.—ԺԸ դար։

Նղշ. լատ. Մկրտիչ Նաղաշի Պատասխանի լատինացոց թղթոյն (1438 թ). հրատ. Աբրտ. 1916, էջ 418—423։

Նշխ. մատ. Նշխարք մատենագրութեան Հայոց. զանազան մանր գրուածքներ ԺԲ—ԺԷ դարերից. հրատ. Պատկանեան, Պետերբ. 1884. տե՛ս և Պտմ. ոուբ։

Ննն. Ննննոս. հրատ. Մանանդեան ZAPh. և արտատպ. Marburg 1908, այս վերնագրով՝ Nonnos, Die Scholien zu fünf Reden Gregor von Nazianz.

Նոր ժող. Նոր ժողովածու, Միջնադարեան Հայոց տաղեր և ոտանաւորներ. հրատ. Կոստանեանց, պրակ Ա. Բ. 1892, Գ. 1896, Դ. 1903.

Նոր վկ. Հայոց նոր վկաները. հրատ. Մանանդեան և Ա՛ճառեան, Վղրշպտ. 1903 (ԺԲ—ԺԹ դարերից գրուածքներ)։ Համմտ. նաև Նոր վկաներ և տաղեր. Աբրտ. 1910, էջ 465—475։

Նուշր. Խրատք օգտակարք արարեալ բանաստեղծ Թագաւորին, որոյ անունն է Նուշրէվան. տպ. Պղնձ. էջ 78—91։

Նչ. եզեկ. Եսայի վրդ... Նշեցուց... Մեկնութիւն ի մարգարէութիւն եզեկիէլի (ըստ ՆՀԲ).—ԺԳ դար։

Նչ. Թղթ. կամ խր. Թուղթ Նորին առ ազգային չարհկեցիս կամ առ հետևողս նոցա... և խրատական բանք նորա... (ըստ ՆՀԲ).—ԺԳ դար։

Նչ. քեր. Մեկնութիւն քերականին ինքնագիր (ըստ ՆՀԲ)։

Շապհ. Շապուհ Բագրատունւոյ հատակոտորք. ըստ ՆՀԲ և տպ. Սամ. անեց. էջ 247—250 (Ի դար)։ Տե՛ս և Սուտ-Շապհ.

Շար. Ջայնքաղ Շարականն. Վղրշպտ. 1888 (շարականները նշանակուած են Ա—ՂԴ գլուխներով, որից յետոյ էջ 439—531 դրուած են երգերը և մեռելոց շարականները)։

Շիր. Անանիայի Շիրակունւոյ մնացորդք բանից. Պետերբ. 1877.—է դար։

Շիր. քրն. տե՛ս Անան. ժմնկ.

Շնորհ. չփ. Ներսէսի Շնորհալւոյ Բանք չափաւ. Վենետիկ ՌՄՀՔ (նշանակել եմ էչերով).—ԺԲ դար։

Շնորհ. վիպ. Նորին Վիպասանութիւն. անդ, էջ 493—559 (նշանակել եմ տողաթուերով)։

Շնորհ. առ. Նորին առակք. անդ, էջ 560—584 (նշանակել եմ թուահամարով)։

Շնորհ. ատեփ. Նորին Թուղթ առ Ստեփաննոս ոմն, վասն խնդրոյ մեկնութեան վերջին գլխոյ Սահմանաց դրոց Դաւթի Անյաղթի. հրատ. Ն. Շնորհալւոյ Թուղթք, Վենետ. 1873, էջ 295—296։

Շնորհ. ընդհ. Ն. Շնորհալւոյ Թուղթ ընդհանրական, տպ. Երուսաղէմ 1871.

Շնորհ. պատճ. Նորին պատճառ խնդրոյ միաբանութեան. տե՛ս Շնորհ. ընդհ. տպ. Երուսաղէմ, էջ 85—203.

Շնորհ. Թղ. Թուղթ Տ. Ներսիսի կաթուղիկոսի Հայոց գրեալք ի պանագան ժամանակս առ այլ և այլ անձինս (կան նաև ուրիշների Թղթերը). անդ, էջ 205—329.

Շնորհ. ճղնս. Ն. Շնորհալւոյ Ողբ Եդեսեայ քաղաքի. Կալկաթա 1832.

Շնորհ. մաթ. Մեկնութիւն Ս. Աւետարանին, որ ըստ Մատթէոսի. Պոլիս 1825, էջ 16—196.

Շնորհ. սրգ. Պատմութիւն վարուց Ս. Սարգսի զօրավարի՝ Թարգմանեալ ի Ն. Շնորհալւոյ. Սոփերք, հտ. ԺԶ. Վենետ. 1854.

Շնորհ. չկ. Շղթայ մեկնութեան ևօթանց Թղթոց կաթողիկեայց (ըստ ՆՀԲ).

Շնորհ. յս. որդի Շնորհալւոյ Յիսուս Որդի, տե՛ս Շնորհ. չփ. էջ 7—166.

Ողբ. տե՛ս ՍԳր.

Ողբ. ճղնս. տե՛ս Շնորհ. ճղնս.

Ոսկ. ամբակ. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսոյ եպիսկոպոսապետի ասացեալ յԱմբակումայ մարգարէի մեկնութենէն. հրատ. լմբ. ժբ մարգ. Պոլիս 1825 էջ 155—7։

Ոսկ. գծ. Մեկնութիւն գործոց առաքելոց խմբագիր արարեալ նախնեաց յՈսկեբերանէ և յԵփրեմէ. Վենետ. 1839.

*Ոսկ. ես. Յովհ. Ոսկեբերանի Մեկնութիւն եսայեայ մարգարէի. Վենետիկ 1880.

Ոսկ. լս. Յովհաննու Ոսկեբերանի ներբողք երկու ի Ս. Գր. Լուսաւորիչ. Սոփերք, հտ. Դ. Վենետ. 1853. (նոյնն է նաև Ոսկ. ներբ. լս.)։

Ոսկ. ծն. եզեկ. Մասն մեկնութեան դրոցն Ծննդոց և այլոց բանից հին կտակարանի (ըստ ՆՀԲ)։

*Ոսկ. ճառք. Յովհաննու Ոսկեբերանի ճառք. Վենետ. 1861 (մասամբ ոսկեդարեան)։

*Ոսկ. մ. կամ մտթ. Յովհաննու Ոսկեբերանի յաւետարանագիրն Մատթէոս. հտ. Ա և Բ. Վենետիկ 1826 և հտ. Գ. Վենետ. 1826, որ ունի նաև յաւելուած Պօղոսի Թղթերի, որոնք ամբողջ կան Ոսկ. պօղ.—Ոսկ. մտթ. գ և դ գրքերից երկու նոր բագիւտ պատառիկ, հրատ. Բազմ. 1913, էջ 14—16։

Ոսկ. մելիտ. Ներբող ի Ս. Մելիտոս Անտիոքայ հայրապետն (ըստ ՆՀԲ).

*Ոսկ. մտթ. դ. Յ. Ոսկեբերանի ի Մեկնութենէն Մատթէի ճառ Դ. հրատ. ՀԱ 1921, էջ 353—364.

*Ոսկ. յհ. ա և բ — Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Աւետարանին Յոհաննու, Պօլիս ՌՃԿԶ=1717. հտ. Ա, էջ 2—487, հտ. Բ. էջ 488—965։ Ոսկեդարեան են առաջին 13 գլուխները, մնացեալը յետոյ քարգմանուած և խմբագրուած Կիրակոս վարդապետի ձեռքով՝ 1112 թուին։

Ոսկ. Ներբ. լս. — Ներբողեան ի Ս. Գր. լաւաւորիչ, ասացեալ ի Կոկիսոն, մինչ յաքսորան էր. տես Ոսկ. պօղ. բ. էջ 792—841. Վենետ. 1862, նոյն է Ոսկ. լս.

*Ոսկ. պօղ. — Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն թղթոցն Պօղոսի. Վենետ. 1862.— հտ. Ա՝ ա և բ Տիմոթեայ, Տիտոսի, Փիլիպեցւոց, Կողոսացւոց, Սիմեսացւոց.— հտ. Բ՝ Հռովմայեցւոց, Կորնթացւոց, Գաղատացւոց, Թեսաղոնիկեցւոց, Եբրայեցւոց, ի Գործոց առաքելոց, ի Յովհաննու Մեկնութենէ, և երկբայական ճառք, էջ 613—921։—Ոսկեբերանի Պաւղոսի մեկնութենէն անտիպ հատուածներ՝ ՀԱ 1912, 730—40 և 1913, էջ 37—44, 222—7, արտատպ. Վարդանեան, Դասական մանր բնագիրներ, Վիեննա 1913, էջ 95—139.—իսկ Ոսկեբերանի յառ Եբրայեցիս թուրքն Պօղոսի ճառ լդ (Վիէննա 1855), նոր քարգմանութիւն է Հ. Ս. Գաթրճեանից. տե՛ս Ակինեան, Դասական հայերէնը, Վիեննա 1932, էջ 359։

*Ոսկ. սղ. — Յ. Ոսկեբերանի Սաղմոսաց մեկնութեան պատառիկներ. հրտր. ՀԱ 1917, էջ 11—22 և 1922, էջ 325—330։

*Ոսկ. տաբ. — Յ. Ոսկեբերանի ճառ ի տաբարակն. հրտր. ՀԱ 1922, էջ 333—344։

Ոսկիփ. — տե՛ս Տաքե. ոսկիփ.—իսկ ՆՀԲ Ոսկիփ. ձեավ հասկանում է զանազան ժողովածուներ։

Ովս. — տե՛ս ՍԳր.

Որոտ. ախետ. — Յոհաննու Որոտնեցւոյ... ի բան աւետարանչին որ ասէ. Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ. հրտր. Տաքե. ամ. գլուխ բ.—ԺԴ դար։

Որոտ. պօղ. — Յովհ. Որոտնեցւոյ ի յառաջաբանս Պաւղոսի առաքելոյ համառօտ տեսութիւն. տպ. Ներսէս, էջ 77 կն.—ԺԴ դար։

Ուխտ. — Ուխտանէս եպիսկոպոս (հտ. Ա. Պատմ. Հայոց, հտ. Բ. Պատմ. բաժանման վրաց ի հայոց). Վաղշապ. 1871.—Ը դար։

Ուռհ. — Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն. Վաղշապ. 1898.—ԺԲ դար։

Ուտպ. — տե՛ս Օրբ.

Պալիանց. — տե՛ս Մարթին.

Պարականոն շար. — Հին և նոր պարականոն կամ անվաւեր շարականներ. Վաղշապ. 1911։

Պետ. ա. բ. — տե՛ս ՍԳր.

Պետր. ողջ. — Պետրոս աբեղայի վասն ողջոյնի. տե՛ս Տաքե. ամ. էջ 737—9։

Պետր. (եպս.) սիւն. — Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս. հրտր. Գ Տէր-Մկրտչեան. Վաղշպ. 1902 (Զ դար)։

Պերիարմ. — տե՛ս Անյ. պերիարմ.

*Պիոն. — Վկայութիւն սրբոյն Պիոնեայ. Das Martyrium des hl. Pionius. հրտր. Մ. Սրապեան WZKM 28(1914), էջ 378—399 և արտատպ.—նոր բառերն ունի Վարդանեան.—Ե դար։

Պիսիդ. վից. — Պիսիդեայ Վեցօրեայք, Վենետ. 1900 (Ը—Թ դար)։

Պիտ. — տե՛ս Խոր.

Պիտառ. — Պիտառութիւնք ազգի ազգի, որպէս ճառք կամ հատուածք բանից ի վերայ զանազան իրաց ի հին դարս (ըստ ՆՀԲ)։

Պղատ. — Պղատոնի իմաստասիրի տրամախօսութիւնք. Վենետ. 1877. պարունակում է՝

— Պղատ. յՔր. — Պղատոնի յՔրիթիտոն կամ յաղագս սրբոյ. էջ 11—35.

— Պղատ. սոկր. — Պղատոնի Սոկրատայ պատասխանի. էջ 37—73.

— Պղատ. տիմ. — Պղատոնի առ Տիմէոս. էջ 75—174.

Պղատ. — Պղատոնի Տրամախօսութիւնք. Վենետիկ. 1890. պարունակում է՝

— Պղատ. օրին. — Պղատոնի օրինաց և օրէնսդրութեանց. գիրք Ա—ԺԲ, էջ 1—462.

— Պղատ. մինով. — Պղատոնի ի Մինովս և յաղագս օրինի. էջ 463—477.

Պղնձ. — Պատմութիւն Պղնձէ քաղաքին. տպ. Տփխիս 1908, էջ 1—61 (Պօլսի 1850 թուի տպագրութիւնից անփոփոխ)։

Պորփ. — Նեթաժութիւն Պորփիւրի, տե՛ս Անյ. պորփ.

Պտճռ. քրծր. Սկիզբն և պատճառ Բարձրացուցեացն ճառի և տեսութիւն. հրտր. Բր. քեր. էջ 28—34 (ներածութիւն)։

Պտմ. աղեքս. Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ (Սուտ-Կալիսթենէս). Վենետ. 1842 (ե դար)։

Պտմ. աղջ. Պատմութիւն աղջկան և մանկան, և հարցմունք նոցա ընդ միմեանս. տե՛ս Պղնձ. էջ 137—176։

Պտմ. ամաս. Պատմութիւն Ամասիա քաղաքի և յաղագս սննդեան և վարուց Ս. Թէոդորոսի զօրավարի. Սոփերք, հտ. ԺԶ, էջ 55—80. Վենետ. 1854։

Պտմ. դիոն. Պատմութիւն սրբոյն Դիոնեսիոսի Արիսպագացւոյ. հրտր. ՀԱ 1914, էջ 205—18։

Պտմ. եղիշ. Պատմութիւն սրբոյն Եղիշէի վարդապետի (իմա՛ կենսագրութիւն). Սոփերք, հտ. ԺԱ, էջ 39—45. Վենետ. 1854։

Պտմ. թագ. Պատմութիւն Թադէոսի առաքելոյն և Սանդխտոյ կուսին. Սոփերք, հտ. Ը. էջ 59—75. Վենետ. 1853։

Պտմ. լմբ. Պատմութիւն վարուց Ներսիսի (Լամբրոնացւոյ) եպիսկոպոսի. հրտր. Սամ. անեց. էջ 224—243. (Նաև Արքտ. 1878, էջ 895).— ԺԴ դար։

Պտմ. կիլ. Պատմութիւն ազգին Ռուբինեանց թէ որպէս սիրեցին Կիլիկիոյ. հրտր. Սամ. անեց. էջ 204—212.— 1300 թուիցն։

Պտմ. հյր. Պատմութիւն վարուց և նահատակութենանց երջանիկ հայրապետացն Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, որդւոց և թոռանց Ս. Գրիգորի. Սոփերք, հտ. Ժ. էջ 46—56. Վենետ. 1854.— բառացի նոյն է ՃՀ. կթ. էջ 51—60, ուստի և չեմ բառաքաղած։

Պտմ. մծբ. Պատմութիւն Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին. Սոփերք, հտ. ԻԲ, էջ 1—65, Վենետ. 1861։

Պտմ. յյս. ներ. Պատմութիւն յայտնութեան նշխարաց Ս. Ներսիսի. Սոփերք, հտ. Է, էջ 31—78. Վենետիկ 1853.— ԺԴ դար։

Պտմ. ներս. Պատմութիւն Ս. Ներսիսի Պարթևի հայոց հայրապետի. Սոփերք, հտ. Է. էջ 5—30. Վենետիկ, 1853։

Պտմ. ներս. հյր. տե՛ս Մխսր. եր.

Պտմ. ռուբ. Համառօտ պատմութիւն Ռուբինեան իշխանաց. հրտր. Սամ. անեց. էջ 212—223. (Նոյնը նաև Նշխ. մատ. հրտր. Պատկանեանի).— գրուած 1286 թուին։

Պտմ. սահ. Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ հայրապետին և Մեսրովբայ վարդապետին. Սոփերք, հտ. Բ. էջ 1—42 (ՆՀՐ նուէրը գնում է ՃՁ դար)։

Պտմ. վր. Համառօտ պատմութիւն վրաց՝ ընծայեալ Ջուանշէրի պատմչի. Վենետ. 1884.— Թրգմ. վրաց. ժ—ԺԴ դար։

Պտմ. տէր յեսկ. Պատմութիւն Տէր Յուսկան և որդւոյ նորին Ստեփանոսին. հրտր. Պղնձ. էջ 197—232։

Պտրգ. Սբրազան Պատարագամատոյցք Հայոց. հրտր. Դաթրճեան և Տաշեան. Վիեննա 1897. պարունակում է՝

— *Բասենզեան պատարագամատոյց. Թրգմ. ե դարու, էջ 120—158 (ասկեդարեան).

— Բասենզեան պատարագամատոյց՝ նոր Թրգմ. էջ 180—216 (Թ—ժ դար).

— Նազիանզեան հաւատացելոց պատարագ (Ս. Սահակայ). էջ 222—242.

— Նազիանզեան հաւատացելոց պատարագ (Ս. Գրիգոր աստուածաբանի) էջ 244—254.

— Նազիանզեան հաւատացելոց պատարագ (Կիւրղի Աղեքսանդրացւոյ). էջ 256—267.

— Նազիանզեան հաւատացելոց պատարագ (Ս. Աթանասի Աղեքսանդրու հայրապետի). էջ 272—299.

— Ոսկեբերանի պատարագ. էջ 353—384.

— Իգնատիոսի պատարագ. էջ 389—411 (ԺԴ դար).

— Նախասրբելոց պատարագ. էջ 414—429.

— Ս. Յակոբոյ Տետնեղբօր պատարագ. էջ 435—450 (ԺԴ դար ?).

— Հռոմայեցւոց պատարագ. էջ 455—466 (ԺԲ դար).

— Պատարագ Միաբանողաց կամ Ունիթոռաց մխալ. կրկին խմբագրութեամբ. էջ 476—499 (ԺԹ և ԺԷ դար).
— Ըստ Վատիկանեան օրինակին. էջ 503—507.
— Պատարագամատոյց առ Յովհ. Արճիշեցւոյ. էջ 513—518 (ԺԹ դար).
— Համբրոնեան պատարագ. էջ 519—556 (ԺՌ դար).
— Լիանեան օրինակ. էջ 562—566.
— Կիլիկեան օրինակ. էջ 569—573.
— Ուրուագիծ պատարագի ըստ D և F ձեռ. էջ 574—582.
— Սովորական պատարագ հայոց. էջ 617—721.

Պրոկղ. կուս., ստեփ., ղկ. ասկ., մեկն. ղբր. ևն. — Ս. Պրոկղի եպս. Կիւզիկիոյ և ապա պատրիարգին Կոստանդինուպօլսոյ ի Ե դարու՝ Ճառք և ներբողեանք ի ս. կոյսն, ի Ստեփաննոս, ի Ղուկաս աւետարանիչն, ի Յհ. Ոսկեբերան և հատուածք մեկնութեան Ս. Գրոց ևն.։ Որպէս ինքն էր առ սբ. քարգմանչօք մերովք, նայնպէս և գործք նորա երևին յայնժամ քարգմանեալ (ըստ ՆՀՌ)։

Պրոկղ. շղկ. — Շաղկապք աստուածաբանականք՝ պիտակ կոչմամբ անուանեալ՝ գործ Պրոկղի իմաստասիրի Դիադոխոսի, քարգմանեալ ի ձեռն Սիմէոնի քահանայի վրացւոյ և մեկնեալ յաւելուածով իւիք Սիմէոնէ եպիսկոպոսէ Գառնոյ կամ Կարնոյ, անպէտ ճով և շաղփաղփ բանիւք (ըստ ՆՀՌ).—ԺԷ դար։

Պրամ. — Դիրք պարապմանց սրբոյն Կիւրղի Աղէքսանդրացւոյ. Պոլիս 1717։

Ռուշք. — տե՛ս Ստեփ. լեհ.

Սալաձ. — Դաւիթ Սալաձորեցի, տաղասաց (ըստ Հրուս. և Նորայր, Բանաս. 1901).—ԺԷ/ԺԸ դար։

Սահմ. — Դիրք Սահմանաց Դաւթի. տե՛ս Դաւ. անյ.։

Սամ. աննց. — Սամուէլի քհ. Աննցւոյ հատուածք ի գրոց պատմագրաց. Վղրշպտ. 1893 (ԺՌ դար)։

Սամ. աննց. շար. — Նրա շարայարութիւնը անանուն հեղինակներից. էջ 140—180 (ԺԹ—ԺԷ դար)։

Սանահն. — Անանիայի վրդ. Սանահնեցւոյ ի ԺԱ դարու... քաղուած Ոսկեբերանի ի Մեկնութիւնէ Քրիստոսի... գրուած նորա վիճաբանական ի վերայ մարդեղութեան և ի վերայ սովորութեանց եկեղեցւոյ (ըստ ՆՀՌ)։

Սասն. — Կարապետ Սասնեցի. Ներբողեան յաղագս վարուց և մահուան Ս. Մեսրոբայ. Էջմիածին 1897.—ԺՌ դար։

Սարգ. — Մեկնութիւն ճօթանց Քրիստոս կաթուղիկեայց, արարեալ երանելւոյն Սարգսի շնորհալւոյ վարդապետի (ԺՌ դար), Պօլիս ա. տպ. 1743, բ. տպ. 1826—8. պարունակում է՝

— Սարգ. յոչ. — Յառաչաբանութիւն. էջ 10—11.
— Սարգ. յկ. — Մեկնութիւն Յակոբայ Քրիստոյն. էջ 13—179.
— Սարգ. ա. պետր. — Մեկնութիւն Ա. Քրիստոյն Պետրոսի առաքելոյ. էջ 180—397.
— Սարգ. բ. պետր — Մեկնութիւն Բ Քրիստոյն Պետրոսի առաքելոյ. էջ 398—486.
— Սարգ. ա. յհ. — Մեկնութիւն Ա Քրիստոյն Յովհաննու Աւետարանչի. էջ 487—598.
— Սարգ. բ. յհ. — Մեկնութիւն Բ Քրիստոյն Յովհաննու որ առ Կիւրիա. էջ 599—613.
— Սարգ. գ. յհ. — Մեկնութիւն Գ Քրիստոյն Յովհաննու որ առ Գայիոս. էջ 614—627.
— Սարգ. յուդ. — Մեկնութիւն Քրիստոյն Յուդայի առաքելոյն. էջ 628—667.
— Սարգ. վրջ. — Վերջաբանութիւն և պատճառք 7 Քրիստոցն կաթուղիկեայց, էջ 667—673. (շփոթմամբ յիշել եմ մերթ ա և մերթ բ տպագրութեան էջահամարները. ուստի երբ տպագրութիւնը չէ յիշուած, այլ միայն էջը, կարող է լինել թէ՛ ա և թէ՛ բ տպ.)։

Սարկ. աղ. — Աղօթամատոյց Յովհաննու Սարկաւագայ վարդապետի. Սոփերք, հտ. ԺԷ Վենետ. 1854.—ԺՌ դար։

Սարկ. լուս. — Յովհաննու Սարկաւագ վարդապետի Ներբողեան ի Ս. Գր. Լուսաւորիչն հայոց. Սոփերք, հտ. Ե, էջ 5—36. Վենետ. 1853.

Սարկ. քհ. — Յովհաննու Սարկաւագ վարդապետի յաղագս քահանայութեան. Սոփերք, հտ. Գ. Վենետ. 1853.

Սարկ. պատկ. ուսմ. տոմար. շարժ. ևն. — Յովհաննու... Սարկաւագ վարդապետի... բան յաղագս յարգութեան ս. պատկերաց, խրատ ուսումնասիրութեան... տոմարական բանք... բնախօսութիւն վասն շարժման կամ սասանութեան երկրի... (ըստ ՆՀԲ)։

Սարկ. հանգ. կամ մարդեղ. — (Նորին) բացատրութիւն Հաւատամքի, որ կոչի և նշանակ հաւատոյ, որպէս և ճառն մարդեղութեան ուղղեալ ընդդէմ Նեստորականաց (ըստ ՆՀԲ)։

*ՍԳր. — Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց, ըստ Եշգրիտ քարգմանութեան նախնեաց մերոց, համեմատութեամբ երրայական և յունական բնագրաց (ե դար.) Պոլիս 1895. պարունակում է՝

— Ած. — Ծննդոց.
— Ել. — Ելք.
— Ղեւտ. — Ղեւտականք.
— Թուոց. — Դիրք Թուոց, Թիւք.
— Թիւք. — Դիրք Թուոց, Թիւք.
— Օր. — Երկրորդումն Օրինաց.
— Յես. — Դիրք Յեսուայ՝ որդւոյ Նաւեայ.
— Դատ. — Դատաւորք.
— Հռութ. — Դիրք Հռութայ.
— Թագ. — Դիրք Թագաւորութեանց Ա. Բ. Գ. և Դ.
— Մն(աց). — Դիրք Մնացորդաց Ա. և Բ. տե՛ս և Մնաց.
— Բ. եզր. — Եզր երկրորդ.
— Նեհմ. — Դիրք Նէեմեայ.
— Եսթ. — Եսթեր.
— Յոբ. — Դիրք Յոբայ.
— Սղ(մ). — Դիրք Սաղմոսաց Դաւթի.
— Առակ. — Առակք Սողոմոնի.
— Ժղ. Ժող. — Ժողովող (եկեղեսիաստէս).
— Երգ. — Երգ երգոց.
— Սա. — Մարգարէութիւն Եսայեայ.
— Երեմ. — Մարգարէութիւն Երեմեայ.
— Ողբ. — Ողբք Երեմեայ մարգարէի.
— Եզեկ. — Մարգարէութիւն Եզեկիելի.
— Դան. — Մարգարէութիւն Դանիելի.
— Ովս. — Մարգարէութիւն Ովսեայ.
— Յովէլ. — Մարգարէութիւն Յովելեայ.
— Ամովս. — Մարգարէութիւն Ամովսայ.
— Աբդ. — Մարգարէութիւն Աբդիու.
— Յովն. — Մարգարէութիւն Յովնանու.
— Միք. — Մարգարէութիւն Միքիայ.
— Նաւում. — Մարգարէութիւն Նաւումայ.
— Ամբ. — Մարգարէութիւն Ամբակումայ.
— Սոփոն. — Մարգարէութիւն Սոփոնեայ.
— Անգ. — Մարգարէութիւն Անգեայ.
— Զքր., Զաք. — Մարգարէութիւն Զաքարեայ.
— Մաղաք. — Մարգարէութիւն Մաղաքեայ.
— Մտթ. — Աւետարան ըստ Մատթէոսի.
— Մրկ. — Աւետարան ըստ Մարկոսի.
— Ղուկ., Ղկ. — Աւետարան ըստ Ղուկասու.
— ՅՀ. — Աւետարան ըստ Յովհաննու.
— Գործ., Գծ. — Գործք առաքելոց.
— Հռ., Հռովմ. — Թուղթ Պօղոսի առաքելոյ առ Հռովմայեցիս.
— Ա. Բ. կոր. — Թուղթ Պօղոսի առ Կորնթացիս Ա և Բ.
— Գաղ. — Թուղթ Պօղոսի առ Գաղատացիս.
— Եփես. — Թուղթ Պօղոսի առ Եփեսացիս.
— Փիլիպ. — Թուղթ Պօղոսի առ Փիլիպեցիս.

— Կող. Թուղթ Պօղոսի առ Կողոսացիս.
— Ա. Բ. Թես. Թուղթ Պօղոսի առ Թեսաղոնիկեցիս Ա. և Բ.
— Ա. Բ. տիմ. Թուղթ Պօղոսի առ Տիմոթէոս Ա. և Բ.
— Տիտ. Թուղթ Պօղոսի առ Տիտոս.
— Փիլիմ. Թուղթ Պօղոսի առ Փիլիմոն.
— Եբր. Թուղթ Պօղոսի առ Եբրայեցիս.
— Յկ. Թուղթ Յակոբայ առաքելոյ.
— Ա. Բ. պետ. Թուղթ Պետրոսի առաքելոյ Ա. և Բ.
— Ա. Բ. Գ. յհ. Թուղթ Յովհաննու առաքելոյ Ա. Բ. և Գ.
— Յուդ. Թուղթ Յուդայի առաքելոյ.
— Յայտ. Յայտնութիւն Յովհաննու Առաքելոյ (ոչ-ասկեդարեան. հին թարգմանութիւնը տես Յայտ.) Պօլսի 1895 թուի հրատարակութիւնից դուրս են մնում հետևեալ գրքերը, որ բառաքաղել եմ Վենետիկ 1860 թուի հրատարակութիւնից.
— Ա Եզր. Եզր գիրք առաջին.
— Յուդիթ. Յուդիթ.
— Տոբ. Տովբիթ.
— Ա. Բ. Գ. մակ. Մակաբայեցւոց գիրք Ա. Բ. և Գ.
— Իմ(աստ). Իմաստութիւն Սողոմոնի.
— Սիր(աք). Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ.
— Բարուք. } Թուղթ Բարուքայ, որի շարունակութիւնն է Թուղթ Երեմիայ (էջ 1216—8).
— Թղթ. բար. }
— Մանաս. Աղօթք Մանասէի թագաւորի.
— Կոր. առ պօղ. Թուղթ Կորնթացւոցն առ ս. առաքեալն Պօղոս. որի շարունակութիւնն է՝
— Գ. կոր. Պօղոսի առաքելոյ Թուղթ Կորնթացւոց Գ.
— Եւթագ. Աղերս Եւթագի.
— Գ. եզր. Եզր գիրք երրորդ (տպուած է Աստուածաշնչի Զօհրապեան հրատարակութեան մէջ. հտ. Գ, էջ 40—76, Վենետ. 1805).
Սեր. Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն. հրտր. Պատկանեան. Պետերբ. 1879.— է դար. (Սկզբում գրուած Անանունը յիշում է Մատ-Սեր. ձևով).
*Սերեր. Սերերիանոսի եմեսացւոյ Ճառք. Վենետիկ 1830.
Սենեկ. Խօսք Սենեկիդոսի իմաստասիրի առ Ագրիանոս կայսր. հրտր. Տաշեան, Մատեն. մանր ուսումն. հտ. Ա. էջ 229—240, որ և դերմ. Das Leben und die Sentenzen des Phil. Secundus, Wien 1895.—Զ—Ը դար.
Սիմ. ապար. Սիմէոն վրդ. Ապարանցւոյ Վիպասանութիւն սակս Պալեաւունեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի. Վղրշպտ. 1870.—ԺԸ դար.
Սիմ. լեհ. Սիմէոն դպրի լեհացւոյ ուղեգրութիւն. հրտր. ՀԱ 1932, թիւ 7—12.
Սիմ. կամրկպ. տե՛ս Կամրկ.
Սիսիան. Սիսիանոսի Հայոց վարդապետի Ներբողեան ի Ս. Քառասունն. Սոփերք, հտ. ԺԲ. Վենետ. 1854.— ԺԱ դար.
Սիր(աք). տե՛ս ՍԳր.
Սիւն. յոր. Ստեփաննոս Սիւնեցւոյ Մեկնութիւն Յորայ (հատուածք). հրտր. Խոիք. յոր. էջ 304—310.— Ը դար.
Սիւն. քեր. Ստեփաննոսի Սիւնեցւոյ Մեկնութիւն Քերականին. հրտր. Քր. քեր. էջ 183—219.— Ը դար.
Սիւն. առ պտր. անտ. Թուղթ առ Աբանաս ասորի պատրիարգն Անտիոքայ... ի Ստեփաննոսէ Սիւնեցւոյ (ըստ ՆՀԲ).—Ը դար.
Սիւն. առ գերմ. Թուղթ Ստեփաննոսի Սիւնեցւոյ... պատասխանի թղթոյ Ս. Գերմանոսի (ըստ ՆՀԲ).— Ը դար.
Սկևռ. աղ. Գիրք աղօթից Գրիգորի Սկևռացւոյ գիտնական վարդապետի. Պօլիս 1742.— ԺԲ դար.
Սկևռ. լմբ. Գրիգորի Սկևռացւոյ Ներբողեան ի Ս. Ննբէա Համբրռնացեալ. Սոփերք, հտ. ԺԸ. Վենետ. 1854.

Սկևռ. յար. Գրիգորի Սկևռացւոյ... Ճառ ի չարշարանս և ի յարութիւն Քրիստոսի ևն (ըստ ՆՀԲ)։

Սկևռ. պատ. Պատասխանիք Մխիթար քահանայի Սկևռացւոյ յաղագս համապատասխանութեան երկոտասան առաքելոց. Երուսաղէմ 1865.—գրուած 1262 թ.։

Սհկ. կթ. Սահակայ Հայոց կաթողիկոսի (Զօրափորեցւոյ) Ճառ. հրտր. ՅՀ. իմաստ. Վենետ. 1833 (է դար). այն է՝

— Սհկ. կթ. արմատ. Ճառ ասացեալ յարմատենեացն օր, որ է Ղուկմեան. էջ 185—193։

— Սհկ. կթ. եկեղ. Նորին յաղագս կարգաց եկեղեցւոյ (այս գրուածքը յիշատակում է ՆՀԲ. բայց մեզ անծանօթ է մնում. եթէ չէ շփոթուած ՅՀ. իմ. եկեղ. գրուածքի հետ)։

Սպ(մ). տե՛ս ՍԳր.

Սմբ. դատ. Սմբատ Գունդստապլի Դատաստանագիրք. հրտր. Karst, Strassburg 1905 (երկու հատոր).— Նոյնը Ղևոնեան, Էջմիածին 1918, չափազանց ոգորմելի ձևի տակ.—ԺԴ դար։

Սմբ. պտմ. Սմբատայ Սպարապետի եղբօր Հեթմոյ Ս. արքայի Հայոց Պատմութիւն, Մոսկուա 1856։ Աւելի լաւ է հրտր. Շահնազարեան, Փարիզ 1859, «Տարեդիրք Սմբատայ Սպարապետիս» (Ես բառաքաղել եմ Շահն. հրատարակութիւնը, բայց միշտ համեմատելով Մոսկուայի տպագրութիւնը).—ԺԴ դար։

Սոկր. Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական Պատմութիւն (Քրդմ. 696 թուին). Վաղշապ. 1897։

Փ. Սոկր. Փոքր Սոկրատ. Նոյնի համառօտ խմբագրութիւնն է, որ տպուած է ամէն մի էջի տակ։

Սուտ-Շապհ. Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ. տպ. Էջմիածին 1921. հրտր. Մեսրոպ եպս.— բոլորովին սխալ է վերագրել Շապուհին. հեղինակը նոյն իսկ Բագրատունի չէ, այլ միայն Արծրունի։ Ցաճախ յիշում եմ Կեղծ-Շապհ. և Շապհ. ձևերով։

Սուփոն. տե՛ս ՍԳր.

Ստ. ժմ. Ժամակարգութիւնն մեկնութիւն... Ստեփաննոսի իմաստասիրի Սիւնեաց եպիսկոպոսի. հրտր. Ս. Վրդ. Ամատունի. Արրտ. 1915, թ. 2—8, 1916, թ. 1, 5, 1917, թ. 2—3.— Ը դար։

Ստեփ. լհհ. Ստեփաննոս Լհհացի... Բառգիրք ընդարձակ և բազմավաստակ (ըստ ՆՀԲ).— ԺԷ դար։

Ստեփ. սևան. Ստեփաննոս Սևանեցի. տե՛ս Գ. Տէր-Պօղոսեան, Հնոն Շանթի Հին աստուածները և Ստեփաննոս վանականի յիշատակարանը. Շուշի 1913.—Ժ դար։

Ստեփ. սիւն. Ստեփաննոս Սիւնեաց եպս. (ՆՀԲ այս անունով գնում է զանազան հեղինակների գործեր. տե՛ս և Դիոն. Նիւս. Պրպմ. Շար. ևն)։

Սրճ. տե՛ս Ճառընտ.

Վահր.(ոտ). Վահրամայ Բարունւոյ ոտանաւոր Պատմութիւն Ռուբինեանց. հրտր. Շահնազարեանց, Փարիզ 1859.— կայ նաև տպ. Կալկաթա 1832, կից Ոզբ Նդեսիոյ և մի քանի տողեր աւելի ունի. ես ամբողջը համեմատել և տարբերութիւնները վերցրել եմ, բայց յիշում եմ Շահն. էջերը.— ԺԴ դար։

Վահր. երդ. Վահրամայ վարդապետի Ճառ ի Ս. Երրորդութիւն. հրտր. ի գիրս «Ճառագ և խոստովանութիւնք հաւատոյ Գ. Նարեկացւոյ և Վահրամայ վարդապետիս» Երուսաղէմ 1856, էջ 115—175։

Վահր. մարդ. Վահրամայ վարդապետի Ճառ ի մարդեղութիւնն Քրիստոսի. հրտր. նոյն գրքում՝ էջ 176—216։

Վահր. յայտ. (Նորին) տօնական Ճառ ի յայտնութիւն Քրիստոսի կամ յօթումն արքային Հռոնի Գ. առ իւրև (ըստ ՆՀԲ).

Վահր. յար. համբ. դտ. ևս. ևն. Նորին Ճառ ի յարութիւնն Քրիստոսի և ի համբարձումն, իբրու մեկնութիւն բանից գրոցն Դաւթաւորաց և նախնեայ մարգարէիւ, որպէս և Ճառ ի Պենտեկոստէ քաղեալ յԱստուածաբանէ (ըստ ՆՀԲ)։

Վանակ. յոր. Յովհաննու վարդապետի Վանական կոչեցելոյ... Տաւուշեցւոյ... ի ԺԴ գարու Մեկնութիւն գրոցն Յորայ (ըստ ՆՀՔ).— սրանից հատուածներ կան հրտր. Խրիք. յոր. էջ 284—290։

Վանակ. հց. Հարցմունք և պատասխանիք զպէտսէս իրաց ի պէտս պարզամտաց (ըստ ՆՀՔ).

Վանակ. տարեմտ. Ճառ տօնական ի տարեմուտն, որպէս և այլ ճառք մեկնաբանականք իբրև քարոզք՝ գրեալք ի տօնական մատեանս (ըստ ՆՀՔ)։

Վանակ. յուրախ. Առանձին բացատրութիւն շարականիս վարդավառի՝ Ուրախացիր պատկ կուսից (ըստ ՆՀՔ)։

*Վեցօր. Ս. Բարսղի եպս. Կեսարու Կապադովկացւոց Ճառք վասն վեցօրեայ արարչութեանն. Վենետիկ 1830։

Վիմ. տար. Վիմական տարեգիր. Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց. հրտր. Կ. Կոստանեանց, Petropoli 1913.

Վիպաս. Վիպասանական երգեր Գողթան երգիչների (հտր. և Մագ.)

Վկ. ատ. Վկայութիւն սրբոյն Ատոմայ. Սոփերք, հտ. ԺԲ, էջ 69—82. Վենետ. 1854.

Վկ. արև. տե՛ս նախ. վկ. արև.

Վկ. բարթ. Վկայաբանութիւն Ս. Բարդողիմէոսի առաքելոյ. Սոփերք, հտ. ԺԲ. էջ 5—30. Վենետիկ 1854։

Վկ. գէ. Վարք (վկայաբանութիւն) Ս. Գէորգայ զօրավարին. Վենետ. 1849.

Վկ. գողթ. Ոդք վասն չարեացն աշխարհիս Հայոց և վկայաբանութիւն Ս. Վահանայ Գողթնացւոյ (կրկին խմբագրութեամբ). Սոփերք, հտ. ԺԳ. Վենետ. 1854։

Վկ. դաւ. Վկայաբանութիւն Ս. Դաւթի որ ի Դաւին կատարեցաւ. Սոփերք, հտ. ԺԲ. էջ 85—96. Վենետ. 1854.

Վկ. քադ. Վկայաբանութիւն Քադէոսի առաքելոյն. Սոփերք, հտ. Ը. էջ 9—58. Վենետ. 1853։

*Վկ. կիպր. Վկայաբանութիւն սրբոյն Կիպրիանոսի եպիսկոպոսի. հրտր. ՀԱ 1922, էջ 11—17.

Վկ. հմզ. Վկայաբանութիւն սրբոց իշխանացն Համազասպայ և Սահակայ. Սոփերք, հտ. ԺԲ. էջ 61—80. Վենետ. 1854.

Վկ. հտկտ. Վկայաբանական հատակոտորք. հրտր. Վրք. դիոն. էջ 45—56.

Վկ. շուշ. Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկան՝ դստեր մեծին Վարդանայ. Սոփերք, հտ. Բ. Վենետ. 1853։

Վկ. ոսկ. Բան և ասութիւն ճշմարիտ սրբոցն Ոսկեանց քահանայից. Սոփերք, հտ. ԺԲ. էջ 59—66. Վենետ. 1854.

Վկ. սանդ. Վկայութիւն Ս. Սանդխտոյ՝ դստեր Սանատրկոյ արքայի. Սոփերք, հտ. Ը. էջ 77—83. Վենետ. 1853.

Վկ. սուք. Վկայաբանութիւն սրբոց Սուքիասանց. Սոփերք ԺԲ. էջ 33—56. Վենետիկ 1854.

Վստկ. Գիրք Վաստակոց. Վենետ. 1877.

Վրդ. այգեկ. Առակք Վարդանայ Այգեկցւոյն. հրտր. Վրդ. առ. III էջ, 67—93.—ԺԳ դար։

Վրդ. աննց. Աննցի Վարդանայ վարդապետի Երգելիկ վասն կատաց աստուածութեան. հրտր. Հ. Բ. Սարգիսեան, Վենետ. 1919 (տե՛ս և Ջոպանեան, Հայ էջեր)։

Վրդ. աշխ. Աշխարհացոյց... Վարդանայ վարդապետին պարզ և համառօտ տեսութեամբ. հրտր. Բառգիրք Հայոց Երեմիա վարդապետի Բ տպ. Պոլիս 1729, էջ 497—535։

Վրդ. առ. Ժողովածոյք առակաց Վարդանայ. հրտր. Մառ, Ս. Պետերբ. հտ. I—III, 1899.— ԺԳ դար։

Վրդ. բար. Վարդան վարդապետի ասացեալ առակ Բարուխաօս. հրտր. Վրդ. առ. III, էջ 97—110։

Վրդ. դան. Մեկնութիւն Դանիէլի մարգարէի, արարեալ ի Վարդան վանական վարդապետէ՝ համառօտ և լուսաւոր մտօք. հրտր. Լմբ. ժբ. մարգ. Պոլիս 1825. էջ 242—280.

Վրդ. երգ. Հատուածք Հիպողիտեայք ըստ Մեկնութեանն երգոյ երգոց որ ի Վարդանայ. տե՛ս Մառ, Ипполитъ, Толкованіе песни песней, էջ 88—114, Պետերբ. 1901.

Վրդ. յա. — Վարդանայ վարդապետի Բարձրբերդցւոյ Ներբողեան ի Ս. Գր. Լուսաւորիչ. Սոփերք, հ. ե. էջ 37—82, Վենետ. 1853.

Վրդ.(պտմ.) — Վարդան վարդապետի Պատմութիւն. տպ. Վենետ. 1862 (աւելի լաւ է քան հրատ. Էմինի)։

Վրդն. աղ. — Վարդանայ Բարձրբերդցւոյ Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի, ի յԱժդարխան 1797.

Վրդն. ծն. եւ. ղեւտ. Քառց օրին. — Մեկնութիւն հինգ գրոցն Մովսէսի՝ հետեողութեամբ նախնի հարց և վարդապետաց, ի բազում համառութեամբ (ըստ ՆՀՔ)։

Վրդն. յանք. — Առանձին բացատրութիւն շարականի Կուսին՝ Անթառամ ծաղիկ (ըստ ՆՀՔ)։

Վրդն. աւետ. քրդ. ևն — Մեկնութիւն զանազան բանից աւետարանի, մանաւանդ ըստ Յովհաննու, ի վերայ կանանց իւղաբերից և պէսպէս քարոզք (ըստ ՆՀՔ)։

Վրք. ալեքս. — Վարք և պատմութիւն Ալէքսիանոսի ճգնաւորին. հրտր. Պղնձ. էջ 177—196.

Վրք. ածար. — Ընդարձակ պատմութիւն վարուց Գրիգորի աստուածարանի (ըստ ՆՀՔ).— ԺՔ դար։

Վրք. դիոն. — Պատմութիւն Ս. Դիոնեսիոսի եպիսկոպոսի Արիապագացւոյ. տե՛ս Ակինեան, Նիւթեր հայ վկայաբանութեան. Վիեննա 1914, էջ 35—42.

Վրք. եւագր. — Վարք Եւագրի Պանտացւոյ՝ գտեալ ի սովորական օրինակս գրոց նորա (ըստ ՆՀՔ)։

*Վրք. իգն. — Վարք Ս. Իգնատիոսի Անտիոքայ հայրապետին. Սոփերք, հտ. ԻՔ. էջ 139—186. Վենետ. 1861.

Վրք. իլար. — Վարք Ս. Իլարիոնի, Սոփերք, հտ. ԻՔ. էջ 67—137. Վենետիկ 1861։

Վրք. հց. — Վարք սրբոց հարանց (կրկին քարգմանութեամբ). հտ. Ա. և Բ. Վենետ. 1855։

Վրք. շնորհ. — Սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց. Սոփերք, հտ. ԺԴ. Վենետ. 1854.—ԺՔ դար։

Վրք. ոսկ. — Պատմութիւն վարուց... Ս. Յովհ. Ոսկեբերան հայրապետին Կոստանդնուպոլսոյ. Քրգմ. ի յունականէ ի հայս, ի Գրիգորէ կաթուղիկոսէ Վկայասէր կոչեցելոյ. Վենետիկ 1751.— ԺՔ դար։

Վրք. սեղբ. — Պատմութիւն վարուց Ս. Սեղբեստրոսի եպիսկոպոսին Հռոմայ (Քրգմ. 678 թուին). տպ. Վենետ. 1893՝ յոյն բնագրին զուգընթաց։ Աւելի լաւ է տպ. Վղրշպտ. 1896՝ ընդարձակ և համառօտ խմբագրութիւնները միասին, հրտր. Սոկրատայ Սքոլաստիկոսի հետ, էջ 691—799։

Վրք. և վկ. — Վարք և վկայաբանութիւնք սրբոց. 2 հտ. Վենետիկ 1874։

Վրք. քերթ. — Վրքանէս քերթող... համառօտ պատմութիւն ընտիր ոճով վասն շինութեան վկայարանի Հռիփսիմեանց ի Կոմիտասայ կաթողիկոսէ, և ետուր ընդդէմ պատկերամարտից (ըստ ՆՀՔ).— է դար։

Տաթև. ձմ. — Դրիգորի Տաթևացւոյ (ԺԴ դար) Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր. Պոլիս ՌՃՁԲ. (վերջին գլուխը Տաթևի շինութեան պատմութիւնն է, որ բառացի արտագրուած է Օրբելեանի Եվ գլխից, ուստի չեմ բառատղել)։

Տաթև. առ. — Նորին Ամառան հատոր. Պոլիս ՌՃՂ=1741.

Տաթև. հարց. — Գիրք հարցմանց Գր. Տաթևացւոյ. Պոլիս ՌՃՀԱ=1729.

Տաթև. ոսկիփ. — Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, արարեալ Ս... Գրիգորի Տաթևացւոյն. Պոլիս ՌՃՂԲ=1746.

Տաղ. — Զանազան միջնադարեան տաղեր. 1) Տ. եպս. Պալեան, Հայ աշուղներ. Ա. Զմիւռնիա 1911. 2) Ազգային երգարան, Թամար-Քաթիպա, Ս. Պետերբ. 1856. 3) Զօպանեան, Հայ էջեր, Փարիզ 1912. 4) Տաղ վասն սկուալի ՀԱ 1930, էջ 594—5։

Տարօն. — Պօղոսի Տարօնացւոյ Թուղթ ընդդէմ Թէոփիլոսեայ հոռոմ փիլիսոփային. Պոլիս ՌՄԱ=1752.— գրուած 1122 թ.

Տես. աահ. — Տեսիլ սրբոյն Սահակայ. Սոփերք հտ. Բ, էջ 43—67. Վենետիկ 1853.

Տեսիլ դան. — Տեսիլ Դանիէլի եօթներորդ. հրտր. Գալէմքեարեան, WZKM 6, էջ 114—136.— է դար։

Տիմ. — տե՛ս ՍԳր.

Տիմ. կոյս. Տիմոթէոսի ս. եպս. Աղէքսանդրու ասացեալ ի ս. կոյսն Մարիամ. հրատ. Ակինեան, Տիմ. կուզ, Աղդ. մատ. ՍՂ, էջ 54—60.

Տիմ. կուզ. Տիմոթէոսի (Կուզի) եպիսկոպոսապետի Աղէքսանդրեայ Հակաճառութիւն. էջմիածին 1908.— 2 դար.

Տիտ. } Տոբ. } տե՛ս ՍԳր.

Տոմ. լև. Սկզբնագիրք տումարի Ս. Լևոնի և սահմանի ս. ժողովոյն Քաղկեդոնի. Վիննա. 1805 (թէև նոր թարգմանութիւն է, բայց իբր համեմատութիւն մէջ են բերուած զանազան հատուածներ հին թարգմանութիւնից։ Սակայն ո՛չ մի նոր բան չունի)։

Տոմար. Տումարական գրութիւնք հնոց, միջնոց և յետնոց (ըստ ՆՀՔ)։

Տօնակ. Տօնական մատեան, որ և Տօնանամակ և Պատճառք տօնից կամ Տօնապատճառք (զանազան հեղինակների գործեր).— ըստ ՆՀՔ։

Տօնացոյց Տօնացոյց (ըստ ՆՀՔ).

Փահլ. Պատմութիւն յաղագս Փահլուլ թագաւորին. հրատ. Պղնձ. էջ 62—77։

Փարպ. Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս 1904.— 6 դար.

Փարպ. Թղթ. Նորին Թուղթ առ Վահան Մամիկոնեան. անդ, էջ 183—204.— 6 դար։

Փիլ. (հտ. Ա) Փիլոնի Երրայեցւոյ Բանք երեք չև ի լոյս ընծայեալք. հտ. Ա. Վիննաիկ. 1822. պարունակում է՝

— Փիլ. Նախ. ա. Փիլոնի յաղագս յաւուրաչխենամութեան էջ 1—43.

— Փիլ. Նախ. բ. Փիլոնի յաղագս նախախնամութեան. էջ 44—121.

— Փիլ. լիւս. Փիլոնի յաղագս բան ունել և անասուն կենդանացդ, առ Լիւսիմաքոս. էջ 123—172։

Փիլ. (հտ. Բ) Փիլոնի Երրայեցւոյ Մնացորդք ի Հայս. (հտ. Բ.) Վիննա. 1826. պարունակում է՝

— Փիլ. լին. Փիլոնի այնոցիկ որ ի լինելութենէն խնդրոց և լուծմանց. էջ 1—444.

— Փիլ. ել. Փիլոնի այնոցիկ որ յելս է խնդրոց և լուծմանց. էջ 445—548.

— Փիլ. սամփս. Փիլոնի առանց պատրաստութեան ի Սամփսոն. էջ 549—577.

— Փիլ. յովն. Փիլոնի յաղագս Յովնանու. էջ 578—612.

— Փիլ. տեսիլ արր. Փիլոնի... ի տեսլեան... որ առ Աբրահամ. էջ 613—619.

Փիլ (հտ. Գ) Փիլոնի Հերրայեցւոյ Ճառք. Վիննաիկ 1892. պարունակում է՝

— Փիլ. տես. Յաղագս վարուց կենաց տեսականի. էջ 5—32.

— Փիլ. իմաստ. Կենաք իմաստնոց. էջ 33—104.

— Փիլ. այլար. Աստուածային օրինացն այլաբանութեան. էջ 105—177.

— Փիլ. քհ. Յաղագս քահանայիցն և ժՔ ականց. էջ 178—200.

— Փիլ. բագն. Յաղագս բագնին իրաց. էջ 201—219.

— Փիլ. ժ բան Յաղագս տասն բանիցն. էջ 220—267.

— Փիլ. շն. Յաղագս թէ ո՛չ շնայցես. էջ 268—284.

Փիլիպ. } Փիլիմ. } տե՛ս ՍԳր.

Փիլոքս. Երանելւոյն Փիլոքսենոսի Նարուկայ եպիսկոպոսի Պատմութիւն ժողովոյն Սիւնեաց, ի խնդրոյ Տ. Կոմիտասայ Հայոց կաթուղիկոսի. հրատ. Զեն. յուզ. էջ 9—28 (տե՛ս նաև Աբր. մամիկ.).— է դար։

Փոնց. Պատմութիւն կայսերն Փոնտիանոսի և կնոջն և որդւոյ նորին Դիոկղետիանոսի և ետքն իմաստասիրաց. Տփխիս 1857.

Փոտ. (Թղթ.) Թուղթ Փոտայ յունաց պատրիարգի (ըստ ՆՀՔ)։

Քեր. Բրակ. տե՛ս Բր. քեր.

Քեր. քերթ. Մովսէսի քերթողի և Ստեփաննոսի Սիւնեցւոյ Մեկնութիւն քերականութեան (ըստ ՆՀՔ).— տե՛ս և Սիւն. քեր.

Քերթ. եկեղ. և տաղ. Մովսէսի քերթողի... հատուած մի բանի ի վերայ ուր ձայնից շարականի ...և տաղք կամ մեղեդիք ինչ (ըստ ՆՀՔ)։

Քհնպ. Քահանայապետք Հայոց Մեծաց. հրատ. Սահ. անեց. էջ 269—272.—ժ դար։

Քուչ. — Նահապետ Քուչակի դիւանը. հրտր. Ա. Ջոպանեան. Փարիզ 1902.— ԺԶ դար։

Օգոստ. բաջ. — Աւգոստինոսի Բաջեցւոյ Ճանապարհորդութիւն յԵւրոպայ (1614 թ.) տե՛ս Նշխարք ժառենագր. Հայոց, հրտր. Պատկ. Պետերբ. 1884, էջ 5—26.

Օշն. նմ. — Առ Տէր Գրիգոր... նամակ... առ ի յՕշնէ տեառն Կանչոյ. հրտր. Սմբ. պտմ. (Շահնազ.) էջ 159—161։

Օր. — տե՛ս ՍԳր.

Օրբ. — Ստեփաննոս Օրբելեան. Պատմութիւն տանն Սիսական. Մոսկվա 1861.— ԺԴ դար։

Օրբ. հկճռ. — Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի հակաճառութիւն ընդդէմ երկարնակաց. Պօլիս ՌՄԸ.

Օրբ. ողբ. — Ստ. Օրբելեանի Ողբ. Քիֆլիս 1885.

Օրհն. — Օրհնութիւնաբեր ցուցակ. հրտր. Ջարբ. Հայկ. Բրգմ. Վէնետիկ 1889, էջ 246—8։

Բ

Նոր մատենագրութիւն

(Հայ և օտար)

(դնում եմ միայն խիստ կրճատ ձևերը)

ԱՔ	*Առձեռն բառարան, բ. տպ. Վիեննայ 1865.*
Ազգ. հանդ.	*Ազգագրական հանդէս, խմբագր. Ե. Լալայեանի.*
Ամատ.	*Ս. վրդ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապ. 1912.*
Այտնեան, Քնն. քեր.	*Հ. Ա. Այտընեան, Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Վիէննա 1866.*
Արև. մամ.	*Արևելեան մամուլ, հանդէս, խմբ. Մ. Մամուրեանի, Զմիւռնիա.*
Արշ. արրտ.	*Արշալոյս Արարատեան, պարբերական հանդէս, Զմիւռնիա.*
Արրտ.	*Արարատ ամսաթերթ, Էջմիածին.*
Աւգերեան, բցտ. չփ. կշռ.	*Հ. Յ. Աւգերեան, Բացատրութիւն չափուց և կշռոց, Վիէննայ 1821.*
Բազմ. Բզմ.	*Բազմավէպ, հանդէս, Վենետիկ.*
Բանասս.	*Բանասէր, հանդէս, խմբ. Կ. Բասմաջեան, Փարիզ, 1899—1907.*
Բառ. երեմ.	*Բառգիրք հայոց... Երեմիայ վարդապետէ, Յալիկօնայ 1698.*
Բիւզ.	*Բիւզանդիոն օրաթերթ Պօլսոյ, խմբ. Բ. Քէշեան.*
Բիւր.	*Բիւրակն հանդէս. Պօլիս 1898—1900.*
ԳԲ / *Գաբ. բառ.*	*Ս. Գաբամաճեան, Նոր Բառագիրք հայերէն լեզուի. Պօլիս. ա տպ. 1892 և շատ աւելի ընդարձակ՝ բ տպ. 1910, ուր կան նաև Ուղուրիկեանի համեմատութիւնները*
ԳԴ	*Բառարան Պարսկերէն... ի Գէորգեայ դպրէ Տէր Յովհաննէսեան Պալատցոյ, ի Կոստանդնուպօլիս 1826.— գրքի վերջում կայ պրս.-հայ ցեղակից բառերի համեմատական մի ցուցակ. պարունակում է 435 բառ, մեծագոյն մասամբ ճիշտ Հայ լեզուաբանութեան ամենահին երախայրիքներից է։*
Էմ. ազգ. ժող.	*Էմինեան Ազգագրական ժողովածու, հրատ. Լազարեան Ճեմարանի, Մոսկուա, հտ. Ա—Զ.*
Թիրեաքեան, Ար. բռ.	*Յ. Թիրեաքեան, Արիահայ բառարան, Վիեննա 1914—20.*
ՀԱ	*Հանդէս Ամսօրեայ, ուսումնաթերթ Վիեննայի Մխիթարեանց, 1887—1933.*
Հացունի, Դաստ.	*Հ. Վ. Հացունի, Դաստիարակութիւնը հին Հայոց քով, Վենետիկ 1923։*
ՀԲուս.	*Ալիշան, Հայրուսակ կամ Հայկական բուսաբառութիւն, Վենետիկ 1895.*
Հիւբշ.	*այսպէս առանձին նշանակում է* Hübschmann, Armenische Grammatik, Leipzig *1895—7. միս գործերը նշանակում եմ յարակից բառերով. ինչ.*
Հիւբշ. Arm. St.	Hübschmann, Armenische Studien, Leipzig 1883.
Հիւնք.	*Յ. ք՞. Հիւնքեարպէչէնեան, Ստուգաբանական բառարան, Պոլիս 1894. բացարձակապէս անարժէք գործ. էջերը չեմ նշանակած. հետաքրքրուողը կարող է գտնել նոյն գրքի յետևը գտնուած բառացանկում. էջ նշանակում եմ միայն այն դէպքում, երբ ցանկում մոռացուած է նշանակել բառը։*
ՀՀԲ	*Մխիթար աբբա, Բառգիրք Հայկազեան լեզուի, 3 հտ. Վենետիկ 1769.*
Հյ. դր. լեզ.	H. Pedersen, Armenisch und die Nachbarsprachen, KZ 39, 334—485, *հյ. թրգմ. Հ. Կէտիկեան, Հայերէն և դրացի լեզուները. Վիեննա 1907 (առաստպ. Հանդէս Ամսօրեայից 1905—6)։*
Մասս. աղաւ.	*Մասեաց Աղաւնի, պարբերական հանդէս. Թէոդոսիա.*

Մորթմ. Ent.	Mordtmann, Entzifferung und Erklärung der arm. Keilinschriften von Van und der Umgegend. Leipzig 1873, *արտատպ.* ZDMG *1872, էջ 465—691։*
Յուշ(արձ.)	*Յուշարձան Մխիթարեան միաբանութեան ի Վիեննա. 1911.*
ՆՀԲ	*Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ 1836—7.*
Շահն.	*Շահնամէ (տպագրեալ Շահն.=Շահնազարեան հրատարակութենէն հետ)։*
Շէֆք.	J. Scheftelowitz *(հանդերձ յիշատակութեամբ իր գործերի)։*
Չուբ(խնով)	Чубиновъ, *Բառարան վրաց-ռուս-ֆրանս. ա. տպ. 1846, բ. տպ. Պետերբ. 1887, (հայերէնի հետ համեմատութիւններ կան միայն ա տպագրութեան մէջ)։*
Պատկ.	*Ք. Պատկանեան, որի գործերից յիշատակելի են յատկապէս՝*
— Պատկ. Изслд.	Изследованіе о составе арм. языка, *Պետերբ. 1864.*
Պատկ. Матер.	Матеріалы для арм. словаря, *Պետերբ. I 1882, II 1884.*
Պատկ. աշխ. գր.	*Պատկեր աշխարհիկ գրականութեան, հրատ. Յ. Գուրգէն, Հտ. Ա, Պօլիս 1892, ուր Յ. Թիւնեաքեան, էջ 182—209 ունի ընդարձակ մի յօդուած Հայ-իրանեան բառերի համեմատութեան։*
ՋԲ	*Հ. Մ. Ջախջախեան, Բառգիրք հայ-իտալ. Վենետիկ 1837.*
Տէրվ.	*Հ. Սեր. Տէրվիշեան, որի գործերից յիշելի են՝*
Տէրվ. Altarm.	Dervischjan, Das Altarmenische *Ք.* Wien 1877.
Տէրվ. Նախալ.	*Հնդեւրոպական նախալեզու, Պօլիս 1885.*
Յուց. դեր.	Pedersen, *Հին հայերէնի ցուցական դերանունները. Վիեննա 1907.*
ՓԲ	*Գ. Փէշտիմալճեան, Բառգիրք Հայկազեան լեզուի, 2 Հտ. Պօլիս 1844.*
Քաջունի	*Հ. Մ. Քաջունի, Բառգիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց (գաղղ-հայ. և հայ-գաղղ.) 3 Հտ. Վենետիկ 1892.*
Bailly	Dictionnaire grec-français, 6e éd. Paris *(լիակատար գործ. 2193 էջ հատիւն)։*
Bartholomae	Altiranisches Wörterbuch, Strassburg 1904 *(մեծագոյն գնդ. և հզրս. բառարանը. 2000 սիւնակ)։*
BB	A. Bezzenberger, Beiträge zur Kunde der indogermanischen Sprachen, Göttingen *(պարբերական հանդէս, սկսած 1877 թուից, Հտ. 1—30).*
Berneker	Slavisches etymologisches Wörterbuch, Heidelberg 1924 *(սլաւական լեզուների ընդհանուր արմատական բառարանն է. լոյս է տեսել միայն Ա. Հտ. A—L տառերը. մնացեալը մնում է անտիպ՝ հեղինակի հիւանդութեան պատճառով)։*
Böhtlingk	Sanskrit-Wörterbuch. Petersburg 1855—75. *Հօքը հատոր՝ամենամեծ բառարանը սանսկրիտ լեզուի։*
Boisacq	Dictionnaire étymologique de la langue grecque, *2-րդ տպ.* Heidelberg—Paris 1923 *(յունարէնի լաւագոյն արմատական բառարանը)։*
Bopp	Grammaire comparèe des langues indo-européennes, *գերմ. 2-րդ տպագրութենից թրգմ.* Michel Bréal. *5 հտ. 1866—74։*
Böttich. Vergl.	Böttticher *(որ է* Lagarde), Vergleichung der armenischen Consonanten mit denen des Sanscrit. ZDMG 4(1850), *էջ 347—369.*
Brockelm.	C. Brockelmann, Lexicon Syriacum, Berlin 1895.
Brugm. Grdr.	K. Brugmann, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen. Strassburg 1897—1916.
BSL	Bulletin de la Société linguistique de Paris *(լեզուաբանական պարբերական հանդէս), հտ. 1—34։*
Bugge:	
— Btrg.	Beiträge zur etymologischen Erläuterung der arm. Sprache, I. Christiania 1889.
— Etr. u. Arm.	Etruskisch und Armenisch, I. Christiania 1890.
— Lyk. St.	Lykische Studien, Christiania, I. 1897, II. 1901.
BVS	*տե՛ս* KZ
Canini, Et. étym.	Marco Antonio Canini, Etudes étymologiques, Turin et Rome, 1882 *(ամբողջովին անգիտական)։*

Ernout-Meillet: Dictionnaire étymologique de la langue latine, Paris 1932 (*լատիներէնի լաւագոյն արմատական բառարանը. դժբախտաբար ուշ հասաւ ձեռքս. բայց բոլոր կարևոր բաները աւելացրի Յաւելուածիս մէջ*).

Gesenius *տե՛ս էջ 30.*

GGA Göttingische gelehrte Anzeigen *(նոյն քաղաքի գիտական ընկերութեան պարբերականը)։*

Gosche: De Ariana linguae gentisque armeniacae indole prolegomena. Berlin 1847.

Horn: Grundriss der neupersischen Etymologie, Strassburg 1893 *(պարսկերէնի միակ արմատական բառարանն է)։*

IF Indogermanische Forschungen. Strassburg. *գիտական պարբերական հանդէս, հտ. 1—45 (1927). կարևոր է նոյնի՝*

IF Anz. Anzeiger für indogermanische Sprach—und Altertumskunde, *հտ.* VIII *42—49 և հտ. X, 41—50, որոնց մէջ Հիւբշման տալիս է իր քերականութեան յաւելուածը (ընդհանրապէս աննկատելի է մնացած)։*

JAs. Journal Asiatique de Paris, *գիտական պարբերական հանդէս՝ Ասիական ընկերութեան) 1822—1916 և 1923—28։*

JRAS Journal of the Royal Asiatic Society, *Լոնդոն, հտ. 1—20 և նոր շրջան հտ. 1—62 (1930)։*

Karolides: *Ամբողջական խորագիրը տե՛ս էջ 28.*
Γλ. συγ.

Klap. As. pol. Klaproth, Asia polyglotta, Paris 1823 *(պատմական, այժմ անարժէք գործ)։*

Kluge: Etymologisches Wörterbuch der deutschen Sprache. *10-րդ տպ.* Berlin *1924 (շատ գնահատուած Արմատական բառարան գերմաներէն լեզուի)։*

KZ Kuhn's Zeitschrift für vergleichende Sprachforschung *(որ և* ZVS՝ BVS), Berlin *1858—1927 (գիտական հանդէս), հտ. 1—54 (1927)։*

Lag. P. de Lagarde:

— Arm. St. Armenische Studien, Göttingen 1877 *(Հայերէնի առաջին Արմատական բառարանն է)։*

— Beitr. bktr. Lex. Beiträge zur baktrischen Lexicographie, Leipzig 1868.

— Ges. Abhd. Gesammelte Abhandlungen, Leipzig 1866.

— Sym. Symmicta. Göttingen 1877.

— Urgesch. Zur Urgeschichte der Armenier, Berlin 1854.

LUA *Այս հանդէսը անձամբ չեմ տեսել. տեղեկութիւնները քաղել եմ* Pokorny-*ից։*

Meillet, Esq. Esquisse d'une grammaire comparée de l'arm. classique. *Վիեննա 1903.*

MSl Mémoires de la Société de Linguistique do Paris.

P. de Court. } *Խորագիրը մանրամասն տե՛ս էջ 28.*
Paspati }

Peterm. Petermann. Grammatica linguae armeniacae. Berlin 1837.

Pictet Les Origines indo-européennes ou les Aryas primitifs, Paris 1859 *2 հտ. (քաղել եմ* Lag. Arm. Stud. *աշխատութիւնից)։ Սրա Բ տպագրութիւնը 3 հատոր, տպ. 1887 կամ աւելի ուշ, ունի նոր յաւելուածներ, որ համեմատելով նախորդի հետ՝ աւելացրել եմ Յաւելուածիս մէջ։*

Pokorny *տե՛ս* Walde.

Quicherat: Dictionnaire latin-français, *47-րդ տպ.* Paris 1913.

REA *կամ* Rev. ét. arm. Revue des études arméniennes, Paris *հտ.* I—IX.

Riggs: A. Grammar of the modern armenian language, as spoken in Constantinople and Asia Minor. *ա. տպ. Իզմիր 1847, բ. տպ. Պոլիս 1856,*

Rivola: Dictionarium armeno-latinum, *Բառագիրք Հայց. 2-րդ տպ.* Paris 1633.

SA — Sprachwissenschaftliche Abhandlungen, *խմբ.* Patrubàny, *հտ.* I և II. Budapest. *(տեսել եմ հտ. I-ամբողջ. իսկ հտ. II-ից միայն տետր 1—4. Համառոտակ բոլոր պրպտումներիս՝ անկարելի եղաւ գտնել մնացեալը. չկայ նոյն իսկ* Budapest-*ում։ Յայտնի է որ հեղինակ-խմբագիրն էլ խելագարուեց և վախճանուեց։ Միայն վեննայի Մխիթարեանց գրադարանում կայ մի օրինակ)։*

Schröder, Thes. — Schröder, Thesaurus linguae armeniacae. *Ամստերդամ 1711.*

Seidel: — Mechithar's des Meisterarztes aus Her «Trost bei Fiebern», Leipzig 1908. *Մխիթար Հերացւոյ Ջերմանց Մխիթարութեան բժշ. ընտիր ծանօթութիւններով։*

Sophocles: — Greek lexicon of the Roman and Byzantine periods, Cambridge 1914 *(բիւզանդական յունարէնի լիակատար բառարան, 1188 էջ, երկսիւն)։*

SWAW — Sitzungsberichte der Kais. Akademie der Wissenschaften. Wien. *Հտ. 1—173.*

Trautmann: — Baltisch-Slavisches Wörterbuch, Göttingen 1923 *(Բալթիկ-սլաւական. լեզուների արմատական բառարանն է. շատ վատահելի աշխատութիւն)։*

Walde: — Lateinisches etymologisches Wörterbuch, *2-րդ տպ.* Heidelberg 1910 *Նոյն հեղինակինն է նաև* Vergleichendes Wörterbuch der indogermanischen Sprachen, *բոլոր հնդեւրոպական լեզուների համեմատական արմատական բառարանը, շատ յարգուած աշխատութիւն, որ հեղինակի մահից յետոյ խմբագրեց և հրատարակեց* Pokorny, *3 հտ.* Berlin 1927—31. *դիւրութեան համար յիշում եմ վերջինիս անունով։*

Wind(isch). — Windischmann, Die Grundlage des Armenischen im Arischen Sprachstamme. 1846.

WZKM — Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes. *գիտական պարբերական հանդէս. հտ. 1—36 (1929).*

ZAPh — Zeitschrift für armenische Philologie. *2 հտ. հրատ.* N. Finck, Marburg.

ZAss. — Zeitschrift für Assyriologie.

ZDMG — Zeitschrift für Deutschen Morgenländischen Gesellschaft. *Հտ. 1—83 (1929).*

ZKM — Zeitschrift für die Kunde des Morgenlandes. *Հտ.* I (1837)—VII.

ZVS — *տե՛ս* KZ

Будаговъ: — Сравнительный словарь турецко-татарскихъ наречій, *2 հտ.* С. Петербургъ 1869.

ЗАН — Записки Академіи Наукъ, Петербургъ, *հտ. 1—11 (1893—1912).*

Зап. Кол. Вост. — Записки Коллегии Востоковедов.

ЗВО — Записки восточного отделен. Русского Археологического Общества.

ИАН — Известія Академіи Наукъ. Петербургъ, 1907—1925.

Яз. и Лит. — Языкъ и Литература, *հտ.* I և II *(1926—7)։*

Яф. сборн. — Яфетический Сборникъ, *հտ.* I և II *(1923)։*

Լեզուներ

(Բառասկզբում հ=հին, մ=միջին, ն=նոր)

աբ(աղ).	աբաղա (Կովկաս)
ագ(ուլ).	ագուլ (Կովկաս)
ալբ(ան).	ալբաններէն
ալթայ.	ալթայերէն (Թուրքական լեզու)
ակ.	ակուշա (Կովկաս).
ակկադ.	տե՛ս աքքադ.
այլազգ	պրս. թրք. արաբ. (ըստ ՆՀԲ)։
անգլ.	անգլերէն
անգսք.	անգլօսաքսոներէն
անդ(ի)	անդի (Հիւս. կովկասեան լեզու)
անցուդ.	անցուգերէն (կովկասեան լեզու)
աշար.	աշարական բարբառ վրաց.
աս(որ).	ասորերէն
ասորեստ. / ասուր.	ասուրերէն, Ասորեստանի լեզուն
ավար. աւ.	ավարերէն (Դաղիստան)
ատտ(իկ).	Ատտիկեան (յունարէն բարբառ)
ատրպ(թրք).	Ատրպատականի թուրքերէն
արաբ.	արաբերէն
արամ.	արամերէն (որ և ասորերէն)
արև. թրք. / արևել. թրք.	արևելեան թուրքերէն
արկ(ադ).	արկադեան (բարբառ յն.)
արմ(որ).	արմօրիկեան (բրբտոն).
արշ.	արշի կամ արճի (Կովկաս)
ասիս(ազ).	ասիսազերէն
աքքադ.	աքքադերէն
աֆղ(ան).	աֆղաններէն
բաբել.	բաբելացերէն
բասկ.	բասկերէն
բաց.	բացերէն (չեչենական լեզու).
բելուճ.	բելուճերէն
բևեռ.	խալդեան բևեռագիրների լեզուն
բէովտ.	բէովտիական (բարբառ յունարէնի)
բիւզ.(յն).	բիւզանդական յունարէն
բոհեմ.	բոհեմերէն (եւրոպական գնչուների լեզուն)
բոշ(այ).	բոշայերէն (հայ գնչունների լեզուն).
բոսն.	բոսնիական լեզուն
բուդ.	բուդուխ (Կովկաս)
բուլգ(ար).	բուլգարերէն
բուխար.	բուխարա
բուր(ևաթ).	բուրեաթերէն (Թուրքական լեզու)
բրբտ.	բրբտոներէն (կելտական լեզու Ֆրանսիայում)
գաէլ.	գաէլական լեզու (կելտական հին լեզու)
գալլ.	գալլերէն, որ և կիմրերէն կամ վելշերէն (Անգլիա)
գաղղ. ղղ.	գաղղիերէն, իմա՛ ֆրանսերէն.
գերմ.	գերմաներէն (արդի լեզուն).
գնչ.	գնչուերէն (Տաճկաստանի գնչունների լեզուն)
գոթ.	գոթացերէն կամ գոթերէն
գոլ.	գոլուա, հին կելտերէն
գորտ.	գորտինեան (բարբառ յուն).
գուր.	գուրիական բարբառ վրաց.
գրբ.	գրաբար հայերէն
դաղմ.	դաղմատեերէն (ըստ ՆՀԲ)
դան.	դանիերէն
դիդ. / դիդօ.	դիդօ (Հիւս. կովկասեան լեզու)
դոր.	դորիական (բարբառ յունարէնի)
դուժ.	դուժիկի
դրավիդ.	դրավիդեան
եազդ(ուլ).	եազդուլամի
եակ(ութ.) / եաքուտ.	եաքուտերէն
եաղն.	եաղնոբի (իրանեան բարբառ Պամիրում)
երր.	երրայեցերէն
եգիպտ.	եգիպտացերէն
ենովպ.	ենովպացերէն (Աբխազիա, Հաբէշ)
էլ.	էլէական (բարբառ յունարէնի)
էլամ.	էլամերէն
եպիր.	եպիրական բարբառ յն.
ետրուր. / ետր. / ետրուսկ.	ետրուսկերէն (հին Ետրուրիոյ լեզուն)
երս.	= իռլ.
եւռլ.	եւռլիական (բարբառ յունարէնի)
եւր.	եւրոպական
զազ(ա)	զազա (քրդական լեզու).

զիրյ. զիրյէն
զնդ. զանդկերէն կամ զենդերէն (Աւեստայի լեզուն)
էթ. էտոն(ոն). էտոնէն. էտոներէն (ֆիննական լեզու)
էրզ. էրզա=իռլ.
Թաթաս. Թաթասսարան (հիւս. կովկասեան լեզու)
Թաթ. Թաթերէն
Թալ. Թալիշի (պրս. բարբառ)
Թալմ. Թալմուդերէն (նոր եբրայեցերէն)
Թամուլ. Թամուլերէն (Դրավիդեան լեզու Մադրասից ճեյլոն)
Թարգ. Թարգում (արամէական)
Թես(ալ). Թեսալական (բարբառ յունարէնի)
ԹԹր. Թաթարերէն
ԹիրԹ. Թիրէթերէն
Թոխար. Թոխարերէն
Թոսք. Թոսքա (բարբառ ալբանական)
Թունգուզ. Թունգուզերէն (Մանչուրիայի բնիկ լեզուն)
Թուշ. Թուշերէն (վրացական բարբառ)
Թրակ. Թրակերէն
Թրք. Թուրքերէն
իբեր. իբերական
իլլիւր. իլլիւրերէն (հին Իւրիկիոյ լեզուն)
իմեր(ել). իմերելերէն (վրաց. բարբառ)
ինդ. ինգիլոյ. ինգիլոյ (վրացական բարբառ)
ինգուշ. ինգուշերէն (չեչեններէն)
իռլ. իռլանդերէն
իտալ. իտալերէն
իրան. իրանական
լազ. լազերէն (վրացական ընտանիքից)
լակ. լակ կամ կազիկումուկ (հիւս. կովկասեան լեզու)
լակոն. լակոնական (բարբառ յունարէնի)
լահճ. լահճերէն (իրանեան բարբառ Կովկասում)
լապպ. լապ(ոն). լապոներէն (ֆիննական լեզու)
լափ.
լատ. լատիներէն
լեզգ. լեզգիերէն
լեքք. լեքքերէն
լհճ. լհճերէն
լեհ. լեհերէն (բարբառ յունարէնի).
լիթ. լիթուաներէն
լիվ. լիվներէն (ֆիննական լեզու)
լիւդ. լիւդիերէն
լիւկ. լիկ. լիւկիերէն
լոկր. լոկրիական (բարբառ յունարէնի)
լտ. լատիներէն
խալդ. խալդերէն (բևեռագիր)
խբրղզ. տե՛ս կիրգիզ.
խին. խինալուղ (Կովկաս)
խիւր. խիւրկիլի (Կովկաս)
խուռս. խուռսալ կամ խուռսագ (հիւս. կովկասեան լեզու)
խպտ. խպտերէն (Եգիպտոսի բնիկների արդի լեզուն, որ գրեթէ մեռել է)
խրվ(ատ). խրվատերէն (Սերբիա)
կաբ. կաբարդ. կաբարդերէն (բարբառ չերքեզերէնի)
կազիկում. տե՛ս լակ.
կալմ(ուխ). կալմուխերէն (ալթայական լեզու)
կամխ. կամխերէն (որ և հաթերէն)
կամչատ. կամչատալ (Կամչատկայի լեզուն)
կայ. կայտ. կայտաղ կամ կարակայտագ (հիւս. կովկասեան լեզու)
կաշուբ. կաշուբերէն (սլաւական լեզու)
կար. կարատա (Կովկաս)
կելտ. կելտերէն
կիլիկ. կիլիկեան հայերէն
կիմբ. կիմբերէն (տե՛ս գալլ.)
կիպր. կիպրական (Կիպրոսի յունարէն բարբառ)
կիրգիզ. կիրգիզերէն (ալթայական լեզու)
կիւր. կիւրին. կիւրին կամ քիւրին (լեզգիերէն լեզու)
կոյբ. կոյբալ
կոր. կորնթական (բարբառ յն.)
կորկիւր. կորկիւրա (Կորֆու կղզու յն. բարբառը)
կրն. կրներէն (կելտական լեզու)
կուբ. կուբաճի (Կովկաս)
կումուկ. կումիկ. կումուկերէն (Քրքական լեզու)
կպղկ. կապադովկիական արդի յունարէն բարբառ
կրետ. կրետական բարբառ հին յունարէնի
հաթ. հատ. հաթերէն
հրդ. հին բարձր գերմաներէն
հնս. Հնսէնի բարբառ (գերմաներէն)
հիբիթ. տե՛ս հաթ.
հինդ. հինդի
հինդուստ. հինդուստանի
հիւս. պհլ. հիւսիսային պահլաւերէն
հիւրկ. հիւրկան կամ խիւրկիլի (կովկասեան լեզու)

ՀՀիւս. Հին Հիւսիսային (Սկանդինավիա)
Հյ. Հայերէն
Հնդ. Հնդկերէն
Հնխ. Հնգևրոպական նախալեզու
Հոլլ. Հոլլանդերէն
Հոմեր. Հոմերական յունարէն
Հունգ. Հունգարերէն
Հոոդ. Հոոդոսի բարբառ (յունարէնի)
Հր. Հրէարէն
Ճապոն. Ճապոներէն
Մազանդ. Մազանդարանի (բարբառ պարսկերէնի)
Մալայ. Մալայերէն
Մալգաշ. Մալգաշերէն (Մադագասկարի լեզուն)
Մակեդ. Մակեդոնական
Մանգլ. Միջին անգլերէն
Մանդ(այ). Մանդայերէն (նոր երրայեցերէն)
Մանիք. պհլ. Մանիքէական պահլաւերէն
Մանչ(ուր.) Մանչուրերէն
Մար. Մարերէն
Մբգ. Միջին բարձր գերմաներէն
Մգ. Միջին գերմաներէն
Մեսապ. Մեսապերէն (Հիւրիկեան լեզու)
Մինգ. Մինգրելերէն (վրացական լեզու)
Մինգր.
Մինգրել.
Մինջ. Մինջանի (պարսկական բարբառ)
Միշն. Միշնայերէն նոր երրայեցերէն
Միջ. հյ. Միջին հայերէն
Միջ.ստ.գերմ. Միջին ստորին գերմաներէն
Միռլ. Միջին իռլանդերէն
Մլտ. Միջին լատիներէն
Մհյ. Միջին հայերէն
Մյն. Միջին յունարէն
Մոնգոլ. Մոնգոլերէն կամ Մոնղոլերէն
Մորդ(վ). Մորդվիներէն (Ֆիննական լեզու)
Մսգ. Միջին ստորին գերմաներէն
յաբեթ. յաբեթական (ըստ Մառի).
յիդդ. յիդգա (yidgha) իրանեան բարբառ Հինդուքուշում
յն. յուն. յունարէն
յոն. յոնիական (բարբառ յունարէնի)
Նրգ. Նոր բարձր գերմաներէն = գերմ.
Նողայ. լեզու թաթարական
Նորմ. Նորմանդական
Նորվ. Նորվեգերէն
Շապս. Շապսուխերէն (կովկասեան լեզու).
Շափս.
Շիղն. Շիղնի (բարբառ պրս.)
Շվ(եդ). Շվեդերէն
Արմատական բառարան—5

շվէյց. շվէյցարական
ուկր. ուկրայներէն
ումբր. ումբրերէն կամ օմբրերէն (իտալական լեզու)
ուղգ. ուղգուրերէն կամ ույղուրերէն (հին թուրքերէն).
ուղգուր.
ունցո (կովկասեան լեզու)
ուտ. ուտիերէն
ուրարտ. ուրարտերէն
չակավ. չակավերէն (բարբառ ալաւական)
չաղաթ. չաղաթայ (հին թուրքերէն)
չամ. չամերէն (մոն-քմեր լեզու)
չեխ. չեխերէն
չեչ(էն). չեչնեներէն
չերեմ(իս). չերեմիսերէն (ֆիննական լեզու)
չերք. չերքեզերէն
չերքէզ.
չին. չինարէն
չուվաշ. չուվաշերէն (ֆիննական լեզու)
պազ(ենգ). պազենգերէն (իրանեան լեզու)
պալ. Պալիգնեցիք, Պելիգնեցիք (Սամնիական ժողովուրդ)
պալմ. պալմիրերէն
պալմիր.
պահլ. պահլաւերէն
պամիր. պամիրեան (բարբառ).
պամփ. պամփիլիական (բարբառ յունարէնի)
պարթև. պարթևական պհլ.
պելասգ. պելասգերէն (Յունաստանի նախաբնիկների լեզուն)
պերմ. պերմերէն (ֆիննական լեզու)
պհլ. պահլաւերէն
պոլաբ. պոլաբերէն
պոնտ. պոնտական
պորտ. պորտուգեզերէն
պրակր. պրակրիտ.
պրովանսալ
պրուս. պրուսերէն (իմա՛ հին պրուսերէն)
պրս. պարսկերէն
ջավայ. ջավայերէն
ջար. (կովկասեան լեզու)
ջէք (լեզու կովկասեան)
ռ. ռուսերէն
ռոմանս. ռոմանական
ռում(ին) ռումիներէն
ռուս. ռուսերէն
ռուտուլ (Կովկաս)
ոշ. ոշականի (բարբառ իրանական)
սաբ. սաբէական (սեմական լեզու)
սաբին. սաբինական
սակ. սակերէն (արևելեան իրաներէն)
սամոյ. սամոյեդ

սանգլ.	սանգլի (բարբառ պարսկերէնի)
սանս.	սանսկրիտ
սասան. պհլ.	Սասանեան պահլաւերէն
սար.	սարիղոլի (բարբառ պրս.)
սարդ.	Սարդենիա կղզու լեզուն
սարմատ.	սարմատական
սաքս.	սաքսոններէն
սգերմ.	ստորիճ գերմաներէն
սեմ.	սեմական (լեզու)
սեմն.	սեմնանի (պարսկերէնի բարբառ)
սերբ.	սերբերէն
սիրյ.	սիրյաններէն (ֆիննական լեզու)
սլ.	սլաւերէն
սլով.	սլովեններէն
սլովակ.	սլովակերէն
սլտ.	ստորին լատիներէն
սկանդ.	սկանդինաւեան
սկիւթ.	սկիւթական
սկովտ.	սկովտերէն, շոտլանդերէն
սնս.	սանսկրիտ
սոգդ.	սոգդիարէն (իրանեան լեզու)
սորբ.	սորաբերէն (սլաւական լեզու)
սումեր.	սումերերէն
սպան.	սպաներէն
սվան.	սվաներէն (վրացական լեզու)
ստ. լտ.	ստորին լատիներէն
ստ. յն.	ստորին յունարէն
վար. վարկ.	վարկուն (կովկասեան լեզու)
վեդ.	վեդայական Հնդկերէն
վելշ.	տե՛ս գալլ.
վենետ.	վենետերէն (Լիւրիկեան լեզու)
վեպս.	վեպսերէն (ֆիննական լեզու)
վոգ(ուլ).	վոգուլերէն (ֆիննական լեզու)
վոթյ. վոթյակ.	վոթյակերէն (ֆիննական լեզու)
վոլոֆ.	վոլոֆ (ափրիկեան լեզու)
վոտ. վօտ.	վոտերէն (ֆիննական լեզու)
վր. վրաց.	վրացերէն
տաբ(աս).	տե՛ս Քարաս.
տեմկ. տեմ.	տեմկերէն
տուբալկանեան	
ցախ(ուր).	ցախուրերէն կամ ծախուրերէն (Հիւս. կովկասեան լեզու)
փարս.	փարսի (գերբերի լեզուն)
փիւն(իկ).	փիւնիկերէն
փոկ.	փոկէական (բարբառ յունարէնի)
փռուգ.	փռուգերէն
փռուս.	տե՛ս ուկր.
քաղդ.	քաղդէարէն
քարթ.	քարթվելերէն (վրացերէն)
քիմր.	տե՛ս կիմր.
քոնր.	մոն-քմեր
քոյբալ.	(Քաթարական լեզու)
քորն.	տե՛ս կորն.
քումուք.	տե՛ս կումուկ.
քուչ.	քուչերէն
քրդ.	քրդերէն
քրիստ.սոգդ.	քրիստոնէական սոգդերէն
օմբր.	տե՛ս ումբր.
օսթյ(ակ).	օսթյակերէն (ֆիննական լեզու)
օսկ.	օսկեան (իտալական լեզու)
օսմ(ան).	օսմաններէն
օսս(եթ).	օսեթերէն
ֆիննն.	ֆիններէն
ֆլամ.	ֆլամաններէն
ֆր. ֆրանս.	ֆրանսերէն
ֆրանք.	ֆրանքոններէն (գերմանական լեզու)
ֆրիզ.	ֆրիզերէն (գերմանական լեզու)

Հայերէն գաւառականներ

Ագլ.	Ագուլիս
Ազա.	Ազա գիւղ
Աժտ.	Աստրախան
Ալշ.	Ալաշկերտ
Ալքս.	Ղեղինական (նախկին Ա-լեքսանդրապոլ)
Ախց.	Ախալցխա
Ախք.	Ախալքալաք
Ակն.	Ակն
Այն.	Այնթապ
Անկ.	Անգորա, Էնկիւրի
Անտ.	Անտիոք
Աշտ.	Աշտարակ
Ապ.	Ապարան
Ասլ.	Ասլանբէգ
Աստ.	Աստապատ
Ատ. Ատափ.	Ատափազար
Ատն.	Ատանա
Արբ.	Արաբկիր
Արդ.	Արդուին
Արճ.	Արճէշ
Արտ.	Արտանուշ
Բ.	Բալու
Բբ.	Բաբերդ
Բզ.	Բազար գիւղ (Նիկոմիդիա)
Բիւթ.	Բիւթանիա
Բլ.	Բուլանըխ
Բղ.	Բաղէշ
Բն. Բնկ.	Բինկեան
Բս.	Բասեն
Գնձ.	Գանձակ
Գոր.	Գորիս
Դվ.	Թաւրիզ
Դրլ.	Դարալագեազ
Եալ.	Եալովա (Նիկոմիդիա)
Եդ.	Եդեսիա
Երև.	Երևան
Երզ.	Երզնկա
Եւդ.	Եւդոկիա
Զթ.	Զէյթուն
Զմ.	Զմիւռնիա
Էնկ.	Էնկիւրի
Էվ.	Էվէրէկ
Թեհ.	Թեհրան
Իզդ.	Իզդիր
Իլպ.	Իլպիշ (Սեբաստիայի մօտ)
Լ.	Լոռի
Լհ. Լեհ.	Լեհահայք
Ծ.	Ծոյ
Ծզ.	Ծիզան
Ծթ.	Ծոյթ
Ծլ.	Ծլաթ
Ծն.	Ծիան
Ծնս.	Ծնուս
Ծտչ.	Ծատրչուր
Ծր.	Ծրիմ
Ծրբ.	Ծարբերդ
Կ.	Կարս
Կես. Կս.	Կեսարիա
Կիւր.	Կիւրին
Կղզ.	Կաղզուան
Կմ.	Կէմլէյիկ
Կմխ.	Կամախ
Կմշ.	Կիւմիշխանէ
Կյ.	Կէլվէ (Նիկոմիդիա)
Կր.	Կարին
Հբ.	Հին Բայազիտ
Հզ.	Հազզօ
Հզր.	Հազրօ
Հճ.	Հաճին
Համշ.	Համշէն
Հնգ.	Հունգարահայք
Հնդ.	Հնդկահայք
Հնխ.	Հին Նախիջևան
Հղղ.	Հին Ջուղա
Հւր.	Հաւարիկ
Ղզ.	Ղազախ
Ղզլ.	Ղզլար
Ղրբ.	Ղարաբաղ
Ղրդ.	Ղարադաղ
Ղփ.	Ղափան
Ղբ.	Ղարաքիլիսա
Մէրզ.	Մէրզէկէօզ (Նիկոմիդիա)
Մժ.	Մուժամբար (Թաւրիզ)
Մլթ.	Մալաթիա
Մլկ.	Մալկարա
Մկ.	Մոկք
Մղ. Մղր.	Մեղրի
Մն.	Մանիսա
Մնզ.	Մանազկերտ
Մնճ.	Մունճուսուն (Կեսարիա)

Մշ. Մուշ
Մշկ. Մաշկերտ
Մրղ. Մարաղա
Մրշ. Մարաշ
Մրս. Մարսուան
Նբ. Նոր-Բայազեդ
Նխ. Նուխի
Նկ. Նիկոմիդիա
Ննխ. Նոր-Նախիջևան
Նջ. Նոր-Ջուղա
Նփ. Նիքիկերտ
Շիր. Շիրակ
Շլ. Շուլաւեր
Շհ. Շապին-Գարահիսար
Շմ. Շամախի
Շշ. Շամշուլդէ
Շտ. Շաուշխ
Ոզմ. Ոզմի
Որմ. Ուրմիա
Զմ. Զմշկածագ
Զմշ. Զմշկածագ
Զն. Զէնկիլէր (Նիկոմիդիա)
Զրս. Զարսանճաք
Պլ. Պօլիս
Պշ. Աղբակ (Պաշգալէ)
Պտ. Պուրսուր
Պր. Պրտ. Պարտիզակ
Ջղ. Նոր-Ջուղա
Ք. Ռոտոսթօ
Ռմ. Ռում. Ռումանահայ
Ռշտ. Ռշտունիք
Ս. Սեբ. Սեբաստիա
Սք. Սքանոզ
Սիփ. Սիփան
Սլզ. Սէօլէօզ (Նիկոմիդիա)
Սլք. Սուլքանապատ
Սլմ. Սալմաստ
Սշ. Սուշավա
Սս. Սասուն
Սվ. Սիվրիհիսար
Սվեդ. Սվեդիա
Սր. Սրմ. Սուրմալու
Վն. Վան
Տ. Տարէնտէ
Տիգ. Տիգրանակերտ
Տս. Տէրսիմ
Տտ. Տիատին
Տր. Տրապիզոն
Տփ. Տփղիս
Ցղ. Ցղնա
Ք. Քղ. Քղի
Օշ. Օշական
Օվ. Օվաճըք
Օրտ. Օրտու
Ֆն. Ֆոնուղ

(Ի հարկին նոյնները նաև Թուրքերէն բարբառներուն համար).

Այլ համառոտագրութիւններ

Ազգ. մատ.	Ազգային մատենադարան
ած.	ածական
աղաւ.	աղաւաղեալ
անկ.	անկատար
անց.	անցեալ
անց. ընդ.	անցեալ ընդունելութիւն
աշխ.	աշխարհաբար
ապ. ապատ. ապո.	ապառնի
ար.	արական
արեմ.	արեմտեան
արձ.	արձանագրութիւն
արմ.	արմատ
արտ.	արտասպեալ
աօր.	աօրիստ
բազդ.	բազդատական
բառ. բո.	բառարան
բց. բցո.	բացառական
գերադր.	գերադրական
գյ.	գոյական
գրակ.	գրական լեզուով
գրծ.	գործիական
գտ.	գաւառական
դերբ.	դերբայ
եզ.	եզակի
երկ.	երկակի
ընթ.	ընթերցուած
թրգ. թրգմ.	թարգմանութիւն
ժղ.	ժողովրդական
իգ.	իգական
ինչ.	ինչպէս
լծ.	լծորդ
լյնթ.	լայնաբար
լուս. լս.	լուսանցքում
խմբ.	խմբագրութիւն
ծան.	ծանօթութիւն
ծծկ.	ծածկաձեւով
ծղբ.	ծաղրաբար
կոչ.	կոչական
կտ. կտր.	կատարեալ
կտկ.	կատակաբար
կրտ.	կրաւորական
հիւս.	հիւսիսային
հլ.	հոլովմունք
համեմ.	համեմատել
հյց.	հայցական
հտ.	հատոր
հր.	հարաւային
հրմ. հրամ.	հրամայական
հրտ. հրտր.	հրատարակութիւն, հրատարակեալ...
հրց.	հարցական
ձ. ձեռ.	ձեռագիր
ձձ.	ձեռագրեր
միջ.	միջին
մնկ.	մանկական լեզուով
յգ. յոգն.	յոգնակի
յոշ.	յատաջաբան
ներգ.	ներգոյական
ներկ.	ներկայ
նշ.	նշանակում է
շար.	և շարունակութիւնը
շգ.	շաղկապ
ուղ.	ուղղական
չեզ.	չեզոք
ոմկ.	ոմանք օրէն
սաստկ.	սաստկական
սեռ.	սեռական
տ.	տե՛ս
տպ.	տպուած, տպագրութիւն, տպագիրը...
տր.	տրական
փխ.	փոխանակ
փխբ.	փոխաբերաբար
փոխ.	փոխառութիւն, փոխառեալ
օր.	օրինակ

Ա

***ԱԱԼՈՒՍԱՆ** *կամ* **ԱՅԱԼՈՒՍԱՆ** *«վառվառուկ խոտը» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1։*

= արաբ. السن aalusan *բառից (NZKM 11, 266), որ արաբացնել է յն.* ἄλυσσον-*ից, որից փոխառնել են նաև լտ.* alyssum, *ֆրանս.* alysse, alysson *«վառվառուկ»։ Այս խոտը հին ժամանակ գործ էր ածւում իբր կատաղութեան դարման. քան այսմ յն. բառը կազմուած է* λύσσα *«կատաղութիւն» բառից՝ a բացասականով։—Ա՛ճ.*

*** ԱՐ** *«հրէական տոմարի 11-րդ ամիսը» (գրուած է նաև աւ, ավ Իգնատ. Թղ. 95) Յայտմ. օգ. 15. Հ. կիրակ։*

= ասոր. ܐܒ āb, *եբր.* אב āb *նոյն նշ. այս բառը չի գտնւում Ս. Գրքի մէջ, այլ գործածուած է միայն Թալմուդում. սրանցից փոխառնել են նաև արաբ.* أب āb *«օգոստոս ամիսը» (քան Կամուս, Թրք. Թրգմ. Ա, 76), պրս.* ماه اب āb-māh *կամ* māhāb *«օգոստոս»։*

Ուղիղ մեկնեց Müller SWAW *38,577։*

Աբանոս տե՛ս Բբենոս։

Աբաս տե՛ս Աբբաս։

Արարիւի տե՛ս Ափարրիւ։

***ԱԲԲԱ** *կամ* **ԱԲԲԱՅ**, *ի հլ. «հայր, երկնաւոր Հայր» ՄԳր. Ոսկ. Հռոմ. 173—4, Եփր. Հռ. 32 (այս իմաստով գործ է ածուած հայր բառի հետ միասին). 2. «վանահայր, վանական» Վրք. Հց. երկրորդական ձևերն են աբաս, ու հլ. աբբաս Վրք. Հց։ Այս աբաս (սեռ. աբասու) ձևը մի քանի անգամ գործածել է Կղկնտ. որ հրատարակիչները յաւուկ անուն են կարծել և գլխատառով են դրել. այսպես՝ Էմինի Հրատ. էջ 163, 165, 167—9։ Այս բառից են ծագում աբբասուհի «կուսանաց վանքի մայր կամ մեծաւորուհի» Ճառընտ. աբբահայր «վանահայր» կոչ. 369 (բայց այստեղ պետք է կարդալ աբբայ, ևա՛յր. տե՛ս իմ Հայ նոր բառեր հին մատ. Ա. էջ 164)։*

= յն. ἀββᾶ, ἀββᾶς, *որից նաև լտ.* abba, abbas, *ֆր.* abbé, *գերմ.* Abt, *վրաց. աբբա ևն. բոլորն էլ ծագում են սեմականից. համմ. եբր.* אב āb, *արամ.* ab, *ասոր.* ܐܒܐ ābā, *արաբ.* اب ab, ابو abu, ابى abī, ابا abā, *ասոր.* abu, *որոնք նշանակում են «հայր»։— Հիւբշ. 338։*

Ուղիղ մեկնեցին նախ Բառ. երեմ. ՀՀԲ, Աւետիքեան, Մեկն. Թղ. Պօղ. բ. 396 և ՆՀԲ։

***ԱԲԲԱՆԱ** *«բարձր տեղ». գործածուած եմ գտնում միայն Եզեկ. ի. 29. Ջի՞նչ է աբբանայդ այդ՝ յոր դուքդ մտանէք և կոչեցին զանուն նորա աբբանա, մինչև ցայսօր ժամանակի։*

= եբր. բնագրի הבמה ha-bāmā, *«բարձունք» բառն է, որ յն. տառադարձուած է* αβαμά, *այլ ձևս.* αββανα, *որից էլ տառադարձուած է հայերէն ձևը։—Ա՛ճ.*

Բառ. երեմ. մեկնում է «քար՝ որոյ երկիր պագանէին, կռոց տուն, բաղանիք. լուացման տեղ»։ Առաջին իմաստով անշուշտ հասկանում է եբր. אבן eben, *արամ.* אבנא abna, *ասոր.* ܐܒܢܐ abnā *«ժայռ, քար», որ սակայն բնագրում չը կայ։ Նորերից բառս գիտէ միայն Ա՛Բ՝ իբր երբայեցերէն։*

ԱԲԲՈՒ *«չորից» ունի միայն Բառ. երեմ. էջ 3։ Ըստ Ակինեան ՀԱ 1930, 493 ուրիշ ձևագիրներ ունին աբոռ, արբոռ, արբէէ. բացատրութիւնն է Արբոռ քաղաքի անուան, որ գործածուած է Ծն. իգ. 2 և 3ես. ժդ. 15 (Մեռաւ Սառա ի քաղաքի Արբոկայ ի ձորն, այն ինքն է Քեբրոն։ Անուն Քեբրոնի էր յառաջ*

քաղաք Արբոկ). այս բառը արդարև Փիլ. լին. դ. էջ 301 մեկնում է «չորից» (թարգմանի Արբոկ՝ չորից)։ Ըստ այսմ՝

= եբր. Arba քաղաքի անունն է, որ գործածուած է Ս. Գրքի եբր. բնագրի նոյն հատուածներում և տառադարձուած է յն. առաջին տեղում Ἀρβόκ, երկրորդ տեղում Ἀργόβ (այլ ընթ. Αρβωκ, Αρβο, Αρβε, Αρβεκ, Αρβοα, Αρβοκ (Gesenius 17, 63բ և 728բ) և կցուելով եբր. arba «չորս» բառին, թարգմանուել է այսպես՝—Ա.ճ.

ԱԲԲՈՐ «պահանորդ կամ պահպանող». գիտե միայն Բառ. երեմ. էջ 3։ Ըստ Ակինեան ՀԱ. 1930, 493 այլ ընթ. ատոր, ագոր. սրանով նոյնանում է բառս ատոր «պահանորդ» բառի հետ, որ տե՛ս առանձին։

ԱԲԹ (սեռ. -ի) «կտաւից կամ սունկից և նման բաներից պատրաստուած դիւրավառ նիւթ, դաւ». Նար. խրատ. Տաթև. ձմ. ճծդ։

> Նախ Klaproth, Asia poligl. 100 կոչ պրս. pedeh բառին։
> Նշ՛Բ և սրանից առնելով նաև Հիւնք. դնում են յն. ἅπτω, ἅπτομαι «լուցանել, վառել» բայից։ ZDMG 1868 (22), 330 և սրանից էլ Lagarde, Sym. 1877, 103, 40 դնում է պրս. ابێ ābēž, ابير ābēr, ایر āēr, ابز āēz, ابيز āyēz «կայծ» բառերից։ Lag. Arm. Stud § 3 մերժում է սրանք՝ նշանակութեան տարբերութեան պատճառաւ։

Գիմ.—Հճ. աբ՛բ՛եր, Խրբ. աբ՛էր, Համշ. ափէր, Ջթ. աբ՛իր. նոյն է նաև աբեր, Ղրբ. «լեռնային բոյս՝ որից աբեթ են պատրաստում». բայց տարբեր է աբեր ննխ. «խեղճ, թշուառ», որ Յարեբ յատուկ անունից է։

Փոխ.—Վրաց. աբեղի «աբեթ» (տե՛ս Ա-ճառ. Բազմ. 1898 225 բ և Արրատ. 1898, 370 բ), մինգր. օբեղ «աբեթ», սվան. հաբեղի, հորեղ «աբեթ», Մառ ИАН 1918, էջ 339 այս բառերը համարում է bed «վառել» արմատից. համմտ. սվան. libdine «վառել», եթէ այսպէս է, ուրեմն բառը բնիկ կովկասեան կդառնայ և հետևաբար հայ ձևը կլինի վրացականից փոխառեալ։ Աւ այժմ այս ստուգաբանութիւնը անհաստատ է թուում մեզ։

*ԱԲԵՂԱՅ, ի հլ. «վանական, կուսակրոն կրոնաւոր» կոչ. ժդ. Բուզ. Ջ. 16. ածանցման մէջ երևում է երկու ձևով. բուն ձևից՝ աբեղայական եղ. աբեղայութիւն Լմբ. պտրդ. աբեղայական Մարթին. կրճատմամբ՝ աբեղաթաղ Մաշտ. աբեղութիւն Լմբ. մատ. էջ 47։ Յետնաբար եղած է հաբեղայ Վրք. հց. ժե (այսպէս գրուած նաև կոչ. 290). կրճատ՝ աբեղ Դրնդ. 343. յետին և յարմարեալ ձև է խաբեղայ «վատ աբեղայ, խաբեբայ աբեղայ» (ինչպես ունինք չհաճաճայ). Խաբեղայն և ո՛չ աբեղայն. Ո՞ւր է խաբեղայն Մարթինոս. Յայտ համմտ. խաբ եղար և ո՛չ կրոնաւոր. Լմբ. մատ. էջ 48։

= ասոր. ܐܒܝܠܐ abīlā, awīlā «աբեղայ», որի առաջին նշանակութիւնն է «տխուր, սրբոտում» ܐܒܠ ebl «ցաւ, սգալ, տրտմիլ» արմատից (Brockelmann, Lex. syr. էջ 2 ա). ասորերէնից փոխառեալ է նաև արաբ. أبيل abīl «ծերունի» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 372), «քահանայ» (անդ՝ էջ 126)։—Հիւբշ. 299։

> Հներից Տաթև. ամ. 52 մեկնում է «աբեղային հայր ասի»։ ՀՀԲ ապ «հայր» բառից։ ՆՀԲ արար. էպիլ։ Müller SWAW 66, 278 արամ. ābrā «ընկեր, եղբայր» բառից, որ մերժելով Lag. Arm. Stud. § 4՝ դնում է ասոր. awīlā։

Գիմ.—կր. աբ՛էղա, Սլմ. ապեղա, Պլ. Ռ. ափէղա, Տփ. ափիղա, Մրղ. ապէղա, նոպէղա։ Նոր բառեր են աբեղաթող, աբեղաջարդ, աբեղաձագ, աբեղախաղ, աբեղաճաշ, աբեղուկ։

ԱԲԵՂՐԻ «փութապէս». գիտե միայն Բառ. երեմ. էջ 3։

*ԱԲԻՈՆ «աղքատ». «Աբիոնն աղքատ կոչի ի լեզու հերրայեցի... զնոսա (գերիոնիտ աղանգաւորսն) առաջինքն յիրաւի կոչեն աբիոնացիս, փոխանակ զի աղքատաբար և տկարաբար ունեին նոքա զՔրիստոս». Նւս. պտմ. 203—4. Նոյնը Անան. ժմնկ. 39՝ Քանզի աբիովն ի հերրայեցւոց լեզուն աղքատ կոչի։—Ուրիշ տեղ չէ գործածուած։

= յն. ἄβιος, ἄβιον «աղքատ, չունևոր» (α ան+βίος կեանք) եբր. אביון evyōn «աղ-

քաա, թշուառ». այս բառը Եւսեբիոսի թարգմանութեամբ ասորականից անցել է մեզ։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ԱԲԽՈՈՒ *«շրթունք» ըստ Մառ,* Тексты и раз. по Кавк. Фил. *հա. 1, էջ 74 (Ленинг. 1925)։*

Կցում է պրս. ابخور ābxōr *բառին, որ նշանակում է «տեղին այն յափունս ջրոց, ուստի ջուր ըմպեն մարդիկ և այլ կենդանիք»։ Իմաստը չի թոյլատրում միացնել այս երկուսը։*

Աբոն *տե՛ս* **Արբոն**։

ԱԲՈՔ *«բուրձ, պարկ,* capsella*». գիտէ միայն Ներսէսովիչ, բառ. լտ.—հյ. էջ 66—67։*

ԱԲՐԱՅ *«աղախին». ունի միայն Բառ. երեմ. էջ 4, իբրև յունական բառ։*

Ագաթէս տե՛ս **Ակատ**։

ԱԳԱՀ, ի-ա *հլ. «ժլատ, անյագ» ՍԳր. որից* **ագահութիւն** *ՍԳր.* **ագահել** *ՍԳր.* **ագահագոյն** *Առակ. իգ. 2. որկորագաղ Յայսմ։—Ագահ և որկրամոլ հոմանիշների տարբերութեան վրայ խօսում է Տաթև. ամ. 252։*

ՀՀԲ մեկնում է «ահ գայ»։ Peterm. *25 լտ.* avarus *ձևին է կցում։ Հիւնք. լտ.* acuo *«սրանալ, բարկ և խայթիչ լինել»,* acus *«ասեղի ծայր, սրածայր»,* aculeus *«խայթոց» բառերից։*

Գիւր.— Մշ. **ագահ**, *Ղրբ. Տփ.* **ա՛գահ**, *Ալշ. կր. Ջղ.* **ագ՛ահ**, *Շմ.* **ակահ**, *Հմշ. Ռ. Սլ.* **աֆահ**, *Ակն.* **աֆայի**, *խրբ.* **ագ՛գ՛այ**, *Նխճ.* **աֆաֆ**, *ԶՓ.* **ագ՛օհ**, **ագ՛ոհ**, *ՀՀ.* **ագ՛գ՛օհ**, *Պլ.* **աճֆահ**, **աճֆա**, *Ասլ.* **աճֆա**. *Բրբախօս հայոց մէջ՝ Առն.* **աճֆահ**, *Անկ.* **աճֆա**։

*ՓՈԽ.—***Անգահ** *դաւառական ձևից փոխառնել է Թում վրաց.* **անգարի**, **անգաարի** *«շահամոլ, ընչաքաղց»,* **անգաարեբա** *«ընչաքաղցութիւն». մեր ի ձայնի դէմ r ենք գտնում նաև վրաց. զոռվա «զոհել» և բարի «բահ» (հին *զորեի, *բարի) բառերի մեջ, ըստ Մառ.* Иппол. *61 կայ և վրաց.* **անգահրի** *ձևը։*

ԱԳԱՆ *«ժրաջան, անդադար» Տաղ։*

ՆՀԲ համարում է անագան բառի դրականը. բայց նշանակութիւնը տարբեր է։ Ունինք նաև գնչ. akan *«հիմալ»,* akana *«անմիջապէս»,* akanak *«մի րոպէ»,* akano *«րոպէապէս» (տե՛ս* Vaillant, Gram. Dial. et voc. des Bohémiens, Paris *1868, էջ 94), որոնք սակայն պատահական նմանութիւն ունին։*

+ԱԳԱՆԻՄ *(ագայ, ագիր, ագեալ կամ ագուցեալ) «հագնիլ» ՍԳր. Բուզ. Ոսկ. երր. որից* **ագուցանել** *«հագցնել. 2. օղակի մէջ անցկացնել» ՍԳր.* **ագոյցք** *«օղակ. 2. օղակի մէջ անց կացնելով բառնալու ձող» ՍԳր.* **ագուցիկ** *Մծբ.* **ագանելիք** *«զգեստ» Ոսկ. երր. Նոյն արմատի ն-ով զօրացած յետին ձևերն են* **նագանիլ** *«հագնիլ» վրք. հց. Գնձ. կանոնագ.* **նագնիլ** *Լմբ. Մաշտ. Գնձ.* **նագուցանել** *«իրար անցկացնել» երզն. քեր. նոր լեզուի մէջ՝* **նագուստ**, **նագուստեղէն** *են։ Արեւմտահան դրական լեզուն կրաւորականի մէջ գործածում է նագուիլ,* **նագուած**, *մինչդեռ արեւելեանը ունի* **նագնուիլ** *և* **նագնուած**։ *Այստեղ կայ նաև* **նագի** *«հագած» ձևը, որ դիմորոշ յօգով էլ գործածական է. օր.* **նագի շորերս**, **շորս նագիս է**, **նագիդ ի՞նչ է. շորերը նագին**։ *Միւս բայական ձևերն են* **նագցնել**, **նագուեցնել**։ *Իսկ արմատակից առագաստ, օր, օդ? յագչիլ? ինչպես և զգենուլ, զգեստ, առիգած բառերի վրայ տե՛ս առանձին։*

= հնխ. **é̆vō** *կամ* **ó̆vō** *(և ոչ* **á̆vō**) *արմատից, ցեղակից լեզուներից համմ. լտ.* ind-uo *«հագնիլ»,* ex-uo *«հագուստը հանել», ումբր.* an-ovihimu, *գնդ.* **aoθru**. *«կօշիկ», լիթ.* av-iù *«կօշիկ կրել»,* au-nù, **aũti** *«կօշիկ հագնիլ», լեթթ.* áu-ju, *հսլ.* ob-u-jǫ *նոյն նշ.։ Հայ. ա-ի վրայ (փխ. հնխ. o), տե՛ս* Bartholomae BB *17. 91 և* Meillet MSL 8, *153։—Հիւբշ. 411։* Pokorny *1*, 109, Walde 263, Ernout-Meillet 303, Trautmann 21:

Lag. Urgesch. Arm. *612 յաջորդ* **ագանիլ** *«օթեւանիլ» բառի հետ միասին՝ ցեղակից է դնում սանս.* **āvas**, *յն.* **ἐσ-τία**, **ἔν-υμι** *բառերին, որոնք մեր երկու նշանակութիւններն էլ ունին։ Այս մեկնութիւնը մերժում է* Arm. st. § 8; Canini, Et. étym. *131* **ագուցանել** *բառը կցում է պրս.* **čatû** *«ծածկոց»,* **čâdar** *«ծածկոց»*

բառերին։ Միայն համեմատութեան պատճառն ալ է, որ այս բառերը գրում է câtu, câdar, *որով č գառնում է գ։ Տերվ. Նախալ. 66 նոյնպես մեր երկու բառերը համեմատում է լտ.* induo, *դնտ.* aoðra *ձևերի հետ։ Հիւնք. հանում է այգ բառից՝ նոյնպէս «ըստ կրկին նշանակութեան»։ Վերի ձևով մեկնեց նախ* Bugge, Btrg. *14։* — Karst, *Ծուշարձան էջ 402* ագոյցք=*սումեր.* ag', ak *«օդակ, կեռ», էջ 416՝* ագաճել, ագոյցք= *մոնղոլ.* xaga *«գոցել»,* xagalgu *«գուռ»,* xaga-lta *«գոգաւոր», թունգուզ.* kā *«գոցել»։*

ԳՒՌ.—ՀՃ. Մշ. հագ'նել, *խրբ.* հագ'նիլ, *Ախց. Ակն. Կր. Համշ. Պլ. Ռ. Սեբ.* հաճնիլ, *Սչ.* հաճնել, *երև. Նախ.* հաճնէլ, *Տփ.* հա'ճնիլ, *ՋՓ.* հագ'նըլ, *Տիգ.* հոճնիլ, *Աս.* հա*նիլ, *Ջղ.* խագանել, խագ'նել, *Ոզմ.* խագ'րնիլ, *Մկ.* խակ'նիլ, *Նր.* խաճնիլ, *Սլմ.* խայհնել, *Մրզ.* խայհնէլ, *Վն.* խայնել։ *Սրանք գործածւում են նաև «ագուցանել» նշանակութեամբ. օր. Տփխիսի բարբառով՝* հալդ'էն հաճգրու *«օդակը անց կացրու»։—Նոր բառեր են* հագուն, հագուկ, հագուստ, հագուորիլ, հագվտիլ, հագվտուճ։

+ԱԳԱՆԻՄ *(ագայ, ագի'ր, ագուցանել) «գիշերը մի տեղ անց կացնել, օթևանիլ» ՍԳր.* ագուցանել *«հիւրընկալել» Գծ. ժ. 23.* օբ–ագայանալ, օբ–ագայիլ *ՍԳր.* օբ–ագան լինել *Տօնակ.* օբ–ագանիլ *Ոսկ. յհ.* բաց–օթեագ *«դուրսը գիշերած» Ղկ. բ. 8. Փարպ. Փիլ.* վայրագ *«դուրսը կեցող, անբնտանի, վայրենի», Մն. իզ. 12. իե. 27.—նոյն արմատից է նաև* օբ, *որի վրայ տե՛ս առանձին։*

=*բնիկ հայ բառ՝ հնխ.* aw—*«գիշերել, քնել» արմատից, որի այլ ժառանգներն են հուն.* ἠαὐω *«քնել, հանգստանալ, գիշերել»,* ἠαυθμός *«գիշերային ապաստարան, որջ»,* μηἰαυθμός *«փարախ»,* ἠνιαυθμος *«իջևան, բնակարան»,* αὐλη *«բակ, բնակարան»,* αὔλις *«ապաստարան, գիշերային օթևան, վրան, տախտ»,* ἄγραυλος *«վայրագ»,* αὐλίζομαι *«գիշերել» ևն* (Boisacq *100, 364,* Pokorny *1, 19—20)։ Ուրիշ լեզուի մեջ պահուած չէ այս արմատը, բայց սրա աճումն է wes—*«բնակիլ», որ պահուած է շատ լեզուների մէջ։ Նշի ստուգաբանում է «մինչև այգ օթել»։ Այտնեան, Քնն. քեր. էջ 280 իբր այգանիլ։* Lag. *և Հիւնք. տե՛ս նախորդ բառի տակ։ Տերվ. Նախալ. էջ 66 զնդ.* av *«մտնել»,* aovra- *«հողաթափ», լտ.* induo *բառերի հետ՝ հնխ.* av *արմատից։* Bugge, Btrg. *էջ 14,* IF *1, 446,* Müller, Armeniaca *VI, էջ 8 դնում են նոյնպէս հնխ.* av *արմատից, իբր յն.* ἰαὐω *(=* *iy-au-yō*) *«ննջել»,* αὔλις *«օթեվան», զնդ.* av *«երթալ» ևն, Հիւբշ. 411 չի ընդունում այս մեկնութիւնը, որովհետև յիշեալ բառերը կա՛մ ձևով և կա՛մ նշանակութեամբ համաձայն չեն հայերէնին։ Բայց նշանակութիւնը (երկուսն էլ «գիշերել») բոլորովին նոյն է. իսկ ձևով* aw- *տալիս է* ագ-։ Meillet REA *6(1926), 334 հնխ. արմատը դնելով* eu, ou, *սորին ձայնդարձը դնում է* u, *որի վրայ աւելանալով* a *նախայաւելուածը, յառաջացել է* aw> *հյ. ագ-։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 339 Բրք.* eg-len-mek *«զուարճանալ, մի տեղ ժամանակ անց կացնել»։*

*ԱԳԱՆՈՎՔ *(սեռ.-այ) «հեղանիւթերի աման, թակոյկ». մէկ անգամ գործածուած է Ես. իր. 24. «Մինչև յանօթս ագանովքայ»։*

==*Խրբ.* אגן aggān *«կոնք» բառի յոգնակի* אגנות aggānōθ *ձևն է, որ գործածուած է երբայական բնագրի նոյն տեղում և յն.* *αγανώθ *տառադարձութիւնից անցել է մեզ։ (Այժմ մեր ձեռքը հասած յն. օրինակներում ամբողջ այս հատուածը պակասում է)։ Համմտ. նաև.* անկան։—*Հիւբշ. 301, 338։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՔ և ՆՀԲ։

ԱԳԱՊ, ի–ա հլ. «աղքատներին տրուած սիրոյ ճաշ» Կանոն. 26, 27, 35. իմ. Մխ. դտ. էջ 162, որից ագապատէր *Կանոն. էջ 113,* ագապատուն *Կանոն. թարգմանաբար նաև* սէր *«հասարակական ճաշ»,* սէր առնել *«հասարակական ճաշ տալ» Վրք. հց։ Ագապ բառի գործածութիւնը երևում է մեր մէջ գոնէ Զ դարուն. համմտ. Գ. վ. Յովսէփեան, Արրտ. 1912, էջ 997—1001։ Քանիցս անգամ գրուած է* ագաբ *Օրբ. հկճտ. էջ 137։ Հին հայոց* ագապի

մասին նկատողութիւններ տե՛ս Մառ, Христ. Вост. *2(1913), էջ 145—7։*

= յն. ἀγάπη «սէր. 2. ագապ», որից փոխառեալ է նաև լտ. agapae։—*Հիւբշ. 338։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ. Աւետիքեան՝ Մեկն. Քղթ. Պօղոսի, Ա. 875, ՆՀԲ։

Ա.ԳԱՏ *«երկու մեծ բոլորակք՝ որ հատատնեն զհասարակածն և զկենդանակամարն ի չորս մասունս հաւասարս. ֆր.* colure*». մհյ. բառ՝ ըստ Նորայրի, Բառ. ֆր. էջ 259 բ։*

= արաբ. عقد ʿaqd *«կապ, պսակ, մանեակ», օ.*عقدة ʿuqda *«կապ, հանգոյց», յգ.* عقد ʿuqad, ʿəqd *«կապեր, հանգոյցներ»։—Աճ.*

Ա.ԳԱՐԱԿ, *ի–ա հլ. «անդաստան, արտեր ու հողեր... գիւղ» ՍԳր. Ագաթ. որից* **ագարակիկ** *կոչ.* **ագարականալ** *«անշէն՝ աւերակ մընալ» Մամբր.* **ագարակապաշխ** *«արտերի վերատեսուչ» (իբր Քրգմ. յն. ἀγρονόμος հոմանիշից. հմմտ. ἀστρονόμος=աստղաբաշխ, νέμω=բաշխել բայից). կայ նաև* **ագարակի** *խոտ բոյսը՝ ՀԲուս. § 4։ Նորագիւտ բառ է* **ագարակել** *«ծաղկեցնել, զարդացնել», որ մէկ անգամ գտնում եմ գործածուած վրդն. սղ. խէ. էջ 167. «Նախ քան զՔրիստոսի գալուստն աղգ մարդկան զՀոգին սուրբ ո՛չ ունէին զճարտարապետն, որ պարիսպ շինէր և կենդանութիւն տայր և արուեստս ագարակէր»։*

=նոյն է յն. ἀγρός, *լտ.* ager, *սանս.* ájra, *գոթ.* akrs, *գերմ.* Acker *հոմանիշ ձևերի հետ, որոնց բնիկ հայերէն համապատասխանն է *ագր, տեղափոխութեամբ * արգ, որ պահուած է արտ ձևով (տե՛ս այս բառը)։ Այս պարագային* **ագարակ** *բառը դառնում է փոխառութիւն՝ թերևս փոքր-ասիական մի որևէ կորած հնդևրոպական լեզուից։—Աճ.*

Վերի ձևերը յիշում է առաջին անգամ ՀՀԲ. յետոյ նոյնը Böttticher, Arica *87, 427,* Lag. Urgesch. *903։—ՆՀԲ եբր.* אקל։ Lag. Arm. st. *§ 9 անմեկնելի է գտնում բառի երկրորդ ա–ն։ Տէրվ. Նախալ. 60=ագրակ, յն. ἀγρὸς ևն՝ աւելացնելով «եթէ օտարամուտ չէ»։ Հիւնք. յն. ἀγρὸς և հյ.* **ագաճիլ** *բառերից։ Բ. Խալաթեան, ՀԱ 1902, 309 ա–սոր.* ܐܟܪܐ akārā, *ասուր.* ikkaru *բառից փոխառեալ, որ սակայն նշանակում է «հողագործ» (*Brock. Lex. syr. *10 բ)։ Մորթման,* Ent. *541 գտնում է տոսպական* akhar, *որ համարում է հյ. առ նախդիրը կամ* **ագարակ**։ *Ալիշան, ՀԲուս. § 4* **ագարակի** *խոտ յարմարացրած է կարծում լտ.* acorus, *ֆրանս.* acore, *Քրք.* اكير egir *հոմանիշներից։ Սագրդեան, ՀԱ 1909, 335 և* Karst, *Ծուշարձ. էջ 402 սումեր.* agar *«արտ» բառին ցեղակից։*

Փոխ.—Վրաց. **ագարակի** *«արտ, մարգ, գիւղ, ագարակ». Թոմելման դահսբեսա բեսլի կեբիլի ագարակսա բսսա (Որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում). Մտթ. ժգ. 24.—առանց –ակ մասնիկի՝* **ագարա** *«ագարակ, գիւղական տուն»։ Նոյն բառը Թուրքացեալ* اكرك ekrek *ձևով գտնում ենք բազմաթիւ տեղական յատուկ անունների մէջ Փոքր-Ասիայում։ Նոր-Նախիջևանի գիւղական հայ բարբառով կայ էգէրէմ «ամառ ժամանակ եղների պահած տեղը դաշտի մէջ», այս բառը անշուշտ հյ.* **ագարակ** *բառն է, որ փոխառութեամբ անցել է նախ Խրիմի Թաթարների լեզուին և այստեղ *egerek ձևն առանալուց յետոյ՝ նոր փոխառութեամբ և ձևափոխել նշանակութեամբ յետ է դարձել հայերէնին։*

*** Ա.ԳԻ** *(-ւոյ, հաւ, ւով) «պոչ» (յատկապէս մազաւոր տեսակը, ինչ. ձիու, եզան ևն, բայց ո՛չ ոչխարի, շան, ձկան, թռչունի, օձի ևն)։ Բուզ Գ. 6. Յայտ. Բ. 10, 19. որից* **ագնար** *խոր. աշխ.* **ագնաակ** *վստկ.* **ագաս** *Ոսկիփ. կարճագի Պտմ. աղեքս. նոր գրականի մէջ* **ագվազ** *«կենդուրու անասունը».— ըստ. Տաթև. հարց. 371* **ագաս** *«անդամը կարած», որից երևում է թէ* **ագի** *նշանակում էր նաև «առնէ», ինչպէս է և* **պոչ**։

Հիւնք. գնում է այգ «առաւօտ» բառի հակառակը, իբր այգ «սկիզբն լուսոյ» և **ագի** *«վերջ, ծայր»։ Յ. Արշէզ, Բազմ. 1897, 51 յօդրդ է դնում* **պոչ**։ *Ենսէն ՀԱ 1904, 184 հաթ.* ḫ, ḫá։ *Գնանջեցեան,* ZAPh *1, 48 հնխ.* aŭ-ijo *ձևից. հմմտ. սնս.* ava *«մեկուսի, հեռու», avara «ե-*

տևը, եսին», avarā *«փղի եսևը»*։ Patrubany, SA *2, 13 սանս.* agha *«անմաքրութիւն»*, *իսկ ՀԱ 1908, 343 իպ.* áge *«անդամ» բառին ցեղակից։* Karst, *Յուշարձ. 402 սումեր.* aga *«եսևի մասը, կռնակ» բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* عكو 'akva *«ողնաշարի ծայրը՝ պոչի սկսելու տեղը» (Կամուս., Բրք. Բրգմ. գ. 879)։*

ԳԻՒ.—Ագլ. ագի, *Հճ.* ագ'գ'ի, *Ասլ. Խրբ. Ռ. Սեբ.* աֆի, *Ջթ.* ագ'է *«պոչ». Ալշ.* ագ'ի *«ողնաշարի ծայրը». Սչ.* աֆի՝ *ընդհանուր առմամբ, նոյն իսկ ոչխարի, ձկան և թռչունների համար գործածուած. Հւր.* հոգի, *Շմ.* հոմֆի, *Ղրբ.* հո՛մֆի, հոմֆու *«պոչ», իսկ Ակն.* ագ'իֆ *և մն.* ակի *«ցգեստի քղանցք, փէշ»։*

ԱԳԼԻՄԻՍ. *«արծաթի կամ ոսկիի փշրանք կամ աղտ» Վստկ. 113. Առ արծաթի ապիմիա տասն լիտր և լեսհա՛ կորկոտ։*

*ԱԳՈՆ *(սեռ.-ի) «մրցանք, ոլիմպիական խաղեր» Նւս. քր. Խոր. բ. 79. Միխ. աս. 79. որից* ագոնաւար *Նւս. քր.* ագոնավար *ԱԲ.* ագոնիսայք *«ըմբիշներ, ագոնաւարներ» Նւս. քր. ա. 278։*

= յն. ἀγών *«մրցանք, մարտ»,* ἀγωνίζομαι *«մենամարտիլ, կռուիլ»,* ἀγωνιστής *«մարտիկ, ագոնաւար» և սրա յոգնակին* ἀγωνισταί *«մարտիկներ, ագոնիսաւորք», յոյնից է փոխառեալ նաևասոր.* ܐܓܘܢܐ agōnā *«ագոն»։— Հիւբշ. 338։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ԱԳՈՐ, ի–ա *հլ. «պահապան, վերակացու, պաշտպան». ունին միայն ՀՀԲ և ՓԲ, առանց օրինակի և վկայութեան, սրա հետ նոյն են* ագոդ *«պահանորդ կամ բարձրութիւն»,* ագովր *«յայտնութիւն բարձրութեանն» և* արբոր *«պահանորդ կամ պահպանող». բոլորն էլ Բառ. երեմ. էջ 3 և 5։ Անստոյգ բառեր։*

ԱԳՈՐԱՆՔ *«աղբի մթերք» Բառ. երեմ. 5, որ և* ագոռանք *«դիզուած աղբ» ԱԲ. առանց վկայութեան յիշում է ՆՀԲ՝ իբր «Հին բռ.». ՀՀԲ չունի։*

ԱԳՈՒԳԱՅ ի հլ. (միայն յոգնակի գործածուած) «ջրի փողրակ» Սոկր. 306, Անան. դիտ. 27. Ստ. սիւն. Կանոն. Վահր. երդ. 167. Գր. վկ. Նիւս. Տաթև. ձմ. լէ (գրուած է գրծ. ագուգաւ*)։*

= ասոր. ܐܓܘܓܐ agōgā *«ջրի փողրակ». այս էլ իր կարգին փոխառեալ է յն.* ἀγωγός *հոմանիշից, որ ծագում է* ἄγω *«քերել, ածել» բայից։ Ասորերէնից փոխառութեան ապացոյց է հայերէնի -այ վերջաւորութիւնը։— Հիւբշ. 300։*

ՆՀԲ դնում է յունարէնից։ Ուղիղ մեկնեց նախ Lag. Arm. St. § *10։*

ԳԻՒ.—Մշ. ագ'ուգ'ա *«կեղտոտ ջրերի և արտաքնոցի փողրակ», Ակն.* ագ'ուգ'ա, *Խրբ.* աֆուֆա, *Սեբ.* հոմֆիւֆո *«ջրի փողրակ», Բլ.* ագ'ուգ'ա *«լճակի ջրանցքը». նըշանակութեան զարգացմամբ Վն.* ակուկա, *Մկ.* հոկ'իւկ'ո, *Սլմ.* ոբֆ'իւֆ'ո *«հողից թրծած ո ձևով յենարան՝ որ թոնրի ակի մօտ են դնում և վառելիք փայտերը վրան յենում». նոյն բառը կր. «թոնրի ծակ, անդուռ», Ալշ. «տան մէջ այն նրբանցքը, որ սենեակը ախոռին է միացնում»։*

ՓՈԽ.—Գւռ. Բրք. ԵՒդ. ꜧꜩꜫꜧ haquqa *«ագուգայ, փողրակ» (Յուշարձ. 329), Տ.* hekürge *«ագուգայ» (Բիւր. 1899, էջ 798)։ Սեբաստիոյ գւռ.* հոմֆիւֆո *ձևը թուրքերէնից ետ դարձած փոխառութիւն եմ համարում։*

ԱԳՈՒՆԻԱՅ *«ծածուկ». գիտէ միայն Բառ. երեմ. 5։*

ԱԳՈՒՒ *«բուռ, ափ». գործածուած է մէկ անգամ Եզեկ. ժ. 2 (սխալ է մեկնում Բառ. երեմ. 5 «գոգ կամ աղաբողոն», որին հետեւելով ՀՀԲ, ՋԲ և ՓԲ աւելացնում են նաև «գոգ մարդոյ կամ հանդերձի»)։*

Աւգերեան, Ջփ. և կշռ. էջ 41 համարում է պրս. آخر āxar *«գուռ, աւազան» բառից։* Karst, *Յուշարձ. 402 ափ և գոգ բառերի հետ միասին՝ ցեղակից է դնում սումեր.* agub *«երկնակամար» բառին։*

ԳԻՒ.—Խոջ. աֆուռ *«մի բուռ իրար կցած, կիցք»։*

ԱԳՈՒՒ, ո հլ. «աղիւս». գործածուած է մէկ անգամ Վրք. հց. Բ. 328. «Աղիւս թրծեալն հրով ագուռ՝ կացցէ և ի ջրի լաւ քան զքար»։ Նորևրս Հ. Ա. Վարդանեան, ՀԱ 1910, 369 ա, գտաւ նաև մի երկրորդ վկա-

յութիւն այս բառի համար. «Որպէս ագռոյ հարկանել զգլուխ նորա» (Վարք Գէորգայ, էջ 32), որ փոքրիկ սրբագրութեամբ կարդում է ագռով։

= պրս. ākūr «աղիւս». բնիկ սեմական է, ուստի և պարսկերէնն էլ փոխառնել մի սեմական լեզուից. համմ. ասուր. agurru, ասոր. ܐܓܘܪܐ agūrā, արաբ. أجر ajur կամ أجور ajūr, որից քրդ. أجور āǰūr «աղիւս». պարսկերէնից են նաև վրաց. ագուրի «աղիւս», ագուրխանա «աղիւսի գործարան», սիրիագ. անգուր, մինգր. անգուրա, սվան. անգուրյ, թուշ. ագուր, բոլորն էլ «աղիւս» նշանակութեամբ։— Հիւրշ. 91, 510։

ՀՀՔ և ՋՔ առնելով հին բառարանից (համմ. Բառ. երեմ. էջ 5 «ագուռ. հասուստա») մեկնում են բառս «պինդ, անբեկանելի», ուստի չունին «աղիւս» նշանակութիւնը։ Առաջին անգամ Հ. Յ. Աւգերեան, Ջփ. և կշռ. էջ 41 պրս. agūr բառի համեմատութեամբ և Հարանց Վարքի լատին թարգմանութեան բաղդատութեամբ՝ գտաւ թէ ագուռ նշանակում է «աղիւս» և «պինդ, անբեկանելի» իմաստը գոյութիւն չունի։ ՆՀՔ անտեղի կերպով միացնում է երկու նշանակութիւնները էլ, որին հետևում են նաև ՓՔ. ԱՔ և միւսները։ Lag. Ges. Abhd. 278 յն. ἄγουρος, ἄωρος «տարաժամ» (անտարակոյս «պինդ, բիրտ» նշանակութեան համար), որ յետոյ Arm. St. էջ 166 ցանկից մերժում է։

ԳԻՒ.— նր. ագուռ, Տփ. ագուր. վերջինս նշանակում է նաև «խաղաթուղթի մէջ կարմիր գոյնով քառակուսի նշանը, օրիա, ֆր. carreau, ռուս. бубны», ճիշտ ինչպէս որ նոյնը Ղրբ. կոչւում է f'mրփիւն (= Թրք. kerpij «աղիւս»)։

ԱԳՈՒ «քաղցուկ կամ մեղրի դիրտ» Վստկ. 93, «վէրքի շարաւ» Վստկ. 213.—նորագիւտ բառ։

⊙ ԱԳՈՒԱԻ, ու հլ. (յետնաբար ի–ա, ո հլ., «ագռաւ թռչունը, տճկ. ղաուղա» ՍԳր. երբեմն նաև «րու» Օր. ժդ. 16, Ա. Թագ. իդ. 26. «համաստեղութիւն Կոյսի մօտ» Շիր. որից ագռաւանալ «սևանալ» Նար. Տօնակ. գայլագռաւ Ոսկիփ. ագռաւի բուր, ագռաւի ծաղիկ, ագռաւի ճանկ կամ ագռաւի ոտ՝ այլ և այլ բոյսեր. ՀԲուս. § 5—7։

= բնաձայն բառ է, ինչպես և որիշ շատ լեզուների մէջ. համմ. սանս. kārava, լտ. corvus, յն. κόραξ, κόρακος, հբգ. hraban, գերմ. raben, անգլ. crow, raven, ֆրանս. corbeau, իտալ. corvo, միջլ. crū, հալ. krukū, պրս. کارگ karāγa, غلاگ kalaγ, աֆղան. کاړۍ kārγā, քրդ. قەرك qərik, qaraq, նաև ոչ հնդեվրոպական լեզուներից՝ Թրք. قرغا qarγa (աղաւ. karga, հայոց մօտ՝ խառղա, ղառղա). լապ. ġuri, uri, kuari, kvari, մինգր. kvaria, ավար. քաքքա, թաւդուզ. kärie, եբր. עֹרֵב ʿōrab, արաբ. غراب γurab են են։ Հնդեվրոպական նախալեզուի մէջ կար kor կամ qor «կռկռալ» բնաձայն արմատը, որից կազմուել են վերոյիշեալ ցեղակից ձևերը. ալպես նաև հայերէնը։

Հներից Տաթև. հարց. 220 համարում է արդէն բնաձայն բառ։ Ըստ Յակոբ Ղրիմեցւոյ «վասն զոգոալոյն ագռաւ ասեմք»։ Ինճիճեան, Հնախ. Գ. 22 կո բրնաձայնից։ Սանս. և պրս. ձևերի հետ կապած է նախ Böttticher, ZDMG 1850, 350, Arica 68, 111. բայց Lag. Arm. St. § 13 ձայնապէս անհամաձայն գտնելով մերժում է։ Պատկ. Изсл. сост. арм. яз. 62 սանս. ձևի հետ։ Հինք. յն. κόραξ ևն։ Capelletti, Armenia, Թրգմ. Արշլ. արրտ. 1842, 108 բնաձայն է համարում։ Bugge, Btrg. 40 դնում է *korōwó նախաձևից. շեշտի պատճառաւ k դարձել է g և ա յաւելուած։ Այս մեկնութիւնը մերժում է ինքը՝ KZ 32, 67։ Müller, WZKM 11, 205 ճիշտ համաձայն է գտնում հալ. gavranŭ, չեխ. havran, որոնք ունին հնխ. gh, իսկ միւսները k. եթէ մեր հին ձևը լինէր * գռաւ (= գուռաւ), ասում է Müller, բոլորովին նոյն կլինէր արաբ. غراب γurāb համանիշի հետ։ Տե՛ս Pokorny 1, 413 և 417 բնաձայն ker-, kor-, kr- արմատի տակ։

ԳԻՒ.— Ալղ. Մշ. Ջղ. ագ'ռավ *(Մշ. նաև գ'էլու կոս «գայլագռաւ»), Ագլ. Երև. Ղրբ. Շմ.* ակռավ. *Սչ.* ռfռաւ, *Տփ.* ա'կռավ, *ԶՓ.* ագ'ռօվ, ագ'ռռվ, *Հճ.* ագ'ռօվ, ագ'ռռվ, *Ակն.* առfռավ. *Մկ.* կուռ-աf'ռավ՝ *մարդոց տրուած վատ ածական է. Թռչունը կոչում է* կռիկ, *որ վն.* կռիկ, *Ոզմ.* կռէ'f *ձևերի հետ փոխառեալ է քրդերէնից, ինչպէս որ Ննխ. Պլ.* խառղա՝ *Թուրքերէնից և Նբ.* ղառղառ՝ *արևելեան Թուրքերէնից։ Նոր բառեր են* ագռաւածաղիկ, ագռաւափուշ, ագռաւաfայլ, ագռաւախաղող, ագռաւուկ։

ԱԴՐԱԿԷՉ *«խոտաւանձ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 565, որ յիշում է նաև ՀԲուս. § 2918 կասկածով՝ ագրագև ձևով, ըստ Գաղիանոսի։*

**ԱԴՐԻՏԻՍ «սէգ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 565, որ ՀԲուս. § 2747 յիշում է միայն յն.* ագրիստաս *ձևով։*

=յն. ἄγριωστις, *որից լտ.* agrostis. *մի տեսակ խոտաբոյս է, որ գիտական բառով կոչում է* cynodon dactylon L.— *Աճ.*

**ԱԴԱԴ «շարժուն քանոն՝ որով չափեն զանկիւնս յերկրաչափութեան.* alidade». *գիտէ միայն Նորայր, Բառ. ֆր. էջ 42 բ, իբր մհյ. բառ։*

= արաբ. عضاد ʿiḍāda (*Թուրքական արտասանութեամբ* əzade) *«շարժուն քանոն, անկիւնաչափ». այս արաբ բառն է՝ որ* al *յօդով միասին անցել է եւրոպական լեզուներին և ձևացրել* alidade *են բառերը։— Աճ.*

**ԱԴԱԴՌՈԱՄԲՈՎ. նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Եղիշ. մասն. էջ 254. «Յաւուրն յայնմիկ, ասէ, դիցես կոծ սաստիկ իբրև զկոծն ադադռոամբով որ ի դաշտին» (ակնարկում է Զաք. ժբ. 11)։*

= եբր. הֲדַדְרִמּוֹן hadadrimmon *բառն է, որ գործածուած է բնագրի համապատասխան տեղը («որպէս Հադադռիմմոն ի դաշտին Մեգիդդոյի»)։* Gesenius, *Բառ եբր. 1910, էջ 172 Հադադռիմմոն համարում է Մեգիդդոյի դաշտում մի քաղաք, ուր Յովսիա Թագաւորը սպանուեց Եգիպտացոց պատերազմում և որտեղ այս դեպքի վրայ մի մեծ ողբ տեղի ունեցաւ։ Աբդի Հրեաները, ինչպէս և միւս թարգմանութիւնները համարում են մարդու անուն։ Շփոթելով բառը եբր.* רִמּוֹן rimmon *«նուռ, նռենի» բառի հետ, թարգմանուած է նաև սխալմամբ «նռենիի». այսպէս յն.* ὡς κοπετὸς ῥοῶνος *(նռնաստան) և հյ. «իբրև զկոծ նռենեաց կտտորելոց ի դաշտի»։— Աճ.*

Բառ. երեմ. էջ 5 գրում է «ագաթռիմովթ. նռենեաց խշեալ» և մի քիչ յետոյ էլ «ագռամթովն. կտտրած նռենեաց»։ Վերի մեկնութիւնը տուաւ Աճառ. Հայ. նոր բառեր հին մտ. հտ. բ։

**ԱԴԱՄԱՆԴ (սեռ.-ի. գրուած նաև* աղամանտ, անդամանդ, անդամանտ) *«թանկագին քարը, ալմաս» Ամովս. է. 7, 8. Փիլ. եփր. արմաւ. 55. Մագ. «մագնիս» Շիր. բժշ. Ոսկիփ. «անխորտակելի, բուռն» Վրդն. ծն. ժմ. որից* աղամանդեայ *«ադամանդէ» Ամովս. է. 7, «մագնիսէ» Շիր. «կարծրակուռ» Երեմ. ժէ. 1, Ոսկ. մտթ. ա. 15, բ. 8.* աղամանդան *«կարծր, պինդ, ամուր», դրժ.* աղամանդանիւ *էլ. արիստ. էջ 6 (նորագիւտ բառ) ևն։ Նոյն բառը «մագնիս» նշանակութեամբ. ստացած է նաև ն յաւելուածը և յատկորդական ձևափոխութիւններով դարձել է* նաեդամանտ, խանաուամանտ, խանդուամանդ, խուեդամանտ *Երզն. Մխ. բժ. 120. Տօնակ. Բրս. մրկ. 359, որ և վերջապէս Բառ. երեմ. էջ 200՝* անկեմատան։ *Զարմանալի է որ* Rivola, *Բառ... Հալոց 1633, էջ 165* խանդուամանդ *մեկնում է* "calamitas".

= յն. ἀδάμας, *սեռ.* ἀδαμάντος *«ադամանդ», որ գալիս է* δαμάω, δαμάζω *«ընկճել, նուաճել» բայից և նշանակում է բուն «անոտնուաճ, անընկճելի». այսպէս է կոչուած քարը՝ իր խիստ կարծր յատկութեան պատճառով։ Այս առաջին իմաստով գործածուած է նաև մեր մէջ։ Ցանարէնից փոխ են առել և ուրիշ շատ լեզուներ. ինչ. լտ.* adamas, *գերմ.* Diamant, *ֆր.* diamant, *անգլ.* adamant, diamond, *վրաց.* ադամասի, ադամանտի, անդամանտի *«ադամանդ քարը», ամդամատի «մագնիս», պրս. Թրք. և քրդ.* الماس almas, elmas, *որից գաւ.* ալմաս, ալմաստ, *յաւելուած ս-ի համար հմմտ.* Սաղամաս>Սալմաստ, սուս>Սչ. սուսս *«լուսն»,* պես>պեստ, Ռուս>Ռուսաս։—*Հիւբշ. 338։*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀՒ, յետոյ Աւգերեան, Լիակ. վրք. սրբ. ե. 197։

ԱԴԱՐ (սեռ. -այ) «երրայական վեցերորդ ամիսը» (որ համապատասխանում է մարտին) ՍԳր. Եւս. պտմ. 603։

= երր. אדר adār, որ յն. ἀδάρ տառադարձութիւնից անցել է մեզ (համմտ. Ա. մակ. ե. 43). երրայական բառի միւս սեմական ցեղակիցներն են ասոր. ܐܕܪ adar, արաբ. أبار ābār, աւսար. addaru.—Աճ.

ԳԻՒ.—Սլմ. ադmr «մարտ ամիսը» (ըստ Ա. Աթայեան, Սալմաստ, էջ 163)։

ԱԴԱՐՈՐ «մի տեսակ գոհար կամ մարգարիտ» Խոր. աշխ. 614. չունին բառարանները։

= արաբ. درّة durra, յգ. دُرّ durr, درر durar «մարգարիտ». հայ ձևի գրչութիւնը խանդարուած է։—Աճ.

ԱԴԵՆ կամ ԱԴԻՆ, ա հլ. «դրախտ, եդեմ» Եփր. եղիշ. ը. էջ 116. Նար. որից ադենաբուղխ, ադինաբուխ Անան. եկեղ. Թէոդ. մայրագ. Երզն. լուս. ադինասարաս (չունի ՀՔ) Առաք. պտմ. 39. ադենայինք Գր. տղ. ադենական Շար. ևն։

= ասոր. ‘ēḏen, որ է երր. עֵדֶן ‘ēḏen, արաբ. عدن ‘adn «եդեմ, դրախտ», աւսար. idinu «դաշտ»։ Արմատը (ᶜdn) նշանակում է «փափկութիւն, փափկանալ». այս պատճառով աւսում է հլ. գրգարան «դրախտ» և յաճախ դրախտ փափկութեան։ Նոյն բառի յունական ձևից է առառադարձուած եդեմ, որ տե՛ս առանձին։—Հիւբշ. 300։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՒ, ՆՀՒ, Շրէօդէր, Thesaur. 45։

ԱԴԵՄ «ներկուած սեկ կամ կաշի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Միխ. աս. 164. եթող զկինն և զգեցաւ հանդերձ փիլիսուփայի, սեկ ներկեալ՝ զոր ադէմն կոչեն, և ծաղր արար զծիրանիսն։

= արաբ. أديم adīm «կաշի, կարմիր ներկած կաշի, աղաղած կաշի» (Կամուս, Թրք. Թրգմ. գ. 390)։—Աճ.

Langlois, Chronique de Michel le Grand, Venise *1868, էջ 126, ծան. 4 (չեմ տեսած) մեկնել է ասոր.* atima *«թանձր, հաստ, հաստատուն», երր.* adina *«թիկ», արամ.* adina *«կապ, չուան» (նկատողութիւն Ալինեանի, ՀԱ 1930, 497)։ Ընդունելի չէ՝ նշանակութեան տարբերութեան պատճառաւ։* N. W., *Բազմ. 1919, էջ 350 դնում է արաբ. առեմ «սև» (իմա՛* أدم adam *«սպիտակի գարնող սև», Կամուս, Թրք. Թրգմ. գ. 390)։*

ԱԴԻԱԼԻՊՏՈՍ «անձանձրոյթ». ունի միայն Բառ. երեմ. էջ 6։

= յն. ἀδιαλήπτως «անընդհատաբ»։—Աճ.

ԱԴՈՆԱ կամ նաև ադովնա, ադոնայի. ադովնայի «Տէ՛ր իմ» ՍԳր. (միշտ տէր բառի հետ), Ոսկ. ես. ծա. կոչ. 141. Եփր. աւետ. 337. Նար. էջ 93։

= երր. אדון adōn «տէր, իշխող», որից אדני adōnāi «Տէ՛ր իմ». այս բառը ուրիշ սեմական լեզուներ չունին՝ բացի փիւնիկ. adn «տէր». մեր ձևը յն. Ἀδωναῖ տառադարձութիւնից է յառաջացած։

ՆՀՒ դնում է երր.։

ԱԴՈՆՄՈՅ *«պարզ բառ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 6. յայտնի չէ թէ ի՛նչ է ուզում ասել։*

ԱՁԱՁԱՅԻԼ կամ ԱՁԱՁԻԼ. նորագիւտ բառ, որ 4 անգամ գտնում եմ գործածուած Եփր. հտ. Ա. էջ 222—3, անծանօթ իմաստով, ակնարկութեամբ Ղևտ. ժզ. 8։

= երր. עזאזל *‘azāzēl բառն է, որ գործածուած է Ղևտ. ժզ. 8. այս բառի իմաստը անծանօթ է. հաւանաբար նշանակում է «անապատներում բնակուող մի չար ոգի» (տե՛ս* Gesenius, *Բառ. երր. 1910, էջ 570)։ Հները հասկանում էին «ազատ արձակուած նոխազ», ինչպէս.ունի և մեր թարգմանութիւնը։ Երրայեցի բառը ասորական տառադարձութեան միջոցով անցել է մեզ։—Աճ.*

Աւելի ընդարձակ տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մտ. հտ. բ։

ԳԻՒ.—ազազիլ (Լոռի, Փամբակ) նշ. «ջոջաղ, կրակի կատր մարդ» (Հաղորդեց Ստ. Զօրեան). բառիս այս իմաստը շատ կարևոր է՝ ճշտելու համար երր. ազազայէլ բառի նշանակութիւնը, որ անստոյգ է։

Փոխ.—Ուտ. äzäzil «*զարհուրելի, կատաղի*»:

+ԱԶԱԶԵԼ «*չորացնել*» *Վկ. արև. էջ 102, Սարգ. Ճառընտ.* ազազիլ «*չորանալ*» *Եղիշ.* ազազուն «*չոր, ճղաձ, ցամաքած*» *Մն. խա. 23, 24. Փիլ.* ազազաճալ «*ցամաքիլ*» *Փիլ.* ազազեալ աղբերս «*ցամաքած՝ չուրը կտրուած աղբիւրներ*» *Տիմոթ. կուզ. էջ 278.* ազազաճիլ «*ցամքիլ*» *Վկ. արև. Գիտք անհունք նուազեցին և եղեն մօտ յազազանել (էջ 42).* ծովազազ «*ծովերը ցամաքեցնող*» *Տօնակ.* կողմնազազ «*մէկ կողմը գօսացած*» *Ոսկ. յանդամ. 848.* յազազիլ «*չորանալ*» *Եփր. Վկ. արև. էջ 54=Սոփերք, ի. 103 (չունին ՆՀՔ և ԱՔ). «Եւ գաւազան անօրէն իշխանին... ահա յազազեալ խորտակեալ կայ ի մէջ մայրոյն և չէ ձէռնհաս միւսանգամ գալարանալ»:*

= *կրկնուած* ազ *արմատից. հնխ. արմատն է* *azdo, որից ծագում են, յն.* ἄζω «*ալրել, չորացնել*» ἄζομαι «*չորանալ*», ἀζάνω «*չորացնել*», նալ. azditi «*չորացնել*»: *Հնդեւրոպական շրջանին՝ այս արմատը ձևափոխուած և գործած է նաև* askh, azgh, *որոնցից յառաջացած են հիալ.* aska, *հրպ.* asca «*մոխիր*», *գոթ.* azgo: *Հայերէնում հնխ.* zgh *տալիս է ձ, բայց երկու ձայնաւորի միջև* z, *ինչպէս ցոյց է տալիս մոզի=յն.* μάσχος. *ըստ այսմ* azgh- *գործել է հյ.* ազ *և կրկնութեամբ* ազ-ազ-ի: *Բոլորի պարզ արմատն է* ās- «*ալրիլ*», *որ պահում են սանս.* āsa- «*փոշի, մոխիր*», ásita- «*սև, մթնագոյն*», *լտ.* areo «*չորանալ*», aridus «*չոր, չորացած*», ardeo «*այրել*», assus «*խորուած*»: *Ալնուհետև արմատը ածել է* d, k(g), gh *ածականներով, առաջինից* (azd) *են յն.* ἄζω «*այրել, չորացնել*», ἀζαλέος «*այրած, չոր, կարծր*», *չեխ. և լհհ.* ozditi «*չորացնել*». *երկրորդից են հհիւս.* aska, *հոլլ.* asch, *անգլ.* ash, *գերմ.* asche, *հրպ.* asca «*մոխիր*», *իսկ վերջին* azgh- *ձևից են գոթ.* azgo *և հյ.* ազ<azgh>*աձ—. տե՛ս և* ասպիճ, ածիւճ (Boisacq 16, Walde 59, Kluge 25, Ernout-Meillet 76, 66,—*զարմանալի է որ* Pokorny *մոռացել է յիշել այս բառերը*):

Scheftelowitz, KZ *54, 250 կգում է հյ.* ածիւճ *բառին և համեմատում է գոթ.* azgo «*մոխիր*», *յն.* ἐσχάρα «*խարոյկ*», ωχρος «*գժգոյն*», *պրս.* azaγ «*մութ*» *բառերին:*

ՀՀՔ Թում է հանել զգուիլ, նուազիլ բառերից՝ ՆՀՔ Թրք. az «*սակաւ*» *բառից: Հիմնք. զաւակ բառի հակառակը, նոյն ընդ զածած:* Bugge IF *1, 445 և* KZ *32, 1 առաջին անգամ համեմատեց վերի յն. և նոյ. ձևերի հետ, ենթադրելով թէ հնխ.* zd. *որ տալիս է* ստ, *շեշտից առաջ լինում է գ: Հիւբշ. 412 չի ընդունում այս բացատրութիւնը:* Meillet MSL *10,281 և 15,357 մեկնեց վերի ձևով:* Patrubány SA *1, 195 յն.* ἀχύη «*կարօտ, խեղճ*», ἀχύνια «*պակասութիւն*», *լտ.* egenas «*կարօտ, դուրկ*», *գնդ.* az «*տենչալ, ցանկալ*»: *Նոյն* IF *13, 125 և ՀԱ 1903, 151 նոյն ընդ* bqß, ազն, ազգ: *Սապըգեան ՀԱ 1909, 334 առմիր.* iz, azaz «*կրակ*», *Թրք.* ɔsɔ «*տաք*»: *Պատահական նմանութիւն ունին ավար.* azun «*ընհար*», *չեչէն.* āzuń «*ընհար, ազազուն*», āzvalar «*ընհարիլ*», āzulla «*ընհարութիւն*»:

ԱԶԱԶՈՒ «*մի տեսակ Թունաւոր խոտ, լտ.* carpesium, *ֆր.* carpésie» *Գաղիան. Ռոշք.*

Շեթայնշնալդէրի հաւաքածոյի մէջ կայ արաբ. ازاز ʻazaz «*գայխնի*» WZKM *11,269 և* عزز ʻazlz «*գանթարիոն բոյսը*» WZKM *12,219: Ուրիշ նման բառ չեմ գտնում յիշեալ ճոխ հաւաքածոյի մէջ:*

*ԱԶԱԶՈՒՆ «*աստամբ, ակռաներ*». *դիտէ միայն Բառ. երեմ. էջ 6:*

= *Թրք.* azu «*աստամ, սեղանատամ, ժանիք*»—*Աճ.*

*ԱԶԱՊ «*դեռ չամուսնացած (տղայ կամ աղջիկ), որից ազապութիւն «*աղապ լինելը*». *ՆՀՔ գնում է իբրև յետին ռամիկ բառ. հնագոյն վկայութիւնը գտնում եմ Կոստանդին Ա. կաթուղիկոսի կոնդակի մէջ (տե՛ս Կիր. տպ. վենետ. էջ 171), Կանոն. էջ 176, Տաթև. Հարց. 601:*

= *արաբ.* عزب ʻazab, *որից փոխառեալ են նաև Թրք.* azab, *քրդ.* azeb, *նոյն նշ. ըստ*

այսմ մեր բառը գրելի էր ազար, *ինչպես հնչում են զանազան գաւառականներ։— Հիւբշ. 261։*

Ջ-ի դնում է «ռճկ.»։ Ուղիղ մեկնեց Lag. Arm. St. § 15։

Գիմ.—Ագլ. Ակն. Մշ. Պլ. ազար, *Ախց. Երև. Կր.* ազապ, *Մկ.* ազար։—*Այնթապում ստացել է «մշակ, ծառայ» նշանակութիւնը։*

*ԱԶԱՏ, ի-ա *հլ. յետնաբար նաև ի հլ. «ազնուական (իբրև հակառակը՝ շինական, ծառայ բառերի). 2. անկախ, ինքնիշխան, ազատուած, արձակ» ՍԳր. Եզն. որից* ազատել *ՍԳր.* ազատեցուցանել *ՅՀ. ը. 36, Գազ. դ. 31.* ազատանալ *Հռ. զ. 20. Ագաթ. Եզն. Ոսկ. մաթ.* ազատաբերան «համարձակախօս» *Կոչ. 192.* ազատախօս *Ոսկ. հս.* ազատութիւն *ՍԳր. Ագաթ. Բուզ.* անազատ, *Ոսկ. մաթ.* անազատիկ *Ոսկ. մ. ա. 20.* ազատագունդ *Ագաթ. Բուզ. ե. 1.* ազատակոյտ *Ագաթ.* ձերբազատ *Մխ. գր.* ազատանի *Բուզ.* ազատազն «ազատազգի» (նորագիւտ բառ) *Փոնց. 115.* ազատասէր, ազատասիրութիւն, ազատամարտ *(նոր գրականի մէջ)։ Նոյնից է նաև* ազատրեղ *(բոյսը) «լտ.* petroselinum, *ռճկ. մայրաքաղաքներ, պրս. չէվիէրի, ռուս.* петрушка» *Գաղիան. որ կազմուած է* ազատ *և* ţեղ *բառերից (վերջինս ունի և* ţեղ-ա-կարոս*), իբր ազատ՝ վայրի բեղ (Տէրվ.* Altarm. *էջ 81)։*

= *պհլ.* āzāt «ազատ, ազնուական», āzātān «ազատականի», *պրս.* آزاد āzād «ազատ», آزاده āzāda=*հլ.* ազատակ, *զնդ.* āzāta, *որ է* ā+zāta «ծնեալ»։ *Իրանական բառը ստրածուած է նաև բազմաթիւ ուրիշ լեզուներում. ինչ. քրդ.* azad, āzā, *զազա.* azád, *թրք.* آزاد azad «արձակ», azadlama «ազատագրեալ», *չերք.* azad, *օսմ.-թրք.* āsad, *չազաթալ.* آزاده azade «ազնուական, նուրբ», *վրաց.* ազաի «ազատ», ազատոբա «ազատութիւն», գաազատեբա «ազատուել», *թուշ.* ազատ *և թուրքերէնի միջոցով՝ բուլգար. սերբ.* azat, *նյն.* ἀζάτος, ἀζάτικος.—*Հիւբշ. 91։*

Առաջին անգամ ուղիղ մեկնեց Գ-դ, յետոյ ՆՀՔ, Peterm. *22 ևն։ Էմին, ռուս. թրգմ. Աստղիկի, 1864, էջ 254 (արտատպ.* Истор. М. Хорен. *1893, էջ 304)* ազ «ազն, ազգ»+գատ < *պրս.* zad *բառերից։—Ագատ է նաև Մասիս լեռան ածականը. Յազատն ի վեր ի Մասիս. (վիպաս. երգ). այս վերադիրը բացատրելու համար տրուած են զանազան մեկնութիւններ, ՆՀՔ հասկանում է «արձակ, ընդարձակ, բարձր», Մ. Թաղիադեանց, Ճանապարհորդ. ի Հայս. Կալկաթա 1847, Ա. 168, «մայր ազատեալ յերկանց ծննդեան իւրոյ... արգանդ լեալ նորածին սերնդոց զարմիս մարդկութեանն»։ Աստղիկ Արևելեան, 1855, Բ. 1, էջ 10, «այս ածականը նոյն ան գագաթը տապանը մնալով ազատելն է»։ Կոստանեանց, Հայ հեթ. գր. 1879, էջ 17, «մեզ այնպէս է երևում թէ* ազատ = *զնդ.* yazata «պաշտելի բառն է» ևն։ *Այս բոլորը անտեղի մեկնութիւններ են.* ազատ Մասիս *նշանակում է «ազնուականն, ազատազգին Մասիս»։*

Գիմ.—Ագլ. Ախց. Երև. Ղրբ. Մշ. Մրղ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. ազատ, *Ալշ. Ակն. Խրբ. Կր. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* ազադ, *Ասլ.* ազա՛. *Ջ-ի.* ազօդ, ազոդ, *Հճ.* ազօդ, *Տիգ.* mqmդ։

Փոխ.—Ըստ Bugge *հայերէնից են փոխառեալ գոթ.* azētizō = *յն.* εὐκοπώτερον «հեշտագոյն», azētaba = *յն.* ῥᾳδίως «սիրով», *Բ. Կոր. ժա. 19 (մեր թրգմ. մատիւր), Ա տիմ. ե. 6 յն.* ἡ σπαταλῶσα *(հայ թրգմ. գիրգ այրին)* = *գոթ.* sō wizōndei in azētjam.— Bugge *ցոյց է տալիս, թէ այս բառերը ուրիշ գերմանացեղ բարբառներում չկան, որուած աստուգաբանութիւններն էլ դոհացուցիչ չեն, ուստի հնթադրում է թէ գոթ.* azēts «դիւրաւ» *փոխառեալ է հլ.* ազատ *ձևից։ Այս բառի մեջ ա-երը երկար էին, ինչպէս ցոյց է տալիս իրանականը. գոթականը լեզուն t ձայնից առաջ a չունէր, ուստի վերածեց* e՝ *պահելով երկարութիւնը, իսկ առաջին* a-*ն դարձաւ կարճ, որովհետև շեշտից առաջ գոնուելով՝ այլևէն հայերէնում կարճ էր հնչում։ (Այս բոլորը տե՛ս*

IF 5, 168—80, Թրգմ. ՀԱ. 1895, էջ 229;— Իբր հայերէն բառ յիշում է Կոստանդին Պերիերոժէն. ὀνκατὰ τὴν τῶν Ἀρμενίων διάλεκτον ἄζατον ἐκάλουν «զոր հայերէն բարբառով ազատ կոչեն» (տե՛ս Du Cange 31):

*ԱԶԱՏԴԻՐԱԽՏ «մի տեսակ ծառ, uzédarac» Բժշ.= պրս. ازاد درخت āzād-diraxt, որ կազմուած է āzād «ազատ» և diraxt «ծառ» բառերից. պարսկականից են կազմուած նաև լտ. melia azidarach, ֆրանս. azédarac, սպան. acedaraque:

Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Բառ. ֆր. էջ 118 բ, յետոյ ՀԲուս. § 10։

Ազատքեղ տե՛ս Ազատ։

*ԱԶԱՐ «վշտացած, նեղացած», գործածական է միայն յետին դարերի ռամկական գրականութեան մէջ. ինչ. Կոստ. երզն. 96, 147. որից ազարել «վշտացնել» Մոթ. ևագր. էջ 68։

= պրս. ازار āzār «վիշտ, նեղութիւն»։ Ուղիղ մեկնեց Պոտուրեան, հրտր. Կոստ. երզն. էջ 43։

ԱԶԱՐ «սունկի ծառը, liege». ունի միայն Քաջունի, հտ. Ա. էջ 1149 և հտ. Գ. էջ 2, որից Տիրոյեան, Հանրագրութ. էջ 215 և 308։

ԱԶԱՐԻԳԻ «մի տեսակ բոյս է» Բժշ. յիշում է միայն ՀԲուս. § 12, որ և իզարիղայ ՀԲուս. § 854. այլուր կոչուած է fուշուլա ՀԲուս. § 3216։

ՀԲուս. այս երեքը իբր առանձին բոյսեր է նշանակում։ Նորայր ՀԱ. 1923, 346 ձևի և նկարագրութեան նոյնութիւնից հաստատեց, որ միևնոյնն են։

*ԱԶԱՐԻՈՆ «խիստ կարմիր մի ծաղիկ է» Ամիրտ. ՀԲուս. § 13. ըստ Նորայրի՝ Բառ. ֆր. 1193 ա «ֆրանս. tanaisie»։

= պրս. ازدرون āzaryūn, նոր հնչումով āzaryōn, նոյն նշ. ընդարձակ մեկնութիւնը տե՛ս Ատրպատեան։—Ա՛ճ.

ԱԶԲՆ (-ին, -ամբ) «գործելիք կտաւի սկզբի ծոպերը՝ թելերը» Դատ. ժզ. 13, 14, Եփր. դտ. 343. յգ. ազբունս Պիսիդ. տող 273. գրուած է ասբն Փիլ. ել. 526, ասպն Վրք. և վկ. ա. 516։ Որից ազբախումբ «բազմախուռն» Բուզ. 86, ազբոց «ջուլհակի սանտր», Ոսկ. Եփես. 806 (չունի ՆՀԲ), ազբնագող «ազբով հմայող» ԱԲ։

Հիմնք. հանում է պրս. asb «ձի» բառից, Պատահական նմանութիւն ունի ասոր. ܐܙܒܐ azbā «անութի կամ աճուկի մազեր»։

Գ՚ՒՒ.— Մկ. Ջղ. ասպ, Ակն. խրբ. Ռ. Սեբ. ասփ, ՋԲ. ասբիլ «ազբերը ձգել». նոր բառեր են ազբասանտր, ազբափայտ, ազբել, ազբող, ազբաթել, ազբանպատ։

ԱԶԳ, ի–ա հլ. «ցեղ, սերունդ, գերդաստան, ժողովուրդ, ազգ, իրերի տեսակը ևն» ՍԳր. Եւս. քր. Կոր. Եզն. Կոչ. Բուզ. «ազգական» Ոսկ. Հռոմ. 43. որից ազգահամար Բ. Եզր. բ. 62, Ոսկ. մ. ա. 1. ազգական ՍԳր. Բուզ. Ագաթ. ազգատ Բուզ. դ. 19. ազգատոհմ ՍԳր. Եւս. պտմ. գ. 4. ազգի ազգի ՍԳր. Ագաթ. Եզն. ազգովիմբ խոր. այլազգ ՍԳր. Եզն. Եւս. քր. (այժմ գաւառականներում «թուրք կամ մահմետական», ինչպէս է նաև մհյ.), չազգ Օր. լբ. 21. չազգականութիւն Ոսկ. մ. ա. 3. ազնուազգութիւն Ոսկ. յհ. բ. 9. ազգացեղութիւն «ազգականութիւն» Կանոն. 191. մեծազգի Եփր. ծն. Բուզ. վատազգի Ոսկ. ես.ևամազգի Եզն. բազմազգեան Ագաթ. բիւրազգի ՍԳր. վեցօր. Ոսկ. Եփես. մեռազգեայ Եւս. քր. նոր գրականի մէջ շինուած բառեր են՝ ազգապահական, ազգարնակութիւն, ազգարնակչութիւն, ազգագրագէտ, ազգագրական, ազգագրութիւն, ազգադաւ, ազգակործան, ազգամիջեան, ազգամոլ(ութիւն), ազգայնական, ազգասիրաբար, ազգասիրական, ազգատեաց, ազգուրաց։

= փոխառեալ պհլ. ʾzʾh azg «ճիւղ» բառից, որ ծագում է հնխ. azgho «ճիւղ» ձևից և որի այլ ժառանգներն են յն. ὄσχος, ὄσχη, ωσχη «ճիւղ, ծիլ, ընձիւղ». պհլ. բառի շարունակութիւնն է պրս. ʾzʾy āzay կամ azay, ʾzʾx āzax «յօտեցնել այրելի ճիւղը որթոց» (տե՛ս Pokorny, 1, 185)։

ՀՀԲ ազն բառից. Հիմնք. սկայ բառից։ Շեֆք. BB 28, 302 ազն բառից՝ կ>գ մասնիկով։ Pedersen, Հայ. դր. լեզ. 142—3 չէ՛ յն. ὄσχη, ὄσχος «որթի բարունակ»։ Վերևի մեկնութիւնը առաջար-

կեց նախ Patrubány IF *13, 124—5* և *ՀՄ. 1903, 151*։—Fierlinger KZ *27, 478* կցում է սանս. āsaǰāmi «կցել, հաստատել» բառին։ Մաս, Христ. Вост. *2 (1913), 30* սվան. agi, argi «տուն», խալդ. asi «տուն», Argišti «տան գլուխը», սվան. lizgune «բնակեցնել», mezgi «գաղթական, նորաբնակ»։

ԳԻՒ.—Ագլ. Երև. ազգ, Ղրբ. ազկ, Ալշ. Մրշ. Շմ. Տփ. ասկ, Ախց. Խրբ. Կր. Համշ. Մշ. Ննխ. Ոզմ. Ռ. Ջղ. Սեբ. Սլմ. Սչ. ասֆ, Ակն. Պլ. ասգ, Տիգ. muf, Ասլ. աս՛, Զթ. օսգ, ոսգ՛. Մկ. ազկ–mգկբտակ «գերդաստան». գաւառականներում շատ տեղ (ինչ. Ոզմ. Սչ. Նբ.) ազգ նշանակում է նաև «ազգական»։ Բրքախօս հայոց մէջ Անկ. Առն. այլասի «մահմեդական», Առն. ասկաղաև «ազգական» (Արևելք 1888, նոյ. 8—9)։

ԱԶԳԱԲՈՆ «սատանայ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մոլութ. 415 ա. «Ունէին թագաւոր զհրեշտակն անդնդոց, այսինքն զսատանայ, որ կոչի ազգաբոն, որ թարգմանի կորուստ»։

ԱԶԴ. արմատն անհոլով է և ոճերով միայն գործածական։ Առաջին և հիմնական իմաստն է «լուր», որից ազդ առնել «լուր տալ» ՍԳր. Ոսկ. ազդ լինել «լուր տրուիլ, լսուիլ» ՍԳր. ազդել «լուր տալ». Ազդեսցիմ փողով (Թուոց 6. 9). ազդարար «լուր տուող». Ազդարարն ժամահար՝ փող (ՅՀ. իմ.)։ 2. Այս առաջին իմաստից ծագում է «զգալ» իմաստը, ճիշտ ինչպէս աշխ. իմանալ «լուր լսել. 2. զգալ» (Ականջս չի՛մանար. Ցաւ ի՛մացայ). տճկ. duymaq «լսել. 2. զգալ». ռուս. слышать «լսել (ձայնը) և զգալ (հոտը)» ևն։ Այս իմաստով են՝ ազդիլ «զգացուիլ». Հուր ջերմութեամբն ազդի մարմնոյ. Եղն. Ի չարշարելն ոչ ինքն ինչ զայրանայ և ի տանջելն ոչ ինքն ազդի. Ոսկ. Ես. ազդարան «զգայարանք» Նար. ազդելի «ըզգալի». Ազդելի աչխարհ կամ տարերք. Վեցօր։ 3. «Զգալ» կրաւորական իմաստ է, որի ներգործականն է «ներգործել, ազդել», այսինքն «իմանալ տալ». այստեղից՝ ազդ «ազդեցութիւն». Զննելի հուրս երբեմն մերձեցաւ ի մարմինս և ազդ ինչ հրոյ ոչ եցոյց. Ոսկ. Ես. 69. ազդել «գործել, ներգործել». Թէ ազն աճիւամի, ոչ իմիք ազդիցէ այնուհետև. Մտթ. Ե. 13. ազդեցի, Ոսկ. Ես. ազդող Եբր. դ. 12. ազդեցութիւն ՍԳր։ 4. Սրանից անբաժան է «զօրութիւն, ոյժ» իմաստը, որից ազդոյ (յետնաբար ազդու) «զօրաւոր» Ոսկ. ազդոյ վէրս Ոսկ. մտթ. յազդոջ (ազդ արմատի հնաւանդ ներգոյականը և նրա միակ հոլովական ձևը) «զօրաւոր ժամանակը» Ոսկ. Եբր. է։ Վերջին իմաստով բառս գրուած է նաև աստ (ինչպէս կայ ազդր և աստր). առանձին անգործածական է. գտնում է հետևեալ ձևերի մէջ. աստագոյն, աստիագոյն «սաստկագոյն» Ոսկ. յհ. ա. 3. աստեղ «հաստատուն» Ածաբ. ծն. Պիտ. Խոսր. պտրգ. աստի, աստին, աստոյ «պինդ, տոկուն, հաստատուն» Փիլ. (ստէպ). Ոսկ. յհ. ա. 3. աստու, աստոյ «գտեղ» Վանակ. յոբ. բոլորն էլ յետին։ Բայց հնից կան՝ յաստուջ պահել Ոսկ. Ես. առաւել աստիճ եղն. (ըստ Բոռնեան, Հատընտ. 1891, էջ 53 ուղղելի առաւելաւ դիճ). յաստիս մանկութեան Բուզ. յաստիս մարմնոյ, յետ աստեացն մանկութեան «արբունք, առոյգ հասակ» Ոսկ. մտ. գ. 14. Եբր. Իդ. յաստիսս յուժի զօրութեան Ոսկ. Ես։

= հպրս. azdā «լուր» (օր. kārahyā naiy azdā abava չեղև ազդ ժողովրդեան). պհլ. azd «լուր» (օր. Arǰāsp azd mat ազդ եղև Արջասպայ. Geigar, Yātkār i Zarīrān, էջ 48) մանիք. պհլ. azd «յայտարարել», azdegar «ծանուցող, տեղեկարեր» (Salemann ZAH *8 (1908)*, էջ *51*), աֆղան. zdą, սանս. addhā «ապահով, առոյգ, հաստատ»։ Իրանեան բառը պէտք է ունեցած լինի նաև մեր «ներգործութիւն, ուժ» նշանակութիւնը։ Պահլաւերէնի միջոցով բառը փոխառութեամբ անցել է նաև արամերէնի՝ אזד azd կամ אזדא azdā ձևով, այս բառը նշանակում է նախ «ազդ, լուր». օր. azd hn yt'bd «ազդ եղև» ZAPh. *2, 265*, երկրորդ՝ գործածուած է Դան. բ. 5. millətā minnī azdā. այստեղ բառի իմաստն անորոշ է. յոյն թարգմանութիւնն ունի ὁ λόγος ἀπ' ἐμοῦ ἀπέστη. հայը՝ բանն վերացաւ յինէն. վուլգատան՝ Sermo recessit a me, որով azdā

կլինի «լծոց, բան (խոսք), sermo»։ *Սակայն* Nöldeke *(տե՛ս* Schrader, Die Keilinschr. u. d. alte Test. Giessen *1872, 617) հանում է պրս.* azda *«ապահով, առյգ, հաստատ» ձևից, որով վերի հատուածի միտքը կլինի «իմ խոսքս հաստատ, անդառնալի է». ալսպէսով արամ.* azdā *նոյնանում է մեր* ազդու *բառի հետ։*

ՆՀԲ էջ 724 գ յն. αἰσθάνω, αἰσθάνομαι *«լսել, հասկանալ»։* Spiegel, Litter. *470 դնում է* Zend *«զանգիկ» բառից։* Iusti, Zendspr, *48* ազդ=*գնդ.* āzainti *«գիտութիւն», 300* ասաիք=*գնդ.* sti *«տարբչութիւն»։* Lag. Baktr. Lex. *1868, էջ 16* azdā *(=անս.* addhā*)։ Հիւրշ.* KZ *23,* Arm. St. *16,* Arm. Gram. *92 և* ZDMG *46, 324 (թրգմ. ՀԱ. 1892, 354) իրարից տարբեր բառեր համարելով* ազդ *«լուր» և* ազդ *«ներգործութիւն», առաջինը դնում է իրանեանից փոխառեալ, իսկ երկրորդը՝ բնիկ հայ և ցեղակից անս.* addhā *բառին։ Հիւնք.* ասաղ-*ից։*

Աստ *«ուժ» բառը մեկնել են հետևեալ ձևերով.* Iusti, Zendsp. *գնդ.* sti *բառով։ Մորթմանն,* ZDMG *26, 528 նոյն է համարում վաննան բևեռ.* istinini *«գոյութիւն ունենալով»։* Müller, SWAW *48, 428 հաստել բառից։ Թիրեաքեան, Հայ-երան. ուս. 156 պրս.* هستی hasti, *պհլ.* stih *«էութիւն, գոյութիւն, աստի աշխարհ»։*

Փոխ.—Lag. Ges. Abhd. *186 յունաց աւանդած* ἀζαβαρίτης *ձևը սրբագրելով* ἀζδαβαρίτης *հասկանում է հյ.* ազդաբեր։—*Անբացատրելի պատճառով մեզանից են փոխառեալ վրաց.* անազդի, անազդեուլի *«իսկոյն, անմիջապէս, յանկարծական», անազդադ, անազդեուլად «յանկարծական, անմիջապէս», որոնք ծագում են հյ.* անազդ *(հմմտ.* յ-ան-կարծ*) ձևից. այս բառը գործածուած է Ոսկ. մ. ա. 13 «յեղակարծ, յանկարծահաս» նշանակութեամբ՝ որ նրա հետ նոյն է։*

ԱԶԴԱՐ *«պարապարբ». այսպէս է մեկնում Բառ. հրեմ. էջ 6. այլուստ անծանօթ և անստոյգ բառ։*

Կայ պրս. ازدار azdar, *բայց նշանակում է «արժանիք»։*

ԱԶԴԻՐ *«թեզանիթ». ունի միայն Բառ. հրեմ. էջ 6, որ և էջ 218 դնում է յազդէր «հշտոտի կամ թեզանիթ»։*

+ ԱԶԴՐ, ր հ. *(գրուած նաև* աստր*) «մէջքից մինչև ծունկ գտնուած մասը» Սգր. յետնաբար նշանակում է «շալակ, ուս» և հոլովուած է* ազդերի, ազդերաց. *Լմբ. Նար. առաք. 427. Գր. տղ.* ազդերաւք *«ազդրեր» ձառընտ.։*

=*բնիկ հայ բառ. հմմտ. սանս.* sákthi, sakthnás, *գնդ.* haxti *«ճաճոկ», յն.* ἰσχίς ἰσχίον *«ազդր, բարձք», որոնց վրայ տե՛ս* Meringer, Beitr. *3,* SWAW *125։ Արիական լեզուների նախաձևն է* sakth-, *որի դէմ հայը ձայնաւորի շրջմամբ և բաղաձայնների թրթռացումով հանում է* azgdh, *որ g կրճատուելով՝* azdh—. *հոլովման և բ վերջաւորութեան համար հմմտ.* ոսկր = *սանս.* ásthi, asthnás.—*Հիւրշ.* IF Anz. *10.47?*

Հիւնք. յն. γαστήρ *«որովայն»։* Pedersen, *Հայ. գր. լեզ. 143 կապ չունի յն.* ὀστέον, *սանս.* asthi *«ոսկր»։* Meillet MSL *10, 277 տուաւ ուղիղ մեկնութիւնը։* Patrubány *ՀԱ. 1908, 278 հնխ.* *mēmso- *«միս» բառից։ Բառիս վրա տե՛ս նաև* Meillet MSL *23, 259—260, որ* azdh-, azgdh- *նախաձևը կապւում է «ոսկր» բառի հետ, իբր սանս.* ásthi *«ոսկր» և* sákthi *«ազդր, սրունք». հմմտ. գերմ.* bein *«ոսկր և ազդր»* (Boisacq *385)։*

ԱԶԽՈՅԳ *«վայրի դդում». նորագիւտ բառ, որ մեկ անգամ գտնում եմ գործածուած Խոր. աշխ. հրտր. Սուքր. 11. «Կարմիր ծով... յորոյ ծոցոյ ելանէ Պարսայ Արաբացոց ծովքըն... Պարսայ ասկաւ ինչ իբրև զաղիւսակ, և Արաբացւոցն՝ ազխոյգ նման»։*

Այսպես է մեկնում Սուքրյան։

ԱԶՆ, ն հ. *(-զին, ինք, անց) «ազդ, սերունդ, ցեղ», Սգր. որից* դիւցազն *(յգ. դիւցազունք) եղն. Եւս. քր. հսկայազն Եփր. յհ. և Թգ. համազն Խոր. ՅՀ. իմ. զհամազունսն*

Ոսկ. մ. բ. 34. հայկազն *Խոր. Մագ. կամ* Հայկազուն *Խոր. 3Հ. կԹ.* երկազն *կամ* երկազնի՞ *«երկու տեսակ» Ճառընտ.* բազազն *Նար. Տօնակ.* ծառայազունք *Սեբեր.* ազնիւ *«լաւ ազգից, ընտիր տեսակի, նուիրական» ՍԳր. Եւս. քր. Ոսկ. «թանկ, սուղ» Վրք. հց. բ. 19. իրրև ձայնարկութիւն «կեցցե՛ս, ապրի՛ս, քա՛ջ ե» Մտթ. իե. 21, 23. Ղկ. ԺԲ. 17 (հմմտ. յն.* εὖ, εὖγε *«կեցցե՛ս»,* εὐγενής *«ազնուածնունդ, ազնիւ»),* ազնուական *ՍԳր. Ոսկ. եւս. քր.* չազնուութիւն *Ոսկ. մ. ա. 21. նոր ձեւով և ն-ի կրճատումով՝* դիւցազեան *Մագ.* հայկազեանք *Խոր. հռիփ. 3Հ. կԹ. Հների մօտ* ազն *բառի եզակի գործածութիւնը անտեսուր է։ Նոր գրական բառեր են* ազնուամեծար, ազնուաշուք, ազնուափայլ, ազնուապետութիւն, ազնուապետական, անազնիւ, գերազնիւ *եւն։*

ՆՀԲ երր. զան, զենիմ։ *Տէրվ.* Altarm. *35 յն.* γένος, *լտ.* gens, genuinus, *հյ.* զանազան *բառերի հետ, իսկ Մասիս 1882, օգ՞ 18* զն, զան = *ծնիլ արմատից։* Bugge, Etrusk. u. Arm. *79 ցեղակից յն.* ἔθνος *բառին.* Bugge, Lyk. stud. *1, 55 կցում է լիւկ.* adm̃ma *բառին, հայերէնի մէջ զ ծագում է հնխ.* dh-ից։ *Ադոնց,* Армен. въ эт̃. Юст. *392 իրան.* zana *«ծնունդ» բառից։ Հիւնք.* զանազան *բառից։* Patrubány IF *13, 124—5 և ՀԱ 1903, 151* bզն *բառի հետ՝ իբր յն.* ὄσχος *«ճիւղ», պհլ.* azg *«ճիւղ»։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 142* ազգ *բառից։ Ենաէն,* Hilt. u. Arm. *էջ 11, 109, 200 հաթ.* sin=azin *«ժողովուրդ», սեռ.* sna, *իսկ ՀԱ 1904, 271* sn *կամ* azni= ազնիւ։ *Աճառ. ՀԱ 1905, 346 համարում է* անձն *բառի կրկնակը,* անձն *մասնաւոր, իսկ* ազն *հաւաքական իմաստով.* ձն>զ *ձայնափոխութեան համար հմմտ.* կորիզ *և* կողինձ, զիս<*զիզ<*զինձ։ *Թւում է թէ պատահական նմանութիւն ունի մանիք.* ažwn *«որդի», ИИАН 1907, 537։*

ԳԻՒ.— Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Կր. Հճ. Ղրբ. Մշ. Ննխ. Ջղ. Սլմ. ազնիվ, *Տիգ.* ոգնիվ, *Երև. Սեբ.* ազնիֆ։

ՓՈԽ.—Վրաց. ազնի, ազնաուրի *«ազատ, ազնուական». Դա ազնաուրթա Գալիլիասթա «և մեծամեծաց Գալիլիացւոց» Մրկ. զ. 21.* ազնաուրեբա, ազնաուրոբա *«ազնուականութիւն»,* ուազնո *«անարգ»,* սաազնուրի *«ազնուական», ուտ.* ազնաուր *«ազնուական»,* ազնաուրլուղ *(մի հայերէն բառ՝ մի վրացական և մի թուրքերէն մասնիկով) «ազնուականութիւն», թուշ.* ազնուր *«ազնուական»,* ազնուրոր *«ազնուականութիւն», վրացերէնի միջոցով՝ ռուս.* азнагуръ *«վրացի ազնուական». ըստ* Будаговъ Срав. слов. *1, 38 գործածական է նաև պարսիկ գրականութեան մէջ* āznāvur *ձեւով։ Վրացի բառը յետ դառնալով մեզ՝ գաւառականների մէջ տուել է* ազնաուր *Բլ. Խլ. Նբ. Վն. «Հսկայ, վիթխարի մարդ. 2. հրեակայական էակ, ոգի, չինն»։ Ըստ Կարապետեան, Օսմ. բառ. էջ 29 տճկ. ևս կայ* azнavor *«ազնաւոր, քաջ, դիւցազն»։*

ԱԶՈԽ, ի *հլ. «խակ խաղող» ՍԳր. Վեցօր. 102. որից* ազոխացեալ *«խակ մնացած» Ես. ժբ. 5.* ազոխանալ *«ատամն առնել» Վրք. ոսկ.* ազոխացուցանել *«թթուեցնել» Լմբ.։*

=ձեւով նոյն է պրս. āzux *«մէջը փուտ և դառարկ ընկոյզ» բառի հետ. բայց իմաստով յարմար չէ. իրանեան բառը կարող էր սակայն թերևս նախապէս աւելի ընդհանուր իմաստ ունենալ. այդ պարագային հայ բառը փոխառեալ պիտի լինէր պարսկերէնից։ Թիրեաքեան, Պատկեր Ա. 191 թուի հանել պրս.* āzax *«որթյօտա» բառից։ Հիւնք. պրս.* āzux *ձեւից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. էջ 17 նոյն ընդ* ածուխ= *պրս.* āsūx *«չվառած, չեփած»։*

ԳԻՒ.—Հճ. ազոխ, *Խրբ.* ազօխ, *Տիգ.* ոզուխ, *ՋԹ.* ոզիւխ *կամ* ոծիւխ. *իսկ Արբ.* ազօխ *նշանակում է թէ՛ ազոխ և թէ՛ որևիցե խակ պտուղ.— Բիւթ. յայնաբար «խաղողի սարփինայ», Ակն. «մատղաշ, երիտասարդ».—* Ազոխ կտրիլ *Սեբ. «շատ թթուիլ» (խմորը եւն)։*

*ԱԶՏԻՀ *«ազնուականութիւն, իշխանութիւն», նորագիւտ բառ. երկու անգամ միայն գործածուած է Գիրք. Քղ. էջ 170, 171. Ջի*

ապտիհ որ ինձ հասեալ է ի ներանց. Ապտիհդ ձեր և փառաւորութիւն։

= պհլ. āzātīh «ազատութիւն, ազնուականութիւն», պրս. آزادی āzādī «ազատութիւն». ավելի ընդարձակ տե՛ս ազատ բառի տակ։—Ա՛ճ.

Ակինեան, ՀԱ. 1909, 141 համարում է պրս. azadeskari *«ազատ, ինքնիշխան»։ Նորայր ՀԱ. 1909, 220 մեկնում է «շուք, փառաւորութիւն», իբր ասոր.* ḥḏyṯā *«փառաւորեցաւ», ḥḏyṯā «փառաւորեալ»։*

ԱԹԱՐԻԿ, որ և աթաբեկ, աթաբակ, աթապակ «թագաւորահայր կամ փոխարքայ» Յայսմ. հոկտ" 6. Նոր վկ. էջ 314 (ժե դար). որից աթաբակութիւն *Ոսկիփ. Մաղաք. աբ. էջ 5. Միխ. ասս. էջ 439. Ուռա։*

= արև. թրք. اتابیگ atābēg «թագաւորահայր», չաղաթ. اتابیڭ կամ اتابگ atābeg «մեծ հայր, կառավարիչ, Սուլթանի որդիների ուսուցիչը»։—Հիւբշ. 261։

Ուղիղ մեկնեց նախ Գիմ։

ԱԹԱՆԱԲՐԻ «գառնացեալ». *ունի միայն Բառ. երեմ. էջ 7. անստոյգ բառ։*

ԱԹԱՆԱՍԻԱ «անթառամ ծաղիկը» Բժշ։

= յն. ἀθανασία «անմահութիւն», որից լտ. athanasia, ֆրանս. athanasie։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 3270։

ԱԹԱՇ, իբր «անուն Հրոյ Պարսից» Սեբ. հրտր. Պտկ. էջ 27։

= պրս. آتش ātaš. պազ. ātaš, պհլ. ātaxš, գնդ. ātarš (-š եզ. ուղ.), փարսի ātaš, թրք. ateš «կրակ» ևն.—Հիւբշ. 92։

Ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. Pers. stud. *էջ 5։*

ԱԹԱՇԱԿ «վատ հիւանդութիւն, սիֆիլիս» ԱԲ։

= պրս. آتشک ātašak «վատ ցաւ, սիֆիլիս», որից նաև վրաց. աթաշաճգի, աթեշաճգի, արաբ. جُدَرِيّ ṭašāt (տե՛ս Կամուս, թրք. թրգմ. Ա. էջ 37). պարսիկ բառը նշանակում է բուն «կրակիկ» (ātaš բառից)։—Ա՛ճ.

Թիրեաքեան, Ար. բառ. դնում է պրս. ātaša *«աստիճ հոք և ջերմ տուող մի հիւանդութիւն»։ Ըստ իս լաւագոյն է* āṭaš̌ak *իր վերջածայնի պատճառաւ։*

Գիմ.—Վն. աթաշակ, *որից* աթաշակոտ, աթաշակոտիլ։

ԱԹԱՇՓԱՐԻՍ «կրակապաշտ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբ. էջ 354. Ընդ բուտփարիսան և ընդ աթաշփարիսան կորիցէ և ի գժոխս իջցէ. իւր հալալն նմա հարամ եղիցի։ Նոյն բառն է դարձեալ, որ իբր յատուկ անուն գործածուած է Յայսմ. ապրիլ 8, այլափոխեալ աղէկփարաս ձևով. Զոր տեսեալ մոգպետն Ադէլփարաս և չարախօսեաց զդերիսն առ Շապուհ։

= պրս. آتشپرست ātašparast *«կրակապաշտ», որ կազմուած է* ātaš *«կրակ» և* parast- *«պաշտել» բառերից։—Ա՛ճ.*

ԱԹԱՐ *«պահպանօղ». ունի միայն Բառ. երեմ. էջ 7։*

ԱԹԵՐԱՅ «ցորենից կամ խմորից պատրաստուած մի տեսակ կերակուր» Պտմ. աղեքս. 41. Խոր. Գ. 62. Վրք. հց. բ. 67. գործածուած է հյգ. աթերայ *և յգ. սեռ.* աթերաց *ձևերով, որից ՆՀԲ ենթադրում է եզ. ուղ.* աթեր, *ի-ա հլ.։*

= յն. ἀθήρα, ἀθάρα *(եգիպտականից փոխառեալ) «ալիւրով կամ մաքրած ցորենով պատրաստուած կերակուր», որից և լտ.* athera.—Հիւբշ. 339։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԱԹԻԹԱՅ. *անյայտ բառ, որ Բառ. երեմ. էջ 244 դնում է իբր բացատրութիւն շառշիռ բառի դէմ, որ նոյնպէս անծանօթ է։*

ԱԹԻՆԵԱԼ *«պճնուած, զարդարուած» (արմատը *աթէն). մէկ անգամ միայն գործածուած է Բուզ. ղ. 2. «Եւ ինքն Զաւէնն աթինեալս և զտապակեալս զժապաւինեալս նարօտօք ագանէր»։ Կարելի է կարդալ նաև ենաթինեալ, Զաւէն յատուկ անուան անսովոր յօղը միասին առնելով։*

Հացունի, Պտմ. տարազի 149 հանում է յն. ἀθηνάζω «Աթենացու պէս ապրիլ» բայից։

Աթիո տե՛ս Այթիո։

ԱԹԽԱՐ «վաղամեռուկ խոտը. juncus odoratus *կամ* andropogon schoenanthus» *Վստկ. 109, 127. ՀԲուս. § 3336. գրուած է նաև* աղխար, օրխոր, *իսկ ըստ Բառ. երեմ. յաւել. 573 (առնելով Գաղիանոսից)* արթախ։ *Ուղիղ*

ձևը ՀԲուս. § 16 համարում է իբխիր, բայց աբխար կամ սղխար ձևն էլ ուղիղ է, ինչպես երևում է յաջորդ համեմատությունից։

= արաբ. خَشِيَ «ընդն նշ». այս բառը սովորաբար կարդացւում է iôxir, բայց նաև aôxar. սրանից է նաև լտ. oleum adechari WZKM 11, 268։—Հիւբշ. 261։

Ուղիղ մեկնեցին Lag. Arm. St. § 22 և Ալիշան, Վստկ. 239։

*Ա.ԹՂԵՍՏԱՑՔ «ըմբիշներ, գօտեմարտողներ» Եւս. քր. ս. էջ 278. Ագոնիստալքն աթղեստալք կոչեցան = յն. οἱ ἀγωνισταὶ ἀθληταί ἐκλήθησαν. սրանից դուրս ուրիշ տեղ չէ գործածուած։

= յն. ἀθληταί (յզ. ուղ. ἀθλητής բառի) նոյն նշ. որից նաև լտ. athleta, գերմ. Athlet, ֆրանս. athléte, յատկապէս ասոր. ܐܬܠܝܣܐ atlīsā. այս ձևի, ինչպէս նաև հայերէնի մէջ ներմուծուած ա-ի համար համմտ. մագնեստիս<յն. μαγνήτις.—Հիւբշ. 339։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ. վերջին անգամ ասորերէնի համեմատութեամբ՝ Վարդանեան, Բառարն. դիտ. բ. 9 և ՀԱ 1920, 324։

Ա.ԹՈՈՒ, ո հլ. «նստարան» ՍԳր. «բնական պէտքի աման» Դատ. Գ. 24. «գահ» ՍԳր. որից աթոռակից նթ. ա. 14. Բուզ. Սեբեր. աթոռակալ խոր. Նար. նախաթոռ ՍԳր. հակառակաթոռ խոր. Արծր. աթոռագործ Քերդ. քեր. 159. զուգաթոռ Կաղկանտ. զարմանաթոռ Ոսկիփ. բիկնաթոռ Յայսմ. աթոռանալ «գահակալել» Կիւրղ. զկ. Հարստարապետական բառեր են՝ սալաթոռ, խաչաթոռ Ջքր. սարկ. Գ. 13, 14. նոր գրականի մէջ՝ աթոռակալել, աթոռանիստ, աթոռանիաս, հակաթոռ, բազկաթոռ, ճօճաթոռ ևն։

Windisch. 12 յն. θρόνος «աթոռ»։ Müller SWAW 41, 11 ասոր. ܐܬܪ aθar, ܐܬܪܐ aθrā «տեղ, պարագայ, ժամանակ», արամ. ܐܬܪ «տեղ», արաբ. أثر aθar, إثر iθr «հետք», ասուր. ašru «տեղ», եբր. אשר ašer, եթովպաց. ዕሠG ašr «տեղ» իմաստի զարգացման համար համմտ. պրս. جا gāh «տեղ» և հլ. գահ, հպրս. gāthu «տեղ, աթոռ, գահ»։ Lag. Arm. St. § 23 և Հիւբշ. 300 չեն ընդունած այս մեկնութիւնը։ Müller պընդում է նոյնը WZKM 8, 280 (թրգմ. ՀԱ 1894, 293)։ Հիւնք. թրք. اوتورمق oturmaq «նստիլ» ձևից. (սակայն սրա հնագոյն ձևն է اولتورمق oltur-maq, ուր l խանգարում է)։ Ընէէն ՀԱ 1904, 184 հաթ. atr։ Patrubány ՀԱ 1908, 344 հնխ. sed «նստիլ» արմատից։ Karst, Յուշարձան 408 սումեր. tur «բազմոց, գահաւորակ»։ Մառ, Тексты и Раз. по Кавк. фил. հտ. 1, էջ 78 (Ленингр. 1925) կցում է յն. θρόνος հոմանիշին և երկուսը միասին դնում է յարեխեմական արմատից։

ԳԻՒ.— Համշ. աթոռ, ՀՃ. աթոռ, Խրբ. Մկ. Ռ. Սչ. Տիգ. աթօն, Տփ. ա՛թուր, Ակն. Ասլ. աթէօն, Զթ. մթէո՛ն, Մշ. աւոռոմ, Ալշ. աւոռն, Սլմ. աթոռմ, Ախց. Կր. Ննխ. աթօնմ, Ագլ. ա՛թուռմ, Զղ. աթոռմ, աոթոմ։

*Ա.ԹՈՒԹԱՅ (անեզաբար գործածուած), ի հլ. «տաւ, գիր» Փարպ. Խոր. գրուած է արուրթայ «գրութիւն, գրուածք» Սասն. 14։

= ասոր. ܐܳܕܽܘܳܬܳܐ āθūθā «տաւռ», նոր ասոր. ät'üit'ə, որ յոգնակին է ܐ aθ բառի։—Հիւբշ. 300։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ. բայց սա կցում է նաև յն. լտ. ἄρθρον, articulus, որոնք այստեղ գործ չունին։ Յետոյ Lag. Arm. stud. § 24։

*Ա.ԹՈՒՆԻ «բաղնիսի հնոց». մէկ անգամ գործածուած եմ գտնում Գիրք թղ. 515 = Միխ. ասոր. 209. «Յետ այսորիկ տեսանէր նոյն ծերն զՅոբնաղիոս յանկեան մի կանգնեալ և սևացեալ իբրև զաթունի, որ ղբաղանիսն այրէ»։ Բառիս երկրորդ վկայութիւնը գտնում եմ Անկ. գիրք հին կտ. 335. «Եւ գնացեալ հանդիպեցաւ այրոյն, և տես զի ի սովոյն մաշեալ էր և եղեալ զաթունի» (պետք է ուղղել եղեալ իբրև կամ որպէս զաթունի)։ Հրատարակիչը համարում է «դուցէ թրք. zabun «վտիտ»! Բառարաններին անծանօթ է այս բառը. միայն ԳԲ էջ 8 ա ունի աթուն «հաց եփելու փուռ», որի աղբիւրը ինձ անծանօթ է։

= արաբ. اتون atūn «հնոց», اتّون atavvun «հացի կամ կրի փուռ, բաղնիսի հնոց» (տե՛ս համաս. Թրք. Թրգմ. գ. 589, 605). բնիկ սեմական բառ է. համմ. ասուր. atūnu, utūnu, սաբա. אתונא atōnā, արամ. אתין atūn «հնոց»:—Ահ. սամեր. udun «փուռ»:

lusti, Zendspr. 49 գնդ. ātar «կրակ» բառին կցում է հյ. առուն, որով անշուշտ հասկանում է աթուն:

ԱԹՈՒՐ «ոտք» Հին բռ. առանձին անգործածական է. ոճերով ունինք՝ առաթուր կոխել «ոտքի տակ առնել» Դ. Թագ. Բ. 33. Գ. մակ. ե. 23. առաթուր կոխան առնել Եզեկ. լբ. 2. առաթուր հարկանել Գ. մակ. զ. 15. Առաթ. Ոսկ. մ. բ. 25, 26. առաթուր անկեալ լծ. ածար. ընդ աթուր հարկանել «սրով ջարդել» Յուդ. ժզ. 6. «ոտքի տակ առնել, ընկճել» Փիլ. իմաստն. սրա համեմատ ընթաբրել «ընդ ոտն հարկանել» Բուզ. Գ. 15 (տպագրում դրուած է ընթադրել, որ իբր յետնադարեան ձև չի կարող Ոսկեդարում գոյութիւն ունենալ. ուստի Նորայր, Կոր. վրդ. 461 ուղղում է ընթաթրել «ոտքի տակ առնել», որ պէտք է հասկանալ ընդաթրել). առաթուր գնալ «ծնկաչոք՝ չոքէչոք երթալ» Ջքր. սարկ. Բ. 36:

= փոխառեալ է հիւս. կովկասեան լեզուներից. համմ. ուտ. թուր «ոտք», որից թուրճ «հետիոտն», թուրնուր «ոտք չունեցող», թուրղա՞յ «բոբիկ»:— Ուղիղ մեկնեց ուտէացի Պատուական Քուշմանեան (անձնական):

Հիւնք. աթոռ բառից է հանում:

Աթր տե՛ս Արթր:

*Ալ, յգ. ալք «ծննդկաններին թշնամի՝ այլանդակ կերպարանքով մի չար ոգի» Տաթև. ամ. 574. Հարց. 150. Ախտարք. որ և ալի Ադամ. 37 (դևք, սատանայ, քաջք և այլին).

=պրս. āl «ախտ ինչ սատակիչ, որ պատահի կնոջ, որ նորոգ ծնեալ իցէ զմանուկ իւր. և այս դիպի նմա յօրէ ծննդեան մինչև ցօրն եօթնևորդ». մեր մէջ, թևրևս և պարսից մէջ, չար ախտը անձնաւորուած է իբրև չար ոգի. համմ. փարսի āl «այլանդակ կանացի կերպարանքով առասպելական մի հրեշ»:—Հիւբշ. 262:

Ուղիղ մեկնեց նախ Պատկ. Матер. II 4: Ալիշան, Հին հաւ. 222 ալք «անդունդ» բառից, որ կցում է գոթ. hell «դժոխք» բառին: Սագրզեան, ՀԱ. 1909, 335 սումեր. alal «մի չար ոգի»:

ԳԻՒՂ.—Շատ տեղ պահուած է ալք ձևով. տե՛ս Բիւր. 1898, 296—7 և 1899, 70 Աբեղեան, Arm. Volksgl. 118, Աճառ. Գւռ. բառ. 53: Ագլ. օլ. Ննխ. ալէքաւր ըլալ «յանկարծական մի բանից սաստիկ վախենալ» (հաղորդեց Ա. Ջամինեան, նամակ 1927 յունիս 13). բառը ցոյց է տալիս, որ արմատն է ալ և ո՛չ ալք: Նոյն արմատից են նաև ալոց-գալոց Մշ. «փորձանք, պատահար», ալոց-գալոց լինել «յանկարծ կորչիլ, անհետանալ. 2. յանկարծական մի փորձանքի ժամանակ գլուխը կորցընել», ալոց աշխարհ (կամ երկիր) Սեբ. «հեռաւոր անծանօթ երկիր»:

ՓՈԽ.—Կպղվկ. յն. ἀλτής «ծննդկան կանանց և նորածին մանուկներին վնասող մի չար ոգի», ἀλούς «մութ գիշերները թափառող և մարդկանց վնասող մի չար ոգի» (Karolides, ΓΛ, σσγκρ, 136—8), ուտ. հալ «ալք, քաջք», հալբաֆտի «դիւահար»: Ծրդ. ալք «նոյն նշ.» (Ալիշան, Հին հաւ. 226). վրաց. ալի «անառաւոր ոգի»:

*ԱԼԱԾԱՀԻ, որ և ալաժարի «ներկատու մի բոյս է» (ըստ Խ. Ուղուրիկեան, Մասիս 1881 նոյ. 23 ramnus infactorius L) Մատթ. վրդ. Մեկն. վեցօր. ի (ըստ ՀԲուս. § 18):

=արաբ. الجهرى al-Jahri «տորոն», որից նաև թրք. Jehri, ֆրանս. alizari ևն. մեր ժ ձայնը արաբերէն J-ի ձայնափոխութիւնը չէ, այլ յատուկ ա՛յն բարբառին, որից առնուած է բառը:

ԳԻՒՂ.—երև. ալաժա՛ճի, Ղրդ. իլիժէ՛ճի, Գնձ. բոլջո՛ղլի, Սեբ. ջոճի. Երևանում գործածւում է նաև իբրև «դառնաբարոյ». ոճով ասում են թէ այս ինչ անձը դառն է՝ ինչպէս ալաժա՛ճի:

ԱԼԱՀՈՒԻԹԵԼ «այծի պապաչել»?: Նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Թղ. էջ 86 «Որ յերեկեանն

հայթիւն գոռմանն և խնջիւն վրնջելոյ պայթուցեալ պապչեկին լալաւարթիւն ալախութման քաղուն»։

Գտաւ ու մեկնեց Ածառ. Հայ. նոր բառեր հին մատ. հտ. Բ։

***Ա.Լ.Ա.Մ** «դրօշ, դրօշակ». Նորագիւտ ռամիկ բառ, որ գործածուած է մի քանի տեղ յետին մատենագրութեան մէջ. ինչ. Վրդ. պտմ. 94, 96. Միխ. առ. 419, 529, 605. որից խաչալամ «խաչադրօշ, խաչվառ» Սամ. առնեց. 118 (արդի գռ. խաչալեմ). սրա համար հմմտ. Միխ. այրիվ, էջ 70 «Յիսէ՝ Շեխայ որդին ետ ալամ և խնձ ի վերայ Զաքարիա կաթողիկոսին»։*

= արաբ. علم ʿalam «դրօշ, դրօշակ», յատկապէս «դրօշակի ծայրն անցուած լուսնաձև կամ թաթանման նշանը» (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 520)։

Ուղիղ մեկնեց նախ Ալիշան, Հրտր. Վրդն. պտմ։ Վերջին անգամ Ածառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 104։

***Ա.Լ.Ա.Նի** «յայտնի, հրապարակաւ». չունին ՆՀԲ և ԱԲ. գործածական է յետին հայերէն ռամիկ լեզուի մէջ. ինչ. Կիր. էջ 171 (Թագաւորն խրատեսցէ զալանի մեղքն). Կոստ. երզն. 151 (Յերակ է միտքն ի շնալ գաղտ և ալանի). հմմտ. նաև անդ՝ էջ 152. Քուչ. 60. Անսկիզբ 27, 73. Սմբ. դատ. էջ 21, 77 ևն։*

= արաբ. علنى ʿalani «հրապար ակալինն»։

Ուղիղ մեկնեց նախ Ալիշան, հրտր. Կիր. էջ 171։ Վերջին անգամ Ածառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 73։

Ա.Լ.Ա.Ն.Կ. *անստոյգ բառ. ՀԲուս. § 19 յիշում է ալանկի տակ բոյսը, աւելացնելով թէ «սխալ գրուած է. պէտք է կարդալ սղանկի տակ, թէև կայ* alangium *անուամբ միշտ ծառ մի». իսկ § 309 և յաւել. էջ 675 յիշում է* **բանջար** *անունով մի խոտ, որի համար ասում է թէ «Շոռոթեցիք իրենց լեռան անուամբ ալանկի բանջար կոչեն»։*

***Ա.Լ.Ա.Պ.Ա.Ս.Տ.Ր** «մի տեսակ թափանցիկ մարմարիոն». մէկ անգամ ունի Բրս. մրկ. էջ 253. «Ալապաստրն (տպ. ալապաստռն) է մարմարիոն սպիտակ՝ պարզ իբրև ապակի, և ունի կայտեր բազում, որ պահէ զիւղն առանց ապականութեան»։ (ՆՀԲ յաւել. յիշում է այս օրինակը՝ դնելով ալապաստր «շիշ իւղոյ կամ մեռոնի՝ առանց ունկանց, մանաւանդ ի հանքային քարէ». իսկ ԱԲ՝ իբրև իրարից տարբեր բառեր՝ նշանակում է ալապաստր (ռ-ով) «մարմարիոն» և ալապաստղ (դ-ով) «եղի՝ մեռոնի շիշ»)։*

= յն. ἀλάβαστρον, ἀλάβαστρος, կամ նաև ἀλάβαστος (հմմտ. վերը ալապաստ *) «մի տեսակ թափանցիկ մարմարիոն կամ կրաքին քար. 2. նոյն նիւթով շինուած աման (շիշ)՝ անուշահոտութիւն կամ միւռոն պահելու համար». որից փոխառեալ են նաև լտ.* alabastrum, *իտալ.* alabastro, *գերմ. անգլ.* alabaster, *ֆրանս.* albâtre *«մարմարիոնը»։ Մեր բառը գրուած է յետին տառադարձութեամբ՝ որ հին ձևով պիտի լիներ *ալաբաստ։ Ճն. բառը մեկնում է* a *բացասականով՝* λαβή *«առնք, կոթ» բառից, որովհետև յիշեալ աման առանց առնկի էր. և կամ աւելի հաւանաբար համարում է օտար փոխառութիւն. հմմտ. արաբ.* البصرة al-Baṣra *«Բասրայի քար»* (տե՛ս Boisacq, էջ 40)։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, հտ. Բ. էջ 1041։

***Ա.Լ.Ա.Տ.Ն.Ի** «մի տեսակ խոտ». ունի միայն ՀԲուս. § 20։*

= արաբ. alatini, *որ գալիս է յն.* ἐλατίνη *«Ֆր.* véronique, velvete *կոչուած կապուլտ ծաղիկը» բառից. և այս էլ ծագում է յն.* ἐλάτη *«սոճի» բառից՝ տերևների նմանութիւնից առնելով այս անունը։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 20։

Ա.Լ.Ա.Ր.Ե.Լ *«համաչել». ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. պող. ա. 390. Ջիր որ այնպէս անամօթ և յանդուգն, որ ստէպ լսիցէ զգործովանս և չալարիցէ (յն. չամաչիցէ) և ցածնուցու ի բազում չարեաց։*

Իմաստի տարբերութեան պատճառաւ կապ չունին գռ. ալարիլ «դանդաղիլ, ծուլանալ» և արև. Բրք. الارمق alarmag *«բարկութեամբ նայիլ, բարկութիւնից դէմքը այլափոխել»։*

Ա.Լ.Ա.Ի.Ո.Ի.Ն.Ք կամ **Ա.Լ.Ա.Ի.Ս.Ո.Ի.Ն.Ք** *«բազմատեղք, բոլք համաստեղութիւնը» Հին բռ.*

Ճառընտ. Վրք. և վկ. ա. 682.—երկու ձևերից մին սխալ գրչութիւն է։

Բառ. երեմ. էջ 7 գրում է ալասուն և մեկնում է «բազմատաղ»! Ալիշան, Հին հաւ. էջ 114 մեկնում է «Սայլն» (Մեծ արջ)։

*ԱԼԱՓ «խոտ հնձելու ի կերակուր երիվարաց բանակի». իբր միջին հյ. բառ ունի միայն Նորայր, Բառ. ֆր. էջ 565 ա. նոյն բառն է և ալափ «աւար, կողոպուտ», որ թէև առանձին գործածուած չէ, բայց կայ նրանից ալափ առնել կամ ալափ տալ և ալափել «կողոպտել, աւարել, թալանել» Ոսկիփ. Ուռհ. Տաթև. ամ. 510։

= արաբ. علف ʿalaf «անասուններին տրուած կեր կամ խոտ», որից փոխառեալ են նաև վրաց. ալափի «ճուրաժ», ասո. ալաֆ «կեր, խոտ» և թիբր. ཨཱལ ālapa «ճոշակ» (համմտ. Будаговъ, I. էջ 78 և 765)։ Այս իմաստից յառաջացել է յետոյ «աւար, թալանն», համմտ. ֆրանս. fourrage «խոտ», յետոյ «թալանն», որից fourrager «խոտ հաւաքել և ապահանել, աւարել, վերի վայր հարկանել, խառնակել», fourrageur «աւարառու՝ թալանչի զինուոր, maraudeur», նոյնպէս և վրաց. ալափի «աւար, որս», ալափորա «աւարում, աւարել», ալափալա «կողոպտում», ալափիաճի «կողոպտիչ, թալանչի, աւարապետ, շատ էժան բան»։

Ալափ «խոտ» բառը ուղիղ մեկնեց նախ Նորայր՝ անդ։ Bugge, Btrg. 21 ալափ «աւար» կցելով յն. λάφυρον հոմանիշին, համարում է բնիկ հայ։ Վերի ձևով ուղիղ մեկնեց Նումէն (Մաո), Արաքս 1890 Ա. 109։ Հիւբշ. 412 անստոյգ է գտնում Bugge-ի համեմատութիւնը, որովհետև յն. λαφ- (հնխ. labh-) արմատը՝ իբր բնիկ հայ պիտի տար *լաւ. մեր բառը կարող է ծագել միայն հնխ. larh-արմատից. բայց այսպիսի մի ձև ենթադրելու հիմք չունինք։ Այս առթիւ Մաոի աստւգաբանութիւնը կրկնում է Մէնէվիշեան ՀԱ 1897, 248։ Պատահական նմանութիւն ունի յն. ἀλαπάζω «աւերել, կողոպտել, թալանել, փլցնել»։

Գիմ.—լ. ալափ, ալավ, երև. ալաֆ «խոտ և դարման, անասունի կեր»։

ԱԼԲՆԱԿ. անստոյգ և անծանօթ բառ, որ գիտէ միայն Բառ. երեմ. էջ 7 և մեկնում է «կընկալ», որի ինչ լինելը անյայտ է։

Ակինեան ՀԱ 1930, 493 տալիս է բառիս աւելի լաւ ընթերցուածը՝ Բառ. երեմ. № 956 և 1017 ձեռագրերից. «Ալ բնակ կամ ընկալ»։ Սրանով բառը դառնում է ալ. իսկ «բնակ և ընկալ» նրա նշանակութիւնները։ Ակինեան կարծում է, թէ եբրայական մի անուան բացատրութիւնն է։

Ալգոնա տե՛ս Ախունա։

* **ԱԼԷԼՈՒ** (սեռ. ի) «աստուածային օրհներգութիւն» 3հ. իմ. ժմ. Նար. լմբ. աղէղու (գրծ.-ով) 3հ. իմ. եկ. ալէլուիա կամ ալէլուիայ ՍԳր. որից ալէլուել «օրհնաբանել» Եփր. արմաւ. էջ 45։

= եբր. הַלְלוּ יָהּ Halelu Yāh «գովեցէք, փառաբանեցէք զԱստուած» (եբր. הלל hll արմատը բուն նշանակում է «լուսաւորել». համմտ. արաբ. هلال hilāl «լուսնի մահիկ». բայց յետոյ դարձել է «փառաբանել, ալէլուիա անունը լուսաւոր, հռչակաւոր դարձնել»). եբր. բառը յն. ἀλληλούϊα տառադարձութեան միջոցով անցել է մեզ. նոյն բառը տարածուած է նաև ամբողջ քրիստոնէական աշխարհում. համմտ. լտ. alleluja, իտալ. ֆրանս. alleluia, անգլ. allelujah, գերմ. halleluja, ռուս. аллилуйа ևն։—Հիւբշ. IF Anz. 10, 43։

Հները ծանօթ էին բառիս ծագման. համմտ. Եպիփ. կիպր. (Սաղմոսների ըսկիզբը դրուած յառաջաբանում) «Ալէլուիա՝ որպէս նախագոյն թարգմանեցին՝ գովեցէք զՏէր է՝ ըստ եբրայեցւոց ձայնին. և արդ նշանակէ ալէլու՝ գովեցէք, իսկ իա, զՏէր կամ զէն»։ Լմբ. մատ. էջ 485. «Որ է ըստ եբրայականին յամենայն լեզուս ազգաց քրիստոնէից՝ օրհնութիւն Աստուծոյ»։ 3հ. արձիշ. 60 «Ալէլուիայն օրհնեցեք զԱստուած թարգմանի»։ Տաթև. ձմ. ե. «Ալէլուն օրհնեցէք կամ գովեցէք զՏէր թարգմանի»։ Աւելի ընդարձակ՝ Տաթև. հարց. 644. «Ի յեր-

բայիցի լեզուն ալ ասէ թէ՝ դայ յայտնեսցի, էլ՝ Աստուած, ուիայ՝ օրհնեցէք և գովեցէք զկենդանին Աստուած»։ Այս վերջին մեկնութիւնը ծայրից ծայր սրխալ է։ Նորերից ուղիղ մեկնեցին նախ ՀՀՒ, յետոյ ՆՀՒ, Շրոդէր, Thesaur. 45 և։

ԳԻՒ.—Իբր եկեղեցական բառ պահուած է ամեն տեղ. նոր բառեր են՝ ալելուիա Հմշ. «ծննդեան տօնին աւետիս ման գալը», ալելու Ք.Ղ. «այս առիթիւ նուէր հաւաքելու յատուկ ծակոտկէն մի աման»։

*Ա.լ.Ի.Փ կամ Ա.լ.Ի.Ֆ «այբ տառը», ունի միայն ԱՒ։

= Եբր. אלף alef, արաբ. ألف alif, եթովպ. alf, թրք. elif «այբուբենի առաջին տառը»։

Ալի «առանցք, երկանաքար կամ ճախարակ». մէկ անգամ գործածուած է Փիլ. ել. 509. «Ալի հոլովելով՝ ոչ փոխէ զտեղին. ինքն յինքեան շրջելով՝ ոչ մատչի ի բաց. նոյն օրինակ և երկին պատի յինքեան, ոչ տեղափոխութեամբ»։

Այս վկայութեան մէջ ալի անշուշտ ուղղական է. բայց ՆՀՒ կարծում է, որ կարող է նաև սեռական լինել, ուսոի և նշանակում է ալ, սեռ. ալի, կամ ալի, սեռ. ալոյ։ ՋՒ ունի միայն ալի ձևը։ Պէտք է կարծել, թէ ՆՀՒ-ի ենթադրած ալ ձևը ճիշտ չէ։— Բառիս մեկնութեան համար ՆՀՒ յիշում է յն. ἄλη «թափառումն» և ἀλάω «աղալ»։

+Ալի (-ոյ,-եաց) «ալիք, կոհակ». սովորաբար յոգնակի գործածուած՝ ՍԳր. Ագաթ. բայց եզակին էլ կայ. ինչ. Կնիք հաւ. էջ 5, Պիտ. Մագ. վրք. հց. են։ Սրանից են՝ ալէկոծ Ոսկ. վեցօր. ալէկոծել Եղիշ. Պիտ. Նար. երեքալեան Անան. եկեղ. Նիւս. ալեակ «փոքր ալիք» ԱՒ. ալիասաստ Կրպտ. նոր գրականից՝ ալեձև, ալեծածան են։ Այս արմատի հետ նոյն է՝

+Ալի (-ոյ,-եաց) «սպիտակ մօրուս կամ մազ». սովորաբար յոգնակի գործածութեամբ. ՍԳր. Ոսկ. բացառաբար եզակի ունի Ոսկ. մ. բ. 24. սրանից են՝ ալեւոր «ծեր» Ոսկ. ալեւորիլ «ծերանալ» Մն. իմ. 8. Սղ. հ. 18. Բուզ. ալեւոյր «ծերութիւն» Ոսկ. Եբր. է. ալխառն Ոսկիփ. աղեբեկ «ալէխառն (մազ)» Խոր. 3Հ. կթ. սպիտակալիհ ԱՒ. նոր գրականից ալեզարդ, ալեհեր են։

= բնիկ հայ բառ. հմմտ. յն. πολιός «ալիք» (թէ՛ մազերի և թէ՛ ժայռերին բաղխող ծովի համար առաւած), αἱ πολιαί «ճերմակ մազեր», սանս. palitá, pâliknī «սպիտակ ալիք», քրդ. پیل pēl «կոհակ», պրս. պհլ. pīr «ծերունի»։ Յունարէնը գալիս է հնխ. polio- ձևից, իրանեանները հնխ. plgo- ձևից. հայերէնն էլ ո՛չ թէ o-ն փոխած է ա, այլ, ինչպես դիտել է տալիս Հիւբշման (անձնական), ածանցում է հնխ. plio- ձևից։ Հմմտ. նաև՝ գնդ. pouruša-, paouruša- «սպիտակած (մազեր)», յն. πέλειος «ծերունի», πελιτνός «ժժգոյն», πελλός «սևագոյն», πελιός «ժժգոյն, կապարագոյն, մութ», πέλεια «վայրի աղաւնի», լտ. palumbēs, հպրուս. poalis «աղաւնի», լտ. palleo «ժլժժտնիլ», pallor «ժժգոնութիւն», pallidus «ժժգոյն». միւլ. liath, կիմր. llwyd «գորշ» հրդ. falo, գերմ. fahl, անգսք. fealo. հիսլ. fǫlr «ժժգոյն, ժոխրագոյն», լիթ. paĩvas «բաց դեղին», հսլ. plavъ «սպիտակ», pelesъ «գորշ», սերբ. plâv «կապոյտ, դեղնագոյն», լիթ. pelẽ, լեթթ. pele, հպրուս. peles «մուկ», լիթ. pilkas «գորշ», լեթթ. palss «մոխրագոյն», ռուս. pelësyj «խայտաբղէտ», որոնց բոլորի արմատն է հնխ. pel- «գորշ, թոխ, ժժգոյն ևն» (Pokorny 2, 53, Boisacq 762, Trautmann 205, Walde 555, Ernout-Meillet 689)։— Հիւբշ. 412 և 520։

Նհբ ալիք «մազ» հանում է ծովի ալիքից։ Հիւնք. ἄλς «ծով» բառից, իսկ կրկին նշանակութեանց համար համեմատում է πολιός։ Վերի գեղեցիկ մեկնութիւնը տուաւ Bugge, Btrg. 9, Սագրգեան, ՀԱ 1909, 334 հ.յ. ողող, ուղխ, ճեղուլ, սամար. a, aa, ağa «ջուր», ağia «ալիք», թրք. öl, ūl «ծով», ak-maq «հոսիլ» են բառերի հետ։ Klapnoth, Asia pol. 106 կցում է ֆինն. allot, օսթյ. allāk բառերին։

ԳԻՒ.—Սովորական է ալեւոր բառը. Ալշ.

Հմշ. հալիվոր, *Երև.* հալի՛վօր, *Մշ.* հալվոր, *Ակն. Խրբ.* հալվօր, *Սլմ.* խալվոր, *Տիգ.* հալվուր, *Հճ.* հալիվոյ, *Զթ.* հալվիւր, հալվիյ, *Ոզմ.* խալվուր, *Մկ.* խալվիւր, *Մրզ.* խալվիր, *Ղրբ.* հալե՛վուր, հալի՛վուր, հալի՛վօր, *Վն.* խալիվոր, *Ագլ.* հալվիւր: *Ինչպէս տեսնւում է, բարբառները միաձայն վկայութեամբ ցոյց են տալիս նախաձայն հ, որ ո՛չ թէ մի նոր յաւելուած է, այլ նախալեզուական r ձայնի կանոնաւոր շարունակութիւնը. մինչդեռ զրաբարի մէջ ընկած է. համմտ.* հոր: *Նոյն հ-ով ունինք միջին հյ.* հալևորիկ «*մի տեսակ բոյս*» *Գաղիան. որ և* ալևորուկ, *սխալ գրչութեամբ* ալվորուկ *ՀԲուս. § 2959, որ Նորայր ՀԱ 1923, 60 ուղղում է* ալևորուկ. *արդի գաւառականում «մի տեսակ խաղող»: Արմատական ալիֆ ձևը՝ «կոհակ» նշանակութեամբ պահում է Երև.* ալիֆ, *իսկ «մազ» նշանակութեամբ կայ միայն զանազան ռճերի և դարձուածների մէջ. ինչ.* վեր թֆենմ ալիֆ, վար թֆենմ մօռուֆ *(Խրբ.) «երկու որի մէջ ընկած»,* ալիֆն անարգել *(Զրս.),* ալիֆ-մօռուֆ մէկ ընել *(Սեբ.) «ծերունուն հայհոյել»,* ալիֆը երեսի վրայ ասալ *(Տփ.) «դժգոհութեան նշաններ ցոյց տալ» են: Բրբախօս հայոց մէջ էլ կայ Ատն.* ալիֆ «*մօրուս*», *որ*

Փոխ.—անցել է նաև Ատանայի Թուրքերի և Բրբախօս յունաց բարբառին (Արևելք 1888, նոյ. 8—9):

*Ալիկ «*անասունի կերը*» *Վստկ. 211 (Զաուրջին ալիկն յերեկոյէն տուր). որից* ալկել «*անուցանել, անասունին կեր տալ*» *Անսիզք 79 (Ու թէ ոք գնէ գրաստ՝ զինչ ու լինի և տանի յիւր տունն ու ալկէ և ունեայ յիր տունն ինչվի վազն ու տան ջուր, նա իր է, այլ չդառնայ): Երկուան էլ անծանօթ նորագիւտ բառ:*

=*արաբ.* عَلِيق ʿalīq *բառից «տավարի կեր՝ որ դնում են տոպրակի մէջ» (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 28):—Ուղիղ մեկնեց* Karst, *Կիլիկ. քերակ. էջ 38:*

Գիմ.—Մշկ. ալիգ «*անասունի կեր*», *Հճ.* ալիգ «*ձիու կեր*» *(Թէրզեան, Ամէն. տարեց. 1924, 197):*

+Ալիւր, *հնագոյն ձևն է* ալեր «*ալիւր*» *ՍԳր. (հետևում է r հոլոմման. բայց կայ նաև սեռ.* ալերոյ *Եփր. Թգ. 434,* ալիւրոյ *435. յետնադարձ եղել է n հլ.). ընդհանրացմամբ «որևէ նուրբ փոշի». ինչ.* ալիւր գործելոյ «*ածուխի բարակ փոշի*» *Տաթև. ամ. 231. այս բառից* ալիւրադիւք «*ալիւրով համոյող*» *Մխ. Երեմ. վահր. յայտ.* գարէալիւր *Վստկ.:*

=*բնիկ հայ բառ՝ հնխ.* al «*աղալ*» *արմատից. ամենամօտիկ ձևն է յն.* ἄλευρον «*ալիւր*»: *Հարց է թէ հայ բառը փոխառութի՞ւն է յունարէնից, թէ նրա հետ միասին պատկանում է հնխ.* al=*հյ.* աղալ *արմատին, որի վրայ մանրամասն տե՛ս առանձին:* Lag. Urgasch. Arm. 904, Arm. stud. § 28, Bugge KZ 32, 40 և Meillet *(անձնական) համարում են թէ հայ բառը փոխառութիւն է. հին հայոց ծանօթ չէր ալիւրը. նրանք գործածում էին կորկոտ կամ ձաւար, այսինքն ցորենը պարզապէս սանդի մէջ ծեծում և այնպէս խոշոր խոշոր եփելով ուտում էին. աղած ալիւրը առաջին անգամ յոյներից անցաւ մեզ՝ Պոնտոսի վրայով: Ընդհակառակը* Pictet *1, 277 և Հիւրշ. չեն ընդունում, որ այսպիսի հասարակ ու սովորական մի բան փոխառութիւն լինի: Վերջին կարծիքին ի նպաստ կարելի է յիշել բնիկ հայ.* աղալ, աղօրիկ, *երկան են բառերը, որոնք ցոյց են տալիս, թէ ջաղացպանութեան արհեստը սկզբից ծանօթ էր հայոց:—Հիւրշ. 414:*

Գիմ.—Ակն. Ասլ. Գոր. Մկ. ալիւր, *Մրզ. Շմ. Սլմ. Վն.* ալիւր, *Ագլ.* մ՛լլիւր, *Սլմ. Ախց. Կր. Համշ. Մշ. Նախ. Պլ. Զթ. Ռ. Սեբ. Սչ. Տփ.* ալուր, *Երև. Խրբ.* ալիր, *Տիգ.* ալիր, *Ղրբ.* ա՛լէր, ա՛լլէր, *Կալաջուղ (Մարաղա)* ալէօր, *Հճ.* էլիյ, *Զթ.* էլէյ, էլէր, *Ոզմ.* յէլօր, *Ռում.* լուր *(վերջինը տե՛ս Պ.ք. Մամիկոնեան, Ռումանահայոց ներկան և ապագան, էջ 81): Նոր բառեր են* ալրատուն, ալրմաղ, ալրոտ, ալիւրարի, ալրաբաբախ, ալրաշաղախ, ալրբեր, ալրահամ, ալրենաշ, ալրմաղել, ալրհաշ *են:*

*Ալլիլոյիւն *«փոխադարձ յարաբերութիւն. կապակցութիւն» Պրոկղ. (Տաշեան. Մատ. մանր ուսումն. հտ. Ա. էջ 39): Նորագիւտ բառ:*

=*յն.* ἀλληλουχία *համանիշից տառադարձուած:*

Գաւառ և ուղիղ մեկնեց Տաշեան (անդ):

Ալխոզաձ *«մշկան եղինջ, լեղակ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 565, իսկ ՀԲուս. § 896 և 899՝ այս և ալխոշալ ձևով, որ թուի վրիպակ։*

***Ալմանակ** *«օրացոյց». ունի միայն* Rivola, *Բառգիրք Հայոց, տպ. 1633, էջ 5։*

=իտալ. almanacco, *ֆրանս.* almanach, *որ ստ. լատ.* almanachus *և ստ. յն.* almanakon *բառն է. այս անունով կոչում է Եւսեբիոս եգիպտական օրացոյցները. բառի բուն ծագումը անյայտ է. ոմանք դնում են արաբ. (հմմտ. սպանական արաբ.* al-manākh*), ուրիշներ եգիպտական յունարէն։ Իրապէս նշանակում է «օրացոյց՝ աստղաբաշխական ծանօթութիւններով». բայց յետոյ՝ այս կարգի հրատարակութեանց մէջ ամէն տեսակի նիւթեր և այժմ ստացել է ընդհանրապէս «ժողովածու» նշանակութիւնը։ Ըստ այսմ արևելեան գրականում ասում ենք ալմանախ (ռուսական, որ է գերմանական արտասանութեամբ) «գրական ժողովածու» իմաստով։—Ա՛ճ.*

Ալնահարի *«բոյս ինչ». դիտէ միայն Քաջունի, Գ. 3։ կայ արաբ.* النهار al-nahr *«սպիտակ խաղող»։*

***Ալոճ** *(որ և ալուճ) «մի տեսակ վայրի պտուղ է ֆր.* azerole» *Վստակ. 155, որից* ալոճի «նոյնի ծառը. ֆր. azerolier» *Բժշ։*

=արևել. թրք. چوﻻ alu͡ǰ, *թրք.* halə͡ǰ *նոյն նշ.—Հիւբշ. 261։*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ։ Մեր բառը Գ-ի համեմատում է պրս. الوچه ālūča *«սալոր» բառի հետ, որ սակայն այստեղ կապ չունի և ծագում է պրս.* الو ālū *«սալոր» բառից՝* ča *նուազականով։ Բայց կարելի է որ վերի թրք.* alu͡ǰ *ձևը ծագած լինի նոյն պրս. բառից։* Bötticher, Arica *94 և 199 և* Lag. Ges. Abhd. *44 պրս.* ālū *«սալոր» բառից։* Lag. Arm. stud. *էջ 188 թրք.* alə͡ǰ*։*

Գիհ.— Ախց. երև. կր. ալօճ, *Ռ. Սեբ.* ալօջ, *Մշ.* ալուճ, *Աալ.* ալէօշ, *խրբ. Հճ. Տիգ.* ալուջ, *Ոգմ.* ալըշ, *որից* ալոշիկ, *Սս. «լեռնային ալոճ»։*

Ալոն *«սեղեխ, հոմանխ». նորագիւտ բառ. որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բառ. երեմ. էջ 184, նոմանի բառի բացատրութեան մէջ։*

Ալոջ *«էգ ուլ» Ղեւտ. դ. 28, 29, Թուոց ժե. 27. նորագիւտ Մնաց. բ. լե. 7—8։*

Հինք. որոջ հոմանիշից։ Lidén, Stud. *25 լտ.* alo, *հհիւս.* ala, *գոթ.* alan, *հիւլ.* alim *«անուցանել» բառերի հետ, իբր բնիկ հայ, հնխ.* al *արմատից (տե՛ս Ալիկ), կազմուած* -ոջ *մասնիկով։* Karst, *Ցուշարձ. 406 ոլ բառի հետ միասին կցում է սումեր.* lu *«գառն» ձևին։*

Գիհ.— Մշ. ալոջ, *Մկ.* ալիւջ, *Ոգմ.* ա՛լուչ *«երկու տարեկան էգ ուլ»։*

Ալոց. *անատոյգ նշանակութեամբ, որից* **ալոցագոյն** և **անալոցագոյն**, *երկու տեղ միայն գործածուած. «Դկղաք (գետ) անալոցագոյն և վնասակարագոյն ի գետոց է, իսկ Արածանի՝ ալոցագոյն և կենդանարարագոյն և աճեցուցանող». Փիլ. լին. էջ 10. «Զյորձանուան բաժանէ ընդհարմամբ զանալոցագոյն բնմունք կենցաղոյս». Սկևռ. ի լմբ. (տպ. Սփիւռք, ժե. 63)։—Հին բռ. մեկնում է անալոց «անամօթ կամ անտեղի», որ սխալ է.* **ալոցագոյն** *«աննզարար կամ պտղածին». ՆՀԲ «աղու, հեզիկ ևն», ՋՔ* **ալոցագոյն** *«քաղցրագոյն, աննզարար, պտղածին», անալոց «անամօթ, անտեղի կամ անյատակ, խոր», անալոցագոյն «վնասակարագոյն, անբիր, ժանտ, կարի անհամ», ԱՔ* **ալոցագոյն** *«հեղուկ, կակուղ», անալոցագոյն «անունդ չըտուողջ»։*

ՆՀԲ յծորդ հյ. աղ կամ լտ. alo *«անուցանել»։*

Ալոճ *«խոտ է բժշկական» Ամիրտ. ունի միայն Ալիշան, ՀԲուս. § 23։*

***Ալպոճ** *«հնդկական մի խոտ է կամ* acorus calamus» *Ամիրտ. ունին միայն ԱՔ և ՀԲուս. § 27։*

=արաբ. البوﺟ albu͡ǰ *(տե՛ս Շթայնշնայդերի բառարանական ճոխ հաւաքածոյի մէջ,* WZKM *11, 314,* بوﺟ bu͡ǰ *բառի տակ)։—Հիւբշ. 262։*

Ուղիղ մեկնեց նախ ՀԲուս. § 27։

*ԱԼՍՈՒՍ «բժշկական բույս է». Մխ. հեր. չունի ՀԲուս. հմմտ. նաև աղսուս, որ ուրիշ բույս է։

= արաբ. سوس al-sūs «մատուտակ, ֆր. réglisse, լտ. glycyrrhiza»։—Ա՛ճ.

*ԱԼՓ կամ ԱՂՓ, ի հլ. «յոյն այբուբենի առաջին տառը» նւս. քր. ա. Ոսկ. կող. էջ 570. որ և ալփա, աղփայ Յայտ. ա. 10, իա 6, իբ. 13։

= յն, ἄλφα նոյն նշ.։

Ուղիղ մեկնից ՆՀԲ։

*ԱԼՓԱՐԵՏ կամ ԱՂՓԱՐԵՏ, ի–ա հլ. «այբուբեն», բաղաձայնների նմանութեամբ և աւելի սովորական դարձած՝ ալփափետ, աղփափետ, ի–ա հլ. Ոսկ. մ. բ. 24. Կոր. ևն. յետնաբար նաև ալփավիտ (նոր յն. β=վ, η=ի արտասանութեամբ) Վրդն. պտմ. էջ 73. ալֆավիտ Երզն. երկն. ոտ. էջ 54. առհասարակ յոգնակի գործածութեամբ։

= յն. ἀλφάβητος «այբուբեն», կազմուած է յոյն այբուբենի առաջին երկու տառերի անունով (α, β), ալապէս են նաև հլ. այբուբեն (ա, բ), վրաց. აბგრაგի (ა, ბ), արաբ. الفبا alifba (ب ا) ևն. յունարէնից են փոխառեալ նաև լտ. alphabetum, ֆրանս. alphabet ևն։—Հիւբշ. 340։

Ուղիղ մեկնից նաև ՀՀԲ։

Ա՛Լ–Ք «խորք, խորունկ տեղ, անդունդ, անտակը» Փիլ. Սարկ. ագ. 62. Երզն. մաթ. 486, 491. որից ալուց «աւելի ներսը, խորը» Եզն. (Եղինն ձմերանի ընդ ալոց կողմն նստելոյ). սրանից է կազմուած նաև Պետրոս Դուրեանի աճալի «անյատակ» բառը՝ որ գործածուած է մի անգամ իր հռչակաւոր «Տրտունջքի» հետևեալ գեղեցիկ տողերի մէջ.

Որ ժպրհի ձգտիլ՝ սուղիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուխքն անալի...

Հիւնք. ալիf բառից։ Ալիշան, Հին հաւ. 222. գերմ. գոթ. hell «դժոխք», հհիւս. Հէլ «դժոխոց դիցուհին», Karst, Յուշ. 417 տճկ. alčaq «ցած», alt «տակը»։

*ԱԼՔԻՄԻԱ «տարրաբանութիւն կամ բնաւլուծութիւն», մանաւանդ «ոսկի շինելու արուեստը» Առաք. 243. այժմ գործածական է միայն ֆիմիա՝ առաջին իմաստով։

= արաբ. الكيميا al-kīmyā, որից նաև ֆրանս. alchimie ևն։—Հիւբշ. 262։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։

ԱԽԱՂ «սպիտակ աքիս» Քազ. առ լեհ. Ուրիշ տեղից անյայտ է։

ՆՀԲ համարում է աքիս բառի ռամկականը։

* ԱԽԱԽԻԱ, որ և աղաղիա, խախխա, կակիա «ակացիա ծառը և ուլկումիլի խէժը» Բժշ. ԱԲ. ՀԲուս. § 28։

= արաբ. اقاقيا āqāqiā «ուլկումիլի խէժ» (ան՛ս կամուս, Թրք. Թրգմ. բ. 535, qaraz բառը և Շեմսընշնայդէրի հաւաքածոյի մէջ՝ WZKM 11, 273), լտ. ֆրանս. acacia, իտալ. acazia, ռուս. акація «ակացիա ծառը». բուն ծագումը յն. է, բայց մեր ձևը արաբերէնից փոխառեալ է։ Պէտք չէ շփոթել մեզ ծանօթ ակացիան նախորդի հետ, որ նրա մէկ տեսակն է. կոչւում է faux acacia կամ robinier. բուն ակացիան տաք երկիրների յատուկ փշոտ մի ծառ է։

Ուղիղ մեկնից Ալիշան, ՀԲուս.։

[ԱԽԱԿԱՆ «տօն. ունի միայն Բառ. երեմ. էջ 8. բայց մի քիչ ցած գրում է ախտատրական «տօն կամ զատիկ». և ինչպէս որ մի տող առաջ գրած է ախատուած «ձայն ամբոխ» և քիչ յետոյ ունի ուղիղ ունի ախտատրոյժ «ձայն ամբոխի», նմանապէս ունի ուղիղն է ախտատրական, որ թուի թէ պէտք է կարդալ ախտարական։ Տե՛ս վարը ախտարք բառի տակ։]

ԱԽԱՄԱԽ «տխմար, անմիտ». մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. պօղ. ա. 268. Թեպէտ և ախամախ ինչ մարդիկ իցեն... և անպիտանք և ապաժամանք և անարգք և անգոսնեալք։ Կապ չունի Թրք. ախմախ հոմանիշի հետ, որ է արաբ. احمق āḥmaq, քան որում մեր բառը աւանդուած է Ոսկիդարիից։

ԱԽԱՅԽԻՐ «բժշկական մի արմատ». ունի միայն ԳԲ, որի աղբիւրն է Քաջունի, Բ. 769, որ épices, épicerie բառը մեկնում է «համեմունք, բովիճայք, ի յետնոց՝ ախայխիր»։

ԱԽԱՆԿԱԼ «հաստատուած, տնօրինուած». մէկ անգամ ունի Ոսկ. եփես. 677. «Կրաւեր ինչ չեն մեր իրքս, այլ անդուստ ի վերուստ մատակարարելք և տիանկեալք»։

Բառս ունի միայն ԱԲ և մնկնում է «իբր կապով հաստատած, տնօրինած», որով ուզում է աղխ. ախ բառից հանել։

Ախարտուած տե՛ս Տրոյդ։

ԱԽԱՒԵՂԱԳԷՍ *(սեռ. -ի) «խոյակ, սիւնագլուխ» երեմ. ծբ. 22 (երեք անգամ), Ոսկ. մ. բ. 25, Փիլիպ. 465, գրուած է նաև աւուելագէս, խաւեղագէս, աղաւաղագէս, աղխաղեագէս (Անկ. գիրք հին կտ. էջ 214), ճաւեղագէս Ոսկ. եփես. էջ 781։*

=անշուշտ բարդուած է ախաւեղ և գէս բառերից, որովհետև այսքան երկար մի բառ չի կարող արմատ լինել։ Առաջինը՝ որ հաւանարար «սիւն» նշանակութիւնն ունի, այլուստ իսպառ անծանօթ է։ Երկրորդը՝ բուն Թորոմանեանի (անձնական), հյ. գէս «մազ, վարս» բառն է. ախաւեղագէսը ներկայացնում է սեան խոյակից վեր՝ թակաղաղի տակ գտնուած մասը, որ աստիճանաձև է լինում և կարող է վարսաւոր ձևեր էլ առանալ։ Ըստ իս գէս՝ յն. γεῖσος, γείσσος, γεῖσσον բառն է, որ նշանակում է «դուրս երկարած մաս, քիւ, ցիւ, corniche» և երեմ. ծբ. 22 երեք անգամ գործածուած է՝ հենց ախաւեղագէս բառի դէմ։—Ա.Ճ.

ՀՀԲ և ՆՀԲ աղխ և գէս բառերից։ ՓԲ (խաւեղագէս բառի տակ) խաւիղ «բուրաստան» և գէս «մազ» բառերից։ Թորոմանեան, Հատընտիր. Ա՛. 212 մնկնում է «վրայէ վրայ շատ ծալք ունեցող»։

***ԱԽԵՍՏ** *«պատուհան» ըստ Բառ. երեմ. էջ 8, որ ասիլի մանրամասն մնկնում է ՓԲ «պատուհան. պահանոց՝ ուր փակեալ պահին իրք». ուրիշ բառարաններ չգիտեն։*

=պրս. ایشگ āqišta «մառան կամ մթերանոց». նոր պարսկական արտասանութեամբ āγeštä։—Ա.Ճ.

ԱԽԵՐԱՆ. *մէկ անգամ գործածում է Բուզ. դ. 5.—«Միտք ի կերպարանացն (հաւատոց) թափուր և ունայն իբր ախերակք»։ Որից յախերական կամ յախերական՝ նոյնպէս մի անգամ գործածուած. «Յախերական կոտորել զանաստուն իւրեանց ի զոհս ճիճեղորյն» Ագաթ.։ երկուսի էլ իմաստը անորոշ է։ Հին բռ. մնկնում է յախերական «անխնայ կամ ընդվայր», ՆՀԲ ախերակ «անշահ, անպիտան, ապերակ կամ հնոտի», ախերական «ի զուր, անխնայ կամ յախտանն»։ Պէտք է ուղղել ախերակ «յիմար, ապուշ», յախերական «յիմարաբար, անմտօրէն», ինչպէս ցոյց է տալիս՝*

ՓՈՒ.—վրաց. ახვირაკი ախվիրակի «ապուշ, անմիտ, անխելք, տխմար»։

ԱԽԻԻՔ *«մրուր, դիրտ» Ոսկիփ. որ և ախժիեք Վստկ. էջ 104։*

ԱԽԻՄ, ԱԽԻՏԱՆ *«խորհուրդ». ունի միայն Բառ. երեմ. էջ 8։*

*** ԱԽԻՆՈՍ** *«մի տեսակ խոտ է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 29, որ յիշում է նաև ախիրոս մի ձև։*

=արար. عنيق\ aqīnus «oximum gariofil բոյսը» (տե՛ս Շեթայնշնայդերի հավաքածոյի մէջ՝ WZKM 11, 274), որ փոխառեալ է յն. ἄκινος «մի տեսակ ռեհան» (Դիոսկ. 3, 50) բառից։—Ա.Ճ.

ՀԲուս. § 29 մնկնում է նախ յն. ἐχῖνος «ոզնի» բառից, իսկ յետոյ ախինոսը համարելով անստոյգ ձև, մնկնում է յն. ἔριvος բառով, որ մի անծանօթ բոյս է՝ զանգակաձևերի ցեղից։

***ԱԽԻՈՆ** *«մի տեսակ խոտ է. վիշապագլուխ, ֆր. vipérine, լտ. echium rubrum L» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 30։*

*=արար. قيون\ *aqiūn ձևից, որին թէև պատահած չեմ, բայց տառադարձութիւնն է յն. ἔχιον համանիշի (Դիոսկ. 4, 27). այս յն. ձևից փոխառեալ են նաև լտ. echium, իտալ. echio. յոյն բառը ծագում է ἔχις «օձ» ձևից, ինչպէս որ ֆրանս. vipérine գալիս է vipère «իժ» բառից։—Ա.Ճ.*

ՀԲուս. դնում է յունարէնից։

ԱԽԼԱԽՆՁՈՐ *«ձիննծաղիկ?» Սալամ. որ և խալխայխնձոր Բժշ. ունի միայն ՀԲուս. § 31 և յաւել. էջ 675։ Գտնում է նաև նոր գաւառականների մէջ համմ. Ալխա խնձոր գօտիդեմ (ժող. երգեր, Շիրակի երգեր, Սպ. Մելիքեան 1917, էջ 3). կր նմանիս ալխա խնձոր (անդ՝ էջ 8). ըստ Ամատունի, Հայ բառ ու բան, էջ 9 բ բլ. խլ. նշանակում է «մի բոյս՝ որ ունի բողկի նման տերևներ. տալիս է ընկոյզի մեծութեամբ համեղ պտուղներ»։ Բա-*

ոխ մասին ընդարձակ տե՛ս Նորայր, Բանաս. 1901, 97։ Ըստ Դանիէլ վրդ. Ջարոյեան (Նամակ 1933, մարտ 3) Գաւաշի գաւառականով նշանակում է «Ախալթայ խնձոր», որի կրճատ ձևն է. բառս նոյն խնձորի համի, հոտի և գոյնի պատճառաւ սիրուն աղջիկներին իբր վերադիր են գործածում։ Քրդ. ևս ասում են կէնէ, պիւ դրմինի սեւախալայէ «աղջիկ, դու նման ես ախալախնձորի» (քրդ. սեւ=պրս. سیب sīb «խնձոր»)։

=բառի երկրորդ մասն է խնձոր, բայց առաջին մասը անծանօթ է։

*Ա.ԽԼԻՄԻՆ. «մի տեսակ բոյս. cadmiá» Բժշ. ունի միայն Karst, ZAPh 2, 137։

=արաբ. القليميا al-qalimiā (իբն-Բէյթար, էջ 314) կամ قليميا qlīmiā (տե՛ս Շթայնշնայդէրի հաւաքածոյի մէջ WZKM 12, 325)։

Ուղիղ մեկնեց Karst, անդ։

*Ա.ԽԼՍԱՋ «մի տեսակ բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 32։

=արաբ. خسارج axarsāj նոյն նշ. որի համաձայն հայ ձևը պէտք է ուղղել ախլսաջ. արաբերէնում չ ձայնը գոյութիւն չունի։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

*Ա.ԽՀԱԻԱՆ «մի տեսակ բոյս է. լտ. matricaria» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 33։

=արաբ. اقحوان aqhavān «նոյն նշ.» (տե՛ս Շթայնշնայդէրի հաւաքածոյի մէջ՝ WZKM 11, 274). նոյն արաբ. բառը ըստ Будаговъ, Срав. слов. 1, 307, նշանակում է «երիցուկ, ռուս. ромашка»։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

Ա.ԽՄԱՐ, ի–ա հլ. «տխմար» Տիմոթ. կուզ. էջ 330. ՅՀ. իմ. Պիտ. Փիլ. Մագ. որից ախմարութիւն Փիլ. Պիտ. Մագ. ախմարաբար Երզն. մոթ. ախմարագոյն Փիլ. Պիտ. գրուած նաև աղմար ԱԲ. աղամար ԱԲ, որից աղամարութիւն «տխմարութիւն» Խոր. ա. 3։ Այս բառի մի քանի ոսկեդարեան վկայութեանց մէջ գործածութիւնը յետսամուտ է համարում Վարդանեան ՀԱ 1921, 110 (Բառաք. դիտ. Գ. էջ 9) և ուղղում է ախմար։

ՆՀԲ մեկնում է արաբ. ղումր, յգ. աղմար։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 36 պհլ. a-ħamār «անհամար, անհաշիւ, անզգոյշ» բառից։ Պատկ. Драг. камни 65 արաբ. احمر āḥmar «յիմար» բառի հետ։

Տե՛ս և ախմար։

Ա.ԽՆԹՈՐ, գրուած նաև աղնբոր, աղխնբոր, յախնբոր, յաղխնբոր, յաղրնբոր «ծառայական, գռեհիկ, ստորին, ոմիկ». որից ախնբորագոյն Խոսք. Վանակ. յոբ. յաղխնբորագոյն Փիլ. իմաստ. աղնբորակագոյն Փիլ. տեսակ. 14. յախնբորագոյն Երզն. մոթ. 390 (տպ. ախնբորագոյն), յախնբորակագոյն, աղխնբորականագոյն Փիլ. տեսակ. ևն։ Վերջինիս մէջ (էջ 18) համապատասխանում է յն. բնագրի ἀκρόδωρακες «մի քիչ հարբած, ապուշ, հաստապլուխ» բառին, իսկ էջ 72՝ յն. ἀνδραποδώδεστατα «ստրուկի՝ ծառայի վայել, կոպիտ կոշտ», լտ. serviles.—հմմտ. նաև սաղախնբոր։

ՆՀԲ մեկնում է ախմար, աղախին, առաքուր, տճկ. այագ «ոտք», հյ. ախ, աքուր, եբր, բնդ բառերով։ Նագրճեան, Արեւելք 1884 հոկտ՝ 17 տանս. հվէ կամ ճու արմատից։ Հիւնք. յն. ἀλάστωρ «ոխակալ»։

Ա.ԽՈՅԵԱՆ, գրուած նաև ախոյան «քաջ, նախայարձակ կարիճ. (ի հլ.) Բ. Քագ. ա. 6, Յովհ. բ. 7. Ագաթ. եզն. Բուզ. «յաղթանակ» Ոսկ. յհ. բ. 39 Շար. որից ախոյանական Ոսկ. ես. ախոյեճանալ Ուռպ. ախոյեճանայարձակ կամ աղեալ՝ ախոյանարձակ Արծր. բռնախոյեան Նար. էջ 260։

Հիւնք. ագոնիստայիֆ բառից։

ՓՈԽ.—Հայերէնից հին ժամանակ փոխառեալ է վրաց. ახოვანი «առնական, քաջ», ახოვანება «առնականութիւն, քաջութիւն». y ձայնը վրացերէնում v դառնալու իբրև լաւագոյն օրինակ կարող եմ յիշել վրաց. ბავრაკი բավրակի «դրօշակ», որ ծագում է թրք. بيراق bayraq համանիշից. ճիշտ նոյն ձևով էլ հյ. ախոյեան>վրաց. ախովանի։—lusti—laba, Dict. kurde 255 քրդ. شەراخف šerāxiw «ախոյեան» բառը վերլուծելով šer «առիւծ»+axiw, վերջինը համարում է հյ. ախոյեան բառից փոխառեալ։ Բայց անշուշտ սխալ է, որովհետև ախոյեան բառը բարբառներում գոյութիւն չունի։

Ախոնդ, ի–ա *հլ. «ատամոքս, փորոտիք» Փիլ. (այս ձևով գործածուած է մէկ անգամ, Մարմնոյս մեծութիւնն և որ էր ի նմա ախոնդացն). որից* ախոնդաձիք, ախոնդեաձիք *կամ* ախոնդիք *«նոյն նշ.» Նիւս. Փիլ. Պիտ. Մագ.* ախոնդաեռուտ *«մաղձոտ» Բժշ. առ լհՀ։*

Նշխ յն. χόνδρος «կոճիկ՝ քիթի, կոկորդի, մանաւանդ կրծքի մասերի»։

***Ախոռ** *«ձիու կամ էշի ախոռ» Սեբ. էջ 68, 95. Վրք. հց. (ՆՀՒ դնում է ո հլ. բայց չունի վկայութիւն). որից* ախոռապետ *Բուզ.* ախոռապան *Մարթին. տե՛ս և* շահախոռապետ։

=*պրս.* خور āxūr *«ախոռ», պհլ.* āxvar *«ախոռ», āxvar i stōrān «գոմ», քրդ.* خۆڵ axūr *«ախոռ, մսուր», աֆղան.* āxōr, *որոնք գալիս են զնդ. *āxvarəna ձևից և այս էլ ծագում է* xvar *«ուտել, խմել» արմատից՝ ā մասնիկով, ըստ այմ* ախոռ *բուն նշանակում է «ուտել-խմելու տեղ»։ Իրանեանների փոխառեալ են նաև ասոր.* ܐܟܘܪ axur, *չաղաթալ.* axor *«մսուր», արաբ. թրք.* اوخور öxör *«ձիու ախոռ», օսմ.* خۆڵ áxor axər, ahər *«ախոռ» (և սրա միջոցով նէն.* ἀχούρι, *բուլղար.* yahər, yaər, əhər, avər, *սերբ.* hahar, har), *վրաց.* ախորի, ախուրի *«ախոռ», թալմուդ.* אתוריך *«ախոռապետ»։ —Հիւբշ. 93։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՆՀՒ, Lag. *և այլն։*

ԳԻՒ.—Սլմ. ախոռ, *Ախց. Ակն. Խրբ. Կր. Շմ. Ջղ. Ռ. Սեբ. Տիգ.* ախօն, *Երև.* ա՛խօն, *Հճ.* ախոր, *Մշ.* յախոռն, *Գոր. Ղրբ.* ա՛խուռ, *Մրղ. Տփ.* ախուր, *Զթ.* mխէօռ, *Ասլ.* ախվէօր, *Ագլ.* ա՛ճուռ, *իսկ Պլ.* ախռո՝ *նոր փոխառութիւն է տաճկերէնից։ Երև. Ղրբ. Սլմ. և Մրղ. տեղական թուրքերէնի ազդեցութեան տակ՝ իմաստի փոքր փոփոխութեամբ դարձել է «մսուր». այսպէս է հասկանում նաև Բառ. երևմ. էջ 216, որ մեկնում է* մսուր *«ախոռ»։*

— **Ախորան** *«սրբութեաց ու սեղ (գետ)». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գործածում է Յհ. կր. էջ 47. Ելանեն բազում ակունք և լինի գետ սուր և ախօրան և մտանէ անհուն ծովն Միրանայ և Սառչամուտ։*

=*Ախուրեան գետի անունն է, որ վերածուել է ածականի. ձևի կողմից համմտ. նոյն հեղինակի մօտ (էջ 50)՝ եւ գետն գայ Ղարսայ և յԱնոյ, որ է Ախօրան։ Գետի յատուկ անունը հասարակի կամ ածականի վերածուելու օրինակ է նաև յն. Ἀναυρος «գետ Թեսալիայում» և ἄναυρος «անձրևներից վարարած գետ, հեղեղ». համմտ. նաև փխբ. «ամէն գետ կամ ջուր» (Boisacq 60)։—Աճ.*

Տե՛ս իմ Հայ նոր բառեր, հտ. բ. էջ 91։

***Ախորժ**, ի *հլ. «հաճելի, հաճոյական» Ագաթ. «հաճոյք», ախորժակ, յօժարութիւն» Յհ. կթ. Յանայ. Յհ. իմ. «դժուարին!» Մագ. դամագտ. որից* ախորժակ *«քաղցր, հաճելի» Շար. Յհ. կթ. Նար. «մտադիւր» Փարպ. «սրբոտի բնմունք, ցանկութիւն» Խոր. Յհ. կթ. «գործ, ըրազմունք» Փիլ. Խոր. Պիտ. (նոր գրականում «մասնաւորապէս՝ ուտելու և ընդհանրապէս՝ մի բան անելու փափագ, ցանկութիւն»).* ախորժական *«հաճելի» Ոսկ. Եզն.* ախորժել *«սիրել, փափագիլ, հաւանիլ» ՍԳր. Եզն. Ոսկ. (կայ նաև* ախորժալ *Փարպ. Ոսկ. յհ. ա. 24.* ախորժիլ *Մագ. ժա),* ախորժութիւն *Ոսկ. մտթ. և եփես.* ախորժակութիւն *Դիոն. Փիլ.* անախորժ *Նար. Մագ.* անախորժական *Ոսկ. մ. գ. 14.* չախորժական *Եզն.* չարախորժակ *Պիտ.* բարեախորժ *Եզն.* մարմնախորժ *Թէոփ. խ. մկ.* յարախորժելի *Նար.* յօժարախորժ *Մարկ. աղ. Գր. հր.* մարդաչախորժ *«անմարդասէր, մարդատեաց» Ոսկ. հս. 154 (գրուած է մարդաչախոժ)։*

=*Իրան. *ā-xuarza- ձևից, որ կազմուած է ā մասնիկով *xuarza-բառից. համմտ. պհլ.* xvārak *կամ* xvālak<*xuarδak< xuarza-ka *«քաղցրութիւն, երջանկութիւն»,* xuarzist *«քաղցրագոյն», զնդ.* xuarəzišta— *(գերադր.) «ամենաքաղցր, ամենահամեղ», օսս.* xorz *«լաւ», պրս.* خواليدن xvālīdan *(*xuarδ<*xuarz) «ճաշակել, համ առնել»,* خوالی xvālī *«կերակուր»,* خواليگر xvālīgar *«խոհարար» (*Horn *§ 500,* Bartholomae, Altir. Wört. *1874)։ Վերջին պրս. բառերի վրայ տե՛ս և* խոհ։

Բագրատունի, Քերակ. վարգ. 1470 իբր

անխորշ, անխորշելի։ *Հինք.* յօժար բա-

ոից։ Коршъ, *Բրգմ. Մշակ 1914, № 122* հպրս. **xwardya ենթադրեալ ձևից։ Ուղիղ մեկնց* Nyberg, Hilfsbuch d. Pehlevi *II, էջ 137։*

***Ախինն.**, *գրուած նաև* աղխուցա, ալկուցա, արխուցա *«մի տեսակ արաբական ծաղիկ», որ Շէհրիմանեան համարում է «*sinapi silvestris, *վայրի մանանեխ»։ Մէկ անգամ ունի Խոր. աշխ. 612. «Ելոջանիկ Արաբիա. իւղք անոյշք ի նմա և ծաղիկ վեշտասան. հալի, ջաւոու, մաղապ, խալոկ. քմիի, աղխուցա, խալար, բոխտակ, նարդոս, բալասան, բան, յասմիկ, նարան, վարդ, մանուշակ, մարգարէ», (հրատ. Պատկ. 1877 էջ 22)։* Աղխուցա *բառի տեղ մի ձեռագիր ունի* դհուցաղհուցաւ, *որ արաբ.* دهن الحناء duhn-al-hinnā *«հինանալի իւղ» բառից փոխառնալ է։ Սրա համեմատ* Lag. Arm. Stud. § *62* ախուցա *բառը հանում է արաբ.* الحناء al-hinnā *«հինայ» ձևից (համմ.* Pott, ZKM *7, 131,* ἀλχάν, ἀλχάννα*)։ Այս մեկնութիւնը ստոյգ չէ։ Ստոյգ մեկնութիւնը տալիս է Պատկանեանի լիշած ձևերից երրորդը. պրս.* اخون akhūn, *արաբ.* اقحوان aqhūn *«երիցուկ,* chamaemelum*», կամ արաբ.* احكونا axkūna "dactylus crudus" *(Խոր. աշխ. հրատ. Պատկ. էջ 57)։ Շեթայնշնայդերի մօտ՝* WZKM *11, 274, կայ արաբ.* اقحوان *որ տե՛ս վերը* աղխուցա *ձևի տակ։ Բառ. երեմ. յաւել. 565 ունի* ալգունա *«խոտ» բառը, որ տրիշ բան չի կարող լինել, եթե ոչ վերի* ալկուցա *ձևի տարբեր մէկ ընթերցուածը։*

Ախորթամար *«մի տեսակ հարկ». Նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Անիի անթուական մէկ արձանագրութեան մէջ (տե՛ս Վիմ. տար. 221)։*

***Ախտ**, ի հլ. *«հիւանդութիւն» Սգր. Ոսկ. մ. ա. 4. որից* ախտաբեկ *Ոսկ. Փիլ.* ախտաբեր *Կոչ.* ախտահալած *Ագաթ.* ախտաժէտ *Սգր.* ախտահանել *Սգր.* ժանտախտ *Ոսկ. յհ. բ. 11.* չարախտավոր *Ագաթ.* ախտացոյց *(նորագիւտ բառ) Անկ. գիրք առաք. 102.* ախտահաղ *«հիւանդութիւնները ջնջող» Սարգն. 65 (սխալ տպուած աղտահաղ). Նոր դրականի մէջ բաղմաթիւ բժշկական բառեր. ինչ.* բոխախտ, այտուցախտ, փեղձախտ, ճնդախտ, շաքարախտ, ծովախտ, շնախտ, շնախտաբոյժ, ախտանիշ, ախտաբան, ախտաբանական, ախտաբանութիւն, ախտահիանել, ախտահիանիչ, ախտահիանութիւն *են։ Հետևելով յն.* πάθος *բառին, ախտ նշանակում է նաև «կիրք, ներքին բերմունք, մոլութիւն» Սեբեր. ժղ. ղ. 2. Խոր. Փիլ. Նիւս. (այս իմաստով գործածական է յատկապէս նոր դրականում՝ իբրև առանձին բառ). որից* ախտակիր *Սարկ. Շար.* ախտակրիւ *Շար. Սարգ. Աթ. Համբ. Նար.* ախտակրցիլ *«կարեկցիլ, գթալ» Խոր. Լմբ.* ախտակրցութիւն *«գութ, կարեկցութիւն» Աթ. Ածաբ. Շնորհ.—Աթ ունի* ապախտ տեղիք *«արբազան վայրեր» բառը, որ* ապախտ *«ապերախտ» բառի հետ գործ չունի և կազմուած է* ախտ *բառից՝ ապ բացասականով։*

=պհլ. axt *«յոռի, տգեղ, հիւանդ, 2. գարշելիք, ապականութիւն», ղնդ.* axti *«աղտեղութիւն, հիւանդութիւն, ախտ» =սանս.* aktú*։ —Հիւբշ. 93։*

Ուղիղ մեկնց նախ Lag. Urgesch. Arm. *953։ Հիմնք. կատաղի բառից։*

Գիր.—Ախց. ախտ *«մոլութիւն, բարոյական պակասութիւն», Ակն.* ախդ, *Սեբ.* ախթ, *Զք.* օխդ, ոխդ *«վատ հիւանդութիւն»։*

***Ախտար**, ի–ա *հլ. «աստղ, բախտ, աստեղահմայ ժամագէտ» (միայն յոդնակի գործածուած) Եփր. արմաւ. 52. Շիր. Տօմար. գրում է նաև* աղթարի *՝ որ սխալ ձև է, ինչ. բաղդ՝ փոխանակ գրելու* բախտ։ *Սրանից են* ախտարակ *«բնախօս, փիլիսոփայ» Եա. քր. բ. 200. «բնութիւն» Փարպ.* յախտարակաց *«ի բնէ, բնականից» Ոսկ. Սեբեր. (գրուած ախտարակայ երգն. մտթ. 209),* վատախտարակ *«թշուառ, որ է չար աստղի տակ ծնած» Եղիշ. համմտ. Նաև* ախտարմոլ *և ապախտար բառերը։*

=պհլ. axtar *«կենդանակերպ, համաստեղութիւն», պրս.* اختر āxtar *«աստղ, բախտ»,* بداختر badāxtar *«չարաբախտ, վատախտարակ», պարսկերէն ձևի նախաձայնը կարող է հնչուել թէ՛* a *և թէ՛* ā*։— Հիւբշ. 93։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՆՀԲ, Spiegel BVS 5, 398 եև։

***ԱԽՏԱՐՄՈՂ**, *կամ նաև* **ախտարմող, ախտարմաղ, ախտարմախ, ի-ա** *հլ. «աստղերը դիտելով գուշակութիւն անող». երկու անգամ միայն գործածուած է. մին՝ Խոր. բ. 67 և միսը՝ Շիր. բոլորն էլ սխալ գրչութիւններ են և պէտք է ուղղել* **ախտարմար**:

= *պհլ.* axtarmār *«աստեղագէտ, աստղաբաշխ», որի հետ համմտ. պրս.* axtar-šumār, sitāra-šumār, *պհլ.* starušmar *և հյ. աստեղաճշմար. բոլորն էլ կազմուած* axtār, sitāra, *աստղ բառից և դնդ.* mar=*սանս.* smar, *պհլ.* ušmurtan, *պրս.* šumurdan=*հյ. ճշմարիտ բայից. նոյն արմատից է նաև հյ. ճշ-մար: Ուրիշն բուն իմաստն է «աստղերը հաշուող»։—Հիւրշ. 94։*

ՆՀԲ մոլեալ յախտարս: Ուղիղ մեկնեց նախ Պատկ. Матеріалы *1, 7։ Հիմնք.* **ախտար+մոդ**=*պրս.* mōγ *բառերից։*

Ախտապատին *տե՛ս* **Ակռաբադին**:

ԱԽՐԻՃԱՆ *«մի տեսակ անուշահոտ և գեղեցիկ ծաղիկ է» Մխ. առ. (4 անգամ յիշուած). ՀԲուս. § 35 ըստ Շէհրիմանեանի համարում է «լտ.* tropoelum, *ֆր.* capucine*» կոչուած ծաղիկը։*

ԱԽՐԻՃԱՆԱԿ *«կզմուխ բոյսը». ունի միայն ՀԲուս. § 3273, որ և աւելացնում է. «հին և ընտիր անուն... ո՞ւր և ուստի նախ յիշուած ըլլալն յայտնի չէ ինձ»։*

ԱԽՑԻՓԵԼՑ *կամ* **ախցիփելոց, աղցիփելոց** *«թուլամորթ, վարթով անկարգ» (հակաթոռ կաթուղիկոսների համար ասուած) Վրդն. պտմ. տպ. Վենետ. էջ 52։ Սրա հետ նոյն է* **ցղրեղ**, *տե՛ս առանձին։*

ՆՀԲ աղց բառից՝ կրկնութեամբ։ Այտընեան, Քնն. քեր. էջ 262 տճկ. abuqsubuq *հոմանիշից հայացեալ է համարում գտ.* **ափեղցփեղ** *ձևը, առանց անդրադառնալու* **ախցիփելոց** *բառի վրայ։ Ս. Մխիթարեան, Բիւրակն 1898, 789 հայերենից փոխառեալ է դնում էնգիւրիի բարբառում գործածական* apuksupuk, apursupur *ձևերը, որոնք ուղղակի թուրքերէնից են փոխառեալ։*

ԳԻՒ.—Առն. **ախցփէլոց** *(գրուած է* **աղցրեղոց**՝ *Արեւելք, 1888 նոյ. 8—9). Ջղ.* **ափեխցրփեխ, ափեխցրփելոց. Ախց. Երև. Ննխ. Պլ. Տփ. ափէխցփէխ, Ղրբ. ափէղցփէղ։**

+ԱԾԵԼ *(ածի, ած). առաջին և նախնական իմաստն է 1) «բերել», որից այլևայլ եղանակաւորումներով ծագում են հետևեալ երկրորդական նշանակութիւնները. 2) փոխադրել, վարել, տանիլ. 3) շարժել, հասցնել, վերածել. 4) յեղյեղել, ասել. 5) պատել, բոլորել, վրան կապել, հագնիլ, շինել. 6) լցնել, կաթեցնել. 7) զարնել (ապտակ, սուր եև). 8) կատարել, անել. 9) աւելացնել, յարել. 10) բռնել, ձերբակալել. 11) սիրտ՝ սէր շահիլ, յանկուցանել.—այս բոլորը հին և ընտիր են. յետնաբար ունինք նաև 12) կտրել, վիրաւել, սափրել. 13) բուսցնել. 14) նուագել. 15) ձու ածել։ Այս նշանակութիւնները ոսկեդարեան ածանցներում էլ գտնում են։—Այս բոլոր նշանակութիւնները իրար հետ անձուկ կապերով կապուած են. նման եղանակաւորումներ գտնում ենք նաև օտար լեզուների մէջ. ինչ. յն. ἄγω, բացի «բերել» նշանակութիւնից, նշանակում է նաև «փոխադրել, տանիլ, առաջնորդել, վարել, իրեն քաշել, յանկուցանել, յիշել, միտքը պահել, պատ քաշել, փոս՝ ջրանցք շինել եև», ἀγωγή «փոխադրութիւն, մատուցում, տանիլ, ջրի ագուցայ, մեթոդ, երդ, մեղեդի, ծիլ, ընձիւղ եև», լտ.* ago *«փոխադրել, տանիլ, վարել եև», պրս.* burdan *«տանիլ, խաղի մէջ յաղթել, անունը յիշել, ասել, ժամանակ անցկացնել եև», լտ.* agė *(հրամ.) «օ՛ն, աղէ՛, ասա՛, խօսի՛ր, գնա բանիդ եև», հյ.* **բերել** *«գրել, բուսցնել (որից* **բեր**), *համբերել, վարել, քշել», թրք.* getirmek *«բերել, բուսցնել, պտուղ տալ, ծնիլ եև», ռուս.* нести *«բերել, տանիլ, ձու ածել» եև.—***Ածել** *բայի այս նշանակութիւններից յառաջ են գալիս հետևեալ բառերը.* **առածիլ** *«պատուիլ, դառնալ» եզն. Ոսկ. ես. յածիլ «ման գալ» ՍԳր. նւս. քր. յածումն ՍԳր. Փարպ.* **ածանիլ** *«հագնիլ» Սղ. ղբ. 1.* **ած** *«ծիլ, ընձիւղ» Վեցօր. (տե՛ս Վարդանեան, Բառաքն. դիտ. բ. 10),* **ածու** *«պարտէզի մէջ հողի մշակուած փոքր բաժանմունքներ» Սիր. իդ. 41. Խոր.* **ածուեցի** *«ածուի մէջ բուսած» ԱՔ.* **ածելի** *«մազերը կտրելու, ածիլելու գործիք» ՍԳր.*

Ոսկ. ես. ածելել «մազը կտրել» *Յայսմ. (նոր գրականում* ածիլել*).* ա՛ծ «շո՛ւտ արա, բե՛ր ի մէջ, աղէ՛» *Թր. քեր. (Քրգմ. յն.* ἄγε *հոմանիշից).* ածողել «առնել տանիլ» *Մագ. և Երզն. քեր.* ածանցիլ *Երզն. և Թր. քեր.=յն.* παράγομαι *(որից նոր գրականում* ածանցիչ*),* առածանել, զառածանել «խաստրիլ, նղծանիլ, ապականիլ» *ՍԳր. Սերբր. Վեցօր. Ոսկ.* նուագածու *Դաւտ. ե. 11,* ծաղրածու *Ոսկ. մ. և Եփես.* զօսիածու *Դ. Թագ. գ. 21,* զօսեած *Ոսկ. ա. տիմ.* խնամածութիւն *Ոսկ. մ. ա. 13.* խոհիդածել *ՅՀ. իմ. ՅՃխ.* մտածել *Պիտ. Նար. և ուրիշ շատ ձևեր արդի գրականում, ինչ.* արտածել, վերածել, արտածութիւն, ներածութիւն *են։*

= *հնխ.* ag-[1] *արմատից, որի ներկայ առաջին դէմքն է* *ag¹ō. *համմտ. յն.* ἄγω, *լտ.* ago, *սանս.* ájāmi, *գնգ.* azāmi, *հպրս.* —aǰatā, *հհիւս.* aka, *հիտ. (ad)*—aig *են, բոլորն էլ «բերել, տանիլ, վարել» նշանակութեամբ։—Հիւբշ. 412 (տե՛ս* Pokorny I, 35 Boisacq II. Ernout-Meillet 23, Walde 21*)։*

*ՆՀԲ «*ած=*որպէս յն.* ἀγωγή*», իսկ տալիս բառի տակ* ածել=*լծ. յն.* ἄγω*, որ ուղիղ մեկնութիւնն է։ Ուղիղ մեկնեցին նաև* Windisch. 13, Gosche 21. *վերջինը բայի սանս.* aǰ=*հլ.* ածել՝ *համեմատութիւնից՝ դնում է նաև փռիւգ.* ἄζενον, ἄζενα «*մօրուս*»*, սանս.* aǰina «*կաշի, մորթ*»՝ *մեր* ածիլել *բառի հետ, որ* Lag. Arm. Stud. § 37 *մերժում է։ Հիւնք.* ածել «*բերել*»=*յն.* ἄγω*,* ածել «*կտրել*»=*պրս.* āzdan «*խթիել դաշոյնով՝ սանդուխ*»՝ *իբր տարբեր արմատ, իսկ* զառածանիլ՝ արածել-*ուց։* Karst, *Յուշարձ. 417* ածելի *դնում է թաթար.* aš, is, kaš, kas «*քերել*» *արմատի հետ։ Սանտալճեան, ՀԱ. 1913, 406 խալդ.* iziei «*երկիր*» *դնում է այս արմատի հետ։*

ԳԻՒ.— Տեղի տալով բերել *համանիշի առաջ՝ նոր բարբառներում սովորաբար պահուած է միայն «ճու ածել» նշանակութեամբ. այսպէս՝ Ջղ. Սլմ. Վն.* ածել, *Ախց. Գոր. Երև. Ղրբ. Մրղ.* ածէլ, *Շմ. Տփ.* ածիլ, *Ագլ.* ա՛ծիլ, նա՛ծիլ, *Ալշ. Հճ. Մշ. Սչ.* աձել, *Ակն. Կր. Նախ. Պլ. Սեբ.* աձէլ, *ՋԹ. Խրբ. Համշ.* ածիլ, *Ասլ.* աձէ՛լ, *Ոզմ.* բծէլ, *Մկ.* բծիլ, *Շտ.* ծել, *Ռ.* հաձէլ, *Տիգ.* հաձէլ։ *Ուրիշ նշանակութեամբ են Ագլ. Երև. Ղրբ. Շմ. Ջղ. Տփ. «ջուր լցնել, նուագել», Շտ. Ոզմ. «լցնել»։*—Ածու ձևն ունին *Ագլ. Վն.* ածու, *Ալշ.* աձու, *Ոզմ.* ա՛ծօ, *իսկ ՋԹ.* աձուկ *(սեռ.* աձվից*), Խրբ.* ածուկ, *Համշ.* աձուկ *և Կս.* աձվիկ «*բանջարանոց*»։ *ՆՀԲ և ՋԹ իրր դուռ. բառ ունին նաև* արծու, արծուն։—Ածելի *բառը պահած են Տփ.* ածիլի, *Համշ.* աձիլի, *Խրբ. Կր.* աձըլի, *Ասլ.* աձըլի, աձըլիւ, *Տիգ.* մձըլի, *Երև.* աձլի, առձըլի՛, *Նբ.* արձըլի, *Ալշ. Մշ.* արձըլի, *Ոզմ.* ա՛ռձըլէ՛, *Մրղ.* արձօլու, *Ագլ.* ձէ՛լի, *Գոր. Ղրբ. Շմ.* ծիլի. *իսկ Սչ. միայն բայը* աձըլել *(չկայ «ածելի»)։—Թրքախօս հայոց մէջ այս արմատից պահուած կայ Առն. մուզմունկ «մտածմունք»։—Նորակերտ դաւառական բառեր են՝* ածած, ածած-գցած, ածած-մածած, ածան, ածուկ *կամ* ածականց, ածամանց, ածելուկ, ածելքոյն, ածեր «*նորատունկ այգի*»*,* ածիկ, ածմծել, ածոց աենլ «*ջարդել*»*,* ածլել «*ցրտի կծելը մարդկանց երեսները*» *են։*

ՓՈԽ.—*Գւռ.* ածեր «*նորատունկ այգի*» *բառից է վրաց.* ხეხრի "лесокъ, кустарникъ" *(Ջուբինով² 498), իսկ* ածելի *բառից ուտ.* ծի՛լի *(որ և Ղրբ.* ծի՛լի*)։*

ԱԾՈՒԽ *(ո հլ. ըստ ՆՀԲ) «բոմուր» Ագաթ. որից* ածխակէզ «հրակէզ» *Արծր. բ. 1.* ածխանալ «*ածուխ կամ մոխիր դառնալ*» *Փիլ. յովն. 602 (ձեռ.* ածղանալ*). այս օրինականերում* ածուխ *նշանակում է «մոխիր կամ կրաքար» վերջին նշանակութեամբ պէտք է հասկանալ նաև Բուզ. Գ. ի. «Տեսէք ածուղ, որով երկաթ շողացուցուք... բերին ածուղ, որով խարէին զաչսն Տիրանայ»։* Ածուխ *բառը Ղեղ. ԺԸ. 8 գործածուած է «մուր»իմաստով. «Թխացան քան զածուխ տեսիլք իւրեանց (յն.* ἀσβόλην*, որ է մուր)»։ Նոր գրականում և բարբառներում գործածական է միայն «ածուխ» իմաստով, որից* ածխարար, ածխահան, ածխավաճառ, ածխավաճառանոց, բնածուխ, ած-

խահաճ, ածխաբբու, ածխակոյտ, ածխայինն են։ Բառի հնագոյն ձևն է ածուղ, ինչպէս կայ գործածուած չորս անգամ Բուզ. Գ. ի և այլուր. ղ ձայնը գտնուելով բառի վերջում և թերևս ազդուելով ծուխ բառից՝ դարձել է յետոյ խ. այսպէս է ընդունում նաև Հիւբշ. Die altarm. Ortsnamen, *395 ծան։*

Նախ Klaproth, Asia pol. *102 մեկնեց* աճ+ծուխ։

Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 206, էմին, Քեր. 1846, էջ 37, Բագրատունի, Զարդաց. էջ 672, § 1470, որից նաև Երեմեան, Բազմ. 1898, էջ 480, 545 մեկնում են ա բացառականով՝ ծուխ բառից, իբր ա-ծուխ (ծուխ չունեցող)։ Տէրվիշ. Նախալ. 60, 128, Müller WZKM *8, 361 ածս.* āṅgāra, *պրս.* angišt, *լիթ.* anglis, *հալ.* ąglĩ *«ածուխ» բառերին ցեղակից։ Այս մեկնութիւնը Հիւբշ. 412 սխալ է գտնում։ Թիրեաքեան, Պատկ. աշխ. գր. Ա. 191 պրս.* ءاز āzax *կամ* ءاژ āzaγ *«հօտեցնել այրելի ճիւղ որթոց»։ Նոյնը նաև Մէնէվիշ. ՀԱ 1896, 183 և 1897, 244, 248, որ մերժում է Հիւբշ., էջ XX ծան։ Մէնէվիշ. այնուհետև ՀԱ 1905, 347 համեմատում է* ածուղ= *ռուս.* уголь, *գերմ.* Kohle *«ածուխ», Հինք. ծաղիկ բառից։ Կուրտիկեան, Ճէրիտ. շարգ. № 3273 պրս.* ատուղաէ *«երտ»։* Pederien *ՀԱ 1905, 348 համեմատելով հալ. ռուս. անս. ձևերի հետ, աւելի հակամէտ է ընդունելու իբր= գերմ.* Kohle, *իտլ.* gual *«ածուղ»՝ ղ ձայնով, առանց կարենալու բացատրել խ ձայնը։ Ածուխ բառի պատմութիւնը արել է Կէտիկեան ՀԱ 1905, էջ 346—8։ Վերջին անգամ Թիրեաքեան, Արիահայ բռ. դրնում է պրս.* ءوسا āsūx *«չվառած, չեփած»։*

Գիհ.—Ռ. ածուխ, *Գոր. Ղրբ.* ա՛ճաուղ, *Հճ.* աճաղ, *Նբ.* աճախ, *Երև.* ա՛ճաօղ, *Շմ.* հաճաուղ, աճաղ *ձևն ունի արդէն էֆիմ. 258։ Նոր բառերն են* ածխաբանաճ, ածխակոր *«երտ»։*

Փոխ.—Լազ. ծոլա, մծոլա *«մուր», համմտ. վերը* ածուխ *«մուր». Նաև Պօլսահայ ծածկալեզուով մուր նշանակում է «ածուխ» (Ամատ. Արրտ. 1911, 419)։ Հյ.* ածուղ *ձևին նման է հնչում ուտ.* ծիլ *«վառ ածուխ, պողպ», որ փոխառութի՞ւն է արդեօք, քէ հին կովկասեան մի բառ։*

*ԱԿԱԴԵՄԻԱ *«գրագէտների, գիտունների և գեղարուեստագէտների կառոյց». Նոր բառ է, որից և* ակադեմական։

=յն. Ἀκαδήμεια կամ Ἀκαδημία. այս անունով էր կոչւում աթենացի հերոս Ἀκάδημος-ի պարտէզը՝ Աթէնքի մօտ. այս պարտէզումն էր ուսուցանում Պլատոնը, որից էլ պլատոնական փիլիսոփայական դպրոցը ստացաւ իր անունը. աւելի յետոյ ակադեմիա *բառը աւելի ընդհանուր նշանակութիւն ստացաւ, և տարածուեց բոլոր եւրոպական լեզուների մէջ։*

*ԱԿԱՀ *«տեղեակ» Ոսկ. մտթ. բ. 17. Գազ. ես. Սերեր. 171. Փիլ. լին. 203. Կնիք հաւ. 340. Երզն. մտթ. 351 (տպ. ակեահ). Մագ. ուտ. Անան. մոկ։*

=պրս. ءاگاه āgāh, *պազ.* āgāh, *պհլ.* ākās *«դիտուն, հմուտ». Ծագում են զնդ.* kas, *սանս.* kāç *«նայիլ, նկատել» արմատից. համմտ. նաև օսսեթ.* khaçun, khäçün, *թրք.* agʸah *«տեղեակ», չաղաթ.* agah *«ուշադիր»։—Հիւբշ. 94։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՆՀԲ, Müller SWAW *42, 250 են։*

Գիհ.—Մկ. Վն. ակախ *«արթուն». Նոր բառեր և ձևեր են* ակաճիլ *Շտ. Մկ. «Արթնանալ, ուշքի գալ, հասկանալ»,* ակահ չունիմ *«տեղեկութիւն չունիմ» (Ազգ. Հանդ. իդ. 142),* ակահ չտանիլ *Մկ. «քունը չտանիլ, չկարենալ քնել»,* ակահցնել *Շտ. «քնից արթնացնել»։*

ԱԿԱՂԶ. *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* ակաղձեալ *(գրուած նաև* ակրղձեալ*),* ակաղձուն *«լի, լեփ-լեցուն» Ոսկ. վեցօր. 130, 153. Պատմ. աղէքս. 154. Պետ.։*

Նշբ դնում է յեղց «լի» բառից (տե՛ս անդ. յեղց)։ Հինք. եկեղեցի-ից։

*ԱԿԱՄԱՅ, ի *հլ. «իր կամքին հակառակ, չուզենալով» ՍԳր. Ագաթ. Ոսկ., որից* ակամայացեալ *«ակամայ սխալած» Թուղց ժե 28.* յակամայց *(այժմ* ակամայից*) Փիլ.* ա-

կամայաբար *Ոսկ.* ակամայութիւն «բռնաբարութիւն» *Կանոն. Սարգ.*։

=պհլ. akāmak «անվճռական», պազ. akām «ակամայ», սանս. akāma «ակամայ, չուզելով». *Հայ բառը անշուշտ իրանեան փոխառութիւն է՝ ա բացասականի պատճառով. բնիկ հայ կերպարանքի տակ պիտի լինէր* անկամ։ *Տե՛ս և* կամ։—*Հիւրշ. 164։*

ՆՀԲ (կամայ բառի տակ) սանս. աkամա։ *Ուղիղ մեկնեցին* Spiegel, Gram. Huzv. *էջ 187 և* Lag. Arm. Stud. § *39։ ԳԻՒ.—Սեբ. Սչ.* ագամա «ակամայ», *իսկ Մկ.* ճոկոմմոկա «անակնկալ կերպով»։

Ական տե՛ս Ակն։

Ականատ տե՛ս Ակն։

ԱԿԱՆԴՈՒԿ «առած հանելու մի տեսակ խոտ» *Բժշ. գիտէ միայն ՀԲուս. § 38, որ և յաւել. էջ 675 առած է թէ «գըրուած է ևս* ակրենդուն, *որ գուցէ սխալ ըլլայ. բայց գրողն կ'իմացնէ՝ որ կաղնեան է»։ Նորայր, Բանաս. 1901, էջ 99 կարծում է թէ գուցէ լինի ֆրանս.* acanthe? *Շեթայնշնայդէրի հաւաքածոյում կայ արար* قنتيون acanthium *(WZKM 11, 274)։ Բայց թերևս ուղղելի է* ականդուկ, *որ տե՛ս* ականջ *բառի տակ։*

+ **ԱԿԱՆՋ** «լսելիք» *ՍԳր. հների մօտ գործածում է մի՛միայն իրրև յոգնակի* ունկն *բառի (հմմտ.* ակն—աչք), *ի-ա հլ. յետնաբար նաև եղակի և ի հլ. (ըստ այսմ Եղեկ. Գ. 10* կո՛ւր ականջովք բովք՝ *ուղղելի է* ականջօք, *սխալը յառաջացած է յաջորդ բառի ազդեցութեամբ)։ Այս բառից են կազմուած* ականջալուր «ականջովը լսած» *Բ. պետ. բ. 8. Կիւրղ. Ոսկ.* ականջատ «ականջը կտրած» *Ղեւտ. ին. 18, իր. 23.* ականջամուտ «մի տեսակ միջատ» *Կանոն.* ականջբռո «ականջի բլթակ» *Մխ. բժշ.* ականջկրկիր «ականջ խառնելու գործիք» *Վստկ. մեծականջ Խոր. աշխ. մկնականջ Գադիան.* ականջել «լսել, ականջ դնել» *Խոր. Գ. 65. Լծ. կոչ. որ և* շականջել *Փիլ. տես. 28,* շականջանել *Փիլ. ժ բան. 234. Խոսր. պատգ.* շականջանալ *Տօնակ.* սկանջել *կամ* սկանջել *Արշ. Հին բռ. (Բառ. երեմ. էջ 242 ունի* շականաճնել, շալականաճնել *ձևերով). ըստ Համբրոնացւոյ ձեռագրին և ըստ կրկին տպագրութեանց՝ Խոր. Գ. կև ունի* սականջել. *այսպէս նաև տպ. Տփղիսի 1913. ուրիշներ գնում են* ականջել։ *(Տե՛ս նաև Քննաւէր Նորայրի, Բ. էջ 53)։—Բոյսի անուններ են* ականջախոտ և ականջուկ *(ՀԲուս. § 39, 40). վերջինը գըրուած է նաև* ակնատակ, ակնեատուկ՝ *Սալաձորեցու մի քանի ձեռագրերում, որ ՀԲուս. § 45 տարբեր բառ է կարծում, իսկ Նորայր, Բանաս. 1901, էջ 99 աւելի հարազատ մի ձեռագրով ուղղելով* ականջուկ՝ *համապատասխան է դնում տճկ.* qulag otu *ձևին։*

=ունկն, ունկան *բառի երկակին է, ճիշտ ինչպէս աչք երկակին է* ակն *բառի. երկուսն էլ հին հայերէնի մէջ կորած երկակի թուի վերջին հետքերն են. սրա համար է որ թէ՛ աչք և թէ՛ ականջք չունին եզակի. եզակիներն են* ակն և ունկն։ *Զևապէս շատ այլափոխուած է* ականջք և *ստուգաբանօրէն դժուար բացատրելի. աղդուելով աչք բառից սա էլ ստացել է չ յաւելուածը, որ յետոյ զարձել է ջ՝ նախորդ ընդհականի պատճառաւ։*

Klaproth. Asia pol. *103, հյ.* ունկն, *լիզպ.* an, een, hanka *համանիշների հետ.* Windisch. *8 գնում է յն.* ἀκούω «լսել». *բառի հետ, որ մերժում է* Lag. Arm. Stud. *§ 41։ Տէրվ. Նախալ. 59* ունկն, *անգեղ բառերի հետ հնխ.* ak, ank «ծռիլ, կորանալ» *արմատից. հմմտ. սանս.* anč «ծռիլ», *յն.* ὄγκος «կոր, ճանկ», *լտ.* uncus, angulus։ *Հիւնք. կանչել բառից։* Patrubány SA *1, 188 յն.* ἀκούω, *իսկ ան և ջ մասնիկ. ինչ. վիպասա՛ն և անուր՛ջ։ Ուղիղ մեկնեց* Meillet ZAPh. *հտ. 1, էջ 147։ Զափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 85, ըստ Մատ մինգր.* კუჯი კուջի, *վրաց.* ყური ղ՛ուրի *համանիշների հետ։*

ԳԻՒ.—Մկ. Վն. ականջ, *Ոզմ.* ա՛գանջ, *Ակն.* ագօնջ *(յգ.* ագըժվի*), Երև. Խրբ. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* անգաջ, *Ախց.* անկաճ, *Մշ.* անգանջ, *Տփ.* անգաճ, *Ասլ.* ա՛գաչ, *Ալշ.* յանգաջ, *Նբ.* հանգաջ, *ՋՓ.* անգէչ, *Ագլ.* ան՛գուճ, *Հին Գղ.* ա՛նգ՛ուճ, *Տիգ. Հճ.* անգոջ. *Սլմ.* անգ՛աջ, *Մրղ.* անգ՛ուճ, *Ղրբ.* անգուճ, անջուգ, *Ջղ.* անգոճ, *Հւր. Շմ.* անգօջ, *Հմշ.* օնգօջ. *կան նաև*

բաղմաթիւ բարդութիւններ և ածանցներ, ինչ. ականջագիղ, ականջակոթ, ականջդմակ, ա-կանջարել *են, որոնց մասին տե՛ս Գւո. բառ.։*

ԱԿԱՌՆ «բերդ, ամրոց» Ա. մկ. Բ. 52, 53, ժ. 6. որից ակառաճ *(միայն սեռ.* ակառանց*) «բերդականները» Ա. մակ. ժդ. 7, Բ. մակ. ժե. 31. ուրիշ տեղ գործածուած չէ։*

= յն. ἄκρα «դղեակ» բառից, որից փոխառեալ են նաև ասոր. ʾaqrā, *արաբ.* عَقْر ʿaqr, عَاقِر ʿaqār *«կալուած», վրաց.* ակրա, ակարա *«սարաւանդ»։ Յոյն բառի իսկական նշանակութիւնն է «ծայր», յետոյ «գագաթ, լեռան բարձունք», որից էլ «դղեակ կամ բերդ». Համմ. նոյն արմատից* ἀκρόπολις *«միջնաբերդ, բուն՝ ծայրաքաղաք»։ Հայերէնի մէջ և վերջաւորութիւնը յօդ է. ինչ.* ձուկն, ջերմն *են։—Հիւբշ. 339։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։

ԱԿԱՍՏԱՆ *«ապահով տեղ կամ վիճակ». գործածուած է միայն յակաստանի ներգոյական հոլովով՝ Ոսկ. Սերմր. եղն։ Սխալ է մեկնում Բառ. երեմ. էջ 9 «ճանապարհ կամ կարգ» և էջ 218 «ի հաստատութեան»։*

ՆՀՒ ապաստան բառից? Թիրեաքեան, Պատկեր աշխ. գրակ. Ա. 192, պրս. اگستن agistan *կամ* اگشتن agištan *«յապահովի լինել» բառից, որ սակայն չունի ԳԴ։*

ԱԿԱՏ «Թանկագին բար է» Նլ. իր. 19, լԲ. 12. Եզեկ. իր 13. Ոսկիփ. յետնաբար ագաթէս, ագադէս *Տոմար. յակար Նորագիւտ Յայտ. իա. 20։*

= յն. ἀχάτης նոյն նշ., որ կարծւում է թէ իր անունը առացել է Սիկիլիոյ Ակաւէս գետից՝ ուր այս քարից շատ էր գտնւում (Բառ. Ս. գրոց, էջ 18)։ Յունարէնից փոխառեալ են նաև լտ. achates, *գերմ.* Achat, *ֆր.* agate *«ակատ»։ Հայերէնը պիտի լինէր ուղիղ տառադարձութեամբ *աճատ, բայց ճ-ի տեղ ունինք կ, ինչպէս որ ֆրանսերէն բառն էլ նման փոփոխութեամբ ունի g.—Հիւբշ. 339։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։

ԳԻՒ.—Կերևայ թէ այս բառն է Մշ. ակատ *«քարեգնդակ,* bille*», ճիշտ ինչպէս որ ֆրանսերէն էլ ասւում է* bille d'agate*։*

ԱԿԱՏ «մակոյկ, նաւակ». միայն Նար. կգ. էջ 161. ունինք նաև ակատիոն *Մ. Սոկր. էջ 318։ Տիրոյեան, Հանրագր. 310 ունի նաև* ակակ *ձևը՝ նոյն նշ.։*

= յն. ἀκάτιον, ἄκατος «թեթև. նաւակ», որից փոխառեալ է նաև լտ. acatium, acatus *նոյն նշ. Սոկրատի տուած ձևը (կարդա՛* ակատիոն*) յունարէնի ստրկական տառադարձութիւն է։—Հիւբշ. 339։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՒ և ՆՀՒ։

ԱԿԱՏ *«սակաւ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 9, որ և էջ 96 դնում է հյց.* զակատ *«զփոքր»։*

[ԱԿԱՐ *«պանրի, մոմի, մորթի մանրիկ որդ, բաշխ». գործածուած չէ հայ մատենագրութեան մէջ. կայ միայն* աճաղար *կամ* աճարար *«մանր որդ» Գաղիան. որ նմանեցնելով յն.* ἄκαρι, *լտ.* acari *հոմանիշներին, ուղղում է* ակար *ՆՀՒ, որին հետևում է նաև ԱՒ (Հիւբշ. 339 յիշում է զգուշութեամբ)։ Բայց աճալար շատ ուղիղ ձև է և այս սրբագրութիւնը անտեղի (տե՛ս* աճալար *բառի տակ). հետևաբար և* ակար *անգոյ ձևը ջնջելի է բառարանից։]*

**ԱԿԱՐ կամ* ԱԿԱՐՈՆ *«մի տեսակ խոտ, բաշխ կամ բաշխատակ, բաղշտակ». ունի միայն ՀՒուս. § 41։*

= յն. ἄκορος «հոտաւէտ մի բոյս է», ἄκορον «նոյնի արմատը», որից փոխառեալ են լտ. acorus, *ֆրանս.* acore, *մինչև անգամ Թոխար.* okaro. *Համմ. նաև* ակիր։

Ուղիղ մեկնեց ՀՒուս. § 41։

**ԱԿԱՔԹԱՂԻԿ «կառն (որ է փուշ) Գաղիան. ունի միայն Բառ. երեմ. յաւել. 579։*

= յն. ἄκανθα «փուշ» բառից աղաւաղ տառադարձութիւն. չգիտեմ թէ ի՛նչ Թիւրիմացութեամբ յառաջացած է վերջին վանկը։—Աճ.

**ԱԿԵՂԴԱՄԱՅ «արեան գիւղ». իբրև յատուկ անուն գործածուած է Գծ. ա. 19. «Մինչև կոչել գեղջն այնմիկ բարբառովն իւրեանց ակեղդամա, այսինքն է գեօղ արեան»։ Յայնաբար առնուելով նշանակում է նաև «գերեզման». «Եդին յակեղդամայ հարցն». Վրք. հց. ա. 626։*

= եբր. אֶקֶל aqel *«գիւղ» և* דָּם dām *«արիւն» բառերից. մեր բառը Ս. Գրքի Թարգ-*

մանուքեան ժամանակ յն. ἀκελδαμά ձևից է տառադարձուած։

Ուղիղ մեկնեց ՆՀՔ։

ԱԿԹԵՆ *«թերադարձ». ունի միայն Բառ. երեմ. էջ 9, որի հետ նոյն է* ագգեն *«թիւրադարձ»՝ անդ, էջ 5։ Անստոյգ և անյայտ բառ։*

***ԱԿԻԴԱՍ** *«ճճի մանր» Գաղիան. ունի միայն Բառ. երեմ. յաւել. 573։*

=յն. ὀκίφη,ης «մանր որդ» բառից այլափոխեալ տառադարձութեամբ. պէտք է կարդալ սկիփաս։— *Աճ.*

***ԱԿԻՇ, ի–ա** *հլ. «կեռ, երկաթի ճանկ՝ կրակ խառնելու համար են» Վստկ. 213. Յկ. ղրիմ. Յայտմ. սեպտ. 25 (գրծ.* աճղով*). բոլորն էլ յետին։*

=պրս. آگیش āgīš, *որ և* آکوژ ākūǰ *կամ* آکاژ ākaǰ *«ակիշ», որից փոխառեալ է նաև թրք.* egiš։

Նախ Lag. Ges. Abhd. *204 պրս.* ākaǰ, ākanǰ *ձևերի հետ, որ* Arm. Stud. *§ 6 սխալ է գտնում։ Ուղիղ մեկնեց Թիրեաքեան, Պատկեր աշխ. գր. Ա. 192, որից նաև Մէնէվիշ. ՀԱ 1896, 183 և 1897, 244։ Այս համեմատութիւնը մերժում է Հիւրշ. էջ XX ծան. չվստահելով պարսիկ ձևի ստուգութեան վրայ։ Սխալւում են Գաղանճեան, Պալեան և Մխիթարեան, երբ հնթադրում են թէ թրք.* eyiš, egiš *հոմանիշ ձևերը հայերէնից են փոխառեալ (տե՛ս Բիւրակն 1898, էջ 450, 712, 789 և Յուշարձ. 328). այս ձևերը ծագում են ուղղակի պարսկերէնից, նոյնիսկ թերևս մեր բառը թուրքերէնից լինի։ Սագրեան ՀԱ 1909, 335 (օղակ բառի հետ) և* Karst, *Յուշարձ. 402 (ագոյցf բառի հետ) կցում են սումեր.* ag', ak *«օղակ, կեռ» բառին։*

Գիւտ.—Ախց. երև. Ղրբ. ակիշ, Ալշ. Ասլ. Զթ. Խրբ. Կր. Հճ. Մշ. Ռ. Սեբ. ագիշ, Ակն. mգիշ, *Ագլ. ա՛կուշ, Նբ. ակիշ, Առն. էդիշ։ Նոր բառեր են ակիշբաթ կամ ակշաբաթ, բաբակիշ (Զղ. բաբակիշ, բաբակիժ), կեռակիշ, ակիշնոց, ակիշբռնիշ, ակիշեբես։*

***ԱԿԻՐ** *«բաղշտակ խոտը» Բժշ. ունին միայն ՀՀՔ և ՀԲուս. § 41. կայ նաև* էգիր, էկիր *ՀԲուս. § 733։*

=պրս. اگیر egir *կամ* agīr, *տճկ.* egir «acorum, calamus aromaticus» (Будаговъ, Срав, слов. I. *էջ 74)։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

Ակիր տե՛ս Սակուր։

ԱԿԻՒՐԱՓՕՌ. *նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Թղ. 204 «Որք զկնի նառեանն լիգոնի (պսակ) ակիւրրափաւեացն սփռղեն»։*

Այս մասին տե՛ս իմ Հայ. նոր բառեր, հտ. Բ։ Թուի յն. բառ ... φόρος «...կրող» ձևով։

ԱԿՂԹԻԼ. *անստոյգ բառ՝ առանց վկայութեան. ՀՀՔ մեկնում է «սկրտել, սահիլ», ՆՀՔ, ՋՔ և ԱՔ «կրթիլ» ըստ Հին բռ. նոյնպէս և Բառ. երեմ. էջ 9 «կրթիլ»։ Բոլորի աղբիւրն էլ նոյն է և տարբերութիւնը յառաջացած է նախաձայն ա աւելացնելով կամ պակասեցնելով։*

ԱԿՃԻՒ *տե՛ս* ԱՅԹԻՒ։

+ԱԿՆ, *ե հլ. սեռ.* ական, *գրծ.* ակամբ *յետնաբար նաև* ակին. *հոլովուած է յակին Մանդ. էջ 191. «Որպարս բժժանաց ի ձեռին և ի յակին և ի պարանոցի կապել».—«աչք» իմաստով հնների մօտ գործածւում է միայն եզակի. յոգնակին է աչք. երկրորդական նշանակութիւններով յոգնակին լինում է* ակուեք *(յետնաբար նաև* ակաեք*),* ակաց, ակուս, *(–*ակաս, յակաց, ակամբ*)։ Առաջին և հիմնական նշանակութիւնն է 1. «աչք» ՍԳր. Ագաթ. Եղն. մտնում է բազմաթիւ ոճերի մէջ. ինչ. յակն առկաեել «երևալ» Սեբեր. Ոսկ. մթ. յակն արկաեել «ցոյց տալ» Ա մակ. է. 3. զակն արկաեել «երես դարձնել» Ես. ծբ. 7. յակն առնուլ «սիրել» Սեբեր. Ագաթ. Բուզ. ակն ածել «պատկառիլ» ՍԳր. Ոսկ. մթ. «հոգ տանիլ» ՍԳր. ակն առնուլ «աշառել» ՍԳր. ակն դնել «աչք տնկել, ցանկանալ» ՍԳր. Բուզ. յակն գալ «երևալ» Բուզ. դ. 58. ակն տալ «նայիլ, դիտել» Եղիշ. յես. Լմբ. սղ. ընդ ակն խոցել «սիրտը կոտրել» Ոսկ. եփես. ըստ ակն անկաեել «աչքից անտես լինել» Բուզ. զակամբ գալ «աչքը մթնել» Ագաթ. Բուզ. առ ակաս դիպել «աչքին զարնել» Ագաթ. ընդ*

ակամբ հայիլ «վատ աչքով նայիլ» ՍԳր.։ Այս իմաստից ծագում են ակաճել «նկատել» Եզն. էջ 174 (ըստ նորագիւտ ձեռագրին), յակաճել «լաւ նայիլ» Սիր. ժէ. 31. զակաճել «դիտել» յոբ. իդ. 15. ակաճողիմ «աչք» Առակ. իգ. 29. ակաճատես «աչքով տեսած» ՍԳր. Կոչ. Ագաթ. ակաճառուր «նշանառուր, երեւելի» Փարպ. ականի «ոչ-կոյր, աչք ունեցող» Եւ. գ. 11. միականի ՍԳր. Բուզ. ակնկառոյց Բուզ. ակնճար Ոսկ. կող. ը. ակնածու «խնամարկող» Փիլ. ակնածութիւն պատկառանք» ՍԳր. ակնահաճոյ Ագաթ. ակնակապիճ Յոր. խ. 19. ակնարկել ՍԳր. Ագաթ. Ոսկ. ակրճղի «աչքի պինդ մաշկը» ՋՔ. ակնիտ «աչքի հիւանդութիւն գրաստներին» ՋՔ. ակնկոր Ոսկ. գիջակն Ոսկ. բ. Կոր. Կոչ. խայտակն Խոր. խոչրընդակն Դատ. ժա. 36. Եւագր. կոտրակնել Արծր. չարակն ՍԳր. Ոսկ. (տե՛ս նաև Առակ). Նոր գրականում կազմուած բառերից ակնապիշ, ակնաբոյժ, ակնաբուժական, ակնդէտ, ակնոց, ակնոցաւոր, ակնոցավաճառ են։ Այս առաջին և հիմնական նշանակութիւնից բխում են հետևեալ երկրորդական նշանակութիւնները. 2. Ակն «յոյս» Ոսկ. ա. Թես. և Ես. որից ակն ունել «յուսալ, սպասել» ՍԳր. Կոչ. Եզն. ակնկալութիւն ՍԳր. Եզն. Ագաթ. անակնկալ Մանդ. Պիտ. Նար. ևն. 3. Ակն «փոս, ծակ». ինչ. ակն ուղականի Ոսկ. Ես. ժա. ակն տապարի Նպիտ. խշ. ակն գերեզմանի Պիտ. որից ակնբացել «արտի մէջ փոսեր բանալ» Վստկ. ակնհատութիւն (ամուսնութեան) «դատաճանութիւն». Ոսկ. ա. Թես. այս իմաստով աւելի սովորական է ակաճ «փոս, ծակ», որ արմատական ձևով գործածուած է համարւում մէկ անգամ Եւ. իբ. 2. «եթէ յական գտանիցի գող և խոցեալ մեռցի, չէ այն նմա ի սպանութիւն» (յն. ἐν τῷ διορύγματι). բոլոր բառարանները այստեղ յական համարում են նախդրիւ հայցական և դնում են ուղ. ական. սակայն տեղից երևում է, որ ներգոյական է, ուստի և ուղղականն է պարզապես ակն: Ուրիմն ական անկախ ձևով գործածուած չէ։ Սակայն շատ սովորական ոճ է ական հատանել «փոս փորել, պատ ծակել» ՍԳր. Ոսկ. մթ. ածանցման մէջ ունինք ականահատ «գերեզմանակրկիտ» Ոսկ. յհ. բ. 39. ականամոմ «մի տեսակ մոմ, որով մեղուները փեթակի մուտքն են փակում» Եզն. (գտ. ակնմոմ). ականոց «անուի գունտի ծակը՝ ուր լիսեռն է մտնում» Երզն. քեր. ական հատանել «ճի վրայից կազմուած է ականատ «մկան և ուրիշ կենդանիների թակարդ» Եփր. Ոսկիփ. Վրք. Հց. որ և ոմկ. ակնատ Ջևնոր, էջ 29, իբր ականահատ>ականատ. Համմ. փողահար>փողար, ծխահան>ծխան, ականջահատ>ականջատ. Համմ. նաև տակը ԳԻՒ. Նոր գրականում ականահատ, ականահատ են նոյն ծագումից են։ 4. Ակն «աղբիւրի բխած տեղը, ջրի աչք» ՍԳր. Ագաթ. Վեցօր. Եզն. որից աղբերակն ՍԳր. Ոսկ. ես. կամ ակնաղբիւր Ագաթ. ակնավճիտ Արծր.։ 5. Ակն «որթի կամ ծառի աչք» Վստկ. որ և կոչւում է ակնուտ Վստկ.։ 6. Ակն «խաչի թևերի միջին կէտը» Մաշտ.։ 7. Ակն «գոհար, բանկագին քար» ՍԳր. որից ականակապ «գոհարազարդ» ՍԳր. Ղեւիշ. ականակերպ «գոհարի պէս» Ագաթ. ակն վաճի Ղեկ. ա. 22. վաճակն Վեցօր. ականակիտ «պայծառ (ջուր կամ քար)» Փարպ. Խոր. ակնագործ Ել. իր. 9. 11. ականագոյն «գոհարի գոյնով» Ոսկ. Ես. բիւրակնեայ Ճառընտ. ոսկեակն Ել. լթ. 13. ակնավաճառ (նոր դրականի մէջ) են։ 8. Ակն «ծովի ժժման» Բրս. բնչեղ.։ 9. Ակն «չափ» Սասն. 33 (համմ. մէկ աչքով նայիլ)։—Այլևայլ դարձուածներով ասւում է ակն առնու (որից և արեգակն. համմ. պրս. čašma-i-āfitāb), ակն չինուածոյ, ակն լուսոյ, ակն տունչեան են. յականէ «բուն անունով» Ես. բ. 14, Փարպ. առ ականէ «առ երեսս» Եփես. գ. 6. Կող. գ. 22 (ինչ. յն. ὀφθαλμοδουλείᾳ «առ ականէ ծառայութիւն»)։

=հնխ. ôki, սնս. oknós, երկակի ուղ. okí «աչք». համմ. հալ. oko, երկ. oči, ռուս. око, очи, լիթ. akìs, լտ. oculus, յն. ὄμμα (=*ὀπ-μα) «աչք», համեր. ὤπα «երես, դէմք», ὤψ «աչք», πρόσ-ωπον «կերպարանք», ὄσσε=*okye=*okie «երկու աչք». համմ. դարձեալ սանս. ākši, գնգ. aši «աչք», axš, հպրս. axš «նայիլ», պհլ. aš, թոխար. açāṃ, քուչ. eçane «երկու աչքերը», գնչ. aki, aok,

yak, yaok, *գոթ.* ahjan, augo, *գերմ.* Auge, *անգլ.* eye «*աչք*» *ևն. տե՛ս* Pokorny *1, 169—172*՝ *հնխ.* oqw—«*տեսնել*» *արմատի տակ,* Boisacq *722,* Walde *536,* Ernout-Meillet *663—4,* Trautmann *4. հմմտ. նաև կամխ.* tunakalas «*արեգակ*», tunnakeššar «*արև*», *որի մեջ* ak=*հլ.* ակն «*աչք*» *բառն է, որից և ունինք հլ.* արեգակն «*արևի աչքը*», *իսկ* akalas=*լտ.* oculus «*աչք*» (Meillet, BSL *34, № 102, էջ 131—2*)։ *Այս բոլորը պատկանում են նոյն արմատին. բայց նրանք ձայնափոխ իրար միացնելը դժուար է։ Սրա պատճառը* Meillet, Interdiction de vocabulaire, *էջ 16, վերագրում է մի հին թաբուի, որով «աչք» բառը բերան առնել արգիլուած էր։ Այս նախապաշարմունքը կայ այժմ էլ Մալայեան կղզիներից մէկում։ Սրա համար է որ իսլանդերէնը և պարսկերէնը չունին աչի հասարակաց բառը և նրա տեղ գործածում են՝ առաջինը* súil, *որ նշանակում է բուն «արեգակ» և երկրորդը* čašm, *որ Ավեստայում նշանակում է բարի արարածների աչքը։ Սրա համար է նոյնպէս, որ գերմ.* Auge, *գոթ.* augo *այնպէս են հեռացել նախատիպից, որ այլևս անճանաչելի են դարձել, թերևս նմանահնչիւն մի բառի վրայ կաղապարուելով։ Հայ.* ակն, ական<*oknós, *իսկ* *óki>ակ, *պահուած է միայն առակ (առւակ) բառի մէջ. հնխ. երկակի* okí *ձևի յաջորդն է աչ, որ նախապէս երկակի էր՝ իբր յն.* ὄσσε *և սանս.* akši *և յետոյ առացաւ f յոգնակերտ նշանը (*Meillet ZAPh. *1, 147*)։ Ակն *բառի դանազան առումները ունին նաև ուրիշ լեզուներ. հմմտ. յն.* ὀπή *(նոյն* ὀπ- *արմատից, որից* ὄψομαι «*նայիլ*») «*ծակ, բացուածք*», πολυωπός «*բազմաթիւ ծակերով (ուռկան)*» *(հմմտ. Ոսկ. ակն ուռկանի ղջուր ո՛չ արգելու). հսլ.* okno «*պատուհան*», *լիթ.* ākas «*սոխոյցի վրայ ծակ*», *ռուս.* очко «*ակն (մարդու և ծառի)*», *պրս.* چشم čašm «*աչք*», ḥ چشمه čašma=*պհլ.* čašmak «*աղբիւր*», *անգլ.* gem «*ակն մատանիի, ծառի*», *գերմ.* Auge «*աչք, ակնուռ, հացի կամ պանրի մէջ ծակ*», *ֆրանս.* oeil «*մարդու աչք, ադամանդի փայլ, մուրճի կամ ասեղի ծակ, ծառի ակնուռ, հացի՝ պանրի կամ արգանակի մէջ գտնուած ծակերը*». *Նոյնը նաև ոչ-հնդևրոպական լեզուներում. ինչ. թրք.* göz «*աչք, ծակ, փոս, ակնուռ, աղբիւր*», *վրաց* ɓvali «*աչք, ակունք, քարեղէն*», *լազ.* ɓoli «*աչք*», gw'rɓoli «*աղբերակն*», *արաբ.* عين ʿayn «*աչք, աղբիւր, գոհար*», *երր.* עַיִן ʿayin, *ասուր.* ēnu «*աչք, աղբերակն*»։—*Հիւբշ. 413։*

Ակն *բառի ուղիղ համեմատութիւնը առաջին անգամ տուեց* Klaproth, Mémoires *1, 428,* Asia pol. *հմմտ. սլ.* oko, *գերմ.* Auge, *սանս.* akša, *իսկ «ջրի ակունք» իմաստով՝ էջ 104 արաբ.* عين ʿayn: Autran, Sumérien et indo-eur. *էջ 87 սումեր.* ug «*տեսնել*» *բառի հետ։ Ն2Բ տե՛ս* աչ։ *Ուղիղ են նոյնպէս* Petermann *25, 26,* Windisch. *8 ևն։ Սարգիսեան, Ագաթ. և իր բազմ. գաղտ. (1890), էջ 140 սնս.* agni «*կրակ*» *բառից է հանում* ակն *արևու, վահագն, ակն Վանի ևն։ Հիւնք. էջ 169* ակն «*աչք*» <յագ «*կուշտ*» *բառից, էջ 250* ակն «*գոհար, աղբիւր*»< *յն.* ἰάχινθος «*յակինթ*» *բառից։ Արշէզ ՀԱ 1896, 268 երր.* ʿayin «*աչք*» *բառից։ Գեանջեցեան* ZAPh *1, 37* ակընդի *բառի մէջ* դի=*սանս.* dhāya «*շարք, դիրք*»։— Ական «*փոս*» *բառը Ն2Բ գնում է* ակն «*աչք*» *բառից։* Lag. Ges. Abhnd. *298 սանս.* khan *և գնդ.* kan «*փորել*» *բառերի հետ։ Հիւնք. 250* ակն «*գոհար*» *բառից, իսկ էջ 251՝ պրս.* اگنان agnān «*փորուածք, խոռոչ*» *բառից։ Հիւբշ.* Arm. Gr. *413 կասկածում է, մերթ հայերէն ա մասնիկ համարելով (հմմտ. սանս.* ākhana-, ākhanika-«*գող, խոզ, մուկ*», *այսինքն «փորող») և մերթ ական իրանեան փոխառութիւն համարելով, իբր հպրս.* *ākana-; *հմմտ. գնդ.* avakana- «*փոս*», hankana- «*գետնափոր հիւղ*», *սանս.* ākhana-։ *Ուղիղ մեկնեց նախ* Pedersen KZ *36, 100, որ ընդունեց Հիւբշ.* IF Anz. *հտ. 10, 44։*

Գիմ.—Ակն «*աչք*» *բառն ունին Ագլ.* օ՛կըն «*աչք*», ըկնըծօ՛կ «*աչքածակ, ագահ*», ըկնա՛-

ցօվ «աչքի ցաւ», Ղրբ. ա՛կը (կամ ա՛կնը) տալ «այցելել, նայիլ, աչքից անցկացնել», Սլմ. ակդ կուրնա՛ «աչքդ կուրանա՛յ» անէծքի մէջ միայն։ —2. Ակն «ջրի ակունք» ունին Ղրբ. Շմ. ա՛կնը, Երև. Մկ. Մշ. Վն. ակ: Ոզմ. նախը՛րակ, Ալշ. Ակն. Խրբ. Կր. Հմշ. Սեբ. ագ, Ասլ. ա*, ագ, Տիգ. mգ, Ագլ. օ՛կրն, Հճ. օգ:— 3. Ակն «մատանիի քար» ունին Ջղ. Վն. ակն, Ղրբ. Շմ. ա՛կնը, Ոզմ. ագ, ագնուի՛, Տփ. ակը, Ագլ. օ՛կրն, Երև. Մկ. Մշ. ակ. Ալշ. Ակն. Խրբ. Կր. Ննխ. Սեբ. ագ, Տիգ. mգ, Հճ. օգ։—Գաւառականների մէջ ակն բառը մի քանի նոր առումներով էլ հարստացած է. ինչ. «ջաղացքի անցք, թոնրի ծակ, ուրագի ծակը, փեթակի դուռ, սայլի անիւ (համմտ. գրաբ. ակն), ապուրի հատ»։ Նոր բառեր են ակնակալ, ակնանակոյր, ակաւնել, ական անել, ական ական անել, ական բօթափելի, ականփարատիկ, ակնահան, ակնառիլ, ակնառտիկ, ակնավառիչ, ակնաւեր, ակնամճեճ, ակնդել, ակնիկ, ակներ, ակնկապ, ակնփոռ:—Ականատ բառի գաւառական ձևերն են՝ Մշ. Վն. ակնատ, Ոզմ. նագրնադ, Տփ. ականաք՝ հին վկայութիւնն ունի Մոլութ. 271 բ. «Որպէս ականաքն լի թռչնովք», կականաք, կա՛նաք («Հաթաբալա» 1911, էջ 6). իսկ Ղրբ. կա՛նատ «թռչուն որսալու ցանց», Մրդ. ականատ, Սլմ. ակնատ «պատի մէջ բացուած դարան», Նր. ագնատ «սեննակից սեննակ բացուած փոքր պատուհան»։ Այս նշանակութիւններից ոմանք աւելի են հաստատում ականատ բառի ստուգաբանութիւնը՝ իբր ական նատանել:—Ականամում <Սվեդ. այմիմ:

Փոխ.—Bugge IF 5, 168—180. Բրգմ. ՀՄ 1895, 230 հայերէնից փոխառեալ է համարում գոթ. anaks «յանկարծ» Ղկ. բ. 13, թ. 39, Մրկ. թ. 8 (յն. ἐξαίφνης, ἐξάπινα): Գերմանական լեզուներում սրան համապատասխան բառ չկայ. Leo Meyer մեկնել է վեդ. añjas «արագ, յանկարծ» բառով, բայց Bugge մերժում է՝ իր կարծիքով բառը կազմուած է հյ. ան բացասական մասնիկով և ակն «յոյս» բառով, իբր «անակնունելի». ակն բառի և յանդը ջնջուած է գոթ. բառի մէջ, որովհետև ժողովրդական հայերէնից է առնուած. -s մակբայակերտ է, ինչպէս յաճախ գոթացերէնն էլ ճանաչում է մակբայակերտ s։—Հայերէնից զուտ փոխառութիւն է վրաց. ականաթի «թռչուն որսալու ցանց». այս նշանակութեան համար համմտ. Ղրբ. կա՛նատ։—Պատահական նմանութիւն միայն ունին կովկասեան լեզուներից ուտ. ափսուն «դիտել, տեսնել», ավեստեսուն «ցոյց տալ», ռուտ. ագուն «ականել»։

Գիր. ակնիկ «ձուածեղ» բառից է ըստ իս բուշ. ակնիկ «ձուածեղ» (Finck, Die Spr. d. arm. Lig. ЗАН 1907, էջ 105)։

Ակնեալ «հպարտ, յոխորտ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Եպիփ. Բաղ. էջ 235 «եկն ամենիմաստն (Յովսէփ արիմաթացին) մերձեցեալ աղերսանօք, թէ ո՛րպէս փափագանաց ցանկութեան իւրում հասցէ. զի ոչ մերձեցաւ ակնեալ և մեծարանօք («մեծամտութեամբ») վասն Քրիստոսի բանս ասել, զի մի ի բարկութիւն զնա ածեալ բորբոքեսցէ... այլ խնդիրս ինչ փոքր ունիմ ի քէն, ո՛վ դատաւոր...»։

Ակնեատակ տե՛ս Ականջ։

***Ականոթ** «ուղեկից, հետևորդ, օգնական, ծառայ». Նորագիւտ բառ, որ երեք անգամ գործածուած եմ գտնում յետին մատենագրութեան մէջ «Ու լուեալ զայս թագաւորն Միխայլ... առաքեաց ի Սեբաստիա զակոդոսն իւր հնգետասան հազարօք՝ բնրեալ զնոսա առ իւր, զի մի՛ փախիցեն. և հասանէր ակոդոսն զօրօքն ի Սեբաստիա ... և տեսեալ ակոդոսն զիմաստութիւնն». Ուռհ. 83. նոյն բառը գրուած է ակալուր Սմբ. պատ. 56 «Հաւատաց թագաւորն և յղեց ի Սևաստ զակալուրն իւր հնգետասան հազար հեծելով»։—Այս բոլոր օրինակներից երևում է, որ ակոդոսր բիւզանդական զինուորական մի մեծ պետ էր։

=յն. ἀκόλουθος ըստ Sophocles 106 նշ. «the captain of the emperor's booly —guard», որ է «կայսերական թիկնապահապետ»։

Տե՛ս իմ Հայ նոր բառեր հին մատ. Ա. 188։

***Ականիտոն**, գրուած նաև ակոնիտով.

աճկոճիտով՝ «մի տեսակ թունաւոր խոտ» Վեցօր. 88։

=յն. ἀκόνιτον, լտ. aconitum, ֆրանս. aconit նոյն նշ.։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ։

ԱԿՈՒԲ «կերակուր եփելու վառարան». մի մի անգամ գործածուած է Վրդն. եւ. Կանոն և Յայտմ. ապր. 23 (էատ պիս յակուբէ անտի)։

Գիմ.—Ջղ. աfուք «վառարան, օջաղ»։ Բառ. երեմ. էջ. 140 ակուբ ձեռվ յիշում է խառոյկ բառի բացատրութեան մէջ. որից երեւում է որ իր ժամանակ բառը յայտնի և սովորական ձեւ էր։ Փամբակ՝ ակուբ «փոքրիկ թոնիր, որի վրայ կերակուր են եփում, հաց թխում կամ քուրսի դնում» (հաղորդեց Ստ. Զօրեան). նոյնը նաև Շամախի (տե՛ս Շիրվանզագէ, «Քաոս»)։

Փոխ.—Վրաց. ակուբա «խոհանոցի փուռ, վառարան»։ Վրացերէնում այս բառը ստուգաբանուած չէ և Ջուբինովը համարում է հայերէնից փոխառեալ։

ԱԿՈՒՄԲ, ի հլ. «սեղան, բազմական» Բուզ. դ. 4. «հանդիսականների խումբ կամ բազմութիւն» Եղիշ. Շնորհ. Նար. որից ակումբ առնուլ «խումբ կազմել» Լմբ. ակումբ մաշկեայ «մինդար, վրան նստելու փոսթ, մորթի» Յուդիթ ժբ. 15. ակմբաճոյլ Բէռդ. խշ. ակմբիլ «հաւաքուիլ» Եղիշ. խր. եռակմբանոց «երեք բազմոցով ճաշասեղան կամ սեղանատուն (ըստ հռովմէական սովորութեան), triclinium» Փիլ. տեսակ. բազմակմբանոց «շատ բազմոցներով կամ նստարաններով սեղանատուն» Աբ։ Բառի հիմնական նշանակութիւնն է «նստիլ», որ սակայն գործածուած չէ. ակումբ մաշկեայ այն մաշկի կամ մորթի կտորն է, որի վրայ նստում էին (ինչպէս հիմայ մահմեդականները՝ աղօթելու ժամանակ). ակումբ «ժողով. բազմութիւն» բառի համար հմմտ. ֆրանս. séance (seoir «նստիլ» բայից), ռուս. засыданіе (сидыть «նստիլ» բայից), հյ. նիստ (ժողովի), նիստ գումարուիլ, նստից բացակայիլ են։ Նոր գրականում ակումբ նշանակում է «կլուբ» (օր. գրական ակումբ, Հայոց ակումբ են), որի փոխարէն գործածւում է նաև ակմբանոց։

Müller, Armen. *VI լտ.* cubo, cumbo «ընկողմանիլ», յն. κύπτω «ծռիլ, հակիլ» բառերին ցեղակից։ Հիւնք. ումպ, ըմպել բառից։ Գաղանճեան, Արև. մամուլ 1902, 74 ա մասնիկով խումբ բառից։ Ուղուրիկեան, Ամէն. տարեց. 1909, էջ 228 լտ. accubare, accumbere «բազմիլ, ընկողմանիլ» բառից փոխառեալ։—Նոակմբանոց և բազմակմբանոց բառերը Աբ կարծած է ըմպել արմատից և ըստ այսմ գրում է եռակըմպանոց, բազմակըմպանոց «իրեք կամ շատ նըստարանով տեղ՝ ուտելու, խմելու». սխալը ուղղում է նախ Նորայր, Բառ. ֆրանս. (triclinium), յետոյ Թէոդիկ և վերջին անգամ մանրամասն՝ Ուղուրիկեան, Ամէն. տարեց. 1909, էջ 226—8։

Գիմ.—Մն. Ննխ. Պլ. Սեբ. ագամ or, *Ատն. Սվ.* ագամ or, *Զթ.* ագան or «եկեղեցական մեծ ծոնի հանդիսաւոր օր»։

Փոխ.—Վրաց. ակումի «ժողովուրդ, բազմութիւն. դէզ, կոյտ, խումբ». մարգալիտիս ակումի «մարգարտի շարք». ը-ի համար հմմտ. պատշգամ–պատշգամբ, սալամ (*Քրդ.*)—սալամբ, եւն։

*ԱԿՈՒՄԻՏ «կրօնաւորական մի տիտղոս է» Կորիւն. Խոր. Գ. 57. դրուած ակիւմիա Վրք. Հց. *Ժդ*։

=յն. ἀκοίμητος, որ նշանակում է բուն «անքուն, տքնող, չքնող» և միանձանց կարգի անուն է։—Հիւրշ. 339։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

Ակունդ տե՛ս Յակինթ։

ԱԿՈՒՐ «բրիչ, ֆր. pic». ունի միայն Քաջունի. Հա. բ. էջ 329, որից Տիրոյեան, Հանրագրութ. 311, 353։ Քաջունին տալիս է նաև բառիս համար երկու վկայութիւն՝ ի ներքուստ ակրովք և կացաւոր մրճովք փորելով. փորէ բահիւ կամ ակրով։ Աշխ. խղ(?)։ Այս բառը նոյն է ակիր հոմանիշի հետ, որ Խոր. Գ. 28 սակրօf բառի սխալ ընթերցուածից է յառաջացած (տե՛ս անդ)։ Բայց Քաջունու երկու նոր վկայութիւնները գալիս են հաստատելու սխալ և անգոյ համարուած բառիս գոյութիւնը. դժբախտաբար չի հասկացւում, թէ «Աշխ.» ասելով ի՞նչ աղբիւր է հասկանում։

*ԱԿՏԱՐ «սղագրող կամ քարտուղար». մէկ

անգամ ունի Մխ. գտ. էջ 268. նույնը ակտար *ձևով Վրք. և վկ. հտ. բ. էջ 254։*

=լտ. actarius *«տեսրակ բռնող, հաշուապահ» կամ* actuarius *«սղագրող քարտուղար»։ Ուղիղ մեկնեց նախ Վարքի հրտր. (անգ, ծանօթ.), յետոյ Բաստամեան, Մխ. գտ. ծան.,* Karst, *Դտսան. II 80։*

ԱԿՏՈՆ *«մի տեսակ ծառի ծաղիկ». ունի միայն ՓԲ, առանց վկայութեան. Նորայր, Բառ. ֆր. 641 բ յիշում է իբրև նորակերտ բառ. չունի ՀԲուս։ Բառիս վրայ մի քննութիւն ունի Ուղուրլեկեան (Մասիս 1881, նոյ" 23), որ համարում է «*sambucus ebulus, *տճկ.* yer mürveri», *որ և բառ Նորայր, ֆր.* hiéble, *վայրի թանթրուենի։*

***ԱԿՐԱԲԱԴԻՆ** *«բժշկարան, դեղերի դիրք,* pharmacopée» *Մխ. բժշ. 126, աւելի ուշ* ախրապատին *Ամիրտ.։*

=արաբ. اقرابادين aqrābāḏīn *նոյն նշ. որ յն.* γραφίδιον *«գրքուկ» բառն է, ասորերէնի միջոցով անցած արաբերէնի։*

Ուղիղ մեկնեց նախ Seidel *§ 248, որից յետոյ* Basmadjian JAS, *1915(5), էջ 384։*

ԱԿՐԱՍ *«դեղերի զանգուած,* pastille». *ունի Գաբ. բառ. իբր արաբերէն բառ։ Գիտէ նաև Քաջունի, հտ. գ. էջ 5 բ։*

*** ԱԿՐԿԱՐՀԱՅ** *«մի տեսակ խոտ է, բողի տակ,* pyrethrum» *Մխ. բժ. որ և* ակիկաւրայ *Գաղիան. (բստ Բառ. երիմ. յաւել. 573), այլ ձ.* ակիրկաւրիա, ախրկաւրիա։ *Ընդարձակ նկարագիրը տե՛ս* Seidel, *Մխ. հնր. § 238։*

=արաբ. عاقرقرحا ʿāqir qarḥā *(տե՛ս Շեայնշնայդէրի հատուածոյի մէջ՝* WZKM *12, 217). բստ Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 550 ակրկարհան վայրի Բարխունի արմատն է. արաբ բառն էլ փոխառեալ է ասոր.* ܥܩܪ ܩܪܚܐ ʿeqār qarxā *«*anthemis pyrethrum*» բառից (*Brock. Lex. syr. *259 ա), որի բուն նշանակութիւնն է «արմատ, ծաղիկ»։—Հիւբշ. 262։*

ՆՀԲ արաբ. էօսրլ գահր։ *Ուղիղ մեկնեց* Lag. Arm. St. *§ 44։*

***ԱԿՔԱՆ** *«մի տեսակ փուշ,* chardon». *դործածուած է Դ. Բազ. ժգ. 9. «Ակքան ի Լիբանանէ յղեաց առ եղևնափայտն... և կոխեցին զակքանն»։ Նոյն բառը մէկ անգամ* nfnq *հոմանիշով և մէկ անգամ էլ* եկխան *ձևով ունի Բ. մնաց. իե 18 «Ոքոզն որ ի Լիբանան է, յղեաց առ մայրան... և եկեալ կոխեցին զամենայն ղեկքանն» Նորագիւտը երկու պարագային էլ գնում է դժնիկ. «Դժնիկ որ Լիբանան լերին է, առաքեաց առ մայրան Լիբանանու ... և եկին գազանքն կոխան արարին և սատակեցին զդժնիկն»։ Այս համեմատութիւններից հետևում է, թէ* ակխան, եկխան, դժնիկ *և* nfnq *հոմանիշ են։ Կիւրղ. Թգ. և Վանակ. վրդ. մեկնելով այս բառը գրում են. «Ակքանն բանջար ինչ է... Ակքանն մանր թուփ է» են։ Արևմտեան գրականում՝* եկխան *«փուշ,* chardon» *ձևի վրայ հիմնուելով կազմուած է* եկխանիկ *(թռչունը)՝ թարգմանաբար ֆրանս.* chardonneret *հոմանիշից։*

=երբ. յն. և հայերէն սխալ ընթերցուածներից յառաջացած մի բառ է։ Ս. Գրքի հերրայական բնագրում 4 տեղումն էլ գրուած է חַחוּח haxux, *որի ուղղականն է* חָוּחַ xux *«մի տեսակ հասատ և ուժեղ ուղտափուշ,* chardon, *լտ.* notobasis syriaca L.»։ *Յոյն թարգմանութեան մէջ երբ. բառի դէմ գրուած է առաջին և երկրորդ անգամ* ἄχαν, *երրորդ անգամ* ἀχχουχ *(այլ ձևս. οχοζ) և չորրորդ անգամ* ἀχχουχ *(այլ ձ.* αχουχ*)։ Յունարէնում այսպիսի բառեր չկան, ուստի յայտնի է, որ երբ.* haxux *բառի տառադարձութիւններն են։ Ուրեմն ուղիղ ձևն է* ἀχουχ*, միւսները այլափոխեալ։ Իրօք էլ յունարէնի մէջ կայ* ἄχανθα *«փուշ» բառը, որի պատահական նմանութիւնը թելադրել է գրիչներին* ἀχουχ *ձևը դարձնել վերջապէս* ἄχαν*։ Հայ թարգմանիչը տառադարձել է յունարէնից ա՛յն ձևերը, որ գտել է իր գործածած ձեռագրում. այսպէս οχοζ ընթերցուածը պահել է* nfnq*, իսկ միւսները* ակխան, եկխան*։ Սրանք յունարէնի երեք ձևերից ո՛չ մէկի հետ չեն նոյնանում. այլ ներկայացնում են նրանց խառնուրդը։ Այսպէս, ակխան կրում է երկրորդի առաջին մասը (αχχ) և առաջինի երկրորդ մասը (αχ)։ Սրանից հետևցնում եմ, որ կա՛մ յն. բառը ունէր ուրիշ երկրորդական ընթերցուածներ և յատկապէս մեր թարգմանչի գործածած ձեռագրում* αχχαχ, εχχαχ *ձևե-*

րը և կամ հայերէնը պէտք է կարդալ ակոուն, *իբր յն.* *αχχουν *վխ.* αχχουχ *ընթերցուածի։— Աճ.*

✗ **ԱԿՕՍ**, ի *հլ.* «*արօրի քաշած գիծը, փոսը*» *ՍԳր. Ոսկ. որից* ակօսաբեկ *Ես. է. 24.* ակօսաձև *Վեցօր.* ակօսաձիգ *Ագաթ.* ակօսել *Խոսր.* ակօսախոտ *Գաղիան.* ակօսաւոր *(նոր գրականի մէջ)։*

ՀՀԲ թւում է թէ կապում է յն. αὖλαξ *համանիշին։ Տէրվ.* Altarm. *27 սանս.* karšu, *գնդ.* karša «*ակօս*» *բառերի հետ։ Հինք. աղիս-ից։ Ղափանցեան, տեղեկ. ինստիտ. 2, 79 կասուլ «կամնել» բայից։*

ԳԻՒ.—Երև. վն. ակօս, *Մշ. Նր. Սլմ.* ակոս, *Խրբ.* ագօս, *Ալշ.* ագոս, *Ոզմ.* ագուս, *ՋՓ.* ագէօս.— *Նոր բառ է* ակնակօս *լինել Երև. «արտը բաւական վարած և վերջացնելու մօտ լինել» (Ազգ. հանդ. թ. 141).—Սալմաստում* ակօս *նշանակում է «գութանին լծուած ամոլի ձախ եզը»։*

ՓՈԽ.—Քրդ. ajoS agos *«ակօս»*, agos we-kirin *«ակօսել»։*

ԱՀ, ի *հլ. «վախ, սարսափ» ՍԳր. Ագաթ. Եղն. որից* ահաբեկ *«սոսկալի», Ոսկ. գաղ.* ահագին *«սարսափելի. 2. «շատ մեծ» ՍԳր. Ագաթ. Եղն. Ոսկ. Վեցօր.* ահարկու *ՍԳր.* ահաւոր *ՍԳր. Ագաթ.* ահեղ *ՍԳր.* ահել *կամ* յահել *«վախեցնել» Ոսկ. բ. կոր.* ահեալ *«սարսափած» Ագաթ. Պարզ. 226.* չահագին *Ոսկ. մ. ա. 20.* զ *սաստկականով* զահաւնդիլ *Մագ. Քղ. 236. Նոր գրականում* ահաբեկիչ, ահագնադղորդ, ահագանգ, ահեղասաստ: *Առանձին հոլովական մի ձև է* զահի, *որից* զահի հարկանիլ *«սարսափիլ» ՍԳր.։ Ահ ունի նաև երկու ուրիշ ձև. 1.* աճիւ, *որ գործածուած է յետին շրջանում* ահիպարանոց *ՅՀ. կթ. էջ 201, 324,* ահիպասարսափ *Շ. բարձր. ձևերի մէջ. և 2.* արհ, *որ գտնում ենք* արհական *«սարսափելի» Ոսկ. ես.* արհաւիրք *«սարսափ, ուրուական տեսիլ» ՍԳր. Ոսկ. Ագաթ.* արհուրաճք *ԱԲ բառերի մէջ. սրանից* զ *սաստկականով* զարհ, *որից* զարհուրիլ *«սարսափիլ, շատ վախենալ» ՍԳր.* զարհուրանք *ՍԳր.* զարհուրեցուցանել *ՍԳր.* հեղգազարհուր *Արիստ. առաք. կայ և* զարհաւրատեսակ *Նար.— այս ձևերը կազմուած են կրկնութեամբ, ձայնաւորի փոփոխութեամբ և ի-ի անկումով.* արհաւիր՝ ւ *յաւելուածով (հմմտ.* ծերեւեր, սերեւեր*) և արմատական* ա *վերածելով* ի, *իբր* արհաւիր =*արհաւարհ. իսկ* զարհուրիլ<զարհ-ուրհ-իլ *(*ա *վերածուած* ու*)։ Հնագոյն և նախնական ձևն է* արհ, *ինչպէս ցոյց է տալիս նաև վրացերէնը. ր-ի անկումը սովորական է հայերէնում. հմմտ.* զոհ<զորհ, խոհ<խորհիլ *են։*

ԳԴ պրս. هوی huy *«ա՜հ» բացագանչութիւնից դնում է հյ.* ա՜հ *և գոյականաբար* ահ *«վախ», նոյնը նաև Հինք, Տէրվ. Նախլ. 84. սանս.* tras, *գնդ.* taras, *հպրս.* tars, *պրս.* tursīdan, *լտ.* terrere, *յն.* τρέω *«վախենալ» բառերի հետ՝ հնխ.* tars, tras *արմատից, իբր* արհ, *որից թեթևացած՝* ահ: *Թիրեաքեան Սարնամակ ծան. 41,* վախ, պախ և պակ *համանիշների հետ, իսկ Բազմ. 1912, էջ 269* վախ *բառից թեթևացած։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 56 սանս.* ṛti- *«յարձակում», հսլ.* rati *«կռիւ» բառերի հետ. հմմտ.* մահ: *Յ. Գ. Մ., Պատմ. գրակ. էջ 16* ահիպարանոց *բառի մէջ* ահի=*սանս.* aṁhi *«օձ»։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Կր. Ղրբ. Մշ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տփ. ահ, *Ագլ. Հճ.* օհ, *ՋՓ.* օհ, ոհ, *Ակն.* այհ, *Խրբ.* այ, *Մկ. Ոզմ. Ջղ. Սլմ.* ախ. *այս բոլորը աւելի «Աստուծոյ ահը» բացատրութեան մէջ են գործածում։* Արհ *ձևը պահում է նաև* արհուրելի *«զարհուրելի»։ Առանձին ոճերով գործածւում են* ահ ահել, ահ զցել, սիրտը ահ ընկնել, ահ տալ *են։ Նոր գաւառական բառեր են* ահալի, ահակալել, ահաճար, ահահոռիլ *(արտասանուած* ախախորիլ*),* ահագոռ, ահնթփիլ, զահնդիլ, զահահորիլ, զարզահդ, զարհուռ *են։ Հետաքրքրական է գուռ.* ահռոիլ *«սոսկալ» իր զանազան ձևերով.—*ահռիլ, ահռուիլ, ահմռիլ, ոհմրռիլ, ոհմիլ, հմռիլ, զահմռիլ, զահռուիլ։

ՓՈԽ.—Մեզանից է վրաց. զարի *«վախ, սոսկում». Ծագում է հյ.* արհ *ձևի* *զարհ *աստստկականից. մեր կորցրած* ր *ձայնը վրացականում դեռ պահւում է։*

⊙**ԱՀԱ.** *«հրէշ, ահաւասիկ» ՍԳր. (շատ յա-*

ճախ գործածուած). որից աճա աւասիկ, աճա աւադիկ, աճա աւանիկ *կամ միացած՝* աճաւասիկ, աճաւադիկ, աճաւանիկ *ՍԳր. համառօտուած՝* աւաս *(իբր ձայնարկութիւն) «ահաւասիկ, հա՛ հիմի կգամ, ալէ՛օթա» Մխ. անեց. 38 (նորագիւտ բառ)։*

=Բնաձայն բառ. հմմտ. վրաց. ա՛հա «ահաւասիկ». «Ահա եսերա, մեւ ծարվալիւնո անգելոսի չեմի» (ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ) Մրկ. ա. 2. աւում է նաև վր. եհ, եճա, ուս. աճա, *ասոր.* ܗܵܐ hā, *ն. ասոր.* ähä, *քրդ.* a, ahan, han, vaha, yaha, *որոնց համար պէտք չկայ կարծելու, թէ հայերէնից են փոխառեալ։—*Աճաւասիկ *են կազմուած են* աճա+աւա+ս+իկ *են չորս տարրերով. իսկ* աւասիկ *են պարունակում են միայն վերջին երեքը։*

Justi *156* աւա-դի-կ *դնում է դիտել, դէա, պրս.* dīdan *են ձևերի հետ՝ գնդ.* dī, did *«տեսնել» բառի տակ։ Տէրվ. Նախալ. 20* աճաւասիկ *են բառերը մեկնում է իբր* աճաւ *=սանս.* asau *(=a+sa+u դիրանուանական արմատներից) և* սի-կ, դի-կ, ճի-կ *(ս, դ, ն), այս պատճառաւ կոչում է «հինգպատիկ բարդեր»։ Հիւնք.* աճաւանիկ *դնում է* աճա+*պրս.* իճէ *«ահա՛» բառերից։ Էսգէթ, Արրտ. 1915, 65* աճա *=արաբ.* ها hā *«ա՛ռ» հրամայականից, որ գործածւում է իբր «ահա՛»։*

ԳԻՒ—ՀՃ. Սչ. ա՛հա, *Ալշ. Կր. Համշ.* ա՛հան, *Ախց. Մրղ.* ա՛հա՛, *Ոզմ.* բհա՛, *Ասլ.* բ̓հը̄, *Ագլ.* բ՛հը, *Ղրբ.* բհը, *Տիգ.* հա՛.—*նոր ձևեր են Արբ.* աճա՛նա, աճա՛նամա, *Ակն.* աճանակ, *Ր.* հա՛նա, հա՛նսա, հա՛նդա, *Խրբ. Նխճ. Ր.* հա՛նա, *Վն.* հան, *Խզ. Մշ. Վն.* աճանջ, *Վն.* հանանչ, *Երև. Ղրբ.* հրէս, հրէտ, հրէն, *Շմ.* հmրmս, հmրmտ, հmրmն, *Ագլ.* հրէ՛սիկ՛, հրէ՛տիկ՛, հրէ՛նիկ՛ *կամ* հէ՛սիկ՛, հէ՛տիկ՛, հէ՛նիկ՛։

Ա.ՀԱՆԳ, ի *հլ., մէկ անգամ միայն գործածուած է Մեսր. եր. «Դրօշս կանգնէին ընդդէմ ահանգիցն Պարսից»։*

=Անասոյդ բառ։ ՆՀԲ մեկնում է «յարմարութիւն ձայնից և իրաց, հանդէս» և նոյն է դնում պրս. آهنگ āhang *«նպատակ, հա-*

ղորդակցութիւն, ներդաշնակութիւն» բառի հետ, որ նշանակութեան կողմից յարմար չէ։ ՋՔ չի նշանակում այս բառը։ Պատկ. Матер. *I. 8 պհլ.* āhanko *«օրէնք, կարգ», պրս* آهنگ āhang *«ներդաշնակութիւն»։ Հիւբշ. 95 դժուարանում է ընդունել թէ բառը ուղիղ է դրուած, բայց սրբագրել աճագնից՝ գանում է անյարմար։*

Ահապա տե՛ս հապա։

Ա.ՀԱՐ *«նօթի». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 10. անասոյդ բառ։ Ակինեան ՀԱ. 1930, 493 կարծում է, թէ սովաճար բառի վերջի մասն է։*

Ա.ՀԵԱԿ, ի–ա *հլ. «ձախ» ՍԳր. Ագաթ. որից* աճեկակողմն *3Հ. իմ.* աճեկան *3Հ. իմ. երև.* աճեկեայ, աճեկիւ, աճեկին *«ձախակողմեան» Խոր. Նղիշ. գաղ. 3Հ. իմ. երև. Փիլ.* աճեկութիւն *«ձախորդութիւն» Մխ. ապար. որ և* աճկութիւն *Հայկ. 146.— այս բառից պէտք է գնել նաև* աճեկորդ *«չար, սատանայի զաւակ», որ աղաւաղեալ* աճկէորդ *ձևով գործածուած է մէկ անգամ Անկ. զբրք հին կտ. էջ 394. «Ապա յայնմ ժամանակի նեղեսցի վիշապն և յառաջնորդաց իւր ըմբռնեսցի, և յաճկէորդացն կապեսցի, և մի՛ ոք ընկալցի զնա, զի ահեղ դարիւն սրբոցն ի քաղաքս և ի գաւառս» (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մտ. հատ. բ)։*

Böttticher ZDMG *1850, 350 միացրեց սնս.* savya-, *գնդ.* havya, hāvōya, *պհլ.* hōī *կամ* havīk *«ձախ» բառերին։ Այս մեկնութիւնը ընդունում են* Müller, Justi, *Տէրվ. են։* Lag. Arm. St. *§ 45. այս բառը համարում է պահլաւական փոխառութիւն, մինչդեռ ձախ բնիկ հայ է։ Տէրվ. Նախալ. 105* աճեակ *հանում է հնագոյն *հաւեակ ձևից, իբր նախաձայն հ կորած և միջձայն վ դարձած հ. ինչ.* արուեստ> արհեստ։ *Հիւբշման, որ* KZ *23 նոյնպէս ընդունել էր վերի մեկնութիւնը,* Arm St. *17 կասկածով է վերաբերւում, իսկ* Arm. Gram. *414 բոլորովին սխալ է գտնում, ասելով որ «եթէ բնիկ հայ լինէր՝ սանս.* savya *=հյ. *հեգի կամ *եգի ձևը պիտի առնէր. հմմտ. սանս.* gavya *= կոգի. իսկ եթէ փոխառեալ լինէր իրանեանից, պհլ.* hōī, havīk *ձևերը շատ անհամաձայն*

են»։ Հիմնք. յն. ἀκαιός բառից, որ չգիտէ Bailly։—*Անկ. գիրք հին կտ. 394 յաճկէտարդացն ձևը ուղղել է յաճնկոտդացըն. այս սրբագրութիւնը հաստատւում է նոյն հատուածի միւս խմբագրութեամբ, որ տե՛ս անդ 244 (եւ յահնկորդացն կապեցի)։ Այս աճնկոտդ ձևն ունի նաև Տեսիլ Դան. «յահնկորդացն կապեցի»* WZKM *6, 126,* հրտր. Գալէմքեարեանի։ Jensen IF Aux. *14, 52 և ՀԱ 1904, 183* հաթ. aḫ *«ձախ» բառի հետ։* Pedersen *Հայ դր. լեզ. 57* աճ *բառից, իբրև թէ* աճեակ *«ձախորդ, անյաջող»։*

*Ա.Հ.ԵԿԱՆ *(սեռ. -ի) «հին հայոց իններորդ ամիսը» (գրուած է յն.* ξανθικός *ամանուան դէմ. քատ անշարժ տոմարի ապրիլ* $^{8}/_{21}$ *—մայիս* $^{7}/_{20}$*) Բ. մակ. ժա. 30, 33. յետնաբար աճիկի (անհոլով) ՅՀ. կաթ. Վանակ. տարեմտ.։*

=*Պհլ.* *āhrakān *ձևից, որի հնագոյնն է* *āθrakān. *այս բառը կազմուած է* ātur *«կրակ» բառից. իրանեաններից մէջ իններորդ ամիսը նուիրուած էր կրակին և կոչւում էր պհլ.* ātur, *պազ.* āδar, *գնդ.* āθrō, *հպրս.* āθriyādiya-, *հյ. աճեկան գալիս է* *աճրեկան *ձևից. համմտ. մեճեկան, յետնաբար մեճեկի,*

=*Ըստ Ստրաբոնի τὰ Μιθράκανα. յետին պահլաւերէնում* āδaragān *կոչւում էր «Ադար ամսուայ ադար օրուայ տօնը»։—Հիւբշ. 95։*

Հներից Վանակ. տարեմտ. և Տաթև. Հարց. 201 մեկնում են «ահկի, այսինքն ակ անկանի. ի յառնելն գետոց և ի թուլանալն ձեան, ահ է ասեն մարդիկ ամենայն ուրեք, դի գետայարոյցք է»։ Տաթև. ձմ. ա «Ահկի՝ զահարկութիւն ասէ ի վերայ դիւացն, կռապաշտութեան և մեղաց և սատանայի»։ Brosset JAs. *1832, X. 530* աճեակ *«ձախ» բառից։ Ուղիղ մեկնեց նախ* Böttticher ZDMG *1850, 365,* Lag. Ges. Abhd. *9։—Աւգերեանց, Բիւր. 1898, 53—54 պրս. խոռեմ ամսանուան հետ։*

Ա.Հ.ԵՔԵԼ *«համոքել կամ ծիրանել». ունի միայն Բառ. երեմ., որ յիշում է Ակինեան ՀԱ 1930, 493. բայց զուր է կապում պհլ.* āhōk> *հյ. աճոկ «վնաս, պակասութիւն» բառի հետ։*

*Ա.Հ.ԻԱՀ *«եհովա, Աստուած». Զչորեքգրբեանն դնէ աճիահ, դի չորեգգրեանն և ադովնայի և ահիահ զԱստուծոյ անունն նշանակեն եբրայեցերէն. Ոսկ. հս. ծա. գրուած է աճյահ կիւրղ. եւլ.։*

=*Եբր.* אֶהְיֶה ehyeh *(տառացի* a h i h*) «եհովա, որ էն», որ յունարէն տառադարձութեան միջոցով անցել է մեզ Ոսկեդարում։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։

Ա.Հ.Իլ *«հաւաքուիլ, մի բան դիտելու համար շորս կողմը շարուիլ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Նար. տաղ. 471. «Խառն ի խուռն ահին հոյլ ծերունեաց պերճից» (տե՛ս Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 142)։*

Ակինեան ՀԱ 1930, 493 դր. ահել? աշել «նայիլ» բառի հետ թերևս լծորդ։

Ահկի տե՛ս Ահեկան։

*Ա.Հ.ՈՒ *«յանցանք, վնաս, պակասութիւն, մեղագրութիւն» վրթ. քերթ. Լմբ. սղ. Մխ. բժշ. Ոսկիփ. Վստկ. Ուռհ. 309 (ունի սեռ.* աճոկոյ*, որ տպագրիչները յատուկ անուն են կարծել. տե՛ս Աճառ. Արրտ. 1913, էջ 1148). իբր ած. նշանակում է «վնասակար, առողջութեան համար վնասակար» Մխ. բժշ. 147. որից* աճոկել *«վնասել» Մխ. բժշ. Վստկ. 26.* աճոկութիւն *«վնաս» Վստկ.* աճաճոկ *«անվնաս» Շիր. Քր. քեր. 57, Մխ. բժշ. 100. գրուած է նոր Ա-նան. մակ։*

=*Պհլ.* āhōk *«թերութիւն, պակասութիւն, մոլութիւն»,* āhōkīnītan *«ապականել, աղտոտել», որից պրս.* ﺎﻫﻮ āhō *«պակասութիւն, տրատ, մեղք», պազենդ.* āhō *«թերութիւն»։ Բուն և նախնական իմաստը ցոյց է տալիս գնդ.* āhita *«անմաքուր, ապականեալ» (որի բացասականն է* an-āhita *«մաքուր, ամբիծ», որ և Աճաճիտ աստուածուհին)։ Այս իմաստից բխում է «հոգու անմաքրութիւն, մեղք» և վերջապէս «վնաս»։—Հիւբշ. 95։*

Ուղիղ մեկնեց Պատկ. Матер. *1,8։ Տառ* ИАН *1913, 417 հանում է աճեակ «ձախ» բառից։*

Ա.Հ.ՈՒԱՆՔ *«հինգերորդ օր ամսոյ». գիտէ միայն Քաջունի։*

+Ա.Ղ. *ի հլ. «աղ» ՍԳր. Բուզ. Ոսկ. որից* աղաչուր *Սիր. Ոսկ.* աղաճուռ *«աղի և հում» ՅՀ. կթ. 329.* աղի *ՍԳր.* աճաղ *Շնորհ. ընդհ.*

կամ լ ձայնով՝ աճալի «առանց աղի» Ոսկիփ. Առաք. լծ. սահմ. 234. շրջմամբ՝ ալանաճամ «անլի» անդ՝ 288. աղուճակ «աղի փայլուն կտոր» Ոսկ. ես. աղկեր «աղած ձուկ» Եպիփ. յղ. ակ. յաղել «աղով համեմել» ՍԳր. Ադաթ. Եփր. ծն. աղահար «աղած» (չունի ԱՔ) Տարօն. էջ 278 (Ձիմս աղահար օրհնել և ուտել). աղահատ «աղի, շօռ» Նուշր. 81 (չունի ԱՔ). «ի յաղահատ տեղիք սերմ մի՛ ցանէք»։—2. աղի նշանակում է նաև «կծու», որից աղութիւն «կծութիւն» Վեցօր. փխբ. «սրտառուչ». ինչ. «Աղի ողբով զաղէտսն նուագէին» Ոսկ. ես. «Ելաց աղի ողբովք» Լմբ. առկ. «Զաղի աղէտս ողբոցն» Անան. նին. որից աղի և ողորմ Ոսկ. մ. բ. 8. Երր. իգ. կամ միացեալ աղիողորմ «սրտառուչ» Մամբր. Նար. Սրգ.—3. կրկնութեամբ աղաղ «մորթ աղելը» Կանոն. աղաղել «մորթ աղել, դաբաղել» Կանոն. աղաղոց «մորթ աղելու աման» Կանոն.—4. աղ՝ իբր նշան բարեկամութեան՝ Բուզ. դ. 53, որից աղ ուխտի, ուխտ աղի ՍԳր. Եփր. մն. աղ առնուլ «բարեկամանալ» Ոսկ. մ. բ. 7. աղ և հաց ուտել «բարեկամանալ սեղանի վրայ» Եղիշ. Ոսկ. աղուփոխ «բարեկամութիւնը նենդող» Եփր. հլ. էջ 185.— 5. իբր նշան խեղճուկ կերակուրի, որից աղիկ Ոսկ. ա. տիմ. (ի շորաբեկ սեղան մատչին, ոմն հացիկ և աղիկ, և ոմանք իւղիկ ևս յաւելուն). աղուհաց «սակաւապէտ կերակուր» Ոսկիփ. աղուհացի «մեծ պահք», որ և աղհացի, աղցի Արշ. Ճշ. Տօնաց. Ժմ. 170. Սամ. անեց. շար. 168. Ճառընտ. (հմմտ. Ննխ. ախացի). Նաև աղուհացի «բաղարջակերք» Եփր. վկ. արև. աղցըմի (ձյաղուհացան մի՛ ասեր» ձևից համաոատուած) Շար. Տօնաց. աղապէտ «diète» Խոսր. Լծ. Նար. Բժշ. կամ աղպէտ Վստկ.—6. իբր նշան ապականութեան, որից աղարտ վարել՝ իբր թէ արտը աղ վարելով՝ «քանդել, կործանել, փճացնել» Դաւո. թ. 45. աղարտել «նախատել, այպանել, փճացնել» ՍԳր. Ոսկ. Եփր. ա. կոր. 69. աղարտութիւն Սեբեր. անաղարտաբար (նորագիւտ բառ) Պրպմ. 81.— 7. իբր նշան համի կամ քաղցրութեան, փափկութեան, սիրունութեան, որից աղու «քաղցր, անոյշ» Խոր. Պիտ. Նար. կամ փոխաբերաբար՝ «կեղծաւոր, քծնող, նենգամիտ» Ոսկ. մ. ա. 4. Պիտ. (-ու մասնիկի համար հմմտ. կծու, քրքրու, հատու), աղուամազ «բարակ և նուրբ մազ» Ղևտ. ժգ. 30. աղուանալ «նենգաւորիլ» Եղն. աղուաջ (սխալ գրչութեամբ կամ յետին՝ աղաւաջ, աղվաջ, աղաշ, աւաղաշ) «յիմար, խելթուկ» Մանդ. վրք. հց. աւ 394. Մաշկ. (-ուաշ մասնիկի համար հմմտ. քթուաշ), աղուշ-մաղուշ «սիրունիկ» Քուչ. 59. աղուոր Շնորհ. առակ. Սմբ. պտմ. տպ. 1856, էջ 50, 51. աղուորութիւն Տաթև. հրց. 250. աղէկ (<*աղու-եակ). Անկ. գիրք հին կտ. Ա. 174. Տաթև. հրց. 239. Մոթ. եապր. 124. (-որ մասնիկի համար հմմտ. եաւոր, բեկոր, արուրագոյն «կտրիճ, զօրաւոր»), աղածրի կամ աղարծի «փափուկ, մատղաշ» Գ. մակ. ղ. 12 (մասնիկի համար հմմտ. բաւարծի, բաւածրի, խաւարծի). աղեբար «անուշութեամբ, հանդարտ կերպով» Ոսկ. Ճառք 480. աղալեզու կամ աղաւալեզու «կեղծաւոր քաղցրախօս» Մանդ. 121 (Ճառընտ. սրա տեղ գրում է աղուաշ լեզու) և էջ 123 (մի քիչ յետոյ ինքը մեկնում է թէ՝ «ցուիոգեացն և աղաւալեզուացըն... ոչ ոք հաւատայ. զի ամենայն ոք ի մտացն հաստատութիւն և յառաքինութիւն հայի, և ոչ յընդվայրած լեզուին աղութիւն»). ալախօսիկ՝ իբր «աղուախօս, քաղցրախօս» Ուռհ. 216. (աղ բառի այս առումը ունի նաև արաբ. ملیح malih «աղի. 2. գեղեցիկ», որի համար էլ Այտենեան, Քնն. քեր. 335 կարծած է թէ աղուոր բառը թարգմանութիւն է արաբականից՝ իբր յաղեալ, աղիւ համեմեալ).—8. ոչխարների՝ աղը շատ սիրելուց՝ նմանութեամբ առնուած է նաև երկնաւոր հօտի համար, իբր «փարախ, մակաղատեղ» նշանակութեամբ. ինչ. «Դիմեցին ի մահ իբրև խաշինք սուրբքյաղն երկնաւոր» Եղիշ. «Զայնեալ կոչեաց յաղն երկնաւոր» Ճառընտ. «Այլ որպէս հօտ հովուապետին՝ յաղն երկնային գրոհ տայր» Շնորհ. եդես. «ի քրովբէից աղի հանգուցար» Նար. կուս. 416. ոճով՝ աղաձայն առնել «ոչխարները աղի կապել» Ճառընտ.— 9. աղ գործածուած կայ նաև ուրիշ իմաստներով. այսպէս՝ աղաբաւ «մեղքի մէջ թաթախուած» Ագաթ. § 149. աղութիւն «խօսքի պղծութիւն», աղեգանել «աղէկ մը ձեծել»,

աղեգոյն «աւելի աղօտ»։ Սրանց մէջ աղ ըմբռնուած է իբրև աղտ, աղօտ, աղէկ (սաստիկ). սակայն այս իմաստները այլուր դոյութիւն չունին. աղաբաբաւ կայ Ագաթանգեղոսի միայն մէկ օրինակում և նոր տպ. ունի մեղսաբաբաւ, որով աղաբաբաւ ձևը չնչուում է։—Աղ բառի միւս ձևերն են աղծ, աղտ, որ տե՛ս առանձին։

=Հնխ. sâld, սեռ. salnés. Համմտ. յն. ἅλς, լտ. sal (ֆրանս. sel, իտալ. sale, ռում. sare), հսլ. soli, ռուս. соль, գոթ. salt հիսլ. salann, կիմր. halan, գերմ. salz, անգլ. salt, շվ. նորվ. salt, դան. salz, soole, բուլ. sălyi չեխ. sůl, սերբ. sô, հպրուս. sal, հոլլ. zout «աղ». լիթուաներն ու ալբանացիք չունին այս արմատը և «աղ» գաղափարը բացատրում են մի բառով՝ որ նշանակում է «փոշի ցանել, ցրուել»։ Թեև լիթուաները չունին այս բառը, բայց նոյն արմատից են կազմուած լիթ. saldùs, լեթթ. saĩds «քաղցր, անուշ», լիթ. sąlù, salaũ, sálti «քաղցրանալ», saĩdinti «քաղցրացնել», ինչպես ունինք հյ. աղու «քաղցր» և հսլ. sladъkъ, ուկր. solódkyj, ռուս. сладкій «քաղցր» (նախնական իմաստը «աղած»). տե՛ս Pokorny 2, 452, Walde 671, Trautmann 248—9, Ernout-Meillet 847, Boisacq 47։ Հնդեւրոպականներից աղը (նիւթն ու բառը միասին) անցաւ ֆիննական ժողովուրդներին. Համմտ. հունգ. só, ֆիննի. suola, վօտ. soela, էստն. sool, լիվ. suol, վեպս. sola, վօտյ. slal, չերեմիս. šanzal, լապպ. salte, մորդվ. sal, սիրյ. sol, sov, վօգուլ. seh, օսթյակ. sol՛, sal են։ Աղ բառի ընդհանուր լեզուների մէջ առած ձևերի քննութիան, աղի ծագման և պատմութիան, աշխարհագրական անունների մէջ գործածութեան մասին մի գեղեցիկ մենագրութիւն ունի Victor Hehn, Das Salz, eine Kulturhistorische Studie, տպ. Berlin, 1873, էջ 74։—Հիւրշ. 414։

Schröder, Thesaur. 46 աղի բառը դնում է իբր. أجِيْ aǰə «լեզի» բառից։ Նշիր անալի=յն. ἅναλος, իսկ աղ 8-րդ առումով, իբր «փարախ»=պրս. աղիյլ և յն. ἀγέλη «փարախ, հօտ», որից առնում է և Հիւնք.։ (Բայց aγəl «փարախ» պարսկերէն չէ, այլ գուա թրք. համմտ. ալդաբ. aγəl)։—Աղ բառը ուղիղ մեկնեցին Peterm. 29, Windisch. 17 են։ Տէրվ. Մասխս 1882 յունիս 7, № 3205 յաղել դնում է բուն հաղել, իբր աւելի հիշտ պահած նախնական ձևը (հնխ. s>հյ. հ)։—Bugge, Lyk. Stud. 1, 13 հյ. աղ բառը գտնում է Կարիոյ Ἁλικάρνασσος տեղանուան մէջ։—Պատահական նմանութիւն ունին աղ բառի հետ՝ կովկասեան լեզուներից ուտ. էլ, խիննալուղ դա, կիւրին, ռուտուլ, ցախուր, տաբասարան. ֆէլ, ագուլ. կոլ, գալ, բուդուխ. ջէք. կաալ, բոլորն էլ «աղ» իմաստով—հյ. աղուճակ բառի հետ պրս. نمکچک namakčak «ծովային սատափանման մի խեցեմորթ».—աղու բառի հետ արաբ. حلو halv «աղու, անուշ», որից halva «հրուշակ»։

Գիւր.— Ագլ. Ալշ. Ակն. Ասլ. Երև. Խրբ. Կր. Համշ. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Ննխ. Շմ. Ոզմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տփ. աղ, Տիգ. ող, Զթ. օղ, ոդ, Հճ. օղ։— Անալի բառը ունին՝ Շմ. անալի, Ագլ. Գոր. Ղրբ. նա՛լի, Խրբ. Կր. Հճ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սլմ. անլի, Համշ. օնլի, Զթ. անլը, Սչ. ալլի, աղէգ «աղէկ, լաւ». Տիգ. ոլլի, ոնոդ, Ակն. օլլի, Երև. ալանի, Ջղ. յալանի, Ննխ. Վն. Տփ. ալնի, Մրղ. անիր.— միւս հետաքրքրական ձևերից յիշենք Խոչ. աղամազ «աղուամազ», Տարէնառէ աղվաշ «մազերը, մօրուքը, յօնքերը և թարթիչները բնականից սպիտակ, շատ բաց դեղին գոյնով. 2. որ արևին չի կարող նայիլ, աչքերը թոյլ. 3. անհեռատես, ոչ-շրջահայեաց», Խրբ. աղգէգ «գեղեցիկ» (միւսներից Մկ. աղէկ, Մրղ. աղէկ՛, Մշ. Ննխ. Պլ. Սեբ. աղէգ, Ագլ. ա՛ղիկ՛ «լաւ»), Տփ. աղի «գեղեցիկ»։ Նոր բառերից յիշելու արժանի են աղցան, աղցանել, աղլէգ, աղմուր, աղշար, աղալի, աղաղոց «զգուելի», աղադրի, աղերես են։

Փոխ.— Հյ. աղու բառից է վրաց. գաալովերա «քաղցրանալ, անուշ համ առանալ», արմատը ալով, վրաց. მოალბება միալեբա «փաղաքշել» (հյ. աղու ձևից), ուտ.

ախցիմա (աղցմի ձևից) «զատիկ», Խալա ախցիմա «մեծ պատ»։

ԱՂԱԲԱՍԱՐ «բազմատեղք, բոլք համատեղութիւնք». գիտէ միայն ՓԲ։

*ԱՂԱԲՈՂՈՆ, ի–ա հլ. «վերարկու, կրօնաւորի կարճ փիլոն» Ոսկ. ես. Բուզ. ե. ը. Տղիշ. Խր. Վրք. Հց. Պիտ. գրուած նաև աղեբողոն, աղաբաղովճ, աղաբանոս, աղաբղոն, ղաբողոն Պտմ. մծբ., ղարղոնիկ, ղարոնիկ Պտմ. մծբ. 18. անաղափ, անաբող, անափաղ Վրք. Հց. Ճառընտ. Մաշտ. բողոն կամ բուղոն Ճառընտ. = Անկ. գիրք առաք. 26. այս բոլորի մէջ ամէնից աւելի գործածականն և կենդանի ձևն է աղաբողոն, հոլովման համար հմմտ. աղաբողոնով Ոսկ. տիտ. աղաբողոնամբ. Վրք. Հց. ա. 205. բարդութեամբ կայ մերկաղաբաղ «հնդիկ քաֆիր» Ոսկ. բ. կոր։

= ՅՆ. ἀναβολή, ἀναβόλαιον, ἀνάλαβος «մի տեսակ վերարկու». բաղկանում է երկու կտոր կերպասից, որ ձգում են ուսի վրայ. մէկը դէպի աջ և միւսը դէպի կռնակը. սուդարանօրէն նշանակում է բուն «վրան ձգած» (ἀνα «վրայ» + βάλλω «նետել, ձգել», բառերից), կամ որ նոյն է՝ «վերարկու»։ Յոյնից է փոխառնուած նաև ասոր. ܐܢܐܠܒܘܢ anālābon «կրօնաւորի վերարկու»։—Հիւբշ. 339։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։

ԱՂԱԲՈՎԴ «դաշտ», ունի միայն Բառ. երեմ. 10։

ԱՂԱԳ, ի–ա հլ. «ճանապարհ». մէկ անգամ ունի Ոսկ. փիլիպ. 411. «Արատիցի որմ, խրամատիցի և ամենեցուն աղագ լինի» (այդու պատի համար է ասում, որ քանդուելով՝ ամէնքի աղատ անցուդարձի ճանապարհ է դառնում), երկրորդաբար նշանակում է «հնարք, կերպ, միջոց» Պիտ. 34. կթ. Մագ. երդն. քեր. բոլորն էլ յետին. սակայն հին և բնաիր են սրա հոլովելու ձևերը. գրծ. աղագաւ «պատճառով» Ոսկ. յհ. և Դղ. «համար, վասն» Ոսկ. մ. եւս. քր. յաղագս (նախ. հյց. կամ ներգ.) «համար, վասն» ՍԳր. (յետնաբար գրուած յաղակս Անկ. գիրք նոր կտ. էջ 360, 364, 367, 371, 375). երկուսն էլ գործածուած իբր նախադրութիւն։ Աղագ բառի մէկ ուրիշ ձևն է եղագ «ճամբայ» Ոսկ. եփես. 808 և ես. «միջոց, հնար» Ագաթ. կայ նաև եղանգ ձևը՝ որ գիտէ միայն ԱԲ. բոլորի նախնական նշանակութիւնն է «ճամբայ». հմմտ. տճկ. يول yol «ճամբայ» և երկրորդաբար «հնար, միջոց, կերպ, եղանակ». կամ նաև աշխարհաբարի մէջ ճամբայ «հնար, միջոց». ինչ. «Ստակ վաստակելու ճամբան չգիտէ. բայ՛ որ ճամբայ մը մտմտանք և բերել տանք»։

ՆՀԲ գնում է լծ. հյ. ուղի և արաբ. իլան «դեղ, դարմանն։ Հիւնք. յն. ἔλεγχος, ἔλεγξις, «պատճառ, ապացոյց»։ Մառ, Грам. др. арм. էջ 31 հյ. առաջ բառից աղաւաղուած, այնպէս, ինչպէս fարադր—fաղադր։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 339 թրք. yol, yolaq «ճամբայ, միջոց»։

ԳԻՒՒ.—Աղագ բառը շատ գաւառականներում կայ աղաճ ձևով (ինչ. Երև. Լ. ԼՀ. Ղզ. Ղրբ. Ղրդ. Սբ. Տփ.) և նշանակում է «առջևը». Աղագս մի՛ կանգնիր նրա աղագիցը փախչում էր. նշանակում է նաև «առաջ, նախապէս». Աղագ այստեղ մեծ քաղաք է եղել։ Սրանից են աղագանալ «մեծ պաշտօնի հասնիլ». աղագկտրուկի տալ «մէկի առաջը կտրելով անցնիլ», աղագուց «կանխաւ» և զանազան ոճեր՝ աղագ բառով կազմուած։

ՓՈԽ.—Վրաց. ալագի «տեղ», երբեմն նաև «ճամբայ, շաւիղ». Գանմզադնիթ գպանի ուփլիսանի, գա ծրփել—հզ՛ոՒէնիթ ալագանի միանի «պատրաստ արարէք զճանապարհ տեառն և ուղիղ արարէք զշաւիղս նորա». Մրկ. ա. 3. ափխազ. ալագօ «ճամբայ»։—Կայ նաև չէրքէզ. ogogu «ճամբայ», որ անշուշտ պատահական նմանութիւն ունի։

*ԱՂԱԼ «ոչխարի փարախ» Առաք. լծ. սահմ. 380 (գործածուած երեք անգամ)։

= Թրք. اغيل aγəl «փարախ». այս բառը ղուտ թուրքական է. հմմտ. ալթուր. aγəl «փարախ», չաղաթայ. اغيل aγəl «բակ, փարախ», որ և կումկաւեան اول aul «աուլ», թրքականից է փոխառեալ պրս. اغل āγil «ոչխարի փարախ», որի հետ պատահական նմանութիւն ունին յն.

ἀγέλη «ոչխարների հօտ» և լտ. agolum «հովուի բիր կամ գաւազան»:—Ա՛ճ.

+ ԱՂԱԼ (աղացի, աղա՛) «ցորենը մանրել՝ ալիւր շինել» ՍԳր. «որևէ նիւթ փշրել»: ՍԳր. Եփր. Ել. 32. կք. «որոճալ» Փիլ. լին. «գիշատել» 32. կք. որից աղացիկ «աղացած», Ոսկ. ա. տիմ. բ. խնկաղաց «խունկ մանրելու սանդ» ՍԳր. աղօրի «ջաղացք» Երեմ. ժբ: 12. «աւտամ, ակռայ» Նար. կգ. 160. աղուն կամ աղօն «աղալու տրուած բան» Ոսկիփ. Մխ. դտ. ջրաղացf լմբ. բրս. մրկ. Երզ. ոտ. որից r ընկած՝ ջաղացf: Նոր գրականում ունինք աղօրեպան, ջաղացպան, մլաղաց, ճողմաղաց, սրճաղաց ևն:

=Հնխ. al (ասիական ar) արմատից. հմմտ. յն. ἀλέω «աղալ», ἀλέτης «երկան», ἀλετὼν «ջաղացք», ἄλευρον «ալիւր», գնդ. aša (*arta-ից) «աղացեալ», սոգդ. ʾrβ «ջաղացք», պրս. ﺁرد ard, բելուճ. ārt, աֆղան. ōṛ̣, քրդ. ār, ārd, գազա. ārdi և հինդ. āṭā, «ալիւր» նշանակութեամբ և բոլորն էլ հնագոյն ārt- ձևից. պհլ. ārtan «աղալ»: Այստեղ է պատկանում նաև հյ. ալ-իւր, ուր ղ ձայնի դէմ գտնում ենք լ. հմմտ. աղ և աճալի: Աղօրի բառի հնագոյն ձևն է բաս Հիւբշ. *alatrio-. Հմմտ. յն. ἀλέτριος. Մասնիկը գտնում ենք նաև uror բառի մէջ: Նկատելի է որ հնդևրոպացիք «աղալ» գաղափարի համար բարբառային երկու խմբի էին բաժանւում. հիւսիս-արևելեան խումբը գործ էր ածում mel արմատը (այսպէս ունին բալթիկ-սլաւոնական, գերմանական, կելտական, լատին և ալբանական լեզուները), իսկ արևելեան խումբը գործ էր ածում al արմատը (այսպէս են յոյնն ու արիականը). հայերէնը այս կէտում միանում է յունարէնին, մինչև մանր տարբերութեանց մէջ անգամ (հմմտ. Meillet REA 4, 4—6):—Հիւբշ. 414:

Ուղիղ մեկնեց նախ Այվազովսքի, Յղ. Հնչման (1852), էջ 15, համեմատելով յն. ἀλέω ձևի հետ: Յետոյ Müller SWAW հտ. 35 (1860), էջ 193 և հտ. 42, էջ 329:

Գիւղ.—Ալշ. Ախց. Ակն. Ասլ. Երև. Խրբ. Կր. Հմշ. Մկ. Մշ. Մրղ. Ոզմ. Զղ. Սեբ. Սլմ. Վն. Տփ. աղալ, Ղրբ. ա՛ղիլ, Ճմ. աղիլ, Զթ. Հծ. աղօլ, Տիգ. mղmլ:—Աղել «աղ ցանել» բայից տարբերելու համար տեղ-տեղ բայը նոր կերպարանքի տակ է մտած. այսպես՝ Դվ. աղաճալ, Ագլ. ըղա՛նիլ, Գղ. ըղա՛նալ, Սչ. ախցել, Ռ. ախցել (<*աղացել). իսկ Ղրբ. ընդհակառակը աղել բառն է, որ ձևափոխուել է և դարձել ա՛ղավ ա՛նիլ «աղ ցանել» և աղր տնիլ «աղել, աղաջուրը դնել»: Հետաքրքրական ձև է Ղրբ. ա՛դումներ «աղուն, աղալիք բան». հմմտ. մրջիւն>մրջէ՛մներ: Նոր գաւառական բառեր են աղճաղաց, աղուլոս, աղուճել, աղուխս, աղցուկ կամ աղացուկ, ջաղացավարդ ևն:

Փոխ.—Վրաց. ալա, ալատա «ջաղացքի տուփը՝ ուր ալիւրն է թափւում» հայերէնի՞ց փոխառեալ է, թէ պատահական նմանութիւն միայն ունի:

ԱՂԱԼՈՒՃԻ «հալուէի փայտ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 49, իբր անստոյգ բառ: Շթայնշնայդէրի հաւաքածոյում կայ اخيلوس axīlus ձևը՝ WZKM 14, 267:

=Արաբ. ենթադրեալ غَالُوخ āγālūx հոմանիշ ձևից, որ տառադարձուած է յն. ἀγάλοχον «հալուէի փայտ» բառից (դիոսկոր.) այս վերջինն էլ ծագում է սանս. aguru «հալուէ» բառից, որ նշանակում է բուն «ոչ-ծանր» =a-guru (Boisacg, էջ 5): Արաբ. غَالُوخ āγālūx ձևի մէջ սխալմամբ կիտը ներքև դրուելով՝ կարդացուել է جَالُوخ āγālūǰ:—Ա՛ճ.

ԱՂԱԽԻՆ «կին ծառայ» ՍԳր. սովորաբար ո հլ. բայց ունինք նաև մի քանի տարբեր հոլովաձևեր. այսպէս՝ ի-ա հլ. աղախնաց Բ. եզր. բ. 65. Յուդէլ բ. 29. յաղախնաց Տոբ. ը. 14. աղախնանց Գծ. բ. 18. աղախնայց ՍԳր. աղախնեայս Եղիշ. աղախնօք Փարպ. աղախնեաց Եփր. ծն. որից աղախնութիւն Ել. իա. 7. Եւս. քր. աղախնորդի Կոչ. աղախնել կամ տարօրինակ մի ձևով՝ աղախնայել «ծառայել» Ճառընտ.:

Հիւնք. աղագին բառից. «զի ի Թրակիա ընդ աղի փոխանակէին զգերիս»: Մառ ЗВО 22, 67 իբրև «տնային» կցում է աղխ բառին, որի նախնական նշանակութիւնը համարում է «տուն»:

ԱՂԱԿԱՏԱՆՔ «զեղխութիւն» եղն. մէկ անգամ միայն գործածուած։

ՆՀԲ ղծ. աղճատանք, աղ և կատակ։ Հիւնք. կատաղի բառից։

⊙**ԱՂԱՂԱԿ**, ի–ա հլ. «բարձր ձայն, բղաւոց» ՍԳր. Ագաթ. որից աղաղակել ՍԳր. Ագաթ. աւտաղաղակ Թէօդ. մայրագ. արմատն է աղաղ, որ թէև առանձին գործածուած չէ, բայց կայ Ախց. աղաղել «լալ, կանչել, բղաւել» բառի մէջ։

=Նման է հնչում յն. ἀλαλά, ἀλαλή, ἀλαλαγή, ἀλάλαγμα «աղաղակ», ἀλαλάζω «աղաղակել»։ Սակայն մեր բառը չի կարող յոյնից փոխ առնուած լինել՝ ծայրի ակ-ի պատճառաւ. նոյնպէս անյարմար է երկուսն էլ միասին դնել նախալեզուից, քանի որում յունարէն բառը համարւում է բնաձայն, ինչպէս և սանս. alalā, arē, ararē (տե՛ս Boisacq, Dict. étym. էջ 40)։ Հալ. ole, բուլգար. olele, լիթ. aluoti, alioti «աղաղակել» (Pokorny, I, 89)։ Այս պարագային կարելի է հայերէնն էլ դնել բնաձայն բառ. հմմտ. աղէ՛ «դե՛հ, օ՛ն»։ —Ահ.

ՆՀԲ յն. բառըմնգնից է դնում, Windisch. 17 յն. և հյ. բառերը ցեղակից է համարում։ Lag. Arm. Stud. էջ 166 ցանկի մէջ չէ ընդունած։ Չի՛ ընդունում նաև Հիւրշ. ո՛չ իբր փոխառեալ և ո՛չ իբր ցեղակից։ Տէրվ. Նախալ. 63 յն. ἀλαλά, սանս. ār «օրհնել», āre «օ՞ն» բառերի հետ հնխ. ar արմատից. Scheftelowitz BB 29, 66 ևս համարում է բնաձայն՝ համեմատելով վերի ձևերի հետ։ G. Deeters, Caucasica 4, 52 լտ. ululare։ Հիւնք. յն. ձևին աւելացնում է նաև պրս. ﻫﻠﻬﻠﻴﺪﻥ և երբ. ալէլուիա! Յակոբեան, Մաղիկ 1899, նոյ" 4 իբր. եէլալ, ասոր. ալէլա, արաբ. վէլվէլէ, յն. ալալոզին, լտ. ululare ևն։ Մառ ИАН 1917, 328 վրաց. ղաղադի «կանչ» ևն։ Բառը նմանաձայն լինելով պատահական պէտք է համարել վրց. աղղաղադեբա «աղաղակել», ՝աբաբ. ‘av‘ava «հաչիւն», քրդ. lōlō, lelī, ōlōlō, ōlelī «ո՛վ, ա՛յ»։

ԳԻՒՒ.—ՋԲ. աղաղօգ, աղաղօգ։—Նոյն բառն է և երև. աղաղաճ «լաց, ողբ, վայնասուն», որ Ամատունի, Հայոց բառ. 17 բ համարում է «անէծք, հայհոյանք»։

ԱՂԱՂԱՆՁ «մի տեսակ թռչուն է». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Անան. գիտ. 8 «Յորժամ աղաղանչք ձայն առնեն ընդ առաւօտս՝ ձմեռն նշանակէ. յորժամ ՝առ ծովեղերք թևովք զջուրսն հարկանեն, զյուղմունս ամպոց նշանակէ»։

ԱՂԱՂՄԱՂԱԿԵԼ «աղմկել, աղմուկ հանել». մէկ անգամ ունի Ոսկ. երբ. էջ 512 «Այլք արբենան և բարբաջեն, և այլք աղաղմաղակեն» (յն. θορυβέομαι «աղմկել»)։

=Թուի կրկնականը աղմ– արմատի՝ որի վրայ տե՛ս աղմուկ։

ՆՀԲ «իմա՛ կամ ընթերցիր աղմկել»։ Վերի ձևով մեկնեց Աճառ. MSL 20, 160։

ԱՂԱՄԱՍՈՒԿ. պահուած միայն աղամասուկ ածել «խառնակել, տակնուվրայ անել» ոճով, որ մէկ անգամ միայն ունի Ոսկ. եփես. 895 «Զբնաւն եղծանէ, յամենայնի վերայ աղամասուկ ածիցէ»։

Ազամար տե՛ս Ախմար։

ԱՂԱՄՈՂ. անստոյգ իմաստով բառ է. հնագոյն գործածութիւնը և հարազատ նշանակութիւնը «մոլորիլ, շեղուիլ, ծռիլ, խոտորիլ» երևում է աղամողիլ բայից՝ հետևեալ օրինակներում «Զուղղորդ ճանապարհն գնայցեն և չաղամողիցեն առ անտեղեկութեան. ի մատաց այլուր աղամողելոյ» Ոսկ. մ. ա. 6. 13.—երկրորդ՝ «ցրուիլ, ցնդիլ». «Բաղում հետք են աղամողեալք յամենայն կողմանս. Վեցօր. բ. 190 «Մի՛ ոք այսուհետև լիցի յարդ և մի՛ այսր անդր աղամողեալ իբրև զունդ». Ոսկ. մ. ա. 11։ Այս իմաստն ունենալու է նաև աղամողումն «ցրուումն» «Յարդգողի ծիր, ոմանք կարծեն զոլ լուսոյ աղամողումն, զոր աստեղքն փայլակենն». Փիլ. նխ. բ. էջ 101. որի հետ համմտ. Շիր. էջ 47. «Սորին հրոյ սակի է զոր ցոլմունք աստեղաց անուանեմք. քանզի առ ի յոյժ բախմանց շրջագայ պարունակացդ շարժելով զյարմարական գնացս՝ երևումն լինի վերին լուսոյն... և ի յաղամողել լուսոյն է առ փայլատակիւն՝ առ ի ցրուել ուժգնութեան օդոյն»։ Նաև Շիր. էջ 66 աղամողել ձրոյ «ցրուման հրոյ»։ Ցետին հեղինակները սակայն գործա-

ծում են զանազան իմաստներով. այսպէս՝ Փիլ. այլաբ. էջ 165 օձի շարժումների մասին խօսելով ասում է. բազմաման և շաղապատ, և աղամող բազմապատիկ, որպէս օձին շարժումն։ Այստեղ կարող էինք աղամող բառն ըստ հին նշանակութեան դնել «ծուռ ու մուռ», բայց յն. բնագիրն ունի «խաւտուտիկ, գոյնըզգոյն», և ըստ այսմ նշ. եզեկ. մեկնում է «բազմագունի, աղամող՝ ըստ Ակիւղասայ». Հին բռ. մեկնում է «գելաթիւր կամ անդարձ» (ուզում է ասել «շատ ոլորուն»)։ ՀՀԲ, որից և ՓԲ. մեկնում են աղամողել «մթնել, սևանալ», որ յայտնապէս սխալ է։ ՆՀԲ աղամող «խաւտուտիկ», աղամողիլ «այլայլիլ, այլափոխիլ, այլագունիլ, ծածանիլ, խառնակիլ. 2. խոտորիլ, մոլորիլ, տատանիլ, ցնդիլ», աղամողումն (լուսոյ) «տատանումն»։

ՆՀԲ մեկնում է իբր այղումայղ, այլևայլ։ Այվազովսքի, Յղ. հնչման, էջ 8 նոյն ընդ աղաւաղ։ ԱԲ «աղեաց պէս ծուռ և գալարուած» ասելով՝ հանում է աղիք բառից։ Հիւնք. մղեղ «փոշի» բառից։—Թերևս կապ ունենայ մող «ծուռ» բառի հետ։

*ԱՂԱՆ «ազնուական, իշխան». անծանօթ և առանձին անգործածական բառ, որ պահուած է միայն Բուզ. Դ. բ աղանազգի բառի մէջ, որ Թարգմանում եմ «ազնուազգի, ազատազգի»։ Նոյն բառն է նաև Աղան յատուկ անունը, ինչպես ունինք իշխան, իշխանիկ՝ իբրև յատուկ անուն։—Նոյն բառից ազդուելով սխալ գրուած է աղանադրօշ Բուզ. Դ. բ, որ ըստ իս պէտք է ուղղել աղաւնադրոշ (Բանաս. 1904, էջ 99)։

=Ասոր. ܥܠܳܐ ʿalāñā «իշխան, գլխաւոր. dux, superior. 2. եկեղեցական հովիւ, pastor, clerici praeter episcopum» (Brockelm. Lex. syr. էջ 250)։—Ա՛ճ.

ԱՂԱՆԴ, ո, ի-ա, յետնաբար նաև նաև ի հլ. «սուտ կրօն» ՍԳր. Սեբեր. եզն. Ագաթ. «2. աղանդաւորների խումբը» Գծ. Ագաթ. եզն. «Ձկախարդանք» Նար. Վրք. Հց. «4. մաքուր և հշմարիտ կրօն» Տիմոթ. կուզ, էջ 255 (Արհամարհեցան հարանցն աղանդք, առաքելական աւանդութիւնք անարգեցան)։ Որից աղանդաւոր եզն. աղանդագործ Ոսկ. աղանդամիտ եզն. չարաղանդ ՅՀ. իմ. բաղդէաղանդ Փիլ. իմաստ. այլաղանդ Ոսկ. եբր. 477. Եփր. Համաբ. 27. անաղանդ հաւատք «մաքուր կրօն» երզն. մոթ. 373. աղանդութիւն Ոսկ. Բուզ. աղանդել «տղանդ հնարել, կախարդել» Պիտ. Կանոն. «պատմել, քարոզել» Տիմոթ. կուզ 164 (Երանելին Կիւրիղղոս ամենայն ուրեք մի որդի, մի Տէր աղանդէ). աղանդիճ «կախարդական բաներ» Յայսմ. Ճառընտ. աղանդասար երզն. մտ. (ինչպէս կախարդասար՝ կազմուած սար բառով, որ Հիւբշ. 236 համարում է պրս. sar «գլուխ», իբր «աղանդապետ»)։

ՆՀԲ մեկնում է այլ ընդ այլոյ (կրօնք), յն. αἵρη, αἵρεσις «սխալանք» և թրք. آل āl «խարէութիւն», بلغ γalat «սրխալ» բառերով։ Spiegel (Gram. huzv. spr. 1856, էջ 189, Litteratur 11, 470) սխալմամբ կարդալով ազանդ՝ համեմատում է zand «գանդիկ» բառի հետ. Müller SWAW 42, 257 պրս. رند rind «ճգնաւոր» բառից! Ալիշան. Հին հաւ. 12 աղօթք, աղերս, աղաչանք և աղու, աղաւնի բառերի հետ։ Հիւնք. պրս. آغنده āγunda «թունաւոր մեծ սարդ» !! Pedersen, Հայ. դր. լեզ. 226 դ ածանցով յն. πλανάω «մոլորիլ, շեղիլ»։

ԱՂԱՆԴԵՐ «կերակրից յետոյ քաղցր ուտելիք, մրգեղէն ևն. dessert» Բուզ. ե. 7. Ոսկ. ճառք, էջ 403. գրուած նաև աղբնդեր ԱԲ կամ աղանդէր ՋԲ։

Pedersen, Հայ. դր. լեզ. 226 աղանդ բառի հետ։

ԱՂԱՆՆԱԼ «ի բացեայ եդնալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 10։ Ակինեան ՀԱ 1930, 493 բառիս համար տալիս է մի այլ ընթերցուած՝ «Աղանդեալ. ի բաց եդեալ». սրանով կապում է աղանդ բառին, իբր թէ «ի բաց եդեալ գհաւատս»։

+ ԱՂԱՆՁ «խարկած ցորեն» և սրանից աղանձիլ «այրիլ, խարկիլ» Ոսկ. եբր. 528. աղանձեցեալ Նիւս. կազմ. ոամկաբար աղրնձել կամ աղնձել «խարկել» Վասկ. Մխ. բժշ.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. lndh-ձևից, որ սոորին ձայնդարձն է lendh-«կերակուր պատրաստել, խորովել» արմատի. ժառանգներն են սանս. randh-«եփել, կերակուր

պատրաստել», randhana -*«եփուածք, կերակրի պատրաստութիւն»*, randhi -*«եփելը»*, *յն. λάσανα, գւտ. lasca «կաթնասի եատուանի»* (<*lạ̈dh- ~ <*հնխ.* lṇdh-), *հպրուս.* landan *«կերակուր»*, *իռլ. հկորն.* lann *«տապակ»* (Pokorny *2, 439*, Boisacq *558*)։ *Հայերէնի վերջաձայնի փոփոխութեան համար հմմտ.* փոխինճ և փոխինդ. ա *յենարանը դրուած է դ ձայնի պատճառաւ. առանց յենարանի ձևը և նախնական նշանակութիւնը պահած է հայերէնից փոխառեալ վրաց* ლანძგი *լանձվի «տապակ, կասկարայ»*, ლანძგა *լանձվա «մի քիչ այրել՝ խորովել»*։— *Աճ.*

Պատահական նմանութիւն ունի լտ. polenta *«փոխինդ»*, *որ* *polnta *ձևի տակ կարող էր տալ հյ.* *աղանդ>աղանճ։

Նշ՛ր լծ. խանճեալ, *Ջր* աղ և խանճ *բառերից։ Գազանճեան, Արև. մամուլ 1902, 74* ա +խանճել։

Գիւր.—*Ալշ. Երև. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն.* աղանճ. *Շմ.* աղանճիլ, *Խրբ.* աղրնճիլ, *Ագլ.* բղա՛նճիլ, *Հճ.* աղոնճ. *Ակն.* աղուճն *«փշրուած կորկոտ»*, *Ջր.* աղրնճիլ *«աղանձել»*, *իսկ* գօգաղրնճիլ *«մարմնի քոր գալը». սրա վրայ ընդարձակ տե՛ս* եռալ։ *Ունինք նաև գւտ.* եղնճել *Բն. «եղիպտացորեն խորովել», որի վրայ տե՛ս* եղինճ։

Փիհ.—*Վրաց.* ալանճվա *«խարկել, բովել, կերակուրը այրել»։*

ԱՂԱՆՈՒԻ *«մի տեսակ գունաւոր կաւ» (կարող է լինել կարմիր, սպիտակ, մոխրագոյն, կանաչ, ևն. հին ժամանակ գործածւում էր իբրև դեղ). նորագիւտ բառ, որ ունի միայն Պիսիդ. Վեցօր. տող 1531, իբր յն.* βῶλος, *ֆր.* bol, *տճկ.* բրնի մախտում։

ԱՂԱՋԵԼ *«խնդրել, աղերսել» Սգր. Ագաթ. եղն. որից* աղաչիլ *«մէկից աղաչուիլ» Ոսկ. (միջին հյ.* աղչել *Անսիպք 41),* աղաչանք *«աղերսանք» Սգր. «երաժշտական դկ ձայնին պատկանող մի տեսակ եղանակ» Մանրուս. (տե՛ս Ամատունի, Հայ. բառ ու բան, էջ 18 բ).* աղաչելի *Ոսկ.* աղաչաւոր *նար.* աղաչելութիւն *Արծր. բուն արմատն է* աղ-*կամ* աղա-, *որից չ յօդակապով* աղաչել *(ինչ. ճանաչել, ամաչել, փախչել, թաքչել), օք մասնիկով՝* աղօք *(հմմտ. ճանաչել>* *ծանաչել—ծանօք, ամաչել—ամօք), գործածուած աննեզաբար՝* աղօթ *Սգր. Ագաթ.* աղօթաբուղխ *Ագաթ.* աղօթակեր, աղօթկեր, աղօթկեար, աղօթկիր *Բուզ. Եւս. քր. Սերեր. յետին են* աղօթել, աղօթարան *են։*

Müller SWAW *38, 589 լտ.* oro *«աղաչել» բառին ցեղակից. (մերժում է* Lag. Arm. Stud. *§ 52 ասելով՝ որ լտ.* oro *գալիս է բուս* Corssen KZ *11, 336* os *արմատից, ուստի ամենևին նման չէ հայերէնին)։* Ascoli KZ *16, 448 կցում է սանս.* arčh, *յն.* ἄρχ-εσθαι *բառերին. հյ.* աղաչել *դնում է=առաջել «angehen, դիմում անել»։ Տէրվ. Նախալ. 32, 62 հյ.* աղէ, աղմուկ, աղաղակ. *սանս.* ār *«օրհնել»,* are *«օ՛ն», յն.* ἀλαλά *«աղաղակ»,* ἀρά *«աղօթք» բառերի հետ, հնխ.* *ar *«օրհնել, աղաչել» արմատից։* Bugge, Beitr. *36 նոյնպէս դնում է հնխ.* ar *արմատից. հմմտ. յն.* ἀράομαι *«աղօթել, աղաչել»,* ἀρά, ἀρή *«աղօթք, խնդիրք, աղաչանք»,* ἀρατικός *«աղաչական»։ Հիւնք.* ուխտ և աղօթ *բառերից։ Հալաճեան, Արևելք 1893 նոյ՛ 10* աղու աչ։ *Շէֆթէլովից* BB *29, 48 սանս.* āryati *«փառաբանել»։ (Այս բառը ցեղակից է վերի յն. ձևերին, որոնց միանում են նաև լտ.* oro *«ասել, խօսել, խնդրել, աղաչել», ռուս.* ору, орать *«բղաւել». բայց հայերէնը կապ չունի նրանց հետ)։* Pedersen, *Հայ. գր. լեզ. 91* ողոք *բառի հետ։ =լտ.* loquor *«խօսիլ»?* Karst, *Յուշարձ. 417 թրք.* yal var-maq *«աղաչել»։* Charpentier IF *25, 242 սանս.* lapati *«խօսիլ, շաղփաղփալ»։* Oštir, Wörter und Sachen *3, 204 հսլ.* plačǫ, plakati *«ողբալ, լալ»։ Մառ* ЗВО *25 (1921), էջ 25 վրաց.* ლოცვა *լոցվա «աղերս, աղաչանք», բառի հետ։* Pokorny *1, 182 մերժում է լտ.* oro, *յն.* ἀρά *են։*

Գիւր.—*Հճ. Մշ. Ջղ.* աղաչել, *Ախց. Երև. կր. Ննխ. Պլ. Ռ.* աղաչէլ, *Ջր. Համշ. Շմ. Ոզմ.* աղաչիլ, *Ալշ.* աղաջ՛ել, *Սլմ.* ադաչել, *Մրղ.* ադաչէլ, *Տիգ.* ադաչիլ, *Մկ.* ադաճիլ, *Վն.*

աղաճանճ, Ագլ. ըղա՛ճիլ, Գոր. Ղրբ. ըղա՛շանճ, ղա՛շանճ (իսկ ղա՛շանճ անիլ «աղաչել»), Սեբ. ախշէղ, Տփ. աղաշանճ, աղանշաճ, Հւր. աղանշէլ:— Աղօթք բառի ձեվերը տե՛ս առանձին:

Աղապատանք տե՛ս Աղիք:

Աղապէտ տե՛ս Աղ:

ԱՂԱՊՐԵԱՅ «թացեալ», ունի միայն Բառ. երեմ. էջ 10:

ԱՂԱՏԵԼ «դառն ողբալ» Սասն. 72. հմմտ. աղատ Գնձ. «սէր, գուրգուրանք», աղատ աղատ Ղզ. Ղրբ. «դառնագին, սրտաճմլիկ (լալ)», աղատ անել Գնձ. «գուրգուրալ», աղատով Ագլ. Ղզ. Ղրբ. «սրտալի, աղիողորմ ձայնով (լալ)», աղատով լինել Ղրբ. «շատ սիրել, վրան գուրգուրալ», աղատպաղատ Ղրբ. «աղաչանք-պաղատանք», աղատիլ Վն. «աղերսել, աղաչել, պաղատիլ»: Կայ և Հճ. Զթ. աղրդ «ողբ»:

*ԱՂԱՐԻԿՈՆ «մի տեսակ սունկ» Մխ. բժշ. գրուած նաև ախարիկոն, դարիկոն:

= Յն. ἀγαρικόν, լտ. agaricum. Ֆր. agarie, իտալ. agarico, արաբ. պրս. غاريقون ġārīqūn, բոլորն էլ նոյն նշանակութեամբ:— Հիւբշ. 339: Ըստ իս փոխառեալ է ո՛չ թէ յն. ἀγαρικόν ձևից, ինչպես ընդունուած է, այլ արաբ. غاريقون āġārīqōn ձևից, որ լիշում է Seidel § 323. բժշկարանների փոխառութիւնները աւելի արաբերէնից են, քան թէ յունարէնից: Այսուհետ կարևոր է յատկապէս նկատել ղ ձայնը, որի դէմ յունարէնն ունի γ:— Աճ.

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ:

Աղարտել տե՛ս Աղ. 6:

Meillet, Յուշարձ. 211 կցում է՝ սանս. arus «վէրք», հսլ. oriti, raz-oriti «քանդել» բառերի հետ, իբր կրկնութեամբ *արարտել, որից էլ տարանմանութեամբ աղարտել: Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 96 աղէտ բառից:

+ԱՂԱԻԱՂ, ի–ա հլ. «փճացած, այլասերուած, տկար (մարմին)» Փիլ. լին. որից աղաւաղել «ապականել, փճացնել» Եզն. Եղիշ. «մերժել, արհամարհել» Եղիշ. «կասեցնել, յետ կեցնել» Յհ. կթ. աղաւաղիչ «փճացնող (կարկուտ)» Լմբ. սղ. աղաւաղութիւն «վատուժութիւն» Նիւս. կազմ. աննաղաւաղելի (նորագիւտ բառ) Լմբ. մատ. էջ 3:

=Կրկնուած է այլ բառի երկրորդական աղ ձեւից, որ առանձին անգործածական է. ըստ այսմ բառի հնագոյն ձևն է աղևաղել և նոյն է այլայլել (=այլևայլել) բառի հետ: Նշանակութեան զարգացման համար հմմտ. այլայլիլ բառի առումները հետևեալների մէջ. «Ապականեն զհոգին և այլայլեն զմիտսն» Վրք. հց. «Զպատակեր պատուոյն. այլայլեալ» Նար. «Կերպարանին այլայլեալ տգեղանայր ձև» Յհ. իմ: Թէ այլ բառը կարող էր նաև ունենալ աղ երկրորդական ձևը՝ հմմտ. թոյլ—թող, փայլ—փաղ, նշոյլ—նշող, յոյլ—յողալ. հներից իրօք էլ աւանդուած է աղևաղել «այս ու այն տեղ թափթփել» Ոսկ. Հերոդ. 617:— Աճ.

Այվազովսքի, Յղ. հնչման, էջ 8 նոյն ընդ աղամոդ: Հիւնք. աղամոդել բառից: Bugge, Btrg. 22 յն. ἀλαπάζω «աւարել, փճացնել», ἀλαπαδνός «թոյլ, տկար» ձևերի հետ՝ իբր բնիկ հայ, աղաւ արմատից. վերջին -աղ մասնիկի համար հմմտ. աւաղ: Pedersen, Հայ. դր. լեզ. 57 մեկնում է աղա-ւ-աղել, որի պարզ արմատը գտնում է յեղում, եղանիմ բառերի մէջ:

ԱՂԱԻՆԻ (նոյ, նեաց) «աղաւնի թռչունը, դոխ» ՍԳր. ածանցման մէջ մտնում է երկու ձևով. 1. աղաւնե. ինչ. աղաւնեակ «փոքրիկ սիրուն աղաւնի» Երգ. ր. 14. աղաւնեկ «երաժըշտական ԱԿ ձայնին պատկանող մի եղանակ» Մանրուսմն. (ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 18 բ). աղաւնեվանառ ՍԳր. գրուած նաև աղաւնէվանառ, ինչպես և աղաւնէառուն Վստկ. 2. աղաւնա—ինչ. աղաւնակէրպ Ագաթ. աղաւնաձև Մ. մաշտ. 173 ա. աղաւնաձագ Գնձ. աղաւնաւոտ կամ աղաւնիճ «մի տեսակ խոտ» Գաղիան. բժշ. (այս բոյսի անունը ուրիշ լեզուներում էլ ծագում է «աղաւնի» բառից. ինչ. յն. περιστερεών, իտալ. erba colombina, գերմ. Taubenkraut, Թրք. güvercin otu, որ է Ֆրանս. verveina). առանձին մի ձև է աղուճաւոտ փխ. աղաւնաւոտ:

Ինճիճեան, Հնախօս. 9 21 աղու ուճի: Peterm. *29, 42 սասր.* ևա yaunā, *երր.* יונה yaune *«աղաւնի» բառից փոխառեալ:* Klaproth, Asia pol. *105 գոթ.* ahaks: Böttticher, Arica *67, 405 օսս.* balōn: Lag. Urgesch. Arm. *768 համարում է թէ բառը կազմուած է* labi *արմատից՝* ā *մասնիկով, ինչպես որ նոյն արմատից դնում է օսս.* balōn, *լատ.* palumes, columba, *հսլ.* goląbĭ *հոմանիշները՝ կազմուած* ava, upa, cum *մասնիկներով:* Lag. Arm. Stud. *§ 53 մերժում է այս. և ասորի ու եբրայական ձեվերին աւելացնում է պրս.* ևց vana *«վայրի աղաւնի», ասելով թէ այս բառերի մէջ անշուշտ մի կապ կայ. և թէ ա՛յն ժողովրդին է վերաբերում բառը՝ որ ընտելացրել է աղաւնին:* Bugge KZ *32, 1* աղաւնի *բառի առաջին նշանակութիւնը դնում է «սպիտակ» և ըստ այսմ մեկնում է լտ.* albus, *օսկ.* alafo, *յն.* ἀλφός, ἀλωφούς *«սպիտակ» ձեվերով, ինչպես որ սլաւ և գերման լեզուներումն էլ «կարապ» ծագում է նոյն* albho— *«սպիտակ» բառից. Համմ. հսլ.* lebedĭ, *հրգ.* albiz, *հիսլ.* alft՛ *ևն:* Müller SWAW *84 (1877), 226 օսս.* balan, *ինչ. լիթ.* balaudis = *հսլ.* lebedi: Pokorny *1, 93 մերժում է լտ.* albus *ևն ձեվերի հետ դնել հնխ.* albho— *«սպիտակ» բառից: Հիւնք. յն.* ἐλέvη *(Հեղինէ) յատուկ անունից: Հալաճեան, Արեւելք 1893 նոյ" 10* աղու հաւ. *Մառ* ИАН *1915, 940 սվան. մուգր «աղաւնի» ևն: Պատահական նմանութիւն ունին լազ. ալիոնի «mouette» և կազանի թթր.* ագուվն āguvun *«կաքաւ»:*

Գիւտ.—Պլ. աղավնի-խուշ *(միայն կրօնական պատմութեանց մէջ. վերջին մասն է թրք.* quš *«թռչուն»). Հճ.* աղվոնի, *Ակն. Ռ.* աղվրնի, *Զթ.* աղվրնը, աղվրնը, *Սեբ.* աղվրնիգ, *Խրբ.* աղվրնիգ՛, *Ննխ.* աղվէնիհ, աղունիհ, *Տիգ.* ողվրնիհ, *Ալշ.* յէղվրնեգ, *Մկ. Մշ.* էղվրնիկ, *Ագլ.* ըղօ՛նի, *Երև. Ջղ.* աղունիկ, *Տփ.* աղունակ, *Գոր. Վն.* յեղունիկ, *Սլմ.* յէղունիկ՛, *Ոզմ.* յեղունէ՛կ, *Ղրբ.* յեղօ՛նէ՛զ՛, ղօ՛նեզ՛ *Պրտ.* եղվրնագ: — *Աղաւնի բառը միակ բացառութիւնն է, որ արդի լեզուի մէջ չէ վերածուած *աղօնի ձևին, մինչդեռ ուրիշ ամէն տեղ աւ երկբարբառը բաղաձայնից առաջ դառնում է օ: Այս պատճառաւ Հիւբշման (անձնական) կարծում է թէ հին հայոց աղաւնի բառը հնչում էր *աղաւրնի: Այս ենթադրութիւնը հաստատւում է գւս. աղվրնի, աղվրնիկ, աղվրնը ևն ձևերով, որոնք ենթադրում են հնագոյն *աղուանի կամ *աղաւրնի. բայց սրանց հետ միաժամանակ անհրաժեշտ է ընդունել նաև ճիշտ աղաւնի հնչուած մի ձև, որից կանոնաւորապէս յառաջ է եկել *աղօնի և սրանից էլ Տփ. Վն. Ոզմ. Ղրբ. գաւառականների օ, ու պարունակող ձևերը:*

ԱՂԱՓ *«ամորձիքների պարկը, փոշտ,* scrotum». *ունին միայն Նորայր, Բառ. ֆր. 426 ա և ԳԲ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Տաթև. ամ. 178 «Միորձին փոշտանկն է, որ աղիքն յաղափն իջանէ, ծանրանայ և ոչ կարէ բայլել»:*

ԱՂԱՓԱՐԻԿ. *անստոյգ բառ. մէկ անգամ գործածուած է Մանդ. զ կամ ժզ. «Երկնչի յամօթոյն, աչքն պատրուակին, իբրև շուն ըմբռնեալ ի տեղիս (շնութեան)՝ ամօթովն աղափարիկ»: ՆՀԲ մեկնում է «շառագունել կամ մթագնիլ աչօք», ՋԲ «ամօթէն պահվըտուիլ», ԱԲ «խպնիլ» (ամաչել):*

ՆՀԲ կցում է յն. ἀλαωπός բառի հետ, որ բարդ բառ է և նշանակում է «կոյր». արմատն է ἀλαός «կուրանալ, չտեսնել». ոմանք այս յոյն ձևը համարում են λάω «տեսնել» բառից՝ ἀ բացասականով, ուրիշներ ἀλάομαι «վարանիլ, դեղեւիլ» բառից. երկու պարագային էլ անյարմար է կցել հայերէն բառին:

***ԱՂԲ,** *ո հլ. (յետնաբար ի հլ.) «աղտեղութիւն, կղկղղանք» ՍԳր. Ագաթ. որից* աղբանոց *Ոսկ.* աղբաբոյն ուռվայն *«քաղիբի կամ աղիք» Մանդ.* աղբիւ *«աղբ թափելու տեղ» Եփր. յոր (ներգ.* յաղբիսն ձևով. *Հրտր. ՀԱ 1912, էջ 669)* և աղբեւ *«աղբանոց» ՍԳր. (երկուսն էլ գործածուած միայն աննշաբար. յետնաբար ունինք նաև* աղբիւս, աղբիւսք, աղբիս, աղբևս, աղբիսք *ձևերը՝ որոնք յառաջ եկած են* աղբեւ *կամ* աղբիւ *բառերի հայցա-*

կանը (աղբևս, աղբիս) ուղղական դարձնելով (համմտ. չnrf–չnrս) և նրանից էլ նոր յոգնակի կազմելով (աղբիսuf, աղբիսf), գաղբիս մեծացուցանել *«ուտելիքով փորը տկռեցնել»* Լաստ. յե. աղբախուղբ *«աւելած ժեխ»* Փիլ. էջ 199. աղբել *թրքել (ոչխարի կամ մարդու) (չունին բառարանները)* Ուռհ. 141, 295. *«հողը աղբով պարարտացնել»* Վստկ. աղբեղէն *«ոչինչ, անարժեք, Պլ. քաքէն բան»* Ա. մակ. բ. 62. աղբագոյն *(նորագիւտ բառ)* Անկ. գիրք առաք. 102. աղբոց *«արտաքնոց»* Ճառընտ. աղբիճ *«աղբով պարարտացրած (հող)»* Վստկ. աղբաճար *«աղբանոց»* (նոր բառ). առանց յօդակապի՝ աղբկուտոց Յայսմ. կրկնութեամբ՝ աղբաղբուտ *«աղբոտ»* Ոսկիփ. Թերևս նաև աղբաղբուկ կամ աղբղբուկ *(գրուած նաև աղաբղբուկ)* (ՀԲուս. § 48). *անստոյգ բառ. Գաղիանոս գործածում և մեկնում է հետևեալ ձևով. «եւիսբու. աղբղբուկ» կամ «Ալշփոյ. աղբղբըկի հունդ, ապամ կոմաճի», Ստ. Կամեն. հասկանում է «*valeriana *բոյսը». ՆՀԲ «աղտ պղնձոյ և այլոց իրաց... 2. անուն խոտոյ»,* ըստ ՋՔ «valeriana. *2. մետաղի կղկղանք?»,* ըստ ԱԲ *«հանքերու աղտ, դիրտ. 2. բժշկական արմատ մը ծագիկն անուշահոտ, տճկ. քէտի օթու». Վրուրի Որմգդանայ Բուրաստանք, Ա. տող 27* աղբղբուկ *«հաւու ծիրտ»։ Բառիս վրայ մի առանձին քննութիւն ունի Նորայր, Արևել. մամուլ 1879, էջ 60, Մանկավրժ. Թերթ 1879, յունիս, էջ 18, Հայկ. բառաբան. էջ 104 և Մասիս 1880 յուլ. 4, որոնց մէջ հերքելով «աղտ, դիրտ և ծիրտ» ենթադրական նշանակութիւնները, հիմնւում է Գաղիանոսի «իւիսբու, ալշփոյ» հոմանիշների վրայ.* եւիսբու *բառը հասկանում է յն.* իβίσκος, *լտ.* hĭbiscum, *որ է ֆրանս.* guimauve, *տուղտ, տճկ. կիւլհաթէմ։ (Բայց նկատում եմ, որ թէև յն.* ἰβίσκος *բառը* Bailly, Dict. gr. fr. *6-րդ տպ. էջ 956 բ և Λ.* Αεξανδιου λεξ. νεοελλην. και γαλλικον, Par s, *էջ 389 ա գնում են ֆր.* guimauve, *որ է տուղտ, բայց նրա հոմանիշ լտ.* hibiscum *բառը* Quicherat, Dict lt.-fr. *47-րդ տպ. էջ 620 մեկնում է «*sorte de mauve*», որ է մոլոշ, տճկ.* ebem gümeli *(Գաղիանոսի ապամ կոմաճին) և հյ.* բաղբաf: *Նորայրին պատասխանում է Ուղուրիկեան, Մասիս 1880, յունիս 24, որ մերժում է տուղտը և հաստատում* valeriana officinalis. *բոյսի անունն էլ (աղբ բառից) աղիքների ճճիները արտաքսելու յատկութիւնից առնուած է համարում։* եւիսբու *ձևը առաջարկում է կարդալ էլ իսուն, որ է Պլինիոսի, Դիոսկորիդեայ, Գաղիանոսի և Մեսուէի ասարոնը. իրօք էլ այս բոյսը իր բարկ հոտի համար հներից ոմանք նմանեցրել էին* valeriana*-ին։ Ըստ Բենսէ, Ազգ. հանդ. ե. 19 Բուլանըխում* աղբաղբուկը «sisymbrium Sophia» *բոյսն է. ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 19 բ Շիրակում և Սիփանում նշանակում է «ցանցառ, բարակ ոստերով, դեղին ծաղկով բարձր խոտ, որից տան աւել են շինում»։*

=Կովկասեան լեզուներից փոխառեալ բառ է. համմտ. լազ. lebi *«կեզտ»,* lebiari, leboni *«ապտուտ, կեղտուտ»,* ulebu *«կեղտոտուել»* (Ajarian, Etude sur la langue laze, *էջ 37). Հայերէնը չունենալով բառասկզբում* z՝ *ըստ օրինի աւելացրել է նախաձայն* ա, *բայց առանց նախաձայնի ձևը պահուած է գաւառականում. այսպէս Ղրբ. լեռ «դիրտ, մրուր, հիւանդութեան ժամանակ լեզուի վրայ գոյացած կեղտը», լեպաճ «օճառ եփելուց յետոյ տակը մնացած դիրտը», լեպակալել «ցեխոտիլ, լեզուի վրայ հիւանդութեան պատճառաւ կեղտ կապել»։ Այս բառը թէև չկայ վրացերէնում, բայց լազերէնը հայերէնից փոխառեալ չէ, ինչպէս ցոյց է տալիս նախաձայն* ա*-ի բացակայութիւնը։ Հայերէնը փոխառեալ է այժմ կորած կովկասեան մի լեզուից, որից ի դէպ է գալիս այն հանգամանքը, որ բառի աւելի նախնական ձևը (լեպ), այժմ էլ գործածական է միայն Ղարաբաղի բարբառում։—Աճ.*

Windisch. *18 լտ.* alvus *«փոր, արգանդ ևն» բառից։ Հիւնք.* աղբիւր *բառից* աղբիւս *և սրանից էլ* աղբ: Bugge, **Btrg.** *35 յն.* ἀφρός *«փրփուր» բառին ցեղակից, որ մերժում է Հիւբշ. 417։ Նոյն,* Lyk. Stud. *2, 18 գտնում է* ὄλβη *քաղաքի անուան մէջ։* Liden, Stud. z. altind. *էջ 30 լիթ.* al-mens *«մեռելի շա-*

բաւ», մրգ. ulmec *«հոտած» ևն բառերի հետ։* Peterson KZ *47, 25 ընդունում է* Liden*-ի մեկնութիւնը և միացնելով աղտ բառին՝ երկուսն էլ դնում է հնխ.* el, ol*—«թրջիլ» արմատից։ Լազերէն բառի հետ համեմատութիւնը տուած եմ նախ* Etude sur la langue laze, *էջ 37 և Արրտ. 1911, 418։*

Գիմ.—Ալշ. Կր. Սեբ. ախր՝, *Ախց. Երև.* ախպ, *Ոզմ. Ռ. վն.* ախփ *«պարարտութիւն», Ակն.* ախփ *«մարդու և անասունների աղբ», Տփ.* աղպ, *Ջթ.* օխր՝, ոխր՝, *Հճ.* օխր՝, *Ասլ.* ախ* *«ձիու, կովի, ոչխարի աղբ»։ Ագլ. չունի այս բառը։ Բառի նախնական իմաստը ցոյց են տալիս* աղր-ժախ *Սեբ. «աղբ և նմաններ, նետելու բաներ, չօր-չօփ»,* աղրոտ *Ղզ. «կեղտոտ», Սեբ. «անպէտ մասեր՝ բար են շատ պարունակող (ցորեն, ընդեղէն են)» (Համմտ.* աղրոտ *«կեղտոտ» Ոսկիփ.) և Խրբ.* ախփ *«ժեխ, աւլուք»։ Կրճատ ձև է արիկ Մնճ. «աթար» փխ.* աղրիկ։ *Նոր բառեր են* աղրախոտ *(Ղրբ.* բխպա՛խօտ, *Ագլ.* բխպա՛խուտ *«մի տեսակ վայրի խոտ», Համմտ. գրբ.* աղրդրուկ*),* աղրիճ, աղրնոց, աղրուն, աղրտուխ, աղրոտացնել *են։*

Փոխ.—Քրդ. axpîn *«պարարտութիւն, ժեխ»,* axpîn dâin *«աղրել, հողը պարարտացնել», Բրբ. գւռ. Կր.* աղր *(Բիւր. 1898, 626), Սեբ. Տր.* axpun *«աղրուն, արտի համար պատրաստուած աղր, պարարտութիւն»,* axpunlamak *«աղրունել, արտը աղրով պարարտացնել» (Յուշարձ. 328). այս բոլորի համար Համմտ. յատկապէս գւռ.* աղր *(ախփ) «մոխրախառն կղկղանք արտաքնոցներում»,* աղրուն *«արտերը պարարտացնելու համար պատրաստուած աղբ»,* աղրուներ *«արտը պարարտացնելու համար աղր փռել»։ Սխալւում է* Krälitz-Greifenhorst *ZU 1911 260՝ որը կարծում է թէ Բրբ.* axpun *յառաջացած է հյ.* աղր*-ն որոշեալ ձևի վրայից։*

*ԱՂԲԵՍՏՐՈՅ *«կիր» Գաղիան. ունի միայն Բառ. երեմ. յաւել. էջ 573։*

=Յն. ἀλάβαστρος *«կրաքին քար». աւելի ընդարձակ տե՛ս* ալապաստր։ *Ա.Ճ.*

+ԱՂԲԻԲ, ր *հյ. «ջրի աղբիւր» Սգր. Եղն. Ագաթ. Հնագոյն ձևն է* աղբեր*, որից յետնա-*

բար աղբեր *(ուղ.) և* աղբիւր*։ Ածանցման մէջ մտնում է երեք ձևով. 1.* աղբեր*-. ինչ.* աղբերակ *Սգր. Ոսկ. ևս.* աղբերացնել *Խոր.* աղբերանոս *Շար. 2.* աղբիւր*-. ինչ.* աղբիւրակն, աղբիւրացնել, աղբիւրանալ*. 3.* աղբեր*-. ինչ.* աղբերուկն, աղբերացուցանել, աղբերանալ*. սրանց մէջ հնագոյնն է* աղբեր*- ձևով կազմութիւնը. միւսները յետնաբար այլափոխեալ գրչութիւններ են։ Հետաքրքրական ձև է* աղբրիար *«հարբուխ» (Թորոսեան, Տետրակ Համ. բառարանի, 1794, էջ 19)։*

=Հնխ. bhrevr̥ *ձևից. համմտ. յն.* φρέαϛ *«ջրհոր, ջրամբար», հոմեր.* φρεῖατα*=*φρήατα*, որ գալիս է յն. *φρᾱτ̣ϝαρ նախաձևից և ենթադրում է հնխ.* bhrēvr̥*, սեռ.* bhrēvn̥tos*. մեր բառը գալիս է հնխ. ուղղական* bhrevr̥*, սեռ.* bhrevros *ձևից, որ մեր մէջ դարձել է նախ *բրեր, տարանմանութեամբ *բղեր, տեղափոխութեամբ *դբեր և ա յաւելուածով* աղբեր*. միջին *բղեր ձևը ցոյց է տալիս կապադովկեան յն.* πλευρὸν *«աղբիւր», որ բուս* Karolides *փոխառեալ է հայերէնից։ Հնդեւրոպական նախաձևի սոսրին ձայնդարձից յառաջացել են գոթ.* brunna*, հրգ.* brunno*, անգսք.* burna*, գերմ.* Brunnen *«աղբիւր»։ Բոլորի պարզական արմատն է հնխ.* bhreu *«եռալ, պղպջալ, խմորիլ», որի ժառանգներն են ի մէջ այլոց՝ գերմ.* brauen *«գարեջուրը պաղպաղացնել», ալբան.* brum *«խմոր, թթխմոր», լտ.* fervo *«եռալ», բրբտ.* broud *«տաք տաք», գերմ.* brodeln *«եռալ, եփիլ», հիսլ.* broð*, հրգ.* prod *«խաշու», հիսլ.* brauð *և նրգ.* Brot *«հաց» (իբր «խմորուն»), Բրակ.* βρῶτος *«մաճառ», ռուս.* брять *«հոսել, խոխոջել» են։— Հիւրշ. 415։*

Windisch. *18 լտ.* alveus *«գետի տաշտը», հհիւս.* alf*, elf և յն. *Ἀλφεῖος «գետի անուն և գետի աստուած»։* Lag. urg. Arm. *808 սկանդինաւեան* alf*։* Müller KZ *5, 108 նոյն է դնում հյ.* աղր*,* աղբիւր*, զնդ.* awra*, պրս.* ابر abr *«ամպ», յն.* ἀφρός *«փրփուր, կեղտ», որով* աղբիւր *համարում է իբր «փրփրուն»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* H. Ebel, BVS *8, 368։ Ալիշան, Հին հաւ. 53 եղրայր բառի հետ, իբր թէ* աղբիւր *«եղբայր Հրոյ»։ Հիւնք. յն.* Ἀλφεῖος *գետի*

անունից: Տե՛ս Pokorny 2, 168, Boisacq 1037, Ernout-Meillet 338, Walde 225, 286, Berneker 88:

Գիմ.—Տփ. աղբուր, *Ասլ.* ախբիւր, *Ագլ. Գոր. Ղրբ. Գղ.* ախպիւր, *Պլ.* ախբուր, *Կր. Համշ. Զղ. Սեբ.* ախբ'ուր, *Ախց. Երև. Շմ.* ախպուր, *Ռ.* ախփուր, *Ալշ. Մշ.* յախբ'ուր, *Մրղ. Սլմ. Վն.* ախպիւր, *Տիգ.* ախփիւր, *Ակն. Խրբ.* ախբ'իր, *Նբ.* ճախպուր, *Մկ.* ճոխպիւր, *Ոզմ.* ճախփիւր, *Հճ.* ախբ'իյ, *Զթ.* ախբ'ըյ, ախբ'ըր:

Աղբուն տե՛ս Արբուն:

ԱՂԵԿԱՅ *«ուժգնութիւն», ունի միայն Բառ. երեմ. 11:*

***ԱՂԵԿԱՏ** *«մանելու իլ. րոք»* Վրք. Հց. *ա. 304. գրւում է նաև* աղէկատ, աղէկանդ *Արիստ. աշխ. սրանից* աղեկատիկ *բոյսը «sphondylium կամ* branca ursina*» Հրուս. § 54:*

=Յն. ἀλεκάτη, *ուիլի սովորական ձևով* ἡλακάτη *«իլ», որի ծագումը ոմանք դնում են հնդեւրոպական նախալեզուից (համմ. լիթ.* leñktis *«վիլակ»), ուրիշներ համարում են փոքր-ասիական մեռած մի լեզուից փոխառութիւն (տե՛ս* Boisacq, *էջ 318):— Հիւբշ. 340:*

Pictet *2, 161 «Թուի յունարէն»:* Pictet *բ տպ. հտ. Բ. 213 Թևրևս յն.* ἡλακάτη *հոմանիշից փոխառեալ, որի հետ համմտ. հյ.* եղէգն: *Ուղիղ մեկնեցին Այվազովսքի, Յղ. հնչման էջ 14 և Հիւնք:*

***ԱՂԵՂ** *«մի տեսակ ակունք» Առաք. պտմ. 457. Աղեղն կարմիր լինի, բայց կարմիր և ալ լինի. լաւն մէկ դոյն լինի և առանց տամարի:*

=Արաբ. عقيق ʿaqīq *«սարդիոն», որի աղաւաղեալ ձևն է ոճկ.* hakik, *պրս.* aγīγ. *վերջինից էլ ձեւացած է հայերէնը:—Աճ. Այս մեկնութիւնը ինձնից առաջ տուել է Պատկ.* Драгоц. камни. *33:*

ԱՂԵՂԱՅ *«սգաւոր». ունի միայն Բառ. երեմ. էջ 11:*

Աղեկարծ տե՛ս Յեղ, յեղակարծ:

ԱՂԵՂՆ, ն *հ. (սեռ.* աղեղան*)* *«նետ նետելու գործիքը» ՍԳր. Եղիշ. «ծիածան» ՍԳր. Ոսկ. «բուրդ կամ բամբակ գզելու գործիք» Վստկ. որից* գեղեցկաղեղն *Խոր.* աղեղնաւոր *ՍԳր. Եղիշ.* աղեղնել *«բամբակը գզել» Ա.Բ.* դիպաղեղն *Խոր.* ֆաչաղեղն *Խոր. Մագ.* ճաստաղեղն *Խոր.* աղեղնակապարն *Ոսկ. Բուզ.* աղեղնադրօշ *Մեսր. նր.* տատաղեղն *«մի տեսակ թռչուն» Լաստ.* աղեղնաբաճել *«ընդդիմաբանել» Թէոդ. մայր. Գնձ.* աղեղնաձև *(նոր բառ):*

Schröder, Thes. *46 արաբ.* قوس ʿaqq *բառից:* Müller SWAW *88, 12 յն.* ὠλένη *«թեւ, բազուկ, ձեռք», լտ.* arcus *«աղեղն»:* Bugge, Btrg. *36 առնս.* arāla *«ծռած, կորացած» բառին ցեղակից, Հինդ. ուղիղ բառից:* Petersson, Ar. u. Arm. Stud. *101* -եղն *համարում է մասնիկ, ինչպէս և* տատեղն, ասեղն, բաղեղն, պեղեղն *բառերի մէջ:*

Գիմ.—Հճ. Մշ. աղեղ, *Ակն. Զթ. Խրբ. Կր. Զմ.* աղէդ, *Ալշ. Ոզմ. Վն.* աճեղ, *Ախց. Մկ. Սեբ.* աճէդ, *Տփ.* աճէդ, աճիղ, *Ասլ.* աղէ՛խ, *Ագլ.* ա՛ճիղ:—*Վն.* աճղան լար *(իբր աղեղան լար) կուսական կամարաւոր յօնքերի համար առուած:— Բառի զանազան նշանակութիւնները իրարից զանազանելու համար կազմուած են՝ նեա բառի բարդութեամբ՝ Սլմ.* նետաղեղ, *Ակն.* ձէդ վաղէդ, *Մշ. Զղ. Վն.* նետվաճեղ, *Երև.* նէտվա՛ճէդ, *Ոզմ.* նիտաճեղ, *Տփ.* նիտվաճիղ, *Ասլ.* նէդվաճճէդ, *Զթ.* նիդր'աղէդ, լրմր'աղէդ, *բոլորն էլ առաջին նշանակութեան համար:— Աղեղ «ծիածան» նշանակութեան համար ունինք՝ Ալշ.* աճէղճագ, *Ոզմ.* աճրղճակ, *Վն.* աճանկ, *Ագլ.* ըղիյօ՛կըն *և Ախց.* աղէղնավor:— *Երրորդ նշանակութեամբ է Ռ.* աճէղճագ, *որից* աղճել *«աղեղնել, աղեղով գզել»,* աղճուգ *«գզածի թափթփուքը», Ակն.* էղճիլ՝ *փոխանակ* (աղ)եղնել:

ԱՂԵՐՍ, ո *և* ի *հ. «աղաչանք, պաղատանք» ՍԳր. Ոսկ. ես. «գութ, ողորմութիւն» Սեբեր. (յաղերս ածիլ կամ խոնարհեցուցանել «աղաչելով ողոքել» ոճի մէջ), «շքմեղութիւն, ջատագովութիւն» ՍԳր. Ոսկ. «մէկի սիրտը շահելու համար տրուած ընծայ, նուէր» Խոր. Նար. «յարաբերութիւն» Ոսկ.*

Եբր. Հոսիթ. «աղաչական, մեղմ (ձայն)» Եփր. եղ. Եղիշ. որից աղերսել *ՍԳր.* աղերսալից *Եզն.* աղերսական *Ոսկ. ես.* աղերսաճճ. *Ոսկ. ոճով ասում է* յաղերս աճկանիլ, յաղերս մաուչիլ, աղերս լինել, աղերս արկանել *«աղաչել»։ Նոր բառեր են* աղերսագին, աղերսագիր, աղերսախառն *են։*

ՆՀԲ աղէտ, աղիտ *բառերից?* Bugge, Beitr. *36 կցում է* աղաչել, աղօթ *ձև. վերին։ Հիւնք. յն.* ἔλεγχος *«պատճառ, ապացոյց» բառից։ Հալաճեան, Արևելք 1893 նոյ" 10* աղու երես։ Pedersen, *Հայ. դր. լեզ. 91 ժողովրդական ստուգաբանութեամբ կազմուած* աղաչել *բայից։*

ԳԻՒ.—Մշ. աղրսալ, աղրսաճճ *«աղաչել, աղաչանք»։*

ՓՈՒ.—Վրաց. ალերսի *«գգուանք, սէր»,* ალერსիანի *«գգուող, սիրող, քաղաքավար»,* ალერსიანობა *«քաղաքավարութիւն»,* ალერსება *«գգուել, շողոմել»։*

Աղևաղել տե՛ս Աղաւաղ։

ԱՂԷ *«օ՜ն, հապա դեհ՛, բայց արդ», ՍԳր. Եզն։*

Peterm. *29, 34, 25 յն.* ἄγε, *լտ.* age *«օ՛ն, բե՛րի մէջ»։ Այսպէս նաև Հիւնք։ Այս մեկնութիւնը թէև շատ հմայուցանման, բայց սխալ է γ—g—ղ ձայնափոխութեան պատճառաւ, որ անկարելի է, եթէ մեր բառը յունարէնից փոխառութիւն լինէր, պիտի ունենար *ագէ ձևը, իսկ եթէ բնիկ հայ լինէր և յոյն ձևին ցեղակից՝ պիտի ունենար *աճ ձևը։ Նկատելի է նաև թէ Ս. Գրքում բառս շատ անգամ համապատասխանում է յն. բնագրի μὴ καί, ἀλλά, γαρ ձևերին. մինչդեռ եթէ յունարէնից փոխառութիւն լինէր, ամէն անգամ ἄγε ձևի դեմ դրուած պիտի գտնէինք։ Այս պատճառաւ ահա* Lagarde, *Տէրվիշեան և Հիւբշման չեն ընդունած այս մեկնութիւնը։ Ըստ Տէրվ. Նախալ. 63 բառս հյ.* աղաղակ, աղմուկ, *յն.* ἀλαλά, *սանս.* ār *«օրհնել»,* are *«աղէ՛» բառերի հետ գալիս է հնխ.* ar *արմատից։ Յունարէն բառի թարգմանութիւնն է հյ.* բե՛ր, բե՛ր ի մէջ *«օ՜ն, դէ՛հ»։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 339 քրք.* ھله hele *«դե՛հ»։*

ԱՂԷՏ, *ի հլ. (կայ նաև յգ. գրծ.* աղետօ*ֆ) «գութ» Վրք. հց. Նար. «սրտի ցաւ, վիշտ» ՍԳր. «մեծ չարիք, փորձանք» Եզն. Ոսկ. բարդութեան և ածանցման մէջ մրանում է* աղէտ, աղետ, աղիտ—*ձևերով. օր.՝* աղետական *«գթալի» Ճառընտ.* աղետակած *«ողբալի» Պտմ. աղ.* աղէտաբեր, աղետաբեր *կամ* աղիտաբեր *«ցաւալի» Պիտ. Ջքր. կաթ. Արծր.* աղէտանալ *«խղճալ» Խոսր. (որի աւելի յետին ձևն է* աղետալ *«խղճալ, հոգալ» Կոստ. երզն. 147),* աղէտաւոր *կամ* աղետաւոր *«ցաւալի» Լաստ. Վրդն. աղ.* աղիտաւորաբար *«մարդու գլխին փորձանք բերող» Ոսկ. մ. բ. 15 և Փիլիպ. բ.* բազմաղէտ *«շատ գթոտ» Ոսկիփ.* չարաղէտ *«դառն, անտանելի» Մանդ. Պիտ. ոճով ասում է* աղէտս վարել *«տխրիլ» Պտմ. աղ.* աղաւաղեալ *ձև է. Բառ երեմ.* աղաղաբերին *(էջ 10),* աղեբաբերին *(էջ 11), որոնք մեկնում է հաւատարապէս «պատգամ կամ թուղթս կամ գուբա»։ Նոր գրականում* աղէտ *գործածւում է միայն «մեծ փորձանք» նշանակութեամբ, որից* աղէտալի։ *Միւս նշանակութիւնները կապում են բառիս հետ* աղաղել *«դառն ողբալ», որ տե՛ս վերը։*

ՀՀԲ, ՆՀԲ և ՋԲ աղիտ *բառից։ Հիւնք.* աղօթ *բառից։*

Աղթամայ տե՛ս Աղթամար։

ԱՂԹԱՄԱՆ *«ապարանջան» Հին բռ. և Բառ. երեմ. էջ 11, որ էջ 12 գիտէ նաև աղցամանի ձևով։ Ըստ Ամատունի, Հայոց բառ. էջ 21 ա՝ կենդանի է։*

ԳԻՒ.—Բուլանըխ և Կոփ՝ աղբաման *«ոտի ապարանջան» ձևով։ Ս. Մովսիսեան (Բենէ) յայտնում է, որ Բուլանըխում և իր ծննդավայր Կոփ գիւղում այդպիսի բառ չկայ, այլ միայն խալխալ (Նամակ 27 սեպտ. 1928)։*

ԱՂԹԱՆԴՈՒՄՆ *«խելագարումն», գիտէ միայն Բառ. երեմ. էջ 11։*

ԱՂԹԱՊԱՍ *«տանձենու նման և փշոտ*

մի ծառ է» Ամիրտ. ունի միայն Ալիշան, Հայբուսակ § 55։

ԱՂԹԱՐՄԱՅ «կաթոլիկ դարձած հայ». յետին ռամիկ բառ՝ որ առաջին անգամ գործածուած եմ գտնում Սամ. աննեց. շար. 152, որից աղբարմայութիւն (անդ՝ էջ 153)։ Այս գիրքը թէև 1287 թուից է, սակայն յիշեալ կտորը անշուշտ շատ յետին յաւելուած է. գործածում է քանիցս անգամ Մեծոփ. 15, 16, 37, 38 նն։ Բառը յետոյ հայ-կաթոլիկական վէճերի ժամանակ հայ-կաթոլիկների սովորական ծաղրանունը դարձաւ (ինչպէս կայ այսօր Պոչը-կտրած՝ նոյն իմաստով)։ Գրուած է նաև ախբարմայ, ինչպէս ունին Տաթև. ձմ. ծ, Առաք. պատմ. 295, 335։ Նոյն բառն եմ համարում աղբամայ «խառնիճաղանճ կամ խաժամուժ», որ ունի միայն Բառ. երեմ. էջ 11։

= Թրք. اقطارما aqtarma բառն է, որ اقطارمق aqtarmaq բայի դերբայն է. այս բայը Будаговъ, Сравн. слов. *1, 67—68 գրում է* اقتارمق aqtarmaq, *չաղաթայ. ապրբայճան* اختارمق axtarmaq *ձևով և մեկնում է «փորել, խառնշտել, փնտռել, տապալել» և Բուրթ-օսմաններեն գործածութեամբ «մաքսախոյս ապրանք փախցնել», որից* اقتارما aqtarma *«մաքսախոյս ապրանք, աւար»։ Աբիկեան, Ընդ. բառ. տճկ.-հայ. Պօլիս, 1892, էջ 57ա դնում է* اقطارمق aqtarmaq *«փոխադրել» և* اقطارما aqtarma *«փոխադրութիւն»։ Վերջինը շատ սովորական մի բառ է այժմ էլ Պօլսում և նշանակում է «փոխանցում, մէկ ամանից միւսը լցնելը, մի տեղից միւսը փոխադրուելը և յատկապէս՝ մի շոգենաւից միւսը փոխադրութիւն,* пересадка» *(հայերը արտասանում են* ախբարմա *կամ* ախտարմա*)։ Թէ՛ այս վերջին իմաստը և թէ՛ «մաքսախոյս» շատ յարմար են մեր բառի գործածութեան և մտքին։— Ա.*

Կապ չունի աղբար բառի հետ՝ որին ուղում է կցել Գ. վրդ. Գալէմքեարեան. Տաճար 1913, 354։ Իմ մեկնութիւնը անկախաբար կրկնում է Deny BSL *34, № 102, էջ VIII (1933 թ.)։*

ԱՂԹԿ «տուղտ» Բժշ. գիտէ միայն Հիւս. § 56։

= Յն. ἀλθαία *«տուղտ», որից փոխառեալ են նաև լտ.* althea *«մոլոշ», ֆրանս.* althaea *և իտալ.* altea *«տուղտ»։— Ա. Հիւս. դնում է փոխառեալ՝ լատիներէնից, բայց լտ. բառը* Quicherat, Dict lt-fr. *47-րդ տպ. էջ 66ա մեկնում է «*mauve *մոլոշ», մինչ յունարէնը մեկնում է «*guimauve *տուղտ»։ Այս երկու բուսանունները յաճախ են շփոթում իրար հետ։*

ԱՂԻ *(սեռ.-ւոյ,-եաց) «փորոտիք». քիչ անգամ է գործածուում եղակի. ինչ. «Քուն առողջութեան ի վերայ չափաւոր ազուոյ». Սիրաք. լդ. 24. սովորաբար յոգնակի գործածութեամբ՝ աղիք ՍԳր. Ագաթ. (այսպէս են նաև հյ. բնդեր, յն. σπλάγχνα, ἔντερα, լտ.* exta, viscera, *առնս.* Jaṭhārāṇi *են. հմմտ.* Meillet MSL *17, 18)։ Ածանցման մէջ մտնում է 4 ձևով.—1. աղե- ինչ. աղեկէզմ, էմբ. պտրգ. աղեխարշ Բրս. մրկ. էմբ. պտրգ. աղեկոտոր Յհ. կթ. աղեցաւ «սիրտը ցաւած, վշտահար» (նորագիւտ բառ) Ուսպ. էջ 328 (Հանապազ աղեցաւ և լերդախոց լինելով), 2. աղէ-. այսպէս են գրում նաև նախորդները յետնաբար. 3. աղի-. միայն աղիկամի Նար. քր. բայց սովորական է բառավերջում. ինչ. ճեղաղի «ներքաղիք» Նիւս. կազմ. ըստ Լհմ. փիաղիւ Փիլ. լին. ճախաղի Սոկր. (ուրիշ է աղիողորմ՝ աղ բառից). 4. աղ-. աղախարշանճ «սրտի կսկիծ, խշխշուք» Ոսկ. Երր. ա. աղախարշումն Ճառընտ. գարաղուրիւն Պղատ. տիմ. աղապատանճ «գութ, սէր» Փիլ. իմաստ։ Աղիք նշանակում է նաև «նուագարանի լար» Սերեր. «Օրհնեցէք զՏէր սաղմոսարանաւ և չնարաւ և աղեաւ»։ Այս նշանակութիւնը յառաջ է եկած նիւթի պատճառաւ։ Որից տասնաղի «10 լարանի քնար» Սղ. եօթնաղի Փիլ. հաղցրաղի Ոսկ. յհ. ա. 1. բազմաղի «բազմալար» Եփր. Համաբ. աղէգէտ «նուագիչ իմացող» Ագաթ. աղեպատ «քնարի բարակ ծայրը՝ որի վրայ հանդչում են թելերը» Աբ. աղեյարմար «յարմարաւոր լարերով, լարերը յարմարած» Նար. աղե-*

մասուճք «քնարի լարերի վրայ շարժող մասներ» ԱԲ. աղեքախք «քնարահարութիւն» ՅՀ. կք։ Նոյնպէս «աղեղի լար կամ աղեղ», որից աղեներգործութիւն «նետաձգութիւն» Պիտ.։ Աղիքը համարուած է նաև գութի կայան. «Արդարն ողորմի անասնոյ իւրում. աղիք ամբարշտաց անողորմ են» ՍԳր. որից «գութ, ողորմութիւն, սիրելի զաւակ» ՍԳր. այսպէս և յն. σπλάγχνα, լտ. viscera «աղիք, գութ, սիրելի զաւակ», σπλαγχνίζω «գթալ, կարեկցիլ»։ (Այժմ այս իմաստները տրւում են թոքերին. ինչ. ռմկ. ջիգար)։— Աղիկամի, աղիկամութիւն «ազատ, ինքնակամ» նաև. քր. ա. բառերի մէջ աղիք առնուած է իբր «անձ»։— Նոր գրականում կազմուած ձևեր են աղեթափութիւն, աղեխոռով, աղեկապ, աղեկիզիկ, աղեկբուր։

Հինք. ալիք *բառից։ ՀԲ* աղիկամի *մեկնում է «բան աղու կամի, որ է բան հաճոյս»։ Թիրեաքեան, Ար. բառ. 18* աղիկամի=*պհլ.* aha-kāmē «*ինքնիշխան*»։

Գիւմ.—Ալշ. Ախց. Երև. Կր. Հճ. Մշ. Սեբ. Տփ. աղիք, *Մկ. Սլմ. Վն.* աղիք՛, *Ջղ.* աղիկ, *Տիգ.* ողիք, *ՀԲ.* աղբ, *Ակն. Ննխ.* աղէք, *Ոզմ.* աղէ՛ք՛, *Ղրբ.* ա՛ղէ՛նք՛. *Նոր բառեր են Գար.* ճղմա՛ղինք=*Ղրբ.* ճրղմա՛ղէ՛նք՛ «*ներքաղիք*», *Ագլ.* գ՛ըրա՛ղինք՛=*Ղրբ.* կիրա՛ղէ՛նք՛ «*ոգաղաղիք*» (*դիտելի է նաև յգ.* աղեստան *Սեբ.*)։

ԱՂԻԱՅ «աղիւս». *անստոյգ բառ, որ մէկ անգամ միայն գործածուած է. «Ոչ ասեմք զաուն խառնեալ և յօդեալ ի հողոյ և ի ջրոյ, այլ ի յաղիայէ և փայտէ» Դամասկ.։*

—*Ըստ ՆՀԲ «իմա՛ կամ ընթերցի՛ր* ագիւս»։

[ԱՂԻԲԱՐ. *նորագիւտ և անստոյգ բառ. մէկ անգամ ունի Սոկր. եկեղ. պատմ. էջ 244. «Քանզի ոմանք ստահակաբար զառանձին էութիւն Հօր և Որդւոյ շարամանեցին, ի միութիւն համագոյութեանն անուամբ աղիբար չարութեանս կապեալք», յոյն բնագիրն ունի համապատասխան տեղում* χορδῇ κακίας δεσμούμενοι, *որտեղ* χορδή «*աղիք. նուագարանի լար են». ըստ այսմ հյ.* աղիբար *ձևն էլ յարմարցուած է* աղիք *բառից։—ԱՃ.*]

ԱՂԻՃ «բարակ աղիք, նրբաղիք». *ունի միայն ՋԲ, որից էլ ԱԲ. յայտնի է որ* աղիք *բառից յարմարեցրած է։*

ԱՂԻՋ «կոյս, աղջիկ». *մէկ անգամ գործածուած է Տիմոթ. կուզ էջ 283, որից Կնիք հաւ. էջ 168 (Ս. կոյս Մարիամի համար առուած). սրա փաղաքշականն է* աղջիկ, *և հլ. «կոյս, օրիորդ. 2. մանկամարդ կին. 3. նաժիշտ» ՍԳր. յետնաբար նաև «4. դուստր, աղջիկ զաւակ» կայ և* աղճիկ «*դիցուհի*» *Պատմ. աղեքս. (աղճկան մեհեան). միջին հյ.* աղջկիճ «*աղջիկ*» *Անսիզք 45, 49, 55 կամ* աղչկիճ *Սմբ. դատ. 122—3. որից* աղջկորդի «*անհարազատ զաւակ*» *Ա. Թագ. ի. 30.* աղջկամարդ «*մանկամարդ կին*» *Ոսկ. Եփր. ա. տիմ. 243, Տիտ. 262. «կնամարդի, անարի, Թոյլ» Արծր.* աղջըկական «*փաղաքշական*» *Մագ. և Երզն. քեր. Երկրորդական նշանակութիւն է* աղիճ «*բոզ*» *Եւս. քր. բ. 204. յետնաբար ի—ա հլ. սեռ.* աղիճաց *Անան. խոստ. էջ 11։ Լեզուների մէջ «աղջիկ» նշանակող բառը կարող է յետոյ «բոզ» իմաստն էլ ստանալ. հմմտ. հյ.* բոզ =*վրաց.* բոզի, *որ լազ.* բոզո «*աղջիկ*» *բառն է. ֆրանս.* fille *և թրք.* قیز qəz «*աղջիկ*», *որոնք ժողովրդական լեզուի մէջ «բոզ» իմաստն էլ ունին։ Թէ՛ արմատները և թէ՛ ածանցները գրվում են թէ՛ ճ և թէ՛ ջ տառով. այսպէս՝ աղիճ-աղիջ, աղջկամարդ-աղճկամարդ են. ներկայ լեզուի մէջ սովորական է միայն ջ-ով գրութիւնը. բայց կիրևայ թէ հնագոյն ձևն էր ճ, որ ղ ձայնի մօտ և նրան յարմարուելով դարձել է ջ։*

Հներից Առաքել Սիւնեցին աղջիկ *առուգարանում է* չիք *բառից. այսպէս՝ Ադամ. 138։*

Յորժամ դստերք ծնանին մարդիկ,
Կոչին զանուն նորին աղջիկ.
Այսինքն լաւ էր թէ չէիք,
Չի շատ չարեաց պատճառ լինիք։

(*Համմտ. նաև դուստր*) Klaproth, Asia pol. *103* աղջիկ=*անդի* jaĉeki *։ ՆՀԲ* աղիճ «*բոզ*» *մեկնում է «աղջիկ աղճատեալ»։* Böttticher, Arica *12 սանս.* āli։ *Հինք.* աղիճ «*բոզ*» *հանում է* աղճատաճ-*ից, իսկ* աղջիկ՝ աղիճ *կամ արջ բառից։* Bugge, Btrg. *11* աղիճ=*յն.*

παλλακίς, παλλακή «հարճ»։ Patrubány SA 2, 314 աղիճ՝ լտ. alo «անուցանել» բառից, իսկ SA 1, 191 սանս. rakš, յն. ἀλέξω «պահել, պաշտպանել» բառերից։ Շէֆթէլովից BB 29, 17 աղջ-իկ՝ յն. παρθένος «կոյս» բառի հետ հանում է հնխ. parqʷhe ձևից։ Պոնտական ժողովրդական սուտագրանութեամբ աղջիկ=աՙճ չիf. այսպէս գոչեց Ադամ՝ երբ կենդանիների մէջ իրեն մի ընկեր չգտաւ և այն ժամանակ Աստուած ստեղծեց մի աղջիկ՝ նաև (Բիւր. 1899, 534)։ Պատահական նմանութիւն ունի պարսկական նաղդուամի բարբառով ǰačág «աղջիկ» (տե՛ս JAs. 1916, 263)։

Գիհ.—Մշ. ախջՙիկ (կոշական ախջՙի), *Ակն. Չմշ. Պլ.* ախջիգ, *Ալշ.* ախջՙիգ, *Առլ.* ախջիգ, ախջիյ, *Ախց. Երև. Մկ. Զթ. Վն. Տփ.* ախչիկ, *Ագլ. Սլմ.* ա՛խչիկ՛, *Կր. Ննխ. Շմ. Ռ. Սեբ. Սչ.* ախչիգ. *Գոր.* ա՛խճիկ, *Ղրբ.* ա՛խճիգ՛, *Ոզմ.* ախչՙի՛կ, *Մրդ.* ախչիկ՛, ախչիյ, *Տփղ.* ախչիգ, *Զթ.* ախչՙգին (*տես.* աշգրնրն), *Խրբ.* աչխին, *Հճ.* աչգին, *Ակն.* աշխրնագ, աշխի, աշին, աչիգ։ *Հետաքրքրական ձև է Պլ.* ախչիգնութիւն, *որի մէջ* ն *ձևացած է նաւասնութիւն բառի նմանողութեամբ։*

Փոխ.—Բրբ. գւռ. Կր. աճչիկ (*Բիւր. 1898, 626*), *քրդ. Դէրսիմի բարբառով* աղչիկ «աղջիկ» (*Հայաստան 1917, № 90*)։

ԱՂԻՄԱՅ կամ ԵՂԱՄԱ «մի տեսակ բանջար է».—Ծոր լ.4 կարդում ենք.«Որք պատէին խարշափուն բանջարով, որոց բանջարն իսկ էր կերակուր». յոյն բնագիրն ունի οἱ περιχαλοῦντες ἄλιμα ἐπὶ ηχοῦντι, οἵτινες ἄλιμα ἦν αὐτῶν τὰ σῖτα.—Վանակ. յոր. 309 մեր հատուածի խարշափուն բառը մեկնելով՝ գրում է. «Ջխարշափունն այլք աղիմայ Թարգմանեցին և կէսք գերիսն. և է սա բանջար աղեհամ, որ յուտելն լցուցանէ զտեղի հացի.—բանջարն՝ զոր յիշէ Յովք՝ գերիսն, որ եղամա ասեն»։ Ըստ այսմ աղիմայ կամ եղամա, որ ուրիշ տեղ գործածուած չէ, պարզապէս՝

=յն. ἄλιμα, *որ և* ἅλιμα *բառի տառադարձութիւնն է. բուն նշանակում է «ծովային»* (ἅλς «ծով» *բառից) և երկրորդաբար «arroche բնաւանիքին պատկանող մի Թուփ, լտ. halimus, ֆր. arroché de mer», որի համար կարծիք կար Թէ քաղցը անց է կացնում։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ, վերջին անգամ Նորայր ՀԱ 1921, 612։ Ալիշան ՀԲուս. § 628 համարում է յն. ἕλμος «կորեկ», *իսկ § 1036 լտ.* alisma «հովուի փող» *կոչուած բոյսը։*

ՈՂՏԱՅ, ի հլ. «հփած և Թանձրացրած ոսպ». ունի միայն ՋԲ, իբր նոր բառ։

=Արաբ. عقيدة ʿaqīda «կիսայրեաց շաքար, caramel», *Թրք.* ağda «սառնաշաքար» (Будаговъ, Срав. слов. 1, 61)։—*Ա՛ճ.*

**ԱՂԻՒՍ, ո հլ. «Թուղլա, քարփուճ» ՍԳր. ԱգաԹ. Եւս. քր. որից* աղիւսաղուտն *Երեմ. խգ. 9.* աղիւսաԹիւ *Ելք. ե. 19.* աղիւսեայ *Ոսկ.* աղիւսարկ «աղիւսաշինութիւն» *ՍԳր. Ոսկ.* աղիւսակ «աղիւսի կտոր. 2. յուցակ» *Փիլ. Գնձ. (Կովկասում սխալմամբ գործել է* աղիւսեակ). աղիւսակերտ, աղիւսապատ *(նոր բառեր)։*

=Թերևս փոխառեալ Փոքր-Ասիական մի լեզուից, որի յիշատակն է Հեսիքիոսի աւանդած ἄλυβ «πέτρα, ժայռ» բառը (տե՛ս Boisacq *20)։—Ա՛ճ.*

ԳԴ, ՆՀԲ, Պատկ. Матер. *1, 8 և Հիւնք. համարում են պրս.* āxīz «աղիւս» *բառից։ Այսպէս նաև Մէնէվիշեան ՀԱ 1896, 183։* Patrubány SA *1, 193=հնխ.* levk'os, *արմատը* luk'։

Գիհ.—Մշ. աղուս «աՒքարի այն տեսակը՝ որ ձմեռ ժամանակ ախտում հաւաքուած ադրը գարնան շրջանին տիեզով են պատրաստած». *Մկ. Վն.* օղիս, *Ոզմ.* օղէս «աղիւս»։ *Ուսումնական համբով են մտած Պլ.* աղուրասագ, *Առլ.* աղիւսագ *են «պիւթագորեան աղիւսակ»։*

Փոխ.—Հայերէնից հին ժամանակ փոխառեալ է վրաց. ალიზი ალիզի «աղիւս», *որ ներկայացնում է մեր ղ-ի հնագոյն արտասանութիւնը։ Յետին շրջանում, այսինքն ղ տառը խ-ի մօտ հնչումն ստանալուց յետոյ, մեզանից փոխ է առնուած պրս.* آخیز āxīz «աղիւս»։ *Սխալւում են այն բոլոր քննիչները՝ որոնք կարծում են Թէ հայերէն բառը պարսկերէնից է փոխառեալ. պարսկերէն x ձայնից անկարելի է ստանալ հյ. ղ (=l), բայց հա-*

յերէն ղ (=γ) կարող էր դառնալ պրս. x։

ԱՂԻՓ. *գործածուած է միայն մէկ անգամ. «կառավարն տեղեակ պնդեսցէ և կազմեսցէ զկառս իւր, զի մի՛ անկեալ ջարդեսցի և զաղիփ առցէ». Մծբ. 340. ըստ ՆՀԲ բառ անյայտ, թերևս «ալափ, աւար» նշանակութեամբ. ըստ ԱԲ* աղիփ առնուլ *«տկարանալ», ՋԲ* զաղիփ առնուլ *«տկարանալ, խախտիլ, վնասիլ»։ Ուղիղ է վերջինը։ Աղիփ արմատ է՝ որից շինուած են նաև* զաղիփաղիփուն *«տկար, խախուտ, խարխուլ» Իմ. Բ. 14, դ. 4, Ոսկ. յՀ. ա. 7. Սեբեր. 66, «անվաւեր» Աբեան. պտրգ.* աղիփուն *«տկար» Կեչառ. աղեքս.* զաղիփումն *«սահիլ, վայր ընկնիլ» Վրք. իլար. 91. և սրա իբր անցողականը՝* աղիփուցանել *(սխալմամբ գրուած նաև* աղիփուցանել*) «թակարդով բռնել, թակարդը ձգել» Մծբ. 383։—Նորայր, Հայկ. բառաքն. էջ 50* զաղիփաղիփմունս *Ոսկ. Հռոմ. ժդ. էջ 177 և* զաղիփաղիփութիւն *Ոսկ. մ. գ. ժդ. էջ 55 ուղղում է* շաղիփաղիփութիւն *և* շաղիփաղիփմունս*, որով ԱԲ-ի այս բառերը՝ ևթէ յիշեալ տեղերից են առնուած, ջնջելի են։*

ՀՀԲ, ՆՀԲ և ՋԲ աղիփուցանել *հանում են հաղր բառից ? Հիւնք.* զաղիփաղիփուն *դնում է* աղր-*ից։ Պատահական նմանութիւն ունին լիթ.* aipnas *«տկար, թոյլ», սանս.* álpa *«փոքր, չնչին»* (Pokorny 1, 92)։

ՓՈԽ.—Հայերէնից է փոխառեալ վրաց ջაღფება *դաալփնբա «թառամեցնել, թուլացնել» (գիտէ Ջուբինով 345, բայց չունի* ალფნბა *արմատականը)։*

ԱՂԻՓԱՏՈՍ *«հոդաբարձու». ունի միայն Բառ. երեմ. էջ 11։*

ԱՂԼՀԱԿ *«ոչխարի վրայ դրուած հարկ». Նորագիւտ բառ՝ որ գործածուած եմ գտնում Ա. նիի 1301 թուի արձանագրութեան մէջ. «Զեղինն հապրն, զկովին համբրէլէն, զոչխարին աղլհակն» (տե՛ս Վիմական տարեգիր, էջ 151)։*

= *Թրք.* غل حقی aγəl haqqə *«փարախի՝ գոմի իրաւունք», որ կազմուած է թրք.* غل aγəl=*ույղուր.* aγəl *«փարախ»+ արաբ.* حق haqq *«իրաւունք» բառերից։—Ա.ճ.*

Karst, *Դաստն. II, էջ 12 դնում է պրս.* aγəl *«գոմ» կամ արաբ.* 'iqāl *«ոչխարի տարեկան հարկ»։*

ԱՂՆ *կամ* **ԱՆ**, *ի հլ. «փականք. 2. օղակ. 3. կոհ-կարասիք, ունեցած-չունեցածը, վաճառքի բեռներ. 4. համբորդների բազմութիւն, ամբոխ» ՍԳր. Ագաթ. «Ց. ցեղ, զարմ, ժողովուրդ» Սամ. անեց. 42 (Միհանի Հայկ յանձն առնելով զաղխն՝ Արամանեկայ). «6. մարմնի յօդ» Մագ. որից* աղխել, աղել *«կողպել» Դատ. դ. 6. Ագաթ.* աղխիլ *«կողպուիլ» Բ. Քագ. դ. 34. (տե՛ս և* ախաղել *Ոսկ. բ. տիմ. 241),* ախեալ *«փակուած, կողպուած, կոյս» (Ս. Կոյսի համար ասուած՝ ի կուսական արգանդէ և յախեալ մօրէ) ՅՀ. իմ. խոստ. 9.* աղխամաղխ *(կրկնութեամբ և մ յաւելուածով. հմմտ. արեամարեմ) «հակ հուպ ապրանք, բազմութիւն ընչից» ՍԳր.* աղխազուր *«կոշտ» (գրուած նաև* ալխազուր*) Խոր.* աղխաւորոյզ *(կամ* ախաւորոյզ, աղխաւորոյժ*) «աւազակ» ՅՀ. կՔ.* ախաւորուզել *«կողոպտել» Պտմ. առ Լհ.* բազմաղխաղխ *«բազմախոսուն» Սեբեր. գ.(ինչպէս պէ՛տք է կարդալ ըստ Հիւնք. էջ 182՝ ձեռագիրների* բազմախաղաղ ընթերցուածը*). «Որք զայսպիսի ինչ բանս և զանուանս և զկարգս ընդ միմեանս խառնեալ չզաւանիցեն ի միմեանց, բազմաղխաղխ ինչ նիւթոց ընդ միմեանս խառնելոց նման են... գտանիցես այնուհետև զրազմաղխաղխ նիւթս ընդ միմեանս խառնեալ».* աղխաղխակոյտ *«բեռան հակերի պէս դիզուած» Մծբ. ը (երկիցս), Կոչ. ժղ. Ասող. Գ. խր. Անան. ժմնկ. էջ 18 (առաջիններում գրուած* խաղաղակոյտ*, վերջին երկուսի մէջ* խաղխաղակոյտ*. բոլորն էլ ոսկորների դիզուած կոյտի համար է ասուած. ՆՀԲ մեկնում է «խաղաղ անշարժ մնացած կոյտ», որ յարմար իմաստ չէ. ըստ իս պէտք է ուղղել* աղխաղխակոյտ*). ճարտարաղխ Ոսկ. Ես. (անատոյգ և սխալ գրչութիւն).* աղխաղխել *«դիզել, կուտել, խոկել» Բ. մակ. ժա. 4. Ոսկ. Վեցօր. 129.* աղխեալ գանձ *(ուղղել* աղխաղխեալ գանձ *«դիզուած գանձ»՝ ըստ Նորայր, Հայկ. բառաքն. էջ 57) Սեբ. էջ 40։*

ՆՀԲ լծ. տճկ. հալխա, հալվա *«օղակ»։ Հիւնք. խաղ բառից։* Bugge, Beitr. *36 յն.* ἀρχέω *«արգիլել»,* ἄρκος *«պահպա-*

նութիւն», լտ. areco «արգելք հանել», լիթ. rakinù «կողպել», rāktas «բանալի» են բառերի հետ՝ հնխ. arkh- նախաձևից։ Petersson KZ 47, 284 խ մանիկով՝ ոլորել և աղեղն բառերի հետ։ Մառ, Основ. таблицы, էջ 6 և ЗВО 22, 67 «տուն» նախիմաստով կցում է եբր. אָהֶל ahel «վրան, տուն», արաբ. اهل ahl «ընտանիք», վրաց. ხახლი սախլի «տուն, ընտանիք», լազ. մինգ. oḫori «տուն» բառերի հետ՝ յաբեթական sxl—hxl արմատից։ Պատահական նմանութիւն ունի արաբ. أغلق aγlaqq «դուռը փակել»։

ԳԻՒ.—Ախց. Հմշ. Մշ. ախ «դռան փականք», Ակն. Խրբ. Հմշ. ախել «դուռը փակել», Սեբ. ախլը «գոց, կողպուած». Հմմտ. նաև ախլաճ Բգ. Բն. Եւդ. Կիւր. Ջն. Սեբ. «դուռը կողպելու համար վրան անցուած շղթան», ախիկ Ակն. «դռան կողպէք», ախլել Սեբ. Ջն. «դուռը կողպել՝ շղթան դնելով»։ Գրաբարում բառիս ուղղագրութիւնը անորոշ է (ա՞ղխ թե ախ). նոր գրականում միայն աղխ ձևը համարում է ուղիղ. գաւառականների ախլը, ախլաճ, ախլել ձևերի լ ձայնը թերևս շարունակութիւնն է հին ղ ձայնի։

ԱՂԽԱՂԱՆ կամ ԱԽԱՂԱՆ «գանակոծելու գործիք, ֆալախկա», ունին միայն ՓՒ և ԳՒ։

+ԱՂՄ «աղտ, կեղտ». առանձին անգործածական արմատ, որից կազմուած են աղծութիւն «կեղտոտութիւն» ԱՒ. աղծապիղծ «գարշելի» ՅՀ. իմ. պալ. Ոսկիփ. Կանոնք սահ. 74, 85. աղծապղծութիւն Պիտ. աղծել «պղծել, ապականել, աղտոտել» (նորագիւտ բառ) Կանոն. 210։

=Աղտ «կեղտ» բառի երկրորդ ձևն է. տ>ծ ձայնափոխութեան համար հմմտ. աղտ «աղ»—աղծեալ «աղած», արտ-*արծ, պիղծ-պղտոր են։

ՀՀՒ «նա որ պղծի աղցիւք, այսինքն ախտիւք»։ ՆՀՒ եղծ բառից.?

+ԱՂՄ «աղ». առանձին չկայ գործածուած, սրանից է կազմուած աղծեալ «աղած, աղը դրած» Եւս. քր. ա. 130։

=Հյ. աղտ «աղ» բառի երկրորդ ձևն է, որի վրայ տե՛ս վարը աղտ.—Հիւբշ. 414։

+ԱՂԿԱՂԿ, ի-ա հլ. «թշուառ, աղքատ» Ածաբ. աղքատ. Բրս. աղ. Խոսր. Ոսկ. գծ. 297. Նար. «անպիտան, փուճ» Նար. գրուած նաև անկաղկ՝ ինչպէս Ոսկ. ճառք 472. որից աղկաղկիլ «թուլանալ, անփոյթ լինել» Կիւրղ. հանգ. աղկաղկութիւն «խեղճութիւն» Փիլ. որ և անկաղկութիւն Ոսկ. ճառք 466. աղկաղկուկ. Սարգ. ա. պետր. ա. էջ 184։

=Հնխ. alg>հյ. *աղկ- պարզ արմատից կրկնուած. հմմտ. լիթ. elg-eta «մուրացկան», elg-etis «աղքատութիւն», elg-damasis «մուրալով», յն. ἄλγος «ցաւ», ἀλγεινός, ἀλεγεινός «ցավագին», որոնք յառաջանում են նոյն հնխ. alg- արմատից։ Սրա բաղաձայնի աստիճանը փոխելով ձևանում են լիթ. álk-ti, լէթթ. a'lk-t «քաղցնուլ», պրուս. alkīns «անօթի», alkīnisquai «ցաւ, վիշտ», հսլ. alŭkati, lakati «քաղցնուլ, տենչալ», alŭčĭ «քաղց», հրգ. ilgi «քաղց», իռլ. elc, olc «դէշ, յոռի» են։

Հիւնք. կղկղաճ բառից։ Սանտալճեան, Բազմ. 1904, 509 յծ. հլ. աղբատ։ Pokorny 1, 160 հնխ. elg-«աղքատ» արմատի տակ ընդունում է լիթ. elgeta «մուրացկան», հրգ. ilki «քաղցր» բառերի հետ նոյնութիւնը, բայց մերժում է յն. ἄλγος «ցաւ», որ 2, 423 դնում է հնխ. leg- արմատի տակ>յն. ἀλεγω «հոգալ, հոգս անել, անհանգստանալ», ἀλγέω «տառապիլ, (Boisacq 42).—լտ. algeo «մրսիլ» բառի համեմատութիւնը սրանց հետ՝ մերժում է Ernout-Meillet 31։ Վերի մեկնութիւնը առաւ Lidén, Arm. St. էջ 99։

*ԱՂԿԻՊ «եղիճ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 565. չգիտէ Հայրուսակ։

=Յն. α'καλήφη «եղիճ, ortie, լտ. urtica» բառից. քան այժմ մեր ձևը ուղղելու է ակղէփ։—Ա՛ա.

*ԱՂԿԻՈՆ կամ ԱՂԿԻՈՎՆ (սեռ.-ի) «մի տեսակ ծովային թռչուն, ծովամ, alcedo hispida, alcedo smyrnensis L» Վեցօր. 169, 170. աղկիոնիդաս աւուրք (յն. ἀλκυονίδες ἡμέραι, jours alcyoniques) «ձմեռային արեւադարձից 7 օր առաջ և 7 օր յետոյ եղած շրջանը, երբ ծովը խաղաղ է լինում և աղկիոնը բոյն է շինում» Վեցօր. 170 (գանազան սխալ գրչութիւններով՝ որ տե՛ս Վարդանեան ՀԱ 1922, 653)։

= Յն. ἀλκυών կամ ἀλκυών, նոյն նշ. որից փոխառեալ են նաև լտ. halcyon, alcyon, ֆր. alcyon (իբր «martin-pêcheur ձկնորս ճայ»), վրաց. ალვუნი ալկունի „зимородокъ, иванокъ»: Յոյն բառը ժողովրդական ստուգաբանութեամբ մեկնուել է ἅλς ծով + κυέω «յղանալ, ծոցումը կրել» բառերից. գիտական ստուգաբանութեան դանազան փորձեր տե՛ս Boisacq, էջ 45—46;—Հիւբշ. 340:

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ:

ԱՂԿՈՐ «թաղար, ծաղկաման» Վստկ. 132, 134:

Հիւնք. հանում է արկղ բառից:

ԱՂՃԱՏ. արմատը հների մօտ առանձին գործածուած չէ, կայ միայն նոր գրականում, իբր ած. «աղաւաղեալ, խանգարեալ» նշանակութեամբ. որից աղճատիլ «ծերութիւնից ցնդիլ, խոֆիլ. 2. զառանցել» Սիր. Խա. 4. Կանոնք թագ. 401. ՅՀ. կթ. Վրք. հց. աղճատաբանել «յիմար յիմար խօսիլ» Սարկ. հանգ. աղճատանք «ունայն խօսքեր, ցնդաբանութիւն» կիւրղ. գնձ. Խոր. ՅՀ. իմ. «նախատինք» Կլիմաք. Վրք. հց. աղճատել «աւրել փճացնել, փշրել, ջախջախել» Երեմ. իգ. 9. Կլիմաք. աղճատիչ «նախատիչ» Լմբ. առ:

St. Martin JAS. II 1823, էջ 330 անգէտ լինելով աղճատանք բառին, խորհնացու Գ. կը հաւտւածի (Ոչ տօնի աղճատանք դրնռնարարձս պսակելով գրաստս) աղճատանք բառի համար ասում է թէ հայերը այսպիսի բառ չգիտեն. Թերևս լինի Աղեքսանդրեան պաշտամունքին յատուկ օտար մի անուն և կամ Թերևս Աքեր, յն. ὄβρια = Canope աստուծոյ աղաւաղեալ ձևը: Հիւնք. հանում է աղակատանք բառից: Թիրեաքեան, Ար. բառ. պհլ. Axt-Jādū նշանաւոր կախարդի անունից:

ԳԻՒ.—Նոր գաւառականներում կայ աղճոտիլ «նեղանալ, վշտանալ, քէն անել» և աղճակոտ բնել Ջն. «ջարդել, փշրել». բայց արդեօք այս բառերը նո՞յն են վերիններից հետ:

ԱՂՄԱՆ «դատ, վճռ». նորագիւտ բառ՝ որ երեք անգամ գտնում եմ գործածուած մի քանի արձանագրութեանց մէջ. «Այլ ոչ ում աղման չկա հետ գողին». (Արձանագր. 1233 Բուբից, Վիմ. տար. 75). «Քան զդաղմէն այլ իրք չտայ. աղման չաննեն» (Անթուական արձանագր. Վիմ. տար. 226). կա և աղմանաձէք (Արձ. 1263 Բ. Վիմ. տար. 106): Ըստ դիտողութեան Թ. Աւդալբէգեանի, Ինստ. տեղեկ. 1, 78 բառս արդէն ինձնից առաջ գտել էր Մառ, Վիմ. տար. էջ XVI և աղմանաձէք յոգնակի չէ, այլ ուղղելի աղման աձէք:

+ԱՂՄՈՒԿ, ի-ա հլ. (յետնաբար նաև ի հլ.) «խառնակութիւն, իրարանցում, շփոթ վիճակ» ՍԳր. Ոսկ. Սեբեր. Բուզ. որից աղմկել «տակնուվրայ անել» Յոբ. լդ. 10. Ոսկ. յհ. Փարպ. աղմկութիւն «տակնուվրայութիւն» Իմ. ժդ. 25. աղմկարար «կռուարար» Ոսկ. յհ. բ. 37. աղմկիչ Ոսկ. բ. տիմ. աւ նոր գրականում աղմուկ նշանակում է «շփոթ աղաղակ, ժխոր», որից աղմկալի, աղմկայոյզ. այս իմաստը չկայ հին լեզուի մէջ:

= Բնիկ հայ բառ. կազմուած է -ուկ մասնիկով հնխ. $p^{o}l$-m- արմատից, որ այլուր պահուած է միայն յն. πόλεμος «իրարանցում, կռիւ, պատերազմ» ձևով հնխ. $p^{o}l$- կանոնաւորապէս տալիս է հյ. ալ-. համմտ. ալիք = πολιός. բայց այստեղ դարձել է աղ-՝ յաջորդ բաղաձայնի պատճառաւ. պարզ արմատը պահուած է Թերևս աղաղմաղակել կրկնականում:—Ա՛ճ.

ՆՀՒ ալիք, աղաղակ բառերից: Տերվ. տե՛ս աղէ՛: Հիւնք. յն. ἀλαλαγμός «աղաղակ» բառից: Petesson KZ 47, 263 հյ. աղմուկ բառը իսլ. jalmr, գւս. նորվ. jalm, շվէդ. jalm «աղմուկ, ժխոր, դոյլիւն» բառերի հետ դնում է հնխ. el, ol- բնաձայն արմատի տակ: Նոյնը ընդունում է Pokorny 1, 153, որ յն. πόλεμος դնում է 2, 52—53 հնխ. pel-«անհանգիստ շարժումներ անել, դողդոջել» արմատի տակ: Վերի մեկնութիւնը հրատարակել եմ MSL 20, 160, որ մեծ հրճուանքով ընդունեց Meillet (անձնական): Ծունարէն πόλεμος բառի համար առաջարկուած են զանազան մեկնութիւններ, որոնց մէ՛կն էլ ընդունուած չէ գիտութեան մէջ (տե՛ս սրանց մասին Walde

557, 600 և Boisacq 744, 762, 802)։ Պատահական նմանութիւն ունի վրաց. աղմրուլի «ժխոր, աղմուկ»։

ԳԻՒՐ.—աղմուկ ձևի հին վկայութիւններն են՝ Շատ աղմունք լինի «շատ կռիւ լինի» (Էֆիմ. էջ 120). Շատ կռիւ և աղմունք եղաւ (Յիշատ. յէ դարից՝ Դիւան ժ. էջ 102)։ Մխիթար աբբայի Դուռն քերականութեան մէջ, էջ 92՝ իբրև աշխարհիկ ձև կայ աղմուկ «կռիւ». իսկ ըստ Պէտէչեան, Արևելք 1888, նոյ" 8—9 Բրքաթօս հայերից կայ աղմուկ Առն.։ Առաջին ձևով պէտք է հասկանալ անշուշտ Սեբ. աղմուկ «ծանրատաղտուկ կնճռօտ գործեր, ղրաղմունք, կռիւ, վէճ». բայց այս բառը ծագում է աղալ բայից, որովհետև ասում են՝ աղմուկը աղալ «իր գործերը տեսնել վերջացնել»։

*ԱՂՄՈՒՐ «աղաջրով համեմանք». նորագիւտ բառ՝ որ աղաւաղեալ ձևով գտնում եմ գործածուած Բառ. երեմ. երկու անգամ. առաջինը՝ էջ 209, մանաւ բառի բացատրութեան մէջ. այսպէս՝ Մանաւս աղածին կամ ամուր (?) կամ մոռի (իմա՛ մորէ). և երկրորդը՝ էջ 215, յղ. մոռիս «ամուրք» ձևով։

= Ծն. ἁλμυρίς նոյն նշ. լաղմուած է ἅλς ծով, ἅλμη «ազաջուր» բառից։—Ա.ճ.

Աղշբանկ տե՛ս Բանգ։

ԱՂՇԿՈՐԵԼ «ստիպել, բռնադատել». մէկ անգամ գործածուած է Ետագր. ժ. «Նեղեն նախատանօք և զարձ առնել անդրէն աղշկորեն»։ Հին բռ. գրում է աղշկորել կամ աղշկորել. իսկ Բառ. երեմ. էջ 12 գրելով աղշկորել՝ մեկնում է «ստիպել կամ սակաւ սակաւ ի ներս ածել կամ խարխարել կամ շողոքորթել». բայց նոյնի տակ դնում է նաև իրեւ տարբեր բառ՝ աղորկորել «ստիպել», որ անշուշտ նոյնն է. Փբ ունի աղջոկորել, սակայն յայտնի չէ թէ որտեղի՞ց է առած այս ընթերցուածը։ Ըստ Սարդիսեանի՝ հրտր. Ետագր. էջ 66 յոյնը համապատասխան տեղում ունի κολακεύουσι, որ է «flatter, aduler, շողոքորթել, ծծնիլ». սրանով էլ ճշտւում է հայերէն բառի իմաստը՝ որին համաձայն է գալիս Բառ. երեմ. 12 «շողոքորթել»։ Այս պարագային, արմատը դնելով լշկ- (ա յաւելուած՝ ղ-ի պատճառով և -ար մասնիկ)՝ կարելի է մտածել հլ. laskati, ռուս. ласкать «փայփայել, շողոմել» բառերի մասին, որոնց համար Berneker 691—2 տալիս է մի քանի մեկնութիւններ, բայց բոլորն էլ մերժում է։

ՆշՒ համեմատում է յն. ἀλκάζω «ոյժ իմն տալով կռուել» և ἀλκέω «քարշել»։

Աղու տե՛ս Աղ։

Karst, Յուշարձ. 417. բաժանում է իրարից աղու «քաղցր» և աղու «ննդգաւոր». վերջինը դնում է ույղուր. al' խաբէութիւն, խորամանկութիւն, իսկ աղ, աղու (իմա՛ աղի)=ՔՔր. al «թոյն»։

Աղուաշ տե՛ս Աղ։

Աղուէշբանգ տե՛ս Բանգ։

+ԱՂՈՒԻՒՍ, ու հլ. (Հոլոմման ժամանակ՝ հակառակ սովորական օրէնքին՝ է չի դառնում ի, այլ լինում է և աղուեսու, յգ. աղուեսուեմ ևն) «աղուէս անասունը» ՍԳր. ածանցման և բարդութեան մէջ մտնում է աղուեսձևով. ինչ. աղուեսաճուն «սուտ կամ թեթև քուն» Ոսկ. ա. տիմ. ժգ. աղուեսենի «աղուէսի մորթ» Բուզ. աղուեսապռոշմ «յանցաւորի ճակտին դրուած մի տեսակ խարան» Կանոն. էջ 80, որ և աղուեսակերպ դրոշմ Մագ. կամ աղուեսախարան ԱՒ. աղուեսուկ «փոքր աղուէս» Ոսկիփ. աղուեսացու «մազ թափող մի հիւանդութիւն» Վստկ. աղուեսածաւմ «սալէպ բոյսը, tubera saler (Համմտ. Քրք. tilki ţašaγə կոչուած արմատը՝ Կամուս, Քրք. Քրգմ. Ա. 617), գիշերաղուէս «մի տեսակ անապատային մեծ աղուէս» Պտմ. աղէքս. յետին սխալ գրչութիւն է աղուէսապռոշմ (է-ով՝ փոխանակ ե)։ Ինչպէս տեսնւում է, թէ՛ հոլոմման և թէ՛ ածանցման մէջ բառի բունն է աղուես, որ յետոյ բառավերջի ս-ի պատճառ դարձել է աղուէս. Համմտ. մեր յօդուածը՝ Բազմ. 1898, էջ 226։ Վրդ. առ. յաճախ գրում է աղուվէս։

= Բնիկ հայ բառ. ցեղակիցներ են առնս. lōpācá, հինդուստանի لومڑی lomṛī, ղնդ. urupi-?, պհլ. rōpās, պրս. روباه rūbāh, փարսի rūwās, բելուճ. rōp'ask, օսս. robas, rūbas, rūwas, քրդ. rūwī, revī, յն. ἀλώπηξ (սեռ. ἀλωπεκος), ռուս. лиса, լտ. vulpes, հլտ. volpes (թերևս ունենալ ուրիշ ծագում), կապադովկ. յն. ἀγώπης, ἀπὸς (Karolides,

էջ 144), իրանեաններից փոխառութեամբ նաև չէրքէզ. ruvas, չերեմիս. rübüš, բոլորն էլ նոյն նշանակութեամբ։ Համեմատութիւնները տե՛ս Pokorny 1, 317, Boisacq 48, Walde 448. Ernout-Meillet 10, 88, Horn § 626։ Արիական բառերը ծագում են *laupēk'o- նախաձևից. հլ. աղուես< աղուես ծագում է հնագոյն *աղուվես ձևից և ենթադրում է հնխ. alōpek'u-. նախաձայն a-ի համար հմմտ. յոյն ձևը։ Հայերէնը չի կարող փոխառնալ լինել իրանեանից՝ r բազաձայնի պատճառաւ։—Հիւրշ. 415։

Ինճիճեան, Հնախ. դ. 21 աղու բառից։ Յն. ἀλώπηξ ձևի հետ համեմատեց նախ Rask, Nonnulla, էջ 23։ Ուղիղ մեկնեցին նախ ՆՀԲ, Peterm. 22, 29, 33. Windisch. 18, 26 ևն։ ՆՀԲ մեկնում է նաև «աղու հեպիկ ձևացեալ»։ Հիւնք. Եղիսա Կարքիդոնացու անունից։ Հալաճեան, Արեւելք 1893 նոյ՛՛ 10 աղու վէս։ Սխալւում է Հիւրշման՝ ենթադրելով թէ գուցե կարող էր բառը նախապատմական ժամանակ փոխ առնուած լինել իրանեանից։ Պատահական նմանութիւն ունի արաբ. لعوض la'vaḍ «շնագայլ» (Կամուս. Թրք. Թրգմ. բ. 445)։

ԳԻՒ.—Ալշ. Ասլ. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Ջղ. Ռ. Սեբ. Սչ. Վն. Տփ. աղվէս, Մշ. աղվես, Ագլ. Զթ. Մկ. Ոզմ. աղվիս, Ախց. Նբ. Սլմ. աղվէզ, Ակն. աղվօս։ Գաւառականներում աղուէս նշանակում է նաև «տան կամ սայլի դերան. 2. հարսանիքի առիթ ուղարկուած սուրհանդակ կամ համբաւաբեր» ևն։

*ԱՂՈՒԹ «յակինթ քարը» Գնձ.

= Թրք. یاقوت yaqut, գաւ. Թրք. yaqut, որ և ուղ. yaqut «յակինթ». բուն ծագումը տե՛ս Յակինթ բառի տակ։—Աճ.

ԱՂՈՒԻՃԱՒ «եղևնահունդ, խորասանի բոյս, artemisia santonica, santonine, սօլուճան օթի» Բժշ. (կայ գաւ. աղպիճակ Չմ. «լորի»)։ Հիւս. §.65 համարում է «staphisagria». ըստ ԳԲ խորասանին լինելով մի տեսակ օշինդր՝ նոյնանում է աղուիսակ բառի հետ՝ որ ըստ Հիւս. § 66 մի տեսակ օշինդր է։ Նորայր ՀԱ 1923, 163 գտնելով յաճախ պղվիտակ «օշինդրի տակ», ենթադրում է որ աղուիսակ սխալ գրչութիւն է՝ փոխանակ պղվիտակ. իսկ անդ՝ էջ 499 աղուիճակ մեկնում է վերի ձևով և համարում է աղուճակ բառի հետ նոյն, որովհետև նոյն բոյսի հիւթը բիւրեղանալու յատկութիւնն ունի։

ԱՂՈՒՆՔ «աղէտ, եղեռն». Պիտ. 408—9. Փիլ. (ստէպ). կայ միայն հոլովեալ աղուիմ, աղուից, աղուիս ձևերով. ՆՀԲ դնում է եզ. ուղ. աղուն. ըստ հոլովման պէտք էր դնել աղն, և հլ։

Աղուոր տե՛ս Աղ։

ԱՂՈՒՐԻ (յգ. սեռ. աղուրեաց) «որթի տաշտաթաղ անելու ճիւղը» Փիլ. լիւս. 164, որ և աղուրայ Վստկ. 143. ոմկ. յգ. աղուրայնի, սեռ. աղուրայնոյ Վստկ. 61. նոյն է նաև աղօր «սերունդ, շառաւիղ» Մագ. Թղ. էջ 205 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր, հտ. բ)։

ԳԻՒ.—Զարմանալի է, որ բառս պահուած է Այնթապի Թրքախօս հայոց մէջ ախրա, ախուրա ձևով. ախրա եաթրմագ «որթը տաշտաթաղ անել» (Բիւր. 1900, էջ 668). ուրիշ տեղ չեմ պատահած այս հաղուագիւտ բառին։

ԱՂՊԱՏ «բոյս ինչ, pentaphyllum» Բժշ. գիտէ միայն ՀԲուս. § 70։

ԱՂՊԱՐ «աչքի քսելու մի տեսակ ծարիր, ամկ. սուրմա, պրս. թութիա. 2. համեմ» Բժշ.։

Աղջ տե՛ս Արջն։

Աղջիկ տե՛ս Ադիջ։

Աղջկատակ տե՛ս Եղիճ։

Աղջոկորել տե՛ս Աղշկորել։

ԱՂՍՈՒՍ «պատաւարտ բոյսը» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 68. ուրիշ է ալսուս «մատուտակ», որ տե՛ս վերը։

+ԱՂՏ «կեղտ» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 23. մ. բ. 12. Ագաթ. «2. սաղմի թաղանթ, տղընկեր, ընկերք» Օրին. իր. 57. «3. հանքի, մետաղի դիրտ» Ագաթ. Վստկ. որից աղտեղի ՍԳր. Ագաթ. աղտեղել ՍԳր. Փարպ. աղտեղանալ Յայտ. իր. 11 կամ աղտանալ Եփր. աւետ. աղտախիճ «կեղտ, արատ» ՅՀ. իմ. ապաւլ. աղտանաճ «նատոյ տեղի» կանոնք. աղտեղութիւն ՍԳր. Եզն. Ագաթ. աղտեալ «ապականուած, նեխուած» Մանդ. էջ 127 (գրում է

հարբած մարդու հոտած ղգայուանքների համար՝ «Շողին աղտեալ ընդ երեսն մտանէ (փորից) և «ընդ օդսն տարածանի»)։

=Բնիկ հայ բառ. համմտ. յն. ἄρδα «աղտ, կեղտ, անմաքրութիւն», ἄρδαλος «աղտեղի», ἀρδαλόω «ապականել». տե՛ս Pokorny *1, 148,* Boisacq *75։ Հայերէնի մէջ սպասւում էր ըստ սովորականի *արտ, ինչպէս ունինք յն. χαρδία =հյ. սիրտ, բայց համմտ. և նեղ։— Հիւրշ. 415?*

Այվազովսքի, Յղ. հնչման 15 պրս. ālūda *«կեղտոտ»։ Ուղիղ մեկնեց նախ* Bugge, Btrg. *35։* Patrubány SA *1, 193 լատ.* lutum, *հիռլ.* loth, *լիթ.* lutynas, lutynė *«դիրտ, կեղտ»։ Շէֆթէլօվից* BB *29, 28 յն. ἄρδα «կեղտ», սանս.* ārdra *«թաց» և կամ յն. πλάδος «խոնաւութիւն»։ Առաջինները մերժում է* Petersson KZ *47, 250, կցում է յն. πλάδος «թացութիւն», πλαδαρός «թաց, խոնաւ» բառերին և աղտիւր, եղտիւր, աղբ բառերի հետ հանում է հնխ.* el-, ol- *«թրջիլ» արմատից՝ տ ածականով։ Նոյնը կրկնում է* Pokorny *1, 153։ Վանցեան, Պատմ. քերակ. 146 կեղտ բառից կրճատուած։ Թիրեաքեան, Ար. բառ. 15 հյ. ախտ «հիւանդութիւն», պհլ.* axt *«յոռի» բառից։*

ԳԻՒ.— Ախց. Ակն. Կր. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. աղտ. Սչ. ախղ, Ասլ. աղ, Ագլ. էխտ, Գոր. յէղտ, Ջղ. յեխտ, Ղրբ. յէխտ, Ջթ. օղդ, ողդ, Հճ. օղդ։— Նոր բառեր են աղտակալել, աղտակուլի, աղտաջուր, աղտկոռոյս կամ աղտկորուստ են։*

+ԱՂՏ «աղ», ի հլ. գործածուած է միայն տեղ ցոյց տուող մի քանի անուններում մէջ. ինչ. Ծով աղտից, Քաղաքք աղտիցն, Ի հովիտս աղտիցն, Ձոր աղտից ՍԳր. կամ նաև «աղահանք» նշանակութեամբ. Ջաղտս Կողբայ. ՅՀ. կթ. Ջմեր աղտուց կէան. Արձ. 1235 թուից (տե՛ս Վիմ. տարեգ. 79). Բաժ աղտից ՍԳր. կրկնութեամբ աղտ-աղտ «աղի, լեղի» Վեցօր. որ և աղտաղտին ՅԿ. գ. 12. աղտաղտուկ «աղի, աղած, լեղի. 2. աղի և ծովային վայր» ՍԳր. Խոր. Փիլ. ինչպէս աղ, նոյնպէս և սրա հոմանիշ աղտ՝ նշանակում է նաև հողի անբերրութիւն և լայնաբար ամէն բանի վատութիւն. ուստի առում է՝ Յաղտաղտուկս անապատի. Արար ղերկիրն պտղաբեր յաղտաղտուկս. ՍԳր. Աղտաղտուկ կենցաղ, կերակուր. Լմբ. Վրդն. են։ Արմատի երկրորդ ձևն է աղծ, որի վրայ տե՛ս վերը։

=Հնխ. sâld «աղ» բառից. սեռ. salnés, *որից նաև աղ. ըստ այսմ աղտ (և աղծ) աւելի հաւատարիմ են քան աղ, պահած լինելով հնխ. բառավերջիկ* d *ձայնը. այս ձայնը պահում են նաև գոթ.* salt *«աղ»,* saltan *«աղել», լտ.* sallo<*saldo *«աղել». միւս ցեղակից ձևերը տե՛ս աղ բառի տակ.—Հիւրշ. էջ 414։*

ՀՀՒ և ՆՀՒ հանում են աղ բառից, իբր աղուտ, սեռ. աղտի և սրանից աղտ։ ՆՀՒ վերի «Ջաղտս Կողբայ» ձևի մէջ աղտ համարում է «վայրք, գիւղք», իբր թրք. ալէք կամ վիլայէթ։ Հիւնք. լտ. sal *բառից, համարելով թէ* s *տառը (ձևի նմանութեան պատճառով) տ կարդացուած լինի։*

ՓՈԽ.— Վրաց. ალდატი ալդատի «չոր և անբերրի հող, աղտաղտուկ». Հայերէնից փոխառութիւն է համարում նաև Ջուբինով[2], էջ 19։

Աղտամուղտ տե՛ս Արջն։

ԱՂՏԷՋ. *անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. և վկ. բ. 125 «Ըստ սովորութեան իւրեանց զոհս աղտէզ մատուցանէին հրոյն»։— Թուի թէ պէտք է ուղղել զոհս աղտեղիս։*

Աղտիւր տե՛ս Եղտիւր։

ԱՂՏՈՐ *«մի տեսակ թթու բոյս, որի փուշին Կովկասում և Պարսկաստանում ձուածեղի, ձկան և լուլա քաբաբի վրայ են ցանում.* rhus coriaria, *սմաղ, սօմաք, (որ է ասոր.* ܣܘܡܩܐ sūmāqā *և նշանակում է բուն «կարմիր») ետր. աշխ. Մխ. բժշ. ոամկաբար դրում է նաև* ախտոր, աղտուր։

ԳԻՒ.— Խրբ. աղդօր։

**ԱՂՑ, ի հլ. «պէտք, կարիք, հարկաւորութիւն, ներքին պահանջ», գործածուած է միայն աննեղաբար։ Բառիս համար գտնում եմ ոսկեդարեան մի վկայութիւն՝ Կոչ. 204. «Բնաւ ա՞ղխ ինչ էին Աստուծոյ քնութեան ընդ*

մարդկութիւնս իջնալ շրջնալ». ուր աղխ *«կարասիք» պէտք է կարդալ* աղցf *«կարիք, պէտք» (տե՛ս իմ Ջեռագր. սրբագր. հայ մատենագիրների մէջ 1926, էջ 8—9)։ Պիտ. Փիլ. Նիւս. որից* աղցաւոր *«կարօտ, թշուառ. 2. պիտանի, կարևոր. 3. անհրաժեշտ» Եղիշ. ե. էջ 86. Պիտ. Փիլ. Նար. կուս. 412.* աղցաւորագոյն *«աւելի կարևոր», Փիլ.* աղցաւորութիւն *«կարօտութիւն, բնութեան պահանջ» Լմբ. սղ. Շ. յկ. ծ.* աղցաւորապէս *Իրեն. հերձ. 103։*

=*Ասոր.* ܐܠܨ elaṣ *«ճնշել, նեղել, ստիպել, հարկադրել, բռնադատել»,* ܐܠܨܬ elṣaṯ *«պէտք եղաւ»,* ܡܢ ܐܠܨ men ālṣā *«ἐξ ἀνάγκης, ի հարկէ ստիպեալ»,* ܐܠܨܬܐ ālṣṯā *«անհրաժեշտ կարիք»,* ܐܠܨܝܐ ālṣāyā *«կարեւոր, ստիպողական, անհրաժեշտ»,* ܐܠܨܝܬܐ ālṣāyūṯā *«պէտք, կարիք» են (*Brockelm. Lex. syr. *էջ 12 բ)։—Աճ.*

Նշբ թուի հանել ախտ *բառից, ըստ որում նաև* աղց *բառին սխալմամբ տալիս է «ցաւ, վիշտ» նշանակութիւնը։ Հիւնք.* աղ-ից։

Աղցան տե՛ս Աղ։

Աղցմի տե՛ս Աղ։

Աղփ, Աղփաբետ տե՛ս Ալփ, Ալփաբետ։

Աղփուն, Աղփուցանել տե՛ս Աղիփ։

ԱՂՓՐԹՈՒԹԻՒՆ *(կամ* ախփրբութիւն*). Նորագիւտ բառ՝ որ երկու անգամ ունի Սմբ. դատ. 208—9. յաղփրթութենէ լինի. ընդ ախփրբութենէ լինի (անատունի սատկելու համար է ասում).* Karst *թարգմանում է «Mutwille, անզուսպ լինելը, ստահակութիւն»։*

+ԱՂՔԱՏ, ի–ա *հլ. (Ս. Գրքում երկու տեղ* ո *հլ.) «տնանկ, անինչ, մուրացիկ» ՍԳր. «կարօտ, զուրկ» Ղևտ. իէ. 8. Ոսկ. Ես. Սերեր. «չետին, նուաստ» Պիտ. «տկար, խեղճ» Լմբ. Թղթ. որից* աղքատացուցանել *«աղքատացնել» ՍԳր. «նուաստացնել, պակասեցնել» Ոսկ. բ. Կոր.* աղքատաբար *Եւս. պատմ.* աղքատանալ *ՍԳր.* աղքատութիւն *ՍԳր. Եղն.* աղքատակերութիւն *«հարստահարութիւն» Բուզ.* աղքատասիրութիւն *Բուզ. կամ առանց յօդակապի՝* աղքատսիրութիւն *Փարպ. Մանդ.* աղքատախնամ *(նոր բառ) ևն։*

=*Հնխ.* oliqo- *ձևից՝ –ատ. մասնիկով (ինչ. հաստ–ատ). համմտ. հիւլ.* liach *(<հնխ.* leiqo-*) «թշուառութիւն», հին պրուս.* lic-uts *«փոքր», լիթ.* lēk-na-s *«ճղճիմ», բաղաձայնի աստիճանը փոխելով՝ յն.* ὀλίγος *«փոքր, քիչ»,* ὀλιγοπελέω *«տկարանալ»,* λοιγός *«հիւանդութիւն, ախտ, մահ», ալբան.* l'ik *«չար, նիհար»,* l'ig-en *«նիհարացնել», լիթ.* ligà *«հիվանդութիւն»,* ligónis *«հիւանդ, տկար», լեթթ.* liga *«ծանր հիւանդութիւն» են։ Համեմատութիւնները տե՛ս* Pokorny *2, 398,* Boisacq *697, 586։ Մեր ամենամօտիկ ձևն է յոյնը. հայերէնի մէջ* i *կըրճատուած է ըստ օրինի։*

Հներից Տաթև. ամ. 360 մեկնում է. «Աղքատք կոչին, այսինքն ի յաղխեաց և ի յընչից հատեալ. և կամ աղքատ, այսինքն ի յաղեաց և ի գիոց հատեալ, զի սոքա մարդկան ատելիք են եղեալ»։ Նոյն ոճով՝ Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 311 աղխ *կամ* ապ *բառից, որ* աղխ *(կարասիք) կամ ուտելու* աղ *անգամ չունի։ ՀՀԲ, ՆՀԲ և ՋԲ* աղխատ, *զուրկ յաղխից կամ յաղցից։ Հիւնք.* գաղթել *բայից կամ նաև* աղ *և պրս.* ﻏﺪﺍ gadā *«մուրացկան» բառերից։* Patrubány SA *1, 197* լմանեմ *բայից ատ մասնիկով։ Սանտալճեան, Բազմ. 1904, 500 իբր* աղ–ատ *լծ.* աղկաղկ։ *Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Lidén, Arm. Stud. *97։ Թիրեաքեան. Արեւահայ բառ. 40 պէս.* a-hu-kat *«ոչ-գեղեցիկ տուն (ունեցող)»։ Պատահական նըմանութիւն ունին լիթ.* álkti, *լեթթ.* alkt, *հպրուս.* alkins, *հսլ.* alъkati *«քաղցնուլ» (*Pokorny *1, 159)։*

Գիւղ.—Ախց. Մշ. Սլմ. ախատ, *երև. Մրղ. Տփ.* ախկատ. *Ագլ.* ա՛խկաթ, *Մկ. Ոզմ. Վն.* ախ՛ատ. *Նախ. Ռ. Սչ.* ախատդ *Գոր. Ղրբ. Շմ. Ջղ.* ախկադ, *Ակն. Խրբ. Կր. Պլ.* ախգադ. *Ալշ. Սեբ.* ախգ՛ադ. *Զթ.* ախօդ, ախոդ. *Հճ.* ախօդ. *Ասլ.* ախգա՛, *Տիգ.* ախմդ։

Փոխ.—Վրաց. აღჭატი ალჭატի *«փխրուն, դիւրաբեկ, ժժգոյն, աղքատ, մուրացկան»,* აღჭატება ალჭატება *«փխրուն՝ դիւրաբեկ դարձնել, աղքատացնել»։ Ջուբինովի մօտ էլ բառս համարւում է հայերէնից փոխառեալ։*

Աղօթք տե՛ս Աղաչել։

Հներից Տաթև. ձմ. հբ. ա՛յսպէս է աուդաբանում աղօթ *բառը. «Աղօթք որ անդրադարձեալ ասէ այսպէս. թող արարէք մեղաց ձերոց յամենայն ժամ. կամ թէ յաղբուրիւն արարէք ի վերայ դիւաց. կամ թէ յամօթ արարէք զսատանայ. կամ թէ ախ և օթ արարէք, այսինքն ախին և եղուկին և տրտմութեան օթևանս արարէք զձեզ... զարձեալ՝ աղին օթարան արարէք զձեզ, կսկծիլ և հոգալ վասն մեղաց և զանհամութիւն. հոգուց համեմել յամենայն ժամ»։ Նոյն հեղինակը՝ ամ. 323* աղօթ *հանում է աղ բառից. «Աղօթքն ա՛յսպէս անուն յայտնէ. աղ՝ այսինքն, որպէս աղն յամենայն իր խառնի և զամենայն ի համ բերէ, այսպէս աղօթքն յամենայն բարի գործս խառնի և բաղցրր և ընդունելի առնէ Աստուծոյ»։— Նշ.* աղաչել *բառից։ Հալաճեան, Արևելք 1893 նոյ" 10 աղու յօդուածք։ Հինք.* ուղտ *բառից։* Müller SWAW *136 1897, էջ 9 ըստ այլոց՝ է դնում յն.* ἀρά, *լտ.* orator *բառերի հետ։* Patrubány SA *1, 189* rogo *«աղաչել»,* rogatio *«աղաչանք», կազմուած* p *մասնիկով։* Karst, *Յուշարձ. 417 ԲԲր.* yal-var-maq *«աղերսել»։*

ԳԻՒ.—Ոսմ. աղօր, *Ախց. Հմշ. Մկ. Նխճ. Ռ. Սլմ. Սչ. Տիգ.* աղօթ, *Ղրբ. Մշ. Մրդ. Ջղ.* աղօգ, *Սեբ.* աղօգ՛, *Ակն. Խրբ. Կր. Պլ.* աղօգ, *Երև. Շմ. Տփ.* աղօտ, *Հճ.* աղօթ, աղոթ, *Ալշ.* աղօդ՛գ՛, *Ագլ. Գոր.* աղուրկ, *Ասլ.* աղէօ՛վն. աղօգ, աղօցկ, *ԶԲ.* մղէօթ, մղէօցկ։ *Այս այլևայլ գաւառականների մէջ էլ հին հայերէնի ոճով բայը լինում է* աղօթ *առնել (աղօթս առնել, ԶԲ.* մղէօցկ գիեօլ*). իսկ* աղօթել *(Մկ.* մղօթիլ*) նշանակում է «շար աչքից պահելու կամ ցաւը փարատելու համար վրան աղօթք անել»։ Նոր բառեր են* աղօթարան *«արևելք»,* աղօթարանախառն *«ընդ այգըն ընդ առաւօտն»,* աղօթնոց *«համբիչ» են։*

*ՓՈԽ.—*Kluge MSL *18, 168 հայերէնից փոխառեալ է դնում վրաց.* ლოცვა *լոցվա «աղօթք»,* მლოცავი *մլոցավի «աղօթող» (այսպէս նաև Ջուբինով[2] 653). Հայ բառը կցում է ռուս.* молитва *«աղօթք» բառին։ Երկուսն էլ սխալ։*

ԱՂՕՏ, ի հլ. *«նսեմ, կէս մութ (լոյս), թոյլ. տկար (ձայնի համար)» Եփր. աւետ. Առ որս. «սուղ, կարճ (վանկ)» Բր. Երզն. և Նչ. քեր. որից* ընդ աղօտ *«մեղմով, կամացուկ, թեթև իմն» Ա պետ. ա. 12. Ոսկ. մ. բ. 5, 7. յհ. ա. 1.* աղօտանալ *Փիլ. Նար.* աղօտաչահ *Պիսիդ.* աղօտերևակ *Ա.Բ.* աղօտաճաճանչ *ՅՀ. իմ. ատ.* աղօտագոյն *Ոսկ. յն. Դիոն. Մաքս. ընդ* աղօտատեսիլ *Փիլ.* աղօտալոյս, աղօտափայլ *(նոր բառեր) են։*

Bugge, Beitr. *36 համեմատում է յն.* ápaiós *«նուրբ, թոյլ, տկար» բառի հետ. հայը կազմուած է* -ուտ, աւտ = օտ *մասնիկով, մինչդեռ յոյնը ունի* -ιό- *մասնիկը. Շեֆթ.* BB *29, 66 փոխառեալ է դնում պրս.* *aδauta *«անմաքուր» բառից, որ կազմուած պիտի լինէր* a *բացասականի ղնդ.* dav, *սանս.* dhāv *«մաքրել»,* dhauta *«մաքուր, պայծառ, փայլուն» բառից, իբր սանս.* adhauta *«անմաքուր»։ Պատահական նմանութիւն ունին հալ.* slabъ, *լեթթ.* slābs, *հրգ.* slaf, *գերմ.* schlaff *«տկար, թոյլ» (*Trautmann *270)։* Karst, *Յուշարձ. 417 ԲԲր.* al, il *«տակը» բառի հետ։*

Աղօրի տե՛ս Աղալ։

ԱՃԱԼ *«մի տեսակ բոյս է. գործածւում է բժշկութեան մէջ.* cassia senna. *սինամէքի» Բժշ.։*

Patrubány *ՀԱ 1907, 305 հնխ.* ad *մասնիկով* +k´u *«ուռչիլ»* +o+lis *մասնիկ։— կայ արաբ.* عجلة ʾaǰāla *բոյսը, որի վրայ տե՛ս Կամուս, ԲրբՔրգմ. գ. 281։*

ԱՃԱՊԱՐԻԼ *«շտապել, վռազել, արտորալ, ճեպել» ՍԳր. Ագաթ. որից նոր գրականում* աճապարանք, աճապարանօք։ *Նոյն բայի աղաւաղեալ ձևն եմ կարծում* աճապել *«յառաջել կամ հասանել» Բառ. երեմ. էջ 12։*

Նշ. ճեպ, շտապ *բառերից։ Հինք.* ճեպ-*ից։ Բ. Խալաթեան, բանաս. 1902, 166 աստւր.* šapāru։ Patrubány *ՀԱ 1907, 305* ad *մասնիկով* +k´u *«ուռչիլ»* +p *(*epi *«վրայ»)* +պար *«շուրջ»։ Թիրեաքեան, Ա-*

բիահայ Բառ. պրս. čapār «*պիսակաւոր ձի. 2. փոստի ձի*»։

Գիւր.—Ակն. աբաչաroճiք «*առճապարանք*», *որ ձևացած է* ճ *և* պ (>ջ *և* բ) *ձայների տեղափոխութեամբ (տե՛ս Մաքսուդեանց,* Le parler arm. d'Akn, *էջ 48)*։

Ա.ՃԱՌ, ի–ա և ո *հլ.* «*սապոն կամ այս նպատակին ծառայող օշնան խառը, օճառախօտ,* saponaria officinalis L» *ՍԳր. Կոչ. 305 (տես.* աճառոյ). *Լմբ. մատ. 93, 376 (գրծ.* աճառաւ, աճառոք, *այլ և.* օճառոք*), 136, 167 (գրծ.* աճառօվ*), Նար. Մխ. Երեմ. որ և* օճառ «*սապոն*» *Եսթ. բ. 3. Մաղաք. գ. 2. Դան. ժգ. 17. Եղիշ. Հյր. մեր 199. Լծ. ար. կամ* ոճառ (*գրծ.* ոճառաւ) *Լմբ. մատ. 500. յայտորդից զանազանելու համար արդի գրականում ընդունուած է միայն* օճառ *ձևը, որից* օճառախառ, օճառացում (saponification) *նոր բառերը*։

Հիւնք. օծել *բառից։ Պատահական նմանութիւն ունի ասոր.* ʾādaryā «*օճառախոտ*». (Brockelm. Lex. syr. *245)*։

Ա.ՃԱՌ «*նեարդ, կռճիկ, ջիղ*» *Ագաթ. Բրս. սղ. որ և* օճառ *Նիւս. Բն. Լծ. Նար. որից* աճառապատ «*նեարդապատ, ջղապատ*» *Եզեկ. Ժ. 22. Երզն. քեր. Նիւս. կազմ.* աճառապինդ «*ջղապինդ*» *Պիտ. (գրուած* ուճառապինդ *Պիտառ.),* աճառամաշկ «*կռճիկների բաղանթը*» *ՓՒ.* աճառային «*կռճիկի վերաբերեալ*» *ՓՒ.—Նախորդից զանազանելու համար արդի գրականում ընդունած ձևն է միայն* աճառ։

Հիւնք. աճառ «*սապոն*» *բառից։* Patrubány *ՀԱ 1907, 304* աճիլ *բայի հետ։ Թիրեաքեան, Արիահայ բառ. 21 պրս.* آچار āčār, آچاریدن āčārīdan, *որ Ջէրմէնգի բառարանից է հանում, բայց նշանակութիւնը չի տալիս. իսկ Արիահայ բառ. էջ 92 պհլ.* avzar *և պրս.* افزار afzār, *որ բառ ԳԴ և Բուրհան՝ նշանակում է «կօշիկ, ոտք, նաև առագաստ, համեմունք» (իսկ* āčār *չունի Բուրհան. միայն ԳԴ նշանակում է «զաոիվայր և զաոիվեր»)*։

Գիւր.—Ունինք աճառ *եւդ. Սեբ. «բոլորովին նոր, չհնացած, չմաշուած (տուն, շէնք, ըզգեստ)». յատկապէս ասում են* նոր–աճառ *եւդ. 2. Ասլ. Սեբ. Սվ. «ուժը՝ թարմութիւնը տեղը, աշխոյժ, կայտառ, եռանդուն (մարդ, թև, թիկունք)». որից* աճառուտ *Զն. «աշխոյժ, կորովի,* vigoureux». *Զէյթունի բարբառով ասում է* աջօր «*նոր (գինի, տիկ ևն)*»։ *Յայտնի չէ թե այս բառերը վերի* աճառ *ձևի՞ց են, թէ փոխառեալ թուրքերէնից. որովհետև միևնոյն ժամանակ ունինք պրս.* آجار aǰar «*թարմ ու գալարտ*», *քիրդիզ.* آجار aǰar, آژار ažar «*դէմքի առողջ և գեղեցիկ գոյն, կաւի փայլ*», اجارلە aǰarlə «*առողջ ու փայլուն գոյնով*»։ Աճառ «*աշխոյժ*» *ձևը վերի բառից նթէ յառաջացած է, այդ պարագային պէտք է դնել հայերէնից իբր փոխառութիւն։*

Փոխ.—Էնգիւրիի Բրք. գւո. aǰar «*ամուր, զօրեղ*», *որ գործածական է նաև տեղացի հայոց ու յունաց մէջ (Մխիթարեան, Բիւրակն 1898, 789)*։

Ա.ՃԱՌ կամ Ա.ՒՃԱՌ «*սարք, կազմած*», *յատկապէս «ձիու կազմած» Ոսկ. Երր. ղ. «օժիտ, հանդերձանք, զարդ, առիթ, պատճառ, նիւթ» Պիտ. Փիլ. ՅՀ. կաթ. Նար. որից* նոճեաճառ «*նոճիի փայտից կազմուած*» *Նար. խշ։*

=*Պհլ.* afčār «*գործիք, կարասիք, սարք, կազմած*» *բառից, որից* zēn. afčār «*թամբի սարք*». *նոյնից է պրս.* افزار afzar *կամ* اوزار avzar «*համեմունք, կերակրի սարք. 2. գործիք արուեստաւորաց*». *ծագում է հին իրան.* *api-čara -*ձևից, *որ կազմուած է* api- *մասնիկով* čārā- «*միջոց, ճար*» *բառից։ Այսպէսով սրանց է կապւում նաև վրաց.* აბჯარი აբջարի «*զէնք, զրահ, սպառազինութիւն*»։

Նշ. օճառ *բառից է հանում։ Կերևայ թէ պէտք է կցել վրաց.* აბჯარი აբջարի «*զէնք, զրահ, սպառազինութիւն*» *բառի հետ, բայց նրանց յարաբերութեան կապը յայտնի չէ։ Ուղիղ մեկնից* Nyberg, Hilfsbuch *2, 3. բայց միասին է դնում նաև* օճառ «*սապոն*», աճառ «*կռճիկ*» *իբր* *a-čarana-, *ինչպէս նաև* օճառ։ *Այս բառերի միութիւնը ա՛յն ժամանակ ընդունելի կլինի, երբ իրանեանում ապացուցուի նոյն նշանակութեանց գոյութիւնը։*

Գիւր.—Ըստ այմմ նոյն է Զթ. ավջօր «*ընդհանուր անուն լոբիի, բակլայի, սիսեռի և*

*ոսպի», յատկապէս «լորի», որոնք առնուած են իբր կերակրի համեմունք։

*Ա.ՃԱՌ «առաստաղ, առիք, ճոռոք» ըստ Լծ. նար. կամ «առաստաղի մանր գերաններ» ըստ ՆՀԲ. բայց աւելի է հիշտ դնել «տանիք», ինչպէս ցոյց է տալիս բառիս միակ վկայութիւնը՝ Հց. աթ. էջ 421—2. «...ածես ի վերայ գերանս... զառաստաղս կապեացես... և ի վերայ աճառս արկանել... և ապա աւարտել»։ Այս օրինակից յայտնի է որ աճառ առաստաղ չէ, այլ նրանից վերև եղած մի բան, որ է «տանիք». Համմտ. նաև հետևեալ տաղի մէջ «Տաճարն այն ո՞ւմ նման է. աճառքն այն ո՞ւմ նման է. մարդակքն այն ո՞ւմ նման է. գերանքն այն ո՞ւմ նման է» (տե՛ս Ջօպանեան, Հայ էջեր, էջ 60)։

= Արաբ. اِجّار iǰǰār «տանիք» (տե՛ս Համառ, Թրք. Թրգմ. Ա 745)։—Ա.Ճ.

Գ.Իմ.—Իբրև միջին հյ. բառ ունինք ոճոռ «առիք (Նորայր, Բառ. ֆր. 584 ա), որ կայ նաև արդի գաւառականներում. ինչպէս՝ ոճոռ Ախք. լ. Թեհ. Ղզ. Ղրբ. Մկ. Տփ. ուռճուճ Ագլ. ոռճուճ Հջղ. ուռճօճ Աստ. (Բառ. երեմ. էջ 189 յիշում է ոճոռ, ոռճուճ ձևերով. այժմ Երևանի բարբառով օ՛ջօռ). բայց այս բոլորը նո՞յն է վերի աճառ ձևի հետ։

Աճառել տե՛ս Աճռել։

*Ա.ՃԱՍ, որ և աճազ «մի տեսակ սալոր» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 75։

= Արաբ. اجاص aǰaṣ կամ iǰaṣ «սալոր» (տե՛ս Շթայնշնայդերի հաւաքածոյի մէջ՝ WZKM 11, 267 և Համառ, Թրք. Թրգմ. բ. 870), որից Թրք. գաւ. iǰes «չոր սալոր»։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 2689։

Ա.ՃԱՐՉՕԽԱՆ «մի տեսակ բոյս. տճկ. ղրմզի թօփ», ունի միայն Բառ. երեմ. յաւել. 565. չգիտէ ՀԲուս։

Աճառի տե՛ս Հաճարի։

+Ա.ՃԵԼ (-եցի) «մեծանալ» ՍԳր. Ոսկ. Ես. Բուզ. Ագաթ. (յետնաբար աճիլ, -եցայ Գնձ. ինչպէս է և նոր գրական լեզուում). պարզ արմատը Ա.Ճ «աճում» Գնձ. «բոյսի աշք, ակնուռ» Վստկ. Մխ. գտ. Ոսկիփ. «անասունների բնական աճումով աւելացած քանակը» Մխ. գտ. 98, 291. աճանգման մէջ մտնում է երեք ձևով. 1. աճ-. ինչ. աճումն ՍԳր. Եզն. աճուն Ագաթ. Եփր. թգ. աճական Ոսկ. յկ. բ. 32. աճաճ «ոչ-կենդանական, հանքային» Մագ. քեր. 2. տկար (ծիլ) Պիտ. 3. չշատացող, անփուփոխ մնացող» Գէ. Ես. գերաճումն Վրք. Հց. գրախտաճուն Պիտ. բազմաճուն լինել «շատ զաւակների տէր լինել» (նորագիւտ բառ) Ոսկ. սղ. (Հրտր. ՀԱ 1917, 27. տպուած է բազմաճիւն, ուղղել վերի ձևով՝ ըստ Վարդանեան ՀԱ 1921, 240). աճուրդ, աճրդախօսութիւն (նոր բառ). 2. աճեց-. ինչ. աճեցուցանել ՍԳր. աճեցուցիչ Եփր. ա. կոր. աճեցուն Կող. ա. 10. Ագաթ. աճեցական Պիտ. աճեցութիւն Նիւս. կազմ. 3. աճել-. ինչ. աճելութիւն Պիտ. Նար. 3հ. կթ. աճելական հոսրովիկ։

= Բնիկ հայ բառ. հնխ. արմատն է *āug-, որ զանազան ճիւղաւորութիւններով ընդհանուր տարածուած է շատ հնդևրոպական լեզուների մէջ. այս առաջին ձևից ունինք լտ. augeo, լիթ. áugu, գոթ. aukan, հրգ. ouhhōn, հիսլ. auka «աճիլ», սանս. ओजस ōǰas «ուժ», գնդ. aoǰa «ուժ», s աճականով՝ յն. αὔξω «աճիլ», լտ. auxilium «(աճումն), սատար», երկրորդ vag- արմատաձևից (s աճականով) սանս. vakš, գնդ. vaxš, գոթ. vahsjan, գերմ. wachsen «աճիլ, մեծնալ» և վերջապէս սղեալ og, ag, ug ձայնդարձերից՝ սանս. उक्षति ukṣati «ուժեղանալ», उग्र ugra «կարող, զօրեղ», գոթ. akran «պտուղ», լիթ. ūgis «ծիլ, բողբոջ», ūgl-is «միամեայ ծիլ», ûglus «բոյս», լեթթ. ūga «գաւխնի, հաղարջի նման վայրի պտուղ, կեռաս», հսլ. vin-ja-ga «վայրի որթ», ռուս. ягода «քոլապտուղ, մոշ, մորի ևն», яглый «պաղաւէտ, բերրի, ուժով» ևն։ Այս վերջին *ag արմատից է նաև հայերէնը, իբր *agiō>աճիմ։ Համեմատութիւնները տե՛ս Pokorny 1, 22 և 173 (որ իրաբից բաժանում է հնխ. aug- «շատանալ» և ōg- «աճիլ» արմատները), Boisacq 101, Walde 73, Ernout-Meillet 86։

Յն. լտ. և սանս. ձևերի հետ համեմատեց նախ ՆՀԲ, յետոյ Bötticher, Vergl. 350, Arica 87, 426. բայց այս մեկնու-

Թիւնը չընդունուեց՝ հայերէն ձեւի տարբերութեան պատճառով. ո՛չ Հիւբշման, ո՛չ Տէրվիշեան և ո՛չ իսկ նոյն ինքն Լագարդ յիշում են նոյնը։ Müller SWAW *32, 579 յն.* ἀχμή *«սայր, վերջին ծայր» բառի հետ։ Հիւնք. պրս.* آجستن *ājastan «ծառ անկել»։* Patrubány *ՀՄ 1907, 304* ad *նախդիրով* *k'euō *«ուռչիլ» արմատից. համմտ. սանս.* švāyati *«ուռիլ, ածիլ», յն.* κίκυς *«ուժ»։* Pedersen KZ *39, 393 լտ.* augco *են ձևերի հետ, համարելով թէ հնխ.* āug- *արմատը հալերէնում վերածուած է* āg-։ *Այս մեկնութիւնը վերի ձևով վերջնականապէս ապացուցեց* Lidén IF *18, 503—6, որ ընդունում է նաև* Meillet MSL *15, 357։* Karst, *Յուշ. 416, 417 մոնղոլ.* asik, *թրք.* asik *«օգուտ, շահ» ճապոն.* suke *«օգնութիւն», թթր.* as *«օգուտ, շահ»։ Թիրեաքեան, Ար. բառ. (ըստ* Harlez*) զնգ.* az *«ընձիւղել, վերաբուսանիլ»։*

Գիւտ.—Ախց. Մկ. Մշ. Շմ. Ոզմ. Տփ. աճիլ, *երև.* աճել, *Մշ.* աջել, *Ակն. խրբ. կր. Պլ. Ռ. Սեբ.* աջիլ, *Ննխ.* աջել, *Աալ.* աջէ՛լ, *Տիգ.* մջիլ, *նոր բառեր են* աճ *«ծառի ճիւղ, մագլցող բոյսերի թել»,* աճ տալ *«մեծանալ»,* աճեկուճ, աճուճ *«ետիւելով խոշորացող (լոբի ևն)»,* աճեծառ *«արմատի կողքի երկրորդական ճիւղերից աճած ծառ»։*

Փոխ.— Ոմանք հայ գւռ. աճաճ *ձևից փոխառնել են համարում թրք. գւռ. (Կեսարիա, Էնգիւրի)* anaǰ, *որ նշանակում է «թխամայր, մայր հաւ՝ որ թխում է. 2. մեծացած կենդանի կամ մարդ, խոշոր (հաւ, օձ)» ևն. (այսպէս. Պալեան, Բիւր. 1898, 712, Մխիթարեան, անդ՝ 789, Գազանճեան, Յուշարձ. 328). Հայ բառն է* աճաճ *Սեբ. «աճելուց՝ ծնելուց դադարած (կենդանի), ածէ կտրած (հաւ). 2. Ակն. հին (փեթակ, աղաւնի)»։ Սակայն յայտնի չէ թէ հա՞յն է թուրքերէնից փոխառնել, թէ ընդհակառակը. որովհետև թրք. գւռ. ձևը նոյն է գրական* ج anaǰ *«անհեթեթ, խոշոր» բառի հետ, որ թևևս* ci ana *«մայր» բառից է և բնաւ չի յարմարւում հյ. աճաճ «տկար, չզաւեցող» բառին։*

+Ա.ՃԻԻՆ, *հնապէս և հլ.— բնդաճեան Ոսկ. Պօղ. Ա 771, յաճեաճ՝ անդ՝ 783 (նկատողութիւն Հ. Ակինեանի ՀՄ 1930, 488). (գրծ. աճեամբ), ի հլ. (սեռ. աճենի) և ո հլ. «մոխիր, գազախ» ՄԳր. Ոսկ. յհ. ա. 12. «մարմնի ոսկորների մնացորդ հողը» Նար. Արգ. Լմբ. որից* աճիւնաճալ *Ոսկ. սղ. լբ և ա. Թես. ը.* աճիւնացուցանել *Սրգ.* աճիւնախառն կրակ *Տոմբ. գ. 18 և ը. 2։*

= *Բնիկ հայ բառ՝ հնխ.* azgy- *ձևից, որի ուրիշ ժառանգներն են գոթ.* azgō *«մոխիր», հիսլ.* aska, *հին անգլ.* aesce, *հբգ.* asca, *գերմ.* Asche, *անգլ.* ashes *«մոխիր, աճիւն», սիրակուս.* ἄσβολος *«մուր»։ Բոլորի էլ պարզ արմատն է* ās *«այրել, չորանալ» (համմտ. սանս.* āsa *«մոխիր»,* ásita *«սև, թուխ». լտ.* āreo *«չորանալ»), որի աճականները են* g-*ով* azg, azgh *(որից վերոյիշեալ ձևերը) և* d-*ով* azd, *որի հաջորդները տե՛ս ազազել բառի տակ։ Համեմատութիւնները տե՛ս* Kluge *25,* Ernout-Meillet *67,* Boisacq *86,* Walde *59* (Pokorny *մոռացել է յիշել այս արմատը)։*

Justi, Zendsp. *50 զնդ.* ātrya *«մոխիր» բառից կասկածով։ Հիւնք.* աճառ *«սապոն» բառից։ Շէֆթէլովից* BB *28, 312 հհիւս.* aska *են բառերին ցեղակից, որ վերի ձևով մեկնեց* Meillet MSL *15, 357։*

Ա.ՃՈՒԿ *«երանք, ցայլք» (իբր ռամկական բառ) Մարթին։*

Böttticher, Vergl. *350,* Arica *87, 426 սանս.* vankšaṇa, vakšas *«կուրծք» և սկովտ.* uchd*։ Աճառ.* SA *1, 303 համարում է փոխառնել թթր.* uǰa, uǰe *«նստոյ տեղի մարդոյ», չաղաթ.* uǰa *«դաւակ», ույղուր.* uča *«պոչ, դաւակ» բառից. բայց ձևով, ինչպէս և նշանակութեամբ անյարմար են։* Patrubány SA *2, 31 հալերէնից փոխառութիւն է համարում հունգ.* ágyék *«մէջք»։*

Դիւտ.— Ախց. երև. աճուկ, *Ակն. Առն.*

Արբ. խրբ. կր. Համշ. Ննխ. Պլ. Ր. Սչ. աջուգ, *Ասլ.* աջիւյ, աջիւ*, *ՋԹ.* էջուգ, *Մշ.* աճըխաբկճեր, *Ալշ.* աջըխպագ. *այս բառերի իմաստը տեղից տեղ տարբերւում է. օրինակ՝ Պօլսում երկու սրունքների միացման տեղն է, ուր ամօթոյքն է. Երևան և Ախլցխա՝ պորտից ցածր երկու կողքի փոսիկները։*

ՓՈԽ.— Թրք. գւռ. կր. eǰük *«առուկ» (Բիւր. 1898, էջ 627)։*

**Աճոնի, որ և* աճուր, հաճուր *«մի տեսակ բոյս է». ունի միայն ՀԲուս. § 77. Ամիրտովլաթ մեկնում է «շամամ», Սիմէօն Կամրկապցի «վարունգ», ԳՔ «աղուամաղոտ վարունգի նման պտուղ,* melon chate*». արդի գաւառականներում այս անունով հասկացւում է «շնեխիար կամ շնկիար. վարունգի ընտանիքին պատկանող մի բոյս է. կուտերը աւելի մանր, խիտ, բարակ, ծուռ և շատ երկայն. մէկ մատնաչափից մինչև մէկ մարդաչափ կարող է մեծանալ. գոյնը բնդհանրապէս դեղնաշորթ (կոէմ) է կամ մութ կանաչ. իր որոշիչ մէկ նշանն է ակօսաւոր կեղևը։ Այնթապում կայ երկու տեսակ աճուռ. 1. խրա* աճիր՝ *որի կեղևը ակօսաւոր է և գործածւում է թթու դնելու. 2. փիլպի* աճիր *(բրդոտ աճուր)՝ որ վարունգի մեծութեամբ է. կեղևը ակօսաւոր չէ, մութ կանաչ գոյն ունի և աղուամաղով ծածկուած է. այս տեսակը գործածւում է դոլմա շինելու (Բիւր. 1900, էջ 669)։*

=Արաբ. خيار ‘aǰūr *«մի տեսակ վարունգ», որ յիշուած է Կամուս, Թրք. Բրգմ. բ. էջ 81, ՔԷև էջ 22 բառաշարքում պակասում է։—Ա՛ճ.*

ԳԻՒ.— ՋԹ. աջուռ. *Արբ.* աջուր, *Այն.* աջիր։

**Աճպարար «ձևոնածու» Լծ. Փիլ. Ոսկիփ. աւելի ընտիր ձև է* աճապարար, *որ ունի միայն Ա՛Բ։*

= Արար. عجب ‘aǰab+ *«զարմանալիք» +Հյ.* արար *(անող) բառերից բարդուած, ըստ այմ վերի բառը պէտք է կարդալ աջբարար. այս ձևով կազմուած է նաև գւռ.* աջբաւես *(Բլ. ՆԲ) «այլանդակ, շատ տգեղ», արաբ.* عجب ‘aǰab *+Հյ.* տես *(տեսք) բառերից։— Հիւրշ. 262։*

Նախ Աւգերեան, հրատ. Փիլ. հտ. բ, էջ 523 ծան. մեկնում է Հյ. աչապարար *(աչք պարարող) կամ արաբ.* աճայիպարար*։ Ուղիղ մեկնեց ՆՀԲ, Թիրեաքեան, Ար. բառ. հանում է* աճապարել *բառից։*

ԱճՌՆԻ, *կամ* Աճ.ՐՌԻ *«տրորել». յետին բառ. «Աղ ցանեա ի վերայ և աճռեա՛, որ մի՛ աւորի ընդ ինքն» Վստկ. 184. «ԶԱբրահամ հայրն տանիս. զԻսահակ ի հողն աճռիս (մահը)» Բլկր. 47. «Սապոնով և աճռելով» Առաք. լծ. սահմ. 401. գրուած է աչքրել «տրորել, ճմլել, ցաւացնել». «Քանի՞ դիմ սիրտս աչքրիս» Քուչ. 46. բառի հնագոյն ձևն է* աճառել *«իրար խառնել». «Այլն ամենայն խառնուածովք այլոցն պիտացեալ՝ աճառեալ լինի առ ի ձիթոյ ազգ. իսկ ձիթենւոյն ըստ ինքեան իսկ առանձինն» Փիլ. և. 535. կամ նաև «շաղուել, շաղախել». «Ի հնումն ղբաղարջն ձիթով աճառէին» Գիրք Բզ. 337. հաճառ հայս էին աճառել «իւղով խմոր էին շաղուել» Դրնդ. 110. վերջին հատուածի մէջ գտնում ենք նաև եղանաո «իւղով շաղուած» բարդ բառը՝ նոյն արմատից։*

=Ստոյգ չէ Թէ արդեօք աճառ *«սապոն» բառից է կազմուած։*

ՆՀԲ ագուռ *«ափ, բուռ» բառից։*

ԳԻՒ.— Եւդ. ՋԹ. խրբ. Մրշ. Պլ. Սվ. աջրել *«տրորել, ափի մէջ առնելով ճմլել, ճմռթկել», 2. Ջն. «սապոնել, լուացքը օճառով տրորել», 3. Ննխ. «կնդտոտել, ապականել (որ արդիւնք է շատ տրորելու)», Ասլ.* աջրուել, *Ակն.* էջրուիլ *«սապոնել», ՀՃ.* էջէրել *«տրորել»։ Նոյն բայի սաստկականներն են* աճոթել, աճուկել, աճուռել, աճրռուկել, *որոնցից* աճումաճ *«կնդտոտ», աճրռուուիլ «կնդտոտուիլ», աճռուուիլ «սիրտը ցաւով տրորուիլ». Թերևս նաև Ախց.* աճոճօրել *«փշացնել»։*

ՓՈԽ.—Քրդ. աճրռանարե *«շաղուելով զանգուած շինել». Լը սէր Հարի հէօքմաթէ բրուտէ քո՞ննm, ժը աւ եէք աճրռանտընէ ֆրագ չէքըրընա. եթէ ո՞չ ունիցի իշխանութիւն բրուտն կաւոյն, ի նմին զանգուածոյ առնել անօթ (Հռովմ. թ. 21)։*

+Ա.Մ, ի-ա *հլ. «տարի» ՍԳր. Ագաթ. «տարիք» Եւս. Ոսկ. որից ամամէջ «մի քանի տարուայ միջոցը» Ագաթ.* ամաճոր *«նոր տարի», ամաճորաբեր Ագաթ. զ և առ նախդիրներով՝ զառամ «խիստ ծեր» Պիտ. զառամագոյն Եփր. աւետ. զառամանալ 3Հ. իմ. առ. եայ և եան մասնիկներով՝ միամեայ Յայսմ. եռամեայ, եռամեան, եռեմեան Պղատ. օրին. Փիլ. երեքամեայ Եւս. քր. բազմամեայ Իմ. դ. 15. բազմամեան Մծբ. աւելի հին ձևով* երկեամ, *գերկեամ, երկեմեան, երկեմենից, երեամ, երեմի ՍԳր. Ոսկ. մ. բ. 8. Ես. և բ. տիմ երեմեան, երեմենի «3 տարեկան» ՍԳր. ութամեան Գծ. Յ. 33. Նոր գրականում ամավերջ, կիսամեակ, տասնամեակ Ան։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* sama- *ձևից. Համմտ. սանս.* सम sámā *«տարի, եղանակ, ժամանակ», զնդ.* 𐬵𐬀𐬨𐬀𐬌 hama- *«ամառ», հիւլ.* sam *«ամառ», կիմր.* ham *և գալլ.* hāf *«ամառ» (տե՛ս նաև ամառն բառի տակ)։ Համեմատութիւնները տե՛ս* Pokorny *2, 492—3.—Հիւրշ. 416։*

Հներից Տաթև. ձմ. ա. «իակ ամ կոչի վասն երից. նախ դի արեգակն յամեն յերկոտասան կենդանակերպան երեսուն երեսուն օր և ապա վճարէ զտարին. երկրորդ՝ զի սովաւ յամենք մինչ ի մահ» (երրորդը չկայ)։ Նորերից Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 315 ցեղակից լտ. annus։ *ԳԴ արաբ.* عام ‘ām *«տարի»։ ՆՀԲ արաբ. ամ, լտ.* annus, *եբր.* šana *ևն։ Նախ* Rask, Nonnulla, *էջ 25։ Համեմատից խոլ.* am, amser *ձևերի հետ։* Klaproth, Asia pol. *102 արաբ.* a‘âm; Canini Et. ètym. *197 արաբ.* am *«տարի», խոլ.* am *«ժամանակ»։ Մաոլզ մեկնութիւնը տուաւ նախ* Lag. Urgesch. Arm. *872։ Մորթմանն,* ZDMG *30, 415 տոպագական բևեռագրերի մէջ գտնում է* Hamapsa *դիցանունը, որ մեկնում է* ա։ *և բոյս բառերից։ Տէրվ. Մասիս, 1881 մայիս 11 ամ բառի նախաձևը համարում է* *ֆամ։ Karst, Յուշարձ. 406 սումեր.* mu *«տարի»։*

Փոխ. Հայերէնից է վրաց. ერკემალი երկեմալի, *որի վրայ տե՛ս երկու։*

Ամաժանդ տե՛ս ժանտ։

+Ա.ՄԱԼ *(-ացի) «լցնել» ՍԳր. որ և ամաճալ (-ացայ) Օր. Իգ. 25. Վկ. արև. 30. Ոսկ. մ. ա. 9 և Ես. գ. կամ* ամաճել *(-եցի) Վեցօր. Եփր. Համաբ. յետին են ամայել Երզն. մաթ. և* ամացուցանել *Սկևռ. աղ. բոլորն էլ «լցնել», որից ծովամած «ծովը լցուած» Գ. մկ. գ. 3.* ամաճ, ո *կամ* ի-ա *հլ. «անօթ» ՍԳր. Եզն. Ագաթ. խնկամաճ Բ. մնաց. դ. 22, գինեմաճ Բրս. արբեց. ոսկեամաճ Մաբթին. Նոր գրականում* աղամաճ, կաթնամաճ, շամարամաճ, թէյամաճ, թանաքամաճ, գրչամաճ, բիամաճ, ամաճեղէն *ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* am- *«լցնել» արմատից, որի միւս ժառանգներն են սանս.* ámatra *«աման, բաժակ, կուժ», յն.* ἄμις *«գինեքայլին աման, կրճճ»,* ἄμη *«դոյլ», որից փոխառեալ լտ.* hama, ama *«դոյլ» և սրանից էլ մրգ.* âme, ōme, *գերմ.* ohm *«մի տեսակ չափ»։ Այս բառերը* Walde *և* Boisacq *դնում են հնխ.* am- *«բռնել» արմատից. բայց հայերէնը ցոյց է տալիս* *am- *«լցնել», որ աւելի յարմար է։— Հիւրշ. էջ 416։ Համեմատութիւնները տե՛ս* Pokorny *1, 52 (հնխ.* am- *«բռնել» արմատի տակ),* Kluge *355,* Ernout-Meillet *424 (լտ. ձևը ապրում է գեռ. գաղ. Ֆր.* aîme *բառի մէջ),* Boisacq *53,* Walde *31։*

Առաջին անգամ Աւգերեան, Բցար. չափ. և կշռ. 1821, էջ 42 նշանակից ամալ և աման բառերի նոյնութիւնը։ Lag. Ges. Abhd. *63, 167 աման բառի դէմ յիշում է պրս.* مان mān *«մի տեսակ չափ», յն.* μάννις *«մի տեսակ բաժակ», ասոր.* ܡܢ mān *(այս բոլորը արամական փոխառութիւն են ըստ* Nöldeke *և մեզ հետ գործ չունին. այսպէս նաև ըստ* Horn, Grdr. *§964) և պրս.* آمادن āmādan *«լցնել»?* Lagarde, Arm. St. *էջ 166 պրս.* mān, *ուղիղ մեկնութիւնը տուեց* Pictet *2, 279, բայց յիշում է նաև պրս.* آمس āmus *«գինու մեծ դաւաթ», որ չի կարող սրանց վերաբերիլ։ Պատկ. Սլաւ. էջ 86 լտ.* amo? *Տէրվ. Նոյ. 62 վերի յն. ձևերի*

հետ նաև պրս. āmādan, mān, հյ. ամալ, աման՝ հնխ. am արմատից՝ Bugge, Etrusk. u. Arm. 112 աման կցում է հարուսկ. ama հոմանիշին։ Հիւնք. ամալ և աման արաբ. amānat «աւանդ» բառից, Հիւրշ. ԲԷ Arm. Stud. 18 և ԲԷ Arm. Gram. 416 նշանակում է մի՛ միայն աման և չի յիշում ամալ, որից հետևում է ԲԷ չի ընդունում երկուսի արմատակցութիւնը։ Petersson KZ 47, 279 հնխ. sem- «ամանով մի հեղուկ վերցնել» արմատից. համմտ. լիթ. semiù նոյն նշ., sàmtis «չերեփ», հիւլ. doesmet «դուրս թափել» ևն, որ կրկնում է Pokorny 2, 488։ Մառ ЗВО 23, 352 և ИАН 1917, 323 ասոր. ܡܢܐ mānā «աման»։ Ղափանցեան ЗВО 23, 352 աման=զնգ. yama «ապակեայ աման, բաժակ»։ Յակոբեան, Բիւզանդիոն, Բ. 473 պրս. ամեխ, էմեան, հէմեան, «բուրձ», ասոր. մանա, երր. մէնի։ Սանտալճեան, Բազմ. 1904, 498 ուրարտ. ամանիս։

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Ակն. Դոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տփ. աման, Ոզմ. ա՛ման, Ասլ. ամա՛, Տիգ. mmn, ՋԲ. ՀՀ. ամօն, Համշ. օմօն (որից օմնիլ «ամանել, լցնել»)։ Նոր բառեր են ամանլուայ, ամանլուացի, ամանլուացիկ, ամանլուիչ, ամանկոտուկ, յգ. ամանաի և կրկնութեամբ աման-չաման։

ՓՈԽ.— Ասոր. امان aman, յգ. امنان amanan «աման, պնակ, խոհանոցի ամաններ», amana šekir «շաքարաման» (այլ է amani «կարասիք»)։ Բոշ. aman «աման», որից telaman «կարապաման» (Fink, Die spr. d. arm. Zigeuner, ЗАН 1907, էջ 121)։

* **ԱՄԱՂԹԵՂՋԻՒՐ** և կամ ա ընկած՝ **մաղթեղջիւր** «Յորի աղջիկներից մէկի անունը» Յոր. խր. 14. «ամալթեան եղջիւր, նշանակ առատութեան և ճոխութեան» (քերթողական լեզուի մէջ) Նիւս. Երգ. Ոսկիփ։

=Յն. Ἀμάλθεια «կաթնատու այծ՝ որ սնուցեց Արամազդին՝ իբր դայեակ», որից κέρας Ἀμαλθείας «Ամալթէայի եղջիւրը, որ եղաւ նշանակ առատութեան»։ Ս. Գրքում դրուած է Ἀμαλθείας κέρας, իբրև Յոբի երրորդ աղջիկը, մինչդեռ եբրայական բնագրում կոչւում է קֶרֶן הַפּוּךְ qeren hapūk, որ բուն նշանակում է «անգոյրի կամ ծարիրի եղջիւր», գեղեցկութեան նշան է և դարձել է իգական յատուկ անուն։ Յունականից փոխառեալ է լտ. Amalthea, Amaluheae cornu, նոյնպէս և միւս եւրոպական լեզուներում։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԱՄԱՅԵԼ «ծեփել կամ շպարել, linio». ունի միայն Ներսէսովիչ, Բառ. լտ-հյ. էջ 305 բ։

ԱՄԱՅԻ (սեռ. ւոյ, հաց) «անշէն, անբնակ» հոր. Պիտ. Նար. «որք ու անտէր լքուած» Փիլ. Պիտ. Նար. Անկ. գիրք հին կտ. Ա. էջ 170—171. «պարապ տեղը, իզուր» Մագ. Թղ. 237. աւում է նաև ամա ԱԲ, ամայ «ամայի» Ոսկ. յհ. ա. 28. «բարբարական պատող» Ոսկ. Եփես. 833. «անշնորհք» Բառ. երեմ. էջ 13. որից ամայութիւն «անշէնութիւն» Փիլ. Պիտ. Ոսկ. յհ. ը. 33. «լքումն, մինակ որբի պէս մընալը» հոր. Ոսկ. յհ. ա. Անկ. Գիրք հին կտ. Ա. էջ 168. առմայական «վայրի (բոյս)» Նար. ամայանալ «անշէն մնալ» հոր. Լատ. «հեռու, դուրկ մնալ» հոսր. Փիլ. լիւս. «ճգնիլ, անապատ քաշուիլ» Գր. սրկ. «հնանալով մոռացուիլ» Մագ. հին և ընտիր վկայութիւններն են Բուզ. ը. 44 «Ողորմէր աղքատաց, գերեաց, ամայեաց (լքեալ)» և Ոսկ. ես. «ամայացոյց ի կախարդացն»։

Justi Zendsp. 26 կասկածով դնում է գնդ. amayavā «չէնչին, մնայն, անարժէք», սանս. amāyá? գնդ. mā «չափել» արմատից։ (Bartholomae, Altir. Wört. 141 այս բառը մեկնում է «ցաւ, տառապանք», որով համեմատութիւնը ջնջւում է)։ Փաւնակ. Անահիտ 1903, 101 և 1904, 97 ամայի (Բուզանդի մօտ) գնում է *ամարդի, որից ամատի< ամայի։ Ղափանցեան, ЗВО 23, 360 ան բացառականով+māy «չափել»։

ԳԻՒ.—Ագլ. Երև. Խրբ. Սեբ. ամայի։

ՓՈԽ.—Վրաց. ამაო ամաո «ի զուր, պարապ, անոտի, սուտ, սխալ, անհիմն», ამაოდ ամաոդ «ի զուր» (այս իմաստի հետ նոյն է Մագ. ամայի «ի զուր»). ამაოება ամաոեբա «ունայնութիւն», ამაოხრებელი ամաոխրեբելի «աւերիչ» (որ է «ամայի դարձնող»)։ Մառ

Текст. и Раз. *VI*, Физиол. *1904*, էջ *XXXV* յիշում է վրաց. ამავოյ ձևը։

*Ա.ՄԱՆԱԹ «աւանդ արուած բան» Տաթև. ամ. 26. Գողութիւն է հատանել զաւանդ և զամանաթ։ (Չունին բառարանները)։

=Արաբ. امانة amānat «աւանդ», որ գալիս է امن amn «վստահիլ, ապահով լինել» արմատից։ Թուամ է թէ բառը թուրքերէնի միջոցով անցած է մեզ։—Աճ.

*Ա.ՄԱՆԱԿ, ի–ա հլ. «ժամանակ» Փիլ. Պիտ. 3Հ. իմ. աստ. Նար. որից ամանակաւ «ժամանակական» Նիւս. կազմ. ամանակեան Փիլ. ամանակութիւն «տարի» Շիր. հինգամանակ Թր. քեր. բազմամանակ Մագ. դուզնամանակեան Անյ. ստորոգ. հանգէստամանակ Վրդն. ծն. անամանակ Կնիք հաւ. էջ 266. երկամանակ Թր. քեր. Մագ. եռամանակ Թր. քեր. Մագ. յոգնամանակ Անյ. ստորոգ. յոգնամանակագոյն Պղատ. տիմ. ամանակաւոր (նոր բառ) ևն. արդի գրականում ամանակ նշանակում է միայն «ձայնաւորի կամ վանկի տևողութիւնը կամ չափը»։

=Պրս. امانا amāna «ժամանակ» ձևից. պարսկերէնի մէջ այսպիսի բառ չկայ, բայց կայ امان amān «ժամանակ, ժամանակամիջոց», որի հետ միասին՝ հայերէնի միջոցով՝ ներմտրում եմ և amāna=պհլ. amānak ձևը, հիշտ ինչպէս որ համանիշ պրս. zamān ձևի հետ միաժամանակ կայ պրս. زمانا zamāna=պհլ. zamānak։—Պրս. امان amān համապատասխանում է սովորաբար արաբերէնին, հիշտ ինչպես որ زمان zamān «ժամանակ» բառն էլ համապատասխանում է արաբերէնին (արաբ. անկանոն յգ. լինում է ازمان azmān և ازمنة azmina)։ Սակայն ինչպէս որ պրս. zamān բնիկ պարսկերէն է և ոչ բնաւ արաբերէն, ինչպէս ցոյց է տալիս հյ. ժամանակ բառը (Horn, Grund. § 659), նմանապէս և amān բնիկ պարսկերէն է, ինչպէս ցոյց է տալիս հյ. ամանակ բառը։ Արաբերէնին համարիլու պատճառը եղել է երկու ուրիշ համանուն բառերի գոյութիւնը արաբերէնում. այն է amān امان «փող, քմբուկ» և amān «անձնատուութիւն, ապահովութիւն, խնայել, ներում»։ Երեք նոյնահնչիւն բառերը միասին գործածուած են հետևևալ երկտողում.

چو یکدم طبل وسرنا و امان زد
دلیران بی امان تیغ امان زد

čū yakdam ṭabl u surnā u amān zad,
dilīrān bī-amān tīγ-i amān zad.

*Երբ միահաղոյն քմբուկ, շեփոր ու փող հնչեցին, քաջերը առանց ժամանակ (կորցնելու) անձնատուութեան թուրը քաշեցին։—Աճ. Հիւրշ. 156 անժամօթ լինելով վերոյիշեալ պրս. ձևին և հյ. ամանակ կցելով ժամանակ բառին, չի կարողանում մեկնել այս երկուսի յարաբերութիւնը։ Patrubány SA *1*, *311* ժամանակ բառից՝ ժ-ի կրճատմամբ։

Ա.ՄԱՋԻ *(-եցի)* «ամօթ դգալ» ՍԳր. Եղն. Ոսկ. որից ամաչեցուցանել Հռ. ե. 5. ամաչկոտ Ոսկիփ. անամաչ Ոսկ. յհ. Մաշկ. Ոսկիփ. անամաչելի Ոսկ. յհ. բ. 9. -օբ մասնիկով՝ ամօթ, ո հլ. (մինչդեռ ծանօթ և աղօթ՝ ի հլ. սակայն ունինք նաև զամօթի, յամօթի հոլովաձևերը) ՍԳր. Ագաթ. Ոսկ. Եփես. որից ամօթալից ՍԳր. Ոսկ. Ագաթ. Եփր. Բ. Կոր. Եւս. պոմ. ամօթալիր Ճղ. 193. ամօթակից Ոսկ. մ. գ. 6. ամօթաճ Ոսկ. ամօթապարտեալ Բուզ. ամօթխած, ամօթոած, ամօթեաց, ամօթեած (ո՞րն է ուղիղ դրչութիւնը. Թուամ է վերջի երկուսը) Ոսկ. ամօթոյ Ա. Կոր. ժբ. 13. Կոչ. Ոսկ. յհ. ա. 17. Եփր. տիտ. անամօթ Սիր. խ. 32. Ոսկ. անամօթիլ Երեմ. գ. 3. Ոսկ. ևն։

=Արմատն է ամ, չ յօդակապով. ինչպէս ունինք ճան-ա-չել, փախ-չել, մատ-չիլ ևն. արմատը աւելի լաւ ցոյց է տալիս ամօթ, որ կազմուած է -օթ մասնիկով, հիշտ ինչպէս ճանաչել-ծանօթ, աղաչել-աղօթ։

Աւետիքեան, Քերակ. 1815. 311. ան-աչ ձևից, իբր թէ աչքը գոցել կամ ծածկել ամօթից։ Տէրվ. Նախալ. 61 սանս. am «յարձակիլ, վնասել» արմատի հետ։ Հիւնք. ամաչել դնում է ամօթ+աչ բառերից, իսկ ամօթ՝ ամերոյս քարի անունից։ Pedersen, Հայ. դր. լեզ. 26 գերմ. Schmach «ամօթ, նախատինք», schmähen «այպանել» ձևի հետ։ Charpentier IF *25*, *243* յն. ἀνωτώ «անայպանելի», μῶμος «նախատանք, յանդիմանութիւն, ծաղր» բառերի հետ։ Karst, Յուշարձ. *423* կցում է թրք. am «բունոց» բառին։

Գիհ.—Զգ. ամանչել, *Երև.* ամանչէլ, *Տփ.* ամանչիլ, *Ախց. Կր.* ամբնչէլ, *Վն.* ամչնալ *(երկավանկ), Մշ. Մրղ. Ղզմ. Սլմ.* ամչբնալ, *Ալշ.* ամեբնալ, *Մկ.* ամչբնալ. *Տիգ.* ամչբնալ, *Ննխ. Ռ. Սչ.* ամբնչնալ, *Հճ.* ամոչնօլ, *Զթ.* ամբչնօլ, ամբչնոլ, *Ակն. Ասլ. Խրբ. Ննխ. Պլ. Սեբ.* ամբչնալ, *Հմշ.* օմչբնալ, *Ագլ.* բմա՛նչիլ, *Շմ.* համանչիլ, *Գոր. Ղրբ.* հըմա՛նչիլ, *Հւր.* հումանչէլ, *Պո.* մահանչ *«ամօթ»* (ամանչ<ամաչ *բառից շրջուած է, ինչպէս որ ունինք Ղրբ.* հա՛մաչ *«ամօթ, պատիւ, պատուի զգացում»)։ Նոր բառեր են* ամաչեբես, ամամաչկոտ *են.—իսկ* ամօթ *բառի դէմ ունինք Ախց. Ակն. Երև. Խրբ. Կր. Մկ. Մշ. Մրղ. Ննխ. Շմ. Պլ. Զգ. Ռ. Սլմ. Սչ. Վն.* ամօթ, *Ղզմ.* ա՛մօթ, *Ալշ.* ամօտ, *Տիգ.* մօթ, *Հճ.* ամօթ, ամոթ, *Ագլ. Տփ.* ամուր, *Ասլ.* էմէօ՛, *Ղրբ.* հա՛մօթ, *Գոր.* հա՛մուր։

+ԱՄԱՌՆ, ն *հլ. (-ռան կամ -բան, յգ. -բունք) «ամառ» ՍԳր. Կոչ. բուն ձևն է* ամար, *որ և յօդի պատճառով դարձել է* ամառ։ *Ածանցման մէջ մնում է երկու ձևով. 1.* ամար-, *որ հնագոյն և հարազատ ձևն է. ինչ.* ամարայիկ *Դան. բ. 35.* ամարայնի *ՍԳր. Ոսկ.* ամարանի *«ամառ ժամանակ» ՍԳր. Եւս. բր. Եփր. Եբր. Վեցօր.* ամարասուն *Ագաթ.* ամարաստան *կամ* ամարաստուն *«ամառանոց» Վեցօր. էջ 135։—2.* ամառն-, *որ գոնբւում է յետին ժամանակի ձևերում. ինչ.* ամառնային *Խոր. Պիտ. Փիլ.* ամառնամուտ *Սարկ. տոմ.* ամառնանոց *Տոմար. արդի լեզուի մէջ հնագէտները գործ են ածում յաճախ առաջին ձևերը (*ամարանոց, *սեռ.* ամրան *են), իսկ միւսները երկրորդ կարգի ձևերը (ինչ.* ամառանոց, ամառանոցային, ամառանոցատուր, *սեռ.* ամռան *են). լեզուի բարեշրջութեան օրէնքները իրաւունք են տալիս վերջիններին։*

=*Բնիկ հայ բառ. պարզ արմատն է հնխ.* som *«ամառ, տարի», որ պահուած է գնդ.* 𐌷𐌰𐌼𐍉 hamō, *գրծ.* hama *«ամառ» ձևով (պհլ.* hāmīn, *քրդ.* hāwīn, *գազա* amnâni*). Նոյնը* ā *բնով դարձել է սանս.* सामा sámā *և հյ.* ամ *(գրծ.* ամաւ*) հնխ.* s°mā *ձևից. կելտականի մէջ վերածուել է* o *բնի, որից իռլ.* sam, *կիմր.* ham, *գալլ.* hâf. *գերմանականի մէջ չեզոք* r *բնով յառաջացել են հբգ.* sumar, *գերմ.* Sommer, *գոթ.* sumrus, *անգլ.* summer, *սկովտ.* samh-radh *«ամառ». այս* r *իբր մասնիկ ունինք նաև հայերէնում, որի վրայ աւելանալով ն՝ կազմուել է* ամառն *(տե՛ս* IF *1, 179,* Meillet MSL *15, 262—3 և* Introduction[5]*, էջ 391)։ Կազմութեան կողմից բառս բոլորովին նման է* ձմեռն *բառին, նոյնպէս* r *և* n *մասնիկներով։ Համեմատութիւնները տե՛ս* Pokorny*, 2, 493,* Kluge *456։—Հիւրշ. 416։*

Հներից Վանական վրդ. «այս է՝ որ յանօթ առնու» (տե՛ս Ալիշան, Հին հաւ. էջ 136)։ Նոյնպէս է նաև Տաթև. հարց. էջ 197։ Ոմն Գ. Կ. Արշալ. Արարատեան թերթում, 1843, № 130 համեղն *բառից։ Ուղիղ մեկնից նախ* Bötticher, Arica *78, 305։ Տէրվ. Մասիս 1881 մայ" 11 նախահայ ձևը դնում է* *համառն, Canini, Et. étym, *104, իսլ.* eymiria *«խարոյկ» բառի հետ։ Սարգիսեան, Ագաթ. և իր բազմ. գաղտնիքը, էջ 213, ծան. 2* ամ–առ *կամ առընթեր կամ ի վերայ կայ ամին։ Հալաճեան, Արեւելք 1893, նոյ" 10* ամ+առնել։ *Հինք. արար.* համարաթ *«աշխատասէր» բառից։ Սրմագաշեան, Արմէնիա 1899, թ. 64—65 ռում.* amar *«լեղի» ? Պատահական նմանութիւն ունի ափխազ.* амара *«արեգակ»։*

Գիհ.—Շմ. ամառնը, *Ագլ.* ա՛մառնը, ա՛մառ. *Ալշ. Ախց. Ակն. Ասլ. Երև. Խրբ. Խրիմ. Մկ. Մշ. Մրղ. Ննխ. Պլ. Զգ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տիգ.* ամառ *(Սչ. սեռ.* ամբռան*), Ղրբ.* ա՛մբէռնը, *Գոր.* ա՛մառր, *Ղզմ.* համառ, *Զթ.* ամօռ, ամռռ, *Հմշ.* օմառ, *սեռ.* օմռօն, *Հճ.* ամոյ։ *Նոր բառեր են* ամառնատաճն, ամառդղում, ամառնենի, ամռնուկ, ամառնութիւն, ամառել, ամառթռղ։

*ԱՄԱՍԱՐԱԿՈՎՔ *«երուսաղէմի տաճարից մի անօթ». մէկ անգամ գործածուած է Երեմ. ծբ. 19։*

=*Եբր.* מִזְרָק mizrāq *«օրհնեալ ջուր սրսկելու ման» բառն է՝* זרק zrg *«սրբսկել» արմատից. բնագրում գրուած է յգ. ուղ.*

הַמְּזָרְקוֹת hammizrāqōṯ, *որի դէմ լոյն թարգմանութիւնն ունի քաշտարծի, առանց ձեռագրական տարբերութեանց։ Այս ձևից ծագում է հյ. մասմարովք, ինչպէս ունի Շիրակացին. «Կադամադեկովք և մասմարովք ի գրոց եբրայականաց ոչ է թարգմանեալ. արդ ուր գտանիցես զայս անուանս, գիտասջի՛ր, եթէ կադամադեկովք ըմպելի ասի. և մասմարովքն ճաշակ, որով զգինին հանեն» (Շիր. հրտր. Պատկ. էջ 31)։ Ամասարակովք ձևը եբրայական բառի աւելի հաւատարիմ տառադարձութիւնն է. բայց ո՛չ թէ ուղղակի եբրայականից է, այլ դարձեալ յունարէնից (*ἀμασαρακώθ ձևի միջոցով), ինչպէս ցոյց է տալիս նախատար հ-ի բացակայութիւնը։ Արդի ձեռագիրներում այսպիսի ընթերցուած չկայ, բայց անշուշտ եղել է Ս. Սահակի գործածած ձևը։*

Ըստ այսմ առաջին մեկնիչն է Շիրակացին։ Բառ. եւիմ. էջ 13 հասկանում է «բուրվառ»։ Նորերից ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բցար. չփ. և կշռ. 43, 124, յետոյ ՆՀԲ։

[ԱՄԱՍՆԱ, «արկանել կամ քարշել». գիտէ միայն Բառ.հրեմ. էջ 19. բայց այս բանը սուտ ու սխալ ենթադրութեան արդիւնք է, ինչպէս երևում է մի տող ներքև յիշուած ամասցես «արկցես կամ ձգեսցես» և վեց տող ներքև յիշուած ամաց «ելից, էարկ, ձգեաց» ձևերից, որոնք ո՛չ այլ ինչ են, եթէ ոչ ամաձ «լցնել» բայի զանազան ժամանակները։]

ԱՄԱՏՏԱՐԱ. «նետի նպատակ». գործածուած է մի անգամ միայն. «Եւ ես երեքկնեցից փքնօք յորս՝ ածել և ձգել յամատտարային». Ա. Թագ. ի. 20։

= Երր. מַטָּרָה mattārā «նետի նպատակ». բնագրում դրուած է նախդիրով לְמַטָּרָה ləmattārā «ի նպատակն», որ նոյն թարգմանութեան մէջ տառադարձած է Ἀματταρί (այլ ձ. λαρματταραι), որից էլ հայերէնը։

Հներից կիւրղ. Թագ. այսպէս է մեկնում բառս. «Ամատտարային կամ տունկ է կամ տեղի և նոյնպէս եբրայեցերէն մնացեալ է բանն»։ Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ԱՄԱՒ «մի տեսակ ձուկ է». այս բառը մէկ անգամ ունի Մագ. քեր. 228. «Ոչ ունելով նոցա (Յունաց) են՝ յորջորջեն զճուռակն ծուռակ, որպէս ոչ եղելոյ լուղակաց որ ի մերում գաւառի, նովին ձայնիւ կոչեն զամարն՝ ամաւ». այսինքն թէ յոյները ճ չունենալով՝ ճուռակը հնչում են ծուռակ և մեր երկրի ամար ձուկը չունենալով՝ անունը պահում են ամաւ։—Այս ձուկը ծանօթ է մինչև հիմայ և Սևանայ լճի ձկներից մէկն է, ըստ Ալիշան, Տեղ. Հայոց մեծաց, էջ 19։ Առուղելով նորբայազէտցոց մօտ՝ զայլ որ հիմայ կոչւում է ամաւ և գեղարքունու տեսակներից է։

Մագիստրոսի առածը սխալ հասկանալով Սահակ. Կամենիցացի գրում է ամար «մի տեսակ թռչուն, fulica, larus», որին հետևել են նաև ՆՀԲ, ՋԲ և ԱԲ։ Սխալը ուղղեց և վերի միութիւնը տուեց Նորայր, Հայկ. բառաք. էջ 105։ Սխալւում է ԳԲ ամաուն և ամար տարբեր ձկներ համարելով։

ԱՄԱՐԱՆ «պանդոկ՝ ուսոի կերակրին աղքատաք և մանկունք դպրոցաց Տաճկաց. դարմանոց». միջին հյ. բառ, որ յիշում է միայն Նորայր, Բառ. ֆր. 661 բ։

= Արաբ. عمارت ʾimārat «բարեպաշտական խոհանոց՝ յորմէ ժառանգաւորաց և կարօտելոց կը բաշխուի նկանակ, ապուր և քրքմագոյն փիլաւ». բուն նշանակում է «շէնք, շինութիւն» (տե՛ս Աբիկեան, Ընդ. բառ. տճկ. 1892, էջ 409 ա)։ Սրանից փոխառեալ է և ֆրանս. imaret նոյն նշ։

Ուղիղ մեկնեց Նորայր, անդ։

ԱՄԱՐԱՆՈՑ կամ նաև ամարայնոց «գլուխը դնելու մի տեսակ կանացի զարդ է». նորագիւտ բառ, որ երկու անգամ ունի Անկ. գիրք հին. կտ. էջ 156 և 182. Թագ կապեալ ընդ ծամակալովքն և ամարայնոց գլխադրաւ ծածկեաց զգլուխ իւր. Եւ ամարանոց արկեալ զգլուխ իւր որպէս զհարսն։ Առաջին օրինակում թէև կարելի է ենթադրել որ լինի ածական, «ամառնային» նշանակութեամբ, բայց երկրորդ օրինակից երևում է որ անկախ գոյական է։ Տե՛ս և ամաւր։

Ա.ՄԱ.ՐԱՆՏԻՆԷ *«ադամանդեայ». մէկ անգամ գործ է ածել Կալիսթ. 5. 18 «Արեգակն՝ սառնային բիւրղեայ. և լուսին՝ ամարանտինէ»։*

=Յն. ἀδαμαντίνη «ադամանդեայ», ինչպէս ունի յոյն բնագիրը. ըստ այսմ հայերէնը ձեռագրական սխալ է, որ պէտք է ուղղել ադամանտինէ։—Հիւբշ. 340։

Ուղիղ մեկնեց նախ Ն2Բ. յետոյ Կալիսթենէսի հրատարակիչը, էջ 5 ծան. և վերջին անգամ Տաշեան, Ուսումն. ստ. Կալիսթ. էջ 207։

***Ա.ՄԱ.ՐՈՒ** *«գառնուկ». նորագիւտ բառ, որ երկու անգամ գործածել է Իրենէոս. ցոյցք, էջ 51 և հերձ. էջ 81 միևնոյն ձևով. Իբրև ոչխար ի սպանդ ածաւ և իբր ամարու առաջի կորչի անձայն (ե դարու Թրգմ. ունի՝ Իբրև որոջ առաջի կորչի անմռունչ Կայ. ես. ծգ. 7)։ Նոյն բառը գտնում եմ նաև Ոսկ. Ճառք, էջ 426. Իբրև զոչխար ի սպանումն եկն և իբրև զամարու առաջի կտրողի իւրոյ անձայնւ—Հին բռ. արդէն մեկնում է «որոջ կամ ոչխար»։*

=Ասոր. ܐܡܪܐ emrā «գառն». այս բառը գործածուած է Ս. Գրքի ասորի Թարգմանութեան միևնոյն տեղը և Իրենէոսի ասորի բնագրի միջոցով է անցել մեզ։ Բառը բնիկ սեմական է և գտնում է նաև միւս սեմական լեզուների մէջ. ինչ. ասուր. immēri, փիւնիկ. amr, արամ. אִמַּר immar, արաբ. عمر imarr, عمرة amarra «գառնուկ» (Կամուս, Քրք. Թրգմ. Ա. 752)։—Հիւբշ. 300։

Ուղիղ մեկնեց նախ Ն2Բ։ Հիւբշ. բառը համարում է անստոյգ, որովհետև այն ժամանակ վկայութիւնները պակասում էին։ Վերի ձևով մեկնեց Վարդանեան, ՀԱ 1910, էջ 282։

Ա.ՄԱԻ, *որից ամաւենի «որդան կարմրի կաղնին. quercus coccifera». ունի միայն ՀՌուս. § 79 ըստ Ստ. Ռոշքեանի։*

Ամբառնալ տե՛ս Բառնալ։

=Բառնալ բառից՝ ամ մասնիկով։—Հիւբշ. էջ 176, 428։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և Ն2Բ։ Հիւնք.

Ա.ռտաւան *յատուկ անունից։ Թիւրեմբեան, Կարնամակ, ծան. 35* ամբարտակ, ամբարտաւան, բարդ ևն ձևերի հետ։

Ա.ՄԲԱ.ՍԻԿ *«մշկահոտ տանձ». ունի միայն Ա.Բ. իսկ Ն2Բ չիշում է գտ. բառերի շարքում՝ ամբասկի ձեւով «ազգ տանձի, աղնիւ, մշկահոտ»։ Նորայր, Բառ. ֆրանս. դնում է «poire d'ambrotte կամ muscadelle»? գտնում է արդի գաւառականներում՝ հետևեալ ձևերով. արաբիկ Վն. «մի տեսակ տանձ», համբասիկ Բզ. «մի տեսակ մեծ և հիւթալի տանձ»։*

Ա.ՄԲԱ.ՍՏԱՆ, *ի–ա հլ. «դատախազ, մէկի դէմ դատ պահանջող, չարախօս. 2. պահանջուած դատը, չարախօսութիւն» ՍԳր. Ոսկ. որից* ամբաստան լինել *կամ* ամբաստանել *«դատարանը դանդատ տալ, չարախօսել» ՍԳր. Ոսկ.* ամբաստանութիւն *ՍԳր. Եղիշ. Նոր գրականում* ամբաստանեալ *«դատի կանչուած անձը»,* ամբաստանագիր, ամբաստանական, ամբաստանիչ *ևն։ Կիր. էջ 18 ունի աւելի պարզ մի ձև՝* ամբաստ լինել *«ամբաստանել», բայց Թուխ Քէ շինծու է։ (Այլ է Սոկր. 36* ամբաստացեալ. *«Թուխմ ոմանց աստ ամբաստացեալ». յոյն բնագիրն ունի* ἀπεχθάνεσθαι *«ատելի լինել», որից յայտնի է՝ որ բառը պէտք է ուղղել* բամբաստացեալ*)։*

Ն2Բ վրաստ բառից ? Տէրվ. Altarm. *11* ամ–բաս–ա–ան, *իբր* բամ *«խօսիմ» բառից, ինչ.* բամ–բաս–անք։ *Հիւնք. ըմբռստ բառից։* Nyberg, Hilfsbuch 2, 27 *կապում է պագնդ.* anbasān *«հակառակորդ» բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի պրս.* پوستین pōstīn *«բամբասանք»։*

***Ա.ՄԲԱՐ** *«շտեմարան» Ա. մնաց. իր. 12. «մթերք, մթերած բաները» Նար. Լմբ. սղ. գրուած է նաև* ամպար. *որից* ամբարել *Յովէլ. ա. 18.* ամբարանոց *Խոր. Ասող.* ջրամբար *Արծր.* ամբարապետ *Փարպ. Հին լեզուի մէջ աւելի գործածական է* համբար, ի–ա *հլ. «մթերանոց. 2. մթերք» (այսպէս Ս. Գրքում 20 անգամ գործածուած է* համբար, *մէկ անգամ* ամբար*), յետնաբար* ո *հլ. (ինչպէս է և* ամբար*), որից* համբարանոց *Ղկ. ժբ. 24 կամ* համբարոց *Ագաթ.* համբարել *ՍԳր. Եւս. քր.* խոտահամբար *Ագաթ.* յոգնահամբար *Նար. Սկևռ. սղ.* համբարակալ. *Եփր. ա. 128 (սխալ*

է համբարակեալ. տե՛ս Վարդանեան ՀԱ 1913, 301—2). համբարածու «պարենավաճառ» ՅՀ. կթ. բամբարական կամ համբարաճ «արգանդ» Թէոդ. Խչ.— Հնագոյն վկայութիւնը գտնում ենք հին հայկական առածի մէջ. Թէ քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարքն չեն. Խոր. ա. 11։—Առանձին տե՛ս համբարակ, համբարակապետ, համբարապան:

=ՊՀլ. պազ. anbār «հատաքուժ, պաշար», anbārakpat «համբարակապետ», սրա հնագոյն համբար ձևի հետ նոյն է պՀլ. hanbār «ուտելեղէնի պաշար». օր. hanbār i zamistān «ձմեռուայ պաշար» (Nyberg, Hilfsbuch 2, 99). պրս. انبار anbār «շտեմարան» իրանեանից փոխառութեամբ նաև Թրք. انبار ambar, քրդ. anbār, ասոր. ܒܝܬ ܐܢܒܪܐ bīt ambāre, նբն. ἀμπάρι, ալբան. ambar, chambar, բուլգար. ambar, hambar, սերբ. hambar, ռուս. амбаръ, լհհ. ambar, imbar, հունգ. hambár, վրաց. ამბარი ամբարի (նաև համբարի), ուս. համբար և վերջապէս արաբ. انبار anbar «մթերանոց», որ արաբ բառագիրներն բնիկ կարծելով համարել են յոգնակի և հնմտդրել են եզակի نبر nibr «ամբար» (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. բ. 118)։ Այս բոլորի արմատն է սանս. पर् par և գնդ. ཟབ par «լցնել», sam- մասնիկով՝ սանս. sampūrag- գնդ. hąmpar- «լցնել», պՀլ. anbārīt «լցնում է», պրս. انباراً anbāram «լցնում եմ» են։ — Հիւբշ. 95, 178։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Lag. Symmicta 57, Ger. Abhd. 12 և Urgesch. 215։—Müller SWAW 44, 225 և Տէրվ. Նախալ. 96 bhar արմատի տակ՝ պրս. anbardan, ambāštan են։ Մորթմանն, ZDMG 26, 492 պրս. և արաբ. ձևերից դուրս՝ նաև խալդ. khaparit։

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Ակն. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Մշ. Մրղ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Սլմ. ամբար, Ալշ. ամբար, աճբար, Սչ. ամբար, համբաճ, Մկ. Ոզմ. ամբոր, Վն. ամբոր, Տիգ. ամբաո, Հմշ. օմբար (սեռ. օմբրի), ՋԲ. ամբօյ, ամբոր, ՀՃ. ամբոյ. Թւում է Թէ այս բոլորը Թուրքերէնից նոր փոխառութիւն են։ Հին է Նբ. ամրոց «աթարի դէզ», որ ծագում է ամբարոց բառից, միջին ձայնաւորի սղումով և յետոյ միջին բաղաձայնի ընկումով (ամբարոց>ամբրոց >ամրոց), ճիշտ ինչպէս ունինք վարդապետ >*վարդպետ>վարպետ: Միջին ամբրոց ձևը կայ դեռ պահուած արդի բարբառներում։

*ԱՄԲԱՐԻՇՏ, ի–ա հլ. «անաստուած չարագործ մարդ» ՍԳր. որից ամբարշտել ՍԳր. եղն. որ և ամբարշտանալ եղն. ամբարշտութիւն ՍԳր. Ագաթ. ամբարշտագոյն եղն. Ոսկ. ես. գրուած է նաև ամպարիշտ և անբարիշտ:

=Կազմուած է ան բացասական մասնիկով և պարսկականից փոխառեալ պարիշտ «պաշտել» արմատով (տե՛ս այս մասին ասելի ընդարձակ Պաշտել բառի տակ). Համմտ. դժպարիշտ բարե-պարիշտ, կռա-պարիշտ, զրապարիշտ, մարդա-պարիշտ, վատա-պարիշտ են՝ փոխանակ դժպաշտ, բարեպաշտ, կռապաշտ են։ Ըստ այսմ ամբարիշտ<անպարիշտ, բուն ան–պաշտ «հաւատք՝ օրենք չճանաչող»։—ն և պ ձայները իրար վրայ փոխադարձաբար ազդելով՝ առաջինը դարձել է շրթնային, երկրորդը՝ բրթունւ։—Հիւբշ. 142։

Հներից Լմբ. ագ. իէ և լգ. առուգաբանում է ան–բարի. «Մի՛ համարիր ընդ ամբարիշտս զանձն իմ. անբարի նա՛ է՝ որ գիտէ զբարին և ոչ առնէ։ Ամբարիշտ է որ անմասն է ի բարւոյ, ի հաւատս և ի գործս պիղծ»։ Ուղիղ մեկնեց նախ Սիմէօն Ջուղայեցի, Քերակ. Պօլիս 1725, էջ 154. «Թարց առաջին վանկին՝ է պարիշտ, որ է պաշտօն, զի անպարիշտ է որ ոչ ունէ հաւանի կամ լինի պաշտօնեայ, այլ է անպաշտօն»։ Ուղիղ մեկնեցին նաև ՀՀԲ, ՆՀԲ, ՋԲ, Բագրատունի, Քեր. զարգաց. 654, 690, Petermann 250, Müller WZKM 5, 186 են։

ԱՄԲԱՐՀԱՒԱՃ, ի հլ. «ամբարտաւան, հրպարտ, բարձրամիտ» ՍԳր. որից ամբարհաւաճիլ Ա. կոր. ժգ. 4. Ագաթ. Եփր. մն. 490. ամբարհաւաճութիւն Իմ. ժէ. 7. Ոսկ. ամբարհաւաճումն Կոչ. գրուած է նաև ամպարհաւաճ, ամբարահաւաճ Անկ. դիրք հին. կտ. Ա. էջ 170։— Կարծելով ինչ որ հաւաճ արմատից՝ կազմուել է նաև ուղիղհաւաճ «ուղղադաւան,

ուղղահաւաստ» 3հ. կք։—Ամբարհաւաճ, ամբարտաւան, հպարտ և սնափառ *հոմանիշների տարբերութեան վրայ խօսում են Մաթ. հւագր. էջ 130 և Տաթև. ամ. 244։*

Հներից լծ. նար. մեկնում է «ոչ (=ան-) բարին հաճիայ»։ Մաթ. հւագր. 130 «անբարի հաճութիւն»։ ՀՀՔ ամբարտաւան *և* ամբարձեալ *բառերից։ ՆՀՔ «ամբարձեալ մտօք, հաւան և համ ընդ ինքն», ՋՔ «որ ընդ ամբառնալն հաճի»։ Բագրատունի, Քեր. զարդաց. էջ 652 և Պատկ.* Изслед. *18* հաւաճ *=լծ.* հաւատ։ *Թիրեաքեան, Կարնամակ, ծան. 35* ամբարտակ *բառի հետ։*

*ԱՄԲԱՐՏԱԿ, ի–ա *հլ. «աշտարակ, կոթող, թումբ» Խոր. 3հ. կք. որ և* համբարտակ *«աշտարակ» Փիլ. Պիտ. Նար. «ամբարտաւանութիւն» Փիլ. նխ. բ. էջ 69 (Բրգմ. յն.* ἐπιτειχίσμός*),* համբարտակեալ *«գոռոզաբար կանգնած» Փիլ. գրուած է նաև* անբարդակ *ԱՔ։*

=Պհլ. *anbārtak *ձևից, որ աւանդուած չէ, բայց նոյնը հաստատում է պրս.* دژ anbārda *«լցուած, լի. 2. ամբարտաւանութեամբ փքուած».* ամբարտակ *նշանակում է բուն «հող ու քար լցնելով կազմուած թումբ կամ բլուր». ծագման մանրամասնութիւնը տե՛ս* ամբար *բառի տակ։— Հիւբշ. 178։*

ՀՀՔ, ՆՀՔ և ՋՔ ամբառնալ *բառից (համբարձեալ ի յատակէ ի վեր)։* Lagarde, Urgesch. *272 իբր հպարտ–ակ,* par *«լցնել» արմատից։ Նոյն,* Arm. Stud. *§ 90 պրս.* anbārda*։ Հիւնք. Աբոտաւան յատուկ անունից։*

*ԱՄԲԱՐՏԱՒԱՆ, ի *հլ. «հպարտ, մեծամիտ» ՍԳր. Ոսկ. Եբր. որից* ամբարտաւանութիւն *ՍԳր. ամբարտաւանական Ոսկ. Ես. ամբարտաւանիլ ՍԳր. կամ* ամբարտաւանանալ *Ոսկ. ա. կոր. ամբարտաւանատեաց Գ. մկ. գ. 8. անամբարտաւան էր ընդ Ներ. 39. գրուած ամպարտաւանիլ Եփր. աւետ. 326։*

=Պհլ. *anbārtavān *ձևից, որ ծագում է նոյն* an-bār- *«լցնել» արմատից՝ որից և* ամբար, ամբարել, ամբարտակ. *ամբարտաւանը նշանակում է բուն «լցեալ, լի հպարտութեամբ», ինչպես և պրս.* دژ anbārda *«լցուած, հպարտութեամբ փքուած, հպարտ» (ըստ* JRAS *1894, 443). մասնիկի համար համմտ. պհլ.* xustavān *=* խոստովան, āstuvān *«վստահելի, հաւատարիմ» =զնդ.* āstavana *«խոստովանող»։— Հիւբշ. 178։*

Մատթ. հւագր. 130 աւան *բառից։ ՆՀՔ ամբարձեալն... արտաքանամբք։ Նոյնպէս և ՋՔ։*

Հիւնք. Աբոտաւան *յատուկ անունից։ Հիւբշ. 178, ծան. 3 կարծում է նաև* ամպարտ-ա-վան, *իբր պարտ արմատից, որից և* հպարտ։ *Թիրեաքեան, Կարնամակ, ծան. 35* ամբարտակ *բառի հետ։*

ԳԻՒ.—Ալղ. Ախց. կր. ամբարտավան. *Մշ. Ոզմ.* ամպարտավան, *Շմ.* ամբարդավան, *Սչ.* ամբ'արդավան, *Երև.* անբարտա՛վան, *Մրղ. Սլմ. Վն.* ամպարտավան, *Խրբ. Ննխ.* ամփարդավան, *Սեբ.* ամբ'արդրվան, *Ասլ.* ամփարդրվա՛ն, *Պլ. Ռ.* ամփրդավան. *Ակն.* անփարդավան, *Տիգ.* ամփmրդmվmն. *Ննխ. նաև* ամբարդրգվան *(ժողովրդական ստուգաբանութեամբ պարտկուպլ բայից).—տարբեր խմաստ են ստացել Դվ. «շատ մեծ, վիթխարի» (Ի՞նչ ամբարտաւան տուն է). Եւդ. «կօշտ, անկիրթ». Բրբախօս հայերից Ատն.* ամբրդավան *«շատակեր» (Արևելք 1888, նոյ. 8—9)։—Հճ. ունի* անբ'այդավոն *ձևով։*

ՓՈԽ.—Վրաց. ამპარტავანი ամպարտավանի *«հպարտ», ամպարտավնեբա «հպարտութիւն» ևն։*

ԱՄԲԵԻՏ, ի *հլ. «խլուրդ». գործածուած է ընդամէնը 4 անգամ. «Որպէս զննուցու որ զամբևան, այնպէս պիղծ համարեալ լիցի. այսու ցուցանէ թէ ոյդի ոչխար որ մի զննուցու. զի որ յորովայնի մեռանի՝ ընդ այն համար է թէ զամբևան որ սպանանիցէ. քանզի ամբևան կոյր է և ոչ գիտէ որպէս սպանանիցի» Կիւրղ. օրին. «Ոչ գոհացան զԱրարչէն իւրեանց և ոչ ոյոյս ճշմարտութեանն կամեցան տեսանել, այլ զօրէն ամբևից սուզեալք ի խորութիւն անմտութեանն». Իրէն. հերձ. 224. ուր լտ. բնագիրն ունի* mures caeci *«կոյր մուկ, խլուրդ,* aspalax typhlus*»։ Բառս գրուած է նաև* ամբոյտ *(անբոյտ, ամբոյթ, ամպոյտ) և այս ձևով Գաղիանոսի բառացանկում մեկնւում է «ասփաղկէ» (իմա՛ յն.* ἀσπάλαξ*, որ է խլուրդ)։* Անբոյտ *նշանակում է*

նաև «մի տեսակ բժշկական խոտ, asplenium scolopendrium, արծուաճանկ, ցողկենի» (Բառք Ստեփ. Կամենից. Ջեռ. մատ. Վիեննայի, թ. 225). այս իմաստը ծագել է aspalax բառի միւս նշանակութիւնից, որ է «անծանօթ բոյս ինչ» (ըստ Պլինիոսի)։ Այլ է պրս. anbūt انبوت «խոտի արմատ»)։ Աներոյտ բառին մի երրորդ նշանակութիւն տալիս են ՆՀԲ և ՋԲ ըստ Գադիանոսի՝ «յովազ կամ միեղջերու կենդանին», թէև այս նշանակութիւնը ստուգուած չէ, բայց կարելի է կարծել թէ Գադիանոսի «ասփաղկէ=ասփաղաքս» բառը շփոթուած լինի պրս. palang پلنگ=փաղանգ բառի հետ և այս նշանակութիւնը տրուած լինի։

ՆՀԲ ամբևտ կարծել է «սաղմ կամ խրլուրդ» և համեմատում է յն. ἔμβρυον «սաղմ» բառի հետ։ Նորայր, Հայկական բառաքն. 106 Գադիանոսի ձևերով և Խոտրջուրի հնդաբարբառի միջոցով ստուգում է «խլուրդ» նշանակութիւնը։ Վերջին լուսաբանութիւնը տուաւ վերի ձևով Վարդանեան ՀԱ. 1910, 282։

Գիմ.—Խոջ. ամբուդ «խլուրդ» (ուրեմն անցած *ամբիւտ ձևից, ճիշտ ինչպէս ունինք ալեւ>ալիւ>ալուտ)։ Խլուրդ բառը լինելով աստիճէնից փոխառեալ, առանձին կարևորութիւն է ստանում այս ամբևտ ձևը, որ պահուել է միայն Խոտրջուրում։

* ԱՄԲԻՈՆ «հնկեղեցու բեմը», որ և ամպիոն Վրք. հց. Վանակ. հց. Ուռհ. կամ անպիոն Հայկ. 122. աւելի հարազատ ձև է ամբոն Պտրգ. 197. Վրք. ոսկ. Մխ. դտ. էջ 270. Յայսմ. գրուած ամպոն Պտրգ. 532. Լմբ. մատ. 205. Սոկր. 504։ Արդի գրական լեզուն ընդունել է միայն ամբիոն ձևը և տուել է ընդհանրապէս «բեմ» նշանակութիւնը։

=Յն. ἄμβων «բոլորակաձև ցցուած տեղ, ինչպէս բլրի բարձունք՝ գագաթ, նկեղեցու ամբիոն», որից նաև ռուս. АМВОНЪ, ֆրանս. ambon, վրաց. ამბიონი ամբիոնի, որ մերին նման ունի ի յաւելուածը, թէև կայ նաև վրաց. ამბონი ամբիոնի։ Յոյն բառի ծագումը անստոյգ է ըստ Boisacq, էջ 51։—Հիւբշ. 340։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*ԱՄԲՈՒ. ի հլ. (յետնաբար նաև ո հլ.) «խումբ, բազմութիւն. 2. խռովութիւն. իրարանցում, կռիւ» ՍԳր. Ագաթ. որից ամբոխել «խռովութիւն հանել» Ագաթ. Կիւրղ. ամբոխիլ «վրդովուիլ, յուզուիլ, տակնուվրայ լինիլ» Ես. ե. 30. բազմամբոխ ՍԳր. Ոսկ. Ագաթ. միջամբոխ Բուզ. 158 (ուղղել ըստ իս միջամուխ). խառնամբոխ Ագաթ. միաբանամբոխ Մծբ. խաղաղամբոխ Մծբ. մարտամբոխ Ագաթ. ամբոխութիւն «ամբոխ. 2. կռիւ» Խոր. Կիւրղ. գնձ. Նար. ամբոխաձիւ «կռիւ» Շապհ. 27. հրեշտակամբոխ «հրեշտակագունդ» Ճառընտ. ամբոխական Փիլ. ամբոխասաստ Աստղ. ամբոխարար Վանակ. ամբոխալից Պիտ. Նոր բառեր են ամբոխայիւն, ամբոխավար, ամբոխավարութիւն ևն։

=Պրս. انبوه anbōh «խուռն բազմութիւն, ամբոխ», որի բուն ծագումը անյայտ է։—Հիւբշ. 96։

ՆՀԲ մեկնում է համօրէն խումբ, բայց և տալիս է առաջին անգամ ուղիղ մեկնութիւնը։ Յետոյ Lagarde. Urgesch. 958։

ՓՈԽ.—Վրաց. ამბოხი ամբոխի, ამბოხება ամբոխեցա «խռովութիւն», მეამბოხე մեամբոխ «կռիւ՝ շփոթութիւն հանող, խռովարար»։

ԱՄԲՈՒՈՂ, որ և ամբովկ, աւրոկ «որևէ գործի կատարումը, վերջացնելը». աստւում է միայն ամբոկ գործոյ, որ մէկ անգամ ունի Ագաթ. և քանիցս անգամ ՅՀ. կք. որից ամբոկել «աւարտել» (գիտէ միայն ՓԲ)։

ՆՀԲ հանում է ամբողջ բառից. Հիւնք. համբակ-ից։

+ԱՄԲՈՂՋ, ի հլ. «բոլոր, բովանդակ. 2. ողջ, անարատ, անվնաս» Պիտ. Անկ. գիրք նոր կտ. էջ 138. որից ամբողջանալ, ամբողջապէս, ամբողջան «ամբողջովին» ևն, բոլորն էլ յետին. ինչ. Պիտ. Փիլ. Նար. և այլն։ Գրուած է ամպողջ Իրեն. Հերձ. էջ 164 և 180։

=Կազմուած է ողջ բառից՝ ամբ- մասնիկով, որ թէև միայն այս բառի մէջ է գործածուած, բայց սղեալ ըմբ- ձևով գոյութիւն ունի նաև ըմբոստ բառի մէջ։ Համեմատութիւնները տե՛ս Pokorny 1, 54, Boisacq 58, Walde 33, Ernou-Meillet 40, Traumann 1։ Նախաձևն էր ambhō (երկակի), որ կազմուած է

ambh + bhō *բառերից. առաջինի համար հմմտ. լտ.* amb-igō «վարանիլ, կասկածիլ, երկու մտքի վրայ լինել», amb-ulō «երթալ պալ, մանը գալ» են, իսկ երկրորդի համար՝ գոթ. bai *(գերմ.* beide. *անգլ.* both. *անդաք.* bá ðà, *հին իսլ.* baðer *կազմուած նոյն բառից՝ որոշեալ յօդով* Kluge *46) «երկուսն էլ», որ ցոյց է տալիս թէ հնխ.* bhō *առանձին էլ նշանակում էր «երկուսն էլ»: Այս* bhō *բառն է դարձեալ, որ նախադիրների յաւելումով դարձել է լիթ.* a-bù, *հսլ.* o-ba, *վեդ.* u-bhā, *գնդ.* u-bā *(*Ernout-Meillet *40) «երկուսն էլ»:*

ՀՀԲ ամենևիմբ ողջ: Աւետիքեան, Քեր. 1815, էջ 207 ան+բ բացասականներով ողջ բառից՝ ՆՀԲ համբուն ողջ, կամ իբր աև-բողջ «ան-պիղծ»: Էմին, Քերակ. էջ 38 և Հիւնք. ամ-բ-ողջ, ամ և բ կրկին բացասական մասնիկներով, որոնք իրար են չեզոքացնում, իբր «ոչ-ոչ-ողջ»: Իրօք էլ կայ ամբողջախոհ, ամբողջախոհութիւն Փիլ. իբր «ողջախոհ, ո՛չ-բղջախոհ». մինչև անգամ երեք բացասականով՝ աև-ամ-բ-ողջախոհ, իբր «բղջախոհ»: Տէրվ. Նախալ. 122 համ+ողջ՝ բ յաւելուածով, ինչ. թմրիլ-թմբրիլ, արմաւ-ամբրաւ: Վերի մեկնութիւնը տուաւ հայագէտ Meillet MSL *8, 236 և 9, 156. որ Հիւբշ. 416 ուղիղ է գտնում, բայց նշանակութեանց տարբերութեան պատճառով անապահով:*

ԳԻՒ.—Նոր գաւառականներում բառս ջընջուած է. կայ միայն Ոզմ. ամփոխ: Հին գաւառականներից յայտնի է համբողջ, որի համար խոսրով Անձևացին գրում է. «Ամբողջ է՝ զոր մեք համբողջն ասեմք. բովանդակ, ասէ, ամենեքեան ամբողջ պահեսցին». (Խոսր. պտրգ. էջ 55): Սրանից երևում է որ ժ դարում բառս Անձևացեաց գաւառում համբողջ ձևն ունէր:

**ԱՄԲՈՎՏ թէև ըստ ՆՀԲ նշանակուած է «մակընթացութիւն», բայց ըստ Մալխասեան (անձնական) պետք է հասկանալ «տեղատուութիւն»: Այսպէս է իրօք ցոյց տալիս Նոննոսի օրինակը. «Ամփոփումն ջրոյն ի փորոքս երկրի՝ ասի ամբովտ». և յն. ἄμπωτις նշ. reflux (Bailly *103 գ), որ է «տեղատուութիւն»: Հայերէնի մէջ յն. π>պ դարձել է բ, ինչպէս ունինք ամբ=ամպ:*

=Յն. ἄμπωτις «նոյն նշ.» կազմուած է ἀμ(φ)α «վեր» և πότος «քամել» բառերից և նշանակում է բուն «վերըմպութիւն»:—Հիւբշ. 340:

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ:
Ամբուռք տե՛ս Ամպ:
Ամբրաւ տե՛ս Արմաւ:

ԱՄԵԹ *«հաստատուն, անփոփոխ, բերրի». հմմտ. հետևեալ վկայութիւնները. Ամեթ քարոզչութեամբք. Ագաթ. Սերտ և ամեթ ոդիքն. Ոսկ. բ. տիմ. 217. Ամեթ և պետեղ պահեսցի կարգ. Պիտ: Որից* ամեթագոյն *«արդիւնաւէ՞տ» եւագր. ժա (Վաստակքն ամեթագոյն են).* ամեթանալ *«ուռճանալ (բոյսի)» Շնորհ. եգես. Ոսկ. յհ. ա. 1.* ամեթութիւն *«զօրաւոր՝ ամուր լինելը, ուռճանալը» ԱԲ.* ամեթացեալ *«փորձառու, գործի մէջ եփուած» Վրք. հց. ա. էջ 266:*

ՆՀԲ երր. אֱמֶת emeθ *«ճշմարտութիւն, հաստատութիւն, խօսքին տէր լինելը», որ ծագում է երր.* אמן amn *արմատից=արաբ.* ﺃﻣﻦ amn *«ապահովութիւն, հաստատութիւն»: Այս բառերը ձևով թէև նման, բայց իմաստով չատ չեն, մանաւանդ որ մեր երրայական փոխառութիւնները Ս. Գրքի միջոցով են, իսկ ամեթ Ս. Գրքում գործածուած չէ:—Եւրոպա (Հանդես Վիեննայի), 1849, էջ 200*

հպրս. āmāta *բառից, որ նոյն է գնդ.* āmāta *«ճարտար, կարող» բառի հետ (Նոյնպէս գործ չունի մեր բառի հետ, որովհետև պիտի տար *ամատ): Ղափանցեան* ЗВО *23, 360 ան+գնդ.* maēθa *«գեղեուն, անհաստատ, փոփոխական»:*

**ԱՄԵԹՈՎՍ «մեղեսիկ կամ սուտակ կոչուած թանկագին քարը» Յայտ. ԻԱ. 20. գրուած է նաև* ամեթիստոս *Տօնակ. կամ* ամեթոս, ամէթիստոն, ամթիստոն *ձևերով, որոնք յիշում է ԱԲ առանց վկայութեան:*

=Յն. ἀμέθυστος, *որից փոխառեալ են նաև լտ.* amethystus, *ֆրանս.* améthyste, *գերմ.*

Amethyst, *ռուս.* аметистъ, *վրաց.* ამეთ-ვისტო *ամեթվիստո ևն, բոլորն էլ «սուտակ» նշանակութեամբ։ Յունարէնում բառիս առաջին իմաստն է «առանց հարբեցութեան» (կազմուած ἀ բացասականով՝ μεθύω «հարբիլ» բայից). և գործ է ածւում նշանակելու համար մի խոտ՝ որ հարբածութեան դէմ դեղ էր։ Սուտակն էլ համարուելով հին յոյների մօտ հարբածութեան դէմ իբր միջոց՝ ստացել է այս անունը։—Հիւբշ. 340։*

Ուղիղ մեկնից նախ ՀՀԲ (մեղեսիկ բառի տակ), յետոյ ՆՀԲ։

ԱՄԵՀԻ *(-ւոյ, -եաց) «անզուսպ, կատաղի (ձի, ալիք, կիրք). 2. անկիրթ (մանկութիւն)» Իմաստ. ժդ. 1. Ոսկ. «3. անմշակ, կորդ (հող)» Եփր. Համար. 35. որից* ամեհամոտ *«ամէհին զսպող (սանձ)» Ոսկ.* ամեհաբար *Եփր. Համար. 35. Մանդ.* ամեհութիւն *«վարքենի բարք» Մագ. Սրգ. Լմբ. գրուած է* ամահի *Ոսկ. ա. տիմ. էջ 15,* ամահութիւն *Մագ. Թղ. 27։—Տե՛ս և ումեկ բառի տակ։*

ՆՀԲ աճաճ բառից։ Peterm. *250* աճ+մեհ=մեղ, մեղր *«կակղութիւն»։* Müller KZ *5, 107 դնգ.* *āmāʒa *«հում ուտող»։* Lagarde, Ges. Abhd. *9 սանս.* āmitra *և* Arm. Stud. § *80 հպրս.* hamiθriya *«ապստամբական»։ Շահխլերկրդ, Древ. Вост. III դնում է Միհրի անունից, ինչպէս է նաև* մեհեան։ *Ղափանցեան, ЗВО 23, 358 ունի մի տառանձին քննութիւն բառիս վրայ, որով կրկնում է* Lagarde-*ի մեկնութիւնը, այն է հպրս.* hami θriya *«ապստամբ»։*

ԱՄԵՂԵԼ *«ուրանալ, ժխտել». գործածուած «ի հին Քերականս». ունին միայն ՀՀԲ և ՓԲ, իբր անստոյգ բառ. նոյն է անշուշտ* ամեղելել *«ղլանալ» Բառ. երեմ. էջ 14։*

ԱՄԵՍՏ, *որից* ամեստութիւն. *նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ դնում եմ գործածուած Ոսկ. ես. 48—49. «Յորժամ զիւր յաղթութիւնն եցոյց և զնոցա ամեստութիւնն յայտ արար». ըստ ծանօթ. հրատարակչի՝ յն. «անիմաստութիւն կամ անճանաչողութիւն»։*

+ԱՄԷՆ, ի *հլ. «բոլոր». հնագոյն արմատական ձևն է, որ ընտիր մատենագրութեան մէջ հազուադէպ գործածութիւն ունի. այսպէս են՝ Զամէն մնացեալս յանձն առնէր շնորհացն Աստուծոյ (Կորիւն). Յամէն արարածոց (Զգօն). Առաւել հատու է քան զամեն սուր երկաբերի (Եփր. աւետ. 317). Յամէն թղթոցն Պօղոսի (Եւս. պատմ. 204). (այս ձևերի վրայ տե՛ս Այտնեան, Քնն. քերակ. էջ 64)։—Վարդանեան, բառաքն. դիտ. Ա. էջ 11=ՀԱ 1913, 158 ցոյց է տալիս՝ որ բոլոր ոսկեդարեան ամէնները «ամ» համաոստագրութեան յետին սխալ ընթերցուածներն են և Ոսկեդարում չրկար ամէն բառը, այլ միայն ամենայն։ Այս բոլորը չեն խանդարիլ սակայն ընդունելու թէ բառիս արմատն է ամէն, որ յետնաբար առվորական գործածութիւն է ստացել, ինչպէս ունին Պիտ. Նար. Շար. Պիսիդ. Լաստ.։ Սրա էլ հիմնական ձևն է ամեն. բայց որովհետև հայերէնի օրէնքներով վերջաձայն ե-ից առաջ գոնուած ե դառնում է է, ուստի և ամեն դարձել է ամէն։ Ուր որ է մնում է բառի մէջ, այնտեղ ե ձայնը նորից երևան է գալիս. այսպէս հոլովման ժամանակ՝ սեռ.* ամենի, ամենից *և ածանցման մէջ։ Այստեղ ստանում է հետևեալ ձևերը. 1.* ամեն-, *որ ամէնից հարազատ և սովորական ձևն է. սրանից* -այն *մասնիկով՝* ամենայն *«բոլոր» ՍԳր. Ագաթ. եղն. են (այս* -այն *մասնիկը ցոյց են տալիս նաև* մի-այն, երկ-այն, գեանապարհ-այն, միանգամ-այն *են)։ Սրանից են կազմուում հարիւրաւոր բարդութիւններ, որոնք բաժանւում են երկու մեծ խմբի. ա) Ոսկեդարեան բարդութիւններ, որոնց մէջ* ամեն- *նշանակում է «ամէնքը կամ ամէն բան» և միանում է բայարմատի հետ. օր.* ամենագէտ *«ամէն բան գիտցող» Սերբր. Ոսկ. Ագաթ. եղն.* ամենաբժիշկ *«ամէնքին բժշկող» Ագաթ.* ամենազօր *«ամէն բան զօրող» ՍԳր.* ամենաբաւ *«ամէն բանի բաւող» Ոսկ. յհ. ա. 41.* ամենալցոյց *«ամէնքին լցուցանող» Ագաթ.* ամենակերակրիչ *«ամէնքին կերակրող» Իմ. ժդ. 25.* ամենաշնորհող *«ամէն բան շնորհող» Կոր. են են։ բ) Ձետին բարդութիւններ, որոնց մէջ* ամէն *նշանակում է «ամէնից կամ ամէնից աւելի» և միանալով ածականների հետ՝ կազմում է գերադրական. օր.* ամենամեծ, ամենալաւ,

ամենամաճուր, ամենաբազում են։ Այս կարգին են պատկանում նաև ուրիշ մի խումբ բարդութիւններ, որոնց կազմիչ երկրորդ մասը գոյական կամ բայարմատ է և դարձեալ ձևացնում են գերադրական ածական։ Սրանք բարդութեան ընդհանուր օրէնքներին հակառակ ձևեր են և կազմուած միայն յետին հեղինակների անձուկ շրջանում. թարգմանւում են «ամէնից աւելի..., ամբողջապէս..., ամէնից աւելի... ունեցող, ամէնից աւելի... եղող». ինչ. ամենաբախտ, ամենագիշեր, ամենաճառագայթ, ամենաբաճա, ամենագլուխ, ամենաճառաչ, ամենաճայր են։ Ոսկեդարեան մի քանի բարդութիւններ էլ կան, որոնք առաջին հարազատ խմբից հեռանալով՝ կազմութեան կողմից նմանւում են երկրորդ խմբին. սրանք կա՛մ ձեռագրական խաթարումներ են և կա՛մ անկանոնութիւններ. ինչ. ամենածաղիկ Սեբեր. ամենաճաճատակ Ոսկ. Ես. ամենաչար Եզն. ամենալաւութիւն Ոսկ. բ. կոր. են։—2. Ամէն—. Նախորդ բարդութիւնները ոմանք նաև այս ձևով են գրում. ինչ. ամէնիմաստ ամէնողորմ, ամէնաղիւց, ամէնառատ են, որոնք յետին սխալ գրչութիւններ են, ուղ. ամէն ձևի նմանողութեամբ յառաջացած։— 3. Ամենա- (ձայնաւորի մօտ). ինչ. ամենաերեսլի ԱՓ. հներից աւանդուած միակ օրինակն է. նոր գրողների մօտ այս ոճը գարձել է շատ սովորական. այնպէս որ ազատ կերպով ասում են ամենաճամիա, ամենաճախելք, ամենաճարժէք են։ —4. Ամենե-. այս հնագոյն ձևը պահում են ամենեֆ-ին, ամենեֆեան «բոլորն էլ» ՍԳր. Ագաթ. սեռ. տր. ամենեց-ուն, հյց. ամենես-ին, գրծ. ամենեւ-իվ ՍԳր. կրկին հոլովիալ՝ յետնաբար ամենիվ, ամենեցուց են. մասնիկների համար համմտ. բոլոր-ով-ին, բոլոր-ով-իվբ. -ին,-ենան մասնիկն ունին նաև երկո-ին, երկոենան, բոլորեին, բոլորենան են։ —5. Ամենի-, որի համար ունինք իբր օրինակ՝ ամենիենան, ամենիսեան յետին գրչութիւնները. Անկ. գիրք նոր կտ. էջ 209, 212, 215, 218 են, Եփր. Համար. 256, Աւետ. 286։—6. Եւ վերջապէս կայ ամին- ձևը. համմտ. միջին հյ. սեռ. ամինոյ վրդ. պտմ. էջ 158։

= Հնխ. sṃmo- ձևից, որի միւս ժառանգները են ի մէջ այլոց՝ սանս. सम sama «իւրաքանչիւր ոք», գնդ. समस hama, հպրս. hama «ամբողջ, նոյն», վերսի hama, պրս. աֆղան. همه hamah, պհլ. hamāk, բելուճ. hame, քրդ. hem, գազա heme և հյ. (իրանական փոխառութեամբ) համակ, համայն «բոլոր, ամբողջ», լն. ἁμός, ἁμᾶ «միասին», գոթ. sums, հրգ. sum, հիսլ. sumr «ոմն ոք», են։ Բուն արմատն է հնխ. sem—«մէկ» որ յետո դարձել է «միասին, ամբողջ»։ Հյ. ամեն բառի մէջ պարզ արմատն է ամ<*sṃmo-, իսկ -են մասնիկն է։ Համեմատութիւնները ընդարձակ տե՛ս Pokorny 2. 489.—Հիւբշ. 416։

Նախ Klaproth, Asia poligl. էջ 99 ամենայն համեմատեց լտ. omnes, պրս. hama բառերի հետ։ ԳԴ պրս. հեմե=ամենայն, հեմեկեան=ամենեքեան։ ՆՀԲ արաբ. 'ammah, պրս. hamah, լտ. omnis, omne, πᾶν, πᾶς։ Բագրատունի, Զարգ. քեր. էջ 672 ա-մեն «ոչ մին»։ Peterm. 34 և Windisch. 38 լտ. omnis։ Peterm. 250 ան+մէն «non unus»։ Müller SWAW 38, 583 սանս. sama։ Տէրվ. Նախալ. 122 սանս. sama, գնդ. hama, լն. ὁμός, գոթ. sama, հալ. samъ։ Մորթման ZDMG 26, 545=համայն, լտ. omnis, պրս. hamah և խալդ. kamna, kamnae, kammanada։ ՀԱ 1897, 287=համ-այն-այն=ամենայն։ Pedersen, Ծաց. դեր. 38 լտ. omnis<*omenis։ Karst, Ծաշ. 408 սումիր. umuna «հաւաքոյթ»։

Ամէն բառի (է-ո՛վ թէ ե-ով) գրութեան վրայ երկար վէճեր են բացուած քանի քանի անգամ ազգային թերթերում։ 1883 Թուին վէճ ծագելով Յ. Գուրգէնի, Հիւնքեարպէլէնտեանի և ե. Մուրատեանի միջև, հրաւէր են կարդում բանասէրներին վճռել այս խնդիրը (Մասիս, 1883 յուլ. 29). Գուրգէն ընդունում է առանձին գրել ամէն, բառի մէջում ամեն—։ Տէրվիշեան, 4 օգոստ՛՛ պաշտպանում է այն կարծիքը, թէ ամէն գրչութիւնն է

ուղիղ թէ՛ ամէն «բոլոր» և թէ ամէ՛ն «եղիցի» բառի համար։ Ընդհակառակը Մասիսի խմբագրութիւնը ընդունում է ամեն «բոլոր» և ամէ՛ն «եղիցի»։ Տաճատ վրդ. 8 օգոստ" յայտնում է թե երկու բառերը լծորդ են և ըստ կամս կարող են գրուիլ։ Գուրգէն, 19 օգոստ" պնդում է իր կարծիքի վրայ։ Նորայր, 6 սեպտ" ըստ Այտնեան, Քնն. քեր. 345 և ըստ Այվազովսքի, Մասեաց Աղաւնի 1855, էջ 52 պահանջում է գրել է-ով, որովհետև այսպէս է գործածուած 5 դարում։ Հինգ երկար յօդուած հրատարակեց ոմն Սողոմոն Ֆր. Յ. Մուրատեան՝ Յոպպէից (Մասիս, 24—29 սեպտ.), ուր ամենայն բառը մեկնում է հյ. համ, յն. ὁμο բառերով և էն, այն մասնիկներով. համ–այն բառի վրայ շինուած է ամ–էն. թուում է պաշտպանել ամեն ձևը. շատ անգոյն և անարժէք յօդուած է։ Մի ուրիշ պատասխան ունի Հ. Ա. Բ., Բազմ. 1884, 238—9, որ արտատպեց նաև Արեւելք 1884 դեկտ" 11. այս յօդուածի հեղինակն էլ յայտնում է թէ ոմանք ստուգաբաններին ա–մէն (իբր թե ո՛չ մին, այլ բոլորը). բայց ինքը դնում է համ մասնիկ+է «էակ, էութիւն»+ն յօդը, որով համէն>ամէն՝ է-ով։ Այնուհետև բոլոր լաւ գրողները ընդունեցին ամէն «բոլոր» (է-ով) և ամե՛ն «եղիցի» դանազանութիւնը։ Նորից մի անգամ յուզուեց այս խնդիրը 1877-ին. Յ. Գաղանճեան, Բիւզ. թ. 231 պահանջում է ամեն գրչութիւնը, որին հակառակ են գուրս գալիս Դ. Սարգիսեան, անդ՝ № 239, Ուղուրիկեան, № 244, Հանդէս ամս. 1897, էջ 286 և 318, Մասիս № 212։ Այժմ ամէն տեղ ընդունուած է ամէն գրչութիւնը՝ որ ուղղագոյնն է և հիմնւում է ո՛չ թէ ստուգաբանական պատճառների վրայ, այլ որովհետև հայերէնի մէջ վերջաձայն ն–ից առաջ գրւում է է և ո՛չ ե (տե՛ս ընդարձակ Աճառ. Բազմ. 1898, էջ 224)։ Միայն արևելեան հայերն են, որ պահում են ամեն սխալ գրչութիւնը, այս էլ սակայն ո՛չ թէ ստուգաբանական կամ ուղղագրական պատճառներով, այլ պարզապէս հեշտութեան համար, է-ով գրուած բառերի թիւը մէկով պակասեցնելու նպատակով։

Ամեն բառի ե-ո՞վ թէ է-ով գրութեան մասին նոր վէճեր ծագեցան վերջերս արևմտահայ թերթերում. տե՛ս. յատկապէս Ղադիկեան՝ Կոչնակ, 1925, թ. 52 և Մէնէվիշեան ՀԱ 1930, 730—2։

ԳԻՒՒ.—երև. Ննխ. Տփ. ամէն, Ախց. Գոր. Խրբ. Կր. Հճ. Ղրբ. Պլ. Ջղ. Սեբ. Սչ. ամմէն. Ռ. աեմէն. Ոզմ. հա՛մմէն. Համշ. էմէն. Ակն. էմմէն. Սլմ. ըմմէն. Անտ. է՛մրն. Տիգ. ըմմրն. Մրղ. ըմմրւն, զըմմրւն, Ասլ. բամմէն. Մշ. յրմէն, Ալշ. յրմմէն. Մկ. ճրմէն. Վն. ճրմէն, զրմէն. Ագլ. Գղ. ա՛մման. Ղրդ. օմէն. Մղր. օ՛մմէն, սեռ. ումմուցո՛ւն, ումուցո՛ւն. Մժ. հումմուն։— Ինչպէս շատ բարբառների, նոյնպէս և գրական լեզուի մէջ ամէն հնչում է զոյգ մ-ով. այս բանը յառաջ է գալիս արդի հայերէնի այն յատկութիւնից, որով մի բառ աւելի ուժգին արտայայտելու համար երկրորդ վանկի առաջին բաղաձայնը կրկնւում է, ինչ 2 ձայնաւորի միջև ընկած լինի. ինչ. բոլո՛ր, յիմմա՛ր, ապպո՛ւշ են. իսկ ամէն բառը միշտ էլ առաւութեան հետ կապուած լինելով՝ ամմէն սաստկականը ընդհանուր գործածութիւն ստացաւ։

*ԱՄԷՆ, յետնաբար նաև հոլովուած՝ ի հլ. այս բառը խօսքի սկիզբը գրուելով (կըրկնեալ կամ ոչ) նշանակում է «ճշմարիտ, իրաւամբ, արդարև». Ամէն ամէն ասեմ «ճշմարիտ եմ ասում» (77 անգամ գործածուած Աւետարանում. Ս. Գրքի միւս մասերը չունեն)։ Խօսքի վերջը գրուելով՝ ամէն նշանակում է «այո՛, այդպէս է և այդպէս թո՛ղ լինի» (4 անգամ Հին կտակարանում, 36 անգամ Նոր կտակարանում, որոնցից մէկը միայն Աւետարանում, այն է Մտթ. գ. 13)։ Երբեմն էլ թարգմանուած է հյ. եղիցի (կամ կրկնեալ). ինչ. Օր. իէ. 16=26, Թիւք ե. 22։ Իբր գոյական՝ ամէն նշանակում է «ճշմարտութիւն». Այսպէս ասէ ամէնն. Յայտ. Գ. 14։ =երր. אמן āmēn «ստոյգ, ճշմարիտ, այդպէս եղիցի», որ ծագում է אמן amn

«հաստատ՝ իրական լինել» արմատից։ Հրէից մէջ սովորութիւն էր՝ որ ամէն հասարակական աղօթքից, մաղթանքից ու անէծքից յետոյ ամբողջ ժողովուրդը միաբերան գոչում էր ամէն, այսինքն թէ «այո՛, ճշմարիտ է, թո՛ղ այդպես լինի»։ Եւ այնքան մեծ նշանակութիւն էին տալիս այս բառին, որ բուն աղօթքից աւելի զօրաւոր էին համարում. և ասում էին՝ որ եթէ մէկը ամբողջ սրտով «ամէն» գոչէր, երկնքի դռները կբացուէին։ Այս սովորութիւնը հրեաներից անցաւ քրիստոնեաներին. եկեղեցիներում մինչև անգամ կար մի առանձին պաշտօնեայ՝ որ պարտականութիւն ուներ «ամէն» ասելու համար ժողովուրդին նշան տալու։ Երբ աղօթքը վերջանում էր, նա թաշկինակը շարժում էր և ամբողջ ժողովուրդը «ամէն» էր կանչում։ Այս սովորութիւնը տևեց մինչև Ե դար։ Հերոնիմոս պատմում է թէ երբ ժողովուրդը միաբերան «ամէն» էր գոչում, որոտման ձայնի նման դղրդում էր եկեղեցին։ Անկարգութեան տեղիք չտալու համար՝ հետզհետէ վերացուեց այս սովորութիւնը և որոշուեց որ սարկաւագը միայն «ամէն» ասի։ (Տե՛ս Աւետիքեան, Մեկն. Թղթ. Պօղոսի, Ա. էջ 961)։ Եբրայական բառը փոխառութեամբ տարածուեց բոլոր քրիստոնէական, ինչպէս և մահմետական ժողովուրդների մէջ. ինչ. արաբ. آمين āmīn, յն. ἀμήν, լա. ֆրանս. են amen, ռուս. аминь, վրաց. ამინ ամին են։ Մեր բառը տատապարձուած է յունարէնից։ — Հիւրշ. էջ 340։

Հներից Խոսր. 10 մեկնում է. «Ամէնն եբրայեցի բարբառով այո՛ և արդարև». դարձեալ էջ 115 «Յերրայականէն ի մերս ամէնն եղիցի թարգմանի. ասի և է և ստոյգ և ճշմարիտ»։ Համբրոնացին, Մատ. էջ 182 դնում է յոյնից (տե՛ս վերը՝ Պօսխումէ). բայց բուն նշանակութեան ծանօթ է. «Ամէն. այսինքն թարգմանեալ և է, թէ զոր ինչ ասացեր օրհնութիւն... այդպէս է ճշմարիտ և է միշտ օրհնութեան արժանի» (անդ՝ էջ 268)։ Նորերից ուղիղ մեկնեց նախ Աւետիքեան (տե՛ս վերը), յետոյ ՆՀԲ։ Բառիս վրայ երկար գրում է Մսեբեան, Ճռաքաղ 1859, էջ 79—82։

ԳԻՒՒ.—Առհասարակ գործածւում է ամմէն ձևով. Մշ. և Տփ. ամէն (մէկ մ-ով). ուներնիք նաև նոր փոխառութեամբ Համշ. ամիճ (տաճկերէնից) և Տփ. ամին (վրացերէնից)։

* ԱՄԻԱՍ «մի տեսակ խաղող» (նորագիւտ բառ). Ամիաս տունկն լաւ հաստատուն մնայ յայլափոխմունս օդից և գաւառաց։ Վստկ. 49. Եւ է ազգ մի ևս զոր ամինատին անուանեն. էջ 50. նոյն էջ՝ երկու անգամ էլ գրուած է մենիաս։

=Յն. ամի՛նիոս, ինչպէս ունի բնագիրը, «յանուն տեզուոյ ի Սիկիլիա» (համմտ. յն. Ἀμένας =լա. Amenanus գետ Սիկիլիոյ). այս բառը հասել է մեզ արաբերէնի միջոցով, որովհետև Վաստակոց գիրքը արաբերէնից ենք թարգմանել։

Այսպէս մեկնեց Վաստակոց գրոց հրատարակիչը, էջ 49 ծան։

+ԱՄԻԿ «մի տարեկան արու ուլ» ՍԳր. (5 անգամ), Եփր. օրին. էջ 287. ուրիշ տեղ չկայ։

=Կազմուած է ամ «տարի» բառից, իբրև տարեւոր ուլ. կազմութեան կողմից բոլորովին նման է վրաց. ტარიგი տարիգի «գառնուկ», որ շինուած է հյ. տարի բառից. համմտ. նաև Ղրբ. տէ՛կան<տարեկան «խոճկոր»։— Ա՛Ճ.

ՆշԲ կցում է յն ἀμνός «գառնուկ» բառին։ Այսպէս նաև Հիւնք։ Բայց այս յն. բառը կցւում է լա. agnus, հսլ. agnę՛ jagnę են համանիշների հետ և *ἀβνος ձևի վրայով հասնում է հնխ. agn̥nos բառին, որից չի կարող ծագիլ հյ. ամիկ (համմտ. Boisacq, էջ 54)։

ԳԻՒՒ.—Կայ Ղրբ. տ՛մլիգ՛ «նորածին փոքրիկ գառն». բայց թւում է թէ այս բառը փոխառեալ է թրք. emlik «կաթնկեր գառնուկ» համանիշից։ Այս բառը չունին Աբիկեան և Будаговъ (վերջինս, էջ 210 գիտէ միայն imlek «сосунъ կաթնկեր»). բայց յիշուած է Կամուսի թրք. թրգմ. Գ. 185։

*ԱՄԻՃ, ո հյ. «խորտիկ ի մսոյ կամ յորոյ, ծուծ կենդանեաց» (ՆՀԲ), «փափուկ մասն ինչ երէոց կազմեալ համեմիւք՝ իբր ուտեստ աղնիւ» (ՋԲ), «ուլ, վայրի որսերու

ձագ, փափուկ ուտելիք անոնցմէ» (ԱԲ)։ Գործածուած է միայն երկու անգամ. եղին առաջի նորա (Արշակ թագաւորի) միրգ, խընձոր, վարունգ և ամիճ. Բուզ. ե. 7. Սնեալք էին (հայ ազնուական տիկիններըը) ուղղովք զուարակաց և ամճովք երէոց. Եղիշ. ը։ Այս օրինակներից երևում է որ ամիճը մի տեսակ փափուկ և ազնուական ուտելիք է. առաջին օրինակը ևնթադրել է տալիս պտուղի մի տեսակ, բայց այս ևնթադրութիւնը կասկածելի է դառնում, երբ քիչ յետոյ Բուզանդ աւելացնում է «Ձդանակն... որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել». այս կամը ցոյց է տալիս, որ պտուղ և ամիճ տարբեր բաներ են։ Երկրորդ օրինակից բաւական ճշտւում է իմաստը՝ իբրև երէի մսով պատրաստուած մի տեսակ ուտելիք։ Այս իմաստին համապատասխան է նաև ամիճ բառից կազմուած ամճաբեր «խոհարար» բառը. Ոսկ. մ. գ. 17. «յամճաբերացն և խոհակերացն = յն. ὀψοποιός «խոհարար». նոյնը նաև Ոսկ. կող. 532։

= Իրանեան փոխառութիւն է. համմ. աւսոր. ʾamṣa «մի տեսակ թթու ուտելեղէն», բաղդ. אומצא ōmṣa. արաբ. آمص āmiṣ, عامص ʾāmiṣ կամ آميص amīṣ «մի տեսակ ուտելիք.— հորթի միսը պատառատելով՝ փաթաթում են մաշկի մէջ և եփում. 2. թանապուրը սառցնելով և իղը քամելով մնացած ջուրը» (Կամուս, Բրք. Բրգմ. բ. 364)։ Այս բոլորը փոխառեալ են պհլ. *āmīč «խառնուրդ» ձևից, որ պատկանում է պրս. آميختن āmēxtan, āmīxtan «խառնել» բայից. արմատը آميز āmīz և կամ آميغ ōmīẓ — Հիւբշ. 96։ Պհլ. amīč բառը, որ յայտնի չէր, առանդուած գտել է Stackelberg WZKM 1903, էջ 48—49 (չեմ տեսած). գործածուած է մի քանի անգամ Chusrav —i Kāvatān դրուխան մէջ՝ «որսի մսով կերակուր» նշանակութեամբ (նկատողութիւն Հ. Ակինեանի ՀԱ 1930, 497)։

Նշբ մեկնում է ամիկ հիեալ կամ համեղ կերակուր, ինչպես և Բրբ. emĭek «ծծելի ինչ»։ Տէրվ. Altarm. 60 առնս. mršta, mišta «համեղ կերակուր». իսկ առնս. āmikšā «մածնաթան, կակուղ պանիր» գործ չունի սրա հետ։ Lagarde, Ges. Abhd. 12—համեմատեց ասորի ձևի հետ, իսկ Arm. Stud. § 82 հարցնում է, թէ արդեօք չն. ձուձա «մի տեսակ կարկանդակ» գործ ունի՞ սրա հետ։ (Boisacq 53 այս մեկնութիւնը չէ ընդունած և չն. բառը մնում է առանց առուգաբանութեան)։ Հինք. ամիկ բառից։ ՀՌուս. § 81 համարում է «միրգ» և գուցէ նոյն ընդ ամլաճ (տե՛ս այս բառը), Հիւբշ. Pers. Stud. էջ 8 համեմատում է վերի իրանեան ձևերի հետ։ Նորայր ՀԱ 1921, 102 առնս. ամիշա «միս»։

+ **ԱՄԻՍ**, ո հլ. (վաղեմի ձև է սեռ. որ. ամսեան, որից ներգ. յամսեան) «ամիս» ՍԳր. եզն. որից ամսագլուխ ՍԳր. կոչ. ամսաւոր ՍԳր. Եւս. քր. ամսամուտ ՍԳր. Ոսկ. ամսօրեայ ՍԳր. երեքամսեայ Եւս. քր. եռամսեայ Մագ. եօթնամսեայ Մահմ. Արշ. Մագ. եռամսուրիւն Փիլ. եուիրամսակ «սրբրազան՝ եուիրական ամսագլուխ» Փիլ. լին. չորեքամսեան Մամիկ. տասնամսեայ Իմ. է, 2. ամսական Խոր. Լաստ. ամսակէս Զքր. կթ. ամսայիճ Փիլ. ամսատօն Մարկ. պատկ. ամսանահանջ Մարկ. տոմ. ամսապակաս Փիլ. նոր բառեր են ամսաթերթ, երկամսեայ, կիսամսեայ, ամսավճար, վեցամսեակ են։

= Հնխ. *mēns բառից, որի ժառանգներն են տանս. **मास** mās «լուսին, ամիս», հինպրսս. ماس mās, գնչ. másak, másek, գնպ. må, mânh-, հպրս. māha «ամիս», māhyā «յամսեանն», սոդգ. m'γ «ամիս, լուսին», պհլ. փարս. բևլուճ. պրս. ماه māh «ամիս, լուսին», աֆղան. miyāšt, բրդ. mah, mānh, և ուխլի փոփոխեալ՝ hīu, գազա āšma, գաժիկ. āšmi, օսս. méi, mayye, mäy, յն. μείς (յոնիական), μήν «ամիս», μήνη «լուսին», լտ. mēnsis (ֆրանս. mois, իտալ. mese, սպան. mes), գոթ. mēna «լուսին», mēnōðs «ամիս», գերմ. Mond «լուսին», Monat «ամիս», անգլ. moon «լուսին», moníń «ամիս», լիթ. mnů, mėnesis, հսլ. měsęcĭ, սերս. мєсѧцъ, հիսլ. mi (սեռ. mís), կիմր. mîs են։ Համեմատութիւնները տե՛ս Pokorny 2, 271, Boisacq 633, Walde 476, Ernout-Meillet 576, Trautmann 179, Kluge

335. բառիս հնդեվրոպական պարզ արմատն է mē- «չափել» (համմտ. յն. μέτρον «չափ»> մետր), ըստ որում լուսնի համեմատ էին չափում ամիսները։ Այս արմատից կազմուել նախ mē-n, որ պահուած է գերմ. և բալթեան լեզուների մէջ. լնտով աճմամբ ստացուել mēn-es-, բայց աւելի սովորական եղաւ mēns-, ինչպէս գտնում ենք յոյն, հայ, իտալական և կելտական լեզուների մէջ. սրանից կրճատուելով՝ mēs-, որ գտնում ենք արիական և սլաւեական խմբերի մէջ։ Նախալեզուի ամիսները լուսնային լինելով՝ «լուսին» և «ամիս» բառերը նոյն կամ նոյնաբմատ էին սկզբում. հետոյ՝ իրար հետ չշփոթելու համար լուսնի համար ջոկ բառ հնարուեց, իսկ առաջինը մնաց «ամիս» իմաստով։ Մենք «լուսին» իմաստով նոյն արմատից առնինք միայն մաիին, որ իրանական փոխառութիւն է. բնիկ հայ ձևը կորած է։ Դիտելի է նաև որ հնդեվրոպական բոլոր լեզուները (թող զազան և գուժիկին) առանց բացառութեան անին նախաձայն մ. միայն հայերէնն ամիս բառն է՝ որ անի ա նախաձայն յաւելուածը։ Այս էլ զուտ հայկական յօրինուածք է։ Հնագոյն հայերէնն էր *միս, որ ժողովրդական ստուգաբանութեամբ կամ պարզ նմանողութեամբ հլ. ամ «տարի» բառից ստացել է մի նախաձայն ա (Աճառ. Բազմ. 1898, 372)։— Հիւբշ. 417։

Հին Տօմարի մէջ մեկնւում է իմ ես իբր թէ մէկը տեսնելով լրացած ու փուլ եկած լուսինը, ասաց «դու ի՛մ ես օրինակ»։ Յայտմ. յնվ. 8 «Ամիսն 30 օր է և ստուգաբանի յիմաստնոցն թէ իմ ես օրինակ»։ Տաթև. ձմ. ա. «Ամիս կոչի ի լուսնոյն. զի յաւուրս 30 պատէ զամենայն կենդանակերպան. զոր տեսեալ առաջինքն զհին և զնոր, ասացին իմ ես օրինակ ծննդեամբ և մահուամբ և նորոգմամբ և կոչեցաւ ամիս»։ Նորևրից ՆՀՒ մեկնում է «ամ փոքրիկ, ամ լուսնի»։ Ուղիղ մեկնեց նախ Klaproth, Asia pol. 103, որ համեմատում է սլ. mesäz ձևի հետ, ապա Peterm. 22։ Հիւնք. ամ և յն. μείς։ Պատահական նմանութիւն ունին կովկասեան լեզուներից ափխ. ամգ, ամգա, ամբգ, շապ. մագե, ավար. մօծ, կաբ. մագա, մագէ, աբազա մազէ, մազէօ, որոնք նշանակում են «ամիս, լուսին». իսկ շապ. աբազա մաֆէ, կաբ. մախօ, ափխ. ամշ «օր». Թէ նմանութիւնը պատահական է՝ ցոյց են տալիս ցեղակից լեզուներից՝ ագ. ցախ. ռուտ. վազ, բուդ. ջէկ. վազ, խիւր. վաձ, խին. վաաց, վար. կուբ. կայակ. բաց, դիդօ բոցի են ևն ձևերը։

ԳԻՒ.—Ագլ. Ակն. Ասլ. Ալշ. Գոր. Երև. Խրբ. Կր. Հճ. Մկ. Մշ. Նախ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տփ. ամիս, Տիգ. mմիս, Մրզ. ամբս, Ոզմ. ա՛մէ ս, Ղրբ. ա՛մբէս, Ջթ. ամբս, Հմշ. օմիս։

Ամիր տե՛ս Ամիրայ։

ԱՄԻՐ ԱԼ ՄՈՒՄՆԻՔ կամ նաև ամիր մումնիք «արարների խալիֆան» Ղևոնդ. Կիր. ևն։

= Արաբ. أمير المؤمنين amīr-al-mūminīn «զլուխ հաւատացելոց» (որ է խալիֆայն մահմետականաց)։— Հիւբշ. 262։

ԱՄԻՐԱՅ, ի հլ. (նաև յգ.-այիւ, այեաց կամ այաց) «մահմետական իշխան, կուսակալ» Սեբ. Արծր. Պատ. Ներս. Հյր. 67. Երզն. քեր. Ուռպ. Ուռհ. Մագ. որից ամիրայական Մագ. ամիրայապետել Արծր. ամիրայութիւն Վրդն. պատ. Միխ. աս.— բառի երկրորդ ձևն է ամիր Յիշատ. Վրդն. պատ. 137, որից ամիրապետ «արարների խալիֆան» ՅԿ. կթ. Ուռպ. ամիրացուցանել Ասող. ամիրութիւն Վրդ. պատ. ամիրացեալ «ամիրայ դարձած» Միխ. աս. 447։

= Առաջինը գալիս է ասոր. ʾamīrā «կուսակալ» բառից, որ իր հերթին փոխառեալ է արաբ. أمير amīr «պետ, հրամանատար» բառից, արդէն մօտ 700 թուին։ Իսկ երկրորդը գալիս է ուղղակի արաբ. أمير amīr ձևից։— Հիւբշ. 300։

Նախ ՆՀՒ դրաւ արաբերէնից։ Հիւբշ. դանազանութիւն չի դնում ամիրայ և ամիր ձևերի միջև և երկրորդը կարծում է առաջինից համառօտուած։

ԳԻՒ.—Ակն. Մշ. Պլ. Ռ. Սեբ. ամիրա, խրբ. mմիրm. այսպես էին կոչում հայ մե-

ծառունները 1860 թուի Ազգ. Ահմանադրութիւնից առաջ. Մկ. ամբրա «քուրդ բէգ». Նորայր, Բառ. ֆր. ունի գիշերային ամիրայ ձեվը՝ իբր orang-outang «մարդակերպ կապիկը», բայց բնիկ ո՞ր բարբառին յատուկ է այս բառը՝ նշանակած չէ Նորայր։

* **ԱՄԻՐԱՇԽԱՄ** կամ **ԱՄԻՐԻՇԽԱՆ** «ոհմանի ցեղից մի տեսակ անուշահոտ խոտ է» Բժշ. Ամիրա. ունի միայն ՀԲուս. § 83։

=Հների վկայութեամբ թուրքերէնից փոխառեալ բառ է. հմմտ. Ամիրա. «Թուրքն այս խոտիս ամիրիշխան կասէ». Բժշ. «Համհամյիմ, որ է թուրքերէն ամիրիշխանն»։—Աճ. Գիհ.—Վն. ամիրիշխամ «մի տեսակ խոտ է»։

* **ԱՄԻՐ ՍՊԱՍԱԼԱՐ** «մեծ սպարապետ» Յիշատ.։

=Պրս. امیر سپاهسالار amīr sipāhsālār նոյն նշ։ Ուղիղ մեկնեց նախ St Martin, Mémoires sur l' Arménie, II. Paris 1819, էջ 251։

* **ԱՄԼԱՃ** կամ **ԱՄԼԷՃ** «մի տեսակ հընդկական ծառ և նրա պտուղը. այս ծառը գեղեցիկ է, մանր մանր տերևներով. պտուղը նման է բամբակի բոժոժի, անհամ, բայց բժշկութեան մէջ յարգի. կուտերը հանելով՝ կճեպը կաթի մէջ հարում են և դործ ածում մաղասը բանալու, սիրտը, աչքը, ստամոքսը կամ 'առնականութիւնը ուժեղացնելու, արիւներթութիւնը կասեցնելու համար». Մխ. բժշ. 126. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 84։

=Արար. حمل amlaǰ, պրս. آملا āmila, թրք. elma, լտ. ֆրանս. emblic, ասլ. լտ. amilegum, amblech. բոլորն էլ հնդկական աղբիւրից (տե՛ս Կամուս, թրք. թրգմ. Ա. 441, Շթայնշնայդեր WZKM 11, 275, Будаговъ, Сравнит. словарь турецко-татар. наречий, հտ. I, էջ 94։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 84։

* **ԱՄՂԱՆ** «մի տեսակ դգեստ է» Յհն. է 21. Տեսի յատարին ամղան մի նկարէն (երբ. אַדֶּרֶת ardereθ «վերարկու», յն. φελόνη «կլոշկ մաշկ, մի տեսակ պարսկական գորգ»). այս բառը բացատրելով Եղիշ. յհս. էջ 174՝ մեկնում է «ասրեղէն հանդերձ». Ստեփ. լհհ. կարդում է ամադան. Ս. Գրքից դուրս գրտնում եմ բառիս համար երկու օրինակ ևս. Ամղանք տարածեալք. Ոսկ. հառք 364. Զգահոյան, զամղանան, զառանին դգեվլիան. Ոսկ. ճառք 471։

=Ասոր. ܐܡܠܐ āmelā, ܐܡܠܘܢ āmlōn «վերարկու» (գործածուած է Ս. Գրքի համապատասխան տեղը. ծագումն անյայտ է և թուում է թէ օտար փոխառութիւն է)։—Հիւբշ. 300։

ՆՀԲ լծ. յն. ἐμάτιον «զգեստ»։ Առաջին անգամ ուղիղ մեկնեց Lagarde, Arm. Stud. § 84։ Հիւնք. Դամիդ-ից։ Բառը նախապէս միայն 3ես. է. 21 վկայութիւնից յայտնի լինելով՝ կարծում էին թէ Ս. Գրքի ասորական թարգմանութեան հետքերից է, քան որում ասորականումն էլ նոյն տեղը դրուած է āmelā։ Հիւբշ. Ուսումն. փոխ. բառից, Բրգմ. Տաշեան 1894, էջ 14 ծանօթ լինելով միայն ասորերէն բառ առաջին ձևին և հայերէնի հետ անհամաձայն գտնելով՝ կարծում է թէ ամղան յունաձև ἀμίλαν հայցականից է։ Բայց Arm. Gram. 300 հրաժարած այս կարծիքից՝ հմ. բառը սրբագրում է ամղայ, իբրև հասարակ դրչագրական սխալ։ Նմանապէս Վարդանեան, Բառաք. դիտ. Բ. 13 (=ՀԱ 1913, 557) ամղանի և տասը մօտ մի թուականի (ամղան մի 3ես. է. 21) մ-ից յառաջացած է կարծում։ Այս բոլոր ենթադրութիւնները անմիջապէս կջնջուին, երբ նկատի ունենանք այժմ Ոսկեբերանի երկու նոր վկայութիւնները, ասորերէնի երկրորդ āmlōn ձևը և յաջորդ՝

Գիհ.—Ակն արդան «մի տեսակ վերարկու, որի մէջը առհասարակ բամբակ է լինում և մինչև ծնկներն է հասնում. տճկ. խրոխա». այս իմաստով էլ բառը գործածական է երբեմն արևմտեան գրական լեզուի մէջ։

* **ԱՄՆՈՍ** «գառն». ունի միայն ՀՀԲ, առանց վկայութեան։

=Յն. ἀμνός «գառն»։

Ուղիղ մեկնեց ՀՀԲ։

ԱՄՈԼ, ի, ի–ա, ո հլ. *(նաև ամոլեաց, որով եզակին լինում է ամոլի)* «զոյգ՝ արօրը քաշող եզների, լայնաբար՝ ձիերի և փխբ. մարդոց» Ագաթ. Կոչ. *(սովորաբար յոգնակի գործածութեամբ)*. «լծորդ տաու» Երզն. քեր. որից եզնամոլ կամ եզնամոլի Տօնակ. Ճառընտ. գառնամոլ Ճառընտ. ամոլաջիլ «զոյգ ջղեր ի յետոյս» Մն. լբ. 25, 32։

ՆՀԲ համ+ուլն «վիզ»։ *Հինք.* ամուլ *բառից։ Հալաճեան, Արևելք 1893 նոյ" 10* ամ+ոդ։ Bugge, Btrg. *22 պրս.* hambar *(=բելուճ.* ambal, *օսս.* ämbal*) «ընկեր» բառից փոխառեալ։ Ղափանցեան* ՅԲՕ *23, 352 գնդ.* уəma *«երկուրեակ»+ռուս.* волъ *«եզ»։*

Գիւր.—Մշ. Սլմ. Վն. ամոլ, *Ալշ.* յամոլ, *Կր.* համօլ, *Մկ. Ոզմ.* ամուլ, *Գնձ. Երև.* ա՛մբօլ, *Ղրբ.* ա՛մբուլ, *որոնք նշանակում են գութանին լծուած առաջին զոյգը։ Նոր բառեր են* ամոլալուծ *(Ղրբ.* բմբլո՛լիւծ*)*, ամոլակօս, ամոլկոտ, ամոլվար *կամ* ամոլուր, ամոլկի *(հմմտ.* վեցկի*)։*

ՓՈՒս.—Թրք. գաւ. Կր. hamol *«մի զոյգ եզ» (ըստ Բիւր. 1898, 627)։*

Ամոխախ տե՛ս Խոհ։

Թիրեաքեան, Արիահայ բռ. 22 պրս. ham-xāh *«խորհրդակից»։*

ԱՄՈՂ *«ողորմածութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 15։*

* **ԱՄՈՆ**. *նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սասն. 61, իբրև ածական կամ վերադիր Ս. Մեսրոպի. Ի ամոն եկեղեցւոյ։*

=Երր. אָמוֹן āmōn *«վարպետ,* werkmeister*». ըստ այսմ* ամոն եկեղեցւոյ *նշանակում է «վարդապետ եկեղեցւոյ»։—Աճ.*

***ԱՄՈՆԻ** *«գինձ, համեմ կամ չաման», ունի միայն Բառ. երեմ. յաւել. 565. չգիտէ ՀԲուս։*

=Յն. ἄμωμον *«նոյն բոյսը.* cissus vitiginea L.*», որ և լտ.* amomum. *Ֆր.* amome.*—Աճ.*

Ամորձիք տե՛ս Որձ։

ԱՄՈՒԼ, ո հլ. *(յեռանաբար նաև ի–ա հլ.) «չրեր, չծնող» ՍԳր. Ագաթ. որից* ամլուդի *եղիշ. Շար. ամլածին Նար. Կուս. Մագ. ամլութիւն Փիլ. Իգն. Շար. Մխ. դտ.* ամլանալ *Եփր. համար. Փիլ. լիւս։*

ՆՀԲ լծ. ան–յղի *և Թրք. (իմա՛ արաբ.)* համիլէ օլմայան *«որ յղի չէ», իսկ հտ. բ. էջ 11 գ համմ «իգական ամօթոյք» բառից է հանում։ Հինք. լմել բառից։ Մառ* ՅԲՕ *5, 320 գնդ.* apuбra *«անորդի»։ Ղափանցեան* ՅԲՕ *23, 360* ան *բացասականով սանս.* mūla *«արմատ»։* Meillet MSL *22, 55* ան *բացասականով հնխ.* pōlo>*հյ.* ուլ *«ձագ» ձևից։ Կայ նաև երր.* אמל aml *արմատը՝ «չորանալ, թառամիլ, ցամաքիլ» նշանակութեամբ։*

Գիւր.—Կր. Մշ. ամուլ, *Սեբ.* ամուր! *(անշուշտ շփոթուելով* ամուր *«պինդ, կարծր» բառի հետ)։*

ԱՄՈՒՍԻՆ, ո հլ. *«կնոջ մարդը կամ մարդու կինը» ՍԳր. ածականի պէս գործածուած է երկու տեղ. Ի վերայ առն իւր ամուսնոյ. Յովէլ ա. 8. Կին կուսացի ընդ առն ամուսնոյ իւրոյ. եղիշ. 1. «2. հաւասակակից, ժամանակակից» նշանակութեամբ ունի Փիլ. այլաբ. և եկ. ա. 1. որից* ամուսնանալ *«կարգուիլ» ՍԳր. եղն. «մերձաւորիլ» Օր. իր. 13. եղն.* ամուսնակից *«մէկի կինը, ամուսինը« Ոսկ. յհ. բ. 17.* ամուսնասէր *Ագաթ.* ամուսնաւոր *եղն. Բուզ. Ոսկ.* ամուսնութիւն *«կարգուիլը» ՍԳր. «զուգաւորութիւն» Ոսկ. Վեցօր. Կոչ. եղն. վաղամուսնիք բարք «կանուխ ամուսնանալը» Եւս. քր. ա։*

=Բնիկ հայ բառ, որ կազմուած է ամ *«համ, կից, միասին»+*ուս*<հնխ.* uk՛*-«վարժուիլ, սովորիլ»+*ին *մասնիկով։ Կազմութեան կողմից սրա հետ միակ համեմատելի բառն է լտ.* uxor *«կին», որ կազմուած է նոյն* uk՛*- արմատից՝ ամենահին հնդեւրոպական իգական-նակատ* -sor *մասնիկով, որից ունինք նաև հնխ.* swė— sōr>*հայր բառը և 3, 4 թուականների իգականը։ Հնխ.* uk՛*- առորին ձայնդարձն է* euk՛*- արմատի, որից ունինք նաև* ուսանիլ *(տե՛ս անդ)։ Ըստ այսմ* ամուսին *նշանակում է բուն «միասին կամ հետը վարժուած՝ մեծացած»։*

ՆՀԲ Համասին, ի միասին, յն. γαμέτης*։ Տէրվիշ. Նախլ. 73 իբր համասին (անա-*

նիլ արմատից)։ Lagarde, Urgesch. Arm. *535 անս.* paç *«համաձայնիլ» արմատին է կցում։* Ewald, KZ *6, 12 և* Müller SWAW *38, 583* ամ=sam*(կից)* +*անս.* vas *«բնակիլ»։* Müller, Orient und Occident *3, 347 գնդ.* hąm+vas =*անս.* sam+vaç *«համամիտ, համախորհուրդ»։* Lagarde, Baktr. Lex. *14 պրս.* آموسنی āmūsnī *(այսպէս նաև Պատկ. Матер. I 7, Հիւնք. և Թիրեաքեան, Պատկեր աշխ. գրակ. Ա. 192, Աբիհայ բռ. էջ 25). բայց* Lagarde *ինքը* Arm. Stud. § *85 մերժում է։ (Այս պարսիկ բառը գրւում է* āmūsnī, āsnī, āsī. *Նշանակութիւնը Գ-ի հետևեալ ձևով է բացատրում. «ի Պարսիկս ընդ միով արամբ կանայք երկու կամ երեք՝ զիրեարս ասի կոչեն»։ Այս նշանակութիւնը յարմար չէ մեր բառին և հետևաբար նմանութիւնը պատահական է)։* Bugge, Lyk. Stud. *1, 56 իր հնխ.* səm-euk'inā *«համաբնակ, բնակակից». հմմտ. անս.* ôkas *«բնակութիւն» և լիւկ.* eus *«բնակիչ»։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 191 ուսանիմ բայի հետ։ Ճիշտ մեկնութիւնը տուաւ* Meillet, *նախ* MSL *9, 50 (հաղորդեց Հայկ Պէրպէրեան, նամակ 21 փետր. 1933) և յետոյ* BSL *95, 8,* Ernout-Meillet *1100։ Նոյնն են ակնարկում նաև* Bugge *և* Pedersen, *տե՛ս վերը։ Այս մասին տե՛ս նաև* Benveniste BSL, *հտ. 35. № 104, էջ 104։*

ԱՄՈՒՏ *«լուծ, joug». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. էջ 8 բ. Նման մի բառ չկայ պարսկերէնում կամ արաբերէնում (չունին Գ-ի և Կամուս). ամոլ բառի սխալ մի ընթերցուածը չէ՞ արդեօք (և կամ խամուտ բառ Աղասի Ջիլհանի)։*

ԱՄՈՒՐ, ո, ի–ա *հլ. «(իբր ած) զօրեղ, հաստատուն, պինդ. 2. (իբր գլ.) ամուր տեղ, բերդ. ամրոց» Սգր. Ագաթ. Ոսկ. որից* ամրախիտ առնել *«ամուր տեղերում պահել» Ա. մկ. ա. 56 (ուղղելի* ամրախիր, *հմմտ. ծակախիր Ագաթ.).* ամրանալ *Սգր. Ոսկ.* ամրածածուկ *Գ. մակ. դ. 6. Վեցօր. 185. Ոսկ. Կոզոս. Նս.* ամրական *«ամուր. 2. բերդ. 3. բերդական» Ա. մկ. ժա. 18. Ոսկ. Ես. Ագաթ.* ամրակռմն *Սգր.* ամրաշէն *Ոսկ.* ամրապան *«բերդապահ» Բ. մկ. ժե. 31.* ամրապարիսպ *Եփր. Թգ. և յես.* ամրոց *Սգր.* ամրութիւն *Սգր. Ոսկ. Ագաթ.* անամրութիւն *(նորագիւտ բառ) Ուռհ. 139.* մեծամուր *«շատ ամուր» Եղիշ.։*

Նշ Ը ծ. Բրք. (իմա՛ արաբ.) մամուր *«շէն», էմին «ապահով»։* Bötticher ZDMG, *1850, 350 անս.* amūra *«անախալ», որ չընդունից ինքը* Lagarde, Arm. Stud. § *86։* Justi, Zendsp. *գնդ. և անս.* amavant *«զօրեղ» բառի հետ կապակցում էմին, Քերակ. էջ 37* ան-ուր: *Հիւնք. էջ 114* nrm *բառից, իսկ էջ 237* ա-rմն *բառից։ Մառ* ЗВО *5, 320* ամուլ *բառի հետ գնդ.* apuθra *«անորդի» ձևին է կցում, իսկ* ИАН *1916, 237* հաւաս, հաւան, հաւասաի *բառերի հետ դնում է յաբեթական* sam *արմատից, որից նաև վրաց.* մծամս *«հաւատամ»։*

Գ-Ի.—Ախց. Ակն. Խրբ. Կր. Նխ. Ռ. Սեբ. ամուր, *Ոզմ.* համուր, *Մկ.* հիմուր, *Հմշ.* օմուր, *Աալ. էմիւր, Հճ.* ամույ, *Մշ.* ամբուր, *Մշ.* յամբուր. *Նոր բառեր են* ամուրփոկ, ամուրկեկ, ամրափորի *«խնայող»,* ամրել *(Զղ.* ամրել, ամբրել, *Հնդ.* ամբռել*) «գոցել, փակել»։ —Գաւառականներում* ամուր *բառը ստացել է զանազան նոր նշանակութիւններ. այսպէս՝ «1. բարձրաձայն. 2. ուժգին, ծանր. 3. հաստատուն, անսասան. 4. արագ. 5. փորը պինդ». և վերջապէս դարձել է գերադրականի նշան (Կիւրինում). ինչ.* ամուր աղէկ *«շատ լաւ, ամենալաւ»,* ամուր անուշ *«շատ քաղցր»։*

Փոխ.—Նոր ասոր. ämuirä *«յաճախ» փոխառեալ է Հյ. գւռ. ձևից. նշանակութեան զարգացման համար հմմտ. ասոր.* xelänä *«ուժով. 2. յաճախ» և ասոր.* kalən *«յաճախ», որ Բրբ.* قالين qalən *«հաստ, ամուր» բառից է փոխառեալ՝ նշանակութեան նոյնպիսի զարգացումով։*

ԱՄՈՒՐ–Ք *«քօղ, ծածկոց». ունի միայն ՀՀԲ, իբր գործածուած «ի հին պատմագիրս». այլուստ անյայտ և անստոյգ բառ. հմմտ. վերը* ամարանց:

ԱՄՈՒՐԻ *(սեռ. -ւոյ, -եաց)* «չամուսնացած կամ այրի մնացած» Ա կոր. է. 8. Յոբ իդ. 21.—*ըստ ՀՀԲ կայ նաև* ամուրեայ, ամօրեայ *գրչութեամբ։*

Lagarde, Arm. Stud. § 87 *դնում է սանս.* an+vara+ya «դեռ չընտրած =չամուսնացած». *բայց այս մեկնութիւնը ինքն իսկ չէ ընդունած։ Եազճեան, Պատկեր 1890, էջ 198—209 դնում է ա-մուրի «ան-կին», կազմուած* ան>ամ *բացառական մասնիկով+*ուրի<ուրիի «կին», *որ գալիս է սանս.* vira «այր» (հյ. ուր) *բառից՝ սանս.* ī>հյ. ի, իի *իգական մասնիկով։ Հիւնք. յն.* ἄμυδρος «անմասն»։ *Պափանցեան,* ЗВО 23, 360 ան+mur ?

ԱՄՈՔ «մեղմ» *Փիլիմ. առ լեհ. այս արմատից են* ամոխել «մեղմել, կակղել» *ՍԳր. Սեբեր.* ամոխաառն «բարեխառն (օդ)» *Վեցօր. 90.* ամոխումն «մեղմացում» *Լմբ. սղ.* դժուարամոխելի *Նար.* դիւրամոխելի *Նար. բայց* ամոխել *նշանակում է նաև յետնաբար «հեփել, մարսել» Մագ. Նիւս. և այս երկու նշանակութեանց համաձայն՝* ամոխումն «մարսումն» *Նիւս. րն.* ամոխանիք «համեմելը» *Փիլ.* ամոխարար *կամ* խաճամոխ «խոհարար, կերակուր եփող» *Փիլ. ևն։*

Տէրվ. Altarm. 58 *սանս.* marǰ «մաքրել», mršta «մաքուր, համեղ», *յն.* ἀμέλγω, *լտ.* mulgeo, *հյ.* մաքուր, միրգ *ևն բառերի հետ։* Canini, Et. étym. 29 *յն.* ἀμυγ-δάλη «նուշ» *բառի հետ։ Հիւնք.* սաամոքս-ից։ Pokorny 1, 179 *հնխ.* omo—>հում *բառից?*

+**ԱՄՊ**, ո *հյ. (գրուած նաև* ամբ) «ամպ» *ՍԳր. Ագաթ. որից* ամպախաղաց *Ագաթ.* ամպագոյն *Բ. մկ. ա. 22.* ամպածին *Ագաթ.* ամպայարկ «ամպով ծածկուած» *Ագաթ.* ամպացեալ *Եզն.* ամպաշող «ամպշող» *Ագաթ.* ամպաշուի *կամ* ամպաշուխ *Ագաթ. § 562* ամպափարատ *Մաշտ. գերամբակ «ամպերից բարձր» Պարակ. շար. էջ 12 (նստելոյն ի քրոբէս երկրորդ քառակառք վեհագոյն կոյս. ոսկեղեն և գերամբակ բաղմաց անստուեր լուսոյն, լուսակալ և ճրագ ճշմարիտ.—ըստ իս ուղղելի է գերամպակ բազմակ. նորագիւտ բառ).* ամպաչուել «ամպերի վրայով երթալ» *Ագաթ. (նոր տպ.* ամպաչու եղէ*).* ամպաւար *վեցօր* ամպեղէն *կոչ. ևն։* Ամպ *բառի ուսելի յետին նշանակութիւնները են. 1. «շանթ, կայծակ» (որից* ամպահարիլ «կայծակից զարնուիլ» *Սկևռ. լմբ.* ամպահարութիւն *Ա-բիստ աշխ.). 2. «սպունգ» (սխալ է ըստ ՆՀԲ դնել «սպունգի մէջի ճճին») Զքր. կթ. երգն. երկն. գ. (սպունգս մեծամեծս, այն զոր ամպ ասեն). այս իմաստով թարգմանութիւն է պարսկերէնից. համմտ. պրս. «սպունգ» իմաստով* ابرك abrak, ابرمرد abr-i-murda *և* ابركهن abr-i-kuhan *բառերը, որոնք բուն նշանակում են «ամպիկ, մեռեալ ամպ, հին ամպ» (ան՛ս նորայր, Բառ. ֆր.* éponge *բառը). այսպէս նաև նոր ասոր.* aiva «ամպ, մշուշ, ըսպունգ» *և Ագուլիսի բարբառով՝* թուխպ «ամպ. 2. սպունգ». *Միևնոյն* ամպ *բառից է կազմուած նաև* ամբուռ *կամ* ամբուռոյց «մբըրիկ, փոթորիկ» *Արիստ. աշխ. (մէկ անգամ գործածուած, որ ՀՀԲ սխալմամբ նշանակում է* ամբուռ «ամուր, պինդ սաստիկ»՝ *դրդուելով գաւառական* ամբուր «ամուր» *բառից)։ Նոր դրական բառեր են* ամպածրար, ամպամած, ամպհովանի *ևն։*

= *Հնխ.* ǵbhó, mbhó *ձևից. համմտ. սանս.* नभस् nábhas «ամպ, երկինք, մթնոլորտ», अम्भस् ámbhas *կամ* अम्बु ambu «ջուր», *յն.* νέφος, νεφέλη «ամպ», *լտ.* nebula «ամպ, մշուշ», *հրգ.* nebul, *գերմ.* Nebel «մշուշ», *անգսք.* nifol «մթին», *հիսլ.* njōl «գիշեր», *հիսլ.* nēl «ամպ, մշուշ», *հսլ. ռուս.* небо «երկինք», *ղնգ.* nabah-, *կամիս.* nebiš «երկինք», *լիթ.* debesis «ամպ», *հիսլ.* nem. *միսլ.* neamh, *կիմր.* nef «երկինք», *անգալին յատկացածով* nembh-, *որից պհլ.* namb, nam, *պրս.* nam «խոնաւ, նամ», *պհլ.* nambītan «խոնաւանալ», *լտ.* nimbus «ամպ, անձրև» *են, որոնք յառաջանում են հնխ.* nébh- *արմատից (*Pokorny 1, 131, Ernout-Meillet 628, Trautmanu 195, Walde 378, 511, Boisacq 666, Kluge 346*): Փոխառութեամբ նոյն արմատին են հասնում նաև* ճամ *և*

ճաւթ, որոնք տե՛ս առանձին։ Սրա կրճատն է gbhó, mbhó, որից հյ. ամբ>ամպ (հնագոյն ազգագոյն ձևը առաջինն է, որի փոխարէն այժմ ընդունուած է ամպ. հնխ. bh դառնում է հյ. բ և ո՛չ պ)։ Բառիս միւս ցեղակիցները տե՛ս ամպրոպ։—Հիւբշ. 417։

Schröder, Thesaur. 45 եբր. עב ʿāb «ամպ, մշուշ» բառից փոխառեալ։ ՆՀԲ լծ. ամբար, ումպ և թրք. եմմեք «ժծել» (հա. Բ. էջ 1042)։ Ուղիղ մեկնեց նախ Windisch. 15, յետոյ Gosche 46, Canini, Et. étym. 103 հյ. բմպել և յն. ὄμβρος բառերի հետ։ Հիւնք. յն. ὄμβρος-ից։

ԳԻՒՒ.—Ազմ. ամպ, Ագլ. Ալշ. Ախց. Ակն. Խրբ. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Նախ. Պլ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տփ. Գոր. ամբ, Երև. ամբ, աՙբ, Ռ. աՙբ, Տիգ. ամբ, Հճ. Համշ. օմբ, Զթ. օմբ, ոմբ, Ասլ. աՙ*.—գաւառականներում ամպ նշանակում է նաև «2. ամպոտ, ամպամած (Նախ. Պլ.). 3. անձրև (Խրբ. Տիգ. Ք.). 4. աչքի փառ, լուսն (Պլ.). 5. սպունգ (Դվ. Երև. Զթ.). 6. արօրի մի մասը (Վն.)»։ Նոր բառեր են ամպածոռ, ամպակալել, ամպգալ, ամպոռիլ, ամպիկ «մի տեսակ կապտորակ խաղող», ամպճնճղ, ամպճով, ամպռոտալ, և կրկնութեամբ՝ ամպուզամպ, ամպզապ «մէկ ամպոտ, մէկ պարզ (երկինք)»։ Ամպ «սպունգ» իմաստի համար հմմտ. նաև վրաց. ღრუბელი գրաբելի «ամպ. 2. սպունգ» և Սվեդ. мбрмq «սպունգ»։

ՓՈԽ. տե՛ս Հովի։

*ԱՄՊԱՃ, որ և անպաճ, աճապաճ, աճապ և աճպ «մի տեսակ հնդկական պտուղ». ունի միայն ԱԲ։

=Արաբ. أنبج anab նոյն նշ. Կամուս (Բրք. Բրգմ. Ա. 75) այս բառը համարում է պարսկերէն, որի արաբացեալը դնում է جنبا anbaǰ (անդ՝ էջ 443)։ Այս պտղի մասին խոսում է Իբն-ի-Բաութութա II 185 և III 125. գրում է عنب կամ عنبة ʿanba։ Այս պտղի մասին ընդարձակ խօսում է Կալկաթայի «Աղդասէր» Թերթը, 1847, հտ. Դ. էջ 126, ուր և նախաւոր ձևը դրում է հնդկերէն ամբա, ամ։ Ըստ Թադիադեան, Առաջն. մանկ. էջ 165, 173 այս պտուղը մեծ դեղձի չափ է, նշաձև, դեղնաշորթ կարմիր. խակը չափազանց թթու լինելով՝ անուտելի է. կեղևելով դնում են կերակրի մէջ, կամ աղում են, շորացնում և թթու դնում. հասունը շատ համեղ է և խնկի բուրմունքն ունի. համարում է Հնդկաստանի պտուղների թագուհին։ Ըստ Будаговъ 1, 98ա հնդկերէնն է anbe (anba), կոչում է նաև nerek, որ է մալայերէն mangga և այստեղից ֆրանս. mango կամ mangue, ծառը manguier, որ պատկանում է anacardiacé սեռին։—Աճ. Քաջունի, Գ. 9 համարում է «melongène frixa»։

ԳԻՒՒ.—Սրա՞ն է պատկանում արդեօք Հճ. мбрмջուզ «սալորենու առաջին պտուղը (ուտելի), որ թափուելուց յետոյ դուրս է գալիս սալորը»։

Ամպար տե՛ս Յամբար։

ԱՄՊԱՐ «մոլորակ». որից ամպար աստեղ «հօթը մոլորակները». ունի միայն Ալիշան, Հին հաւատք, էջ 112՝ հանելով մի հին գրուածքից, որի անունը չի տալիս։

Ալիշան (անդ) սուտագրանում է անպար «անշարժ»։

Ամպարտքաշ տե՛ս Պարտքաշ։

+ԱՄՊՐՈՊ, ի-ա հյ. (գրուած նաև անպրոպ) «փոթորիկ». մէկ անգամ ունի Յոր լը. 25. միւս վկայութիւնները յետին են. ինչպէս Պիտ. Նար. էջ 234, Ճառընտ. փոխաբերաբար նշանակում է «խռովութիւն, տակնուվրայութիւն, փորձանք». ՅՀ. կթ. Նար. (հմմտ. աշխ. Գլխուդ այնպէս մէկ փոթորիկ հանեմ որ...). որից ամպրոպային, ինչպէս ունինք ամպրոպային Աւամազդ խոր.։

=Հնխ. gbhró-, mbhró- ձևից, հմմտ. յն. ὄμβρος «անձրև», լտ. imber «անձրև. ամպ», սանս. abhrá- «ամպ. փոթորիկ», զնդ. awra «ամպ», պրս. ابر abr «ամպ», օսս. arw «երկինք», միւլ. imrim «փոթորիկ», միւս ցեղակից ձևերը տե՛ս ամպ բառի տակ, որ սրա հետ նոյն արմատն ունի։ Ամպրոպ բառի մէջ վերջածայն պ մասնիկ է։

ՆՀԲ ամպուռք, ամպուռոյցք, բոպէ ամպոց, արուիւմն ամպոց։ ԶԲ ամպ բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Տէրվիշ. Altarm. 94, որ սակայն բա-

ռավերջի -ոպ մասը համարում է սանս. ap-, *պրս.* آب ab «*ջուր*» *ձևի հետ նոյն։ Հիւնք. յն.* ὀμβρο-βλυστέω «*անձրևը հոսիլ*»։ *Զարմանալի է որ Հիւբշման մոռացած է նշանակել բառս՝ բնիկ հայ բառերի շարքում։ Պատահական նմանութիւն ունի ասուր.* imbaru «*փոթորիկ*» (Muss-Arnolt, Assyr.-engl.-deutsches Handwb. *էջ 55 բ*)։

ԱՄՎԱՃ «*մի տեսակ բոյս է. ձիու ագի.* equisatum» *Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 85։ ՀԲուս. անդ համարում է օտար բառ և անշուշտ արաբերէն է, բայց չունի կամուս, թրք. Թրգմ. Ա. 442։*

***ԱՄՐ.** *նորագիւտ բառ, որ մեկ անգամ գտնում եմ գործածուած Սասն. 61. ի ամոն եկեղեցնոյ. ի ամր իմաստից։ Որ և մեկնում եմ՝*

= *Եբր.* אֵמֶר ēmer *կամ* ōmer «*բառ, բան. խօսք, հրաման, խոստում, պիտութիւն*»։— *Ա.ճ.*

***ԱՄՐՈՒՍԻԱ** «*մի տեսակ խոտ է.* ambrosia maritima L» *Բժշ. Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 86։*

= *Յն.* ἀμβροσία, *որից փոխառեալ են նաև լտ.* ambrosia, *ֆրանս.* ambrosie *անս։ Մեր բառը տառադարձուած է ոչ թէ ուղղակի յունարէնից, այլ նրանից փոխառեալ արաբերէն ձևի վրայից, որ նմանապէս ղուրկ է β=բ ձայնից՝ իբն-Բէյթարի մօտ։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

***ԱՄՓԻԹԱՏՐՈՆ** «*բոլորաձև աստիճանաւոր սրահ՝ տեսարանների համար*». *Նոր բառ է.*

— *Յն.* ἀμφιθέατρον, *որ բուն նշանակում է «շուրջ—տեսանելիք». որանից փոխառեալ են նաև ասոր.* ܐܡܦܝܬܐܛܪܘܢ amfīθeatrōn, *ֆրանս.* amphithéâtre *անս անս։*

ԱՄՓՈՓ «*ժողովուած, հաւաք, մէկտեղուած*» *եղն. Ոսկ. Եփր. ծն. «զսպուած, պարկեշտ (կեանք)» Եփր. ծն. «կոկիկ (հագուստ)» Կոչ. «փոքր, սահմանափակ (գետին)» Կոչ. «անմասն, ղուրկ» Շնորհ. որից* ամփոփել «*հաւաքել, ժողովել. 2. իրեն քաշել, ղգուշանալ. 3. ձեռքով բռնել. 4. փայփայել, սիրտիկել, մեղմել*», *կրաւ. «բովանդակուիլ. 2. քաշուիլ, պահուիլ, կծկուիլ. 3. եա քաշուիլ. 4. փակուիլ, գոցուիլ. 5. պակասիլ» ՍԳր. Ոսկ. Ագաթ.* ամփոփութիւն «*չափաւորութիւն*» *Կոչ.* վաշխամփոփ «*վաշխ հաւաքող, վաշխառու*» *Մաշկ. գրուած է նաև* աճփոփ *Շիր. 35.* ամանափոփ *Ագաթ. նոր գրական լեզուի մէջ* ամփոփ «*կոկիկ կերպով համառօտուած*», *որից* ամփոփում «*եղրակացութիւն, համառօտութիւն*», լուսամփոփ, ձայնամփոփ, իմֆամփոփ։

= *Արմատն է փոփ, որից ամ- մասնիկով՝* ամփոփ. *նոյն արմատը գտնում ենք նաև սիրտ բառի մէջ, որ կազմուած է q>u մասնիկով։*

ՆՀԲ լծ. յն. ἀμφί «*շուրջանակի*», ἀμφω *և լտ.* ambo «*երկոքեան*», *հյ. ափ։ Տէրվ. Նախալ. 93 արմատը դնում է փո, կրճատ կրկնութեամբ փոփ, ամփոփ = հյ.* փոfr, *սանս.* putra «*որդի*», *յն.* παίω «*զարնել*» *անս։ Հիւնք. ամբոխ բառից։ Վերի ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet MSL *16, 124։ Թիրեաքեան, Արիահայ բա. 26 պրս.* انبوب anbūb «*կահաւորում*», انبودن anbūdan «*դիզել*» *բայից։ Ամօթ տե՛ս Ամաչել։*

ԱՅԱԻՉՆՈՒԻ «*սպիտակ փուշ, oxyacantha*». *ունի միայն ՀԲուս. § 87, առնելով Դանիէլ վարդապետի Սաղմոսաց մեկնութիւնից, ուր յիշատակուած է եղել իբրև ասորի բառ, և ո՛չ թէ գործածուած իբր հայերէն։*

Ասորի ձևը անյայտ է։ Ալիշան՝ անդ, մերձաւոր է գտնում նաև յն. ἀείζωον, *լտ.* aizoon, *որոնք նշանակում են զանազան բոյսեր, ի մէջ այլոց ֆրանս.* vivace *և* joubarbe *կոչուած բոյսերը։*

***ԱՅՔ,** ի հլ. «հայերէն այբուբենի առաջին գրի անունը». փոխաբերաբար «սկիզբ», ինչպէս որ Ք նշանակում է «վերջ, վախճան». «Ես եմ այբ և ես եմ քէ» Յայտ. ա. 8. որից* այբբեն, այբևբեն, այբուբեն «*բոլոր գրերը միասին*» *Մաշտ. ջհկ. Վրդն. պտմ. Վրք. հց.* այբեենաւոր *կամ* այբբեենաւոր «*քերականն*» *Արշ. լգ.*

այբաթարց ԱԲ (սխալ ձև՝ փոխանակ ասելու ապաթարց, *ըստ որում ապաթարցի ժամանակ սովորաբար այբ տառն է՝ որ կրճատուած է լինում*). եգիպտայբ «եգիպտական դիր և դպրութիւն» Սկևռ. լմբ. (Հրատ. Սոփերքի մէջ, հտ. ժե, էջ 40). նոր բառեր են այբբենարան, այբուբենական «այբուբենի կարգով. 2. տարրական, ամենահասարակ»։

=Յն. ἄλφα առաջին տառի անունից, որ իր կարգին փոխառեալ է սեմականից, համմտ. եբր. alef, ասոր. alaf, արաբ. alif, որոնք ներկայացնում են א ا տառերը. բուն ծագումն է եբր. אֶלֶף elef, ասուր. alpu «եզն», համաձայն տառի նախաձևին։ Հայերէնի մէջ բառիս նախկին ձևն էր ալփ, որ յետոյ դարձաւ *այփ և յաջորդ բեն (բ) տառի ազդեցութեամբ այբ։ Տե՛ս նաև վերը ալփ, ալփաբեա։—Աճ.

ԳԻՒ.—Հնչում է այփ, այիփ։

Ա.ՅԳ, ու հլ. (կայ նաև սեռական այգոյ, որ թւում է յետնաբար ձևացած) «առաւօտ» ՍԳր. Ագաթ. որից կազմուած են ընդ այգն Մրկ. ա. 35. Ագաթ. ընդ այգս այգոյն Բուզ. դ. 10. այգուն, այգուց «առաւօտուն» ՍԳր. ցայգ «մինչև առաւօտ եղած ժամանակը, այսինքն դիշեր» ՍԳր. Եղն.Կորիւն. Ոսկ. մտթ. (ճիշտ ինչպէս որ ցերեկ նշանակում է «առաւօտից մինչև երեկոյ եղած ժամանակը»). ցայգապաշաօն Բուզ. ցայգացնոր Սերեր. յայգուէ «առաւօտուն» Բ Թագ. բ. 27. Բուզ. զցայգ «դիշերը» ՍԳր. ցայգութիւն «դիշեր ժամանակ» Օր. իգ. 10. Ոսկ. այգալաց Մաշտ. այգողմ ԱԲ. այգաստղ Շիր. այգաճալ «լուսանալ» Խոր. բայց նաև այգեճալ Բուզ. գ. 7. այգուց «թաղման երկրորդ առաւօտը մեռելի վրայ կատարուած կարգ» Մաշտ. զայգոյ «յաջորդ օրուայ առաւօտուն» ՍԳր. յայգցեանն Շապհ. 41. այգահող Առաք. պտմ. այգորել (կամ այգաւորել, այգեւորել, յայգորել, ագեվորել) «թագաւորին կամ իշխանին բարի լոյսի երթալ» Ա. Եզր. գ. 15. Բուզ. այգորելի տեղի «դահլիճ» Ա. Եզր. գ. 15. ագաւորող! «այն անձը, որ խնդիրք մատուցանելու համար թագաւորին է ներկայանում» Մխ. դտ. 262։ Նոր բառեր են ցայգահանդէս, ցայգածաղիկ, ցայգազարթոյց են։

ՆՀԲ լծ. յն. ἀυγή =այգ, իսկ այգորել= այգօրել, լծ. լտ. auguror «բարեմաղթել»։ Canini, Et. étym. 212 յն. ἀυγή։ Հիւնք. էգ բառից։ Շէֆթէլովից BB 28, 288 ցայգ արմատ կարծելով՝ սխալմամբ դնում է լտ. caecus «կոյր», իռլ. caech, կիմր. coeg, կորն. cuic «միականի» են։ Patrubány ՀԱ 1905, 158 այգ=լտ. aevum, գոթ. aiws, յն. αἰών, սանս. āyuš «կեանք»։ Karst, Յուշ. 408 սումեր. uku «օր»։ Կապ չունի յն.՝ἄφως=ἕως «արշալոյս», որովհետև սրա հնխ. արմատն է ues, aues «փայլել», որ չի կարող տալ հյ. այգ։ Պատահական նմանութիւն ունին հիւսիսային կովկասեան լեզուներից ուտ. ակուճա «առաւօտ», ակու-ճաուն «առաւօտուն», ռուտ. էիւգ և ագ. ակու «առաւօտ»։

ԳԻՒ.—Արմատը պահուած չէ. բայց կան մի քանի ածանցներ. ինչ. էգլաց, այգողմ, էգուց, էգվան.—էլաց ունի Համշ. «մեռելի քելեխ» նշանակութեամբ. իսկ Այնթապի Թրքախօս հայերը էլաս ձևով և «շարշարման գիշեր» նշանակութեամբ.—այգողմ (հնչուած ախօխմ) բառը ունին Ատ. Ջթ. Մն. Մշ. Մշկ. Ննխ. Սեբ. Սվ. Ք. (Անգորայի Թրքախօս հայերը այֆօճ՝ Բիւր. 1898, էջ 789). Սեբ. կայ նաև աբուճօղ «մի տեսակ հաց՝ որ այգողքի առթիւ են պատրաստում». կոչւում է և ագողճաճաց.—իսկ Ղրբ. իճա՛վէղ, Երև. էճաֆօ՛ղէմ, Ջղ. նագնախող, Բլ. էճիող, Շմ. իճնճաճօղ, ճնաճօղ. *այս բոլորը գործ են ածում «այգողք» նշանակութեամբ և իրենց ձևով ցոյց են տալիս՝ որ բառը կազմուած է ո՛չ Թէ -ող մասնիկով, այլ ճող բառից և հետևաբար այգողմ էր հնագոյն այգաճողմ>այգիողմ, ինչպէս ունի Առաք. պտմ. 417 այգաճող (այս մասին Ամատ. Արրատ. 1911, 673)։—Աւելի հետաքրքրական են էգուց, էգվան բառերը՝ որոնք հնչում են Ախց. Խոջ. Կր. էվան «վաղը», Երև. Լ. Հբ. Ղզ. Ղրբ. Մշ. Տս. Տր. Տփ. էֆուց, Շմ. էֆուց, յէֆուց, Համշ. էվօճ «առաւօտուն», էֆուց, էֆուճց «վաղը», Ջղ. ֆեկուց, Ագլ. ճեօ՛գիւց, յեօ՛գիւց։ Կայ նաև հին լեզ-

ում «վաղը» նշանակութեամբ. հմմտ. Սակր. էջ 365՝ «ես և այսօր և այգուց նոյնս եմ». միջին հյ. յեգուցն, յեգցեն «վաղը, վաղուանից» Անսիզք 13. եգցենն «վաղուանը» Տաթև. ամ. 379. ժողովրդական եգուց, յեգուց ձևը յիշում է Համամ. քեր. 271, այսպէս՝ «ի վաղիւն տեսանէ զՅիսուս զի գայ, զոր գտեհիկքն յեգուց ասեն, եգուց դառնամք» (նոյնը նաև քանիցս վրք. հց.). «առաւօտ» և «վաղը» նշանակութեանց զուրգացման համար հմմտ. գերմ. morgen «առաւօտ և վաղը», ռուս. завтра «վաղը»<за-утро «առաւօտ»: Եգուց ձևից է էխի (այսինքն եգուցի), որից էխի օրը, էսաւ օրը, մէկէլ էխը և ընդհանրացմամբ էխի տարին:—Աղգագրական նշանակութիւն ունի էխպարէվ (էգբարև, այգբարև) վն. «պատկի հետևևալ առաւօտը նորապսակ զոյգը նուագածուների հետ կուու բարձրանալով՝ արևի ծագումը երգելն ու ողջունելը» (Աղգ. հանդ. իե 52): Կայ վերջապէս Ղրբ. իճա՛roա «նախ քան լուսաբացը նախիրն արօտ տանելը»:

Փոխ.—Ջուբինով (ա. տպ.) հյ. *զայգ ձևից է հանում վրաց. ზეგ զեգ «վաղանդ, վաղը չէ միւս օրը». հմմտ. վերը զայգոյ ՍԳր.

+ **Ա.ՅԳԻ** (սեռ. -ւոյ, -հաց) «խաղողի պարտէզ. 2. խաղողի որթ» ՍԳր. Կոչ. Վեցօր. աճանցման մէջ մտնում է չորս ձևով. 1. այգե-. ամենից սովորական ձևն է. ինչ. այգեգործ ՍԳր. այգեստան ՍԳր. Ագաթ. այգեկութ Ոսկ. այգեպան (նոր բառ). 2. այգէ-. այսպէս գրուած են նաև նախորդները՝ սխալ գրչութեամբ. ինչ. այգէգործ, այգէկութ են. 3. այգա-, որի համար ունինք հնից միայն մէկ օրինակ՝ այգաւէտ Ես. լզ. 17 (այլուր այգեէտ Արծր.) և յետնաբար այգածաղիկ. 4. այգ-. ինչ. այգորդ «այգեպան» Բուզ. Ջեն. Յետնաձև հոլովման արդիւնք են այգոյ գայլ, այգոյ ծաղիկ, այգու մատնի են բուսանունները: Արդի հայերէնի մէջ արևմտեան գրականում այգի պահել է իր բուն նշանակութիւնը, իսկ արևելեան գրականում նշանակում է ընդհանրապէս «պարտէզ». ինչպէս՝ բաղաքային այգի, բուսաբանական այգի են:

=Բնիկ հայ բառ. հիմնական նշանակութիւնն է «որթ». ի դնելով իբր բուսական մասնիկ (հմմտ. կաղնի, ծիրանի), արմատը կլինի *այգ «խաղող», որ յետոյ կորել է: Այս բառի հետ հմմտ. լտ. ūva «խաղող», յն. ὄα, ὄη, οἴη, οἶα «սինի ծառ» ὄαν, ὄα, οἶα, ὠά «սին, sorbus». իմաստի փոքր տարբերութեամբ՝ չեխ. jiva, հրգ. īwa, īga, հանգլ. īw, ēoh, հիսլ. ȳr, իռլ. eo, կիմր. ywen, հոլլ. ijf, անգլ. yew, գերմ. Eibe և գերմանականից փոխառութեամբ ֆրանս. if, որոնք բոլոր նշանակում են «դեղձի» (Pokorny *1, 165*, Boisacq *682*, Walde *864*, Ernout-Meillet *1099*, Berneker *438*, Kluge *110*): Այս բոլորի նախաձևն է հնխ. *oiu̯ā «լեռնալին մանր պտուղ՝ մոշի, ելակի պէս. քոլապտուղ» ընդհանուր նշանակութեամբ: Հալերէնում oi աւելիս է այ (հմմտ. այս>oid-) և v բառ օրինի դառնում է գ: Նոյն բառերին ցեղակից են թեում նաև լիթ. jẽvà, ẽvà, լեթթ. iva «դժնիկ», հսլ. iva. սերբ. ïva, ռուս. ива, լեհ. iwa «ուռի», որոնք ծագում են հնխ. eiu̯ā ձևից: Ընդունելով բառիս արմատը *այգ «խաղող», առանձին կարևորութիւն է առանում Ես. լզ. 17 այգաւէտ բառը (երկիր հայաւէտ և այգաւէտ, իբր կազմուած բուն *այգ արմատից, բայց սրան հակառակ է դերբ պալիս յունարէն բնագիրը՝ որը ունի ἄρτων καὶ ἀμπελώνων «այգեստանի»:

Հիւնք. ագի բառից: 3. Արշէզ ՀՍ. *1896, 268* գինի բառի հետ: Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lidén IF *18, 500—503*, որ ընդունել են նաև Walde *864*, Boisacg *682*. Մառ ЗВО *25, 307* նոյնպէս գինի բառից:

Գիր.—Ակն. էգ՛ի «պարտէզ», Ագլ. է՛գ՛ի, լգ. ըգ՛ըճա՛նի, ըգ՛ըճո՛նիք, Ասլ. Խրբ. Ռ. Տիգ. Յղ. էի, Հճ. էգ՛գ՛ի, Մրզ. Սլմ. էֆ՛ի, Զթ. էգ՛է, Մշ. յէգ՛ի, Ոզմ. ճէ՛գէ, Տփ. իգի, Զղ. իգ՛ի, Վն. իկ՛ի, Երև. իֆի: Նոր բառեր են այգեբաև, այգեբաղ, այգեռուպ, այգեաէր են:

Փոխ.—Հայերէնից փոխառեալ պէտք է դնել արաբ. ايك ayk «անտառ, ծառաստան, պղպատու ծառերի պարտէզ, արմաւենիների պարտէզ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Գ. 72):

Այգորել տե՛ս Այգ՝

+**Ա.ՅԴ** *«այդ, դա» ՍԳր. ևն. որից* այդչափ, այդպէս, այդպիսի, այդր, այդրէն, այտի *կամ* այդի *«այդտեղից»*, այդրէնածին *«բնիկ» Ե-գեկ. խէ. 22. բոլորն էլ հին և ընտիր. յետին են* այդուստ *կամ* այտուստ *«այդտեղից»*, այդաճօր *«այդտեղ»*, այդգուճակ *«այդպիսի»*, այդապէս *«այդպէս»*, այդհան *են։*

=*Բնիկ հայ բառ, հնխ.* to *ձևից. մեկնութիւնը մանրամասն տե՛ս* Դ, դա։—*Հիւբշ. 487։*

ԳԻՒ.—Ակն. Պլ. Ռ. Սչ. ադ, *Կր.* ադ, իդի, *Հճ.* ադ, էդ, իդօ, *Ննխ.* ադ, իդա, *Համշ.* էդ, իդա, *Ալշ.* էդ, *Մշ.* էդ, դդ, իդա, դդի, *Զթ.* ոդ, *Խրբ.* ոդ, ոդի, *Ախց.* աւո, *Ագլ. Ցղ.* աո, ա՛ոի, *Մկ.* աո, աոիկ, *Երև. Ղրբ. Մրղ. Սլմ.* էո, *Վն.* էդա, *Զղ.* էդ՝ *(որից հետաքրքրական է* էդ՝տեղ>ոտեղ>տեղ *«այդտեղ»). Ասլ.* ա*։—*այս բառը չունին Շմ. և Տիգ. առաջինը նրա փոխարէն գործ է ածում* աա, *իսկ երկրորդը գիտէ միայն զանազանել այս և այն. երկրորդ դէմքը անծանօթ է այստեղ!—Նոր ձևեր են* աոիկ, աոիկա, աոիկակ, աոաճկ, աոճկիկ, աոաճկուկ, աոաճկով, էդմալ, էդմլա, էդմահ, էդօրդ *«նախորդ օրը»*, էդէնց *են, որոնցից ոմանք մտել են և գրական լեզուի մէջ։*

**Ա.ՅԵՆԱԿ «օրինակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 15։*

=*Պրս.* ایین āyīn *«կարգ և ընթացք, տարազ և կերպ»։—Ա.Ճ.*

**Ա.ՅԵՐ (սեռ. -ի), գրուած նաև* աեր *«մթնոլորտ» Մծբ. որ և այեռա «օդի չաստուածուհին, Հերա» Ոսկ. ես. ընդ այէրս օդոց Մծբ. 223։*

=*Յն.* ἀήρ *(սեռ.* ἀέρος*) «օդ», որից փոխառեալ են նաև լտ.* aër, *ֆրանս. անգլ.* air, *ռուս.* аэръ, *Թուշ.* աէր, *վրաց.* ჰაერი ნաեռի, *արաբ.* ایر ayr *կամ* ایّار iyyār *«օդ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա 754) են։ Մեր բառի մէջ* ե *գրուած է յն.* η=է *գրի դէմ՝ ո՛չ թէ յն. սեռ.* ἀέρος *ձևի* ε *ձայնի պատճառաւ, այլ յաջորդ* ρ-*ի համար։ Յն. բառը կցւում է* ἄημι *«փչել», ἀήτης «քամի» բառերին և նրանց հետ միասին ծագում է հնխ.* aŭē *«փչել» արմատից, որի միւս ժառանգներն են սանս.* vâti, *գնդ.* vāiti, *լիթ.* vėjas, *լտ.* ventus, *գերմ.* Wind, *ռուս.* ветер *«քամի», հիւլ.* feth *«օդ» են (Boisacq 17)։—Հիւբշ. 338։*

Ուղիղ մեկնեց նախ Հ.Հ.։

ԴԻՒ.—Կայ միայն Տփ. ճայէր, *որ նոր փոխառութիւն է վրացերէնից։*

Ա.ՅԹԻՒ *(գրուած նաև* աթիո*). աւում է միայն* յայթիս, յայթիոս, յաթիոս *կալ. սրա հոմանիշն է* ակճիո, աճիւո, ակճիւո, *գործածուած նոյն ձևով՝* յակճիոս *կալ, լինել են. Ոսկ. Վեցօր. Փիլ. Լմբ. (*յաճիւո *ունի Արծր. էջ 154). բայց այս երկուսը միևնոյն բառի տարբեր գրչութիւնները չեն, որովհետև գործածուած են նաև միասին. ինչ. Յաթիոս և յակճիոս կան ընկճել. Վեցօր. դ. 66. երկուսն էլ նշանակում են «հետաքրքրութեամբ, ուշի ուշով լսել, ոտքի մատների վրայ յեցած երկարիլ՝ ականջ դնելու համար». որից* յայթել *«ուրախութիւնից թռչկոտիլ» Փարպ. Թուղթ (էջ 200). իսկ Ոսկ. մ. գ. 16* յայթիո և ի թռիչս կայցէ*=յն. բնագրում «հանդերձեալ ի վեր յառնել»։*

Բառ երեմ. էջ 218 դնում է յակթիո *«կայտառ կամ իմաստուն» և ճիշտ այս իմաստներով էլ ունի էջ 219* յայթ. *որից երևում է որ այս վերջինը պէտք է հասկանալ* յայթիո։ *Նշ.* թռչել *(Թիո) արմատից ? Հիւնք. յն.* αἰνθήρ *«եթեր» բառից։*

**Ա.ՅԺՄ «հիմա» ՍԳր. Եւս. պտմ. որից* ցայժմ *ՍԳր. Եզն.* առ այժմ *Գծ. իդ. 25. Ոսկ. մ. ա. 1.* այժմիկ *ՍԳր. Ագաթ.* առ այժմիկ *Կոչ.* այժմու *Բ կոր. ը. 14. Եւս. քր. Ոսկ.* այժմէն *Նար.* այժմեան *Մրգ. յկ.* այժմածին *Զքր. կթ. Նոր բառեր են* այժմէութիւն, այժմէական։

=*Կազմուած է Հ.* ա՛յս-ժամ *ձևից. շատ յաճախ գործածութեան և շեշտը առաջին վանկի վրայ լինելու պատճառաւ ս բաղաձայնը և ա ձայնաւորը կրճատուել են։ Իմաստի զարգացման համար համմտ. ֆր.* tout à l'heure, *թրք.* bú sahat *և յատկապէս ռուս.* сейчасъ, *որոնք նշանակում են «այժմ, իսկոյն, շուտով» են, բայց բուն «այս ժամին»։—Հիւբշ. 411։*

Ուղիղ մեկնեց նախ Նշ.Հ. նոյնը ընդունում են և Bugge KZ *32, 32,* Meillet MSL *10, 246 են։* Junker KZ *43, 349 չի ընդունում* այս+ժամ *բացատրութիւնը, այլ ուղղակի հնխ.* ai *դերանուանական*

արմատից + ժամ. տե՛ս և Pokorny *1, 100։*

ԳԻՒ.—Պահուած չէ, այլ ամէն տեղ փոխանակուած հիմայ, հիմի, հիմակ, հիմիկ, մկա *ձևով. արևմտեան գրականի մէջ էլ ընդունուած է* հիմա, *իսկ արևելեանը գործածում է այժմ։ Կարելի է նաև յիշել Տփ.* իժում, *Սչ.* աճժումը, աճժըմը «յետոյ, այնուհետև»։

Ա.ՅԻՋՈՆ, *որ և* այեզոմն, այզոյն «լուսդեղ խոտը» *Գաղիան. (ըստ ՀԲուս. § 927 և § 3118). որ և* այեզոմն *Բառ. երեմ. յաւել. 565։*

=Յն. ἀεί̈ζωον, *որ բուն նշանակում է «յաւիտենակեաց» և գործածւում է երկրորդաբար նշանակելու դանադան անթառամ բոյսեր, յատկապէս «joubarbe», որ է ըստ Նորայր «գառնադմակիկ, փերփեր քարի, վայրի ազոխ»։ Նոյն է և լտ. փոխառեալ* aizoon։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

+Ա.ՅԼ, *ո հլ. (սեռ.* այլոյ, *տր.* այլում*) «ուրիշ». դանադան դարձուածներով՝ ինչ. ընդ այլ, այլ այլոյ, այլ առ այլով «իրարու», այլ ընդ այլոյ, այլովքն հանդերձ «և այլն», այլ և այլ, այլ ևս, բոլորն էլ հին և ընտիր։ Այլ նշանակում է նաև «ևս, էլ, այլ ևս, մէկ էլ. 2. բայց, սակայն. 3. հապա, նոյն իսկ. 4. արդ, արդ ևս» ՍԳր. Ագաթ. Ոսկ. ևն։ Որից* այլազգ *«ուրիշ կերպ» ՍԳր. Եզն.* այլազգի *ՍԳր.* այլակերպ *ՍԳր. Ոսկ. Եւս. քր.* այլաբարբառ *Ոսկ.* այլագոյն *Ագաթ. Ոսկ.* այլալեզու *ՍԳր. Ոսկ.* այլայլ *Եւս. Սերեր. Ոսկ. Երր.* այլայլութիւն *Ագաթ.* այլանդակ *Ագաթ.* այլուսա *Եսթ. դ. 14. Եզն.* այլուր *Իմ. ժր. 18. Կոչ. Վեցօր.* յայլակարծուց *Բուզ.* այլաբերաբար *Լծ. պրպմ. (Նորագիւտ բառ. տե՛ս իմ Հայ. նոր բառեր, բ. 83)։ Նոյն բառը ունինք նաև այլակ ձևով, որից կազմուած են* այլակաբանել *Փիլ. եր. բ. 13.* այլակդեն *Եղիշ.* այլակութիւն *Փիլ. եր. բ. 33. Եղիշ. խր.* այլայլակ *Պորփ. Արծր. Նար.* անայլայլակ *Նար. ևն. Տե՛ս նաև* աղաւաղ։ *Նոր բառեր են* այլաբանօրէն, այլադաւան, այլասերում *ևն։*

*=Բնիկ հայ բառ. հնդևրոպական նախաձևն էր *alyo-, որից ծագում է յն.* ἄλλος *«այլ, ուրիշ». սրա մօտ կար՝ իբր երկրորդ ձև՝ հնխ.* allo-, *որից ծագում են կիպր.* αἴλος, *լտ.* alius, *քուչ.* alyek, *դոթ.* aljis, *հիւլ.* aile, *ն. կիմր.* ail. *վերջապէս կար հնդևրոպական մի երրորդ նախաձև *anyo-, որի ժառանգներն են սանս.* 𑀅𑀦𑁆𑀬 anya-, *զնդ.* anya-, *հպրս.* 𐎠𐎽𐎢 aniyā (uvā), *պհլ.* han, *փարս.* ainā, *օսս.* inne, *սլ.* inu *ևն։ Հիւբշ. 417 հայերէնը դնում է հնխ. առաջին ձևից՝ տեղափոխութեամբ. *alyo- > *aylo- > այլ. իսկ* Meillet MSL *8, 237 համարելով թէ *alyo- պիտի տար *աղջ, հայերէնը բաժանում է միւսներից և դնում է հնխ. *ailo- ձևից։ Վերջին անգամ Հիւբշ.* IF *19, հյ. թրգմ. ՀԱ 1907, 251* բոլոր, *նրանք են բառերի համեմատութեամբ պնդում է թէ հնխ.* alyo- *կարող էր տալ հյ.* այլ։ *Հայերէն բառը հին ձեռագրներում դրուած է հաւասարապէս* այլ, այդ, այդ՝ *ձևերով, որոնց մէջ հնագոյնն է* այդ. *այսպէս օր.՝ Կրկնագիր Ագաթանգեղոսի մէջ 30 անգամ գործածուած է* այդ *և ո՛չ մի անգամ* այլ *կամ* այդ՝ *(տե՛ս Աճառ. ՀԱ 1913, էջ 12)։ Կոկորդական (կատակային) լ (ղ)՝ հետևելով յ ձայնին՝ վերածվել է յետոյ լեզուային լ, որով ձևացել է* այլ. *(տե՛ս այս մասին Աճառ. Բազմ. 1897, 170)։—Մեր բառի երկրորդ «բայց, սակայն» նշանակութեան զարգացման համար համմտ. յն.* ἀλλά *«բայց», դոթ.* alja *«բացի»։—Հիւբշ. 417։ Տե՛ս նաև* Pokorny *1, 85—86,* Walde *27,* Boisacq *46,* Ernout-Meillet *34։*

Առաջին մեկնիչն է Schröder, *որ* Thesaur. *19 և 47 յն.* ἄλλος, ἀλλα *ձևերից փոխառութիւն է համարում։ Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 315 ցեղակից է դնում յն.* ἄλλος *և լտ.* alius *բառերին։ Նշ նաև աւելացնում է Թրք.* իլ, էլ *«օտար», արաբ.* իլլա *«հապա»։ Մրմաղաշեան, Արմէնիա 1899, № 64—65 սում.* alt *հոմանիշի հետ, ինչպէս և* այլուր = *ֆրանս.* ailleurs *և ռում.* aiurea։ Bugge, Lyk. Stud. *2, էջ 91 և 98 լիկ.* ala *«ուրիշը» կամ «օտար»։ Սանտալճեան,* L'idiome *16 ուրարտ.* alia։ Karst, *Ծուշարձ. 417 Թրք.* el *«օտար»։* **Այլամոյն** *բառի վրա* Canini *տե՛ս* Մոյն։

ԳԻՒ.—Ագլ. Ակն. Ննխ. Ռ. Սչ. Ցղ. ալ, *Կր. Պլ.* ալ, ա *(Ակն և Պլ. կայ նաև հին ձևով* ար*),*

Շմ. ալ, ml, *Խրբ.* ալ, բլ, *Մկ.* ալ, էլ, *Հճ.* ալ, էլ, ա, *Զթ.* ml, m, *Գոր. Երև. Ղրբ. Համշ. Մրղ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ.* էլ, *Ախց. Ասլ. Սեբ.* ա, *Ալշ. Մշ.* լէ, էլ, *Տիգ.* ml, լէ, *Անտ.* իլի, *սրանցից* ա, m, բլ, լէ *գործածւում են յետադաս և անշեշտ, իսկ միւսները թէ՛ նախադաս և թէ՛ յետադաս։ Նկատելի է որ մեր երկու գրական լեզուների մէջ էլ բառս գործածւում է ալ կամ էլ ձևով (ինչպէս են նաև վար, վէր) և հին ձևը (այլ) վերականգնուած չէ։ Նոր գաւառական ձևեր են էլա «գոնէ», էլի, էլեա «նորէն», էլլբեա «նորէն», էլման «դարձեալ», էլօր «վաղանդ», էլօրութիւն «վաղանդի՝ միւս օրուայ համար», ալի, ալմա, ալուայ, ալուի, ալա, ալի, էվլէմ «նորէն» (միջին հյ. այլուի բառից). մէկէլ, մէկալ «միւս» (հմմտ. մի ալ «միւս» Շապհ. 64, 77). այլազգ «մահմեդական, տաճիկ», այլազգնոց «տաճկական թաղ», այլակերպ, այլևայլէ (ալևալէ) «այլանդակ». Անգօրայի Բրքախօս հայերն էլ ունին այլազգի «մահմետական», այլանդարակ «այլանդակ, տձև» (Բիւրակն 1898, էջ 789)։

Ա.ՅՂԱՆ «արքայիկ, վասալ թագաւոր». նորագիւտ բառ՝ որ գտնում ենք գործածուած յետին մատենագրութեան մէջ մի քանի տեղ ինչպէս՝ Վրդ. պտմ. 156, 158. գրուած նաև էլղան Վրդ. պտմ. 149, ելղան Վահր. ոտ. տպ. Կալկաթա 1832, էջ 158 (իսկ հրտր. Շահն. 235 խան)։

= Թաթար. ايلخان eyl-xān, *ույղուր.* ilqan *հոմանիշից, որ կազմուած է* ايل eyl «*երկիր, ցեղ*» + خان xān «*իշխան*»= *մանչուր.* xan' «*թագաւոր, գերիշխան, տէր*», *մոնղոլ.* xan «*ցեղապետ*», *ասվում է նաև* elxan. *հմմտ. արևել. թրք. և քրդ.* el-bägiə «*ցեղապետ*», *տճկ.* el-bašə «*խաղի մէջ ընտրուած խմբապետ*»։

Ույղիղ մեկնեց նախ Ալիշան, հրտրկ. Վրդ. պտմ.։ Վերջին անգամ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատեն. հտ. Ա, էջ 105։

+Ա.ՅՄ, ի *հլ. «այծ անասունը» (սովորաբար էգի համար է գործածւում) ՍԳր. որ և* այծի, *յոգնակին* այծիք, *սեռ.* այծեաց «*այծ*» *ՍԳր. կոչ. որից* այծեամն *ՍԳր.* այծեմնիկ *(իբր կնոջ յատուկ անուն գործածուած) Գծ. թ. 36, 39.* այծենի «*այծի մորթ*» *Վրք. Հց.* այծեայ «*այծի մազէ*» *Յայտ. ղ. 12.* այծաման *վեցօր. կամ* այծման *Օր. ժդ. 5.* էշայծեամն *Խոր. բ. 81.* այծենական «*այծի մազից շինուած թաղիք*» *Անյ. պորփ.* այծառած *Մամիկ. Մագ.* այծամարդ «*Սատիրոս*» *Խոր. աշխ.* այծեղջիւր *Շիր. Փիլ.* ֆառայծ *(նոր բառ). այստեղ է պատկանում նաև* այծառ *կամ* այծար, ածաղ «*սև կաղամախ*, populus nigrä *(տեղը չէ նշանակած ՆՀՌ. նոյնպէս նաև ՀՌուս. § 36). իբր Բրգմ. յն.* αἴγειρος՝ *համանիշից, կազմուած* αἴξ «*այծ*» *բառից (սխալմամբ այսպէս է ստուգաբանուել յն. բառը, թէև բոլորովին ուրիշ ծագում ունի. տե՛ս* Boisacq, *էջ 20)։*

= Բնիկ հայ բառ. հնխ. aig'- (Pokorny 1, 8 *և 38,* Boisacq *26)։ Հմմտ. յն.* αἴξ, *սեռ.* αἰγός «*այծ*», αἴγειος «*այծեայ, այծենի*», *սանս.* अजा aǰā «*այծ*», aǰá- «*բուծ*», aǰagara «*այծակեր*», aǰina- «*մորթ*», *զնդ.* izaēna *կամ* īzaena- «*մաշկեայ, կաշեղէն*» (*որից* Justi *հետևցնում է հին զնդ.* *iza «*այծ*» *բառը), պրս.* azak «*այծ*», *լիթ.* ožỹs «*բուծ*», ožkà «*այծ*», *հոլ.* ag allaid «*եղջերու*»։ *Հայերէն ձևը ճշտիւ համապատասխանում է յունարէնին. միւսները գրկ են յ ձայնից։ —Հիւբշ. 417։*

Հներից Փիլ. լին. գ. 3 «այծ, առ ի յածել և յարձակել կենդանի ասացեալ, որ է դիմել»։ Ույղիղ մեկնից նախ ՆՀՌ, յետոյ Windisch. *13 և եև* Lagarde, Urgesch. Arm. *735 և* Arm. Stud. *§ 93 ույղիղ մեկնութեան հետ յիշում է նաև եբր.* עֵז 'ēz = *արաբ.* عنز 'anz, *փիւնիկ.* 'az, *ասոր.* ܥܢܙ 'nez «*այծ*»։ *Սագրզեան ՀԱ 1909, 336 սումեր.* ruz «*այծ*»։ Karst, *Յուշարձ. 408 սումեր.* uz «*այծ*»։ *Թիրեաքեան, Արիահայ բռ. 28 զնդ.* azi «*երինջ կամ այծ*» *անստոյգ բառի հետ։* Autran, Sumér. et indo-eur. *44 սումեր.* sigga *բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի ավար.* ծէ «*այծ*»։—*Այծառ բառի կազմութիւնը և նշանակութիւնը որոշում են Ույղուրիկեան և նորայր,*

Մասիս 1880 յունիս 24, յուլ. 4 և օգոստ" 1։

ԳԻՒ.—Ագլ. այծ, Ախց. Ձղ. աձ, Երև. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. էձ, Կր. Սեբ. Սչ. Ննխ. ած, Հճ. աձ, էձ, Ասլ. աձ, ազ. Ալշ. Համշ. էձ, Ոզմ. յէձ, Զթ. Խրբ. մձ.—*Մշ. և Զթ. բառս նշանակում է «այծի էգը՝ սկսած 4-րդ տարեկանից». այսպէս է նաև գրաբարի մէջ. մինչդեռ միւս գաւառականների և գրական լեզուի մէջ ընդհանուր նշանակութիւն ունի.—Գաւառականներում այծ փոխաբերաբար գործածւում է նաև երկիւղի, բարկութեան և քնի համար. ինչ. այծ այծ լինել Ղրբ. «վախենալ», այծերը գալ Երև. Ղրբ. Տփ. «բարկանալ», Ննխ. «քունը տանիլ», այծերը հաւաքել կամ մօտ անել Երև. Տփ. «բարկանալ» են։—Նոր բառեր են այծահաւք, այծամորի, այծուպտուկ, այծերէն կամ այծեվար, այծոտիլ, այծուկ, այծտերև։*

Ա3Ն «ջրի ակունք». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սասն. 59. Այն յորդահոս։

=Եբր. עין 'ain «ակն, աղբիւր». բուն նշանակում է «աչք»։—Ա՛ճ.

+Ա3Ն «էն, նա». գործածւում է զանազան ձևերով ու դարձուածներով. ինչ. այն զի, այն իսկ է, այն ինչ, այնու զի, այնուհետև, այնչափ, այնպէս, այնպիսի, յայնժամ, յայնկոյս, յայնմհետէ, յայն սակս, ցայն վայր, բոլորն էլ հին և ընտիր. յետին են այնհան, այնգոյն, այնգունակ, այնուգունակ։

=Մեկնութիւնը տե՛ս և, եա։—Հիւբշ. 487։ Նախ ԳԴ համեմատեց պրս. ān ձևի հետ։ Մորթման ZOMG 26. 472 պրս. این in «այն», խալդ. inida «յայնմ»։ Ծագման պարզաբանութիւնը տե՛ս Meillet MSL 10, 254 և 19, 52։ Karst, Յուշ. 402 սումեր. an, na ցուցականի հետ։

ԳԻՒ.—Ագլ. Ակն. Պլ. Ռ. Սչ. Ձղ. աե, Հճ. աե, էե, իեօ, Ննխ. աե, իեա, Կր. աե, իեի, Զթ. Շմ. մե, Խրբ. մե, մեի, Մկ. մե, մեիկ, Համշ. էե, իեա, Ալշ. Երև. Ղրբ. Մրղ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. էե, Մշ. էե, ըե, ըեի, իեա, Տիգ. էե, մե, ըեի, ըեիգի, Ոզմ. նաեաե, Ասլ. ա՛։—Նոր ձևեր են աեի, աեիկ, աեիկա, աեիկակ, իեիկ, աեանկ, աեանկուկ, աեանկով, էեէեց, էմաե, էմալ, աեդին են, որոնցից ոմանք մտած են նաև գրական լեզուի մէջ։

⊙Ա3Ո «հա՛, այդպէս է» ՍԳր. Ագաթ. կայ նաև հոլովուած ի հոլովումով. համմտ. եփր. տիտ. 262 այոյնիւե (ձեռ. այոյոյնիւե) և ոչովն. գրուած նաև այոյ, հայո՛, հայոյ Թր. քեր. 33, Համամ. քեր. 275։ Այս բառը ԺԲ դարում արդէն գործածական չէր մեր ժողովրդի մէջ և դրա համար է, որ Մխիթար Գոշ իր Դատաստանագրքում (հրտր. Բաստամեան, էջ 9) հարկ է համարում բացատրել բառը այսպէս. «Այոն այո լիցի և ոչն ոչ. որ է հան՝ հա և ոչն՝ ոչ»։ Աւելի յետոյ նոյնը ունի Երզն. մտթ. էջ 123. «Այլ եղիցի ձեր բան, այո՛ն այո և ոչն ոչ... այսինքն ղհայն հա և զչէն չէ»։

=Բնաձայն բառ է. ըստ այսմ մեզ հետ կապ չունին լատ. ajo, անգլ. ay, yes, ֆրանս. oui, գերմ. ja, ալբան. ai, գնչ. ani, չաղաթ. ﻱﻮ aui, խիվայի բարբառով ﻭﻭ uvva, բաթթար. ﻱﻲ iye, Քրք. ﻫﺎﻱ ﻫﺎﻱ hay hay «անտարակոյս», ափխազ. ay, ayay, տաբաս. av, ay, ևն։ Զարմանալի է որ այսպիսի մի բառ, որ մեր արդի լեզուի ամենասովորական մի ձևն է, գոյութիւն չունէր ո՛չ միայն ընդհանուր հնդեւրոպական նախալեզուի մէջ, այլ և յունարէնում և լատիներէնում։ Պլատոնի խօսակցութեանց մէջ երբ հարց է տրւում «Ասացի՞ր», պատասխանը լինում է «ասացի» կամ «ես եմ» (ատողը) կամ «անշուշտ»։ Այսօր էլ երբ ռուսին հարցնում ենք «տեսա՞ր», պատասխանը լինում է «տեսայ». նշանակում է թէ «այո՛» բառը դեռ այնպէս սովորական իմաստ չունի, ինչպէս մեր մէջ կամ եւրոպական լեզուներում։ Հնդեւրոպական նախալեզուի մէջ «այո՛» բառը չլինելու պատճառով է՝ որ այժմ էլ մի ընդհանուր բառ չկայ լեզուների մէջ. նոյն իսկ ռոմանական լեզուները իրենց մէջ կամ սլաւական լեզուները իրենց մէջ չունեն ընդհանուր մի բառ՝ այս իմաստով։ Այս բոլորը ցոյց է տալիս որ այս գաղափարը ուշ է կազմուած՝ զանազան լեզուների մէջ զանազան միջոցներով (Meillet, Les interférences entre vocabulaires, Paris 1925)։ Այսպիսի միջոցների մէջ հետաքրքրական են օր. Սուշավայի բարբառով կի և պի բառերը՝ որոնք գործածւում են «այո՛» նշանակութեամբ՝ առաջի-

նր սահմանական ներկայ և անկատար հարցականի դէմ. երկրորդը ապառնիի. ինչ. կի բերե՞ս.—կի. Պիտի բերե՞ս.—Պի (տե՛ս իմ Գաւառական բառարան, էջ 569)։

Bugge BVS 1, 153 ալբան. ai, գնչ. ani ձևերի հետ։ Հիմնք. լտ. ajo «ասեմ»։ Յ. Գ. Մ. Պատմ. գրակ. 16 ճապոն. նայի։ Karst, Յուշարձ. 417 թրք. ya «ի հարկէ» և 421 թրք. evvet «այո՛»=հյ. հաւատ։ Պատահական նմանութիւն ունի խպտ. haio «այո»։

*Ա.ՅՊ «պակասութիւն» (նորագիւտ բառ). երկու անգամ ունի Վստկ. 97, 103 «Այնու զգինւոյն այպն իմանան. եւ այս ճշմարտապէս զամենայն՝ այպ ի գինւոյն հանէ»։

=Արար. عيب ʿayb. «ամօթ. 2. թերութիւն. պակասութիւն»։—Ա՛ճ.

Ա.ՅՊՆ «ամօթ, ծաղր» ՍԳր. անհոլով է. սովորաբար գործածւում է ոճերով. ինչ, այպն կատականաց ՍԳր. այպն առնել «ծաղրել» ՍԳր. այպն և կատակ առնել Ոսկ. յհ. ա. 36. բառի բունն է այպան-, որ յետնաբար նաև իբր առանձին բառ գործածուած է մէկ անգամ 3ս. որդի. որից այպանել «ծաղրել» ՍԳր. այպանալից Ոսկ. մ. ա. 9. այպանութիւն Բրեմ. խթ. 16. Ագաթ. այպանումն Խոր. Նար. բուն այպն ձևից ունինք այպնակատակ «միմոս» Ոսկ. յհ. ա. 1. այպնել «ծաղրել» Եփր. աւետ. այպնկատակ լինել «ծաղրել» Բ. մկ. ժ. 34. այպնարարութիւն Լմբ. ամովս.—ԱՒ ունի նաև այպնիլ «զարմանալ»։

ՆՀՒ արար. عيب ʿayb «ամօթ»։

Գիտ.—կարևոր ձև է Արտանուշի էպնել «այպառել, եպերել» (Մշակ 1884, № 25)։

[Ա.ՅՈՒՔ ՊԱՅՓԻՔ. մէկ անգամ գործածուած է Ոսկ. պօղ. ա. 733 «Հանապազ այոիք պայփիք, երգք, արբեցութիւնք»։—ՆՀՒ գնում է իբր յն. τραγῳδία «եղերերգութիւն». ՋՒ, որից և ԱՒ, մեկնում են «ճաթելով պոռալը կամ ուռելը»։ Վարդանեան ՀԱ 1921, 112 ցոյց է տալիս որ հասարակ սխալագրութիւն է՝ փոխանակ գայոիք պայփիք (գայռ բառից), ինչպէս՝ ունին Ոսկեբերանի յիշեալ մեկնութեան երկու լաւագոյն ձեռագրերը։

Ե. Գեանջեցեան ZAPh 1, 48 սանս. irayati «շարժել», յն. ἐλλω «ուղարկել, նետել», հրգ. ilen, illen «շտապել»։]

+Ա.ՅՍ «էս, սա» ՍԳր. ևն. որից այս ա-ևուն, այս ևիշ, այս ինչ, այսինճն է, ըստ այսմ, այսուհետև, յայսմհետէ, այսպէս, յայսկոյս, այսշափ, այսպիսի, այսօր, այսր, այսրէն, ցայսօր, բոլորն էլ հին և ընտիր. յետնաբար այսաճակ ՅՀ. իմ. այսբար Մագ. այսգոյն ՅՀ. իմ. այսգուճակ. Պիտ. այսկերպ. Լաստ. Յայսմ.։

=Մեկնութիւնը տե՛ս Ս, սա։—Հիւբշ. 487։

ԳԻՒ.—Ակն. Ասլ. Պլ. Ռ. Սչ. աս, Ննխ. աս, սա, Կր. աս, իսի, Ախց. աս, իսիկ, Հճ. աս, էս, իսօ, Մշ. էս, ՋԲ. Շմ. ըս, Համշ. իսա (չկայ էս), Տիգ. էս, ըսի, Խրբ. ըս, ըսի, Ալշ. Գոր. Երև. Ղրբ. Մրղ. Ջղ. Սլմ. Տփ. էս, Վն. էսա։ Մոկաց բարբառում ջնջուած է այս բառը։ Հետաքրքրական են Մրղ. էշ ֆիշիր «այս գիշեր», էշ շտպիւ «այս շաբթու», ouor «այսօր»։—Նոր ձևեր են ասի, ասիկ, ասիկակ, ասիկա, ասանկ, ասանկուկ, ասանկով, ասդին, իսիկ, էսէնց, ըսէնց, էսմալ, էսմլա, էսման, ըստի «այսպէս», էստի «այստեղ», աստի կամ ըսկնայ. «այսպէս», ասպէսնակ են, որոնցից ոմանք անցել են նաև գրականին։ Կրճատ ձևեր են Ջղ. ըսօր, սօր, Ղրբ. սօր, սօրի «այսօր»։

Ա.ՅՍ, ո հլ. (Իրեն. էջ 9 ու հլ.) «քամի, փչուն» Սղ. ժ. 7. Եզն. փոխաբերաբար «այս չար, դև, սատանայ» ՍԳր. Եզն. որից այսաճար ՍԳր. այսաճարիլ ՍԳր, Ագաթ. Եւս. պտմ. այսակիր ՍԳր. այսամուտ Բուզ. այսոտ Խոսր. պտրգ. Կնիք հաւ. 174. այսաճալածել «սատանան քշել». Ուխտ. բ. 19—20 (նորագիւտ բառ), այսայարան «թատրոն» (իբր դիւաց հանդիսարան) Կիւրղ. ի կոյսն։ Այս բոլորի մէջ այս բառը «դև» իմաստն ունի։ Շատ հազուագիւտ է այս «քամի», որ մէկ անգամ գործածուած է Սղ. ժ. 7 (Այս մրրիկ բաժին բաժակի նոցա = յն. πνεῦμα καταιγίδος ἡ μερὶς τοῦ ποτηρίου αὐτῶν). և ինչպէս Եզնիկն է ցոյց տալիս, ե դարուն Հիւսիսային Հայաստանի մէջ մարած մի ձև էր և գործածւում էր միայն Հայաստանի հարաւային գաւառներում՝ «Յորժամ մեք (կողբացիք և այլ հիւսիսային Հայք) ասեմք թէ սիք շնչէ, ստորնեայք (այն է՝ հարաւային Հայք) ասեն՝ այս շնչէ» (տե՛ս մեր Քննութ. Եզնկայ նորա-

դիւտ ձեռագրին, էջ 74—75)։ երկու նշանակութեանց զարգացման համար համմտ. յն. πνεῦμα «շունչ և հոգի», լտ. spiritus «շունչ» =ֆրանս. esprit «ոգի, հոգի», հյ. ոգի ևն՝ կրկին առումներով։

ՆՀԲ, որից և Հիւնք. լծ. թրք. اسمك esmek «փչել, շնչել քամուց» և պրս. sāya «ոգի, հոգի» (բուն «ստուեր»)։ եզնիկի մէջ սուրբեայք բառը նախապէս սխալմամբ սուրբեայք կարդացուած լինելով՝ կարծուում էր թէ այս «ոգի» ատրերէնից փոխառեալ բառ է։ Այս կարծիքի համեմատ Տէրվիշեան, Մասիս 1882 դեկտ. 16 համարում է սեմական փոխառութիւն։ Ալիշան, Հին հաւ. 213, 216 հնդ. ասուրա, պնդ. աճուրա: Canini, Et. étym. 94 հնդ. ahura, ասուր. Asur բառերի հետ։ Schrijnen BSL 95, 63 համարում է փոխառեալ նախահնդեվրոպական համաեւրոպական ais «Աստուած, նուիրական բան, ղոհ» բառից, որ Իտալիայում յատկապէս շատ ներկայացուցիչներ ունի։ Նոյնը կրկնում է Meillet BSL 33, № 100, էջ 173, որ հյ. այս կցում է հարուսկ. ais «Աստուածծ» բառի, որի նշանակութիւնը շատ հաստատ է և որ չի գտնվում իտալական լեզուների մէջ։ Հյ. այս բառի մէջ ս չի կարող յառաջացած լինել հնխ. s-ից. բառը անշուշտ միջերկրեան փոխառութիւն է։ (Պէտք է նկատել սակայն, որ այս բառի նախնական նշանակութիւնն է «փչիւն», և «դև» իմաստը յետոյ է առաջացած)։

ԳԻՒՐ.—Ունինք սեղանայս վն. (որ և սեղանակ) «պատուհանող ուժեղ քամի, որից աւելի ուժեղը փոթորիկ է կոչւում»։

+ԱՅՏ «թուշ» (գործածուած մանաւանդ յոգնակի) երգ. դ. 3, ղ. 6, Ոսկ. մ. բ. 5, որից կարմրայտ Ցւս. քր. բուն և նախնական նշանակութիւնն է «ուռեցք», բայց այս իմաստով առանձին գործածական չէ, այլ կայ միայն բայական ձևերով. ինչ. այտնուլ (այտեայ) «ուռիլ» Գծ. իր. 6. այտումն Ցս. ա. 6. Ոսկ. Ագաթ. այտոյց «ուռեցք» Ոսկ. Փիլ. ժբ. այտչիլ Մխ. բժշ. այտուցանել «ուռեցնել» Ջքր. ծործ. այտուցումն Նար. այտուցախտ (նոր բառ).—իսկ Պարակ. շար. 49 սրօքն այտեալ և կոշկոճեալ, կարդա՛ ըստ իս ցտեալ։

=Հնխ. oid «ուռչիլ» արմատից. հմմտ. յն. οἰδέω «այտնում», οἴδημα «այտուց», οἰδός «ուռեցք», հսլ. jadra «ծոց, ստինք», հբգ. eiz «պալար», նորվ. eitel «գեղձ», հիսլ. óil «այտ, թուշ». Meillet MSL 8, 153 սրանց է կցում նաև լտ. aemidus «ուռած», որի համեմատութեամբ հետևցնում է թէ հայերէնի մէջ այ- ներկայացնում է ai.—այս մասին տե՛ս BB 5, 273։—Հիւրշ. 418։

Այտ «թուշ»=այտնուլ բառից դրաւ նախ ՀՀԲ։—ՆՀԲ այտնուլ և յայտ բառերից։ Ուղիղ են նաև Lagarde, Arm. Stud. § 97, Տէրվ. Նախալ. 66, Հիւրշ. Arm. Stud. 19. իսկ Հիւնք. յետոյ և ետնա (հրաբուխը) բառերից։—Այտնում բառը ուղիղ մեկնեց նախ Lagarde, Arm. Stud. § 97. Հիւնք. այտ-ից։ Պատահական նմանութիւն ունի արաբ. خد ḫaid «մարմինը հարուածից ուռչիլ» (Կամուս, թրք. Թրգմ. բ. 466)։ Այտ «թուշ» և այտնուլ «ուռչիլ» բառերի կապը հաստատելու համար Scheftelowitz KZ 53 (1925), 251 յիշում է հոլլ. koon «այտ» =հիսլ. kaun «ուռուցք»։ Համեմատութիւնները տե՛ս Pokorny 1, 166, Boisacq 68, Berneker 271, Walde 15, Ernout-Meillet 16, Kluge 115 (գերմ. Eiter, հրգ. eitar, գերմ. *aitra, հոլլ. etter, անգսք. attor, անգլ. atter, սանս. eitr բառերի հետ, որոնք բոլոր նշանակում են «ուռեցքի կամ պալարի մէջի թարախը»)։

+ԱՅՐ (հոլովւում է առն, յառնէ, արամբ, արf, արանց, արամբf) «արու մարդ» ՍԳր. «2. ամուսին, էրիկը» ՍԳր. «3. արի, քաջ, կտրիճ» Ա Թագ. դ. 9. Բ. մկ. է. 34. զանազան դարձուածներով ունինք՝ արանց fաջ կամ fաջ արանց «թագաւոր» ՍԳր. Ագաթ. վատ արանց «հնամարդի, թոլլ» ՍԳր. առն տալ, արանց լինել «ամուսնանալ» ՍԳր. այր այր, այր առ այր, այր զբնկեր, այր ըստ առնէ, այր զարամբ «իրարու» ՍԳր. ածանցման մէջ մտնում է երեք ձևով. 1. առն- որ հների ամենասովորական ձևն է. գտնւում է միայն

բարդերի և ածանցների սկիզբը. ինչ. առնակին *«ամուսնացած կին» ՍԳր. Ոսկ.* առնակնութիւն *Սեբեր.* առնաբար *«արիաբար» Ագաթ.* առնազէն *«կռուող մարդու զէնք» Ագաթ.* առնութիւն *«արիութիւն» Ոսկ. Եբր. Ագաթ.* առնի *«արական, էրիկ, մարդու» Եւս. քր. «արական անդամ» Բուզ.* առնացի *Օր. իբ. 5 ևն. տարօրինակ կերպով յետագաս է* սիրառն *«հոմանի» (նորագիւտ և յետին բառ) Փոնց. 34, 36, 127, 168, 194.—2.* այր. *ընտիր մատենագրութեան մէջ քիչ անգամ գործածուած է. եղած բացառիկ օրինակներն են* այրասէր *«ամուսնուն սիրող» Տիտ. բ. 4.* այրասիրութիւն *Ոսկ. տիտ.* այրենի *Ա. մկ. դ. 28. Ագաթ. կամ* այրուձի *ՍԳր.* այրընտիր *Կոչ. այս ձևով պիտի լինէր սակայն բարդութեանց երկրորդ մասը, ինչպէս ցոյց են տալիս՝* սկեսրայր *ՍԳր. (նոյն իսկ հոլովուած* սկեսրայրի ! *Ա. թագ. դ. 21),* աներայր *Ա. կոր. է. 11. պատահաբար միայն աւանդուած չէ* հնոայր *խոր. յետինների մօտ բառի թէ՛ սկիզբը և թէ՛ վերջը սովորական է դարձած. ինչ.* այրաեմաճ *Փարպ.* այրասիրտ *խոր.* այրասպան *Պիտ. Փիլ.* այրաբող *կանոն.* այրիկ *Բր. քեր. կամ* այրուկ *ճառընտ.* բազմայր *Արշ. Փիլ.* բազմայրութիւն *Լմբ. առակ.* իշայր *«արու վայրի էշ» Վանակ. յոբ.* կիսայր *նիւս. բն Սանահն.* խօսնայր *Մխ. դտ. Վանակ.—3. ար—, որ երևում է բառերի սկիզբը միայն. այսպէս՝ ու մասնիկով՝* արու *«որձ» ՍԳր. որից* արուաբար *կիւրղ. Թգ.* արուագէտ *ՍԳր.* արուական *«արականն» Սգր. Եզն.* արուանալ *«արիանալ» Փիլ. Լաստ.* արուբիւն *(կամ* արուրիւն*) «արական բնութիւն» Եզն. «քաջութիւն» ՍԳր. Ագաթ. Կոր. «արբունք» Ոսկ. ես. «առնանդամք» Եւս. պտմ. 158 (հմմտ. ՀԱ 1914, 123). «սերմն առն» ՍԳր. Եզն. -ուր մասնիկով (հմմտ. աղու-ուր)* արուրագոյն *«աւելի քաջ» Պիտ. Նար. առաք. 432, Թր. քեր. 15 (իբր յն. ἀνδρειότερος): 3՛. կբ. -ի մասնիկով* արի *«քաջ», որ գործածւում է յետնաբար. հներից ունինք միայն* Արիւն Արամազդ *Ագաթ. (քանիցս), որից* արիաբար *խոր. Պիտ.* արիական *Ոսկ. յհ. բ. 8.* արիաճալ *Պիտ. Նար.* արեացի *«կորիճ» Փարպ.* աների *«քաջ» Լամբրո» Եղիշ. Պիտ.* վատարի *Պտմ. վր.* անարաճց *«կոյս մնացած» (որ չէ եղած առանց) Ագաթ.* արական *Փիլ.* արամբի *Ես. ծդ. 1. Կոչ.* արանցի *«առնական» Մանդ.* արանի *(արականք» Ուռհ.:*

= *Բնիկ հայ բառ է, բայց բացատրութիւնը շփոթ է. մի կողմից կայ գնդ.* arša *«այր, արական (հյց.* aršānəm, *սեռ.* aršnō, *յգ. սեռ.* aršnąm*), յն. ἄρσην, ἄρρην (սեռ. ἄρρενος), լակ.* eirṣṇ, *յոն.* ἔρσην (ἐρσήν*) «այրուկ, այրական», սանս.* ṛšabhá- *«ցուլ». — իսկ միւս կողմից կայ յն. ἀνήρ, ἀν(δ)ρός «այր»: Հիւբշ. 418 առաջիններին կողմն է և գնում է հյ. առն=գնդ.* aršnō*<հնխ.* ṛsnós*, ուղղականը սեռականի նման *առն<հնխ.* ṛsen *(համմտ. գառն=յն.* ἠρήν*), յգ. ուղ. *արիներ. իսկ այր, արբ՝ արիշ բանից ձևացած: Bugge, Etrusk. u. Armen. էջ 53 առաջարկում է այր=ἀνήρ. Meillet MSL 9, 151 և 11, 18 ծան. ընդունելով որ հնխ. s՝ հայերէնում r ձայնից յետոյ տալիս է շ (օր՝ գարշիլ, քարշել), մերժում է Հիւբշմանի համեմատութիւնները և ըստ* Bugge՝ *գնում է այր=ἀνήρ, սեռ. առն<հնխ.* anr$^{e}/_{o}$s *(յն. ἀνδρός), ուր. առն<հնխ.* anrai, anri, *պրծ. արամբ, սեռ. ար. արանց կազմուած նմանութեամբ գառն բառի. յգ. հյց.* arṣu*<*anrṇs, յգ. ուղ. արբ շինուած սրանից:*

ԱՅՐ *«մարդ» դաղափարի համար կար երկու բառ, հնխ.* wiro- *և* ner-. *առաջինը սովորական անունն էր, երկրորդը՝ իր առնական յատկութիւնները ցոյց տալու համար: Առաջինից ունինք լտ.* vir, *իռլ.* fer, *գալլ.* gwr, *գոթ.* wair, *լիթ.* vy´ros, *սանս.* vīrá-, *(կորած է հայերէնում, ուր պիտի տար *գիր), երկրորդից՝ սանս.* nár-, *զնդ.* nar-, *յն. ἀνήρ, ἀνδρός, այրան.* n´er, *լտ.* Nero *իբր յատուկ անուն, օսկ.* niir, *լտ.* neriosus *«ուժեղ», իռլ.* nert, *գալլ.* nerth *«ուժ, առնականութիւն» (*Ernout-Meillet *635,* Pokorny *2, 332,* Boisacq *62,* Walde *517*):*

Հներից Տաթև. ամ. 54 այրն պատկեր թարգմանի (բայց յայտնի չէ թէ ի՛նչ լեզուով է այս աստգաբանութիւնը): Աւետիքեան, Բերակ. 1815, էջ 315 ցեղակից ածկ. եր և յն. ἀνήρ: Ն՛ՀՐ այր յծ. յն. ἀνήρ, լտ. vir, արի=*յծ. այր, արու, առաքինի, յառնել, արի՛, թրք.*

er, erkeg, յն. Արէս չաստուածը և ա՛րի, ա՛րիպօս «լաւ, քաջ»: Rask, Nonnulla 25 կցում է թրք. ار er բառին: Klaproth, Asia pol. 103 թրք. er և գերմ. er «նա»: Peterm. 33 այր= թրք. er, գոթ. vair, լտ. vir, սանս. vīra, էջ 146 սանս. nr: Diefenbach, Berl. Jahrb. 1843, 447 յն. ἄρρην = առն: Gosche 46 սանս. vīra=այր, իսկ էջ 73, ծան. 221 մերժում է յն. ἄρρην և սկիւթ. aior: Lag. Urgesch. Arm. 196, 197 այր և արի հաւասրակաց ar արմատից? Müller SWAW 41, 9 այր =գնդ. airya: Dulaurier JAs. 16 (1870), էջ 189 այր=սանս. arya: Մորթմանն ZDMG 24, 80 այր=թրք. er. Նոյն՝ ZDMG 26, 526 խալդեան arna «այր մարդ: Նոյնը տե՛ս նաև Մասիս 1872 փետր. 1 և Մայիս 1872, էջ 40: Bopp, Gram. comp. II 37 այր=յն. ἀνήρ, սանս. nar, nr: Տէրվ. Altarm. 85 և Նախալ. 65 արու=յն. ἄ'ρρην, ἄρσην, գնդ. aršan, իսկ Նախալ. էջ 165 և Մասիս 1881 մայ'' 11 այր=լտ. vir, հնխ. vira: Bugge, Etrusk. u. Arm. 49 համառակ. arnϑ «մարդ», էջ 51 համառակ. larϑ = լավ առն, էջ 52 համառակ. lar=լար այր:— Հիւնք. այր=պրս! er, արու<արևից, իսկ արի<արև կամ այր բառից: Bugge, Lyk. Stud. 1, 64 լիւկ. arus, arñna բառերի հետ, իսկ 2, 113 լիւկ. er «այր»: Jensen, Hitt. u. Arm. էջ 95 այր= հաթ. r, aro «այր», 98 արի=հաթ. ario «քաջ, արի»: Գնանջեցեան ZAPh 1, 46 ըստ ՆՀԲ, արի՝ որ է առնիմ, յառնիմ բայից: Մէնէվիշեան, Արդի լեզ. 59 այր=մոնղոլ. eri և հունգ. férj, emb-er «այր»: Շէֆթէլովից BB 29, 25 հնխ. satēr ձևից, որ է լտ. sator «սերմանող», որա իգականն է սանս. strī «կին». իմաստի զարգացման համար համմտ. սանս. vṛṣa «սերմանող, այր»: Սագըզեան ՀՄ 1909, 333 սումեր. eri «մարդ», uru «արու»: Karst Յուշարձ. 403 սումեր. eri «մարդ» և 423 թրք. er, չուվաշ. ar «մարդ» են: Մառ. Яфетическ. Кавказ, էջ 53 և Текст. и Раз. VI, Физіолог 1904 XXXV վրաց. երի «ապտ», ափխազ. ar «զօրք» են:—Արի. Արիք «Արիացիք, իրանեանները» և արի «քաջ» բառերը միևնոյն կարծելով՝ արիական ցեղանուան հետ կապել և սանս. ari, ārya «ազնիւ, ընտիր», լատ*, գնդ. airya «Արիք» են բառերի հետ միացրել են E. Boré JAs. 1841, 658, Pictet BVS 1, 91, Justi, Zendsp. 2, S. de sacy, Mémoires sur diverses antiquités de la Perse, էջ 60, 69, 111, 181, 247: Տէրվ. Altarm. 85, Kretschmer, Einleitung 129 են: Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ, որ ընդունում են նաև Հիւբշ. Arm. Stud. էջ 11, Arm. Gram. 26 և Meillet, Dial. ind-eur. էջ 24:—Գազանճեան, Յուշ. 325 հայերէնից փոխառեալ է համարում թրք. er «այր, այր մարդ», كرك erkeg «արու». Նմանապէս Patrubány, Spr. Abhnd. 1, 4 հայերէնից փոխառեալ է գնում magyar «մաճառ, հունգարացի» բառի վերջին մասը իբր magyar <*mogyeri =mogy, վոգ. manši (Egyetemes Philologiai Közlöny 1883, VIII 953)+ eri, որ է հլ. այր: Տարակոյս չկայ, որ այս բառերը, ինչպէս նաև թրք. كرك erkeǰ «արտ ալծ», չագաթայ. ایر ir «մարդ, ամուսին, ազատ մարդ», ایران īrān «մարդ, այր», ایركاك īrkāk «արու» և նմաններ բոլորովին պատահական նմանութիւն ունին մեր բառերի հետ:

Գիւտ.—Արմատական ձևով չկայ. ունինք միայն խրբ. mrիզ, կր. Ախց. Ոզմ. էրիկ, Ակն. Զթ. Համշ. Նախ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. էրիգ, Մկ. Վն. իրիկ, Մրղ. Սլմ. իրիկ, Սլշ. Մշ. իրիգ, Ասլ. էրիյ, բոլորն էլ «ամուսին» նշանակութեամբ. ներկայացնում են մհյ. այրիկ «ամուսին» Անսիզք 19, 21, Մխ. դատ. 97 ծան: Կրճատ ձևով են Նախ. էրիմարբ, Ակն. էրմարբ:—Նոր բառեր են առնաճիք, առնեճիք, առնաճ, առնաճաճ «ամուսնու կողմի ազգականները կնոջ համար», էրկնաչ «արամբիծ», տալար «տալոջ այրը» (իմա՛ տալայր):

ԱՅՐ, ի հլ. «քարայր, մաղարա. 2. աւերակ տեղեր» ՍԳր. Ոսկ. մտթ. բից farayr Ոսկ.

մ. ա. 5. Ուրբաթայրք *(տեղական յատուկ անուն) խոր. պատ. հոիփս.:*

Klaproth, Asia pol. *101 արաբ.* غار ġār *«քարայր»:* Peterm. *146 և* Müller WZKM *10, 351 և* SWAW *88 (1877) էջ 16 լտ.* antrum *«քարայր»: Հիւնք.* այր *«մարդ» բառից:* Patrubány *ՀԱ. 1903, 380 հնխ.* ei *«երթալ» արմատից:*

ԳԻՒ.—Ալլ. երև. Մշ. էր, Մկ. Ոզմ. Սլմ. Վն. ճէր, *Հճ.* fmյօյ *«քարայր»:*

ՓՈՒ.—Կապադովկ. ըն. Καρκέθης, Γλωσσ. συγκρ. ἑλληνοκαπ. *λ. 88):*

*Ա.ՅՐԱ.Ս *կամ* Ա.ՅՐԱ.ՍՍ *«կապույտ շուշան» բժշ. ունի միայն ՀՔուս. § 3277 և § 2358:*

=*Արաբ.* ايرس ayras *հոմանիշից. այս բառը գոյութիւն չունի կամուսում, բայց անշուշտ կար արաբների բժշկական լեզուի մէջ, իբրև տառադարձութիւն յն.* ἶρις, *լտ.* iris *«մի տեսակ շուշան» բառի: Արաբերէնում բառասկզբի* i *պիտի գրուէր* إ *որ սակայն կարելի է կարդալ նաև* ay. *այսպէս է յառաջացել մեր այրաս ձևը՝ փխ. յն.* ἶρις, *որ և միմիայն արաբերէնի միջնորդութեամբ կարող է մեկնութիւն ստանալ:*

Ուղիղ մեկնեց ՀՔուս:

+Ա.ՅՐԵԼ *«վառել», որից* այրոցել *(չունի ՆՀԲ) «այրել». «Իբրև ղջահ ի մէջ փայտից դիզալից և այրոցեն յաջ և զահեակ իւրեանց» (Լծ. կոչ. 108): ՍԳր. նաև փոխաբերաբար, ինչ. սիրտը այրել, մորմոքեցնել, գլուխը տաքացնել. «Գինին իսկ անդէն զնոսին այրէ» Ես. ե. 11: Աճանցման մէջ մտնում է չորս ձևով. 1.* այր. *ինչ.* այրելի *Ագաթ. Ոսկ. Եփես. ՍԳր.* այրիչ *Վեցօր. Եղն.* այրումն *ՍԳր. Ագաթ.* այրուք *Վստկ. Եփես. ՍԳր.* այրեալ *Ոսկ. Եփես.* դիւրայրելի *Բրս. մախ. Սարգ. 2.* այրեաց, *որ իբր առանձին բառ էլ է գործածւում՝ «վառումն» նշանակութեամբ.* յայրեաց տալ *Կոչ.* յայրեաց և յաւեր դարձուցանել *Բուզ. բարդութեանց վերջում սովորական ձև է. ինչ.* կիսայրեաց *Ոսկ. ես.* հրայրեաց *ՍԳր. 3.* այրեց-, *որ յառաջանում է նախորդից՝ բառասկզբում և բառամիջում (անշեշտ լինելու դէպքում). ինչ.* այրեցած *ՍԳր. Ագաթ. Բուզ.* այրեցեալ *ՍԳր.* այրեցուած *Վեցօր.* անայրեցող *Ծագր.* հրայրեցութիւն *Մանգ. Սահմ. 4.* այրաց-, *որից առնինք միայն* այրացաւեր առնել *Բուզ. որ ուրիշներ* այրեացաւեր *են գրում:—Նոյն արմատից գ սաստկականով կազմուած է* գայրանալ՝ *որ նախապէս նշանակում էր «տաքանալ, բորբոքիլ». այս կորած իմաստը պահում է դեռ գրեթէ Ովս. է. 5. Սկսան իշխանք գայրանալ ի գինւոյ «գինուց գլուխները տաքացաւ». փոխաբերաբար՝* գայրանալ *նշանակում է «սաստիկ բարկանալ, կատաղիլ» (իբր կրակ կտրիլ). 2. «սիրտը մորմոքիլ» ՍԳր. 3. «գօրանալ՝ սաստկանալ (ցաւը)» ՍԳր. աճանցման մէջ մտնում է միայն երկու ձևով.—1.* գայր-. *ինչ.* գայրագին *ՍԳր.* գայրագնիլ *ՍԳր.* գայրագնացուցանել *Ագաթ.* գայրանք *Ոսկ. ա. թես.* գայրումն «գայրոյթ» *Ոսկ. Գաղ. յհ. ա. 3.* գարնանագայր «գարնան ջրերից վարարած» *նար.—2.* գայրաց-, *ինչ.* գայրացկոտ *Վրդն. ազ. Վրք. հց.* գայրացութիւն *Դ. թագ. իդ. 26.* գայրացուք «ցաւի սաստկութիւն» *Սերբ.* գայրացաբար *(նորագիւտ բառ) «բարկութեամբ» Հայել. 332:*

=*Քնիկ հայ բառ. պարզ արմատն է* *այր «կրակ», *որ յետոյ նուր բառի մրցութեամբ կորած է.* *այր=*հնխ. ուղ.* āter. *համմտ. զնդ.* ātar, *ուղ.* ātarš, *պհլ.* ātur, *փարս.* āthaš, ādār, *պրս.* آذر āδar *կամ* آتش ātaš, *գազա* adər, *քիլուճ.* ās, *աֆղան.* ōr, *օսս.* art·. *տե՛ս* Pokorny *1, 42,* Walde *67,* Ernout-Meillet *80: Իրանեան բառերը փոխառութեամբ անցել են նաև հայերէնի. ինչ.* ատր, ատրագոյն, ապաշ, *որոնք տե՛ս առանձին: Միևնոյն հնդեւրոպական ընտանիքին են պատկանում նաև սանս.* âtharvan *«քահանայ (նախապէս հրապաշտութեան)», լտ.* āter *«մուխ, սև» (այսինքն այրած),* atramentum *«թանաք» (որ նախապէս միայն սև էր լինում), իռլ.* āith *«փուռ», ուկր.* vatra *«կրակ, վառարան», սերբ.* vătra, *«կրակ», լեհ.* watra *«յարդի մոխիր»:—Հիւրշ. 418:*

Ուղիղ մեկնեց նախ Lagarde, Urg. Arm. *804: Էմին, Հայոց հեթ. կրօնը, Թրգմ. Յոյս 1875, էջ 347 և* Истор. Асохика *276 նախնական ձևը դնում է* երե՝ *որ մնացել է բարբառներում. իր արմատն ունին* երկիճ, երկիր, արեգ, երդ, ор, երաւ: Müller SWAW *88 (1877), էջ 16*

դնդ. ātar *ձևի հետ՝* Canini, Et. étim. *26 յն.* ἀηρ՝ *Պասմաճեան, Պատկեր 1892, բ. 10 եարուսկ.* erus «արև»=*հյ.* այրել, այրուցք: *Տէրվ. Նախալ. 66 չի ընդունում կապել* աur *բառի հետ, այլ սանս.* idh, *յն.* αἴθω «վառել», *լտ.* aestas «ամառ», *հբգ.* eid «խարոյկ», *իբր* *այդրել՝ *ր մասնիկով:* Καρολίδης, Γλωσσ. συγκρ. ἑλλενοκαππ. *λέξ. 67. յն.* εὖω «խորովել», αὔω «այրել», εὖρος «արեւելեան—հր.—արեւելեան քամին» *և մանաւանդ կապադովկ. յն.* αἴρέτζ «գերեզմանատուն» *(մեռելները այրելու սովորութիւնից): Հիւնք. այր «մարդ» բառից: Թէրեաքեան, Պատկեր աշխ. գր. 193 պրս.* آبار aōar, ապր *ձև:* Karst, *Յուշարձ. 400 ասուր.* irrur «այրել»:

Ձայրանալ *բառը ՆՀՌ մեկնում է* սայր, ծայր *բառերից, Մորթման* ZDMG *26, 595 խալդ.* zairbiti, *էմին,* Истор. Асохика *242* այր «մարդ» *բառից: Հիւնք. 14, 289* սայրանալ *բայից, յայտնապէս մերժելով* այրել *բառի հետ կապակցութիւնը: Ուղիղ մեկնեցին Տէրվ. Լեզու էջ 74 և Հիւբշ.* Arm. Stud. *էջ 12:*

ԳԻՒ.—Խրբ. mrḥl, *Մշ. Սլմ. Սչ.* էրել, *Ախց. Սրև. Կր. Մրղ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* էրէլ, *Ասլ.* էրէլ, *Հմշ.* էրուշ, *Գոր. ՋԹ. Ղրբ. Տփ. Ճղ.* էրիլ, *Ալշ.* իրել, *Ագլ. Մշ. Ոզմ.* իրիլ, *Մշ. Վն.* իրիցել, *Մկ.* իրիցիլ *(միջին հյ.* այրոցել *ձևից, որ ունի ԱՒ), Ջղ.* յերել, *Հւր.* յէրել, *Շմ.* յէրիլ, *Ակն.* յէրիլ, էրիլ, *Հճ.* էյել. *իսկ Տիգ. կրաւորաձև* էրվիլ, *որ գործածւում է ՔՀ՝ ներգործականի և ՔՀ՝ կրաւորականի համար. օր.* յէս էն բուխքը մրճ էրվիմ «*ես այն թուղթը պիտի այրեմ»: Հետաքրքրական ձև է Ջղ.* իլերիֆ «վառելափայտ» *(իմա՛* այրելիֆ*): Նոր բառեր են* այրածաճուռ, այրածֆ, այրան «կծու», այրիչֆ, այրոտել, այրոցֆ, այրուկ:—*Ջղ.* իլերֆանոց «փայտանոց» *իմա՛* այրելիֆ-անոց:

Ա3ՐԻ *(տոյ, նաց) «ամուսինը մեռած կին» ՍԳր. մէկ անգամ իբր «կինը մեռած մարդ» Սէփր. ա. կոր: Որից* այրենոց «այրիների ապաստարան» *Բուզ.* այրութիւն *ՍԳր. Ոսկ. որ և յետնաբար* այրիութիւն *Սարգ. յկ.* այրանալ *ԱՒ կամ* այրիլ *Լմբ. սղ. իբր «այրիանալ»:*

Աւետիքեան, Մեկն. Թղ. պօղ. Գ. 488 «ի հայումս այրի առացաւ, իբրև պակասեալ յառնէ. բայց ըստ կրիցն ևս արդարև այրի՛ և առչորի յաղէտից առնն մեռելոյ»: ՆՀՌ Թուխ այր *բառից: Էմին, Քերակ. էջ 51* այր *բառից՝ ի մասնիկով, ինչպէս* բերի՛: *Տէրվ. Նախալ. 165 հնխ.* vidhavā «այրի» *(լտ.* vidua, *գերմ.* witwe, *սանս.* vidhávā, *զնդ.* viδavā, *գոթ.* widuwō, *կիմր.* gweddw, *հպրուս.* widdewū, *հալ.* vĭdova *ևն) բառից, իբր* dh>p *ձայնափոխութեամբ՝ անցնելով* *աւիդեա ձևից: Հիւնք. յն.* ἔρημος «լքեալ» *բառից:* Patrubány SA *1, 192* այրիլ *բայից: Պատահական նմանութիւն ունի հբր.* עֲרִירִי ʿarīrī «միայնակ, անզաւակ»:

ԳԻՒ.—Առանձին գոյութիւն չունի, այլ պահուած է որբաւոր *բարդի մէջ՝ որ սակայն պարզապէս նշանակում է «այրի(կին)»: Այսպէս՝ Ախց. Ակն. կր. Պլ.* օրփէվարի, *Ալշ.* օրպէվէրի, *Սչ.* օրբ'օվարի, *Սրև.* օրփրվէ'րի, վօրփրվէ'րի, *Հմշ.* օրփրվէրի *(ճօ՛շարա գիւղում* օրբվէրի*), Ասլ.* էօրփրվարի, *Ագլ.* ըրբրվմ՛րի, *Գոր. Ղրբ.* ըրփրվէ'րի, *Մշ.* օրբ'էվէրի, *Շմ. Ռ.* վօրփէվարի, *Խրբ.* վօրփրվարի, *Ջղ.* վորբ'ավէրի, *Սլմ.* վորփրվէրի, *Տփ.* վուրփէվէրի, *Ոզմ.* ըուիրվէրէ, *Վն.* վոռպէօվէրի, *Մկ.* վօռպմվմրը՛, *Ննխ.* օրֆարի, օֆարի *(հինը* էրփէվարի*):—Սրանցից աւելի հետաքրքրական է ՋԹ.* էրիգր'ը՛ղ *«այրի-կնիկ», որ վերածուել է մէկ բառի, իսկ Տիգ. դարձել է ժողովրդական ստուգաբանութեամբ* էրիգգնիգ *«այրի կին», իբր ՔՀ այրի կինը ընտանիքում ՔՀ՝ էրիկ է և ՔՀ՝ կնիկ:*

+ Ա33 *(անհոլով). առանձին դրեթէ անդործածական. դոնւում է սովորաբար ոճերի մէջ՝ «այցելութիւն, տեսութիւն. 2. քննութիւն. 3. խնամատարութիւն. 4. վրիժառութիւն» նշանակութիւններով. ինչ.* այց առնել *ՍԳր.* այց լինել *Բ. մակ. ժբ. 46.* այդ և խնդիր լինել *Ագաթ.* յայց ելանել *ՍԳր. Ագաթ. որից* այցելու *ՍԳր.* այցելութիւն *ՍԳր.* այցել *Ոսկ. մ. բ. 27. յետնաբար* յայցել *Եղիշ. գաւտ.* այցելել *ՅՀ. կթ.* այցելականութիւն *ՅՀ. կթ.* ացյառնութիւն «այցելութիւն» *(նորագիւտ բառ) Պտմ. լմբ. յունարէնից թարգմանաբար գործածւում է նաև* այցելու «եպիսկոպոս» *և այ-*

գելութիւն «եպիսկոպոսութիւն» իմաստով։ Նոր բառեր են այցեստուս, այցեքարտ, այցելագիր են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ais-sk'hą ձևից. համմա. հրգ. eisca «հարցուփորձ», eiscōn, heiscōn «հարցնել, քննել, խուզարկել», անգսք. āsce «քննութիւն», անգլ. ask «հարցնել», նրգ. heischen. «խնդրել, պահանջել», լիթ. jĕszkóti, հալ. iskati, ռուս. искать «փնտռել», սանս. ईक्षति iччhā «փափագ, ցանկութիւն», iччhati «փնտռել, փափագիլ, ըղձալ», գնդ. isaiti «փափագիլ», aeša «փափագ», լտ. aerusco «խնդրել» (տե՛ս Walde 17, Kluge 211, Berneker 1, 433)։ Յն. ἵμ-ερος «մեծ փափագ, ցանկութիւն» (համմա. սանս. iṣmá- «սիրոյ ատաուածը»), ἱμείρω «փափագիլ, ատնչալ» (Pokorny 1, 12, Boisacq 375, Ernout-Meillet 18, Trautmann 67)։ Նշանակութեանց շարքն է ուրեմն «փնտռել, խնդրել, քննել, նայիլ, հոգ տանիլ, այցելել»։ Հակառակ Հիւբշմանի կարծիքին՝ նոյն է նաև ճայցել, ինչպէս որ ունինք արդէն կեանս այցել «կեանք խնդրել» կրկնագիր Ագաթանգեղոսի մէջ՝ էջ 28 բ (որ ՀԱ. 1913, էջ 16—17 սրբագրել եմ այնել, քանի որ տպագիրն առնել, բայց Վարդանեան ՀԱ. 1913, 294 կցում է ճայցել բառին՝ դնելով ? ընկած) և այցել «խնդրել» Իսախ. «Մի՛ խընդրեսցէ զնա. յայտ է թէ մի՛ այցեսցէ». համմա. մանաւանդ այց և խնդիր լինել Ագաթ. որի հետ նոյն է ճայց և խնդիր լինել Վեցօր. 173։—Հիւբշ. 418։

Նշ՛ր լծ. ճայեացք, աչս, ակն, ճայց։ Ուղիղ մեկնութիւնը առաւ նախ Pictet 2, 701, որից առել են Տէրվ. Altarm. 49 և յետոյ Lag. Arm. Stud. § 102. կասկածով։ Հիւնք. պրս. āyiša, iyša «լրտես»։ Յ.Գ. Մ. Պատմ. դրակ. 16 Հաւհոն. այց։ Անաբող տե՛ս Աղաբողն։

*ԱՆԱԳ, ի-ա հլ. յետնաբար ո հլ. «կլայեկ» ՍԳր. Ագաթ. որից անագեայ Ջրբ. դ. 10. Նոր բառից են անագել Ջռ. անագազօծ, անագազօծել, անագապղինձ, անագագործ։

=Ասուր. anāku «անագ», սումեր. ni-ig-gi, na-ag-ga, an-na, em. an, հին սումեր. *anag, ասոր. ʾānxā «անագ, կապար» (բացարձակ ձևը ānax), եբր. אֲנָךְ anāx «կապար», մանգ. אנכא ankā «անագ», արաբ. أنوك ānuk «կապար», որ և «անագ, կլայեկ» (ըստ Կամուս, թրք. Թրգմ. դ. 72), եթովպ. nā'k. սեմականներից փոխառեալ են սանս. nāga «անագ, կապար», հին ֆրանս. aloanoc, alhonoch «կապար», allenec, alnec «անագ» (իբր արաբ. al-anuk, ըստ Marcel Devic, Dict. étym. des mots fr. d' origine orientale, Paris 1876)։ Մեր բառի բուն փոխառու աղբիւրը յայտնի չէ, բայց ինձ թւում է թէ ասորեստանցիներից և սումերներից է անցել, ըստ որում ձևով և նշանակութեամբ նրանց է նման ամէնից աւելի։—Հիւբշ. 300։

Առաջին անգամ Schröder, Thes. 46 դրաւ արաբերէնից փոխառեալ։ Նշ՛ր յիշում է սեմական լծորդները։ Böttticher, Rudimenta, Berlin 1848, էջ 32 ասոր. ānax և սանս. vanga։ Պատմաճեան, Մասիս 1893, 251 աքքադ. անակու ձևից։ (Նոյնը յետոյ Սագրեեան ՀԱ. 1909, 335 եև)։ Հիւբշ. 300 թէև դնում է ասորական փոխառութեանց շարքում, բայց բուն փոխառուն անյայտ է համարում։ Iensen, Hittiter und Armenier, 209 համարում է թէ հայերը Կիլիկիա եղած ժամանակ, այն է հաթեան շրջանին սեմականներից փոխ են առել։

Գիմ.—Ջի գործածուում. այժմ կայ միայն կլեկ և Թուրքերէնից փոխառութեամբ խալայ։—Արև. մամուլ 1895, էջ 764 այս բառից է դնում անգամել Մն. «հայհոյել», մանաւանդ «սաստիկ հայհոյել», իբր Թրգմ. տճկ. qalaylamaq «անագով զօծել. 2. փխբ. սաստիկ հայհոյել»։

ԱՆԱԳԱՆ «ուշ մնացած, յետին (իբր ած.)» ՍԳր. «հրեկոյ եղած, տարաժամ» (Վասն անագան ժամուն) Գ. մակ. ե. 11. Կոչ. ժգ. «հրեկոյ» (անագանն ի վերայ հասանէր, կամեցան անդ ագանիլ զզիշերն) Ճառընտ.

=Վրք. և վկ. ա. 329. «ուշ (իբր մկ.)» Ագաթ. Եղն. յետիններէն մօտ գլխաւորապէս, ինչպէս և ներկայ բոլոր դաւառականներում առհասարակ բառս այս վերջին նշանակութեամբ է։ Սովորաբար անհոլով է. յետիններէն

մօտ ունինք սեռ. -ի. Անագանին ոչ ժամանեցի. Նար։ Որից անագանութիւն վեցօր. անագանիմ ՍԳր. կամ անագանեմ վեցօր. անագանավար «ուշ ցանուած» Եփր. եկ. էջ 150, Կիւրղ. եկ. անագանի «ուշ ժամանակ, երեկոյեան դէմ» ՍԳր. Ոսկ. ևն։

ՆՀԲ ո՛չ ագան, ո՛չ ընդ այգն։ Այսպէս նաև Մառ, Грамм. др. арм. яз. էջ 297։ Հիւնք. մեկնում է «արտաքոյ ժամու ադաննելոյ»։ Տե՛ս նաև -ագան բառը։

ԳԻՒՒ.—Մկ. հոեոկ՛ոե, Սչ. անգ՛ան, Խրբ. անհան, Ալշ. Մշ. յանգ՛ան, ՋՓ. անգ՛օն, Ոզմ. հանգ՛ոե, Վն. անկ՛ոե. բոլորն էլ «ուշ» նշանակութեամբ. Մարաշում նշանակում է «երեկոյ» (Անգան աաեն ո՞ւր կերթաս)։ Գրաբարի անագանիլ ձևին համաձայն են անգնիլ Խրբ. Վն. «ուշանալ, ուշ մնալ», Մրշ. «երեկոյ լինել, օրը տարաժամիլ» (Օրը անգնցաւ), Սչ. անգրնվիլ «երկար տևել, ուշանալ» (Սեղանը պիտի անգնուի)։

*ԱՆԱԳԱՆՈՍ, ի-ա հլ. «հկեղեցու մէջ գիրք կարդացող, գրակարդաց՝ որ մի առանձին աստիճան է» Լմբ. մատ. էջ 84. Լծ. Նար. Օրր. իզ. (Հրատ. Էմինի, էջ 80, 81). առանց յունական -nus վերջաւորութեան՝ կրճատ անագան ձևով ունի Օրր. ողբ. ժդ յաւագոյն ձևն ունի Ագաթ. § 856 անագնովս (հին տպ. անագանոս)։

= Ճն. ἀναγνώστης «ընթերցող», որ ծագում է ἀναγιγνώσκω «կարդալ, վերծանել» բայից. յունարէնից փոխառեալ է նաև ասոր. ܐܢܓܢܘܣܛܐ anagnōsta կամ ܐܢܓܢܘܣܛܘܣ angnōstōs նոյն նշ.։

Ուղիղ մեկնութեան ծանօթ էր հներից Լմբ. մատ. 84 «Ութերորդ դաս եկեղեցւոյ՝ անագանոսք, որ թարգմանին ընթերցողք»։ Նորերից ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ԱՆԱԳՈՐՈՅՆ (անհոլով է. գրուած է նաև անագորոն, անագորուն, անագորովն) «անգութ, անողորմ» ՍԳր. Ոսկ. Վեցօր. 189. «անխնայ, անմիտ» Սղ. Ճժր. 158. Բ. մակ. բ. 33. որից անագորոյնութիւն (անագորոնութիւն կամ անագորունութիւն) «անգթութիւն» Ոսկ. մտթ. «անբանութիւն» Ոսկ. յհ. անագորունագոյն. Կոչ. 331. արդի գրականում ընդունված է միայն անագորոյն ձևը՝ առաջին նշանակութեամբ։

Հներից Մեկն. հռ. ա. 31 առուգաբանում է «անագօրոյնք, այսինքն անգորովք և անգութք»։ Այսպէս նաև ՀՀԲ, Ինճիճեան, Եղանակ Բիւզ. 1820, էջ 212, ՆՀԲ և Հիւնք։

ԱՆԱԳՈՒՄ «մի տեսակ օդ կամ քամի». ունի միայն ԱԲ. իսկ Ալիշան Հին հաւատք, էջ 64 դնում է վկայութիւնը, առանց հեղինակի անունը յիշելու։

*ԱՆԱԶԱՐՄ «ուժով, վայրենի, անգութ». ունի միայն ԱԲ, որից անազարմաբար, անազարմապէս «անագորոյն, անխնայ կերպով, վայրենաբար» Նեմես. էջ 118. Մխ. դատ. Վրդն. պտմ. Սամ. անեց. 109. Երզն. լուս. (սխալմամբ գրուած է նաև անգարմաբար, անգարմապէս՝ կարծելով թէ բառը կազմուած է գարմ «ցեղ» բառից)։

= Պհլ. āzarm «յարգանք, ակնածանք, պատիւ», պազենդ. āzarm «յարգանք, պատիւ», anāzarm «անարգ, անպատիւ», anāzarmihā «անպատուութիւն, անարգութիւն», պրս. آزرم azarm «ամօթ և պատկառանք. 2. համեստութիւն և պարկեշտութիւն. 3. ողորմութիւն և գթութիւն. 4. յարգ և պատիւ. 5. արդարութիւն և իրաւունք. 6. հանգիստ և խաղաղութիւն», آزرميدن āzarmidan «յարգել, մեծարել»։—Հիւրշ. 96։

ՆՀԲ Բրք. զարպլը, զարպ իլէ (իմա՛ արաբ. ضرب ḍarb «հարուած»)։ ՋՓ թուում է դնել զարմ բառից։ Ուղիղ մեկնեց Պատկ. Матеріалы, հտ. I, էջ 7։

*ԱՆԱԹԵՄԱՅ (գրուած նաև անաթէմա) «անէծք, նզովք, բանադրանք» (յատկապէս եկեղեցական) Մաշտ. Կանոն. որից անաթեմայել «նզովել, բանադրել» Ճառընտ.։

= Ճն. ἀνάθεμα «նզովք», ἀναθεματίζω «բանադրել, նզովել». բուն նշանակում է «վերագրութիւն, վրան գրուած բան» (կազմուած ἀνά «վրայ» և θέμα «գրուած բան» բառերից)։ Իբրև եկեղեցական բառ անցել է շատ լեզուներիս. ինչ. ռուս. анаѳема, ֆրանս. anathème, իտալ. anatema ևն, բոլորն էլ նոյն նշ.։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։ Հիւրշ. չէ յիշած պատահաբար։ Անալի տե՛ս Աղ։

ԱՆԱԼՈՒԹ «ընձուղտ». մէկ անգամ գործածուած է Օրին. ժդ. 5՝ հյգ. զանալութ ձեռվ։ Այս բառը սխալմամբ ուղղական կարծելով Խոր. աշխ. գրում է. «կենդանի ինչ նման զանալութոյ» (բայց նոր տպ. էջ 599 ունի յանալութ)։ Գուգարաց նահանգի արտադրութիւններն էլ յիշելիս՝ ասում է. «լինի ի նմա անալութ և հաճար ծառ և սերկևիլ և տօսախ» (Խոր. աշխ. 610)։ Որովհետև Հայաստանում ընձուղտ չկայ, ուստի ՀԲուս. § 95 հետևցնում է թէ այս հատուածում անալութ նշանակում է ինչ-որ բոյս և կամ խանգարուած ձև է՝ փոխանակ մի ուրիշ բուսանունի։ Իրօք էլ Վատիկանեան ձեռագրի մէջ նոյն տեղում գտնում է «լինի ի նմա և անուշ խոտ ուտելիք» ընթերցուածը (տե՛ս ՀԲուս. յաւել. էջ 675)։ Բայց ամէն տարաձայնութիւն կը վերանայ, եթէ ընդունինք, որ վերի հատուածներում անալութ նշանակում է ո՛չ թէ «ընձուղտ», այլ, ինչպէս ցոյց է տալիս Համշէնի բարբառը, «եղնիկ»։ Այս պարագային, Վատիկանեան ընթերցուածը, ինչպէս արդէն երևում էլ է, անյաջող սրբագրութիւն կամ պարզ սխալագրութիւն է։ Աւելացնենք և այն, որ Օրին. ժդ. 5 յունարէն օրինակը ներկայացնում է երկու տարբեր խմբագրութիւն և թէև անալութ բառի դէմ՝ ընկնում է յն. «ընձուղտ» բայց կարելի է շարքերը փոխելով՝ դնել «եղնիկ»։

Հինք. հանում է լևիաթան բառից!

Գիմ.—Համշ. օնլութ «եղնիկ». այս հաղուագիւտ բառը ցոյց է տալիս՝ որ զանալութ պարզապէս սխալմունք է։

***ԱՆԱԿԻՒՂ** «մի տեսակ կարճ պարեգօտ». մէկ անգամ ունի Բուզ. 184 «Ագաւ նա պարեգօտ մի՝ զոր անակիւղս կոչեն» (3 ձեռ. անկիւղս)։

=*Յն.* ἀνάκωλος «կարճասրուն». յատկապէս գործածւում է պատմուճանի համար. բստ այսմ երկու ձևերից ուղղագոյնն է անակիւղ, որ պէտք է կարդալ անակող։ Նկատելի է նաև բառի ծայրի ս ձայնը, որ չի կարող յոգնակի հայցականի նշան լինել, բստ որում «պարեգօտ մի՝ զոր» եզակի է. ուստի աւելի լաւ է համարել յն. բառի վերջաձայնը, որով բառը կուղղուի և կդառնայ *անակողոս կամ *անակովղոս։—Աճ.

ՆՀԲ մեկնում է «յն. ἀγκύλος, որ է ոլորեալ, կոր, ճարմանդաւոր», ընտրելով անկիւղ ձևը։ Սրանից ապդուելով ԱԲ նշանակում է անկիւղ «կռճկած հագուստ», Բայց յն. ἀγκύλος նշանակում է «ծուռ, կեռ, խորամանկ» և չի յարմարւում հագուստի։ Նորայր, Բառ ֆրանս. 170 ա հասկանում է «լամբակ, boutonnière»։ Չէ յիշում Հիւբշման։ Վերի մեկնութեանս համաձայն է նաև Meillet (անձնական)։

ԱՆԱՂԱՅՏ «գարշ կամ աղտեղի». այսպէս ունի միայն Բառ. երեմ. 17։ Թուում է թէ անաղարտ բառն է՝ սխալ բացատրուած։

***ԱՆԱՂԱՓ** տե՛ս Աղաբողոն։— Հացունի, Պատմութ. տարազին, էջ 426—7 տարբերում է իրարից երկուսը, դնելով աղաբողոն = ἀναβώλαιον և անաղափ = ἀνάλαβος «կրօնաւորներին յատուկ երիզ՝ որ ուսերից իջնելով կուրծքի վրայ խաչաձևւում է»։

ԱՆԱՂԿ. անստոյգ բառ. ՆՀԲ յիշում է գաւառական բառերի շարքում (հտ. բ, էջ 1060) և համեմատելով հյ. աղկաղկ «տկար», յն. ἄναλκος (իմա՛ ἄναλκις) «տկար, թոյլ» բառերի հետ՝ մեկնում է «անոյժ, անժոյժ, անարի». ՋՔ իրր անստոյգ բա՛ռ «անժոյժ կամ անարի, անոյժ». ՓՔ մեկնում է «անժոյժ, բուռն, զօրեղ, աստիկ». ո՛չ մէկը չունի վկայութիւն. բստ այսմ հնագոյն յիշատակութիւնն է Բառ. երեմ. էջ 17 «անաղկ. անժոյժ»։

ԱՆԱՄԵՍԻՏՈՆ «ընտիր արքայական ծիրանի». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կալիսթ. 123 «Հանեալ իմ զքղամիդն անամեսիտոն արկի ի վերայ նորա» (ասում է Մեծն Աղեքսանդրը)։

= Անշուշտ յունարէն փոխառութիւն է. բայց նման մի ձև չեմ գտնում Bailly-ի բառարանում։ Ակինեան ՀԱ 1930, 488 յիշում է նաև անամեսիտոն ընթերցուածը. բառը պահասում է, ինչպէս Կալիսթենէսի յունարէնում, նոյնպէս և Վիեննայի թ. 885 ձեռագիր օրինակում. Raabe, Ἱστορία Ἀλεξάνδρου, Leipzig 1896, էջ 69 առաջարկել է կարդալ հայ բառը ամենուստ. Ակինեան համարում է ղամիդ բառի բացատրութիւնը (աղաբողոն?)՝ կնշանակու կաղմից մուծած և յետոյ աղաւաղուած։

*ԱՆԱՆՈՒԽ, ո հլ. «նանու, դաղձի բնատնին» Մտթ. իգ. 23. Դուկ. ժա. 42. յետին ձևվերով՝ անուխ, աննուխ, անանեխ (ՀԲուս. § 96), որից farաննուխ «վայրի անանուխ» Վստկ. 191. ևոռոմ աննուխ, սարի աննուխ Բժշ.։

= Թուի փոխառեալ իրանականից. համմտ. պրս. ناخونا nānxāh կամ نانوخیه nānūxēh «հացհամեմ, սրջնգեղ, սև սոնիճ. մի տեսակ սև սերմ՝ որ հացի վրայ ցանելով ուտում են». կազմուած է نان nān «հաց»+ xʸāh «համեղ» բառերից, ճիշտ ինչպէս հյ. հացհամեմ։ Իրանականից փոխառեալ են նաև ասոր. ܢܢܥܐ nān'ā (փոխանակ nā'nəā) «անանուխ», ܢܥܢܘܥ nankuhg «անանուխ», յն. ναναῦχα «հացհամեմ» Du Cange, արաբ. نعنا na'na' «անանուխ», թրք. nane «անանուխ»։ Այս երկու բոյսերի (հացհամեմի և անանուխի) յարաբերութեան վրայ տե՛ս Löw, Aram. Pflanzennamen, էջ 259 ևն. համմտ. նաև պհլ. nānā nānūkspram «անանուխ իբր հացհամեմ» (ըստ Justi)։—Հիւբշ. 96։

Ուղիղ մեկնից նախ Pott, Kurdische Studien ZKM 7, 1850, էջ 143, յետոյ Lagarde, Urgesch. Arm. 1854, 833, Arm. Stud. § 106 և էջ 166։ Հիւնք. մանանեխ-ից։

Գիւտ.—երև. Ջղ. անանուխ, կր. Ռ. Սեբ. աննուխ, Ասլ. աննիւխ, Ակն. Ջթ. Խրբ. Հճ. անուխ, Սլմ. անուխ, աննխ, Համշ. օնլուխ, Ագլ. նա՛նուն, նա՛նօն, նա՛նու. բարդութեամբ ունինք Ղրմ. առվանանօխ, Մկ. առվանանուխ (իբր առուի անանուխ), բայց նշանակում են «անջրդի տեղերում բուսնող վայրի անանուխ»։ Միւս բարբառներում գործ է ածւում թրք. նանա, նանէ։

Փոխ.— Թրք. գուռ. Տարէնտեի annəx «անանուխ» (ըստ Բիւր. 1899, 798)։ Ուռ. նանուխ «անանուխ»։

*ԱՆԱՇԱՀԻԿ «օտարական, պանդուխտ, նժդեհ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ միայն գտնում եմ գործածուած կրկնագիր Ագաթանգեղոսի մէջ, ուր միւս ձեռագրերն ունին անճաշխարհիկ հոմանիշը։ Այս վերջինը իբր նախատատական ածական գտնում ենք նաև Ոսկ. եփես. 833, ուր սակայն մի ձեռ. ունի անաշախիկ՝ որ վերի անճաշահիկ ձևի հետ նոյն է։

= Սագամամբ նոյն է անճաշխարհիկ բառի հետ. սրանց հին արշակունեաց ձևն է xšaθr, որից xšahr և հայերէնի մէջ ձայնաւորի յաւելումով՝ աշխարհ։ Միջին պարսկերէնում xšahr կրճատուելով դարձաւ šahr, որից փոխ առնուեցան հյ. շահապ, շահապետ, շահաստան, շահատակ բառերը, որոնց ժամանակակից է նաև անճաշահիկ։ Հայերէնի մէջ շահ առանձին դոյութիւն չունենալով, իբր արմատ մնաց միայն աշխարհ ձևը. իսկ շահ բառը մնաց միայն վերի բարդերի մէջ, որով իր ինքնուրոյնութիւնը կորցրեց. հայերէնի մէջ պէտք եղած բարդ ու ածանց ձևերը սկսան կազմուիլ միայն աշխարհ բառով, իսկ շահ-ով ձևերը հետզհետէ կորան. այսօր բոլորն էլ անհետ են եղած։ Այսպէս կորաւ նաև անճաշահիկ հազուագիւտ ձևը և նրա տեղ դրուեց՝ հայերէնի մէջ կազմուած անճաշխարհիկ նոր բառը։— Ա.Ճ.

Վերոյիշեալ մեկնութիւնս հրատարակել եմ նախ ՀԱ. 1913, էջ 17։ Տե՛ս նաև Վարդանեանի նկատողութիւնները, ՀԱ. 1913, էջ 558 և Բառաքնն. դիտ. հտ. բ. էջ 15։ Անապ տե՛ս Ամպաճ։

*ԱՆԱՊԱԿ, ի–ա հլ. «անջուր, անխառն (գինի). յայնաբար՝ գուտ, մաքուր, անխառն (որ և է բան)» ՍԳր. «եթէ զջուրն (հազարոյ) քամեալ անապակ լմպիցէ ոք» Եղն. 67. «Անապակ մատուցանէր առնն» Բուզ. էջ 222։ Համմտ. նաև Գիրք թղ. 478 «Մարդիկ սովոր են զգինի՝ որ անխառն են ի ջրոյ՝ անապական կոչել. իսկ զջրախառնն՝ ապականեալ ասեն»։ Ամպակ ձևն ունի Գիրք մոլութ. 155 ա. «Ջերմագոյն քիրակէս ամպակ գինւով»։

=Պհլ. *anāpak ձևից, որ չէ աւանդուած. համմտ. զնդ. anāpa «անջուր», սանս. anapa «անջուր», պրս. ناب nāb «գուտ, անխառն», գործածուած ամէն տեսակ բանի համար, բայց յատկապէս գինու համար. կազմուած է an- բացասական մասնիկով՝ āpa «ջուր» բառից։—Հիւբշ. 97։ Հիւբշ. ZDMG 35 (1881), էջ 656 պրս. ناب nāb և զնդ. anāpa «անջուր» բառերի հետ։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ, որ համեմատում է պրս. nāb։ Տէրվ. Altarm. 94 սանս. anapa «անջուր»։ Պատկանեան,

Փորձ 1880 մարտ, էջ 84 և Матеріалы *1, 6 պրս.* پاک pāk *«մաքուր» բառից, ան և ա կրկնակ բացատականներով։ Հիմնք. յն.* ἀναβαχχεύω *«Բաքոսից ներշնչուիլ»։ Ոմանք ուզում են մեկնել* ապականիլ *բառից, իբր թէ* աե–ապակ *«չապականուած». բայց այս մեկնութիւնը սխալ է, որովհետև* ապականիլ *բայի արմատը* ապակ *չէ։*

ԳԻՒ.— Բուն իմաստով ունինք Տփ. աեապակ, *Ակն.* աեբագ. *այլուր տարբեր իմաստով ունինք հետևեալները. Կր.* ամբակ, *Ախց.* ամպակ, *Ռ.* աեբագ, *Խրբ. Պլ.* ամբագ *«անհամ, անհիւթ, աննիւթ» (միս, ապուր կամ այլ ջրալի կերակուր). Ննխ.* ամբագ *«առանց հետը բան ուտելու» (օր.՝ ամբագ չայ խմել). Ասլ.* ամբա*, *Հմշ.* օնբագ *«ցամաք (հաց)», Տիգ.* mմբmգ *«առանց շաքարի (թէյ, սուրճ ևն)», Սեբ.* ամբբբուգ, բմբբբուգ *«անիւղ, անհամ» (<աեպակուկ ձևից, որի մէջ կ-ն նախորդ պ-ի ազդեցութեամբ վերածուել է շրթնականի, ճիշտ ինչպէս* բոկ *եղած է* բոկիկ>բոպիկ*)։*

**ԱՆԱՊԱՏ, ի–ա հլ. (յետնաբար նաև ի հլ.) «ամայի, անշէն, անբնակ (իբր ած.). 2. ամայի և անբնակ տեղ (իբր գոյ.) ՍԳր. Վեցօր. Ագաթ. 3. զուրկ, անմասն» Փիլ. Մանդ. Մագ. «4. քաղաքից հեռու գտնուած վանք» Յիշատ. Վրք. հց. որից* աեապատական *ՍԳր. Վեցօր. Եզն.* աեապատակեաց *Բուզ.* աեապատացեալ *Ագաթ.* աեապատասէր *Կոչ. ևն։*

=Պհլ. anāpāt, *պազենդ.* anāwādān, *պրս.* ناباد nā ābād *«անշէն, անբնակ», որոնք բացատական ձևերն են պհլ.* āpātān, *պազենդ.* āwādān, *պրս.* اباد ābād, آبادان ābādān *«շէն, բնակեալ» բառերի. արմատը* ապատ *ունինք նաև առանձին, և մի խումբ յատուկ անունների ծայրը. ինչ.* Վաղարշապատ, Պերոզապատ *ևն։—Հիւբշ. 97։*

*ՀՀԲ ոչ պատեցեալ որմով։ ՆՀԲ *պրս.* nā ābād *և յն.* ἄβατος *«անկոխ, անգնաց»։* Spiegel, Gram. Huzv. *էջ 188—189 պհլ.* anāpāt *և պրս.* nā ābād*։ Տէր-Վիշեան,* Altarm. *94* āpa *«ջուր» բառից. փոխառեալ է պրս.* ābād*-ից, որ է սանս.* apavant *«ջրարբի»։*

ԳԻՒ.—Մկ. հոնոպատ *(գիւղի անուն է), Երև. Տփ.* աեապատ, *Սլմ.* աեապատ, *Ոզմ.* հաեապատ *(վանքի անուն է), Ակն. Մշ.* աեաբադ, *Սեբ.* աեաբադ *(իբր տեղի անուն), ՋԹ.* աեաբօդ*։*

Անաուակ տե՛ս Առակ։

ԱՆԱՌԿԵԼ *«էշի զոալ». որ և* աեըռկել. *մէկ անգամ ունի Ոսկ. յհ. բ. 30 «էշքն անաուկեն և (ճայք) աղաղակեն». ուրիշ օրինակ չկայ. այստեղ էլ ձեռագրում սխալմամբ գրուած է եղել* աեաուակեն, *տպագրում* աեաուակ են. *ուղղումը ՆՀԲ-ից է։*

Օսմաններէն, Ատրպատականի թուրքերէն և Քրիմի թաթարերէն آغرماق aġərmaq *«զոալ» (*Radloff, Versuch eines Wörterbuches der Türk-dialecte, S. Peters. *1893, Աբիկեան, Ընդ. բառարան տճկ. հլ. Գօլիս 1892, էջ 58)։ Նմանութիւնը՝ որ ընդունում է Թիրեաքեան, Բազմ. 1913, 339, պատահական է։*

ԱՆԱՍՈՐԱԿԵԼ *«խոովել կամ ընդդիմանալ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 17։*

Անաուսուն տե՛ս Աս, ասել։

ԱՆԱՐԱՆ *«դարան». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 17։*

Անարգ տե՛ս Արգ։

ԱՆԱՐԳԱՏ *«դիպ? կամ անձրև». ունի միայն Բառ. երեմ. էջ 17. յայտնի չէ թէ ի՛նչ է ուզում ասել։*

Անարդ տե՛ս Արդ։

Անարդիլ տե՛ս Արդ։

***ԱՆԱՐԻ** *(-բուոյ, եաց) «չափազանց մեծ, անհեթեթ, անճոռնի, վիթխարի» Եզն. Բուզ. Վեցօր.*

=Նոյն է աեարի *«Արեաց ազգից դուրս, ոչ-արիական» բառի հետ և փոխառեալ է իրանականից. Համմտ. զնդ.* anairya-, *սանս.* anārya-, *պհլ.* anēr *«ոչ-արիական, օտար»։ Ազգերը սովորութիւն ունին իրենցից դուրս գտնուած ազգերին «վայրենի, բարբարոս, այլանդակ» համարելու և նրանց անունը այս նշանակութեամբ կամ ուրիշ վատ իմաստով իբր ածական գործածելու. Համմտ. Հայերէնում* խուժիկ, խուժան, խուժադուժ, խաղտալուր, խաղտալեզու, *գաւառականներում՝* fուրդ,

թnirf, զազա, լազ, բոշա, յունարէն՝ բարբարոս, վրացերէն՝ fուրդի «գող», դ'ազախի «աւազակ» են։ Ըստ այսմ վերի ոսկեդարեան անարի «անճոռնի, անհեթեթ» բառը պէտք չէ շփոթել. յետոսկեդարեան անարի «տկար, երկչոտ» բառի հետ, որ արի «քաջ» բառի բացասականն է։ Առաջինը յատուկ անունից է, երկրորդը՝ հասարակ անուն։

ՆՀԲ լծ. թրք. իրի, հա՛մ իրի «խոշոր»։ Տէրվ. Altarm. 85 անարի «հսկայ» և անարի «երկչոտ» բառերը նոյն համարելով՝ դնում է զնդ. anarya, ինչպէս որ արի «քաջ» = զնդ. airya, որով երեք բառերն էլ հաւասարապէս Արեաց անունից ծագած են լինում։ Հիւբշ. 25—26 Թէև Անարի ազգի անունը զնդ. anairya- ձևին է կցում, բայց սխալուելով ՆՀԲ-ից, անարի «երկչոտ» և անարի «վիթխարի» բառերը հայերէն այր բառից ծագած է համարում անխտիր։

ԱՆԱՐԿԳՈՍ «նենգաւոր». ունի միայն Բառ. երեմ. էջ 18։

Անափաղ տե՛ս Աղաբողոն։

* ԱՆԱՓՈՌՏ «բիւզանդական մի բարձր աստիճան». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ուռհ. 27 «Եւ յանախուռն պատուսպաթիրին Դևրջնայ, Լևոնի և Տարօնոյ զորավարին ողջոյն»։

= Անշուշտ, յունարէն բառ է, բայց պակասում է Bailly-ի բառարանում՝ իբրև յետին. հմմտ. նոր յն. ἀναφορτίζομαι «բռատանձնել, բեռնաւորուել, մէջքի կամ ուսի վրայ վերցընել»։— Աճ.

*ԱՆԱՓՈՐԱՅ «դիմումն բարձրագոյն իշխանութեան, աղերսագիր». նորագիւտ բառ՝ որ երկու անգամ գտնում եմ գործածուած Անան. ժամնկ. 77, 78 «Եւ գրեցին անափորայ առ թաթաւորն. Եւ արարեալ անափորայ (այլ ձեռ. անիփորայ) առ թագաւորն Կոստանդին, աղաչեցին զի եղիցի միաւորութիւն Հռովմայեցւոցն և Կոստանդնուպօղսեցւոցն»։

= ՅՆ. ἀναφορά «բարձրացում, վերելք. 2. մատուցումն ընծայի առ Աստուած. 3. դիմումն բարձրագոյն իշխանութեան», նոր յն. «աղերսագիր»։— Աճ.

Մեր այս մեկնութիւնը հրատարակուած է նախ Հայ. նոր բառեր հին մատենագ. Ա. էջ 124։

*ԱՆԲՐՈՒԲՐ «եւրոպացի կայսր» Միխ. ատ. 530, 531. որ և ումբրուր Պատմ. ռուբ. 220. ըմբրուր Սամ. անեց. 133. ընբրուր Պատմ. կիլ. 209. օնբրուն Սմբ. պատմ. 115, 121. որից օնբրուրիւն «կայսրութիւն» Սամ. անեց. 132. բոլորն էլ յետին Կիլիկեան շրջանի բառեր են և յատուկ միայն եւրոպացի թագաւորներին. հմմտ. յատկապէս Վահր. 214 «Ֆրանկաց ումբրուրըն ծանուցեալ և յունաց կայսրն զայս լուեալ»։

= Ֆրանս. empereur «կայսր», որ ծագում է լտ. imperator բառից և սա էլ impero «հրամայել» բայից։ Բուն նշանակում է «հրամայող»։

Ուղիղ մեկնեց Ա. Տէր-Միքելեան, հրատ. Սամ. անեց. էջ 296։

ԱՆԳԱՔ «կատարելութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 18, որ մի քիչ յետոյ էլ նոյն իմաստով դնում է անգուդ։— Անստոյգ բառ։

*ԱՆԳԱՀ «անժամանակ, ուշ». նորագիւտ բառ՝ որ գտնում եմ գործածուած Մխ. բժշ. գանազան ձևերով. այսպէս՝ էջ 109 անկահ, էջ 95 յանգահ, որից յանգահիլ «ուշանալ» էջ 26։

= Պրս. بگاه gāh «ժամանակ» բառից՝ ան բացասականով։— Աճ.

Տե՛ս իմ Գաւառական բառարանը, էջ 95 ա։

ԳԻՒՐ.— Գործածական է անգախ ձևով այժմ էլ Խրանում և Վանում։

ԱՆԳԱՀԵԼ, անստոյգ բառ, որ իբր մեկնութիւն պարել բառին՝ տալիս է Բառ. երեմ. էջ 269։

*ԱՆԳԱՄ «հնդ». գործածւում է բազմաթիւ ոճերով, ինչ. այս անգամ, այն անգամ, առ անգամ մի, երկրորդ անգամ, կրկին անգամ, երիցս անգամ, բազում անգամ, մի անգամ, միանգամայն, ո՛չ անգամ, բոլորն էլ հին և ընտիր. (յետին է համ-անգամ-այն բառը). հին է նաև անգամ «նաև, ևս, մինչև իսկ» ՍԳր. Ագաթ. եղն. Ոսկ. մտթ. մինչ անգամ «մինչև անգամ» Բուզ.։

= Պհլ. պազենդ. hangām «ժամանակ, մի-

չոց, տարուայ եղանակները», պրս. هنگام hangām *«ժամանակ, միջոց»* և انگا angām *նոյն նշ. վերջինը՝ որ չէ յիշած Հիւբշման, աւելի ուղիղ է ներկայացնում մեր բառը, մինչդեռ միւսները աւելի վերաբերում են հանգամ-անք բառին։ Կազմուած են* han- *մասնիկով* gām- *արմատից, որից ունինք նաև* aiwi *մասնիկով՝ զնդ.* aiwigāma- *«ձմեռ, տարի» (տե՛ս* Horn, *§ 1109 և* Bartholomae, Altir. wört. *89)։—Հիւբշ. 97։*

Ուղիղ մեկնեց նախ Schróder, Thes. *47, իբր փոխառեալ պարսկերէնից՝ ՆՀՔ այն* +գամ *«անգամ, հետ» բառերից։* Lagarde, Arm. Stud. *§ 111 համարում է թէ հայերէն բառի նշանակութիւնը ասոր.* زبنا zabnā *«ժամանակ, անգամ» բառի վրայ ձևուած է, ըստ որում իրանական* hangām *բառը՝ «ժամանակ» նշանակութեամբ չէ գործածուած մեր մէջ։* Iusti, Zendsp. *3 զնդ.* aiwigāma *«ձմեռ» բառի տակ դնում է իրար հետ միասին հյ. անգամ, պրս.* hangām, *պհլ. փարս.* ōgām *(կարդա՛* hangām*) ևն։ Տէրվ. նախալ. 122 և հետու 91 համ-գամ, այսինքն կազմուած գամ բառից՝ համ մասնիկով. համմտ.* անտառ, անմոյթ, անխուլ։ *Սագրգեան, ՀԱ 1909, էջ 335 հյ. գամ, սումներ.* gam *«անգամ» բառերից։* Müller WZKM *9, 83* gam *«երթալ» բայից, ինչպէս արաբ.* خطو xatva *«քայլ» և* مرّ marra *«ընթացք», որոնք նշանակում են նաև «անգամ»։*

Գիւտ.—Ակն. Սչ. անգ'ամ, *Ախց. Երև. Կր. Ննխ. Սեբ. Տփ.* անճամ, *Տիգ.* մնճամ։

Անգայտ տե՛ս Գայտ։

Անգանակ տե՛ս Անկանել։

Անգանուրդ տե՛ս Անկարուրդ։

Անգար տե՛ս Գար։

**ԱՆԳԱՐ (սեռ.-ի) «համարելը, մի բանի տեղ դնելը». մէկ անգամ ունի Եզն. էջ 287 «եթէ յայն միտս ուխտաւորք էին, ապա և կուսութիւնն չէր յանգարի կուսութեանն» (այսինքն «ի համարի, ի կարգի». աշխ. կուսութեան հաշուում չէր, կուսութեան տեղ չէր կարող դրուել. համմտ. Եզն. 286, Եւ ոչ ուխտաւորութիւնն նոցա յուխտաւորութիւն համարէր). որից* անգարել *«համարել, սեպել» Սեբ. 138.* անգարիլ *«համարուիլ, սեպուիլ» Շիր. 16, 18։—Սխալ է ՋՔ* անգար *«վայելչութիւն»։*

=*Պհլ.* angārtan *«համարել, պատմել», պազենդ.* angārdan *«ենթադրել, հաշուել, պատմել»,* angird *«եզրակացութիւն, ամփոփումն»,* angāra *«համարելը, ենթադրութիւն», պրս.* انگاشتن angaštan *«կարծել, համարել», հրամ.* انگار angār *«համարի՛ր, կարծի՛ր»,* angārānīdan *«կարծեցուցանել, տալ համարել»,* angāra *«համարան, մատեան գործոց, պատմութիւն անցից անցելոց»,* angārīdan *«կարծել, վարկանիլ»,* angārda *«պատմութիւն. առասպել», իրանեանից փոխառեալ վրաց.* ანგარიში *անգարիշի և թուշ.* ანგრიშ *անգրիշ «հաշիւ»։ Այս իրանեան բառերը ծագում են* ham *մասնիկով* kar *«անել, կատարել» արմատից. համմտ. զնդ.* hankārayēmi *«գործադրել, լրացնել»,* hankərətay- *«վերջաւորութիւն, վերջին հաշիւ» (*Bartholomae, Altir. wört. *447 և 1770)։—Հիւբշ. 97։*

**ԱՆԳԱՐԻՈՆ «տարապարհակ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած ԺԱ դարու մի արձանագրութեան մէջ, հրատր. Վիմ. տար. 27։*

=*Յն.* ἀγγαρήιον *«պարսկական սուրհանդակների պարտադիր ծառայութիւնը»,* ἀγγαρεύω *«տարապարհակ. վարել», նոր յն.* ἀγγαρεία *«ձրի ծառայութիւն», որից և Թրք.* انغاریا angaria *«ձրի կամ բռնի աշխատութիւն»։ Յոյն բառի ծագումը համաբուում է պարսկական ըստ* Bailly, *էջ 7։—Աճ.*

Անգաւան տե՛ս Անկանել։

Անգեղ տե՛ս Անդղ։

**ԱՆԳԵԼԻԿ «հնգկական նարդոս». ունի միայն ՓՔ։*

=*Ֆրանս.* angélique, *իտալ.* angelica *բառից նոր փոխառութիւն. բուն նշանակում է «հրեշտակային», փխբ. «հովանոցաձևերի ընտանիքից շատ հոտաւէտ մի ծաղիկ է»։—Աճ.*

**ԱՆԳԵՂՈՍ «հրեշտակ, պատգամաւոր», ունի միայն Բառ. Երեմ. էջ 18, որից առնելով անշուշտ նաև ՀՀՔ և ՓՔ։*

=*Յն.* ἄγγελος *«հրեշտակ, պատգամաւոր», որից փոխառեալ է նաև լտ.* angelus *ևն։*

Ուղիղ մեկնեց ՀՀՔ։

Անդժատ տե՛ս Անդուժատ։

ԱՆԴԻԱՅԵԼ *«մերժել, ուրիշի ասածը հերքել». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Սոկրատի Եկեղ. պատմ. Ա. 36. «Այլ և զայս զնորա շարագրեալս Եւսեբիոս Պամփիլեայ յերեսին գիրոն անգիացեաց (յն. ἀνέτρεφεν)՝ յանդիմանեալ զչարափառութիւն նորա»։ Թուի թէ պէտք է կարդալ* **ընկեաց**, *ինչպէս ունի Երուսաղէմի լաւագոյն օրինակը. հմմտ. նաև էջ 86* **ընգեցոյր**՝ *նոյնպէս «հերքել» նշանակութեամբ։*

ԱՆԴՂ *(-ղ հլ.) «մի տեսակ գիշակեր թռչուն» ՍԳր. Վեցօր. 171, 174. գրուած նաև* **անկղ**. *իսկ Կոչ. ժղ. և Եփր. խր.* **անծեղ**՝ *կարդա՛* **անգեղ**։

Böttich. Vergl. Arm. cons. ZDMG *1850, 366,* Arica *54,* Lagarde, Urgesch. Arm. *763 և* Arm. Stud. § *114 սրա հետ են համեմատում սիւրիթական ăγλο «կարապ» բառը, որ աւանդում է Հեսիքիոս.* ăγλο ὁ κύκνος ὑπὸ Σκυθῶν։ *Հիւնք. արաբ.* عنقاء ‘anqā *«փիւնիկ հաւ»։ Շէֆթէլօվից* BB *29, 28 ը համարում է մանիկ։ Ադոնց* REA VII *1(1927), էջ 187 միացնում է* ăγλο *«կարապ ըստ Սիւրիթացւոց» (Հեսիքիոս), յն.* ἄγγελος *«հրեշտակ», պրս.* ἄγγερος *«արքայական սուրհանդակ» (Հեսիք.—Սուիդաս) բառերի հետ։ Անդրադձև մի աստուած էր, որ լիտոլ աստուածների սուրհանդակի պաշտօն ստացաւ։ Յիշելու արժանի է նաև լազ.* անկե *«անգղի գոյնով մի տեսակ թռչուն՝ որ ճանճ, թիթեռ են բռնում է, ուտում»։*

Գիմ.—Կր. անգղ, *Ղրբ.* անգ։

***ԱՆԴՂ** *«ամանի, յատկապէս զամբիւղի ականջ, կանթ, բռնելատեղ, ունկ» Վրք. հց. բ. 359. Վստկ. 134. յոգնակին է* **անգեղ**, *որից կարելի է հետևցնել նաև եզ.* **անգեղ**, *ինչպէս անում են բառարանները։ Գրուած է նաև* **անկղ**։

= *Պրս.* انكل angul, انكول angūl, انكيل angēl, انكلا angula, انكولا angūla, انكيلا angēla *«օղակ՝ յոր անցանէ կոճակ, լամբակ կոճակամալյր»։—Աճ.*

Նշխ հյ. **ունկն** *և լտ.* ungula *(տե՛ս* **անգղ** *բառի տակ)։ Տէրվ. Նախալ. 59 հյ.* **ականջ**, **ունկն**, **ունկունք**, *սանս.* aǰ, anǰ *«ծռել», յն.* ὄγκος *«կոր, ճանկ», լտ.* uncus, angulus *«անկիւն» (աւելացրո՛ւ գնչ.* anko, *գերմ.* angel *«կարթ» ևն) բառերի հետ հնխ.* ak *«ծռիլ, կորանալ» արմատից։ Հիւնք. լտ.* angulus *«անկիւն»։*

Գիմ.—Արբ. Զթ. Խրբ. Ջն. **անգ** *«ամանի ունկունք», երև.* **անգ** *«պարկի ունկունք. ցորենի պարկի ծայրերը մի քանի օղակներ են կարում, նրանց միջից մի բարակ չուան են անց կացնում և ծայրերը միատեղ ժողովելով՝ կապում են, որպէսզի ցորենը դուրս չթափուի». այս իմաստը բոլորովին համապատասխան է պարսիկ բառի նշանակութեան։— Տարբեր ծագում ունին կր.* **օնգ**, *իբր <***ունկն**, **ունկունք** *և երև. Տփ.* **անգ**, *որ է* **անկանել**, **անկուած**, *յանգ ձևի հետ նոյն։*

ԱՆԴՈՅՍ, *ի հլ. (անեզաբար գործածուած) «կիսգ, աքացի, քացի». ունի միայն ԱԲ. մի մի անգամ գտնում եմ գործածուած Աբան. էջ 604 և Վրք. հց. ա. 72. սրա ժողովրդական իմաստն ունի* **անգոյս** *«արհամարհանք, անարգանք» (նորագիւտ բառ), որ նոյնպէս մէկ անգամ գործածուած եմ գտնում Մանդ. 217. «Ամբարհաւանութիւն, անսփոփութիւն, նեղութիւն(,) անգոյս, արհամարհութիւն են»։ Արմատի բայական ձևը աւանդուած է մեզ դանազան գրչութեամբ. այսպէս են՝* **անգոսնել** *«խօսքը շլսել, արհամարհել, նախատել» ՍԳր. Ագաթ. Եւս. քր.* **անկոսնել** *նոյն նշ. Սիր. լդ. 26. Եփր. Թգ. 360.* **անկուսնել** *«արհամարհել, բանի տեղ չդնել, ծաղրել» Ածար. կարկտ. և աղք. Յայտմ. դեկտ. 16.* **անկուշնել** *կամ* **անկոշնել** *«ասածը արհամարհել» Ոսկ. ա. տիմ. էջ 99. Մանդ.* **անգուշել** *«կիսգ զարնել» Ագաթ. Ոսկ. մ. գ. էջ 54, Եփր. Համաք. 230. Լմբ. պտրգ. կիր. էջ 52 (մնացեալքն իբր զանտրունչս անգուշեալ կիսգս ընկենուին).* **անկուշել** *«հեստել, անհնազանդ գտնուելով արհամարհել» Բ. օր. լբ. 15 (յօրացաւ և անկուշեաց սիրելին). Ոսկ. ես. Եփր. հռ. 30. Ասող. 162 (Յորժամ գիրացաք, ստուարացաք, լայնացաք և անկուշեցաք (այլ ձ.* **անկուշացաք**) *զսի-*

բելին մոռանալով զԱստուած), «քացի տալ» ՅՀ. կք. անգուշնել *«արհամարհել» Լմբ. աղ: Այս բոլորի մէջ ամէնից աւելի գործածականն է* անգոսնել, *իսկ միւսները շատ հազուադէպ գործածութիւն ունին. բարդութեանց մէջ էլ միայն առաջին ձևն է գործածւում. ինչ.* անգոսնասէր *Եւագր.* անգոսնասիրութիւն *Մաշկ.* անգոսնութիւն *Ոսկ. յհ. բ. 2.* անգոսնումն *Վրք. հց. դ: Ներկայ գրականը գիտէ միայն* անգոսնել *«արհամարհել». միւս ձևերն ու իմաստները ջնջուել են:*

Հներից Երզն. քեր. ասում է. «Անգոսնեացն և անգուշեաց՝ մի բառ է. շայն՝ ասորի, և սէ՝ հայեցի»: Նոյնը ունի և Տաթև. հարց. 407: ՆՀՒ հանում է կուշտ, ուս *(կշտաւ գրթցել, տալ անկանիլ յուսոց), պրս.* گوش gōš *«ականջ» և* گوشیدن gōšīdan *«լսել» բառերից: Հիւնք. նշկաճել բայից: Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 83* կոյս *բառից:*

Անգոսնել տե՛ս Անգոյս:

ԱՆԴՈՆ ԿՈՒՈՆԱՒՈՐ. *նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Շիր. 65. Մեծասիր գօտին՝ որ կոչին անգոն կոռոնատոր (երկնքի հօթը գօտիներից մէկն է՝ ըստ հին աստղաբաշխութեան):*

*ԱՆԴՈՒԺԱՏ *«չարհոտ, քաղբան,* assa foctida, *մի բոյսի ժանտահոտ խէժն է». գրուած է նաև* անկուժատ, անգժատ, անգօժատ, անկժատ *Մխ. բժշ. 126. Վստկ. Գաղիան. էնկիւժէնտ Վստկ. 81. էնկիւժէտ Վստկ. 214. կամ նաև* անկուժակ, անիշատ՝ *ինչպէս յիշում է ՀՔուս. յաւել. էջ 675: Սրանից* անգուժատաբեր *կամ* անգժատաբեր *Խոր. աշխ. 597:*

= Պրս. انگژه angužad, angižad, *որ և* انگیزه angiža, angaža *նոյն նշ. համառօտուած է *angud+žad, հնագոյն *angut-žat բառերից, ծագում է պրս.* انگدان angidān, angudān *կամ* انگیان anguyān *(= արաբացեալ* انجدان anǰudan *կամ* anǰidān*) «քաղբանի ծառը,* silphium» *բառից (որից փոխառեալ է նաև հյ.* անճիտան, անճուտան *նոյն նշ.) և պրս.* ژاد žad*<հինը *žat «խէժ» բառից. ըստ ալամ ասում են նաև* انگدان‌ژاد angidān-žad *«անգուժատ, քաղբան, չարհոտ». համմտ.* کنگژاد kangaržad, *ասոր.* ܩܢܓܪܙܕ kangarzad *«կանկառի ծամոն,* gummi cynarae scolymi»:—*Հիւրշ. 98:*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ:
Անգոման տե՛ս Գոման:

*ԱՆԳՈՒՏԱՆ *«մի տեսակ բոյս ու համեմ» ԱՒ. ըստ ՀՔուս. § 101 «Հին բժշկարանն յիշէ համեմոց հետ, բայց կրնայ ըլլալ նոյն անճիտանն»: Գրուած է նաև* անկիտան *(համաձայն միջնադարեան տառադարձութեան):*

= Պրս. انگدان angudān, angidān, *որ և* انگیان anguyān *և արաբացեալ* انجدان anǰudān, anǰidān *«ռետին ունեցող մի ծառ՝ որի խէժը կոչւում է անգուժատ, քաղբան, չարհոտ» (WZKM 11, 276): Վերի բառերը փոխ են առնուած երկու ձևով. պարսկերէնից* անգուտան *և արաբերէնից* անճուտան, անճիտան *ձևով:—Աէ.*

Գիւմ.—Հին Ջուղայում կայ անգուտան *«մի տեսակ լեռնային բոյս, որ եփում ուտում են». իսկ զոխը՝ որ կոչւում է* արդոզան, *հում են ուտում:*

ԱՆԴՍՏՈՒՏ *«ամուր կամ պինդ». ունի միայն Բառ. երեմ. էջ 19:*

ԱՆԴՏԻ *«բոզ». ունի միայն ԱՒ. իբր անբոտոյզ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. Եփես. 833 «Ջանգտին և զսամտի անուն կոչես զբոզն և պոռնիկն»:*

Գեանջեցեան ZAPh 1, 46 գտանել *բայից:*

+ԱՆԴ *«այնտեղ» ՍԳր. Կորիւն. Ագաթ. «հին ժամանակ» Ագաթ. Կորիւն. որից* անդէն *ՍԳր. Ագաթ. Ոսկ.* անդաւօր *Նար.* անդուստ, անտուստ *ՍԳր. Ագաթ. Ոսկ.* անդր *ՍԳր. Ոսկ.* անդրէն *ՍԳր.* անդոտին *ՍԳր. Ագաթ. Եղն.* անտի *(փխ.* անդի*) ՍԳր. Եղն. Ագաթ. յետին ձևեր են* անդրագոյն, անդրադարձ, անդրութիւն *«գերագունութիւն»,* անդրանալ *«յառաջխել, կրկին և կրկին անդր գառնալ» (վերջին բառը Բառ. երեմ. էջ 220 գրում է* յանդրանալ *«դեգել», որ պէտք է կարդալ անշուշտ դեգերել՝ հին իմաստով):*

= կազմուած է այն, նա արմատականից՝ դ-տ տեղական մասնիկով, որի ծագումը մութ

է. ասելի ընդարձակ տե՛ս Meillet MSL *10, 259*։

ՆՀԲ թրք. ande, onda, orada, պրս. ānǰā «այնտեղ»։ ԴԴ պրս. andun։ Bopp, Համմտ. քեր. *2, 410 (ֆր. թրգմ.)* այն բառից։ Տէրվիշ. Նախալ. *117* սանս. adha, յն. ἔνθα «անդ»։ Հիւնք. յն. ἔνθα, Глейе, Сбор. мат. Кавк. *31, 6* իւլ. and «անդ»։ Մառ ИАН *1910, էջ 1246* այն բառից՝ ա բացառականի! մասնիկով։ Pedersen Ծուց. դեր. էջ *63* անդ = հիւլ. and «այնտեղ», անդր = սանս. antara «ուրիշ», անտի = ան(դ+ա)տի։ Տե՛ս Pokorny *1, 67* և *2, 336—7*։ Պատահական նմանութիւն ունին լտ. inde, unde «անտի, ուստի»։

+ԱՆԴ «արտ» ՍԳր. Ագաթ. (սովորաբար ո հլ. երբեմն ի հլ. ներգ. յանդի. այսպէս՝ Ս. Գրքում ունինք *21* անգամ ո հլ., *5* անգամ ի հլ., *21* անգամ էլ յանդի. անսովոր ձև է յղ. սեռ. անդուց Նար. Մծբ. *449*), որից անդաստան ՍԳր. անդաստան «արտի պահապան» Ճառընտ. անդել «մշակել» Վրք. հց. գրուած է նաև հանդ Վրք. հց. բ. *447*։

=Նոյն է յաջորդ անդ բառի հետ, որի վերջին իմաստն է «տուն». հին նահապետական կեանքում տունն ու արտը իրարից անբաժան բաներ էին. այսօր էլ «տուն-տեղ» ձևը նման մի երևոյթ է ցոյց տալիս գաւառականներում. Ղրբ. հոնդոմդ, որ իրապէս անդ «արտ» + վարել բառերից է կազմուած, ո՛չ միայն նշանակում է «հող, կալուածք», այլ և «տուն, տեղ, մկկի գտնուած տեղը, կողմը», Մշ. հանդաւորէ՝ որ նոյնպէս հանդ «արտ» բառից է, նշանակում է «տան ներսը, բակը ևն»։—Աճ.

Pictet, բ. տպ. հտ. գ. էջ *112* սանս. anta «վերջ, սահման», հրգ. ente «վերջ», արմոր. ānt «ակօս» բառերի հետ։ Անդաստան բառը Müller *3(1889), 149* կցում է պհլ. *andastān բառին, որ է հպրս. ardastāna «Hochbau» ըստ Spiegel, բայց «համառանոց» ըստ Müller։ (Bartholomae, Altir. wörtb. *133* սխալ է գտնում այս բացատրութիւնը և մեկնում է «Halbstand, պատուհանի պատկը»)։ Հիւնք. ուղղ բառից։

ԳԻՒ.—Գոր. Երև. Կր. Տփ. հանդ, Ախց. հանտ, Ղրբ. հոնդ, Ջղ. պահուած է միայն անդ'էն դ'աշտէն «սարէն ձորէն, վերիվերոյ (խօսիլ)» դարձուածում։ Նոր բառեր են հանդավար «տուն-տեղ», հանդաբան, հանդատէր, հանդատրէֆ «տան ներսը, բակը ևն»։

ՓՈՒ. Ուտ. händ «արտ», händävär «շրջակայք»։

+ԱՆԴ «սեռ, շեմք». արմատ առանձին անգործածական, որ պահում է միայն դրանդ (ի հլ.) Նս. ղ. *4*, դրանդի Եղեկ. խգ. *8*, Ա մկ. ե. *47*, դրանդի (ւոյ, եաց, -ոջ) Եղեկ. ժ. *19*, խգ. *8*. Նս. ծէ. *8*. Դատ. ժբ. *26*, Ամովս. բ. *1*, Դ Թագ. խգ. *8* «նախատուռ, դռան գաւիթ, մուտք կամ շեմք». կազմուած է դր- «դուռ» (Համմտ. դր-ացի) և յիշեալ անդ բառերից։ Համմտ. նաև անդաստակ։

=Բնիկ հայ բառ, հնդեւրոպական ծագումով, որի ցեղակիցներն են սանս. ātā «դռան շրջանակը», գնդ. ąiθyā «դռան ցից երը կամ գերանները», լտ. antae «դռան երկու կողմի սիւները», հիւլ. and «նախասենեակ»։ Համերէն բառի ձևի մասին տե՛ս Meillet, Les dial. indo-eur. էջ *65*։—Հիւբշ. *419*։

Pokorny *1, 59* և *870* (որ գնում է հնխ. anətā), Ernout-Meillet *53* (ըստ որի լատինը չունի երկվանկ *anət-ձևը, որ ցոյց է տալիս վեդայականը), Walde *46*։

Ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. Arm. Stud։

ԳԻՒ.—Պահուած է տեղ-տեղ բարդութեանց մէջ. այսպէս՝ Բլ. դ'ըրբնդի «դռան վերի շեմքը», Սր. անդրվոր «տեսիլք, տան մէջ բնակող մարդիկը», Վն. անդիվոր «տուն-տեղ, ընտանիք» և իբր քաղաքավարական բացատրութիւն «կինը, ամուսինը». սրանք երևան են հանում անդ «տուն» ձևով մի բառ։

*ԱՆԴԱՃԵԼ «մտածել, քննել, հոգ անելով մտմտալ» (գրուած նաև անդիճել, անտիճել) Եղիշ. *14, 63*. Կոստ. երզն. *130*. Քուչ. *60*. անտիճել «խորհրդածել, քննելով մի բան ննջադրել» Մխ. բժշ. *134*, որից անդաճումն, անդէճ «մտմտուք» Նար. անդէճ լինել «մտատանջուիլ» Քուչ. *90*.—ունինք նաև հանդիճել

կամ հանդիջել ձևը՝ որ ՀՀԲ և Հին բռ. մեկնում են «համեմատել, բաղդատել», իսկ ՆՀԲ և ԱԲ համարում են նոյն ընդ անդիեել: Տարբեր է Ոսկ. պօղ. ա. 361 բնդաեել, որ ըստ Վարդանեան, Բառաքնն. դիտ. Գ. 54 պէտք է կարդալ ընդ աեել:

= Պհլ. andāčišn *«ենթադրութիւն, մտածութիւն»*, andāčak *«կարծիք, գաղափար»*, *բայց նաև «չափ, եղանակ, կերպ»*, andāxtan *«հայեացք ձգել, վերից նայիլ»*, պահլևդ. andāzešni *«չափելի»*, պրս. اندار andāz *«չափ, նպատակ»*, اندازه andāza *«կանոն, չափ, կշիռ»*, اچانده andāča *կամ* اندیشه andīša *«խորհուրդ, մտածում, մտատանջութիւն» (որից յետնաբար մհլ. անդիշայ, որ տե՛ս առանձին)*, andāxtan انداختن *«գձել, նետել»*, քրդ. ئەندازە endāze *«կանոն, չափ»*, اندازین andāzin *«զէնք արձակել»: Իրանականից փոխառութիւն են նաև արաբ.* هندسة handasat *«երկրաչափութիւն»*, مهندس muhandis *«երկրաչափ»*, թալմ. הנדם handēs *կամ* הנדז handēz *«չափել»: Բոլորի աղբիւրն է ըստ* Horn § 117, *պնդ.* hąm+tač*:—Հիւրշ. 98:*

Ուղիղ մեկնից նախ ԳԴ, որ մեր բառը պրս. andāča *ձևից փոխառեալ է համարում: Յետոյ ՆՀԲ,* Lag. Arm. St. § 116 *են:*

ԳԻՒ.—Այս բառն է անդեել, անդեւորիլ *նշ. «ըմբռնել, հասկանալ»:*

ԱՆԴԱՄ *(ո հլ. բայց կայ նաև դրծ. -of) «մարմնի մաս, երբեմն նաև ամբողջ մարմինը» ՍԳր. Ագաթ. «ծածուկ անդամ» Յհխ. Յհ. կաթ. նոր դրականի մէջ նաև «ժողովի մասնակից անհատ»: Այս արմատից են* անդամաբիւ *«յօշուած ու առանձին հաշուած անդամներ» ՍԳր.* անդամալոյծ *ՍԳր.* անդամայաղթ *Ոսկ. ես. կամ* յաղթանդամ *Օր. թ. 2. Եւս. քր. Վեցօր. 185.* ջերմանդամ *Վեցօր. 184.* ծանրանդամ *Վեցօր. 185.* թեթև անդամ *Վեցօր. 185.* ձիանդամ, իշանդամ *Նղեկ. իդ. 20.* խեղանդամ *Մանդ.* հաշմանդամ *Սարգ. ևն.— Միջին հայերէնի մէջ* անդամն *ձևն են ենթադրում յդ.* անդամուիճ, *հյց.* զանդամուես *Վրք. հց. Թէոփ. խ. մկ.* անդամնաւորիլ *«զօրանալ, կազմաւորուիլ» Վրդն. ծն. որին համաձայն է գալիս Ղրբ.* ա՛նդէմներ:— *Նոր դրականում կազմուած բառեր են* անդամուհի, բազմանդամ, անդամավճար, անդամակցութիւն, անդամագրել, անդամազնիճ, անդամազննական, անդամազննութիւն, անդամահատել, անդամահատութիւն, առանդամ *են:*

=Պահլ. պազենդ. andām, *պրս.* اندام andām *«անդամ, բարեկարգութիւն, ծածուկ անդամ արական և իգական», քրդ.* ئەندام endām *«անդամ, ծածուկ անդամ»,* هندافhindāw *«ուրք», պնդ.* handāman *«անդամ»: Կազմուած է* han *մասնիկով* dhā>dā *«դնել» արմատից և նըշանակում է բուն «համադրութիւն». Հմմտ. սանս.* sandháy- *«յօդ»: Իրանեանից փոխառեալ են նաև մանդ.* handāmā, *արամ.* הדם haddām *«կտոր, մաս», (հմմտ. յօշեսցես անդամ անդամ. Ել. իԲ. 17). ասոր.* ܗܕܡ hadāma *«անդամ», արբ.* هندام handām *«մարմնի արտաքին վայելչութիւն» (Կամուս, Բրբ. Բրգմ. Գ. 579), Թալմ. Բարդում.* הדם hadēm *«անդամ անդամ կտրտել»=արաբ.* هدم hadm *«փլցնել»:—Հիւրշ. 98:*

Առաջին անդամ Schröder, Thes. 46 *դրաւ ասորերէնից փոխառութիւն: Ցետոյ ԳԴ պրս.* andām. *Նոյնպէս ՆՀԲ,* Lagarde, Urgesch. 86,—Peterm. Gram. 20 *ասոր.* hadom, *անս.* anga*: Հիւնք. յն.* ἔντομή *«կտրել»,* ἔντομος *«միջատաւոր»:*

ԳԻՒ.—Ջղ. անդամ *«ազդր», Տփ.* ա՛նբամ *«մարմնի անդամ», Ղրբ.* ա՛նդէմներ *«ոչխարի կամ տաւարի ազդր, տճկ. բուդ», Զթ.* անդ՛օմ *«ժողովի անդամ», Ակն.* էնդէմ *«մարմին»: Աւելի տարածուած ձև է* անդամալոյծ, *որից վերջածայնի փոփոխութեամբ ունինք Ռ.* անբամալուջ, *Կր.* անբամալօջ, *Պլ. իմաստի փոփոխութեամբ՝* անդամալուջ, անբամալուջ *«խիստ ծանր, տեղից չկարենալ շարժելու բան», նոյն իսկ Թրքախօս Հայերից Առն.* անդամալօզ *(Բիւր. 1900, 454): Նոր ձև է Շմ.* վարանդամ *«ամբողջ մարմինը». Վարանդամս վժվժում ա:*

+ ԱՆԴԱՍՏԱԿ *(ըստ ՆՀԲ ի-ա հլ. Քէև մէջ բերուած վկայութեանց մէջ հոլովուած ձև չկայ) «նախագաւիթ, շէնքի մուտքի առաջ*

գտնուած մասը, vestibule, սահանլըխ» Ոսկ. մ. ա, էջ 20, 107, 230. ուրիշ օրինակ չկայ։

=Նոյն է անդ «նախադուռ կամ բարաւոր» բառի հետ, որ տե՛ս վերը. անծանօթ է միայն բառի վերջի մասը։—Աճ.

ՆՀԲ անդ «արտ» բառից, իբր «ի չափ անդոյ միոյ»։ Հիւնք. լտ. intestinus «ներքին»։

✦ [ԱՆԴԱՍՏԱԿԱՆ «սաստ, յանդիմանութիւն, չախ». մէկ անգամ ունի Սիր. իթ. 35, ուր նոր թարգմանութիւնն ունի պախարակեաց։—Սքխալ գրչութիւն է բառս՝ փոխանակ սանգաստական, ինչպէս ունի Ս. Գրքի լաւագոյն հրատարակութիւնը, Վենետ. 1860։

ՋԲ դնում է իբրև անստոյգ բառ։ ՓԲ հանում է անդաստակ բառից։ ԱԲ ջնջել է սոյն անգոյ բառը։ Ուղիղ բացատրութիւնը տալիս է Վարդանեան ՀԱ 1921, 115։]

ԱՆԴԱՐԻՈՆ «լեռնային անծանօթ մի խոտ» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 102։

Ալիշան (անդ) բառի ձևից դատելով օտար է կարծում։ Շթայնշնայդերի հաւաքածոյում (WZKM 11, 276) գտնում եմ արաբ. انتار antār, որ է «grain de Ligusticum»։

*ԱՆԴԱՐՁ, ի հլ. «կտակ, կտակի թուղթը» Դև. թ. էջ 29, Կանոն. Վրդն. պտմ. Ուռհ. որից անդարձագիր «կտակի թուղթը» Վրդն. պտմ. անդարձանի «կտակներ» Մագ. մեծ են. էջ 49. անդարձական «կտակային» Պտմ. աղեքս. 113։

=Պհլ. andarz «կտակ, խրատ, խորհրդատուութիւն», պազենդ. andarz «պատուէր, խրատ», պրս. اندرز andarz «պատուէր, խրատ, վերջին կտակ (խօսքով կամ նիւթական)»։ Իրանեանից փոխառեալ են նաև վրաց. ანდერძი անդերձի «կտակ, հրաման, պատուէր», ანდერძნამაგი անդերձնամագի «կտակ, կտակագիր», მოანდერძე մոանդերձե «կտակակատար»։ (Այս բառերը հայերէնի միջոցով անցած չեն վրացերէնի, այլ ուղղակի պարսկերէնից, ինչպէս ցոյց է տալիս «հրաման, պատուէր» նշանակութիւնը, որ հայերէնում չկայ և իրանեանի մէջ միայն գոյութիւն ունի)։—Հիւբշ. 99։

Հներից Վրդն. պտմ. էջ 99 և 161 դառնալ բառից է հանում. «Եւ անդարձն անկրկնելի կոչի ստուգաբանութեամբ... զի անդարձ է ասեն և հաստատուն է զկնի մահու կտակ»։ Այս մեկնութիւնը դնում է նաև Dulaurier JAs. 16(1860), էջ 308, իբր «irrévocable»։ Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։

ԳԻՒ.—Տփ. անդէրձ «կտակ» նոր փոխառութիւն է վրացերէնից։

ԱՆԴԵԱՅ, սովորաբար յոգնակի գործածուած՝ անդեայք (հոլովուած անդէից, անդեայց, յետնաբար անդէից), որ և անդի (ւոյ, ւոց) «պահաք, արջառ, նախիր» ՍԳր. որից անդէորդ «հեզնարած, նախրապան» Խոր. Ածաբ. Նոր կիր. Երզն. մտթ. գրուած և անդիւորդ Եւս. քր. (բայց անդէորդութիւն Եւս. քր.), անդեաւորդ Նիւս. բն. անդուորդ, անդիւորդ Փիլ.։

ՆՀԲ անդ «արտ» բառից, «իբր այն՝ որ ճարակի կամ պահին ի վայրս անդոց»։ Անդևղայ տե՛ս Դևղ։

ԱՆԴԵՂԻԿ կամ ԱՆԴԵՂԻԿՈՆ «ծաղիկ ինչ աղնիւ պիտանի ի դեղօրայս»։ Ոչնի միայն ՓԲ՝ առանց վկայութեան։

*ԱՆԴԵՐՁԱՊԵՏ, ի–ա հլ. «Պարսից արքունիքում մի մեծ պաշտօնեայ». այս տիտղոսով ունինք մոգաց անդերձապետ Բուզ. մովան անդերձապետ Ողիշ. Փարպ. դերանդերձապետ Ողիշ. սակատաւ անդերձապետ Բուզ. նոյն է նաև հանդերձապետ «հազարապետ արքունի տան, վերակացու» ՍԳր. Եւս. քր. և պտմ. հանդերձապետութիւն «հազարապետութիւն» Երզն. մտթ.։

=Պհլ. andarzpat «օգնական, խորհրդական», որ կազմուած է andarz «խորհուրդ» (տե՛ս անդարձ բառի տակ) և pat «պետ» բառերից։ Հին Պարսից մէջ այսպիսի խորհրդականներ կային մոգպետի, նահանգապետների, հրամանատարների մօտ են. քանի այսմ ունինք պհլ. andarzpat-i-vāspuhrakān «անդերձապէտ աւագանւոյ», *möγān andarzpat (որից՝ փոխառեալ է ասոր. muγān-andarzbaδ) «մոգպետի խորհրդականը»=մոգաց անդերձապետ, *dar-andarzpat (ըստ Թիրեաքեանի այսպէս պէտք է ուղղել Կարնամակ ժդ. 9 պհլ. yalandarzpat գրչութիւնը) «խորհրդական արքունի դրան»=դերանդեր-

ձապետ (կազմուած պհլ. dar =պրս. دَر dar «դուռն» բառով),*Sagastān- andarzpat «խորհրդական նահանգապետին Սագաստանի» =Սակսաաձի անդերձապետ: Անդերձապետը սատրապից յետոյ նահանգի ամենամեծ պաշտոնատարն էր: Հայաստանում էլ կար մի անդերձապետ, որով հազարապետութեան կամ բարձրագոյն իշխանութեան գաղափարը կցուեց այս բառին: Վերի պհլ. բառերը հայերէնի մէջ պիտի տային *անդարձապատ, *դարանդարձապատ ևն, բայց հայկական բերանների մէջ ազդուելով հանդերձ «զգեստ», հանդերձաւոր «պատրաստութիւն» և պետ բառերից, ստացել են այս ձևերը:—Հիւբշ. 99, 179:

ՀՔ անդարձ «կտակ» կամ հանդերձ բառից: ՆՀՔ, Հիւնք. ինչպէս և Պատկանեան JAs. Paris 1866, 1, 115 հանդերձապետ հանում են հանդերձ բառից: Այս բառի վրայ մի ընդարձակ և լաւ քննութիւն ունի Պատկ. Матер. II. 16—17, յետոյ Բազմավէպ 1895, էջ 146—8:

ԱՆԴԻԱԿ «աստղի անուն». ունի միայն ԱՔ. մէկ անգամ գործածում է Շիր. էջ 73:

Ըստ Ալիշան, Հին հաւ. 130 յիշեցնում է Հայկի գօտու աճիտակ աստղը:

*ԱՆԴԻԼԻՊՍ «բարեխօս կամ պաշտպան». մէկ անգամ գործածուած է Լմբ. մատ. էջ 338 «Մտցէ առաջի Հօր և գալստեանն մերոյ առնա և խօսակցութեան անդիլիպս և միջնորդ լիցի» (լուսանցքում մեկնուած է «առիթ»):

=Յն. ἀντίληψις «պաշտպանութիւն, միջնորդութիւն, բարեխօսութիւն». աստւգաբանօրէն նշանակում է «փոխարինը իր վրայ առնել»:—Հիւբշ. 340:

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ:

*ԱՆԴԻՄՈՆ «է մետաղ ինչ կիսահրահալ, այլ ոչ ծաւալական». ունի միայն ՓՔ, առանց վկայութեան:

=Լտ. antimonium, իտալ. antimonio, ֆրանս. antimoine «ծարիր» բառերից նոր փոխառութիւն:—Ա.Մ.

*ԱՆԴԻՇԱՅ «հոգ, մտածութիւն, մտմտուք». գործածական է յետնադարեան ռամկալեզու գրականութեան մէջ. ինչ. Կոստ. երզն. 101, 155:

=Պրս. اندیشا andiša համանիշից փոխառեալ, որի վրայ ընդարձակ տե՛ս անդաեել:

Ուղիղ մեկնեց Զօպանեան, հրտր. Քուշակի, էջ 131:

*ԱՆԴԻՏԻՈՆ կամ ԱՆԴԻՏԵՍՈՆ «անգեղայք». ունի միայն Բառ. երեմ. 19 (խանգարուած ձևով):

=Յն. ἀντίδοτον «անգեղայ, դեղթափ, հակաթոյն» բառն է. ըստ այսմ պէտք է ամբողջը փոխել ու կարդալ գոնէ՛ անդիտոդոն «անդեղայ»— Ա.Մ.

*ԱՆԴԼԻՏԵՐԻՈՆ «մի տեսակ չափ». իբր օտար բառ մէկ անգամ յիշում է Շիր. էջ 31 «Կիւաթոս չափ է դինւոյ արկանելոյ յապակիս, և կոչի ըստ աստիկեցւոց լեզուի անդլիտերիոն. գինեհան է երկայնադաստակ»:

=Յն. ἀντλητήριον «ջրի դոյլ», որ նաւազականն է ἀντλητήρ «նաւի ջուրը պարպելու դոյլ» բառի և սա էլ գալիս է ἀντλέω «նաւի ջուրը պարպել» բայից:—Հիւբշ. 340:

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բացատր. չափ. և կշռ. էջ 43. յետոյ Պատկ. հրտր. Շիր. էջ 31:

*ԱՆԴՈՀ «մտատանջութեան հիւանդութիւն». արմատական ձևով մի քանի անգամ գործածուած է բժշկարանում «Նոան շարաբ, որ օգտէ անդոհի, որ ի մարդոյ սիրտ բնկնի. Փորանցի և վերաբերութեան (փսխել) և անդոհի օգտէ» (տե՛ս ՆՀՔ, յաւել. Բ. էջ 1043 բ), «Ջանդոհ և զարտնեղութիւն յետ տանի» (տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 62 բ): Որից անդոհական «սարսափելի, մարդու վրայ վախ ձգող» Սարգ. յուդ. գ. էջ 665. Մաշկ. անդոհիլ կամ անտոհիլ «վախից դողալ, սիրտը բաբախել» Ոսկիփ. Ախտարք. անանդոհ «անցաւ, անվիշտ, հոգերից և մտատանջութիւնից ազատ» Ոսկ. յհ. բ. 10, էջ 603 բ (տպ. անդոն):

=Պհլ. andōh «մտմտուք, ցաւ, մտատանջութիւն», պրս. اندوه andōh «տխրութիւն, տրտմութիւն, հոգ», اندوهیدن andōhīdan «տխրիլ, տրտմիլ», اندوهگین andōhgēn կամ اندوهناک andōhnāk «տրտմագին, տխրագին»:—Հիւբշ. 99:

Նախ ՆՀՔ կցեց պրս. andōh բառին: Lag. Urgesch. 174 և Beitr. bktr. Lexic. 47

պրս. andōh բառի հետ միասին հանում է սանս. dhu=գնդ. du արմատից։

ԱՆԴՈՒՐԱՆՔ (-անաց) «ժայռ, սուր քարեր, անպք, արտևանք լերանց». հին քերականներից առնելով ունի միայն ՀՀՔ, որից էլ ՓԲ։ Այս բառը գիտէ ՆՀԲ իբր գաւառական բառ և գրում է անդորգանք «ափափայք և ժայռք լերին մօտ ի գագաթն». նոյնը կրկնում է խոռն բառի տակ. չունի ԱԲ։

—ԱՆԴՈՐ (հոլովուած միայն յանդորու) «հանգստութիւն, հանգիստ (իբր գոյ.), լայն, արձակ, ընդարձակ, հանգիստ (իբր ած.)» ՍԳր. Վեցօր. գրուած նաև անդոյր Լաբուբ. 18. Սեբեր. ընդոյր Մծբ. 347, 364. անդոյրբ Վեցօր. 141. Յճխ. Լմբ. սղ. ընդորբ Սրգ. ա. յհ. դ. էջ 679 (ա. տպ.), որ բ. տպ. էջ 535 ունի անդոյրբ ձևը. որից անդորրութիւն Ծն. իգ. 22. անդոյրրութիւն Եզիշ. գաւ. անդորրիչ Եփր. համաբ. ընդորրութիւն Փիլ. յովն. էջ 609, անդորրագիր (նոր բառ). այժմ ընդունուած է միայն անդորր ձևը։

=կազմուած է ան (ոչ բացասական) մասնիկով դորր, դոյր արմատից, որի վրայ ընդարձակ տե՛ս դիւր։— Ա.Ճ.

ՆՀԲ համայն դիւր և Բրբ. տարսրզ, տարլրգսրզ «ոչ նեղ»։ Lag. Urgesch. 208 սանս. dhar «տանիլ» արմատից։ Հիւնք. յն. ἄνδηρον «գետափին» բառից։ Մամիկոնեան, Հազարից մէկը, էջ 237 համարում է կազմուած ան- բացասականով՝ դորր ձևից, որ գոնում է գւռ. դորր գալ (Ղրբ. ևն) ոճի մէջ. այսպէսով անդորր լինում է «անշարժ». (բայց ըստ իս գւռ. դիւրիւր գալ, դիրուր գալ «շարժուիլ», դիրար տալ, իրար տալ «շարժել» ևն ձևվերը ծագում են ընդ իրեար (իրար) ձևից և հետևաբար կապ չունին վերի դորր կամ անդորր բառերի հետ. տե՛ս իմ Գաւառական բառարան, էջ 279 ա)։

Գիւտ.—Առանձին Բրբախոս հայոց մէջ գործածական անհոկ արբոֆ օրուրմուշ «անհոգ նստել է» ոճի երկրորդ բառը Պէտէլեան, Արևելք 1888 նոյ" 8—9 մեկնում է հյ. անդորրոֆ ձևով։

+ԱՆԴՈՒՆԴ, ո հյ. (գործածուած է անեզաբար, նոր լեզուի մէջ միայն կայ եղակի անդունդ) «անչափակ խորութիւն» ՍԳր. Վեցօր. Ագաթ. Կոչ. փիլ. «դժոխք, գերեզման» նաբ. որից անդնդալից Ոսկ. Ես. անդնդախորհ Ոսկ. բ. կոր. անդնդական Ագաթ. անդնդային Ագաթ. անդնդեհեպետ (կրճատուած անդնդադեհեպետ ձևից) «դժոխքի իշխան» Երզն. քեր.։

=կազմուած է ան- բացասականով *դունդ «յատակ» բառից, որ առանձին աւանդուած չէ։ Ճիշտ նոյն կազմութիւնն ունին յն. ἄ-βυσσος, հսլ. bez-dūna, ռուս. бе́здна, գերմ. ab-grund, գալլ. an-nwfn ևն համանիշները՝ որոնց բուն նշանակութիւնն է «անյատակ»։ Այսպէս է մինչև անգամ մեր գաւառականներից Երև. վն. անատակ «անդունդ» (օր. անատակը գնաց)։ Հյ. *դունդ «յատակ» ծագում է հնխ. bhundhos «խորք, յատակ» բառից, որի միւս ժառանգներն են սանս. budhnás, գնդ. bunō (որից փոխառեալ հյ. բուն), յն. πυθμήν, πόνδαξ, լտ. fundus, իռլ. bond, bonn, անգլսք. botm, հիսլ. botn, հրգ. bodam, գերմ. boden, անգլ. bottom (տե՛ս Walde 325, Boisacq 825, Klude[10] 65, Pokorny 2, 190, Ernout-Meillet 385)։ Բայց հնխ. bhundhos պիտի տար հյ. *բունդ, որով մեր բառը լինելու էր *անբունդ։ Բ ձայնի դ-ի վերածուիլը կարելի է մեկնել մի քանի ձևով։ Նախալեզուն bhundhos բառին իբր հոմանիշ ուներ նաև *dhubnos «խոր» բառը (համմտ. հսլ. dūno «յատակ», ռուս. дно, լիթ. dùgnas «յատակ», dubùs «խոր», գոթ. diups, հրգ. tiof, գերմ. tief, գալլ. dwfn «խոր»)։ Meillet MSL 12, 430 կարծում է, որ հնխ. bhundhos ազդուելով dhubnos-ից, նախաձայնի փոխոխութեամբ գարձել է *dhundhos, որից հյ. *դունդ։ Vendryes MSL 18, 309 ենթադրում է՝ որ bhundhos ձևի մէջ նախաձայնը պարզապէս ազդուել է վերջաձայնից. բայց նոյն հեղինակը (անդ, էջ 310) ցոյց է տալիս նաև, որ հին լեզուների մէջ «աշխարհ, անդունդ, խորք, խորութիւնք ևն» նշանակող բառերը՝ իբր սերբագան գաղափարներ՝ արդիլուած լինելով բերան առնել, ենթակայ են եղած համաւոր ձայնափոխութեան։ Այսպիսի մի ձայնափոխութիւն կարելի է ենթադրել նաև հայերէնի համար։

Հներից Նիւս. բն. գրում է. «Յայտնէ և անուն անդնդոց զնիւթոյն անբաւութիւն», որով բառը համարում է կազմուած ան ժխտականով՝ Lagarde, Urgesch. *213 համեմատում է լտ.* fundus *«յատակ» բառի հետ, ընդունելով որ լտ.* f=*առնս.* dh: *Բայց այս մեկնութիւնը չի ընդունում* Lag. Arm. Stud. *§ 123, համարելով ըստ* Pott, KZ *19, 28 թէ լտ.* fundus=*յն.* βένθος: Bugge, Etrusk. u. Armen. *96 անս.* adhas *«տակը» բառին է կցում: Հիւնք. ան-ընդունող: Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ* Meillet MSL *12, 430:* Pedersen, *Հայ. գր. լեզ. էջ 35 կցում է հլ.* dūno *«գետին», լիթ.* dùgnas *«գետին», իռլ.* damun *«աշխարհ»,* fudomain *«խորտնկ», կիմր.* dwfn *«խոր» բառերին:*

Գիւմ.—երև. ա՛նդունդ, *Զթ. Հճ. Ջղ.* ան-դ՚ունդ՚, *Շմ.* անտունդ, *Ախց.* անդ՚ունք, *Խրբ. Կր. Սեբ. Սչ.* անթունք, *Նր.* նանդունդ, *Ագլ.* ա՛նդունտ, ɯ՚ինդիւնտ, *Մշ.* յանդ՚ունտ, *Ալշ.* յանտուտ, *Տփ.* անդուրկ, *Սլմ.* ɯինդիւտկ՚, *Մկ.* նɯինդիւտ. *Թրքախօս հայերից՝ էնկ.* անթունք *«նեղ ու մութ տեղ» (Բիւր. 1898, 789), Ատն. ոճով աստում է* antunta gitdi *«յաղթուեցաւ, տարուեց (խաղի մէջ)» (Արեւելք 1888 նոյ. 8—9):*

ԱՆԴՈՒՆՔ *«ամբարտաւանութիւնք». ունի միայն Բառ. երեմ. էջ 19:*

ԱՆԴՈՒՍԱՅ *«անարգ». ունի միայն Բառ. երեմ. էջ 19:*

Անդուստ, Անդամին, Անդր տե՛ս Անդ:

ԱՆԴՐԱԼ *կամ* ԱՆԴՐԱՆԱԼ *«գրգռուիլ», որից* անդրացուցիչ *«գրգռող». մէկ անգամ գտնում եմ գործածուած վեցօր. 190. «Չև ևս երևեալ են բնաւ ամենևին կորեան մատաղոյն ատամունք և որ գրգռիցէ ոք զնա՝ այնու տեղեաւ ընդ որ ատամունքն գալոց են՝ յարձակի առնու զանդրացուցիչն իւր»: Աբ մեկնում է «ձանձրացնող», ըստ իս պէտք է հասկանալ «գրգռող», որովհետև անդրացուցիչ կրկնութիւնն է նախորդ «որ գրգռիցէ» ձեւի: Աբ ունի նաև* անդրալի *«ձանձրալի»:*

Աբ անշուշտ կապում է անդրանալ *«հանապազորդել» բային: Վերի մեկնութիւնս տե՛ս իմ Հայ. նոր բառեր, հտ. Ա. էջ 156: Անհրաժեշտ է յունաբէն բնագրի համեմատութիւնը:*

Անդրակ տե՛ս Անդրակ:

ԱՆԴՐԱՆԻԿ, ն և ի-ա *հլ. «առաջնեակ, նախկին, երիցագոյն» ՍԳր. Կոչ. որից* անդրանկածին, անդրանկացուցանել, անդրանկութիւն *ՍԳր.:*

ՆՀԲ=լտ. anterior *«առաջին, նախնական»: Հիւնք. բնաիր բառից:* Bugge KZ *32,2* ան և իկ *մասնիկներով՝* *antero, *antro- *ձևից, որին է պատկանում նաև լտ.* anter-ror:

Գիւմ.— Երև. անդրանիկ, *Զթ.* անդ՚րանիգ, *Սեբ.* անթրանիգ, *Կր.* անթրանիկ *«միամօր» (այս իմաստով ունին հներից Շար. Նար. Սկեւռ. եւս., որոնց օրինակները տե՛ս ՆՀԲ). Մկ.* ɯնդրɯնիկ, *Մշ.* անդրենգ, *Ալշ.* ընթրանի՛, *Պլ.* անթառանիգ *(միայն իբր յատուկ անուն):*

*ԱՆԴՐԱՎԱՐՏԻՔ *(սեռ.-հաց, միշտ աննզարար գործածուած). Հին լեզուով նշանակում է «ներքնավարտիք» (մարմնի վրայից հագածը). այս նշանակութիւնը երևում է գործածուած տեղերից և հաստատւում է բառի ծագումով. համմտ. «Արասցես նոցա անդրավարտիս կտաւիս ծածկել զառականս մարմնոց իւրոց միջովք չափ և բարձիւք չափ» Ել. իր. 42. «Անդրավարտիս կտաւիս զդեցցի ի վերայ մարմնոյ իւրոյ» Ղեւտ. զ. 10: Նոր գրականում բառի իմաստը փոխուելով՝ գարձել է «գրպի վարտիք»: Այստեղ էլ մեր երկու գրական լեզուները տարբերում են իրարից նրանով՝ որ արևմտեան գրականում* անդրավարտիք *նշանակում է «ներքնավարտիքի վրայից հագնելու լայն ասիական տափատ» (և ոչ երբեք եւրոպական տափատը), իսկ արևելեան գրականում «եւրոպական տափատ». ճիշտ ինչպէս որ ռճկ. շալվար բառն էլ արևմտեան բարբառներում նշանակում է «ասիական լայն տափատ», իսկ արևելեան բարբառներում նշանակում է «եւրոպական տափատ»:*

=Բառիս ծագումը տե՛ս վարտիք:—Աճ.

ՆՀԲ անդր *կամ պրս.* andar *«ներքին» և*

վարտիք *բառերից։ Նոյնը նաև Տէրվիշ. ՀԱ. 1887, էջ 22։*

Անդրէն տե՛ս Անդ։

***ԱՆԴՐԱՔՆԷ** «փրկրիմ». սխալ գրչութեամբ գրուած է անդրճնէ Հին բռ. (ըստ ՀԲուս. § 3115), անդոճօէ Գաղիան. (ըստ Բառ. երեմ. յաւել. 573)։*

=Յն. ἀνδράχνη «փրփրիմ», որից փոխառեալ է նաև ասոր. ܐܢܕܪܟܢܝ andrakni «փրփրիմ բոյսը, դանդուռ, խլֆա, լտ. portulaca»։ Յոյն բառը ծագում է ἀνδρο «այր» + ἄχνη «ուռուցք, փրփուր» բառերից։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

***ԱՆԴՐԻ** (բոյ, բեաց) «արձան» Ոսկ. ես. և յհ. Կոչ. 101, 402. Եւս. պտմ. 104. Խոր. Եղիշ. մասն. 249. Էլ. արիստ. 65 (յգ. սեռ. անդրոց). Պիտ. որից անդրիագործ Ագաթ. անդրիասեղծ Նիւս. բն. կրճատմամբ անդրագիր «արձանագրուած» Նար. խչ. կիսանդրի (նոր գրականի մէջ)։ Բառիս երկրորդ ձևն է անդրիանդ (գրուած նաև անդրիանա, սխալ գրչութեամբ անդրիաա), ի–ա հլ. «արձան» Եւս. քր. բ. 268. Դամասկ. Նոննոս. որից անդրիանագործ Ոսկ. մ. գ. 6։*

=Յն. ἀνδριάς, սեռ. ἀνδριάντος «անդրի, արձան». ուղղականից առնուած է հյ. անդրի ձևը, իսկ սեռականից՝ անդրիանդ. այսպէս նաև ասոր. ܐܢܕܪܝܢܛܐ andryantā, վրաց. ანდრიანტი անդրիանտի։ Յոյն բառը ծագում է ἀνήρ, սեռ. ἄνδρός «այր, մարդ» բառից և բուն նշանակում է «մարդու արձան», յետոյ ընդհանրապէս «արձան»։—Հիւբշ. 340։

Ուղիղ մեկնեցին ՀԲ, ՆՀԲ ևն։ Կ. Վրդ. Շահնազարեան, Երկրագունտ 1864, թ. 5, էջ 7 հանում է Հնդկաց Իգդրա աստուծոյ անունից։

***ԱՆԴՐԻԱՍ** «Նեմեսիս աստուածուհու մակդիրը». ըստ Արիստոտէլի նաև «արարիչն երկնի և երկրի». Դաւ. անյ. ունի միայն ՀԲ։*

=Յն. Ἀδράστεια նոյն նշ. բառիս բուն իմաստն է «անխուսափելի»։

Ուղիղ մեկնեց ՀԲ։

ԱՆԴՐԻՏԱԿ «վայրի չամանի» Բժշ.։

ՋԲ դնում է իբրև անստոյգ բառ— ՀԲուս. չունի։

ԱՆԴՐՈՅԹՔ «զկոտոց, որձ, ստամոքսի վեր գալը». մէկ անգամ ունի Նիւս. կազմ. ժգ։

ՆՀԲ և ՋԲ հանում են անդր բառից։

ԱՆԴՐՈՒԱՐ, գրուած նաև անդրուվար, անդրվար, անդրավար, անդուար, ի–ա հլ. «կաթքի կամ պատգարակի լծուած ձի, ջորի, կառք, սայլ» Ոսկ. ես. և մ. Ագաթ. Սեբեր. Փարպ. «մի տեսակ ձի» Մագ. քեր. էջ 241 = Երզն. քեր. գործածուած է նաև օձի համար՝ Եղիշ. Թղմ. 296։

ՀՀԲ անդավար, իբր անդը (արտը) վարող։ Հիւնք. Հանդրին անդուդգ «Ադրիական ծով» ձևից։ Հացունի, Դաստիարակութ. 400 անդր և վարել բառերից։

***ԱՆԵԹՈՒԲ** «սամիթ», ունի միայն Բառ. երեմ. յաւել. 565. պէտք է ուղղել անեթում, իբր՝ = լտ. anethum «սամիթ», որ ծագում է յն. ἄνηθον համանիշից. Ֆրանս. aneth, anet «սամիթ, fenouil»։—Աճ.*

***ԱՆԵՄՈՆ** «պուա, ծաւիկոտրուկ ծաղիկը, տճկ. կելինճիք չիչէյի» Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 103. Նոյնը յանէմոն ձևով՝ Բառ. երեմ. յաւել. 570։*

=Յն. ἀνεμώνη «պուա, anemone coronaria կամ hortensis L.». ծագում է ἄνεμος «քամի» բառից, իբր ծաղիկ՝ որ ամենաանշան քամուց բացւում է. ըստ այսմ կայ հյ. Թարգմանաբար հողմածաղիկ։ Յունարէնից փոխառեալ են նաև Ֆրանս. anémone, իտալ. գերմ. anemone ևն։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

ԱՆԵՐ, n հլ. (յհանապար ի–ա հլ.) «կնոջ հայրը» ՍԳր. «անհրորդի, անհրձագ» Խոր. բ. 77, 79. «անհրանք, անհրոջ տունը» Բուզ. գ. 5, Վահր. յար. որից Աներ Իբրանեու կամ Իբրանեներ «Իբրանանի դիմաց գտնուած մի սար, երկրորդ Իբրանան» Օրին. ա. 7, ժա. 24. անեռանալ «աներ դառնալ» Եփր. ծն. էջ 92. նոր բառեր են անեռորդի, անեռձագ։*

Տէրվիշ. Altarm. 35 անես. nar, գնդ. nar, պրս. نر nar, յն. ἀνήρ «այր» բառերի հետ։ Տէրվ. Նախալ. 164 ուզում է կապել հյ. ներ բառին։ Հիւնք. ներ-ից։ Bugge IF 1, 444 անես. Jāmātar, գնդ.

zāmātar, *յն.* γαμβρός, *լտ.* gener, *ալբան.* ðender, *լիթ.* žéntas, *հլ.* zętĩ *համանիշների հետ հնխ.* *g¹anətēr *ձևից՝ նախաձայնի կորուստով։* M. E. Schmidt KZ *47, 189 գերմ.* Ähn, *հրգ.* ano *«մեծ հայր, պապ» բառի հետ, որի ներկայացուցիչն է սակայն հլ.* ճաճ *(տե՛ս անդ)։*

Գիր.—Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. աներ, *Ախց. Ակն. Երև. Խրբ. Կր. Պլ. Ռ. Սեբ.* աճէր, *Գոր. Ղրբ. Շմ.* հաճէր, *Տիգ.* մճէր, *Ագլ. Մկ. Ոզմ. Տփ.* աճիր, *Հմշ.* օճիր. *այս բոլորը նշանակում են «աներ, կնոջ հայրը».— Մրզ.* աճէր, *Հճ.* աճեյ, *Ջթ.* աճիր *«աներդրդի» (աները կոչւում է Մրզ.* կակօ, կէյճաթա, *Ջթ.* գրբչրոր)։ *Աներ բառի այս նշանակութիւնը երբեմն գրաւում ենք նաև հների մօտ. Նշ֊ի տալիս է երկու օրինակ. Աներոյ նորա եւթագեայ. Խոր. բ. 77. Աներոյն իւրոյ Արտաւազդայ. Խոր. բ. 79. որոնց վրայ կարող ենք աւելացնել նաև Օրբ. Հրատր. էմինի, էջ 135՝ Գնայ առ աներն իւր Գագիկ ի Վասպուրական (Հճատ. Արրատ. 1912, էջ 1143)։*

Աններ *«անապատ կամ անմարդաձայն». ունի միայն Բառ. երեմ. էջ 20։*

+Անէծ, ի *հլ. (միայն յոգնակի գործածուած) «անէծք, նզովք, բանադրանք, անաթեմայ» ՍԳր. Ագաթ. Ոսկ. Եփես. եզակի գործածութեան մի օրինակ տալիս է Նշ֊ի՝ Եփր. օրին.—որից* անիծարեր *Ագաթ.* անի ծանել *ՍԳր. (յետնաբար* անիծել. *ըստ այսմ ուղղելի է Ջի֊նշ* անիծեցից՝ *Բուզ իգ. 8 և նմաններբ).* անիծաանելի *Երեմ. ժե. 10.* անիծիչ *ՍԳր.* հրապարականէծ *Առակ. ժա. 26։*

= *Հնխ.* neid- *«նախատել, հանդիմանել» արմատից, որի միւս ժառանգներն են՝ սանս.* nindati, nidyáte, nidā *«ծաղրել, ծաղր», գնդ.* nāismi (<*nāidmi>*nāiδmi> *nāizmi) «նախատել, ապտակել», յն.* ὄνειδος *«նախատինք, յանդիմանութիւն, ամօթանք», ὀνειδίζω «վիրաւորել, նախատել, յանդիմանել», լիթ.* naids *«ատելութիւն»,* nīstu, nīst, nīdēt *«ատել», գոթ.* ga-naitjan *«անուանարկել»,* naiteins *«անուանարկութիւն», հբգ.* neizzen *«չարչարել» ևն* (Boisacq *703,* Trautmann *199,* Pokorny *2, 322)։ Բառս սլաւական, իտալական և կելտական ճիւղերում պահուած չէ։ Հայերէնի մէջ ծ ձայնը ծագում է նախաւոր տ-ից. հմմտ.* անիծ, *խայծ ևն, իսկ նախաձայն տ-ի յարաբերութիւնը ճիշտ այնպէս է՝ ինչպէս* անուն=*յն.* ὄνομα=*լտ.* nomen։

Հինք. մեկնում է իբր ան֊օծանել։ *Ուղիղ մեկնեց* Bugge KZ *32, 46 և* IF *1, 450, որ ընդունում են նաև* Pedersen KZ *38, 206; 39, 423,* Meillet MSL *20, 211։* Margoliuth, *Թրգմ. Բիւր. 1900, 334 երր.* נאס niōṣ *«անիծել» Սղ. ժ. 3 ձևից է կցում (սրա արմատն է ըստ* Gesenius, *էջ 472 երր.* נאס naṣ *«արհամարհել, անարգել», որ նոյն է ասուր.* nāṣu *հոմանիշի հետ)։ Գազանճեան, Արև. մամ. 1902, էջ 74 երր.* նիէյց *բառից փոխառեալ՝ հայկական ա յատկութեամբ։ Մառ* ИАН *1918, 348* ան=*եւամ.* na, *ափխազ.* anə *«ատուած» +*ðf=*վրաց.* ծղ՛վ, *մինգր.* ɓր֊ղ՛ուալա *«անէծք»։*

Գիր.—Ոզմ. Վն. անէծ, *Ալշ. Մշ. Շմ. Ջղ.* անէծկ, *Ախց. Ջթ. Կր. Մկ. Ննխ. Ռ.* անէցք, *Երև. Ղրբ.* ա՛նէցկ, *Հճ.* անէցք, անեցք, *Խրբ. Պլ. Սչ.* անէցգ, *Ակն. Սեբ.* անէսգ, *Տիգ.* մնէձք, *Ագլ. Գոր.* ա՛նիծք, *Տփ.* ա՛նիծկ, *Սլմ.* անէսք՛, *Ասլ.* անէս*, *Հւր.* անիսկ, *Մրզ.* անիսկ՛, *Հմշ.* օնիձք.—*բայական ձևով՝ Ալշ. Ջղ. Սլմ. Վն.* անիծել, *Ախց. Երև. Կր.* անիձէլ, *Շմ. Տփ.* անիծիլ, *Սչ.* անիձել, *Ննխ. Սեբ.* անիձէլ, *Ասլ.* անիձէ՛լ, *Ջթ.* անիձիլ, *Ակն.* անիձիլ, *Պլ.* անիձէլ, անրձէլ, *Ոզմ.* անրծիլ, *Մկ.* մնրծիլ, *Ղրբ.* ընէ՛ծիլ, *Հմշ.* օնիձուշ, *Ագլ.* ա՛նիծք *ասլ.:—Սղերդի արաբախօս հայերն ունին* անիզազ *«անիծած, անիծեալ» (Բիւր. 1899, էջ 116), Առանայի բրքախոս հայերն էլ* անէս *«անէծք» (Բիւր. 1900, 454)։ Նոր բառեր են* անէծքաբան անէծքագիր, անէծքաչար, անէծքատու, անէծքատուր, անէծքմոր, անիծուկ։

Անընկմաձ *«անձնասպան». Նորագիւտ բառ, որ ունի Սմբ. դտ. 7, 147 (այլ ձեւ.* ա֊

նակամաճ): = *Երկրորդ մասն է մաճ, բայց անծանօթ է աճրնկ:*

ԱՆԹԱՅՐ *«կայծ» Բառ. երեմ. 20. «բառ յն. ἄνθραξ, կայծ, կայծակն» ՆՀԲ յաւել. գուռ., «ֆր. anthrax, շիրիփէնչէ (վէրքը)» (Նուպար, Բառ. ֆր. 42):*

***ԱՆԹԱՆԻ** *«Հրէից հօթներորդ ամիսը, Թըշրին». մէկ անգամ ունի Գ. Թագ. ը. 2: (Այսպէս ըստ ՆՀԲ և ԱԲ. իսկ տպ. Պօլսոյ 1895 թ. աթանիմ):*

= *Եբր. բնագրի* הָאֵתָנִים hāθānīm *բառն է, որ յն. ἀθανίν տառադարձութեան վրայից անցել է մեզ: Բուն նշանակում է «մշտահոս» և այսպէս էր կոչուած, որովհետև աշնանային անձրևները այս ամսին էին սկսում լցնել ցամաքած գետերը: Այս ամսի առաջին օրը սկսում էր փող հնչեցնելու ոտնը և 15-ին՝ տաղաւարահարաց ոտնը (բառարան Ս. Գրոց, էջ 30):—Ա՛ճ.*

***ԱՆԹԵՂ** *(ներգ. յանթեղի) «տաք մոխիր» Վեցօր. 158. Փարպ. որից* անթեղ ճարկանել *«կրակը մոխրի տակ թաղիլ» Կիւրղ. ել:*

= *Կովկասեան լեզուներից փոխառեալ բառ է, որի արմատը պահում է վրացերէնը. այսպէս՝* ანთება անթեբա *«կրակ վառել, հրահրել, բորբոքում»,* ანთებული անթեբուլի *«վառած»:—Ա՛ճ.*

Մեր արմատի հետ պատահական նմանութիւն միայն ունին յն. αἰθάλη «մոխիր, մուր, վառած ածուխ», αἴθω «հրավառ», αἴθω «վառիլ», ἄνθραξ «ածուխ», ἀνθρακία «անթեղ» են բառերը, որոնցից փոխառեալ է նաև վրաց. ანთრაკი անթրակի:

ԳԻՒՒ.— Ալշ. Հճ. Ոզմ. անթեղ, *Երև. Խրբ.* անթէղ, *Մշ.* անթեխ, *Զթ.* ինթեղ.—*իսկ Տիգ.* անթիղ *«անթեղելու յատուկ ածուխի մեծ կտոր»: Նոր բառեր են* անթեղել *(Ակն. ենթէղիլ),* անթեղնել *(Ղրբ.),* անթեղկալ, անթեղուել, աեանթեղ, անթղոց *(Մշ.) «կրակը խառնելու ձող», որ ՆՀԲ-ի մօտ (Հտ. Բ, էջ 1060 գ)* անթեղոց *ձևն էլ ունի, իսկ Բլ. Դվ. Վն. դարձել է* անթրոց:

***ԱՆԹԵՄ** *(որ և ըստ ՋԲ և ԱԲ* անթեմն*) «մի տեսակ բոյս կամ ծաղիկ». Կոչ. 321 (Թարշամեսցի ոսկեծաղիկն... զի անթեմն այս երեւելի բանջար է բաղմապատիկ, որ շուրջ դիւրեաւ ունի բուսանել ճառագայթաձեւ զբաւերովն). որից էլ ճառընտ. և Տօնակ.: Նոյնը յետին բժշկարաններում սխալմամբ գրուած է և* աթիմոն, ավթիմոն, օթեմոն *և նշանակում է «մի տեսակ բոյս՝ բաղադրեալների մէջից, որի ծաղկից պատրաստում են միջատասպան փոշի. ֆր. pyréthre» (ըստ Նորայր ՀԱ. 1923, 346):*

= *Յն. բնագրի τὸ ἀνθέμιον τοῦ χρυσίου ձևն է, որ Կոչումն ընծայութեան Թարգմանիչը մէկ անգամ Թարգմանել է* ոսկեծաղիկ, *իսկ միւս անգամ տառադարձել է* անթեմ. *յն.* ἀνθέμιον *նշանակում է «փոքր ծաղիկ»,* ἄνθεμις *«որևէ ծաղիկ՝ յատկապէս երիցուկ», իսկ* ἄνθεμον *«ծաղիկ, 2. մի տեսակ բոյս», որ Թուի Թէ Թարգմանչի ակնարկած բառն է:*

Ուղիղ մեկնեց նախ Կոչման ընծայութեան հրատարակիչը՝ էջ 335, որ կգտում է յն. ἀνθέμιον *բառին: ՆՀԲ և Հիւբշ. 340, յն.* ανθεμίς *ձևի հետ:*

ԱՆԹԻԼՈՍ *տե՛ս Անքիլոս:*

***ԱՆԹԻՀԻՊԱՏՈՍ** *(սեռ. ի) «փոխ-հիւպատոս» Եւս. պտմ. 268. կամ* անթիպատոս *Ոսկ. պտճ. Երր. (Հրտր. ՀԱ. 1913, էջ 43), Վրք. և վկ. ա. 85. որից* անթիպատուրիւն *Ճառընտ. գրուած նաև* անթիհպատոս, անթիպատ *Արձանագր. 1033 թ. (Շողակաթ, էջ 180),* անթիհպատ *Ոսկ. գծ. 328. լատադոյն ձևն է* անթիպատոս *Անկ. գիրք առաք. 277, 280, որից կոչական* անթիպատէ՛ *Անկ. գիրք առաք. 281, Վրք. և վկ. ա. 401.* անթիհպատէ՛ *Անկ. գիրք առաք. 162, 164.* անթիպատ պատուրիւն *Մագ. Թղ. 82:*

= *Յն.* ὑπάτος *«փոխ-հիւպատոս», որ կազմուած է* ἀντί *«փոխանակ, փոխարէն» և* ὕπατος *«հիւպատոս» բառերից:—Հիւբշ. 361:*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ:

***ԱՆԹԻՊԱՏՐԻԿ** *«փոխ-պատրիկ». գործածուած է միայն սեռ. և բց. ձևերով. ինչ.* յանթիպատրէ *Վկ. շուշ. էջ 11,* յանթիպատրեայ *Վկ. շուշ. 49,* անթիպատրեայ *Վկ. շուշ. 50, որից* անթիպատրկութիւն *«պատրիկի փոխանորդութիւն» ԱԲ. մեր մէջ իբր տիտղոս գործածուած ունինք նաև* անթիպատ պատրիկ

Արձանագր. 1029 և 1033 թուերից (տե՛ս Վիմակ. տարեգ. էջ 16, 17)։

=Յն. ἀντι-πατρίκιος «փոխանորդ պատրիկի». մեր մէջ բառը շփոթուած է անթիթիւպատոս բառի հետ. իսկ անթիպատ պատրիկ ներկայացնում է անթիթիւպատոս և պատրիկ միասին։—Ա՛ճ.

Սոփերքի հրատարակիչը (Բ. էջ 57) ուզում է կարդալ անթիպատոս կամ անթիթիւպատոս։

ԱՆԻԱՅ *«սան կամ թիանոս». ունի միայն Բառ. երեմ. էջ 20 (այսպէս նաև երկրորդ տպագրութեան մէջ). ինչ լինելը յայտնի չէ։*

ԱՆԻԱՏ *«փոզահար». ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Պատմ. աղէքս. էջ 26 «Եդաւ սափորն. վիճակեցան առընթեր անիատքն»։*

ԱՆԻԱՐ *«գունագեղ մի ծաղիկ է. lotus». մէկ անգամ ունի Ագաթ. և մէկ անգամ էլ Գր. Նապիանզ. երկուսն էլ ե դար։*

Նշանակութիւնը Նազիանզացու վկայութեամբ տուգից Նորայր ՀԱ 1923, 165 և Բառ. ֆրանս. 759 աւ։

ԱՆԻԱՅԵՆԱԼ *«խնամեալ կամ խնայեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 20։*

ԱՆԻԴ *«մի տեսակ թռչուն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Խոր. աշխ. հրատ. Սուրբեան, էջ 30. վկայութիւնը տե՛ս առաջ. ձևի մասին տե՛ս առնօշ։*

*ԱՆԻԴՈՒՆ կամ ԱՆԻԴՈՂՈՆ *«նուշ, բադամ» Գազիան. ունի միայն Բառ. երեմ. յաւել. 565 և 573։ Երկուսն էլ անշուշտ սխալ դրչութիւն, որ պէտք է ուղղել *ամիգդալոն, իբր =յն. ἀμύγδαλον «նուշ»։—Ա՛ճ.*

+ԱՆԻԹ, ո հլ. *«ոջիլի հունդ» Նար. կթ. էջ 177. Լծ. Նար.։*

=Հնխ. բառ, որի միւս ժառանգներն են յն. κονίς, κονίδες, հալ. gnida, ռուս. гнида, լիթ. glinda, լեթթ. gnīda, հիւս. gnit, շվէդ. gnett, դան. gnid, իտալ. sned, հանգլ. hnitu, անգլ. nit, հրգ. hniz, գերմ. nisse, nisz, (Laus)nuss, լատ. lens, lendēs, ալբան. Ɔenf «անիծ»։ (Տե՛ս Pokorny 1, 461 և 585, Ernout-Meillet 511)։ Այս բոլոր բառերը անշուշտ բխում են մի հնդեւրոպական նախաձևից, բայց կարելի չէ եղած տակաւին յաջողել կերպով բացատրել նրանց միութիւնը և ճշտել ձայնական յարաբերութիւնները։ Ենթադրեալ նախաձևերն են skonid-, sknid-, gnid- *են։ Հայերէնը գալիս է *անիտ ձևից (համմտ. խայծ-խայտ, պիղծ-պղտոր, խանձ-խանդ են), որով հասնում ենք* -nid *ձևին և նախաձայնի անկումով՝ հնխ.* knid- *կամ* gnid-։

Ուղիղ համեմատութ նախ Pictet 1, 415, *յետոյ* Lagarde, Gesam. Abhnd. 57 (*մերժում է ինքը* Armen. Stud. § 125), Bugge KZ 32, *էջ 46 և 53,* Pedersen, *Նպաստ, էջ 19։ Նոյն համեմատութիւնը ընդունում են նաև* Walde 421, Boisacq 491, Trautmann 93, Berneker 1, 313, Kluge 351։—Petersson, Ar. u. Arm. Stud. 129 *(մերժելով՝ անիծ կցում է լիթ.* nržti *«քոսոտիլ»,* nėžėti *«քոր գալ» բառերի հետ։—Հայերէնի հետ պատահական նմանութիւն ունին կովկասեան լեզուներից շատերը, ինչպէս՝ ավար. նած, անդ. նոցի, կար. նացէ, դիդ. նոցի, լակ. նօց, նացուլու, վար. նաշայ, կուբ. նիվէ, կայ. նէզ, նէյու, ակ. նէո, խիւր. նիո, ուտ. նէծ «ոջիլ», նեծբաֆտեսուն «ոջլոտիլ», նէցբա «ոջլոտ», կիւր. նէտ, ագ. նատ, տաբ. նից, խին. նիմց, արչ. նաց, չեչ. մէզի «ոջիլ»։*

Գիմ.—Ագլ. Ալշ. Ախց. Երև. Կր. Մկ. Ջղ.Սլմ. Վն. Տփ. անիծ, Ակն. Խրբ. Հճ. Մշ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. անիծ, Նխճ. անիծ (հինը անէծ), Մշ. անիծ, Ոզմ. անէ՛ծ, Ասլ. անիծ, անիզ, Շմ. նիծ, Գոր. Ղրբ. նա՛նէծ, Հմշ. օնիծ, Ջթ. անըծ, Մրղ. անիծ, անը՛ծ, Տիգ. մնիծ։ Նոր բառեր են անիծիկ, անիծքաշ, անիծոտ կամ անծոտ, անծկեղ, անծկերտ, անծհաճ, անծոտիլ, անծաբաբախ և այլն։

ԱՆԻԿԱՅ *«անդ», այսպէս ունի Բառ. երեմ. էջ 20. ինչ լինելը յայտնի չէ։*

ԱՆԻՀԱՆԳ *«դժուար». ունի միայն Բառ. երեմ. էջ 20։*

*ԱՆԻՍՈՆ *«մի տեսակ բոյս և նրա սերմը*

կամ հունդը» Բժշ. վստկ. 109. գրուած է աճասոյ Բառ. երևմ. յաւել. 565։

=Յն. ἄνισον, որի ծագումը անյայտ է. Թուում է թէ Ասիայից կամ Եգիպտոսից փոխառնուած լինի. Համմտ. արաբ. yansun *(տե՛ս* Boisacq, *էջ 62 և* Bailly, *էջ 166 գ). յունարէնից փոխառեալ են լտ.* anisum, *ֆրանս. գերմ.* anis, *իտալ.* anice, *անգլ.* anise, *ռուս.* анисъ, *թրք. քրդ.* anisun, *վրաց.* անիսուն, անիսուլի *են։—Հիւրշ. 340։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԳԻՒՐ.—Ախց. կր. ննխ. Պլ. Ռ. անիսօն, *Ակն.* անասօն, անասուն, *Սեբ.* անիսուէօն *են։*

ԱՆԻՏԱԿ *«Հայկ համաստեղութեան մէջ մի աստղի անուն է», ըստ Ալիշան, Հին հաւ. էջ 130։ Համմտ.* անդիակ։

ԱՆԻ, ո *կամ երբեմն ի–ա հլ. «կաղքի ակ, անիւ» ՍԳր. «սեռն, առանցք» Ել. ժղ. 25. «տանջանքի մի գործիք» Բ. մկ. է. 3. «երեխայի խաղալիք» Ոսկ. յհ. բ. 25. «երկնային մարմինների գունդը» Եզն. Սեբեր. Վեցօր. «ուղտափուշի սերմը» Վրդն. սղ. ձր. էջ 278. այս բոլորը փոխաբերաբար ձևացած առաջին նշանակութիւնից։ Որից* անուագայութիւն *Դիոն. Երկն.* անուանն *Կիւրղ. յես. և Թգ.* անուաւոր *Խոր. միջնաբեր Կոչ. 90. չորեքանիւ Կղկնտ. նոր բառեր են՝* հնծանիւ, հնծանուող, երկանիւ, *Ֆառանիւ,* անուածաղիկ։

Հիւնք. անուր *բառից։—Պատահական նմանութիւն ունին սանս.* nābhi, *զնգ.* nāfa, *պրս.* nāf, *յն.* ὀμφαλός, *լտ.* umblicus, *լիթ.* naba, *հպրուս.* nabis, *անգլոսաքս.* nafu, *հիսլ.* nef, *հրգ.* naba, *հիսլ.* imbbiu, *գերմ.* nabe, *որոնք նշանակում են «պորտ կամ անուի սեռ»։ Այս ամբողջ խումբը պատկանում է մի նախաձևի, որի ժառանգորդը կորել է հայերէնում (տե՛ս* Walde *849)։ Մառ,* Сред. движ. *էջ 35 ափխազ.* abarbal *և վրաց.* ბორბალი *բորբալի համանիշների հետ։*

ԳԻՒՐ.—Մշ. անիվ. *ուրիշ տեղ չկայ բառս. գործածւում է ակ կամ թրք.* թէրէն, թէրէնլէք *են։*

ԱՆԻԱՅԵԼ *տե՛ս* Խնայիլ։

ԱՆԻԱՆԱԻԹ. *նորագիւտ անասոյգ բառ, որ մի անգամ գործածուած է Թէոդորոս Քոթինաւորի մօտ (Ներբողեան խաչի, էջ 162) «Ո՛վ հշմարիտ աստուածային տունկ, գերագրական և իմանալի անկագործութեանն խորհրդոյն ապաստվի, խորութիւն և անխանաւթ քառաթև սուրբ նշան»։*

ԱՆԻԹԱՆՔ *«մի տեսակ հիւանդութիւն». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. իլար. 119 «Ոչ բժիշկս կոչել, ոչ առ դեղս և ի բուսոց և յայլոց նիւթից տալ օգնականութիւն, այլ ձիթով օծէր և զանունն Քրիստոսի կոչէր, զանխթանք ախտն բժըշկէր, և ամենեցուն ընթացեալք կթէին զբարիսն առնելով իբրև յաղթիւրէ աննախանձ»։*

ԱՆԻԱՆՈՏ *տե՛ս* Անձխոտ։

***ԱՆԻՈՒԵՔԱՐԻ** *«անփականութիւն»? նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբ. հրտր. էմինի, էջ 151, Շահնազ. Ա. 251 «Ետու զՏաթև վանն իմ հոգևացս ի ձեզ, ի տէր Դաւիթ Սիւնեաց եպիսկոպոս, որ յիմ հօրէն յիս հրիտակ հասեալ էր. անխուէշքարէ ամենայն սահմանօք, լերամբ և դաշտիւ, այգօք և ընկուզեօք, մարգագետնովք և ջաղացանով և որ ինչ համօրէն սահմանք են»։*

=Պհլ. xwēškār, *պրս.* خویشکار xᵛēškār *«ազգական, սեփական»,* xwēškārī *«անփականութիւն», որոնք շատ լաւ համապատասխանում են հայ ձևին. միայն չգիտեմ թէ ի՛նչ է աե մասնիկը բառի սկզբին։—Աճ.*

ԱՆՄԵՂ *(որ և* անձեղ, անձեղն*) «կաչաղակի նման մի թռչուն է» Գաղիան. Մխ. առակ. «ԲՋ ձայնին պատկանող մի հղանակի անուն է» Մանրուս. (Արբտ. 257—8).—իսկ Կոչ. ժզ. և Սիր. խր. 224* անձեղ *բառը գրչագրական սխալ է, որ պէտք է ուղղել* անգեղ *(յն. γῦψ)։*

Պատահական նմանութիւն ունի գերմ. Amsel *«կեռնէխ թռչունը»։*

ԳԻՒՐ.—Ալշ. Հճ. Ոզմ. վն. անձեղ, *Ակն. Մկ.* անձէղ, *Մշ.* հրնձեղ, րնձեղ, *ԶԹ.* անձիւղ, *իսկ Խրբ. բարդութեամբ* Ֆաֆանձէղ։

ԱՆՄՈՂ *«կաւատ». գործածուած է մէկ անգամ Փիլ. շն. 277 (յն.* προσαγωγός*), որից* անձողութիւն *«կաւատութիւն» Ածաբ. կիպր. Փիլ. լին. ա. 70, շն. 275։*

Հին բռ. մեկնում է «անսովոր, տգեղ»։ Այսպէս նաև Բառ. երեմ. էջ 21, որ գրում է աճծոխ։ ՆՀԲ «արբանեակ չարութեան, որպէս աճիծ կամ առիթ մեղաց. ըստ յն. προσαγωγός (առածօղ), իբր կաւատ»։ ՋՔ «անծողութիւն—Թուի գործ անիծից արժանի կամ կաւատութիւն»։ ԱՔ «կաւատ»։

ԱՆԿ *տե՛ս Անկանել։*

ԱՆԿԱՆ *«սիւն, կուզի, նետ, փքին, Թօփ». այսպէս է դնում Գէորգ դպիր՝ երեմիայի բառգրքի յաւելուածում, էջ 537։ Անստոյգ բառ։*

***ԱՆԿԱՆ** (գրուած նաև* **անգան**) *«սանդ, հաւան». մէկ անգամ միայն գործածուած է Թուոց ժա. 8, ներգ. յանկանի (յանգանի) հոլովով։ Ուրիշ օրինակ չկայ։ Բայց անշուշտ նոյն է անգանակ «կոնք» Տաթև. հարց. 359, որ կենդանի է արդի գաւառականներում անգանակ, անկին ձևով և «կոնք, տաշտ» նշանակութեամբ։*

=Ասոր. ܐܓܓܢܐ aggānā *«կուժ, ջրաման», եբր.* אַגָּן aggān *«լուացքի կոնք, լական», արաբ.* اِجَّانَة iJJāna, اِنجانة inJāna, *եթովպ.* ágan, *աասուր.* agannu, *կովկասեան լեզուներից խիւր.* angana *«ափսէ, պնակ»։ Նշանակութեան կողմից մեր գաւառականները գրաբարից աւելի համաձայն են սրանց։*

Lagarde, Gesam. Abhd. *8 պրս.* finJān *«բաժակ» բառի հետ։ Ուղիղ մեկնեց նոյն՝* Arm. St. *§112։ Հիւրշ.* Arm. Gram. *301 չէ ընդունած այս մեկնութիւնը՝ նշանակութեանց տարբերութեան պատճառաւ, որ սակայն հարթւում է մեր ցոյց տուած գաւառական ձևերով։* Jensen, Hitt. u. Arm. *համարում է Թէ բառը փոխ առնուած է ասորերէնից՝ հիբբիթական շրջանում։ Հիւնք. կին բառից։ Վերի ձևով բացատրեց Աճառ. Արրատ. 1910, 178։*

Գիմ.—երև. անգաճակ, *կր. Ք.* անգին, *խն. ինջան «հողից շինուած մեծ տաշտ՝ որի մէջ լուացք են անում, խմոր են շաղախում կամ լոգնում»։ Մամիկոնեան, Հազարից մէկը, էջ 235 ունի անկան «մեծ սանդ փայտի՝ կորկոտ, բրինձ Թակելու համար». բայց չգիտեմ Թէ իրօք Գանձակի գաւառականո՞վ է, Թէ գրաբար։—Բառ. երեմ. էջ 219 ներգ. յանգանի ձևը բացատրելով գրում է «յըջանի». որից ենթադրում եմ Թէ իր ժամանակ գաւառում գործածական էր ինջան ձևը՝ որ գիտէ նաև Խիանի գաւառականը։*

ԱՆԿԱՆԱՔՈՅԹ *տե՛ս Բոյթ։*

+ԱՆԿԱՆԻԼ *(կտր. աճկայ, հրմ. անկի՛ր, արմատն է աճկ), գրուած է նաև* **աճգանիլ**, *ընկանիլ. ընդարձակ գործածութիւն ստացած, բազմաթիւ ոճերի մէջ մտած, պարզ կամ յ և ց նախդիրներով աճած և բազմաթիւ ու բազմազան նշանակութիւններով զարգացած մի բառ է։ Բուն և առաջին նշանակութիւնն է 1. «ընկնել, ցած ընկնել» ՍԳր. որից* **անկումն** *ՍԳր.* **անկասեղ** *Շիր.* **վայրանկեալ** *Շար. Նար.* **առորանկիլ** *Մագ. Շար. ևն։ Այս նախնական նշանակութիւնից փոխաբերաբար և հետզհետէ զարգանալով՝ բխում են հետևեալ առումները։—2. «ցած կախուիլ» ՍԳր. հմմտ. աշխ.* **վարտիքը վար իյնալ**. *ֆրանս.* ses cheveux lui tombent sur les épaules.—*3. «երթալ, դիմել, ապաստանիլ, դիտմամբ կամ պատահմամբ մի տեղ հասնիլ, այնտեղ կամ նրան ապաւինիլ» ՍԳր. հմմտ. Բրք.* yola düšmek *«ճամբայ ընկնել»,* bir köye düšdük *«պատահմամբ մի գիւղ հասանք», աշխ. մի գիւղ բնակիմ, շատ վատ տեղ եմ բնկել. որից* **անկանել** *ի ճանապարհ, յուղի, ի շու ՍԳր.* **առանգել** *«առնել փախչիլ, յափշտակել (կին, աղջիկ)» Եւս. քր. կամ հակադարձ՝* **անկառ առնել** *ԱՔ.—4. Հասնելու գաղափարին հետևում է վերջանալու գաղափարը. հմմտ. ֆրանս.* le vent est tombé *«քամին դադրեց». այս նշանակութեամբ անկանիմ բայը առանձին գործածուած չէ, բայց «ծայր, վերջ» իմաստով ունինք շատ ածանցներ. ինչ.* **յանգ** *հանել, յանգ ելանել, յանգ տանիլ Ոսկ. ՍԳր.* **յանգ, յանկ** *«վերջ, սպառուած, ոտանաւորի ոտք» Բր. և Երզն. քեր.* **յանգել, յանգեցուցանել** *«վերջացնել» Ոսկ.* **անգաւորիլ, յանգաւորիլ** *«վերջանալ» ԱՔ.* **անգանակ** *«վերջ» ՓՔ.* **անգաւան** *«ծայր, գագաթ» ՓՔ.* **անգուդ** *«վերջ, կատարելութիւն» Հին բռ.* **յանգաւոր** *«չափաբերեալ գրուածք, որ յանգ ունի» Մագ.*

ցանկ, ցանգ «միշտ» (այսինքն մինչև վերջանալը, ի սպառ) ՍԳր. Ոսկ. Եզն. «ճիւղերով ևն հիւսուած պատ՝ պատնէշ» (իբր վերջ կամ սահման) «վերջ» նշանակութեան համար հմմտ. լտ. cado «ընկնել» որ և «վերջանալ, յանգիլ», որից εὖ, καλῶς πίπτειν «լաւ, յաջող վերջանալ». ἡ πεσέεται ἡ μάχη «կռիւը ի՞նչպէս պիտի վերջանայ» ՍԳր. Կոչ. նմանութեամբ «գլուխների ցուցակ» Սղ. Խոր. ցանկել «պարապել» Ագաթ. Եփր. աղ. և համաբ. ցանկոռդ «միշտ» Ագաթ. Ոսկ. մոթ. ցանկոռդել «յաճախել» ՍԳր. Ոսկ. մ. ա. 4. ցանկութիւն «հանապազորդութիւն» Ոսկ. բ. տիմ. 197 (չունի ՆՀԲ)։—5. «իրեն բաժին ընկնել, իրեն վիճակուիլ» ՍԳր. Եղիշ. «յարմարիլ, ձեռքն ընկնել. պատահիլ» Եղիշ. Կիր. պտմ. անկ է «պատշաճ է, յարմար է» ՍԳր. Եւս. քր. Եզն. Սեբեր. հմմտ. աշխ. Ինձ ի՞նչ բաժին է ընկնում. Այս բանը բնելը ճեզի կիյնայ. տճկ. búda bana düšdü «այս էլ ինձ վիճակուեց», ֆրանս. cela m' est tombé en partage. որից անկ «պատշաճ» Փիլ. Պիտ. յանգ, յանկ «յարմար, պատշաճաւոր, հանդարտ, զգօն» Վեցօր. Ոսկ. անգու «արժանաւոր» Ագաթ. անկաւոր «պատշաճ» Մխ. դտ. Մարգ.։—6. «Իրարու հետ յարմարուիլ, միանալ, ընկերանալ, ժողովուիլ» Բուզ. է. 43. հմմտ. աշխ. իրարու հետ իյնալ-ելլալ. տճկ. düšüb qalqmaq «ընկերանալ, կենակցիլ», ֆրանս. tomber d'accord «համաձայնիլ»։ Որից յանգչիլ, յանգուցանել կամ յանկչիլ, յանգուցանել «սիրով կապուիլ, կապել, սիրտը գրաւել» ՍԳր. Ոսկ. յանկակից, յանգակից «մերձաւոր» Վեցօր. զանգել, զանգանել «խառնել, միաւորել, շաղուել, իրարու յարել» ՍԳր. Եւս. քր. Ոսկ. (հմմտ. Ղրբ. իւրիւր ընգած «լաւ խիւս կազմած, շաղախուած, լաւ իրար խառնուած»), զանգուած «բաղադրութիւն, խմոր, ձոյլ, հալս» ՍԳր. զանկանիլ «մի բանի յարիլ» (գրուած նաև զանկել, զանկանել), արիւնազանգ կամ արեանազանգ «արիւնաշաղախ» Պիտ. Կղկնտ. զանգութիւն «խառնուրդ» Տիմոթ. կուզ, էջ 170, անգանգ Փիլ. այլաբ. մսազանգուած Նար. կուս։— 7. «ծննթարկուիլ, առարկայ դառնալ» (օր. ծառայութեան, մէկի հրապոյրներին, կապանքի, հիւանդութեան են) Սգր. Եղիշ. Փարպ. հմմտ. աշխ. փորձանքի մէջ ընկնել, գերի ընկնել, անկողին իյնալ են. տճկ. xasta düšmek «հիւանդանալ», yesir düšmek «գերի բռնուիլ», ֆրանս. tomber malade «հիւանդանալ»։—8. «Մեռնիլ, մանաւանդ պատերազմի մէջ» ՍԳր. Բուզ. որից ի կենաց անկանել, յարեւ անկանել «մեռնիլ» ՍԳր. Ոսկ. անկած «դիակ» Ոսկ. խչ. Մէկն. ա. կոր։—9. «Թուլանալ, պակասիլ, տկարանալ» ՍԳր. Ագաթ. Եզն. հմմտ. ֆրանս. tomber en disgrâce «չնորհազուրկ լինել», tomber dans le mépris «արհամարհուիլ», tomber en ruine «կամաց կամաց փուլ գալ, կործանուիլ». տճկ. düšgün «անկեալ, խեղճ»։ Որից անկ «ընկած աղքատացած» Մանգ. անկած «տկար, խեղճ» ՍԳր. Ոսկ. մ. և ես. Վեցօր. ոտքն անկածմ «ոտքից խեղճ, քայլել չկարողացող» Սոկր. եկեղ. պտմ. էջ 279 (հմմտ. նաև փոքր Սոկրատ, նոյն էջ) = տճկ. düšüt «խեղանդամ», տնանկ «աղքատ, անից տեղից ընկած» ՍԳր. անկելաճոց Վրք. հց։—10. «Մի բանով զբաղուիլ, պարապիլ» ՍԳր։—11. «Վրան յարձակիլ, իրան պատել՝ բռնել (օր. քունը, ամպը, հովը են) ՍԳր. հմմտ. ֆրանս. tomber sur les ennemis «յանկարծ թշնամիների վրայ յարձակիլ», Թրք. üste düšmek «վրան յարձակիլ», arqasəna düšmek «հալածել, հետապնդել»։— 12. «Մեղանչել, յանցանք գործել, պոռնկիլ» ՍԳր. Եզն. հմմտ. ֆրանս. tomber en faute —13. «Իրար հետ կռուիլ, հակառակիլ» Բուզ. Եզն. հմմտ. Թրք. biribirine düšürmek «իրար հետ կռուեցնել», աշխ. Ինչո՞ւ իրար հետ ընկաք. ֆրանս. tomber un adversaire «թշնամիին յաղթել»։—14. «Գործել, հիւսել, բանիլ» ՍԳր. Ոսկ. մ. Սեբեր. (թել, առէջք և կկոց նետելու գաղափարից առնուած). որից անկած «հիւսուած բան, սարդի ոստայն» Փիլ. անկիչ «ջուլհակ» Փիլ. անկուած «բանուածք» ՍԳր. անկուածոյ «հիւսկէն» ՍԳր. յանկոյ «հիւսուած, հիւսելով շինուած» Անկ. գիրք հին կտակ. էջ 155. ոստայնանկ «ջուլհակ» ՍԳր. Սեբեր. Վեցօր. Եփր. Թգ. սարդանկու Փիլ. տե՛ս անկուածայիկ (նոր բառ)։

= Հնխ. sŋg արմատից, որի միւս ժառանգներն են գոթ. sigqan, հրգ. sinkan, գերմ. sinken, հիսլ. søkkva, անգսք. sincan, անգլ. sink, հոլլ. zinken «սուզուիլ, խորն իջնել», նաև գոթ. sagqjan, հրգ. senchan «սուզել», լիթ. senkù, sèkti «ընկղմել, ջրի խորն իջնել, ջուրը ցածրանալ», յն. ἐάφθη «ցած ընկաւ, ընկաւ» (տե՛ս Boisacq 210, Kluge 454 և Trautmann 256, Pokorny 2, 495 (հնխ. seng²—արմատի տակ)։ Այս բոլոր բառերի մէջ էլ կայ «վայր ընկնելու» գաղափարը. յատկապէս գերմ. sinken ունի մեր անկանիլ բայի առումների մեծ մասը. այսպէս՝ «1. խրուիլ, խոնարհիլ, իջնել, 2. նաւի ընկղմիլ, 3. ցածր ընկնել. 4. շէնքը փուլ գալ, 5. թուլանալ, լքանիլ, նուաղիլ, 6. խոր քնի մէջ ընկնել». ոճերով՝ Zur Erde sinken «ցամաք եղնել (հմմտ. անկաք լիտալիա), գետին ընկնել», Die Sonne sinkt «արեգը խոնարհում է, մայր մանելու մօտ է». Der Nebel sinkt—ամպ մթագին անկաւ. In das Grab sinken «գերեզման իջնել».—Im Preise sinken—ի գնոյն անկցի ըստ արժանաւոյն (Մխ. գտ.)—Unter einer Last zu Boden sinken «բեռան տակ կքիլ» (Ծոգնեալ անկանին յաժոյ. Պիտ.)—Den Muth sinken lassen—Բնկաւ անկաւ զօրութիւն ուժոյ իւրոյ (Եղիշ.)— Bis in die sinkende Nacht—անկաւ ի վերայ իմ մութ (Պիտ.)։ Ձևի համար խօսելով վերոյիշեալները ներկայացնում են հնխ. seng, senk² կամ առանց ռնգականի sek² ևն. հայերէնը ցոյց է տալիս արմատի առորին ձայնդարձը sŋg։ —Հւիբշ. 419։

Pictet 2, 170 անկանել «հիւսել» = սանս. aṅhu, գոթ. aggvus, յն. ἄγχω «խեղդել», լտ. ango «խեղդել, սեղմել»։ Տէրվ. Նախլ. 59 հյ. ականջ, ունկն, անկիւն, սանս. aÑj, anÑj «ծռել» են բառերի հետ հնխ. ak արմատից։ Bugge KZ 32, 2 կորն. բրետօն. ancou «մահ», կիմր. angeu, հիռլ. éc, նաև կիմր. angen «պէտք. ստիպում», հիռլ. écen, յն. ἀνάγκη «ստիպեալ»։ Մէնէվիշեան ՀԱ 1892, 20 արիական anÑj «սահիլ, անկանիլ (ի մեղս ևն)», եւրոպական angas, ang «անկանիլ, սահիլ, գլորիլ»։ Հիւնք. անկանիլ «ընկնել» < կանգուն բառից, անկանիլ ընդ կնոջ <յն. ἐγγυάομαι «նշանադրել» բառից, անկանել «հիւսել» <պրս. էնկիխթէն «կորզել, քաշել», անկուածոյ <պրս. էնկիուն։ Գեանջեցեան ZAPh 1, 61 անկանել «հիւսել»=սանս. sačati «կախել, կեռից անց կացնելով կախել», հսլ. sęgą, լիթ. segù «կախել»։ Դաւիթ-Բէկ, Յուշարձ. էջ 396 ն. գալլ. angeu, արմորիկ. ancou «մահ», հին բրետ. ancou «անկում, մահ»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Meillet MSZ 8, 288։ Մաս ИАН 1917, 320 արմատը ka, որից և ար-կանել, ավար. ղեզի, ափխազ. ականաւա ևն։

Գիւտ.—Ջղ. բնգաանել, բնգենել, Հւր. բնգաանէլ, Ագլ. բնգ՛մ՛նիլ, նրնգ՛մ՛նիլ, Ախց. Շմ. բնգնիլ, Մկ. բնգ՛նիլ, Երև. բնգենէլ, Ալշ. Մշ. յրնգրնել, Հճ. ը՛նգենել, Նբ. նրնգենել, Զթ. ը՛նգը՛լ, Տփ. նրնգենիլ, Տիգ. բգնիլ (կար. բնգm), Յղ. գ՛րնիլ, Համշ. բղնիլ, Ղրբ. բղնէլ, Խրբ. Կր. Սնբ. բյնիլ, Վն. իյնել, Ննխ. իյնէլ, բյնէլ, իննել, Ակն. իյնիլ, Ասլ. Պլ. Ռ. իյնալ, Սլմ. իննել, Մրղ. իննէլ (կար. իննգ՛ամ), Սչ. բննիլ, Մղր. նա՛նիլ։—Առանայի Բրբախօս հայերը պահած են անկ «մատնների ոսկորների յօդերը», տնանկ «ազգատոհմ»։ Նոր բառեր են բնկուկ, բնկնատոր, բնկուկբերան, բնկցնել, Բլ. Մշ. ամֆենկ «հունձքի ժամանակ թափուած և միւս տարի բուսած ցորեն», Երև. անգ «անդամալոյծ». տե՛ս և յանգ։

ԱՆԿԱՐՃ «ծոց, գիրկ». ունի միայն ԱՌ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Կոչ. էջ 10. «Որարիցէ՞ ոք հուր յանկարճի և զձորձս իւր ո՛չ կիզուս։ Բառի իմաստը որոշելու համար հմմտ. Առաք. գ. 27 «Որարիցէ ոք հուր ի գոգ իւր և զհանդերձան ո՞չ այրիցէ»։ Սրա հետ նոյն է յանուրճ «ծոց, գիրկ», որ գիտէ միայն ՓԲ։

ԳՒ մեկնում է իբր անկաճ<ականջ (ծովի խորշ)։

ԱՆԿԱՐՈՒՐԴ (գրուած նաև անկանուրդ), մէկ անգամ միայն գործածուած է Ցես. Բ. 5՝ յոգնակի անկարուրդք ձևով. (Եւ անկարուրդք

կօշկաց նոցա=յն. καὶ τὰ κοῖλα τῶν ὑποδημάτων αὐτῶν, ուր κοῖλα «խորշք»): ՆՀԲ համարում է «կօշիկի երեսը կամ տակը», Հացունի, Պատմ. տարազին 131 կօշիկի տակը՝ ներբանի խորշը, ուր ընդհատւում է կօշկի կարը:

ՆՀԲ կար բառից: Հացունի (անդ) իբր ան-կար-ուրդ (ինչ. ժողով-ուրդ):

ԱՆԿԵՍ *«թիւրութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 21:*

***ԱՆԿԻՐՈՍ** *«նաւի երկաթ, խարիսխ». մէկ անգամ գործածում է Վեցօր. էջ 150. ունի միայն ՀՀԲ. չեն յիշում ՆՀԲ և ԱԲ:*

=յն. ἄγκυρα «նաւի խարիսխ», որից փոխառեալ են նաև լտ. ancora, ֆրանս. ancre, գերմ. anker, անգլ. anchor, ռուս. якорь, վրաց. ანკვირა անկվիրա բոլորն էլ «խարիսխ նաւի» նշանակութեամբ:—Հիւրշ. 518:

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ. յետոյ Վեցօրէից (տպ. Վենետիկ 1830) հրատարակիչը, էջ 150:

ԱՆԿԻՒՂ *«մանգաղ». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. 14:*

+ ԱՆԿԻՒՆ, *ն հլ. (սեռ. անկեան, -կեանց, յգ. անկիւնք, գրծ. -կեամբ, բց. յանկիւնէ՝ մէկ անգամ միայն Նեեմի Գ. 20. յետնաբար ի հլ. գրուած է նաև անգիւն) «անկիւն, քունջ, քօշա. 2. մի առանձին տեղ, ծայր, խորշ» ՍԳր. Ագաթ. եփր. եւլ. որից* **անկիւն հատանել** *«ական հատանել, պատ քանդել՝ գողութիւն անելու համար» Ոսկ. ա. Թես. և եփես. 892.* **անկիւնահատ** *«պատ քանդող» Ոսկ. դդ.* **անկիւնակալ** *Սարգ. գէ. ես.* **անկիւնաւոր** *Փիլ.* **անկիւնաբար** *Երզն. մտթ. և բազմաթիւ երկրաչափական բառեր, ինչ.* **երեքանկիւն** *Վեցօր. չորեքանկիւնի ՍԳր. վեցանկիւն Վեցօր. յետնաբար եռանկիւն, եռանկիւնի, հառանկիւն, հառանկիւնի, բազմանկիւն, ուղղանկիւն և:*

= Հնխ. ang արմատից՝ -իւն մասնիկով. այս արմատի բուն նշանակութիւնն է ծռիլ, կորանալ, որի հնխ. ank-ձևից են բխում սանս. añčati «ծռել»,-akna- «ծռուած», յն. ἀγκών «թևի կորութիւնը, արմուկ», ἀγκύλος «ծռած, կոր», ὄγκος «կեռ», լտ. ancus «թևը դռսացած», uncus «կարթ, կեռ», խալ. écath «կարթ (ձրկնորսի)», հբգ. ango և հալ. ǫkotr նոյն նշ. ևն (Pokorny 1. 39 և 61, Walde 43, Ernout-Meillet 50 և 1081): Այս արմատի միւս ժառանգորդներն են. լտ. angulus «անկիւն, խորշ, ծայր», հալ. ągŭlŭ, ռուս. уголъ «անկիւն, խորշ». լատիներէնից ծագած ռոմանական ձևերն են ֆրանս. angle, իտալ. angolo, սպան. ángulo, ռում. unghi ևն, բոլորն էլ «անկիւն» նշանակութեամբ. ծագում են հնխ. ang-los ձևից:—Հիւրշ. 419:

Ուղիղ մեկնեց նախ Klaproth, Asia pol. 100, որ համեմատում է լտ. angulus բառի հետ: ՆՀԲ առաւելաբանում է հլ. յանգիլ կամ անկանիլ բառերով և լծորդ է դնում լտ. angulus, յն. γωνία, պրս. խիւնկ, քիւնճ: Böttich. ZDMG 1850, 350, Arica 41=սանս. vankâ: Lagarde, Urgesch. 331 սանս. anč, anka, յն. ὄγκος, լտ. uncus «կեռ, ճանկ», որոնց վրայ Arm. Stud· § 128 առնչացնում է լտ. angulus: Riggs, Քնրակ. 1856, էջ 60. յն. ἀγκών Lagarde-ի հետ նոյն է Տէրվ. Նախալ. 59: Հիւնք. յն. ἀγκών, ὄγκος: Petersen, Համ. գր. լեզ. էջ 98. յն. ἀγκών:

Գիմ.—Ղրբ. m՛նգիւն «կողմ», իսկ այլափոխուած նշանակութեամբ ունինք Վն. «պատի մէջ շինուած դարան», Խն. «մառան», Սլմ. «թոնիրի յատակը՝ որի վրայ բացուած է ակը» (բստ Աթայէան, Սալմաստ. էջ 66):

***ԱՆԿԻՒՆ** *«աթոռի կամ բազկաթոռի թև». երկու անգամ միայն գործածուած է Բ. մնաց. Բ. 18 «եւ վեց աստիճանք էին աթոռոյն կապեալք ոսկւով և անկիւնք (յն. ἀγκῶνες) աստի և անտի յաթոռն նստելոյ. և երկու առիւծք կային առ ոտս անկեանցն (յն. ἀγκῶνας)»:*

*=յն. բնագրի ἀγκών «թև, արմուկ» բառն է, որ ուղղակի տառադարձուած է. բստ այսմ մեր բառի հին ձևն էր *անկոն կամ անկովն, որ յետոյ շփոթուելով անկիւն բառի հետ՝ այս ձևն է ստացել. համմտ. անակիւղ < ἀνάκωλος:—Աճ.*

Բառարանները դնում են իբրև նախորդ անկիւն բառի մէկ նոր առումը, որ բստ իս ճիշտ չէ:

ԱՆԿԼԻԿ *«անդիկ, թրք. հավաճիվա». գիտէ միայն Քաջունի, Հտ. Գ. 14։*

ԱՆԿԼԻԿ *«շատ նուրբ կտաւ, մարմաշ, տիւլ,* mousseline*». իբր մէյ. բառ ունի Նորայր, Բառ. ֆր.*

ԱՆԿՂԻՏԱՆԱԼ *(ացայ) «վատ բանի սէր կապել, ցանկանալ» Սարգ. (ստէպ)։—Հին բռ. և Բառ. երեմ. էջ 21 մեկնում են «յիմարիլ ի տուփանս կամ պշնուլ»։*

ՆՀՔ լծ. յն. ἐγκλίνω *«ծռել», լտ.* inclino *«խոտորիլ, հակիլ»։ Հիւնք. կատաղի բառից։ Բայց ունինք նաև կաղիլ, որ ունի նոյն նշանակութիւնը՝ ինչ որ* անկդիտանալ։

+ԱՆԿՈՂԻՆ *տե՛ս Կող։*

Հներից Վրդ. սղ. խ. 4 «Այս են ամենայն անկողինք, որ յաղն և յորսայս անկանին»։ ՀՀՔ ընկողմանիլ *և* կող *բառերից։ Ինճիճեան, Եղանակ Բիւզ. 1819, 147* անկումն ողին։ *ՆՀՔ* ընկողմանիլ, կող *կամ* անկանիլ *(ուր* անկեալ դնի ոք*) բառերից։ Հիւնք. յն.* ἀνακλίνω *«պառկեցնել» և հյ.* ընկղմիլ, անկանիլ *և* ընկողմանիլ *բառերի հետ։* Bugge IF *1, 437* անկանել*-ից։* Patrubány SA *196* ան *«մէջ»=* in*+*կողին*=յն.* γωλεός *«որջ», լիթ.* gulisio *«որջ», լեթթ.* gōla *«որջ, բոյն»։ Նոյն, ՀԱ 1908, 155* ան *մեկնում է հնխ.* sm *«մէկ», որով* անկողին *«մէկ հոգի պառկելու տեղ»։ Դաւիթ-Բէկ, Յուշարձ. 397 գալլ.* cilcet *«անկողնի պաստառ», արմորիկ.* golched *«պաստառ», իռլ.* colcait *«անկողնի պաստառ», հին բրետ.* colcet *և լտ.* culcita *«անկողնի պաստառ»։*

Գ.—Խրբ. Մշ. Տիգ. ընգօղին, *Կր.* գօղինք, *Ախց.* գ'օղինք, *Տփ.* գօղէնք *«անկողին», Զթ.* ուղուգան *«անկողնի վերմակ», Վն.* գ'օղվէնք' *«անկողինները իրար վրայ դիզուած ծալք» (*ընկողուանգ *Վն. «անկողինների ամբողջութիւնը» և* անկողկալ *(ըստ* El. Riggs*) «ծալքաւոր, անկողնակալ» նոր բառեր են)։*

Փ.—Վրաց. լոգինի «անկողին, մահճակալ» (այս բառը Ջուբինով դնում է յունարէնից փոխառեալ. բայց թէ՛ հին յունարէնում և թէ՛ նոր յունարէնում այսպիսի բառ չգտայ). քրդ. کلین kulin *«անկողին. խշտիկ»,* کولین kūlin *«անկողին և ուրիշ բաներ պահելու մեծ դարան»։*

ԱՆԿՈՂՄԱՆՈՒՄՆ *տե՛ս Կողմն։*

ԱՆԿՈՒ, ԱՆԿՈՒԱՅ *տե՛ս Անկանիլ։*

Գ.— Ունինք պահուած Ալաշկերտում «Անուն կայ, անկուն չկայ» առածի մէջ, որ նշանակում է «անունով միայն կայ, իրապէս գոյութիւն չունի»։

ԱՆԿՈՒՄՈՒՇ. *անստոյգ բառ. մէկ անգամ գործածուած է Սեբ. իբ. հրտր. Պատկ. էջ 75 «Եւ թշնամւոյն հատեալ զամրութիւն՝ անկաւ ի բանակն, և անհնարին լինէր կոտորածն. և նոցա հատեալ ըզտեղի մի, ոմանք հետևակք և ոմանք հեծեալք յանկումուշի ձի, ելին և գնացին փախստական»։ Պատկանեանի ձեռագրի ընթերցուածն է յանկումուղի, որ միւս ձեռագրերում և հին տպագրում է յանկումուշի։ Այս ձևից առել է և ԱՔ, որ դնում է յանկումուշ, իբր անստոյգ բառ, «յանկարծ» նշանակութեամբ։ Հեծեալք բառը պահանջում նախդրիւ հայցական. ուստի թերևս սրա համար է՝ որ ԱՔ դնում է յանկումուշ, յաջորդ բառը կարդալով ի ձի։ Իմ կարծիքով անկումուշի ածական է ձի բառին և թերևս «տրմուղ, կրմուղ» բառերի հետ նոյն է (խամ, անվարժ ձի). և ահա այս պատճառով աւելի մէտ եմ ձեռագրի ղ-ով ընթերցուածին։*

Այսպէս մեկնել եմ Արրտ. 1911, 231։

ԱՆԿՈՒՇԵԼ *տե՛ս Անգոնել։*

ԱՆԿՈՒՆ *«թելադարձ». այսպէս ունի միայն Բառ. երեմ. էջ 21, յայտնի չէ թէ ի՛նչ է ուզում ասել։*

Կայ ֆրանս. engrener *«մեքենայի անիւների ատամները իրար մէջ հագցնել». որ և իտալ.* ingranare*։*

ԱՆԿՈՒԹԻՒՆ *«հղօրութիւն». նորագիւտ և անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. Հռոմ. 228 «Բազմեցար ննջեցեր իբրև զառիւծ (ասելով Աստուծոյ համար)... զանկութիւնն և զահաւորութիւն միայն ընդունիմք և ոչ եթէ զգազանապէսն...»։*

ԱՆՀԵԹԵԹ *կամ* **ԱՆՀԵԴԵԴ** *«այլանդակ, տձև, անճոռնի, անկարգ» Ոսկ. Եզն. Բուզ. որից* անհեդեդութիւն *(կամ* անհեթեթութիւն*) Եզն. ուղիղ գրչութիւնը անստոյգ է դեռ, թէև*

նոր գրական լեզուն ընդունել է միայն անհեթեթ ձևը։

ՀՀԲ և ՆՀԲ հանում են հեթեթ-աեմ ձևից, որ միայն Լաստիվերտցին է գործածած և անշուշտ հայթայթած «միջոց, հնարք» բառի գաւառական արտասանութիւնն է ներկայացնում։ Այս ստուգաբանութիւնը ընդունելու դէմ են՝ նախ ե ձայնաւորը փոխանակ այ երկրաբրբառի, երկրորդ՝ բառի նշանակութեան տարբերութիւնը և երրորդ՝ այն հանգամանքը, որ անհեթեթ բառը ունինք նաև դ-ով գրուած, մինչդեռ հայթայթել միշտ թ-ով է։ Հիւնք. ետնա լեռան անունից։

Անհիւ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մաղաք. ար. 42 «Զևանի անհիւ և անդոհիւ լինելն ի մէջ այլազգացն ի ծառայութիւն»։*

=Եթէ չէ սրբագրելի անիւ (վախով), բացասական մի ձև է, իբր «անտէր, անօգնական», ուստի արմատն է հիւ ?—Ա՛ճ.

Անձաի, *ի–ա հլ. «այր, քարայր» ՍԳր. որից* անձաւամուտ *«անձաւները մտած բնակած» Կորիւն.* խաւանձաւ *ՍԳր. Ոսկ. սղ.* խաւանձաւամուտ *Ագաթ. յետին են* անձաւախիտ *ՅՀ. կթ.* անձաւանոս առնել *«այրի մէջ գցել» Մխ. այրիվ. 81.* պաղանձաւ *Խոր.։*

ՆՀԲ և Հիւնք, անձուկ *«նեղ» բառի հետ են կապում։ Նոյնը նաև* Patrubány IF *13, 164 և ՀՄ. 1903, 152։ Մառ* ИАН *1918, 340 ան մասնիկով ձաւ արմատից, որ է վրաց. ցիցգարո «սեպ ժայռ»։*

Անձիան *կամ* **Անձիանի.** *մի տեսակ ծառ է, որ մէկ անգամ Վստկ. 13 յիշում է կաղնիի հետ։ Ըստ ՀԲուս. § 110 բնագրում դրուած է πῦρος, ուզում է ասել πρῖνος, որ է լտ.* ilex *«սղոցի», ինչպէս որ Նորայր, Բառ. ֆր. մեկնում է «yeuse, ազգ ինչ յարադալար կաղնուոյ, սղոցի, որ է* chêne vert*»։ Անշուշտ բառիս հետ նոյն է և անձնի, որ յիշում է ԱՒ «տեսակ մը ծառ», և որ չգիտեն միւսները, նոյն իսկ ՀԲուս։*

Պատահական նմանութիւն ունին վրաց. անձլի *«թանթրուենի,* sureau, вонючая бузина, селеникъ*»,* անձա *«ցից, կայմ», արաբ.* عنظوان *ʿunzuvān «մի տեսակ աղի խոտ՝ որ ուղտը ուտում է. 2. մի տեսակ օճառախոտ» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 534)։*

Անձխոտ, *գրուած նաև* **անձխոտ, անձախոտ, անիծխոտ** *«մի տեսակ դառնահամ վայրի խոտ է. շահիճէռէ, ֆր.* fumeterre, *լտ.* fumus terrae, fumaria, *անգլ.* fumatory, *գերմ.* Erdrauch, *ռուս.* дымянка*» Մխ. բժշ. 119, Հին բռ. բժշ.։*

=Կազմուած է անիծ + խոտ *բառերից, ինչպէս ցոյց է տալիս բառիս հոմանիշը՝ մամու ոջիլ. ըստ այսմ լաւագոյն ձևն է* անձախոտ *կամ* անիծխոտ*։ Բառիս հետ պէտք չէ շփոթել* բնձախոտ *կամ* բնծախոտ*, որ տարբեր բոյս է (*aconitum, pardalianches, *ֆրանս.* aconit*) և ծագում է ինն բառից։*

ՆՀԲ և ԱՒ երկու բոյսերը իրար են խառնում։ Առաջին անգամ երկուսը իրարից տարբերում է ՋՔ, նոյնը աւելի ընդարձակ ՀԲուս. § 111 և § 746։ Այսպէս է նաև Քաջունու բառարանը։ Հետևելով անձխոտի եւրոպական հոմանիշներին՝ որոնք «ծուխ» բառից են ծագում, և շրփոթելով անձխոտը ընձախոտի հետ, ՆՀԲ բնձախոտը մեկնում է «ո՛չ խոտ ընձու, այլ՝ իբր խոտ ծխոյ կամ ծխոտ, համայն ծուխ»։ Սակայն այս մեկնութիւնը, եթէ մինչև իսկ ուղիղ լինէր, պիտի վերաբերեր անձխոտին և ո՛չ թէ ընձախոտին։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Նորայր, ՀԱ. 1922, 394։ Ակինեան ՀԱ. 1930, 494 ինձ է վերագրում անիծ–խոտ *ստուգաբանութիւնը, որ Նորայրից է. ինքը վիճելի է գտնում այս մեկնութիւնը և հանում է բառը* անձուղ *(իմա* ածուխ*) ձևից։ Ուղիղ է առաջին մեկնութիւնը, որովհետև նոյն բոյսը կոչւում է նաև* մամու ոջիլ*։*

+Անձն, *ն հլ. (-ձին, -ձինք, -ձանց, կայ նաև հյց.* անձուն*! Ծփր. Համաբ. 207) «մարդ, մարդ ինքը» ՍԳր. Ագաթ Եզն. Ոսկ. ևն. բազմաթիւ ոճերով ու դարձուածներով. ինչ.* անձամբ, անձամբ անձին *«ինքնին»,* անձին առնել *«անձնասպանել»,* զանձամբ առ–

նուլ «հագնիլ, վրան առնել», ըստ անձինք առնուլ «ստանձնել», յանձն բեկանիլ, զանձամբ դառնալ «իր շուրջը պտտիլ», յանձին ունել «վրան առնել, ընդունիլ, խոստանալ», ձեռն յանձին հարկանել «պարծենալ», յանձրն առնել «յանձնել», յանձն առնուլ «իր վրայ վերցնել». բոլորն էլ հին և ընտիր։ Ածանցման մէջ մտնում է անձն ձևով, յօդակապով կամ առանց յօդակապի և խիստ քիչ անգամ միայն անձ կամ անձին ձևով։ Այսպէս 1. **անձրն** ձևից՝ յօդակապով. անձնագով «ինքնագով» Ոսկ. մ. բ. 10. անձնադիւր «թուլամորթ, հեշտասէր» Ոսկ. երր. եզն. անձնակամ «անկախ» Բուզ. դ. 5. Ագաթ. անձնակից Կնիք հաւ. 31. անձնամատն Ա. թագ. ի. 30. անձնապան ՍԳր. անձնապանապետ Ա. թագ. իը. 1. անձնաւոր ՍԳր. Ոսկ. մ. բ. սուանձնակիր, սուանձնաւոր «բռնակիր, մշակ» (նորագիւտ բառեր) Բ. մնաց. բ. 18, լդ. 13 (ըստ նորագիւտի).—2. առանց յօդակապի, ձայնաւորի մօտ կամ բառավերջում. ինչ. անձնգովութիւն Ոսկ. անձնեաձոյ Բրս. հց. յանձնապաստան ՍԳր. Կոչ. անձնսիրութիւն Ոսկ. մ. ա. 16. անձնտէր Պիսիդ. անձնդիւր Առակ. ծգ. 23. Ոսկ. ա. տիմ. անձնապուր Ոսկ. ես. եզն. անձնեղ «մեծամարմին, խոշոր» Ոսկ. մ. բ. 22. անձնբնաիր եղիշ. անձնիշխան եզն. անձնիփ «իրան» Ճառընտ. անձնիկ (չունի ԱԲ) Բլկր. 29. առանձնել «ընդունիլ» Սեբեր. ըստանձնել «շալկել» Ագաթ. Բուզ. յանձնել եղիշ. Խոր. անձնիւր (գրուած սովորաբար անցնիւր) «իւրաքանչիւր, ամէն մէկը իր» Ոսկ. եզն. Սեբեր. Եւս. քր. անցնուրոյն «ամէն մէկինը զատ զատ» (փխնկ. գրելու անձնուրոյն) 36. կթ. դատարկանձն Ա. տիմ. ե. 14. միանձն Վեցօր. կոպտարանձն Խոր. համանձն «ընկերակից» Պրպմ. 423 ա (նորագիւտ բառ), կիսանձն Շիր. մեծանձն Պիտ. Կաղկնտ. վեհանձն Կղկնտ. անանձն Ոսկ. ես.—3. **անձ** ձևից են՝ յանձանձել ՍԳր. Ոսկ. յանձանձիչ Երեմ. խթ. 1. Ոսկ. ես. Կիւրղ. Մն. Եւս. քր. անձնուէր, անձնուիրութիւն, անձնուիրաբար (նոր գրականում կազմուած՝ փխ. հնաձև անձնանուէր են).—4. **անձին** ձևից կայ միայն առանձին, առանձինն «մինակ» ՍԳր. Ագաթ. Ոսկ. Սեբեր.—Նոր գրականում կազմուած բառեր են՝ անձնականութիւն, անձնապաշտպանութիւն, անձնապատուութիւն, անձնավստահ, անձնատուութիւն, անձնազոհ, անձնափոխանորդ են։

=Հնխ. ang[1]hen. Ձևից. սրա պարզական արմատն է հնխ. anə- «փչել, շնչել», որից սանս. ániti «շնչում է», ánila «քամի», յն. ἄνεμος «քամի», գոթ. us-anan «արտաշնչել», հսլ. vonja «գոլորշի», vonjati «հոտիլ»։ Հների մէջ հոգին ըմբռնուելով իբր շունչ կամ քամի, ծագում է նոյն արմատից. հմմտ. եզն. 90՝ «Քանզի ոգւոյ և հողմոյ անուն եբրայեցերէն և յունարէն և ասորերէն նոյն է. նա թէ և հայերէն ոք մանր միտ դնիցէ, նոյնպէս գտանի, յորժամ տագնապեալ ոք յումիքէ իցէ, ասէ. Չետ ոգի կլանել, չետ ոգի առնուլ. և այնու զօգոյս՝ զոր միշտ ծծեմք, յայտ առնէ»։ Ըստ այսմ նոյն արմատից ունինք լտ. anima «օդի հոսանք, քամի, շունչ, հոգի», animus «հոգի», թոխար. āñm «հոգի», հիսլ. andi, ǫnd «հոգի», բրբտ. eneff «հոգի»։ Պարզ արմատի g'h անականով՝ հշվէդ. ange, շվէդ. anga, դան. ange «շոգի, գոլորշի», հհիւս. angi «անուշահոտութիւն, բոյր», նորվ. ange «անուշ հոտ»=գոթ. *agga, *aggins, հիսլ. angi «հոտ, բոյր» և հլ. անձն, որի առաջին իմաստը եղել է «հոգի». հմմտ. պրս. جان Jān «հոգի. 2. մարմին» և աշխ. ոգի, որ հիմայ նշանակում է նաև «անձ». ինչ. երկու հոգի, մի քանի հոգի են։ Տե՛ս Pokorny 1, 58, Ernout-Meillet 51, Walde 44, Boisacq 61. Նոյն արմատից է նաև ոդմ, որ տե՛ս առանձին։

Նշխ չծ. ինձ, ինքն և արաբ. ինս, ինսան «մարդ»։ Pictet, բ. տպ. գ. 276 պրս. ān «խելք» են բառերի հետ սանս. an «շնչել»։ Մառ ЗВО 5, 317 զնդ. aŋhu։ Հիւնք. ցանկութիւն բառից։ Diefenbach, Wört. der got. Spr. 1, 47 an «շունչ» արմատից, ինչպէս սանս. atman-; Bugge IF 1, 450 արմատը դնում է անձ, որ պահուած է գտնում նախ-անձ բառի մէջ, իբր նախ «առաջին»+անձ <*and- <հնխ. sṇt'-, ծագած es «լինել» արմատից. հմմտ. յն. οὐσία «էութիւն»։ Patrubány IF 13, 164 և ՀԱ 1903, 152 ան-

ձուկ *բառի հետ. համմտ. լիթ.* tanú «մարմին» և *սանս.* tanu «նուրբ»։ Շէֆթէլովից BB *28, 298 և 29, 55 սանս.* náhuṣa «ցեղակից», náhuṣ «սերունդ», nahuəya «արական»։ Վերի մեկնութիւնը տուաւ Lidén, Arm. Stud. *էջ 38։* Karst, *Յուշարձ. 413 թրք.* kendü «ինքը», *քամեան* entu, enta «անձ», *Մաո* ЗВО *25, 305 ափխազ.* ашъа *և յն.* ψυχή «հոգի» *բառերի հետ։*

Գիմ.—Ախց. կր. անձ, *Սեբ.* անձ, *Ակն.* օձն «մարմին» (*ինչ.* անձր չփլախ «մերկ» *են*). *ոճերով աստմ է՝ Շմ.* անձր փափուկ պահել, *Ալշ.* անձի միս ուտել «շատ նեղութիւն կրել», *Ակն.* անձիներ վրայ է «մտաւորապէս թոյլ է», *Տփ. Ինչ անձէն չէ, էն աշխարէն չէ (առած),* օխչրնձով «ողջ անձով, կենդանի կերպով». *նոր բառեր և առումներ են՝* անձ վն. «յղի կովի իգական անդամը», անձամեռ *Դվ.* «թուլամորթ, ծոյլ, պղերգ», ունձկուտուր *վն. (<անձկուտոր)* «նազելով քայլող, հպարտ, ինքնահաւան», անձիկ *Ակն.* «անձ», առընձի *Ալշ.* «առանձին». *իսկ* անձնաճուր *Ապ.* «առասպելական էակ» ձևափոխուած է ազնաւուր *բառից։*

Փոխ.—Քրդ. ئەرزی arzi «միևնակ» *բստ* Justi, Dict. kurde, *էջ 5, հլ.* առանձին *բառից է. համմտ. յատկապէս Ալշ.* առընձի ձևը։

Անձնի *տե՛ս* Անձիան։

+Անձոիկ, ո, ի-ա *հլ.* «նեղ» *ՍԳր.* «դժուարին» *Սեբեր.* «կիրճ, նեղ անցք» *ՍԳր. Բուզ. Ոսկ.* «կարօտ, փափագ». *ՍԳր. Ագաթ. որից* անձկանալ «կարօտելով փափագիլ» *ՍԳր. Ագաթ.* անձկիլ *Սեբեր.* անձկալ *Սրգ.* անձկաբեկ *Վեցօր. 170.* անձկագոյն *Ոսկ.* անձկայրեաց *Բուզ. Կորիւն.* անձկալի *Փիլիպ. դ. 1.* անանձուկ *Նար. խչ.* բազմանձուկ *Ծագր.* նեղանձուկ *Աբր. կրետ. 74.* անձկութիւն *ՍԳր. Սեբեր. սրանք գրուած են նաև ծ-ով։*

= *Հնխ.* ang'hu- *ձևից. համմտ. սանս.* an'hú- «նեղութիւն, նեղ», án'has- «վիշտ, նեղութիւն», *զնդ.* ązō «նեղութիւն, սրտի անձուկ», *օսս.* ungag «նեղ», *յն.* ἄγχω «խեղդել, նեղել, վշտացնել», *լտ.* ango «սեղմել, խեղդել», angor «սրտի անձուկ, սրտնեղութիւն», angustus «նեղ», *ֆրանս.* angoisse, *իտալ.* angore, *անգլ.* anguish, *սպան.* angostura «հոգ, վիշտ, սրտնեղութիւն», *դոթ.* aggvus «նեղ», *հալ.* ąziti «սեղմել», ązŭkŭ «նեղ», *ռուս.* узкій «նեղ», уже «աւելի նեղ», *լիթ.* aũksztas «նեղ», *հիւլ.* cum-ung «նեղ», *գերմ.* eng «նեղ», Angst «սրտի անձուկ», Enge «կիրճ» (Walde *41,* Trautmann, *11,* Kluge *118,* Boisacq *10)։ Մեր բառի արմատն է* անձու. *կ-ի համար համմտ. հալ.* ązŭkŭ=*ռուս.* узкій, *որոնց վրայ ընդարձակ տե՛ս* Meillet MSL *10, 269։—Հիւբշ. 420,* Pokorny *1, 62,* Ernout-Meillet *49։*

Նշխ անցքն փոքրիկ, *լծ. թրք.* քնսիզ, իճճ «նուրբ», *լտ.* angustus։ *Ուղիղ մեկնութիւնն տուին* Lagarde, Urgesch. *352, Պատկ.* Изслд. *էջ 16, Տէրվ.* Altarm. *57 են։ Հիւնք.* ցանկալ *բայից։*

Անձրեի, ի-ա, ո *հլ. (Ս. Գրքի 21 օրինակներից 17* ի-ա *հլ., 4* ո *հլ.)* «անձրև» *ՍԳր. Ագաթ. Եզն. որից* անձրևաբախ *Ագաթ.* անձրևածին *Կոչ.* անձրևայոյզ *Վեցօր.* անձրևել *Փիլ. Նար. Երկնանձրև Նար. 264. նոր բառեր են՝* անձրևային, անձրևանոց, անձրևաշափ, անձրևոտ *են։*

Müller, Armen. *VI յն.* ձχίνος «ամպոտ լինելուց առաջացած մթութիւն»։ *Մաո* ЗВО *5, 312 զնդ.* vāra, *պհլ.* vārān, *պրս.* bārān *համանիշների հետ՝ ձ յատելուածով։ Հիւնք. ծառաւ բառից։* Karst, *Յուշարձ. 407 ծորիլ, սորել բառերի հետ՝ սումեր.* sur «անձրև, անձրևել»։ *Մաո* ИАН *1918, 340 արմատը ձ, որ գտնում է ափխազ.* ашъа «ջուր», ашаша «ցօղ», ашъпъ «ձմեռ» *բառերի մէջ։*

Գիմ.— Ալշ. Մշ. Ոզմ. Զղ. վն. անձրեվ, *Սչ.* անձ^{ե}րեվ, *Երև.* անձրէվ, *Ախց.* անցրէվ, *Սլմ.* անձրռէվ, *Ագլ. Տփ.* ա՛նձրիվ, *Տիգ.* մնձրիվ, *ՋԹ.* անձիվ, *Նբ.* անձվէր, *Մրղ.* անձրվը^{ր}, *Խրբ. Պլ. Պրտ. Ռ. Սեբ.* արզէվ, *Ակն.* օրզէվ, *Ասլ.* էօրզ'վ, *Մկ.* անձրօվ, *Հճ.* արեվ։

●Անձրուիթ «մի տեսակ խէժ կամ ռետին. sarcocolle» *Բժշ. ունի միայն Հրուս. § 112. որ և* անզրուտ *Հրուս.* անձրուտ *ԳԹ. նոյնը նաև* անզրուտ «մի դեղին փոշի է՝ որ աչացաւի իբր դեղ է գործածւում» Rivola, *Բառգ. Հայոց 1633, էջ 21։*

= *Պրս.* تورزنا anzarut «*է խիժ իմն, գոյացեալ ի փշաւոր խոտոյ իմիք, որ լինի կարմիր և սպիտակ. և շատ լինի ի լերինս Շէպանքնարէի. որոյ լաւն այն է՝ որ իցէ սպիտակ և հակեալ ի դեղնութիւն. է դառն յոյժ, բայց լուծիչ է մաղասոյ և մազձի. և աչացաւութեան օգտակար*» (ԳԴ, էջ 84 ա)։ *Պարսկերէնից փոխառեալ են նաև արաբ.* تورزنا *կամ* تورزنع ‘anzarut *նոյն նշ. (տե՛ս* WZKM *11, 276՝ Շթայնշնայդէրի հաւաքածոյի մէջ). վրաց.* ანზაროთი անզարոթի *կամ* ანხარუთი անսարութի «мясной клей (камедь), бельмокъ (смола)։

Ուղիղ մեկնեց նախ նորայր, Բառ. ֆր. էջ 1117 բ և Հայկ. բառաք. էջ 26։

ԳԻՒ.—Սեբ. անձրուտ «*մի տեսակ ծաղիկ է. ֆարֆիօն*» (*ըստ Գաբիկեանի*)։

ԱՆՉՐՈՒԿ «*շատ մանր մի ձուկ է*». *մէկ անգամ ունի Աշխ. լգ. առ Ստեփ. լեհ։ նշբ հանմարում է «տճկ. անչա, խամսի պալըգ», ինչպէս ընդունուած է այժմ էլ արևմտեան գրականում։*

նշբ հանում է անձրև *բառից՝ «իբր ի փրփրոյ անձրևաց ծնեալ»։ Պատահական նմանութիւն ունին իտալ.* acciuga, *ֆրանս.* anchois, *լազ.* անճարիա, անճրվարիա՝ *ձկների անուններըլ։*

***ԱՆՂԱՐԱ** «*մի տեսակ խոտ*» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 113։*

= *Արաբ.* اغنا onaγrā *նոյն նշ. (ըստ Բէյթարիի). փոխառեալ է նյն.* ὀνάγρα *հոմանիշից, որի բուն նշանակութիւնն է «ցիռ, վայրի էշ». նոյնից փոխառեալ են նաև լտ.* onagra, *ֆրանս.* onagre, onagraire, oenothère *(որ է ռմկ.* herbe aux ânes, *իշախոտ)։ Արաբ բառը կարելի է կարդալ նաև* anγara, *որով և յառաջացել է հայերէն տառադարձութիւնը։*

Ուղիղ մեկնեց Ալիշան, ՀԲուս. § 142։

ԱՆՂՈՒՆ «*մուխ գոյնով՝ անհոտ՝ գիշահոտ մի տեսակ վարդ. ֆրանս.* rose fétide» *Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 114. նոյն բառն է և պտղուն Ամիրտ. որ ունի ՀԲուս. § 2487։*

= *Արաբ.* anikun «rose fétide»։

Ուղիղ մեկնեց նորայր ՀԱ 1926, 69։

***ԱՆՃԱՐԱ** *կամ* **ԱՆՃՈՐԱ** «*եղիճի հունդ*» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 115. նոյն է և* անճուրայ «*եղինճ*» *Գազիան. (ըստ Բառ. երեմ. յաւել. 573)։*

= *Պրս.* انجرا anǰira, *որից նաև արաբ.* انجرا «*եղիճ*» (*տե՛ս Շթայնշնայդէրի հաւաքածոն,* WZKM *11, 276)։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 115։

***ԱՆՃԱՐԱԿ** «*մկնականջ խոտը,* myosotis» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 116։*

= *Պրս.* انجرا anǰarak «*մի տեսակ ռեհան, մարդանգոշ*»։

Ուղիղ մեկնեց Աճառ. (անտիպ). նոյնը անկախաբար նորայր ՀԱ 1924, 79։

***ԱՆՃԻՏԱ** *կամ* **ԱՆՃԻՏԱՆ** *տե՛ս* Անգուտան։

***ԱՆՃԻՐԻՏԱՄ**, *մի տեսակ բոյս է, որ Ամիրտ. այսպէս է մեկնում. «Ինքն թուղ կու նմանի, բոլոր և կարմիր, և ինքն հանգալն է. և ի մէջն որպէս կէտեր ունի. և ինքն ծառի մի միրգն է. ի Հնդկաց կուգայ», նոյն բառն է* անիթրադանի «*թուղ*» *Բառ. երեմ. յաւել. 565։*

= *Պրս.* انجیر آدم anǰir-i-Ādam «*է տեսակ իմն մրգոյ, որ լինի ի Հնդիկս. ըստ ձևոյն բոլոր և ըստ երանգոյն կարմիր, և ունի ի միջի իւրում սպիտակ կէտ ինչ*» (ԳԴ). *նոյնը* Будаговъ *1, 100 մեկնում է. արաբ.* حنطل hanṭal *բառով, ճիշտ ինչպէս Ամիրտովլաթն է։ Բուն նշանակում է «Ադամի թուզ»։*

Ուղիղ մեկնեց Աճառ. (անտիպ), նոյնը անկախաբար Նորայր ՀԱ 1924. 79։

ԱՆՃՈՒՆԻ *(նոյ, նեաց)* «*անհնթեթ մեծութեամբ, խոշոր*» *եզն. Կիւրղ. թգ. որից* անճոռնացեալ *Վրդն. սղ։ Արդի գրականում նշանակում է «տգեղ, տձև», որ գրաբարում չկայ։*

Հիւնք. հանճար բառից։

ԳԻՒ.—Ջղ. անճոռնի, *Ախց. Սրև. Շմ.* անճօռնի, *Ակն. Ասլ. Նախ. Պլ. Ռ. Տիգ.* անջօռնի «*տգեղ, այլանդակ*». *որից* անճոռնուիլ *Տիգ. «խեղկատակ ձևեր առնել, խայտառակ դառնալ»։ Նոյն բառն է* ճաւռնիկ *(իմա՛* ճռռնիկ)

«res grandis et excedens» (ըստ Rivola, Բառ. հայոց², էջ 241)։

Անճորան տե՛ս Անջորան։

Անճուկ «մի տեսակ կապիկ. jocko, pongo». ունի միայն նորայր, Բառ. ֆր. 714 ա և 963 բ, իբր նորաստեղծ բառ. չգիտեմ ի՛նչպէս է կազմուած։

*Անճուհ «մի տեսակ հալուէ» Ամիրտ. (մեկնում է յօտ, որ է արաբ. عود 'ūd «հալուէ»). ունի միայն ՀԲուս. § 121։

= Պրս. خوجنبه alanǰūx կամ خوجنبه yalanǰūx «փայտ խնկոյ, ուտ ազաճի» (ԳԴ)։

Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ 1924, 545։

*Անճուպար «մի տեսակ բոյս է, որ թոքախտի իբր դարման էր գործածւում հին բժշկութեան մէջ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 122։

= Պրս. انجبار inǰbār «է խոտ իմն՝ որ բուսանի յափունս դեռոց և է ի պատուական դեղորէից անտի. որ յոյժ կարմրագոյն լինի. և է օգտակար բուժակ արիւն թքանելոյ» (ԳԴ), արաբ. انجبار anǰibār «այծատերեւ, engibar, deus equinus, chèvrefeuille» (Շիմայնշնայդեր WZKM 11, 276)։

Ուղիղ մեկնեց Ալիշան, ՀԲուս. § 122։

*Անճուկ «մեկնականջ բոյսը, myosotis» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 121։

= Պրս. كرجنبه anǰarak «մեկնականջ» բառն է, որից տառադարձուած է հյ. անճարակ (տե՛ս այս բառը)։ Այստեղ كرجنبه ձևը մի փոքրիկ սխալով կարդացուած է كوجنبه anǰūk, որով յառաջացել է անճուկ հայ ձևը։—Ա՛ճ.

Անմեռուկ տե՛ս Մեռանիլ։

*Անմոնի «համեմն, որպէս խաթմի» Գաղիան. ունի միայն Բառ. երեմ. յաւել. 573։

= Յն. ἄμωμον, լտ. amomum հոտաւէտ բոյսը, որ հնդկական մի փոքր թուփ է, «cissus vitiginea L.»։—Ա՛ճ.

Անյաջ տե՛ս Աջ։

Անյարիր տե՛ս Յառնիլ։

Աննախին. բոլորովին անսովոյ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 134 անիմանալի լեզուով գրուած մի ոտանաւորի մէջ, որի բացատրութեան փորձը տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. հա. Բ։

Աննուիճ տե՛ս Շուշան։

*Աննոգանալ «կարդալ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 16։

= Յն. ἀναγινώσκω, ἀναγνώσομαι «կարդալ» բայից յարմարեցրած. հմմտ. և հյ. անագանոս «ընթերցող»։—Ա՛ճ.

Այս մեկնութիւնս տե՛ս իմ Հայ. նոր բառեր, հա. Բ։

*Անոյճ (ի հլ. յգ. ուղ. անոյշք կամ անուշուք) «համեղ, ախորժելի, հոտաւէտ» ՍԳր. Կիւրղ. ծն. «հաճելի բան, ախորժելի կեանք» Եւս. քր. «սիրով, ախորժելով» Ոսկ. բ. կոր. որից անոյշք «երկնային արքայութիւն» Եղն. անուշակ «անմահական» Գ. մկ. ղ. 10. Եւս. քր. ա. անուշակ կերակուր «անմահների ուտելիքը, ἀμβροσία» Իմ. ժթ. 20. անուշահամ Ագաթ. անուշահոտ Ագաթ. Եղն. անուշանալ «անուշ հոտեր քաւելով հոտաւէտութիւ» Ոսկ. ա. տիմ. մ. և ես. անուշարար «ախորժելի» Զաք. Բ. 17. «քաղցրեղէն եփող» Եղիշ. անուշութիւն «քաղցրութիւն, բոյր» ՍԳր. Ագաթ. յետնաբար անուշացնել զսիրտ «հաճել, համոզել» Մար. պտմ. 102։

= Պհլ. anoš «նեկտար, անմահութեան ըմպելիք», anōšak «անմահ, անանց», պազ. anōš «դեղաբոյս», պրս. نوش nōš «կենաց ջուր, քաղցրամաշակ և անուշահամ իր, խորիսխ, շաքար, քաղցր ըմպելիք ևն», ناشه nōša «լաւ, բարի, քաղցր», نوشین nōšīn «քաղցր, համեղ», نوشدارو nōšdārū «անդեղայ, դեղաբոյս», نوشیدن nōšīdan «ըմպել, խմել», نوش کردن nōša kardan «շողոքորթել», ناشابه nōšāba «կենաց ջուր, անմահութեան ջուր», Շահնամէի մէջ յաճախ գործածական է نوش بزی anōša bizī tū «յաւիտեան կեա՛ց»։ Այս բոլոր բառերի արմատն է զնդ. aoša- «մահ», որից բացասական մասնիկով anaoša- «անմահ»։ Անմահութեան իմաստը յետոյ փոխուած է քաղցրութեան. մինչև այսօր էլ մեր ժողովուրդը գործածում է անմահական հոտ, անուշ անմահական ջուր, անո՛ւշ անմահութի՛ւն ասացուածները, որոնց մէջ անմահական բառը «քաղցր» իմաստն ունի (հմմտ. M. Abeghian, Arm.

Volksglaube, էջ 27)։ Այս օրինակները ցույց են տալիս՝ որ ո՛չ միայն անոյշ «քաղցր» և անուշակ «անմահ» բառերը պէտք չէ բաժանել իրարից (ինչպէս անում է Հիւբշման), այլ նաև այն՝ որ մեր նախնիք այս բառերի հետ փոխ էին առած նաև անմահութիւնը և քաղցրութիւնը իրար զուգորդելու գաղափարը։ —Հիւբշ. 99։

Առաջին անգամ ուղիղ մեկնեց ԳԴ յետոյ Paterm. 92 են։

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Երև. ՋՔ. Խր. Խրբ. Կր. ՀՃ. Ղրբ. Մկ. Մշ.Ննխ. Շմ. Ոզմ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Վն. Տփ. անուշ, Ջղ. անուշ, անո՛շ. Սլմ. անո՛շ, Տիգ. անուշ, Ակն. անիւշ, Ասլ. էնիւշ, Հմշ. օնուշ, Մրզ. աննօշ, այս ձևերից ոմանք, ինչ. Ասլ. Խր. Պլ. նշանակում են «քաղցր» (սրանց մէջ fաղցr բառը կորսուած է). ուրիշներ՝ ինչ. Սչ. Խրբ. Ոզմ. «համեղ, համով» (որոնց մէջ fաղցr բառն էլ կայ պահուած), իսկ Ագլ. Ղրբ. Մրզ. Շմ. Ջղ. Սլմ. գործածում են միայն իրր բարեմաղթութիւն՝ ուտողին կամ մանաւանդ խմողին ուղղուած։ Նոր բառեր են անուշաչուի, անուշապուր, անուշբերեել, անուշել, անուշեղէն, անուշկեկ, անուշ-մանուշ, անուշ-չանուշ են։

ՓՈԽ.—Ըստ Ծաղիկ 1891, էջ 89—90 իրր. գործածւում է nuš olsun, anuš olsun «անո՛ւշ լինի» (իրր բարեմաղթութիւն. յատկապէս ճաշի վրայ զկոտացողներին են ասում). առաջինը պարսկերէն է, իսկ երկրորդը՝ եբէ ստոյգ է, փոխառեալ է հայերէնից։

ԱՆՈՅՇ «ստացումն». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 23, որ և էջ 24 նոյն իմաստով ունի անսոյլ։

*ԱՆՈՆ, ի-ա հլ. «թոշակ, ռոճիկ» Ճառրն. Պիտ. Մաշտ. ջահկ.։

=ՅՆ. ἀννῶνα բառից, որ փոխառեալ է լտ. annona «պաշար, պարէն, տարեկան բերք» բառից, իսկ սա էլ ծագում է annus «ամ, տարի» բառից (Walde 45)։—Հիւբշ. 45։

Ուղիղ մեկնեց նախ Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 314, յետոյ ՆՀԲ։

ԱՆՈՇՏ տե՛ս Ոստ-նուլ։

ԱՆՈՊԱՅ, ի հլ. «անխելք, անմիտ» Ոսկ. հս. Կոչ. 228. «դաժան, ժանտ» Նար. Սկևռ. յար. Սարգ. յուդ. «տգէտ, գռեհիկ, վայրենի» ի դիրս խոսր. «անշէն, ամայի տեղ» Պատմ. աղէքս, «անկիրթ կերպով» Շ. յկ. խթ։

ՆՀԲ մեկնում է հյ. աեեփ կամ յն. օ՛փս «երես» բառից, իրր «աներես»։

ԱՆՈՒԱԳԻԼ տե՛ս Աւագ։

ԱՆՈՒԹ կամ ԱՆԹ, ի, ո հլ. «թևի տակի փոսը, խօլթուխ» Բ. մկ. ժբ. 40. Երեմ. լբ. 12. Ռուզ. գ. 18. այս հին օրինակների վրայ կարելի է աւելացնել այժմ՝ «Խեցիս ջեռուցեալ յանթոն դնէին» Եփր. Վկ. արև. 30 «Գունդս կապարիս հրամայեալ է ջեռուցանել և դնել յանթս ձեր, մինչև ծակեսցի փոր ձեր» (Գոր. և Շմոն, էջ 70)։ Ածանցեալ ձևերն են՝ անթել «թևի տակն առնել» կանոն. անթմէջ «անութի մէջտեղը» ԱՐ. բնդանթական «թևի տակի» Բժշ. անուրբա, անուրբայ «թևի կամ վրի տակ ուռեցք» Գաղիան. անթանոց «ուսընդանուի կապուած ոսկու շարք կամ լանջագեղ կամար» Հին բռ. բնթանոց «ղենջակ» Ոսկ. ևս. անթանոցիկ «թևի տակ դրած փոքրիկ խուրձ ցորեն» Յոր. իգ. 19. անթատակ «թևի տակը» Ոսկիփ. Աբր. կրետ. 84. նոյն բառը գրւում է անր և անդ ձևերով (վերջին ձևով է Զքր. սարկ. բ. 52). Վարդանեան ՀԱ 1922, 280 սխալ գրչութիւն է համարում անր, որ սակայն արդարանում է գտ. ձևերով. նոր գրականում ընդունուած է միայն անուր, որից անթացուպ «խեղանդամի թևի տակ գաւազան», ուսընդանուր (իրր մէ՛կ բառ) «կրծքի վրայ խաչմերուկ»։

Bugge KZ 32, 2 դնում է հնագոյն *ասնուր ձևից, որ կազմուած է համարում ասն+ուր. առաջինը՝ ասն=յն. ἄξων, սանս. ákša, լտ. axis, հսլ. osĭ հբգ. ahsa «առանցք»<հնխ. ak'sōn. նշանակութեան փոփոխութեան համար համմտ. լտ. axilla, հբգ. uohsana «անթառակ». երկրորդը՝ ուր, մասնիկ է. համմտ. ագանուր (?? երբ. բառ է), ամօր, անօր, Հիւնք. խանուր-ից։ Պատահական նմանութիւն ունի արաբ. ابط ibṭ «անութ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 454)։

ԳԻՒ.—Ակն. ՀՃ. Համշ. օնր, Մկ. Վն. ճիւնր. բառիս նշանակութիւնը դրաբարից մի քիչ տարբեր է. այսպէս՝ Ախց. ՋՔ. Համշ.

«գիրկը», ՀՃ. «կապոց, տրցակ», Մկ. Զն. Տր. «թևատակ, երկու բազուկների կամ մէկ թևի ու իրանի միջև առնուած մի բանի քանակութիւնը», Ակն. «մի կուրծք բեռ, լանջքի վրայ առած բեռան քանակութիւնը», Մրշ. «ուս, կռնակ», իսկ միայն Վն. «թևի տակը»: Նոր ձևեր են Ալշ. յանեէտակ. Մշ. յանդ'էտակ, Վն. ընթատակ, Մկ. ներբրտակ, Համշ. օնբդագ «թևի տակը», Վն. ինքել «թևի տակ դնել», Համշ. օնբուլ «տղան գիրկը նստեցնել», Զթ. անբիլ «գրկել», Ակն. օնբիլ «յափրշտակել, մի բան ամբողջովին խլել ու փախչիլ, կրծքի վրայ բեռնատորուիլ», Խոջ. անբել «անթով կամ գրկով չափել, ոմկ. խուլաելամիշ ընել»:

+ԱՆՈՒՆ, ն հլ. (անուան, -անք, -անց) «անուն. 2. համբաւ, հռչակ, 3. ինչ-որ մարդ» ՍԳր. Ագաթ. Եզն. (երրորդ նշանակութիւնն համար համմտ. յատկապէս՝ Գծ. ա. 15՝ էր անդ բազմութիւն անուանց իբրև հարիւր և քսանից): Ածանցման մէջ մտնում է 4 ձևով. անուն և անուան ձևերով՝ յօդակապով կամ առանց յօդակապի. այսպէս՝ 1. անուան ձևից՝ յօդակապով. անուանագէտ Վեցօր. անուանադիր Վեցօր. անուանադրութիւն Կոչ. անուանակիր Կորիւն. Ագաթ. անուանակից Ոսկ. մ. ա. Եւս. քր. անուանաշատ Վեցօր. 2. առանց յօդակապի՝ անուանդրութիւն Շ. խոստ. անուանել ՍԳր. Ագաթ. Կոչ. անուանարկ ՍԳր. Կոչ. անուանի ՍԳր. Ագաթ. Ոսկ. ես. (միջին հյ. ձև է անվրնել Անսիզք 35).—3. Անուն ձևից յօդակապով. անուանադրութիւն Կոչ. 163. Նար. Սարգ. Լմբ. Գնձ. անուանակիր, անուանագործութիւն Փիլ. անուանադրել Ճառընտ.—4. առանց յօդակապի՝ անուանդրութիւն Կոչ. 162. վատանուն Կոչ. Եզն. մեծանուն Երեմ. լբ. 19. Կորիւն. մոլարանուն Ա տիմ. գ. 20. յայտանուն Ագաթ. բաջանուն Եզն. Եւս. քր. Ոսկ. Նոր բառեր են անուանապէս, անուանարկել, անանուանարկիշ, անուանարկութիւն են:

= Բնիկ հայ բառ, որի ցեղակիցներն են սանս. nâman नामन्, գնդ. na ma, հպրս. 𐎠𐎼𐎰 nāma, պհլ. բելուճ. nām, պրս. نام nām, փարս. nąm, աֆղան. nōm, քրդ. naw, զազա namé, օսս. nōn, nōm. գնչ. nav, naf, թոխար. ñom. քուչ. ñem. յն. ὄνομα, եւոլ. ὄνομα. լտ. nōmen, ֆրանս. nom, իտալ. nome, սպան. nombre, ռոմ. nume, գոթ. namō, գերմ. Name, անգլ. name, շվէդ. namn, դան. navn, հոլ. imą, ռուս. имя, հպրուս. emmens, ալբան. emen, հիւլ. ainm, յդ. anmann, հիսլ. nafn, հգալլ. anu, յգ. enuein, կիմր. enw, կորն. hanow, կամխ lāman, անս. lamanaš «անուն» (l սաբանմանութեամբ յառաջացած), որոնց բոլորն էլ նշանակում են «անուն»: Այս միևնոյն բառը գոնւում է նաև ոչ-հնդեվրոպական ֆիննական լեզուների մէջ, որոնք գերմանականից են փոխ առել. օր. էստ. ֆիննն. վօտ. վնպս. nimi, սամոյ. լիվ. պիրլ. nim, վոգուլ. օստյ. nam, näm, լապ. nam, namma, nabme, հունգ. név, մորդվին. lem, չերեմիս. lən: Հնդեվրոպական նախաձևը դրւում է *e/o nomen, *ŋmen, հայերէնը քան Հիւբշ. *անվան, *անուվան նախաձևից և այս էլ հնխ. *anmŋ, anōmŋ ձևերից (տե՛ս Walde 522, Boisacq 704, Kluge 344, Berneker, 1, 426, Trautmann 70, Pokorny 1, 132, Ernout-Meillet 642—3):—Հիւբշ. 420:

Ըստ հին հայ քերականների անուն մնկնում է իբրև անուանելի. համմտ. «Ասի անունդ անըմբռնելի, վասն զի արդարև, իսկ անտեղի և անժամանակ է» Մագ. Երզն. ևն: Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 191 այն ուն, էն ուն «էութիւն ունեցող»: Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Klaproth, Asia pol. 103, որ համեմատում է պրս. nām, ֆրանս. nom, յն. ὄνομα են, լետոյ ՆՀԲ, Peterm. 33, Windisch. 23 են: Մորթմանն ZDMG 26, 51 խալդ. բևեռագրերի anuni, «անուն» բառի հետ: Պատահական նմանութիւն ունի ճապոն. 名 namae «անուն» բառը:

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Զթ. Խրբ. Կր. ՀՃ. Մկ. Մշ. Մրզ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ.

վն. անուն, Տփ. ա՛նուն, ա՛նում, Սրև. ա՛նուն, ա՛նիմ, Գոր. Ղրբ. Ջղ. անում, Տիգ. mնուն, Ոզմ. անուն «անուն», անվով «անունով, անուանի», Ակն. անիւն, Անտ. էնէօ՛ուն, Ասլ. էնիւն, Համշ. օնուն, Շմ. անիմ: Գաւառականներից մի քանիսի մէջ երևցած մ ձայնը Meillet համարում է խորին հնութեան նշան, իբր մնացորդ հնխ. m ձայնի: Նոր բառեր են անուանաւոր, անուոր, անուղդրել, անուղով, անուղել, անուիլ, ա՛նուղը «ամեննին բնաւ» (համմտ. Դրնդ. 328 «ծկեղեցի անուն չկայր ի մէջ վանացն»). հետաքրքրական ձևեր են անմանի «անուանի», աննիմ «անուններ» Գնձ.:

*ԱՆՈՒՇԱԴՐ «պաղչեղի նման մի նիւթ է. Թրք. և ոմկ. նշադըր» Բժշ. ունին միայն ՋՔ և ԱՔ. գործածական է և արդի գրականում: = Պհլ. *anōšāδur. այս բառը աւանդուած չէ պահլաւական գրականութեան մէջ, բայց նրա գոյութիւնը հաստատում է փոխառեալ ասոր. anōšāδur ձևը. հայերէն բառի հնագոյն ձևն էր ուրեմն *անուշադուր, որից անո. անուշադրի և սրանից էլ վերակազմուած ուղ. անուշադր: Նոր պրս. ձևն է نوشادر nūšādir, որից փոխառեալ Թրք. نشادر nišadər, վրաց. ნიშადური nišaduri, նյն. νισαντύρι, νισανδύρι, ռում. nišadir, բուլգար. nišadŭr, ռուս. нашатырь: Բառս հասել է մինչև Ֆրանսիա, ուր ըստ Marcel Devic, Diet. étym. գտնում ենք հֆրանս. anotasiar, amizadir, almisadre «անուշադր»: —Հիւրշ. 100:

Ուղիղ մեկնից նախ ԳԴ, յետոյ Böttich. Horae 39, 85, Lagarde, Ges. Abhnd. 9, 19 և Arm. Stud. § 133:

ԱՆՈՒՇԱԿ *տե՛ս* Անոյշ:

ԱՆՈՒԻ, ո հլ. «օղակ» ՍԳր. որից անուապատ, անուափակել «անուրով պատած՝ փակած» Բենիկ. ծանուանուր Տօնակ. անուակ «վզի առաջի օղականման ոսկորները» Ցոր. լա. 22 (գրուած նաև անդրակ, ուր ր>ղր ձայնափոխութեան համար համմտ. ծանր>ծանդր, մանր>մանդր են), կազմուած թարգմանաբար յն. χλεῖς բառից, որ նշանակում է «նիգ, սողնակ, կեռ, ճարմանդ, վզի անրակ»:

Ինճիճեան, Եղան. Բիւզ. 1820, էջ 211 ան բացառականով ո՛ւր բառից, «քանդի անուրն գոլով պարունակաձև բոլորեալ, անուր ասի, իբր զի չիք նշանակել ի նմա, թէ ո՛ւր է սկիզբն նորա և ո՛ւր աւարտ նորա»: Տէրվ. Altarm. 89 գնդ. ągra, յն. ἄγχω «խեղդել», իբր նախահայ *անգուր ձևից: Հիմնք. լտ. anulus: Bugge KZ 32, 3 լտ. anus, anulus (annulus) «օղակ» և հիւլ. āinne, յետնաբար fāinne. բայց այս համեմատութիւնը ուղիղ չէ, որովհետև լտ. anus բառի նախնականն է anno- ըստ Walde 49: Petersson KZ 47, 285—6 մերժելով Bugge-ի մեկնութիւնը դնում է հնխ. snū-ro- «կապ» ձևից, որ ծագում է հնխ. snēu- «թել ոլորել» արմատից, որի ժառանգները տե՛ս նոյն արմատ նեարդ բառի տակ: Մերժում է Pokorny 2, 696, ըստ որում «օղակ» և «կապ» տարբեր գաղափարներ են: Պատահական նմանութիւն ունին արաբ. պրս. քրդ. نير nīr, ասոր. ܢܝܪܐ nīrā «եղան լուծ»:

+ԱՆՈՒՐՋ, ի հլ. յետնաբար նաև ո հլ. «երազ» Մաթ. իէ. 19. Ոսկ. մ. ա. 1. Խոր. Փիլ. (հնների մօտ աննշական). որից անուրջարանել Կամրջ. անուրջական Խոր. Նար. Տօնակ. անուրջանալ Սարկ. Հանգ. սուղանուրջ Պղատ. տիմ:

= Բնիկ հայ բառ, հնագոյն *anōr- ձևից. սրա հետ համմտ. յն. ἄναρ, ὄνειαρ, ὄνειρος, ὄνειρον, կրետ. ἄναιρος, յպ. ὀνείρατα «անուրջ, երազ», ալբան. ą'dəɾe «երազ». հայերէնի մէջ ջ մասնիկ է, ինչ. սաթջ և գաղջ բառերում. ալբան ձևը գալիս է ըստ G. Meyer, Etym. Wört. der alban. Spr. էջ 11, *anrjo- նախաձևից. յն. ὄναρ և նախահայ *anōr համեմատում են իրար այնպէս՝ ինչպէս յն. τέκμαρ և τέκμωρ. իսկ հայերէն նախաձայն ա-ի դէմ յն. ο՝ համմտ. նաև անուն= յն. ὄνομα (Boisacq 703, Pokorny 1, 180): —Հիւրշ. 420:

Առաջին ուղիղ մեկնիչն է ՆՀԲ, որ դնում է «լծ. յն. ο՛ϝιαρ, οἰϝρος և հլ. անլուրջ»: Եւրոպացոց մէջ ուղիղ մեկնից նախ

Հիւրշ. ZDMG *36 (1882), 117*, որ դնում է =յն. ὄνειρος, ինչ. στεῖρα=սաերջ, յետոյ Justi, Litt. Blatt, *1883*, էջ *63* յն. ὄναρ, աւելի յետոյ Müller, Armeniaca VI: Բառիս վրայ խօսում են նաև Bartholomae BB *17, 103*; *18, 34*, IF *1, 454*; *2, 268*; Meillet MSL *8, 155*; Schmidt, Pluralbild, *193* եւն: — Marquart, Յուշարձ. էջ *300*: Մորթմանի ւս *7, 1*, էջ, *508* Ἀναριάκη բառի մէջ ուզում է գտնել հյ. *անրջակ բառի տառադարձութիւնը՝ Ն.Ք. Դ-Գ դարից. այս ժամանակ հայ բառի մէջ գեռ ջ ձայնը ձևացած չէր և հնչւում էր յ=y:

ԱՆՉՈՒ «չափ անորոնելի». ունի միայն Բառ. երեմ. էջ 23:

ԱՆՊ տե՛ս Ամպաճ:

ԱՆՊԱՀԱԿԻԼ տե՛ս Պահակ:

ԱՆՊԱՒԱՏԱԿ տե՛ս Ապաւարտակ:

ԱՆՊՈՅՏ «ակն գնդաձև, որ հրոյն դիմանայ, ֆր. orite». գիտէ միայն Քաջունի, հտ. Բ. էջ 217 և Գ. 16:

ԱՆՋԱՏ (յետնաբար ի հլ.) «զատուած, բաժնուած» Վեցօր. Ոսկ. Կողոս. որից անջատանել կամ անջատել «բաժնել, զատել» ՍԳր. Ագաթ. անջատեցուցանել Եփր. Թգ. անջատումն Ղեր. ա. 7. անանջատ Փիլ. տարանջատական ՅՀ. իմ. պալ. դիւրանջատական ԱՒ:

ՆշՒ յիշում է պրս. انجیدن anǰidan «դուրս քաշել, մաներել, ածելիով կրտրատել», բայց մեր բառը մեկնում է հյ. նամ կամ րն մասնիկով+զատ «ջոկ»: ՓՒ հանում է ինչ որ *ջատ «կից» բառից՝ ան բացառականով: Հիւնք. պրս. էնճիյտէն բառից՝ որ ո՛չ ձևով և ո՛չ նշանակութեամբ նման է մեր բառին: Թիրեաքեան, Արիահայ բառ. 39 պրս. էնճիյտէն-ից, իսկ էջ 159 պրս. جدا Judā «զատ» բառից:

***ԱՆՋԻՄԱՆ** «ժողով». նորագիւտ բառ, որ երկու անգամ դանում եմ գործածուած հայ մատենագրութեան մէջ. «եւ արարեալ Դիոկղետիանոսի թագաւորի անջիման, կոչէ ի միասին գումարեալ զսինկղիտոսն ամենայն և զիշխանս» Վրք. սեղբ. էջ 719. «եւ Սերգիս՝ որում Բարգէն անուն էր, Արդիշոյեան խուժիկ, ի Շուշարի շահաստանէ, ի նմին յանջմնի՝ առաջի մեր ամենայն Հայոց ասաց՝ թէ այդ այդպէս է» Գիրք թղ. էջ 47:

= Պհլ. anǰaman կամ hanǰaman «ժողով», պրս. انجمن anǰuman «ժողով» (այս անունով է կոչւում նաև այսօր Պարսկաստանի երեսփոխանական ժողովը). հպրս. *hanǰamana «ժողով»: Իրանեանից փոխառեալ են նաև ասոր. ܗܢܙܡܢ hanzaman (Brockelmann Lex. syr. *84 բ*), մանդ. האנשימאן hanšiman, արաբ. حنزمن hinzamn «մարդկային ամբոխ» (Horn, § *114*), վրաց. անջմնի «հրապարակաւ»:

Գիրք թղ. հրատարակիչը հարցնում է թէ արդեօք պրս. էնճիւմէն բա՞ռն է: ԳԲ ունի իբր պրս. բառ: Վերի ձևով մեկնում է Աճառ. Հայ. նոր բառեր, հտ. Բ:

ԱՆՋՈՐԱՆ «ոսպի տերև» ԱԲ և Բառ. երեմ. յաւել. էջ 565, որ և անճոռան ՀԲուս. § 120 ըստ Բժշ. պէտք է հասկանալ առանձին մի բոյս, ինչպէս որ ցոյց է տալիս՝

ԳԻՒ.—Համշ. «օնճուռա» (հնչուած օնջուռա) «մի տեսակ բոյս, Քրք. իվախն».—Այս բոյսը առատութեամբ բուսնում է խրամների մօտ՝ աղբուած տեղերը. երբ պոկես՝ մի անախորժ հոտ է թողնում. բուսած տեղը հողի լաւութեան նշան է. մատղաշ ժամանակ՝ որճացող կենդանիները ախորժով ուտում են. հասունացած ժամանակ՝ փնջաձև սպիտակ մի ծաղիկ է տալիս թանթրաւենու ծաղիկներին նման, որոնք չհոտ սևանում են. մեծութիւնը ոսպի չափ, բայց փայլուն: Անճուռաչի տերևները ջերմի դեղ են. տաքացնելով փռում են անկողնում, հիւանդին էլ վրան պառկեցնում. քրտնում է և առողջանում (Բիւրակն, 1900, էջ 84 բ):

ԱՆՋՐՈՒԹԻՒՆ «հեշտութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 24:

ԱՆՋՐՊԵՏ, ի, ի-ա, ո հլ. «երկու բան իրարից բաժանող միջոցը» ՍԳր. Ոսկ. Եբր. կոչ. եզն. Վեցօր. «արգելք, խոչընդոտ», Եղիշ. ՅՀ. կթ. «տարբերութիւն, խտրութիւն», Սարգ.

«անջրպետող, բաժանող (իբր ած.)» Նար. «անջրպետուած, բաժանուած» Նար. Քեր. քերթ., որից անջրպետել *ՍԳր.* անջրպետութիւն *ՍԳր. Սեբեր. Նա. քր. Կոչ. Ոսկ. մ. ա. 15.* աննանջրպետ *Շար. Նար. Կն։*

ՀՀԲ անջատել *բառից։ ՆՀԲ լծ. արաբ.* ճեվպէք *«միջոց»։ Հիւնք. պրս.* էննիյրտէն *«ծակել»։*

ԱՆՒԿՆԼ *տե՛ս* Անառակել։

ԱՆՍԱԼ *(-ացի) «լսել և լսածը կատարել, հնազանդիլ, ինդ տալ, համբերել, սպասել» ՍԳր. եզն. Ոսկ. մ. Ագաթ. որից* չանսական *Սեբեր.* չանսացութիւն *Մխ. Երեմ.* չանսաւորութիւն *Արծր.։*

Հիւնք. հանում է անսասել *ձևից, այն է «չասել», ուրիմն և լսել։*

***ԱՆՍԻՉ** *«օրէնք». այս անունն է կրում Սմբատ Պատմիչի Դատաստանագիրքը (Անսիզ Անտիոքայ), որ հին ֆրանսերէնից է թարգմանուած։ Նոյն բառը գործածւում է նաև անդ՝ էջ 3, 15, 23, 41, 83. որից կազմուած է* անսիզվար *«իրաւաբէր» Անսիզք 41։*

=Ֆրանս. assises *(յոդնակի գործածութեամբ, ինչպէս է շատ անգամ մեր բառն էլ) կամ* cour d'assises *«քրէական յանցանքները դատող դատարան, եղեռնադատ առեան». ծագում է* asseoir *«նստիլ» բայի անցեալ դերբայից (*assis *«նստած») և բուն նշանակում է «նիստ»։—Հիւբշ. 390։*

Ուղիղ մեկնեց նախ Անսիզքի հրատարակիչը, էջ XXI։

ԱՆՍՈՂ *«առացումն» տե՛ս* Անոյշ։

ԱՆՍՈՒԱՂ *տե՛ս Սուաղ։*

ԱՆՍՏԻ, ԱՆՍՏՈՒ *տե՛ս Ստի։*

ԱՆՏԱԽ *«ակռան, ուղտափուշ,* chardon*» Բժշ. ունի միայն Ալիշան, Հայրուսակ § 124։*

ԱՆՏԱՌ, ի-ա *հլ. (Յոբ. խ. 17* անտառովք*, յետնաբար նաև ի հլ.) «անտառ, մէրի» ՍԳր. որից* անտառախիտ *«անտառները շատ. 2. ծառաշատ. 3. տերևախիտ» ՍԳր. Կոչ. 219. եզն.* անտառակ *Բուզ.* անտառանալ *«աճիլ, ուռճանալ» Երեմ. ժէ. 8.* անտառատուն *«գինարան»! Եփր. Թգ. 425. տատասկանտառ Տօնակ. նոր բառեր են՝* անտառապահ, անտառապետ, անտառային, անտառաբանական, անտառաբնակ *Կն։*

ՆՀԲ համտաբր, համծառ։ Böttticher ZDMG *1850, 350 և* Bopp. *Համմտ. քերական. բ տպ. Բրգմ.* Bréal, *II 381 տանս.* kantara: Lag. Urgesch. Arm. *259 և* Bak. Lex. *68* tar *արմատից, իբր «անթափանցելի»։ Մսերեանց, Ճոռաքաղ 1859, 430 մեզնից փոխառեալ է դնում տանս.* բառու *«ծառ» և* Մադեռա *կղզու անունը, որ «լուսիտաներէն նշանակում է ծառ»։ Տէրվ.* Altarm. *75 նոյն ընդ հյ. ծառ և տնս.* taru *«ծառ».* անտառ*=համծառ։ Նոյն, Նախալ. 86, 122 և Լեզու էջ 91 ան մասնիկը համեմատում է* անխուլ, անճոյր, անգամ *բառերի ան մասի հետ։* Canini, Et. étym, *125 հբգ.* triuuen *«աճիլ» բայի հետ։* Bugge, Etrusk. u. Arm. *86* ծառ. *յն.* δρῦς, δρῦος *բառերի հետ,* ան-= sm *«միասին»? Հիւնք. յն.* δένδρ-*ից։* Patrubány SA *1. 190 փոխառեալ իրանեանից, իբր պհլ.* van *«ծառ»+*tar *մասնիկ (=տնս.* *vanatara *«ծառատան»)։ Սագրգեան ՀԱ 1909, 335 հյ. ծառ և սումեր.* tar *«ծառ, անտառ, փայտ»։ Մառ* ИАН *1912, 597 վրաց. տեվրի «խիտ անտառ» բառի հետ, Մառ* ЗВО *1925, 667 ռուս.* дерево *«ծառ» բառի հետ։*

ԱՆՏԱՐ *«ապրայ, կշռորդ». մէկ անգամ ունի Բառ. Երեմ. էջ 237՝ հետևեալ ձևով. «նիժար և նժար. կշռորդ կամ փարատնկ կամ ապրայ կամ անտար»։—Նոյն է վն.* անտար *«ապրայ»։*

ԱՆՏԻ *տե՛ս* Անդ։

***ԱՆՏԻՂՆՈՏՈՒՍ** *«անպայման». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Լմբ. օր. 17 «Միթէեցուցանեն զնա ի ժառանգութիւն անտիղնոտուս, այսինքն առանց կարծեաց»։*

=Յն. բառ է, լատինական ձևով ձևափոխուած և յետոյ հայերէն տառադարձուած. համմտ. յն. ἀντιγνωμονέω *«հակակարծիք լինել» և* γνωτός *=լտ.* gnotus *«ծանօթ»։*

ԱՆՏԻՃՆԼ *տե՛ս* Անդամնել։

***ԱՆՏԻՄԻՍ.** *անստոյգ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Պարգ. 504 «Սարկա-*

ւագն քարոզէ և սփռէ զանտի միանն» (այսպէս!). համապատասխան տեղը միւս խմբագրութիւններն ունին միայն՝ «եւ սարկաւագն քարոզէ առ դուռն» էջ 515. «Սարկաւագն քարոզէ առ դուռն խորանին» էջ 536։

= *Նոր յն. ἀντιμήνσιον կամ ἀντιμίνσιον «խորան շարժական,* autel portatif*»։— Աճ.*

ԱՆՏԻՆԵԼ *«զարհուրիլ»? մէկ անգամ գործածուած է Մագիստրոսի Գամագոտականում, տուն 15։*

Այսպէս մեկնեց Մէնէվիշեան, Գամագոտականի ամբողջական լուծում, էջ 143 (=ՀԱ 1911, 727)։

***ԱՆՏԻՆՈՍ** *«համաստեղութիւն Այծեղջիւրի մօտ». ունի միայն ՀՀԲ։*

= *Յն. Ἀντίνοος, Ֆրանս.* Antinoüs *նոյն նշանակութեամբ։— Աճ.*

***ԱՆՏԻՔՐԻՍՏՈՍ** *(սեռ. -ի) «սուտ Քրիստոսը, նեռ» Ոսկ. մ. բ. 21, Ածազդ. ժբ. Դամասկ. Լմբ. յայտ. ժԲ. ևն։*

= *Յն. ἀντίχριστος, լտ.* Antichristus, *գերմ.* Antichrist *ևն. բուն նշանակում է «հակառակ Քրիստոսի»։—Հիւրշ. 340։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

***ԱՆՏՈՒՉ** *«կղմուխ բոյսը,* halenium, *ֆրանս.* aunée, aulnée*» Ամիրտ. ունին միայն ՋԲ, ԱԲ և ՀԲուս. § 125։*

= *Թրք. اندز anduz «բժշկական անուշահոտ մի բոյս» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 279) կամ اوتی اندز anduz otə «կղմուխ,* inula helenium*» (Blau, Sprachdenkm. 161, 76), «մի խոտ՝ որ ձիու հիւանդութեանց մէջ են գործածում» (Будаговъ, հա. 1, էջ 101; Ուս.* andoz *«լայնատերև մի բոյս է»։ Տարբեր է սակայն արևել. Թրք. չաղաթայ. اندز* anduz *«գինի ծառը,* genévrier*»* (P. de Court. Dict. Turc—orient.)։—*Հիւրշ. 262։*

Թուրքերէն բառը յիշում են նախ ՋԲ և ԱԲ։ Lagarde, Arm. St. *§ 135 յիշում է Թուրքերէնը, բայց մեր բառը դնում է պրս.* andūza, andūža, andūša *«մանիշակ» բառից։ Ալիշան, ՀԲուս. § 125 դնում է Թուրքերէնից։*

ԳԻՒ.— Նոյն է կարծեմ լոռեցոց **անդուզ** *բոյսը (Ազգ. հանդ. է, էջ 299 տպուած է* **անդուղ**, *պէտք է ուղղել* **անդուզ**՝ *ըստ Ռուբէն Քալանթարեանի Բուսաբանական բառացուցակի (անտիպ)։*

***ԱՆՏՌՈՆ** *«այր, քարայր». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Սոկր. եկեղ. պտմ. էջ 656 «Վասն որոյ և Թագուհին Հեղինէ Բարեպաշտուհի զծնունդ Աստուածածնին սքանչելեօք զարդարէր, և ամենայնիւ զտաճարն անառոն պայծառացուցանէլով». (Բեթղեհեմի այրու տաճարն է, ինչպէս աւելի պարզ գրում է փոքր Սոկրատը. «Աստուածասէր սուրբ տիկինն Հեղինէ շինէր յանուն Աստուածածնին և զծննդեանն որ ի Բեթղեհեմ»)։*

= *Յն. ἄντρον «այր, քարայր»։*

Ուղիղ մեկնեց Մ. Վրդ. Տէր-Մովսէսեան, անդ։

ԱՆՐԱԿ *տե՛ս* **Անուր**։

ԱՆՑ, *ի հլ. «անցնելը, ճամբայ, նեղութիւն, դիպուած, պատահած բան» ՍԳր. Եւս. պտմ. «վիժուած» Փիլ. Պիտ. այս արմատից են անցանել (կար. անցեալ ձևն ունի Կնիք հաւ. էջ 12) «անցնիլ, երթալ. 2. առաջ անցնիլ, գերազանցել, չափից ու սահմանից անցնիլ. 3. զանց առնել, ձգել անցնիլ, թողնել. 4. անցնիլ, փճանալ, ոչնչանալ. 5. մաբիլ, շիջանիլ, հանգիլ. 6. պարապիլ մի գործով կամ խօսքով (խօսիլ, ճառել, պատմել). 7. գլուխը դալ, պատահիլ» ՍԳր. Բուզ. Եզն. Վեցօր. Ագաթ. Եւս. պտմ. Սերբր. Ոսկ. անցանել զգինեաւ «սթափիլ», անցանել ընդ մուն «երազափորձիլ», անցանել ընդ կին «մերձաւորիլ», ի բաց անցանել «բնական պէտքը հոգալ», անցանել յաշխարհէ «մեռնիլ», անցանել զաւուրբ «ժերանալ», անցուցանել ՍԳր. Ոսկ. Սերբր. Ագաթ. անցական Ագաթ. անցանակ «պատիկ» (իբր Թրգմ. պասեմ բառի, ինչպէս են նաև անցարան, անցիկ) Նիւս. կազմ. անցաւոր ՍԳր. Ագաթ. Կորիւն. անցուրիւն Ագաթ. անցուցանիլ «օրօրոցի կապ» Հին բռ. անցնող «մի տեսակ ջերմ» Մխ. բժշ. անցուորիկ «շաքարախտ» Բժշ. անցուրական (նոր բառ). հարևանցի, ի հարևանցի «վեր ի վերոյ, վարկպարագի իմն» Ա. կոր. ժղ. 7, Ոսկ. մ. ա. 16, յհ. ա. 32. հարևանցիկ առնել Ոսկ. յհ. բ. 4. երա-*

գանցուկ *Ոսկ. ես.* թափանցանց *ՍԳր.* լուսանցոյց *Եզեկ. խա. 16. խբ. 11.* պարանցիկ *Դատ. թ. 27.* վաղանցուկ *Գե. ես.* անանց *Ոսկ. ես. Ագաթ.* գանց առնել *ՍԳր. Ագաթ.* գանց լինել «*վրիպիլ*» *Եսթ. ժ. 5.* գանցանել *ՍԳր. եւս. քր. և պտմ. Եփր. եկ. Կոչ. Ագաթ.* գանցուցանել *ՍԳր. Սեբեր. եւս. քր.* ուխտազանցութիւն *Երեմ. գ. 11.* գերազանց *Պիտ.* անցուրդ «*շատ համբաների անցման կէտը*» *Առաք. պտմ. 271 (չունի ԱԲ).* առանց *ՍԳր. Եղն.* առանցանել «*բանդագուշել, զառանցել*» *Բ. կոր. թ. 11. Ոսկ. ես. և Եփես.* առանցիկ «*առասպելական*» *եւս. քր.* առանցք *ՍԳր.* զառանցել «*սաստիկ ծերանալ*» *Ոսկ. մտթ. ա. 2.* «*գնդաբանել*» *Բուզ. եւս. քր. (հմմտ. Ոսկ. Եփես. 805՝ Մինչև ցե՞րբ ոչ դադարէք յառանցեալ ի զառանցեալ բանից).* զառանցուցանել «*խաբել*» *Կող. բ. 4.* զառանց «*առակով*» *Օրբել.* պատուիրանազանցութիւն *Ոսկ. յհ. ա. 4.* յանց «*յանցանք*» *Ոսկ. Երր. Եփր. Թգ.* յանցանել *ՍԳր.* յանցաւոր *ՍԳր.* յանցանք *Կիւրղ. ղևտ.* «*Այս արմատից պէտք է լինի նաև* թանց «*առանց, բացի*» *ՅՀ. իմ. ատ. և երև. որից տարբեր է* թարց:

Lagarde, Urgesch. Arm. 329 *անս.* anč՝ *գնդ.* ač՝ *Տէրվիշ.* Altarm. *106 հնխ.* ag-s *արմատից՝ որից նաև անս.* akšî, *լտ.* axis, *լիթ.* aszis, *հլ.* ось, *յն.* ἄξων, *հրգ.* ahsa, *գերմ.* Achse «*առանցք*»՝ *Հիւնք.* անսալ *բառից՝ Մորթման* ZDMG *30, 425 խալդ.* andani *և ելամ.* antuga «*անցք*» *բառերի հետ՝* Bugge KZ *32, 33 անս.* gaccĥâmi, *յն.* βάσκω «*երթալ*» *բառերի հետ՝ իբր հնխ.* gmsk'ô- *արմատից՝* Pedersen, *Հայ. դր. լիգ. 146 լտ.* ante «*առաջ*», *յն.* ἄντομαι «*առաջն երթալ, հանդիպիլ, դիմել*» *բառերի հետ՝* Karst, *Ցուշարձ. 417 թթր.* aš, eš *(թրք.* aşmaḳ*)* «*անցնիլ, գերազանցել*» *բառի հետ՝ Շէֆթելովից* BB *28, 287 անս.* naçati «*վճռանալ*», *զնդ.* nasyêiti, *պհլ.* nasinîdan «*նիհարիլ*», *յն.* νέκυς «*մահ*», *լտ.* necare «*սպանել*»:

Գիւմ.—Հմ. Սչ. անցնել, *Նախ.* անցնէլ, *Գոր. Ղրբ.* ընցրնել, *Հւր.* հրնցրնել, *Հւր.* հրնցանէլ, *Ախց. Կր. Տիգ.* անցնիլ, *Զթ.* անցնըլ, *Մշ. Վն.* ընցնել, *Մկ.* ընցնիլ, *Ալշ.* ɟրնձ'նել, *Երև. Տփ.* անց կէնալ, *Շմ.* անց կանալ, *Զղ.* յանց կենալ, անց կալ, *Հմշ.* օնցնիլ, օսնիլ, *Ասլ. Խրբ. Պլ. Ռ. Սեբ.* ասնիլ, *Ագլ.* յընց կօլ, *Յղ.* յունց կօլ, *Սլմ.* բսնել, *Մրղ.* բսնել, *Ակն.* օսնիլ: *Նոր բառեր են* անցանակ, անցանաճ, անցաւոր «*քիչ*», անցաւորի, անցոմոոցոց, անցուր, անցուկ, անցուցք, անցել «*բացի*» *(սրա հին վկայութիւններից հմմտ. Դրնդ. էջ 120 և 328 ի մեր Սարգսէն ի զատ, (բայց մի քիչ յետոյ)՝ Բայց ի Սարգսէն անցել. Եկեղեցի անուն չկայր ի մէջ վանացն ի ծննդենէն անցել: Սրա աւելի հին ձևն է* անցեալ. *հմմտ. Եւ միրգ չունի, քան զծաղիկն անցեալ. Ամիրտ. (ըստ ՀՒուս. § 2227). ձևի համար հմմտ.* թողել «*բացի*», *որ ծագում է* թողեալ *ձևից)*:

ԱՆՑԱՔԱՏ. *ձևով և նշանակութեամբ անըստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տարօն. Ա. § 10 «Մ՛չ բաժանեմ յերկու բնութիւնս՝ աստուածային և մարդկային. զի առաջինն յոյժ անցաղատ և անկիր է, և երկրորդն անզօր մերոյ փրկութեանս»:*

ԱՆՑԻՈՒԱՏԱՆ «*փղակազմ*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 25:*

ԱՆՑՆԻՐ *տե՛ս* Անձն:

ԱՆՓԱՅԻ «*համայի, անմարդաբնակ*». *երկու անգամ միայն գործածուած է. «Լերանց և անփայից Զորոց և անձաւաց անկենդանեանց տամ լոյս» Անան. շիր. էջ 40. «Դիպեցաւ ի տեղի անփայի յեզր գետոյ ուրեմն» Վրք. հց. ա. 604:*

ՆՀԲ պրս. پای pay «*ոտք*» *կամ յն.* ἄφοδος «*հեռանալ, մեկուսանալ*»:

ԱՆՓԵԼՔ, ի *հլ.* «*արջառաջիլ*». *մէկ անգամ ունի Վրք. և վկ. Ա. 216 «Վարեսջիք զդովաւ կաշիւք անփեղքիւք»:*

ԱՆՓԻՒՌ *կամ* **ԱՆՓԻՒՆ** «*եպիսկոպոսական խաչ կամ գաւազան*» *Ճառընտ. Տօնակ. գրուած ամփիոն Ստ. ժմ. 495. ամփիւռն Ստ. ժմ. 634. ափիոն Ստ. ժմ. 638, 639. հմմտ. հետևեալ վկայութիւնը. «Նշանն յաղթութեան՝ որ կոչի ըստ մերում լեզուի կնիք, և ըստ երրայեցւոցն անփիոն, զոր ունի քահանա-*

յապետն ի ձեռին իւրում» (նոյն վկայութիւնը Ստ. ժմ. Արրատ. 1915, 634 ունի պարզապէս «ըստ մերում լեզուիս կնիք, որ է ամփիւռն»)։

ՆՀՔ թուի յն. ἀναφορά «վերբերումն. 2. ձօն գոհաբերութեան առ Աստուած», կամ «եթէ գրեսցի զափիռ, ըստ արաբ. և եբր. զաֆէռ, պրս. փիռուզա, է յաղթանակ մարտի»։

ԱՆՔԱՅ «նուագ». ունի միայն Բառ. երեմ. էջ 25։

ԱՆՔԱՏ (սեռ. -ի) «կարօտ, աղքատ, նուաստ» Ոսկ. ես. յհ. ա. 9, 10. Փիլ. նար. էջ 178. «աչք տնկող, ազահ» Ոսկ. ես. որից անխատանալ «կարօտ մնալ, պէտք ունենալ» Փիլ. լիւս. 146. Պիտ. անխատիլ Փիլ. անխատութիւն «չքաւորութիւն» Թէոդոր. խչ. անանխատ «անկարօտ» Ոսկ. յհ. ա. 9։

ՆՀՔ դնում է «լծ. հյ. աղխատ, որպէս թէ գրեալ էր յն. տառիւս ἀγκάδ (որ տառացի agkad է, բայց կարդացւում է ankad). նոյն ընդ պրս. և արաբ. էնֆեաս, մէնաֆէտ, թրք. գրէսիզ»: Սրբանից առնելով Հիւնք. էջ 93 շինում է պրս. էնֆեաս «կարօտ, աղքատ, չքաւոր» բառը։ Ստոյգն այն է՝ որ էնֆեաս պարսկերէն չէ, այլ արար. انكاد ankad բառն է, որ մեկնւում է «ոտքը չար, անբարեյաջող, nuqnuruuq», نكد nakd արմատից (տե՛ս Կամուս, թրք. Թրգմ. Ա. էջ 700)։ Նշանակութեամբ և ձևով տարբեր բառիս նմանութիւնը պատահական է։ Տէրվ. Altarm. 19. հյ. խանգել բառի հետ = սանս. skhad, յն. σχάζω, լտ. scandula, հսլ. ckada, скадъ. ըստ այսմ ան մասնիկ է, Թիրեաքեան, Արիահայ բառ. 40 ան բացասականով զնդ. kata, պհլ. katak, պրս. كد kad «տուն» բառից, իբր «անտուն». (զնդ. kata նշանակում է «սեննեակ, նկուղ, գերեզման» և չունի «տուն» նշանակութիւնը)։

Գիւտ.—Ըստ Գաբրիէլեան ՀԱ 1909, 256 նոյն է գւռ. անհոտ (Ակնայ բարբառով), որի նշանակութիւնը սակայն չէ տուած։

*ԱՆՔԻԼՈՍ կամ ԱՆՔԻՂՈՍ «կողամայր ձուկը». ունի միայն ԱՔ, իսկ ՆՀՔ թէև առանձին մոռանում է յիշել, բայց կողամայր բառի տակ դնում է հետևեալ վկայութեամբ. «Զուկն անքիլոս, որ կոչի կողամայր, որովայնս ոչ ունելով, բայց միայն պլուխս և մերկ կողերս. ուստի կոտորատեալ տնկէ և առնէ զաւակս» Վրդն. ծնն. Այս տեղից առնելով Յայսմ. մրտ. 21՝ սխալմամբ գրում է. «Զուկն անքիլոս, որ կոչի կողամայր, որովայն ոչ ունի...»։

= ԾՆ. ἐγχελυς, ἐγχέλυος «օձաձուկ կամ կողամայր» բառն է, որի ուղիղ տառադարձութիւնն է ենխեղէս (տե՛ս այս բառը). գիտունները կարծում են, որ այս յն. բառի նախաձևն է *αγχέλυος (տե՛ս Walde 43, Boisacg 213). Հայերէնն էլ ենթադրում է ճշտիւ յն. ἄγκυλος ձևը, որից փոխառեալ է նաև ֆրանս. ancyle «կողամայր»։—Աճ.

ԱՆՔԻՐՈՍ «ծուլու ժժմակ մը». ունի միայն ԱՔ, իբր յն. բառ։ Bailly չգիտէ նման մի ձև։

ԱՆՔՈՅԹ (ի հլ. ըստ ՆՀՔ, թէև առանց վկայութեան) «հանդարտ, խաղաղ, հանգիստ, ապահով» Ոսկ. ես. Վեցօր. 144. Փիլ. Պիտ. «ծածուկ, պահուածծ» Նար. Շ. վիպ. որից անհոգացեալ Փիլ. իմաստ. Տիմոթ. կուռ, էջ 315, անհոյքութիւն (այսպէս առանց ամփոփման) ՋՔ և ԱՔ։

ՆՀՔ դնում է լծ. հյ. հանգիստ, անգայթ, անսայթաք, անխուռ, յն. ἀκύμαντος «անալեկոծ», պրս. āsūda «հանդարտ» լտ. sudum «պարզ (եղանակ)»։ Տէրվ. Altarm. 74 կա՛մ ան-խուրխ և կամ համ-խոյթ, ընդունելով խոյթ = յն. κεύθω «պահել, ազատել»։ Հիւնք. անխուռ կամ անգայթ։ Տէրվ. Լեզու էջ 91 մեկնում է համ-խոյթ, ուր *խոյթ «պատըսպարան»։ Pedersen, Հայ. դր. լեզ. 26 խոյթ = հսլ. kypěti. ռուս. кипить «հռալը», լտ. cupiō «ցանկանալ»։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 95 ան բացասականով խոյթ «ժայռ» բառից։

ԱՆՕԹ, ո հլ. (յետնաբար նաև ի հլ). «աման, կահ, կարասիք, գործիք՝ մանաւանդ պատերազմական գործիքներ» ՍԳր. Եղն. Եփր. ծն. որից յաճօթ առնուլ «գործածու-

թեան համար փոխ առնել» Դ. թագ. գ. 5. Սեբեր. յաճօթ տալ *«փոխ տալ» Ոսկ. մ. գ. 24 (հմմտ. գուռ.* խար տալ *«կաթ փոխ տալ» Ալբս. Ախց. Ակն. կիւր. Կյ. Հմշ. Ջն. որ կազմուած է տճկ.* قاپ qab, *ոմկ.* խար *«աման» բառից),* աճօթարեր *«կարասիները տանող (կառք)» Բրս. ընչեղ.* աճօթագործութիւն *Փիլ. եղ.* աճօթապան *«եկեղեցու տանդատուն» Պտրգ. 429 (նորագիւտ բառ). Նոր դրականի մէջ ունինք* հրաճօթ, բեղաճօթ, բ'եղաճօթապետ, բեղաճօթաձիգ, բեղաճօթարան, *որոնք կազմուած են* աճօթ *բառի «պատերազմական գործիք» նշանակութեան համաձայն։*

Բագրատունի, Քերակ. զարգ. 1496 համարում է կազմուած օթ *մասնիկով. ուստի արմատը* աճ։ *Այսպէս նաև* Bugge KZ *32,2 ևն։ Հիւնք. դնում է* աւանդ *բառից և սրանից է համարում* յաճօթ առնուլ *ոճր։ Յակոբեան, Բիւզանդիոն № 743 պրս.* آوند āvand *«աման» բառից, իբր տեղափոխութեամբ* աճաւդ, աճօղ, աճօթ։ *Բ. Խալաթեանց, ՀԱ 1902, 399 ասուր.* unūtu, *եբր.* אָנָה ānā, *արամ.* אנא ānā, *արաբ.* اِنَاء ina *«աման»։ Յիշեցնում է եգիպտ.* ḫnw.t *«եղջիւր, 2. գինու աման»։—Աճ.*

ԱՆՕԹԻ *տե՛ս* Նօթի։

ԱՆՕՍՐ *(ի հլ. յգ.* աճournուճ *կամ* աճաunուճ) *«բարակ, թեթև, անգայտ, ցանցառ, հաղուագիւտ» Ոսկ. ես. մ. և ա. տիմ. Կիւրղ. ես. Եփր. երաշտ. որից* աճournագոյն *Ոսկ. մ. և ես.* աճournամարմին *եղն.* աճournանալ *«անգայտանալ, բարակիլ» Փիլ. Նիւս. կազմ. Ոսկ. յհ. ա. «տկարանալ, նուազիլ, հիւծիլ» Դ. թագ. ժդ. 26.* աճournացուցանել *եզեկ. խդ. 10. Ոսկ. ա. տիմ.* աճournել *Յոբ ժդ. 11, Վեցօր. ը. 166. Տիմոթ. կուզ 247,* աճournութիւն *Ոսկ. մ. բ. 18. Կանոն. Փիլ.* աճournաբար *«անզգալի կերպով» Երզն. մտթ. 290 բ. գրուած է նաև* աճաուր *(ՋՔ),* ճour *Խոր. Շիր. Վստկ. որից* ճournագոյն, ճournաճեր, ճournաճող, ճournանալ, ճournութիւն, *բոլորն էլ յետին. ըստ այսմ հնագոյն և ուղղագոյն ձևն է* աճour=աճաուր. *ուստի և կասկածելի է* ճournաբոյս *Վեցօր. 96՝ ըստ սրբագրութեան Վենետիկի հրատարակիչների, մինչ ձեռագիրն ունի* ճորաբոյս։

Հիւնք. արաբ. عناصر *'anāṣir «տարերք», որի եզակին է* عنصر *'unsur «տարր»։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 124 համեմատում է գոթ.* ganōhs, *հրգ.* ginuog, *հհյս.* gnógr *«բաւականը», լտ.* nanciscor *«պատահիլ», սանս.* açnōti *«հասնում է»։*

ԳԻՒ.—Ալշ. Մկ. Ննխ. Սլմ. Վն. Տիգ. ճo՛ռր, *Ախց. Կր.* ճour, ճoru, *Շմ.* ճour, ճournր, *Խրբ. Ռ. Սեբ.* ճoru, *Տփ.* ճournr, *Ասլ.* ճէo՛ռր. *ՋՔ.* ճէoյր, ճէoռր, *Հճ.* ճէյս։ *Գաւառականների մէջ բացի «ցանցառ, ոչ-խիտ» իմաստից՝ նկատելի են նաև Հմշ. «քիչ», Տր. «քիչ անգամ», Վն. «անխելք, խեղճուկ», Ննխ. «չքաւոր, անկուտի, անփող» նշանակութիւնները։*

*ԱԾ «*amidon, *օսլայ, նշայ». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. 17, բայց չի յիշում հտ. Ա. էջ 87* amidon *բառի տակ։*

**ԱՇԱԿԵՐՏ, ի-ա հլ. «վարպետի մօտ սորվող» ՍԳր. Կորիւն. որից* աշակերտիլ *ՍԳր. Կորիւն.* աշակերտական *Ագաթ.* աշակերտակից *ՅՀ. ժա. 16.* աշակերտասէր *Կորիւն. Ոսկ. յհ. ա. 3.* աշակերտութիւն *եզն. Կորիւն. Եփր. Կողոս.* աշակերտուհի *Ոսկ. յհ. բ. 26.* աշակերտավայել *(նոր բառ) ևն։*

*= Հին պհլ. *ašākert, որի նոր ձևն է* ašāgart=*պազենդ.* ašāgard, *պրս.* شاگرد šāgird. *որից փոխառութեամբ քրդ.* šāgird, *թրք.* šayirt, šayərt *«աշակերտ»։—Հիւբշ. 100։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՆՀՔ, Böttticher, Arica *76, 254 ևն։ Թօփուզեան, Արծիւ Վասպ. էջ 44 իբր արշ կերտել «գեր ի վեր լինել»։*

ԳԻՒ.—Սչ. աշագեղ, *Երև.* աշագէրդ, աշկէրտ, *Ախց. Կր. Մկ.* աշկէրտ, *Շմ.* աշագէրդ, շագիրդ, *Մշ. Ջղ.* աշկերտ, *Ննխ.* աշկերդ, *Ակն. Խրբ. Պլ. Ռ.* աշգէրդ, *Սլմ. Վն.* աշկեռտ, *Ալշ.* աշկերդ, *Ոզմ. Տփ.* աշկիրտ, *Մրզ.* աշկէրթ, *Ագլ.* ա՛շկառտ, *Տիգ.* աշգիրդ, *ՋՔ.* էշգիրդ, էշգիյդ, *Սեբ.* աշգեդ, *Հճ.* էշգէյդ։ *Արեւմտեան*

գրականում զանազանում է աշակերտ (դպրոցի համար) և աշկերտ (խանութի համար)։

ԱՇԱՐԱՅ (ի հլ. ըստ ՆՀԲ) «հաճար» Մխ. դտ. «ըստ ոմանց լուբիա կամ անոր մէկ տեսակն» ՀԲուս. § 132. նոյնը ոմկ. աշորայ (ըստ ՆՀԲ, ԱԲ, ՀՀԲ և ՓԲ). որից կազմուած են աշարայիճ, աշարեղէն «հաճարեղէն» ՀՀԲ. աշորեայ հաց «հաճարահաց» ՀԲուս. աշորախոտ «լտ. consiligo?» ՀԲուս. աշորուկ «հաճարանման մի խոտ» ՀԲուս. և ՆՀԲ, հտ. Բ. էջ 1060 գ, իբր գաւառական բառ։— *Մեր Համալսարանի գիւղատնտեսական բաժնի դասախօսները գտնում են, որ աշորայ և հաճար բոլորովին տարբեր բոյսեր են. այսօր էլ մեր ժողովուրդը զանազանում է այդ երկուսը, առաջինը կոչելով «աշորա կամ տարեկան» (ռուս. рожь, գերմ. Roggen), իսկ երկրորդը՝ աճառ (ռուս. полба).*

Lagarde, Urgesch. 486 հաճար բառի հետ սանս. čar արմատից։

ԳԻՒՐ.—Լ. աշօրա, Ղրբ. շա՛րա՝ նոյն բոյսը, իսկ Վն. աշարա (գիւղերում) «ցորենի նոր ծլած բոյսը» (քաղաքում) «նոր ցորեն» (ըստ ՀԲուս. § 126 աշարայ «նորաբոյս խոտ»)։ Բոլորովին տարբեր է Ննխ. արիշ «рожь», որ փոխառեալ է Կազանի թաթարէն և կիրգիզերէն أرِش arîš հոմանիշից (տե՛ս Будаговъ 1, 27)։

ՓՈԽ.—Հայերէնից փոխառեալ եմ կարծում ասօր. ešrā կամ ešrā, dašrā «avena», որ ասորերէնի մէջ մեծագոյն մնացած մի բառ է և մեկնութիւն չունի. Brockelmann, Lex. syr. 79 բ բառիս համար իբր վկայութիւն գրած է միայն Hoffmann, Syrisch-arabische glossen, իսկ բառիս վրայ խոսել է Löw, Aramäische Pflanzennamen № 81. *ասորին կարող է հայերէն որևէ գրաւոր աղբիւրից տառադարձուած լինել՝ ա տառը սխալմամբ կարդալով ա։*

***ԱՇՂԱՀԱԿ** «մի տեսակ ձուկ, թերևս վիշապաձուկ». երկու անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 216 «*ելեալ ձկան երևել նմա, աշղահակ կոչեցեալ, և լռելեայն ի գոգ նորա ժայթքեալ մարգարիտ մի... իսկ զնկարագրութիւնն ձկանն այն՝ աշղահակ կոչեցեալ, ի դիտն նկարագրել (հրամայէ)*»։ Բառս ունի միայն ԱԲ. ուրիշ բառարաններում չկայ. Կոստանեան (Հրատ. Մագ. թղ.) յատուկ անուն է կարծած բառը և ո՛չ միայն դլխատառով է դրած, այլ և էջ 333 ա յատուկ անուանց ցանկի մէջ է մտցրած։ Նոյն բառն է որ Բառ. երեմ. էջ 25 գրում է «աշտակ. վիշապ»։

= Պրս. اژدها aždahā, اژدهاک aždahāk և اژدرها aždarhā «վիշապ». *ըստ այսմ վերի բառը պէտք է ուղղել աժդահակ. սխալը յառաջացել է դ գրի խուլ հնչումից։*—Աճ.

ԱՇԵԼ *տե՛ս* Աչք։

[**ԱՇԽ** «մարդ և անասուն», այսպէս ունի Բառ. երեմ. էջ 25 (նոյնը նաև բ տպ.). պէտք է ուղղել աշխարհ, որ իրօք մարդոց և անասնոց ամփոփումն է. բառաշարքի մէջ արդէն տեղն էլ աշխարհ է պահանջում և ո՛չ աշխ։]

ԱՇԽԱՏ. *արմատ առանձին անգործածական. ոճով ասւում է աշխատ առնել «յոգնեցնել» ՍԳր. աշխատ լինել «յոգնիլ, նեղութիւն կրել, մի բանի վրայ չարչարուիլ» ՍԳր. որից* աշխատել Ա. եզր. բ. 29=աշխատեցուցանել «յոգնացնել, նեղել» Եզեկ. իբ. 18. աշխատիլ «յոգնիլ» ՍԳր. Ագաթ. Ոսկ. Կիւրղ. ծն. աշխատութիւն ՍԳր. աշխատասէր Եւս. քր. անաշխատ Ագաթ. բազմաշխատութիւն Պիտ. դառնաշխատ ՅՀ. կթ. *նոր բառեր են աշխատազուրկ, աշխատավարձ, աշխատաւորութիւն, աշխատաւորական, աշխատունակ են։*

= Պհլ. *axšāt *ձևից, որ հաստատում է մանիք. պհլ.* axša «mühe, plage, աշխատանք, նեղութիւն, տանջանք»։

Müller SWAW 42 (1863), 255 զնդ. *xšaiti *ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց ենթադրւում է սանս.* kšati- «վիրաւորում, վնաս, ցաւ, սխալ» *բառի միջոցով։ Սրան հետևելով* Justi, Zendspr. 94 զնդ. xsan *բառի տակ՝ իրար է միացնում սանս.* kšan, *և պրս.* axšatā *և հյ.* աշխատ։ Lagarde, Arm. Stud. § 141 *չի ընդունում* Müller-*ի մեկնութիւնը, առարկելով թէ նշանակութիւնը, տարբեր է և թէ զնդ.* xšati- *պի-*

տի տար հյ. շետ: Հիւբշ. 100-101 ընդունում է բառերի ձևական համաձայնութիւնը, բայց նշանակութեան տարբերութեան պատճառաւ մերժում է: Ուղիղ մեկնեց Salemann ЗАН *8(1908) էջ 53:* Müller-*ի մեկնութեան հետ նոյն է* Коршъ, *Մշակ 1914, № 121: Հիւնք. պրս.* pĕžhā *«աշխատող, ջանացող» բառից, որ սակայն չգիտէ ԳԴ:*

ԳԻՒ.—Ալշ. Ջղ. Սլմ. աշխատել, *Ախց. Ոզմ. Տփ.* աշխատիլ, *Երև. Նախ.* աշխադէլ, *Սչ.* աշխադել *«յոգնիլ», Շմ. Պլ. Ռ.* աշխադիլ, *Ասլ.* աշխադէ՛լ, *Ագլ.* ըշխա՛տիլ, *ՋԲ.* աշխադըլ, *Գոր. Ղրբ.* ըշխա՛դէլ, ըխշա՛դէլ, *Մրղ.* ախշատէլ, աշխատէլ, *Խր.* ախշադէլ, *Կր.* ախշադիլ, *Մկ.* mշխատիլ, *Ակն.* աշխըդիլ, *Տիգ.* mշխադիլ, *Հւր.* աշղադաճ: *Բառիս իմաստն էր հնագոյն շրջանում և գրաբարում «նեղուիլ, յոգնիլ, չարչարուիլ», արդի գրականում «աշխատիլ, բանիլ, գործել», գաւառականներում «շահիլ, վաստկիլ» (այսպէս են օր. Երև. Ղրբ. Տփ. ինչ. երկու մանէք աշխատեցի). վերջին իմաստով հմմտ. հներից. «Խորհուրդս մարմնաւոր ջանիւ ոչ յայտնի, ի որձով և առաջնորդութեամբ գրոց աշխատի» Լմբ. պտրգ. «Աշխատիլ պարտ է մեզ յոյժս զգործս հոգւոց մերոց» Վրք. Հց. ի նշանակութեան զարգացման համար օտար լեզուներից հմմտ. լտ.* labor *«աշխատանք» և* laboro *«տանջուիլ, չարչարուիլ», հունգ.* munka *«աշխատանք»<սլ.* muka *«տանջանք», ասոր.* ʿamīlā *«աշխատասէր, յոգնած, տանջուած»:*

ԱՇԽԱՐ *(անհոլով) «ողբ, լաց, կոծ» Ջաք. ժբ. 10. որից* աշխար դնել *«վրան լալ, կոծել» Բուզ.* աշխարել *ՍԳր. Ագաթ. Եղն. Ոսկ. ես. և մ.* աշխարաւիծ *Ագաթ. Կորիւն.* աշխարան *Բուզ.* աշխարանք *Ոսկ. ես.* աշխարում *Մտթ. բ. 18.* գերաշխարան *Նար.:*

ՆՀԲ լծ. թրք. hayqərəš *«պոռալը» (սակայն արմատն է* hayqər*): Հիւնք.* ապաշխարել *բալից: Սագըզեան ՀԱ 1909, 335 և* Karst, *Բուշարձ. էջ 402 սումեր.* aše̍ra, aše̍rra *«ողբ»:* Коршъ, *Թրգմ. Մշակ 1914, № 122* աշխար *դնում է անծանօթ պրս. մի բառից՝ որի հետ հմմտ. սանս.* akšara *«տառ, վանկ, խոսք», լտ.* quiritare *«դոռալ, ճչել», իսկ* աշխարան *<հպրս.* aršaka-θāna *«արցունքի սափոր»>պրս.* *aškdān:

*ԱՇԽԱՐԱԻԱՆԴ *«թագաւորական թագի կապը». մէկ անգամ գործածած է Բուզ. ե. լը. «ի պատիւ գլխոյ ի վերայ գադաթանն ի բիկնաց արծուոյն հանդոյցք թագի կապեալ աշխարաւանդ հանդոյց»: Պէտք է հասկանալ հայ Արշակունեաց թագաւորական խոյրի այն ժապաւէնը՝ որ ճակատի կողմից սկսելով՝ շրջապատում է խոյրը և յետևի կողմում մի կապ ձեւացնելուց յետոյ՝ երկու ծայրերով ցած է կախւում (հմմտ. օր. Տիգրանի խոյրը՝ իր դրամների վրայ): Այս բառը ունի միայն ԱՔ. զարմանալի է, որ միւս բառարանները չեն յիշում:*

=Բառի երկրորդ մասը աւանդ՝ *անշուշտ պրս.* بند band *«կապ» բառն է, բայց առաջին մասը անյայտ է. ամբողջը անշուշտ իրանեան փոխառութիւն է:—Հիւբշ. 101:*

ԱՔ մեկնում է «թագաւորական թագին աշխարհքէ գունդը (ի՞նչ գունտ) պինտ բռնող կապ». այս բացատրութեամբ անշուշտ բառս ենթադրում է կազմուած աշխարհ *և* պինդ *(կամ* band*) բառերից:* Коршъ, *Թրգմ. Մշակ. 1914, № 121 հպրս.* *awi-sara-banda>պրս. afsar-band *«թագի կապը» բառի գաւառական մի ձևից: Հացունի, Պատմ. տարազին 96 պրս.* խշատրա *= աշխարհ կամ իշխանութիւն բառից, իբր իշխանութիւնը արքայի գլխին կապող:*

*ՍԱՇԽԱՐՀ, ի–ա *հլ. «աշխարհք, երկիր, գաւառ ևն» ՍԳր. Ագաթ. Կոչ. Եւս. (գրուած է* աշխարհ՝ *Տիմոթ. կուզ էջ 216 և 297 շատ անգամ. Փիլ. իմաստ. 33 գրուած է* աշխարհ *և յետոյ r տառը քերուած հանուած. Փիլ. այլաբ. 143 և յետոյ՝ յաճախ ունի* աշխարհ*). որից* աշխարհագիր *ՍԳր.* աշխարհագրական *Ագաթ. Բուզ.* աշխարհագոյժ *Ոսկ. մ. ա. 19, 25.* աշխարհագործ *Ագաթ.* աշխարհագործութիւն *Եւս. քր.* աշխարհագունդ *Ագաթ.* աշխարհակոծ *Մաշտ.* աշխարհահեղձ *Մշտ.* աշխարհադիտել *Յես. ժբ. 8.* աշխարհազօր *Բուզ.* աշխարհաժողով *Ագաթ.* աշխարհա-

կան *Կոչ. Կորիւն. Բուզ. Ոսկ. Ագաթ. (հմմտ. ասոր.* ʿālmā *«աշխարհ» և* ʿālmāyā *«աշխարհական, laicus»).* աճաշխարհիկ *ՍԳր. Ագաթ.* տարաշխարհ *Եւս. քր. Ոսկ. մ. բ. 7.* տարաշխարհական *Ոսկ. Ես. մաթ. և Փիլիպ.* միջնաշխարհ *Բուզ.* համաշխարհիկ *Բ. մկ. գ. 18. Կորիւն.* գերաշխարհիկ *Պիտ. ՅՀ. իմ. երև.* չնաշխարհիկ *Ոսկ. մաթ. և յհ. Եւս. քր.* աշխարհաբար *Մխ. աննց. 14 (չունի ՆՀԲ). բարդութեանց մէջ կրճատմամբ՝* աշխարհալած *Կորիւն.* աշխարհամար *ՍԳր. Նոր բառեր են* անդրաշխարհ, անդրաշխարհայիկ, աշխարհագրական, աշխարհագրագէտ, աշխարհահանդէս, աշխարհաքրոշակ, աշխարհածնութիւն *ևն։*

=*Հպրս.* xšaθra *«թագաւորութիւն», զնդ.* xšaθra- *«թագաւորութիւն, իշխանութիւն», սանս.* kšatra *«տէրութիւն, իշխանութիւն», բաղդ. պհլ.* xšatr *«երկիր», պհլ.* šatr, *պրս.* شهر šahr *«քաղաք» (հնագոյն նշանակութեամբ «երկիր») կամ նաև* شار šār *նոյն նշ., քրդ.* شار šār *«երկիր»,* شهر šeher, šehir *«քաղաք»։ Մագում է իրան.* xšāy *«իշխել» արմատից։ Բառիս հին արշակունեան ձևն էր—*xšaθr, *որ յետոյ եղաւ* xšahr, *որից էլ հայերէնի օրէնքների համաձայն ձևացաւ* աշխարհ: *Իրանեան բառը աւելի յետոյ վերածուեց* šahr *ձևին և այս ժամանակ վերըստին փոխ առնուելով՝ դարձաւ հյ.* շահ *(հմմտ.* շահաստան, անաշահիկ *ևն)։—Հիւբշ. 101։*

> *Հներից շատեր հանում են* աշխար *բառից, այսպէս՝ Ցայսմ. մարտ 19 «Աշխարհ ասելն այլ ինչ նշանակէ (հմմտ.* երկիր, *այն է «վախեցի՛ր»), որ աշխար և սուգ է և կոծ և աղէտ ողբոց և հովիտ վշտաց և տրտմութեան», Տօնար. «Աշխարհ կոչի աշխար և սուգի և տրտմութեան հովիտ»։ Տօնակ. «Աշխարհականըն աշխարական ասի. և աշխարհն՝ սգոյ և աղէտի անուն է. զի աշխարելի է աշխարհականն»։ Տաթև. ձմ. ճԺ. «Կոչի աշխարհ, այսինքն է աշխար, որ է սուգ և տրտմութիւն և միշտ և հանապազ պարտ է աշխարել զմեզ՝ և ի սուգ և ի տրտմութեան կալ ի վերայ երկրի. զի զտեղիս զայս՝ հովիտ տրտմութեան անուանէ մարգարէն Դաւիթ»։ Նոյն է և Տաթև. հարց. 210։—ՆՀԲ լծ. պրս. Բրբ.* աշիխեար *«յայտնի» կամ հյ.* աչխատ *«տեսանելի, երևելի» կամ* ազգեր *(ազգ բառի յոգնակին), Բրբ.* ասկէր *«զինուոր»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ* Müller SWAW *42, 255, նոյնը Պատկ.* Арм. reorp. *74։ Հիւնք. պրս.* šahr *բառից։*

Գիմ.—երև. Վն. աշխար, *Ալշ. Ախց. Ակն. կր. Համշ. Մշ. Պլ. Զղ. Ռ. Սչ.* աշխարհ, *Ագլ. Տփ.* աշխարհ, *Ասլ.* աշխար*, *Ննխ.* աշխարհ, ախշարհ, *Ոզմ.* ախշար, *Խրբ. Շմ. Մեր.* աշխարհ, *Ղրբ.* աշխարհ, աշխարհ, *Մկ.* աշխարհ՛, *Գոր.* ըշխա՛րհ, *Տիգ.* մշխարգ, *Մրղ.* մշխարհ՛, *Սլմ.* մխշարհ՛, *Զթ.* աշխարհ, աշխարհ, *Հճ.* աշխօյ։ *Նոր բառեր են* աշխարհանցում, աշխարհի, աշխարհիկործում, աշխարհիովի, աշխարհիմտես *ևն։*

ԱՇԽԱՐՀԱՒԱՆԴ *կամ* **ԱՇԽԱՐԱՒԱՆԴ**, *ի հյ. «պանդոկ, դիննեատուն» Ոսկ. (քանիցս), որից* աշխարհաւանդիկ *կամ* աշխարաւանդիկ *«գիննեպան, պանդոկապետ» Ոսկ. մ. բ. 13, գ. 5. Սարգ. յկ. բ. 119 բ։*

=*Անշուշտ իրանեան փոխառութիւն է, ինչպէս ցոյց են տալիս* ւանդ *և իկ մասնիկը.բայց իրանեանների մէջ պահուած չէ։—Հիւբշ. 101։*

> *ՆՀԲ և ՋԲ* աշխարհ *բառից։ ՀԱ 1897 նոյ. (կողի վրայ, վերջին էջ, սիւնակ բ)* աշխարհ-ա-ւանդիկ, *որի վերջին մասը նոյն է դրւում* հանգր-ուան, օթե-ւան, իջա-վան *և* վան, վանք=*հպրս.* wahana *բառերի հետ։* Коршъ, *Բրգմ. Մշակ 1914, № 121* աշխարհ *և* աւան *բառերից, իբր Բրգմ. յն.* πανδοκεῖον «հիւրանոց», *բառացի «ամէն բանի ընդունարան»։*

ԱՇԽԷՏ *«կարմիր-դեղնագոյն, հրագոյն» Ջաք. ա. 8, զ. 2, 6. Լմբ. զքր. ուրիշ տեղ չկայ. որից* աշխետածի *Գնձ. (ունի միայն ԱԲ, իսկ ՆՀԲ յիշում է* ճարտուկ *բառի տակ),*

աշխատութիւն, աշխատանալ *ՀՀԲ (առանց վրկայութեան)։*

=Զնդ. xšaēta- «փայլուն, պայծառ, լուսափայլ», (իգականը xšōiθnī), որից hvarəxšaēta «արևի լուսափայլ գունդը, արեգակն», համմտ. նաև a-xšaēna «անփայլ, մթβագոյն». սրանցից են յառաջանում պհլ.*xšēt ձևը, որից փոխառեալ է նաև վրաց. ხსედი խսեդի «աշխէտ ձի». պահլաւերէնի նոր ձևն է šēt=պրս. šēd։ Պհլ. šēt, պրս. شید šēd «արև, փայլ», خورشید xōr-šēd (xūršīd) «արեգակ» ևն։ Բայց իրանեան բառը ունէր նաև «աշխէտ (յատկապէս ձիու համար) նշանակութիւնը, որից յառաջացել են պհլ. šēt-vars «կարմրահեր», պրս. سپیدشید šēd-asp «աշխէտ ձիերով» (ըստ Շահնամէի՝ Ջէմշիդի թոռան՝ Տուժի որդու անունն է), شیدانه šēdāna «լուսնապ» (գոլնի պատճառով ալապէս կոչուած), شیده šēda «է անուն մի ի բովանդակ անուանցն երիվարի», شیدخ šēdax «մատակախազ ձի», քրդ. شی šī «աշխէտ», hesp-i-šī «աշխետաձի»։ — *Հիւբշ. 101։*

ՆՀԲ յիշում է վրաց. սխետի։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Müller, Orient und Occident *3, 348, որ* Lagarde, Arm. Stud. § *144 մերժում է։ Հիւնք. պրս.* šēdax *բառից։*

ԱՇԽՈՅԺ *(ի հլ. ըստ ՆՀԲ) «ուժեղ, զօրեղ, արի, կտրիճ» ՅՀ. իմ. պալ. Պիտ. Մագ. (արդի գրականում և գաւառականներում «աշքաբաց, եռանդուն»). որից* աշխոյժ *«եռանդ, արութիւն» Խոր. գ. 8.* աշխոյժութիւն *(առանց սղումի) Պտմ. աղէքս.* աշխոյժուհի *«թագուհի» Հին բռ. գրուած է նաև* աժխոյժ։

ՆՀԲ մեկնում է «հրային և ուժեղ», որով ուզում է հանել աշխէտ *և* ոյժ *բառերից։* Коршъ, *Брэм. Мշակ 1914, № 122 հպրս.**xšaudya *ձևից՝ որ ծագած է դրնում զնդ.* xšūd=*սանս.* kšūd «յուզուիլ, ցնդուիլ» *արմատից։*

Գիւր.—Ախց. Ակն. Պլ. աշխուժ, *Սեբ.* աշկուշ։

***ԱՇԿԱՐԱՅ** *«յայտնապէս» Եղիշ. էջ 18. մէկ անգամ միայն գործածուած. ուրիշ վկայութիւն չկայ. բառս յիշում են միայն ՋՒ և ԱՒ. չունի ՆՀԲ։ Այժմ էլ գործածական է միայն արևելեան գրականում, իսկ արևմտեանից դուրս է վտարուած՝ իբրև Թուրքերէն! գռեհիկ բառ։*

=*Պազենդ.* āškārā, *պհլ.* āškārāk, āškārak, *պրս.* آشکار āškār, āškāra. āškārā *և սրանից էլ փոխառեալ քրդ.* ašikar, ašikara, eškerā. *Թրք.* ašikʸar, *ումկ.* eškʸare, *որից էլ սերբ.* ašic'are, eškero *ևն, բոլորն էլ «ակնյայտ» նշանակութեամբ։ Հնագոյն ձևն է գնդ.* *āviškāra *(Horn § 33), որ կազմուած է* āviš *«յայտնի, ակնյայտ»+*kāra *«անել» բառերից, ինչպէս սանս.* āviškṛta, *նոր ձևը* āviškāra։ *Հայերէնը նման չէ պահլաւերէն ձևին, այլ պազենդ ու նորապարսիկ ձևերին, որից հետևում է, որ ուշ ժամանակի փոխառութիւն է (Ե դար)։— Հիւբշ. 102։*

Առաջին անգամ ՋՒ նշանակեց իբր պրսկ.։

Ուղիղ մեկնեց Spiegel, Huzw. Gram. *164 ևն։*

Գիւր.—Ջղ. աշկարա, *Ագլ.* mշկրէօ՛, *Ղրբ.* mշկʸmrm՛, *Պլ. էշգ՛արէ ևն՝ իբր նոր փոխառութիւն արևելեան Թուրքերէնից կամ տաճկերէնից։*

***ԱՇՄ** *«յասպիս քարը»։ Մէկ անգամ գործ է ածել Մարթին.—Պատկ.* Драгоценные камни, *էջ 72 ունի նաև* եաշմ *ձևը։*

=*Պրս.* یشم yašm *«յասպիս»։ Աւելի ընդարձակ տե՛ս* յասպիս *բառի տակ։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ ՋՒ. Պատկ. (անդ) ևն։

ԱՇՄՈՒՆԻՍԱՅ *«վայրի ստեպղին կամ գազար». Բժշ. ունի միայն ՀՒուս. § 128 և յաւել. էջ 675, որ ասում է Թէ այսօր էլ գործածական է բառս Սեբաստիոյ բարբառում։*

ԱՇՄՈՒՇԱՅ *«մոլոշ բոյսը». ունի միայն ՀՒուս. § 129։*

ԱՇՆԱՊ *«անծանօթ Թուփ էջ. Ռոշք. ստեփ. ունի միայն ՀՒուս. § 130։ Այս բոյսը Քաջունի, Տտ. Գ. 17 մեկնում է* anie, *բայց այս բառը չկայ բուն բառարանում։*

ԱՇՈԳԻ *«առանձին, յատուկ, մասնաւոր». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Իրենն. ցոյցք, էջ 15 «Այս է օրհնու-*

թեանն զօրութիւն լինել զԱստուած և զտէրն բոլորեցուն Սեմայ ստացուած աշոգի աստուածպաշտութեանն»։ Սրանից առ նախդիրով՝ առաշոգ «առանձին, զատ», որ 4 անգամ գտնում ենք գործածուած վրք. հց. «Ունէր առաշոգ խուղ» Վրք. հց. բ. 106. «Ի տեղւոջ մօտագունի և յառաշոգւոջ» Վրք. հց. ա. 498. «Բաժանեցին զհացիկն և ա՛ն եղբայրն զմասն իւր առաշոգ» Վրք. հց. բ. 218. «Արկին ինձ պրտուէ մի առաշոգ, իսկ յայլում յանկեան ինքեանց» Վրք. հց. բ. 479։ Բառի երկրորդ ձևն է ոշոգի Ոսկ. պօղ. բ. 722 (Շունչ առանձինն գործիցէ և մարմինն ոշոգիս առնիցէ). որից նոյնպէս առ նախդիրով ունինք առոշոգի «առանձին, յատուկ, իրեն միայն սեփական», մէկ անգամ գործածուած Բուզ. Դ. 14 (էջ 117) «Իբրև սեպհական ի բնէէ առանձին առոշոգի նոցա էր կարգեալ»։ Այս ոշոգի բառն է՝ որ ուշոգի գրչութեամբ պահուած է 3 տեղ. «Թևպէտ և համօրէն զամենեցունց սիրոյն ասաց, այլ և յառանձինն ևս յուշոգին իւրաքանչիւր որ գայ» Ոսկ. պօղ. ա. 612. «Զատ մեկնեաց, ուրոյն բնակեցոյց. օրէնք ուրոյնք, կարգք ուշոգիք» Ոսկ. ես. էջ 12. «Զանձինս զուշոգիս» Ոսկ. պօղ. ա. 579։— Այսպէսով բառս ներկայանում է 3 ձևով՝ աշոգի, ոշոգի, ուշոգի և առ նախդիրով՝ առաշոգ, առոշոգի։

=Թուի թէ իրանական փոխառութիւն է. համմտ. պրս. ژُشْ ăšō̆ կամ ژُشْ ušō̆ «անգիտացեալ իր, թէ մարդ իցէ և թէ այլ» (տե՛ս ԳԴ աշուղ և իշուղ ձևերով). իմաստի զանազանութեան համար համմտ. լտ. secreto «գաղտնի, ծածուկ, մասնաւոր, յատուկ», secretus «բաժանուած, անջատուած, հեռացած, զուրկ, մեկուսի, առանձնացեալ, մասնաւոր, մենաւոր, գաղտնի, անտեսանելի, անտիպ, հազուագիւտ»։—Ա.

Բառս բացատրուած է զանազան ձևերով. ՀՀՒ՝ որ միայն առոշոգի ձևը գիտէ, մեկնում է «առանձնական, յատուկ, որոշակի, մեկուսի»։ ՋՒ գիտէ միայն առաշոգ և առոշոգ *ձևերը և մեկնում է «առանձին, առանձնական»։ ՆՀՒ անտեղի կերպով մերժում է այս նշանակութիւնները և մեկնում է՝* առաշոգ *«արևահայեաց, լուսաւոր և ջերին՝ այսինքն* ակրին, ճով, *որպէս* շոգիաւոր», առոշոգի *«տեղի առաշոգ, հովանոց, ամարանոց, դուարճալի և հով վայրք»,* ուշոգի *«ուր իցէ ուշ ոգւոյ, բարեկարգ. բարեձև»։ ԱՒ բոլոր այս բառերը ճշտիւ մեկնում է «առանձին, զատ»։ Նահապետեան (Ուղղ. ազգ. մատենագր. էջ 93) Բուզանդի* առոշոգի *բառը ուղում է սրբագրելով վերածել որևէ նախարարական տան անունի։ Բառիս վրայ մի կարճ քննութիւն ունի Վարդանեան ՀԱ 1910, 283 ա=Բառաք. դիտ. բ. 80, որ առաջին անգամ գտնելով աշոգի բառը, մեկնում և միացնում է միւսների հետ շատ ուղիղ կերպով։ Իրեն հետաձայն չենք միայն այն կէտում՝ որ աշոգի և առոշոգի աղաւաղուած է համարում և սրբագրում ուշոգի. սրան հակառակ են ո՛չ միայն Վարք Հարանցի անկախ վրկայութիւնները, որ հեղինակը աչքի առաջ չէ ունեցել, այլ և պարսիկ բառի համաձայնութիւնը։*

Ա.ՇՈՊ *տե՛ս* Ապշոպ։

Ա.ՇՈՐԱՅ *տե՛ս* Աշարայ։

Ա.ՇՈՒՆ *(և հլ. սեռ.* աշնան*)* «աշուն» Ագաթ. *Եզն. ածանցման սկիզբը գտնում ենք երկու ձևով. 1.* աշնան. *օր.* աշնանաբեկ լինել *Ոսկ. լուս.* աշնանայինն *Փիլ. Պիտ.* աշնանայ*ք Եփր. փես. 383.* աշնանատունկ *Վստկ.* աշնանի *Կոչ. ՅՀ. կք.—2.* աշն-. *ինչ.* աշնանայինն *Փիլ.* աշնայնի *Փիլ. լիւս.։*

Հներից Վանակ. վրդ. մեկնում է «աշունն՝ որ անշնչին» (Ալիշան, Հին հաւ. 136)։ Նոյնը Տաթև. հարց. 197։ Ոմն Գ. Կ. (Արշալ. արրտ. 1843, № 130) աշուն=խաշուն *(խաշա՞ծ)։* Klaproth, Asia Pol. *101. հմլ.* осень *«աշուն» բառի հետ։* Lagarde, Urgesch. Arm. *880 ռուս.* осень *«աշուն»* ? *Պատկ.* Изслд. *5 սանս.* ušman *«ամառ»։* Müller WZKM *5, 266 գոթ.* asans *«հունձք»։ Տէրվ.* Altarm. *50* աշուն *կապում է* արշալոյս *բառի հետ, իբր լեռին, մութ, տխուր եղանակ. տե՛ս*

Աբշալոյս։ *Հինք.* շուն *բառից։ Հալա-ճեան, Արեւելք 1893 նոյ՛ 10* հաջիլ *բառից։ Հիւրշ. 433 մեր-ժում է միացնել գոթ.* asans, *հլ.* jasenĭ = *ռուս.* осень, *պրուս.* assanis *հոմանիշների հետ։* Patrubány IF *14, 54 և ՀԱ. 1907, 305* *ku-ō *«ուշիլ, աճիլ» արմատից, իրր* *ākikuuont *«պտղաբեր» նախաձևից, համմտ. սանս.* štšuš *«տզալ», յն.* κύων *«ժա» ևն։* Pedersen, *Հայ. դր.լեզ. 158 հլ.* աճիլ *բայից՝ ուն մասնիկով. համմտ. լտ.* auctumnus, Lidén, *Ռուշարձ. 387—8 հլ.* հասանիլ *բայի հետ՝ իրրև «հասուն»։ Պատահական նմանութիւն ունի եբր.* אשון əšūn *«ժամանակ»։*

Գիտ.—Ալշ. խրբ. կր. Համշ. Մկ. Մշ. Մրզ. Սեբ. Սլմ. Վն. աշուն, *Ախց. Ագլ. Գոր. Երև. Ղրբ. Սլմ. Սչ. Ջղ. Տփ.* աշունք, *Տիգ.* աշուն, *Ոզմ.* ա՛շօն, *Ակն.* աշիւն, *Հճ.* էշունք, *ՋԹ.* էշօնք, էշոնք։ *Նոր բառեր են* աշնանանաս, աշնցան, աշունքենի, աշնավար, աշնանաւոր, աշնուկ, աշունքանալ *ևն։*

ԱՇՏԱՆԱԿ, ի–ա *հլ. «շամդան, մոմակալ» ՍԳր. Ագաթ. որից* աշտանակազարդ *Անան. եկեղ.* աշտանակակիր *Նար. մծբ.* աշտանակամազ *«մազերը վեր ունկած» Ոսկ. ես.* աշտանակել *«արիութեամբ ձիու վրայ ցատկել նստիլ» Խոր. Պատ. աղէքս. 36. կԹ. վերջին երկու բառերը ցոյց են տալիս «ցցուելու, կանգնելու» գաղափարը, որ յառաջացած է փոխաբերաբար։*

ՆշԹ լծ. հյ. ոստնուլ, ոստ, *Թրք.* իսպ *«վերքն», յն. լտ.* իսդա՛մէ, սդօ՛, *պրս.* իսդատէն *«կանգնիլ» ևն. որից նաև* աշտարակ *(տե՛ս* ոստ *բառի. տակ)։ Հինք. պրս.* իշթիւր *«ուղտ» բառից դնում է* աշտանակ *և* աշտարակ։

Գիտ.—Ագլ. բշտա՛նակ։

ԱՇՏԱՐԱԿ, ի–ա *հլ. «բերդ, խուղէ» ՍԳր. որից* աշտարակագործ *Ագաթ.* աշտարակագործութիւն *Եւս. քր. եզն. Ոսկ. ա. կոր.* աշտարակեայ *«աշտարակներ ունեցող» Ողբ. բ. 7.* աշտարակեալ *Եւագր.։*

ՆշԹ և Հինք. տե՛ս Աշտանակ։

Գիտ.—ՋԹ. աշդարօգ *«բերդ». իսկ Պլ. կայ միայն «Գիտես թէ աշդարագն ենք» դարձուածի մէջ, որ գործածւում է խառնակ հաւաքոյթների համար, ուր մեծ անկարգութիւն է տիրում (ակնարկութիւն Բաբելոնի աշտարակաշինութեան)։*

***ԱՇՏԵԱՅ** (ի *հլ. սեռ.* աշտէի *ևն) «հետից նետելու կարճ նիզակ» Երգ. դ. 4. Ա. մնաց. ժբ. 8. Նիւս. Երգ. Արծր. յետնաբար ունինք նաև* աշտէ *խոր.* աշտէն *լծ. նար. ձևերը. հոլովեալ ձևերից ոմանք էլ, ինչպէս սեռ.* աշտէի, *գրծ.* աշտէիւ *ևն, յետին վկայութեանց մէջ կարող են ուղ.* աշտէ *ձևից յառաջացած լինել։ Աշտէն ձևի հետ միանում է* աշտեան։ *Ածանցման մէջ ունինք* աշտենաւոր *Եփր. վկ. արև. 71, Մամիկ. 23, Ճառընտ.* աշտէաւոր *Մխ. այրիվ. էջ 11. ուրիշ ձև չկայ։*

=*Հպրս. և դնդ.* aršti-, *սանս.* ṛṣṭi *«նիզակ». կայ նաև պհլ.* aršt *(Horn, Grdr. էջ 266), բայց սա պարզապէս դնդ. բառի տառադարձութիւնն է. Հպրս.* aršti- *ձևը պիտի տար պհլ.* *ašt, *որից հյ.* *աշտ *և–եայ վերջաւորութեամբ* աշտեայ *(համմտ. բազէ)։ Հպրս.* aršti- *ձևի մօտ կար նաև* *ṛšti- *ձևը, որից ծագում է պրս.* خشت xišt *«նիզակ, ուղղ» և սրանից էլ հյ.* խիշտ, խըշտաւոր։ *Այս իրանեան ձևերից են նաև քրդ.* هشی heš *«ուղղ, մականի» և ավար.* աշթի *«կացին, տապար»։— Հիւրշ. 102, 510։*

ՆշԹ և Հինք. դնում են լծ. լտ. hasta, *Թրք. (իմա՛ պրս.)* xišt։ Peterm. *21 լտ.* hasta։ Justi, Zendsp. *43 դնդ.* ašta *և սանս.* aštā։ *Տե՛ս և* Pictet *1, 199 և 2, 209 բստ* Lag. Arm. Stud. § *147,* Müller WZKM *9, 380 և 10, 353 ուղիղ է մեկնում, բայց մեր բառի –եայ վերջաւորութիւնը բացատրելու համար՝ ենթադրում է Թէ պհլ. բառը նախ անցած լինի սասրերէնի* *aštā, *aštāyā *ձևով և այստեղից էլ անցած հայերէնի։ Բայց այսպիսի սասրի բառ չկայ։* Jensen *ՀԱ. 1904, 184 դանելով հաթ. ...tai կամ ...tia «ուղղ» ձևով մի բառ՝ ենթադրում է, որ հայ բառը բնիկ է և ո՛չ փոխառութիւն։ Պատահական

նմանութիւն ունի ասոր. ܫܕܝܬܐ šədāīta *«նիզակ», որ ծագում է* ܫܕܐ šədā *«նետել» արմատից։*

*[*Ա.ՇՏԻՊ *«ձաւար». Գաղիան. որից աշտըպեայ հաց «ձաւարէ հաց»։ Անգոյ բառ՝ որ սրպինք է սխալ ընթերցանութեան։ Գաղիանոսի օրինակներից մին ունի «Աթոր. աշտիպ. ինքդ հետ մարտին ելանէ»։— Ոչքեան յիշեալ հատուածի մէջ աթոր համարելով լտ.* ador *«ցորեն», ենթադրում է աշտիպ «ձաւար»։ Նրան են հետևում Ջախջախեան, Բագրատունի (Վիրգիլիոսի Մշակականք Ա. 225, Գ. 206), Աբ և Ալիշան, Հիւս. § 135։ Բայց Գաղիանոսի տոյն հատուածը, վաւագոյն ձեռագիրների և ուրիշ բառացուցակների միահամուռ վկայութեամբ պէտք է կարդալ «Աթիար ալ տիպ. ինքն հետ մարգարտին ելանէ». սրանով հասկացւում է արար.* ազֆար-ադ-դիր *«դիւի եղունգ» խեցեմորթը, որ մարգարտի կամ սատափի վրայ է աճում։*

Այս պատուական մեկնութիւնը տուեց նորայր ՀԱ 1921, 103։ Pictet *բ տպ. Ա. 234 հյ. ոստ բառի հետ. համմտ. գերմ.* ast *«ոստ» և իտլ.* astas *«ճոկան» են, իսկ Բ. էջ 272 սանս.* astra *և զնդ.* asta *«նետ»։]*

Ա.ՇՏՈՒՃ, ո *հլ. աւում է միայն* աշտուն հաց *պարզ՝ «ցամաք հաց» Ոսկ. մ. բ. 23 և հս. Եւագր. Կանոն. գրուած է նաև* աշտուղ *Տաճև. ձմ. իբ. աստուն Սասն. 34, Վրք. Հց. Բ. 386. Ուռպ. (այս ձևը թէև յետնաբար աւանդուած, բայց նախնականն է. տե՛ս աստիճան բառի տակ). ածանցմամբ ունինք* աշտիճագոյն *(առանց սղման) Եւագր.* աշտեակեր *Եփր. վկ. արև. (=Սոփերք ի, 147) կամ* աստեակեր *Եփր. վկ. արև. 86 (սրբմամբ)։*

Նշբ յն. ἄσιτος *«անկերակուր», իտալ.* asciutto *«չոր, ցամաք»։ Հինք.* աստիճան *բառից։*

Ա.ՁԼԵՆԹԻՆ *«անծանօթ մի բոյս». Բժշ. ունի միայն Հիւս. § 136։*

Ա.ՁՐԵԼ *տե՛ս Ահեղ։*

+Ա.ՁՔ, ի–ա *հլ. (միայն յոգնակի գործածուած, որովհետև եզակին է ակն) «աչք» ՍԳր. Ագաթ. Բուզ. յետնաբար ունինք սեռ.* աչից *(որից գուռ.* աչիշ*) Պղատ. տիմ. Լմբ. մատ. 354 և սղ. երդն. քեր. Սարգ. յկ. Վրք. հց. ոմկ.* աչեր Շնորհ. առակ. *ոճերով աւում է աչս առնակել կամ արկանել, յաչաց հանել կամ ելանել, ըստ աչս դառել, կալեալ լինել աչաց, կալ աչաց, առ աչօք, բոլորն էլ ընտիր։ Այս բառից են կազմուած* աչալուրջ *Ոսկ.* աչակոռել *Ոսկ. Կոդ. էջ 548.* աչագար կիւրղ. *Թգ.* աչառել *«ակն առնուլ» ՍԳր. Սեբեր.* աչառիլ *Ոսկ. հս. Եփր. ծն. Կոչ.* աչարձակութիւն *Եղեկ. իգ. 11.* աչեայ *«աչք ունեցող» Սեբեր.* աչացու *ՅՀ. կԲ. Մագ. կամ* զաչացու *«կոյր» ՍԳր.* աչոց *«ակնոց» Աշխ. առ լհ.* բազմաչեայ Շար. Դիոն. *Եպիփ. Բաղմ.* աչաղաճ *«չար աչք» Կանոն.* աչաղամտութիւն *«նախանձ» Ածար. ժղ.* բացաչայայտ *«ակնյայտանի» Կնիք Հաւ. 250.* զաչաղել *Գնձ.* յաչաղել *Սիր. ժգ. 8. Խոր. Փիլ.* յաչաղաճ *Ոսկ. յհ. ա. 28, 30. բ. 9, 10.* յաչաղկոտ *Ոսկ. յհ. բ. 9. ոմկ.* աչել *«նայիլ, դիտել» Վրդն. դան. ա. էջ 244.* յաչու ունել *«հսկել, լրտեսել» Ուռհ. 353.* աչազուրկ *«կոյր» (նոր բառ) են։*

=Մեկնութիւնը տես Ակն։—*Հիւբշ. 413։*

Առաջին անգամ Klaproth, Mémoires *1, 428 սանս.* akša *բառի հետ, իսկ* Asia pol. *99? ուղիղ համեմատեց հյլ.* oči, *ռուս.* očki *«ակնոց» բառերի հետ։* ՆՀԲ աչ*=լծ. ակն. լտ.* oculus, *արար.* ա՛յն, *Բրբ.* göz, *սանս.* akši, *հյլ.* oko *«ակն», օչի «աչք», իսկ* յաչաղել*=աչօք ազելն։ Սանս. ձևի հետ նաև* Peterm. *26,* Windisch. *9,* Gosche *35 են։* Haug GGA *1854, 269 և 273 (առ* Lag. Arm. St. *§ 149—150) հյ.* աչառել*=պրս.* آچار *āčār «զառիվայր» բառի հետ* čar *արմատից, իսկ* աչացու*=պրս.* آژوخ *āžux «աչքի ճպուռ, բիժ»։ Հինք.* աչ *Բրբ.* aǰ *«անօթի» բառից։ Տէրվ.* Altarm. *87 և նախալ. 28, 59* աչել *գուռ. ձևը կարծում է շատ հին, որովհետև անհարատ է պահել սնս. և զնդ.*

բառերի š ձայնը։ Jensen IF Anz. *14, 51* հաթիան հոմանիշ մի բառի մէջ գըտնում է չ ձայնը, իսկ ՀԱ *1904, 183* s'(t's') = աչք։ Պատահական նմանութիւն ունի հափոն. ⊀ mekkachi «մէկաչուի, միականիի»։ ?

ԳԻՒ.—Ախց. Մկ. Ննխ. ?? Ոզմ. Սչ. վն. աչ, Հճ. Տիգ. mչ, Հմշ. ⊀ աչգ, Կր. Զղ. աչկ, Երև. աչկ, աչկ, Զթ. էչվէ (սեռ. էչօց), Տփ. աչկ, աճկ, Մշ. աճկ, Ալշ. ֆաճկ, Շմ. աճկ, աշկ, Ռ. Սլմ. աչք, Գոր. Ղրբ. Մրզ. աչկ, Ակն. Խրբ. Պլ. Սեբ. աչգ, Ասլ. աչ*. Ցղ. օչկ, սեռ. աչկի։ Բրքախօս հայոց մէջ Ատն. օչչիկ «աչք» (Արեւելք *1888 նոյ" 8—9*)։ Նոր բառեր են աչուլուկ, աչուլիկ, աչիկ, աչուկ, աչիչայ, աչեղ, աչիցչուր, աչկապ, աչնոց, աչուագին, աչուար, աչխաբաց, աչխանի, աչխիլել, աչխել են են։

ԱՊԱ «յետոյ, վերջը» ՍԳր. Ագաթ. Սեբեր. որից յապա առ յապա «վերջ ի վերջոյ» Բուզ. *դ. 5.* զառ յապայսն «յետիններըը» Սիր. խը. *6.* Ոսկ. ես. մինչև յապայ Բուզ. *դ. 23.* յետնարար ի հոլովմամբ ունինք զապային «յետինը, վերջինը» Կլիմաք. կարգ կամ ոճմ ապային «Տօնացոյցում շաբթէ շաբաթ չգրած, այլ իրար եւնից յիշատակած տօներ. ինչ. Տօն Յովհ. Կարապետի, Ապա Պետրոսի Հայրապետի, Ապա Անտոնի անապատականի են»։ Աւելի սովորական է իբրև շաղկապ՝ «ուրեմն, հետեւաբար» նշանակութեամբ և ապա, ապա և, ապա ուրեմն, ապա թէ, ապա եթէ, ապա թէ ոչ են ձեւերով։ Առաջին նշանակութիւնից ձեւացած են ապագայ «յետոյ գալիք» Խոր. պիտ. *3՛.* կթ. ապաժաման «յետնեալ, անպիտան» Սիր. ժա. *12, ժգ. 5.* Ոսկ. ապաժամանութիւն Ոսկ. մ. ա. *23.* ապառնի Ոսկ. մ. ա. *11(!)* Պիտ. Սահմ. Պղատ. Լմբ. յապաղել «ուշացնել, երկարաձգել» ՍԳր. յապաղիլ «ուշանալ» ՍԳր. յապաղեցուցանել Եփր. Եւս. պտմ. յապաղութիւն Սեբեր. Բուզ. անյապաղ Փարպ. Պիտ. Փիլ. են (աղ մասնիկի համար հմմտ. կախաղան, յաշաղանի, կենցաղ)։

Diefenbach, Berl. Jahrb. *1843, 444* գնդ. apa-։ Justi, Zendsp. *22* և յետոյ Տէրվիշ. Նախալ. *118* սանս. գնդ. apa, յտ. ab, ā գոթ. af, հյ. ապ- (մասնիկ), նաև հպրս. apara, գոթ. afa. ձեւերի հետ։ Մորթման ZDMG *26, 541*՛ խալդ. khaubi «յետոյ»։ Հիւնք. յապաղել բայից։ Bugge KZ *32, 62* սանս. ápara «յետեւը, յետինը», áparam «յետոյ, ապագայինն» են. նախաձեւն էր հնխ. *ápo։ Մառ, Грам. др. арм. яз. *288* բուն ձեւը համարում է ապար, որից p ընկնելով՝ ապա. բուն ձեւը անաղարտ գըտնում ենք ապառնի (!) բառի մէջ։ Meillet MSL *8, 292* և *10, 270* յատ. ab բառի հետ, ինչպէս ֆուպ = յտ. sub։ Հիւրշման չէ ընդունած։ Patrubány SA *1, 218* նոյն ընդ ապ- = գնդ. apa։ Սազըլեան ՀԱ *1909, 335* և Karst Ցուշարձ. *402* սումեր. aba «յետոյ»։ Աճառ. Նորք *1925 № 5, էջ 393* յիշում է նորագիւտ կամիս. (հաթիան արձանագրութեանց լեզուով) appa «յետոյ»։

*ԱՊԱԲԱԼԱՄՈՆ «բալասանի ծառի հիւթը». մէկ անգամ ունի Ագաթ.։

=Յն. ὀποβάλσαμον «բալասանի ծառի հիւթը». կազմուած է ὀπός «ծառերից վազած հիւթը» + βάλσαμον «բալասան» բառերից. բան այսմ մեր բառը պէտք է սրբագրել ոպոբալսամոն։—Հիւրշ. *էջ 341*։

*Նշ*ի ուզում է կարդալ իբրև երկու բառ՝ ապա բալսամոն. այսպէս մտածել են անշուշտ նաև ՋԲ և ԱՔ, որոնք չունին այս բառը։

*ԱՊԱՋՈՆԵԱԼ անաւոյգ և նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Մագ. *թղ. 237* «Որջասոյղ և գրուանող, ծեքեալ, նոծեալ, ապազոնեալ» (այլ ձ. ապա զիենալ)։

=ապ բացասականով յն. ζώνη «գօտի» բառից կազմուած. գօտի կապել, գօտեւորուիլը նշան էր կռուի պատրաստուելու. բան այսմ գօտեթափ լինելն էլ պիտի նշանակէ «պարտուիլ, տկարանալ»։—Աճ.

Այսպէս եմ մեկնել... ՀԱ 1923, 246։

Ապաբարց «յետին կողմ, եւեր» Շիր. «մակակէտ, որ է՝ նշանը» երզն. և նչ. քեր. վրդն. ազ. յոչ։

=*Թարգմանաբար կազմուած է յն.* ἀπόστροφος *հոմանիշից, որ ծագում է* ἀπο- «ապ-» *և* στρέφω «դարձնել» *բառերից. ըստ այսմ հայերէնն էլ պիտի լինէր* *ապադարձ, *որ հին յունաբան դպրոցի ընդունած գաւառական արտասանութեան համաձայն գրուել է* ապաբարց. *բառի այս ծագումը հաստատում է նաև* այբաբարց *գրչութիւնը։*

Աւետիքեան, Քերակ. 1815, 217 ապա «յետոյ» + բարց «բացի» *բառից. իբր «առանց նաբինի՝ վերջինի»։ Ըստ ՆՀՔ «ոմանք կամեցան իմանալ որպէս հյ.* այբադարձ, *կամ* ապ ա՛ դարձ»։ ՀՀՔ *ունի* բարց այբի։ *Ուղիղ են մեկնում ՆՀՔ և Հիւնք.։ Վերի ձևով ունի Ածառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 158։*

Ապաժոյժ, ի-ա *հլ.* «արիւն, *մանաւանդ թափուած արիւն» Վկ. արև. 119. Ոսկ. մ. բ. 10. Մարութ. Եփր. մատ. բ. 305. Եղիշ. է. էջ 96. Խոր. Լաստ. Իգնատ. դկ. 241. Արծր.* «օրէնք կանանց» *Վրդն. ծն. որից* ապաժուժախան «արիւնարբու» *Թէոդ. մայրագ. սովորաբար գործածւում է* արիւն *բառի հետ միասին. ինչ.* արեամբ և ապաժուժաւ բարբառել *ևն։—Սխալ ստուգաբանութեամբ յետնաբար համարուած է անառանելի, անժուժալի» (օր.՝ յապաժոյժ տանջանան). Բառ. երեմ. էջ 26 ունի* ապաժուժել «զրկել կամ հանել»։

ՀՀՔ, ՆՀՔ և ՋՔ ժուժալ բայից, իբր «անժուժալի, անառանելի»։ Տէրվ. Altarm. *86 յիշում է ժոյժ, վիժել և սանս.* apayuǐ «թողնել հեռանալ»։

***Ապաւեղ.** *անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածուած է Վեցօր. է. «Ծով մեծանիստ, ապալեկ, շեպ, անխորշ, անզոգ»։ Ըստ իս նշանակում է «աններդ» և*

=*կազմուած է* ապ, ապա *բացառական մասնիկով պէս.* lap = *պրս.* لب lab «շրթունք» *բառից, որ նշանակում է նաև «ափն, եզերք». ինչ.* لب آب lab-i-āb «ջրի եզերքը», لب جوی lab-i-ǰuy «գետի եզերքը», لب دریا lab-i-daryā «ծովեզր». *միւս իրանեանններից կան քրդ.* lēw, *բելուճ.* lap, *վախի* law *են* (Horn § 953)։ *Այս բոլորը տալիս են հնխ.* lep- *ձևը, որի ժամ կար նաև հնխ.* leb. *համմտ. լտ.* labium, *նրգ.* lippe, *անգսք.* lippa, *հրգ.* lēfs, lëffur, *լիթ.* lúpa (Walde 401)։ *Հայերէնը իրեև բնիկ բառ կարող էր կորուել սրանց (հնխ.* leb *պիտի տար հյ.* *լեպ), *բայց որովհետև «եղերք» նշանակութիւնը միայն իրանեանի մէջ է գտնւում, ուստի յարմար է դնել փոխառութիւն, իբր պրս.* بیلب bē-lab «աններդ»։ *Դժուարութիւն է հանում ե ձայնը, որ կարծեմ սխալ գրչութեան արդիւնք է. Վեցօրէից մեր օրինակը բազմաթիւ օրինակներ ունի նման սխալ գրչութեանց։—Ա՛ճ.*

ՆՀՔ ուղղում է ապալեր, *ԱՔ բարդմանում է «առիշեղ»։ Տէրվ.* Altarm. *94 սխալ գտնելով ՆՀՔ-ի մեկնութիւնը, իրանից հնարում է մի ուրիշ, բայց շատ անյաջող մեկնութիւն. այն է՝* ապալ = լտ. opul-entus «առատ» + եպ = *պրս.* اب āb «ջուր», *որով* ապալեպ *լինում է «առատաջուր, ջրառատ»։ Վերի մեկնութիւնս ընդունում է նաև* Meillet *(անձնական)։ Ինձնից յետոյ նոյնը անկախաբար Թիրեաքեան, Արիահայ բռ. էջ 44։*

Ապաւեր *կամ* **Ապաւերկ** «ամայի, անշէն, *թափուր». առաջին ձևը՝ որ լատադոյնն է երեւում, ունին Պիտ. Կղկնտ. իսկ երկրորդը, որ* լերկ *բառից աղղուած է Բուզ., ունին Փիլ. տես. 23. Անան. ակեղ. Շ. ա. յհ. իր. Օրբ.։*

ՆՀՔ լերկ *բառի՞ց։* Peterm. *82 ուղղագոյնը համարում է* ապալիր, *իբր «ոչ լցեալ, թափուր»։ Հիւնք.* լինել *բայի լե՛ր հրամայականից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 45 ապ-։պրս.* لر lar «յորդառատ ջուր», *որով* ապալեր «անջուր»։

Ապաւոտ «անասուրբ, պիղծ» *Ղեւտ. է. 18. «անվաւեր» Ոսկ. Եփես. 795. «ապերախտ» Ածաբ. կարկտ. «խարդախ, կեղծ» Պզատ. օրին. որից* ապախտ առնել «խօսքը չլսել, արհամարհել, երախտամոռ լինել» *Սգր. Ագաթ. Ոսկ. յհ. ա. 2.* ապախտ լինել «անկարգանալ. խանգարուիլ, փճանալ» *Ոսկ. ա. տիմ.* ապախտաւոր «ապերախտ, երախտամոռ» *Սեբեր. Ոսկ. մ. բ. 18. ա. տիմ. ժե. և ևս.* ապախտիմ «ապերախտութիւն» *Բուզ. գ. 14.* ապախտաւորագոյն *Ոսկ. մ. ա. 13.* ա-

պախտաախէր *«ապերախտ կամ կեղծարար»* կնիք Հաւ. 367 ևն։

ՆՀԲ լծ. հյ. ուխտ, ԹրՔ. ախտ, աիտ, իբր *«ուխտազանց կամ ապերախտ»*, յն. ἀπάτης *«յետս կասեալ»*։ Տէրվ. Altarm. 87 = *ապակոխիք*, ակն բառից. Համմտ. գոթ. ah-jan *«տեսնել, զգալ, մտածել»*, aha *«միտք»*, հբգ. ah-ta *«յարգանք»*։ Հիւնք. ապ-ուխտ և յն. ἀβαχχεύτος *«պիղծ, աննուէր»*։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 45 կրճատուած ապերախտ բառից։

*ԱՊԱԽՏԱՐ, ի-ա հյ. *«հիւսիս»* Խոր. աշխ. *«աստղահմայի գուշակութիւն»* Շիր.։

= ՊՀլ. apāxtar *«հիւսիս, հիւսիսային, մոլորակ»*, պրս. باختر bāxtar *«հիւսիս»*, باختری bāxtarī *«հիւսիսային»*, զնդ. apāxtara, apāxəδra *«հիւսիսային»*. այս բառը բուն նշանակում է *«յետևը, յետևի կողմում գտնուած»* և զնդ. apa, apāk *«յետևը»* բառի բաղդատականն է՝ -tara մասնիկով կազմուած (կապ չունի պրս. axtar = զնդ. *axtara *«աստղ»* բառի հետ)։ Հին իրանեաններ նայում էին դէպի հարաւ, ուստի հարաւը կոչում էին *«յառաջակողմ, առջևի կողմ»*, իսկ հիւսիսը *«յետև, յետևի կողմ»* (Bartholomae, Altiran. Wört. էջ 79—80)։—Հիւրշ. 94։

ՆՀԲ հանում է ախտաւոր բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Burnout, Yasna CXX—CXXII, յետոյ Lagarde Beitr. Bactr. Lex. էջ 6, Garrez, JAs. XIII (1869), էջ 191։ Հիւնք. համարում է ախտաւոր բառի բացատականը։

ԱՊԱՒՏ *տե՛ս* Ապուխտ։

ԱՊԱԿԱՆ *«ապականուած»* Արծր. (այս արմատական ձևով ուրիշ տեղ գործածուած չէ). որից ապականել *«անհետացնել, ջնջել, մէջտեղից վերացնել. 2. խանգարել, վնասել, աւրել, փչացնել. 3. կեղտոտել. 4. պղծել զկոյս. 5. (կրաւ) հրակէզ լինել, կրակով այրիլ»* ՍԳր. Ագաթ. ապականացու Ա. պետ. ա. 18. ապականիչ ՍԳր. Ագաթ. ապականութիւն ՍԳր. Ագաթ. անապական Ագաթ. ևն։ Նոր գրականում գործածւում է միայն *«կեղտոտել»* իմաստով և նիւթական կամ բարոյական առումով։

ՆՀԲ և ՋԲ? ապ և ակն բառերից, իբր *«բառնալ և աներևոյթ առնել յաչաց»*։ Lagarde, Gesam. Abhd. 298 khan *«փորել»* արմատից, որից նաև վկանդել։ Պատկանեան, Փորձ 1880 մարտ, էջ 84 և Матеріалы I. 6 ա բացատականով պրս. پاک pāk *«մաքուր»* բառից, իբր *«անմաքուր»*։ Տէրվ. Նախալ. 24 ապա + ակն։ Հիւնք. ապ + ակն, ինչ. յն. ἀφανίζω *«աներևոյթ դարձնել, ջնջել, կորցնել, հեռացնել, մթագնել»*, կազմուած a բացասականով φαίνω *«երևիլ»* բայից։ Հիւրշ. 413 խորհրդածելով Lagarde-ի համեմատութեան վրայ՝ կասկած է յայտնում, որ դուցէ բառս իրանեանից փոխառեալ լինի, իբրև պհլ. *apakanēm? Թիրեաքեան, Արիահայ բռ. 49 պրս. āb *«ջուր»* + կան մասնիկով, իբր թէ *«մէջը ջուր խառնել»*։

ԳԻՒՌ.—Ջղ. Սլմ. ապականել, Երև. ապականէլ, Շմ. Ոզմ. Տփ. ապականիլ, Խրբ. աբագանիլ. բոլորն էլ նշանակում են *«կեղտոտել»* և յատկապէս քաղաքավարական լեզուով *«կղկղել, բնական պէտքը հոգալ»*։

*ԱՊԱԿԻ (-ւոյ, եաց) *«ապակի, շուշա»* Յոր. իր. 17. Յայտ. իա. 18. Պղատ. տիմ. 36. կԹ. *«շիշ, սրուակ»* եզն. *«գինու բաժակ»* Վրք. Հց. ա. 580. նոյն բառն է նաև ապիկի *«ապակի, շուշա կամ ուլունք»* Խոսր. պտրդ. Վստկ 92. 116. Եփր. արմատ. 56. *«արիւն առնելու սրուակ»* Մխ. բժշ. 29. *«ջնարակ»* Բժշ. Վստկ. ածանցման մէջ մտնում է երեք ձևով. 1. ապակա-, ինչ. ապակագործ Վրք. Հց. ապակագործութիւն Ագաթ. Սահմ. ապակատաւազ Մագ. 2. ապակե-, ինչ. ապակեղէն Ոսկ. ա. տիմ. Ագաթ. Յայտ. դ. 6. ապակեայ Վրք. Հց. բ. 66. 3. ապակէ-, ինչ. ապակէգործ Յայտմ. ապակէգործութիւն Սահմ.։ Իսկ ապիկի ձևից ունինք ապիկած *«ջնարակած»* Վստկ. ապիկէգործութիւն Մխ. բժշ. ապիկեղէն Յայտմ. սնտ. 20. նաև ապիկոյ փրփուր, ապիկու խոտ բոյսերը. Բժշ.։ Նոր գրականում ընդունուած է միայն ապակի *«շուշա»* (բարդութեան մէջ ապակե-) և

ապիկի «չնարակ»։ Նոր բառեր են ապակեայ, ապակեփեղկ, ապակեդուռ, ապակեխոռ, կրկնապակի, ճեճապակի են։

=Իրանեան փոխառութիւն է. համմտ. պրս. ابگینه ābgīna «ապակի, շիշ», նոր պհլ. āwgīnak «անդիկ կամ հայելի», āwgīnakīno «բիւրեղեայ». իրանեաններից փոխառութիւն են նաև չերքէզ. abkos «սրուակ, բաժակ», apkū «սրուակ», կաբ. abgi «շիշ»։ Այս բոլորը ծագում են գնդ. āp-, հպրս. āpi-, պրս. آب āb «ջուր» բառից, ինչպէս որ ունինք արաբ. مایو māviyya «հայելի»՝ ծագած ماء mā «ջուր» բառից։—Հիւբշ. 103։

Առաջին անգամ ուղիղ մեկնեց Գ.։ Նոյնը յետոյ Նշ.։ Lagarde, Urgesch. 28 *սկիզ բառի հետ։* Patrubány SA 1, 222 *համեմատում է հունգ.* üveg «բաժակ, գաւաթ», *օսս.* awg։

Գ.—Վն. ապակէն «ապակեայ», Ջղ. ապիկ «չնարակ, յախճապակեայ ադիւս», ապիկել, ապրկել «չնարակել»։

Ա.ՊԱ.ՀԱՐ *տե՛ս* Ապարահ։

Ա.ՊԱ.ՀԱՐՋԱՆ կամ Ա.ՊԱ.ՀԱՐՋԱՆ (սեռ. ի) «կնաթողութիւն», որից գիր ապահարզանի Օր. իդ. 1, թուղթ ապահարզանի Ես. ծ. 1. Երեմ. գ. 8. Եփր. ծն. էջ 56. Ես. պամ. 285. Նոյն ձևերն ունին առէպ Ոսկ. Ես. և մտ. արդի գրականում ընդունուած է միայն ապահարզան ձևը՝ «ամուսնալուծութիւն» նշանակութեամբ (այսինքն թէ՛ մարդու և թէ՛ կնոջ կողմից, մինչդեռ հնում միայն մարդու կողմից ապահարզան էր տրւում կնոջ)։

=Իրանեան փոխառութիւն է. համմտ. զնդ. apaharəzana «արձակում», որ կազմուած է apa մասնիկով harəz «արձակել, ձգել, թողնել» արմատից=հիւս. մանիքէական պհլ. hyrz (hirz) «թո՛ղ, ձգէ՛», պրս. hilem «թողնեմ». համմտ. նաև նոյն արմատից՝ սանս. apasarǰana- «լքում, բաշխում, հոգին աւանդել», զնդ. viš-harəzana-, apaŋharšti- «պատիժը ներել», սանս. apasṛšta «չետ քաշուած», սոգդ. 'pγ'rš «անջատուող»։ Բառիս հոմանիշ է հյ. արձակում. համմտ. Մաթ. և. 31 զարձակմանն=յն. ἀποστάσιον։—Հիւբշ. 104։

նշէ «իբրու մեկնիլ ի հարազատ առնէ կամ ի հարսնէ»։ Տէրվ. Մասիս, 1882 օգոստ՞ 18 օտար փոխառութիւն է՝ իբր ապա+հարզան, ինչպէս կայ համհարզ. երկուսն էլ կազմուած են նոյն հարզ բառից, ուր հար մասնիկ է, զա, զան «ծնիլ», համմտ. ազն, ազանց, որով բառը բուն նշանակում է «ոչ-համահարզ, օտար համարելն զկին»։ Նոյնը նաև Տէրվ. Լեզու, էջ 155—6, ուր այս հարզ ձևը կցւում է հարս, հարն բառերին։ Հինք. հարսն, հարսան-իմ բառից կամ յն. ἀποχωρίζω «բաժանուիլ»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Հիւբշ. Pers. Stud. էջ 222։

Ա.ՊԱ.ՀԵԼ «ընդդիմանալ». ունի միայն Բառ. Երեմ. էջ 26։

Ա.ՊԱ.ՀԻՊԱՏ «փոխ-հիւպատոս». ունի միայն Ա.Բ. մեր մատենագրութեան մէջ աւանդուած է հետևեալ ձևերով. ապուհպատ Արձ. է դարի (Շողակաթ 173). ապահիպատ Արձ. Ը դարի (Շողակաթ 176). ապուհիպատ Ասող. 91 և 144. Կղկնտ. Հրտր. Շահն. էջ 300, 333, 360. ապահի պատրակի Ուխտ. ա. 109 (կարդա՛ ապուհիպատ պատրկի), ապուհպատոն Սոկր. էջ 431 (այլ ձձ. ապուրիպատ, ատաճիպատ, ապահիպատ են)։

=Յն. ἀπὸ-ὑπατος, որ Բիւզանդիանց ժամանակ «պատուակալ հիւպատոս» նշանակութիւնն ունէր։

Ուղիղ մեկնեց Նորայր, Հանդ. գր. և պատմ. Բ. 315։

Ա.ՊԱ.ՀԻՊԱՏԻԿՈՍ նորագիւտ բառ. նոյն է նախորդի հետ և երկու անգամ միայն գործածուած է Սոկր. եկեղ. պատմ. էջ 94 ապոհպատիկու և էջ 98 ապահպատիկոս ձևով։

=Յն. ἀπὸ-ὑπατικός «փոխ-հիւպատոսական»։

Այսպէս մեկնեց Մ. Վ. Տէր-Մովսէսեան, նոյն հրատ. էջ 94 ծան.։

Ա.ՊԱ.ՀԻՊԱՐՔՈՍ «փոխ-հիւպարքոս, հպարքոսական փոխանորդ». պահուած է միայն ապահիպարխուրիւն բառի մէջ՝ որ գիտէ միայն Ա.Բ. մէկ անգամ գործածուած եմ գտնում Կաղկնտ. Հրտր. Շահն. Ա. էջ

299 =հրտր. էմինի, էջ 143 ապա հիւպաճռաւութիւն ձևով։

=ՅՆ. ἀπὸ-ὑπαρχος «փոխ-նպարքոս»։—Ա՛ճ.

Ա.ՊԱՀՈՎ «հանգիստ, վախից՝ երկիւղից ազատ» (անհոլով). սովորաբար գործածւում է յ նախդիրով. ինչ. ապահով կամ յապահով «հետու բնակած, զատուած, առանձնացած» Եզեկ. լզ. 11(յն. ի բաց ընկեցիկ). յապահով լինել, յապահովս առնել «ապահովիլ, ապահովացնել, Ոսկ. մտթ. յետնարար ունինք յապահով (իբր ած.) Փիլ. վրք. հց. Գէ. ես. յապահովանալ Պիտ. Փիլ. Արծր. 3՛. կաթ. յապահովաճիմ Պիտ. յապահովացուցանել 3՛. իմ. Գնձ. յապահովութիւն Պիտ. Փիլ. նոր գրականում ընդունուած է անհախդիր ապահով ձևը, որից կազմուած են ապահովել, ապահովագրել, ապահովագրական, ապահովագրութիւն, ապահովաբար, ապահովապէս, անապահով, անապահովութիւն են։

ՆՀԲ «ապ, այսինքն հետի՝ յանէ կամ ի ինովէ՝ այսինքն ի հողմոյ»։ ՓԲ յոջ. էջ բ ապ «ոչ»+աճ «երկիւղ»+ով գործիականի մասնիկը։ Տէրվ. Մասիս 1882 օգոստ" 18, ապա մասնիկ է։ Հիւնք. յն. ἀποφῶ (այսպէս!)։ Մէնէվիշեան ՀԱ 1930, 731 ծան. մեկնում է ապ-աճ-ով «անվախ» (դրծ. մասնիկով)։

Ա.ՊԱՂԱՍ կամ **Ա.ՊՂԱՍ** (ի հլ. ըստ ՆՀԲ) «թեթև կամ անկարևոր և ըստ կամս լուծելի պահք» Մանդ. էջ 35 (ուր անգամ ունի ապաղաս, յգ. հյց. ապաղասս. չկայ ապղաս). Եփր. պհ։

ՆՀԲ մեկնում է անաղուհաց, անաղցք կամ յն. ἀπαλός «փափուկ», յգ. հյց. ἀπαλάς (իբր ո՛չ խիստ, այլ թեթև պահք)։ Thumb յն. ἀπλοῦς «պարզ» բառի իգ. յգ. հյց. ἁπλᾶς ձևից։ Երկուսն էլ կասկածելի են ըստ Հիւրշ. էջ 341։

***Ա.ՊԱՂԱՐԻ** «մեռաղեայ աման է կոնքի կամ կուժի պէս». նորագիւտ բառ, որ երեք անգամ գործածում է Անան. գիտ. 24 (այլ ձ. ապարխարէ, ապարխօրէ) և 28 (առանց ձեռ. տարբ). յիշուած է նաև յետին մի տաղի մէջ ապխոր ձևով. Գաւաթն որ եկ մեծ ապխորս յիս. Նոր ժողովածու, Բ. էջ 50։

=Պրս. ābxōra «կուժ, ջրաման» (այս բառը չունի ԳԴ, բայց գիտէ Будаговъ I. էջ 1 b) կազմուած է յայտնապէս āb «ջուր» և xōrdan «խմել» բառերից. ըստ այսմ ուղիղ է տաղարանի ապխոր ձևը, իսկ ապաղարէ աղաւաղ գրչութիւն պէտք է համարել։—Ա՛ճ.

ԳԻՒ.—Գ. Տէր-Մկրտչեան, հրատ. Անան. գիտ. էջ 16 յիշում է գւռ. ապխօռ «պղնձէ խոր աման թանի՝ մածունի համար». այս բառը այլուստ ինձ անծանօթ է։

Ապայագիտութիւն «ապառազինութիւն» Մխ. դատ. յօրէնս Թագ. ունի միայն ՆՀԲ (յաւելուած, հտ. Բ. էջ 1045 ա), իբր անբառոյգ բառ. արդիւնք է սխալ ընթերցման և ջնջուած Առձեռնում։

***Ա.ՊԱՇԱՒ** (ի, ի–ա հլ. ըստ ՆՀԲ) «զղջում, յանցանքի համար զղացած ցաւը» նոր. լմբ. աղ. Մարկ. ք՛. «զղջացած» Եփր. բ. կոր. «թշուառ, եղկելի» 3՛. կթ. յիշատ. որից ապաշաւել «զղջալ» ՍԳր. «խնայիլ, մեղքնալ, վրան ցաւիլ» Ա. մկ. ժգ. 5. Արծր. Մծբ. անապաշաւ կոչ. ապաշաւութիւն Փարպ. են։ (Ապաշաւել և ապաշխարել բառերի տարբերութեան վրայ խօսում է Տաթև. ամ. 302)։

=Պհլ. *apašāv, որ հաստատում է զնդ. apašav- «յետ շարժուիլ, յետ դառնալ, հեռանալ». կազմուած է apa-«յետ» նախդիրով՝ զնդ. šav, šyav, հպրս. šiyav, պրս. شدن «շարժուիլ, ճամբայ ելնել, երթալ» բայից, որի վրայ ընդարձակ տե՛ս չաւ. ըստ այսմ ապաշաւ բուն նշանակում է «յետ դառնալ արածից, հեռանալ», որի յիշողութիւնը պահում է թեւրև Գծ. ը. 22 «Ապաշաւեա՛ դու ի չարեացդ քոց» (բցո. փոխանակ ի վերայ կամ զ-)։ Բառիս կազմութեան համար համմտ. արշաւ, իմաստի զարգացման համար՝ փաշամանե։—Ա՛ճ.

ՆՀԲ ապա ցաւ կամ ապ փոշիման։ Հիւնք. յն. ἀπό+պրս. աշամ «ըմպելի» կամ աշ «կերակուր» և աւ կամ առ «ըմպելի», այսինքն «ուտել-խմելուց հրաժարիլ»։ Թիրեաթեան, Արիահայ բռ. 51 զնդ. apaša «յետս» բառից։

***Ա.ՊԱՇԵԱԼ** «զղջալ, արած յանցանքի վրայ ցաւիլ. մեղքը լալ». արմատ առանձին

անգղրծածական, որից ապաշխարել *ՍԳր. Բուզ.* ապաշխարող *Սիր. ժէ. 20.* ապաշխարութիւն *ՍԳր. Բուզ. Եղն.* ապաշխարաւն *Նար.* անապաշխար *Փարպ.* անապաշխարող *Ոսկ. բ. կոր.* անապաշխարութիւն *Ոսկ. բ. կոր. Եւն: Նոր գրականում և բարբառներում գործածւում է միայն կրօնական առումով:*

=*Իրանեան փոխառութիւն է. համմտ.* պհլ. apāxš, *պազենդ.* awāxš «*բարկացած, ցաւած, դղջացած, ապաշխարած*». *Հայերէնի մէջ ար մասնիկ է. համմտ. մեծ-ար-ել, ասուած-ար-եալ Եւն:*

ՀՀՒ, ՆՀՒ և ՔՒ ապա *(յետոյ)* աշխարել: Peterm. *256 և* Lagarde, Urgesch. *36,* Beitr. Bktr. Lex. *61* ապաշխարհ, *իբր աշխարհից մեկուսացած.* Müller SWAW *42, 255 սանս.* apakšэr, apak šal «*լուալ, մաքրել*» *բառի հետ: Տէրվ. Նախալ. 118* ապ *բացասականով աշխարել բայից: Հիւնք. յն.* ἀπο, ապ+ *պրս.* աշ «*կերակուր*» *և* խor «*ուտել*», *ուրեմն* ապաշխարել, «*ինքդինքը կերակրից զրկել*»: *Վերի մեկնութիւնը տուաւ* Müller WZKM *10, 271, որ ընդունում է նաև* Meillet *(անձնական)*: Andreas *դնում է պհլ.* ’pxš’d «*ներում*» *բառից փոխառեալ:* Bailey IRAS *1930, էջ 16 գտնում է, որ այս բառը ձևով և նշանակութեամբ սխալ է և չի համապատասխանում հայերէնին. պէտք է կարդալ և հասկանալ պրս.* بخش baxš «*ներել*»: *Նոյնպէս նաև* Nyberg, Hilfsbuch *2, 20 պհլ.* apoxšāδišn «*ներում, ողորմածութիւն*» *բառից, որի հին ձևը համարում է* *apa–xšaδ, *որից էլ պրս.* baxšay — am «*ներել, բաշխել*»: *Իմաստը տարօրինակ կերպով հակառակն է:*

ԳԻՒ.—Կրօնական նշանակութեամբ պահուած է գրեթէ ամէն տեղ նոյն ձևով. ինչպէս՝ Զղ. Սլմ. ապաշխարել, *Մրզ.* ապաշխարէլ, *Մշ.* արաշխարել, *Ախց. Երև. Կր. Վրբ. Նխ. Պլ. Սեբ.* արաշխարէլ, *Ակն. Շմ. Ոզմ.* արաշխարիլ, *ՋՓ.* արաշխարըլ, *Մկ.* ապաշխարիլ, *Տիգ.* արշխարիլ, *Գոր.* բրըշխարվլ, *Ագլ.* բրըշխա՛րանք, բշխա՛րուղ:

[ԱՊԱՒ *«կեզտոտ, աղտոտ, ապականեալ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է ապառութիւն ձևի տակ. «Մաքրելով զիմ ապառութիւնս վերադիտողութեամբ» (Աբան. տպ. Վենետիկ 1899, էջ 301). Ձեռագրական տարբերութիւններն են ապառաժութիւն, ապականութիւն: Պէտք է ուղղել ապաւառութիւն. տե՛ս* ապաւառ:]

ԱՊԱՌԱԺ, ի, ի–ա *հլ. «պինդ քար, ժայռ, առապար, քարոտ տեղ» ՍԳր. Բուզ. որից* ապառաժանալ *Տօնակ.* ապառաժանալ *կամ* ապառաժիլ *Նիւս. ԹԷոդ. Գր. տղ. ԹղԹ. Իւնիկ.* ապառաժուտ *Եփր. Համաբ. Պիտ.:*

ՆՀՒ լծ. հյ. ապ *և* երէզ, *արաբ.* arz «*հող*», *յն.* ἄκρος «*անանց, անկոխ*», ἀπόρρηγμα «*հատած*», ἀπαράσσω «*հատանել*»: *Հիւնք. առապար բառից: Քիրեաքեան, Արիահայ բռ. 51 պհլ.* aviras «*անճանապարհ*»:

ԳԻՒ.—Երև. Կր. Ոզմ. ապառաժ, *Ալշ. Ակն. Ասլ. Խրբ. Ննխ. Տիգ.* արառաժ, *Մկ.* ապառաժ, *Խրբ. Պլ. Սեբ.* fար–արառաժ, *Սլմ.* fար–ապոmժ, *իսկ Շմ.* ապառաժ *գործածւում է «ժլատ, կծծի» իմաստով:*

ԱՊԱՌՆ *(սեռ.* ի*) «յարդէ անկողին». գիտէ միայն ԱԲ:*

ԱՊԱՌՈՒԻՄ *(անհոլով) «խիտ, անսանձ, վայրագ, յանդուգն, բիրտ, անզուսպ» Մծբ. 268. Ոսկ. յհ. ա. 36, բ. 19, 17. Իգնատ. 334. Մարգ. յհ. «կարգէ դուրս, խիստ շատ» Եղիշ. Պիտ. որից* ապառումս *«յանդգնարար» Նար. 163. Լմբ. առեն.:*

ՆՀՒ ապ *և* առ *(շատօղ վերջաւորդ) կամ* ապ *և իրք.* ar «*ամօթ*» *(իբր անառակ, անամօթ): Պատկ.* Матеріалы *I. 7 պհլ.* apārūn «*անմաքուր, անկարգ, անբնական, կեղծ, սխալ, չար*» *բառի հետ, որ մերժում է Հիւբշ. 104: Փորթուղալ փաշա, Եղիշե 235 պազենդ.* اوارون āvārun, *որ նախորդի հետ նոյն է:*

ԱՊԱՍՈՎՔ *«ապացոյց, օրինակ» ԹԷոդ. խշ. էջ 164 և 171. այս երկու վկայութիւնից դուրս ուրիշ օրինակ չկայ:*

ՆՀՒ լծ. իտալ. abbozzo «*օրինակ*»: *Ակինեան ՀԱ 1930, 490 ուզում է իմանալ* ափիւսովք «*ծածուկ, գաղտնի*»:

ԱՊԱՍՈՅԵԼ *տե՛ս* Ասել։

***ԱՊԱՍՏԱՆ**. ի, ի–ա *հլ.* «ապաւէն, պատրսպարան» *ՍԳր. Ագաթ.* «ապաւինած, վրստահացած» *Բ. կոր. ա. 15, Ոսկ. եփես. Եւս. քր. եփր. ծն.* «վահան, ասպար» *եփր. Թգ.*, որից ասլաստան լինել «ապաւինիլ, վրան վստահիլ» *ՍԳր. Ագաթ. Ոսկ. մ. գ. 25.* յոգիս ապաստան լինել «ննջն ընկնել» *ՍԳր.* ապաստան է «ներա ձեռքն է, նրան վստահուած է» *Ոսկ. մ. ա. 14. Եւս. քր.* ապաստան առնել «ապաւինիլ» *ՍԳր.* «մի գործ մէկին յանձնել» *Ոսկ. մ. Եւս. քր.* յանձնապաստան *ՍԳր. Կոչ.* ապաստանիլ *Եսթ. ժդ. 1, ժզ. 2.* բռնապաստան «դիմադարձ, բռնի միջոցների դիմելով՝ իշխանութեան անձնատուր չեղող» *Կանոն. 81.* յետնաբար ունինք նաև ապաստան «մինչև, նաև» *ԱՔ*, ապաստանութիւն *Փիլ. Մագ. ևն։*

=*Պհլ.* apastān «ապաւէն, ապաստան», *պազենդ.* awastām «վստահութիւն, հաւատարմութիւն», *համմտ. սանս.* upasthāna- «յարգ, պատիւ», avastāna «բնակարան, տուն, տեղ» (Horn, *էջ 266*), որոնք կազմուած են sthā «կալ, մնալ» արմատից՝ զանազան մասնիկներով։—*Հիւբշ. 104։*

*Նշ*Բ ապահովաստան կամ ապա հուսկ յետին կայարան։ Ուղիղ մեկնութիւնը տալիս է նախ Windisch. *20*, որ համեմատում է *սանս.* apasthāna ձևի հետ, Spiegel *իր* Gram. d. Hüzw. Spr. *գործում, էջ 184* սասանեան արձանագրութեանց apastān ver Yezdān *դարձուածը մեկնեց «ապաստան յԱստուած», որ ընդունեցին* Haug, An old pahlpaz. gloss. *էջ 79, 80 և ուրիշներ։ Մորթման* ZDMG *26, 495 և Բևեռ. Հյստ. Գ. Ապտուլլահ, Պօլիս 1872, էջ 56, Հայ և պհլ. ձևերին համաձայն է գտնում խալդ.* ipçidina, *որ յետոյ կարդաց* ispistan *(Մասիս, № 1196, 1 փետր" 1872 և Սիօն 1872, էջ 40) կամ ուղղելի* apsadan, apastan։ *Թիրեաքեան, Պատկեր աշխ. գրակ. Ա. էջ 192 պրս.* آبشتن ābištan «թաքուցանել, ծածկել, պահել»։ *Հիւնք.* ամբաստանել *բառից։*

***ԱՊԱՏ** «շէն, շէն տեղ» *եղիշ. գ. էջ 46. 36. կթ. ուրիշ տեղ չկայ. գտնում ենք նաև զանազան տեղական յատուկ անուանց ծայրը. ինչ.* Վաղարշապատ, Ներսեհապատ, Պերոզապատ, *նորերից* Խանապատ, Ղազարապատ, Կորիւնապատ. *գրուած է պատ Մագ. խէ և ծ։*

=*Պհլ.* āpāt, āpātān, *պազենդ.* āwādān, *պրս.* آباد ābād, آبادان ābādān «շէն, ապատ». *Նաև յատուկ անուանների ծայրին՝ ճիշտ հայերէնի պէս* Balāšābād, Pērōzābād, Lēlābād, Sayidābād, Xurramābād, Hāydarābād, Allahābād *ևն. տե՛ս նաև* անապատ։ *Հպրս. ձևը թէև չէ աւանդուած, բայց ենթադրւում է *āpāta (*Horn, § *4)։—Հիւբշ. 97։*

*Ուղիղ մեկնեց նախ Գ*Ր*։ Նշ*Բ պատ, պատել *և պրս.* ապատ, ապատան։ *Ուղիղ են նաև* Neumann, ZKM *1, 247,* Lagarde, Urgesch. *931 ևն։* Canini, Et. étym. *145 պատել բայից։ Ց. Գ. Մ., Պատմ. գրակ. էջ 15 եբր.* ապատ։

***ԱՊԱՐԱՀ**, ի *հլ.* «տեռատես, ամսական հոսում ունեցող» *Ես. կդ. 6, Եզեկ. ժբ. 6, լզ. 17.* «տեռատեսութիւն, ամսական հոսում» *Կոչ. 117. Ոսկ. կողոս. 659.* որից ապարահանոց «ճեմիշ, արտաքնոց» (այս բառը գործածուած է *Գ. Թագ. ժ. 27՝ լուսանցքի վրայ*), ապարահութիւն *եփր. ծն. էջ 79.* ապարահիտ «տեռատես» *Գէ. ես.* ապարահեղ «արտաքնոց» *Բուզ. ե. 35 (այսպէս ուղղեց Նորայր այս բառը՝ Բուզանդի յապարահէզանց առնելոյ դարձուածը սրբագրելով յապարահեղ անցանելոյ «արտաքնոց երթալու». տե՛ս Կորիւն վրդ. և նորին Թրգմ. էջ 446).* յապարահեղն երթալ «արտաքնոց երթալ», զապարահեղին պետս (ճարել) «բնական պէտքը հոգալ», ապարահեղէ «կղկղանք». *վերջին երեքը գործ է ածում Ոսկ. կող. 572, 604, 696 (յն. ունի* ἀποπατέω «կղկղել». *Իմաստի ճշտումը կատարեց Վարդանեան, ՀԱ 1911, 500, մերժելով Նորայրի (անդ) տուած նշանակութիւնը, որ է «միզել, մէզ»)։ Բառս գրուած է նաև* ապարախ, ապահար *Գնձ. կանոն. Սարգ. ա. պետր. դ (էջ 316).* որից ապահարել *կանոն.* ապահարիտ *Մաշտ.* ապահարութիւն *կանոն.։ Նախնական իմաստն*

է եղել «ջրի ճանապարհ», ինչպէս ցոյց է տալիս Հաճնոյ գաւառականը, ուր ունինք ապառաի «ջրի խողովակ» (ըստ Թէրզեան, Ամէն. տարեց, 1924, էջ 197)։ Նոյն են նաև Աստ. արրաի «ջաղացքի վաքը» (հաղորդեց Մ. Աբեղեան) և Սլմ. արրա «վաքի թումբը» (հաղորդեց Սեդրակ Բարխուդարեան)։ Ըստ այսմ բառը փոխառնալ է՝

=պհլ. āp «ջուր»+ rās (կարդա՛ rah) «ճանապարհ» բառերից, իբր պրս. ابراه ābrāh «ջրի անցք, ջրմուղ»։ (Նկատելի է ռահ, բարդութեան մէջ դարձած րահ, ճիշտ ինչպէս ռազմ բառի մէջ րազմ, որից պատերազմ)։ Բառիս ստուգաբանութիւնը ցոյց է տալիս, որ հին հայոց մէջ արտաքնոցները շինուած էին ջրի անցքի վրայ, ինչ որ հաստատում են նաև ճեմիշ և չաշմակ բառերը (տե՛ս անդ)։ Համմտ. նաև պրս. ابخانه ābxāna «արտաքնոց» (բուն «ջրատուն»)։ Սրանից բնականաբար հետևում է նաև որ արեվելեան լուացումը հին հայոց էլ սովորութիւնն էր։ Ուրեմն կարող ենք այս մտքով հասկանալ եղն. էջ 16 «կամ ղջուրս՝ զոր հանապազն ըմպեմք... և զներբին և զարտաքին աղտեղութիւնս մեր նոքօք սրբեմք»։— Ա՛ճ. Նշհ և Հիւնք. բառիս ուղղագոյն ձևը համարում են ապարաի, իսկ Տէրվիշ. Մասիս 1882, օգոստ՛՛ 18 բուն ձևը դնում է ապաիար։ Նշհ մեկնում է «Ըստ եբր. ապարաի է անցք (եբր. ברה և արաբ. برح brh «անցնիլ»), իսկ յն. ἀποῤῥέω «բացահոսիլ, բղխիլ», առուիւ կամ հուռ հուռ վազել»։ Canini, Et. étym. 56 յն. ἀβροτονον «մի տեսակ բոյս, ֆրանս. aurone»։ Հիւնք. հրապարակ բառից։ Հիւբշ. 103 կարծում է որ իրանեան փոխառութիւն է, սակայն համեմատելի ձևեր չի նշանակում։ Ուղիղ մեկնեց նախ Ա. Խաչատրեան (անձնական)՝ պրս. ابراه ābrāh «անցք ջրոյ», որ ձևաւորում և հաստատում եմ վերի եղանակով։ Այսպէս նաև Թիրեաքեան ՀԱ 1914, 55, որ ապարաի դնում է =պրս. āb+rāh և սրանից ապարաիեղ, իբր ապաիեղ «դուրս հոսած», որի մէջ աւելորդաբար պահուած է rāh։—Կարող է լինել՝ որ բառս իրօք պրս. اب āb, հպրս. և պհլ. āp «ջուր» բառից ձևացած լինի, համմտ. պրս. ابخانه ābxāna «ջրի շտեմարան. 2. արտաքնոց», ابدان ābdān «ջուր կեցած տեղ. 2. միղափամփուշտ», ابریز ābrēz «ջրհեղ. 2. արտաքնոց», ابدستخانه ābdastxāna «լուացուելու տեղ. 2. արտաքնոց», հյ. ջրվաթ «ամէղ» և ջուր թափել «միզել»։

*ԱՊԱՐԱՆ, ի հլ. (յետնաբար նաև ի–ա հլ. Փարպ.) «մեծ տուն կամ պալատ, իշխանական տուն» ՍԳր. Ագաթ. Եփր. ծն. (գործածուած է միայն անեզաբար). որից ապարանազարդ (փղի կերպարանքի համար իբր ածական տրուած) Վեցօր. 193. անապարան «անտուն» Նար. երգ. 348։

=Հպրս. apadāna- «դղեակ, պալատ, ապարանք» բառից, որ կազմուած է apa մասնիկով՝ adā «կառուցանել, շինել» արմատից. համմտ. սանս. apadhâ «դղեակ» (Bartholomae, Altiran. Wörter. էջ 74 և 718). այս բառը ուրիշ իրանեան լեզուների մէջ պահուած չէ. բայց փոխառութեամբ ունինք եբր. אפדן afeden Դան. ժա. 45, Թալմ. אפדנא, պալմիր. אפדנא, ասոր. ܐܦܕܢܐ āfadānā «պալատ, ապարանք», արաբ. فدن fadan «բերդ, դղեակ»։—Հիւբշ. 104։

Ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. ZDMG 36 (1882), 128, ապա Մառ ЗВО 5, 316։ Հիւնք. պրս. اوارا avāra «տեսան իշխանութեան»։ Karst, Ծուշարձ. էջ 400 ասուր. aburru «շրջափակ», abaru «ապահովութիւն», abru «բնակարան», abartu «բնակութիւն, բնակարան»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 55 պրս. اوارا avāra «պալատ» և اورنگ avrang «գահ»։ Այտնեան ՀԱ 1925, 511 ապ «ջուր»+աթաո՛ «բնակութիւն», որով ապարանք կլինի «ծովեզերեայ բնակարան, տեղ. եալը»։

*ԱՊԱՐԱՆՉԱՆ (ի–ա հլ. ըստ Նշհ. թէև առանց վկայութեան) «դաստակին անցկացնելու օղակաձև զարդ, բլազուկ (թէ՛ այրերի և թէ՛ կանանց յատուկ)» ՍԳր. Եփր. թգ. 389. Կաղկնտ. հրտր. Շահն. Ա. էջ 291. յետնաբար ապրանչան Վստկ. 149. առպենան Արձ.

1318 թուից (Վիմական տարեգ. 159). ապարանջ ԱԲ. որից ոսնապարանջան ԱԲ, ապառեան Վրդ. առ. 134։

= Պրս. ابرنجن abranǰan «ապարանջան», որ աւելում է նաև afranǰan, avranǰan, baranǰan. յատկապէս dastabranǰan. «ձեռքի ապարանջան» և pāyabranǰan «ոտքի ապարանջան». իրանեանից փոխառութիւն է նաև վրաց. ამბარჩა ամբարչա «ապարանջան, մանեակ, ոսկի», ոսս. ожерелье»։ — Հիւբշ. 104։

Առաջին անգամ ուղիղ մեկնեց ԳԴ. յետոյ ՆՀԲ ևն։ Եվրոպացիներից ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. ZDMG 35 (1881), 657։

ԳԻՒՒ.— Ալշ. խրբ. Մշ. Ննխ. Սեբ. աբըռջան, Սլմ. աբըռջոն, Ակն. էբըռջան, Հճ. mpmrջոն, Զթ. աբուռջօն, Մկ. mոպրնջոն։ Նոր բառ է ապրջանել Ք. «պաշարել, շրջապատել»։

*ԱՊԱՐԱՍԱՆ, ի հլ. «ըմբոստ, յանդուգն, խեղ» Ագաթ. Ոսկ. յհ. բ. 25. Եփր. բ. տիմ. 254 կամ նաև ապեռասան Ոսկ. բ. տիմ. Նար. սրանից ապարասանութիւն Յճխ. Փիլ. Պիտ. Ոսկ. յհ. կամ ապեռասանութիւն Ոսկ. հս. Պիտ. ապարասանել Ոսկ. պետր. և եղ. ապարասանաբար Թէոդ. մայրագ. Ոսկ. հռ։

= Փոխառեալ է պհլ. *apērasan = պրս. bērasan «անսանձ» ձևից. բառը կարող էր նաև հայոց մէջ կազմուած լինել ապ- բացասականով և *առասան կամ եռասան բառով. բայց որովհետև հայերէնում չունինք առասան ձևը և կայ միայն առասան «շուան» նշանակութեամբ, ուստի ամբողջովին իրանեանից առնուած է։— Աճ.

Նախ ՀՀԲ և յետոյ միւսները, ինչպէս ՆՀԲ, ՋԲ, Peterm. 77, 260 ապ բացասականով եռասան բառից։ Windisch. 19 սանս. raçmi բառի հետ։ Նախորդ ձևով է նաև Հիւբշ. 102 և 148։

ԱՊԱՐԴՈՒՄ տե՛ս Ապրդում։

ԱՊԱՐԵԿ «պղնձէ նուագարան». ունին միայն ՀՀԲ և ՓԲ, երկուսն էլ առանց վկայութեան. Առձեռնում չկայ, ՆՀԲ-ի գաւառական բառերի ցանկում (Հտ. Բ. էջ 1060 գ), ինչպէս և ՓԲ յաւել. գտնում ենք ապարեկ «գօս, չոր, արուգ, ազազուն, ցամաքեալ» բառը, որի հետ նոյն է Բառ. երեմ. էջ 27 «ապարեկ. գօ՛ս». այս բառը այլուստ ծանօթ չէ ինձ, բայց կարող է լինել արեկ բառի բացասականը (տե՛ս արեկ)։ Կարելի է կարծել նաև, որ ՀՀԲ (որից և ՓԲ) այս «գօս» բառը, որ է «չոր», կարդացած կամ հասկացած լինի գոս (որ է ՅՄբուկ) և սրանից յառաջացած լինի «պղնձէ նուագարանը»։

*ԱՊԱՐԹԱՆ. արմատ առանձին անգործածական, որից ունինք ապարթանել «յանդգնիլ, խրոխտանալ». մէկ անգամ Ծղիշ. էջ 12 «ի վեր քան զմարդկային բնութիւնս ընդվզեալ ապարթանէր» (տպ. Մոսկուա ապարասանէր), գրուած նաև ապըրթանել. նոյն արմատից է ապարթանական կամ ապըրթանական «հպարտ, յանդուգն», որ մէկ անգամ ունի Ագաթ. «Ապ(ա)րթանական փառաւոնեան զօրուն».— շինծու ձեւեր են ապրրթական «հակառակօղ» Հին բռ. = Բառ. երեմ. էջ 28 և ապրթիլ, ապրդիլ «դէմ կենալ» ՀՀԲ և ՓԲ։

= Պհլ. apartanīh «հպարտութիւն, ամբարտաւանութիւն», պազենդ. awartanī «հպարտութիւն», պրս. برتن bartan «հպարտ, ամբարտաւան». կազմուած է apar-, awar-, bar «վեր» և tan «մարմին, անձն» բառերից, իբր «մեծամիտ, մեծանձն». հակառակն է պհլ. frōtan = պրս. فروتن firōtan «համեստ, խոնարհ», որ կազմուած է firō «վար» և tan «անձն» բառերից։— Հիւբշ. 105։

Հիւնք. պրս. آورد avard «պատերազմ» բառից։ Ուղիղ մեկնեց Հիւբշ. ZDMG 36 (1882), էջ 128 և Pers. Stud. էջ 138։ Թիրեաքեան, Արրտ. 1903, էջ 725—6 և Արիահայ բռ. 56 պհլ. apartar «աւելի վեր, վերագոյն» բառից։

ԱՊԱՐՀԱՏԻԿ «պարսկական մի գնդի անունը». Ծղիշ. գ. էջ 90 «Իսկ զգունդն զապարհայիկ և զԿատշաց և զՀոնաց և զԳեղաց և զայլս ևս ամենայն զընտիր ընտիր զօրուն մարդիկ ի մի վայր ժողովէր։ Բառս ունի միայն ԱԲ. չեն յիշում ՆՀԲ և ՋԲ՝ անշուշտ յատուկ անուն համարելով։

= Անշուշտ իրանեան փոխառութիւն է,

ինչպէս ցոյց են տալիս նախ իմաստը և երկրորդ պահլաւական —īk *վերջաւորութիւնը։*

Թիրեաքեան, Արիահայ բռ. 56 համարում է ապա–ռահ–իկ, *իբր թէ «արտուղի ճամբաներով թշնամուն հալածող գունդ»։*

Ա.ՊԱՐՈՒՄ *(յգ. ուղ.-րումք, հյց. -րումս. ուրիշ հոլով չունի) կամ* **ապարումն** *(որ են-թադրում է յգ. սեռ.* ապարմանցն *ձևից) «վրանի ծայրերը, ծոպ կամ չուան» ՍԳր. Ոսկ. ես և մ. գ. էջ 66։*

Պատահական նմանութիւն ունի վրաց აბაგრი ապաուրի *կամ* აბეგრი ապեուրի «կապ, սամեթթել»։

***Ա.ՊԱՐՔՏԻԱՍ** *«հիւսիսային քամի» Տաթև. հարց. 205, 206, որից սեռ.* ապարքտիոյ *Արիստ. աշխ. և ածական* ապարքտիական *«հիւսիսային» Արիստ. աշխ. սխալ ձև է* ապարքիտաս *Առաք. կենդ. էջ 70, որ և էջ 71 ունի* ապարքտիաս։ *Ուրիշ տեղ չէ գործածուած։*

=Ծն. ἀπαρκτίας *«հիւսիսային քամի»,* ἀπάρκτιος *«հիւսիսային». երկուսն էլ ծագում են* ἄρκτος *«արջ» բառից, իբր արջային կամ Մեծ Արջի համաստեղութեան կողմից փչած։—Հիւբշ. 341։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։

Ա.ՊԱՐՕՇ *«գլխին կապելու մի զարդ է» (ըստ Հացունի, Պատմ. տարազին, էջ 132 ճոխ ժապաւէն՝ որ ճակատից անցնելով գլխի յետևում կապւում էր). չորս անգամ միայն գործածուած է Ս. Գրքում՝ անհոլով (ՆՀՔ դնում է սեռ.-ի)։*

ՆՀՔ համեմատում է ռուս. убрусъ *«թաշկինակ, անձեռոց, պատկերների մարգարտաշար պսակ»։ Հինք. պրս.* շուպարա *«գդակ»։ Հիւբշ. 105 փոխառեալ է դնում պհլ. *aparafš ձևից, որ հայերէնի վրայից է շինում, որ սակայն հաստատելու համար ուրիշ իրանեան կամ ասորի բառ չկայ։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 56* ապ+պրս. ruš *«լոյս», իբր «լուսարգել, ծածկոյթ»։*

ԳԻՒ.—Խրբ. կայ աբառօշ *բառը, որ գործածւում է միայն* աբառօշ-ին *«բոլորովին ճաղատ, տճկ. քէլ» ասութեան մէջ. արդեօք նոյն բառի՞ց է։*

Ա.ՊԱՒ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածուած է Պտմ. հյ. առ լեհ. «Մեռաւ Գորգի վրաց արքայ, և աշաց և երակաց ապաւ ածէր որդին Դաւթի իշխանին»։ ՆՀՔ մեկնում է «աւելորդ հիւթ հոսեալ, բիժ, աղտ (իբր արմատ բառիս* ապաւան*)», իսկ ՋՔ և սրանից էլ ԱՔ «աչքի ճպռոտութիւն, փորու լուծմունք»։*

Թիրեաքեան, Արիահայ բռ. 57 պրս. آب āb *«ջուր» արմատից։*

***Ա.ՊԱՒԱՆԴԱԿ** *(գործածուած է անհոլով. մէկ անգամ Սկևռ. ես. ունի գրծ.* ապաւանդակիւն. *իսկ ՆՀՔ դնում է ի–ա հլ.) «վրանի չուան» ՍԳր. (5 անգամ). Գէ. ես. Սկևռ. ես. Նար. իե. էջ 58. սրա լուծման մէջ* ապաւանդակ *մեկնւում է «հաստ ճոպան, մալուխ»։*

=Փոխառեալ է իրանեանից. մայր ձևը կորած է, բայց նրա գոյութիւնը հաստատում է սանս. upabandha- *«կապ, չուան»,* band!i *«կապել» արմատից։—Հիւբշ. 105։*

Lagarde, Urgesch. *417* bandh *«կապել» արմատից։ Վերի մեկնութիւնը տուաւ Հիւբշ.* Pers. Stud. *էջ 139։ Հինք.* ἀποβάτρα *բառից, որ չգիտէ* Bailly *(թերևս իմա* ἀποβήθρα *«նաւից դուրս գալու կամուրջ»)։*

Ա.ՊԱԻԱՌ, *ի–ա հլ. «թրիք, քակոր» ՍԳր. Լմբ. Զքր. ժբ. 6. Կանոն. «կեղտ, աղտ» Նար. խր. 506. «աղիքների մաշկը» Նար. առաք. 427. որից* ընդ առիւն և ընդ ապաւառ գալ *«արիւն-քրտինք մտնել» Ոսկ. պօղ. բ. 486 (ուզում է ասել* ընդ առիւն և ընդ ապաժոյժ գալ*). ապաւառել «դուրս անել, մաքրել, լուալ» Պիտառ.* ապաւառութիւն *«կեղտոտութիւն, ապականութիւն», Տիմոթ. կուզ, էջ 24 և հակառակը՝ «մաքրել, լուալ, քաւութիւն մեղաց» Տիմոթ. կուզ, էջ 24, 308, Կնիք հաւ. էջ 198.* բացապաւառութիւն *«փորը դուրս ելլելը» ԱՔ, «մաքրել, սրբել» Տիմոթ. կուզ, էջ 24, Կնիք հաւ. 189.* անապաւառութիւն *«քաւութիւն մեղաց» Կնիք հաւ. 119։*

Հներից Համամ. քեր. 267 համարում է կազմուած ապ *նախդիրով։ Տէրվ.* Alt-arm. *14 սանս.* apaskara *«թրիք, քա-*

կոր» հոմանիշի հետ։ Lagarde, Urgasch. *243 հյ. վարել բայից, որ ինքն իսկ մերժում է* Arm. St. *§ 160։ Թիրեաքեան ՀԱ 1914, 56 պրս.* ab *«ջուր» և* bār-idan *«տեղալ, հոսիլ» բառերից. իսկ Արիահայ բո. 54 աղաւաղուած ապարան բառից։*

ԱՊԱԻԱՍԻԿ *տե՛ս Պայուսակ։*

ԱՊԱԻԱՐՏԱԿ, ի–ա *հլ. «արգանդ». մէկ պնդամ գտնում եմ գործածուած Տիմոթ. կուզ, էջ 160 «Քանզի որպէս ի կուսական ապաւարտակացն յառաջ եկեալ մարդ ոչինչ նհատ Աստուած ի ձեռն ճահագործութեանն ճանաչիւր, այսպէս և մարմնով մեռեալ յարոյց զսա...»։ Տեղից և գործածութիւնից յայտնի է, որ ապաւարտակ «արգանդ» նշանակութիւնն ունի. յոգնակի գործածութիւնը համապատասխան է ևամք հոմանիշին, որ նոյնպէս անեզական է. հմմտ. Փիլ. այլաբ. էջ 108, Տիմոթ. կուզ. էջ 292 ևն։ Նոյն բառը եզակիով ունի Օրբ. հկճռ. գ. էջ 32 և զ. էջ 79 «Նախ մարմինն գոյանալ յապաւարտակի և յետ տեսականալոյ անդամոցն ի կերպս ձևոցն, ապա առնու շունչ և տպաւորի ի նըմա կենդանութիւնն» (մի քիչ ցած՝ պարտ է գոյանալ մարմնոյն յարգանդի մօրն). «Սերմ առն և արիւն կնոջ ի միասին խառնեալ յապաւարտակի՝ լինի մարմին և գոյանայ մանուկն»։*

Բառ. երեմ. էջ 27 ունի ապրտաւակ «որովայն կամ անմաքուր», իսկ էջ 24 աճապաւատակ «մաքուր», որոնք միևնոյն բառն են։ ՀՀԲ, ՋԲ և ԱԲ գրում են ապաւարտակ «անմաքուր, ագռոռ», առնելով հին քերականներից, որոնք այս նըշանակութիւնը յարմարեցրած են տեղին՝ ենթադրելով ապաւառ «թրիք, քակոր» բառից։ ՆՀԲ չի յիշում։ Վերի մեկնութիւնը տուաւ Աճառ. Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 66։ Թիրեաքեան, Արիահայ բո. 57 առանց ուշադրութիւն դարձնելու՝ դեռ ապաւառ բառից է հանում։

ԱՊԱԻԻԼ *տե՛ս Յապաւել։*

ԱՊԱԻԻՆ *(սեռ. ի. բաո ՆՀԲ ի–ա հլ.) «ապաստան, օգնական. 2. պատսպարան, ապաստանելու տեղ» ՍԳր. Խոր. Լմբ. սղ. Նար. որից* ապաւինիլ *ՍԳր.* ապաւինութիւն *ՍԳր.* ապաւինել *(այսինքն* ապաւինեցուցանել*) Եփր. ք. Քեա.* աճապաւէն *«առանց ապաւէնի» Արշ. Նար.։*

Մորթման ZDMG *26, 496 նոյն ընդ ապաստան։ Հիւնք. յն.* ἀποβένω *«ժամանել ի նաւահանգիստ»։*

ԳԻՒ.—Սեբ. աբավէն *«օրապահիկ, օրուայ հացը», Մկ.* ճուս–ապավէն *«մէկի յոյսն ու ապաւէնը». կայ և Վն. անէծքի մէջ* ապաւամեռ *«յոյսն ու ապաւէնը մեռած»։*

ԱՊԱՔ. *արմատ առանձին անգործածական. գտնում է միայն* ապաք ցապաքէն *և* ապաքէն ցապագ *«անշուշտ, անտարակոյս» ասացուածների մէջ. առաջինը յիշում է միայն Հին բո. «միանգամայն այսպէս» նշանակութեամբ. իսկ երկրորդը մի քանի տեղ գործածուած է մեր մատենագրութեան մէջ. ինչ. Կոչ. 5. Ոսկ. յհ. ա. 6. Ծագր. գ։ Արմատի –էն մասնիկով զարգացած ձևն է* ապաքէն *«արդարև, անշուշտ». (հմմտ. արդ–արդէն, անդ–անդէն, աստ–աստէն, այսր–այսրէն ևն) ՍԳր. Կոչ. Ագաթ. Եզն. որից* ո՞չ ապաքէն *«չէ՞ որ» ՍԳր.* ապաքինել *կամ* ապաքինիլ *«լաւանալ, բժշկուիլ, առողջանալ» Ճ. դ. 52. Ոսկ. ես.* ապաքինացուցանել *Սերբ.* ապաքինիչ *Նար.* ապաքինութիւն *Ճառընտ.։—Ապաքէն և ապաքինիլ բառերի նշանակութեան զարգացման համար հմմտ.* صحيح *ṣaḥīḥ «ճիշտ, ստոյգ» և* صحّت *ṣiḥḥat «առողջութիւն» արաբերէն ձևերը։*

Հներից Համամ. քեր. 267 հանում է ապ նախդիրից։ ՆՀԲ ապաքինել *բայը կցում է հյ.* աւաքել *և յն.* ἀκέομαι *«բուժել» բառերի հետ։* Lagarde, Urgesch. *37 նոյն բայը կցում է սանս.* sva, *զնդ.* xva *«իւր» բառերին, իբր թէ «նորէն ինքը իրեն գալ, բժշկուիլ»։ Տէրվ.* Altarm. *37 հյ. կեանք, սանս.* ǰīv *«ապրիլ» արմատից։ Հիւնք յն.* εὐαγεῖν *և հյ.* աւաքել *բայերի հետ։ Այս բոլորը վերաբերում են* ապաքինել *բային. քննիչները նկատի չեն առած սակայն, որ մեր մէջ բայի արմատն է* ապաք։ Meillet MSL

10, 272 ապաֆէն բառը մեկնում է իբր կազմուած ապա և -ին մասնիկներով (հմմտ. ինքնին). արմատն է fe, որի հետ համեմատւում են սանս. և զնդ. ča. յն. -τε, լտ. -que, հնխ. k^we «և» ձևից։

*ԱՊԵԼԻՈՆ «արևելեան քամի» (գրուած նաև ապելիոդ, ապելիօդ, ապէլիօդ) Արիստ. աշխ. Առաք. կենդ. էջ 70. Տաթև. հարց. էջ 205. ուրիշ տեղ չէ գործածուած։

=Յն. ἀπηλιώτης «արևելեան քամի», որ կազմուած է ἀπό «ի» և ἥλιος «արեգակ» բառերից. ըստ այսմ բառի ուղղագոյն տառադարձութիւնն է ապելիոն։—Հիւբշ. 341։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։

ԱՊԵԿ ԹՈՒՆ տե՛ս Եկ։

*ԱՊԵՆԻԱԶ (գրուած նաև ապէնիազ) «անկարօտ, մարդու կարօտութիւն չունեցող» Ոսկ. յհ. ա. 9. Ագաթ. Ճառընտ. Նար. 148. «անսպառ, անվերջանալի» Նար. առաք. 434. երզն. քեր.։

=Պհլ. apēniyāz «անկարօտ», պազենդ. awēnyāz, պրս. بینیاز bē-niyāz «աննիւթ, անկարօտ», bē-niyāzī «անկարօտութիւն». բոլորն էլ կազմուած են niyāz «պակասութիւն, պակաս, կարօտ» բառից՝ apē, awē, bē=ապերբացասականով, որի հայերէն ձևից կազմուած է մեր մէջ հոմանիշ աննիազ բառը։—Հիւբշ. 105։

ՋՒ ոչ նուազեալ։ Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ, որից Lagarde, Arm. St. § 162։

ԱՊԵՐԱԿՍ «գովս». ունի միայն Բառ. երեմ. էջ 28։

ԱՊԵՐԱՆԻՍ «աներես», ունի միայն Բառ. երեմ. էջ 28։

ԱՊԻԴԱՏ տե՛ս Դատ։

ԱՊԻԶԱԿ «կրծքի վրայ կախելու իշխանական զարդ» (նկարագրութիւնը տե՛ս Հացունի, Պատմ. տարազին, էջ 100) Բուզ. ե. 38. սրանից դուրս ուրիշ տեղ չէ գործածուած։

Թիրեաքեան, Արիահայ բռ. 58 պրս. ابزار āvēza կամ ابزاو āvēža «գինդ, օղ» (որ սակայն չի յարմարիլ մեր բառի հետ՝ ջ v ձայնի պատճառաւ)։

*ԱՊԻԶԱՐ «նզովք, անէծք կամ նզովեալ, անիծեալ». «Եւ ըստ տաճիկ օրինին էր անհուն երդմամբք հաստատեալ զգիրն՝ նալաթք և ապիզարք բազում կարգեալ ի նմա» Օրբել. էջ 256. «Յիւր Մահմետէն ապիզար և յիւր օրինացն հազար հազար նալաթ նորա վերայ եղիցի» Օրբել. էջ 159. նոյնպէս և էջ 160, 170, 197. սխալմամբ գրուած ապիազ. էջ 266 «ՅԱստուծոյ և յիւր փեղամբարէն ապիազ լիցի» (որ Շահնազարեան հրատարակութեան մէջ, հտ. Բ. 112, ուղիղ է)։ Հնագոյն վկայութիւնն ունի Իրեն. ցոյցք, էջ 8 «Անգործք և անշահք և ապիզարք» (գերմ. բրգմ. segenlos, որ է առանց օրհնութեան)։ Բառիս երկրորդ իմաստն է «նզովվելով թողուցած (աւտ կրօնը)» և այս իմաստով ունինք յետնաբար բեզար նոր վկ. էջ 250, 253 (ժե դար). «Հրաժարեալ և բեզար եմք յօրինաց ձերոց». և հին ձևից ածանցմամբ՝ ապիզրիլ «նզովվելով թողուլ (աւտ կրօնք մը)» ԱԲ։ Վերջապէս նշանակում է բառս «հրաժարած, ձեռք բաշած» (դատական բառ, որ թերևս և նզովքով էր կատարւում). Համմտ. «Վճարեաց զամենայն դինն ողջամբ. և ես առեալ եմ զգանձս... և ապիզար եմ ես և իմ զաւակք և այլ ազգայինք յայդ ջրոյդ յայսմեսէ մինչև յաւիտեանս ժամանակաց» Օրբել. էջ 187 (ուր ապիզար նշանակում է «իր իրաւունքից հրաժարած, ծախելով՝ սեփականութեան իրաւունքը ուրիշին թողուցած»). նոյնը բայական ապիզրիլ «կնոջիցը հրաժարիլ, ապահարզան տալ» Սմբ. դտ. 124։

=Իրանեան փոխառութիւն, որի մայր ձևը պահուած չէ. կայ միայն պրս. بیزار bēzār «ձանձրացկոտ, տաղտկացած», بیزاری bēzārī «ձանձրոյթ, անհանգստութիւն, չարչարանք», որից վրաց· აბეზარი abezari «ձանձրալի», აბეზრობა abezrobа, აბეზარობა abezarobа «ձանձրոյթ, ցաւ», արևելեան գուռ. pbզարիլ «ձանձրանալ», թրք. بیزارلمق bizav olmaq «ձանձրանալ, խուսափիլ, հեռանալ, խորշիլ, օտարանալ» (Будаговъ 1, 302), որ ցոյց է տալիս դեռ մեր բառի երրորդ նշանակութիւնը։—Աճ.

ՋՒ համարում է «բառ այլազգական»։ Աճառ. Նոր վկ. էջ 782 թրք. بزمك bezmek «ձանձրանալ» բայից (որ սակայն

յայտնի չէ թէ կապ ունի՞ յիշեալ պրս. բառերի հետ)։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 58 պրս. bīzār «ձանձրոյթ, ղըղուանք» բառից։

ԱՊԻԿԱՐ *տե՛ս Կար։*

ԱՊԻԿԻ *տե՛ս Ապակի։*

Lagarde, Gesam. Abhd. *6. 21 աստր.* ابجر abgar, *որ է «կաղ»։*

ԱՊԻՀԱՐԿԵԼ *տե՛ս Հարկ։*

***ԱՊԻՄԱԿ.** *մէկ անգամ գործածուած է Եզնիկի մէջ. «Զորդիս կամ զծառայս յապիմակս և ստահակս յօժարեցուցանիցէ հանել» (էջ 269)։ ՆՀԲ և ՋՔ մեկնում են բառս «անվերակացու, անգլուխ, ինքնագլուխ, անըղդամ, խեռ», ԱՔ «անխելք, անզգամ». Վարդանեան ՀԱ 1913, 560=Բառաքնն. դիտ. Բ. 20 ուղղում է* ապիկամ. *«անկամ, ծոյլ, թոյլ», որով բառս կդառնայ*

=փոխառեալ պհլ. apē-kām, *պրս.* بیکام bēkām *«անկամ» ձևից (կազմուած* kām *«կամք» բառից՝* apē=bē *բացասականով)։— Ա՛ճ.*

ՆՀԲ «ի ձայնէս մակ, այսինքն ի վերայ, կամ որպէս անիմայ»։ Հիւնք. ապ բառասականով իմանալ բայից. (այս մեկնութիւնը սխալ է, որովհետև իմանալ բայը ածանցների վերջում դառնում է իմայ, իմաց, իմաստ, բայց ո՛չ բնաւ իմակ)։

***ԱՊԻՐԱՏ** *(սեռ. ի, բստ ՆՀԲ ի կամ ի-ա հլ.) «անօրէն, անարդար, անիրաւ» ՍԳր. Ոսկ. մ. ա. 9 և յհ. ա. 37, 44. Եզն. «դուրս վռնտուած» Ոսկ. յհ. ա. 6 (մէկ անգամ). որից* ապիրատութիւն *ՍԳր. կոչ.* ապիրատիլ, ապիրատել, ապիրատանալ, ապիրատաբար *Պղատ. տիմ. և օրին.։*

*=*Պհլ. apēdāt *«անիրաւ, անարդար» > պրս.* بیداد bēdād *նոյն նշ., որից պհլ.* apādātīh, *պազենդ.* awēdādī, *պրս.* بیدادی bēdādī *«անարդարութիւն». հայերէնը ծագում է պհլ. *apēδāt ձևից, որ ցոյց է տալիս արդէն նորագիւտ սոգդ.* apδāte *«անարդարապէս»։ Բոլորն էլ ծագում են* dāt, dād *«դատ, արդարութիւն» բառից,* apē>awē> bē-=ապ- *բացասականով։—Հիւբշ. 105։*

ՆՀԲ «հայ. իր, իրաւունք և լծ. ընդ այլ և այլ ձայնս այլոց ազգաց»։ Հիւնք. յն. ἀπείρατος *«անփորձ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 58 պհլ.* avirād *և պրս.* bī-rād *«անագնիւ» բառից։*

ԱՊԼՄՈԴ *«այգիներին վնասակար աւելորդ խոտ». նորագիւտ բառ, որ մէկ նգամ գտնում եմ գործածուած Վստկ. 59 «Զապլմոդն և զամէն ազգ քաղ՝ սրբէ ցանն ի ծառոցդ»։*

ԱՊԿԱՒ *«բոյս ինչ. տե՛ս նիշաստան, արաբ. լուպապ ըլ շահմ». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. 18։*

ԱՊՂԱՍ *տե՛ս Ապաղաս։*

ԱՊՂԵՊ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածուած է հետևեալ հատուածում. «Ցորժամ ցաւք ի վերայ ինչ հասանիցեն, առ վրտանգին ապղեպս բերեմք (այլ ձ. ապղեպ ըմպեմք), եթէ հնար ինչ էր, ընշիւք փարատել զայս ի մէնջ» Ոսկ. պօղ. Ա. էջ 231։—ՆՀԲ դնում է նաև ապշեպ ձևով, որ սակայն չկայ ձեռագիրներում և մեկնում է «թերևս իբր ապշոպ, շփոթ, ամբոխումն, յոյզք խռովութեան, վարանք». ՋՔ ընդունելով միայն ապղեպս բերել ձևը՝ մեկնում է «մորմոքիլ կամ հառաչել», որին հետևելով ԱՔ գրում է «ապղեպս բերել. ողբալ, սիրտը խշխշալ»։ Յոյն բնագիրը ոչինչ չի պարզում, որովհետև ընդհանուր իմաստը միայն ունի։*

ԱՊՃԻՒ. *անստոյգ բառ. մէկ անգամ գործածուած է Նար. տաղ. 471 «Տաւիղ ապրճիւ երդ գալիլեացուարճից»։—ՆՀԲ (հտ. Բ, էջ 1045 ա) մեկնում է «մակդիր ազգի իրիք քնարի», ԱՔ «տեսակ մը քնար կամ երգ»։*

***ԱՊՇՈՊ** *«շփոթութիւն, խռովութիւն, կռիվ» Խոր. բ. 48 (գրուած նաև ապշեպ, աշոպ). որից* ապշոպել *«յափշտակել, խլել» Պիտ. ապշոպիլ «խռովիլ, շփոթիլ» Ոսկ. ի սաղմ. լը, էջ 674։*

=Եթէ ուղիղ ընթերցուածը աշոպ է, ինչպէս ունին Խորենացու ձեռագիրներից երկուսը, փոխառեալ է իրանեան āšōp ձևից. համմտ. պհլ. āšōp *«խառնակութիւն, խռովութիւն» > պրս.* آشوب āšōb *«կագ, կռիւ, խառնումն, խռումն»,* آشفتن āšuftan *(ներկ.* āšōbam*) «ամբոխիլ, ցնորիլ մտօք»,* آشفته āšufta

«խելացնոր», որոնցից փոխառեալ է նաև ասոր. ܐܫܒܓܪ āšūbgar «խազմարար, կռուարար»։ Իրանեան բառերը կազմուած են ā մասնիկով šōp արմատից, որի հետ նոյն է սանս. kšōbhatē «յուզել», kšōbha- «խառնակութիւն, յուզում» (ջրի համար ասուած) և փոխաբերաբար նաև «շփոթութիւն, խռովութիւն, երկիւղ, անհանգստութիւն», kšōbhaṇa «խառնակութիւն, վրդովում», kšōbhayāmi «վրդովել, խառնակել, վեր ի վայր յուզել ևն», kšubh «վէտվէտիլ, յուզուիլ, խառնակուիլ, դողալ ևն»։—Իսկ եթէ, ինչպէս ասւելի հաւանական է, ուղղագոյն ձևը ապշրոպ է (ինչ որ ցոյց են տալիս զանազան ածանցները), փոխառեալ է պհլ. *ap-šōp ձևից, որ կազմուած է նոյն šōp արմատից՝ ap, apa մասնիկով։—Հիւբշ. 106։

Նշ՛ի բաց շոպել։ Lagarde, Arm. St. § 165 աշոպ համեմատում է պրս. āšōb բառի հետ։ Նոյնպէս և Հիւբշ. Pers. Stud. էջ 7։

*ԱՊՈԿՐԻՍԻԱՐ «թագավորական եկեղեցու սպասաւոր». ունի միայն Ա՛ր. մէկ անգամ գործածուած է Մխ. դտ. հրտր. Բաստամեան, էջ 268։

=Յն. ἀποκρισιάριος, լտ. apocrisiarius, որից և ֆրանս. apocrisiare. նշանակում է «պատգամաւոր, մէկի գործերը վարելու համար նշանակուած փոխանորդ, թագաւորի ներկայացուցիչը եկեղեցական գործերում, Բիւզանդեանց ժամանակ կայսեր պատասխանը հաղորդող պաշտօնեայ, Պապի դեսպանը Պօլսում ևն». ծագում է յն. ἀπόκρισις «ընտրութիւն, պատասխան» բառից։

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ), յետոյ Karst, Դատաստան. II, 80։

ԱՊՈՂՓԱՅԵԼ «տեղեկանալ, հասու լինել». ունի միայն ՓՒ, որին իբրև աղբիւր ծառայել է անշուշտ. Բառ. երեմ. էջ 28 ապողփայլեալ «տեղեկացեալ կամ իմացեալ»։ Անստոյգ բառ։

*ԱՊՈՄԱՄ «մամի մամը, տատի տատը» Մխ. դտ. ուրիշ տեղ չէ գործածուած։

=Յն. ἀπομάμμη նոյն նշ.—Հիւբշ. 341։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ, յաւել. հտ. Բ, էջ 1045 ա։

*ԱՊՈՊԱՊ «պապի պապը» Մխ. դտ. Տաթև. հարց. 611 (գրուած է ապպապ)։

=Յն. ἀποπαππος «պապի պապը»։—Հիւբշ. էջ 341։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ, յաւել. հտ. Բ. էջ 1045 ա։

ԱՊՈՌՆԱ «հոսում կամ վիժում ունեցող». նորագիւտ բառ. որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կանոն. էջ 119 «Վասն որ ապառնա է կամ ձգէ կամ ածէ՝ ինն ամ ապաշխարեսցէ»։

=Համմտ. յն ἀπορροια «հոսում», ἀπόῤῥους «հոսում ունեցող» և կամ ἀπουρέω «միզած ժամանակ դուրս ձգել». բայց արդէօք աւելի մերձաւոր ասորական մի ձև չկա՞յ—Աճ.

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր, հտ. Բ. էջ 156։

ԱՊՈՍԻԼ տե՛ս Ասել։

*ԱՊՈՍՏՈԼՈՍ «առաքեալ կամ պատգամաւոր». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 28 (գրուած է ապօստուղուս)։

=Յն. ἀπόστολος «պատգամաւոր, պատուիրակ, առաքեալ», ծագած ἀπο στέλλω «ուղարկել» բայից. նոյնից փոխառեալ է նաև լտ. apostolus «առաքեալ» ևն։—Աճ.

*ԱՊՈՐԻՒՄԱՅ «հնդուկների յատուկ մի չափ է». իբրև օտար բառ մի անգամ յիշում է Շիր. հրտր. Պատ. էջ 31 «Չափ 11. քսեստ կոչի ապորիւմայ ըստ Թէոբայեցւոց լեզուի»։

=Յն. ἀπόῤῥυμα նոյն նշ., որից փոխառեալ է նաև ասոր. ܐܦܘܪܘܡܐ afōrūma «15 քսեստ առնող մի չափ» (Brockelm. էջ 24 ա)։—Հիւբշ. 341։

Ուղիղ մեկնեց նաև Աւգերեան, Բացատրբ. չփ. և կշռ. էջ 45։

ԱՊՈՒՉԱՅ տե՛ս Ապուչայ։

ԱՊՈՒՉԱՆ «լեռնային մի խոտ է. onagra, epilobium angustifolinm կամ hirsutum» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 142, իբրև պրս. բառ. տե՛ս և աճղարա հումանիշը։

Գիմ.—Ֆռ. ապիզուն։

ԱՊՈՒՉԱՆՔ «անդունդ, վիհ». ունի միայն ԱՔ։

Թիրեաքեան, Արիահայ բռ. 62 պրս. āb-zan «լոգարան, աւազան» *բառից։*

***ԱՓՈՒՉՆԱՅ** *(սեռ. -ի. ըստ ՆՀԲ ի հլ.) «կապիկ» Ոսկիփ. Մխ. աս. հրտր. Երուս. էջ 378 (տպուած է արուզնայ. մէկ ձեռ. ունի* ապուզնա, *որից հետևում է, որ առաջինն էլ պէտք է ուղղել ըստ հին տառադարձութեան* աբուզնայ*). Յայտմ. սեպ. 23։ Յետին ռամիկ բառ է։*

= *Պրս.* ابوزنه abūzna, *որ և* بوزينه būzina, پوزينه pūzīna *«կապիկ», արաբ.* ابوزّنى abūzinna *«կապիկ». պարսկերէնից փոխառեալ է նաև ռուս.* обезьяна *«կապիկ»։— Հիւբշ. 262։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, որից յետոյ Lagarde, Urgesch. *757 ևն։*

ԱՓՈՒԼ *«թողնել». յետին հայերէն բառ. հմմտ. Տաղ (Հրտր. Զօպանեան, Հայ էջեր. էջ 5). Խաչ կու հանէ՝ ապուլ կուտայ (կարձակէ)։ Սովորական է արդի մի քանի գաւառականների մէջ. ինչպէս՝ ապուլ տալ Ննխ. «թողնել», ապոլ աճել, ապոլել Համշ. Տր. «թողնել, ձգել», ապլել Մշ. «բարձր տեղից կախուած մի բան քիչ քիչ ցած իջեցնել, դուրս շպրտել» ևն։*

***ԱՓՈՒԽՍ** *(ըստ ՆՀԲ ո հլ. թէև առանց վկայութեան) «աղած ու բաց օդում չորացրած միս. տճկ. բաստրմա» Թուց ժա. 32. Մագ. ժը. որից* ապըխտել *«ապուխտ շինել, միսը չորացնել» Թուց ժա. 32. Բարուբ. ղ. 27. ապխտեալ Եւս. քր. ա. 130. գրուած է ապախտ Մագ. Թղ. էջ 231 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր, հտ. Բ), ապախտել Թղթ. բարբուքայ։*

= *Պհլ.* *apuxt *«անեփ, չեփած» բառից, որ կազմուած է* a *բացասականով* puxt *«եփած» բառից. հմմտ. պհլ. hu-puxt «լաւ եփուած, քաջեփ», պրս.* پخته puxta *«եփուած»,* پختن puxtan *«եփել» բայից։ — Հիւբշ. 166։*

Ուղիղ մեկնութիւնը ունի նախ Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 206։ ԳԴ մեկնում է իբր փոխառութիւն պրս. آويخته āvīxta *«կախուած» բառից։* Lagarde, Urgesch. *345 զնդ.* aoxta *«ցուրտ, սառն», պրս.* yax *«սառոյց», օսս.* ix *«կարկուտ»,* yäxan *«սառցային» բառերի հետ։ Այս մեկնութիւնը մերժում է ինքը* Arm. St. *§ 167։ Եւրոպացիներից ուղիղ մեկնեց նախ Հիւբշ.* ZDMG *35 (1881), 177։ Տէրվ. Նախալ. 45 ուղիղ է. նոյնպէս և* Horn, Grdr. *§ 285։ Հինք. պրս. ավիխբէն «կախել» բայից։*

ԳԻՒ.— Ագլ. ա՛պուխտ, Ննխ. Սեբ. ապուխտ՝ նոյն նշանակութեամբ. իսկ Ղրբ. Տփ. ա՛պուխտ, Երև. ա՛բուխտ գործածւում են միայն իբրև պատկեր չոր բանի. ինչ. Չորացել ապուխտ են դառել. Չոր -ապուխտ դառած հաց։

ՓՈՒՒ.— Վրաց. აპოხტი *ապոխտի կամ* ჰაპოხტი *իապոխտի «չորացրած միս կամ ձուկ»,* აპოხტება *ապոխտեբա «միսը չորացնել՝ ապխտել». Նոր վրացերէն ձևն է* აპუხტი *ապուխտի, որ ունի Դրիշաշվիլի, Ձմեռի քալաքիս բոհեմա, էջ 235 (հաղորդից Գ. Ասատուր)։ Լհհ.* abucht *«ապուխտ,* gestampftes Fleisch» *(տե՛ս* Booch-A'rkossy-Koczyński, Polnisch-Deutsch. Wörterbuch, Leipzig *1891, էջ 1). Լհհերէն բառը փոխառեալ է ուշ ժամանակ Լհհահայ բարբառից և այս պատճառով հայերէն պ-ի դէմ ունի* b՝ *Լհհահայ արտասանութեան համեմատ (տե՛ս* Patrubány SA, *հտ. 1, էջ 89)։*

***ԱՓՈՒԿԱԼԻՆ** *կամ* **ԱՓՈՒԿԱԼԱՄԻՆ, ՊՈՒԿԱԼԱՄԻՆ** *«մի տեսակ ընտիր կերպաս». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Սմբ. դատ. 88 և Մխ. դտ. (անդ)։*

= *Արաբ.* ابوقلمون abū qalamūn, *աւելի սովորական է պրս.* بوقلمون būqalamūn *«ծագկանկար դիպակ հռոմայական ճարտարաց, որ իբէ գործեալ դեղին և սպիտակ ոսկեթելիւ և կամ ատաչնանկեալ գունագոյն մետաքսիւք». յատաջացած է յն.* βυσσαλάμινον *ձևից*

Ուղիղ մեկնեց Karst, Դատաստան. *հտ. 1, էջ 88 և հտ. 2, էջ 77։*

***ԱՓՈՒՂԱՅ,** *ի հլ. «մի տեսակ տիկ՝ որի մէջ ատրիները ձէթ լցնելով Հայաստան էին բերում ծախելու». մէկ անգամ ունի Կանոն. էջ 134 «թէ անխիղճ պա՞րտ է համարել զձէթդ, որ բերեն յԱսորոց ապուղայիւք մեռելոտիւք և յանասրբ անասնոց թէ ոչ» (այլ ձև. ապողացիւք, ապողանիւք, ապուղայիւք)։*

= *Ասոր.* ܐܦܘܠܐ apāulā *«ampulla» (Br-*

ock. Lex. syr. էջ 22). այս լատին բառը բացատրում է «ուռած փորով փոքր սրուակ՝ որի մէջ հները ձէթ էին լցնում լոգանքի ժամանակ գործածելու համար» (Quicherat, Dict. Latin-fr. 1913, էջ 75)։—Աճ.

Նշ֊ի և Ջ֊ի դնում են բառս ապուզայ ձևով և նշանակում են «կապիկի մորթով շինուած տիկ», անշուշտ կապելով պրս. abūzna «կապիկ» բառի հետ։ Ա֊ բոլորովին ջնջած է բառս, երևի համարելով նոյն ընդ ապուզնայ «կապիկ»։ Աճառ. Հայ. նոր բառեր, հտ. Բ. էջ 157 համարում է ասորական փոխառութիւն և ուղիղ ձևը դնում է ապուղայ։ Այս եզրակացութիւնը բոլորովին հաստատւում է այժմ ասորի բառի համեմատութեամբ և տակի գտ. ձևերով։

Գիւմ.—Մկ. ապուղա «մխալափամփուշտ, փուչիկ». նոյնը Զամարլուի գիւղերում ապուղա ձևով.—երախաները խաղում են այս փուչիկով, տիկի պէս վիզում ուղնում, շիշի ձև տալիս։

ԱՊՈՒՆԻ «ի ծածուկ». ունի միայն Բառ. երևմ. էջ 28։

ԱՊՈՒՇ տե՛ս Ուշ։

Նշ֊ ուղիղ է մեկնում, բայց միաժամանակ լծորդ է դնում նաև հյ. յափշտակութիւն (տե՛ս ափշութիւն բառի տակ)։ Զուբինով մեր բառից փոխառեալ է դնում վրաց. աբուշի, աբուղալակի «անկոչ հիւր, հացկատակ», որ սակայն ո՛չ ձևով է նման մեր բառին և ոչ էլ նշանակութեամբ։ Հ. Ք. 3, Հա. 1901, 240 հանում է գտ. պուշ «կարճատես» բառից, ինչպէս և պշնուկ։

ԱՊՈՒՒ (ըստ Նշ֊ի հլ., թէև առանց վրկայութեան) «աւար, կողոպուտ» Ես. ը. կ. Յուդթ. ժե. 7. Եզիշ. Ղևոնդ. (գրուած է ապուր Լաստ. դ). որից ապռել «աւարել, կողոպտել, յափշտակել» Եփր. Բուոց՝ էջ 254. Գէ. հս. Ճառընտ.։ Բառիս գործածութեան համար մի գեղեցիկ օրինակ ունի Մանդ. էջ 68, որ վաշխառուների մասին խօսելով՝ ասում է. «Ժողովել և ապռել և գանձել զայլոց ինչս» (ապռել բառի դէմ մի ձեռ. ունի պահել)։—Ապուռ բառը նշանակում է նաև «առաւտեղեակ գազան՝ որ ճանապարհորդներին է յափշտակում» (ունի միայն Ա֊). Համմտ. Ոսկ. պօղ. Ա. էջ 602—4. Սկիւղան որ Թարգմանի ապուռք, որպէս և Հայք ծուլացուս իմն և վիշապս մարդակերպս ...Համբաւն. Ոչ ապուռքն, ոչ վիշապաւիժքն. Զձիացլուցն և զապուռ գազանացն. Զիցէ՞ այն գործ ապուռքն գազանաց։ Կազմուած է յիշեալ յն. σκῦλον, յգ. σκῦλα «աւար» բառից Թարգմանաբար (ըստ Տաշեան, Ուս. դաս. հյ. էջ 553)։ Համմտ. վերջապէս անդ՝ «Ո՞ր ապուռ, ո՞ր քիմաս...» ուր երկու առասպելեալ գազանները միասին են յիշուած։

=Պհլ. apurtan (միշտ գաղափարագրով գրուած բառ իբրև yẖnṣlwn) «վերցնել, աւարել, կողոպտել», apar «թալան, աւար, կողոպուտ», պազենդ. apar, apardan նոյն նշ. կազմուած է apa- մասնիկով par «անցնիլ» արմատից. համմտ. գնդ. nipārayeiti «մի բան իրեն սեփականացնել», առնս. apa-par- «մի բան վերցնելով առնել տանիլ»։ Իրանեանից փոխառեալ են համարում արևել. թրք. اپارمق aparmaq «առնել տանիլ» (ընկայ տառկերէնում)։

Հիւնք. հանում է աւար հոմանիշից Patrubány, Հա. 1903, 221 նոյն ընդ ապուր. ապրիլ։ Փորթուգալ փաշա, Եղիշէ 285 պազենդ. āpurtan «յափշտակել»։ Գաբրիէլեան Հա. 1910, 235 ափ արմատից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 63 պհլ. āvar «կողոպտել» բառից։ Ուղիղ մեկնեց նախ Փորթուգալ փաշա, Եղիշէ էջ 285։ վերի ձևով Niberg, Hilfsbuch 2, 14 և 20։

Գիւմ.—Վն. ապուռ «խիստ էժան գնով առնուած բան. տճկ. քէլէփիր»։

ԱՊՈՒՒ «կարթ» տե՛ս Ապուռ։

[ԱՊՈՒՒԻՇ. մեկ անգամ գործածուած է ՈՀէ=1228 թուի մի արձանագրութեան մէջ. «Թողաք զգեղիս Շիրակա զապուռիշի և զչրաահին բաժն յորգեցէ յորդիք» (Վիմ. տար. 71)։ Արձանագրութեան մէջ ապուռիշի ձևր պետք է կարդալ ապուռ իշի «էշի հարկ», որով ջնջում է ապուռիշ անգոյ բառը և ա-

պուր «հարկ» բառի համար ստացում է մի նոր վկայութիւն՝ գրուած ապուռ ձևով։

Բառիս վրայ առաջին անգամ խօսել է էմին, Арм. надписи *1881, 51* համարել է յատուկ անուն։ Աբիշան, Շիրակ էջ *91* համարում է «ջրի հարկ», իբր պրս. āb «ջուր» բառից։ Karst, Դատաստ. *2, 234* մեկնում է «ջրանցք»։ Բառիս վրայ առանձնապէս խօսում և վերի ուղիղ մեկնութիւնն է տալիս Մանանդեան, Տեղեկ. ինստիտ. *1, 21* և *2, 33*։ Մառ. Сборн. мат. Кавк. *17, 194*, որ և կցում է պրս. آبریز ābrīz «դոյլ, ջրաման, արտաքնոց» բառին, սակայն ո՛չ ձևով է նրման և ո՛չ նշանակութեամբ]։

ԱՊՈՒՍ «անտեղի, սուտ, անհիմն». անստոյգ բառ, որ յիշում է միայն ՓԲ, անշուշտ առնելով Երեմիայի բառգրքից, ուր էջ *28* գտնում ենք ապուսա «ուսա» (sic)։

ԱՊՈՒՐ. արմատ առանձին անգործածական. երևան է գալիս բարդութեանց ծայրին. ինչպէս՝ աւծնապուր «անձն ազատած» Ոսկ. ես. եզն. մազապուր «հագիւ ազատուած» ՍԳր. ես. քր. մարդապուր Դ. թագ. է. *7*. Ոսկ. մ. ա. *8*. դիւրապուր Ոսկ. ա. տիմ. բայական ձևով ապրիլ կամ ապրել «ազատիլ» ՍԳր. Ոսկ. Ագաթ. որից ապրեցուցանել ՍԳր. ապրուսա «փրկութիւն» Ագաթ. ապրանք «ազատութիւն» Փիլ. Պիտ.։ Բուն արմատն է պուր, որից ծ աճականով՝ պուրծ և ա յաւելուածով՝ ապուր. տե՛ս պուրծ։—Ապրիլ «ազատիլ» բայը յետոյ ստացել է «կեալ, ապրիլ» նշանակութիւնը. արդեն հին լեզուի մէջ էլ կան պարագաներ, ուր «ազատելու» հետ նաև «կեալ» նշանակութիւնը անբաժան է. ինչ. Ոչ էր ապրանաց. Բ. թագ. ա. *10* (ազատուելու չէր. մեռնելու էր, չէր կարող ապրիլ. այս վերջին իմաստով առած է անշուշտ Անկ. գիրք հին կտակ. Ա. էջ *121*). «Զարշարեաց զհարսն մեր առնել բնկեցիկ զմանկունս նոցա, զի մի՛ ապրեսցին» Գծ. է. *19*. «Տղայք ծնանելով վեցամսայք և ութամսայք ոչ ապրին, իսկ եօթնամսայքն ապրին» Սահմ. ր. ժդ. «եթէ ճանաչիմք չմահացու կերակուրն և զապրեցուցանողն» Սարգ. ա. պ. թ։ Այս նշանակութիւնից են բխում ապրուսա «ուտելիք, կերակուր» ՅՀ. կաթ. Անան. եկեղ. նար. ապրանք «պարէն, կայք» Վրդն. աղ. և դան. Մաղաք. աբ. Երզն. խրատ. «Հարբսութիւն» Թլկր. *52*. ապուր «ուտելիք, կերակուր» Շն. առակ. Ուռհ. Հրտր. էջմ. էջ *199, 200*. և յատկապէս «ջրալի կերակուրը, սուպ, չօրբա» Մխ. բժշ. վերջիններիս իմաստի զարգացման համար համմ. հյ. կեանք «ինչք, առաջուածք, ապրանք», յն. βίος, լտ. vita «կեանք, ուտելիք, պարէն», ֆրանս. vivre «ապրիլ. 2. ուտելիք»։

Հներից Տաթև. առ. *261* գրում է. «Ապրանքն փրկանք թարգմանի». ուզում է ասել թէ ապրանք ծագում է ապրիլ «ազատիլ» բայից։ Peterm. *34* լատ. aperire «բանալ» բայի հետ։ Tromler, Disputatio de Abrech aegyptiorum (ըստ Karst, Gesch. d. arm. Phil. էջ *2*) եգիպտ. abrek «ապրիլ, կեալ» բառի հետ։ Ganini, Et. étym. *185* առնս. bhar «անուացանել» և յն. φορά «անուագ»։ Մառ, Яз. и Лит. *1. 233* ասիրագ. bza «կինդանի», բասկ. abere «անասուն», վրաց. ცხოველი ցխովլի «կինդանի»։ Տէրվիշ. Altarm. *94* ապուր «սուպ» հանում է պրս. آب āb «ջուր» բառից, իսկ Նախալ. էջ *61* ապրիլ դնում է ափ և յափշտակել բառերի հետ՝ ցեղակից առնս. āp, գնդ. āf «հանդիպել, յափշտակել» արմատներին։ Հիւնք. դնում է ապուռ «աւար» բառից։ Bugge KZ *32, 62* հնխ. ápo, յն. ἀπό, հյ. ապ-|-յն. ἄῤῥω «բառնալ, վերցնել, առնել, կրել» բառերի հետ՝ իբր բնիկ հայ։ Յակոբեան, Բանասէր *1900, 42* գնդ. amər-ətāt ոգու հետ։ Patrubány SA *1, 198* ապ մասնիկով՝ հուր բառից, իբր «կրակից առնուած», իսկ ՀԱ *1903, 221* միտքը փոխելով՝ լտ. aperiō, առնս. apavar «բառնալ» բառերի հետ։ Karst, Յուշարձ. էջ *400* աւստր. ebēru «միջից կամ վրայից անցնել»։ Թիրնաքեան, Արիահայ բռ. *63* պհլ. āvār «կողոպտել» բառից։ Մառ ИАН *1920, 137* բասկ. abere «կինդանի», սվան. ləwer «առողջ» բառերի հետ։

Գիր.—կր. Մկ. Սլմ. վն. ապուր, Ալշ. Ախց. Ակն. Ջթ. Խրբ. Հմշ. Մշ. Ննխ. Ռ. Սեբ.

աբուր, *Մրղ.* ապուռ, *Տիգ.* mբուր, *Ոզմ.* ա՛պօր, *Ասլ.* աբիւր, *Հճ.* աբույ. *այս բոլորը նշանակում են «սուպ, չօռվա». իսկ Այն. Արբ. Մրշ. «փլաւ», Ղրբ. «անասուններին տրուած կերը (յարդ, գարի, թեփ, հաճար ևն)։ Պլ. կայ միայն «պաղա՛ծ աբուր» և «կերած աբուրը նայէ՛» ոճերով, իսկ Երև. բանապուր բարդի մէջ։*—Ապրիլ *բառը պահուած է Ջղ. Սլմ. Վն.* ապրել, *Ագլ. Կր. Մկ. Շմ. Ոզմ. Տփ.* ապրիլ, *Գոր. Երև. Ղրբ.* ա՛պրէլ, *Ալշ. Ախց. Ակն. Խրբ. Մշ. Պլ. Ռ.* աբրիլ, *Սչ.* աբրեւ, *Ննխ.* աբրէլ, *ՋԹ.* աբրլ, *Տիգ.* mբրիլ, *Հմշ.* աբռիլ, *Մրղ.* աբռէլ, *Սեբ.* ափրիլ, *Ակն. Ասլ.* արբիլ։ —Ապրուստ *բառի դէմ գտնում ենք Մկ. Ջղ. Սլմ.* ապռուստ, *Մշ.* աբռուստ, *Ագլ. Երև.* ա՛պռուստ, *Պլ.* աբռուսդ, *Ասլ.* արբիւս՛։— Ապրանք *բառի դէմ Ագլ. Գոր. Երև. Ղրբ. Ջղ. Սլմ. Տփ.* ապռանք, *Ալշ. Ախց. Խրբ. Մշ. Պլ. Սչ.* աբռանք, *Մկ. Վն.* ապռանք՛, *Ոզմ.* հաբռանք, *Հմշ.* աբռօնք, *ՋԹ.* աբռօնք։ *(Այս բառը Գոր. Երև. Ղզ. Ղրբ. նշանակում է նաև «արջառ, տաւար, եզ ու կով». համմտ. արաբ.* مال māl *«ապրանք, ինչք. 2. արջառ»)։ Նոր բառեր են* ապռուցք, ապռուա, ապրիկ, ապըրցու, ապռուիլ, ապռտրկուիլ *և ապուրի զանազան տեսակների անուններ. ինչ.* բանապուր, ճիտապուր, փշռուկապուր *ևն։ Ատանայի Բրբախօս հայոց բարբառով ունինք* ապուր *«կերակուր», ճիտապուր «հերիսայ», ապրիս «կեցցե՛ս»։ Պօլսոյ մանկական բարբառով* աբիս *«համբուրել, ձեռք համբուրել» (ըստ որում ձեռք համբուրողին պատասխանում են* ապրի՛ս*)։*

Փոխ.—Ատանայի հայոց ճիտապուր «հերիսայ» բառը գործածական է նաև տեղացի Թուրքերի և յոյների մէջ։—Հայերէնից փոխառեալ եմ կարծում նաև քրդ. ئوبر abur, ubur *«պարէն. ապռուստ,* moyen de vivre*». Համմտ. Ղուկ. իս. 4՝ Համա ուիա ժը նէչարիթէչէ իս հէմի ապուրէ իս ավէք «Բայց նա ի կարօտութենէ իւրմէ զամենայն զկեանս իւր զոր ունէր՝ արկ). Գծ. ժբ. 20՝ Ջիրա ոլաթէ ուան ժը ոլաթէ փատիշահէ ապուր մը սմնար պու (Վասն կերակրելոյ երկրին նոցա յարքունուստ). Գծ. ժԹ. 25՝ Ապուրէ սm ժը դըշդէ հանm (Յայսմ գործոյ է շահ մեզ). Ա. կոր. Թ. 14՝ ժը ինձիլէ ապուր պը քըն (յԱւետարանէ անտի կեալ)։* Justi, Dict. Kurde, *էջ 280 այս բառը դնում է արաբ.* عبور *'ubur ձևից, որ սակայն նշանակում է «անցնիլ», կամուս, Թրք. Թրգմ. Բ. 18 այս բառին տրուած զանազան նշանակութեանց մէջ չկայ ո՛չ «ապրուստ» և ոչ էլ մերձաւոր մի բան։ (Կարող է սակայն «անցնիլ» իմաստը յետոյ դառնալ «ապրուստ». համմտ. Թրք.* چچمک qeč-mek *«անցնիլ» և նրանից* چچنمک qeč - in - mek *«ապրիլ, ապրուստ հարել»)։—Պատահական նմանութիւն ունի ասոր.* ܥܒܘܪܐ *'abūrā «ցորեն», որ գործածուած է արդէն Ս. Գրքի մէջ և կապւում է եբր.* צבור *ṣibbōr բառի հետ։*

**ԱՊՈՒԻՐ «տրանդիտ ապրանքների վրայ դրուած հարկ». Կիլիկեան շրջանի բառ. գործածուած է Լևոնի 1215 Թուի հրովարտակում (*Karst, *Դատաստան. II 233), մի երկրորդ վկայութիւն ունի Լևոն Գ-ի հրովարտակը 1288 Թուից. «Եւ յապուր որ տան ընդ յԱյաս ու ընդ կուկլակ, նայ այսպէս լիննայ». (Տեղեկ. ինստիտ. 2, 34)։ Նոյն բառը* ապուռ *գրչութեամբ կայ ՈՀէ=1228 Թուի մի արձանագրութեան մէջ. «Թողաք զղեղիս Շիրակա զապուռ իշի և զչրասահին բաժն յորդեցէ յորդիք» (Վիմ. տար. 71)։*

=*Արաբ.* عبور *'ubūr «անցնիլ» բառից, ճիշտ ինչպէս որ նոյն հարկի լտ. ձևը՝* pàssagium *բուն նշանակում է «անցք»։*—Ա՛ճ.

ԱՊՈՒՐԱԿԻ *«յանկարծակի, չապաստած տեղը». յ նախդիրով գործածուած է միայն երեք անգամ մեր մատենագրութեան մէջ. «Որ յանկարծակի յապուրակի գայնպիսի փափկութիւնս ի բաց Թօթափեցին և միջամուխ եղեն պատերազմաց» Ոսկ. եփես. 814. «Լուար Թէ դայ օրհաս յանկարծ, մի՛ լինիք կախեալ զյուսոյ. Լուար Թէ դայ մահ յապուրակի, եղիցին ընդ անձին քում պաշարք քո» (Ներսէմի նորագիւտ վեշտասան ասացուած վասն Նիկոմիդեայ քաղաքի. հրտր. Յ. Մուրատ, Յուշարձ. էջ 207). «Այլ Թէ զօրագոյն և արբուն իցես, զոմանս առաթուր կոտորես և զոմանս յապուրակի դառնալով» Ոսկ. բ. տիմ. էջ 277։ Առանձին ապուրակի ձևը չիշում է Բառ. երեմ. 28 և մեկնում է*

«անիրաւութեամբ անկանել յիրս ինչ», բայական ձեւով էլ ունի յապուրակել «անիրաւել» էջ 220։

ՆՀԲ հանում է ապուր բառից և ըստ այսմ մեկնում է «իբր առ և ապուր առնելով, յափշտակելով, իբրև զաւար փութապէս շորթելով կորզելով»։

ԱՊՈՒՐԱՆ
ԱՊՈՒՐԱՄ } *տե՛ս Ապրամ։*

ԱՊՈՒ, ի հլ. «ձուկ բռնելու կարթ». իբր մհյ. բառ ունի Նորայր. Բառ. ֆր. 629 բ (hameçon). նոյնը գտնում ենք ՆՀԲ ապուռ ձեւով՝ մէկ անգամ միայն գործածուած Մարբին. «Ներոն որսայր ձուկն ոսկի ապուիք» բայց այս գործիականը կարող է ունենալ ուղղական թէ՛ ապուռ և թէ՛ ապ. առաջինը՝ որ ՆՀԲ է ենթադրում, ուղիղ չէ. այլ միայն երկրորդը՝ ինչպէս ցոյց է տալիս տակի գաւառականը։

ՆՀԲ և ԱԲ միացրել են ապուռ «աւար, կողոպուտ» բառին։ ՋԲ գնում է առանձին։

ԴԻՒ.— ՋԲ. օ՛բոր «ձուկ բռնելու յատուկ ուռկան», յգ. արոիր։— Այս բառից է ապուօն «գետերի առաջ շինուած ձկնորսանոցների թումբը. ֆր. bâtardeau» (Նուպարեան, Բառ. ֆրանս. էջ 87). բայց կարծեմ հեղինակի ձեռքով կազմուած և ո՛չ բնիկ ժողովրդական։

ԱՊՈՒԱՆ «խոտի կտորտանք». մէկ անգամ ունի Եւս. պտմ. էջ 162 «Կերակուր էր նոցա ապուան հին խոտոյ»։ Նոյնը ճառընտրում գրուած է ապառան ձեւով։

ՆՀԲ, ՋԲ և ԱԲ ուղիղ ձեը համարում են ապուան և մեկնում են «կտոր, պատառ, կորզուած մաս», իբր թէ ապռել «կողոպտել» բայից։ Վերի իմաստը ցոյց է տալիս՝

ԴԻՒ.— Բլ. ապուօն «չոր խոտը, ցորենը կամ առւոյտը դիզելու կամ սայլի մէջ բառնալու ժամանակ գետին մնացած մանրուքը»։

* **ԱՊՈՒՏԻԿԻՈՆ** «հարաւ» խոր. աշխ. 586 (այլ ձձ. ապռիկիկոն, պռոտիկոն, ապռոտիկոն). չունին բառարանները։

—Լտ. apricus, apericus «հարաւային, արեգդէմ» բառն է. յոյն բնագիրն ունի νοτιώτατος «ամենահարաւային». բայց թարգմանը դրել է լատիներէն մի ձեւ՝ յունական վերջաւորութեամբ. ըստ այսմ ուղղագոյն ձեւն է ապռիկիկոն, որ անշուշտ գործածուած էր հայ թարգմանի գործածած յունարէն բնագրում։

Ուղիղ մեկնեցին St Martin և Պատկանեան, Арм. reorp. էջ 4։

ԱՊՍՈՒԱՐ «պարտքի փոխարէն մէկի իրերի զրաւումը պահանջատիրոջ կողմից». այս արմատը գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. 19, որ կազմում է նրանից ապսուարուն «cession» և ապսուառու «cessionnaire» բառերը (բայց չի յիշում Ա. էջ 421 բուն բառարանի մէջ)։

* **ԱՊԱՊԱՐԵԼ**, ևցի կամ նաև ապասպարել, ապսպրել, ապրսպարել, ապսպուարել, ապսուարել «յանձնել». հնագոյն ձեւն է ապասպարել, որի համար ՆՀԲ ունի ճառընտրից մի վկայութիւն. ա-ի կրճատումով՝ սրանից յառաջացել է ապսպարել միջին ձեւը, որ գտնում ենք յաճախ Կորիւն, Ոսկ. բ. կոր. այս ձեւից ա-ի նոր կրճատումով ապրսպրել Վրդն. ծն. ըստ լեհ.— սխալ զրչութիւն և ըստ Հիւրշ. սրբագրելի են ապրսպարել՝ Օրբելեանի ապսպուարել և ապսուարել ձեւերը (հրտր. էմինի, էջ 153) «տալ, յանձնել, փոխանցել, նուիրել» նշանակութեամբ։

= Պհլ. apaspāram «յանձնել, մէկին վստահել», պազենդ. awaspāram նոյն ևշ., պրս. سپردن supurdan, سپاریدن siparīdan (նեռկ. supāram, sipāram) «ապսպրել, պատուիրել, յանձնել», sipāriš «պատուէր, ապսպրանք»։ Պարսկականից են փոխառեալ նաև քրդ. سپارك sipārik, سپاره sipāre «յանձնարարութիւն», արևել. թրք. اسمارلامق əsmarlamaq, օսմ. اصمارلق əsmarlamaq կամ səmarlamaq (փոխանակ səparlamaq) «յանձնարարել, ապսպրել»։ Իրանեան բառը կազմուած է apa մասնիկով spār արմատից, ինչպէս որ pat մասնիկով էլ կայ պատ-ապարել։—Հիւրշ. 106։

ՆՀԲ ապար բառից, Lagarde, Urgesch. 278 uç մասնիկով par արմատից, որից

Նաև պրս. supurdan: *Հիւնք. հլ. ապար և պրս.* sipardan *ձևերից:*

Դիմ.—Մշ. Սլմ. Վն. ապըսպրել, *Ոզմ. Տփ.* ապըսպրիլ *(Ոզմ. ստացել է «սպասել» նշանակութիւնը), Ջղ.* աբսպարել, *Ախց. Երև. Ննխ.* աբրսպրել, *Մշ.* աբրսբրբել, *Պլ. Սհբ.* աբրսբրբել, *Ասլ.* աբրսբրէլ, *Ակն. Զթ. Խրբ.* աբրսբրբիլ, *Տիգ.* ոբրսբրել, *Ռ.* աբրսփրել, *Ագլ.* պրսպա՛րիլ, *Գոր. Ղրբ.* փրսպա՛րել: *Նոր բառեր են* ապսպարաճ, ապսպարէ *(Ագլ.* պա՛սպարէ, *Ղրբ.* փա՛սպարէ*),* ապրսպրուճ:

*ԱՊՍՏԱՄԲ, ի–ա *հլ. (յետնաբար նաև* ի *հլ.) «իշխանութեան դէմ կանգնած անհնազանդ, ըմբոստ» ՍԳր. Ագաթ. որից* ապրստամբել *ՍԳր. Վեցօր.* ապստամբեցուցանել *ՍԳր. Եղիշ.* ապստամբութիւն *ՍԳր. Ոսկ.* ապստամբող *Դան. գ. 32.* ապստամբանոց *«ապստամբների բոյն» Միխ. աս. 377.* ծառայապստամբ *Եւս. քր. Նոր գրականում* ապստամբապետ *են: Բառիս հնագոյն ձևն էր* ապաստամ *և սրանից էլ* ապաստամբութիւն, ապաստամբել, ապաստամբական, *ինչպէս գտնում ենք գրուած մի քանի շատ հազուագիւտ օրինակներում. այսպէս՝ Եզնիկի նորագիւտ ձեռագրում (Ձեռ. էջմ. № 1111, Կարինեան 1091), էջ 53* ապաստամ *(5 անգամ), էջ 91* ապաստամբութեանն, *էջ 53* ապաստամբի *(տե՛ս Տ-Մկրտչեան և Ա.Ճառեան, Քննութ. և համեմատութ. Եզնկայ նորագիւտ ձեռագրին, էջ 71—73), Իրենէոսի նորագիւտ Ընդդեմ հերձուածոց գրոց մէջ՝ էջ 8, 49, 205, 211, 212 (6 անգամ)* ապաստամբ, *էջ 148, 210, 215, 218, 221* ապաստամբեալ, *էջ 155, 212, 213, 215, 218, 220, 221, 223* ապաստամբութիւն, *էջ 212, 222, 224* ապաստամբական *(տե՛ս Վարդանեան ՀԱ. 1910, 283), Վարք և վկ. ա 646* ապաստամբութիւն, *Յայտմ. յուլ. 17* ապաստամբ, *սեպտ. 27* ապաստամբել: *Հնագոյն այս* ապաստամբ *բառի միջից կորուսման օրէնքով ա ձայնը աղուից յետոյ (հմմտ.* ապասպարել*) և նորագոյն* ապստամբ *ձևը ո՛չ միայն գրաւեց նրա տեղը, այլ և նոյն իսկ հնագոյն բնագիրների մէջ ներմուծուեց: Մեր բառարաններում* ապաստամբ *ձևը չկայ. յիշում է միայն ՋՔ:*

= *Պհլ.* *apastamb *ձևից, որ կազմուած է* apa *մասնիկով,* stamb *արմատից. հմմտ. սանս.* stambha- *«հպարտութիւն, ամբարտաւանութիւն»,* vi-štambha- *«ապստամբութիւն», պհլ.* stambak, *պրս.* sitanba *և հլ.* ստամբակ *(տե՛ս այս բառը):—Ա.Ճ.*

Աւետիքեան, Բերակ. 1815, 210 ապաստամբակ: *Նէ՛ր հլ. ի բաց ստամբակեալ, ստահակեալ, յն.* ἀποστάτης, ἀφεστικός *«ապստամբ»:* Windisch. *42 և* Lagarde, Urgesch. *148 սանս.* stambh *արմատից: Տէրվ.* Altarm. *42 սանս.* stambh, *յն.* στέμβω, *լիթ.* stebyti, stambùs *են: Նոյնը նաև Նախալ. էջ 113: Հիւնք.* ստամբակ-*ից: Վերի ձևով մեկնեց Ա.Ճառ. Քնն. և հմմտ. Եզն. ձեռ. էջ 72: Թիրեաքեան, Աբրահալ բռ. 64* ապ+*պրս.* ‌ستام sitam *«զրկանք», այն է «զրկանքի դէմ հնազանդ»:*

Դիմ.— Սեբ. ափսդամ *ձևով գործածական է «անհնազանդ զաւակ» նշանակութեամբ:*

ԱՊՏԱԿ *(ի–ա, n հլ. երկուսն էլ յետնաբար. հին հոլովաձևեր չկան) «ապտակ, ափով հարուած երեսին, սիլլա, շամար». գործածուում է այլևայլ ոճերով. ինչ.* ապտակ ածել, հանել, դնել, մատուցանել *«ապտակ իջեցնել» ՍԳր. Սերեր. Ոսկ. յհ. բ. 5, 37. ա. 3, կոչ. որից* ապտակալից *Ոսկ. մ. գ. 5.* ապտակակոծ *Ոսկ. մ. բ. 12, 23.* ապտակատու *Կոչ. 238.* ապտակել *Մտթ. իղ. 67. Ոսկ. յհ. ա. 34.* ապտակումն *Ոսկ. յհ. ա. 37.* բռնապտակ *Ճառընտ.* անապտակ *Սիր. համաբ. 122:*

Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. 58 դնում է ափ *բառից և համեմատում է պրս.* էֆդէխ *կամ* աֆդախ *բառի հետ (այս բառով Թերևս ուղում է հասկանալ արաբ.* aftax *«մեծ ճիրաններով (առիւծ)»,* fatx *«մատները դէպի ափը ծկել»): Նէ՛ր* ափ-*ից: Հիւնք.* տապանակ-*ից:*

*ԱՊՐԱՒԻԼ *մեկնուած է բառ Քաջունի, հմ. Գ. էջ 19 «խանդումանդ բար» (որևէ*

մագնիս). նոյնը ԳԲ գնում է «սանդղ խլող մագնիս», իբր բառ արաբ. Այս պարագային՝ բառս ծագում է՝

= արաբ. عبرة ibra, յգ. عبر ibar «սանդղ» +հյ. խիլ (խլել) բառերից։—Աճ.

***Ա.ՊՐԱՅ** *«որևէ բան պարունակող ամանի քաշը». իբրև մհյ. բառ ունի նորայր, Բառ. ֆր. tare. իսկ իբրև գւռ. բառ ունին ՋԲ և ԱԲ։ Սովորական գործածութիւն ունի արևմտահայ գրական լեզուի մէջ։*

= Արաբ. عبء ʿabra, որից փոխառեալ են նաև քրդ. abre, վրաց. აბრა აբրա՝ նոյն նշանակութեամբ։— Աճ.

ԳԻՒ.— Երև. Մշ. Նախ. Սեբ. աբրա, Սլմ. Ալշ. աբոա, Հճ. աբro։

*** Ա.ՊՐԱՅՈՅՂ** *«երեակ մոլորակը, Saturne». ունի միայն Քաջունի, հտ. Բ. էջ 569 և հտ. Գ. էջ 19՝ ըստ Շիրակացւոյ։*

= Պհլ. apr, abr, պրս. ابر abr «ամպ» (Horn § 63)+հյ. յոյզ բառերից, իբր «ամպայոյզ, անձրևաբեր»։—Աճ.

***Ա.ՊՐԱՆՃ** *«մի տեսակ բոյս» Բժշ. ունի միայն ՀՌուս. § 143։*

= Արաբ. عبرنج abranǰ կամ جبرنج baranǰ, որ ըստ Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 175 նշանաւոր դեղ է ինքը պղպեղից աւելի փոքրիկ, կլորիկ, սև, միջին սպիտակ և դառնաւուն մի հունդ է. արաբ բառը փոխառեալ է պրս. جرنگ barang հոմանիշից (տե՛ս Շիայնշնայդէր WZKM 11, 266)։

Ուղիղ մեկնեց Ալիշան, ՀՌուս. § 143։

Ա.ՊՐԱՍԱԴ *տե՛ս Ապրասամ։*

***Ա.ՊՐԴՈՒՄ,** *ո հլ. «ձիու սարքի մաս է». մէկ անգամ ունի Բուզ. 110 «Բազում նժոյգս՝ ոսկիվարաւանդ ապրդմովն տայր նմա։ Նոյնը ապարդում ձևով, ի–ա հլ. ունի Ոսկ. եփես. 769 «Ոսկեսանձ երիվարօք՝ համակ ոսկիվարաւանդօք և ապարդմօք»։*

*= Պրս. پارڈم pārdum կամ پالڈم pāldum «ձիի թամբի փոկ». բառիս պահլաւ ձևը յաւանդած չէ. բայց կարող էր լինել *apārdum։—Հիւբշ. 515։ Պհլ. *apardum կազմուած պիտի լինի պհլ. apar «վեր»+dum «ագի» բառերից և բուն նշանակում է «վերնագի»։ Պրս. پالڈم pāldum ձևից փոխառեալ է վրաց. პალდუმი պալդումի «шлея, կաոք քաշող ձիու մեջքի փոկը»։*

ՆշԲ, ՋԲ և ԱԲ նոյն են համարում ապրշում «մետաքս» բառի հետ։ Կասկածում է Նորայր, Կորիւն վրդ. և Բրգմ. 451 և դնում է «ձիու կազմածի մաս»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Stackelberg, որ նամակով յայտնել է Հիւբշմանին։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 55 պհլ. apar «վրայ»+tum (պրս. dum) «պոչ»։

Ա.ՊՐԹԱՆԱԿԱՆ *տե՛ս Ապարթան։*

***Ա.ՊՐԻԼ** *կամ նաև ապրիէլ (սեռ. ի) «հռովմէական տոմարի չորրորդ ամիսը» Անան. շիր. 19, Արշ. Շնորհ. Քղթ. Յայտմ. նոր գրականում գործածական է միայն ապրիլ ձևը։*

*= Յն. ἀπρίλιος կամ ἀπρίλιος բառից, որ ծագում է լա. aprilis ձևից. բուն նշանակում է «երկրորդ», իբրև մարտից յետոյ երկրորդ ամիսը, ինչպէս ունինք quintilis (հինգերորդ) «յուլիս», sextilis (վեցերորդ) «օգոստոս». համմ. սանս. apara-, հպրս. դնդ. apara- «վերջինը, երկրորդը», գոթ. afar «յետոյ», լատինի նախաձևը *aporo-s։ Լատինական տոմարի տարածման հետ այս բառն էլ անցաւ բազմաթիւ լեզուների. յիշենք ի մէջ այլոց ֆրանս. avril, դերմ. april, իտալ. aprile, վրաց. აპრილი ապրիլի, ռուս. апрель են են (Walde 52—53)։— Հիւբշ. 367։*

*Տաթև. հարց. 201 համարում է ծագած մի իմաստասէրի անունից։ Ուղիղ մեկնեց ՀՀԲ։ Ըստ Benveniste BSL № 95, էջ 68—74 լա. aprilis չէ՛ թէ ծագում է *aporo-s «երկրորդ» բառից, որ չէր կարող գոյութիւն ունենալ, այլ *apru ձևից, որ հարուակերէնի մէջ գործածական էր՝ իբր կրճատում Ἀφροδίτη «Աստղիկ» աստուածուհու անուան (այլուր Ἀφρώ)։ Ինչպէս մարտ և մայիս, նոյնպէս և ապրիլ նուիրուած էին աստուածների անուան։*

ԳԻՒ.— Ախց. Պլ. աբրիլ, Ղրբ. ա՛պրէլ են։

ՓՈՒ.— Հայերէնից փոխառութեամբ կայ գւռ. Բրբ. Ակն. abrel, Կր. abril (Բիւր. 1898,

626). Հայերէնից փոխառութեան ապացոյց է b ձայնը։

Ա.ՊՐԻԼ «կեալ» տե՛ս Ապուր։

* Ա.ՊՐԻՇՈՒՄ «մեռաքս» Կղկնտ. Միխ. ասոր. Գնձ. (գրուած նաև ապրշում). փոխաբերական իմաստով է ապիրշում «ծառի վրայ մազանման մամուռ» Վստկ. 79. որից ապրիշմի «մեռաքսեայ» Նար. տաղ. 473 ապրիշմագործ «մեռաքս շինող (շերամ)» Պիսիդ. Վեցօր. տող 1293. ապրշմեղէն Բղբ. դաշ. 17. ապրիշմեղէն Յայսմ. նոյ՛ 8 (որ և պրիսմեղէն Մաշտ. ջահկ. պրիսմէն Սմբ. դատ. 21). ապրիշիմագործութիւն Միխ. այբիվ. էջ 45։ Արդի գրականում ընդունուած է միայն արևելեանի մէջ պրշում ձևով, իսկ արևմտեանը չէ ընդունած իբր ռամիկ (գործ է ածում նրա փոխարէն մեռաքս)։

= Պհլ. *aprēšum, պրս. ابریشم abrēšum, abrēšam, ասֆղան. wreṣam «մեռաքս», պարսկերէնից փոխառեալ են բելուճ. abrēšam, քրդ. avrīšim, ebrīšim, armuš, hewirmūš, վրաց. մինգր. aprbešumi, սվան. ինգիլ. aprbešum, թուշ. aprpšu, ութ. apprkʒʒum, խին. aṗlwašum, ասոր. ܐܒܪܝܫܘܡ abrīšūm, արաբ. ابريسم ibrīsum, թրք. ebrūšŭm, դնչ. ibišim, նլն. μπρσίμι, սերբ. imbrišim են։ Հին իրանեան ձևը ենթադրւում է *aparēšum, *uparēšum, *uparēšma, որ պատկանում է պրս. rišten «մանել» և կամ սանս. kšauma «ոլորած մեռաքս» արմատին (Horn § 65)։—Հիւբշ. 107։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։

Գիւմ.— Ջղ. aprišum, Ախց. Կր. Տփ. aprɛšum, Երև. aprշum, Ղրբ. mpriʼšim, Վն. arապշում, Մկ. mապշում, Մրղ. apուռշում, Ալշ. apրuշում, Սլմ. arփրշում, Գոր. pրriʼšim, Ագլ. pարɛʼշում, Ակն. Պլ. ɛpիշիմ (Թուրքերէնից նոր փոխառութեամբ)։

Ա.ՊՐԻՎԻ «անծանօթ մի ծառ». Բժշ. ունի միայն Ալիշան, Հայբուսակ § 147։

Ա.ՊՐՈՒՄԱՐ «վերադիր կամ ի վերայ բերուն ինչ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 28. յայտնի չէ թէ ի՛նչ է ուզում ասել։

* Ա.ՊՐՈՒՐ «ամբուլի տեսակից մի բոյս» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 149։

= Պրս. ابرود ābrūd «ամբուլ կամ նուռնուֆար». Ամիրտուվլաթ շփոթելով վերջաւորը՝ կարդացել է ابرور ābrūr, որով ստեղծել է ապրուր ձևը։—Աճ.

* Ա.ՊՐՍԱՄ «բալասան» Խոր. Տօնակ. Ոսկիփ. որ և ապրասամ նիւս. կաղմ. Հերձ. 129. ապուրսամ Վրք. և վկ. ա. 527 (խունկս ապուրսամս). ապրասաղ, ապրսադ (այս երկուսը յառաջացել են *ապրասաստ և *ապրսաստ գրչութիւններից՝ երկաթագիր Մ և Տ գրերի շփոթութեամբ)։— ՆՀԲ ունի նաև ապուրան «մի տեսակ խունկ», որ մէկ անգամ գործածել է Ճառընտ. «կէսքն արկանէին խունկս հիրիկս և կէսքն խունկս ապուրանս»։ Այս վկայութիւնը Վրք. և վկ. ա. 527 հետևեալ ձևով է. «կէսքն արկանէին պտուղ նարդեան, կէսքն խունկս խիրիկս և կէսքն խունկս ապուրսամս». որից երևում է, որ ապուրան ընթերցուածը պէտք է ուղղել ապուրսամ, որ է ապրսամ։

= Ասոր. ܐܦܘܪܣܡܐ apūrsāmā, ܦܘܪܣܡܐ pursāmā, մանդալ. pursāmā «բալասան»։ Հայերէն բառը ըստ Lagarde, Gesam. 17 ծագում է ասոր. apūrsam ձևից, իսկ ըստ Հիւբշ. երկուսն էլ պարսկերէնից (?)։— Հիւբշ. 197։

Փոխ.— Վրաց. apրսամի (ըստ Մառ Иппол. 62. չունի Ջուբինով) «բալասան» անշուշտ փոխառեալ է հայերէնից, ինչպէս ցոյց է տալիս ու ձայնաւորի անկումը։

*Ա.ՊՓՈՎԲ «ջրի կոնք, լական». մէկ անգամ գործածուած է երեմ. ծր. 19 «նէ զապփովքն և զամասարակովքն»։— Բառս յիշում են ՀՀԲ, ՋԲ և ԱԲ. չունի ՆՀԲ։

= Եբր. סַף saf «կոնք» բառի յգ. סִפּוֹת siffōṯ ձևից այլափոխուած։ Եբրայական բնագրում մեր բառի դէմ այժմ գրում ենք הַסִּפִּים has-siffīm «կոնքերը», որ յիշեալ סַף saf բառի յոգնակին է. բայց Եօթանասնից գործածած օրինակում անշուշտ եղել է סִפּוֹת siffōṯ ձևը՝ որ նոյնպէս յիշեալ סַף saf բառի յոգնակին է։ Հունարէն թարգմանութեան ժամանակ այս բառը տառադարձուել է σαφφώθ, որ յետոյ եղել է ἀφφώθ և ἀπφώθ. առաջին

երկու ընթերցուածները մնում են զանազան ձեռագրերում, իսկ վերջինը ընդունուած է իբրև մայր ձև։ Նոյնը ունեցել են նաև մեր թարգմանիչները իրենց օրինակում, որից և տառադարձել են հայերէնը։ Այս բառի դէմ ունինք վրաց. ხაბფოთი սապփորի «կոնք», որ ենթադրում է յն. σαπφώ. այս էլ բռնում է միջին տեղը σαφφώ, ձփֆա և ձպֆա ձևերի։

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 45, յն. ձպֆա ձևից։

***ԱՊՕՏԻՔՍ** (սեռ. ի) «մուրհակ» Մխ. դատ. (գրուած ապատիքս). կայ նաև ապատիկ Լմբ. օր. 89։

= 3ն. ձպճձէէչ «ապացոյց»։— Հիւբշ. 341։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ. յաւել. հտ. Բ. էջ 1045 աւ Սխալ է Բասմաջեան, Լմբ. օր. 43, որ համարում է յն.ὑποθήκη «գրաւական»։

Ա.Ջ, ո, ու հլ. (բովանդակ ՍԳրքի մէջ ունինք 33 անգամ աջոյ, 8 աջով, 5 աջու, 2 աջուց, 2 յաջում, 62 աջմէ. յետնաբար նաև ի հլ.) «աջ» ՍԳր. Ագաթ. ևն. յետնաբար «արբի կամ նաև կրօնաւորի ձեռք», որով աւում է մինչև անգամ՝ Ուր կայ ձախ աջն Պետրոսի և Պօղոսի. Վրդ. աշխ. 516։ Այս բառից են աջակոդմն ՍԳր. աջաթև Արծր. աջակից Սամ. երէց. աջակցիլ Խոր. ՅՀ. կթ. աջեակ Վրդ. քրվ. աջել «հրաւիրեալը վերև կամ աջ կողմը նստեցնել» (հմմտ. յն. δεξιόομαι) Մանդ. աջին Խոր. ՅՀ. կթ. աջանալ (նոր բառ)։

2. Լեզուների մէջ առհասարակ աջը համարուած է լաւ, բարեդուշակ, յաջողութեան կողմ, մինչդեռ ձախը նշան է անյաջողութեան, ձախորդութեան, իբրև չար, անբարեդուշակ կողմ։ Այս նախապաշարման համեմատ ունինք յն. δεξιά «աջ», δεξιός «յաջող, ճարտար, արամիտ, ճարպիկ», լտ. dexter «աջ, յաջողակ, ճարտար», տճկ. جاص sağ «աջ, առողջ, ողջ», պրս. تسار rāst «աջ, ուղիղ», գւռ. գործս աջ է գնում «յաջող է»։ Ընդհակառակը՝ յն. ἀριστερός «ձախ, անյաջող», լտ. sinister «ձախ, անբարեյաջող, չարագուշակ», հյ. ձախ, ձախորդ, ձախորդութիւն, ձախող, գւռ. գործս ձախ է գնում «անյաջող է»։ Ըստ այսմ հյ. աջ բառից կազմուած են աջող եղեկ. ծը. 28. խոր. Փարպ. աջողակ «ճարտար» ՍԳր. Փարպ. «լաւ, յաջող» Պիտ. Ջենոբ. աջողաձեռն «ճարտար» խոր. ՅՀ. կթ. չաջողութիւն եզն. մանաւանդ յ նախդիրով՝ յաջող եւս. քր. յաջողակ ՍԳր. յաջողել կամ յաջողիլ ՍԳր. յաջողութիւն ՍԳր. եզն. եւս. քր. անյաջ «անյաջող, տարադէպ» խոր. բ. 7. միջին հյ. աջողնալ «հիւանդը լաւանալ, ապաքինիլ» Անսիզք 65 (հմմտ. թրք. sağ «աջ. 2. ողջ»)։

3. Յաջողութեան գաղափարից անբաժան է յառաջդիմութեան գաղափարը. ըստ այսմ աջ բառից են ծագում՝ առ մասնիկով՝ առաջ «առջևը» ՍԳր. Ոսկ. եզն. Ագաթ. բնդ առաջ ՍԳր. Ոսկ. ես. առաջոյ, առաջապահ, առաջև, զառաջեսք, զառաջեաւ, առաջի, զառաջասուն, յառաջ ևն, բոլորն էլ հին և ընտիր (հմմտ. թրք. ön բառը՝ որ նշանակում է «առջևը», իսկ կումուկերէնում արդէն «աջ». այսպէս՝ ong «աջ», ong yanə «աջ կողմը». տե՛ս Мохира, Кумыкско-русскій словарь, Сборн. матер. Кавказа, հտ. 17)։— Այս բոլոր բառերը զուգորդուած են տեղի գաղափարի հետ. բայց յառաջդիմութիւն առանց ժամանակի գաղափարի՝ անկարելի է. այս պատճառով լեզուների մէջ այն բառերը՝ որ նշանակում են «առջև», նշանակում են նաև «նախ». հմմտ. ֆրանս. avant «առջևը, առաջ, նախ», devancer «առջևից երթալ և կանխել», յն. πρό «առջևը, առաջ, նախ», թրք. ön \ önde «առջևը», önde \ öndje «նախ և առաջ», պրս. پیش pēš «առջևը, նախ», پیشرو pēšrav «առջևից գնացողը», پیشین pēšīn «առաջուց, կանխաւ» ևն։ Հայերէնի մէջ էլ ունինք առաջ «առջևը», աշխ. «նախ, նախապէս», յառաջ «դէպի առաջ և առաջուց, նախ», յառաջել «առաջ երթալ և կանխել», առաջի «առջևը», բայց նաև «առջի, առաջին» Սեբեր. թ. Բուզ. ե. 51. զառաջել «կանխել» եւս. պտմ. Եփր. ա. տիմ. առաջուստ «առջևից» Եփր. աւետ. «առաջուց» Եփր. Եբր.

առաջին (այս բառի կազմութեան հետ հմմտ. բելուճ. p'ēšī «առաջին», բառացի «այն որ առջևն է», և սոգդ. sry «առաջին», բառացի «այն որ գլուխն է»), առաջնորդ և վերջապէս յաջորդ, ուր յ և որդ մասնիկ են, հմմտ. նախորդ:

= Բնիկ հայ բառ՝ հնխ. sədhyo- կամ sādhyo- «ուղիղ» ձևից: Սրա արմատն է sādh- կամ sədh-, սորին ձայնադարձը sidh — «ուղիղ նպատակին դիմել». ժառանգներն են սանս. sādhati «յաջողեցնել, կարդի բերել, բարգաւաճ դարձնել», sādhú «ուղիղ, կանոնաւոր, լաւ, պատրաստ, կարգին», sidhyati «նպատակին հասնիլ, յաջողիլ», sidhrá— «յաջողակ», sadhis- «նպատակ, տեղ», sādhyá- «յաջողակ, կարգին, նպատակին հասած», գնդ. hāiδišta- «ամէնից բարեյաջող», hādrōyā- «նպատակին հասնելու ցանկութիւն», āsna- (*ā-zdh-na-) «յաջողակ, գործունեայ, կըտրիճ», յն. ἰθύς «ուղիղ գծով գնացող, ուղիղ», ἰθύτ «ուղղակի», ἰθύνω «ուղիղ գծով վարել», ἰθνω «ուղղակի վազել, սաստիկ փութալ» (Pokorny 2, 450, Boisacq 370): Հայերէնի ձևով ամենից համապատասխանն է սանս. sādhyá-: Հնխ. նախաձայն s-ի անկման օրինակ է ազ<sā'ld, dhy>ջ ձայնափոխութեան համար հմմտ. հնխ. médhyos>մէջ: Նշանակութեան զարգացումը ճիշտ նոյն է, ինչ ֆրանս. droit «աջ»<լտ. directus «ուղիղ» բառից և ո՛չ թէ հակառակը. այսպէս նաև պրս. راست rast «ուղիղ. 2. աջ»:

Ուղիղ մեկնութիւնը տուաւ Liden, Arm. Stud. 75:

Peterm. 26, Böttich. ZDMG 1850, 350, Arica 81, 354, Justi Zendsp. 150 են այս բառը կցում են ընդհանուր հնդեւրոպական *deks- արմատին, որ գրեթէ բոլոր լեզուների մէջ կայ. ինչ. սանս. dákšiṇa, գնդ. dašinō, յն. δεξιός, լտ. dexter, լիթ. deszinė, հալ. desĩnŭ, գոթ. taihswa, հբգ. zēso, հիւլ. dess, ալբան. djatș, բոլորն էլ «աջ», բայց հայերէնը, ինչպէս ցոյց է տալիս Lagarde, Arm. Stud. § 176, չի կարող կցուիլ սրանց, որովհետև նախաձայն d-ի անկում չկայ հայերէնում. Տէրվ. Երկրագունտ 1883, էջ 178—9 գարձեալ նոյն մեկնութիւնն է տալիս և ենթադրում հնագոյն աջ «հրթիռ» իմաստով մի արմատ: Մորթման ZDMG 1872, էջ 518 խալգ. azi «աջ», իսկ Jensen IF Anz. 14, 52 և ZA 1904, 183 հաթ. s'i ձևի հետ է համեմատում: Հիմնք. հանում է ողջ բառից: Patrubány SA 1, 214 վերադառնում է dakšina-ին և *աոջ կամ *առջ ձևի միջոցով դուրս է բերում աջ. իսկ ZA 1905, 253 ենթադրում է թէ հնխ. deks շրջուել է odks, որից հյ. աջ: Pedersen, Հայ. դր. լեզ. 156 համեմատում է յն. ἄξιος «արժանի» բառի հետ. Lidén, Arm. Stud. 75 հանում է հնխ. sādhio ձևից. հմմտ. սանս. sádhati, sádhnōti «յաջողիլ, յաջողեցնել, կարգաւորել», sadhàyati «յաջողիլ, նպատակին հասնիլ, առանալ», sādhaka «յարմար», sādhu «իրաւացի, ճիշտ, լաւ, գեղեցիկ, առոյգ, ախորժելի», գնդ. hāidišta «նպատակայարմար», āsna «յաջող, յաջողակ». Նշանակութեան տարբերութեան համար հմմտ. գերմ. recht և հհիւս. hogri «աջ և իրաւացի»:— Այս մեկնութեան է հակառում նաև Meillet (անձնական). Karst, Յուշարձ. էջ 426, 429 թաթար. yak, yag, sak, sag, sav «լաւ, աջ» և թրք. saγ «աջ» բառերի հետ:

Brosset JAs. 1834, 383 են, որից նաև Չուբինով իր վրացերէն բառարանում (ա. տպ.) հյ. աջ բառի հետ համեմատում են վրաց. մարջվենի հոմանիշը, մարջուկ «աջ կողմ» (լազ. marjguani աջ). իսկ նախաւոր մար- մասի համար յիշում են վրաց. მარცხენა մարցխենա=հյ. ձախ: Գրեթէ նոյն է Մառ ИАН 1913, 419, որ հայ ձևի մէջ գտնում է վրացի բառի ջ ձայնը՝ իբրև մնացորդ յաբեթական ջուն=սեմ. ymn «աջ» արմատի: Հայերէնին աւելի մօտիկ ձևեր կան կովկասեան միւս լեզուներում. ինչպէս՝ ուտ. mɔm, կիւր. էրշի, լակ. ишуа, տաբ. ирҷул

«աջ», բոլորն էլ պատահական, ինչպէս նաև մանչուր. ičі «աջ»։

ԳԻՒՌ.—Ամն. Գոր. } Երև. Ղրբ. Ոպմ. Զղ. Սեբ. Սլմ. Վն. Տփ. } աչ, Մկ. աչ, Ալշ. Մշ. աճ, Ասլ. աչիւգ, աչիւ*, Ագլ. յեօջ. Հճ. եջ'չ'իգ, միւսները գործածում են ձախ. սաղ համանիշը։ Նոր բառեր են աջերես, աջաճամբոյր, աջել «յաջող երթալ, յաջողիլ»։

+Ա.Ռ. նախդիր կամ նախադրութիւն, որ զանազան հոլովներով զանազան նշանակութիւններ է ստանում. ինչ. կողքին, դէպի, դէմը, առջևը, համեմատութեամբ, համար, պատճառաւ, օրով, ժամանակին, մի բանի տեղ կամ փոխարէն ևն։ Սրանց համար օրինակներ և վկայութիւններ տե՛ս ՆՀԲ։ Շատ սովորական է բառակերտութեան մէջ, ուր դրւում է բառասկզբում կամ մի նախդիրից յետոյ. ինչ. առ-աձց, առ-աձնին, առ-ողջ, առ-հաւատչեայ, առ-կայծ, առ-ընթեր, առ-աւել, առ-ակուռք, յ-առ-աջ, զ-առ-աձցել, զ-առ-ի-վայր ևն։ Յունարան հեղինակների մօտ դարձել է յն. πρός ձևին համապատասխան նախամասնիկ, որով կազմուած են բազմաթիւ բառեր. ինչ. առ-բերան=յն. προστόμιον, առ-բերել =προσάγω, առդնել=προστίθημι, այսպէս և առոգանութիւն, առարկայ ևն։

= Հնխ. par-ձևից, որի բունն է *perə- «առաջի». այս բառը ներկայանում է բազմազան ձևերով, որոնցից հայերէնի ամէնից աւելի համապատասխանն է յն. παρ-, παρά. սա էլ մեր բառի պէս զանազան հոլովներով նշանակում է «կողքին, դէպի, դէմը, մէկից, միջոցով, համեմատութեամբ» ևն. հմմտ. նաև սանս. párā, param «յայնկոյս, անդին», purás «առաջ», գնդ. parō, յն. πέρα «յայնկոյս, անդին», լտ. per, pro-, prae, հիւլ. ar «առջևը» (օր. գոլ. Are-morica=հլ. առ-ափնեայ). հիթիթ. piran «առջևը» ևն, որոնց վրայ տե՛ս Walde 574—5 հպրուս. prei, լիթ. prẽ, հսլ. pri «մօտը, կողքին» (Ernout-Meillet 764, Pokorny 2, 35, Boisacq 746)։ Հլ. առ ձևի կրկնակն է երա-, որ տե՛ս երախայրի բառի տակ։

ՆՀԲ լտ. ad, հիւլ. ar։ Windisch, 40 գոթ. us, հրգ. ar, ir, er ձևերի հետ։ Lagarde, Urgesch. 9 հլ. առ նախդիրը գտնում է լտ. ar-cesso «մօտ կանչել» բայի մէջ։ Pictet BVS 2, 90 հիւլ. ar, air, օսս. ar, er, վեդ. āra, ārē, ārāt. Lagarde, Arm. St. § 177 սանս. ṛṇa, գնդ. ərəna, պրս. ɔ rā (մասնիկ անորոշականի, որակականի և հայցականի)։ Մորթման ZDMG 26, 541 տոսպական akkar ձևի հետ, որ մնում է առ կամ ազարակ։ Καρλίδης, Γλ. συγκρ. ἑλλ. 1ές. 69 յն. ἄρι, ἔρι աստիճական մասնիկ և կապադովկ. ἀραβάϊ «սա, այս»։ Ուղիղ մնկնութիւնը տուաւ Meillet MSL 7, 165 և Esquisse 69, Karst, Ծուշարձ. 401 սումեր. kara «առջևը», 406 սումեր. ra «դէպի»։ Justi, Kurd. Gram. էջ IX գնդ. frā, պրս. far-, քրդ. hel, օսս. ar, är ձևերի հետ։

ԳԻՒՌ.— Ղզ. Ղրբ. պահուած է առիս, առիտ, առին «մօտս, մօտդ, մօտը» (քովս, քովդ, քովը) ձևերի մէջ. սրանցից առաջինը գրաբարի առ իս ձևն է, որ միացած և մէկ բառ է կազմած, իբր թէ ուղղականը լինէր առի և ս դիմորոշ յօդ. այսպէս ըմբռնելուց յետոյ՝ շինուած են միւս ձևերը՝ առիտ, առին, յգ. առընէրս, առընէրտ, առընէրը «մեզ մօտ. ձեզ մօտ, նրանց մօտ»— Նոյն առ մասնիկը պահում են նաև առատամ, առափ, առկող, առնկող, առնստիկ են գաւառական բառերը։

+Ա.Ռ. ի հլ. «առնելը, գրաւում, յափըշտակութիւն, կողոպուտ, աւար, կահ-կարասիք» ՍԳր. Ոսկ. ես. Եւս. քր. Եփր. Թգ. բայական ձևն է առնուլ «առնել, ձեռք բերել, կրել, հանել, գրաւել, նուաճել, խլել, ձեռնարկել, սկսիլ, այնպէս մեկնել կամ հասկանալ ևն» ՍԳր. Ագաթ. Սղն. Բուզ. Սեբեր. Ոսկ. բառակազմութեան մէջ մտնում է առաջին ձեւով. ինչ. առևանգել Եւս. քր. առուրևառ «(շունչ) առնել-տալը» Ագաթ. «վաճառականութիւն, առուտուր» Պիտ. «հեղնակցութիւն, խօսակցութիւն» Խոր. Փարպ. առուրևառիկ Ոսկ. մ. ա. 1, բ. 10. Եփես. առուրևառութիւն Ոսկ յհ. բ. 39. անառ Լաստ. Արծր. կամ անառիկ Ոսկ. ես. առևգնաց առ-

նել *Սեբեր.* առուկ «յափշտակող» *Եփր. բ. կոր.* առեանառու *Խոր. Մագ.* վրիժառու *Առ որս. Նար.* խորշակառ «խորշակից զարնուած» *Ոսկ. մ. գ. 8.* դիւրառու *Ոսկ. ես.* քափառիլ *Երեմ. լա. 22. Սիր. Բ. 7. Եզն.* աշառել *ՍԳր. Սեբեր.* ակնառութիւն *ՍԳր.* անաշառ *ՍԳր.* անաշառելի *Ոսկ. յհ. ա. 31.* սրտառուչ *Ոսկ. Բուզ. Կորինթ. Սեբեր. Եզն.* ոտնառիլ *Եզն. Ոսկ. մ. ա. 5.* չուրջառ *Պարզ. Մաշտ. (գրուած յետնաբար չուրջալ Առաք. պատմ. 402, որի հետ հմմտ. Ննխ.* սուրչար, սուրչալ). գայլառ «գայլից յափշտակուած» *Կանոն.* շնառ «շնից յափշտակուած» *Կանոն.* մարդառու «մարդ խածնող (ուղտ)» *Եփր. ծն. էջ 45.*— առն- ձևից են կազմուած առնլի «առնող» *Կանոն.* առնումն «առնելը» *Երզն.* մտթ. Նոր գրականի մէջ բայական ձևն է առնել և ոչ բնաւ առնուլ, ըստ որում -ում յօրդուիթիւնը չնչուած է նոր լեզուի մէջ։ Միայն Միխիթարեաններն են, որ անբմբռնելի պահպանողականութեամբ շարունակում են դեռ առնուլ «առնել, վերցնել» ձևը թէ՛ իրենց գրուածքների և թէ խօսակցութեան մէջ։

=Հնխ. ar- արմատից, որի միւս ժառանգներն են յն. ἄρνυμαι, կտ. ἀρόμην «առնել, շահիլ, վաստկիլ, ստանալ, ձեռք բերել», հաթ. arnumi «առնում, գրաւում», սանս. ṛnomi «առնեմ»։—*Հիւբշ. 420*; *Տե՛ս* Boisacq *80* և Pokorny *1, 76—77*. վերջինս այս խմբից դուրս է հանում սանս. ṛṇómi «հասնիլ, ձեռք բերել, ստանալ», որ դնում է er-, or- «շարժիլ» արմատից, և ընդհակառակը միացնում է գնդ. ar-, ներկ. ərənav- «երաշխաւորել», frā մասնիկով՝ frərəta- «ընծայաբերութիւն, գոհի մատուցում»։ Brosset, JAs. XIV (*1834*), *էջ 369—405* համեմատում է սանս. harati և վրաց. aleb բառերի հետ։ ՆՀԲ առն բառից, իբր «առնաբար»։ Peterm. *30, 34* սանս. ṛ։ Lagarde, Urqesch. *194* առնել «առնել» բառի հետ առ արմատից. հմմտ. յն. ἄρνυμαι, ὄρνυμι, ἀραρίσκω։ Աւելի լաւ է Lag. Arm. Stud. § *193*, որ լիշում է միայն յն. ἄρνυμαι, ἤραρον։ Bopp, Gram. comp. III *106* սանս. ṛnāmi. *Մորթման* ZDMG *26, 564* խալդ. arniu, *561* arubi, *543* aruni, *613* ariean ձևերի հետ։ Karst, *Յուշարձ. 406* սումեր. ra «հետ առնել, բռնել»։ *Մատիկեան ՀԱ. 1919, 32* հաթ. arnumar հոմանիշի հետ։ *Թիրեաքեան, Աբիհայ բռ. 63* նոյն ընդ. ապուռ, աւար, աւեր։

Գիւմ.— *Զթ. Սչ.* առնուլ, *Ալշ. Մշ. Զղ. Սլմ. Վն.* առնել, *Ախց. Կր. Մրղ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* առնէլ, *Երև.* ա՛ռնէլ, *Ասլ.* առնէ՝լ, *Ագլ. Ակն. Խրբ. Մկ. Շմ. Ոզմ. Տիգ.* առնիլ, *Հճ.* արնել, *Տփ.* ա՛րնիլ, *Համշ.* առնուշ, *Հնդ.* առուլ, *Ղրբ.* ի՛նքօնիլ (=ինքն առնուլ)։ Ատանայի Բրքախօս հայերն ունին սրճնաւ «շուրջառ»։— Նոր բառեր են առնուիլ «համբերնալ», առնուորիլ, առէգ «շրջիկ մանրավաճառ», առֆ, առոց, առնելիֆ, առնելիֆուր, առուճակ, առուփախ ևն ևն։

+ԱՌԱԳԱՍՏ, ի, ի-ա հլ. «վարագոյր, վերեւից ներքև ձգուած ծածկոց, հարսանեկան սեննակ, նաւի առագաստ» *ՍԳր. Վեցօր. 129.* «աչքի թաղանթ» *Նիւս. կազմ.* «ստոծանի» *Նիւս. բն.* որից առագաստել «պարփակել, ծածկել, պահել» *ՍԳր. Կոչ. Ագաթ. Եփր. ծն. Ոսկ. յհ. ա. 12.* առագաստաձև *Վեցօր. 166.* անառագաստ «չծածկուած, բաց» *ՍՀ. կԲ. արմաւ.* ևն։ Նոր բառեր են առագաստանաւ, առագաստակալ, առագաստաւոր։

=Կազմուած է ագ *արմատից՝* առ և աստ *մասնիկներով. տե՛ս* ագ-անիմ «հագնիլ» *բառի տակ.* առ և աստ *մասնիկների համար էլ հմմտ.* առ-աջ, առ-էջ, զ-գաստ, զ-գեստ, իմ-աստ ևն։—*Հիւբշ. 411*։

Այս մեկնութիւնը տուաւ նախ ՆՀԲ։ *Նոյնն ունին նաև* Lagarde, Urgesch. *613, Տէրվ. Նախալ. 125 (իսկ Տէրվ.* Altarm. *80 համեմատում է գօտի, պարեգօտ, առիգած, զգեստ ևն ձևերի հետ)։ Մորթման* ZDMG *30, 424 մեկնում է* arh «մարդ, ամուսին»+kasd «կին». վերջինիս հետ հմմտ. Վանեան բևեռ. gistiau «հարս», քրդ. kiž, kič «աղջիկ», յն. Κασταύνειρα «Պրիամոսի կինը»։ *Հիւնք.* առաստաղ *բառից*։

ԳԻՒ.— Երև. **բռա՛ֆաստ** *«հնձանի կամ տան մէջ այն մասը, ուր խաղողն են կոխում՝ գինի հանելու համար»։*

ԱՌԱՔՈՒՐ *տե՛ս* **Աքուր**։

+ԱՌԱՁ *(յետնաբար ի, ո հլ.) «երկնային ներշնչում, յայտնութիւն, տեսիլ. 2. աստուածային սպառնալիք, պատգամ» ՍԳր. յետնաբար «սուրբ հայրերի պատուէրները, բարոյական վճիռ կամ իմաստասիրական ճշմարտութիւն» Սահմ. Ասող. Նար. նոր գրականում ունի միայն «proverbe, пословица» նշանակութիւնը, որից* **առածանի, առածապատում** *են։*

= Կազմուած է **-ած** *մասնիկով* **առ-ն-ուլ** *բայից (համմտ.* **արար-ած***), ճիշտ ինչպէս հոմանիշ յն. λῆμμα «ստացած բան, շահ. 2. իմաստասիրական առած. 3. ներշնչում, մարգարէութիւն» կազմուած է* λαμβάνω*«առնել» բայից։*

Այս մեկնութիւնը ծանօթ էր արդէն հներին. համմտ. Դ. Թագ. Բ. 25 «Ես Տէ, առ ի վերայ դորա զառածս զայս». Գէ. ես. «Առած կոչեն զազդումն մարգարէական շնորհացն, զի զոր ինչ առնուին ի Հոգւոյն, զայն խօսէին»։ Նոյն մեկնութիւնը տալիս են նաև ՀՀՒ, ՆՀՒ, ՋՒ, Lagarde, Arm. St. *§ 179,* Bugge KZ *32, 44։* Müller SWAW *66, 269* ձևով *նոյն է դնում սանս.* rāǰi, *զնդ.* rāza, *իսկ նշանակութեամբ զնդ.* rāzarə *«կարգ»։ Տէրվ.* Altarm. *91 կազմուած առ մասնիկով, նոյն ընդ* առակ*։ Մառ* ЗВО *5, 316 պհլ.* andāzak *«չափ» բառի հետ։ Հիւնք.* առակ *բառի հետ։ Մաքսուդեան,* MSL *17, 356 բաժանում է* առ-ած *և* ած *համարում է* ասել *բայի հնագոյն ձևը, իբր լտ.* ad-agium *(տե՛ս* ասել*)* Meillet *ևս դնում է ըստ Մաքսուդեանի* առ-ած *(*ասել *բայից). տե՛ս* Ernout-Meillet, *էջ 29, Մառ* ИАН *1917, 329 նոյն ընդ* առակ *և ավար.* ra'i *«խօսք»։*

ԳԻՒ.— Ազլ. Ախց. առած*, Ալշ.* առած*։*

ԱՌԱՁ *«քթոց կամ քաղաքակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 29։*

+ԱՌԱԿ, *ի-ա հլ. առաջին և նախնական նշանակութիւնն է «օրինակ» և ըստ այսմ շատ անգամ գործածւում է* **օրինակ** *բառի հետ միասին. ինչ. Որ է առակ օրինակի. Գաղ. դ. 24. Որք առակաւ և օրինակաւ պաշտէին. Երր. ը. 5. Առակ օրինակի. Կոչ. ժա. Առակ օրինակի լինէր տեսողացն. Եւս. պտմ. ղ. կամ պարզապէս՝ Առակ մի կամիմ ասել բանիցս ասացելոց. Կոչ. ժա. Գնդեցան ջրոյն առակաւ. Նար. Զիթոյ առակաւ ընդ ոսկերս բաշխի. Նար.— 2. Սրա աւելի ցանձրացեալ նշանակութիւնն է «դիտելու բան, տեսնելու առարկայ». Որպէս յառակն ամենեքեան զարմացմամբ հային. Լմբ. սղ.— 3. Ուրիշներին իբր օրինակ դրուած առարկան սովորաբար բացասական տիպ է լինում. գողը, անառակը, աւազակը մանէին ածում ժողովուրդի մէջ, որպէս զի նրանից օրինակ առնելով՝ չարից հեռանայ և բարիին հետևի. բայց սրանով իբր օրինակ դրուած առարկան լինում էր «ծանակ, նշաւակ, խայտառակ». առաջ լրացուցիչ բառով ասում էին՝ Առակ օրինակի խայտառակութեան. Նորագիւտ բ մնաց. է. 20. Առակ խայտառակութեան յետնոց թողեալ. Գ. մակ. բ. 3. Զի մի՛ ծանակ և առակ լինիցիմք. Առակ և ծանակ արար. Ոսկ. ես. Բայց յետոյ կարելի եղան պարզապէս ասել՝ Առ առակէ շրջեցուցանէին. Բ. մակ. ը. 10.— 4. Օրինակը փոխանակ ցանձրացեալ մի առարկայ լինելու՝ կարող է նրա պատկերը լինել, այսինքն «փոքր պատմութիւն՝ ուր կայ մի բարեխրատ օրինակ» ՍԳր. (առէպ).— 5. Երբ առակը պարզ չէ և նմանութիւնը դժուարըմբռնելի, այն ժամանակ նա դառնում է «առեղծուած, հանելուկ» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 40. բ. 21։— 6. Իսկ երբ ամփոփուած է մի շատ կարճ ձևի մէջ, համարւում է «առած, ասացուած» Ա. Թագ. ժ. 12. Ագաթ։— Այս այլևայլ նշանակութիւններից բխում են հետևեալ բառերը.* **առակագիր** *Ոսկ. ես.* **առակաբանել** *Ագաթ.* **առակախօս** *Ագաթ.* **առակական** *Ոսկ. ես.* **առականի** *Մագ. ոտ.* **առակապատում** *Ջքր. կթ.* **առակարկու** *Թուղթ իա. 27.* **առակել** *«առակով պատմել, նշանակել, ցոյց տալ, խայտառակել, նշաւակել» ՍԳր.* **անառակ** *ՍԳր.* **անառակութիւն** *ՍԳր. Եզն. Փարպ.* **անառակագնաց** *Ծիր. դ. 240.*

խայտառակ ՍԳր. առակաճ «խայտառակութիւն, ծաղր» Ոսկ. մ. ա. 4, բ. 18 և ես. «ամօթոյք» ՍԳր. Եզն. մերկառակ «մերկ և խայտառակ» Եփր. վկ. արև. էջ 35 (ՆՀԲ և ԱԲ չունին, որովհետև Սոփերք Ի 34 նոյն բառը ունի մերկ առակ և կողոպուտ ձևով)։

=Կազմուած է ակն «աչք» բառից՝ առ նախդիրով. սակայն այստեղ առնուած է բառի հնագոյն արմատական ակ<հնխ. ǒki ձևը. ակն, ական ձևը երևան է գալիս առակաճ բառի մէջ, ինչպէս նաև առականել «ծածկել, գոցել» բառի մէջ, որոնք նոյն կազմութիւնն ունին։ Առակ բառի նշանակութեանց զարգացման հետ կատարեալ նմանութիւն ունի արաբ. مثل maθal, որից բխում են امثلة maθalā «օրինակ, դոր օրինակ», مثل miθl «նմանն», مثل maθul «առակ, առած», تمثيل tamθīl «նմանեցնել, առակն իբր օրինակ բերել»։

ՆՀԲ անառակ բառի հետ լծորդ է դնում առակ և թրք. ատ, ըրգ «ամօթ», իսկ առակել՝ լծ. լտ. arguo «յանդիմանել» (տե՛ս այս բառը). Lagarde, Anmerkungen 73 հյ. առնուլ բառից, իբր թարգմանաբար ասոր. aṯḏā բառից, որ ծագում է aṯḏ «առաւ» արմատից։ Մերժում է Lag. Arm. St. § 180։ Տէրվ. Altarm. 91 առ մասնիկով, նոյն ընդ առած։ Մառ ЗВО 5, 316 պհլ. andāzak «չափ» բառի հետ։ Հիւնք. ակն «աչք» բառից, իսկ անառակ՝ առակ բառից։ Patrubány SA 1, 215 սանս. pra-karī «երգի յորդորակ», prakarana «արտադրութիւն, ստեղծումն»։ Մառ ЗВО 22, 71 արմատը դնում է առա, որից բարդուած է առասպել. իսկ ИАН 1917, 329 նոյն ընդ առած և ավար. ra'i «բառ»։

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Երև. Կր. Ղրբ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. առակ, Ակն. Խրբ. Հմշ. Մշ. Ննխ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. առագ, Տփ. առակ, ՋԹ. առօգ։ Այս բոլորը նշանակում են «առակ, վիպակ»։ Բայց ունինք նաև Վն. առակ «խայտառակ», Պլ. առգօց առագ «շատ խայտառակ», առագել «նախատել, խայտառակել», Մկ. առակիլ «խայտառակել», Ասլ. առայ «նշաւակ, ծանակ», առրգել «ծանակել», Ագլ. բորկո՛բիճ «խայտառակութիւն» (հիմայ անգործածական դարձած հին ձև), համմտ. նաև առկէ ելնել Ննխ. «ամօթը կորցնել», առկէ ճաճել Ննխ. «լրբացնել», առկուիլ Ակն. «իրար հետ անճոռնի կատակներ անել»։ Անգորայի Բրբախօս հայերն էլ ունին առագ, առաջ «առակ, վիպակ»։— Անառակ բառը պահած են Ալշ. Ախց. Երև. Շմ. Ջղ. Վն. անառակ, Ակն. Խրբ. Մշ. Պլ. Ր. անառագ, Ասլ. անառայ, Տփ. անառակ, ՋԹ. անառօգ։ Նկատելի է, որ արևմտեան բարբառներում անառակ նշանակում է «չար, անհանդարտ», իսկ արևելեան բարբառներում «անբարոյական, լկտի, պոռնիկ». գրաբարում երկուսի միջինն է՝ «զեղխ, շռայլ»։ Ոզմեցոց մէջ զարմանալի ձևափոխութեամբ անառակ նշանակում է «խելօք, իմաստուն, որ ամաչելու բան չունի», իսկ առակօտ «անառակ»։

ՓՈՒԽ.—Վրաց. არაკი արակի «առակ, պատմութիւն», არაკობანი արակոխանի «առասպելական», საარაკე սաարակե «առակալին», մինդր. არაკი արիկի «հէքեաթ»։

ԱՌԱԿՈՒՈՒԿ «հակառակող, դիմադարձ». այս բառը ունին միայն Բառ. երեմ. էջ 29, ՀՀԲ (ըստ Հին քերակ.) և ՓԲ (առկուուկ ձևվով)։ Միակ վկայութիւնը տալիս է Միսբան (Գալուստ Տէր-Մկրտչեան), Գորիա և Շմոն, Վղրշպտ. 1896, էջ 21 «Ասէ Թագաւորն. Մի՛ կար ի յամառութեանդ և առակուուկ ընդդէմ Թագաւորութեանս իմոյ, զի մի՛ մեռցիս». (տե՛ս Վկայութիւն Սրբոյն Յակոբայ Թագաւորացն, որ վկայեաց տանջանօք ի Բելապատ քաղաքի ի մէջ Խուժաստանի, Ճառընտ. ա. և բ. տպ. Վենետ. 1874. Վարք և վկայաբանութիւնք սրբոց, հտ. Բ. տպագրի մէջ բառը ուղղուած է նակառակ, ըստ Միսբանի բնագիրն ունի առակուուկ)։—Այս բառի հետ արմատակից է առակուուկ (Ներգ. յառակուուս) «հակառակութիւն», որ մէկ անգամ գործածուած է նոյն ես. Ոսկ. յհ. ա. 3 «Լինդէ՞ր բնաւ, յորժամ իշխան զմեզ զգուեն ինչ և կամ թշնամանեն ինչ, չբարկանամք. զի չիշխեմք յայնմ սաստից, որ հաւասար և առաւել ևս կան յառակուուս (այսպէս տպ. էջ 58, ըստ ՆՀԲ առակուուս կամ առկուուս) մեր՝

քան զսրամտութիւն բարկութեանն» (յն. ո՞չ ապաքէն, դի երկիւղ զուգակշիռ կայ կրից՝ զմեզ ահացուցիչ)։

*=Ըստ իս կազմուած է առ նախդիրով՝ արմատական *ակռուկ ձևից, որ գտնում ենք առանձին վանի բարբառում ակռկիլ բայի մէջ. այս բառը նշանակում է «կառչիլ, իլիշմիշ ըլլալ». բայց ռճով առում է օձիքին ակըռկիլ, մէկին ակռկիլ «մէկի հետ բռնուիլ, հետը կռուիլ»։—Աճ.*

ՆՀԲ առակռուիճ մեկնում է «առկռունս, առ կռան, ի բառէս կուռն, ի թիկանց, կռնակը, գլխուն վրայ կեցած և կամ առ կիրս»։ ՋԲ դնում է առակռուիճ կամ առկռուճան «հակաքարշ, տճկ. տէնկ, իտալ. contrappeso»։ ԱԲ ջնջել է այս բառերը։ Միաբան (անդ) մեկնում է «հակառակ, խայտառակ» և հանում է առակ բառից։

ԱՌԱՄԲԱՒՈՐ. *անստոյգ բառ. ունի միայն Բառ. երեմ. էջ 97 հյց. զառամբաւոր «զանցաւոր» ձևով. բայց հմմտ. նաև էջ 123 ժամանակամբոյր «անցաւոր»։*

ԱՌԱՆՁԻՆ *տե՛ս Անձն։*

ԱՌԱՆՑ *տե՛ս Անց-անել։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Կր. Ղրբ. Մրղ. Ննխ. Շմ. Սեբ. Սչ. Սլմ. Վն. Տիգ. առանց, Ջղ. առանց, առանցի, Հճ. Տփ. առանց, Ակն. առօնց, Հմշ. օռօնց, Ագլ. Խրբ. ըռընց, Յղ. ըռռունց, ուռռունց, Ղրդ. ուռռուց, Ասլ. ըռաշ։

ԱՌԱՇՈՊ *տե՛ս Աշոպի։*

ԱՌԱՊԱՐ, *ի-ա հլ. «քարուտ կամ դժուարուտ տեղ» ՍԳր. եփր. աւետ. 274. որից առապարին «քարուտ տեղեր բռնող (ծառ)» Վեցօր. 103. առապարածոր, առապարասէր Փարպ.։*

ՆՀԲ «որ և յներբ. և ըստ ոմանց ի յն. գրի առապա, առավա, գուցէ որպէս զկողմանս Ապառաժ Արաբիոյ. տե՛ս և աւիր կամ առաւիր». յետոյ Փիլ. լին. դ 111 մի ձեռագրի մէջ յառապարի և մի ուրիշ ձեռագրի մէջ էլ առ յապարի գտնելով, ապար համարում է ապառաժ և առապար բառերի արմատը։ Հիւնք. ճանապարհ բառից։ Սարգսեան տե՛ս առաճեռ բառի տակ։

ԱՌԱՋ, ԱՌԱՋԻՆ *տե՛ս Աջ։*

Հներից Համամ. քեր. 268 առաջին բառը կազմուած է համարում առ նախդիրով։ ՆՀԲ առաջ, առաջին են հանում է աչ բառից կամ դնում է լծ. յն. ἀρχαῖος, ἀρχή (տե՛ս ՆՀԲ ճիճ և սկիզբն բառերի տակ)։ Peterm. *162* առաջին *համարում է առ մասնիկով աջ բառից, ինչպէս յն. πρῶτος «առաջին» ծագում է πρὸ-ից։* Müller SWAW *41, 11 արամ.* רֹאשׁ raš, *արաբ.* رأس ras *«գլուխ, գլխաւոր» բառերի հետ, իսկ* WZKM *9, 299 մերժում է իր այս մեկնութիւնը և դնում է առ+աջ (իմա՛ աչք) հմմտ. յն. πρόσωπον, ἐνώπιον։ Մորթման* ZDMG *26, 493* առաջի=*խալդ.* ardizi։ *Տէրվ. Նախալ. 134* առաջին՝ *սանս.* pra-thama, *լտ.* pri-mus *են ձևերի պէս առ մասնիկով։ Մառ* ЗВО *5, 318* առաջ, առաջին, աջ *և* եռաչխ *կցում է զնդ.* daŝina, *պհլ.* daŝn *«աջ» բառերին։ Հիւնք. աջ բառից։* Bugge KZ *32, 3, յն. ἀρχή ձևի հետ հայերէնի մէջ երկրորդ ա յաւելուած է։ Սանտալճեան,* L'idiome... *12* առաջին *բառի արմատը դնում է չի=խալդ.* sibi. *Նոյն բան է նաև Բազմ. 1904, 498, ուր համեմատում է ուրարտ. չի, սի ձևի հետ։* Patrubány SA *1, 187* առա *=հնխ.* pro-, *իսկ չ աւելացրած է նմանութեամբ մէջ բառի։ Նոյն, անդ էջ 314 հունգ.* ós *«շատ հին, վաղեմի» մեր բառից փոխառեալ է դնում։* Pedersen, *Հայ. գր. լեզ. 91* առ *նախդիրով կազմուած և չ մասնիկ, ինչպէս վեր-չ։*

ԳԻՒ.—Ագլ. յա՛ռաջ, ա՛ռաչ, Ախց. Գոր. Երև. Կր. Հմշ. Ղրբ. Ննխ. Շմ. Պլ. Սչ. առաչ, *Տիգ.* առաչ, էռաչ, *Ալշ.* յառէչ՛, *Ջղ.* յառէչ, *Մկ.* ճռառաչ, *Մշ.* յառաճ, *Խրբ. Սեբ. Սլմ.* ռռռչ, *Մրղ.* ռռռչ, *Վն.* ռռռճ, *Տփ.* ա՛ռաչ, *ՋԲ.* էռռչ, *Ակն. Ռ.* էռէչ, *Ասլ.* ռռռչ, *Հւր.* հառաչկ։—*Հճ. բառիս կրկին նշանակութեանց մէջ տարբերութիւն դնելով՝* առօչ *«տեղով առաջ»,* առաչ *«ժամանակով առաջ» (ֆր.* devant *և* avant, *բրք.* ön *և* ilk). *—Կորուսման կանոնին ենթարկուած են՝ Ջղ.* առջ՛ի, յառջ՛կին, առջ՛նէկ, *Ախց. Ննխ. Պլ.* առջի, առջէվ, *Սլմ.*

mոչեվ, *Տփ.* ա՛րչի, ա՛րչիվը, *Ասլ.* mոչի, *Ակրն.* էոչէվ, *Մշ.* ֆառջ՛եվ, *Ալշ.* ֆառջ՛եվ, *Հճ.* արջ՛եվ, *Գոր. Ղրբ.* բոա՛չին, *Վն.* mոճին, *Ոզմ.* ճէրչիվ, *Մկ.* ճէրճիվ, *Համշ.* այչիվ, այչի, *Ագլ.* բորչկի՛, բոջրճէօ՛կ, *Հճ.* արջ՛mեճեգ «առջիննկ»։— Նոր բառեր են առաջակապ, առաջկտուուկ, առաջուց, առաջտուն, առաջ՛, առաջֆալուծ, առաջօֆ, առջնդարձ ևն։

ՓՈԽ.—Յոյները և ռումինացիք ունին արցիվո՛ւրիօն (ἀρτζιβούριον), արցի՛վուրցի (ἀρτζίβουρτζι), արթզֆօռթզ են ձևով բառեր, որոնք փոխառեալ և յարմարեալ են մեր **Առաջաւորաց Պահոց անունից, որի վրայ այլակերպ առասպելներ են պատմում։ Առասպելի հնագոյն վիճակը գտնում ենք ճառ ընդդէմ Հայոց խորագրով յունարէն ընդարձակ մի գրուածքի մէջ, որ վերագրւում է ԺԱ—ԺՒ դարից Սահակ անուն մի հայ կաթուղիկոսի, բայց հաւանօրէն Եւտեմիոսի (ԺՒ դարից) կամ Կալլիստոսի (ԺԴ դարից) խարդախութիւնն է (տպ.** Migne, Patr. gr. *հտ. 132)։ Այս ճառի մէջ մի առանձին գլուխ կայ՝ որի վերնագիրն է* Περὶ τῆς σατανικῆς νηστείας τοῦ ἀρτζιβουρίου *(Յաղագս դիւական պահոց արցիվուրի, Ա. գլ. ժդ)։ Ահա թէ ի՛նչ է պատմւում յիշեալ գլխում. «Սարգիս անունով մէկը, Հայոց մոլորութեան վարդապետ, մի շուն ունէր* **արցիվուր** *անունով։ Սակայն այս բառը նշանակում է «առջևից գնացող»* (առաջաւոր)։ *Սարգիսը սատանայի ազդեցութեամբ այս շունը գործ էր ածում իբրև իր դալստեան աւետարեր և յայտարար, ամէն անգամ՝ երբ մի գիւղ, մի քաղաք կամ մի ուրիշ տեղ երթար, ուր իր մոլորութեան ժանտախտից բռնուած աշակերտներ էին բնակում։ Երբ սրանք տեսնում էին շանը, յաջորդ օրը թափորով մի քանի մղոն տեղ ընդառաջ էին գնում իրենց վարդապետին։ Մի անգամ՝ երբ շանը սովորական պաշտօնով մի տեղ ուղարկեց, գալլերը ճանապարհին պատառեցին նրան։ Սարգիսը երկրորդ օրը գնալով նոյն տեղը և տեսնելով որ ոչ ոք իրեն ընդառաջ չի եկել, ինչպէս սովորութիւն էր, սաստիկ բարկացաւ։ Երբ քաղաք մտնելով իմացաւ թէ իր յառաջընթաց շունը այնտեղ չէ հասած, մարդիկ ուղարկեց փնտռելու համար և գտնուած ոսկորներից գուշակելով թէ գայլերն են կերել, հրամայեց ամենայն Հայոց՝ որ ամէն տարի, սահմանեալ օրեր, նրա մահուան համար ծոմ պահեն ու մեծ սուգ բռնեն. և այս պասը կոչեց* արցիվուրց պաս»։—Նոյն առասպելը գտնում ենք նաև Աֆթիմիոս Սեկոտաւինոսի Չէն կատարեալ գրքում. *Նիկեֆորոս կալսթասի Պատմութեան և Աբէնքի Միլետիոս արքեպիսկոպոսի Եկեղեցական պատմութեան մէջ, որ Զենատիոս Սքոլարիոս սարկաւագի ձեռքով համառօտուելով տպուած է նախ Զմիւռնիա (1861) և յետոյ արարերէն թարգմանութեամբ՝ Երուսաղէմ (1867), այն ժամանակի յունաց Երուսաղէմի պատրիարք Կիւրեղի հրամանով։ Սրա իններորդ գլխի թարգմանութիւնն ունի Երուսաղէմի Սիօն ամսագիրը (Ջ տարի, 1871, մայիս, թիւ 5, էջ 100), ուր մեր բառը դարձել է յն.* արթզֆոռթզ *կամ* արթզֆոռ։

Առասպելի մի ուրիշ ձևն ունին ռումինացիք, որոնց մէջ բառը դարձել է արցիվուրցի։ *Ռումին առասպելի մէջ* արցիվուրցի *է կոչւում մի հայ աւազերէցի շունը։ Աւազերէցը անտառով անցնելիս մոլորուել և այդ շան միջոցով կարողացել է գտնել ճանապարհը։ Հայերը այդ շունը սրբերի կարգն են դասել և ի պատիւ նրա՝ Ս. Սարգսի բարեկենդանին պաս են պահում և Զատկի թաթախման երեկոյին էլ նրան նուիրուած մի տօն են կատարում (տե՛ս Պ. ք՛Հ. Մամիկոնեան, Ռումանահայոց ներկան և ապագան, Կալաց 1895, էջ 44—45)։*

Արցիվուրի *առասպելի մասին խօսում են նաև Պօլսի «Երևակ» թերթը (1864 մայիս 23, №20, էջ 154), Պօլսեցի յոյն հայագէտ Δ. Τζολακίδης-ի յօդուածը* Ἡ παρ' Ἀρμενίοις πενθήμερος νηστεία Ἀρατζάβορατζ (Հրատ. Ἐκκλησιαστίκη Ἀλήθεια *թերթում, XII, 13 ևն) և վերջապէս Հ. Ց. Աւգերեանի յօդուածը «Արցիվուրցի առասպելն և Ս. Սարգսի տօնը» (Բազմ. 1899, էջ 544—548), որից քաղել եմ Սուտ-Սահակին վերագրուած մասը։—Յոյն աղբիւրներից է յառաջացել ռուս.* арцыву-рiева недыля, *որ* Даль, *1912. Ա. էջ 66բ*

м'ясопустъ է բացատրում. „всеядная, за два недели до вел. поста, мясопустная; постъ у Армянъ въ память Св. Григорія. Греки внасмех говорятъ, что это помять по собаке волхва Сергія, съеденной волкомъ".

*Ա.ՌԱ.ԱՍԱՆ (յետնադար ի, ի–ա հլ. գրծ.–ով) «չուան» Ժղ. դ. 12. Ագաթ. որից առասանակ «բարակ չուան» Ա.Թ. ստեփ. առասանել «չուանով քաշել» Մագ. Թղ. 133. Նոր գրականում առասանն է «հատ դերձան կամ որ նոյն է՝ շատ բարակ չուան. տճկ. սիջիմ»։

=Պհլ. *rasan, որից պրս. رسن rasan և կամ ورسن varsan «չուան». այս բառը ունեցած պիտի լինի նաև «սանձ» նշանակութիւնը, որ սակայն չէ աւանդուած. համմտ. ցեղակից ձևերից սանս. raçanā- «չուան, առասան, սանձ, գօտի», raçmi «սանձ», հինդուստ. راس rās «սանձի փոկերը», գնչ. rasmoz «սանձ», զազա هاسن rasanə «չուան», մինչ. lâsá «չուան»։ Իրաննականից են փոխառնուած նաև արաբ. رسن rasan «չուան. 2. տաւարի քթին անցուած սանձը» (Կամուս, Բրբ. Բրգմ. Գ. 637), արամ. risna, եբր. רֶסֶן resen «սանձ», նոյնպէս և հայ. երասան, երասանակ, ապարասան, ապերասան բառերը՝ որոնք պահած են իրանականում կորած նշանակութիւնը (տե՛ս այս բառերը)։— Հիւբշ. 107։

*Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ԳԴ։ ՆՀՌ պրս. արաբ. ռէս, ռէսէն, ռիսման, ռիշթէ, լտ. restis։ Տէրվիշ. Altarm. 91 և Նախալ. 82 առասան բառը բաժանելով երասանակ և ապերասան ձևերից՝ կըցում է յն. ἀγχόνη, գնդ. aγana համանիշներին, որով հետևցնում է թէ բուն օրինի պիտի լինէր առւածան, Pictet բ տպ. Բ 206 պրս. rasan, սանս. raçana «չուան» ևն։

+Ա.ՌԱ.ՍՊԵԼ, ի–ա հլ. «մտացածին առասպատմութիւն» ՍԳր. եզն. Ոսկ. ա. Թես. «առասպելական» (իբր ած.) Կոչ. 267. «առակ» խոր. Աբծր. «առնծուած, հանելուկ» Դաս. ժղ. 12, 19. «առած» Ա. Յագ. իդ. 14. խոր. Սահմ. Բրս. մրկ. 86. «առակ նշանակի» Առ որս. ունինք նաև սեռ.–տր. առասպելեաց ձևը՝ որ ենթադրում է ուղ. *առասպելիք՝ Ագաթ. խոր. բ. 7. Շնորհ. Թղթ. այս արմատից են առասպելարան Կոչ. ժդ! առասպելախօս Բարուք. Գ. 23. Ոսկ. բ. տիմ. առասպելական եզն. Եւս. քր. առասպելաւն Սիբեր. առասպելապաաիր Կոչ. առասպելարկու Եւս. քր.։

*ՆշՌ «ի բայէս առասել և ի մասնկանէս պել, որպէս ի լտ. fari, ուստի կազմի fabella, fabula, լծ. ընդ. յն. βάλλω, βλῆμα «արկանել, արկուած»։ Տէրվ. Altarm. 91 և Նախալ. 61 առ մասնիկով ասել բայից. Հիւնք. ասպար–ից։ Մառ ЗВО 22, 71 բարդուած առա+սպել համանիշներից. առաջինն է առակ բառի արմատը, երկրորդը զանազան ձայնափոխութիւններով կցում է երկրորդ սիւնակի –ման «միտք» և հյ. բան, բառ ձևերին։

=Բնիկ հայ բառ՝ կազմուած առ նախդիրով՝ հնխ. spel- «խօսիլ, պատմել» արմատից, որի ժառանգներն են նաև գոթ. spill «առած, ասացուածք, պատմութիւն» (գործածուած է Ս. Գրքի մէջ ճշտիւ այն տեղերը միշտ, ուր հայերէնն ունի առասպել), spillōn «ծանուցանել, պատմել, աւետարանել», spilla «ծանուցիչ», հհյւս. spiall (*spella) «ծանուցում, լուր», spialla «խօսիլ», gud-spell «Աւետարան», and-spilli «խօսակցութիւն», հսաքս. spel «խօսք», wil-spel «աւետիս», god-spel «Աւետարան», հոլլ. spellen «երազ մեկնել», bi-spel «պատմութիւն, առակ, առած, օրինակ», հանդրլ. spell «պատմութիւն, առակ, խօսք, երգ, լուր, պատգամ», spellian «խօսիլ», god-spell «Աւետարան», bi-spell «առակ», հրգ. spel «խօսք, պատմութիւն, առակ, վէպ, առասպել», got-spel «Աւետարան», got-spellōn «աւետարանել», uuār-spelio «մարգարէ», մրգ. spellen «պատմել, խօսիլ, շաղակրատել», bi-spēl «խրատական պատմուած, առած», գերմ. bei-spiel «օրինակ», անգլ. spell «պատմութիւն, առակ, հմայք, դիւթութիւն, բառ հեգել», gospel «աւետիս, Աւետարան».—ընդհանուր դերմանական նա-

խաձևն է spella: *Այս արմատը բացի հայկականից ու գերմանականից ուրիշ տեղ գոյութիւն չունի, ըստ որում կապ չունին բառիս հետ յն.* ἀπειλή «*սպառնալիք, սնապարծութիւն*», ἀπειλέω «*սպառնալ, պարծենալ*», լիթ. pẽlt «*նախատել*», լտ. appellare «*դիմել, կանչել, անուանել, կոչել*», inter-pellare «*խօսքը ընդմիջել*» ևն (Pokorny *2, 676,* Boisacq *67,* Ernout-Meillet *714,* Walde *52,* Kluge *48*): *Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Lidèn, Göteborgs Högskolas Årasskrift *1933, էջ 46—49:*

Գիմ.—Ջղ. առասպել «*լկտի պատմութիւն*», *Կր. Սեբ.* առասպէլ. *Տփ.* արասպիլ «*կամակոր, յամառ*», *Ռ.* առասփել, *Տիգ.* առասբէլ. *Աժտ. Ննխ.* առասբէլ «*անբարոյական, անպարկեշտ*» (*օր.՝ առասպել բաներ մի՛ ասիլ*): *Անգորայի Բրբախօս հայերն էլ ունին արասբէլ «անբարոյական խօսք, հէքեաթ»:*

ԱՌԱՍՏԱԿ (*ի–ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան*) «*գինի խմելու բաս՝ գաւաթ՝ շատրուանի պէս ծորակներով*». *երկու անգամ ունի Բրս. արբեց.:*

ԱՌԱՍՏԱՂ, *ի–ա հլ. (հմմտ. սեռ.* առաստաղաց *Եփր. աւետ. 324*) «*առիթ, ձեղուն, ճեմուղ*» *ՍԳր. 3Հ. կթ. Նար.* «*սեննեակի յատակը՝ տախտակամած՝ որ ներքնայարկի ձեղունն է*» *Եփր. աւետ. 324.* «*երկինք*» *Ոսկ. յՀ. Բ. 1.* «*քիմք, բերնի ձեղունը*» *Ոսկիփ. Մխ. բժշ. (ոմկ. բերնին թավանը, որ է Բրբ.* «*ձեղուն*»), *որից* առաստաղակալ *Բ. մակ. ա. 16.* առաստաղակեալ «*առաստաղով ծածկուած*» *Վկ. գողթ. 17:*

= *Բնիկ հայ բառ՝ հնխ.* stel- «*դնել, գետնել, բարձրացնել, կանգնեցնել, ցից, սիւն, չինարան*» *արմատից, առ մասնիկով, ինչպէս* առասպել: *Ժառանգ ձևերը տե՛ս* առաւել, սաեղծ *և* սաեղն *բառերի տակ: Այստեղ յիշելի են առն.* sthála- «*բարձրութիւն, գետին*», *յն.* στέλλω «*սարքել, պատրաստել*», σταλιξ «*ցից*», στῦλος, στολή «*սարք*», *առտ.* stîlə, *դոր.* στάλα, *թես.* στάλλα «*սիւն*», *հիսլ.* stallr «*խորան, մասր, սխտոռ*», *անգսք.* steall «*սխտոռ*», stellan «*հաստատել*», *հրպ.* stal «*բնակավայր, բնակարան*», stellan «*հաստատել, կանգնեցնել*», stollo «*ցից, չինարան*», *ինչպէս նաև* g, d, p *աճականներով՝ անգսք.* steale «*բարձր կանգնած, ցից տնկուած*», *անգլ.* stelt «*ցից*», *հիսլ.* stolpi «*սիւն, ցից*», *գերմ.* stülpe «*կախարիչ*», stülpen «*խուփը դնել*», *ռուս.* столбъ «*ցից, սիւն*» (Pokorny *2, 643—6,* Boisacq *908*):—*Ա.Մ.*

Նշ՝ դնում է պրս. առասթագ՝ *որ գոյութիւն չունի (տե՛ս տակը ՓՈՒ.):* Տէրվիշ. Altarm. *40 առ մասնիկ + սառ, որ համեմատում է յն.* στέγος «*պռոնկանոց*», στέγη «*յարկ. տուն*», *հսլ.* стеля, *լիթ.* stogas «*տանիք*» *բառերի հետ (տե՛ս և* բաշխել):

Վերևի մեկնութիւնը տուած էի, երբ ըստացուեց Liden-*ի տուղարանութիւնը, հրտր.* Göteborgs Högskolas Årsskrift, *1933, էջ 41—42: Հեղինակը նոյնպէս առաստաղ մեկնում է առ նախդիրով հնխ.* stel- *արմատից, բայց առնում է* stel- «*տարածել, փռել*» *և ո՛չ թէ* stel- «*հաստատել*»: *Իր մեկնութեան հետ ճշտիւ համաձայն են գալիս հսլ.* stelja «*առաստաղ*» *և ռուս.* стель «*սեննեակի ծածք*», *որոնք նոյն* stel- «*տարածել*» *արմատից են բխում: Բայց աւելի յարմար է թվում* stel- «*հաստատել*», *իբրև շինարարական բառ: Նշանակութեան կողմից էլ բոլորովին նոյնանում է առն.* sthála- «*գետին*», *ըստ որում հյ. առաստաղ նշանակում է նաև «սեննեակի յատակը»: Բայց թերևս պէտք է և իրար հետ նոյնացնել հնխ.* stel- «*տարածել*» *և* stel- «*հաստատել*», *որոնք* Pokorny *2, 643 իբրև առանձին արմատ է յիշում: Առաջինի տակ սակայն ունի միայն հսլ.* stelją «*տարածել*» *և լտ.* lātus «*լայն*». *ուրիշ լեզուների մէջ չէ աւանդուած:* Ernout-Meillet *501 թէև յիշում է* latus=stelją *կապակցութիւնը, բայց բաւական անվստահ ձևով: Այդէն* Boisacq *908 հսլ.* stelją «*տարածել*» *դնում է հնխ.* sthel- «*կանգնել*» *արմատի տակ, որով ընդունած է լինում երկու արմատների նոյնութիւնը:*

Գիմ.—Ակն. առըպախ, *Զթ.* այրպօխ, առըպոխ, *Սվիզ.* առըպ'ուղ' «առաստաղ. 2 բնրանի քիմք» (*հմմտ. Բրբ.* բավան «ձեղուն. 2. քիմք»)։

Փոխ.—Հայերէնից են փոխառեալ Բրբ. դւս. arəstaq آرستاق (*Նուդկիոյ բարբառ*), arəsduɣ (*Կարնոյ բարբառ*), arəsdaq (*Կեսարիոյ բարբառ*), arəsdaɣ (*Սերաստիոյ և Տարէնտէի բարբառ*), arəsdax (*Ասանդալի բարբառ*) «առաստաղ». օր.՝ bu gün evin arəsdaɣənə aldəm «այսօր տունը վերից վայր մաքրեցի»։ Բրբախօս հայերն էլ գործ են ածում էնկ. arəsdak, *Ասն.* arəsdax «առաստաղ»։ *Այս բոլորի մասին տե՛ս Արևելք 1888 նոյ. 1—9, Բիւրակն 1898, էջ 626, 712, 789 և 1899, էջ 798, Մաղիկ 1891, էջ 89—90 և Յուշարձան, էջ 328։ Նոյնը* آراستق arastaq *ձևով և «ձեղուն» նշանակութեամբ ունի* Будаговъ, Срав. слов. тур.-тат. I, *էջ 23 իբրև հայերէնից փոխառեալ բառ։*

* **ԱՌԱՍ**, ի–ա *հլ.* «առաստաձեռն, առատ առատ բաշխող, բարեգործ» *ՍԳր.* «անարատ, պայծառ (աչք)» *ՍԳր.* «լի, յորդ, շատ» *Ա. Թագ. իե. 3. Ագաթ.* որից առաստութիւն «շատութիւն» *Տիտ. դ. 6. Ագաթ.* «առաստաձեռնութիւն, բարերարութիւն» *ՍԳր. Ոսկ. մ. բ. 20.* «պարզասրտութիւն» *ՍԳր.* առաստաբեր *վեցօր.* առաստաբուղխ *Ագաթ.* առաստագոյն *Երր. բ. 6. Ոսկ. յհ. ա. 22.* առաստաձեռն *ՍԳր. Ոսկ. բ. կոր.* առաստամիտ *Ոսկ. ա. տիմ. և մ. գ. 11. Եփր. բ. կոր.* բազմառատ *Եփր. պհ. 171.* զուարթառատ *Բ. կոր. Թ. 7.* կիսառատ *Ոսկ. Երր.* առաստանալ *կամ* առաստանիլ «առաստաձեռնութիւն անել. 2. սիրտը հոալ, ևփուիլ (զայրոյթով, վրէժով, ցաւով)» *ՍԳր. Ագաթ. Ոսկ. ևն։—Միջին հյ.* բոատ, *որից* բոատական «առաստասիրտ» *Սմբ. դատ. 15։—Նոր գրականում* առատ *նշանակում է միայն «շատ»։*

=*Պհլ.* rāt «վհհանձն, բարերարող», rātīh «վհհանձնութիւն», *պազենդ.* rādī «վհհանձնութիւն», *պրս.* راد rād «առաստաձեռն, բաջ, կորովի, մտացի», *զնդ.* rātā «շնորհ», *սանս.* rāti- «առաստասիրտ, բարերարող», *որոնք բոլոր ծագում են* rā «տալ, բաշխել, շնորհել» *արմատից. ինչպէս ունինք սանս.* rātá-, *զնդ.* rātō «տրուած, մատուցուած». *բառիս եւրոպական ցեղակիցներն են իռլ.* rath «շնորհ», *գալլ.* rhâd «շնորհ», rhoddi «տալ», *լտ.* rēs «բան, իր, տրուած բան» *են (տե՛ս* Walde *650)։— Հիւրշ. 107։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ԳԴ, յետոյ Պատկ. Матер. *I. 15։*—Bugge IF *1, 452 դնում է* *sruad- *ձևից. հմմտ. յն.* ῥύαξ, -ᾰκος «հոսուն». *նշանակութեան տարբերութեան համար հմմտ. յն* ῥόος «հոսուն, առատ», *ֆրանս.* effusion de cœur, *հյ.* առատութիւն սրտի. *ըստ* Bugge *հյ. բառը հնագոյն* *առուատ *ձևն ունէր։* Patrubány *ՀԱ. 1908, 213 հնխ.* pro- *մասնիկով* dā «տալ» *արմատից։ Գաբրիէլեան ՀԱ. 1910, 365* առու, լորդ, *յն. լտ.* ru, ruo «հոսիլ»։ *Բիւրեակեան, Արիահայ բռ. 61* առատանալ «գրգռուիլ» *ջոկում է սոյն* առատ «յորդ» *արմատից և հանում ա բացասականով պհլ.* rād «ապնիւ» *բառից։*

Գիմ.— Ախց. երև. Սլմ. առատ, *Ալշ. Խրբ. Մշ.* առաղ, *Ոզմ. բոատ, Ակն. բոադ, Զթ. օ-* ոօդ, օոոդ (*բոլորն էլ «շատ» նշանակութեամբ*). *իսկ Հճ.* ոɐօդ *նշանակում է «էժան», ճիշտ ինչպէս այլուր ունինք* առատ «թանկ»։

Փոխ.—Վրաց. ართო առատո *«առատ, շատ» փոխառեալ է հայերէնից, ինչպէս ցոյց են տալիս նախ ա յաւելուածը՝ որ հայկական է և երկրորդ «շատ» նշանակութիւնը՝ որ չկայ պարսկերէնում, ուր.* arat՝ «արգաւանդ, բարեբեր»։

ԱՌԱՏՈՒԿ *կամ* **ԱՌԱՏԻԿ**, ի–ա *հլ.* «առատան *կամ շուան՝ որով յանցաւորի ոտքերն ու պուխը պրկում էին գելարանի մէջ». գործածուած է միայն հոլովեալ ձևերով. երկու անգամ* առատկօք *Ագաթ. ՅՀ. կթ. 300 և մէկ անգամ* առատկաց *ՅՀ. կթ. 912. այնպէս որ անկարելի է ճշտել ուղղականի շեշտեալ ձայնաւորի երանգը (ի կամ ու)։*

Նշթ նոյն ընդ առասան, *իտալ.* ritta։ *Սխալ է* առատակ *ձևը՝ որ տալիս է ՓԲ։ Պատահական նմանութիւն ունի պրս.* رد rada «կամնաս այլ. և է տախտակն

այն՝ յոր իբր սեեռամամբ պնդեալ գայլախառ քարին, կասուն այնու զցորեան ի կալի, վասն տրոհելոյ զհատն ի յարդէն»։

Ա.ՌԱԻԵԼ *տե՛ս* Աւել։

Ա.ՌԱԻԻՐ «ի զուր, վայրապար, պարապ տեղը» Փիլ. լին. *82, 95.* Լաստ. *էջ 4.* որից աղվիրական «ի զուր» Մագ. *թղ. 237.* թէ առաւիր «ի զուր, ընդ վայր» Հին բռ. կամ միացեալ ձևով բառաւիր Հին բռ. և Մագ. գամագա. (*տե՛ս ՀԱ 1911, 374*)։

= Ցայտնի չէ թէ բառիս մէջ առ նախդի՞ր է թէ արմատական։

Նշ*թ* «յորմէ առեւաւիր, իբր աւ վայրապար, լծ. թրք. պրս. ավար, ավարէ. նոյն ընդ ձայնիցս ընդ վայր, վայրապար». Հիւնք. առեւաւիր բառից։ Bugge IF *1, 453* հանում է իր բառից, առ նախդիրով և աւ բացառականով. ուր և փոխուել է ւ։

Ա.ՌԱԻԻՒԵՏ «միզափամփուշտ». մէկ անգամ Նեմես. բն. *էջ 59.* ուրիշ օրինակ չկայ։ Նշ*թ* «նոյն ընդ փամփուշտ»։ Տէրվ. Altarm. *80* առա մասնիկով ուշտ արմատից, որի հետ համեմատում է սանս. vasti «ուռույցք»։

Ա.ՌԱԻԻՕՏ, ի, ու հլ. «այգ, առաւ» ՍԳր. վէցօր. Սերեր. Ագաթ. որից առաւօտանալ Ագաթ. առաւօտել *Սիր. դ. 13.* առաւօտին, առաւօտու, առաւօտուն, առաւօտուց ՍԳր.։

Շրէօդէր, Thesaur. *45* փոխառնալ եբր. ערבות ʿarabot «երեկոյ» բառից։ Նշ*թ* երեոյթ կամ աւուտ, կամ առ յառոյթ «ժամ յառնելոյ ի քնոյ» և կամ աւօտ բառից՝ որ տե՛ս էմին, վահագն վիշապաքաղ (Изслед. *76*) սանս. arvat «առաջագ, վազող (արևի ծագման համար ասուած)»։ Տէրվ. Altarm. *79* առաւաստու մեկնում է առա+ւստու, վերջինը համմտ. սանս. vastu «այգ, լուսաբաց»։ Հիւնք. առև բառից։ Նազարէթեան, Պատկեր *1893, 159* առ+աղօտ կամ առ+աւօտ, ինչպէս ունինք ց+այգ։ Patrubány SA *1, 218* հնխ. *pro+զնգ. av «երթալ»+t մասնիկ։ Նոյն SA *2, 13* pro+ ἀπό +au-ti «երթ»։ Նոյնը վերջապէս ՀԱ *1906, 341* առ մասնիկ, իսկ աւ՝ համմտ. լտ. aurōra «արշալոյս», յն. ἕως «այգ» ևն։ Ղափանցեան ЗВО *23, 351* զնգ. hav «ծնիլ», յն. ὑός «որդի» ևն։ Մատիկեան ՀԱ *1919, 32* հաթ. ar-i-wa-ar համանիշի հետ։ Նոյնը Ա-ճառ. Նորք *1925, № 5, էջ 393* arriwar։

Գիւռ.—*Ախց. երև. կր.* առավօտ (*բայց նաև երև.* առավօդը), *Զղ.* առավոտէնց, *Մկ.* mոուտուուն, *Շմ.* առօօտ, *Մրղ. Սլմ.* առաուուն (*սեռ. Մրղ.* առաուվա), *Ոզմ.* առավօն, *Ննխ.* առավդուն, առադուն, *Սչ.* առվադու, *Վն.* առաուուն, առավուուն, առաւմաւն, *Սեբ.* առդրվանց, *Զթ.* առդրվօնց, *Մշ.* յառդու, *Պլ. Ռ.* առդու, առդրվան, *Ասլ.* առդի, *Ակն.* առդօնց, առդի, *Ղրբ.* բռուբա՛նա, *Գոր.* բռվբա՛նա, *Տփ.* առուտեհան, առուտիան, առոուտեիրը, առուտվա, *Մժ.* բռվօտ «առաւօտ», բռվօտաց «առաւօտեան», իսկ *Ագլ.* գործածւում է շm՛rmվ, *Տիգ.* գանուխ, որանց մօտ առաւօտ բառը գոյութիւն չունի։ Նոր գաւառական բառեր են՝ առաւօտադէմ, առաւօտակաղչ, առաւօտախառն, առաւօտաճառ, առաւօտաճով, առաւօտմեց, առաւօտատեղ ևն։

Փոխ.— *Բոշայերէն* բռադուճին, բռադուին «առաւօտեան», արատույճի «այսօր», արատույճ, բռատույճ «գիշերը, երեկոյին» (*տե՛ս* Finck. Die sprache der arm. Zigeuner, ЗАН *1909, էջ 106*)։

Ա.ՌԱՔԵԼ (*եցի*) «ուղարկել, ղրկել» ՍԳր. վէցօր. Ագաթ. որից առաքիչ ՍԳր. Ագաթ. առաքեալ ՍԳր. Ագաթ. առաքելաբար Ագաթ. առաքելագործ Ագաթ. առաքելախօս Ագաթ. առաքելածաճօք Ագաթ. Կորիւն. առաքելակարգ *Բուզ.* առաքելացու «ուղարկելիք» Եզն. առաքելութիւն ՍԳր. Սերեր. առաքելաճի *Ոսկ. ա. կոր. (ըստ Յուշարձան, էջ 310 ոսկեդարեան չէ՛).* երկնառաք *Ոսկ. ես.* ասուածառաք *Փիլ. Պիտ.* պատուիասառաք *Պիտ. ևն*։

= Կազմուած է առ մասնիկով աք «ոտք» բառից. պարզական աքել «ուղարկել» բառը կենդանի է մինչև այսօր Զեյթունի բարբառի մէջ։

Ուղիղ մեկնեց նախ Նշ*թ*։ Տէրվ. Altarm. *66* սանս. su «ուղարկել, կանգնել ևն»,

pra-su «շարժուիլ», յն. σεύω «վախեցնել», ἔσσυμαι «շտապիլ», հալ. cobamu «ուղարկել» բառերի հետ է համեմատում, հայերէնի մէջ առա- դնելով մասնիկ, արմատը p=sv: Բայց այս կարծիքը թողած՝ ուղիղ մեկնութիւնն է յիշում Տէրվ. Մասիս 1881 մայիս 1: Հիմնք. պատարագ բառից: Patrubány SA 1, 212 հնխ. *pro+su ձևից. համմտ. սանս. su, sauü «շարժման մէջ դնել»: (Այս մեկնութիւնը Տէրվիշեանի առաջարկած և յետոյ թողած մեկնութիւնն է): Բ. Խալաթեանց ՀԱ 1902, 399 ասուր. raku, եբր. קָרַב rāxaq «հեռանալ»: Pedersen Հայ. պր. լեզ. 91 կազմուած է առ նախդիրով. f նոյն է ներ-f-ս, ար-առաfս, բառս-f բառերի f-ի հետ:

ԱՌԱՔԻՆԻ (-նւոյ, -նեաց) «կարիճ, քաջ. 2. բարեպաշտ, հոգով մաքուր» ՍԳր. Ոսկ. յհ. բ. 36. Փարպ. որից առաքինութիւն ՍԳր. Ագաթ. Կորիւն. առաքինանալ Ա. եղր. ա. 33. Ոսկ. մ. ա. 18, բ. 18 և հս. Եւս. պտմ. առաքինի Եփր. ա. կոր. և եբր. Ոսկ. Սերեր. առաքինաբար Ոսկ. ա. կոր. առաքինաբան Ագաթ. առաքինացուցանել Եփր. Քգ. առաքինեցուցանել Եզն. Են: Արմատն է *առաքէն, ի մասնիկ է (համմտ. բար-ի, ար-ի, երկար-ի), որից զուրկ են ածանցները:

ՆՀՔ հլ. արf և աf «ուրբ» կամ արագ, յն. ա՛ոի «լաւ, արագ», ἀρετή «ոյժ, զօրութիւն, առաքինութիւն», էմին, Истор. Асохика 242 այր բառի սեռ. առն ձևից: Տէրվ. Altarm, 22 առա- մասնիկով ինի արմատից, որի հետ համմտ. գոթ. us-kau-as «խոհական», անգլսք. skyn «միտք», հպրս. para-kav-i «զգուշաւոր». վերջինիս para- մասնիկը համապատասխանում է մեր առ մասնիկին: Հիմնք. առոյգ բառից: Patrubány SA 1, 212 հնխ. pro+svenio, որ է սանս. svana «ձայն»: Թիրեաքեան, Արիահայ բռ. 82 այր «քաջ, արի» բառից՝ -գին մասնիկով:

ՎԱՌԳԵՂ «սպիտակահող». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Խոր. աշխ. հրտր. Սուքրեան, էջ 22 «Հող սպիտակ առգեղ անուն, զոր ազացեալ ցանեն ի վերայ ցորենոյն... և ճճի չուտէ»:

=Յն. ἄργιλος «կաւ», որից փոխառեալ է նաև լտ. argilla, argila>Ֆրնս. argile «կաւ»:

Ուղիղ մեկնեց Սուքրեան, անդ, էջ 30:

ԱՌԵՂ, ի-ա հլ. «երկար ու հաստ գերան, որի վրայ նստած է սայլը և որի ծայրից կապւում են լուծն ու եզները» Նար. տաղ. (Ի յառեղէն առեալ շարժումն կուրծն սայլին). Արծր. ա. 9 (Ի սաստիկ շրջագայութիւնէ սայլիցն բաղում անգամ և առեղք փայտիցն վառմամբ հրոյ հրդեհին) հրտր. Պատկ. էջ 31. Պիսիդ. վեցօր. տպ. վենետ. 1900, տող 342. Երզն. քեր. «առաստաղի մէջտեղի մեծ գերանը» Յայտմ.=Նոր վկ. էջ 109 (ԺԹ դարից). «Ճայթեաց առեղ դարպասուն և կոտրեցաւ ընդ մէջն և դ որմունքն յիրեար դիպան և առաստաղն նստաւ ի վերայ նոցա», «երաժշտական գՁ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. տե՛ս Արրտ. 1894, էջ 257, 259:

ԳԻՒ. Ալշ. Մշ. Նր. Ոզմ. վ. առեղ, Կր. առէղ:

ԱՌԵՂՄԱՆԵԼ
ԱՌԵՂՄՈՒԱՆ } տե՛ս Եղծ:
ԱՌԵՎԱՆԴԵԼ տե՛ս Անկանիլ 3:

Ուղիղ մեկնեց ՆՀՔ: Հիմնք. յն. ἀγγαρεύω «բռնաբարել, լկել» բառի հետ:

—ԱՌԻՉ կամ ԱՌԻՁ, ո հլ. (յետնաբար ի հլ.) կտաւի երկայնութեան ձգուած թելերը. chaîne» Ղևտ. ժգ. 48=59. Պղատ. օրին. 156. Գէ. հս. Լմբ. սղ. նմանութեամբ «սարգի ոտայնի» համար ասուած՝ վեցօր. 121. Թերևս նաև «բանակի շարքը» Յուդթ. է. 3 (գրուած նաև առաջf). սրանից կազմուած են մեռաfառէջ Ագաթ. Կղնկտ. հրտր. էմ. էջ 138. օդառէջ Պիսիդ. վեցօր. տպ. վենետ. 1900, տող 271:

=Առ մասնիկով էջ (իջանել) արմատից. ըստ այսմ ուղիղ դրչութիւնն է առէջ, ուր ջ վերջաձայն լինելով հնչուութեամբ դարձել է չ: Առէջները այն թելերն են, որ ոտայնի կատարից առկախ կանգնած են և քանի կտաւը գործւի՝ հետզհետէ ցած են իջնում:

Աւետիքեան, Քերակ. 1815, 208 առ մասնիկով էջ բառից։ ՆՀԲ Բրք. էրիշ բառի հետ, որ Հինք. պրս. է համարում սխալմամբ, Pictet, Origines 2, 156 պրս. arēš։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 65 պրս. اریش ariš «գրկաչափ»։

ԳԻՒ.— Խրբ. Սեբ. առէշ, Ռ. առէշ, Մշ. յառէճ, Ալշ. յառէճկ, Գոր. Ղրբ. ա՛ռաչ, Ակն. առիշ։ (Ալշ. Բլ. և Մշ. այսպես են կոչւում նաև կողովի, խոիրի և նման հիւսկէնների հիմնական հաստ ճիլերը՝ որոնց վրայ հիւսւում են միւս բարակ ճիլերը (Ղրբ. մայր)։ Ըստ Կ. Մ. Շահնազարեան, Վազի մշակութիւնը, էջ 84 առէջ են կոչում նաև «բոյսի կաշու տակի ջիղերը» (գաւառակա՞ն բառ է թէ ինքնահնար)։ Սեբաստիոյ բարբառում փոքր փոփոխութեամբ առէջ դարձել է «մեծ մաքոք՝ որի վրայ ջուլհակը թել է փաթաթում»։ —Նոր բառ է առէջաթել Ղրբ. «ոտայնի առէջքի թելերը»։— Նոյն բառից եմ կարծում նաև գւռ. առջկան (առիջկան, առիչկան). Ալշ. Ապ. Լ. Վն. «բոր, մեծ իլ»։

ՓՈԽ.— Ըստ Գազանճեանի (Յուշարձան 328) հայերէնից փոխառեալ է Բրք. اریش eriš «առէջք». բայց ինչո՞ւ դրուած է š և ոչ č, որ Թուրքերէնում յաճախադէպ մի հնչիւն է։ Ըստ Будаговъ. Срав. сл. I. էջ 28 այս բառը, որ սակայն բացի տաճկերէնից ուրիշ որևէ Թուրք-Թաթարական լեզուի մէջ չկայ, ծագում է պրս. اریش āriš բառից («արմուկից մինչև միջամատի ծայրը եղած տարածութիւնը»), որ և ըստ Horn, Grdr. § 70 գնդ. ārštya «կանգուն»=Բրք. aršin բառն է։

[ԱՌԹԵՐ, ի–ա հլ. «շնչերակ». ունի միայն ՀՀԲ և սրանից առնելով ՓԲ. իբրև վկայութիւն գրուած է հետևեալ հատուածը. «Ամպք իջեալ ի բարձանց ի խորութիւն անդնդական ծովուցն խոնարհ առթևրացն լցեալք, ուռուցեալք» Ագաթ. հա.։ ՀՀԲ այս բառը մեկնում է իբր յն. ἀρτηρία «շնչառիող». սակայն արդիւնք է սխալ գրչութեան, որ Ագաթանգեղոսի նոր տպագրութեանց մէջ ուղղուած է «խոնարհ՝ առ եթերացն առընթեր լցեալ». այսպես տպ. Վենետիկ 1835, էջ 412. Թիֆլիս 1882, էջ 323 և վերջապէս 1902 Թուի նոյն հրատարակութիւնը, էջ 283, ուր ձեռագրական տարբերութեանց մէջ յիշւում է նաև առթերացն ձևը։]

ԱՌԻԿԱՄ, ի–ա հլ. «զենջակ, գոգնոց» Ոսկ. մ. բ. էջ 464. Նար. Նխ. Երեմ. Մանդ. ճառընտ. որից առիգածեալ ճառընտ.։

=Գած «հագնիլ» արմատից. մեկնութիւնը տե՛ս զգածիլ բառի տակ։—Ա՛ճ.

ՆՀԲ լծ. զգած, զգեստ, առագաստ, առագուցեալ։ Տէրվ. Altarm. 80 հանում է առագաստ բառից, առ վերածելով ծ։— Հինք. առաստաղ բառից։

ԱՌԻԹ, ի–ա հլ. «հարսնախօսութեան համար ուղարկուած միջնորդը. 2. որևէ միջնորդ, բարեխօս. 3. միջոց. 4. պատճառ, սկզբնապատճառ, առիթ» Եփր. Համ. էջ 17 և աւետ. 307. Նիւս երգ. Խոր. Ոսկ. յհ. բ. 20. Փարպ. որից առբել «հարսնութեան խօսիլ, կնութեան հրապուրել» Խոր. Հոիփս. Շնորհ. յս. որպի. «նիւթել, պատճառել» Ոսկ. յհ. բ. 19, մ. ա. 5. առթական Շնորհ. ուս. մաճառիթ 36. կաթ. կենսառիթ Նար. Գնձ. արդի գրականում առիթ գործածական է միայն վերջին 4-րդ իմաստով և յատկապէս առթիւ մակբայաձևով. նոր բառ է շարժառիթ «զբրդապատճառ»։

ՆՀԲ առնուլ բայից, իբր առօղ և բնթօղ։ Canini, Et. étym. 108 յն. αἰτία «շարժառիթ, պատճառ» և սանս. artha բառերի հետ։ Հինք. 78 արդ բառից։ Patrubány ՀԱ 1903, 380 առ մասնիկով iti «հրթիռ» բայից։ Karst, Յուշարձան, էջ 423 Բրք. ara «մէջտեղը»։

ԱՌԻՃ կամ ԱՌԻՆՃ «գիւղ» առանձին չէ գործածուած, բայց կայ մի խումբ հին տեղական յատուկ անուններ մէջ. ինչ. Բագայառիճ կամ Բագայառինճ, Գուկառինճ, Լուսաբառիճ, Խոկառինճ, Զիբառիճ, Մկնառինճ, Տիրառիճ, Կբառիճ։ Թէ բառի ամբողջական ձևն է առիճ (և ո՛չ թէ ա յօգակապով ոիճ)՝ ցոյց են տալիս մի քանի անջատ գործածուած ձևեր. ինչ. Առջոյ առիճ, խաղտոյ առիճ և վերջապէս Կոտայքի Առինջ գիւղը (համմտ. նրա մօտ Աւան գիւղը, որ աւան հասարակ անունն է յատուկ անուն դարձած), նոյն եմ կարծում նաև Հառիճ։

Մատ. Яз. и лит. I *236*, harič «կաղնի» բառի հետ (տե՛ս կաղին)։

*Ա.ՌԻՆԿ. ի–ա հլ. «առուտ ձուկը» ունի միայն Փբ։

=*Իտալ.* aringa «առուտ» բառից նոր փոխառություն. հմմտ. նաև ֆրանս. hareng, գերմ. häring. *Թրք.* ringa, linga «առուտ»։ —Ա.Ճ.

*Ա.ՌԻՍ «մոլորակի անուն». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Շիր. 66 «ի գեղեցկական գօտւոջն (են) լուսինն և 5 մոլար աստեղքն, որ կոչին առիս և կռինիս»։

=Յն. Ἄρης «Մարս մոլորակը, Հրատ»։—Ա.Ճ.

Ա.ՌԻՒԹ, ու հլ. (յետնաբար նաև ո հլ. յգ. առիւծ *կամ* առիւծուհ) «առիւծ, ասլան» ՍԳր. Ոսկ. մ. բ. 10. «համառատեղութեան անուն» եզն. Շիր. Պիտ. «Գ2 ձայնին պատկանող երաժշտական մի եղանակ» Մանրուս. (տե՛ս Արրատ. 1894, էջ 257, 259). որից առիւծաբար Բ. մակ. ժա. 11. առիւծագոյն Կոչ. առիւծակարիւն Վեցօր. 192. առիւծանալ ՍԳր. Ոսկ. հս. առիւծացուցանել եզեկ. ժթ. 5. առիւծենի Ոսկիփ. Սարգ. մրջիւնառիւծ Յոր. դ. 11 =յետնաբար մրջնառիւծ Գնձ. գետնառիւծ Ղևտ. ժա. 30. Սոփոն. բ. 14. Ոսկ. Փիլիպ. նոր գրականում առիւծասիրտ, բնձառիւծ են. —Հնագոյն գրչութիւնն էր առեւծ. կայ նաև առեաւծ Վկ. արև. էջ 23, 24. միջին հյ. առոյծ։

=*Բնիկ հալ բառ՝ հնխ.* reug'- «մռընչել» արմատից, որ տալիս է հյ. ռեւծ և ռ-ի պատճառով՝ ա յաւելուածով՝ առեւծ։ *Ժառանգ ձևերից հմմտ. յն.* ἐρεύγομαι (ερυγοντα, ἐρύγμηλος) «ցոլի բառաչել, առիւծի մռնչել», ὠρυγή «ոռնոց», ὠρυγμός «մռնչիւն», *լտ.* rūgio «մռնչել առիւծի», հալ. rъzati, *լեհ.* rzać', *ռուս.* ржать «խրխնջել», *միջ.* rucht «ոռնոց, ազազակ», *անգլսք.* rēoc «վայրի, վայրենի», *գոթ.* in-rauhtjan «կատաղիլ» են։ Այս բոլորը կազմուած են պարզական reu- «ոռնալ, գոչել, մռնչել» արմատից՝ g' աճականով։ Նոյնից k աճականով ունինք հալ. rykati, *ռուս.* рыкать, рычать, *հրգ.* ruhen, *լեթթ.* rùcu, rùču, *լիթ.* rūkti «մռնչել, բառաչել»։ Պարզական արմատի համար հմմտ. յն. ὠρύω «ոռնալ (գայլի և շան), մռնչել (առիւծի)». միւսները առ՛ս ոռնալ բառի տակ (Pokorny *2, 350*, Walde *661*, Boisacq *285*, Trautmann *247—8*, Ernout-Meillet *835*)։—Ա.Ճ.

Հներից վարդան և Տօնական մեկնում են «առիւծն ի յառնելոյ» (այսինքն առնուլ «առնել, յառիշառակել» բայից)։ Այսպէս նաև Տաթև. հարց. 220։ Schröder, Thesaur. *45 փոխառեալ է եբր.* אַרְיֵה āriye «առիւծ» *համանիշից։* Klaproth, Asia polygl. *էջ 103 արաբ.* aguō։ *Ինճիճեան, Հնախ. Գ. 20 և* Capelletti, Armenia *(Թրգմ. Արշալ. արրատ. 1842, 108)* առնուլ և ծուիլ *բառերից (տե՛ս և արծուի)։ Նէբ* արի և ոյժ *կամ* յոյժ *բառերից։* Lagarde, Urgesch. *738 գնդ.* raoža «ընձառիւծ», *հալ.* rūisŭ։ *Մանր Մաղիստ. Համբարիր չափածոյ բանից, էջ 133—134 հլ.* առնու ßիւծէ *կամ* արի և ոյժ և փիւնիկ. առիւս։ Müller, SWAW *48, 430 վերի գնդ. և հալ. ձևերի հետ նաև պրս.* یوز yōz, *մոնղոլ.* bars, *կոլթալ.* barès «առիւծ», *չին.* rà «ընձառիւծ»։ Նոյնը SWAW *76, 425* են *մերժում է պրս.* yōz = «յովազ» *բառի համեմատութիւնը։ Մատ* ЗВО *5, 318 գնդ.* disu, *պհլ.* dis «գիշատիչ դազան»։ *Հիւնք. յն.* ἄρκτος, ἄρκος «Արէս» դիցանունից։ Patrubány SA *1, 198 լտ.* rugire «մռնչել», *լիթ.* rūgóti «մռմռալ» *բառերի հետ։ Նոյն,* ՀՄ *1908, 214 առ մասնիկով* -իւծ «հարաւ» *բառից (հմմտ. հալ.* jugŭ «հարաւ»), *իբրև «հարաւի անասուն»։ Անկախաբար առաջս եմ վերի մեկնութիւնը, որ ընդունում է նաև* Meillet (*նամակ 1928 փետր. 13*)։ Karst, Յուշարձան, *էջ 402 սումեր.* ariya *և էջ 417 թրք.* arslan *համանիշների հետ։* Դափանցեան, Տեղեկ. ինստ. *2. 105—7 հնխ.* reg' > *լտ.* rex «թագաւոր» *բառից (առիւծն իբրև անասունների թագաւոր ըմբռնելով)։ Մատ,* Сред. движ. *էջ 9 կցում է արաբ.* لبيد lays *համանիշին։ Պատահական նմանութիւն պիտի ունին սանս.* haryakša, *գնչ.* uros, *թրք.* arslan, *մանչ.* arsalana, *արաբ.* عفروس ʿufrūs, عفرس ʿafras (*կամաս,*

Թրք. Թրգմ. Բ. 263). عرباض ʿirbāḍ *(էջ 426), բոլորն էլ «առիւծ»։*





Գիմ.—Ղրբ. ա՛ռիւծ, *Կր.* առուծ, *Ալշ. Ակն. Մշ.* առուն, *Ոզմ.* առօծ, *Տիգ.* առյուն, *Պլ.* այռուն *(միայն իբր ած. գործածուած, ինչ. իմին այռուն զավակս). Սեբ.* այլուն. *Նոր բառեր են առիւծաձուտ, առիւծբերան։*

ԱՌԻՔ «առաստաղ». *ունի միայն ԱԲ. յիշուած կգտնեմ Լծ. Նար.* աճառ *բառի բացատրութեան մէջ (տե՛ս ՆՀԲ* աճառ *բառի տակ). անեզական բառ է, որի եզակին է* առի, *յգ. սեռ.* առեաց, *ինչպէս ունի Տաթև. առ. 305։*

Գիմ.— Ախց. Կր. Սեբ. Տիգ. առիմ, *Խրբ. Ալմ. Վն.* առիք՛, *Մշ.* յառիմ, *Ոզմ.* հառիք՛, *Ալշ.* յառիկ, *Մկ.* հառիք՛, *Չճ.* արիք, *Ննխ.* առէք. *Մրդ.* առեք՛, *Ասլ.* առէ. *իսկ Երև. պահուած է միայն տունը պատ–առիմ անել «տունը-տեղը սրբել, մաքրել» դարձուածի մէջ։ Հետաքրքրական է Ջարսանճաքի գաւառականով սեռ.* առից *«առաստաղի, առիքի»։*

ԱՌԼԵՉ *«մեռելներին լիզելով կենդանացնող առասպելական մի էակ» Բուզ. ե. 36. Եղն. Ոսկ. պօղ. Ա. 602. գրուած է նաև* արալեզ, արալէզ *և* յարալէզ *Սահմ. ա. ե. Առաք. լծ. սահմ. 189. Վահր. երրդ. 165.* յարալեզ *Եղիշ. հրց. 52. երկու ձևերն էլ միասին գործածելով Եզնիկ գրում է. «Զառլեզն ի շանէ (էջ 98), զոր արալեզն կոչեն» (էջ 99) և հոլովուած՝* զարալիզէն *(էջ 100)։*

= Բառի բնիկ ձևը անստոյգ լինելով՝ ստուգաբանութիւնն էլ կասկածական է. արդի ձևի տակ թուում է թէ լեզ ծագում է լիզել բայից. բայց կարող է լինել որ դա ժողովրդական ստուգաբանութեան արդիւնք լինի, ինչպէս է նաև լեզու բառը. համմտ. տակը նշանակուած գանազան մեկնութիւնները։

ՀՀԲ և ՋԲ յար լիզօղ։ ՆՀԲ յար լիզանօղ, գուցէ և Արայի լիզօղ։ Էմին, Վէպք հնոյն Հայաստանի, էջ 82, Ист. Асохика *288 և ուրիշ ընդարձակ՝ Հայ հնթ. կրօնը, Հայ Թրգմ. Յոյս Արմաշու, 1875, էջ 358—360՝ մերժում է «Արայի լիզօղ» մեկնութիւնը, որովհետև եթէ արալէզը Արայից ծագած լինէր, Արայի ժամանակ հազիւ թէ պիտի գոյութիւն ունենար. մինչդեռ ընդհակառակը այս նահապետի ժամանակ շատ տարածուած է. ուստի ծագում է «յար լիզող» ձևից։* Böttich, Arica *30, 5 և* Lag. Gesam. Abhd. *170 «թևերև կապ ունենալ առաւ.* Aral *«դժոխք» բառի հետ։* Sayce, The cun. inscr. of van, *էջ 415 հանում է բառել.* Arali *բառից, որ է «սանդարամետ, տառերկրեայ աշխարհ, մահու երկիրը, ուր իջաւ Թամմուզը»։ Տէրվիշ. Լեզու 1887, 115 լիզել բայից։ Առլէզների վրայ վեց առանձին յօդուած ունին Հմայեակ Նալեան, Եղիշե վրդ. Դուրեան, Կ. Յ. Պասմաճեան, Դ. Խաչկունց և Դ. Շահրիեան (տե՛ս Ծաղիկ 1895, էջ 550—556 և 601—616)։ Դուրեանի կարծիքն այն է, որ* յարալէզ *միջնադարեան մի ձև է, իսկ «յար լիզօղ» ստուգաբանութիւնը ծագում է վարգան Վարդապետից. Հին և ուղիղ ձևն է* առլէզ *կամ* արալէզ։ Scheil, *Բազմ. 1897, էջ 77 խալդեան* erilaš *«արքայ» բառից, իբր «արքայ առաւուածոց»։ Մանրակրկիտ և բնտիր մի յօդուած ունի Կ. Յ. Բասմաջեան, Բազմ. 1897, էջ 525—531, ուր յաջող կերպով ցոյց է տրուած թէ առլէզները ասորեստանեան աղբիւրից են և ներկայացնում են ասորեստանցոց Մարդուկ աստուածն ու սրա հետևորդ չորս շները, այն է*  *ուկկուամու «յափրշտակիչն»,*  *ակկուլու «տուիչն»,*  *իկշուդա «կորզիչն» և*  *իլքէրու «յագեցուցիչն». այստեղ էլ մեր բառը ստուգաբանուած է «յար լիզող»։ Այս յօդուածին պատասխանում են Մեննեվիշեան ՀԱ 1898, 26 և Դ. Խաչկեան, անդ, էջ 41—44։ Առաջինի կարծիքն այն է թէ ուղիղ ձևն է* առլեզ *և թևերև պատահաբար միայն լեզ նմանութիւն ունի մեր լիզել բայի հետ. առ գտնում է արիական բառագանձում* ar *«վէրք» ձևով։ Բասմաջեան, Բիւր. 1898, 409 պատասխանում է թէ* ar *«վէրք», ինչպես նաև*

հբր. 'arel, *ասուր.* arlu «մեռել», arali «գերեզմանատուն» *բառերը պատահական նմանութիւն ունին և հին ձևն է* յարալէզ՝ լիզել *բայից։ Մի նոր քննութիւն նոյն նիւթի մասին ունի Մատիկեան ՀԱ. 1923, 481—496, ուր բառը մեկնւում է իբր «Արան լիզօղ»։*

ԱՌԿԱՅԹԵԱԼ *կարդա՛ Առկայծեալ։*

ԱՌՂՈԹԱՆԻԼ *«փախչիլ, ապաստանիլ, մի տեղ ապաւինիլ». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Արծր. էջ 231 «Ոչ կարաց իւրայովքն զերծանել, իբրև յայնժամ առղոթաւ ի լեառն»։*

Այսպէս է մեկնում Աճառ. Հայ. նոր բառեր հին մատեն. Ա. էջ 202։

+ԱՌՆ *(սեռ.* առին, *յգ.* առինք*)* *«արու վայրի ոչխար. շիկերէ». մէկ անգամ ունի Ծղն. էջ 148 և մէկ անգամ էլ Մագ. քեր. 239 = Ծրգն. քեր. հոմանունների մի շարքի մէջ։ Բառի նշանակութիւնը ճիշտ որոշում է էլիասի նորագիւտ Մեկնութիւն Սաղմոսարանի Արիստոտէլի (հրտր. Մանանդեան 1912, էջ 50), ուր կարդում ենք. «Առն և առն ոչ ասին հոմանունք. զի մին ուղղական է և զշիկերէ նշանակէ, իսկ միւսն սեռական է և զայր նշանակէ՝ որպէս այր, առն»։ (Տե՛ս և Հ. Ա. Վարդանեան, ՀԱ 1913, էջ 294—295)։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ṛsen *«արու» ձևվից հմմտ. յն. ἄρσην, ἄρρην «արու, այր, առնական», զնդ. հպրս.* aršan *«այր». այս բառից կազմուած են նաև զանազան արու անասունների անուններ. ինչ. յն. հոմեր.* ἀρνειός *«խոյ», սանս.* ṛṣabhá- *«ցուլ». բոլորի պարզական արմատն է* eres *«հոսիլ, թագուհիւն, դըսութիւն» (հմմտ. սանս.* ár-ṣati *«հոսիլ», լտ.* ros, *հալ.* rosa, *լիթ.* rasà *«ցօղ», սանս.* rása- *«հիւթ, հոլգ»), ըմբռնելով արուն իբր «հոսեցնող» (տե՛ս* Walde *658,* Boisacq *83,* Trautmann *237,* Pokorny *1, 150)։*

ՆՀԲ լծ. **գառն**, *որ և յն.* **առնիο՛ս** *կամ* **առս, առնօ՛ս**: *Սագրեան ՀԱ 1908, 395 և* Karst, *Յուշարձան 405* **գառն** *բառի հետ սումեր.* kar *«գառն»։ Սխալւում է ԳԲ, որ շփոթելով եւրոպական* arnic *բառի հետ՝ մեկնում է «մեծ եղջիւրներով մի տեսակ գոմէշ»։* Meillet *(անձնական և յետոյ* MSL *19, 124) գտնում է, որ մեր բառը չի կարող փոխառեալ լինել յն. ἀρήν «գառնուկ, ոչխար, խոյ» և մանաւանդ ἄρνός բառից, որ նշանակում է միայն «գառնուկ» և յունարէնի մէջ վաղուց գործածութիւնից ընկած էր։ Այնուհետև տալիս է ուղիղ մեկնութիւնը՝ վերի ձևով։*

ՓՈՒՆ.—Վրաց. არნი არნა *«վայրի ոչխար», ասոր.* ܐܪܢܐ arnā *«լեռան այծ». հայերէն բառը մեկնուելով իբր հնդեւրոպական, բնականաբար թէ՛ վրացին և թէ՛ ասորին հայերէնից փոխառեալ են լինում։*

***ԱՌՆԱԿ** *«հոգիները տանող չար ոգին, գրող». նորագիւտ բառ՝ որ գործածել է Պրոխորոն գիրք (տե՛ս Ալիշան, Հին հաւ. էջ 227)։*

=Ասոր. ܚܪܢܓܐ harnāgā „thos, canis anreus, jackal, շնագայլ». *ոգիների անունները շատ անգամ անասունների անունից են յառաջանում. ասորի բառը, որ պիտի տար «հառնագ», հայ բերանների մէջ հայաձև կերպարանք է ստացել։—Աճ։*

Ալիշան, անդ, հանում է առնել բայից, նոյնը նաև Խաչկոնց, Բիւր. 1898, 868 իբր հոմանիշ կրող բառի։

ԳԻՒՏ.—Այս բառից են կազմուած **առնակաւոր** *նբ. Շիր. «կատաղի (շուն), չար, ստահակ (տղայ)»,* **առնակային, առնակաչուն** *վն. «չար, ստահակ»։*

+ԱՌՆԵԼ *(կտ.* **առարի**, *հրմ.* **առա՛**, *որոնք ցոյց են տալիս թէ արմատն է բուն* ար. *սրանից կրկնութեամբ* **արար**, *իսկ պարզականը և ձայնի մօտ՝* **առնել** *ևն) «անել, գործել, կատարել, ստեղծել, վերածել, շինել» ՍԳր. Սեբեր. Եղն. Ագաթ. Բուզ. ևն։ Ածանցներն են* **առնելի** *«գործ» Ոսկ. բ. կոր. «անող, կատարող» ՍԳր. Ծիր. եւ. և հտ.* **արար** *«շինուածք» ՍԳր. Ոսկ. ես. Ագաթ. «երկրագործութիւն» Բ. մակ. ժբ. 1. «բերք, արդիւնք» Օր. իր. 4. իմ ժղ. 26. ժբ. 10. «գոյք, ինչք, կալուածք» Ոսկ. մ. և Ծիես. Ես. քր.* **արարած** *«շինած բան, գործ, շինուածք» ժղ. գ. 22. Բուզ. դ. 24. «ստեղծագործութիւն» Ծն. բ. 4, ե. 1. Եղն. Վեցօր. «ստեղծուած էակ» ՍԳր.*

արարիչ *ՄԳր. եզն. Ագաթ.* արարուած «շինուածք» *Փարպ. (արդի գրականում բատրերգութեան մասերը).* ապառնի *Ոսկ. մաթ. ա. էջ 157 և 644. պօղ. ա. 649 (կասկածելի է որ ոսկեդարեան լինի. համմտ. Վարդանեան ՀՍ. 1913, 560).* խոռակարար *Ա. Թագ. ը. 13.* խոռանարար *Ոսկ. ես.* խոյրարար *Խոր.* բնռերեար *Ագաթ. եզն.* չարարար *Ագաթ. որոնցից էլ* բարերարել *Ագաթ.* չարարարել *Ոսկ. մ. գ. 34, որով ունենում ենք *արարել ձևով մի բայ:*

= Հնխ. ar *արմատից. համմտ. յն.* ἁραρίσκω «յարմարել, կազմել, շտկել, պատրաստել». *կատարեալ ժամանակի ձևերն են՝* ἤραρον, ἄραρα *(համմտ. հյ.* արարի, արարայ*).* ἀρήρεμαι, *բոլորն էլ կրկնաւոր. պարզական արմատը ցոյց են տալիս կտ.* ἦρσα, *հրմ.* ἄρσον, *կրաւ. կտր.* ἤρθην, *գերբ.* ἄρμενος «պատրաստուած, պատրաստ» *(տե՛ս* Boisacq *73 և* Pokorny *1, 69) և ըստ* Meillet *(անձնական) գնդ.* ərənāvi «արարաւ», aši *(<*ɣti) «գործ» բառերը:—Հիւրշ. 420:*

ՆշՒ առն *բառից, «որպէս Յէ առնարար, արիարար»:* Peterm. *30 սանս.* kṛ «գործել»? *Ուղիղ մեկնութիւնը յիշում է առաջին անգամ* Lagarde, Urgesch. *194 հյ.* առնել և առնուլ *ձևերը դնելով առ արմատից, որի հետ համեմատում է յն.* ἄρνυμαι, ὄρνυμι, ἀραρίσκω: *Աւելի լաւ* Müller SWAW *42, 330, որ յիշում է միայն յն.* ἀραρίσκω: Lagarde, Arm. Stud. *§ 192 յիշեալ ձեւերին կցում է նաև* յառնել: *Սրանց համաձայն է Տէրվ.* Altarm. *93, Նախլ. 62 և Մասիս 1881 մայիս 11, ուր աւելացնում է նաև* յարել, յերիւրել, յարդարել, յարմարել, արդ, զարդարել, *իբր նոյն* ar *արմատից: Մորթման* ZDMG *24, 80 ցեղակից է դնում թրք.* yaramaq «յարմար գալ, օգտել»: Bugge, Etr. u. Arm. *էջ 39 ետրուսկ.* arce «արարք» *և էջ 73* anni «առնիք»: *Մատ.* ЗВО *5, 321 գնդ.* dā «առնել» *ձևի հետ. համմտ.* արար=*գնդ.* adadā: *Գարագաշեան, Ծաղիկ 1891, էջ 89 յն.* ուրի'զօ, օրի'զօ: *Հիւնք.* առնել< առն *բառից, իսկ արարի յառնարէնից:* Bugge, Lyk. Stud. *2, 48 լիւկ.* ẹni «էր», ẹnẹ «էր»:

Փառնակ տե՛ս արտ *բառի տակ:* Karst, *Յուշարձան 401 սումեր.* gar «առնել», *417 թիբր.* yar, yer, ar, er «պատրաստել», *չաղաթայ.* yar, yarak, yaratmek, *օսմ.* yaratmak «ստեղծել»: *Մատիկեան ՀՄ. 1919, 32 հաթ.* yaw-war *համանիշի հետ:*

ԳԻՒ.—Գրաբարի առնել *ձևը հետզհետէ փոփոխուելով գարձել է միջին հյ.* առնել, այրնել, այնել, անել *և վերջացել է արդի* էնել, ընել, ալ *սղումներով (տե՛ս Այտնեան, Քննական. քեր. էջ 282 և Յովնանեան, Հետազօտ. նախնեաց ռմկ. Ա. էջ 77): Այս ձևերի համեմատ ունինք Հնդ.* առել, արարի, *Քղ. Սչ.* վն, անել, *Ագլ. Ակն. Եմ. Տփ.* անիլ *(Տփ. ապռ. կօճիմ), Ծրև. Գոր. Ղրբ. Ննխ. Ռ.* անել, *Սլմ.* mնել, *Մրղ.* mնել, *Մկ.* անիլ, էնիլ, *Ալշ. Հճ. Մշ.* էնել, *Ախց. Կր.* էնել, *Զթ. Խրբ.* էնիլ, *Ոզմ.* յէնիլ, *Պլ. Սեբ. Տիգ.* ընել, *Ասլ.* ընէ՛լ, *Համշ.* ընիլ, ընուլ,էրի, *Մղր.* ա՛րիլ, *Հւր.* mլ.—*պարզ արմատով ունինք* արմուճ *Վն. «արարմունք, գործ», էրուրբ, էրուրբ «արարք, գործ». կրկնութեամբ Ծրև.* ապարուր «ասեղնագործ», *Խարգաճարուր «քարգահով բրոնուած» ձևերը (տե՛ս Աբովեան, Երկեր, 14, 34):*

*ԱՌՆԷՏ, *ի հյ. «մեծ մուկ» Կոչ. 403 (յգ. սեռ.* առնեաց*). Եպիփ. յար. Ճառընտ.:*

=*Ասոր.* ܐܪܢܒܐ arnā'ā «առնէտ, մեծ մուկ» (Brockel. *28 ա*). *Հայերէնը փոխառեալ է այնպիսի գաւառական մի ձևից, որ դեռ ունէր ատամնականը. յայտնի է որ ասորի ' ձայնը համապատասխանում է հնագոյն ատամնականի, համմտ. արաբ.* ارض ard=*ասոր.* ܐܪܥܐ ar'ā «հող»:—*Աճ.*

Պատահական նմանութիւն ունի արաբ. ارنب arnab «մի տեսակ մեծ մուկ» (*Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 149*), *որի ասորի համապատասխան ձևն է* ܐܪܢܒܐ arnəbā «նապաստակ»: *Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 111 կազմուած էտ մասնիկով, ինչ.* բրէտ, կրէտ:

ԳԻՒ.—Ծրև. ա՛ռնէտ, *Ակն. Խրբ.* առնէդ, *Զթ.* առնէկ-մուկ, *Ագլ.* ըռնա՛յտ, *Ղրբ.* բռնատ:

Ա.ՌՆՈՒԿ *տե՛ս* Առ։

Ա.ՌՈՑ *«ուժով» տե՛ս* Առոյգ։

+ **Ա.ՌՈՑ** *«աղբիւր, ոռոգիչ ջուր»* Կնիք հաւ. *16 (այլուր այս արմատը առանձին անգործածական է). որից* առոգել *«ջրել, ոռոգել, ուռճացնել»* վրք. հց. լմբ. Շնորհ. հդես. առոգանել *«ջրել, թրջել»* Ագաթ. *(արիւնն առոգանէր զերկիրն).* առոգումն *«ջուր տալը»* լմբ. առոգանութիւն *«ջրելը»* Մագ. լմբ.— *Նախաձայն ձայնաւորի փոփոխութեամբ՝ արմատի երկրորդ ձևն է* ոռոգ, *որից* ոռոգել, ոռոգանէր *«ջրել»* ՍԳր. Սեբեր. ոռոգումն *«ջրելը»* Ագաթ. Բուզ. դ. *12.* արիւնոռոգ Պիտ. ճշմարտոռոգ Բէոդ. մայր.։

=Հնխ. srov *արմատից. հմմտ. յն.* ῥόϝος *«հոսանք», լիթ.* sravà *«հոսումն»,* srāvinu *«արիւն հոսեցնել», հսլ.* o-strovŭ *«կղզի», նաև սանս.* srāváyati *«հոսեցնել» և հյ.* առու, *որի հետ նոյն համեմատութիւնն ունի, ինչ որ չոգայ և չու, կոգի և կով, արեգ և արև, ագանիմ «հագնիլ» և օդ, ագանիմ «իջևանիլ» և* op: *Միւս ցեղակից ձևերի վրայ տե՛ս վարը* առու։ *(Տե՛ս* Pokorny, *2, 703,* Trautmann *279,* Walde *657,* Boisacq *839)*։

Նշ՚ր նոյն ընդ ոռոգել, առու, առոյգ, *լծ. լտ.* rigo, irrigo, *յն.* ἀρδεύω։ Peterm. *25 և Հիւնք. լտ.* rigare։ *Տէրվ. Նախալ. 106 արմատը դնում է* ոգ, *որ իբր թէ ծագած է՝ հյ.* գէջ, գիջանալ, *յն.* ὑγρός *«խոնաւ», լտ.* uveo *«առատկանալ» ևն ձևերի հետ՝ հնխ.* vag *արմատից։ Վերի մեկնութիւնը տուաւ նախ* Bugge IF *1, 451, 452.* Bugge *հայերէնի հնագոյն ձևը համարում է* *sroṷánō (-ṇnō)։ *Բայց Հիւբշ. 421 չի ընդունում* Bugge-*ի մեկնութիւնը, առարկելով թէ* առու *բառի նախնական նշանակութիւնն է «փոս, անցք» և ո՛չ թէ «վտակ»։ Սակայն եթէ այս առարկութիւնը ընդունինք էլ, վերաբերում է* առու *բառին և կապ չունի* ոռոգ <*srov *համեմատութեան հետ։ Քիւսխելեան, Բազմ. 1910, 153* առոյգ *բառից։* Karst *Յուշարձան 423 իբր.* arəq *«վտակ»։ Պատահական նմանութիւն ունի սեռ. ارغ rəgī *«ոռոգեալ»։*

Ա.ՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ *տե՛ս* Ոգեղ։

Ա.ՌՈՂՋ *տե՛ս* Ողջ։

Karolides *տե՛ս* արի *բառի տակ։*

Գիւր.—Ախց. Ակն. երև. Ննխ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. առօխչ, *Պլ.* օխջ–առօխչ, *Ալշ.* առոխճ, *Շմ.* առօխճ, *Տփ.* ա՛ռուխչ, արվուխչուրին, *Ոզմ.* հա՛ռուխչ, *Ասլ.* առէօ՛խչ, *Սլմ.* առվոխչ։ *Մի նոր և հետաքրքրական ձև է Ղրբ.* ոռխճլէվ (<*առողջ և լաւ?*)։

***Ա.ՌՈՑԳ** *(անհոլով) «կայտառ մարմնով» Խոր. Պիտ. Մագ. որից* առոյգանալ *Մագ.* առոյգաբարձ *Խոր.* առոյգացուցանել *Փիլ.* առոյգութիւն *Պիտ. Փիլ. Նիւս. այս բոլորի մէջ հայերէնի ոյ>ու ձայնափոխութեան օրէնքը զարմանալի կերպով չէ պահուած։ Գրուած է նաև* առոգ, ոռոգ *և* առուգ. *առաջինից շինուած են* առոգագաւակ *Փարպ.* առոգանալ *Սարգ. ա. պետ. էջ 293, լմբ.* առոգանձն *Յհ. կթ.* առոգավարժ *Արծր.* առոգութիւն *Սոկր. 181.* առոգեալ *Վրք. և վկ. սրբ. Ա. 536. երկրորդից* ոռոգանալ *Ոսկ. պետր. և եղ. Արծր. իսկ վերջինը (*առուգ*) յարմարցուած է* առուգանալ, առուգութիւն, առուգագոյն *Պիտ. ձևերից, որոնք* առոյգ *բառի կանոնաւոր ածանցներն են։ Բառս հների մօտ շատ հազուագիւտ է. Նշ՚ր յիշում է միայն երկու օրինակ, այն է՝* առոգութիւն *Սիր. լ. 15 և Ոսկ. ես.։*

=Կազմուած է առ նախդիրով *ոյգ *արմատից, որ առանձին գործածուած չէ և նշանակում է «ոյժ, զօրութիւն». փոխառեալ է իրանեանից. հմմտ. գնդ.* aogah-, aogo, aogarə *«ոյժ, զօրութիւն»* (Bartholomae, *38, 39*): *Զանդիկ բառի երկրորդ ձևն է* aoǰah-, *որ տալիս է պհլ.* ōǰ, ōž *և սրանից էլ հյ.* ոյժ. *Ճիշտ այսպէս էլ գնդ.* aogah-*պիտի տար պհլ. *ōg, որ աւանդուած չէ և սրանից էլ հյ. *ոյգ։ Երկու ձայների (*ոյժ *և* ոյգ*) լծորդութեան համար հմմտ.* առուժել *և* առուգանք, *երկուսն էլ իրանական փոխառութիւն։ Ըստ այսմ* առոյգ *բառի կազմութիւնը այնպէս է՝ ինչպէս* առողջ։— Աճ.

Նշ՚ր մեկնում է խառն ի խուռն «իբր առոգեալ, ոռոգեալ, առաճեալ, կամ ուռճացեալ՝ որպէս զբոյս, կամ առողջ և ոյժ առեալ յարբունս. կամ հարուստ և

կայտառ մարմնով, որ և թրք. առդղ» *(սակայն թրք.* առդղ *նշանակում է «նիհար, ազազուն»)։ Թաղիադեան, Առաջնորդ մանկանց, էջ 47* առուգ *բառի հետ կցում է հնդ.* ուգ *«շաքարեղէգի ծաղիկ» ձևը։* Lagarde, Urgesch. *356 լս.* augus-tus *ձևի հետ։ Տէրվ. Նախալ. 105 սանս.* vaǰ, ukš, *գնդ.* vaǰ, vaxš, *յն.* ἄξω, *լտ.* vigere, augere, *գոթ.* vaksjan *են ձևերի հետ՝ հնխ.* vag, vaks *«աճիլ, զօրանալ, օգնել» արմատից՝ ցեղակից հյ.* օգնել, զօրաւիգն, օճան, օժանդակ, օժիտ *և վաշխ բառերին։* Karolides *տե՛ս* արի *բառի տակ։ Հիւնք.* առուգ *«նիհար» բառից։ Աճառ. Բանասէր 1899, 252 իբր* առ+ոյգ, ոյժ *բառից գ-ժ ձայնների լրծորդութեամբ։ Վերի մեկնութիւնս ընդունում է նաև* Meillet *(անձնական)։*

Փոխ.— Justi, Dict. Kurde *հայերէն* առոյգ *բառից փոխառութիւն է համարում քրդ.* ցəյն yārók *«կանաչ»։*

ԱՌՈՇՈՒԻ *տե՛ս* Աշուղ։

+ԱՌՈՒ (ո և ի–ա *հլ.*) *«գետակ», վտակ. 2. ջրի ճամբայ, անցք, փոս, երակ». առ հասարակ յետին. հներից ունինք հետևեալ վկայութիւնները. Առուս աղբանոցաց (Ոսկ. մ. գ. 4). Զառուս տղմոյն ձգել (Ոսկ. յհ. բ. 30). Մեծութիւն թէ առուով գայցէ (Սաղմ. կա. 11). առաջին երկուսի մէջ* առու *«անցք» նշանակութեամբ է, երրորդի մէջ՝ թէև յն. համապատասխան հատուածը ունի «հոսեցի» (ῥέῃ), բայց հայերէնը դարձեալ «անցք» նշանակութիւնն ունի։ Նոյն իմաստով են նաև* առուահանք *«ջրանցք, քանքան» Եւս. պտմ. բ. 6, էջ 89,* առուամէջ *«ակօս, նեղ անցք» Թուց իբ. 24. Ագաթ. ըստ այսմ* առու *«գետակ» նշանակութիւնը հնից աւանդուած չէ, որչափ թոյլ են տալիս ենթադրել ՆՀԲ-ի մէջ բերած օրինակները. ուստի և յայտնի չէ թէ* առու *բառի նախնական նշանակութիւնը կապուած է հոսելո՞ւ գաղափարի հետ, թէ փորելու, անցնելու*

=եթէ բառը նախապես կապուած էր հոսելու գաղափարի հետ, ծագում է հնխ. *sru *«հոսիլ» արմատից. նախաձևը կարող է լինել* *sruyós *կամ* *sruyá *և կամ* *srutis, *որոնց երեքն էլ հաւասարապէս տալիս են* առու. *համմտ. սանս.* srávati *«հոսիլ»,* sruti- *«հոսում»,* srôtas *«հոսանք, գետ, երակ, ելք, բացուածք», հպրս.* rauta *«գետ», պրս.* ﺭﻭﺩ rōd, *քրդ.* rū, *յն.* ῥυτός *«հոսուն»,* ῥύσις *«հոսում»,* ῥοῦς *«հոսանք», հսլ.* struya *«հոսանք, հեղեղ»,* o-strovŭ *«կղզի», հիսլ.* straumr *և գերմ.* Ström *«հեղեղ, հոսանք», լիթ.* sravìù, sravėti *«հոսիլ»,* sravà *«հոսանք», հիռլ.* sruth *«գետ»,* sruaim *«հեղեղ» են։ Առու բառը այս պարագային ծագմամբ նոյնանում է հյ.* առոգել, ոռոգել *բառերի հետ, որոնց համեմատութիւնը տե՛ս վերը։—Իսկ եթէ բառը նախապէս կապուած էր փորելու և կամ անցնելու գաղափարի հետ, այն ժամանակ վերի մեկնութիւնը ուղիղ չէ և* առու *չունի կապ ո՛չ* ոռոգել *բառի և ո՛չ* sru *արմատի հետ, ինչպէս կարծում է Հիւբշ. 420։ Ըստ իս հաւանական է առաջինը և* առու *համապատասխանում է հիշտ սանս.* srôtas *«հոսանք, գետ, ելք, բացուածք, երակ» բառին։*

Klaproth, Asia polvgl. *էջ 100 պրս.* arga *բառի հետ։ ՆՀԲ լծ. յն.* ῥύαξ *«վտակ, հեղեղ», լտ.* rivus *«առուակ», թրք.* ərmaq *«գետակ»։* Canini, Etud. étym. *78 սանս.* ṛ *«հոսիլ»։ Տէրվ. Նախալ. 57, 65 հնխ.* ars *արմատից, որից նաև սանս.* arš *և հյ.* արշաւիղ, առու(=արհ, արշ) *են։ Նոյնպէս* Müller, Armen. VI, *իբր սանս.* arṣ-, *յն.* ἄρσην *«արու»։ Մաս* ЗВО *5, 318 գնդ.* āču *«գետակ»։ Հիւնք. լտ.* arula *«բագին»։ Ուղիղ մեկնութիւնը առաւ* Bugge IF *1, 452, որ չի ընդունում Հիւբշ. 421։* Bugge, Lykische Stud. *1. 13 գանում է նոյն հյ. բառը Լիւկիոյ* Ἀρυκανδα *քաղաքի և* Arycandus *գետի անուան մէջ։ Գաբրիելեան ՀԱ 1910, 365 հյ.* առատ, յորդ *և յն. լտ.* ru, ruo *«հոսիլ» բառերի հետ։* Karst, *Ծուշարձան, էջ 402 սումեր.* ari *«հոսիլ»,* aria *«գետ»,* uru *«հոսանք», էջ 423 սամ.* arəg *«առուակ», չաղաթ.* arik, arna*։ Գաւառական նմանութիւն ունին եբր.* יאר yəōr, *եգիպտ.* yoor

«գետ», սպան. arroyo «առու», արաբ. ﻭﺍﺩﻱ ravā «առատ հոսող ջուր»:

ԳԻՒ.—Ագլ. Ակն. Գոր. Երև. ԶՓ. Համշ. Ղրբ. Մրղ. Ջղ. Սեբ. Սլմ. առու, Խրբ. առուն (բայց փեղ. առվի), Հճ. արու, Ալշ. Մշ. յառու, Վն. ոռու, Ասլ. արիւ, Ոզմ. նոռու, բոլորն էլ նշանակում են «առու», իսկ Նախ. առու «անձրևի և հեղեղի ջրի ճամբայ»: Նոր բառեր են արուազ, առուահան, առուատեղ, առուեզեր, առուկառոս, առուպանանուխ, առուանալ:

ՓՈԽ.—Հայերէնից փոխառեալ է անշուշտ վրաց. ჩუ ru, ჩუვი ruվի «ջրանցք, առու», որ ներկայացնում է հայերէնի հնագոյն ձևը՝ առանց նախաձայն ձայնաւորի:—Հայերէնին նման են հնչում նաև մինգր. rեկա «առու», ուտ. ուրէյն «առու, ակունք», չադաթթ. arik, aruk «ջրանցք, փոս», կրզրլ բարբառով airə «վտակ, գետակ», կարա կրզրլ airək, ալթայ. airəčak, լեռնդի բարբառով airəǰak, արևել. թրք. arγa, arγav «առուակ», arən «ջուր», arna «գետի հիւղ»: Այս բոլորը կցւում են պրս. ﺟﻮ arγā, ﺟﺎﺏ arγāb, ﺟﻮ arγāv «գետակ» բառերի հետ. հայերէնի հետ նմանութիւնը պատահական է, ինչպէս ընդունում է նաև Պատկանեան, Փորձ 1880, մարտ, էջ 94: Սրան հակառակ Pedersen 40, 195 և Հայ. գր. լեզ. էջ 193 թուրք բառերը փոխառեալ է դնում նախահայ *arogu ձևից և թրք. aryγ ձևից էլ փոխառեալ հունգ. árok «ջրանցք»:

ԱՌՈՒԵԿԱՆ «անցաւոր կամ վարկպարապի». ունի միայն Բառ. երեմ. էջ 31. Համմտ. առվիրական «ի զուր» (առաւիր բառի տակ): (Տե՛ս Pokorny, 2, 703, Trautmann 279, Walde 657, Boisacq 839):

ԱՌՈՒԵՂ «մի տեսակ անձրևոթ ծաղիկ» Դաւ. սալաձ. ունին միայն ՀՌուս. § 157 և Նորայր, Բանաս. 1901, էջ 92:

ԱՌՈՒՈՑՏ (ի հլ. ըստ ՆՀԲ) «մի տեսակ խոտ է. medicago sativa, ֆրանս. luzerne» (ըստ Արթինեան, Տունկերը, էջ 8—9). գրուած է նաև առուտ, առվոյտ, առոյտ, առուտ, առուտտ, առաւիտ, առաւոյտ, առաւօտ՝ Գաղիան. Բժշ. առաւետ ՁԳր. սարկ. Բ. 117. որից առաւիտանոց «առուտյտ քանելու տեղ» ՁԳր. սարկ. Գ. 28. իշառուոյտ «onobrychis» Բժշ. ըստ ՀՌուս. § 160:

Տէրվ. Altarm. 29 համեմատում է յն. ἐρέβινθος և հրգ. araweiz «սիսեռ»: Հիւնք. գնում է միայն յն. ձևը:

ԳԻՒ.—Սլմ. առվոտ, Վն. առվտա. Ալշ. Մշ. առվուդ, Մկ. ոռուտ, Ոզմ. առավուտ:

ՓՈԽ.—Վրաց. ალავერდი ալավերդի «առտյտ խոտը»:

ԱՌՊԱՒԱՐ «բան». այսպէս գիտէ Բառ. երեմ. էջ 31. յայտնի չէ թէ ի՛նչ է ուզում ասել:

*ԱՌՍԱՆ «անծանօթ մի բոյս է. թերևս լինի առուտյտի մի տեսակ». Ամիրտ. ունի միայն Ալիշան, ՀՌուս. § 162:

=Պրս. ﺭﺍﺳﻦ rāsan «անտուղ խոտը»՝ ըստ Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 637, որ արաբ. հոմանիշը դնում է قنس qanas, որի նկարագրութիւնն էլ տալիս է հտ. Բ. 279. ըստ ԿՊ պրս. rասէն մի տեսակ ծառ է, որ նաև կոչւում է փիլգուշ (փղի ականջ):—Աճ.

[ԱՌՏԱԼ «տատանիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 31, որի յաջորդ էջումն էլ գտնում ենք առտուիլ «մատնիլ». սրանից հետևցնում եմ թէ առաջինն էլ պէտք է կարդալ առտալ «մատնել», իբրև կազմուած առ և տալ բառերից:]

ԱՌՓՈՎԵՆԱՅ «ի ծածուկ». ունի միայն Բառ. երեմ. էջ 32:

ԱՌՔՈՒՍԵԱԼ «առեալ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 32:

ԱՌՔՏԻՒՐՈՍ տե՛ս Արքտորոս:

*ԱՍ կամ ԱՍԻ «մի տեսակ հին դրամ է», ունի միայն ԱՔ, իբր լատին բառ:

=Լտ. as, assis «հռովմէական մի դրամ»:

+ԱՍ, ի հլ. «ասածը, խօսք» Խոր. Խոսր. Նար. այս արմատից են ծագում ասել (կտր. ասացի, հրմ. ասա՛) «ասել, խօսիլ» ՍԳր. Ոսկ. ես. ևն ևն. «աքլորի երգելը» Փարպ. ասացած «խօսք» Եզն. Փարպ. ասող Ագաթ. ասուն «բանական, բանաւոր էակ» Եզն. անասուն «անբան, կենդանի» ՍԳր. Ագաթ. Եզն. վիպասան Նար. քր. վիպասել Լաստ. ժզ. արբասաց Ոսկ. ես. գովասանական Կիւրղ. խչ. բարեասաց Վեցօր. կամ զեղչմամբ բարեսաց

Պիտ. կանխասաց Ագաթ. Ոսկ. ես. և մ. ա. 11. ճարտարասան կամ ճարտասան Ոսկ. մտթ. Փիլ. այլասացիկ իրf «այլաբանութիւն» երզն. մտթ. 337 (տպ. յայլասացի կիրս!). յունարան հեղինակների մօտ արտասանել, բացասական, բացասոցել, առոտասել և այլափոխեալ ձևերով՝ ապուսել (ապ բացասականով) «ժխտել, ուրանալ, մերժել» Պղատ. տրամ. Մինովսի, Վեննետ. էջ 408, բացուսել «բացասել, ժխտել» Պերիարմ. ապուսեալ Մագ. գամագտ. ապասոցել, ապուշել, ապոսել, ապոսմնել, ապասութիւն Պերիարմ. Արիստ. Տիմոթ. կուզ էջ 280. անապուսելի «անուրանալի» (չունի ՆՀԲ) Կիր. տպ. Վեննետ. էջ 193։

=Հնխ. ag՛ «ասել» արմատից, որի միւս ժառանգներն են լտ. ajō կամ աւելի ajjō «ասել, խօսիլ» (<փխ. *agjō, ինչպէս կայլտ. major<*magyos), ad-agium, ad-agio «բարոյական ասացուած, առած», միոլ. ai, ae «առասպել», յն. ἠ (ծագած ἠχτ ձևից) «ասէր», ἠμί «ասեմ, խօսիմ» (ծագած *ἠγμί ձևից կամ նախորդից).—իսկ սանս. ah, āha «ասել» ծագում է ādh արմատից, ինչպէս ցոյց է տալիս զնդ. āδa «ասաց», որով այս արմատի հետ գործ չունի (Walde 21—22, Boisacq 324, Pokorny 1, 114, Ernout-Meillet 28—29)։ Հայերէնում հնխ. g՛ առհասարակ տալիս է ծ, բայց ինչպէս ետ բառի մէջ, նոյնպէս և այստեղ դարձել է ս։

Տաթև. հարց. 216. անասուն բառը մեկնում է «զի անխօսուն են կամ զի անանունդ և անընտել». (ըստ այսմ հանում է աս կամ սուն արմատից)։ ՆՀԲ ասել դնում է լծ. յն. φάσκω «ասեմ», φάσμα «երգ»: Peterm. 22, 34, Windisch. 19, Böttlcher ZDMG 1850, 350, Տէրվ, Նախալ. 61 են համեմատում են սանս. ah ձևի հետ։ Պատկանեան, Փորձ 1880 մարտ, էջ 87—88 համարում է թէ հայերէնի մէջ ս ձայնը յետին է և թէ մեր բառի նախաձևն է *անել (համաձայն սանսկրիտի), որ անփոփոխ պահում են գաւառականները՝ անալ, ընել ձևերով։ Meillet MSL 7, 164 բացատրելու համար g՛> ս ձայնափոխութիւնը, ենթադրում է որ *ag՛ նախ դարձել է ըստ օրինի *ած, յետոյ բաղաձայնի մօտ աս, ինչպէս եղել է նաև ես բառը. յետոյ այս աս ձևը ընդհանրացել կամ նրա վրայից նմանողաբար շինուել է ասեմ, տիպ. հրնագոյն *ածեմ ձևի, հիշատ ինչպէս որ յն. ἠ ձևի վրայից յետոյ շինուել է ἠμί։ Ընդունելով հանդերձ *eg՛o>ես համեմատութիւնը, Հիւբշ. 421 չի ընդունում *ag՛>աս-ել համեմատութիւնը, սպասելով սրա դէմ կանոնաւորապէս հնխ. *ak՛։ Մաքսուդեան MSL 17, 356 կարծում է թէ հյ. առ-ած բառը պահում է դեռ Meillet-ի ենթադրած *ածել> ասել նախաձևը. այս բառը ինքը մեկնում է առ մասնիկով *ածել = ասել բայից. համմտ. լտ. ad-agium առասպիւն. մեր կարծիքով սակայն առած բառը ուրիշ ծագում ունի (տե՛ս անդ)։ Հիւնք. յն. ᾄδω, ᾶσομαι, ᾆσαι «երգել» բառերից։ Patrubány SA 1, 4 նոյն է դնում հունգ. han-g «ձայն», ֆիննն. sana «բառ», իբր *asank «խոսք» ձևից (համմտ. հյ. առ-ասաց). իսկ SA 1, 192 նոյն ընդ յն. ἠ «ասա՛»<*ἠχτ-, իբր հնխ. *ak՛, նոյնը SA 2, 234 և ՀՄ 1903, 381 հնխ. *spek «տեսնել» արմատից կրճատուած։ Karst, Ծուշարձան, էջ 407 սումեր. sa, ša «ծանուցանել»։ Scheftelowitz BB 28, 286 հբգ. jēhan «խօսիլ» բառի հետ՝ հնխ. yok՛ արմատից։ Petersson, Ar. u. arm. Stud. էջ 100 լիթ. oszìù, ōszti «ադմկել, բզզալ», oszlỹs «շատախոս, շաղակրատ» բառերի հետ, որոնք դրւում են հնխ. āk՛ արմատից։

ԳԻՒՐ.—ՀՃ. Մշ. Ջղ. Սլմ. Սչ. Վն. ասել, Ծրև. Ննխ. ասէլ, ԶՔ. Շմ. ասիլ, Տփ. ա՛սիլ, կօ՛սէ, Ալշ. Մշ. ըսել, Ախց. Կր. Պլ. Ռ. Սեբ. ըսէլ, Ակն. Խրբ. Մկ. Ոզմ. Տիգ. ըսիլ. Ասլ. ըսէ՛լ, Գոր. Ղրբ. ա՛սէլ, ա՛ճիլ, Ագլ. ա՛ճիլ, ե՛ճիլ, Համշ. ասուշ (կտր. ասսի), Շտ. սել։ —Անասուն բառը պահում են ԶՔ. Մշ. Շմ. Սլմ. Վն. անասուն, Ծրև. անա՛սուն, Մկ. Տիգ. մեսուն ձևով և «կենդանի, հայվան»

նշանակութեամբ։ Փոփոխեալ նշանակութեամբ են Սչ. աճասուն «թռչուն», Ոզմ. աճասօն «անբան», Վն. աճասուն «անբնակ, անմարդաբնակ, ամայի տեղ», Ալշ. Ախց. Շհ. աճասուն, Վն. աճասում «անխօս, դեռ խօսել չիմացող (մանուկ)» և վերջապէս Կր. աճասուն «երախայ, մանկիկ». այս վերջին նշանակութեամբ բառս նոյնանում է լտ. in-fans բառի հետ, որ նշանակում է բուն «չխօսող, անբան», յետոյ անցնելով «համր, անձարտարախօս, խօսելու անընդունակ, դեռ լեզու չելած» նշանակութիւններից, վերջապէս դառնում է «մանուկ» և այս նշանակութեամբ տալիս է ֆրանս. enfant «երախայ»։ —Նոր գաւառական բառեր են ասուաս, ասէկօսէ, ասեցնել, ասմունք, ասուլիս (որ արեւմտեան գրական լեզուի մէջ նոր ընդունուեց), վայնասուն (էնկիւրիի Թրքախօս հայերը ունին այս բառը վայնէխիմ ձեւով) ևն։

ԱՍ, ո հլ. անծանօթ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Նար. տաղ. 472.— Շուք տարրաղըշոյ զեղ մէջ ասոյ զկնտ։

Անծանօթ բառս Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 16 համարում է աur «բուրդ» բառը։ Ուղղորվին անհամոզիչ։

ԱՍԱԳ «տուգանք» ? բացատրութիւնը տե՛ս կոփար բառի տակ։

*ԱՍԱԽ «օրէնք». Համմտ. Վրդ. պտմ. տպ. Վենետ. էջ 160, հրտր. Էմինի, էջ 211 «Զի ասախն, որպէս ասէին ինքեանք կոչելով զեդեսիոյ սահմանն ի Ջանկըղղանէն... հրամայէր պահել». այսպէս նաև Տաթև. ամ. 424. Մաղաք. աբ. 10. վերջինս էջ 4 գրում է նաև իասախ. «Եւ այս է օրէնքն Աստուծոյ, որ եդեալ է ի նոսա, զոր անուանեալ են իւրեանքն իասախ»։ Բառիս բացասականն է անասախ «ապօրինի կերպով, անարգել» Մաղաք. աբ. 28. «անսանձ, ապօրէն» Խլաթ. յիշ. 16։

= Թրք. یاسا yasaγ կամ ياساق yasaq «օրէնք, արգելք», մոնղոլ. dkasak «օրէնք» (Будаговъ 2, 329)։

Ուղիղ մեկնեցին էմին, Ист. Вартана 188 և Ալիշան, հրտր. Վրդ. պտմ. էջ 160, ծան.։

ԱՍԱՅԻԿ «լեարդի միջին մեծ երակը» = Տաթև. հարց. 244 (նորագիւտ բառ)։

* ԱՍԱՆ «առաւօտ». նորագիւտ բառ, որ խաթարուած ձեւով գործածուած է մէկ անգամ Սեբ. էջ 38 «Քանզի լինի առ Սասանայ», որի համապատասխան տեղում Արծր. 95 ունի «Քանզի վաղիւ առաւօտուն»։

=Պհլ. *āsān «առաւօտ» բառից, որ հաստատում են պրս. خراسان xurāsān «արեւելք» (յետոյ եղաւ «Խորասան գաւառ», ինչպէս յն. ἀνατολή «արեւելք», յետոյ «Անատոլիա նահանգը», կամ արաբ. مغرب maγrib «արեւմուտք», յետոյ «Մաղրըբ երկիրը»), բելուճ. rōš-āsān «արեւածագ, արեւելք» (Horn § 23)։

Անծանօթ բառս գտաւ ու մեկնեց Մարքվարթ (Նամակ, 1926 յունվ.)։

ԱՍԱՍԱՆ կամ ԱՍԱՄԱՆ «կիսագոռոզ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 32։

*ԱՍԱՐ կամ ԱՍԱՐԻՈՆ «փոքր մի դրամ է» Ոսկ. մտթ. էջ 129, Եփր. փես. 407. Շիր. էջ 27. որ և ասսար Տիմոթ. կուզ էջ 286. ասսարիա Եւս. քր. բ. 180 (չունի ՆՀԲ. Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 48 գրում է ասարիոն կամ ասսարիոն)։

=Յն. ἀσσάριον «հռոմէական մի դրամ՝ որ արժէր 10 սանտիմ». փոխառեալ է լտ. assarius բառից, որ ծագում է as, assis հոմանիշից. փոխառեալ են նաև գոթ. assarjus, վրաց. ასარი asari „accapiŭ, мелкая монета“։—Հիւրշ. 341։

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, անդ. յետոյ Պատկանեան, հրատ. Շիր. էջ 27։

— Անանիա Շիրակացին, էջ 33 ասում է թէ «ըստ եբրայեցւոց ասարիոն՝ նուագութիւն կոչի». բայց պէտք չէ բառի համար հասկանալ. համմտ. անդ՝ էջ 27 «ասարիոն ըստ հելլենականին չեպտոն կոչի, բայց ըստ եբրայեցւոց նուագութիւն կոչի, որ է անօսր»։

*ԱՍԱՐՈՆ «բժշկական արմատ է» Մխ. բժշ. էջ 144. ունի միայն ԱԲ. չէ նշանակում և ՀՌուս. նոյն բառը Բառ. երեմ. յաւել. էջ 573 մեկնում է «քէտի օդի» (որ է կատուախոտ)։

=Յն. ἄσαρον, լտ. asarum, արաբ. سارون

asārūn «կատուախոտ», ֆրանս. asaret, կայ և լտ. asaron ձևր (ըստ Պլինիոսի). գիտական լեզուով կոչւում է asarum Europ. L. բոլորի աղբիւրը յունարէնն է. բայց սրա էլ ծագումը անծանօթ (Boisacq 86)։—Հիւբշ. 279։

ԱՍԵՂ «ատուր». ունի միայն Բառ. երեմ. էջ 32։

+ԱՍԵՂՆ (ասղան, -ղունք, -ղանց) «ասեղ» ՍԳր. Մագ. Ճառընտ. յետնաբար և իբր ամկօրէն ունինք նաև ասիղն, ասեղ, ասեխ գրչութիւնները. ածանցման մէջ մտնում է բազմազան ձևերով. ինչ. ասեղն-, ասղան-, ասղեն-, ասղն-, ասղ. օրինակ՝ ասեղնագործ, ասղնագործ, ասղնեգործ ՍԳր. ասղանի «թել» ՍԳր. Ոսկ. Կող. 618. ասղենի «թել» Մանդ. էջ 191 (համմտ. պրս. darzan «ասեղ» և darzman «թել»). ասղնագործութիւն Ծլ. լը. 23. ասղնանի Ոսկ. Կողոս. ը. ասեղնակարկատ Մարաթ. ասղնաքոռոպ կամ ասղանիքոռոպ Մաշտ. սքեմ. վրք. հց. ասղնածեծ Նխ. դևտ. ասղնաչափ Ոսկ. լուս. ասղնեայ Տօնակ. ասղաբան «ասեղով բանուած» Աբր. կրետ. 37. ասղակտուց «մի տեսակ ծովային թռչուն» Անան. գիտ. 8 (նորագիւտ բառ). այս բոլորի մէջ ամենահինն ու դասականը պիտի լինի ասղան- ձևը, յետոյ ասեղն-. միւսները յետին են, նոր բառեր են ասեղնաձև, ասեղնաւոր են։

= Բնիկ հալ բառ՝ հնխ. ak'lōn կամ aklŋ ձևից. համմտ. լտ. acus «ասեղ», acuo «սրել», acies «ծայր, սայր», ācer «սուր», յն. ἀκίς «ծայր, սայր», ἄκρις «սարի գագաթ», ἄκρος «սրածայր», ἄκρον «ծայր», ἄκων «ճոպան», ἀκόνη «լեռան», ἄκαινα «սուր ծայր, խթան», սանս. âçri- «սուր ծայր, անկիւն», âçna- «պարսապքար», açáni- «քնետի սլաք», լիթ. asztrùs, հսլ. ostrŭ «սուր, սայրասուր», ostĭ-tŭ «դժնիկ», ostĭnŭ «խթան», ռուս. острый «սուր», լեթթ. ass «սուր», հսլ. osĭla=ռուս. оселокъ «սրոց, լեռան», հիսլ. eggja «սրել», հաթք. eggja «սրի բերան», անգլսք. egl «խթան», հբգ. ahir, գոթ. ahs, գերմ. ähre «հասկ», անգլ. ear «հասկ կապել» են են. այս բոլորի պարզական արմատն է հնխ. ak'- «սուր լինել» (տե՛ս Walde 7, Boisacq 32, Trautmann 15. Kluge 10 ա)։—Հիւբշ. 421։

Առաջին անգամ Lag. Baktr. Lex. 14 և Arm. Stud. § 195 դրաւ aç արմատից, համեմատելով յն. ακ-ίδ-, լտ. acies, aculeus ձևերի հետ. Տէրվիշ. Նախալ. 59 լտ. acus, յն. ακόνη են։ Հիւնք. Թրք. aslan «առիւծ» բառի հետ։

Գիւտ.—Ալշ. Զք. Հճ. Սլմ. վն. ասեղ, Ոզմ. ա՛սեղ, Մշ. Սչ. ասեխ, Ախց. Գոր. Համշ. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. ասէղ. Երև. Ննխ. ասէղ, ասէխ, Ակն. Խրբ. Կր. Պլ. Ռ. Սեբ. ասէխ, Ասլ. ասէ՛խ, Տփ. ա՛սիղ, Տիգ. ասիղ, Ագլ. ա՛յսդղ, ա՛յսդղնը, Ջղ. ասուղ (այսպէս ունի նաև Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. Սանկպետ. 1788, էջ 163)։ Նոր գաւառական բառեր են ասեղնատս, ասղակար, ասղաման, ասեղնոց, ասղբոյն, ասղաւոր, ասղաւոր, ասըղնրտել։

ԱՍԵԻԱՆ «գլուխ», ունի միայն Բառ. երեմ. էջ 32։

ԱՍԻ «տարբերութիւն», ունի միայն Բառ. երեմ. էջ 32։

*ԱՍԻՒ «անծանօթ մի թռչուն է». մէկ անգամ գործածուած է Յոբ. լԹ. 13 «ԵԹէ յղասցի ասիդն և նեհասյն»։

=Եբր. חֲסִידָה xasīda բառն է, որ գործածուած է բնագրի համապատասխան տեղը և որ այլևայլ կերպով է մեկնուած. ինչպէս «արագիլ, յոպոպ, բազե, ջայլամ, կարապ, մորեխ», յոյն թարգմանութիւնը անփոփոխ պահել է եբրայական բառը (ἀσίδα καὶ γέσσα), որից էլ տառադարձուած են հայը և վրացին (ახოდა ասիդա). ուրիշ տեղ ունինք ասող և արսին (տե՛ս այս բառերը)։ Մեր նախնիք ասիդ-ի մասին այսպէս են գրում. «Ամանք զասիդայդ հաւ ասացին» Մխ. երեմ. իսկ Նար. յովէդ. ըստ Սեբերիանոսի՝ «գաղան» է համարում և Համամ. յովէդ.՝ «սողուն». Տօնականումն էլ մեկնւում է «Ասիդ. սողուն է սեվագոյն կերպիւ փղշտաց երկրին, յորժամ արկանէ զձուն, ընդ բերանն փսխէ և բուսանի ծառ». Նորագոյն քննութեանց համեմատ՝ այս եբր. բառը նշանակում է «արագիլ» (տե՛ս Նէեսա)։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ։ Բառիս վրայ առանձնապէս խօսում է Ստ. Օտեզբճեան, Մասիս 1884, էջ 200։

Ա.ՍԻՕՍ «բորակ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 573, որ առնում է Գաղիանոսից և մեկնում է «քօհարչիլէ» (իմա՛ Քրք. «բորակ»)։

Ա.ՍԼԱՆՁ «ներկատու վայրի մի խոտ է. rêséda» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 164։

Ա.ՍԼԻ «արմատ կապած (բոյս)». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Վստկ. 35 «Թէ ասլի լինի (որթն), այսինքն արմատաւոր և թէ երկու տարւոյ պանդրած»։

Ա.ՍԽԵԼ «կոխել, հարթել, ճմլել». ունի միայն Բառ. երեմ. 133՝ լմշտել բառի բացատրութեան մէջ։

***Ա.ՍԽԻՍ** «մի տեսակ բոյս, որ Քրք. կոչւում է սախըզ թիֆանի, այն է ծամոնի փուշ». Բժշ. ունի միայն ՀԲուս. § 165։

=Արաբ. شَخِيش ašxīš, որ Շիայնշնայդէրի հաւաքածոյի մէջ (WZKM 11, 271) մեկնում է „Arachlis qummifère“. (այս բառը չկայ Կամուսի մէջ)։ Արաբերէն բառի մէջ ش գրի եռակետը ջնջուելով՝ դարձել է س s, որով հայերէն տառադարձուել ասխիս։ Սրանից երևում է փոխառութիւնը դրաւորի վրայից է և ո՛չ բերանացի։—Ա.Ճ.

Ալիշան՝ անդ, համարում է կասկածելի և օտար բառ։

Ա.ՍԿԱՄՈՒՆԻ տե՛ս Սակամունի։

Ա.ՍԿՆ (չէ հոլովուած) «սուտակն քարը». երկու անգամ միայն գործածած է Սերեր. էջ 46—47 «Ի կամարի քահանային 12 ակն՝ յականց պատուականաց, սարդիոն և տոպազիոն և զմրուխտ, ասկն և շափիւզայն և յասպիս, գոճազմ և ակատ և կարկեհան, ոսկեակն և բիւրեղ և եղնգնաքար... յառաջին կարգին զսարդիոնն և զտոպազիոնն և զմրուխտն, և յերկրորդում զասկնն և զշափիւզայն և զյասպիսն...»։ Այս բոլորը ակնարկում են եւ. խր. 17, որ մեր թարգմանութեան մէջ այսպէս է. «Կարդ ականցն՝ առաջին՝ զմրուխտ և սարդիոն և տոպազիոն, կարգ մի. Եւ կարգն երկրորդ՝ կարկեհան և շափիշա և յասպիս. Եւ կարգն երրորդ գոճազմ և ակատ և սուտակ. Եւ կարգն չորրորդ՝ յակինթ և բիւրեղ և եղունգրն»։ Համեմատութիւնից երևում է, որ ասկն դրուած է կարկեհանի դէմ. բայց որովհետև երրորդ կարգում արդէն կարկեհան կայ, ուստի իր համապատասխանն է «սուտակ», որ արդէն ըստ վրդն. ծն. կարկեհանի մի տեսակը է. «Սուտակն կարկեհանն է և յականցն գիրքն կայծ ասի»։

***Ա.ՍԿՈՐԻՈՆ** (ի–ա հլ. ըստ ՀՀԲ) «վայրի սխտոր» Բժշ. ունին միայն ՀՀԲ, ՋԲ և ՓԲ, իբրև յն. բառ. պակասում է ՆՀԲ-ի և Հայրուսակի մէջ։

=Յն. σκόρδιον «սխտորի հոտով մի բոյս է. լա. teucrium scordium L“. դալիս է σκόρδον, σκόροδον «սխտոր» բառից։—Ա.Ճ.

Ա.ՍՂՈՒԼՈՒՍ «շրէշ խոտը» Ամիրտ. առհասարակ չէ յիշուած բառարաններում. մոռացել է նշանակել նաև Հայբուսակը. Ամիրտովլաթ մեկնում է բառը «ինքն տակ մըն է, որ ի ջաղացքն կաղան և ինքն շրէշն է»։

Ա.ՍՃԻ «ճաշ, կերակուր». մէկ անգամ միայն ունի Ոսկ. ես. 157՝ «Թէպէտև կերակրեցաց, այլ աշտուձ հացիւ և ձկամբք. նաև քաղաքին այն իսկ հանապազորդ առճի»։

***Ա.ՍՄԱՋՈՒՆ**, ունի միայն ԱՔ՝ «երկնագոյն» նշանակութեամբ, իսկ Բառ. երեմ. յաւել. 565 «լուրջ շուշան ծաղիկ». նոյնը ասմաջուն «լուրջ շուշանածաղիկ, iris» Գաղիան (ըստ Նորայր, Բառ. ֆր. 703 բ)։ Մի՛ևնոյն բառն է՝ որ յիշում է ՀԲուս. § 167 ասմադուն կամ ասմաճուն ձևով և մեկնում է այսպէս. «Գրուի ի բառս Գալիենոսի և կու զուգի լուրջ շուշանի»։

=Արաբ. اسمانجونی āsmanǰūni «շուշան» բառից, որ Շիայնշնայդերի հաւաքածոյի մէջ (WZKM 11, 271) մեկնում է „lilium, anserenium“. արաբերէն բառը բուն նշանակում է «երկնագոյն» և ծագում է պրս. آسمان ās mān «երկինք»+ون gōn, gūn «գոյն» բառերից (Կամուս, Քրք. Բրգմ. Գ. 647)։ Արաբերէն բառի վերևից մի կետ ջնջուելով կարդացւում է ասմաջուն, որից նոր տառադարձութեամբ ասմաճուն և սխալ գրչութեամբ ասմազուն ձևն է յառաջանում։—Ա.Ճ.

Ա.ՍՄԱՆԻԿ «քրքուր». ունի միայն Բառ. երեմ. էջ 33։

Ա.ՍՈՂ «ասիդ թռչունը» ունի միայն ԱՔ, որի ազբիւրը ինձ յայտնի չէ. տե՛ս ասիդ։

ԱՍՈՐԵԱԿ *(որ և ասորեկ, սորեկ)* «մի տեսակ թթու բանջար, ճարճրուկ, լտ. eruca, ֆրանս. roquette» Գաղիան. Բժշ. ըստ ոմանց «կոտեմ, ջրկոտեմ»։ —Սրանից տարբեր է սորեկ «որթ», որ եբրայական փոխառութիւն է։ Կայ նաև գւռ. ասորիկ, սորեկ, սորուկ, սոսորիկ «կտաւատի մի տեսակ՝ որից ձէթ են հանում», հունդը նման է կոտեմի կամ կորեկի. ըստ Ախք.՝ վայրի մի խոտ է (տե՛ս Ազգ. հանդ. Ա. 138). բայց չգիտեմ թէ կապ ունի՞ նախորդի հետ։

ՀԲուս. § 168 ասում է. «Զարմանալի կամ հետաքննական բան մ'է, որ մեր ասորեկ կոչածը՝ Ափրիկեցիք ալ հիմայ ասուրիկ կոչեն, ըստ վկայութեան Ատանսոն բուսաբանի, որ շատ տարիներ կեցաւ ի Սենեկամպիա»։ Ֆերահեան, Բազմ. 1931, էջ 141—2 խօսելով բառիս վրայ, գանում է, որ նոյն է լտ. eruca, ֆրանս. roquette, իտալ. ruca, տճկ. rokka salata, գւռ. ճարճիր, ճարճրակ, արար. جرجير jirjir, ինչպես դրել եմ ես էլ։ Այս բոյսը շատ նման է կոտեմի և ջրկոտեմի, որի համար էլ երբեմն շփոթվում է նրանց հետ։ Բոլորովին տարբեր է գւռ. սորեկ, սորուկ «լտ. sorgham, saricum» (տե՛ս իմ Գւռ. բառ.)։

ԱՍՈՒԻ *տե՛ս Ասր։*

ԱՍՈՒՊ *«թռիչ աստղ». ըստ ՀՀԲ և ՋԲ ի–ա հլ. ՀՀԲ իբր վկայութիւն դնում է Ալպերտ ածաբ. ըստ ՆՀԲ բառ ամկ. գործածական է արդի գրականում։*

ՆՀԲ արաբ. շիհապ, շիհիւպ բառից. (իմ՛ արար. شهاب šahāb, šihāb «աստղ», յգ. شهب šuhub «աստղներ», որոնք չեն կարող տալ մեր ասուպ ձևը)։

***ԱՍՊ** *«ձի». առանձինն գործածուած չէ, այլ կայ միայն մի քանի բարդութեանց մէջ. ինչպէս՝ ասպազէն, ասպաստան, ասպանարական, ասպանդակ, ասպետ, ասպարէզ, ասպատակ, որոնք սակայն ո՛չ թէ հայերէնում անկախաբար կազմուած, այլ ուղղակի իրանեանից ամբողջութեամբ փոխ առնուած բառեր են։ Սրանցից ենթադրուած է յիտոյ ասպ բառը՝ որ առանձին գոյութիւն չէ ունեցած հայերենում. համմտ. սակայն Մասն. 18 գրծ. հասբամբ «ձիաւորներով», որ ենթադրում է հասբ (=ասպ) ձևը։*

=ՊՀլ. asp «ձի» բառից փոխառեալ. միւս ցեղակիցներն են հպրս. asa-, զնդ. aspa-, սնս. açva-, պրս. اسب asb, բելուճ. hasp, աֆղան. ās, aspah, քրդ. asp, hasp, թաթ. as, օսա. afse, yefs «ձի». այս բոլորը ծագում են հնխ. ek'vo- ձևից, որի վրայ աւելի ընդարձակ տե՛ս էշ բառի տակ։—Հիւբշ. 108։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յիտոյ ՆՀԲ. նոյնը նաև Peterm. 17, Windisch 19 ևն.—Մորթման, Բևեռ. արձանագր. Թրգմ. Ագաթանգ. էջ 48 բևեռ. ապպա «երիվար», յն. իպպոս, պրս. yabu բառերի հետ Տէրվշ. Մասիս 1882 յուլ" 24, Երկրագունտ 1884, էջ 55, Լեզու էջ 157 հնխ. akva ձևից, սանս. açva ևն. «Բայց հայը փոխառութիւն է, որովհետև բնիկ լինելու դէպքում պիտի ունենար ասու, աս, ասկ ձևը»։

***ԱՍՊԱԶԷՆ**, ի–ա հլ. *«ձիու զէնք և զարդերը» Ագաթ. Խոր. Արծր. յետնաբար նաև «ձիաւորուած ու զինուած» ՅՀ. կթ. գրուած է նաև* ասպիզէն. *որից* ասպազինեալ *«ձին զինելով կռուի պատրաստած» Արծր.։*

*=ՊՀլ. *aspzēn «ձիու զէն ու զարդ» բառից, որ սակայն աւանդուած չէ պահլաւ գրականութեան մէջ. կազմուած է պհլ. asp «ձի» և zēn «զէնք» բառերից. պրս. կայ* اسب و زين zīn-i asb *«թամբ». սակայն այս նշանակութեամբ գործածուած չէ հայերէնի մէջ։—Հիւբշ. 108։*

ՀՀԲ և ՆՀԲ մեկնում են հյ. ասպ և զէն բառերով։ Այսպէս է նաև Տէրվիշ. Մասիս 1882 յուլ" 24։ Laqarde, Arm. Stud. *§ 199 համեմատում է պրս.* zīn-i-asb *ձևի հետ։*

ԱՍՊԱԿ *«ուտելիքի պատառ կամ փշրանք (ըստ ԱԲ), կերակրի մնացորդ (ըստ Նորայր, Բառ. ֆր. 346 ա)». ուրիշ բառարաններում չէ յիշատակուած. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. պօղ. ա. 459. Շունք սեղանոյն ասպակի սպասիցեն։ Բայց տե՛ս և ասպականի բառի տակ։*

Թիրեաքեան, Արիահայ բռ. 66 դնում է պրս. ژباب sabāγ «բրդուճ» բառից, ենթադրելով որ սրա հին ձևը լինի պհլ. *āsbāk; (Բայց այս պհլ. բառը պիտի տար. պրս. āsba և ո՛չ թէ sabāγ. իսկ պրս. sabāγ պիտի տար հյ. *սաբագ. համմ. چراگ čirāγ =ճրագ. երկու դէպքում էլ հաւեմատութիւնը ուղիղ չէ):

ԱՍՊԱԿԱՆԻ (-նւոյ, -նեաց) «որսորդ» Փիլ. լին. 371. (շփոթ է Պիտ. թ. 5 հատուածում, ուր կարող է թէ՛ «որսորդ» և թէ մանաւանդ «որսի շուն» նշանակել). որից **ասպականաասպաս**, որ մէկ անգամ գործածուած է Նար. լե. էջ 97.—«Ընդ քանանուհւոյն ձայնի ի խորոց սրտիս պաղատիմ, սովեցելոյս ասպականասպաս կաղկանձողական ամենաթշուառ վրտանգաւորիս, ապրուստ կերակրոյ փշրանաց հացի ի բազմապեշտ քո սեղանոյ մասնաւորեացես»: Այստեղ ամբողջը ակնարկութիւն է Մատթ. ժե 27 Քանանացի կնոջ և յատկապէս «Քանզի և շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց» հատուածի: Լծ. Նար. լե. մեկնում է «շան ուտելիք, լափ» (անշուշտ ասպաս «թանապուր» բառից կարծելով), ՀՀԲ «շան կերակրոյ սպասող կամ յուսացող», ՓԲ «որսական շան նման կերակրոյ սպասող», Աւետիքեան, Մեկն. Նարեկի, Վենետ. 1859, էջ 194 «սպասաւոր կամ ծառայող որսորդի, որ է շուն» (ասպականի+ասպաս բառերից) և էջ 553 «շան պէս սպասող կամ ձիանց պահապան»: Իսկ ես կարծում եմ, որ ասպականասպաս նշանակում է «կերակրի մնացորդներին սպասող» և կազմուած է ո՛չ թէ ասպականի «որսորդ կամ շուն», այլ ասպակ «կերակրի մնացորդ» բառից. բուն այսմ ասպականասպաս ճիշտ այն է՝ ինչ որ Ոսկ. պօղ. ա. 459 «շունք սեղանոյն ասպակի սպասիցեն»:

ՆՀԲ ուղում է հանել ասպ «ձի» բառից. այսպէս նաև Հիւբշ. 108 կասկածով: Փորթուգալ փաշա, Եղիշէ էջ 467 գնդ. spāka «շնիկ» պրս. isba اسبه «շուն», յգ. اسبگان isbagān «շներ»: Այս մեկնութիւնը շատ ուղիղ պիտի լինէր (համմ. Հերոդոտոս Ա. 110 σπάκα τὴν κύνα καλέουσι οἱ Μῆδοι Մարք ղշուն սպակա կոչեն), եթէ սակայն ասպականի իրօք նշանակէր «շուն», ինչպէս ունի Պիտ. և ո՛չ թէ «որսորդ», ինչպէս ցոյց է տալիս Փիլ. որ աւելի վստահելի է:

***ԱՍՊԱՀԱՊԵՏ** (ի-ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «զօրապետ, սպարապետ». երկու անգամ միայն գործածուած է Խոր. բ. 68 և 28 և այն էլ իբրև ազգանուն կամ տիտղոս. «...և քոյր նոցա՝ ասպահապետի պահլաւ, քանզի ի վերայ զօրաց էր այրն նորա»:

=Պհլ. spāhpat «սպարապետ, զօրագլուխ, որից պրս. سپهبد sipahbad կամ اسپهبد ispahbad, ispahbud և տառադարձուած՝ արաբ. اسبهبذ asbahbuð, յն. Ἀσπεβέδης (Պրոկոպիոս, Պարս. պատ. Ա. 10): Բառի հին ձևն էր հպրս. spādapati, որ Արշակունեաց ժամանակ փոխ առնուելով՝ դարձաւ հյ. սպարապետ, ասպարապետ, իսկ Սասանեանց ժամանակ երկրորդ անգամ փոխ առնուելով նոր ձեւով՝ դարձաւ ասպահապետ: Իրանեան բառերը կազմուած են spāda > spāh > sipāh «սպայ, զօրք» և pati>pat>bad «պետ, տէր» բառերից.—Հիւբշ. 22, 240:

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, որ պրս. էսփէհպէտ ձևից փոխառութիւն է դնում: Յետոյ գալիս են ՆՀԲ և Lagarde, Gesam, Abhd. 186:—Dulaurier JAs. 18(1861), էջ 291 համարում է հայկական ձև, կազմուած ասպ բառից. իսկ արաբ. asbahbuð հայերէնից տառադարձուած է դնում:

***ԱՍՊԱՂՕԼ** կամ **ԱՍՊԱՅՈՒԼ** «ջղախտ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 170:

=Պրս. اسپغول aspaγōl, ispaγōl, ispaγōn, ispaγūna, ispayūn, isfayūn, ispayūš «է խոտն այն, որոյ սերմն կոչի արաբ. bizriqaṭūnā և Քրք. qarniyarəq» (ԳԴ էջ 150 բ). յիշեալ արաբերէն բառն է «բզրիկաւան, psyllium, herbe aux puces կամ plantago psyllium»: Պրս. բառը կազմուած է asp «ձի» և γōl «ականջ» բառերից և տառադարձաբանօրէն նշանակում է «ձիականջ»:—Ա.Մ.

ՀԲուս. ասում է միայն թէ պարսկերէն է:

***ԱՍՊԱՁԱՐԱԿԱԿԱՆ** «հովուական, թափառական», մէկ անգամ միայն գործածուած է

ես. քր. ա. 230 «Ասպահաբարակական կեանս կէին և այսպէս կոչէին հովիւք»։

=*Պհլ.* *aspčarakakān *«ձիարօտական» ենթադրեալ ձևից, որ կազմուած է պհլ.* asp *«ձի»,* čarak *«ճարակ, մարգ» բառերից՝* akān *«-ական» մասնիկով. բստ այսմ բառը բուն նշանակում է «ձի արածեցնողի պէս, ձիու հովուի վայել»։—Հիւբշ. 108։*

ԱՍՊԱՆԱԿ *տե՛ս Սպանանել։*

ԱՍՊԱՆԴԱԿ *«հեծեալի ոտնատեղերը՝ որ թամբի երկու կողքից կախուած են». այս ձևվրն է, որ ընդունուած է արդի գրականում, բայց հնապէս գրւում էր նաև* ասպաճտակ, ասպատան, ասպատանգ, ասպատանկ, *և իբր յգ.* ասպատանք, *հյց.* ասպատանս *Վրք. հյ. ա. 218։*

=*Անշուշտ պահլաւական փոխառութիւն է՝ կազմուած* asp *«ձի» բառից. բայց նոյն իսկ հայերէնի ձևը անորոշ լինելով՝ կարելի չէ որոշել թէ յատկապէս ի՛նչ պահլաւերէն բառից է. հմմտ. միայն պոհեմ.* span *«սպասնդակ» (տե՛ս* Vaillant, Gram. Dialegues et Voc. de la langue des Bohimiens ou Cigains, Paris *1868, էջ 128), նաև վրաց.* ავჟანდა ավժանդա, *մինգր.* აჟანდ, აჟანდი, *ավան.* ავჟანდ *«սպասնդակ»։—Ա.Ճ.*

ՆՀԲ «ի ձայնէս ասպ և ոռն» կամ Թրք. özengi *«սպասնդակ»։ Հիւնք. պրս.* asb angīz اسب انگیز *«կօշիկի խթանը՝ ձի քշելու համար»։ Թիրևաքեան, Արիահայ բռ. 69 պհլ.* asp *«ձի» +*vandak, *պրս.* بند band *«կապ» բառերից։*

***ԱՍՊԱՆՏ** *«սպիտակ մանանեխ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 172 կասկածով։*

=*Պրս.* اسپند ispand *«սպանդ խոտը, փեղենալ», որ և* سپند sipand, *սրա մէկ տեսակն է* خرد سپندان sipandān-i-xurd *«մանանեխ», որից արաբ.* اسفند asfand *կամ* سفند sifand *«սպիտակ մանանեխ,* sinapi album*» (Շթայնշնայդէրի հատւածոյի մէջ տե՛ս* WZKM *12, 95)։—Ա.Ճ.*

ԱՍՊԱՍԱԼԱՐ *տե՛ս Սպասալար։*

*** ԱՍՊԱՍՏ** *«առւոյտ խոտը,* luzerne*» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 173։*

=*Պրս.* اسپست aspast *կամ նաև* ispist, isfist, sipist *և b ձայնով էլ* اسبست *(Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 290) «առւոյտ». բուն նշանակում է «ձիու կեր» ըստ* Horn, Grdr. *№ 79։ Մեր բառը լեհին լինելով անշուշտ պարսկերէնից է. բայց կան նաև ասոր.* ܐܣܦܣܬܐ aspasṯā *և ասոր.* aspasti *«medicago sativa», որոնց կապը պարսկերենի հետ դժուար է որոշել։—Ա.Ճ.*

Ամիրտովլաթ յիշում է արդէն «որ պարսկերէն ասպաստ *ասեն և հայերէն առվոտ ասեն»։*

***ԱՍՊԱՍՏԱՆ,** *ի–ա հլ. «ախոռ», Երեմ. լա. 40. Բուզ. դ. 16 (քանիցս). Եփր. Թգ. 423, 426, 457. Պատմ. ագէքս. Փիլ. լիւս. Արծր. Ճառընտ. որից շինուած կեղծ ձևեր են* ասպաստանի *«ախոռ» Մխ. Երեմ. (իբրև Թէ մեկնելու համար Երեմ. լա. 40* ասպաստան *բառը).* ասպաստանեակ *«արածող ձիոց կամ դարմանող երիվարաց» ՀՀԲ,* ասպաստանիճ *«երկրորդական ձի ճանապարհորդաց» ՓԲ։*

=*Պհլ.* aspastān, *պրս.* اسپستان asbistān *«ախոռ», գնդ.* aspōstāna-, *սանս.* açvasthāna *«ախոռ», կազմուած* asp *«ձի» և* stān *«-արան» ձևերից։—Հիւբշ. 108։*

ՀՀԲ հյ. ասպ և -ատան ձևերից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Müller SWAW *38, 575, որից* Justi, Zendsp. *38։*

***ԱՍՊԱՍՏԱՆԻԿ** *«ախոռի մէջ պահուած, լաւ խնամուած ձի». մէկ անգամ գործածուած է հայ մատենագրութեան մէջ՝ Ա. մակ. գ. 39։*

=*Պհլ.* *aspastānīk > *պրս.* *asbistānī *ենթադրեալ ձևերից, որոնք կազմուած են նախորդից՝* i̯ > ī *մասնիկով։—Հիւբշ. 108։*

***ԱՍՊԱՏԱԿ,** *ի–ա հլ. «ձիով արշաւանք կամ յարձակում. 2. ձիով արշաւող, յարձակուող» ՍԳր. ես. քր. Բուզ. դ. 58. Ոսկ. ես. ոճով ասում է* ասպատակ գնել, տալ, սրիռել, առձակել, առնել *«արշաւել». նոյն արմատից են* ասպատակաւոր *Յոր. ա. 17. Եղիշ.* ասպատակել *ՍԳր.* ասպատակի *կամ յասպատակի «արշաւակի» Վեցօր. 153, 160.* դիւրասպատակ *ԱՔ. նոր բառեր են ծովասպատակ, ձիասպատակ: Ըստ ԱՔ կայ և աս-*

պատ «ասպատակ», որ անշուշտ մի յետին ձև է, ուր ակ սխալմամբ նուազական կարծուելով՝ ջնջուած է։

=Իրան.*aspataka- ձևից, իբր պհլ. *asptak «ձիով արշաւանք, ասպատակութիւն» և զնդ. *aspōtaka- այս բառերը կազմուած են asp «ձի» և tak «վազել» բառերից. համմ. զնդ. aspa- «ձի», tač «վազել, արշաւել», taka- «վազող (ինչ. dərəzitaka «արագընթաց»), պհլ. tak «վազք, արշաւ» պրս. takīdan «արշաւել», tak կամ tag «յարձակում, արշաւանք», tēztak «սրընթաց, արագավազ», tagāvar «լաւ վազող» (Շահն. է. 1046), որ մեր ասպատակաւոր բառի վերջին մասն է։ —Հիւբշ. 108։

Ուղիղ մեկնութիւնը առաւ նախ ՆՀԲ, որ սակայն դնում է նաև լտ. expeditio «արշաւանք»։ Müller, Kuhns u. Schleich. Beitr. 5. 106 և SWAW 88, 16 օսս. afsad «բանակ» և զնդ. spāδa «սպայ» բառերի հետ։ Lagarde, Bktr. Lex. 64 զնդ. *aspōtāka ձևից։ Հիւնք. տապատա-ից։

*ԱՍՊԱՐ (ի–ա հլ. յետնաբար նաև n հլ.) «վահան» ՍԳր. որից ասպարաբեկ «վահանի բեկոր կամ փորր վահան» Եզեկ. լԲ. 9. ասպարակիր Ոսկ. Փիլ. ժգ. ասպարաւոր Բ. մբնաց. ժդ. 8. ժէ. 17. ասպարափակ Փարպ. ասպարել «վահան գործածել» Պիտ. գերասպարել «պահպանել, պաշտպանել, խնամակալել» Տիմոթ. կուզ, էջ 282 (իբր ստրկական թրգմ. յն. ὑπερασπίζω «պաշտպանել» բառի, որ կազմուած է ὑπέρ «գեր, վեր» և ἀσπίς «վահան» բառերից. տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. կուզի հակաճառութեան մէջ, էջ 71)։ Երրեմն բարդութեանց մէջ եղած է սպար-. այսպէս են՝ սպարակիր Բուզ. դ. 15, և. 5. սպարափակ Ագաթ. առանձին սպար «վահան» ձևը ունի ԱԲ, բայց ՆՀԲ չգիտէ։

=Պհլ. գւռ. *aspar ձևից, որի հետ բոլորովին նոյն է նորագիւտ մանիք. պհլ. ʾaspar «վահան» (ИАН 1912, 46). միւս իրանեան լեզուներն ունին պհլ. spar, պազնդ. spar, պրս. sipar կամ ispar «վահան», հպրս. σπαρα- (Հեսիքիոս), սանս. phara-, և փոխառեալ ձևով՝ sphara- «ասպար». (զնդ. spāra- ձևը, որ տալիս է Horn § 700, ուղիղ չէ ըստ Bartholomae 1618)։—Հիւբշ. 108։

Ուղիղ մեկնեց նախ Աւետիքեան, Քերակ. 1815, 314, որ փոխառեալ է դնում պրս. սիփէր ձևից։ ՆՀԲ «լծ. յն. ἀσπίς, պրս. խափէր, սիփէր, հյ. պատասպար և նուաճի»։ Ուղիղ են նաև Müller SWAW 42, 253 և Justi, Zendsp. 303։—Jensen ՀԱ 1904, 184 հաթեան արձանագրութեանց մէջ գտնելով ...ri կամ ...ar «վահան» ձևով մի բառ, կարծում է թէ մեր ասպարն է և չի ընդունում որ հայերէնը իրանեանից փոխառութիւն լինի։

Գիմ.—Մշ. ասպար «վահան», որից ասպարեցուկ «թրով և վահանով մենամարտութիւն»։

ԱՍՊԱՐԱՊԵՏ տե՛ս Սպարապետ։

*ԱՍՊԱՐԷԶ կամ ԱՍՊԱՐԷՍ, ի–ա հլ. «ձիարձակարան, կրկէս, հրապարակ» ՍԳր. Բուզ. «երկայնութեան չափ, վտաւան, մէկ ձիրնթաց, որ է 1/8 մղոն կամ 125 քայլ կամ 625 երկրաչափական քայլ» ՍԳր. «բաց դաշտ, հրապարակ, հանդիսարան» Ոսկ. մտթ. ա. 9. Գ. մակ. դ. 9. որից ասպարիսել «արշաւել» Պիտ. ասպարիսախաղաց Վրք. դիոն. ասպարիսական Խոր. աշխ. հին հայերէնի մէջ գործածական էին թէ՛ ասպարէս և թէ ասպարէզ, քանի որ երկու ձևերն էլ կան արդէն պարսկերէնում. ածանցների մէջ գտնում ենք միայն ասպարէս, իսկ արդի գրական լեզուի մէջ ընդունուած է միայն ասպարէզ։

=Պհլ. asprēs, asprās, asp(u)rāṣ «ձիարձակարան, հրապարակ», պրս. اسبرز asbrēz, asprēs, asprēz, aspras, aspraz, asparēs, asparēš, siparēš «ձիարձակարան», կազմուած asp «ձի» և պրս. rēxtan, ներկ. rēzam «հնդուել, թափել» բառերից. վերջինը պիտի նշանակէր նաև «վազել, ընթանալ» համմ. հյ. թաւալ և ընթալ, աշխ. վազել «հոսիլ և ընթանալ», զնդ. tač «վազել, արշաւել և հոսիլ»։ Իրանականից փոխառութիւն է և ասոր. اسپرسا asprīsā «ձիարձակարան, կրկէս»։—Հիւբշ. 109։

Ուղիղ մեկնեց նախ St Martin, Mémoires sur l'Arménie, հա. Բ. Paris 1819, էջ 381։ Նոյնը յետոյ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. Վիեննա. 1821, էջ 46։ Այսպէս նաև ԳԴ, ՆՀԲ ևն։ Justi, Zendsp. 249 մեկնում է բառս ասպ+գնդ. raiθya «ճամբայն»։

ՓՈԽ.—Վրաց. ახპარეზი ասպարեզի «ձիարշաւարան, մրցարան ևն», ახპარეზობა ասպարեզոբա «հասարակաց խաղեր, ըմբշամարտութիւն». սրանք կարող են ուղղակի իրանեանից էլ փոխ առնուած լինել։—Մտած է Աւետարանի քրդ. թարգմանութեան մէջ՝ Ղուկ. իդ. 13. ժը՝ Գուտսէ սատուշէսթ ասպարէզ տուր պու (հեռի էր յերուսաղեմէ 160 ասպարիսաւ)։ Այսպէս նաև Յովհ. զ. 19. Պիսթ ու բինճ նախօտ կասասի ասպարէզան (իբրև ասպարէզս 25 կամ 30)։

Ա.ՍՊԱՐԹԻՆ «ծնեբեկ» Գաղիան. ունի միայն Բառ. հրեմ. յաւել. 573. համմտ. ասպուրակ։

*Ա.ՍՊԱՐԻՄ «մի տեսակ խոտ է». մէկ անգամ յիշում է Ամիրտ. ասպարիմներու ջուր ձեռվ՝ Ախտաստածութեան գրքում. ունի միայն ՀԲուս. § 3286։

=Պրս. آب اسپرم isparm-āb «է տեսակ իմն խոտոյ, զոր ի ջուր եռացուցեալ, լուանան զանձն հիւանդին, և կամ զախտացեալ անդամն նորին»։ Պարսիկ բառը ըստ ձևի կարելի է կարդալ նաև asparim. բառի վերջի մասը թարգմանելով Ամիրտովկաթ՝ դրել է «ջուր»։—Աճ.

ՀԲուս. կասկածով է նշանակում բառս և կարծում է թէ շփոթուած է ասփուրի և ասպրամի հետ։

Ա.ՍՊԱՐԻՈՆ. գործածուած է մի անգամ Շիր. մի ձեռագրի մէջ՝ փոխանակ ասարիոն ձևի։ Մանանդեան, Տեղեկ. ինստիտ. 2, 41—42 ենթադրում է, թէ այս ձևը ո՛չ թէ դրչագրական վրիպակ է, այլ առանձին բառ և արծաթեայ մի դրամի անուն, որ փոխառեալ է յն. aspros, aspron հոմանիշից։ (Յոյն ձևն է ἄσπρα, ἄσπρο, բուն նշ. «սպիտակ», որ փոխառեալ է լտ. asprum ձևից. յոյնից են բուլգար. aspra, սերբ. āspra, jāspra «դրամ» Berneker 32)։

*Ա.ՍՊԵՏ, ի-ա հլ. (ըստ ՆՀԲ նաև ի հլ.) «ձիաւոր ազնուական, հեծեալ իշխանաւոր» Բուզ. Փարպ. Խոր. Սեբ. (բառիս նշանակութեան և գործածութեան վրայ տե՛ս Նորայր, Կորիւն վրդ. 284). որից ասպետութիւն Ագաթ. Խոր. Նոր գրականում ասպետական, ասպետաբար, ասպետօրէն «ասպետի վայել ազնուութեամբ»։ Տարօրինակ կազմութիւն ունի վերջասպետ «այծքաղ» Փիլ. ել. 533։

=Իրանեան փոխառութիւն է. համմտ. սանս. açvapati, հպրս. *aspapati- «ձիատէր» (կազմուած aspa- «ձի» և pati «տէր, պետ» բառերից), որ համառոտուելով դարձել է *aspati, ինչպես որ հպրս. *hamamata «համամայր» եղել է hamātā· — Հիւբշ. 109։

Առաջին մեկնիչն է Dulaurier, որ JAS 18(1861), էջ 291 բառս դնում է պրս. asp «ձի» ձևից։ Էմին, Истор. Вардана 90 ասպահապետ բառից համառոտուած։ Müller, SWAW 38, 573 ևն սանս. açvapati, զնդ. aspapaiti։ Էմին, Ист. Асохика 251 ասպ և պետ բառերից։ Տէրվ. Մասիս 1882 յուլ" 24=ասպապետ =սանս. asvapati. Հայերէնում երկու պ-երից մին ընկած է։ Նոյնը նաև Լեզու, էջ 158։ Հիւնք. ասպայապետ կամ ասպատակ ձևից։ Մառ Крит. и мелкія ст. (1903), էջ 70 նկատելով, որ հների մէջ միջին ա-ի անկում չկար, ուստի չէր կարող *ասպապետ դառնալ ասպետ. հետևաբար ասպետ դնում է *ասուպետ ձևից (ինչ. մոգուպետ>մոգպետ), որ հանում է պրս. گشو sū կամ سو asū «կողմ» բառից. այսպէսով ասպետ դառնում է ճիշտ «կողմնապետ, կուսակալ»։ (Այս մեկնութիւնը սխալ է, որովհետև՝ 1. միջին ա-ի կորուստ չկայ *ասպապետ>ասպետ բառի մէջ. այլ ապրագարանութիւն (haplologie), որ ծանօթ էր նաև հներին. ինչպէս հպրս. *hamamatā>hamātā և հյ. ճարտարապան >ճարտապան. 2. փոխոխութիւնը կամ անկումը եղել է նախապէս իրանականում և յետոյ պատրաստ անցել Հայերէնի. 3. պրս. sū «կողմ» բառի հին ձևն

է պհլ. sūk (Horn § 748), որից եթէ կազմուած լինէր մեր բառը, պիտի ունենար «*սուկպետ, *ասուկպետ կամ *ասկպետ ձևը և ո՛չ բնաւ ասպետ)։ Ադոնց, Յուսա. էջ 400—1 մեկնում է աս+պետ, որի մէջ աս միացնում է սե-պուճ բառի առաջին մասի հետ։

Փոխ.—Ագաթանգեղոսի յոյն թարգմանութեան մէջ հայերէնից յունարէնի տառադարձուած է բառը ἀσπέτ, ἀσπέτων ձևով (Հրտր. Lagapde, § 164, էջ 83, 95 և § 135, էջ 68, 46). սրանից էլ ձևացել է արաբ. اسباط asbāta «ասպետ»՝ Ագաթանգեղոսի արաբական թարգմանութեան մէջ (Մատ ЗВО 16, 201)։

*ԱՍՊԻԹ «օձ ինչ չարաթոյն, քարր». ունի միայն ՓՒ, առանց վկայութեան։

= *Ծն.* ἀσπίς, ίδος «մի տեսակ թունաւոր օձ, coluber haie L. *Ֆրանս.* aspic». նոյնից են նաև վրաց. ახპიტო ասպիտի, *ռուս.* аспидъ «թունաւոր օձ»։—*Ա՛ճ.*

*ԱՍՊԻՍ «վահան». մէկ անգամ միայն իբր օտար բառ գործածել է Կիւրղ. Թգ. «իսկ ասպիսն չորեքանկիւնի վահան է»։

= *Ծն.* ἀσπίς «վահան»։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

*ԱՍՊԻՐԱԿ «վարդապգիների տեսակից մի բոյս է. *Ֆրանս.* spirée». ունի միայն ԳՒ, առանց վկայութեան։

= Անշուշտ նորերից յարմարուած ֆրանս. spirée ձևի վրայից։—*Ա՛ճ.*

*ԱՍՊՆԶԱԿԱՆ, ի հլ. (ըստ ՆՀԲ նաև ի-ա հլ. թէև առանց վկայութեան) «վանատուր, հիւրընկալ» Հռ. ժգ. 23. Ոսկ. հռ. Կորնթ. Ոսկ. յհ. բ. 14 յայնաբար «ընդունարան» Եղն. Ագաթ. վեցօր. կամ «առիթ» Աճառ. մկրտ. Ճառընտ. որից ասպնջականութիւն «հիւրընկալութիւն» Իմ. ժբ. 3. Ոսկ.յհ. ա. 10. Եղիշ. ասպնջականել Բրս. մրկ. նախասպնջական Բրս. պհ. քիչ անգամ ունինք ասպանջական Սերբհր. 181, որից ասպանջականութիւն Սերբեր. 181. Ճառընտ. շատ յետին է ասպնջատեղ Արր. կրետ. 9։

= պհլ. պաղնդ. aspanǰ «օթևան, բնակարան», պրս. چشم sipanǰ «հիւր» (որ պարսիկները յարմարեալ ստուգաբանութեամբ մեկնում են sa «երեք» և panǰ «հինգ» բառերից. իբր թէ «երեք կամ հինգ օր մնացող—հիւր»)։ Իրանեանից փոխառեալ են նաև ասոր. ܐܫܦܙܐ ašfāzā «տուն, հիւրանոց», ܐܫܦܙܟܢܐ ašfīzkanā «հիւրընկալող», մանդ. אשפנז špinza։ Հայերէնի կրկին ձևերն էլ ունին իրենց համապատասխանները. ասպանջ-ական<պհլ. aspanǰ և ասպնջական <*ասպինջական<պհլ. *aspinǰakān >ասոր. ašfīzkanā։ Ըստ Horn § 704 պարսկականից փոխառեալ են նաև թրք. ispenǰe, *ռումին.* spendže, *բուլգար.* ispenč «գերու փրկանք», *սերբ.* spendža «ծախս»։—Հիւրշ. 109։ Nyberg, Hilfsbuch 2, 23 պհլ. aspanǰ «հիւրընկալութիւն» մեկնում է իրան. *us-spanč-, իբր առնս. çvañč- «բացախիլ, գրկարաց ընդունելի»։—Իրանեանից է փոխառեալ նաև վրաց. მახპინძელი մասպինձելի «հիւրընկալ առնուտէրը կամ տանտիրուհին», მახპინძლობა մասպինձլորա «հիւրասիրութիւն», სამახპინძლო սամասպինձլո «հիւրասիրութիւն»։

Նախ ՆՀԲ պրս. սիփեճչ «հիւր» և իսփեճչ «առաք առեալ յօտարականէ»։ Lagarde, Urgesch. 509 ասպ+իջանել բառերից։ Lagarde, Urgesch. 511, Gesam. Abhd. 27, Arm. Stud. § 207 պրս. sipanǰ և ասոր. āšpīz։ Ոմն Ռ., Նոր-Դար 1885, № 5 վերլուծում է ասպա «բնակարան»+անջա+-կան մասնիկ. առաջինը գտնում է պարիսպ և խալդ. տուսպա բառերի մէջ, երկրորդն է վրաց. սաուճջե «ինչք», որով ասպընջական «բնակարան՝ կերակուր առաղ». թերևս նոյն է և վրաց. սոփելի «գիւղ»։ Հիւնք. պրս. որբենճ և լտ. hospes: Кипшидзе, Грам. мингр. яз. էջ 291 մեր բառին է կցում մինգր. միճջե «տէր, տնտրհատուէր»=վրաց. մենճելի։

ԱՍՊՈՒՋԱՆ «մի տեսակ լեռնային գեղեցիկ ծաղիկ» (psyllium *բստ* Շէհրիմանեանի և Տիգրանեանի՝ էջ 16, soldanelle *բստ* նորայր, Բառ. *ֆր.* mélilot bleu *բստ* Ուղուրի-

կեանի, տե՛ս ԳԲ էջ 175 և 1405) Մխ. առակ. Համամ. քեր. 258=Երզն. քեր. Վստկ. 142. միևնոյն բառն է ասպազան Ագաթ. տպ. 1909, էջ 331 (ուր երկու ձեռ. ունին նոյնպէս ասպուզան). աւելի յետին հեղինակներ գրում են՝ ասպազայ Ա.Բ, ասբօսան Դաւ. սահմ. (այլ ձ. սապուսան), ասպոնան Բժշ. ասպուզանուկ Բժշ. ամէնից ուղիղ ձևն է ասպուզան, որից ու=ա տառերի շփոթութեամբ յառաջացել է ասպազան գրչութիւնը՝ ըստ Նորայր, Հայկ. բառաք. էջ 3 և Բանաս. 1901, էջ 101։

Ըստ ՀԲուս. § 174 պարսկերէն է հնչում։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 79 ասպազէն բառից!

Ա.ՍՊՈՒՃԱԿ (ի=ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «մի տեսակ սոխակ» Ոսկ. Փիլիպ. է. ուրիշ տեղ չէ գործածուած։

ՓՈԽ.—Վրաց. ახპუჭაკი ասպուճակի «մի տեսակ թռչուն» Բ օր. ժղ, որ Ջուրինով 52 մեկնում է «silvia cineria»։

*Ա.ՍՊՈՒՐ (ո հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան), գրուած նաև ասպուս, ասիւռ կամ ասպուրակ «մի տեսակ հրազէն կարմիր ներկատու ծաղիկ է» Բժշ. Վստկ. 94. Մխ. բժշ. 117, 84. Ամիրտովլաթ մեկնում է «արաբ. դրտում», Նորայր, Բառ. ֆր. 204 ա Աբթինեան, Տունկերը էջ 6—7 համարում են «կանճրակ, ֆրանս. carthame, լտ. carthamus tinctorius», որ նոյն արաբ. դրաւումն է։

=Արաբ. عصفر ʿaṣfur կամ عصفور ʿaṣfūr carthame» (տե՛ս Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 34 և Շթայնշնայդերի հաւաքածոյի մէջ՝ WZKM 12, 219), որ և Բրբ. կոչւում է اصبور aspur (այս բառը իբր Բրբ. համանիշ դնում է Կամուս, անդ և Գ. 537 արաբ. قرطم qurṭum բառի դէմ. նոյնը ունի նաև Будаговъ 1, էջ 53։—Տարբեր է հնդկական ասփուր՝ որ դեղին կորիզով մսոտ մի պտուղ է (տե՛ս Թաղիադեան, Առաջն. մանկ. էջ 185)։

Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Բառ. ֆր. 204 ա և Ամէնուն տարեցոյցը 1914, էջ 59։

*Ա.ՍՊՈՒՐԱԿ «ծնեբեկ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 177։

=Ենթադրում եմ պրս.*aspurāk(g) ձևից, որ է արաբ. اسفراج asfrāj (տե՛ս Շթայնշնայդերի հաւաքածոյի մէջ WZKM 11, 270). ծագում է յն. ἀσπάραγος բառից, որից նաև լտ. asparagus, ֆրանս. asperge, ռուս. спаржа «ծնեբեկ»։—Ա.ճ.

ՀԲուս. § 177 դնում է յն. և լտ. ձևերից։

Ա.ՍՍԱԳ «ամսի 17-րդ օրը». ունի Քաջունի, Բ. 101 և Գ. 21 (մեկնում է «անվախճան». ի՞նչ լեզուով)։

+Ա.ՍՏ «այստեղ» ՍԳր. ևն. որից աստանօր Պիտ. 34. կք. աստէն ՍԳր. Ագաթ. Ոսկ. մ. ա. 7. աստէն և աստ Ոսկ. յհ. ա. 3. աստի ՍԳր. աստի և անտի ՍԳր. աստի անտի Սեբեր. աստուստ Ոսկ. յհ. ա. բ. 26. աստստին Եւս. քր. աստր («հոս, այստեղ») Ճառընտ. Եփր. համաբ. աստիճ «աշխարհային բաներ» Ոսկ. մ. ա. 6. 22. աստանդել «ձգձգել, տատանել» Վեցօր. Եփր. Թգ. Ոսկ. ես. աստանդութիւն Վեցօր. Սեբեր. ևն, աստանդական (նոր բառ)։

=Կազմուած այս բառից՝ ա տեղական մասնիկով, որի ծագումը մութ է. համմտ. անդ (տե՛ս Meillet MSL 10, 259)։

ՆՀԲ լծ. ընդ լտ. sto, յն. ἵστημι, պրս. istādan «կանգնիլ», հյ. աստր, բստ, նիստ, հաստատ ևն։ Lagarde, Gesam. Abhd. 300 աստանդել բառը համեմատում է հպրս.*astanda- «աստիճանդակ» բառի հետ, որ առանդել է Պլուտարքոս (Ջուգ. Աղէքս. 18) ἀστάνδης, ἀσκάνδης, ἀσγάνδης ձևերով։ (Հիւբշ. 109 իրաւամբ մերժում է այս անտեղի մեկնութիւնը)։ Bopp, Համմտ. քեր. ֆր. Բրգմ. 411 աստ բառը դնում է այս բառից։ Müller SWAW 42, 253 աստիճ «աշխարհ»=զնդ. sti։ Bugge KZ 32, 35 այս բառից (այ>ա ձայնափոխութեան ապահով մի օրինակ է համարում)։ Pedersen Ցուց. դեր. 62 նոյն ընդ հյ. հաստ, համմտ. գերմ. fast «գոնէ», hart «կարծր և մսոտ». նախապէս աստ նշանակում էր «մսոտ»։ Մառ ИАН 1910, էջ 1246 այս բառից՝ ա բացառականի մասնիկով։ Scheftelovitz BB 29. 20 աստիճ «աշխարհ» կցում է վեդ. asti «լինել», զնդ. sti «արարչութիւն», հպրս. astin

«բան» են ձևերի հետ, իրր հնխ. es «լինել» արմատից։

ԱՍՏ «ուժ» տե՛ս Ազգ։

Karolides 98 հյ. աստի «հաստատուն» կցում է կպդվկ. στί, στῦ «յատակ, գետին» բառին (Γλωσσ. συγκριτ.)

*ԱՍՏԱԽՈՏՈՍ «ծիրանի ծաղիկներով ախուշահոտ մի բույս է, եզնախոտ, աբեղախոտ, ֆր. stéchas, տճկ. քէշիշ օթու, գարապաշ օթու, լտ. lavandula stoechas L» Մխ. բժշ. էջ 126, 128. Ամիրտ. գրուած է զանազան ձևերով. այսպէս՝ աստախօտոս, աստօխօտոս, աստախօտոս, աստուխաւտաւս, աստխուտոս։ Նորագոյն մի ձև է ուստուխուտուզ «ռեհան» ՀԲուս. յաւել. էջ 675. կայ և կրճատ աստախոս ԱԲ։

=Արաբ. اسطوخودس ustūxūdūs (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 501 և Շթայնշնայդէր WZKM 11, 270), պրս. استوخودس ustūxūdas (ԳԴ. էջ 156 ա), որոնք փոխառեալ են յն. στοιχάς, սեռ. στοιχάδος հոմանիշից (ծագում է στείχω «ուղիղ գծով յառաջ շարժուիլ» բայից)։

ՆՀԲ և ԱԲ սխալմամբ իմանում են աստակոս և մեկնում «խեցգետին»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Նորայր, Հայկ. բառաքն. էջ 106. Բառ. ֆր. էջ 1169 բ, Ամէն. տարեց. 1909, էջ 251—2։

*ԱՍՏԱԿՈՍ «խեցգետին» Նեմես. էջ 30. ուրիշ տեղ չէ գործածուած։

=Յն. ἀστακός «խեցգետին», որից փոխառեալ են նաև լտ. astacus, Թրք. astaqoz, ռմկ. բստախոզ։ Յոյն բառը յառաջանում է ὀστακός ձևից և ծագում է ὀστέον «ոսկր», ὄστρακον «խեցի», ὄστρεον «ոստրէ» բառերից (Boisacq 90—91)։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ԱՍՏԱՆՆԼ «ուղղել կամ քննել». ունի միայն Բառ. երեմ. էջ 33։

*ԱՍՏԱՌ (յետնաբար ի-ա հլ. հմմտ. աստառոճ Կանոն. էջ 1005) «հագուստի եռևի կողմը դրուած շորը» Կանոն. էջ 105, Վստկ. 119, Վրդն. սղ. ճը, էջ 371, հնից ունինք անաստառ «առանց աստառի» Կիւրղ. Թագ։

=ՊՀլ. *āstar, որ աւանդուած չէ, բայց հաստատւում է հայերէնի հետ պրս. آستر āstar «աստառ» ձևի միջոցով. ծագում են stṛ «սփռել, տարածել, փռել» արմատից, հմմտ. կանս. āstara «ծածկոց, գորգ, անկողին, շոր» (ինչպէս նաև հյ. սփռել և սփռոց), պարսկականից փոխառեալ են նաև քրդ. ئاستەر astar. Թրք. astar և սրանից էլ նոյն, ձտարծվա «աստառ քաշել», ւերբ. hastar «աստառ»։—Հիւբշ. 110։

ՓՒ պաստառ բառից համառօտուած է կարծում։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Böttticher, Arica 75, 240, Lag. Urgesch. 245, Gesam. Abhd. 14։

ԳԻՒ.— Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Ննխ. Շմ. Ջղ. Սլմ. աստառ, Ակն. Համշ. Պլ. Ռ. Սեբ. աստառ, Տփ. աստար, Հճ. աստօր. նոր բառեր են աստառել, աստառուցու, աստառուկ, աստառանալէ։

ԱՍՏԱՐԻՏԱՅ տե՛ս Աստրատիգայ։

ԱՍՏԼ «ամուսնութեան համար նշանած ընտրել, աղջիկ ուզել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տիմոթ. կուզ. էջ 283 (=Կնիք հաւ. էջ 168). որից աստօղ «աղջիկ ուզող, նշանած, փեսացու», նոյնպէս մէկ անգամ գործածուած՝ անդ, էջ 283 (=Կնիք հաւ. 168). նոյնը ունի ԱԲ ճաստիլ «նշանուիլ աղջկան» (տե՛ս Աճառ. Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի հակաճառութեան մէջ, էջ 67—68)։

ԱՍՏԻՃԱՆ, ի-ա հլ. «սանդուխի ոտք» ՍԳր. «բաժանմունքներ ժամացոյցի, այժմ նաև ջերմաչափի, երկրագնտի լայնութեան և երկայնութեան» ՍԳր. «չափ, կէտ» ՍԳր. Վեցօր. «եկեղեցական կարգ» Ա. տիմ. դ. 13. Ագաթ. Կորիւն. «իշխանութիւն, պատիւ» Խոր. Յճխ. «տան յարկ, դատիկոն» Ոսկ. գծ. «յառաջդիմութիւն» Կոչ. ժա. որից աստիճանիլ «աստիճանների բաժանուիլ, 2. արևի կամաց կամաց վեր բարձրանալը» Վեցօր.=Շիր. էջ 57. աստիճանաւոր «կարգաւոր, կղեր» ՅՀ. իմ. աս. Նոր գրականում՝ աստիճանաչափ, աստիճանացոյց, աստիճանաբար, աստիճանական, բարձրաստիճան, երկաստիճան, եռաստիճան, քառաստիճան (ընտրութիւն) ևն։ Ս ձայնը ազդուելով յաջորդ ճ-ից՝ դարձել է շ և ըստ այսմ ունինք աշտիճան, աշտիճանել, ութաշտիճանեայ

Մամբր. իննաշտիճանեան *Մագ. նոր գրականում միայն առաջին ձևն է գործածական։*

= *Ակնյայտնի կերպով կապ ունի հնխ.* steigh- «*երթալ, սանդուխի աստիճաններից վեր բարձրանալ*» *արմատի հետ, որի ժառանգներն են սանս.* stigh, *յն.* στείχω «*երթալ, յառաջանալ*», στίχος «*կարգ, շարք*», στοιχέω «*կարգով առաջ երթալ*», *գոթ.* steigan, *հբգ.* stīgan, *նրգ.* steigen «*ելանել, սանդուխից բարձրանալ*», stiege «*աստիճան, սանդուխ*», *հսլ.* stignǫ «*գալ, հասնիլ*», stĭdza «*շաւիղ*», *լիթ.* staigà «*շտապ, յանկարծակի*», *հիսլ.* tīagaim «*երթալ, քայլել*» *են։* Աստիճան *բառի հնգոյն ձևն է* *աստէճան, *որի հետ ճշտիւ համաձայն են հնխ.* steigh- *արմատի առաջին երկու բաղաձայնները և երկբարբառը. դժուարութիւն են հանում միայն նախաձայն ա (հմմտ. սակայն* ասող*) և վերջաձայն* gh, *որ հայերէնում սովորաբար տալիս է գ, սակայն կարող է լինել նաև ղ (ինչ. ջեր, ջերմ) և թևրևա ձ, ժ (օձ, իժ), բայց ո՛չ բնաւ ճ։ Դժբախտաբար իրանեանում ասանդուած չէ բառս, որով կարելի չէ նաև ստուգել թէ իրանեանից փոխառութիւն չէ՞ արդեօք։—Ա.հ. (տե՛ս* Pokorny *2, 614,* Walde *829,* Boisacq *907,* Kluge *470,* Trautmann *285)։*

Նշ՚ր «ի ձայնէս ճաճ՝ իբր արմատ բառիս սանդուղք, և աշտ, ոստ, թրք. իւսթ, *իբր «բարձր, ի վեր», Տէրվ.* Altarm. *73 և Նախալ. 114 համեմատում է վերի ձևվերի հետ, իբր բնիկ հայ։ Հիւնք. պրս.* šutur «*ուղտ*» *բառից։* Meillet *(անձնական) ապահովաբար փոխառեալ բառ է։*

Գիտ.— Տրև. Շմ. աստիճան, *Սեբ.* ասդիջան, *Տիգ.* մսդիջոն, *Զղ.* ասդիջան, ասլիջան, *Գոր. Ղրբ.* մստիջան, ասլըջան, *Տփ.* ասլիջան, *Ախց.* չափն ու ասլիճանը ճանչել *(Գեղամեան, Ջէննաթ-ղէննաթ, էջ 24)։*

+ԱՍՏՂ (ղ *հլ.*) «*աստղ*» *ՍԳր. Ագաթ. Եզն. Եւս. քր. «ծովային մի տեսակ ժժմակ» Փիլ. լիւս. յոգնակին ունինք նաև* աստեղաձև *Մագ. մեծ են. էջ 67. ածանցման մէջ մտնում է երկու ձևով.* աստեղ- *և* աստղ-, *առաջինից ունինք* աստեղաբաշխ *Փիլ.* աստեղատուն *Վեցօր. Եզն.* աստեղագէտ *Ես. խէ. 13. Եւս. քր. Վեցօր.* աստեղագիտութիւն *Կոչ. Ոսկ. մ. ա. 6. Վեցօր. Եւս. քր.* աստեղաձեւ-մար *եզն.* բազմաստեղ* *ՍԳր. ևն. երկրորդից՝* աստղագէտ *Վեցօր.* աստղաձեւան *Ագաթ.* աստղիկ «*արուսեակ. նաև Աստուածուհին*» *Կոչ. Ոսկ. եփես. և մ.* աստղկեան *Ոսկ. Եբր. է.* անաստղ *Սահմ.* բազմաստղ *Վստկ.* շնաստրղ *ԱՒ ևն։ Նոր գրականի մէջ* աստղալից, աստղածաղիկ, աստղանիշ *ևն։*

= *Բնիկ հայ բառ՝ հնխ. ուղ.* stēr, *սեռ.* stṓs- *ձևից. միւս ցեղակիցներն են յն.* ἀστήρ, ἄστρον, *սնս. և զնդ.* star-, *գնչ.* stiari, *պհլ.* stār, stārak, *փարս.* stār, stāra, *պրս.* ستاره sitāra, *թալ.* āstua, *մազանդ.* sāreh, *աֆղան.* stōrai, *բելուճ.* istar, *քրդ.* istirk, *զազա* əstar, *օսս.* stalj, *թոխար.* s'ren, *լտ.* stella *(և յունարէնից փոխառութեամբ* astrum*), իտալ.* stella, *ֆրանս.* astre, *սպան.* astro, estrella, *սոմ.* ste, *գոթ.* stairnō, *հբգ.* sterno, *գերմ.* stern, *հիսլ.* stjarna, *անգլսք.* steorra, *կորն.* steyr, *անգլ.* star, *կիմբ.* seren, *բոլորն էլ «աստղ» նշանակութեամբ։ Հնխ.* stēr *բառը ոմանք ուզում են մեկնել հնխ.* ster «*ցրուել*» *արմատից կամ դնում են սեմականից փոխառեալ, բայց երկու կարծիքն էլ անհաստատ են համարւում (տե՛ս* Walde *736,* Boisacq *91,* Horn § *711,* Kluge *471,* Pokorny *2, 635)։—Հիւբշ. 421։*

Հայերէնի նման յունարէնն էլ ունի նախաձայն a. *բայց կայ նաև առանց յաւելուածի՝* στερ*ոπή «փայլակ»։ Նախալեզուի մէջ պէտք է դնել երկու տարբեր նախաձև՝* ster- *և* stel-. *Հայերէնը պատկանում է երկրորդին և իր* ա *բնով (աստեղաց) նոյնանում է լատիներէնի վերջաւորութեան հետ* (Meillet BSL *32, № 99,* էջ VII)։ *Սխալ է լտ.* stella *հանել* *stēr-la *ձևից, հայերէնը ցոյց է տալիս, որ պէտք է դնել* *stēl-na *ձևից (*n *յաւելուածի համար հմմտ. գոթ.* stairno, *որոնց զուգահեռաբար գոթ.* sunno «*արեգակ*», *հսլ.* sl̥ъ-n-ьce «*արեգակ*», měs-ę-cь «*լուսին*») (Ernout-Meillet *930)։ Բալթիկ-սլաւականի մէջ պակասում է այս բառը և նրա փոխարէն գտնում ենք լիթ.* žvaigzde, *լեթթ.* zvàigzne, *լհհ.* gwiazde, *հսլ.* zvězda, *ռուս.* zvězdá (Trautmann *373)։*

Հներից Վարդան Պատմիչ, Մեկն. ծն. ա

19 մեկնում է այսպէս. «Աստեղք կոչին դի ոստոստելով գնան և աստեղք են յայսմ աշխարհի պէտս»։ Նոյնը նաև Յայսմ. մրտ. 20 «Լուսինն սողալով գընայ... և աստեղք ոստոստելով. և աստղ կոչին, զի ասա եղենի պէտս այսմ աշխարհիս և անդէն անպիտանանան»։ Առաջին անգամ ուղիղ մեկնեց Klaproth, Asia poly. 105, յետոյ ՆՀՔ, որից յետոյ էլ Peterm. 21, Windisch. 11 և։

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Մկ. Շմ. Վն. Տփ. աստղ, Ախց. աստղը, Երև. աստխ (բայց՝ աստղը, աստղնէր), Մշ. Ջղ. աստխ, Գոր. Ղրբ. Ննխ. Սչ. ասթխ, Ոզմ. ասդղ, Հմշ. ասդէղ, Խրբ. ասդ'ըխիգ՛, Ասլ. ա՞սխ, Պլ. ասդղը, ասղը, ասղ, Ակն. Կր. Ռ. Սեբ. ասխ, Տիգ. ասդղ, Սլմ. ասղ՛, Հճ. օսթխ, օսխ, Զթ. օսղ, Մրղ. ասկ։ Նոր բառեր են աստղփուշ, աստղոտիկ, աստղնտիւ, աստղակաւ, աստղաբաց, աստղալոյս։

ՓՈԽ.—Արևել. թրք. استیج astiγ «մի տեսակ կանացի զարդ, գինդ, զլխի եռևից կախուած մի զարդ» (ըստ P. de Courteille, Dict. Turk-Orient. Paris 1870). այս բառը թուրքերէնի կամ պարսկերէնի մէջ մեկնութիւն չունի և կարող է հայերէնից փոխառեալ լինել։

*ԱՍՏՈՒԱԾ հին և ընտիր բառ, որից ունինք մի քանի հարիւր ածանցներ. հնագոյններից յիշենք հետևեալները. աստուածաբարբառ Ագաթ. վեցօր. Կորիւն. աստուածաբեր Կորիւն Ագաթ. աստուածագէտ Ոսկ. Ագաթ. աստուածագիր Բուզ. աստուածախոյզ Եզն. աստուածախօս Սեբեր. Ագաթ. աստուածախօսել Ոսկ. ա. տիմ. աստուածահաւր Կոչ. աստուածանշան Եւս. քր. աստուածեղէն ՍԳր. Եփր. ծն. Բուզ. աստուածական Ագաթ. Եզն. Ոսկ. ես. անաստուած Եփես. բ. 12. Կոչ. բազմաստուածեան Եզն. Սեբեր. երեքաստուածեան Սեբեր. չաստուած ՍԳր. Եզն. Սեբեր. յետին են աստուածունի «աստուածային» Կնիք հաւ. 315. աստուածարել, աստուածարեալ ևն՝ առ մասնիկով. հմմտ. մեծ-ար-ել, հրաժ-ար-իլ։—Մեր քերականութիւնները սովորեցնում են թէ Աստուած բառը նշանակելով «ճշմարիտ Աստուածը», հոլովւում է Աստուածոյ, յԱստուածոյ, Աստուածով, իսկ «չաստուած» նշանակութեամբ հոլովւում է աստուածոյ, աստուածոց, աստուածով ևն (տե՛ս Բագրատունի, Քերակ. զարգաց. էջ 24), բայց այս կանոնը սխալ է։ Ստոյգն այն է, որ առաջին նշանակութեամբ բառս երբեք ամբողջովին չէ գրուած մեր ձեռագրերի մէջ, այլ միշտ պատուով՝ Ա՜ած, Ա՜յ, յԱ՜յ, Ա՜վ։ Օրինակի համար կրկնագիր Ագաթանգեղոսի մէջ Ա՜ած, Ա՜ծն, յա՜ծ, զա՜ծս պատահում է 10 անգամ, իսկ բարդութեանց մէջ 20 անգամ և միշտ գրուած է Ա՜ած. սեռական Ա՜յ՝ 20 անգամ. բացառական յա՜յ՝ 3 անգամ. ընդամէնը 53 անգամ և միշտ պատուով (տե՛ս իմ յօդուածը ՀԱ 1913, էջ 4)։ Այսպիսի համառօտագրութիւններով ի հարկէ կարելի չէ իմանալ բառի հիշտ ընթերցումը. բայց կարելի էլ չէ առանց պատճառի պնդել թէ հին հնչումն էր Աստուածոյ։ Ընդհակառակը՝ յոգնակի հոլովները, չաստուածոյ սեռականը, անաստուած, անաստուածի, անաստուածիւ ձևերը և հայերէնի ընդհանուր ձայնաւորութեան օրէնքները ցոյց են տալիս թէ հին հայերէնի մէջ աստուածոյ ձևով մի բառ չէր կարող գոյութիւն ունենալ և թէ աստուած՝ ամէն նշանակութեամբ էլ հոլովւում էր աստուածոյ, աստուածով ևն։ Մեր ձեռագրերում կան արդէն մի քանի դէպքեր, որոնք վերի կանոնին հակառակ են. այսպէս՝ էջմիածնի Կարինեան թ. 526 ձեռագրի (ՋՋ=1457 թուից) մագաղաթեայ պահպանակում գտնում ենք աստուածոյն ամբողջական գրութիւնը (Գրծ. ե. 43, որ տպագրում աստուածոյն է. Մ. վրդ. Մաքսուդեանց ՀԱ 1913, 312). կրկնագիր Ագաթանգեղոսում՝ էջ 52 բ գրուած է աստուածոց և 30 ա աստուածոցն (Աճառ. ՀԱ 1913, էջ 4). բայց երեք պարագային էլ խօսքը չաստուածների վրայ է և հետևաբար՝ ըստ ենթադրեալ կանոնի՝ պիտի լինէր աստուածոյ, աստուածոց։—Աստուածոյ ձևը միջին հայերէն է, որ կանոնաւորապէս յառաջացած է հնագոյն *աստուածոյ սեռականից, միջին ա-ի անկման օրէնքը հաստատուելուց յետոյ. *աստուածոյ ձևը տառացի գրուած չլինելով անհետացել է և ժողովրդական աստուածոյ ձևը անցել է նրա տեղը՝ նոյն

իսկ հնագոյն բնագրերի մէջ։ (Այս գաղափարը յայտնած և պաշտպանած է Meillet. վերջին անգամ տե՛ս իր Altarmenisches Elementarbuch *1913, էջ 20. Հիւրշման ևս համաձայն է նրան (անձնական). միայն* Pedersen *(Նպաստ մը Հայ լեզ. պատմ. էջ 72) կարծում է թէ* աստուածոյ *հին հայերէնի յատուկ մի ձև է և յառաջացած է երաժշտական շեշտի պատճառով* *աստուածոյ *նախաձևից։ Բայց այս պարագային ինչո՞ւ «չաստուած» նշանակութեամբ մնաց* աստուածոյ։

=Փոխառեալ է փռիւգերէնից. հմմտ. նշանաւոր թրակո-փռիւգական աստուածութիւնը Σαβάζιος, Σαβάθιος, Σεβάζιος, Σεβάδιος, Σευάδιος, Σαυάζιος, Σαοάζιος, Σαάζιος *(տե՛ս Արիստոփան,* Vespae *9,* Aves *875,* Lysistrata *388, Թէոփրաստի Նկարագիրք 16, Ոպպիանոս, Որսականք 1, 26, Կղեմէս Աղէքս.* Protreptique *14, Մտրաբոն 471). այս աստուածութեան անունը լեռոյ յատկացուեց Բագոսին։*

Մեր հին մատենագիրները հետևեալ ձևվերով են ստուգաբանում։ Խորով Անձևացի, Մեկն. ժամակարգ. էջ 99 «Աստուած անունն արարչական է ... և առ մեզ ստուգաբանի թէ աստ *էած զմեզ»։ Նոյն հեղինակի Մէկն. պտրգ. էջ 16 «Տէրըն անուն վասն տիրելոյն է, իսկ աստուածն՝ վասն ստեղծանելոյն և յաստիս ածելոյ զեղեալքս»։ Յովհ. Վանակ. վրդ. Բացատր. աղօթից Ամբակումայ՝ «Աստուած է անուն, որ թարգմանի զմեզ յաստիս ածող»։ Ս. Ներս. Լամբր. Մեկն. Պատարագի «Աստուած, այսինքն աստ ածող զոչէան չէութիւն և ի գոյութիւն» (Լմբ. մատ. էջ 349)։ Յովհ. Վնկն. վրդ. հարց և պատս. «Ո՞վ եղ զանունս Աստուած. Պատասխան. Ասեն թէ օձն ասաց նմայի. Չի՞ է զի ասաց ձեզ որ զքեզ աստ ած։ Զայն, ասեն, ածն առին և Աստուած անուանեցին։ Բայց դու մի՛ ընդունիր զայս. զԱստուած անունն Ադամ եղ (և ոչ օձը)»։—Սկևռ. աղ. 53 «ըստ քերթողական արհեստի ծանեալք զանուն յիրէ և ի ձայնէ և ի ներգործութենէ. ըստ որում յաստիս ածմանէ՝ Աստուած»։ Այսպէս և Առ որս. ե. ըստ հյ. թրգմ. Նար. վահր. երրդ. վրդն. պտմ. էջ 1՝* աստ *էած։ Միխայէլ ասորի, Երուս. 1870, էջ 536՝ «Աստուած, որ է ածիչի գոյութիւն յանգոյից»։ Տաթև. հարց. 49 Աստուածն յաստ էած զմեզ և կամ ստեղծօղ և կամ ճանաչօղ լսի. իսկ Տաթև. ամ. էջ 78 ա «Աստուած տեսօղ թարգմանի»։—Ագաթանգեղոս (տպ. 9 փ. 1909, էջ 40) բառախաղով ունի «զոր կոչես դու աստուածս՝ ստոյգ իսկ են հաստուածք, վասն զի հաստեալք են ի մարդկանէ»։—Նոր քննիչներից նախ* Schröder, Thesaurus *էջ 43* ազդու *ած «efficaciter producens, ազդու կերպով արտադրող»։* La Croze, *Զեռագ. աշխատ. տե՛ս Բազմ. 1897, էջ 8 մարական* Աժդահակ *յատուկ անունի հետ։ ՀՀՔ հների համեմատ՝* աստ *էած։ Ինճիճեան, Եղանակ Բիւզանդ. 1820, էջ 211* հաստել *բայից, իբր հաստուած, հաստիչ։ ՆՀՔ «իբր հաստիչ կամ* աստ *և յաստիս ածող, այսինքն գոյացուցիչ... և կամ...* աստոյ, աստևոր, հաստատուն»։ E. Boré JAs. *11, 652 ծ դնելով=*st՝ Աստուած *բառը կարդում է* astvast *և թարգմանում է «Աստուած Աստուածոց», արմատը դնելով* Ast *«Աստուած», իբր պրս.* yazd, yazdan *«արարիչ Աստուած»։ Ագդասեր Կալկաթայ, հտ. Բ. թիւ 42, էջ 180 աս «ասել, խօսք, շունչ» և տուած, որ է «տուող» բառերից։* Windischm. *էջ 20 «լինել» բառից, ինչ. դնդ.* astvañt *«աշխարհ»։* Gosche *էջ 7 նոյն կարծիքն ունի։ Կովկաս լրագիր, Տփ. 1847, թ. 15* աշտուած, *այսինքն յաշտիւք պատուեալ կամ հաշտեալ։* Böttticher, Arica *63 և* Lagarde, Urqesch. Arm. *503 դնդ.* astvat *«գոյութիւն ունեցող»։ Մսեր Մսերեանց, Ճռաքաղ 1861, էջ 8—10 հաւաքում է մինչև այն ժամանակ եղած ստուգաբանութիւնները, որոնցից լաւագոյնն է համարում Խորով Անձևացու մեկնութիւնը՝* աստ *էած. բայց աստ համարելով «հաստումն, ստեղծումն» և ո՛չ թէ «աստ, այստեղ»։ Տե՛ս նոյնպէս նոյն հեղինակի Ընդարձակ հրահանգ Քրիստ. էջ 10.*

129։—Պօզոս պար. Ադրիանուպօլսեցի, Թանգարան խրատուց, Ա հտ. էջ 170, ազդուած, այսինքն «ազդեալ, ծանուցեալ»։ Էմին, Исторія Вардана, ծան. 1 և Müller SWAW 48, 428 ապտել, ճապտել բայից։ Կ. վրդ. Շահնազարեան, Երկրագունտ Մանչէստրի, 1864, թիւ 1, էջ 7 և թիւ 5, աստղաբանում է աս+տուած. աս՝ իբրև գնդ. աս, էս, եզ, էզ, իզ «Աստուած» (ինչպէս աս-եր=արբ «Աստուած հրոյ», ասման «երկինք», եզ-դաւ «Արարիչ Աստուած» ևն), իսկ տուած=սանս. devas, լտ. deus, յն. θέα «շողշողուն էակ»։ JAs. 1(2864), 170 թերևս ազդել, ազդող։ ZDMG 1868, 330 հաստել =stā արմատից։ Տէրվիշեան, Altarm. էջ 92—93 ընդարձակ մի յօդուած ունի, ուր բառիս արմատ է դնում անս. և գնդ. stu «գովել, բարձրացուցանել»։ Մարկոս Աղաբէգեան, Թուրք, Պօլիս 1878, էջ 22 աչաւաճիստա բառից! (ուղում է ասել գնդ. Aši-vahišta «գերագոյն արդարութիւն», որ և բարձր աստուածութիւն էր)։ Կ. Կոստանեանց, Հայոց հեթան. կրօնը, էջ 14 սանս. աս «է» բառից. ինչ. Աճուրա «էութիւն, էակ»։ Մորթման (ըստ Ալիշան, Հին հաւ. էջ 17) փռիւգ. Ասդուատ «Աստուած» ձևի հետ։ (Այսպիսի մի ձև այլուստ մեզ անյայտ է)։ Ա.Լ.(Արևել. մամուլ 1889, 178) սանս. ասվաս «ազդող, Աստուած» բառից։ Ալիշան, Հին հաւ. 18—19 հնդ. աստուատրա «աստուածային ծառը», աուատաղ «ինքնաստուր», գնդ. ասդվատ «էական», կելտ. Duez «Աստուած», սկանդ. Ասկերտ, Աս-բուրգ «աստուածոց բնակարան», աս, աճց «սիւն հաստատութեան», լապոն. ացի և հունգ. իսդեն «Աստուած», խալտ. Ծս, պոլինէզ. Ադուա «Աստուած»։ Տաշեան, Ուսումն. հայ լեզ. էջ 361 ուրարտ. asdu, istubi ևն բառերը կցում է հաստել, Աստուած բառերին։ Meillet, Revue critique 1896, էջ 423 աստ- գնում է =yaz(ā)ta։ Patrubány, Ethnol. Mitthell. 1896 V. էջ 143 Աստուած<vastu-a-s «տան և քաղքի Աստուած» (վեդ. vastu «բնակատեղի»), որ ինքը SA 1, 211 մերժելով գնում է սանս. stávati, գնդ. Staoiti «օրհնել, գովել»։ Bugge, Lyk. Stud, 1, 13 Պամփիւլիոյ Ἀσπενδος, Σστεδιτυς քաղաքի անուան մէջ. հայերէնում պէտ մասնիկ է։ Սանտալճեան, L'Idiome, էջ 16, գնդ. astu և բեռ. aste։ Marquart, Բիւր. 1900, 335 գնդ. astvath «գոյութիւն ունեցողը. հայից փոխառեալ է եբր. עבאוֹת ṣəbāōṯ «Սաբաւովթ»։ Jensen ZDMG 1899, 453 և ՀԱ 1904, 372 հաթ. Ὀστασος Մեծ Ած, որ աւանդում է Ստեփանոս Բիւզանդացի (նոյնը նաև Jensen IF Anz. 14, 55)։ Թիրեաքեան, Կարնամակ, ծանօթ. 91 պհլ. ուզաիշ «կուռք» բառը աուզտաս կարգալով նոյն է դնում Աստուած բառի հետ։ Աճառեան ՀԱ 1907, էջ 277—285 ունի մի ձանձրալի յօդուած Աստուած բառի մասին, որ մեկնում է ast «է, կայ» բառից՝ ant ու vant մասնիկներով։ Patrubány ՀԱ 1908, 188 հասկ տուած։ Pedersen KZ 39, 243 հաստ կամ հաստել բառից։ Մառ առաջին անգամ ուղիղ համեմատեց վերի փռիւգական ձեվերի հետ (տե՛ս Богъ Сабазіосъ у Армянъ. ИАН 1911, էջ 759—774, հմ. թրգմ. Արարատ, 1911, էջ 794—9). Մառը չի մեկնում բառը, այլ հարց է տալիս թէ արդեօք յարեթեանն չէ՞, որ լեռով Փռիւգիա և այնտեղից էլ Թրակիա է անցել. հայերէնի մէջ ս ձայնը համարում է լեռով աւելացած, հին արմատական ձեր ասված։ Նոյն հեղինակը ИАН 1912, 829 նոյնին է կցում նաև սվան. ափսադ, ափսաս, ափսասա «որսի աստուած»։ Ց. Գ. Մ., Պատմ. գրակ. էջ 16 սանս. իզվարս։ Սանտալճեան, Hist. de l' Arménie II 610 ուրարտ. asta, aste, astas «հաստող», Oštir, Btrq. alarod. 66 յն. Ἀστυπάλαια լատուկ անուան մէջ, որ մեկնում է «Աստուածների սեղան»։ Պատահական նմանութիւն ունի ռունական ծածկագրերով ansuz «Աստուած»։

Գիւր.—Ագլ. Մկ. Ոզմ. Ջղ. Վն. աստված, *Ալշ. Մշ.* աստվան, ասվան, *Տփ.* ա՛ստվան, ա՛ստուն, *Երև.* ա՛ստվան, ա՛ստօն, *Հմշ. Տիգ.* ասդվան, *Ախց. Կր. Մրղ. Սլմ.* ասված, *Ասլ. Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* ասվան, *Գոր. Ղրբ.* ա՛ստուծ, *Շմ.* աստօծ, *Հճ.* ասվօն, *Ակն.* ասվան, ասբան, *Վն.* ասպած, *Զթ.* ասբ՛օն: *Հոլովման ժամանակ տ, ծ, վ ընկնելով կամ փոփոխուելով յառաջանում են հետևեալ կրճատ ձևերը. Զթ. սեռ.* ասուծու, *Մրղ.* աստու, *Կր. Շմ.* ասսու, *Երև.* ա՛սսու, *Պլ.* աստուծու, ասծուծու, ասծու: *Սրանցից դուրս յիշելու արժանի են Ագլ.* բսսա՛ծին, *Մկ.* աստարածին, ասվարածին, աստվարածին, *Խոյ և Ասպ.* ասվարածին, *Էնկիւրիի Թրքախօս հայոց բարբառով* ասվայիզին «*Աստուածածին*»:

*ԱՍՏՈՒԼՈՒԽԻԱՅ «ըռէվէնտ» (որ է խաւարծիլ բոյսը) Գաղիան. ունի միայն Բառ. երեմ. յաւել. էջ 573:

=*Յն.* ἀριστολοχία «*սղանգ, զրևանդ*» *բառն է, որ արաբերէն ձևի վրայից անշուշտ հասել է մեզ, աղաւաղուելով բառի Թէ՛ ձևը և Թէ՛ նշանակութիւնը: Այս բոյսը հին ժամանակ երկունքի ցաւերի մեղմիչ էր համարւում, ուստի և յոյն բառը կազմուած է* ἄριστος «*լաւագոյն*» *և* λοχία «*երկունք*» *բառերից: Յունարէնից փոխառեալ են նաև լտ.* aristolochia, *ֆրանս.* aristoloche, *արաբ.* ارسطولوخيا usturlāb «*աստղերի բարձրութիւնը չափելու աստղաբաշխական գործիք*». *կազմուած է* ἄστρον «*աստղ*» *և* λαμβάνω «*առնել*» *բառերից:—Հիւբշ. 341:*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ ևն: Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 268 բնիկ արաբերէն կարծելով մեկնում է արաբ. ustur «*տողեր*» +lāb «*գործիքի հեղինակի անունը*». *Թարգմանիչը տալիս է ճիշտ մեկնութիւնը ըստ յունարէնի:*

*ԱՍՏՌՈՆՈՄԻ «*աստղաբաշխական աղիւսակ*». *մէկ անգամ գործածում է Մագ. Թղ. 172, որ հրտր. Կոստանեան* աստռաւնոմի *ձևով է դնում:*

=*Յն.* ἀστρονομία «*աստղաբաշխութիւն*», *որ կազմուած է* ἄστρον «*աստղ*» *և* νέμω «*բաշխել*» *բառերից:—Աճ.*

ՆՀԲ և սրա հետ Հիւբշ. 341 դնում են յն. ἀστρονομικός «*աստղաբաշխական*», *որ ձևով յարմար չէ:*

ԱՍՏՐԱՏԻԳԱՅ «զօրագլուխ» Եփր. գծ. 30, երկու անգամ գործածուած. «Աստրատիգային պատառելովն զգեստուց իւրեանց». «Զահի հարան աստրատիգայքն ի շարժմանէ անտի»: Նոյնից օրինակելով Ոսկ. գծ. 301 (=Սկևռ. գծ.) գրում է աստարիտայ: *Առաջինի մէջ լուսանցքի վրայ մեկնուած է բառս «քաղաքապետք, ճոխք քաղաքին» և իրօք համապատասխանում է Գծ. ժզ. 22 հատուածին. «Եւ զօրագլուխքն պատառեցին զհանդերձս իւրեանց»:*

=*Ասոր.* ܐܣܛܪܛܝܓܐ estratīga, *որ գործածուած է Գործք Առաքելոցի համապատասխան տեղը (Brockelm. 18 բ), փոխառնուելով յն.* στρατηγός «*զօրագլուխ*» *բառից. ասորականից էլ տառադարձուած է հայերէնի՝ Եփրեմի Թարգմանչի ձեռքով:*

ՆՀԲ ունենալով միայն աստարիտայ *ձևը, մեկնում է «քաղաքացիք» և կցում է յն.* ἀστικός *հոմանիշին: Ուղիղ մեկնեց Վարդանեան ՀԱ 1922, 406:*

+*ԱՍՐ «բուրդ» (հոլովուած է* ասու, ասուց, *բայց նաև* ասրոյ *կամ* ասրու, ասրով *կամ* ասեր, ասրոց, յասրոյ) *ՍԳր. Վեցօր. Եփր. դտ. 336. բառի բունն է* ասու, *որով կազմուած են* ասուեայ *Ղևտ. ժգ. 59,* ասուի *ՍԳր.* ասուեղ *Եզն. հին և ընտիր բառերը. յետին են* ասր- *ձևով կազմուածները. ինչ.* ասրեայ, ասրաբեր, ասրեղէն, ասրավաճառ *ևն. նոր գրականում* ասուեակ, ասուեղէն *կազմուած են հնագոյն ոճով:*

=*Հնխ.* pᵒk'u- *ձևից, որ ասորին ձայնդարձն է* *pek'u-, *pok'u- *բառի. սրանց միւս ժառանգներն են յն.* πόκος «*կտրուած*

բարդ, ասր», πέκος «գեղմ», πέκω «մազը սանտրել, բարդ խուզել», լտ. pexus «բրդոտ», pecus, pecoris «արջառ, պաճար, պախրէ», pecūlium «ինչք, ստացուածք», pecūnia «դրամ», հրգ. fahs «մազ», fihu «արջառ», գոթ. faihu «ինչք, դրամ», գերմ. Vieh «արջառ», հոլլ. vee «արջառ», անգլսք. foer «ոչխար», անգլ. fee «կալուածք, վարձք», հիսլ. fax «ձիու բաշ», fāer «ոչխար», լիթ. pékus «արջառ», peszù «պատռել, մազերը պոկել», հպրուս. pecku «արջառ», սանս. paçu «ոչխար», pakšman «թարթիչ, մազ», գնդ. pasu «հօտ, արջառ, ոչխար», pašna- «կոպ», պրս. پشم pašm «ասր, բուրդ»։ Հնխ. բառը նշանակում էր նախապէս «բուրդ», յետոյ «բուրդ տուող անասունը» և սրանից յետոյ էլ «ոչխար, արջառ, ինչք, ստացուածք, դրամ». հայերէնը կանգնած է ամենահին նշանակութեան վրայ (հմմտ. Walde 568, Boisacq 759, Trautmann 217, Kluge 510, Pokorny 2, 16, Ernout-Meillet 710)։— Հիւրշ. 421։

Böttich. ZDMG 1850, 351 և Arica 80, 330 սանս. asrā, açrā «ձար, մազ»։ Laqarde, Urgesch. 520 նաև գոթ. ahs «հասկ»։ Müller SWAW 66, 270 գնդ. *çavaṅha և լն. χῶας «գեղմ»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Buqqe, Btrq. 11։

ԱՍՐԱՏԱԿ «մի տեսակ թռչուն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 231 «Ոմն դրուս և զասրատակս ըմբռնեալ առ լեռնոտամբն կասբեայ, շրջեցուցանէր՝ բազէ զնոսա կատածեալ» (այլ ձձ. զտատրակս, զուրատակս)։

=Կազմուած է **ասր+տակ** բառերից և ճիշտ նոյն է՝ ինչ որ **բդդտ** թռչունը։ Այս թռչունը այսպէս է կոչուել անշուշտ տակը (յետոյքը) բրդով ծածկուած լինելու պատճառով։— Աճ.

ԱՍՐՈՅԹ տե՛ս Սարաւոյթ։

***ԱՍՐՈՒՆՁ** «սիլիկոն կոչուած ներկը, որ է կապարի կարմիր թթուածնատ, ֆր. minium, տճկ. սիւրիւչէն». մէկ անգամ միայն ունի Յովասափ բժշ. որից ՀԲուս. § 183. նոյն է նաև **ասրէճ** «սիլիկոնն» Գազիան. (ըստ Բառ. երեմ. յաւել. 573)։

=Արաբ. اسرنج asranǰ (տե՛ս Շէյխոյնայգերի հաւաքածոն WZKM 11, 270. սխալ ձայնանիշով կարելի է կարդալ asrunǰ) կամ سرنج saranǰ. որ կամուս, Բրք. Բրգմ. Ա. 412 այսպէ՛ս է մեկնում. «Ծառօթ մի գեղի անունն է, որ հրեիմն سيلقون sīliqūn էլ են կոչում. տաճկերէն سلوكن sülüyen կոչուած կարմիր ներկն է, որ այրած անագով և կապարով է շինուում. վէրքերի համար օգտակար է». պրս. سرنج sirinǰ «մեկնի սիլիւկէն, որ է ներկ ինչ կարմիր» (ԴԴ)։ Տե՛ս և **սիղիգոն, սրիկոն**։— Աճ.

ՀԲուս. § 183 Յովասափ բժշկի յիշած սիլիկոնը հասկանում է լտ. siligo «հասարակ ցորեն կամ ցորենի տեսակ մի. ըստ յունականին σιλίγνεον, որով ասրուճնը դառնում է «ցորեն»։ Վերի մեկնութիւնը ինձնից է։ Նոյնը այժմ անկախաբար Նորայր ՀԱ 1921, 106։

ԱՍՐՕՍ «ճիւղ, ոստ»? նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Նար. տաղ. 482 «Այդ ասս ու տոսախ ծառերդ վարդագոյն ոստս արձակիցին. այդ նոճ ու բողբոջ ասրօսդ՝ զարդ առեալ վարդն շուշանին» (Տե՛ս Աճառ. Հայերէն նոր բառեր հին մատեն. Ա. 143)։

***ԱՍՓԱՂՕՓ** «նէֆթ» Գազիան. ըստ Բառ. երեմ. յաւել. 573։

=Յն. ἀσφαλτος «նաւթ, կուպր», որ սեմական փոխառութիւն է համարւում (Boisacq 93)։— Աճ.

***ԱՍՓՕԴԻԼՕՆ** «շրէշ բոյսը». մէկ անգամ ունի Նոննոսի մեկնիչը՝ այսպէս. «Տնկոյ առնուն է, զհոտն անոյշ ունելով և զծաղիկն հրճուելի»։ Այս մեկնութեան համեմատ ԱՔ նշանակում է «անուշահոտ տունկ մը»։ Աւելի յաճախ գործածուած է յետին բժշկարաններում՝ **ասփոդելոն, ասփորիլոն** ձևով (տե՛ս ՀԲուս. § 757 և § 3287)։

=Յն. ἀσφόδελος «շրէշ, որ շուշանազգիներէն տեսակից մի բոյս է. asphodelus ramosus L.» սրանից փոխառեալ են նաև լտ. asphodelus, ֆր. asphodèle «շրէշ». բառը շատ հին է. գործածուած է Հոմերոսի մօտ. ծագումն անծանօթ (տե՛ս Boisacq 93)։

ԱԲ արդէն յիշում է թէ յունարէն է։ Ուղիղ մեկնեց Հիւս. § 757։

ԱՍՓՈՒՇ *«աղաբոյս քարն է. և է խոտ ինչ»։ Այսպէս ունի Քաջունի, Գ. 22։ Այս բացատրութիւնը հասկանալու համար համմտ. էջ 5 աղաբոյս fwr «քար յորոյ վերայ բուսանի աղ, և է խոտ ինչ»* (լտ. salicornia *կոչուած բոյսն է)։*

***ԱՏԱԿ** (ի-ա *հլ. ըստ ՀՀԲ, անհոլով ըստ ՆՀԲ*) *«կարող, ընդունակ, ձեռնհաս»* ծւս. *քր. ա. 65. Սերբր. բ. գ. Ոսկ. Ծբր. է. ոչ էր ատակ նմա «ժամանակ չունէր» Պտմ. վր. 73. որից* ատակել *«կարեննալ, ժամանակը բաւել, միջոց ունենալ» Փիլ. Խոր.* ատիկել *նոյն նշ. Վրք. հց. ա. 509. Վրդն. առ. 309.* անատակ *«անկարող, անճարակ» Վրք. հց.։*

= *Պհլ.* *atāk *«կարող» բառից, որ յառաջանում է* *ati-tāvaka-> *ātavaka *ձևից և որ նոևան հկաւ մանիք. պհլ.* ’’ðwγ *«կարող» ձևով. կազմուած է* tu, tav *«զօրել, կարողանալ» արմատից (ընդարձակ տե՛ս* բաւ *բառի տակ)։ Բառիս կազմութեան և* v *ձայնի ոգման համար համմտ. պհլ.* astānak *«թուլութիւն, տկարութիւն» <* *us-tāvana- *«անուժ»,* attān *<* *ati-tāvana *«ուժեղ, կարող, ընդունակ»,* stav *«տկար» <* *us-tavah *«ուժից գուրկ» պրս.* sutūh *«ննջասրտեալ և ձանձրացեալ» <* *us-tava-θa, *պրս.* کوتاه kōtāh *«կարճ, տկար» <* *kauta-tāva-θa *և վերջապես պրս.* mī tuvānam *«կարող եմ» > ժող.* mi tūnam.

Հներից Վանակ. Հաւատ. արմատը դրնում է ատ. որով հաւատ բառի մեկնութեան մէջ ասում է. «Հաւատն լոյս, հաւն սկիզբն, և ատն՝ զօրութիւն գործոյ»։ ՆՀԲ լծ. տոկ, տոկուն *և Բրբ.* հաթտ *(իմ՛ արաբ.* hadd *«սահման, համարձակութիւն»). վերջին համեմատութիւն դրած է* աւօտ *բառի տակ։* Gosche, 22 *հա. մեմատում է փռիւգ.* Ἀδαγεύς „Deus Hermaphroditus“ *աստուածութեան հետ, որի անունը աւանդում է Հեսիքիոս,* Gosche *գտնում է, որ «Աստուած նշանակութիւնը յարմար է համեմատելու «կարող» իմաստի հետ»։* Böttticher, Arica *31 ատակել, փռիւգ.* attaqus *«բուժ» և պրս.* takka *ձևերը իրար հետ է համեմատում։* Laqarde, Urgesch. *312 արմատը դնում է* tak*։ Հիւբշ. 110 մերժում է կցել պհլ.* tag *(=*tak*) «զօրեղ, քաջ» բառին։ Հիւնք.* տակ, յատակ *բառից։* Bartholomae IF *38 (1917—20), էջ 47 փոխառեալ է դնում միջին իրան.* *attāk *«կարող» մի ձևից, իրր <* *ati-taγāk*։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 73 պրս.* تاك tak *«յատակ, բուն, հիմ» բառից, իրր թէ «բանիբուն»։ Ուղիղ մեկնութիւնը, որ հնթադրել էր* Bartholomae IF *38, 47, մեռ ձևով յոգրեց* Nyberg, Hilfsbuch *2, 24 և 208։* Meillet BSL *№ 103, 46 տալիս է նորագիւտ* ’’ðwγ *ձևը, որ հաստում է* ātavaka-*։*

Գիւմ.—վն. ատակ՛ *«յատակ, յարմար», Ննխ.* աղագ *«պարապ՝ յարմար՝ տրամադրելի ժամանակ», Երև.* ատակէլ, *Մն. Ննխ.* ադիգել, *Խրբ.* աղրգիլ, *Ակն. Շիր. Սվ.* ադգել *«գործերը վերջացնելով հանգստանալ, պարապ ժամանակ՝ միջոց ունենալ», Ակն.* աղգուիլ, *Ննխ.* աղագում, ադէգում *«յարմար՝ աղատ կամ պարապ ժամանակ, միջոց»։*

+ԱՏԱՂԶ *(ի հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վրկայութեան) «առհասարակ շինուածանիւթ, մասնաւորապէս փայտեղէն» ծւս. քր. ա. 174. Սերբր. ե. դ. Ճառընտ.։ (ՀՀԲ մեկնում է միայն «պինդ կամ կարծր», որին հետևելով ՆՀԲ՝ նախորդ նշանակութեանց վրայ աւելացնում է նաև իրր ունկ. «կարծր, պինդ, խիտ». այս նշանակութիւնը այլուր չենք գտնում. ՋՔ և ԱԲ էլ չունին)։* Ատաղձ *բառից են* ատաղձագործ *Իմ. ժգ. 11.* ատաղձարար *ՀՀԲ և ՓԲ. նոր գրականում* ատաղձագործութիւն, ատաղձավաճառ, ատաղձագործարան *են։*

= *Բնիկ հայ բառ՝ հնխ.* del- *«ճեղքել, արուեստով կտրել, փայտի վրայ աշխատիլ» արմատի* dl- *առորին ձայնդարձից՝ ա յաւելուածով և ձ աճականով, որ յաճախ է պատահում ղ-ից յետոյ (ինչ. գեղձ, դեղձ, դեղձաճ, դաղձ, գաղձն)։ Ծառանգ ձևերից յիշենք ալստեղ սանս.* dálati *«ճեղքել, պայթիլ», dála- «կտոր, բաժին, թերթ», լն.*

δαίδαλος «արուեստով գործուած», δαιδάλλω «արուեստավէրտել, զարդարել», δέλεος, կիպր. δάλτος «գրելու տախտակ», լտ. dolo «տաշել, փայտի վրա աշխատիլ», dolābra «կացին, փայտտաշ», dedolo «տաշելով հարթել», լիթ. dalis «բաժին, մաս», daly'ti «բաժանել», լիթթ. dalá «բաժին», հալ. dola, ռուս. доль «բաժին, մաս», ալբան. datoy «բաժանել», հպրուս. dellīks «կտոր», dellieis «բաժանի'ր», մրգ. zolle «փայտի խորանարդ կտոր, կոճղ», իռլ. fo-dálim «անջատել», delb «ձև, կերպ», հիմբ. delu «պատկեր», միռլ. del «ճպուռ, գաւազան», հոլլ. tolk «փոքր ճպուռ», և gh ածականով՝ իռլ. dluigim «ճնդքել», հիռլ. telgia «տաշել», talga «տաշ», լիթ. dalgis «մանդաղ», սերբ. dlaga «կոտրած ոսկորը կապելու տախտակ», լեհ. գռ. dtožka «տախտակամած», չեխ. dláha «տախտակամածի տակի տախտակները» (Pokorny 1, 809—812, Berneker 209, Trautmann 44, Ernout-Meillet 269, Walde 239, Boisacq 174, 161): Այս բոլորի մէջ մեզ ամէնից աւելի մօտիկ ձևերն են յն. δάλτος «գրելու տախտակ» և վերջին սլաւական բառերը:

Bugge, Etrusk. u. Armen. էջ 66 նոյնացնում է ստեղծանիլ բառի հետ, բայց լեռուլ ինքը KZ 32, 37 և IF 449 մերժելով՝ համեմատում է հնհյս. telgja «քար կամ փայտ կտրել՝ տաշել». մերժում է Pokorny 1, 812՝ ա նախածայնի պատճառաւ. մինչդեռ նոյն նախածայնը գտնում ենք նաև արիշ բառերի մէջ, ինչպէս ագռաւ, արաղաղ են: Ընդարձակելով վերածում եմ վերի ձևին: Հիմնք. ակաղձուն բառից:

+ԱՏԱՄՆ (ն հլ. -ման, -մունք, -մանց, -մամբ) «տաւտմ, ակռայ, կնոխք» ՍԳր. Սեբեր. Նչն. ածանցման մէջ մտնում է 1. պարզական տատմ- և 2. ամբողջական տատմն ձևով. ինչ. տատմացել «տատմներով խածնել, կծօտել» Ոսկ. մ. ա. 18. Կիւրղ. Թգ. տատմացի «տատմներով» Ճառընտ. Խոհք. տատմաճաճ «աքցան» Յայտմ.—իսկ երկրորդ ձևից՝ տատմնաբաի Ոսկիփ. տատմնախիլ Ճառընտ. տատմնաւոտ «տատմի տակ բնկնող (հացի մէջ ուտը)» նար. էջ 218. տատմնաւոտակ Մխ. տպար. տատմնացաւ Կանոն. Յայտմ. տատմնացի Խոսր. պարզ. (հմմտ. բոնցի, ատացի. ունինք նաև տատմացի). տատմնացնել Մխ. դատ. էջ 418. տատմնաւոր Նիւս. կազմ. Անյ. Հակակ. նոր գրականում ստեղծուած են բազմաթիւ նոր բառեր. ինչ. անատամ, ներծատամ, սեղանատամ, շնատամ, տատմնամիս, տատմնակապիճ, տատմնաբոյժ, տատմնաբուժական, տատմնաբուժարան, եռատամ (ա տատի նման), տատմնափորիչ են:

= Բնիկ հալ բառ, որի միւս հնդեվրոպական ցեղակիցներն են՝ առնս. dan (հյգ. dantam, գրծ. dâta), հինդ. dānt, գնչ. dant, գնդ. dantan-, պհլ. dandān, պրս. دندان dandan, քրդ. dîdan, diran, զազա dendān, բելուճ. dantan, օսս. dandag, աֆղան. dan, լտ. dens (սեռ. dentis), իտալ. dente, dentello, ֆրանս. dent, ռում. dinte, սպան. diente, գոթ. tunþus, հրգ. zand, գերմ. Zahn, անգլս. tōð, անգլ. tooth, լիթ. dantis, հիռլ. dēt, կիմր. dant, կորն. dans, հիսլ. tǫnn «տատմ», որոնք ծագում են հնխ. dent, dont, dṇt ձևերից. այս բոլորի մէջ մեր բառի նախածայն ձայնաւորը պահպանում է: Այս տեսակէտով հլ. ձևին աւելի մօտիկ են յն. ὀδούς, սեռ. ὀδόντος, լոնիակ. ὀδώς, հոլ. լգ. ἔδοντες հոմանիշները: Բոլորն էլ ներկայացնում են հնխ. ed- «տատել» արմատի ներկալ դերբայը. առնս. և միւս ձևվերը դալիս են արմատի զերօ ձայնդարձից, հոլ. ἔδοντες պահում է արմատի e տատիճանը, իսկ միւս յն. ձևերը դալիս են հնխ od- տատիճանից, որ պահում է միայն հլ. ուտել<հնխ. ōd-(Meillet MSL 19, 182): Հայերէն տատմն ձևի մէջ Հիւբշ. կարծում է, որ արմատական մասն է տատ-, իսկ -մն մասնիկ է, ինչպէս անունք կող և կող-մն, իսկ Scheftelowitz BB 29, 26 կարծում է, որ հյ. տատմն բառի արմատն է *տատ, որից -մն մասնիկով *տատնմն և լեռուլ ն ընկնելով՝ տատմն: (Տե'ս Walde 228, Boisacq 686, Trautmann 45, Horn § 574, Kluge 539):—Հիւբշ. 422; Pokorny 1, 120, Ernout-Meillet 251,—Benveniste BSL, № 95, էջ 74—78 սխալ է գտնում այս բառը

դնել ed «առնել» արմատից, որովհետև ատամը չէ առնում, այլ մարդը: Ո՛չ մի լեզուի մէջ ատամը չի բացատրւում «առնել» արմատով, այլ «կծել», օր. ասոր. šinnu, հբր. šēn, արար. sinn «ատամ» յատաջանում են šnn «սրել, ծակել» արմատից. վրաց. kb-ili «ատամ»<kb-ena «կծել» արմատից. և թրք. diš «ատամ» բառից ծագում է diš-le-mek «կծել»: Ընդունելով հնդեվրոպական ձևի մէջ -մն մասնիկ, նախաձևը կլինի *dn̥-mn, որով պէտք կլինի ենթադրել թէ հնխ. de/ont>dn̥-t՝ կազմուած է t ածականով. սրանով էլ կապւում է հնխ. denk'-, dn̥k'- «կծել, պատռել» արմատին, այս էլ կազմուած dn̥- պարզականից՝ k' ածականով. համմտ. սանս. dáçati «կծել», յն. δάκνω «պատռել» են:

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ և առաջ Klaproth, Asia polyql. *106, որ կրում է յն. ὀδούς, բայց միևնոյն ժամանակ սամոյէդ.* timia: *Ուղիղ է նոյնպէս Գ Դ, որ համեմատում է պրս.* dandan *ձևի հետ: ՆՀԲ լծ. հլ. ծամ, ծամել,* Diefenbach, Berl. Iahrb. *1843, 448,* Windisch. *12 յն. լտ. սանս. են ձևերի հետ:* Gosche *28,* Laqarde, Urqesch. *389,* Bopp, Gram. comp. *թրգմ.* Bréal, I *327, դնում են հնխ.* ad *«առնել» արմատի տակ. այս տեսակէտով* Gosche *գտնում է, որ ամենահաւատարիմ ձևը հայերէնն է և միւս լեզուները արմատական ա նախաձայնը կորցրել են:* Bopp *համարում է թէ* ատամն *բառի մէջ* -ման *մասնիկ է, ինչպէս* հիմն: Canini, Et. étym. *էջ 14 պելասգ.* dam: *Տէրվ. Մասիս 1882, օգոստ՝՝ 3 արմատը դնում է* da «կարել, առնել», *ա յաւելուած և* մն *մասնիկ. ինչպէս որ սանս. բառն էլ կազմուած է ներկայ դերբայի* -ant *մասնիկով: Նոյնը, Նախալ. 86* da, dā «կարել, բրդել» *արմատից: Հիմնք. ադամանդ բառից:*

Գիմ.— երև. Մկ. Մրղ. Սլմ. վն. ատամ, *Ոպմ. ա՛տամ, Մշ.* ադամ. *միանները գործածում են ակռայ կամ կեռիկ բառը: Նոր բառեր են* առատամ, առամնաթափիկ, առամնաժանգ, առամնատակ:

Փիհ.—Գ. Փառնակ (Անահիտ 1906, էջ 233) հայերէնից փոխառեալ է համարում ալբան. dham «ատամ» *բառը, որ հարկաւ ընդհանուր հնդեվրոպական ծագում ունի:*

ԱՏԱՅԱՆ «հարկ, տուրք». *ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Վկ. դողթ. 14 «Առատաձեռն տրօք բաշխելով նոցա դահեկանս, դատարկն ատայանն առ»:*

Սուիերքի հրատարակիչը (անդ, էջ 97) համարում է արար. խոյան «պարտք», որի համեմատ էլ ԱԲ գնում է արաբերէնն փոխառութիւն: (Իմա՛ արար. دين dayn *«պարտք», որ չէ՛ յարմար):*

+**ԱՏԵԱՆ**, ի հլ. *(մէկ անգամ Փարպ. ունի* առեանս*) «ժողով, ժողովի նիստ. 2. դատարանի ժողովը. 3. ժողովատեղի, դատարան. 4. դատաստան, դատարանի առաջ հարցաքննութիւն» ՍԳր. Ոսկ. «տաճարում բեմի առաջը» Նիշ. Տօնաց. Նար. յետնադարձ բառս առացել է նաև «տեղն, ժամանակ» նշանակութիւնը (ինչպէս Մխ. բժշ. 101): Տեղի գաղափարից ժամանակի գաղափարին անցնելու համար հմմտ.* առաջի *և* յառաջ, յետ *և* յետոյ, *պրս.* گاه gāh, *որ նշանակում է «տեղ. 2. գահ. 3. ժամանակ, պահ». յատկապէս գոթ.* ƕeihs *«ժամանակ», հհիւս.* ƕing *և հբգ.* ding *«գատական ժողով, տեղն ու ժամանակը» (*Lidén, Arm. Stud. *էջ 93). հակառակը հլ. ժամ «պահ. 2. եկեղեցի»: Այս բառերը նախապէս նշանակած են մի որոշ գործողութեան ժամանակը. այսպէս՝ պրս.* gāh *«թագաւորի գահ բազմելու ժամանակը», հլ. ժամ «եկեղեցական արարողութիւն եղած ժամանակը», հբգ.* ding *«գատական ժողով եղած ժամանակը», այսպէս նաև առեան «նիստ եղած կամ լինելու ժամանակը», բայց յետոյ ընդհանրացամբ՝ առհասարակ «ժամանակ»: Այս իմաստով հնից ունինք՝ առեան հոդմոյ «քամի փչելու ժամանակը» Ճառընտ. (Մեին երկոքեան ի նաւն և հղև առեն հոդմոյ և վաղվաղակի եհաս նաւն յերկրն ծովուն). յառեանի «ճիշտ ժամանակին» Տաղ. (Մեզ ժա-

մանեակ՝ միշտ յատենի). որից նաև ատենա-հաս *«ատենին՝ ժամանակին հասնող» (Ս. Սարգսի ածականը, որ ուրիշ բառով ասւում է* արագահաս*) Տաղ. Մաղաք. աբ. Գնձ:—Ա-տեան բառի առաջին նշանակութիւնից են բր-խում՝* ատենակալ *Դտ. ե. 10. Ադաթ. եւս. քր. Կոչ.* ատենաբարշ *Ոսկ. մ. ա. 16.* ատենապե-պիր *ՍԳր. հանդիսատեան Ոսկ. յհ. ա. 27.* ա-տենընթեր ատեան *«արտίդιον» Ոսկ. պօղ. էջ 219 (ըստ սրբագրութեան Վարդանեանի ՀՍ. 1913, 556). յետին են* ատենաբանել, ա-տենախօսութիւն, ատենապետ *են:*

=*Հնխ.* esd *«նստիլ» արմատից. համմտ. լտ.* solium *«նստելու տեղ, աթոռ, թիկնաթոռ, գահ, դատաւորական աթոռ, վարչութիւն», հիւլ.* suide *«նստարան»,* sedeo *«նստիլ» բա-յից (միւս ցեղակիցները մանրամասն տե՛ս նիստ): Ըստ այսմ հայերէն բառի արմատն է* ատ, *եան մասնիկով:—Հիւբշ.* IF Anz. *10, 47:*

Müller WZKM *7, 376 և 10, 273 պրս.* dīvān *«ատեան» բառի արշակունեան* *atīvān *ձևից, որ սակայն գոյութիւն չունի* Bugge, Etrusk. u. Armen. *էջ 64 եւս.* tenu *«գահարան» նոյն է դր-նում ատեան բառի հետ, իսկ էջ 65 ա-տեան «ժամանակ» իմաստով համեմա-տում է ՀՀիւս.* timi, *անգլ.* tīma *«ժա-մանակ» բառերի հետ: Հինք. պատեաճ-ից ատեան, յատեան-ից ատեն: Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet MSL *8, 154, որ Հիւբշ. նախապէս չէր ընդունած, յե-տոյ ընդունեց յատկութեամբ:* Müller H. *(տե՛ս* Fr.*)* WZKM *15 (1901), 410* ա-տեն *«ժամանակ» բառը փոխառեալ է դր-նում սրսմ.* עִדָּן ʿiddān, *ասոր.* ʿeddān, *արաբ.* ʿiddān *կամ* ʿaddān *«ժամանակ» բառից. համանութիւնը ա-կայն պատահական է:*

*Գիմ.—*Ատեան *իր բուն նշանակութեամբ կորած է. կայ միայն* ատեն *«ժամանակ» (մի-այն արեւմտեան հիւղի բարբառներում), որ ընդունուած է նաև արեւմտեան գրականում. այսպէս՝ Սմ.* աղեն, *Ակն. Ննխ. Պլ. Ռ.* աղեն, *ՋԹ.* աղին, *Տիգ.* ադին. *նոյնն ունին նաև Աբր. Եւդ. Խրբ. Կր. Մրշ. Նոր ձևեր են՝* ատե-նակ, ատենով, ատենօք, ատեն ատեն, անա-տեն:

+ԱՏՆԼ *(եգի) «չափել, գդուիլ» ՍԳր. սրա հնագոյն ձևն է* ատեալ, *որ գործածուած է* ատեամ, ատեայ, ատեայր *են ձևերով՝ ՍԳր. եզն. կատարեալը լինում է ըստ օրինի *ա-տեացի>ատեցի (հնչ. կեամ-կեցի). ունկի յետոյ* ատեցի *ձևի վրայից ենթադրուած է ներկայ* ատեմ, *որ վտարելով* ատեամ *ձևը՝ նրա տեղն է բռնել: Ըստ այսմ* ատելի *ՍԳր.* ատելութիւն *ՍԳր. Կոչ. ձևերը ծագում են ո՛չ թէ* ատե- *բնից, այլ* ատեա- *բնից. այսպէս *ատեալի>ատելի, *ատեալութիւն>ատելու-թիւն, ինչպէս *սենեակի>սենեկի են. համմտ. նաև գործատեաց Առակ. ԺԲ. 15. եղբայրա-տեաց Ոսկ. մ. ա. 16. խրատատեաց Մծբ. մարդատեցիկ Ոսկ. մ. ա. 23. նոր պրակա-նում* հայատեաց, ռուսատեաց *են:*

=*Բնիկ հայ բառ. ցեղակիցներն են լտ.* ōdi *«ատել»,* ōdium *«ատելութիւն», անգլսք.* atol *«ատելի, տգեղ», հիւլ.* atall *«չարագա-շակ», յն.* ὀδύσσομαι, ὀδυάομαι *«վրան բարկա-նալ», Ὀδυσσεύς «ոգեհաս» (յատուկ անունը, իբր «ցասեալն»). ըստ* Καρολίδης, Γλωσσ. συγκρίτ. *էջ 67 այստեղ է պատկանում նաև կապադովկ.* adis *«ատելի» (*Walde *537,* Boisacq *685,* Pokorny I, *174,* Ernout-Meillet *665):—Հիւբշ. 422:*

Ուղիղ մեկնից նախ Klaproth, Asia polygl. *էջ 101՝ լծորդ դնելով լտ.* odi: *Նոյնը նաև ՆՀԲ, բայց սրա հետ միաց-նում է նաև արաբ.* عدو ʿadū, ʿaduvv *«թշնամի», որ բնաւ յարաբերութիւն չունի մեր բառի հետ:* Peterm. *258,* Windisch. *12, Տէրվ. Նախալ. 61 են լտ.* odisse: Diefenbach, Berl. Jahrbl. *1843, էջ 449 սխ.* asnag *«թշնամի» և գոթ.* hatis, *Մորթմանն,* ZDMG *26, 619 բևեռ.* itukani *«կռիւ», 692* atgisni: *Հիւնք. աւելացնում է ՆՀԲ-ի վրայ նաև յն.* ἄσης *«գժտութիւն, մահ»:*

Գիմ.—նրև. ա՛տել, *Ագլ. Շմ. Տիմ.* ատիլ, *Ալշ. Մշ.* աղել, *Ռ. Սեբ.* աղէլ, *Ակն. Խրբ.* ա-դիլ:—*Նոր բառեր են* ատելական՝ *«ատուած, արհամարհելի», ատելական «ատող, չսի-րող»:*

*ԱՏԵՍԱՐՈՆ «Տաւիանոսի չորս աւետարանները». մէկ անգամ գործածուած է իբր օտար բառ՝ նաև. պտմ. 311 «Սոյն սա Տետրիանոս պլուխ նոցա առաջին ժողովեաց և խառնակեաց և եղ աւետարան և կոչեաց նմա առեսարոն, այսինքն խառնուածոյ»։

=Ասոր. ܐܬܪܘܢ (Brockelm. 71, առանց ձայնանշիրի ditsron) ձևից սխալ ընթերցմամբ. այս բառը պահում ենք նեսթորեան պատմութեան ասորի թարգմանութեան համապատասխան տեղը և չն. քնարքի τὸ διατεσσάρων [εὐαγγέλιον] «չորս աւետարաններ» բացատրութեան տատադարձութիւնն է։ Հայ թարգմանիչը ասորի բառի նախատառ d տեսականի մասնիկ կարծելով չապաւել և պահել է առեսարոն։

Նորագիւտ բառս գտաւ և ուղիղ մեկնեց Վարդանեան ՀԱ 1913, 623; 1920, 328 և Բառաք. դիտ. բ. 23։

*ԱՏԹԻԻԻ «Աստիկեան պատմութիւն». նորագիւտ բառ, որ 5 անգամ գործածուած եմ գտնում հետևեալ տեղերը. նես. քր. բ. 116 (Պատմէ Փիղոքորոս յերկրորդումն ատթիոսջն). նես. քր. բ. 130 (յերկրորդում ատթիդին). Անան. ժմնկ. էջ 33 (եւ պատմէ զայս Փիղոքորոս՝ յերկրորդում ատթիոսջն... որպէս պատմէ Պաղեփատոս յառաջնում ատթիոսջն... զոր Փիղոքորոսն պատմէ յերկրորդում ատթիդին)։

=Յն. Ἀτθίς, Ἀτθίδος բառն է, որ նշանակում է «աստիկեցի, աստիկեան» և գրուած է նաև իբրև խորագիր Փիլոքորոսի, Փանոդեմոսի և ուրիշների պատմական երկերի, իբր «Աստիկեան պատմութիւն, Պատմութիւն Աստիկէից»։—Աճ.

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 125։

*ԱՏԻ, «ծանրութեան չափ է». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ուռհ. 120 «Առաքեաց ի Բաղէշ և նա բերել զրաբանն, զոր Վասիլ Բագաւորն արարեալ էր յաղագս Հերայ, հնգետասան ատիլի, ածաւոր և զարմանալի»։

=Արաբ. عادل ʿādil բառն է, որ թէև սովորաբար նշանակում է «արդար», բայց միանգամայն տարբեր տառցել էր «կշիռ» նշանակութիւնը, մանաւանդ Պարսից մէջ. համմտ. Գէորգ Դպրի պարսկերեն բառարանը՝ էջ 31 բ.— վրացերէնում էլ ადლი նշանակում է «արշին» (Ջուբինով 7)։—Աճ.

Գտաւ ու մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին. մատ. Ա. 189։

ԱՏԻԿԵԼ տե՛ս Ատակ։

ԱՏԻՃԱՂ «պլլուած, ոլորուն». նար. տազ. 465. անստոյգ բառ. վկայութիւնը տե՛ս Պատիճաղ։

ՆՀԲ և ՋԲ նշանակում են «Ատիճաղ տե՛ս Պատիճաղ»։ ՆՀԲ մոռանում է յիշել Պատիճաղը, բայց ՋԲ և ԱԲ գնում են վերի նշանակութեամբ, իբրև անստոյգ բառ։

ԱՏԻՆԵԼ «առնական կարողութիւնը կորցնել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Քղ. 67 «Այժմ ատինելով իմ, զի խափանեալ յառնի անդամոցս, ոչ զարական բերեմք սերտութեան բնութիւն» (այլ ձ. առեճելով)։—

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեն. հտ. Բ։ Ըստ ՀԱ 1928, էջ 232 ծան. բառիս մասին խօսել է Ե. Դուրեան, Սիոն 1927, էջ 340—1 և ցոյց է տուել թէ ատինել բառը գոյութիւն չունի, այլ կցումն է ատին և ելով բառերի։ Չեմ տեսած Սիոնը ընդհանրապէս Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 243 գնում է յն. ἀδυνατέω «անզօր լինել» բայից։ Անճիշտ է, որովհետև ὸ չի տալ ա։

*ԱՏԼԱՍ «մի տեսակ թանկագին կտորիղէն». հետագայն վկայութիւնը գտնում եմ 1197 թուի մի արձանագրութեան մէջ՝ Վիմ. տար. 39. երկու վառ առլաս. ասելի ուշ՝ 1261 թուին. Վիմ. տար. 103՝ երկու նախորա նասիճ և առլաս վառ։

=Արաբ. أطلس aṭlas «անդուս»։—Աճ։

ԱՏԼՈՑԵԼ «աքսորել». ունի միայն ՓՒ։

*ԱՏՄԱՏ «հնդիկ բակլայ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 185։

=Արաբ. حماط ḥimāṭ. տե՛ս Շիրայնշնայդէրի բուսաբանական հետաքրքրական, MZKM 11, 272, ուր սակայն տրուած չէ բառիս նշանակութիւնը։—Աճ.

*ԱՏՇԻԼ «ծարաւիլ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Մծբ. 350 «Մանկիկ

աղբատին ջուր և նա առվի է. ըմպէ մեծատունն զգինի բազմամեան և պասքեալ առշեալ կայ»։ (Ասորի բնագիրն ունի ləhaq *«ծարաւից պապակիլ» ըստ Վարդանեան ՀԱ 1929, 249)։*

=Բառիս հետ բոլորովին նոյն է արաբ. ʿaṯš *«ծարաւ»,* عطش ʿaṯša, عطشان ʿaṯšan *«ծարաւի»։ Ե դարում արաբերէնն փոխառութիւն չէր կարող լինել, եւ լի ուշ ժամանակ էլ չկար հայերէնում այսպիսի բառ, որպէսզի կարելի լինէր կարծել թէ Զգօնի մէջ առշեալ յետին յաւելուած է։ Ասորերէնում էլ նման ձեւով բառ չկայ «ծարաւ» բառի հոմանիշների մէջ (տե՛ս* Brockelm. Lex. syr. *էջ 475 բ), ինչպէս որ բնագրումն էլ գործածուած չէ։ Ուստի մնում է միայն ենթադրել, որ* ʿaṯš *ասորի գաւառական մի ձեւ է, որ անցել է հայերէնի կա՛մ կենդանի լեզուի միջոցով և կա՛մ Զգօնի ասորի բնագրից, որտեղից յետոյ իբր ոչ պրական և անսովոր բառ ջնջուել է։—Ա՛ճ.*

Բառիս վրայ խօսում է Վարդանեան անդ, ուղղում է աշտիլ և ուզում է կապել աշտուն բառի հետ։ Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1929, էջ 172 դրել է արաբ. աբշ *«ծարաւիլ» բառից՝ համարելով յետին յաւելուած։ Նրանից անկախաբար տալիս եմ վերի մեկնութիւնը։*

ԱՏՈՐ *«պահանորդ». ունի միայն Բառ. երեմ. էջ 34. մէկ անգամ գտնում եմ գործածուած Սաան. էջ 59 «Անդաստան մրգաբեր, առու պղպղուն, արբուցանող զառունկս և ղբանջարս, արգասիք և առոր»։*

=Եբր. אטר Āter *(հյ. Առեր) իշխանի անունից է, որ Ղևտացոց զոնապանների առհմից էր (տե՛ս Եզր. բ. 42). յաւուկ անունը յետոյ հասարակ անուն է դարձել։—Ա՛ճ.*

ԱՏՈՒՐ *«Քրխառոսի խաչափայտի առաջին բուսոյ անունը» Տաթև. Հարց. 495 (նորագիւտ բառ)։ Այժմ էլ պահուած է վանայ բարբառում առոր ձեւով։*

ԱՏՈՔ *«լիքը, լաւ հասած (ցորեն, սերմ)» ՍԳր. Ագաթ. որից առոհութիւն Ագաթ. Փարպ. առոհանալ Ոսկ. յհ. ա. 1, 3. առոհատեսիլ Փարպ. առոհատիաւ Թէոփիլ. խ. մկ. Վրդն. սղ. ևն։*

Նշ՛Բ լծ. Բրբ. tog *«կուշտ»։ Տէրվ.* Altarm. *7 առոհ դնելով բուն «ուտելի», կապում է սանս.* ad *«ուտել», գոթ.* itan *«ուտել» բառերի հետ։ Նոյնը կասկածով նաև Նախալ. 61։ Հիւնք. հանում է ազոխ բառից։* Karst, *Յուշարձան, էջ 403 սումներ.* du *«ամբողջապէս»,* dug *«լցուիլ», 408 սումներ.* tug' *«առատանալ», 417 թաթար.* toq *«լի, բանձր, կուշտ», չաղաթ.* toq *«կուշտ, լի», օսմ.* toq *«կուշտ», չաղաթ.* toq-luk *«լիութիւն»։*

***ԱՏՐ** *«կրակ». առանձին գործածուած չէ. կայ միայն բարդութեանց մէջ, ինչպէս՝* առրագոյն, առուշան, առրճաճակ, *որոնք ուղղակի փոխառեալ են իրանականից. Հայոց մէջ կազմուած բառեր են* առրաշէկ *«կրակի պէս կարմիր» Փիլ. այլաբ.* առռոռակ *«հրագոյն» Մագ. Քղ. 48, 67.* առռոռական ախտ *«ջերմուտենդ» Մագ. Քղ. 50.* առռական *«հրեղէն» ԱԲ.* առրաշիկանալ *«կրակի գոյն առանալ» ԱԲ. շփոթելով* առ- *մասնիկի հետ՝ ունինք նաև* առռաշէկ, առռաշիկագոյն, առռաշիկանալ *սխալ գրչութիւնները՝ Խոր. Ձքր. կթ. Փիլ. ևն։*

=Պհլ. ātur *«կրակ» բառից փոխառեալ, որի միւս իրանական ձևերն են ղնդ.* ātare-, *նպ. ուպ.* ātarš, *պրս.* آذر āδar, āzur *կամ* آدر ādar *«կրակ» (*Horn *§ 7, 9)։ Բառիս բնիկ հայ ձևն է այրել, որ տե՛ս առանձին։ Պարսկականից փոխառեալ է նաև* աթաշ, *որ գարձեալ նոյն արմատին է պատկանում։ Ատր սխալ ենթադրուած մի ձև է. պհլ.* ātur *տալիս է հյ. *առռուր, որ հայերէնի սղման օրէնքով, բարդութեանց սկիզբը դարձել է առր.—այս ձևը բառարանները համարել են արմատական։—Հիւրշ. 110։*

Ուղիղ մեկնեց նախ Գ՛Ժ։ Նոյնը նաև Նշ՛Բ, որ սակայն եւկայնում է և թրք. od, *յն.* ὑδωρ: Peterm. *21 և* Justi, Zendsp. *49 կցում են պարսկականի հետ։* Diefenbach, Berl. Jahrb. *1843, 449 գնդ.* ātar, *պրս.* āδar, *բայց ո՛չ* ataš: Pictet *2, 263 սրանց հետ նաև հիռլ.* adhair *«կրակ»։*

***ԱՏՐԱԳՈՅՆ** *ի հլ. (բառ ՀՀԲ ո հլ. որ սխալ է) «հրագոյն, հրափայլ, հրացայտ» Կոչ. 375. Գոր. և Շմ. 70. Վրք. հց. Մագ. ՅՀ. կթ., որից*

ատրագունակ նոյն նշ. ԱՔ. ըստ ՀԲուս. § 187 ատրագոյն նշանակում է նաև «adonide ծաղիկը, flor Adonis» (առնելով Ստ. Շէհրիմանեանի հաւաքածոյից բայց ո՞ր ժամանակի բառ է)։

= Պհլ. *āturgōn հոմանիշ ձևից. համմ. պրս. ադրգուն āδargūn «հրագոյն», իբր գնդ. *ātarəgaona (կազմուած ātarə — «ատր» և gaona- «գոյն» բառերից)։ Ծաղկի համար ունինք պհլ. ādargūn «վայրի խաշխաշ», պրս. ադրգուն āδargūn, որից արաբ. آذريون āδaryūn (Կամուս, Թրք. Թրգմ. Գ 590) «մի տեսակ ծաղիկ, rutilus, species, anemones, calendula officinalis», վրաց. ადრაგუნი ադրագունի «մի տեսակ ծաղիկ, златоцвытъ»։ Պարսկերէնից փոխառեալ արաբ. آذريون āδaryūn ձևից է հյ. ազարիոն, որ ունի Ամիրա։—Հիւրշ. 110։

Müller SWAW 38, 573 գնդ. ātar, պրս. ādar բառերից։ Justi, Zendsp. 49 գնդ. ātar «կրակ» + gaona «գոյն»։

*Ա.ՏՐԱՔ «մի տեսակ բոյս է. նշուշ, ալոճ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2202 և յաւել. էջ 675. իսկ § 188 յիշում է ատրուխ, ատրաւխ? «ալոճի պտուղ»։

= Յն. ἀνδράχνη «վայրի ելակենի» (ἀνδρος այր և ἄχνη ծագկամն բառերից)։

Ալիշան, ՀԲուս. § 2202 յն. ἀνδράχνη, որ վերի ձևով ուղղեց Նորայր ՀՍ. 1923, 498։

*Ա.ՏՐՃԱՆԱԿ «ոչվօլվէր». նոր գրականին յատուկ բառ է, բայց ըստ Տէրվիշեանի «թէև միայն արդի լեզուն կը ճանաչէ զայն, սակայն բառին յօրինուածը կը վկայէ յայտնապէս թէ նոյն իսկ Ոսկեդէն դարու ժամանակներն, ապահով գոյութիւն ունէր, վասն զի գոնէ նոյն ժամանակին պահպանիկ փոխառութեանց ճիշտ ձևն ունի»։ Բառիս հնագոյն գործածութիւնը (ատրաճան ձևով) գտնում եմ երկու անգամ Դիւան, ժ. էջ 364 «Ամանք զատրճանսն վառօդալիս առնէին։ Պատրաստեալ ատրաճանաւորաց» (1796 թուից)։

=Իրանեան *āturǰanak ենթադրեալ ձևից որ կազմուած է ātur «կրակ» և հպրս. գնդ. ǰan «զարնել, սպաննել», գնդ. ǰana- «զարնող», պհլ. zatan, zanēt, zanišn, պրս. زدن zadan, հրմ. zan «զարնել, հարկանել» ձևերից։ Իրան. *āturǰanak բուն նշանակում էր «հրահան, չախմախ». համմ. պրս. آتش زنه ātašzana «հրահան», կազմուած آتش زدن ātaš zadan «հուր հարկանել, կրակ վառել, այրել» ռմից։ Պհլ. ձևերը թէև ունին ā, բայց հպրս. և գնդ. ձևերը ցոյց են տալիս ǰ, որ գտնում ենք նաև նոր իրաննանների մէջ, ինչ. բելուճ. ǰanag և պարսկական բարբառներով ǰiden, ǰindemūn (տե՛ս Horn § 653)։ Այս պարագային մեր ատրճանակ բառը պէտք է հասկանալ հնագոյն *ատրջանակ։ Նոյն ǰan արմատը գտնում ենք նաև մեր խարազան և գաւազան բառերի մէջ, որոնք ունին զ և ջ ն կամ ջ. այս պատճառու ատրճանակ բառը բուն պահլաւականից տարբեր իրաննան մի գաւառականից պէտք է դնել։ Իմաստի փոփոխութեան համար համմ. քրդ. ženin- որ գալիս է նոյն žan արմատից և նշանակում է «հուր հարկանել, կրակ վառել, հրացան արձակել». համմ. նաև տճկ. չախմախլը «հրացան»՝ չախմախ «հրահան, կայծքար» բառից։

*Ուղիղ մեկնութիւնը տուաւ Տէրվիշեան, մի առանձին յօդուածի մէջ, որ տպուած է Մասիս 1882, փետր. 27. թ. 3124 և Լեզու 1887, էջ 124։ Սակայն Տէրվիշեանի սխալն այն է, որ օրինակ առնելով մուճակ, ոռճիկ, տաճիկ, տաճկին, վաճառ, արճիճ բառերը՝ որոնք պարսկերէնում ունին z, կարծում է թէ պրս. z-ի դէմ միշտ գտնում է հյ. ճ և ըստ այսմ մեկնում է ատրճանակ =պհլ. ātaršǰanak կամ āturǰanak։ Բայց այսպիսի պհլ. ձևեր չկան և պահլաւերէնը նոյն արմատը ունի zan- ձևով։ Այս պատճառով էլ ես դրի պահլաւերէն գաւառական մի ձևից՝ իրօք կամ ենթադրութեամբ այն անձի՝ որ առաջին անգամ ստեղծել է մեր ատրճանակ բառը նոր դրականում։—Հիւնք. մեկնում է բառս «թեքադրուած ատրուշան-ից կամ թրգմ. բառիս նրացան» (ցան=ճան)։

*Ա.ՏՐՈՒՇԱՆ, ի–ա հլ. «կրակատուն արևապաշտների» Բուզ. դ. 59. եղիշ. Փարպ. նմանութեամբ կամ նախատաբար «սպանդատուր քրիստոնեաների տաճարը» Մագ.։

=*Փոխառեալ է իրաննանից, որի ապագոյցներն են նախ նիւթը և երկրորդ բառի առաջին մասը* աատր-<պհլ. ātu «կրակ». *երկրորդ մասը (ուշան) մեկնուած չէ՝ մինչև այսօր պահլաւերէնում համապատասխան մի ձև գտնուած չինելու պատճառով։*

ԳԴ համարում է պրս. آذرنوش āδarnōš «անուն երկրորդի կրակարանին հըռչակաւոր աստուշանացն եղելոց յաշխարհին Պարսից»։ *էմին,* Ист. Вардана *85* աատր+ուշան «տո՞ւն» *բառերից։* Langlois, Collect. II *186 պրս.* ātašdān «կրակարան» *բառից տառադարձուած։ Տէրվ. Մասիս, 1882 փետր. 27, թ. 3124,* աատր+uš «վառել» *բայարմատից։ Հիւնք. պրս.* آذر روشن āδarrōšan «մեծապայծառ պիւռհոն» (իմա՛ հուրըն լուսաւոր)։ Müller WZKM *4, 358 ենթադրում է պհլ.* ātrūšān (*իբր* ātur šāh), *որ սակայն պիտի տար հյ.* աատրշան։ *Հիւբշ. 111 ենթադրում է պհլ.* *āturōšān *ձևր. համմտ. սանս.* óšati «այրել»։ *Նորայր, Կորիւն վրդ. 190 ըստ Տէրվիշեանի։ Թիրեաքեան, Կարնամակ, ծանոթ. 65 ենթադրում է, որ հնագոյն* آذر روشن āδr rōšan «հարն լուսաւոր» *անունով նշանաւոր մի աստուշան կար և նրա անունը յետոյ բնդհանրանալով՝ հասարակ անուն դարձաւ։* Stakelberg, Древ. вост. *1901 (Բազմ. 1902, էջ 198)* աատր+շան. *վերջինիս հետ համմտ. պրս.* گلشن gulšan «վարդանոց» *բառի* šan *մասնիկը։ Մարքվարթ (նամակ 1926 յունվ.) կցում է պրս.* آذرافشان āδarafšān<*ātr-abhi šāna *ձևին։*

Ա.ՐԱ.ԲԱՅԻՆ «այգի, ծառ կամ նման մի բան». *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Ոսկ. ես. 367 «Իբրև զդրախտն Տեառն. Ակիւղաս ասէ՝ Զդաշտս նորա. Սիմաքոս՝ Ջտերևս նորա. Թէոդիտոսն Զարաբայինան նորա»։*

***Ա.ՐԱ.ԲՈՎՔ** (ի–ա *հլ. ըստ ՀՀԲ*) «ձաւար, կոլիտա». *մէկ անգամ գտնում եմ գործածուած Բ. Քադ. ժէ 19 «Կափոյց դիտուին ի վերայ գրին և ցամաքեցուցանէր ի վերայ նորա արարովք»։*

=*Երր.* הָרִפוֹת hā-rīpōth «ձաւար, կորկոտ» *բառն է, որ եօթանասնից Թարգմանութեան մէջ տառադարձուելով* Ἀραφώθ, *տեղից էլ անցել է հայերէնի։—Ա.Ճ.*

Ա.Ր դնում է «չոր թուզ», իբր բառ եբրայեցերէն։—Նոյն բառն է որ Բառ. եբեմ. էջ 27 դնում է ապարովք «պաղատիտ չոր թզոյ»։



***Ա.ՐԱ.ԲՈՎՔ** «տափաստան, հարթավայր». *նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Ս. Գրքում. «Եւ պնդեցաւ զօրն Քաղդէացւոց զհետ Թագաւորին և հասին նմա յԱրաբովթ Երիքովայ» (Դ. Թագ. իե. 5). «Եւ հասին Սեդեկիայ յԱրաբովթ Երիքովայ (Երեմ. լթ. 5)» երկու տեղումն էլ համարուած է յատուկ անուն։*

=*Երր.* עֲרָבוֹת arāboth «տափաստան, անապատ, steppe» *բառն է, որ եօթանասնից Թարգմանութեան մէջ տառադարձուել է* Ἀραβώθ, *իբրև յատուկ անուն, և այստեղից էլ անցել հայերէնի։ (Այսօր էլ երիքովի կողքի նոյն տեղը կոչւում է արաբ.* عربة ʿarabat)։ *—Ա.Ճ.*

***Ա.ՐԱ.Գ** (*անհոլով. յոգնակին* արագք *կամ* արագունք) «շուտ, փութով» *ՍԳր. Ագաթ. Կոչ. որից* արագագիր *Սղ. խտ. 2.* արագագնաց *Եղն. Վեցօր.* արագագոյն *ՍԳր. Կոչ.* արագագնեցեալ *Ոսկ. տիմ.* արագաթև *Ագաթ.* արագախաբիկ *Ոսկ. ես.* արագառան *Առակ. խդ. 34. Վեցօր.* արագընթաց *Վեցօր.* արագել *ՍԳր.—բառի երկրորդ ձևն է* երագ «արագ» *ՍԳր. Եփր. ծն. և ա. կոր. Ոսկ. մ. ա. 25, որից* երագագնաց *Վեցօր. Եփր. ծն.* երագագոյն *ՍԳր.* երագակատար *Ոսկ. ես.* երագածագ *Վեցօր.* երագահալ *Վեցօր.* երագանցուկ *Ոսկ. ես.* երագաւել. *Ագաթ.* երագասլաց *Վեցօր.* երագել *Եզ. լդ. 8։ Արդի լեզուի մէջ երկրորդ արմատը և նրանից ծագած բոլոր ձևերը չնչուած են. գործածական են միայն առաջիններից, որոնց վրայ իբրև նոր բառեր աւելացել են՝* արագախօսութիւն, արագահոս, արագասլաց, արագասոյր, արագավազ, արագացնել *են։*

=*Պհլ.* *rag *ձևից՝ հայկական ա կամ ե յաւելուածով (համմտ.* երանգ <*պրս.* rang)։

իրաննան ձևը աւանդուած չէ, բայց կան նրա միւս ցեղակիցները. ինչ. զնդ. *raγu-, իգ. rəvī «արագ, աշխոյժ, փոյթ», գերադր. rənǰišta «շատ արագ», rənǰyō «արագ», rənǰaṭaspa- «արագաձի», rənǰaiti «թէթեւ կամ արագ է», սանս. raghù- «վազող, թէթեւ», բարդութեանց մէջ «արագ, փոյթ, աշխոյժ», rą'has- «արագութիւն», laghú- «թէթեւ, կարճ, փոքր, սակաւ», rághīyas- «թեթեւակշիռ»: Արմատի r ձայնը յատուկ է միայն իրաննան լեզուներին, որի դեմ եւրոպականները ունին l. համմտ. յն. ἐλαχύς «թեթեւ, արթուն, փոյթ», ἐλαχύς «փոքր», լտ. levis «թեթեւ, արագ», լիթ. leñgvas «թեթեւ», ալբան. l'eh «թեթեւ», հոլ. līgŭkŭ, առս. легко «թեթեւ, հեշտ», գոթ. leihts, գերմ. leicht «թեթեւ, հեշտ», հբգ. lungar «արագ», անգլսք. lungre «արագ, անմիջապես», անգլ. light «թեթեւ», հոլ. lugu «փոքր, քիչ», կիմր. llei «սակաւ» ևն: Այս բոլորը ծագում են երկու հնխ. ձևերից՝ leghu և lenghu (առաջինը անգլականով, երկրորդը առանց անգլականի. համմտ. Walde 423, Boisacq 238, Berneker 753, Trautmann 158, Kluge 300, Pokorny 2, 426, Ernout-Meillet 514): Հայերէն ձևը փոխառեալ է իրաննանից, որովհետև բնիկ լինելու դէպքում պիտի ունենայինք *լեգ, *լենգ, *եղենգ:—Հիւբշ. 422:

ՆՀԲ լծ. հյ. առաջ, առ աք, յն. ἀργός «արագ», թրք. yürük «լաւ քայլող»: Յն. և սանս. ձևերի հետ ուղիղ համեմատութեան նախ Հիւբշ. KZ 23, 24 և 405: Lag. Arm. Stud. § 224 համեմատում է ասօր.  կամ  ligtīg «արագ արագ» բառի հետ, որ Nöldeke համարում էր իրաննանից փոխառեալ:—Տէրվ. Մասիս 1881 մայիս 1 և Նախալ. 103 արագուիճ ձևի մէջ ու համարում է սանս. raghu ձևի u ձայնի ներկայացուցիչը: Մառ ЗВО 5, 316 զնդ. taka պհլ. tag, «վազող» բառից: Հիւնք. nurag բառից Եպրեհան, Արևելք, հոկտ. 17, 1884 «տրաք բառի մը փոխարերութիւն է և ոչ այլ ինչ»: Հիւբշ. 422 դնում է բուն հայերէն բառերի շարքը, բայց կասկածում է, որ իրաննան փոխառութիւն լինի: Սակայն յետոյ նկատելով, որ r արիական լեզուներին յատուկ է, մինչդեռ եւրոպականները ունին l, փարատեց իր կասկածը (անձնական. տե՛ս նաև Patrubány SA 1, 77): Scheftelowitz BB 29, 16 հիսլ. frár «արագ», հբգ. frō «ուրախ», վեդ. prava «թռչելով» բառերի հետ՝ դնում է հնխ. provo արմատից: Pedersen, Հայ. դր. լեզ. յն. τρχύς «բիրտ» բառի հետ է կցում (էջ 20): Սագրեան ՀԱ 1909, 335 ար «ոտք» բառից, որ պահում են նաև արագիլ, արգել, արահետ: Karst, Յուշարձան 400 ասուր. arhu «արագ» բառին ցեղակից: Պատահական նմանութիւն ունի արաբ. عج raq' «արագ վազել, շտապել» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 588):

ԱՐԱԳԱՋ տե՛ս Երագաղ:

***ԱՐԱԳԻԼ**, ի–ա հլ. «ծովային ճայ, ձկնկուլ» Ղևտ. ժա. 19. Օր. ժգ. 16. Սղ. ճգ. 17. «արագիլ, լաղլագ» Փիլ. Սարգ. Սահմ. Շ. տող.:

= Պէտք է կցել յն. πελαργός «արագիլ» բառին: Այս բառը թէև առատաբանում է πελός «սև»+ἀργός «սպիտակ» բառերից (Boisacq 760, Pokorny 2, 53), բայց դա անշուշտ ժողովրդական յարմարանք է: Բառի հին ձևը պէտք է դնել *περαγλός կամ *παραγλός, որ անդափոխութեամբ առել է πελαργός. փոքրասիական ծագումով բառ է, և նոյն աղբիւրից է նաև հայերէնը:—Ա.

ՀՀԲ դնում է արագիլ «շտապիլ» բայից: Klaproth, Asia polyql. էջ 105 պրս. arha: Pott BVS 4, 90 վերջ. alarch: Müller SWAW 64, 454 ար = զնդ. airya+-ագիլ=լտ. aquila «արծիւ»: Lagarde, Arm. Stud. § 225 յն. πελαργός «արագիլ» բառի հետ: Հայերէնի հին ձևը համարելով *հարագլ-: (Այս համեմատութիւնը ճիշտ չէ, քանի որում յն. πελαργός հասարակ բարդութիւն է πελός «սև» և ἀργός «սպիտակ» բառերից կազմուած: Այսպէս է կոչուել թռչունը՝ իր սև ու ճերմակ փետրների պատճառով. տե՛ս Boisacq 760): Տէրվ. Altarm. 22 հետևում է Müller-ին: Եպրեհան, Մա-

տես 1884, էջ 202 «թևերս բազդատի արկիլա ձայնին հետ»: Հիւնք. առաքիլն *բառից: Մէնէվիշեան ՀՄ. 1890, 54 դրնում է* արա *«ոտք» (հմմտ.* արաճնա, որոգայթ*)+ գիլ. իբր «բարձրուն, բարձրաբերան»: Հալաճեան, Արեւելք 1893 նոյ՛ 10* արագ *խել: Buqqe IF 1, էջ 444, 456 հրգ.* chragil *«ճռռոցող»,* chragilōn *«շագիշագիլել» բառերի հետ. այս բառերը* R. Hildebrand (Deutsch. Wtb. V *1956) և* Fick BB *17, 320 համեմատում են լտ.* grāculus *«մի տեսակ ագռաւ» բառի հետ, որ բուռ* Fick *հնխ.* graglo-, graqélo *նախաձևից է ծագում.* Walde *349 լտ. և գերմ. բառերին կցում է նաև հալ.* gračą grakati *«կռնչել»,* grŭkati *«մռնչել», իսլ.* grāc *«կռնչիւն», սերբ.* gröchot *«բարձր քրքիջ» և արիշ բնաձայն բառեր, որոնք բոլորը գնում է հնխ.* ger- *արմատից: Halévy (անձնական) հբր.* גָּגָל regel, *ասոր.* ריגלא reglā, *արաբ.* رِجل riǰl *«ոտք» բառերից, իբր «երկայնոտան»: Pedersen, Հալ. դր. լեզ. 17 համեմատում է սանս.* krakara *«մի տեսակ կաքաւ»: Patrubány ՀՄ. 1908, 188 -ի համարում է նուագական մանրիկ: Մագդեան ՀՄ. 1909, 335 և* Karst, *Յուշարձ. 402 սումեր.* arik-gil-lm *«մի տեսակ բարձրաբերան թռչուն է»: Յոյն բառի հետ, ինչպես նշվեց, կապել էր* Lagarde: *Առաջարկում եմ վերի մեկնութիւնը, որ ընդունում է նաև* Meillet *(անձնական): Ըստ այսմ պատահական նմանութիւն ունին ասոր.* raqraqu, laqalaqa, *արաբ.* laqlaq, *թրք.* legleg, leylek *համանիշները:*

Գիմ.—Վն. առակ՛ել, *Ոզմ.* առակէլ, *Մկ.* առակ՛ել:

ԱՐԱԳՈՅՆ *«անկարօտ կամ աննուազ». ունի միայն Բառ. երեմ. էջ 34:*

ԱՐԱԼԷՋ *տե՛ս Առլեզ:*

ԱՐԱԽԻԼ *«թռչուն ինչ». ունի միայն Քաջունի, հտ. Գ. էջ 23:*

+ԱՐԱՆ (ի, ո հլ.) *«վէրքի, մանաւանդ բորոտութեան նշան, սպի, կեղ, որ երևում է մորթի վրայ՝ հիւանդութիւնից առաջ կամ մնում հիւանդութիւնից յետոյ. 2. հագուստի կամ քարի ու պատի վրայ փտութեան նշան». ՍԳր. «որքիւն հիւանդութիւնը» Կաղիան. «սպիտաւոր, սպի ձգող (ախտ)» Փիլ. լին. դ. 40. գրուած է նաև առած «վէրք, հարուած» հին Մաշտ. լաստ. որից* արածճացայ *«քաղցկեղ» Բրս. մրկ. 86 (չունի ԱԲ).* արածադէմ *«չեչոտ, պիսակոտ, ծաղկահար» ՓԲ (իր ստեղծած բառն է):*

= Նոյն է արածել *«ճարակիլ, խոտ ուտել» բառի հետ. վարակիչ վէրքերի անունները շատ անգամ ծագում են «ուտել» գաղափարից. ինչ. գւռ. կերցայ, կեր-եարա, մազկեր, ծամկեր, ռուս.* костоядь *«ոսկորի փտախտ» (բառացի «ոսկրակեր»). յատկապէս* արած *բառի վրայ խօսելով՝ սրա յն. համանիշը* λειχήν *(որից փոխառեալ են լտ.* lichen, *ֆրանս.* lichen, *ռուս.* лишай*) «բորոտութիւն. 2. մամուռ» ծագում է յն.* λείχω *«լիզել» բայից:—Աճ.*

Հիւնք. գնում է հարած բառից: Bugge, Beitr. *31 յն.* γάγγραινα *«վէրք»,* γράσις *«կանաչ խոտ» բառերի հետ:* Scheftelowitz BB *29, 31 նոյն ընդ ապատ:* Lidén, Arm. Stud. *35 հլ.* արածել *բայի հետ՝ ինչպես յն.* τρώγω *«ուտել» բայի դէմ* τραῦμα *«վէրք»,* τρώω *«վիրաւորել»:*

+ԱՐԱՆ. *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* արածիլ *«ուտել, ճարակիլ (խոտ)» ՍԳր. նմանութեամբ «կրակի լափելը, հրկէզ անելը» Ագաթ.* արածել *«հօտը արածացնել» ՍԳր.* արածանել *եղնկ. լդ. 8. Պտմ. ազէքս.* խոզարած *ՍԳր.* այծարած *Մագ. Սարգ.* դիւարած *Մամիկ.* ճօտարած *Փարպ.* խաշնարած *Ծն. դ. 20. Նոր լեզուում* բոզարած, հորթարած, կովարած, գառնարած *են: Տե՛ս նաև* արօտ:

= Հնխ. trəg՛ *արմատից, որ պահուած է նաև յունարէնում՝ երկու ձևով. ապաած* trəg՛ *ձևից՝* τραγανός *«ուտելի»,* τραγεῖν *«ուտել, արածիլ»,* τραγαλίζω *«կրծել, լափել»,* τράγος *«բուծ». և երկար ձայնաւորով* trōg՛ *ձևից՝* τρώγω *«ուտել, կրծել, արածիլ, ճարակիլ» (յատկապէս անասուններուի մասին խօսելով),*

τρωγός «ուտիճ», τρώξιμος «ուտելի», τρώκτης «ուտող»։

ՆՀԲ առ ածել, յորում ածել, լծ. և երբ. բաա, արաբ. բայ։ Müller, Kuhns u. Schleich. Btrg. *5, 108* անս. raǰ, գնդ. rāz, օսս. arazin «ուղղել, վարել», araz kanin «առաջնորդել»։ Տէրվ. Նախալ. *63, 102* ասնս. arǰ, յն. ὀρέγομαι, լտ. regere, հյ. արքայ ևն բառերի հետ՝ հնխ. arg, rag «ուղղել, վարել» արմատից։ Ա. Լ. (Արև. մամուլ *1889, 177*) արիական արծա, արժա «ձիերու երամակ» բառից! Buqqe, Beitr. *31*, IF *1, 444, 456*, KZ *32, 43* արածել, արա-ւտ=յն. γράω «ուտել», ասնս. gras «կրծել»։ Հիւնք. արածել դնում է ածել բայից։ Jensen, հաթ. razs «հովիւ, արածող կամ երէց», arsa, ars, rsa «արածել»։ Patrubány SA *2, 151* և *281* ասնս. raǰ, լտ. regere։ Վերի մեկնութիւնը առաւ Lidén, Arm. Stud. *35*, որ ընդունում է նաև Pedersen ՀՄ *1907, 95*, իսկ Meillet (անձնական) կասկածով է միայն ընդունում։

Տե՛ս Pokorny *1, 732*, Boisacq *988*։

Գիւր.— վն. առածել, երև. առա՛ծել, Ջղ. առածացնել, Շմ. առածիլ, Սլմ. առածալ, Մրղ. առածալ, Գոր. Ղրբ. ըրա՛ծել, Ագլ. ըրա՛ծիլ, Ախց. կր. առծել, Տփ. ա՛րծիլ, Մշ. Սչ. առնել, Ննխ. Ռ. Սեբ. առնէլ, Ասլ. առնէ՛լ, Զթ. առնըլ, Ակն. խրբ. առնիլ, Ալշ. առնալ, Տիգ. mրծիլ, Հճ. այնել, Հմշ. այնուշ, Մկ. էրէնալ։

*ԱՌԱԿԱՆ, որ և առեկան, իրական «դալուկ, դեղնցաւ» Մխ. բժշ. *93, 114*։

= Արաբ. عِرْق irqān, որ Կամուսի արաբերէն ընդարձակ բառարանը (Բրբ. Բրգմ. Բ. էջ *863*) ա՛յպէս է մեկնում. «Մի տեսակ կարմիր ծառի անուն է, որ Բրբ. գըզըլ աղաճ կոչուածն է. նաև նշանակում է հինայ. նաև նշանակում է քրքում. նաև նշանակում է աղբերաց արիւն կոչուած դեղը. նաև նշանակում է մի տեսակ հիւանդութիւն՝ որ բոյսերին է պատահում, նրանց հիւթն է ապականում, դեղնեցնում և անպիտանացնում է. և Բրբ. սաէ «ցորենի դեղնախտ» է կոչում. այս հիւանդութիւնը մարդոց էլ է պատահում և կոչում է նաև araqān, iriqān, aruqān, arq, arqān, urāq, yurqān և սա շատ ծանօթ մի բառ է. բժշկութեան մէջ յայտնի է yarqān ձևով և ունկ. կոչում է սարլըզ «դալուկ»։—Բառը բնիկ արաբերէն է և Թէև Կամուսը վերի հատուածում عرق arq «անբուն մնալ» արմատի տակ է դնում, բայց այս յայտնապէս սխալ է։ Բառը ծագում է սեմական يرق yrq «կանաչ» արմատից (ինչպէս ուղղում է յետոյ նաև Կամուսը՝ հտ. Գ. էջ *69*), որին պատկանում են նաև ասուր. arāqu «կանաչիլ, դժդունիլ», amurriqānu «դալուկ», ասոր. مريقانا mriqānā, եբր. יֵרָקוֹן yēraqōn «դալուկ», արաբ. ارقان irqān «հինա, քրքում» կամ բայական գործածութեամբ «մազին, մերուսին հինա դնել, քրքում քսել, դեղին ներկել» (տե՛ս Կամուս, Բրբ. Թրգմ. Գ. էջ *639*)։—Ա՛ճ.

ՆՀԲ մեկնում է պրս. էրէֆան, էրաֆան, եբր. էրաֆօն։ Karst, Յուշարձան, էջ *402* Բրբ. yarakan «դալուկ» և սումեր. ara «դեղին» բառերի հետ։

+ԱՌԱՀԵՏ, ի հլ. «ճամբայ» Ոսկ. ես. Նղն. Վրք. հց. հտ. Բ. էջ *671*. Պիտ. գրուած է նաև առհետ ԱՔ (ինչպէս ունինք առալէզ-առլեզ). առանաւորի մէջ սղուած ռահետ Տաղ. Գնձ. որից առահետել «հրթիռ, ուղևորիլ, յառաջ դիմել» Պրոկղ. յոսկ. անառահետ Ոսկ. ես. Մարութ. Վկ. արև. էջ *146* (սրանք ըստ սրբագրութեանց Նորայրի, Հայկ. Բառաքնն. էջ *26*). առահետ լինել «բնաջինջ լինել, անհետ դառնալ» Նղն. Մաթ. (ո՛չ Թէ միայն աւերի, այլ և ամենևին առահետ լինի). Տաթև. ամ. *399* (յառահետ եղալ կորնչին զեք). Տաթև. հարց. *206* (յորժամ լուծանի, ամենևին յառահետ լինի ամպն)։— Առահետ բառը առհասարակ բառարանները մեկնում են «արքունի, լայն, բանուկ ճանապարհ». բայց կան օրինակներ՝ որ ընդհակառակը «նեղ ճանապարհ» են ցոյց տալիս. ինչ. «Ո՛վ հօտ մեծի հովուին և առաջնորդին կենաց, որ նեղ առահետին յընդարձակն տանի» Վրք. հց. Բ. էջ *671* (ըստ սրբագրութեան Նորայրի). «Ընդ անապատն կամի գնալ, ուր ոչ և առահետ ինչ

*երբեք առաքինութեանց երևեցաւ» Ոսկ. ես. «Արգելեալ պահէ ո՛չ միայն զարքունեացն պղծուածս, այլ և զպղծուղի հետևանաց ապահեաս» Պիտ.։

= Կազմուած է այր և հետ բառերից, իբր «մարդու ոտքի տեղ, մարդու ոտք կոխած տեղ». այս ստուգաբանութեան յարմար է «նեղ ճամբայ» նշանակութիւնը, այր բառը ածանցների սկզբում լինում է ար-. (ինչպէս արու, արի, արական). հետ առնուած է այստեղ իր սկզբնական իմաստով, որ է «ոտք»։

ՀՀԲ «յար և միշտ հետս ունող ճանապարհ»։ ՆՀԲ. յար կամ արանց ուղևորաց արարեալ՝ հետք։ Տէրոյենց, Երևակ 1859, էջ 109 յար «միշտ» և հետ բառերից է դնում. որով և արահետ ձևը սխալ համարելով՝ այնուհետև սկսում է գործածել յարահետ։ Մէնէվիշեան ՀԱ 1890, 54 *արա «ոտք» (համմտ. nrոգայք, արագիլ) և հետ բառերից։ Նոյն ՀԱ 1898, 253 ար «ոտք» (համմտ. ar-n-գայք) և հետ = հնխ. pedo, ռուս. путь «ճամբայ» (և ո՛չ պրս. rահ կամ ոահ բառից)։ Սարգսեան, Բիւր. 1898, 483 արմատն է ար «անցք, ճամբայ», որ պահում են արգի գաւառականները՝ «ճամբու անցք, հնձելի արտի մէջ՝ մէկ կողմից բացուած անցք» նշանակութեամբ. այս ար արմատից են նաև հնար, արատ, ձագար և թերևս առապար։ Խաչկոնց՝ անգ, իբր ծանօթ. ուշացնում է թէ ար համապօր է պրս. ոահ «ճամբայ» բառին։ Փառնակ տե՛ս արտ բառի տակ։ Սագրեան ՀԱ 1909, 335 ար «ոտք» բառից, որ պահում են արագիլ, արգել, արագ, սումեր. arik «ոտք»։ Karst, Յուշարձան, էջ 402 սումեր. arik «ոտք, խարիսխ» և հայ. երի բառերի հետ։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 77 պրս. rāh «ճամբայ» + հյ. հետ «շաւիղ» բառերից։ Պատահական նմանութիւն ունին ասոր. ʾḥa; rəheṭ «վազել» և ʾḥa; rehṭa «ընթացք, ջրանցք»։

*ԱՐԱՄԱՋԴ «մի տեսակ թռչուն է» Վրդն. առկ. 35—36 (նորագիւտ բառ)։

= Աբամագդ աստուծոյ անունից, որ պարսիկ փոխառութիւն է։—Աճ.

ԱՐԱՄԱԹԻ «նուագեալ». ունի միայն Բառ. երևմ. էջ 35։

ԱՐԱՄՈՒՐ, ի հլ. անստոյգ նշանակութեամբ բառ, որ գ և յ նախդիրներով գործածուած է հետևեալ տեղերը.—1. Յորժամ շուրջ բակ ունիցի լուսինն ամպոց և ունիցի մոայլ գարեգակն... զարամուր փքոց և զդառնաշունչ բքոց ամբոխելոց յայտ առնեն (Վեցօր. գ. էջ 115).— 2. Զարամուր բքոց և զդառնացուցիչ հողմոց ամբոխելոց յայտ առնէ (Շիր. էջ 51, առնելով Վեցօրէից գրքից).— 3. Յերկրի զչուրն սառուցեալ միատարր՝ լինի սառն և զարամուրք ամպոց՝ լինի օդ մրրկեալ (Վրդն. սղ. հխր, էջ 505, հետևելով նախորդներին, բայց սխալմամբ գ արմատական կարծելով).— 4. Մաուցեալ ի գերեզմանս բռնալս... հոտ ժանտութեան և պղծութեան թաքուսեալ ոսկերս յարամուրս գտանիցես (Ոսկ. յհ. ա. 1, էջ 21)։— 5. Առաքեցից զձեզ ընդ ամենայն տիեզերս, որք յար ի յարամրի և ի չարի խակ կացցեն (Ոսկ. մ. ա. 16)։—6. Ի հոգոցն պատրանաց ի բազում յարամրի և ի միգի կան (Ոսկ. մ. ա. 20)։— 7. Զնոսա սպրդոզս անուանէ, որ կերպարանիս և նեղին յարամրի առ մեզ ի ներքս մտանել (Սարգ. յուդ. ա. էջ 634, ուր նոյն էջ մի քիչ ցածրում՝ որք սպրդեցին յանյայտս ի ներքս մտանել).— 8. Զկերպարանս աստուածպաշտութեան և առաքինութեան զգեցեալ՝ յարամրի ի ներքս մտանեն՝ թագուցեալ ունելով զթոյնս դառնութեանն (Սարգ. Բ. պետ. գ. էջ 433)։— Մեր բառարանները զանազան ձևերով են մեկնում այս բառերը. այսպէս ՀՀԲ մեկնում է արամուր «յոյժ ամուր», յարամուր «մածեալ մրով», յարամրի «յարելով և մերձաւորելով». ՆՀԲ մեկնում է արամուր, զարամուր «բուռն, աստիկ, ուժգին», զարամուրք «խտութիւն, հոծութիւն», յարամուր, յարամրի «բուռն, խիտ, մուխ», յարամրի «Բուռն առնելով անձին և իբր ընդ նեղ ծակ սպրդելով ի մթան կամ ի մուր ծխոյ»։ Գրեթե նոյն բառերով է ՋՔ, բայց յարամուր բառին տալիս է նաև «մուխն, մթութիւն,

կամ մրուր ծխոյ» նշանակութիւնը։ Ա֊Բ կրկնում է բոլոր իր նախորդներին և միայն արամուր բառի վրայ աւելացնում է «ամպ, մէգ, մուխ» նշանակութիւնը։ Ամբողջ այս անստուգութեան և խառնակութեան վրայ նոր լոյս է սփռում վրաց. ალმური *ալմուրի. ահմուրი արմուրի «ծուխ, բոց, ձիւնապատ սարերի վրայ իջած թանձր մշուշը, մրրիկ, փոթորիկ, բուք». Համմ. ԳԺ. բ. 19.* ხიხლი და ცეცხლი და ალმური კუალმიხა ახსილი და ცეცხლი და ალმურის կուամփիսա—*արիւն և հուր և մրրիկ ծխոյ։ Այս իմաստները շատ լաւ յարմարւում են վերը մէջ բերուած օրինակներին՝ մեծ մասամբ. մանաւանդ Ոսկ. փիլ. 440 վկայութեան հետ՝ որ չունի ՆՀԲ. «Ի կուտել ամպոցն ձիւնաբերաց, ի շառաչել շանթիցն բարկութեան, ի մէջ այնչափ արամբից և ի շուրջ պատել փոթորկաց». Համմ. նաև Եփր. վկ. արևել. 41 (=Սոփերք Ի. 91)՝ «Օդք սուգ զգեցեալ բարկութեամբ շնչէին և ի պարզ յատակութենէն յարամուր և ի մրուր և ի մրրիկ դառնային»։ Միայն № 4 վկայութեան մէջ պէտք է առնել «մրոտած, մրճոտած, սևացած» իմաստով, իսկ յարամրի մակրայ է՝ «ծածուկ, գողունի» իմաստով. (ինչպէս երևում է Սարգ. յուդ. ա, էջ 634 հատուածի բացատրութիւնից), որ մթութեան գաղափարից յառաջացած է փոխաբերաբար Բառիս համար նոր վկայութիւն է տալիս Ոսկ. ես. 292՝ «Ապա եթէ կամիցիս ուսանել թէ որպիսի՞ ինչ արամուր աղտեղութեանց յառաջնովք կոյր, զկատարչաս հա՛րց և ի նոցանէն տեղեկանաս»։ Այստեղ բառը նմանապէս «մրոտ, կեղտոտ» իմաստն ունի և տալիս է մի նոր ապացոյց մրրիկ և մրուր (թերևս նաև մուր) բառերի ծագման նոյնութեան (տե՛ս մրրիկ)։*

ՀՀԲ կցում է յարիլ, ամուր և մուր բառերին։ ՆՀԲ սրանց վրայ աւելացնում է և յն. γνόφος «կամացուկ»։

ՓՈԽ.— Հայերէնից փոխառեալ պէտք է կարծել վրաց. ահმური *արմուրի, ალმური ալմուրի. սրանցից հնագոյնն է արմուրի, որից յառաջացել է յետոյ ալմուրի՝ վրացերէնի ձայնական օրէնքների համաձայն, քան որոնց կրկին ր–երից մին դառնում է լ. ինչ. Գրիգոր=վրաց. Გრიგოლი, Թուշ. Գրիգոլ, մարգարիտ=վրաց. მარგალიტი, Թուշ. մարգալիտ։*

*ԱՐԱՅԻՇ «հանդէս». *մէկ անգամ ունի Մեծոփ. էջ 11։*

= Պրս. آرایش ārāyiš «զարդարանք, ծէս և օրէնք»։—Հիւբշ. 262։

Բառարանները չէն յիշում այս բառը։

*ԱՐԱՆԴՆՈՅՆ. *անասոյզ բառ, որ մի տեսակ անասունի անուն է. մէկ անգամ գործածուած է Բարուախօսի մէջ, էջ 131 (Հրատ. Մատ). «Վասն մսոցի (ըստ Մատ իմա՛ մողէզի) և որ կոչի արանգնոյն» (նոյնը տե՛ս և* Физіологъ, *էջ* LXII *և բնագիրը՝ էջ 1. «Վասն մողէզի որ կոչի արանգ)։ Մատ ընդունելով այս բառը իբրև «մողէզ», կցում է պրս.* رنگ rang *«մողէզ» բառին, որ մի շատ հազուագիւտ ձև է և գտնւում է միայն* سیزرنگ sīz-i rang *«մողէզի կաթ կամ մէզ» բառի մէջ։ Ըստ իս լաւագոյն է դնել իբր յն.* ἀράχνιον *«սարդ» (տե՛ս Մատ,* Физіологъ, *էջ 50)։—Աճ.*

ԱՐԱՆԴ *«կոճղէզ, բոյսի տակի սոխար» Թժշ. ունի միայն ՀԲուս. § 190։*

= Պէտք է կարծել արաբ. կամ պրս. փոխառութիւն. *Համմ. տակը* արանդուպարանդ։—Աճ.

Ուրիշ է արաբ. رند ranid *«մի տեսակ հոտաւէտ ծառ, հալուէ, մրտենի, դափնի, վայրի մրտենի» (Կամուսի Թրք. Թրգմ. Ա. 612), որ Շեփայնշնայդէր* WZKM *12, 88 յունարէնից փոխառեալ է համարում։*

*ԱՐԱՆԴՈՒՊԱՐԱՆԴ կամ ԱՐԻՏՊԱՐԻՏ *«սոխի նման մի բոյս է,* gladiolus» *Թժշ. ունի միայն ՀԲուս. § 191։*

= Պրս. برند برند *բառից, որ կարող է ի մէջ այլոց կարդացուիլ* arandubarand. *այս բառը ծանօթ է միայն Հայբուսակին. այլուր չեմ գտած։ Բոյսը մեկնուած է իբր լտ.* gladiolus, *յն.* ξιφίον, *որոնք բուն նշանակում են «փոքր Թուր». Համմ. նաև հայերէն հոմանիշը՝ ագռաւի թուր։ Ըստ այսմ կարող ենք մեկնել բառի վերջի մասը՝ իբր պրս.* برند barand *կամ* birind *«պաղպաջ սու-*

սերի» (բստ ԳԴ)։ Շթայնշնայդէրի հատուածոյի մէջ էլ կայ artad barīd? բառը (WZKM 11, 268), որ հեղինակը չէ կարողացել մեկնել և որ անշուշտ մեր բառն է։

ՀԲուս. վերի անծանօթ պրս. ձևի հետ է համեմատում։

*Ա.ՐԱ.ՊԱՆ, ո հլ. «մեծ թմբուկ». ունի միայն ՀՀԲ և սրանից էլ ՓԲ, առանց վկայութեան. մէկ անգամ գտնում եմ գործածուած նոր վկ. էջ 203 (1403 թուից). «Թափով և արապանով շուրջ և բոլոր պարէին» (այլ ձև. արաբանով)։ Այլ վկայութիւններ են՝ «Ժողովեն զրագում զարապանս, այսինքն դնաղարայս» Ջուղ. 244.—«Միտս ունողին մոծակն է զերթ երգարան, իսկ անմտին՝ սակաւ շփիրն և արապան» (Բրք. տավուլ զուրնա). Դիւան ժ, էջ 325 (1799 թուից)։ Յայտնի է, որ արապան ծագում է թրք. balaban բառից. բայց այսքան վկայութեան առաջ դժուար է ասել, թէ նախաձայն b-ի բացակայութիւնը պատահական է։

= թրք. بالابان balaban «թմբուկ», որից փոխառեալ են նաև նոր սուր. balaban «թմբուկ» և ռուս. барабанъ «թմբուկ»։ Թաթարէրէն բառը իր հերթին ծագում է պրս. بالابالا bālā bāng «բարձրաձայն» բառից (տե՛ս Будаговъ 1, 236, որ տալիս է ռուս. բառի այս բացատրութիւնը, մինչդեռ Даль և Berneker չգիտեն)։ Հայերէնի մէջ նախաձայն b-ի բացակայութիւնը պարզ ձևաբանական սխալի արդիւնք է։—Ա՛ճ.

Ա.ՐԱՍՏ տե՛ս Երաստ։

Ա.ՐԱՍՏՈՅ (հնագէս չէ հոլովուած. յետնաբար կայ միայն բցո. ի յարաստոյց. ՆՀԲ դնում է ի հլ. ՀՀԲ ի–ա հլ.) «որձաքար, պինդ՝ կարծր քար» Ագաթ. եղն. երէց 268. Փիլ. նխ. ա. 36. գրուած է նաև արազդոյ Փիլ. նխ. ա. երաստոյ ՅՀ. կթ. 358։

ՆՀԲ մեկնում է «կարի աստոյ կամ ասաի, կամ իբր արու և ազդու»։ Պատկ. Матер. I 15 պրս. راست rast «հաստատուն, ամուր» (ԳԴ չգիտէ այսպիսի բառ)։ Փառնակ, Անահիտ 1904, էջ 26 բաբելոնական Արաշտու «Արարատ» բառի հետ, առնելով իբրև «ամուր, կարծր, լեռ, ժայռ», Մաո, Надпись Сардура, էջ 8 մեկնում է «ուրարտական, ուրարտացիներից մնացած»։

Ա.ՐԱՏ, ո հլ. (յետնաբար նաև բց. յարատուէ, գրծ. արատաւ) «մարմնական պակասութիւն. 2. բիծ, կեղտի նշան, լաքա. 3. վրնաս» ՍԳր. եփր. ծն. և ղևտ. Կանոն. հիմայ գործածական է միայն երկրորդ նշանակութեամբ։ Որից արատաւոր ՍԳր. արատել ել. իր. Բ. կոր. գ. 3. Ոսկ. ևս. անարատ ՍԳր. Կոչ. անարատութիւն Ագաթ. սրան են պատկանում նաև արատիլ «պատր ճեղքուիլ» Ոսկ. Փիլիպ. 411 (չունի ՆՀԲ, բայց յիշում է ԱԲ) և անարատ «ամիանտ քարը» Բրս. պհ. ա. վերջինը կազմուած է թարգմանաբար յն. ἀμίαντος բառից, որ նշանակում է «անարատ, մաքուր. 2. ամիանդ քարը» (a բացասականով μιαίνω «աղտականել, կեղտաոտել» բայից)։

Ասետիքեան, Քերակ. 1815, էջ 313 յար աստիլ։ Տէրվիշ. Նախալ. 103 աստս. rad, լտ. radere «քերել, քերթել» բառերի հետ։ Հիւնք. յն. ἄρδα «կեղտ»։ Մարգիսեան տե՛ս արաճեռ բառի տակ։ Karst, Յուշարձ. էջ 417 *ար+ճատ. ար=թաթար. ar «մաքուր, լաւ», arik «մաքուր», ari «գեղեցիկ», իսկ ճատ «կտրուած» բառն է, որ կրճատուած է աս ձևով։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 65 ա բացատականով պհլ. rāt «բարեբարոյ»։

ԳԻՒ.— Արատ արմատը կորած է. բայց կայ անարատ բառը. Ախց. Կր. Մրղ. Սլմ. Տփ. անարատ, Երև. անա՛րատ, անա՛րաթ, Ալշ. Ակն. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. անարադ, Ասլ. անարա*, Մկ. mնmրատ, Տիգ. mնmրmդ, Հճ. անայօդ. մինչև անգամ Կեսարիոյ և էնկիւրիի Բրքախօս հայերը պահած են բառս անարադ ձևով։

ՓՈՒԽ.— Թուրք գաւառականները տեղ տեղ փոխ են առած այս բառը հայերէնից انارات anarad ձևով. օր. Կեսարիոյ Թիւրքմէնները ունին anarad yaγ «անարատ իւղ» (երկուսն էլ հայերէնից). տե՛ս Տ. վրդ. Պալեան, Բիւր. 1898, 712 և Գազանճեան, Յու-

շարձ. էջ 328.— Նոյնպէս Առանայի Թուրքաց և Թրքախօս յունաց բարբառով anarad (տե՛ս Ալեվեյք 1888, նոյ" 8—9), Սեբաստիոյ Թուրք բարբառով anarad (ըստ Գաբիկեան, անձնական)։

Ա.ՐԱՏ «արագիլ»? անասոյգ նորագիւտ բառ, որի մասին աւելի ընդարձակ տե՛ս Աւիովդ։

Ա.ՐԱՐ, Ա.ՐԱՐԻՉ տե՛ս Առնել։

Ա.ՐԱՐՏԵԼ «չորանալ կամ փշրել». ունի միայն Բառ. երեմ. էջ 40։

Ա.ՐԱՑ (սեռ. ի) «հայկական տոմարի վեցերորդ ամիսը» Ջրբ. ա. 7. Վանակ. տարեմ. Յայսմ.։

> Հները համարում էին Հայկ նահապետի որդիներից մէկի անունը։ Վանական Վրդ. Տարեմտի մէջ և Տաթև. հարց. 200 ատուգաբանում են հետևեալ ձեվով. «Ի յունել ձեան զլերինս և զբլուրս, ասեն, արանց է այս ճանապարհ և ոչ կանանց... արի մարդոց է աւուրքս և ոչ Թուլից և վատաց»։ Իսկ Տաթև. ձմ. ա. մեկնելով նոյն բառը՝ գրում է. «Արաց՝ առ ի յօրինել զայրն Աստուծոյ զԱդամ, որ իբրև զաման բրտի այրեաւ Թրծեաց սիրով հոգւոյն»։ Lagarde, Gesam. Abhd. 163 համարում է սեռական, սրեմն և արմատը ար-։ Պատկանեան, О названіяхъ древнихъ арм. мысяцевъ, էջ 38 արմատը գնում է արա, որից հետև է, ասում է, haurvat և պրս. خرداد xordād ամանունը, բայց նոյն է կապակովկեան հրորդ ամիսը, որ է ἀραιότατα, ἀραιοτα, αρα: Ծաչկոնց, Բիւր. 1898 թ. 4 աստր. այր, էյրու, լեզ. արաբ. այար, պալմ. այար, աստր. իյօր ամանուններին հետ։ Յակոբեան, Բանասէր 1900, էջ 40 պրս. اردی بهشت ardī bihišt «ապրիլ» ամանունից։

Ա.ՐԱՓԵՏ «կուշտ». այսպէս ունի միայն Բառ. երեմ. էջ 34։

*Ա.ՐԱՔ, գրուած նաև արագ «մի տեսակ ծառ, որի փայտը օգտակար է բերանի հիւանդութեան և գործածւում է իբր ատամնափորիչ» Ամիրտ. ունի միայն ՀԲոտա. § 3289։ = Արաբ. اراك arāk «մի տեսակ փշոտ ծառ, որ ուղտը սիրում է ուտել. դրանից պատրաստում են ատամնափորիչներ» (Будаговъ 1, 23). պարսկերէնում նոյն բառը նշանակում է «ատամնափորիչ» (ԳԴ, էջ 98 ա)։ Հայբուսակ ասում է թէ «Եւրոպացիք այլ նոյն անուամբ arack կոչեն, բայց և գիտնական լեզուաւ salvadora persica»։ — Ա՛ճ.

[Ա.ՐԱՔՈՍ, ի–ա հլ. «կոկորդիլոսի հետ բարեկամ մի թռչուն է, որ նրա ատամների միջև մնացած մսերն է ուտում». ունի միայն ՀՀԲ, որից և ԳԲ, առանց վկայութեան։ Մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. մրտ. 21։— Կենդանաբանութեան մէջ յայտնի է այս թռչունը. երբ կոկորդիլոսը գամաք է դուրս գալիս և ահագին երախը բացած պառկում է, այս թռչունը գալիս է և նրա լնդերքին կպած ապրուկները հաւաքելով ուտում է. կոկորդիլոսը բնականաբար գոհ է մնում և չի վնասում նրան։ Այս թռչունը կոչւում է գիտութեան մէջ trochilus (տե՛ս Бремъ, Жизнь животныхъ, հա. III, էջ 160)։ Նոյնի հայերէն տառադարձուած ձևերն են արոխիլոս Փիլ. սխալմամբ արոխոս Վրդն. ծն. որից՝ ա և ա գրերի շփոթութեամբ յառաջացած պիտի լինի արախոս անգոյ բառ։—Ա՛ճ.]

+Ա.ՐԲ «ըմպել, խմել». արմատ, որ առանձին էլ գործածական է «գինեբրուք» նշանակութեամբ՝ Ածար. մկրտ. այս արմատից են արբի, արբ (ըմպիմ բայի պակասաւոր ժամանակները, որոնք հին *արբանեմ բայի մնացորդներն են), արբենալ «գինովնալ, հարբիլ» ՍԳր. արբիլ նոյն նշ. Պզատ. օրին. յարբելեաց «գինով ժամանակ» Բուզ. գ. 18. արբեցութիւն, արբեցող ՍԳր. արբուցանել «խմացնել. 2. ոռոգել. 3. գինովցնել, հարբեցնել» ՍԳր. արբեցուցանել «հարբեցնել, գինովցնել. 2. ոռոգել, ջրել» ՍԳր. գինարբուխ կամ գինեարբուխ «խնջոյք» ՍԳր. գինարբու «հարբեցող» Խոր. Փիլ. Նար. կամ աւելի լաւ՝ գինեարբու Պիտ. արիւնարբու Ոսկ. ես. Եղիշ. ջրարբի ՍԳր. Վեցօր. Կոչ. Ոսկ. ես. ջրարբիլ «ոռոգուիլ» Թէոդ. մայրագ. դառնարբոյց Վրք.

հց. յատկապէս հետաքրքրական են ճ նախաձայնով՝ ճարբեցուրիւն Պղատ. օրին. 24. ճարբեցեալ՝ անդ, 28։ Վերի բառերի մէջ պէտք է նկատել թէ ի՛նչպէս «խմել» և «գինովնալ, հարբիլ» նշանակութիւնները մերթ-ման մէջ են իրար հետ. առաջին նշանակութիւնը հետզհետէ տեղի է տալիս երկրորդին. նախ *արբաեմ բայը ջնջւում է, մնալով նրանից մի քանի ժամանակ միայն (կատարեալը, ապառնին, հրամայականը են). յետոյ ածանցները կազմում են միայն երկրորդ նշանակութիւնից և վերջապէս նոր լեզուն խապաս վտարում է «խմել» նշանակութիւնը՝ պահելով միայն «գինովնալ, հարբիլ»։

= Հնխ. sṛbh- արմատից, որի միջին և բարձր ձայնադարձներն են srobh, srebh. սրանց ժառանգակիցներն են յն. ῥοφάω, ῥοφέω «ջրալի մի կերակուր ուտել, կուլ տալ, գինի խմել, լափել, ապառել», ῥόφημα «ջրալի կերակուր», լտ. sorbeo «ջրալի ուտելիք ուտել կամ խմել, կուլ տալ, ագահութեամբ լափել», sorbilis «ջրալի, հեղուկ», sorbillare «քիչ քիչ խմել», լիթ. srebiù, srobiù «կում անել», surbiù «ծծել», լեթթ. surbju «ծծել», strebju «կում անել, գդալով ուտել», streba «գինով, հարբած», հալ. srŭbati «կում անել, քիչ քիչ ուտել կամ խմել», միսլ. srub «գունչ, մռութ», ալբան. g'erp «կուլ տալ», g'erbe «կաթիլ» (տե՛ս Walde 726, Boisacq 844, Trautmann 294, Pokorny 2, 704, Ernout-Meillet 916)։ Ըստ այմ լեռին հայկէնի և գավառականների մէջ բառասկզբում երևացող ճ ձայնը ո՛չ թէ յաւելուած է, այլ հնխ. s ձայնի թանկագին մէկ մնացորդը—Հիւբշ. 423։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Müller SWAW 42, 256։ Հինդ. պրս. abr «ամպ», լտ. ebrius «հարբած», ebibo «խմել» բառերի հետ։ Յ. Աբրէզ ՀՄ 1896, 270 եգիպտ. արպ «գինի», արաբ. عنب ʿanb, عنبا ʿanba «խաղող», սանս. ինդու «պտուղ», յն. ἄμπελος «այգի, որթ» բառերի հետ. իսկ հյ. ումպ, ըմպել նոյն արմատի մեկ ուրիշ ձևն է միայն. համմտ. ըմպելի, սիկսպ. իմմելի, սանս. սիկրու «ըմպելիք», մեր արր, ումպ, ըմպ ձևերը գալիս են նախնական ար, ամ «ջուր, ըմպելիք» արմատից։ Patrubány ՀՄ. 1908, 187 հայից է դնում թրք. arpa «գարի»։

Գիմ.— *Մշ.* ճարբ'էճալ, *Տիգ.* ճուրփեճալ, *Սչ.* ճարփել, *երև. Նախ.* ճարփէլ, *Ախց. Շմ. Սեբ. Տփ.* ճարփիլ, *Ակն.* ճարպել, *Ագլ.* ճո'րբիլ, *Ցղ. Ղրբ.* ճարփիլ, *Սլմ.* խարփել, *Մրզ.* խարփըէլ, *Զթ.* հայբ'իճալ։ Նոր բառեր են ճարբան, ճարբոտիլ, ճարբածառօճ։

Փոխ.—*Մաո,* Грам. др. арм. էջ 265 վրաց. ხარბი խարբի «ագահ, անկուշտ» բառը հանում է հյ. գւո. խարփ<հարբ ձևից, իմաստի գոյգն փոփոխութեամբ։ Այս մեկնութիւնը սխալ է ըստ իս. վրաց. խարբի փոխառեալ է հյ. խարբ բառից՝ որ տե՛ս առանձին։

+ԱՐԲԱՆԵԱԿ, ի–ա *հյ. «ծառայ, ապառաւոր, օդնական, հետևորդ» Իմ. ժգ. 2. Սեբեր. է. Ոսկ. մ. ա. 1. Կորիւն. Եզն.* որից արբանեկել *«ծառայել» Իմ. ժգ. 24, ժթ. 6. Փրպ. «պէտքը լրացնել» Պիտ. Մագ.* արբանեկութիւն *Ագաթ. Եզն.* արբանեկեցուցանել *Կոչ.* արբանեկակից *«ծառայակից, ընկեր» Ոսխտ. ա. էջ 3 (նորագիւտ բառ)։*

= Հնխ. arbh, rabh *արմատից, որի միւս ժառանգներն են սանս.* árbha- «փոքր, թոյլ, ոգալ», *հալ.* rabŭ (robŭ) «ծառայ, ապառաւոր», rabota «աշխատանք», *ռուս.* рабъ «ծառայ, ստրուկ», раба «աղախին», работа «աշխատութիւն», ребёнокъ «մանկիկ», *գոթ.* arbaiθs, *հսաքս.* arbêdi, *անգլսք.* earfoþ, *գերմ.* arbeit «աշխատանք, նեղութիւն». — Նշանակութեանց զարգացման համար համմտ. *հյ.* մանուկ «փոքր, ոգալ, ծառայ», *ոմկ.* մանչ և խանութի մանչը. միւս կողմից նկատելի է, որ շատ լեզուներում բառս առացել է «աշխատանք» իմաստը, ըստ որում աշխատանքը ստրուկներին յատուկ գործ էր և է այժմ էլ վայրենիների մօտ, ազնուականները պարապում էին սրսորդութեամբ կամ կերուխումով և կամ պատերազմներով (տե՛ս Walde 546, Kluge 22, Pokorny 1, 183 4)։ Հիւբշ. 423։

ՆՀԲ մեկնում է «յարբունս հասեալ»։ Müller, Kuhn u. Schleich. Btrg. 5, 108 ամնս. ɾbhu «ոգարկել», արմատը rabh: Հիմնք. յն. ἄβρα «ապախին»։ Jensen, Hitt. u. Arm. 95 հաթ. arbasa, rpasa = ἁρβασις։

ԳԻՒՐ.— Մնացել է միայն վանի բարբառի մէջ արբնիկ «օգնական» ձևով։

Ա.ՐԲԱՆԵԼ «բարբառել», ունի միայն Բառ. երեմ. էջ 35։

Ա.ՐԲԵԿ «խիստ կամ քաջ կամ առաւել». ունի միայն Բառ. երեմ. էջ 35։

Ա.ՐԲԵՆԱ. անձանօթ կախարդական մի բոյս, որ բժշկարանների մէջ ասանդուած է դանագան դրշութեամբ. այսպէս՝ ափրիանա, յաբենայ, տրբենա: Բոլորն էլ ունի միայն ՀՔուս. § 263, 2148, 3000, իբրև առանձին առանձին բոյսեր։ Նորայր ՀԱ 1923, 344 նկարագրութեան նոյնութիւնից հետևցրրեց, որ միևնոյն բառերն են և Ալիշանի առնուշադրութեամբ միայն տարբեր բոյսեր համարուած։

Ա.ՐԲՇԻՒ տե՛ս Շիւ։

*Ա.ՐԲՈՆ «կանխաւճար, առգին». միայն երկու անգամ գործածուած է Վրք. հց. Բ. 149 «Այլոց յառաջագոյն էր տուեալ զգինան. իսկ հայրն Ովր ոչ նրբեք յառաջէր և տայր արբոն իմիք. այլ ի ժամանակին առաքէր զգինան և գնէր... ետ ինձ արբոն» (այլ խմբ. գրաւ)։

= Պրս. بون arbōn «կանխաւճար», որ և արաբ. عربون arabūn «գրաւականն», անմիջականից փոխառեալ է յն. ἀρραβών, որից և լտ. arrhabo «գրաւ, գրաւական»։— Ա՛ճ.

ՆՀԲ և ՋԲ գրում են արոն, արբոն և մեկնում են «կրօնաւորական ողջոյն». և այս սխալ նշանակութեամբ էլ առուգաբանելով՝ ՆՀԲ դնում է = ասոր. awūn կամ արաբ. ابون abūna «Հայր մեր» և կամ լտ. ave «ողջոյն», հյ. աւետիք։ ՋԲ բառ այլազգական։ Lagarde, Ges. Abhnd. 866 օտս. ar «բարի»+bon «օր», իբր «բարի լոյս»։ Հիւբշ. 299 թէև յիշում է ՆՀԲ-ի առաջին մեկնութիւնը, բայց նշանակութեան տարբերութեան պատճառով սխալ է գտնում։ ԱԲ դնում է ուղիղ նշանակութիւնը «գրաւ» և համարում է յունարէն։

Ա.ՐԲՈՒՆ (առհասարակ անհոլով. միայն յոգնակին ունի յետնաբար -ունք, -ունց, -բամբք հոլովները) «չափահասութիւն» (միշտ տարիքի համար գործածուած) Փիլ. Պիտ. Խոր. 3Հ. կթ. ճշ. Նար. բառ Նորայրի (Բանասէր 1900, էջ 130) հների մօտ նշանակում է «առուգութիւն, զօրութիւն». ինչ. «Յայնժամ մինչդեռ աստիքն նոցա (հին օրինացն) էին, մանաւանդ թէ կամիցիս, և այժմ իսկ արբունք նոցին են» (Ոսկ. մտթ. ժէ 278).— Մադիստրոսի մօտ գործածուած է պարզապէս «չափ» նշանակութեամբ. ինչ. յարբուն գրեզ ձգեալ «չափի բերելով քեզ, խելքդ գլուխդ բերելով» Մագ. գամագր. 6։ —Բառս կայ նաև Կեչառ. 189, իբր ածական և «դեռատի» իմաստով՝ «երանի էր ինձ ի դեռարոդրոջ և յարբուն հասակին, յորժամ ճնճս առնալ ճօճէի սիգալով» (ձմ. յաղփիւն, փաղփիւն, յարփիւն, յարբուն, յաղբուն. հրատարակիչը դրել է վերջինը. բայց պէտք է հասկնալ աղիւն «տկար», որի վրայ տե՛ս աղիփ)։

ՆՀԲ այր բուն կամ արբնալ բառ բառականին, այսինքն ոտոգնալ, Böttlich. Arica 64, 36 և Lagarde, Urgesch. 865 ամնս. arbha «փոքր, թեթև»։ Müller, Kuhn u. Schleich. Btrg. 5, 108, ամնս. ɾbhu «ուղարկեալ»։ Հիմնք. արբի «համեցիր» բայից։ Հիւբշ. Arm. Stud. էջ 11 չի ընդունում ամնս. arbha բառի համեմատութիւնը, նշանակութեան հակառակութեան պատճառով։ Ե. եպս. Դուրեան (անձնական) համեմատում է գերմ. Erbe «ժառանգութիւն, ժառանգորդ» բառի հետ, արմուկը համարելով այն տարիքը, երբ մարդ ժառանգութիւն առանալու իրաւասէր է դառնում։ Եւրոպացի լեզուաբանները Erbe բառը իր ամբողջ ընտանիքով (այսպէս՝ գոթ. arbi, հբգ. arbi, erbi, հին. orpe «ժառանգութիւն», գոթ. arbja, հբգ. arpeo, erbo, հին. orbe «ժառանգորդ») կցում են լտ. orbus «զրկուած», յն. ὀρφανός և հյ. որբ բառերին՝ ժառանգութիւնը հա-

մարելով որբի իրիլը։ Այս երկու խըմբերին միացում են նաև առնս. árbha «փոքրիկ, մանուկ», հլ. rabŭ «ծառայ» և հյ. արբանեակ խումբը (տե՛ս Walde 546—7)։ Եթե Դարեհանի առուգաբանութիւնը ճիշտ է, արբուն բառը գառնում է մի կապ երեք խմբի բառերի միջև (որբ, ժառանգորդ և տղայ)։

*ԱՐԳ «յարգ, արժէք, արժանիք». արմատ առանձին անգործածական. ներկայանում է երեք ձևով.— 1. Պարզական **արգ** ձևով, որից արգաւոր «յարգի, արժէքաւոր» եզն. արգոյ «յարգելի, պատուական» Ագաթ. արգաժողով «վաւ բաներ հաւաքելու պահելու տեղ» Ոսկիփ. արգագոյն «պատուականագոյն» Պիտառ. անարգ «նուաստ, աստրին» ՍԳր. Ագաթ. անարգարար Ոսկ. անարգել, անարգանք ՍԳր. մեծարգի Ոսկ. Կոչ. եզն. Վեցօր. կամ մեծարգոյ Վեցօր. Պիտ. հայրանարգու Ոսկ. մաթ. Ա. 41, պօղ. Ա. 17, 244, մարգարէանարգու նա. պատ. էջ 377 (ըստ սրբազրութեան Վարդանեանի ՀԱ 1913, 559). անարգական (նոր բառ)։ Այս արմատից են նաև արգապիր նուէր «ի յիշատակ կամ ի յարգանա՝ տաճարը դրուած ձօն, կրօնական ընծայաբերութիւն» (իբր թրգմ. յն. ἀνάθεμα, ἀνάθημα համանիշներին, որոնք նշանակում են բուն «վերադիր») Փիլ. ժ. բան. նաև արգունդ կամ յարգունդ «մեծանալը, աճիլը, թոչելու առաքանին հասնելը (թռչունի ձագերի համար առուած)» Ոսկ. Կոչ. էջ 545 (չունի ՆՀԲ). մասնիկի համար համմ. ծնունդ և սերունդ, իսկ նշանակութեան համար համմ. զարգանալ։— 2. Ջ նախդիրով՝ **զարգ**, որից զարգանք «բարգաւաճութիւն» Ոսկ. աղ. (նորագիւտ բառ՝ որ տե՛ս ՀԱ 1917, 27), զարգանալ «մեծանալ, աճիլ, յառաջանալ» ՍԳր. Ագաթ. զարգացումն Ոսկ. յհ. ա. 28. զարգուն «զարգացած», Փիլ. զարգալի Դիոն. երկն. ևն։— 3. Յ նախդիրով՝ **յարգ**, որ գործածական է նաև առանձին, «արժէք, գին» նշանակութեամբ (ի հլ. ըստ ՆՀԲ) Ա. Քագ. ժգ. 21. որից յարգել «պատուել, մեծարել, 2. արժեցնել, տոկոսի դնելով աճեցնել ևն» ՍԳր. Եփր. բ. կոր. Ոսկ. մ. ա. 4. Եւագր. յարգաւոր Ոսկ. մ. ա. 17, բ. 13. յարգի Ոսկ. ա. 32. յարգանք Ոսկ. Ագաթ. յարգագոյն «պատուականագոյն» նիւս. կազմ. յարգոյ Մխ. առ. Մծբ. որ և յարգոյր Տաղ. ևն։— ՆՀԲ ունի նաև յարգ «հերիք, բաւական» և յարգի լինել «հերիք լինել» ձևերը, որոնց համար տալիս է մի մի վկայութիւն. «Ոչ ունէր պէտս անտի օգնականութեան, այլ ինքն անձամբ իւրով յա՛րգ էր և ինքեամբ ի գլուխ հանէր զամենայն» Ոսկ. յհ. ա. 29 (ըստ իս այստեղ կարելի է կարդալ յարգէր «կատարում լրացնում էր»). «Նորա միայն յարգի լիցուր վկայութեան» (յն. հերիքասցուր տեսութեամբ). Ոսկ. յհ. ա. 2։

= Իրանեան *arg ձևից, որ չի առնդտած թէև, բայց կան նրա միւս ցեղակիցները. համմ. առնս. argha- «գին, արժէք», arghya- «յարգոյ, յարգելի», anarghya- «անյարգ, անարժէք», argh «արժել», arha- «յարգի», arhaṇā «յարգանք», գնգ. arəǰaiti «արժէ», arəǰah- «արժէք, գին», պհլ. arǰ «արժէք, արժանիք, գին», aržānīk «արժանի, արժանաւոր», aržānih «արժանիք», պազնդ. arzānī «արժանաւորութիւն», պրս. ارج arǰ կամ ارز arz «արժէք, գին», ارزیدن arzīdan «արժել», օսս. և սոգդ. arʒ «արժէք, գին»։ Միւս լեզուներից որանց համապատասխանող ձևերն են թոխար. arcantr «արժէ, արժանի է», յն. ἀλφή «շահ», ἀλφάνω «շահիլ, վաստկիլ», լիթ. algà «վարձ» հպրուս. algas «վարձ» (տե՛ս Pokorny 1, 91)։ Այս բոլորը ծագում են հնխ. algṷh արմատից, որ հայերէնի մէջ պիտի տար *աղգ, եթէ բնիկ լիներ բառս. բուս այսմ արգ իրանական փոխառութիւն է (համմ. առագ)։ Փոխառութեան կողմն են նաև մեր բառի կրկին նշանակութիւնները (բարոյական՝ արժանիք և նիւթական՝ արժէք), որոնք յատուկ են իրանեաններին և եւրոպական լեզուների մէջ չկան (տե՛ս և Boisacq 47)։ Նոյն իրանեան բառը փոխ է առնուած նաև արժել ձևով, որով կունենանք կանոնաւոր մի կրկնակ, ինչպէս տուգանք և տուժել, առոյգ և ոյժ ձևերն են։— Հիւրշ. IF Anz. 10, 46։

ՆՀԲ ուղիղ մեկնութեան հետ խառնում

է նաև համայական առուգաբանութիւնները. այսպէս՝ արգ, զարգանալ, յարգ, արժել, յառաջ, առաջին, աճել լծորդ են. որոնց հետ համեմատում է նաև հյ. իրակել (իբր յարդել), յն. ἐργάζω, պրս. arǰ, arziš. յարգ «հերիք» = յն. ἀρκῶν, ἀρκόμαι «բաւականանալ»: Gosche 36 գնդ. arəǰa, պրս. arǰ: Müller SWAW 41, 8 և 152 առնս. arh, argh, օսս. arγ: Lagarde, Baktr, Lex. 7 առնս. argha: Justi, Zendsp. 29 գնդ. arəǰ բառի տակ: Հիւնք. արգադիր = յն. ἐργατικῶς «ճարտար հղանակաւ». իսկ զարգանալ, յարգել<արգասիք բառից: Տէրվ. Նախալ. 64 իբր բնիկ հալ համեմատում է վերի ձևերի հետ: Հիւբշ. 477 դրած էր բնիկ հալ բառերի շարքը, բայց Meillet-ի (Revue critique 1897, էջ 388) և Pedersen-ի (KZ. 36, 76) ցուցմունքներով լեռալ պրաւ փոխառեալ բառ: Karst, Յուշարձան, էջ 417 ալթալ. ak, ag «արժէք, կշիռ», ալդար. oq «արժէք», aqirlamak «յարգել, պատուել», չաղաթ. agir և օսմ. aγər «ծանր»:

Գիմ.— Կայ միայն անարգել բառը՝ «հայհոյել, նախատել» նշանակութեամբ (Սլմ. անաւակել, հբր. անօրխլ, Տիգ. mնբրխլ, Հճ. անmյգ'ել). միւսները կորել են:

*ԱՐԳ, ո հլ? «գործ, աշխատանք». կորած արմատ, որից ունինք միայն արգօյ օր «լաւ օր, գործի օր, աշխատանքի օր» (Ζωῆς αὐτῶν ἀργὰς, յն. ἐξ ἡμέρας τὰς ἐναργούς. Եղնկ. խգ. 1) և արգոյ «գործունեայ, ազդեցիկ, ազդու» (Հաղորդութիւն հաւատացն քոց արգոյ լինիցի. յն. ἡ κοινωνία τῆς πίστεώς σου ἐναργὴς γένηται. Փիլիմ. 6):

=Հին փոխառութիւն յն. ἔργον «գործ, աշխատանք, աշխատութիւն, երկ» բառից:

Առհասարակ բառարանները չեն բաժանած նախորդից: Արգոյ օր ձևը ՀՀԲ և սրանից առնելով ՓԲ՝ դրում են արդոյ օր, որ եթէ առոյգ լինէր, պէտք պիտի լինէր կապել այս բառը արդիւնք ձևի հետ: Առաջին անգամ ՆՀԲ արգոյ «գործոն» և մանաւանդ արգոյ օր կգում է յն. ἔργον բառին: Հիւնք. հանում է արգասիք բառից: Ուղիղ մեկնեց Pedersen, Philologische Wochenschrift, 1907 յնվ. 5, թրգմ. ՀՄ. 1907, էջ 95:

+ԱՐԳԱՀԱՆ «գութ». արմատ առանձին անգործածական, որից կազմւում են արգահատել, -եցի (նոր գրականում արգահատիլ, -եցայ) «խղճալ, կարեկցիլ» ՍԳր. Եզն. կոչ. «աղերսել, գութ խնդրել, աղաչել» Նար. արգահատանք «կարեկցութիւն» Ոսկ. մ. ա. 18. արգահատելի «խղճալի, մեղքանալու» Եզն. արգահատութիւն «կարեկցութիւն» Ոսկ. մ. բ. 10. Եզն. «աղաչանք» Նար. անարգահատելի «անգութ» Պիտ. գրուած է նաև յարգահատել «աղերսել» Նար.:

= կազմուած է *արգ «փոր, աղիք» և հատ «կտրել» բառերի բարդութեամբ. նշանակութեան համար հմմտ. աղեխարշ, աղեկէզ, աղիողորմ, աղեխորով են հոմանիշները. իսկ *արգ «փոր, աղիք»<հնխ. arq^{w} բառի վրայ տե՛ս վարը արգանդ:—Ա՛ճ.

ՆՀԲ հյ. արգանդ բառից. լծ. լա. rogo, թրք. (իմմ՛ արաբ.) رجا raǰā «աղաչել»: Հիւնք. արգանդ բառից՝ համեմատելով լատ նշանակութեան, արաբ. rahm «արգանդ և գթութիւն»:

ԱՐԳԱՆԱԿ «մսի ջուր, խաշու» ՍԳր. (ՆՀԲ դնում է ի–ա հլ. ունինք միայն սեռ. ի, Եզնկ. իգ. 12):

ՆՀԲ թւում է հանել արգասիք բառից: Հիւնք. արf, արfայ բառից:

[ԱՐԳԱՆԱԿ «մեհեան, արձան». գիտէ միայն Ներսէսովիչ Բառ. լա.-հյ. 138 ա, որ լա. delubrum ձևին իբր հոմանիշ դնում է հյ. արգանակ: Որովհետև լա. delubrum բացի «մեհեան, արձան, կուռք» նշանակութիւնից ուրիշ նշանակութիւն չունի (տե՛ս Quicherat- Daveluy, Dict. lat. -fr. Paris 1913, էջ 384 և Walde 227), մանաւանդ չի նշանակում «խաշու, մսաջուր», ուստի այս արգանակ բառը պէտք է կարդալ արձանակ:—Ա՛ճ.]

+ԱՐԳԱՆԴ, ի–ա հլ. (ՆՀԲ դնում է ի և ո հլ. ի սխալ է, ո յետնաբար) «մօրը փորը, դաւակատուն, ծնամանը» ՍԳր. Ագաթ. Եփր. Համար. գրուած է նաև արգանա: Այս բառից են արգանդախեղդ «կանացի մի հիւան-

դուխին» ԱԲ, արգանդակից «մէկ մօր որդիք, հասակակից» ԱԲ (հմմտ. թրք. قرنداش qarəndaš, ազտ. qardaš «եղբայր», qəzqardaš «քոյր», յն. ἀδελφός «եղբայր», ἀδελφή «քոյր», ἀγάστωρ «եղբայր», որոնք գալիս են ուձ qarən *«փոր», δελφύς «արգանդ», γαστήρ «փոր, որովայն» բառերից). արգանդային, արգանդաբերան (նոր բառեր):

= *Արմատն է* **արգ**, *որ գտնում ենք նաև* **արգահատել** *«խղճալ, կարեկցել» բարդի մէջ (տե՛ս այս բառը).* **արգ** *ծագում է հնխ.* arg^{w}- *արմատից, որից նաև կիմր.* arffed *(հին ձևը* *arpet) *«ծոց, գիրկ» և թնրևս գաէլ.* arcuinn *«կռնկի ծիծ»:*

ՆշԲ մեկնում է «արգասիք, երկք և երկունք անդ»: Lagarde, Arm. St. § 236 *յն. ὀργάν «ուղիղ», որ մերժում է Հիւբշ.* Arm. Stud. *էջ 11, որովհետև ըստ* Curtius, Grundzug. 184 *յոյն բառը պահպանում է հնխ.* verg *արմատին: Կապ չունի նաև պրս.* ارغند arγand *«քաջ, կորովի», որի վրայ խոսում է* Lagarde, *անդ: Հիւնք. երկ բառից:* Pedersen, Philologische Wochenschrift, *1907, յնվ. 5, Թրգմ. ՀԱ. 1907, էջ 95 համաձայնում է բնիկ հայ, բայց յն.* արգասիք *և* արգաւանդ *բառերի ազգակցութիւնը կրած: Ուղիղ մեկնութիւնը առաւ նախ* Lidén, Arm. Stud. *էջ 21, որի վրայ իմ կողմից ուշադրացնում եմ արգահատել բառի համեմատութիւնը:* Meillet *(անձնական) ընդունում է կասկածով, իսկ* Walde 57 *իբր առաջ: Սպրդեան ՀԱ. 1909, 335 և* Karst, Systemfragen *էջ 402, 406 սումեր.* rig, rak *«առնգծել, երկնել, գաւակ բերել»: Ղափանցեան* ՅԲՕ *23, 353* արգանդ, արգասիք *և զարգանալ բառերի հետ* arg *«պատուհան» արմատից:*

Գիմ.— Ակն. Ջղ. **արգ'անդ'**, *Ալշ.* **արկանա**, *Ագլ. Տփ.* **ա'rfանդ**, *Շմ.* **արfանդ**, **ևարfանդ**, *Ախց.* **արfանք**:

***ԱՐԳԱՍԻ** *(գործածւում է անեզաբար. տես. -եաց) «գործ, արդիւնք» Գ. մակ. գ. 4. Ոսկ. յհ. ա. 12. Կորիւն. նկն. Բուզ. «երկրի արդիւնք, բերք» Նար. Յհ. կաթ. (անասելր մի ձև է գրծ.* **արգասի** *Նար. մծբ. 448, որ ենթադրում է ուղ.* ***արգաս**): *Այս արմատից են* **արգասաւոր** *«արդիւնաւէտ» Խոր. Պիտ. Նար.* **արգասաւորական** *«բերրի, բարեբեր» Նար.* **արգասաւորութիւն** *Իմ. ժգ. 19. Պիտ.* **արգասու** *«շահաւէտ» Շնորհ. Թղթ.* **անարգասի** *Պիտ.* **անարգասաւոր** *Իմ. ժգ. 19. Եզն.:*

= *Յն.* ἐργασία *«աշխատութիւն, աշխատանք, արտադրութիւն, աշխատութեան արդիւնքը (ամէն տեսակ բանի, նաև հողի համար ասուած), վաստակ, շահ». Ծագում է* ἔργον *«գործ»,* ἐργάζομαι *«աշխատիլ, գործել, հող մշակել» բառից, որի բնիկ հայ կեղակիցն է* **գործ**: *Հայերէնի մէջ նախաձայն* **ե** *ազդուելով յաջորդ* **ա** *ձայնաւորից, ստացել է նրա երանգը (հմմտ. դալապար, փխլիսուխայ, երեխայ):*

Ուղիղ մեկնից առաջին անգամ Աւետիքեան, Մեկն. Թղ. պօղ. Գ. 668, որ դրնում է «յն. էդղասիա, այսինքն գործ, արարք, յորմէ և ի մեզ բառն **արգասիք**»: *ՆշԲ, լծ. հյ.* **յարգ**, **երկի** *և յն.* ἐργασία: *Հիւնք. գնում է միայն յունարէնը: Նոյնը վերջին անգամ վերի ձևով* Pedersen, Philologische Wochenschrift *1907, յնվ. 5, Թրգմ. ՀԱ. 1907, էջ 95: Այս մեկնութիւնը ընդունում է նաև* Meillet *(անձնական): Սպրդեան ՀԱ. 1909, 335 և* Karst, Systemfragen *406 սումեր.* rak *«առնգծել, գաւակ բերել»: Ղափանցեան,* ՅԲՕ *23, 353* արգանդ. արգաւանդ. զարգանալ *բառերի հետ* arg *«պատուհան» արմատից: Պատահական նմանութիւն ունի արաբ.* ارغاس irγās *«բազմացնել, արգասաւոր դարձնել» (համառ. Թրք. Թրգմ. Բ. 246),* رغس raγs *«շնորհ, առատութիւն» արմատից:*

***ԱՐԳԱՍՏԷՐ** *«արուեստանոց, գործարան». ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. Ճառք. էջ 374 «Թողոյր զիւրացն արգաստեարան և զայր առ փրկիչն ոգւոց մերոց» (այլ ձ.* **արգաստէր**):

= *Յն.* ἐργαστήριον *«գործատեղի, գործատուն», որ կազմուած է* ἔργον *«գործ» բառից:*

Ուղիղ մեկնեց Ոսկ. ճառից հրատարակիչը (տպ. Վենետ. 1861)։

ԱՐԳԱՏ *«որթատունկի յօտ, կտրուած ամիսորդ ճիւղերը,* sarment». *իբր միջին հյ. բառ ունի նորայր, Բառ. ֆր. 1118 ա. նոյնը յիշում է Բառ երեմ. էջ 258 արգատ ձևով և այժմ էլ գործածական է երև. արմատ ձևով։*

ԱՐԳԱԻԱՆԴ (ի–ա հլ. *ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան*) *«բերրի, պտղաբեր, բարեբեր» Փարպ. Խոր. Պիտ. ՅՀ. իմ. առ. որից* արգաւանդաբէր *Նար. խչ.* արգաւանդաւոր *Փիլ. Խոր. Պիտ. Նար.* արգաւանդամիտ *Պիտ.* արգաւանդապտուղ *Խոսր.* արգաւանդեայ *Շիր.* արգաւանդութիւն *Պիտ.—ՀՀԲ և ՋԲ ունին նաև* արգաւանդ *ձևը.— Բոլորն էլ յետին։*

Lagarde, Arm. Stud. § *237 յն.* ὀργα-ντ-, *իբր* ὀργάς *«հիւթալի, պարարտ և բարեբեր տեղ. անտառապատ երկիր»։ Տէրվ. Նախալ. 64* արգոյ, արգաւոր, *արժէք են բառերի հետ՝ հնխ.* argh *«արժէք» արմատից։ Հիմնք.* արգանդ-*ից։ Բուում է թէ բառիս մէջ* -ւանդ *մասնիկ է (հմմտ. գնդ.* vañt- *«-ւէտ») և բուն արմատն է* արգ՝ *իբր «բերք, պտուղ»։ Եւ անշուշտ սրա համար է որ* Pedersen, Philologische Wochenschrift *1907, յունվ. 5, Բրգմ. ՀԱ 1907, էջ 95 գրում է թէ* արգ *«արժէք» պարսիկ բառն է՝ աղդուած* արգասիք *բառի նշանակութիւնից։—* Karst, *Յուշարձան, էջ 406 սոսմեր.* rak *«ստեղծել, զաւակ բերել» բառի հետ։ Ղափանցեան* ՅՒՕ *23, 353* արգանդ, արգասիք *և զարգանալ բառերի հետ՝* arg *«պտուղ» արմատից։*

+ **ԱՐԳԵԼ** *(անհոլով) «արգելք, խափանարար, խոչընդոտ» Ագաթ. Ոսկ. Եբր. Կոչ. «բանս» Յայտ. ժբ. 2. ՅՀ. կք. աւելի յաճախ գործածական է այլևայլ բայերի հետ. ինչ.* արգել առնել, արգել լինել, արգել արկանել, արգել տալ, յարգել արկանել *«արգիլել, խափանել» ՍԳր. Ոսկ. Կոչ. Եղն. Եւս. Եր. Բուզ. այս արմատից են* արգելական *«բանտարկեալ» ՍԳր. Եղն. «մենակեաց, ճգնաւոր» Կորիւն. «ճգնաւորական» Վրք. հց. Փիլ. լին.* արգելան *«բանտ, բանտարկութիւն» ՍԳր. Ագաթ.* արգելավանք *«կուսանոց» Ագաթ.* արգելատուրութիւն *Եւագր.* արգելոց *Բուզ.* անարգել *ՍԳր. Ագաթ.* բանդարգել *Գծ. իղ. 10. Ոսկ. մ. ա. 7,* բերդարգել *Բուզ.* վիմարգել *Եա. լա. 9. բայական ձևով* արգելուլ *«արգիլել, չթողուլ. 2. բանտարկել» ՍԳր. Վեցօր. Բուզ.* արգելել *Ոսկ. ա. Թես. գ. Վրք. հց. Ճառընտ. ՅՀ. իմ. եկ.* արգիլել *Վրք. հց.* արգելանիլ *«արգելուիլ» ՍԳր. արդի գրականում ընդունուած է* արգիլել *(արևմտեան գրական),* արգելել *(արևելեան գրական), իսկ* արգելուլ *համարւում է գրաբար, նոր բառեր են շնչարգելութիւն, հողմարգել, ուղարգել, լուսարգել, շանթարգել,* արգելակ *են։*

= *Բնիկ հայ բառ՝ հնխ.* arg- *արմատից. մեր բառի անմիջական ցեղակիցներն են յն.* ἀρκέω *«վանել, հեռացնել, խափանել, միմապրել», ἄρκος «պարման, ճար», լա.* arceo *«փակել, գոցել, կողպել, հետ պահել, չթողնել որ մօտենալ, արգիլել», հիւլ.* du-imm-aircthe, do-imm-urc *«ետևից, ճնշել, խնդրել»,* du-[illegible]-urc *«պաշտպանել»,* tess-urc *«պահել»։ Հնխ. արմատը առած է նաև* areq, areg, aleq *ձևերը, ո անցից յառաջացած են լիթ.* rahinti *«փակել»,* räktas *«բանալի», հրպ.* rigil, *գերմ.* riegel *«նիգ, խափան, այգելք», անգլ.* rail *«երկաթի ձող»,* railing *«վանդակ», լա.* arcanus *«ծածուկ, փակ, գաղանի», սանս.* argala- *«նիգ»,* rákšati *«պահել, պաշտպանել», յն.* ἀλέξω *«վանել, հեռացնել, պաշտպանել», անգլսք.* ealgian *«պահել, պաշտպանել» (տե՛ս* Walde *56,* Boisacq *78,* Kluge *395, տե՛ս* Pokorny *1, 80,* Ernout-Meillet *65)։ Հայերէնի մէջ* -ել *մասնիկ է (հմմտ. տես—տեսիլ). պարզական արմատն է* արգ, *որ պահում է գեղ բքարգ երև. Ներ. «բուքից արգելուած, բուքի բռնութեամբ՝ ճամբան չկարենալ երթալ»։— Հիւրշ. 423։*

ՆՀԲ յծ. հլ. առ գելում, լա. arceo, *յն.* εἴργω *«փակել, գոցել», κωλύω «արգիլել»։* Windisch. *7 լա.* arceo, *յն.* ἔρκος *«պանկապատ»,* Gosche *22 նոյն է գնում փոխադրելով* Ἀργεῖτας *բառի հետ, որ բուն Հեսիքիոսի* Λάκωνα *գիցուհու փոխա-*

գական անունն է։ Böttich. ZDMG *1850, 351,* Arica *76, 242,* Lagarde, Urgesch. *932,* առնս. argala «նիզ, սղնակ» բառի հետ։ Tomaschek, Die alt. Thrak. II, էջ 4 թրակ. ἀργιλος «մահ»! — Հիւբշ. Arm. Stud. *21,* Տէրվ. Նախալ. *63* վերի ձևով։ Հիւնք. լա. arceo, յն. εἴργω։ Osthuff IF *8, 54* հլ. արգել գնում է հնխ. ɟkélos, rekélos ձևից, համեմատելով հբգ. rigil և լիթ. rakinti բառերի հետ։ Հիւբշ. IF Anz. *10, 44* մերժում է այս համեմատութիւնը։ Այսօր գիտունները ընդունում են այս բառերի ցեղակցութիւնը լա. arceo են ձևերի, հետևաբար նաև մեր արգել բառի հետ։ Մատ. ЗВО *13, 0122* (տե՛ս նաև Patrubány SA *1, 68—69*) մերժելով հնդեվրոպական ձևերի համեմատութիւնը՝ փոխառեալ է գնում բառս ասոր. ܐܪܓܠ ʾarqel «խանգարել, արգիլել, եւ պահել», ܐܘܪܓܠܐ ʾūrqālā «արգիլք» բառատառ արմատից. համմ. նաև նոր ասոր. ärkil, ärkält'ä «յապաղել, ուշացնել»։ (Այս մեկնութիւնը ճիշտ չէ, որովհետև հայերէն բառի արմատն է արգ, ինչպես ցոյց է տալիս բքարգ բառը)։ Սագըզեան ՀԱ 1909, 335 ար «ոտք» բառից, որ պահում են արագիլ, արաւեւտ, արագ։

ԳԻՒ.—Ոդմ. արգբիլի, Սչ. արեել (գյ.), արիլել, Տրև. արե՛լել, Շմ. արէլիլ, Սեբ. արիլել, Ալշ. արկիլել, Տիգ. արիլել.—Ակնայ բարբառում արգիլել նշանակում է «բանտարկել (մարդ, շուն ևն)»։

*ԱՐԳԵՍՏԷՍ «հիւսիս-արևմտեան քամի» Արիստ. աշխ. Առաք. կենդ. էջ 70. Տաթև. հարց. 205. ուրիշ տեղ գործածուած չէ։

= Յն. ἀργέστης «արևելեան կամ հիւսիս-արևմտեան քամի». ծագում է ἀργός «սպիտակ, փայլուն» արմատից. իբր թէ այդ քամին ամպերը ցրուելով երկինքն է պարզում։— Հիւբշ. *341*։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ։

*ԱՐԳԻԱՅ «ոռոգումն». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Սակր. եկեղ. պատմ. Ա. 18 «Զնիդոս հանէ ի յարկիայ եգիպտոսի»։

= Յն. ἀρδεία «ոռոգում». ըստ այսմ հայերէն բառը պէտք է ուղղել արդիայ։

Ուղիղ մեկնեց Մ. Վ. Տէր-Մովսէսեան, Սոկրատի հրատարակիչը, անդ, էջ 51։

ԱՐԳԻՈՆ. անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Ոսկիփ. «Զպատմուճանն աստուածային փորանկեալ և զարգիոն նախորոն»։ ՆՀԲ համարում է յն. ἀργής, ἀργῆτις «սպիտակափայլ» և թարգմանում է «սպիտակ». ԱԲ առանց կասկածի մեկնում է «ճերմակ». ՋԲ և Հիւբշ. չեն յիշում։

*ԱՐԳԻՏԻՍ «արագ անցնող կայծակ». մէկ անգամ ունի Արիստ. աշխ. որ միևնոյն ժամանակ տալիս է բառի նշանակութիւնը. «ոմանք ի շանթից՝ որ վազվազակի ի թռիչս անցանին, ասացեալ լինին արգիտէաք»։

= Յն. ἀργῖτες, որ յոգնակին է ἀργής «փայլող, փայլատակող» բառից.— Հիւբշ. *341*։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։ Gosche 22 նոյն է դնում փռիւգական Ἀργῖτας դիցուհու անուան հետ, եթէ միայն այս բառը հյ. արգել բառը չէ։

*ԱՐԳԻԻՐՈՆ «արծաթէ դրամ» Շիր. 33. Տօնակ. անշուշտ նոյն է նաև արիւր «ոսկեպղինձ» Բառ. երեմ. էջ 37։

= Յն. ἄργυρον, որ հայցական հոլովն է ἄργυρος բառի. նշանակում է «արծաթ», բայց նաև «կտրուած արծաթեայ դրամ». վերջին իմաստով թէև յոյն բառի գաւառական ձևն է ἀργύριον, բայց սա յարմար չէ մեր ձևին։

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բացատր. շիր. և կշռ. էջ 49, որից յետոյ ՆՀԲ։ Հիւբշ. 342 դնում է յն. ἀργύριον ձևից։

*ԱՐԴԱՌ (սեռ. -այ) «քուրձ, պայուսակ, հէյսէկ». գործածուած է Ս. Գրքում միայն երեք տեղ, և միշտ fourà բառի հետ. «Ի իջիք ի քուրձ արգոր... զքուրձն արգոր... զքուրձն արգոր ընդնմին» Ա Թագ. գ. 8, 11, 15։ Սրանցից առնելով մի մի անգամ էլ գործածուած է հետևեալ տեղերում. «Քուրձն արգոր զհաշորութիւն վարուց կրօնից աստուերագրէր» Սրճ. տապան. էջ 409. «Բարձեալ ի վերայ ուղտուց՝ վտարեաց ի Սամաստա, եդեալ ի

ներքոյ արգորայ տաղաւարաց» Արծր. 139։ (Հին բռ. մեկնել է բառս «քուրձ ոսկւոյ կամ փառաւ», ՀՔ «արկղ, սապատ կամ քսակ», միւսները «քուրձ, տոպրակ»)։ Միևնոյն բառի երկրորդ ընթերցուածն է երգազ *(նորագիւտ բառ), որ երկու անգամ գտնում եմ գործածուած կիւրղ. թգ. «երգազն անօթ ինչ է հիւսկէն, որ այնպէս կոչէր յայլազգեաց անտի, կամ մեկնակ շալակամատն է կամ կէս շալակաց։ Երգազն մեկնակ շալակամատն է կամ կէս շալակաց»։ ՆՀՔ գիտէ այս վկայութիւնները (տե՛ս շալակամատն բառի տակ), բայց* երգազ *բառը առանձին չի յիշում (տե՛ս նաև Գալեմքեարեան, Մասիս 1900, էջ 403)։*

= *Եբր.* ארגז argaz *«կաշի հաւր գրած արկղ կամ տպի երկաչեայ պալուսակ, հէյպէ», որ և սրսմ.* argaz, *ասոր.* ܐܪܓܙܬܐ argazta *«պալուսակ». Եբրայեցերէն բառը Ս. Գրքի եբրայական բնագրումն էլ գործածուած է միայն վերոյիշեալ տեղերը և ուրիշ տեղ չկայ։ Եօթանասնից թարգմանութեան մէջ յիշեալ բառը տառադարձուելով եղել է* ἀργὸζ, *որի ձեռագրական տարբերութիւններն են* ἐργαβ և ἀργοβ։ *Հայ թարգմանիչները իրենց գործածած յոյն ձեռագրում գտել են* ἀργοβ *ընթերցուածը, որ տառադարձել են հյ.* արգոբ։ *Իսկ Կիւրղ. թգ. նոյն բառը տառադարձուած է* ἐργαζ, *որ աւելի համապատասխան է եբրայական բառին և որից էլ տառադարձուած է մեր* երգազ *ձևը։— Հիւբշ.* IF Anz. *10, 42։*

Առաջին անգամ ՀՀԲ, յետոյ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 50 մեկնեցին այս բառը՝ իբր եբր. փոխառութիւն։ Բայց այս վերջինը համարում է թէ «նախնիք մեր թարգմանեալ են զսա քուրձ, և բստ միտումս կարծեաց՝ առ նմին պահեալ զեբրայական հնչումնդ՝ սակաւուք իմն այլայլութեամբ»։ Բառիս վրայ առանձնապէս խօսեց A. Carrière, *արևելագիտական ԺԱ համաժողովում (անձնական. տե՛ս նաև ՀԱ 1897, 316 և Արձագանք 1897, № 107) և տուաւ վերի մեկնութիւնը։ Ո՛չ մի քննիչ չէ՛ յիշած* երգազ *բառը, որ աւելացնում եմ իմ կողմից։*

ԱՐԳՈՒՔ *«խօսք». երկու անգամ միայն գործածուած է Մագ. թղ. էջ 237 և 238. Անխորատայղ (ՆՀՔ* աճխորազ*) արգոր կարծել. ենթադրեցից վճռական արգոր (բստ Նորայր, Բանաս. 1900, էջ 130)։*

ԱՐԳՈՍՏԱՅ *տե՛ս Որգոստայ։*

+**ԱՐԴ**, ու *հլ. «ձև, կարգաւորութիւն, սարք» եղն. ընդարձակ գործածութեամբ արմատ, որ ներկայանում է մեզ բազմազան կերպարանքներով և ճոխ ածանցումով։* **1**. *Ամենապարզ և նախնական ձևն է* արդ, *որից ածանցւում են՝* աճարդ *«անձև, անկազմ» եղն. «տձև, տգեղ» նիւս. կազմ.* արդակ *«հարթ» Փիլ. Շիր. «տախտակ ի բաց քերիլոյ զղեղուն մասն չափոյ ցորենոյ.* racloire *» մհյ. բառ (բստ Նորայր, Բառ. ֆր. 1022 ա). արդակագոյն «շատ հարթ» Փիլ.* արդել *«յարդարել» Փիլ.* արդեալ *«տաշուած, կոկուած» (նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Նորագիւտ Բ. մնաց. լդ. 11. տե՛ս իմ Հայ. նոր բառեր Մնաց. գրոց մէջ, 11).* արդակել *«ուղղել» Շիր. միարդակ (նորագիւտ բառ) Սա. ժմ. 634 (Շնորհօքն Քրիստոսի դիցուք առաջի զմիարդակ (այլ ձ. միարձակ) լուծն ի միասին ժողովելն մեր).* արդուած *«յօրինուած» Պիտ.* անարդակ *«աննման, անհամեմատ, գերազանց» Մագ. մակարդակ Արիստ. Մագ.* անարդի *«անհեթեթ» Փիլ.* անարդիլ *«վիթխարի, անճոռնի, տձև» Պիտ. Փիլ. Վրդն. երգ. նաև բառերի ծայրին, ինչ.* խորանարդ *«խորանաձև» Յոբ. լը. 38, Ագաթ.* գմբեթարդ *«գմբեթաձև» Վեցօր. էջ 15.* ծորձորարդ *«հովտաձև, գոգաւոր» Ոսկ. Եփես. 871.* վիմարդ *3հ. կթ.* վիմարդեաց *Անյ. բարձր.* գիա՞րդ *«ի՛նչ ձև, ի՞նչպէս» ՍԳր. որից յետիններին մօտ համաոստուած* զերդ *կամ* զերբ *(յետոյ* զեղ, զէտ*) «իբր, որպէս, նման» Շնորհ. Մագ. Երզն. այբ.։ Նոր գրականում* արդուկ *«ութու»,* արդուկել *«ութու տալ, ութույով հարթել».— 2. Ձևական կարգաւորութիւնը կամ նիւթական ուղղութիւնը բարոյական մտքով առնելով՝ կազմուած է* արդար *բառը (-ար մասնիկի համար համմտ.* մնձ–ար–ել.

հրաժ–ար–իլ, յարդ–ար–ել, զարդ–ար–ել, ապ–ստուած–ար–եալ *են*), ո հլ. «*ուղիղ, ճշմարիտ, հաւատարիմ (մարդ), սուրբ շիտակ, իրաւ (խօսք)*» ՍԳր. *Ոսկ. որից* անարդար *Ա. պետ. գ. 18.* արդարագնաց *Կոչ.* արդարագնացք *վկեցօր.* արդարակորով *Եղ. ժբ. 21. Եզն.* արդարանալ *ՍԳր.* արդարացուցանել *ՍԳր. Ագաթ.* արդարածնունդ *Արծ. 1217 թ. (Շահխաթ. Ստորագր. Բ. 99—100),* արդարև «*ճշմարտիւ, իրաւ, իրօք, սուտքնեամբ, ճշմարիտ որ*» *ՍԳր.*— **3.** *Յ նախդիրով կազմուած է յարդ արմատականը, որ առանձին էլ գործածուած է «արդ, կարգ, ձև» նշանակութեամբ՝ Եզն. որից ածանցուած են նոյն* –ար *մասնիկով (ինչ որ տեսանք* արդար *բառի մէջ)՝* յարդար «*ողորկ, վայելուչ*» *Ոսկ. մ. գ. 3.* յարդարել «*ուղղել, կանոնաւորել, կարգաւորել, շինել*» *ՍԳր. Ոսկ. Եւս. քր. Եզն. Կիւրղ. Թգ.* յարդարիչ «*կարգադրող*» *Ոսկ. «Ճրագի մկրատ, բաղմակալ» Ել.լէ. 25. Գ. Թագ. է. 49.* յարդարուն *Բրս. հց. Մարգ. Պիտ. Կանոն.* նուագայարդար *Եւս. քր.* երգայարդար *Եւս. քր.* սեղանայարդար *Ոսկ. Եփես. նոր գրականում* բեմայարդար, հաշուայարդարութիւն *են*.— **4.** *Ջ նախդիրով՝* զարդ, ու *հլ. (ինչպէս է նաև բուն արմատը՝* արդ) *ՍԳր. Ագաթ. որից* զարդասէր *վկեցօր. Ոսկ.* զարդասիրիկ *Ոսկ. ես.* զարդակից *Ոսկ. երր.* անզարդ *Խոր. Պիտ. փիլ.* անզարդութիւն *Ոսկ. մ. բ.* չզարդ *Ոսկ. ա. տիմ.* դիազարդ *Շն. ծ. 2.* մեհենազարդ *Գծ. ժԹ. 35.* մեծազարդ *վկեցօր.* լուսազարդ *Ոսկ. յհ. ա. 43.* նշողազարդ *Մծբ. վկեցօր.* մարգարտազարդ *Բուզ.* ծաղկազարդ *Պիտ. ՅՀ. իմ. նոյն* –ար *մասնիկով՝* զարդարել *ՍԳր.* զարդարեցուցանել *Ոսկ. յհ. բ. 34.* զարդարագիր *Եւս. պատմ.* զարդարանք *Եփր. Բ. կոր.* զարդարկոտ *Ոսկ.* զարդարուն *Ոսկ. (որ և յետնաբար* զարդուն *Սարգ. յհ. ը). արդի գրական լեզուի մէջ բազմաթիւ նոր բառեր, ինչպէս՝* պատկերազարդ, նկարազարդ, զարդագիր, լուսանցազարդ, սիւնազարդ *են*.— **5.** *Արդ արմատը ունի նաև «արուած բանը, կատարած գործը, վաստակ, իր» նշանակութիւնը. համմտ. վարր՝ ցեղակից ձևերը. այս նշանակութիւնը գտնում ենք* արդիւն *բառի մէջ, որ կազմուած է իւն մասնիկով (համմտ.* շարժիւն «*շարժում*» *Յոբ. լԹ. 23,* հնչիւն *ՍԳր. են). արդիւն (սեռ.* –դեան, *գրծ.* –դեամբ, –դեամբք. *սովորաբար անեղական, որի համար էլ արդի լեզուում աւում է* արդիւնք) *բուն նշանակում է «գործ, արուած բանը» ՍԳր. Ոսկ. Եզն. Կորիւն. Սեբեր. և յետոյ «բերք, արմտիք, երկրագործութեան արդիւնքը» ՍԳր. Եփր. Երր. Ոսկ. Կողոս. (ճիշտ ինչպէս ունինք* արգասիք «*գործ, արդիւնք և բերք, արմտիք*»). *սրանից ածանցուած են՝* արդիւնագործ *Սեբեր.* արդիւնակատար *Կորիւն.* արդիւնարար «*պտղաբեր*» *Ոսկ. յհ. ա. 17. Եղիշ. գտ. «երկրագործ, մշակ» ՍԳր. Կոչ. Եփր. Երր.* արդիւնական *Փիլ.* արդիւնականաւոր *Եւագր. ոճով աւում է* յարդիւնս ածել *Ոսկ. Եփես. ճիշտ ինչպէս ունինք* ի զարդ և ի յարդ և ի կերպարանս ածել *Եզն. նոր գրականի մէջ* ապարդիւն, արդիւնաւէտ *են (Rivola, Բառ. Հայոց 1633, էջ 39 դնում է* արդիւնք «vasa sacra aurea et argentea», *ինչ որ նոյն է ՆՀԲ* արդիւնք «*ինչք, գոյք, կարասիք*»).— Արդիւն *բառի գործիականը՝* արդեամբ *և մանաւանդ յոգնակին՝* արդեամբք *գործածւում է մակբայաբար «իրօք, իսկապէս, գործնապէս, գործով» նշանակութեամբ, որ նոյն է «սուրբ, շիտակ, ճշմարիտ» նշանակութեան հետ*.— **6.** Արդեամբ *բառի այս գործածութիւնը նոյնանում է ճիշտ մեր* արդեօք *բառի հետ, որ հների մօտ դրական մտքով գործածուելով նշանակում է «իրօք, արդարև, իսկապէս, յիրաւի» ՍԳր. Ոսկ. յհ. բ. 1, Փարպ. իսկ հարցական գործածութեամբ «մի՞թէ» (բուն՝ իրա՞ւ, իրա՞ւ է որ) ՍԳր. Եղիշ. (արդի գրականում դրական գործածութիւնը իսպառ գադարել է և մնում է միայն հարցական մտքով)։ Սակայն այս* արդիօք *ձևը իրապէս գործիական հոլով է և ենթադրում է հնագոյն ուղ. *արդի «գործ» բառ. (նրա աւելի հին ձևերն են* արդեւ, արդեաւ, *կայ նաև* արդիւ *Եփր. Համար. 87, 201, 225, աւետ. 276. նշանակութեան համար համմտ.* արդեամբ, *ձևի համար համմտ.* ձեւ, մեւ, ձեօ, մեօ *գործիականները)*։

— *Հնխ.* art- *արմատից. համմտ. յն,* ἀρτύς «*կարգաւորութիւն*», ἀρτύω, ἀρτύνω «*կարգա-*

ւորել, պատրաստել, յօրինել, շինել», ἀρτίζω «կարգի դնել», ἄρτος «յարդարուն», ἀρετή «արժանիք, մարմնական և հոգեկան ընաիր յատկութիւններ», ἀρτι- «արդար, ճշմարիտ», որ դանուում է հնահնակ բարդութեանց մէջ. ἀρτι-επής «ճշմարտախօս», ἄρτι-νους «արդարատմիտ», ἀρτί-πους «ոտքերը ուղիղ», ἀρτι-τρων «արդարակերով» ևն. լատ. ars (սեռ. artis «ձեռքի կամ մտքի ճարտարութիւն, արհեստ, ճարտարարուեստ, ձեռագործ, գեղարուեստ», artifex «վարպետ, բանւորների պետը», artificium «արհեստաւորի կամ արուեստագէտի արած գործը», artus «յօդ, մարմնի յօդուած, անդամ», սանս. ṛtá- «սուրբ հրաման, իրաւունք, ճշմարտութիւն», ṛtâvan «սուրբ, արդար», ṛtú- «կարգ, կանոն», ṛti- «ձև, եղանակ», հպրս. arta-, գնդ. aša, aša-van- «սուրբ», մրգ. art, գերմ. art «ձև, եղանակ, տեսակ, կերպ»: Աբիսական, հայ, յոյն, լատին և գերմանական ընտանիքների դերս արիշ տեղ չէ՛ պահուած այս արմատը: Հնխ. art- ածած է հնխ. ar- «կցել, միացնել, արուեստով յօրինել» պարզական արմատից, որի վրայ տե՛ս առնել. յարել:— (Walde *63*, Boisacq *84*, Kluge *24*, Pokorny 1, *70—72*, Ernout-Meillet *72—73*): —Հիւրշ. *423* և *424*:

Schröder, Thesaur. *57* Հեսիքիոսի Ἀρτάδες (οἱ δικαιοι ὑπο Μαγων *կոչին արդարք ըստ Պարսից*) բառը մեր արդար ձևն է համարում: Նոյնը նաև Վիտոնեանք, թրգմ. Նոր. լուչ. էջ 6: ՆՀԲ արդէն նշանակած է արդ, զարդ, յարդ արմատականների նոյնութիւնը, որոնց հետ լծորդ է դնում նաև արդար, ճարր, թրք. boршам «յարդարանք». իսկ արդեօք, արդարև *գալիս են* արդար բառից. *ազիզ է նաև* զիարդ: Windisch. *11*, *42*, Böttich. ZDMG *1850*, *351* արդար *բառը կցում են սանս.* ṛta *ձևին*, իսկ Böttich. Arica *13 և* Justi, Zendsp. *30 գնդ.* arəta «կատարեալ» բառին: Böttich. ZDMG *1850*, *366 և* Lag. Urgesch. arm. *193 հայ. արդ բառը նոյն են դնում սասր.* ardīklā «ճարտարապետ» բառի առաջին մասի հետ, kla *համարելով սանս.* kara «շինող» *բառը*: Զարդ *բառը* Justi, Zendcp. *119 համեմատում է գնդ.* zairita «ոսկեզոյն գեղին» *բառի հետ, իսկ* Lag. Arm. stud. § *758 հետևելով ՆՀԲ-ի, բաժանում է* զ+արդ *և համեմատում սանս.* saṃṛd-dha *բառի հետ, միայն* saṃ *մասնիկի տեղ՝ դնելով* uz *մասնիկը (=զ)*: *Տէրվ. Նախալ. 117 ունի գնդ.* anarata, *սանս.* anrta=*հյ.* աճարդար: *Նոյն, Նախալ. 62 և Մասիս 1881 մայիս 11՝ տե՛ս* առնել: *Հիւնք.* արդ «ձև» *հանում է ա՛րդ մակբայից.* արդարև, արդեօք, յարդարել, զիարդ, զարդ, աճարդիլ՝ արդ-*ից.* արդար *թէ՛* արդ *բառից, թէ՛ յն.* ἀρτιος-*ից և թէ՛ պրս.* dādar *ձևից*: Bugge KZ *32*, *3 իրարից զանազանում է* արդ «ձև» (*որից* զարդ)=*յն.* ἀρτός *և* արդ «ուղղութիւն» (*որից* արդար, արդեօք, արդարև)=*սանս.* ṛta-: *Գրիքէ նոյնպիսի բաժանում անում է նաև Հիւրշ. 423—4, միևնոյն ժամանակ չի ընդունում* արդեօք *և* զիարդ *բառերը միացնել նախորդներին: Սակայն այսպիսի մի բաժանում անտեղի է, որովհետև արդէն յն.* ἀρτός, *սանս.* ṛta-, *լա.* ars *ևն պատկանում են միևնոյն* art- *արմատին: Սրանց ծագման, արդ «հիմայ» բառի հետ հին ցեղակցութեան, ինչպէս և հնագոյն պարզական* ar=առնել *արմատից ծագելու մասին տե՛ս* Walde, *էջ 61—63: Քիւրքեաքեան, Կարնամակ, ծանօթ. 32 պիտ.* arastan «յարդարել» *բայից է դնում* արդ *և* յարդարել: *Պատահական նմանութիւն ունի արաբ.* زتّ zatt «զարդարել» (*Կամուս, թրք. թրգմ. Ա. 303*):

Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 107 արդակ «ուղիղ» *պրս.* ardar *բառից և կամ օսս.* urdig «ուղիղ»:

+ԱՐԴ «հիմայ» ՍԳր. Ագաթ. *Եւս. պտմ.* «հիմիկուայ, արդի, այժմուայ» *Եփր. հռ. 40 (յարդ ժամանակս). գործածւում է նաև իբր անցման ձև՝ խօսքի սկիզբը, իբրև նախորդների հետևութիւնը, «ուրեմն, հետևաբար, ֆրանս.* or» նշանակութեամբ. ՍԳր. Ագաթ. (*Նոր գրականում գործածական է միայն այս*

նշանակութեամբ)։ Ունինք զանազան ձևերով. ինչ. արդ ևս, և արդ, իսկ արդ, բայց արդ։ Նոյն արմատից են՝ արդի «այժմեան, հիմիկուայ» ՍԳր. Եւս. քր. Ոսկ. արդէն, արդէն իսկ «առաջուց, հիմի էլ» ՍԳր. արդածին «նորածին» Կիւրղ. գանձ. արդատունկ «նորատունկ» Եփր. աւետ. արդեան «այժմեան» Փիլ. Խոր. Պիտ. արդային «հիմիկվայ» Ճառընտ. արդեօք «հիմակուհիմայ» Մագ. Վրք. հց. «արդ, ուրեմն» Յայտ. գ. 3. Ոսկ. յհ. ա. 29, 38. զարդիս Գծ. ե. 35. ցարդ, ցարդ և ՍԳր. արդիական (նոր բառ)։

=Հնխ. art- արմատից. հմմտ յն. ἄρτι «հիմի, այս վայրկեանիս, մի քիչ առաջ, հենց հիմայ». բարդութեանց սկզբում հայերէնի պէս գործածւում է «նոր» նշանակութեամբ. ինչ. ἀρτι-γενής «արդածին, նորածին», ἀρτί-γαμος «նոր ամուսնացած», ἀρτι-βιος «նորակառոյց», ἀρτι-κόμιστος «նորաբեր» են հմմտ. նաև լիթ. arti «մօտ»։ Գիտուններն ընդունում են, որ այս արմատը նախալեզուի մէջ իսկ նոյն էր նախորդի հետ. հմմտ. նշանակութեան զարգացման համար՝ գերմ. eben «հարթ, ուղիղ» և so eben «իսկոյն, անմիջապէս, հի՛մայ» (տե՛ս Walde 63, Boisacq 84, Pokorny 1, 72)։ — Հիւրշ. 423։

Ուղիղ մեկնութիւնը առաւ նախ ՆՀԲ. նոյնը լեռոլ Windisch. 11, 42, Lag. Urgesch. 195 են։ Մորթմանն, ZDMG 24, 80 ցեղակից է դնում թրք. artək «ա՛յլ ևս, մնացորդ» բառին։

ՓՈԽ.— Վրաց. ახდი արդի «այժմ, իսկոյն» կարող է միայն հայերէնից փոխառեալ լինել, որովհետև եթէ յունարէնից լինէր՝ *արտի ձևը պիտի ունենար։ Ջուբինով ևս դնում է հայերէնից։

ԱՐԴԱԽԻ «տապալիլ, կործանուիլ». ունի միայն ԱԲ, իբր անստոյգ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Պտմ. աղէքս. 26 «Անկեալ արդախին բոլոր կառքն» (յն. κατα-πίπτει ὅλως τὸ ἅρμα)։ Ակինեան ՀԱ 1930, 487 տալիս է բառիս մի այլ ընթերցուածը վիեննայի № 885 ձեռագրից, որ է խարբաղիլ. և հիմնուելով այս ձևի վրայ՝ ուզում է սրբագրել խարդախիլ, իբր թէ խարդախել բայի կրաւորականը՝ «կործանիլ» նշանակութեամբ։ Իմաստի տարբերութիւնը չի թոյլ տալիս։

ԱՐԴԱԿԵՏՈՍ «աստեղատան անուն է» Շիր.։

+ԱՐԴԱՐ.

= Արդ արմատից՝ -ար մասնիկով. ընդարձակ տե՛ս արդ։— Հիւրշ. 423։

3. Գ. Մ., Պատմ. գրակ. 16 տանս. արհադ։ Մատ ИАН 1920, 107 վրաց. մարթալ «արդար» բառի հետ։

ԳԻՒՂ.— Ջղ. արդ՛ար, Ակն. Ասլ. Երև. Խրբ. Կր. Համշ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տփ. արբար, Ոզմ. ա՛rբար, Ալշ. Մշ. արտար, Ննխ. արբար, աշբար, Ագլ. ա՛ռբար, Գոր. Ղրբ. Մրդ. Սլմ. Տիգ. mrբmr, Մկ. արտmr, Վն. mrտmr, Զթ. արդ՛որ, այդ՛օյ, Հճ. այդ՛ոյ. Բրբախօս հայերից էլ Ատն. arddar (Արևելք 1888, նոյ՛ 8—9)։ Նոր բառեր են արդարուկ, արդար-եղ, արդարականջ։

+ԱՐԴԵՕՔ.

= Մեկնութիւնը տե՛ս արդ։

+ԱՐԴԻԻՆ.

= Մեկնութիւնը տե՛ս արդ 5։

ՆՀԲ հանում է արտ բառից (համաձայն բառի երկրորդական նշանակութեան, որ սակայն երկրորդական է)։ Windisch. 41 ուզում է կցել առնս. ɾtu «տարուայ եղանակ» կամ նաև ɾdh, vɾdh բառերին։ Lag. Urgesch. 410 առնս. ardh «ի կատար ածել», Տէրվ. Նախալ. 65 առնս. ardh, յն. ἄλθω, հալ. rasti(=ardti) «աճիլ, բարգաւաճիլ», rodŭ «ծնունդ» են բառերի հետ՝ հնխ. ardh «առածել, խնամել» արմատից։ — Հիւնք. էջ 78 արդ արմատից։ Թիրեաքեան, Պատկեր աշխ. գրակ. Ա. 193 պրս. ɔ,ı ard «աւելիւր» բառից։ Scheftelowitz BB 29, 21 լտ. pretium «գին» բառին ցեղակից։ Pedersen KZ 40, 210 հլ. առնել, յն. ἀραρίσκω բայից։

ԳԻՒՂ.— Պահուած է միայն արդիւճ գալ «մի բանի ծառայել, պէտք գալ» ոճի մէջ (Տաբէնետ). նոյն է նաև արդում երև. «հողի բերքը». օր. «Մենի հարիր արդում տուող հողեր» (Պոզոհան, Ցեցեր, էջ 90)։

ԱՐԴՆ (-դունք, -հանց) «նիզակ, տէգ» Յոբ. խա. 17, Փիլ. լին. դ. 183. որից արդնբնկէց

Բ. մակ. դ. 14. արդնակիր *Պտմ. աղէքս.* արդնատէգ *Սարկ. Հանգ.* արդնատր *Փիլ. լին. 384. Ճառընտ.* երկարդնեայ *Պտմ. աղէքս. 32. ի՞նչ կապ ունի գեղարդն բառի հետ։*

Lagarde, Arm. Stud. § *243 ՆՀԲ-ի բերանն է դնում յն.* ἀρδίς «նետի սուր ծայրը, խթան» *բառի համեմատութիւնը և էջ 167 ընդունում է իբրև ստոյգ։ Այս մեկնութիւնն ունի նաև Հիւնք։ Հիւբշ.* Arm. Stud. *էջ 11 յն.* ἄρδις *բառին աւելացնում է նաև հիւլ.* aird «ծայր» *(այսպէս նաև* Boisacq *15), բայց չի ընդունում հայ բառի համեմատութիւնը՝ ձայնական օրէնքների անհամաձայնութեան պատճառով. (սպասելի էր ըստ օրինի *արտ)։ Նոյն հեղինակը իր* Arm. Gram. *աշխատութեան մէջ բնաւ չէ իսկ յիշած այս համեմատութիւնը։* Scheftelowitz BB *29, 29 լտ.* radius «գաւազան» *բառի հետ։ Թիրեաքեան, Կարնամակ, ծանօթ. 19, 132 և Արիահայ բռ. 43 պհլ.* արտիշտար *բառի մէջ ուզում է տեսնել* արդ *ձևը և բառը մեկնել իբրև «տիգաւոր զօրք», միևնոյն ժամանակ* արդն *և աշտանայ իրար է միացնում։* Petersson KZ *47, 245 լիթ.* ardai, *սոս.* ред, *լտ.* assar, assis *բառերի հետ, որոնք նշանակում են «ձող, գերան, տախտակ են»։* Pokorny *1, 84 ընդունում է առաջին համեմատութիւնը, բայց միւսները մերժում է։*

*ԱՐԴՈՒ, ի–ա *հլ. «մի տեսակ չափ է, որ առնում է 72 քսեստ կամ 29 օխա» ՍԳր. գործածուած է 11 անգամ և ուրիշ տեղ չկայ։*

= *Հպրս.* ardabā, *որ աւանդել են յոյն մատենագիրները և որից փոխառեալ են նաև արաբ.* اردبّ irdabb *կամ* ardabb *(Կամուս, թրք. թրգմ. Ա. 142 համարում է եգիպտական մի մեծ չափ), խպտ.* ertōb, *յն.* ἀρτάβη «56 լիտրա», *լտ.* artaba, *հին ֆրանս.* ardeb, *վրաց.* ართაბი արտավի «2 փութ= 80 ֆունտ»։ *Ըստ Հիւբշ. մեր բառը փոխառեալ է պարսկականից. բայց այն ժամանակ սպասելի էր *արտաւ ձևը։ Ուղղակի լունաբէնից են* արտաբոս *կամ* արտափ *Շիր. որ տե՛ս վերը* արտաբոս։—*Հիւբշ. 111։*

Բառիս վրայ ընդարձակ խօսել է նախ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 50—53, ուր տալիս է և վերի համեմատութիւնները։ Նրանից յետոյ գալիս են ՆՀԲ, Böttich. Arica *13,* Lag. Urgesch. *906 են։ —Հինք դնում է արդն «նիպակ» բառից։ Թիրեաքեան, Պատկեր աշխ. գրակ. Ա. 194 պրս.* ārd «ալիւր» *բառից։*

ԱՐԴՈՒԽԱ. «նուաստակ բոյսը» *Բժշ. որ և* արդուղա, արթուղա, արթուխա՝ *ըստ Ամիրտովլաթի. երղնկայի բարբառով նշանակում է «անձխոտ». ունի միայն ՀՌուս. § 196։ Անշուշտ՝ նոր գաւառականներից* արդղիկ «մի տեսակ վայրի բանջար», արթոխիկ *Բլ. «մի տեսակ խոտ՝ որ այրող զօրութիւն ունի. եփելով գործ են ածում իբրև քոսի դեղ» (տե՛ս Ազգ. հանդ. ե. 167), նոյն բառերն են։*

+ **ԱՐԵԳ** «արև, արեգակ». *այս նշանակութեամբ գործածւում են միայն* Արեգ բաղաք *«Արեգական քաղաք=յն. Ἡλιούπολις» ՕՆ. խա. 45, 3ես. ժե. 7, 10. Երեմ. խգ. 13. Եզեկ. գ. 17.* Արեգ դուռն *«արեւելեան դուռ» Ագաթ. ի յարեգ կուսէ «արեւելեան կողմից» Նար. խշ.։ Աւելի գործածական է* արեգ *(տես. ի) «հայոց ութերորդ ամիսը» Եսթ. բ. 16, ը. 9, ժա. 2. Կոչ. ժդ. Եփր. Համար. 18—19, 217, 234 են, որ միևնոյն բառն է. համմտ. պրս.* مهر mihr, *որ բուն նշանակում է «արեգակ», բայց նաև ութերորդ ամսուայ անունն է։—Ածանցման մէջ մտնում է երկու ձևով.— 1.*ԱՐԵԳ, *որից* արեգաւէտ *Պիտ.* արեգունի, արեգդէմ, արեգջեր *Ոսկիփ. որոնք յետին են. բայց հնից ունինք* արեգակն *(-կան, կանէ, կնէ, կամբ, կունք) «արև» ՍԳր. Եզն. (կազմութեան համար համմտ. պրս.* چشمهٔ آفتاب čašmai-āftāb *և արաբ.* عين الشمس aynuš-šams, *հայերէնից էլ թարգմանաբար վրացերէն* მზიס თუალი მզիս թուալի, *որոնք բոլորն էլ նշանակում են «արևի աչք». տե՛ս Աբեղեան,* Volksglaube *89, 41 և Մառ* Физіологъ, *էջ 51). որից* արեգակնատեսիլ *Եզն.* արեգակնակէզ. *Ագաթ.* արեգակնակ «պատշգամ» *Խոր. ա. 15 են։— 2.* ԱՐԵԳՆ, *որից* արեգնապաշտ «արևապաշտ» *Յայսմ.* արեգնափայլ *Ոսկիփ.* արեգնածաւալ, արեգնակէզ *ԱԲ.*

բոլորն էլ յետին և անշուշտ ազդուած՝ արեգակնապաշտ, արեգակնափայլ *են ձևերից։— 3. ԱՐԱԳ, որից յ նախդիրով ունինք հին և ընտիր մի բառ՝* յարագել *«արևի առաջ դնել» (իբր յն. ἐξηλιάζω) Բ. Թագ. իա. 6, 9,13. Կիւրղ. Թագ։— Արեգ բառի երկրորդ ձևն է* արեւ, ու *հլ. «արեգակ. 2. արևի լոյսը. 3. փոխաբերաբար՝ կեանք» ՍԳր. Բուզ. Եփր. Ծն. Եզն. Ոսկ. (անսովոր հոլով է ներդ.* յարևոջ *«արև եղած տեղերում». Շրջի յանձրևի և յարևոջ. Սարկ. յկ. գ)։ Այս արմատականից են* արևելք *(որ ըստ* Meillet MSL *17, 25 և 18, 256 իրանեան* خراسان xor-āsān *«արև+ելք» բառի վրայից կազապարուած է) ՍԳր.* արևմուտք *ՍԳր. Ագաթ.* արևագալ *Մրկ. ժզ. 2.* արևածայրէ *Եզն. Վեցօր.* արեւապաշտ *Եզն. Վեցօր.* արևիշուշտ *Ոսկ. մ. գ. 3.* արևկայ *Վեցօր.* յարևացուցանել *«արևի մէջ չորացնել» (չունի ՆՀԲ) Կղկնտ. Հրտր. Էմին, էջ 59.* արևորդի *«մի տեսակ աղանդ» Շնորհ. (որ և արևապաշտ Տարօն, բ. § 11, էջ 264).* արև անկ *«մայրամուտք» Շապհ. 62.* յարևու *«ցերեկով, դեռ երեկոյ չեղած» Վրդն. առ. 239 (Ջիա՛րդ յարևու եկիր այսօր), նոր բառեր են* արևոտ, արևաճայեաց, արևահարութիւն, արևելաճառաւ, արևմտաճառաւ, արևելաճիւսիս, արևմտաճիւսիս *են։— Ընտիր հայերէնի մէջ* արեգակն *և* արև *նշանակութեան կողմից զանազանւում են նրանով, որ* արեգակն *ասողն է, իսկ* արև *նրա լոյսը. Համառ. Մծբ. 125 Հետևեալ բնորոշ հատուածը. «Ամենայն որ գիտէ, զի արեգակն ընդ երկինս երևեալ կայ. և մտանէ ի նմանէ ընդ դրունս բազումս և ընդ պատուհանս ապարանից. և ուր մտանէ ի ճառագայթից անտի արեգականն, թեպէտ և քան զթաթ ձեռին իցէ՝ արև կոչի նա և արեգակն գլխովին յերկինս է»։*

= Հնխ. rev- *ձևից, որի ներկայացուցիչն է նոյնպէս՝ սանս.* ravi- *«արեգակ» լեռվեդայական բառը. սա կանոնաւորապէս տալիս է հլ.* արեգ, *բայց կարող է նաև լինել* արև, *ինչպես ունինք կով-կոգի.* աւթ-ագանիլ, ոռոգել-առու։ Հնխ. rev- *արմատը զանազան աճականներով տալիս է բազմաթիվ նոր ձևեր, որոնցից լիշում ենք մի քանիսը. սանս.* rudhirá-, *լտ.* ruber, *յն.* ἐρυθρός, *լիթ.* raũdas, *հսլ.* rŭdrŭ, *հբգ.* rōt, *գոթ.* rauþs, *իռլ.* ruad, *հիսլ.* rjōðr *«կարմիր», լտ.* rūfus *«շէկ», russus «մութ կարմիր», սանս.* rudhirám, *հիսլ.* roðra *«արիւն», գոթ.* gariudjō *«ամաչկոտութիւն», սանս.* aruṇá-, aruša- *«կարմիր», գնդ.* auruša- *«սպիտակ», լտ.* robigo, rubigo, *հբգ.* rost, *լիթ.* rūdis, *հսլ.* rŭžda, *ռուս.* ржа *«ժանգ», հսլ.* ruda *«բոլր, մետաղ», ռուս.* руда *«բուվ, հանք, արիւն» են են (տե՛ս* Walde *659,* Boisacq *276,* Trautmann *238—9,* Pokorny *2, 359)։ —Հիւրշ. 424։*

Klaproth, Asia polygl. *էջ 105 ֆիննն.* awringo=արև։ *Ն՛ՀԲ* արեգ՝ *նոյն ընդ* արև, *իսկ* արև՝ *երևեցուցիչ ամենայնի լիշում է նաև սանս.* arka *«արեգակ», որ պատահական նմանութիւն միայն ունի։* Klaproth, Mémoires I *431* արև =*սանս.* āryamā, *ֆիննն.* awringo: Peterm. *30, 33* արև=*սանս.* ravi, aryaman *(այսպէսով բառիս առաջին ուղիղ մեկնիչն է* Petermann*)։ Ամն Գ. կ.՝ Արշալոյս Արարատեան թերթում, 1843, № 130* արև *բառի մեջ* ար *դնում է*=ուր, *իսկ և՝ իբր առաւելական. հմմտ.* բարև, ալեւոր, և քաւ զև։ Windisch. *30* արև=զնդ. hvaro, *սանս.* svar, *կասկածով նաև սանս.* aryaman, *«բայց* արև=երևիլ *բառն է նոյն ընդ. սանս.* svar *«փայլիլ»։* Gosche, *էջ 48 պրս.* raw, *գնդ.* âurv, *սանս.* arb *«երթալ», ձևերից. իսկ էջ 74 արմատը դնում է* ar։ — Lagarde, Urgesch. *186* արև= *սանս.* ravi, *էջ 372* արեգ=*սանս.* ranĭ *արմատից։* Müller SWAW *38, 587 և 44, 565 սանս.* ravi *«արև»։ Շահնազարեան, Երկրագունտ 1864, № 5, էջ 7,* արև=*գնդ.* ճվարկ։ *Էմին,* Вахагн-вишап. *24 և* Ответъ Патканова, *Մոսկ. 1874, էջ 25 (արտ.* Изслед. *75, 102)* արև=*գնդ.* xvarə, *իբր* sur, svar *արմատից։ Նոյն հեղինակը, Հին հայ. հեթան. կրօնը, հայ թրգմ. Յոյս 1875, էջ 347 և* Ист. Асохика *276* արեգ, արև. երկինք, երկիր, այրել, երդ, եռալ, or

բառերը հանում է wr արմատից։ Տէրվ. Մասիս 1881 մայ" 1 և յետոյ Նախալ. էջ 45, 48, 63 հնխ. ar «վառել, այրել» արմատից է դնում արև, արեգ. արեգակն, արուսեակ, յարագել, սանս. aru, aruša «բոցագոյն, կարմիր», զնդ. auruša «սպիտակ». արեգ և արև բառերի համար համմ. լոգանալ և լուանալ։ Canini, Et. étym. 51 արեգակ= իռլ. eark «արև», erk «երկինք»։ Ալիշան, Հին հաւատ, էջ 85 ծլորդ է դնում or, նուր. արփի. էջ 90 յիշում է սարէարէն արև կամ ուրու «արեգակ», «գուցէ պատահաբար ինչուան Ովկիանիոյ Արեգական պաշտօնէից բնակարանին կոչուի Արեգի անուամբ (Arekois կամ Arcois)». էջ 263 եգիպտ. Ռայ «Արև աստուածը»։ Bugge, Etrusk. u. Arm. էջ 1 հատուկ. erus «արև» բառի հետ։ Հիւնք. արեգ հանում է երագ «շուտ» բառից, իսկ արև<Արէս դիցանունից, և վերջապէս արևակն, իբր երևակ, Բրգմ. յն. φαίνων բառից։ Յակոբեան, Բանաս. 1900, 40 պրս. ēraǰ համանիշից։ Ս. Բանասէր (Բանաս. 1903, էջ 240) արեգակն, արև և արփի բառերի արմատը դնում է wr «Աստուած»։— Karst, Յուշարձան, էջ 417 ալթայ. yar «փայլիլ, շողալ», yari «երևալ, լուսաւորիլ», yarik «լոյս», ույղուր. yaruk «պայծառ»։ Մարտիրոսեան, ՀԱ 1924, 455 արև=հաթ. arivar «ծագումն արևու»?—իսկ արեգ ամառանունը հների մօտ համարուած էր Հայկ նահապետի աղջիկներից մէկի անունը։ Վանական վրդ. իր Տարեմտի մէջ և Տաթև. հարց. 201 ստուգաբանում են «Որպէս թէ յառնեն բոյսք և բանջարք աստուածային հրամանաւն. արի ասէ հիւսիսի և ե՛կ հարաւ, որ է գարնան ամիսն» (ուրեմն հասկանում է արեկ)։ Տաթև. ձմ. ա. մեկնում է «Արեգի՝ յառաջընթաց է ըստ ձայնին բանի և չկայ այսինքն կարօտութիւն հնոյն օրինաց յայսմհետէ, զի ամենայն ինչ նոր հղև Քրիստոսիս։ Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։ Ըստ Böttlich. ZDMG 1850, 365—6 և Pott ZDMG 1890, 347—369 արեգ «արև» բառի հետ գործ չունի։ Brosset JAs. 1832, 530 իրաւ է խառնում հյ. արեգ, եգ. իգակաճ, վրաց. igacai, igracai, igrica «մարտ» ամառանունը։ Ըստ Lag. Gesam. Abhd. 262 պհլ. arāng բառի հետ, Աճէմեանց, Բիւրակն 1898, թ. 4 ark «փայլիլ» արմատից։ Յակոբեան, Բանաս. 1900, 41 քաղդ. արախ սամճու. «ութերորդ ամիս», երր. քաղդ. ասոր. արար. արախ «լուսին»։ Պատահական նմանութիւն ունին տարաս. բեղ, բիղի, կիւբ. բաղ, ագ. բաղ, բաղա «արեգակ» (կովկասեան լեզուներ)։ Մառ, Яз. и Лит. 1, 225 բասկ. egun «օր», eguski «արև»։

ԳԻՒՂ.— Արեգ ձևը առանձին չկայ. բայց ունինք արե՛գ նր. գարմացական բացագանչութիւն. բարդութեամբ արեգդէմ, արեգի. արեգին, արեգունի։ Կայ նաև շատ հետաքրքրական մի ձև՝ Շտ. սեռ. արեկան. բայց որովհետև չկայ սրա ուղ. արեկ ձևը, ուստի պէտք է ընդունիլ որ սեռ. արեգական ձևի կրճատումն է։

ՓՈԽ.— Հայերէնից փոխառեալ է Թորքումի գւռ. Բրբ. արեգի «արեգդէմ տեղ» (տե՛ս Շիրակ 1905, էջ 425)։

ԱՐԵԳԱԿՆ տե՛ս Արեգ։

Հներից Սամուէլ Կամրջաձորեցի (ժ դար) իր Տօնական բանից մէջ «Արեգակն անուանեցաւ, այսինքն լուսոյ ակն»։ Վանական վրդ. իր Տարեմտի մէջ մեկնում է «Արեգակն, մեծ ակն ասի կամ տուրնջեան աստղ, կամ լուսոյ ակն» (տե՛ս արէկ)։ Վարդան վրդ. Սաղմոսաց մեկնութեան մէջ գնում է. «Արեգակն, լուսոյ ակն զի լուսոյն սեռն և յատակ լոյսն ի նմա է»։ ՀՀՒ և ՆՀՒ դնում են իբր «արևու ակն»։ ՆՀՒ յիշում է նաև սանս. arka համանիշը։ Էմին, Հայ հեթան. կրօնը, հյ. Բրգմ. Յոյս հանդէս Արմաշու, 1875, էջ 293՝ դնում է «արեգի աչք». արեգակը այսպէս ըմբռնել Հայոց միայն յատուկ չէր. նոյնն ունէին նաև ուրիշ ազգեր. այսպէս՝ Պարսիկները համարում էին Արամազդի աչքը. եգիպտացիք՝ Տիմիուրղոսին աջ աչքը. Յոյները՝ Դիոսի աչքը. Հին Գերման-

ները՝ Վուօդանի աչքը. իսկ հիւսիսային Գերմանիոյ բնիկները կիմշդայն հիմինս «երկնից գոհար» կը կոչէին արեգակը, ինչպէս որ Ն. Շնորհալին կը կոչէ «պայծառ կարկեհան» (տե՛ս Յաղագս երկնից և զարդուց նորա. Մատենագր. Շնորհ. Վենետ. 1830, էջ 285 և Grimm. Գերմ. դիցաբ. հա. Բ. էջ 665)։— Հիւնք. համարում է ակն «աղբիւր» բառից և համեմատում է պրս. čašma-i-āfitāb «աղբիւր արեգական»։ Այսպէս է մեկնում նաև Ալիշան, Հին հաւատք, էջ 85. «ինչպէս աղբեր-ակն՝ ջրոյ բղխումն ցուցընէ, սա այլ տաքութեան և լուսոյ»։

ԳԻՒ.— Ջղ. արեգ՛ակ. Կր. արեգ՛ակ. Տփ. արե՛գագ. Մչ. արեքագ. Երև. արե՛քակ (բայց արե՛քագը). Ախր. Ննխ. Ռ. արեքագ. Պլ. միայն արեվ-արեքագ «շատ տհաս, լուսաւոր (օր)» ձևի մէջ. Ոզմ. արեգ՛ակ. Յեր-գ՛ակ. Վն. արեկ՛ակ. Տիգ. արեքագ. Զթ. արիգ՛օգ. Մկ. երեկ՛ակ. Սլմ. որկ՛ակ՛. Գոր. բրե՛բեակ. Ղոր. բրի՛բ՛եակ. բրի՛յեեակ. Ագլ. բրա՛յեակ. բայց և արեքա՛բ։

ԱՐԵԳՈՎԹ «հրանութիւն կամ գովութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 36։

ԱՐԵԿ «ղօրաւոր, սաստիկ» Պիտ. «գերազանց, աւելի բարձր» երզն. բեր. գրուած է նաև արեգ «մեծ կամ առաւել» Հին բռ. առեգ «առաւել» Բառ. երեմ. էջ 30. և այս բառն է ակնարկում Վանական վրդ. երբ իր Տարեմրտի մէջ առուգաբանում է «արեգ-ակն՝ մեծ ակն ասի»։ ՓԲ և ՆՀԲ յաւել. ունին նաև ապարեկ «ազազուն» բառ, որ վերոյիշեալ արեկ բառի բացասականն է։ Տե՛ս և ապարեկ։

ՆՀԲ արի, արիական բառից։

ԱՐԵՆԱԼ տե՛ս Արիւն։

+ԱՐԵՒ տե՛ս Արեգ։

ԳԻՒ.— Ալշ. Մշ. Ջղ. Վն. արեվ, Ակն. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. արէվ, Ասլ. արէ՛վ, Սլմ. որեվ, Հւր. որէվ, Ագլ. Զթ. Հմշ. Տփ. արիվ, Ոզմ. ա՛րիվ, Մրշ. Մրղ. Տիգ. որիվ, Հճ. այեվ, Մչ. կայ միայն արեվելք։ Նոր բառեր են արևկող, արևբաց, արևալոյս, արևազուրկ, արևահամ, արևահաս, արևակոխ, երկայնաւրև։

* ԱՐՋԲԷԴ «մի մեծ պաշտօնեայ՝ պարսից արքունիքում». մէկ անգամ ունի Վկ. արևել. =Սոփերք Ի. էջ 31 «Նստէր անդ ներքինի մի մեծ, դայեակ որդւոյ արքային, որոյ անուն աշտիճանին յորում կայր, կոչէր արդբէդ, պատուական և մեծարոյ էր առաջի ամենայն թագաւորութեանն» (այլ ձ. արդբրդ, արդրբթ, արդրդ)։

= Պրս. بزرگ *arz-bad բառից, որ ասորերէն ܐܪܙܒܕ arzbed «dominus areis, բերդապետ» (Brock. 26 բ) ձևի միջնորդութեամբ հասել է մեզ. ուղղակի փոխառեալ լինելու դեպքում պիտի ունենայինք *արզպետ։

Ուղիղ մեկնեց Վարդանեան ՀԱ. 1922, 281։

ԱՐՋՆ «պաղլեղ, շիք». մէկ անգամ միայն գործածուած է Ոսկ. գծ. 25 «Որք զծիրանիսն ներկանեն, նախ ընդ արդն տոփով անցուցանեն զրնդունիչ կտաւն»։— ՆՀԲ և ԱԲ դնում են արզն. բայց որովհետև և կարող է լինել յօդ, ուստի զգուշաւորութեամբ ՋԲ գրում է արզ կամ արզն։

*ԱՐՋՈՒՉԻ «աղերսագիր մատուցանող, աղերսարկու». Յիշատ. ՁՈԳ=1304 թ. (Շողակաթ էջ 36, տպ. արդուչաց)։

=Թրք. عريضه چی arzači (բուն arīzä-či, արար. ʿarīza «խնդիրք, աղերսագիր» բառից). տե՛ս Будаговъ, Срав. слов. I 760 բ։— Աճ.

ԱՐԻ «ունայն». ունի միայն Բառ. երեմ. էջ 36։

ԱՐԻՆԿՄՆԵԼ «կտրատել». մէկ անգամ գործածուած է Պիտ. «(Որքն յատեալ) չարագոյն խզմամբ սրոյ արընկմնեալ ի կենցաղոյս բերքի»։— ՆՀԲ, ՋԲ և ԱԲ իրար համաձայն՝ թարգմանում են «կոճռոպել, կտրտել», մեկնելով արմուկն բառից (իբր «յարմկանէ հատեալ»)։ Եթե ուղիղ է այս մեկնութիւնը, կարող ենք համեմատել բազկել «կտրատել» բառի հետ, որ ծագում է բազուկ բառից։

+ԱՐԹ, արմատ առանձին անգործածական. ածանցման մէջ մտնում է պարզ կամ զ-ով աճած ձևով. այսպէս՝ զարթնուլ (կտ. զարթեայ, հրմ. զարթի՛ր) «արթնանալ» ՍԳր. զարթ-չիլ նոյն նշ. (մասնիկի համար հմմտ. փախ-չիլ, բաֆ-չիլ) նար. երգ. Յճխ. Շնորհ. լմբ. երզն. մտթ. զարթուցանել ՍԳր. զարթ-

խում Նիւս. կազմ. Լծ. Եւագր. կազազարթոյց Մծբ. պատերազմազարթոյց Մծբ. զարթումն «արթնութիւն» Ագաթ. որի պարզ ձևն է *արթումն, ներգոյականը յարթմնի «արթուն ժամանակ» Շնորհ. ոտ. զարթմնի Շնորհ. եգես. այս բոլորից աւելի դործածական է դարձել -ուն մասնիկով՝ արթուն ՄԳր. Ագաթ. Ոսկ. ես. յհ. ա. 13. որից արթնութիւն Ագաթ. Փարպ. (արդի բողոքական հայոց լեզուով «հանդիսաւոր աղօթք, հսկում»), արթնական Ագաթ. արթնամիտ Փարպ. ծանրարթուն Ոսկ. ա. տիմ. և ես. արթնանալ Խոսր. զ նախգիրով էլ զարթուն Նիւս. կազմ. ճառընտ. զարթնական Ագաթ. զարթնանալ Նար. ևն. սրանք այնքան յաճախական են դարձել լեզուի մէջ, որ վերջապէս անհետացրել են բոլոր նախորդ ձևերը. ներկայ գրականում գտնում ենք միայն արթուն, զարթուն, արթնանալ կամ արթննալ, արթնացնել կամ արթնցնել, զարթեցնել կամ նաև զարթեցնել (զ-ով ձևերը յատուկ են միայն արևելեան գրականին)։

= Հնխ. pṛth- արմատից, որի բուն ժառանգորդն է հյ. ճարթ-նուլ, ճարթ-չիլ «վեր ցատկել». սրանց հետ հմմտ. ի մէջ այլոց ռուս. прянуть «ցատկել» (միւս ցեղակիցները տե՛ս ճարթնուլ բառի տակ), որի համապատասխան սերբ. prĕnuti se ձևը նշանակում է «արթնանալով վեր ցատկել»։ Meillet, MSL 11, 399։ Քանի որ հնխ. pṛth- արմատը տալիս է արդէն ճարթ-նուլ, ճարթ-չիլ բայը, ուստի լաւագոյն է բաժանել նրանից արթուն և դնել ար (յառնեմ, արի՛) «վեր կենալ» արմատից՝ թ ածականով, ինչպէս ունինք յն. ὄρνυμαι «վեր կենալ» ձևի դէմ ἐρέθω, ἐρεθίζω «գրգռել, գայրացնել», ὀρθόω «գրգռել, մղել», որոնք կազմուած են նոյն արմատից՝ dh ածականով (Boisacq 273, Pokorny 1, 137)։

Նշ. մեկնում է «յարոյթ, այսինքն յարուցիչ ունող, յարուցեալ ի քնոյ»։ Müller, Kuhns und Schleich. Beiträge 5, 138 գնդ. irlδ «բարձրանալ, վեր կենալ»։ Տէրվ. Լեզու 1887, էջ 89 արմատը գնում է վարթ կամ վարճ, որից զուարթ, զուարճ, զարթնուլ, արթուն. վերջինում վ՝ իբրև սկզբնատառ՝ ընկել է, իսկ միւսներում գ-ից պահպանուելով մնաց։ Հիւնք. արդ «ձև» բառից։ Ուղիղ մեկնեց Meillet REA 8 (1928), էջ 5։

Գիւմ.— Ալշ. երև. խրբ. Մշ. Պլ. Ռ. Սեբ. արթուն, Ախց. երև. կր. Ջղ. Սչ. Տփ. զարթուն, Նխճ. արթուն, զարթուն, զաշքուն, Ագլ. ա՛րթուն, զա՛րթուն, Տիգ. mրթուն, Ասլ. արթիւն, Գոր. զա՛րթիւն, Ակն. արդ՛իւն, Վն. mրթիւն, Մրղ. Շմ. զmրթիւն, Սլմ. զmոթիւն, Ղրբ. զէ՛րթուն, Հմշ. զայթուն, Ոզմ. հարթօն, Հճ. այդուն, Զթ. այդ՛օն, արդ՛ոն.— բայական ձևերն են Ասլ. Պլ. Ռ. Սեբ. արթննալ, Ախց. կր. Տփ. զարթիլ, Ջղ. զարթնել, Մրղ. զmրթնէլ, Ագլ. ըորնա՛նիլ, Ղրբ. զիւրթնա՛նալ, Գոր. զըրթնո՛նոլ, Նխճ. զաշքիլ, Հմշ. զայթուշ, Սլմ. զmանիլ, Սչ. գեղեցիկ դանազանութեամբ ունի զարթնել «քնից արթնանալ» և արթնալ «սթափիլ, մտքով արթնանալ»։

ԱՐԹՋԻԿ. անատոյգ բառ. մէկ անգամ գործածուած է Մծբ. ժթ. «Արթչին ի նմանէ և ոչ առնեն զկամս նորա»։ Նշ. մեկնում է «հարթչիլ կամ սարտչիլ», Ջ «խոյս տալ, հրաժարիլ»։ Տե՛ս հարթ-չիլ։

*ԱՐԹՐ (սեռ. արթր) «քերականական յօդ» Եզն. էջ 261. կամ ր ընկած՝ արթ (սեռ. արթր, գրծ. արթր) Ոսկ. փիլիպ. 410, Եփես. 854. Սարգ. բ. պետր. գ. էջ 476։

= Յն. ἄρθρον «յօդ», բուն նշանակում է «յօդաւորութիւն, կցում» և գալիս է հնխ. ar «յօդել, կցել, շինել» արմատից, որի ժառանգները տե՛ս արդ և առնել բառերի տակ։— Հիւրշ. 342։

Նախ Հշ դրաւ յունարէնից։ Նշ. սրան աւելացնում է նաև լտ. artus, articulus, սաոր. աբ կամ հաբ՝ այսինքն տարր և յօդ։

*ԱՐԺԱՆ, ի հլ. «պատշաճ և վայելուչ բանը» ՍԳր. Ագաթ. Ոսկ. մ. ա. 1. «արժանիք, արժանաւորութիւն» Սիր. լը. 18, Իմ. ժգ. 15. «իրաւունք, արդարութիւն» Եզն. որից արժան է «վայելուչ է, յարմար է» ՍԳր. Ագաթ. արժանանալ Ագաթ. արժանապէս Իմ. ժգ. 1. Ա. Թես. բ. 12. Կոչ. ժղ. արժանաւոր ՍԳր. Ագաթ. Եւս. պտմ. Վեցօր. արժանաւորել Ագաթ. արժանաւորութիւն Ագաթ. Վեցօր. արժանի ՍԳր.

Բուզ. Սեբեր. Ոսկ. Վեցօր. անարժան, ի և ի-ա *հլ. ՍԳր. Ոսկ. Ագաթ. Կորիւն. Բուզ. Եղն.* անարժանութիւն *ՍԳր. Ագաթ. Ոսկ. յետին և յունարէնի վրայ ձևուած են՝* արժանանաւառո =*յն.* ἀξιόπιστος, արժանապատիւ= ἀξιότιμος, արժանապարտ= ἀξιόχρεως, արժանայաղթ= ἀξιόνικος *և նմաններ։ Նոր բառեր են* արժանայիշատակ, արժանապատուութիւն *են։— Բառիս երկրորդ առումը դրամական է. որից ունինք* արժանիք *«դրամի վրայի կնիքը» և* արժանել *«դրամը կնքել և արժէքը որոշել» Ոսկ. մ. ա. 11.* արժան է *«կարժէ, դին ունի» Ծն. իգ. 9. Ա. մնաց. իա. 24.* արժանի *«դին ունեցող, արժող» Սեբեր.* արժան *«դիւրագին, էժան» Ճառընտ. Ոսկ. յհ. բ. 14 են. այս միևնոյն բառն է՝ որ r-ի յապաւումով դարձել է* աժան, յաժան, աժանիմ. *ինչ. լմբ. ժբ. մարգ. էջ 113 (Յովել. գ. 6) «Ձմանկունս երբայեցիս գնէին յաժան»։ Նոր գրականում բառիս երկու առումների համար առանձին տարբերութիւն դնելով՝ գործածւում է* արժան *«վայելուչ» և* աժան *(արևմտեան գրական),* էժան *(բայց նաև* արժան՝ *արևելեան գրական) «դիւրագին»։ Ըստ այսմ ունինք (ա կամ է նախաձայնով)* էժանագին, էժանանոց, էժանանալ, էժանութիւն *են։*

= *Պհլ.* aržān *«արժան, արժանի», որ պահուած է* margaržān *«մահու արժանի» բարդի մէջ,* aržānīh *«արժանիք, արժանաւորութիւն»,* aržānīk *«արժանի, արժանաւոր», պազենդ.* arzānī *«արժանիք», պրս.* ارزان arzān *«արժանի, արժանաւոր. 2. դիւրագին, էժան»,* arzānī *«արժանաւորութիւն». մեր բառը իր կրկին նշանակութիւններով էլ փոխառեալ է իրանեանից, որից են նաև ասոր.* ܐܪܙܢ arzān, *քրդ.* erzan *«էժան», արևել. թրք.* arzanlik *«առատութիւն»։ Տե՛ս նաև յաջորդ բառը։— Հիւբշ. 92։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ԳԴ։ ՆՀԲ լիշում է պրս. խրզան և լծորդ է դնում յն. ἄξιον *«արժանիք»։* Gosche *36 առնս.* arh, *զնդ.* arəǰa, *պրս.* arǰ, arzānī *են։* Karst, *Բուշարձ. 401 սումեր.* garza *«օրէնք, հրամանք»,* garzi *«արդար» բառերի հետ։*

ԳԻՒ.— Ախց. Ակն. հրբ. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. աժան, *Ասլ.* աժա՛, *Զղ.* ǯեռժան, ǯեժժան, ǯեժան. *երև. Մրղ. Սլմ. Տփ.* էժան, *Ղրբ.* է՛ժան, ի՛ժան, *Շմ.* էյժան, *Ալշ. Մշ.* ǯէժան, *Ոզմ.* ճեժան, *Ագլ. Վն.* էժոն, *Մկ.* ճէժոն, *Տիգ.* էժժոն, *Գոր.* ի՛ժան, *Հմշ.* էժօն. *այս բոլորը նշանակում են «դիւրագին»։ Գրական փոխառութիւն է* արժանի՝ *որ տեղ տեղ գտնում ենք գաւառականներում։ Սրանցից դուրս ունինք նաև Մշ.* աժնեկ, *Տփ.* ա՛ժնիկ, *որոնք երևան են հանում հին հյ. *արժանիկ ձևը։ Այս բառը թէև աւանդուած չէ գրաբար գրականութիւնից, բայց անշուշտ հնապէս գոյութիւն ունէր, որովհետև ներկայացնում է ճիշտ պհլ.* arzānīk *«արժանի» բառը, որից փոխառեալ է։*

*ԱՐԺԵԼ *«արժէք կամ դին ունենալ» ՍԳր. Ոսկ. յհ. բ. 14. Բուզ. որից* արժէք *«դին» Մաշտ. ջահկ.* դանգարժեայ *«մէկ դանգ արժող» Եփր. աւետ. ր բաղաձայնի կորուստով՝ յետնաբար* աժել *Ճառընտ.* աժէք *Լաստ. Մխ. դատ. նոր գրականում՝* արժողութիւն, մեծարժէք, քանկարժէք, փոխարժէք, արժէքաւոր, անարժէք, արժէքուղղ, արժեգին, արժեքոմս *են։*

= *Պհլ.* aržītan *«արժել»,* arǰ *«դին, արժէք, արժանիք», պրս.* ارزیدن arzīdan *«արժել, յարդ՝ դին ունենալ, արժանի լինել»,* arz, arǰ *և տեղափոխութեամբ՝* azar *«դին, արժէք»,* arǰmand *«յարգի, իմաստուն մարդ», սոգդ.* ʾrz *«արժէք, արժանիք», զնդ.* arəjaiti *«արժէ»։ Պարսկերէնից փոխառեալ են նաև չաղաթ.* ارزماق arzəmak *«արժել», սերբ.* rz *«դին, արժէք»։ Հյ.* արժել *փոխառեալ է պահլաւերէնից՝ արժան բառից անջատաբար։ Նոյն արմատից է նաև* արգ, *որի վրայ տե՛ս առանձին։— Հիւբշ. 93։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՆՀԲ են։ Միւսները առհասարակ միացնում են արժան *բառի հետ։ Ա. Լ. (Արև. Մամուլ 1889, 177) արիական* արծա, արծա *«ձիոց երամակ» բառից! Սանտալճեան ՀԱ 1913, 394 ուրարտ.* arşibini =*«արժիգինս» բառի հետ է համեմատում։*

ԳԻՒ.— Շմ. արժիլ, *Զղ.* աժժել, *Սչ. Վն.* աժել, *Ախց. Ակն. երև. Կր. Հմշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* աժէլ, *Ասլ.* աժէ՛լ, *Գոր. հրբ.* աժիլ, *Ագլ.*

ա՛ժիլ, նա՛ժիլ, *Սլմ.* mժել, *Մրղ.* mժէլ, *Ալշ. Տիգ.* mժիլ, *Մշ.* բժե, *Ղրբ.* mժիլ, յէ՛ժիլ, *Տփ.* աժէ՛նալ: *Սրանց միջին ձևը՝ այժէ ունի Սմբ. պատմ. էջ 11: Նոր բառեր են արժեցնել, արժում–չարժում, արժովի «աղդեցիկ», արժ կամ աժ «արժանի», որ գործածւում է միայն արժ է կամ աժ է «արժանի է» ձևի մէջ:*

ԱՐԻ *«կապիճ». ունի միայն Բառ. երեմ. էջ 37:*

+ **ԱՐԻ** *«քաջ ևն»:*

= **Այր** *բառից՝ ի մասնիկով. տե՛ս* **այր**:

Καρολίδης, Γλωσσ. σύγκ. *69 հլ.* արի, առողջ, առոյգ *կյում է ասնս.* aram *«հաւատալիւ», զնգ.* arəta *«կատարեալ», յն.* ἀρείων *«արիագոյն» և մանաւանդ կապադովկ.* ἀρό, ἀροῦσκο *«առողջ, արի» բառերի հետ: Մարքվարթ* REA *8(1928), 218 մերժում է գնել այդ բառից և համարում է* ար *(որից առնել «գործել») արմատից:*

Փոխ. — *վրաց.* ახე არი „доблестный, *քաջասիրտ, արի» (Մառ,* Тексты и разск. IV *յատկ. չունի Զուրինով):*

* **ԱՐԻԿ** *«ո՛վ հերձուածող». նորագիւտ բառ, որ մէկ անդամ ունի Տիմոթ. կուզ, էջ 128:*

= *Յն.* Ἀρειε, *որ կոչականն է* **Արիոս** *անուան և այստեղ իբր հատարակ անուն առնուած է:* — *Ա՛ճ.*

Այսպէս մեկնեց Ա՛ճառ. Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 68: Նոյնը յունարէնի համեմատութեամբ հաստատում է Ակինեան, անդ՝ էջ 48:

ԱՐԻԿ *«մի տեսակ թունաւոր միջատ». տե՛ս Ալիշան, Հին հաւատք, էջ 155:*

ԱՐԻՆՁ *«մի տեսակ բոյս է.* polygonium aviculare, *մատիտեղ թռչնոց». Գաղիան. ունի միայն Հռուս. § 207:*

Գիւղ.— Ալիշան (անդ) յիշում է Խոտրջուրի գաւառականով արիճ բոյսը, առանց սակայն նոյնութիւնը հաստատելու:

***ԱՐԻՇ**, ի–ա *հլ. «խաղողի սարփինայ». ունի միայն ԱՔ, իբր ոմկ. երկու անգամ գրտնում եմ գործածուած Վստկ. էջ 47 և 50 «ի վերայ ծառոց հանես զնոսա կամ ի վերայ արիշաց», «եւ զայս ազգս պարտ է հանել ի յարիշ կամ ի ծառս»:*

= *Արաբ.* عريش *ʿariš «իբրև հովանի շինուած հիւղակ, տնակ. 2. փայտեայ կազմած՝ որի վրայ խաղողի որթն է բարձրանում. սարփինայ (Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 335).— Ա՛ճ.*

Գիւղ.— Սվեդ. ա՛ռրըշա *«ծառերի հիւղերի տակ հաստատուած խնչակ՝ պտուղների ծանրութիւնից չկոտրուելու համար», Այն.* արիշ, *Զթ.* արիշի, արշի *«սարփինայ», Հճ.* արիշեն *կոչւում է խաղողի որթի այն տեսակը՝ որ սարփինայի վրայ է բարձրանում: Սրանցից տարբեր է Նախ.* արիշ *«կառքի առեղ, այն է կառքի առջևի երկու երկար փայտերը, որոնց մէջտեղը լծում են ձին և որի ծայրը անցուած է խամուքը». փոխառեալ է Թթր.* آرش arïš *համանիշից (տե՛ս* Будаговъ, Срав. слов. *1, 34):*

ԱՐԻՈՎԴ *«մայրի ծառ»? Նորագիւտ անստոյգ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրդն. սղ. ճգ. էջ 342, որ մեկնելով Սղ. ճգ. 17 «բոյն արագլի ապաւէն է նոցա» հատուածը, գրում է «Բոյն արագլի. Սիմաքոս (ասէ) արիովդ արատայ տուն է նորա»: Եբրայական բնագիրը նոյն տեղն ունի «արագլի մայրք են տուն». որից կարելի է ենթագրել թէ* արիովդ *նշանակում է «մայրի», իսկ* արատա *(տես.* արատայ*) «արագիլ»:*

***ԱՐԻՈՎՔ** *«վայրի բոյս է». մէկ անգամ միայն գործածուած է Դ. Բագ. դ. 39 «եւ եղ յանդն քաղել արիովք. և եգիտ որթ յանդին և քաղեաց ի նմանէ ազոխ լի շալակաւ». ըստ Գբ «դառն դդմենին է, Բրբ. ապուճէչկ դարփուզը»:— Բառ. երեմ. էջ 337 գրում է* **օրիովդ**:

= *Եբր.* אֹרֶת oroth *«խոտեր» (յոգնակի) բառն է, որ Ս. Գրքի Յօթանասնից Թարգմանութեան մէջ տառադարձուած է յն.* ἀρώθ *ձևով և սրանից էլ ուղղակի հյ.* **արիովք**, *վրաց.* არიოთი **արիոթի**:

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ:

+ **ԱՐԻՒՆ** *(-բեան, -բեամբ) «արիւն» ՍԳր. «սպանութիւն, կոտորած» ՍԳր. Ագաթ. Բուզ. «աղգակցութիւն, արեանակցութիւն, աղգական» Խոր. Փարպ. (միջին հյ.* այրոյն, այրիւն, առոյն *Անսիզք 33, 61, 93). որից* **արիւն խաղողոյ** *«գինի» ՍԳր.* **արիւն որթոյ** *«գինի» Ծփր. Համար. ընդ արիւն գալ «արիւնի մէջ թաթախուիլ, մեռնիլ» Ոսկ. Երր. ե. յարեան առնել*

«արիւնոտել (ձեռքը)» Ոսկ. մ. բ. 19.— ածանցման մէջ մտնում է երեք ձևով. 1. Ա-ՐԻՒՆ-. ինչ. արիւնագոյն *եղն.* արիւնակալ *«զոհի արեան թասը» Ել. լե. 16.* արիւնաճան *Բուզ.* արիւնաճեղ *ՍԳր.* արիւնաճալ *կոչ. Բուզ.* արիւնաճշան *Ագաթ.* արիւնարբու *Ոսկ. ես.* արիւնոտ *Ոսկ. մ. բ. 5 և Եփր.* անարիւն *եղիշ.— 2. ԱՐԵԱՆ-. ինչ.* արեանագին *Փիլ. լին.* արեանապարտ *Մաշկ.* արեանաւոտ *խոր. Գր. հր. Շնորհ.* արեանեղուրիւն *եղիշ.— 3. ԱՐԵՆ-. ինչ.* արենազանգ *կաղանկ.* արենաջուր *Վրք. հց.* արենապարտ *Արծր. Զքր. ծործ.* արենիճ *«մի տեսակ բոյս.* ascyrum *(բատ ՀԲուս. § 200)։— Այստեղ է պատկանում նաև* արենալ՝ *որ մէկ անգամ ունի Սիր. խր. 5. «վասն իրաւոտ որդւոց շատի և ծառայից չարաց՝ վասն ի զկողոպն նոցա արենալ» (ձեռ.* վասն ի զկողոպն յարենալ, *որ հրատարակիչը ուղղել է բատ յունարէնի՝* πίεσμαι αἱματόω, *կազմուած* αἱματόω *«արիւնիլ» բայից)։— Նոր գրականին յատուկ բառեր են* արիւներբուրիւն, սակաւարիւն, պաղարիւն, սառնարիւն, տաքարիւն, արիւնիլ, արենակցական, անարիւնութիւն, զարիւն *են։*

= *Հնխ.* esr(g)- *«արիւն» բառից, որի միւս ժառանգներն են սանս.* ásṛk, *սեռ.* asnáḥ, *կամխ.* ešḫar, *յն.* ἔαρ, ἔαρος (εἴαρ, ἦαρ), *հին լտ.* aser, asser, assyr, *լիթթ.* asins *«արիւն»* (Walde *64*, Boisacq *209*, Trautmann *14*, Pokorny *1*, *162*, Ernout-Meillet *76*)։ *Հալերէնի մէջ -իւն մասնիկ է. համմտ.* արդիւն, աճիւն, ճերիւն, *հնխ.* esr- *դառնում է հյ.* *ենար->*եար->*ար-, ճիշտ ինչպես հնխ.* ves *դառնում է հյ.* գարուն։ —*Հիւրշ.* IF Anz. *10*, *44*։

Lagarde, Urgesch. *725 սանս.* aruna *«կարմիր» բառի հետ կապակցում։* Müller SWAW *42*, *256 թեկուս լատ.* serum *և յն.* ὀρός *«արիւնաջուր»,* Osthoff SA *2*, *56 դնում է հնխ.* ser-, sr- *«հոսիլ» արմատից, իբր սանս.* sisarti *«հոսիլ» և յն.* ῥαίνω *«ոռոգել»։ Պատկանեան,* Изслед. *62 սանս.* rudhiram, *յն.* ἐρυθρός *«կարմիր»։— Տէրվ. Նախալ. 65 տուաւ նախապէս ուղիղ մեկնութիւնը։ Նոյնը անկախաբար* Bugge, Btrg. *24*։ *Հիւնք. պրս.* իրիյն *«թարախ» բառից։ Հիւբշ. 424 կասկածում էր ընդունել վերի մեկնութիւնը՝ բառի ձայնական դժուարութեանց պատճառաւ, բայց* IF Anz. *10*, *44 ինքն իսկ հարթից այս դժուարութիւնները՝ վերի ձևով։ Սպրոգիան ՀՄ. 1909*, *336 և* Karst, *Յուշարձ. 408 սումեր.* uru, gurun *«արիւն».* Karst *նաև 418 ԹՔՔր.* ir, ür, or *«հոսիլ», չադաթ.* erin, *եակութ.* irānä, *ալթալ.* irïń *«թարախ», օսմ.* ərmaq *«պնա» բառերի հետ։*

Գիմ.— Ասլ. արիւն, *Ագլ. Ղրբ.* mrիւն, *Ախց. Ալղ. Ակն. Կր. Համշ. Մկ. Մշ. Ննխ. Պլ. Զթ. Ռ. Սեբ. Սչ. Վն. Տփ.* առուն, *Գոր. Երև. Խրբ.* արին, *Շմ.* առուն, *Սլմ.* էրիւն, *Մրզ.* էօրիւն, *Տիգ.* mրին, *Զթ.* էյին, էրին, *Ողմ.* յէրօն, *Հճ.* էյին, *Հւր.* յէռըն։

ԱՐԻՓՆԻԻ *կամ* **ԱՐՓԻՆԻԻ.** *անծանօթ իմաստով նորագիւտ բառ, որ երկու անգամ գրտնում եմ գործածուած Մագ. քգ. 121*, *325. տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեան. հտ. Բ։*

***ԱՐԻՒ** *«առու». յիշուած է առաջին անգամ 996 թուի մի արձանագրութեան մէջ. «Քիրդկայ այգին, որ ջրանցի արեւի տակն է» Վիմ. տար. էջ 11։*

= *Թրք. ԹՔՔր.* ارق arx *կամ* ارق arq *«ջրանցք, առու»* Будаговъ *1*, *26։—Ահ.*

+**ԱՐԾԱԹ**, ո *հլ. «արծաթ մետաղը. 2. արծաթեղէն. 3. դրամ. 4. հարստութիւն» ՍԳր. որից* արծար կենդանի *«անդիկ, լտ.* argentum vivum, *ֆրանս.* vif-argent *(նոյն ոճով կազմուած)» Կլիմաք.* արծարագին *«դրամով գնուած» Յուդթ. դ. 9. «ծառայ» ՍԳր.* արծարագոյն *Ոսկ. մտթ.* արծարագործ *ՍԳր. եղն. Ագաթ.* արծարազօծ *Ոսկ. մ. ա. 20.* արծարեանիւ *Ոսկ. մ. բ. 25.* արծարեղէն *ՍԳր.* արծարի *ՍԳր. Ագաթ.* արծարսիրութիւն *Ա. տիմ. ղ. 10.* անարծար *ճառընտ.* բազմարծար *Փիլ. Պիտ.* կաւարծար *Փարպ. նոր բառեր են* արծարաձուկ, արծարապաշտ, արծարաջրել *են։*

=*Բնիկ հայ բառ, որի հնդեւրոպական ցեղակիցներն են սանս.* raǰatá- *«արծաթ, սպիտակ, արծաթագոյն», հպրս.* ardata, *դնդ.* ərəzata-, *թոխար.* ārkjant *«արծաթ»,*

լտ. argentum (ֆրանս. argent, իտալ. argento, ռում. argint), գալլ. argento-, հիռլ. argat, կիմր. ariant, կորն. argant, բրետ. arc'hant «արծաթ». այս բոլորը ծագում են հնխ. areg՛ «փայլիլ» արմատից, որից՝ տարբեր մասնիկով ծագում է նաև չն. ἀργυρος «արծաթ» (տե՛ս Pokorny 1. 82, Walde 59, Ernout-Meillet 67, Boisacq 75). տե՛ս և արծնել, արծարծել:—Հիւբշ. 424:

Ուղիղ մեկնութիւնը առաւ նախ Աւդերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 54—56, համեմատելով չն. ἀργύρος և ἀργύρεον ձևերի հետ: Ուղիղ է և Klaproth, Asia polygl. էջ 105, որ գնում է լտ. argentum, բայց սրան է աւելացնում նաև լիդդ. araz, կապիկամուխ. arz, անդի arsi և էրզերէն erged, Brosset, Aperçu général de la langue géorgienne, JAs. XIV (1834), էջ 369—405 մեր բառի հետ նոյն է գնում չն. ἀργος, լտ. argentum և վրաց. վեցխուի, վերցխուի: Ուղիղ են մեկնում նաև ՆՀԲ, Peterm. 23, Windisch. 13, Lagarde, Urgesch. 812: Justi, Zendsp. 72 գնդ. ərəzata և հյ. արծաթ բառերի հետ կցում է նաև ասր. ʻարաց «արծաթ, դրամ», որ մեզ հետ կապ չունի: Մորթման ZDMG 30, 438 վանեան բեվեռագրերի լեզուով գտել է ardzat համանիշը: Kretschmer, Einl. in d. Gesch. d. gr. Spr. 137 և Andreas համարում են թէ հայերէն բառը իրանեանից փոխառութիւն է: Այս կարծիքը սխալ է, ինչպէս ցոյց է տալիս Հիւբշ. 424, որովհետև արծաթ ունի ճիշտ բնիկ հայ բառերի ձևը, ուր ծ ներկայացնում է կանոնաւորապէս հնխ. ց՛. եթէ փոխառութիւն լինէր, պիտի ունենար *արզաթ կամ *արձաթ ձևը, ենթադրելով, որ հարս. ձևը լինէր *arzata—: Բրեմեան, Բազմ. 1899, 54 գնում է զանգիկ փոխառութիւն: Ipsen IF 39. 235 արծաթ և երկաթ համարում է փոքր-ասիական ծագումից: Մառ ИАН 1911. 142 համեմատում է մինդ. վարշխիլի, վրաց. վերցխլի համանիշների հետ և մեր բառի հին ձևը գնում է *վարծ-աթ, իբր կազմուած աթ իգական մասնիկով: Նոյն ИАН 1917, 324 ավար. ʻարց «արծաթ»: Ч'арая, Объ отношеніи абхазск. яз. էջ 11 հայերէնից փոխառեալ է գնում կովկասեանները և յատկապէս ափխազ. արաձն «արծաթ»:

ԳԻՒՏ.— Ախց. Գոր. Կր. Ղրբ. Շմ. Ջղ. արծաթ, Ալշ. Ակն. Խրբ. Մշ. Պլ. Սեբ. Սչ. Ռ. արձաթ, Նախ. արձաթ, արզաթ, Ագլ. Երև. Մկ. Մրղ. Սլմ. Վն. առծաթ, Ոզմ. ա՛ռծաթ, Տփ. է՛րծաթ, Տիգ. mրձաթ, Ասլ. արձա՛, Հմշ. այծաթ, Ջթ. Հճ. այձօթ: Որովհետև երկաթ բառը Կովկասի մի քանի հայ բարբառներում դարձել է ա՛րկաթ, ժողովուրդը մտածել է թէ քանի որ ա՛րկաթ ձևի դրականն է երկաթ, ուստի ա՛րծաթ ձևի դրականն էլ պիտի լինի է՛րծաթ. այսպէսով իբր դրական ձև տարածուած է Կովկասի ո՛չ-հնուս դրականագէտների շրջանում երծաթ ձևը, որ մինչև անգամ տեղ տեղ գրքերի մէջ էլ մուտք է գործել: Հնագոյն գործածութիւնը գտնում եմ 1788 թուին՝ Կղէոպատրայ Սարաֆեանի Բանալի գիտութեան, Սանկտպետերբուրգ, էջ 49:— Արծաթ և երկաթ բառերի իրար վրայ փոխադարձ ազդեցութիւնը գտնում ենք նաև գրաբարի մէջ. տե՛ս այս մասին երկաթ բառի տակ:— Նոր գաւառական ձևեր են արծաթաուաշ, արծաթգլուխ, արծաթնոց, արծրիկ, արծրուկ, արծրման են:

+ ԱՐԾԱՐԾԵԼ.

= Կրկնուած արծ արմատից, որի վրայ տե՛ս արծնել:

* ԱՐԾԻՆ «մի տեսակ բոյս է. աղուհաւաձուք, լտ. satyrion, Բրբ. սալէպ». ունի միայն ՀԲուս. § 212, առնելով Սեւիսեանոս Ռոշքեանի բառարանից:

= Յն. ἀρσην «արու» բառն է, ըստ որում նոյն բոյսը կոչւում է նաև չն. ἀρσενόγονον, ἀῤῥενόγονον (որից լտ. arsenogonum), որ բուն նշանակում է «արուներ ծնող, արուածին» (տե՛ս Նորայր, ՀԱ 1924, 546, Aulcherat, Dick. lt.-fr. 1913, էջ 113բ):—Ա.

ԱՐԾԻՒ տե՛ս Արծուի:

+ ԱՐԾՆԵԼ «տաք երկաթով կամ գունաւոր մոմով փայտի վրայ նկարել». մէկ անգամ միայն գործածուած է Բ. մակ. բ. 30 «Ծեփելն

և պահելն և արծնելն և նկարելն» (ուր չորս մերձանիշ բառերի դէմ յոյնն ունի ἐγκαίειν καὶ ζωγραφεῖν *«ներկայրելն և կենդանագրելն»)։ Բառիս բուն արմատն է* **արծ**, *որ այստեղ աճել է և յաւելուածով։ Պարզ ձևը՝ որ առանձին անգործածական է, կրկնութեամբ պահում են* **արծարծանել** *«մարող կրակը բորբոքել» Ես. ծգ. 16,* **արծարծել** *«մոռացուելու մօտ եղած մի բան նորոգել, վառել, գրգռել» Բ. տիմ. ա. 6.* **արծարծիլ** *«հոանդ առանալ, սիրտը վառուիլ» Ծն. խե. 27 (յետիններից մօտ սովորական է* **արծարծել** *Ոսկ. գծ. Փիլ. Պիտ. Ջննոր. Խոր. Արծր. Մագ.),* **արծարծութիւն** *Ոսկ. ես.* **արծարծումն** *Փիլ. Պիտ.* **արծարծիչ** *Լաստ.։ Նոր գրականի մէջ կազմուած են նոյն արմատից՝* **արծարծ** *«բորբոք» ՋՔ,* **հրարծարծ, մշտարծարծ, արծնիչ, արծնապակի, արծնագործ, արծնարար.**— *ոսկերչական բառ է* **արծնել** *«մետաղեայ բանները են ոզորկելով փայլեցնել, մասխալա զարնել»։*

= *Հնխ.* arg¹ *արմատից, որի միւս ժառանգորդներն են յն.* ἀργός *«փայլուն, սպիտակափայլ, սպիտակ»,* ἄργής *«սպիտակութիւնից փայլող, ցոլուն», սանս.* arǰuna *«բոսպիտակ»,* arǰ *«խորովել»,* reǰ *«հուր, փայլ», քուչ.* ārkwi *«ճերմակ»,* arkwiññe *«ճերմակութիւն», լտ.* arguo *«լուսաբանել»,* argutus *«իմաստուն, լուսամիտ»։ Այս արմատից է ծագում նաև* **արծաթ** *բառի ամբողջ հնդեվրոպական ընտանիքը։ Արմատի նախնական իմաստն է ուրիմն «փայլ, ցոլք, լոյս», որով* **արծնել** *«փայլեցնել»,* **արծարծել** *«վառել, այսինքն նորից փայլեցնել» (տե՛ս* Pokorny *1, 82)։*

Նշբ արբեցուցանել, զարբուցանել *ձևերից։* Müller, Armeniaca VI *գնդ.* rāza, rāzarə, ərəzu *«ուղիղ», սանս.* ǰju, *յն.* ὄρθιος *«գրկաչափ»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Տէրվիշ. Նախալ. 48, 64, 102, որի համեմատ և Հիւնք։* Meillet MSL *8, 288 սանս.* sǰáti, *գնդ.* hərəzaiti, *պրս.* hilem *և հյ.* արկանել, *զերծ բառերի հետ յիշում է նաև* արծարծել, *բայց սա անշուշտ սխալմունք է և պէտք է ուղղել* արձակել։ *Ջարմանալի է որ ո՛չ* Lagarde *և ո՛չ Հիւբշման յիշում են բառիս այս պարզ մեկնութիւնը։— Պատահական նմանութիւն ունի կազանի թաթարերէն* چچچل er-čimek *«մաքրել, արբել»։*

***ԱՐԾՈՒԷՍՔ** *«արքեպիսկոպոս». Օրբ. 323 (Առաւ և մեծ քաղաքն Կորնթացւոց աշխարհաժողովն Աքքայիա (Աքհա) ի նոյն ծովեղերն, յորում կայր տուն և աթոռ երից թագաւորացն փառնգաց՝ դամփլուն (*Chevaliers de Temple*) և Ըսպիթալուն և ալամանուն, կայր ի նմա և մեծ արծուէսքն Երուսաղեմի, այսինքն արքեպիսկոպոսն). Սկևռ. պատ. 23. որ և* **արծվէսք** *Սմբ. պատմ. 109,* **արծուվէսք** *Սկևռ. պատ. 66.* **արծուէս, արծրւէս** *Գր. տղ. յեմ. Պատ. կիլիկ. Կիր. 75։*

= *Հին ֆրանս.* arcevesque, arcivesque *«արքեպիսկոպոս», որ բուռ* Littré, *հտ. Ա. էջ 186 գ՝ ԺԱ—ԺԴ դարերի ֆրանսերէնի ձևն էր և հնչում էր* **արցբվէսք, արցիվէսք**. *նոր ֆրանս.* archevêque. *վերջաձայնի չնջումը (*արծուէս *ձևի մէջ) յառաջացած է սխալմամբ՝ բառը յոգնակի կարծուելով (տե՛ս Այտնեան, Քնն. քեր. էջ 280)։*

Ունի միայն ՆՀԲ, որ և մեկնում է «որպէս գաղղ. **արշբւէք***». Այտնեան, անդ՝ հֆբ.* **արշվէսք**։

+**ԱՐԾՈՒԻ** *(արծուոյ, արծուեաց) «արծիւ թռչունը» ՍԳր. յետնաբար, ինչպէս նաև արդի գրականում՝* **արծիւ** *(ի կամ ո հլ.) Մագ. Նար. Լմբ. Վրք. Հց. «Համաստեղութեան անուն» Շիր. ածանցման մէջ մտնում է երեք ձևով. 1.* **ԱՐԾՈՒԻԾ-**. *ինչպ.* **արծուեներան** *Բուզ. գ. 2=Մխոր. հր.* **արծուակիր** *ՅՀ. կԲ.—2.* **ԱՐԾՈՒԻԱ-**. *ինչ.* **արծուաներան** *Մարքին.* **արծուաբրոիչ** *Տօնակ.* **արծուակերպ** *Մաղաք. ար.* **արծուաբեր** *Արծր.* **արծուաճանկ** *Բժշ.—3.* **ԱՐԾ-** *ինչ.* **արծռունգն** *(գրուած նաև* **արծրռունկն, արծռուկն, առծռունկն**) *«արծուաքիթ» Արծր. Պորփ. Պղատ.* **արծնգռութիւն** *Պորփ. Մխ. ապար. այս երեքից միայն առաջինն է ոսկեդարեան (Համմտ. գինի–գինեպաղ), իբրև ծագած արծուի ձևից. միւս երկուսը յետին են և ծագում են արծիւ ձևից։ Բառավերջից ունինք գետարծուի «մի տեսակ արծիւ» Ղևտ. ժա. 13. Որ. ժդ. 13. նոյն բառից է անշուշտ*

արծուիվ *(սեռ.* արծուեց*) «մի տեսակ չրգողութիւն» Մխ. բժշ. 145, Բժշ. Վստկ. 119, որ և* արծուացաւ *նոյն նշ. ՀՀԲ և ՀԲ. նոր բառեր են* արծուեդրօշ, արծուաֆիք:

= *Հնխ.* ĝ'ipyo- *ձևից. սրա հետ համմտ. սնս.* ĝĭipyā, *որ նախ գործածւում է իբրև վերադիր* çyēnā- *«արծիւ» բառի և երկրորդ՝ նշանակում է «*geai bleu, *կապոյտ անծեղ թռչունը». զնդ.* ərəzifya- *«մի լեռան յատուկ անուն. 2. արծիւ», վերջին իմաստով գործածուած է միայն* ərəzifyōparəna- *«արծուեփետուր» բարդի մէջ. հպրս.* *arzifya, *որ ենթադրւում է Հեսիքիոսի աւանդած* ἄρξιφος (ἀετὸς παρὰ Περσαις *արծիւ ըստ Պարսից) ձևից. սրա հետ կար թերևս նաև հպրս.* *ardifya- *(այս բառը ներկայացնում է յունաց աւանդած* ἄρδιφός *ձևը.* Tomaschek BB 7, 199*), որից յառաջացած կարող են լինել պհլ.* āluh, *պրս.* اَلُو ālūh (<*arduf), *քրդ.* āleh, hálō, elūh, alo, əló *«արծիւ» (տե՛ս* Pokorny 2, 363*):—Հիւրշ. 424:*

Վիւտոննանք, Բրգմ. Խոր. յոլ. էջ 6 համեմատում են Հեսիքիոսի ἄρξιφος *ձևի հետ, որ հայերէնից են համարում:* Klaproth, Asia polygl. *էջ 99 դեմ.* Aar *«արծիւ» բառի հետ Ինճիճեան, Հնախօս. Գ. էջ 20 և սրանից առնելով իտալացի* Capelleti *քահանան՝ իր* Armenia *աշխատութեան մէջ (հյ. Բրգմ. Արշալոյս Արարատեան 1842, էջ 108) համարում են առնուլ և ծուել բառերից. «Արուեստիւ և խորհրդով կազմեալ են կրկին առնուանքս (արծիւ և առիւծ), ասում է Ինճիճեան, որպէս վայել էր կազմել Ագամայ, երկոքին ևս կենդանիք բազաւոր ծանուցեալք՝ մին չորքոտանեաց և միւսն թռչնոց. և ահա երկոքին ևս նոյնասեռ անուամբ յորջորջեալ. միայն յետևառաջութեամբ վանկից տարբերեալ»: Մահր մագիստ. Խմբ. չափածոյ, էջ 148 արի և ծիւ ծիւ բառերից* R. Roth ZDMG 4, 264 *համեմատում է սանս. և զնդ. ձևերի հետ: Նոյնը կրկնում են նաև* Böttich. Arica 13, Müller SWAW 42, 254, Justi, Zendsp. 72 *են: Հինդ.* արծուի *նոյն ընդ առիւծ:* Jensen, Hitt. u. Arm. *էջ 50, 221 համ.* arṣauia *«արծիւ»:*

Գիհ.— Ախց. Տփ. արծիվ, *Ալշ. Մշ.* արձիվ, *Ագլ. Գոր. Երև. Մկ. Ոզմ. Սլմ. Վն.* առծիվ, *Ղրբ.* ա՛ռծիվ, m՛ռծիվ, *Հճ.* այձիվ:

Փոխ.— Վրաց არწივი արծիվի *«արծիւ. 2. արծուենկար կաոր՝ որ պատարագի ժամանակ քահանայի ոտքի տակ են փռում»,* არწივა *արծիվա «արծուախոտ,* aquilina*», ավան. Թուշ.* արծիվ, *մինգ.* արծիվի, *չեչէն.* ärzu *«արծիւ».— պատահական նմանութիւն ունին լակ.* բարզու *«արծիւ», կայ.* արծիր, *ակ.* արծես, *խիւր.* արսիս *«թռչիլ»:*

ԱՐԾՊԱՅ *«մի տեսակ բոյս է. լտ.* serratula, *ֆրանս.* sarrette*». ունի միայն ՀԲուս. § 215, առնելով Ստ. Ոռշքեանից.— իսկ ըստ Նորայր, Բառ. ֆր. 1117 և ԳԲ նշանակում է «օճառախոտ, ռճկ. չօղան,* saponaire*»:*

ԱՐԿ *«ձգել». Հների մէջ այս իմաստով առանձին անգործածական արմատ (յետնաբար կայ* արկ, *ինչպէս ՅՀ. կթ. 72), որի բայական ձևն է* արկանել. *գործածւում է բազմաթիւ ու բազմազան առումներով, ճոխ ու հարուստ ոճերով: Առաջին ու հիմնական նշանակութիւնն է* 1. *«ձգել, նետել» ՍԳր. որից հետզհետէ բխում են հետևեալները.* 2. *«դնել, մացնել, մուծել» (օր. լծակը օղակի մէջ, մարդը բանտի մէջ, ապարանջանը բազկին, օղերն ականջը, սուրը պատեանը են) ՍԳր.* 3. *«տարածել, փռել, սփռել» (օր. սփռոցը գետին, անկողին, թուրձ, չուան, ցանց, սեղան են) ՍԳր.—* 4. *«հանել, զրկել» (օր. աչքից ձգել, կուսութիւնից հանել, հարստութիւնից զրկել են) Եղեկ. իգ. 3, 8. Ոսկ. մ. ա. 24 և յՀ. ա. 8. Եղն.—* 5. *«վերագրել, վրան ձգել» (օր. մեղքը, յանցանքը են) Եղն. Ոսկ. Եփես. Եզիշ.— իրար հետ անձուկ կերպով կապուած այս առումների համեմատ են հետևեալ ոճերը.* վիճակ արկանել, ձեռն արկանել, ձայն արկանել, գոյժ արկանել, խաղ արկանել, գիրկս արկանել, ուսկն արկանել, խունկ արկանել, ճառ արկանել, ի ծառայութիւն արկանել, առակ արկանել, առասպել արկանել, բան արկանել, աչս արկանել, ակն արկանել, ի ճարց և ի փորձ արկանել, առաջի արկանել, ի գործ արկանել, ի վայր արկանել, յուշ ար-

կաճել, յեռգ արկանել, ի կիր արկանել, յիճիճ արկանել, բուռն արկանել, ի միաս արկանել, շնորհս արկանել, ընդ միմեանս արկանել, ընդ իւիւ արկանել, հուր արկանել, ի խոյզ և ի խնդիր արկանել, ի ճիճ արկանել, ի փորձ արկանել, ի թիւ արկանել *են են։ Այս առումներով ածանցուած բառեր են՝* արկած *«փորձանք, պատահար» Փիլ. Պիտ.* արկանիմ *«ձգումիմ» ՍԳր. Վեցօր.* արկաճելի *«ձգող» Ոսկ. մ. ա. 4. Ջաք. դ. 12. Կորիւն.* արկնոց *«գազանների կամ հաւեղէնի վանդակ» Աբ.* արկած *«թշնամանք» Հին բառ. (տե՛ս ՀԱ 1911, էջ 371),* արկեան *«յափշտակիչ» (իբր ած. գիշակեր թռչունների հիրանի. տե՛ս* սարկեաւան*) Վեցօր.* ֆարարկել *«քարկոծել» Տիմոթ. կուզ, էջ 119,* ֆարարկիլ *«քարկոծուիլ» Տիմոթ. կուզ, էջ 25 (երկուսն էլ նորագիւտ բառ, որ տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 106).* անուանարկ *ՍԳր. Կոչ.* ակնարկել *ՍԳր. Ագաթ. Վեցօր. Ոսկ. ա. կոր.* առարկ *«հանելուկ» Փիլ. սամփս. «առարկութիւն» Փիլ. լին.* առարկել *Պղատ. տիմ. Փիլ.* բանսարկու *ՍԳր.* բանսարկութիւն *Թուց իբ. 32. Սիր. ժթ. 15.* բանսարկեալ *Վրք. հց.* գլխարկել *«գլուխը վար կախել (ծանրութիւնից կամ ամօթից)» Ագթ. գ. 12. Վեցօր. Ոսկ. Փիլ. Եփր. Նիւ.* ենթարկիլ *Կիւրղ. գնձ.* խրենկարկու *Դ. Բագ. իգ. 5.* խնկարկել *Շար. Նխ. Թուց.* խնամարկել *ՍՆ. խգ. 21.* կանխարկ *Մծբ.* խուզարկ *Ոսկ. Եբր. ժա.* խուզարկու *Դտ. ե. 14.* ձեռնարկել *«սկսիլ» ՍԳր. «յանձնել» Ոսկ. յհ. ա. 25.* յուզարկու *Խոր.* յուզարկել *ՍԳր. Ոսկ.* յուզարկաւորութիւն *ՍԳր.* սիրարկու *Նար.* փոխարկել *Ոսկ. յհ. ա. 27. Խոր.* փորձարկութիւն *Թէոդ. մայրագ.* շարարկութիւն *«հանդանակ հաւատոյ» Կնիք հաւ. 294 (իբր սարկական Թրգմ. յն. σύμβολον բառի) են։ Նոր գրականի մէջ շինուած բառեր են՝* առարկայ, առարկայական, խաղարկութիւն, խուզարկել, փորձարկել, ձեռնարկ *«գաւազդիրք» (միայն արեւելեան գրականում),* բանսարկել, խնդրարկու, սակարկութիւն, անուանարկել, բուարկութիւն, ներարկել, կիրարկել *են։— Այս իմաստներից դուրս ունինք նաև հետեւեալները.* **6.** *«լցնել» (ջուր, գինի, իւղ) ՍՆ. իբ 18, լե. 15, Ել. խգ. 6, լ. 18, խ. 7, են. որից* արկարան *«մեծ գաւաթ, գինիի աման» Սեբեր. թ, էջ 164 (վրիպակով գրուած է* սարկարան. *տե՛ս այս բառը).—* **7.** *«վրան շոր են ձգել, ծածկել, վրան առնել, հագնիլ» ՍՆ. իգ. 65, լը. 14, Ել. լգ. 33, 35. Ղեւտ. ը. 7. կրաւորական՝* արկանիմ *«հագուիլ» ՍԳր. օր. «Արկեալ զիւրեւ կաւ մի» Մրկ. ժղ. 51. «Արկին զնովաւ հանդերձս» Ղկ. ժթ. 35.* որից արկանելի *«ծածկոց, զգեստ» ՍԳր.* վերարկու *«հագուստ» ՍԳր. «զլխի ծածկոյթ» Ոսկ. յհ. բ. 7. «անաստուն մորթ» Կանոն. «վերմակ, կապերտ» Եփր. պհ. եղիշ.* գլխարկ *Մաշտ. Մխ. ապար. Նոր գրականի մէջ՝* գլխարկատր, գլխարկավաճառ *են։—* **8.** *«շինել, յօրինել, հաստատել, կառուցանել». օր.* Արկցուք ապիւս, արկին պատնէշ *ՍԳր.* Արկցուք առօր, *Վեցօր. 197. որից* արկ *«շինուածք». Օր. «Արկ ձեղուան եկեղեցւոյն» Եփր. փիս. 376.* հիմնարկութիւն *Ագաթ.* հիմնարկել *Փարպ.* ապիւսարկ *Ել. ա. 14. ի. 8, Ոսկ. մ. բ. 14 կամ* աղիւսարկութիւն *Ել. ի. 7.* տնկարկ *«բոյս տնկող» Վեցօր.* երգարկ *«երգ շինող» Եփր. դտ. էջ 332. և մանաւանդ յ նախդիրով՝* յարկանել *«շինել, կառուցանել (տուն են)՝ ՍԳր.* յարկել *«վրան ծածկել» Ոսկ. մ. բ. 2. «կառուցանել» Լմբ. դրր.* յարկ, ի–ա հլ. *«շէնք, ձեղուն, դամիկոն» ՍԳր. Եփր. ծն. Ոսկ. յհ. մ. բ. 2.* յարկակից *Ոսկ. մ. բ. 5.* վերնայարկ *Ագաթ. ՍԳր.* միջնայարկ *ՍԳր.* ներքնայարկ *Տօնակ.* խորանայարկ *Անան. հկիզ.* ետնայարկ *Մարքին.* միայարկ *Օրբ.* կրկնայարկ *Խոր. Փիլ.* եռայարկ *Խոր. Փիլ. Նոր գրականում՝* գեռնայարկ, սառնայարկ, երկյարկանի, վեցյարկանի *են։*

= *Իրան.* harək *ձևից փոխառեալ. համմ. գնդ.* harək, harəčaya- «emittere, հանել, դուրս հանել, բաց թողնել, դէն գցել, մի կողմ նետել, գցել, նետել», harəka- «դէն ձգելու բան» (Bartholomae, Altir. Wört. *1788—9), ասես.* sɣka- «նետ, սլաք»։ *Պարսկերէնի մէջ չէ պահուած բառս։ Սրանց ցեղակից են համարւում միւս.* slactha «զարնուած», slaec «թուր», *գոթ.* slahan, *հիւս.* sla, *անգղս.* slēan *հդ.* slahan, *գերմ.* schlagen «զարնել», *նդլ.* slay «սպանել», *հոլլ.* slaan, *հաքս.* slahan «զարնել», *որոնք*

տալիս են հնխ. slak- *«զարնել» արմատը* (Pokorny *2, 706—7,* Kluge *423)։*

Տէրվ. Նախալ. 46, 110 հնխ. sark *«զարնել, նետել» արմատից, որից նաև սանս.* sarǰ, *զնդ.* harez, hareč, *գոթ.* slahan *և հյ.* հարկանել, զարկանել *են։ Նոյնը նաև* Meillet IF *5, 330,* MSL *8, 288 և* Scheftelowitz BB *28, 305։ Այս մեկնութիւնը սխալ է, որովհետև քնիկ լինելու դեպքում պիտի ունենայինք հյ.* լ, ղ *(և ոչ* ր, *որ արիական է) և* f *(և ոչ* կ*)։ Այս պատճառով էլ մերժում է* Pedersen KZ *36, 289։ Հիւնք.* հարկանել *բայից։* Karst, *Յուշարձ. 402 սումեր.* rig*։—Մառ տե՛ս* անկանել*։ Ուղիղ է Ղափանցեան* ЗВО *23, 353, որ անցողակի համեմատում է զնդ.* harək *բառի հետ։ Նշանակութեան համաձայնութիւնը և արիական* r*-ի դէմ հյ.* ր *պահանջում են դնել փոխառութիւն։*

ԳԻՒՐ.— Այս արմատին են պատկանում արկ *Մշ. «կերակուրի նստել» (գործածւում է հաշուելու համար. օր. Որը չորս արկ կերակուր կուտենք. իբր «անգամ»).* արկ *Խն. «մեռելահաց»,* արկանոց *է. «փեթակի վրայի ծակը՝ որ մեղուների ելևմուտի համար է»,* արկնել *Մրշ. «անձրևել»,* առարկայ *Վն. «վէճի նիւթ», Սեբ. «կռիւ, վէճ», Երև. Ախց. «խօսակցութեան նիւթ»։*

ՓՈԽ.— Վրաց. ხარგა *խարգա «խրճիթ, հիւղակ» մեր* յարկ *բառի՞ց են։*

* ԱՐԿ *«աւան». Նորագիւտ բառ, որ մի անգամ գործածուած է Ուռհ. տպ. էջմիածին, էջ 135 «Մի առ մի քակեալ հանին զքաջ զղօրականսն ի տանէն Հայոց, զորս հանին յարկաց և ի գաւառաց, և բարձեալ խափանեցին զաթոռ թագաւորութեանն Հայոց»։*

=Պհլ. *ark *հոմանիշից, որի հետ նոյն է պրս.* ark *«միջնաբերդ» (օր. Թաւրիզի արքը՝ Ղալայի և Լիլաւայի միջև)։ Ըստ իս այս բառը փոխառնալ պիտի լինի լտ.* arx, arcis *ձևից, որ է «քաղաքի բարձրագոյն մասը, ուր է միջնաբերդը, ապաստարան, պատնէշ, գագաթ» (*Ernout-Meillet *63)։*

Բառարանների մէջ չէ մտած բառս, անշուշտ շփոթուելով յարկ բառի հետ. բայց այս պարագային պիտի լինէր ի յարկաց։ Գաւառ ու մեկնեց Մարքվարթ (նամակ 1926 յնվ.)։

ԱՐԿԱՄ *(բոյսը) տե՛ս Կասկած։*

ԱՐԿԴՈՄ *«օձամարտ». ունի միայն Բառ. երեմ. էջ 37։*

*ԱՐԿՂ *(-կեղ, -ղաց) «անտուկ, պահարան. 2. գրամի գանձանակ. 3. մեռելների ոսկորները պահելու անդուկ» ՍԳր. Ագաթ. Կորիւն. որից* արկղակերտ *Եւս. քր.* արկղագործ *Ագաթ.* արկղիկ *Պատմ. աղէքս.* դրամարկղ, արկղակալ *(նոր բառեր)։*

= Ժողովրդական լտ. arcla *բառից, որի գրականն է* arcula, *իսկ այս էլ նուազականն է* arca *«անգուկ, արկղ, դրամի գանձանակ, մեռելի դագաղ, հագուստի պահարան» բառի, որ ծագում է* arceo *«պահել, պարփակել են» բայից, որի հայերէն լծորդն է* արդել *(տե՛ս այս բառը)։ Նոյնին է պատկանում նաև լտ.* arx, arcis, *որ տե՛ս* արկ *«աւան» բառի տակ. լատին բառը փոխառութեամբ տարածուած է ամէն կողմ. հմմտ. ֆրանս.* arche *«նոյի տապանը» (նոյն իմաստով գտնում ենք պահուած մեր* արկղակերտ *բառի մէջ՝ որ նոյի տապանի համար է ասուած). իտալ.* arcella, *անգլ.* ark, *կորն. և գալլ.* arch, *բրետ.* arc'h, *հիւլ.* arc, arg, *գոթ.* arka, *հիւլ.* ork, *հրգ.* archha, archa, arahha, *մրգ.* arke, *դերմ.* Arche, *անգլոսաք.* örk, *շվէդ.* ark, *հպրուս.* arkan, *հալ.* raka, račica, *չեխ.* rakev, *բոհեմ.* irakli, *լապ.* arkko, *ֆիննն.* arkku, *յն.* ἄρκλα *են։*

Լատին բառի հետ համեմատեց նախ Աւգերեան, Բացատր. չի. և կշռ. էջ 57, յետոյ ՆՀՔ, Տէրվ. Մասիս 1881 ապր" 27 և Հիւնք։ Հիւբշ. IF Anz. *10, 43 որնում էր բառս յունարէնից հասած մեղ.* Scheftelowitz BB *29, 69 լատինից։ Վերջին անգամ* Meillet MSL *18, 349 ցոյց տուաւ որ ուղղակի ժողովրդական լատիներէնից է։*

ԱՐԿՈՂ *«աստղի կամ համաստեղութեան անուն». մէկ անգամ ունի Շիր. էջ 73։*

ԱՐՀ, ԱՐՀԱԿԱՆ *տե՛ս Ահ։*

ԱՐՀԱՄԱՐՀ *(անհոլով բստ ՀՀՔ և ՔՔ, ի հլ.*

ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «խոտելի, բանի տեղ չդրուած, անարգ» *Դան. դ. 14, Ոսկ. յհ. ա. 14, 20, 31.* որից արհամարհանք *ՍԳր. Վեցօր.* արհամարհեմ «բանի տեղ չդնել, նախատել, անարգել, ծաղրել» *ՍԳր. Ագաթ.* կամ արհամարհեամ *Եփր. ա. կոր.* արհամարհելութիւն *Խոսր.* արհամարհիչ *Կիւրղ. Թուց.* արհամարհոտ *ՍԳր. Կոչ. 139.* արհամարհութիւն *ՍԳր.* դիւրարհամարհ *Ոսկ. յհ. ա. 43.* հեշտարհամարհ *Ոսկ. յհ. բ. 11.* արհամեծեալ «արհամարհելով մերժած» *Պտմ. աղեքս. 21 (անշուշտ պակասաւոր գրչութիւն)* արհամարհական, արհամարհելի *(նոր բառեր)*։

= *Կրկնուած է* արհ *պարզ արմատից, որ այլուստ անծանօթ է. կազմութեան համար հմմտ.* աղխ –ա–մաղխ, խառն–ա–մառն։

Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 211 վերի ձևով։ Brosset JAs. *XIV (1834), էջ 383 ևն դնում է* ար–համարել «ոչ համարել», *իբր* ար = *վրաց.* ար «ոչ»։— *ՆՀԲ* ան–համարել «չհամարել ինչ» *(նոյնը Մառ ИАН 1918, էջ 2087)։ Բագրատունի, Քերակ. զարգ. 654* ան–համարել։ Dulaurier JAs. *1870, 125—293* –ամ– *միջամասնիկով կրկնուած՝ իբր* արհ–ամարհ, *ինչպէս* աղխ–ամ–աղխ *և* հեղձ–ամ–րղձուկ։ *Տէրվ. Նախալ. 102 տալիս է վերի մեկնութիւնը և* արհ *դնում է հնխ.* ra, ars *արմատից, իբր ցեղակից* լալ, շաղփաղփ, ողր *են բառերին։ Հիւնք.* արհամար *բառից և կամ կրկնուած* արհ *արմատից։— Կրկնութեան վրայ խօսում են նաև Աճառ. ՀԱ 1899, 207 ևն, Գապանճեան, Արև. մամուլ 1902, 77։*—Pedersen, *Հայ. դր. լեզ. էջ 56* արհ *արմատը կցում է* ահ «վախ» *բառին։*

Փոխ.— Մտած է Ս. Գրքի քրդերէն թարգմանութեան մէջ. Միպբրն, է՛յ արհամարհոդան ու շաշ պրն (Տեսէ՛ք, արհամարհոտք և զարմացարուք). Գծ. ժգ. 41։

ԱՐՀԱՒԻՐ.

= *Կրկնուած է* արհ «ահ» *արմատից, որի վրայ տե՛ս* ահ։

ՆՀԲ մեկնում է ահ աւիր «ահ վայրապար», աւիր *դնելով պրս.* ավարէ *բառից, և կամ* աճատր իրէ։ *Տէրվ. Նախալ. 84* աճ, արհ *արմատից։— Հիւնք.* հարիւր *կամ* Արհմն *բառից։ Իրրև կրկնական են մեկնում Աճառ. ՀԱ. 1899, 233 և Հիւբշ. IF 19, 457—480։*

ԱՐՀԵԳԵԼ «համոգել (!) կամ ծիւրել». *ունի միայն Բառ. երեմ. էջ 37 (ճիշտ նոյն ձևվով նաև երկրորդ տպագրութեան մէջ)։*

ԱՐՀԵՍՏ *տե՛ս Արուեստ։*

ԱՐՀԻ կամ ԱՐՀ, ի հլ. «արքեպիսկոպոս» Գնձ. որից արհիական «արքեպիսկոպոսական» Գնձ.։

= *Յն. ἀρχή «սկիզբ, գլուխ» բառն է. բայց բառի այս գործածութիւնը յառաջացած է* արհիեպիսկոպոս *բառից կրճատմամբ. տե՛ս նաև* արշի։

ՆՀԲ յն. արխի՛։

ԱՐՁԱԳԱՆԳ, ի–ա հլ. «ահռելարար անձրևական է. յետին և տղէտ գրիչների մօտ գըրուած է նաև* արձագանճ, արծագանճ, *և յետոյ համարուելով յոգնակի, կազմուած է հզ.* արձագան *կամ* արծագան *Մագ. Քղ. 117, նաև «ջրերի և ալիքների շառաչը» Մագ. Քղ. 62.— Ս. Գրքում գործածուած է միայն երկու անգամ՝ Իմ. ժէ. 18 և Յոբ. լ. 6. վերջինը «արձագանգ առուղ, քաջահնչիւն» նշանակութեամբ. միւս վկայութիւնները յետին են, ինչ. Բրս. վաշխ. Նար. Խոսր. Լաստ. Փիլ. Շնորհ. ևն. սրանից ունինք* արծանագանուտ «խոխոջուն, շառաչալից» *Մագ. Քղ. 140 (նորագիւտ բառ. տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. հտ. Բ, էջ 179),* արձագանգիլ *(նոր գրաբանում)։*

= *Բարդուած է* արձ *և գանգ բառերից. առաջինը անծանօթ է, իսկ երկրորդը գանգիւն «հնչիւն» բառի արմատն է։*

Հներից Գրիգոր Նարեկացին իմանում է գանգիւն արձանաց, *ըստ որում գրում է. «Ոչ արձագանք արձանաց ի խորոց ինչ դանչութենէ խիստս առաքեցեալ». Նար. ղբ։ Այստեղ* արձան *ասելով հասկացւում է «քար, ժայռ, վէմ», որով* արձագանգ *լինում է «քարերի ձայները»։ Այսպէս է հասկանում նաև ՆՀԲ։ Տէրվ.* Altarm. *55 և Մասիս 1882 մարտ 10, № 3133* արձ + գանգ(իւն). արձ *դնում է* արձակ

բառի հետ նոյն, որով արձագանգը դառնում է «արձակուած ձայն». իսկ Տէրվ. Նախալ. 55 և Հիւնք. բառի առաջին մասի վրայ չեն խօսում։ Մառ ИАН 1912, 598 արձան+վանկ, Яз. и Лит. 1, 269 բասկ. artza «քարոտ» բառի հետ։

*ԱՐՁԱԿ, ի–ա հլ. «ազատ. 2. ազատ, համարձակ. 3. չկնքուած, չփակուած (թուղթ, նամակ)» ՍԳր. Վեցօր. Բուզ. Սեբեր. յետին են «4. ընդարձակ. 5. հասարակ, պարզ (լեզու). 6. լուր, ոչ-տօնական (օր). 7. ուտեստ (օր). 8. հեռու, անդին» Խոր. Վրք. Հց. Մխ. բժշ. ՅՀ. իմ. եկ. Վստկ։ Այս արմատից են արձակել «քանդել, քակել, ազատել, թողնել, ուղարկել, գցել, նետել, դուրս տալ են» ՍԳր. Բուզ. Սեբեր. Ագաթ. որ և արձակուլ Եւս. եկ. պտմ. Գ. իդ. 192, Ոսկ. երր. ժա և համբ. Վրք. Հց. Ա. 600. Կիւրղ. ծն. Ջրր. կթ. Դիրք թղ. էջ 168, 170 (ըստ Նորայր ՀԱ. 1909, 219բ—220ա). արձակաճեր Ոսկ. մտթ. ճերարձակ Գ. մկ. դ. 6. Ոսկ. մ. և ա. տիմ. Ես. արձակավայրք «բաց տեղ, ազատ դաշտ» Եզեկ. խր. 15. արձակաքաղաք «անպարիսպ քաղաք» Օր. գ. 5. արձակերասանեակ Ոսկ. Եփես. և մ. գ. 6. Վեցօր. էջ 17. արձակմանն «ապահարդանի թուղթ» Մտթ. ե. 31. արձակուրգ Երեմ. լգ. 17. Եւս. պտմ. Ոսկ. ես. ընդարձակ ՍԳր. ընդարձակել ՍԳր. Եւս. ընդարձակագնաց Սեբեր. համարձակ ՍԳր. Ոսկ. Եւս. քր. համարձակելի (նորագիւտ բառ) Էմբ. մատ. էջ 53. համարձակագոյն Կորիւն. յարձակ արձակ «շատ ազատ» Ա. մկ. β. 3. յարձակիլ ՍԳր. բացարձակ «հեռու» Ա. մակ. ը. 3. Ոսկ. մտթ. Սեբեր. (նոր իմաստով յետին է). աշարձակութիւն Եզեկ. իդ. 11. ձիարձակ լինել Ագաթ. ձիարձակարան Խոր. Պտմ. աղէքս. բազկարձակ Ագաթ. բուսարձակ Վեցօր. սանձարձակ ԱԲ. նախայարձակ Արծր. նոր կամ նոր իմաստով բառեր են՝ լայնարձակ, լուսարձակ, ընդարձակածաւալ են։

= Հիւս. պհլ. *harzak հոմանիշ ձևից, որի մէջ h ընկել է (հմմտ. համբառնալ–ամբառնալ) և z դարձել է ըստ սովորականին ձ (հմմտ. անդարձ, դերձակ, հանդերձ, բարձ, մարձել). կան սակայն մի քանի գաւառականներ՝ որոնց մէջ թէ՛ ն և և թէ զ անապատ պահուած են (տե՛ս տակը). հմմտ. նաև համարզակիլ «համարձակիլ» ձևը՝ որ գտնում ենք գործածուած Տիմոթ. կուզ. էջ 103։ Պահլաւ բառը թէև չէ աւանդուած, բայց հայերէնի հետ նոյնն են ենթադրում սանս. sṛǰ, զնդ. harez, հիւս. մանիք. պհլ. hyrz (hirz), պրս. هشتن hištan (ներկ. hilam) «ձգել, թողնել, արձակել»։ Նոյն իրանեան արմատից փոխառեալ է նաև հյ. ապահարզան (տե՛ս այս բառը), իսկ արմատի բնիկ հայ ձևն է զ-երծ<հնխ. serg՛։

Նշբ առ ձիգ, առձգեալ։ Müller, A. Kuhns u. Schleichers Btrg. 5, 109 և SWAW 84, 227 արձակ և արձան բառերը գնում է սանս. ṛǰu, զնդ. ərəzu «տղիղ» բառերի հետ։ Տէրվ. Altarm. 55—56 առաջին անգամ համեմատում է սանս. sṛǰ և զնդ. harəz ձևերի հետ. մանրամասնօրէն մէջ է բերում այս բառերի նաև երկրորդական նշանակութիւնները՝ որոնք լիովին համաձայն են մեր արձակել բառի երկրորդական նշանակութեանց հետ. բայց՝ ըստ իր սովորութեան, չի որոշում հայերէնի աղերսը. կերևի որ իրա համար հայ բառը բնիկ է, որի պարզագոյն ձևը պահուած է համարում (անդ, էջ 55 և Մասիս 1882 մարտ 10, № 3133) արձ–ա–գանգ բառի մէջ։ Պատկ. Матеріалы I. 7, պհլ. a-rčak «շղթայազերծ»։ Հիւրշ. իր առաջին աշխատութեան մէջ (Arm. Stud. 21) չէ իսկ յիշում վերի մեկնութիւնը. այնպէս որ Տէրվ. Նախալ. 64 հրաժարած իր ուղիղ մեկնութիւնից՝ բառը կապում է սանս. argh, յն. ὀρχέω և հյ. շ-արժել բառերի հետ, իբր հնխ. argh «շարժել, յուզել, գրգռել» արմատից։ Տէրվիշեանի հին մեկնութիւնը վերսին է կենդանանում Meillet-ի յօդուածով, որ MSL 8, 288 սանս. sṛǰáti, զնդ. hərəzaiti, պրս. hilam ձևերի դէմ գնում է նաև հյ. զ-երծ և արձարծել. (այս վերջինը տպագրական մի վրիպակ է, փոխանակ արձակել) ըստ Meillet-ի արձակել բնիկ է. ն նախաձայնի համար համեմատում է

անկանել=գոթ. sigqan:— Հիւբշ. Arm. Gram. *104, ընդունելով* Meillet-ի *մեկնութիւնը,* արձակել *համարում է սանս.* sṛj, *գնդ.* harəz *արմատի բնիկ հայ ձևը. բայց էջ 425 համարում է անստոյգ, որովհետև ո՛չ իբր բնիկ և ո՛չ էլ իբր փոխառեալ կարող է, ասում է, կապուիլ վերի բառերի հետ: Ուղիղ մեկնութիւնը վերջին անգամ տուաւ* Meillet MSL *17, 244:— Հիւնք.* արձաք *բառից:* Scheftelowitz BB *28, 298 սանս.* rah «*բաժանել*», rahita «*ազատ*», *պրս.* rāz:

Գիհ.—Ջղ. յարձ'ակել «*քանդել, քակել*», *Ախց. Տփ.* արցակ «*լայն*», *Սչ.* արցագել, *Երև.* առցա՛գել, *Պլ. Ռ. Սեբ.* արցրգել, *Կր.* արցրկել, *Ակն. Խրբ.* արցրգիլ, արցգիլ, *Մշ.* ճարցգել, *Ալշ.* ճարձկել, *Մրղ.* առձակել, *Տիգ.* արցրգիլ, *Սլմ. Վն.* առցկել, *Մկ.* առցկիլ, *Ոզմ.* բրցկիլ, *Շմ.* արձագ, *Ագլ.* բոզմ՛կիլ, մ՛ոզմակ, *Ցղ.* մ՛ոզմակ՛, *Ղրբ.* ճոռզմակ, *Հմշ.* ագճռուշ, *Ննխ.* արցրգել, ած'գ'րել, *Զթ.* ածգիլ:

Փոխ.—Սրմագաշևան (Արմէնիա) ռում. hartag «*յանկարծ յարձակում*» և hârtâgos *(հրրցրգօս) «յանկարծ յարձակող, կռուարար» բառերը կցում է հյ.* յարձակ *ձևին. իբր փոխառեա՞լ:*

ԱՐՁԱՆ, ի-ա *հլ.* «*կոթող, սահմանաքար, մահարձան, մեծ քար, կուռք*» *ՍԳր. Ագաթ.* «*փորագրեալ քարէ տախտակ, արձանագրութիւն*» *խոր. Փիլ. Նար.* «*պարսպի բուրգ, բուրջ*» (*այս իմաստով գործածուած Անիի արձանագրութեանց մէջ. հմմտ.* Орбели, О двух терм. *էջ 111—4, ի թերթին* Изв. Р. Ак. Ист. матер. культ. *հտ. I*): *Այս արմատից են* արձանագիր *ՍԳր. Կոչ. Վեցօր.* արձանագրել *Կոչ.* արձակել «*արձանագրել*» *Փիլ. Պիտ.* արձանանալ «*արձան դառնալ, քարանալ*» *Պիտ. Նար.* «*ամրանալ, հաստատուիլ*» *ՅՀ. կթ. Նար.* «*անշարժ՝ ուղիղ մնալ*» *ՍԳր. Կիւրղ. գտ.* արձանութիւն «*ամրութիւն, հաստատութիւն*» *Ես. զ. 13=Մանդ. էջ 139.* արձանաfար «*խոշոր՝ մեծ քար*» *Ուխտ. Ա. 57 (նորագիւտ բառ),* մանարձան *ՍԳր.* աղարձան *Կոչ. 408. նոր բառեր են* կիսարձան, յուշարձան, խաչարձան, արձանագործութիւն *և ն.*

Müller *տե՛ս* արձակ *բառի տակ Ցէրվ.* Altarm. *56* արձակ *բառի նման* sṛj *արմատից, հմմտ. սանս.* samāsarj «*ամբռանալ*»: *Հիւնք,* արձակ *բառից: Յակոբեան, Բիւր. 1899, էջ 599 պրս.* artang *կամ* aržang «*Մանի նկարչի ալբոմը*»: Karst, *Յուշարձան 410 հլ.* եբէզ *քաղաքի անունը և սումեր.* ri «*քարթրութիւն, դադաթ*»: *Մառ,* Сред. передняж. *46* ար+ձան. *Երկուսն էլ նշանակում են «քար». ալտպէս* ար = *հլ.* քար, ձան=*բասկ.* arkayç *(արկայց) «քար» բառի վերջածայնն է:*

Գիհ.— Ակն. Երև. Պլ. Սեբ. արցան, *Տիգ.* mrgmն, *Սլմ.* mրձան, *բոլորն էլ «կուռք» նշանակութեամբ:*

Փոխ.—Վրաց. არძანი արձանի «*մեծ քար, վէմ, 2. քարի աղ*» *(հմմտ. հայ.* աղարձան, արձան աղի *են).* უარძანოკო ուարձանիկո «*անալի*», არძანაგი արձանագի «*հրնութեան և աղնուականութեան իրաւունք*». *վերջինս ենթադրում է հայերէն կորած* *արձանակ *մի բառ, որի հետ հմմտ.* արձանակել «*արձանագրել, յիշատակագրութեամբ և հրապարակաւ հաստատել*».—*բայց արդէն ՀՔ ունի* արձանակ «*արձանագիր*» *բառը, որ չկայ ուրիշ բառարաններում. տե՛ս և* արգանակ «*մեհեան*»:

[ԱՐՁԷՆ *կամ նաև* արձեան, արձին, արձի «*մատնաձև սուր ծայր երեքժանիի ևն*», *առանձին չէ գործածուած, այլ կայ միայն* երեfարձէն «*երեքժանի*» *բարդի մէջ (գրուած նաև* երեfարձին, երեfարձի) *Վրք. հց. Բ. 428—9. իբր առանձին բառ նշանակած են միայն ՀՔ,* ՋՔ արձեանք *կամ* արձէնք ձևով, *ի հլ. և աննշական, որից նաև ՓՔ. իսկ ՆՀՔ* երեfարձէն *բառի տակ գնում է «*արձին՝ *թուի ատամն կամ ժանիք»:*

=երեfարձէն *բառը կազմուած է թարգմանաբար յն.* τρίβολος «dard à trois pointes, trident, *տէգ եռասայր, երեքժանի» ձևից. «Ունէին տէգս հրեղէնս երեքսայրիս և երեքարձիս հրավառեալս. Զերեքարձէնն զայրն հրեղէն տէգս:—Յոյն բառը կազմուած է* τρεῖς «*երեք*» + βάλλω «*արձակել*» *բառերից, որով և հասկանալի է որ հյ.* երեfարձէն *ևս*

կազմուած պիտի լինի արձակել բառից, յապաւամամբ կամ սրա արմատը համարելով արձ–: Այսպէսով արձէն բառ գոյութիւն չունի և սխալ ենթադրութեան արդիւնք է։—Աճ.

Նշ՛ արաբ. սիճն, էսիւճն, եբր. շէն, պրս. տէճտան «աստամ» ձևերի հետ։ Հիւնք. էջ 37 պրս. ارجن arǰan «հեծանոց» բառից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 83 պրս. ارچین arčīn «աստամ, ժանիք»։]

ԱՐՉՈՅՀ (սեռ. -ւի, իսկ Նշ՛ դնում է ի–ա հլ.), գրուած նաև արձուղ, արձող «ձկնորսի ուռկան, ցանց» Սեբեր. 59 (երեք անգամ), Ոսկ. յհ. ա. 1. նոյն բառն է և արձուի «ծովու գործի կամ ցանկ» (իմա՛ ցանց) Բառ. երեմ. էջ 37։

*ԱՐՉՈՒՉԻ «գատաւոր թաթարաց» Մադաք. աբ. 29 «Հրամայեաց իւրոց արդուչացն, այսինքն դատաւորացն... եկեալ արդուչացըն... ասացին արդուչիքն»։

= Թթր. یارغوچی yarγučı «գատաւոր, իշխան, ինքնակալ տէր», որ ծագում է չաղաթ. یارغ yarγu, ալթայ. yarγə, մոնգոլ. ձար, ձարգու «իրաւունք, դատ, դատաստան» բառից (Будаговъ, հա. II. էջ 325—6)։

Ուղիղ մեկնեց Պատկ. անդ, էջ 63։

*ԱՐՃԻՃ (ըստ Նշ՛ ո, ի հլ. առանց վկայութիան) «կապար» Մխ. այրիվ. էջ 10. Վրդ. առ. 341, Զքր. սարկ. բ. 55 (վերջին երկուսը սեռ. արճճոյ ձևով). Ոսկիփ. որից արճճափակ «կապարով փակուած» Մխ. աս. 272. արճճեայ Վստկ. 52. արճճակապ կամ արճիճակապ «կապարով կպցրած» Մարքին. (Նշ՛ և Աբ արճիճ մեկնում են «կապար», Ջռ մեկնում է արճիճ «անագ», սեաւ արճիճ «կապար». առաջինների կողմն են արդի բարբառները, որոնց մէջ արճիճ նշանակում է «կապար կամ հրացանի կապարեայ գնդակ», իսկ երկրորդը հետևում է Ոսկիփորիկին, ուր ունինք «արճիճ սեաւ, որ է կապար», հմմտ. նաև պարսկերէնը։

= Պհլ. *arčīč, որ թէև աւանդուած չէ դեռ մինչև այժմ մեզ հասած գրականութեան մէջ, բայց նրա գոյութիւնն է հաստատում հայերէնի հետ և պրս. ارزیز arzīz «անագ», յատկապէս՝ սպիտակ arzīz «անագ» և սև arzīz «կապար»։ Այս բառի ծագումը բոլորովին անյայտ է, որովհետև կապ չունի դնդ. arezaži- «դաշոյն» և ərəzata-=սանս. raǰatá- «արծաթ» բառերի հետ (Horn § 68)։ Հայերէն բառը թէև աւանդուած է շատ ուշ, բայց իր ձևից դատելով շատ հին է և բխում է պահլաւերէնից։—Հիւբշ. 111։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Նշ՛։ Pictet 1, 158 պրս. բառը կցում է սանս. raǰata «արծաթ» բառին, որ այստեղ դործ չունի։ Lagarde, Arm. Stud. § 262 պարսկերէնից է դնում նաև արաբ. رصاص raṣaṣ «անագ, կապար. այսպէս նաև Müller WZKM 20, 271, որոնց համաձայն չէ Հիւբշ. 511 անկանոն ş-ի պատճառով, փոխանակ լինելու z։

Գիմ.—Ախց. Ղրբ. Տփ. արճիճ, Ագլ. երև. Մկ. Ջղ. Սլմ. Վն. առճիճ, Ոզմ. արճէճ, Մղ. արջիջ, Տիգ. mrǰiǰ, Ջբ. էռջիջ, բոլորն էլ նրշանակում են «կապար. 2. հրացանի գընդակ». վերջին նշանակութիւնից լայնաբար Մրշ. «դէնք, հրացան»։ Նոր բառեր են արճրճել, արճճատուն (բոյս), արճճիկ «որսի հրացանի կապարեայ գնդիկ», արճճոտուն կամ արճիճկապ «մէջը կապար լցրած (վէգ)»։

Փոխ.— Գնչ. arčíči կամ նաև artíči, arkíči «անագ, կլայիկ» կարող է հայերէնից լինել, բայց կարող է նաև ուղղակի պահլաւերէնից փոխառեալ լինել։

ԱՐՃՃՈՒԿ տե՛ս Արտիճուկ։

* **ԱՐՃՈՒԱՆ** «մի տեսակ բոյս, որ խիտ կարմիր ծաղիկ ունի, լտ. cercis siliquastrum, Ֆրանս. gainier կամ arbre de Judée» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 219։

=Արաբ. ارجوان arǰuvān, որ իր կարգին փոխառեալ է պրս. ارغوان arγavān ձևվից, երկուսն էլ նոյն նշանակութեամբ (տե՛ս Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 820 և Շթայնշնայդէր WZKM 11, 268)։

ՀԲուս. անդ յիշում է յիշեալ պրս. և արաբ. ձևերը։

ԱՐՄ (սեռ.-ի) «արմատ» Լծ. Նար. Տօնակ։ Բրս. ապաշխ. ոսկեդարեան հայերէնի մէջ գործածւում է արմն ձևով (սեռ. –մին, գրծ. –մամբ) Մտթ. գ. 10. Ղուկ. գ. 9. Կոչ. ածանցման մէջ մտնում է հետևեալ ձևերով. 1. **Արմ,**

Արմն ձևից՝ արմնիլ «արմատ բռնել, հաստատուիլ» Ոսկ. Ես. արմախարիսխ «հաստարմատ» Նար. խշ. յարմնիլ «հաստատուիլ մնալ» Եփր. մն. 493. արմոջ «դեռ չհրնձուած, թարմ, արմատը վրան (խոտ)» Նար. երգ. 330 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեն. Ա. էջ 144)։—2. **Արմաս** (կազմուած -աս մասնիկով), ո հլ. «ծառի արմատ. 2. ցեղ, զարմ. 3. հիմ, խարիսխ» ՍԳր. Սեբեր. Ագաթ. (այժմ նաև բառի արմատը, այսինքն պարզագոյն սկզբնական ձևը). որից արմատել «արմատ բռնել» Ճառընտ. արմատագէտ Վեցօր. արմատախիլ Ոսկ. արմատակեր Բուզ. Ագաթ. արմատանալ ՍԳր. Ագաթ. Ոսկ. յհ. բ. 8. արմատաթի ՍԳր. Ոսկ. Ագաթ. երկարմատեան Եզն. հաստարմատ Սղ. խէ. 2. խորարմատ Վեցօր. արմատիթ ՍԳր. Եւս. պտմ. կամ արմատիթ Եփր. համաբ. իբր նպակի՝ արմատ Եփր. աւետ. որից արմատաժողով Մծբ. ժթ. նոր բառեր են արմատական, բայարմատ, արմատացեալ են. գաւառականների մէջ հետաքրքրական է կնիկարմատ կամ կինարմատ, որի հին վկայութիւնն ունի Վրք. հց. Ա. 694 կին արմատ։—3. **Զարմ** (կազմուած զ նախդիրով), ի, ի-ա հլ? «ցեղ, սերունդ» Սիր. խ. 15. Ես. ծղ. 22. Խոր. Կանոն. Պիտ. որից անզարմ «անզաւակ» Մագ. հաջազարմ Սկևռ. բարեզարմ Շնորհ. լուսազարմ Նար. կայսերազարմ Գնձ. զարմուհի «սերունդի համար պահուած էգ ձի» Վստկ. 197. (ցեղ ցուցնող բառերը առհասարակ կոճղի և արմատի են նմանեցրած. Համմտ. վերի արմատ բառի երկրորդական «ցեղ, զարմ» նշանակութիւնը, ինչպէս նաև ճիւղ, շառաւիղ՝ որոնք հաւասարապէս երկու նշանակութիւններն էլ ունին)։—4. **Արմանալ** «զարմացած մնալ» Բուզ. Փիլ. (Համմտ. աշխ. փայտ կտրիլ «սաստիկ զարմացած մնալ»). որից զ նախդիրով՝ զարմանալ ՍԳր. Կոչ. Եւագր. Ոսկ. (խոնարհման մէջ տարօրինակ է զարմանասցի Եփր. դատաս. 164). ընդ նախդիրով՝ ընդարմանալ «թմրիլ» ՍԳր. Բուզ. այս ձևերից են՝ արմանալի Փիլ. նխ. արմացումն Փիլ. արմացմ Մխ. բժշ. զարմանագործ Վեցօր Սեբեր. Ոսկ. զարմանազան Ա. եզր. ա. 10. Կիւրղ. խշ. զարմանալի ՍԳր. Եւս. քր. եզն. զարմանք ՍԳր. եզն. Բուզ. զարմացումն ՍԳր. ընդարմացուցանել ՍԳր. ընդարմ Վրդն. եև։

— Բնիկ հայ բառ՝ հնխ. ʃ- արմատից (մանրամասն տե՛ս յառնեմ)՝ -մ կամ -մն մասնիկով. մերձաւոր ցեղակիցներն են յն. ὄρμενος «ցօղուն, ընձիւղ, ծիլ, կաղամբի կուրծ», ὄρχανος «ճիւղ», ἔρνος «ծիլ, ճիւղ», հիսլ.renna «ծլիլ, աճիլ (բոյսի)», rani «ճիւղ», նորվ. runne, rune «ճիւղ», հգ. rono «կոճղ, ծառի բուն», թերևս նաև պոնտ. armon «վայրի բողկ» (Pokorny 1, 137—9, Boisacq 713)։ Pictet 1, 304 պլինիոսի armon ձևը կպում է մեր բառին։ Տէրվիշ. Altarm. 8 արմուկն բառի հետ նոյն ծագումից։ Canini, Et. étym. էջ 127 յն. κορμός «ծառի կոճղ»։ Thomaschek, Deutsche Litteraturh. 1883, էջ 1254 չհչէն. օրում «արմատ» բառի հետ։ Bugge, Lyk. Stud. 1, 18 լիւկ. Ἁρμόδιος և նման յատուկ անունների մէջ։ Scheftelowitz BB 29, 25 հնխ. 0romr, հգ. drum, անգլ. thrum, յն. τέρμα են բառերի հետ, որոնց իմաստն է «ծայր, եզր»։ Patrubány ՀՄ 1906, 57 sero «հոսիլ» արմատից է հանում։ Karst, Ցուշարձան 404 սումեր. erim, rim «հիմնարկութիւն»։—Մատ ИАН 1917, 444 ընդարմ և զարմանալ հանում է աի, զարի «վախ» արմատից։ Պատահական նմանութիւն ունին չհչէն. orum, arumeš «արմատ», արաբ. عرق āruma «արմատ» (Կամուս, թրք. Թրդմ. Գ. 391), ասոր. ʿamrā «բոյս»։ Ուղիղ մեկնեց Persson. Beitr. 657։ Ernout-Meillet 810 լտ. ramus ձևի հետ։

ԱՐՄ. անստոյգ նշանակութեամբ բառ, որ մէկ անգամ ունի Վանակ. վրդ. հրց. «Միկոնն ի՞նչ է.—Արմ ասեն, քան զգաֆրանն հով է և քան զսապոն տաք» (տե՛ս ՀԲուս. § 220)։ Ըստ իս այս բառը կարելի է հասկանալ «բոյս» և այս պարագային կնոյնանայ վերի արմ, արմն բառի հետ. իսկ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 72 մեկնում է «մեկոն, խաշխաշ»։

*ԱՐՄԱ «զինանշան», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մին.

համդ. 42 «Եւ կայսերքն՝ ըստ անուանն՝ առիւծ արմա առաքեցին նմա (Լևոն Բ-ին), զոր բարձեալ ի վերայ դրօշի իւրոյ՝ առաջի իւր ընթանայր»։

=Իտալ. arma «զինանշան», որ ծագում է լտ. arma «զէնք» բառից։—Աճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին. մատեն. հտ. Ա. էջ 135։

ԱՐՄԱՆ ի-ա հլ. անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Մագ. թղ. 214 «Զոմանս (ի ձըկանց) ծպտեալ ի մէջ Դիայ (կայծականց), պարապատեալ արմանօք (կամ արմանեօք)»։ —ՆՀԲ մեկնում է «խոշոր ալիւր կամ արմատանման ծիղ», ԱՔ «խոշոր ալիւր, կամ տերև, կեղև», իսկ ՋԲ միայն «խոշոր ալիւր». այս իմաստի համար հմմտ. գւռ. արմայ «խոշոր ալիւր, եգիպտացորենի կորկոտ»։

ԱՐՄԱՆԱՆ.

=Առմ արմատից՝ փոխաբերաբար. տե՛ս արմ։

Ուղիղ մեկնութիւնը թւում է թէ ծանօթ էր ՀՀԲ-ին, ինչպէս երևում է «կապիլ զգայութեամբ, որով լինի որ իբրև զբկոնդ» բացատրութիւնից։ Windisch. 21 զարմանալ կցում է յն. χαίρω, χάρμα բառերին։ Liden IF 44, 191 կցում է հանդլ. eormen «հզոր, մեծ», հսաքս. irminsûl «մեծ սիւն», հիսլ. jǫrmun, լիթ. ermis «հրէշ» բառերին։

Գիհ.—երև. Շմ. Սեբ. արմանալ, Ասլ. Տփ. արմրնալ, Ակն. արմրնալ, արմրննալ «չտեսութիւն անել», Նոր. Պլ. արմրննալ, Ղրբ. ըրմա՛նալ.—Ալշ. Ախց. երև. Շմ. Ջղ. Սչ. Տփ. զարմանալ, Ագլ. զարմա՛նիլ, Սլմ. զմրմանալ, Մկ. Ոզմ. զմրմռնալ, Ղրբ. զրմա՛նալ, ՋԲ. զարմանոլ, զայմանօլ, Հճ. զայմանօլ։

ԱՐՄԱՍ «հողամաղ թռչունը, լտ. mergus, ֆր. harle, տճկ. զարապաթագ. ըստ Քաջունի, հտ. Գ. 26 և Ա. 988 այսպէս «կոչեցեալ է ուրեք առ մեզ»։

ԱՐՄԱՏ.

Առմ բառից՝ առ մասնիկով. տե՛ս արմ։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ՀՀԲ, Klaproth, Asia polygb. 106 չեչէն. arumeš;—Böttlich. Arica 78, 307 պրս. xarmān «կալ» բառի հետ։ Haug, Gāthā 1, 224 արմտիք բառը համեմատում է գնդ. (spenta) ārmaiti «երկրի Աստուածն բառի հետ։ Հիւնք. արմտիք=թրք. armaγan «նուէր»։

Գիհ.—Շմ. արմատ, ևն.—առհասարակ գործածական է կնիկարմատ բառի մէջ։

***ԱՐՄԱՒ**, ո, ու հլ. «արմաւ պտուղը, խուրմա» Ագաթ. «արմաւի ողկոյզ» Բ. թագ. ժզ. 1. «արմաւենի» ՍԳր. «արմաւենու տերև» Վրք. հց. «մի տեսակ խոտ» Բժշ. «փիւնիկ թրուչունը» Կոչ. 404—5. Տօնակ. Բար. 146. Մխ. առ. (այս բոլոր նշանակութիւնները կազմուած են հետևողութեամբ յունարէնի, ուր φοῖνιξ նշանակում է «արմաւ, արմաւենի, արմաւենու տերև, փիւնիկ հաւ, մի տեսակ բոյս (lolium perenne L)»։ Երջմամբ գրուած է ամրաւ Քուշ. 57, 59. և բ ձայնի յաւելումով եղած է ամբրաւ Ոսկ. ես. Վրք. հց. Վստկ. 206, որ և գրւում է ամպրաւ Քուշ. 54։ Սրանցից ածանցուած են արմաւաստան Եզեկ. խէ, 18, 19. արմաւենի «արմաւի ծառ, արմաւենու տերև, մի տեսակ զարդ (վերջին նշանակութեան համար հմմտ. յն. φοῖνιξ «մի տեսակ զարդ») ՍԳր. արմաւաջուր Վրք. հւագրի. ամբրաւօղի Կանոն.։

=Պհլ. *armav? ձևից, որի դէմ ունինք միայն պհլ. պազենդ. xurmā, պրս. خرما xurmā «արմաւ», xurmāstān «արմաւաստան»։ Այս ձևերը կարող էին յառաջանալ պհլ. *armav ձևից՝ նախաձայն x-ի յաւելումով և վերջաձայն v-ի անկումով։ Առաջին երևոյթի համար հմմտ. գնդ. arša- «արջ»=պրս. xirs, գնդ. išthya=պրս. xišt «աղիւս», հպրս. uška>պրս. xušk «չոր», գնդ. aešma-=պրս. xišm «ցասում»։ Երկրորդ երևոյթի համար հմմտ. հպրս. brūva- > պրս. abrū «յօնք», հպրս. yauviya>պրս. jō «ջրանոց», հին պրս. srvā>պրս. serū «հեղջիւրդ, սանս. գնդ. grīvā=պրս. girē «վիզ»—Հիւրշ. 111։

Այս մեկնութիւնը տուաւ նախ Böttich. Arica 73, 196, Lag. Urgesch. 821 ևն։ Նոյնը ընդունում է Müller SWAW 66, 273, որ և WZKM 9, 79 արմաւ և xurmā գնում է ar-man- ձևից, իբր = լտ. alimentum «սնունդ»։ Իրարից քիչ

տարբրութեամբ նոյն ծագումը տալիս են Peterm. 52 և Հիւնք. առաջինը արմաւ համարում է յն. ἀμβροτος «անմահ» բառից, մեր արմաւօղին դնելով իբր ἀμβροσία «նեկտար», իսկ Հիւնք. էջ 291 ամբրաւ համարում է բարդ բառ, իբր ամբր<յն. ἀμβροτος «անմահ» և աւ<ճաւ, ուստի «ամբրաւ աստուգաբանի անմահ հաւ. քանզի հաւն արմաւ՝ որ և փիւնիկ հաւ, անմահ է, վերստին ծնանելովն ի մոխրոյն (ըստ առասպելաց)»։ Հիւս. § 221 արմաւ թռչունը աստուգաբանում է «միթէ՞ արմ-ճաւ?»։ Scheftelowitz BB 29, 47 մերժելով պրս. xurmā, համեմատում է սանս. āmra «մանգո կոչված պտուղը»։

Գիհ.—Ջղ. ամբրաւ, Մկ. ամբրով, Ագլ. Ոզմ. Վն. ամբրով, Տիգ. ամբրոր. —Միխթար Աբբա, Դուռն քերականութեան, էջ 92 իբրև աշխարհիկ ձև գնում է ամբաւ։—Նոր բառ է Վն. ամբրիկ «արմաւի ձևով շինուած մի տեսակ քաղցր խմորեղէն»։

*ԱՐՄԻՆԱՆ «մի տեսակ բոյս. ֆր. horminelle» Ամիրտ. ունի միայն Հիւս. § 222։

= Արաբ. ارمينين armīnīn կամ ormīnīn, որ փոխառեալ է իր կարգին յն. ὄρμινον «sauge, եղեսպակ. Բրբ. առա չայը» բառից, որից նաև լատ. horminum ևն։

Ուղիղ մեկնեց Հիւս. անդ։

*ԱՐՄԻՈՆ «նաւի առագաստ». բառիս համար ՆՀԲ գտել է միայն մի վկայութիւն, այն է Լծ. նար. ին՝ իբրև բռշարան բառի բացատրութիւնը. սրանից դուրս գտել եմ 11 ուրիշ անկախ վկայութիւն. Հասեալ ի նաւահանգիստ՝ արմիոն նաւին խոնարհի. կամ նաւավարք թևօք վարեն զնաւն և կամ հողմն լնու զարմիոնն և վարէ զնաւն. Հոգին սուրբ իբր զհողմն լնու զարմիոն մտաց մերոց և վարէ զմեզ ի նաւահանգիստն երկնից. Տաթև. ձմ. խա, ճխթ. Լորամարգի նստեալ ի վերայ ջուրց՝ զմի ի թևոցն տարածէ իբրև զարմիոն. Գիրք առաք. 297 բ. տե՛ս և Տաթև. ամ. 508—9, 511, Ոսկիփ. 400. Առաք. լծ. սահմ. 316։

= Ճն. ἀρμενον «նաւի առագաստները, չուանները ևն» (ἀραρίσκω «շինել, կազմել» բայից)։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։ Ջունի Հիւբշման։

ԱՐՄՈՒԽ «թանգ, արժէքաւոր». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Առաք. պտմ. 464, որ Փերուզակի մասին խօսելով՝ ասում է թէ չորս գլխաւոր հանք ունի. (Առաջին) մադանն ի Նշաւուր է. աղէկն ու դիմաթուվն ի հոն կու լինի. Երկրորդ մադանն ի Խոճանտ է. այն էլ հանց որ հինգ ֆլօրին պակաս չի լինիր. Երրորդ քան (պրս. كان kān հանք) ի Քիրման, ի գեղն Շահպասք է. քանց առաջինքն չեն արմուխ...։

+ԱՐՄՈՒԿՆ (-մկան, -կամբ, -կունք, -կանց) «բազուկի ծալուած տեղը» ՍԳր. Փիլ. տեսակ. Ոսկ. Նոր կիր. Նար. «որբի ճիւղ, ոստ» Իրեն. հերձ. 235. յետնաբար գրուած է նաև արմունկն Սիր. խա. 24. արմուկ (ի-ա հլ.) Ճառընտ. արմունկ (բց. յարմնկէն) Մարբին. Գնձ. հոգ. (այս վերջինը «որբի ճիւղ, ոստ» նշանակութեամբ). որից արմնկաչափ «կանգուն, արշին» Մարբին. արմկցի (այն է արմկացի) «արմուկով» ԱՌ։

= Հնխ. arm- արմատականից, որի վրայ հայերէնի մէջ աւելացել է -ուկ. ուկն մասնիկը. իր ցեղակիցներն են՝ սանս. īrmá- «բազուկ, նախարազուկ», զնդ. arəma «բազուկ», սոգդ. 'rm «թեւ», օսս. arm «ձեռքի ափ», գաղա ērmé «ուս», լտ. armus «բազուկ, թիկունք», գոթ. arms, հրդ. aram, գերմ. Arm, անգլսք. earm, անգլ. arm, պրուս. irmo «բազուկ», հալ. ramo, ramę «ուս», հհիւս. armr «բազուկ» (տե՛ս Walde 62, Trautmann 13, Kluqe Etymologisches Wörterb, d. deutschen spr. էջ 23, Pokorny 1. 73, Ernout-Meillet 70)։—Հիւբշ. 425։

Ուղիղ մեկնեց նախ Klaproth, Asia polygl. էջ 100, որ համեմատում է գերմ. arm։ ՆՀԲ լիշում է պրս. aran, aranǰ, arang (սրանք ըստ Horn՝ § 14 կապ չունին այս արմատի հետ), յն. արմօս՝ հօդուած, զօդ, լտ. armus։ Böttich. Arica 71, 160, Lag. Urgeschichte 685 սանս. aratni, պրս. āran, լտ. armus ևն։ Հիւնք. անկիւն բառից, որովհետև յն. ἀγκών «անկիւն և արմուկ»։

Գիհ.—Ախց. արմունկ, Ալշ. Ակն. Ագլ. Գոր. Երև. Զթ. Խրբ. Կր. Ղրբ. Մշ. Ջղ. Տփ.

արմուճգ, վն. արմուճգ՛, Շմ. արմուճ, Տիգ. ɪրմուգ, Հճ. այմուգ, Մկ. էրմուճգ՝, Սլմ. էրմիւճգ՛, Ասլ. արմիւյ, Ոզմ. յէրմօնկ ։ Նոր բառ է արմնկցաւ «տկար՝ անվնաս ցաւ» (իբր թէ արմուկի ցաւ)։

ԱՐՄՏԻՔ տե՛ս Արմ։

ԱՐՇԱԼՈՅՍ. ներկայ գրականի ընդունած ձևն է. հները աւանդում են շատ բազմազան ձևերով. ինչ. արշալուրշ, արշալուշ, աշալուրջ, աշալուրշ, աշալուջ, աշալուշ, աշալուշս, աշալուս, աշալոյս, արշալուս, աշալուրջ, որոնք ոսկեդարեան հայերէնի մէջ (ինչպէս նաև յետնաբար) գործածուած են միշտ անեզաբար, ընդ նախդիրով և անհոլով. (միայն Խոր. բ. 39 ունի հոլովուած աշալրջացն, այլ ձ. աշալրջոցն, աշալրջոցն)։ Այսքան զանազան ձևերը բացատրելու համար պէտք է մեկնիլ հնագոյն *արշալուրջ բառից, որի յգ. հյց. հոլովն է *ընդ արշալուրջսն։ Սրա մէջ կրկին r բաղաձայնները փոփոխակի կամ երբեմն էլ միանգամայն ընկնելով, ջ ձայնը յաջորդ բաղաձայնի պատճառով շ-ի վերածուելով և յետոյ էլ ջնջուելով, և u արմատական կարծուելով ու լոյս բառի հետ շփոթուելով՝ ձևացել են բոլոր վերի ձևերը։ *Արշալուրջ բառի հին նշանակութիւնն է «յետին պահ գիշերոյ՝ որում յաջորդեն նշոյլք լուսոյ առաւօտուն», իսկ արդի «aurora, արշալոյս, տճկ. շաֆախ» նշանակութիւնը յետին է։

=Բարդ բառ է, որ կազմուած է արշ «ըակիզբ) (?) և լուրջ (լուրթ) «կիսամութ, կիսալոյս» բառերից (տե՛ս այս վերջինը)։—Աճ.

ՀՀՒ աշալուրջ դնում է աշել «նայիլ» և լրջանալ բայերից։ Աւետիքեան, Բացատր. շար. 325 «յորում լինի աշել կամ նայիլ, կամ յորում լրջանան աչք»։ ՆՀՒ աչ և լուրթ բառերից և ո՛չ թէ «արշք կամ առաջին և լոյս»։ ՋՒ աչ և լուրջ «զուարթ» բառերից (համմտ. աշալուրջ բառի տակ տուած բացատրութիւնը. «որ ծագմամբ լուսոյն զուարճացուցանէ զաչս»)։ Էմին, Վահագն Վիշապաքաղ (Извлыд. 77) սանս. aruši «արշալոյս»։ Lagarde, Arm. St. էջ 190 արշ? և լոյս բառերից։ Տէրվ. Altarm. 50 համարում է արշա և լոյս բառերից կազմուած. արշա՝ իբրև նախաւոր վաշրա կամ աւշրա «երեկոյ»=լիթ. vaskaras, հիռլ. fescor, յն. ἑσπερος, լատ. vesper, նոյն վաշրա-ից է գնում նաև աշուն, իբր «մութ, տխուր եղանակ»։ Նոյն, Նախալ. 103 դնում է արշա+լուրջ, որի մէջ արշա թողնում է առանց մեկնութեան, իսկ լուրջ՝ արմատակից է դնում լուրջ, լոյս բառերին։ Ալիշան, Հին հաւ. 145 զնդ. ուշահինա կամ օշէն «առաջին պահ աւուր»։ Հիւնք. հանում է արջ և լոյս բառերից. հին հայերը յն. λυκαυγής «արշալոյս» բառի առաջին մասը λύχη «այգ» շփոթելով λύκος «գայլ» բառի հետ, նրա տեղ դրել են արջ և թարգմանաբար շինել են արշալոյս, վանցիան, Պատմ. քեր. 213 առաջին և լոյս բառերից։ Patrubány ՀԱ 1908, 214 արշ- կըցում է արգել բառին։ Karst, Յուշարձան 406 սումեր. ruš, rus «փայլուն» բառի հետ է համեմատում։

Գիր.—Աշմուշ ձևով պահում են Զն. «լուսանալու մօտ եղած մութը», Խն. Մշ. Զն. «արևը մայր մտնելուց յետոյ պատած նօսր մութը, կիսաստուեր», որից աշմշիլ Զն. «լոյսի և մութի մէջտեղ, երբ դեռ մութը բոլորովին վերջացած չէ, լոյսի առաջին նշոյլներն սկըսիլը».—Ախց. արշալուսին՝ ճիշտ արդի գրականի նման «լոյսի նոր բացուել սկսելուն»։

ԱՐՇԱՏ, իբր պտուղի անուն գործածուած է միայն մէկ անգամ Խոր. աշխ. Վենետ. 1881, էջ 32, Մոկաց երկրի բաժնի մէջ. «Ե՛ւ ունի ի մրգաց զարշատ և մանրագործ»։ Բայց Խոր. մատ. Վենետ. տպ. 1843 և 1865, էջ 608, նոյն տեղում գրուած է. «Ե՛ւ ունի ի մրգոց գաւիշակ և մանրագործ»։ Երկուսի մէջ էլ ձեռագրական տարբերութիւններ չեն նշանակուած—Բառս յիշում է միայն ՀՒռս. § 223, ուր մէջ է բերում նաև Ամիրտովլաթի մեկնութիւնը. «Արշատ, որ է հաճար-ըլ-նուան, որ է ըոօջնայն»։—Վերջինս հանքային նիւթ լինելով՝ երկուսը իրար հետ գործ չունին։

ԱՐՇԱՒ, արմատ, որ հների մօտ առանձին

գործածուած չէ. յեռնաբար միայն կայ Գր. տղ. յեմ. Մարթին. որից արշաւել «յարձակելու համար վրան վազել» ՍԳր. Ագաթ. վեցօր. արշաւիլ Եզն. Ոսկ. ես. Եփր. ծն. արշաւանք ՍԳր. Կոչ. Սերբր. Ագաթ. ձիոյ արշաւանք «մէկ ասպարէզ» Ագաթ. արշաւանդէս Մծբ. յարշաւանի (կարդա՛ արշաւակի) Վեցօր. 129. արշաւասոյր Ագաթ. ձիարշաւ Մեսր. եր. Արծր. Գնձ. ֆաջարշաւ Խոր. կառարշաւ Պիտ. ծովարշաւ ԱՔ. գրչագրի սխալ է շաւակի Բուզ. 182, որ պէտք է կարդալ արշաւակի: Նոր բառեր են արշաւախումբ, սրարշաւ, նաւարշաւ, ֆառարշաւ են:

= Պհլ. *aδšāv «արշաւ» բառից, որ կազմուած պիտի լինի ati, հպրս. atiy, գնդ. aiti, սանս. áti «մօտ, դէպի, վրան» (գործածւում է շարժում ցոյց տուող բայերի հետ՝ Böhtlingk, Sans. Wört. 1, 89) նախդիրով՝ գնդ. šav, šyav, հպրս՝ šiyav «շաժուիլ, զինուորական բանակով թշնամու վրայ գնալ», պրս. šudan «ներթալ» բայից (ընդարձակ տե՛ս չու, համմտ. նաև ապա-շաւ):

Տէրվ. Նախալ. 65 սանս. arš, aršāmi ձեւի հետ՝ հնխ. ars «արշաւիլ, սահիլ, հոսիլ» արմատից: Հիւնք, արծուի բառից: Մառ, Яфет. сбор. 1, 51 յաբեթական ras «ձի» բառից: Ուղիղ մեկնեց Մարքվարթ (նամակ 1926 յունվ.):

*ԱՐՇԻ. գործածւում է միայն եպիսկոպոսն արշի ձևի մէջ (Վրք. Հց.), որ շրջուած է արշի եպիսկոպոս բառից, իբր՝

= յն. ἀρχή «սկիզբ, գլուխ». տե՛ս և արճի: Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ (սկիզբն բառի տակ):

ԱՐՇԻԵՊԻՍԿՈՊՈՍ տե՛ս Արքեպիսկոպոս:

ԱՐՇԻՄԱՆԴՐԻՏ տե՛ս Արքիմանդրիտ:

*ԱՐՈՅՐ (սեռ. արուրի) «ոսկեպղինձ, դեղին պղինձ, ֆրանս. laiton, տճկ. փիրինճ» Ա. մնաց. իր. 2 (ուր յոյն և լատին թարգմանութեանց մէջ այս բառը չկայ). նորագիւտ Ա. մնաց. ժը. 8, իր. 2, Ռ. մնաց. ա. 4 (միայն այստեղ ենք գտնում հոլովուած սեռ. արուրի ձեւը). որից արուրի «պղնձեայ» Եփր. զևտ. էջ 220.—արոյրի նշանակութեան վրայ երկար խօսում է Հ. Ս. երեմեան, Բազմ. 1899, էջ 102:

= Հին պհլ. *rōδ բառից (համմտ. բոյր< գնդ. baoiδi-), իբր հպրս. *rauδa, որոնց դեմ կենդանի են պհլ. rōd, rōi, պրս. روی rōy «առնագ, պղինձ», բելուճ. rōd և սոդդ. rōδ «պղինձ» իրանեան ձևերը: Սրանց հետ ցեղակից են սանս. lōha- «կարմիր մետաղ, պղինձ, երկաթ», հալ. ruda «մետաղ», լատ. raudus, rodus, rudus «պղնձի կտոր», հրգ. aruzzi, erizzi, գերմ. Erz «առնագապղինձ», անգլսք. lēad, հոլլ. lood «կապար» ևն, որոնք հանւում են հնխ. reud, reudh կամ leud ձևերից (Walde, էջ 643, Horn § 635, այլ է Kluge 123): Եթէ այս բառը բնիկ հայերէն լիներ և ո՛չ փոխառեալ, պիտի ունենայինք *արոյտ, *արոյդ, *երոյտ, *երոյդ կամ *լոյտ ձևը:—Հնդեւրոպական բառիս հետ նմանութիւն ունին նաև սումեր. urud, աստր. urudū «պղինձ»:—Հիւբշ. 111:

Նէբ լծ. լտ. aes, aeris, իտալ. rame «պղինձ»: Lagarde, Arm. St. § 272 և էջ 188 լտ. raudus, կիմր. elydr ցեղակիցների հետ: Ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. ZDMG (1882) 36, 133: Tomaschek, Deutsche Litteraturz. 1883, էջ 1254 վրաց. rwali: Հիւնք. պրս. rōy բառից: Jensen, հալ և աստրեատանեան ձևերի միջնորդ է դնում հաթերէնը:

Փոխ.—Հայերէնից առնուած է վրաց რვალი «պղինձ, արոյր», որի հին ձևը պիտի լինի *რվարի. համմտ. Գրիգոր>վրաց. Գրիգոլի, մարգարիտ>մարգալիտի:

ԱՐՈՍ «ուժեղ, հզօր». նորագիւտ բառ՝ որ գործածուած եմ գտնում մէկ անգամ Ալեքսանդրի կաֆաների մէջ (Աղթամ. հրտ. Կուտանեան, էջ 108), հետևեալ ձևով. «Ո՛վ վատշուէր Նեկտանեբոս, որ թագաւոր էիր յեգիպտոս, ո՛չ թէ հզօր ձեռամբ արոս» (այլ ձ. հարոս, հրոս, յարոս)... սրա բացասականն է անարոս «տկար», որ գտնում է նախորդից մի քիչ ցած՝ առանց ձեռագրական տարբերութեանց. եղեր տկար և անարոս:

+ԱՐՈՒ.

= Այր բառից՝ ու մասնիկով, տե՛ս այր:

Հիւբշ. ZDMG 36, 121 արմատը ար= յն. ἀρ-σην, Scheftelowitz KZ 38, 263 և BB 29, 45 գնդ. aurva «արագ, ու-

ժողվ, վեդ. arvan, հաաքս. aru «արագ ձի» Meillet MSL 19, 124 լտ. aries, umbր. erietu «խոյ» բառերի հետ։

ԱՐՈՒԱՐՁ. *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* արուարձան *«քաղաքի պարսպից դուրս գտնուած վայրերը կամ գիւղերը» (ի-ա հլ.) ՍԳր.* արուարձանեայ *«սահմանակից» նւս. քր. ա.* արուարձաճեայք *«քաղաքի արուարձանները» Բուզ իա 25. «արուարձանի բնակիչները» նւս. քր. ա. բ.* արուարձական *«սահմանակից» նւս. քր. ա. Ոսկ. մ. բ. 28.* արուարձային *«արուարձանի բնակիչ» Ոսկ. ես.—ուրիշ բառ է* արուարձան *«առնապատակը» (արու+արձան) Նար. կ։*

ՆՀԲ արձան *«քար» բառից։ Հիւնք.* արուարձան *կազմուած է դնում հյ.* արձակավայր *բառից տեղափոխութեամբ։ Պատահական նմանութիւն ունին պրս.* برزن barzan *«թաղ, քաղաքամաս»= զնդ.* vərəzəna- *«համայնք»=հպրս.* vardana *«քաղաք» (*Horn § 199, Bartholomae 1424—5)։

ԱՐՈՒԳ *(գրուած նաև* արուճ*) «նուազեալ, չորացած, տկար» Ոսկ. ես. 178 (Տեղին կործանեցաւ, այսուհետև երթեալ նստիցես ընդ արուք հովանովք). «զուրկ, թափուր» Լաստ. ժ. «չոր, անպտուղ (ծառ)» Սարգ. յկ. ե. էջ 68, Բ. պետր. ա (էջ 414). Գր. սքանչ. ծն. քս. (Նոքա ընդ արուք ծառովն նստէին և հեթանոսք ընդ ոստովք ծառոյն կեննաց. ՀԱ 1912, 473). «ուժը կամ ներգործութիւնը կորցրած» Ղեղ. խալխ. 286 (Ի ծածկոյթ արուգ սրբութեանցն՝ յորում ոչ ևս լիցին զօրութիւնք երկնաւորք)։*

Թաղիադեան, Առաջն. մանկ. էջ 47 հյ. առոյգ բառի հետ կցում է հնդ. ուգ «շաքարեղէգի ծաղիկ» ձևին։ ՆՀԲ և Պատկ. Փորձ 1880 մարտ, էջ 93 (ինչպէս նաև Հիւնք.) կցում են թրք. ارق aruq, arəq *«նիհար, ճոզած» բառին։* Karst, *Ծուշարձ. 418 աւելացնում է նաև ույգուր.* yerik *«հիւանդ, հիւանդոտ», չաղաթայ.* ارىغ arig, arəγ, اريق ariq *«նիհար, ցանցառ, աղքատ», ալթայ.* arə *«յոգնեցնել, նիհարացնել», եաքութ.* yari *«հիւանդ», arittak «նուրբ»։ Մենք էլ կարող ենք աւելացնել դեռ կոյբալ.* ārak, *կարագաս.* arak *«նիհար, ճոզած», բայց այս բոլորը պատահական նմանութիւն միայն ունին, որովհետև ծագում են* aru-maq *«նիհարիլ» արմատից (*Будаговъ, Срав. слов. *1, 34)։*

ԱՐՈՒԵՍՏ, ի *հլ. (յետնաբար նաև ի-ա հլ. մէկ անգամ միայն Բուզ. դ. 20 ունի* արուեստաց*) «ճարտարարուեստ, մտաւոր կամ ձեռական արհեստ» ՍԳր. Ագաթ. Կորիւն. Բուզ. «ձեռագործ, ճարտար շինուած բան» ՍԳր. «հրաշք» ՍԳր. «հրէշ» Փիլ. ժ. բան. Յայտմ. «խաբէական հնարք» Ոսկ. յհ. ա. 12. Լմբ. աղ. Սարգ. որից* արուեստագէտ *Երեմ. իդ. 1, իմ. ժե. 6. Եղն.* արուեստագիտ *Վեցօր. արուեստագործել Ոսկ. մ. ա. 6.* արուեստախառն *Մծբ.* արուեստական *«ճարտար արուեստագէտ» Սերբր. Ոսկ. ես. «առաքինի, բարեպաշտ» Կորիւն. «նենգաւոր» Մծբ. «հրաժշտութիւն, նուագարան, երաժիշտ» ՍԳր.* արուեստանոց *Ոսկ.* անարուեստ *Վեցօր.* զրարուեստութիւն, չարարուեստութիւն *Ոսկ. մ. բ. 27,* արուեստակ *«արհեստ» (նորագիւտ բառ) Անկ. գիրք առաք. 194. յետնաբար աւում է նաև* արհեստ *Ս...հմ. Լմբ. Պզատ. օրին. որից* անարհեստ *Անյ. այրվ. Սամ. երէց. (իսկ ՆՀԲ-ի յիշած* անարհեստ *բառը՝ Ոսկ. ես. պէտք է ուղղել* անարահեստ*՝ ըստ Նորայր, Հայկ. բառաք. էջ 26),* արհեստագէտ *Լմբ. ևն։ Նոր գրականում տարբերւում են* արուեստ *«մտաւոր արուեստ, art» և* արհեստ *«ձեռական արուեստ, métier»։ Նոր բառեր են* գեղարուեստ, ճարտարարուեստ, գեղարուեստագէտ, արուեստակութիւն, արուեստաճաշակ, արհեստական, արհեստանոց, արհեստաւոր, արհեստապետ *ևն։*

ՆՀԲ լծ. լատ. ars, artis *«արուեստ» և և յն.* ἐρατεύς *«սիրահար, սիրող» (էջ 372 ա)։ Հիւնք. ճարուստ բառից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 90 - եստ մասնիկով* արու *բառից, իբր թէ բառը նախապէս նշանակում էր «արութիւն»,* virtus*», յետոյ «ճարտարարուեստ»,* virtuosité*», Առնտալճեան ՀԱ 1913, 401 խալդ.* aris, *լտ.* ars *ձևերի հետ։*

Դիմ.—երև. ա՛րեւեա, Ախց. արէա, խրք. արեէա, Շտ. արեուա են։

***Ա.ՐՈՒՃԱՆԱԿ** *«նկարի ուրուագիծ». կայ միայն* **արուճաճակս** *եանել «նկարի ուրուագիծը պատրաստել կամ դեռ առանց գոյնի նկարել՝ յետոյ գոյները դնելու համար» բացատրութեան մէջ, որ իբրև անստոյգ բառ՝ յիշում է միայն Ա.Բ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. եփես. 873 «Ո՞չ ընդվայր իմն զգործն զոր գործէ՝ թուի, շուրջ գրելն և արուճանակս հանել, այլ յորժամ զերանգսն խառնիցէ, ապա երևի արուեստն գեղեցիկ»։*

=Պահլաւական փոխառութիւն է, ինչպէս ցոյց է տալիս բառի արտաքին ձևը. բայց պահլաւերէնի մէջ համապատասխան բառը չէ աւանդուած. ունինք միայն պարսկերէն զանազան մերձաւոր ձևերով ارچنگ arčang, ارژنگ aržang, ارسنگ arsang, ارتنگ artang, *որոնք Գէորգ դպրի բառարանում հետևեալ ձևով են մեկնուում.* ارتنگ artang *«է անուն գրոց Մանի անուանեալ նկարչին, որ զինչ և իցէ նկար ի միտս իւր եկեալ, կամ զարմանալի պատկեր ինչ ուրեք տեսեալ, զնոյն նախագոյն սևէր ի նոյն գիրս, և ապա նկարեալ պատկերագրէր»,* ارژنگ aržang *«անուն գրոց ինչ, յորում գոն գրեալ պէսպէս նկարք և պատկերք նկարեալք յանուանի պատկերահանէն Մանի կոչեցեալոյ»,* ارچنگ arčang *«նոյն նշ. և ևս նշանակէ նկար»։*

Ուղուրիկեան, Մէճմուայի էֆքեար, թ. 1902, № 360 գնում է պրս. رو rū *«երես»+* ژنگ *«տախտակ, նկար». բայց յետոյ տալիս է ուղիղ մեկնութիւնը՝ կցելով պրս. էրշէնկ բառին (տե՛ս Գաբամաճեան բառարան, 1910, էջ 213 և 1405)։*

Ա.ՐՈՒՍ *«սև խունկ, զուկի,* liquidamlbar». *մէկ անգամ միայն ունի Խորենացու Աշխարհագրութեան ձեռագիրներից մէկը. «Զուկին զոր Հայք արուս կոչեն» (Խոր. մատենագր. էջ 600)։ Ունին միայն Ա.Բ և Գ.Բ։*

***Ա.ՐՈՒՍԵԱԿ** *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ) «երկնքի ամենապայծառ մոլորակը, որ արևածագից առաջ սկսում է փայլփլել. կոչւում է նաև լուսաբեր, այգաբեր, առաւօտու աստղ, լուսոյ աստղ, լուսաստղ» ՍԳր. Գիւտ առ վաչէ. Նար. ծ. և յովէդ. փոխաբերաբար նշանակում է նաև «արեգակ» Նար. Համամ առ. Լաստ. «Յովհաննէս Մկրտիչը» Շար. Նար. «սատանայ» Ես. ժդ. 12. Առ որս. կամրջ. Խոսր. գրուած է նաև* **արաւսեակ, արօսեակ, արիւսակ** *Մագ. թղ. 181. այս բառից են* **արուսեկաձև** *«լուսապայծառ» Նար. յովէդ.* **արուսական** *«արուսեակի նման» Ա.Բ. վերջինս ենթագրում է *արուս արմատը, որ շատ կարևոր է բառի ծագման տեսակէտով։*

=Պահլաւերէն հոմանիշ մի ձևից փոխառեալ, որ թէև աւանդուած չէ, բայց կայ նրա արմատը. համմտ. պհլ. arūs *«ասիտակ, ճերմակ», պազենդ.* alōs, alūs, *փարս.* arōs *«ասիտակ», զնդ.* auruša- *«ասիտակ, լուսափայլ», սանս.* aruśá- *«պայծառ, լուսափայլ, հրաժոյն կարմիր, մանաւանդ՝ արշալոյս, արեգակ, օր». այսպէս է կոչուած Արուսեակը՝ իր լուսափայլ պայծառութեան համար. համմտ. նոր գաւառականների մէջ* **լուսու աստղ, լուսաստղ** *և մանաւանդ թրք.* aq yəldəz *«ասիտակ աստղ=Արուսեակ»* (Будаговъ *1, 499)։—Ա.Ճ.*

Գ.Դ պրս. زاوز zāvars *«արուսեակ»։ ՆՀԲ պրս.* արուսէ *«հարս» (այս բառը մեզ հետ գործ չունի, որովհետև արաբ.* عروس *'arūs բառն է)։* Lag. Urgesch. *337* ruč *արմատից։ Էմին, Վահագն վիշապաքաղ* (Изслед. *77) առնս.* aruša *«առաւօտու աստուածութիւն»։* Mordtmann, ZDMG *31, 417 խալդ.* Arazua *յատուկ անուան հետ։* Müller SWAW *88 (1877), էջ 11 զնդ.* auruša, *օսս.* ors *«ճերմակ» և սանս.* aruṣa *ձևերի հետ։ Տէրվ.* Altarm. *50 առնս.* aruša, *զնդ.* auruša *ձևերի հետ՝ լոյս արմատից։ Նոյն հեղինակը՝ Մասիս 1881 մայ'' 1 և Նախալ. էջ 45, 48, 63 թէ' առնս. և զնդ. ձևերը և թէ հայ. արև, արեգակ, արուսեակ բառերը հանում է հնխ.* ark *կամ պարզական* ar *արմատից, մերժելով լոյս բառի հետ որևէ առնչութիւն։* Bugge, Etrusk. u. Armen. *էջ 3 իբրև նաւագական *արուսի ձևից, որ մեկնում է «արև» և կցում է արտուկ.*

erus «արև» բառին։ Հիւնք. արաբ. արուսեք «փոսուռալ»։

+**ԱՐՋ**, ո, ու հլ. (յետնաբար նաև ի հլ.) «արջ գազանը» ՍԳր. Ագաթ. եզն. «Բևեռի մօտ գտնուած և հօթ-եօթը աստղերից բաղկացած երկու համաստեղութիւն, որոնք զանազանւում են իրարից՝ **Մեծ Արջ** և **Փոքր Արջ** անուններով» Շիր. 49. Խոր. աշխ. «Հիւանի մեծ յըղկիչ գործիք, խարաբուզ» ՋՔ (իբրև ռմկ.) և ԱԲ. «ԳՋ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. Արրատ. 1894, 257 և 259։— Երկրորդական նշանակութիւնները ծագած են թարգմանաբար. հմմտ. յն. ἄρκτος «արջ և Մեծ Արջ ու Փոքր Արջ համաստեղութիւնները», իտալ. orso «արջ և յղկիչ գործիք»։ Այս արմատից են ծագում մկնարջ Բռ. ատևի. լեհ. կամ արջամուկն «մի տեսակ անասուն» ԱԲ. արջենի «արջի մորթուց գգեստ» ԱԲ. արջային «հիւսիսային» Խոր. աշխ. (իբր թրգմ. յն. ἀρκτικός «հիւսիսային» բառի), արջատակ կամ արջատակ «թաղթ, վայրի շողգամ, cyclamen» Բժշ. (հմմտ. պրս. خرسکیاه xirs-giyāh, յն. ἀρκό-πους, ἀρκὸ-φυτον, ἄρκτιον, որոնք այլևայլ բոյսերի անուններ են և բոլորն էլ կազմուած «արջ» բառից. այսպէս նաև հյ. արջախատոր, արջու ականջ, արջու աչք, արջընկոյզ, արջի հաւ, արջու խաղող են)։ Նոր բառեր են արջապան, արջմեղու, արջամագիլ են։—Ունինք գրուած առջ վրդ. առ. 84։

= Բնիկ հնդեւրոպական բառ՝ հնխ. ḱtho- ձևից, որի միւս ժառանգներն են սանս. ṛkša-, հինդուստ. ऋक्ष ričəh, զնդ. arša-, սոգդ. aššа, օսս. ars, պրս. خرس xirs, պազա xəš, բելուճ. riš, յն. ἄρκτος, ալբան. ari, լտ. ursus (որից ֆրանս. ours, իտալ. orso, սպան. oso), հիւլ. art, կիմր. arth, բոլորն էլ նոյն նշանակութեամբ (տե՛ս Walde 861, Boisacq 78, Horn § 477, Pokorny 1, 322, Ernout-Meillet 1095)։ Ամենահին ժամանակներից սկսած այս բառը հնձթարկուած էր tabou-ի և դրա համար էլ *ḱtho- նախաձևը այնքան շատ ձևափոխութեանց է հնձթարկուել բոլոր վերոյիշեալ լեզուների և մանաւանդ հայերէնի մէջ (տե՛ս Meillet, Interdictions de vocabulaire, էջ 7—12)։ Նոյն tabou-ի պատճառով է նաև որ սլաւական, բալթեան և գոթական ճիւղերը ի սպառ ջնջել են բառը, հնարելով նրա տեղ նոր դարձուածներ. ինչպէս՝ «մեղր ուտող» (ռուս. медведь), «թաթախ» (գերմ. Bär) են։ Նման բացատրութիւններ կան նաև հայերէնի մէջ, ինչ. քեռի, լեռան ծաղկակոխ, տանձակեր են։—Հիւբշ. 425։

Ուղիղ մեկնեց նախ Klaproth, Asia polygl. էջ 99, որ սակայն կցում է նաև բասկ. artsa։ Ինճիճեան, Հնախ. Գ. 21ա բնաձայնից։ ՆՀԲ համեմատում է յն. և լա. ձևերի հետ. նոյնը կրկնում են Peterm. 26, Windisch. 9 են։ Հայերէնի ջ վերջաձայնի բացատրութեան համար տե՛ս Տէրվ. Altarm. 26, Meillet MSL 10, 281 ծանոթ., Les dial. indo-eur. էջ 86, Pedersen KZ հ. 38, էջ 208, 213 և հ. 39, էջ 432։ Scheftelowitz BB 28, 293 և 29, 17 բոլորովին մերժում է համեմատութիւնը՝ ջ-ի հանած դժուարութեան պատճառու և կցում է արջն «սև» բառին, ճիշտ ինչպես գերմ. Bär «արջ»=լիթ. bėras «թուխ»։ Տե՛ս ИАН 1920, 134 բասկ. ars «արջ», Яз. и Лит. 1, 234 վրաց դաթվ, արաբ. dab, յն. ἄρκτος «արջ» և վրաց. արչու «դորշուկ» բառերի հետ։

ԳԻՒՒ.—Շմ. Սչ. Տփ. արչ, Ասլ. արչ, արշ, Ոզմ. արճ, Ալշ. Մկ. առճ, Հճ. արջ՝ (<*առջ)։ Ախց. Ակն. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Մշ. Մրղ. Ռ. Սեբ. Սլմ. Վն. առչ, ՋՔ. առջ՝, Համշ. այչ, Ագլ. օռջ. այս բոլորը պահած են իրենց նշանակութիւնը. միայն Տիգ. առչ «արու կաուս», իսկ «արջ» նշանակութեան համար գործածւում է Թրք. այու բառը (նոյնը Պլ. և Ննխ.)։ Նոր գաւառական բառեր են արջագոռ ասլ, արջակատու, արջակճնիկ, արջանաշխ, արջապան, արջապապոյ, արջապլոյ, արջապար, արջատանձի, արջախոթոթ, արջախուռակ, արջախուճ, արջխնդեղնի, արջուշապ, արջփիլուճ են։

ՓՈՒ.—Բրդ. hirč, erǰ, harč, hərč համանիշները պէտք է կարծել թէ հայերէնից են՝ ǰ, č վերջաձայնի պատճառու, որ իրանեանների մէջ չկան։ (Ս. Գրքի թարգմանութեան մէջ

դրուած է հէրջ. այսպէս՝ Ու լնկէ ուի ոգա լընկէ հէրջ (և ոտք նորա իրրև զարջու). Յայտ. ժգ. 2։—Փոխառեալ է նաև չերքէզ. erš. և թերևս գնչ. hirč, ričini «արջ» (հինդուստ. ձևն է ričəh, որ բուսական հետու է գնչ. hirč ձևից)։—Վրացերէն ևս կան արջაკელა արջակելա և արջოკა արջոիկա «վայրի կանկառ» բուսանունները՝ որոնք Ջուբինովի բառարանում (2-րդ տպ. էջ 48) հայերէնից փոխառեալ են համարւում։

ԱՐՋԱՌ, ո հլ. (յետնաբար նաև ի-ա հլ. ըստ այմ եզնիկի արջառաց ձևը յետին սրբագրութիւն է) «տաւար, ընդհանուր անուն կովի, ցուլի, եզան, հորթի և երինջի» ՍԳր. Եզն. Եւս. քր. որից արջառէանց (իբր Բրգմ. Վասիւր անուան) Եւս. քր. արջառաջիլ ՅՀ. կթ. Վրք. Հց. արջառամաճ Մանդ. արջառակաշի Նոննոս. ևն։

Klaproth, Asia polygl. էջ 104 ֆինն. erže, örǰ բառերի հետ։ Müller SWAW 42, 255 և 88, 12 յն. ἄρσην «արու», սանս. ṛšabha, vṛša «սերմ թափող» և գնգ. arṣan «այր» բառերի հետ։ Հիւնք. հանում է բառաչ բառից։ Scheftelowitz BB 28, 310 և 29, 17 առ մասնիկով արջ բառից։ Մառ ИАН 1912, 834 երինջ բառի յոգնակին է համարում,

Գիհ.—Նր. արչառ, Մրղ. արչար, Երև. Կր. Համշ. Ննխ. Շմ. Ջղ. աչառ, Ալշ. Մշ. Ոզմ. աճառ, Մկ. աճmռ, Վն. mճmռ, Մժ. աչէռն, բոլորն էլ նշանակում են «երկամեայ արու հորթ, դեռ չծուած փոքր եղ»։

*ԱՐՋԱՍՊ (ի, ի-ա հլ. ըստ ՀՀՒ, ո հլ. ըստ ՆՀՒ և ՋՒ) «սև թանաքի համար գործածուղ քիմիական մի տեսակ նիւթ, ծծմբաթթու, ֆրանս. vitriol, sulfate» Երզն. երկն. Բ. Բժշ. Վստկ. 80. Վրք. քերթ. Ոսկիփ. Մխ. ապար., գրուած է նաև առջասպ, արջասպն, արջասպ (վերջինը գիտէ միայն ՓՒ). որից արջասպաներկ «արջասպով ներկուած, սև» Տօնմար. «թանաք» ԱՒ. արջասպնագոյն Տաթև. ամ. 465. նոր բառեր են արջասպախառն ՋՒ, արջասպային ՀՀՒ, ՋՒ, արջասպուտ ՀՀՒ։

=Բարդուած է արջ-ն «սև» և ասպ (անծանօթ) բառերից. Համմտ. լտ. ater «սև» և atramentum «արջասպ». ըստ այմ Հայերէն ասում է նաև սևալեղ։

Առաջին անգամ ՀՀՒ արջն «սև» բառից։ ՆՀՒ արջն «սև»+արաբ. սէվոյ «զգեստ»։

Գիհ.—Ալշ. առճասպ, Մկ. առճmսպ, Սլմ. mռճասպ, Ոզմ. արջապս, Մշ. առճապս։

ՓՈԽ.—Վրաց. არჯახჯი արջասպի «արջասպ, купоросъ", որ Ջուբինով (բ տպ. էջ 48) հայերէնից փոխառեալ է համարում։ Նոյնպէս է նաև Թուշ. არჯაშ արջամ «արջասպ»։

*ԱՐՋՆ «սև». մէկ անգամ գտնում եմ գործածուած Բուզ. Գ. 14. «Եւ յաւուրս ձմերանոյն՝ յորժամ... կամէր ուրեք երթալ ի պէտս ճանապարհի, յանկարծօրէն ձիւնն յամաք արջն լինէր առաջի նորա»։ Այս արմատից են կազմուած արջնագոյն «մուխ գոյնով» Փիլ. եր. 548. արջնաբոյր «բոլորովին մուխ» Ճառընտ. արջնագոյս «սև ագռաւ» Մխ. առ. արջնազգեստ «սևազգեստ» Լաստ. Մարութ. Փիլ. սամփս. 575. Սարգ. յկ. գ. արջնաբոյր «սևագոյն» Նար. 177. Լմբ. մատ. 541. Կաղկանտ.? արջնայեղց «բոլորովին սև» Ոսկիփ. արջնատես «սև» Նար. լա. էջ 79. արջնատեսակ «սև» Մխ. առ. արջնազգեցեալ «սևներ հագած» (նորագիւտ բառ) Պարականոն շար. էջ 95 (մէկ անգամ միայն գործածուած է). արջնդեղ «սև սոնիճ բոյսը» Ես. իր. 25, 27. Մխ. առ. (այսպէս նաև լտ. nigella, յն. μελάνθιον հոմանիշները, որոնք կազմուած են niger, μέλαν «սև» բառերից)։ Այս բառից է նաև արջասպ, որ տե՛ս վերը։—Արջն արմատը ներկայանում է մեղ երկու ուրիշ ձևերով էլ, այն է աղջ և աղտ։ Առաջինը՝ աղջ «մուխ, մթութիւն», առանձին անգործածական մի ձև է, որից ծագում են աղջուրիւն «խաւար» Նար. ղ, էջ 16. կրկնութեամբ աղջաղջ (սեռ. ի) «մշուշ» Նիւս. սքանչ., «մուխ, ոչ-պայծառ, անթարեկարգ (եկեղեցու համար ասուած)» Սմբ. դատ. 51. աղջամուղջ (ի, ի-ա հլ.) «թանձր մուխ» Յեսս. բ. 5, Բ. պետ. բ. 17, աղջամղջին Յոբ. ժ. 22. Ամովս. Է. 20. աղջամըղջեալ Ոսկ. ապաշխ. Փիլ.—երկրորդը՝ աղտ «մուխ, խաւար», նոյնպէս առանձին չէ գործածուած, բայց ունինք սրանից աղտամուղտ «մուխ, խաւար» Եփր. գծ. էջ 25 (տե՛ս նաև մուղտ արմատը առանձին)։

= հիւսիսային կովկասեան լեզուներից փոխառեալ բառ է. համմտ. չեչէն. ‘ärži «սև», ‘erzin «սև, մուխ», ‘aržulla «սևութիւն», ինգուշ. արջի «սև», թուշ. արջի, ‘արճի «սև», ‘արճի ատթեր «սև փող, պղինձ դրամ»։ Ըստ իս այստեղ է պատկանում նաև վրաց. ახ-ჯაკელა արջակերա, ახჯოკა արջիոկա «հոռոմ արջնդեղ, nielle romaine» (բայց տե՛ս նաև արջ բառի տակ)։ Համմտ. նաև մուղտ, մուղջ բառի տակ յիշուածները։—Աճ.

ՆՀՒ արջն դնում է արջ բառից (որպէս հասարակ գոյն արջոց). աղջամուղջը< աղտամուղտ-ից, իսկ աղտամուղտ կազմուած աղտ և մուղտ կամ մուր բառերից։ Տէրվ. Նախալ. 99 աղջամուղջ բառի մէջ՝ մուղ մասը կասկածով նոյն է համարում մռուր, մռրիկ, մուր, մռայլ յն. μέλας «սև» են բառերի հետ, իբր հնխ. mar «սևանալ» արմատից։ Հիւնք. աղջամուղջ հանում է արջն բառից, իսկ արջն դնում է հյ. արծաթ կամ արաբ. արսա «հող, երկիր» բառից։ Scheftelowitz BB 28, 298 աղջ կցում է լիթ. žlėjà «վերջալոյս», žlėjuju «մթնել» բառին. իսկ BB 28, 293 և 29, 17 արջն՝ յն. ὀρφνός «մութ», ὀρφνῶδης «սևացեալ», ὄρφνη «մթութիւն» բառերին։ Meillet MSL 10, 279 աղջ բառը համեմատում է յն. ἀχλύς «մշուշ, մթութիւն», հպրուս. aglo «անձրև» բառերի հետ, ընդունելով, որ ջ ներկայացնում է այստեղ հնխ. gh։ (Սակայն այս մեկնութիւնը ներկայացնում է մի քանի դժուարութիւններ. նախ՝ ի նկատի առնուած չեն արմատակից արջն և աղտ ձևերը և նրանց յարաբերութիւնը հաշուած չէ. երկրորդ՝ gh>ջ ձայնափոխութիւնը անաւոյգ է. երրորդ՝ ἀχλύς = aglo համեմատութիւնը հասատատպէս ընդունուած չէ. համմտ. Walde 527 և Boisacq 108)։ Petersson, Arische und Armenische Studien, էջ 126 աղջ բառը կցում է լտ. algeo «մրսիլ, սառչիլ», algor «սառնամանիք», algidus «ցուրտ, սառած», նիսլ. elgur «ձևան բուք, կիսահալ ձիւն» բառերի հետ, որոնց արմատն է հնխ. algh-. այս արմատից է դնում նաև հպրուս. aglo և յն. ἀχλύς, իբր հնխ. a(l)gh-lu-։

Գիմ.—Առհասարակ կորած են գաւառականներում. բայց կան դեռ Տփ. ախտամուխին, աղբումուխքին «մութնուլուսուն»։ Ախց. աղտեմղտին «արշալոյսին, լուսանալու մօտ», նրև. Լ. Շիր. աղտամուղտ «առաւօտեան և երեկոյեան աղջամուղջ, խաւար» (Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 24 ա), կայ և աղտեմղտիլ «լուսանալու մօտ արեւելքի լուսաւորուիլը» (Նորայր, Բառ. ֆր. crépuscule բառի տակ)։

ԱՐՍԻՆ. մէկ անգամ միայն գործածուած է Երեմ. ը. 7, իբր համապատասխան երբ. תִּירָה xasīda և յն. ἀσίδα բառերի, որոնք մէկ անգամ էլ Յոբ. լԲ. 13 են գործածուած և հայերէն թարգմանութեան մէջ պահուած են ասիդ տառադարձութեամբ (տե՛ս այս բառը)։ Ս. Գրքի մեկնիչները xasīda բառը հասկացել են «կարապ, յոպոպ, արագիլ, բազե, մարախ», նորագոյն գիտուններն մեկնում են «արագիլ»։ Հին հայ մեկնիչներն էլ սրանց համեմատ ասիդ բառը մեկնել են «հաւ, գազան, սղոյն» (տե՛ս անդ), իսկ արսին բառը մեկնում են «թռչուն, սատղ կամ արուսեակ». համմտ. «Արսինն թռչուն է օդադնաց, հասակաւ և գունով և ձայնիւ որպէս սարիկ. ոտն կարճ է և ճանկն սուր. հետևակ չկարէ երթալ, բարձր բոյն դնէ, և բարձր որսայ իւր կերակուր» Վանակ. հրց.։ «Արսին՝ ոմանք դասիդայդ հաւ ասացին և այլք սատղ ասեն յերկինս». «Արսինդ թևրևս արօսեակդ է, և նշանակաւ Յովհաննէս է» (Մխ. երեմ.)։

Müller SWAW 64, 454 և 84, 227 արսին մեկնում է զնդ. airya saēna, համարելով թէ զնդ. saēna բարդութեանց մէջ տալիս է հյ. սին, իսկ անկախ՝ ցին։ Տէրվ. Altarm. 22 նոյն մեկնութիւնը կրկնում է։ Եաղըճեան, Մասիս 1884, էջ 201 մեկնում է «լեռան բազէ կամ լեռան արծիւ», իբրև կազմուած ար «լեռ» և սին=սանս. çyēna, զնդ. saēna «արծիւ կամ բազէ» բառերից. յետոյ համեմատում է եաանա ժ. 27 յիշուած ուրէրիսաէնա բառի հետ, որ թարգմանում

է «հուսկ յարսին» և ո՛չ թէ «ի ծայր լերին» ուր «Աահնա բնակի»։

*ԱՐՎԷՍ «սապոն» (որ է հալուէ) Գազիան. ունի միայն Բառ. երեմ. յաւել. 573։

=Յն. ἀλόη, ης, լա. aloe, es, ֆրանս. aloés, անգլ. aloes «հալուէ»։—Ա.Ճ.

+ԱՐՏ, ո հլ. «ցանուած կամ ցանելիք հող» Սղ. ճզ. 37. ես. իէ. 4. որից արտավար «արտաշափ, օրավար» եւս. քր. «մշակուած արտ կամ վարելիք հող, արտ» Ոսկ. մ. ա. 6, 12. եփր. օրին. ես. ժթ. 7. «երկրագործ, արտ վարող» Նոննոս. Ճառընտ. արտավայր եփր. պհ. 174. արտավարել «արտը վարել, մշակել» Վրդն. սղ. և լուս. արտաճուճն, արտճուճն, արտուճն «արտը հնձող անձր» Մանդ. էջ 169. Ճառընտ. արտորայք ՍԳր. Ոսկ. արտաճող «արտ լինելու հողը» (նորագիւտ բառ) եփր. մատ. հա. Գ. էջ 174 (բատ մի ձեռ. տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. հա. Բ. էջ 268)։

=Հնխ. ag'ro- բառից, որի միւս ժառանգներն են յն. ἀγρός, լա. ager, սանս. ájra, գոթ. akrs, հրգ. ackar, achar, գերմ. Acker, հիսլ. akr «ագարակ, արտ, անդաստան» (տե՛ս Walde 19, Boisacq 10, Kluge 6, Pokorny 1, 37, Ernout-Meillet²2)։ Հնխ. ag'ro- առել է հայերէնում նախ *ագր-, անփափոխութեամբ *արձ- և լեռնոյ ձ-ս ձայնների փոխանակութեամբ արտ։ Միևնոյն բառը ունինք նաև հլ. ագարակ ձևով, որ բատ իս քննիկ չէ և փոքրասիական հնդեւրոպական մի լեզուից փոխառութիւն է։

Նշ Բ երբ. արար. պրս. եռեն, արզ, երզ «երկիր, վեմին»։ Peterm. 258 երբ. ארץ areṣ «երկիր, վեմին»։ Տէրոյենց պատուէրի, Վրևակ 1857, էջ 99 դար «շիտակ վեմին» բառից տեղափոխութեամբ.=լա. terra, սանս. տարա։ Lagarde, Arm. Stud. § 278 հնխ. ar «հերկել» արմատից, որից և լա. arare ևն։ Müller SWAW 88, 12 իբր հնխ. arta «մշակուած»։ Տէրվ. Altarm. 72 պատրոյ հանում է որոյ բառից, որ տե՛ս նոյն, Նախալ. 62՝ բատ Lagarde-ի՝ հլ. արօր, գոթ. airda ևն ձևերի հետ՝ հնխ. ar «հերկել» արմատից. Ձի ընդունում Հիւբշ. Arm. St. էջ 11։ Հինդ. պրս. ɔɔ ard «ալիւր» բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Meillet MSL 9, 150, որ կրկնում է լեռնոյ Pedersen KZ 39, 352։—Patrubány SA 2, 12 յն. ἀρόω «հերկել» բառի հետ։ Գ. Փաստակ, Անահիտ 1906, 233 արմատը ար, որից նաև արարք «կալուածք», ար-ա-ճեռ և ալբան. ar «արտ»՝ իբր փոխառեալ։ Karst, Յուշարձան 402 սումեր. ar «արտ»։—'Oštir, Btrg. alarod. 59 սումեր. adar «դաշտ» բառի հետ։ Գաստահական նմանութիւն ունի արաբ. ارض «հող, երկիր»։ Նաև՝ Pictet բ. տպ. հա. Բ. 108 գոթ. airtha, պհլ. artā, քրդ. ard, օսս. ardus «արտ, մարգ», որոնք հաւանաբար սեմական են, իբր արաբ. ardh ևն։ Autran, Sumér. et ind. 79 յն. ἀγρός են. ձևերի հետ կցում է սումեր. agar, աքքատ. ugaru «արտ»։ Գաստահական նմանութիւն ունին հրգ. art, անգլսք. earð, հհբւս. qrð, հնաքս. ard, որոնք նշանակում են «ցանուած հող, արտ, հունձք, բնակավայր, հայրենիք» և ծագում են artōn «արօրով վարել» բայից (Pokorny 1, 72)։

Գիհ.—Ախց. կր. Շմ. Ողմ. Տփ. արտ, Գոր. Ղրբ. Մկ. Սլմ. վն. առտ, Ակն. Խրբ. Ռ. Սեբ. արդ, Երև. առդ, Տիգ. mrդ, Սլղ. Մշ. յարդ. Ասլ. արդ, ար*, Հմշ. այդ, Ագլ. օռտ, Զթ. օյդ, ուրդ, Հճ. օյդ։ Նոր բառեր են արտախլիս, արտաշափ, արտատեղ, արտատէր ևն։

Փոխ.—Վրաց. ართავარი արտավարի «հօթը փթանոց չափ» (փոխառեալ է հյ. արտավար բառից, որ ծագում է արտ և վարել բառերից). քրդ. ard, ārd, ērd, hhard «հող, դաշտ, արտ». հմմտ. Սլղ. Մշ. յարդ ձևը՝ որից ուղղակի քրդ. hhard. (սխալւում է Justi, Dict. Kurde, էջ 5, որ այս բառերը համարում է արաբ. ard, arz ձևից)։

+ԱՐՏ «դուրսը». արմատ առանձին անդործածական. որից -ատ- մասնիկով արտատ- (հմմտ. արմատ-ատ-ի, ներ-ք-ոյ ևն) և այս արտատ- ձևից էլ նորանոր մասնիկներով՝ արտատս «դուրս» ՍԳ. Ագաթ. եզն. եփր. ես. արտատսել Ագաթ. արտատիճն ՍԳր. արտատոյ ՍԳր. եւս. պտմ.

bզն. Ոսկ. ես. Բուզ. արտաfուտա *ՍԳր.* արտաfնոց *Վրք. Հց. Վստկ. 30. Մաբթին. «սրբուն, anus» (չունի ԱՔ) Տաթև. Հարց. 241. յետոսկեդարեան շրջանին արտդարձել է նախամասնիկ, իբր համապատասխան չն ἐκ, ἐξ- մասնիկին և սրա օրինակով՝ յունարէնից թարգմանաբար յօրինուած են բազմաթիւ նոր բառեր. ինչ.* արտաբերել = *չն.* ἐκ-φέρω, արտադատել = *չն.* ἐκ-κρίνω, արտադրել = *չն.* ἐκ-τίθημι, արտալածել (< *արտ+ալածել) = *չն.* ἐξ-ελαύνω, արտաշնչել = *չն.* ἐκ-πνέω, արտասանել = *չն.* ἐκ-φωνέω, արտուհութիւն *կամ* արտօհութիւն (< արտ + ունել *բառերից*) = *չն.* ἐξ-οχή *են ևն։ Նոյն մասնիկը գտնում ենք նաև մի քանի ոսկեդարեան գրուածքներում, բայց սրբանք անշուշտ յետին ձեռքերից ներմուծուած են. այսպէս՝ «Եւ զորրութիւն արտաուրեան անձանցն սրտակեղ ցաւոցն արտաբեկութեանն» Բուզ. Դ. ժգ. էջ 93 (ուղղել* արտաուրեան*). «Ոչ ըստ արտուղի անկանին» Ագաթ. «Մոլորեցաւ նա ըստ արտուղի» Եփր. ծն. «Մոլորեցոյց զնոսա ըստ արտուղի» Եւս. պտմ. 619. «Վրիպեալ զարտուղին խորհուրդք, Վեցօր. ղ. «Ոչ իբրև գտնիկ մի արտաճալած խուճապէր» Ոսկ. Փիլիպ. էւ — Անասէր կապմութիւն ունի* արտաfական *Սոկր. 198, իբր չն.* ἐξίστατα *«չետս կացցն»։*

= **Urs** *«հող, անդաստան» բառի հետ նոյն է, իբր նրա նախդրիւ հայցական հոլովը. համմտ. լիթ.* laũkas *«արտ, հող»,* laukė *«դուրսը», ասոր.* ܒܪ barā *«արտ, դաշտ և դուրսը», հիւլ.* im-maig *«դուրսը»,* mag *«արտ»։*

Նշխ արտ *«դուրսը» մեկնում է «ի նմանութենէ արտոյ՝ որ լինի ի բացի, կամ արմատ ձայնիս արտաքոյ», իսկ* արտաքս *մեկնում է* արտ *«անդ» + աք «տուք», իբր թէ* արտաքս *«ի դաշտ», և կամ* արտ *«չն.* ἐξ-» + *հյ.* աքս- (աքսորել *բայի արմատը)։* Windisch. *41 և* Lag. Urgesch. *194 ուշս.* ɣtē։ Müller SWAW *88, 12 ուղիղ մեկնեց* արտ *«դաշտ» բառից։ Տէրվ.* Altarm. *7—8 ուշս.* araña *«հետ»,* āra *«հետաւորութիւն»,* ārāt *«հետուից»,* ārakāt *«հետ»,* ɣtē *«բացի, առանց», լիթվ.* āras *«դուրսը», լիթվ.* irti *«գաւառիլ»։ Նոյն, Նախալ. 62 հնխ.* ar *«հեռի անել, արտաքս հանել» արմատի տակ է դնում լիթվ.* ir-ti *«գաւառիլ», հալ.* oriti *«գաւել, լուծել», հյ.* արտաքս, արտաքոյ։ *Նոյն, Երկրագունդ 1883, էջ 173* արտաքս *բառի ս-ն միացնում է յգ. հյց. ս-ի հետ։ Հիւնք. բոլորն էլ* արտասուք *բառից է հանում։ Վերի մեկնութիւնը տուաւ* Meillet MSL *9, 150. իսկ* ք *ձայնի վրայ խօսում է* MSL *10, 270։*

ԱՐՏԱՔՈՍ, *որ և* արտաք, արտափ *«արդու, մի տեսակ չափ է» Շիր. էջ 31, 34 «Ըստ հելլենականին արտաբոս կոչի, բայց եղաւ յեգիպտացւոցն որմոր, որ է բարեժողով»։*

= *Յն.* ἀρτάβη *հոմանիշից (հնթադրեալ* *ἀρταβος *ձևը չգիտեն թէ՛* Bailly *և թէ՛* Sophocles*)։ Բառիս հնագոյն ձևն է* արդու, *որ ծագում է իրանեանից (տե՛ս այս բառը)։ Շիրակացու «յեգիպտացւոցն որմոր» բառը պետք է կարդալ* որտոր *և հասկանալ խպտ.* erṭob *«արդու»։ — Հիւբշ. 342։*

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 56։

ԱՐՏԱՂԱՅ. *յիշուած է իբրև հիւանդի տալու փափուկ ուտելիք. «Կերակուր՝ խաշուի ջուր տալ ի թևթև մսէ և ի գիճային, զերդ ուլի ոտներ և արտաղային. Հաւու ձագ և կաքաւու ձագ և տահուճ և ուլու ոտներ և արտաղային՝ դմով եփած» Մխ. բժշ. 18, 51։*

= *Վրաց.* არტალა արտալա *«տաւարի կրճղակներից վերև գտնուած՝ ազդրի փափուկ մասերը և նրանցով պատրաստուած մի տեսակ խաշ, որ Տփղիսում շատ յարգի կերակուր է համարւում։ (Ջուբինով 46 մեկնում է „подбедерокъ, т. е. бедро и лапатка отъ »оляшки“)։ Ըստ այսմ վերի ձևերը պէտք է հասկանալ -աճի մասնիկով հատարական։ — Աճ.*

Բառս յիշում է միայն Նշխ արտալայն *(սեռ. -ի) ձևով և մեկնում է «կա՛մ է ոմկ. հատալա, խըրդբըրդ, գաթէղ, մսան փորոտեաց կենդանեաց և կամ իցէ վայրի, որպէս արտիկ, վարի ոչխար կամ այծ»։ Աբ ջնջել է այս բառը. արդեօք մոռացմա՞մբ, թէ մի տարբեր ըն-*

թերցուած գոնելով։ Պատահական նըմանութիւն ունի պրս. ārdhāla آلهارى «ալիւրով շինուած մի աղքատիկ կերակուր»։ Seidel, Մխ. Հեր. § 74 իմանում է, որ արտալայնի յոգնակի ձև է –նի մասնիկով, ըստ Karst-ի հաղորդագրութեան ճիշտ է մեկնում «Knöchel, Knic», ըստ Իւլիւմեմիշեանի գործածական է Կեսարիայում՝ «անասունի ազդր, սրունք» իմաստով, թերևս, աւում է, նոյն է Բրբ. ⵢⵏⴷⴰⵍⴰ ardala «յարակից, կցուած» բառի հետ։

ԱՐՏԱԽՈՅՐ «թագաւորական թագ». մէկ անգամ Ագաթ. «Զթագաւորս շքեղացուցանեն ի նմանութիւն արտախոյրն պսակի ի վերջաւորն փողփողելոյ»։ Նմանութեամբ՝ «լուսընթագ կամ երևակ մոլորակը». «Զհինգ աստեղացն, որք մոլորական անուանակոչին, որոնց անուանքն են այսորիկ. լուծ, հզչերու, ծկրաւորի (կամ ծկաւորի), փառաղնոտի (կամ փարանձոտի), արտախոյր (արտախուր կամ արտախուրի). Ստեղծեալ արտախուրն ի չորրորդում արարչութեանն» Զքր. կթ. ի շարչ. Տօմար.։ Այս բառից են ծագում արտախուրել «թագով պսակել», արտախուրիլ «թագով պսակուիլ» ՅՀ. կթ. արտախուրակել «պատել, շորով ծածկել» (նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Արամ մատենադիր ժ դարի, տե՛ս Հայկականք Միսթանի. Վզրշապ. 1894, էջ 42). արտախուրակ «ծածկոյթ, ծածկոց» Ել. լզ. 19, խ. 17. Թիւք գ. 26, դ. 25, «խոյրի կամ թագի արտաքին զարդերը, ինչպէս նաև ևկեղեցական զգեստաւորութիւնն մէջ եպիսկոպոսական թագի այն զարդերը՝ որոնք թագի նաևի եղերքից կախուելով՝ անցնում են վակասի տակից և հանդչում շուրջառի թիկունքի վրայ» Ագաթ. (առնոյր զքահանայութեան թագն՝ օծանել և դնել նոցա արտախուրակս). Լմբ. ժբ մարգ. էջ 194 (Զաք. գ. 13)։—Արտախուրակ բառը գործածուած է նաև Դան. Գ. 21 հատուածում. «Կապեցան պատմուճանօք և վարտնօք, արտախուրակօք և զանկապանօք իւրեանց»։ Չորս խնդրական բառերի դէմ երբայեցին ունի פַּסַרְגְּלֵיהוֹן פַּטִּישֵׁיהוֹן וְכֻבְּעֵיהוֹן וּלְבוּשֵׁיהוֹן, որ Եօթանասնից ժամանակից ի վեր գոնագան ձևերով հասկացուած է. յոյն օրինակը ունի՝ ἔχοντες τὰ ὑποδήματα αὐτῶν καὶ τὰς τίάρας αὐτῶν ἐπὶ τῶν κεφαλῶν αὐνῶν σὺν τῷ ἱματισμῷ αὐτῶν. Վուլգատան ունի „Cum braccis suis et tiaris et calceamentis et vestibus". բողոքականների անգլերէն պաշտօնական հրատարակութիւնը՝ in their coats, their hosen, and their hats and their other garments. բողոքականների իտալական թարգմանութիւնը՝ con le lor giubbe, le lor calze, le lor tiare e tutti i lor vestimenti. բողոքականների պարսկերէն թարգմանութիւնը՝ لباسهاي ايشان و سائر ها و عمامه ها و جبه ها و ردا ؛ Այս բոլորի մէջ էլ արտախուրակ բառի դեմ գալիս է «tiara, թագ, գլխարկ, իմամա, փաթթոց»։ Սակայն նորագոյն քննութիւնները ցոյց են տալիս, որ երբայական բնագրի համապատասխան բառը ո՛չ թէ «գլխարկ», այլ «մի տեսակ հագուստ» է նշանակում։ Այսպէս Gesenius-ի երբայերէն-արամերէն բառարանը յիշեալ բառերը մեկնում է «ներքնավարտիք, ներքնազգեստ, վերարկու, զգեստ» (Hosen, Unterkleid, Mantel, Kleid). երբայական բնագրի Kautzsch-ի թարգմանութիւնն ունի՝ Untergewändern, Röcken, Mänteln und (sonstigen) Kleiden (տպ. Freiburg 1890). բողոքականների հայ աշխարհաբար թարգմանութիւնը (տպ. Պօլիս 1884) «Անդրավարտիքներովը, բաճկոններովը, վերարկուներովը ու (ամէն) հանդերձներովը». նոյնի արեւելահայ թարգմանութիւնը (տպ. Պօլիս 1906) «իրանց անդրավարտիքներովը, պատմուճաններովը և վերարկուներովը և միւս հանդերձներովը». բողոքականների արաբերէն թարգմանութիւնը ունի նմանապես وأمصتهم وأردیتهم ولباسهم في سراویلهم Արդ՝ հայ թարգմանիչները ի՞նչ են հասկացել այս արտախուրակ բառով։ Յոյն օրինակի համեմատութիւնը ցոյց է տալիս, որ ինչպէս այլուր, նոյնպէս և այստեղ արտախուրակ նշանակում է «թագ, գլխարկ»։ Բայց Միսթար (Հայկականք, Վաղարշապատ 1894, էջ 42—49) ևնթադրում է

թէ արտախուրակ այստեղ նշանակում է «վարտիքի վրայից հագնելու զգեստ՝ որ առաջից բարձրը և յետևից զիստերն էր ծածկում»։ Իրրև ապացոյց բերում է նախ՝ եբրայական բնագրի համեմատութիւնը, երկրորդ՝ այն հանգամանքը՝ որ վերի հատուածում արտախուրակ բառը դրուած է վարտիքի և դանկապանների միջև և հետևաբար պլխի հետ գործ չունի. երրորդ՝ միջին դարի հայ մեկնիչների ակնարկները։ Սրանցից Արամ մատենադիր ժ դարու՝ Դանիէլի այս հատուածի ակնարկութեամբ գրում է. «Չի մերկանդամ ո՛չ է արկեալ ի հուրն, այլ պատմուճան հաւատոյն ընդ իւր է և վարտեօք ապաշխարութեան զառակաս մեղացն ծածկեալ է. և զարձս սրբութեանն արտախուրեալ»։ Վարդան, Մեկն. Դան. գ. էջ 252՝ «կապեցան վարտեօք և բարձին հանդերձիւքն»։ Արտախուրակ այս նշանակութեամբ գործածում է նաև Սեբ. էջ 63 «Առաքէ նմա ոսկի և հանդերձս թագաւորականս արտախուրակս ոսկեզօծս և զանգապանակ ակամբք և մարգարտովք կարգեալ»։—Այս բոլորը սակայն բան մեզ ոչինչ չեն ապացուցանում. մեր նախնիք եբրայեցերէնի անտեղեակ էին և Մ. Գիրքը յունարէնից են թարգմանել, ուստի ամենևին նշանակութիւն չունի այն հանգամանքը թէ եբրայական բառը բուն ի՛նչ է նշանակում. մանաւանդ որ հները միշտ «թագ» են հասկացել և միայն շատ նոր ժամանակներում պարզուել է բառիս իմաստը։ Երկրորդ՝ մեր ուշ ժամանակի մատենագիրները թէև կարող էին եբրայերէնի տարբեր նշանակութիւնը տեղեակ լինել, բայց վերոյիշեալ արտախուրակը միշտ «թագ» են հասկացել։ Այսպէս՝ Արամ մատենագրի արտախուրակելը նշանակում է պարզապէս «ծածկել». հմմտ. արտախուրակ «ծածկոյթ, ծածկոցել. լզ. 19, խ. 17, Բուզ գ. 26, գ. 25.—յատկապէս Վարդան Դանիէլի մեկնութեան շարունակութեան մէջ ասում է. «Կապեցան վարտեօք՝ բարձին հանդերձիւք, արտախուրակօք, խո՛յր ասեն ունել ի գլուխն, թագն՝ նշան պատուոյ»։ Վերջապէս բնաւ պէտք չկայ Սեբէոսի արտախուրակը վարտիք հասկանալու, մանաւանդ որ ոսկեզօծ վարտիքը նոյն իսկ թագաւորներին անյարմար է.—Պատկանեան նոյն բառը հասկանում է «գլխի ապարոշ, чалма»։

= Բարդուած է արտ + խոյր բառերից. վերջինը իրանեան փոխառութիւն է (տե՛ս խոյր). բայց ի՞նչ է արտ-։—Հիւբշ. 160։

ՀՀՌ մեկնում է արտ «դուրս» բառից, իբր «արտաքուստ երևելի խուրիկ»։ Տէրվ. Altarm. 75 հպրս. arta «բարձր» (որ գտնում է arta-xšatra բառի մէջ) և խոյր։ Canini, Et. étym 200 արդ «զարդ» բառից։ Հիւնք. արտ մասնիկով՝ խոյր բառից։ Patrubány SA 2, 12 արտ «գետին» և խոյր բառերից։ Մատ ЗВО 9, 307 «ծածկոյթ» նշանակութեան կըցում է վրաց. խար, խուրա «ծածկել»։

ԱՐՏԱՒՈՅՐ. անատոյգ բառ, որ գործածուած է մի շատ հին վիպասանական երգի մէջ. «Տեննչայ Սաթենիկ տիկին տեննչանս պարտախոյր խաւարտ և զտից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ». Խոր. Ա. 30։—Այստեղ դնում եմ բազմազան մեկնութիւնները՝ որ տրուել են այս բառի առթիւ։

ՆէՒ լիշեալ չորս բառերն էլ (արտախոյր, խաւարտ, տից և խաւարծի) համարում է բոլոր կամ խառն անուններ։ Այսպէս են նաև Ֆլօրիվալ, Ա. Սահակեան (Թարգ. Խոր. 1897), Պատկանեան (Матер. для армян. слов. I, էջ 23), Ջալալեան (Zur Erklärung der arm. Geschichte des M. v. Chorene, WZKM 1893, I), Մկ. Պալեան (անտիպ աշխ. տե՛ս Մխիթարեանի Հայկազեան, էջ 37)։ Մխիթարեաններից իտալերէն թարգմանութիւնը հասկանում է խաւարտ «խոտ», խաւարծի «խոտիկ», իսկ արտախոյր և տից՝ խոտի անուններ. բուն այդ վերի հատուածը թարգմանում է «La principessa Satinig bramasse ardentemente della mensa d' Arcavan l'erba ardacur e l'erbolina ditz»։ Նոյնը ընդունում են նաև Langlois՝ ֆրանսերէն և Lauer՝ գերմաներէն թարգմանութեան մէջ։ Վենետկեանց եղբարց լատին թարգմանութիւնն ունի. Praeter haec Sattinica valde concupavit

operculum planum tenebricosum ex pulvino Argovani *(գծածկոյթ հարթ մթին՝ ի բարձից Արգաւանայ)*. ուր արտախոյր հասկացուած է «ծածկոյթ», խաւարտ կամ խաւարծի՞ «մթին, խաւար», իսկ միւսներր անծանօթ, որովհետև «հարթ» բառի համապատասխանը չունինք, զոից թարգմանուած չէ։ էմին՝ ոուսերէն թարգմանութեան մէջ՝ փոփոխելով բառերր՝ դնում է. «Տէնչայր Սաթենիկ կրել զթագն Արգաւանայ և բազմել ի վերայ բարձից նորա»։ Եփրեմ Դաթևան, Արձագանք 1886, թիւ 39, էջ 495 մեկնում է արտախոյր «թագ», խաւ-արտ «զրսից սամոյրով պատած» (խաւ և արտ բառերից), ոից «փունջ» (իբր արմատ տրցակ բառի), բաւարծի՝ բաւ և արծնել բառերից. որով ամբողջի թարգմանութիւնը լինում է «Սաթենիկ տիկինը սաստիկ ցանկանում էր բռնել կամ փայփայել Արգամի սամրապատ խոյրը և նրա թաւշեայ բարձերի փունջը»։ Ա. Բահաթրեան, Հին Հայոց տաղաչափական արուեստը (Շուշի, 1891, էջ 78) արտախոյր մեկնում է «արտախոյրանման, պատկաձև» (իբր ած.), խաւարտ «մի տեսակ բոյս», ոից «նորաբոյս», խաւարծի «ծիլ»։ Lagarde, Arm. Stud. § 759 զարտախուր (զ հայցականի նախդիրը իբրև արմատական ընդունելով) կցում է պրս. زردخ zardxau «մի տեսակ դեղին ծաղիկ» բառի հետ, համարելով, որ այս վերջինը աղճատուած է zardxwar բառից։ Այս մեկնութիւնը մերժում է Հիւրշ. 150։ Միաբան, Հայկականք (Վղրշապ. 1894, էջ 35—59) Խորենացու յիշեալ հատուածը սրբագրում է «Տէնչայ Սաթենիկ տիկին տէնչանս զարտախուր զատից ի բարձից Արգաւանայ», որի մէջ արտախոյր մեկնում է «մի տեսակ զգեստ, վարտիք» (տե՛ս արտախուրակ բառը նախորդ հատուածում), խաւարտ «ուռուցիկ», բայց յետին յաւելուած է, ինչպէս նաև խաւարծի. իսկ զոից պէտք է կարդալ զատից. որով հատուածը թարգմանւում է «Տիկին Սաթենիկը ցանկանալով ցանկանում է Արգաւանի բարձերից (սրբուհք)՝ դիատերի արտախուրին»։ Յովհ. Թումանեանց, Հորիզոն 1894, Ա. էջ 168—176 ընդունում է այս մեկնութիւնը, բայց «զգեստ» նշանակութիւնը համարում է արտախոյրի առաջին առումը, երկրորդ առումն է «մի տեսակ ծաղիկ» և այս իմաստով էլ գործածուած է այստեղ։ Stackelberg WZKM 15(1901), 382 զարտախոյր ուղղում է զարդախար =պրս. زرخار zardxār։ Բ. հայ. Գէորգեան, Հովիւ 1906, 134 զոից համարում է զախս, որ միմ բառի հայցականն է և մեկնում է «խաւարծիլի ցօղունը»։ Հ. Ն. Անդրիկեան, Բազմ. 1906, էջ 105—7 (=Հովիւ 1906, էջ 345—346) համարում է արտախոյր ած., խաւարտ «մի տեսակ կանաչեղէն», ոից «տարիքի, հասակի, կեանքի» և խաւարծի «ծիլ». իսկ ի բարձից Արգաւանայ ձևը համեմատում է Նոննոսի ի բարձից Արամազդայ ձևի հետ։ Ա. Քիշմիշեանց, Тифлисскій Листокъ 1906 թ. № 145 և 148 (=Հովիւ 1908, էջ 351) զարտախուր «դեղին քաղցրաբոյր մի ծաղիկ՝ որ յարդի է Պարսկաստանում՝ իբրև պարտէզների զարդ», խաւարտ «մի տեսակ բոյս», խաւարծի «խաւարծիլ», ոից «փունջ»։ Աճառեան ՀԱ 1908, 124 ցոյց է տալիս որ չորս բառերն էլ բոյսի անուն չեն կարող լինել. որպէսզի չորսն էլ բոյսի անուններ, այսինքն գոյականներ լինէին, պէտք պիտի լինէր նախ՝ չորսի վրայ էլ դնել հայցականի զ յօղը և երկրորդ՝ և շաղկապը դնել կա՛մ վերջին գոյականի մօտ, կա՛մ ամէնքի մօտ և կամ դնէ երկու բառը մէկ։ Արդ՝ որովհետև և շաղկապը միայն մէկ անգամ է դրուած և զ նախդիրը երկուսի վրայ միայն կայ, ուստի հետևում է թէ այստեղ ունինք երկու գոյական՝ երկու ածականով։ Ըստ իս ածական է խաւարծի (համմտ. բաւարծի, աղարծի), ուստի ոից գոյական է. նոյն համադրութեամբ՝ խաւարտ էլ լինում է ածական

և արտախոյր գոյական (տե՛ս խաւարտ)։ Ա. Բահաթրեան, Հովիւ 1908, էջ 415—6 մեկնում է արտախոյր «արքայական», խաւարտ «մի տեսակ բոյս», տից=դից, խաւարծի «ծիլ, ուղէշ», բարձ «անկողին». որով հատուածը թարգմանում է՝ «Սաթենիկը Արգաւանի անկողնից ցանկանում էր արքայական խաւարտ և դիւցազնական ուղէշ» (այսինքն՝ յղանալ, ծիլ՝ զաւակ ունենալ)։ Սիօն վրդ. Հովիւ 1909, էջ 235—7 գաւառական բարբառներից առնելով՝ մեկնում է տենչալ «մորմոքուիլ», զարդախոյր «խոյրազարդ, խոյրով զարդարուած», խաւարտ խորտ, հուժկու», տից «ցից, իշխանական գաւազան», խաւարծի «խաւարտ, խորտ, հուժկու բառի սեռականը», բարձից «բառնալը, վերացուելը» (Մորմոքուի՛ր, Սաթենիկ, խոյրազարդ քաջ Արգաւանից գաւազանի՝ իշխանութեան բարձումը)։ Շ. վրդ. Սահակեան, ՀԱ 1911, էջ 334—47, Համշէնի բարբառի համեմատ մեկնում է տից «փունջ» (որ կցում է դեզ, տրցակ և tisser «հիւսել» բառերին), խաւարծի «խաւարծիլ բոյսը», որի հոմանիշն է խաւարտ. իսկ արտախոյր «մի կապ, մի փունջ»։ Հ. Կ. Տ. Սահակեան, Բազմ. 1911, 345—52 կարդում է «Զարտախոյր սաղաւարտ և զդից հաւ՝ արծուի ի բարձր դիցն՝ Արտաւանայ» Հացունի, Ճաշոց 143 այնպէս է հասկանում թէ Սաթենիկը ցանկանում էր մասնակցիլ Արգաւանի խնջոյքին (բարձ) և այնտեղ վայելել խաւարտն ու խաւարծի բոյսերը։

ԱՐՏԱԿԷՏ, ի հլ. անատոյդ բառ. մէկ անգամ ունի խրիմեանեան Մագ. թղ. 133 «կէտ կարճիւ արտակիտիւ քեզ աւադիկ ի կախ կորզեալ»։ ՆՀՔ մեկնում է «ոյր կայցէ կէտ կամ խայթ և ճանկ արտաքս ցցուեալ. և որ արտաքս ձգէ ճանկով». ԱՔ «ճանկ ունեցող կամ ճանկով դուրս քաշող, կամ կարմրախայտ ձուկը»։ Սրանից արտակիտել «կարճով բռնել» Մագ. ժբ. լ. լէ. «ցնցել» ԱՔ։

*ԱՐՏԱՆԻՍԱ «տատիճանուկ բոյսը. leontice, leontopetalum» Ամիրտ. տնի միայն ՀԲուս. § 3294։

= Արար. عرطنيثا ʿartanīsā «տատիճանուկ խոտը» (տե՛ս Կամուս, թրք. թրգմ. Ա. 357 և Բ. 835), որ է ասոր. ܐܪܛܢܝܬܐ ʿarṭānīṯā նոյն նշ. (տե՛ս Brockelmann 261ա)։—Ա՛ճ.

ՀԲուս. դնում է արար. عرطنيه որ գոյութիւն չունի Կամուսում։

ԱՐՏԱՇ. նորագիւտ անծանօթ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Պարսկանոն կամ անվաեր շարակ. էջ 158 «Ընդ անցանելն արտաշի և այլազգի վաճառականի, խօստանայր քեզ տասանորդ ի յոչ կամաի (sic), ժողովեցեր գուտերամակն առ քոյդ վկայարանի»։ Խօսքը Ս. Աբգիմսեհի մասին է։ Սրա ընդարձակ վկայարանութեան համեմատութիւնը (տե՛ս Աւգերեան, Լիակ, վարք սրբ. հտ. Ե. էջ 117) ցոյց է տալիս որ սոյն արտաշը հազարացի հարուստ մի իշխան է, որ իր ուղտերի երամակը կորցնելով՝ սրբի շնորհիւ գտաւ։ Ուստի արտաշ մեկնելի է «իշխան»?

ԱՐՏԱՇԵԿ տե՛ս Աւտ։

+**ԱՐՏԱՍՈՒՔ** տե՛ս Արտասր։

ԱՐՏԱՓ տե՛ս Արտաբոս։

ԱՐՏԱՔԻՆ, ԱՐՏԱՔՈՅ, ԱՐՏԱՔՍ տե՛ս Արտ։

***ԱՐՏԵՄԻՍԻՆ** «հղեհին խոտը, դնդածաղիկ, ֆրանս. armoise կամ herbe de st Jean, որ մի տեսակ ափսինթ է». Գազիան. ունին միայն Բառ. երեմ. յաւել. 565 և ՀԲուս. § 501։

=Յն. ἀρτεμισία, որից և լտ. artemisia նոյն նշ. ծագում է Արտեմիս աստուծոյ անունից։

Ուղիղ մեկնից ՀԲուս. անդ։

***ԱՐՏԵՐԻ** «շնչերակ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ սեռ.-տր. արտերեաց ձևով գործածուած եմ գտնում Սոկրատ Եկեղ. պատմ. էջ 383 «եւ այնքան յաղաղակէն խրզեալ պատահեաց ընթեան, մինչ դի ամենայն երակացն բանալ զբերանս և ամենայն արտերեացն պատառիլ»։

=Յն. ἀρτηρία «շնչերակ», որից փոխառեալ են նաև լտ. arteria, ֆրանս. artère ևն. ըստ Bailly ծագում է ἀρτέω «կոշիկ, ճանկ» բառից։—Ա՛ճ.

ԱՐՏԵՒԱՆ «*քարթիլի մի թելը*» *մէկ անգամ գործածուած է Գ. կոր. 45 (Ոչինչ ապականեցաւ մարմինն նորա և ոչ արտևան մի կտրացաւ)։ Սովորական է յոգնակի գործածութեամբ* արտեանուք *(սեռ.* -նաց, -նաց, *հյց.* -նուս, *գրծ.* -նամբք) «*քարթիլներ*» *ՍԳր. եփր. համաբ. խոր. Պզատ. տիմ.։—Ե-զակի ձևով և «լեռան գագաթ» իմաստով գործածուած է բառս մէկ անգամ էլ Ղուկ. գ. 29 (Հանին զնա արտաքոյ քաղաքին և ածին զնա մինչև յարտևան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր՝ գահավէժ առնել զնա). նոյնը կրկնում են Մագ. Քղ. 91, Տաթև. ամ. 488 և 680, Վրդ. յաւետ.։ Այս իմաստը զուտ հետևողութիւն է յունականի և Աւետարանի թարգմանութեամբ մտած հայերէնի մէջ։ Այսպէս նոյն տեղում յոյն օրինակն ունի ἕως ὄφρύος τοῦ ὄρους, ար յն. ὀφρύς՝ որ նշանակում է «յօնք», նշանակում է նաև «ափսիսայ բարձրութիւն, անապատեալ լեռ կամ բլուր», ճիշտ ինչպէս լտ.* supercilium *նշանակում է «քարթիլ և լեռան գագաթ»։ Կարելի էր կարծել թէ այսպիսի փոխաբերութիւն հայերէնի մէջ էլ կայ. բայց սրան հակառակում է այն հանգամանքը՝ որ այս իմաստով գործածութիւնը անսովոր է մեր լեզուի մէջ և բացի յիշեալ տեղից՝ այլուր գոյութիւն չունի։ Թէ որչափ անսովոր և անծանօթ էր այս բառը մեր մէջ՝ ցոյց է տալիս Իգնատ. գկ. 122, որ յիշեալ բառը յատուկ անուն (!) կարծելով՝ գրում է. «Հանին զնա արտաքոյ քաղաքին և ածին ի գլուխ լերինն Արտևանայ, գահավէժ առնել զնա»։—Մեզ պէս վարուած են նաև ասորիները, թարգմանելով համապատասխան բառը* ܓܒܒܝܢܐ gəbbīne *«քարթիլ» և նորագոյններից անպիտացիք՝* brow *«յօնք». (յիւս թարգմանութիւններից յիշենք ֆրանս.* bord *«եզերք» և պրս.* قلّه qulla *«բուրգ, աշտարակ»)։*

Նշի իբր արտևևան, արտաքս երևնալն։ Windisch. *41 թեևս արտ «գագաթ» բառին ցեղակից։* Böttich ZDMG *1850, 351 և* Arica *79, 316 առնս.* ūrdhva, *զնդ.* ərəδwa *«բարձր կարկառած», լիթ.* erdwas: *Հիւնք. Արտաւան յատուկ անունից։ Թիրևաքեան, Արիահայ բռ. 88 գնդ.* ardvi (?) *և առնս.* rdhyati *«բարձրութիւն» բառերից։*

ԱՐՏԻԿ «*վայրի ոչխար*». *մէկ անգամ ունի վկայր. թ. էջ 192 «Այծաքաղք և արտիկք բազում անգամ երկուորեակս ծնանին»։ Սրա հետ նոյն է արտի, որ մէկ անգամ գործածուած է խոր. աշխ. հրտր. Սուքրեանի, էջ 30. «Բարձր Հայք. ունի երէս, եղջերու, այծ և քաղցս, առն և արտի, վիթ և կրկիթ և խող. և ի հաւուց ճարակաւորս, զորս կաքաւ, զարաւշ, զանիդ և զայլս»։*

Նշի արտ *բառից։ Սագրդեան ՀԱ 1909, 335 և* Karst, *Յուշարձան 407 սումեր.* rutik *«խոյ»։*

ԱՐՏԻՃ «*արտերում բուսնող մի տեսակ խոտ. լտ.* aphaca *կամ* vicia cracca? *ունի միայն ՀԲուս. § 239, որ առնում է Սա. Ռոշքեանից և սա էլ մի հին բժշկարանից։*

***ԱՐՏԻՃՈՒԿ** «*կանկառ,* artichaut. *ունին միայն Բառ. հրեմ. յաւել. 565 և ՀԲուս. § 240. նոյն է նաև մհյ.* արճճուկ *(Նորայր, Բառ. ֆր. 92 ա)։*

= *Իտալ.* articiocco *«կանկառ» բառից. սրա մայր ձևն է արար.* الخرشف alḫaršaf *«ընտանի կանկառ», որ նախ անցել է Սպանիա, ար գարձել է սպան.* alcachofa *և այտեղից Իտալիա մտնելով՝ վերածուել իտալ.* articiocco*։ Այնուհետև բառը տարածուելով արևելք և արևմուտք՝ մի կողմից տուել է մհյ. արտիճուկ. միւս կողմից հֆրանս.* artischault, *ֆրանս.* artichaut, *հոլլ.* artisjok, *անգլ.* artichoke *և ԺԶ դարի կէսին Շվէյցարիոյ վրայով Գերմանիա մտնելով՝ գարձել հգերմ.* artschoke, erdschocke, *նգերմ.* Artischocke *և վերջապես Գերմանիայից էլ Ռուսաստան մտնելով տուել է ռուս.* артишокъ (Kluge, Etym. Wort. der deutschen spr. *1924, էջ 24—25*), *լհհ.* karczach, karciof, karczof, karciok, arcioch, *ակր.* karčocha, *իտալ.* carciofo, *ալ.* artičōka, *չեխ.* artičok, *լիթ.* érczukas *(վերջինը «գետնախընձոր» նշանակութեամբ)* (Berneker *489*)։

ՀԲուս. յիշում է իտալ. և ֆրանս. ձևերը և հարց է տալիս թէ «ո՞վ որմէ՞ առած է»։

ԱՐՏՈՅՏ «*աբեղաձագ թռչունը, տճկ. չայիր գուշը*». *գրուած նաև* արտուտ, արտիւտ, արտօտ, *Մագ. Գնձ. վրդն. առկ. 33. Գազիան,*

Բժշ. Ոսկիփ. որից արտուփիկ *Կոստ. Երզն. 134։*

Ինճիճեան, Հնախօս. Գ. 21 արտ *բառից։ (Իրօք էլ մեր բառին համանիշ թրք.* چایرقوشی čāir qušə *և քրդ.* čāhir *կամ* teir-i-čahiri *«արտոյտ» նշանակում են բուն «արտի՝ մարգագետնի թռչուն»)։ Մսեր մագիստ. Խմբագիր չափածոյ բանից, էջ 116, 149* արտ *ուսէ։* Patrubány MSL *15, 136* արտ+աւտ *«երգ», որ համեմատում է յն. ἀοιδή «ձայն» բառի հետ։*

ԳԻՒ.—Ախց. Տփ. արտուտ, *վն.* արտուփիկ, *երև.* ա՛ռտուտ, *Ալշ. Ակն.* արդուդ, *Մշ.* յարդուդիկ, *Խրբ.* արդուդիգ՛։

ԱՐՏՈՐԱԼ *«շտապել, փութալ» Վստկ. 203 (եւ թէ արտորաս՝ նա տարի ընդ մէջ). Վրդն. առ. 185 (հրմ. մի՛ արտորաք). որից* առտրճօֆ *կամ* ապտորճօֆ *«շտապով» Սմբ. դատ. 208.* առտրցնել *կամ* ապտորացնել *«շտապեցնել» Սմբ. դատ. 208։*

Նշխ լծորդ է դնում լտ. ardor *«եռանդ»։*

ԳԻՒ.—Խրբ. Ննխ. Պլ. արդօրալ, *Կիւր.* արդօրճալ, *Ակն.* աղիւրալ, *Խրբ. Զրս.* ավդօրճալ *(*Rivola *ունի* աւտորել *ձևը)։ Ամասար* արտորֆ *Առն. Խրբ.։*

***ԱՐՏՈՒՃ.** *իբր անծանօթ մի բոյս՝ ունի միայն ՀԲուս. § 241, առնելով բժշկարանից։*

= *Թրք.* آردّج *կամ* آردیج ardəǰ, *թթր.* آرتوچ artut *կամ* آرتوش ʿartuš *«գինի». որովհետև լիշեալ բժշկարանում* արտուճի *տերևը առաջարկում է իբրև դեղ, ենթադրում եմ որ այս բառը լինի, ըստ որում գինիի տերևը իբրև դեղ առաջարկում է այլուր. հմմտ. ՀԲուս. էջ 122։—Աճ.*

ԱՐՏՕՆԵԼ *տե՛ս Ունել, Ոյն։*

+ԱՐՏՕՍՐ *«արցունք» ՍԳր. Մամբր. ՅՀ. կթ. փոխարերաբար «ծառից վազած հեղուկը, խէժ, աւիշկ» Բրս. հց. որից* արտօսրագոյն *Կորիւն.* արտօսրալից *Գ. մկ. դ. 2, զ. 29, յետնաբար՝* արտօսրալիր *Սղիշ.* արտօսրարբուղս *Փարպ.* բազմարտօսր *Բրս. գոհ.* մշտարտօսր *Մագ.։ Այս ձևը գործածւում է միայն իբր հզակի և անհոլով, որի յոգնակին է* արտասուր, ի–ա *հլ. «արցունք» ՍԳր. Ոսկ. որից* արտասուաբեր *Ագաթ.* արտասուալից *ՍԳր. Ագաթ.* արտասուագոչ *Ագաթ.* արտասուակաթ *Բուզ.* արտասուակցուղ *Գ. մակ. դ. 10.* արտասուել *ՍԳր. Ոսկ. մթ.։* Արտասուր *անեզական է. յետին քերթողները նրա վրայից յօրինել են հզակի* արտասու *ձևը. ինչ. «Կորեան յարտասուէ» Գնձ. «Եւ զարտասուելն ընդ արտասուին» Յս. որդի Գ. տող 918։*

= *Բնիկ հալ բառ, որի միւս ցեղակիցներն են՝ յն.* δάκρυ, *հլատ.* dacruma, *լտ.* lacrima *(ռում.* lacrimă, *սպան.* lagrima, *իտալ.* lagrima, *ֆրանս.* larme), *հբրտ.* dacr, *նբրտ.* dacrou, *կորն.* daqr, *կիմր.* daigr, *հիռլ.* dēr, *դոթ.* tagr, *հրգ.* trahan, zahar. *մրդ.* traher, *գերմ.* träne, zähre, *հիռլ.* tār, *անգլսք.* tear, *անգլ.* tear, *թոխար.* ākār, *սանս.* अश्रु áçru, *գնդ.* asrū, *պհլ.* ars, *պրս.* ارس ars, اشک ašk (<*ašraka), *վախի* yašk, *մազանդար.* اسر asr, *բելուճ.* als, *աֆղան.* ōšа, *քրդ.* ئسر stir, istir, histir, *լիթ.* aszarà, *լեթթ.* asara, *բոլորն էլ «արցունք» նշանակութիւնամբ (տե՛ս* Walde *405,* Boisacq *163,* Trautmann *14,* Kluge *493,* Horn § *69 և 88,* Pokorny *1, 33—4 և 769,* Ernout-Meillet *490)։ Բառիս հնդևրոպական նախաձևն էր *drakru. որից կրճատմամբ յառաջացաւ երկրորդական *dakru և յետոյ *akru։ Վերջինից ծագեցին արիական և բալթեան ձևերը. միւսները սովորաբար գալիս են հնխ. dakru ձևից։ Հայերէնը ծագում է նախնական լիակատար *drakru ձևից։ Ինչպէս եղբայր և աղբիւր բառերի մէջ, նոյնպէս և այստեղ՝ հնդևրոպական նախաձևի r բաղաձայնը շրջուելով՝ առաջ է անցել (*rdakru) և հայկական սովորական ա յաւելուածն առացել։ Բառավերջի համար հմմտ. ասր–ասու, մաճր–մաճու–մաճուճ ևն։* Արտասուր *<* արտասուր *ձևի մէջ նկատւում է ա ձայնաւորի երկբարբառացումը, որ գտնում ենք նաև այլուր. ինչ.* յատաճել–յօտ *ևն։—Հիւբշ. էջ 425։*

Հներից Սարգիս Շնորհալի, Մեկն. յկ. թ. մեկնում է «ի սգաւորութենէն ...արտասուք անուանին»։ Տաթև. Մեկն. սաղմ. հթ. արտասուր *և* արտօսր *մեկնում է* աճօսր, արտաֆս, հոսիլ *և* արտեվաճուճ *բառերով։ Նոյնպէս Տաթև. Հարց. 787 «արտասուք, այսինքն արտաքսեալ»։ Մտեփ. Ագոնց, Ճարտասանութ. էջ 96* արտասուր *= արտաքին*

սուգ։ Առաջին անգամ ուղիղ մեկնութիւնը տուած է համարում ԳԴ, որ համեմատում է պրս. էրս։ *ՆՀԲ* արտօսր՝ *իբր արտասորնալ, իսկ* արտասուբ՝ *սուգ բառից։* Peterm. *21 համեմատում է սանս. յն. և լտ. ձևերի հետ։* Diefenbach, Berl. Jahrb. *1843, էջ 448 սանս. պրս. և լիթ. ձևերի հետ։ Տէրվիշ.* Altarm. *21 բառի սկզբի* ար *մասը համարում է մանիկ, իսկ Նախալ. 78 նախաձևը դրնում է* *աաurr=*աաurու. *սրանց վրայ խօսում է նաև Թէրճէմանը էֆքեար 1882 և Երկրագունտ (1883, էջ 171) թերթերում։ Հիւնք. Պարսից* Արտասիւրա *(Արտաշիր) թագաւորի անունից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 87 զնդ.* Ardvīsūra *«ջուրց պահապան ոգի» բառից։*

ԳԻՒ.—Շմ. Ջղ. արտասուեմ, *Ախց. Կր. Տփ.* արտսուեմ, *Երև. Մշ.* արդասուեմ, *Ալշ.* արտսուեմ, *Մշ.* արդսուեմ, *Ննխ.* արդուսուեմ, *Տիգ.* արդբսուեմ, *Ագլ. Գոր. Ղրբ.* բոտա՛սուեմ, *Ոզմ.* արտբսօեմ, *Համշ.* այդբսուեմ, *Մկ. Վն.* առտսուեմ՛, *Ակն. Զթ. Խրբ. Պլ. Ռ. Սեբ.* արցուեմ, *Ասլ.* արցիւեմ, *Հճ.* արձ՛ուեմ, *Վն.* առցուեմ՛, *Սլմ.* արսուեմ, *Մրղ.* առսուեմ. *այս բոլորը ծագում են* արտասուեմ *մայր ձևից։ Նոր բառեր են՝* արտասուակոլոլ, արտբսեմաճամ, արցուեմոտ, արցուեմոտիլ, արցուեմիլ, արցուել. *վերջինը* արտասուել>արտբսուել>արցուել *ճանապարհով յառաջացած։*

ԱՐՓ, ի *հլ. «լեռներ, օդից այնկողմ մինչև հրեղէն երկինքն եղած միջոցը» (ըստ հին աստղաբաշխութեան) Հց. աթ. Կիւրղ. Ճառընտ. Տոմար. Նար. կուս. որ և* արփի *(-ւոյ, -եաւ) Փիլ. Նիւս. կազմ. Պիտ. Խոր. գ. 62.* արփին *Նար. կուս. Գնձ. Սարգ. ա. պ. ժա։ Ածանցման մէջ մտնում են վեց ձևով. 1.* **արփա-** *ինչ.* արփագեղ *Տոմար.* արփամերձ *Պիտ.* արփայինն *Փիլ. Խոր.* արփաճաճաճչ *Զքր. կթ.—2.* **արփայա-**, *որից* արփայագնաց լինել *Խոր. գ. 55.—3.* **արփե-** *ինչ.* արփեգնաց լինել, *Փիլ. լիւս.* արփենի *Յս. որդի. Գնձ. Նար. տաղ.—4.* **արփիա-** *ինչ.* արփիազարդ *Պիտ.* արփիակիզն *Թէոդոր. խչ.* արփիաճեմ *Փիլ. լին. բառավերջում* **արփի-** *ինչ.* գերարփի *Շար. Սարգ. Նար.* լուսարփի *Նար. կուս.* հրաշարփի *Պրոկղ. յայտն.— 5.* **արփճ-**, *որից* արփնաթևել *Ոսկիփ.— 6.* **արփիճ**, *որից* երեքարփին *Մաթս.* եօթնարփին *Շար.։ Այստեղ է պատկանում նաև* արփող *«երեկոյեան արեւելեան ժամը 12, երբ արևը մայր է մտնում»։ Բոլոր այս բառերը յետին են. Ոսկեդարը այս արմատը չի ճանաչում։ Նոր գրական լեզուն գրական բարձր սեռերում միայն գործածում է* արփի *«արեգակ»։*

ՆՀԲ արև *բառից. (այսպէս նաև Ալիշան, Հին հաւատք, էջ 85),* Lagarde, Urgesch. *797 օսս.* arw *«երկինք» բառի հետ։ Մերժում է Հիւբշ.* Arm St. *էջ 18, որովհետև օսս.* arw *պատկանում է զնդ.* awra *«ամպ» բառին։* Tomaschek, Die alten Thraker, II. *52—3 սանս.* rūpa *«գեղեցկութիւն» են։* Bugge KZ *32, 66 համեմատում է* արև *բառի հետ, օրէնք դնելով որ հյ. v ձայնը r-ից յետոյ դառնում է փ. ինչ.* երևիլ—երփն։ *Հիւբշ. 424 սխալ է գտնում այս մեկնութիւնն էլ։ Նազարէթեան, Պատկեր 1893, էջ 159* արփող *մեկնում է* ար+փող, *այսինքն այն ժամը, երբ քաղաքի դռները կողպում էին փողահարութեամբ։* Scheftelowitz BB *29, 35* երփն *բառի հետ հնխ.* prepso, *յն.* τρέπω *«երևիմ»։* Pedersen, *Հայ. դր. լեզ. էջ 34* արփի=*լտ.* aprīcus *«արևոտ» և կամ հյ.* երփն? Petersson LUA° *1916, 33—4 (ըստ* Pokorny *2, 499)* երփն *բառի հետ միասին հանում է հնխ.* ser, sor *«կարմիր» արմատից. համմտ. լեթթ.* sârts *«երեսը կարմիր», լտ.* sorbum *«սին պտուղը», լիթ.* serpes *«գեղին նեղկ տուղ մի խոտ» են։*

ՓՈԽ.—Վրաց. արփի *(տե՛ս Մառ, Հայ-վրաց. յարաբերութ. էջ 41)։ Ջունի Ջուբինով։*

ԱՐՔԱՅ, ի *հլ. «թագաւոր» ՍԳր. որից* արքայագունդ *Բուզ. Ագաթ.* արքայասուր *Ագաթ. Կորիւն.* օձարքային *Կոչ. 155.* արքայութիւն *ՍԳր. Եւս. պտմ. Ագաթ.* արքայորդի *Դ. Թագ. ժա. 12. Ոսկ. մ. ա. 6. աւելորդ բարդութիւն է* թագարքայ *«թագով պսակուած արքայ», որ թէև գործածուած չէ, բայց նրա-*

նից է բազարեայածին «Թագաւորից ծնուած» (նորագիւտ բառ) Պարսկ. շար. էջ 21։ Բառիս բուն պարզական արմատն է արք, որ թէև գրաբարի մէջ առանձին գործածուած չէ, բայց կայ մի խումբ բարդութեանց մէջ. այսպէս՝ արքունի ՍԳր. Ագաթ. Ոսկ. մ. բ. 8. արքունիք ՍԳր. Ագաթ. Մեբեր. արքունատուն, որ և յարքունատուն ՍԳր. Ագաթ. արքունատուր Ագաթ. Կորիւն. արքունական Յհ. բ. 8. Եւս. քր. Ագաթ. Կորիւն. Դեղարքունի՝ տեղական յատուկ անուն են։ Եթէ գրչի սխալ չեն, հին են նմանապէս՝ արքական «արքայական» Եւս. քր. ս. 232. արքազունք «արքայազունք» Ագաթ. յետին են՝ արքապատկեր Ոսկ. գազ. արքեան «արքայական» Ճառընտ. արքակոռոյս Կիչառ. յազէքս. արքակապին Գազիան. արի, արիւն, արիւնի, արեան «լաւ ուռճացած, ազնիւ (բոյս)» Վստկ. 15, 19, 20, 35. արիանալ, արիւնանալ «բոյսի ուռճանալ, ազնուանալ» Վստկ. 23. արիւնացնել «ազնուացնել» Վստկ. 16. հմմտ. արայենի պրատուղ «ընտիր պտուղ» Ոսկ. յհ. ա. 45 (այսպէս ըստ ՆՀԲ. իսկ ըստ տպ. էջ 484 արեան), արուսի գինի «ընտիր գինի» Ոսկ. մ. բ. 28. (պարսկերէնում ամէն ինչ՝ որ մեծ է, ընտիր և ազնիւ, կոչւում է شاه šah «արքայ». ինչ. šah-anĭīr «ընտիր թռչուն», šāhi-guharān «ընտիր գոհար», šāhlūk «ընտիր սալոր», šāhbāl «մեծ փետուր», šāh-ballud «շագանակ», šāhbuy «ընտիր անուշահոտութիւն», šāhrāh «մեծ փողոց» են են)։ Նոր բառեր են փոխարքայ, արքայամօրի, արքայիկ «գաւառական թագաւոր», արքայավայել, արքայաձուկ, արքայախնձոր, արքայադուստր են։

Առաջին անգամ A. Acoluthus, Obadias armenus, Lipsiae 1680, էջ 53 յն. ἀρχή ձևի հետ։ Schröder, Thesaur. էջ 47 յն. ἄρχων «գլխաւոր, մագիստրատ Աթէնքի, Սպարտայի են» բառից փոխառեալ։ Նոյնպէս է նաև Klaproth, Asia polygl. էջ 102։ ՆՀԲ յն. ἄρχων, ἀρχή «սկիզբ, դլուխ, ծայր», հլ. առաջին, արգոյ, արշի, արք։ Յունարէնի հետ նոյն է դնում և Windisch. էջ 9։ Յունարէնից փոխառեալ է համարում Müller SWAW 41, 10։ Էմին, История Вардана էջ 50 և Асохика 250 (որից История Арм. М. Хоренскаго 1893, էջ 301) այր և քայ «Թագաւոր» բառերից. երկուսն էլ հին պրս. ծագումից. քա՛ պահուած է մինչև այսօր, «պա՛րոն» նշանակութեամբ, ուրեմն ար-քայ բուն նշանակում է «այր Թագաւոր»։ (Ընդհակառակը քա՛ այսօր իսկական է և բնաւ պատուաւոր կոչական չէ)։ Ascoli-Schweizer, ZVS 17, 136 (տե՛ս Lag. Arm. Stud. § 286) գնդ. qhrah, qhrahi են «Թագաւորական», qharaṅh «փայլ»։ Ապատլլահ, Բևեռաձև արձանագր. Մարթմանալ, Գօլիս 1872, էջ 48 յն. ἀρχω, խալդ. արքիս. Մարթման ZDMG 26, 537 խալդ. arkizi, 598 arizai, arkanini ձևերի հետ։ Տէրվ. Altarm. 21 կապմուած է համարում գնդ. ār մասնիկով (որ գտնում է armaiti բառի մէջ) +քայ արմատով, որի հետ համմտ. պրս. کی kay=գնդ. kavaya «արքայական»։ Նոյն, Նախալ. 102 թիւրեա rag արմատից, որի հետ համմտ. յն. ὀρέγω «առաջնեմ, երկարել», լտ. regere «իշխել», rex «Թագաւոր», գոթ. rakjan, reiks, սանս. rāǰan «արքայ»։ Ա. լ. (Արև. մամուլ 1889, 178) սանս. արքայ «փառահեղ, լուսաւոր, ճոխապանծ» բառից։ Bugge, Lyk. Stud. 1, 81 լիւկ. axati «պետ», յն. ἀρχω և Ἀχαιοί «արքայեցի» անուան հետ, որ հասկանում է «տիրողներ»։ Հիւնք. ἄρχων բառից։ Brockelmann ZDMG 47 հաստատում է, որ բառս չի կարող յունարէնից փոխառեալ լինել, ինչպես ցոյց է տալիս այ վերջավորութիւնը։ Նագարեթեան, Պատկեր 1893, էջ 91 արեզ բառից, իբր «արեւպաշտական ծնունդ, լուսաւոր»։ Jensen, Hitt. u. Arm. էջ 101 հաթ. arpa, arwa բառերի հետ։ Patrubány SA 1, 211 փոխառեալ է դնում յն. ἀρχός բառից, միայն վերջաւորութիւնը աստրականից առնուած. իսկ ՀՍ 1908, 152 համեմատում է ծառայ բառի վերջաւորութեան հետ։ Scheftelowitz BB 29, 68 փոխառեալ է թալմուդ. רכא rəkha «Թագաւոր» բառից, որ փոխառեալ է գերմ.

*rik համանիշից. սրանից է և ֆինն. rik «թագաւորութիւն»։ Pedersen, Հայ. պր. լեզ. 103 արմատը գնում է արք = սանս. ɣšva «բարձր», իսկ այ վերջաւորութեան հետ համմտ. ծառ-այ, յօրայ, փես-այ, հսկ-այ։ Սագըզեան, ՀԱ 1909, 335 և Karst, Յուշարձան 402, 406 նոյնիր. ruk «թագաւոր» բառի հետ։ Մատ ИАН 1920, 102 մարզ-արէ բառի հետ։ Meillet, REA 1, 12 յն. ἀρχων բառից, որ նախ անցել է արամէերէնի, այստեղից պարթեւականին և պարթեվականից էլ հայերէնին։

ԳԻՒ.—Գրականից փոխառեալ է արեայութիւն «երկնից արքայութիւն» նշանակութեամբ, որ ամէն տեղ կայ զանազան արտահանութեամբ. ինչ. Պլ. արեայութեան, Ղրբ. բրբվօ՛բուն են։ Բնիկ գաւառական է Ակն. Խրբ. արեենի «յաղթանդամ» (համմտ. վերը արեենի վատկ.)։—Կովկասահայ բարբառները գիտեն նաև արէ «իշխանութիւն» ձևով մի բառ (Տփ. արէ, Ղրբ. ɪrէ, Երև. էրէ, էլէ), որ գործածական է հետևեալ ոճերի մէջ. Ուրիշի վրայ ի՞նչ էրէ ուներ «ինչո՞ւ իշխանութիւն ես բանացնում ուրիշի վրայ». էրէ բանացնել «ամէկի վրայ բռնութիւն գործ դնել, իշխանաբար վարուիլ, ճոխանալ», Որքով գալ «իշխանութիւն բանեցնել», Նրա վրայ արէ ուներ «գերազանց է, կարող է նրան հրամայել, իրաւունք ունի»։ Այս բառը իմ Գաւառական բառարանում, էջ 156ա համարել եմ արեայ բառի արմատ։ Զարաշար սխալ։ Բառս օտար փոխառութիւն է Թուրք-Թաթարական լեզուներից. համմտ. մանչուր. erki «բռնութիւն, ինքնակամութիւն, յանդուգն համարձակութիւն, անսան ձութիւն, ծնողքի պաշտպանութեան վրայ յոյս դնելով՝ ազատ յանդուգն արարքները» (տե՛ս Захаровъ, Полный маньчжурско-русск. словарь, С. Пет. 1875, էջ 87 բ)։

ՓՈԽ.—Վրաց. გელაქნური գելաքնուրի «գեղարքունի ձուկը», որ իր անունը Գեղարքունիքից է առել։

*ԱՐՔԱՅՈՒՆ «քրիստոնեայ». գրուած նաև արեաւուն. այսպէս էին կոչում Թաթարները քրիստոնեաներին. «Արքաւունքն Աստուծոյ միայն երկրպագեն» Վրդն. պատ. տպ. Վենետ. 1862, էջ 156. «Ջինչ քրիստոնեայ կայ և արքաւուն» էջ 158 (էմինի հրատարակութեան մէջ՝ էջ 205, 207 չորս անգամ գրուած է արեայուն). «Ինքն (Մանկու զանն) յոյժ սիրէր զքրիստոնեայս, զորս և արքայուն կոչէին» Օրբել. էջ 299, «նկ, արքայուն» Օրբել. էջ 303. «Զայս մի արքայուն մեզ պահեսցուք» Օրբել. էջ 299. «Սարգիս արքաւունին» Արձ. 1271 թուից (Վիմ. տար. 113)։

=Մոնղոլ. ärkävün «քրիստոնեայ» (տե՛ս Մոնղոլ-արաբերէն բառարան, ЗВО 15, 121). նոյնը աւանդում է նաև արաբ պատմագիր Ռաշիդ-էդ-դին arkāun ձևով։

Ուղիղ մեկնութիւնը առաւ նախ St. Martin, Mémoires sur l'Arménie, Paris 1819, էջ 279։ Սխալւում է ՆՀԲ, որ բառս մեկնում է «թագաւորազն թաթար», որով ուզում է հանել արեայ բառից, իբր սրա ամիկ ձևը։ Սխալը ուղղուած է Վարդան Պատմիչի (Վենետ. 1862) հրատարակութեան մէջ, էջ 156, ծանօթ. 5 և Առձեռն բառարանում։

*ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ի–ա հլ. (յգ. –ուեք) «մեծ կամ գլխաւոր եպիսկոպոս» Ագաթ. Խոր. 34. կթ. Լմբ. պտրգ. Մխ. գտ. յետնաբար ասւում է նաև արհիեպիսկոպոս, արշիեպիսկոպոս կամ արեեպիսկոպոս, եպիսկոպոս արհի, եպիսկոպոս արշի, կրճատմամբ էլ պարզապէս արհի։ Այս բառից են արեեպիսկոպոսապետ Բուզ. դ. 4. արեեպիսկոպոսութիւն 34. կթ. արեեպիսկոպոսական, արեեպիսկոպոսարան (նոր գրականի մէջ)։

=Յն. ἀρχιεπίσκοπος «արքեպիսկոպոս». կազմուած ἄρχω «գլխաւոր լինել, վարել», ἀρχή «գլուխ, սկիզբ, գլխաւոր» + ἐπίσκοπος «եպիսկոպոս» բառերից. նոյնից փոխառեալ են նաև լտ. archiepiscopus, իտալ. arcivescovo, ֆրանս. archevêque, ռուս. архіепископъ, վրաց. არხეეპისკოპოზი արխեպիսկոպոզի են համանիշները։—Հիւբշ. 342։

Հներից ուղիղ մեկնութեան ծանօթ է Լմբ. մատ. 83 «արքեպիսկոպոսք, որ Թարգմանին եպիսկոպոսապետք կամ

*առաջին եպիսկոպոսաք»։ Նորերից ուղիղ մեկննց նախ ՀՀՔ, յետոյ ՆՀՔ են։

*ԱՐՔԵՐԷՑ «աւագերէց, աւագ քահանայ» վրք. ոսկ.։

=Ճն. ἀρχιερεύς «աւագերէց» բառից կազմուած, տառագարձելով ἀρχι = արք. իսկ ἱερεύς «քահանայ» բառը թարգմանելով հյ. երէց։ Նոյն յն. բառից են ռուս. архіерей և վրաց. არხიერი արխիերի։—Հիւրշ. 342։

Ուղիղ մեկննց նախ ՆՀՔ։

ԱՐՔԷՆ «քեզ ի պատիւ, քու խաթերդ համար» կամ «ապրիս, բրա՛ւօ, աֆարի՛մ». իբր մակբայ յիշում են հին բերականները. եւ շնորհակալուն՝ զէն, արքէն, գրուատ. Բր. քեր. 32. Շնորհակալոյն. յարքէն, գրուատ, որ է պարգև. Քերդ. քեր. 177. Գէնն արդէն է և արքէնն ի սէր քո, որպէս թէ ասէ. Արդէն ի սէր քո առնեմ զայս. արքէն վասն քո արարի զՍիսովն. արքէն, շինեմ զերուսաղէմ և Սամարիա, Համամ. քեր. 273։ Նոյն բառը գրտնում է Նորայր, Հայկական բառաքնն. էջ 87 նաև Վրք. հց. Ա. էջ 225, ուր գրուած է վրիպակով արարէ են fn (կարդա՛ արէն fn)։—Բառ. երեմ. էջ 35 գրում է արգէնիզէ «երանի է քեզ»։

*ԱՐՔԻԴԻԱԿՈՆ «աւագ սարկաւագ». մէկ անգամ ունի Բուզ. էջ 121 (ՀՀՔ դնում է նաև արճդիակոն ձևը). նոր հնչումով արշիդիակոնութիւն Ջքր. սարկ. Գ. 2։

=Ճն. ἀρχιδιάκονος «աւագ սարկաւագ», որ կազմուած է ἄρχω «գլխաւոր լինել, վարել», ἀρχή «գլխաւոր»+διάκονος «սարկաւագ» բառերից։ Սրանից են փոխառեալ նաև իտալ. arcidiacono, ռուս. архидіаконъ, վրաց. არხიდიაკონი արխիդիակոնի են համանիշները։—Հիւրշ. 342։

Ուղիղ մեկննց նախ ՆՀՔ։

*ԱՐՔԻՄԱՆՏՐԻՏ «աբբայ, վանահայր» վրք. հց. բ. 56. յետին ձևերն են արշիմանդրիտ վրք. հց. Բ. 334, առշիմանդրիտ Օրբ. հկճռ. ժա. էջ 154. շամանդրիդ Վրդն. պատմ. սպ. Վեննտ. էջ 83, որի դէմ հրատ. էմինի, էջ 113 ունի արշամանդրիտ։

=Ճն. ἀρχιμανδρίτης «վանահայր». կազմուած է ἀρχι- «պետ, գլխաւոր»+μάνδρα «փարախ» բառերից և բուն նշանակում է «փարախապետ»։ Սրանից են փոխառեալ նաև լտ. archimandrita, իտալ. archimandrita, ֆրանս. archimandrite, ռուս. архимандритъ, վրաց. არხიმანდრიტი արխիմանդրիտ են համանիշները։—Հիւրշ. 342։

Ուղիղ մեկննցին նախ ՀՀՔ և ՆՀՔ։

*ԱՐՔԻՏՐԻԿԼԻՆՈՒՍ «իշխան ընթրիսարանի» այսպէս ունի միայն Բառ. երեմ. էջ 40 (վրիպակով գրուած արքիարիկլինուս)։

=Լտ. architriclinus «սեղանապետ» կազմուած է archi- «մեծ, գլխաւոր» և triclinium «սեղանատուն» բառերից։—Ա՛ճ.

*ԱՐՔՏԱԿԱՆ, ի–ա հյ. «արշալոյս, այսինքն հիւսիսային քամի». մէկ անգամ ունի Ա. թիւս. աշխ։

=Յն. ἀρκτικός «հիւսիսային». ծագում է յն. ἄρκτος «արջ, Հիւսիսային Արջ համաստեղութիւնը» բառից. սրանից են փոխառեալ նաև լտ. arcticus, ֆրանս. arctique համանիշները. հայերէնի մէջ յունական մասնիկը թարգմանուած է հյ. ական ձևով։—Հիւրշ. 342։

Ուղիղ մեկննցին նախ ՀՀՔ և ՆՀՔ։

*ԱՐՔՏՈՐՈՍ «Արջի պոչ կոչուած աստղը՝ Արջապան համաստեղութեան մէջ, Մեծ Արջից քիչ հեռու» (հայ գաւառներում համարւում է Մեծ Արջի 7 եղբայրներից խոռված մի եղբայր). Ճառընտ. =Վրք. և վկ. ա. 682։ Գրուած է նաև առմխիւռոս, առմխիւռոս։

=Յն. ἀρκτοῦρος նոյն նշ. բուն իմաստն է «արջապան» և կազմուած է ἄρκτος «արջ» և οὖρος «պահապան» բառերից։ Սրանից է նաև լտ. arcturus նոյն նշ.—Հիւրշ. 518։

Ուղիղ մեկննցին նախ ՀՀՔ և ՆՀՔ։

ԱՐՕՇ «մի տեսակ թռչուն». վկայութիւնը ան՛ս արտիկ բառի տակ։ Անստոյգ է բառիս ձևը։ Նախադասութեան մէջ յարադրուած «զորս կաքաւ և զայլս» բառերից երևում է, որ զ նախդիր է. ուստի բառիս ուղղականը պէտք է դնել առօշ։ Բայց զ-ով սկսուող բառերը կարող են զ նախդիրը յատկանալ. ուստի կարելի է դնել նաև ուղ. զառօշ։ Հենց ՆՀՔ և ԱՔ էլ ունին իբր գտ. բառ զառօշ «միամիտ և մոխրագոյն թռչուն մը՝ հաւէն մեծ»։ Այս ձևը ինձ այլուստ յայտնի չէ. բայց ունիմ եա-

ոչ խոչ. «մի տեսակ թռչուն, միսը շատ համեղ, սուլելու ձայնով երգում է, խոշոր կաքաւ»։

ԱՐՕՍ *(սեռ.-ի)* *«մի տեսակ ջրային մեծ թռչուն,* outarde» *Սմբ. պատ. 92, Ուռհ. տպ. եմ. 446, տպ. էջմ. էջ 355. Մագ. թղ. 70. Թումա վրդ. նկր. Կիլիկ. Տաղ. Բառ. առ. լհհ. (վերջին վկայութիւնները յիշում է Նորայր, Հայկ. բառաքնն. էջ 108)։*

ՀՀԲ թերևս **արտ** *կամ* **արօտ** *բառից? ՆՀԲ «թերևս ազգ* **արօր** *թռչնոյ»։* Falk-Torp, Etymologisk ordliog over det norske og det danske sprog, Christiania *1903—6, հտ. 2, էջ 376 (չեմ տեսած)* կցել է հալ. dropy, *առս.* дрофá, дрохвá, *ակր.* drófa, dróchva, *չեխ.* dropfa, drofa, *սերբ.* dröplja, *բուլղ.* drópla, *մրգ.* trap, trappe, *հոլլ.* trapgans, *գերմ.* Trappe *բառերի հետ, որոնք բոլոր նշանակում են «արօս»։ Մերժում է* Berneker *227։*

ԳԻՒ.—Ալշ. երև. խրբ. Մշ. Ոզմ. Վն. **արօս**, *Սլմ.* լայլմնգ-**արօս** *«արագիլ»։*

ՓՈՒ.—Բրբ. գռ. կր. haros *«արօս» (Բիւր. թ. 1898, էջ 627)։*

ԱՐՕՍ *«չհերկուած հող, կորդ». ունի միայն ԱԲ՝ առանց վկայութեան. որից* **արօսանալ** *«կորդանալ, անմշակ մնալով խոպանանալ» Ոսկ. մ. բ. 24, Մանդ. էջ 47։*

ՆՀԲ **արուգ** *«չոր» բառի հետ?*

ԳԻՒ.—Ալշ. **արօս**, *Բբ.* **հարօս** *«ուժեղանալու համար 5—6 տարի անմշակ թողուած կորդ արտ», այս իմաստն ունի նաև* **արօս** *Ախք. (տե՛ս Ադգ. հանդ. Գ. 372 և Մալխասեան, Հօրտ-մօրտ, հտ. Ա. էջ 87)։*

ԱՐՕՍԱԽՈՍ *«մի տեսակ բժշկական խոտ է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 247։*

=կազմուած է **արօս**+**խոտ** *բառերից, վերջինը ծանօթ է. բայց յայտնի չէ թէ առաջինը կրկին արօսներից ո՞րն է։—Աճ.*

ՀԲուս. համեմատում է պրս. **արուապուխ** *(թրք.* **եէնի կէլիճ օթու***) «հարսնախոտ» բառի հետ։ Գէորգ Դպրի պարակերէն բառարանը պիտէ միայն* عروسپرده *'arūsparda «մի տեսակ կարմիր ծաղիկ»։*

*[***ԱՐՕՍԻ** *«սինի ծառը և նրա պտուղը, սին, տճկ. իւէդղ, լտ.* sorbum*». այսպէս է նշանակում ՆՀԲ՝ առնելով Գազիանոսից. իրեն են հետևում ՋԲ, ԱԲ և ՀԲուս. § 248, առանց որևէ բացատրութեան, Նորայր, Հայկ. բառաքնն. էջ 108 և յետոյ ՀԱ 1921, 107 ցոյց է տալիս, որ այս բառը թիւրիմացութեան արդիւնք է։ Գազիանոս յիշում է «Ոտի. արօսի». ոտի բառով պէտք է հասկանալ յն.* ὠτίς *(լտ.* otis, *ֆրանս.* outarde*), որ է «արօս թռչուններ». իսկ ՆՀԲ հասկացել է յն.* οὖς *«սին», որով առեղծել է* **արօսի** *«սին» նշանակութիւնը։ Այս պարագային շատ կարևոր է իմանալ թէ ի՛նչ ծառ է Դրբ.* **հրօ՛սէ**, *որ գտնում եմ Ագգ. հանդ. հտ. ԺԲ. էջ 88։*

Lidén, IF *18, 489—90 համեմատում է սլովաք.* skoruša, *լհհ.* skorusza, *հալ. նալ. սերբ.* oskoruša, *չեխ.* oskoruše, oskeruše, *լիթվ.* sērmaukschi, sērmukschi, zērmauksis, zērmuksis, *լիվ.* szermükszlé, szermükszné *բառերի հետ, որոնք բոլոր նշանակում են «սինի ծառ»։]*

+**ԱՐՕՏ**, *ի հլ. «արածելու խոտ և դաշտ» ՍԳր. Ագաթ. որից* **արօտակից** *Կոչ. 119. Ոսկ. հս.* **արօտական** *ՍԳր.* **արօտատեղի** *Մարքին.* **արօտաբոյծ** *Արծր.* **արօտանալ** *«արածիլ» Սարկ. Հանգ.* **խաշնարօտ** *«խաշնարած» Մծբ.* **պանարարօտ** *Փիլ. Ասող.* **պարարտարօտ** *Փարպ.* **տարապարտարօտ** *Մծբ. 195։*

=Պատկանում է **արածել** *արմատին, որի մօտ ենթադրում է նաև **արաել *համանիշ ձևը, և նրա հետ յարաբերում է այնպէս՝ ինչպէս մօտ և յօտ յարաբերում են մատուցանել և յատաճել բառերին։*

ՆՀԲ դնում է **արածել** *բայից, ինչպէս* **ամաշել**>**ամօթ**, **աղաշել**>**աղօթ**: *Տէրվ. Նախալ. 63* **արածել** *բառի հետ՝* **ա** *մասնիկով, որի մօտ* **ծ** *փոխուել է* **ւ**։ Bugge, Btrg. *31* **արածել** *բայի հետ, բուն արմատը* **արա-**: *Հիւնք. յն.* ἄρατος *«մշակուած հող»։* Lidén, Arm. Stud. *էջ 35 կցում է* **արածել**<*հնխ.* **trag** *արմատին, իբր նրա հերկորդական մէկ ձևից. ինչպէս ունինք յն.* τρώγω *«արածիլ» բառի դէմ՝ յն.* τραῦμα *«վէրք»,* τρώω *«վիրաւորել»,* τρώχω *«մաշուիլ, փճանալ»։*

ԳԻՒ.—երև. կր. Մկ. Ոզմ. Սլմ. Վն. **արօս**,

Ալշ. Համշ. Մշ. Նախ. արօդ, *Ղրբ.* ա՛ռուա (*Ագգ. հանդ. ժէ. 46*)։ *Այս բոլորի մէջ* արօա *նշանակում է «խոտ եղած տեղ, արօտավայր». իսկ Նախ. նշանակում է «կանաչ խոտ, բանջար, խոտաբոյս». օր. կոտիմը ուտելու արօտ է (խոտ նշանակում է «չոր խոտ»)։*

+ ԱՐՕՐ, ո հլ. *(յետնաբար կայ նաև ի, ի–ա հլ.) «հողը վարելու գործիք, արօր»* Դաս. *պ. 51, Ոսկ. մ. բ. 27. Վեցօր, 197. Սերբեր. ո-րից* արօրադիր առնել *«հերկել»* ՍԳր. արօրադրել *Պիտ. Ճառընտ.* արօրել *Ոսկ. ա. կոր.* կրկնաւոր, երեքնաւոր առնել *«պրպտել, մի լաւ քննել» Սերբեր. 171.* արօրաձիգ *Պիտ. Փիլ. լին.* արօրավար *Պղատ. տիմ. և օրին. ևն։ Յետնաբար գրւած է նաև* հաւոր *Եփր. մրգ. 359. 32. կթ. Վստկ. Վրդն. առ. 12։*

= *Հնխ.* aratrom *կամ* arətrom *ձևից, որի միւս ժառանգներն են յն.* ἄροτρον, *դոր.* ăpa-тpom, *լա.* arātrum, *իռլ.* arathar, *կիմբր.* arasr, *հիռլ.* arðr, *նրբրտ.* arar, *լիթ.* arklas, *հսլ.* ra-lo, *լհհ.* radlo, *ռուս.* арало *են։ Հնդեւրոպականներից փոխառութեամբ բառս անցել է նաև ֆիննական լեզուներին. ինչ. ֆիննի.* atra, *վօտ.* adra, *էստն.* ader, ater, *վեպս.* adr, *լիվ.* adrs, *բոլորն էլ նշանակում են «արօր»։ Հնխ.* aratrom *ձևի պարզական արմատն է հնկալանկ* *arə- *«հերկել», որի ժառանգներն են յն.* ἀρόω, *լա.* arō, *իռլ.* airim, *գոթ.* ar-jan, *հդգ.* erran, *մրգ.* ern, *լիթ.* arìù, *հսլ.* arją։ *Արիական լեզուները բոլորովին անծանօթ են թէ'* *ar *արմատին և թէ' ածանց* *aratrom *«արօր» բառին։ Հայերէնը կանգնած է եւրոպական և սեմական լեզուների միջև, չտեսնելով պարզ* *ar *արմատը, բայց պահելով* *aratrom > արօր *բառը (տե՛ս* Walde *55, 62,* Boisacq *80,* Trautmann *13,* Pokorny *1, 78,* Ernout-Meillet *71)։— Հիւրշ. 423։*

Առաջին տպիղ տեսնիչն է Klaproth, *որ* Asia polygl. *104 կգում է լա.* arare *ձևին։ Նշէ լծ. հսլ. վար. վարել բառերի հետ՝ գնում է նաև յն. և լա. ձևերը։* Lag. Urgesch. *902 լա.* arare *«հերկել» և յն.* ἄροτρον *ձևերի հետ միևնոյն արմատից։* Pictet *2, 88 փոխառնալ յունարէնից? Տէրվ.* Altarm. *80, նախ. 62, Երկրագունտ 1883, էջ 172 յիշում է վերի ձևերը և հայերէնի նախաձևն է դնում* *aratra, *ուր* t *ընկած ժամանակ փոխանակուել է ւ ձայնով։ Հինք.* արօր *=յն.* ἄροτρον, արօրադիր *=յն.* ἀροτήρ *«հերկրագործ»։* Коршъ, *Բրգմ. Հովիտ 1914, 456 ֆիննն.* aura *«արօր» բառի հետ։*

ԳԻՒ.—երև. Սեբ. Վն. արօր, *Ասլ.* արէօ՛ր, *Խրբ. Կր. Համշ.* հաւոր, *Ալշ.* հmրօր, *Զթ.* հmյէօյ, հmրէօր, *Մկ. Վն.* խաւոր, *Ոզմ.* խաւռր, *Մշ.* հրրօր։—*Նոր բառեր են՝* արօրհամ, արօրձող։

ՓՈԽ.—Հնդեւրոպական փոխառութիւն են անշուշտ, բայց հայերէնից չեն չաղաթ. կամ արեւել. Բրք. haral *«արօր, մշակութիւն, վարուցան» (թէ՛ օսմաներէնի և թէ՛ ուրիշ Բրքական լեզուների մէջ գոյութիւն չունի. համմտ. ռուս.* арало *«արօր»), վրաց.* ահონა արոնա *«արօր» (Զուբինով, էջ 46 համարում է լա. փոխառութիւն)։*

ԱՐՕՐ *«չրային մի տեսակ թռչուն՝ բադի նման» Մխ. տառակ. Հր.։*

ԳԻՒ.—Վն. արօր, *Ոզմ.* ա՛ռօր. *Նոր բառեր են* արօրիկ *Վն.* ճշնարօր *Մշ. «տճկ. անզուտ թռչունը»,* արօրկերէն *Վն. «մի տեսակ ծաժկալեզուս»։*

ԱՐՕՐԱՆԱԼ *տե՛ս Հարօրանալ։*

ԱՅՈՒՅԱՆՔ *«փաթութիանք». գիտէ միայն Բառ. նրեմ. էջ 41։*

ԱՒ *տե՛ս Աւ։*

ԱՒԱԳ, ի–ա *հլ. «մեծ, նրևելի, պատուական (բարոյապէս և նիւթապէս, թէ՛ անձերի և թէ՛ իրերի համար ասուած)» ՍԳր. եզն. Ոսկ. ես. և մտթ. Վեցօր. 142. Համմտ. «Ո՛չ տղայոյ որ աւագ բանս խօսի» եզն. «Փոքր որ ի նոսա, կեբակուր է աւագին» Վեցօր. 142։ Որից* աւագագոյն *եզն.* աւագախումբ *Բուզ.* աւագամեծար *Գ. մկ. ա. 11.* աւագանալ *Ոսկ. մ. բ. 21. Բուզ.* աւագանի *«իշխաններ» Սգր. Ագաթ.* աւագափող *«մեծ փող» ես. իէ. 13.* աւագորեար *Բուզ.* աւագոյթ *«ծերութիւն» Բ. մկ. գ. 23.* աւագութիւն *«իշխանութիւն» Ա. մկ. բ. 51. Ագաթ.* անաւագ *«փոքր, տկար, խեղճ» ՍԳր. Ոսկ. ես. եզն.* անաւագակեր *«կեղեքող» Վեցօր. 143.* անաւագիլ *«մաշուիլ, տկարա-*

նալ» Ոսկ. ա. ամմ. ժբ. (կարգամ աճաւագիկ՝ ինչպէս ունի ՅՀ. կի.). գեղջաւագ Կանոն. յիշոցաւագ «հայհոյողներու վրայ հսկող ոստիկան» Կիր. էջ 171. հեծելաւագ «հեծելազօրքի պետութիւն» Ուռհ. 425, 357. հարիւրաւագ, հազարաւագ «հարիւրապետ, հազարապետ» Տաթև. ամ. 633 և այլն։

ՆՀԲ էծ. հաւակ, աճ, բարգաւաճ։ Հինք. հյ. աւաճել «բժշկուիլ» և յն. ἐπαγῆς «մարքուր, յաջողակ, ճարպիկ»։ Patrubány ՀՄ 1906, 343 աւ «փայլիլ» արմատից կրկնուած, իբր աւաւ (տե՛ս առաւօտ, որ նոյն աւ արմատից է)։ Նոյն, SA 2. 13 աւ=յն. ἀπό +ագ=սանս. agha «անմաքրութիւն», ուրիմն աւագ «անաղտ, մաքուր»։ Karst, Յուշարձան 428, չաղաթ. ույղուր. aka, aga, մոնղոլ. axa, aka, թունղուզ. akā մանչ. axūn «հրէից եղբայր», օսման. اغا aγa «պարոն»։

ԳԻՒ.—ՀԹ. ավօգ՝, ավոգ՝ «մեծ»։ Այլուր ամէն տեղ կենդանի է միայն Աւագ յատուկ անուան և աւագերէց, աւագ ֆաճանայ, աւագ սարկաւագ բառերի մէջ, որոնք գրականից են փոխառեալ։

+ԱԻԱԴԻԿ, որից աճա աւադիկ կամ՝ աճաւադիկ, դա աւադիկ ՍԳր. Ագաթ. Ոսկ. կող. ևն։

=Կազմուած է աւա- և -իկ մասնիկներով՝ դ(ա) դերանունից. կազմութեան կողմից նոյն են աւասիկ և աւանիկ՝ որոնք ձևացած են նոյն մասնիկներով՝ սա, նա դերանուններից։

ԱԻԱՁ, ո հլ. (յետնաբար նաև գրծ. աւ) «ծովի կամ գետի աւազ, լայնաբար՝ հող. փոշի» ՍԳր. Եզն. որից աւազածիր կամ աւազադիր Ագաթ. աւազակապ Ագաթ. աւազեղէն Սիր. իբ. 21. աւազին Ագաթ. աւազուտ Սիր. իե. 27. աւազել «աւազով շփել» Վրք. հց. բնդաւազել «աւազի տակ թաղել» Եղիշ. և. էջ 83. Կաղկանտ. աւազահիմն ՅՀ. կի. ևն. նոր բառեր են՝ աւազամար, աւազամած, աւազայինճ, աւազախառն, շամարաւազ ևն։

=Բնիկ հայ բառ, որի հետ կապւում են լտ. sabulum, յն. ψάμμος, ἄμμος, ψάμαθος, ἄμαθος, հիսլ. sandr, հգ. sampt, մյգ. sant, գերմ. և անգլ. sand, հոլլ. zand (գերմանական փոխառեալ ֆինն. santa), որոնք բոլոր նշանակում են «աւազ»։ Ընդհանուր գերմանական ձևը պրում է *sanda. նախաձևը *samdho-, *samadho- (Kluge 407), որ միանում է յն. ψάμαθος ձևին։ Հայերէնը միանում է լատինին, ուր b ծագում է bh ձևից, որ առլիս է հյ. ւ։ Ըստ այսմ մեր բառի առաջին մասի նախաձևն է հնխ. sabh->հյ. աւ-, վերջի մասը անկայուն է։ Klaproth, Asia polygl. 104 յն. ἄμμος «աւազ» բառին է կցում։ Bugge, Etr. u. Arm. 79 և KZ 32, 38 յն. ἄμαθος «աւազ» և գերմ. Sand «աւազ» բառերին ցեղակից, որոնց նախաձևը դնում է *samadhós։ Հիւնք. էջ 277 ավասիս ձևի՞ց է հանում։ Ա. Աճառեան (անձնական) մեկնում է ապա «ջուր» և այ «ածել, բերել» բառերից, իբր «ջրից բերուած»։ Ուղիղ մեկնեց Meillet (տե՛ս Ernout-Meillet 841). համմ. նաև Walde 667, Boisacq 1074, չի հիշում բնաւ Pokorny։

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Ակն. Եղմ. Կր. Մկ-Մշ. Մրղ. Ոզմ. Զղ. Սեբ. Սլմ. Վն. Տփ. ավազ. Տիգ. mvmq, Ղրբ. հա՛վազ։ Նոր բառեր են՝ աւազկոկել «ապիկել, չնարակ քսել», աւազկուն, աւազնոց, աւազմաղ, աւազուտ, աւազարան։

ԱԻԱՁԱԿ, ի-ա հլ. «յայտնի գող, ճամբի յիւղակ» ՍԳր. որից աւազակել «բռնի յափշտակել» Ա. եղր. դ. 23. Ոսկ. յհ. բ. 14. Եւս. քր. աւազակուտ Եզն. աւազակաբարոյ Կիւրղ. ծն. աւազակապետ Մանդ. Նեղոս. ևն։ Նոր բառեր են՝ աւազակային, աւազակախումբ ևն։

ՆՀԲ մեկնում է «հէն աւազուտ վայրից կամ ի վերայ վազող»։ Տէրվ. Նախալ. 106 հյ. վազել, վազել. սանս. vah, զնդ. vaz, լտ. vehere են բառերի հետ հնխ. vagh «երթալ» արմատից։ Հիւնք. գովող բառից։ Müller WZKM 6, 265 պհլ. bačak, պրս. baza «մեղք, յանցանք» բառերից։ Քիւրեաքեան, Ա-լիահայ բռ. 346 պրս. varz «գործ» բառից։—Մաս HAH 1913, 330 Ախխազ ազգի անունից։

Գիհ.—Ագլ. Ախց. Ջղ. Սլմ. ավազակ, *երև.* ավա՛զակ, ավա՛զագ, *խրբ. Մշ. Ննխ. Սեբ.* ավազագ, *Պլ. միայն* գող-ավազագ *ձևով պահուած, Ասլ.* ավազայ, *Տիգ.* mվmգmգ, *Հճ.* ավազօգ, ավազոգ:

Փոխ.—Վրաց. ავაზაკი աւազակի «աւազակ», ავაზაკობა ավազակորա «աւազակութիւն», ავაზაკური ավազակուրի «աւազակաբար», ხავაზაკო սաավազակո «աւազակային», *մինգր.* აჯაზაკი ավազակի, *ասո.* աբազակ «գող»:

ԱԻԱՋԱՆ, ի–ա հլ. «գուռ. 2. ջրշեղջ, հալվուղ. 3. եկեղեցում մկրտարան» ՍԳր. Ոսկ. մ. ա. 7. Եղիշ. խոր. որից աւազանօրհնէք *կանոն.* աւազանազարդ *Անան. եկեղ.* աւազանածին *Մխ. երեմ. Տօնակ.* աւազանապաճոյճ *Անան. եկեղ. բոլորն էլ յետին: (Միջին հյ.* ավզալ *բստ* Karst, *Քերակ. 130):*

=*Փոխառեալ է իրանեանից, բայց որան ծնունդ տուող մայր ձևը յայտնի չէ. կայ պրս.* آبزن ābzān «*փոքր ջրշեղջ*» (vullers). *2. «է աման ինչ տապանաձև երկայնածիգ բստ հասակի մարդոյ, զոր արարեալ ի պղղինձոյ և կամ յերկաթոյ և ի վերայ նորին խուփ ինչ արարեալ և ի միջակի նորին ծակ մի վասն շնչահանութեան կազմեալ, և զոմանս հիւանդս ի մէջ նորա ընկողմանեցուցեալ, զարման մատուցանեն» (ԳԴ): Այս բառից են փոխառեալ արաբ.* ابزن abzan «*մէջը լողանալու աւազան կամ կոնք*», بازان bāsān «*աւազան, ջրշեղջ*» (*Կամուս, Բրք. Բրդմ. Գ. 599*), *վրաց.* აბაზანა աբազանա «*լուացուելու մեծ տաշտ*»: *Բայց այս պարսիկ բառը չէր կարող տալ հյ.* աւազան, *որովհետև պրս.* آبزن ābzān *ենթադրում է պհլ.* *apazan, *որ կարող էր տալ միայն հյ.* *ապազան *ձևը: Սակայն կայ նաև ասոր.* ܐܒܙܢܐ avzānā «*մկրտութեան աւազան*», *որ նոյնպէս փոխառեալ է պարսկերէնից և որի* v *ձայնը համաձայն է հյ. ւ-ին, բայց վերջաւորութիւնը* (ā) *տարբեր է:—Հիւբշ. 111:*

Հներից Մագ. քեր. 229 արդէն նշանակում է պրս. ծագումը. «Իսկ մեր ի Պարսից բազում ինչ ընտանեբար ուսեալ դգնաս, որպէս գուռա և ոիդէ, մարքար, աւազան՝ որ է ջրոյ անօթ»: Աւգեբեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 57 պրս. آبدان ābdān «*ջրաման*» *բառի հետ: ՆՀԲ Բրք. նաւուզ, նավզ (իմա՛ արաբ.* حوض ḥavz) «*աւազան*» *և պրս.* ābdān «*ջրամանն*»: Lagarde, Ges. Abhd. *10 պրս.* ābzan, *որ տե՛ս վերը: Հիւնք. իրար է խառնում հյ. գովդ, ժողով և արաբ.* havz: *Գազանճեան, Արև. մամ. 1907, էջ 934—5 Բրք.* հավուզ: Karst, *Յուշարձան 428 օսմ.* aγəz «*ծակ*» (*իմա՛ «բերան»*), *չաղաթ.* aguz, agiz (avuz), *ալթայ.* auz *ևն:*

ԳԻՀ.—Պահուած է միայն «մկրտութեան աւազան» նշանակութեամբ. այսպէս Ալշ. Ախց. երև. կր. Մկ. Ննխ. Շմ. Պլ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տփ. ավազան, *Ոզմ.* ավmգmն, *Տիգ.* mվmգmն, *բոլորն էլ գրաբարից փոխառնուած: Պարսկերէնի հետ խառնուելով ձևացած է Ջղ.* նավիզարան: *Նոր բառ է* աւազանեղբայր «*աղգակից, կրօնակից*»:

Փոխ.—Հայերէնից փոխառեալ պէտք է կարծել վրաց. ავაზანი ավազանի «*լուացարան, աւազան*» (*Մատ.* Тексты и разск. *IV յատկ.*), *մինչդեռ* აბაზანა աբազանա *համանիշը ուղղակի պարսկերէնից է, ասո.* avazan «*մկրտութեան աւազան*»:—*Թուրեան, Բիւր. 1899, 798 հայերէնից փոխառեալ է դնում Բրք. գուռ. S.* avazan «*աղբիւր*» (*օր.* avazana gidelim «*աղբիւր երթանք*»). *բայց ես կասկածում եմ այսպիսի մի բառի գոյութեան վրայ, բստ որում հայ բարբառների մէջ չկայ աւազան բառը՝ այսպիսի գործածութեամբ:*

ԱԻԱՂՈՑ *տե՛ս Աւիլ:*

ԱԻԱՂ «*վա՛խ, ափսո՛ս*» *խոր. Պիտ. Նար. «վայ տալը, ափսոսանք, ողբի ձայն» Ոսկ. յհ. բ. 7. Վրք. հց. Պիտ. «նիհար, վատոյժ» ԱԲ. որից* աւաղել «*վայ տալ, վա՛խ ասել, ողբալ*» *Ոսկ. յհ. ա. 40. խոր. Նար.* աւաղուկ «*եղկելի, խեղճ*» *Մծբ. ժԲ.* աւաղաբեր «*շատ խղճուկ պատուղներ տուող*» *Մծբ. ժե.* աւաղաբոյս «*խղճուկ բուսած*» *Մծբ. ժԲ.* աւաղապէս *Ոսկ. ծն. բազմաւաղելի Նար.* աւաղակոչ *Սամ. 56. Հին օրինակ է աւեղկել «ափսոսալ, վայ կարդալ», որ մէկ անգամ ունի Բուզ. գ. 3. «Յորժամ գՀերան դեռ վիրային ի նմանէ, առ յոյժ գեղեցկութեանն բաղումք յարտա-*

աուս հարան՝ որք լուանն կամ տեսին, ի գեղն աւեղկեալ». (այս բառը Հ. Գ. Նահապետեան, Բազմ. 1906, 315 անյաջողաբար ուղղում է աւերեալ)։—Գրուած է նաև ավախ Վրգ. առ. էջ 21։

ԳԴ միացնում է պրս. آواخ avāx «աւազ» բառի հետ։ Տէրվ. Նախալ. աւազ և աւեսել բառերի մէջ աւ դնում է սանս. av, յն. αὔω «գոչել», լտ. ovo «ծխալ, ուրախութեան աղաղակ բարձրացնել» ձևերի հետ՝ հնխ. av «գոչել, կոչել» արմատից։ Bugge, Beitr. 21 արմատը դնում է աւ, կազմուած աղ մասնիկով։ Հիւնք. պրս. avāx։ Գազանճեան, Տարեց. Պապիկեանի 1905, 125 Թրք. vax! վա՛խ։ Հ. Ա. Վարդանեան, ՀԱ 1912, 636 Բուլանդի աւեղկել ձևի հետ համեմատում է Ակնայ բարբառով աղայուիլ, աղայկուիլ «աւազել», հերքելով Նահապետեանի անտեղի սրբագրութիւնը։ Պատահական նմանութիւն ունի արաբ. عول ʿavl, اعوال ʿival *«աւազել, ողբալ, հառաչել» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 300)։*

*ՓՈԽ.—Հայերէն բառին շատ նման է հրնչում պրս. آواخ avax կամ آوخ avax «աւազ», որի ծագումը անյայտ է (Horn չի նշանակած ոչինչ)։ Հայերէնը չի կարող փոխառեալ լինել պարսկերէնից, որովհետև այս պարագային պիտի ունենայինք հյ. *աւախ։ Առաուելն պարսկերէնը կարող է փոխառեալ լինել հայերէնից (համմտ. աղիւս)։ Եթէ պարսկերէնը փոխառեալ է հայերէնից, փոխառութիւնը կատարուած է յետին շրջանում, երբ արդէն հայերէն ղ ստացել էր արդի հրնչումը՝ փոխանակ լ-ի։*

**ԱԻԱՆ, ի–ա հլ. «գիւղաքաղաք, մեծ գիւղ» ՍԳր. Ագաթ. Եղիշ. հների մօտ գործածւում է նաև խառն կերպով «գիւղ կամ քաղաք» նշանակութեամբ. աւելի յետոյ է, որ հաստատւում է «գիւղաքաղաք» նշանակութիւնը. համմտ. Աւանն գիւղաքաղաք ասի. Վրդն. աշխ. այսպէս նաև արդի դրականում։ Այս արմատից են աւանանալ «շէնանալ» Բուզ. Խոր. Ասող. աւանագիօղ Ջէնոբ. գիւղաւան «մեծ գիւղ» Աբ. աւանաշէն Ճառընտ. շինաւան Պատմ. աղեքս. աւանապետ «գաւառապետ» Կիւրղ. Թգ.։ Աւան բառը ուրիշ մի առումով էլ գտնում եմ գործածուած մեր հին մատենագրութեան մէջ, բայց դժուար է ճշտիւ որոշել. ահա թէ ի՛նչպէս է բացատրում Կիւրղ. Թգ. այս բառը. «Աւան այն ասի, որ յանդն ոք մասն ի շինուած գրաւիցէ» (տե՛ս ՆՀԲ, աւանապետ բառի տակ)։*

*= Պհլ. փոխառեալ բառ. կայ հպրս. āvahana- «պիւղ, աւան», որ է սանս. āvasana «քաղաք» (արմատը՝ vas «բնակիլ». Bartholomae 333, արմատի մասին տե՛ս գոյ, Pokorny 1, 306), այս բառը պիտի առ պհլ. *āvahan, որից հյ. *աւաւան և հայերէնի ձայնական օրէնքներով աւան. համմտ. փողաւար>փողար, ակաւիջաւատ>ակաւիջատ։—Հիւրշ. 112։*

Brosset JAs. 14(1834), էջ 369—405 համեմատում է բառս հյ. վանք, սանս. vani և վրաց. վանի բառերի հետ։ ՆՀԲ վան արմատից, որից նաև իջավան, օթեւան։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Եւրոպա 1849, էջ 200։ Lagarde, Ges. Abhd. 149 առար. אוֹן avan, *իբր երկուան էլ* van *«բնակիլ» արմատից։—Lag. Urgesch. 909 գնդ. aonya «առնագ» բառի հետ՝ որա նշանակութիւնը սխալ հասկանալով։ Haug GGA 1854, 250 գնդ. *avaāhanəm բառի հետ՝ ās «նստիլ» արմատից։ Մորթման ZDMG 31, 421 նոյն գնդ հյ. վան, սանս. vas «բնակիլ», որից āvasana «քաղաք», հպրս. āvahana, շօշափան թևեռ. uvanis «քաղաք», գերմ. wohnen «բնակիլ», առար. avan (որ փոխառեալ է գնում), խալդ.* 𒀀𒉿𒈬 *, որ կարդում է* van *կամ* avan *«քաղաք»։ Հիւնք. յն. αὐανή «ցամաքութիւն»։ Müller WZKM 8, 183—4 պհլ.* ʾwʾn *«պալատ», թալմուդ.* אוֹבָא avnā *«իջևան», արմատը* aw, *համմտ. յն.* αὐλή, *լտ.* aula *«բակ»։ Աէտեոսեան ՀԱ 1907, 281 ազանիմ բառի հետ։ Մատե՛ս վան։ Պատահական նմանութիւն ունին սանս. avani «երկիր, հող», քրդ.*

awāni «շէնք, շէն տեղ», ասոր. ܐܘܝܢܐ avvānā «բնակարան, իջևան, օթևան»:

ԱԻԱՆ «կողոպտիչ, թալանչի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած նոր ժող. Ա. 44 (1680 թ. գրուած մի տաղարանից). «Ուրուրն ավան էր զինչ զթաթար, Ոչ ոք զմուէր (կարդա՛ չմուէր) ի շէնն երթայր, Առնոյր զհաւի ձագն գնայր, Թէ հազար մարդ յետևն գոռայր»: Սրա հետ նոյն է գալիս խաւան «աւերող» Բառ. հրեմ. էջ 125, որ պէտք է ըստ այսմ հանել արմատների շարքից:

ԱԻԱՆԴ (հնից ունինք ներգ. յաւանդի, սեռ. աւանդոց, յետնաբար ից, իւ, of) «պահ տրուած բան, փխբ. կտակ, պատուէր, ընծայ» ՍԳր. Ագաթ. «աւանդական սովորութիւն» Տօնակ. Փիլ. Շնորհ. վիպ. և թղթ. «գաղտնիք, խորհուրդ» Վրդն. ազ. որից աւանդել ՍԳր. Ագաթ. եզն. աւանդութիւն ՍԳր. Ագաթ. Կորիւն. աւանդակիր Ագաթ. աւանդապահ Բ. մակ. գ. 15. Գ. մակ. գ. 18. Ագաթ. Բուզ. աւանդաւոր Բուզ. աւանդատուր Բ. մակ. գ. 15. աւանդիւ «աւանդութիւն» Շնորհ. բարձր. առաքելաւանդ Կանոն. աւանդատուն «եկեղեցու պահարան» ԱԲ. աստուածաւանդ 3Հ. իմ. Դիոն. Նար. միւռաւանդ Նար. ևն. նոր բառեր են ճնաւանդ, նուռաւանդ, աւանդաբար, աւանդավէպ ևն:

ՆՀԲ «և անդր կարկառեալ, մատուցեալ, տե՛ս և գոհաւանդ, սոթաւանդ, լծ. լտ. ante, իտալ. avanti «յառաջ»: Windisch. 42, Lag. Urgesch. 108 սանս. avanidhā ձևի հետ, որով հայ բառը բաղկացած է լինում աւա=սանս. ava և ն=սանս. ni մասնիկներով՝ -դնել արմատից: Gosche 69 հայերէնը դնում է հնագոյն *աւա-դնել ձևից, աւա = սանս. ava մասնիկով և հյ. դնել բայով կազմուած, համաձայն չն. παρα-τιθέναι և սանս. ava-ni-dhā ձևերին: Haug GGA 1854, 250 աւան բառից: Müller SWAW 88, 15 ā մասնիկով band արմատից. այստեղ է պատկանում նաև Avesta իբր «աւանդութիւն». սակայն WZKM 10, 177 պար-աւանդ և ապա-ւանդակ բառերի հետ՝ իբրև իրանական փոխառութիւն: Հիւնք. պրս. اوند avand «անօթ, աման» բառից. համմ. հյ. յաւօթ առնուլ «փոխ առնել» ոճը: Յ. վ. Յակոբեան, Բիւզանդիոն թ. 743 աւանդ «կարասի»=պրս. ավեանա, իսկ աւանդ, աւանդել=արաբ. եմանեք: Pedersen, Հայ. դր. լեզ. 220 նոյնացնում է հաւ-աս, հաւ-ասա են բառերի հետ: Պատահական նմանութիւն ունի սանս. bandha «կապ», բայց նաև «աւանդ»:

***ԱԻԱՆԴ** «գլխաւոր քաղաք, chef-lieu». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Շապհ. էջ 67 և 72. «Ունիք զէրութիւնդ Զարևանդ գաւառի և զաւանդ քաղաքն Հերայ, զգլուխդ Պարսից». «Բռնութեամբ առեր զամենայն կողմանս արևմտից, մինչև հասար յաւանդ քաղաքաց ի Պարսս»:

=Պրս. آوند avand «գահ, աթոռ, պաշտօն» (թախթ ու մէնանէդ) ըստ Բուրհա՛նի Կատի, Բուրհա՛նի Ջամի (էջ 13) և Ջարհա՛նդի Քիհանգիրի բառարաններու: Չի գտնում Գէորգ Դպրի բառարանում: Սրանից է կազմուած Պարսից نهاوند Nihāvand քաղաքի անունը (տե՛ս Blochet, Liste géogr. էջ 2), որ ժողովուրդը սխալ ստուգաբանութեամբ մեկնում է «նոյի գահ» (այս ստուգաբանութիւնը յիշում է Կամուս, Քրք. Քրգմ. Ա. 701 և մերժելով մեկնում է «մեծ քաղաք»): —Ա՛ճ.

Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. 2576 բ ոննի «viculus, աւանդ, փողոցիկ», ուր աւանդ բառը կա՛մ է աւան և կա՛մ աւանդ, որ վերի բառն էւ Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 182 հանում է պրս. աւա, հյ. աւան բառերից: Վերի մեկնութիւնը հրատարակել եմ նախ իմ Հայ. նոր բառեր հին մատ. աշխատութեան մէջ, հտ. Բ. էջ 47 և 297:

ԱԻԱՆԴԵԼ «մոլեգնիլ» տե՛ս Աւիլ:

+**ԱԻԱՆԻԿ**, որից աճա աւանիկ կամ աճաւանիկ, նա աւանիկ են. ՍԳր. Ոսկ. մ. ա. 9 են:

=Կազմուած է աւա- և -իկ մասնիկներով՝ ն(ա) դերանունից. կազմութեան կողմից նոյն

են աւադիկ և աւասիկ, որոնք ձևացած են նոյն մասնիկներով՝ դա, սա դերանուններից։

*ԱԻԱՁ (գրուած նաև աւաջ), n, ի-ա հլ. «ձայն, երգ, մեղմ և քաղցր երգ» Երզն. քեր. Անյ. պորփ. Մարթին. Բրս. մրկ. 68. «լեզու, բարբառ» Սոկր. եկեղ. պտմ. էջ 169. որից աւաչ ասել «երգել», աւաչական «եղանակաւոր» Սոկր. 387. աւաչել կամ աւաջել «երգել, մրմնջել» Մարթին. Մին. համդ. 56. դիւրաւաչ «քաղցրահնչիւն» Անյ. պորփ.։

= Պհլ. āvāč «ձայն», որից čarp- āvač «քաղցրախօս», պազենդ. *āwāž, որից du-šāwāžē «չարաձայնութիւն», պրս. آواز āvāz «ձայն, աղաղակ», ոչ آوازا āvāza «բարբառձայն և երգելով կարդալ. 2. հնչակ, համբաւ», որից փոխառեալ են նաև աֆղան. բելուճ. քրդ. āvāz «ձայն» (Horn § 54), չաղաթթ. ոչ آواز avaze «համբաւ», ասրբ. avazile «գոչելով, բարձրաձայն» (թուրքերէնի միջոցով անցած)։ Իրանեաններէի արմատական ձևերն են գնդ. vāč- «խօսք», պհլ. vāč «մարդով ազօթող», պրս. باج baǰ, ژاو vāž «միտմիկ մրմնջեալ ազօթք. 2. այն լռութիւնն՝ զոր առնեն մոգքն՝ այսինքն կրակապաշտքն, ի լուանալն զանձինս իւրեանց և լուտելն գկերակուրս» (ԴԴ) — Հիւբշ. 112։

> Ուղիղ մեկնեց նախ ԴԴ, որ համեմատում է պրս. āvāz բառի հետ։ Նոյնը կրկնում են ՆՀԲ, Lag. Urgesch. 347, Հիւնք. են։ ՆՀԲ աւելացնում է նաև անկ. հավա, լտ. vox, իտալ. voce, առնս. vāča։ Հիւնք. նաև յն. ἐνάζω «վառս առնուլ գոչելով»։

ԳԻՒ.—Մրշ. էվmչ? ՋԹ. էվmջ՛f, էվէջ՛f (որից բայաձև ավջ՛իլ «երգել») «որ և է աշխարհական երգ, խաղ, շարքի, մանի, թիւրքի»։ Այս բառն է նաև Շլ. աւաչ «ծաղր». օր. «Սուտ կաղի տալով՝ նրա աւաչն էր անում»։ Այս նշանակութիւնը (եթէ չկայ վրիպակ) լուսաբանում է աւաչ բառի հին մի գործածութիւնը. «Աւաջ, յիշոցք և այլ ազաւղի զբոյց... մի՛ լիցին ի բերանս մանկանց» Բրս. մրկ. այստեղ աւաջ անշուշտ չի կարող «երգ, ձայն» նշանակութիւնն ունենալ, այլ պէտք է առնել «ծաղր, ծաղրական երգ» իմաստով։

ՓՈՒ.—Վրաց. ავაჯა ավաջա «արտասանական երգ»։

ԱԻԱՌ «աման». անստոյգ բառ, որ կայ միայն միզաւառ «միզաման» (Ոսկ. կողոս. էջ 603) բարդութեան մէջ։ Բայց եթէ այս բառը իրօք վրիպակ է և պէտք է կարդալ միզառ, ինչպէս ենթադրում է Վարդանեան ՀԱ 1911, 500, այն ժամանակ բառը կծագի առնուլ ձևից և անգոյ աւառ բառը կջնջուի։

> Թիրեաքեան ՀԱ 1914, 56 միզաւառ բառը մեկնում է մէզ+պրս. bār-īdan «տեղալ, ցօղել». հմմտ. ապաւառ։

+ԱԻԱՍԻԿ, որից աճա աւասիկ կամ աճաւասիկ, սա աւասիկ են. ՍԳր. եղն. են։ Ռմկ. հլ. կայ ճա՛նսը «ահաւասիկ» Տաղ. հրտր. Զօպանեան, Հայ էջեր, էջ 74։

=Կազմուած է աւա- և -իկ մասնիկներով՝ ս(ա) դերանունից. կազմութեան կողմից նոյն են աւադիկ և աւանիկ, որոնք ձևացած են նոյն մասնիկներով՝ դա, նա դերանուններից։

ԱԻԱՏ տե՛ս Հաւատ։

*ԱԻԱՐ, ի-ա հլ. (տես. աւարոյ՝ Ա. Թագ. ժե. 12. յետնաբար նաև ի հլ.) «կողոպուտ, թալանած բաները» ՍԳր. «աւարառութիւն, թալան» եղկ. լբ. 13. Փարպ. որից աւարել ՍԳր. Բուզ. աւարաբաշխ Դաւտ. ե. 30. աւարաբար Ա. մկ. գ. 3. աւարամասն Բուզ. աւարառու ՍԳր. Ոսկ. ես. աւարուիւն (կարդա՛ աւարառուիւն) Բուզ. գ. 6։

= Պհլ. āvār «կողոպուտ», բելուճ. āvār «աւար, կողոպուտ», աֆղան. avār «կողոպուտ, աւարի տալը», մանդալ. אוואר āvār «աւերածութիւն»։—Հիւբշ. 112։

> Bugge IF 1, 454 պհլ. āpār «դողութիւն», օսս. abreg, ամար. abúrik «աւազակ», յն. ἔναρα «աւար, կողոպուտ», առնս. sánara «աւար» բառերի հետ՝ իբրև քնիկ հայ. մեր բառը գնում է *աճար նախաձևից։ Horn § 53 մեր բառը փոխառեալ է գնում իրանեանից։ Müller WZKM 9, 287 յն. ἀπαυράω «կողոպտել» և պրս. آوار āvār, ոչ آوارا āvāra բառ Horn § 53։ Scheftelowitz BB 29, 42 յն. ἀείρω «բռնել»։ Patrubány SA 2, 33 թէ՛ հայր, թէ՛ պհլ. ձևերը

և թէ՛ յն. ἔναρα *հանում է հնխ.* ar (առնում, ἄρνυμαι) *արմատից,* apa- *և* -en- *մասնիկներով: Նոյն, ՀԱ 1908, 246* ap- *մասնիկով առնուլ բայից: Փորթուգալ փաշա, Եղիշէ 285 պաղնդ.* աբար «աւար»: *Թիրեաքեան, Կարնամակ ծան. 129 պհլ.* աւարկար «ճակատագիր» *բառի հետ: Գաբրիէլեան ՀԱ 1910, 235* ալ *բառից:*

Գիւր.—Տփ. ավար, *որ պահուած է միայն՝* վուրիճ ա՛վար, վուրիճ խա՛վար *ասացուածի մէջ:*

Փոխ.—Վրաց. ავარი ավարի *կամ* იავარი իավարի «աւար, կողոպուտ, որս», ონავარი ոնավարի, *որից մինգր.* ნავარი նավարի «կողոպտիչ» (Кипшидзе, Грам. мингр. яз. *1914, էջ 285*), *սլաթէս և իմեր.* ნავარი նավարի «անտէր, փճացած» (*քատ* Беридзе, Груз. глосс. *էջ 31*):

ԱԻԱՐՃ «անծանօթ մի բոյս է» *Բժշ. (տե՛ս* նաւրուր *բառի տակ):*

ԱԻԱՐՏ *(սեռ.* ի*)* «վերջ, ծայր» *Ոսկ. յհ. ա. 22 և մ. ը. 27. Եփր. Փիս. 376. որից* աւարտել *հոր. Պիտ.* աւարտեղ «հոտավանկ բառ՝ վերջի երկու վանկերն երկար» *Քեր. Բր. և Երզն.* աւարտակէտ «վերջակէտ» *Մագ.* աւարտուն «կատարեալ» *Անյ. վերլծ. արիատ.* աւարտաճառական «կատարեալ հասակով» *ՅՀ. կթ.* անաւարտ *Արիատ. աշխ. Նար. խչ. Երբաւարտ Ոսկ. Փիլիպ. է.* բացաւարտել «առածը նորից կրկնել» *Մաքս. եկեղ. (տե՛ս նաև* վաւարտ *բառի տակ): Նոր բառեր են* աւարտաճառ, ուսումնաւարտ, չրջանաւարտ, բեմականաւարտ, ճեմարանաւարտ *են:*

= *Պհլ.* *avart *հոմանիշ ձևից, որ կրած է. կալ միայն մանիք.* אנאורד anāvard «անվերջ, անվախճան, յաւիտեան» *նորագիւտ ձևը (տե՛ս* Salemann, Manichäische Studien ЗАН *8, 54):*

Նշմ յն. հլ. վերջ: Տէրվ. Altarm. *24, Նախատ. 107* վերջ, վաղջաց, աւարտ *բառերին միացնում է ասես.* varǰ «վերջանալ», apa-varǰ «վերջացնել», vart *դառնալ, անցնիլ», լատ.* vertere «դառնալ»: *Հիւնք.* սաղաւարտ *բառից:* Bugge IF *1, 454* աւարտ *դնելով* *անարտ *նախաձևից՝ համեմատում է յն.* ἀνύω «վերջացնել», *սանս.* sanoti *բառերի հետ. հայերէնի մէջ* արտ *մասնիկ է. հմմտ.* պարարտ<պարար: *Գաղանճեան, Արև. մամուլ 1902, 74* ա *յաւելուածով վերջ բառից: Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Salemann՝ *անդ: Պատահական նմանութիւն ունի ասես.* avarati «աւարտ», *վերջ»:*

ԱԻԱՔԵԼ *տե՛ս* Հաւաքել:

ՆՀՒ ապաքինել *և* աւաքել «բժշկել» *դնում է յն. յն.* ἀκέομαι «բժշկել»: Lagarde, Urgesch. *39 երկասն էլ ասես.* sva, *գնդ.* xva «ինքն» *բառերի հետ: Տէրվ.* Altarm. *10 նոյն ընդ* հաւաքել: *Հիւնք. յն.* εὐαγέω «սրբել, մաքրել»: *Թիրեաքեան ՀԱ 1912, 288 նոյն ընդ* հաւաքել:

ԱԻԳԵՐ «անծանօթ մի ծաղիկ է», *որ և* աւգեր ծաղիկ *Սալաձ. (գրուած նաև* այաւիր*): Ըստ Նորայր, Բառաս. 1901, 102* թևրեա *պրս.* ﺍﻓﮕﺎﺭ afgār «անդամալոյծ» *բառից է. հմմտ.* անդամալուծի ծաղիկ *կամ* խոտ:

ԱԻԻԱԿ, ի–ա *հլ.* «գծուծ, անարդ, մանանէ»*. գիտէ միայն Փբ:*

ԱԻԵԱԼ *տե՛ս* Ասիլ:

+ԱԻԵԼ «ասլելու գործիք» *Ղկ. ժե. 8. Գնձ. Շար. որից* աւելել *(գրուած նաև* ասիլել, աւելուլ*)* «ասլել» *Ոսկիփ. էմբ. սղ.* աւլածու *Փիլ. վրք. հց.* աւլած. *Ոսկիփ.* աւլուիմ *Ոսկիփ. նաև* աւլուկ *(բանջարը) Բժշ. Գաղիան. որ արդէն արդի գաւառականների մէջ տեղ տեղ նշանակում է «աւել շինելու բոյսը»:*

= *Բնիկ հայ բառ, որի հետ համեմատւում են յն.* ὀφέλλω «աւլել», ὄφελμα «աւել», ὀφελτρέυω «աւել ածել, աւլել». *այս յունարէն ձևերը ենթադրում են հնխ.* obhel *ձևը, որ հայերէնի մէջ պիտի տար բառ օրինի* *աբել *կամ* *աբել: *Զայնական այս անկանոնութիւնը չպիտի թոյլ տար բառիս առուգաբանութիւնը իրրև ճիշտ ընդունելու, եթէ միևնոյն ձայնափոխութիւնը չգտնէինք նաև յաւելուլ=յն.* ὀφέλλω *բառի մէջ: Երևի ներկայ ենք* bh=ա *ձայնափոխութեան մի նոր օրէնքի, որի մասնաւոր պայմանները դեռ անծանօթ են մեզ (տե՛ս* Walde *188,* Pokorny *1, 178):*

Այս մեկնութիւնը տուած էր նախապէս Հիւնք. նոյնը անկախաբար կրկնում է Pedersen, *Հայ. դր. լեզ. 6, որ սրանց ուղում է կցել նաև հսկանդ.* afl «դարբնոց» *բառը։* Patrubány SA *2, 13 յն.* ἀπο =աւ *մասնիկով եւ արմատից. բայց յետոյ՝ ՀԱ 1907, 305 ընդունում է վերի մեկնութիւնը։* Meillet *(անձնական) բաւական ընդունելի է համարում վերի մեկնութիւնը։ Նոյնը ընդունում է նաև* Boisacg *732։*

ԳԻՒ.—Աղշ. Հճ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. ավել, *Ախց. Ակն. Խրբ. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* ավէլ, *Ասլ.* ավէ՛լ, *Երև.* ա՛վէլ, ա՛վիլ, *Ագլ. Զթ. Հմշ. Մկ. Ոզմ. Տփ.* ավիլ, *Մրզ.* ավրլ, *Շմ. Տիգ.* ովիլ, *Գոր.* է՛վիլ, *Ղրբ.* է՛վիլ.—*իսկ* աւելել, աւլել *բայի ձևերն են՝ Ջղ.* ավիլել, *Սչ.* ավրլել, *Ակն.* ավրլիլ, *Հմշ.* ավիլուշ, *Աղշ. Հճ. Մշ. Սլմ.* ավլել, *Ախց. Կր. Պլ.* ավլէլ, *Երև.* ա՛վլէլ, *Տփ.* ա՛վլիլ, ավի՛լիլ, *Մկ.* ովլիլ, *Ննխ.* ավլէլ, ալվէլ, *Սեբ.* ալվէլ, *Խրբ.* ալվիլ: *Նոր բառեր են՝* ցախավել, աւելաղր, աւելուր, աւելուցք, աւլուր, աւելի, աւելուկ, աճաւել, աւլիշ, ալուճք, ալտուր:

ՓՈՒՆ.—Վրաց. ავლო ավլի «*մոխիր, աւելուք, ապականութիւն*», ავლიბი ավլիճի «*ապրիւս, ապրանոց*», *ուս.* âvêluk «*ավելուկ բոլոր*»։ *Թրք. գաս. Կր.* evelig panǰarə «*աւելուկ*» *(Բիւր. 1898, 627), Եւդ.* ävelig «*աւելուկ*», *Եւդ.* səxävel «*ցախաւել*» *(Պազանճեան, Յուշարձան, էջ 328—9), Կր.* sexevel *(բառ Բեւեռագիր, Բիւր. 1898, էջ 627). Թորթումի բարբառով՝ ցախաւել (անշուշտ գրուած սխալ. տե՛ս Շիրակ, 1905, էջ 425), քրդ.* avel *(Տէրսիմի բարբառով) «աւել» (Հայաստան, խմբ. Թոթովենցի, 1917, թ. 90),* säqavel *(Նոր-Բայազիտի բարբառով) «ցախաւել» (Ամաո.* MSL *16, 365). Համմտ. նաև հասկ բառի տակ։*

+ Աիեև. *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* աւելագոյն *Եփր. Թգ. 404. Ոսկ. յհ. ա. 3 և Ես. Ագաթ.* աւելախնդիր *Մծբ.* աւելադրել *Ոսկ. յհ. ա. 37.* աւելարանել *Լծ. ածաբ.* աւելաստաց «*ադահ*» *Ոսկ. յհ. բ. 25.* աւելուածք *Մծբ.* աւելի *ՍԳր. Ագաթ. Ոսկ. Վեցօր. Վկ. արև. էջ 132 (սրա հին գործածութեան վրայ տե՛ս Այտընեան, Քնն. քերակ. էջ 65),* աւելորդ *ՍԳր. Եղն. Կոչ. Վեցօր.* աւելեաց «*հայկական տոմարով ամավեջի յաւելուածական 5 կամ 6 օրը*» *Տոմար. Յայտ.* աւելամիս, աւելորդաբանութիւն, աւելորդապաշտ *են (նոր բառեր)։ —2. Առ նախդիրով աճած՝* առաւել *ի-ա? կամ ո հլ. «աւելի» ՍԳր. Ագաթ. Եղն. Կորիւն. Ոսկ. Ես.* առաւելոյ *ՍԳր. Ագաթ.* առաւելութիւն *ՍԳր. Եղն. Վեցօր. Սեբեր.* առ առաւելն *(նոր բառ)։—3. Յ նախդիրով աճած՝* յաւելուլ «*աւելացնել*» *ՍԳր. Եփր. Բագ.* յաւելումն *Եւս. քր. Եփր. ծն.* յաւելուած *Եւս. քր. Ոսկ. մ. բ. 23.* յաւելուածոյ *Եւս. քր. Ոսկ. յհ. ա. 37.* յաւելուածոյ *Եւս. քր. Ոսկ. մ. բ. 23

բի մեկնութիւնը առաւ Pedersen, Հայ. դր. լեզ. 6, որ յունարէնի հետ կապակցով աւելացնում է նաև հսկանդ. afl «զօրութիւն», afla «ստանալ», դան. avl «կութք, արդիւնք», avle «ծնիլ, մշակել», հրգ. avalōn «աշխատիլ» են։ Meillet (անձնական) բաւական ընդունելի է համարում վերի ստուգաբանութիւնը։ Մերժում է Boisacq 732։ Petersson, Arische und Armenische Studien, էջ 104 ὄφελος համարում է կազմուած ὀ- մասնիկով և կցում է սանս. phala- «պտուղ», լտ. pollēre «զօրեղ՝ ուժեղ լինել» բառերին. այսպէսով յաւելուլ ձևի հետ կապը ջնջւում է. ընդհակառակը Petersson ընդունում է Pedersen-ի միւս համեմատութիւնները (հսկանդ. afl են), որոնց վրայ աւելացնում է նաև նորվ. avl «ուժ, կորով», անգլսք. afol «զօրութիւն», eafop «ուժ», յն. *ἀπελο- «ուժ», որից ὀλιγηπελής «տկար», ὀλιγηπελέων «թոյլ լինել» են, իբրև հնխ. apelo- > հյ. աւել։

Գիմ.—Զղ. յավել, իվել, իվելի. *Երև. Շմ.* ավէլ, *Ախց. Տփ.* ավէլ, ավելի, *Համշ. Ննխ. Ռ. Սչ.* ավելի, *Սլմ. Վն.* ովել, *Մրղ.* ովիլ, *Կր. Պլ.* էվէլ, էվելի, *Գոր.* է՛վէլ, *Խրբ. Տիգ.* էվելի, *Ակն.* էվէլ, էվրլի, *Ասլ.* էվէ՛լ, *Ալշ.* ɨէվել, *Սեբ.* ɨէվէլ, *Մշ.* ɨէվելի, *Հճ.* իվել, *Ոզմ.* հավիլ, *Մկ.* հովիլ, *Ագլ. Զթ. Ղրբ. Մղ.* իվիլ։ Նոր բառեր են աւելաճուն, աւելճորդ, աւելատուն, աւելկեր, աւելցուկ, աւելօք են։ Այստեղ է պատկանում նաև առաւել (գաւառական զանազան ձևեր են՝ յառաւել, ռաւել, ռաւալ, ռևել, հռռովել, ռովուլ, հռովուլ, հլովոր, հաւալօ, հռռալօ, հեղել) «արտի ծայրին անվար մնացած մասը. 2. գութանի երգ», որի հին վկայութիւնը գտնում եմ գործածուած *Տաթև. ամ. 360* «Զառաւիղն որ գլուխն է արտին, մի՛ հրնձեր, այլ աղբատին թող»։

Փոխ.—Աղուաներէն աւելիֆ «աւելեաց ամիսը» (ըստ Պարիզի մատենադարանի թիւ 114, fol. 43 ձեռագրի, որ տե՛ս Dulaurier, Recherches sur la chronol. arm. Paris, 1859, էջ 167). վրաց. ახალო արալი կամ ჭოროველო հորովելი «հռռովել»։

Աւելոյ տե՛ս Աւել։

Աւեղկել տե՛ս Աւաղ։

Աւենիւ «մի տեսակ հարսնուկ (ծաղիկը)» *Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 256։*

ԱւեՏ (գրուած նաև աւէտ) «ուրախ լուր» *Գնձ.* «բարև, ողջոյն ?» *Ճառընտ.* որից աւետել «ուրախ լուր տալ» *Մծբ.* աւետիք (ոմկ. աւետիս) «ուրախ լուր. 2. պարգևի խոստում» *ՍԳր.* աւետչեայ «աւետիս բերողին արուած պարգևը» *Բ. Թագ. գ. 10.* աւետագիր *Կորիւն,* աւետաւոր *ՍԳր. ես. քր.* աւետապարգև *Ագաթ.* աւետարան *ՍԳր. Ագաթ.* աւետարանել *ՍԳր. Կոչ. Ագաթ.* աւետարանիչ *ՍԳր. Եփր. Եփես. Բուզ.* աւետարանագիր *Ոսկ. մ. ա. 1, 16. Եփր. ծն. Ագաթ.* նախաւետեալ «ներանք, որոնց աւետուեցաւ նախ Աւետարանը» (նորագիւտ բառ) *Պարսկան. շար. էջ 31.* հոլովեալ ձևից՝ աւետեացարեր *Ագաթ. § 642.* տաղաչափութեան համար յարմարեցրած ձև է rաւետումն (իբր հրաւետումն) «կրակով աւետում» (նորագիւտ բառ) *Պարսկան. շար. էջ 16* (բաւեմամբ հրեշտակն աւետէր, ասէ, հոգին սուրբ եկեսցէ ի քեզ)։

ՆէՒ (աւետիք բառի տակ) *լծ. պրս.* نوید nuvīd «նոր լուր», *արաբ.* havadīs «աւետիս», *լտ.* ave, avete «ողջ կամ ուրախ լեր, լերուք»։ Justi, Zendsp. 276 գնդ. vid «գիտենալ», *պրս.* nuvīd «աւետիք» են։ Այտընեան, Քնն. քերակ. 269 բոլորովին չունի կապ ուկ. հավատիս համանիշի հետ։ *Տէրվ. Նախալ. 108* vid «գիտենալ» արմատից, իսկ էջ 66 av «գոչել» արմատից, իբր յն. αὐω, *լտ.* avare, *սանս.* av, հյ. աւաղ։ Մորթմանն ZDMG 26, 518 *լտ.* votum «տիտա», և խալդ. vadini «աւետիք»։ Καρολίδης, Γλωσσ. συγκρ. էջ 66 յն. ἀείδω «երգել», ἀοιδή «աղմուկ», ὄδω «փառաբանել», սանս. vadami «ասել, խոսել» բառերի հետ։ Մառ ЗВО 5, 319 գնդ. vid «գիտենալ», āvaēδaya «յայտարարել» և կամ Avesta բառից։ Müller WZKM 10, 279 գիտեմ բայի անցողականն է համարում, իսկ էջ 355 գնդ. āwaēδa-, āwaēδayēmi ձևերի հետ է համեմատում։ Հինդ. հնդկական վեդայից հա-

նամ է Աւետարան: Partubány SA *1, 211* իրանեան փոխառութիւն է համարում. հմմտ. գնգ. nivaeδayemi, պրս. nuvēd «աւետիս» ձևերը. իսկ SA *2, 234* համեմատում է յն. κόδη «ձայն», առնս. vádati «խօսի» բառերի հետ: Այս վերջին համեմատութիւնը ունի նաև Գեանջեկեան ZAPh *1, 49*: Թիրեաքեան, Կարնամակ ծան. *100* Աւետարան համեմատում է հաւատա և Avesta բառերի հետ: Մարքվարթ (նամակ *1926* յունվ.) հպրս. *ā-vaid-ya «ծանուցում» բառից, որ առած պիտի լինի նախ *աւերիք, յետոյ դարձած աւետիք: Nyberg, Hilfsbuch *2, 2* իրան. *awyati-, *awyata- ձևից, որ կազմուած է awi- մասնիկով yata- «լիշողութիւն, լիշատակ» բառից. հմմտ. գնգ. yāta- «մէկի համար նշանակուած բաժինը», yata- «լիշողութիւն», պհլ. awyat, պազ. ayāδ, պրս. یاد yād «լիշողութիւն, լիշատակ»: Երկու մեկնութիւններն էլ անընդունելի՝ առաջինը ձայնական. երկրորդը նշանակութեան տարբերութեան պատճառով:

ԳԻՒ.—Իբր կրօնական բառ պահուած են միայն աւետարան և աւետիս ձևերը. այսպէս են՝ Ախց. Երև. Կր. ավէտարան, Նոխ. Պլ. Ր. Սեբ. ավէդարան, Խրբ. ավէդարան, ավիդրան, Ջղ. ավիտարան, Տփ. ավիտարան, ավէտրան, Ակն. ավիդարան, Շմ. ավատարան, Ալշ. Մշ. Սլմ. Վն. ավէդրան, Ոզմ. ավդրան, Մրղ. ավրաիրան, Տիգ. ավդրմն, Գոր. բվիտա՛րան, Ղրբ. բվրտո՛րան, Ագլ. բվրտոմրոն, Ջղ. (Փէրիա գաւառի Ազնաւուլ գիւղը) էվէտարան, Մկ. էվէտրան, Զթ. ավիդրօն, Հճ. ավիդայօն:—Իսկ աւետիս բառը իր նշանակութիւնը փոխելով՝ եղել է Երև. Նր. «Մննդեան դիշերը տնից-տուն ման գալով խորհուրդ Մեծ երգել և տօնը շնորհաւորել», Սվ. «նոր տարի, կաղանդ», Ախց. «երկար կոլոնաձև բուղթ՝ վրան սրբանկարներով և շարականներով՝ որ նոր տարուն են պատրաստում և տնէ տուն վաճառում»:

ՓՈԽ.—Կապադովկ. յն. avidos, որ բառ Καρολίδης, Γλωσσ. συγχρ. էջ *66* գործածական է միայն Avidós Kalendós երգի մէջ, որ երգում են Ամանորի երեկոյին (կաղանդին):—Ս. Գրքի քրդ. թարգմանութեան մէջ մտած է աւետարանիչ ձևը՝ Բ. տիմ. դ. 5. Ամէնէ աւետարանիչէ իճրա պբfm (Զգործս աւետարանչի գործեա՛): Ուտ. avetaran «աւետարան»:

*Աիեր (սեռ. ի) «քանդուած, աւերուած» ՍԳր. «աւերում, քանդում» Դուկ. իս. 20. Եւս. քր. Ոսկ. Ես. «աւերակ տեղ» Բուզ. դ. 58. որից աւերած ՍԳր. Ագաթ. Ոսկ. Ես. Բուզ. աւերել «քանդել» ՍԳր. Բուզ. «ապականել, փճացնել» Սղ. ծթ. 2. Ագաթ. աւերակ ՍԳր. Ոսկ. Ես. աւերուած Ոսկ. Ես. անաւեր կլիմաք. խղճաւեր Եղիշ. խչ. Ճառընտ. վաղաւեր Ագաթ. երազաւեր Ագաթ. տնաւեր Լաստ.:

=Պհլ. *avēr «աւերակ», որից յգ. avērān (հմմտ. պրս. آباد ābād «շէն» բառից յգ. նաձև آبادان ābādan «շէն»), պազենդ. awīrān «աւերեալ», պրս. ویران vērān «աւեր, աւերեալ» (Horn § *1087*): Պարսկերէնից փոխառեալ են քրդ. vīr. vīrane և թրք. vīran, verane «աւերեալ, աւեր. 2. աւերուած տեղ»: —Հիւրշ. *112, 511*:

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ համեմատելով պրս. vīrān «աւերակ» և آوار āvār «փճացած, աւերակ» բառերի հետ: Brosset, JAs. Paris *1834, էջ 383* վրաց. ავარი իավարի «աւար» և պրս. یاوه yāva, یاوا yāvā «կորուսեալ» բառերի հետ: Spiegel, Huzw. Gram. *190, 191* ևն, Müller SWAW *38, 587*, Սէր՝ աւսումն հնագետաանօրհալ Ա. *1861*, թիւ *16, էջ 158* պրս. vēran «աւերակ»: Bugge IF *1, 454* *աւեր նախաձևից դնելով՝ իբր բնիկ հայ համեմատում է յն. ἐναίρω «ապանել, խողխողել, մի քաղաք աւերել»: Հիւնք. պրս. āvār «աւեր»: Karst, Ծաշարձան *400* աստր. arbûtu «աւերել», irbu, urbatu «աւերում», էջ *402* սումեր. ari, arri «աւերակներ»:

ԳԻՒ.—Ալշ. ավեր, Սլմ. ավերակ, Ախց. ա-

վէրակ, *Մշ.* ավէրագ, *Մկ.* մվէրակ, *Հւր.* յէվէր «*աւեր, աւերուած*», *Ոզմ. Սլմ. Տփ.* ավիր «*աւերուած*».—*բայական ձևով՝ Երև.* ավէ՛րել, *Մշ. Սլմ.* ավրել, *Ալշ. Վն.* ավիրել, *Ջղ.* յավիրել, *Երև.* ավի՛րել, *Ռ.* ավըրէլ, *Մրղ.* ավըւրել, *Ախց. Կր. Ննխ. Պլ.* ավրէլ, *Ասլ.* ավրէ՛լ, *Ակն.* ավըրիլ, *Համշ.* ավիրուշ, *Մկ. Տիգ.* մվրիլ, *Ննխ. Սեբ.* աւվէլ, *Խրբ.* աւվիլ, *Զթ.* ավյիլ, ավրիլ, *Հճ.* այվել (*գործ են ածում «հղծանել, փճացնել, գրածը կամ գծածը ջնջել, դրամ մանրել, պասը լուծել, ապականել կոյս» նշանակութիւններով*).—*Շտ.* ավեր «*յոռի, գէշ, վատ*»։—*Նոր բառեր են* աւերակութիւ, աւերճոգ, աւերութիւն, աւերուկ, աւրշտկել, աւրուիլ, աւրուկ *են։—Մրշ. ևս* աւեր *բառը նշանակում է «գէշ, վատ, յոռի»։*

Փոխ.—Bugge IF *5, 168—180, Թրգմ. ՀԱ 1895, էջ 260 «չեմ համարձակիր, ասում է, հայերէնիլ փոխառեալ զնել զոթ.* aurahi «*գնրեզման*» *բառը»։*

***ԱԻՉԱՆ** «*երգիչ*». *անի միայն ԱԲ. նոյնը* Rivola, *Բառ. հալոց 1633, էջ 45* «lyricẽ, seu fidicen in ludis, et in mésis cócinens *խաղի մէջ քնար ածող կամ սեղանի վրայ երգող»։*

=*Արևել. Բրբ.* اوزان avzan «*մի տեսակ արտասանական երգ* (récitatif), *որի մէջ բառերը ենթարկուած չեն Թրքական առոգանութեան ո՛չ մի օրէնքի. սրա գիտը վերագրում է Օղուզ խանին և սրա հօր՝ Խարախանին՝ որդի Մողուլ խանի»,* اوزانجی avzanǰə «*աւազան երգը երգելով՝ Թմբուկ զարնող*» (P. de Courteille, Dict. Turk- Oriental, Paris *1870*), *պրս.* اوزن ūzan «*են սոքա մարդիկ գրոհի միջ, որք Թանգուրէ հարեալ՝ երգս երգեն և ուղուղնամէ կարդան. բառս այս կոչի ի բարբառ Թուրքաց օզան» (ԳԴ էջ 380). նոյնը* Будаговъ *1, 131, որ բառի առաջին նշանակութիւնը դնում է «շատախօս, աղմկարար»։—Աճ.*

ԱԲ դնում է «տահկերէն բառ»։ Ակինեան ՀԱ 1930, 493 ուզում է սրբագրել աւշան, իբր աւաչ բառից. բայց շատ զուր, քանի որ կայ Բրբ. اوزان avzan *բառը, որ հաստատում է աւզան ձևի ճըշտութիւնը։*

***ԱԻԹԻՄՈՆ** «*մի տեսակ բոյս* cuscuta epithymis L.» *Բժշ. Գաղիան. գրուած նաև աֆտիմոն Մխ. բժշ. 126.* աֆթիմոն *Ամիրտ. (ՀԲուս. § 3299) կամ* օթեմոն *Ռոշք. (ըստ ՀԲուս. § 3235). Համմտ. նաև Նորայր ՀԱ 1923, 346։*

=*Պրս.* افتیمون aftimūn, *որի հետ նոյն են լտ.* epithymum, *ֆրանս.* épithym, *նոյն նշանակութեամբ. բոլորն էլ ծագում են յն.* ἐπίθυμον *հոմանիշից. այս անունը տրուած է բոյսին՝ Թիւմ խոտի վրայ բուսնող մի մակաբոյծ լինելու պատճառաւ—Հիւբշ. 279։*

ՆՀԲ, ՋԲ, ՀԲուս. § 3299 դնում են յունարէնից։

ԱԻԻ «*ցնորիլ, խենթենալ*». *այս բայից ունինք միայն աւեալ «ցնորած, խենթ» Բրս. մկրտ.—Համբասի եփրեմ իբրև գաւեալ երինջ. (աւեալ երինջ՝ ռմկ. խենթ կով, խենթ կովի պէս).—պարզ արմատն է աւ, որից կազմուած են նաև աւանդող «ցնորած, մոլեգնած» (բայը պիտի լինէր *աւանդիլ «ցընորիլ, մոլեգնիլ»՝ անդ մասնիկով. Համմտ. ըն-անդ՝ եռալ բայից). Զարախօսեն զԵփրեմայ իբրև զաւանդող երնջի առահակութիւն մոլորէ. Սեբեր. ժ. 185 (յունարէն համապատասխան բառը կազմուած է ապիւն բառից).* աւղական «*խրտչող, տրտինգ տուող*»։ *Նար. իբ. էջ 51 (երինջի համար է ասուած՝ ինչպէս և վերիններըը. այս բառը Լծ. Նար. գրում է* աւուղական *և մեկնում է «տրմղական», որ նաև Բառ. հրհմ. էջ 41 դնում է* աւուղակ (*ր. տպ.* աւուզակ) «*տրմուղ, անվարժ, մտրուկ*». *նոյնը նաև ՀՀԲ. իսկ Աւետիքեան, Մեկն. Նարեկի, էջ 100 դնում է* աւ՛ղ *բառից և մեկնում է «հեծող»).* աւելոց ելանել «*փախչիլ, ի դուրս սարտնուլ, ընդոստնուլ*» *Ոսկ. երր. լա. էջ 564 և մ. ա. էջ 331. գրուած նաև* աւոլոց ելանել *Նբաղ.=Նխ. Քղթ. պօղ. (Հին բռ. գրում ու մեկնում է* աւոլոց *կամ* աւալոց «*արտաքս, ի բաց*», *աւոլ «մոռացումն, զլացումն բռնաղբօսութեան!»։—Այս բոլոր բառերը չափազանց հազուագիւտ, գործածութիւնից դուրս ընկած և հազիւ մէկ-երկու անգամ պատահող ձևեր են. ամէնից աւելի կենդանի է ապիւն (կազմուած իւն մասնիկով) «ներքին ազդում, կիրք,*

մոլեգնութիւն» Մեսրոբ. 194. Բրս. սրբ. և մկրտ. Փիլ. ժ. բան, որ նաև արդի գրականում գործածական է «եռանդ, խանդ» նշանակութեամբ։ Նոյն բառը նշանակում է նաև «արջառներ և ձիեր խայթող երկթևեան միջատ՝ մեծ ճանճի նման, բոռ, կնիւ, ֆր. oestre». *«Զի որպէս աւեամբ չիշատակի արտմիցուցանողացն խայթեալք՝ ընդոստուցանելով զնոսա ցասմանն և ի վեր վազեցուցանելով» Բրս. զրարկացողաց (տե՛ս Նորայր, Բառ. ֆր.* oestre *բառի տակ). նշանակութեան զարգացման համար համմտ. ֆրանս.* oestre «բոռ, կնիւ. 2. աւիւն, եռանդ», Ղրբ. կէտ «մի տեսակ ճանճ է մեղուի մեծութեամբ, դեղին գոյնով, որ թէ գլխից և թէ յետոյքից խայթում է. յարձակւում է էշերի, տաւարի և հորթերի վրայ, որոնք ցաւի սաստկութիւնից սկսում են փախչել», որից* կէտ անել, կետել *«արագ ու յանկարծ փախչել»։*

Այս բառն է, որ Բառ. երեմ. էջ 41 գրում է «աւիւն, վարար կամ կնիւ», իսկ էջ 37 սխալմամբ արիւն *«վարար կամ կնիւն»։ (ՀԲուս. § 258 դանելով այս «աւիւն, կնիւն» բացատրութիւնը և սխալմամբ յօդը միասին առնելով հասկացել է «կնիւն, սէգ», որով առեղծել է* աւիւն *«սէգ» անդոյ բառը։—Նորայր ՀԱ 1921, 107 ուղղում է այս սխալը)։* Lagarde, Urgesch. *495* աւիւն *դնում է* av *արմատից, իբր լտ.* avere *«ցանկալ, ողջունել»։ Հիւնք.* աւիւն<*յն.* αὐὰν *«ձայն, երգ բարբոսական»։ Ղափանցեան* ՅԲՕ *23, 351 գնդ.* hav *«վարել»։*

Աւիշ *«մի բանից վազած հիւթը (ինչպէս՝ ծառի խէժ, տունկի հոյզ, մեռելի շարաւ, թարախ են)» Եւս. պատմ. 160. յետնաբար նաև Յհ. կթ. 301. Կանոն. Օրր. Տօնակ. գրուած նաև* աւիշկ *Ոսկ. ա. տիմ. 112.* աւիշտ *Մամբրր. բ. տպ. էջ 54* աւիշխ *և* աւիժ*։ նոր բառ է* աւշային *(օր. աւշային կազմութիւն)։*

ՆշՀՔ թուի հանել վիժել բայից։—Հիւնք. օշարակ բառի հետ՝ պրս. էֆշիւրէ, էֆշար։ Թիրեաքեան, Արիահայ բս. 92 պրս. افشاں afšak *«ցօղ դիշերոյ»։*

Աւիւին *տե՛ս Աւիլ։*

Հ. Ն. Անդրիկեան, Բազմ. 1907, 16 կելտ. awen *«ոգի» բառի հետ, որից նաև* աստւածին։

+**Աւին** *«սեփականութիւն, իրեն պատկանող բանը». առանձին անգործածական բառ, որ սեռ.* աւնոյ *ձևով երևում է միայն* աւնոյտէր *բառի մէջ. այս բառը նշանակում է «մի բանի բուն կամ բնիկ տէրը» Ագաթ. տպ. 1909, § 376, Ոսկ. տիտ. ա. 284. «2. ամուսնացեալ կնոջ օրինաւոր ամուսինը» Յճխ. ը. էջ 81. ստորին հայերէնի մէջ* ունեւտէր *Սմբ. դատ. 9։ Բառը ձեռագրերում գրուած է զանազան ձևերով. այսպէս՝* ոնոյ պէր, սնոյ տէր, յաւնոյ տէր, ունոյ տէր, աւնոյ տէր, աւնէտէր, օնոյտեառ*ք. իսկ հրատարակիչները իբր թէ սրբագրելով՝ բնագիրների մէջ են մտցրել* այգւոյ տէր *(Ագաթ.),* բնաւ տեառ*ք (Ոսկ.),* սնոյ տէր *(Յճխ.) անիմաստ ձևերը, այնպէս որ* աւն *կամ* աւնոյտէր *չի գանւում ո՛չ մի բառարանում։ Թերևս նոյն արմատից է ծագում* գեռաւնեալ *Սոկր. 589, որ գրուած է բնագրի* ἐπιπολάζων *յառաջացեալ, առաւելեալ» բառի դէմ։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. opno- *ձևից. միւս ժառանգներն են առնս.* ápnas *«հառատութիւն, ունեցուածք, սեփականութիւն, ինչք, հարստութիւն»,* apnarāĭ- *«հարուստ, ընչաւէտ»,* āpas *«գործ, կրօնական գործ», յն.* ὄπτης, ὄπτηρ, *«հողի բերքը, ցորեն, սեփականութիւն, ինչք, հարստութիւն»,* ὄπτιος *«անուցիչ, բերի, հարուստ»,* Ὀπτία *«Դեմետր աստուած», լտ.* ops *(հայերէն բառի նման չէ գործածուած ուղ. այլ սեռ.* opis*) «հարստութիւն, ինչք, կարողութիւն, ուժ, զօրութիւն, նպաստ, օգնութիւն»,* opus *«գործ, աշխատանք, երկրագործութիւն»,* operare *«գործել, աշխատիլ»,* opes *«ինչք. ուժ, զօրութիւն, զօրք»,* ops *«հնձոց աստուածուհին»,հրգ.* abalōn *«աշխատիլ, գործել, շատ գործ ունենալ»,* uobo *«երկրագործ»,* uoben *«գործ դնել, գործադրել, պատուել, փառաբանել»,* uoba *«ուռն», մրգ.* uop *«հողագործութիւն, աշխատանք»,* uobo *«հողագործ», լիթ.* ūpstas *«առատութիւն, պաշար»,* apstūmas *«լիութիւն, հարստութիւն»,* apstùs *«հարուստ», հիւլ.* āne *«հարստութիւն», հիւլ.* afl *«ուժ, զօրութիւն»,* afle *«ինչք, հարըս-*

տաքիւն, ճարտարարուեստ, ծառապատուղ», afla *«առանալ, շահիլ, հնձել»*, efni *«նիւթեղէն, հարստութիւն»*, efna *«կատարել»*, ⊘fa *«գործել»*, հանգլ. efnan, *անգլսք.* aefian *«գործել»*, հին սաքս. ōbian *«աշխել»* են են։ *Այս բոլոր բառերի պարզական արմատն է հնխ.* op *(երկար ձևը* ōp*)*, *գանազան մասնիկներով աճած* opno-, opnes- *են. հիմնական նշանակութիւնն է «աշխատանք, հողագործութիւն», որից յետոյ «հողի բերքը, հարստութիւն, ինչք և անասնատիրութիւն» (տե՛ս* Walde, *էջ 544—5,* Boisacq *702,* Meillet MSL *15, 257 են,* Pokorny *1, 175,* Ernout-Meillet *672—5)։—Ա.ճ.*

Այս անծանօթ, հաղուագիւտ և մոռացուած բառը մութից լոյս աշխարհ հանեց Նորայր, Կորիւն վրդ. էջ 442 և Յուշարձան, էջ 168։ Վերի մեկնութիւնը ինձնից է։

***Ա.ԻՇԱԿ** *«մի տեսակ խէժ,* gummi ammoniacum. *2. կանաչագոյն մի հանք է. բորակ կամ անուշադր» Գաղիան. Հին բռ. (գրուած նաև* օշակ, աւշախ, օշ, վաշախ, վաշաղ, վարշամակ*)։*

= Արաբ. اشق uššaq, چشا uššaǰ, *պրս.* اوشا ūša, *ասոր.* ܐܘܫܩ avšāq *«անուշադրի խէժ. այս ձևերից ծագում են հյ.* աւշակ, օշակ, օշ, աւշախ.—*աւում է նաև արաբ.* وشق vašaq, *պրս.* وشا vaša, *որոնցից ծագում են* վաշախ, վաշաղ. *Կամուսի արաբերէն հոյակապ բառարանը (Բրք. Բրդմ. Ա էջ 373) բառս համարում է բուն պարսկերէն, յետոյ արաբացեալ և նոյնից է համարում Թրք.* چادر وشاغی čadər ušaγə *կոչուած խէժը, որ է ըստ* Будаговъ *1, 137* «gummi ammoniacum»։—*Հիւրշ. 262։*

Ուղիղ մեկնեց նախ Նշ*Ր, յետոյ* Lag. Ges. Abhd. *11 և* Arm. Stud. § *298։ Հիւս. § 3252 արմատը կարծում է օշ։*

Ա.ԻՈՒՈՑ *տե՛ս Աւիւ։*

Ա.ԻՈՂԱԿԱՆ *տե՛ս Աւիւ։*

***Ա.ԻՈՒԳԱԲ** *«փառատաբան». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Սկևռ. պատ. 19 «Քաղաքապետն՝ որոյ անուն Ջուփրի, այր խաղաղարար և մայէստր գանփլուն և քումանուտուր տանն հիւանդանոցին, և ամենայն իշխանք ծուխգիրեայց՝ բաց ի բրէնձէն և բովանդակ աւուգաթքն»։*

= Ֆրանս. avocat, *իտալ.* avvocato, *լտ.* advocatus *«պաշտպան, փաստաբան», որ այժմ էլ գործածական է Պօլսոյ հայոց մէջ* աբուքաբ *ձևով։—Ա.ճ.*

Այս մեկնութիւնը տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 73։

***Ա.ԻՍԱՐԴ** *«պառաւ կին» Փիլ. շն. 272, որ և գրուած* ouարդ *Ոսկիփ. սրանից է աւսարդական «երիտասարդական, չափահաս» նոր վկ. էջ 47 (ԺԲ դարից)։*

= Ենթադրում է հպրս. *awisardā=*պհլ.* *afsard *«տարիքոտ, ծեր» բառը, որ կազմուած է հպրս.* awi- (abiy-)=*զնդ.* aiwi-=*պհլ. պրս.* ai, aw *մասնիկով հպրս.* *sarda=*զնդ.* sarəδa-=*պրս.* سال sāl *«տարի» բառից։ Այս բառից են կազմուած նաև երիտասարդ և ևաւասարդ բառերը, որոնք տե՛ս։—Հիւրշ. 112։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Lagarde, Ges. Abhd. *274,* Baktr. Lex. *5՝ գնելով իբր=զնդ.* *aiwisarəδa։ *Տէրվ.* Altarm. *էջ 46, ծան. 2 աւ գնում է փխ.* յաւ, *որից* յաւէտ. *իսկ* սարդ = *զնդ.* sarəδa։ *Նոյն, Մասիս, 1881 մայիս 8 և Նախ. 70 մեկնում է միայն* սարդ *=զնդ.* sarəδa։ *Հիւնք.* սարդ *միջատի անունից։*

Ա.ԻՍԵՐԲՈՍ. *մէկ անգամ ունի Եւս. պատմ. էջ 665, իբրև կայսերական տիտղոս. ինքնակալ կայսր Կոստանդինոս աւսերբոս և սաբեստոս։ Հրատարակիչը համարում է խաթարուած ձև՝ փխ.* եւսեբէս։

***Ա.ԻՐ** *«սիւք, հեզաշունչ քամի». ունին ՆՀՔ, ՋՔ և ԱՔ՝ առանց վկայութեան։*

=Յն. ἄῤῥ *«սիւք, բարակ քամի»,* ἀω *«փչել» բայից։*

Ուղիղ մեկնեց ՆՀՔ։

Ա.ԻՐ, ո հ*լ. «մաղձ». ունի միայն Ա.Ք. երեք անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. հին. 808 և Ոսկ. ա. տիմ. 112. Ի շարաչար ինչ մաղձոյ կամ ի յաճախութենէ աւրոյ և մաղձոյ լինին... յորժամ աւրն մածէալ ի մի վայր ժողովիցի. Անդ, խօղ, անդ աւր, անդ շիմալ, անդ հիծել, անդ փսխել և ղպայոել։*

ԱԻՕՏ. *շատ անստոյգ նշանակութեամբ մի բառ, որ գործածում է Վանակ. Հաւատ. ստուգաբանական հետևեալ մութ հատուածում. «Հաւատն լոյս. հաւն սկիզբն և առն զօրութիւն գործոյ. զհոյն (հ) գիր ի բաց առ, աւատ ասի. ամենայն ի դէպ բանի ասեն՝ թէ աւատ կայ. և առաւօտ ասեն զսկիզբն աւուրն, որպէս աւօտ արեգական գալոյ»: Այս բառից են կազմուած անշուշտ շաղաւօտ «գիշերուայ ժամի չորսը՝ ըստ արևելեան ժամահաշուի» և կամաւօտ «գիշերուայ ժամի հինգը»:—Ըստ իս աւօտ նշանակում է «ժամանակ»:*

ՆՀԲ աւօտ հասկանում է «առաւօ՛տ», որ սակայն ո՛չ առաջին գործածութեան է յարմարում և ոչ երկրորդին: Միևնոյն ժամանակ ՆՀԲ համարում է առաւօտ բառի արմատը և ստուգաբանում է «որպէս թէ հաւօղ կամ աւետաւոր այգոյն»: ՋԲ մեկնում է աւօտ «աւետիք», որ յարմար է երկրորդ գործածութեան, բայց առաջինի համար անընդունելի: ԱԲ միացնելով երկու բացատրութիւնները՝ անտեղի կերպով գնում է «առաւօտի սկիզբը. 2. աւետիք»:

ԱԻՕՏ ՁԱԻՕՏ *«շուարած, շշկլուած, շփոթած». յետին ռամկական հայերէն բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Քուչ. 102 «Գնամ ու գնամ կասէր իմ մանչուկն, ես աւտալու չի. երբ բարով մնա՛ ասաց, ես աւօտ չաւօտ մնացի. երբ ոտքն ի զանգուն իդիր (ասպանդակը դրաւ), ես հայրան ի վայր մնացի»: Պահուած է Ակնայ ժողովրդական մի երգի մէջ աւատ չաւատ ձևով. «Պազրիկս ի յեփոց դրի, գեռ աւատ չաւատ կու նայիս» (Բիւր. 1900, էջ 389):*

+ԱՓ, n հլ. *«բուռ, ձեռքի ներսի կողմը»* ՍԳր. Ոսկ. ես. որից ափյափոյ *«վեր ի վերոյ, հարևանցի»* (հմմտ. արևել. հյ. **ձեռաց**, արևել. թրք. äl üsti *«արագ, իսկոյն, շուտ, հապճեպով»*, երկուսն էլ *«ձեռք»* բառից) Կոչ. 45. ափս զափի հարկանել *«ծափ տալ»* Եպիփ. ծն. ափիբերան *«պապանձուած»* ՍԳր. Ոսկ. ափիբերանել *«պապանձեցնել»* Ոսկ. յհ. ա. 27. բ. 14. ափել *«բռնել, ձեռք ձգել»* Բանք աղ. էջ 183. ափաչափ *«մէկ ափի պարունակութեամբ»* Մխ. այրիվ. էջ 8 = ափչաք Վստկ. էջ 21. ափամէջք Մաշտ. ջահկ. ափիկ Շնորհ. առ. ափկից *«կուց»* Վստկ. ափցի *«ափով»* (հմմտ. ախացի, բռնցի) Ոսկիփ. Վրդն. առ. 217. ափլափել *«խարխափել»* ԱԲ (մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայտմ. օգ՞ 20. Հարին զնոսա կուրութեամբ և յափլափելն իւրեանց, ծեծէին զմիմեանս): Այստեղ են պատկանում նաև յափսիբերս երթալ, յափսիբերս խաղալ *«ոտքերի և ձեռքերի վրայ թաւալիլ, գլորիլ»* Ա. Թագ. ժդ. 8. իա. 13. *«սիրելուց կամ վրան գուրգուրալուց չորս դին թռչկոտել»* Կիւրղ. ծն. (ափ և բեր բառերից կազմուած. հմմտ. գւռ. ափս աճել, ափս երթալ, ափսիլ), չորեքյափիք *«չորս ոտքի վրայ երթալով»* Պատմ. ազէքս.:

ՆՀԲ լծ. ծափ, շօշափ. յն. ἀφή *«շօշափելիք»*, երր. כף *«ձեռք»*, թրք. ավուճ *«ափ»*: Տէրվ. Նախալ. 61 առնս. āp, գնդ. āf *«յափշտակել»* և հալ. ճափափել, ապրել, յափշտակել բառերի հետ հնխ. ap արմատից: Հիւնք. յն. ἀφή *«շօշափելիք»* բառից ափ է հանում, իսկ ափյափոյ գնում է ճափափել բառից: Bugge KZ 32, 73 համարում է բնիկ հայ բառ, ցեղակից յն. παλάμη, լտ. palma, հիւլ. lām, կիմր. blav, անգլսք. folm համանիշներին. հայը անցել է *palama > *palv > *պու նախաձևերից: Կուրտիկեան, Արևելք թ. 4185 գնդ. աֆ *«յափշտակել»* բառից: Pedersen, Հայ. դր. լեզ. 149 յն. ἄφος *«լօգուած»* բառին ցեղակից: Ստեփանեան ՀՄ. 1909, 335 առնս. gab *«ձեռք»*: Karst, Յուշարձան 400 առաբ. kappu *«ձեռք»*, 402 առնս. ab‘, ap *«բոլն, ծակ, խոռոչ»*, agub *«երկնակամար»*, 404 առնս. gab *«ձեռք»*, թաթար. kab, kob, kov, kev *«ուռած, կլոր, պարապ, փոս»*: Մարտիրոսեան, ՀՄ, 1924, 459 հաթ. up *«ափ, բուռ»*: Պատահական նմանութիւն ունին առաբ. upnā, արամ. אפנא xūfnā, երբ. חֹפֶן ḥōfen, արաբ. حفنة ḥafnā *«բուռ»*, ինչպէս նաև չէրքէզ. ափը *«մատ»*: Վերի մեկնութիւնը, որ առել էր Pedersen KZ 39, 428, հաստատում է այժմ Meillet MSL 23,

276 և Dict. étym. lat. 691, մերժելով յունարէնի հետ դրուած միւս համեմատութիւնները, որ ունի Pokorny 1, 46։

ԳԻՒՒ.—Ախց. Ակն. Խրբ. Մկ. Մշ. Մրղ. Ոզմ. Ռ. Սլմ. Սչ. Վն. ափ (Ննխ. ափ՝ միայն ափը ըլնել «ձեռքն ընկնել» ոճի մէջ), Ասլ. ափ, ա*, Տիգ. ոփ, Ալշ. ֆափ, Ագլ. օփ, ՋԲ. օփ, ոփ.— -ուռ մասնիկով աճած ձևեր են՝ Ախց. ափուռ, Գոր. Ղրբ. հա՛փուռ: Նոր բառեր են՝ ափախաւար, ափաս, ափաւել, ափիկ-խուփիկ, ափիկյափիկ, ափլապուղ, ափլփռել, ափկած, ափուխուփ անել, ափուճոպ, ափուչիմ, ափուչաս, ափռոել, ափս անել, ափս երթալ, ափսիլ, ափշել «նոր ուռք հլնող մանկիկներու ձեռքով-ոտքով քայլելը», հափռել, հափռամէջ, հափռամիջի ևն։

*ԱՓԱՐԲԻՈՆ (գրուած նաև արարբիոն, ափարբի, ափարփի, արարբի) «մի տեսակ բոյս. լտ. euphorbium L. 2. նոյն բոյսի հիւթը, որ փուշտացնող մի խէժ է» Ամիրտ. Բժշ.։

= Արար. فربيون farbiyūn կամ فرفيون farfiyūn նոյն նշ. (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 682), որ փոխառեալ է յն. εὐφόρβιον համանիշից. յոյն բառը նշանակում է բուն «պատրաստ, լաւ անուած» և ծագում է εὖ «լաւ» և φέρβω «անուցանել» բառերից։ Ծանարէնից փոխառեալ են նաև լտ. euphorbium և Ֆրանս. euphorbe, իտալ. euforbio ևն։ Հայերէնը չի կարող յունարէնից լինել՝ ձայնական մեծ տարբերութեան պատճառաւ. ծագում է աւելի ճիշտ՝ արար. فربيون *afarbiyūn ձևից, որ չունին բառարանները։— Ա.Ճ.

Lagarde, Arm. Stud. § 2 դրաւ առաջին անգամ յունարէնից։ Այսպէս նաև Հիւբշ. 338, սխալելով այն բանից, որ ՆՀԲ աբարբի բառի տակ ուղարկում է ափարփի ձևին, իսկ ափարփին մոռանում է յիշել, որով բառը մնում է առանց վկայութեան. Հիւբշման կարծում է թէ բառը հին է և հանում է յունարէնից, առանց նկատի առնելու ձայնական անյարմարութիւնը։

ԱՓԱՓԱՅ, ի հլ. «լեռների վրայ ապառաժ ու տատպար տեղեր» Եզն. Ոսկ. Հռոմ. 376—7. Ոսկ. Ես. 249. Նանայ 2. Շիր. 34. կթ. Լաստ. Ոսկիփ. բստ ՀՀԲ կայ նաև անփափայ ձևը, որ իրօք գործածուած եմ գտնում Յայսմ. դեկտ. 15։

ՀՀԲ մեկնում է «ափունք լերանց» ԱԲ թուի հանել ափ բառից։ Հինք. էջ 67 ափ բառի հակառակն է։ Bugge KZ 32, 74 ափն բառի հետ է համեմատում։

*ԱՓԻԳԱՏՈՍ «հոգաբարձու, տեսուչ, վերակացու». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Եւս. պտմ. էջ 40 «Եւ իբրև առաքինանայ այսուիկ եղև նա ափիզատոս, այսինքն հոգեբարձու Պաղեստինացւոց»։

= Ասոր. ܐܦܝܡܠܛܘܣ afīmlatūs, որ առաջարձուած է յն. ἐπιμελητής «հոգաբարձու, կառավարիչ» բառից. այս յունարէն բառը, որ կազմուած է ἐπί «վրայ» և μελέτη «հոգս, խնամք» բառերից, գտնում է բնագրի յիշեալ հատուածի մէջ, որ Թարգմանութեան ժամանակ ասորերէնի և ասորերէնից էլ հայերէնի է անցել. բստ այսմ հայերէն բառը պէտք է ուղղել ափիմզատոս։

Գտաւ ու մեկնեց Վարդանեան ՀԱ. 1913, էջ 624 և 1920, 325 (Բառաբ. Դիտ. բ. 25)։

*ԱՓԻՄԵՒՒՆՈՍ (գրուած նաև ափիմևոնոս, ափիմեոնոս) «ամենօրեայ (ջերմ, տենդ)» Մխ. բժշ.։

= Յն. ἀφημερινός «ամենօրեայ». որանից են ծագում առաջին և երկրորդ ձևերը. իսկ երրորդը առնուած է յն. ἐφήμερος «առօրեայ, ամենօրեայ, միօրեայ (ջերմ)» բառից. կան նաև ἐφημέριος, ἐφημερινός համանիշները. բոլորն էլ ծագած ἡμέρα «օր» բառից՝ ἀπό և ἐπί մասնիկներով։—Հիւբշ. 342, 517։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*ԱՓԻՆԳ «մի տեսակ գազան» Խոր. աշխ. 598 «Գազանք անցանեն... որ կոչին ափինգք, մարդակերպք են և դիւնեսէրք». այլ ձև. նափինգ, նափինք. պէտք է կարդալ սրփինգ, իբր

= Յն. σφίγξ «մի տեսակ կապիկ», լտ. sphinga «հեթովպական մի գազան», որ Պլինիոս (Բնակ. պատմ. Ը. 21) նկարագրում է իբրև թխամազ, կուժքի վրայ գոյգ ատնքներով, հրէշանման գազան (sphingas, fus-

co pilo, mammis in pectore geminis, Aethiopia generat. multaque alia monstri similia):

ԱՒ յիշում է իբրև անստոյգ բառ, թերևս «ափինքս»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Պատկ. Арм. reorp. *էջ 25։*

ԱՓԻՈՆ «խաշխաշի հիւթը» Գաղիան. Ամիրտ. գրուած նաև աֆիօն Վստկ. 82, ա-ֆիոն, աբիոն, որից ափիոնամոլ (նոր բառ)։

=Արաբ. պրս. افيون afiyūn *նոյն նշ. ծագում են յն. ὄπιον հոմանիշից, որ գալիս է յն. ὀπός «ծառերից վազած հիւթ. ինչ. թուզի կաթ, սոխի ջուր, խաշխաշի հիւթ կամ ափիոն» բառից։ Մի կողմից յունարէնից և միւս կողմից արաբերէնից ու պարսկերէնից փոխ առնելով բառս տարածուած է ամէն կողմ. ինչ. լատ.* opium, *գերմ. անգլ. ֆրանս.* opium, *հֆրանս.* affion, *սպան.* afion, *իտալ.* oppio, *հանդ.* áfiom, *խրվաթ.* afium, *թրք. քրդ.* afion, *սլաս.* опіумъ, *վրաց.* აფიონი ափիոնի *կամ* აფთიონი ափիոնի. *սանս.* aphena *և մինչև անգամ չին.* 鴉片 yá³-p'ien⁴-yèn′, *որ բառացի նշանակում է «տպիղ թերթի ծխելու»։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ։

ԱՓԼԱՓԵԼ *տե՛ս Ափ։*

ԱՓԼԵՂ *«ապտակ». ունի միայն ԱՔ և Նոբայր, Բառ. ֆր. էջ 1158 ա, իբր միջին հյ. բառ։*

=Անշուշտ ափ բառից է. համմտ. «Ափցի յերեսն եզարկ» Ոսկիփ. բայց անծանօթ է մնում երկրորդ մասը՝ լեզ։

ԳԻՒ.— Գնձ. ափլեզ *«ապտակ»,* ափլեզ ուտել *«ապտակուիլ» (տե՛ս Մամիկոնեան, Հազարից մէկը, էջ 11, 235)։*

ԱՓԽԱՐ *«կտրած գինի կամ քացախ» Մխ. ապար.։*

ԱՓՆ *(և հլ. -ին, -ամբ, -ունք, -անց, յետնաբար նաև սեռ. ափան) «որևէ տեղի կամ բանի ծայր, եզր (ինչ. ձորի, գուբի, ջրհորի, քաղաքի, գերեզմանի ևն)» Եզեկ. լԲ. 11, Ճառընտ. ՅՀ. կԲ. յատկապէս «ջրի եզերք» ՍԳր. որից* ափնաձիր *«ափերով պատած» Ագաթ. գետափն Գծ. ժզ. 13. ծովափնեայ Ես. ԺԲ. 5. բարափն Լծ. փիլ. դարափն Վրդն. առ.։*

ՆՀԲ «տեղի շրջափող», տրեմն և ափ բառից։ Հիւնք. յն. ἀφή «շրջափելիք, մերձեցումն» և հայ. ափ բառերի հետ։ Ալիշան, Հին հաւ. 470 փութ. Ափիս *«աստուած երկրի».* Bugge KZ *32, 74* համարելով հնագոյն *աղփ ձևից, կցում է յն. Ἄλβια, Ἄλπια, Ἄλπεις, լա.* Alpes, *իտլ.* Alba, Alpa *յատուկ անուններ հետ։* Patrubány SA *2, 300 առնս.* āp- *«ջուր», պրուս.* ape *«գետ» բառերին ցեղակից է դնում։ Պատահական նմանութիւն ունին ասոր.* ḫâpu *«եզերք», երբ.* חֹף ḫōf *«եզերք», արաբ.* حَافَّة hāffa *«եզր, ծայր», կաբարդին.* 'ufe *«եզերք»։*

ԳԻՒ.— Տփ. ափ *«ջրի եզերք», բայց նաև* ափն *«մի բանի եզերքը» (ինչ. տախտի ափնումը, շորի ափները). Վն.* ոփ, *Ալշ.* յափ. *Ոզմ.* հափ *«ջրի ափ». այստեղ է պատկանում նաև* ափնի, ափնիք *Վն. «այգիների մէջ շորս պատերի տակի մասերը»։ Նոր բառեր են առափ, առափուճք, առափտել։*

ՓՈԽ.— Վրաց. բարափի են տե՛ս Քար բառի տակ։

ԱՓՆԻ *«հունձքից յետոյ մնացած թափթփուք հասկեր» Եփր. գետ. էջ 225 (սեռ.* ափնեաց*). Համար. 167. Երզն. մաթ. 451. «խաղողի որթ». այս վերջին իմաստը գտնում եմ Եփր. աւետ. 289 «Ասէ Եսայի. եղիցի յաւուր յայնմիկ ամենայն տեղի յորում իցէ հազար ափնի (կամ ափն) այգւոյ՝ հազար հազար շափով, խոպանասցի և ի փուշ դարձցի»։ ՆՀԲ այստեղ էլ բառս հասկանում է նախորդ իմաստով, բայց այս իմաստը յարմար չէ տեղին։ Եսայեայ ակնարկուած հատուածն է՝ «Եւ եղիցի յաւուր յայնմիկ ամենայն տեղի՝ ուր իցէ հազար որթ հազար կշռոյ սկիզ խոպանասցի և ի փուշ դարձցի». Ես. է. 23, որով ափն կամ ափնի բառի համապատասխանը լինում է «որթ»։*

ՆՀԲ ափն *(յափունս անդոց անկեալ իրք) կամ ափ (հասկք մնացեալք ափով ժողովելիք) բառից։*

ԱՓՆԻՔ *կամ ուրի որոշ ձևով մարդու* ափնիք *«մի տեսակ բոյս, լա.* symphytum,

ֆրանս. consoude» *Ամիրտ. (ՀԲառ. § 262, 2013)։*

= *Կազմուած է* ափ «բառ» *բառից, իբր թրգմ. արաբ.* كف آدم kaff-i-ādam *համանիշի (Կամուս, թրք. թրգմ. Բ. էջ 835)։*

ԱՓՈԻ *տե՛ս* Ափիւղ։

ԱՓՈԻՃ «*խաղագնդակ,* balle». *միջին հյ. բառ (տե՛ս Նորայր, Բառ. ֆր. էջ 124 ա)։*

ԱՓՈԻՆԻԱՑ «*ի ծածուկ*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 42։*

***ԱՓՍԻ** «*մետաղեայ սկաւառակ*» *Թուց դ. 7, Ա. եզր. բ. 13, որ և* ափսեայ *Դ. Թագ. իե. 15. Նոր գրականում ընդունուած է միայն* ափսէ *ձևով, որ արևելեան բարբառով նշանակում է «կերակրի պնակ», իսկ արևմտեան բարբառով «մետաղէ տափակ ու լայն աման, թէփսի»։*

= *Յն.* ἀφίς, *որ ծագում է* ἅπτω «կցել, կապել» *բայից և նշանակում է բուն «կապ». երկրորդաբար «ամէն կոր կամ բոլորակաձև բան. ինչպէս՝ անիւ, դուրգն, կամար, երկնակամար, ծիածան, շրջանակ, արևի սկաւառակ» և վերջապէս «սկաւառակ», որից փոխառեալ է և լտ.* absis (apsis, hapsis) «կլոր ու խոր պնակ, սկաւառակ»։— *Հիւբշ. 342։*

Ուղիղ մեկնից նախ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 58։ ՆՀԲ աւելացնում է նաև լծ. պրս. թէփսի։ *Յակոբեան, Բիւզանդիոն Թ. 743 եբր.* սաֆ, *ասոր.* սաֆա «կոնք, տաշտ» *բառերի հետ։*

Փոխ.— *Հայերէնի միջոցով են փոխառեալ արաբ.* aps, *շափսըխ.* aps «փայտէ պնակ»։

ԱՓՍԻԹԵՐՍ *տե՛ս* Ափ։

***ԱՓՍԻՆԹ** «*մի տեսակ դառն խոտ է.* absinthium» *(գրուած նաև* ափսիեդ, ափսընդիճ, ափսիճբի, ափսիճբիճ, ափսոնդիճ) *վրք. հց. ա. 696. Բժշ. Գաղիան. նաև* աւսինճ *Բառ. երեմ. յաւել. 565. աւելի հին է* օշինդր, օշինաւր, աւշինդր *նոյն նշ. վեցօր. էջ 101. Նորագիւտ Յայտ. բ. 11. Նար. էջ 182. Նիւս. կազմ. Վստկ. 107. Գաղիան. սրա սեռականը* օշնդեր *գտնում եմ Պիսիդ. վեց. տող 1536։ Նոր գրական լեզուի մէջ ընդունուած է միայն* օշինդր *ձևը։ Այս բոյսի գիտական անունն է* artemisia absinthium L.։

= *Յն.* ἀφίνθιον «օշինդր», *որի ծագումը անլսելտ է, բայց բնիկ հնդեւրոպական չէ (տե՛ս* Boisacq *109). յունարէնի մէջ բառս ունի հին գործածութիւն. նոյնը գիտեն Հիպպոկրատ (Ն. Ք. 460—375) և Թեոփրաստոս (Ն. Ք. 443—355)։ Սրանից են փոխառեալ նաև լտ.* absinthium, *ֆրանս.* absinthe, *գերմ.* Absinth, *իտալ.* assenzio, *արաբ. պրս.* افسنتين afsintin, afsantīn, *վրաց.* აფსინთი ափսինդի *կամ* აბზიონდა աբզինդա *են։ Հայերէն ձևերից* ափսինթիճ, ափսընդիճ, ափսնդիճ *(և թերևս նաև* ափսինթի*) ծագում են արաբերէնից,* օշինդր *ևնթադրում է բուռ Հիւբշ. պհլ.* *afšind-, *որից փոխառեալ է. իսկ* ափսինթ *և* ափսինդ *կարող են լինել թէ՛ յունարէնից և թէ՛ արաբերէնից։—Հիւբշ. 259, 342։*

Առաջին անգամ ՀՀԲ ափսինդ *գնում է յունարէնից։ ԴԴ* օշինդր *գնում է պարսկերէնից։ ՆՀԲ անորոշաբար յն. լտ. պրս. ձևերի հետ։* Lagarde, Ges. Abhd. *214 և* Btrg. B'tr. Lex. *5 օշինդր ձևը համարում է յունարէնի սկզբնականը՝ իբր սերուած պոնտականից։ Հիւբշ. յիշում է միայն երկու ձև՝* ափսոնդիճ *և* օշինդր. *առաջինը յունարէնից, երկրորդը պահլաւերէնից։*

***ԱՓՍՈՍ** «*աւա՛ղ, եղուկ*» *Գնձ. որից* ափսոսալ «*աւաղել, ցաւիլ, մեղքնալ*» *Գէ. ես. Տաթև. ձմ. խգ.* ափսոսել *վրք. դիոն. Վրդն. երդ. Գնձ.* ավսոսալ *Ոսկիփ.* ափսոսանք *Գէ. ես.։*

= *Պրս.* افسوس afsōs «*անիրաւութիւն, զրկանք. 2. ծաղր, տնաղ*», *և 3. իբր միջարկութիւն «ափսոս, աւաղ». բառիս հին ձևն է պազենդ.* awasōs, *պհլ.* afsōs «*ծաղր*» (Horn § *101*)։—*Հիւբշ. 262։*

Ուղիղ մեկնից նախ ԴԴ, յետոյ ՆՀԲ են։

Գիւմ.— *Ալշ. Զղ. Սլմ. Վն.* ափսոս, *Ախց. Երև. Շմ. Սեբ. Սչ.* ափսօս, *Մկ. Ոզմ. Տփ.* ափսուս, *Մրղ.* ափսուխ, *Ակն.* աֆսօս, *Ղրբ.* ա՛փսուզ։

Փոխ.— *Վրաց.* აფსუსი ափսուսի «*ափսոս*» *ուղղակի նոր պարսկերէնից է և մեզ հետ գործ չունի։*

ԱՓՏԵԼ *տե՛ս Կալափտել։*

ԱՓՐԻԱՆԱ *տե՛ս Աբրենա։*

***ԱՓՓՈՎ** *«արդ, իրօք». գործածուած է միայն Հին կտակարանում, հետևեալ երկու տեղերը. «Մ՚ար ես, Տէր Աստուած եղիայի, ափփով» Դ. Թագ. ը. 14. «Տեսէք գոռա ափփով ո՞ կոտորեաց» Դ. Թագ. ժ. 9. Նոյն բառը ափու ձևով և «հիմայ, այժմ» նշանակութեամբ գործածում է Մագ. «Եւ ափու եկն քեզ եկեսիկէն» (ըստ Նորայր, Բանաս. 1900, էջ 130)։*

= Եբր. אַף הוֹא af hoa *կամ* אֵפוֹא efo *ձևերից, որոնք նշանակում են «և, նաև, իրօք, արդ», ինչպէս և գործածւում են իմաստը զօրացնելու և կամ հարցականը շեշտելու համար։ Յօթանասնից թարգմանութեան ժամանակ այս բառերը պարզապէս տառադարձուել են յն. ἀφφώ. ինչ. վերի հատուածների մէջ* ποῦ ὁ Θεὸς Ἠλιοὺ ἀφφώ.— ἴδετε, ἀφφώ.—*որանցից էլ տառադարձուած է հյ. ափիով։—Հիւբշ. 325։*

Հներից կիւրղ. Թագ. մեկնում է բառը այսպէս. «Ափիովն պարեհ է»? Նշ Բառ եբր. որ կնշանակէ «և այժմ»։

***ԱՓՓՈՒՍՈՎՔ** *կամ* **ԱՓՈՒՍՈՎՔ** *«հիւանդ». երկու անգամ միայն գործածուած է Հին կտակարանում՝ հետևեալ տեղերը. «էր բորոտեալ մինչև յօր մահուան իւրոյ և նստէր ի տան ափիուսովք» Դ. Թագ. ժե. 5. «Եւ ի տանն ափուսովք նստէր բորոտեալ» Բ. Մնաց. իզ. 21.— տուն ափիուսովք նշանակում է «հիւանդանոց»։*

= Եբր. חִפָּשׂוֹת xāfəšīθ *կամ* חֻפָּשׂוֹת xāfəšūθ *«հիւանդութիւն», որից* בֵּית הַחֻפָּשׂוֹת beiθ haxāfəšūθ *«հիւանդանոց» (այն է «տուն հիւանդութեան»)։ Այս բառը Յօթանասնից թարգմանութեան ժամանակ տառադարձուել է յն. ἀφφοσώθ, որից էլ տառադարձուել է հայ ձևը։ Հները այս եբրայական բառը հասկանում էին «զատ, առանձին», որոնց համաձայն Բառ. եբեմ. էջ 28 դնում է «ապիուսովք. ի ծածուկ»։ Այսպէս ունին նաև բողոքականների հին հրատարակութիւնները ու թարգմանութիւնները. ինչպէս՝ անգլ.* New York *1894 «a several house, մասնաւոր տուն», Պօլսի 1895 թուի գրաբար հրատարակութեան մէջ մեկնուած է «առանձին, զատուցեալ». բայց նորերը դնում են «հիւանդանոց». օրինակ՝ հայերէն աշխարհաբար թարգմանութիւնը (Պօլիս 1906) առաջին վկայութեան մէջ դնում է «և նա բորոտ էր մինչև իր մահուան օրը և նա հիւանդանոցումն էր կենում» (թէև երկրորդ վկայութեան մէջ դնում է դեռ «և մի առանձին տան էր բնակվում բորոտուած»).— Պարսկերէն թարգմանութիւնը (*London *1911*) երկուսն էլ դնում է* مریضخانه marīzxāna *«հիւանդանոց», արաբերէն թարգմանութիւնը (*Cambridge-*ի համալսարանի նոր հրատ.) երկուսն էլ դնում է* بیت المریض bayt-ul-maraz *«հիւանդանոց»։ Հին առումով հասկանալով նաև Արծր. էջ 210 շինել է յափիուսափս «ծածուկ, գաղտնի»՝ «Եւ նոյն ժամայն հրաման հասեալ յափիուսափս յամանս ի գաղտնիս՝ զրաւ առնել կենացն նոցա»։—Հիւբշ. 325։*

ՀՀՔ, ՆՀՔ, ՋՔ և ԱՔ մեկնում են «առանձին, ծածուկ», իբր բառ. եբր.։ վերի ձևով ունի Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 204։

***ԱՓՕՍԹԱԹԱՅ** *«դասալիք». նորագիւտ բառ, մէկ անգամ գտնում եմ գործածուած Մոլութ. 3 «Դարձեալ է ափօսթաթայ, զի եթէ կարգաթող զաւեցեալ լինի, որ ի բաց դնէ զզգեստ կարգին, ես առաւել որ Քրդու զաղքաատութիւն, որ է զէութիւն կրօնաւորութեանն»։*

= Լ. apostata *(> ֆրանս.* apostat*), որ փոխառեալ է յն. ἀποστάτης «կարգաթող, ապացեալ» բառից։—Ա.ճ.*

ԱՔ, ի հլ. *«ոտք» Փիլ. բագ. էջ Տաթև. ատ. 276. որից* աք ածել *«ոտքով զարնել» Շնորհ. մաթ. առ լեհ.* աքացի *(համմտ. բռնցի, ափցի, ձերբացի, ձեռամբացի) «ոտքով» Ոսկ. մ. բ. 10.* աքացել *«ոտքով զարնել» Գծ. իզ. 17. Ոսկ. ես. յհ. ա. 1.* աքացելի *«աքացող» Ոսկ. ես.* աքեացք *«ոտքը սրունքով միասին» Ամովս. գ. 12.* աքացիք *«աքացող» Ոսկ. ես.* աքացանի *«ոտքեր» Փիլ. լին.* աքացոտել *Փարպ. կամ* աքցոտել *Ոսկ. յհ. ա. 3. Փարպ.* աքսոտել *Ոսկ. մ. ա. 18. յհ. ա. 3 (էջ 59) և բ. 16.* աքսոտիլ *եփր. զղջ.* աքսել

«կից զարնել» Գնձ. բառարաֆեաց «բարձր ոտքերով» Վեցօր. 193. աֆեան «աքացի զարնող, կիցնկեց» Մխ. դտ. 418. շեակաֆի «շան պէս ոտքեր ունեցող» Պատմ. աղէքս. Բառաֆեաց «չորքոտանի» Փիլ. էջ 174. Պիտառ. Վրդն. ծն. Երզն. լս. (Ներբ. յորդ. 36). Ոսկիփ. աֆոմէջ կամ աֆմէջ «ցայլք» միջին հայերէն բառ (Նորայր, Բառ. ֆր. էջ 463 բ)։— Այստեղ է պատկանում նաև առաֆել «ուղարկել» բառը, որ տե՛ս առանձին։

=Բուռմ է թէ կովկասեան լեզուներից փոխառեալ բառ է. համմտ. խինն. ank՝ և արչ. ak «ոտք»։

ՆՀԲ նոյն է գնում ահկ. ayaq «ոտք» բառի հետ։ Justi, Zendsp. էջ 314 գնդ. haxa և պհլ. hax «գարշապար»։ Տէրվ. Altarm. 73 առնս. aṅka «սիրտ, կարծք ևն», anč «ծոևլ», գնդ. aka, յն. ὄγκος, լտ. uncus «կեռ» բառերին իբր ցեղակից։ Հիւնք. յն. ἀγξ «գարշապար», λακτίζω «աքացկել»։ Սարգսեան, Բիւրակն 1898, էջ 483 ոտք բառից։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 330 համառօտուած թրք. ayaq բառից։

ԳԻՒՐ.— Ախց. աֆ «ոտք, քայլ», աֆվի «երկու ոտքերը» (կազմուած է յոդնակերա –ուի մասնիկով. ինչպէս են աչուի, մասուրներ, ծնկվրներ են). Համշ. ագ «ոտք» (օր. աֆդ բաշէ՛ «ոտքդ քաշէ՛»), աֆվի «հզան եաևի երկու ոտքերը», Ակն. ագ՝ «ոտք», որ պահուած է միայն ագ՝ինը տակն առնել «ոտքի տակն առնել, ծեծել, ոտիկ» դարձուածի մէջ. Հւր. հաֆ «ոտք» (շատ սովորական գործածութեամբ), որից բարդութեամբ հաֆըրէքիգ «ոտաբոպիկ»։— Աֆացի բառը պահուած է Մշ. ակցի, Ագլ. Գոր. Երև. Ղրբ. ֆա՛ցի, Ոզմ. ք՛ացէ, ացկէ, Տփ. ֆացի, ածկի, Շտ. ասկի, Մկ. ակ՛ուց ձևերով։ Նոր բառեր են ֆացահարել, աֆցառաֆ։

ԱՔԱԼ «մի տեսակ անծանօթ խոտ է» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 264։

ԱՔԱԼԱՐ կամ ԱՔԱՐԱՐ «թզենու կամ արմաւենու ճանճ. փսէնաս, լտ. cynips psenes L. ֆրանս. gallinsecte» Գաղիան.— (ըստ ԱԲ բառս նշանակում է նաև «մանր ճճի, որդ պանրի, մորքի, մոմի». բայց այս բանը թիւրիմացութեան արդիւնք է. տե՛ս ակար)։

ԱՔԱԿԱՆ «մի տեսակ եկեղեցական ըղձատ». մէկ անգամ ունի Մխ. դտ. 253 «Աքաքական ու պճղնաւոր և շուրջառ և եմիփորոն» (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 57)։

=Հյ. աֆ «ոտք» բառից, իբրև մինչև ոտքը հասնող շապիկ. իմաստի զարգացման համար հմմտ. պեղնաւոր հոմանիշը՝ պեղն «ոտքի կոճ» բառից։

Ուղիղ մեկնեց Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 15։

ԱՔԱՂ տե՛ս Քաղ։

+ԱՔԱՂԱՂ, ո հլ. «աքլոր» Առակ. լ. 31. Վեցօր. 163. Խսիր. Մագ. Երզն. քեր. Համամ. առակ. գրուած է նաև ագաղաղ Խոր. աշխ. այգաղաղ ԱԲ աֆալալ Սամ. աննց. շար. 162։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. kel- «կանչել, գոչել, հնչել արմատի աստրին k]- ձայնդարձից՝ կրճատ կրկնութեամբ (*ֆաղֆաղ> *ֆաղաղ) և ա յաւելուածով։ Այս արմատի ժառանգ ձևերից յիշենք ասնս. kalakala— «դոչիւն, աղմուկ», յն. καλέω «գոչել, մօտը կանչել, անուանել», κέλαρύζω «ջրի խոխոջել», κέλωρ «ձայն», κελαδέω «մի երգ հնչել», κλήτωρ «մանեատիկ», κέλαδος «ճիչ, կանչ», κελάδων «հնչուն», լտ. calo «կանչել, յայտարարել, հրաւիրել», clamo «աղաղակել», clārus «բարձրահնչիւն, անուանի, պայծառ», con-cilium «ժողով», անգլսք. hlōwan, հրգ. hlōian, մրգ. lüejen «բառաչել», հնգ. hel «բարձրաձայն», hellan «հնչել», մրգ. hal «հնչիւն», հիսլ. kalla «կանչել», գերմ. hell «հնչուն, պայծառ», hallen «հընչել», հհիւս. hiala «շառաչոսել», hlymja «հնչել, աղմկել», լիթ. kalba «լեզու», լեթթ. kalúôt «շշուկ ասել», հսլ. klakolъ, ռուս. колоколъ «զանգակ», լիթ. kañkalas «բռժժ» են (Boisacq 397, Pokorny 1, 443—6, Ernout-Meillet 131—2, Walde 115, Berneker 547, Trautmann 115)։ Հնդեւրոպական աքլորը չէին ճանաչում։ Առաջին անգամ Հնդկաստանից եկաւ։ Ն. Ք. 9. դարում Հին-վաց Յանաստանում և ապրածուկ Եւրո-

պալում։ Զանազան ազգեր ատին նրան զանազան անուններ. ալպպէս լոյները կոչեցին μῦδος «մարտաւանդի, մարդ», περσικός «պարսիկ», ἀλέκτωρ «կռուող» են։ Բայց տրուած անուններից մէջ շատերը կազմուած են «երգել, խօսիլ, կանչել» բայից. այսպէս լիթ. gaĩdỹs «աքլոր» (gẽdóti «երգել» բայից), հալ. pětlъ, ռուս. pětuchъ «աքլոր» (pěti «երգել» բայից), պրս. xurōs, պհլ. xrōs, քրդ. korōs, բելուճ. krōs «աքլոր» (գնդ. xraos, սանս. krō'çati «գոչել» բայից), հրդ. hano, անգսք. hona, հհիւս. hanz, գոթ. hana, գերմ. hahn «աքլոր» (բուն «երգող», համմտ. լտ. cano, հիւլ. canaim «երգել»), յն. ἡϊ-κανός «ալգուն երգող» (իբր ած. աքլորի)։ Նոյն իսկ մեր գաւառականներից լուսակաչճ, խօսող, կուսող։ Այս անուանակոչութեանց միջոցին բնականաբար շատերն էլ պիտի դիմէին վերի kel- «կանչել» արմատին, իրարից անկախաբար. այսպէս են սանս. uśa-kala- «ալգուն կանչող», kalādhika-, kalāvika-, հիւլ. cailech, կիմբ. ceiliog, կորն. chelioc «աքլոր»։ Հալեբէնի մէջ արմատի կրկնութիւնը շատ յարմար է թռչունին. համմտ. կկու, յոպոպ, ճնճղուկ։ Հնխ. kal- արմատի հետ շատ նման է հնչում ուս. kal-p'esun «կարգալ, կանչել». արդեօ՞ք փոխառնուած է այն ժամանակ, երբ դեռ հայերէնը ունէր բալ «կանչել» բայը։—Ա՛ճ.

ՀՀԲ այգուն աղաղակող։ Այսպէս է մեկնում նաև Ինճիճեան, Հնախ. Գ. էջ 21 (նոյնը Մառ ИАН 1920, 101)։ ՆՀԲ լծ. լտ. gallus «աքաղաղ» և հյ. այգ աղաղակ (տե՛ս ազաղաղ ձևի տակ)։ Pott BVS 4, 80 անգլ. chick, chicken «վառնակ», գնչ. kachni բառերի հետ։ Տէրվ. Altarm. 76, 83 դնում է իբր *ամաղաղ = լտ. gal-lus, իբր սանս. gar «գոչել, ծանուցանել», գնդ. gar «երգել» և հայ. գեղ-գեղ-ել արմատից։ Հիւնք. աղաղակ բառից։ Յ. Աբեղ, Բազմ. 1897, էջ 51 ուղիղ ձևը համարում է ագաղաղ՝ իբր լծ. կաչաղակ բառից։ Կուրթիկեան, Ա-րեւելք 1899, յուլ" 22 և նոյ" 18 գնդ. khala «պոռալ, գոչել, աղաղակ» բառից։ Յակոբեան, Ծաղիկ, 1899 նոյ" 4 աղաղակ բառից. իսկ նոյն տեղը՝ ծանօթ. խմբագր. պրս. կեալ «աքաղաղ» բառից (չգիտէ ԳԴ)։ Patrubány ՀՄ. 1908, 152 իբր < *քաք-աղաղ, այն է ֆրանս. coq+հյ. աղաղակ «աքլորի ձայն»։ Պատահական նմանութիւն ունին կովկասեան լեզուներից արչ. xaleko, ավար. xeleko, xelako, անգ. alkuzi, չէրքէզ. at'aqə, ինչպէս և քրդ. kelebab, սանս. kāhala, իռլ. coileach են համանիշները։

ԳԻՒՌ.— Ա.ֆաղաղ բառը արտասանութեամբ ափալալ՝ միջին ա-ի կորուստով դարձել է նախ ափլալ (այս ձևը իբր ռմկ. յիշում է միայն ԱԲ).— ափլալ ձևից տարանմանութեամբ յառաջացել է ափլար (այսպէս ունինք Տփ. Նոր-Ջուղայի գիւղերը և Համշ. ափլար. վերջինս տե՛ս Մառ, Матер.по Хемшарец. ՋԲ ևս ունի հնից ագլար).— երկրորդ ձայնաւորը վերածուելով ո՝ յառաջացել են մի կողմից ափլոր (համմտ. ափլոր Ոսկիփ. ագլոր ՋԲ), որից էլ արդի զանազան գաւառական ձևերը՝ Ախց. Երև. ափլօր, Մրզ. Վն. այլիէօր, Սլմ. այլիէօր։— Միւս բարբառները ստեղծել են զանազան նոր բառեր, ինչ. որձակ, ճեռ, լուսակաչճ, խօսող, կուսող=կօսող. շատ տեղ էլ գործածւում է թրք. (<պրս.) խօրօզ ձևը։

ԱՔԱՐ, ի-ա հյ. «վայրի թռչուն է, որի միսը ուտում են» Փարպ.։

Տէրվ. Altarm. 76 սանս. kar «գոչել» արմատից. համմտ. սանս. krakara «մի տեսակ թռչուն»։

ԱՔԱՐՏԵԼ «գաւառապարտել, մեղադրել, ամբաստանել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Պետրոս նպս. Սիւնեաց (հրատ. Գ. Տ. Մկրտչեան, Վաղշապ. 1902, էջ 41=Արրատ. 1902, 202). «նախ առաջին դերանելին Դէոսկորոս աքարտէին Եւտիքէ անուամբն և լուծեալ զնա յաքսորս ի Կիզիկոն»։

ԱՔԱՔ *«մուկն». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 42։*

ԱՔԻՍ, ի *հլ. «մկնհարսուկ անասունը, տճկ. կէլինճիք» Ղևտ. ժա. 29. Ոսկ. գծ. Նոննոս. Վստկ. 197. Գաղիան. (գրուած է նաև ագիս). որ և աֆիսա Վրդն. առակ. 24. որից մկնաֆիս Ղևտ. ժա. 30. Գաղիան. նոր գրականում* կզաֆիս։

Ներ յիշում է պրս. آس ās, *որ Գ֊ի մեկնում է «գազում, որ է մուշտակ իմն սպիտակ»։ Բազմ. 1844, էջ 335 առնս.* աքիու։ *Մառ, Վրդ. առ. I, էջ 217 ասոր.* ܩܩܘܫܝܬܐ qaqūšyatā *«կաուս»։* Patrubány *ՀՄ. 1908, 186 յն.* ἀχίς *«ծալր» բառից փոխառնալ. համմ. գերմ.* Spitzmaus *«աքիս» (բառացի «ծալրամուկ»)։ Մառ,* По поводу русск. слова сало, *էջ 116 իբրև յարեթական բառ կցում է ասոր.* ʾiza qūza>*հլ.* կուզ *«կաուս», ռուս.* киса, кошка *«կաուս» են բառերին։*

Գ֊ի Ռ.— Մկ. աքʻիս *«աքիս», Ախց.* աքիսա *«առնէտ»։*

***ԱՔԻԼԻՄԷԼԻՔ** *«մի տեսակ բոյս է. թագաւորապատկ, նշանախ, լտ.* fritillaria imperialis» (*գրուած նաև* էքլիլ մէլիք, էքլիլ-իւլ-մէլիք) *Բժշ. Վստկ. 108. ունի միայն ՀԲուս. § 266։* Seidel, *Մխ. հեր. § 214a համարում է լտ.* meliloton, sertula campana, *յն.* μελιλωτος *և փոխառնալ բառով* ἀκλιμελιχ *տալիս է նաև բոյսի ընդարձակ նկարագիրը։*

= *Արաբ.* اكليل الملك iklīl-ul-malik *«մի տեսակ բոյս է», որի երկար նկարագրութիւնը տե՛ս Կամուս, Թրգմ. Թրք. Գ. էջ 340. բուն նշանակութիւնն է «թագաւորի պըսակ»։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

ԱՔԼՈՐ *տե՛ս Աքաղաղ։*

Ախաղաղ *բառի հետ ծագմամբ նոյն են ընդունում ՆՀԲ, Տէրվ.* Altarm. *76, Կուրտիկեան, Արեւելք 1899 յուլիս 22։— Հիւնք. յն.* ἀλέκτωρ *«աքաղաղ» բառից համառօտուած։ Հալաճեան, Արեւելք 1893 նոյ՛ 10 այգ լուր։ Յակոբեան, Ծաղիկ 1899 նոյ՛ 4 կցում է զնդ. ſեալա «պոռալ, կանչել», պրս. կեալ «աքաղաղ», յն.* ἀλέκτωρ *և լտ.* gallus *«աքլոր» բառերին։ Մառ* ИАН *1920, 101 այգ֊լուր «առաւօտեան թռչուն»։*

ԱՔՇՈՒՇ *տե՛ս Քշուշ։*

ԱՔՈՒՍ *«ո՞րպէս է». ունի միայն Բառ. երեմ. էջ 42։*

ԱՔՍԱՐ *«մի տեսակ բոյս է. լտ.* bunium bulbocastanum, *ֆրանս.* noix de terre» *Ամիրա. ունի միայն ՀԲուս. § 269։*

ՀԲուս. անդ գնում է արաբ. الاكثار **աֆուցար** *հոմանիշից. բայց այսպիսի այլանդակ ձեով և արտասանութեամբ մի բառ ո՛չ կամուսի արաբերէն հոյակապ բառարանը գիտէ և ո՛չ էլ Շիայն-շնայդէրի բուսաբանական ընդարձակ հաւաքածոն՝* WZKM *հտ. 11 և 12։*

ԱՔՍԵԼ, ԱՔՍՈՏԵԼ *տե՛ս Աքս։*

***ԱՔՍՈՐ**, ի *հլ. (գործածուած է անեղաբար) «տարագրութիւն, իբր պատիժ՝ բնակած քաղաքից կամ երկրից դուրս քշելը» Բուզ. դ. 10 (տպ. 1832, էջ 101, տպ. 1889, էջ 105), Եւս. պտմ. Ա. ժա. 55. Ճառընտ. Վրք. Հց. Յայսմ. որից* աֆսորել *Բուզ. դ. 5, 11. Խոր. Կլիմաք. Լմբ. պտրգ. Հ. Կիլիկ.* աֆսորիլ *Բուզ. դ. 5, 6, 13.* աֆսորանիք *Լաստ. Յայսմ։—Բառիս երկրորդ ձևն է* եֆսորի *(յգ.* եֆսորիք*) Սոկր. եկեղ. պտմ. էջ 162, 165, 171, 183, 184. կամ* եֆսօղի *Անան. խոստ. էջ 10 (Յոհան եքսաւոխս լինի). որից բայածն* եֆսորել *Սոկր. եկեղ. պտմ. էջ 179, 207, 226, 234։ Նոր գրականում ընդունուած է միայն* աֆսոր *(եզակի գործածութեամբ), որից շինուած նոր բառեր են* աֆսորական, աֆսորավայր, աֆսորատեղի։

= *Յն.* ἐξορία *«աքսոր», որ կազմուած է* ἐξ- *«դուրս» նախդիրով* ὅρος *«եզերք, սահման» բառից. ըստ այսմ բառը թարգմանուած է նաև յունաբան հեղինակներից հյ.* արտասահմանութիւն (արտ- *և սահման բառերից)։ Յունարէնից փոխառնալ են ասոր.* ʾaksoria *կամ* eksoria, *վրաց.* ექსორია ხքսորիա *«աքսոր»։ Հայերէնի մէջ, ինչպէս նախաձայն ձայնաւորները ցոյց են տալիս, ա֊*

unr *փոխ է առնուած ասորերէն ձևից և ասելի հին հայերէն է, քան* Եfunրի, *որ փոխ է առնուած ուղղակի յունարէնից և գոյութիւն ունի միայն յետին ժամանակի հեղինակների մօտ։—Հիւբշ. 301։*

Նշ՚ր, որ ծանօթ էր միայն աfunr *ձևին, դնում է յունարէնից փոխառութիւն։ Այսպէս նաև Տէրվ.* Altarm. *69, որ նախաձայնը հայացած է համարում։ Առաջին անգամ ասորերէն ձևի հետ համեմատեց* P. Smith *185 (ըստ* Lagarde, Arm. Stud *§ 304)։—*Եfunrել *ձևը նորագիւտ է և բառարաններում չկայ։*

Գիմ.—Եւդ. աfuorել *«առել, նախատել»։*

ԱՓՅԱՆ *(գրուած նաև* աfծան, ագցան*) «գամ՝ մեխ քաշելու, առամ հանելու և տորաշէկ երկաթը հնոցից դուրս քաշելու ևն. երկբացիկ գործիք, ունելի, քէլփէքին, խասճ» Արծր. Ոսկիփ. Վրդն. առ. 214։*

Նշ՚ր մեկնում է «իրր ոտս ունօղ (աf բառից) կամ ագուցեալ *ընդ միմեանս»։ Տէրվ.* Altarm. *74 դնում է* ագ *«ոտք» բառի հետ՝ սանս.* ač, anč *«ծռիլ» արմատից։ Հինք. fած «էգ շուն» բառից կամ խածանել բայից։*

Գիմ.—Մշ. աfցան, *Զթ.* աfցօն, աfցոն, *Ակն.* անցագ.*—ուրիշներ գործ են ածում թրք.* كلپتين kelpetin *բառը (Պլ.* գէլփէքին, *Նխ.* էլփէքի *կամ* էլփէքին, *Վն.* f՚ալբmբին, *Ղրբ.* f՚բուիբբիւն*), որ փոխառեալ է արաբ.* كلبتان kalbatān *հոմանիշից (բուն աստղաբանական նշանակութիւնն է «գոյգ շներ»)։*

ԱՓՅՈՏԵԼ *տե՛ս Աբ։*

ԱՖԹԻՄՈՆ *տե՛ս Աւթիմոն։*

ԱՖԻՈՆ *տե՛ս Աւիւոն։*

***ԱՖՈԿ** *«գէշ, վատ, անպատեհ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Վրդն. առ. 53 «Յուցանէ առակս թէ Աստուած օգնական է, բայց պատրաստիլն չէ աֆոկ» (այլ ձև. պարտ է պատրաստ կենալ, պատրաստ կենալն աղէկ է, բարի է, պատեհ է, պարտ է)։*

=Զևափոխուած է աճոկ *«յանցանք, վնաս, պակասութիւն» բառից, ինչպէս որ իրօք էլ մի քանի տեղ գտնում ենք* աճոկ *ձևով. «Ոչ վայել է որ ահոկ խօսին ընդ որ չունիս հաշիւ» (այլ ձ. յամօք). Վրդ. առ. էջ 108. «ի մէջ առն և կնոջ և ի մէջ եղբարց ահոկ (այլ խմբ.* անօգուտ*) մի՛ խօսիր որ չամաչիս» Վրդ. առ. 61։ Զևի զանազանութեան համար հմմտ.* ճոր>ֆօր, ճոս, ճոդ, ճոճ>ֆօս, ֆօդ, ֆօճ *ևն։ Իմաստի զարգացման համար հմմտ. արաբ.* عيب ʿayb *«ամօթ, պակասութիւն, վնաս, յանցանք», Ատրպ. թրք.* eybi yox *«վնաս չունի»։—Ա՛ճ.*

Մաո, Վրդ. առ. 53 ծան. ուզում է ուղղել կամ հասկանալ աճոկ*։*

Գիմ.—Երզ. աֆոգ *«ամօթ», Շհ.* աֆէգ *«գէշ, վատ». Արածս աֆէգ է. Աֆո՛գ է, աղջի՛կ։*

Բ

⊙**Բ.** *բնաձայն արմատ, որից զանազան ածանցիչներով ու կրկնութեամբ ձևացած են բազմաթիւ բնաձայն բառեր. այսպէս են՝* **բշալ, բշել, բշիւն, բշումն, բշողական, բջել, բջողական, բջջաճ, բնշել, բրնշել, բնշումն, բջող, բնջել, բրել, բիբել, բրիւն, բրրիւն, բրրշալ, բրշել, բաշել, բաշիւն, բաջաղել, բառաշել, բառաճշիւն, բառաճջել, բարբաճջել, բարբաջել, բոբոալ, բոմբիւն, բմբիւն:** *Այս բառերի վրայ տե՛ս իւրաքանչիւրն իր տեղում:*

ԲԱ՛ *տե՛ս* **Բալ** *(բայը):*

*ԲԱԲ *«դուռ». մէկ անգամ ունի Մագ. իբ՝ իբրև մեկնութիւն Բաբ յատուկ անուան: Ըստ այսմ այս բառը մեր մէջ գործածուած չէ:*

=*Արաբ.* بَاب *bāb «դուռ»:—Հիւբշ. 263:*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, բայց սխալմամբ համարելով պարսկերէն, որին հետևում է նաև ԱԲ:

ԲԱԲ *(կամ* **բարոյ***). անծանօթ բառ. առանձին չէ գործածուած, այլ կայ միայն ջրաբաբ, ջրաբաբոյ բառանուան մէջ, որ յիշում է Գաղիան. բառիս իմաստը անյայտ է. մեկնում է դանազան ձևերով. բառ ոմանց նշանակում է «ջրկոտիմ», բառ այլոց «սամիթ կամ տուզ և կամ մոլուշ». բառ Բժշկարանի «սամիթ», բառ Հին բռ. «մի տեսակ փրփրիմ»:*

ԲԱԲԱԽԵԼ *տե՛ս* **Բախ:**

ԲԱԲԱՅ *«բլուր». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 43:*

*ԲԱԲԱՆ, ի–ա *հլ. «պարիսպ քանդելու պատերազմական քարընկէց մեքենայ» Լաստ. ժգ. Ուռհ. ճգ. որից* **բաբանահար** *«բաբանով հետելու քար» Մխ. ապար. գրում է նաև* **բանբանահար.**—*ՀՀԲ գիտէ նոյնպէս բանբանախաղաց բարդը, որի վրայ տե՛ս ԳԻՒ:*

=*Թուրք-թաթարական բառ է, ինչպէս երեւում է Լաստիվերացու վկայութիւնից. «Պատերազմական գործի պատրաստեալ, զոր ինքեանք (Թուրքերը) բարան կոչէին». Լաստ. ժգ. տպ. Վենետ. 1844. էջ 69:—Սակայն* Будаговъ *չունի այսպիսի մի բառ և ուրիշ Թուրք-թաթարական բառարաններէի մէջ էլ չեմ հանդիպած:—Ա՛ճ.*

ՆՀԲ մեկնում է «իբր ռմկ. պապա սափան», որ իրք. նշանակում է «մեծ պարսպատիկ»:

ԳԻՒ.—ՆՀԲ (հտ. Ա. էջ 399 գ), ՋԲ (էջ 267ա) և Նորայր, Բառ. Ֆրանս. (տե՛ս bascule, balançoire, branloire *բառերի տակ) դնում են զաւառական* **բարան** *«գերան՝ որի երկու ծայրերը նստելով տղայքը՝ ճօճւում են». այս ձևը ծանօթ չէ ինձ այլուստ: Գաւառականներում այս իմաստով ունինք* **արաբգի, լոկէփակէ, հալաճօճիմ, տանկլճոչի, տանկլճոզի, առաջանկուզիկ, առնկուզայ, տճկ. տանկալափիշտի, չէօյլէնշէօ.** *ՀԲԲ էլ կազմել է վերի բառից* **բարանախաղաց** *«բարան խաղացող»:*

⊙**ԲԱԲԻ.** *զարմացական ձայնարկութիւն. Ոսկ. Ես. մաթ. հռ. և յհ. Մարգ. ա. յհ. գ. որից* **բարէական** *«զարմանալի, հրաշալի» եպիփ. խշ.—Նոր գրականում* **բարէ** *գործածւում է երբեմն իբրև ցաւի բացագանչութիւն:*

=*Բնաձայն բառ է, որի հետ պատահաբար նման են յն.* βαβαί *(զարմացական բացագանչութիւն),* παπαῖ *(զարմացման, ուրախութեան և կամ ցաւի բացագանչութիւն), սանս.* बाबा *bābā, լտ.* papae *(զարմացական), այսպէս նաև Ֆրանս.* bah! *ռուս.* бабаба! *վրաց.* ბაბო **բարո՛** *և այլն:*

ՆՀԲ համեմատում է յն. βαβαί, *լտ.* papae *ձևերի հետ: Նոյնը նաև Տէրվ.*

Նախալ. էջ 19, Հինք. էջ 333։ Ե., Բիւրակն 1900, 314 պապ բառի կոչականն է, իբր «հա՛յր, արի օգնի՛ր»։

ԲԱԲՈՒՆԻՃ *տե՛ս* Պապունիճ։

ԲԱԳ «բերանի կապ». *Հին բռ. և քեր. բայց գրականութեան մէջ չէ՛ գործածուած. յետին և գուցէ յարմարեալ մի բառ է։*

ՆՀԲ առանուում է հյ. գաբ «գաղանի բերան», վրաց. բա՛գի «բերան, շուրթն» և հյ. փակ «գոց» բառերի միջև. յիշում է նաև *Թրք.* ژ baγ «կապ»։ Karst, *Յուշարձան 424, Թթր.* bag, beg, *չագաթ.* bogau, bogra, *ույղուր.* bak, bek «կապ, առասան, լար» են բառերին ցնդակից։

ԲԱԳ «բաժին, ժառանգութիւն». առանձին և անկախ մէկ անգամ միայն գործածուած է Եփր. Թգ. 402 «Ձիք իմ, ասէ, որդեակ՝ որ ունիցի զբագ և զբաժին իմ» (ժառանգորդ զաւակ չունիմ)։ Այս արմատից են բագ արկանել «բաժին հանել» *Ոսկիփ.* բագ անկանիլ «բաժին ընկնիլ» *Ոսկիփ.* բագորդ «բաժանորդ, մասնակից, հաղորդ» *Կոչ. 67. Բուզ. դ. 6. Սարկ. լուս. 14.* բագել «մասնաւորել» *Հին բռ.* բագամիտ «երկմիտ, տարակուսած» *ՆՀԲ։*

= *Պհլ.* *bag «մաս, բաժին» *բառից, որ թէև չէ գործածուած, բայց նրա գոյութիւնն են հաստատում պազենդ.* bag «մաս, բաժին», *դնդ.* baγa-, *հնդ.* baga-, bāga- «մաս, բաժին», *առնս.* भाग bhāga- «մաս. բաժին, վիճակարկութիւն»։ *Համմտ. նաև* բաժին, բաժանել *բառերը, որոնց հետ ճիշտ այն յարաբերութիւնն ունի, ինչ որ ունին իրար հետ* առւգանք և առւժել, արգ և արժել, առ-ոյգ և ոյժ *ևն։—Հիւբշ. 113։*

Նախ ՆՀԲ մեկնել է սանս. պակա *բառով և դրել է իբր արմատ՝* բաժին, բագ-ձաձել *են բառերի։—* Böttich. ZDMG *1850, 351 սանս.* bhāga, *դնդ.* baγa։ *Նոյնը նաև Տէրվ. Նախալ. 95 և Ծրկրագունտ, Ա տարի, էջ 170։ Սազրպեան ՀԱ 1909, 335 սումեր.* page, pakit «իր կողմից», *Թրք.* pay «բաժին»։

ԲԱԳ «կից, միասին, հաւաքուած». առանձին գործածուած գտնում եմ միայն ի բագ անկանիլ «հաւաքուիլ, գումարուիլ» ոճի մէջ, որ մէկ անգամ ունի *Մանդ. ապ. Վէնետ. 1860, էջ 210* «Ջի բագ անկեալ մեղք տարւոյն քառասուն աւուրքս ընկեցուք յանձանց». այլ ձեռ. բագանակեալ «հաւաքուած, ժողովուած, գումարուած», ինչպէս գիտեն նաև *Մանդ. սիր. 13* և *Գիրք Թղ. 240։* Նոյն արմատից են բագձաձել «հաւաքել, ամփոփել» *ՅՀ. կԹ. Նիւս. կաղմ. Տօնակ.* բագձաձական «հաւաքական, խմբական» *Բր. քեր. Պորփ. Սկևռ. լմբ.* բագձաձաբար «հաւաքաբար» *Թէոդ. խշ.* որոնք բարդուած են ձաձել «հաւաքել» բառով։

ԲԱԳ «Աստուած». արմատ առանձին անդործածական, որից կազմուած են Բագարան «աստուածների բնակավայրը», Բագաւան «աստուածների աւան» (որ և Դիցաւան), Բագայարիճ «աստուածների գիւղ», Բագարատ «Աստուածատուր, Աստուծոյ տուածը». *բայց սրանք յատուկ անուններ են միայն՝ առաջին երեքը տեղական, վերջինը անձնական։* Իբրև հասարակ անուն ունինք միայն բագին, ի–ա *հլ. (յետնաբար* ի, ո *հլ.)* «մեհեան, աստուածների տաճարը» *Ագաթ. Ոսկ. յհ. ա. 31.* «աստուածների զոհի սեղանը» *ՍԳր. Ոսկ. ես. Ագաթ.* «եկեղեցու խորան, սեղան» *Ոսկ. մ. բ. 22. Փիլ. Եփր. վաշխ. Մխ. դտ.* «արձան» *Գիրք մողոր. (յետնաբար ենթադրուած է նաև ուղ.* *բագնի ձևը, որից կան բագնեաց, բագնեաւ, բագնեօք *հոլովաձևերը)։* Բագին *բառից ածանցուած են* բագնասէր *Ագաթ.* բագնապետ *Մագ.* բագնագիտութիւն *Փիլ.* բագն. բագնաձև *Արծր.* բագնայարկ *Անան. եկեղ.* յարաբագին *Փիլ.։*

=*Պհլ.* bag «Աստուած», *պազենդ.* baγ, *հպրս.* baga- «Աստուած», *դնդ.* baγa-, *սանս.* भग bhága- «բաշխող, բաժանող, յարգելի, պաշտելի, Արեգակ, Լուսին և Սիվա աստուածը»։ Իրանեան *բառերի միւս հնդեւրոպական ցեղակիցներն են հյ. ռուս.* Богъ «Աստուած», *փռիւգ.* βαγαῖος «Արամազդ աստուած» (*ըստ Հեսիքիոսի*), *որոնք ցոյց են տալիս թէ ևթէ հայերէն բառը բնիկ լինէր, պիտի ունենար* *բակ ձևը։ Բառիս բուն նշանակութիւնն է «ճոխ, հարստութիւն բաժանող». համմտ. նոյն արմատից հսլ.* bogatŭ «հարուստ», ubogŭ «աղքատ» *բառերը։—Հիւբշ. 113։*

Առաջին անգամ St. Martin, Mém. s. l' Arm. *հա. Բ, էջ 487 համեմատեց բառս* Богъ «*Աստուած*» *ևն ձևերի հետ:* Gosche *էջ 22 վերի բառերի հետ: Ուղիղ են մեկնում նաև Եւրոպա հանդէս, Վիեննա 1852, էջ 162, ծան. 2, Սէր. 1862, թ. 24, էջ 182, Էմին, Հայ հնթան. կրօնը, թրգմ. Յուս 1875, էջ 414—5, Տէրվ.* Altarm. *102 և Նախալ. 95,* Justi, Zendsp. *209 ևն: Մորթմանն* ZDMG *26, 485 և 30, 438 վանեան բևեագրերի մէջ գտնում է* Bag «*Աստուած*» *և* bagrituri՝ *նոյն արմատից:* Canini Et. étym. *էջ 71* բագին=լտ. paganus «*կռապաշտ*» *և հյ. երկր-պագել:*

Փոխ.—Մասնիկի և նշանակութեան պատճառով մեզնից փոխառեալ է թուրք վրաց. ջაგიი բագինի «*բագին, զոհ, տաճար*». *Համմ. Ա. կոր. թ. 13. Արա ուժդ՛իթա, բամեթու բոմելնի իդի բագինաա համախուրներին, բագինիսագան հաճամիան? Ո՞չ գիտէք եթէ որ ի տաճարին գործեն, ի տաճարէ անտի ուտեն:*

ԲԱԳԱՒՈՐԴ *տե՛ս Բատավարդ:*

ԲԱԳԻՆ *տե՛ս Բագ:*

ԲԱԳԶԱԶԵԼ *տե՛ս Բագ և ձաձել:*

*ԲԱԴ *(ի, ու հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «բադ անասունը, օրդագ» Արիստ. աստ. Տօնակ. գրուած նաև* բաա, *որ և պաա Զքր. սարկ. բ. 141. սրանից* բադիճոն «*մրթմիմն*» *(ըստ ԳԲ):*

=Այս բառը գտնում է բազմաթիւ լեզուների մէջ. այսպէս՝ ասոր. ܒܛܐ baṭṭa, *արաբ.* بط batt «*բադ*», *պրս.* بد bat *և քրդ.* بێ beî «*բադ, վայրի սագ*», *չեչէն.* bâd, bat, *ակուշ.* bad, *վօգուլ.* batta, pot, *կայտախ. խիւրկ.* badbad, *բոլորն էլ «բադ» նշանակութեամբ. իսկ վրաց.* ბატი **բատի**, *մինգր.* **բատէ**, *թուշ. սվան.* **բատ, բատա**, *կիւրր.* **բատտ** *և ալբան.* patë՝ *բոլորն էլ «սագ» նշանակութեամբ. սպան.* pato *թէ՛ «սագ» և թէ՛ «բադ»: Բառիս սկզբնական ծագումը անյայտ է* De Lagarde, Ges. Abhd. *21 համարում է հնդևրոպական. աւելի ընդարձակ խօսում է այս մասին* A. Pictet. Les origines indeur. *Ա. էջ 394: Հայերէնը կարող է միայն իրանականից փոխառեալ լինել, որովհետև աւսորին պիտի տար հյ.* *բաթայ *կամ* *բանաայ, *իսկ արաբերէնը չէր կարող ազդած լինել, որովհետև հյ.* բադ *Արաբների արշաւանքից աւելի հին է: Ըստ Կամուս, թրք. թրգմ. Բ, էջ 457 արաբ.* بَطّ batt «*սագ*» *բառը փոխառեալ է պրս.* بَت bat *ձևից:—Հիւբշ. 114:*

Նախ Klaproth, Asia polygl. *էջ 100 արաբ.* batt, *վօգուլ.* batta, poat, pot, *բննդալի* badach *բառերի հետ: Ինճիճեան, Հնախ. Գ. 21 հանում է ա բնաձայնից: Պարսկերէնի հետ է համեմատում նախ ԳԴ, որից լեռոլ նոյնը ՆՀԲ,* Böttich. Horae, *էջ 22 ևն:*

ԳԻՒ.—Մշ. բադ, *Վն.* բոդ, *Ալշ.* բադ, *Սչ.* բ՛ար, *Ոզմ.* բ՛ոդ, *Պլ. մանկական լեզուով* բաբբար, փա՛բի, փա՛բի, *նոյնպէս Ասլ.* փա՛բի փաբի «*բադ կանչելու ձայն*»: *Նոր բառեր են* բադիճուռ, բադուկնոց՝ *երկուսն էլ խոտի անուններ:—Տփ.* բադ *նշանակում է «սագ»:*

ԲԱԴԱԿ *տե՛ս Բանդակ:*

*ԲԱԴԷՆ *«կտաւէ կամ բեհեզէ սպիտակ շապիկ» Դան. ժբ. 6, 7. գրուած է* բադեան *Ոսկ. յհ. (Հին բռ. մեկնում է «ծիրանի», Ոսկ. ճառք, էջ 588 «բադէն, այս է պատմուճան աստուածային», Վրդն. դան. ղ. էջ 269 «զբադէն զգեցեալ՝ որ է փառս քահանայական զգեստու»):*

=Եբր. בַּדִּים baddîm *«կտաւէ զգեստ» բառն է, որ* בָּד bād *«սպիտակեղէն» բառի յոգնակին է: Այս բառը, որ գործածուած է Ս. Գրքի եբրայեցերէն բնագրի համապատասխան տեղերում, Յօթանասնից օրինակում չէ՛ թարգմանուած, այլ տառադարձուած է պարզապէս յն.* βαδδίν *ձևով, որից էլ տառադարձուել է հայերէն թարգմանութեան ժամանակ:*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ:

Փոխ.—Հայերէնից փոխառեալ է վրաց. ბადეი **բադեճի** *«կտաւէ կամ բրդե զգեստ». գործածուած է Ս. Գրքի նոյն տեղերում. հայերէնից փոխառութեան ապացոյց է է=ե*

ձայնաւորը՝ փոխանակ երբ. i=յն. ὶ: Ջուբինով ևս համարում է հայերէնից փոխառեալ բառ:

*ԲԱԴԻԱՆ «մի տեսակ բոյս է. ռազիան, սամիթ. foeniculum» Մխ. հեր. ունի միայն ՀԲուս. § 273:

=Պրս. بادیان bādyān կամ bādiān «սամիթ, ռազիան»:

Ուղիղ մեկնից ՀԲուս. անդ: Ուրիշ է ֆրանս. badiane «ծառ ինչ ճենաց և Բաթարաց», որին Նորայր Բառ. ֆր. էջ 120 ա կցում է այս բառը:

ԲԱԴՐՈՆ տե՛ս Բաթրոն:

*ԲԱԶԱԶ «կերպասավաճառ», որից բազզազոց «ճոթեղէնի շուկայ», որ գտնում եմ գործածուած 1209 թուի մի արձանագրութեան մէջ (Վիմ. տար. էջ 49):

=Արաբ. بزّاز bazzaz «կտաւավաճառ, կտաւագործ», որ ծագում է بز bazz «կտաւ» բառից:—Ա.ճ.

ԲԱԶԴ «դառն նուշ» Բժշ. ունին միայն Բառ. երեմ. յաւել. 565 և ՀԲուս. § 275:

*ԲԱԶԷ, ի հլ. «շահէն թոչունը» Ղևտ. ժա. 16. Յոբ. լթ. 26. Փիլ. լիւս. գրուած է նաև բազայ Փարպ. Լմբ. ժղ. Ոսկիփ. պազայ Ուռհ. տպ. էջմ. 353. սրանից են բազէական Խոր. բ. 7. բազէակիր Խոր. բ. 7=բազէկիր ՅՀ. կթ. բազապան «բազէ պահող» Rivola, Բառ. հայոց, 1633, էջ 51:

=Պհլ. bāz կամ bāǰ, պրս. باز bāz, ozباز bāza «բազէ» (վերջին ձևին համապատասխանում են հլ. բազայ, պազայ, որոնք աւելի յետին են), քրդ. bāzī باژی, աֆղան. bāz, բելուճ. bāz, bāñz, բոլորն էլ «բազէ» նշանակութեամբ: Lagarde սրանց է կցում նաև նպրս. غليواج γalīvāǰ, غليواژ γalīvāž կամ خليواج xalīvāǰ «ցին, ուրուր» (Gesam. Abhd. 21). իսկ ըստ Böttticher, Rudimenta myth. semiticae, Berlin 1848, էջ 34 և Horn, Neupers. Etym. § 162 նոյն արմատից է նաև սանս. vāǰin, «կարիճ, կատագի, յետնաբար թռչուն»: Մեր բառին նման՝ իրանեանից փոխառեալ են նաև ասոր. ܒܙܐ bāzā, ܒܙܝ bāzī «բազէ», ܒܙܝܩ bāzīq, ܒܙܪܩܐ bāzrqā «ցին, ուրուր», արաբ. بازی bāzī կամ باز bāz (Համառ. Թրք. Թրգմ. Բ. 160 և Գ. 767). վրաց. ბაზი բազի «բազէ», ბაზიერი բազիերի «բազէանոց»:—Հիւրշ. 114:

Ամէնից առաջ Schröder, Thesaur. էջ 46 դնում է արաբ. bazī ձևից: Klaproth, Asia polygl. էջ 100 և ԳԴ պրս. bāz ձևից: Ինճիճեան, Հնախ. Գ. 21 դնում է հլ. վազէ (վազէլ) բառից: Windisch. 21 և Gosche 44 թէ՛ հլ. բազէ և թէ՛ պրս. bāz հանում են vah արմատից: Տէրվ. Նախալ. 173 հանում է հնխ. bhansa նախաձևից:

ԳԻՒ.—Մշ. բազէ, Հմշ. բազա, Ալշ. բ՚ազա, Մկ. Ոզմ. բmզm:

ԲԱԶԻՉ «ծառայ». ունի միայն Բառ. երեմ. էջ 44:

ԲԱԶԻՐ «քննել». ունի միայն Բառ. երեմ. էջ 44:

ԲԱԶԿԵԼ տե՛ս Բազուկ:

*ԲԱԶՄԱԿ, ի-ա հլ. «ճրագ» Ա. մնաց. իր. 15. Փիլ. բագն. 203, 204. Վրդն. եւ. «ճրագարան, աշտանակ» Երզն. մտթ. Նար. լծ. նար. որից բազմակակալ և կամ համառօտուած բազմակալ «ճրագ» Բ. մնաց. գ. 21. «ճրագի մկրատ» Ել. իմ. 38, լմ. 17. Թուց գ. 9. Գ. թագ. է. 49. «աշտանակ» լծ. նար.:

=Իրան. *bazmak հոմանիշ ձևից, որ թէև չէ գործածուած բնաւ իրանեան գրականութեան մէջ, բայց հայերէնի հետ նոյնն է հաստատում ասոր. ܡܙܡܟܐ mazməxā (բացարձակ ձևը mazmak) «ճրագ, աշտանակ» (Brockelm. 96 ա, 182 բ), որ բնիկ սեմական չի կարող լինել և նոյն իրանեան բառից փոխառեալ պէտք է լինի: Ասորերէնի մէջ նախաձայն b՝ յաջորդ վանկի m-ի ազդեցութեամբ վերածուել է m-ի:—Հիւրշ. 114:

Նշխ բազմիլ բայից (ճրագ՝ որ բազմի ի վերայ աշտանակի): Ջխ բազմիլ բայից և կամ բազուկ բառից (ճրագակալ, այսինքն բազուկք աշտանակին): Ուղիղ մեկնից նախ Böttticher, Horae aram. էջ 38 և Lagarde, Gesam. Abhd. էջ 63, համեմատելով ասորի ձևի հետ:

ՓՈԽ.—Հայերէնից փոխառեալ է Բուժ վրաց. ბაზმა բազմա, ბაზმაკი բազմակի «ճրագ» երեմ. իե. 10, որից ხაბაზმაკე սաբազմակե «աշտանակ, ճրագ» Ջքր.

դ. 2։ Հայերէնից փոխառեալ է համարում նաև Զուբինով։

*ԲԱԶՄԻԼ, -ևցայ «պատուով նստիլ, հանդիսա նստիլ, սեղան նստիլ» ՍԳր. որից բազմական «կոչնական, սեղան նստածներք» ՍԳր. Բուզ. դ. 2 (տպ. Վենետ. 1832, էջ 67, ինչպէս և Հրատր. Պատկ. էջ 57 սխալմամբ տպուած է բազմակալացն). «կոչունք, հացկերոյթ» Մտթ. իգ. 7. Գ. մակ. ղ. 22. «բազմոց, բարձ, նստելու պատուաւոր տեղ» Յուդթ. ժբ. 15. Ագաթ. բազմականակից «սեղանակից» Բուզ. դ. 19. բազմականաւոր «կոչնաւոր, հացկերոյթ տուող անձ» Մծբ. ժթ. բազմակից «սեղանակից» Բրս. մրկ. բազմեցուցանել «նստեցնել» Ղկ. թ. 14, 15. բազմոց «նստելու տեղ» Վրդն. Շնորհ. Եփր. յհ. մկ. բազմիմ «բազմոց» ՋՔ ևն։

= Պհլ. *bazm բառից, որ ապացուցած չէ, բայց որա դէմ ունինք պրս. بزم bazm «հացկերոյթ, խնջոյք», بزمگاه bazmgāh «տեղի բազմականի խրախճանութեանն», بزمه bazma «անկիւն բազմականի», աֆղան. bazm «խրնջոյք, հաւաքոյթ» (Horn § 215 արմատը դնում է սանս. bhaǰ- «հրճուիլ, վայելել»)։ —Հիւբշ. 114։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ։—ՆՀԲ դնում է բազում «շատ» բառից (նստել պատուով իմն ի մէջ բազմութեան)։ Böttlicher, Horae aram. 41 և Rudimenta 50 բազմական «նստելու բարձ» կցում է ասոր. پشمگا pašməgā «ձիու ծածկոց» բառին, բայց ինքն իսկ մերժում է Lagarde, Arm. Stud. § 320։—Müller SWAW 42, 251 և WZKM 7, 368 պրս. bazm բառի հետ։ Տէրվ. Նախալ. 93 հնխ. bhagh «աճիլ» արմատից դնում է հլ. բազում, բազուկ և կասկածով նաև բազմել։ Հիւնք. թէ՛ բազում «շատ» և թէ՛ բազմիլ հանում է պրս. bazm-ից։

ԳԻՒ.—Տփ. բազմիլ, Խրբ. Սեբ. բ'ազմիլ, Ալշ. Հճ. Զղ. բ'ազմել, Ախց. բ'ազմէլ, Պլ. փազմիլ «փառաւոր դիրքով նստիլ»։ Նոր բառ է բազմիս վն. «հարսանեկան ճաշ, որ տրւում է փեսայի տանը՝ ազգականաւումից յետոյ՝ արշալոյսի մօտ»։

ԲԱԶՄՈՅԹ տե՛ս Բազում գւո.։

ԲԱԶՈՒԻԹ տե՛ս Բուղաքին։

*ԲԱԶՈՒԿ, ի–ա հլ. «թև» ՍԳր. նմանութեամբ «զօրութիւն, իշխանութիւն» Յոբ. խ. 4. «բանակի թև» Վեցօր. ը. 174. «ճիւղ, ոստ» Եղեկ. ը. 27. «արմատի ողկոյզ» Վրք. հց. Ա. 176. «որթատունկի ճիւղ» Բուզ. 99. որից բազկակից «աջակից, օգնական» Ագաթ. բազկաառած Ագաթ. Կորիւն. բազկանոց «ապարանջան» Գնձ. բազկառձակ «ճիւղաւէտ» Ագաթ. բազկացի «թևով» Քեր. Երզն. և Նչ. երկայնաբազուկ Եւս. քր. հաստաբազուկ Խոր. բազկել «համառօտել, կարճել» Բ. մկ. ը. 29. «կոտորել, ջարդել, սպանել» ՅՀ. կաթ. 361, 380 (սխալ հետևողութեամբ յն. βραχίων «կարճագոյն, համառօտագոյն» բառի, որ պատահաբար նման է βραχίων «թև, բազուկ» բառին), նոր բառեր են բազկաթոռ, բազկեռակ են։—Այս արմատի՞ց է արդեօք նաև բազկել «պատմել» Բառ. երեմ. էջ 44։

= Պհլ. bāzūk «թև» բառից, որ աւանդուած է սխալագիր bāzīh գրչութեամբ։ Այս բառի հետ նոյն են գնգ. bāzu-, սանս. बाहु bāhu, պրս. بازو bāzū, աֆղան. bāzū, քրդ. bazink, bask, գաձ bazin, բելուճ. bāzk «թև», օսս. bazug «թևի վերի մասը, թև» (Horn § 167)։—Արիական այս ձևերին ցեղակից են գրւում յն. πῆχυς, πᾶχυς «արմուկ, նախաբազուկ», թոխար. pokem «բազուկ», հնիւս. bógr, անգսք. bóz, հրգ. buog «լօգ, կցուածք, ուս» (Boisacq 781), որոնք նախորդների հետ միասին երեւան են հանում հնխ. bhāg'hu-։ Կարելի է կարծել, որ հլ. բազուկ լինի բնիկ՝ յառաջացած հնխ. bhāg'hu- ձևից. հնխ. g'h>հլ. զ ունինք դեզ, լիզել, մոզի, ոզնի և ախզ բառերի մէջ. -ուկ մասնիկի համար էլ հմմտ. արմուկն, աղմուկ։ Այս առթիւ եղած քննութիւնները տե՛ս Հիւբշ. Arm. Stud. էջ 21, որ վարանում է բառը բնի՞կ թէ փոխառեալ ընդունելու մէջ. հմմտ. նաև Lagarde, Arm. Stud. § 323, Meillet MSL 7, 58, Pokorny 2, 130, որոնք փոխառութիւն են համարում։ Այսպէս է ընդունում վերջապէս նաև Հիւբշ. 114։

Նախապէս Klaproth, Asia polygl. *էջ 99 համեմատեց պրս.* bāzū *և քրդ.* bask *բառերի հետ։—ԴԴ համեմատում է պրս. բառի հետ։—Պրս. և սանս. ձևերի հետ են համեմատում* ՆՀԲ, Peterm. *17,* Diefenbach, Berl. Jahrb. *1843, 444,* Windisch. *21,* Gosche *34 են։ Յանսբէնի համեմատութիւնը տալիս է նաև* Böttticher ZDMG *1850, 351 են։* Pott ZKM *1850, 167 մեր ձևի հետ է համեմատում *քրդ.* bāsk kaluin *«ծխամորճ»։ Տէրվ. Նախալ. 95 հնխ.* bhagh *«ճաքիլ» արմատից։* Jensen ՀՄ *1904, 183 դնում է հաթ.* p'ás'á *«թև» բառը, որով հայերէն* բազուկ *համարում է բնիկ և ո՛չ թէ փոխառեալ։*

ԳԻՒՒ.—Ոսմ. բ'ազուկ *«դաստակ», Տիգ.* փmզուգ *«թև». նոր բառ է* բազկապ *Ջն. «օրրանի վրայի այն կապը, որով մանկիկին կապում են, որպէսզի վայր չընկնի»։ Նոյնպէս և* բազկալում *Բլ. «շալը գործելուց յետոյ խտացնելու համար ձեռքով լմնելը»։*

ՓՈԽ.—Ուտ. բազուկ *«անութ, անութի տակի փոսը»։*

*ԲԱԶՈՒԿ *«ճակնդեղ, լտ.* beta*» վստկ. 167։*

=*Նոյն* բազուկ *«թև» բառն է, որ յատկացուած է այս բոյսին՝ իր երկար թևերի պատճառաւ։ Նկատելի է, որ ճակնդեղի ամէնից պիտանի մասերն են տակը (արմատը) և* բազուկները *(թևերը). այս պատճառով էլ ժողովուրդը կոչում է տեղ տեղ տակ և տեղ տեղ էլ* բազուկ *անունով. հմմտ. նաև վն.* ճոռ, *որ բուն նշանակում է «կիսախողովակաձև», բայց նաև «ճակնդեղի կոթերը» (ձևից առնելով այսպէս կոչուած)։ Միջին հայերէնում աւում էր տակաւին ճակնդեղի* բազուկ *Մխ. բժշ. 83, 117, որից յետոյ սեռականը վերացուեց։ Արդի գաւառականներում* բազուկ *բառը յատկացուած է նաև ուրիշ մի քանի բուսեղէնների, որոնք նոյնպէս թևի նմանութիւնից ստացել են իրենց կոչումը. այսպէս՝ Ռն. «կանկառ փուշի թևը», Արբ. «որթատունկի բարակ ու կանաչ ճիւղերը», Ակն. «բանջարի ցօղուն, ղոխ», Տիգ. «հազար բոյսի կոթը», Սեբ. «տերևի երկարութեամբ (այսինքն կոթից մինչև ծայրը) գնացող ջիղը», նաև. Օվ. «մոլոշ»։—*

ՆՀԲ դնում է բազուկ *«թև» բառի տակ։ Հիւնք. դնում է պրս.* pāzū *բառից, որ տե՛ս տակը ՓՈԽ։—Հիւբշ. չէ յիշած։*

ԳԻՒՒ.—Ախց. կր. բ'ազուկ, *Ալշ. երև. Մշ. Սեբ.* բ'ազուգ, *Ջղ.* բ'ազուխ, *Մկ. Վն.* պmգիւկ. *Սլմ.* պmգիւ', *բոլորն էլ «ճակնդեղի վերի մասը». իսկ Տիգ.* փmզուգ *«հազարի կոթ»։ Նոր բառեր են* բազկաթև, բազկաթթու *(հմմտ. Առաք. պտմ. 380* բազկի թթու*),* բազկիկ, ճոռբազուկ *«ճակնդեղի տերևներն ու ցողունը միասին»։*

ՓՈԽ.—Հայերէնից փոխառեալ են պրս. بازو pāzū *«բազուկ, որ է յայտնի բանջար ինչ տափաստանի» (ԴԴ), գւռ. թրք.* پزوك päzūg *«բազուկ»,* پسكتون päsküten *[«բազկաթիան» (տե՛ս Յ. Դադանճեան, Յուշարձան, էջ 329ա). գրական թուրքերէնում ընդունուած ձևն է* بازی pazə *«բազուկ, bette» (տե՛ս Աբիխան, Բառ. ռուս.-հայ.-գաղղ. էջ 208 բ)։ Թուրքերէնի միջոցաւ հայերէնից է փոխառեալ յն. κάζι «բազուկ»։ Այս բոլորն էլ յետին ժամանակի փոխառութիւններ են, ուստի ներկայացնում են հայերէն Բրիտոն բ-ի դէմ խուլ p ձայնաշեղջութիւնը։*

ԲԱԶՈՒՄ, ի–ա *հլ. «շատ» ՍԳր. նաև. պտմ. Ոսկ. զանազան դարձուածներով ունինք՝ ոչ բազում «քիչ», բազում այն է «շատ անգամ պատահում է, որ», բազում անգամ «յաճախ», բազում ուստեք կամ բազում ուրեք «շատ տեղ, շատ պարագաներում», բազում ինչ «շատ բան», բազմօք «շատ կերպով»։ Ածանցմամբ տալիս է խիստ բազմաթիւ բառեր, որոնցից յիշենք մի քանիսը.—* բազմաբար *«յոգնակի» Եզն. Կիւրղ. ծն. և Թգ. Ագաթ. Կորիւն* բազմագոյն *Կոչ. Ոսկ. մ. ա. 1.* բազմադիմի *Ագաթ. Ոսկ. ես. և մ. ա. 19.* բազմազօր *Կոչ. Բուզ.* բազմաժամաճակեայ *Իմ. բ. 10. Յոբ. լբ. 9. Եւս. քր. Ոսկ. ես.* բազմաժողով *Ողբ ա. 1. Եւս. պտմ. ա. 4. Եփր. յես. Ագաթ. Մծբ.* բազմանալ *ՍԳր.* բազմացուցանել *ՍԳր. Ագաթ.* բազմաւար *Օրին. լգ. 6.* բազմութիւն *ՍԳր. են են։ (Առձեռն բառարանում սրանց թիւն է 572)։ Առանց սղման*

են բազումժամանակեայ Յոբ. լբ. 7. կոչ. բազումողորմ ՄԳր. Փարպ. բազումառնութիւն Եփր. աւետ. բազումուսմնութիւն Փիլ. լին. ևն—Յունարէնի հետևողութեամբ՝ մի քանի տեղ բազում գործածուած է «մեծ» նշանակութեամբ. ինչ. բազմամագիլ «մեծ մագիլներ ունեցող» Եզեկ. ժե. 17. բազմամարմին «մեծ՝ խոշոր մարմնով» Նիւս. կազմ. Տօնակ. հմմտ. յն. πολύσαρκος «գէր»։—Ամենբաոին նման՝ բազում բառն էլ յետոսկեդարեան շրջանին շատ անգամ գործածւում է գերադրական շինելու համար. այսպէս՝ բազմաչար «շատ չար» Մանդ. Յճխ. բազմածիծաղելի «խիստ ծաղրական» Նիւս. բն. բազմահարուստ «մեծահարուստ» Յհ. կթ. բազմատխուր «չափազանց տխուր» Նար. ևն։ Սրանց համար իբրև օրինակ ծառայել են ոսկեդարեան բազմահմուտ Իմաստ. ը. 8. Սիր. իա. 25. բազմանձուկ Եւագր. ժբ. ևն ձևերը, որոնք սակայն գերադրականի նշանակութիւն չունին, այլ մեկնւում են իբր «շատ բանի հրամուտ, շատ անձուկ (կարօտ) ունեցող» ևն. և միայն յետին հեղինակների մօտ ըմբռնուած են իբրև գերադրական (շատ հմուտ, խիստ անձուկ)։ Այստեղ անշուշտ մեծ ազդեցութիւն է գործած յունարէնը, ուր այսպիսի գերադրականներ շատ սովորական են. հմմտ. πολυβάρβαρος «խիստ բարբարոս», πολυσχ-βαστος «յոյժ օգոստափառ», πολύχλωρος «շատ դժգոյն» ևն։— Նոր բառեր են բազմասուտ «շատ սուտ» Լծ. պրպմ. 762, բազմօտարութիւն «շատ օտար լինելը, մեծ տարբերութիւն» Լմբ. մատ. 230։—Այլանդակ մի ձև է բազմեալ «շատացած» ԱԲ։—Հների մի քանի հարիւր ածանցների վրայ նոր գրական լեզուն աւելացրել է նաև շատ նոր ձևեր. ինչպես՝ բազմանդամ, բազմանիստ, բազմակողմանի, բազմաբովանդակ, բազմալեզուեան, բազմալեզուագէտ, բազմահատոր, բազմաբերք, բազմավանկ, բազմահայ, բազմապատկելի, բազմապատկիչ, բազմարուեստեան, բազմահարուածեան ևն։

=Հնխ. bhŋg'hú- ձևից, որի միւս ժառանգորդներն են՝ սանս. **बहु** bahú- «շատ, բազում», bą'hīyas- «շատ խոշոր», bą'hišṭha «շատ ամուր, հաստ», **बहुल** bahulá- «խիտ, հոծ, ընդարձակ, բազում, մեծ, լայն», գնդ. bązah- «ընդարձակութիւն», bąšnu- (<*bąznu-) «բարձրութիւն, խորութիւն», բելուճ. bāz «շատ», baz «թանձր, խիտ», գնչ. buhu, but «շատ, բազմութիւն», յն. παχύς «հաստ, խոշոր, թանձր, հարուստ, ճոխ», πάχος «պիրութիւն», παχυλός «կոպտաբար», լիթ. bāžmas «բազմութիւն, ամբոխ», լեթթ. bāst «լցնել, թխել, խծկել», biſs «թանձր, խոշոր», bisums «թանձրութիւն», bēschna «հաստութիւն, թանձրութիւն», հհիւս. bingr «դէզ, կոյտ» են (Boisacq 753, Pokorny 2, 151)։ Շատ պարզ չէ, թէ հայերէնը սրանց հետ ի՛նչ յարաբերութիւն ունի. բնիկ լինելու համար՝ հնխ. bhŋg'hu- ձևի դէմ ըստ սովորականին սպասւում էր հյ. *բանձում (դնելով -մ մասնիկ). բայց նձ-ի տեղ զ ևս պիտի կարելիանք գտնել (հմմտ. բազուկ բառի տակ ասուածները)։ Ըստ Pedersen KZ 38, 226 բառի հին ուղ. ձևն էր *բանձում, որ հոլովման մէջ դարձաւ բազմի, բազմաւ, բազմաց (նձ վերածուելով բաղաձայնի մօտ զ) և այստեղից էլ անցաւ ուղղականին։—Ըստ Meillet REA 3, 5 բազում փոխառութիւն է իրանեանից։ Թէև այսպիսի մի ձև անծանօթ է իրանեանում, բայց կարելի է հնթագրել պարթեւական *bazuma-, որ աճած է -ma մասնիկով։ Նման մասնիկներով աճած ձևեր ներկայացնում են սանս. bahu-, bahulá- և յն. παχύς, παχυλός։ —Հիւբշ. 426։

Առաջին անգամ ՆՀԲ համեմատեց սանս. պահու բառի հետ։ Նոյնը կրկնում են այնուհետև Peterm. 17. Diefenbach, Berl. Jahrb. 1843. 444, Windisch. 21, Böttticher ZDMG 1850, 351, Bopp Համմտ. քերակ. թրգմ. Ֆրանս. Բ. 207 ևն։—Տէրվ. Նախալ. 95 հնխ. bhagh «աճիլ» արմատի տակ դնում է բազուկ և բազում։ Հիւնք. պրս. بزم bazm «խրախճանք» բառից։ Patrubány SA 1, 197 բառի ծայրի ում-ը նոյնացնում է իրանական -um «-երորդ» դասականի մասնիկի հետ։

Գիմ.—Պլ. փազում՝ գրականից փոխառութեամբ գործածւում է երբեմն՝ մեծ չափազանցութիւն ցոյց տալու համար։—Նոր բառ է **բազումք** *(Երև. Ղրբ. Շմ.) «բոլոր համառօտեղութիւնը» (Ջղ.* բ'ազմոնք, *Մկ.* պmզիմք'*), որի հին գործածութիւնն ունի Սմբ. պատ. 53 «Երևեցաւ աստղն գիսաւոր յերեկոյին յարևմըտից կողմն և յեաս սողալով՝ եկն ի հարաւ ընդ բազումին և ընդ լուսնին մէջ». հմմտ. նաև* **բազմոյք** *«սայլ համառօտեղութիւնը» (ըստ ՋՔ և ԱԲ)։*

ՓՈԽ.—Գնչ. կայ azòm *«շատ, բազմաթիւ». սրա մասին որևէ մեկնութիւն չունի* Paspati.—*Թէև ընդունինք, որ գնչուերէնի բնիկ ձևն է* buhu *կամ* but, *կարող է* azóm *հյ.* **բազում** *ձևից փոխառնւած լինել։ Բայց նախաձայնի պատճառով աւելի լաւ է դնել ռմկ.* äzmə, êzmə *«մի շատ, խել մը» ձևից, որ իր հերթին կազմուած է թարգմանաբար թրք.* bir äz *ձևվից։*

***ԲԱԶՊԱՆ** *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ, առանց վկայութեան) «հեթեղեցական զգեստաւորութեան մէջ՝ պատարագչի թևնոցը» Լմբ. պտրգ. Մաշտ. «ձեռնօց» Արծր. հրտր. Պատկ. էջ 192։*

=*Պհլ.* *bāzupān, *պրս.* *bāzūbān, *գնդ.* *bāzupāna- *«բազպան», որոնցից ո՛չ մեկը գրականութեամբ աւանդուած չէ. կազմուած են* bāzu *«բազուկ» բառից՝* pāna-pān-bān *«-պան» մասնիկով։—Հիւբշ. 114։*

ՀՀԲ բացատրում է «որ պատէ զբազուկըն»։ ՆՀԲ պրս. **պազուպէնա** *՝ որ ուրիշ բառ է։* Lagarde *ևն չեն յիշում։*

ԲԱԶՐԻ *(գործածուած անեզաբար՝* **բազրիք***) «պահակելու կամ նստելու տեղ, բազմոց կամ գահոյք» Ոսկ. Եփես. 816 (Գահոյս արծաթապատս մի՛ առնիցես, այլ այնպիսի մահճակս... մի՛ փղոսկրեայ գահոյս, մի՛ արիզապատ բազրիս). նոյն բառն ունի և Տօնակ. Սանդուղք (Յակոբայ)՝ խաչն... և բազրիքն՝ քահանայութիւն և թագաւորութիւնն Քրիստոսի։ Այս բառից է* **բազրտան** *«գահոյքի աստիճանները՝ ոտքերը» Անկ. Գիրք նոր կտ. 88, 187 (4 անգամ)։*

ՆՀԲ ունենալով միայն **բազրիք** *բառի երկրորդ վկայութիւնը՝ մեկնում է «գահի կամ սանդուխի երկու կողմի բևերը՝ վանդակները» (*բազուկ *և կամ* բազմիլ *բառից)։ ՋՔ դնում է «բազմիք, բազմոց», ԱԲ «սանդուխին կամ գահոյից կոթընելիքը՝ երկու դիէն, անկողին»։ Մեր տուած նշանակութիւնը հաստատւում է 1) Ոսկեբերանի վկայութեամբ, ուր յիշուած կամ գործածուած է գահոյքների հետ զուգընթացաբար. 2) երիզապատ ածականից, որ այլուր գործածուած է գահոյքի համար. Գահոյք երիզապատք. Մծբ. ժբ. Երիզապատ պնդեցի զգահոյս իմ. Առակ. ե. 16. և վերջապէս 3)* **բազրտան** *բարդից, ուր* **ոտ** *անյարմար է սանդուխի ճաղերի համար, բայց շատ յարմար է գահոյքի համար։*

ԲԱԹ *«միայն». ունի միայն Բառ. երեմ. էջ 44։*

ԲԱԹԱԹՈՒԿ *(այսպէս է աւանդուած արդի գաւառականներում), գրուած է* **բաթտուկ** *և բուսական* **–եճի** *մասնիկով՝* **բաթթկեճի, բաղդղկեճի, բաթկեճի, բաղկեճի** *Վստկ. 206, Բժշ. մի տեսակ բոյսի անուն է, որ մեկնուած է զանազան ձևերով, այսպէս՝ Բառ. երեմ. յաւել. 573 դնում է «քշօթն (իմա՛ գայլխոտ)», ՆՀԲ և ՋՔ համարում են անյայտ, ԱԲ «թեղի», Նորայր, Բառ. ֆր. 336 ա «*cuscute, *գայլխոտ, քշութ», ՀԲուս. «1. գայլխոտ,* cuscuta *» (§ 277 և 409), «2. կնձնի,* ulmus *» (§ 277) և «3. աւթիմոն,* cuscuta epithymum *» (§ 3080). Արթինեան, Աստուածաշնչի տունկերը, էջ 142 բժշկարաններում գտնում է* **բաթկեճի** *«թեղի,* ulmus campestris L.*». Ամէնից ապահով են գաւառականները, ուր ունինք Ախց. Ախթ.* **բ'աթաթուկ** *«մոլոշ, էպէմ կիմէճի, փիփերթ,* malva *» (ՆՀԲ հտ. Բ. էջ 1060—61 այս բառն է, որ գրում է* **բաղբրուկ, փաբբրուկ** *«մոլոշ»,* **բաբբրկեճի** *կամ* **փաբբրկեճի** *«բոյս ինչ որպես պատատուկ կամ պատապիճ», Ազգագր. Հանդ. Ա. էջ 137* **բաթաթուկ** *„*convolvulus liseron*“):*

ՀԲուս. § 3080 հանում է **փաթաթուիլ** *բառից, ըստ որում գայլխոտը բաղեղի պէս փաթաթւում է ուրիշ բոյսերի վրայ.*

սրա համար «պէտք էր, ասում է, փ ասուիս գրուիլ»։

ԲԱԹԻՈՆ, ի–ա հլ. «բազմոց» Ոսկ. մաթ. էջ 61, Կոր. 571, Եփես. 833 (սեռ. բաթիոնաց), «սանդուխք, բեմի աստիճանները» վրք. և վկ. Ա. 694. Պիոն. 380. ՅՀ. կԲ. 110, գրուած փաստոն վրք. հց. Ա. 670, 679. բաղոռն, բաղռուն, բանդռուն *«աթոռ» Անկ. գիրք նոր կտ. 407 (որ էջ 390 գառնում է աթոռ). նաև «մահիճ կամ մահճակալ, տախտ» Եփր. փիս. 417. Ճառընտ. որից* բաղռոնակ *«պատկելու տախտ» Ճառընտ.=վրք. և վկ. Բ. 411։*

=Յն. βάθρον «պատուանդան, սանդուխի աստիճան, նստարան, աթոռ», որ ծագում է βαίνω *«քայլել, երթալ» բայից։—Հիւբշ. 342։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԲԱԺ, ի հլ. «արբունի տուրք, հարկ, մաքս» Ա. մակ. ժ. 29. Եղիշ. «փոխարէն վճարք, իբր գին տրուած գումարը» Եզն. (գուցէ ընդ որդւոյն տալոյ զնա բաժ առնուցու). որից բաժապան ՋԲ, ԱԲ *կամ* բաժապետ *«մաքսապետ, մաքսերի վերակացու» Յն. որդի.* բաժել *«մաքսը վճարել կամ մաքս առնել» Յն. որդի.* բաժառն *«մաքսատուն» ԱԲ.* բաժռար *Արձ. 1320 Թուից (Վիմ. տար. 160)։*

*=*Պհլ. bāž *«մաքս», պրս.* باژ bāž, باج bāǰ, باز bāz, پاژ pāž *«մաքս, տուրք, հարկ», հպրս.* bāǰi- *«հարկ, արքունի տուրք», որոնցից պրս.* باجبان bāǰbān, بازبان bāzbān, بازوان bāzvān, بازدار bāzdār, باجدار bāǰdār *«մաքսապետ, հարկահան», հպրս.* βāζiγrāβa- *«մաքս առնելը» (իբր *bāǰigraba-): Իրանեան բառերը ծագում են հնխ.* bhag>*սանս.* bhaj *«բաժանել» արմատից։ Իրանեանից փոխառեալ բառեր են նաև վրաց.* ბაჟი *բաժի «մաքս», նաձաղ* აბაჟო *աբաժո «մաքսատուն», թուշ.* აბაჟი *«մաքսատուն», քրդ.* باج *bāǰ և թրք.* باج *baǰ «մաքս, տուրք, հարկ», ասիական թրք.* باجمان *baǰman «առեւտրականների հարկը հաւաքող պաշտօնեայ», թալմուդ.* בזבן *bazbān «մաքսապետ»։ Տե՛ս նաև* բաժանել *բառ տակ։—Հիւբշ. 115։*

Առաջին անգամ ուղիղ մեկնեց ԳԴ։ ՆՀԲ այս մեկնութեան հետ յիշում է նաև հլ. աբաժ, բաժին, բաժանել, բագ, *Բրբ.* փայ, *լտ.* pars, portio *«մաս»։ —* Böttticher ZDMG *1850, 351 համեմատեց սանս.* bhāǰya *բառի հետ։ Նոյն* Arica *79, 317 սանս.* bhāga *«մաս, բաժին, երջանիկ, բախտ, յաջողութիւն, դեղեցկութիւն», գնդ.* baγa- *և պրս.* bāǰ *բառերի հետ։* Lag. Urgesch. *359 սանս.* bhaǰ *«բաժանել» արմատից ևն։*

ԲԱԺԱԲՈՒՆ «իջումն». այսպէս է մեկնում Բառ. երեմ. էջ 44։ Յայտնի չէ, թէ ի՛նչ է ուզում ասել։

**ԲԱԺԱԿ, ի–ա հլ. (կայ նաև ո հլ. որ յետնաբար առնի է տարածուած. հմմտ. բաժակոյ Եփր. համաբ. 210) «գաւաթ, ըմպանակ», փոխաբերաբար «2. գինի կամ ըմպելիք, որ բաժակի մէջ է լցուած. 3. չարչարանքի, վշտի, ուրախութեան, սիրոյ և փրկութեան նշան. 4. ծագկի պարունակը» ՍԳր. վեցօր. 94։ Որից* բաժակիկ *Մանդ.* բաժակեան *«մէկ բաժակ պարունակութեամբ» Պտմ. աղեքս.* բաժակել *«բոյսի շուրջը փոս բանալ՝ ջրելու համար» Փիլ. յին. էջ 12 և յովն. 610. Պիտ. Սարկ. քՀ.* բաժակակալ *(որից համառօտուած* բաժակալ*) Եղիշ.* եւրաբաժակ *Ագաթ.* բաժակազող *ԱԲ.* բաժակամաճ *ԱԲ. գրուած է նաև* բաժակ *վրք. հց. Նահապ 377. (հմմտ.* բաժանել և բաժճանել*) և սխալ ստուգաբանութեամբ՝* բաժճակ *Մխ. երեմ. (իբր թէ* բաժանել *բառից հանելով)։ Նոր գրականում ունինք* բաժակաճառ, բաժակաձև, բաժակաճառութիւն *ևն։*

*=*Պհլ. *bažak *հոմանիշից, որ թէև աւանդուած չէ գրականութեան մէջ, բայց հաստատւում է՝ հայերէնի հետ, նաև ուրիշ փոխառութիւններով. այսպէս՝* בזך bazak *կամ* בזיך bazīk, *կովկասեան լեզուներից՝ ցախ.* bazak *«սափոր, կուժ»։ Իրանեան բառ արմատն է* bhaǰ *«բաժանել», որից ունինք նաև գնդ.* baǰina- *և սանս.* bhāǰana- *«աման»։—Հիւբշ. 115։*

Հներից Վարդան վրդ.՝ Սաղմոսաց մեկնութեան մէջ, գլ. ճժե., էջ 385 համարում է բառս յառաջացած բաժանել *բայից. «Բաժակ՝ աման գինւոյ՝ բաժանիչ ասի»։ (Այսպէս մտածելով է, որ Մխ. երեմ. գրում է* բաժճանակ *և ո՛չ իբր սխալ*

պրչի)։ ՆՀԲ բաժին բառից։ Böttich. Rudimenta *49, 184* բաժակ *բառի հետ է համեմատում առաջ.* فزغ fuzg *և* بزغدة bzguda *բառերը։ Նոյն,* ZDMG *1850, 351 առնս.* bhāǰana *և կապակով. ենթադրեալ* βητιάχη *(*Pollux *6, 96) բառերի հետ։ Նոյն,* Arica *14 պարսիկ* βατιάχη (Athen *11, 27*) *և անս.* bhāǰana *ձևերի հետ։* Lagarde, Urgesch. *361 դնգ.* baǰina-: *Նոյն,* Hagiogr. chald. *315. քաղդ.* בזך *ձևի հետ։ Նոյն,* Arm. Stud. § *326 միտելով իր այս մեկնութիւններն (առաջ.* فزغ fuzg *չկայ բնագիրներում.* بزغدة *բառը պէտք է կարդալ* بزغدة bzguda, *որ է արաբ.* نجذ naǰūd. βητιάχη *պարսիկ է ըստ* Pollux *և ո՛չ թէ կապադովկիան, և ըստ* Falkenberg *պէտք է տղդել* βατιάχη, *որով բառս նոյնանում է պրս.* بادیه bādya *ձևի հետ, առանց գոթ մեկնաբ. հյ.* բաժակ *բառի հետ), պահում է միայն հրէարէն* בזיך bazīk, *որ փոխառեալ է դնում պրս.* bāǰa, bāža *ձևից։ Այսպէսով ապիր մեկնաբիւնը առած է լինում* Lagarde։ *Տէրվ. Նախալ. 95 հնթ.* bhag «բաժանել» *արմատի առկ է դնում։* Καρολίδης, Γλωσσ. σαγκρ. *79 միտում է կցել կապադովկ. ըն.* vutókko «դոյլ» *բառին։—Հիւնք.* բաժին *բառից։ Գիմ.—Գործածւում է միայն «Հաղորդութեան բաժակ, սկիհ. 2. Հաղորդութիւն. 3. Հաղորդութեան դինի» իմաստով. այսպէս են Ջղ. Սեբ.* բ'աժակ, *Ալշ.* բ'աժագ, *Մրզ. Սլմ.* պուժոկ', *Շմ.* պաժակ, *Ղրբ.* պէ'ժակ, *Պլ. Տփ.* բաժանի՛։ *Նոր բառեր են բաժկի «Հաղորդութեան դինին» (նրև.* բ'աշկի), բաժկարեւրան «մաքրախօս» (որի բերանը Հաղորդութեան բաժակի պէս սուրբ է), բաժակացու «Հաղորդութիւն պատրաստելու դինի»։

*ԲԱԺԱՆԵԼ, -եցի «մաս մաս անել, 2. սփռել, ցրուել, տարածել. 3. իրարից բաժանել, անջատել. 4. դանազանել, ջոկել» *ՍԳր. Մծբ. Եփր. եւ. Սեբեր. որից* բաժանող «հաղորդ, մասնակից» *ՍԳր.* բաժանումն *ՍԳր.* բաժանակալ «ժառանգորդ» *Կոչ. 109.* բաժանական *«անմիաբանասէր» Մծբ.* բաժանակից «մասնակից ընկեր» *ՍԳր. Ոսկ. մտթ. Եփր. երր. 229.* բաժանաւար *Ղկ. ժբ. 14.* բաժանաւոր *Բուզ.* անբաժան *Փարպ. ևն։—Արմատն է բաժան, որ հների մէջ քիչ անգամ գործածուած է. ինչ* բաժան «բաժանեալ» *Եփր. համաբ. «բաժին, մաս» Եփր. երր. 210. արդի հայերէնով* բաժան բաժան անել։—Պարզագոյն արմատն է բաժ «մասն քանակի, որ ունի և զորոշեալ մասն ուղիի» *Փիլ. «հաղորդ, մասնակից» Շնորհ. այբուբ. «բախտ, ճակատագիր» Ոսկիփ. որից* ձևացած են բաժին *ՍԳր. Եւս. քր. Սեբեր.* անբաժ «անմաս» *Պիոն. 382 (ոսկեդարեան), Փիլ. Պիտ. Նար. վրր. իգն. 145 (տպ.* բաժ, *բայց ըստ իմաստի ուղղելի անբաժ. Վարդանեան ՀԱ 1921, 240).* լարաբաժին *ՍԳր. ջրաբաժ Ոսկ. երր. 527.* կեղակաբաժին *Փարպ.* բաժակից «բաժանակից, մասնակից» *Միխ. առաջ.* բաժամիա «երկբայ, քերահաւատ» *Բենիկ. Բէռգ. խչ.* բազմաբաժ *Փիլ. այլաբ.* կիսաբաժ *ՅԿ. կք. Տես. առհ. 48.* բաժինք «տարակոյս, երկմտութիւն» *ԱՓ.* բաժուդ «բաժին ունեցող» *ԱՓ։—Բառս գրուած է նաև r-ով. ինչ.* բարժանել *Խոսրովիկ.* բարժանող *Յիշատ. Եփր. մխն. տիտ.* բարժանութիւն *Լմբ. պարզ.* բարժանումն *Մաշկ.* բարժանակութիւն *Առաջ.* բարժին *Նորագիւտ յայտ. իր. 19. Վկ. շուշ. 32.* անբարժ *Նանայ. 16.—այս բառերի մէջ զրանուած r ձայնը առուգաբանօրէն չի արդարանում։—Նոր բառեր են* բաժանորդագին, բաժանորդագրութիւն, բաժանակատութիւն, բաժանելի, բաժանորդագրել, բաժնեգին, բաժնեկից, բաժնեառուն, չաւաբաժին, նորաբաժանութիւն *են ևն։*

=*Իրան.* bāž *համանիշից փոխառեալ. հմմտ. գնդ.* bažaǰ «բաժանել, բաշխել», baxta «բաժանուած, բաշխուած», *առնս.* भज् bhaǰ «բաժանել, անջատել, բաշխել», -bhāǰana, -bhāǰin «մասնակից, բաժնեկից»։ *Այստեղ են պատկանում նաև* բաժ *և* բաժակ *բառերը, որոնց վրայ խօսել ենք առանձին, իրենց իրանական ձևերով միասին։ Սրա համար հմմտ.* բաշխ, *որ* բաշխել *բառի արմատն է, բայց նշանակում է նաև «հարկ, տուրք, ճակատագիր», ինչպէս է*

և բաժ բառը։—Ամբողջ այս խմբի հնխ. արմատն է *bhag, որի դէմ պիտի ունենայինք *բակ, եթէ բառը բնիկ հայ լինէր։ Մեր բառը համարւում է փոխառեալ, ըստ որում իրանեանի հետ միասին ունի ժ։—Հիւբշ. 115։

Ամէնից առաջ ԳԴ բաժին բառին է կցում պրս. پازين pāzīn «բաժին, պահ դիշերոյ»։ ՆՀԲ առնս. պաճ, լս. pars, portio, թրք. pay «բաժին», պրս. pāra, pārča «կտոր, բաժին, մաս»։ Windisch, 21 առնս. bhaǰ: Müller SWAW 38, 577 առնս. bhaǰ, լս. frango, յն. ῥήγνυμι = φρήγνυμι ձևերի հետ. Lagarde, Baktr. Lex. 62 գնդ. baǰina-։ Մորթմանն ZDMG 1872, 614 բևեռ. bazui= բաժ(ին)։ Տէրվ. Altarm. 52 առնսկր. bhaǰ, Նախալ. 95 հնխ. bhag արմատից։ Canini, Et. êtym. էջ 1 բաժին =լս. pagina «էջ»։ Հիւնք. բաժանել նոյն է դնում բաշխ բառի հետ։

ԳԻՒ.—Ջղ. բ'աժանել, երև. բ'աժանել, Ալշ. Մշ. Սչ. բ'աժենել, Նխճ. բաժենել (բ'աժենել, բ'առնել), Ախց. Կր. Սեբ. բ'աժենել, Ոզմ. բ'աժրնիլ, Ագլ. բժո՛նիլ, Տփ. բաժնիլ, Խրբ. բ'աժնիլ, Պլ. Ռ. փաժենել, Ասլ. փաժենէ՛լ, Տիգ. փոժենել, Հճ. բ'էժենել, Զթ. բ'էժնիլ, Մրղ. պոժի՛նել, Գոր. պժա՛նիլ, Ղրբ. պժէ՛նել, Շմ. պիժոնիլ, Սլմ. Վն. պոժենել, Մկ. պոժնիլ, Հնդ. բաշնըվիլ.—Ագլ. Տփ. բա՛ժին, Ալշ. Ախց. երև. Մշ. Ջղ. Սչ. բ'աժին, Ոզմ. բ'ոժին, Պլ. Ռ. փաժին, Տիգ. փոժին, Մկ. Մրղ. Սլմ. պոժին. Զթ. բ'էժին, Գոր. Ղրբ. պէ՛ժին, Նխճ. փայ-բաժին (որի մէջ փայ<թրք. pay «բաժին» բառն է)։—Նոր բառեր են բաժանբաժնութիւն, բաժանովի, բաժանպատ, բաժանիճ, բաժին «հարիւր տրամնոց կշիռ», բաժուկ կամ բաժունճ «մազերի հնդքը», բաժընտիլ, նաև բաժինճ «օժիտ», վերջինիս հին գործածութիւնն ունի և տարբերում է Տաթև. ամ. 203՝ հետևեալ ձեւով. «Հարսին տուեալ լինին երեք իրք. այսինքն բաժինք, օժիտք և պարգևք. բաժինքն տուեալ լինին ի հօրէ հարսինն վասն պիտոյից պսակին, և օժիտքն ի փեսայէն լինին տուեալ, իսկ պարգևքն ի բարեկամացն լինին տուեալ»։

ՓՈՒԽ.—Հայերէնից փոխառութիւն է գնչ. bazin. այս բառը Paspati մեկնում է «մասն, բաժին, հարստութիւն» և համեմատում պրս. باز bāz «յետս, յետ» և باژ bāž «մաքս, տուրք» բառերի հետ, որոնք նշանակութեան կողմից բնաւ յարմար չեն։ Մէջ բերուած օրինակներում «բաժին, ինչք» նշանակութիւնը յայտնի երևում է. այսպես՝ Ka mulótar léngoro dat, abór bazin liné? իրենց հօր մահից յետո ի՞նչ բաժին առին.—saró po bazin xalías les իր ամբողջ բաժինը կերաւ.—abor bazin ka teráva ամբողջ հարըստութիւնը որ ունիմ։— Paspati ասում է, թէ բառի ճշտագոյն նշանակութիւնն է «հասարակօրդ աշխատաւորների իրենց մէջ բաժանածը. 2. ժառանգութեան մաս, բաժին»։ Այս երկու նշանակութեանց համար էլ յարմար է մեր բաժին ձևը. հմմտ. մանաւանդ գաւ. բաժինճ։ Գնչուերէն լեզուի մէջ ժ ձայնը խիստ քիչ է պատահում, ինչ որ մի նշան աւելի է փոխառութեան։—Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 մեզանից փոխառեալ է համարում ալբան. pyèse «մաս, բաժին», որ անշուշտ իրաւացի չէ. հմմտ. ֆրանս. pièce։

ԲԱԺԻԼ «վայելել». ունի միայն Բառ. երեմ. էջ 44, որ սակայն էջ 47 դարձնում է բաճել, մի քիչ ցածր էլ բայծել։ Կայ եւ արմատական ձևը բաճ, որի նշանակութիւնը չէ դրուած առաջին տպագրութեան մէջ (Ալիկօռնա 1698, էջ 47), իսկ երկրորդ տպագրութեան մէջ (Պօլիս ՌՃՀԸ=1729) դրուած է «վայել»։

*ԲԱԼ «կեռաս, տճկ. քիրազ, դիլաս» Բժշ. նոր գրականում «ֆիշնէ, вишня», որից կազմուած նոր բառեր են բալենի «բալի ծառ», բալագոյն «բալի գոյնով, մութ կարմիր»։

= Պրս. بالو balū կամ նաև آلوبالو ālūbalū «կեռաս». սրանցից փոխառեալ են վրաց. ბალი բալի, ალუბალი ալուբալի, մինգր. buli, թուշ. bal, alubal, չեչէն. bol, օսս. bal, լեզգ. bali, beyli, խմերել. bali, լազ. buli են, բոլորն էլ «կեռաս» կամ «բալ» նշանակութեամբ։ Բառիս ծագումը չգիտէ Horn:—Հիւբշ. 263։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Lagarde, Arm. Stud. § 329։ Patrubány

ՀԱ 1908, 276 հնխ. bhelo *«ալանուլ» արմատից. համմտ. յն. φλέω, լատ.* fluo *«հոսիլ»։*

Գիմ.—երև. բ'ալ, *Համշ.* պալ *«կեռաս», պալընի «կեռասենի». նոր փոխառութիւն է Տփ.* բալի *«կեռաս» (վրացերէնից). միւսները գործածում են սովորաբար թրք.=պրս.* ձեր *(ֆիշնէ ևն)։ Նոր բառեր են* բալնոց *«բալենիների պարտէզ»,* բալնուտ *«բալենիների անտառ»։*

+ԲԱԼ, *ի հլ. «մէգ, մշուշ, մառախուղ» Սեբ. հրտր. Պատկ. էջ 94. Անան. գիտ. 40. Արծր. հրտր. Պտկ. էջ 93, 94. Լաստ. ժ. Ասող. 116. Պտմ. աղէքս. 167. Վստկ. 49. «մթադոյն, աղօտ (տեսողութեան համար աստուած)» Վստկ. 164. «ամպ, ծխի քուլայ» Լծ. Նար. ա. (Որպէս ծուխն բալբալ ելանէ ի բուրվառէն. չունի ԱՔ). «գիշեր» Բառ. երեմ. 45. որից* բալաձև *կամ* բաղաձև *«մշուշի նրման» Նիւս. կազմ.* բալատեսիլ *նոյն նշ. Բրս. պհ.* բալուտ *«միգամած, մշուշոտ» Վստկ. 158.* բալեցուցանել *«աչքի տեսողութիւնը տկարացնել» Վստկ. 164 (չունի ԱՔ).* բալգոյն *«մշուշոտ, մութ գոյնով» Վստկ. 219.* բալատեսակ *«մշուշանման» (նորագիւտ բառ) Նմմես. էջ 104.* բալէշ *«մեգից յառաջացած խոնաւութիւն»* Rivola, *Բառ. հայոց 1633, էջ 52.* բալանիգ *«միգարեր» Վեցօր. գ. 124=Շիր. հրտր. Պատկ. էջ 57. բառս թէև մեծ մասամբ յետին ժամանակներում է գործածուած, բայց այս վերջինը ցոյց է տալիս, որ Ոսկեդարին էլ գոյութիւն ունէր։*

=*Հնխ.* bhəl- *ձևից, որի միւս ժառանգորդներն են սանս.* bhāla- *«փայլ» (նաև «ճակատ»), յն. φαλός «փայլուն, շողշողուն, սպիտակ», φάλιος «լուսաւոր, սպիտակ», լտ.* fullo *«հագուստ մաքրող», հսլ.* bělŭ *«սպիտակ», ռուս.* белый *«ճերմակ»,* бельмо *«աչքին պատած փառ, լուսն», լիթ.* bãltas *«սպիտակ»,* bąlù *«ճերմակիլ, սպիտակիլ», լեթթ.* bâls *«գիժգոյն»,* bals *«գիժգունութիւն»,* balinât *«գիժգունել», գոթ.* bala *«գիժգոյն», հաւքս.* blī *«գոյն», հհբւս.* bál, *անգլսք.* baēl *«բոց, կրակ, փայտակոյտ», միսլ.* ball *«բիծ», կիմր.* bal *«ճակատի վրայ սպիտակ բիծ ունեցող (անասուն)», բրտտ.* bal *«ճակատի վրայ սպիտակ նշան», ալբան.* bale *«ճակատ», հպրուս.* ballo *«ճակատ» են* (Walde *271, 324,* Boisacq *1013,* Berneker *56,* Trautmann *29)։ Պէտք է նկատել, որ «լոյս» նշանակող բառերը յետոյ կարող են «մութ» նշանակութեան հասնել. համմտ. հլ.* լոյս *և* լուսն *«աչքի բալ՝ մշուշ», գռմ.* լուսաւոր *«կոյր», հսլ.* mrakŭ *«մթութիւն» և գերմ.* Morgen *«առաւօտ», սանս.* raǰ *«պայծառանալ» և վեդ.* raǰa- *«խաւար»։ Բայց հնխ.* bhəl-, bhal- *արմատը միւս լեզուներում էլ ունի մթութեան գաղափարը. այսպէս՝ յն. φάλιος նշանակում է «սև գոյնով, որի վրայ սպիտակ բծեր կան» (տե՛ս* Bailly, Dict. gr-fr. *1910, էջ 2052 ա), ռուս.* бельмо *«աչքի լուսն» (համմտ. հլ.* բալեցուցանել *«աչքի տեսողութիւնը տկարացնել»), լեթթ.* bâls *և գոթ.* bala *«գիժգոյն» (համմտ. հլ.* բալ *«մթագոյն, աղօտ») են։ Մեր մէջ մթութեան գաղափարը ունէի խառացած և «փայլ» իմաստը բոլորովին չնչուած է։ Տե՛ս* Pokorny *2, 175։*

Ուղիղ ժեկնեց Patrubány *ՀԱ 1903, էջ 150։ Նոյնը լիտոյ* Scheftelowitz BB *29, 37։ Ըստ* Pokorny *2, 189՝* Petersson, Etym. Miszellen *34 կցել է լեթթ.* buls, bula *«աղթապին օդ, չորութիւն» բառին։*

Գիմ.—Ալշ. բ'ալ *«աչքի վրայ մշուշ», Վն.* պալ *«հիւանդութեան ժամանակ լեզուի վրայ կապած սպիտակ կեղտը» (համմտ. գռմ.* ման *«մշուշ» և «առամի վրայի սպիտակ կեղտ»)։ Այս արմատից է թերևս նաև* բալօղ *(Բլ.* բ'ալօք*) «բքախառն քամի»։ Վերջապէս նոյն արմատից եմ կարծում* բալամբոցիկ, բալանաբոց, բալան բալան, բալախնցնել, պալաճ պալաճ *են (այս բառերի իմաստը տե՛ս Գաւառական բառարան)։*

+ԲԱԼ *«խօսիլ, ասել». պարզ արմատն է բա, որ առանձին անգործածական է. բայից էլ աւանդուած են միայն ներկայի եզ. երեք դէմքերը (բամ, բաս, բայ), քիչ անգամ յգ.* բամք, բաք *և հրամ.* բա՛. *սրանք էլ անկախ չեն գործածւում, այլ միշտ ասել բայի յարադրութեամբ՝ հետևեալ ձևով. Ասացի բամ ցրնցից գնաս. Օր. լր. 26. Քեղէն իսկ ասացեր բաս յերկրէն յաշխարհէն ձենաց եմք.*

Բուզ. Ե. լէ. Քերոսոս բայ ասէ յառաջնում մատենին. Եւս. քր. ա. Ասեն բան՝ ազատելով ազատին արարածք. Եփր. հռ. 33. Ո՛չ ևիէ ասեմք բամք կուրդ ինչ իցեն. Եփր. ա. կոր. 63. Ասեն բան կին մի... խօսէր, Եփր. ա. կոր. 79. Համմ. նաև Ողբ գ. 24, 54, 57. Բ. մակ. ա. 20, ժբ 24. Մագ. բ. 14. Ագաթ. Ոսկ. ես. յհ. ա. 28, 37. բ. 84. Եփր. եվ. ա. կոր. (ստէպ) են։ Բացատութիւն են այն դէպքերը, երբ բալ բայը առանձին գործածուած լինի. այսպէս են՝ Առաքեցի առ ձեզ... առաքեալ, բամ։ Դարձարուք իւրաքանչիւր ի ճանապարհէ իւրմէ. Երեմ. լե. 15. Իսկ այն զոր երկրորդեաց Առաքեալ, բայ չիք արդար բայց ի միոյ. Եփր. հռ. 27. Գրեաց զիւր անուն և զընկերաց և զտեառնն ամենեցուն, զի բայ Քերևս յանդիմանեսցին և կշտամբեսցին. Եփր. ա. կոր. 53։—Ո՞ւր իցեն (սահմանք Սպարտիոյ). և նորա զնիզակն ցցեալ, բայ. յայտ վայրի. Պիտ.։—Ասել բայի աւելի սովորական գործածութիւնը պատճառ է եղած յետոյ բալ բայը ասպարէզից հեռացնելու՝ իբր աւելորդ հարատութիւն։ Բայց նոյն ասել բայի յարատրութիւնն է եղած պատճառ նաև՝ որ բամ, բաս, բայ ձևերը ստացել են շաղկապային գործածութիւն՝ «Թէ, որ» նշանակութեամբ. համմ. վերի օրինակները. Ասացի բամ ցրեցից զնոսա «ասացի Թէ պիտի ցրուեմ նրանց». Ասաց բայ գայ և ահա եկն. Եփր. հռ. 38 (Ասաց Թէ գալու է և ահա եկաւ) են։ Նոյն բառն է նաև բա՛ (հրամայականի ձև) «Թէ, որ. 2. իրօք, անշուշտ». համմ. Թշնամանեցեր զնոսա, զի ասացեր՝ բա՛ (Թէ, որ) մարդիկ են. Ագաթ. նաև Տէր մեր զայս ասաց, զժուարին բա՛ մատնել (իրօք, արդարև). Եփր. համար. Ասաց հրեշտակն ցմարիամ, բա «եղիշարեի քոյր քո» Եփր. համար. 17. Զի այն որ ասացն բա (Թէ) «ի սկզբանէ էր բանն» Կոչ. 201։ Այսպիսի գործածութիւն գտնում ենք նաև ուրիշ լեզուներում. համմ. լիթ. buk, ֆրանս. ժողովրդական լեզուով que j'dis, qu'i dit են (տե՛ս Meillet, Rev. crit, Բրդմ. Բազմ. 1898, 119 բ), ռուս. молъ, де, дьять, որոնք ծագում են молвить, деять, десказать «ասել, խօսիլ» բայերից և իբրև մասնիկ կամ շաղկապ են գործածւում (տե՛ս Boyer BSL 13, 28)։—ԲԱ արմատի միւս ածանցներն են՝ 1. ԲԱՅ, ի հլ. «խօսք, մարդկային բան» Փիլ. Սարգ. Անյ. բարձր. «պարապ՝ սուտ խօսք» Խոր. ա. 21. «բառ» կիւրղ. գնձ. Լմբ. սղ. և առ. Գր. տղ. Թղթ. «բայ, գործողութիւն ցոյց տուող բառ, verbum» Բր. Մագ. և Երզ. քեր. Պերիարմ., որից բայածական Բր. քեր. մակբայ Բր. Մագ. և Երզն. քեր. երկբայ Սիր. ա. 36. Ոսկ. Փիլիպ. աներկբայ Պիտ. նար. խաբեբայ «խաբէական բաներ ասող» Ես. գ. 4. Ոսկ. երբ. բայբան «հակաճառութիւն, վէճ» Ոսկ. բ. տիմ. 219 (չունի ՆՀԲ). բեռաբայութիւն «պակաս ասել, Թերի համարելը» Կնիք հաւ. 263. Նոր բառեր են բայարմատ, բայանուն, բայական, բայաձև, բայակերտ, մակբայակերտ, ղերբայ, ղերբայական են։—2. ԲԱՆ, ի հլ. «խօսք» ՍԳր. Ագաթ. «բառ» Կոչ. ժե. «պատգամ, հրաման, պատուէր» ՍԳր. «կարծիք, բանականութիւն, խորհուրդ» Ագաթ. Փիլ. «լեզու, բարբառ» Կիւրղ. ծն. խոր. «պատճառ, հանգամանք, էարդ» Սահմ. Փիլ. «Աստուծոյ խօսքի մարմնացումը, Որդին Աստուած» ՍԳր. Ոսկ. ես. Ագաթ. «նիւթ, իր, առարկայ» ՍԳր. Բուզ. Փարպ. (համմ. Ա. մբնաց. ժա. 19՝ առնել զբանդ զայդ=անգլ. do this thing). այս նշանակութիւնը, որ ծագած է առաջինից, հիմայ միակ ընդունուածն է. երկու նշանակութեանց անձուկ յարաբերութեան համար համմ. Ոչ գոյր նմա մեզ գնել բանբերին և ոչ պատիժ և ոչ բանք. Բուզ. գ. 5. Ազատեալ լինէր Յուսիկն ի բանէրոյն. Բուզ. գ. 5. Առանց բանի պոռնկութեան. Մաթ. է. 32։ Նոյն առումը գտնում ենք նաև զոյց բառի վրայ. ինչ. Չեմք մեք կարող առնել զոյցդ զայդ (այդ բանը). Մծբ. 240. Նոյնպէս և այս ջերմս՝ երբ սկիզբն անհոգ կենայ իւր աէրն և պէտ չայնէ, աւերի իւր զոյցն (բանը կվատանայ). Մխ. բժշ. 37։ Նոյն երևոյթը նկատւում է նաև ուրիշ լեզուների մէջ. ինչ. յն. λόγος «խօսք», բայց նաև «խօսքի նիւթ, առարկայ», ῥητός «առուած կամ ասելիք խօսք», յետոյ «որևէ բան, իր», ῥῆμα «բառ, խօսք», յետոյ «խոստակցութեան

նիւթ» և վերջապէս՝ առհասարակ «առարկայ, իր, նիւթ, գործ» (Համաձայնում է երրայական ոճ. տե՛ս Bailly, Dict. gr.-fr. *1910, էջ 1717 բ). եբր.* daβar *«խօսք, իր», կամիս.* memiyaš, memiyan *«խօսք, իր»* BSL, *33, № 99, էջ 140. լեհ.* rzecz *«խօսք, բան, իր»* (Meillet BSL *12, 99)։ Այս բառից են ծագում* բանբեր *«լրաբեր» Բուզ.* բանագէտ *«հանճարեղ» Առակ. իգ. 26.* բանագնաց *«պատգամաւոր» Ա. մակ. բ. 33.* բանագնակ լինել *«աւտ պատճառներ յառաջ բերել» Ոսկ. ես.* անբան *«անխօս» Ագաթ. «անասուն, առանց բանականութեան» Պիտ. Փիլ. «անգործ, դատարկ» Անկ. գիրք նոր կտ. 90.* զրանգտանիկ *«հնարովի, սուտ բան» Եղն. էջ 98 (բառիս վրայ տե՛ս ՀԱ 1914, 244. հմմտ. մանաւանդ* բանագնակ*).* բանակ *«Հրէից քահանայապետի կրծքի վրայ կախուած ականակուռ տախտակը՝ իբրև նշան դատաստանի» Փիլ. եւ. 539. Ճառընտ. Լմբ. յայտ. (Բրգմ. յն.* λογεῖον *հոմանիշից, որ ծագում է* λόγος *«խօսք» բառից. պատահաբար նման է և բնաւ սրա հետ կապ չունի ռուս.* панагія *«եպիսկոպոսի կրծքին կախուած լանջախաչ», որից էլ հյ.* պանագէ, պնակէ. *բուն աղբիւրն է յն.* παναγία *«ամենասրբուհի. 2. Մայր Աստուածածին. 3. եպիսկոպոսներին տրուած տիտղոս, Նորին Ամենասրբութիւն»* (Sophocles, Greek lexicon, *էջ 834 բ).* բանադրել *«նզովել» Մխ. դտ. Կանոն.* բանախօսութիւն *Կոչ.* բանաստեղծ *Եւս. քր.* բանաւոր *Եղն. Ագաթ.* բանաբան *Եղն.* բանիբուն *Ոսկ. Սերբր. Եւս. քր.* բանկայ *«խօսքը անցուկ» Եւս. քր. բ. էջ 266.* բաջարանիկ *«լեզուանի» Եփր. Թագ. 399, 443.* միաբան *ՍԳր. Եւս. քր.* տասնաբանեայ *Մծբ.* բանս *յգ. հյգ.* ձևից են կազմուած բանսարկու *ՍԳր.* բանսելու առնել *«խօսքով որսալ» Ա՚Բ.* բանսերբուկ *«դիւրահաւան» Բուզ. 242 (չունի ՆՀԲ). ռամկաձև յոգնակի է* բանեար *«վէճ, կռիւ, հակառակութիւն» Եփր. ծն. էջ 75. «ամբաստանութիւն, մեղադրանք, յանդիմանութիւն» Ոսկ. պօղ. ա. 268, Բուզ. (հմմտ. յն.* λόγος *և* ῥῆμα *«խօսք», բայց նաև «վիճաբանութեան նիւթ»). որից* բաներող *«կռուասէր» Եփր. ծն. էջ 75 =* բանիցխնդիր *«կռուարար» Եփր. ա. տիմ. 244 (չունի ՆՀԲ. գիտէ Ա՚Բ).* բայբաեար *«վէճ, կռիւ» Ոսկ. պօղ. ա. 219 (տե՛ս Վարդանեան, ՀԱ 1922, էջ 574)։—*Բան *բառի բայական ձևն է* բանել *«ասել, խօսիլ», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Տիմոթ. կուզ, էջ 107 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 69), բայց առատ են սրա բարդ ձևերը, ինչ.* այլաբանել, փառաբանել, ապաբանել, մեծաբանել, դիմաբանել, ընդդիմաբանել *են։ Նոր գրականում ստեղծուած են բազմաթիւ նոր բառեր. ինչ.* բուաբան, բուաբանութիւն, բուսաբան, լեզուաբան, երկրաբանութիւն, տարրաբանական, բանաճիւսութիւն, բանասիրական, բանաստեղծորեն *են են։—3.* Բառ, *ի հլ. «բառ» Փիլ. տիսակ. Անյ. պորփ. «լեզու, բարբառ» 3հ. կթ. 3ճխ. «երգի եղանակ» Վրք հց. որից* բառգիրք *Երզն. քեր. Ոսկիփ.* բառակցութիւն *Պրպմ.* կիսաբառ *Երզն. քեր.* բառակապ *Յայսմ.* բառացի *«փառաւոր, հրեշակաւոր, անուանի» Պիտ. Փիլ. Նար. Մագ. Տիմոթ. կուզ, էջ 204, 308 (սորկական Բրգմ. յն.* λόγιμος *«յիշատակութեան արժանի, նշանաւոր, հռչակաւոր» բառի, որ ծագում է* λόγος *«բառ, խօսք» բառից)։ Նոր բառեր են՝* բառարան, բառացանկ, բառացուցակ, բառախաղ, բառացի, բառակազմութիւն, բառական, բառակրկիտ, բառաճիճ, բառաճճիութիւն *են։—4.* Բարբառ *«հնչիւն, ձայն, խօսք, լեզու» ՍԳր. Ագաթ. Կորիւն. Եւս. քր. կազմուած է կրկնութեամբ* բառ *բառից, որից՝* բարբառել *կամ* բարբառիլ *«ձայն հանել, դոչել, խօսիլ» ՍԳր. Վեցօր. անբարբառ Բ. մակ. գ. 29. Ոսկ. յհ. ա. 1. Ագաթ.* բարձրաբարբառ *Մծբ. Ագաթ.* երկբարբառ *Թր. քեր.* հայաբարբառ *Ագաթ. Կորիւն.* մեծաբարբառագոյն *Կոչ.* բարբառագէտ, բարբառագիտութիւն, բարբառագիտական, բարբառային *(նոր բառեր) են։ Ոմանք յաճախ գրում են բառս* բառբառ *ձևով, որ սխալ է։—5.* Համբառ *«չարախօսութիւն» (կազմուած է* բամ *և* բաս *«ասում եմ, ասում ես» բայաձևերից, ինչպէս կայ* բայբաեր *«կռիւ, վէճ» Ոսկ. բ. տիմ. 219 և ինչպէս այսօր էլ բարբառների մէջ ունինք* ասէ-կոսէ, կասէ-կուսէ, ասուաս, բսի-ըսաւ *են) Ոսկ. մ. ա. 13. Վրդ. Բուց. (գրուած նաև* բանբաս*).*

որից աճրամբաս Ոսկ. կողոս. եղիշ. (ունինք նաև աճրանբաւս Սոկր. եկեղ. պատմ. էջ 786, եթե տպագրական սխալ չէ). բամբասաճճ ՍԳր. բամբասել ՍԳր. բամբասական Օր. իր. 14. սղմամբ՝ բաբասած «բամբասուած» կանոն. (տե՛ս Շողակաթ՝ էջ 44 երկիցս)։

=Հնխ. bhā- «խօսիլ» արմատից. հմմտ. յն. φημί «ասեմ, բամ», φής «ասես, բաս», φησι «ասէ, բայ», φάμεν «ասեմք», φατε «ասէք», φασί «ասեն», φάτις (=բայ) «խօսք, լեզու, անուն, տարածայնութիւն, համբաւ», φάσις «խօսք, յայտարարութիւն, տարածայնութիւն, վճիռ», φωνή «ձայն», φωνέω «հընչել, գոչել, խօսիլ», φάμα «ձայն, աստուածների յայտարարութիւնը», դոր. φαμί «բամ», սանս. bhan, bhánati «խօսիլ», լտ. fāri «ասել, խօսիլ», fama «լուր, համբաւ», fabula «խօսք, պրոյց, առակ», հլ. bajati «պատմել», basnī «առակ», balija «կախարդ», ռուս. баснь «առակ», գռ. ռուս. бáять, бать «խօսիլ», լիթ. bóju, bóti «մէկի մասին հարցնել», հիռլ. bōn, bōn «աղաչանք, խնդիրք», անգլսք. bēn «խնդիրք», հրպ. ban «հրաման, արգելք», bannu «հրամայել», գերմ. bannen «կախարդական խօսքով կապել» ևն (Walde 265, Boisacq 1024, Berneker 39, Kluge 39, Trautmann 24, տե՛ս Pokorny 2, 123—4, Ernout-Meillet 360—1)։ Բան «խոսք» և «իր» նշանակութիւնից զարգացման համար հմմտ. նաև երր. dabar «խօսք, իր», կամիս. memiyaš, memiyan «խօսք, իր» BSL 33, № 99, էջ 140։—Հիւրշ. 4, 427—8։

Նախապէս բամ, բաս, բայ, բա՛ համարում էին առանձին առանձին շաղկապներ և յայտնի չէր թե միևնոյն բայի զանազան ձևերն ու դիմքերն են։ Այսպէս ՀՀՔ, ՆՀՔ, ՋՔ և ԱՔ դրանցից իւրաքանչիւրը դնում են իբրև անջատ բառ։ Առաջին անգամ Այտընեան, Եւրոպա լրագրում, Վիեննա 1850, թիւ 11, էջ 43—44 հրատարակից մի գեղեցիկ քննութիւն, որի մէջ ցոյց տուաւ թէ այդ կարծիքները սխալ են և հաստատեց թէ դրանք մի՛ պակասաւոր բայի մնացորդներն են։ Զարմանալի է, որ այն քննութիւնից յետոյ էլ Նորայր, Հայկ. բառաբ. էջ 12 դեռ նախկին կարծիքի վրայ է և բաս բառը ուղղում է բամ։—Brosset JAs. 1834, էջ 369—405 հյ. բայ=սանս. bās և վրաց. սաւրարի, վիուբեների։ Windisch. 15 հյ. բայ, բան դնում է յն. φήμι և սանս. bhāna «փայլ» բառերի հետ՝ հնխ. bhā արմատից։ Այտընեան, Եւրոպա (անդ) յն. φημί, φησί և սանս. բամի, բասի, բաաի... ձևվերի հետ։ Lag. Urqesch. 132 յն. φωνή բառի հետ bhā արմատից։ Justi, Zendspr. 213 բա՛=զնդ. ba «անշուշտ, այո՛», որին հակառակ է Lag. Arm. St. § 345։ Տէրվ. Altarm. 11, Մասիս 1882 մայ" 24, Նախալ. 95, 96 բամ, բաս, բայ, բաւրել, աճրաւիր, ամբաստան, բառուրք, բաղբաղայք, բանգն, բանդագուշանք, նամբաւ են մեկնում է Այտընեանի ձևով։ Καρολίδης, Γλωσσ. συγκρ. 80 նախկիններին վրայ աւելացնում է և կապադովկ. bau «լայտնի, բացայայտ» և bavuka «վէպ, հանելուկ»։ Հիւրշ. Arm. Stud. առնում է միայն բան=φωνή, իսկ Arm. Gram. ուղիղ է մեկնում բամ, բաս, բայ, բան. անապատհով է համարում բա շաղկապը կապել զնդ. bā, յն. φή «այո՛, իրօք» են ձևվերի հետ։ Глеше, Сбор. мат. Кв. 31, 6 բան=իոլ. ket-banim։ Հ. Գ. Նահապետեան, Բազմ. 1908, 266 գրանգաանք բառը ուղղում է բանդագուշանք։ Karst, Յուշարձ. 403 բամ, բաս, բայ, բան, բառ=սումեր. ba «ասել, խօսիլ», bar «պատգամ»։ Autran, Sumér. et ind. էջ 81 սումեր. bi «ասել, խօսիլ» բայի հետ է կապում։ Pokorny 2, 136 գոր է բաժանում բա՛ և կցում զնդ. bā, bē, գոթ. ba, լիթ. bà, հլ. bo են մասնիկների հետ, իբր հնխ. bhe, bho։ Մառ՝ բան «գործ» բառի մասին տե՛ս վան։—Մխիթարը, ինչպէս նաև Գէոր. և Փիլոս. տե՛ս առանձին առանձին բան, բառ և բամբասել։

*ԲԱԼԱԲԱՆ «Թմբուկ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Դիւան

ժ. 448 (ԺԲ դարից). «Հարեալ զբալաբանն դարձաւ զօրավարն Ռուսաց»։

=Թր. balaban «թմբուկ» բառից, որից փոխառեալ է նաև ուտ. balaban «երաժշտական փող»։ Աւելի ընդարձակ տե՛ս արապան։—Ա՛ճ.

*ԲԱԼԱԹԻԿԻՆ «մահակ, կոպալ». նորագիւտ բառ, որ չորս անգամ զանազան ձևերով գործածուած եմ գտնում չեմին շրջանի գրականութեան մէջ. այսպէս՝ ուղղագոյն բալաթիկին ձևով Տաթև. ձմ. իգ. «Զանազան է սիհն. և վասն այլոց գինուց՝ մէկ ձեռն բաւական է. գի գինուրն է զբալաթիկինն՝ ի մէկ ձեռն կարէ բանեցուցանել. բայց աղեղանն երկու ձեռք պիտի»։—Նոյնը բլատկի և բլաթկին կամ պլատկի ձևերով հետևեալ տեղերում՝ «Ու տեսան ագռի ագռի սիհ կապած, ըռումբ և չարխի աղեղ լարած ու թրեր և բլատկի ասպարք ու քէշիկ» (Պղնձէ քաղաք, Տփխիս 1908, էջ 39). —«Երեք տուն մալի ու խազին (=արաբ. māl u xazīna ապրանք և գանձ). 4 տուն հագեստի էր, գէիմ ու զրհե, թուր, բլաթկին և նաչախ ու ռումբ և ասպարս անհուն բազմութեամբ» (Հաւաքարան, էջմիածին 1916, էջ 20).—«Ընջուղն գէր և աղուոր պիտի, որ մին ունենայ և ուժով կտրիճք գահեն և բերեն ծոներ պլատկերով և ածեն ի տունն. և ընդ առաջն մեղմն ծեծեն ղընջուղն և ի հետ սերտեն ղզարկերն այնչափ, որ միան մէն մանրի և ի զարկուցն մեռանին» (Վստկ. էջ 194)։

=Պրս. بلاتگين balātigīn «բիր, չօմագ՝ որ գլուխն գնատակ է և փշուռ»։—Ա՛ճ.

Ալիշան՝ Վաստակոց գրքում մեկնում է բառս «հարուածք գաւազանի և գաւազանք կամ բուքք», Գէորգ Դպիր «սպառնոս, որով կապեալ զկով և զարջառ տանին՝ ուր կամիննն» (տե՛ս Վստկ. էջ 257)։ Գաբամաճեան բառարան «ոլորուած թաշկինակ կամ զննջակ, որով ինչ ինչ խաղերու մէջ հարուածներ կը տրուին»։ Վերի մեկնութիւնը տուաւ Ա՛ճառ. Հայ. նոր բառեր հին մատ. հտ. Բ. էջ 139։

ԲԱՂԱՒ «անուոի, չնչին, աննշան». գործածուած է միայն հետևեալ օրինակներում. «Փոխանակ այնր զի ասէ սակաւ ճացիւս, հերբայեցի բալախ ճացիւս ասէ» Եփր. Թուոց՝ էջ 246. «Անձինք մեր ձանձրացեալ նեղեալ են ի հաց սակաւ, այսինքն բալախ հացիւս, որպէս և գրեալ է ի հեբրայեցի» Եփր. օրին. էջ 268. «Ո՛չ էր նա (Յովհաննէս Մկրտիչը) եղեգն բալախ» Եփր. համաբ. էջ 93։—«Որպէս և գրեալ է ի հեբրայեցի» բառերից պէտք չէ հետևցնել թէ բալախ հերբայական բնագրում գործածուած և հերբայեցերէն մի բառ է. հեղինակը բառի նշանակութեա՛ն համար է խօսում և ո՛չ թէ ձևի։ Ակնարկուած հատուածն է Թիւք իս. 5, որ մեր Եօթանասնից Թարգմանութեան մէջ այսպէս է. «Անձինք մեր տատակացեալ են և սնոտի հացէս», որի դեմ հերբայեցին էլ ի՛նքը ունի בלחם הקלקל ba-leḥem haqlōqēl «հաց սակաւ, չնչին, անբաւարար»։

*ԲԱՂԱԽ «անապատային վատ խոտ, փշաբոյս». այս իմաստով գործածուած եմ գրտնում Վրք. հց. Բ. 590 «Ոչխարն առնու ճարակ ի խոտոյ անտի դրարիոք գալարիս, ապա և ճարակի գրալախ անապատի և յորժամ խըստանայ ի փշոց անտի» (այլ խմբ. Ոչխար առնու կերակուր դրարի գալարս, առնու և գիւղըս և ի փշոց մինչ խոցոտի բերան նորա)։ Նոյն է նաև բալախ «օշնան խոտը» Ամիրտ. Բժշ. կայ և ձաւարալախ «herba dulcamarae» (ըստ Տիգրանեան, Բառ. բժշ. բոյսերի, էջ 13. բայց չգիտեմ իւրահնա՞ր բառ է, թէ որևէ աղբիւրից)։

=Վրաց. ბალახი բալախի «խոտ», որից կազմում են զանազան բոյսերի անուններ. ինչ. ბალახკვერცხა բալախկվերցխա «грудная трава, հոտոմ սամիթի, alchemilla vulgaris L.», ბალახფიჩვა բալախփիչվա «лиственница, mêlèze, larix, pinus larix L, կաենի», ბალახ-ჭაბლა բալախ-ճաբլա «жидовская вишня, coqueret, alkekenge, յակորուկ», ბალახ-კოვზა բալախ-կովզա «ложечная трава, ժովարդակ, cranson, cochlearia officinalis L», ბალახ-ბულახი բալախ-բուլախի «անպիտան խոտեր», ბალახ-ვარდა բալախ-վարդա «ջրկոտիմ». ինպիլ. բալախ «խոտ»։—Ա՛ճ.

ՆՀՐ, ԱՒ և ՀՒտս. § 278 շփոթելով նախորդ բալախ բառի հետ՝ համարում են «անպիտան խոտ, սէգ, կնիւն, պրտու,

salicornia»։ ՆՀԲ հանում է լ. palus «ճահիճ» բառից։ ՀԲուս. նախորդից խառնելով՝ սեմական է համարում։ Պատահական նմանություն ունի եաքուբ. bəlax «ուռու ճիւղեր՝ որոնցով արջառն է սրնանուում»։

ԳԻՒ.—Կայ Ալշ. Բլ. Երև. Մշ. փալախ «մի տեսակ դաշտային կակուղ խոտ, որից կեմ են պատրաստում». որ և Բգ. փալախոտ։ Բայց արդեօք այս բոլորը նո՞յն են նախորդի հետ. տարբերութիւնը ո՛չ միայն բ և փ ձայների մէջ է, այլև նշանակութեանց, որ բոլորովին հակառակ են միմեանց։ (ՆՀԲ բալախ և գւռ. խաճին բառերի տակ յիշում է այս գւռ. բառը, բայց դրում է բալախ և տալիս է «անպիտան խոտ» նշանակութիւնը, որ սխալ է. էջ 1063 յաւելուածում յիշում է և քրդ. բալախ «փափուկ խոտ», որ անշուշտ մեր փալախ ձևը պետք է հասկանալ)։ Բենէ (նամակ 1933 մարտ) փալախ բառը դնում է քրդ. p'äläx հոմանիշից փոխառեալ, որ մեկնում է իբր p'äl «թուփ, թերթ» բառից ծագած. այսպէսով մերժում է բալախ «անասպատային վատ խոտ, փշաբոյս» և փալախ բառերի նոյնութիւնը, որ մենք էլ կասկածելի ենք գտնում։

ԲԱԼԱՂՕ. անասոյզ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Վրդն. առ. 339 «Ջնաւն ի բալաղօ չնստուք, որ մոլորի և մեռանի»։

*ԲԱԼԱՍԱՆ (ի–ա հլ. քան ՆՀԲ, բայց առանց վկայութեան, սեռ. պալասանայ Միխ. աս. 378) «արաբական մի տեսակ թուփ, նրա ծաղիկը, անուշահոտ իւղը. balsamina hortensis Dc.» Նոր. աշխ. 612. Մաշտ. յետին դրչութեամբ պալասան Բժշ. Միխ. աս. պալասամ Բառ. երեմ. յաւել. 571 (երկիցս). Հընագոյն ձևերն են բաղսամոն (յունարէնից փոխառեալ) և ապրսամ (ասորերէնից կամ պարսկերէնից փոխառեալ). աւում է և մեռոնի ծառ Բժշ.։

= Արաբ. بلسان balasān, որից նաև թրք. پلسنك pelesenk «բալասան»։—Հիւբշ. 263։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԲԱԼԱՏՈՒՐ տե՛ս Պալատուր։

*ԲԱԼԱՓՈՒՇ «աշխարհական մարդոց հագնելու վերարկու». յետին ռամիկ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Առաք. պատմ. 220 «Ու բնաւ ո՛չ գիտէին թէ պարտ է կարգաւորի վեղար և փիլոն ունիլ զիւրեաւ, կամ հանդերձս խոշորս, և ասուիս զգենուլ. այլ որպէս աշխարհական և զմարմնաւոր իշխանս փափուկ և ազնիւ զգեստիւ պճնէին, չաշխուր և կապայ և պատուական փակեղ ի գլուխս և բալափուշ զիւրև առեալ»։

= Պրս. بالاپوش bālāpūš «վերարկու» (կազմուած է bālā «վեր» և pūš «ծածկոց» բառերից)։—Ա.ճ.

*ԲԱԼԻՇ «տախտակաձև կարուած՝ ոսկեայ և կամ արծաթեայ թաթարական մի դրամ, որի արծաթեան արժէր 200 դենար, իսկ ոսկեան 2000 դենար». երկու անգամ է գործածուած մեր մատենագրութեան մէջ. «Առեալ զոսկի բալիշն, որ էր տափարակաձև ի չափ Քզոյ միոյ և ի կշիռ լտեր միոյ. զի այն իսկ էր յաղթութեան պատիւն» Օրբ. 310. «Ու ունէր ի ձեռն բալիշ մի և երկու հանդերձ էր տուել կարել» Վրդ. պատ. էջ 158։

= Արևել. Թրք. بالش bališ նոյն նշ. (տե՛ս P. de Court. Dict. Turk-Orient. Paris 1870). այս բառից է նաև պրս. بالش bāliš (Խարեզմի բարբառով) «թուման, մեկ քսակ դրամ, որ է 500 դրաշ», մանգղ. بالش bališ «մոնղոլական մի դրամ, որի ոսկին տներ 8 մսխալ և 2 դանգ, արծաթը 8 դիրհամ և 2 դանգ, թղթեանն՝ 10 դինար» (Будаговъ 1, 237 և Quatrem. Hist. des mong. 1, 320)։

ՆՀԲ հտ. Բ. էջ 1047 սխալմամբ մեկնում է «զարդ մեծագին ի գլուխն կամ ի լանջս և ի բազուկս տուեալ ի պարգև յաղթողաց»։ Սխալ է և ԱԲ, որ նախորդին հետևելով մեկնում է «յաղթողին տրուած զարդ, չէլենկ, սօրդուճ (ցցունք)»։ Ուղիղ մեկնեցին էմին, Истор. Вардана, էջ 186 և Վարդան վրդ. Պատմութեան հրատարակիչը, անդ, էջ 158, ծանօթ. 6։ Մեր բառի հետ բնաւ կապ չունի պրս. بالش bališ «բարձ», որից փոխառեալ են գւռ. բալիշ, վրաց. բալիշի, թուշ. բալիշ «բարձ»։

ԲԱԼԻՍՏ տե՛ս Բաղիստր։

*ԲԱԼՂԻՆՋ «մլուկ, փայտոջիլ, թախտաբիծ, խանտալայ, punaise», որի նուազականն է բալղինջիկ. այս բառերի համար ունինք երկու վկայութիւն. «Դևք լցին բովանդակ զայրն զայն բալղինջիւ և մժեխիւ. Եհաս անդ բազմութիւն մրջմանց... կորուսանել զբալղինջսն». Վրք. հց. Բ. 16, 17 (ըստ այլ ձ. բալղինջիկ):

=Վրաց. ბაღლინჯა բաղլինջա, Թուշ. բաղլինջօ, ինգիլ. բալղունճ «մլուկ, փայտոջիլ». Հայերէնը փոխառեալ է վերջին ժամանակներում, ինչպէս ցոյց է տալիս ղ ձայնը= վրաց. ღ ձայնի դէմ:—Ա.Տ.

Նշ Բ, ՋԲ և ԱԲ դնում են բառս «վայրի մեղու», որովհետև Վարք Հարանցի միւս խմբագրութեան մէջ վերոյիշեալ տեղը գրուած է «մժղով և պիծակով». Բայց այս նշանակութիւնը բնաւ յարմար չէ. մրջիւնները ի՞նչպէս պիտի կարենային օդի մէջ թռչող այդ պիծակներին որսալ: Ըստ իս պէտք է հասկանալ «մլուկ, փայտոջիլ», ինչպէս ցոյց է տալիս վրացին և՝

ԳԻՒ.—Տփ. բաղլինջ «մլուկ»:

*ԲԱԼՈՒՏ «վայրի կաղին» Բժշ. չունի Հրուս.:

=Արաբ. بَلُّوط ballūṭ, ասոր. և արամ. ܒܠܘܛܐ balūṭā, պրս. بلوط balūd, Թրք. palamut, բոլորն էլ նոյն նշ.: Այս բառից է նաև պրս. بلوطشاه šāhbalūṭ «շապանակ» (բառացի «արքայական բալուտ»), որ աղաւաղուելով դարձել է Ղրբ. շմրա՛լուտա «շապանակ»:—Հիւբշ. 263:

Ուղիղ մեկնեց նախ Նշ Բ:

ԲԱԽ «հարուածի». այս արմատական ձևն ունի միայն Սոկր. հկեղ. պտմ. էջ 172՝ «ընդհարում» նշանակութեամբ. նոյն արմատից են բախել «զարնել, ծեծել (դռան, կուրծքի, ջրի, ալիքի համար են)» ՍԳր. Ագաթ. Եւս. քր. «պատերազմի մէջ իրար զարնուիլ» ՍԳր. Եւս. քր. Սեբեր. «քնար զարնել» Փիլ. քհ. Սահմ. «ականջը զարնել, ձայնը լսելի անել» ՅՀ. կթ. բախած «յիմար» (համմտ. դիւահար՝ կազմուած հարկանել բայից) Բուզ. 142. Ոսկ. յհ. բ. 21. բախիւն Ագաթ. սրտաբախ Վեցօր. Ոսկ. կողոս. և Եփես. դիւաբախ Ագաթ. մրտաբախ Նիւս. կազմ. Երզն. մտթ. 402:—Բառիս կրկնականն է բախբախել (ատամների իրար խփուելու համար ասուած) Ոսկ. ապաշխ. բախբախումն Մագ. բայց աւելի սովորական և ընտիր է՝ առաջին անդամի մէջ խ-ի անկումով՝ բարախել Դան. ե. 6. բարախիլ Կոչ. բարախիւն Երզն. քեր. բարախումն Մխ. աղօթ. Եղիշ. խաչել.:—Յետիններից մօտ իմաստի զօրացման համար կազմուած է բաղխել (իմա՛ բախել, ղ=ղ արտասանութեամբ և ո՛չ բնաւ ղ=l), որ հնում գոյութիւն չունէր, ինչպէս ցոյց են տալիս բարախել, բարախիւն ևն (տե՛ս իմ յօդուածը՝ ՀԱ 1913, էջ 13):—Այժմ ընդունուած է յետին սխալ ձևը:

Նշ Բ համարում է բնաձայն բառ: Տէրվ. Նախալ. 96 «իս նախընթաց ղ-էն պատճառեալ անպէտ յաւելուած» համարելով (ճիշտ հակառակը)՝ ուղղագոյն ձևը դրնում է բաղել, որ համեմատում է մբգ. bern «զարնել» և լտ. terire «վիրաւորել» բառերի հետ և բոլորը միասին հանում է հնխ. bhar «զարնել» արմատից: Հիւնք. փակել բառից: Սրմագաշեան, Արմէնիա, բարախել համեմատում է լտ. palpitare «սիրտը տրոփել» բառի հետ: Scheftelowitz BB 28, 311 լիթ. brak «մուրճի հարուած»:

ՓՈԽ.—Լազ. bax «ծեծել (օր. մարդ, ցորեն)», մինգր. բախափա «ծեծել, զարնել» (տե՛ս Աճառ. Արրատ. 1911, 417):

*ԲԱԽՏ, ի հլ. «բարի կամ չար պատահմունք. 2. յաջողութիւն. 3. ճակատագիր» ՍՆ. լ. 10. Ես. կե. 11. Եզն. յետիններն սխալ գրչութեամբ գրում են բաղդ, որ ընդունուած է նաև արդի գրականում, բայց հիմայ հետզհետէ ջնջուելու վրայ է: Այս արմատից են բախտաբաշխ «բախտ բաժանողը» Ոսկ. Ես. բախտանոց «մեհեան» Պիոն. 384. բախտաւոր Եզն. բարեբախտ Խոր. Պիտ. Փիլ. նխ. չարաբախտ Ճառընտ. վատաբախտ Փիլ. Նոնն. լիաբախտիկ Պիտ. ծննդաբախտ Վեցօր. երկնաբախտիկ Պիտ. վատաբախտիկ Պիտ. աճբախտ Ոսկիփ. նոր բառեր են՝ դժբախտ, դժբախտաբար, դժբախտութիւն, բախտախընդիր, բախտախնդրութիւն, բախտագուշակ, բախտակից, ապաբախտ, տարաբախտ,

տարաբախտաբար *են։—Այստեղ է պատկանում նաև* բաստ «բախտ, յաջողութիւն, երջանկութիւն» *Պիտ. Շիր. Սարկ. քհ. որ ուրիշ բան չէ, եթէ ոչ* բախտ *բառի յետին գաւառական մէկ ձևը. խ>ս ձայնափոխութիւնը ցոյց են տալիս նաև* դրախտ>դրաստ, տախտակ >տաստակ *բառերը. անշուշտ եղել են նաև ուրիշ գաւառական բառեր խտ>ստ ձայնափոխութեամբ, բայց գրականութեան մէջ չեն մտել։ Արդի բարբառների մէջ այսպիսի ձայնափոխութիւն չի նկատուած։* –Բաստ *ձևից ծագած բառեր են՝* բաստայեղց *Պիտ.* բարեբաստ *Պիտ. Պղատ. օրին. և տիմ. Սկևռ. լմբ.* բարեբաստիկ *Կաղանկտ. Փիլ. Պիտ.* չարաբաստ, ֆաչաբաստիկ *Պիտ. Փիլ.* վատաբաստ, վատաբաստութիւն *Փիլ. են։ Սրանցից մի քանիսը գործածական են նաև արդի գրականում։*

=*Պհլ.* պազենդ. baxt «բախտ, բարեբախտութիւն, ճակատագիր», պրս. بخت baxt «բախտ, ճակատագիր», զնդ. baxta «իբր բաժին նշանակեալ մաս, բախտ, ճակատագիր, դժբախտութիւն»=սանս. भक्त bhaktá «տրուած բաժինը», भक्ति bhakti «մասնակցութիւն, մաս, բաժին»։ Իրանեանից փոխառեալ են նաև աֆղան. բելուճ. գնչ. baxt, քրդ. baxt, bext, հինդուստ. buxt, թրք. baxt, baht, և թուրքերէնի միջոցով էլ նկն. բռάχτι, բուլղար. bahtisam, սերբ. baht։—*Բոլորի՞ արմատն է զնդ.* bag, baž= սանս. bhaǰ «բաժանել, բաշխել», որի անցեալ դերբայն է զնդ. baxta=սանս. bhaktá, բախան ըմբռնելով իբրև ի վերուստ բաշխուած բաժանուած վիճակ. համմա. նոյն արմատից սանս. bhaga- «բախտ», bhagavant «երջանիկ, բախտաւոր» և հլ. բաշխ «ճակատագիր, բախտ» (բաշխել «բաժանել» բայից)։—Այս ծագումը և նիւթական իմաստը ցոյց են տալիս զնդ. baγōbaxta- «աստուածապարգև (ճանապարհ), šōiθrōbaxta «գիւղերի մէջ բաշխեալ (ջուր)», սանս. भगभक्त bhagabhakta- «աստուածաբաշխ» են (Horn § *185*, Bartholomae *923*)։— *Հիւրշ. 115։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ և առաջ Schröder, Thesaur. *էջ 46. նոյնը նաև* St. Martin, Mémoires *1819*, Paris, *էջ 478, ինչպէս և ԳԴ, ՆՀԲ,* Peterm. *27 են։*

ԳԻՒՐ.— Ագլ. Գոր. Ղրբ. Ննխ. Շմ. Տփ. բախտ, *Ախց. երև. Ջղ. Սեբ.* բ'ախտ, *Մկ. Մրզ. Ոզմ. Սլմ. Վն.* բոխտ, *Պլ. Ռ.* փախդ, *Տիգ.* փոխդ *(բայց* փոխըրվուր «բախտաւոր»*), Զթ.* բ'օխդ.—*իսկ Սչ.* բ'ախտ «համուսին», *Ալշ.* բոխտ «բախտ. 2. ապաստան, ապաւէն»։ *Նոր բառեր են* բախտաւոր «երանի՛» *(Շմ. տարբերում է իրարից* «բոխտավոր «երանի» և բախտօօր «բախտաւոր»*),* բախտակնծուիլ, բախտովի, բախտիորձուկ, բախտաւորուիլ, բախտաւորացնել *են։*

ԲԱԽՏ «*թակարդի կապը, որ որսի վիզն ընկնելով խեղդում է*». *յգ.* բախտերք. *նորագիւտ բառ, որ այս երկու ձևով մի քանի անգամ գործածուած եմ գտնում Վրդն. առկ. 34. պարզապէս «որոգայթ» իմաստով ունի Վրդն. առ. 88 (սեռ.* բախտերաց*). գրուած* բաղտերք *Վրդ. քար. 102։*

ԲԱՇԻՆ «*մի տեսակ աղած ձուկ*». *մէկ անգամ գործածում է Մանդ. էջ 210 նաւակատեաց ուտելեղէնների հետևեալ ճոխ ցանկում. «իւղ, ձու, ձուկն, պանիր, կոգի, կաղամի, բաժին, շմուկ, կաթն, խեր և ձկան մորէ». նոյնը կրկնում են Գիրք Թղ. էջ 239, Մանդ. սիր. 13. (Մանդ. մէկ ձեռ. ունի* բախն. *Շողակաթ՝ էջ 127* բաձին*)։ Երկրորդ անգամ գործածուած է բառս Բժշկարանում՝ հետևեալ ձևով. «Բաժին, որ է սապարթիոն» (իմա՛ յն.* σαπέρδιον, σαπέρδης, *ֆրանս.* saumure ou poisson salé qu'on tirait en abondance du Pont-Euxin, *մի տեսակ աղի ձուկ, որ առատութեամբ որսում էին Սև ծովից*)։

> ՆՀԲ *և ՋԲ չունին այս բառը. յիշում է միայն ԱԲ, առանց վկայութեան և մեկնում է «ուտելիք մը, թերևս մածուն»։ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 84 «բառ անբատոյգ, թերևս կաթնեղէն»։ Ուղիղ մեկնեց վերի ձևով Նորայր ՀԱ 1921, էջ 339։*

*ԲԱՆ, ի–ա *հլ. (*ՆՀԲ *նաև ի հլ. առանց վկայութեան) «տան շուրջը եղած գաւիթը» Եփր.*

եվ. և համաբ. Փիլ. «ոչխարների փարախ» Մծբ. Ճառընտ. Վրք. հց. «արեգակի կամ լուսնի եղերքը պատող ծիր» Վեցօր. 115. Եղն. Շիր. «արեգակի սկաւառակը կամ գունտը» Փիլ. սամփս. «աստղից աստղ գոնուած միջոցը՝ տարածութիւնը» Վրք. դիոն. ոճով աստւում է բակ առնուլ Բ. մակ. ժե. 13. Ոսկ. մաթ. և եբր. բակ ունել Եզեկ. ա. 27. Փիլ. լին. բակ արկանել «շրջապատել» Փիլ. այլաբ.։—Այս արմատից են բակաձև «կլորակ, կոլոր» Ոսկիփ. բակառել «պարփակել, շրջապատել» Կաղանկտ. Մագ. երգն. քեր. բակարգել առնել «պաշարել» ԱՓ. ներբակ Անան. եկեղ. Զքր. կթ։—Բակ «լուսնի բակ» նշանակութեան համար հմմտ. նաև արևել. Թրք. ayəl և kutan «ոչխարների գիշերային փարախ. 2. լուսնի բակ» (տե՛ս P. de Courteille, Dict. Turk-Orient. նոյն բառերի տակ)։

=Հարաւային կովկասեան լեզուներից փոխառեալ բառ է. հմմտ. վրաց. ბაკი բակի «քաղաքից դուրս ցանկով պատած տեղ տաւարի համար, բակ. 2. բակ լուսնի», ბაკმული բակմուլի «լուսնի բակի նման փայլուն», լազ. baki «ախոռ», սվան. bog «ախոռ», ավար. bak «յատակ, տեղ, վայր»։ Հայերէնի փոխառեալ լինելու ապացոյց է այն հանգամանքը, որ վրացերէն მობაკვა մորակվա «ցանկով պատել», ბაკოვანი «շրջապատուած, ցանկով պատած» ունին աւելի ընդհանուր և նախնական իմաստ։—Աճ.

ՆՀՔ մեկնում է փակել բայից։ Այսպէս նաև Peterm. 259. Հիւնք. փարախ բառից համաոտեալ։— Թիրեաքեան, ՀԱ 1912, 288 նոյն ընդ փակ։

ԳԻՒ.—Ախց. կր. բ'ակ, Պլ. Տփ. բագ, Ալշ. Խրբ. Մշ. Սեբ. բ'ագ (Սեբ. նշանակում է նաև «լուսնի բակ», ինչպէս և Ալշ. Վն.), Ոզմ. բ'ոկ, Մկ. Վն. պոկ, Մրղ. Սլմ. պոկ', Զթ. բ'օգ, Ասլ. փա*. այս բոլորը նշանակում են «տան բակ». իսկ Ագլ. բօկ «արտաքնոց»։—Նոր բառեր են բակդուռ, բակ-պատ-տակ.—Վն. բակ «նաւի ամբար»։

ՓՈԽ.—Հայերէնից փոխառեալ են, ինչպէս նշանակութիւնն է ցոյց տալիս, քրդ. پاگ pak «բակ», Թրք. գւռ. Սեբ. پاگ pāg «տան շէնքի մէկ կողմը լոյս առնելու համար թողուած պարապ մասը, որ բուն բակը չէ» (Գաղանճեան, Յուշարձան, էջ 329), Տ. pag «բակ» (տե՛ս Բիւր. 1899, էջ 799)։

*ԲԱԿԵՂԷՓ (որ և բակեղաբ) ի-ա հլ. «տոպրակ, պարկ». մէկ անգամ ունի Դ. Թագ. դ. 42 «Եբեր... նկանակս գարեղէնս և պաղատիս բակեղեփաւ (այլ ձեռ. բակեղաբաւ)»։ Այս օրինակից առնելով Մագ. Թղ. 134 գրում է. «բեղեկ բազմակ բեղուն բակաղնեփի քեզ նուիրեալ»։ Հին բռ. գրում է բակաղբ և Բառ. երեմ. էջ 45 բակեղբ «շալակ»։ Որքա՜ն անուշադիր է սակայն Յայսմ. յունիս 17 (էջ 812 բ), որ Դ. Թագ. նոյն համարից առնուած հատուածում գրում է «նկանակս գարեղէնս... և պաղատիս բակեղ աբո՛ռ»!

=Եբրայական փոխառութիւն է։ Ս. Գրքի արդի եբրայեցերէն բնագրում համապատասխան բառն է בציקלונ bəciqlōnō, որի դէմ յոյն թարգմանութիւնն ունի βακελ-λεθ ընթերցուածը, որից էլ տառադարձուած է հյ. բակեղեբ։ Հայերէն և յունարէն ընթերցուածները ցոյց են տալիս, որ յիշեալ եբրայեցերէն բառը (այլուստ բոլորովին անծանօթ) պէտք է սրբագրել בקלצת bəqəla'at, որի հետ նոյն է գալիս արաբ. قلعة qəla'at կամ قلاع qəla'a «երկաշէտ պարսպակ, հէյկէ»։ Եբրայական բառը արդէն Օծթանասնից թարգմանութեան ժամանակ անշուշտ մոռացուած մի ձև էր, որի համար էլ թարգմանիչները միայն տառադարձութեամբ պահել ստիպուեցան։ Յոյն բառը ցոյց է տալիս նաև, որ հայերենի մէջ ուղղագոյն ձևն է բակեղեբ. սխալ է բառարանների դրած *բակեղէբ ձևը, որ չկայ բնագիրներում (տե՛ս այս մասին իմ յօդուածը՝ Բազմ. 1898, էջ 222 ա)։—Հիւբշ. 343։

Ուղիղ մեկնեց Lagarde, Arm. Stud. § 333, որի առաջարկած սրբագրութիւնը ընդունում են և եբրայագէտները։

ԲԱԿԵՐՏ «մտրուկ». ունի միայն Բառ. երեմ. էջ 45։

Տե՛ս բակաեր բառի տակ։

*ԲԱԿԱՅ (ի հլ. ըստ ՆՀՔ, թէև առանց վր-

կայութեան) «բակլայ կոշուած ընդեղէնը, fève» *Մխ. առակ. Տօնակ. Յայսմ. Վստկ. 21.* մաճր բակլայ «lupinus» *Գաղիան.*:

= *Արաբ.* بَقْلَة baqla, *որ և* بَاقِلَّي baqila, بَاقِلِّي bāqilla «բակլայ», *որից փոխառեալ են պրս.* bāgālā, *արևել. թրք.* Ալե baqla, *թրք. քրդ.* Ալե bakla *և թուրքերէնի միջոցով էլ ալբան.* baklla, *բուլգար.* bakla, *սերբ.* bakla: *Արաբերէնի պարզ արմատն է* bql «բոյս, արօտ, խոտ, բանջար», *որից և* بَقَّال baqqāl «ընդեղէն ծախող, նպարավաճառ» (=*ասկ.* բախկալ, *և ռուս.* бакалейный):—*Հիւբշ. 263:*

Նախ Շրէօդեր, Thesaur. *47 դրաւ պարակներէնից փոխառեալ: Նոյնը յետոյ Գ Դ,* Pott ZKM 7, 157, Lag. Arm. Stud. § 334:

Գիտ.—*Ագլ. Տփ.* բա՛կլա, *Զղ.* բ՛ակլա, *Ալշ. Նախ.* բագլա (*Զալբր գիւղի մէջ* բ՛ագլա «լոբի»), *Ախց. Կր. Մշ.* բ՛ագլա, *Մկ.* բոկլա, *Մշ.* բագլագ, բանգլա, *Զթ.* բ՛ագլօ, *Տիգ.* բոգլո, *Գոր.* պոկլո, *Ղրբ.* պէ՛կլա, *Ակն. Սեբ.* բ՛այլա, *Վն.* բոյլ, *Ոզմ.* բոճլո, *Ասլ.* փայլա, *Սլմ.* բողլո, *Ռ.* փաղլա, *Պլ.* փախլա, *Շմ.* փոխլո:—*Նոր բառեր են՝* բակլաճճի, բակլաախտակ, բակլաֆչե:

*ԲԱԿՂ *կամ* ԲԵԿՂ, ղ *հլ.* «գաւազան, բիր, մահակ». *երկուսն էլ գործածուած են միայն մէկ մէկ անգամ գրծ.* բեկեղբ, բակեղբ *ձևերով. սրանցից առաջինի համար ՆՀԲ իբր վերկայութիւն տալիս է Ոսկիփ. իսկ երկրորդը գործածուած եմ գտնում Յայսմ. մրտ. 2 «Բակեղբ չախչախանաց պծամելիսն»: Սրանց ուղղականը պիտի լինի* *բակղ, *բեկղ. *վերջին ձևը գնում է ՀԲ, որի տեղ ՆՀԲ ունի* *բեկուղ *և սրա հետ էլ իբրև երկրորդական ձև* *բակուղ. *այս վերջինը յիշատակում են նաև ՀՀԲ, ՀԲ, ՓԲ և ԱԲ: Բայց սրանից ո՛չ մէկը չէ՛ գործածուած մատենագրութեան մէջ. յատկապէս բակուղ ձևը նոր բառագիրների կողմից լատիներէնից տառադարձուած մի բառ է և սրա համար է որ ՀԲ համարում է «նոր բառ», իսկ ՆՀԲ (հտ. Բ, էջ 1061 ա) գնում է գաւառական բառերի շարքում: Բակղ ձևը յիշատակում է միայն Հիւբշ. 343 (իբր ՆՀԲ-ից), բայց գոյութիւն չունի ո՛չ ՆՀԲ-ի մօտ և ո՛չ էլ ուրիշ բառարաններում:*

= *Յն.* βάκλον, βάκολα, βάκολον «գաւազան, ցուպ», *որ նոյնպես փոխառեալ է լտ.* baculus, baculum *հոմանիշից. հմմտ. նաև ասոր.* ܒܘܩܠܐ bōqla «մահակ»:—*Հիւբշ. 343:*

ՆՀԲ (հտ. Ա. էջ 480 ա, հտ. Բ. էջ 924 գ. 1061 ա) գնում է պրս. باهو bāhū «ցուպ, հովուական գաւազան», *հլ. փակ «գաւազան», լտ.* baculus, bacillus, *յն.* βακτηρία «գաւազան»: Lagarde, Arm. Stud. § 335 *լտ.* baculus-*ից փոխառեալ,* Karst, *Յուշարձան 406 փակ բառի հետ՝ սումեր.* pa (pag?) «գալիսոն»:

ԲԱԿՏԵՐ «մատակ». *ունի միայն Բառ. երեմ. էջ 45:*

Համեմատել սրա հետ բակերա «մրտրուկ», *որ նոյնպէս գիտէ միայն Բառ. երեմ.: Թւում է թէ երկուսը միասին մատնանշում են* բակտեր «մտրակ» *ձևվով մի բառ, իբր յուն.* βακτηρία, βάκτρον, βακτήριον «գավազան»:

ԲԱԿՏԵՐԵԱՆ. *անստոյգ բառ, որ մեկ անգամ ունի Մագ. գամագա. «Տարփիմք ցանգ տաժել և պատսփայել և բուծել, զի բաղածեալ բեկտեացնս՝ բակտերեալ, զլեզուն զնգակին ի տատպին»: Հ. Գ. Մէնեվիշեան ՀԱ. 1911, էջ 552 Ստ. Ռոշքայի բառարանում գտնելով* բակտերեալ «զրահտեր, այսինքն զմտրուկ ուսուցանել, վարժել», *վերի բառը մեկնում է «վարժեալ»: Նախ ուզում է համեմատել յն.* βακτρεύω «գաւազանի վրայ կռթնիլ» *և* βακτηρία «գաւազան» *բառերի հետ, բայց յետոյ աւելի լաւ է համարում սրբագրել պատկառեալ:*

+ԲԱՀ, ու *հլ. (յետնաբար ի հլ.) «երկաթէ բիր» Ագաթ. Գոր. և Շմ. 70 (անտ.* բահուց), *որից* բահաւոր *(չունի ԱԲ) Առաք. պտմ. 88.* բահել «փորել» *ՀԲ (իբր նոր բառ):*

= *Հնխ.* bher- *արմատից, որի միւս ժառանգներն են (իրենց աճած ձևերով միասին). սանս.* bhrīṇāti «վիրաւորել», bhrī «կացին», *զնգ.* brīnənti «հատանեն», brōiθra «սուր բերան, սայր», bāra «սուր ծայր»,

պրս. بریدن burīdan «կտրել, բրդել» (ներկ. بُرّ burram), بیل bēl (գւռ. berd) «բահ», քրդ. birin «կտրել», bāl, bīel, ber «բահ», թրակ. βρίλων «սափրիչ», յն. φάρω «ճեղքել», φάρος «տրօր, հերկ», φαρόω «հերկել», ἄφαρος «անմշակ», ալբան. bie, birni «զարնել, բաղխել», brimë «ծակ», լտ. ferio «ծեծել, բաղխել, հարուածել», forare «ծակ ծակել», հլ. briti «մազերը կտրել, սափրել», bričĭ «ածելի», borją «կռուիլ», branĭ «կռիւ», ռուս. борона «ցաքան», броня «զրահ», бритъ «ածիլել», бритва «ածելի», լիթ. barù, լեթթ. bar'u «նախատել» (որ է «խօսքով ծեծել»), հպգ. borōn «ծակել», bora «գգիր», berjan «ծեծել», նրգ. bohren «ծակել», անգլսք. borian, անգլ. bore, հիսլ. borr «ծակել», beria «ծեծել», իռլ. bern «ճեղք», berraim «մկրատով խուզել», ևն ևն (Walde 283—4, Boisacq 1016, Kluge 66, Berneker 94, 74, 76 Trautmann 27, Horn § 212 և 257, Pokorny 2, 159, Ernout-Meillet 333): Այս բոլոր բառերի հիմնական նշանակութիւնն է «ծեծել, ծակել, ճեղքել, փորել»: Առաջին նշանակութեան հետ կապւում է բիր, միւսների հետ բահ: Բահ բառի հնագոյն ձևն է *բարհ (ինչպէս ցոյց են տալիս կովկասեան փոխառութիւնները), որ հնխ. bher արմատի հետ կապւում է այնպէս՝ ինչպէս մահ<մարհ կապւում է mer> մեռանիլ արմատի հետ: Այս *բարհ ձևի հետ կար և *բիրհ, որ զրաբարում սղուելով դարձաւ բիր «մահակ, հաստ գաւազան», իսկ գաւառականների մէջ տուաւ բիհ<պիհ, բիհր, բիհիր: Այս երկու բառերը (բիր և բահ) նշանակութեան կողմից շատ անձուկ կերպով միացած են իրար հետ: Հին հյ. *բիրհ միայն ծեծելու գործիք չէր, այլ նաև փորելու գործիք. այս պատճառով է, որ զրաբարում ունինք բրել «փորել», բրիչ, երկրաբիր, հողաբիր են (տե՛ս բիր բառի տակ). արդի գաւառականներից Ղրբ. պիհ (<*բիհ<բիհր) նշանակում է «բահ» և ո՛չ թէ «բիր». Ագլ. բռիհ՛լ, որ ծագում է *բիրհ արմատից, նշանակում է «բահել» և ո՛չ թէ «բիրով ծեծել»: Վերջապէս կենդանի է տակաւին երև. Ղղ. Ղրբ. Տփ. բիհր, բհիր «ծայրին երկաթ անցկացրած բիր՝ գետինը փորելու, նաև իբրև ցից խրելու համար, որից շղթայով շուն, տաւար կամ ձի են կապում»:

Առաջին անգամ Lag. Gesam. Abhd. 297 և Ârm. Stud. § 336 բահ հանելով բարի ձևից, կցում է գնդ. barōiθra բառին: Lag. Ârm. Stud. § 336 և Հիւբշ. Arm. Stud. 25 բահ բառի հետ համեմատութեան են գնում նաև բրել, բրիչ: Thomaschek, Deutsche Litteraturz. 3. Թ. 1883, էջ 1254 թուջ. bhargh բառի հետ: Հիւնք. պրս. جَو jah «ցեխի կամ նաւի թիակ»: P. Persson KZ 33 (1894), 292 ուղիղ է համեմատում բահ, յն. φαρόω, լտ. forare: Հիւբշ. Pers. Stud. 34 բահ=պրս. bēl<*berd: Նոյն, Ârm. Gram. 427 անտարակոյս է համարում բահ=հնխ. bher ևն համեմատութիւնները, իսկ էջ 429—430 իրարից բաժանելով բիր «փոլոտ» և բրել, վերջինը ուղում է բահ բառի հետ *bher արմատից հանել: Reichelt KZ 39 (1905), 35 բահ համեմատում է ուղիղ կերպով լիթ. bárti, barnis, հլ. bratl, branĭ ձևերի հետ: Scheftelowitz BB 29 (1905), 25 փոխառեալ է բահ՝ պհլ. *barh ձևից, որի ներկայացուցիչն է պրս. գւռ. bār «բահ»: Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձան, էջ 396 իռլ. bláll և հբրտ. bahell, buhell «կացին, բահ բառերի հետ»:

Գիմ.—Տփ. բահ, Ախց. երև. կր. Մշ. Սեբ. բ'ահ, Ռ. փահ, Խրբ. բ'այ, Ալշ. բ'ա (սեռ. բ'այի), Հւր. բոհ, Ջղ. բ'ախ, Ոզմ. բ'ոխ, Գոր. Շմ. պոհ, Մկ. Մրղ. Սլմ. Վն. պոխ, Ագլ. բէօհ (սեռ. բո'ճի), Ղրբ. պիհ (Թաղոստ գիւղ՝ պի'ճի):—Կարևոր ձևեր են Գոր. պո'ճիլ, Ղրբ. պի'ճիլ, Ագլ. բռիհ'լ «բահել»:—Նոր բառեր են բահակոթ, բահաձև, բահակտուկ, բահաբեջ, բահիճրիկ, բահափոռ:

Փոխ.—Վրաց. ბარი bari, ბარული բարուլա «բահ», ბარგა բարգա «փորել» (<*բարճել), մինգր. բարի, բուգուխ. բար, չեչէն. bahă, behi, թուշ. bahh, կիւրին. փեր, բոլորն էլ «բահ» նշանակութեամբ:

*ԲԱՀԱԴՈՒՐ «քաջ, կտրիճ». մէկ անգամ գործածում է Մաղաք. աբ. 32։

= Պրս. بهادر bahādur «քաջ, կտրիճ», որից նաև քիրդիկ. bātər, ալթալ. paattər, փռուս. bohatýr, ռուս. богатырь, հունգ. bátor ևն. բուն աղբիւրը համարւում է մոնգոլ. baγadur (տե՛ս Berneker 66, Будаговъ 1, 297)։

Ուղիղ մեկնեց նախ Պատկ. հրատ. Մաղաք. աբ. էջ 64։

*ԲԱՀԼԻԿ «պատերազմական զրահ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Սեբէոս, հրտր. Պատկ. էջ 67 «Ապա ի վերուստ իմն հասեալ օգնութիւն՝ պատառի վերտ և ամուր (տպ. վերտևամուտ) բահլիկ և կուռ զրահին ամրութիւն արքային Քուշանաց ի նիզակէն Սմբատայ»։ Նոյնից առնելով Սիմ. ապար. 97՝ «Լուծեալ զվերտմուտ բալհիկ զրահին»։

=Պհլ. *bahlīk ենթադրեալ ձևից, որ հայերէնի հետ հաստատում է պրս. بهله bahla, որ Դ մեկնում է «ձեռնոց. և է այն՝ զոր ազանին ի ձեռս առ ի ոչ պատառել, յորժամ առնուն ի ձեռս զորական թռչունս». բառիս հին նշանակութիւնը պիտի լինէր ուրեմն «ձեռնապահ զրահ»։—Աճ.

ԲԱՀՂԱԿ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Սեբէոս, հրտր. Պատկ. էջ 64 «Եւ երթեալ յանդիման լինել թագաւորին ի մեծ անուանել դաստակերտին. և ելեալ արտաքս ի դահլիճն, նստի ի բոր և ի բահղակ (ձեռ. պահղակ)»։ Վերջին երկու բառերը տպագրում համարուած են յատուկ անուն, որ սխալ է. բոր նշանակում է «գորգ» և փոխառեալ է պարսկերէնից. բահղակ ևս պիտի լինի մօտաւոր նշանակութեամբ մի բան, որով թագաւորական պալատի դահլիճը զարդարուած էր։

=Անշուշտ իրանական փոխառութիւն է։ Կայ պրս. پهل pahl «մեծութիւն և շքեղութիւն», որ տալիս է հյ. *պահլ կամ պահղ, բայց յարմար չէ։

*ԲԱՀՄԱՆ «փշաքեղ բոյսը. լտ. behmen» Բժշ. Ամիրտ. ունի միայն Հիւս. § 289։

=Արաբ. بهمن bahman «փշաքեղ, ծուռ արմատով մի բոյս է՝ կարմիր կամ սպիտակ» (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 602 և Շթայնգասյդէրի հաւաքածուն՝ WZKM 11, 321). սրանից է նաև գիտական լտ. անունը՝ behmen։

Ուղիղ մեկնեց Հիւս. § 3077։

*ԲԱՀՈՒՆԴ «ակունքներով զարդարուած մի տեսակ կանացի զարդ». մէկ անգամ ունի Բղթ. դաշ. 17. նոյն բառը բահուրանդ ձևով գիտէ Հին բռ. «Մեհեանդ. անթանոց կամ բահուբանդ»։

=Պհլ. գռ. *bāhūvand «ապարանջան կամ թևի մի ուրիշ տեսակ զարդ» ենթադրեալ ձևից. սրա բուն պհլ. ձևը պիտի լինէր bāzūband, որի նոր պրս. ձևն է بازوبند bāzūband «յուռթ. և թարգմանի բազկակապ, ուր գրեալ մաղթանս ինչ՝ կապեն ի բազուկ», կազմուած է بازو bāzū «բազուկ» և بند band «կապ» բառերից.—bāzū բառի գռ. bāhū ձևի ժառանգները դանում ենք դեռ նորապարթիկ bōhū, bohī, bāhōi, bōī, bāī (<*bāhī) գաւառականների մէջ (տե՛ս Horn, էջ 38, § 167). իսկ vand-band «կապ» բառի համար հմմտ. նոր. պրս. գռ. wándam, windam (Horn, էջ 50, § 219), հյ. մեհեանգ, պախճաւանդ, պարաւանդ, դանդաճաւանդ, և սրանց համեմատ նաև վրաց. ბაზვანდი բազվանդի=ბაზმანდი բազմանդի «բազուկին կապելու յուռթ», որ ներկայացնում է պհլ. *bāzūvand ձևը։—Հիւբշ. 116։

Առաջին անգամ ՆՀԲ համեմատեց պրս. پیوند payvand «կապ» և پایبند pāyband «ոտնակապ», որոնք թէ՛ ձևով և թէ՛ իմաստով յարմար չեն։ Böttticher, Arica 75, 228 պրս. باخ bāx «դէմքի դեղեցկութիւն, չանցնող դրամ». Lag. Urgesch. 606 սանս. bhāsvant «մարդարտաձեւ վզնոց» և մեհեանգ բառերի հետ։ Սրանց բոլորին հակառակ է Lag. Arm. Stud. § 337 և պահում է միայն բառի վերջամասը՝ -ուանդ=bandh «կապ», Հիւբշ. Pers. Stud. 23 պրս. bāzū բառի հետ։

ԲԱՀՈՒԿ «գեղեցիկ». ունի միայն Բառ. երեմ. էջ 50։

ԲԱՀՐԱԿ «ընդեղէն կամ արմտիք ինչ անծանօթ». ունի միայն ՋՔ, իբր նոր բառ։

ԲԱՀԲԱԿ «մանաւանդ, ամէնից աւելի». միջին հյ. բառ. ինչպէս պիտեն Մամբ. դատ. կջ 39, 188, 189 և ուրիշներ (նորայր, Բառ. ֆր. surtout բառի տակ)։

*ԲԱՀԲԱՅ «իբր տուրք տալու տասանորդ արմտեաց». մէկ անգամ ունի Մեծոփ. 111 «Մարդագլուխ 40 թանկայ առնուն, թո՛ղ զբահրայ և զչարէք»։

=Պրս. بهرا bahra «մաս, բաժին, շահ, օգուտ, հասոյթ» բառն է։

ԲԱՂ «կից, յար» նշանակութեամբ հին և առանձին անգործածական արմատ. ոսկեդարեան մատենագրութեան մէջ աւանդուած է երկու ձևով. պարզ բաղայ «սուտ պատճառ, բարուրանք» Եփր. արև. 153 և կրկնուած բաղբաղայ «կցկցեալ սուտ պատճառանքներ, մեղադրանք» Դատ. գ. 4 և Ոսկ. կող. 594. աւելի սովորական է յետին մատենագրութեան մէջ. ինչ. բաղել «կցորդել, միացնել» Նչ. քեր. Մխ. ապար. (Բառ. երեմ. 46 մեկնում է «պատել»), բաղաբաղել «կցկրցել, սուտ պատճառներ մէջ բերել» Մանգ. բաղայ «սուտ պատճառներ, բարուրք» Եղիշ. դտ. 184. Կաղանկտ. Պիտ. Փիլ. Ղևոնդ է. էջ 21. բաղբաղանք Նանայ. Վրք. ոսկ. Մագ. բաղբաղել «սուտ պատճառներ յօդել» Փիլ. Խոր. Պիտ. Լմբ. մատ. 76. «զբաղեցնել» Նեղոս 685 (այլ խմբ. զբաղեցուցանել). անբաղայ «անստգիւտ» Փիլ. լին. Պիտ. անբաղայապէս Յհ. իմ. առ. Յհ. կթ. կամ անբաղապէս Խոսրովիկ. անբաղբաղայ Փիլ. կողաբաղ «կողակից, կինը» Անյ. քեր. առ Մագ. Երզն. քեր. Նչ.—Նոյն բառն է, որ դարձել է նաև նախամասնիկ՝ համապատասխան հյ. նամ, շաղ, շար, յար, կից, յն. συν, συλ, συγ, συμ, συρ (լտ. con, col, cum, com, cor) մասնիկներին, որով սերկօրէն թարգմանուած են շատ յոյն բառեր. ինչ. բաղադրել = συντίθημι, բաղազան = συγγενής, բաղաձայն = σύμφωνος, բաղդատել = συγκρίνω, բաղկանալ (<բաղ+կայանալ) = συνίστημι ևն ևն։ Անստոյգ բառ է բաղածել Մագ. գամագտ. որի վրայ տե՛ս Հ. Գ. Մէնէվիշեան ՀՍ. 1911, 551 (Հին բռ. մեկնում է բաղածութիւն «վնաս, տկարութիւն»)։—Այս արմատից ծագած ուրիշ ածանցներ են զբաղիլ և բաղեղն, որոնց վրայ տե՛ս առանձին։—Բաղ արմատի հետ նոյն է փաղ, որի վրայ տե՛ս նոյնպէս իր տեղում։

Նշիր լծ. Քրք. պիլէ «միասին». ոմկ. պըլլել, յն. πλέκω «հիւսել», լտ. plico «ճկել, ծռել» (տե՛ս բաղեմ բառի տակ)։ Տէրվ. Altarm. 11, Մասիս 1882 մայիս 24, Նախալ. 49, 95 բաղայի, բաղբաղայի դնում է բառ արմատից (տե՛ս և բալ)։ Հինք. բոլորն էլ Քրք. بغ baγ «կապ» բառից։ Savelsberg, Lyk. Beitr. II 46 լիւկ. bala բառի հետ, որ գտնում է nasabala «դիակների հաւաքում» անստոյգ բառի մէջ։

ԲԱՂ «միայն», որից ոչ բաղ «ո՛չ միայն» նորագիւտ բառ, որ մի անգամ գտնում եմ գործածուած Սասն. 33 «Զի թէ դշխոյն և նիւնուէացիքն գատեն, ո՞րչափ ևս սա. և զի ոչ երկոտասան միայն աթոռ, քանզի և ոչ բաղ ուստերք Յակոբայ յերկրէ, այլ յոլով ազգք ըստ լեզուացն և ըստ թուոյ հրեշտակացն»։—Նոյն բառն է, որ Ամատունի (Հայոց բառ ու բան, էջ 84 ա) գտել է էջմիածնի № 395 Ձեռագիր բառարանում՝ մեկնուած բաղ «մի (մէկ)»։

Թուում է թէ եբր. בַּל bal (= արաբ. بل bal) «ոչ, ոչ իսկ, դեռ ոչ» բառն է. Սասնեցին շատ է սիրում գործածել գուտ եբրայեցերէն բառեր տեղի-անտեղի։—Ա՛ն.

ԲԱՂԱԿՏԻ «պատերազմ կամ կագ». ունի միայն Բառ. երեմ. էջ 46։

*ԲԱՂԱՄ, որից կայ միայն բաղամ փայտ «որդան փայտ, Բրազիլեան փայտ, bois de Brésil, լտ. caesalpinia brasiliensis L. կամ lignum brasiletto?» ունի միայն ՀԲառ. § 291, առնելով Արեւելահայերէնական գրքերից։

=Քրք. بقام baqam կամ آغاجی بقام baqam aγaǰə «բրազիլեան փայտ» (տե՛ս Մ. Աբիկեան. Օսմ. բառ. Պօլիս 1888, էջ 182)։ Քրք. բառը նշանակում է նաև «2. կարմիր ներկ. 3. սուտ ներկ. 4 սուտ, կեղծ, շինծու». վերջին նշանակութեամբ գործածական է բառս այժմ էլ Պօլսահայ ռամիկ լեզուի մէջ՝ baxam ձևով։ Բառիս բուն աղբիւրն է պրս. بكم bakam, որից արաբ. بقم baqqam (ըստ կա-

մուս, թրք. թրգմ. Գ. 402) և այստեղից էլ *թրք.* بقم baqam։—*Կամուս* նկարագրում է *այս ծառը՝ իբրև մեծ ծառ, տերևները նման նշենու տերևներին, կեղևը կարմիր, որից պատրաստում են կարմիր ներկ. օգտակար է նաև դանագան հիւանդութեանց համար։— Աճ.*

*ԲԱՂԱՆԻՔ, -եաց, -եօք *(միայն անեզաբար գործածուած) «բաղնիք, տաքուն, համամ. 2. ջերմուկ» Եզեկ. իդ. 40. Ես. պատ. Խոր. Սեբ. 55.—անսովոր եզակի ձևը գտնում եմ գործածուած մի անգամ Վրք. Ա վկ. Բ. 356* բաղանի մի. *միջին հյ. յգ.* ձևն էր բաղանեստան *(հմմտ. Սոկր. եկեղ. պատմ. էջ 112 տըպուած* բաղանեստ այն, *որ պէտք է կարդալ* բաղանեստան *յգ. հյգ.)։ Այս բառից են* բաղանապան *Յայսմ.* բաղանապետ *Փիլ. Ճառընտ.* բաղանաւոր *ԱՔ.* բաղանէպան *Ճառընտ. առաջին երեքը ա յօդակապով, վերջինը՝* բաղանէպան *(կարդա՛ բաղանեպան)՝ ըստ օրինի ունի է (ինչ. *գինիապան>գինեպան). ռամկական ձևեր են* բաղնապան *Գնձ.* բաղնեպան *Ոսկիփ.* բաղնելուայ *«բաղանիքից նոր դուրս եկած» Քուչ. 79 (չունի ԱՔ)։*

= Ծն. βαλανεῖον «բաղանիք» (որ ըստ Boisacq *113 ծագում է հնխ.* gʷelē *«ժորիլ» արմատից)։ Նշանաւոր էին բիւզանդական հասարակական բաղանիսները։ Իբրև քաղաքակրթա՛ն տերմին՝ այս բառը իրի հետ տարածուեց շատ լեզուներում. այսպես՝ ասոր.* حمّا balānā, *արաբ.* بلّان ballān *(Կամուս, թրք. թրգմ. Գ. 118), լտ.* balineum, balneum, *սո. լտ.* balnia, *ռմկ. *baneum, որից ֆրանս.* bain, *իտալ.* bagno, *սպան.* baño, *պորտ.* banho, *սլ.* banya, *ռուս.* баня, *նյն. (յետ փոխառեալ)* μπάνιο *ևն։ Հայերէնի մէջ բառիս անեզական գործածութիւնը համապատասխան է ուրիշ շատ լեզուների, որոնց մէջ էլ «բաղանիք» յոգնակի է. ինչ. հոմեր. յն.* λοετρά, *ֆրանս.* bains *(տե՛ս* Meillet MSL *17, 22) ևն։—Հիւրշ. 343։*

ՆՀԲ զարմանալի է, որ չունի բառիս մեկնութիւնը։ Ուղիղ մեկնեց նախ Այվազովսքի, Յղ. հնչման 15։ Ղ. Աղայեան, Հղրիւր 1889, էջ 6 մեզանից է դնում վրաց. ბანიო აբանո *«բաղանիք», որ սակայն բնաւ յարմար չէ։ Աճառեան (անձնական) պրս.* pāk ū nīk *«մաքուր և լաւ» բառերից է համարում ձևացած։*

Դիմ.—Ննխ. Պլ. բաղնիք, *Ախց. Կր. Մշ. Սեբ. Սչ.* բ'աղնիք, *Խրբ.* բ'աղնիխ՛, *Ալշ.* բ'աղնիք, բ'աղնիս, *Երև. Սլմ. Տփ.* բաղնիս, *Ռ.* փաղնիք, *Տիգ.* փողնիք, *Զթ.* բ'աղնըք, *Մկ. Վն.* պողնիս, *Մրշ.* պաղնաք *(ըստ Գաբրիկեան, Ամէն. տարեց. 1922, 325)։ Նոր բառեր են՝* բաղնիսէշ, բաղնասրած, բաղնապան, բաղնեաւոր, բաղնասատէր։

*ԲԱՂԱՆՏ. *մէկ անգամ ունի Կիւրղ. Թագ. հետևեալ հատուածում՝ «Կարիճն գործի ինչ տանջանաց է, նուրբ և երկայն իբրև զբաղանտ, զոր Հայերէն բուքն ասեն. զոր լնուն աւազով և այնու հարկանէն ի գան»։ Ըստ իս նշանակում է «քսակ, տոպրակ, պարկ», իբր՝*

= յն. βαλάντιον «քսակ, պարկ», որից փոխառեալ է նաև վրաց. ბალანტი *բալանտի «փոքր պարկ, քսակ»։—Աճ.*

ՆՀԲ բառս մեկնում է «բուք» և լծորդ է դնում պրս. بلند baland *«է վերին փայտըն շրջանակաց դրան, պատուհանի և այլոց»։ (Բայց «բուք» դրուած է վերևում կարիճ բառի համար, որ է «փշոտ գաւազան» և որ կարելի չէ աւազով լցնել։ Ուստի բաղանտ չի կարող «բուք» լինել։ Անտեղի է նոյնպէս պրս.* baland, *որ միայն ձայնապէս է նման և նշանակութեան կողմից կապ չունի)։ ՓՔ մեկնում է «դուռն վերին բարաւորի փայտը», որովհետև այսպէս է մեկնում ՆՀԲ իր լծորդ համարած պրս. պելէնտ բառ։ ԱՔ դնում է «ծեծելու փայտ»։*

*ԲԱՂԱՍԻՈՆ *«վայրի նռան ծաղիկ» Հին բռ. որ և* բաղաւորոն *Գազիան. ունին միայն Բառ. երեմ. յաւել. 565 և ՀԲուս. § 2227։*

= Ծն. βαλαύστιον «վայրի նռան ծաղիկ», որից և լտ. balaustium, *ֆրանս.* balauste *նոյն նշ. ըստ այսմ մեր բառերն էլ պէտք է ուղղել* բաղաստիոն։

Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Բառ. ֆր. 123 բ և յետոյ ՀԲուս. անդ։

ԲԱՂԱՐՋ, ի–ա, ո *հլ.* «*անխմոր հաց (իբր դոյական) կամ անխմոր, չխմորուած (իբր ածական)*» *ՍԳր. (գրուած* բաղարճ *Եփր. ա-ւետ. 279, 280). որից* **բաղարջակերք** *ՍԳր.* **բաղարջբնծայ** *Նար. էջ 252.* **բաղարջեայ** *Եպիփ. ծն.* **բաղարջիկ** «*փոքրիկ բաղարջ հաց*» *Վստկ. 102. Նաև* **բաղրջուկ** «*մոլոշ բոյսը, փիփերթ,* malva» *Բժշ. (վերջինիս նշանակութեան զարգացման համար համմտ. արաբ.* خُبّاز xubbāz «*մոլոշ*»՝ xubz «*հաց*» *բառից. ռուս. գռ.* калачики «*մոլոշ*»՝ калачь «*ճերմակ հաց*» *բառից. համմտ. նաև հյ.* ճճղկաբլիթ, հացուպաճիր, ճճղկի հաց):

Καρολίδης, Γλωσσ. συγκρ. *փոխառեալ է դնում կապադովկիական* παγάρτζι *հոմանիշից, որովհետև այս բառի արմատը կարծում է* παγ, *որ կայում է յն.* πάγος «*սառած*», πήγνυμι «*սառչիլ*», *լտ.* piger «*ծոյլ*», *սանս.* paǰras «*հաստատուն*» *բառերին: Հիւնք. թրք.* boγača «*կարկանդակ*» *բառից: Յակոբեան, Բիւզանդիոն թ. 742 արաբ.* فطير fitr «*ծոմը բանալ*» + *պրս.* چه ča *նուազական մասնիկով:*

Գիւտ.—Ալշ. Մշ. բ'աղարջ, *խրբ.* բ'աղարշ, *Գոր. Շմ.* պաղարճ, *Մկ. Վն.* պmղաոճ, *Ղրբ.* պէ'ղարճ, *Տփ.* բա'ղաճ, *Ախց. Երև. Կր.* բ'աղաճ, *Զթ.* բ'աղաջ', *Սեբ.* բ'աղաշ, *Մրզ.* պmղmճ, *իսկ Ակն. Մշկ. բառս երեան է գալիս բաջուկ ձևով և «կարկանդակ» նշանակութեամբ. Պրտ.* բ'աջ'ուգ «*մի տեսակ աղցան*» (<*բաղրջուկ ձևից).—այս բաղարջ բառի և թրք.* boγača «*կարկանդակ*» *բառի խառնուրդն է ներկայացնում Համշ.* պուղարջա «*կարկանդակ*»:—*Նոր բառեր են* **բաղարջնախշի, բաղարջուկ, բաղարջ-չաղարջ:**

Փոխ.—Վրաց. ბლაღჯო *բլթրջի «բաղարջ»,* ბლაღჯობა *բլթրջորա «բաղարջակերաց ուօն», կապադովկ. յն.* παγάρτζι «*բաղարջ*», παγάρτζικο ψωμὶ «*բաղարջ հաց*» (Καρολίδης, Γλωσσ. συγκρ. *94 և* Bugge KZ *32, 11) որ, ինչպէս γ=ղ ձայնից երևում է, ուշ ժամանակի փոխառութիւն է հայերէնից. այսպէս նաև վրաց.* ბაღაჯი բաղաճի «*բաղարջ*» (*Զուբինով 99), որի մեջ ღ=ղ յետնաթեան նշան է, մինչդեռ բլթրջի հին է: Ուռ.* պաղաճ «*բաղարջ*»:

ԲԱՂԱՓՈՒՇ *տե՛ս Բուշ:*

⊙ԲԱՂԲԱՋ «*պատռտական ցնդած խօսքեր*». *որից ունինք* **բաղբաջանք** *Սերբ. 196.* **բաղբաջել** *Մագ. Թղ. 136.— և յաւելուածով* **բաղբանջանք** *Ոսկ. յհ. ա. 3 (էջ 51. չունի ՆՀԲ). Տաթև. Ա. § 63.* **բաղբանջել** «*ցնդաբանել*» *Ուռհ. էջ 225.* **բաղբանջումն** *Անան. կկ.:*

=*Բնաձայն բառ, կրկնուած բա ձայնից, որի վրայ աւելացել են ղ, ճ, ջ ածանցիչները. համմտ.* **բարբաջել** *և* **բարբանջել:**—*Ա՛ճ.*

Այս մեկնութիւնը տուել եմ նախ ՀԱ. 1899, էջ 204, 234: H. Petersson, Arische und Arm. Stud. *74, 75 տեսնում է, որ ճջ ժամանիկ է, իսկ բաղարմատը գնում է հնխ.* bhel «*գոչել*» *արմատից. համմտ. հհբւս.* belja «*բառաչել*», *լիթ.* bylà «*խօսք*», *հպրուս.* billīt «*խօսիլ*», *հյ.* բողոք, *լտ.* balbus «*կակազ*» *ևն:*

* **ԲԱՂԲԱԿ**, *որ և գրուած է* **բաղբաք, բաղբաբ, բաղբաղ.** *մի տեսակ բոյս է, որ բժշկապետերը մեկնում են «չրաբար, սամիթ կամ տուզա». սրանք իրարից բոլորովին տարբեր բաներ են.— նշանակութիւնը ճշտում է միայն՝*

=*վրաց.* ბალბა **բալբա** «*մոլոշ*». (*Զուբինով, էջ 623 մեկնում է բառս «վրաց. մոլոխի», որ է «մոլոշ,* malva, *փիփերթ». իսկ էջ 94 մեկնում է ռուս.* проскурнякъ, *որ մերթ հասկացվում է «մոլոշ,* malva» *և մերթ «տուզա,* althaea». *այս երկու բոյսերը (տուզա և մոլոշ) յաճախ են շփոթւում իրար հետ (համմտ. ֆրանս.* mauve «*մոլոշ*» *և* guimauve «*տուզա*»). *կայ յն.* μάλβαξ, μάλβακον «*մոլոշ*» (Bailly, Dict. gr.-tr. *1222), որի համար* Boisacq *604 ծան. ասում է, թէ չափազանց կասկածելի է: Հայ և վրացի ձևերը ո՛չ միայն ջնջում են կասկածը, այլ և* μάλβακον *ձևի հետ հնթադրում են նաև *βάλβακον, որ հյ. և վրաց. ձևերին իբր մայր ծառայած պիտի լինի: Բաս ասեմ հյ.* **բաղրակ** *պէտք է գնել յունարէնից:—Ա՛ճ.*

Նորայր. Հայկ. բառաք. 105 «ձայնիւ

նման» է գտնում աղբղբուկ բառանունի հետ։ ՀԲուս. § 290 յիշում է հնդ. balbaka *«մի տեսակ բրնձանման ընդեղէն,* eleusina indica*», որ անշուշտ պատահական նմանութիւն ունի։ Այսպէս են նաև գնչ.* bulbok *«ծաղկի բաժակ»* (Vaillant, Gr. des Bohémiens, *էջ 99), սոր.* ܦܠܒܓ plbg *«gossypium, բամբակենի»* (Brockelm. *272). վրաց.* ბალბალუკა *բալբալուկա «проскурина», որ է* evonymus verrucosus L. *Ակինեան ՀԱ. 1930, 496, 40 Գաղիանոսի մէջ բառս մեկնուած է գտնում «սպալոն, սպեթղոն», որ համարում է յն.* σπλήνιον=*լտ.* chrysosplenium *«մի տեսակ բոյս, որ օգտակար է փայծաղինն»։*

Գիւմ.—է. ալբա *«մոլոշ, փիփերթ»* (*նոր փոխառութիւն է վրացիերէնից). կայ և բաղբուկ բոյսը Մշոյ բարբառում, բայց չգիտեմ թէ յատկապէս ի՛նչ բոյս է նշանակում։*

ԲԱՂԲԱՃ *«կերակուր ի մսոյ և ի հացէ.* pâte de viande*». ունի միայն Քաջունի, հտ. Բ. 277, Գ. 32։*

Բաղեղն *(սեռ. բաղեղան՝ ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «պատատուկ բոյսը, լտ.* hedera helix L, *ֆրանս.* lierre, *թրք. սարմաղուղ» Փիլ. լիւս. Նեղոս 656. իբրև ռամկաձև՝ բաղեղ Բժշ. Գաղիան.— գրուած է նաև բառեղ, բարեխ Գաղիան. (ըստ ՀԲուս. § 312)։*

=Կազմուած է բաղ «կից, յար», բաղել «կցել, միացնել» արմատից. կրկնութեան ձևի համար հմմտ. պատ–ատ–ել, փաթ–աթ–ել. *իսկ իմաստի զարգացման համար հմմտ. հյ.* պատաղիճ, պատատուկ *«բաղնղ» (պատել բալից), լտ.* convolvulus *«բաղեղ»* (convolvo *«ոլորաիլ, պատատիլ» բալից), յն.* ἕλιξ *«մի տեսակ բաղեղ»* (ἕλιξ *«ոլորուն, գալարուն» բառից), թրք.* sarmašəq *«բաղեղ»* (sarmaq *«պատել, փաթաթել» բալից)։ Տե՛ս հուլպա բառի տակ տուած ձևերը. նկատել յատկապէս վրաց.* შამბალოლა *շամբալիլա (փոխառեալ պարսկերէնից)։*

Նշխ հանում է բաղիլ *բալից, որով առաջին անգամ ուղիղ մեկնողը ինքն է։* Lag. Urgesch. *491 ուզում է կցել* գբաղիլ և պատաղիճ! *բառերին։ Հիւնք.* աղեղն *բառից։ —* Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 101 -եղն մասնիկով* բաղել *«binden, կապել» բալից (մասնիկի համար համեմատում է* ասեղն, աղեղն, պճեղն և առեղն*)։*

Գիւմ.—Ալշ. բ'աղեղ, *Զթ.* բ'աղէղ, աղէօղ, աղէղ *«մի տեսակ բոյս է, որից պատրաստում են բաղեղապուր կոչուած կերակուրը».— Ոզմ.* բ'ոռեղ, *Շտ.* պառեխ, *Մկ.* պոռէղ, *Ագլ.* բա՛ռաղնը.— *այս ձևերը ճշտում և հաստատում են Գաղիանոսի* բառեղ, բարեխ *ձևերը. բոլորն էլ կազմուած են տարանմանութեամբ (*dissimilation*)՝ կրկին ղ-երից մին վերածելով ռ կամ ր։— Նոյն* բառեղ *բառը գտնում ենք նաև Նր. Վն., բայց իբրև «մի տեսակ դաշտային ծաղիկ»։*

Փոհ.—կայ պրս. لبلبش šanbalīl, *որ և* بلبلیش šanbalīla, *որ Դ մեկնում է «բոյս ինչ բազմաճիւղ և սպիտակածաղիկ. թրք.* boy toxumə, *արաբ.* بلبش hulba*» (տե՛ս Կամուս, թրք. Բրգմ. Ա. 113)։ Այս անունով Թաւրիզի Բուրքերը հասկանում են մի տեսակ դաշտային խոտաբոյս, որ ոչխարը շատ է սիրում ուտել. տալիս է ոսպի նըման, բայց անկանոն եղերքներով շատ կարծրը մի սերմ, որ պարսիկները ծեծելով՝ իւղի մէջ տապակած ուտում են։ Այս սերմը կարևոր չամանն է, որով ապուխտ են պատրաստում։ Առատութեամբ աճում է Ղարադաղում, որ մեր հին Փայտակարանի նահանգն է։ Բառս պարսկերէնով կամ Բուրքերէնով չի կարող բացատրուել, ուստի կարծում եմ, որ հյ. *շնբաղեղ ձևից փոխառեալ մի բառ է։ Ուրիշ է պրս.* بلبلید šanbalīd *ծաղիկը, որի վրայ տե՛ս շամշիտակ։*

**ԲԱՂԵՆԱ «կէտ անասունը». ունի միայն Փբ. Բուի նոր փոխառութիւն։*

=Իտալ. balena, *որից նաև թրք.* balena. *բուն մայրն է լտ.* ballaena, *որ ո՛չ թէ յն.* φάλαινα *համանիշից է փոխառեալ, այլ հիւսիսային բալկանեան անծանօթ մի լեզուից (տե՛ս* Walde *82 և* Boisacq *1012)։— Ան.*

ԲԱՂԷՋ. *առանձին անդրծածական արմատ, որից կայ բաղէզութիւն անստոյգ բառը. մէկ անգամ ունի Ջքր. կթ. «Ապա թէ ասիցէ ծառայն չար ի բաղէզութեան իւրում, ասէր իմ յամէ...»։*

Նշ՚ր մեկնում է «իմա՛ կամ ընթերցիր բախածութիւն, անմտութիւն, և կամ իբր համախոհութիւն եզականի ընդ անձին իւրում և ընդ սրտի». յիշում է նաև արաբ. mulahaza «մտածութիւն»։ Ջ՚ր գրում է բառս բաղեղութիւն և մեկնում «միայնութիւն կամ խորհելն ընդ միտս իւր»։

ԲԱՂԹ. *անյայտ իմաստով բառ, որ իբր օրինակ յիշում է Բր. քեր. էջ 9. այս միևնոյն բառը առուգրանելով Համամ. քեր. 256 առում է. «բաղթ. թոյն է թուլագոյն և տխուր» (այսինքն՝ թէ բաղթ բառի մէջ՝ վերջատառ թ նշանակում է թուլութիւն և տխրութիւն)։ Տխրութեան հետ կապելուց՝ ենթադրում եմ, որ խանգարուած գրչութիւն է և պէտք է կարդալ* բաւթ = թօթ *«վատ կամ տխուր լուր»։—Աճ.*

Այս մեկնութիւնս տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 102։

ԲԱՂԻՈՎՔ *«փուփոխումն». ունի միայն Բառ. երեմ. էջ 47։*

*ԲԱՂԻՍՏՐ կամ ԲԱՂԻՍՏՐ *«նետաձիգ աշտարակ, նետ նետելու պատերազմական մեքենայ» Ա. մակ. ը. 51. «նետ» երեմ. Բ. 8 (որ սխալմամբ Մխ. երեմ. մեկնում է «սուր հառաչայր, զոր ունին զինուորք ի մարտակս երիվարաց» (նոյնը բառացի կրկնում է Բառ. երեմ. էջ 45)։— Առաջին նշանակութեամբ և բաղիստ ձևով ունի Նորագիւտ բ. մնաց. իզ. 15 «եւ արար Ողիա յերուսաղէմ մեքենայս խորհրդովք իմաստութեան, զի լիցին ի վերայ աշտարակացն և ի վերայ անկեանցն բաղիստս և վէմս մեծամեծս»։ (Սովորական թարգմանութիւնն ունի «ձգել նետս և քարինս մեծամեծս», համաձայն յունարէնի՝ որ է* βάλλειν βέλεσι καὶ λίθοις μεγάλοις)։

= Յն. βαλίστρα *«քարաձիգ մեքենայ», որ ծագում է* βάλλω *«նետել, արձակել» բայից. սրանից են փոխառեալ նաև լ.* ballista, *ֆրանս.* baliste, *ռուս.* баллиста, *ասոր.* ܒܠܣܛܪܐ blstrs *կամ* ܒܠܣܛܐ blsts (Brockelmann, *էջ 39ա, երիտան էլ առանց ձայնանիշի*) *ևն։ Յունարէն բառը չգիտէ* Bailly, *չէ՛ գործածուած Ա. մակ. ը. 51 և Բ. մնաց. իզ. 15, իսկ Երեմ. Բ. 8 ունի* βολίς, *որ է «նետ». լիշում է միայն* Sophocles, Greek lexicon, *էջ 296ա՝ վկայութեան կոչելով Պրոկոպիոս (543 թ.), Մաւրիկիոս (607 թ.) և Լևոն Փիլիսոփայ (911 թ.)։ — Հիւբշ. 342։*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀր, յետոյ Նշ՚ր ևն։

ԲԱՂԽԵԼ *տե՛ս Բախ։*

ԲԱՂՁ, ի հլ. *«փափագ, իղձ» Պիտ. որից* բաղձալ *Պիտ. Փիլ. Նար.* բաղձանալ *Փիլ. Մանդ.* բաղձնուլ *Սարկ. ՔՀ.* բաղձանք *Փիլ. Պիտ. Նար.* բաղձալի *Եղիշ. Փարպ.* բաղձալիս *ՅՃԽ. Գնձ.* բազմաբաղձ *ՅՀ. կթ.* բազմաբաղձիկ *Պրպմ.* երեքբաղձեան *Ճառընտ.* մեծաբաղձ *Խոր.* հայրենաբաղձութիւն *(նոր բառ)։*

Նշ՚ր (բաղձալի *բառի առակ)* բա *և իղձ բառերից։* Böttticher ZDMG *1850, 351 և* Arica *88, 439 առնակրիտ.* vāmčh։ *Տէրվ.* Altarm. *60 հպրս.* bərəǰa *«փափագ»։ Նոյն, Նախալ. 60 հնխ.* agh, igh *արմատից է հանում առնս.* īh, *յն.* ἰχανᾶν *«ցանկալ», լտ.* egeo *«կարօտիլ», հյ.* բաղձ, իղձ<բ-աձ-ղ, իձ-ղ. *իսկ էջ 96, հնխ.* bharg *արմատից գլնում է առնս.* bhrāǰ, *գնգ.* barāǰ *«շողալ»,* bərəǰe *«անձուկ», յն.* φλέγω *«այրել», լտ.* flagrari *«բորբոքիլ» և հյ.* բարկ, բարկանալ, բաղձալ։ *Հիւնք.* աղցք *բառից։ Գաղանճեան, Արև. մամ. 1902, 75* բ *մասնիկով* իղձ *բառից։* Patrubány *ՀՄ. 1906, 343 Տէրվիշեանի վերջին մեկնութեան պէս։* Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 128 օսս.* bällun *«ցանկալ, նախանձիլ» բառի հետ հնխ.* bhelg'h *արմատից, որի պարզական* bhel *արմատից են լիթ.* balvas, *լեթթ.* balwa *«նուէր»։*

Գիմ.— Ակն (Կամրկապ գիւղում) կայ բ՚ախձուկ (ըստ Մաքսուդեանի)։

ԲԱՂՇՏԱԿ *տե՛ս Բաշխ։*

ԲԱՂՈՒԿ «նարինջ». *առաջին անգամ գործածել է Անանեան, Բառ. աշխ. -գրբ. 1769, որից էլ Օղուլլուխեան, ՓԲ և ՀԲուս. § 3301 (Նորայր ՀԱ. 1924, էջ 547)։*

ԲԱՂՈՒՆ «պտուղ վշտաց». *ունի միայն Բառ. երեմ. էջ 47։*

*ԲԱՂՍԱՄՈՆ «բալասան». գրուած է բաղսամովն *Ոսկ. ա. տիմ.* բաղսամոս *Վեցօր. էջ 101.* բաղասամովն *Ոսկ. երր.* բաղասամոն *Գաղիան.* վաղսամ, վաղսամոն *Պիսիդ. տպ. Վիեննա. 1900, տող 911.* բալասամին *Տաթև. հարց. 604։ Ըստ* Анненковъ-*ի բուսաբանական բառարանի, էջ 61 ա՝ այս է «հինայի ծաղիկը, ֆր.* jalousie, balsamine des jardins», *գիտական անունով* balsamina hortensis Dc.

= *Յն.* βάλσαμον «բալասանի թուփը և նրա իւղը», βάλσαμος «բալասանի թուփը», *ըստ այսմ յիշեալ ձևերից ճշտագոյնն է* բաղսամոն.—բաղսամոս *գալիս է* βάλσαμος *բառից, իսկ* վաղսամ, վաղսամոն՝ *յն. բառի հին տատագարձութիւններն են. համմ. նաև* ապրսամ *և* բալասան, *որոնցից առաջինը փոխառեալ է ասորերէնից կամ պարսկերէնից, իսկ երկրորդը արաբերէնից։ Ցոյն բառի ծագումը անհասկանալի է՝ քան* Boisacq *114։—Ա՛ն.*

Զարմանալի է որ ո՛չ Lagade *և ո՛չ Հիւբշման չեն յիշում այս բառը։*

ԲԱՂՏԻ «շարաբախտ, վատ, գէշ». *նորադիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վեցօր. 119 «եւ առաւել բարանչանամ ընդ այնս՝ որ հաւատան նոցա դկեանս իւրեանց, մեկնել զբարի կամ զբաղատի կեանս նոցա» (խօսքը բախտ դուշակող ների մասին է. զարմանում եմ, ասում է Ս. Բարսեղ, որ մարդիկ իրենց բարի կամ չար բախտը նրանց են մեկնել տալիս)։—Փափագելի էր յունարէնի համեմատութիւնը։*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատէն. Ա. 157։ Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 179 ուղղում է բախտի «բախտաւոր»։ *Այս դէպքում ապաւելի էր եւ և ո՛չ Թէ կամ։*

ԲԱՂՐՋՈՒԿ *տե՛ս Բաղարջ։*

ԲԱՂՓՈՒՆ *տե՛ս Բարթուն։*

ԲԱՃԿՈՆ, ի–ա *հլ. «պատմուճան, վերարկու» ՍԳր. եփր. ծն. էջ 51. Լաստ. որից* բաճկոնակ «խեղճուկ հագուստ» *Եւագր. 126. Վրդն. ծն. Տօնակ. նոր գրականում ընդունուած է* բաճկոնակ «շապիկի վրայից հագնելու կարճ ու անթև հագուստը, ֆր.* gilet, *ռուս.* жилетъ, *թրք.* yelek», *իսկ* բաճկոն «բաճկոնակի վրայից հագնելու թևաւոր հագուստը. *ռուս.* пиджакъ»։ *Հնապէս էլ* բաճկոնը շապիկի վրայից հագնելու զգեստն էր. *համմ. Մաթ. ե. 40 «եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկն քո, թո՛ղ ի նա և զբաճկոն քա»։ Սրա բացատրութիւնը տալով Երզն. մաթ. 125 գրում է. «Տեսակ բանիս թուի ինձ սխալ դոլ ի թարգմանչաց կամ ի գրչաց. քանզի* բաճկոն *վերին են է և շապիկ ներքինն, որպէս ասէ Ղուկաս Թէ՝ եւ որ հանէ ի քէն զբաճկոն քո, մի՛ արգելուր ի նմանէ և զշապիկա»։ Նկատողութիւնը ճիշտ է, բայց իրողութիւն այն է, որ մեր Հայրերը թարգմանել են ճիշտ այն՝ ինչ որ գտել են յունարէնում. καὶ τῷ θέλοντί σοι κριθῆναι καὶ τὸν χιτῶνά (տակի հագուստ) σου λαβεῖν, ἄφες αὐτῷ καὶ τὸ ἱμάτιον (վրայի հագուստ)։*

Նհբ լծ. պրակ. بزيون bazyūn «մեծագին և պատուական կերպասք», بزجامه baz-Jāma «փառաւոր և շքեղ հանդերձ»։ *Գ. վրդ. Սրուանձտեանց. Մանանայ, էջ 411,* բեն «տուս *բառից, իբր թէ «տասերի վրայ ձգուած զգեստ»։ Պատահական նմանութիւն ունին ասոր.* پايزاكون pāizākōn «մի տեսակ կերպաս» *և թրք.* چيكن čerken, čekmen «թիկնոց» (Будаговъ, I, *էջ 469)։*

ԲԱՄԱ. «զոհի բարձր սեղան, բեմ, բարձունք» Ա. Թագ. Բ. 19 ևն։

= *Երր.* בָּמָה bāmā «բարձրութիւն, բարձունք, զոհի սեղան» *բառն է, որ յունարէն Թարգմանութեան մէջ, իբր յատուկ անուն առնուելով, պահուած է* Βαμά, *որից էլ ստացուած է հայերէնը։* Bailly *346‴ և* Sophocles *296″ յիշում են բառս՝ իբրև երբայական փոխառութիւն։ Նրա որոշեալ*

ձևն է եբր. הבמה habāmā, որ առաւպարձուած է յն. ἁβαιά (այլ ձ. αββανα), որից էլ հյ. աբբանա (տե՛ս այս բառը)։

ՆՀԲ և ԱԲ դնում են եբրայեցերէնից։

ԲԱՄԱՅ «յո՛ւմ մայր». այսպէս ունի Բառ. եբհմ. էջ 47. ինչ լինելը յայտնի չէ։

***ԲԱՄԲ** (ի հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «նուագարանի խոշորաձայն հաստ թելը. 2. հաստ ձայն» երզն. քեր. Ոսկիփ. որից **բամբերգային** «հաստ ձայնով երգող» նար. **բամբյուրակ, բամբյուրակաւոր** (նոր բառեր). գրուած է պամ երզն. քեր. տե՛ս և բանդ, բանդախառն։

=Պրս. بم bam, որից փոխառեալ արաբ. بمّ bamm «բամբ, հաստ ձայն, քնարի հաստ թելը». վերջաձայն բ՝ հայերէնի մէջ յետոյ է աւելացրած. հմմտ. բեմ>բեմբ, պատշգամ>պատշգամբ։— Հիւրշ. 116։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ԳԴ, նոյնը կրկնում են յետոյ ՆՀԲ, Lag. Urgesch. *629 են։*

***ԲԱՄԲԱԿ** (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «բամբակ» (գրուած նաև բանբակ) կաղկանտ. խոր. աշխ. երզն. մաթ. 231. Մատ. և երզն. քեր. որից **բամբակենի** «բամբակի բոյսը, gossypium herbaceum L» Մխ. առակ. նոր գրականում **բամբակեղէն, բամբակեայ, բամբակավաճառ**։

=Պհլ. pambak «բամբակ» բառից, որի յաջորդներն են պազենդ. panba և պրս. پنبه panba «բամբակ»։ Այս իրանեան ձևի ծագումը և առաջաբանութիւնը յայտնի չէ։ Փոխառութեամբ տարածուած է դէպի Արևմուտք՝ մինչև Եւրոպայի ծայրը. այսպէս յն. πάμβαξ, նյն. βομβάκιον, βαμβάκι, μπαμπάκι (հնագոյն փոխառութիւն է βόμβυξ «շերամ, մետաքս»), մ. լատ. bombax, bombacum, արաբ. بمبج bambāj, քրդ. پنبو panbu, վրաց. ბამბა բամբա, ბამბაკი բամբակի, թուշ. բամբա, օսս. bambag, bämp'äg, արևել. թրք. կամ չաղաթ. ماموق mamuq, օսմ. پامبوق pambuq, ալբան. pambuk, ռում. bum bak, չեխ. pamuk, հունգ. pamuk, pamut, սերբ. bumbak, pambuk, pamuk, bobac', խորվաթ. bumbak, բուլգար. pamuk, pambuk, ռուս. бумага «թուղթ», бумажникъ «թղթապանակ», бумазея «բամբակեայ կտաւ», իտալ. bambagia, bombagio, ուս. փամբակ (ուղղակի փոխառութիւն իրանեանից՝ նախաձայն փ-ի պատճառաւ) են։ Հայերէնը, ինչպէս նաև մեւս լեզուներից շատերը, նախաձայն բ փոխել են b=բ՝ բառամէջի b-ի ազդեցութեամբ։—Հիւրշ. 116։

Պարսկերէնի հետ համեմատեցին նախ ԳԴ, յետոյ ՆՀԲ են։ Gosche, *էջ 22 Հեսիքիոսի աւանդած փռիւգական βάμβαλον «վերարկու և ամօթոյք» բառը համեմատում է հյ. բամբակ և պրս.* panba *բառերի հետ։*

ԳԻՒՐ.— Տփ. բամբակ, Ախց. Երև. Կր. Ջղ. բ'ամբակ, Ննխ. բամբագ, Ալշ. Խրբ. Մշ. Սեբ. Սչ. բ'ամբագ, Պլ. բամբագ, փամբագ, Ռ. փամբագ, Տիգ. փոմբոգ, Ասլ. փամբայ, Զթ. Հճ. բ'ամբօգ, Ոզմ. փոմբոկ, Գոր. Մկ. Վն. պոմբոկ, Մրղ. Սլմ. պոմբոկ', Շմ. պոմբոգ', Հւր. բոնբոկ, Ղրբ. պէ'մբակ, Ագլ. բի'մբոկ, բի'մբէկ։ Նոր բառեր են բամբակել, բամբակիլ, բամբկուն, բամբակածախ, բամբակաւոր, բամբակաբաղ, կրճատ՝ բամբխող և բամբահատ «բամբակի սերմ»։

+**ԲԱՄԲԱՍԵԼ.**

= *Կրկնուած է բալ «ասել» բայի ներկ. եզ. ա և բ դէմքերից, իբր բամ «ասեմ»+ բաս «ասես». ընդարձակ տե՛ս բալ։*

Տաթև. Հարց. 381 «բամբասանքն բասիր բանք զայլմէ»։ ՆՀԲ (բամբասանի բառի տակ) բամ, բա' կամ բամբ և ասել բառերից։ Karst, *Յուշարձ. 406 սումեր.* pam, pav «յայտարարել»։

ԳԻՒՐ.—Ննխ. բամբասել, Տփ. բամբասիլ, Հճ. Ջղ. Սչ. բ'ամբասել, Զթ. Խրբ. բ'ամբասիլ, Ախց. Կր. բ'ամբասէլ, Ալշ. Մշ. բ'ամբ'ասել, Սեբ. բ'ամբ'ասէլ, Երև. բ'ամպասէլ, Ոզմ. բ'ոմբասիլ, Ագլ. բմբա'սիլ, Սլմ. Վն. պամբասել, Շմ. պամբասիլ, Մրղ. պոմբոմասէլ, Մկ. պոմբոսիլ, Գոր. Ղրբ. պմբա'սէլ, Պլ. Ռ. փամփասէլ, Ասլ. փամբըսէլ', Տիգ. փոմփոսէլ, Էնկիւրիի Բրքախօս Հայերն էլ ունին փամփասանք։

***ԲԱՄԲԻՇՆ**, ն հլ. (-շան, -շանէ, -շամբ.) «թագուհի» Եւս. քր. Ոսկ. մ. գ. 14. Եփր. Թգ. 420. Արծր. Փիլ. յետնաբար հղել է բամ-

բիչ Գնձ. որի համեմատ սրբագրուած է Մծբ. գ. և որ նոր գրականի էլ ընդունած ձևն է (բայց քիչ գործածական)։

= Պհլ. 𐭱𐭠𐭲𐭩𐭱𐭭 bānbišn «թագուհի», յառաջանում է գնդ. dəmąnō paθni «տան տիրուհի» ձևից՝ ըստ Tedesco BSL 26, 64—66, որ ընդունում է Meillet, Gram. du v. perse, էջ 71. Նորագիւտ մանիքէական պհլ. באנבישן bānbišn «թագուհի» (Salemann, Manichäische Stud. ЗАН, հա. 8 (1908), էջ 59)։—Հիւբշ. 116—7։

Ուղիղ տեղեկութիւնը տուաւ նախ և առաջ Müller SWAW 66 (1870), էջ 270 (նոյնը նաև WZKM 8, 284), համեմատելով պհլ.-պազենդ. 46 բառարանի (էջ 96) անորոշ մի գրութեան հետ։ Այս բառը կարդացւում էր bānbošne. Lag. Arm. Stud. § 344 մեր բամբշաճ սեռականի հետևողութեամբ կարդաց bambušan, իսկ Հիւբշ. KZ 23, 402 ուղղեց bānbišn, որ և հաստատուեց մանիքէական պահլաւերէնի գիւտով։ Հիւնք. շամբուշ բառից։

ԲԱՄԲԻՒՆ տե՛ս Փանդիռն։

ԲԱՄԲՈՑ կամ ԲԱՆԲՈՑ «մի տեսակ խիժաբեր բոյս». մէկ անգամ ունի Գաղիան. խունկ ի բամբոցէ (կամ ի բանբոցէ) ձևի մէջ՝ որ ՆՀԲ համարում է «gomme ammoniaque»։

ՆՀԲ բամբոց համարում է «գաւազան, որով լինի բախել զիմն կամ զնուագարան», որով Թուի թէ կապել է ուղում բամբ «հաստ ձայն կամ քնարի հաստ թել» բառին։ ԱԲ դնում է բամբոց «հղէդի տեսակ մը. պամպու»։ Սրանով բառը ուղում է հանել հնդկական bambu-ից. այս պարագային թերևս յարմար էր սրբագրել բառը բամբոյ, ինչպէս առնում է Թաղիադեան, Առաջնորդ մանկանց, էջ 38 և համարում է հնդ. bambu. իսկ խունկ ի բամբոյէ համարում է հնդկական բանս-լուչ՝ որ հնդկեղէգի խունկն է, սաթի նման բիւրեղացած մի նիւթ՝ որ բամբուն կոտրելու ժամանակ հրբեմն միջից դուրս է գալիս։—Հիւս. (տե՛ս § 300 և յատկ. էջ 663) ուզում է կցել կիլիկեան բարբառով բամբոզ, բիւմբոս բուսանունի հետ։ Բայց բամբոս (ՉԲ. կր. Մշկ.), ինչպէս նաև բամբուզ Ակն. բոլորովին տարբեր բոյսեր են և չեն կարող յարմարիլ բամբոց-ին՝ որ խէժ ունի։— Բամբոս նշանակում է «ձնծաղիկ», իսկ բամբուզ «ցօղնաւոր, կոկոնաւոր մի խոտ՝ որի մէջ կայ բամբակի պէս սպիտակ մի նիւթ»։

ԲԱՄԻԿ «կուտեր ունեցող անծանօթ մի բոյս է» Բժշ. ունի միայն Հիւս. § 301։

Արդեօք ծանօթ բամիա՞ն է։

+ ԲԱՅ տե՛ս Բալ բայլ։

ԲԱՅ (ի հլ. ըստ ՆՀԲ. բայց կայ միայն ի բայի ներգոյականը) «գաղանների որջը կամ ձմեռուայ քառասունքը» Շնորհ. նկես. որից բայանալ «որջը մտնել» Փիլ. լին. Արծր. հրատ. Պատկ. էջ 119. բայոց «արջի ձմեռային քառասունքը» նոյն. բայեցեալ «քառասունք մտնելով թմրած կամ քնած» կոչ. գրուած է բաւ վրդն. այգեկ. 85։

ՆՀԲ «որպէս պաճ, այսինքն՝ դիպահ և պահք»։ Հիւնք. յն. παχίς «դարան ամրութեան»։

Գիր.— ՆՀԲ և ՋԲ իբր ամկ. յիշում են բայ կամ բաճ, որ ինձ այլուստ ծանօթ չէ։

ԲԱՅԱՍՍ «նիհ արապես ապստամբութիւն» այսպէս ունի Բառ. երեմ. էջ 47. ինչ լինելը չէ՛ յայտնի։

ԲԱՅԺ «կոտոշ, եղջիւր?» նորագիւտ բառ. որ մէկ անգամ գտնում եմ գործածուած էֆիմ. 332 «Թաթաւեալ հուրն է հրացեալ ծիածանդ՝ որ տարահոսեալ ընդ օդոյն, երբեմն սովորի հպիլ բայժի երէվայրից»։ (Քիչ յետոյ կայ մի ուրիշը. «հպին ծառոց և նաւուց»)։

ԲԱՅՑ «սակայն» ՍԳր. Եզն. զանազան զարձուածներով ունինք բայց միայն, բայց սակայն, բայց արդ, բայց եթէ ՍԳր. Ագաթ. կայ նաև բայց «միայն», բայց ի «բացի», բայց միայն «բացի» ՍԳր. Եզն.։

ՆՀԲ «որպէս թէ ի բաց ասեալ կամ բաց ի բանէ աստի». Peterm. 251 բաց «verbum» բառից։ Karst, Յուշարձան 402

սամեր. ba, ban *բացասական մասնիկի հետ։*

ԲԱՆ «մի տեսակ արաբական բույս, նրա ծաղիկը և իւղը, myrobalanum, moringa aptera» *Խոր. աշխ. 612. «վայրի կաղին կամ ամէն. իւղային և դառն պտուղ» Վրդն. ծն. յետին տառադարձութեամբ գրուած պան Վստկ. 89. Ամիրտ.։*

= *Պրս.* بان bān, *որից նաև արար.* بان bān „myrobalanum“ *(տե՛ս Կամուս, թրք. թրգմ. Գ. 602 և Շեֆալնշնալդէր* WZKM *11, 314)։ Պէտք է նկատել, որ յունարէնի մէջ էլ ունինք* βάλανος «վայրի կաղին կամ կաղնի», βάλανος μυρεψική կամ մի բառով μυροβάλανον «բան, myrobalanum»։—*Հիւբշ. 117։*

ՆՀԲ «որպէս յն. βάλανον»։ *Ուղիղ մեկնութիւնը տալին միևնոյն տարում (1877)* Lagarde, Arm. Stud. § *348 և Պատկ. Խոր. աշխ. էջ 57—ՆՀԲ և Հիւս. § 244 երբ. տարբեր բոյսեր են յիշում* բան և պան։

ԲԱՆ «*մեղրահաց*» *տե՛ս* Պան։

+ԲԱՆ «*խօսք*» *տե՛ս* բալ *բայը։*

Canini, Et. étym. *194* բան «*խօսք*» = *յն.* φαίνομαι «*երևալ*», *իսկ 234* բանիլ «*գործել*» = *իսլ.* vann, *քիշուա լեզուով* san «*անել*»։ *Այս բառն է տեսնում* Tromler, Disputatio, *էջ* XXIV *(ըստ* Karst, Gesch. d. Arm. phil. *էջ 2) Յովսէփ Նահապետի եղիպտ.* Panech *տիտղոսի մէջ։ Ստ.* ЗВО *25, էջ 23* բան «*գործ*» և բանիլ «*գործել*» = *եւամ.* man «*շինել*»։ *Թիրեաքեան, Արիահայ բռ. 97 պրս.* کانې bāng (>վանկ) *բառի կրճատ* بان bān *ձևից դնում է* բան «*խօսք*», *իսկ պրս.* بن ban «*անգ, անդաստան, մշակութիւն*» *բառից* բան «*գործ*»։

ԳԻՒ.— Տփ. բանէ «*խօսք*» *իմաստով դիտէ միայն Սայեաթ-Նովա. այլուր ամէն տեղ գործ է ածւում* բան «*իր*» *իմաստով. այսպէս՝ Ննխ. Պլ. Տփ.* բան, *Ալշ. Ախց. Ակն? Երև. Խրբ. Կր. Մշ. Զղ. Սեբ. Սչ.* բ'ան, *Ոզմ.* բ'մն, *Մղր.* բէն, *Գոր. Մկ. Մրզ. Շմ. Սլմ. Վն.* պոն, *Ղրբ.* պէն, *Ռ.* փան, *Տիգ.* փոն, *Ասլ.* փա, *Զթ.* բ'օն, բ'ոն, *Հճ.* բ'օն, *Համշ.* պօն, *Ագլ.* բիւն։— *Այստեղ է պատկանում նաև* բանիլ «*գործել, աշխատիլ*», *որի հնագոյն գործածութիւնը գտնում եմ Իգնատ. դկ. 235 «Արուեստք են սոքա երկրագործաց, որով զանբան երկիր ածեն ի պտղաբերութիւն». (անշուշտ այստեղ* անբան *նշանակում է «չգործուած, չբանուած, չհերկուած»). Նոյն իմաստով է նաև* անբան *Անկ. գիրք նոր կտ. էջ 90 «Ընդէ՞ր արտում նստեալ գայք ասա դատարկ անբան», ուր* անբան *նշանակում է «անգործ»։— Նոր բառեր են՝* բանգէտ, բանարար, բանելչէք, բանբոզ, բանկալ, բանլար, բանուր, բանճոգ, բանուզովի *են, են, իսկ* բան «*խօսք*» *բառից են՝* բանոց «*խօսելու վերաբերեալ*», բանսարկի «*բանսարկու*» *և թերևս* բանպնդել «*հարցաքննել*»։ *Թրքախօս հայոց մէջ կայ՝ էնկ.* անփէն «*անբան, ապուշ*», *Ասն.* փառափանէլ օլմաք «*ուրախանալ*»։

ՓՈԽ.—Վրաց. უბნობა ուբնորա *և յգ.* უბნობაճი ուբնորաճի «*խօսակցութիւն, ճառ*», *բայական գործածութեամբ* უბნობა ուբնորա, ვუბნობ վուբնոր «*խօսիլ, խօսակցիլ*», *արմատական* բան *ձևով՝* բանիրա *ըստ Մառ* ЗВО *13, 65։—Ունինք նաև գնչ.* penao «*խօսում եմ*», pena «*պատասխան*», penelo «*խօսուած*», penava, benava «*խօսիլ, ասել*», *բուշ.* փանիլ «*ասել, պատուիրել*», *որոնք* Finck, Die Stellung des Arm.-Zigeunerisches im Kreise der verwandten Mundarten, *էջ 14 հանում է պրակրիտ.* bhaṇ-aï *ձևից։*

ԲԱՆԱԼ *(բացի, բա՛ց) «բանալ, մեկնել, բացատրել» ՍԳր. Ագաթ. Կիւրղ. դևտ. որից* բանալի *ՍԳր.* բաց, ի–ա *հլ. «չփակուած» ՍԳր. Ոսկ. ես. եփր. բ. կոր.* ի բացի «*դաշտի մէջ*» *ՍԳր.* բաց ի *(արդի լեզուում միացած* բացի, *ինչպէս ունինք և դէպ* ի>դէպի) «*զատ, ջոկ*» *ՍԳր.* բացագոյն «*աւելի հեռու*» *ՍԳր.* բացատ «*միջոց, միջավայր*» *Եզնկ. խբ. 13. եփր. ծն. Բուզ.* ի բաց *ՍԳր. Եւս. քր. Կոչ.* ի բացեայ *ՍԳր. Եւս. քր.* բացէ ի բաց *ՍԳր. Վեցօր. եփր. յես.* բացօթեայ *(սխալ է գրել* բացօդեայ՝ *ինչպէս տարածուած է Կովկասում, տգէտ գրողների մէջ) Ղկ. բ. 8.* բացարձակ «*հեռատես*» *Ա. մակ. բ. 3. Սեբեր.*

Ոսկ. մաթ. անբաց «չբացուող, չփարատուող, չուսացող» *Իմաստ. ժթ. 16.* գլխիբաց վեց-*օր.* երկբացիկ *Գ. թագ. գ. 34.* կիսաբաց *Ոսկ. մաթ.* մշտաբացիկ *Անան. եկեղ.* բացադիմի *Ետր. մատ. հտ. Դ, էջ 246 (այս բառի վրայ տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. հտ. Ի, էջ 269).*— *յետնաբար* տար *մասնիկով՝* տարբանալ «տարածանել» *Բառ. երեմ. էջ 308. կրաւ.* բանիլ «բացուիլ» *Սասն. 34:*—Բաց *բառը յունաբան հեղինակների մօտ գործել է նախամասնիկ՝ համապատասխան յն.* ἀπο- *և* ἐκ- *նախամասնիկներին, որով շատ յունարէն բառեր սորիօրէն թարգմանուած են հայերէն, ինչ.* բացարձակ = *յն.* ἀπόλυτος, բացառել = ἀποδιδωμι *(կազմուած* տալ = *յն.* δίδωμι *բայից.— Ճ. կաթ. Շար. գրած են* բացադրել, *ինչպէս ընդունել է նաև արդի արևելահայ գրական լեզուն. բայց, ինչպէս յունարէնը ցոյց է տալիս, յայտնի սխալ է.* բացադրել *(դնել բայից)* = *յն.* ἀποτίθημι *նշանակում է «հեռացնել, մէկդի դնել, առաջը դնել»).* բացառութիւն = ἀπόληψις, բացասել = ἀπόφημι, բացակայիլ = ἄπειμι *են: (Այսպէսով* բաց *նախամասնիկը<*ի բացի *«դաշտ» բառից և* արտ *նախամասնիկը<*արտ *«անդաստան» բառից՝ կունենան միևնոյն առընչութիւնը իրար հետ): Մեր արմատի գանազան նշանակութեանց հետ համաձայն են գալիս՝ լտ.* aperire «բանալ» *և «մեկնել, բացատրել»,* apexte «բաց» *և «բաց դաշտի մէջ»,* բրբ. ačmaq «բանալ», ačəq «բաց», ačəqləq «բացատ, բացօթեայ տեղ, դաշտը», *գոթ.* բրբ. ačar «բանալի»:— *Նոր գրականում կազմուած բառեր են* անբացատրելի, բացագանչական, բացառութիւն, բացառաբար, բացառապէս, բացառակի, բացառիկ, բացատրական, բացարձակապէս, բացորոշ, բացիկ «բաց նամակ» *են:*

Brosset, JAs. *1834, 378 համեմատում է վրաց.* վարենվ *բառի հետ: Նշ.* ֆաթախ «բանալ» *բառի հետ արմատական է գնում:* Böttticher, Arica *86, 422 և* Lagarde, Urgesch. *126, 128 պրս.* ﺑﺎﺯ bāz «բաց» *և յն.* φαίνειν «երևիլ» *բառերին կցելով՝* բանալ *գնում է հնխ.* bhā *արմատից: Այս մեկնութիւնը մերժում է ինքը* Lag. Arm. Stud. § *349, որովհետև պրս.* bāz = *սանս.* avāñč: Böttticher ZDMG *1850, 351* բաց = *սանս.* vahis «դուռ»: Müller SWAW *42, 255 պրս.* bāz=բաց: Bopp, Gram. comp. II *413* բաց «հեռու» = *սանս.* vahis *կամ* bahis: *Տէրվ. Նախալ. 94* բոց, բաց, բանալ *և* բոկ *բառերը կցելով յն.* φῶς «բոց», φαίνω «երևիմ» *և սանս.* bha «առաջ» *բառերի հետ՝ բոլորը միասին հանում է հնխ.* bha *արմատից:* Καρολίδης, Γλωσσ. σογκρ. *96 կապակովկեան* πεζὸ «պարապ» *և* πεζόνω «դատարկել» *բառերի հետ: Հիւնք.* բանալ *հանում է* բերան *բառից: Այսպէս նաև Յ. Աբէղ, Բազմ. 1897, 51, արմատը համարելով* բա = *յն.* φαίνειν: Patrubány *ՀԱ. 1904, 94 հնխ.* bhū «լինել, մեծանալ» *արմատից:* Scheftelowitz BB *29, 37 գնգ.* bata «բաց, անծածկելի», *գոթ.* banja «վերք» *բառերին կեղակից:* Karst, *Ցուշարձան 403 տումեր.* ba «բանալ» *և* bad «բացուածք» *բառերի հետ:* —Charpentier IF *25, 248 (1909 թ.) հրգ.* bannan «պատժի կամ տուգանքի սպառնալիքով հրամայել, unter Strafandrohung befehlen» *բառի հետ է համեմատում:* H. Petersson, Ar. und. Arm. Stud. *էջ 123 «անկասկած պատկանում է սանս.* bhâti «լուսաւորել, երևալ», bhāna «լոյս, երևոյթ» *բառերին, նախաձևը լինելով* *bhā-sk'-o- >բաց»:

Գիւմ.— *Նխ. Պլ.* բանալ, *Ալշ. Ախց. Խրբ. Կր. Մշ. Ջղ. Սեբ. Սչ.* բ'անալ, *Ոզմ.* բ'մնոլ, *Ջթ. Հճ.* բ'անօլ, *Ասլ. Ռ. Տիգ.* փանալ, *Ագլ.* բմ'նիլ, *Մկ.* պմնալ, *Վն.* պմնմ'լ, *Գոր.* պմ'նոլ, *Ղրբ.* պէ'նալ, *Հմշ.* պօնուշ:— *Այս բայը կորցնելով՝* բաց *բառից վերակազմել են Երև.* բ'աց անէլ, *Տփ.* բաց անիլ, *Սլմ.* պոցել, *Մրղ.* պոցէլ, *Շմ.* պոցիլ. *Ըստ իս այս ձևափոխութիւնը կատարուած է հշտութեան համար բառը* բանիլ «գործել, աշխատիլ» *բառի հետ. համմտ. հերկ.* բանում եմ, *անկատ.* բանում էի, *որոնք երկու նշանա-*

կութեամբ էլ կարող են գործածուել։—Բաց բառի ձևերն են՝ Պլ. Տփ. բաց, *Ալշ. Երև. Խրբ. Մշ. Սեբ. Սչ.* բ'աց, *Ասլ.* փաց, փաս, *Ոզմ.* բ'mg, *Մղր.* բէց, *Գոր. Մկ. Մրղ. Շմ. Վն.* պmg, *Ղրբ.* պէց, *Ագլ.* բէօց, *ՋԹ. Հճ.* բ'օց։—Բանալի *բառի ձևերն են Ղրբ.* պճմ'լի, պլմ'նի, *Ախց. Կր.* բ'անլիհ, *Խրբ.* բ'անլի, բ'ալլի, *Երև.* պալանիհ, պլանիհ, *Տփ.* բալնիհ, *Ալշ. Մշ.* բ'ալնիհ, *Չմ. Սչ.* բ'ալլինհ, *Պլ.* բալլինհ, բալլիհ, *Ակն.* բ'ալլի, *Սեբ.* բ'ալլիհ, *Ռ.* փալլիհ, *Տիգ.* փալլինհ, *Ննխ.* բալիհ, *ՋԹ.* բ'ալընհ, *Ոզմ.* բ'mլնիս, *Մկ. Վն.* պmլնիս, *Ջղ.* բ'լանիհ, *Ագլ.* պլm'նիհ', *Սլմ.* պալիս, *Մրղ.* պոնիս, պmնէս, *Հմշ.* պօնլիհ, *Ասլ.* փայլի։

Փոխ.— Մարքվարթ ՀԱ 1913, 526 հյ. բացագնաց *«դատաճանութեամբ թշնամու կողմն անցնող» բառից փոխառեալ է դնում յն.* Παστγνάθ ης *յատուկ անունը* (Theophan. Chronogr *էջ 344, 25 տպ.* de Boor), *որ ինքը ածական է համարում կամ մականուն։ (Խօսքը Թէոդորոս Ռշտունու մասին է, որ* բացագնաց *եղաւ և յոյներից անցաւ արաբների կողմը)։— Հայերէնի՞ց է արդեօք գնչ.* pinriovava, pintavava, pinravava, pinavava *«բացուիլ (դռան, օդի)»։*

ԲԱՆԱԿ, ի–ա *հլ. «զօրքի խումբ. 2. ուղեւորների կարաւան, 3. բանակի իջած՝ դադարած տեղը» ՍԳր. Բուզ. որից* **բանակիլ** *ՍԳր.* բանակեցուցանել *Ա. մակ. ղ. 33.* բանակից *Ոսկ. մ. ա. 1.* բանակամէջ *Բուզ.* բանակեցող *ՍԳր. Վեցօր. եփր. ա. կոր.* բանակատեղ *Ստեփ. սևան. չորքաբանակ ԳՆՃ. զօրաբանակ (նոր բառ)։*

Հինք. բնակիլ *բայից է հանում։* Scheftelowitz BB *29, 37 մեկնում է* բանալ *բայից, իբրև «բաց տեղ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 97 պրս.* بنه buna *«տուն-տեղ, կարասիք»։*

Փոխ.—Վրաց. ბანაკი բանակի *«բանակ»,* ბანაკება բանակեցա *«բանակիլ»,* დაბანაკება դաբանակեբա *«ճակատ յարդարել, բանակիլ և կռուի պատրաստուիլ»,* ბანაკე սաբանակե *«բանակ, վաշտ»,* ბანაკისა նաբանակեվի *«բանակատեղի»։ Կասկածելի է սակայն որ այս բոլորը՝ հայերէնի հետ միասին փոխառեալ լինին պահլաւերէնից, ինչպէս ցոյց է տալիս բառի* -ակ *վերջաւորութիւնը։*

ԲԱՆԱԿԻՍ *«դերեզման». ունի միայն Բառ. երեմ. էջ 48։*

ԲԱՆԲՈՒՇ, *որ և* բամբուշ, բերդոշ, բաֆոշ *(անստոյգ ընթերցուածներով) «մի տեսակ ծաղիկ» Սալաձ. ունի միայն ՀԲուս. § 303, 327։*

> *Ըստ Նորայր, Բանաս. 1901, 103 նոյն է թուում Սասնեցու (էջ 59)* **բրդոշ** *բառի հետ, որ սակայն ըստ իս անասունի, մանաւանդ թռչունի անուն է թուում։*

***ԲԱՆԳ** *կամ* **ԲԱՆԿ** *«մի տեսակ թունաւոր և թմրեցնող բոյս է. լտ.*hyoscyamus, *ֆրանս.* jusquiame, *անգլ.* henbane, *ռուս.* белена, *գերմ.* Bilsenkraut *(սրա գործածութիւնը դադարեցել է տալիս)» Գաղիան. որից ունինք* **բանկեխոտ** *ԲԺշ. (գիտէ միայն ՀԲուս. § 305),* աղուաշբանկ *(իբր «խենթ բանկ»), գրուած նաև* աղուէշբանկ, աղշբանկ, աղշպէնկ *Վստկ. 32, 224։*

= *Պրս.* بنگ bang *«բանգ», որի հին ձևն է զնդ.* baŋha- *«մի տեսակ բոյս, որ սաղմը վիժելու համար են գործածում և որից պատրաստում են թմրեցնող մի ըմպելիք»=սանս.* bhaṅgā *«կանեփի և նրա սերմից պատրաստուած գինովցնող ըմպելիք» (տե՛ս* Bartholomae *925,* Hehn Kulturpflanzen *484,* Horn § *232)։—Ըստ* Marcel Devic, Dict. étymol. des mots fr. d'origine orientale, Paris *1876 Հնդիկները այս անունով* (bang) *են կոչում թէ՛ «հնդիկ կանեփ» կոչուած բոյսը և թէ՛ նրանից պատրաստուած թմրեցուցիչ հեղուկը։ Հնդիկ կանեփը կազմում է հաշիշի գլխաւոր տարրը։ Հնդիկները երբ որ ուզեն ուղեղը անզգայացնել, ցաւերը խաղաղել և անհոգ ննջել, փոշիացնում են* bang*-ը, խառնում ափիոնի,* aree*-ի և շաքարի հետ ու կուլ տալիս։ Իսկ երբ ուզեն ուրախանալ, խառնում են մուշկի, չամբարի և շաքարի հետ ու խմում։—Իբրև անուն բառը տարածուած է շատ ուրիշ լեզուների մէջ, ինչ. աֆղան.* bang *«կանեփ», արաբ.* بنج banj, *վրաց.* ბანგი բանգի, *ռուս.* пенька *«կանեփ», լեհ.* pienka, *չեխ.* pěnek, pěnka,

գերմ. Bangenkraut, պորտ. bango, ֆրանս. bangue ևն։—Հիւբշ. 263։

ՆՀՔ յիշում է պարսիկ բառը՝ առանց նմանութիւնը շեշտելու։ Lagarde, Urg. 834, Gesam. Abhd. 83 ուղիղ համեմատում է զնդ. և պրս. ձևերի հետ։

ԳԻՒ.— Տփ. բանգ, որի համար Ախվերդեան (Սայեաթ-Նովայի հրատարակութեան մէջ, Թիֆլիս 1852, էջ 46) ասում է թէ «էս տեղի բնակիչներն էլ ամէն տեսակ քնեցնող դեղին ասում են բանգ».— Ղրբ. բm՛նգի «մի տեսակ թունաւոր խոտ, որ նման է շուշան խոտին. ուտողը խենթանում է». սրա համար էլ ասում են բm՛նգի ես կերել «խե՛նթ ես, գժուե՛լ ես, ի՛նչ է». համմտ. պրս. بنگی bangī «անմիտ» (Horn § 232)։— Ունինք նաև աղշրանգ (որ է աղուաշրանգ) Ախք. Մշ. Նբ. Շիր. (բոյսի նկարագրութիւնը տե՛ս Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 22).— Նոյն բառը գտնում եմ աշրդպանգ ձևով՝ Ագգ. Հանդ. Ա. 137, իբր Ախալքալաքի գաւառականով։

*ԲԱՆԴ «թառի կամ նման երաժշտական գործիքների թևի վրայ՝ լարերի տակ՝ իրարից մի մի մատ հեռաւորութեամբ՝ գօտու նման փաթաթուած թելերը, որոնց վրայ դնելով մատները՝ ստացւում են do, re, mi... ևն ձայները. ռուս. ладъ, ֆրանս. touche, գերմ. Tast»։ Այս բառի առանձին գործածութեան չեմ հանդիպած. մեր բառարաններն էլ չգիտեն. բայց նրա ապացոյցն է Լծ. սահմ. 274 դրուած վկայութիւնը, որ հետևեալ ձևն ունի. «Բաղագանութիւն հնչմանց... որ այլևայլ ձայնքն բաղկանան և մի լինին ժիրն և բանդն. զի երաժշտական արուեստն չափով և քանակիւ է»։ Այստեղ ժիր և բանդ աղաւաղ գրչութիւններ են, փոխանակ զիր և բամբ (պրս. արաբ. زیر و بم zīr ū bam «բարձր և ցած ձայները»), բայց յայտնի կերպով ցոյց են տալիս, որ բանդ երաժշտական մի բան գոյութիւն ունեցած է։ Այս բառից է կազմուած բանդախառն «բանդերը խառնուած» (կարող է երբեմն պատահիլ, որ նուագարանի բանդերը իրենց տեղից շարժին և այն ժամանակ ձայները սխալ դուրս կգան և անհերդաշնակ մի բան կլսուի). այս բառը մէկ անգամ գործածուած է Թէոփ. ի խ. մկ. «խօսիմք նուագարանքս քո. և արդ մի աղի պակասեաց. ժրացո՛ զբանդախառն երգարանս, զի մի՛ և այլ թերացցի»։

= Պրս. بند band բառից, որ բացի սովորական «կապ, յօդուած, գօտի» նշանակութիւններից, ունի նաև վերոյիշեալ «touche, ладъ» նշանակութիւնը, որ թէև չկայ պարսկերէնում, բայց կենդանի է մինչև այժմ էլ Ղարաբաղի թուրքերի և հայերի մօտ՝ bänd ձևով. Գէորգ Դպրի բառարանն էլ գիտէ بند شهریار bandi-šahriyar «է առնուն երաժշտական եղանակի միջոց»։—Ա՛ճ.

ՆՀՔ՝ որ գիտէ միայն բանդախառն բառը վերոյիշեալ վկայութեամբ, մեկնում է «կապակցեալ, բարեյարմար, դաշնակաւոր (նուագարան)»։ Նոյնը նաև ՋՔ «պնդեալ և խառնեալ, այսինքն կապակցեալ, բարեյարմար, ներդաշնակաւոր»։ Երկուսն էլ ճիշտ հակառակն են հասկացել։ Երբ հեղինակը (Թէոփիլոս) ասում է, թէ նուագարանի թելը կտրուել է և սրա համար օգնութիւն է խնդրում, այլ ևս յարմար չէ ասել «բարեյարմար կամ դաշնակաւոր», այլ «աւրուած, խանգարուած»։ Վերի հատուածը բարգմանւում է ըստ այմ՝ «Մենք քո նուագարաններն ենք՝ որ խօսում ենք. ահա մի լար պակասեց. դու՛ ուղղիր այս աւրուած նուագարանը, այնպէս որ մէ՛կ էլ չաւրուի»։— ՆՀՔ հանում է բառը պրս. պէնճ «կապ» բառից, ՋՔ՝ պնդել բառից։

ԲԱՆԴԱԳՈՅՇ. արմատ առանձին անդորձածական, որից կազմուած են բանդագուշիլ «խելքը ցնդիլ, ցնորիլ, ցնորածի նման խօսիլ, ցնդաբանել» Սիր. լա. 6. Ոսկ. գաղ. և մ. ա. 19. Եզն. Եփր. ա. Բես. 183. բանդագուշել Ոսկ. գաղ. բանդագուշացուցանել Փարպ. բանդագուշանք «յիմարաբանութիւն» Եզն. Փարպ. բանդագուշան (նախորդի եղակին, որ անսովոր է) Մեկն. ղևտ.։

ՆՀՔ յն. φαντασία «ցնորք» բառի հետ նոյն է դնում։ Տէրվ. Altarm. 11 լուծում է բառս բանդ և գուշ. առաջինը համեմատում է սանս. bhand «ուրախութիւնից բղաւել» ձևի հետ, իսկ երկրորդը

հյ. գուշակել և անս. ghuš «գուշել, բղաւել»։ Տէրվ. Նախալ. 95 բամ, բաս, բայ ձևերի հետ, որոնց վրայ տե՛ս բալ։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 98 պրս. بنده banda «ծառայ»+ گوش gōš «ականջ» բառերից, իբր «ականջի ծառայ»։

*ԲԱՆԴԱԿ կամ ԲԱԴԱԿ «պտուղի քամած և եփած հիւթ, օշարակ» Մխ. Բժշ. էջ 82 (և յաճախ), էջ 96 չորս անգամ ունի բանդակ։

= Վրաց. ბადაგი բադագի «ռուպ, մաթ, патока, гливейнъ», ուտ. բադակ «խաղմուղ, բաղցու, խաղողի շիրա»։—Աճ.

Ճշտիւ կարելի է համեմատել պրս. باده bāda «գինի» բառի հետ. այս պարսիկ բառի ստուգաբանութիւնը ծանօթ չէ. բայց կայ بادیا bādya «գինու աման», որի հին ձևը դնում է Horn § 155 պհլ. bātak. Համմ. Յունաց աւանդած βατάκη «մի տեսակ աման» պարսկական բառ։ Սրանք ցոյց են տալիս, որ պրս. bāda բառի հին ձևը պիտի ունենար t ձայնը, որով երևան հկած նմանութիւնը յօդս է ցնդում։ Պատահական նմանութիւն ունին նոյնպէս սանս. phāṇṭa «նոր կարագ, առաջին խաշուն», phāṇi «շաքարի խմոր, կաթնախառն ալիւր», phaṇayāmi «կաթից կարագ հանել», ռուս. патока «ռուպ, մաքրած մեղր ևն»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 98 պհլ. bandak «կապ» բառից, ճիշտ ինչպէս այժմ կայ պրս. bastanī «պաղպաղակ, բանդակ»՝ bastan «կապել» բայից։

Գիմ.— Երև. բադագ «քնքիշ կամ խաղողի մաթ, բաքմազ» (տե՛ս Աբովեան, Երկերը, էջ 355. այժմ Քանաքեռում այս բառը անգործածական է. նոյն իսկ ծերունիները չիմացան), Համշ. բեռ «խաղմուղ, շիրա»։

* ԲԱՆԴԱՐ «բանուկ վաճառաշահ քաղաք», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յակոբ Կարնեցու Վերին Հայոց տեղագրութեան մէջ, էջ 37 «Զի այժմ քաղաքս այս յոյժ բանառար (այսպէ՛ս գրուած, ըստ յետին տառադարձութեան) է նման Ստամպօլայ, որ տարին ՃՌ բեռ մտանէ և ելանէ»։

= Արաբ. بندر bandar «առևտրական նաւահանգիստ». այս բառը համարւում է արաբերէն՝ ըստ Կամուս, Քրք. Քրգմ. Ա. 775 և Будаговъ I, էջ 270. բայց ըստ ԳԴ կայ պրս. بندر bandar «տեղի՝ ուր վաճառականք առևտրութիւն առնեն»։ Անշուշտ բնիկ իրանեան է և ծագում է بند band «կապ» բառից. համմ. պրս. بند band «ջրի առաջքը կապուած թումբ»։ Նշանաւոր են Պարսկաստանում Bandargāz, Bandarabbās և Bandarbušir նաւահանգիստները Կասպից ծովի և Պարսից ծոցի վրայ։ Համմ. նաև պրս. بندرگاه bandargāh «է տեղին այն՝ յորում վաճառականք բեռինս կապեն և բանան. և ևս նաւահանգիստ, ուր նաւք վաճառականաց նկնալ՝ զնաւս իւրեանց թաթխեն»։ Տաճկերէնի մէջ bandar դարձել է «մեծ, նշանաւոր, վաճառաշահ (քաղաք)» իբր ած. ինչպէս՝ bander šehir dir «մեծ քաղաք է»։ Այս բառից է նաև ածկ. (=պրս.) بندرشاهی «մարսապետ. 2. հիւպատոս, առևտրական գործակալ»։—Աճ.

Այս մեկնութիւնը տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 48 և 92։ Պատահական նմանութիւն ունի հյ. բան+տար (բան և տանիլ բառերից), ինչպէս ունինք նաև բանուկ։

ԲԱՆԴԱՐ. անատոյգ նշանակութեամբ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած կեղծ Շապուհ Բագրատունու Պատմութեան մէջ, էջ 76 «Եւ նա կոչեաց զբանդար, որ կարդացած էր ի դուռն նորա, զտեսուչ զօրացն Պարսից և ասէ. «Ա՛ռ զայս երկու մանուկս և հովուեա՛ զնոսա որպէս արժան է և տե՛ս, զի որդիք են ամիրային Ապուսէճայ»։ Էառ և երեթ ի հոգացողք զնոսա բանդար և ասէ...»։

Կարող է լինել յատուկ անուն, բայց կարող է լինել նաև պաշտօնի անուն. համմ. նախորդը և տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 48։

ԲԱՆԴԻՒՆ տե՛ս Փանդիռն։

ԲԱՆԻՒՆ «քնքիշ ահեղ». այսպէս ունի միայն Բառ. երեմ. էջ 48։

ԲԱՆԿՆ «առաւսպել, հէքեաթ, մուսալ» Ոսկ.

Կող. էջ 582. Բրս. մրկ. գրուած է նաև բանգն *Ոսկ. եբր. թ. 500. բայց լաւագոյն ձևը թուում է* բանկն, *որից նաև* բանկնարկել «առաստաղ-լաբանել» *Ուս. քր. ա. 256. կայ դարձեալ յղ. հյց.* բանկունս «առաստաղներ» *Պարապմ. 226 (որ ՆՀԲ համարում է* բանիկ *բառից, բայց ըստ իս այստեղ պիտի դնել). ԱԲ էլ յիշում է* բունկն *ձևը (չգիտէ ՆՀԲ), որից յառաջացած է* ունկն և բունկն «ցնդական խօսքեր» *Մխ. ապար.։*

ՆՀԲ դնում է բան «խօսք» *բառից։ Տէրվ.* Altarm. *11, Նախալ. 95, Մասիս 1882 մայ՞ 24 հանում է* բամ, բաս, բայ *ձևերից։ Հիւնք. պրս.* بانڭ bank «ձայն» *բառից։ Մէնէվիշեան ՀԱ. 1914, 244 պրս.* bang «բանգ խոտը» *բառից փոխառեալ ձև!*

ԳԻՒՐ.— Վն. պայնս «վէպ, պատմութիւն», *որ ծագում է հնագոյն* *բանկնս *կամ* *բանգրնս *ձևից. Ջղ.* բ'ունգն «հէքեաթ», *Ղրբ.* պր'նգրլ, *Շշ.* պունգլը, *Լ.* բունգլ «հանելուկ». *Աժտ.* բանիներս *պնդլ է եղել «մեր գործը վատ է». նոր բառ է* բանկլիկ *Խն. «մանրավէպ, առակ»։*

ԲԱՆՋԱՌ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Վստկ. ժդ. «երբ ի վերայ պուտկի կամ պղնձի՝ երբ ի վերայ կրակի լինի, զկրակն իբրև զբանձառ մարգրտապէս յեղուիլ, նշան է անձրևի»։*

ՆՀԲ մեկնում է «ցիրուցան կամ շիթ առ շիթ, պուտ պուտ, ցրցնքած»։ Այսպէս նաև ԱԲ։ Ըստ իս անհաւանական է այս մեկնութիւնը, որովհետև իբրև զ *բառը ցոյց է տալիս, որ* բանձառ *գոյական է, որի ածականն էլ է* մարգրտապէս։— *Սակայն ՆՀԲ գաւառական բառերի յաւելուածում (հտ. Բ. էջ 1061) դնում է նաև «պաստառ կամ ցանցառ և ցնցրղկեալ ինչ»։*

ԲԱՆՈՆ «դեսպան». *գիտէ միայն Բառ. երեմ. էջ 48։*

*ԲԱՆՈՒԿԱՆ «պալատական տիկիններ». *խանգարուած ձևով գործածուած է երկու տեղ. «Եւ առին զկապուտ զաւար բանակին և զկանայս թագաւորին և զբամբիշն և զբանբսկան ընդ նոսին» Բուզ. Գ. իա։ «Եւ նոքա առին զբանակն ամենայն հանդերձ արքունական գանձիւքն։ Եւ կալան զբամբիշն և զբանակն» Սեբ. Հրտր. Պտկ. էջ 27։ Երկուան էլ պէտք է կարդալ* բանուկան, *որով այս երկու հատուածները համաձայն կըգան Բուզանդի ուրիշ երկու հատուածների հետ. «Եւ ըմբռնէին զտիկնանց տիկինն հանդերձ այլովք կանամբքն» Բուզ. Ե. 2. «Եւ ամենայն կանանօքն և հանդերձ տիկնանց տիկնաւն» Բուզ. Գ. 21։*

= *Պհլ.* bānūkān *«տիկիններ», որ յոգնակին է պհլ.* bānūk *«տիկին» բառի. սա էլ դիտուում է իբրև արագաբանութիւն* bānbānūk *բառի, որ յառաջացած է* dmānapaδnī- *«տան տիրուհի» ձևից (տե՛ս* Tedesco RSL. *հտ. 26, էջ 65—66). Նոյն են նաև բելուճ.* bānuk *«տիկին», պրս.* بانو bānū *«տիկին», յղ.* بانويان bānūyān *կամ* بانوان bānūān *«տիկիններ». ծագում են պրս.* بان bān *«տուն»=պհլ.* bān *«կառոյց» բառից և նշանակում են բուն «տանտիկին»* (Horn § *175 և 178)։—Հայերէնի մէջ պահլաւերէնի միջին երկար* ū *ձայնաւորը կարող է պահուել. ինչ.* Մեհրուժան<պհլ. Mitrūčan, Սուրեն< պրս. Sūrēn, Ապզուտկաւան<պհլ. Afzūtkavāt *են։—Բառիս աւելի նոր ձևն է ներկայացնում վրաց.* ბანოვანი *«տիկին», որ փոխառեալ է պրս.* bānūyān *ձևից, մինչդեռ մեր բառը պահլաւերէնից է. սրա համար է, որ հայերէնում գտնում ենք կ, որ չկայ վրացերէնում։*

Ուղիղ մեկնութիւնը տուել է A. Carrière, *որ մի նամակով դիմելով Հիւբշմանին (տե՛ս Հիւբշ.* Arm. Gram. *117), առաջարկում է սրբագրել վերի բառերը՝ Բուզանդի մէջ* բանոկան *և Սեբէոսի մէջ* զբանուկսն, *որոնք համեմատում է վրաց.* բանոգանի, *պրս.* bānū, *պհլ.* bānūk *և բելուճ.* bānuk *ձևերի հետ։ Վրաց. ձևի մէջ* y>v *վ ձայնափոխութեան համար համմտ.* ախոյեան>*վրաց.* ახოვანი ახოვანის, *թրք.* بيراق bayraq> *վրաց.* ბაირაკი *բավրակի։ Բայց ի հարկին կարելի է վրաց.* ბანოვანი *սրբագրել* ბანოკანი *բանոկանի (ვ և კ տառերի նմանութեան պատճառաւ)։*

Հիւբշ. անապահով է համարում այս մեկնութիւնը, որովհետև նախ վրաց. բանոգանի *պէտք է կարդալ* բանովանի *(համմտ. Գիլանի նորապարսիկ բարբառով* bānewān *«թագուհի»* Horn § 178*) և երկրորդ՝ որովհետև պհլ.* bānūk >*հյ.* բանուկ *ձևը պիտի տար յգ.* *բանուկ *կամ հաւանական* *բանկանի։— *Այս բոլոր անպատեհութիւնները կվերանան, եթէ մեկնենք այնպէս, ինչպէս վերը մեկնեցի։— Մառ,* Грам. др.-арм. *էջ 96 առանց յիշելու աղբիւրը՝ վրաց.* բանովանի *և հյ.* բանուկան *(եզ.* բանուկ*) դնում է պարսկերէնից փոխառութիւն։*

ԲԱՆՋԻ *տե՛ս* Բռինձ։

ԲԱՆՊՈՏ, *որ և* բանպօտիճ, բօնբօճ *«մի տեսակ բոյս, պասպայիճ,* polypodium*» Բժշ. ունի միայն Հ Բուս. § 308։*

ԲԱՆՋԱՐ, ո *հլ. (յետնաբար նաև* ի, ի-ա *հլ.) «կանաչեղէն, խոտեղէն» ՍԳր. Եզն. Փարպ. (յետնաբար նաև «ճակնդեղ կամ բազուկ»), որից՝* բանջարիկ *Ոսկ. Եփես. և ա. տիմ.* խառնաբանջար *Եւս. պտմ. 689.* բանջարանաշակ *«բուսակեր» Ագաթ.* բանջարանաշակութիւն *Կորիւն.* բանջարեղէն *Առակ. ժե. 17.* բանջարակեր *Վրք. հց.* բանջարանոց *Վրք. հց. ևն։*

Նշ Ր մեկնում է «բան ճարակելոյ»։— Մորթման ZDMG *1870, 80 համեմատում է թրք.* پنجار panjar *«ճակնդեղ» բառի հետ։ Սրան պատասխանելով Պատկանեան, Փորձ 1880 մարտ, էջ 93 ասում է, թէ պէտք է համեմատել ո՛չ թէ* panjar*, այլ թրք.* پنجر banjar *«մոլոշ, բանջարեղէն, բոյս»։ Հիմնք. թրք.* panjar *«ճակնդեղ» բառից փոխ առնուած և ընդհանրացած։* Patrubány, *Բանաս. 1902, 80 և* IF *14, 58* բանալ= *յն. φαίνω բայից, իբր «բացուած», ջ և ար մասնիկներով. համմտ. ջին-ջ, ար-դար, դալար։*

Գիմ.— Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Ջղ. բ'անջար, *Ոզմ.* բ'մնջmr, *Մկ. Մրղ. Շմ. Սլմ. Վն.* պmնջmr, *Ննխ.* փանջար *«մի տեսակ բոյս է. ռուս.* лебеда*», Տիգ.* փmնջmr, *Ղրբ.* պէ'նջmr, *Հմշ.* պօնջար *«մի տեսակ բաց կաղամբ», Զթ.* բ'էնջօյ, բ'էնջօր, *Հճ.* բ'էնջոյ, *Ագլ.* բի'նջmr. *բոլորն էլ ընդհանուր կամ մասնաւոր խոտաբոյսի անուն։ Նոր բառեր են* բանջարամայր, բանջարաճաղ, բանջարաճոլ, բանջարբսուկ, բանջարճաղի, բանջրուռ *ևն։*

Փոխ.—Վրաց. ბანჯარა բանջարա *«բանջարեղէն, овощи», քրդ.* پنجار penjar *«կանաչեղէն», արևել. թրք.* پنجر benjer *«προсвирка պարուէզի կանաչի» (*Будаговъ *1, 270),* پنجر penjer, پنجار penjar *«ճակնդեղ, յատկապէս տերևները»* (Будаговъ *1, 311),* پنجر panjar *«ճակնդեղ, մոլոշ, կոտեմ»* (P. de Court.), *օսմ.* پانجار panjar *«ճակնդեղ», նաև գաւառական թուրքերէն բարբառներից՝ հս. կր.* panjar, *Ակն.* penjer, *Եւդ.* پانجار panjar *«բանջար, ուտելի խոտ», Էնկ. (նաև տեղացի Ցունաց լեզուով)* panjar *«բանջար, ճակնդեղ»։*

*ԲԱՆՏ *կամ* ԲԱՆԴ, ի *հլ. «յանցաւորին արգիլելու տեղ» ՍԳր. Եփր. ծն. որից* բանտական *Ագաթ.* բանտական *Ոսկ. ես. Ագաթ. Կորիւն.* բանտամուտ *Ագաթ.* բանտապան *Կոչ.* բանտապան *Կոչ.* բանտապետ *ՍԳր.* բանտարգել *Դծ. իզ. 10. Ոսկ. մ. ա. 7.* խաւարաբանդարգել *Սերբ. ևն։ Այս բոլորը գրւում են թէ՛ տ-ով և թէ դ-ով. նոր գրականում թէև ընդունուած է գրել տ-ով, բայց հնագոյն և հարազատ ուղղագրութիւնը դ-ով է, ինչպէս ցոյց է տալիս բառի ծագումը։ Նոր բառեր են* բանտարկել. բանտարկութիւն։

= *Պհլ.* *band *«բանտ» բառից, որ թէև չէ աւանդուած գրականութեան մէջ, բայց նոյնն են հաստատում պազենդ.* band *«կապ, կապանք», պրս.* بند band *«կապ, յանցաւորի ոտքը զարնուած շղթան», աֆղան.* band *«կապումն, բանտարկութիւն, ձերբակալութիւն, գերութիւն», սոգդ. նորագիւտ* βnd *«բանտ», քեղուճ.* bandag *«կապեալ», քրդ.* بن ben, بند bend *«կապանք». որոնցից կազմուած են պրս.* بندیوان bandīvān *«բանտապան»=պհլ.* bandīkpān *և սոգդ.* βntpt'k *«բանտապահ». համմտ. նաև Թուրֆանի առասն. պհլ.* ban *«կապ»,* banbēd *«բանտապետ»,* banéstān *«բանտ» (*BSZ *հտ. 33, № 99, էջ 157). բառիս բուն և նախնական*

նշանակութիւնն է «կապանք» և այս պատճառով յաճախ ասում են տուն բանտի, այն է «կապարան»: Իրանեան բառերին ցեղակից են գնգ. bañd, սանս. bandh, bandhati, գոթ. bindan, հրգ. bintan, գերմ. binden, թրակ. βενδ- «կապել», յն. πεῖσμα (<*πενθ-σμα) «պարան, թոկ» πενθερός «աներ» (համմտ. սանս. bandhu «աղգական»), լտ. offendix «քահանայական փակեղի կապերը», լիթ. beñdras «մատնակից ընկեր», միռլ. bunne «կապ»: Այս բոլորի արմատն է հնխ. bhendh, սոսրին ձայնդարձով bhn̥dh, որ լիտուլ արխականում դարձաւ նաև bendh> bandĥ «կապել» (Walde 537, Boisacq 758, 766, Trautmann 30, Kluge 57): Ի՞նչ պէտք է տար այս արմատը հայերէնի մէջ. հնխ. bh դառնում է հյ. բ, իսկ հնխ. b>հյ. պ: Ըստ այմ հնխ. bhn̥dh կարող էր տալ հյ. բանդ (Հիւբշ. Arm. Gram. 511), իրրև բնիկ հայ բառ, բայց որովհետև ունինք հյ. պինդ, որ հնխ. bendh ձևի կանոնաւոր ներկայացուցիչն է (համմտ. ֆինգ) և հարազատ հայերէն, և որովհետև «բանտ» իմաստը իրանեանի մէջ միայն կայ, ուստի հյ. բանդ փոխառեալ է իրանեանից, որի հարազատ հայերէն ձևն է պինդ: Իրանեանից փոխառեալ է նաև վրաց. ბანდი բանդի «կապեալ»: —Հիւբշ. 117:

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ՆՀԲ, որ համեմատում է պրս. band «կապ» բառի հետ, թէև սրա հետ միասին յիշում է նաև հյ. պաճանդ: Peterm. 17, 21 սանս. bandh, պրս. band: Windisch. 14 սանս. bandha: Մանանալեան, Բազմ. 1904, 500 լծ. հյ. բաստարան:

Գիր.— Ալշ. բ'անդ:

*ԲԱՇ (ի հյ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «ձիու և ուրիշ կենդանիների մազը» Վրդն. առակ. Ճառընտ. Վստկ. 198, 204. Մարթին. որից երկայնաբաշ ԱԲ. գրուած և նաև փաշ Վստկ. բայց հնագոյն ձևն է բարշ (սեռ. -ի) Պիտ.:

=Պհլ. *barš բառից, որ թէև առանդուած չէ, բայց կան սրա միւս ընկերները, ինչ. զնդ. barəša- «ձիու վիզ կամ կռնակ», պհլ. buš, բելուճ. bušk «ձիու բաշ», պրս. بش buš, پش paš, فش fuš «վիզ, ձիու բաշ», ասֆղան. vraž «բաշ», օսս. barze, bārz «վիզ» (Horn § 220): Հյ. բարշ բառի բ ձայնը իր ներկայացուցիչն ունի զնդ. բառի մէջ, իսկ փաշ ձևաբանական սխալ չէ, այլ հաստատուում է պրս. fuš ձևով:—Հիւբշ. 118:

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ԳԴ, համեմատելով պրս. փէշ ձևի հետ: Lag. Arm. Stud. § 355 վարանում է համեմատել զնդ. և պրս. ձևերի հետ: Մանտալճեան, Բազմ. 1904, 500 բարշ=լծ. հյ. վարս:

ԳԻՐ.— Վն. բոշ (գիւղերը փոշ) «ձիու բաշ», Խրբ. բաշ, Մշ. բ'աշ, Սլմ. պոշ, Ասլ. փաշ «ձիու բաշ». իսկ Տիգ. փոշ «աղջկայ վարս» նշանակութեամբ գործածական է միայն անէծքներում. նոյնպէս կայ Մրղ. պոշ (միայն հողը բաշիդ դնեմ «մեռնի՛ս» անէծքի մէջ):— Կերևի թէ նոյն բառն է և Երև. բաշ, Ղրբ. պէշ «կտուրի եզերքը, տան պատի վերի ծայրը, կատար, գագաթ». նշանակութեան զարգացման համար համմտ. Քրբ. یال yal «ձիու բաշ», բայց Կովկասի բարբառներում նաև «լեռան թեքուած մասը», ռուս. грива «բաշ, երկար կատար լերանց»: (Չի կարող լինել Քրբ. باش baš «գլուխ» բառից, ինչպէս ցոյց է տալիս Ղրբ. պէշ, որ փոխառութեան պարագային գոնէ *բէշ ձևը պիտի ունենար):— Կայ սակայն զնդ. barəšnav- «բարձրութիւն, գագաթ՝ լեռան, մարդու» (Bartholomae 951), որ չգիտեմ թէ կապ ունի՞ այս բառի հետ:

Բաշտիս «քուռակ, ձիու ձագ». գործածուած է միայն երկու անգամ հայ գրականութեան մէջ. «Եւ չէզոքն, որպիսի՝ քուռակ, բաշտհատ, մատաղաձի» Մագ. քեր. 241= Երզն. քեր. «Խորհուրդ ի մէջ առեալ յանսանձս եղին բաշտհատ ջորոջ. զի թէ ուղղակին երթիցէ պողոտայ, նոյն բարի հղիցի» Յայսմ. նոյ" 18:

=Բարդուած է բաշ+հատ(անել) բառերից: Հայոց սովորութիւնն է քուռակի բաշերը խուզել մինչև 3 տարեկանը, որից յետոյ դառնում է ձի և այլ ևս բաշերը թողնում են: Այս սովորութիւնը ստուգեցի Երևանի կա-

ռապաններից ու ձիապաններից։ Այսպէս է եղել նաև դիւղերում։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ՓՈԽ.— Վրաց. ფაშატი *փաշատի «փոքր զամբիկ ձի.* молодая кобылица» *(Ջուբինով, էջ 1298),* ֆաշատի *gիխնի «էգ ձի»* (Erckert, Die spr. d. Kauk. Stammes § *346), մինգր.* ֆաշատի *«քուռակ»։ Այս բառերը անշուշտ փոխառեալ են հայերէնից, որովհետև հայերէնը ունի իր ստուգաբանութիւնը, իսկ վրացական ձևերը ո՛չ մի ստուգաբանութիւն չունին վրացերէնով։ Բայց վրացական ձևերն էլ ծագում են հյ. գւռ. *փաշատ ձևից, ըստ որում հյ. բաշ բառի գւռ. ձևն է փաշ. աւելի ստուգական է ճատ>ատ կրճատումը, ինչ. ձնճատ, ֆրատ, պնչատ, ականջատ, կռնատ են։*

*ԲԱՇԵԼ, *ի հլ. «աղքատներին բաժանուած ողորմութիւն» Պատմ. վր. էջ 74. «հարկ, տուրք» (մանաւանդ անեզարար) Խոր. Գ. 65. «ճակատագիր, բախտ» Եզն. Վանօր. 116. Սևբեր. Խոր. Բ. 63 (այս վերջին երկու նշանակութեանց համար հմմտ. բաժ «հարկ, տուրք, ճակատագիր» և բաժանել, բաժին բառերը)։ Այս արմատից են ծագում* բաշխել *«բաժանել կամ իբրև պարգև տալ» ՍԳր. Եզն. Ագաթ.* բաշխոյմ *«պարգև» Բ. մակ. դ. 14.* բաշխիչ *Ագաթ.* բազմաբաշխ *Իմ. է. 22,* պարգևաբաշխ *Ագաթ.* բաշխատել *«բաժան բաժան անել» Վստկ. 166.* կենդակարաշխ *ՍԳր.* ջրաբախշի *Բուզ.* առատաբաշխ *Համամ. առկ.* շնորհաբաշխ *Շար. Նար. են։ Այս արմատից են կազմուած նաև* ժամաբաշխ *«ախտարագէտ» Վանօր.* ագարակաբաշխ *«գիւղատնտես» Պղատ. օրին.* աստեղաբաշխ *Փիլ. Վրդն. ազ. որոնք աստրկօրէն թարգմանուած են յն.* ὠρονόμος *«ախտարագէտ»,* ἀγρονόμος *«գիւղատնտես» և* ἀστρονόμος *«աստղաբաշխ» բառերից, որոնք էլ կազմուած* νέμω *«բաժանել, բաշխել» բայից։ Նոր բառեր են* մրցանակաբաշխութիւն, ջրաբաշխական *են։*

= *Պհլ.* *baxš *բառից, որ թէև աւանդուած չէ գրականութեան մէջ, բայց կան իր ընկերները, ինչ. զնդ.* baxš *«մաս և բաժին հանել, նուիրել, պարգևել», պազենդ.* baxšīdan *«տալ, նուիրել»,* baxšešn *«նուէր», պրս.* بخش baxš *«բաժին, մաս, կենդանակերպ»,* بخشیدن baxšīdan *«պարգևել, շնորհել»,* بخشایندە baxšāyanda *«պարգևիչ, բաշխիչ»,* بخشایش baxšāyiš *«բաշխումն, ողորմութիւն, պարգև»,* بخشیش baxšiš *«պարգև», աֆղան.* baṣal, *բելուճ.* bakšag, *քրդ.* بخشین baxšin *կամ* باغشین bāγšin *կամ* بغشاندین baγšandin *«նուիրել, բաշխել» են (Horn § 186)։ Այս իրանեան բառերը կազմուած են* bag=*սանս.* bhag *«բաժին, բաժանել» արմատից՝ š ածականով (տե՛ս* բագ և բաժանել.—Bartholomae *924)։ Պարսկերէնից են փոխառեալ նաև արևել. թրք.* باخشلامق baxšlamaq *կամ* baγišlamaq *«բաշխել, շնորհել, ներել», օսմ.* بغشلامق baγəšlamaq *«պարգևել» են։—Հիւբշ* էջ 118։*

Առաջին անգամ ՆՀԲ կցեց պրս. պախշ, պախշիշ բառերին։ Յետոյ Lag. Urgesch. Arm. *360 են։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* بخس baxs *«տուրք առնել» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 215)։*

ԳԻՒՂ.—Սչ. բաշխել, *Ննխ.* բաշխէլ, բախշէլ. *Երև.* բ'աշխէլ, *Աշլ. Մշ.* բ'աշխել, բ'մխշել. *Ոզմ.* բ'մշխիլ. *Ախց.* պաշխէլ, *Համշ.* պաշխուշ, *Վն.* պmշխել, *Մկ.* պmշխիլ, *Ագլ.* բշխիլ, *Կր. Զղ.* բախշել, *Ղրբ. Շմ. Տփ.* բախշիլ, *Սլմ.* բmխշել, *Մրզ.* բmխշէլ. *բոլորն էլ նշանակում են «պարգևել, նուիրել և ներել» (վերջին նշանակութիւնը գրաբարին անծանօթ է)։*

*ԲԱՇԵԼ *«մի տեսակ ջրային բոյս է.* acorus calamus L» *(ըստ Արթինեան, Անահիտ 1907, № 1) Բժշ. Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 311 (սրա մօտ սխալ է բաշխէ ձևը և պէտք է կարդալ բաշխ է). նոյն բառից բարդուած համանիշ է* բաշխտակ, *որ և* բաշղտակ, բաղշտակ *Բժշ. Ամիրտ.։*

=*Պրս.* واژ vaxaz *(կարելի է նաև կարդալ* važ*), որից արաբ.* واج vajj *նոյն նշ. (Կամուս, թրք. թրգմ. Ա. 448). Հայերէնը պարսկերէնից աղաւաղուած կամ մի ուրիշ միջնորդ ձևից է յառաջացած։—Աճ.*

Բառիս գոյութիւնը ցոյց տուաւ և հաստատեց Նորայր, Արև. մամուլ 1879, էջ 60 և Հայկ. բառաբ. 109։ Իրանից առաջ ՆՀԲ, ՋՔ և ԱԲ Գաղիանոսի մէջ գտնելով

«Ակարոն. բաշխ է» բացատրությունը, ակարոնը կարծել են յն. ἄκαρι և ըստ այսմ էլ բաշխ մեկնել են «աքլաղ, ակար, մոմի, մորթի, պանրի մանր որդ». մինչդեռ պէտք էր հասկանալ լտ. acorum=acorus, ինչ որ հաստատւում է ուրիշ հոմանիշներով, ինչ. ոճճ, վաչ. վաճ, ակիր, յատ ըլ դարճ են։ Զարմանալի է սակայն, որ ՆՀԲ բաղշատակ բառի մէջ բաղշ բոյսը յիշելուց և այդ բոյսը «պրս. վաժխ» հասկանալուց յետոյ՝ առանձին չի յիշում բաղշ և գիտէ միայն բաշխ որդը։

Գիւմ.—Բոյսի նկարագրութիւնից երևում է, որ տարբեր է խոջ. բոշխ՝ որ ՆՀԲ (յաւել.) այսպէ՛ս է բացատրում. «խոտ բարակ իբրև դմազ՝ ի ձև ինջի, ճարակ գրասուց, խաշանց և թռչնոց. դնի և ի մէջ կօշկաց և տրեխաց առ ի ջերմացուցանել զոտս ի ձմերանի». թրք. այաղ օթու («ոտքի խոտ»)։

*ԲԱՇԽԻՇ «պարգև, նուէր, ընծայ». մէկ անգամ միայն գործածուած է Բուզ. հ. 2 «եւ ամենայն զօրացն տային բաշխիշ ի մեծամեծ աւարացն ածելոց»։ (Նորայր, Կորիւն վրդ. էջ 184 այս բառը կարդում է բաշխել, որով բաշխիշ ձևը դուրսիինից զրկւում է)։

=Պհլ. baxšišn ձևից, որ գաղափարագրերով է գրված և այն է՝ ḫekunišn (տե՛ս Nyberg, Hilfsb. 1, 28 և 2, 30). սրա նեբկալացուցիչներն են պազենդ. baxšešn «նուէր, պարգև», պրս. بخشش baxšiš «պարգև». սրանից փոխառնւալ է նաև ժողովրդ. թրք. bakšiš, որի միջոցով լազ. baxčiši և մինչև իսկ ֆրանս. bakchich՝ տաճկական բախշիշի իմաստով։ Բառիս արմատն է բաշխ. բայց -իշ մասնիկը լինելով զուտ պարսկական վերջաւորութիւն, բառը ամբողջապէս փոխառնւած է իրանեանից։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ՝ համեմատելով պրս. պէխշիշ ձևի հետ. որից էլ Lag. Arm. Stud. § 358։ Ունի նաև Horn § 186։ Զարմանալի է, որ Հիւբշ. 118 բաշխ արմատի տակ է յիշում և առանձին փոխառութիւն չի համարում։

Բաճկուլ «մի տեսակ թռչուն». ունի միայն ԱԲ. վկայութիւնը անյայտ է։

=Պէտք է ուղղել բալկուլ, իբր «բալ կուլ տուող», ինչպէս ունինք ձկնկուլ և ճանճակուլ թռչունները։ Բալկուլ ձևը կենդանի է Լոռիի գաւառականում (Ազգ. հանդ. ժ. 190). ըստ Ռուբէն Քալանթարեանի (անձնական) դա մի փոքրիկ թռչուն է, որ լինում է միշտ անտառում՝ բալենի կոշուած վայրի ծառի վրայ։ Սխալը յառաջացել է լ և շ տառերի նմանութիւնից։—Ա՛ճ.

ԲԱՇՈՏ «բաղէի նման մի թռչուն». ՆՀԲ դնում է գաւառական բառերի շարքում, իսկ ՋԲ և ԱԲ իբր հին բառ։

Կարո՞ղ է լինել բաշ բառից, իբր «բաշաւոր»։

⊙ԲԱՋ-ԻԻՆ «անասունի ձայն» Վահր. յայտ.։

=Բնաձայն բառ. կազմուած է բա արմատից՝ չ ածանցականով. հմմտ. ճաճա-չել, բառա-չել, ճա-չել ևն։—Ա՛ճ.

Այս մեկնութիւնը տուել եմ նախ ՀԱ 1899, 203։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 99 դնդ. vač «ձայն» բառից է հանում։

⊙ԲԱՋԱՂ «ցնդաբանութիւն, յիմար սուտ ու մուտ խօսքեր». արմատ առանձին անգործածական, որից բաջադիլ «ցնդիլ, բանդագուշել, սուտ ու մուտ բաներ ասել» Վեցօր. 181. Խոր. Յհ. կթ. Խոսիք. 20. բաջաղանք «ցնդաբանութիւն» Դ. Քագ. Բ. 11. Եզն. «դատարկ բաներով զբաղում» Ոսկ. մ. ա. 17. բաջաղեցուցանել «մեծ մեծ ջարդել» Եփր. աւետ. բաջաղումն Ոսկ. տիտ. Ճառընտ.։

=Բնաձայն բառ. կազմուած է բա արմատից՝ ջ յօդակապով փոխանակ շ-ի (հմմտ. հաչել, բջել, խնջել) և -աղ մասնիկով (հմմտ. կախ-աղ-ան, կեց-աղ, խաճ-աղ-ատանք, յապ-աղ-իլ, յաչ-աղ-ել ևն)։—Ա՛ճ.

Müller SWAW 88 (1877), էջ 12 տանս. bhāṣ արմատից։ Տէրվ. Altarm. 11, Նախալ. 95 և Մասիս 1882 մայիս 24 կցում է բամ, բաս, բայ ձևերի հետ. տե՛ս բալ բայը։ Հիւնք. բաղ մասնիկից, որ է թրք. baγ «կապ»։ Վերի մեկնութիւնը տուած եմ նախ ՀԱ 1899, 203։

+ԲԱՒ տե՛ս բալ բայի տակ։

Canini, Et. étum. էջ 176 իտլ. for «ճառ բառի հետ։ Մատ ЗВО 5, 320

պնգ. mąðra համանիշի հետ: Bugge KZ 32, 4 սանս. brū «խօսիլ» բառի հետ: Ագաո. ՀԱ. 1899, 204 ճառ, գոռալ, պոռալ, զռալ բառերի հետ իբրև բնաձայն: Patrubány SA 1, 198 բառ, որից բարբառ, դնում է բայ բառից: Meillet MSL 11, 392 միացնում է մի խումբ բնաձայն բառերի հետ, որոնք տե՛ս բողոք բառի տակ: Scheftelowitz BB 29, 38 յիշ. balsas «ձայն», սանս. bhāšā «խօսք» բառերին ցեղակից: Karst տե՛ս բալ բայի տակ: Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 75 կցում է բարբաջել, բառաջել, բառաչել բառերի հետ:

Գիտ.—Տփ. բառ (գործածում է Սայեաթ-Նովան, բայց բառ Դ. Ասատուրի չկայ Տփղիսի բարբառում). Ջղ. բ'առ, Մկ. պառ, ՋԲ. բ'օռ:

Փոխ. — Վրաց. զանազան մասնիկներով անվանք მოუბარი մուրարի «խօսող, գրացող», նաუბარი սաուրարի «գրոյց, խոսակցութիւն», უბარი ուրարի կամ უუბარი ուուրարի «անխօս, որ բարկութիւնից չի խօսում», უბრობა ուրրորա «անխօս մնալ, լռել»:

⊙ԲԱՌԱՆՁ կամ ԲԱՌԱՆՋ «առաւարի դոշիւնը». առանձին աւանդուած չեն, բայց ունինք սրանցից բառաձգել, բառաձգիւն, բառանձիւն (գիտեն միայն ՀՀԲ և ՋԲ):

=Բնաձայն բառ. կազմուած է բա պարզական բնաձայն արմատից, ռ սաստկականով և ն, չ, ջ ածանցիչների յաւելումով. հմմտ. բաշել, բառաչել, բնջել ևն:—Աճ.

Petersson տե՛ս բառ:

Գիտ.—Երև. բրառանչել, բռնչալ, Ագլ. բորնչոլ, Տփ. բարաձգիլ, Շմ. պառաձգիլ, Ղզ. Ղրբ. պռա՛նչիլ, պըրընչ-պա՛ռանչ գալ:

⊙ԲԱՌԱՁ «ոչխարի կամ տաւարի ձայն» Նար. Վրդն. և. որից բառաչել Վեցօր. 120 (տպ. բառաջել), Եւս. պտմ. 632. Ոսկ. յհ. բ. 43. Եփր. նին. բառաչումն եղիշ. միանձ. Լծ. Նար. Սիսիան, անբառաչ Եփր. և. էջ 154, միաբառաչ ճառընտ. =Ջեն. գազիր. (Հրտր. ՀԱ. 1922, 76):

=Բնաձայն բառ՝ պարզական բա արմատից. բաշել բառի սաստկականն է՝ ռ մասնիկով աճած. հմմտ. թաչել, հաչել, շաչել ձևերի դէմ բառաչել, հառաչել, շառաչել և կառաչել:—Աճ.

Նշխ լծ. հաչել, հառաչել: Հիմնք. հանում է կառաչ բառից: Վերի մեկնութիւնը տուած եմ նախ ՀԱ 1899, 204: Գազանճեան, Տարեց. Պապիկեանի 1905, 126 լծ. Թրք. bayər-maq «բղաւել»:

Բառացի տե՛ս Բալ բայի տակ, Բ. 3:

Նշխ գրեթէ ուղիղ է մեկնում, երբ գրում է «իբր բառից արժանի». սխալ է, երբ դնում է «լծ. և փարթամ, որպէս և յն. εὔπορος «հարուստ»: Մէնէվիշեան ՀԱ 1911, 721 ուզում է փոխանակել վառացի ձևով:

+ԲԱՌՆԱԼ (կար. բառնի, հմմ. բա՛րձ) «վե՛ր վերցնել, բարձրացնել. 2. վերցնել տանիլ. 3. վրան առնել, բեռնաւորուիլ. 4. ջընջել, մէջտեղից վերացնել» ՍԳր. Եղն. Ագաթ. «համբերել, տոկալ» Փարպ. Մխ. Երեմ. Վրդն. և. որից բառնալ բողոլ «երեսի վրայ ձգել, լքանել» Սղ. ձ. 13. Սիր. խա. 11. բառնալ զգլուխ «գլխատել» Ագաթ. կրաւ. բառնիլ Գառդն. 32 կամ բառնանիլ «վերցուիլ» Խոսրովիկ. բառնալիք «բեռ վերցնելու ձող» ՍԳր. շարաբառնալ Արիստ. Պորփ. դժուարաբառնալի Առակ. իէ. 3: Այս արմատի մէջ ձևերն են՝ 2. **Ամբառնալ** «վեր վերցնել կամ վեր ելնել, բարձրանալ» ՍԳր. որից ամբառնալիք «բեռ վերցնելու ձող» Նար. «թեզանիքի վեր քաշած մասը» Եւագր. ամբարձի «տապանդակ» (չունի ԱԲ) Ջրր. սարկ. Ա. 22. գերամբառնալ ՅՀ. իմ. պալ. Նիւս. բն.—3. **Համբառնալ** «վեր վերցնել կամ վեր բարձրանալ» ՍԳր. (այս և նախորդ բառի նշանակութեան նուրբ տարբերութեան վրայ խօսում է Առաք. լծ. սահմ. 443).—4. **Բարձ.** առանձին անգործածական ձև, որից բարձումն Փարպ. Խոր. բարձիչ Ոսկ. հռ. Եփր. համաբ. բարձուցանել Հռոմ. բ. 16. բարձումք «բարձր տեղեր» ՍԳր. բարձուստ ՅՀ. իմ. երև. բարձակրել «առանձնել» Անան. պետր. բարձ և բող առնել Կանոն. կամ բարձիբողի առնել Մխ. ապար. Մարքին. Շնորհ. ընդհ. բեռնաբարձ Կոչ. Խոր. մանկաբարձ Ել. ա. 19, 21. բացբարձիչ Ոսկ. հռոմ. 131. հո-

գաբարեան *Կորիւն. կամ* հոգեբարեան *Ոսկ. ես.* բացբարեութիւն *Լծ. պրպմ. 787.* ամբարձ *«բարձր» Աբ.* ամբարեամն *Խոր. Նար.* ամբարեուղէջ *Նար.* վերամբարձ *Ոսկ. ես.* համբարեամն *ՍԳր.* բնաբարձ *Մծբ. Ոսկ. ես.* գերամբարձ *Անան. եկեղ. Ասող.—5.* **Բերձ.** *առանձին անգործածական ձև. գտնում է միայն բարդութեանց երկրորդ մասի մէջ, ինչ.* երկնաբերձ *Ագաթ. Եզն.* երկնաբերձագոյնս *Ագաթ.* լեռնաբերձ *Եզն.* բարձրաբերձ *ՍԳր. Եւս. քր. Ագաթ.* ուղղաբերձ *Մծբ.* մեծաբերձ *Վեցօր. 167.* լանջաբերձ *Փիլ. տես.* լուսաբերձ *Դիոն. եկեղ.* ծանրաբերձ *Ոսկ. յհ. բ. 30.* հրաբերձ *Դիոն. երկն.* համբարձաբերձ *Ջքր. կթ.* բարձաբերձութիւն *Արծր. յհանաբար կայ նաև բառերի սկիզբը՝ իբրև անկախ բառ. այսպէս են՝* բերձաբերիլ *Յիշ. ասկ. յհ.* բերձակատար *Պիտ.* բերձրութիւն *Նար. խչ.—6.* **Բարձր** *(r հլ. -ձու, -ձամբ, -ձունք, -ձանց) ՍԳր. որից* բարձրանալ *ՍԳր. Ագաթ.* բարձրացուցանել *ՍԳր.* բարձրաւանդակ *ՍԳր. Ագաթ. Ոսկ. ես. Եւս. քր. Վեցօր,* բարձրագոյն *ՍԳր. Եփր. եկ. Ագաթ. Կորիւն. Ոսկ. մ. ա. 16.* սարաբարձր *Բուզ.* բարձրեալ *ՍԳր.* բարձրիմաց *Լծ. պրպմ. 615.* բարձրաձայն *«բարձր» Անկ. դիրք հին կտ. էջ 301 (տպ.* բարձրաձայն*). Նոր բառեր են* բարձրապատուիրիւն, բարձրաստիճան, բարձրահանդակ *են։—Այս բոլորի արմատական ձևն է* բարձ, *որի ձայնդարձն է* բերձ. *առաջինից r մասնիկով կազմուած է* բարձր. *բայական ձևով եղել է *բարձնալ (կտր. *բարձցի), որից ձ չնչուելով *բարճալ, կտր. *բարցի. սրանք էլ հայերէնի ուղղագրական օրէնքներով՝* բառնալ *(r դառնում է ն–ի մօտ n) և կտր.* բարձի *(r ձայնից յետոյ գալիս է միշտ ձ և՛չ երբեք ց). Համմտ. այս բոլորի համար* դառնալ–դարձ. *վերջապէս ամ և համ նախամասնիկներով՝* ամբառնալ, համբառնալ։

= *Հնխ.* bhŗg'h- *ձևից, որ սոսրին ձայնդարձն է հնխ.* bherg'h *արմատ. հայերէնում* bherg'h-> բերձ- *և* bhŗg'h-> բարձ- *այս արմատների միւս ժառանգներն են սանս.* bŗhánt *«հասած, ուժով, մեծ, բարձր», գնդ.* բերձանդ bərəzant- *«բարձր, բարձրաձայն»,* բարձրանդ barəzah- *«բարձրութիւն»,* բերձի bərəzi- *«բարձր», սոգդ.* βarz *«երկար, բարձր», պհլ.* burz *«բարձր», պրս.* برز burz *«բարձր»,* بلند buland *«բարձր», օսս.* bārzond, *քրդ.* berz, *բելուճ.* burz *«բարձր», հրդ.* burg *«քաղաք» (նախապէս «ամրացուած բարձունք»),* bērg *«լեռ», գերմ.* Berg *«լեռ», գոթ.* bairgahei *«լեռնադաշտ»,* baurgs *«քաղաք», հիւլ.* brī *(տես.* breg*) «լեռ», կիմր.* bre *«լեռ, բլուր»,* bry *«բարձր», կելտ.* Brigantes *«լեռնաբնակք», գերմանականից փոխառութեամբ՝ հլ.* brĕgŭ *«հզերք», ռուս.* béperъ *«հզերք», սերբ.* brĭjeg *«բլուր», փ. ռուս.* éreh *«հզերք. բլուր» (*Walde *310,* Berneker *49,* Horn § *198,* Kluge *50,* Pokorny *2, 173). —Հիւբշ. 428։*

Böttticher ZDMG *1850, 351 սանս.* bhar, *յն.* φέρω *«բերել» են բառերի հետ։ Նուլնը կրկնում են* Müller SWAW *40, 15 և* Justi, Zendspr. *211։ Սրանց բոլորի դէմ է եկնում* Lagarde, Arm. Stud. § *359, ցոյց տալով, թէ յիշեալների համապատասխան հլ. ձևն է* բերել *և հետևաբար սրանք կապ չունին մեր բառի հետ։ Մորթմանն* ZDMG *1872, 541 նյն.* πάρω, πέρνω, *խալդ.* pari, *իսկ էջ 614 խալդ.* parme։ *Հիւբշ.* ZDMG *36 (1882), էջ 115—116* բարձ- *հնխ.* bhrgh' *արմատից և բառնամ<հնխ.* bhrg'h-nā-ti, *ուր* g'h *ընկել է r և n ձայնների միջև, ինչպէս ընկել են* k' ուր<ok't-*>յն.* ὀκτώ *և r՝* bubu = ἔδρακε *բառի մէջ։ Նոյն ձևով է նաև Հիւբշ.* Arm. Stud. *էջ 22, ուր նկատում է, որ* բառնալ *բառի մէջ* բարձ, բարձր *արմատի ձ ձայնը կորած է։ Տէրվ. Նախալ. 96 և 199 հնխ.* bhargh *«ճահիճ» արմատից է դնում հնդ.* barh, *գնդ.* barəz, *հյ.* բարձր, բարձ, բառնալ։ *Հիւնք.* բարձումն, բառնալ, բեռն=*պրս.* bār *«բեռ», յն.* φάρος *են։* Scheftelowitz BB *29, 13 հիւլ.* barr *«գագաթ», սանս.* bhṛṣṭi *«ծայր» բառերի հետ։* Pedersen, Aspirationen i Irsk *194 և հյ. դր. լեզ. 36* բառնալ=*գերմ.* bringen, *գոթ.* briggan *«բերել» և կիմր.*

hebrwng։ Karst, *Ծուշարձան 403 առմէր.* bar «*բարձր, վեր, գագաթ, մակերես*»։

ԳԻՒ.—Նախ. բառնալ, *Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Ջղ.* բ՚առնալ, *Զթ.* բ՚առնօլ, *Ոզմ.* բ՚տռնալ, *Մկ. Սլմ. Վն.* պտռնալ, *Տիգ.* փառնալ, *Ասլ.* փտռնալ։—*Ագլ.* բէ՚ռնիլ, *Սեբ.* բ՚էռնալ, *Ախց.* բ՚էռնէլ, *Ղրբ.* պէ՚ռնէլ, *Շմ.* պէռնիլ, *Տփ.* բէրնիլ, *Հճ.* բ՚էրնել, *Ռ.* փէռցրնել.—*Երև.* բ՚առցէլ, *Զթ.* բ՚արցրնիլ, *Հմշ.* պարցրնուշ, *Մրղ.* պտռցէլ։—*Սրանցից առաջին խումբը ծագում է* բառնալ *ձևից, երկրորդը ևնթադրում է *բեռնել, որ կա՛մ բեռն արմատից ծագած մի հին ձև է և կամ յետնաբար կաղապարուած է* բեռն *բառի վրայ. երրորդը մի նոր կազմութիւն է բարձր ձևից։*

ՓՈԽ.—Տե՛ս բարձր *բառի տակ։*

ԲԱՌՋՈՒԿ «bogue». *ունի միայն Քաջունի, հտ. Դ. 34, որ և հտ. Ա. էջ 289 դնում է «bogue, բուճուճ, արտաքին փշոտ կեղև շագանակի», առանց յիշելու* բառջուկ *ձևը։*

ԲԱՌԻԱԿԱՆ. *նորագիւտ անծանօթ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագիստրոսի խրթին հանելուկային ոտանաւորներից մէկի մէջ. «Բառական բաղդատական բաղազանեալ բարգաւաճեալ» (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 175)։*

ԲԱՍԱՆԵԼ «*զատել*». *ունի միայն Բառ. հրիմ. էջ 48։*

*ԲԱՍԱՃ «*խաչակիրների արշաւանքը*». *չունի ԱԲ. քանիցս անգամ գործածում է Հեթ. ժմնկ. եղև առաջին բասաճն Ֆռանկաց գալ յՍրուսաղէմ. Բասաճն էառ զՆիկիա քաղաքն ի Յունաց. եղև երկրորդ բասաճն Ֆռանկաց։*

=Հֆրանս. passage, *որ բուն նշանակում է «անցք»։*

Ուղիղ մեկնեց Karst, *Կիլիկ. քեր. էջ 15։*

*ԲԱՍԱՐ «*խելք, միտք, բանականութիւն*» *Կոստ. Երզն. 141. յետին տառադարձութեամբ պասար Գր. ազթամ. Քուչ.։*

= *Արաբ.* بَصَر baṣar «*տեսողութիւն. 2. աչք. 3. կորովութիւն մտաց*»։

Ուղիղ մեկնեց Նորայր (Կոստ. Երզն. էջ 191)։

ԲԱՍԻԼԻԿ «*ձևոքի երակ, որտեղից արիւն են առնում*» *Մխ. բժշ. 121, 116 (վերջինս* բարսիլիկ*). ունի միայն ԱԲ՝ իբր յն. բառ։*

=*Յն.* βασιλικός «*արքայական, թագաւորական*» *բառն է, որ թէև* Bailly-*ի և* Sophocles-*ի հոյակապ բառարաններում, ինչպէս նաև արդի յունարէնում այս նշանակութիւնը չունի, բայց անշուշտ պէտք է որ մի այդպիսի գործածութիւն ունեցած լինի, իբրև «գլխաւոր՝ մեծ երակ». Համմտ. Քրք.* شاه damar *šah damar «շնչերակ, artère», բառացի «արքայերակ»։—Աճ.*

Իմ տուած մեկնութիւնը ունի նախ Seidel, *Մխ. հեր. 151ª. ևնթադրում է* βασιλική ձևը, *որի համար ասում է թէ դեռ երևան չէ եկած, բայց նրանից է փոխառեալ արաբ.* bāsliq, *որից էլ Մխիթարը։*

*ԲԱՍԻԼԻՍԿՈՍ *կամ* ԲԱՍԻԼԻՍԿՈՍ «*մի տեսակ օձ, որի համար հներն ասում էին թէ մահացու հայեացք ունի*» *Ոսկ. ես. 153. եզն. յետնաբար ունինք* վասիլիսկոյ *(փխ. *վասիլիսկոս) Վրք. հց.* վասիլիսոս *Հայել. 178։*

=*Յն.* βασιλίσκος «*նոյն օձն է*». *ծագում է* βασιλεύς «*արքայ, թագաւոր*» *բառից, որի նւազականն է և նշանակում է բուն «արքայիկ». սրա համար է, որ նոյն օձը թարգմանարար կոչում է նաև Հյ.* արմայիկ օձ։ *Համմտ. նաև պրս.* شاه مار šāhmār «*արքայ- օձ*», *որ է «մեծ օձ»։ Յոյն բառի յետին տառադարձութիւնն է* վասիլիսկոս *ձևը։ Յունարէնից փոխառեալ են նոյնպէս լտ.* basiliscus, *ֆր.* basilic, *ռուս.* василискъ *ևն համանիշները։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։

*ԲԱՍԻՐ «*պարսաւելի, անարգելի*» *Նար. որից* բասրել «*պարսաւել, վար զարնել*» *Եփր. Թգ. էջ 455. Ոսկ. ես.* բասրիլ *Խոր.* բասրելի *Նար.* բասրանք *Սիր. լը. 16. Ոսկ. ա. կոր.* բասրական *Երզն. մաթ.* անբասիր *3Հ. կթ. ևն։ r ձայնի տեղափոխութեամբ յառաջացած է* բարսել, *որ մէկ անգամ գործածել է Ոսկ. ես. յն.* βλασφήμα «*հայհոյել*» *բառի դէմ (ըստ ՆՀՒ).—Նշանակութեան զարգացման համար համմտ.* անարգել, *որ նոր գաւառականներում գործածւում է «հայհոյել» նշանակութեամբ (տե՛ս* արգ *բառի տակ)։*

= Ասոր. ܒܨܝܪ bəsīr «անարդ». գալիս է *basīr ձևից. արմատը ܒܨ bəsār «արհամարհել, մերժել, խոտան համարել», որից նաև ܒܨܪܐ bəsārā «աստրութիւն», ܒܨܝܪܐ bəsīrā «ապականեալ, պիղծ» ևն:—Հիւբշ. 301:

ՆՀԲ լծ. հյ. վսեր: Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Lagarde, Arm. Stud. § 360: Տէրվ. Altarm. 11, Նախալ. 95, Մասիս 1882 մայ" 24 բամ, բաս, բայ ձևերի հետ է կապում: Հինք. պարսաւ և բասրել դնում է <յն. περισύρω «քաշքշել»

ԳԻՒ.—Վն. պարել, Նբ. պառեբ «դառարկ դառարկ խօսիլ, ցնդաբանել, խելքին փչածն ասել»:

ՓՈՒ.—Վրաց. ბასრობა բասրոբա «ծաղրել, այպանել». Խոլո իգինի ჩრაասրոբես մաս «Եւ նոքա ծաղր առնէին զնա» Ղուկ. Ը. 53. გაბასრვა գաբասրվա «նախատել, վրան խնդալ», ნაბასრობელი սաբասրոբելի «բասրելի, պարսաւելի, այպանելի»:

ԲԱՍՍ տե՛ս Բախտ:

ՆՀԲ լծ. պրս. (իմա՛ արաբ.) فوز favz «փրկութիւն, յաջողութիւն», լտ. faustus «երջանիկ», faustitas «երջանկութիւն»: Ուղիղ մեկնութիւնը տուաւ Böttticher ZDMG 1850, 331, Arica 77, 270, Lag. Urgesch. 361 ևն: Հինք. լատ. faustus «երջանիկ»:

*ԲԱՍՍ «ապաստանի տեղ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած կեղծ Շապհոյ Բագրատունւոյ պատմութեան մէջ, էջ 43 «Ապա է՞ր է դի նստիս ընդ դրուց քաղաքին. բասա է. այս քաղաքս քո է և այդ բարձր աշտարակս դի՞ է քեզ. ասա ինձ»:

= Պրս. بست bast նոյն նշ.— Արդի Պարսկաստանում շատ սովորական է բասը. երբ մէկը կառավարութեան կողմից հալածուած է կամ երբ ժողովուրդը պետութեան դէմ ցոյց է ուզում սարքել, տունը տեղը թողնում է և ապաստանում է մի մզկիթ, մի սրբատեղի, փոստատունը կամ այլ անբռնաբարելի մի վայր և ոչ ոք իրաւունք չունի նրանց այնտեղից դուրս հանելու—Ա՛ճ.

Այս մեկնութիւնս տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեան. հատ. Բ. էջ 49:

Հ. Դր. Սարգսեան, Բազմ. 1927, 182 պրս. քրդ. bās «քաւ է» ձևից!

*ԲԱՍՏԱՐԱՆ, ի–ա հլ. «բանտ» եփր. Թգ. 446 «Մատնեաց զնա ի բանտ բաստարանին».—ուրիշ օրինակ չկայ:

= Պհլ. bastak «կապանալ», bastan «կապել», գնդ. basta-, պրս. بستە basta «կապեալ», بستن bastan «կապել», արմատը bast-+հյ. -արան ձևերից, իբր «կապարան»:

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ. նոյնը նաև Տէրվ. Մասիս 1881 մայ" 11: Հինք. Նորայր՝ Կորիւն վրդ. էջ 256:—Սանուալճեան, Բազմ. 1904, էջ 500 լծ. հյ. բանդ:—Վարդանեան ՀՍ. 1913, 624—5 (Բառարն. դիտ. Բ. 26) Յովհ. Եփեսացու մօտ գտնելով ասոր. ܒܣܛܝܪܐ bastīrā կամ ܒܣܛܝܪܝܢ basṭīrīn անծանօթ բառը՝ համարում է «լտ. vestiarius, տուն պատմուճակաց» և նրանից ուղղակի տառադարձութիւն է կարծում հայ բառը, գործածութեան ձևի համար համեմատում է Բուզ. ե. 6 «Մուծին զնա ի ներքս ի տունն պատմուճակացն կապեալ ձեռս յետս ...և անդէն ի վաղուն պատմուճակացն փողոտեցին զնա»: Բայց ասորի բառը պիտի տար հյ. *բաստիրայ, *բաստիրին և ո՛չ թէ բաստարան. ուստի առ առաւելն պէտք է ասէինք թէ բաստարան սխալ ընթերցուած է:

*ԲԱՍՏԵՒՆ (ն հլ. –ռան, –ռամբ, –ռունք) «դեսպակ, գահաւորակ» Ոսկ. Երր. իր. էջ 552, Եղիշ. ը. էջ 156 (տպ. պաստեռունս):—Այսպէս են մեկնում նաև Ստ. լեհ. և Հին բռ.:

= Յն. βραστήριον «փակ գահաւորակ» (Sophocles էջ 303 ա, յիշատակուած առաջին անգամ Յուստինիանոսի Օրինագրքում), որի հետ նոյն են լտ. basterna և հրէարէն bstrna בַּמְטָרְנָא (տե՛ս Fürst, Gloos. graeco-hebr. 85) և ասոր. ܒܘܣܛܪܢܝܢ busternīn (Brockelmann, Lex. syr. 41ա) համանիշները: Հրէարէն բառը փոխառեալ է լատիներենից. որից լատաջանում է նաև ֆրանս. basterne «մի տեսակ եղնասայլ, որ հին ժամանակ գործածական էր Գաղղիայում»: Լատին բա-

ոի ծագումը անատոլգ է. Walde *85 գնում է լա.* bastum «գաւազան, բառնալիք» *բառից (կամ մի համանիշ ձևից, որ ծագել է յն.* βαστάζω «բառնալ, կրել, տանիլ» *բայից). ըստ այմ յունաբէնն էլ բնիկ չի եւրում* (Boisacq *չէ իսկ յիշել) և որովհետև յունաբէն բառը ուշ է աւանդուած, իսկ հայերէն բառը արդէն 6 դարում կայ, ասոի բանաւոր է բաստեռն գնել լատիներէնից փոխառութիւն՝ համաձայն* Meillet-*ի տեսութեան (*MSL *18, 348—350):* Ernout BSL *№ 89, էջ 94 լա.* basterna *բառը կապում է գերմանական* Basternae, Bastarnae *ժողովրդի անուան հետ, կա՛մ տարերան փոխառեալ է սրանցից և կամ բաստեռնը կրողները տաջին անգամ Բաստեռնացի գերիներ են եղել: Վերջին կարծիքն ենք դնում նաև* Ernout-Meillet *101:*

Նշ չգիտէ այս բառը, որովհետև Ոսկեբերանի ձեռագրում բառս բոլորովին խանգարուելով դարձել է «զրազմատառամբն» (տե՛ս Նշ նուարաան բառի տակ): Իսկ Եղիշէի վկայութեան մէջ չգիտեմ ինչու կետեր է միայն դնում (տե՛ս Նշ գաիատրակ բառի տակ): Առաջին անգամ ՋՔ մեկնում է բառս «կակուղ և փափուկ նստարան, սէտիր, canape, sofa», *որին հետևում են ԱՔ, Էմինեան Բառ. գաղղ. (տե՛ս* sofa), *Մեղու 1859, էջ 21:—Բագրատունի, Դրախտ կորուսեալ Դ. տող 305 գնում է իբր «բազմոց կամ գորգ»: Առաջին անգամ Նորայր, Արև. մամուլ 1879, 60 և Հայկ. բառաքն. էջ 110—111 քննութեան առնելով այս բոլորը, հաստատում է բառի բուն նշանակութիւնը:*

Böttich. ZDMG *1850, 351 մեկնում է իբր* աւա *մասնիկով* star *արմատից, որից և սանս.* avastāra «վարագոյր»: *Նոյնպես է նաև* Böttticher, Arica *78, 287:* Lagarde. Urgesch. *246* stɣ «տարածել, փռել» *արմատից: Նոյն,* Arm. St. § *362 մերժելով այս բոլորը՝ գնում է լա.* basterna *բառի հետ:—ՓՔ յոջ. էջ բ հանում է պաստառ բառից: Թիւրեաքեան, Պատկ. աշխ. պրակ. 194 պրս.* پستر pistar «անկողին» *բառից. (սրա աւելի հարազատ ձևն է* بستر bistar, *որից պրս.* پستراهنك pistarāhank «վերմակ», Müller WZKM *4, 259 պրս.* bistar *բառը մեկնում է գնդ.* vastra- «զգեստ», *որ* Horn § *218 նշանակութեան տարբերութեան պատճառով մերժելով՝ գնում է* vi+star. *պարսիկ բառից են ծագած նյն.* πιστέρι «անկողնի վերմակ» *(տե՛ս* Miklosich, Türk. Element.*) և գնչ.* pasterni «գորգ» (A. Paspati, Etudes sur les Tchinghianés*) են): Հիւբշ. 118 լատին բառի հետ միասին՝ գնում է պարսկերէնից (կասկածով), առանց սակայն պարսկերէն մի ձև յիշելու, իսկ էջ 511 (կասկածով) և* Armeniaca IF *19, հլ. Թրգմ. ՀԱ 1907, 250 (առանց կասկածի) գնում է յունարէնից:*

[ԲԱՍՏԻԿ «աղէտ կամ լաւ» (փաղաքշական). *այսպէս ունի միայն Բառ. երեմ. էջ 49. անշուշտ առաջին բառը պէտք է կարդալ աղէկ (Ագուլիսի բարբառում գոյութիւն ունի՛ այս բառը). ամբողջը կազմուած է հյ. բարեբաստիկ ձևից և սխալ է հասկացուած:*]

ԲԱՏԱՎԱՐԴ, որ և յետին տառադարձութեամբ պատավարդ, պատվարդ «մի տեսակ փուշ է. spina alba» *(ըստ ՀԲուս. § 313) Բժշ.—Նոյնը սխալ գրչութեամբ* բագաւորդ *(ՀԲուս. § 271), որ Հին բռ. նախորդի նման մեկնում է «երնջակի տակ»:*

=Պրս. بادآورد bādāvard, *որի աւելի ուղիղ ձևն է* بادآور bādāvar՝ *նոյն նշ. կազմուած է* bād «հողմ, քամի» և āvar-dan «բերել» *բառերից. այսպէս է կոչուած բոյսը այն պատճառով, որ ծաղիկը աշնան քամուց խլուելով այս ու այն կողմ տարուրերում է: Մխ. Հերացին տառադարձելով բառի վերջին մասը իբր* vard «վարդ», *թարգմանաբար կազմել է հյ.* հողմավարդ *(ՀԲուս. § 1711) և* հովվարդ *(ա՛յսպէս պէտք է ուղղել ՀԲուս. § 313 յիշուած* հոռվարդ *բառը): Երկուսն էլ սխալ են: Պարսկերէնից փոխառեալ են նաև արաբ.* بادورد bādvard, بدورد baddāvard, بادورد bāδvard, باورد bāvard «chardon d'âne» *(տե՛ս Շիմկեվիչի հատ. քաժոյի մէջ* WZKM *11, 314):*

Ուղիղ մեկնեց Նորայր, Բառ. ֆր. էջ 224 ա, ուր տե՛ս և բառիս վկայութիւնները։

ԲԱՏՈՒԻՍ *«չափ ուղղոց». ունի միայն Բառ. երեմ. էջ 49. ինչ լինելը յայտնի չէ։*

ԲԱՏՈՒՑ *«պատուհան կամ թարաճա». ունի միայն Բառ. երեմ. էջ 49, որ այս բացատրութեամբ ուզում է հասկացնել «պատի մէջ շինուած դարակ՝ զանազան բաներ պահելու համար». նոյնը կրկնում են ՀՀԲ, ԳԲ և Նորայր, Բառ. ֆրանս.* niche *բառի տակ։ Կենդանի է այժմ էլ Երևանի բարբառում բառաց ձևով. համմտ. Պռօշեան, Սօս և վարդիթեր, գ. տպ. էջ 421։*

ԲԱՐ *«հաստ». ունի միայն Բառ. երեմ. էջ 49։*

ԲԱՐԱՔ *«ոստայնի կկոց, մաքոք» Յայսմ. (մէկ անգամ)։*

***ԲԱՐԱԿ** *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «նուրբ» Մծբ. Եփր. Համաբ. Փիլ. Փարպ. որից* **բարակամած** *«բարակ կըտաւ մանող կամ բարակ մանած (կտաւ)» Նս. ժթ. 9. Վեցօր. 121.* **բարակագոյն** *Փիլ.* **բարակագործութիւն** *Փիլ.* **բարակուռ** *«ձիւղերը բարակ և տկար (որթ)» Վստկ.* **բարակ ցաւ** *«հիւծախտ» Մխ. բժշ. (կազմութեան համար համմտ. թրք.* اینجه inje *«բարակ» և* اینجه آغری inje aγrə *«բարակ ցաւ, թոքախտ»)։*

*= Պհլ. *bārak, որ անշուշտ գոլութիւն ունէր *bārīk ձևի հետ միասին. երկուսն էլ թէև աւանդուած չեն, բայց հաստատւում են հայերէնի հետ՝ պրս.* باریک bārīk *և բելուճ.* baraγ *համանիշներով։—Հիւրշ. 118։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, որ կրկնում են ՆՀԲ, Lag. Urgesch. *927 և այլն։*

ԳԻՒ.—Տփ. բա՛րակ. *Ախց. Երև. Կր. Ջղ.* բ՛արակ. *Ննխ. Պլ.* բարագ. *Խրբ. Մշ. Սեբ. Սչ.* բ՛արագ. *Ագլ. Հւր.* բmrmկ. *Ալշ. Ոզմ.* բ՛mrmգ. *Համշ.* պարակ. *Մկ.* պmրակ, *Գոր. Վն.* պmրmկ. *Մրղ. Սլմ.* պmրmկ. *Շմ.* պmրmգյ. *Ղրբ.* պէ՛րակ. *Ասլ.* բ՛արայ. *Ռ.* փարագ. *Տիգ.* փmրmգ. *ՋԹ.* բ՛արագ, բ՛այօգ. *Հճ.* բ՛այօգ. *Ակն.* բ՛արգնալ *«բարակիլ»։ Նոր բառեր են* բարակաճող, բարակասիրտ, բարակացաւ, բարակարտասի, բարակուկ, բարակիլ *են։*

ԲԱՐԱԿ *«որսի շուն» Ղեղշ. ը. էջ 158. ըստ ՆՀԲ գրուած է նաև փարագ, փարաֆ. փոխաբերական իմաստով են փարաֆ «լկտի, խենթ, պոռնիկ» Հին բռ. «շուն, աղտեղի» Բառ. երեմ. 322,* պառաֆ *«պոռնիկ» Բառ. երեմ. 272.* փարաֆեան *«աղտեղի» Մագ. դամագտ. (տե՛ս Մէնէվիշեան, ՀԱ. 1911, 722),* փարաֆումն *«խենթութիւն» Նար. խե, էջ 112. սրբանց համար համմտ.* շուն, շնութիւն, շնացեալ *են. տե՛ս նաև* պառական։

Հներից Լծ. Նար. փարաֆմունք *«խենթութիւն» մեկնում է «պարսկերէն փերթ փերթ ասէ, որ է այլևայլ մեղքն» (սրանով պէտք է հասկանալ անբնական խառնք ընդ կանայս. համմտ. Ղևտ. ժթ. 19=Օր. իր. 9 «Ջայդի քո մի՛ վարեսցես այլևայլ», որ շատեր այս առումով են հասկանում)։ ՆՀԲ և ՋԲ (նոյնպէս և Աւետիքեան, Մեկն. Նար. Վենետիկ 1859, էջ 228) դնում են պրս.* پارەگ *«շուն»։ Հիւնք. փարախ բառից։ Փորթուգալ փաշա, Ղեղշէ 467* **բարակ** *«նուրբ» բառն է, իբր թէ «բարակ գլխով կամ բարակ մարմնով շուն»։* Bugge IF *455 իտալ.* bracco, baracco *«որսի շուն» բառի հետ, որ մերժում է Հիւրշ. 343։—Բառիս հետ նոյն են ըստ Նորայր, Կոր. վրդ. 227 ֆրանս.* braque, *անգլ.* brach *«որսի շուն, մի տեսակ քերթէ»։ Բայց անգլ.* brach, *ինչպէս և հֆրանս.* brac, *իտալ.* bracco, *ծագում են գերմ.* bracke, *հրգ,* bracko *համանիշից, որի հետ նոյն է մլտ.=հին ֆրիզ.* barm-braccus *(ըստ* Kluge *70)։ Բայց յայտնի չէ թէ այս վերջինի՞ ծագումն ինչ է։ Սրա հետ նո՞յն են արդեօք թրք.* براق baraq *«որսի շուն» և կիրգիզ.* باراق baraq *«մի տեսակ որսի շուն, родъ пуделя», որ* Будаговъ *1, 251 կցում է ֆրանս.* braque *բառի հետ, առանց նկատի առնելու չազաթայ.* بدق badaq *համանիշը, որ փոխառութեան գործը խանգարում է։*

***ԲԱՐԱՒ** *«փայլակ». մէկ անգամ ունի =կրկնուած է* բար *անծանօթ արմատից. քում մեկնուած է փայլակն)։*

=Եբր. ברק bārāq «փայլակ». Համմտ. և արաբ. برق barq «փայլակ»:—Աճ.

ԲԱՐԱՄ. *անծանօթ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Օրբ. 353 «Բայց ի թակէլն մեր զսահաւ մնացորդ հիման հիւսիսային սեանն՝ զտաք զանպատմելի գանձն աստուածային՝ զնշխար սրբոյն Գրիգորի Լուսաւորչի զգագաթան մի կողմն և զբարամն աջ բազկին եդեալ ի փոքրիկ սնդուկ փայտեայ և կոպղեալ և մատանեալ կապարեայ կնքովն»:—Թուի թէ նշանակում է «նախապատուկ»:*

Շահնազարեան, հրտր. Օրբ. բ. 369 հանում է յն. բրաս, ֆրանս. bras «բազուկ» բառից:

ԲԱՐԱՄԲՈՒՆՔ *«վանդակի ձողերը» Ոսկ. Եփես. 828 (բարամբունք գառագղի). ունի միայն ԱԲ. ուրիշ տեղ չէ գործածուած. անշուշտ յոդնակի է՝ հզ. *բարամբն ձևից:*

ԲԱՐԱՆ *«բարիք». ունի միայն Բառ. երեմ. էջ 49:*

ԲԱՐԱՇԽ *(ի հլ. քան ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «խիտ, բիրտ» (բնաւորութեան համար ասուած) Փիլ. ևլ. 471 (խիտաթ և բարշաշխ խոպոպք). ուրիշ տեղ չէ գործածուած:*

Հին բռ. և Բառ. երեմ. էջ 49 սխալ են մեկնում «բար, հաստ. բարաշխ, կակուղ կամ դիրգ»: Վերջինիս հետևելով է, որ ՀՀԲ դնում է «կակուղ կամ փուխ կամ դիւրաւ վնասելի»—ՆՀԲ դնում է լծ. հյ. պիրկ, պրս. պէրգ, թ. փէհ, գարբ:

***ԲԱՐԱՊԱՆ,** *ի–ա հլ. «դռնապան» ՍԳր. Եփր. մն. 479, 482. Մծբ. 112. (նոր գրականում այս անունով են կոչւում Պատրիարքարանի դռնապանները (շաթիր), որոնց գլխաւորն էլ բարապանապետ անունն է կրում): Այս բառին պէտք է կցել բարապետ «դռնապան» Մծբ. և բարատր «դռան վերի սեմը» ՍԳր. Մագ. Ճառընտ. «դռան երկու կողքի սեմերը՝ աջ և ձախ» Տաթև. ամ. 390: Բոլորի արմատն է բար «դուռ», որ առանձին գործածուած չէ: Համմտ. սրանց հոմանիշները դարապան և դարապետ:*

=Հիւս. պհլ. bar «դուռ» բառից, որ դաւառական ձևն է պհլ. dar, պրս. در dar, գնդ. pvarə, հպրս. duvara- «դուռ» բառի. համմտ. նոր պրս. դաւառականներից գիլանի bar, սեմնանի bar, քաշմիրի bār, ber, քրգ. bar, աֆղան. war, վախի bār, բոլորն էլ «դուռ»: Իրանեան dw- հիւսիսային պահլաւերէնի մէջ բառասկզբում դառնում է b, որով dvar- դառնում է bar (տե՛ս Horn § 545, Հիւբշ. Pers. Stud. 116, 166, Gauthiot MSL 17, 144 և Meillet MSL 17, 246): Համմտ. նաև պրս. سالار بار sālār-i-bār «դռնապանապետ, բարապանապետ» (ՀԱ. 1910, 120): Իրանեանից փոխառեալ է նաև հյ. բուշալ. բար «դուռ», բարաճ «արտաքս, դուրս»:—Հիւբշ. 119:

Ուղիղ մեկնեցին Պատկ. Матеріалы I, էջ 8 և Հիւբշ. ZDMG 36(1882), էջ 128—9: Հինք. բարակ «որսական շուն» բառից:

Գիմ.—Արմատը պահում է դեռ Վն. դmr- բmr «տուն-տեղ», որ դար «դուռ» և բար «դուռ» համանիշների յարադրութեամբ կազմուած մի բառ է:

ԲԱՐԱՒՈՐ *տե՛ս Բարապան:*

Փոխ.—Բրբ. գւռ. S. palavar «դռան վերի սեմը» (Բիւր. 1899, 798): Բառիս հին գործածութիւնը ցոյց է տալիս Բառ. երեմ. էջ 81, որ դրանդի բառը մեկնելու ժամանակ գրում է. «բարաւորն, որ է բալաւարն»:—Նոյնը ունինք նաև վրաց. ბალავარი բալավարի ձևով, որ Ջուբինով մեկնում է «бутовая плита, հիմնաքար»:

⊙ԲԱՐԲԱՆՋ *«պատուական առասպել, ցնդաբանութիւն» Վեցօր. 134, 182. Ոսկ. յհ. ա. 8. Մանդ. որից* **բարբանջել** *«ցնորաբանել» նշն. Ոսկ. Երբ.* **բարբանջանք** *Ոսկ. յհ. ա. 31. Պիտ. Իսիւք. Վրք. ոսկ.* **բարբանջումն** *Փիլ. ՅՀխ. Խոր. Փարպ.* **բարբանջմունք** *Վկ. գե. էջ 10.* **բարբանջեցուցանել** *Եւագր. էջ 250: Սրա հետ նոյն է՝*

⊙ ԲԱՐԲԱՋ *«ցնդաբանութիւն, պատրաստական անմիտ խօսքեր» Վեցօր. էջ 63. Ոսկ. ա. տիմ. որից* **բարբաջել** *Ոսկ. Երբ. Կոչ. 225. Փիլ. Սիսիան.* **բարբաջանք** *նշն. Ոսկ. տիտ. Փիլ. ՅՀ. կթ.* **բարբաջումն** *Նիւս. կազմ.* **բարբաջողական** *Վրդն. ծն:*

=Բնաձայն բառեր են. երկուսն էլ կազմուած են բ, բա պարզ ձայնից՝ կրկնութեամբ

ջ աճականով և ն յօդակապով կամ առանց յօդակապի. հմմտ. կարկաչել, գարգաչել, կրկչաձայն, դրդչիւն *են։—Ա՛ճ.*

Տէրվ. Altarm. *11* բամ, բաս, բայ *ձևերի հետ։ Նոյն, Նախալ. 49 հնխ.* bhargh *արմատից, իսկ էջ 95՝ իբրև* բա–բրաջ՝ *աճած* bha, բամ, բան *են արմատից։ Հիմնք.* բաղ *մասնիկից։ Վերի մեկնութիւնը տուած եմ նախ ՀԱ 1899, 204 բ։—* Petersson, Ar. u. Armen. Stud. *74—75 հնխ.* bhʒ—bhʒ *ձևից. հմմտ. հյ.* բառ, բառաչ, *առնս.* barbara-, *յն.* βάρβαρος *են։*

ԲԱՐԲԱՌ *տե՛ս* բալ *բայր։*

Καρολίδης, Γλωσσ. συγκρ. *էջ 95 մերժում է կցել կապադովկ.* παραπωτεύω *«ինքնիրեն խօսիլ, մրմնջալ» բառի հետ։ Գարագաշեան, Ծաղիկ 1891, էջ 13 բ հանում է յն.* βάρβαρος *«բարբարոս» (իւրակապէս «այլալեզու») բառից։ Յ. Գ. Մ., Պատմ. գրակ. 15 երր.* տապար։

ԲԱՐԲԱՐԵԼ *«ժամանակ կամ առիթ չունենալ՝ մի բան անելու համար» Փիլիպ. դ. 10, Եփր. փիլիպ. Ոսկ. յհ. որից* բարբարաւիճ *«վարանք, տատամսիլը» Ոսկ. փիլիպ.։*

=Կրկնուած է բար *անծանօթ արմատից։ Աւետիքեան, Մեկն. թղ. Պօղ. Բ. էջ 721 կրկնուած է համարում* բար *«պէս, կերպ» բառից։*

Գիմ.—Սրանի՞ց է գուռ. բարբարական *«աստանդական, դատարկ» (Ակն. պլ.)։*

ԲԱՐԲԱՐԻԱՆՈՍ *տե՛ս Բորբորիանոս։*

***ԲԱՐԲԱՐԻԿ** *«բարբարոսական, վայրենի» Ոսկ. ես. 221 կամ* բարբարիկոն *«վայրենական, բարբարոսական» Անյ. քեր. 93. Արծր. հրտր. Պտկ. էջ 68. Մագ. և երդն. քեր.։*

=Ծն. βαρβαρικὸς *«բարբարոսական», որի չեզոքն է* βαρβαρικὸν. *Երկուսն էլ ծագում են* βάρβαρος *բառից, որ տե՛ս տակը։—Հիւբշ. 343։*

Ուղիղ մեկնից նախ ՆՀՒ?

***ԲԱՐԲԱՐՈՍ,** *ի–ա հլ. «այլազգի, օտարազգի, վայրենի ժողովուրդ» (իբր գոյ.), «վայրենաբարոյ, բարբարոսական» (իբր ած.) ՍԳր. Կորիւն. Ագաթ. որից* բարբարոսական *Ագաթ. Կորիւն. Պիտ. Փիլ.* բարբարոսիկ *Եւս. քր. են։*

=Յն. βάρβαρος *«ո՛չ-յոյն, այլազգի, օտարազգի, վայրենի», այս անունով էին որակում Յոյները բոլոր այն ազգերին, որոնք յունարէն չէին խօսում, որոնց լեզուն իրենց անհասկանալի էր. հմմտ. Անաքարսիսի խօսքը. «Սկիւթացիք բարբարոս են առ Աթենացիս և Աթենացիք՝ բարբարոս առ Սկիւթացիս»։ Նոյնպէս Ովիդիոս բանաստեղծը՝ աքսորուած օտար երկիր, գրում է. «Բարբարոս եմ աստ, զի ոչ ոք իմանայ զիս»։ Բառը յետոյ ստացաւ «վայրենի» նշանակութիւնը և փոխառութեամբ տարածուեց շատ ուրիշ լեզուների մէջ. ինչ. լտ.* barbarus, *ֆրանս.* barbare, *թրք.* barbarləq *«բռնակալութիւն», վրաց.* ბარბაროსი barbaros *են։ Ըստ ծագման՝ յոյն բառը կցւում է առնս.* barbaras *«կակաչ», սլով.* brbrati, *սերբ.* brboljiti *«բռբռալ», լիթ.* birbti *«բզզալ» են բառերին՝ իրրև բնաձայն (*Boisacq *114)։ Ծն.* βάρβαρος *բառը* Weidner, Glotte IV *303 (տե՛ս* Boisacq *1100) փոխառնել է համարում բաբել.* barbaru *«օտարական» բառից։ Ծոյն բառի «այլալեզու՝ անհասկանալի խօսուածք. աղճատաբանութիւն» առումից է ձևացած հայերէնում էլ* բարբառ *«բարբառջանք» ԱԲ։—Հիւբշ. 343։*

Schröder, Thesaur. *56, 57 հայերէն բառի արմատը դնում է* բառ, բարբառ. *Հայերէնից է փոխառնել յունարէնը, որից էլ անցել է միւս լեզուներին։ Ուղիղ մեկնեց նախ Աւետիքեան, Մեկն. թղթ. Պօղոսի Ա. 957 (?) և յետոյ ՆՀԲ։*

***ԲԱՐԲԻԶԱԿ,** *որ և* բարբիւզեակ, բարբուզան, բարբուզնա, բարբուզնօ *«ծմել, լտ.* blitum, *ֆրանս.* blite» *Գաղիան. ըստ Հիւս. § 315։*

=Արաբ. يربز yarbūz *կամ* جربز Jarbuz *նոյն նշ. սրանց սկզբնաւորը սխալ կարդացուելով՝ դարձել է* بربز barbūz, *որից էլ ձևացել է հայերէնը։ Կամուսի արաբերէն ընդարձակածաւալ բառարանը այս ձևերից ո՛չ մէկը չգիտէ. բայց Շթայնշնայդէրի հատաքածոյի մէջ (*WZKM *11, 327) գըտնում եմ թէ՛* yarbūz *և թէ՛* Jarbūz *ձևերը։*

Ուղիղ մեկնեց Հիւս. § 1195։

Գիմ.—Ըստ Հիւս. § 315 «Հիմայ այս անուամբ ի վան և ուրիշ կողմեր ծանօթ է ան-

սակ մի վարունգ կամ վարընդի նման բանջարեղէն մի»։

Ըստ հաղորդագրութեան Ա. Մովսիսեանի (նամակ 1927 սեպտ. 5) Բուլանըխի գաւառականով պորպզնակ նշանակում է iris germanica -ի կամ թրաշուշանի նման, մանիշակագոյն և մէջտեղը դեղին գծիկներով սիրուն մի ծաղիկ, որ ձնծաղիկից յետոյ է երևում և քիչ ժամանակից չորանում։ Ստուգաբանում են քրդ. barf bəza «ձիւնածին»։

*ԲԱՐԲՈՒՏ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «տեսակ թելաւոր նուագարանի». մէկ անգամ ունի Ուռհ. տպ. էջմ. էջ 79։ =Պրս. և արաբ. بربط barbut, որ և barbat (ըստ Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 455) «մեծափոր նուագարան ինչ. լաւութա, luth». ոմանք այս բառը ստուգաբանում են պրս. bar-i-bat «սադի կուրծք»։ Ըստ այսմ բառը բնիկ պարսկերէ՞ն է, որից փոխառեալ են նաև յն. βάρβιτος, βάρβιτον (Զ դար Ն. Ք.), լտ. barbitus, վրաց. ბარბითი barbith, ֆրանս. berbith «արաբներին յատուկ մի տեսակ չորեքթելի նուագարան»։ Հայերէնը չի կարող լինել յունարէնից i-ի պատճառաւ, մանաւանդ որ Ուռհայեցու ժամանակ դուր է փնտռել յունական ազդեցութիւն։ Փոխառեալ է նոր պարսկերէնից կամ արաբերէնից, ինչպէս հաստատում է ու ձայնաւորը։

Առաջին անգամ ՀՀԲ դրաւ յունարէնից։ Ուղիղ մեկնեցին ՆՀԲ և ՋԲ՝ դնելով պարսկերէնից։ Lag. Arm. Stud. § 365 դնում է արաբ. և պրս. ձևերը։ Հիւբշ. 343 դնում է յունարէնից!

ԲԱՐԳԱԻԱՃ, ի հլ. «պանծալի, փառաւոր, անուանի» Օր. իզ. 19. ՅՀ. կԲ. «զուարթ, ծաղկեալ» Բրս. պհ. որից բարգաւաճիլ Պիտ. Նար. Կանոն. բարգաւաճանք Ոսկ. մտթ. Փիլ. (գրուած է պարգևաճանք՝ մի անծանօթ գրուածքի մէջ, որ Ոսկեբերանի գործերից է Թում. տե՛ս ՀԱ 1913, էջ 55). բարգաւաճագոյն Պիտ. անբարգաւաճ Փիլ. իմաստ. նոր գրականում բարգաւաճ նշանակում է «յաջողած, զարգացած, prospéré»։

ՀՀԲ մեկնում է «աճեցեալ բարեօք». ՆՀԲ «բարեբեր և աճեցուն»։ Կապ չունի սոգդ. βrγ'w (կարդա՛ farγâw) «հարստութիւն»։ Աղբալեան ՀԱ 1927, 406 հանում է պրս. barg «տերև» բառի գործիականից +աճ։ (Սխալ, որովհետև barg բառի հին ձևն է պհլ. valg (նաև varg), զնդ. varəka «տերև»)։

ԲԱՐԳԵՂ «բարեբախտ». ունի միայն Բառ. երեմ. էջ 50։

ԲԱՐԳՈՂԵԼ «նշկահել». ունի միայն Բառ. երեմ. էջ 50։

ԲԱՐԴ, ի հլ. «դէզ» (խոտի կամ հացաբոյսերի համար գործածուած) Դատ. ժե. 5. Ագաթ. Փարպ. «ոչ-պարզ, բազադրեալ (բառ)» Բր. և Երզն. քեր. «մի տեսակ ծաղիկ՝ որ գարնան սկիզբն է բացւում» Տաղ. (տե՛ս Կոստանեան, Նոր ժողովածու, Բ. 68). որից բարդել «դիզել, կուտել» Նար. Սարգ. յկ. Կլիմաք. Վրք. Հց. բարդած «կոյտ» Տօնակ. «բազադրեալ» Փիլ. այլար. բարդութիւն Նար. բարդումն Կլիմաք. յարաբարդել ՅՀ. կԲ. բարդակ «խումբ, դէզ» Սիւն. քեր. 206. բարդածանց «քէ՛ բարդուած և քէ՛ ածանց բառ» (նոր բառ)։

Պատկ. Мамер. II. էջ 2 պրս. pard پرد «ծալք, ւիցս, անգամ» բառի հետ։ Canini, Et. êtym. 143 լտ. pars, partis «մաս»։ Հիւնք. բրդել բառից։ Meillet, Esqu'sse էջ 38 թերևս բերել բայիւն ցեղակից. հնխ. bhṛti- «բերեալ» դերբայից. համմտ. սանս. bhṛti «բերումն», bhṛta «բերուած, լցուած, բեռնաւորուած», գոթ. -baurθs, հբգ. -burt, գերմ. ge-burt։ (Նոյնը կրկնում է Scheftelowitz BB 29, 21)։ Թիրեաքեան, Կարնամակ, ծան. 35 ամ-բարտ-ակ ձևի հետ։ Karst, Յուշարձան 403 սումեր. bar «հաւաքել, դիզել» և հլ. պար։

Nyberg, Hilfsb. 2. 32 կցում է պհլ. bār «եզերք», պրս. bār «եզերք», սերբ. brdo «սար, բլուր», ուկր. bérdo «անդունդ» բառերին և գերմ. berg=հալ. brĕgr «եզերք» բառերի հիման վրայ ենթադրում է թե հին իրանեան ձևն է *bardi «բարձունք», որից փոխառեալ են հլ. բարձ և բերձ։ (Horn, § 158 bār կցում է զնդ. pāra- և սանս. parā- «եզերք» բառերին)։

ԳԻՒ.—Ալշ. խրբ. կր. Մշ. p'արդ' (բայց խրբ. նաև p'արդի), Մկ. պmրթ, Վն. պmոթ. այս բոլորը նշանակում են հունձքի որոշ

չափ, որ է 40 խուրձ. (Զրս. նշանակում է «30 հատ». գործածւում է ձու համրելու համար)։ Նոր բառեր են բարդոց *նոյն նշ. (Ալշ. Մշ.* բ'արդ'ոց, *երև.* բ'արբօց, *Ոզմ.* բ'mրթուց), բարդակոլոն *«իրարանցում, խառնաշփոթութիւն»,* բարդոցել, բարդնակ, բարդակ։

Փոխ.—Լազ. bardi *«խոտի դէզ»,* پارت part *«բարդ, 30 խուրձ».* (Justi, Dict. Kurde *այս բառի հետ նոյն է գնում նաև վրաց.* ფარდი փարդի *«մաս, զոյգ», որ սակայն այստեղ գործ չունի)։*

ԲԱՐԴՈՒ *«ջոդ կամ կարնեցի». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 50 (բ. տպ.* շօդ). *ինչ լինելը յայտնի չէ։*

ԲԱՐԵԹԱՆԻ *«բուրձ». ունի միայն Բառ. երեմ. էջ 50։*

Բարեկենդան *(սեռ.* ի), *գրուած նաև* բարիկենդան *«Պահոց, մանաւանդ Մեծ պահոց նախորդ օրը՝ որ յատկացուած է ուրախութեան և զուարճութեան» Կամրջ. Ասող. Տօնակ. Արշ. Յայսմ. որից* բարեկենդանութիւն *«զուարճութիւն. ուրախութիւն» Բ. մակ. ե. 6. «բարեկենդան» Լծ. կոչ. Կամրջ.* բարեկենդանանալ *«զուարճանալ, ուրախանալ» Մաշկ.* բարեկենդանացուցանել *«բարեկենդան բռնել» Տօնակ.* բարեկենդանի *«բարեկենդան» Բրս. մրկ. Լծ. կոչ.։*

=Բարդուած է բարի *և* կենդան, կենդանի, կենդանութիւն *բառերից. Համմտ. յն.* εὐ-ζωΐα *«երջանիկ կեանք»,* εὐ-ζωέω *«երջանիկ ապրիլ»,* εὐ-ζωά *«երջանիկ կեանք», որոնք կազմուած են* εὖ *«լաւ, բարի» և* ζάω *«ապրիլ, կեալ» բառերից։—Հիւրշ. 119։*

Ուղիղ են մեկնում ՀՀԲ և ՆՀԲ։—ԳԴ գնում է պրս. պէրգանատան *բառի հետ։ Պատկ.* Матер. *I. 8 և Հիւնք. գնում են երկուսն էլ։ Լեոնեան, Աւետարեր 1914, 259 քրդ.* բar *«նախ» +* կրթան *«պահել», իբր նախ քան զպահս։*

Գիմ.—երև. բ'արիկէնքան, *Շմ.* պարիկէնքան. *Ախց. Կր.* բ'արկէնտանճ. *Ալշ. Խրբ. Մշ. Սեբ.* բ'արգէնդանճ. *Ակն.* բ'արգէնքան *(սեռ.* բ'արգէննի). *Պլ. Ռ.* փարգենդանճ. *Ասլ.* բ'արգէնդագ. բ'արգէնդա*. *Սլմ.* պmրգէնդանճ՛. *Վն.* պmրկէնդmճ՛. *Տիգ.* փmրգէնդանճ. *Մկ.* պmրկmնտmճ՛. *Ննխ.* բարգէնդանճ. բարգէնանճ. *Տփ.* բարգէդանճ. *Զթ.* բ'արգինդոճ. *Հճ. Զթ.* բ'այգինդօճ. *Ոզմ.* բ'mրգընդmճ. *Ագլ.* պըրկի'նդmճ. *Ղրբ.* փըրգինդան, պըրըկէ'նբան. *Առն.* բարգինդանճ. *Համշ.* պարգիդօճ. *Մրղ.* պmոկ'mննանճ, *էնկ.* փանգըրդանճ, *Զղ.* բարանգէդան։

Փոխ.—Պրս. برقندان barqandān *կամ* برغندان barγāndān *(արդի պարսից արտասանութեամբ երկուսն էլ հնչւում են* bärγändān*) «Շաբան ամսուայ վերջին օրը, որի յաջորդ օրը սկսում է Ռամազանի ծոմապահութիւնը» (ճիշտ ինչպէս մեր բուն բարեկենդանի յաջորդ օրը սկսում է Մեծ Պասը)։ Այս բառը չկայ հին զրադարշտական լեզուի ու գրականութեան մէջ. յատուկ է միայն իսլամական շրջանին և գործածւում է միայն բառարաններում։ Պարսկերէնով բառս չի ստուգաբանւում.* ق q *ձայնը արդէն ցոյց է տալիս, որ օտար է. սակայն իսլամական լինելով հանդերձ արաբերէն չէ և չի կարող լինել իր բազմաձայնութեան պատճառով։ Այս բոլորը ցոյց են տալիս, որ պրս. բառը փոխառեալ է հայերէնից։—Հայերէնից են նաև ուտ.* pärängändä, *թրք. գւտ. հնս.* pengerdenk, *նւդ.* پرگندنك pärgendänk, *Սեր.* pärgündänk։

ԲԱՐԵՔԹԱՆԻ *«վեհագոյն». ունի միայն Բառ. երեմ. էջ 50։*

ԲԱՐԻ *կամ* ԲԱՐԻ *«գէթ, գոնէ» վրք. հց. Բ. 277. յետին և ռամիկ բառ։*

=Պրս. باری bārī *«գոնէ» (բուն նշ. «մէկ անգամ»), որից թրք. ռմկ.* bare *«գոնէ»։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ հտ. Բ. էջ 1047 գ (համմտ. նաև Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 139)։

ԲԱՐԹՈՒՆ *«շարժուն. ունի միայն Բառ. երեմ. էջ 50, որի հետ նոյն են բաղփուն «շարժուն» էջ 47 և* բարեդեալ *«շարժեալ» էջ 50։*

*—*ԲԱՐԻ *(-բւոյ, -բեաց) «լաւ, ընտիր, աղէկ, բարեգործութիւն» ՍԳր. նշն. Կիւրղ. ծն. Սեբեր. «ինչք, գոյք» (համմտ. ֆրանս.* les biens, *գերմ.* Gut, *արաբ.* خير xayr, *որոնք նշանակում են նախ «բարի» և երկրորդաբար «ինչք») Յճխ. «բարօրութիւն» Խոր. ժմ. սրանից են ծագում բազմաթիւ բարդեր ու ա-*

ծանցներ, որոնց թիւը Առձեռն բառարանում 441 է։ Այս ածանցմանց մէջ բաւը ներկայացնում է չորս հետևեալ ձևերով.—1. **Բարի-.** *ինչ.* բարիոմ «լաւ, ընտիր, ազէկ» *Տոբ. ժբ. 11. Յուդթ. գ. 3. Եզն.* բարիասաց *Մծն.* բարիաւուր *Բուզ.* բարիօրինակ *Ճառընտ.* բարիոտն «օտքը բարի, ուղտրով» *Վրք. Հց.* բարիխոհրդութիւն *Յճխ. չ*բարի *Ոսկ. մ. ա. 17։ —2.* **Բարե-.** *ինչ.* բարեգործ *ՍԳր. Ագաթ.* բարեդրուժ *Ոսկ. Հռ. և բ. տիմ.* բարեժողով *Ոսկ. բ. կոր.* բարեխոհեալ *Կորիւն.* բարեխոհուդ *Բուզ.* բարեխաւսս *Տիտ. բ. 3.* բարեխօս *ՍԳր. Ագաթ.* բարեկամ *ՍԳր.* բարեկեաց *Ագաթ.* բարեկենդան *(տե՛ս առանձին)*, բարեկեցիկ *ՍԳր. Ոսկ. մ. ա. 20.* բարեբար *ՍԳր. Ագաթ. Եզն.* բարեի *կամ* բարեհի *Ոսկ. յհ. ա. 12.* բարեհել *Եւս. քր. ա. Եփր. Համաթ. (ԱՔ ունի նաև* բարոհել *ձևը).* բարեհաճել, բարեհացուցանել *Եփր. ասաց. Նիկոմ. (երկուսն էլ Նորագիւտ բառ. տե՛ս Յուշարձ. էջ 207).* բարեհիկ *Ոսկ. փիլիպ.* բարեսես «գեղեցիկ» *Սմբ. պտմ. 105. Ձայնաւորի մօտ՝* բարեախոռժ *Եզն.* բարեասաց *Վեցօր.* բարեագործ! *Տօնակ.* բարեաճուն *Յայսմ.— 3.* **Բարէ-.** *նախորդի սխալ գրչութիւնն է. ինչ.* բարէժամանակ *Խոր.* բարէազգի *Սոկր.* բարէբնկալութիւն *Աթ. անտ.* բարէյորդոր *Վրք. Հց. ևն։— 4.* **Բար-.** *ինչ.* բարամութիւն «բարեբեր տարի» *Փիլ. իմաստ.* բարատեաց *Փիլ.* բարութիւն *ՍԳր. Եզն.* բարընկալութիւն *Ոսկ. գծ.* բարեջանիկ *Սահմ. Խոր. վրդվռ. Ճառընտ. Մագ.— Այս բոլորից դուրս՝ բառի զանազան հոլովներից ունինք՝* բարեացապարտ *Կորիւն. Ագաթ. (որի դէմ կրկնագիրն ունի* բարեցապարտն *Յուշարձ. էջ 83 բ). Խոր. ՅՀ. կթ. Արծր.* բարեաւ *Ա. թագ. իդ. 20. Փարպ.* բարով *Ոսկ. ա. կոր.* բարուհ *ՍԳր. Եփր. ծն. ել. թգ.* չբարուհ *Խոսր. պարգ.* բարեօք *Բուզ. գ. 6 (ըստ ՆՀԲ այսպէս. իսկ տպագրեալի մէջ չկայ. տե՛ս տպ. 1889, էջ 96)։ Նոր գրականում ստեղծուած են նորա՛յր բառեր, որոնցից յիշենք՝* բարեացական, աբարեացական, բարեխիղճ, անբարեկամական, անբարեկիրթ, անբարեմիտ, անբարեյաջող, անբարեյոյս, բարեկարգիչ, բարեկրթութիւն, բարեհաճ, բարեհայեցողութիւն, բարեփոխել, բարեփոխութիւն, բարեմաղթել, բարեպաշտակ, բարեգուշակ, բարեծնունդութիւն, բարեշրջութիւն, բարեշրջական, բարեպաշտական, բարեճոռոգում, բարեճոռոգութիւն, բարեճոռոգել, բարեճոռոգչական, բարեճոգի, բարուհում, բարելաւել *ևն։*

=Կազմուած է բար-f *«բնութիւն, բնաւորութիւն» բառից՝ ի մասնիկով, որ ածական կազմող մասնիկ է. համմտ.* աղ-ի, լեղ-ի, ար-ի, ֆաճ-ի, երկայր-ի, երկդիմ-ի *ևն. իմաստի զարգացման համար էլ համմտ. նոյն* բարf *բառից յառաջացած՝* բառոյական, բառոյագէտ, բառոյագիտութիւն, *որոնք հիմայ յանգած են «բարի, առաքինի» իմաստին. այսպէս նաև լատ.* mos *«բարք, վարք», բայց նաև «բարի վարք, շիտակ բնաւորութիւն, ուղղամտութիւն»,* in morem *«կանոնաւոր»,* moratus *«բարեկիրթ»,* յն. ἦθος *«սիրելի, յարգելի, հաւատարիմ» (*ἔθος *«բարք» բառից), գերմ.* Sitte *«բարք», իսկ* sittig *«քաղցր, համեստ, խելօք, բարի վարքով»,* sittigen *«կրթել, դաստիարակել», ֆրանս.* moral *«բարեկիրթ»,* morale *«բարեկրթութիւն» ևն։ Յատկապէս յիշելու արժանի է մհյ.* բառոյ *«ազնիւ, լաւ, կրթուած» Վստկ. 221։*

Klaproth, Asia polygl. *199 և 101 տիրլ. պերմ.* bur, *գերմ.* brav, *շվէդ.* bra։— Rask, Nonnulla de systemate... Haunae *1832, էջ 25* բարի=*լապոն.* barhe: *ՆՀԲ առնս.* վարա *«ընտիր, ազնիւ»։* Peterm. *17, 30 պրս.* bih, *առնս.* bhadra։—Windisch. *15 յն.* φέρ-ιστος *«ամենաքաջ, լաւագոյն»։* Gosche *47 արմատը* var, *համմտ. գնգ.* vərəta *և առնս.* ūru *«բարձք ոտից»,* varōru *«գեղեցիկ բարձ, ազդրերը գեղեցիկ»։* — Müller SWAW *38, 578 և 44, 563, Հիւբշ.* KZ *23, 39 ըստ* Peterm։—Lagarde, Arm. Stud. § *367 առաջին անգամ տուաւ ուղիղ, մեկնութիւնը, որ սակայն ընդունած չեն գիտունները, քանի որ լեռոլ նոր նոր ստուգաբանութիւններ են առաջարկել։ Տէրվ.* Altarm. *7 առնս.* bhadra, bhadraka։ *Հիւնք. պրս.* bār *«բերք» բառից։* Patrubány SA *1, 187 հնխ.* bher *արմատից, իբրև* bhr-ɟo-

ձևից. համմտ. յն. φορά «լիութիւն, բերրիութիւն», φέρμα «պտուղ» և φέρτερος «լաւագոյն»: Meillet (անձնական) առաջարկում էր յն. φέρτερος «լաւագոյն»-ինչպէս որ Esquisse, էջ 11 ունի յն. φέριστος «լաւագոյն, ընտիր»: Բայց Հիւբշ. IF Anz. 10, 47 մերժում է, որովհետև յն. φέρτερος կցւում է լիթ. gēras «լաւ» բառին: Փառնակ, Անահիտ 1903, 130 գնդ. vara- «շնորհ»: Patrubány ՀԱ 1908, 314 բերել բալից: Karst, Յուշարձ. 403 սումեր. bar «փայլիլ, արև, փայլակ» բառի հետ: Ա. քհ. Երկաթ. ՀԱ 1912, 657 արի բառից: Մառ, Новый Востокъ 1924, № 5, էջ 318 վրաց. վարեսի «լոռեգոյն» բառի հետ:—Պատահական նմանութիւն ունի արաբ. بَارِئ bārī' «լաւ, գեղեցիկ» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 544): — Բարև բառը ոմն Գ. Կ.՝ Արշալոյս Արարատեան թերթում՝ 1843 թ. № 130 մեկնում է բարի+և, համարելով վերջինս սաստկական մասնիկ, ինչպէս ունին արև, ալևոր, և բաւ զև:

Գիտ.—Նախ. Տփ. բարի (սակայն Նախ. նշանակում է «ինչք, ապրանք»), Ալշ. Ախց. Ասլ. Երև. Խրբ. Կր. Մշ. Ջղ. Սեբ. բ'արի, Ոզմ. բ'mրի, Զթ. բ'արբ', բ'այբ', Ղրբ. Շմ. պարի, Սլմ. Վն. պmրի, Մրզ. պmոի, Մկ. պmրբ', Հճ. բ'այի, Ռ. փարի, Տիգ. փmրի.—Ագլ. Տփ. բարէկամ, Ջղ. բ'արեկամ, Ախց. Կր. բ'արէկամ, Սչ. բ'արէգամ, Ննխ. բարէգամ, Ալշ. Երև. Մշ. Սեբ. բ'արէգամ, Ասլ. բ'արէգամ, Սլմ. պmրեկամ, Ղրբ. պարէկամ, Շմ. պարէկամ, պարակամ, Մկ. պmրէկամ, Ոզմ. բ'mրակամ, Գոր. պարիկամ, Պլ. Ռ. փարէգամ, Տիգ. փmրէգmմ, Մրզ. պmոmկամ, Հճ. բ'այգամ.—Ալշ. Սչ. բ'արեվ, Երև. Խրբ. Սեբ. բ'արէվ, Սլմ. պmրեվ, Ղրբ. պա'րէվ, Պլ. փարէվ, Հճ. բ'այէվ, Զթ. բ'արիվ, բ'այիվ, Ոզմ. բ'mրիվ, Մկ. պmրիվ, Տփ. բար'օվ, Ախց. Մշ. Ջղ. բ'արօվ, Շմ. պարօվ, Ակն. բ'արէվ «ողջոյն», բ'արէօվ «լաւ», Ագլ. բm'rmվ, Մղ. պա'րավ: —Նոր բառեր են՝ բարեկէն, բարեւագիր, բարևել, բարևիկ, բարեմճայ, բարեաուր, բարիբաև, բարովուկ են:—Թրքախօս հայերից Առն. ունի բարի, բարիլիս, բարիրկուն, բարովկիր «բարով եկար», բարիպտուղ բառերը:

Փոխ.—Հայերէնից փոխառեալ է գնչ. paravén «բարև, ողջոյն», որ զուր տեղը A. Paspati աշխատում է կապել սանս. pran'āma, հինդուստ. प्रनाम prunam «պաշտել, ողջունել» բառերի հետ:—Bugge IF 5, 168—180, թրգմ. ՀԱ 1895, 231 մեզանից է դնում գոթ. barusnjan Ա. տիմ. ե. 4, իբր բարեպաշտանալ բառից յարմարեցրած:—Տ. Վ. Պալեան, Բիւր. 1898, 712 հայերէնից է համարում կնաարիոյ թուրք և թիւրքմէն բարբառով parig «հաւատափոխ». բայց չգիտեմ թէ ի՛նչպես է կապում հայերէնի հետ;—վերջապես Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 հայերէնից փոխառեալ է դնում ալբան. mbarē «լավ, բարի»:

ԲԱՐԽՐԻՒ «գայթակղիլ». մէկ անգամ ունի Վահր. Խրդ. «Ցայսպիսեացս է՛ երթեք և պատրիլ տկարամտացն, և սխտաւորաց բարխրրիլ և կարծել զԱստուած թագաւոր»:

ՆՀԲ հետևելով սխալ ստուգաբանութեան (իբր ոմկ. բախալիլ բառի հետ՝ բախ արմատից) մեկնում է «ցնորիլ, յիմարիլ»: ՋԲ աւելի ուղիղ դատելով դնում է «ցնորիլ, յիմարիլ, կամ գայթակղիլ». իսկ ԱԲ երկուսն էլ:

ԲԱՐԿ «կծու, թունդ» Ագաթ. «դժնեայ, բարկացկոտ» Ոսկ. Ես. մ. ա. 16. Եւագր. «ուժգին, սաստիկ, շատ» Ոսկ. դդ. Անկ. գիրք նոր կտ. 110, 231. «հրավառ, սաստիկ տաքացած» Վստկ. 134. Բ'կր. 49. որից բարկանալ «զայրանալ» ՍԳր. բարկութիւն «զայրոյթ» ՍԳր. Ոսկ. Եփես. «կայծակ» Իմ. ժթ. 12. Եւս. քր. Ոսկ. մտթ. բարկացայտ Ագաթ. բարկացող ՍԳր. բարկացութիւն Եփր. համար. ևն: (Բարկութիւն և սրտմտութիւն հոմանիշների տարբերութեան վրայ մանրամասն տե՛ս Տաթև. ամ. 235 և մտթ. Եւագր. 74):—Արևմտեան գրականում կազմուած նոր բառ է բարկօղի «կոնեակ»:

ՆՀԲ լթ. բարակ: Տէրվ. Նախալ. 96 սանս. bhrāj, գնդ. barāj, յն. φλέγω, լտ. flagrari բառերի հետ հնխ. bharg «շողալ, խորովել, բաղձալ» արմատից: Müller WZKM 5, 267 յն. φλέγω «վա-

ռել» բառի հետ։ Հիւնք. լա. parcus *«ագահ»։* Patrubány SA *1, 218 սանս.* bhrāj *«փայլլ, ցոլք» բառի հետ։* Scheftelowitz BB *28, 307 լեթթ.* bargs *«խիստ, անգութ», լիթ.* burgeti *«կռտիլ», հհիւս.* berkja *«աղմկել» բառերի հետ։* Lidén, Arm. Stud. *58 յն. φάγρος (կրետական) «լեռնանաքար» և φοξός «սրածայր» ձևերի հետ համեմատելով՝ հանում է հնխ.* bheg² *արմատից. հայերէնի նախաձևն է հնխ.* bhag²-ro> բարի։ Petersson IF *23 (1908), էջ 403 հնխ.* bherg *արմատից, որ ածած է* bher *«կտրել» պարզ արմատից. հմմտ. յն. φάρω, գնդ.* bar *«կարել, փորել», հիսլ.* barki *«կոկորդ»։ Սագըզեան ՀԱ 1909, 335 և* Karst, *Ծուշարձ. 403 հլ. բուռն բառի հետ՝ սումեր.* bar *«ձեռք», bar «գօրեղ, կատարեալ», էջ 418 թթր.* berk *«ամուր», ալգոնք.* berk *«յոյժ, ամուր», ատրպատ.* berk *«կարծր, պինդ», նաքսթթ.* bärkkä *«յոյժ, լաւ», չուվաշ.* parga *«ամուր, հաստատուն»։ Դաւիթ-Բէկ. Ծուշարձ. 396 նպալլ.* bragod, bragdy, *կորն.* bregand, *հրլնտ.* bracaut *«խմորում», յն. βράσσω «եռալ», լտ.* flagrari *«այրիլ, բորբոքիլ»։ Թիւնաքեան, Բազմ. 1912, 265* բարկաւալ *հանում է պրս.* barik *«բարակ, նուրբ» բառից։* Petersen, Kelt. gram. *1, 109 և* Persson, Beitr. *22 (տե՛ս* Pokorny *2, 188) հիսլ.* borb, borp *«լիմար», նիսլ.* borb *«կոշտ», լեթթ.* bârgs *«կարծր, խիստ, անգութ, անագորոյն»* (Trautmann *27*), *շվէդ. գտ.* bark *«ինքնահաճ, լամառ, անմարդամօտիկ անձ»,* barkun *«կոշտ, անհարթ» բառերի հետ, որոնց նախաձևն է հնխ.* bhorg²o- *(Pokorny 2, 188)։* Petersson IF *23, 403 և* Persson, Beitr. *1, 37 (տե՛ս* Boisacq *1101) սա. գերմ.* brakig, *հոլլ.* brak, *անգլ.* brack *«դառն, աղի, աղաջուր» բառերի հետ, որ մերժում է* Pokorny *անդ։*

ԳԻՒՒ.—*Տփ.* բարգ, *Ալշ. Խրբ. Մշ.* բ'արգ, *Ոզմ.* բ'mրկ, *Ախց.* բ'արֆ, *Մկ. Սլմ. Վն.* պmրկ, *Ասլ.* բ'ար*.—*Տփ.* բարգա'նալ, *Երև.* բ'արգա'նալ, *Ոզմ.* բ'mրգանալ, *Ռ.* փարգանալ, *Սլմ. Վն.* պmրկանալ, *Շմ.* պարգանալ, *Զթ.* բ'արգանոլ, *Զթ. Հճ.* բ'այգանօլ։ *Նոր բառեր են* բարկանիֆ, բարկել, բարկնալ։

ԲԱՐԿԱԺԱՏ, որ գրւում է նաև բարգժատ, փէժատ, բարգատ *«մի տեսակ խէժ, որ խայծղանի հետ ունի. ֆր.* malthe» *(ըստ Նորայր, Բառ. ֆր. 775 բ), «քաղբան, չարհոտ,* galbanum *(վատ հոտով մի խէժ է)» (ըստ ՀԲուս. § 319 և 1945) Բժշ. Հին բռ.։*

= *Պրս.* بَرْزَد bārzad *«քաղբան», որ գլուխում եմ Շթայնշնայդէրի հատաքաժոյի մէջ՝* WZKM *11, 314. Ծագում է պրս.* زَد zad *կամ* ژَد žād *բառից, որ նշանակում է «խէժ». իսկ* *bār *ներկայացնում է այն ծառը, որից վազում է նոյն խեժը. հմմտ. բառիս հոմանիշը* անգուժատ<*պրս.* angužad՝ *որ է* անիւռատան<*պրս.* augudan *ծառից վազած խէժը։ Շթայնշնայդէր ունի նաև* بَازَد bāzard *ձևը, որ հայերէնի մէջ չկայ։ Պրս.* bārzad *տալիս է հյ.* բարզատ. *իսկ* բարգժատ *(կամ որ նոյն է* բարկժատ*) ձևի դէմ յիշատակուած պրս.* بَرْجَد bargažad *ձևը չեմ գտած որևէ բառարանում։*

Բառիս գոյութիւնը երևան հանեց նախ Նորայր, Արևել. մամուլ 1879, էջ 60 և Հայկ. բառաք. 25, որոնց մէջ բարկժատ *մեկնում է =պրս.* պէրկիժէտ *(չունի ԳԴ)։ ՀԲուս. § 1945 դնում է պրս.* bārzad >*հյ.* բարզատ։

ԲԱՐՁ, ի հլ. «գլխի տակ դնելու բարձ» Մրկ. դ. 38. Եղիշ. «նստելու բարձ, որ պատուի նշան էր» Ղուկ. ժդ. 8. Գ. մակ. ե. 8. «պատուի աստիճան» Ագաթ. «նաւի նստարան» Ճառընտ. «եռանկեան խարիսխը՝ որի վրայ նստում է եռանկիւնը» Պզատ. տիմ. «մարմնի բարձր, երանք, աղդր (հմմտ. նրստոյ տեղի)» ՍԳր. Եւս. քր. այս բոլոր նշանակութիւններն էլ յառաջացել են առաջինից։ Որից բարձկնեար *Եզեկ. ժգ. 18, 20.* բարձրնաիր *Ղկ. ժդ. 7.* բարձրէց *Բուզ. գ. 9. Ղուկ. ի. 46.* բարձառու *Եւս. քր.* բարձակից *«սեղանակից» Մտթ. ժդ. 9. Ղուկ. ժդ. 10. «աթոռակից» Եւս. քր.* բարձաձգութիւն *Մծբ. նախա-*

բառնուրիւն *Շիր.* երկայնաբարձ *«սրունքները երկար»* *ԱԲ.* բարձրակր *(նոր բառ)* *են:*

= *Իրանեան փոխառութիւն է. համմտ. սանս.* barhis *«զոհաբերութեան ժամանակ նատելու բարձիկ՝ աստուածների և զոհաբերողների համար», գնդ.* barəziš *«բարձ, ծածկոց», օսս.* baz *«բարձ»: Այս բառերի եւրոպական ցեղակիցներն են՝ հպրուս.* balsinis *«բարձ»,* pobalso *«գլխի բարձ, անարթ», գալլ.* bulga *«քսակ», սերբ.* blazina *«փափուկ անկողին»,* blazinja *«բարձ», հրգ.* bolstar, *անգլ.* bolster, *հհիւս.* bolstr, *գերմ.* Polster *«բարձ» են (տե՛ս* Fick I⁴, *էջ 492,* Kluge *374), որոնց նախաձևն է հնխ.* bhelg'h: *Հայ.* բարձ *չի կարող բնիկ լինել, որովհետև հնխ.* bhelg'h *ձևի դէմ պիտի ունենայինք* *բեղձ, կամ եթէ ենթադրենք, որ հայերէնը ծագած լինի հնխ.* bhlg'h *առորին ձայնդարձից, այն ժամանակ պիտի ունենայինք* *բաղձ. յամենայն դէպս միշտ ղ-ով և ո՛չ թէ բ-ով: Վերջինը իրանական փոխառութեան ապացոյցն է: Բուն պարսկերէնում* barz *ձևը չկայ, այլ ունինք միայն պրս.* بالش bāliš *կամ* بالين bālīn, *պհլ.* bālišn, *քրդ.* bälišt, bälišne, bālīw, bälge, *վախի* baleš, *սար.* balax *(տե՛ս* Horn, Grdr. § *172): Սակայն պէտք է որ հնապէս գոյութիւն ունեցած լինի նաև* *barz *ձևը, որից էլ յառաջանում է հյ. բարձ բառը (համմտ. Հիւբշ.* Pers. Stud. *221—3): Ըստ* Lidén, Arm. Stud. *41. ծան. նոյն բառն է նաև պրս.* bal *«թեև, անաստնի երիւ»<*bard<* *barz, *որով հայերէն բառի կրկին իմաստները (գլխի բարձ և մարմնի բարձք) երևան են գալիս պարսկականում: (Տե՛ս* Pokorny *2, 182);*—*Հիւբշ.* IF Anz. *10, 45:*

ՀՀՒ, ՆՀՒ և ՓՒ երկուսն էլ (թէ՛ «գլխի բարձ» և թէ՛ «մարմնի բարձերը») դնում են բառնալ, բարձող, բարձր բառերից: Böttticher, Rudimenta Myth. Semit. *1848, էջ 35 և* Lag. Urgesch. *716* բարձք *(մարմնի) համեմատում են ռուս.* берцо *«սրունքի ոսկորը» բառի հետ:* Böttticher ZDMG *1850, 351 և* Lagarde, Urgesch. *660 ուղիղ մեկնեցին* բարձ *(գլխի)՝ համեմատելով սանս.* barhis *և գնդ.* barəziš *բառերի հետ: Տէրվ. Նախալ. 96* բարձր *են բառերի հետ՝ հնխ.* bhargh *«աճիլ» արմատից:* Bugge, Etrusk. u. Armen. *97 հետևսկ.* falaš *ձևի հետ: Հիւնք.* բարձր *բառից է հանում: Հիւբշ. 428 համարում էր բնիկ հայ բառ.* Meillet, Rev. crit. *թրգմ. Բազմ. 1898, 119 (յետոյ նաև* MSL *17, 244) առաջ վերի մեկնութիւնը, որ ընդունեց նաև Հիւբշմանն: Թիրեաքեանն, Կարնամակ, ծանօթ. 35՝* ամբարտակ. բարդ, բերդ *և բառնալ բառերի հետ է կցում:* Karst, *Յուշարձան 418 թրք.* baldər *«սրունք» բառի հետ=*բարձր:

Գիտ.—խրբ. Մշ. Ջղ. Սեբ. բ'արձ', *Հւր.* բարձ, *Նախ. Պլ. Տփ.* բարց, *Ախց. Ակն. Ասլ. Կր. Սչ.* բ'արց, *Ոզմ.* բ'արց, *Սլղ.* բ'առձ', *Երև.* բ'առց, *Ռ.* փարց, *Տիգ.* փարց, *Մկ. Շմ.* պարց, *Գոր. Սլմ. Վն.* պառց, *Մրզ.* պառց, *Ղրբ.* պէրց, *Ագլ.* բէօռձ, *Զթ.* բ'արձ', *Հճ. Զթ.* բ'օյձ':—*Այս բոլորը նշանակում են «գլխի բարձ». միւս նշանակութիւնը կորած է: Նոր բառեր են* բարձիկ. բարձափայտ, բարձրեա, բարձակալ:

Փոխ. — *Վրաց.* ბარძაღი բարձաղ՝ի *«բարձք, գիսաւ» (Ջուբինով², էջ 98). Հին էն.* bārč *«der Ehrenplatz, պատուոյ բարձ» (թերևս և լին՝ տպագրական վրիպակ՝ փոխ.* barc *կամ թէ* barç=բարձ, բարց*). այս բառը չի կարող հայերէնից բաժանուել, որովհետև միւսները ունին* barz, bališ, baz.— *Սղերդի արաբախօս քրիստոնեաների բարբառով* parsig *«բարձիկ» (Բիւր. 1899, 116):*

ԲԱՐՁՈՒԻՆՆԱԿ *«մի տեսակ ծաղիկ է. լտ.* abrotonum, *ֆրանս.* aurone» *(ըստ Արթինեան, Աստուածաշունչի տունկերը, էջ 105՝* armoise). *Ակինեան ՀԱ 1930, 496 ընդունում է, որ բառս այս նշանակութեամբ է մտած հայ գրականութեան մէջ, բայց սխալ է համարում, որովհետև էջմիածնում լսել է բացմանակի ծաղիկ՝ իբր «լտ.* achelllea millefolium, *ֆրանս.* achillée, *գերմ.* Schafgarbe, *Բրք. ղիճ օթիւ իմաստով: Նշանակութիւն չունի, որովհետև բոյսերի անունները գաւառից գաւառ շատ են փոխում իրենց*

իմաստը (գրուած է նաև ուրիշ շատ զանազան ձևերով. այսպէս՝ բարձուեցնել, բարձուեցիկ, բարձուիցեակ, բացուեցնել, բարձումեցնել, բարձմացեակ, բացմեցնակ, բարձնակ, բրբռվիցնակ) *Մխ. բժշ. 133. Գաղիան. Սալաձ. Բժշ. այս ծաղիկը շատ է տարածուած Հայաստանում. վերոյիշեալ զանազան ձևերն էլ ցոյց են տալիս, որ անունը զանազան տեղեր գործածական էր։*

=*Թուի թէ հայկական կազմուիթիւն ունի. կարո՞ղ է լինել* բարձր *բառից, իբր* բար-ձու-ցեի-ակ։

ԳԻՒ.—Ախց. բ'ացվէցնիկ, *Ջղ.* բ'ացմեցնակ, *երև.* բ'ացմէցնակ, *Մշ.* բ'արձ'մացուկ, *Տփ.* բարցմացուկ. *կայ նաև* բարբմիցնակ *(տե՛ս Արարատեան, Քնարիկ մանկական, էջ 90), որ միանում է վերի* բրբռվիցնակ *ձևին։*

ՓՈՒԽ.—Վրաց. ბარტმანუკი, *որ Ջուբինով[2], էջ 98 մեկնում է զանազան ձևերով.* «деревей, тысячелистникъ. 2. кровавикъ. 3. гулявица. 4. чихотная трава»։

+ ԲԱՐՁՐ *տե՛ս Բառնալ։*

Klaproth, Asia polygl. *101 և 142 սամոյէդ.* pirze, piriče, parče *և հնիսէյ.* barčoi *համանիշների հետ է միացնում։ Նշ՛ր «ի վեր* բարձնալ... *պրս.* պերզ, պիւրզ, պերզեան ...*որպէս* պերն, *պրս.* պերժ»։—Windisch. *13, 15 գնդ.* bərəzat, *սանս.* vṛhat։—Gosche *72, 201 սրանց հետ նաև օսս.* barzond, *պրս.* firāz «*զառիվեր*» *բառերը։ Հիւբշ. տե՛ս* բառնամ *բառի տակ։ Տէրվ. Նախալ. 96* բարձ *ևն բառերի հետ հնխ.* bhargh *արմատից։* Bugge, Etrusk. u. Armen. *էջ 96 հլ.* բարձուցք = *խորուկ.* falnθ «*երկինք*»։ *Հիւնք. պրս.* بَرْتَر bartar «*վերագոյն*» *բառից։ Թիրեաքեան, Կարնամակ՝ ծանօթ. 35* ամբարտակ, բերդ, բարդ, բարձ *ձևերի հետ է միացնում։*—Karst, *Ծուշարձան 403 սումեր.* bar «*բարձր, վեր, գագաթ, մակերևոյթ*»։ *Մարտիրոսեան ՀՄ 1924, 458 հաթ.* barku «*բարձր*»։ *Պատահական նմանութիւն ունի չեչէն.* barz «*բլուր*»։

ԳԻՒ.—Սչ. բ'ա՛րցր, բ'ա՛րցը. *Պլ.* բա՛րսը. *Ակն. Ասլ. Սեբ.* բ'ա՛րսը. *Հմշ.* պա՛րսը. *Խրբ.* բ'արս, բ'առս. *Ռ.* փարս.—*Տփ.* բա՛ցր. *երև.* բ'ացր. *Ննխ.* բա՛ցրո. *Ոզմ.* բ'մ՛ցր. *Ագլ.* բէօ՛ձր. *Շմ.* պmցր. *Դոր.* պmցրը. *Ղրբ.* պէ՛ցիւր *(Թաղոտ գիւղ՝* պէ՛ցուր*).—Ալշ. Մշ.* բ'աձ՛ր. *Ախց. Կր. Ջղ.* բ'աճցր. *Վն.* պա՛ցր. *Սլմ. Մկ.* պmճցր. *Մրղ.* պm՛ճցի՛ր, *Տիգ.* փաճցր. *Ջթ.* բ'օ՛ձ՛ր, բ'օձ՛ը, բ'ո՛ձ՛ր. *Հճ.* բ'որ։—*Առաջին շարքի մէջ* ր *ձայնը պահուած է. երկրորդում կորած է. երրորդում վերածուել է և-ի. շատ անկանոն և բացառիկ դիրք է բռնում միայն Հճ.* բ'որ։—*Այսպէս են նաև յիշեալ բառերի համապատասխան ածանցները. ինչպէս՝ Սչ.* բ'արցրանալ. *Պլ.* բարսրնալ, բարսուրիւն, *Սեբ.* բ'արսրնալ, *Ասլ.* բ'արսիւրիւն, *Ռ.* փարսրնալ.—*Տփ.* բացրացնիլ, *Ննխ.* բացրոնալ, *Ոզմ.* բ'mցրանալ, *Ագլ.* բրձրm՛նիլ, բրձրէօ՛րիւն, *Շմ.* պmցրանալ, *Ղրբ.* պրցրա՛նալ, պրցրօ՛րիւն.—*Ալշ. Մշ.* բ'աձ՛րնալ, *Ախց. Կր.* բ'աճցրնալ, *Տիգ.* փաճցրնալ, *Մրղ.* պmճցի՛րնալ, *Ջթ.* բ'աձ՛ըյնօլ, բ'աձ՛րնու։—*Նոր բառեր են* բարձրաւիան, բարձրաւիաւան, բարձրաւիով, բարձրաձայնել, բարձրացք, բարձրաչոք, բարձրիկ, բարձրկեկ, բարձրուիաշի, բարձրալուսիկ, բարձրման, բարձրուտ *ևն։*

ՓՈՒԽ.—Թևրևա հայերէն բարձրութիւն *բառից փոխ առնուած լինի կազիկումուք* barzuntiu «*բարձրաւանդակ, հրուանդան,* promontoire»։

ԲԱՐՁՐԱԻԱՆԴԱԿ, ի–ա *հլ.* «*բարձր (իբրև ածական), բարձրութիւն, բարձր տեղ (իբրև գոյական)*» *ՄԳր. Ոսկ. ես. Վհցօր. Ագաթ. Եւս. քր. գրուած է նաև* բարձրաւանդ *Սիր. իր. 21,* բարձուանդակ, բարձաւանդ, բարձաւանդակ, բարձուաւանդակ. *բայց սովորական ձևն է* բարձրաւանդակ, *որ արդի գրականի էլ միակ ընդունած ձևն է. հոլովւում է նաև* բարձու աւանդակի՝ *իբրև երկու իրարից անջատ բառեր. այսպէս՝ Եզեկ, ժէ. 22 «Եւ առից ես յընտիր ընտիր մայրիից բարձու աւանդակին. և տաց ես ի գլխոյ շառաւիղացն նորա ի սիրտս նոցա» (տպ. Պօլսի 1895 թ. ունի* բարձուանդակին. *Նշ՛ր յիշելով նոյն վկայու-*

թիւնը՝ դնում է **բարձուաւանդակին**. *յունարէնն ունի* καὶ λήψομαι ἐγὼ ἐκ τῶν ἐκλεκτῶν τῆς κέδρου ἐκ κορυφῆς, *որ է «լեռան գագաթից»). սեռականի նոյն ձևը ունի նաև յետնաբար Յայսմաւուրք, յունիս 26 «Կախեցին զերկոսին ի բարձու աւանդակի» (ըստ վկայութեան ՆՀԲ-ի)։ Այս բառից են կազմուած* **բարձրաւանդակագոյն** *Փիլ.* **բարձրաւանդայարկ** *Անան. եկեղ. անպէտ բառերը։*

=*Կազմուած է* **բարձ**+**ւանդ** *բառերից. վերջինը գտնում ենք նաև* **սարաւանդ, սարաւանդակ, գահաւանդ, գահաւանդակ** *և դարաւանդ բառերի մէջ. այս բոլորի մէջ էլ* **-ւանդ** *ունի «բարձր տեղ» նշանակութիւնը։— -ւանդ բառը գտնում ենք նաև մի քանի ուրիշ բառերի ծայրը. ինչ.* **պարաւանդ, շարաւանդ, վարաւանդ, բահուանդ,** *որոնց բոլորի մէջ նշանակում է «կապ» և փոխառեալ է իրան.* band, wand *«կապ» բառից (աւելի ընդարձակ տե՛ս* **բահուանդ** *բառի տակ)։ Յայտնի չէ թէ այս երկուսը միևնոյն բառե՞րն են. ուրիշ խօսքով պրս.* band *«կապ» ունէ՞ր նաև «տեղ, բարձր տեղ» նշանակութիւնը։ Երկուսին իրրև միջին օղակ ծառայի թերևս հյ. դարաւանդ «բարձունք» իբր պրս.* دربند dar-band *կամ* درونج darvand *«լեռան կիրճ ևն»։—Ա՛ճ.*

ՆՀԲ «ի բարձր և անդր. լծ. և լտ. ante, *իտալ.* avanti *«յառաջ», թրք.* önde, önden *«առաջից»։ Հիւնք. նաւասարդ բառից դնում է* **սարաւանդ** *և սրա նմանութեամբ էլ* **բարձրաւանդակ**։

ԲԱՐՇՈՒԿ. *անստոյգ նորագիւտ բառ, որ մեկ անգամ գտնում եմ գործածուած Մագիստրոսի հանելուկային մի ոտանաւորի մէջ. «Բարեհամ բուծող հլու բարշուկ գեղոյ ձեզ ընձեռեալ»։ Թերևս նշանակում է «մեղմ, անոյշ»։*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեն. հտ. Բ. էջ 175, 180։

ԲԱՐՈՅՔ *տե՛ս* **Բարք**։

ԲԱՐՈՎԴՐՈՔ *«Թռչունի էգը»? նորագիւտ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. քեր. էջ 241՝ արջառի և ձիու իգական ու չեզոք հոմանիշների շարքից յետոյ. «Եւ թռչնոցդ՝ որպիսի բարովդրոք և այս այսքան»։*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեն. հտ. Բ. էջ 104։—Ադոնց, Թրակացու քերականութեան հրատարակութեան էջ 307 (վրիպակների ցանկում) համարում է ֆրանս. perroquet *«թութակ» բառից աղաւաղեալ մի ձև (այս ֆրանս. բառը ծագում է իտալ.* parrochetto *ձևից)։*

ԲԱՐՈՒ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ոսկ. յհ. բ. 30 «Էշք անառակեն և աղաղակեն բարուք»։ Զեռագիրներն ունին* **բառուք**, *որ յայտնապէս սխալ է։ Բարու պէտք է որ նշանակէ մի տեսակ անասուն, ինչպէս երևում է տեղից։ ՆՀԲ համարում է «համբարու կամ պարիկ» (ձայնական նմանութիւնից առնելով) և կամ «չարաձայն թռչուն, որպիսի են ճայք, ագռաւք»։ Սրան են հետևում նաև ՋՔ և ԱՔ։ Բոլորն էլ անստոյգ։*

Böttticher, Arica *68, 110 համեմատում է աֆղան.* brak *«սև ու ճերմակ գոյնով՝ խառուփիկ կաչաղակ», ալաս.* wrann *«սև, ագռաւ», լիթ.* warnà *«որիւ»,* warnas *«ագռաւ»։ Նոյն,* Wurzelforschungen, Halle, *1852, 21 կցում է հյ. որի, սանս.* varna *«գոյն» և լիթ.* warnas *«ագռաւ» բառերին։* Karst, *Յուշարձան 402 համարելով «մի տեսակ առասպելական անասուն», դնում է = սումեր.* amar-baruu *«մատաղ եղնիկ»։*

***ԲԱՐՈՒԻԹ** *«վառօդ» Առաք. պտմ. 69։*

=*Թրք.* barut بارود *բառն է, որ թափանցել է մինչև Բալկանեան թերակղզին. այսպէս՝ նյն.* μπαρούτης, *ռում.* barut, *ալբան.* barut, *սերբ.* barutnica *«վառօդ»։ Նոր գրականում կեղծ ստուգաբանութեամբ նոյն բառից յարմարեցրած է* **վառօդ**, *իբր թէ* **վառ օդ**, *որի հնագոյն վկայութիւնն ունի Գիրք որ կոչի բանալի գիտութեան, Սանկտպետերբուրգ 1788, էջ 38 և 201* **վառօդ** *ձևով։—Թուրք բառի բուն ծագումը և ստուգաբանութիւնը յայտնի չէ.* Будаговъ *1, 224 ա համարում է արաբ.* بارود bārūd *«վառօդ», որ սակայն չունի կամուս. նոյն բառը ԳԴ դնում է իբր պարսկերէն։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԳԻՒ.—Առհասարակ բարութ *ձևով է. միայն Ագլ. ունի* բո՛ռութ:

ԲԱՐՈՒՆԱԿ, ի–ա *հլ. «խաղողի պաղաբեր ոստ» Յոր. ի. 21. Վեցօր. 95. Նար. «ծառի ճիւղ, ոստ» ՍԳր. «որթի կամ ծառի տակ գրուած խեչակ, նեցուկ, սարփինայ» Պիտ. Վրդն. անթառ. որից* բարուՆականաձև *Գնձ. Ոսկիփ.* բարուՆակացեալ *Խոր. Հռիփ.* բարուՆակեալ *Մագ.* անբարուՆակ *Շար.:*

ՀՀՒ մեկնում է իբր բեռուՆակ: *ՆՀՒ* բարուոյ ուՆակ *կամ* բեր–ուՆակ, *համմտ. յն.* ἀγαθὸν «բարի և բարունակ»: *Հինք. պրս.* بارنك barnāk «հրիտասարդ»: *Թիրեաքեան, Արիահայ բռ. 102 պրս.* بار bār «պտուղ» *բառից: Շատ յարմար էր թևրևս այս ստուգաբանութիւնը, մանաւանդ որ* բար «պտուղ» *բառը գործածական է արդի բարբառներում. ինչ. Երև. Ղրբ. Տփ. կամ նաև Ջն. «նորատունկ ծառի առաջին պտուղ» նշանակութեամբ. որից ունինք* բարատու «պտղատու», բարել «պտղաբերիլ», բարելի «պտղատու», բարեղէն «պտղեղէն», բարուտ «պտղաբեր», բարաբալի «պըտղաթափ»: *Բայց կարելի՞ էր ոսկեդարում գտնել այսպիսի մի բարդութիւն, որ յետիններին է յատուկ. համմտ.* պարուՆակ, շարուՆակ, շնորհուՆակ *ևն:*

ԳԻՒ.—Վն. պարիւնակ «սարփինայ»:

ՓՈԽ.—Քրք. գւռ. Տ. perneg «խաղողի որթի յննարան, սարփինայ» *(Բիւր. 1899, 798):*

ԲԱՐՈՒՐ «ոստ պատճառ, պատրուակ» *Ոսկ. ես. 307 և մտթ. Սերբ. Վեցօր. 149. «իրաւացի պատճառաբանութիւն» Ոսկ. մ. բ. 14. Հռովմ. 409. ՅՀ. կթ. «պատճառ, առիթ» Ոսկ. ես. և մտթ. «ամբաստանութիւն» Երզն. մտթ. 468. Տօնակ. որից* բարուրաՆք *Ոսկ. մ. բ. 14.* բարրել «ոստ պատճառներ մէջ բերել» *Փիլ. իմաստն. «կեղծաւորիլ» Սերբ.* բարուրիլ «մեղադրուիլ, դատապարտուիլ» *Մագ. Թղ. 237.* բարրելի *Փիլ. իմաստն.* բարրաՆք *Ոսկ. երբ. մտթ. եփես.* անուտիաբարուր *Գր. տղ. գրուած է* պարուր *Վանակ. յոր.:*

Brosset JAs. Paris *1834, էջ 378 կապում է վրաց.* բրալի *ձևի հետ, որ նշանակում է «մեղք, յանցանք, պատճառ», Տէրվ.* Altarm. *11, Նախալ. 95, Մասխ 1882 մայ" 24* բամ, բաս, բայ *ձևերի հետ:* Karst, *Յուշարձան 403 սումեր.* bar «կապ, կապել» *և հյ.* պարան բառերի հետ:

ԲԱՐՍ. *արմատ անծանօթ և առանձին անդործածական, որից բարդուած է* բարսպիտութիւն «հեշտասիրութիւն, բղջախոհութիւն». *մէկ անգամ ունի Կոչ. դ:*

ՆՀՒ դնում է «պրս. պէրշ, փէրս, *որ է ցանկութիւն, բղջախոհութիւն, պիղծք». բայց պրս.* barš «փափագ» *է նշանակում. իսկ* pars *գոյութիւն չունի Դէսրգ Դպրի բառարանում:*

ԲԱՐՍԵԱԼ. *մէկ անգամ ունի Կիւրղ. գանձ. «Բարսեալ են ընդդիմացողական Աստուծոյ բանք»: Յոյն բնագիրն ունի* κεχῆνός «կեղծեալ, խարդախեալ, սուտ, ապօրինի, խաբեբայ, երկդիմի». *ուստի մեր բառն էլ պէտք է ունենայ այս նշանակութիւնները:*

ՆՀՒ մեկնում է «այլայլախառն, խառնակ, գարշելի, պիղծ, խարդախ, պարսաւելի»:

ԲԱՐՍԵԼ *տե՛ս* Բասիր:

***ԲԱՐՍՄՈՒՆՔ** *(սեռ.* բարսմանց*) «ճիւղերի կապոց, որ կրակապաշտները աղօթքի ժամանակ բռնում էին իրենց ձեռքին՝ սրբազան կրակի առաջ» Սեբ. (համմտ. նաև* վարսամ*):*

=*Ջնդ.* barəsma-, *սեռ.* barəsmanō, *լգ. սեռ.* barəsmanąm, *պազենդ.* barsum, *փարս.* barsam, *պրս.* برسم barsam, *բոլորն էլ նոյն նշանակութեամբ (տե՛ս* Bartholomae *948,* Horn § *200), փոխառութեամբ ունինք ասոր.* ḥaḥ;ḥaḥ būrsmā *(Brockelmann 46 բ): Ջնդ. բառը ծագում է* barəziš «բարձ» *բառից և նեթադրում է ունէլի հին *barəzma- ձևը (տե՛ս* Bartholomae *948 և 1595): Հայ.* բարսմունք, բարսմանց *նեթադրում է հզ. ուղ. *բարսմն կամ *բարսումն. վերջինին համաձայն է պալխ պազենդ.* barsum. *բայց ինչպէս* Marquart, *Յուշարձան, էջ 292 ցոյց է տալիս, մեր բառը շատ ունէլի հին փոխառութիւն է և լգ. սեռ.* բարսմանց *հայում է հպրս. *barsmanah- ձևին:—Հիւբշ. 119:*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ՆՀՒ

համեմատելով պրս. պէրսէմ *բառի հետ. բայց սխալ է, երբ սրա հետ աւելացնում է «ի ձայնիցս* պէրսիյան, *որ է գաւազան, կամ* պէրճ, *այն է պլան... էր աղօթագիրք կռապաշտից կամ կրակապաշտից՝ կալեալ մի մի տետր ի ձեռին ի վերայ կրակի...»: Այսպէս են մեկնում նաև պարսիկները. համմտ. ԳԴ «*պէրսէմ *է անուն գրոցն հրապաշտից, որք ի պաշտելն իւրեանց զկրակ, զմի մի ի գրոց անտի ի ձեռս կալեալ ընթեռնուն...»: Թէև ՆՀԲ, հտ. Բ. էջ 1047 ուղղում է թէ «սխալ է ասելն ըստ այլոց՝ թէ իցէ նաև աղօթագիրք Պարսից», բայց ԱՔ կրկնում է նոյնը: Եւրոպացի հայագէտներից ուղիղ մեկնեց նախ* Böttticher, Arica *75, 241:*

ԲԱՐՏԻ *«մի բարձր ծառ է. լտ.* populus pyramidalis» *Շնորհ. Քղթ. Վրդն. աղ. լզ. Վստկ. 58, 93 (սեռ.* բարուոյ), *Տաթև. ամ. 246. կովկասահայ գրականում յաճախ գրում է* բարդի՝ *նոր գաւառականների հնչման համաձայն:*

Բառիս նշանակութիւնը ճշտելու համար ընդարձակ մի վէճ Հ. Թումանս կէտիկեանի և Բնապատումի (=Հ. Գ. Մէնէվիշեանի) միջև՝ տե՛ս ՀԱ 1905, էջ 51—53, 221—222, 285—6, 319—20, 350—352: Ուղիղ է Հ. Կէտիկեանի տեսութիւնը, որ հաստատում է թէ բարտի = populus pyramidalis *և* կաղամախի = populus tremula. *Նոյնը հաստատում է նաև Աբեղեանեան, Տունկերը էջ 24 և Ածառեանցի տունկերը էջ 34: Նոր գրողները սխալմամբ* բարտին *համարում են* populus tremula *և* կաղամախին՝ popolus pyramidalis: — Աճեմենովի *Բուսաբանական բառարանում, էջ 268 ա գրուած է* բարտի = populus nigra L:

Մորթմանն ZDMG *31, 414 բառս կապում է Խորշապատի ասոր.* արձանագրութեան *76-րդ տողում լիշուած* bagbartu *առումս հետ, հիմնուելով այն բանի վրայ, որ բարտին էլ պաշտում էր Արևորդիներից:* Patrubány SA *1, 311 ցեղակից է համարում ռում.* bradu «*շուճի, pin*»: Lidén IF *18, 490 համեմատում է հլ.* brěstŭ, *բուլգար.* brest, *սերբ.* brȉjest, brȉjes, *սլով.* brést, *չեխ.* břest, *լհհ.* brzost, *ռուս.* берестъ, *որոնք առհասարակ նշանակում են «*ulmus, *կնձնի». հալ ձևը գնում է հնխ.* bhŗstiiā-: *Այս մեկնութիւնը մերժում է* Berneker *52, սլաւական ձևերը կցելով հբգ.* beraht, *գոթ.* bairhts «*փայլուն, ցոլուն, պայծառ», բառերին և դնելով հնխ.* bherk'tos *ձևից:*

Գիր.—Ալշ. Մշ. բարդի, *Խրբ.* բ'արդի, *Ոզմ. Վն.* բmրդի, *Երև.* բառդի, *Զթ.* բ'արդը՛, բ'այդը՛, *Մկ.* բmրդը՛.—*փոխաբերական իմաստով ունինք Երև. «բարձրահասակ», Առն. «այգիների և պարտէզների եզերքի ցանկապատը», Եւդ. «շինուածանիւթի փայտեր՝ որոնք ընդհանրապէս բարտի ծառից կտրուած են լինում»:*

Փոխ.—Վրաց ბარდი *բարդի, որ Ջուբինով², էջ 97 մեկնում է «ռուս.* чилига». *(այս անունով* Анненковъ-*ի բուսաբանական բառարանը հասկանում է զանազան բոյսեր. ինչ.* artemisia procera, cytisus biflorus, caragana, trapa natans *են). միջգր.* բարդի «*թուխ». ափխազ.* abard «*ռուս.* чилига, *թուփ».—գւռ. Քրք. Եւդ.* پەردە perdü «*բարտի ծառից կտրուած առարձաւիայտ», Առն. (նաև տեղացի Յոյների մօտ)* pardə «*այգիների և պարտէզների եզերքի ցանկապատը», Թաւրիզի Քրք. բարբառով՝* pärdü «*կտուրների վրայ հաստ գերանների հակառակ դիրքով դրուած բարակ փայտերը՝ որոնք սովորաբար բարտիի ճիւղերից են լինում և որոնց վրայ լցնում են հողը». այս բառը չէտ առնելով եղել է Ղրբ.* փmրդու «*կտուրի վրայ հաստատուած այն հաստ գերանները՝ որոնց վրայ լցնում են հողը» (տե՛ս Փ. Տէր-Մովսէսեան,* Armenische Bauernhaus, *էջ 144), Ուռ.* p'arduk «*սենեակի առաստաղի գերանը» (Թուրքերէնի միջոցով, ինչպես Ղրբ. փmրդու՝ նոյն նշանակութեամբ):*

ԲԱՐՓ. *գրուած է նաև* բարդ, բարբ «*մի տեսակ ծաղիկ, որ գարնան սկիզբն է բացւում» Սալաձ. ունի միայն ՀՐուս. § 324. Նորայր. Բանաս. 1901, 103 ուղիղը համարում է* բարդ:

ԲԱՐՓՈՒՆՔ *«կեալ ինքեանք». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 51. յայտնի չէ ի՛նչ է ուզում ասել:*

ԲԱՐ–Ք, ու հլ. *(գործածւում է միշտ անեղաբար) «ներքին բնածին յատկութիւն, բնութիւն, բնաւորութիւն, վարք, սովորութիւն» ՍԳր. Ոսկ. Սերբ. Կոչ. Կիւրղ. ծն.—ածանցման մէջ մտնում է հետևեալ ձևերով. 1.* **Բար-**. *առաջին արմատական ձևն է, որից ունինք* բարի *«լաւ» (այս բառի վրայ տե՛ս առանձին).* բարաւորութիւն *«բնաւորութիւն» Փիլ. քհ. Ճառընտ.* չարաբար *«վատ բնաւորութիւն ունեցող» Իմ. գ. 12. Առակ. ժթ. 19. Կոչ.* բարեբար *«բաղդաբաստ» Կոչ. Վեցօր. Ոսկ. ևս.* գեղեցկաբարութիւն *Փիլ. լին.* վատաբարութիւն *Կանոն.* բարացուցական *«բնութագրող» Նար.* բարառնութիւն *«այլաբանութիւն, դիմառնութիւն» (Քրգմ. յն. ἡθοποιΐα բառի, որ կազմուած է ἦθος «բարք» և ποιέω «առնել» բառերից) Պիտ. Փիլ.—2.* **Բարբ**. *նոյն բառի յոգնակին, որից ունինք միայն յետնաբար* բարբախոպոս *Ոսկիփ.* ղժնաբարբ *Լաստ.* խոշորաբարբ *Երզն. քեր.—3.* **Բարե-** *որից ունինք մէկ բնաիր բառ՝* բարեգիտութիւն *«բնախօսութիւն, φυσιολογία» Կոչ.—4.* **Բարոյ-**, *որից ունինք նախ անեղաբար* բարոյ *«բարք» ՍԳր. Ոսկ. Ագաթ. և յետոյ՝* բարեբարոյ *Սիր. իզ. 1. 3Հ. իմ. եկ. 3Հ. կթ. (որ և* բարեբարւոյ *Սիր. իզ. 3. Ճառընտ. Արշ.)* բարոյախօսել *Եւս. քր.* բարոյածին *Վեցօր.* բարոյական *Փիլ.* գազանաբարոյ *Եզն.* դառնաբարոյ *Կոչ.* ճօրաբարոյ *Ագաթ.* շնաբարոյ *Ա. Թագ. իե. 3. Նոր գրական լեզուի մէջ՝* անբարոյական, բարոյագէտ, բարոյականութիւն, բարոյավէպ, բարոյախօսութիւն, բարոյախօսական *ևն:—5.* **Բարու-**, *որ առաջին արմատական ձևի բունն է (հզ. սեռ.* *բարու, *յգ. սեռ.* բարուց*), որից՝* բարեբարու *Ճառընտ.* գայլաբարու *Տօնակ.* բարուախօս *«բարքերի մասին խօսող» Վրդն. Հրտր. էմ. էջ 31 (ուր տպ. Վեհետ. էջ 20 ունի* բարոյախօս*).* բարուական *ԱԲ.* բարուցԲ *«բարք» ԱԲ. չարաբարու Նանայ. այստեղ կարելի է դնել նաև* բարեբարութիւն *Ոսկ. ևս. և Երր. չարաբարութիւն ՍԳր. Վեցօր. ևն (իբր* բարեբարու–*ութիւն ևն, տպա թէ ոչ* բարեբար–*ութիւն ևն): Այս բոլորից դուրս* բար–f *բառը ստացել է նաև երեք ուրիշ ձև. այն է՝ 6.* **-բար**, *իբր մասնիկ, որ դրւում է բառի վերջը և ցոյց է տալիս «պէս, նման». ինչ.* հայկաբար *Ագաթ.* գազանաբար *ՍԳր. Մծբ.* բազմաբար *Ագաթ. Կորիւն Եզն.* տիրաբար *Բ. մակ. ժգ. Եւս. քր.* ո՛րբար *«ի՛նչպէս» Արիստ.* ա՛յսբար *«այսպէս» Մագ. թղ. 22.—7.* **Իբր** *«ինչպէս, պէս, նման. 2. երբ, ո՛ր ժամանակ որ» նշանակութեամբ և 8.* **երբ** *«ո՛ր ժամանակ», որոնց վրայ տե՛ս առանձին:*

ՆՀԲ *լծ.* վարք, բեբումն *և* բար, *այսինքն «պէս»:* Andreas *(տե՛ս* Maspero, Recueil *18, 216) փոխառեալ միջին պրս.* *bārak=*պրս.* bāra *«անդամ, հեղ. 2. պատճառաւ» բառից:* Meillet MSL *18, 256 և* Altarm. Elementarbuch *38* -բար *մասնիկի ծագումը գնում է բարք դոլականից:* Karst, *Ցուշարձ. 403 սումեր.* bar *(*mar*) «առաջնորդել, վարել»: Հիւրշ.* KZ *23, 405 ծան.* -բար *մասնիկը նոյն է գնում* -աւոր *և* -բեր *ձևերի հետ (*լուսաւոր = լուսաբեր*). Համմ. գերմ.* wunder-bar, schein-bar- *ևն:* Nyberg, Hilfsb. *2, 233 համեմատում է պհլ.* varišn *«վարք, վարմունք» բառի հետ, որի առելի նոր ձևն է պազ.* bareśn: Nyberg *այս երկուսը ծագումով իրարից տարբեր բառեր է համարում և առաջինից փոխառեալ է դնում հյ.* վարք, *երկրորդից՝* բարք: *Մարտիրոսեան ՀՍ 1924, 458 = կամիս.* barkuiš *«բարի, լավ սովորութիւն»:*

Գիտ.—Տփ. բարf *«բնաւորութիւն». Ախց.* բ'արf *«ախորժակ, ներքին բնմունք, հաճոյք». օր.* բ'արfս կուզէ *«կախորժիմ, կփափագիմ, սիրտս ուզում է», որից* բարփոխութիւն *«յղի կանանց ախորժակի խանգարումը», բարփոխ «յղութեան պատճառով ախորժակը խանգարուած». Համմ. միջին հյ.* բարf *«ախորժակ, քէֆ». «Ինդրեաց բարքս և կերայ» վրք. Հց. Բ. 26 (տե՛ս և Նորայր, Բառ. ֆր.* appétit *և* fantaisie *բառերը). գրական փոխառութիւն է երև.* վարf *ու* բ'արf:

ԲԱՅ *տե՛ս Բանալ:*

*ԲԱՒ «հասնելու՝ բռնելու ծայր, վերջ, սահման» ՍԳր. որից անբաւ «անվերջ» Երեմ. բ. 6. Կոչ. Ոսկ. Ագաթ. բաւակ «ձեռնհաս, կարող» Սերեր. 100. բաւական «չափ, հասողութիւն» Նչ. ժբ. 4. Ագաթ. «հերիք, որ կօգտէ, կբաւէ» ՍԳր. Կոչ. «գոհ» Սիր. խ. 18. Կանոն. (այժմ էլ գործածական է այս իմաստով արևելեան գրականում, բայց արևմտեանը չգիտէ). «ձեռնհաս, կարող» ՍԳր. Սերեր. Ոսկ. մ. ա. 6. Եւս. քր. անբաւական Ագաթ. բաւել «ձեռնհաս՝ կարող լինել» ՍԳր. Ագաթ. «տևել, դիմանալ, յերկարել» Եւս. քր. «ապաստել, համբերել» Ոսկ. մ. և ես. Սերեր. «հերիք լինել, օգտել, բաւական լինել» Ագաթ. բաւեցուցանել Ագաթ. Կիւրղ. ծն.։ Նոյն արմատը ունի նաև բով ձևը՝ որից ածանցուած են բովել «ձեռնհաս լինել» Վրք. Հց. «զօրել» Մխ. բժշ. 84. «տոկալ, համբերել» Դամասկ. բովալ «հասնիլ, ժամանիլ» Ուտհ. բովական «բաւական» Ոսկ. ես. բովականութիւն Ոսկ. մ. գ. անբով «անբաւ» Գնձ.։—Նոր բառեր են՝ անբաւարար, բաւականաչափ, բաւականի, բաւականին, բաւարար, բաւարարել, բաւարարութիւն են։

= Իրան. bav- «զօրել, առատ լինել, կարող լինել» արմատից, որի ածանցներն են պհլ. bavandak (ներկայ դերբայ) «կատարեալ, ամբողջ, լրացեալ, մանիք. bvndg «կատարեալ» > հյ. բաւանդակ, վնդ. būiri- «առատ, կատարեալ, լրիւ, կարող, հզօր». հմմտ. նաև սանս. bhumā- «լիութիւն, հարստութիւն», bhūri- «առատ, լիուլի, շատ, ուժեղ, հզօր», bhávīyas- «աւելի առատ, ուժեղագոյն, հզօրագոյն», pra- bhūta- «առատ, բազմաթիւ»։ Իրանեան արմատը հանդէս է գալիս. bhewə-, bhū- «աճել, մեծանալ» արմատից (որի ժառանգները տե՛ս բոյս արմատի տակ) և այս էլ կցւում է bhu- «տուչիլ» արմատին (Pokorny 2, 114 և 140)։ Երկտառ միութեան համար հմմտ. ի միջի այլոց լիթ. būrỹs «քանակութիւն, դէզ», յն. φῦμα «առատք, աւելցք», հսլ. iz-bytъkъ «առատութիւն»։

ՆՀԲ հաւ «սիկիզբ» բառի հականակի՛ց. սանս. պավա «գոյութիւն, էութիւն». իսկ անբաւ «անվերջ»՝ բաւ բառից. բայց անբաւ «անճառ, անպատում» բա, բայ, բառ, բաճ ձևերից։ Lagarde, Urgesch. 189 բաւ՝ սանս. bhu, յն. φυ-. իսկ էջ 130՝ անբաս «անճառ» = սանս. bhā։—Lag. Arm. Stud. § 374 բաւական ձևի հետ համեմատում է պրս. باب bāb «արժանի»։ Տէրվ. Նախալ. 97 հնդ. bhū, յն. φύω, լտ. fuo, fui, լիթ. buti, գոթ. bauan «բնակիլ», հյ. բոյն, բոյս բառերի հետ՝ հնխ. bhu «լինել, բնակիլ» արմատից։ Հիւնք. բովք-ից դնում է բովանդակ, որի հակառակն է բաւական, որանից բևեկնի, յորից համառօտեալ բաւակ, բաւ, ամբաւ։ Patrubány SA 1, 189 յաջորդ բաւանդակ բառի հետ, միասին՝ պարսկական ֆերհաուռթիւն է համարում (ընդունում են նաև ուրիշները, ինչ. Bartholomae, Altir. Wört. 969, Boisacq 151 և վերջին անգամ Benneniste BSL, հտ. 34, № 102, էջ 189)։—Scheftelowitz BB 29, 37 սանս. bhavati «լինել», հալ. byti, լիթ. buti, յն. φύω «աճեցնել», լտ. fui «եղայ» են ձևերի հետ։ Pedersen, Հալ. գր. լեզ. 49 լիթ. bengiù «վերջացնել», pabangà «վերջ» բառերի հետ։

Գիր.—Տփ. բովական, որ ծագում է բով արմատից (տե՛ս վերը)։

ԲԱՒԱԿ «աստուիկ ինչ մանուածոյ». ունի միայն Բառ. երեմ. էջ 52։

ԲԱՒԱՅ «պատրաստ». ունի միայն Բառ. երեմ. էջ 52։

*ԲԱՒԱՆԴԱԿ «ամբողջ, համօրէն, կատարեալ» Իմ. ժե. 3. «կատարելապէս» նոյն Սերեր. առում է նաև բովանդակ ՍԳր. Ոսկ. Կորիւն. Եւս. քր. Կոչ. Սիր. եւ. կայ նաև բաւբնդակ, որ առաջինի միջին հայերէն ձևն է։ Սրանցից են ծագում՝ բովանդակել ՍԳր. Ագաթ. Եւս. պտմ. և քր. Ոսկ. ա. կոր. բովանդակութիւն ՍԳր. Եւս. քր. անբովանդակ Ագաթ. անբովանդակական Ոսկ. ես. բաւանդակել Ճառընտ. Մագ. բաւանդակութիւն Արշ. Եւկղիդ. անբաւանդակելի Առ որս. Բենիկ. Նիւս. բն. են։ Նոր գրականում ընդունուած է միայն բովանդակ ձևը։

= Պհլ. 𐭥𐭥𐭭 buvandak «կատարեալ, ամբողջ, լրացեալ», նորպհլ. մանիք. בונדג bvndg «կատարեալ» (Salemann, Manichäische Stud. ЗАН *8, 61*), պազենդ. bunda, պրս. buvanda «անուանի մարդ» (տե՛ս Horn, Neupers. Schriftsprache *145*. Grundr. d. iran. Phil. I. *2, 1*): Իրանական ձևը բուն ներկայ դերբայ է, որի արմատից են պրս. بوی buvī «լիցիս», بود buvad «լիցի», بوش buvīš «լինելութիւն» են, որոնք ծագում են հնխ. bhewə, bhū «աճիլ, մեծանալ, լինել» արմատից: Սրա վրայ մանրամասն տե՛ս հյ. բոյս: Պհլ. 𐭥𐭥𐭭 բառը, ըստ որում գրուած առանց ձայնաւորների, մինչև վերջերս կարդացւում էր bundak (բառիս երկրորդ և երրորդ տառերը կարող են կարդացուիլ թէ՛ u, թէ՛ v և թէ n). Horn կարդում է buvandak. Հիւբշման հայերէնի օգնութեամբ կարդում է bavandak, բայց կարելի է նաև կարդալ bovandak:—Հիւբշ. IF Anz. X, *36*:

Առհասարակ գրուած է բաւ արմատից, որ տե՛ս: Ուղիղ մեկնեց նախ Patrubány SA *1, 189, որ համեմատում է Հիւբշ. անգ: Վերջին անգամ* Salemann, Manichäische Stud. ЗАН *8 (1908), 61*:

Գիւղ.—Պահուած է միայն բովանդ ախշարհ նր. բովանդար աշխարհ վ. «ամբողջ աշխարհ» ձևով:

ԲԱԻԱՆՔ *«դին, վարձք». ունի միայն ԱԲ:*

ԲԱԻԵՆԱՆ. *անյայտ իմաստով նորպհլ. բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած նար. տաղ. 471 «Ծարաւ բաւենոյ ցօղ փոխանակ նոճից, որ պիմս ունելով վերամբառնայ ի փառս»:*

ԲԱԻԵՂ *«մի տեսակ բոյս է. լտ.* philomis» *Հին բս. Ստ. լեհ. ունի միայն ՀԲուս. § 326:*

ԲԱԻԻՂ *(ի–ա հյ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «լաբիւրինթոս» եւս. քր. ա. 212. Նար. էջ 105. «ծածկուած մութ տեղ՝ նկուղի նման» Ոսկ. եփես. 804. Սարկ. առմար. գրուած է նաև բաւիլ, բաւեղ. որից բաւղակ «ծածկուած մութ տեղ» Ոսկ. եփես. 804 «Բաւիղս և բաւղակս շինիցեմք» (արեւի ջերմութիւնից ազատ մնալու համար). բաւղակաձև եւս. քր. ա. 212:*

Լծ. նար. մեկնում է «բաւիղ. քիւ տեղի. կամ շինուած պատուածով»—Հին բս. «բաւիղ, բաւեղ, բաւակ, բաւղակ կամ բողակ. շինուածք ինչ կամ առոյգ (առուք) մանուածոյք, սաուերական»: Սբրանից է, որ ՀՀԲ և սրա անմիջական հետևողը ՓԲ, մեկնում են բառս իբրև «քիւ, քարանձաւ, պարսպապատ լեռ»: Հինք. հանում է Բաբելոն բառից: Պատահական նմանութիւն ունի լտ. papilio *«վրան», որից ֆրանս.* pavillon:

***ԲԱԻՔԱՅ** *«ըմբիշ» Մագաք. աբ. 33—34 (հինգ անգամ), որ և* poƒա՝ *անգ 35 (մէկ անգամ):*

= Քթբ. (էօղրէկ և չաղաթայ) بۈکا bükä *«ըմբիշ, ուժեղ մարդ» (Будаговъ 1, 286):*

Ուղիղ մեկնեց Պատկ. հրատ. Մագաք աբ. էջ 64:

***ԲԱՔԱՅ** *«լալիք». ունի միայն Բառ. հրեմ. էջ 52:*

= Երբ. בָּכָא bākā *«լալ», որի հետ նոյն են արաբ.* بكا bukā *«լալ, լաց, ողբ», սասր.* بكا bkā *«լալ» են:—Տե՛ս և լալօս բառի տակ:—Աճ.*

ԲԱՔԱՍԱԿԱՆ *տե՛ս Բեք:*

ԲԱՔԹՕՇ *տե՛ս Բանբուշ:*

⊙ԲԲԵԼ *«ձագերի հանած ձայները» ԱԲ, որ և բիբել Ոսկ. Կող. առ Լեհ. որից բբիւն կամ բբբիւն «բազմութեան կամ յաղթութեան ձայն, գոչիւն» ՅՀ. կբ.:*

=Բնաձայն բառ՝ կազմուած բ արմատից. տե՛ս բնդարձակ տե՛ս բբշալ:—Աճ.

ԲԲՂՕՇ. *անյայտ իմաստով նորպհլ բառ, որ մէկ անգամ գործածում է Սաան. 59 «Բազէ արագաթռիչ, բու մահու մեղաց, բբղաւշ կեփապէ, բուծող հոգոց»:*

⊙ԲԲՋԱԼ *«առիւծի ձայն» Անկ. գիրք նոր կտ. 139 (Ոսկիփ. ըստ ՆՀԲ, հա. Բ. էջ 1048 ա), որի հետ նոյն են բբշել «անասունի ձայն» (նորպհլ բառ) Սաան. էջ 40, բբշօղ «մռնչո՞ղ» (Առիւծ համաստեղութեան համար գործած) Շիր. հրատ. Պատկ. էջ 67 (նորպհլ բառ):*

=Բնաձայն բառ. համմտ. բբել. երկուսն էլ ծագում են բ արմատականից կրկնութեամբ, առաջինը առանց ածանցականի, երկրորդը՝ ածանցականով:—Աճ.

ՆՀԲ բիբել կցում է լտ. pipilo համանիշի հետ: Տէրվ. Altarm. 32 յն. βύκτης «մռնչող (քամի)», հսլ. боукати, боукъ են բնաձայնների հետ: Հիմնք. բբել, բիբել=յն. πιππίζω «շշնել, սուլել»: Bugge KZ 32, 31 բբել կամ բիբել համեմատում է ալբան. bibë «թռչունի ձագ», յն. πιππίζω, լտ. pipare, գերմ. pipen «ճրուտղել» բառերի հետ՝ իբրև բնիկ հայ: Հիւբշ. 429 յիշում է այս մեկնութիւնը, բայց չի ընդունում և բոլորն էլ բնաձայն է համարում: Բբել և բբշալ բառերի մասին վերի մեկնութիւնը տուել եմ ՀԱ 1889, էջ 203—4:

ԲԲՋԻԼ տե՛ս Բիբ:

ԲԲՈՒՃ «մի տեսակ թռչուն». ունի միայն Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 94 հանելով մի ձեռագիր Տաղարանից. «Բըբուճի աչին չաղար. Զարեգական լոյսըն չտեսնայր, ինքն գիշերն ի շուռ կուգայր, Զգողն ու պառաւ մարդն յիմանայր»: —Անշուշտ բուն է, որ և կոչւում է բուճ: Ս. Մովսիսեան (Նամակ 1928 սեպտ. 27) կցում է գւռ. բ'բ'ռէճ «գիսախոտ, խճճուած մազերով» բառի հետ:

ԲԴԵՌ (սեռ. -ի). անսովոր բառ. մէկ անգամ ունի Արծր. հրտր. Պատկ. էջ 219 «Այս ոմանք այսորակ երիվարօք յայս նիշ նիւս կեղթում, ի մէջ բդեղի պահարանեալ նամակ տանին»: ՆՀԲ մեկնում է «արմտիք եգեալ յամանի, ցորեան, գարի ևն». ՋՔ «փաթեթ, ծրար կամ ծրարեալն ի փաթեթի».—իսկ Առձեռն բառարանը դնում է այս երկու նշանակութիւնները էլ:

*ԲԴԵՇԽ կամ ԲԴԵԱՇԽ, ի-ա հլ. «մեծ իշխան, կուսակալ» Ագաթ. Փարպ. Խոր. «հիւպատոս» Ոսկ. եբր. «ԴԶ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (տե՛ս Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 94). որից փոխառնակ բդեշխի «փոխ-հիւպատոս» ՍԳր. կամ բդեշխաւոխ Անկ. դիրք նոր կտ. էջ 381. բդեշխութիւն Խոր. Մագ. գրուած է նաև բդիշխ:

=Իրանեան փոխառեալ բառ է, որի պահպան տառադարձութիւնները են՝ ասոր. ܦܬܟܫܐ paṭaxšā, յն. πιτιύξης, πητιάξης, βιτάξης, βίσταξ (կարդա՛ βίταξ), վրաց. პატახშო պիտիախշի, პატიახშო պատիախշի, პატიაშხი պատիաշխի (որից տառադարձուած է իբր յատուկ անուն՝ հլ. Պատիաշխ, տե՛ս Պատմ. վրաց, էջ 86). և վերջապէս յոյն բառի յետին հնչումից տառադարձուած լտ. vitaxa (Ամմիանուսի մօտ): Հայ. բդեաշխ կարող է գալ հնագոյն *բիդիախշ ձևից. ասորին, յն. πιτιάξης և վրաց. պիտիախշի ենթադրում են *pitiaxša- ձևը. վրաց. պատիախշի կամ պատիաշխի կարող է տալ հպրս. *patiaxša- կամ *paitiaxša-, որ անշուշտ կազմուած է paiti- > պատ- նախամասնիկով: Կայ նաև պհլ. pātaxšāh, որ տալիս է պրս. پادشاه pādšāh կամ pādišāh «թագաւոր» և որ Horn § 266 դնում է հպրս. *pati-xšāyaθiya «արքայ, թագաւոր» ձևից: Բայց այս բոլորից ո՛չ մէկը ճշտիւ համաձայն չէ հայերէնին. միայն յն. βιτάξης բառն է, որ իր նախաձայնով համապատասխանում է հայերէնին և որի հետ էլ նոյն է գալիս պհլ. ԿԱՏ bitaxš «տեղակալ, փոխարքայ»:—Հիւբշ. 119:

Առաջին անգամ Lag. Gesam. Abhd. 187 համեմատում է լտ. ձևի հետ, որի վրայ Lag. Arm. Stud. § 375 աւելացնում է յունարէնը:—Տէրվ. Altarm. 86—87 դնում է հպրս. *patiy-axš, դնդ. *paitiaxšə, իբր axš «դիտել, նայիլ» բառից, paiti- մասնիկով: Նոյն, Մասխ 1882 օգոստ՝՝ 31 հպրս. պատեաշխ «հսկել, պահել». հայերէնը փոխառեալ է պհլ. պատ+աշխ ձևից:—Հիմնք. դշխոյ բառից: Թիրեաքեան, Կարնամակ, ծանոթ. 128 պհլ. pātaxšāh և պրս. pādišāh: Համմտ. Նաև Marquart ՀԱ 1903, 118, որ հպրս. paiti-axša մեկնում է paiti- մասնիկով և axša բառով. համմտ. Աշխեճ, Աշխադար յատուկ անուններ: Stackelberg WZKM 17(1903), 52 շատ լաւ համեմատից պհլ. bitaxš բառի հետ: Սիօն վրդ. Եզիպի կուսմանէ, Ախալցխա

1910, էջ 15 շեխ *(իմա՛ արաբ.* شيخ *šayx) բառի հետ*! Karst, *Ծուշարձան 405, 406 տումիս.* isse «իշխան», pateši «իշխան, տէր, փոխարքայ»: Коршъ, *թրգմ. Մշակ 1914, № 121 կցելով վերի բառերին՝ նախատիպը համարում է գնպ.* *bitya-xšaya «երկրորդ իշխան», իբր «թագաւորի երկրորդը»:

ԳԻՒ.—հբր. ר׳ע׳ישׁ «չլիքիկ, փողոցային աղջիկ»:

ՓՈԽ.—Հայերէնից է փոխառնալ արաբ. بيثقس bīθqs «բդեշխ», որ գործածուած է Ագաթանգեղոսի արաբերէն թարգմանութեան մէջ. البكير ابن بيثقس حموا جوطرا ملسو ىلاتثا = *բնագրում՝ երկրորդ իշխանն Աղձնեաց (>արաբ.* ارمناوز*), որ է (արաբ. «անուն նորա») բդեաշխն մեծ (տե՛ս* Mlaker WZKM, *հտ. 32, էջ 134)*:

ԲԴՈՒՂ. *անյայտ նշանակութեամբ մի ածական է. նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Առաք. պտմ. 271 «Ծախիւք և արդեամբք քրիստոսասէր մեծի պատրկի Ջուղայեցի խոջայ Պետրոսին, զոր մականուամբ բդուղ Պետրոս ասէին»: Ըստ Ս. Մովսիսեան (նամակ 1933 մարտ) նշանակում է «կարճահասակ». Համմտ. Բլ.* պտօ *«կարճլիկ ու մանր (կին)»,* պտուղ *«փոքր կուկլա, տիկնիկ»:*

ԲԴՈՒՄ *տե՛ս Բտում:*

ԲԴՐԱՂ *տե՛ս Փթթրախ:*

ԲԵԲՂՕՇ *տե՛ս Բանբուշ:*

ԲԵԴԵԿ** *(գրուած նաև* **բեբեկ) «շէնքի քանդուած՝ խարխլած մասը, որ կարօտ է նորոգութեան». ինն անգամ գործածուած է Ի Բագ. ժբ և իբ.—մէկ անգամ էլ ունի Կիւրղ. Թգ. որ բացատրելով յիշեալ բառը՝ գրում է սխալմամբ. «Բեդեկն՝ զորմ ինչ կամ զայլ ինչ յարկ տաճարին կարկատել է». անստոյգ նշանակութեամբ է Մագ. Թղ. 134 «բեդեկ բազմակ բեղուն քակաղեթիւ քեզ նուիրեալ».—Հին բտ. մեկնում է «բեդեկ. կազմած կամ խախտած»:*

=Եբր. בְּדָק bedeq *«պատի վրայ ճեղքուածք, շէնքի խարխլած մասը», որ Ս. Գրքի յունարէն թարգմանութեան մէջ տառադարձուած է* βεδέκ *(Sophocles, էջ 304 բ մեկնում է «breach, chink ճեղքուածք»), որից էլ ուղղակի հայերենը (ինչպէս որ Վուլգատան ունի* bedec*):—Եբր. բառը ծագում է* בדק bdq *«ճեղքել, ճեղքուածքը կարկատել, նորոգել» արմատից, որի հետ նոյն է ասոր.* ܒܕܩ bdaq *«նորոգել, վերաշինել»: Երկրորդ նշանակութեան պատճառաւ է, որ Կիւրղ. Թգ. և ուրիշներ վերի բառը հասկանում են «նորոգել»:*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ:

ՓՈԽ.—Վրաց. **ბედეკი** *բեդեկի «ճեղքուածք» (Ջուբինով[2] 102), որ գտնում է Ս. Գրքի համապատասխան հատուածներում, կարող է տառադարձուած լինել հայերէնից:*

***ԲԵՋԱԿ** *(սեռ. -ի) «փայլատակում» Եւագր. էջ 11 (երկու անգամ). «իբրև զտեսակ բեզակի, որպէս զժուարինս նուագելով... բեզակի որ է փայլատական». գրուած է նաև* բեզէկ *(սեռ.* բեզեկի*) «արեգակ» Մագ. Թղ. 70, 135.* բեզեկա *«արեգակն» Հին բտ. որից* բեզեկեան *«արեգակնափայլ, արեգակնային» Մագ. Թղ. 62, 219:*

=Եբր. בָּזָק bāzāq *«փայլակ» բառն է (*בזק bzq *«ճեղքել, պատռել» արմատից, քանի որում փայլակը ամպերը ճեղքելով դուրս է ցայտում): Այս բառը գտնում է միայն ենթկ. ա. 14 հատուածում և տառադարձուած է յունարէնում* βέζεκ *(Sophocles, էջ 304 բ «lightning, փայլակ»), Վուլգատայում՝* besec*, վրացերէնում՝* **ბეზეკი** *բեզեկի, սակայն հայերէն թարգմանութեան մէջ, փոխանակ միւսների նման տառադարձելու, թարգմանուած է «արեգակն»: Սրանից հետևում է այն, որ* բեզեկ *բառը մեր մէջ մտել է առաջին անգամ Եւագրի թարգմանութեամբ յունարէնից, ուր իրօք որ գտնում ենք* βέζεκ*:*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ, Ալիշան, Հին հաւատք, էջ 85, յիշում է Միջին Ամերիկայի Ջոլոյ ցեղի լեզուով **բեզէա** *«արեգակ», որի նմանութիւնը բոլորովին պատահական է:*

ԲԵԹ *կամ* **ԲԵԹՕ** *տե՛ս Բէթ:*

***ԲԵԹԹԻԿԱ** *«պանդոկ, իջևան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Գոր. և Շմ. էջ 69 «Եւ հրամայեաց դատաւորն Եւետոս դահճապետի տանել զերկոսեան և արգելուլ*

ի բանտի, ուր արգելեալ էին ընկերք իւրեանց ի փուտկայի միջ՝ որ կոչի բեթթիկա»։

=*Ասոր.* ܒܝܬ bīt «*տուն*» + ܛܝܩܐ tīqa <*յն.* θήκη, *այն է «տուն ընդունելութեան». ըստ երևութին բառս յատուկ անուն է, բայց իրապէս բացատրութիւնն է նախորդ փուտկայ բառի։*

Գտաւ ու մեկնեց նախ Մառ ՀԱ 1898, 270 և յետոյ Վարդանեան ՀԱ 1920, 327։

*ԲԵԼԻԱՐ *(սեռ. -այ) «սատանայ» Բ. կոր. ղ. 15. Ոսկ. բ. կոր. Նար. Գառն. 48.* որդիք բելիարայ *Դատ. ի. 13։*

=*Եբր.* בליעל bəli-ya'al *բառն է, որ կազմուած է* bəli *«ոչ, ան-» և* ya'al *«օգուտ» բառերից. ուստի բուն նշանակում է «անպէտք, անօգուտ, անպիտան», բայց յետոյ նաև «չար, վատ, ապականօղ» և յատկացուեց սատանային. «չար» իմաստով գործածուած է Դատ. ի. 13, ուր Ս. Գրքի աշխարհաբար թարգմանութեան մէջ իրօք գտնում ենք «չար զաւակ մարդիկը», իսկ Բ. կոր. ղ. 15 առնուած է «սատանայ» իմաստով։ Ս. Գրքի յունարէն թարգմանութեան մէջ տառադարձուած է բառս* Βελίαλ *և* Βελίαρ *(այլուր կայ և* Βελίας. *տե՛ս* Sorhocles *305 ա), Վուլգատայի մէջ* belial, *ասոր.* ܒܠܝܥܪ bellār, *որից կամ յունարէնի երկրորդ ձևից էլ տառադարձուած է հայերէնը։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ, Աւետիքեան, Մեկրն. Բզ. Պօղ. բ. 134 և ՆՀԲ։—Հներն էլ ծանօթ էին բառիս մեկնութեան. համմ. Ոսկ. բ. կոր. «Բելիար ի հերբայեցւոյ բարբառոյ անտի թարգմանի ապստամբ» (sic). *սրա համար է որ Հին բռ. գրում է «բելիար. ապստամբ»։*

Գիհ.—Շմ. բէլյար *(գործածական է միայն անէծքների մէջ)։*

Փոխ.—Վրաց. ბელიაზრი բելիարի *կարող է լինել թէ՛ հայերէնից և թէ՛ յունարէնից։*

+ԲԵԿ *«կոտրած» Մծբ. Եփր. փիս. 418. «խեղանդամ» Ղևտ. իբ. 22. «խոնարհ, հեզ» Ոսկ. յհ. բ. 14. Ճառընտ. Նար. երգ. 312. «լրբեալ, սիրտը կոտրած, վհատ» Ոսկ. յհ. ա. 13. այս արմատից են* բեկանել *(կտ. բեկի, հրմ. բե՛կ) «կոտրել, կտրել, բաժանել (հացը). 2. խորտակել, ջարդել, փշրել, 3. պատառոտել, գիշատել. 4. հարուածել. 5. ուժը կոտրել. 6. սարսափեցնել. 7. (կրաւ.) ձայնին արձագանգ տալ» ՍԳր. Եփր. ա. կոր. Ոսկ. կողոս.* բեկել *նոյն նշ. Վրդն. ղևտ. Լմբ. սղ. և առկ. Խոսր.* բեկումն *«խորտակում, կոտորած, հարուած, ցաւ» ՍԳր.* դիւրաբեկ *Իմ. ժե. 13. Ոսկ. բ. տիմ.* գազանաբեկ *ՍԳր.* ասպարաբեկ *Եզեկ. լթ. 9.* ցրտաբեկ *Ոսկ. մ. գ. 8.* նախանձաբեկ *Սիր. թ. 1. Եփր. Թգ. Ոսկ. ես. և մ. բ. 4. Ագաթ.* հրամանաբեկ *Կոչ. 109.* կաշառաբեկ *Գ. մակ. դ. 15. Բուզ.* խեցբեկ *Ոսկ. մ. ա. 2.* լեռդաբեկել *Ոսկ. բ. կոր.* աղեբեկ *Խոր. 3Հ. կթ.* կրկնութեամբ՝ բեկբեկել *Եփր. խր. 225. Մանդ. Փիլ.* բեկբեկումն *Մծբ.*—nr *մասնիկով՝* բեկոր *«կտոր» ՍԳր. Եփր. Համաբ. «ճեղք» Գիրք մոլութ. (համմ.* հաս-nr*).*—na *մասնիկով՝* բեկոռել *«մանր կտրտել» Երզն. քեր. Յայտմ. Վրդն. ծն.*—ա *սատկականով՝* բեկտել *«կոտրտել» Իմ. դ. 5. Սիր. լբ. 24. Ոսկ. բ. տիմ.* բեկտու *«փուխր, դիւրաբեկ» Խուիւք. յոբ. 206.* բեկտումն *Փիլ.* բեկտոր *Տաճև. ամ. 296, 519. Ոսկիփ. 332 (ըստ ՀՀԲ կայ նաև Դատ. թ. 53, որ մեր լաւագոյն օրինակներում* բեկոր ձեռն ունի*). վերջապէս չ մասնիկով՝* բեկչիկ *ԱՔ «կոտրիլ», աներեկչելի Վրք. ոսկ. նոր բառ է* բեկարոյժ, բեկարուժութիւն *«սրընթացութիւն»։*

=*Հնխ.* bheg *արմատից, որից կամ նրա անգալին* bheng *ձևից յառաջացել են՝ սանս.* bhañj, bhanákti, babhán'ja *«բեկանել, խորտակել», bhaṅga- «բեկումն, խորտակումն, ալիք», bhañji «բեկումն, ալիք», հիւղ.* bo-ingim *«խորտակեմ», com-baig «կոտրել, խորտակել», լիթ.* bangà *«ալիք», ռուս.* бужать *«քար կտրել»; գնչ.* pangáva, pagiom *«բեկանել, կտրել, խորտակել».—Նոյն արմատից r-ի ներմուծումով յառաջացել են անգալանով լտ.* frango, *առանց անգալանի կտր.* fregi *«կոտրեցի», fractio panis «բեկանել հաց», գոթ.* brikan, *հբգ.* brehhan, *գերմ.* brechen, *անգլ.* break *«կոտրել» (տե՛ս* Walde *313,* Trautmann *26,* Kluge *72) —Հիւրշ. 429։*

Ուղիղ մեկնեցին նախ Peterm. *17 և* Windisch. *14, որոնցից լեսաւ գալիս*

ևն Böttich. ZDMG *1850, 352*, Gosche *73, 219*, Bopp III *105*, Հիւբշ. KZ *23, 22*, Տէրվ. Altarm. *17, 88*. Նախալ. *95*, Meillet MSL *8, 289 ևն*։ — Canini, Et. êtym. էջ *1* առնս. bhaj «բաժանել», եգիպտ. peka «ճեղքել», pek «բաժանել»։—Հիւնք. փակաճիլ բայից։—Walde, Lat. etym. Wört. *313* Հայերէնի նմանութիւնը պատահական է համարում։—Պատահական նմանութիւն ունի արաբ. بَكّ bakk «պատռել, ջնջել, մէկի վիզը կտրել» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. *75*)։

Գիմ.—Ղրբ. պէկ «փոս. 2. աւերուած՝ փլած, աւերակ տեղ»։

Փոխ.—Վրաց. բեգվա, գարեգվա, դարեգվա «դարնել, ծեծել, սեղմել, ճնշել, ոտնակոխ առնել». ավար. բեկիգէ «խորտակել» պատահական են թէ իրօք փոխառեալ հայերէնից։

ԲԿԿԱՐ «Հարկ, տէրութեան վճարուած տուրք» *Յհ. կաթ. 169, 203* (բեկարաց), Կանոն. էջ *125. Օրբ. Հրտր. էմ. էջ 130* (բց. ի բեկարէ). գրուած նաև պեկար (ըստ յետին տատադարձութեան) Մխ. դտ. Հրտր. Բաստամ. էջ *216*. արձանագրութեանց մէջ առաջին անգամ յիշուած է *901* թուին (Վիմ. տար. էջ *4*) բց. ի բեկարէ ձևով։ Որից աՆբեկար «առանց հարկի» Մխ. դտ. (ըստ Հրտր. Բաստամեանի՝ էջ *212* աՆպեկար)։ Բառիս վրայ առանձին մի քննութիւն ունի Մանանդեան, Գիտութիւն և արուեստից ինստիտուտի Տեղեկագիր *1, 32—37*, ուր համարում է «հողային հարկ կամ թևրևս պարտադիր դինուորական ծառայութիւն»։

ՆՀԲ լծ. հլ. բաժ և լտ. vectigal, որ է «տուրք»։ Ագոնց, Арм. Юстин. *484* պրս. بکارآمدن ba-kār āmadan «գործի գալ»։ Այս առուգրանութիւնը, որի վրայ ծանրանում է նաև Մանանդեան՝ անդ, բոլորովին զուրկ է արժէքից (Մանանդեան, Տեղեկ. ինստ. *2, 37* երկու տարրեր բառեր է համարում փայքար, պեկար «հողային հարկ»<պրս. pāikār և բեկար «պարտադիր ձրի աշխատանք»<պրս. bekār) և յառաջացած է նոր պրս. bekār հնչման ազդեցութիւնից։ Սա մի՛ բան չէ, այլ kār ﻛﺎﺭ «գործ» բառի արաբականը կամ նախդրիւ հայցականը. ba նախդիրը ծագում է հպրս. patiy, գնդ. paiti, պհլ. pat, պազենդ. pa ձևից և նոյն հայերէնի մէջ գոյութիւն ունեցած լինէր, առնուազն պա ձևը պիտի ունենար, որով սպասելի էր *պահար և ո՛չ բեկար (համմ. Horn § *144*)։—Տե՛ս նաև փաքար։

Գիմ.—Տփ. բէգար «առագանք», երև. բէգար «ձրի պարտադիր աշխատանք»։

Փոխ.—Վրաց. ბეგარა բեգարա «պարտադիր ծառայութիւն, որ կատարում են գիւղացիք կալուածատիրոջ կամ պետութեան համար. ինչ. հողի մշակութիւն, հունձք են». (Զուբինով ևս հայերէնից փոխառեալ է համարում)։ Ուտ. begyâr «պարտադիր ձրի աշխատութիւն»։

ԲԿՂ տե՛ս Բակղ։

*ԲԿՀԻՉ (կամ բեհեզ), ո հլ. (յետնաբար ի–ա հլ.) «աղնիւ մի տեսակ կտաւ, նրա թելը, մանածը կամ նրանով շինուած շոր» ՍԳր. կիւրղ. ղկ. Փիլ. որից բեհեզեայ ՍԳր. Փարպ. խոր. բեհեզեղէն ՍԳր. բեհեզաթել նար. բեհեզազգեստ Մծբ. Մարթին. բեհեզաթել նար. խշ. արբաբեհեզ նար. խշ. կեղծ և շինծու բան է բեհեզաստուն «թանկագին իրերի շտեայ», որ ունի միայն ՀՀՔ և թևրևս ինքն է յարմարեցրած ռճկ. bezesten հոմանիշի վրայից։

=Փոխառեալ բառ է, բայց յայտնի չէ ո՛ր լեզուից. համմ. հբր. արամ. փիւնիկ. בוץ būṣ, ասոր. ܒܘܨܐ būṣā «շատ նուրբ և յատկապէս եգիպտական բամբակեայ կտոր», արաբ. بَزّ bazz, որ նախ նշանակում էր «բեհեզ», իսկ յետոյ ընդհանրապէս «թանկագին կերպաս», Թրք. بز bez «լաթ, շոր, հասարակ տեսակի կտոր», յն. βύσσος «բեհեզ, կտաւ», լտ. byssus, byssum, ռուս. бyссонъ, бyссъ «բեհեզ» և бязь «կտաւ» են։—Հյ. բեհեզ գալիս է նախաւոր *բեհեզ ձևից (ինչ. Աբրահամ<Աբրաամ ձևից). բայց այս ձևը ո՛չ յայնին է համապատասխանում և ո՛չ ասորիին։ Դժբախտաբար ուսանդուած չէ մեզ իրանեան ձևը, որից թևրևս փոխա-

*ռնալ լինի հայերէնը. որովհետև բառարաններ-
րի մէջ աւանդուած պրս.* بز bazz *բառը ա-
րաբերէն է.* Müller WZKM *8, 280 (Թրգմ. ՀՍ.
1894, 293) համարում է փոխառեալ ասորի
գաւառական մի ձևից՝—Հիւբշ. 392։*

*Առաջին անգամ ՆՀԲ յիշում է վերի ձև-
վերը։ Հիւնք. դնում է յունարէնից։*

ՓՈՒԹ.—*Հայերէնից փոխառեալ է վրաց.* **ზეეზი** *զեեզի,* **ზვეზი** *զեեզի,* **ზელეზი** *զե-
լեզի և կամ կրճատ* **ზეზი** *զեզի «բնէզ»
(ըստ Մառ* Текст. и разс. IV *յատկ.* Ип-
пол. *64 և* Крит. и мелкія ст. *էջ 68)։
Ուտ.* bâhâz *«ոսկեթել հագուստ» (ըստ Ափգ.
Պալասյան)։—Նոյն բառը հայերէնի միջոցով
մտած է նաև Աւետարանի քրդերէն թարգ-
մանութեան մէջ, Դտկ. ժզ. 19 «բէհէզ ու
նազիք տիւլպէնա որարկըրթ պուս» (Ագանէր
բեհեզս և ծիրանիս)։*

**ԲՆՀԵՇՏԻ «գրախտային», յատկապէս բե-
հեշտի խնձոր «մի տեսակ ընտիր խնձոր.*
pomme de paradis» *Տաղ.։*

=Պրս. بهشتی bihišti *կամ* bähišti
«գրախտային»։

*Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Նո-
րայր, Բառ. ֆր. 897 աւ։*

***ԲՆՀՄՈՎԹ,** *ի–ա հլ. «առաւօտեան մի
գազան» Լմբ. ժր. մարգ. էջ 142 (Ամբակ. ա.
14). գրուած է նաև* **բեհմովդ, բէհմովթ, բէ-
հէմօթ** *(ՀՀԲ),* **բեհմութ** *(Կղնկտ. Հրտր. էմ. էջ
159. իսկ Հրտր. Շահն. Ա 323 ունի* **բեհմովթ.**
*Կաղանկատուացին գործածում է այս բառը
իբրև ածական՝ փղի գլխի մեծութիւնը որա-
կելու համար).* **բեհմովթ** *Վրդն. պտմ. էջ 4
(գրծ.* **բեհմովթաւն** *ձևով, որից պարզւում է
թէ բառը հետևում է ի–ա հոլովման).* **բեհ-
մովն, բեհմոն** *Մխ. առակ. կե. հզ. վերջա-
պէս կայ* **բեհեմովթ** *ձևով և «սատանայ» նշա-
նակութեամբ՝ Ադամ. 255։*

=Եբր. בהמות behemōth *բառն է,
որի իմաստը անորոշ է. գործածուած է Յոբ.
խ. 10 և նկարագրուած է իբրև մի վիթխարի
գազան. Ս. Գրքի արդի մեկնիչները ընդունում
են, որ այս բառով հասկացուել է «գետաձի» և
թէ բառը ծագում է եգիպտ.* pehe-mūth *«եզն
ջուրց» բառից։ Եբրայական բառը Ս. Գրքի
միջոցով անցել է շատ լեզուների. ինչ. ֆր-
բանս.* béhemoth, *անգլ.* behemoth, *ռուս.*
бегемотъ, *վրաց.* **ბეჰემოტი** *բեհեմոտի, ա-
սոր.* ܒܗܡܘܬ behmūt *(*Brockelm. *33 ա).
լն.* βεημώθ *(*Sophocles *304 բ) ևն, բոլորն էլ
ընդհանուր և անորոշ իմաստով՝ իբրև սար-
սափելի մի գազան։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

***ԲԵՂ** *«ընչացք» Առաք. պտմ. 301. գոր-
ծածական է այժմ էլ արևելեան գրականում և
բարբառներում՝ այս ձևով. մինչդեռ արևմ-
տեան գրականը՝ նոր տառադարձութեամբ
ունի պեխ. որից* **բեղաւոր, անբեղ** *(պեխաւոր,
անպեխ)։*

=Արևել. Թրք. بیڭ biŋ *կամ* میڭ miŋ, *Թրք.*
بیق bəyəq, *գւռ.* bəyəγ. *որից փոխառեալ
են նաև չէրքէզ.* biyik, *լազ.* buyuγi, *ուս.*
բիղուր *(տե՛ս Բարխուդարեան, Ազուանից
երկիր և դրացիք, 1893, էջ 95), բոլորն էլ
«ընչացք, բեղ»։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

Գիւր.—Ալշ. Սլմ. **բեղ,** *Ջղ.* **բեղէր,** *Երև. Մկ.*
բէղ, *Ղրբ.* **բէղ,** *Մրզ.* **բըղ, բէխ,** *Սչ.* **բեխ,**
Տիգ. **բէխիր,** *Զթ.* **բէխիր, բէխիյ,** *Տփ.* **բիխ,**
Պլ. **բըյըխ** *ևն։ Նոր բառեր են* **բեխաւոր, բե-
խաստեղ** *«շրթունքի այն մասը՝ ուր բեղերն
են բուսնում»։*

ԲԵՂԿԵԼ *«նեղել, տառապեցնել». ունի մի-
այն ՀՀԲ՝ առանց վկայութեան. նոյն բառը
գիտէ նաև Բառ. երեմ. 53, բայց մեկնում է
«վշտակցել»։*

ԲԵՂՄՆ, *ն հլ. «արական սերմ». նորագիւտ
բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած
Տիմոթ. կուզ. էջ 195 «Ոչ ծնօղաց ենթակա-
ցելոց և ոչ բեղման արականի ի բնութենէ
անգործարանի»։ Սրանից են* **բեղմնաւոր** *Փիլ.
այլաբ.* **բեղմնաբեր** *«պտղաբեր» Թէոդ. մայ-
րագ.* **բեղմնաւորել** *նար. կուս.* **բեղմնաւորու-
թիւն** *(նոր բառ)։ Սրա հետ նոյն է* **բեղուն,** *ո
հլ. «պտուղ, բերք» Պիտ. 36. կթ. Փիլ. լին.
Վրդն. ղևտ. (ձևի համար կարելի է համեմա-
տել կողմն և կող), որից ծագում են* **բեղնա-
ւոր** *«բերրի, բարեբեր» Պիտ. «բազմածին»
Փիլ. լին.* **բեղնաւորել** *«պտղաբերել» Լմբ.
Կլիմաք.* **բեղնաւորութիւն** *Պիտ.* **բեղնաւորա-
գոյն** *Փիլ.* **անբեղնաւոր** *Պիտ. կամ* **անբեղուն**
«անպտուղ, ամուլ» Փարպ. Փիլ. ժ. բան.

բազմաբեղուն «բերրի» Պիտ. Տօնակ. «բազմածին» Պիտ. Փիլ. Նար. «շատ, բազմապիսի» Մագ. տարբեղուն «օտարատերմն, օտարոտի, խորթ» Մագ. գամագտ. (տե՛ս ՀԱ 1911, 546), կամ տարաբեղուն Տիմոթ. կուզ, էջ 239 ևն. բեղնաւոր ևն ձևերից ենթադրուած է յետոյ բեղն «պտուղ, բերք» ձևը, որ ունի միայն Հին բռ. իսկ բեղուն բմբռնուելով իբրև ածական՝ կազմուած -ուն մասնիկով, ենթադրուած է սխալմամբ բեղ արմատ՝ որից ունինք բազմաբեղ «բերրի» Գնձ. Կրպտ. ոտ.։ Նոր գրականումն էլ բեղուն ածական է միայն «բերրի» նշանակութեամբ. հնագոյն «պտուղ» նշանակութիւնը գոյութիւն չունի այլևս։

ՀՀՔ բեղուն<բերուն (բերել բայից)։ Böttich. ZDMG *1850, 352* առնս. phala «պտուղ»=հյ. բեղն։ Հինք. յն. φαλλός և լտ. phallus «արական անդամի կերպաւորութիւն՝ իբր խորհրդական նշանակ բեղմնաւորութեան»։ Սագրզեան ՀԱ 1909, 335 սումեր. pag՝ «առատ՝ բեղուն լինել»։

ԲՆԼՈՒՆ «համակիր, սիրող». անստոյգ բառ, որի բացառական ձևը միայն կայ մէկ անգամ գործածուած Կղնկտ. (Հրտր. էմ. էջ 183, Շահն. Ա. էջ 361) անբեղուն. «Թէպէտև անբեղուն (այլ ձ. անբեղոյ, անտեղուն) միտս ունէին ընդ նմա ամանք ի մախայորդոր տոհմակցացն, բայց նա ի ձեռն իմաստակիր և քաղցրահամբոյր խօսից նուաճէր և յինքն յանկուցանէր զամենեցուն սիրտ»։

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատեն. Ա. էջ 8։

*ԲԵՄ, ի–ա հլ. «դատաւորական աթոռ, բարոզչական ամբիոն» ՍԳր. «խորանի տեղը՝ եկեղեցու մէջ» Խոր. ՅՀ. կԲ. «գահոյք, բազմոց, նստարան» ՅՀ. կԲ. Վրդն. ծն. որից բեմական ՅՀ. կԲ. Նար. Սարգ. բեմասացութիւն Խոր. Խոսր. պտրգ. գրուած է նաև բեմբ (հմմտ. պատշգամ և պատշգամբ) Ոսկ. յհ. ա. 12. Փարպ. Նար. Տօնակ. որից բեմբական Խոսր. ձ. գրաբեմբ Ջքր. սարկ. Գ. 12. Նոր գրականում ընդունուած է միայն բեմ, որից շինուած են բեմադրել, բեմադրութիւն, բեմայարդար. բայց կայ նաև բեմբասաց, բեմբասացութիւն, բայց ո՛չ բեմասաց, բեմասացութիւն։

= Յն. βῆμα «քայլ, քայլաչափ, չքախումբ, աստիճան, սանդուխի ոտք, դատարան, բեմբասացութեան ամբիոն, եկեղեցու բեմ, խորան», որ ծագում է βαίνω<*βαμιω «քայլել» բայից (Boisacq *112*). լունարէնից փոխառեալ են նաև սուր. ܒܝܡ bīm, վրաց. ბემი բեմի, ბემონი բեմոնի (որոնք Զուբինով[2], *104* հայերէնից փոխառեալ է համարում)։— Յն. βῆμα բառի դորիական ձևն է βᾶμα, որի հետ պատահաբար միայն նման է յն. βαμά «բարձր տեղ»<փոխառեալ եբր. בָּמָה bāmā «բարձրութիւն» (Sophocles *296*)։—Հիւբշ. *343*։

ՆՀՔ լծ. եբր. բամա, պամա։ ՋՔ դնում է եբր. կամ յն. իսկ ԱՔ յն.։ Վերջին անգամ Վարդանեան ՀԱ *1920, 337*. ասորերէնից տառադարձուած է համարում։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Սչ. բ'եմ, Ախց. Երև. բ'էմ, Տփ. բիմ, Մկ. պիմ, բոլորն էլ «եկեղեցու բեմ» նշանակութեամբ։—Նոր բառ է բեմատակ Ջղ. «եկեղեցու բեմի տակը»։

ԲԵՆԱՋՆ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Պիտ. *580* «Հասեալ ի բենազն աշտիճան, ուր զկացրդոցն կատարելով... բարւոք յարմարեցես գովասանական հանդէս»։—ՆՀՔ և ՋՔ մեկնում են «դպիր կամ վարդապետական, բեմական». ԱՔ միայն վերջինը։

ՆՀՔ, որից էլ ՋՔ, ուղղում են բառս բեմազն կամ բենազն. առաջինը հանելով բեմ և ազն բառերից, երկրորդը՝ պրս. պէնազ (իմա՛ بناغ banāγ) «դպիր» բառից, որ սակայն պիտի տար հյ. *բանագ. Baumgartner, Über das Buch die Chrie, ZDMG *40 (1886), 480* մերժում է ՆՀՔ-ի սրբագրութիւնը (իբր բեմազն) և բառը համարում է անծանօթ ձև։

+ԲԵՒՆ, ն հլ. (ոին, ոինք, ոանց) «բեռ. 2. բեռնաւորուած ապրանք. 3. ծանրութիւն, ուրիշին տրուած նեղութիւն» ՍԳր. որից բեռնաբարձ Կոչ. բեռնական Ոսկ. յհ. բ. 35. բեռնակիր ՍԳր. բեռնակրութիւն Ոսկ. ես. և յհ. ա. 14. բեռնաւոր ՍԳր. բեռնատար Լծ. պրպմ.

659. ծաճրաբեռն Օր. լ. 11. Ոսկ. ես. մ. և յհ. ծաճրաբեռնել Ոսկ. բ. կոր. ծաճրաբեռնի Ոսկ. ևփես. և մ. ա. 16. մեծաբեռն Ագաթ. վեցօր. դժուարաբեռն Վրդն. լս. նոր բառեր են բեռնագին, բեռնագիր, բեռնաճաւ են։

= Հնխ. bherno- ձևից, որ ծագում է bher- «բերել, կրել» պարզական արմատից. համմտ. յն. φόρτος, սանս. bhārá-, ալբան. barë (<*bhorno-), գերմ. Bürde, պրս. بار bār, քրդ. بار bar, bare, հինպուատանի بار bar, գնչ. behri, որոնք բոլոր նշանակում են «բեռ» և ծագում են նոյն bher- «բերել, կրել» արմատից։ Պրս. بار bār «բեռ» բառից կազմուած է بارگیر bārgīr «բեռ կրող (ձի)», որ անցնելով թուրքերէնի՝ դարձել է بگیر begir «ձի» և սրանից էլ նոյն. լեզգիու «ձի», որոնք ըստ ալամ որևէ կապ չունին մեր բեռնակիր բառի հետ։ Աւելի մանրամասն տե՛ս բերել, որ ներկայացնում է հնխ. bher- արմատը. արմատի p ձայնը գարձել է n՝ յաջորդ ն-ի պատճառաւ։—Հիւբշ. 429։

Ուղիղ մեկնից նախ ԳԴ (պրս. bār). յետոյ գալիս են ՆՀՔ (պրս. և սանս. ձևերը), Müller SWAW 42, 251 (պրս. ձևը) են։ Մաս ЗВО 5, 320 զնդ. basta «կապուած» բառի հետ։

ԳԻՒ.— Ագլ. բէ՛ոնը, Ղրր. Շմ. պէ՛ոնը, Ննխ. բէո, Ալշ. Մշ. Ոզմ. Ջղ. բ՛եռ, ՋԲ. բ՛եռ, բ՛էո, Ախց. Ակն. Երև. կր. բ՛էռ, Սեբ. բ՛է՛ռ, Սլմ. Վն. պեռ, Համշ. Մկ. պէռ, Ասլ. Խրբ. բ՛ոռ, Ռ. Տիգ. փէռ, Հճ. բ՛էր, Տփ. բի՛րը, Մրզ. պբէռ։—Նոր բառեր են՝ բեռնակ, բեռնել, բեռնոտել, բեռնաշալակ, բեռուկ «էշ»։

*ԲԵՍԵՔԻՍՏՈՆ «նահանջ տարիներում՝ փետրվարի վրայ աւելացուած օրը, փետրվարի 29» Շիր. էջ 20. Անան. ժմնկ. էջ 35. գրուած նաև բեսեխտոն Անան. ժմնկ. էջ 25. այս բառն է, որ Բառ. երեմ. էջ 55 գնում է բէսէխտոն «յիսուն»։—Յունի ՆՀՔ։

= Ծն. βίσεξτος բառի հլց. βίσεξτον ձևից. յունարէնն էլ փոխառեալ է լտ. bisextus, bisextum հոմանիշից, որի բուն նշանակութիւնն է «կրկին վեցերորդ». ըստ որում նահանջ տարին ունի 366 օր։ Լատիներէնից են ծագում նաև ֆրանս. bissexte «փետրվարի 29», bissextil «նահանջ տարի», իտալ. bisestile ևն։—Հիւբշ. 343։

Ուղիղ մեկնից նախ Պատկ. հրտր. Շիր. էջ 20. յետոյ Brockelm. հյ. թրգմ. Ուս. փոխ. բառից, էջ 113։

*ԲԵՍԻՆ «մի տեսակ չափ է. կէս լիտրանոց չիշ» Շիր. 30, 34 (ՆՀՔ յիշում է այս բառը շիշ բառի տակ՝ հտ. Բ. էջ 478 գ)։

= Ծն. βισσίν, βισσίον, βίσσα «շիշ». այս բառերը չգիտէ Bailly, ունի միայն Sophocles, էջ 309, իբր βίκος «գինու տարող»։—Հիւբշ. 343։

Շիրակացին արդէն ինքը մեկնում է «կուժի ըստ հայոց շիշ»։ Աւգերեան, Բացատր. չիփ. և կշռ. էջ 60 կարդում է բառս բեկիոն կամ բեկին և գնում է յն. βικίον «գինու տափոր»։ Նոյնը նաև Պատկ. հրտր. Շիր. էջ 30։ ՆՀՔ համարում է յն. բիխի՛օն։ Brockelmann, Ուս. փոխ. բառից, թրգմ. Տաշեան, էջ 43 երկուսն էլ մերժելով գնում է յն. βίκιον։ Բայց այս բառը ո՛չ Bailly գիտէ և ո՛չ Sophocles։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Հիւբշմանն։

ԲԵՍՏ. անծանօթ բառ. առանձին անզործածական է. գտնւում է միայն հաստաբեստ «ամրակառոյց» Բուզ. վեցօր. 166. հաստաբեստագոյն ԱՔ. հաստաբեստեալ Օրբ. բառերի մէջ։

ՆՀՔ տե. Բ, էջ 54 բ գնում է պրս. بسته basta «կապեալ» բառից։ Տէրվ. Մասիս 1882 օգոստ" 31 և Նախալ. 96 զնդ. և հպրս. basta, պրս. basta ձևերի հետ։ Դժուար կարող է ճիշտ լինել ըստ Հիւբշ. 118։ Անշուշտ սխալ է, որովհետև փոխառութեան դէպքում պիտի ունենայինք *բաստակ։

+ԲԵՐ, ո, ի հլ. «բերումն, ընթացք, գալուստ» Խոր. Պիտ. Փիլ. «բերք, հողի բերած արդիւնքը, պտուղ» ՍԳր. Ոսկ. մ. ա. 21. «արդասաւորութիւն, պտղաբերութիւն» Փիլ. Պիտ. Նար. «ծնունդ, ծննգաբերութիւն» Ջքր. կք. «մի տեսակ երաժշտական խազ» Ոսկիփ. որից բերել «ածել, բերել, կրել, տանել, պատուղ տալ» ՍԳր. Ագաթ. «համբերել» Ոսկ. յհ. ա. 37. Խոր. բե՛ր «օ՛ն, աղէ՛, գե՛հ, շո՛ւտ արա»

Սահմ. Պրպմ. Պիտ. (ստրկական թրգմ. չն. փέրե, ἄγε համանիշներից, որոնք բուն նշանակում են «բե՛ր, ա՛ծ»). բերիմէջ *«բանաստեղծություն» Մծբ.* բազմաբեր *Ոսկ. բ. կոր.* հրամանաբեր *Ագաթ. Կորիւն.* նոթաբեր *Ագաթ.* դառնաբեր *Ագաթ. Կոչ.* մասրեբիկ *Եփր. ծն. էջ 15, 44.* շահաբեր *Առակ. լա. 14.* բարեբեր *Սարկ. քհ. Շար.* աճեբեր *Նար.* համբերել *ՍԳր.* ըմբերել *(<բեդ-բերել) «համբերել» Կոչ.* անբմբեր *«անտանելի» Ոսկ. յհ. բ. 32.* խստամբեր *(<*խստահամբեր) ՅՀ. կթ.* խստամբերութիւն *Ագաթ.* վշտամբեր *Ոսկ. մ. ա. 10.* շարամբեր *կամ* շարըմբեր *Ղևոնդ.* արդիւնաբերութիւն, արդիւնաբերական *են (նոր բառեր)։*

= Հնխ. bher- *սրմատից. համմտ. առնս.* भर् bhar, bhárāmi, *գնդ.* برادن barāmi, *հպրս.* barantiy, *չն.* փέրա, *լտ.* fero, *գոթ.* bairan, *հբգ.* beran *(այս բոլորը նշանակում են «բերել, կրել»),* հալ. berą *«գումարել, հաւաքել», ռուս.* бери́ *«առնել, վերցնել», հիտ.* berim *«բերեմ»,* do-biur *«տամ»,* as-biur *«առնեմ», պրս.* بردن burdan, *պհլ.* burtan, baram *«առնիլ», քրդ.* birin, berum, *աֆղան.* wṛal, *փռիւգ.* abberet *«երեր», ալբան.* birni *«բերեմք», լիթ.* beriù *«կրուել» և այլ բառ.սաթխով բառեր, որոնց վրայ տե՛ս* Walde *284,* Boisacq *1021,* Berneker *51,* Trautmann *31,* Horn § *196,* Pokorny *2, 153—4,* Ernout-Meillet *336։ Մեր բառի դանագան առումների հետ ոգղակի համաձայն են չն. փέրա «կրել, առնիլ, ունենալ, առկալ, համբերել», փորձ «բերումն, ընթացք, պտղաբերութիւն, բերք», փերաւ «պտուղ», պրս.* بر bar *«բերք, պտուղ, արդիւնք», լտ.* fertilis *«բերրի, պտղաբեր» են. իրրև բարդաւճան երկրորդ մաս՝ համմտ. լտ.* lucifer, *չն.* ἐωσφόρος, *հյ.* լուսաբեր, ձիւնաբեր, աճապիւաբեր *են։ Ձգտեղ են պատկանում նաև հյ. -ւոր մասնիկը (օր.* թագաւոր, *իբր «թագ կրող, որ բերէ զթագ») և* բեռն, *որի վրայ տե՛ս առանձին։—Հիւբշ. 429։*

Ուղիղ մեկնից նախ A. Acoluthus, Obadias armenus, Lipsiae *1680, էջ 44, որ կցում է լտ.* ferre *ձևին։* Schröder, Thesaur. *էջ 47 (ինչպէս և ԳԴ) հյ.* բերք *գնում են պրս.* bar *բառից փոխառեալ։* Klaproth, Asia polygl. *100* բերք=*երբ. peri, ասոր.* piro, *պրս.* ber։ *ՆՀԲ առնս.* պրի *(հմ. Ա. էջ 484 բ) և չն.* փէրա *(հմ. Բ. էջ 843 ա)։ Ուղիղ մեկնակին նաև* Peterm. *17, 30, 35 և* Windisch. *14՝ գնելով առնս. չն. և պրս. ձևերի հետ։* Cappelletti, Armenia *(Թրգմ. Ակշալ. տպրտ. 1842, էջ 108)* բերք *գնում է երբ. բերի «պտուղ, բերք» բառից։* Bugge, Lyk. Stud. *1, 14 գրառում է Լիւդիոյ* Պերմունդա *քաղաքի անուան մէջ։* Canini, Et. étym. *էջ 165* բեր *«պտուղ»=առնս.* phala *«պտուղ»։* Pictet *բ. տպ. հմ. Ա. էջ 277 պրս.* pārī *«պտուղ», լտ.* pirum *«տանձ», իտլ.* péire *«տանձ» բառերի հետ է գնում հյ.* բերք։ Autran, Sumér. et ind. *էջ 81, համեմատում է սումեր.* bar *«բարձրացնել, վերցնել» բառի հետ։*

ԳԻՒ.—Ջղ. բ'երել, *Ալշ. Մշ. Սչ.* բ'էրել, *Նախ. Պլ.* բէրէլ, *Ախց. Երև. Կր. Սեբ.* բ'էրէլ, *Տփ.* բէ՛րիլ, *Խրբ.* բ'էրիլ, *Սլմ.* պէրել, *Մրղ.* պէրէլ, *Շմ.* պէրիլ, *Ասլ.* բէրէ՝լ, *Ագլ.* բի՛րիլ, *Ջթ. Ոզմ.* բ'իրիլ, *Վն.* պիրել, *Ղրբ. Մկ.* պի՛րիլ, *Հմշ.* պէրուշ, *Ռ.* փէրէլ, *Տիգ.* փէրիլ, *Հճ.* բ'իլէլ, *Հւր.* բէլ *«բերել»։— Նոր բառեր են* բեր *«աշխարհները կթելու գործողութիւնը»,* բերաառեղ, բերաւոր, բերելու *«յղի»,* բերելչէք, բերողչէք, բերեցնել *«բերել տալ»,* բերկաւա, բերմուճ, բերովի, բերուճի։

+ԲԵՐԱՆ, ո *հլ. (յեռնարար նաև ի-ա հլ. այսպէս ենք գտնում նաև երեք անգամ Ս. Գրքի մէջ՝ Սղ. խր. 14, հէ. 36. Առակ. ժա. 11՝* բերաճօք*) «բերան. փոխաբերութեամբ նաև՝ անցք, դուռ, սրի բերան, սկիզբ, անգամ, հրաման, անձ են» ՍԳր. Ադաթ Ոսկ. եզն. ո-րից* բերանաբաց *Ա. եղր. դ. 9. Բուզ.* բացաբերանեալ *Եւս. պտմ.* բերանապարիշա *(նորագիւտ բառ) «մատուռակ» Նորագ. բ. մնաց. թ. 4 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր Մնաց. գրոց մէջ, էջ 11).* բերանալիր *Եւս. թ. 12. եզեկ. իա. 22. Կորիւն.* բերանակապ *Յոբ. լ. 28. Ագաթ.* բերանացի *Վեցօր.* բերանսել *«պապանձեցնել» ՅՀ. կթ. Վրթ. քերթ.* ափիբերան *ՍԳր. Ոսկ.* շնաբերան *Բուզ.* սրաբերան *Ոսկ. ես.* վիրա-

բերաւն *Դատ. դ. 22.* լիաբերաւն *Եփր. ա. թգ.* նուագաբերաւն *Ջաբ. դ. 12.* եղնգնաբերաւն *Եփր. վկ. արև.* կիսաբերաւն *Ճառընտ.* միաբերաւն *Մեծոփ.* գայլաբերաւն *Տօնակ.* դաշտաբերաւն *Խոր.* ըմբերաւնել (<*ընդ-բերաւնել) *Տիտ. ա. 11. Եզն.:*



=Հնխ. bher- «ծակել, ճեղքել» արմատից. համմտ. լիթ. burnà «բերան», յն. φάρυξ և լտ. frūmen «ըմպան, կոկորդ», հհիւս. barke «վիդ», բուլգար. bъ'rna «շրթունք». այս բոլորը ըմբռնուած են նախապէս իբրև «ծակ, անցք». համմտ. իռլ. bern (հյց. beirn <*bernā) կամ berna (հյց. bernaid<*bernāt-) «ծակ, բացուածք», ալբան. brimë «ծակ», հիռլ. bora «ծակ» (Walde *319—320*, Boisacq *1017*, Trautmann *40*): Պարզական արմատի վրայ տե՛ս բաճ և բիր:—Հիւբշ. *429*:

Klaproth, Asia polygl. *103, 118* վրայ. Ձօճօ պիրի «բերան» բառի հետ: ՆՀԲ «բերող ի ներքս և ի դուրս... վրայ. պիրի»: Առաջին անգամ ուղիղ մեկնեց Böttticher, Arica *69, 139*, որ համեմատում է բառս լիթ. burna և սկովտ. beulan բառերի հետ: Թոփուզեան, Արծիւ վասպ. էջ *42* «բերել ընդ ալն»: Տէրվ. Նախալ. *96* հանում է բերել արմատից: Глеше, Сбор. матер. Кавк. *31, 6* յն. φάρος «ըմբռան» և լտ. foramen «բացուածք» բառերի հետ: Ուղիղ մեկնութիւնը ունի նաև Bugge KZ *32, 4*, որ սակայն Lykische Stud. *1. 15* լիւդ. λάβρος «կացին» մեկնում է հլ. լայնաբերաւն: Մաս ИАН *1910, 1491—4* հլ. պռուկ «շրթունք», վրայ. Ձօճօ պիրի «բերան» և լազ. piji «բերան» բառերի հետ լաբեթմական ծագումից. հայերէնի պարզ ձևն է բեր<պեր, որի վրայ աւելացել է յոգնակերտ ան մասնիկը, ճիշտ ինչպէս ոսկան. պիլար «շրթունք, բերան» կազմուած է նոյն արմատից՝ ար յոգնակերտ մասնիկով:

Գիմ.—Ոզմ. Ջղ. բ'երան, *Նախ. Պլ. Տփ.* բէրան, *Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Սեբ. Սչ.* բ'էրան, *Մկ. Մրղ. Շմ. Սլմ. Վն.* պէրան, *Ղրբ.* պէ՛րան, պա՛րան, *Հմշ.* պէրօն, *Ասլ.* բ'էրա՛, *Ռ.* փէրան, *Տիգ.* փէրմն, *Ագլ.* բո՛րոն, *Հւր.* բիյոն, *Զթ.* բ'իրոն, բիյօն, *Հճ.* բ'իյօն, *Մրշ.* պիճոր (*բստ Գաբիկեան, Ամէն. տարեց. 1922, 325*): Նոր բառեր են բերանախեղճ, բերանբացէք, բերանկալ, բերանոտ, բերնոց, բերնիար, բերնուց, բերանսիվայր (*Ջղ.* բ'արազվէր, *Ղրբ.* փրսրվրէր), որի հին ձևն է ի բերանս «երեսի վրայ ընկած» Ոսկ. պօղ. *Ա. 403* են են:

Փոխ.—Աղերդի արաբախօս քրիստոնեաների բարբառով peran «բերան» (տե՛ս Բիւր. *1899, էջ 116*):

ԲԵՐԴ, ի-ա հլ. «բերդ, ամրոց» ՍԳր. Բղիշ. Փարպ. Խոր. «ԴՋ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (տե՛ս Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 100). որից բերդակալ *Բուզ.* բերդամէջ *Ագաթ.* բերդարգել *Բուզ.* բերդեան *Բուզ. Փարպ.* բերդնորդ *Բուզ.* բերդապան *ՅԿ. կթ.* բերդաքաղաք *Լաստ. Ուռհ.* բերդատէր *Ուռհ.* միջնաբերդ *ՍԳր.* ներքնաբերդ *ՅԿ. կթ.* վերնաբերդ *ՅԿ. կթ.* բերդամուտ լինել *Սմբ. պատ. 57*:

=Ասորեստ.  bi-ir-ti կամ  bi-ir-tu «բերդ, ամրոց», յգ. birāte «բերդեր» (տե՛ս Strassmaier, Alphabetisch. Verzeichniss der Assyrischen und Akkadischen Wörter, էջ *192* և Delitzsch. Asyrisches Handwörterbuch, էջ *185*): Ասորեստանեան լեզուից փոխառեալ են նաև արամ. בירתא birtā, եբր. בירה birā «դղեակ, բերդաքաղաք», թերևս նաև ասոր. ḥ̣ mərādā, merdā «դղեակ»:

Առաջին անգամ Klaproth, Asia, polygl. էջ *100* համեմատեց պրս. بار bār «պարբնպ», արաբ. burǧ برج և գերմ. Burg բառերի հետ: Դէ նոյնպէս պրս. bār:—Lagarde, Gesamm. Abhd, *64* ասոր. merdā «դղեակ» բառի հետ: — Justi, Beiträge *1, 14* (տե՛ս Lag. Armen. Stud. § *384*) հպրս. vardana «քաղաք» բառի հետ, որ մերժում է Հիւբշ. ZDMG *30, 140*: ասկ. Матер. II *22* գնում է իրանեան բառ և կարծում է գտնել Տաբուրիի argabedh «բերդակալ» բառի մէջ: Հիւբշ. ZDMG *46, 233* Die Semitischen Lehnwörter im Altarm.

թրգմ. Տաշեան, Ուսումն. հայ. փոխառ. բառից. էջ 16 կասկածով լիշում է ասոր. merdā, *որ յայտնի կերպով մերժում է Հիւրշ.* Arm. Gram. *301, p և m ձայնների անհամաձայնութեան պատճառով։ Հիւնք. բուրդ բառից։* Bugge, Lyk. Stud. *1, 37 Լիկայոնիոյ* Πέρτα *տեղանուան մէջ է ուզում տեսնել։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Բ. Խալաթեանց, Բանաս. 1902, 166 և ՀՄ. 1902, 309։— Թիրեաքեան, Կարնամակ, ծանօթ. 35 դնում է ամ-բարա-ակ ձևի հետ։* Patrubány *ՀՄ. 1906, 345—6 արմատակից է դնում բարձր և բերձ բառերին, ինչպէս որ* Solmsen KZ *37, 575 դոթ.* baúrgs, *հդ. հաւքս.* burg *«բերդ» հանում է «բարձրանալ» արմատից. «բերդերը յառաջագոյն լերանց բարձանց վրայ դնուող ամուր վայրեր էին նեղութեան և վտանգի ժամանակ ապաստանելու»։* Karst, *Յուշարձան, էջ 399 ասուր.* birtu, Nieberg *տե՛ս վերը Բարդ։*

ԳԻՒ.—Ալշ. Սչ. բ'երբ, Սկբ. բ'էրց-', Ախց. բ'էրբ, Երև. բ'էոր, Տփ. բիրբ, Սլմ. պեոր, Հճ. բ'եյդ', Մկ. պիրբ։

ՓՈԽ.—Գւռ. Թրք. Կր. pert *«արտի թումբ» (Բիւրակն 1898, 626)։—Պատահական նմանութիւն ունի չիչէն.* berd *«ժայռ»։*

ԲԵՐԹՂԵՂ *«հերարձակ, մազերը թափած». մէկ անգամ ունի Ոսկ. երր. ժա. 504 «լսեցեմք զկառաչ ուրուք, յորժամ զբողոք բառնայցէ ... և ի բերդզեղ շրջեսցի և ցնցոտիս պատեալ»։*

ՆՀԲ «Թերևս գրելի բրդզեղ կամ բրդգրդեր իբրու բրդգզեալ երկայն հերովք կամ գեղեալ գիսովք»։

ԲԵՐԹՂԱՏ *«մի տեսակ անծանօթ խոտ է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 335։*

ՀԲուս. համարում է պրս. արաբ. بارزد bārzad *«չարհոտ, քաղքան», որի վրայ տե՛ս* բարկժատ։

ԲԵՐԻԻՐ *տե՛ս Բերրի։*

ԲԵՐԿՐԻԼ *(-եցայ, -եաց կամ -եա՛) «ուրախանալ, հրճուիլ, զուարճանալ» ՍԳր. Կիւրղ. ղկ. Եղիշ. որից* բերկրական *Ոսկ. ա. կոր.* բերկրութիւն *Պիտ. Նար. Սարգ.* բերկրամն *Փարպ. Եպիփ. խչ.* բերկրել *Խոսր. Նար. ևն։— Բառիս հետ բուռ երևույթի՛ միայն նման են* բարեկրիլ *«բարեկեցիկ լինել» Պիտ. Գր. հր.* բարեկրութիւն *Պիտ. Դիոն. Վրք. հց.* բարեկիր *«ընտանի, բարեբարոյ» Բ. մակ. գ. 31. Ոսկ. ի նեռն. Բուզ! գ. 9 ևն։ Վերջիններիս ծագումն է* բարի+կրել, *իբր Թրգմ. յն.* εὐ-πα-θέω *ձևից։*

Böttticher, Arica *39 կասկածով համեմատում է փռիւգական կասկածելի մի բառի հետ։ Հիւնք. պրս.* پر کردن pur kardan *«լցնել» ձևից։* Karst, *Յուշարձան 403 սումեր.* bibra *«ուրախութիւն»։*

ԲԵՐԿՐԻՃ *«անծանօթ բժշկական մի բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 336։*

+ԲԵՐՉ. *տե՛ս Բառնալ 5։*

Patrubány SA *1, 221 մեղանից փոխառեալ է համարում հունգ.* bérez *«լեռան գագաթ», որ շատ անստոյգ է, քանի որ* բերձ՝ *իբրև առանձին բառ՝ հայերենի մէջ էլ գոյութիւն չունի։*

ԲԵՐՈՎՔԱՅ *«ճանճ». ունի միայն Բառ. հբմ. էջ 54։*

+ԲԵՐՐԻ *(-բույ, -բեաց) «բարեբեր, արգասաւոր, պտղաբեր» Ագաթ. Փիլ. Խոր. Պիտ. Նար. ունինք նաև* բերիւր *Մծբ. 108,* բերրիւր *Մծբ. 102 համանիշները (վերջինը բուռ ՆՀԲ. իսկ բուռ տպ.* բերրի*)։*

=*կազմուած է* բեր- *արմատից (*բերել, բերք*),* -րի, -իւր *անծանօթ մասնիկներով (տե՛ս* բեր*). Համմ.* բերուկ, բերուճակ *և լտ.* fertilis *«բերրի» համանիշները՝ որոնք ծագում են նոյն* բեր=*լտ.* fero *արմատից։*

ՆՀԲ բերիւք լի, *այսինքն* բեր-լի*։ Ե. Գեանջեցեան* ZAPh *1, 58* բեր- *արմատից* -ro *մասնիկով։*

ԲԵՒԵԿՆ *«մի տեսակ սև ու փոքրիկ պտուղ է» Ած. խգ. 11. որից* բեկենի *«նոյնի ծառը, որից պատրաստում են բեհեզի իւղը (ռուս.* скипидаръ*). լտ.* pistacia terebinthus L *(ըստ Արքինեան, Ածաշնչի տունկերը, էջ 19)» ՍԳր. Վեցօր. 101. Եփր. Թգ. 428, 439, նոյն ծառը պարզ* բեւեկն *ձևով ունի Վեցօր. էջ 97. բառիս յետին ձևերն են՝* բեհեկ *Վասկ. 202,* բեղկի, բեպկի՝ *ՀԲուս. § 337. կայ նաև* պեհե-

կրն, *որից կազմուած է* պեեկճակայծակ «*չահաբորբոք ԱՔ (չփոթուած* պակի «*մարխ*» *բառի հետ*)։—*Կայ նաև բատ ՀԲուս. § 3303* բեբեկ «*անծանօթ բուսական մի նիւթ*», *որ չի կարող նախորդից տարբեր բան լինել։*

Հինք. բաւական *բառից. հմմտ. յն.* ἀρκετός «բաւական» *և* ἀρκεσθος «*բևեկրն*»։ *Ուղուրիկեան (տե՛ս ԳԲ էջ 274 և 1405) յն.* պակէ *բառի հետ։*

ԳԻՒ.—Թրք. բ'էվգի, *ՋՔ.* բ'իբիգ, բ'իբգիճէ. *նոյն է նաև Բիւթ.* բեմպիկ. *որից* բեկիմորճ *Իլպ.* «*ուտելի լեռնային բանջար ինչ*»։

ՓՈՒ.—Վրաց. ბელეკონი «*բևեկնի*» *Նա. ա. 30 (ուր հայ բնագիրն էլ ունի* բևեկնի). *որից* ბელეკონის-ფები բելեկոնիս-ծիրս «*բևեկնի իւղ, скипидаръ*»։

Բևեռն, *ի–ա հլ.* «*գամ, մեխ*» *ՍԳր. Ագաթ. Եւագր.* «*երկնքի բևեռը*» *Շիր. 48.* «*շրջանակի կենտրոն*» *Դիոն. ածայ. Մաքս. դիոն. ածայ. և երկ. որից* բևեռակապ *Ագաթ.* բևեռապինդ *Ագաթ.* բևեռել *ՍԳր. Ագաթ. Եղն. Ոսկ.* բևեռիչ *Եփր. Համար.* ոսկերևեռ *Բրս. ընչ.* բևեռաստղ «*բևեռային աստղ*» *Առաք. պատ. 143.* բևեռաճաշ «*գամ հանելու արցան*» *Առաք. պատ. 157.* բևեռնցուցիչ «*կողմնացոյց*» *Առաք. պատ. 458 (այս երեք բառերն էլ չգիտեն բառարանները). Նոր բառեր են* բևեռային, բևեռախոյզ, բևեռագիր, բևեռագրութիւն, բևեռանձև, բևեռագրական, բևեռագէտ։

Հինք. յն. βέβαιος «*առոյգ*» *բառից։ Սանուալճեան, Բաբմ. 1904, 499 յծ հլ.* սևեռ։ Patrubány *ՀՀ 1910, 93 առնս.* bhábhasti «*փշրել*»։ *Մաս* ИАН *1917, 318 կապկտմ.* myar *ևն։* Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 111 կրկնուած է Հնխ.* bhers- «*սրածայր լինել, սրտիլ*» *արմատից՝ իբր* bhe-bhers-ā. *հմմտ. շվեդ.* barr *և նորվ.* bar «*սանդ, ծառի փուշ*», *առնս.* bhṛṣṭi «*սայր, սուր ծայր, եղր*», *մբգ.* borste «*անասունների կոշտ մազերը*», *անգլսք.* brord «*սէղ, նիպակ*» *են ևն։*

ԳԻՒ.—Ոգմ. բ'բվեռ, *Մկ.* պբվէռ, *Ալշ.* բ'իբեռ, *Բլ. Մշ.* բիբեռ, *ՋՔ.* բ'իբեռ, բ'իբէռ, *Հճ.* բ'իբեր, *Վն.* պիպեռ. *բոլորն էլ նշանակում են «բևեռ, գամ, մեխ», միայն ՋՔ. «պայտի մեխ»։*

Բեվկի, Բեվկի *տե՛ս* Պևկէ։

Բեք *կամ* Բէք, *ի հլ.* «*մեծ. 2. աւագ, իշխանաւոր*» *Համամ. քեր. 275. Երզն. և նշ. քեր.* «*ո՞վ, ի՞նչ զարմանալի, ի՞նչ հիանալի*» (*զարմացական ձայնարկութիւն*) *Բր. քեր. 33. Երզն. և նշ. քեր. որից* բահասական «*զարմացական*» (*իբր բա՞ք, բե՞ք ասելու*) *Բր. քեր. 33. Երզն. և նշ. քեր.։ Նոյն բառն է, որ զարձել է Բառ. երեմ. էջ 54* բեոգ «*մեծ*»։

Նշբ Թրք. بك pek «*պինդ, յոյժ*», بيرك berk «*ամուր, պինդ*», بيوك böyük «*մեծ*»։ Lag. Arm. Stud. § *389 պրս.* بخ bax (*միջարկութիւն գովութեան*)։

*ՔՂԱՔ «արու այծ» Մագ. քեր. 240 և Երզն. քեր.։

=Պրս. بز buz «*այծ*» *բառի* بزك buzak «*այծիկ*» *նուագականից. բուն հայ ձևը տե՛ս.* բուծ. *հմմտ. ասոր.* ṣbzqā «*փոքր խոյ, aries parvus*» (Brockelm. *35*), *որ նոյնպէս պարսկերէնից է փոխառեալ։—Ա՛ճ.*

Նշբ «որպէս պրս. պիւզ»։

⊙Բղղալ «*ճանճի, մեղուի և նմանների ձայն հանելը*» *Մագ. Քզ. 132. որ և* բզզել *Ոսկ. յհ. ա. 28. որից՝* բզզաճ, բզզումն *Շնորհ. Քզք. բզեզ Վեցօր. 162. Վստկ. 76. կամ* բզիզ *Կանոն. Մագ. Քզ. 214, 215 (իբր բզզացող միջատ),* բզզիւն *(նոր բառ)։*

=Բնաձայն բառ, որ կազմուած է արմատական բզ *ձայնից. զ-ի կրկնութեան համար հմմտ.* ոզզալ, խզզալ, վզզալ, *ինչպէս որ ունինք նաև* վշշալ, խշշալ, բշշալ, ֆշշալ *են բնաձայնները։ Նոյնպիսի բնաձայն բառեր են նաև անգլ.* buzz «*բզզալ*», buzzer «*փսփսացող*», *վրաց.* ბზზუი վբզուի «*բզզալ*» *են, որոնց ո՛չ մէկը կապ չունի հայերէն բառի հետ։—Ա՛ճ.*

Ինճիճեան, Հնախ. Գ. 22 և ՆՀԲ բզեզ *բառը մեկնում են՝ առաջինը զ բնաձայնից, երկրորդը՝* բզզալ *բառից։ Հինք. բոլորն էլ* բնչել *բառից։ Վերի մեկնութիւնը տուած եմ նախ ՀԱ 1899. 233 բ, ուր* բզեզ *բառի նախաւոր ձևը համարել եմ* *բիզբէզ. *այս վերջինը ասելորդ է։ Մաս,*

Վրդն. առ. I, էջ 422 ցեղակից է համարում ասոր. ܚܒܫܫܬܐ xabšūštā «բնդեղ», *իսկ* ИАН *1918, էջ 2076 վրաց.* ბუზი բուզի «ճանճ»։

Գիհ.—Մրզ. Ջղ. Տփ. բզզալ, *երև. Մշ.* բըզալ, *Սեբ.* բ'զալ, *Համշ.* պզուշ, *խրբ. Մկ. Պլ. Սչ.* բզբզալ *(իսկ Զթ.* բ`բզբ`բզօլ *գործածւում է «ջրի ծորալ» նշանակութեամբ).—Մշ.* բզեզ, *խրբ.* բ'զեզ, *համմտ. Ալշ.* դզալ, դզեզ *են, Աստանայի Բրքախօս հայերն էլ ունին* բզեզ ձևը՝ *նոյն նշանակութեամբ։—Նոյն* բզ *ձայնով կազմուած նոր բնաձայն բառեր են՝* բզզան «հոլ», բզզացնել, բզզոց, *որոնց դէմ ունինք նաև* պզզալ, պզպզալ, պզզոց, պզպզոց *են։*

Փոխ.—Բրք. գւս. Կր. pzez «բզեզ» *(Բիւր. 1898, էջ 626)։*

**ԲԶՐԿԱՏՈՒՆ կամ* ՊԶՐԿԱՏՈՒՆ «մի տեսակ բոյս է. psyllium, herbe aux puces» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 339 և § 2540։*

=Արար. بزرقطونا bizr-i-qatūnā, *որ նոյն բոյսի սերմն է նշանակում (հայերէնն էլ ամէնի՛ւ իմաստով է գործածուած), որից փոխառեալ է նաև ասոր.* ܒܙܪܩܛܘܢܐ brzqtūnā «plantago psyllium L» *(տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 867 և Գ. 577, Շեմսընշնալդէր* WZKM *11, 316,* Brockelmann, Lex. syr. *46, 492)։—Ա՛ճ.*

Ուղիղ մեկնից նախ Աճառ. (անտիպ), նոյնը յետոյ Նորայր ՀԱ 1924, 547։

**ԲԶՐՈՒԿ «մկնականջ կամ սամուխ կոչուած բոյսը» Գաղիան. Բժշ. ունին միայն ԱԲ և Հայբուսակ § 340. վերջինը համարում է մերթ «alsine» և մերթ «alopecurus». սխալմամբ գրուած է նաև ագրուկ ԱԲ։*

=Արար. بزر bazr *կամ* bizr *բառի նուազական ձևից (հմ. -ուկ մանրիկով). այս բառը նշանակում է «սերմ». բայց նոյն բոյսի վայրի տեսակը (կամ ա՛յնպէս համարուած) և յատկապէս նրա սերմը կոչում է արար.* بزرقطونا bizr-i-qatūnā. *Համմտ. ՀԲուս. § 340 և § 1559. տե՛ս և նախորդը։—Ա՛ճ.*

Որովհետև Գազիանոսում գրուած է բզրկի տուտն և *լտ.* alopecurus *նշանակում է բուն «աղուէսի պոչ», ուստի ՀԲուս. § 340 հետևցնում է թէ «բստ այսմ բզրուկն էլ «աղուէս» պիտի նշանակէր»։*

**ԲԷԵԳԶԵԲՈՒԼ, ա հլ. «սատանայապետ, դևերի իշխանը» ՍԳր. որից նաև Նար. Լմբ. ժղ. գրուած է նաև պէլզէպուպ Մծբ. 388,* բեհեղզեբուղ, բեզզեբուղ *են. կրճատմամբ* զեբուղ *Տաթև. ամ. 70.* բազու *Վրդն. առկ. 43. Հոլովումը ցոյց է տալիս, որ իրր յտ. անուն է գործածուած։*

=Եբր. בעל זבוב be'elzebub, *որ բուն նշանակում է «ճանճերի աստուած» և փղշտացոց աստուածներից մէկն էր։ Ենթադրուած է թէ այս բառը մեկնել կամ կարդացել են* בעלזבול be'elzebūl, *որ նշանակում է «աղտեղութեան կամ աղբի աստուած» (չարամիտ բառախաղ!). Համմտ. արար.* زبيل zabīl *(ամհ. zibil) «աղտեղութիւն, աղբ»։ Ըստ այսմ աստղաբանական է յն.* βεελζεβούλ, *որից էլ հայերէն ձևը։ Յունարէնից է նաև վրաց.* ბელზებული ბელზებულო «չար ոգիների պետը», *որից* გამბელზებელი գամբելզեբելի «մոլեգնել, դիւահարիլ», *իսկ եբրայականից կամ ասորականի՞ց է արար.* بلز belez «սատանայ» *(Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 162)։*

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։

Գիհ.—Սեբ. բ'էզեբ'ուղ «շատ ագէտ»։

**ԲԷԹ «հեղուկների մի չափ է». մէկ անգամ դանում եմ գործածուած Անկ. գիրք հին կտ. էջ 83 «և տային մեզ հանապազ գրուանս ցորենոյ երկերիւր և ձիթոյ չափ՝ բէթս հինգ հարիւր (ապ. շափքէթս) և գինւոյ հազար և հինգ հարիւր»։—Նոյն բառը դանում ենք նաև կիւրղ. Թգ. «Բեթսեայ իւղոյ մզելոյ. բեթն չափ իմն է մզելոյ, զի մի՛ ոք համարիցի թէ գպաղոյն ասիցէ և ոչ զձիթոյն»։ (Հեղինակը ուղում է ասել թէ բէթը հեղուկների՛ չափ է և ո՛չ թէ հատատուն մարմինների. բէթ բառը գործածուած է, ասում է, հատկացնելու համար թէ խնդիրը ձէթի մասին է և ո՛չ թէ ձիթապտուղի. որովհետև ձիթապտուղը՝ իրր հատատուն մարմին՝ կարելի չէր բէթ հեղուկաչափով կշռել։ Այս բոլորը նրա համար է, որ եբր.* zait *նշանակում է ո՛չ միայն ձիթապտուղ, այլ և՛ ձիթենի, և՛ ձիթափուղ. բուն նշա-*

նակութիւնը կողքի բառերից միայն կարելի է հասկանալ)։

= Եբր. בַּת bath, *որ մի տեսակ հեղուկաչափ է. մեր բառը յառաջանում է յն.* βαίθ *տառադարձութիւնից. համմ. Գ. Թագ. 5, 11* εἴκοσι χιλιάδας βαὶθ ἐλαίου κεκομμένου, *որ ունի նաև* βεθ *տարբերակը. (հալերէնում այս բառը թարգմանուած է* սափոր. «Քսան հազար սափոր իւղով մզկոյթ»)։ Յոյն բառը գրւում է նաև βάτος, βάθος, *բայց չկայ բերսեպոլիսեայ ձևին համապատասխանող մի ձև (*Sophocles *303 բ)։— Աճ.*

Նշ Բ և նրան հետևելով ԱԲ, չունենալով Անկանոն գրոց վկայութիւնը և չհասկանալով կիւրեղի բացատրութիւնը, բեր մեկնում են «իւղ մզեալ, քամած ձէթ»։ Վերի մեկնութիւնս տե՛ս իմ Հայերէն նոր բառեր հին մատեան. հա. Բ. էջ 225—226։

ԲէԺ *(սեռ.* ի, *դրծ.* ով*) «վարագոյր» ճարտնտ. Ա և Բ (բստ Նշ Բ, որոնցից երկրորդում գրուած է նաև վէժ). հինգ անգամ գտնում եմ գործածուած Կաղանկատուացու մօտ՝ հրտր. էմինի, էջ 46, 57 (երեք անգամ) և 58. համմ. նաև* վիժակ։

ԲԷԼ *«կնքահայր». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 146 «Զհոգևոր հայր կնքահայրն, որ է* բէլն»։ *Նոյն բառն է, որ այժմ էլ գործածական է Երև.* բ'էլ *(Վաղարշապատ, Օշական, Աշտարակ), Գնձ. պէլ և Ղրբ. պէ՛լի ձևով՝ նոյն նշանակութեամբ։*

= Քուի թէ *հֆրանս.* baile *«դայեակ, խնամակալ» բառն է, որ միջին հյ. տուել է պայլ (տե՛ս այս բառը). դժուարութիւն է յարուցանում միայն նախաձայնը, որի դէմ սպասելի էր բարբառներում բ և ոչ թէ Երև. բ', Գնձ. Ղրբ. պ։— Աճ.*

Բառիս ստուգաբանութիւնը թելադրել է ինձ Դաւիթ Անանուն։

*ԲԷՀԱՊԱՐ *«անգէտ, անտեղեակ» Կոստ. երգն. էջ 130, 131։*

= Պրս. بیخبر bēxabar *«անտեղեակ»։— Աճ.*

Տե՛ս իմ Բուրբերէնէ փոխառեալ բառերը, էջ 289։ Նոյնը Պատուրեան, Հրտր. Կոստ. երգն. էջ 45։

*ԲԷԿ *«իշխան». յաճախ է պատահում յիշեալ մատենագրութեան մէջ։*

= Թրք. بك beg, *օսմ.* bey, *կիրգիզ.* biy, *ալթայ.* piy, *«իշխան». սրանց զանազան աստիճանների և պարտաւորութիւնների և իրաւունքների մասին տե՛ս* Будаговъ *1, էջ 263—5։*

Ուղիղ մեկնեց նախ Նշ Բ։

ԲԷՁ *կամ* ԲԷՉ, ի–ա *հլ. «կռնակ, քամակ» Ոսկ. ճառք 801 (սեռ.* բիճաց*), Վստկ. 198 (սեռ.* բեճին*), Մարքին. Մխ. բժշ. 4 (սեռ.* բիճին*). «Բարձր մասն ի քիկունս սանտեր ոստայնանկի, ընդ որ կալեալ ձգէ առ ինքն և հարկանէ» Կանոն. «կռնակի ոսկոր կամ քի՝ որով հմայութիւններ են անում» Տաթև. հարց. 388. որից* բիճճայեաց *«բէճով հմայող» Վահր. յայտ.։*

Klaproth, Asia polygl. *էջ 104 ոսս.* plečo, *սլաւ.* pleč *«ուս» բառի հետ։ Նշ Բ յիշում է վրաց.* բեճի *և պրս.* pušt *«կռնակ»։*

Գիմ —Զք. բ'էջ, *Ալշ. խրբ. Տիգ.* փէջ *(նաև Մշկ. Քղի) «ուս» (Ալշ. յգ.* փիջվան*), Մկ. Զրս. «կռնակ», Բլ. «ուսոսկր», Տր. «ոստայնանկի սանտր», Համշ. «ջուլհակի գործիքի այն մասը, որ պարունակում է տֆանները և սանտրը», Լ. «ոչխարի քիակոսկրը՝ որով հմայում են». կրկնութեամբ էլ ունինք Ախց.* մէչկ ու բ'էչք *«մէջքն ու կռնակը»։*

Փոխ.—վրաց. ბეჭი բեճի *«ուս, քիկունք, կռնակի ոսկոր. 2. ոսկոր՝ որի վրայ գրում են իբրև քարեսախտակ»,* ბეჭვა բեճվա *«հիւսուածքի թելերը ոսկորէ դանակով ամրացնել», ուտ.* բmծmն *«կռնակ»,* բmծmնկոծ *«կուզ»,* բmծmնղ'արի *«ծոյլ».—վրացերէն բառը ցոյց է տալիս, որ մեր կրկին ձևերից ուղղագոյնն է* բէճ։

*ԲԷՇ *կամ* ԲԻՇ *«մի տեսակ բժշկական խոտ է» Բժշ. գրուած նաև* պէշ, պիշ. *ունի միայն ՀԲուս. § 341։*

= Պրս. بیش bēš *կամ* bīš. *պհլ.* beš. *պարսկերէնից տառադարձուած է արաբ.* بيش bayš, *բոլորն էլ նոյն նշ. տե՛ս ԳԴ, էջ 442 բ. և 292 ա, Կամուս Թրք. Թրգմ. Բ. 314 և Շեայնշնայդերի հաւաքածոյի մէջ՝* WZKM *11,*

322, որոնց տուած նկարագրութիւնը ճիշտ նոյն է, ինչ որ Հայբուսակի նկարագրութիւնը։ ՀԲուս. § 341 համեմատում է Բէյթարի بيش ձևի հետ։

*ԲԷՇԿ ՄՇԿՈՅ «մկան նման մի կենդանի է» Խոր. աշխ. 615 (ՆՀԲ մեկնում է «մուշկ արտադրող կաւոր»)։

=Պհլ. beš-mešk՝ նոյն անասունն է, որ յիշուած է մուշկ արտադրող անասունների մի շարքի մէջ. պրս. بیش موش bēš-mūš «մկան նման մի կենդանի է, որ բէշ կոչուած թունաւոր խոտի տակ է բնակում և որի միսը նոյն խոտով թունաւորուածներին իբր հակաթոյն է ծառայում». ասոր. ܒܫܡܫܟ bēšmūšk նոյն նշ. իրաննան բառը ծագում է bēš «բէշ խոտը» + موش mūš (պհլ. mešk, բելուճ. mūšk) «մուկ» բառերից։—Հիւբշ. 196։

ՆՀԲ մեկնում է պրս. پوشک pūšek «կաւոր» և مشک mušk «մուշկ» բառերից։ Ուղիղ մեկնութիւնը տուել են միաժամանակ Պատկ. Арм. reorp. 80 և Lag. Symmicta 91, որ սակայն ինքը չէ ընդունած Arm. St. § 390։ Müller WZKM 8, 185 տեսնում է պրս. اش بچکان բառի մէջ։ Նորայր ՀԱ. 1925, 407 հա՛յ բառի ձևը սխալ գտնելով՝ սրբագրում է բուն պարսկերէնի՝ բիշմուշ. (բայց պէտք չէ առնել պարսկերէնը, այլ պահլաւերենը, որով դոնէ վերջին կ ձայնը արդարանում է)։

*ԲԷՇՄԱՐ «անթիւ, անհամար» Կոստ. Երզն. էջ 131։

=Պրս. بیشمار bēšumār «անհամար». կազմուած է bē- բացասականով՝ šumār «համար» բառից։

Ուղիղ մեկնեց Պոտուրեան, Հրտր. Կոստ. Երզն. էջ 45։

*ԲԷՈՒՄԻԷՏ «անյոյս». Կոստ. Երզն. 178 (գրուած է պէումէտ)։

=Պրս. بی‌امید bēūmīd նոյն նշ. կազմուած է bē- բացասականով՝ ūmēd «յոյս» բառից։

Ուղիղ մեկնեց Պոտուրեան, Հրտր. Կոստ. Երզն. 203։

*ԲԷՋԱՐԱՅ կամ ԲԷՋԱՐԱՅ «խեղճ, թշուառ» Սալաձ. «Բարձուեննիկին դոյնն է պակաս, հոտիկն անուշ է բէշարուն»։

=Պրս. بیچاره bēčāra «անճար, թշուառ, խեղճ». կազմուած է bē բացասականով՝ čāra «ճար, ճարակ» բառից։

ՀԲուս. § 343 սխալմամբ դնում է բէշար կամ բէշար «մի տեսակ ծաղիկ»։ Ուղիղ մեկնեց Նորայր, Բանաս. 1901, 128 և ՀԱ. 1921, 108։

*ԲԷՍԻՖԱԹ «աներես, տձև». գործածւում է միայն չետին դարերի գրականութեան մէջ. ինչ. Կոստ. Երզն. էջ 82, 91։

=Պրս. بی bē- բացասականով + արաբ. صفت ṣifat «հանգամանք, կերպ, ձև, ոմկ. դէմք, կերպարանք»։

Ուղիղ մեկնեց Նորայր, Կոստ. Երզն. էջ 192։

*ԲԷՎԱՖԱՅ «անհաւատարիմ, անվստահելի» Կոստ. Երզն. (ԺԹ դար, տպ. Վիեննա 1905), էջ 157։

=Պրս. بی bē- բացասականով + արաբ. وفا vafā «հաւատարմութիւն, վստահութիւն»։

Ուղիղ մեկնեց Նորայր, Կոստ. Երզն. 45։

ԲԷՏ կամ ԲԵԹ «հաստ կամ մեծ». ունի միայն Բառ. երեմ. էջ 52, 54. գործածական է այժմ էլ Ագ. Բլ. Լ. Խ. Մկ. Նր. Շտ. Վն. բէդ կամ պէտ, Ալշ. Մշ. բ'էդ ձևով և «մեծ, խոշոր» նշանակութեամբ, որից պէտանալ «խոշորանալ, մեծանալ», պէտրնտիր, պետապէտ, պէտոսկոր, պէտուճէմ, պէտիլ, պէտմամ «մեծ մայր» ևն։ Աւելի հնից ունինք Թղթկրր. 37. «Աչերդ է թուխ ու պէտ»։ Երկու ձևերից աւելի հարազատն է բէտ և ո՛չ թէ պէտ, ինչպէս ցոյց է տալիս Ալշ. բէտ=Նբ. բէդ։

Ուստի կապ չունի հյ. պետ «մեծաւոր, իշխան, պետաւոր» բառի հետ։

*ԲԷՏԱՐ «արթուն» Կոստ. Երզն. 156 (Յարթուն կացիր ի յաշխարհիս, բէտար կացիր)։

=Պրս. بیدار bēdār, bīdār «արթուն»։

Պոտուրեան, Կոստ. Երզն. 45 դնում է արաբ. բէտէր «ուրախ, զուարթ», որ մերժելով Նորայր՝ անդ, էջ 192, տալիս է ուղիղ մեկնութիւնը։

ԲԹԱԿ «անծանօթ բուսական մի նիւթ է». Բժշ. ունի միայն ՀԲուս. § 344։

*ԲԹՈՒԻ *«կոյս». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մաշտ. 59 «Բրթուլ բոլոր անձամբ»։

= եբր. בְּתוּלָה bətūlā և արաբ. بتول btūl (կարդացւում է butūl) «ազամարդկանցից բոլորովին կտրուած, ցանկական զգացումներից հեռու ապրող կոյս» (ըստ Կամուս, թրք. Բրգմ. հտ. Գ. էջ 138 այս անունով է կոչւում յատկապէս Ս. Կոյս Մարիամը)։— Աճ.

ԲԺԻԺ, ի–ա հլ. «փոքր զանգակ, որ անասունների վիզն են կախում կամ կանայք իրենց ոտքերին են կապում» Ջքր. սարկ. Ա. 27, 74. այս նախնական իմաստից է յառաջանում բժիժ, ո հլ. «կախարդական համակեակ, տլիսմ, յուռութք» Վրք. հց. Գնձ. որ և բժուժ Ոսկիփ. (իմաստի զարգացման համար համմտ. եբր. מְצִלָּה məṣillā «իբրև բրժժանք՝ ձիերի վիզը կախուած փոքր զանգակներ»). այս արմատից են բժժանիք «կախարդանք, յուռութք» Բ. մակ. ժբ. 40. Եւս. քր. Ոսկ. ա. թես. բժժագործութիւն «վհկութիւն» Շնորհ. թղթ. բժժագործ «կախարդ» Վրք. իգն. 154։ Բառիս երրորդ ձևն է բուժուժ «փոքրիկ զանգակ» Առաք. պտմ. 371։ Արդի գրականը գիտէ միայն բուժուժ «զանգակիկ», որի փոխաբերական նշանակութիւնն է «մեռաքսի խողակ» (ձևի նմանութիւնից առնելով)։

ՆՀԲ և սրա հետ ԱԲ՝ հանում են բոյժ բառից։ Ալիշան, Հին հաւ. 381 բիժ կամ բոյժ բառից։

ԳԻՒ.—Ագլ. բիւժիւժ «զանգակիկ», Սրև. բ'օժօժ, բ'օժ «շերամի բուժուժ», Մրզ. պրժօժ «շերամի բուժուժ», Ոզմ. բ'ուժ «շերամի բուժուժ». նոր բառեր են բուժուժաման «շերամի բուժուժների հաւաքում», բուժուժիլ «բացախելով՝ թթուելով վրան պղպջակիններ ձևանալ»։

ՓՈԽ.—Վրաց. ბოყი բուժի «շերամի բուժուժ», որ Ջուբինով[2] 113 համարում է հայերէնից փոխառնալ։ Այս ձևը, ինչպէս նաև Սրև. և Ոզմ. բուժ թւում են ցոյց տալ, որ բառիս բուն արմատն է բուժ, որից կրկնուած է բուժուժ. համմտ. փաթաթել, պատատել են։

*ԲԹԻՇԿ, ի–ա հլ. «բժիշկ, հէքիմ» ՍԳր. եղն. որից բժշկել ՍԳր. Ոսկ. յհ. ա. 16. բժշկիչ եղն. բժշկութիւն ՍԳր. բժշկարան Ագաթ. Ոսկ. Սրբ. և մ. բ. 7. բժշկանոց Ոսկ. տիմ. և եփես. բժշկապետ Կոչ. նախաբժիշկ Յայտմ. բժշկուհի (նոր բառ)։

= Պհլ. 𐭱𐭦𐭱𐭪 bižišk, bijišk «բժիշկ», bijiških «բժշկութիւն», նորագիւտ մանիք. պհլ. בזישך bzišk «բժիշկ» (Salemann, Manich. Stud. ЗАН 8, 61), պրս. بزشک bizišk կամ بجشک bijišk «բժիշկ». սրանց հետ համմտ. զնդ. baeŠazyeiti «բժշկում է», 𐬨𐬀𐬉𐬱𐬀𐬵𐬌 baēšaza- «բուժիչ, բժշկութիւն, դեղ, դարման» (որից կազմուած է պհլ. bēšazak). 𐬨𐬀𐬉𐬱𐬀𐬵𐬌𐬎 baēšazya- «բժըշկող», սանս. भेषज bhēšajá- «դեղ, բժըշկող», bhišajyáti «բժշկում է», bhišáj «բըժիշկ, դեղ», bhišák «բժիշկ», bhēšajyá- «բուժարար»։ Այս բոլորը ծագում են զնդ. biš=սանս. bhiš- «դեղ» բառից, ըստ Bartholomae 915, 966—7։ Բառիս հպրս. ձևը յայտնի չէ. եթէ ի նկատի առնենք սանս. ձևերը՝ պիտի ունենայինք հպրս. *bišaj կամ *bišaž, իսկ եթէ ի նկատի առնենք զնդ. ձևերը՝ պիտի ունենայինք հպրս. *bišaz։ Պհլ. բառի հնագոյն ձևն էր *bišajk կամ *bišažk, որոնց մէջ երկրորդ ձայնաւորը հետևելով առաջինին և š բաղաձայնը հետևելով j, ž բաղաձայններին, յառաջացան bijišk և bižišk. վերջինից է հայերէնը։ Կապ չունի բոյժ բառի հետ, որ ունի սանսկրիտեան։—Հիւբշ. 120։

Ուղիղ մեկնութիւնը առաւ նախ Գ. Ղեռոյ ՆՀԲ։ Peterm. 17, Windisch. 15, Böttticher ZDMG 1850, 352 եւն։ Մառ ИАН 1920, 107 մինգ. մուրիցից «առաջող» բառից։

ԳԻՒ.—Ագլ. բժիշկ, բժշկիլ, Տփ. բժշկիլ, Սրև. բ'ժիշկ, Ոզմ. բ'ժշկիլ, Խրբ. բ'ժշգիլ, Մրզ. պիժիշկ, Տիգ. փժիշգիլ են։

ԲԻՒՐ «մի տեսակ ժժմակ. ածկ. խաբելէբ. ֆր. murex». ունի միայն ԳԲ (աղբիւրն է Քաջունի, հտ. Գ, էջ 37)։

ԲԻԲ, ի–ա հլ. «աչքի մէջտեղի սև կէտը» ՍԳր. Ագաթ. եղն. Ոսկ. յհ. ա. 25. լայնաբար նաև «ակնակապիճ, աչքի ամբոխ, ամբողջ ներքին մասը, որ կոպերով ծածկուած

է» Համ. աղ. Վրք. և վկ. Ա. 578, 566, Բ. 445 (ՀԱ 1911, 368). իսկ բիբք լսելեաց Զգօն, էջ 363 սխալ թրգմ. ասորականի՝ ըստ Վարդանեան ՀԱ 1921, 241. որից բբջիլ, բբջջիլ «աչքերը այս ու այն կողմ դարձնել» Պիտ. 471։

Peterm. 37 լա. pupa, pupilla «բիբ» բառերի հետ։ Windisch. 15 լա. pupillus «բիբ»։ Lag. Urgesch. 827 ասոր. ܒܒܐ bāwā «բիբ», որի հետ Lag. Arm. Stud. § 393 մի անծանօթ կապակցութիւն է ընդունում։ Bugge KZ 32, 11 համեմատում է կապադովկ. παπαῖδι «բիբ» բառի հետ, իսկ էջ 32 կցում է հլ. բիբել, բբել բառերի հետ. համմտ. անգլ. peep «բրչել, ճռուողել և նայիլ»։ Հիւբշ. 301 յիշում է նոր. בבה bāwā, ասոր. ܒܒܐ bawbā «բիբ» և նրանց նմանութիւնը պատահական է դանում։ (Սրանց վրայ կարելի էր ուշադրել նաև արաբ. بوبو būbū, պրս. ببک babak, թրք. بیبک bebek, արևել. թրք. بیبک bebek, بیبیک bibak, بوبەجیک bubejik, ն. ասոր. bibilt'ə, վրաց. ბაბა բաիա համանիշները, որոնց բոլորի նմանութիւնը հայերէնի հետ՝ պատահական է)։ Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 48 համեմատում է մի խումբ բառերի հետ, որ կլորակ բաներ են նշանակում. ինչ. սանս. bimba, լիթ. bamba «գնդակ», շվէդ. bobba «միջատ», bopp «սաինք», լապ. bibili «սանիկ»! են։ ԳԻՒ.—Նախ. բիբ, Ալշ. Ախց. Խրբ. կր. բ'իբ', Տփ. պի'պիկ, Տիգ. փիփ, Մկ. պպուկ։

ԲԻԲԻ տե՛ս Բրկի։

ԲԻԲԻ «է թռչուն ինչ յազգէ բաղէից. աճկ. գուգու գուշու». ունի միայն ՓԲ՝ առանց վերկայութեան։

ԲԻԲԿԱՆ. անծանօթ բառ, որ գործածուած է բժշկարանի մէջ՝ հետևեալ ձևով. «բիբկանի խէժ արա և ի կերակուրն խառնէ». թերևս բևեկնին է՝ ըստ ՀՌուս. § 346։

*ԲԻԲՂՈՍ, ի–ա հլ. «եգիպտական պապիրոս, որ իբր թուղթ էր գործածւում, լայնաբար՝ մագաղաթ, թուղթ, գիրք» Պտմ. աղէքս. 10։

=Յն. βίβλος, βύβλος «մի տեսակ եգիպտական բոյս, որ գիտական անունով կոչւում է cyperus papyrus L. այս բոյսի ցողունն ու արմատները ուտում էին աղքատները. թելերից պատրաստում էին չուան, առագաստ, փսխաթ, կողով, կօշիկ ևն, տերևները գործ էին ածում իբր թուղթ գրելու համար, որից էլ յառաջացաւ լայնաբար՝ թուղթ և գիրք նշանակութիւնը». կարծում են թէ յոյն բառը ծագած է փիւնիկեան Βύβλος քաղաքի անունից, որ ըստ փիւնիկեացոց կոչւում էր Gəbal, այժմ Jebeil. (տե՛ս Boisacq 119, Bailly 382). այս բառից է βιβλίον «Սուրբ Գիրք, Հրէից Աստուածաշունչը», որ փոխառութեամբ տարածուել է գրեթէ բոլոր եւրոպական լեզուների մէջ։— Հիւբշ. 344։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*ԲԻԹԻԿՉԻ «գրագիր, քարտուղար» Մաղաք. ար. էջ 45։

=Թթր. بیتکچی bitikči «քարտուղար». արմատն է بتک bitik, չագաթայ. بیتیک bitik, ալթայ. پچک pičik, ույղուր. մոնգոլ. մանջուր. كدب bidik «գիր, գրուածք, նամակ, գիրք» (Будаговъ 1, 242), որից էլ ունինք արդի բարբառներում՝ նր. բրիկ, Շիր. փիրիկ «կախարդական գիր»։

Ուղիղ մեկնեց Պատկ. Հրաբ. Մաղաք. ար. էջ 64։

ԲԻՉՈՆ «փոփոխումն». ունի միայն Բառ. երեմ. էջ 55։

*ԲԻԺ, ո հլ. «աչքի կեղտ, ճիպոտ» Եզն. 36ճ. Ճառընտ. լայնաբար նաև «բիծ, ժանգ» Համամ. առակ. որից բժաբեր Ոսկ. մ. ա. 2. բժոտ Առաք. մոլ. Տաթև. ձմ. խթ. բժոտիլ Մագ.։

=Պհլ. *biž «բիժ», որ թէև գրականութեան մէջ աւանդուած չէ, բայց նոյնը հաստատում է պրս. بیژ biž «աչքի կեղտ, բիժ, ճիպոտ» (որ և پژ paž)։— Հիւբշ. 121։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ԳԴ. բայց այս մեկնութիւնը ո՛չ ՆՀԲ գիտէ և ոչ Lagarde. եւրոպացիներից առաջին

անգամ ուղիղ մեկնեց Հիւբշ. ZDMG 35(1881), էջ 657։

Գիտ.—Սլմ. բիժ «ճիպոտ», վն. բժ̃ա «ճրպռատ»։

Բիլ «մի տեսակ ձուկ է». մէկ անգամ գործածում է Ստեփ. սիւն. քեր. էջ 208 (որից և Երզն. քեր.) հետևեալ հատուածի մէջ, որ բերում եմ ամբողջովին. «Իսկ առասական է, այսինքն, տեսակաւոր անուն, որ զհասարակական ինչ էութիւն ասէ, որպէս մարդ կամ ձի կամ ոչխար կամ արջառ և այսպիսիք ամենայն աղգ կենդանեաց, ածականաց և անուանից։ Եւ վասն այնորիկ ասէ հասարակական զայսոսիկ, զի ի սոցանէ բաժանին մի մի անհատ գոյացութիւնք՝ Մարկոս, Ադամ, հայր, որդի, Թոռն, խնձորի, տանձի, մանուշակ, շուշան, ալիփին, սղոցն, գալն, լոքն, բիլն, կապոյտն, ովկիանու։ Իսկ տեսականաւ իմն այս ի բազումս կոտորի, որք են առասականք. և այսք են տերն. կենդանի, տունկ, բոյս, ոչ կենդանի, ածական, անուն, ցամաքային, ջրային, երկնային, հրային, օդային, թևաւոր, թռչուն, գազան, չորքոտանի, սողուն, լուղակ, զեռուն, խոտաբուծ, ձեռնարկել, վայրենի, քանզի ամենեքին սոքա ի բազում տեսակս բաժանին, զորս առասական ասէ»։

ՆՀԲ մեկնում է բառս «բաց կապոյտ» և սրանից է հանում պլուզ կամ բլուզ (վերջին ձևը գոյութիւն չունի) և համեմատում է իտալ. blù «կապոյտ», թրք. buludī «ամպագոյն, կապոյտ» բառերի հետ։ Աւելի խոհեմ է ՋՔ, որ գնում է «թուի բացագոյն կապուտակ»։ Երկուսըն էլ հատատարապէս սխալ են։ Վերի հատուածում գոյների մասին խօսք չըկայ բնաւ, այլ բոյսերի և կենդանիների։ Հեղինակը շարում է նախ մարդկային սեռի անուններ, յետոյ բոյսեր և յետոյ ձկներ. այսպէս ձկան անուն են յայտնապէս՝ դլփին, սղոց (սղոցաձուկ), լոք (այժմ լոքօ) և կապոյտ. ձկներ պէտք է լինին նաև դալ և ովկիան բառերը և մանաւանդ բիլ, որ երկու ձկների միջև է գտնւում։ ՆՀԲ շփոթուել է կապոյտ բառից՝ առնելով գոյնի իմաստով, որին հետևել են դալ «դալար», լոք «կարմիր»։—Այս պատուական մեկնութիւնը ընդօրինակեցի ինձ մեր համալսարանի դասախօսներից՝ հայագէտ Մանուկ Աբեղեանից։

Բիծ, ի, ի–ա, ո հլ. «մարմնի վրայ արատ կամ նշան, պակասութիւն, սխտ, սղտեղի գործ» Թուց ԺԲ. 2. Կող. գ. 5. Ոսկ. յհ. բ. 25. ա. 19 և Կողոս. «լուսնի կամ արևի վրայի սև նշանները» Բրս. մրկ. «մարմնի վրայ բշտիկ» Նար. կԲ. էջ 177. «խնդիր, վէճ, վէճի նիւթ» Եւս. պտմ. «կեղտոտ, պիղծ» Կոչ. Փիլ. այլաբ. որից բիծ դնել, բիծս կարկատել կամ ի բիծ տանիլ «մեղադրել, վրան յանցանք բարդել, փտնել» Սիր. ժա. 33. Կորնթ. ևփր. եվ. Ոսկ. մաթ. և երբ. ամբիծ «մաքուր» ՍԳր. «Թաղման կարգ և այս առթիւ կարդացուած մի սաղմոս» Մաշտ. 543 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեն. Բ. էջ 21). ամբծութիւն ՍԳր. բազմաբիծ Գառն. 20. ճառընտ. Նար. բծել «մեղադրել, դատապարտելու մի բան գտնել» ևփր. համար. 242, Բ. գ. կոր. 109, բծկան Բ. պետ. բ. 13. բծկանութիւն Կոչ. 36. բծամիտ 34. կաթ. բծաւոր կլիմաք. լմր. խծրիծ Եւս. պտմ. Եւագր. բառիս երկրորդ ձևն է փիծ, որի վրայ տե՛ս առանձին։

Böttticher, Rudimenta 50, 192 պրս. بيسه pīsa «պիտակաւոր» բառի հետ։ Տէրվ. Նախալ. 93 պիղծ, փիծ բառերի հետ՝ հալ. պէգր, լտ. pingere «նկարել», սանս. piṅj. pingala «դորշ», իրր հնխ. pig «ներկել» արմատից։ Հիւնք. բիժ բառից։ Մառ, Արաքս 1890 ա, էջ 109 պիղծ բառին է կցում և երկուսը միասին սեմական է համարում. համմտ. ասոր. բիշ, արաբ. բահսա։ Նոյն, ЗВО 18, 168 բիծ=վրաց. բիծի=յարեթթական փինցի=վրաց. փինցի=արաբ. بَيْس baisa «վատացաւ», եբր. בָּאַשׁ bāʾš «վատ, յոռի», ասոր. حاما bāšā «չար, պիղծ», բոլորն էլ մի արմատից։ Նոյն, ЗВО 25, 36 խալդ. pitu-le=բիծ։ Karst, Յուշարձ. 424 հյ. պիսակ, պէս, ալբայ. bič, bis, bit, bes «նշան, դրոշմիւն, զարդարել», չաղաթ. bet «կերպա-

բանք»։ Թիրեաքեան, Բառմ. 1913, 339 պիս(ակ), սպի, փիծ, պիծ, պիղծ *բառերի հետ՝ կցում է բրք.* փիս *բառին։*

ՓՈԽ.—Վրաց. ბიწი բիծի *«պակասութիւն, մոլութիւն» Դան. ա. 4.* უბიწო ուբիծո *«ամբիծ, անմեղ, անարատ»,* ბიწიერი բիծիերի, ბიწიანი բիծիանի *«պակասաւոր, մոլի»,* ბიწოვნება բիծովներա *«մոլուրիւն»,—Սղերդի արաբախօս քրիստոնէից բարբառով* ambiz *«մեռելի կարգը, ամբիծք» (Բիւր. 1899, էջ 116)։—Հայերէնից փոխառեալ է դնում* Kraelitz - Greifenhorst WZKM *27(1913), 130 բրք.* pis *«կեղտոտ» բառը, իբր թէ արեւմտահայ փիծ արտասանութիւնից յառաջացած. բայց այս բանը չի կարող ուղիղ լինել, որովհետև հյ. բիծ կամ փիծ բառը՝ թուրքական շրջանին, ինչպէս նաև հիմայ էլ, հայ ժողովրդական լեզուի մէջ գործածական չէր. բրք.* pis *ծագում է պրս.* pīs *«բորոտ» բառից. նշանակութեան զարգացման համար համմտ. հյ.* բորոտ *և գողի։*

ԲԻՄԽԻ *«անծանօթ մի ծառի անուն. լտ.* acer, *ֆրանս.* érable *?» (գրուած է նաև* պիծխի, պծղի, պձղի*) Վստկ. 58. ունին միայն ԱԲ, ՀԲուս. § 347 և Նորայր, Բառ. ֆր. 486 ա։*

ՖԻԿԱՐ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան), որ և բեկար *«փոխանորդ արքայի կամ մեծ իշխանի» Ճառընտ. Յայսմ.։*

= Յն. βικάριος, οὐικάριος *նոյն նշ. (Sophocles 824'), որ փոխառեալ է լտ.* vicarius *համանիշից. այս էլ ծագում է* vicis *«փոխ–, փոխանակութիւն, փոխադարձ, հերթ» բառից։—Հիւբշ. 343։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, որ սակայն սխալմամբ միացնում է նաև արաբ. vakīl *«փոխանորդ» և* vazīr *«եպարքոս»։*

ԲԻՂԼ *«կամարի միջին քարը. oculus absidis». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է վարք Ս. Գէորգայ գօրավարին, Վենետ. 1849, էջ 32 «Հրամայեաց կախել զնա ի բիղլ կամարին»։*

Այսպէս մեկնեց Peeters, Une passion arménienne de s[t] Georges, Bruxelles *1909 (տե՛ս Հ. Ա. Վարդանեան, ՀՄ 1910, 286 բ)։*

*ՖԻՃ *«պոռնկորդի, ապօրինի զաւակ» Կոստ. Երզն. 151. Անսիզք 29 (Բառ. երեմ. էջ 55 գրուած է բիժ). 2. «ծառի արմատի կողքերից դուրս եկած աւելորդ հիւղերը» Վստկ. 142 «Ոմանք զբիճ մորճերն ի տակուցն մաղմզկովն առնուն և տնկեն»։*

= Թրք. پیچ pič *(ամկ.* pij*), որ ունի հիշատ սոյն երկու նշանակութիւնները. («ընճիւղ» նշանակութիւնը չգիտէ* Будаговъ *1, 324, բայց ունի Աբիկեան բառարանը, Պօլիս 1892, էջ 136 և շատ սովորական գործածութիւն ունի օսմաններէնի մէջ)։—Նոյն բառն է և վրաց.* ბიჭი բիճի *«անհարազատ զաւակ. 2. տղայ, երախայ. 3. ծառայ»։—Ա.Ճ.*

Տե՛ս իմ Թուրքերենէ փոխառ. բառեր, էջ 351։

ԲԻՃՈՒԻ *«անծանօթ մի բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 348։*

ՀԲուս. կարծում է թէ ուռիի մի տեսակ է. այս դէպքում անյայտ է մնում բիճ–։

*ՖԻՄԱՐ *«հիւանդ» Կոստ. Երզն. 130։*

= Պրս. بیمار bēmar *«հիւանդ»։*

Ուղիղ մեկնեց Պօտուրեան, Հրատր. Կոստ. Երզն. էջ 45։

ԲԻՆԴ. *անծանօթ բուսական նիւթ. մէկ անգամ ունի Ասար և մեկնում է «բէսէդ» նոյնպէս անծանօթ բառով. պիտէ միայն ՀԲուս. § 349։*

ՀԲուս. ենթադրում է, որ բէսէդ *= արաբ. (իմա՛ պրս.)* بسد busad *(büsed) բառն է, որով* բինդ *կդառնայ «բուսա»։*

ԲԻՏ *«հաւի ոտքի եռևի մասը. մահմուզ» Կիւրղ. ղևտ. որից հաստաբիտ «հաստ ճանկերով (մագիլ)» Վեցօր. 162 (տպ. հաստաբեսա, պէտք է սրբագրել այսպէս. տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեան. Ա. 159)։*

ԳԻՒ.—Բլ. բ'իդ', կր. բ'իտ «արօրի խոփի մեխը». ոճով բիտ ու նիտ կարիլ *Ակն. «գըրգրտուիլ, դայրանալ, սաստիկ բարկանալ»։*

ԲԻՏՈՆ *«սղոցաւոր քթով մի տեսակ մեծ ձուկ է. ֆր.* scie» *Մագ. Բզ. 217. «Զկան ոմն,*

բիտոն կոչեցեալ, հանդիպի նաւուց ախտացեալ և սղոցէ ողամբն զողնափայտն նաւուցն»։

Կոստանեան՝ Մագիստրոսի քղթերի հրատարակութեան մէջ՝ յատուկ անուն կարծելով բառս՝ ո՛չ միայն գլխատառով է գրում, այլ և էջ 334 բ յատուկ անունների ցանկի մէջ է ներմուծում։

+ԲԻՐ, ի–ա հլ. *(յետնաբար ո հլ.) «մահակ կամ հաստ գաւազան» ՍԳր. Ագաթ. «կռանիկ կոթ» Ուռհ. 320. որից* բրազոն առնել *«շաբաշար ծեծել» Ճառընտ.* բրածեծ *«բիրով ծեծ կամ բիրով ծեծ կերած». Ագաթ. Բուզ. Ոսկ. բ. կոր.* բրաչարդ *«բիրով ջարդուած» Մարթին.* բրաւոր *«բիրերով պինուած» Ոսկ. յհ. ա. 21։*—Բիր նախապէս էր նաև փորելու գործիք և այս իմաստից են բղխում՝ բրել *«փորել» ՍԳր. Եւս. քր. Ագաթ.* բրած *«փորած տեղը» Յայսմ. Ճառընտ.* բրածոյ *«փորելով շինուած, հիմը ամուր» ՅՀ. կթ.* բրածոյք *«հանք» Ոսկիփ.* բրիչ *«փորելու գործիք» Լաստ. իգն. Սարգ.* եկրաբիր *«հողը փորող» Ոսկ. Փիլիպ.* գետնաբիր *«հող փորող» Ագաթ.* ճողաբիր *«բրիչ» Եղիշ. այլակ. 239. կրկնութեամբ* բրբրել *«այս ու այն կողմը փորփրել» (չունի ԱՔ) Առաք. պատմ. 59։*

=Մեկնութիւնը տե՛ս բաճ. *գաղափարների դուգորդութեան համար հմմտ. փայտատ, որ նշանակում է «տապար, կացին. 2. բրիչ»։*

Bugge, Etrusk. u. Arm. *93* բրած *= Նորաւակ.* frast։ *Հիւնք. լտ.* virgula *«ճիւղ, ցօպ» բառից։* Bugge IF *1, 452 կցում է յն. φίτρος «կոճղ, ծառի բուն, փայտի կտոր» բառին՝ իբր հնխ.* bhitro- *ձևից։ Սրա վրայ Հիւրշ. 429 աւելացնում է նաև գերմ.* Beil, *հրգ.* bīhal *(<*biθla<հնխ.* bhéitlom*) «տապար, կացին», հալ.* biti *«զարնել, ծեծել». բայց Հիւրշ. իրարից բաժանում է* բիր *«մահակ», որ հանում է հնխ.* bhitro- *ձևից և* բիր, բրել, *որ վարանում է կցել* բաճ *բառին։* Müller WZKM *8, 358 պրս.* bīl, bāl *«բահ» բառի հետ։* Bugge, Lykisch. Stud. *1, 16* բիր, բրել *գտնում է (λα)βύρινθος յատի մէջ։* Scheftelowitz BB *29, 38 գնդ.* barənənti *«կարել, փորել», լտ.* forare *են։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 30* բիր *բառի նախաձևը համարում է* bhiro- *կամ* bhirā- *և չի ընդունում հնխ.* bhitro-, *որովհետև այս ձևը պիտի տար *բիւր (հմմտ.* արօր*)։ Սրանց վրայ տե՛ս նաև* բաճ *և* բրել։—Petersson KZ *47, 260 յն. φάρος, լտ.* ferio, *հալ.* borją, brati *են ձևերի հետ՝ որոնք* P. Persson *համեմատել էր* բաճ *բառի հետ։*

ԳԻՒՐ.—Խրբ. բ'իր, *Հմշ. Մկ.* պիր, *Ոզմ.* բ'է'ր *«բիր». սրանց հետ ունինք նաև Ղրբ.* պիեր, *Տփ.* բիեր, *Երև.* բ'ֆիր *«ցից».—Զթ.* փիյիշ, փիրիշ *«բրիչ», Ռ.* փրէլ *«քերել».—Նոր բառեր են* բիրավար, բիրոց տալ, բրուճ, բրուորիլ *են։*

ՓՈԽ.—Հայերէնի հետ կապ չունի վրաց. ბოძი *բիրկի «հաշուեփայտ», որ բառ Ջուբինովի թաթարերէն բառ է (ռուս.* бирка*)։*

*ԲԻՐԿԱԹՈՐ *«քաւարան» Գիրք Թղ. էջ 507 և 508 (գտնւում է Կոստանդին Ա կաթուղիկոսի առ Հեթում Ա գրած Թղթի մէջ՝ 1246 թ.) որ և* բերքաթուր *Տաթև. Հարց. 392, 687,* բուրգաթուր՝ *անգ, էջ 553 (Լծ. պրպմ. 605* բիերգաթուր*)։*

=Լտ. purgatorium, *Ֆրանս.* purgatoire, *իտալ.* purgatorio, *նոյն նշ. բան նշանակում են «մաքրարան» և ծագում են* purgo *«մաքրել» բայից։—Ա՛ճ.*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեան. բ. 239։

ԲԻՐՏ *«պիրկ, ամուր, պինդ (փայտ)» Եւս. պատմ. 634. Կոչ. «կոպիտ, սոպո, անկիրթ, վայրենի» Եղիշ. ՅՀ. կԹ. Տօնակ. որից* բրտագոյն *Ոսկ. մ. բ. 5.* բրտանալ *Ողբ. դ. 8. Կոչ. Ոսկ. մ. բ. 25. գ. 8. Եւս. պատմ.* բրտացուցանել *Ոսկ. մ. ա. 25.* բրտերախ *Ոսկ. յղ. սգ.* բրտավզութիւն *Գրշ. արիստ.։*

ՆՀԲ բիր *«փայտ» բառից։ Հիւնք.* բուրդ *բառից։* Bugge, Beitr. *35 հանում է հնխ.* bhid-rí-s *ձևից. հմմտ. հհիւս.* bitr *«կրծոտ, կծու», գերմ.* bitter *«դառն», սանս.* bhidrá- *«կայծակ»։*

ԲԻՒԶՈՆ. *անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Մագ. «Ջատսա ի վերայ Ոլոմպիոսի յօժարեցան գնել և ի վերայ ստո-*

բա զաներևաշարժն բիւզոն» (Հրատ. ՀԱ 1892, 168 ա)։—Թերևս ծառի անուն է։

ԲԻԻՂԶԵՂՄԻՏ *«մեկնութիւն քերականութեան». ունի միայն Բառ. հրմ. էջ 55։*

***ԲԻԻՐ**, ու հլ. *(նաև n հլ? յետնաբար ի հլ). «տասը հազար կամ լայնաբար՝ շատ, խիստ շատ» ՍԳր. Եւս. քր. և պտմ. Ագաթ. Ոսկ. Ես (Համեմատէ՛ Երզն. մտթ. 392 «Քանզի որպէս բիւրն՝ զբազումն, այսպէս և եօթն՝ ըստ եբրայեցւոցն զյոլովն նշանակէ»)։ Հին ուղղագրութեամբ գրւում էր բեւր, որ հիմայ բոլորովին վերացուած է գործածութիւնից։ Որից* **բիւրազգի** *Ա. մակ. ժգ. 48, Գ. մակ. ե. 3. Ոսկ. եփես. վեցօր.* **բիւրապատիկ** *ՍԳր. Ագաթ. Եզն. Մծբ.* **բիւրաւոր** *ՍԳր. Ագաթ.* **բազմաբիւր** *Խոր. Արծր. Ան։*

= Պհլ. 𐭱𐭥𐭥 bēvar, *մանիք.* պհլ. 𐭱𐭩𐭥 bivr (Salemann, Manich. Stud. ЗАН *8, 62), պրս.* بیور bēvar *(bīvär), փարս.* baēvar, biwar, *գնդ.* baevarə, *բոլորն էլ «բիւր, տասը հազար», իսկ օսս.* bêurä, bîrä *(որից էլ չէրքէզ.* beurə*) «շատ, յոյժ, երկար ժամանակ» (*Horn, Grdr. § *262,* Bartholomae *913)։—Հիւբշ. 121։*

*Ուղիղ մեկնից նախ Գ Դ. նոյնը նաև ՆՀԲ։—*Peterm. *17, 39 ևն յն. μύριοι «տասը հազար, շատ»։* Windish. *15 գնդ.* baēvare, *սանս.* bhūri *«շատ, լիւ» և յն. μύριοι «բիւր»։ Այսպէս են մեկնում նաև* Gosche *40,* Böttich. Arica *63, Տէրվ. Երկրագ. Ա. 51 ևն։ Հիւնք. զանազանում է բիւր «տասը հազար»<պրս. պիյվեր և բիւր «շատ»<պրս.* پر pur *«բազում, լիւ»։*

Գիմ.—Սեբ. բ'իւր, *Ջբ.* բ'իւր բ'իւրոց, բ'իւյ բ'իւյուց, *Ասլ.* բ'իւիր հազար, *Ախց. Երև.* բ'իյուր հազար, *Խրբ.* բ'իյուր, *Ջղ.* բ'ուրf բ'ուրոց, *Տիգ.* փիյուր, *Պլ.* փիյուր հազար, *Ալշ.* փուր հազար, *Ռ.* փիյիւր, *Մկ.* ֆիյուր փիյուր, *կայ և Ննխ.* համբիւր՝ *իբր «հարիւր բիւր, խիստ շատ»։*

Փոխ.—Իրանեան ա-ի անկման պատճառաւ հայերէնից փոխառեալ պէտք է համարել վրաց. **ბევრი** *բեվրի «տասը հազար, շատ, առատ»,* **ბევრნი ბევრთანი** *բեվրնի բեվրթանի «բիւրաւոր, բազմաթիւ»,* **გაბევრება** *գաբեվրեբա «բազմապատկել»։ Այսպէս է ընդունում նաև Մառ* Иппол. *62։*

***ԲԻԻՐԵՂ** *(ի-ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «մի տեսակ պատուական քար, ակունք» ՍԳր. Եփր. եւ. «վանակն» Շիր. Մագ. գրուած է նաև* **բեհիւղ** *Բրս. ընչ.* **բևեղ** *Եփր. Վկ. տես. 12. որից կրճատմամբ կամ առանց կրճատման՝* **բիւրեղաձման** *Շնորհ. իմ. եղակ.* **բիւղաբեր** *Պտմ. աղէքս.* **բիւղայ** *կամ* **բիւղեայ** *Պտմ. աղէքս.* **ոսկեբիւրեղ** *Տօնակ.։—Տե՛ս և պյօր։*

= *Յն.* βήρυλλος *«բիւրեղ», որից նաև լտ.* bēryllus, *ֆրանս.* bêrille, *սպան.* berilo, *գերմ.* Beryll, *անգլ.* beryl, *ռուս.* беритъ, *վրաց.* ბრილი *բրոլի. յունարէնը փոխառեալ է արևելքից. բառի մայրն է համապատասխանում սանս.* vāiḍūrya-, *պալի* veḷuriya, *որ արեւելք ու արեմուտք տարածուելով առել է մի կողմից չին.* pi-lieu-li *«ապակի», արեւել. թրք.* بيلاور bilaor, *թրք.* بللور billor, *և միւս կողմից արևել. իրան.* virūlya *(տե՛ս* MSL *18, 114), պրս.* بلور bulūr, *քրդ.* بلور billr, *ասոր.* ܒܠܘܪܐ belūrā, *արաբ.* بلور bulūr *և վերջապէս յոյն և եւրոպական ձևերը։ Հայերէնը փոխառեալ է յունարէնից, ուր սակայն ձայնաւորները տեղափոխուած են. յատկին պիտական ձև է բեհիւղ, որ ներկայացնում է յոյն բառի ճիշտ տառադարձութիւնը։—Հիւբշ. 344։*

Բառս առաջին անգամ պարսկերէնի հետ համեմատեց Գ Դ։—ՆՀԲ յիշում է «ռմկ. պիլլօր, պիլլուր»։ Այվազովսքի, Յաղագս հնչման, էջ 15 յն. և պրս. ձեվերը։ Lagarde, Gesamm. Abhd. *22 և* Arm. St. *§ 396 դնում է յունարէնից։ Բառիս վրայ բաւական ընդարձակ գրած է Երեմեան, Բազմ. 1899, 155։*

***ԲԼԱՅԹ** *«դատարանի առաջ ինքնիրան պաշտպանելը» Անսիզք, էջ 23, 33, 39. որից* **բլայթել** *«դատարանի առաջ իր դատը պաշտպանել» Անսիզք 19, 51. բայց ունինք նաև վատ առումով* **բլայթ**՝ *Գիրք Թղ. 509 «Որ ոչ բլայթով և խաբէութեամբ ուսուցա-*

նեն և ուսանին՝ որպէս դրքա, այլ ճշմարտութիւնամբ և հիմամբ առաջնոցն», այստեղ նշանակում է բառս «նենգութիւն, խաբեութիւն» (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեն. Բ. էջ 240)։

=Ֆրանս. plaid «դատարանի առաջ խօսուած պաշտպանողական ճառ», որից բայական ձևով plaider «դատարանի առաջ իր դատը պաշտպանել».—ֆրանս. բառը ծագում է լտ. placitum ձևից, որ դասական լեզուի մէջ նշանակում էր «կամք, վճիռ, հրամանն», իսկ ստորին լատիներէնում «հասարակական ժողով»։—Հիւրշ. 390։

Ուղիղ մեկնեց նախ Անսիոքի հրատարակիչը՝ էջ 19։

ԲԼԱՏԿԻ տե՛ս Բալաթիկին։

*ԲԼԲՈՒԼ «սոխակ» Կոստ. Երզն. 113. նոր տառադարձութիւնամբ պլպուլ Հայել. 114. նոր գրական լեզուում գործածական է յատկապէս բանաստեղծութեանց մէջ։

=Պրս. بلبل bulbul «սոխակ», որից թրք. bülbül, նյն. μπαρμπούλι, սերբ. bulbul, buljbulj, biljbilj, ռում. bîlbîl են։

ԲԼԻԹ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «բոլորակ կակուղ հաց» ՍԳր. որից ԲԼՊԱԿ «ականջի ծայրի փափուկ մասը» ՍԳր. «լեարդի ծայրի մասը» Նիւս. բն. ԲԼԻՔ ԲԶՈՅ «չորացրած թուզ» ԱՒ. ԲԼՔԵՆԻ «հացհամեմ» Ամիրտ. Բժշ. ԲԼԻՔԷՆ «մի տեսակ բոյս, fenugrec, որ է ըստ Анненковъ-ի բուսաբանական բառարանի՝ էջ 361, trigonella foenum graecum L» Գաղիան. (այս բառի վրայ տե՛ս և առանձին)։

ՆՀԲ (աղիւս բառի տակ) լծ. է դնում յն. πλίνθος «աղիւս»։ Հիւնք. բլիփ բառից։ Bugge, Btrg. 35 յն. ἄλφιτον «գարեհաց», ալբան. el'p (սեռ. el'bi) «գարի» բառերի հետ ցեղակից։

ԳԻՒՒ.—Տփ. բլիք, Երև. բ'լիք, Խրբ. բ'լիգ, Ղզմ. բ'լէ'ք, Ախց. բ'լիճք, Խոջ. բ'իլիք, Մկ. վն. պլիք, Ղրբ. պրէ'լիք, պլիք, Շմ. պիլիք։— Նոյն բառը իմաստի զանազանութեամբ դարձել է նաև Բիւթ. «մի տեսակ չոր քաղցրաւենիք, որ պատրաստում են ոլպով եփած օսլայով. տճկ. քէօֆտէ», Ակն. «խաղողի խաղմուղի չորացրածը», վն. «մեղրի խորիսխի կամ պանիրի կտոր», Երև. «ուռուցք, մանաւանդ մոծակի խայթոցից առաջացածը»։ Նոր բառեր են՝ ԲԼՔԵԼ, ԲԼԻԼ, ԲԼԻՔՉԱՓԱՐ։

ՓՈԽ.—Հայերէնի՞ց է փոխառեալ Կաղանի թթր. بلیچ belič կամ بلیش beliš «մի տեսակ կլորակ խմորեղէն». այս բառ թաթարերէնի մէջ առանձին մնացած մի ձև է և ուրիշ ածանցներ ու ազգակիցներ չունի. տե՛ս Будаговъ 1, 269։

ԲԼԻԹԷՆ տե՛ս Բլիթ։

Այս բառը աւանդել է Գաղիանոս «Տիղիս, բլիթէն» բացատրութեամբ։ ՆՀԲ տեղիս բառը հասկանալով չն. տնլց, ԲԼԻՔԷՆ կամ ԲԼԻՔԵԱՆ մեկնում է «կոշտացեալ մասն մորթոյ մարմնոյն, տճկ. նասըր»։ Իրեն են հետևում ՋՒ և ԱՒ։ Առաջին անգամ Նորայր, Հայկ. բառաք. 111 ցոյց է տալիս, որ Գաղիանոսի տեղիս բառն է չն. τῆλις, լտ. telis, որոնք նշանակում են ֆրանս. fenugrec կոչուած բանջարեղէնը. և հետևաբար ա՛յս նշանակութիւնն ունի նաև ԲԼԻՔԷՆ։ Այս մեկնութեան համաձայն է գալիս նաև Ամիրտովլաթի ԲԼԻՔԵՆԻ բուսանունը, և երկրորդ՝ Ստ. Կամենիցացի, որ ունի «բլիթեան. խոտ բժշկական. լտ. meliphyllum, apiastrum» (ըստ Գաղիանոսի)։

*ԲԼԻԼԱՃ «մի տեսակ բոյս է. լտ. belliric terminalia». գրւում է նաև պալիլաճ, բէլիլէճ, պլէլիճ, բլելիճ Մխ. բժշ. 126. ունի միայն ՀԲուս. § 353 և § 2556։

=Արաբ. balîlaj նոյն նշ. (տե՛ս Շթայնշնայդէրի հատաքածոյի մէջ՝ WZKM 11, 320). այս բառը արտրացած է պրս. بلیله balîla բառից (տե՛ս ԳԴ 418 ա)։

Ուղիղ մեկնեց նախ ՀԲուս. յետոյ Seidel Մխ. հեր. էջ 243 և վերջին անգամ Նորայր ՀԱ. 1923, 348։

ԲԼՂԱՄ տե՛ս Պալղամ։

ԲԼՇԱԿ. անստոյգ նշանակութեամբ բառ, որ մէկ անգամ գործածուած է Ել. լը. 3 «եւ արար զամենայն կահ սեղանոյն, զխարիսխսն և զբլշակն և զտաշտսն և զմսահանսն և զբուրվառսն»։ Երրայեցերէն բնա-

գրի համապատասխան բառն է אֶת־הַיָּעִים ար יָעַ yā՝ նշանակում է «թի»։ Բայց մեկնիչներն ու թարգմանիչները զանազան ձևվերով են հասկացել. այսպէս՝ ֆրանսերէն թարգմանութեան մէջ (New York 1884) «racloir քերիչ», անգլերէն վերաբննեալ թրգմ. (Oxford 1903) «shovel, թի», հայ. աշխ. թրգմ. (Պօլիս 1906) «թիակ», վուլգատայի մէջ «forceps, աքցան կամ ունելիք»։ Հայ բառագիրներն էլ մեկնում են՝ Բառ. երեմ. էջ 55 «գաւազան» (գրում է բլրշակ), Սահմ. լեհ. «աքցան կամ ունելիք», ՆՀԲ «տաշտ և այլ ինչ նման նմին, ծածկոյթ կամ խուփ», ՋՔ «ծածկոյթ կամ խուփ», ԱՔ «ծածկոց կամ խուփ», Հիւնք. «երկաթի թիակ», Նորայր, Բառ. ֆր. 738 բ. «lécythe, իւղի կամ գինիի ամանն»։ Դժբախտաբար յոյն օրինակում այս ամբողջ համարը պակասում է։

ՆՀԲ մեկնում է թերևս յն. φιάλα «պըտուկ, փարչ» բառից տառադարձուած և կամ լծ. հյ. բիլ, բլշակնիչ։ Հիւնք. պրս. بلسك bilisk «թոնրի ակիշ, հացահան»։

ԲԼՇԱՆԱԼ (-ացայ) «լոյսը խաւարիլ, աղօտանալ» Դիոն. երկն. «աչքի զօրութիւնը պակասիլ» Փիլ. լին. 399. որից բլշացուցանել կամ բլշեցուցանել «տեսութիւնը տկարացնել, լոյսը մթագնել, գուլացնել, բթացնել (սուր բանը)» Պիտ. Արիստակ. նաւակ. Դիոն. ածայ. Բրս. արբեց. Ագաթ. 166. սրբանց պարզ արմատն է բլշ- (*բիլշ, *բլիշ, *բուլշ կամ *բլուշ), որ ակն «աչք» բառի հետ բարդուելով տուել է նաև բլշակնիլ «աչքը մթագնիլ, շլանալ, տկարանալ» Ոսկ. Հռոմ. 421. Ճառընտ. երզն. մտթ. Սիսիան. (Սոփերք ԺԲ, էջ 52). Սարկ. տոմար. բլշակնութիւն «աչքի տկարութիւն, վատատեսութիւն» Ան. որս. երզն. մտթ. 158. Լծ. ածաբ. Սարգ. յոջ. Վրդն. երզ։

ՆՀԲ լծ. բիլ կամ պլուզ, «որպէս թէ մթագնիլ իբր կապուտակ»։— Հիւնք. պրս. پلوس pulūj «թոյլ անդամ, տկարացեալ անդամ»։

ԳԻՒՒ.— Հակառակ իմաստն ունին պլշակնիլ Ղրբ. պլշալ Վն. պլշացնել Ղրբ. պլշել երև. Ղրբ. Շմ. «աչքը յառելով նայիլ»։ Բայց արդեօք սրանք նոյն արմատի՞ց են։

+ **ԲԼՈՒՐ**, ո հ. (յետնաբար ի և ր հ. սեռ. բլեր Ջննդ. էջ 28, 45, Մամիկ. 27, գրծ. բլերբ Ոսկիփ.) «փոքրիկ լեռնակ» ՄԳր. եփր. յես. եղիշ. որից բլրացի «բլրի վրայ բնակող» Բ. թագ. ղ. 4. բլրանձև Խոր. Մագ. բլրակ ՅՀ. կթ. Ճառընտ. բլրակերպ Մարաթ. հողաբլուր Ես. իե. 2. Մեսր. եր. անտառաբլուր (ներգ. յանտառաբլերեն) Մամիկ. էջ 9. հանդիպաբլուր Օրբ.։ Նոր բառեր են բլրականձև, բլրանման ևն։

= Բնիկ հայ բառ, որի հետ նոյն են կիմր. bal «բարձրութիւն, լեռան գագաթ», հիւլ. bali «գետի եղերքի երկարութեամբ բարձրութիւն, հարթ դաշտի վրայ փոքր բարձրութիւն, բլուր». որանք յառաջանում են bhol- արմատից, որի երկար bhōl- ձևից դալիս է հյ. բուլ (պահուած է բարբառներում. տե՛ս բոլոր բառի տակ). և սրանից էլ -ուր մասնիկով՝ *բուլուր>բլուր (մասնիկի համար համմտ. բախ-ուր, բաբբաբուր, սլուր)։ Բուն արմատը համաբուում է bhel- «ուռչիլ», որի բազմապան ժառանգները տե՛ս Pokorny 176—179, Boisacq 1020, Ernout-Meillet 359։ Հալևրէնի համապատասխան ձևերը տե՛ս բող, բողբոջ բառերի տակ համմտ. նաև բոլոր։

Klaproth, Asia polygl. 102 խալ. fiall, օսթյաք. pel, pelle, անդի pil, bil:— ՆՀԲ լծ. թրք. bayər «գառիվեր»։ Տէրվ, Մասիս 1881 մայ" 6՝ թերևս սանս. պրավատ «բարձունք», պրավաթա «գառիվայր»։ Bugge, Beitr. 40 նախաւոր *բուլվար ձևից, իբր սանս. párvata, զնդ. paurvata «սար», յն. πεῖραρ (<περfαρ) «վերջ»։ Այս մեկնութիւնը մերժում է ինքը KZ 32, 31։ — Thomaschek SWAW 1893, 66, թրգմ. ՀՄ. 1894, 18, ճիշտ մեկնելով (տե՛ս նաև Petersson), նոյն է գնում բոլոր բառի հետ և երկուսը միասին հանում է bhel, bhol «ուռիլ, բարձրանալ» արմատից. ա՛յս է նաև, ասում է, Տրալլեանց Βόλοσσος քաղաքի անունը։ Patrubány SA 2, 13 լտ. flos, գերմ. blühen «ծաղկիլ» բառերի հետ. իսկ ՀՄ 1906, 345 հնխ. bhel «փչիլ, ուռեցնել» արմատից. համմտ.

հիսլ. 8ufa «բլուր» և վ. գերմ. düppel «ուռեցք»։ Հիւնք. բելիար բառից։ Petersson KZ 47, 261 նոյնպէս բոլոր բառի հետ հնխ. bhel, bhol «ուռչիլ, ուռչելով բարձրանալ» արմատից. համմտ. հհիւս. ball «բարձրութիւն», bolr, bulr «փայտի կոճղ», bǫllr «կլոր մարմին», եև։ Պատահական նմանութիւն ունին խունսագ. բլուրու, անդի bil, pil, օսթլ. pelle «լեռ»։

ԳԻՒ.— Ալշ. Երև. Մշ. Սեբ. բ'լուր, ՋԲ. (հիմայ անգործածական) բ'իլիւր։

ԲՍԻՆ «ոջիլ». մէկ անգամ ունի Նոննոս. Նշ֊ի հանում է բիծ «կեղտ» բառից։

ԳԻՒ.— Ղրբ. պծէգնը «ծնտուկի ճանճի գցած որդը», որից բայաձև պրծրգնել «ծնտուկի ճանճի որդեր գցելը». ծագում է նախաւոր *բծիծն ձևից։

ԲՍԻՆ «ծովի սոխ. լտ. scilla, ֆրանս. scille». ունի միայն ՀԲուս. § 355, առնելով Ստ. Ոսկեբանից. գտնում եմ նաև Վարդան Յունաննեանի «Ձնորածութիւն» աշխատութեան մէջ, տպ. 1671, էջ 316 բծեծ «վայրի կոճղէզաւոր մի բոյս»։

*ԲՂԱԿՈՆՔ կամ ԲՂԱԿԱՆՔ «գիշերը հրապկող». ունի միայն ԳԲ, առանց վկայութեան։

=Յն. φυλάκειον, φυλάκιον «չորս հոգուց բաղկացած պահակախումբ». ըստ այսմ վերի բառը պէտք է ուղղել գոնէ փղակոն։ Տե՛ս և այս բառը։—Աճ.

ԲՂԵՏ «պիսակ». արմատ անգործածական, որ գտնում ենք միայն խայտաբղետ կամ խայտաբղէտ բարդի մէջ. Նիւս. Փիլ. Նար. երգ. 306. որից խայտաբղետութիւն «բորոտութիւնից յառաջացած պիսակ» Ոսկ. Հռոմ. 361. գրւում են նաև պ տառով՝ ինչպէս ունի Ոսկ. Հռոմ. 361։

Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 103, ծան. խայտաղղէտ համարում է կրկնաւոր փխ. *խայտաբետ, ինչպէս են հաստատամետ, բարձրաբերձ եև։

ԲՂԽԵԼ, տե՛ս Բուխ։

*ԲՂԽՈՐ կամ ԲՂԽՈՐՈՍ «կանաչ» Յայսմ. (գործածուած է երկու անգամ իբրև մականուն Յունաց Կոստաս Ա. Խլորոս կայսեր, որ գահակալից 305—306)։

=Յն. χλωρός «կանաչ, դեղնականաչ» բառից. ըստ այսմ հայ ձևը պէտք է կարդալ բխղորոս. բայց ի՞նչ գործ ունի այստեղ բառասկզբի բ յաւելուածը։

Նշ֊ի դնում է յն. բառից, բայց կցում է և բղխել բայինն. «Գոյն նորաբողբոջ իրաց բղխելոց ի հողոյ»։

*ԲՂՈՒԿ «հողէ աման՝ իւղ, պանիր և թթուեղէն դնելու» Հալել. 178. աւելի հին ձև է բղուղ Ոսկիփ. Վրդ. առ. 253. Վստկ. 102, 137. Ջքր. սարկ. Ա. 58, Հին բռ. գրուած նաև բղող, բլուղ, բլուզ. որ նշ֊ի և ՋԲ գաւառական են համարում։

=Պրս. بلوك balūk «է տեսակ իմն կրթղայի՝ որով ըմպեն զգինի», بلغ balx «անօթ գինւոյ և գործիք բազմականի»։

Ուղիղ մեկնեց Հիւնք. էջ 300, որ դնում է պրս. belūk։ Petersson KZ 47, 261 բլուր բառին կցելով հյ. բղուղ, երկուսն էլ միասին՝ դնում է հնխ. bhel, bhol «ուռիլ» արմատից (տե՛ս բլուր բառ տակ)։

ԳԻՒ.— Սեբ. բ'ղուզ, Ռ. փուղուգ.— Ալշ. բ'ղիգ.— Տփ. բղուղ, Ախց. Երև. Կր. բ'ղուղ (Ախց. և Կր. սեռ. բ'ըղվի, յգ. բ'ըղվրնէր).— Ոզմ. բ'ղող, Խրբ. բ'ղօղ, Մկ. պղօղ, Արբ. բ'օղօղ.— Խոյ. բ'ուղուբ.— այլ ձևեր են բլուզ, բլուկ, բլիկ Նշ֊ի, բլուդ ԱՒ և ՋԲ, որոնցից ունինք բլուիկ Ք. բղկեակ Պրտ. բղողիկ Բլ. նուագականները։

ԲՂՋԱԽՈՒՀ «պղծասէր, ցանկասէր» Լմբ. ժղ. Երզն. քեր. Գր. հր. Կաղկանտ. Ասող. յիշ. որից բղջախոհական Ճառընտ. բղջախոհութիւն Շնորհ. առ. Ոսկիփ. Լմբ. ժղ. Բրս. մրկ. Գր. հր. գրուած է նաև բողջախոհ Պիտ. բողջախոհութիւն Պիտ. Արծր.։

=Գրեթէ միշտ գործածուած է իբրև ողջախոհ բառի հակառակը, ուստի կարծում է, որ կազմուած է այս բառից՝ բ բացասական մասնիկով. այսպէս է նաև բառիս համապատասխանող յն. ἀσώτος «զեղխ, բղջախոհ, libertin» բառը, որ կազմուած է ἀ բացասականով σῴζω «ողջ առողջ պահել, փրկել, աղատել» բայից (Bailly 298′)։ Բայց հայերէնի մէջ ո՛չ բ բացասական գիտենք այլուր և ոչ էլ ո ձայնաւորի այսպիսի տարապարտ կորուստ։

Այս մեկնութիւնը տուել է նախ Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 207. նոյնը ՆՀԲ, հտ. Ա. էջ 399 ա, որ իբրև օրինակ բ մասնիկի՝ յիշում է ոլոր-բոլոր, ողջ-ամբողջ, ուղխ-բուղխ, ողոք-բողոք, ուռ-բուռ, արի-բարի. բոլորն էլ կեղծ ու անհիշտ. իսկ բղջախոհ բառի տակ ըսնում է՝ «իբր ապողջախոհ, ոչ ողջախոհ կամ պղծախոհ»: Ակինեան ՀԱ, 1930. 498 մեկնում է պղծախոհ>բղձախոհ, ձևից՝ ձ վերածելով ջ. ինչպէս որ կայ գրականութիւն>ֆեռականութիւն: (Սխալ է. ֆեռականութիւն կազմուած է ֆեռել բայից և ո՛չ թէ այլափոխուած գրականութիւն բառից):

*ԲՆԱԿ, ի–ա հլ. «բնակարան, բնակած տեղը» Շար. Նար. Մագ. ՍԿԿ. կթ. արմատ. «գերեզման, մեռելի թաղ» Մն. իգ. 9. Կիւրղ. ծն. որից բնակիլ ՍԳր. Եփր. դևտ. Նա. քր. բնակիչ ՍԳր. Նա. քր. բնակեցուցանել ՍԳր. Նա. քր. բնակարան Նար. բնակութիւն ՍԳր. բնակուճակ կայեանք «գերեզման» Պիտ. բնակակից Եզն. անբնակ Բուզ. եղեգնաբնակ Ագաթ. Փարպ. դիւաբնակ Կաղանկատ. ՃՀ. իմ. Ոսկ. գծ. ճեռաբնակ Ագաթ. վրաճաբնակիչ Դատ. ր. 1. մարդաբնակ Լատ. Պիտատ. Սանահն. անմարդաբնակ Վրք. Հց. լեռնաբնակ Զեննոր. երկնաբնակ Նար. առաք. բնակչութիւն, ազգաբնակութիւն (նոր բառեր). տարբեր է բնակ «բնիկ», որ տե՛ս բուն բառի տակ:

=ՊՀլ. bunak «տուն, բնակարան» ձևից, որ թէև այս իմաստով աւանդուած չէ, սակայն հաստատելու համար ունինք պրս. بنه buna «տուն, հայրենիք. 2. կահ-կարասիք», պՀլ. bunak «կահկարասիք», Բելուճ. bunag «կահ-կարասիք»: Իրանեան բառերը ծագում են պարզական bun ձևից, որից փոխառեալ է հյ. բուն. այս պատճառով բնակ բառի և բուն բառի ածանցները շատ անգամ իրար հետ շփոթում են, կամ այնքան են իրար մօտենում, որ դժուար է լինում որոշել թէ ո՛ր արմատից են ծագում. այսպէս օր. բնականալ «բնակիլ, բնիկ դառնալ, ընտանենալ», բնակցութիւն «բնակակցութիւն» (առաջինը անշուշտ բուն արմատից, երկրորդը՝ բնակ արմատից): ՊՀլ. bunak «բնակավայր, wohnsitz» նշանակութեամբ գործածուած է Städteliste § 36 (Մարքվարտ, Նամակ 1926 յունվ.): —Հիւբշ. 121:

Նշբ հանում է բուն բառից, կցելով բնակ «բնիկ» բառին: Ուղիղ մեկնեց Lagarde, Symmicta 34, 92, որ կցում է պրս. buna և արաբ. bunak բառերին. բայց սա էլ նորից միացնում է բնակ «բնիկ» բառին: Երկու արմատների զանազանութիւնը երևան հանեց նախ Հիւբշ.:

ԳԻՒՐ.— Ոզմ. բ'նակիլ, Հճ. բ'նագել, Զթ. բ'նագըլ, Երև. բ'նագվէլ, Ռ. փնագիլ, Սլմ. պնայվել, Ալշ. Խրբ. բ'նագոիլ. Տիգ. փնագոիլ, Մկ. պնոկոյրան:

ՓՈԽ.—Վրաց. დაბუნაგება դարուճագերա «поселять, բնակեցնել» Ջուբինով², էջ 352, բայց չկա պարզ բուճագերա ձևը:

ԲՆԱՍ «մի տեսակ օձ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մոլութ. 271 բ. «Նմանին օձին, որ կոչի բնաս, զորմէ ասէ Իզիտորոս, թէ ընթանայ գիտ անդնայց և հօտից և կպեալ ի ստինս նոցա՝ ծծէ զկաթն և սպանանէ զնոսա»: Ունի նաև Քաջունի, հտ. Գ, էջ 38 ա «օձ վնասակար յոյժ» իմաստով:

ԲՆԱՒ տե՛ս Բուն:

ԲՆԴԵՌՆ կամ ԲՆԴԻՒՆ, ե հլ. (ան, ունք, անց) «աղբերում ապրող մի տեսակ սև բզէզ» Նիւս. Երգ. Մագ. Բղ. 113. Վրդն. ծն. Սկևռ. աղ. 38. գրուած է նաև բնդեռն Առաք. մոլ. փնդեռն Ոսկ. Եզեկ. Տօնակ. նոր գրականում բնդունուած է միայն բնդեռ ձևով: Որից փնդեռնաճաուտակ «կեղտոտ բզէզի պէս» Յիշատ. պրպմ. էջ 515 (նորագիւտ բառ), կոյաղնդիռ «աղբի բզէզ» Ոսկ. մ. բ. 15, որ պէտք է կարդալ կոյաբնդիռ:

ՓՈԽ. — Վրաց. ფუნდურა փունդուրա «մալիսեան բզէզ, hanneton», որ հաստատում է մեր փնդեռն ձևը:

ԲՆԴՈՐ. արմատ առանձին անգործածական, որից կազմուած են բնդորել «խառնակել, ապականել» Գիրք Բղ. 415. անբնդոր

«անխաոն» Գիրք թղ. 426 (չունի ՆՀԲ). խառնաբնդոր կամ խառնափնդոր, ի–ա հլ. «խառնաշփոթ, խառնիխուռն» Եղիշ. Կաղանկատ. Փիլ. լին. Նիւս. կազմ. Լմբ. հանգ. խառնաբնդորապէս Մաքս. Նչ. ևկեղ. խառնաբբնդորել կամ խառնափնդորել Փիլ. Բագն. Սոկր. Ճառընտ. Նեղոս 692. Մխ. անեց. 3. Տօնակ. անխառնաբնդոր Բրս. չար.։

ՆՀԲ (տե՛ս խառնափնդոր բառի տակ) լծ. լա. con-fundo «խառնել», Lagarde, Beitr. Bktr. Lex. 70, 19 խառնափբնդոր ձևին է կցում գնգ. xrafstra «գէշ, վատ, չար», որ մերժելով Lag. Arm. St. § 970, գնում է խառն+բբնդիոն «բզէզ»։

ԳԻՒՐ.— Տփ. խարնուփնտուր. վն. սուտ ու փնդոր «սուտ ու փուտ» (Էմ. ազգ. ժող. Բ. 442). այլ բան է բնդորել, բնդրնդորել, բնդմնդորել «կարկատել, կցկցել», որ ծագում է բնդել «վատ կարել» բայից։

ԲՆԵԼՈՅ «երեսք». ունի միայն Բառ. երեմ. էջ 56, որ և էջ 58 նոյն իմաստով ունի բուսնահայ։

ԲՆԻՈՆ, ի–ա հլ. «խիստ փոքր մի գրամ է» Ղուկ. ժբ. 59. Ոսկ. ես. և ա. տիմ. էջ 119 (յգ. սեռ. բնիոնաց), 160. Եւս. պտմ. 428. Եւագր. 182. Վրդն. աւետ. Սկևռ. աղ. 95. Երզն. մտթ. 243, 396. Սասն. 26. Բառ է թէ այս դրամը փայտէ կամ կապարէ էր. հմմտ. Ոսկ. ես. 129 «Եւ դու դիա՞րդ կամիցիս, բիւր բնիոնն փայտեայ կամ կապարեա՞յ գտանել, եթէ մի մարգարիտ պատուական»։

Աւգերեան, Բացատր. չի. և կշռ. էջ 61 ասում է. «Զրնիոն չգտաք այլուր արտաքոյ Աստուածաշունչ գրոց. նմին իրի և ստուգաբանութիւն նորա ծածկեալ է ի մէնջ»։ (Դնում ենք վերևում Ս. Գրքից դուրս տասը վկայութիւն)։ Հիւնք. յն. πένης «աղքատ» և πενία «աղքատութիւն»։

⊙ԲՆՋԵԼ «կովի կամ հորթի հանած ձայնը» Վրք. հց. Սանահն. որից բնջումն. «սրրինգի ձայն» Գր. տղ. Թղթ. (տպ. Վենետ. էջ 67). Նաև բնջել «բառաչել» (այս բառը յիշում է ՆՀԲ երկու անգամ. նախ Բշալ բառի մօտ՝ հտ. Ա. 514″, և երկրորդ՝ Բբշալ բառի մօտ՝ հտ. Բ. 1048՛ և գրում է «տե՛ս բբնջել». բայց մոռանում է նշանակելու այս ձևվը, որ միւս բառարաններն էլ չգիտեն)։

=Ինաձայն բառ, որ կազմուած է բ պարզ ձայնից՝ ն և չ ածանցիչներով. առանց ն–ի ունինք բշալ, բշել, բջել, բշիւն, իսկ առանց շ–ի՝ բբել, բբիւն։—Ա՛ճ.

Հիւնք. հանում է ռուսգն բառից։ Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, 203 բ։

*ԲՇՆՈՒՆ «եկեղեցւոյ մէջ զանազան կիրառութեան յատկացեալ ասեղնագործ, զարդարուն ու ընտիր բեհեզէ կամ մետաքսէ դաստառակներ... յատկապէս այն երկայնկեկ դաստառակը՝ որ երկու տղոց ձեռքով ժողովրդին առջև կբռնուի Հաղորդութեան մօտեցած առեններին, իբր ապահովութիւն որ եթէ քահանային ձեռքէն հաղորդութենէն մաս մը սահի, անոր մէջ կենայ և առնուի ու գետին չիյնայ» (ունի միայն Քննասէր, Միսական բառարան, Օրաց. Ազգ. Հիւանդանոցի 1906, էջ 101)։

=Պրս. پیش pīš «առջեր» +خوان xān (արդի պարսկական հնչումով xun) «սեղան» բառերից. իրապէս xān կամ xun ո՛չ թէ միայն մետաղէ կամ տախտակէ սեղանն է, այլ հացի համար փռուած սփռոցը. այսպէս ունինք دستخوان dast-xān կամ däst-xun «երկար կտաւէ սփռոց, դաստախուն»։ Պարսկերենից է նաև վրաց. ფეშხვანი փեշխվանի «կողով», ფეშხვენი փեշխվենի, ფეშხუმი փեշխումի «պնակ, սկաւառակ, եկեղեցական անօթ» (Ջուբինով 2, էջ 1303)։ Թէ՛ պրս. پ p և թէ՛ վրաց ფ փ ցոյց են տալիս, որ բշխուն բառը պետք է կարդալ ըստ յետին տառադարձութեան փշխուն։—Ա՛ճ.

Քննասէր (Օրմանեան)՝ անդ, մեկնում է բառս իբր բաշխօն՝ բաշխել բայից։

ԲՇՏԵԼ. անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Ոսկիփ. «Քան զտասն դահեկանն ի զբրկանաց, զոր տաս աղքատին և բշտես ղնա»։ Ըստ Ս. Մովսիսեանի (Նամակ 1927 սեպտ. 5) նշանակում է «կշտամբել, յանդիմանել» և կենդանի է Մշ. բ'շտել ձևով։

ՆՀԲ մեկնում է «կա՛մ է էշտել և կամ որպէս ոմկ. բշտեցնել գանիւք»։ ԱԲ ջնջած է այս բառը։

*ԲՈՐ «գորգ, օթոց, խալի». գործածուած է երեք անգամ հայ մատենագրութեան մէջ. «Եւ երթեալ յանդիման լինել թագաւորին ի մեծ անուանեալ դաստակերտին և ելեալ արտաքս ի դահլիճն, նստի ի Բոր և ի Բահղակ» (Սեբէոս, հրատ. Պատկ. էջ 64, երկուսն էլ իրրև յատուկ անուն). «Զգեցուցեալ զնա (զմարմինն) եդ ի բոբի միում և ասր շատ ընդ նմա». «Ի բոբի միում եդեալ». Ճառընտ. =Վրք. և վկ. Բ. 377։

= Պհլ. bōp և բելուճ bōp «բարձ, անկողին», պրս. بوب bōb «առն զարդարելու թանկագին գորգ (vullers), գեղեցիկ սփռոց առն (ԳԴ)»։ — Հիւբշ. 121։

ՆՀԲ ունենալով միայն վերջին երկու վկայութիւնները՝ մեկնում է «կողով, զամբիւղ, սփրիդ, բուրձ, արկղ հիւսեալ յոստոց», ՋԲ «կողով, զամբիւղ կամ բուրձ», ԱԲ «կողով, ոճկ. սէփէթ, զէմպիլ»։ Առաջին անգամ Եւրոպա Հանդէս վիեննայի, 1852, էջ 123 առելացնելով նաև Սեբէոսի վկայութիւնը, համեմատում է բառս իրանական ձևերի հետ և մեկնում է «ազնիւ գորգ, օթոց, տապաստակ»։ Նոյնը անկախաբար ունի Հիւբշ.։ Երկուսից էլ անտեղեակ Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 48 հյ. բիր բառի հետ միասին կցում է այնպիսի բառերի, որոնք «կլորակ» իմաստն ունին. ինչ. շվէտ. bopp «ատինք», babbe «փորրիկ երեխայ», babba «միջատ», ռուս. вавка «կապոց» ևն։ Եւրոպայի և Հիւբշմանի ենթադրութիւնը դեղեցիկ կերպով հաստատում է՝

ԳԻՒ.—Ագլ. բիւր «հաստ անկողին», Ջղ. բուի «օրօրոցի մէջ՝ մանկիկի տակ փռուած անկողինը, որի մէջտեղը ծակ է՝ միզամանը դնելու համար»։

*ԲՈՐՈՂՈՆ «գոմէշ». մէկ անգամ ունի Վրք. հց. Ա. 92 «Ջոգաւ աղջիկն կթեաց բորողոն մի» (հյց. հոլով)։

= Յն. βούβαλος «գոմէշ» բառի հյց. βούβαλον ձևից. յունարենից փոխառեալ են նաև լտ. būbalus, ռուս. бу́йволъ «գոմէշ» (Berneker 1, 116) ևն։ — Հիւբշ. 344։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ԲՈՂ, որ և բոգի, բոխ «մի տեսակ լեռնային բոյս է. օձի սխտոր. լտ. gentiana» Գաղիան։

ԳԻՒ.—Բոգի ձևով կան զանազան բոյսեր. այսպէս ըստ ՆՀԲ «խոշոր խոտերի հաստ ցօղունն է՝ եղէգից բարակ և ցորենից հաստ», Շիր. «զանթափա կոչուած վայրի բոյսը կամ նրա հաստ ցօղունը», Մշ. «լայն թփերով մի բոյս, որի գագաթին լինում է կորեկի նման փոքրիկ կարմրագոյն հատեր», «մարդաշափ մեծութեամբ, լայնատերև մի խոտ. մի տարի կեանք ունի. ոճկ. տիւտիւլ»։

ՓՈԽ.— Թրք. գւռ. Թորթումի բոգի (Շիրակ, 1905, 425)։

* ԲՈՂ, ի-ա հլ. (յետնաբար նաև ի հլ.) «անբարոյական կին, պոռնիկ» ՍԳր. Բուզ. Ոսկ. Եփես. որից բոզութիւն Մծբ. Ոսկ. մ. բ. 12. բոզաճոմանի Ոսկ. մ. բ. 12. բոզանոց ՍԳր. Ոսկ. մտթ. կող. երր. և ա. տիմ. Եւս. պտմ. Ագաթ. բոզորդի Եփր. համար. 31 և ել. բոզաւագ «բոզանոց պահող» (չունի ԱԲ) Յայսմ. յնվ. 3։

= Վրաց. ბოზი բոգի «բոզ», ბოზება բոգեբա «բոզութիւն», Թուշ. բոզոր «բոզութիւն, շնութիւն», լազ. bozo «աղջիկ, կոյս, դուստր», bozoba «աղջիկնութիւն, կուսութիւն», bozomót'a «սիրուն, քաղցրիկ աղջիկ»։ Որովհետև բառի հիմնական նշանակութիւնը՝ «աղջիկ, դուստր» պատկանում է լազերէնին, ուստի հայերէնը փոխառեալ է կովկասեաններից։— Ինչպէս պոռնիկ՝ յոյներից և կաւատ՝ արաբներից, նոյնպէս և բոզ՝ կովկասից նիւթի հետ միասին մտել է Հայաստան։ Թէ «աղջիկ» նշանակող մի բառ կարող է յետոյ «բոզ» իմաստն ստանալ, համմտ. հյ. աղիճ և աղջիկ. ֆր. fille «աղջիկ, դուստր», բայց Պարիզի ժողովրդական լեզուով «բոզ», գերմ. dirne «օրիորդ, աղջիկ. 2. ոմկ. բոզ» ևն։— Աճ.

Հինք. պրս. ֆոշ «բոզ»։ Վերի մեկնութիւնը տուած եմ Բանաս. 1906, 105 և

Արրա. 1911, 417։ Patrubány *ՀԱ 1908, 152* բոկ *բառի հետ՝ իբր «մերկ, անամօթ կին»։*

ԳԻՒ.— Ալշ. ՀՃ. Մշ. Ջղ. բ'ոզ, *Ախց. Երև. Խրբ. Կր. Սչ.* բ'օզ, *Ննխ. Պլ.* բօզ, *Վն.* պ֊ոզ, *Ռ.* փօզ, *Ասլ. Սեբ.* բ'էօզ, *Շմ.* պէօզ, *Տփ.* բուզ, *ՋԹ. Ոզմ.* բ'իւզ, *Տիգ.* փուզ, *Սլմ.* պուէզ, *Մկ.* պիւզ, *Մրղ.* պը՛ զ.—*Նոր բառեր են* բոզլաց, բոզլացուիւն, բոզարած *(որից Սչ.* բոզարած*)։*

ՓՈԽ.—Ուտ. boz *«բոզ»։*

*ԲՈՋԻ *«արեգակն». ունի միայն Բառ. հրեմ. էջ 57։ Ակինեան ՀԱ 1930, 493 տալիս է բառիս համար* բուզի, բեզուկ, բեզեկա, բեզեկ, ազեկա *ընթերցուածները. սրանց միջոցով կարելի է ուրեմն նոյնացնել* բեզակ *բառի հետ, որ է երբ.* bāzāq *«փայլակ». ընդարձակ տե՛ս* բեզակ։—*ԱՃ.*

ԲՈՋՈԿԱՆ *«վատթարութիւն». ունի միայն Բառ. հրեմ. էջ 56։*

* ԲՈՋՊԱՅԻՏ *«պարսկական դեռին վերածեալ մի գրքի անուն» Եղիշ. ը. էջ 112. գրուած է նաև* բազպայիտ, *որ Հին բռ. մեկնում է «մեղաց քաւարան»։*

=Իրանական փոխառութիւն է. Հին բառարանի մեկնութեան համաձայն կազմուած պէտք է լինի պհլ. bačak՝ (bačak, bazak?) *= պազենդ.* baža*=պրս.* بژ baza *«մեղք» և զնդ.* paitiiti *«քաւութիւն» բառերից, իբրև հպրս.* *bajapatiti *«մեղաց քաւութիւն»— Հիւբշ. 122։*

Այս մեկնութիւնը տուաւ նախ Հիւբշ. Literar. centrbl. *1892, № 45,* Sp. *1627 և ՀԱ 1893, էջ 245. յետոյ* Stackelberg ZDMG *48, 490—7։—Բազմ. 1893, էջ 51 (նոյնը նաև Փորթուգալ փաշա, Եղիշէ, էջ 400) մեկնում է բառս զնդ.* upazba *«աղաղակել, կոչել, կարդալ, պաղատիլ» բայից՝* -iti *սովորական մասնիկով՝ իբր* upazbaiti, *համմ. զնդ.* avazva *«հայցել, պաղատիլ, երդմնեցուցանել, հաշտ առնել աղօթիւք», և* -iti *մասնիկով՝* avazbaiti. *զնդ.* upa *մասնիկը նոր պարսկերէնում տալիս է* ba. *որով Եղիշէի* բազպայիտ *բառը լինում է* բուն *«աղօթք կարդալն, երդմնեցուցանելն զդիս, այն է ծիսից, արարողութեանց, կարգաց և ձևոց, բառից և թուանշանաց վրայ գիրք, որպէս էր* Husparam *գիրքն Աւետայի ըստ աւանդելոյն Տինքարդի»։ Թիրեաքեան, Կարնամակ, ծանօթ. 102 և Արիահայ բռ. 106, պհլ.* ոզբայիս *կամ* ոզբայիշ *«որ յաճախ կը յիշուի կրօնական մատենագրութեան մէջ և յատուկ կանոն մ'է փառաբանական պաշտօնի մը և մասը կը կազմէ այն օրհներգութեանց՝ որք կը յիշուին սիրայիշ, ենյայիշ, ազբայիշ անուններով», որից էլ «ոզբայիդաև, խնդրել, աղերս արկանել»։*

* ԲՈՐԻՆՈՍ *«մի տեսակ օդային հրերևոյթ» Արիստ. աշխ. էջ 614. ունի միայն Հիւբշ.։*

= Յն. βόθυνος *նոյն նշ.— Հիւբշ. 518։*

ԲՈՃԳ *«անոտի, փուտ, անպիտան». արմատ առանձին անգործածական, որից ունինք* բոժգութիւն *«անոտիութիւն, փտութիւն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Իրենէոսի Ընդդէմ Հերձուածոց գրոց մէջ, էջ 106 «Գիտելով զփուտ և զթերև և զբոժգութիւն վարդապետութեանն նոցա»* (*լտ.* scientes quassum et futile doctrinae suae. *յն.* γινώσκοντες τὸ ἄστατον καὶ εἰκαῖον τοῦ δόγματος αὐτῶν)։ *Նոյն բառը գիտէ նաև Բառ. հրեմ. էջ 57* բուժկութիւն *«ապականութիւն» ձևով (տպուած է* բաժկութիւն, *բայց դրուած է* բու... *սկսող բառերի շարքը). Ոսկեբա իր բառարանում Իրենէոսից առնելով գրում է* նուժկութիւն *(տե՛ս Իրեն. հերձ, էջ 248 ցանկը)։— Արմատը դրինք* *բոժգ, *բայց կարող է լինել նաև* *բոժիգ *կամ* *բոժուգ։

Գտաւ ու մեկնեց Վարդանեան, ՀԱ 1910, 283 բ, որ և նոյնացնում է բառս Փիլոնի փոշկացեալ «փոշի՝ աղբ դարձած» բառի հետ։

ԲՈՃՈՃ *տե՛ս Բժիժ։*

ԲՈԼՈՋ *«strombe, փափկամորթ կենդանի որովայնոտն». ունի միայն Քաջունի, Հտ. Բ. էջ 662, Գ. էջ 38։*

*ԲՈԼՈՃ *«անսերմն՝ ստերջ անասուն» Վստկ. 199 (երկու անգամ), «առնական ան-*

կարողութիւն ունեցող» Սմբ. դատ. 6, 9, 127. ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 670 ա, իբր միջին հյ. բառ։

=Պրս. پولوج pulūj *«թուլանդամ, տկարանդամ, առնապէս անկարող». (*Будаговъ, Срав. слов. *1, 323 այս բառը թուրքերէն է համարում)։*

Ուղիղ մեկնեց Նորայր, անդ։

ԲՈԼՈՐ, ի, ո *հլ. «ամբողջ, ամէն» ՍԳր. Ագաթ. եգն. «կլոր, բոլորակ» Պզատ. տիմ. եփր. օրին. ՍԿմ. «լուսնի շրջան» Շիր. Պզատ. տիմ. Կամրջ. «երկնքի բևեռը» Աբիստ. աշխ. «ծագկի կոկոն» Իմ. բ. 8. «բզգեստի գնդաձև զարդ» Պիտ. «գրի մի տեսակ, բոլորգիր» Յիշատ. պտմ. Վրդն.—այս արմատից են ծագում՝* բոլորել *«պտրել, հիւսել. 2. շուրջը պատել. 3. շրջանր կատարել, վերջացնել» ՍԳր. Ոսկ. մ. ա. 24. Ագաթ. «ամփոփել, հաւաքել» եղիշ.* բոլորակ *ՍԳր. կիւրղ. թագ.* բոլորակութիւն *Ոսկ. ես.* բոլորանձև *Ոսկ. ես. Վեցօր.* երեքբոլորանձև *Վեցօր.* բոլորշի *ՍԳր.* բոլորովին *(կազմուած* բոլոր *բառի գործիականից՝ ին մասնիկով. համմտ. ամեն-և-ին, բն-աւ-իւն, լի-ով-ին, երամ-ովին և ն) Ագաթ. եղիշ. գրւում է նաև* բոլորովիմբ *խոր. Սրգ. Շնորհ. Բրձր. (կրճատ* բոլորովիմ*),* բոլորիմբ *Պիտիդ. Դամասկ.* բոլորեին *կամ* բոլորեբեան *(համմտ. ամենեբին, ամենեբեան, երկոբին, երկոբեան) եգն. Ոսկ. եղիշ. (ընտիր մատենագրութեան մէջ անկախ չի գործածւում. այլ միայն իբր կրկնութիւն* ամենեբեան *բառի հետ).* ծրարոլոր *Վրդ. պտմ.* բոլորապատել *«քաղաքը շրջապատել» Սմբ. պտմ. տպ. Մոսկ. 58 (իսկ տպ. Շահն. ունի* բոլոր պատեցին*). նոր բառեր են* բոլորգիր, բոլորտիք, բոլորաձուէր։

= Բնիկ հայ բառ՝ հնխ. bhel-, bhol- արմատից, -որ մասնիկով։ Այս արմատի հիմնական նշանակութիւնն է «ուռչիլ», որից յառաջացել են մի կողմից «բարձրանալ, միւս կողմից «գնդաձև (ուռուցիկ) կերպարանք առնել» նշանակութիւնները և յետոյ էլ «մեծ, խոշոր, հասած» իմաստը (տե՛ս Boisacq *1020)։ Հայերէնի մէջ «բարձրանալ» գաղափարից ունինք* բլուր*, որ կազմուած է հնխ.* bʰōl-*ձևից՝ -ուր մասնիկով. իսկ «գնդաձև» գաղափարի համար ունինք գուռ.* բուլ *«խմորից կտրուած մէկ գունտ, որ մի հաց կդառնայ» (>Ագլ.* բիւլ*, Ջղ.* բ'ուլ*, Գնձ. Ղրբ. Շմ.* պիւլ*)։ Այնուհետև «կլոր (գնդաձև)» գաղափարը գարձել է «կլոր (բոլորակաձև)»։ (Այս երկու գաղափարները շատ յաճախ են շփոթւում լեզուների մէջ. աշխարհաբարի մէջ կլոր *թէ՛ «բոլորակ» է և թէ՛ «գնդաձև». այսպէս է նոյն իսկ ֆրանս.* rond. *տե՛ս և գինդ բառի տակ)։ Այս իմաստով է կազմուած* բոլ-որ. *Մասնիկների յաւելման մէջ կայ ձայնավորների նմանութիւն.* bhol-*>*բոլ-որ *և* bhōl *>**բուլ-որ>*բլուր։ Վերջապէս «մեծ, խոշոր, հասած» գաղափարի դէմ ունինք հյ.* բոլոր *«ամբողջ»։ Յեղակից ձևերից, որոնք շատ բազմաթիւ են (տե՛ս* Pokorny *2, 177—9,* Boisacq *1020,* Ernout-Meillet *359), յիշենք 1) «ուռչիլ» իմաստից՝ հիւս.* bolach *«ուռուցք», լտ.* follis *«տոպրած պարկ, խողովակ փամփուշտ», ռուս.* болона *«ծառի վրայ ուռուցք» են. 2) «բարձրանալ» իմաստի ածանցները տե՛ս վերը* բլուր*. 3) «գնդաձև» իմաստից՝ հրպ.* ballo *(*bhol-n*) «գնդակ»,* bolōn *«եղորկել, գալարել, պլորել» մրդ.* boln *նոյն նշ.,* bolle *«գնդաձև տմանդ», հիւս.* bǫllr *«գնդակ», և վերջապէս 4) «մեծ՝ խոշոր» իմաստից՝ շվեդ.* bol *«հասած ու խոշոր, ժիտղ»,* bäl-stor *«շատ մեծ (իբր* բոլորովին ստուար*)», հիւս.* blā *«չափազանց, շատ»։ Հնխ.* bhel- *«ուռչիլ» իր համազօրն ունի* bul- *«ուռչիլ» արմատի մէջ. ուշադրութեան արժանի է յատկապէս հիւս.* bǫllr *«ամորձիք»=հյ. գուռ.* պլոր *նոյն նշ.։*

Այս մեկնութեամբ առաջին հետինակն է Thomaschek SWAW *1893, 66, թրգմ. ՀՄ. 1894, 18։ Աւելի յետոյ նոյնը* Petersson KZ *47(1916), 260 և վերջին անգամ* Scheftelowitz KZ *53(1925), էջ 250։ ՆՀԲ յծ. ոլոր. յն.* ὅλος *«ամբողջ, բոլոր», թրք.* ulu *«մեծ», արաբ.* kulli *«ամբողջ։* Peterm. *17, 38, 183 յն.* ὅλος*։ Տէրվ. Նախալ. 106 բ նախդիրով* ոլորել *բայից։—Հիւնք. հյ.* ոլորել *և յն.* ὅλος *բառերից։* Thomaschek*-ի մեկնութիւնը տե՛ս բլուր բառի տակ։* Bugge, Beitr. *41 յն.* πέρας *«ծայր, վերջ, սահման»*

ձևի միջոցով կցում է հլ. բլուր բառին և նրա ազգակիցներին, բայց KZ 32, 31 մերժում է: Patrubány SA 2, 250 տալիս է մի մեկնաբանություն (չունեմ ձեռքի տակ), որ ինքը մերժում է ՀՄ 1906, 345 և կցում է բառս բլուր ձևին:—Pedersen, Հայ. դր. լեզ. 226-որ մասնիկով բոյլ բառին: Petersson KZ 47, 260 հհլատ. bolr, bulr «լոճդ, մարմին», bǫllr «կլոր մարմին», շվէդ. bol «խոշոր, ուժեղ», մրգ. bolle, անգլ. bowl «գնդակ» ևն:

ԳԻՒ.— Ալշ. Մշ. բ'օլոր, Ախց. Երև. Խրբ. Սեբ. Սչ. բ'օլօր, Տփ. բօլօրֆ «շուրջը», Պլ. փօլօր «մի դահնկան, տաճկական դրուշ» (ծածկաձևուով), փօլօրֆը «շուրջը», Ռ. փօլօր «ամբողջ. 2. ծծկ. դահնկան», Տիգ. փօլ'օր «ամբողջ», փօլ'ուր «կլոր», Զթ. բ'ուլոր «բոլոր», բ'ուլորվել «միտքը ամփոփել», բ'ալորվել «շրջան կազմել», Վն. պիլ՚որ, Ասլ. բ'էօլէօր, Զթ. բ'իլիւր, բ'իլիւյ, Մկ. պիլիւր «շուրջը», Ղրբ. պիւ՚լիւր, Շմ. պիլէօ՚ր, Գոր. պիւ՚լէօր, Ողմ. բ'էօլօվ «ամբողջ», Ղզ. պլիւ՚ռիկ «կլոր», Հմշ. պօլօյդիֆ «բոլորաքիք»:— Ո ձայնաւորի ջնջմամբ և r բաղաձայնը լ-ի վերածելով կազմուած են՝ Պլ. բլօրել «ոլորել», բլել «փաթաթել» (այսպէս ունի արդէն Առաք. պատ. 455. արևմտեան դրականի մէջ էլ ընդունուած են պլորել, պլլել ձևերը). Ասլ. բլլէ՚լ, Խրբ. բլօրիլ, Հճ. բ'իլել, Զթ. բ'իլիլ «ման գալ, շրջիլ» (որ և բլլուիլ, Զթ. բէօլլել կս. համմտ. Զթ. իլլիլ<ոլորել), Ասն. (Բրքաիսս հայոց լեզուով) բրլէլէմէբ «փաթաթիլ» (Բրք. -լէմէբ բայակերտ մասնիկով: Նոր բառեր են բոլոր, բոլորիկ «կլորաձև առաններ», բոլորբովի, բոլորել «ծածկել», բոլորեշուրջ, բոլորմեն, բոլրկիլ. բոլբրտել, բոլորպատ են են: Համմտ. նաև Զղ. բ'ուլ, Ագլ. բիլ, Ղրբ. պիլ «խմորից կտրուած մի գունդ, որ մէկ հաց է դառնում»:

ՓՈԽ.—Բուշ. bələrel «գառնալ, յիտ գառնալ» (Finck, Die Sprache der Arm. Zigeuner ЗАН 1907, էջ 107): Վրաց. ხბლუ-ծი սարլուրի «крученный какъ веревка յուանի պէս ոլորած», შებოლოვება շերոլովերա «доканчивать աւարտել». առաջինը «կլոր, ոլորել» իմաստից. երկրորդը «ամբողջ» իմաստից. վերջինը պահում է հայերէնի արմատական բոլ ձևը, որ ունի նաև Ողմ. բ'էօլօվ «ամբողջ»:

ԲՈՒԽ «փորոքնալ արմատ ծառոց». ունի միայն Քաջունի, հտ. Գ. էջ 38, որ և հտ. Բ. էջ 357 մեկնում է «փլատակք գահնիէն շինուածոց»:

ԲՈՒՈՒԽՃ «խրատուիլակ, խոհիճ, երևակայական էակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 112՝ բնկիճեալ բառի բացատրութեան մէջ (գրուած բոխոյ խիճ):

ԲՈՒՇՈՐ «տաճիկ». ունի միայն Բառ. երեմ. էջ 56:

+ ԲՈԿ «բորիկ, ոտքը մերկ» ՍԳր. Եփր. Թգ. 433. որից բոկագնաց Ոսկ. Եփես. բոկանալ ՍԳր. բոկութիւն Եփր. նոյն. բոկանի Մագ. բոկոտն Արշ. 34. կթ. Սարգ. յկ. բոկիկ Շնորհ. առակ. Վստկ. 161. Տաթև. ձմ. ճծ. (երիցս). բոկական (նորագիւտ բառ) «անոտի, բնդունայն» Իրևն. հերձ. էջ 38 (տե՛ս վարդանեան ՀԱ 1910, 283 բ). բոկոլոր (գրուած բոկոլոռ) «ոտաբորիկ» (նորագիւտ բառ) Սոկր. նկեղ. պտմ. էջ 308:

= ՀԵվ. bhosó- ձևից, որի միւս ժառանգները են հլ. bosŭ «բոկոտն», չեխ. bosý, ռուս. босъ «բորիկ», լիթ. bãsas, լեթթ. bass «բոկոտն». համբ. գերմ. bar «մերկ», գերմ. bar-fuss «բորիկ», հանդլ. baer, հիսլ. berr «մերկ», անգլ. bare «մերկ», bare-foot «ոտաբորիկ», bare-headed «գլխաբաց», bare-legged «սրունգները մերկ» (Walde 271, Trautmann 28, Berneker 77, Kluge 39, Pokorny 2, 189): ՀՆեվ. bhosó- առել է նախ հլ. բո-, որի վրայ աւելանալով կ մասնիկը, յառաջացել է բոկ: Շատ կարճ բառերը դառապարտուած են կորչելու կամ կրճատից ազատուելու համար՝ պէտք ունին որևէ մասնիկով զօրանալու: Այսպէս է եղել նաև բոկ, որ դառադականների մէջ մի նոր մասնիկ էլ առանալով դարձել է բոկիկ և յետոյ՝ բաղաձայնների նմանութեամբ՝ բոբիկ, ճիշտ ինչպէս Սեբաստիոյ բարբառով ունինք ամբբուզ<*ամպակուզ<անապակ-ուկ «ոչ պարարտ, անիւղ, անհամ»:—Հիւրշ. 430:

Տէրվ. Նախալ. 94 յն. φαίνω «երևալ»

ևն ձևերի հետ հնխ. bha «փայլիլ, երեվալ» արմատից, բոկ բառը ընդունելով բուն «բաց»։ Հիմնք. հանում է փոկ բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Հիւբշ. ZDMG *35 (1881), 654*, որից յետոյ Kretschmer KZ *31 (1889). 414*, Meillet MSL *8, 154 և 10, 269*, Esquisse *18*։—Petersson, Ar. u. Arm. Stud. *93* վերջաձայն կ յաւելումը մերկ բառի նմանութեամբ է կարծում։

Գիմ.— *Երև.* բ'օրիկ, *Մշ.* բ'օգիգ, բ'օրիգ, *Ննխ. Պլ.* բօրիգ, *Ալշ. Խրբ. Սեբ. Սչ.* բ'օրիգ. *Հմշ.* պօրիգ, *Տփ.* բօ'բլիկ, *Ախց. Կր.* բ'օրլիկ, *Ջղ.* բ'ոփիկ, բ'ոփլիկ, *Ռ. Տիգ.* փօրիգ, *Ագլ.* բm'պիկ', *Ոզմ.* բ'իպլէկ, *Վն.* պէօպիկ, *Սլմ.* վոտրպէօպիկ', *Գոր.* պէ'պիկ, *Հճ.* բ'իրիգ, *Զթ.* բ'իրէգ, *Ասլ.* բ'էօրիյ, *Մկ.* պիւպիկ, *Մրզ.* պէօպիւկ, *Ղրբ.* տէ'պէգ', *Հւր.* նաբրբէրիգ «ոտաբոբիկ»՝ աբ «ոտք» բառի բարդութեամբ։

Փոխ.— *Վրաց.* ბოშლოკა պոպլիկա «ճաղատ». Ձևի համար հմմտ. *Ախց. Կր. Ջղ. Տփ.* ձևերը, որոնք բոպլիկ ձևից են յառաջանում։

+ ԲՈԿԵՂ «մի տեսակ կլորակ հաց». մէկ մէկ անգամ ունին *Վրդն. եղ.* և *Տաթև.* Հարց. *357.* Պօլսահայ գրական լեզուի մէջ նշանակում է «մի տեսակ օղակաձև հաց, մատնաչափ հաստութեամբ և շատ կակուղ, տճկ. սիմիթ» (այս տարի տաճկահայ գաղթականները նոյնը մատրին Երևան). Հին բո. մեկնում է «պղակունդ. բոկեղ»։

= Հնխ. bhōg- «խորովել, տաքացնել, տապակել» արմատից. բոկ «խորիծի ալրիլը, ալրած խորիծ» արմատական ձևով գտնում ենք Պարսիգակի դաստակերտում։ Միւս ժառանգներն են յն. φώγω «խորովել, աղանձել», φώγανον «գարի բովելու տապակ», անգս. bacan, bōc, հրգ. bahhan, backan, գերմ. backen, buk, հիսլ. baka «փուռի մէջ եփել, խորովել, տաքացնել» (Pokorny *2, 187*, Boisacq *1044*)։ Սրանց արմատը դրուում է bhōg- (կարճ bhog²- ձևը պիտի տար հյ. բոկ), որ համապատասխանում է ճաշած g ճակատով՝ bhē «տաքացնել, խորովել» պարզական արմատից։ Եւ որովհետև այս վերջինից ունինք հյ. բով, տուտ բոկ, բոկեղ ևս պէտք է դնել բնիկ հայ. իսկ Կովկասեան ձևերը (ստ. բոկի «ալրած հաց», վրաց. ბუდვა բուդվա «ալրել, խանձել») կա՛մ հայերէնից փոխառեալ և կամ պատահական։—Աճ.

ՆՀԲ (պղակունդ բառի տակ) բոկեղ հաղնում է լտ. placentula հոմանիշից։ Վերի մեկնութիւնս առաջարկեցի Meillet-ին, որ պատասխանեց թէ յաճախ է մրատածել համեմատելու բոկ=յն. φώγω։

Գիմ.— Ասլ. բ'էօգէ՝ղ «ոտաւով խմորուած կլորիկ կամ մանեկաձև հաց, որ պատրաստում են նոր տարւայ առթիւ և մինչև Տեառնընդառաջի օրը պահելով՝ նոյն օրը իրար են բաժանում»։

Փոխ.— Հայերէնից յայտնապէս փոխառութիւն է գնչ. bokoli «տաճկական սիմիթ», Paspati ասում է այս բառի համար թէ առատաբանութիւնը անծանօթ է. գնչուերէն բառի միւս «օղակ, յետոյք» նշանակութիւնները (հմմտ. ասոր. ‘ezqəvā «օղակ և յետոյք, սրբան») ձևացած են փոխաբերաբար։

ԲՈԿՈՒ, ի–ա հլ. «ճոռում, ճարատարախօս, ճարպիկ, լեզուանի». ունի միայն ՓԲ, առանց վկայութեան. որից բոկոկել «ճոռոմել» Բառ. երեմ. *էջ 56*։

*ԲՈՀ «ամայի, անշէն». գործածուած է միայն բոհ և բոհ դարձուածի մէջ, որ փոխառնալ է ասորերէն Աստուածաշնչի Ես. ա. 2 համարից. տե՛ս բոհ և բոհ։

ԲՈՀ «շողիք, լորձունք». ունի միայն ՋԲ և սրանից էլ ԱՔ. չգիտէ ՆՀԲ. ենթադրուած է բոհրոհել կամ բոհրոխել բառից, որ մէկ անգամ ունի Ագաթ. տպ. 1909, էջ 380 «եւ քաղաւորն խողացեալ՝ մեծաձայն ճչէր, կանչէր, խանչէր բոհրոհելով, փրփրացեալ» (ձձ. բոհրոհելով, բոհրոխելով, բոռոհելով, բոխոհելով)։ ՆՀԲ այս բառը մեկնում է «խանչիլ խոզի», իսկ ՋԲ «լորձունս կաթեցուցանել, որպէս առնեն վարազք և կատաղեալքն. կամ հանել զձայն խոզի բո՛հ բո՛հ». ԱՔ ունի միայն «շողիքը վազցնել», որ թերևս ուղղագոյնն է, ինչպէս երևում է փրփրացեալ ձևից։

ԲՈՀ «նիւթ կամ թոզ». այսպէս ունի Բառ. երեմ. *էջ 56*. ինչ լինելը յայտնի չէ. բայց

եթէ նշանակութիւնը կարդանք «հիւթ կամ թուք», բառը կնոյնանայ նախորդի հետ։

ԲՈՀՄՈՒՆՔ *«սպառնալիք, վախ, երկիւղ, սոսկում» Յհ. կթ. (երկու անգամ միայն ունի՝ հյց. բոհմունս, էջ 163 և սեռ. բոհմանց, էջ 421 ձևով. որից երևում է, որ ուղղականն է *բոհմունք, նգ. *բոհումն, արմատը բոհ?). գրուած է բաւմունք Կոստ. երզն. 163։*

Պատահական նմանութիւն ունի պրս. بيم bīm *«վախ, երկիւղ», ուր* m *արմատական է, մինչդեռ մեր բառի մէջ մ մասնիկ է։*

ԲՈՀՐԵԼ *«խաբել, դաւաճանել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբ. հրտր. էմինի, էջ 352 «եւ թէ յետ մեր խախտեսցէ որ զայս վճիռ և կամ բոհրել և դաւաճանել խորհի ի միւս կողմանէ՝ անէծս ցաւագինս ժառանգեսցէ ի մէնջ»։ Այս բառի տեղ հրտր. Շահն. Բ. 229 ունի խոռել «գողանալ, հղծել»։ Գաւառականների մէջ բոհրել նշանակում է «խորովել, աղաւնձել». վերևի բառն էլ արդեօք սրա մի նոր առո՞ւմն է, թէ անջատ բառ։*

+ **ԲՈՂ** *կամ* **ԲՈՂԻԿ** *«մի տեսակ բոյս է.* ferula assa foetida L *(ըստ Արթինեան, Տունկերը, Ա. էջ 48—49)» Գաղիան. Բժշ. որից իգարող «ակրկարհա բոյսը» Գաղիան. (ըստ Հայբուսակ § 365),* բողիճ *«բող բոյսից վազած խէժը» (ՀԲուս. § 364)։*

=Բնիկ հայ բառ. ծագում է հնագոյն հյ. բող «բոյս, ծիլ» բառից, որի այս առաջին և հիմնական նշանակութիւնը կորչելով՝ պահուել է միայն վերևի երկրորդական և մասնաւոր նշանակութիւնը։ Առաջին նշանակութիւնից ծագած է կրկնութեամբ բողբոջ *(ինչպէս ունինք դող արմատից դողդոջ). նոյնից է նաև կ մասնիկով՝* բողկ. *իմաստի զարգացման համար հմմտ. լտ.* radix *«արմատ, բողկ», իտալ.* radice *«արմատ, բողկ, շողգամ», ֆրանս.* radis *«բողկ»։ Հայ. բող ձևին ցեղակից է լտ.* folium *«տերև, թերթ», և երկուսը միասին հնխ.* bhol-, *որին պատկանում է թերևս նաև յն.* φύλλον *«տերև, թերթ, բանջար, բժշկական բոյս» և աւելի ապահովութեամբ լտ.* flos *«ծաղիկ», գալլ.* Bλιτυουντία *«մի տեսակ բոյս» (ըստ Դիոսկորոսի), հիւլ.* bláth *«ծաղիկ», գոթ.* blōma, *հդգ.* bluoma, *գերմ.* blume, *անգլ.* bloom *«ծաղիկ», հբգ.* blat, *գերմ.* blatt, *անգլսք.* blaed *տերև», անգլ.* blade *«փոքրիկ տերև, խոտիկ, ծղօտ» են (*Walde *303,* Boisacq *1041,* Kluge *60, 69,* Pokorny *2, 176,* Ernout-Meillet *355, 358)։—Ա.ճ.*

Իմ այս մեկնութիւնը հրատարակուած է MSL *20, 162։*

Գիւղ.— Երև. բ'օխ, Տփ. բուխ, Վն. պէօխ, Զթբ. պէ'խի (գիւղերում պի'ւրի), Սլմ. պուէղիկ *(սեռ. պուէխկի), այլուր ունինք նաև* բողի *Մշ. Վն., բողիկ Եւդ. Մշ. Վն. պեճի Զգ. բոճի Գոր. բոխիճ Ջղ. որոնք նշանակում են «մի տեսակ դաշտային մասնաւոր գառնահամ բոյս, որի թթուն շատ յարգի է Հայոց մէջ. Բրբ. չաշուր». նոյն բոյսը Արբ. և Երզ. կոչւում է* բոժախ *և որովհետև տեղ տեղ էլ ունինք* ժախ, *ուստի* բոժախ *կազմուած է* բոխ + ժախ *բառերից։*

Փոխ.— Ըստ որում բողիկ *կազմուած է* -իկ *մասնիկով* բող *արմատից, որ հնդևրոպական ծագում ունի, ուստի հայերէնից փոխառեալ պէտք է համարել սասր.* حلبا balīqā *«ferula communis» (*Brockelmann *39). Յայտնի է, որ Հայաստանը նշանաւոր տեղ ունի բողիկի արտադրութեան և գործածութեան մէջ։*

+ **ԲՈՂԲՈՋ**, ո հլ. *(յետնաբար նաև ի, ի-ա հլ.) «ծիլ, ընձիւղ» Յոբ. ժե. 30. Երգ. բ. 13. Ագաթ. «ծնունդ, զարմ, սերունդ, հետ» Յհ. իմ. Երև. Յհ. կթ. Խոր. Հռիփս. «Քրէնիի կոհակները» Նիւս. Երգ. «պղպջակ, ցատկող ջուր» ԱՒ. «գետնախնձորի նման մի սունկ, աստղ, լտ.* tuber, *ֆրանս.* truffe, *տումբալաձ» (գրուած նաև* բողբուճ, բխբուճ*) Բժշ. (ունին միայն Նորայր, Բառ. ֆր. էջ 1249″ և ՀԲուս. § 367)։ Այս բառից են* բողբոջել *Բ. Քանգ. իգ. 5. Ածբ. յղ. յար. Կիւրղ. գնձ.* բողբոջազարդ *Մծբ.* բողբոջեցուցանել *Լմբ. իմ.* բողբոջանալ *Փիլ. այլաբ.* բարեբողբոջ *Նար. խշ. Յհ. գառն.* դեռաբողբոջ *Պիտ.* համաբողբոջ *Դամասկ.* հրաբողբոջ *Տօնակ.* նորաբողբոջ *Ճառընտ. Շար.։*

=Կրկնուած է բող *պարզական արմատից (հմմտ.* դող-դոջ, պաղ-պաջ*), որի ցեղակցու-*

թեան մասին լտ. folium *են բառերի հետ՝ տե՛ս* բող:—*Աճ.*

Այս մեկնութիւնը տուած եմ ՀԱ 1899, 234:—Patrubány *տե՛ս* բուխ *բառի տակ:* Scheftelowitz BB *28, 298 գոթ.* brikan, *լտ.* frango «*կոտրել*» *բառերի հետ:*—*Վերի ձեով վերջին անգամ Աճառ.* MSL *20, 162:*

**ԲՈՂԵԱՅ ԲԻՐ «ծայրին կաշվարեայ գլխատակներ ունեցող գաւազան՝ ծեծի համար». մէկ անգամ ունի Յայսմ. նոյ" 5, որ տպագրեալ օրինակում այսպէս է. «Մանր մանկտին* բողաբrof *հարկանէին զաղաթինն Քրիստոսի»:*

=*Յն.* βολίς *բառն է, որ* Bailly *367" մեկնում է «նետելու առարկայ, նետ, սլաք»,* Sophocles *312' «*missile, arrow, javelin *տէգ, նիզակ, նետ». երկուսն էլ համապատասխան չեն մեր բառին. աւելի լաւ է Ագաթեան, Բառագիրք յն. էջ 184 ա «Երկան չուանի մը ճոթը կապուած գունա մըն է, որ նաւավարները անով ծովին խորունկութիւնը կը չափեն». նոյն է և նյն.* βολίς «*ծովի խորաչափ, գնատակ*»: *Յոյն բառը ծագում է* βάλλω «*նետել*» *բայից:*

ՀՀԲ սխալ կարդալով բառը՝ շինում է բոզաբիր, *որ և մեկնում է «բող ծեծելու բիր»: Նրան է հետևում ՓԲ, Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ:*

\+ ԲՈՂԿ «*բողկ բոյսը. տճկ. թուրփ*» *Գազիան. Բժշ. վստկ. 33, 66. որից* բողկուկ «*նոր բնձիւղած եղջիւր*» *Վեցօր. 190:*

=*Կազմուած է կ մասնիկով՝ հյ.* բող «*ծիլ, բոյս*» *բառից. Մուշի (Ալաշկերտի) բարբառը պահում է դեռ* բող *ձևը՝ տիս.* բողկ: *Բուն ծագումը տե՛ս* բող:—*Աճ.*

Այս մեկնութիւնս տե՛ս MSL *20, 162: Պատահական նմանութիւն ունի ասոր.* pūglā «*բողկ*»:

ԳԻՒ.— *Ալշ. Մշ.* բ'ող! *Ախց. Կր.* բ'օղկ. *Երև.* բ'օխկ. *Հճ.* բ'ողգ. *Ննխ.* բօղգ. *Խրբ.* բ'օղգ. *Հմշ.* պօղգ. *Մշ.* բ'օխգ, բ'ըխգ. *Վն.* պո̂խկ. *Ագլ. Տփ.* բուխկ. *Տիգ.* փուղգ. *ՋՓ.* բ'իւղգ. *Մկ.* պէօղկ. *Սեբ.* բ'էօղգ. *Ղրբ. (գիւղերը) և Շմ.* պէօխկ. *Սլմ.* պուէխկ. *Մրգ.* պրէխկ'. *Ղրբ.* պէխկ. *Ասլ.* բ'էօղ*. *Ոզմ.* բ'իւղ': *Նոր բառեր են* բողկաթաղ, բողկաթեր, բողկահաց, բողկուկ:

ՓՈԽ.— *Վրաց.* ბოლოკი բոլոկի, ბოლოკი պոլոկի «*բողկ*», ბოლოკა բոլոկա «*շողգամ*», *թուշ.* բոլոկ, *օսս.* բուլկ, *լազ.* բուլեկի, բուլեճի «*բողկ*»:

ԲՈՂՈՆ *տե՛ս* Աղաբողոն:

ԲՈՂՈՔ, ո *հլ. (յետնաբար կայ նաև յզ. սեռ.* -աց) «*բարձրաձայն գանգատ*» *ՍԳր. Փարպ. եղիշ. ոճով աւում է* բողոք արկանել, բողոք հարկանել, բողոք բառնալ, բողոք ունել «*բողոքել, բղաւելով գանգատիլ*» *ՍԳր. Փարպ. եղիշ. որից* բողոքել *ՍԳր. Ագաթ. եզն.* բողոքիչ *Նար.* բողոքումն *Պատ. Նար.* մարգարէաբողոք *Անան. ևկեղ. նորաձև նշանակութեամբ գտնում եմ* բողոք «*մունետիկ*» *և* բողոքել «*մունետիկի բարձրաձայն յայտարարելը*». *Համմտ. «Եթէ ոք գտանէ ինչս և քարոզն բողոքէ և գտողն խորէ... Եթէ բողոքն ոչ բողոքէ և զտէր ընչիցն ոչ ճանաչիցէ... իսկ եթէ բողոքն բողոքէ և զտէր ընչիցն ճանաչիցէ...» Աթան. հրց. էջ 429: Նոր գրականին յատուկ բառեր են* բողոքական, բողոքագիր, բողոքարկու, բողոքաւոր, բողոքաւոր *են:*

Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 207 ողոք *բառից բ բացառականով: ՆՀԲ աստղականն ձայնիս* ողոք. *լծ. և յն.* βοή «*ձիշ, աղաղակ*»:— *Բ մասնիկով* ողոքել *բայից հանում են նաև էմին, Հայ. քերակ. 1846, էջ 38. Տէրվ. Նախալ. 63, Գազանճեան, Արևել. մաս. 1902, 76 և Հիւնր:*— *Տէրվ.* Altarm. *10 յն.* φη-μί *և լտ.* loqu-i «*ասել, խօսիլ*» *բառերից բարդուած՝ իբր կրկնական:*— *Հիւբշ.* ZDMG *30, 774—9 քննադատելով այս վերջինը, ասում է. «լեզուաբանութեան առաջին դարն է»:*—Meillet MSL *11, 391 իբր բնաձայն համեմատում է անգլսք.* bellan «*գոչել*», *հգ.* bellan «*հաչել*», *հիսլ.* belja «*մռնչել*», *յն.* φλοῖσβος «*ժխոր*», φλύος «*շատախօսութիւն*», φλύαρος «*դատարկաբան, շատախօս*», φλύαξ «*խեղկատակութիւն*» *են ձևերի հետ (*Boisacq *1032 և 1030 և* Walde *301 այս բառերը կցում են յն.* φλέω=*լտ.* fluo

«բղխիլ, հոսիլ» բառերին)։ Petersson, Ar. u. Arm. Stud. 75 հլ. բաղբաճջել, հհիւս. belja «մռնչել», լիթ. bylà «խօսք», հին պրուս. billīt «խօսիլ» բառերի հետ։

ԳԻՒՐ.— երև. բօղօֆել, Ոզմ. բ՚օղօֆիչ ևն։

ԲՈՂՋ «պալար, վէրք, խաղաւարտ». որից բղջուն «պալարոտ, վրան պալար դուրս եկած». երկու բառերն էլ մի մի անգամ ունի Բառ. երեմ. էջ 144 (խոյլ բառի մեկնութեան մէջ գործածուած)։ Բառիս գոյութիւնը և նշանակութիւնը հաստատում է արդի գաւառականներից Տիգ. բողջոց «վէրք, պալար», որից բողջոցուիլ «վրան վէրքեր դուրս գալ»։

* ԲՈՄԲԻԼՈՍ «շերամի որդը». մէկ անգամ ունի Վեցօր. ը. 176 «(Հնդիկ որդն) գայլ լինի ի կերպարանս այլ իրի իմն՝ որ անուանեալ կոչի բոմբիլոս»։

= Ծն. βομβύλιος «շերամի որդ», որի հետ նոյն են βομβυλίς, βομβύλιον ձևերը. համմտ. նաև βομβύκιον «շերամի խոզակ», βόμβυξ «շերամ, մետաքս».—փոխառեալ է արևելքից, որի վրայ տե՛ս բամբակ բառի տակ։—Ծանրաբէնից է փոխառեալ լտ. bombylis «շերամի խոզակ»։ — Հիւբշ. 344։

Ուղիղ մեկնից նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ ևն։

○ ԲՈՄԲԻՒՆ «ահագին ձայն, անդունդներից եկած դղրդիւն, արձագանգ» ՍԳր. Փարպ. «ծովի մռնչիւն» Գր. տղ. եմ. «թմբուկի ձայն» Լաստ. «քնարի տկար ձայն» Նիւս. կազմ. «դատարկ անիմաստ խօսք» (համմտ. Պլ. ջուրի ձայն) Ոսկ. յհ. ա. 13 (Մի՛ իբրև բոմբիւն ինչ բանքս թուիցին). այս նշանակութիւնը չունի ՆՀԲ։ Նոյն բառն է բմբիւն «որոտումի ձայն» Տօնակ.։

=Բնաձայն բառ. արմատն է բոմբ. համմտ. բմբիւն, ռմկ. զմփ զմփ, գիւմփ գիւմփ, գռ. բոմբ ձէն «խրոխտ ձայն» (Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 113՛). յն. βόμβος «խուլ աղմուկ որոտման, քամու, ականջի բզզոցի, երգի և այլն», βομβέω «բզզալ մեղուի, ճճիների, ականջի, մռնչել ծովի, գոռալ որոտման», լտ. bombus «աղմուկ (մեղուի, ականջի, ձիու ևն)» (տե՛ս Boisacq 126, Walde 94). բայց սրանք կապ չունին հայերէնի հետ։—Ա՛ճ.

ՆՀԲ և Հիւնք. լծորդ են դնում վերի յն. և լտ. ձևերի հետ։ Բնաձայն է համարում Աճառ. ՀԱ 1899, 204։

ԲՈՅԹ, ո, ի–ա հլ. «մեծ մատը» Ոզր ե. 12. Եփր. վկ. արև. որ և բոյքն, ն հլ. (-ին, -անէ, -ամբ) Եփր. համաբ. Մաշտ. ջահկ. նմանութեամբ բոյթ նշանակում է նաև «նուագարանի վրայ թելերը ամրացնելու սեպ» Յկ. ղրիմ. որից էլ բուրակ «նուագարանի թելերը պընդելու բանալի» Յկ. ղրիմ.։—Բոյթ նշանակում է նաև «մսի կակուղ կտոր». այս իմաստով առանձին գործածուած չէ, բայց բարդութեամբ ունինք լեռդաբոյթ «լեարդի վարի ծայրը» ՍԳր. Կանոն. էջ 54. ուկականաբոյթ «ականջի բլթակը» Կոչ. 311 (սխալմամբ գրուած անկանաբոր, որ ՆՀԲ կարդում է ուկականաբոյթ կամ ականջաբոյթ)։— Նոր գրականում ունինք բթամատ «բոյթ մատը» (փոխանակ ասելու բուրամատ)։

Bötticher, Arica 71, 165 կիմբ. bawd, որ մերժում է Lag. Arm. Stud. § 403։ Հիւնք. փուրալ բառից։—Meillet MSL 12. 431 համեմատում է սանս. bhûri- «առատ, ուժով, շատ», bhávīyān «աւելի առատ», հրգ. buro- (bang) «շատ (երկար)». այս անունը տրուած է բոյթին՝ իր հաստութեան պատճառաւ։ —Karst, Յուշարձան 418 հլ. բուբ «հաստ, գալ» բառի հետ։

ԳԻՒՐ.— Ալշ. Ախց. Սեբ. բ՚ուբ, Տփ. բուբ, բիբ, Մշ. բ՚ուա, Ասլ. Ոզմ. բ՚իւբ, Մկ. պիւբ, Ղրբ. պիւբնը, վն. պիւբ, Խրբ. փօբ, Զթ. բ՚օբ, բ՚բդ՚, երև. Զղ. բ՚իբ, Հճ. բ՚իբմօղ, Ակն. բ՚բբնիւգ.— այս բոլորը նշանակում են «բթամատ», իսկ Ագլ. կորցրած լինելով հլ. մատն բառը, նրա փոխարէն գործածում է բիւբ «մատ»։— Նոր բառեր են բբել կամ բոթել «հրել, մշտել» (որի հին վկայութիւններն են բբել «ձեռքով մշտել» Վրդ. առկ. 48 բթելով հանին ի պալատէն Զքր. սարկ. Ա. 73). բբխեղդ, բուբանոց, բուբնոց, բուբիկ, բուբակռունկ, բուբմանճ.— Բառ. երեմ. 55 ունի բիբ «մատնահար» բառը, որ նոյն գռ. բիբ ձևն է։

ԲՈՅԹ «անիւի շրջանակ, հնց». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործած-

ուած Սիւն. քեր. 209, Համանիշների մի շարքի մէջ՝ իբրև համանիշ ներ բառի. «Անիւ և հզուղ, առեղ և աւարտք, հևան և դանդանք, կունդք և ականոց, հեց և բոյթ, կապերտ և գորգ, ձի և դղի, երամակապան և կուտպան, բիր և մահակ»։

Նշ՚Ր և Ա՚Ր չեն յիշում բառս, թէև ծանօթ է իրենց՝ ներ բառի վկայութեան մէջ։ Երևան հանեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 104։

*ԲՈՅԾ, ի–ա հլ. «դնդ, հնար, դարմանն» Պիտ. բառիս համար չորս ընտիր վկայութիւն է գտնում Նորայր, Հայկ. բառաք. էջ 53 «Բոյժս գտանէ հերձուածողն. տնսանե՞ս, ասէ, զի նովաւն՝ սպասաւորութեան գուշակէ» (Սիրեր. ն. էջ 96. տպուած բոյծս). «Բոյժս իմն ի բանիս գտանեն հերձուածողացն աշակերտք» (Սիրեր. Բ. էջ 16, ձեռ. բուժս). «Եւ այնու բոյժս իմն գտանեն հերձուածողքն» (Սիրեր. Դ. էջ 68. ձեռ. բուժս). «Եթէ մեք գայթնիցեմք ընդ նմա, նա չիշխէ գտանել և եթէ մեք թուլամորթք լինիցիմք, նա բոյժս գտանէ» (Ոսկ. Եփես. իր. էջ 923)։ Այս արմատից են ծագում բուժել «բժշկել, առողջացնել» եզն. Ոսկ. մ. բ. 10. յհ. ա. 20. բուժիչ եզն. բուժակ «բժիշկ» Փիլ. լին. (այժմ «ֆելդշէր»). բուժան «դարման» Պիտ. Նեղոս 690, բուժիկ «բժի՞շկ» Առաք. պատմ. 340. Համմտ. բուժկութիւն «բժշկութիւն» Թէոդ. խչ. դժուարաբոյժ Փիլ. նոր գրականում կազմուած են բազմաթիւ գիտական բառեր՝ ինչ. անասնաբոյժ, վիրաբոյժ, ատամնաբոյժ, բնկաբոյժ, ակնաբոյժ, յիմարաբոյժ, ջրաբուժութիւն, ելեկտրաբուժութիւն, ճամանաբուժութիւն են։

= Պհլ. bōž- ձևից. Համմտ. գնդ. buj. baog- «լուծել (գոտին), մաքրել, ազատել, փրկել», baoxtar «ազատարար, փրկիչ», buxti «ազատումն, փրկութիւն», պազենդ. bōxtan «ազատել, փրկել, դերծուցանել», bōžišn «ազատում, փրկութիւն», buxt-ruānī «փրկութիւն հոգւոյ», պհլ. bōxtan «ազատել, փրկել», bōxtār «փրկիչ», բելուճ. bōjag, bōžaγ «լուծել, բանալ, քակել» (Bartholomae 916—17, Pokorny 2, 145). բոլորի նախաձև է հնխ. bheug(h)- «հեռացնել, պրծնիլ, ազատուիլ»։ Հայերէնը փոխառեալ է իրանեանից, ինչպես ցոյց է տալիս ժ ձայնը և կապ չունի բժիշկ բառի հետ։ Իրանեան բառերի ցեղակիցներն են ըստ Walde 326՝ լտ. fungor «կատարել վերջացնել» (իբր թէ գործը կատարելով ազատիլ. Համմտ. ռմկ. խալըսիլ «վերջացնել» < արաբ. xalāṣ «ազատութիւն, փրկութիւն»). գոթ. us-baugjan «աւրնել, սրբել», պալի pari-bhuñjati «մաքրել, սրբել», vi-nib-bhujati «բաժանել»։ — Հիւբշ. 122։

Böttticher, ZDMG 1850, 352 բժիշկ բառի հետ? Ուղիղ մեկնութիւնը տուաւ Justi, Zendsp. 215։ Հիւբշ. Arm. Stud. 23 դեռ հաստատ չէ թէ փոխառեալ է իրանեանից։ — Հիւնք. բժիշկ բառից համառօտեալ։ Գազանճեան, Աբև. մատ. 1902, 76 ոյժ բառից՝ բ մասնիկով։

ԲՈՅԼ, ի հլ. «խումբ (մարդոց, երկնքի, ղեչերուների, եղնիկների և ցուլերի համար գործածուած)» Փարպ. Պիտ. Նար. Վրք. սեղր. 797. բոյլք «բազմաստղք, pléiade» մհյ. բառ՝ ըստ Նորայր, Բառ. ֆր. 653 բ (առանց վկայութեան ՆՀՐ և ՋՐ). որից բազմաբոյլ Նար.։

Brosset JAs. 1834, XIV. 369—405 վրաց. պոլցի բառի հետ։ Böttich. Arica 79, 312 ոյլ բառի հետ = սանս. bhūri- «առատ, շատ»։ Հիւնք. յն. βουλή «խորհուրդ, ժողով» բառից։ Meillet MSL 12, 431 սանս. bhūris «առատ, շատ», գոթ. uf-bauljan «ուռիլ»։ Գազանճեան, Աբև. մատ. 1902, 75 բ մասնիկով ոյլ բառից։ Karst, Յուշարձան 421 ոյլ բառի հետ թրք. küllü «ամբողջ» (գլուխ բախտաբար արաբ. كلّى kullī բառն է)։ Petersson KZ 47, 276—7 բոլորովին ճիշտ է գտնում Meillet-ի մեկնութիւնը, որի վրայ աւելացնում է նաև լիթ. búris, լեթթ. bûra «դէզ, հօտ»։ Pedersen KZ 39, 387 և 406 յ ձայնի յաւելումով բոլոր բառի հետ։ Մերժում է Pokorny 2. 115 և ընդունում է Meillet-ի մեկնութիւնը, դնելով հնխ. bhu- «ուռչիլ» արմատից՝ աճած l աճականով։ — Գւռ. բուլք ձևի հետ նոյն է ալթալ. بولوچ pölök «ցած և փշոտ

*թուփ» (*Будаговъ *1, 323), որ պատահական նմանութիւն միայն ունի, քանի որ կայ գւռ. բուլ «թուփ»:*

Գիր.— Ալշ. Երև. բ'ույf, Տիգ. փույ'f, Խրբ. բ'օյf «աստեղատունը», Զթ. բ'լի «մի աստղի անուն է».— գաւառականներում ունինք նաև տարբեր իմաստներով. այսպէս՝ 1. Ակն. բ'օլ «խումբ» (ըստ Մաքսուդեանի). 2. Հմշ. պույf, Ալշ. Մշ. Բլ. բ'ույլ «թուփ», Խթ. (բույ) «մի շատ թփերի խումբը». 3. Երև. բ'ույք «ձիւնի հիւս». սրանից 1—3 հաւանաբար վերի բոյլ բառի տարբեր առումներն են միայն, իսկ վերջին իմաստով ծագում է բլիլ (փուլ գալ) բայից, քանի որ ասինք՝ «Մի օր ձիւնի բույքի տակին մնացինք: Ձիւնի ամբարտակը բլեց մեր վրայ» (Պոշեան, Շահէն, էջ 227):

Փոխ.— Մատ, Тексты и разс. հա. IV, յաւել. հլ. բոյլք *բառից փոխառեալ է դնում վրաց. ბოლუჭი* բոլուչի «сонмы, *խումբ, ամբոխ, բազմութիւն», որ սակայն յայտնապէս Խրբ. كولك* köluk «*խումբ, դումարտակ» բառն է, ինչպէս ասի և Զոլբինով[2] 113, և բնաւ կապ չունի հլ. բոյլ, բոյլք բառի հետ:*

ԲՈՅԼ. *անստոյգ բառ, որ գտնում ենք միայն ի բոյլ անկանել «նուագիլ, թնդեանալ» ոճի մէջ. «Շնորհք Հոգւոյն բաշխեալք և կեանք պարգեւեալ. ծանունքն ի բոյլ անկեալ և կարճեալ» Ոսկ. մ. բ. 14. անշուշտ կայ գրչագրական մի սխալ. նշՒ ուղղում է ի բաց անկեալ:*

\+ ԲՈՅՄ *«անուցում». արմատ առանձին անգործածական (նշՒ-ի յիշած օրինակների մէջ բոյժ ուղղելի է բոյժ. տե՛ս այս բառը). որից* բուծանել *«անուցանել, պահել մեծացնել» ՍԳր. Եզն.* բուծել *Կաղանկտ. Մագ. դամագտ.* բուծարան *Ճառընտ.* բուծումն *Պրոկղ. ծն. Ճառընտ.* մեղուաբոյծ *Գէ. ես.* մեղուաբուծեալ *Փիլ. սամփս.* պտուաբոյծ *Կանոն. Խոսրովիկ.* անասնաբոյծ *Սարկ. մարգեղ.* բոզաբոյծ *Նիւս. երգ. Համամ. առկ. Բրս. մրկ. Սարգ. ա. պետր. դ. (էջ 324).* բազմաբոյծ *Ասող.* ծերաբոյծ *Փիլ. նոր գրականի մէջ* հաւաբուծութիւն, *բոշնաբուծութիւն, մեղուաբուծութիւն են:*

= Հնխ. bʰug' *արմատից՝ բնիկ հայ բառ. ցեղակիցներն են սանս.* bhuj *(*bhunktḗ, bhuñjátē*) «վայելել, ուտել, օգտուել»,* bhōjayati *«կերցնել, անուցանել»,* bhṓga *«ուտելիք, կերակուր, վայելումն, գործածութիւն»,* bhōjana *«կերակուր, ուտելիք»,* bhojanīya, bhōjya, bhōjas, bhōjasa *«անունդ, ուտելիք»:— Այս արմատը հնապէս ունեցել է նաև *bhrūg ձևը, որից* r *ձայնի կորուստով յառաջացել է հնխ.* bhug'-: *Հնագոյն *bhrūg արմատի ներկայացուցիչներն են լտ.* fruor *«վայելել, գործածել, ապառել, պտուղը քաղել»,* fructus *«վայելումն, օգուտ, շահ, պտուղ», անգլսք.* brúcan *«վայելել», հ. սաքս.* brūkan, *գոթ.* brūkjan *«վայելել, գործածել», հրգ.* brūhhan, *գերմ.* brauchen *«գործածել», անգլ.* brook *«տանել, ժուժալ» (*Walde *320, 326,* Kluge *71,* Pokorny *2, 145 և 208,* Ernout-Meillet *378):— Հիւրշ. 430:*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Böttticher ZDMG *1850, 352, որը կրկնում են* Böttich. Arica *79, 319,* Bopp. *Համմտ. քերակ. Գ. 105, Հիւրշ.* Arm. Stud. *Տէրվ. Նախալ. 97 են: Հիւնք.* բուսուցանիլ *բայից: Թիրեաքեան, Կարնամակ ծանօթ. 42* բոյժ, բոյս *ձևերի հետ:* Scheftelowitz BB *29, 29 մերժելով ասես.* bhuj, *կցում է *bhud արմատին, իսկ էջ 60 գոթ.* beitan *«կծել», հրգ.* bizzo *«կտոր» բառերին: Պատահական նմանութիւն ունի թուշ.* բուց *«խոտ» բառը:*

ԲՈՅՆ, ո հլ. *«թռչունի բոյն» ՍԳր. Վեցօր. Ոսկ. մ. բ. 25. «գազանի որջ» Ես. ժա. 9. Մխ. երեմ. Ներս. մոկ. «հիւղակ, խրճիթ» Թուց իդ. 21, 22. «ծակ, խորշ» Փիլ. լին. որից* բունիկ *«խեղճուկ բոյն» Վեցօր. 169. Լաստ.* բունել, բունիլ *«բոյն դնել, այնտեղ բնակութիւն հաստատել» Երեմ. խր. 28. Սիր. ա. 16. Մծբ.* բունաճայ *Փիլ. Երզն. մտթ.* բունաւորիլ *Սոկր.* բունկէն *«խորշ խորշ» Հին բռ. (=Բառ. երեմ. էջ 58).* մեղուաբոյն *Սեբեր.* ուղղաբոյն *Մեկն. ծն.* սաղմաբոյն *Ոսկ. մ. ա. 4:*

Acoluthus, Obadias armenus, Lipsiae *1680, էջ 15 ծագած է դնում Խրբ.*

בָּנָה bānā «շինեց» բառից։ Müller SWAW *38, 578* պրս. بنه buna «տուն, հայրենիք»։ Lag. Arm. Stud. § *406* գնդ. buna բառից, ինչպէս անունք գոյն <guna։ Տէրվ. Նախալ. *97* բովանդակ, բաւել, բոյս, լա. fuo, դոթ. bauan, սանս. bhū «բնակիլ» ձևերի հետ հնխ. bhu «լինել, բնակիլ» արմատից։ Հիւբշ. Arm. Stud. *էջ 11* նշանակութեան կողմից համաձայն չի գտնում գնդ. buna, պրս. bun «վերջ, հիմ», որոնք կցւում են մեր բուն, բնակ բառերին։ Հիւնք. պրս. bun «յատակ, արմատ», bum «հայրենիք. բնակարան»։ Bugge, Lyk. Stud. *1, 85* հհիւս. búa «բնակիլ», ալբան. buj «պիշերել» և լիւկ. pu «բնակեցնել» բառերի հետ։ Մառ. ЗВО *22, 80* վրաց. բուդն «բոյն», հլ. բուն, ելամ. pun-kito «ի վերջն», վրաց. փուձնա «հիմնել» են բառերի հետ՝ իբր յաբեթական արմատից։ Кипшидзе, Грам. мингр. яз. СП. *1914, էջ 276* մինգր. omane «որջ» կցում է հլ. բուն բառին, պէտք է հասկանալ բոյն, որ արդարև ունի նաև «որջ» նշանակութիւնը։

Գիհ.— Ննխ. Տփ. բուն, Ալշ. Ախց. Երև. կր. Մշ. Ջղ. Սեբ. բ'ուն, Հմշ. պուն, Ռ. Տիգ. փուն, Ագլ. բիւն, Ասլ. Ոզմ. բ'իւն, Ղրբ. Մկ. Շմ. պիւն, Վն. պ̂ն, Ակն. Խրբ. բ'օն, Զթ. բ'ը̀ն, Սլմ. պուէն, Մրղ. պը̀ն, Հւր. բին։— Նոր բառեր են բունկալ, բնակալ, բունաւոր, բունբուն, բունբունալ, բնբնալ, բունբունատել, հաւաբոյն, խոզաբոյն, բունկալնոց։

Փոխ.— Վրաց. ბუნაკი բունակի կամ ბუნაგი բունագի «գազանների որջ, բայոց, բոյն» ծագում են հյ. *բունակ «որջ» բառից, որ կորած է (հմմտ. բոյն «որջ» Ես. ժա. 9. Մխ. երեմ. Ներս. մոկ.). քրդ. پون pun «բոյն, հաւանոց», پنگال pəngal «բունկալ», չեչէն. bien «թռչունի բոյն», թուշ. be' «թռչունի բոյն» (վերջին երկուսը տե՛ս և Thomaschek, Deutsche Litteraturz. *1883, էջ 1254*).— Կասարիոլ թուրք և լոյն ժողովուրդը հաւաստաբառակէս գործածում է pin «բոյն, հաւանոց», Եւդ. թրք. գւռ. پين pin «հաւի բոյն», كلپينك pinlek «հաւանոց»։

*ԲՈՅՈՍ «Երուսաղէմի տաճարի սիւներից մէկի անունն է». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբ. *164* «Եւ ըստ Սողոմոնեան յարկին և կամ Զօրաբաբէլեանին կառուցեալ ի մէջ տանն երկուս սիւնս հրաշակերտս՝ զբոյոս և զյաքում, որք հաստահեղոյս խարխոյք և գեղեցկագիր և բարձրաբերձ թակաղաղօք պարաբարձեալ ունին զահագին բանձրութիւն երկնաձիղուն քարակարկառ յարկին»։ Երկուսն էլ առնուած են Ս. Գրքի մէկ հատուածից. «Եւ կանգնեաց զսիւնս կամարի տաճարին և կանգնեաց զմի սիւնն և կոչեաց զանուն նորա յաքում. և կանգնեաց զսիւնն երկրորդ և կոչեաց զանուն նորա բոոզ» (Գ. Թգ. է. *21*)։ Նոյն բառերն ունի նաև Միխ. աս. տպ. Երուս. *էջ 68* «Երկու սիւն արտաքոյ երեսուն և հինն կանգուն յաջմէ և ի ձախմէ, որոց անուանք բոոզ (տպուած է բսոդ!) և յաքում, որք ասին զօրութիւն և ուղղութիւն»։ Վերջապէս այս նոյն բառն է, որ զանազան աղաւաղ ձևերով անցել է Բառ. երեմ. այսպէս՝ *էջ 56* և *57* բոյոս «զօրութիւն», *էջ 47* բայօղ «զօրութիւն», *էջ 52* բաւոդ «զօրութիւն» և Թերևս նաև -ական մասնիկով՝ *էջ 47* բայական և *էջ 51* բացական «զուգնաքեայ քաջութիւն»։

=Եբր. בֹּעַז bo'az «ոյժ, զօրութիւն» բառից է. այս անունով էր կոչւում Սողոմոնի տաճարի ձախակողմեան մեծ սիւնը։ Բառս յունական թարգմանութեան մէջ տառադարձուած է Βοὼζ կամ βοὸς և այս վերջինից էլ հյ. բոյոս։— Ա՛ճ.

+ ԲՈՅՍ, ո հլ. «որևիցէ դալարիք» ՍԳր. Վեցօր. «ծնունդ, զարմ» Փիլ. այլաբ. Նար. որից բոյս բարուց «բնաւորութիւն» Ոսկ. Հռ. և Բ. կոր. Կոչ. բուսանիլ «բուսնիլ, յառաջ գալ» ՍԳր. Ագաթ. Եւս. պտմ. Կիւրղ. Թգ. բուսաբեր Ագաթ. բուսարձակ Վեցօր. բուսուկ «բոյս, աննշան խոտ» Եփր. Թգ. *423*. ընդաբոյս ՍԳր. մոլաբոյս Ագաթ. երկբոյս Եւս. քր. ընդվայրաբոյս Ագաթ. բնաբուսեալ Եւագր. մայրաբուսակ Ասող. նախաբոյս Բուզ. իճճաբոյս Խոր. բնաբոյս Լմբ. սղ. բարեբոյս Նար. առաք. առատաբոյս Ճշ. *199* ա. սիզաբոյս Ագաթ. Նոր գրականում խոտաբոյս,

բուսաբան, բուսականութիւն, բուսարան, բուսաբանական, բուսաբանութիւն *են։*

=*Հնխ.* pheu̯ə-, bhū- *արմատից, որի առաջին և հիմնական նշանակութիւնն է «աճիլ, մեծանալ (մանաւանդ բոյսի)». համմտ. յն.* φύω *«բուսցնել, ծնիլ, յառաջ բերել, գոյութիւն ունենալ»,* φυτόν *«բոյս, զարմ, զաւակ»,* φυτώριον *«բուծարան»,* φυτεύω *«տնկել»,* φύσις *«ծնունդ, բոյս բարուց»,* φῦλον *«սեռ, ցեղ», ալբան.* bĩn′ *«աճիլ»,* bŭj *«բնակիլ, օթևանիլ»։—Հնդեւրոպական միւս ճիւղերի մէջ այս արմատը առանձուլով «լինել, գոլ» նշանակութիւնը, դարձել է էական բայ. այսպէս՝ իրանեան, սլաւ., բալթիկ, գերմանական և լատինական լեզուների մէջ. համմտ. սանս.* bhávati *«է, կլինի», պրս.* būd *«էր»,* bū-dan *«լինել», հիւլ.* buith *«լինել»,* bŏi *«եղաւ», հալ.* bytĭ, *լիթ.* bûti, *ռուս.* быть *«լինել», անգլսք.* bèo *«եմ», լտ.* fuī *«եղայ», գերմ.* bin *«եմ», անգլ.* be *«լինել» և այլ բազմաթիւ ձևեր (տե՛ս* Walde *323,* Boisacq *1043,* Berneker *114—5,* Trautmann *40—41,* Kluge *57, 450,* Pokorny *2, 140—144,* Ernout-Meillet *379)։ Հայերէնի մէջ հնխ. արմատը աճել է ս աճականով. ինչպէս լուայ և լսեմ։—Հիւբշ.* IF Anz. *10, 47?*

ՆՀԲ *լծ. յն.* φῐ′ο, φῐ′υο, *վօ՛օ և պրս. վեզիտեն «շնչել հոդմոյ». իսկ խոտ բառի տակ՝ լծ. յն.* πόα, βοτάνη։—Windisch. *15 սանս.* puš, pušpa *«ծաղիկ» ձևի հետ։ Մորթման* ZDMG *31, 415 խալդ.* Hamapsa *աստուծոյ անունը մեկնում է ամ «տարիս»+բոյս բառերից. նոյնը՝ էջ 426 համեմատում է պրս.* bostan *բառի* bos *մասի հետ և խալդեան* Busparui *(վասպուրական) բառի հետ։ Տէրվ. Նախալ. 97 համարում է բու պարզականի u-ով աճած ձևը և համեմատում է հյ. բաւել, բովանդակ, բոյն, լտ.* fuo, *յն.* φύω, *սանս.* bhū *ձևերի հետ՝ իբր հնխ.* bhu *«լինել, բնակիլ»։ Վերի ձևով մեկնեցին* Bugge KZ *32, 77,* Meillet MSL *10, 279; 14, 25;* Dial. Indo-eur, *էջ 126։—Հիւնք.* φύω, φύτω։ *Թիրեաքեան, Կարնամակ, ժանօթ. 42 բոյծ, բոյծ ձևերի հետ։ Պատահական նմանութիւն ունի սերբ.* bûs *«թուփ, ցօղուն ևն»* (Berneker *103)։*

Գիւտ.— Ալշ. Երև. Մշ. բ′ուս, *Մկ.* պիւս, *Ոզմ.* բ′էօս.— *Զղ.* բ′ուսնել, *Ախց. Խրբ. Սեբ.* բ′ուսնիլ *(բայց կրկին u-ով Խրբ.* բ′ուսսած*), Զթ.* փուսնօլ, *Հճ.* փուսնել, *Ռ. Տիգ.* փուսնիլ, *Պլ.* փուսնիլ, փսնիլ, *Տփ.* բսնիլ, *Ղրբ. Ննխ.* փսնել, *Շմ.* փսնիլ, *Ասլ.* բ′իւսնիլ, *Վն.* պիւսնել, *Մկ.* պիւսնիլ,— *Երև.* բ′ուսէլ, *Ալշ. Մշ.* բ′ուսիլ, *Ոզմ.* բ′էօսիլ, *Սլմ.* պիւսել, *Հմշ.* պուսնուշ. *իսկ Սչ. փոխանակուած է ծագիլ բայով։— Նոր բառեր են* բուսի, բուսուկ, բսնովի, բսնուիլ, բանջարբուսուկ *են։*

ԲՈՅՍԲՈՒՍԻԼ *«խառնակուիլ, խռովիլ?» անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մծբ. 324 «Անկան կործանեցան կռռավարք. բոյսբուսեալ աստանդեցան կառն երագախաղացք». սրա գէմ ասորի բնագիրը (հրատ.* Graffin *577—9) ունի բառ համեմատութեան վիճելի միտքան Պ. Էսապալեանի (անձնական) «կործանեցան կառավարք և խառնակեցան (խռովեցան) կառք»։ Արդեօք պէտք է ուղղել խույսխուսեալ «այս ու այն կողմ փախչելով»?*

* ԲՈՅՐ *«անուշ հոտ». հին մատենագրութեան մէջ աւանդուած չէ. գործածական է միայն նոր գրականում։ Այս արմատից են* բուրել *ՍԳր. Ոսկ. յհ. ա. 1.* բուրեցուցանել *Ոսկ. ա. տիմ. որ և* բուրացուցանել *Ասող.* բուրանոց *Նար.* բուրաստան *«պարտէզ» ՍԳր. «քաղաքի շուրջը արուարձան» Թուղ լե. 2.* բուրվառ *(գրուած նաև* բուռուառ, բուռուվառ*) «խունկ ծխելու աման» ՍԳր. Սիր. Երր. 201. Փիլ. Յհխ.* բազմաբուրեան *Նար.* անուշաբոյր *Փիլ.* անուշաբուրակ *Լաստ.* բուրկէն *«յամբար» (չունի ԱՔ) Պտմ. աղջ. 145 և 168 (անուշահոտեցաւ մշկով և բուրկենիւ)։ Նոր գրականում՝* խաղցաբոյր, ծաղկաբոյր, շուշանաբոյր, խնկաբոյր, բուռումճաւէտ *են։— Բառս գրաբարի մէջ ընդհանուր իմաստ ունի. այսինքն գործածական է թէ՛ լաւ և թէ՛ վատ հոտի համար. համմտ. «Որպէս կնդրուկ անուշահոտ բուրեցէք» Սիր. լթ. 18. «Ելցէ շարաւ նորա և բուրեսցէ հոտ նորա» Յովէլ բ. 20. նոր գրականի մէջն է, որ յատկացուած է միայն անուշ հոտ բուրելուն։*

= Հիւս. պՀլ. bwd- (*թուրֆանի մանիքէական գրութեանց մէջ*), գնդ. ‏بوذ‏ baoiði- «*բոյր, անուշ հոտ*», սոգդ. βōδa «*անուշահոտութիւն*», պրս. ‏بوی‏ bōy «*հոտ*», օսս. bud «*խունկ*», բելուճ. bōd, bōδ «*բալասանի թուփը*», աֆղան. bū, bō, հմմտ. նաև նոյն արմատից պրս. ‏بویدن‏ bōyīdan «*բուրել*», սոգդ. βōδistān «*պարտէզ*», նոյնպիսի մանիք. ‏בודיסתאן‏ bōdistān «*պարտէզ*» (Salemann, Manich. Stud. ЗАН *8,60*), պրս. ‏بوستان‏ bōstān «*պարտէզ, մրգապարտէզ*», որից փոխառեալ են աֆղան. bōstān «*ծաղկանոց*», թրք. bostan «*բանջարանոց*», մինչև իսկ սլահիլի bustāni և մալդաշ. bušitāni «*պարտէզ*»: (*Հլ. բուրվառ ըստ երևոյթի կազմուած է բոյր և վառ բառերից բարդութեամբ և հետևաբար գործ չունի գնդ. *ba-oiδibara- ձևի հետ, ինչպէս ցոյց է տալիս n վերջաձայնը. ըստ այսմ բուրվառ բառի մէջ բոյր նոյնանում է օսս. bud «խունկ» բառի հետ: Մակայն* Meillet REA *1, 393* դնում է, որ բուրվառ՝ այս ձևի տակ ժողովրդական աստուածանութեան արդիւնք է և թէ իրական ձևն է *բուրար, որ ամբողջութեամբ փոխառեալ է իրանականից. հմմտ. ըստ* Gauthiot, Gram. sogd. *58* սոգդ. βōδ°-βár°n)։—*Իրանեան բառերի բուն արմատն է հնխ.* bheudh-, *որ նշանակում է «արթուն մնալով հսկել, սթափ լինել, զգալ»: Իբրև բնիկ հայ՝ այս արմատը պիտի տար *բոյդ և հետևաբար ո՛չ «բուրել» նշանակութեամբ, որ իրանականի մէջ յառաջացած մի նշանակութիւն է և չի գտնւում միւս կեղակից լեզուների մէջ. հմմտ. սանս.* budhyáte «*արթուն լինել, նկատել*», bódhati «*արթնանալ, իմանալ, նկատել, հսկել, ուշադիր լինել*», bōdháyati «*արթնացնել, ուսուցանել, հաղորդել*», budhás «*զգալուն*», buddhá «*արթուն*», buddhi «*իմացականութիւն*», bōddhā «*ճանաչող*», գնդ. baodanto «*ուշադիր լինելով*», baoδayeiti «*ճանաչել տալ*», fra-būiδyamnō «*արթնանալով*», zaēni-buδra «*ուշադիր հսկելով*», baoδah- «*մտաւոր ըմբռնողութիւն*», յն. πεύθομαι «*տեղեկանալ, իմանալ*», πευθήν «*լրտես*», πευθώ «*լուր, տեղեկութիւն*», հալ. bljudą, bljusti «*դիտել, հսկել*», bъzdą, bъděti «*հսկել*», budíti «*արթնացնել*», bъdrъ «*արթուն, աշխոյժ, սթափ*», ռուս. блюдý, блюстй «*պահել, պահպանել, զգուշանալ*», на-блюдать «*դիտել, զննել*», будить «*արթնացնել*», бодрый «*արթուն, աշալուրջ*», լիթ. budėti «*հսկել*», baudžù «*յանդիմանել*», baũdžava «*տարապարհակ*», baudinti «*դրդռել*», հպրուս. et-baudints «*յարուցեալ*». գոթ. ana-biudan «*հրամայել, կարգադրել*», faúr-biudan (*գերմ.* verbieten) «*արգիլել*», անգսք. béodan «*ծանուցանել, մատուցանել*», անգլ. bid «*հրամայել, մաղթել*», գալլ. bodd «*ազատ կամք*», հիւլ. buide «*շնորհակալութիւն (երախտիքը ճանաչել)*», robud «*ապդարարութիւն*» են (Horn § *240*, Boisacq *776*, Bartholomae *917—8*, Berneker *64. 96*, Trautmann *33*, Kluge *55*):—*Հիւրշ. 122:*

Աւգերեան, Բցար. չփ. և կշռ. էջ 61 բուրվառ *դնում է յն. πυρεῖον հոմանիշից: ԳԴ ուղիղ է մեկնում* բուրաստան = *պրս.* պուսթան: *ՆՀԲ «*բուրաստան, *նոյն ընդ ձայնիս* պարտէզ... *յն.* բարա՛տիսոս, *պրս.* ֆիրտէվս, պույիսդան, պիւսդան, պօսդան... *ասի և արուարձան քաղաքի, որպէս յն.* բրօա՛սդիօն... բուրուան, *լծ. յն.* πυρεῖον»: Lagarde, Urgesch. *924* բուրաստան = *պրս.* bōstān. *Նոյն՝ 428* բուրել = *գնդ.* buδra: *Մորթմանն* ZDMG *31, 426 խալդ.* Busparui (*Վասպուրականն*) *համեմատում է* բոյս *և* բոյր *բառերի հետ:* Müller, Kuhns und Schleichers Btr. *5, 141* բոյր = *գնդ.* baoδa, baoiði *և* bud: *Հիւրշ.* ZDMG *36 (1882) 133* բուրվառ = *baoδōbara: — Հիւնք.* բոյր = *պրս.* պույ, բուրվառ = *յն.* πυρεῖ + *հլ.* վառ, բուրաստան < բուրել *կամ պրս.* պուսթան, պույիսթան, *իսկ Թուոց լև. 2 յն.* προάστιον «*նախաքաղաք*» *բառի դէմ դրուելը «կը թուի թէ ձայնից մերձաւորութեանէն է»:*

ԳԻՒ.—Բուրել *բառը պահած են միայն Ալշ. և Խրբ.* բ'ուրալ «*հոտ բուրել*» *ձևով. միւսների մէջ անխտիր պահուած է* բուրվառ

բառը՝ հետևեալ ձևերով. Կր. բ'ուրվառ, Մշ. բ'ուրվառ, բ'ուրվառկ, Ալշ. բ'ուռվառ, Ասլ. բ'իւրվառ, Վն. պուռվար, Սեբ. բ'ուռվառ, Հմշ. Շմ. Ռ. Տփ. փուրվար, Պլ. փուրվար, փուռվար, Երև. փուռվար, Ախց. Ննխ. փուռվառ, Ջղ. փրովառ, Ղրբ. փրովար, փրոռուար, Մրզ. փիռվառ, Գոր. փիռվար, Տփ. բուրվալ, Ոզմ. բ'էօրվալ, Մկ. պէօռվալ, Տիգ. փուլվառ, Սլմ. փրլվար, Ագլ. փրվօ'ռ, Զթ. բ'բ'ռվառ, Հճ. փուրվօր:

Փոխ.— Ասո. փուրվար *«բուրվառ». Ըստ Մառ.* Ипполл. *63 հայերէն* բոյրք *յոգնակիից է վրաց.* բուրճու, բուրճուխբա *«ծուխ արձակել, ծխալ»:*

**ԲՈՆՈՍՈՍ «վայրի ցուլ» Խոր. աշխ. 594. Վրդն. ծն. և ել. բար. 169. վրիպակով գրուած է* բոնոս, բնիոնս, բոնոնոս *Յայսմ. մրտ. 22:*

= Յն. βόνασος *«վայրի ցուլ», որից փոխառեալ է նաև լտ.* bonasus:—*Հիւբշ. 344*

Ուղիղ մեկնեց նախ Ն2Բ:

ԲՈՆՋԱՍ *տե՛ս Բրնջաս:*

**ԲՈՇԵՆԵԼ (հցի) «վայելել իբրև ի բարեւից սեղանոյ» Եփր. բ. կոր. 95 և ա. տիմ. 246. Ոսկ. մ. ա. 24. որից* ըմբոշխնել (<ընդ-բոշխնել, *ինչպէս* ըմբոռնել<ընդ-բռնել) *«ճոխաբար վայելել, լիանալ» Ոսկ. մ. ա. 24. գ. 32. Մծբ. Եփր. ել. էջ 155. Բգ. 371, 425, 427. Պիտ. Նար.* ըմբոշխնիչ *Ճառընտ.:*

=Իրանեան փոխառութիւն է, որի Բէ՛ պհլ. և Բէ՛ պրս. ձևերը կորած են. ունինք միայն զնդ. baoxšna- *«վայելումն, վայելք». այս էլ առանձին չէ գործածուած, այլ կայ միայն* pourubaoxšna *բարդի մէջ.* θwā upamruyē θrimāi yaţ pourubaoxšnahe—*Ձքեզ կոչիմ ի կերակուր լիամայել (Եասնա 9, 27): Զնդ. բառը* Justi *մեկնում էր «մաքուր, լիամաքուր», նոր մեկնիչները հասկանում են «լիամայել».* Bartholomae *901 մեկնում է «բաղում փրկութիւն, ազատութիւն բերող» (*baog *«արձակել, լուծել, փրկել» արմատից), բայց իսկոյն աւելացնում է՝ Բէ աւելի լաւ կլինէր համեմատել սանս.* bhunákti *ձևին և թարգմանել «լիամայել», եթէ կարելի լինէր հաստատել իրանականում* baoxšna *բառի համար այսպիսի մի նշանակութիւն:—Հայերէնը հաստատում է այդ:—Հիւբշ. 152:*

Ն2Բ պրս. բէշխուն *կամ* փէշքիւն *«սեղան» (իմ՛ պրս.* پشخوان paš^{v}an *«պարգև, տախտակեալ սեղան»:* Lagarde, Arm. Stud. § *820 առաջին անգամ հանում է զնդ.* baoxšna *ձևից: Տէրվ. Նախալ. 95* բաշխել, բաժանել, *սանս.* bhaj, *զնդ.* baxš *են ձևերի հետ՝ հնխ.* bhag, bhagh *արմատից: Հիւբշ. 152 ունենալով միայն* բմբոշխնել *բառը, ծանօթ չլինելով առանձին* բոշխնել *ձևին և ենթադրելով միայն դուշակելով՝ խիստ անապահով է համարում այս մեկնութիւնը:* Scheftelowitz BB *29, 58* բաշխել *բառի հետ է կցում:* Коршъ, *Թրգմ. Մշակ 1914, № 122 սանս.* bhuj, bhojati *«ուտել» արմատի հետ, որ սակայն տալիս է հյ.* բոյծ, բուծանել:

ԲՈՇՆԱԿ *«գազարի նման մի բոյս է. լտ.* singidium» *Բժշ. ունի միայն Հին. § 374:*

**ԲՈՋՈՅ «փոքրիկ ձի» Մագ. 241=Երզն. քեր. երկու տեղն էլ դնում է միայն հոմանիշների մի շարքի մէջ: (Ադոնցի Հրատարակութեան մէջ ունինք միայն* բոչոյ *ձևը. Ն2Բ յիշում է* բոչոյ *և* բոչոյ *ընթերցուածները, որոնցից լաւագոյնն է համարում* բոչոյ, *իսկ Զ՚՝* բոչոյ*):*

= Վրաց. ձահձ-ცხენი բաչա-ցխենի *«փոքրահասակ ձի,* малорослая лошадь—иноходец, пони» *(Զուբիանով², էջ 100):—Ա.Ճ.*

Ադոնց, Արուեստ Դիոն. քեր. էջ 241 հանում է պրս. بچه bača *«ձագ» բառից:*

+ԲՈՒ, ո *հլ. «իշամեղու, բորենի, պիծակ» Վրք. հց. Բ. 184. Նեղոս 674. Մարքին. Պիսիդ. Վեցօր. տող 970. Վստկ. 210. որին պէտք է միացնել նաև* բրէտ, ի-ա *հլ. «իշամեղու» Եւագր. 127, 128. Վեցօր. 175. Մխ. առկ. առաջինի հետ նոյն է* բուեղ *Յայսմ. սալր. 30 (գւռ.* բռռեխ*), երկրորդի հետ կրէ՞տ. շրթնականի այսպիսի փոփոխութեան օրինակ լինի Թերևս պիտի>գւռ. կիտի, տիկի (մանիկ ապառնիի):*

= Հնխ. bhor- *ձևից, որի կրկնաւորներն են ներկայացնում յն.* πεμ-φρη-δών *"իշամե-*

դա», սանս. bam-bhara- *«մեղա»,* bham-bharalī *«ճանճ», լիթ.* bimbalas, bimbilas *«տիզ», լեթթ.* bimbals, bambals *«բզեզ»* (Boisacq *էջ 765,* Walde *315,* Pokorny *2, 161*)։ *Սանակրիտի նախաձևն է հնխ.* bhar, *հալերէնինը՝ հնխ.* bhor, *միւսների մէջ արմատը ցոյց է տալիս* r—l *փոխանակութիւնը, որ կրկնութեան ժամանակ դարձել է ընդհանուր։ Հյ.* բոռեղ *ձևի մէջ* -եղ *մասնիկը համապատասխանում է սանս.* -al *մասնիկին։*

Lagarde, Urgesch. *466, 467* բոռ *միացնում է* բրեա *բառին, իսկ* բրեա *գնում է սանս.* bhrānta:—*Հիւնք.* բոռ<բոր-բորիա *բառից և* բրեա<*յն.* βρῶχος *«մրիխ» բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet MSL *11, 391*։—Patrubány IF *14, 59 գոթ.* basi *«քոլի պատուղ», յն. φῆν «քերել»!*

Գիմ.—երև. բօռ *(որից* բոռաճանճ*), Ակն.* բ'օռ-մէղու, *Ալշ. Մշ.* բօռեխ, *Գնձ.* պիւռ, *Ղրբ.* պէօռնր, պիւռնր *«ձի ու տաւար խայթող մի տեսակ մեծ, սև ճանճ»։*

Փոխ.—Վրաց. ბოზა բորա *«кровопійца, лошадиный кровососъ»։*

**ԲՈՈՒՏ «բռնի. գիծ ընտիր». ունի միայն Բառ. երեմ. էջ 57. յայտնի չէ ի՛նչ է ուզում ասել։*

**ԲՈՈՐ, ա հլ. գործածուած է Ս. Գրքում իբրև յատուկ անուն. բայց յետոյ իբր «արեևագոյն կարմիր» Կոչ. 253. Նար. կր. և մծբ. Համբ. Շնորհ. տաղ. որից* բոռորաբուղխ *«արիւնաբուղխ» Նար. կուս. 418.* բոռորած *«կարմրած» ճառընտ.* բոռորակայլակ *«կարմիր կաթիլներով» Նար. խչ. 392. մծբ. 449.* բոռորային *«կարմրագոյն» Նար. Շար.* բոռորատիպ *«արիւնագոյն» Համբ.* բոռորեռանգեան *«կարմրագոյն» Նար. տաղ. Նոր գրականում (յատկապէս բանաստեղծական լեզուի մէջ)* բոռորագոյն, բոռորագեղ *են։*

=Բբր. בָּשְׂרָה başərā *բառն է, որ նշանակում է բուն «ամրապատ և անմատչելի տեղ» և յետոյ դարձել է եդոմայեցոց գլխաւոր քաղաքի անունը. «Իսկ այս ո՞վ է որ դիմեալ գայ յեդովմայ. կարմրութիւն ձորձոց իւրոց ի Բոսորայ» (Ես. կգ. 1). մեր բառը՝ տառադարձուած է յն.* Βοσόρ *ձևից։*

Ուղիղ մեկնութիւնը գիտէ հներից Կոչ. 258. «Բոսորդ ի հեբրայեցւոց բարբառոյ անտի թարգմանեալ կոչի ի մեր լեզուս՝ մուխ»։ Տաթև. ձմ. ճծա. մեկնում է «եդոմն կարմիր երկիր թարգմանի և բոսորն նեղութիւն»։ ՆՀԲ երբ. պօս, պաձիր. *լծ. ընդ թրք.* պօզ, պաս, պօզում.—Karst, *Յուշարձան 418 օսմ.* boz, bozarak *«գորշ, գորշագոյն»։* Petersson KZ *47, 285 կցում է հյ.* բոց *բառին, իբր կազմուած* -nr *մասնիկով և համեմատում է լտ.* focus *«կրակ, վառարան» բառի հետ։*

ԲՈՍ *«ախտ». ունի միայն Բառ. երեմ. էջ 57։—*

+**ԲՈՎ,** ո, ո՞ւ *հլ. (յետնաբար կայ ի* բովէ, բովաց*) «մետաղ հալեցնելու փուռ» Առակ. ժէ. 3. Ոսկ. ես. Եփր. եւ. էջ 180. Համար. էջ 255. «բուրայ, բուխակ, փօխա» Իմ. դ. 6. Ջաբ. ժա. 13. «բուրվառ» Ասող. դ. իթ. «կրակ» Բենիկ. «մետաղ հալեցնելու գործողութիւնը նեղոս. «մետաղի հանք» Ա. մակ. ը. 3. Խոր. Փիլ. նմանութեամբ «քննութիւն, փորձ» Ագաթ. Կորիւն. որից* բովիլ *(ունի միայն ՀՀԲ) «դժրահալս մաքրել. 2. ցորեն ևն խարկել, բոհրել» (իբր գաւառական բառ), որ և* բովիրել *«խարկել, աղանձել» Մխ. բժշ. 148։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. bhē- *«խորովել աղանձել, տաքացնել» արմատի* bhō- *ձևից (և կամ u ճաճականով). հմմտ. հբգ.* bāen, *նրգ.* bähen *«հացը խորովել», հիսլ.* bað *«շոգիով բաղանիք», հսաքս.* bath, *անգսք.* bœð, *հբգ. և նրգ.* bad *«բաղանիք», նորվ.* bara *«տաք ջրով մաքրել»* (Pokorny *2, 187*)։ *Այս պարզ արմատը բացի հայկականից ու գերմանականից ուրիշ տեղ պատահած չէ. ճաճած ձևով տե՛ս վերը* բոկեղ։—*Ահ.* Pictet *2, 257* եփել *և խոհ ձևերի հետ՝ կապում է սանս.* pač *«եփել» բառին, համարելով «թեւրեա պարսկական ծագումից»։—Հիւնք. փուք *բառից։* Scheftelowitz BB *29, 37 լտ.* focus *«վառարան, կրակ», foveo «տաքացնել», fo-*

tus «ջեռուցում» բառերի հետ։ (Այս համեմատությունը սխալ է, որովհետև լտ. foveo ևն պատկանում են հնխ. dhog²h- արմատին. տե՛ս Walde 311)։ Petersson KZ, 47, էջ 279 լտ. fovea «փոս, քարայր», յն. φωλεός «որջ», գոթ. bauan «բնակիլ», հրդ. būan, գերմ. bauen «կառուցանել», հինւս. būð «բնակարան, վրան» բառերի հետ՝ հնխ. bhou- «փոս, խոռոչ» արմատից. հմմ. բով բառի նախնական իմաստը համարում է «փոս, որի մէջ դնում էին կրակը՝ վառելու համար»։

Գիտ.—*Ալշ.* Ջղ. բ'օվել, *Տփ.* բօվիլ, *Երև.* բ'օվէլ, *Ղրբ.* պօ'վէլ, *Շմ.* պօվիլ, *Սլմ.* վն. պէօվել, *Մրղ.* պէօվէլ, *Մկ.* պէօվիլ, *Ննխ.* բօիրէլ, բրիօրէլ, *Պլ. Ռ.* փօիրէլ, *Ախց.* բ'օֆրէլ, *Հմշ.* պօֆրուշ, *Կր.* բ'օրֆէլ։—*Համմ.* նաև բով *Նբ. հն.*, բովիկ վն. «տաշտաձև մեծ աման՝ որի մէջ աղանձ են բոհրում», բով *Նբ.* «երկաթէ բարակ թիթեղ՝ որի վրայ աղանձ են բովում. սաջ», բով աճել, բովիկ աճել վն. «յորեն բոհրել, աղանձ շինել». նոր բառեր են բովուկ, բոհրուն, բոհրաճոտ, բովուիլ, բովառուն, բովխար։

Փոխ.—*Գնչ.* bov «փուռ (հացագործի, կրի ևն)»։ Paspati համեմատում է այս բառը հինդուստ. बप् bap'h «շոդիի» և սանս. pyuṣ «գոլ, տարութիւն» բառերի հետ. բայց ակներև է, որ ո՛չ ձևով և ո՛չ նշանակութեամբ կապ չունի նրանց հետ։

ԲՈՎԱՆԴԱԿ *տե՛ս* Բաւանդակ։

ԲՈՎԻՃԱՅՔ «խնկեղէն» *Խոր. աշխ. 615, 616. գրուած* բովաճառ՝ *Թորոսեան, Տետրակ համառօտ բառարանի, Նախիջևան 1794, էջ 65։*

Պատկանեան, Խոր. աշխ. 1877, էջ 81 պրս. بوی بچه bōyiča *(ըստ* Vullers*)* «convolvulus, *որ է բազեղ կամ որթի թըրթուռ։ Մարքվարտ (Նամակ 1926 դեկտ.)* պհլ. bōyāk-čār «անուշահոտ ճար՝ դեղօրայք»։

ԲՈՏՈՏ *(ըստ Նշխ* ի, ի-ա *հլ. բայց առանց վկայութեան)* «ճճի, փորի որդ, փայտի ցեց» *Բարուք գ. 19, Վրք. հց. Բ. 623. Նար. կթ. էջ 177. որից* բոտոտակեր «ճճեկեր» *Բարուք. գ. 71. Ագաթ.* բոտոտակերեալ *Բարուք. գ. 11։*

Նշխ Թուի հանել փտել *բառից։ Հինք.* փտել *բառից։ Կայ արաբ.* بطيخ baṭīṭa, *նուազականը* بطيطة buṭīṭia «ծառի որդ» *(Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 457)։ Բայց ըստ որում հայերէն բառը շատ հին է, ուստի նմանութիւնը պատահական է։ Այսպէս նաև ասորիս.* baḷṭītu, *ասոր.* beḷṭīθa «փայտի որդ»։

Գիտ.—*Ռ.* փօդօդ, *Վն.* պտէօտ «բոտոտ». *որից* բոտոտիլ, *Ռ. Վն.* «որդնոտիլ, ճճեկեր դառնալ», բոտ *Վն.* «ճճեկեր, մէջը որդ մտած *(ծառ կամ փայտ)*».—*Նո՞յն է նաև Մկ.* մրճդիւտ «ծառի որդ»։

Փոխ.—*Քրդ.* بتوت betut «ցեց, փայտի որդ».—*այլ է վրաց.* ბოტოტი բոտոտի «հաստատուն թանձր խլինք. густая соля», ბოტოტებიანი բոտոտեբիանի «խլնքոտ, солявый» *(Զուբինով² 115)։*

*ԲՈՐ *(ո հլ. ըստ Նշխ, բայց առանց վկայութեան)* «բորոտութիւն, բոս» *Սրճ. յար. էջ 282. Երզն. մտթ. Շնորհ. ընդհ.* որից բորոտ «բորով հիւանդացած»՝ *ՍԳր.* բորոտութիւն *ՍԳր.* բորոտիլ *ՍԳր.* բորոտանալ *Եփր. մնաց.* բորուիւն *Պրպմ. 48 (չէ մտած բառարանների մէջ. թերևս և վրիպակ է).* ֆածբոր *Վստկ. 223 (գրուած է* բոր *կամ* ֆածպոր)։

=*Իրան.* *bor ձևից փոխառեալ, որի միակ ներկայացուցիչն է նորագիւտ սոդդ. βr'wk' *(կարդա՛* *βarūkə*)* «բորոտ»։—

Ewald, Sprachwiss. Abhnd. 2, 66 արաբ. البرص al-baraṣ «բորոտութիւն» *(որից սպան.* albarazo, *պորտ.* alvaraz, *հֆրանս.* albara, albora*)* համեմատում է մեր բորոտ *բառի հետ։ Սրա դէմ է դուրս գալիս* Müller SWAW 41, 11 *լիշեցնելով թէ հլ.* բորոտ *կազմուած է* -ոտ *մասնիկով* բոր *բառից և թէ արաբերէն բառը գոյութիւն չունի արամերէնում. նոյն,* Armen. VI *լտ.* fur-fur «թեփ (ցորենի, մորթի, գլխի)» *բառի հետ։ Հինք.* բորբորիտ *կամ յն.* ψώρα «բորոտութիւն» *և կամ յն.* πρρ *բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Gauthiot

MSL *19, 128*։ Petersson KZ *47, 260* յն. φάρω «ճեղքել», φάρος «ակոս», φορύω «հերկել», լտ. ferio «բաղխել, զարնել», հսլ. borją, brati «կռուիլ» են բառերի հետ, արմատակից հլ. բիր և բրեմ բառերին. նշանակութեան տարբերութեան համար հմմտ. լտ. scabies «բոր, քոս», scaber «բորոտ» և scabo «քերել»։ Մատ ИАН *1919, էջ 395* նոյն ընդ քոր. իսկ *էջ 405—406* վրաց. բորոտի, բրազի, արաբ. مريض marīz «հիւանդ» և برص baraṣ «բորոտութիւն» բառերին ցեղակից։

Գիմ.—*Ալշ.* Ջղ. բ'nr, *Ննխ.* Պլ. bor, *Ախց.* *Կր.* *Սչ.* բ'or, *Հմշ.* պor, *Սկբ.* բ'էor, *Զթ.* բ'իur, բ'իur։—*Ախց.* *Երև.* *Կր.* բ'orom, *Ալշ.* բ'orոդ, *Ննխ.* Պլ. boroդ, *Սչ.* բ'oroդ, *Հմշ.* պoroդ, *Ւր.* փoroդ, *Ասլ.* բ'էorէo*, *Հճ.* բ'ույոդ, *Զթ.* բ'իւրիւդ, բ'իյիդիլ։

Փոխ.—*Վրաց.* ბოროტი boroტi «չար, գէշ, վատնգաւոր, մոլի, անարդար, եղեռնաւոր», **Յებოროტება** շեբորոտեբա, **განბოროტება** գանբորոտեբա «ձանձրանալ, բարկանալ, տրկարանալ», **ბოროტობა** բորոտոբա, **ხიბოროტე** սիբորոտե «չարութիւն, չարագործութիւն», **ბოროტ-მანქანება** բորոտ-մանքամեբա «մեքենայութիւն, խարդաւանք», **უბოროტო** ուբորոտի «ամենևին չարութիւն չանող, շատ բարի», *Թուշ.* բորոտոբ «գէշութիւն, կեղտոտութիւն». *այս բառերի նշանակութեան տարբերութեան համար հմմտ. պրս.* پیس pīs «բորոտ, կեղտոտ», *Քրք.* pis «կեղտոտ, վատ», *Վն.* կոոտ «բորոտ. 2. գէշ, անպիտան», *լտ.* scaber «բորոտ, քոսոտ. 2. կեղտոտ, անմաքուր. 3. չարաճճի»։ —*Հայերէնից փոխառեալ է Թում նաև Թաթար.* برت bert «քոսոտ, բորոտ, փուճ, անպիտան» (Будаговъ *1, 251*), *որ Թաթարական արմատներով ստուգաբանութիւն չունի։*

*ԲՈՐԱԿ, ի–ա *հլ. (գրուած է նաև* բուրակ, բաւրակ, բօրակ, բարակ) «մի տեսակ հանքային նիւթ. *լտ.* nitrum» *Երեմ. բ. 22. Ագաթ. 106. Եղիշ. հյր. մեր 199. Վրք. հց. Բ. 323. Ճառընտ. Մխ. դտ. Գաղիան.* նոր բառեր են **ճայբորակ**, **աղբորակ**, **բորակածին**։

= *Պհլ.* *bōrak *ձևից, որ չէ աւանդուած, բայց հմմտ. պրս.* بورة bōra «բորակ», որից փոխառեալ են *տաջ.* بورقه būrqā, *վրաց.* **ბორა** բորա, **ბორაკი** բորակի, *արաբ.* بورق bavraq, būraq, *Թրք.* بوراق boraq, *ֆրանս.* *անգլ.* borax, *սպան.* borrax, borraj, *իտալ.* borrace, *ռուս.* боръ *համանիշները*։ *Բորակը՝ ըստ Լէմանի՝ իններորդ դարում մտաւ Եւրոպա։—Հիւբշ. 122։*

Առաջին անգամ ուղիղ մեկնեց Գ. Դ, յետոյ Նշ, Lag. Gesam. Abhd. 21 են, բոլորն էլ համեմատելով պրս. բաոի հետ։

Գիմ.—*Երև.* **բ'օրակ** *կամ* **աղի բ'օրակ** «շատ աղի», *Ալշ.* **բ'օրագ**, *Մկ.* պmրակ, *Վն.* պmրmկ. *միւսները առհասարակ պարսկերէնից կամ Թուրքերէնից նոր փոխառութեամբ։ Վաննցոց և Մոկացոց* պարակ *ձևը շատ լաւ համապատասխանում է Ս. Գրքի* բաւրակ *ձևին։—Նոր բառ է* բորակնոց։

Փոխ.—*Քրդ.* بۆرەق porak *հայերէնից փոխառութիւն պէտք է դնել նախաձայն r-ի պատճառաւ՝ փոխանակ* b։

ԲՈՐԱՄԷՍ «է Թուփ ինչ որ ունի զնմանութիւն գառին, ոտիք, կճղակօք և գրեթէ բոլոր մարմնովն. *տճկ. գուզու ֆիտանը*». *ունի միայն ՓԲ, առանց վկայութեան։*

+**ԲՈՐԲ** «վառիլը, այրիլը. 2. եռալը, հռանդ. 3. յորդ». *հին մատենագրութեան մէջ առանձին գրեթէ անդործածական է. եղած միակ օրինակն է Շիր. հրտր. Պատկ. էջ 50՝* **բորբ շող լուսոյ** «լոյսի յորդառատ ցոլք». *որից կազմուած են* **խաւարաբորբ** «յորդ խաւարով, մութը շատ» *(որ և* **խաւարաբորբոք**!) *Սարկ. տոմար. Տաթև. ձմ. ղզ.* **յորդաբորբ** «շատ տաք» *(*յորդաբորբ ջերմութիւն*) ՅՀ. կթ.* **լուսաբորբ** *ԱՓ.* **օձաբորբ** «օձաշատ» *ԱՓ.* **բոցաբորբ** *Մխ. այրիվ. էջ 58.* **հրաբորբ** *ՅՀ. իմ. Խոստ. 3 (երկուսն էլ նորագիւտ բառ). աւելի գործածական է արմատը պարզ ձևով գաւառականների մէջ, իսկ* –**ոք** *մասնիկով՝ գրաբարի մէջ (հմմտ.* բարիոք*). ինչ.* **բորբոքել** «հրահրել» *ՍԳր.* **բորբոքիլ** «վառիլ, բորբոքիլ, հրահրիլ. 2. այրիլ. 3. սաստկանալ. 4. եռքը դուրս տալ (բորոտութեան)» *ՍԳր. Ա-*

գաթ. Կորիւն. բորբոքեցուցանել Ողբ. գ. 11. բորբոքախառն Մծբ. լուսաբորբոք Խոր. վրդվ. Անան. եկեղ. Տօնակ. հրաբորբոք Խոր. Հռիփս. և վրդ. ՅՀ. կթ. Արծր. կայծակնաբորբոք Թէոդոր. խշ. ջահաբորբոք Ասող. Ճառընտ. Երզն. մտթ. բորբոք Լաստ Խոր. ևն ևն։

= Հնխ. bho-bhr-o ձևից, որ կրկնականն է bher, bhere, bheru, bhreu, bhereu «հռալ, եփել, ծփալ» պարզական արմատի, որի միւս ժառանգներն են՝ լտ. ferveo, fer-bui, fervo, կիմր. berwi, բրբտ. bervein, berucin «հռալ, եփիլ», միռլ. berbaim «եփել», գոթ. հրգ. brinnan և գերմ. brennen «այրել, վառել» (ուրիշներ տե՛ս աղբիւր բառի տակ և Walde 225, 286, Ernout-Meillet 338, Kluge 72, Boisacq 1037, Pokorny 2, 167)։ Հայկբէնի վերի ձևերը ցոյց են տալիս -o- ձայնդարձը, բայց գաւառականների մէջ ունինք նաև -ը- ձայնդարձը՝ բերբել ձևով։

Հները բորբ բառի նշանակութիւնը մոռացել էին. յետնաբար հնարուեցան «խաւար, աղօտ, ծածկուած» նշանակութիւնները.—Հին. բռ. մեկնում է «բորբ. խաւար. Քողաբորբեալ. առագաստեալ». Քողաբորբ «բօղով ծածկուած» իմաստով ունի Ճառընտ. իսկ Թր. քեր. «-◡ չափով բառ» նշանակութեամբ. համմտ. ողաղօտ (◡ — ◡)։ Սրանցից է առնում Առաք. պտմ. 41 ողաբորբեալ «ծածկած, թագնուած»։ Բառ. երեմ. էջ 57 սխալմամբ գրում է բորգ (բառաշարքը պահանջում է բորբ) և մեկնում է «խաւար կամ հնոց կամ տխուր»։ ՀՀՔ մեկնում է բորբ «խաւար կամ մութն, կամ աղջամուղջ կամ մռայլ»։ ՆՀՔ բորբ «թուի արմատ բորբոք բառին, և անխորտիր երևի նշանակել ղյորդութիւն հրոյ և ծխոյ», բորբոք. լծ. հյ. բորբ և յն. πῦρ «հուր»։ ՋՔ մեկնում է «պայծառ, բազմալոյս. 2. տօթ, տապ. 3. խաւար, թանձր խաւար». ԱՔ «ցաթած լոյս. 2. տաքութիւն, ջերմութիւն. 3. մէգ, մութ, մշուշ. 4. առատ, յորդ». սրանցից դուրս ՓՔ դնում է նաև տարբեր մի բորբ. ի հլ. «ծածկոյթ, սաւան» նշանակութեամբ, որից ողաբորբ, ողաբորբեալ բառերը։

Ուղիղ մեկնեց Windisch. 15 բորբոք համեմատելով լտ. ferveo բառի հետ։ Տէրվ. Altarm. 60 և Նախալ. 96 համարում է թէ կրկնուած է բրոք արմատից, որին կցում է անս. bhrāj, յն. φλέγω, լտ. fulgeo, flagro, անգլսք. blican, գոթ. bairhts, հսլ. bliskŭ ձևերը։ Հիւնք. մորմոք բառից։ Վէրի ձևով Meillet BSL հտ. 13, թ. 52, էջ 29։— Scheftelowitz BB 29, 37 առնս. babhru «մութ կարմիր», յն. φρύγω «փայլեցնել». հսլ. bronŭ «սպիտակ», լիթ. bė̃ras «դորշ» բառերին ցեղակից։ Դափանցեան ՅԲՕ 23, էջ 357 բորբոք կրկնուած է *բոք արմատից, որ է = բոց։

Գիւմ.—երև. բ'որփ տալ «կրակ տալ, բորբոքել, սիրտը կամ հոգին արծարծել», բ'որփել. Ղրբ. պէ'րփել «կրակը արծարծել» (յատկապէս «քղանցքով փչել»), նաև «դրդռել, գրգռել», Ջղ. բ'որբո'ֆել, խրբ. կր. բ'որբ'օֆիլ, Ալշ. բ'որբ'ըգել, Մշ. բ'որբ'ըգել, Ողմ. բ'էորբըֆիլ, Նր. բ'որբ'ըֆել, Սլմ. պէորպրֆել «կրակը հրահրել»։ Նոյն բառերն են բորբոնիմ Վն. «բորբոքում», բորբոնիմ զարնել Վն. «հրահրել», բորբոմ ըլլալ Մն. «զայրանալ, աստիճ բարկանալ»։

Փոխ.—Վրաց. ბორბოქი բորբոքի «զայրանալ, բարկանալ, յանդիմանել, քրքմբնջել»։

ԲՈՐԲՈՍ «մզլաձութիւն, քիւֆ» Գէ. ես. Ոսկիփ. Մաշկ. Վրդ. պտմ. էջ 3 և ծն. որից բորբոսաճամ Վստկ. բորբոսաճոտուրիւն Վստկ. էջ 3. բորբոսային Մխ. բժշ. բորբոսիլ Ճառընտ. Ոսկիփ. Մաշկ. Երզն. մտթ. Վրդն. ել. անբորբոս, անբորբոսային Մխ. բժշ.։

ՆՀՔ լծ. բոր, բոյս, բորբոք։ Հիւնք. բու և բոտոտ բառերից։

Գիւմ.—Ալշ. Մշ. բ'որբ'ոս, երև. բ'որբ'օս, Պլ. փորվ'օս, Պրտ. բ'սբ'օրօղ «բորբոսնած», Սեբ. բ'որբ'էս, Տիգ. փօրփուս, Ողմ. բ'էորբէօս, Շմ. պիւրպէօսն. Մկ. պիւրպիւս, Ղրբ. փըրփէշն. -բայական ձևով՝ խրբ. բ'որբ'սողիլ. Ալշ. Մշ. բ'որբ'սնել, Ախց. կր. բ'որբ'սնիլ,

Տփ. բօրփանիլ, *Նխ.* փօրփանէլ *(հինը* բօրբրսանէլ*)*, *Պլ.* փօրփանիլ, *Տիգ.* փօրփիլ, *Սլմ. Վն.* պէօրպսնել, *Ասլ.* բ'սբ'րէօղիլ, *Շմ.* պիրպէօսնիլ, *Ագլ.* բըրբէ'շնիլ, *Ղրբ.* փըրփէ'շնիլ, *Հճ.* բ'myբ'muել։

Փոխ.—*Բրդ.* پرپوس perpos «բորբոս», پويڻن پوسی پرپوسی perposi Ծuin «բոլբոսիլ»։

*ԲՈՐԲՈՐԻՆՆՈՍ «քրիստոնէական մի ազանդ» *Շնորհ. յուգ.* գրուած վրիպակով՝ բարբարիանոս *Կորիւն.* այլուր բորբորիտոն *Խոր.* բորբորիտոս *Ուխտ. Ա. էջ 29.* բորբիոս *Ոսկիփ.* բորբորիտ, բորբիանոս *Ոսկիփ.* նշանակում է նաև «վաւաշոտ, պղծասէր, պոռնիկ» և այս իմաստով գրւում է բորբորիտ *Խոր. Ա. 15. Մագ.* բորբորիտոն *Բրս. մրկ. 126. Մագ. և Երզն. քեր.* —*Նոյն բառն է* բորբորիտոն «տիղմ» *բստ Բառ. երեմ. էջ 57։*

= *Յն.* Βορβοριανοί, Βορβορῖται «բորբորիտոն ազանդաւորները». որոնք կոչւում էին իսկապէս Βαρβηλιῶται. *Քշնամիները բառախաղով միացնելով այս անունը յն.* βόρβορος «ցեխ, աղր, կեղտ», βορβορώδης «աղտեղի, գարշ, պիղծ» *բառերին, վերանուանեցին նրանց* Βορβοριανοί. *(*Sophocles *299, 312)*—*Հիւրշ. 344։*

ՆՀՔ բոլորը հանում է βόρβορος «տիղմ» *բառից։ Հիւրշ. 344 չնկատելով բառախաղը՝ կասկածում է միացնել* բորբորիտ *և* բորբորիանոս *բառերը։ Սիօն վրդ. Տէր-Մանուէլեան, Բառարանջիկ, էջ 18 հանում է* բորբ «կայծ, բորբոքիլ» *արմատից և կցում է գւս.* բորբորիտ «հետաքրքիր» *(այլուստ ինձ անյայտ)։*

ԲՈՐԲՈՔ *տե՛ս Բորբ։*

+ԲՈՐԵՆԻ *(-նւոյ)* «մարդագայլ, hyena» *երեմ. ժբ. 9. վրք. հց. և* բորեան, ի *հլ. Բուզ. Սիր. ժգ. 22. վրք. հց. Բ. 263. Մխ. երեմ.* բորէ *Մագ. քղ. 31. Մխ. առակ. Մխ. երեմ.* բորայ *Բար. 162։*

= *Բնիկ հայ բառ՝ հնխ.* bhero- «գորշ, թուխ» *արմատից, որի ժառանգներն են լիթ.* bẽras, *լիթթ.* bẽrs *հրգ. անգսք.* brûn, *հիսլ.* brûnn, *ռուս.* brynĕ'tь, *որոնք նշանակում են «թուխ», յն. φᾱρός «ամպ» և կրկնութեամբ՝ սանս.* babhrú- «գորշակարմիր»։ *Հնագոյն ժամանակից այս բառը յատկացուած է նշանակելու գազանաձև անասուններ, յատկապէս արջը, որի անունը թաբուի էր ենթարկուած. հմմտ. սանս.* bhalla-, bhallaka-, *հրգ.* bero, *անգսք.* bera, *դերմ.* Bär, *հիսլ.* biǫrn, bersi, *բոլորն էլ «արջ», յն.* φρῦνη, φρῦνος «դոդոշ», *կրկնութեամբ՝ սանս.* babhrú- «հնաոճան, ichneumon», *գնգ.* bawrō, *լտ.* fiber, *կորն.* befer, *բրբտ.* bieuzr, *հրգ.* bibar, *անգսք.* beofor, *հիսլ.* biǫrr, *գերմ.* Biber, *լիթ.* bebrùs, *հպրուս.* bebrus, *ռուս. հին.* бобръ, *բոլորն էլ «կուղբ, ջրշուն»* (Pokorny *2, 166,* Ernout-Meillet *340,* Boisacq *1040,* Berneker *47,* Walde *287,* Kluge *39,* Trautmann *28, 30)։ Մեր մէջ արջը գրեթէ պահած է իր բնիկ անունը և վերի արմատը յատկացուած է բորենիին, որ նաեւ առակի գազան չէ և հիմա էլ մարդագայլ է կոչւում։ Հայերէնի մէջ պահուած է* bhoro- *արմատաձևը, որ գանում ենք նաև սլաւականում (ռուս. հին. լհհ.* бобръ, *ընդհ. սլաւական* *bobrъ*). -bĥi *կամ* -bi *մասնիկը ունին վերի ձևերից շատերը, որոնց համար դրւում է հնխ.* bhre-no-, bhro-no- *ևն։—Աճ.* Lagarde. Arm. Stud. § *412* -bĥi *մասնիկով* բոր «քոս» *բառից. ապէս է կոչուած անասունը՝ մորթի բծաւորութեան պատճառաւ. հմմտ. երբ.* צבוע ṣābō'a «բորենի», *որ բուն նշանակում է «պատեաւոր»։ Սպրպեան ՀՄ. 1909, 336 և* Karst, *Ծուշարձան 408 առմամբ.* ur, urri, bar «բորենի»։ *Պատահական նմանութիւն ունի սանս.* bhárī «առիւծ»։

Գիմ.—*Կայ* բորանի *նրև. «բորենու մորթից շինուած մուշտակ», որի աղբիւրը անյայտ է։*

*ԲՈՐԿՈՆԻՄ, ի–ա *հլ. «մի տեսակ սուր փուշ» Դատ. ը. 7, 16 (այլ ձ.* բորկունիմ, բարկէնիմ*). ուրիշ տեղ չէ գործածուած կարծեմ նոյն բառն է* բորիմ «առիւծամորենի» *Բառ. երեմ. էջ 57։*

= *Եբր.* ברקנים barqānīm. *անասոյդ բառ, որ ոմանք մեկնում են «փուշ», ուրիշներ «կամնասայլ». Եօթանասնից թարգմանութեան մէջ բառը առաւ պատճառութեամբ պա-*

հաւած է յն. βαρκηγέω *(այլ ձե.* βαρκομμεύω, βαρακτηρεῖω, *հայը անշուշտ* βορκονέω *կամ* βορκονεύω*) ձևով (*E. Sophocles, *էջ 299). յունարենի՞ վրայից՞ էլ տառադարձուած է մերը:*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ:

ԲՈՐՏ *«համաստեղութեան անուն» Շիր. ունի միայն ՆՀԲ. չգիտէ ԱԲ:*

ԲՈՐՏ *«անհարթ, անտաշ». արմատ առանձին անգործածական, որից ունինք* խորտաբորտ *«անհարթ առապար տեղ» Խոր. գ. 55 (իմա՛* խորթուրթորտ*) և Ղրբ.* հատտ ու բորդ *«հատտ ու կոպիտ»:*

+ԲՈՑ, ո *հլ. «բոց, ալաւ. 2. մեծ լոյս կամ տաքութիւն» ՍԳր. եղն. Ոսկ. ես. 179 (տես.* բոցոյն! *ձևով), «եռանդ» Կլիմաք. որից* բոցագոյն *ես. ժդ. 8.* բոցադէզ *Ագաթ.* բոցալեզու *եղն.* բոցախառն *Վեցօր.* բոցաճաճանչ *Կիւրղ. եէմ. թղթ. Մծբ. Բ. մակ. դ. 22.* բոցաճաշան *Ագաթ.* բոցաշունչ *Վեցօր.* բոցեղեն *Մն. դ. 24. եղն.* բազմաբոց *եղիշ.* աներոց *Նար. Սարգ.* հրաբոց *Նոնն.* բոցավառ, բոցարծարծ *(նոր բառեր):*

= Հնխ. bhā, bhē, bhāu, bhōs, bhəu̯-es *«լոյս, փայլիլ, ցոլալ» արմատից՝ աճած g մասնիկով, ցեղակից ձևերից համմտ. սանս.* bhās *«լոյս, փայլ», լտ.* bhānús *«լոյս, փայլ, շող, արև»,* bhāti *«լուսավորել»,* bhātis *«լոյս»,* vibhávan *«ճառագայթող», յն.* φάος, φῶς (φάϊος, *պատմ.* φάβος), φόως *«լոյս», հոմեր.* φάε *«փայլիլ, երևիլ»,* φαέθων *«փայլուն»,* φαείνω *«փայլիլ»,* φᾶνός *«փայլուն»,* φαῦσις *«լոյս», πι-*φαύσκω *«փայլեցնել», գնդ.* fravāiti *«փայլիլ»,* bāmyō *«լուսափայլ», հիւլ.* bān *«ճերմակ», անգսք.* bōnian *«լղկել», մրգ.* būenen *«փայլեցնել», գերմ.* bohnen *«աւազով շփելով փայլեցնել» են (*Walde *271,* Boisacq *1014—15,* Kluge *65,* Pokorny *2, 122):—*

Տէրվ. Նախալ. 94 հլ. բաց, բաճալ, *յն.* φῶς, φαίνω, *սանս.* bhā *են ձևերի հետ հնխ.* bhā *«փայլիլ, երևիլ» արմատից:* Canini, Et. étym. *65 կիմմ.* poeth *«կիպիչ» բառի հետ: Հիւնք. յն.* φῶς *բառից:* Bugge KZ *32, 30 յն.* πι-φαύσκω *«լուսաւորել, փայլեցնել», փլնգա «երևեցնել» բառերին է կցում, իբր **բաւց *նախաձևից:* Scheftelowitz BB *28, 290 լտ.* fax *«ջահ, խարոյկ»,* facies *«երես, դէմք», յն.* πα-φάσσω *«յանկարծ երևալ» բառերի հետ:* Patrubány SA SA *2, 34,* IF *13, 163 և ՀՄ. 1906, 342 լտ.* focus *«վառարան», յն.* φώγω *«խորովել», հրգ.* backen *«եփել» են ձևերի հետ. հայերէն* բոց<*հնխ.* bhoksk(h)os: *Լտ.* focus *բառի հետ համեմատութիւնը ընդունում է կասկածով* Walde *302, իսկ միւսները մերժում է:* Petersson KZ *47, էջ 285 արմատը գտնում է* բոսոր *բառի մէջ (երբ. փոխատուութիւն!), իբր* *բոս<*հնխ.* bhok'o-, *որով աւելի է հատպատում* Patrubány*-ի համեմատութիւնը լտ.* focus *բառի հետ:* Meillet, Dict. étym. lat. *357 մերժում է լտ.* focus *«վառարան» բառի հետ կապակցութիւնը: Պատահական նմանութիւն ունի կաթարդին,* bziy *«բոց»:*

Գիմ.—Ալշ. Մշ. Ջղ. բ'ոց, *Ակն. Ախց. Երև. Կր. Խրբ.* բ'օց, *Վն.* պոց, *Հմշ.* պօց, *Ռ.* փօց, *Ոզմ. Սեբ.* բ'էօց, *Ասլ.* բ'էօս, *Ագլ.* բիւց, *Մկ.* պիւց, *Սլմ.* պուէց, *Մրզ.* պը^{h}ց.*— Նոր բառեր են* բոցատար, բոցել, բոցկլտալ, բոցկալ, բոցախառն*:*

ⵔԲՈՒ, ո *հլ. «բու, բայղուշ թռչունը» ՍԳր. Վեցօր. 172. որից* բուէն, բբուէն *Ջենոբ. Լաստ. և* բուիճակ, բբուիճակ *Մխ. առակ. որոնք անշուշտ բուի գանագան տեսակներն են նշանակում. մասնիկի համար համմտ.* լուին, աղաւնին, բողին, կաւին*:* Rivola *ունի* բբու *«բու» ձևը:*

= Բնաձայն բառ է. համմտ. պրս. ﭘﻮ būm, ﺑﻮف būf, *քրդ.* بوم, būm, *արաբ.* بُومٌ bumm *և աւելի լաւ* بوم būh *«արտ բու» (համեմտ. Թրք. Թրգմ. Գ. 726), ասոր.* ḥa bavā(?), *յն.* βύας, βύζα, *լտ.* būbō, *վրաց.* ბუ բու, ბუვი բուվի, ბუი բուի, *թուշ.* բուի, *չեչէն.* բուհու, *լազ.* bγu, burbu *են, որոնք նոյնպիսի բնաձայնների են՝ իւրաքանչիւրը անկախաբար կազմուած (*Pokorny *2, 112):* *Ուրիշ տեսակ բնաձայն է Ռուսաթոյի գաւառականով կուկուվաք «բու»:—Հիւբշ. 430:*

Շրէօդէր, Thesaur. էջ 58 հայերէնից է համարում յո. būbō: ԳԴ գնում է վերի պրս. ձևերից: Ինճիճեան, Հնախ. Գ. 22 ու բնաձայնից: — ՆՀԲ արաբ. պրս. պուհ, պում, A. F. Pott, Kurd. Stud. ZKM 4. 31 բնաձայն (որ ուղիղ մէկնաբիւնն է) և կամ պարսկականից փոխառեալ: Lag. Urgesch. 762 պրս. būm և յո. būbō: Böttticher, Wurzelforsch. Halle 1852, էջ 16 բուհն բառի գէմ գնում է պրս. būm, խպտ. bai, աւստր. bōtā: Հիւնք. պրս. պուհ, պուհե «յոպոպ»: Patrubány ՀԱ 1908, 246 բուհն մեկնում է բու+ei «երթալ»+d. 'իբր «բո՜ւ ձայնելով գացող թռչուն»:

ԳԻՒ.—կր. Մշ. բ'ու, Ալշ. բ'ուվ, Երև. ſon-բու, Անգ. ſոr-բիւվ, ſor-բիւն, Մկ. կուր-պիւվ (հյ. կոյր=պրս. kōr «կոյր» բառով բարդուած). Ննխ. բուհու. Մշ. բո'ւհու, բո'ւհա (ռումիներէնից փոխառեալ), իսկ Ջղ. բ'ուր'ու «քաշուած կեանք վարող մարդ»: Նոր բառեր են բուել, բուալ «բուի ձայն հանել՝ կանչելը»:

ԲՈՒՋԱՂԹՆ «աղջամուղջ». ունի միայն Բառ. երեմ. 57, որի հետ նոյն է բազոխտ «մութ, խաւար, աղջամուղջ» ՓԲ. նոյնը դարձեալ գրուած է բազուխք աղջամուղջ» Բառ. երեմ. էջ 44:

Արդեօք այս բոլորը բալուտ «մխիթարած» բառի սխալ ընթերցուածնե՞րն են. մանաւանդ որ բալուտ բառը գրուած է նաև բաղ- գրչութեամբ:

+ԲՈՒԹ «հաստ, գուլ, անհատակացող. 2. դուլ, ո՛չ-սուր. 3. ծանր, թաւ» Փիլ. Նիւս. ծն. Շնորհ. այբուբ. Երզն. քեր. «կէտադրութեան մէջ՝ նշանը» Թր. քեր. «90 աստիճանից մեծ անկիւն» Եւկղիդ. որից բթել Սիր. ւ. 10. վրք. և վկ. Ա. 370. բթիլ Ագաթ. եղիշ. բթագոյն Փիլ. Պղատ. տիմ. բթաճայեաց «ո՛չսրատես» Առաք. մոլ. բթացուցանել Շնորհ. ընդհ. Ոսկ. աւագ բշ. բթութիւն Նիւս. քն. Մագ. քեր. առանց սղումի՝ բութանկիւն Եւկղիդ. նոր բառեր են՝ բթանալ, բթամիտ են:

= Բնիկ հալ բառ՝ հնխ. bhut- ձևից: Հայերէնի հետ նշանակութեամբ նոյն են հոլլ. bot, դան. but, հիւս. գերմ. butt «բութ (նիւթապէս և կամ փոխաբերաբար, այն է «հաստատլուխ, բթամիտ») կարճ ու հաստ», գերմ. verbuttet «մարմնով կամ հոգեպէս չզարգացած» գւռ. buttet «կարճ ու հաստ», Butz «կարճ ու հաստ մարդ, անասուն կամ բոյս», փոխաոսութեամբ՝ հունգ. buta «բութ, ապուշ», սպան. պորտ. boto, botoso «բութ», ֆրանս. (pied) bot «կուչ եկած (ոտք)», վալլոն. bott, իտալ. boto, ռում. but, butaciŭ «բութ», ռուս. botětь, butetь «հաստանալ, դիրանալ», սլ. búta «խոշոր գլխով մարդ, բթամիտ մարդ»: Այս բառերից սլաւական խումբը ըստ Berneker 77 փոխառեալ է գերմանականից միւոնների ծագումը պարզուած չէ: Ըստ Pokorny 2, 127 գերմանական խումբն էլ ծագում է հնխ. bhaud-, bhūd- «գարնել, հրել» արմատից, որի համապօրն է հնխ. bhaut-, bhūt- «գարնել, հրել» (Pokorny 2, 125): Հլ. բութ ձևով համապատասխան երկրորդին, իսկ նշանակութեամբ առաջինին, դառնում է երկուսի միջին օղակը, ուշադրենք հատկապէս գւռ. բթել, բթել «հրել, մշտել», որ նոյն արմատների բալսական իմաստն էլ պահում է:—Ա.ճ.

Meillet MSL 9, 150 համեմատում է լիթ. bukùs «բութ, գուլ», bùkti «բթանալ, գուլ դառնալ», որոնց վրայ MSL 10, 282 աւելացնում է նաև գոթ. bauþs «խուլ, համր, անհամ»: Հիւբշ. 430 չի ընդունում առաջին մեկնութիւնը, որովհետև կարելի չէ հլ. p և լիթ. k իրար մանրիկ բաժանելով բառից՝ հնխ. bhu- արմատը: Գոթ. bauþs բառի հետ համեմատւում են առնս. badhirá-, միոլ. bodar «խուլ» (տե՛ս Walde 275): Bugge BB 18, էջ 163 ալբան. but̥ë «կակուղ» բառի հետ, որ հիշել է Moratti՝ but ձևով: Pedersen KZ 36, 341 = Նպատ մը, էջ 12 կցում է ալբան. but̥ë «կակուղ», իոլ. bocc, նիոլ. bog «կակուղ» բառերի հետ, որոնց նշանակութիւնը անլարմար է:—Հիւնք. բոյս բառից: Charpentier IF 25, 242 հնխ. bhāu̯- «գարնել» արմատից. համմ. լտ. fatuus «անհամ». confūto «խոտնել,

օրափել»։ Karst, *Ցուշարձան 415 մոնղոլ.* moxo, *բուրիաթ.* moko, *թունգուզ.* moko, *մանչուր.* mokto, motso, mojo *«բութ» և հլ. մուճլ բառերի հետ. իսկ էջ 418 ալթայ. թաթար.* but, bŏt, bŭt *(կլոր, թաւ մարմիններուն համար ասուած), չադաթ.* put *«խրճիթ, արունք»,* buta *«կլորիկ թուփ, կոճղ», օսմ.* budala *«ապուշ»,* bodur *«կարճահասակ» ևն։* Mladenov IF *38, 169 ալբան.* butə *«կակուղ, փափուկ, քնքոյշ», գոթ.* baus, *լիթ.* bukùs, *նորվ.* butt *«բութ» բառերի հետ՝ հնխ.* bhut *ձևից։*

Գիհ.—Ախց. Ջղ. p'nip։

Փոխ.—Kraelitz-Greifenhorst WZKM *27 (1913), էջ 131 գնում է Թրք.* پات pat *«հարթ»,* بط pat *«տափակ, լայն», որից* پطبورون pat-burun *«տափաքիթ»։*

ԲՈՒԹ *«անստոյգ մի բոյս». մէկ անգամ յիշուել է Բժշ. առանց բացատրութեան, ըստ Հայրուսակ § 379։*

Բութակ *«նուագարանի բանալի»* տե՛ս բոյր։ *Թերևս նոյն է* բութակ *«մոյթ, նեցուկ», որ յիշում է Բառ. երեմ. էջ 215։*

***ԲՈՒԹԱԿ** *«մեռած հալեցնելու յատուկ հողէ աման, բուրայ» Ոսկիփ.։*

=*Արաբ.* بُطَاق butaq *«բուրայ», որ փոխառեալ է պրս.* بُطَه bōta *հոմանիշից. որմէ նոյնպէս թրք.* بُطَه pota *«բուրայ»։*

Այս ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ԳԴ, էջ 456 ա (պուրկ բառի տակ)։ ՆՀԲ և ՋԲ դնում են ռմկ. popa։ Pictet *2, 263 պրս. բառի հետ։*

ԲՈՒԹԻՆ *«փոքր եղջերու»* տե՛ս վիթ։

ԲՈՒԾ տե՛ս Բոյժ։

Սխալ ընթերցուած է՝ փոխանակ բոյժ, *ինչպես սրբագրում է Նորայր. Հայկ. բառաք. էջ 53։ ՆՀԲ նշանակում է իբր անստոյգ դրչութիւն, իսկ ԱԲ բոլորովին սխալ է մեկնում «բիծ, ադտ, արատ, պակասութիւն, տճկ. մահանա», ուղիղ անշուշտ կապել բիծ բառի հետ։*

ԲՈՒՃԱԿ տե՛ս Բուռ։

***ԲՈՒԻՃՆԻԿ** *«Չինաստանի մի տեսակ համեմելէն կամ խնկեղէն» Խոր. աշխ. 616. ուրիշ տեղ չէ գործածուած։*

=*Պհլ.* *bōy-i čēnīk=*պրս.* بوی چینی bōy-i-čīni *«ճենական խունկ», որ ծագում է* بوی bōy *«խունկ» և* چین čīn *«Չին» բառերից. ճի՛շտ ինչպես ունինք* դարիճնիկ < *պհլ.* *dar-i čēnīk=*պրս.* دارچین dārčīn *«չինական փայտ»։—Հիւբշ. 123։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ S^t. Martin, Mémoires, Paris *1819,* II, *էջ 394։ Նոյնը կրկնում են* Lag. Arm. Stud. *§ 417, Պատկանեան, Խոր. աշխ. 1877, էջ 83 ևն։*

***ԲՈՒԿ** *«պապական կոնդակ» Մարբին, որ և յետին տառադարձութեամբ գրուած է պուլ Մարբին. վուլ «հրովարտակ» Պատմ. ուռք. 217, վահր. ոտ. (հրատ. Շահն. էջ 205՝ ունի* բուլ*) «պապական կնիք» Մարբին. «կիլիկեան Թագաւորների կնիքը»* REA *1, 247։*

=*Լտ.* bulla *«կնիք, կնքեալ վաւերագիր, վկայագիր, պապական կոնդակ», որից փոխառեալ են իտալ.* bolla, *ֆրանս.* bulle, *անգլ.* bull, *գերմ.* Bulle *«պապական կոնդակ», յն.* βοῦλλα *«թագաւորական մատանի, կնիք» (*Sophocles *315)։ Լատին բառը բուն նշանակում է «ջրի պղպջակ», յետոյ «կոճակ», ապի յետոյ «ոսկի կոճակ, որ զանազան բանների իբր նշան էին գործածում» և վերջապէս՝ ձևիդ առնելով՝ «կնիք ևն»։ Մեր ձևերից բուլ, պուլ լատին են, իսկ վուլ բիւզանդական յունաբլնիդ առառադարձութիւն։—Հիւբշ. 373—4։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։ Որովհետև վուլ ձևի տակ ՆՀԲ յիշում է նաև լատին բառի նախատար «պալար՝ որպէս պղպջապըջակ ևն» նշանակութիւնները, ԱԲ սխալմամբ հայերէն բառի համար կարծելով՝ վուլ բառի դէմ շարում է «պըղպջակի պէս ուռեցք. 2. կոպճա (ուռած). տճկ. գոփջա» նշանակութիւնները։

***ԲՈՒԿ** *«եբրայական ութերորդ ամիսը». մի անգամ գործածուած է Գ. թագ. ը. 38 «Յամսեանն ի բուլ, այն է ամսեան ութերորդ».—յիշում են միայն ՀՀԲ և ՋԲ։*

=*Եբր.* בּוּל būl *«ութերորդ ամսուայ հին քանանացի անունը». մէկ անգամ գործածուած է Ս.Գրքի նոյն հատուածում. տառադարձուած է յն.* βοὺλ *(այլ ձ.* βαάλ*), որից էլ հայերէնը (*Sophocles *314)։—Աճ.*

ԲՈՒԼ *(յետին ուղղագրութեամբ դարձած* բուղ*) «դուրս տալը, միջից յառաջ բերելը (ջրի, ծիլի և ուրիշ բաների համար ասուած)». այս արմատական ձևով երկու անգամ միայն գործածուած է մեր մատենագրութեան մէջ՝ «ծիլ, ընձիւղ» նշանակութեամբ. նախ՝ Ոսկ. ես. էջ 170 և երկրորդ՝ Վեցօր. էջ 87—88 (բստ գեղեցիկ սրբագրութեան Վարդանեանի՝ ՀԱ. 1911, էջ 100)։ Նոյն արմատից են ծագում* բխել *(կամ* բղխել*) «աղբիւրի պէս հոսիլ կամ հոսեցնել (ջուր, գինի, մեղր, կաթ են). 2. ծիլ, նոր բոյսը հողից դուրս գալ, ծաղիկ տալ. 3. առատօրէն արտադրել (որևէ բան)» ՍԳր. Եղն. Կոչ. Ոսկ. յհ. ա. 3.* բղխեցուցանել *Յոբ. լբ. 27. Ես. խա. 19. Ագաթ.* բղխիլ *Եփր. վաշխ.* բղխիչ *Ագաթ.* բղխումն *Եղն. Ագաթ. ջրաբուղխ Դ. թագ. ի. 20. Սերեր. մշաարուխ Եղն. Ագաթ. հանապազաբուխ Ագաթ. Փարպ. հեարուխ Ոսկ. յհ. ա. 44. ծաղկարուղխ Ագաթ. կրկնաբուղխ Եւագրր. յանկարծաբուխ Կիւրղ. Թգ. յորդաբուխ Բուզ. Ոսկ. մ. ա. 23, Կող. ա. կոր. լուսաբուղխ Ոսկ. լուս. Վրք. հց. գետաբուղխ Եպիփ. խշ. ևն։*

ՆՀԲ *յծ.* ուղխ, ուխ, բողբոջ, բոյս, բոյր, բուրումն, *յն.* πηγή *«աղբիւր», թրք.* puñar *«ակունք», յն.* φύω, βλαστάνω *«բուսուցանել, ածիլ», լտ.* pullulo *«յառաջ բերել, ծնուցանել», թրք.* filiz *«ծիլ», buγ «հոգի», buxar «հոգի, ծուխ», լտ* bullio *«եռալ, պղպջակիլ»։ Հիւնք. յն.* πηγή, πηγάζω։ *Գագանճեան, Արև. մամուլ 1902, 75 և մանրիկով՝ հյ.* ուղխ *բառից։* Patrubány *ՀԱ. 1906, 345 հնխ.* bhlō *«փչել, ուռեցնել» արմատից. համմ. լտ.* flōs, *գոթ.* bloma, *գերմ.* Blume *«ծաղիկ», անգս.* blaed *«ծաղկումն» ևն. Նոյն արմատից է կրկնուած* բողբոջ*, իբր **բողբողջ*։ Ասպրկեան ՀԱ. 1909, 334 հյ.* ուղխ*, ողող.* ßêղուլ*, թրք.* ügi *«ջուր», öl, ül «ծով», ak-mak «հոսիլ», göl «լիճ», սամեր.* bal *«տարածել», ik «ալուն» են։*

Գիւր.—Արմատական ձևը պահում է միայն Ղրբ. պէօխ *«ծառի բարակ ճիւղեր՝ որ կոտրտելով՝ իբր կեր տալիս են անասուններին», որից* պխօ՛տիլ, պխպխօ՛տիլ *«ծառերի նոր ծլիլը, կոճակներ արձակելը»։—«Ջուր բխել» իմաստով են՝ Ջղ.* բ'խել, *Երև. Խրբ. Սեբ.* բ'խալ, *Սլմ.* պխել, *Ննխ. Պլ. Տփ.* փըխալ, *Մրղ.* բխխալ, *Ալշ. Ախց.* բ'խխալ, *Ասլ.* փղալ, *Հճ.* բ'ը'խօլ.—*Բրբախօս հայոց մէջ՝ Առն.* բղխել օլմագ *«բխիլ, սրտից ինքնաբերաբար դուրս գալ» (Արևելք 1888 նոյ. 8—9)։—Նոր բառեր են* բխբխալ *Ղրբ. «ջրի բխիլը», Ախց. «ջուրը պղպջակելով բխիլ»,* բրխբրխ *Կր. «ջուր լցնելու կաւէ աման» (այստեղ բառը դարձել է բնաձայն)։*

ԲՈՒԽԱՔԱՐ *«մատանի կամ կնքոց». ունի միայն Բառ. երեմ. էջ 57։*

*ԲՈՒԽԱՐ *«գոլորշի» Երզն. երկն. ժդ. (երկու գոլորշիկք որ ելանեն յերկրէս ի վեր՝ որ ասեն բուխար... այն որ շոր գոլորշին է, որ է բուխարն). փոխաբերաբար «սրտի կսկիծ» Մաթ. գծ. 187։*

=*Արաբ.* بخار buxār *«շոգի, գոլորշի». ասի՛ս և յաջորդը։—Աճ.*

*ԲՈՒԽԱԲԻԿ *«ծխնելոյզ» Դրնդ. 476. յետին ժամանակի բառ, որ հիմայ էլ գործածական է գլուխ.* բխերիկ, բուխարիկ, բուխերիկ, բուխուրիկ, բուխերի *ձևերով և «վառարան կամ ծխնելոյզ» նշանակութիւնով։*

=*Թրք.* بخاری buxari, *որից նաև վրաց.* ბუხარი բուխարի, *ասո.* բուխարիկ, *ն. սպոր.* buxarii *«վառարան, օջախ», ալբան.* buxar *«ծխնելուղ». բոլորն էլ ծագում են արաբ.* بخار buxār *«շոգի, գոլորշի» բառից։—Աճ.*

ԲՈՒԽԱՏԱԿ *«մի տեսակ ծաղիկ՝ որ աճում է երջանիկ Արաբիայում» Խոր. աշխ. 612. ուրիշ վկայութիւն չկայ։*

Lagarde, Gesam. Abhd. *64 գնում է արաբ.* بخته buxtaj *«բուսաջուր». այսպիսի բառ չգիտեն բառարանները. կամուսն էլ չունի. այս պատճառով Պատկանեան, Խոր. աշխ. էջ 57, Հիւբշ.* ZDMG *46, 258—9 և* Arm. Gram. *263 մերժում են*

այս համեմատութիւնը, որ արդէն նշանակութեամբ էլ նման չէ։

*ԲՈՒԽՏԱՆ «չարախօսութիւն, դրպարտութիւն» Ք ուշ. 96. Նոր վկ. էջ 378, որ և բուղտան Նոր վկ. էջ 330 (ԺԸ դար)։

=Պրս. بهتان buhtān նոյն նշ., որից և ն. ասոր. buxtan.—ի ձայնը յաջորդ տ-ի մօտ խ դառնալու օրինակ է նաև մահուան> Արբ. մախուան (Դաւիթ-Բէկ ՀՍ. 1900, 334)։

Ուղիղ մեկնեց նախ Զօպանեան, հրտր. Քուշ. էջ 131, յետոյ Աճառ. Նոր վկ. էջ 782։—Վերի օրինակի համաձայն ջնջելի է իմ Գաւառական բառարանից, էջ 746 մաղքուն բառը և նրա տակ դրուած նկատողութիւնը։

+ԲՈՒՄ, ի–ա, ո հլ. «կաթնկեր դառնուկ կամ ուլիկ, Մն. լա. 7, 41. Սղկ. խղ. 13. Եփր. Ել. Երգն. քհր.։

=Հնխ. bhug'o- ձևից, որի միւս ժառանգներն են սանս. bukka «բուժ», bukkā «այծ», գնդ. būza «ուլ», buzya- «այծեայ, այծի», պհլ. būj, պրս. بز buz «այծ, ուլ», بزیچه buzīča «ուլ, այծիկ», بزه buza «այծեղջիւր», սֆղան. wuz, buz «ուլ», vuza «այծ», հինդուստ. बज buz «այծ», քրդ. بزن bizin «այծ», լօրիստ. biz, զազա bəzeía, bəzyá «այծ», bəzyék «ուլիկ», գուժիկ. bise, սամնանի boča «այծիկ», վախի buč, būč, հապդուլ. boc «հորթ», գնչ. buznó «բուժ», buzni «այծ», buznoró «ուլ», buzín «այծ», búzos «բուժ, ուլիկ», բելուճ. būz «այծ» (Horn § 213), գերմ. Bock, հրգ. boc, հոլլ. bok, անգլսք. bucca, հհիւս. bukkr, անգլ. buck, հիւլ. boc, bocc (փոխառութեամբ ֆրանս. bouc) «նոխազ, արու այծ» (տե՛ս Kluge 64, Pokorny 2, 189)։—Հիւբշ. 430։

ՆՀԲ բուծանել բայից (որից նաև Հինք.)։ Ուղիղ մեկնեց նախ Lag. Urgesch. 733, որ համեմատում է պրս. և գնդ. ձևերի հետ։ Նոյնը կրկնում են Müller, Justi, Տէրվ. Նախալ. 97, 172 եև։

Փոխ.—Վրաց. ბუწო բուծի «մատղաշ, փոքրիկ գառնուկ». բառս հայերէնից միայն կարող է փոխառեալ լինել՝ վերջի ծ-ի պատճառով. թերևս նաև չիչէն. puod, pod «ուլիկ»։

ԲՈՒԾԱՆԵԼ տե՛ս Բուծ։

*ԲՈՒԾԻՆ, ո հլ. «ճրագի մի տեսակ պատրոյգ». մէկ անգամ միայն գործածուած է սեռ. բուծնոյ ձևով՝ Վեցօր. գ. էջ 57 «Ըստ օրինակի պատրուկ ճրագի կամ բուծնոյ, որ ծծեն քամեն դիւղն առ ի կերակուր հրոյ»։ Այս սեռականից կարելի էր հնթադրել ուղ. *բուծճ, *բուծուն և կամ *բուծիճ. բայց միայն վերջինն է ուղիղ, ինչպես ցոյց է տալիս բառիս ծագումը։

=Ասոր. ܒܘܫܬܐ būštnā «փղոմոս, φλόμος, verbascum, խոնդատ, եզան ադի կամ ձկան մահարար կոչուած խոտը» (Brockelm. 34ա). այս խոտը իրրև պատրոյգ էին գործածում. համմ. արաբ. بوصير būṣīr կամ بوصيرة būṣīra «խոնդատ», այս բառերը իրանեանից փոխառեալ պէտք է կարծել. համմ. պհլ. būčīn(ā) կամ bōčīn(ā) «վարունգ»—Հիւբշ. 301։

ՆՀԲ բուծանել բառից («պատրոյգ բուծիչ ճրագի»)։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Lagarde, Propet. Chald. 243, Hagiogr. Chald. 99։

ԲՈՒԿ «կոկորդ». միջին հյ. բառ, որ յիշում է Նորայր. Բառ. ֆր. 605 բ (գրուած պուկ). կենդանի է այժմ էլ գաւառականների մէջ՝ ինչ. երև. Պլ. բուգ, Տփ. բուգը են։ (Տե՛ս Գւռ. բառ. 204—5)։

Պատահական նմանութիւն ունի լտ. bucca «բերան, ուռած այտ» (>ֆրանս. bouche, իտալ. bocca), որովհետև ըստ Walde 99 ծագում է հնխ. buq «փչել, ուռցնել» արմատից, որ եթէ հայերէնի մէջ գոյութիւն ունենար, պիտի ունենար *պուխ ձևը և անշուշտ ո՛չ «կոկորդ» նշանակութիւնը։ Իսկ եթէ մեր բառը համարենք լատիներէնից փոխառեալ, սրբան հակառակ են բառիս ընդարձակ տարածումը և նշանակութեան տարբերութիւնը։—Պատահական նմանութիւն ունին նաև գերմ. Backe, հրգ. backo, bahho «այտ», որոնք ըստ Kluge 33 ծագում են հնխ. bhag- «ուռել»>յն. φαγεῖν արմատից և հայերէնում պիտի տային *բակ։

*ԲՈՒՂԱՅ «ցուլ» Ոսկիփ. ունի միայն ՆՀԲ. չեն յիշում ՋԲ և ԱԲ։

= Թրք. Ьöğa buγa «ցուլ»։—Հիւբշ. 516։ ՆՀԲ իբր բառ ոմկ. պուղա, իսկ Հիւբշման իբր յատուկ անուն է նշանակում։

Բուճուճ «շագանակի վրայի փշոտ կճեպը» Վսակ. 152։

=Համմա. պաճին բառի տակ ասուածները և յատկապէս գուռ. պաճուճ ձևը՝ փոխանակ պաճին և պաճիճ, ու ձայնաւորով։

ԲՈՒՄԲ «սրունքի մսոտ մասերը» Ստ. լեհ. (տե՛ս Նորայր, Բառ. ֆրանս. 613 ա). կենդանի է այժմ էլ Խրբ. «ոլոք» իմաստով։

Lidén, Arm. Stud. էջ 44 կցում է լիթ. bam̃balas «կարճ ու հաստ, թզուկ», նորվ. bembei «պորտ», շվէդ. bamb «փոր», ko-bomba «գէր կով», bämba «հաստատփոր կին», մրգ. bemstīn նոյն նշ. բառերին։

*ԲՈՒՆ, ի–ա հլ. (կայ նաև սեռ. բնոյ եփր. Փիլիպ., գրծ. բնի Բուզ.) «ծառի իրանը, այն է արմատից վեր՝ մինչև ճիւղերի բաժանմունքը եղած մասը» Յոբ. ժգ. 8. նմանութեամբ՝ «աշտանակի հիմնական մասը, որի վրայ հաստատած են ամէնները կամ ճրագները» ել. իե. 31, լէ. 17, Թուոց ը. 4. «նիզակի կոթ» Ա. Թագ. ժէ. 7. «խաչի կոթը, երկար թևը» Շնորհ. թղթ. և բարձր. «սանդուխի երկու կողմի գերաններըը, որոնց վրայ ամրացած են աստիճանները. montant» Վրք. հց. «խարիսխ, հիմ» Ոսկ. ղ. ճառ Ղազարու. (Զբունս սրտին շարժեալ սասանէր. յն. τὰ θεμέλια (գհիմունս) τῆς καρδίας. ձձ. գբոյնս, գբոց, գբոյժս. ՆՀԲ ուղղում է գբոյնըս. Վարդանեան ՀԱ 1911, 690 յաջող կերպով սրբագրում է գբուն). «բուն բանակը կամ բանակատեղին (համեմատութեամբ թևերի)» Ա. մակ. թ. 35. Ագաթ. Բուզ. «մէկի կամ մի բանի ծագումը, նախապատճառը, սկիզբը» Ոսկ. մ. բ. 26. Մծբ. եզն. եփր. Փիլիպ. «բնիկ, բնական, իսկական, ճիշտ ու ճիշտ» Սգր. Ոսկ. ես. և եփես. Ես. պտմ. և քր. Կորիւն։ Այս այլևայլ առումներից են ծագում ի բուն «ցվերջ, ի սպառ» Ագաթ. Ոսկ. ես. ցրուն «ցվերջ, ընդ միշտ» Ոսկ. մ. բ. 6, 7. ես. և եփես. ի բեէ «բնականից, ի սկզբանէ» ՍԳր. Ոսկ. մտթ. հռ. Ես. պտմ. և քր. Ագաթ. Բուզ. եզն. Կիւրղ. Թգ. բուն կանգնել «որսալու մի ձև է. որսատեղին մարդկանցով ու շներով շրջապատելով՝ երէներին խըրտնեցնում էին և քշում դէպի կենտրոնը» Անան. պիտ. 25. ի բմմէ Բուզ. Ոսկ. յոհաս. ի բնոջէ Կիւրղ. գնձ. բնաւ, բնաւ իսկ, ոչ բնաւ, ընդ բնաւ ՍԳր. Սեբեր. Ոսկ. եզն. Ագաթ. Ես. քր. բնաւին Ոսկ. մ. ա. 4. բնաւոր Ոսկ. մտթ. և ես. բնակ «բուն, հարազատ» ՍԳր. Ես. քր. Բուզ. «տևական, մնայուն» ՍԳր. Ոսկ. ես. բնի Ոսկ յհ. ա. 11. բնիկ Փարպ. խոր. բնութ Տիմոթ. կուպ. էջ 178. բնութիւն ՍԳր. Ոսկ. ես. եզն. բնական Հռ. ա. 26, 27. Կորիւն. բնաբարձ Մծբ. Ոսկ. ես. բնադիր «բանակատեղի» Յուդթ. ժե. 7(բուն «բանակ» բառից). բնածին Բ. պետ. բ. 12. բանիբուն Ոսկ. Սեբեր. Ես. քր. անբուն Հռ. ժա. 24. նիզակաբուն եփր. Թգ. Բուզ. միաբան Ագաթ. Կիւրղ. յես. համաբնեայ եզն. ողորմաբուն «բնապէս ողորմած» Մ. Մաշտ. 226 բ ևն ևն։ Նոր բառեր են՝ բնաձիր, բնապաշտ, բնատուր, բնակաեռն, բնածուխ, բնագէտ, բնագիտութիւն, բնոյր, բնութագիր, բնութագրութիւն են։

=Պհլ. պազենդ. 𐭡𐭥 bun «հիմ, արմատ, ծագում, բուն, սկիզբ, ծայր, հիմնական». պրս. بن bun «յատակ, տակ ջրհորի՝ աւազանի և նոցին նմաններց. 2. արմատ կամ տակ ծառոյ», بن نیزه bun-i-nēza «նիզակաբուն, նիզակի կոթը», օսս. bjn «յատակ, տակ», բելուճ. bunā «տակը, վարը, ներքեվը, յատս», քրդ. بن byn «մի բանի յատակը, ներքև, տակ», بنی beni «տակը, մրուր, դիրտ», հինդուստ. بن bun «հիմ, արմատ», զնդ. buna «հիմ, յատակ»։ (Իրանեանից են փոխառեալ նաև զնչ. būna, būnoz «վարը, ի վայր», մանդ. בונא būnka «հիմը, հիմք»)։ Իրանեան բառերի միւս հնդևրոպական ցեղակիցներն են՝ սանս. budhná- «յատակ, հիմ, ծառի բունը, արմատը», յն. πυθμήν «յատակ, հիմ, արմատ, ծառի բուն, ծագում, սկզբնապատճառ, լեռան տորոտը», πύνδαξ «ամանի յատակը կամ խուփը, սրի կոթ», լտ. fundus, գերմ. Boden, հրգ. bodam, հիսլ. botn, անգլսք. botm, կիմբ.

bon «բուն, խարիսխ, հիմ» ևն, որոնք յառաջանում են հնխ. bhudhno- կամ նաև bhundho- ձևից (տե՛ս Walde² 325—6, Boisacq 825, Kluge 65, Horn§ 229, Pokorny 2, 190, Ernout-Meillet³ 385. հմմտ. նաև Berneker 245—6, Trautmann 46)։ Վերջին ձևը հայերէնում պիտի տար *բուընդ (իբր բնիկ բառ), որ իրօք էլ պահուած է բացառական *անբուընդ>անդունդ ձևի մէջ (տե՛ս այս բառը)։ Սրանից հետևում է, որ բուն բառը բնիկ հայ չէ, այլ, ինչպէս մի քանի խիստ մասնաւոր նշանակութեանց համաձայնութիւնը և բառի ի-ա հոլովումը (փոխանակ n) ցոյց են տալիս, փոխառեալ է իրանեանից։—Հիւբշ. 123 և 430։

Klaproth, Asia polygl. էջ 298 մանչու. funku և էջ 105 ալ. pen, էրզ. bun։ Առաջին անգամ ուղիղ մեկնեց Գ, որ մեր բառը համեմատում է պրս. պիւն և պում ձևերի հետ։ ՆՀԲ պրս. պիւն, բայց ի բուն, ցրուն բառի մօտ նաև լծ. լտ. finis «վերջ»։ Պրս. bun ձևի հետ են կցում նաև Böttticher, Lagarde, Müller, Justi։—Spiegel, Comm. 2, 421 հլ. բնութիւն բառի հետ գնում է պրս. buna, ինչպէս որ Windisch. 22 հլ. ճամաբնութիւն ձևին իբր համապատասխան գրած է սանս. samabhāva։—Երկուսն էլ սխալ։—Առաջին անգամ Müller SWAW 38, 578, 593 և 39, 404 ուելացնում է սանս. budhna, իսկ Justi, Zendsp. 215 նաև գնդ. buna։—Bugge KZ 32, 5 հիւլ. bun «արմատ, տակը» և bunad «ծագում, հիմ» բառերի հետ. բայց IF 1, 455 փոխելով այս՝ փուցէ բառի հետ *bunyo- ձևից։ Հիւբշ. Pers. Stud. էջ 31 մերժում է կցել պրս. bun<պհլ. van<գնդ. vanā- «ծառ» բառի հետ, որ պիտի տար հլ. *վան։ Նոյնը Arm. Gram. վճռական մի որոշում չի կարողանում տալ՝ էջ 123 գնելով իբր իրանեան փոխառութիւն, իսկ էջ 431 գնելով իբր բնիկ հայ։ Karst, Ծուշարձան, էջ 400 ասուր. būnu «մանչ, սերունդ, կազմութիւն», bunānu «սերունդ», իսկ էջ 406 հլ. պինդ և սումեր. pin «հիմնարկութիւն»։ Մառ ЗВО 22, 78 հլամ. pun-kite «ի վերջ», վրաց. փուձնա «հիմնել» ձևերի հետ՝ իբր յաբեթական բառ։

Գիւտ.—Տփ. բուն (ծառի), երև. բ'ուն «ծառի բուն և մի բանի հիմքը. ինչ. աթարի գէզի բունը, թոների բունը կապել՝ վառելու համար», Մշ. բ'ուն «բնիկ, իսկական», Շիր. ունն ու բ'ունը=երև. հուսիւ ու բ'ուիւ «մի բանի էութիւնը, բոլոր մանրամասնները», Մրղ. պնավրին «բնաւ», Մշ. բ'նուր, Տփ. բնուրկ, Մկ. պնիւրբ, Պլ. փունուրբ, փունուրբ, երև. Սեբ. Սչ. բ'նուրյուն, Ալշ. բ'նուրբեն, Ախց. բ'նուրէն, Պլ. փունուրիւն, Շմ. պունուրուն։

Փոխ.—Մեր գանազան առումներից կազմուած ձևեր են՝ վրաց. ბუნი բունի «արմատ, բուն, բնիկ, կոթ», ბუნაური բունաուրի «տուն, բնակարան», ბუნება բունեբա «բնութիւն, նկարագիր, յատկութիւն, մարդկային բնութիւն, ցեղ, սեռ», ბუნებით բունեբիր «բնականաբար», ბუნებითი բունեբիբի «բնական», ბუნთურქი բունբուրքի «բուն թուրք» (Մառ Ипполъ. 62), ბუნაკი բունիկի «դաշոյնի կոթ» (Մառ ЗВО 22, 79), թուշ. ბუნებ բունեբ «բնութիւն», կիւրին. փուն «արմատ, հիմ»։—Իսկ արաբ. بنك bunk «բունը, սկիզբը», تبنّ tabannuk «բնակիլ, հաստատուիլ» (Կամուս, թրք. թրգմ. Գ. 76) ուղղակի իրանեանից են։—Պատահական նմանութիւն ունի չինէն. bun «վրան»։

ԲՈՒՆԴ տե՛ս Խնդբունդ։

ԲՈՒՆՁ «հողակոշտ, գուղձ». պիտին միայն ՋՔ և ԱԲ՝ երկուսն էլ բունձ գրչութեամբ, բայց սրանից է բառերունձ «լաւ հող ունեցող» Շնորհ. առ. էջ 75 (այս բառն էլ պիտէ միայն ԱԲ)։

Böttich. ZDMG 1850, 352 և Arica 78, 288 սանս. puñja։

Բունց «իգական անդամ, vulva». իբր միջին հլ. բառ ունի Նորայր, Բառ. ֆր.։

=Համարում եմ բուն բառից կազմուած։—Ա՛ճ.

ԲՈՒՆՊԱՆ, ի-ա հլ. «վերակացու երամա-

*կաց ձիոց». մէկ անգամ միայն ունի Ուռհ. ուրիշ օրինակ չկայ։ Անշուշտ կազմուած է պան մասնիկով (հմմտ. ձիապան) և արմատըն է *բուն «ձիերի երամակ կամ ջոկ». բայց այս բառը այլուստ ծանօթ չէ մեզ։*

ԲՈՒՆՋ «գուլ, բութ». ունի միայն Բառ. Երեմ. 69՝ գուլ բառի բացատրութեան մէջ։

ԲՈՒՇՏ, ո հլ. «մէզի պարկը, միզային փամփուշտ» Պզատ. տիմ. 172. «պալար, ուռուցք» Կիր. պտմ. էջ 23. Միխ. ասոր. էջ 263. «պղպջակ» Առաք. մոլ. փոշտ «ձուանքի ներքին պարկը» Լծ. նիւս. (որից փոշտաանկ «աղեքատութիւն» Ոսկիփ. Լծ. նիւս. Յայտմ. հոկտ. 19. փոշտաանկաւոր Բժշ.) փամփուշտ կամ փանփուշտ «միզային փամփուշտ, մէզի պարկը» Եզն. Շիր. Մագ. բաղարջուշտ կամ բաղափուշտ «մէզի փամփուշտ» Ոսկիփ. Մարթին. (որ և գրուած փալարուշտ Տաթև. Հարց. 242. փաղարջուշտ, փաղափուշտ, փալափուշտ). բշտիլ «ուռիլ» (չունի ԱՒ) Առաք. պտմ. 60. Նոր գրականում փամփուշտ «հրացանի գնդակն ու վառօդը պարունակող ամանը. cartouche», որից փամփշտաւոր, փամփշտակալ, նաև միզափամփուշտ ևն։

*Քննիչները առհասարակ միացրած չեն այս բոլորը։ ՆէՒ՝ որ բոլորն իրար է միացնում, լծորդ է դնում նաև լտ. pustula «պղպջակ, բշտիկ», Böttticher, Arica 71, 167, Lagarde, Urgesch. 713, Beitr. bktr. Lex. 57 փամփուշտ և փոշտ բառերը համեմատում է սանս. pṛšta, գնդ. paršti, *paitiparšti, պրս. աֆղան. pušt «կոնակ» բառերի հետ։ Տէրվ. Altarm. 5 փոշտ կապում է փուք, փչել ևն բառերին, իսկ փամփուշտ դնում է փոշտ բառի սաստկականը՝ մ չաւելուածով։ Justi, Dict. Kurde, էջ 74 փոշտ բառի հետ համեմատում է քրդ. papeft «քարճիկ, միզային փամփուշտ», յն. πομφός «պալար, պղտղջ», լտ. papula «բշտիկ, ուռեցք», papilla «բուտինքի պտուկ», լիթ. pampalas «ուռած, գերբ», pàmti «ուռիլ, գիրանալ»։ Տէրվ. Նախալ. 92 վերջին երկու լիթ. ձևերը, հալ. փամփ-ուշտ, փոպարել, թերևս նաև փափուկ՝ դնում է հնխ. pap, pamp արմատից։ Bugge, Btrg. 20 փամփուշտ կցում է յն. πομφός ձևին՝ իբր բնիկ հալ.։ Müller WZKM 6, 185 միացնում է փոշտ(անկ) և փամփուշտ։*

ԳԻՒ.—Ախց. Կր. Մշ. Ջղ. բ'ուշտ, Խրբ. Սչ. բուշտ, Հմշ. պուշտ, Ննխ. փուշտ, Ագլ. բիւշտ, Շմ. պիւշտ, Ասլ. փիւշդ, բոլորն էլ նշանակում են «բշտիկ, ուռեցք», իսկ Տփ. բուշտ «փուչիկ, միզափամփուշտ»։—Բայաձև Ագլ. Տփ. բշտիլ, Ալշ. Ջղ. բ'շտել, Ննխ. բըշտէլ, փշտէլ, Երև. պշտէլ, փշտէլ, Պլ. բշդել, Սեբ. բ'շդել, Ռ. փշդիլ։—Նոր բառեր են բշտիկ, բշտոկիլ, բշտոտել, բշտեցնել, բշտբշտիլ, բշտբշտոտիլ, ալաբուշտ.—հետաքրքրական է յատկապէս՝ Մշ. փալամփուշտ «բաղափուշտ»։

ՓՈՒ.—Վրաց. ბუშტი բուշտի «միզային փամփուշտ, ջրի պղպջակ», ბუშტუკი բուշտուկի «միզափամփուշտ», դաբուշտեբա «ուռեցք յառաջացնել». լազ. busti «միզափամփուշտ»։

ԲՈՒՌ, ո հլ. «ծեփելու կիր կամ գաճ» Օր. իէ. 2. 4. Ոսկ. ես. 422. «նօթ, սիլիկոն կոչուած կարմիր ներկը» Իմ. ժգ. 14. «ապիկի, ջնարակ, սրտ» Վրք. հց. որից բռել «կրով կամ գաճով ծեփել» ՍԳր. բռեայ «բուռով ծեփած» Երզն. մտթ. 456. բռfար «փոքր քար՝ ձեռքը առնելու չափ» Վրդն. առ. 89. բռածեփ «բուռով ծեփած» Ոսկ. զկ. գրուած է փոր, ի հլ. Սարգ. ա. պետր. դ (էջ 246 բ)։

*=Բաբել. *būlu «կիր», ասուր. pūlu «կիր», որից փոխառեալ է նաև յն. πῶρος «փխաքար, tuf», πωρόω «պնդիլ, կարծրանալ»։*

Հիւնք. սփռել բայից։ Վերի մեկնութիւնը տուաւ Jensen, Hitt. u. Arm. էջ 183, 212 և ՀԱ. 1904, 273։

ՓՈՒ.—Արևել. Թրք. (Kazzak-ի բարբառով) بور bur «գաճ» (Shaw, A sketch), Կազանի Թթր. بور bur «կաւիճ» (Будаговъ 1, 274), Թրք. գաւ. Եւդ. بور pur «բուռ, բռաքար, բռաժալուռ» (Պազանճեան, Ծուշարձ. էջ 329)։

ԲՈՒՌԿԱՆԻՆ «հրաբուխ. նորագիւտ բառ,

որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Թղթ. դաշ. 24. «Սիկիլիա կղզին, յորում կայ հրակատարն բուռկանիա»:

=Լտ. vulcanus «հրոյ աստուած» (Ֆր. volcan «հրաբուխ») բառի յոյն տառադարձութիւնից:—Աճ.

ԲՈՒՒՆ, ն հլ. (-ռին, -ռան, -ռամբ, -ռունք -ռանց) «ձեռքի ափը և թաթը միասին» ՍԳր. «բռունցք» Յայտմ. փոխաբերաբար «իշխանութիւն, տերութիւն» Բ. մակ. գ. 6. Կոչ. Ոսկ. երր. եզն. «բռնութիւն, ուժգնութիւն, աստկութիւն» ՍԳր. «բռնաւոր, իշխան» ՍԳր. Ոսկ. ես. իբր ածական՝ «հզօր, զօրաւոր, բռնաւոր» ՍԳր. Ագաթ. Փարպ. իբր մակբայ՝ «ուժգին կերպով» Բ. մակ. ժ. 30. զանազան ոճերով՝ բուռն ճարկանել «բռնել. 2. սկսիլ» ՍԳր. ի բուռն առնուլ, բուռն արկանել, զբռամբ ածել, զբռամբ արկանել «բռնել» ՍԳր. զոգիսն ի բռին ունել «մահը աչքն առնել» Ոսկ. եփես. բուռն լինել «հարբստահարել» ՍԳր: Այս արմատից են՝ բռնել Սիր. գ. 28, իզ. 10. լա. 2. եփր. պհ. բռնաբար «բուռն կերպով» Օր. իր. 25, 26. Եւս. քր. եզն. Ոսկ. ես. բռնաբարել ՍԳր. Փարպ. բռնագոյն Դտ. ժր. 26, երեմ. լ. 21. բռնադատել ՍԳր. եզն. Կիւրղ. ծն. բռնագրօսել Առակ. ժզ. 26. Սեբեր. բռնալիր Մրկ. է. 3. բռնակալ Եւս. քր. բռնաճալ ՍԳր. Եւս. քր. բռնաշունչ վեցօր. բռնաւոր ՍԳր. Ագաթ. եզն. Ոսկ. մ. բ. 4. բռնի Նեհմ. ե. 14, 18. բռնիւ Եւս. պտմ. ի բռնի Եւս. պտմ. բռնցի Ել. իա. 18. բմբռնել «ձեռքով բռնել» ՍԳր. Կոչ. Ոսկ. յհ. ա. 3. (օր. ըմբռնել ի բուռն. Սուտ-Սեբ. էջ 3. Բուզ. 212), «մտքով բռնել, հասկանալ» եզն. լիաբուռն Պիտ. վանակ. յոր. կաշմբուռն Եւս. քր. հաստաբուռն Ասող. բուռնալիր (առանց սղումի) եփր. պահ. ճարտաբուռն Եւս. քր. բռնապաստան «դիմադարձ, բռնի միջոցների դիմելով՝ իշխանութեան անձնատուր չեղող» Կանոն. էջ 81: Նոր բառեր են բռնաբարութիւն, անբռնաբարելի:

Մորթմանն ZDMG *26, 544 խալդ.* ibirani *«բռնադատել» բառի հետ: Մատ* ЗВО *5, 320 զնդ. և սանս.* mušti, *պրս. և պհլ.* mušt *«բուռ» բառերի հետ: Հիւնք. հանում է բուռ «ծեփ» բառից:* Bugge, Lyk. Stud. *1. 35 և 36 սանս.* barh, bṛhati *«ամրացնել», գերմ.* bergen *«ծածկել, պահել» բառերի հետ. նոյն հայ բառը գտնում է նաև Պրւսաց առնաւան մէջ, որ ըստ Հեսիքիոսի πέρραμος «թագաւոր» բառն է:* Jensen, Hitt. u. Arm. *36, 42, 79 հաթ.* bhurain? *«իշխան» բառի հետ: Գեանջեցեան* ZAPh *1, 61* բռնաբարել *բառի մէջ* *բարել դնում է<բերել՝ Դաւիթ-Բէկ, Յուշարձան 396 և. գալլ.* bryeint, breint *«առանձնաշնորհ», breenin «թագաւոր», հիւլ.* brig *«ուժ, զօրութիւն, արժանիք», հ. բրետ.* brientin *«ազատ, անկախ, ազնուական, զօրաւոր»: Սպրգեան ՀԱ. 1909, 335 հլ.* բարկ. *թրք.* el *«ձեռք»,* berq *«բարկ» և սումեր.* bar, bal *«ձեռք, հզօր, բուռն»:* Karst, *Յուշարձ. 403 վերջին սումեր. ձևի հետ: Մատ, Яз. и Лит. 1, 275 պրս.* mušt, *վրաց.* boţa „загреб" *և ռուս.* хватать *«բռնել» բառերի հետ:*

Գիմ.—Ալշ. Ախց. երև. խրբ. կր. Ջղ. Սեբ. բ'ուռ, *Ռ. Տիգ.* փուռ, *Տփ.* բուրը, *Հճ.* բ'ուր, *Զթ.* բ'օռ, բ'ոռ, *Ոզմ.* բ'էօռ:—*Ալշ. Մշ. Ջղ. Սչ.* բ'ոռնել, *Ննխ. Պլ.* բռնէլ, *Ախց. երև. կր. Սեբ.* բ'ոռնէլ, *Ագլ.* բռնիլ, *Ակն. խրբ. Ոզմ.* բ'ոռնիլ, *Զթ.* բ'ը'ոռնիլ, *Սլմ. Վն.* պռնել, *Գոր. Մրզ.* պռնէլ, *Հճ.* բ'ը'րնել, *Տփ.* բռնիլ, *Մկ.* պռնիլ, *Ղրբ. Ռ. Տիգ.* փռնէլ, *Ասլ.* բ'ռնէ'լ, *Շմ.* փռնիլ, *Հմշ.* պռնուշ. *Համտ. և Պլ. մնկ.* բիննէլ, *Տփ. մնկ.* բլնիլ:—Նոր բառեր են բուռ *Ալշ. «կոթ, մեղեխ», Սս. «դաշոյնի կոթ», Վն. սանդիտոռն», Վն. «նաւի թիակի հաստ կոթը», բռանց «հաղիւ» (այս ձևն ունի նաև Առաք. պտմ. 465), բռի «կոպիտ, բիրտ» (իմաստի համար հմմտ. բռնագլուխ «հաստատակամ, յամառ» (չունի ԱԲ) Յայտմ. յնվ. 6 «Բռնագլուխք իցեն և կարի դժուարին, որ բաղում անգամ հարցաք զնոսա սիրով և աղաչանօք և ոչ ամենևին յայտնեցին զխորհուրդս իւրեանց». ըստ այսմ պատահական նմանութիւն ունի վրց.* բրիո'վի *«բիրտ, կոպիտ մարդ»),* բռնակ, բռնակալ, բռնատ, բռնաշափ, բռնատուն, բռնացնել, բռնաւոր *«բան-*

տարկեալ», բոնբտել, բոնիչք, բոնկալ, բորբոկիլ *«կրակ առնել, բորբոքուիլ» (հմմտ. տճկ.* tutmaq *«բռնել» և* tutušmaq *«բռնկիլ». հներից հմմտ.* բոնկիլ *«վառուիլ» Սմբ. պտմ. 90. «Բորնցո՛ որ աղէկ այրի» Վստկ. 178. «Անկրակ բոներ լերդիկս ու կէրի» Տաղ. հրատ. Նաւասարդ 1914, էջ 230),* բոնկցնել, բոնմնի, բոնոտել, բոնուածք, բոնուիլ, բոուցք, բրորնցքել, բոնցքաչափ, բոնքամ *են։*

ՓՈԽ.—Քրդ. بری birî *«ուժ, կորով»* (Justi *ինքը համեմատում է այս բառը հլ.* բուռն *ձևի հետ. աւելի յարմար է գւռ.* բռի *«կոպիտ, քիրտ»). գնչ.* búrnek *«մէկ բուռ, մէկ ափ լիքը» (այս վերջինը* Paspati *համեմատում է պրս.* burenk, burunk *«մթներուած իր, գանձ» բառի հետ, որ նշանակութեամբ համաձայն չէ գնչու բառի հետ)։*

ԲՈՒՍ *«ձու, որ արլորից բեղմնաւորուած լինելով՝ կարող է ձագ տալ» Քիմիա. գիտէ միայն Նորայր, Բառ. ֆր. 249 աւ։*

ԲՈՒՍՆԱՆԱՑ *«երեսք». ունի միայն Բառ. երեմ. էջ 58, որ և էջ 56 նոյն իմաստով ունի* բնելոյ։

***ԲՈՒՍՏ** *«քարի նման ծովային մի բոյս. մարջան,* corail *Բժշ. գրուած նաև պիտ. արդի գրականում գործածական է միայն առաջին ձևը։*

=Պրս. بسّد bussad *(որ և* بسّو vissad*) «բուսած. պարսկերէնից փոխառեալ է նաև արար.* بسذ busuð *«բուսած» (Համուս, Թրք. Թրդմ. Ա. 721)։—Հիւբշ. 263։*

Ուղիղ մեկնից նախ ԳԴ, լեռոյ ՆՀԲ, Böttticher, Arica *74, 215 են։*

+**ԲՈՒՏ** *«ուտելիք, կերակուր» Սիր. լ. 25, լգ. 25. Եւագր. որից* բտել *«սնուցանել, պարարել» եփր. վարշ. Ոսկիփ. Վրդն. առ. 76.* բտկան *«լաւ սնուած, պարարտ» Վրդն. սղ. էջ 487.* բտոց *«սնուցում» Վրդ. առ. 23.* խոտաբուտ *Բ. մակ. ե. 27. Եղիշ. 36. կթ.* խըտաբուտ *եփր. պհ.* խոզաբուտ *եփր. պհ.* ընդաբուտ *Բուզ. գրուած* բուբ *«սնուցում» Վրդն. առ. 21.* բուբել *«պարարտացնել (մորթելու համար)» Վրդ. առ. 21։*

=Բոյծ արմատի երկրորդ ձևն է և նրա հետ միասին ծագում է հնխ. bhug՛ *արմատից. հայերէնի մէջ ծ-ս ձայնափոխութեան համար հմմտ.* արտ *<*արծ <*ag՛ro *և մանաւանդ* մուտ–մոյծ, *որ ցոյց է տալիս նաև թէ ինչպէս ու և ոյ կարող են իրար փոխարինել։*

ՆՀԲ լծ. ուտ, խոտ, բուծ կամ բոյծ։ *Տէրվ. Նախալ. 97 առնս.* bhuj, *լատ.* fungor *և հլ.* բուծանել *բառերի հետ հնխ.* bhug *արմատից։* Müller, Arm. VI *յն. φυτόν «տունկ» բառի հետ։ Հիւնք.* բուծանել *բոլից։*

ԳԻՒ.—Բլ. բ՛ուպ, բ՛դել, *Մկ.* պիտ *«ընտանի կենդանիների ձմեռուայ ուտելիքի պաշարը. 2. ուրիշի անասունը իր մօտ պահելով կերակրել՝ որոշ վարձքի փոխարէն»։ Նոր բառեր են* բուտր *«նախրապան»,* բավարձ *«նախրապանի վարձը»։*

ՓՈԽ.—Քրդ. پوت put, پوتی puti *«անասունների ձմեռուայ ուտելիքը»։*

***ԲՈՒՏ** *«պերճասուտ, եկեղեցական վերատեսուչ». ունին միայն Մխ. դտ. 141 և Սմբ. դատ. 72. առաջինը յն.* պերճասուտ *բառը բացատրելով՝ գրում է. «որ այժմ է* բուտ *(այսինքն թէ ժԲ դարուն կոչւում էր* բուտ*). երկրորդը հակառակ դիրքով «բուտն, որ է յունարէն պերճասուտ»։ Այս բառը շորս անգամ էլ գործածուած ենք գտնում Բագարանի արձանագրութեան մէջ (է դար). «ԼԳ ամի Խոսրովայ արքայի երանելի տէր բուտ առուեղեան ձգեաց զհիմունս սուրբ եկեղեցւոյս... ԼԸ ամոյն կորուսին զբուտն և յետ երից ամաց մահուան բոին՝ կատարեաց սուրբ եկեղեցիս աննայ բոին ամուսին...» (տե՛ս Մառ ЗВО 7, 322—6)։ Այստեղ Մառը կասկածի մէջ է՝ թէ* բուտ *յատո՞ւկ անուն է թէ հասարակ. բայց ըստ իս յատուկ անուն է Առաւեղեան տոհմից մի իշխանի (տէր) և ո՛չ թէ հոգևորական ոմն, քանի որ բիշ յետոյ էլ ցոյց է տրւում թէ բուտը ամուսնացած էր։ Սակայն նոյն իսկ իբրև յատուկ անուն ընդունելով՝ բառը նոյն է նախորդի հետ. հմմտ.*

=Ասոր. حوذ bud *«եկեղեցական տեսուչ», որ նոյնպէս մեր բառի նման իբրև յատուկ անուն էլ գործածուած է. այսպէս էր*

կոչւում Գալիլակ և Դիմնակ առակաց գրոց ասորի թարգմանիչը։

Բաստամեան, Մխ. գր. 141 դնում է պարեա բառից, Brockelmann, Ուս. փոխ. բառից, Թրգմ. Տաշեան, էջ 94 պերեատուս բառից սղուած է համարում։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Տաշեան, Վարդապետութիւն Առաքելոց, Վիեննա 1896, էջ 53։—Karst, Դաւառն. II. էջ 52=յն. βουτιστης «immersor» (իբր մկրկըտող). բայց այս բառը չունին ո՛չ Bailly և ոչ Sophocles։

ԲՈՒՏ «լիբր կամ աներկիւղ». ունի միայն Բառ. երեմ. էջ 58։

*ԲՈՒՏՓԱՐԻՍՏ «կռապաշտ». մէկ անգամ գործ է ածում Օրբ. էջ 354 «Ընդ բուտիփարիստն և ընդ աթաղփարիստն կորիցէ և ի դժոխս իջցէ»։

=Պրս. بتپرست butparast «կռապաշտ» բառն է, որ կազմուած է but «կուռք» և parast «պաշտել» բառերից։

Ուղիղ մեկնեց Շահնազ. Օրբ. բ. 233։

*ԲՈՒՐԳՆ, ն հլ. (բրգան, բրգունք, բրգանց) «աշտարակ կամ նման բարձր շէնք» Ա. մակ. ժգ. 10. Եւս. քր. ա. 52. Խոր. Նար. խչ. «մի տեսակ կոթող, պիրամիդ» Ա. մակ. ժգ. 28. «անօթիկ՝ յորում արկանին քուէք, որով երերեալք անկանին ի թաւիին. (այսպէս կոչուած իր ձևի պատճառով). լտ. fritillus, ֆր. cornet Աշխ. Ստ. լեհ. վկայութիւնները տե՛ս Նորայր, Բառ. ֆր. էջ 300 ա), որից բրգանձն, բրգանման (Նոր գրականի մէջ)։

=Ասոր. ܒܘܪܓܐ būrgā «աշտարակ», որից փոխառեալ է նաև արաբ. برج burj «աշտարակ, կենդանակերպ». գտնւում է նաև ուրիշ շատ լեզուների մէջ, որոնք բոլոր իրարից են փոխ առած. այսպէս յն. πύργος «աշտարակ, աշտարականման շէնք, պարիսպ, պատնէշ», φύρκος «պարիսպ» (ըստ Հեսիքիոսի), լտ. burgus «պարիսպ», գոթ. baurgs «քաղաք», հբգ. purc, burg «չորս կողմից պարիսպով պատած տեղ, դղեակ», անգլ. burh, հին հիւս. borg, գերմ. Bürger «քաղաքացի», Burg «դղեակ», Նոր փոխառութեամբ նաև սպան. borge, ռում. burdž, բուլգար. birg ևն։ Ծագմամբ այս բառը հնդեւրոպական է և յառաջանում է հնխ. bherg'h- «բարձրանալ, բարձր» արմատից, որի վրայ աւելի ընդարձակ տե՛ս բառնալ։ Հին հնդեւրոպացոց քաղաքները ո՛չ թէ ընդարձակ ու մարդաշատ վայրեր էին, այլ ամուր բարձունքներ, ուր ապաստանում էին նեղութեան միջոցին (տե՛ս Walde 102, 311, Boisacq 829, Kluge 81)։ Հայերէն բառի փոխառութեան տեղը ստոյգ չէ, բայց, ինչպէս նշանակութեան նոյնութիւնից երեւում է, պետք է ասորերէնից փոխառնալ լինի։ Յետին ժամանակներում երկրորդ անգամ փոխառեալ է բառս արաբերենից բուրջ կամ պուրճ ձևով, որ տե՛ս առանձին վարը։ —Հիւբշ. 392։

Առաջին անգամ ԴԴ գրաւ պրս. burj բառից։ ՆՀԲ դնում է յն. լտ. և թրք. ձևերը։ Peterm. 25 յն. πύργος։ Böttich. Rudimenta 15 թրակ. βρία «քաղաք» բառի հետ։ Մորթմանն ZDMG 31, 413 և 489 խալդ. burgaduni դնում է բուրգ +տուն բառերից։ Ալապէս նաև բևեռաձև արձանագր. Մորթմանեան, Գէլիս 1872, էջ 48՝ պուրկաւուն «բերդ», կազմուած պուրկ «բուրգ. յն. πύργος, գերմ. Burg» և տուն բառերից։ Bugge, Lyk. Stud. 1, 34 հլ. բառը իբր բնիկ կապում է գոթ. baurgs «քաղաք», հիւլ. bri «լեռ», զնդ. barəz =բարձր բառերի հետ. նոյնը գրտնում է նաև Πέργαμος, Πέργαμα ևն յատուկ անուանների մէջ, որոնք դնում է լիւդ. prñn- «տուն, շինել» բառից։—Սանտալճեան, L'idiome էջ 10, խալդ. burganani «տաճար» բառի հետ։ Scheftelowitz BB 29, 68 ենթադրում է, որ բառը գերմանականից անմիջականին և այսուհետեւ էլ հայերէնին է անցած։

—ԲՈՒՐԴ, ո հլ. «բուրդ» Երբ. Բ. 19. Ես. ըեմ. լը. 12. Ոսկ. գծ. որից բրդեայ Փարպ. բրդեղէն Վրդն. ղևտ. Յայտմ. բրդագործութիւն Մարթին. բրդազգեաց Վրք. հց. բրդգգեալ Ոսկ. բ. տիմ. էջ 210, որ և բրդագգեալ Սարգ. Կանոն. էջ 50. բրդեղ Վստկ. 214 (ոչ-

խարի համար ասուած). այսպէս նաև բըրդոռ «մի տեսակ թռչուն» (որ յետոյքի բըրդոռ լինելուց առացել է իր անունը) Վանակ. հց. նոր բառեր են՝ բրդոռ, բրդոռիլ.—հմմտ. նաև բեռդզեղ:

=Կազմուած է բրդել «կտրել» բայից. ճիշտ ինչպէս ունինք կռուրմ «ոչխարի բուրդ» ձևը՝ կտրել բայից կամ ասոր. ܓܙܪ gaz «խուզել» և ܓܙܙܐ gezzəθa «բուրդ»:

Ուղիղ մեկնութիւնը տուաւ Հիւնք:—Թիրեաքեան, Կարնամակ, ծանօթ. 35 միացնում է բեռդ, բարդ, բարձ են բառերին: Partubány IF 14, 59 առնս. bardhakas «խուզել, կտրել», լտ. forfex «մկրատ», յն. τέρθω «աւերել»:

Գիմ.—Ալշ. Սեբ. բ'ուրդ' «բուրդ», Սչ. բ'ուրդ' «հաւի փետուր», Պլ. Տփ. բուրբ, Ախց. կր. Ջղ. բ'ուրբ, Նխ. բուրբ, բուշբ, Երև. բ'ուռբ, Ռ. Տիգ. փուրբ, Հւր. բիւրդ, Ագլ. բիւռդ, Ղրբ. Մկ. Շմ. Սլմ. պիւրբ, Մրզ. պիւռբ, Հմշ. պուշտ, Զթ. բ'ուրդ', բ'օյդ', Հճ. բ'ույդ': Նոր բառեր են՝ բուրդձաղկիչ, բուրդիկ, բրդալի, բրդաճաճն, բրդգզել, բրդաչուր, բրդակալել ևն:

Փոխ.—Վրաց. ბურდო բուրդո, ბურდი բուրդի «լարդ, կալի մնացորդ (ցորենի ցօղուն են)». (այս բառը ցոյց է տալիս, որ հյ. բուրդ ունեցել է նաև այս նշանակութիւնը, որ նոյնպէս յառաջանում է բրդել «կտրել» գաղափարից. հմմտ. ռճկ. kesmik համանիշը՝ kesmek «կտրել» բայից). բուրդը'լի «բարձի համար փետուր», որի հետ հմմտ. Սչ. բ'ուրդ' «հաւի փետուր» (Մառ, Текст. и раз. VI. Физиол. (1904). էջ XXXVI մեզանից է գնում վրաց. ბურდ<բուրդ. բայց այս բառը Ջուբինով[2] (Ბიბლიური ბურდის ձևով) մեկնում է «գնտակ». Նմանապէս Մառ Текст. и разс. IV. յաւել. հայերէնից փոխառեալ է գնում վրաց. ბურთი բուրթի «գնտակ». սակայն ինչպէ՞ս կարելի է բրդից գնդակ դուրս բերել)—աւար. բուրբ, բուրբիճա «վաճ, թաղիք», քրդ. پرچ purt «կարճ բուրդ, մորթ, գեղմ, փետուր», پورتکاندن purtkandin «փետրատել» և بەرد berd «թաղիք, կաճ».—հայերէնից համարելու է նոյնպէս արաբ. بُرْد burd «մի տեսակ գոլ գոլ գծաւոր կերպաս. 2. մի տեսակ աբա՝ որ էհրամի պէս վրան են առնում, ծածկւում», بُرُود burūd «վրան խաւ չունեցող հագուստ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 574):

*ԲՈՒՐԴԱՄՈՒՇ «մի տեսակ խաղողդ». ունի միայն ԱԲ. մի անգամ գտնում եմ գործածուած Վստկ. 47. «բուն և լաւ գինին այն է, որում յունարէն ասեն բուրդամուշ ալինօս»: Ըստ Վաստակոց գրոց հրատարակչին՝ էջ 47, յն. բնագիրն ունի μερσίτης, որի գինին էլ կոչում է δενδρογάλινον.—Bailly և Sophocles չգիտեն μερσίτης, բայց գիտեն δενδρογάλ.γνος οἶνος «մի տեսակ գինի» ըստ Վաստակոց գրոց: Այլ ձև. բուրդամուլալիճօս:

=Անշուշտ յունարէն բառի արաբերէն տառադարձութիւնից աղաւաղուած. հմմտ. կլուճուս, ճաւարս և փուրփուզճայ, որոնք նոյնպիսի աղաւաղութեանց արդիւնք են Վաստակոց գրոց մէջ:—Աճ.

*ԲՈՒՐՀԱՆ, որ և պուռճան «հիւանդութեան վտանգաւոր օրը, ճգնաժամ, crise» Մխ. հեր. էջ 141 (բանից անդամ). ունի միայն ԱԲ:

=Արար. بحران buhrān «տագնապ. ճըգնաժամ»:

ԱԲ համարում է տճկ.: Ուղիղ մեկնեց Նորայր, Բառ. ֆր. 326 ա:

+ԲՈՒՔ, ո հլ. «ձիւնի փոթորիկ» Ոսկ. տիտ. հոր. Պիտ. նար. որից բֆայոյզ Վեցօր. 116. բֆացեալ Ագաթ. բֆաբեր հոր. Անան. եկեղ. նար. բֆագճաց ճշ. բֆալլուկ Յայսմ. բֆախառն Վրդն. ծն. Տօմար, բֆաւորդոր ՅՀ. կիւ. ևն:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. bhu- «փչել» արմատից, որ անշուշտ բնաձայն պետք է համարել: Այս արմատը երևում է նաև pou-, pū-, phu-, bu- ձևերով. օրինակները տե՛ս վերը՝ ճեւ բառի տակ (Pokorny 79—81 և 114—118): Հայերէնի մէջ գանազանւում են pu- peu- >ճեւալ, phu- >փուք, փչել և bhu- >բուք. միայն bu- չունի իր ներկայացուցիչը: Վերջածայն ք մասնիկի համար հմմտ. հենց փուք, նշանակութեան

պարզացման համար համմտ. հիալ. fjūk «ձեռան փոքրիկ», fok «ձեռան բուք», լեթթ. pūga «ուժեղ քամի» *(բոլորն էլ* pu- *արմատից՝* g *ածականով)։—Աճ.*

Տէրվ. Altarm. *32 յն.* βὐκτης «փոքրիկ, հոդված», *հյ.* բչել, բչիւն, *հալ.* боукати, боукъ *են։ Հիւնք.* բաւ, բաւական *և* բաւեկն *բառերի հետ։*

Գիհ.—երև. Տփ. բուֆ, *Ախց. Ալշ. Կր. Հճ. Մշ. Ջղ. Սիս. Սչ.* բ'ուֆ, *Խրբ. Ննխ. Պլ. Տիգ.* փուֆ *(Պլ. գործածւում է միայն ձուկին–փուֆին «սաստիկ ձիւն եկած ժամանակին» դարձուածքում. Ննխ. և Սչ. գործածում են «ձիւն» նշանակութեամբ. սրանց մէջ ձիւն բառը ջնջուած է). Ոզմ.* բ'էօֆ, *Մկ. Սլմ. Վն.* պիւֆ, *Ասլ.* բ'իւֆ, բ'ի–*.—նոր բառեր են՝* բըֆակապ, բֆարգ, բֆել։ *Գաւառականներում շփոթուած է* փուֆ *«փչել» արմատի հետ՝ ձայնի և նշանակութեան մերձաւորութեան պատճառով. այսպէս ունինք Պլ.* բֆոխլ *և Ննխ. Սլթ.* փֆոխլ *«շատ ուտելուց փորը ուռչիլ», Ղրբ. Օշ.* բֆնել *«տկտիլ», Ակն.* բֆնել, փֆնել, *Ննխ.* փֆել *«հատեղէնները փչելով մաքրել»։*

Փոխ.—Վրաց. ბუჭი ბუკի *«բուք, ձիւնախառն մրրիկ»,* ბუჭა ბუკა *«բուք սկսիլ»։*

ԲՈՔ *տե՛ս Բոգ։*

⊙ԲՋՆԻ *«երինջի ձայն արձակելը» Ոսկ. մ. ա. 6. որից* բչիւն *«հորթի կամ երինջի ձայն» Եփր. թգ. 365.* բչումն *«գազանի և երէի ձայն» Սկզ. կթ. արմատ.* բչալ *«եզի ձայն» Առաք. մոլ.* բչողական *(առիւծի համար ասուած) Դիոն. երկն. բ. Շնորհ. հրեշտ. Վրդն. ծն. սրանց հետ համմտ.*

⊙ԲՋՆԻ *«կովի ձայն արձակելը» Վրդ. պատմ. լդ. որից* բջող *«բառաչող» Աբ.* բջողական *(արջառի համար ասուած) Ոսկիփ.* բջջանք *«մեղուի բզզիւն» Գր. սարկ. լս.։*

=Բնաձայն բառեր են. պարզ արմատն է բ *ձայնը, որի վրայ աւելացել են չ և ջ ածանցիչները. համմտ.* բաչել, բընչել, բրջել *են։—Աճ.*

Հիւնք. հանում է բընչել *բայից։ Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, էջ 203 բ։*

ԲՋԻՋ, ի–ա *հլ. (գրուած է նաև* բընճ*)* *«մեղրահացի ծակերը» Սկևռ. լմբ. Պիսիդ. Վեցօր. տող 1168. Ածաբ. նոր. կիր. և առաս. «թոքի ցնցուղը» Պղատ. տիմ. 146. նոր գրականում «cellule», որից մի խումբ գիտական բառեր, ինչ.* բջջային, բջջաճիւք *են։*

Նշխ «որպէս թրք. պօռու *«փող, շիփոր» և* պօռալ *ի ռմկ. են լծորդ, նոյնպէս և* բջիջ *(սրնգաձև) և* բջել*»։ Աճառ. ՀԱ 1899, 233* բ *կրկնաւոր է համարում։*

ԲՈՒՆՉ *«բունչի ծառի պտուղը», որից* բըռնչի *կամ* բռնչենի *«մի տեսակ վայրի ծառ, որ տալիս է սիսեռի մեծութեամբ մի պտուղ. այս պտուղի մեծ մասը կորիզն է, վրան կայ բարակ կաշի, որ նախ կանաչ է, յետոյ դեղնում է և երբ հասնում է՝ սևանում ու մի քաղցր համ է տառնում. Պօլսի հայոց գերեզմանատների սովորական ծառն է. տեղ. չէֆլիմպին, լտ.* celtis australis *կամ* occidentalis L. *ռուս.* каркасъ *(ըստ* Анненковъ*-ի Բուսաբանական բառարանի, էջ 89ա). ֆր.* micocoulier, fabrecoulier, *գերմ.* Zürgelbaum, Nesselbaum. *հայերէն կոչւում է նաև* լուտ, տարտաղան*» Գաղիան. այս նոյն բառն է, որ Պատմ. վր. էջ 48 տպագրում գրուած է* բանչի *և որի համեմատ էլ ՆՀԲ և ԱԲ գրում են* բանչի *«անուն ծառոյ առ վրացիս». բայց ձեռագիրն ունի* բռնչի՝ *ըստ Նորայր ՀԱ 1923, էջ 167։—Ըստ Զէյթունցոց կոչւում է* ցապտուկ*։*

Բառիս շատ նման են հնչում ասոր. burāšu, *արամ.* ברוש brūtā *և եբր.* בְּרוֹשׁ bĕrōš, *որոնք սակայն նշանակում են «նոճի»։* Gesenius *(մեծ կասկածով) բառիս արմատը ենթադրում է* brš *«կարել» (համմտ. արաբ.* برت burt *«կացին»), ըստ որում այս ծառից ատաղձ էին քաշում։*

Գիհ.—Ագլ. բռա՛շնը, *Ղրբ.* պռէ՛շնը *(պըտուղը),* պռշնէ, փռշնէ, պռշնէ՛նէ, փռշնէ՛նէ *<*բռնչենենի (ծառը), Ղզ.* փռօշ, *Մշ. (երկրորդ բաղաձայնի տարբերութեամբ)* բ'ղինճկ*.—այլուր ունինք նաև* բռինչ *Ակն. Արբ. Բ. Բն. Խրբ. Զրս. Չմ.* բռնչի *(ծառը), Արբ. Խրբ. Տս.* բռնչրի *և* բռռչնի *Ղրդ.-Մշոյ ձևի հետ նոյն*

են Բղ. Բլ.—Աբեղեան, Arm. Volksgl. էջ 61 դնում է բոլ «celtis australis», իսկ բոբճի «viburnum opulus»:

*ՓՈՒ.—Վրաց. ბრინჯაოს ხე բրինձաոս խե, որ Ջաբինով[2] 117 մեկնում է «առս. каркасъ; акація». սրանից առաջինը celtis australis=բոինչն է, իսկ երկրորդը՝ ո՛չ թէ ծանօթ ակացիան է, այլ բոինչի մի ուրիշ տեսակը՝ celtis caucasica, ըստ որում ըստ Անենկովъ-ի վրացերէնում акаки կոչւում է բոինչի այս տեսակը:

ԲՈՆԻԿԱՐԻՆ, որ է բուրակ.—ա՛յսպէս է մեկնում Բառ. երեմ. յաւել. 574, առնելով Գաղիանոսից. ի՛նչ լինելը յայտնի չէ:

ԲՈՇՈՊ «խոռվայոյզ, խառնակ, շփոթ». մէկ անգամ ունի Բուզ. ե. 39. «գումարէր զզօրսն իւր ըստ բազում ժամանակին՝ որչափ և հնն ի ձեռն իւր»:

ՀՀԲ, ՆՀԲ, ՋԲ և ՓԲ մեկնում են բուռն շոպեալ կամ բռնի շոպեալ: Թիրեաքեան, Արիահայ բռ. 109 պրս. پرآشوب purāšōb «խռովայոյզ, շփոթալի». նշանակութեամբ շափազանց յարմար է սա, բայց նախաձայնը անյարմար:

ԲՈՋՈՅ տե՛ս Բոշոյ:

*ԲՏՈՒՄ «բևեկնի ծառը, pistacia terebinthus L» (ըստ Արթինեան, Ածաշունչի տունկերը, էջ 21—24) Բժշ. ունի միայն ՀԲուս. § 388. գրուած է նաև բդում, պտում, պուտմ, բուտում, բոբմ. նոյնը Բառ. երեմ. էջ 54 գրում է բուտ (բևեկն բառի բացատրութեան մէջ):

= Արար. بطم butum նոյն նշ. (տե՛ս Կարտուսի թրք. թրգմ. Գ. 402 և Շեֆայնշնայդէրի հաւաքածոն՝ WZKM 11, 318): Բաւս բնիկ սեմական է. համմ. ասուր. buṭnu, ասոր. ܒܛܡܐ beṭmā, եբր. בטנת bāṭnā, նոյն նշ.:

Ուղիղ մեկնեց նախ Ալիշան (անդ). յետոյ Արթինեան (անդ):

ԳԻՒ.—Մկ. բիւտմ «բևեկնիի պտուղը». նոյնը նաև բուտ, բուտմ վն. պբուտ Տիգ.—ծառը կոչւում է բտմի (Վանայ բարբառով). տեղացիք այս ծառի ողկուզաձև պտուղները աղջուրի մէջ թթուեցնելով ուտում են:

*ԲՐԱԲԻՈՆ, ի-ա հլ. (կայ նաև գրծ. -ի-) «յաղթութեան մրցանակ՝ պսակ» Ոսկ. փիլ. 482, 483. Յհ. կթ. Ճառընտ. Մագ. Շար. Ներս. մոկ. «անուշահոտ մի ծաղիկ է. tubéreuse, տճկ. թէպէրէ ըստ Նորայր, Բառ. Ֆր. 1250ա, տե՛ս և ՀԲուս. § 389 (Анненковъ-ի Բուսաբանական բառարանում՝ էջ 12 և 600 tubéreuse գրւում է hyacinthus brumalis, polyanthes tuberosa, agapanthus umbellatus) Բժշ. գրւած է նաև բրաբիոն Ա.Բ. բրաբիայ Ոսկ. հռոմ. 88. որից բրաբիոնեայ Յայսմ.:

=Յն. βραβεῖον «յաղթութեան մրցանակ», որից էլ լտ. brabeum. բառիս արմատն է βραβεύς «վարիչ, դատաւոր, հաշտարար», որից βραβεύω «յաղթութեան մրցանակը որոշել» և այստեղից էլ «յաղթութեան մրցանակ»: Եւ որովհետև յաղթութեան մրցանակը առհասարակ մի ծաղիկ էր, ուստի բրաբիոն սկսեց նշանակել նաև ծաղիկը. բայց այս նոր նշանակութիւնը չգիտեն ո՛չ Bailly, ո՛չ Sophocles և ո՛չ էլ նոր յունարէնում կայ:—Հիւրշ. 344:

Ուղիղ մեկնեց Schröder, Thesaur. էջ 47, յետոյ ՀՀԲ, ՆՀԲ են:

*ԲՐԱՋՈՒՐ (որ և բրէջուր) «ունիթոռ, քարոզող, լատինական կրօնական մի կարգ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Յհ. Երզնկացի՝ Թումմասու Ագուինացւոյ Յաղագս հօքն խորհրդոց եկեղեցւոյ գրքի թարգմանութեան յիշատակարանում (1325 թուից). Ումեմն Վարդապետի Ֆրա Թումա կոչեցեալ, ի կարգէ բրաջուրացն: Անշուշտ սովրական բառ էր կիլիկեան հայերէնում:

= Ֆրանս. précheur, անգլ. preacher «քարոզող». Դոմինիկեան կրօնաւորական կարգն էր, որ լտ. կոչւում էր fratres praedicatores:

Ուղիղ մեկնեց Ալիշան, Սիսական. էջ 382:

*ԲՐԱՀՄԱՆ «բրահման, հնդիկ կրօնաւոր» Պատմ. աղեքս. 135 (նորագիւտ բառ):

=Սանս. ब्राह्मण brahmán «հնդկական քուրմ» բառն է, որ յն. βραχμάν (աւելի գործածական է յգ. βραχμᾶνες ձևով. Sopho-

cles *317) տառադարձութիւնից անցել է հայերէնին։— Ա՛ճ.*

ԲՐԴԵԼ *(եցի) «ջարդել, պատառ պատառ կտրտել (հացը)» Ղևտ. ը. 6, Ես. ծը. 7. «սաստիկ զայրացնել, բարկութիւնը գրգռել» Եղիշ. գնձ. բրդիլ «մաս մաս լինել, կտոր կտոր լինել» (ամպերի համար ասուած) Շիր. էջ 44. «բարկութիւնը գրգռուիլ, բարկութիւնից պատռուիլ» Ա. մակ. ը. 24. Բ. մակ. ժդ. 27. որից* բրդոն *«հացի պատառ» ՋՔ. բուն արմատն է* բուրդ, *որ թէև առանձին գործածուած չէ, բայց պահուած է գւռ. ջարդբուրդ, ջարդուբուրդ կրկնաւորների մէջ։ Նոյն է նաև* բուրդ *«ոչխարի բուրդ» բառը, որ տե՛ս առանձին։*

= Բնիկ հայ բառ՝ հնխ. bherdh- *«կտրել» արմատի* bhŏrdh- *ձևից. ժառանգներից համմտ. սանս.* bardhaka- *«կտրելով, խուզելով. 2. աստղագործ», հրգ.* barta *«կացին», յն.* πέρθω, πορθέω *«քանդել, կործանել, աւերել», լտ.* forferex *«խուզելու մկրատ»* (Pokorny *2. 174,* Boisacq *771,* Ernout-Meillet *362)։ Վերջին երկուսը հայերէնին համաձայն ներկայացնում են* bhordh- *ձևը. լատին բառի նշանակութեան համապատասխան է հլ.* բուրդ, *որ պատկանում է այս արմատին։*

ՆշՔ հանում է բուրդ *«ասր» բառից (ճիշտ հակառակը)։ Հինք. պրս.* burrīdan *«կտրել»։ Նորայր, Կոր. վրդ. 332 ի ցասումն բրդիլ ևն ոճի մէջ* բրդիլ *կցում է պրս.* burdan *«տանիլ» բային, որով առաջանում են նոյնպէս զանազան ոճեր պարսկերէնում։ Գաբրիէլեան ՀԱ. 1909, 222 սեղմուած է* փերբ *ձևից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ* Patrubány IF *14, 59, որ իզուր է մերժում* Pokorny *անդ։*

Գիմ.—Ալշ. Սչ. բ՛ռդ՛ել, *Ախց. Կր.* բ՛ռդ՛էլ, *Խրբ. Ոզմ.* բ՛ռդ՛իլ, *Տփ.* բրբիլ, *Մշ.* բ՛ռաել, *Հճ.* բ՛ըյ՛դ՛ել, *Սլմ.* փրթել, *Պլ. Ռ. Տիգ.* փրթէլ, *Ասլ.* բ՛րթիլ, *Ղրբ. Շմ.* փրթիլ, *Ննխ.* փրթէլ, փշրթէլ, *ՋՓ.* փը՛յրը՛լ, փը՛րթը՛լ, *Վն.* պռտել, *Մկ.* փռտիլ, *Մրզ.* փիրթէլ, *Ագլ.* փռդիլ. *Երև.* փոթէլ. *այս բոլորը նշանակում են «կտրտել, մանրել, ջարդել» և փխբ. «մեծաքանել, մեծ մեծ ջարդել, մեծումեծս կոտորել». իսկ Ջղ.* փոթել՝ *միայն վերջին իմաստով։ Նոր բառեր են* բրդբրդել, բրբրդալ, բրդռտել, բրդոց, բրդուկ, բրդուճ, բուրդուրզիկ *են։ Հետաքրքրական է* բրդու մի *Տիգ. «մի քիչ» <*բրդուճ մի *ձևից. ինչ. Բրդու մի կամաց գրուցէ՛, համմտ. պատառ Ղրբ. «քիչ»։*

ԲՐԵԼ *տե՛ս Բիր։*

ՆշՔ «բրով կամ բրչաւ փոս հատանել, փորել»։ Justi, Zendspr. *211 գնդ.* bar, *սանս.* bhar, *պրս.* burrīdan *«կրտրել»,* Ascoli KZ *17, 345 գնում է* Justi*-ի համեմատութիւնները, ուելացնելով նաև լտ.* friare, forare *«ծակել»։ Հինք.* բռել *«ծեփել» բայից։* Karst, *Ցուշարձան 414* փոր *և* փորել *բառերի հետ՝ մոնգոլ.* burgui, *թունգուզ.* burguida, *թրք.* burgu *«գդիր»։* Pictet, *բ. տպ. հտ. Բ. էջ 112 հլ.* բրիչ *կցում է լտ.* porca, *գերմ.* Furche *«ակօս», պրս.* parčam *«արօր» են բառերի հետ։*

Գիմ.—Ջնջուած է ամենուրեք՝ տեղի տալով նոյնանիշ և նմանաձայն փորել բառին։ Նոյն իսկ ՋՓ. փիչիչ *«բրիչ» ձևափոխել է նախաձայնը։*

ԲՐԷՋԱՄ *«բրով զինուած» ? անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ուռհ. տպ. էջմ. էջ 226 «էին արք իբրև ութսուն՝ բրէզածք և ընտրելաք քաջութեամբ»։*

*ԲՐԻՍԷՏ *«նախագահ, դատաւոր» Ցայսմ.— Ջունի ԱՓ։*

= Լտ. praeses, praesidis *«նախագահ, պաշտպան, փոխարքայ, զօրավարապետ են», որ ծագում է* prae *«նախ»+*sedeo *«նստել» բառերից։*

Ուղիղ մեկնեց նախ ՆշՔ։

+ԲՐԷՏ *տե՛ս Բոռ։*

Գիմ.—Մկ. պրետ։

ՓՈհ.—վրաց. ბრეთი *«պիծակ, ձիաստաց»։*

*ԲՐԻՆՁ *(ո հլ. ըստ ՆշՔ, թէև առանց վկայութեան) «որիզ, բրինձ» Ցայսմ. Գաղիան. Խոր. աշխ. որից* բրնձաղաց *«բրինձ աղալու տեղ» Ջքր. սարկ. Ա. 67, Գ. 34.* բրնձահան *նոյն նշ. Ջքր. Բ. 62.* բրինձխամ *«փլաւքա-*

միչ» Յիշատ. 1250 թ. (Ամատ. Հյ. բառ ու բան, էջ 120), **բրնձափոշի** *(նոր բառ)։*

= *Պհլ. փոխառութիւն, ինչպես ցույց է տալիս ձ ձայնը և որ սակայն աւանդուած չէ. համմտ. պրս.* برنج birinj *«բրինձ». որանից են փոխառնել բնչուճ. օսս. ալան.* brinj, *վրաց.* բրինջի, *կաբարդ.* prunž, *չէրք.* pirdš, *քրդ.* birinj, *թրք.* pirinj, *բուլգար.* pirinč *են են. պրս. կալ և* گرنج gurinj *հոմանիշը, բայց տարածուած չէ, իրանեան ձևերի նախնականն է *vrinji-, որի հետ նոյն է վեդ.* vrīhi- *«բրինձ»։ Առանց ռնգականի է նաև աֆղ.* vrižē։ *Արդէն Ն.Ք. Ե դարում պարսկական բարբառներից փոխառնուել էին յն.* ὀρίνδα, ὀρίνδης, ὄρυζον, βρίζα, ὄρυζα *(որից հյ.* որիզ*) առաջին երկուսը ռնգականով, միւսները առանց ռնգականի։—Հիւբշ. 124։*

Ուղիղ մեկնեց նախ Schröder, Thes. *47, յետոյ ԳԴ,* Böttlich. Horae *31 են։*

ԳԻՒ.—Ագլ. Տփ. **բրինձ**, *Ալշ. Երև. Խրբ. Մշ. Ջղ. Սեբ.* **բ'րինձ**, *Ախց.* **բ'րինճ**, *Սչ.* **բ'բրինց**, *Ոզմ.* **բ'րէյնձ**, *Պլ. Ռ. Տիգ.* **փրինձ**, *Համշ. Ղրբ. Մկ. Սլմ. Վն.* **պրինձ**, *Ննխ.* **բիրինձ**, *Մրզ. Շմ.* **պիրինձ**, *Ասլ.* **բ'րինձ, բ'րիզ**։ *Նոր բառեր են՝* **բրնձապուր, բրնձնոց, բրնձխոտ, բրնձալի, բրինձպուր** *կամ* **բրնձի** *են։*

ՓՈԽ.—Վերջածայնի պատճառաւ հայերէնից փոխառնել պէտք է գնել ուս. **բիրինձ**, *խինն.* **պարինց**։

***ԲՐԻՆԶ** *«իշխան» Ուռհ. Գր. տղ. Մխ. այրիվ. 78. Սմբ. դատ. 15. Վահր. ոտ. Հեթում պատմ. գրուած* **բէնձ** *Սկևռ. պատ. 13. այժմ ջնջուած է արևմտեան գրականում, բայց արևելեանն ունի* **պրինց**՝ *նոր փոխառութեամբ ռուսերէնից կամ գերմաներէնից։*

= *Ֆրանս.* prince, *գերմ.* Prinz, *իտալ.* prince *են. ծագում են լ.* princeps *«առաջին, նախկին, գլխաւոր» բառից։—Հիւբշ. 389։*

Նշ՝ գնում է լ. princeps, *իտալ.* principo:—Peterm. ZDMG *15 (1861), 403 գերմ.* Prinz։ *Շահնազարեան. Դաշ. թղթ. 87 հին ֆրանսերէնից։*

***ԲՐԻՆԶ** *«պղինձ» մհյ. բառ, որի վկայութիւնը տե՛ս Այտնեան, Քնն. քեր. էջ 335։*

= *Թրք.* چرچ pirinj *«արոյր, անագապղինձ»։—Ա.Ճ.*

ԲՐԼԱՇԱԿ *տե՛ս Պրշակ։*

***ԲՐՆՋԱՍ** *«գեղին բարձուննեակ ծաղիկը» Բժշ. (տե՛ս ՀԲուս. § 321, էջ 86, տող 9), որ և պարանճասիֆ՝ անդ. սխալ է գրում ԱԲ* **բռնջաս, բրինճասիս**։

= *Պրս.* برنجاسف baranjāsaf, *նոր արտասանութեամբ* berenjāsef, *սխալ ձայնանիշերով կարելի է կարդալ* brinjāsif. *ըստ ԳԴ «է անուն խոտոյ իրիք· որ ի գեղոբալս ի գործ ածի» (տե՛ս և Համուսի թրք. Թրգմ. Բ. 880), ըստ հալ բժշ. «բացուննեակ» (տե՛ս ՀԲուս. § 321)։ Այլ խոտ է պրս.* برنجاست baranjāsat։—*Ա.Ճ.*

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ). Նոյնը ԳԲ։

ԲՐՈՐ *«պղտոր», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 196 «Կողն զերեան փայլուն ունի և զմէջն բրոր»։—Նոյնը գիտէ և Բառ. երեմ. էջ 217, իբրև «մրուր, դիրտ, տիղ»։ Գործածական է այժմ էլ վն.* **պրոր** *«պղտոր», երև.* **բրոր** *«գինու դիրտ» նշանակութեամբ։*

ԲՐՈՒՏ, ի հլ. *(յետնաբար նաև ի-ա հլ.) «հողէ աման շինող» ՍԳր. որից* **բռտարան** *«բրուտի գործարան» ԱԲ.* **բռտեայ** *«հողաշէն» Զենոբ. էջ 33.* **բռտեղէն** *«խեցեղէն» ԱԲ։*

ՆշՒ **բռել** *բառից (կատագործ՝ որ ի բրածէ հողոյ կազմէ անօթս)։ Հինք.* **բիռտ** *բառից (իբր ամանը բռտացնող, ամրացնող)։ Մաո* ЗВО *25, 317 վրաց.* **բռուցա** *«կոյր» բառի հետ։*

ԳԻՒ.—Ախց. Կր. **բ'ռուտ**, *Տփ.* **բռուդ**, *Ագլ. Երև. Խրբ. Մշ. Սեբ.* **բ'ռուդ**, *Ոզմ.* **բ'ռօտ**, *Ղրբ. Մկ. Սլմ.* **պրիուտ**, *Շմ.* **պիւրիուտ**.—*Նոր բառեր են* **բռտին** *«աման շինելու հող»,* **բռտնոց** *(Ռ. փրդրնօց) «բրտի խանութ»։*

ՓՈԽ.—Գուռ. Թրք. Եւդ. Կր. پورت purud *«բրուտ». քրդ.* **բրռտ** *«բրուտ». Պը ուի զմվիյէ բըրռտէ քըռին (Գնեցին այնու զագաբակն բրտի). Մտթ. իէ. 7. Ու տանը աուէ ժը զմվիյէ բրռտռա (Ե. հատն գնա յագարակն բրտի). Մտթ. իէ. 10. Էը սէր Տարի հէօրմաթէ*

բրուտէ թո՞ւննա (եթէ ո՞չ ունիցի իշխանութիւն բրուտն կաւոյն). Հռովմ. թ. 21։

ԲՐՋԱՆ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Մխ. ապար. «Ընդ լուսանալն առնոյր ի մէնջ բաղարջ և ի Մակու յետոյ բրջանն ուտէր»։ Ըստ նշՒ «բառ ոմկ. որ թուի բրդուճ հացի»։*

ԲՐՋՈՒԿ *«սիսեռի կճեպ». գիտէ միայն ԳԲ։*

***ԲՐՍԱՄ** «մի տեսակ հիւանդութիւն. pleurésie, աթլըջան» Մխ. բժշ. 54. որ և ԲՐՍԻՄ՝ էջ 49։*

= Պրս. برسام barsām «ցաւ կամ ուռոյց կրծոց», որ կազմուած է bar «կուրծք»+sām «տաքութիւն»։—Աճ.

Ուղիղ մեկնեց Աճառ. (անտիպ). յետոյ Seidel, Մխ. բժշ. ծան. 151, 167։

***ԲՐՍԻ ԱՆԴԱՐՈՒ** «հովտի բիր բոյսը, հովտի գաւազան, մատիտակ, հաւկթիկ, լա. sanguinaria, գիտական լա. polygonum aviculare L. յն. πολύγονον (Դիոսկորեայ), թրք. čoban deynegi» Մխ. բժշ. 68, որ և բրսի անդաարի՝ էջ 45, պտպտ՝ էջ 68։*

= Պրս. برسیاندارو barsiyāndārū «է խոտ ինչ երկայն և փշալի, որոյ գլուխն է որպէս ձու. որ առ բժիշկս ասի ասա իտռա՛ի, այսինքն հովուացուպ. ո՛չ վասն չնկոյ նորա ի նա, այլ վասն շատ ուտելոյ զսա հովուին ի քաղցնուլն» ԳԴ։

Ուղիղ մեկնեց Saidel. Մխ. բժշ. ծն. 142, 186։

***ԲՐՎԱՆՁ** «առանձին արտօնութիւն» Անտիպք 67 (գրծ. բրվլեով), որ և բրվիճ REA 1, 247։*

= Յբրանա. privilège նոյն նշ.։

Ուղիղ մեկնեց Անտիպքի հրատ. էջ 66։

ԲՐՏԱԿՆՈՅ *«զմռսախտնկ». ունի միայն Բառ. հրեմ. յաւել. էջ 566։*

ԲՕԲ *«գոյժ, վատ լուր» Եղեկ. իա. 7. Մամբր. 32. կթ. Մաշկ. որից* ԲՕԲԱԲԵՐ *Եփր թգ. Մամբր. Մաշկ. Ոսկիփ.* ԲՕԲԱԶՈՅՑ *Երզն. քեր.* ԲՕԲԱԼԻ *Յայտմ.* ԲՕԲԱԼԻՑ *Գնձ.* ԲՕԲԱՈՒՈ *Յայտմ. յնվ. 26. Ներս. մոկ.* ԲՕԲԵԼ *«գուժել» և* ԲՕԲԻԼ *«գուժուիլ» Բրս. մրկ. 404։*

Տէրվ. Նախալ. 66 ը բացասականով՝ աւ արմատից. հմմտ. աւետել, աւազ, լա. ovare, յն. αὔω, սանս. av։ Հինք. փորձիկ բառից։ Գալանճեան, Արև. մամ. 1902, էջ 75 ը մանիկով աւետել բայից։

ՓՈԽ.—Վրաց. ბავთი բավթի «բօթ», ՅՈՒ ბავთე մոբավթե «բօթարեր գուժկան», ՅՈՒ ბავთო սաբավթո «ողբալի, ցաւալի», ՅՈՒ ბმა սաբավթո խմա «ողբագին ձայն»։

ԲՕԼԻՋՄՈՒՆՆ *«առ» (βουλιμία, boulimie) կոչուած հիւանդութիւնը». Նորագիւտ բառ, որ մեկ անգամ գտնում եմ դործածուած Մոլոթ. 343 ա. «համեմատի հիւանդութեանն, որ կոչի բոլիզմոնս, որ նեղէ անյագ քաղցս»։*

ԲՕՐԻԱՍ *տե՛ս Վոռէ։*

Գ

ԳԱՌ «մի տեսակ բոյս. խաշնդեղ. rheum ribes» Բժշ., գրուած նաև գափ, որից գաբծիլ կամ գամբծիլ «գաբ բոյսի ծիլը» Գաղիան. Բժշ.։

Պատահական նմանութիւն ունին արաբ. غَفّ γaff «չորացած առուոյտի տերև», غاف γāf «շատ համեղ պրաղով մի տեսակ ծառ» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 821)։

ԳԻՒ.—Մշ. գ՛աբ՛, վն. կ՛ապ, Մկ. կ՛mփ «խաւարծիլ բոյսի արմատը կամ տակի տերևները, որոնք ուտելի չեն».—այս նոյն բառն ունին նաև Ակն. Զթ. «խաւարծիլ», Բլ. Սո. «խաւարծիլի տակի տերևը» (Ազգ. Հանդ. ե. 21). Բն. «ճիւղ, որի վրայ փաթաթւում են ողկոյզն ու ընձիւղները», խրբ. «ստեպղին, գաղար» (տե՛ս Սաղիկ, 1903, № 21, 22), Երև. «մի տեսակ բոյս» (Աղբիւր, 1888, էջ 332)։—Բոյսի ընդարձակ նկարագիրը տալիս է Յ. Ալլահվէրտեան (Ուլնիա կամ Զէյթուն, էջ 181—2) հետևեալ ձևով. «Մառաձև և առ առաւելն կանգնաչափ բարձրութեամբ հոագոյն (կարմիր, կանաչ և սպիտակ) և հասատարակուկ թթուահամ բոյս մը, մի կամ երկու մեծ, բանձր և բոլորշի տերևօք, որ Զէյթունի և շրջակայ Պէրութ անուն լեռն կը բուսնի ապրիլ ամսոյ վերջերն և մայիսի սկիզբն. սորա միայն բազուկներն կ՛ուտուի կեղևելով։ Յոյժ յարդի է ընդ հովանեաւ քուոյ բուսեալն, զոր «սmլ իրկին գօբ» կ՛անուանեն, այսինքն սալ (տափակ) քարերու շուրին տակ բուսնող»։

ՓՈԽ.—Թրք. գւս. Ակն. gap «գաբ բոյսը»։

ԳԱՌ «կեռ, ճանկ». իբր միջին հյ. բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 327 ու նոյնը ունի Բառ. երեմ. էջ 59՝ մեկնելով «փայտեայ կեռ գործի ի գլուխ պարանոցի». գարձեալ նոյն է «կորակտուց երկաթ չուանի ջրհորոյ՝ յոր մուծանեն զդոյլն առ ի հանել ջուր». մհյ. բառ՝ ըստ Նորայրի, Բառ. ֆր. էջ 770 ու։

ԳԻՒ.—Պահուած է գափ ձևով՝ Երև. Ղրբ. կեփ Գնձ. Ղղ. Ղրբ. «չուանի ծայրն ագուցուած փայտէ ճանկաձև կեռ՝ բեռ կապելու համար»։ Ըստ Նուպարեան, Բառ. ֆրանս. 743 «մէկ ծայրը սուր, միւսը տափակ բեռև. patte-fiche»։

ԳԱՌ. *արմատ առանձին անգործածական, որից կազմուած է գաբեղէն «բաղէն, վերարկու». դամասկ.։*

ԳԱՌԱԱՍ, *նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Սասն. 60 «Գունի պղղալից, գաբաաս ողկուզալից»։ Նոյն բառն է գաբայա «հընձան» Ձեռ. բառ. էջմ. № 420, էջ 211 բ (ըստ Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 122 ա)։*

=Անշուշտ երբ. բառ է, ինչպէս և նախորդը՝ գունի։—Ա՛ճ.

Կայ երբ. גביע gābi'a։ «ծաղկի՝ կամ գինու բաժակ»։

***ԳԱՌԱՆՔ** «խծկանք» Բառ. երեմ. էջ 59, որի ինչ լինելը յայտնի չէ։ Բառիս համար Ա. Զամինեան (նամակ 1927 յունիս 13) գրում է. «Ննխ. գաբաճ նշանակում է «տան ճակատի փոքրիկ բացուածքը՝ ձեղունի լուսաւորութեան համար, որ կարող է ապակեպատ լինել կամ ոչ. և որ ձմեռները խծկում են, որպէսզի ձիւն չմտնէ»։ Գիւղերում կոչւում է գաբաճի։ Ռուսները սրա բարեփոխեալ ձևը կոչում են слуховое окно։ Այս նշանակութիւնը խորհրդածել է տալիս, թէ Հայաստանի շինութիւնները միմիայն գիւղերումն էին գետնափոր, իսկ քաղաքներում գետնի վրայ,

այն էլ ոչ թե տափարակ, այլ թեք կտուրով», նույն բառի մասին Ս. Մովսիսեան էլ գրում է (նամակ 1928 սեպ. 27 և 1933 մարտ). «Գաբաեմ անծանօթ բառը գուռ. գ'աբ'անակն է, որ է «գիւղական տների և օգանների երդիկների կափարիչ, որ շինւում է դռան նման տախտակից՝ շրջանակի մէջ անցկացրած» ցերեկը թեկով վար քաշելով բաց են անում, գիշերը վեր քաշելով փակում»։ Այս մեկնութիւնների համաձայն բառս նոյնանում է թրք. كپنك kepenk ձևի հետ, որ է «պատուհանի կամ դռան փեղկ, որ անձրևի և շոգի ժամանակ փակում են»։ (Քաջունի ևս, հտ. Գ. էջ 42 մեկնում է գաբանակ «առճկ. քէփէնք»)։ Բայց այս բառը նաև մի ուրիշ աւելի յարմար իմաստ էլ ունի—Պօլսում նշանակում է «հին տների մէջ սանդուխի դիմաց շինուած լայն փեղկ, որ գիշերները ծածկելով երկրորդ յարկը առաջինից բաժանում են և որի վրայ անկողին գցելով պառկում էլ են» (միջոց որպէսզի առաջին յարկը մտած գողը նաև երկրորդ յարկը չկարողանայ բարձրանալ)։ Այս բառն է, որ Մ. Աբրիկեան, Ընդ. բառ. առճկ.-հյ. Պօլիս 1892, էջ 472 մեկնում է «վերնատուն»։ Будаговъ, Срав, слов. 2,112 բառիս առաջին նշանակութիւնը գնում է ловушка, западня, թակարթ, ծուղակ» և բացի թուրքերէնից, ուրիշ բարբառ չի նշանակում։ Բայց թուրքական արմատներով էլ չի կարելի մեկնել բառս. ուստի պէտք է ենթադրել, որ ծագում է հյ. *կափանք «թակարթ, կափարիչ, խուփ» բառից, արմատը կափ «փակել, խրփել», որից ունինք կափուկ «թակարթ», կափարիչ են։ Թուրքերէնից յետ է առնուած հայերէնը և դարձած գաբանք (կարդա՛ kapank')։—Ա.ճ

*ԳԱԳԱԹՆ, ն հյ. (-թան, թունք, թանց) «գլխի վերի ծայրը. 2. գլխի գանկը՝ սկաւառակը. 3. լեռան, ծառի ևն ծայրը, կատարը» ՍԳր., որից՝ գագաթնանալ «մինչև գագաթը բարձրանալ» Լաստ. ընթ., գագթնադաշն «առանց զարդի սաղաւարտ, որի գագաթը պարզ է» Մաշտ., գագաթնաւոր «բարձր» Ա.Թ, բարձրագագաթն Խոր. ՅՀ. կթ։, հրագագաթն Ղևոնդ., բարագագաթն Խոր. Աստղ., գագաթնակէտ, գագաթնահայեաց (նոր բառեր)։

= Բաբել. gaggadu, ասոր. ܓܓܕܐ ḳaḳḳa-du «գլուխ, kopf, Haupt (Strassmaier, Alphabetisches Verzeichniss der Assyrischen und Akkadischen Wörter, էջ 891 և Delitzsch, Assyrisches Handwörterbuch, էջ 592), եբր. קדקד qādqōd «գլխի մազածածկ մասը», սամար. gaggud: Հայերէնին աւելի յարմար է բաբել. gagadu ձևը, որ հիշում է Muss-Arnolt, Ass. engl. Handwb. էջ 924ա։

ԳԴ կցում է պրս. چكاد čakād բառին, որ այստեղ գործ չունի և որ մեր ճակատ բառն է։ Riggs, Քերակ. 1856, էջ 60 եբր. kodkod ձևի հետ։ Հիւնք. պրս. չեյֆեատ և «յունական գաւառաբարբառ չամաթի, նոյն նշանակութեամբ»։ Ուղիղ մեկնից նախ Բ. Խալաթեան, ՀԱ, 1902 309, յետոյ Jensen, ՀԱ, 1904, 275 և Karst, Յուշարձան, էջ 399։—Scheftelowitz, BB 28, 306 առնս. kakud, kakuda «լեռան գագաթ, դլխաւոր, պատ», պրս. čakād «ճակատ» բառերին ցեղակից (Այս բոլորը, ինչպես և լտ. cacumen «կատար, գագաթ, ծայր», որ ըստ Fick, I⁴, էջ 19 և Walde, էջ 105 նոյն առնակրիտ բառին է կցւում, պատահական նմանութիւն ունին)։ Patrubány, ՀԱ, 1908, 26 գոգ «գիրկ» բառի հետ միացնելով՝ կցում է այն ձևերին, որ տալիս է Lidén իրրև գոգ բառին ցեղակից (այս ձևերը ան՛ս գոգ բառի տակ)։

ԳԻՒ.—Սեբ. գ'ագ'ար, կր. գ'ագ'աղ', Ալշ. Մշ. գ'ագ'ատ, Զթ. գ'ագ'օթ, գ'ագ'որ, Ոզմ. գ'ոգ'որ, Երև. գ'աֆար, Մկ. Սլմ. Վն. կ'ոկ'որ, Տիգ. քաքար, Շմ. կ'ոկ'ոտ, Ագլ. գ'ագ'ար. այս բոլորը նշանակում են «գագաթ», իսկ Ննխ. (գիւղերում) գ'ագ'աղ' «վէգի գլուխը»։

ԳԱԳԱՆԻՒ «ցնդիլ, ցնորիլ» Փիլ. լին. 280. Գիւտ թղթ. առ անյ. Ճառընտ. վրք. վկ. Ի 496, որից գագաչոտ «ցնդած, խոփած» Սիր. իև. 4։ Ունինք նոյնպէս գարգաշիլ Սաան. 26, Հին բռ., գարգաշեալ «ցնորած» Ոսկ. երր. էջ 492։

=Արմատն է *գաշ կամ *գարշ, որից կրկնուած է։

Տէրվ. Altarm. 78 և Նախալ. 56 գարշ «գանիլ» արմատից է համարում գարգաշիլ և r-ի անկումով՝ գագաշիլ, իբր լա. horsere «քաամնիլ», յն. χέρσος, սանս. harš, հնխ. ghars արմատից։

ԳԻՒ.—Նոյն է գագոշ Վն. «դանդաղ, ծոյլ, ծանրաշարժ, ցնդած, ցնորած, խոֆած»։

ԳԱԳԱՑԵԼ «աքլորի զոռոզարար կոկոալը» Ոսկիփ.=Վրդ. առ. 24, ուր գրուած է գագայել, գայգայել (բայց ո՛չ գագացել)։

=Կրկնուած է *գաց պարզական արմատից։

ԳԻՒ.—Համմտ. գագաշել ՋԲ. «հաւի կիկըթալը՝ ձու ածելուց յառաջ»։—Կայ նաև գագկայել Ակն. «իրանից փոքրներին՝ ձանձրալի դառնալու չափ խրատել, քննադատել»։

*ԳԱԴԻՇ, ի հլ. «խոտի՝ ցորենի դէզ» Հրաուք. դ. 7, Նորագիւտ Ա. մնաց. խա. 20 (ընդ գաղշիւն), Սիր. վկ. արև. էջ 26, 27 (երկու անգամ), Տօնակ. ուրիշ վկայութիւն չկայ։

=Ասոր. ܓܕܝܫܐ gədišā «խուրձերի դէզ, acervus manipulorum, stook» (Brock. 50 բ), որի հետ նոյն են երր. גְּדִישׁ gāḏīš «դէզ, բարդ, խուրձ», արաբ. جدس kuds կամ قداس kaddās «նոր հնձուած որանների դէզ»։ Բառը բնիկ սեմական է և ծագում է արամ. թալմ. גדש gdš «դիզել» արմատից. համմտ. նաև արաբ. جداس kudās «ձիւնի կոյտ», جداسة kadāsa «դիզուած, շեղջակաւտած» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ, 282)։ Նոր փոխառութիւն է քրդ. گدیش gidiš «դէզ, բարդ, խուրձ»։—Հիւբշ. 301։

Առաջին անգամ ՆՀԲ լիշում է երր. կատիշ։ Lagarde, Reliqq. gr. Vorrede 22 ասոր. և հ֊ր. ձևերից փոխառեալ։

ԳԱՋ, ի հլ. «մի տեսակ լեռնային բոյս, որ ամբողջապէս փշերից է բաղկացած և լինում է ընտիր կպչան» (ըստ Արթինեան, Տունկերը, Ա, էջ 311 astragalus tragacantha, ըստ Տիրացուեան, Contributo alla flora, էջ 59 astragalus denstfolius Lam. (տես էջ 74 acanthalimon echinus Bge.) արևել. Թրք. g'avan) Բուզ. ե. 4. Բժշ., որից գաւիխէժ կամ գագիխիժ, որ նոյն փուշից վազած խէժն է. տճկ. քիքրէ. Բժշ. Դաղեան. Վատկ. 82։ Պետք չէ շփոթել յաջորդի հետ։

ՆՀԲ դնում է «որ և այլազգերէն կէզ, խէս, խազ»։ Lag. Gesam. Abhd. 177 պրս. ز gaz, որ «մոշայ» բոյսն է և սրա հետ կապ չունի։ Ըստ Թիրեաքեան. Արիահայ բառ. 109 պրս. ز gaz «մանանայ» բառից։

ԳԻՒ.—երև. գազ, Ալշ. Ախց. Խրբ. Մշ. գ՚ազ, Ոզմ. գ՚ազ, Մկ. Վն. կ՚ազ, Զթ. գ՚օզ, գ՚ոզ։

ՓՈԽ.—Քրք. gez «մի տեսակ փուշ. spina hirci» (ըստ ՀԲուս. § 393, որ այլուստ ծանօթ չէ ինձ. չունի նաև Будаговъ)։

*ԳԱՋ «մոշի ծառը, մովայրի. tamarix» (որ գրուած է նաև կազ) Բժշ.։

=Պրս. ز gaz «մոշայ». ունի նաև հոմանիշ كاز kāz ձևը, որից գալիս է հյ. կազ գրչութիւնը, մինչդէռ առաջինը տալիս է գազ։ Նոյն է և բելուճ. gaz «մոշայ»։—Հիւբշ. 124։

ՆՀԲ և Lagarde շփոթում են նախորդի հետ և նրան տալիք մեկնութիւնը վերագրում են երկուսին։

*ԳԱՋ «մի տեսակ չափ, կանդուն, արշին» յետին հայերէն բառ, որ քանիցս գործածում են Օգոստ. բաշ. 12, Առաք. պտմ. 234—5 (այժմ Պարսկաստանում մի գազը մի մետր =1¼ արշին է)։

=Պրս. ز gaz, որից փոխառեալ են նաև քրդ. gez, չաղաթ. gez, kez, բոլորն էլ նոյն նշանակութեամբ։—Հիւբշ. 124։

ԳԻՒ.—երև. Նախ. Ջղ. Տփ. գազ, Ալշ. Խրբ. գ՚ազ, Ոզմ. գ՚ազ, Շմ. Սլմ. Վն. գ՚ազ, Ղրբ. կեզ, Ագլ. գ՚եօզ. կենդանի է նաև ուրիշ բարբառների մէջ. ինչ. Ապ. Գոր. Լ. Խ. Ղզ. Մկ. Նբ. ԵՒն։

ԳԱՋ ըստ Քաջունի, հտ. Գ, էջ 42 նշանակում է նաև «pie», բայց ֆրանս. pie ունի երկու իմաստ՝ «կաշազակ» և «ճանճկէն ձի»։ Յայտնի չէ, թէ Քաջունին այս երկուսից ո՞րն է ակնարկում, չէ յիշուած անդ, հտ. Բ, էջ 330 կրկնակ pie բառերի տակ։

ԳԱՋ «menaille, աքցան». դիտէ միայն Քաջունի, հտ. Գ, էջ 42 և հտ. Բ, էջ 713. այլուստ անծանօթ։

ԳԱՋԱՉԻԿ *«զայրանալ, սաստիկ բարկանալ, բարկութիւնից կատաղիլ» Շապհ. 78 «Եւ հայիցեալ ամիրապետն և ասէ գազազեալ ընդ ճեղեն, թէ ո՞վ է սա»։ Կենդանի է նաև արդի բարբառներում՝ նոյն իմաստով (Երևան, Լոռի, Ղազախ)։*

ԳԱՋԱՂ *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ և ՋԲ, թէև առանց վկայութեան) «կրակի մոխիր» Ոսկ. մ. բ. 5. Եփր. փես. 411. Փիլ. լին. 267, որից գազաղադէմ «կրակից սևացած կամ մոխրոտ դէմքով» Փարպ., գազաղանալ «մոխիր դառնալ» Խոր. Սկևռ. աղ., գազաղացուցանել «մոխիր դարձնել» Սկևռ. աղ. 102։ Բառը յետնաբար գրում է նաև գազախ (ինչպէս ունինք ածուղ>ածուխ), բայց ընտիր ձևն է գազաղ, թէև արդի գրականում գազախ ձևն է միայն, որ երբեմն գործածւում էր։*

ՆՀԲ անորոշ կերպով պրս. خزیر xazīr «տաք մոխիր» բառից։ Նոյնը հաստատապէս Հիւնք.։ Bugge, KZ, *32, 34 ից.* αἰθάλος, αἰθάλη *«մոխիր» բառի հետ. Հայերէնում գ ձայնը յետոյ է աւելացած։*

ԳԱՋԱՆ, *ի–ա հլ. «վայրենի և գիշատիչ անասուն, 2. փիղ, 3. օձ, վիշապ» ՍԳր. Եւս. քր., «գոռոզ, գազանաբարոյ մարդ» Սարկ. քհ., «բարկ կամ թունդ (աղջուր, քացախ)» Վստկ. 186, 188, որից՝* գազանաբար *Բ. մակ. ժ. 35, ժբ. 15. Ես. ե. 29, Մծբ.,* գազանաբարոյ *Եղն.,* գազանաբեկ *ՍԳր.,* գազանագէշ, *Գ. մակ. ղ. 24,* գազանագոյն *Եզն. Ոսկ. մ. բ. 3, 12,* գազանակեաց *Բ. մակ. ե. 27,* գազանակերպ *Ոսկ. մ. բ. 24,* գազանակուռ *ՍՆ. խդ. 28,* գազանամարտ *Ա. կոր. ժե. 32, Ոսկ. երր.,* գազանամիտ *Ագաթ. Ոսկ. ես.,* գազանանալ *ՍԳր. Ոսկ. մ. բ. 14, Եփր. Բգ.,* գազանիլ *Ոսկ. մ. ա. 13, Եփես. բ.,* գազանել *Ոսկ. մ. ա. 16,* չարագազան *Ոսկ. տիտ. և ես.,* կիսագազան *Եպիփ. բարոյ.,* խառնագազան *Փիլ.,* չգազան *Կիւրղ. ղևտ.,* գազանագուսպ *(նոր բառ) ևն։*

Հներից Վրդն. ծն. հանում է գէզ «պատառուածք» բառից «Գազանք վասն պատառողութեան կոչին. գազանք՝ զի պատառողք են. գեղն պատառուած է»։ Այսպէս նաև Յայտմ. մրտ. 22 «Գազանք վասն երկուց պատճառաց ասին. նախ զի պատառողք են և են ոմանք՝ որ պատառուածոցն գեզ ասեն»։ Տաթև. ձմ. ճՔ· և հարց. 216 «Գազան՝ կա՛մ զի գիշող են և պատառող, կա՛մ զանազան և ահագին կերպարանս ունին»։ Ըստ այմ և ՀՀԲ մեկնում է գզան, գզող: Brosset, JAS, *1834, 383* են *վրաց.* խեցի: Lagarde, Urgesch. *658 սանս.* vahni: Müller, Kuhns u. Schleichers Btrg. *5, 139 սանս.* vāhana, *գնդ.* vazana, *համմտ. նաև գնդ.* vazi *«կով»։ Մ. Մաբիանն, Ճոտքագ, 1861, 330 «Թէ ի ժանիղրն մտիցիս ի գազան, գրգե զքեզ, զի ի բնէ է գզան»։ Պատկ., Փորձ, 1880 մարտ, էջ 84՝ պրս.* گزیدن gazīdan *«կծել» բայի* گزان gazān *«կծող» գերբայից։ Ալպէս նաև Հիւնք.։* Bugge, KZ, *32, 35 գ յաւելուածով յն.* αἴθων *«կատաղի» բառի հետ և կամ գազախ «մոխիր» բառին ցեղակից։* Pedersen, *Նպատա, էջ 8՝ հլ. ան մասնիկով պրս.* gaz-ī-dan *«խածնել» բառից։* Petersson, Ar. u. Arm. Stud. *69 օսս.* ɣazun, qazin *«խաղալ», լիթ.* gaszbùs *«պարարտ, գէր», գաս.* gasznus *«սիրուն, տաք, գրգռիչ» բառերին ցեղակից է դնում, բայց ընդունում է նաև, որ այսպիսի մի բառ հնչառութեամբ կարող է փոխառեալ լինել։*

ԳԻՒ.—Տփ. գազան. Ալշ. Ախց. Երև. Խրբ. Մշ. Ննխ. Ջղ. Սեբ. Սչ. գ'ազան, Շմ. կազան, Ոզմ. գ'ազան, Մկ. կ'ազան, Սլմ. Վն. կ'ազան, Տիգ. ſmqmն, ՋԲ. Հճ. գ'ազօն, Ղրբ. կէ'զան (վերջինս «բորէնի» նշանակութեամբ.—Մշ. շատ անգամ գործածւում է «շուն» իմաստով. Ջղ. «շատ» Բլ. «մեծ», ինչ. գազան փող ունի. գազան քաղաք է)։—Ղրբ. կայ նաև կզնուիլ «բարկանալ», որ թուի թէ ծագում է հին գազանիլ «բարկանալ, կատաղիլ» ձևից. համմտ. «Իբրև զխեան ինչ ի ներքս կայ ի մեզ ցասումնն, զի սատանայի ընդդէմ ատամուներս կրճտիցեմք. զի նմա գազանիցեմք» Ոսկ. պօղ. համեմատութիւնը ուղիղ է թուում, որովհետև հին կ, գ>Ղրբ. կ, բայց սրան հակա-

ռակ է դուրս գալիս Ագլ. կգնվիլ, որ ցույց է տալիս, թէ բառիս նախաձայնը հին հայերէնի մէջ էլ կ էր. ըստ որում Ագուլիսի բարբառում հյ. գ, կ մնում են գ, կ: Այս պատճառով ահա ճիշտ չէ կգնուիլ=գազանիլ համեմատութիւնը և պէտք է գտնել մի ուրիշ նախաձև՝ կ նախաձայնով: Իրօք էլ կայ նրև. իգդ. կծնուիլ «բարկանալ», ձևացած կայծ բառից (իբրև «տաքանալ»), որ տալիս է Ղրբ. և Ագլ. կանոնաւորապէս կգնվիլ:

*ԳԱԶԱՐ «սոխպղին, հավուճ, daucus carota L» ԲԺշ.:

=Պրս. ﮔﺰﺭ gazar «սոխպղին. գազար», որից փոխառեալ են նաև արաբ. جزر jazar, ասոր. ܓܙܪܐ gezārā (Brockelm. 54ա), ն ասոր. gizara, քրդ. گزر gizir, չաղաթայ. (Խիվայի բարբառով) یشکه kešir, գնչ. gezer. վերջինիս հետ Paspati համեմատում է սանս. garjara, հինդուստ. گاجر gajur, աֆղան. gāzara, բոլորն էլ «գազար» նշանակութեամբ: – Հիւրշ. 273:

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ, յետոյ էլ Böttich. Arica 74, 202, Lagarde, Urgesch 836 ևն:

ԳԻՒ.—Տփ. գազար, Երև. Ջղ. գ'ազար, Գոր. Շմ. կ'mգmր, Ղրբ. կէ'զmր, Ագլ. գէօ'զmր:

ՓՈՒ.—Ուտ. käzär նոյն նշ.:

ԳԱԶԳԱՒԻԼ «խորշիլ կամ գազազրել». ունի միայն Բառ. երիմ. էջ 59:

*ԳԱԶԵՐՈՒԱԿ «մի տեսակ հնդկական խնկեղէն» Խոր. աշխ. (Սուքրիի հրատ. ունի գոզիբոյեկ), ըստ Նորայր, Բառ. ֆր. 838 «muscade, մշկընկոյզ», Տիգրանեան, Բառ. բժշ. բոյսերի, էջ 13 «nux moschata», ըստ ԳԲ «արտ. մշկընկոյզ, azerbe, muscat mâle»:

=Պհլ. փոխառութիւն է. բառի վերջին մասը է (-բուակ կամ -բոյեկ) պհլ. bōyāk, պրս. بوی bōya «հոտ ունեցող, բուրող» (տե՛ս բոյր). հմմտ. նայիբուակ, հրբուակ, գոյիբուակ. իսկ առաջին մասը՝ գազեր- մընում է անծանօթ:—Հիւրշ. 123:

Այս մեկնութիւնը տուաւ Պատկանեան, Խոր. աշխ. 1877, էջ 81, իսկ Նորայր, անդ, որից և Ալիշան, Հին. § 397, համարում է արաբ. جوزبوا jauzi-bavva «հնդկընկոյզ» (տե՛ս Շեթայնշնայդէրի հաւաքածոյի մէջ՝ WZKM, 11, 329):

*ԳԱԶՊԷՆ «բոյսերից արտաթորուած քաղցը մի նիւթ է, մանանայ, Ս. Կարապետի հալվա» Խոր. աշխ. 608, Վրդն. սղ ձ. էջ 275, Վրդն. օրին. Տաթև. ձմ. հիա. որ և գազապէն Զեներ, էջ 49, կազպին Նչ. եզեկ.:—ՀՀԲ գրում է նաև գազպի, գազապէ, որոնց համար վկայութիւն չկայ:

=Պհլ. *gazpēn բառից փոխառեալ, որ բուն նշանակում է «մոշայի մեղր» և կազմուած է gaz «գազ, մոշայ» և pēn «մեղր» բառերից. սրանից gaz «մոշայ», որ կորած է պահլաւերէնում, գտնում ենք պրս. گز gaz և բևլուճ. gaz համանիշների մէջ (տե՛ս վերը հյ. գազ), իսկ պհլ. pēn «մեղր» ձևը ներկայացնում են բևլուճ. bēnag, bēnaγ «մեղր», պրս. انگبین angubīn, պհլ. angpēn, angumēn «մեղր» (կազմուած ang «մեղու» և pēn «մեղր» բառերից): Պհլ. *gazpēn ձևի դէմ նոր կազմութեամբ գտնում ենք պրս. گزنگبین gazangubēn կամ گزانبو gazānbū «գազպէն», որ բարդուած է պրս. گز gaz «մոշայ» և انگبین angubīn «մեղր» բառերից:—Հիւրշ. 124:

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ՆՀԲ, որից առել է Lag. Arm. St. § 437:

ԳԻՒ.—Ախց. կր. գ'ազրին, Ողմ. գ'mզպա, Ալշ. Մշ. գ'ազրա. իսկ Ռ. Ֆազէնդ, որ դարձեալ նոյն բառն է, նշանակում է «բոյսերի վնասակար մի հիւանդութիւն»:

ԳԱԶՐԻ «մի տեսակ ծառ», ձևով և նշանակութեամբ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ Բառ. երիմ. էջ 117. թափիչ «գազրի փայտ կամ թակ»: Կարող է և սեռ. լինել:

*ԳԱԶՕՖԻԼԱԿՈՒՄ «գանձանակ, գանձարան». ունին միայն Բառ. երիմ. էջ 59 և ՀՀԲ,

=Լ.ա. gazophylacium «արքունի գանձարան», որ ծագում է յն. γαζοφυλάκιον համանիշից:—Աճ.

ՀՀԲ համարում է «բառ յունական»:

ԳԱԹ «հինաւուր». ունի միայն Բառ. երիմ. էջ 59: Բուն իմաստը յայտնի չէ:

ԳԱԹԱՅ «յայտնի խմորեղէնը» Վրդն. տո.

էջ 320, հին գրականութեան մէջ աւանդուած չէ։

Բուրաստան Ս. Սահակեան թերթը, թ. 1851, էջ 31 դնում է կար բառից կազմուած։ Justi, Dict. kurde, էջ 321 թէ՛ հայերէնը և թէ՛ տակի ձևերը փոխառեալ է դնում ֆրանս. gâteau «կարկանդակ» բառից։

ԳԻՒՐ.—Ընդհանուր տարածուած բառ է. ինչ. Սեբ. գ'աթա, Մչ. գ'ադ'ա, Ախց. գ'աթա ևն։

ՓՈՒՔ.—Վրաց. ჭადა քաղա, ասո. քաթա (տե՛ս Schiffner, Versuch über die sprache der Uden, էջ 83 բ), քրդ. k'adä, kade, kadik, թրք. kete, նոյն նշ.։ Բոլորի ծագումն էլ անյայտ։

+ԳԱԼ, պակասաւոր բայ, որ իր մի քանի ձևերը կազմում է եկ արմատից (այսպէս՝ եկի, եկն, եկ, եկից, եկեալ)։ «Գալ» ՍԳր. ևն գործածուելով զանազան բառերի հետ՝ ձևավացնում են նրանցից բայական ձևեր, ինչ. գալ ի զղջումն «զղջալ», գալ յողորմութիւն «ողորմիլ», գալ ի ննիմ «քննել, քննութիւն», գալ ի միտս, յիմիմն, ի խելս «ուշաբերիլ», գալ ի մէջ «դոյանալ» ևն։ Յատկապէս գործածւում է գ-ով գործիական հոլովով, ինչ. գալ զգրովք «կարդալ», գալ զարբեցութեամբ «հարբեցութեան հետևիլ». նոյնպէս և գալ զսիրով, գալ զնշմարտութեան բանիւ ևն (տե՛ս ՆՀԲ, Ա հտ. էջ 526 ա)։ Այս արմատից են ծագում գալուստ ՍԳր. Եւս. քր. ա. կոչ., արևագալ Մրկ. ժզ. 2. սրանից են նաև զգալ, զգայուն, անզգամ, զգօն, զգաստ ևն, որոնց վրայ տե՛ս զգալ։ Յետևաբար էլ յունարէնի վրայ յարմարուած են ապագայ Պիտ. Նար. 86. կթ., պարագայ Փիլ. Աթ. Թէոդ. կուս., անգայ Փիլ. լին.։ Յետին յարմարութիւն է նոյնպէս գայիլ բայածևը (բուն գայ արմատից), որ թէև առանձին գործածական չէ, բայց գտնւում է շատ բառերի ծայրը, ինչ. շրջագայիլ, յառաջագայիլ, բացագայիլ, պարագայիլ ևն։—Ըստ Հ. Գ. Աւետիքեան, Բացատր. շար. էջ 214 միջնադարեան հայերէնում կար նաև գոլ «գալ» ձևը, որի վկայութիւններն են «Թագաւոր գոլով քո յաշխարհ» Շար., «Այսօր գոլով քո յաշխարհ», «Այսօր գոլով ի բեթանիա. ապատէին և ակն ունէին Տեառն իսկ ինքնին գոլով» Շար.—Սաղմոսք «Աստուած ի հարաւոյ եկեսցէ» հատուածի դէմ Արշ. դնում է գալ ի հարաւոյ։—Նոյնպէս «Գող ոչ գայ» Սարգ. դնում է «Գող ոչ գոյ՝ եթէ ոչ զի սպանցէ»։ Վերջապէս Հին քեր. n—ա լծորդ տառեր համարելով՝ օրինակ է տալիս գոլ<գալ։ Այս գոլ ձևը իրօք էլ կայ այժմ Նոր-Ջուղայի բարբառում։

=Թերևս հնխ. wā- արմատից, որ այլուր ամէն տեղ կորած է, բայց -dh-ով ածած wādh- ձևն են ներկայացնում լտ. vādere «երթալ, քայլել», vado «ջրի հոսանքն անցնել», vadum «հուն», հիսլ. vaða, ōð, անգլս. wadan, wōd, անգլ. wade, հրգ. watan, գերմ. waten և գերմանականից փոխառութեամբ՝ իտալ. guadare, բոլորն էլ «ջրի հոսանով անցնել» (Walde, 802, Kluge, 519)։ Հնխ. wā- «երթալ, քայլել» արմատից ծագումը հաստատում է նորպիւտ կամիս. wā, wē «երթալ, գալ», uwa- «գալ», wāmi, uwāmi «գամ» (տե՛ս Pokorny, 1, 217, Er. out-Meillet, 1027, Benveniste, BSL, 33, № 99, էջ 137)։ Բառիս մասին տե՛ս նաև Pedersen, KZ, 39, 362։

Peterm. 34, Lagarde, Urgesch. 91 սանս. gā, gām «երթալ» բայի հետ։ Եւրոպա, Հանդէս վիեննայի Մխիթարեանց, 1849, էջ 200 հպրս. գամ։ Bopp, Gram. comp. III 18 սանս. jagami, Տէրվ. Նախալ. 77, 80 գոթ. gaggan «երթալ», լիթ. žengti «քայլել» բառերի հետ՝ հնխ. gha արմատից։ Canini, Et. étymol. 83 խպտ. kim «շարժել, յուզել»։ Eugge, KZ, 32, 34, Meillet, MSL, 8, 290 սանս. ágat, յն. ἔβη, լտ. vādo, հրգ. watan։ Հիւն. թրք. թրք. gelmek «գալ» բայի հետ։ Յ. Աբրէգ, ՀԱ, 1896, 270 նոյն ընդ. գնալ=աքքադ. գին «գնալ, յղել»։ Հիւբշ. 441 դնում է եկ<հնխ. ég²āt, հին.<հնխ. ég²emt արմատների gbə, ghō, ghā, ghē ձայնդարձից։ Վերի մեկնութիւնը տուաւ Meillet, Esquisse, 101 Scheftelowitz, BB, 28, 310 սանս. hājihīte «երթալ»,

յն. κιχάνω «պատահիլ, հասնելը, հրգ. gān: Karst, Յուշարձան, 418 գալ և գնալ ձևերի հետ համեմատում է թրք. gelmek «գալը», gezmek «մաև գալ», այս երկուսի պարզ արմատը համարելով ge:

ԳԻՒՒ.—Պլ. Տփ. գալ, Ախց. Ակն. Ասլ. Երև. Խրբ. Կր. Սեբ. գ'ալ, Ոզմ. գ'ալ, Մկ. Մրզ. Շմ. Վն. կ'ալ, Հմշ. կալ, Սչ. իգ'ալ, Ալշ. Մշ. յիգ'ալ, Ննխ. Ռ. ֆալ, Սլմ. իկ'ալ, Տիգ. իֆ'ալ, Զթ. իգ'օլ, իգ'ոլ, Հճ. գ'օլ, Զղ. գոլ, Հւր. գէօլ, Ագլ. գ'իւլ. Նոր բառեր են՝ գալող, գալած, գալացու, գալացուկ, գալիք, գալօր, գալուիս, գալտարութիւն:

+ԳԱԼԱՐ (ի հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վրկայութեան) «ոլորք» (օձի ևն) Վրդն. ի յհ. Ոսկիփ., «սիրտը գորովից ճմլուիլը» Վրք. հց. Ոսկիփ., որից գալարել, գալարիլ «ոլորել, ոլորուիլ, փաթաթուիլ. 2. սիրտը ճմլել, ցաւից տրորուիլ» ՍԳր. Ոսկ. մ. բ. 28. Եղն., գալարափող «մի տեսակ մեծ և գալարուն փող» Եղիշ. Գնձ., գալարեցուցանել Մանդ. Վրք. հց., գալարումն Պղատ. տիմ., գալարուն Սարգ.:

=Կազմուած է -ար մասնիկով (համմտ. զարդ-ար-ել, մեծ-ար-ել, աստուած-ար-եալ. հրաժարիլ, յ-արդ-ար-ել) գալ «ոլորք» արմատից, որ թէև գրաբարի մէջ առանձին գործածական չէ, բայց երևան է գալիս նոր բարբառների մէջ: Գալ «ոլորք» ձևը ստորին ձայնդարձն է գել, գիլ (որից գլ-որ-ել) արմատի, որ տե՛ս առանձին:

ՆՀԲ յիշում է ոլորել. գլել. գլորիլ, գելուլ: Տէրվ. Նախալ. 106 գիլ. գլորել, գալարել, ոլորել, բոլորել կցում է յն. εἰλέω, լտ. volvo, դոթ. valvjan, հյ. ճոլով ձևերին, իբր հնխ. varu, -varv արմատից: Նոյն հեղինակը, Մասիս. 1881 մայ՛ 6 համեմատում է գելուլ բառի հետ, իբր հնխ. ghar «ոլորել, ծռել» արմատից: Հիւնք. գլորել բայից: Յ. Արշէպ, Բազմ. 1897, 52 արմատը դնում է գալ և կցում է գիլ, գլել, գլորել բառերին, իբրև յն. εἰλέειν, լտ. volvere: Պատահական նմանութիւն ունին պրս. ﮔﺎﻝ gāl «մի տեսակ մանր ու դեղին կորեկ, 2. բամբակի խողակ», ﮔﻼ gāla «մանելու պատրաստ ոլորած բամբակ», ﮔﻠﻴﺎ gālīya «մի տեսակ խոտ», որոնք գուց. գալ բառին շատ մօտիկ են հնչումով և նշանակութեամբ: Դարձեալ պատահական նմանութիւն ունի ասուր. galalu «գլորել, երերալ» (Muss-Arnolt, Ass. eng. Handwb. էջ 219) բառի հետ:

ԳԻՒՒ.—Մշ. գ'ալար «փորի ցաւ», Ոզմ. գ'ալուր «փորի ցաւ», գ'ալըրիլ «փորը ցաւիլ», Տփ. գալալ գալալ «ոլոր ոլոր», գալալ գալալ գալ «սիրտը գալարիլ, նեղանալ», Ալշ. գ'ալար «փորի ցաւ», Մկ. կ'ալարիլ «ոլորել», Սլմ. կ'ալրվել «գալարուիլ», նաև գալար Վն. «խիթք», գալարել «փորի խիթք ունենալ» (Վն.).—գալար Հմշ. «թելի ոլորք», գալարոց Երև. «խիթք».—Նոր բառ է գալեռան (իմա՛ գելարան) «մեքենայի այն պտուտակը, որ ամրացնում և սեղմում է»:—Նոր մասնիկով աճած է գալրխնել Վն. «ամուր փաթաթելով կապել, ոլորել ու պրկել»,—պարզ արմատը ցոյց են տալիս գալ Ալշ. Ախբ. Երև. Բլ. «չորացնելու համար ոլորուած ու պահուած բանջարեղէն (շեպ, աւելուկ, շրեշ ևն), որից ձմեռը կերակուր են պատրաստում», գալել Բլ. Երև. Նբ. Շիր. Խ. Մկ. Սլմ. «չորացնելու համար շեպ, աւելուկ են հիւսել»:

ՓՈԽ.—Վրաց. გალა գալա «գալ. вязка зелени для сушки» (Ջուբինով. էջ 158):

*ԳԱԼԼՈՍ, որ և գաղոս «ներքինի». մէկ անգամ ունի Պոմ. աղէքս. 14 «եթէ այժմ ծնցիս, գալլոս եղիցի կամ բացակատար ծնունդըն»: Այս բառը կեչառ. մեկնում է «գոտի կամ խեղ», որ մօտաւոր իմաստ է միայն:

=Յն. γάλλος «ներքինի»: Բուն նշանակում է Ռէայի քահանայ և որովհետև Ռէայի քահանաները ներքինի էին լինում, ուստի բառը ստացաւ այս նշանակութիւնը (Sophocles, 324):—Հիւբշ. 344:

ՆՀԲ մեկնում է բառս «աքաղաղ և հաւկուռտ», իբր յն. γάλλος, լտ. gallus «աքլոր», ինչ որ սխալ է: ՋՔ դնում է «ներքինի»: ԱՔ հետևում է ՆՀԲ-ի սխալին:

ԳԱԿՆՈՒԻ «հպատակիլ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ.

մտթ. ա. 21, էջ 336 «կոչէ զմամոնայն տէր, ո՛չ վասն նորա ինչ քննութեան, այլ վասն այնոցիկ, որ ընդ նովաւն երթեալ գանձուցուն։ Սովին օրինակաւ և զորովայն աստուած կոչէ, ո՛չ ըստ նորա ինչ պատուոյ, այլ ըստ ծառայացելոցն ՅՇուառութեան»։

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. բ. 257։

ԳԱՀ, ու հլ. (յետնաբար նաև ի հլ. սեռ. գահոյ Փարպ.) «բարձր նստարան, բեմ, 2. պատուի աթոռ (թագաւորի կամ իշխանի), 3. պատիւ, իշխանական աստիճան» Գ. մակ. ե. 8. Ագաթ. Բուզ. Եղիշ. Փարպ., որից գահագլուխ Մրկ. ժբ. 39. Ոսկ. մտթ., գահակ «գահ» Ուռհ. Ոսկիփ., գահերէց Ա. Եզր. ե. 63. Ոսկ. մտթ. Ագաթ., գահակալ Վրդն. ծն. Համամ. առկ. Գնձ., գահոյք «գահ, 2. տախտ, մահիճ, 3. պատգարակ, դեսպակ» ՍԳր. Եփր. մնաց., նախագահ Ոսկ. յհ. ա. 21, 27. Խոր., յառաջագահ Մտթ. իգ. 6, բարձրագահ Ագաթ. Ղուկ. ժա. 43. Եղիշ., գահոյանի «գահոյք» Պտմ. աղէքս., մեծագահ Խոսր.։ Նոր բառեր են՝ գահաժառանգ, գահընկէց, գահազուրկ են։

*=Հիւս. պհլ. *gāh, որի դէմ ունինք նորագիւտ մանիք. պհլ. 𐫀𐫗𐫀 gāh «գահ» (Salemann, Manich. Stud. ՅAH 8, 62), պհլ. ʊʊ gās (<gāθ) «տեղ, դիրք, աթոռ, բազմոց, գահ», պազենդ. gāh «տեղ, դիրք, գահ», պրս. ɔ۴ gāh «գահ, աթոռ», սոգդ. γāθūk «գահ», հպրս. gāθu- «տեղ, գահ, աթոռ», զնդ. gātu- «տեղ, նիստ, դասական աստեան, աթոռ, բազմոց, գահ», սանս. gātú- «գնացք, ճամբայ, տեղ» (Bartholomae, 519, Horn. § 889)։ Համմտ. նաև վարը՝ գահաւոր, գահաւորակ, գահճամակ։ Հիւբշ. 125։*

ՆշՒ յիշում է պրս. կեահ, բայց ո՛չ իբրև լծորդ հայերէն բառին. այս պատճառով առաջին մեկնիչն է Böttich. Arica 77, 271 են։

ԳԱՀ, ի հլ. (յետնաբար) «դար, բարձր տեղ, ժայռերի գլուխը» Ղուկ. ը. 33. Կոչ. 101. Փիլ. Պիտ. Լաստ. Բրս. մրկ., որից գահավէժ «անդունդի մէջ գլորուած» Բ. մնաց. իէ. 12. Ղուկ. դ. 29, գահիճ «անդունդ» Ոսկ. յհ. ա. 38, գահաւանդ «բարձրաւանդակ տեղ» Ովս. ե. 1. Սիր. ժա. 32. Սարկ. քհ. կամ գահաւանդակ Երեմ. խզ. 18 (այլ ձե. pa-por). Սարգ. ա. յհ. յոչ. էջ 487—8, գահավիժօրէն «շատ արագ» (նոր բառ՝ կազմուած ֆրանս. précipitamment համանիշի օրինակով, որ ծագում է précipice «գահաւանդ, անդունդ», précipiter «գահավիժել» բառերից)։

=Թուի թէ նոյն է նախորդ բառի հետ։

ՆշՒ նախորդի հետ միասին է դնում։ Lagarde, Btrg. bhtr. Lex. 72 զնդ. gāθaṅh բառի հետ, որ մեկ անգամ գործածուած է Yašt 14, 21։ Հիւբշ. 125 մեկնում է այս համեմատութիւնը, որովհետև զնդ. այս բառը պիտի կարդալ vīgāθō (ձ. vīγāθō) «բլուր, խորշք ևն» նշանակութեամբ։ (Bartholomae ևս, էջ 1436, նոյն բառը կարդում է vīgāθō «Einsenkung, Schlucht, վայրէջք, կիրճ» և չգիտէ (էջ 521) gāθaṅh ձևը)։ Հիւնք. նոյն ընդ գահ «աթոռ»։ Bugge, Lyk. Stud. 1, 13, դրտնում է պոնտական Gagonda քաղաքի անուան մէջ։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 110 պրս. ɔ۴ kūh «լեռ» բառի սղեալ ձև kah ձևից։

Գիմ.— Տե՛ս գեհ։

ԳԱՀ «թոքացաւ» Բժշ. (Հրտր. Բազմ. 1917, 102)։ Նոյն բառն է անշուշտ գահ Բն. «կրունակի վրայ ուռեցք», որ սակայն Ակն. նշանակում է «ուս» և Մշկ. Ք. «թիկնամէջ, կրունակի մէջտեղը»։

ԳԱՀԱԿ «օդակ, լամբակ». մէկ անգամ միայն ունի Ել. լե. 11, որից գահակել «չորս բոլորը լարով շրջանակաձև պատել» Բարսղ. ղ. 42։

ՆշՒ կահ կամ գահեալ բառից է հանում։

ԳԱՀԱՒՈՐ «արքունի մի պաշտօնեայ» Խոր. Բ. 7. 35. կթ. 34. Ասող. ա. 6. Եփր. աւետ.։

*=Հիւս. պհլ. *gahvar, պհլ. gatvar<gaθ-var «մի բարձր աստիճան», որ ծագում է gāh, gās, gāθ «գահ» բառից՝ -var մասնիկով։—Հիւբշ. 125։*

Ուղիղ մեկնեց Lagarde, Symmicta, *48։*

*ԳԱՀԱՒՈՐ *«գահ կամ դեսպակ». մէկ անգամ ունի Ագաթ. (ըստ ՆՀԲ). «բազմեցաք ի միում գերահրաշ գահաւորի»։ Սովորական ձևն է* գահաւորակ, *ի–ա հլ. «արքունի կամ իշխանական գահ, հովանաւոր մահճակալ, դեսպակ, պատգարակ» Երզ. գ. 9. Ագաթ. Ե–ղիշ. Նար. էջ 206. Մագ. թղ. 9, 220. նաև «կասկարայ» (վկայութեան խորանի կահերից մին) Ել. իէ. 4, 5։*

= *Հիւս. պհլ.* *gāhvārak, *պհլ.* gāsvārak, gavārak *«մանուկներին կամ մեծերին յատուկ պառկելու տեղ», պրս.* ﮔﺎﻫﻮﺍﺭ gāhvār, ﮔﺎﻫﻮﺍﺭﻩ gāhvāra, ﮔﻬﻮﺍﺭ gahvāra, ﮔﻮﺍﺭ gāvāra, ﮔﺎﺧﻮﺍﺭ gāxvāra *«օրօրոց», քրդ.* کەهڤارە kehvare *կամ* gehvare *«օրօրոց». արմատն է* gāh, gās, gāθ *«գահ», որոնց վրայ տե՛ս* գահ։—*Հիւբշ. 125։*

ՆՀԲ գահոյք *բառից։ Առաջին անգամ* Lagarde, Symmicta, *48 համեմատեց պրս. բառի հետ, Տէրվ. Մասիս, 1881 մայիս 8, գահ բառից է դնում։*

ԳԱՀԵԼ *«զարնել» «Գահեցին զբերան նորա, որ լցաւ արեամբ» Ոսկիփ., «Պողովատ Թրովն ի վերայ սաղաւարտին գահեաց և յերկուս հերձեաց» Ուռհ. 14 (այս օրինակում ՆՀԲ և տպ. եմ. ունին* գահել, *իսկ տպ. էջմ.* հաճել)։ *Նոյնպէս* հաճել *«զարնել» ձևն է ակնարկում Միխ. աս. 538* հաճանայ *բառի արտուգարանութեան մէջ, իբր գրում է, թէ «ըստ հայկական բառին քաւիչ սուգարանի կամ հարկանող»։ Առաջին իմաստից է յառաջանում «քշել, վարել անասունը» (իբր թէ մբռնակով զարնելով) ինչ. «Գահեալ զերիվարն ուժգին» Ուռհ. 32 (ՆՀԲ և տպ. եմ.* գահել, *էջմ.* հաճել), *«Պնդեց թէ մի՛ գահել ու նա գահեց (քշեց անասունը)» Սմբ. դատ. 208. «Ընջուղն գէր և աղուոր... ուժով կտրիճք գահեն և բերեն» Վստկ. 194, «Ոչ հեծնուն ի ձի, ոչ գահեն մուրատով» Կոստ. երզն. 131։—Նոյնը նաև «հրել, խթել» նշանակութեամբ «Ցայնժամ Զամբրիս ընդմտանելով և քահելով Սեղբեստրոսի՝ ասէ» Վրք. սեղբ. 793։—Անստոյգ նշանակութեամբ են «Զգեօղս և զագարակս առ բարի նախանձ քահեալ՝ առնէին բնակութիւն կրօնաւորաց» Լաստ. ժ. տպ. 1844, էջ 39, «Յորժամ և գահէ զմեզ, պակասեալ է ամենայն բան մեր» Ոսկ. ճառք, էջ 282։ Բառ. երեմ. էջ 326 դնում է* հաճել *«ասստել կամ խոնարհեցուցանել»։—Այս բառի հնագոյն վկայութիւնն ունի Մծբ. 72 «Գաւիթ վկայէ, այսմ. Յարեաւ Փենեհէզ, քահաց և համարեցաւ նմա յարդարութիւն յազգէ ազգ, մինչև յաւիտեան», որ մի քիչ յետոյ դառնում է «Ետես Փենեհէզ եղիազարեան և համաւ նա ի սենեակ նոցա և եհար և անդէն սատակեաց զերկոսեան և մահ նոցա աղօթք համարեցաւ նմա»։ Հատուածս ունի և Սղ. ճե. 30 «Ապա նկաց ի մէջ Փենեէս, հաւեաց և արգելաւ մահ. համարեցաւ նմա յարդարութիւն ազգն յազգ մինչև յաւիտեան»։ Այստեղ ստորագծուած բառի դէմ եբր. բնագիրն ունի* וַיִּפְלֵל vaipalliel *«դատաստան արաւ», որ յունարէնում թարգմանուած է* ἐξιλάσατο *«զոհով հաշտեցնել, քաւել», ուստի* հաւեաց *ձևը արդարանում է։ Բայց* հաճեաց *համապատասխանում է նախորդ եհար բառին, ուստի բնագրում նոյն իսկ ևթէ* հաւեաց *գրուած լինի, անշուշտ պէտք է համարել նոր սրբագրութիւն՝ ժամանակակից ծանօթ մի բառով։ Ասորի բնագրի համեմատութիւնը միայն կարող է լուծել հարցը։—*Գահել *բառի նորագոյն վկայութիւնն ունի Վարդան Յունանեան, Ձեռքածութիւն յերկինս, 1671, որ էջ 303 բառարանի մէջ խօսելով գնդախաղերի մասին՝ ասում է. «Գոն և այլք ևս տեսակք, որք բրօք ստուարասայրիւք գահեցեալք, առոցեն զնոյն արտագործութիւն»։* Գահել *բայից ածանց պէտք է համարել գահող «թակարդ» Փարպ.։*

ՀՀԲ հահել *մեկնում է «քաւել, սրբել յանցանքը», իբր նոյն ընդ* հաւել։ *ՆՀԲ գահել իբր գահ «վախք» բառից, իսկ* հահել *«որպէս գահել, վարել, շարժել կամ հաւել, սրբազանել»։ Հացունի, Դաստիարակութ. էջ 412 գահող մեկնում է «տապար», հանելով գահել «հարկանել» բայից։*

Գիւմ.—Հմ. գ'էհել *(ինչպէս և կեհել Մրշ.) «մղել, առաջ քշել, հրել». այս թանկագին*

բառերը ցոյց են տալիս, թէ գաւել և ֆաւել գրչութիւններից ուղիղ է միայն գաւել: Ունինք նաև գեւել ՋՔ. «վարել, քշել (նաւը), 2. կալ, տևել, գոյութիւնը շարունակել» (Աւետ. ըստ Մարկոսի, Ջէյմունի գաւառականով, Դ. 17): Երկու նշանակութիւններն էլ տճկ. սիւրմէք «քշել, վարել, տևել» բառի համեմատ:

*ԳԱՀՆԱՄԱԿ «նախարարների պատուոյ աստիճանի ցուցակը» Ուխտ. Ա. էջ 40. Օրբ.: =Հիւս. պհլ. *gāhnāmak, իբր պրս. ڪاهنامڪ *gāhnāma «դահական թուղթ, գիրք կամ ցուցակ», որ կազմուած է gāh «գահ, պատուոյ աստիճան» և nāmak «գրութիւն, գրուածք» բառերից:—Հիւրշ. 125:

Ուղիղ մեկնեց նախ Պատկ. Матер. II. էջ 3:

ԳԱՀՈՒՐԱԿ, ի–ա հլ. ունի միայն Բառ. երեմ. էջ 69, որ մեկնում է «որ շուրջ զաստիճանաւն». սրանից առնելով ՓՔ դնում է «վանդակք, որք շուրջ զաստիճանօքն են, կամ յերկուս կողմանս սանդղոց»: Անստոյգ բառ, որովհետև թւում է, թէ գահաւորակ բառից է խեղաթիւրուած:

ԳԱՀՏԱՆԻ «ակիր բոյսը. acorus» Բժշ., ունի միայն ՀԲուս. § 399:

=Անշուշտ բարդուած է տակ բառով. բուն արմատը լինում է գահ, որ տակային անծանօթ է:

ԳԱՀՐՇԱԿ «մի տեսակ անծանօթ պտուղ, որ աճում է Մոկաց նահանգում» Խոր. աշխ. 608, առանց ձեռ. տարբերութեան. իսկ հին տպ. հրշակ: ՆՀԲ և ՋՔ չեն նշանակած գահրշակ ձևը, որ գիտեն միայն ԱԲ և ՀԲուս. § 400:—Տե՛ս նաև արշատ և հրշակ:

Պատկ. Арм. reorp. 46 բառիս վերջին մասի մէջ ուղում է տեսնել պհլ. rīšak «արմատ»:

ԳԱՂ «շատ». ունի միայն Բառ. երեմ. էջ 60:

ԳԱՂԱԿ «մահիճ». ունի միայն Բառ. երեմ. էջ 60. կարծեմ թէ գահակ «օդակ» բառից վրիպակ է, մանաւանդ որ այս գահակ բառը անծանօթ է իրեն:

ԳԱՂԱՋԵԼ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Վանակ. յոբ. լբ. 18 «Ի խօսելն դաղաղէ և զայլսն (Եղիշ.)», ՆՀԲ մեկնում է «քարկոծ առնել բանիւ կամ կծանելը», ՋՔ «կծանել բանիւք զոք կամ կշտամբել», և սրանց հետևելով՝ ԱԲ «խօսքով քարկոծել, կճել», ՓՔ «կշտամբել»:

ՆՀԲ գաղատոս «քարտաշ» բառից է հանում:

ԳԱՂԱՅ «կենդանի կամ խօսուն». ունի միայն Բառ. երեմ. էջ 60:

ԳԱՂԱՏՈՍ, ի–ա հլ. «քարտաշ, քարակոփ, որմնադիր» Ա. եզր. ե. 54, 58. Մծբ. 339. 372. Բուզ. ե. 4. Նիւս. Թէոդոր., որից գաղատոսաշէն «քարաշէն, քարուկիր» Ուռպ. ժ. խ.:

ՓՈԽ.—Վրաց. გალატოზი գալատոզի կամ ყალატოზი կալատոզի «քարտաշ», մինգր. գալատոզի և Թուշ. կալատազ «որմնադիր»: Բայց կարող է լինել, որ բոլորի էլ ծագումը օտար մի աղբիւրից լինի, որովհետև ո՛չ հայերէնը և ո՛չ վրացերէնը բնիկ բառի երեւոյթ չունին:

ԳԱՂԱՓ «մարտոց, սուսեր կամ թուր». ունի միայն Բառ. երեմ. էջ 60. անստոյգ բառ:

*ԳԱՂԱՓԱՐ, ի–ա հլ. «նախատիպ, կաղապար, օրինակ, պատկեր» Փիլ. Ոսկ. լս. Պարապմ. ՅՀ. իմ. առ. Արիստ. ստորոգ. հնագոյն վկայութիւնն ունի Եփր. վկ. արև. էջ 20 (որով առեալ որդիք մարդկան ի գաղափար՝ տեսեալ տպաւորին), որից՝ գաղափարել «ընդինակել, նմանեցնել, ձևացնել» Փիլ. եւ. ՅՀ. իմ. եկ. Նանայ. Ջքր. կք., գաղափարութիւն «օրինակ, նմանութիւն» Անան. եկեղ. Նանայ. յոչ. Ոսկիփ., նախագաղափար Փիլ. լին. Նիւս. կազմ. Կիւրղ. գնձ. Թր. քեր., նախագաղափարել Նիւս. կոչոս., նախագաղափարութիւն Նիւս. կազմ. Սարգ. ա. լհ.: Նոր բառեր են՝ գաղափարական, գաղափարակից. գաղափարանշան.— արդի գրականում դանագանում են գաղափար (երբեմն գրուած գաղաբար՝ արևմտեան հայոց մէջ) «միտք, խորհուրդ, կարծիք» և կաղապար «նախատիպ, օրինակ, մօդէլ կամ ղալիբ»:

=Մեկնութիւնը տե՛ս կաղապար, որի կրկնակն է, թէև յայտնի չէ թէ ինչո՛ւ կ դարձել է այստեղ գ:—Հիւրշ. 163:

Այվազովսքի, Յղ. հնչման, էջ 15 կաղապար *բառի հետ=տճկ.* գալըպ: *Տէրվիշ.* Altarm. *105 և Նախալ. 54 հնխ.* gharbh *արմատից. հմմտ. սանս.* grabh, *գոթ.* greipan, *պրս.* giriftan «*գրավել բռնել*» *են։ Այս մեկնութիւնը մերժելով Հ. Ս. Նազըճեան, Արևելք, 1884, հոկտ" 17, դնում է սանս.* ḷip «*կարգել, կարգաւորել*», սանֆալիփա «*դիտաւորութիւն, մտածում*»։

ԳԻՒ.—Ս̌ղ. ƒաղափար «*գրատախտակ*», *Ոզմ.* գ'յաղափար, *Մկ.* ƒաղափար «*կարծիք*», *բոլորն էլ գրականից փոխառեալ։*

ԳԱՂԳԱՂԵԼ «*խոշորել*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 60. ի՛նչ լինելը յայտնի չէ։*

+ԳԱՂԵԼ «*ծածկել, թագցնել, պահել*». *ունին միայն ՀՀԲ և ՋԲ, իբր նոր բառ և առանց վկայութեան. երեք անգամ գործածուած եմ գտնում հետևեալ տեղերը՝ «Գաղեալ զՎասիլ և զԿոստանդին» Յայսմ. մայ. 27, «Բաղում ինչս ստանայ, գաղէ և ծածկէ ի խաւարի» Տաթև. ամ. 253. նոյնպէս կայ* գաղեալ «*թագնուած*» *Վահր. ոտ. տպ. 1832, Կալկաթա, էջ 155 (մինչ տպ. Շահն. էջ 232 ունի* գաղթեալ), *որից* գաղուստ «*թագցնելը*» *Առաք. պտմ. էջ 403 «Թագուստ և գաղուստ արարեալ»։*

=*Մեկնութիւնը տե՛ս* գող:—*Ա՛ճ.*

Müller, Kuhns u. Schleich. Btrg. *3, 85 հնխ.* var *արմատից։ Հիւնք.* գաճ *բառից։*

ԳԻՒ.—Ջղ. գ'աղել. *Դվ.* կաղել «*ծածկել, պահել*», *որի հետ նոյն են Ղրբ.* կէ'ղել, *Շմ.* կէղիլ *հոմանիշները.— ունինք նաև* գաղուիլ *Ագլ. Ղրբ.* «*թագնուիլ*», գաղնուիլ *Դվ.* գեղուիլ, *Ղփ.* «*թագնուիլ, ծածկուիլ, պահվուիլ*»։

ԳԱՂՈՒԹ (տես. գաղթի) «*հայրենիքը թողնելով՝ փախչիլ ուրիշ տեղ երթալ բնակիլը*» *Եփր. Թգ. և դտ. Փիլ., որից* գաղթել «*փախչիլ երթալ ուրիշ տեղ ապաստանիլ*» *Բ. Թագ. դ. 4. Ագաթ., «ժողովուրդը տեղահան անելով քշել, վտարել» Ասող. դ. 5,* գաղթական *Ա. մակ. ղ. 53. Եփր. ծն. Բուզ. Նա. քր.,* գաղթականութիւն *Նա. քր.։ Սրանցից և* գաղութ *բառի խոտորնակ հոլովներից սխալ ենթադրուած մի ձև է* գաղթ «*գաղթել ուրիշ տեղ բնակիլը*» *Ճառընտ. Փիլ. Գէ. Ես. Տօնակ., «գաղթողների՝ փախստականների խումբը» Յհ. կթ.։ Նոր գրական լեզուի մէջ կազմուած ձևեր են՝* գաղթավայր, արտագաղթ, ներգաղթ, գաղութային, գաղթականական

=*Ասոր.* ܓܠܘܬܐ gālūθā «*աքսոր, գաղթ*» (Brockelm. *55 ա), հբր. արամ.* גלות gālūθ «*աքսոր տարուիլը, աքսորականներ, գաղթականներ*». *այս բոլորը բնիկ սեմական բառեր են, որոնց պարզ արմատն է* גלה gālā «*բանալ, ծածկոյթը հանել, գաղտնիքը պարզել, բնակիչներին դուրս վտարելով երկիրը գաւառակել ևն*», *որոնց հետ նոյն է արաբ.* جلا jilā *նոյն նշ. նաև «փայլ», այն է «կեղտերը հանելով՝ մաքրել»։ Ըստ այսմ վերի ձևերի մէջ* θ *մասնիկ է. ասորերէնի մէջ* gālūθā *—սաստկական ձևն է, որի բաղադրեալն է* gā'ūθ *և բացարձակը՝* gālū:—*Հիւրշ. 301։*

Ն՛Հ հայկերէնով ստուգաբանելով՝ մեկնում է գաղաթք, գաղոյք «*զօրամն փախստեամբ*»։ *Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ* Lagarde, Armen. Stud. *§ 445։—Տէրմ. Մասիս, 1882, յունիս 24 քաղդ.* գալուբ *ձևից։ Հիւնք.* խախուտ, խախտել *բառից։* Scheftelowitz, BB, *29, 29 իբրև բնիկ հայկերէն բառ կցում է գոթ.* wraton «*ճամբորդել*», *սանս.* vaḍana «*ձի*» *բառերին։— Պատահական նմանութիւն ունի թաթար.* كاغرت kagert «*գաղութ, поселеніе, колонія*» (Будаговъ, Срав. слов. *2. 409*), *որ նթէ չնչին փոփոխութեամբ ուղղէինք* كاغوت, *կլիներ ճիշտ* kaġut, *իբր հայերէնից փոխառեալ բառ՝ համաձայն ուշ ժամանակի տատադարձութեան։*

+ԳԱՂԶՆ «*մի տեսակ պատատուկ, գայլխոտ, որ ուրիշ բոյսերի վրայ փաթաթուելով՝ նրանց հիւթը ծծում և չորացնում է.* cuscuta» *Ագաթ. Մանդ. սիր. 34. Գր. տղ. էջ 68. Կանոն. էջ 58. Վստկ. 86. Սարգ. յկ. Ճառընտ. Մխ. երեմ.,* «*մի տեսակ ծովային աղի խոտ*» *Վստկ. 29, որից* գաղձնաւոր «*գաղձ վնասակար բոյսով վարակուած*» (*այգի*) *Նար. էջ*

142։—Բոլորովին տարբեր բառ է դաղձն «վայրի անանուխ» և պէտք չէ կարծել, թէ նախաձայնի շփոթութեամբ իրարից են յառաջացած։

=Արմատն է գալ, որից աճած է ձ աճականով, ինչպէս որ բառիս հոմանիշը՝ գեղձ «պատատուկ» կազմուած է գել արմատից՝ ձ աճականով։ Աւելի ընդարձակ տե՛ս գել։—Աճ.

+ԳԱՂՋ (ի հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «մի քիչ տաք» Յայտ. գ. 16. էլ. արիստ. 62, որից գաղջանալ Շնորհ. վիպ. Վանակ. յոբ., գաղջացուցանել Փիլ. էլ. գրուած է նաև գաղճ, գաղճանալ ևն։—Բառ. երեմ. էջ 61 գաղջ բառին տալիս է նաև «անպիտան, մանր, կակուղ» նշանակութիւնները, որոնք փոխաբերական առումներ են։

=կազմուած է ջ աճականով գաղ անգործածական արմատից, որ առորին ձայնդարձն է գոլ հոմանիշ արմատի։—Աճ.

Ալվազովսքի, Յղ. հնչման 15՝ նոյն ընդ հլ. եկ. աճ. ըլըգ. ըլըճագ «գաղջ»։ Տէրվ. Altarm. 24 գաղջ<*գաջղ. իրրև գէջ բառից՝ ղ մասնիկով. էջ 84 համեմատում է յն. χλιαρός «գաղջ, տաք» բառի հետ, իսկ Նախալ. 80 ջեռնուլ, ջերմ, պրս. garm, զնդ. ghar են բառերի հետ՝ հնխ. ghar արմատից. գաղջ բառի «ջ առան եթէ կրճատ կրկնութեամբ մը չի մեկնուիր, մասնիկ մը միայն ըմբռնելու է, ինչպէս մէջ= medium բառին մէջ»։ Հիւնք. յա. caldor «ջերմութիւն» բառից։

ԳԱՂՋԱՅ «մերկ կամ օրինակ». ունի միայն Բռ. երեմ. էջ 61. անստոյգ բառ, ըստ որում նշանակութիւնն էլ որոշ չէ։

*ԳԱՂՋԵՐ «առնապան». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Մխ. գր. 264 «Փակեցին և գաղջեր յոտան և զօտի ոսկի կրկին»։

=Եւրոպական մի լեզուից փոխառեալ է Ռուբինեանց ժամանակ. համմտ. իտալ. calza «գուլպայ», calzare «կօշիկ», որ ծագում են լտ. calceus «կօշիկ» բառից։ Սրանից են ձևացած նաև նոյն. κάλτζα, κάλτσα «գուլպայ, կօշիկ»=միջին յն. κάλτιος «կօշիկ» (Sophocles, 623), ֆրանս. chausse, chaussure «կօշիկ» սերբ. hlāča «գուլպայ», hlāče «սրունապան», ալ. hláča նոյն նշ. (Berneker, 387) և վերջապէս թրք. قالچين qalčən «առնապան» (այս բառը կամուս, թրք. թարգմ. Ա. 441 և նրանից առնելով Будаговъ, II, 22 դնում են պրս. خارچين xarčīn ձևից աղաւաղուած. ըստ իս նմանութիւնը պատահական է)։—Աճ.

Նորագիւտ բառիս մասին տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 58։

+ԳԱՂՏ «գաղտնի, ծածուկ կերպով» ՍԳր. Փարպ., որից՝ գաղտաբար Ոսկ. յհ. բ. 1, գաղտագնաց Մն. լա. 26, գաղտագողի ՍԳր. Ոսկ. մ. ա. 8, գաղտագողօրէ Բ. մակ. դ. 39. Բուզ., գաղտակեր Ամբ. գ. 14, գաղտանոց «ծածուկ պահարան» (չունի ՆՀԲ) Օրբ. հրտր. էմ. 164, գաղտատ «յետևից ծածուկ կծող շուն» (նորագիւտ բառ) Տաթև. ամ. 249, 250. էֆիմ. 365։ -ուկ և -ըի մասնիկներով աճած են՝ գաղտուկ Բ. մկ. զ. 11. Գ. մկ. դ. 10. Ոսկ. ա. տիմ. Եւս. պտմ. Բուզ. Եփր. Թգ., գաղտնի (համմտ. յայտնի) ՍԳր., գաղտնիւ Սգր., Ագաթ.։ Վերջինս արտադրում է ուրիշ նոր ածանցներ. ինչ. գաղտնագործ Մծբ., գաղտնաշշուկ Մծբ., գաղտնուրիւն Սղ. ձ. 18 ևն։ Նոյն գաղտ արմատից են և գաղտակուր «մի տեսակ ծովային խեցեմորթ» Եւս. պտ. 267. Եփր. մրգ. 352—3. Փիլ. լիւս. 139, 165. Ճառընտ. Նեմես. էջ 18, 30 կամ գաղտակրայ Մարգ. Յուս. գ. էջ 666. Նիւս բն. գաղտակրտուր Վրք. և վկ. Բ. 235. գաղտիկուր կամ գաղտիկուտ «ջղախտ, եղնալիզուս» Գաղիան. բժշ. (ըստ Տիրացուեան, Contributo alla flora dell' Armenia, էջ 97 և 114, Plantago major L կամ Taraxacum officinale Wigg.). գրուած է նաև գաղտակուտ, գաղտակուր, գաղտակոր, գաղտնակոր, կխտրկուր, որոնց դէմ ունինք արդի բարբառներից՝ Մշ. գողոկուր, Ղրբ. կխտրկօ՛ռը, տխտրկօ՛ռը, Ղզ. Ջղ. տխտրկուռ։ Առաջին բառի համար համմտ. Փիլ. լիւս. 139 տրուած նկարագրութիւնը՝ «Ու նշանակ խեցեմորթացդ կատարելագոյն է, որոց մարմինն ուռեալի է. դարանամուտ լինի երկուք պատենիւք. միովն ի միոջէ և միւսովն ի միոջէ՝

որք զնովաւ անկեալ պնդեն պատեանքն»։ Երկրորդը բխում է անշուշտ մի հին աւանդութիւնից. համմտ. սրա վրայ մի առասպել՝ ՀԲուս. § 402։ Գաղտ բառից է վերջապէս գաղտամեսս «խարդախ» Իմ. ժդ. 24 (ձձ. գաղտամես, գաղտամեսց, գաղտապէս), որի վերջին մասը անծանօթ է։—Նոր բառեր են՝ գաղտնապահ, աճգաղտնապահ, գաղտնիքաւոր են։

=Ածած է ո աճականով՝ գաղ (գաղել) արմատից, հիշտ ինչպէս որ այս նոյն արմատի ձայնդարձը՝ գող, նոյն աճականով տալիս է գողո-, գողուկ են։ Մեկնութիւնը տե՛ս գող արմատի տակ։

Տէրվ. Նախալ. 48 հնխ. var արմատից է հանում գաղտ, գեղօն, գառն, սնս. var և գնդ. var «ծածկել, պահել»։ Ստ. Նաղբենան, Արևելք, 1884 հոկտ՝ 17, ո՛չ թէ var, այլ vall «ծածկել, թաքուցանել» արմատից։ Հիւնք. fող բառից, Ղափանցեան, ЗВО, 23, 354 «գանկի կար» իմաստով=գնդ. vaγδana- «գլուխ»։—Մնացեալը տե՛ս գող բառի տակ։

ԳԻՒ.—Պահուած է հետևեալ ձևերով.—Ագլ. գմ՛խուուկ, Սեր. գ՛աղդուգ, Մշ. գ՛ախդուգ, գ՛ախդնի, Ակն. գաղղիւգ, Զթ. գաղդօգ, գ՛աղդոգ, Ննխ. գաղդուգ (գիւղերում՝ գաղդօղ), Ոզմ. գ՛ոդտի, Մկ կ՛ոդտիկ, Երև. գ՛աղնիկ, Վն. կ՛ոխտիկ, կ՛ոդտիկ։—Սրանց դէմ գողտ ձայնդարձն են ցոյց տալիս՝ Ախց. Կր. գ՛օղտուկ, Երև. գ՛օղտնուկ, Խրբ. գօղտուգ, Մշ. գ՛օղդուկ, Ալշ. գ՛օղդու, Ռ. Տիգ. fողդուգ, Աալ. գ՛օղդիւյ, Մրդ. կ՛եղնիք՛, Մլմ. կ՛եղնիկ՛.—Իսկ Պօլսի բարբառը հաւասարապէս գործածում է թէ՛ գաղտուգ և թէ՛ գողդուգ ձևերը։ Նոր բառեր են՝ գաղտուկկուր Ասն. «մի տեսակ կար», գաղտ Դվ. Մշ. Զթ., գաղտնակ Ակն. Սրբ. Խրբ., գաղտիկ Վն., գաղտուն ԳԲ, գեղտ Ղրբ. «գլխի գագաթի մէջտեղը, այնտեղ, ուր գանկի ոսկորները իրար են միանում. fontanelle» (սրա հին վրկայութիւնն ունի Վրդ. աշխ. 507 «Մուղնի Ս. Գէորգայ, ուր կայ ծնօտն և գաղտն և ականջըն և արիւնն Ս. Գէորգայ»)։

ԳԱՂՓԱՅ «տրտնջոդ». ունի միայն Բառ. երեմ. էջ 61, որ և էջ 63 կրկնում է նոյնը գողփայ ձևով։

ԳԱՂՓԻՈՍ «իմաստասէր». ունի միայն Բառ. երեմ. էջ 61։

*ԳԱՃ կամ ԳԱՋ (ըստ հին և նոր տառադարձութեան. առաջինը ընդունուած է արևմտեան գրականում, երկրորդը՝ արևելեան գրականում) «բուռ, plâtre, ալիր». ունին միայն ՀՀԲ, ՋԲ և ՓԲ. հին գրականութեան մէջ գործածուած չէ, բայց գիտէ Բառ. երեմ. էջ 61։

=Պրս. ج kaj, gaj, աւելի հինն է ج gač, ինչպես ցոյց են տալիս պհլ. gač, պաղ. gač. պարսկերէնից են փոխառեալ նաև արևել. թրք. ج gaj, քրդ. ژ ژiéz, ج geč, ژ gāz, ն. ասոր. gāj, gāč, վրաց. ჯაჯი պաչի, աւար. gač, ասոր. ړ gaṣ կամ ړ gaṣā, արաբ. جص jaṣṣ, j ṣṣ, որոնք բոլոր նշանակում են «գաչ» (իսկ արաբ. jabsīn փոխառեալ է յն. γύψος, γύψινος հոմանիշից)։ Իրանեան փոխառութիւն է նաև ասոր. gaṣṣu «գաճ» (Muss-Arnolt, Ass. eng. Nandwb, էջ 229 ա)։ Իրանեան ձևերի մայրը համարում է գնդ. vīčiča- «կիր, գաչ, շաղախ» (Horn, § 890 և Bartholomae, 1437)։—Հիւբշ. 261։

Ուղիղ մեկնից նախ Müller, SWAW, 42, 254։ վերի ձևով Հիւբշ. Pers. Stud. էջ 90։

ԳԻՒ.—Տփ. գաչ, Զղ. գ՛աճ, Երև. գ՛աչ, Մշ. գ՛աչուկիր, Մրդ. գ՛ոչ, Մլմ. կ՛ոճ, Մկ. կ՛Ճճ, Ագլ. գ՛ճօճ։ Նոր բառեր են՝ գաճճաճ, գաճել, գաճամալ, գաճամալել, գաճղակ։

ԳԱՃԱՃ «թզուկ, խիստ կարճահասակ». աւանդուած չէ հին մատենագրութեան մէջ. իբրև միջին հյ. բառ յիշում է Նորայր, Բառ. ֆր. էջ 140 ա. գործածական է նոր գրականում։

Հիւնք. fաչ բառից։

ԳԻՒ.—Սեր. գ՛աչաչ։

ԳԱՄ «բևեռ, մեխ, չիվի» Ոսկիփ., որից կազմուած են երկաթագամ Ագաթ. Խոր. Բ. 87. 86. կաթ., պղնձագամ Վրդն. ծն., գամել «բևեռով պնդել, մեխել» Աբ։

*Նշ*Բ *լծ. տճկ.* գամա *«փայտէ սեպ», շիվի «գամ», լտ.* cuneus *«գամ»։ Հինք.* գամ, գամագիտ լինել *են ձևերից հանում է երկաթագամ և սրանից էլ շինուած է դնում* գամ *«մեխ»։*—Karst, *Յուշարձան, 418 բրբ.* ևոՀ qama *«սեպ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 112 պրս.* ligām *«սանձ» բառի կրճատ* gām *ձևից է դնում։*

Գիմ.—*Ննխ. Պլ.* գամ, *խրբ. Սեր.* գ'ամ, *Ռ.* համ, *Զթ.* գ'օմ, գ'ոմ, *Ասլ.* գ'օմ, գ'օմշի *«գամ», իսկ Ննխ. Պլ.* գամէլ, *Ասլ.* գ'ամե'լ, *Զթ.* գ'ամիլ, *Ռ.* համել *«գամել»։*

Փոխ.—*Իբրև շինարարական բառ՝ մեզանից փոխառեալ է բրբ.* ևոՀ qama *(գրուած նաև* ևոՀ*) «գամ, բեւեռ, երկաթէ գամ»* (Будаговъ *2, 25), քրդ.* ﻙﺎﻡ kam *«զօդ, կցուածք»։—Պատահական պէտք է համարել կիւր.* fnuom, *վարկ.* գումուլ, *կայտ.* գամոլ *«գամ» հոմանիշները, եթէ ենթադրել չուան, որ մեր բառը կովկասեան կամ խալդիական ծագումից է։*

ԳԱՄ, ու *հլ. «ոտքի կռուան, հնարք, միջոց, ճար, ելք» Վեցօր. Ոսկ. ես. փիլ., «անգամ, հեղ» Բուզ. ե. 3. Լաստ., որից* գամ մի *«միանգամ, մէյ մը որ» Ոսկ. ես. մ. գ. 4. Ա եզր. ը. 87. Կիւրղ. Թգ.,* գամու գամու *«ստէպ ստէպ, քանիցս» Եփր. երբ. 218,* գամ ֆան զգամ *«տակաւ առ տակաւ, հետզհետե» Բ. մակ. ը. 8,* գամ գտանել, գամս գտանել, գամագիտ *կամ* գամագիտ լինել *կամ* գտանել *(սխալմամբ գրուած նաև* կամագիտ լինել*) «մի միջոց գտնել, հնարել, դիմադրել» Եւս. երբ. Բուզ. Ոսկ. փիլ. և մ. (ստէպ). Փարպ. (օրինակների գումարութիւնը տե՛ս ՀԱ 1921, 242). որ և* գամագտանել *Եփր. վկ. արև. (Սոփերք, հտ. Ի, 121), որ Վարդանեան, ՀԱ, 1921, 243 մերժելով՝ ուղղում է* գամս գտանել. *բայց ուղիղ է* գամագտական *«յաղթական» Մագ. (Նորայր, Բանասէր, Թ. 1900, էջ 131),* անգամագիտ *«անվնաս.* lintact*» Սկևռ. աղ. Արծր. Տօնակ.։—Բառ. երևմ. էջ 61 և ՀՀԲ ունին նաև* գամագամ *«պէսպէս, դանդաղան»։*

Առաջին անգամ Peterm. *25 համեմատեց երբ.* ﻡ qam *«միասին, և, նաև» բառի հետ։* Lagarde, Arm. Stud. *§ 447 անիմաստ է գտնում այս մեկնութիւնը և հյ.* գամ *դնում է պրս.* ﻛﺎﻡ gām *«քայլ»։ Պարսիկ բառը թէև ձևով համաձայն, բայց նշանակութեան կողմից չի յարմարում մեր բառին. այսպէս նաև իրանեան միւս ձևերը, ինչ. պհլ. պազենդ.* gām, *զնդ.* gāma- *«քայլ, քայլաչափ»* (Bartholomae, *522)։ Ջուր տեղը* Lagarde *հյ.* գամ *բառը թարգմանում է «քայլ» և* գամ ֆան զգամ *մեկնում է «քայլ առ քայլ»։ Յայտնի է, որ հյ. բառը այսպիսի նշանակութիւն չունի։ Եւ զարմանալի է, որ Հիւբշ. 126 առանց երկբայութեան ընդունում է այս մեկնութիւնը, դնելով հյ.* գամ՝ *իբրև իրանեան փոխառութիւն։ Հինք.* գամ, գամագիտ *դնում է* գոմ *բառից, իսկ* գամ մի, գամ ֆան զգամ *դնում է* անգամ *բառից։ Թիրեաքեան, Բանաս. 1900, 315 նոյն ընդ* կամf *և պրս.* ﻛﺎﻡ kām *«իղձ, բաղձանք»։ Անդրիկեան, Բազմ. 1903, 368* գամ *համարում է* ժամ *բառի հետ նոյն և նախնական նշանակութիւնը դնում է «ժամ»։ Սադրզեան, ՀԱ, 1909, 335 սումեր.* gam *«անգամ»։*

Գիմ.—Տփխիսի բարբառը պահում է գամ *«անդամ» նշանակութեամբ. այսպէս՝ էս գամօրը «այս անգամ», մէ գամ «մի անգամ», շատ գամ «շատ անգամ»։—Նշ*Բ *հտ. Ա. 526 բ, Այտընեան, Քննակ. բեր. էջ 126, Մէնէվիշեան, Յուշարձան, 265* աշխարհաբարի կամաց *«մեղմ» բառը հանում են* գամ ֆան զգամ, գամաց ի գամս *ձևերից. հմմտ. միջին հյ. ի գամէ: Բայց այս բանը չի կարող ուղիղ լինել, որովհետև ունինք Ակն.* գամաց, *Տփ.* կամաց, *Երև. Ջղ.* կամանց *են, որոնք ցոյց են տալիս նախաւոր կ: Եթէ բառը ծագած լինէր* գամ *բառից, սրանց տեղ պիտի ունենայինք Ակն.* գ'ամաց, *Տփ.* գամաց, *Երև. Ջղ.* գ'ամանց *են, կամաց ծագում է* կամf *բառից. հմմտ. նոյն արմատից Ոզմ.* կամով *«կամաց», Ալշ. Ակն. Բզ. Մշ. Ննխ. Ջրս.*

կամկար «կամաց, դանդաղ» (այսպէս ունի և Առաք. պատմ. 72, 84. հմմտ. նաև միջին հյ. կամկար. «Քարն որ զառիվայր գնայ՝ ի սկիզբըն կամկար է և որչափ մօտենայ ի ներքին կողմն, զօրանայ շարժումն»). կայ և միջին հյ. կամկէմ կամ կամկէկ «կամացուկ» Վստկ. 54, 184 «Ջոնկին դնելն աղուոր ի կամկեք արա, որ չճմռի» (տպ. ճամկէմ, բայց էջ 248 ուղղուած կամկէմ), «Ցապիկած ամանս շըրջեա ի կամկեկ. Քաղցր, կամակ և զողտրիկ» Պտմ. աղէքս. 22։

ԳԱՄԱՊԵՏ «գնդապետ, զօրապետ». մէկ անգամ գործածում է Բուզ. Ե. 37 «Գայր Դանուն ոմն գամապետ սպարակրացն գնդին Մանուէլեան զօրացն»։

Նշբ դնում է լծ. լտ. cuneus «որ է սեպ և գունդ», Թրք. (իմա՛ արաբ.) جام jam, «գումար», جمهور jumhūr «հասարակութիւն, ժողովուրդ»։ Ա՛ր ասում է, թէ «աւելի ուղիղ կ՚երևայ գումապետ»։— Այս գումապետ ձևն է ընդունում նաև Հ. Ա. Բագրատունի, ստուգաբանելով գում արմատից, որից նաև գումարել, գումարտակ, գումար, համագումեան. և իր Հայկ դիւցազներգութեան մէջ էլ գործածում է այս ձևով (հմմտ. բ. 215, է. 667, Թ. 353, ժգ. 109, ժէ. 1205)։—Նորայր, Հայկ. բառաք. էջ 3 ընդունելով այս մեկնութիւնը՝ սրբագրում է գումապետ: Հ. Ս. Պարոնեան, Արևել. մատ. 1880 ապր՞ հակառակ է կանգնում թէ՛ գամապետ և թէ՛ գումապետ ձևերին, յայտնելով թէ գամ ձևով արմատ չկայ. միւս կողմից՝ թէև Նշբ ունի գում ձևը (ըստ Յհ. կթ.), բայց սա մի սխալ ընթերցուած է, որի դէմ մի ուրիշ գրչագիր էլ մի ուրիշ ձև է հանում. համագումեան բառն էլ չունի Նշբ։ Բայց մինչև իսկ եթէ գում ձևից լինէր բառս, պիտի ունենայինք գմապետ և ո՛չ թէ գումապետ, ուստի աւելի լաւ է կարդալ զաւրապետ, բոլորովին ջնջելով նախորդ երկու ձևերը։—Տէրվիշեան, Մասիս, 1882, ապրիլ 16, թիւ 3161, գումարել բառը դնելով պարսկերէնից փոխառութիւն, չի կարող ընդունիլ գում արմատ, իսկ գամապետ համեմատում է յն. համա, լտ. humus, հսլ. զեմս «երկիր, հող», լտ. homo, գոթ. guma «մարդ» բառերի հետ. սրանց մայրն է հնխ. ghama, որից ծագում է հյ. գամա, գամ «երկիր կամ մարդ, այր»։ Այս երկու նշանակութիւններն էլ յարմար են մեկնելու մեր գամապետը, իբր «գլուխ արանց, տէր երկրի, երկրատէր». հմմտ. սանս. nарapati «տէր արանց» կամ bhupati «տէր երկրի, իշխան»։ Տէրվիշեանին պատասխանում է Նորայր, Մասիս, թիւ 3165, 21 ապր՞ 1882 և մերժելով երեք ձևերն էլ՝ առաջարկում է կարդալ դասապետ, որ գ-գ և մ-ս տառերի նմանութիւնից վերածուել է գամապետ.—այս դասապետ բառը թէև չի յիշում Նշբ, սակայն ունի Բուզ. դ. ծա.։ Նորայր յայտնում է նաև, թէ իր այս առաջարկութիւնը արդեն ընդունել է Պարոնեանը՝ աւելի լաւ համարելով, քան զաւրապետ ընթերցուածը, և խնդրում է Տէրվիշեանի համաձայնութիւնը։ Տէրվիշեան, Մասիս, 1882 ապր՞ 23, թիւ 3167 չի համաձայնում, ասելով, թէ գրողն այնքան անմի՞տ էր, որ իր ժամանակ գործածական դասապետ հասարակ բառը կարող չլինէր կարդալ, մանաւանդ, երբ Բուզանդ գործածում էր այդ բառն ուրիշ տեղ. նկատելի է նաև, որ դասապետ, որչափ և բևեռում է, ոսկեդարեան բառ չէ։ Հիւրշ. 126 դնում է պարսկերէնից փոխառեալ բառերի շարքը, բառի վերջին մասը դնելով ծանօթ պետ բառից, իսկ գամ< պրս. gam կամ gām, որի ինչ լինելը յայտնի չէ։

ԳԱՄԲ «փշեղէն մի բոյս կամ անճիտայ». ունի միայն ՀԲուս. § 405. գուցէ շփոթուած է գաբի հետ։

ԳԱՄՋԱՋԱՐԻՉ «հաւատոյ հաստատութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 61, որի երկրորդ տպագրութեան մէջ գարձած է գամզազարիք:

ԳԱՄՈՒՏԱՇ, որ և կամօտաշ, գամաճուրաշ «մի տեսակ ծաղիկ է» Սալաձ. ՀԲուս. § 404 և Նորայր, Բանաս. 1901, էջ 104։

Գիմ.—Նշի՛ր յիշում է գաւառական բառերի շարքում գամուտաշ «մի տեսակ խոտ, որ տալիս է գորշ կամ կապոյտ բխագոյն ծաղիկ».—*Հրուս.* § 1432 և § 2970 Տրապիզոնի բարբառով դնում է կծնատաշ և տմնատաշ: Այս երկու բառերը նոյն են և նախաձևը առաջինն է. նախաձայն կ-ի տ դառնալու մասին (ապդեցութեամբ յաջորդ տ-ի) *հմմտ.* Ղրբ. կխարկօ՛ոնը կամ տխարկօ՛ոնը «գաղտիկուր»:

ԳԱՄՓՌ «մեծ շուն» Ոսկիփ. Վրդ. առ. 9, 129, որից գամփռել «շան յարձակիլը» Վրդ. առ. 9, 10.—նոյնը գամփալ ձևով ունի Վրդ. այդհկ. 89:

Հիւնք. յն. κέρβερος «կերբերոս» շան անունից: Jensen, Hitt. u. Arm. 63, 78, WZKM. 10, 11, ՀԱ, 1904, 274 արմատը դնում է գամ, իբր հաթ. kam:

Գիմ.—Ախց. գ՛ա՛մփրո, Սեբ. գ՛ա՛մբ՛րո, Երև. գ՛օմփօո «գամփռ շուն»:

Փոխ.—Քրդ. gambul «խոշոր պահապան շուն, mâtîn»: Վերջաձայնի (n>l) ձայնափոխութիւնը քրդերէնի մէջ է կատարուած, որովհետև հայերէն բարբառների մէջ չկայ գամփլ ձևը:

ԳԱՅԹ «ոտքը գայթիլը՝ սահիլը, սխալուիլ կամ մոլորիլ, որոգայթ» Փիլ. ևլ. Վրդն. սղ. Երզն. մաթ. 310, որից գայթի ի գայթի «թոյլ, անհաստատ» Գ. մակ. բ. 16, գայթ ի գայթ Յհ. իմ. Երև. Կանոն. էջ 262, 264, գայթ «փորի քամի, փուքս» Վրդն. առ. 114, գայթիլ «սայթաքիլ, սահիլ իյնալ, սխալիլ, մոլորուիլ» Սիր. ժգ. 29, ժգ. 1, իա. 8, լգ. 20. Մծբ., գայթումն Փիլ., գայթոտ «սխալական» Կանոն. էջ 74. Լմբ. սղ. Սարգ. յհ. բ. էջ 23, «սահուն, լպրծուն» Առ որս. անգայթ «հաստատուն» Փարպ. Փիլ. իմաստ. դիւրագայթ Խոսր. պատգ. 11. Վրդն. ղևտ. Լմբ. սղ., գայթաճիճ «սխալ, յանցանք. 2. գողութիւն» Կղնկտ. (Հրտր. էմ. էջ 66—67, Շահն. Ա. 185)=Կանոն. (սխալ է դնել «գումար, ինչք». տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 10, Բ. էջ 285): Այս արմատից է նաև որոգայթ, որի վրայ տե՛ս առանձին:— 2. Գայթ ձևից յառաջացած է ռմկ. Գէթ «վնաս, յանցանք», որ մի քանի անգամ գրանում եմ գործածուած յետին գրականութեան մէջ, ինչ. «Մայրն՝ յորժամ գէթ առնէ մանուկըն իւր, հարկանէ. այլ սիրտ նորա թախծի ընդ գանն» Տաթև. ամ. հե. «Զի լաւ էր ինձ ընդ միոյ երեք տալ և ոչ թէ անկանել յայսպիսի գեդ և յամօթ» Յայտմ. դեկտ. 10, «եւ քէզ ասեմ, օ՛ն խորագէտ, որ ուսուցեր զկինն տգէտ, թեպէտ յանցանք էր այդ և գէթ, բայց ո՛չ ի քէն, այլ ի չարէդ» Ադամ. էջ 93: Սրանից կազմուած է գիթվոր «մեղապարտ, յանցաւոր». *Հմմտ.* «Որպէս վախեցար դու ի ձայնէ փողոյն իմոյ՝ որ չես ինձ վնասակար, նոյնպէս և ես զարհուրիմ ի ձայնէ փողոյն՝ որ կոչէ զիս ի դատաստան. զի գիթվոր եմ Աստուծոյ, սևերես և պարտական». յետին մի գրուածք՝ հրտր. ЗВО, 11, 75. Որ գիթուոր լինի և սպանանեն... Թագաւորք և իշխանք վասն այն են կացուցեալ, որ զգիթուորն հարցանեն և օրինացն Աստուծոյ վրէժխնդիր լինին» Տաթև. ամ. 35. «Գիթվորն մտեալ յիկեղեցի՝ ազատ են». Տաթև. հարց. 392:— 3. Գայթ արմատի ձայնդարձն է Գիթ. (կամ գութ), առանձին անգործածական, որից ծագում են գթել «սահիլ, սայթաքիլ, ընկնիլ, մոլորիլ» Սգր., «սխալիլ (գողութիւն անել)» Վրք. հց. Բ. 337, գթել կամ գթեցուցանել «սայթաքեցնել, գայթակղեցնել, կործանել, մոլորեցնել» ի գիրս Խոսր. Վրք. հց. Յայտմ. նար. Լմբ. առ., բազմագթելի «դիւրագայթ» նար., անգթելի Փիլ. լին. Պիտ., դիւրագթելութիւն Ոսկ. յհ. ա. 2 (իսկ գթուցանել «թուլացնել» ևն ձևերի վրայ տե՛ս կթուտ):— 4. Առաջին գայթ արմատը բաղդելով գիլ (գլորիլ, գիղ, գել, գալար) բառի հետ ձևանում է—ԳԱՅԹԱԳԼԻԼ (կամ գայթակղիլ) «գլորիլ ընկնիլ, մոլորիլ, սխալիլ» Սգր., «փախչելով մի տեղ ապաստանիլ» Բուզ. Գ. ժը. Կիր. 126 (ըստ Հ. Գ. Այտնեանց, Բազմ. 1914, 257). որից գայթագղութիւն Սգր., գայթագղանիճ Սեբ., գայթագղակից Եւագր., գայթագղեցուցանել Սգր., դիւրագայթակղ Լմբ. սղ.:—Նիւթական «ոտքը սահիլ» իմաստը գեղեցիկ կերպով ցոյց են տալիս հետևեալ վկայութիւնները՝ «Մի՛ ելաներ ի վերայ սառին ծովուդ, զի կօշիկ քո գայթագղեցուցանէ զքեզ» Նիւր. յհ. մկ. 138, «կապեալ էին ոտքն և ոչ գայ-

*թակղէր» Յայտմ. մրտ. 16։ Համմտ. նաև Ոսկ. եփես. 770՝ «Ի վերայ ձեռաց առցեն զքեզ և մի՛ դայթակղեսցի ղբարի ոտն քո», որի դէմ Մատթ. դ. 6 ունինք՝ «ի վերայ ձեռաց բարձցեն ղքեզ, զի մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո», սրանից էլ դուրս է գալիս գայթակղիլ «ոտքը քարի զարնուիլ»։

ՆՀԲ գայթել=գթել, գայթագղիլ<գայթելով գլիլ։ *Հիմնք. երկուսն էլ խուք բառից, իսկ գայթագղիլ < գայթիլ և կաղալ՝ Մէնէվիշեան, ՀԱ, 1890, 54 գայթագղիլ < գայթ և գլել (գլոր, գլան) բառերից։ Մ. Ս. Դաւիթ-Բեկ, Յուշարձան, 397 հյ. կատար բառի հետ՝ թերևս ն. դալլ. cedor «արբունքի մազ», արմօրիկ. kaezourek «արբունքի հասած», ն. իռլ. caith, հ. բրբտ. caitoir «արբունքի հասած», հիռլ. catharac նոյն նշ.։ Մատ, 3BO (անդ) գիբվոր հանում է պրս. ابرو gīd? «վախկոտ» բառից, որ նշանակութեամբ յարմար չէ։ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 9 գայթաճ նորագիւտ բառը մեկնում է «ինչք, հարստութիւն, գումար», որ սխալ է։ Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 5 առնս. vyáthate, vithurà-, գոթ. wiþ3n «դողդոջիլ, ցնցել» բառերին է կցում գթել, գթոտ, գթում։ Ղափանցեան Տիգնկ. ինստիտ. 2, 89 դնում է սայթաքել բայից։*

Գիմ.—Տփ. գէք «վնաս, յանցանք, մեղք», գէք աճիլ «վնասել, մեղանչել», անգէք «անվնաս»։

ԳԱՅԻՍՈՆ, ի–ա հլ. *(յետնաբար նաև ո հլ. այսպէս՝ գրծ. գայիսոնով Մագ. մեծ ն. էջ 21) «նիզակ, տէգ» Յես. ը. 18, 26. Կիւրղ. յես. Մագ. Նար. էջ 241. Շնորհ. բարձր., որից գայիսոնաբար Անյ. բարձր., գայիսոնական ՋԲ, արդի գրականում գայիսոն նշանակում է «թագաւորական մականն»։*

=Յն. γαῖσος բառն է, որ գործածուած է Ս. Գրքի համապատասխան տեղը հյց. γαισὸν ձևով և նշանակում է «մի տեսակ տէգ՝ ամբողջապէս երկաթէ, որ գործածում էին կելտերը»։ Ըստ այսմ բառը բնիկ կելտական է (համմտ. դալլ. gaison. ɡaisos, հիռլ. gae, կիմր. gwaew «տեգ»), որ յետոյ փոխառութեամբ անցաւ լատիններին (համմտ. լտ. gaesum «ծանր երկաթեայ տէգ կամ աշտէ», gaesati «պալլեական բանակ՝ նոյնպիսի տէգերով զինուած», gaesa «տէգ» = ֆրանս. gèses) և յետոյ էլ յոյներին։ Կելտական բառը բնիկ հնդեւրոպական է և նրա ցեղակիցներն են հբգ. geisala, գերմ. Geisel «մտրակ», հբգ. gēr, անգլսք. gār, հիսլ. geirr «տէգ», սանս. héša «նետ» և գնդ. zaēna «զէնք» (Walde, 331)։ Վերջին դանդիկ ձևից փոխառեալ է հյ. զէնք, որով գայիսոն և զէնք դառնում են միևնոյն բառը՝ տարբեր ճանապարհներով հասած Հայաստան. տե՛ս Ernout-Meillet, 390, Pokorny, 1, 528 և 546։

ՆՀԲ թէև յիշում է յն. և լտ. բառերը, բայց համարում է եբր. գիտօն բառից տառադարձուա՞ծ։ Բառիս վրայ առանձին քննութիւն ունի Տէրոյենց, Երևակ, 1857, էջ 367—371, որի բովանդակութիւնը հետևեալն է.—բառս երբայեցերէնում մեկնուած է այլևայլ ձևերով. շատեր հասկանում են «վահան», Սօֆոնեասից թարգմանութիւնը և Ակիւղաս «սուր կամ աշտէ». Հերոնիմոս մեկնում է «վահան՝ վրան դրոշմուած մի նշան, որ շարերը վանելու զօրութիւնն ունէր»։ այս այլևայլ նշանակութիւնները ի նկատի առնելով՝ մեր նախնիք չթարգմանեցին բառը և յունարէնի վրայից տառադարձելով պահեցին։

ԳԱՅԻՍՈՒԹԻՒՆ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Լաստ. ժ. «Հայր սորա ի պալատին զգայիսուրեան ունէր պատիւ, յորմէ ամենայն դատաւորք աշխարհին առաքին» (այսպէս ըստ ՆՀԲ, իսկ տպ. 1844, էջ 32 ունի զգայիսուրեան, մէկ ձեռ. զդայիսուրեան)։ ՆՀԲ մեկնում է «կեսարութիւն կամ գլխաւոր դատաւորութիւն»։*

+ԳԱՅԼ, ո հլ. *(յետնաբար նաև ու հլ.) «գայլ անասունը» ՍԳր. գրուած է նաև գայղ (կրկնագիր Ագաթ. Յուշարձան, 128 բ). սրանից են ծագում գայլ «սանձ, բերանակապ» ՍԳր. Ագաթ. (գրուած նաև գել, գէլ Շար. Շնորհ. վիպ.). հետևողութեամբ յն. Նիկոլ*

«գայլ» բառի, որ նշանակում է նաև «ձիու կարծր ատնձ, կապ» (հմմտ. լտ. lupus «գայլ գազանը», lupatus «սանձ»). գայլանալ «գայլ դառնալ, չարանալ» Ոսկ. մ. բ. 8. Մանդ., գայլենի «գայլի մուշտակ» Բուզ. գ. 2, գայլակորիւն «գայլի ձագ» Մամիկ., գայլատ «գայլից յափշտակուած՝ պատառոտուած» Կանոն. Վրդն. առակ. 32 (գալատ), գայլուխիւն Փարպ., գայլագոտ Վրդն. առկ. 29, մարդագայլ «բորենի» Մխ. առկ., շնագայլ (նոր գրականում կազմուած), գայլաճալած Ուխտ. բ. 37, գայլ կամ գայլխոտ «մի տեսակ գաղձ, cuscuta» Բժշ. (հմմտ. նաև ուրիշ բուսական անուններ՝ գայլ բառից կազմուած. ինչ. գայլաբոխ, գայլասխտոր, գայլասոխ, գայլբաթ, գայլբիս, գայլու ականջ, գայլու թուր, գայլուկ, գայլվիզ. տե՛ս ՀԲուս. § 409—418):

= Բնիկ հայ բառ, որի ցեղակիցներն են՝ սանս. vṛka-, դնդ. vəhrka-, պրս. ورگ gurg, գոթ. vulfs, գերմ. Wolf, հալ. vlūkū, ռուս. волкъ, լիթ. vitkas, հպրուս. vilkis, լիթթ. wilks, իռլ. fael, հիռլ. ylgr ալբան. ul'k, յն. λύκος, լտ. lupus (ֆրանս. loup, իտալ. lupa, lupo, ulivella, ռում. lup, սպան. lobo) ալաւհաններից փոխառութեամբ մինչև անգամ մորգվին. virgas, բոլորն էլ «գայլ» նշանակութեամբ (Walde, 447, Boisacq, 590, Trautmann, 353, Horn, § 910, Kluge, 535): Հալևրէնի նախաձևը ենթադրուած է զանազան ձևերով. Հիւբշման գնում է հնխ. vlyo-, Bartholomae, Stud. II. 13 հնխ. vlk²y-, Fick, II. 259 հնխ. vailo. Հաստատ է, սակայն, որ այս բառն էլ ենթարկուելով tabou-ի, արջ բառի նման՝ կամաւոր ձևափոխութեան առարկայ է դարձած: Հնդկրոպական ազանները վերլուծելով «գայլ» բառի նախաձևը (ul-qu) և կապելով «աղուէս» բառի նախաձևի հետ (իրր ul-p-), կարծում են, որ երկուսի պարզական արմատն է ul «գիշատել» (հմմտ. լտ. vello «խլել», voltur «գիշատիչ թռչուն», lacer «պատառոտած, պատառոտուն), որով «գայլ» նշանակում է բուն «գիշատիչ» (տե՛ս Pokorny, 1. 213 և 316, Ernout-Meillet, 539): –Հիւբշ. 431:

Klaproth, Asia polygl. 106 արաբ. chaila, chaia'l բառի հետ: Ինճիճեան, Հնախ. Գ. 21 բնաձայն է համարում: Peterm. 25, 33 լիթ. gailus «թռնաւոր, կատաղի» բառի հետ:—Lagarde, Urgesch. 237 զնդ. vairya իրր «պատառող», որ գտնում է xšaθravairya «արօր=հողը պատառող» բարդի մէջ: Diefenbach, Berlin. Jahrbl. 1843, 448 պրս. فایل fayil(?) և ալբան. chelm «թռչուն» բառերի հետ: Առաջին անգամ Müller, SWAW, 38, 576 և 585 զնդ. vehrkō, պրս. gurg բառերի հետ ուղիղ համեմատեց: Այս համեմատութիւնը Lagarde, Arm. Stud. § 450 չի ընդունում: Մորթմանն, ZDMG, 24, 80 թրք. قرد qurd «գայլ» բառին ցեղակից է դնում: Հիւնք. այգ բառից: Թոմաշէկ, Deutsche Litt. 1883, էջ 1254 համարում է կովկասեան բառ: — Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 104 գայլ «բերանակապ» բառը բաժանում է գայլ գազանից և դնում հնխ. wel- «ճնշել, սեղմել» արմատից, որի հետ համեմատում է յն. εἴλω, համեր. εἴλω «սեղմել», οὐλαμός «ամբոխ», հլ. լմել են:—Պատահական նմանութիւն ունի արաբ. غل ɣull «բանաստեղծական ձևքի կապանքը, գայլ» (կամուս, թրք. թրգմ. Գ. 306):

Գիւտ.—Ննխ. գալ, Ախց. Կր. Սեբ. Սչ. գ'ալ, Ռ. ֆալ, Զթ. Խրբ. գ'ոլ, Հճ. գ'ալ, գ'էլ, Ոզմ. գ'ել, Տփ. գել, Ալշ. Երև. Մշ. Ջղ. գ'ել (յգ. Մշ. գ'իլաճ, գ'իլաճ), Համշ. կէլ, Մկ. Մրզ. Սլմ. Վն. կ'էլ, Տիգ. ֆէլ, Ագլ. գ'իլ, Ղրբ. Շմ. կիլ:—Նոր բառեր են՝ գայլաղատնալ, գայլախնձոր, գայլակեր, գայլահաջ, գայլահոդ, գայլանոց, գայլառեխ, գայլասիրտ, գայլբերան, գայլխեղդ, գայլծաղիկ, գայլկապ, գայլկակաշ, գայլկոխ, գայլհաւ, գայլմամուխ, գայլմեռ, գայլմուշտակ, գայլպառաւ, գայլչորի, գայլոցի են:

Փոխ.—Վրաց. მგელი մգելի, ինգ. գել, մինգր. გერი գերի, ճգերი ճգերի, լազ. մրգերի, գիւղերի, բոլորն էլ «գայլ (գազանը)» նշանակութեամբ, որոնց նմանութիւնը բաս

Հիւրշ. 397 պատահական է, իսկ ըստ Մատ Ипол. 65 փոխառեալ են հայերէնից։

Գայլախազ, ի հլ. «մի տեսակ կարծր քար» Եւ. դ. 25. Յես. ե. 2. Յոբ. խա. 6, որից գայլախազեայ Յես. ե. 3. Եզիշ. յես. Եփր. յես., գայլախազային (նոր բառ), գրուած գայլաճազ Կամբջ. Անկ. գիրք հին կտ. 300.—ըստ Գաղիան համարւում է «մի տեսակ մարմարիոն»։

=Բարդուած է գայլ և խազ «քար» բառերից։ Վերջինը, որ առանձին գործածուած չէ մեր մատենագրութեան մէջ, փոխառեալ է պրս. خاز xāz բառից և նշանակում է «քարն ա.յն՝ որով քերեալ հանեն զաղտն ի յոտից. այլագ դաշի» (ԳԴ). ըստ այսմ գայլախազ բուն նշանակում է «գայլի քար» և արդէն գործածուած է նաև գայլաքար ձևով. Համմտ. Անկ. գիրք հին կտ. էջ 317 (չունի ՆՀԲ)։ Բառիս այս կազմութիւնը արդիւնք է մի հին աւանդութեան կամ հաւատալիքի։ Գայլախալի գայլ վանելու յատկութեան մասին տե՛ս Աչէղեան, Der Armenische Volksglaube. Leipzig, 1899, էջ 115։

Ուղիղ մեկնից Հիւնք. էջ 19։ Աբեղեան, անդ, գայլախազ մեկնում է «գայլ պատառող կամ գայլ այրող»։

Գիհ.—Rivola, Բառ. հայոց, 1663, էջ 72 ունի «գելխազ. գայլախազ», որ անշուշտ գաւառական մի ձև է, այլուստ անծանօթ։

Գայլիկոն, ի–ա հլ. «ծակելու գործիք է, հերիւն, շաղափ կամ գչիր» Եփր. վկ. արևել. էջ 29. Վստկ. 129, 149, գրուած գելիկան Ճառընտ., գելիկոն Վրք. և վկ. Ա. 504։

ՓՈՒ.—Կապատովկ. լն. καλαχόνι «մեծ գչիր, τέρετρον» (տե՛ս Καρολίδης, Γλωσσ. συγκρ. էջ 39, 165), որից էլ καλαχονίζω «քաղխիլ, ահիլ» (անդ՝ էջ 166).—հայերէնի հետ համեմատութիւնը տուաւ Bugge, KZ, 32, 10, իսկ Karolides, անդ՝ էջ 39 համեմատում է սանս. çalyan «նետ» բառի հետ, որ նման չէ։

Գայկուցեալ, որ և գակուցեալ կամ գագուցեալ «երկուցեալ կամ կնքեալ, կամ ընկալեալ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 59, 60, 61 (երեք տեղ երեք տարբեր ձևերով և իրարից անկախաբար)։

Գայծ, ի հլ. «հացի խմոր, պանրի մակարդ». ունի միայն ՓԲ, առանց վկայութեան. ուստի և անստոյգ բառ։

Գայծ, ի հլ. «ցեխ, տիղմ, աղբ, կեղտ, փսխունք» Ոսկ. մ. բ. 26, գ. 17. Սարգ. ա. պետր. ը. (էջ 331). Բրս. մրկ. այս արմատից են՝ գայոիլ «աղտոտիլ, ապականիլ» Տաղ. յհ. եղբ. հեթմ., գայոիմ պայքիմ «ճաթելու չափ ուտելը» Ոսկ. պօղ. Ա. 733 (տե՛ս և այոիմ), գայոալիր «կեղտուտ, գարշելի» Արծր. ա. 14, գայոանոց կամ գայոոց «սրբան, յետոյք» Ոսկ. հռ., գրուած նաև գաո և կամ գեո, այսպէս՝ գեո «աղբ» Ճառընտ., գեոաթաթախ «աղբի մէջ թաթախուած» Մանդ. Վրք. հց. Ա. 672, միջին հյ. գոո «ցեխ» (տե՛ս Սիսուան, էջ 539)։—Այս արմատը զ նախդիրով աճելով տալիս է ԶԳԱՅՈՒ, ի հլ. «սատմոքսի գազերի ժանտահոտ արտաշնչութիւնը բերնից» Ոսկ. պօղ. Ա. 800. Մանդ. Ճառընտ., որից զգայոել «կեղտը դուրս տալ» Պիսիդ., զկոտալ, ործկալ» Ոսկ. մ. բ. 17. Պիոն. (հրտր. WZKM 28 (1914), էջ 392). Ճառընտ. «վատ խօսքեր դուրս տալ» Լմբ. սղ. Վրք. հց. Կանոն. էջ 254, զգայութիւն «ործկալը» Ոսկ. մ. գ. 17, զգայումն Փիլ. ել. Լմբ. սղ. Վրդն. սղ., անզգայոել «զգայոել» ԱԲ։ Նախորդի նման գրուած է նաև զգաո, զգեո Վրք. հց. Բ. 510, որից զգաոիլ «ապականուիլ» Արծր. ա. 14։

ՆՀԲ գայո հանում է գոեհ բառից (իբր կաւ գոեհաց), գեո=լծ. Բրք. կէրիզ «կոյուղի», զգայոիլ =լծ. Բրք. կէյիրմէք «ործկալ»։ Հիւնք. հայ «մանեակ» բառից։ Scheftelowitz, BB, 29, 44 սանս. vāri «ջուր», հպրս. wurs «ճահիճ» բառերին է կցում։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 340 Բրք. كيرمك ger-mek «երկարել» և كيرمك geyirmek «զգայել»։ Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 121—122 հնխ. ūr-ī ձևից, որի հետ համեմատում է լտ. ūrīna, որ է «մէզ»։ Պատահական նմանութիւն ունին գայո «ցեխ» բառի հետ՝ սանս. karda «ցեխ, տիղմ, կղկղանք», սոգդ. γirēk «ցեխ»։

ԳԻՒ.—Ակն. գ'էո *«ժեխ, ալուք, ալելով յառաջացած աղբը», Մշկ.* գ'էո *«ցեխ», Մկ. վն.* ք'օո *«ցեխ».—նոր բառեր են՝* գայռահան, գռամահ *«ժեխնոց, խաքէնդազ»,* fոռկոխ *«անձրև ժամանակ տանիքի ցեխը ոտներին կպչոտելը»։*

ԳԱՅՈՒԱԼ *«պատկիլ» եղն. որ և* գայռել *«պատկիլ՝ քնելու համար» Կոչ. 307. Ոսկ. կոդ. էջ 534. Եփես. 782, 814 (գրուած նաև* գառել. գառիլ*), որից* գառացուցանել *«պատկեցնել» Բ. Քագ. ը. 2։*

Նշ՛ր հանում է գայռ *«ցեխ» կամ* գառն *բառից։*

ԳԱՅՏ (ի *հլ. քան Նշ՛ր, թէև առանց վկայութեան) «խիտ, հոծ» Մագ. Քղ. 132, որից* գայտուրիւն *«խտութիւն» Շիր. Տրար. Պատկ. էջ 46,* անգայտ *«նօսր, ոչ-խիտ, ոչ-հոծ, ցանցառ, բարակ» Վեցօր. 165. Նիւս. կազմ. Առ որս. (իսկ Ոսկ. մ. ը. 9՝ Ակն յոռի, անգայտ և բիրտ Հատուածում՝ անգայտ բառի համապատասխանն է յն.* τραχύς *«խիտ, բիրտ»)։ Յետնաբար «երկու սուղ վանկերից բաղկացած բառ» Ք՛ր. քեր.,* անգայտանալ *Արիստ. աշխ.,* անգայտացուցանել *Փիլ. լիւս.,* անգայտութիւն *Նիւս. բն. Շիր.։*

+ԳԱՆ, ի *հլ. «ձեռ» ՍԳր. եղն. Եւս. ք՛ր. Ոսկ. ես., «վերք» Յայտմ. մայ՛՛ 4 (Կին մի, որ ունէր ի մարմինն իւր չար վէրս, զոր շնորհօր ցաւ կոչեն... և էր գան կնոջն ի թաթ ձեռինն սաստկացեալ), Յայտմ. յուլ՛՛ 5 (Շաղվէր կաւ և դնէր ի վերայ ցաւագար գանից մարդկան և առժամայն ողջանային), «բոյսի վիրաւոր մասերը» Վստկ. 76, 179 (երկու նշանակութիւններն էլ չունի Աբ), որից՝* գան բմպել *«ձեռ ուտել» Ղուկ. ժբ. 47, 48 Ագաթ.,* գան հարկանել *«ձեռել» ՍԳր.. գանալից Բ. մկ. գ. 38. Իմ. ժղ. 1. Ագաթ. Ոսկ. մ. ա. 9. Սերեր.,* գանահար *Ոսկ. ես.,* գանել *«ձեռել» Բ. մակ. է. 1. Փարպ. Խոր., «կշտամբել, նախատել» Ոսկ. յհ. բ. 11. Բրս. մրկ., «ծառի տակը փորելու ժամանակ արմատին վնասել» Վստկ. 65, «վիրահատութեան ժամանակ շրջակայ մասերին վնաս հասցնել» (իբր միջին հյ. բառ ունի նորայր, Բառ. ֆր. 696 բ),* չարագան *Բ. մակ. գ. 38,* չարագանել *Ջար. ժ. 2. Սիր. լ. 4. Վեցօր. 170,* գանգաճակ առնել *«իրաւամբ յանդիմանել, երեսը գարնել» Ոսկ. եփես. 843 (չունի Նշ՛ր), զգանեալ «ձեռ կերածի պէս եղած»? Եւագր. 236 (չունի Աբ),* գանակոծ, գանակոծել, գանակոծութիւն *(նոր բառեր)։*

= *Հնխ.* g²hen- *արմատից, որի միւս ժառանգներն են առնս.* ghaná- *«բիր, կոպալ»,* ghāta- *«զարկ, հարուած»,* hati-, hâtha- *«ձեռ, հարուած»,* hatyâ- *«սպանութիւն»,* hánti *«ձեռում, զարնում, սպանում է»,* ghnánti *«զարնում են»,* դնդ. jan, jainti *«զարնում, սպանում է», պհլ.* zatan, *պրս.* زدن zadan, زد zanad *«զարնել, սպաննել», քրդ.* ženin *«կրակ վառել, հրացան արձակել», յն.* θείνω *«զարնեմ»,* φόνος *«սպանութիւն»,* ἐ-πε-φν-ον *«զարկաւ», հիռլ.* gonim *«վիրաւորել, սպանել»,* gegon *«սպանեց»,* guin *«վերք», հին.* gandr *«գաւազան, ցուպ»,* guðr, gunnr *«կռիւ», անգլսք.* gūð *«կռիւ», հրդ.* gund-fano *«պատերազմական դրօշ», հսլ.* ženą *«զարնելով քշել, վանել»,* žinja, žęti *«հնձել», ռուս.* гонять *«վարել, քշել, հալածել»,* выгонъ *«արածայնել, արօտ», չեխ.* hon *«որս», լիթ.* ganýti *«տաւար արածացնել»,* gānas *«հովիւ»,* ginzìà *«կռիւ», լիթթ.* gans *«հովիւ», ալբան.* g'an' *«քշել, հալածել», լտ.* de-fendo *«պաշտպանել, արգիլել»,* of-fendo *«ընդհարուիլ, զարնուիլ, նախատել, յանդիմանել»,* in-fensus *«թշնամի» են* (Walde, *224*, Boisacq, *336*, Berneker, *328*, Horn, § *653*, Trautman, *86*), *Կամխ.* kuen *«զարնել, սպանել»,* kuenzi *«զարնում է». տե՛ս* Pokorny, *1, 680*, Ernout-Meillet, *330։ Հայերէն* գան *բառի կրկնակն է* ջին *«գաւազան»<հնխ.* g²hēn-, *որի վրայ տե՛ս առանձին։—Հիւբշ. 431։*

Ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. KZ, *23, 24, համեմատելով առնս.* han, ghna *արմատի հետ։* Lagarde, Arm. Stud. § *451 սրա վրայ աւելացնում է դնդ.* ghāna, jan, vərəθra-γna *են։—Տէրվ. Նախալ. 80 և Մասիս, թ. 3169, 26 ապր՛՛ 1882 վերի ձևով։* Κορκίδης, Γλωσσ. συγκρ. *էջ 85 կապադովկ.* χανίζω *«խորտակել», յն.* χαίνομι *«սպանել»՝*

սանս. kšanōmi «վիրաւորել» բառերի հետ։ Հիմնք. յն. χάννα «եղէգ» բառից՝ իբրև ծեծելու գործիք։ Bugge, Lyk. St. 1, 54 վերիններէն վրայ ուշադրութիւն է և լիւկ. xxąte։

ԳԻՒՐ.—Կայ գան Բզ. «ուռեցք, վէրք» (Արեվելք, 1898, նոյ" 24), որ պահում է միջին հյ. գան բառի նշանակութիւնը։—Արմատի կրկնութեամբ է յառաջացած գանգնած (իմա՛ գան-գան-ած) Ակն. «կողովի կամ պարկի մէջ սեղմուելով ճիպուտած կամ սեացած (պտուղ)»։—Գան «վէրք» և մանաւանդ «կեղտոտ վէրք» նշանակութիւնից բիւած է թուում նաև գուռ. գանիլ «զղուիլ, գարշիլ», որից էլ ունինք գանելաճ, գանկուտ, գանուտ։

*ԳԱՆ «մի տեսակ չափ է». մի անգամ գործածում է Անսիպք 79 «Եւ թէ առ խանութ գովի չափ կամ կշիռ, կամ գան, կամ կանդուն, կամ այլ յայսպիսեացս՝ ծուռ կամ պակաս»...

=Ֆրանս. canne, cane «մի տեսակ հին չափ հրկարութեան, 1 մ. 71-ից մինչև 2 մ. 96 ս.».—Ծագում է լտ. canna «եղէգ» բառից։

Անսիպքի հրատարակիչը (Ալիշան) համարում է «բանջարեղինաց չափ» և համեմատում է պրս. کانه kāna «գինն այն՝ զոր յատկացուցանեն ուտելի իրաց»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Karst, Կիլիկ. քերակ. էջ 30։ Նոյնը վերջին անգամ Grammont, MSL, 20, 254։

*ԴԱՆԴԱԼ «կատակ» Կոստ. երդն. 132 «Սրտով խիստ ուրախ ու խօսօք գանգալի»։

=Պրս. کنکل gangal «բարեկամական կատակ, զուարճաբանութիւն»։

Ուղիղ մեկնեց Բազմ. 1866, 234։

⊙ԴԱՆԴԱՂ «հնչիւն». առանձին գործածուած չէ, բայց սրանից ունինք գանգաչեցուցանել «հնչեցնել (զանգակը)» Ոսկ. ա. տիմ.։

=Բնաձայն բառ, որ կազմուած է պարզական գ, գա բնաձայնից՝ և, չ ածանցիչներով և կրկնութեամբ. ձևի համար հմմտ. դանդաչել, իսկ արմատի համար հմմտ. գոչել, գանչել, գնչել, գարգաչել ևն։—Ամ.

Նշիբ՝ գանգիւն, գանչիւն, արձագանգ բառերի հետ։ Տէրվ. Altarm. 55 գանգիւն, արձագանգ, ֆանֆատել ձևերի հետ՝ կցում է յն. γογγύζειν, հալ. gągidti բառերին։ Նոյն, Նախալ. 30, 43 գանգ արմատից, իբր կրճատ կրկնութիւն հնխ. gha արմատի (այն է gha-gh)։ Նոյն, Մասիս, 1882, մարտ 10, թ. 3133, գանգ «ձայն, հնչիւն» ձևից, որ իբր կրճատ կրկնութիւն է գա նոյնանիշ արմատի, ընդգծանի յատկութեամբ։ Համմտ. գերմ. gagen «կանչել, կարկաչել սագի» և սանս. gha «ձայն, հնչիւն» (առանց ընդգծանի)։ Վերի մեկնութիւնը տուած եմ ՀԱ, 1899, 204։

ՓՈԽ.—Վրաց. գանգաշի «աղմուկ, ժխոր, շռինդ, խառնակութիւն» փոխառեալ է մեր գանգաչ արմատից, որի գոյութիւնը հաստատում է (Աճառ. Արբա. 1898, էջ 311 ա և ՀԱ, 1899, 204 բ)։

ԳԱՆԳԱՏ «տրտունջ, բողոք» Մագ. Շնորհ. նախս. Գնձ., որից՝ գանգատիլ Մաղաք. աբ. լծ. նար., հնագոյն ձևն է ֆանֆատել Բ. մակ. դ. 37. Ագաթ. կամ ֆանֆարտալ Բ. մակ. գ. 37։

=Անշուշտ կրկնաւոր է, բայց պարզ արմատը յայտնի չէ։

ՆՀԲ ֆանֆատել բառին լծորդ է դնում յն. γογγύζω «քրթմնջել»։ Տէրվ. Altarm 55 գանգիւն, արձագանգ բառերի հետ՝ յն. γογγύζω, հալ. gągidti։ Նոյն, Նախալ. 30՝ յիշեալ բառերի հետ գանգ արմատից, իբր կրճատ կրկնութիւն հնխ. gha արմատի, վերի ձևով մեկնել եմ ՀԱ, 1899, 233 բ։

ԳԻՒՐ.—Տփ. գանգատ, Ախց. երև. կր. Ջղ. գ'անգատ, Ալշ. Ակն. Մշ. գեանգադ, Նխճ. գանգադ, գանգրդվէլ, Խրբ. գ'անգրդիլ, Զթ. գ'անգդրլ, Սչ. գ'անգրդվել, Տփ. գանֆռրվիլ, Սեբ. գ'անգ'ադ, Ոզմ. գ'ռանգ,ռատ, Դոր. Մկ. Մրդ. Սլմ. կ'ռանգ,ռատ. Շմ. կ'ռանգ'ադ, Տիգ. քռանգրդիլ, Վն. կ'ռանգ'ռատ, կ'ռյատել, Ղրբ. կ'է'նգ'ռատ, կ'ընգ'ա'տվէլ, Ագլ. գ,ի'նգ'ռատ, գ'ինգ'ռ'տվիլ, Հմշ. կօնգդիլ, Ակն. գ'անգրդիլ, գ'օյդիլ, Ասլ. գ'այդիլ, գ'ալդիլ։ Նոր բառեր են՝ գանգատաբան, գանգատաուր, գանգատաբուղբ, գանգատբերան։

⊙ԴԱՆԳԻԻՆ «անշունչ իրերի ձայն կամ հնչիւն» Մագ., արմատն է գանգ, գործա-

ծուած նաև արձագանգ բառի մէջ, որ տե՛ս վերը առանձին։

=Բնաձայն բառ. հմմտ. գոչել, գանգաշ ևն բնաձայնները։

Տէրվ. Altarm. *55 և նախալ. 30, 55 տե՛ս գանգատ բառի տակ։ Հիւնք.* գանգակ *բառից։ 3. Արշէզ, Բազմ. 1897, էջ 51 յծ.* գանչել։

ԳԱՆԴՈՒՐ *«ոլորուն, գոռուզ (ած.), գոռուզ մազեր (գյ.)» Եփր. ծն. էջ 86. Ոսկ. մ. ա. 4. «գետի ոլորապտոյտ շրջանները» Թէոդոր. ի կոյսն, որից* գանգրագեղ *Բուզ. դ. 3, կամ առանց սղման՝* գանգուրագեղ *Արծր.,* գանգրահեր *Վեցօր. 119. Սերեր.,* գանգրածն *«ծալ ծալ, խորշ խորշ (հագուստի համար ասուած)» Փիլ. տես.,* **fաջագանգուր** *խոր.,* **բագագանգուր** *Բուզ.։*

Bugge, Btrg. *41 համեմատելով չեխ.* kučera *և փոքր ռուս.* kučer *«խոպոպիկ» բառերի հետ, հանում է հնխ.* kankəró *նախաձևից։* Karst, *Յուշարձան, 404* կամար, կարկամ, կամակոր, քամակ, կամք *բառերի հետ՝ առաջիր.* gam, kam *«ծռել, կորանալ»։* Кипшидзе, Грам. мингр. яз. *1914, էջ 213 համեմատում է մինգր.* գանգուրջելա *«կանացի գլխագարդ, չիխտա-կոպիճ» բառի հետ։ Թիւրեանեան, Արիահայ բռ. 114 պրս.* کاکل kākul *համանիշի հետ։* Petersson, KZ, *47, 268 առնս.* váñčati *«ճօճել, առաջանիլ»,* vaṅkú- *«երերուն», գոթ.* unwāhs *«անթերի», անգլսք.* wōh, *հին սաքս.* wāh *«ծուռ», հիսլ.* vangr *«սխալ» բառերի հետ՝ հնխ.* ṷŋquro- *ձևից։ Պատմական նմանութիւն ունի առնս.* khankara *«մազի գանգուր»։*

ՓՈԽ.—Վրաց. განგური *գանգուրի «անասունների մազափոխութեան ժամանակ թափուած մազը կամ բուրդը»։*

ԳԱՆԳՈՒ. *անստոյգ բառ. մէկ անգամ գրուած եմ գործածուած Սամ. աննց. 110 «ՌՄ (—ՆՂէ) Թուին հուր էջ յերկնից և այրեաց զսուրբ Պետրոս յԱնտիոք և պատառեաց զխորանն և ընկղմեցաւ գանգուն»։ Այս նոյն դէպքը պատմում է նաև Սմբ. պտմ. էջ 68, հետևեալ բառերով. «Անկաւ հուր յերկնից ի վերայ եկեղեցւոյն սրբոյն Պետրոսի և այրեցաւ ի հիմանէ քարն. և պատառեցաւ խորանն և զսուրբ սեղանն տարաւ յանդունդս»։ Այս համեմատութիւնից երևում է, որ* գանգո *նշանակում է «սեղան եկեղեցւոյ»։—Բայց կայ և* Գանգրա *քաղաք Պափլագոնիոյ (յն.* Γαγγραί, *լտ.* Gangrē, *այժմ* Ջանղըռը, *որ մի ժամանակ* Dejotarus *թագաւորի մայրաքաղաքն է եղել. տե՛ս* Bouillet, Dict. universel d'histoire et de géogr. Paris, *1860, էջ 680.*—Larousse, Grand dict. universel, Paris, *1872, հտ. 8, էջ 993'''). այստեղ է տեղի ունեցել նշանաւոր եկեղեցական մի ժողով, որի կանոններն էլ կոչւում են մեր եկեղեցական պատմութեան մէջ* Կանոնք Գանգրայ *(տե՛ս Տաշեան, Ցուցակ ձեռ. Վիեննալի, էջ 651)։*

ԳԱՆԿ կամ **ԳԱՆԳ**, ի *հլ. (յգ.* գանկք *կամ* գանկունք*) «գլխի ոսկորը» Փիլ. լին. Վրդն. պտմ. Սոկր.։ Նոր բառեր են՝* **գանկոսկր, գանկաբան, գանկաբանութիւն։**

Böttticher, Arica, *68, 124 առնս.* kañkāla *«կմախք» և լիթ.* kaukolas *բառերի հետ։* Justi, Zendspr. *78 բառս կարգալով* գամկ՝ *նոյն է դնում պրզ.* kamərəδa, *պհլ.* kamār, *փռիւգ.* κίμβρος *բառերի հետ։ Տէրվ. Մասիս, 1882 թ. մարտ 10 «Չենք կրնար որոշել, աստմ է, թէ աղբս ունի* գանգ *«ձալ»ն բառին հետ. որովհետև աստնց առաջին իմաստն անծանօթ է»։ Հիւնք.* գան *«ծնած» բառից։* Scheftelowitz, BB, *28 (1904), 157 և 29, 41 համեմատում է յն. և ալ.* ἄμφη *«ծոծրակ», գոթ.* vaggareis *«բարձ», հբգ.* wanga *և գերմ.* Wange *«ծոյս» բառերի հետ։*

ԳԻՒՒ.—Պլ. գանգ, *Ալշ. Ալոց. Երև. Խրբ. կր. Մշ. Սեբ.* գ'անգ, *Ւմ.* քանգ, *Տիգ.* քունգ, *Ոգմ.* գ'ոունգ, *Մկ.* գ'ունգ', *Ասլ.* գ'անգ, գ'այ, *Չճ.* գ'օնգ, *Համշ.* կօնգ. *մեծ մասամբ պահուած է միայն հայհոլութեանց մէջ։*

***ԳԱՆԶ**, ու, ի, *հլ. «ինչքի և հարստութեան մթերք, մասնաւորապէս դրամի պահեստ» ՍԳր., որից* գանձել *«ինչք մթերել» ՍԳր.,*

գանձագին *Ասող. Յայտմ.*, գանձարան *Ա. մնաց. իր. 11. Առկ. ա. 14*, գանձապահ *Ա. մնաց. իր. 1*, գանձակողոպուտ *Ոսկ. յհ. բ. 12*, գանձահատ *Բուզ.*, բազմագանձ *Մծբ.*, մեծագանձ *Ա. մակ. ղ. 2. Ագաթ. Կոչ. գ.*, գանձալից *Ոսկ. ղկ.*, գանձապետ *Ճղ. 227 բ.*:

=Պհլ. ganj, պրս. گنج ganj «գանձ, թաղեալ ինչք բազում», քհլուճ. ganj, սոգդ. γánzə «գանձ»: Իրանեանից փոխառեալ են նաև սանս. gañja- «գանձարան, գոնարեղէնի հանք, գանձ են», յն. γάζα «արքունի գանձ» (որից γαζοφυλάκιον, γαζοφύλαξ «գանձապահ»), լատ. gāza «գանձարան», հբր. արամ. גנזא ginzi «գանձ», աստր. 𐎲𐎢𐎶 gazā, արաբ. كنز kanz, յգ. كنوز kunuz «գանձ», հունգ. kines, ն. սլով. խրվաթ. kinč «գանձ»: Իրաննանից է փոխառեալ նաև աստր. gunzu «գանձ» (Muss-Arnolt, Ass. eng. Handwb. էջ 227 բ):—Հիւբշ. 126: Schröder, Thesaur. էջ 56—57 յն. և պրս. ձևերը հայերէնից փոխառեալ է դնում: ԿԴ պրս. ձևի հետ: Cappelletti, Armenia, թրգմ. Արշալ. արբա. 1842, էջ 108 յն. γάζα: Windisch. ? սանս. ganja, Gosche 65, որա հետ նաև պրս. ձևը: Սրանց պէս նաև միւսները:

ԳԻՒՐ.—Տփ. գանձ, Ախց. Ալշ. երև. կր. Ջղ. գ'անձ, Սլմ. կ'mանձ:

ՓՈԽ.—Վրաց. განძი գանձի «հողի մէջ թաղուած գանձ», եզդեժ. սագանձուրի «գանձ, գանձարան», մինգր. գանձի. այս բոլորը հայերէնից են՝ վերջածայն ձ-ի պատճառով: Ուտ. կանձապետა «գանձապետ» (եկեղեցական պաշտօնեայ):

*ԳԱՆՁ «մի տեսակ եկեղեցական երգ» Գնձ., որից Գանձարան «այսպիսի եկեղեցական երգերի հաւաքածոյ մատեանը» Գնձ.:

=Պրս. گنج ganj բառն է, որ բացի «գանձ» նշանակութիւնից, նշանակում է նաև մի խումբ պարսկական երաժշտական եղանակներ, ասպէս՝ ganj-i-gāv, ganj-i-bādāvard, ganj-i-sōxta, ganj-i-farīdūn, ganj-dār, որոնք հնարուած են Barbud անուն երաժշտապետից:—Աճ.

Նոյնի «առեալ ի սկզբնաւորութենէ երգոց Նարեկացւոյն. Գանձ լուսոյ, Գանձ բազձալի են»: Գ. Տէր-Մկրտչեան (անձնական) համարում է իտալ. canzona «երգ» բառից փոխառութիւն: Բարդէն վրդ. Լոյս, թ. 51 պրս. xāndan «կարդալ» բառից: Հ. Պատուրեան, Բազմ. 1906, 95 լս. canticum «երգ»: Վերի մեկնութիւնը առած եմ նախ ՀՄ. 1908, 123 բ: Ֆինտգեան, Կոչնակ, 1931, № 40 գնդ. gotha «երգ» բառի հետ է կապում:

ԳԻՒՐ.—Շատ տեղ պահուած է մի ժողովրդական առածի մէջ «Ես գանձ կրսեմ, դուն տանձ կրսես (կամ կհասկնաս)»: Այստեղ կորած է գանձ բառի իմաստը և ժողովուրդը գործածում է առածը՝ առանց բուն նշանակութիւնը հասկանալու: Շատեր էլ հասկանում են գանձ «ինչք», որ բոլորովին անյարմար է առածի մտքին: (Զոհրապ, JAs. Paris, 1823. 186 ուղիղ է թարգմանում առածը՝ je parla chanson, vous répondez poire):—Գանձ բառը առանձին և «երգ» նշանակութեամբ պահուած են Սեբ. գ'անձ, Շմ. կանձ, Ղրբ. Սլմ. կ'mանձ, Տիգ. բmնց:

*ԳԱՆՁԱԿ, ի–ա հլ. «փոր, ընդերք, աղիքների պարկը» Եւս. պատմ. ղ. 41, էջ 503. Պատմ. աղէքս. 134. Շիր. հրտր. Պատկ. էջ 70, որից գանձակցաւ «միզարգելութիւն» Բժշ. (Բազմ. 1917, էջ 101):—Բառիս հնագոյն նշանակութիւնն է «քսակ, պահարան», որ պահած է վանակ. յոր. զ՝

=Պհլ. *ganjak հոմանիշ ձևից, որ բոլորովին կորած է. կայ պրս. گنجه ganjae, որ նշանակում է «բակեղէնի, քսակ» և երկրորդական «ընդերք» նշանակութիւնը կորցրած է:—Աճ.

Նոյնի լծ. թրք. bauğrag, քեսե, ոմկ. qoğğuk: Petersson, KZ, 47, 247 սանս. vakṣáṇā «փոր, որովայն», լտ. vēna «երակ» բառերի հետ՝ հնխ. weng'h արմատից (Pokorny, 1, 261):

*ԳԱՆՁԱՆԱԿ, ի–ա հլ. «գանձարան, արնդուկ, դրամարկղ» ՍԳր. Ոսկ. յհ. բ. 11. Մծբ. Ագաթ.: Արդի լեզուով «եկեղեցում փոքր ար-

կըղ՝ մէջը դրամ ձգելու համար» (հմմտ. Մարկ. ժբ. 41—43, Ղուկ. իա. 1), որից գանձանակադրամ *(նոր բառ)։*

=*Պհլ.* *ganǰānak? *հմմտ. պրս.* گنجينه ganǰēna *«գանձարան, մթերանոց, նկուղ», որ ծագում է* گنج ganǰ *«գանձ» բառից։—Ագ. Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 63 երր.* կանագ։ *Միւսները, նաև Հիւբշ. 126, հանում են հյ.* գանձ *բառից։*

ԳԻՒՌ.—Տփ. գանձանակ, *Ախց. Երև. Կր. Մշ. Զղ.* գ'անձանակ, *Ալշ.* գ'անձանագ, *Խրբ.* գ'անձ'անագ, *Պլ.* գանձանագ, *Ննխ.* գանձանագ, *Շմ.* կանձանակ, *Սեբ.* գ'անցանագ, *Ռ.* գանցանագ, *Տիգ.* ғmնցmնmգ, *Մկ.* կ'mնձmնակ, *Ոգմ.* գ'mնձանակ, *Սլմ.* կ'mնձանակ, *Զթ. Հճ.* գ'անձանօգ, *Ագլ.* գ'ընձա'նակ, *Համշ.* կանցանաղ, *Մրզ.* կէնձանակ, *Ղրբ.* կ'ընձա'նակ, *Գոր.* կինձէ'նակ, *բոլորն էլ «հկեղեցու գանձանակ» նշանակութեամբ (բայց նաև իբրև «գանձանակադրամ». տե՛ս Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 125)։*

ՓՈԽ.—Վրաց. განძანაკი *գանգանակի «հկեղեցու պնակ» հայերէնից է փոխառեալ՝ նշանակութեան պատճառաւ, իսկ* განჯინა *գանջինա «գանձանակ, դարակ» պարսկերէնից է փոխառեալ՝ ձևի պատճառաւ։ Ուտ.* käncänäк *«գանձանակ» (հկեղեցու)։*

**ԳԱՆՁԱՒՈՐ, ի–ա հլ. «գանձապահ, գանձապետ» ՍԳր. Զքր. կք., որից* գանձատրապետ *«գանձապահապետ» ԱԲ։*

=*Պհլ.* ganǰuvar *(գրուած է* ganǰubar*), պրս.* گنجور ganǰvar *«գանձապետ», որից փոխառեալ են նաև սանս.* gañǰavara-*, ասոր.* ܓܙܒܪܐ *կամ* ܓܙܒܪܐ gizabrā *«գանձապահ» (Brockelm. 59 ա), երր.* גזבר gizbār *«գանձապահ, գանձապետ»։ Հայերէն բառը մեր մէջ կազմուած չէ՝ -աւոր մասնիկի այս առանձնա՛յն գործածութեան պատճառաւ, այլ ամբողջութեամբ փոխառեալ է իրանեանից։—Հիւբշ. 126։*

Ուղիղ մեկնեց նախ Lag. Gesam. Abhd. *28։ Միւսները համարած են* գանձ *բառից՝ հայկական կազմութեամբ։*

⊙ԳԱՆՁ. արմատ առանձին անգործածական, որից ունինք գանչել *կամ* գանչիլ *«հընչել, ձայն հանել» Անյ. սահմ.,* գանչութիւն *«ձայն, գոչիւն» Նար. էջ 243,* բացագանչութիւն *ՅՀ. կք. Մագ.,* բացագանչումն *Գր. հր. Լմբ. սղ. Սահմ. Մաքս. ի դիոն.,* գանգակագանչ *«գանգակի ձայնով» Նար. խչ.,* լուսնագանչ *«լուսնոտ» ԱԲ։*

=Բնաձայն բառ, որ կազմուած է պարզական գ ձայնից՝ ն և չ ածանցիչներով. հմմտ. գոչել, գնչել, գանգաչեցուցանել՝ *արմատի համար և* թանչել, խանչել, կանչել՝ *կազմութեան եղանակի համար։—Աճ.*

Հիւնք. գանգակ *բառից։ 3. Արշէգ, Բազմ. 1897, 51 լծ.* գանգիւն։ *Վերի մեկնութիւնը տուած եմ նախ ՀԱ, 1899, 203 բ։*

ԳԱՆՏԻ *«շողգամ» Կմրկպ. ունին միայն ՀԲուս. § 494 և Նորայր, ՀԱ, 1925, 305։*

Յիշելի է, որ կայ պրս. كندر kandi *«է ծաղիկ իմն սպիտակ՝ հակեալ ի դեղնութիւն, որոյ դրակն լինի ըստ կիսոյ կանգնոյ. և է յոյժ անուշահոտ, որ շատ լինի ի կողմանս Եէմէնու և ի մարմանդ վայրսն Շիյրազու և յաշխարհին Հընդկաց»։*

[ԳԱՇԱՆՔ. *մէկ անգամ գործածուած է Պզատ. իմ. 154, հետևեալ հատուածում. «Իրրու դի երբէք յարանց կանայք և այլ գաշանք լինելոց էին, գիտէին զայս բաղկացուցիչքն մեր»։ Տեղի անյարմարութիւնից՝ ընթերցողը կարծում է, թէ նորագիւտ և անծանօթ մի բառի հետ գործ ունի։ Բայց հասարակ տպագրական վրիպակ է, որ պէտք է ուղղել* գագանք, *ինչպէս ցոյց է տալիս յոյն բնագրի համեմատութիւնը.* ὡς γὰρ ποτε ἐξ ἀνδρῶν γυναῖκες καὶ τἆλλα θηρία γενήσοιντο, ἠπίσταντο οἱ ξυνιστάντες ἡμᾶς. *տե՛ս* Platonis opera, Parisiis, *1883, հտ. II, էջ 238, տող 1—3։*]

**ԳԱՌԱԳԻՊ, ի, ի–ա հլ. «գազանների արգելարան, երկաթէ վանդակ. 2. նմանութեամբ՝ բանտ» Եղկ. ժթ. 9. Ոսկ. ես. 264. Ոսկ. մ. գ. 6. Վեցօր. 198. Եղիշ. բացի այս առաջին ձևից, որ ամէնից հարազատն է, գրուած է նաև* գառագեղ, գառագիւղ, գառագիւ, գայռագիղ, գայռագեղ, գայռագիւղ, *որից* գառագեղել *«բանտարկել վանդակի*

մէջ» Գնձ., գառագղանման Պիտ., անգառագեղ Սամ. աննեց. էջ 114. 35. կբ.—արդի գրականում ընդունուած է միայն գառագեղ ձևը։

=Յն. γαλεάγρα «անասունների վանդակ. 2. փիլ. բանտ». բառս կազմուած է γαλέη «կրծող անասուն, յատկապէս կուզ, սկիւռ են» + ἄγρα «որս» բառերից և նշանակում էր նախապէս «սկիւռ բռնելու թակարդ», որից յետոյ ընդհանրանալով՝ նշանակեց առ հասարակ անասունների վանդակ և մինչև մարդոց համար բանտ։ Ըստ այսմ, մեր բառի բոլոր ձևերն էլ աւելի կամ պակաս չափով այլայլուած են. յոյն բառը տուած է նախ *գաղագր կամ *գաղագդ, տեղափոխութեամբ *գառագդ և սրանից էլ՝ գառագիդ։ Ժողովրդական ստուգաբանութեամբ վերջի մասը շփոթուելով գիւղ բառի հետ՝ ստացել է անշուշտ նոյն բառի գաւառական ձևափոխութիւնները։—Հիւբշ. 344։

Նշ. Բ. յաւել. էջ 1048 լտ. carcer «բանտ», cancelli «վանդակապատ» բառերի հետ լծորդ է դնում։ Lagarde, Armen. Stud. § 455 կարծել է, թէ ՆՀԲ մեկնում է յն. γαλεάγρα բառով, մինչդեռ ՆՀԲ չունի այսպիսի բան. ուստի առաջին ուղիղ մեկնիչն է Lagarde։

+ԳԱՒՌՆ, ն հլ. (-ռին, -ռամբ, -ռինք, -ռանց) «նորածին ոչխար, ոչխարի ձագ» ՍԳր., որից՝ գառնենի Ոսկ. մ. ա. 23. Եփր. համաբ., գառնուրիւն Փարպ., գառնազգեստ Նեղոս. Ոսկիփ., գառնածին Նար., գառնանալ Մանդ. վրդն. ծն.։ Բոյսերի անուններ են՝ գառնալեզու, գառնադմակ „sempervivum globiferum L“, գառնագմակիկ „Sedum sempervivum Ledeb“, գառնակաղջ „Oxalis corniculata L և կամ Rumex“ Բժշ. (լատինական համազորները տե՛ս Տիրացուեան, Contributo, 59, 69)։

=Հնխ. vərén (vṛrén) ձևից. համմ. սանսկ. յն. ἀρήν «գառնուկ», կրետ. ϝαρήν, հոմեր. *ἴρην «մաքի» (որից πολύρρην «մաքինեփով հարուստ»), ἀρνειός «խոյ», լտ. vervex «ոչխար, խոյ», սանս. úrā «մաքի», úraṇa- «խոյ, գառն», հպրս. *varnā, պհլ. varak «խոյ», պրս. بَرّ barra (<*varnak) «գառն», աֆղան. vrai, օսս. warik, urek, vārig, բելուճ. gvarak, քրդ. vark, barx: Իմաստի զարգացմամբ՝ հիւլ. հհիւս. vara «մորթ», անգլսք. waru, հիւլ. vara, գերմ. ware «ապրանք» (համմ. արաբ. māl և Դբր. ապրանք «ինչք և տաւար»). տե՛ս Walde, 826, Horn, § 211, Boisacq, 77, Pokorny, 1, 269, Ernout-Meillet, 1052։—Հիւբշ. 432։

Առաջին անգամ ՆՀԲ (օգիք բառի տակ) լծ. յն. ἀρνή, ἀρνός: Lag. Urgesch. 732 սանս. uraṇa, պրս. bara, յն. φαρ: —Müller, SWAW 38, 576, 588 լտ. vellus, անս. varman, հիւլ. wluna «գեղմընն»։—Lag. Arm. Stud. § 457 մերժում է իր նախորդ մեկնութիւնը, որ այժմ իբր առոյգ ընդունուած է։ Տէրվ. Նախալ. 48 գեղմն, գաղտ, յն. εἶρος «գեղմն», ἀρήν «գառն» բառերի հետ սանս. գնդ. var «ծածկել, պահել» արմատից։ Եագրճեան, Արեւելք, 1884 հոկտ՛՛ 17 սանս. վաթքարա: Հիւնք. 254 լտ. caro, carnis «միս»։ Սագրգեան, ՀԱ, 1909, 335 հլ. առն և սոմխր. kar, karus «գառն»։ Karst, Յուշարձան, 405 սոմխր. kar «գառն», 414 մոնգոլ. xuragar, քալմուք. xurgun, թրք. kuzu «գառնուկ», թանգուզ. kurkan և բուրնաթ. xurjagon: Պատահական նմանութիւն ունի եբր. כַּר kar «գառնուկ»։ Pictet, բ. տպ. Ա. 450 յն. χριός «խոյ» բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի սաւթ. giru, kirču «գառ» (Muss-Arnolt, Ass. engl. Handwb. 240, 433)։

Գիւմ.—Ագլ. գ՛առնը, Շմ. կ՛առնը, Դրբ. կ՛ոռնը, Տփ. գարը, Ալշ. Ախց. երև. Կր. Մշ. Սեբ. Սչ. գ՛առ, Ռ. Տիգ. fառ, Ոզմ. գ՛՛ոռ, Մկ. Սլմ. Վն. կ՛ոռ, Զղ. գ՛ոռն, հին Ցղ. կօ՛ռնը, Մծ. գ՛օռն, Զթ. գ՛օռ, գ՛ոռ: Նոր բառեր են՝ գառնարած, գառնամայր, գառնաոռն, գառնաճակատ, գառնագոչում, գառնաճատիկ, գառնաչքանի, գառնուկ են։—Թրքախօս հայոց մէջ կայ garn-dumbaq «գառնադմակ բոյսը» (Արեւելք, 1888 նոյ. 8—9)։

Փոխ.—Ասդ. kar «ուլիկ» (MSL, *16, էջ 358*), ՍՀ garik «սև ոչխարի գառնուկ» (բուն քրդերէն բառերը տե՛ս վերը)։—Կովկասեան լեզուներից կայ ջար. keer «գառնուկ»։—Թերևս այստեղ պատկանի նաև կապադովկ. լն. χαρό, նուազականը՝ χαρόκκο, որ սակայն նշանակում է «եղնիկ, եղջերու» (Καρολίδης, Γλωσσ. συγκρ. *85 և 170 այս բառը կցում է լտ.* cervus *ևն համանիշներին, լիշելով նաև Հիւսիքոսի* χάρος «ոչխար» *բառը)*։

ԳԱՍՈՒՐ *տե՛ս Գասրել։*

ԳԱՍՏԵԼ «մօտել». *ունի միայն Բառ. երեմ. էջ 62։*

ԳԱՍՐԵԼ «կերակուրը փորը թխել». *մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. պօղ. Ա. 237 «եւ ի մարմինս է ինչ այնպիսի դժընդակ ախտ՝ զոր սուրն կոչեն բժիշկք, յորժամ ի բազում կարօտութեան սովիցի և սրայցէ, գասրիցէ և չյագիցէ»։*

Այս բառը չունի ՆՀԲ։ վերի ձևով մեկնում է ԱԲ։ Նոյն բառը գիտէ նաև Բառ. երեմ. էջ 62 «չյարդել» նշանակութեամբ, որ պէտք է կարդալ «չյագել» և որի արմատը պէտք է կարծել գասուր «սրած կամ սուլած կամ ստացուած կամ արարած» *(անդ՝ էջ 62)։ Մ. Նալպարեան, Բառ. ֆրանս. էջ 111, 410 ֆրանս.* bourrer, farcir *բառերի դէմ դնում է գտ.* գասրել, *որ Առձեռնից առնուած պէտք է կարծել։*

ԳԱՎԱՐՍ *տե՛ս Դաւարայ։*

ԳԱՎԻՆ *տե՛ս Վին։*

ԳԱՏԱԿ «հասակ». *բառարաններում այսպէս բառ չկայ. գիտէ միայն ԳԴ, էջ 711 ա։*

ԳԴ անդ՝ կցում է սրար. قد qadd «հասակ» *բառին։*

ԳԱՏՈՅ *կամ* ԳԱՏՈՅՏ «ցաւ, տանջանք». *անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. ես. 290 «Մի՛ ասիցես եթէ ի պատժոյն բռնադատեցաւ այսպիսի բանս խօսել. որպէս որք տանջիցին և զանձանց ինչ վնաս ոչ գիտացին, այլ զանին գատոյս բերեալ, առնիցեն զանձինս վնասակար»։—Ձեռագրում օտար գրչից սրբագրուած է եղել* գատոյտս։

ԳԱՏՈՒՐ «Քրիստոսի խաչափայտի երրորդ բևեռի անունը». *Տաթև. հարց. էջ 495. նորագիւտ բառ։*

ԳԱՐ «ցաւ կամ հիւանդութիւն». *արմատ առանձին անգործածական, որից ունինք բազմաթիւ ածանցներ. ինչպէս՝* գարաղութիւն «աղիքի հիւանդութիւն, փորհարութիւն» *Պղատ. տիմ.,* աշագար «աչքը տկար՝ հիւանդ» *կիւրղ. թագ.,* անգար «կէս գլխու ցաւ, migraine» *Վրք. ոսկ. 45 (տպագրում* արգար*). «Ունէր ախտս ցաւոց՝ զոր աբգարն կոչեն, այսինքն ցաւ որ էր ի կէս գլխոյ նորա, և այնչափ սաստիկ էր ախտն, մինչև արտաքս եկեալ աչ ականն» (այլ ձ.* անկար*), որից՝* անկարութեան ցաւ *նոյն նշ. ԱԲ,* լեզուագար «լեզուին տուող, ցնգաբանող» *կիւրղ. գնձ. 36. կթ.,* լեզուագարիլ «լեզուին տալ, բարբանջել» *Եփր. ղղջ. կիւրղ. գնձ. Ա-ծաբ. ծն. (ըստ յն.* γλωσσαλγέω «լեզուն ցաւիլ. 2. շաղփաղփել»), գլխագար *Ոսկ. ա. տիմ.,* գլխագարութիւն *Ոսկ. յհ. ա., բ. կոր.,* խելագար «գլխի ցաւ ունեցող» *Տաթև. ամ. 88 (Թէ խելագար մարդոյն զատն և զրագուկն պինդ չուանով կապեն, գլխոյն ցաւն փոքրանայ... զի գլուխն վասն առաւել ջերմութեանն և գիջութեանն ցաւի). «ցնորեալ, խենթ, գիժ» Ոսկ. յհ. ա. 17, Մանդ. Նար.,* խելագարութիւն *Ոսկ. յհ. ա. 15, 17,* խելագարեալ *Շիր. հրատր. Պատկ. էջ 56,* ցաւագար *Գնձ.,* գարեւի կամ գարեվի «ցաւալի կամ խոժո՞ռ» *Պիտ.,* գարած «ցաւած» *Բառ. երեմ. 62, «հիւանդ, տկար» ԱԲ, «ցաւ, վէրքի կսկիծ» Տիմոթ. կուզ, էջ 29, 275, 317,* գարիլ «ցաւիլ, ցաւ զգալ» *Տիմոթ. կուզ. էջ 276 (վերջին երկուսը նորագիւտ բառ, որոնց վրայ տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 69—71),* միջագար «մէջը փուտ (փայտ)» *Պիտ. 466,* միզագարութիւն *Սոկր. եկեղ. պատմ. 578 (որի դէմ փոքր Սոկր. ունի* միզգրաւ)։—*Արմատն անկախ ունի միայն Բառ. երեմ. էջ 62, որ գրում է* գար «չորացաւ» *(արդեօք ուղում է ասել «չոր ցա՞ւ» (իբր թեթև ցաւ, առանց հիւանդութեան), թէ «չոր ու ցաւ»)։*

ՆՀՔ պրս. կէր, կէրա, ՖՐք. կէրի «ետ», եկրի «ծուռ», յն. ղօրիեա, լտ. curvus «ծուռ» torvus «վայրենի»։ — Հիւնք. 207 դնում է յն. -αρχ- բառից, որ գտնում է γλωσσαρχος «լեզուագար» բառի մէջ (բայց սա γλωσσάλγος բառի մէկ ձայնական ձևափոխութիւնն է)։— Մէնէվիշեան, Արդի լեզուագիտ. էջ 50 gar «ծանր» արմատից, իբր սնս. giri «լեռ», guru «ծանր», Աճառ. Հայ. նոր բառեր Տիմոթ. Կոպի մէջ, էջ 71 փոխառեալ է դնում իրանականից. համմտ. պհլ. gar, պրս. ﻍ gar, garr «բոր, բորոտութիւն», քրդ. gir, բելուճ. gar «բորոտութիւն». գնդ. garenu- և սանս. gará- «մի տեսակ հիւանդութիւն», ն. սլով. garje «բորոտութիւն», garjav, garat «քորել»։ (Բայց հմ. գար չի կարելի փոխառնել դնել այս իրանեան ձևերից՝ նշանակութեան տարբերութեան պատճառաւ. ինչպէս որ չի կարելի դնել ցեղակից՝ ձևի պատճառաւ. սպասելի էր նախաձայն կ և ոչ գ)։

ՓՈԽ.— Արմատը գաւառականներումն էլ չկայ. պահուած է միայն խեղագար, ցաւագար ձևերի մէջ (Առն. ցավագալ)։— Կարծեմ թէ այստեղ է պատկանում նաև գւռ. գարաղի «դիմոտ, փափկասիրտ, բաղցրալեզու» (Ախց. գ'արաղի, Ննխ., գարաղի. նաև Հնգ. Շիր. Ուդ.) և ո՛չ իբր գառաղի (գառն բառից կազմուած)։

ԳԱՐԱԻ «տիզ, ոչխարի ոջիլ» Վասկ. էջ 217, 218 (չորս անգամ)։

ՆՀՔ անստոյգ բնիներցուածով դնում է գարաւ կամ գարու. սակայն տպագրի բոլոր օրինակները և ամէն տեղ էլ առանց տարբերակի ունին գարաւ. որով այս ձևը առուգում է։

ԳԱՐԳ «ոսկրոտի, կմախք». միջին Հայերէն բառ. ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 200 ա carcasse բառի տակ։

ԳԱՐԳԱՇԻԼ տե՛ս Գազգաշիլ։

⊙ԳԱՐԳԱՋ. արմատ առանձին անգործածական. որից գարգաչանճ կամ գարգաչանճ «չիմար չիմար խօսքեր, ցնդաբանութիւն» Վկ. կիպր. (ՀԱ, 1922, 15). ունին միայն ՋՔ և ԱՔ։

=Բնաձայն բառ, որ կազմուած է գ պարզ ձայնից՝ կրկնութեամբ և շ ածանցականով. համմտ. կարկաչել, մարմաջել, բարբանջել կամ բարբաջել, կրկջաձայն ևն։— Ա՛ճ.

Այս մեկնութիւնը տուած եմ նախ ՀԱ, 1899, 204 բ։

ԳԱՐԳԱՓ «ուղտի ցաւակոտնելը». կայ միայն ի գարգափս յառնել ոճի մէջ՝ Ոսկ. կորնթ. 664. որ նշանակում է «ուղտի նման ցաւակոտել սկսիլ», որից գարգափումն «տախտակների վրայ կոխկռտելու ձայն» Փիլ. նխ. բ. 64։

=Կրկնուած է *գափ պարզ արմատից, որ առանձին անգործածական է. համմտ. կարկափ, խարխափ, շարշափ, սարսափ, բարբափ և տե՛ս յատկապէս սօսափիւն, սօսափել բառը։— Ա՛ճ.

Հիւնք. հանում է խարխուլ բառից։ Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ, 1899, 233 բ։

ԳԱՐԳՄԱՆԱԿ «խոյրի կամ սաղաւարտի վրայ զարդ». մէկ անգամ ունի Բուզ. ե. 38. (ըստ Հացունի, Պատմ. տարազի, էջ 106 սխալ է «զարդ» նշանակութիւնը. բառս նշանակում է «մի տեսակ գլխանոց կամ սաղաւարտ՝ վրան արծիւով»)։

ԳԱՐԻ (-ւոյ, -եաւ կամ -ուվ, -եաց) «գարի, արփա» ՍԳր. Եւս. քր., որից՝ գարեղէն «գարիէ շինուած» ՍԳր., գարեդիւք «գարիի նայելով հմայող» Մխ. Երեմ. Տօնակ., գարեհատ «մէկ հատ գարիի ծանրութիւնը» Շիր. Երզն. քեր., գարեհաց Վրք. հց., գարեջուր Ճառընտ. Յայտմ. Մխ. բժշ., գարնկէց Կիւրղ. ղկ. Ոսկիփ., գարեջրանոց, գարեջրատուն (նոր բառեր)։

=Ծագումն անստոյգ է, հնդեւրոպական լեզուների մէջ գտնում ենք յն. χρῖ, χρῖθή, լտ. hordeum (գւռ. fordeum), հբգ. gersta. գերմ. Gerste «գարի», անգլսք. grātan, անգլ. groats «կորկոտ» (պհլ. jurtāk «արմբուխք» և պրս. ﺟﻮ zurd «մի տեսակ ոլոռ»), որոնք կարող են մէկ արմատից ծագած լինել։ Սրանցից յոյնը ծագում է հնխ. gherzdā ձևից, գերմանականը՝ հնխ. gherzdā «չիմար չիմար խօսքեր, ցնդաբանութիւն» Վկ. կիպր. (ՀԱ, 1922, 15). ունին միայն ՋՔ և ԱՔ։

=Բնաձայն բառ, որ կազմուած է գ պարզ ձայնից՝ կրկնութեամբ և շ ածանցականով. համմտ. կարկաչել, մարմաջել, բարբանջել կամ բարբաջել, կրկջաձայն ևն։— Ա՛ճ.

Այս մեկնութիւնը տուած եմ նախ ՀԱ, 1899, 204 բ։

ԳԱՐԳԱՓ «ուղտի ցաւակոտնելը». կայ միայն ի գարգափս յառնել ոճի մէջ՝ Ոսկ. կորնթ. 664. որ նշանակում է «ուղտի նման ցաւակոտել սկսիլ», որից գարգափումն «տախտակների վրայ կոխկռտելու ձայն» Փիլ. նխ. բ. 64։

=Կրկնուած է *գափ պարզ արմատից, որ առանձին անգործածական է. համմտ. կարկափ, խարխափ, շարշափ, սարսափ, բարբափ և տե՛ս յատկապէս սօսափիւն, սօսափել բառը։— Ա՛ճ.

Հիւնք. հանում է խարխուլ բառից։ Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ, 1899, 233 բ։

ԳԱՐԳՄԱՆԱԿ «խոյրի կամ սաղաւարտի վրայ զարդ». մէկ անգամ ունի Բուզ. ե. 38. (ըստ Հացունի, Պատմ. տարազի, էջ 106 սխալ է «զարդ» նշանակութիւնը. բառս նշանակում է «մի տեսակ գլխանոց կամ սաղաւարտ՝ վրան արծիւով»)։

ԳԱՐԻ (-ւոյ, -եաւ կամ -ուվ, -եաց) «գարի, արփա» ՍԳր. Եւս. քր., որից՝ գարեղէն «գարիէ շինուած» ՍԳր., գարեդիւք «գարիի նայելով հմայող» Մխ. Երեմ. Տօնակ., գարեհատ «մէկ հատ գարիի ծանրութիւնը» Շիր. Երզն. քեր., գարեհաց Վրք. հց., գարեջուր Ճառընտ. Յայտմ. Մխ. բժշ., գարնկէց Կիւրղ. ղկ. Ոսկիփ., գարեջրանոց, գարեջրատուն (նոր բառեր)։

=Ծագումն անստոյգ է, հնդեւրոպական լեզուների մէջ գտնում ենք յն. χρῖ, χρῖθή, լտ. hordeum (գւռ. fordeum), հբգ. gersta. գերմ. Gerste «գարի», անգլսք. grātan, անգլ. groats «կորկոտ» (պհլ. jurtāk «արմբուխք» և պրս. ﺟﻮ zurd «մի տեսակ ոլոռ»), որոնք կարող են մէկ արմատից ծագած լինել։ Սրանցից յոյնը ծագում է հնխ. gherzdā ձևից, գերմանականը՝ հնխ. gherzdā

ձևից, լատինը՝ հնխ. ghɪzd- ձևից (անգլերէնը՝ ghroidhn-). *սրանց դէմ ապաւէնի էր հյ. *գարստի և հարց է, թէ կարո՞ղ էր այս ձևից էլ յառաջանալ գարի, ինչպես որ յունարէնի մէջ χριθή>*χρῑθ ձևից յառաջացել է χρῑ. (Walde, 969, Boisacq, 517, Horn, § 657 և Kluge, 176): Կայ նաև ալբան. drîθ «գարի», որ բստ Jokl, IF, 30, 202 հաստատում է նախաձևի g'h նախաձայնը (տե՛ս Pokorny, 1, 611՝ որ հայերէնը համարում է ոչ-հնդեվրոպական. համմ. վրաց. քերի, բայց հայերէնի ցեղակցութիւնը ընդունում է Meillet, Dict.-étym. lat. 438):— Հիւբշ. 432:

Առաջին անգամ Աւգերեան, Բազմաբ. չփ. և կշռ. 62 համեմատեց յն. χριθή բառի հետ: Klaproth, Asia polygl. 1823, էջ 114 օսս. chor, վրաց. keri, լտ. hordeum և էջ 101 գերմ. Gerste, օսս. chor բառերի հետ: Pictet, 1, 270 օսս. chor, վրաց. քերի ձևերի հետ կցում է պրս. خوار xwār «ուտելիք» բառին: Kuhn, KZ, 11, 387 հանում է *ghars, ghvars արմատականից: Հիւբշ. KZ, 23, 30 կցում է լտ. hordeum «գարի» բառին, իբր հնխ. ghardha ձևից: Canini, Et. étym. 238 պրս. kar «բրինձ» և սանս. gâritra «գարի» բառերի հետ: Տէրվ. Լեզու, 1887, 119 համեմատում է նոյնպէս հնխ. ghardha ձևից, ուր «ր-ի քով dh ինկած է»: Հիւս. § 430 յն. χρεα: Հիւնք. գերի բառից:— Bugge, KZ, 32, 5 ենթադրում է ghrīd նախաձևը, որից վերջաձայնի անկումով յառաջանում է հյ. գարի, բայց կասկածում է նաև, որ մի գուցէ բառս կովկասեան լեզուներից փոխառեալ լինի: (Կովկասեան լեզուների մէջ ունինք վրաց. մինգ. լազ. սվան. քերի, ինգ. քեր. ափխազ. ակեր, բոլորն էլ «գարի» նշանակութեամբ և ձևով այնքան մօտիկ հայերէնին): Scheftelowitz, BB, 29, 50 յն. σῖαι, սաս. ōkai «գարիի ապուռնձ» բառին ցեղակից: Patrubány, SA, 2, 13 և ՀԱ, 1908, 187 սանս. vār «ջուր» բառի հետ՝ իբր «գարեջուր շինելու յատուկ բոյս»: Մառ, Основ. таблицы, էջ 4, կցում է վերի կովկասեան ձևերին և արաբ. شعير ša'īr և երբ. שְׂעֹרָה sə'ōrā «գարի» բառերին, սեմական արմատը դնում է šḳr, իսկ յաբեթական արմատը՝ aḳr, որից առաջանում են վրացական ու հայկական ձևերը: Նոյն հեղինակը ՀԱ, 1921, 81 ուելացնում է և բասկ. gari «ցորեն»: Öštir, Btrg. Alarod. 55, 110 բասկ. gari, ափխազ. aker, վրաց. քերի «գարի», ալբան. kaδ- «աչքի գարիկ» են: Pictet, բ. տպ. Ա. 341 երկար խօսում է յն. χρῑ, կելտ. ceri համեմատութեան վրայ, իսկ Բ. էջ 410 գարօղի միացնում է կելտ. ceria, գալլ. cerevisia, յն. οἶνος χρίθινος, «գարեջուր» բառերին:

Գիւմ.—Պլ. (հին լեզուով), Տփ. գարի, Ալշ. Ախց. Աբլ. Երև. Թբլ. Կր. Մշ. Ննխ. (գիւղերը), Սեբ. Սչ. գ'արի, Ռ. քարի, Հմշ. կարի, Զթ. գ'արը՛, գ'այը՛, Չեմ. գ'այի, Շմ. Սլմ. Վն. կ'արի, Դրբ. կ'ա՛րի (Թաղոտ գիւղ՝ կ'էօ՛րէ), Մրղ. կ'արի՛, Մկ. կ'արը՛, Տիգ. քարի. Ոգմ. գ'ա՛րէ՛, Ագլ. գէ՛րի, Զղ. գ'որի:—Նոր բառեր են՝ գարեհաւն, գարիկ, գարուկ, գարուկներ, գարեցագարի. գարեճոց, գարեփշրուկ են:

Փոխ.—Հայերէնից փոխառեալ է երևում արաբ. جعرة ja'ra «մի տեսակ գարի, որի հատիկները խոշոր և շատ սպիտակ են լինում» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 799): Այս բառը կարելի չէ որևէ արաբ արմատով մեկնել, կայ արաբ. jer արմատը, բայց սրա նշանակութիւնները (աղբ, կղկղանք, յետոյք են) բոլորովին անյարմար են նախորդին:

ԳԱՐԻԷԼ «աղօրկելի». ունի միայն Բառ. երեմ. էջ 63.—ինչ լինելը յայտնի չէ:

ԳԱՐԻԿՊԵՏ «պարսկական պետական մի աստիճան է». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Անան. գիտ. 25:—Թերևս նոյն է կոռգպետ բառի հետ, որ տե՛ս:

ԳԱՐԻՇԱՏ «անփուտ փայտ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած

Խոր. աշխ. հրտր. Սուքր. էջ 44 «Ալլ աշխարհ Հաքեր (ի Հնդիկս), ուր լինի գարիշատ, որ է փայտ անփուտ, և սնկրուեղ»։

ԳԱՐՀԱՅԻԿ «մորմոքիլ, սիրտը այրիլ՝ տոչորիլ». նորագիւտ բառ, որ երկու անգամ գործածուած է հայ ոսկեդարեան մատենագրութեան մէջ. «Յորժամ ի միտ առնուցուս զպատիւ այնոցիկ, որ զուզողութիւնն ի գլուխ հանին, չմաշիցի՞ս առուել... Ո՞չ քան զտանջանսն՝ այն ևս չար լինիցի քեզ, զի տեսանիցես և գարհայցիս։ Եթէ այժմ յորժամ տեսանիցէ ոք զառաքինիս ի պատիւ ելեալ, թեպետև չլկիցի իւիք, սակայն քան զամենայն պատիժս զայն չար համարի». Ոսկ. պօղ. Ա. էջ 715 (այսպէս ըստ էջմիածնի № 1382 ընտրելագոյն ձեռագրի, 1213 թուականից. մինչ տպագիրն ունի յար հայիցիս). «Եւ ապա զինքն հազար ամն զեղջ և ապաշաւ լինիցի առ ի գարհայելոյ իւր յուղիղ յարարածսն, զոր աղաւաղեալ կամակորիցէ» նոյն. էջ 127 (ձեռագիրը և ՆՀԲ ունին առ ի գար հայելոյ. տպուած է առ ի դար հայելոյ. պէտք է կարդալ իբր մի բառ՝ վերի ձևով)։

Մինչև այժմ միայն Եղնիկի ընթերցուածը յայտնի լինելով՝ ՆՀԲ մեկնում էր գար «կոր, ծուռ, թիւր». արմատ բառից՝ խանգար, խելագար, ցաւագար «...յն. ղօրիէ՛ս, լտ. curvus, torvus»։ Սրանով բառս միանում էր գար «հիւանդութիւն» բառի հետ։—Եղնիկի հրատարակիչները ընդունելով, որ բառը նշանակում է «ծուռ», փոխել են դար՝ անշուշտ կապելով դար, դարիվայր, դարիվեր բառերին։—Ոսկեբերանի նորագիւտ բառով այս բոլորը փոխւում և վերածւում է վերոյիշեալ ձևին՝ ըստ Հ. Ակինեանի (Նամակ էջմիածնից, 1927 թ. մարտ 30)։

+ԳԱՐՇ, ի հլ. «պիղծ, զզուելի» Յոբ. ժե. 16. Ագաթ. Ոսկ. ղկ., որից՝ գարշիլ զզուիլ, գանիլ» ՍԳր. Ագաթ. եփր. Համաբ., «պղծիլ, ապականուիլ, շնալ» Կանոնք թագ. 408, գարշել Օր. է. 26, գարշանալ Գ. թագ. իա. 26. Եզեկ. է. 17, գարշեցուցանել ՍԳր., գարշութիւն ՍԳր., գարշեցուցիչ Ես. կզ. 5, գարշելի ՍԳր. Ագաթ., գարշատեսիլ Ոսկ. յհ. ա. 25, գարշելիօրէն (նոր բառ) ևն։

= *Բնիկ հայ բառ՝ հնխ. g²hers- «սարսափ, զզուանք» բառից. ժառանգներն են լիթ. grasà «զզուանք», grasùs «զզուելի», grasaũs «զզուիլ», մրգ. garst «ապականեալ, կծուածք», գերմ. garstig «կեղտոտ, տգեղ» հիւլ. gersir «դաժան, դառնաբարոյ», լտ. fastidium «զզուանք, հակակրութիւն» (Pokorny, 1, 610)։ Հնխ. rs>հյ. րշ ձայնափոխութեան համար հմմտ. tṛs-> թառամ և թարշամ։ Այս մեկնութեան առաջին հեղինակն է Bugge, KZ, 32, 35, որ գնում է գերմ. garstig։ Աւելի լետոյ Meillet, MSL, 8, 280 և 9, 151 լտ. horreo, սանս. hrsyati, լիթ. garsus ձևերի հետ։ Հիւբշ. 432 մերժում է ձայնաչրանական և նշանակութեան տարբերութեան պատճառաւ։ (Իրօք որ առաջին երկուսը տարբեր են և պահանջում են ձառ ձևին, իսկ վերջինը Pokorny, 1, 610 յիշուած միւս բառերի հետ ցեղակից է հալ բառին)։*

Դդ համեմատում է պրս. غرش γirš «գարշիլ, զզուիլ, գանիլ» բառի հետ։ ՆՀԲ «լեռս քարշիլ իրրև ի գիշոյ կամ խորշիլ»։ Justi, Dict. kurde, էջ 310 և 331 քրդ. قریش qyriš «ապահոութիւն, ապր», كريز keriz «սառահակ», kurēž kirin «ապաւանել» և كريژى kurēži «ապահոութիւն» ձևերի հետ համեմատում է պրս. كرش، كرش، كرش، كرشى «ապահոութիւն?», ավար. qeriš, կիւրին. qurüš և հյ. գարշ։ Տէրվ. Altarm. 78 հյ. բռասել, բասմանել, գազաշիլ, գարգաշեալ, գարշ ձևերի հետ նոյն է գնում սանս. harš «շշմիլ, սոսկալ, մազերը ծնկոտիլ, ուրախանալ են», լտ. horreo (<horseo) «գոռալ, սարսափիլ» են ձևերը։—Bugge, KZ, 32, 35 գերմ. garstig «զզուելի» կամ յն. ἀϊσχρός «գարշելի» բառերի հետ՝ գ յաւելուածով։ Meillet, MSL, 8, 280 և 9, 151 լտ. horreō, horridus, horror, սանս. hršyati, լիթ. garssus ձևերի հետ։ Հիւբշ. 432 չի ընդունում այս մեկնութիւնը՝ թէ՛ ձայնաբանական և թէ՛ նշանակութեանց տարբերութեանց պատճառաւ։ — Հիւնք. խորշիլ բառից։ Pedersen, Հալ. դր. լեզ. 127

սանս. hṛṣyati «սարսափում է» (ըստ Տէրվ. և Meillet)։—*այց Meillet, Dial. indoeur. 85 հրաժարում է իր մեկնութիւնից, իրր. անստոյգ։ Karst, Յուշարձան, 404 սումեր. gargig, gagig «չարութիւն, ցաւ» բառի հետ դնում է Գագիկ (անունը) կամ գարշ։ Մատ. ՅԲՕ, 18, էջ 168 վրաց. գերշի, հյ. գէշ, միտրաշում՝ גרים grīsīn, արաբ. جارش jāriš բառերի հետ. ՀԱ, 1921, 81 բասկ. gaizto «գէշ, վատ» բառի հետ, իսկ Новый Востокъ, 1924, № 5, էջ 324 յն. χάρις, լատ. gratia «շնորհ» բառերի հետ։

Գիւր.—Բայական ձևով ունինք Հճ. գարշել (բայց սա ծագում է *գառշել ձևից, ըստ ո-րում, հյ. r>Հճ. յ, իսկ n>Հճ. r), Ոզմ. գ'ʻարշել. — ածական գարշելի ձևն ունին (գրականից փոխառնել) Նախ. (քաղաքը) գարշէլի, Ախց. Խրբ. Կր. Մշ. գ'արշէլի, Ալշ. Նախ. (գիւղերը), Սեբ. գ'առշէլի, Սչ. Խարշէլի, Մկ. կ'արշէլը՛.—իսկ Վն. բայի ձևը իրրև ածական կամ մակբայ է գործածւում. օր. «Փողնի շներ գարշել գարշել կոռնայինն»։

ԳԱՐՇԱՊԱՐ, ի–ա *հլ.* «ուրթի կրուկ, ուրթի հետք» ՍԳր. Ագաթ. Ոսկ. յհ. ա. 2, որից ենդազարշապար Ոսկ. ա. տիմ.։

Հիւնք. հյ. Խարբ և պրս. Խիր պաշ «մի տեսակ օձ» բառից։

+ԳԱՐՈՒՆ (սեռ. գարեան, բայց հների մօտ իրրև սեռական գործածւում է գարեայնոյ. ինչ. «Աւուրք գարնայնոյ» Թուց ժգ. 21, «Ծաղիկ գարնայնոյ» Իմ. բ. 7, «Բոյսք բողբոջաց գարնայնոյն» Ագաթ. «Ի սկզբան գարնանոյն» Եւս. քր.) «գարուն, առջի պահար» ՍԳր. ածանցման մէջ մտնում է երեք ձևով.—1. առանց սղման, այն է գարուն ձևով, միայն գարունաբեր (Ագաթ.) բառի մէջ. 2. սղմամբ՝ գարն-. ինչ. գարեայնի Ագաթ. Կոչ., գարեանալ Փիլ. նխ., գարեագուշակ Նար. առաք. 424.—3. -ան մասնիկով՝ գարեան—.ինչ գարեանաբեր Լաստ. Սկևռ. Շար., գարեանալ Փիլ. նխ., գարեանամուտ Երզն. երկն. գարեանագայլ Նար. ևն։

= Բնիկ հնդեւրոպական հայերէն բառ, որի ցեղակիցներն են սանս. वसन्त vasantá, զնդ. vaŋhar-, vaŋhri, հպրս. vāhara, պհլ. vahār, պրս. بهار bahār, օսս. valjāg, գնչ. varno, յն. ἔαρ, ἦρ, հոմեր. ἠέαρ, հալ. vesna, ռուս. весна «գարուն», լիթ. vasarà «ամառ», լտ. vēr «գարուն», ռում. vară «ամառ», հհիւս. vár, հիսլ. vār, հին կիմր. guiannuin, նոր կիմր. gwanwyn, կորն. guaintoin «գարուն»։ Հնդեւրոպական առաջին նախաձևն էր ᵘĕsr, որի հետ կար նաև ᵘēsr և սրանից կրճատուած vēr. բառի բունն էր r/n, այն է ուզ. ᵘeser, սեռ. ᵘesnes. բառի վերջաձայն r ամանց մօտ փոխանակուեց n-ով և այսպէս յառաջացան վերի ձևերից շատերը (տե՛ս Walde, 819, Boisacq, 210, Horn, § 243, Trautmann, 356, Pokorny, 1, 310, Ernout-Meillet, 1045)։—Հայերէն բառի բացատրութեան համար ամէնից առաջ պէտք է որոշել արմատական ձևը։—Եղանակների անուննները ազգած են իրար վրայ. այսպէս՝ ամառն—ամարան, ձմեռն—ձմերան նոյն ձևն ունին և իրենց հոլովման ձևը ազգած է գարուն և աշուն բառերի վրայ, որոնք բոլորովին անկանոն կերպով լինում են գարնան-աշնան։ Նոյնաձև են դարձնալ ուղղականները. գարուն և աշուն։ Արդ՝ սրանցից ո՛րը որի վրայ է ազգած, որիշ խոսքով գարուն բառի մէջ -ուն մասնի՛կ է, թէ՞ արմատին է պատկանում։ Հաւանական է առաջինը, որով արմատը կդառնայ *գար. և այս ձևը կարող է կապուիլ հնխ. vesr ձևի հետ, անցնելով vesar>*զեաար>*գաար>*գար ձևերից։ Սրանցից առաջինը գտնում ենք արդէն յունարէնի մէջ (ἠέαρ< vesar), երկրորդը լիթուանիերէնում, երրորդը նման է հպրս. և պհլ. ձևերին, իսկ չորրորդը (*գար)՝ հասած է հիսլ. vār ձևին։—Հիւբշ. 432։

Հներից վանակ. վրդ. մեկնում է «որ գայ ի յարումն» (Ալիշան, Հին հաւ. 136)։ Նոյնը նաև Տաթև. հարց. 197։ Ոմն Գ. Կ (Արշալոյս արարատեան թերթում, 1843, № 130)՝ գեղուն բառից։ Windischmann, 7 մեկնում է ուղիղ կերպով՝ լտ. ver, յն. ἔαρ։ Նոյնը կրկնում են Lag. Urgesch. 878, Տէրվ. Altarm.

51, Նախալ. 65 և այլն։ Հալաճեան, Արեւելք, թ. 1893, նոյ" 10 գայ արիւն։ Հինդ. գառն բառից։ Յ. Խ. Մ., Պատմ. գրակ. էջ 16 ճապոն. 𐎲𐎢 haru «գարուն»։ Karst, Յուշարձան, 416 մոնգոլ. xabur, բաբելաթ. kabar, xabar, ճապոն. haru «գարուն»։ Մարտիրոսեան, ՀԱ, 1924, 455 հաթ. karū «կանուխ գալը»։—Patrubánu, IF, 14, 60 կցում է սանս. ghrāti «փչել» և յն. ὀσφραίνεσθαι «հոտոտել» ձևերին։—Պատահական նմանութիւն ունի չիչէն. ինգուշ. gura «գարուն»։

ԳԻՒՒ.—Տփ. գառուիւ, Ալշ. Ախց. Խրբ. Կր. Մշ. Սեբ. գ'առուն (սեռ. Ալշ. գ'առուիվա), Սչ. առչի գ'առուն (ապդուած Բրբ. ilk bahar համանիշից.— bahār բառը Թէև պրս. նշանակում է «գարուն», բայց Թուրքերէնում յատկացուած է Թէ՛ գարնան և Թէ՛ աշնան. զանազանելու համար ասում են ilk bahar «գարուն», son bahar «աշուն», բառացի «առջի գարուն, վերջի գարուն»), Երև. Ջղ. գ'առուիւ, Հմշ. կառուն, Տիգ. fmռուն, Ջթ. գ'ապոն, գ'այօն, Ոզմ. գ'ապուն, Ագլ. գ'մ'-բուիք, Մկ. կ'մբուն, Ղրբ. կ'մ'բուիք, Սլմ. Վն. կ'մբիւն, Մրզ. կ'մառիւն, Մղր. գ'հօ'-բուիք, Հճ. գ'այուն։ Նոր բառեր են՝ գարնցցան, գարնանի, գարնավար, գարունքագեմ, գարունքաճան, գարունքանալ, գարնագարի, գարնակ են։

Փոխ.—Քրդ. كەرنامۆت kernamut «գարնանամուտ». յատկապէս Justi մեկնում է «մարտի 20-ի տօնի անունը, երբ քրդերը գնում են վրանները բնակելու և ուր տանում են իրենց հօտերը արածացնելու»։ Քրդ. բառը յայտնապէս փոխառեալ է Հյ. գարնամուտ ձևից, որ համաձայնուած է գարնանամուտ բառից։ (Justi մեկնում է քրդ. ﻛ ker «էշ» և արաբ. موت mavt «մեռանիլ, մահ» բառերից, իբր «l'âne ne meurt, էշը չի՛ մեռնիլ»!!!)։

*ԳԱՒ «գինու կամ ջրի փարչ». նորագիւտ. բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. փետր" 1 «Բերեալ նոցա սեղան և գինի, զոր կերան արբին և յագեցան. և ընդ առաւօտն յարուցեալ տեսին զգաւսն և զսեղանսն լի նոյն բարութեամբն»։ Նոյնը ունի նաև Տաղ. «Շուտով հասեալ գան ու կըթղայն»։

=Պրս. ﮔﺎو gāv «է տեսակ ինչ արծաթի կամ ոսկի սկահի գինւոյ, ի ձև եզին». պրս. բառը գալիս է ﮔﺎو gāv «կով, եզ» բառից, ուստի հայերէնը ուշ ժամանակի փոխառութիւն է։—Ա՛Հ.

Այս մեկնութիւնս տե՛ս իմ Գաւառական բառարան, էջ 221 բ։ Նոյնը անկախաբար ունի Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 127 աւ։ Պատահական նմանութիւն ունին արաբ. գրֆ «ունկով աման» (Նոթայր, Բառ. ֆր. amphore բառի տակ) և ն. ասոր. kavva «ջրի փոքր աման»։

ԳԻՒՒ.—Կենդանի է և գործածական շատ բարբառների մէջ. ինչ. Ալշ. գ'ավ են, են։

*ԳԱՒԱՂ (սեռ. -ի) «բազէի էգ ձագ». մէկ անգամ ունի Մագ. քեր. 240=Երզն. քեր. «բազէի արական՝ ճուռակ... իսկ շահենի և գաւազի՝ քուպիճ»։

=Պրս. *gavaz հոմանիշ ձևից փոխառեալ. այս ձևը աւանդուած չէ պարսիկ գրականութեան մէջ, բայց հաստատւում է հայերէնի հետ նաև վրաց. ვაზაზი գավազի «բազէ» բառով։ Պարսկերէն կայ گواش güvāš «փոքր որձ բազէ», որ Թերևս ուղղելու է ﮔﻮاز gavāz. ՆշՒ էլ ունի պրս. կիավէզ ձևը (իմա՛ guvaz), որ սակայն բառարաններին անծանօթ է։—Հիւբշ. 264։

Հիւբշ. ZDMG 35(1881), 657 մեկնեց պրս. güvāx ձևով։

*ԳԱՒԱՁԱՆ, ի-ա հլ. «անասուն քշելու փայտ. 2. մարդ ծեծելու փայտ. 3. ծեծ, հարուած. 4. խրատ. 5. իշխանի կամ Թագաւորի մականն, կրօնաւորի գաւազան. 6. իշխանութիւն». ՍԳր., «7. ծառի հիւղ, ոստ» Վրք. Հց., «8. ցեղ, զարմ, ցեղարանական ցուցակ» Սեբեր. Բրս. յուզիտ. Սամ. երէց., «9. եպիսկոպոսի կառավարած Թեմը» Օրբ. Հրատ. էմինի. էջ 101, «10. ծիածանի իւրաքանչիւր գոյնի շերտը» Վեցօր. 115 («Յորժամ ազեղն յամպս երեսաց երին երին գունովք զգաւազանսն ձգելով.—ըստ գեղեցիկ դիտողութեան Ս. Վ.

Նազարէթեանի, Պատկեր, 1893, էջ 132)։ Նոյնը նաև Շիր. 45. որից գաւազանակիր Մ. Մաշտ. 184 ա, գաւազանաբուխն, գաւազանաճեռն, գաւազանահմայութիւն, գաւազանանձն, գաւազանասաստ, գաւազանաւոր, գաւազանել, գաւազանեւգութիւն, գաւազանագիրք, բոլորն էլ յետին։

= Պհլ. *gavāzan «եզ քշելու գործիք, որ մի երկար փալտ էր՝ ծայրը խփան անցկացրած». այս պհլ. բառը աւանդուած չէ, բայց նրա դէմ կան պրս. چوب gavāza, որ և گاوزن gāvzana, چوگ gavāz «էշ կամ եզ քշելու խփան», գնդ. gavāza «եզ քշելու գործիք», երկակի գործածութեամբ՝ «եզ քշելու խփան և մարակ» (Bartholmae, 511), սանս. gáājana (<gavājana) «արջառ քշող». մեկնւում է gāo, gāv «եզ, կով, արջառ» և az, aj «վարել, քշել» բառերից։ Իրանեանից փոխառեալ է նաև ն. ասոր. gävăzä, lävăzä «գաւազան»։ Համմ. խաթազան։—Հիւբշ. 126։

Իրանեան ծագումը նշանակում է հներից Մագ. քեր. 229 «Իսկ մեր ի Պարսից բազում ինչ ընտանեաբար ուսեալ զգեստս, որպէս գուտա և ոիզէ, մարքաբ, աւազան ...գաւազան՝ որ է վարիչ արջառոյ, խարազան՝ որ է վարիչ իշոյ և այլք այսպիսի բազում, որ գրեթէ հասարակորդ է լեզուիս մերոյ. սոյնպէս և մեր առ նոսա»։ Համամ. քեր. 268 արմատը դնում է գաւ նախդիրը։ Ուղիղ է Տաթև. ձմ. լդ. «գաւազան, այսինքն որ հարկանէ գանբանս»։—Նորերից ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ՝ դնելով պրս. gavāza, բայց սխալ է սրա հետ յիշել նաև պրս. ջեվկեան։ ՆՀԲ-ից յետոյ է Böttticher, Arica, 75, 221, որին յաջորդում են Lag. Urgesch. 951, Müller, SWAW. 42, 253, Justi, Zendspz. 103, Պատկանեան, Փորձ, 1880 մարտ, էջ 84, Տէրվ. Մասիս, 1882 ապրիլ 26 են։ Կոստիկեան, Արեւելք, 1899, № 4060 պրս. քեվազէ կամ խեվազէ «հովուական ցուպ» (ԳԴ քեվազէ «կուժ», իսկ խեվազէ չունի)։ Այս համեմատութիւնը մերժելով Յ. Վ. Յակոբեան, Ծագիկ, 1899 նոյ'' 4 դնում է պրս. gāvzana։ Քիրաքեան, Արիահայ բռ. 114 գնդ. gavasna «արջառաջիլ» (ըստ Bartholomae, 510 բառիս իմաստը անյայտ կամ անստոյգ է)։

ԳԻՒՂ.—Գրեթէ ամէն տեղ պահուած է «կրօնաւորի գաւազան» նշանակութեամբ. այսպէս՝ Տփ. գավա՛զան, Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Ջղ. Սեբ. գ՛ավազան, Մրղ. կավազան, Ննխ. Պլ. Ռ. Ֆավազան, Շմ. կ՛ավազան, Ոզմ. գ՛ումգազան, Մկ. կ՛ումգումն, Տիգ. Ֆումգումն, Ղրբ. կ՛ըվա՛զան, Հմշ. կավազօն են։ Բնիկ «հովուի գաւազան» իմաստով է Սլմ. կ՛ումգազան. յատկապէս Ջէյթունի բարբառը որոշում է գ՛ավազօն, գ՛ավազոն «վարդապետի գաւազան» և գ՛ազվօն, գ՛ազվոն «հասարակ գաւազան, փայտ, ցուպ»։ Նոր բառեր են՝ գաւազան Ղրբ. «որթատունկի մատ կամ վազ, որ նոր են տնկում», գաւազանապտուղ, գաւազանափուռ։

ՓՈԽ.—Ուտ. kävăzän «գաւազան» (եկեղեցական բառ)։

*ԳԱՒԱՔ «բաժակ». Բրս. սղ. ա. ուրիշ վրկայութիւն չկայ։—Այժմ սովորական է արեւմտեան գրականում, մինչդեռ արեւելեան գրական լեզուն ունի բաժակ։

= Յն. γαβάθα «ափսէ՝ խոր պնակ, թաս կամ չանաղ, bowl» (Sophocles, էջ 322. այդէն գործածուած 301 թուականից). նոյն. γαβάθα «չանաղ», γαβάθι, γαβαθάκι «փոքր չանաղ», որոնք ծագում են լտ. gabata, gavata համանիշից։ Լատին բառի ծագումը անստոյգ է (տե՛ս Walde 331)։ Նրանից են յառաջացած ֆրանս. jatte, հրդ. gebiza, gebita, թրք. چاناق qavata, ոմկ. gavata «ալյն, մեծ դաւաթ» և ուրիշ գանագան ձևեր (համմ. Gustav Meyer, Türkiše Studien, SWAW, 1893, 128, Marcel Cohen, BSL, № 81, էջ 110)։—Աճ.

ՆՀԲ (նաշակ բառի տակ) լծ. յն. κύαθος «գաւաթ»։—Հիւնք. լտ. cavatus «գոգնալ, գոգաւոր», caveus «տման խնցեղէն՝ գոգաւոր», յն. κύαθος «բաժակ, ջրոյ, դինւոյ», տճկ. գավաթ։ Յ. Վ. Յակոբեան, Բիւզանդիոն, № 742 երբ. կապիա, արաբ. քուպաթ «գաւաթ»։ Patrubány, ՀՄ, 1908, 154 հնխ.

vəbha- «հիւսել» արմատից! Ուղղութիւնը (տե՛ս ԳԲ էջ 307 և 1405) լտ. գապաթա:

ԳԻՒ.—Ննխ. գավաթ (գիւղերը՝ գ՛ավաղ՛), խրբ. կր. Ջղ. Սեբ. Սչ. գ՛ավաթ, Ռ. խավաթ, Շմ. կ՛ա՛վաթ, Ագլ. գա՛վաթ, Գոր. կ՛ոմվոր. Տիգ. խոմվոր, Ղրբ. կվ՛վաթ:—Նոր բառեր են՝ ծննդգաւաթ, հարևանգաւաթ, գաւաթլակօտ. հմմտ. նաև գաւաթ Պո. «աղբիւրի առաջի աւազանը, գուռ», ոճով՝ գաւաթի մօտիկ Ննխ. «հարբեցութեան նախից է ընկած, գինեմոլ» (հմմտ. նյն. γαβάθισμα «հարբեցողութիւն»):

ՓՈԽ.—Ուտ. գամաթ «ջրամաններ»:

ԳԱԻԱԿ, ի–ա հլ. «ձիու և ուրիշ կենդանիների եռևի կողմը» Եւս. քր. ա. 23. Խոր. գ. 9. անարգաբար նաև «մարդու յետոյք» ՋԲ և ԱԲ (առանց վկայութեան), Վրդ. առ. 96 ունի կնոջ համար, բայց անարգակա՞ն է: Բառիս արմատն է *գաւ, որ առանձին գործածուած չէ. որից գաւեղ «լայն և պարարտ գաւակ ունեցող» Շնորհ. առակ. 57: Պարզ արմատը պահում է վրացին:

ՆՀԲ, որից նաև Հիւնք. լտ. cauda «պոչ» բառի հետ Bugge, IF, 1, 445 և 454 համարում է *գանակ ձևից յառաջացած և համեմատում է սանս. jaghána- «յետոյք» և յն. κοχώνη «աճուկ, ցայլք» բառերի հետ Pedersen, Հայ. դր. լեզ. 48 սրանց ուզում է աւելացնել սանս. jangha «ոլոք», գնգ. zanga «կոճ», լիթ. žengiù «քայլել»: Lidén, Arm. Stud. էջ 32 ենթադրում է *գաւ արմատից (որ ուղիղ է. նոյնը նաև Petersson, KZ, 47, 247) և համեմատում է կիմր. gafl «եղան, իգական անդամ», մ. իռլ. gabul, gobul, ն. իռլ. gabhal «եղան, ցայլք», հրպ. gabala, գերմ. Gabel «եղան», սանս. gabhá- «բունդ» են բառերի հետ, իբր հնխ. g²habh- արմատից:—Պատահական նմանութիւն ունի արաբ. كفل kafal «գաւակ» (Կամուս, թրք. թրքմ. Գ. 338):

ԳԻՒ.—Ռ. խավագ, Ախց. Կր. գ՛ավակ, Ղրբ. գ՛ովակ, Ջթ. գ՛ավօգ, գ՛ավոգ:

ՓՈԽ.—Վրաց. Թուշ. ցავა գավա «անասունի գաւակ, ողնաշարի ծայրը». փոխառեալ են մեր գաւ արմատից:

ԳԱԻԱՆԱԼ «անանիլ, nutriri, ali», որից գաւացուցել «անուցանել, nutrire, alere», գաւացուրիւն «անուցում, nutricatio», գաւացումն «անունդ, nutrimentum»: Այս բոլորը ունի միայն Rivola, Բառ. հայոց, 1633, էջ 70:

*ԳԱԻԱՌ, ի–ա հլ. «նահանգ կամ նահանգի մի բաժինը» ՍԳր. Կոչ. Փարպ. Եղիշ., որից գաւառակ Բուզ., գաւառական Յհս. Թ. 22, Եւս. քր., գաւառակողմն Բուզ., գաւառակոյտ Ա. մակ. դ. 1, գաւառապետ ՍԳր., գաւառապետութիւն Եւս. պտմ., բարձրագաւառ Եփր. պհ., բնագաւառ Խոր., շարագաւառեայ Առ որս., վերնագաւառ Ա. մկ. գ. 37, դ. 1. Բուզ.: Նոր բառեր են՝ ծայրագաւառ, գաւառաբարբառ, գաւառաբանութիւն են:

=Կովկասեան կամ խալդեան ընտանիքից փոխառեալ բառ է. հմմտ. վրաց. ցავარი գվարի «տեսակ, ցեղ, սեռ, ընտանիք», ցავარიանი գվարիանի «ազնիւ ընտանիքից, ընտիր, ցեղընտիր», ցავრობა գվարոբա «սեռ. բնակիլ, ապրիլ», ცავრტომობა գվարտոմոբա «ծագում». Թուշ. ցორ գոր «ընտանիք, ցեղ»: Այս բոլորը ունենալով աւելի ընդհանուր և նախնական նշանակութիւն, չեն կարող հայերէնից փոխառեալ լինել—Աճ.

Klaproth, Asia polygl. 102 պրս. kureh (իմա՛ ڪوره kūra «ընշանակէ զմի մասն ի հնգից մասանց աշխարհին պարսից») ՆՀԲ լծ. յն. χώρα «երկիր, գաւառ», Müller, SWAW, 88 (1877), էջ 13=գոթ. gauja, իսկ յն. χαμαί «յերկիր» կասկածելի է: Մորթմանն, ZDMG, 26, 601 բնիկ. kaur: Մառ, ЗВО, 5, 319 իբր *գաուառ ձևից՝ կը-ցուցմ է գնգ. karšvarə, պհլ. պրս. kišvar «աշխարհամասն» բառերին: Հիւնք. պրս. خاور xāvar «արեւմուտք»: Scheftelowitz, BB, 28, 310 գոթ. gawi, գերմ. Gau «գաւառ» բառերից՝ առ մասնիկով. նոյնը BB, 29, 68 գերմանականից օսս. լեզուի մէջ մտած է համարում ցau «գիւղ» բառը: Ենսէն, Hitt. u. Arm. հաթ. waparā (?) ձևի

հետ՝ Patrubány, SA *1, 190* գնդ. karšvarə, պրս. kišvar «աշխարհամասն՝ նոյն ՀԱ, *1908, 213* հնխ. ghabh- «բռնել» արմատից. համմտ. լտ. habeo ևն՝ —Պատահական նմանութիւն ունին սամար. kapru, սասր. արամ. כפרא kafrā, եբր. כֹּפֶר kāfār «գիւղ»։

ԳԻՒ.—Ալշ. Երև. գ'ավառ «յետ բնկած տեղ», Մշ. գ'ավառ (Սասնոյ յատուկ անունն է)՝ նոր բառեր են՝ գաւառագիտուն, գաւցի ևն։

ՓՈՒՆ.—Կապադովկ. յն. gavári «տեղ, վայր» բատ Καρολίδης, Γλωσσ. συγκρ. էջ *168*։—Բայց այս բառը սովորական ձև չէ, այլ գրեթէ իրրև յատուկ անուն է գործածւում, ինչպէս Մուշի կամ Նոր-Բայազետի Գավառը.

*ԳԱՒԱՌՍ «խոշոր դեղին կորնկ. holcus lanatus L (ըստ Տիրացուեան, Contributo alla flora dell' Armenia, էջ *31*)» Ագաթ., գրուած կավարս, կապարս Բժշ.։

= Պհլ. gāvars, պրս. گاورس gāvars, քրդ. gāriz, gāris «կորնկ». պարսկերէնից փոխառեալ են նաև սասր. ܓܘܪܣ gāvars, արաբ. جاورس Jāvars «կորնկ»։—Հիւբշ. *126*։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ, յետոյ Lagarde, Gesam. Abhd. *27*։ — Հբաս § *434* յիշում է նաև իռլ. coirce, cuirce, curca «վարսակ», հգերմ. hirse, hirs. «կորնձա՛»։

ԳԻՒ.—Մշ. գավարս, գվարս (գ և ո՛չ բէ գ՛) «մի տեսակ կորնկ է՝ խոշորահաս, դեղնագոյն և քաղցրահամ»։

ԳԱՒԻԹ. ի, ի–ա հլ? «տան, ապարանքի կամ տաճարի բակ կամ նախասենեակ» ՍԳր. «ոչխարի փարախ» ՅՀ. *ժ. 1, 16.* նմանութեամբ «եկեղեցի, երկնից արքայութիւն» Կիւրղ. գանձ. Լմբ. սղ. և ժղ., որից՝ վայրագաւիթ Եզեկ. խէ. *1* (ի–ա հլ.), սուվրէազաւիթ Նար. խշ., նախագաւիթ *(նոր գրականում)*, նորագաւիթ *(գիւղի անուն՝ Երևանի մօտ)*։

Հներից Համամ. քեր. *268* արմատը դնում է գաւ նախդիրը (?)։—Նորերից Lag. Btrg. bktr. Lex. *29* գնդ. gaoyaoiti «արօտ», սնս. gavyūti «արօտավայր» բառերի հետ՝ Պատկանեան, Փորձ, *1880* մարտ, էջ *84* պրս. gāv «կով» բառից։—Տէրվ. Նախալ. *108*, vas «բնակիլ» արմատից, իբր> գահ–իթ> գաւիթ. «կրնայ նաև գնդ. գայա–իտի, հնդ. գայու՛տի «մակազատեղի» բառերուն հետ համեմատութեան բերուիլ և այն Թերևս աւելի հաւանականութեամբ»։— Հիւբշ. *126* մերժում է գնդ. և սնս. բառերի համեմատութիւնը, որոնք ո՛չ նշանակութեամբ և ո՛չ էլ ձայնափոխ համաձայն են հայերէնին.—Հիմնք. գօտի բառից։—Patrubány, ՀԱ, *1908, 154* հնխ. vəbhā- «հիւսել» արմատից։

ԳԻՒ.—Աւհասարակ պահուած է «եկեղեցու գաւիթ» նշանակութեամբ. այսպէս՝ Պլ. գավիթ *(հին լեզուով)*, ղավիթ *(նոր լեզուով)*, Ախց. Երև. ՋԹ. Կր. ՀՃ. Մշ. Ջղ. Սեբ. գ'ավիթ, Ռ. ղավիթ, Ասլ. գ'ավիթ, գ'ավի՛ ևն։

[ԳԱՒԻԿ «վին, քնար». սխալ գրչութիւնից յարմարացրած բառ է. մէկ անգամ ունի Պտմ. աղէքս. էջ *169* «էր աստանօր և գաւկայ արուեստն յարմարականք առ որ ինքնին հարեալ լիներ»։—ՆՀԲ և ԱԲ ենթադրելով ուղ. գաւիկ ձևից, համարում են «վին, քնար» նշանակութեամբ բառ, մինչդեռ մարդու յատուկ անուն է. ամբողջը բատ Տաշեան, Ուսումն. ստոյն Կալիսթ. էջ *142* պէտք է սըրբագրել այսպես. «էր աստանօր և Գաւկայ արուեստն՝ յարմարական քնար». համմտ. յունարէն քնադիրը՝ ἡν δὲ καὶ ἐνταῦθα ἡ Γλαύκου τέχνη, ἐναρμόνιος οὖσα...]

ԳԱՒՃԱՐԿԱՆ «փող, շեփոր». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Թլկր. *53* «Հրին զփող պատերազմին, զպաուկն ու զնաֆիրն, զգաւճարկանն»։

Ունինք պրս. گاودم gāv-dum «շեփոր», որ կազմուած է gāv «եզ» և dum «պոչ» բառերից։ Վերի գաւճարկան բառն էլ կարող է նոյն gāv բառից մի ուրիշ բարդութիւն լինել, եթէ չկայ սխալ ընթերցուած հարկանել բայից։

ԳԲԱՅԱԹ «տուն, բնակարան». անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Լաստ. ժբ. տպ. *1844*, էջ *78* «Ջայս լուեալ իշխանացն, գնացին առանց պատասխանի տալոյ յիւրաքան-

չիւր գբայաթ» (մէկ ձ. «գբայաթ, այն է տունդիս», իսկ մէկ ձեռ. բառի վրայ սրբագրում է «ի պալատս». ապուաժ է պալատս)։

Կայ արաբ. بيت bayt *«տուն, բնակարան», յգ.* بيوت buyūt *կամ* ابيات abyāt *«տներ»։*

ԳՈՒԱՂԵԼ. *գրուած նաև* **գոգուաղել, գլուրբուաղել, գդուղել, դղդուաղել, դդուաղել**.— *թէ՛ ձևով և թէ՛ նշանակութեամբ անստոյգ բառ. ՆՀԲ մեկնում է «գրգռիկօք շրջիլ, ցնցոտիս զգենուլ, հեռի լինիլ ի փափկութեանց», ՋԲ «առել զգգուանս, հեռի լինել ի փափկութեանց կամ ճնշել զանձն, վատիլ մարմնով», ԱԲ միացնում է երկուսն էլ, Նորայր, Հայկ. բառաքն. 7 «խեղճ ողորմելի հագնիլ կամ թափառիլ»։ Գործածուած տեղերը հետևեալներն են. 1. «ի գրգիս պատեալ, երիթացեալ, գդուաղեալ, բրդգդեալ, քանզի միշտ ի բանտի մեռանէր (Պօղոս)», Ոսկ. բ տիմ. էջ 210.— 2. «Պահք են և գրգուաղելն և գձձիլն առանց լուանալոյ և օծանելոյ» Մանդ. Հառք գ. էջ 36.— 3. «Դեմքն դեղնեալ (աղքատին) և թոշոմեալք, և ամենայն մարմինքն գդուաղեալք և երիթացեալք թափառիս» Մանդ. ե. էջ 52.— 4. «Անգիօղք և անբաղաք ընդ ամենայն աշխարհ շրջին (Հրէայք), ընդ ամենայն տիեզերս գդուաղեալք թափառականք» Ոսկ. ես. 385.—5. «Ջմուռւ ածիցէ զքաղաքին կործանումն և զկրումն խաչահանուացն, թէ որպէս գդուաղեալք թափառին տակաւին ևս ընդ տիեզերս» Դաւիթ քհ. մեկն. Եսայեայ։*

ՆՀԲ գրգլի, գրգլեակ «ցնցոտի» բառից։ ՋԲ գգուանք բառից։ Տէրվ. Նախալ. 55, 89 **դդուաղել, դդոյր, դդոռ, դդուռ**, *յն.* δδ;νομαι *«ցաւալ, խաղալ»*, *զնդ.* dvar, *սանս.* dhvar *են ձևերի հետ հնխ.* dhvar, dhru *«դիմել, թափառիլ» արմատից։ Աճառ. ՀԱ, 1899, 204 բ մեկնում է իբր կրկնաւոր և բնաձայն՝ գ արմատականից՝ ր և ու ձայնների յաւելումով։ Երբ բառի ուղիղ ձևը յայտնի չէ, այս մեկնութիւնը անտեղի է։*

ԳՈՒԻԵԼ *«փայփայել, շոյել, սիրել» ՍԳր. Ագաթ., «մեծարել, պատուել» Եփր. ե. և Բգ., որից* **գգուեցուցանել** *Մծբ.,* **գգուանք** *Նար. կուս.,* **գգուիչ** *Եփր. համաբ. Վրդն. պատմ.,* **գգուողական** *Մագ. և Երզն. քեր.,* **գգուումն** *Շնորհ. Քղբ.,* **գեռագգուել** *Նար. կուս.։*

ՆՀԲ Բուի հանել գոգ բառից։—Տէրվ. Նախալ. 81 **գգուել, նգովել, գոչել, գովել**, *զնդ.* zu, *հնդ.* hu, *հսլ.* zvati *«հնչել» բառերի հետ՝ հնխ.* qhu *արմատից։ Հիւնք. խուել բառից։* Bugge, IF, *1, 451 ընդունում է ՆՀԲ-ի մեկնութիւնը։ Աճառ. ՀԱ, 1899, 204 բ իբրև բնաձայն՝ գ արմատից՝ կրկնութեամբ և ու մասնիկով յառաջացած։—* Lidén, Arm. Stud. *էջ 95 դնում է հնագոյն *gugu- ձևից, որ միացնում է գոգ բառին։ Մառ,* Вступительныя и закл. строфы... Шоты, *էջ 19 (Тексты, XII) համեմատում է վրաց.* **გოგმანი** *գոգմանի,* **ნაგოგმანები** *սագոգմանների «քնքոյշ, հնար զդոյշ վարուելս բան»։*

ԴԱԱԿ, *ի–ա հլ ? «գլխարկ» Սեբ. Հրարկ. Պատկ. էջ 65. Պատմ. աղէքս. Յայտմ. Շնորհ. ընդհ. էմբ. պարգ., «ծաղիկների ընդունարանը, որի մէջ ծլում է ծաղիկը» Վստկ.։ Հին մատենագրութեան մէջ աւելի սովորական է գաւակ ձևը, որից* **գաւակկառոց** *«գլխարկավանդառների շուկայ» Արձ. 1348 թ. (Վիմ. տար. 169). կայ և Ղպակ Հ. կիլիկ., իսկ արդի գրական լեզուի մէջ ընդունուած է գդակ, որից* **գդակավաճառ, գդակակար** *նոր բառերը։*

=Մեր բառի հետ նոյն են վրաց. **გადაი** *գաղիա,* **ჭუდი** *ճուդի «գդակ, գլխարկ»,* **მეჭუდე** *մեճուդե «գդակ կարող», չեչէն. ճուդէ, մինգր. ճուդի, կխուդի, լազ. ճուդի, թուշ. ճուդ «գլխարկ, գդակ»։ Բայց ի՞նչ է սրանց յարաբերութիւնը հայերէնի հետ։ Նկատելի է թէ սրանք չունին –ակ մասնիկը և ներկայացնում են մեր արմատական ձևը. ուստի թերևս մեր գդակը փոխառեալ լինի կովկասեանններից կամ բոլորը միասին խալդիների՞ց։—* M. Riabinin, MSL, *10, 16 վրացի բառ կցում է պհլ.* xōd, xūd, *զնդ.* xaoδa, *հպրս.* xauda, *պրս.* xūd *«խոյր» բառերին, որոնք այստեղ մեզ հետ կապ չունին, ինչպէս կարծում է նաև Մառ,* ЗВО, *9, 306։ Վերջինս վրաց. բառի հին ձևը համարում է *գուա, որ*

գանում է հյ. գտակ <*գուտակ բառի մէջ։— Այս բոլորից դուրս ունինք նաև հյ. գուտի «գդակ, գլխարկ» ձևը, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Հաւաքարանի մէջ անուանց կաթուղիկոսաց Աղթամարայ, տպ. էջմիածին. 1316, էջ 19 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր, հտ. Բ. էջ 140) և որ կենդանի է մինչև հիմայ Վանի ու Մոկաց բարբառում կուտիկ ձևով և նշանակում է «վարդապետի ու քահանայի գլխարկ՝ սև բրդից հիւսուած. 2. գլուխը դնելու սաղաւարտ, գլխանոց», հմմտ. կոտիկ «չանաղ. 2. կանանց գլխակապի շրջանակը» ևն։

Նշբ լծ. fսակ, գտակ, կտակ: Scheftelowitz, BB. 29, 41 սանս. gudhyati և բելուճ. gud «հագնուիլ» բառերին ցեղակից՝ իբր բնիկ հայ բառ։

Գիմ.—Տփ. գդակ, Ախց. Կր. գ'դակ, Ննխ. Պլ. գդագ, Խրբ. Մշ. Սչ. գ'դագ, Ջղ. գ'դ'ակ. գ'ուդ'ակ, Վն. կտակ, Ոզմ. գ'ըդտակ, Մկ. կ'ըտmակ, Զթ. գ'օդօգ, գ'օդոգ, Շմ. fբակ. Երև. fբագ, Տիգ. fդmգ, Սլմ. f'ըդmգ', Ագլ. քէ'դոկ, Մրղ. բ'իդոյ. բ'իբոյ.—Ուրմիայում նշանակում է «սիւնի գլխափայտ».—Նոր բառեր են՝ գդակածալ, գդակաւոր:

*ԳՆԴՈՒԻՐ (սեռ. -այ) «յարձակող Քշնամի գունդ, հէն, աւազակ» Ա. Թագ. լ. 8, 15, 23. որանցից դուրս մէկ անգամ էլ գործածուած եմ գտնում Թէոդորոս Քոթենաւորի ս. Կուսի ներբողեանի մէջ, տպ. Վենետ. էջ 181 գնդուր ձևով։

=Եբր. גְּדוּד gəḏūḏ «յարձակող Քշնամի բանակ, աւազակների խումբ» բառն է, որ Ս. Գրքի յոյն Թարգմանութեան մէջ սխալ ընթերցմամբ սառադարձուած է γεδδούρ, իբր Թէ բնագրում լինէր גְּדוּר gəḏūr և այստեղից էլ անցել է մեր Թարգմանութեան։—Նոյն բառը սակայն Ա. Մնաց. ժբ. 21 ճիշտ սառադարձուած է γεδδούδ, ուրիշ ձեռագիրներ ունին στρατια, որից էլ հայերէնում նոյնը Թարգմանուած է «հէն»:

Ըստ ՀՀԲ բառ եբրայական։ ՆՀԲ եբր. կէտուր, կետօտ:

+Գեհ «ոլորած, պիրկ» Ճառընտ. «ծուռ» էլ. արիստ. 18, գրուած նաև գէհ «ծուռ» Վրք. և վկ. Ա. 514, որից՝ գեհուլ «ոլորել, ճմլել, ճնշել, հմմել» Դատ. ա. 30. Երեմ. դ. 19. Ողբ. ա. 20, գեհանիլ «գեհարանի մէջ պրկուիլ» Բրս. խ. մկ., գեհումն «սրտի ճմլուիլը» Խոսք. Սարգ., գեհոց «պրկիչ գործիք» Ագաթ. Եփր. վկ. արևել. 36. կթ. կամ գեհարան նոյն նշ. Ագաթ. Կորիւն, գեհակի «գեհարելով, կծկելով, շեղակի» ՋԹ, գեհաթիւր «ծռուռումուռ Աբ։— Այս առաջին ձևից դուրս արմատը ներկայանում է նաև ուրիշ մի քանի ձևերով. այսպէս՝ 2. **գել**, որ նախորդի սոորին աստիճանի ձայնդարձն է, դրաբարի մէջ առանձին պահուած չէ և կայ միայն գաւառականներում, ինչ. գել «չորացնելու համար ոլորուած ու պահուած բանջարեղէն (շնպ, աւելուկ, շրէշ ևն)». հմմտ. նոյնի Բրբ· հոմանիշը (Երևանի Թուրքերի բարբառով) sarəm, որ ծագում է sar «փաթաթել» արմատից՝ նոյն արմատից -ար մասնիկով գրաբարն ունի գալար, որ տե՛ս վերը առանձին։ 3. **Գիլ** «գլորուիլ», որից գլել. գլան, գլոբել, կամ՝ 4. **Գիղ** «գլորուիլ», որից *գղել, պահուած միայն գայթագղել բառի մէջ. երկուսն էլ տե՛ս գիլ արմատի տակ։ 5. **Գաղձ**. աճած է ձ աճականով գալ արմատից և պահուած է միայն գաղձն «պատատուկ» բառի մէջ (տե՛ս այս բառը)։ 6. **Գեղձ**. նախորդից տարբեր բառ, որ կազմուած է գել արմատից ձ աճականով և պահուած է միայն գեղձ «պատատուկ, բաղեղ» բառի մէջ (տե՛ս առանձին)։—Այսպէսով այս արմատը իր դանազան ձայնդարձներով և աճումներով համապատասխանում է ճիշտ ղել արմատին, որից ունինք ղեղ, ղալար, ղեղձ, ղաղձ ձևերը։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. velu- արմատից. արմատների նախաձևերն են՝ գրել<հնխ. vel, գիլ<vēl, գալ <vl. ցեղակից լեզուներն ունին նոյն արմատից շատ հոխ ածանցներ, որոնցից յիշենք կարևորները. սանս. válatē «դառնում է». valitá- «դարձած, ծռած», valayati «շրջել. գլորել», ūrmi «ալիք. ծալք», valli «մագլցող բոյս», գնդ. vərənavaiti «ծածկել. պատել. փաթաթել», vāraṃi «ալիքն», յն. ἑλύω «ոլորել. գլորել. գլորուիլ. փաթաթուիլ», εἰλέω «գլորել. փաթաթել. շրջապատել. մագլցիլ», ἑλίσσω «դարձնել. ոլորել. գլորել. գալարուիլ», ἕλιξ «ոլորուն. գալարուն. խղնջաձև. ճախարակ. բաղեղ.

ջրաբաշխական մեքենայ», εἵλιγξ «*որթի ճիւղ*», εἰλεός «*որջ, փաթաթուող մի տեսակ որթ, փորի խիթք*» (= Մշ. Ոգմ. Վն. գալար). լտ. volvo «*ոլորել, գլորել, դարձնել*», convolvulus «*բազեղ, գաղձն*», volumen «*ոլորք, գալար, գրքի հատոր*», ալբան. val'ɐ «*եռացող ջրի պղպջակ, ալիք*», vjet «*փախել*», գոթ. walwjan «*ոլորել, գլորել*», waltjan «*գլորիլ*» (t ածականով, հմմտ. գաղձ և գեղձ՝ ձ ածականով), հրգ. welzan «*գլորել*», wëllan «*ոլորել, գալարել*», գերմ. walzen, wälzen «*գլորել*», wallen «*եռալ, ծփիլ*», walze «*գլան*», հլ. valiti «*գարձնել, գլորիլ*», բալտպր. val «*գլան*», առս. валъ «*ալիք, գլան*», валунъ «*կոպիճ, կլորիկ գալլափաղ*» (=հյ. գիլ), валить «*տապալել, գլորել*», լիթ. veliù, vélti «*ոտքի տակ գլորել, խճճել*», apvalùs «*կլոր*», հհբւս. valr «*կլոր*», հիսլ. velta, vëlta «*գլորել*», հիսլ. fillim «*ծալել*», անգլսք. wealtan «*գլորել*», vielwan «*գլորել*», կիմբր. olwyn «*անիւ*», ևն ևն (*տե՛ս* Walde, *836—7*, Boissacq, *224*, Trautmann, *349*, Kluge, *517*, Pokorny, *1, 298—304*, Ernout-Meillet, *1090*):—Հիւրշ. *433, 435*։

Հ. Գ. Աւետիքեան, Բացատր. շար. էջ *195* գելարան դնում է գայլ «*բերանակապ*» բառից՝ նշելով գելուլ կցում է արգելուլ և գալարել բառերին։— Հիւնք. դնում է գալարել բառից։ Միւսները տե՛ս գալար, գիլ բառերի տակ։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Meillet, MSL, *8, 163*. բայական ձևի մասին խօսում է անդ՝ *16, 244*. աւելի երկար Osthoff, SA, *2, 63—64*։

ԳԻՒՒ.—Գեղեցիկ ձև է գելել Մշ. «*մի բան երկու կարծր բանների մէջտեղ դնելով սեղմել, պրկել*», կայ նաև գելբնակ «*փայտ անցուցանել ի մէջ չուանի՝ առ քաջ ոլորելոյ և պնդելոյ, և ի պէտս պնդագոյն կապելոյ զբեհինս վաճառաց*» (նշելով գրում է գելբռնակ. իմա՛ գելարանակ, ինչպէս ունի Նոր բայր. Բառ. ֆրանս. bille բառի տակ. Մկ. կ՚ոլորուն)։

ԳԵԼԱՍ (սեռ. -ի) «*իւղը հանելու համար ծեծած և թրջած կտաւատ*» Կանոն. (*մէկ անգամ միայն*)։

Բաղիշեան, Առաջն. *մանկանց. էջ 154* գրում է գելած կամ գիլաս և համարում է «*քուսպ, կտաւատի դիրտը*», որից հետևում է թէ բառս հանում է գելուլ բայից (*հմմտ. անդ՝ էջ 161, գելած կամ քուսպ արմատի*)։ Ուղուրլեան (*տե՛ս ԳԲ, էջ 308 և 1405*) պրս. گراوس garāvus «*ձիթհանքի ճախարակ*» բառին կցելով՝ կարծում է, որ այս նշանակութիւնը տալ պէտք է գելաս բառին։ Այս կարծիքը բոլորովին սխալ է, որովհետև՝

ԳԻՒՒ.—կենդանի են տակաւին բատ ՆՀԲ գելաս, գելիազ, բատ Ազգ. հանդ. Գ. *էջ 46* գիլաս ձևերը՝ վերի նշանակութեամբ։ Իւղագործութեան արհեստի և գիլասի պատրաստութեան համար մանրամասն տե՛ս Ազգ. հանդ. (անդ)։

ԳԵԼԻԿԱՆ *տե՛ս* Գայլիկոն։

*ԳԵՀ «*փոս, վիհ, գերեզման, կարկառակույտ*» (բատ ՆՀԲ և ԱԲ), «*վիհ*» (բատ Հին բռ.). գործածում են միայն Երեմ. *խթ. 3. եզեկ. լթ. 11, 15* (Գեհ գերեզման Գովգայ). Լմբ. սղ. *ժէ. Սիւն. քեր. 206* (յիշում է իբրև հաւաքական բառ)։

=Եբր. גַּיְא gaia, gēia, gai «*ձոր*» բառն է, որ գործածուած է Ս. Գրքի եբրայական բնագրի համապատասխան տեղերում։ Յունարէն թարգմանութեան մէջ այս բառը տառադարձելով եղել է γαί, γέ, γή և հասկացում է իբր «*խոնաւ, խոռոչ*» (Sophocles, *322*)։ Սրանից էլ յառաջացել է հյ. գեհ «*փոս, վիհ*» (իսկ «*գերեզման*» իմաստը ՆՀԲ հանում է «*Գեհ գերեզման Գովգայ*» դարձուածից)։— Ձևի մասին տե՛ս տակը ԳԻՒ։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ, Karst, Յուշարձան, *404* սումեր. gi, gē, «*անդունդ*»։ Ղափանցեան, ՅՒՕ, *23, 360* համարում է բնիկ հայ՝ իբր հնխ. vitro- ձևից, որի համապատասխան իրանական ձևից փոխառեալ է հյ. վիհ։ (Բայց հնխ. vitro- պիտի տար հյ. *գիւր!)։ Թիրեաքեան, Աբրահայ բռ. *115* պրս. چاه čāh «*ջրհոր*» բառից փոխառեա՞լ է դնում։

ԳԻՒՒ.—Վերոյիշեալ բառի հետ ձևով և ի-

մասսով նոյն է Հմշ. գեհ «բարձունք», պէտք է դնել գահ «բարձունք, ժայռերի գլուխը» բառից. ըստ այսմ եբր. բառը, ինչպէս ասել ենք, գործ չունի հյ. գեհ բառի հետ, բայց ձևափոխուած է նրա համեմատ՝ անշուշտ յետնաբար։

ԳԵՀ *«ոչխարի հօտ» Վստկ. 215, 216, 217. Թր. քեր. 20. Սիւն. քեր. 210. Սմբ. դատ. 211. Վրդ. առ. 238, 256, 259 (շորս անգամ). Տաթև. ոսկիփ. 480, «ոչխար» Բրս. մրկ. 78, որ և գիհ Վրդն. առ. 160, 188 (ձեռագիրներից ոմանք ունին գեհ, ոմանք՝ գիհ)։—Սրանց հետ հմմտ. գիւուկ լ. Ղկ. կամ գվուկ Երև. «ոչխարների փարախ», որ գրված է Ղրբ. կեօկ։*

ԳԵՀԱՆՔ *«վարձկանք». ունի միայն Բառ. Երեմ. էջ 65, բայց նոյնը էջ 62 մեկնում է «վարձունք», որի ինչ լինելը յայտնի չէ։*

*ԳԵՀԵՆ *(սեռ. ի, յետնաբար՝ ի, ո հլ.) «դըժոխք, հանգերձեալ կենաց անշէջ հնոցը» ՍԳր. Ագաթ. (կրկնագրում՝ Յուշարձան, էջ 113 բ). Կիւրղ. եւ. Փարպ. գրված է գեհենան «հասարակ հնոց» նշանակութեամբ՝ Ճառընտ. որից ունինք՝ գեհենաբորբոք Լաստ., գեհենազարդ Գնձ. Մեսր. եր., գեհենաժառանգ Անան. եկեղ., գեհենաճոխ Վրդն. պատմ., գեհենակից Սարգ. յուդ. Ճառընտ. են։*

= *Եբր.* גֵּי הִנֹּם gēi-hinnom *ձևից, որ Ս. Գրքի միջոցով տարածուել է ամէն կողմ. ալապէս՝ յն.* γέεννα, *լտ.* gehenna *(ֆրանս.* géhenne, *իտալ.* geenna), *ասոր.* ܓܗܢܐ gēhannā, *արաբ.* جهنّم jahannam *(աղաւ. թրք.* jehennem, jehellem, jahandam), *գոթ.* gaiainnan, *ռուս.* геенна *են։ Եբրայեցի բառը նախապես աւտում էր* גֵּי בֶן הִנֹּם gēi ben Hinnom *և կամ պարզապէս* gēi-Hinnom *և նշանակում էր «Հիննոմի ձորը», որ Երուսաղէմի պարիսպների տակ գտնուվալը էր։ Աւետեր էր, որ Հրեաները Մոդոքին տաճար շինեցին և մարդագոհ հաստատեցին. Յոսիա թագաւորը կործանեց տաճարը և այդ տեղը գարշանքի աւարկայ դարձնելու համար՝ քաղաքի կեղտաթափութիւնները այնտեղ բերաւ ու տարածեց։ Այսպէսով նոյն տեղը կեղտի, դժուանքի ու տանկման նշան դարձաւ, յետոյ էլ տասցաւ «չարչարանք» և «դժոխք» նշանակութիւնները (տե՛ս* M. Devic, Dict. étymol. des mots franç. d'origine orientale, Paris, *1876,* gêne *«նեղութիւն» բառի տակ, որ ծագում է գեհենից)։—Հիւրշ. 345։*

Նախ Schröder, Thesaur. *էջ 45 դրաւ եբրայեցերէնից։ Նոյնը յետոյ ՀՀԲ, ՆՀԲ և միւսները։ Հետաքրքրական է Մելքոն անունով տէօֆէնի «ձուլիչ» մի արհեստաւորի յօդուածը, Մասիս, 1882, յունիս 22, № 3217, ուր Հ. Ս. Տէրվիշեանի ուշադրութիւն է հրաւիրում ի մէջ այլոց* գեհեն և jahannam *բառերի նոյնութեան վրայ։ Տէրվ. Մասիս, 1882 յուլ" 17 տալիս է ուղիղ մեկնութիւնը։*

ԳԻՒ.—Իբր կրօնական բառ կայ մի քանի ասացուածների մէջ. ինչ. Շմ. կէհէնի կրակը, Ալշ. գ'էհէն են։

ՓՈԽ.—Ըստ Մառ, Иппол. *63 ն ձայնի պատճառաւ հայերէնից փոխառութիւն է վրաց.* გეჰენია *գեհենիա, որ և* გეენია *գեենիա «գեհեն, դժոխք»։*

ԳԵՀՈՆ. *անատոյգ բառ, որ գրուած է զանազան ձեռագիրների մէջ՝ գոհոն, գեղհուկ, գեղակ ձևերով, իբրև «մի տեսակ թռչուն». մէկ անգամ ունի Խոր. աշխ. յիշում են ՆՀԲ և ՋԲ, իսկ ԱԲ ջնջած է։*

+ԳԵՂ, ո հլ. *«գեղեցկութիւն» ՍԳր. Ագաթ. Եփր. ծն., «գեղեցիկ դէմք կամ տեսք» ՅՀ. կաթ. Նար., որից՝* գեղագոյն *«գեղեցկագոյն» Ոսկ. փիլիպ. է., գեղանի Ուռպ. Վրդն. ծն., գեղապանծ Նաւում. գ. 4. Եզեկ. ժզ. 15. Մծբ. էջ 297. Կոչ. էջ 12. Ագաթ. (բառիս վրայ առանձին մի քննութիւն ունի Վարդանեան, ՀԱ, 1913, 295),* գեղատախտակ *Ագաթ.,* գեղաւոր *Ոսկ. Եփես.,* գեղեցիկ *(մանիկի համար հմմտ. երգեցիկ, դիեցիկ, բնկեցիկ) ՍԳր. Ոսկ. Ես. Եւս. քր. Եղն., գեղեցկագոյն Իմ. է. 29, գեղեցկանալ ՍԳր., գեղեցկատեսիլ Ագաթ., ագեղ ՍԳր. Եւս. պատմ., ագեղանալ Ագաթ., անգեղեալ Խոր., լանջագեղ Երեմ. բ. 32, կանաչագեղ Վեցօր., հասակագեղ Վեցօր., մարմնագեղ Ոսկ. Ես., մեծագեղ Վեցօր., գանգրագեղ Բուզ., լուսագեղ Լաստ., գեղագանութիւն Ճշ. 550 ա. կրկնութեամբ՝* գեղգեղափայլ *«գեղեցկափայլ» Կրպատ. ատ., գեղգե-*

դեալ «գեղեցիկ զարդարուած» թէօդոր. ի կոյն. այլանդակ ձև է գեղեղել «գեղեցկացնել» ԱԲ։ Նոր բառեր են՝ գեղագիր, գեղագրութիւն, գեղագրական, գեղատեսակ, գեղեցկագիտութիւն, գեղարուեստ, գեղարուեստագէտ, գեղարուեստական, գեղարուեստասէր են։

= Բնիկ հայ բառ՝ հնխ. vel- «առնել» արմատից։ Յեղակից ձևերն են՝ լտ. voltus, vultus «գեմ, կերպարանք, երեսք», կիմր. gweled «առնել», բրբտ. guelet «տեսք», հհիւս. līta, անգսք. wlītan «առնել, դիտել», գոթ. wlits «կերպարանք», հհիւս. litr «արտաքին երեսք, գոյն», հսաքս. wliti «կերպարանք, երեսք, փայլ», անգսք. wlite «երեսք, փայլ», wlitu «ձև, կերպ» են (Pokorny, 1, 293)։ Նշանակութեան զարգացման համար հմմտ. զտ. տեսք, տեսօք, տեսքոտ «գեղեցիկ», սանս. kṛpā- «ձև, կերպարանք» և «գեղեցկութիւն», ինչպէս նաև վերիններից «փայլ, գոյն» նշանակութիւնը։ —Ա.Ճ.

ՆՀԲ, Peterm. 25, Windisch. 17, Gosche, 45 յն. κάλλος «գեղեցկութիւն» և καλός «գեղեցիկ» բառերի հետ։ Peterm. 23 նաև գեղեցիկ համեմատում է թրք. güzel հոմանիշի հետ, իբրև տեղափոխութեամբ և իկ մասնիկով ձևացած։ Canini, Et. étym. 186 յն. καλός։ Meillet, MSL, 8, 290 սանս. váras «լաւագոյն», հբգ. wēla, գոթ. wiljan, հսլ. voliti են։ (Այս բառերը ծագում են հնխ. vel «ուզել, փափագիլ» արմատից, որ իմաստի զարգացմամբ կատարած է «ուզածը վերցնել, ընտրել, հաւանիլ», որից էլ «լաւ, գեղեցիկ», ինչ. գերմ. wohl, անգլ. well են. տե՛ս գեղ բառի տակ Kluge, 535)։—Հիւնք. յն. καλός «գեղեցիկ»։ Patrubány, SA, 1, 191 յն. κάλλος «գեղեցկութիւն», սանս. kalyas «առողջ», kalyānas «գեղեցիկ»։ Նոյն, ՀԱ, 1906, 344 յն. γελᾶν «փայլուղ», հբգ. glanz «փայլուն», գերմ. glimmen, glühen «փայլիլ», հսլ. glādŭkŭ «ողորկ» են բառերի հետ, իբր նախնական «փայլուն» նշանակութեամբ։ Սագրեան, ՀԱ, 1909, 335 տումբ. gili «շնորք, գեղեցկութիւն»։—Karst, Յուշարձան, 401, 404 տումբ. g'ili «կանաչ, գեղեցկութիւն», 418 ալպտր. körük, körk «գեղեցկութիւն», տարտ. görçek «գեղեցիկ»։ — Աբեղեան, ՀԱ, 1926, էջ 276 անգեղեայ ուզում է մեկնել «գեղեցիկ», որի նմանը չկայ, իբրև անգին բառի ոճով կազմուած։

ԳԵՂԱՋԱՏ կամ **ԳԵԼԱՋԱՏ** «արու ձի». մէկ անգամ ունի Մագ. քեր. 240 = Երզն. քեր. հոմանիշների պարզ մի շարքի մէջ՝ «եւ ձիոց՝ յովատակ, նժոյգ, փահլ, երիվար, գեղագատ (կամ գելագատ). այսոքիկ արականք են»։

ՆշՀԲ և սրանից առնելով ԱԲ մեկնում են «արու ձի ընտիր, իբր ազատ ի գելոցե կամ սեպհական ազատաց»։

ԳԵՂԱՐԴՆ (-դան, -դանց, -դունք կամ -դեան, -դեանց, -դեամբ) «մեծ նիզակ» ՍԳր. Պիտ. գրուած է նաև գեղեարդն Եփր. Համաբ. 238 (երեք անգամ), 241, որից գեղարդեաւոր Կիւրղ. թգ. Մագ. քեր. Շնորհ. հրեշտ., գեղարդեախոց Գնձ., գեղարդեապատառ Ճառընտ.։—Բառիս համար Բառ. երեմ. էջ 65 տալիս է գիղէարտէ տարօրինակ ձևը, որ և մեկնում է «գեղարդն»։

ՆշՀԲ արդն գեղեցիկ կամ գելիչ։ Հիւնք. պրս. գելան «մեծ կամ առուար» + արդն բառերից։

***ԳԵՂԳԵՂ** «անիւ, գլորում, թաւալում կամ դիւրագլոր, դիւրաշրջիկ». ունի միայն եղեկ. ժ. 13 «եւ անուացն անուն կոչեցաւ գեղգեղ», որից առնելով Դիոն. երկն. ժե. «կոչեցաւ նոցա, որպէս ասէ աստուածաբանն, գեղգեղ. և երևի այս բուռ երրայեցւոց ձայնին վերաշրջութիւնս և վերայայտնութիւնս»։ Հին բռ. դնում է «Գեղգեղ. հոլովումն», իսկ Բառ. երեմ. էջ 69 «Գաղգաղ. անիւ»։—Ուրիշ վկայութիւն չկայ։

=Եբր. גַּלְגַּל galgal «անիւ» բառն է, որ գործածուած է Ս. Գրքի եբրայական բնագրի համապատասխան տեղը. յոյն թարգմանութեան մէջ առաւադարձուած է γελγέλ, որից էլ հայերէնը։ (Sophocles, 326 յիշում է բա-

որս և մեկնում է «ἀνακλιτικός, τροχός, թաւլում, հոլովում, անիւ». բայց վկայութեան մէջ չի յիշում Եզեկ. ժ. 13, այլ միայն առա-Դիոն.)։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ և Հիւնք.։

ԳԻՒՒ.—Ըստ Ս. Մովսիսեան (Նամակ 1928 օգոստ. 23 և 1933 մարտ) նոյն է Բլ. գալգալ (քրդ. gälgäl) «փոքրիկ սայլ, սայլակ, կաշկա, որի անիւները առանց դոզի են և գործածւում է թեթև ծանրութիւններ կրելու համար, ձեռնասայլակ»։ Բայց եբր. բառը ինչպէ՞ս կարող է գոնուիլ Բուլանըխի գաւառականում։

+ԳԵՂԴԵՂ *«բնկբիկ՝ խաղուն ձայնով երգելը». այս բառը միայն մէկ անգամ եմ գրտնում գործածուած մեր մատենագրութեան մէջ. Կանոն. էջ 51 «Զսաղմոսն գեղգեղով հընչեցուցանեն» (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 159). որից* գեղգեղել *«գեղեցիկ երգել» վեցօր. Սերբ.,* գեղգեղանք *Ոսկ. ես.,* գեղգեղումն *Ճառընտ. Շնորհ. եղես. այս բոլորը կրկնուած են գեղ «երգ» պարզ արմատից, որ առանձին չէ գործածուած, բայց պահուած է գեղօն «երգ» բառի մէջ. Ոսկ. եփես. (անատոյդ է Ոսկ. ա. տիմ. ը. գեղօն կամ գեղաւ բառը, որի իմաստն էլ յայտնի չէ)։*

=Ձևով և նշանակութեամբ նման է հնուելալ բառերին. հիսլ. gjalla «հնչել», galdr «երգելը, կախարդական երգ», անգսք. giellan «բղաւել», galan «երգել», gealdor «կախարդական երգ», հհիւս. gala «գոչել, երգել», հրգ. gellan «հնչել, գոչել», galan «երգել», nāhti-gala=գերմ. Nachtigall «սոխակ», ռուս. nagàlitь «աշխատանքի ժամանակ երգել», լիթ. gulbinti «գովել, փառաբանել» են։ Այս բառերի նախաձևը Pokorny *դնում է* ghel- *«գոչել, կանչել», որից հանում է նաև յն. χελιδών «ծիծեռնակ», «grive, սորդիկ,* turdus»։ *Մեզ համար դժուարութիւնը նախաձայնի մէջ է։ Արդարև* g^1h *տալիս է հյ. ձ (=յն. χ),* g^2h *տալիս է ընդհանրապէս գ, բայց e-ի մօտ՝ ջ (համմտ.* ջեր, ջերմ*), ուստի այստեղ մենք դրժ ունինք կա՛մ մի երրորդ տեսակի gh-ի հետ և կամ ներկայ ենք մի առանձին ձայնաբոստական պարագայի, որի պայմանները մեզ յայտնի չեն։ Համմտ. նաև* գերդաստան *(յաւելուածում)։—Ա.ճ.*

Տէրվ. Altarm. *76* աքաղաղ, աքլոր, աքար *բառերի հետ առնս.* gar *«գոչել, ծանուցանել», գնդ.* gar *«երգել»։ Նոյն, Նախալ. 33, 51, 55, 81 հնխ.* ghar *«գեղգեղել» արմատից. համմտ. երգ.* gellen *«շչել, սաբ ձայն հանել», առնս.* gharghara *«քրքիչ», հհիւս.* gala *«երգել». նոյն բառն է նաև հյ. գեր գործել «ողբալ»։ Հիւնք. նախորդ գեղգեղ «թռչուլում, հոլովում» բառից։*

Գեղեի, ի–ա *հլ. «կոյս աղջիկ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գոնում եմ գործածուած եւս. քր. բ. 124 «Փիղամոն... զառաջինն ի Պիւթացիս կարգեաց պարս գեղեաց». համմտ.* Larousse-ի Հանրագիտակը, Philammon *առնտան տակ.* On lui attribuait l'institution *des choeurs de jeunes filles.*

+**ԳԵՂԶ** *«բաղեղ, պատառուկ» Նաւմ. ա. 10. Պիտ. ուրիշ օրինակ չկայ.—Տիրացուեան,* Contributo alla flora dell Armenia *ճանաչում է՝ էջ 81 գեղձ* „convolvulus altaeoides L", *դաշտաց գեղձ* „convolvulus arvensis L", *էջ 30 գեղձի* „taxus baccata L", *էջ 34 գեղձ բարձրաձիգ* „smilax excelsa L"։

=Բնիկ հայ բառ. կազմուած է գեղ<հնխ. vel *արմատից. ձ ածանցականով. համմտ. հյ. գաղձն, յն. ἕλιξ և լտ.* con-volvulus *համանշնները և արև. լիթ.* gẽležuones, gẽležūnes *«գեղձք» ընդհանուր բալթիկ-սլաւեական նախաձևը՝* *gelžā- *(տե՛ս* Trautmann, *84,* Pokorny, *1, 612 և 632), որոնք բոլոր կազմուած են նոյն հնխ.* velu, vel, vol, vl *«ոլորել, փաթաթել» արմատից։ Աւելի ընդարձակ տե՛ս* գեղ։*—Հիւբշ. 433։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Հիւբշ. անդ։

+**ԳԵՂՁ** *«մարմնի մէջ խոյլ,* glande*» Նիւս. բն. դ. և իէ. ուրիշ վկայութիւն է ածանցներ չունի. նոր գրական լեզուի մէջ կան միայն մի քանի գիտական բառեր, ինչ.* գեղձային, գեղձաւոտ *կամ* գեղձոտ, գեղձախտ։

= *Բնիկ հայ բառ՝ հնխ.* gʰelgʰa *ձևից, որի միւս ժառանգներն են՝ հյ.* žlëza, *ռուս.* железá, *սերբ.* žlijèzda, *չեխ.* hliza «գեղձ»: *Թէև* ghe- *պիտի տար հյ.* ջ, *սակայն յաջորդ շչական ձայնի պատճառով մնացել է կոկորդական (կատկային). տե՛ս այս մասին* Meillet-*ի օրէնքը՝* MSL, *13, 243—5 և իմ դիտողութիւնները՝ ՀՍ, 1905, 254 և* MSL, *14, 288:—Հիւբշ. 433:*

Այս մեկնութիւնը տուաւ Bugge, KZ, *32, 5 և* IF, *1, 440, որ ընդունեց նաև Հիւբշմանն:—*Meillet, Revue. crit. *1897, 388 (հյ. թրգմ. Բազմ. 1898, 120) մերժում է այս մեկնութիւնը, որովհետև հակառակ էր մինչև այն ժամանակ ծանօթ եղած ձայնական օրէնքներին, որոնց համեմատ* ghe- *պիտի տար հյ.* ջե-: Meillet-*ի առարկութիւնը անբաւարար է գտնում Հիւբշ.* IF, Anz. *10, 45: Սրա դէմ ընդարձակ պատասխան տուն է* Meillet, MSL, *11, 393. բայց նաւոյ,* MSL, *13, 244 (հմմտ. նաև* BSL, *16, № 57, էջ 101 և 17, № 59, էջ 64) գտնելով քմականների նոր օրէնքը, որա համեմատ ընդունում և հաստատում է վերի մեկնութիւնը:*

+ԳԵՂՋ *«սաստիկ փափագ» (մբ. սղ., որից՝* գեղձալ *կամ* գեղձիլ *«սաստիկ փափագիլ, փղձկիլ, վաղիլ» Պիտ. Պտմ. ազէքս. 69,* գեղձումն *«ուժգին փափագ, տենչանք, փղձկումն, գութ, արգահատանք» Նիւս. կազմ. Փիլ. լին. Պիտ. Լամբ. մատ. 381. Տօնակ.,* գեղձաւիճ *(գրուած գղձաւիճ) Աբան. էջ 354 (նորագիւտ բառ),* բնդ գեղձանիլ *«սաստիկ լալ, փղձկիլ» Ոսկ. մ. բ. էջ 739 և Բ. տիմ. ա. էջ 171 (առաջին վկայութեան մէջ բոլոր ձեռագիրներն ունին* բնդեղձանէր, *իսկ երկրորդից մի ձեռ.* բնդեղձանալ*). արմատն ունի ուրիշ կրկին նշանակութիւն՝ «փափագ և լաց, մորմոք». (*գեղձումն կերակրոյ *«ախորժակ» Նիւս. կազմ.). Հմմտ.* տեղչալ *«փափագիլ», Սուրմալուի գաւառականով «սիրտը կսկծալ, մորմոքիլ»:*

= *Բնիկ հայ բառ՝ հնխ.* vel *արմատից՝ աճած ձ աճականով. հմմտ. լտ.* volo *«ուզել», սանս.* váraṇam *«ընտրութիւն, փափագ», վրն.* vṛṇīté *«ընտրում, փափագում, սիրում է», գնդ.* var, vərənav- *«ընտրել. կամենալ», գոթ.* wiljan *«ուզել»,* waljan *«ընտրել», հբգ.* wëllan *«ուզել»,* węllen *«ընտրել», գերմ.* wollen *«ուզել»,* wählen *«ընտրել». հիւս.* val *«ընտրութիւն», լիթ.* vẽlyju, vẽlyti *«փափագիլ, տենչալ, ցանկալ, բարեմաղթել»,* viltis *«յոյս», հսլ.* volją, voliti *«ուզենալ, կամենալ»,* volja *«կամք», ռուս.* воля *«կամք, իղձ, հաճոյք». յն.* ἐλεϝθαι *«ուզել»,* ἔλδομαι, ἐέλδομαι *(<*fελδ- *աճած δ-ով) «տենչալ, ցանկալ, փափագիլ, բարեմաղթել»,* ἔλδαρ *«փափաք, իղձ»,* ἐλπίς *«յոյս» (աճած π-ով), հկրն. բրբտ.* guell *«լաւագոյն» են. տե՛ս* Walde, *855,* Boisacq, *239,* Trautmann, *348.* Pokorny, *1, 294,* Ernout-Meillet, *495:*

Նէի իրար հետից շարում է «իղձ և բաղձանք... առ գեղեցիկ... գեղմամբ սրտի կամ փղձմամն»: Bugge, KZ, *32, 5 և* IF, *1, 449 դնում է հսլ.* želěti, želati *«փափաքիլ» բառի հետ հնխ.* g²hel *արմատից: Այս մեկնութիւնը յիշում է նաև Հիւբշ. 433, նախորդ գեղձ «խոյլ» բառի մօտ:* Meillet, Revue crit. *1897, 388, թրգմ. Բազմ. 1898, 120 և* MSL, *11, 393 մերժից այս մեկնութիւնը և տուաւ վերի մեկնութիւնը: Այս մասին եղած վէճերը տե՛ս գեղձ «խոյլ» բառի տակ: Հիւբշ.* IF, Anz. *10, 45 համաձայնւում է ընդունելու գեղձ «փափագ» բառի համար կա՛մ* Bugge-*ի և կամ* Meillet-*ի մեկնութիւնը:* Scheftelowitz, BB, *28, 298 տանս.* upa-valhate *«հարձակուիլ»:* Petersson, Ar. u. Arm. Stud. *127—128 այս մեկնութիւններն ընդունում և նրանց վրայ աւելացնում է օսս.* varzum, varzin *«սիրել», որ դնում է հնխ.* ǫelgh, ǫolgh *արմատից:*

+ԳԵՂՄՆ *(-ման, -մանց) «բուրդ» Սղ. հա. 6. նոյ. դս. 336. նոր. Շար., որից՝* գեղմնաւոր *Դ. Յագ. գ. 4,* գեղմնաբարձ *նար. կուս* գեղմնաւէտ *ԱՔ,* ոսկեգեղմն *(նոր դրականում):*

= *Ինքիկ հայ բառ՝ հնխ.* velmn *ձևից. ցեղակիցներն ունին լտ.* vellus (<*vel-nos) *«գեղմ, բուրդ, մուշտակ»,* lāna (<*vlāna) *«բուրդ», գոթ.* vulla, *հրդ.* wolla, *գերմ.* Wolle (<*vlnā) *«գեղմ, բուրդ», հհիւս.* ull, *անգլսք.* wull, *անգլ.* wool, *հոլլ.* wol, *լիթ.* vilna *«բուրդի թել», լգ.* vilnos *«բուրդ», լեթթ.* wilna *«բուրդ», հպրուս.* wilna *«ըղեսա», հալ.* vlŭna, *չեխ.* vlna, *ռուս.* волна, *սերբ.* vũna *«բուրդ», իռլ.* oland, *կիմբ.* gwlan, *կորն.* gluan, *բրբտ.* gloan *«բուրդ», սանս.* ûrṇa (<*հնխ.* vl̥nā) *«բուրդ».* ūrṇāyu *«բրդե ծածկոց, խոյ, սարդ, ոստայն»,* ūrṇu, ūrṇāmi *«ծածկել, պատել», յն.* λῆνος, *դոր.* λᾶνος *«բուրդ». բոլորի նախնական ու պարզական արմատը համարում է հնխ.* vel, vol, vl *«պիշատել, պատառոտել, կոտրել, խուզել» (տե՛ս գայլ բառի տակ), որով բուրդը լինում է բան «կոտրած, խուզած», ինչպես է նաև հլ.* բուրդ *(իմա՛ «բրդել, բրդեալ, կոտրած»). տե՛ս այս բառը.* (Walde, *410*, Boisacq, *578*, Trautmann, *359*, Kluge, *535*, Pokorny, *1, 296*, Ernout-Meillet, *1082*)։—*Հիւբշ. 434։*

Lagarde, Urgesch. *230 սանս.* varmân, *որ ինքն էլ չէ ընդունած* Arm. Stud. *էջ 170 ցանկի մէջ։ Տերվ. Նախալ. 48 գառն և գաղտ բառերի հետ՝ սանս.* var, *դնդ.* var *«ծածկել, պահել», յն.* εἶρος *«գեղմ»,* ἀρήν *«գառն»։—Հիւբշ.* Arm. Stud. *24 դնում է կա՛մ սանս.* varman, *յն.* ἔριον *և կա՛մ լտ.* vellus *ևն (վերի ձևերը)։ Հ. Ս. Եազրճեան, Արեւելք, 1884 հոկտ՛՝ 17 սանս.* loman *«բուրդ, հեր»։ Յ. Աբղէդ. ՀԱ, 1896, 267 յն.* ἔριον։

ԳԵՂՆԻ, *որ և* **գեղնիկ** *կամ* **գղնի** *«հայ». այս հետաքրքրական բառը ունի միայն Բառ. հրեմ. էջ 67(երկիցս) և 63։*

ԳՆՂՏ. *նորագիւտ և անծանօթ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Պիսիդ. վիսյօր. տող 491 «Զգեղտ քայտս, կարմիրս, իբրև զհարսոյկ վառեալս». յոյնն ունի* στικτούς, ἐρυθροὺς, ὡς τὸ πῦρ ἐξημμένους *(թրգմ. խալատաբղէնս, կարմիրս, իբրև զհուր վառեալս)։ Ինչպէս համեմատութիւնից երևում է, հայերէնի մայր բառի համապատասխանը չկայ յունարէնում, և գեղտ թւում է թէ համապատասխանում է յն. στικτός բառին, այն է «պիսակախայտ, պուտ պուտ կետերով բծաւորուած, դոյնզդոյն»։*

ԳԵՂՑԵԼ. *անսովոր բառ. մէկ անգամ ունի Սիր. իթ. 5 «Ի վերայ ընչից մերձաւորին գեղցէ զձայն». յոյնն ունի «խռնարհեցուցէ». (καὶ ἐπὶ τῶν χρημάτων τοῦ πλησίον ταπεινώσει φωνήν). որով* **գեղցել** *լինում է «խռնարհեցնել, ցածրացնել, իջեցնել (ձայնը)»։ Կարող է սակայն այստեղ* **գեղցէ** *ձևը ապառնի լինել և ո՛չ թէ ներկայ. որով բայը կլինի *գեղուլ։*

Նշ՛ր դնում է **գեղցել** *և կապում է* **գելուլ** *կամ* **գեղձիլ** *«փղձկիլ» բայերի հետ. վերջինիս համար հմմտ. «Աղաչեաց զարքայ և գեղձեցաւ, խռնարհեալ առ ոտս» Պտմ. աղէքս։ Ջ՛ր դնում է* **գեղցել** *«խռնարհեցնել». իսկ Ա՛ր բոլորովին ջնջում է* **գեղցել** *ձևը, բայց պահում է* **գեղուլ**։

ԳԵՂՕՆ *տե՛ս* **Գեղգեղ**։

ԳԵՄԱՒ *«գաւառ»*
ԳԵՄԱՒ *«գաւաթ»* } *այս երկուսը իրար հետևից ունի Բառ. երեմ. էջ 63. իսկ էջ 76 էլ* **գեմաո** *«գաւառ».—Հ՛ր դնում է մէկ անգամ* **գեմաո** *«գաւաթ» և միւս անգամ* **գեմաո** *«գաւառ», իբր Հին բռ.։ Բոլորն էլ անսովոր և խառնակ։*

Նորայր, Բանաս. 1900, 131 **գաւաթ** *ուղում է կարդալ «գաւիթ», որով յառաջանում է* **գեմաո** *«գաւիթ» և այս բառը կապում է Մագ.* **գամագա.** **գեմաւ** *«միջոց, մէջ» բառին։ Այս մասին տե՛ս* **Գեմոն**։

—**ԳԵՆԳԵՋԱԼ** *կամ* **ԳԵՆԳԵՋԵԼ.** *ունին միայն Հ՛ր և Ա՛ր, առանց վկայութեան և իրրև անսովոր բառ։ Հ՛ր մեկնում է «դրդուել կամ դայթակղեցուցանել կամ շարժել կամ խախտել կամ վառանգել զոք ի յընթացս»։ Նշ՛ր չունի։ Ա՛ր մեկնում է «դողդողալ»։ Նորայր, Բառ. ֆր. 221 ա «դեղևիլ, դողդոջել, երերալ,* chanceler»։ *Ուղիղ մեկնութիւնը տալիս են գաւառականները, որոնց մէջ գտնում ենք* **գենկեզել** *Խրբ. Ջրս.,* **գենկզել** *Ջրս.,* **կենեշկրենել** *Մն. «թախանձագին աղաչել, պաղա-*

տիլ», գենկեզեանք Խրբ. «ազաչանք, պաղատանք», գենկիզ Ջրս. «գերիի պէս աղաչելով, թախանձագին պաղատելով», գենկէզ Ակն. «երկար և անիմաստ խօսքեր խօսող»։

=Համառօտուած է գետին կզիլ ձևից (իբր ի գուճս անկանելով՝ ծնկաչոք աղաչել)։—Աճ. Այս մեկնութիւնս տե՛ս իմ Գաւառական բառարանը, էջ 224։

ԳԵՆԳԵՆ «թթենի». *անստոյգ բառ. ունի միայն ՀԲուս. § 439, առնելով Բժշկարանից։ Համմտ. յաջորդը։*

ԳԵՆԳԻՒՆԷ «բոբւոյ արմատ». *ունի միայն Բառ. երեմ. յաւել. 566։ Տե՛ս և նախորդը։*

ՊԵՆԵՍԻՍ «հարազատ». մէկ անգամ ունի Եփր. Փիլիպ. «Աղաչեմ զքեզ գենեսիս, հարազատ լծակից իմ»։ (ՆՀԲ գրում է գենեսիս, ՋԲ՝ գենեսի, իբր թե բառավերջի ս ձայնը լինէր առաջին դէմքի ստացական յօդ, իսկ ԱԲ գենեսի՛ս իմ)։

=Յն. γνήσιος «հարազատ», γνήσιέ μου «հարազա՛տ իմ» (կոչական), ծագած γένος «ծնունդ» բառից։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ԳԵՌ *տե՛ս Գայռ։*

ԳԵՍՏՐԱՍ «որսորդ» *Վրք. հց. ձ. «Ջենովբաս՝ այր գեստրաս, որ թարգմանի որսորդ, այր իմաստուն». մի քանի անգամ ունի նաև Մագ. թղ. 234, 236, 239. նաև Հին բռ. և Բառ. երեմ. էջ 63։—Ուրիշ վկայութիւն չկայ։*

=Վերի բացատրութիւնից երևում է, որ օտար է. բայց ո՛ր լեզուից առնուած է, յայտնի չէ։

+ԳԵՏ, ո *հլ. (յետնաբար նաև ի–ա հլ.) «գետ» ՍԳր., որից՝ գետաբար Ոսկ. Երր., գետամեռ Ոսկ. Երր., գետավէժ Ագաթ., գետարծուի Ղև. ս. ժա. 13. Օր. ժդ. 13, գետափն Գծ. ժզ. 13, գետաբար Եւս. քր., գետեզր Թուց իբ. 5. Եւս. քր., խեցգետին Վեցօր., ձիագետի Պատմ. աղէքս., Միջագետ ՍԳր. և շրջուած՝ գետամէջ Եփր. Երր., գետոտայ «գետեր» Սոկր. 188, գետնետիլ «ոռոգուիլ» Հաւաք. 27, գետափնեայ (նոր գրականում), գետառ «տեղափոխուած գետի տեղը, ուր հերկում սերմանում են» Օրբ. էջ 167 (Տայ նախ զայգին մեծ որ ի Հալէից գետառին և յետոյ զգիւղն իսկ զՀալիս.—ԱԲ մեկնում է պարզապէս «գետեզր». վերի ձևով ունի Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 129, որ հաստատում են Մուշի և Երևանի բարբառները). բստ Ամատ. անդ՝ էջ 123 ունինք նաև գետ «ԴՋ ձայնին պատկանող մի նշանակի անուն» Մանրուս. գետնոխ «նոյն» անդ։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. vedo- ձևից. միս հնդեւրոպական լեզուներից հմմտ. սնս. udán «ալիք», udakâ «ջուր», udadhi «ծով», udanua «ամպ», udanyā «ծաթաւ», զնդ. udra- «ջրի կուղբ», յն. ὕδωρ (սեռ. ὕδατος) «ջուր», ὑδρία «ջրի դոյլ», ὕδρα «ջրի օձ», լտ. unda «ալիք», ոմբր. utur «ջուր», հիսլ. vatn «ջուր», vátr «թաց», հիսլ. usce «ջուր», գոթ. watō, հբդ. wazzar, գերմ. Wasser, անգլսք. waeter, անգլ. water «ջուր», հֆբրիզ. wēt, անդսք. waet, անգլ. wet «թաց», լիթ. wandů, լեթթ. údens, հպրուս. unds, wundan, ալբան. ujë, հալ. voda, ռուս. вода «ջուր», հալ. vědro «ջրաման», բուլգար. vada «գետ», փռիւգ. βέδυ «ջուր» (?), կամիս. wātar, սեռ. vetenaš «ջուր» (տե՛ս Walde, 850, Boisacq, 998, Trautmann, 337, Kluge, 519, Pokorny, 1, 252, Ernout-Meillet, 1082)։ Այս բոլորը ծագում են հնխ. ved, vēd, vod, ud, ūd ձևերից. հալիբէնի պէս e ձայնզարձն ունի հալ. vědro, փռիւգ. βέδυ (?), ինչպես և հֆբրիզ. անգլսք. և անգլ ձևերը. իսկ մեր «գետ» նշանակութիւնը գտնում ենք յատկապէս բուլգարերէնի մէջ։ —Հիւբշ. 434։

Klaproth, Asia polygl. *էջ 100 պրս.* kjet «ջրանցք»։ *Ուղիղ մեկնեց նախ* Windisch. *7, որ համեմատում է յն. ὕδ-ωρ և սանս.* udaka *ձևերի հետ։* Gosche, *64, 65 սանս.* udaka, *փռիւգ.* βέδυ, βεδύ «ջուր կամ օդ»։—Lag. Urgesch. *398 լտ.* unda, *հալ.* woda, *իբր* vad *արմատից։* Spiegel, Huzw. Gram. *160 զնդ.* vaiδi? Müller, SWAW, *38, 571, 576 են զնդ.* vaiδi, *պրս.* jōy «գետ»։ *Մորթմանն,* ZDMG, *26, 1872, 550 խալդ.* kidanu «գետ»։ *Հիւնք.* գետ, գիտեմ *բառից.* Karst, *Ծուշարձան, 404 սումեր.* g'ia', iid «գետ»։—*Վերի մեկնութիւնը գտնում է Հիւբշ. կասկածով, որովհետև*

միւս հնգևրոպական լեզուների մէջ ո՛չ ved- ձևն էր գոել և ոչ էլ «գետ» նշանակութիւնը. բայց այժմ այս երկուսն էլ գտնուած լինելով՝ կասկածի տեղիք չկայ այլ ևս: Այսպէս է մտածում նաև Scheftelowitz, BB, *29, 28*:

ԳԻՒ.—Ջղ. գ'ետ, Ախց. Կր. գ'էտ, Ալշ. Հճ. Մշ. գ'եդ, Ակն. Երև. Խրբ. Սեբ. գ'էդ, Ասլ. գ'է'դ, Վն. կ'ետ, Զրբ. Սլմ. կէտ, Մրղ. կ'էա, Համշ. կէդ, Տիգ. էէդ, Ոզմ. գ'իտ, Տփ. գիդ. Ագլ. գ'իտ, Մկ. կ'իտ: Նոր բառեր են՝ գետաոիլ, գետփոր, գետկալ, գետկապ, գետաբերուկ, գետուտի, գետատար, գետատուտ:

ԳԵՏԻՆ, n հլ. (Ագաթ. ունի դրծ. -of) «հողի երեսը» ՄԳր. Ագաթ. Ոսկ. ևս. Եւս. քր., որից՝ գետնաքիր Ագաթ., գետնագնաց Վեցօր., գետնախշտեայ Մծբ., գետնաղոչ «մի տեսակ կախարդ» Ես. ք. 19. ժթ. 3. Ոսկ. ևս., գետնահարց Ոսկ. ևս., գետնածայն Ես. իթ. 4, գետնաշարժ «երկրաշարժ» Ամովս. ա. 1, գետնատուն Դևտ. ժա. 30. Սոփոն. ք. 14. Ոսկ. փիլիպ., գետնաչափ Ոսկ. փիլ. 430 (չունի ՆՀԲ), գետնասողուքիւն Ոսկ. Բ. կոր., գետնատարած Վեցօր. Ագաթ. Կորիւն. Ոսկ. ևս. և մ. ա. 11, գետնատուն Վեցօր., գետնատրաստուն Ոսկ. փիլիպ., գետնափոր Երեմ. ք. 41, գետնել «գետին զարնել, ցած նետել» Կիշատ. աղքս., զգետնել նոյն նշ. Դատ. ե. 27. Գ. մակ. ք. 10. Ղուկ. դ. 35, դաշտագետին Ա. մակ. դ. 40, մարգագետին ՄԳր., փշագետին Նար. Մծբ.: Նոր բառեր են գետնադամբան, գետնայարկ են:

Windisch. 7 ամն. vēdinī «երկիր» բառի հետ: Gosche, 21 փութ. "Αγδιστις կամ "Αγδιστις «Cybele լեռան անունը»: Lag. Urgesch. 400 գետ բառից: Մատ, ЗВО, 5, 286=ՀԱ, 1892, 164 պնդ. gaēθa «աշխարհ» բառից փոխառեալ: Հիւնք. գիհին «թաց» բառից: Bugge, KZ, 32, 35 գ յաւելուածով յն. ἔδαφος «յատակ» բառից: Patrubány, SA 1, 201 և ՀԱ, 1908, 152 գետ+իճ, իբր թէ «գետի մօտ եղած հողեր»: Մանուալեան, L'idiome, 11 խալդ. giel և յն. γύης «արտ, հող», պրս. جای jay «տեղ», օս gāh «տեղ» բառերի հետ են: Scheftelowitz, BB, 29, 27 յն. σῶδας «գետին» բառի հետ հնխ. vedino, ենթադրելով, որ յունարէնն ձևը գալիս է *fódas-ից, ինչ որ անկարելի է ըստ Boisacq, 726:

ԳԻՒ.—Ջղ. գ'ետին, Ախց. Ոզմ. Կր. գ'էտին, Նխ. Պլ. Տփ. գէդին, Վն. կ'ետին, Սլմ. կէտին, Մկ. Մրղ. կ'էտին, Ալշ. Երև. Խրբ. Մշ. Սեբ. Սչ. գ'էդին, Ասլ. գ'է'դին, Ակն. սեռ. գ'էննին, Համշ. կէդին. Ռ. Տիգ. էէդին, Ագլ. գ'ո՛տին, Հճ. գ'իդին, Անտ. Ջթ. գ'իդէն: Նոր բառեր են՝ գետնաբան, գետնագործ, գետնաթաղ, գետնահան, գետնամուտ, գետնասունկ, գետնգնայ, գետնագայլ, գետնուղի են:

ԳԵՐ «ողբ, լաց, կոծ» (ունի միայն ԱԲ), որից գեր գործել «լալ, ողբալ» Ոսկ. պօղ. Հտ. Ա. էջ 260, 492, 751, 832: Բառս գտնում ենք նաև Գ. մակ. դ. 2 «եւ քաջացն սուգ անհնարին և գեր արտասրալից գոլմամբ եռանդն ի վեր հասեալ՝ զսիրտս համլէր» =յն. τοῖς δὲ Ἰουδαίοις (քաջացն) ἀνήκεστον (անհնարին) πένθος (սուգ) ἦν καὶ (և) πανώδυρτος μετὰ δακρύων (գեր արտասրալից) βοή (= գոլմամբ): ՆՀԲ գրելով մէ՛կ բառ (գերարտասրալից), թարգմանում է «սաստիկ արտասուօք լի», իբր կազմուած գեր- ոչ-ոսկեդարեան մասնիկով և համապատասխան յն. πανώδυρτος «յոյժ ողբալի» բառին: Սակայն այս պարագային առանց թարգմանութեան է մնում μετὰ δακρύων «արտասրալից»: Նորայր, Կորիւն վրդ. և Թարգ. էջ 455 ուղղում է Հատուածը՝ «եւ քաջացն սուգ անհնարին և գեր՝ արտասրալից գողմամբ..», գեր առնելով իբր առանձին բառ և գոյական՝ «ողբ» նշանակութեամբ: Հ. Ա. Վարդանեան, ՀԱ, 1911, 48—49 ցոյց է տալիս, որ յունարէնին համապատասխան լինելու համար պէտք է առնել գեր (ածական) «πανώδυρτος, յոյժ ողբալի», որով արտասրալից հշտիւ լինում է μετὰ δακρύων: Գեր ածականը գտնում ենք նաև Եղիշ. գ. էջ 44 «Ոմանք զգեր արտասրն իրրև յաղերբականց հոսէին յաչաց իւրեանց» (ՆՀԲ գրում է իբրև մի՛ բառ՝ գերարտասր, որ շատ անյարմար է գալիս տեղին): Նոյնը նաև Ոսկ. փիլ. էջ 482 «Մի ծոյլս, մի՛ մեղկս, մի՛

ի գեր մտաց», ուր յունարէնը երեք բառի դէմ ունի միայն οὐκ ἀναπεπτωκότα «մեղկ, թոյլ»։ (Բայց ինչպէ՞ս պէտք է հասկանալ այստեղ հյ. գեր, «ողբալի՞» թէ՞ «ծոյլ»)։

Տէրվ. Նախալ. 51, 55, 81 տե՛ս **գեղգեղել** *բառի տակ։ Նորայր, Կորիւն վրդ. և Բրգմ. էջ 455 վերի ձևով պարզաբանելով բառը՝ կցում է պրս.* غرّ γirī *բառին. այսպէս՝* غرّ كردن γirī kardan *«լալ դոչմամբ և աղաղակաւ» (ճիշտ ինչպէս հյ.* **գեր գործել**), غرن γaran *«ի ձայն լալ և ողբալ»,* غرّى γirī *«լալիւն՝ որ լինի դոչմամբ և աղաղակաւ»,* غرنگ γarang *«լաց՝ որ լինի արտասուքեամբ. կերկերումն յորկորի, որ լինի ի լալոյ կամ ի նեղանալոյ»։ Հայերէնը պէտք էր դնել իրանեան այս ձևերից փոխառեալ. բայց ո՛չ նրանց ծագումն է յայտնի և ո՛չ էլ գոնե պահպանէրէն ձևը կայ։ Բառասկզբի γ կարող է տալ հյ. գ (համմ.* غند γund> **գունդ**), *բայց ձայնաւորները համապատասխան չեն։*

ԳԻՒ. Ըստ Ս. Մովսիսեանի (նամակ 1928 սեպտ. 27) նոյնից է **գերի գործել** *Բլ. «լալով աղերսել, խնդրել, պաղատիլ» ոճը։*

+ԳԵՐ *«վեր, աւելի քան, բարձր» Պիտ. 34. իմ. առ. և պալ. Պորփ. Նար. 8. էմբ. մատ. 28 (գեր օրինացն անցանել—օրէնքից այն կողմ անցնիլ). քիչ անգամ միայն գործածուած է ոսկեդարեան մատենագրութեան մէջ՝* **գեր ի վերոյ** *ձևով. այսպէս՝ «Գեր ի վերոյ լինիցին ախոյանին» Եղն., «ի զանգիտելոյ և ի պատկառանաց գեր ի վերոյ լինել», Ոսկ. երր. նոյնը հակառակ դիրքով՝ «ի վերոյ գեր զառաւանայ և քան զմեղս» Ոսկ. կողոս. 594։ Յետոսկեդարեան շրջանին դարձած է շատ գործածական նախամասնիկ, համապատասխան յն. ὑπερ- մասնիկին, որով ստրկօրէն թարգմանուած են բազմաթիւ բառեր. ինչ.* **գերազոյն** *= յն. ὑπέρτερος,* **գերադրական** *= ὑπερθετικός,* **գերակատար** *= ὑπερτέλειος,* **գերապայծառ** *= ὑπέρλαμπρος,* **գերապատիւ** *= ὑπερτίμιος,* **գերբնապէս** *= ὑπερφυῶς,* **գերիմաստ** *= ὑπέρσοφος են են (սրանց մէջ Առաքելում 192 է), բոլորն էլ յետին։ Իսկ այն բառերը, որ իբր թէ ոսկեդարեան մատենագրութեան մէջ գործածուած են, կասկածելի են և սրբագրելի. ինչ.* **գերարտասուալից** *Գ. մակ. դ. 2 (որի վրա տե՛ս նախորդ* **գեր** *«ողբ, լաց» բառը),* **գերահրաշ** *Ագաթ։—Նոր գրական լեզուն էլ ունի բազմաթիւ բառեր՝ նոյն* **գեր** *մասնիկով կազմուած. ինչ.* **գերբնական, գերմարդ, գերմարդկային, գերիշխան, գերիշխանութիւն, գերակշռել, գերակշռութիւն, գերադաս, գերադասելի, գերադասութիւն** *են են։— Նոյն արմատից եմ կարծում նաև* **գերեզման** *«մատուռ»ին, որ ունին ՀՀՔ և ՓՔ։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ger *«բարձրանալ» արմատից, որի միակ ժառանգորդն է յն.* ἀείρω, αἴρω (<ἀϝειρω, ϝαρω) *«բարձրանալ, վերանալ, բարձրացնել, վերացնել»։ Կարծում է Թէ նոյն հնխ.* ger *պարզ արմատի աճականներն են հնխ.* gers *և* gerd. *առաջինից ծագում են սանս.* várśman- *«բարձրութիւն, բարձունք, ծայր»,* váršīyān *«բարձրագոյն, գերագոյն», հալ.* vrŭchŭ *«գագաթ, բարձունք», լիթ.* virszùs *«վերևինը», լտ.* verruca *«բարձրաթիւն, պալար, բիծ», անգլսք.* wearr *«մարմնի վրայ կոշտ», հիսլ.* ferr *«լաւագոյն», նիսլ.* farr *«սիւն, մոյթ», —իսկ երկրորդից՝ հրգ.* warza, *հիսլ.* varta, *հաագս.* warta, *անգլսք.* vearte, *անգլ.* wart, *հոլլ.* wrat, *գերմ.* warze *և պրս.* بالو bālū, *բոլորն էլ «պալար, շիտ»* (Walde, *823*, Boisacq, *15*, Kluge, *519*, Pokorny, *1, 267*, Ernout-Meillet, *1049*, Trautmann, *362*)։

Ն՛Հ պրս. bar, *յն.* ὑπέρ, *լտ.* super, supra *բառերի հետ։*—Windisch. *7 երկրորդ ձևն է համարում վեր բառի, որ մեկնում է իբր սանս.* upari, *յն.* ὑπέρ։ Lag. Urgesch. *228* var *արմատից, հալ.* gorč *ձևի հետ։*—Meillet MSL *7, 165* **գեր և վեր** *նոյն է համարում։ Մատ, Ազաքս, 1890, Ա, 111* **վեր** *և լեռն ձևերի հետ գնդ.* gairi *«լեռն»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 115 պրս.* چير čīr *«յաղթող, բարձր» բառից։ Մխսները տե՛ս* **վեր** *բառի տակ։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet, BSL, *№ 79, էջ*

9։ Իրենից առաջ Müller, SWAW, *38, 586* և Հիւբշ. KZ, *23, 34* և *48* յն. ἀείρω համեմատել էին հյ. վեր բառի հետ, բայց ընդունելի չէր, քան որում հնխ. կ>հյ. վ համեմատութիւնը ուղիղ չէ։

ԳԵՐ «դաւառ» տե՛ս Կեր։

ԳԵՐՈՑ ՏԷՐ տե՛ս Գերի։

+ԳԵՐԱՆ, ի–ա հլ. (յետնաբար ի հլ.) «մարդակ» ՍԳր., «մի տեսակ օդերևոյթ» Փիլ. նխ. բ. *100*, որից՝ բազմագերան Ոսկ. ամբակ., բնագերան Ոսկիփ., մայրագերան Ա. առղ., գերանալից կամ գերանալիր Շնորհ. ընդհ., գերանակիր Նար. ին. էջ *65*. լմբ., գերանձան, գերանացեալ Խոսր. ժմ. պարգ.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. verṇnā- ձևից, որի համապօրինները գտնւում են միայն կելտական լեզուներում և ալբաներէնում. այսպէս՝ բրբտ. gwern և մ. բրբտ. guernenn «կալմ. 2. լաստենի. 3. լաստենիների անտառ», կորն. guern «կալմ», gwern- en «լաստենի», կիմր. gwern «լաստենիների անտառ, ճահճոտ տեղ», gwern-en «նաւի կալմ, լաստենի» միւլ. fern, fernog «լաստենի», նոր իռլ. fearn «կալմ, լաստենի» (որոնից փոխառեալ են պիէմոնտ. verna, պրովանս. vernā, verno, ֆրանս. verne, vergne «լաստենի»), ալբան. vẽrɛ «սպիտակ կաղամախի, populus alba»։ Կելտական բառերի նախաձևն է *vernā, որը տալիս է նաև ալբաներէնը։ Ծառի անունը իբրև ընդհանուր «գերան» նշանակութեամբ գործածելու համար հմմտ. տճկ. perdü և Ղրբ. փարդու «գերան», որոնք ծագում են հյ. բարի բառից (տե՛ս անդ), Pokorny, *1, 292*։

Klaproth, Asia polygl. *99* պրս. kirīš, քրդ. karita։ Նշխ (հեծան բառի տակ) լծ. հբր. qopա։ Հիւնք. պրս. gēran «մեծ» բառից։ Patrubány, SA, *2, 219* լիթ. virszùs «վերին»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lidén, IF, *18, 485—487*, որից անտեղեակ Petersson, KZ, *47, 290—1* հյ. գերանդի բառի հետ հնխ. ǧer- «ծռել» արմատից. հմմտ. հսլ. vrŭvī «չուան», verigy «շղթայ», ոնս. vrnta «կոթ, ցողուն»։

ԳԻՒ.—Տփ. գէրան, Ոզմ. գ'եռան, Ալշ. Ախց. Երև. Մշ. Սեբ. գ'էռան, Ղրբ. կ'ռան, Մկ. Սլմ. Վն. գ'էռան, Խրբ. էռան, Ագլ. գ'ռ'ռան։ Նոր բառեր են՝ գերանեղբայր, գերանական։

ՓՈԽ.—Քրբ. գռ. կր. keran «գերան» (Բիւր. *1898, 627*), քրդ. كران kiran «գերան» (ըստ Justi. Dict. kurde), իսկ Պօլիս տպուած քրդերէն Աւետարանը ունի գէրան. այսպէս՝ Ջրմա տը նէռի գրըշէ նավ ջահվէ պռէյ խօ, ու լը ջահվէ դաւռու գէրանէ նա պինի... ու վահա լը ջահվէդա գէրան հէյէ... ավուլ ժը ջահվէ խօ գէրանէ պը տէրինը։—Ջի՛ տեսաննա դշիտ յական եղբօր քո և ի քում ականդ զգերանդ ո՛չ տեսաննես... և ահաւադիկ ի քում ականդ գերան կայ... հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ (Մտթ. է. *3—5*). ուղղագոյն ձևը թւում է էրան, ինչպէս ունի Վտակ, *1908*, № *141*։

ԳԵՐԱՆԴԻ (-դւոյ, նաւ, նաց) «մեծ մանգաղ. 2. փոքր մանգաղ, յօտաց» ՍԳր. Փարպ. *36*. կթ., որից՝ գերանդազէն Բ. մկ. ժգ. *2*, գերանդաբեր Պատմ. աղէքս.։

Նշխ և Հիւնք. գերան բառից։ Pictet, *2, 220* սանս. karaṇḍa, քրդ. kerendi։ Petersson, KZ, *47, 290* գնում է հնխ. ǧer «ծռիլ, կորանալ» արմատից (տե՛ս գերան բառի տակ), ինչպէս որ յն. ἄρπη, հսլ. srŭpŭ «մանգաղ» = ռուս. serp, լիթ. sirpe «մանգաղ» բառերը նշանակում են բան «հարց»։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. կր. Մշ. գ'էրընդի, Երև. գէռ'ընդի, Սլմ. Վն. կ'էրընդի, Ղրբ. կէռընդի', Ոզմ. գ'էրընդէ. Մկ. կ'էրընդր', Հմշ. էրէնդի։ Նոր բառեր են՝ գերանդաւոր, գերանդաւաղ, գերանդակոթ։

ՓՈԽ.—Քրդ. kirendu, kirendi, kerendi, k'eləndü (քէլընդիւ), լազ. քերենդի՝ բոլորն էլ «գերանդի»։

ԳԵՐԱՍՏԱՆ «պատսպարան». ունի միայն Բառ. հրեմ. էջ *64*. նոյնը ունին ՀՀԲ և ՓԲ «ապահով տեղ» նշանակութեամբ։

ԳԵՐԲՆ «չնչող, սրբիչ (մանաւանդ ջաղացքի ալրոտան)» Վրդն. առկ. *64* (երկու անգամ).—Վարդանի արտաբերէն օրինակում

պրուած է «աւել». իսկ «չնջոց» իմաստը մեր բառարաններն են տալիս. ՀՀԲ գրում է նաև գերբ:

Մաս, Վրդն. աս. հտ. I, էջ 573 դնում է ասոր. ܓܪܘܦܐ gerūfā *կամ պրս.* جاروب jārūb «աւել» *բառերի հետ: (Ասորի բառը* Brockelm. *64 ա մեկնում է «segmentum e stipite olivae in humum plantatum ut ex eo nova surgat arbor, հատուած ի բնէ ձիթենւոյ տնկեալ ի հող, զի բուսցի ի նմանէ ծառ նոր» և փոխառեալ է դնում յն.* γραφεῖον, γραφίς, γραφίδιον *բառերից, որոնք նշանակում են «եղէգ գրիչ կամ նկարչի վրձին»: Տրուած նշանակութիւնը և մանաւանդ յունարէնից ծագումը բոլորովին անհնար են դարձնում որևէ կապ հյ. գերբն և ասոր.* gerūfā *բառերի միջև: Պրս.* jārūb *արդէն ձևով տարբեր է):*

+ԳԵՐԹԱՍՏԱՆ, ի–ա *հյ. «ծառանների և գերիների ամբողջութիւնը» Ղուկ. ժբ. 42. Ոսկ. մ. ա. և Եփես. 800, «ինչք, ունեցած-չունեցածը» Կոչ., «կալուածք, հողեր» ՅՀ. կթ., որից՝* գերդաստական *«ծառայ, աղախին» Ոսկ. հս. 381,* գերդաստանիկ *նոյն նշ. Ոսկ. երր. 552: Նոր յարմարութիւն է* գերդաստան *«ընտանիք». Կովկասում երբեմն (նոյն իսկ իրրև պրական ձև) գործածւում է* գերդաստուն, *որ սխալ է յօրինուած, կարծելով թէ բառի արմատն է* տուն:

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* gherdh- *«շուրջը ցանկապատ քաշել» արմատից: Այս արմատից են բխում սանս.* gṛhá-(<*gṛdhá-) *«տուն, բնակարան, ծառայ, տան բնակիչները, ընտանիք, տանտիկին», գնդ.* gərəδa- *«չար էակների բնակարանը» (նախաւոր իմաստն էր «տուն», ինչպէս ցոյց են տալիս իրանեանից հնագոյն փոխառեալ վոթյ.* gurt *«պիւղ, բնակարան», սիրյէն.* gort *«տուն, գեռնատիպ բնակարան»), ալբան.* gardʰ *«ցանկապատ», փռիւգ.* gordum *«քաղաք», յն. (Հեսիք.)* χορδίς, χορδάλαι *«դէզ, խումբ», լիթ.* gardas *«փարախ»,* gardis *«վանդակապատ, ճաղեր», հսլ.* gradъ *«տուն, քաղաք, պարսպէզ», ռուս.* городъ *«քաղաք», չեխ. «դղեակ, ամրոց» են: Միևնոյն արմատը կայ նաև* g'herdh- *ձևով, որից յառաջանում են փռիւգ.* -zordum *«քաղաք», լիթ.* žádas *«ցորեն չորացնելու կազմած, փարախ կամ դոմ»,* žardis *«ձիեր պահելու բակ», լեթթ.* zārds *«չորանոց, փայտակոյտ», հպրուս.* sardis *«ցանկապատ»: Անորոշ են մնում գերմանական խմբի բառերը, որոնք կարող են թէ՛* gherdh *և թէ՛* g'herdh- *ձևից յառաջացած լինել. ինչ. գոթ.* gards *«տուն»,* garda *«փարախ», հիսլ.* garðr *«բակ, ցանկապատ, ագարակ», հսաքս.* gard *«կալուածք, բնակարան, տուն, սեփականութիւն» (*Pokorny, *1, 608—9): Այս երկուսից տարբեր են հետևեալ մերձաւոր բառերը. լտ.* hortus *«ցանկապատ, պատերով շրջափակուած սեփականութիւն, պարտէզ»,* ço-hors *«բակ, ագարակ, հաւանոց, զօրավարներին ծառայող գինուորները, օժանդակ զօրք», յն.* χόρτος *«բակի՝ փարախի ցանկապատ, շրջափակ, ագրոս», իսլ.* gort *«արտ, ցանք»,* lub-gor *«պարտէզ», կիմր.* garth *«փարախ»,* llorz *«պարտէզ», բրբտ.* garz *«ցանկապատ», մկորն.* lowarth *«պարտէզ» են, որոնք ծագում են* t *աճականով՝ հնխ.* g'her- *«բռնել, չորս կողմը բռնել, շրջապատել» արմատից. սրանից նաև ձեռն, որ տե՛ս առանձին (*Pokorny *1, 603,* Ernout-Meillet, *440): Համմտ. նաև կամիս.* gurtaš *«միջնաբերդ» BSL, 33, № 99, 139: Անշուշտ այս* g'hert- *ձևն է, որ իմաստի նոյնութեան և ձևի նմանութեան պատճառով ազդել է* gherdh *արմատի վրայ և դարձրել* g'herdh-: *Հայերէնը նախաձայնի կողմից ներկայացնում է հիշատ այն դժուարութիւնը, ինչ որ գեղգեղ բառի մէջ. –ատան մասնիկը բնականաբար կարող էր նաև բնիկ բառերի վրայ դրուել, ինչպէս Հայաստան. աղդաստան (*Pokorny, *1, 628,* Walde, *174,* Berneker, *331,* Boisacq, *1067):—Ա.Մ.*

ՆՀԲ «որպես թէ կերտաստան, այսինքն բնակարան», Տերվ. Մասիս, 1883 յունիս 17, № 3213 պրս. گرد gird *«ժողով, շրջան» բառից՝ ատան մասնիկով. բուն այսօր գերդաստան բուն նշանակում է «ժողովատեղ»: Հիմնբ. պրս.* کرن kar-

dan «գործել» բառից։ —Ձևով և նշանակութեամբ շատ նման է բառս հնխ. g'hĝti- ձևին, որի ժառանգներն են լտ. cohors «բակ, ագարակ, հաւանոց, զօրավարներին ծառայող պիւտորները, օժանդակ զօրք», hortus «պարտէզ», յն. χόρτος «շրջափակ, արօտ», հիոլ. gort «ցանք», կիմր. garth «պարտէզ», գոթ. gards «տուն», հբգ. gart «շրջանակ», լիթ. gařdas «փարախ», հսլ. gradŭ «քաղաք» են։ Բայց այս նմանութիւնը պատահական է և ոչ կատարեալ, քանի որում բնիկ լինելու դէպքում պիտի ունենայինք հյ. *ձերդաստան, իսկ իրանեանից փոխառեալ լինելու դէպքում (ինչպէս ենթադրել է տալիս -ստան վերջաւորութիւնը), դոնէ *գերդաստան։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. գ'էրդ'աստան են (անշուշտ դրական ձամբով)։

*ԳԵՐԵԶՄԱՆ, ի–ա հլ. «գերեզման» ՍԳր. Եփր. ծն., որից՝ գերեզմանատուն Ուռհ., գերեզմանակրկիտ Ոսկ. մտթ. Կոչ. 402. Փարպ. (ՀՀԲ ունի նաև գերեզմանակիտ սխալ ձևը), գերեզմանակուր Սեբեր., գերեզմանաճաստ Ոսկ. յհ. բ. 39, գերեզմանատեղի Ոսկ. մ. ա. 9, գերեզմանօրհնէք Մաշտ. 760. Նոր բառեր են՝ գերեզմանափոր, գերեզմանաքար, գերեզմանոց, գերեզմանային են։

=Իրանեան փոխառութիւն է. համմտ. պրս. گرزمان garizmān, garazmān, փարս. garzmān, պազենա. garōθmān «երկինք», պհլ. garōtmān «մազդեզանց արքայութիւնը, երկինք», զնդ. garō nmāna-, աւելի հին ձևով՝ garō dəmāna-, որ բուն նշանակում է «գավեստի տուն» և հասկացւում է «մազդայականների երկնային օթևանը, արքայութիւն երկնից» (Horn, § 706 b, Bartholomae, 512)։ Պահլաւ ձևը որոշ չէ և կարդացւում է մի քանի տեսակ. մանաւանդ որ անծանօթ է հիւս. պհլ. ձևը, որից փոխառեալ պիտի լինի հայերէնը։ Մեր բառը կարելի է մեկնել *garezmān ձևով, որ *գարեզման դառնալուց յետոյ՝ առաջին վանկի ա ձայնաւորը յաջորդ ձայնաւորի հետևողութեամբ դարձել է ե. համմտ. դալապր, փիլիսոփայ, երեխայ են։ Հնագոյն *գարեզման ձևը պահում է դեռ Ջղ. գ'արեզման, որի առաջին վանկի ա ձայնաւորը չի կարող ձայնաբանական օրէնքներով յառաջացած լինել ե ձայնաւորից։ Գալով իմաստի տարբերութեան՝ գերեզման և երկինք գաղափարները համաձայնում են իրար հետ՝ առաջինը երկրորդի իբր նախադուռը համարելով. համմտ. նաև դժոխք, որ «գերեզման» նշանակութիւնն էլ ունի՝ «եթէ ելանեմ յերկինս, դու անդ ես. և եթէ իջանեմ ի դժոխս, և անդր մօտ ես» Սղ. լը. 7, որի համար 36ի. էջ 151 տալիս է այս մեկնութիւնը՝ «Դժոխս ասէ ըզգերեզմանն ապականիչ՝ որ Աստուծոյ խնամովքն պահի ի յոյս յարութեանն»։ Նոյնպէս և եզն. 279 «Գերեզման երկրի. զոր Գիրք դրժոխք կոչեն»։

Հներից վանակ. վրդ. մեկնում է «դիր միոյ կամ գերոյ աման. պարսիկ բառ է. ներքոյ հողոյ կամ երկրի ասի գերեզման»։ Տաթև. Յմ. ծր. «Այսպէս Քարգմանի գերեզմանն. կամ գերոյ աման կամ գերէզմինն կամ գերէզամենն»։ Նոյնպէս Տաթև. հարց. էջ 678 «գիր իմոյ (այսպէս ուղղել նաև վերը վանակ. դիր միոյ) կամ գերոյ աման կամ գերէզամէն. պարսիկ բառ է՝ ներքոյ հողոյ» (իմա՛ ziri zamīn)։ Ուղիղ մեկնութիւնը առաջին անգամ տուաւ Lag. Urgesch. 933, համեմատելով garotman ձևի հետ նոյնը կրկնում է Gesam. Abhd. 178, իսկ Lag. Symmicta 48 ապահովապէս նոյն է դնում պրս. garazmān ձևի հետ։ Մորթման, SBAW 1862, 21 փոխուգական մի արձանագրութեան մէջ կարծում է գտնել այս բառը։ Սրան հակառակելով Müller, SWAW 2, 575 կցում է սանս. bṛh, զնդ. bərəz «բարձրանալ» և հյ. բարձր բառերին։ Lāg. Arm. Stud. էջ 170, Müller, WZKM, 5, 187 և 8, 277, Տէրվ. Մասիս, 1882 սպր. 19, № 3163, բնդունում են ուղիղ մեկնութիւնը։—Մ. ի., Մասիս, 1882 յուլ. 21 պրս. fարազման «աթոռ Արամազդայ» (այսպիսի բառ չունի ԳԴ)։ Գիւլզադեան, Արձագանք, 1893, № 3 գաճ «դար»+ռէզ «նեռել» (համմտ. արձակել, ասպարէզ)+ման «մարդ», իբր

թէ հին սովորութեամբ մարդոց դիակները բարձր տեղից ցած՝ փոսերի մէջ էին գցում։ Սրա դէմ և վերի ձևով ե. Յովհաննիսեան, Արձագանք, 1893, № 12։—Հիւնք. պրս. կիրիզման *«երկինք»։ Ալիշան, Հին հաւ. 418 յն.* κῆρ, κῆρες *«մահուան ոգիներ», լտ.* cerus-manus *«Աստուած»։—Հիւրշ. 127 մերժում է համեմատել վերի իրանեան բառերի հետ։* Patrubány, SA, *1, 210* գերի+*պրս.* zamīn *«հող» բառերից, իբրև «հողոյ գերի»։ Բառիս վրայ երկար խօսում է Թիրեաքեան, Կարնամակ, Ծան. 119 և տալիս է վերի մեկնութիւնը։*

ԳԻՒ.—Ջղ. գ'երեզման, գ'առեզման, *Տփ.* գերէզման, *Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Սեբ.* գ'էրէզման, *Ոզմ.* գ'ՙէրէզման, *Շմ. Սլմ.* կէրեզման, *Մկ. Վն.* կ'էրեզման, *Ասլ.* գ'էրէզմա, *Ակն.* գ'էրզման, *Ննխ. Պլ. Ռ. Սչ.* էրէզման, *Տիգ.* էրէզմոն, *Ագլ.* գրէ'զման, *Ղրբ.* կ'րէ'զման, *Հմշ.* էրէզմօն, *Հւր.* գիրէզման, *Գոր.* կիրէ'զման, *Մրզ.* կ'իրէզման, *Հճ.* գ'էյէզմօն, *Զթ.* գ'իյիզմօն, գ'իրիզմոն, *Այն.* գեզման *(ըստ Բիւր. 1900, 671 բ)*։ Նոր բառեր են՝ գերեզմանուտ, գերեզմանաքումբ, գերեզմանատեղ, գերեզմանօրհնելչէք, գերեզմանապաղ, գերեզմանել։

ՓՈԽ.—Ուս. gärämzä *«գերեզման», gärämzälüγ «գերեզմանատուն», որ կազմուած է* lüγ<*Թրք.* läq *«-արան, -անոց» տեղական մասնիկի յաւելումով, համմ. Էնկիւրիի Թրքախոս հայոց լեզուով* kerezmanlar günü՝ *«վարդանանց տօնի օրը, բուն «գերեզմանների օր»։*

ԳԵՐԲԻ *«տօմալան, հողի տակ բուսնող մի տեսակ սունկ,* truffe» *Պատմ. աղէքս. էջ 127 (ուր յն. համապատասխան բառն է* ὄδνον, *որ է* truffe*). ունի նաև Խոր. աշխ. 609, յիշուած մուրտի և նուռի հետ՝ Սիւնեաց երկրի բերքերի մէջ. այլ ձ. Երերի.—Հին Բժշ. մեկնում է «բիմէ» բառով, որ է արաբ.* kamā *«truffe»։*

Ոսկրեան կարդում է գետերի և կարծելով գետ բառից՝ մեկնում է լտ. potamogeton, *ֆրանս.* potamot, *որ է «ապգ բալասանի, բարձրագոյն քան զայլս. քաւ կեղևով.* eumeces*»։ Վիսսոնեաններբ և* S. Martin *թարգմանում են* geranium, *անշուշտ նմանեցնելով գեր- և* ger-*։ Ուղիղ մեկնեց վերի ձևով Նորայր, Բառ. ֆրանս. 1249 բ և ՀԱ, 1923, 505։ ՀՔուս. § 468 կարդում է դերերի, «զի այս անուամբ կոչեն արաբացիք ուրիշ բոյս մի,* aristida obtusa, *ի ցեղէ սիզոց»։*

+ԳԵՐԻ *(-բուոյ, -եաց) «գերի. 2. գերիների խումբը» ՍԳր., որից՝* գերել *ՍԳր.,* գերեդարձ *Ես. ժդ. 17, Բ. մկ. ժ. 1,* գերեկից *Հռ. ժզ. 7. Ոսկ. ա. տիմ. ժդ,* գերեվար *Յոր ա. 15, Ես. ժդ. 2. Դ. Թագ. ժԲ. 25. Սղ. ճլզ. 3,* գերիչ *ՍԳր.,* գերութիւն *ՍԳր., մարդագերի Ծն. լդ. 29։ Յետին ժողովրդական ձև է* գերէկ *«Բշուառ, խեղճ», որ գոնում եմ Յայսմ. մարտի 22, էջ 598 բ. (Իսկ գերէկ մայրն [ս. Կայսի համար է ասում] սակաւ քայլէր և անկանէր ի վայր)։ Ուշ ժամանակի բառ է նաև գերոյ տէր «անձ՝ որի մերձաւորը գերի է այլազգիների մօտ». Համմ. «Յօտար աշխարհէ եպիսկոպոս, վարդապետ կամ երէց, կամ գերոյ տէր, առանց Թեմի եպիսկոպոսի մի՛ շրջեսցեն կամ շինեսցեն, այլ նորա հրամանաւ՝ ըստ պատշաճի» Կիր. 170 (նոյնը Կանոնագրքի մէջ՝ էջ 175). «Եւ կինն այն հարցեալ ասաց Թէ ի՛նչ մարդ ես, և նա ասաց Թէ ես գերէց եմ և գերոյ տէր» Յայսմ. յունվ. 3.—Պարտաւի ժողովի վերոյիշեալ կանոնի իմաստը հասկանալու համար պէտք է նկատի ունենալ, որ գերեաէրերը շրջում էին, փող հաւաքում և բերում իրենց գերիներին ազատում։ Կանոնն արգիլում է, որ գերոյ տէրերն առանց Թեմի եպիսկոպոսի Թոյլտուութեան շրջին և ժողովարարութիւն չանեն։ Վերջին դարերում գերեաէրերը ժողովարարութեան Թղթեր ստանում էին էջմիածնի կաթուղիկոսներից և այն էլ որոշ ժամկետով. Համմ. Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը, Դիւան, Գ. էջ 595, 692, 721, 733, 765, ԺԱ. էջ 42, 66, 108 են, որտեղ բերուած են գերեաէրերին տրուող ժողովարարութեան Թղթերի բովանդակութիւնները (Թադէոս Ալտալբէգեան, նամակ 1927 Թ. ապրիլի 14)։ Նոյնպիսի գերոյ տէրերի յիշատակութիւնն ունի նաև Դրնդ. էջ 486, 489 և 608։

= *Ինիկ հայ բառ՝ հնխ.* ver «կապ, չուան, չուանով կապել» *արմատից, ի մասնիկով, իբր «կապեալ»: Ցեղակից ձևերից լիշում ենք միայն լիթվ.* werens «թել», *լիթվ.* virtinis «թակարդ», virvė «չուան», apvarė «կապ», *հպրուս.* wirbe «հասար չուան», *հլ.* obora (*ob-vora «չուան»), *ռուս.* оборa «կապ», верига, веруга «շղթայ», верёвка «չուան», *յն.* ἀρτάνη «չուան թակարդ», *ալբան.* avarī' «միասին» (*իբր թէ «ընդ-կապեալ»*) (Pokorny, *1, 263—6*). *որոնց միացնել պէտք է թերևս յն.* ἀείρω «՛ապել, կցել» (*այլ է* ἀείρω «բարձրացնել», *որին միանում է հլ.* գեր «վեր»), *որից յառաջանում են* τετράορος «չորսդք, չորս ձի լծուած», συνωρίς «ամոլ (յառակապէս իրար կապուած մի զուգ ձի), զուգ, ոռնակապ, ձիակապ», συνώρυξ «միասին կապված, միացած ամսոին», παράορος «մսոիկ կապուած կամ լծուած», ἀπάορος «բաժանուած» են (Boisacq, *15*):—*Ահ.*

Brosset, JAs, *14 (1834), 383, առնս.* grah, *վրաց.* քիրա «վարձք» *և պրս.* گیر gir:v «գրաւ» *բառերի հետ:* Lag. Arm. Stud. § *477 տնդ.* gar, aibigar «բռնել»: *Մարքվառն,* ZDMG, *26, 551 բևս.* garri: *Սրա համեմատ նաև Մասիս, 1872, փետ՛ 1, № 1196 և Միսն. 1872, № 2, էջ 40 դնում են բևս.* դարի «գերի»: *Տէրվ. Նախալ. 54, 80 անս.* har, harana, *հալ.* ձեռն, բռնձեռել, *յն.* χείρ, χειρός *բառերի հետ՝ հնխ.* ghar *արմատից: Հիւնք. յն.* χαρικός «կարիատի» *ձևից:* Bugge, KZ, *32, 36 յն.* εἴρερος «գերութիւն» *բառ հետ՝ զ յատկացուած:* Meillet, MSL, *8, 290 հնխ.* ger «բռնել» *արմատից, որի* gor, gī *ձայնագրձներն են՝ տնդ.* gar, aibigar «բռնել», *ալբան.* ngrē «վերցնել», *հլ.* grŭstĭ, *ռուս.* gorstĭ, *լհհ.* gars'c' «մի բուռ», *յն.* ἀξείρω «վերցնել, բարձրացնել»: *Հիւրշ. չէ իսկ լիշում այս մեկնութիւնը, որովհետև ըստ օրինի հնխ.* ger *պիտի տար հլ.* կեր: Patrubány, SA, *1, 210 յն.* σῶρος «պահապան», ὁράω «տեսնել, նայիլ», *հրգ.* wara «խնամք», *որով հնխ.* ver-lo «պահապանին պատկանեալ» ձևն է դուրս բերում և նրանից էլ դնում է *հլ.* գերի: Andreas *և* Scheftelowitz, BB, *29, 67 պհլ.* gīr, *պրս.* gīrem, giriftan «բռնել» *բառից փոխառեալ:*—Lidén, Arm. Stud. § *72 իռլ.* fúar (fo-fuar), frith (fo-frith) «գտնել» *բառերի հետ, որոնց նախնականը դնում է հնխ.* ve-ur:—*Ադոլֆեան, ՀԱ, 1909, 335 առմիս.* garas «առուակ»: Karst, *Յուշարձան, 404 առմիս.* gara «առուկութիւն», gir «երկնականաբար», *420 ալթալ.* ḳur «գօտի»: Meillet, BSL, *№ 79, էջ 9 յն.* ἀείρω «բարձրացնել» *բառին է կցում հլ.* գեր *(վեր) և* գերի, *ըստ որում յոյն բառի նախաձևն է հնխ.* ger: *Այս մեկնութիւնը շատ յարմար է գեր բառի համար, բայց իմաստով անհամապատասխան է գերի բառին, գերի բառին շատ յարմար է յն.* αἰρέω «ձեռքով բռնել, մէկից մի բան խլել, որպէս կամ կտաւ մէջ բռնել, գերել, գերի բռնել, *՞տրտնալ, նուաճել». սակայն ձևով անյարմար է, ըստ որում նախաձայն* f *չունի* (Boisacq, *28*): *Պատահական նմանութիւն ունի նաև կարապին.* ղ՛ար «գերի»: *Համմ. նաև վրաց.* ցერეցა գերեբա «պարսել, քշել, վանել, պաշտպանութիւն, որի հետ չգիտեմ թէ կապ ունի* ցერი գերի «խորթ որդի» *(գործածական նաև Տփղիսի հայոց բարբառում):*

Գիր.—Տփ. գէ՛րի, *Ալշ. Ախց. Խրբ. Մշ. Սեբ.* գ՛էրի, *Սլմ.* կերի, *Վն.* կ՛երի, *Ոզմ.* գ՛ելի՛, *Մկ.* կ՛երը՛:—*Նոր բառեր են՝* գերանալ, գերեկնալ «թախանձել, պաղատիլ»:

Փոխ.—Ուս. geri «գերի»:

Գերիոն կամ Գերիւ ? «*մի տեսակ անծանօթ բոյս է*». *մէկ անգամ գործածել է Վանական վրդ.՝ Յոբի մեկնութեան մէջ, էջ 309 «Չխարշափունն այլք աղիմայ (յն.* ἅλιμος, *լ.* halimus, *ֆր.* arroche de mer *բոյսը) թարգմանեցին և կէսք* գերիոն *(կամ* գերիան*). և է սա բանջար աղեհամ, որ յուտին լցուցանէ զտեղի հացի»: Նշ՛ անշուշտ լոկ ձայնական նմանութիւնից հետևցնելով՝ գերիս մեկնում է «թուի կարուս, քէրէվիզ». *աւելի*

լաւ է ՀՔ, որ դրում է «բոյս ինչ կամ կարոտ»։ Սրանց համեմատ են նաև Քաջունի և Տիրացուեան, Contributo alla flora dell' Armenia, էջ 64, իբր «apium nodiflorum, լախուր»։ ՀՔուս. § 628 Յոբի մեկնութեան մէջ գտնում է մի նոր վկայութիւն. «բանջարն՝ դոր յիշէ Յովբ՝ գերիոն, որ եղամա ասեն»։ Սրանով ՀՔուս. հասկանում է յն. ἔλυμος «կորեկ». (Գազիանոսի կերիոն ձևի վրայ տե՛ս fաղցկեղ). ՀՔուս. § 1395 գտնում է նաև կերիոն ձևը Մշոյ բարբառով և Խոտրջուրի ևթաբարբառով, բայց թողնում է առանց բացատրութեան։

ԳԵՐԾ «գլուխը ածիլուած» Ոսկ. Հռովմ. 252 (չունի ՆՀԲ), որից գերծել, գերծուլ կամ գերծանել «ածիլել, մազերը կտրել» ՍԳր. Ոսկ. հս. Եփր. գտ. 343. Ա. կոր. 67, գերծումն «սափրումն» Ես. իբ. 12, գիսագերծ Ոսկ. Հեբրդ., գլխագերծ Ոսկ. մ. բ., գլխագերծութիւն Ոսկիփ.։ Սրանից տարբեր է fերծուլ, որ տե՛ս առանձին fերծ արմատի տակ։

ՆՀԲ լծ. քերել, քերծել և յն. ξυρέω (փոքրել բառի տակ)։ Տէրվ. Altarm. 18, 83 քերել, քերբել բառերի հետ՝ սանս. kart, գոթ. skreitan «կտրել, ճեղքել»։ Մորթմանն, ZDMG, 26, 527 իրար է կցում բևեռ. çirsıni, հլ. գրել, քերծել, յն. γράφω, լտ. scribo, գերմ. graben «փորել», schreiben «գրել» և kratzen «քերել»։ Հիւնք. յն. κείρω «կերծուլ»։

ԳԵՐՂ «բո՞յս է». ունի միայն Բառ. երեմ. էջ 92, այսպէս. «երժիւ, գերղիւ կամ համամայիւ», բոլորն էլ գործիական հոլով են, ուստի ուղղականը կարող ենք դնել գերղ։ Վերջինը՝ համամայ՝ նշանակում է «աղաւնաբոտ»։

ԳԵՐՄԱԿ, ո հլ. «ճերմակ բարակ ալիւր» Գ. Թագ. դ. 22. Ոսկ. Փիլիպ. ժ. էջ 469, «ճերմակ ալիւրով փափուկ հաց» Մխ. բժշ. Վրք. Հց. Ա. էջ 271, 272, «մանրամազ, բարակ փոշիի պէս» Պտմ. տէր յուսկ. 211, 214 (մանր աւազով և գերմակ մոխրով) = Յայսմ. յնվ. 3. «սպիտակ, ճերմակ (կնոջ մարմնի համար ասուած)» Վրդ. առակ 96. (վերջին նշանակութիւնը պարզ փոխաբերութիւն է, ինչպէս ունինք արդի բարբառներով շարմաղ «բարակ ճերմակ ալիւր», բայց նաև շարմաղ եւրես, շարմաղ աղջիկ են). Նոյն արմատից է գերմակած «մանրած» (Բուքիայի համար է ասում) Մխ. բժշ. 79։

Նորայր, Հայկ. բառաքն. 8 ուզում է ուղղել բառս դերմակ, իբրև քէ գ և դ տառերի նմանութիւնից շփոթուած. և այս *դերմակ ձևը կցում է արաբ. دمق darmaq համանիշին։ Բայց այսպիսի մի բան անկարելի է. որովհետև գերմակ մէկ անգամ միայն յիշուած չէ մեր մատենագրութեան մէջ, որպէսզի այսպիսի պատահական մի սխալ տեղի ունեցած լինէր. երկրորդ՝ որովհետև արաբ. բառը պիտի տար հայերէն դարմակ և ո՛չ քէ դերմակ. և երրորդ՝ որովհետև մեր գերմակ ձևը կենդանի է դեռ հայ. բարբառների մէջ։ Հիւնք. կցում է ներմակ բառին։

ԳԻՒ.—Ունինք երև. գ'էրմակ «խիստ բարակ մաղած (ալիւր)», իբր ածական. իակ Ջղ. գ'երմակ, Ագլ. գէրմակ (ինչպէս նաև Համշ. Հնխ.) «մանր, բարակ, փոքրիկ, պատիկ» ընդհանուր նշանակութեամբ (ասում են օր. գերմակ մանչ, գերմակ աղջիկ, գերմակ աղերք, գերմակ ալիւր, գերմակ աղ, գերմակ քար. խոշորն էլ կայ, գերմակն էլ). որից գերմակել Շլ. «կալը մանրել, ջարդել» (Աղբիւր, 1890, էջ 209, ուր գրուած է կերմակել), գերմակ աւել Սլմ. «եղէգի ծայրի փնջիկներից շինուած բարակ աւել՝ բոնիր մաքրելու համար». Rivola-ի բառարանում կայ գերմակել «մանրել», գերմակեալ «մանրուիլ», համմտ. նաև գերմակցնել Ագլ. «փոքրացնել, պատիկցընել»։

ՓՈԽ.—Հայերէնից փոխառեալ եմ կարծում արաբ. دمق darmaq «մաղելով սպիտակացրած նաշիհ ալիւր». Կամուս, Բրք. Բրդմ. Բ. 900 այս բառի համար յայտնապէս ասում է, թէ «արաբացեալ է». այսինքն օտար լեզուից փոխառեալ է. բայց յետոյ գնելով հոմանիշ دمك darmak ձևը՝ «ընտիր ցորենի ալիւր» (Կամուս, Գ. 86) նշանակութեամբ, բնիկ արաբական բառ է համարում։ Սակայն

այս վերջինն էլ չի կարող մեկնուել արաբական արմատներով (մանաւանդ որ քառատառ է) և ամենևին նրանից ածանցուած որևէ բառ չկայ Կամուսի մէջ. մինչդեռ հայերէնը ազատ և առատ գործածութիւն ունի. գերմակ բառի նախնական «մանր» իմաստը ցոյց է տալիս, որ արաբերէն ձևը հայերէնից է փոխառեալ, գրական ճամբով:— Այսպէս է նաև ասոր. ܓܪܡܐ garməkā «ճերմակ ալիւր» (Brockelm. 63), որ ասորերէնի մէջ անջատ ու առանձին մնացած մի բառ է և որևէ ածանց չունի:

ԳԵՐՄԱՍՏ կամ գերմաստի, գերամաստի «մի տեսակ անտառային ծառ է. մարդաչափ բարձրութեամբ, կարմրագոյն կեղևով՝ որ կարծես գործուած է. ամուր փայտ ունի. պատրաստում են մահակներ ու հպտաններ. երկար ժամանակ այդ հպտանները զալար են մնում. լտ. viburnum lantana L, ռուս. торловина, ֆր. viorne» (Տիրացուեան, Contributo alla flora dell' Armenia, էջ 100, Անենկովъ, էջ 378 բ) Բժշ. Գազիան. (մեկնում են իբրև յն. թերմուկեղոս, արաբ. ալ սաւրան, սաւրան). տե՛ս և ՀՀԲ, Նորայր, Բառ. Ֆրանս. 762 բ, ՀԲուս. § 470, Ուղտրիկեան ԳԲ էջ 320 և 1405:

=Բառիս հետ նոյն են թրք. germašid (ըստ ՀՀԲ), kermaša (ըստ Տիրացուեան, տե՛ս անդ), թրք. գաւ. Տփ. garmašov (ըստ Անենկովъ, անդ), թրք. գաւ. Երև. gărmăšo (ինչպէս ստուգեցի անձամբ երևանցի Բուրքերի մօտ), արաբ. ֆէրկէշէտ (Նորայր), ֆէրմէշիֆ կամ վէֆմէշիֆ «lentisque» (Ուղուրիկեան՝ անդ), որոնք բոլոր նշանակում են նոյն բոյսը: Այս ձևերից ո՛չ մէկը չգտայ Կամուսի արաբերէն, Գէորգ գպրի պարսկերէն և Будаговъ-ի թաթարերէն բառարանում: Ուստի կարելի չէ ասել, թէ ի՛նչ յարաբերութիւն ունին հայերէնի հետ: Որովհետև հայերէն ձևը կարելի է ստուգաբանել իբրև գայլի մասրենի կամ կարմիր մասրի (համմտ. տակը՝ գաւ.): Այս դեպքում վերի բառերը պիտի լինին հայերէնից փոխառեալ. ապա թէ ոչ՝ հակառակը:—Ա՛ճ.

ԳԻՒ.—երև. գ'էրէմասի. Ղրբ. գիլամասրի (ըստ Ազգ. հանդ. ԲԼ. 18 գերմասրի «helianthus tuberosus»). Գնձ. կիլիմաստրի (Ազգ. հանդ. ե. 292), Ղզ. կրմրասաի. կայ նաև լ. Ղբ.:—Анненковъ իբրև հյ. ձև յիշում է kialamasli:

ԳԵՐՈՒԱՅՆ «փոխարկեալ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 64, որի ինչ լինելը յայտնի չէ:

*ԳԵՐՈՒՄ «պանդուխտ». ունի միայն Բառ. երեմ. էջ 64:

=եբր. גֵּרְשֹׁם Gersom բառն է. սա էր «որդի Մովսէսի, ի Սնպիովրայ կնոջէ իւրմէ». այս բառը նշանակում է բուն «վանում, վտարում». բայց հները հասկանում էին «պանդուխտ», ստուգաբանելով բառը՝ եբր. גֵּר שָׁם ger sām «պանդխտեան անդ». համմտ. «Եւ անուանեաց զանուն նորա Մովսէս՝ Գերսամ. ասէ. Ջի պանդուխտ եմ ես յօտար երկրի». եւ. բ. 22 «Միումն անուն էր Գերսամ. ասէ. Պանդուխտ էի յօտար երկրի». եւ. ժբ. 3: Ըստ այս ստուգաբանութեան՝ Gersom ձևն էլ փոխուելով գարձած է յն. Γερσάμ, որից էլ հյ. Գերսամ: Ըստ այմ վերի գերում ձևը պէտք է կարդալ գերսամ կամ գերսում:—Ա՛ճ.

+ԳԵՐՓԵԼ «հեղեղի աւերել կործանելը» Եւս. քր. «կործանել, աւերել, կողոպտել և բայքայել» Բուզ. Եփր. Բուց, էջ 254 և դս. 334. որից գերփաճ «աւերում» Արծր. գերփումն Խոր. Օրբ. (ՀՀԲ և ՋԲ ունին նաև գերբել գրչութիւնը):

=Բնիկ հայ բառ՝ հնխ. verph- «խլել, քանդել» արմատից, որի ժառանգներն են յն. ἔρφος «հաշի, մորթ», սլովէն. zvrpati «խլել, կողոպտել», կաշուբ. varpac «պատռել, խլել, քաշել, կարկատել, շալլալել», հուս. воропъ, наворопъ «յարձակում», врапъ «բռնութիւն», наврапъ «աւարում, կողոպտում» (Pokorny, 1, 291—2):

Ուղիղ մեկնեց Petersson, Från filol. föreningen i Lund, Språkl. uppsatser IV 1915, 142 (չեմ տեսած): Հայերէն բառին շատ նման է հնչում սանս. garaf «ողողել, հեղեղել, inundavit. 2. ջուրը քշել, տանիլ, խլել, քշել տանիլ, abluit, abripuit 3. փչել տանիլ (քամին, փոշին), deflavit (ventus pulverem). 4. քաշքշելով տանիլ, verrit» (Brockelm.

Lex. syr. *63—64*): *Ասորի բառի առաջին նշանակութիւնը կայ ճշտիւ հայերէնի մէջ էլ. համմտ. Գերփնացին ջրհեղեղ պատերազմին (Եւս. քր. բ), և Եփրեմի Ասացուածների մէջ. ասոր.* geraf *բառի դէմ հայ թարգմանութեան մէջ դրուած է հենց գերփել (ըստ համեմատութեան Պ. Է.-ի, ՀԱ, 1933, էջ 279): Բայց նմանութիւնը պէտք է համարել պատահական, ըստ որում ասոր.* gəraf *պիտի առ հ.* գարափ *կամ* գրափ:

Սէր. Ուսումն հնդեւրոպական, թ. 1861, № 16, էջ 159 պրս. giriftan, *դևրմ.* greif, grif *«բռնել»:—Տէրվ.* Altārm *105 սանս.* grabh, *գոթ.* greipan, *հ.* գրաւել *են:*—Müller, A. Kuhns u. Schleichers Beitr. *5, 140 գնդ.* garāfa *«բռնատ»?* Bugge, DZ, *32, 35 յն.* ἁρπάζω *«յափշտակել» բառի հետ՝ գ յաւելուածով կամ հալ.* grabiti *«կողոպտել»:* Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 131 սանս.* vṛháti, bṛháti *«խլել փրցնել» բառի հետ՝ հնխ.* ụer-ph- *արմատից:*

ԳԻՒ.—երև. գ'ոփէլ, *Տփ.* գրփիլ, *Մշ.* գ'որ'ել *«կողոպտել, թալանել, շորթել». այլ բառ է Մշ.* գ'էր'ել *«պինդ պինդ քորել»:*

**ԳՋԱՒ*, ու *հ.* *«բուրդ» Դաան. ղ. 37—40. Եզիշ. դաա. 180. Պատ. ազէքս. էջ 7. Կղնկտ. հրտր. էմ. էջ 66:*

= *Ասոր.* ܓܙܙܐ gezzeθā *«գեղմ, բուրդ», որի հետ նոյն են եբր.* גֵּזָז gizzā, גִּזָּה gizzaθ *«խուզուած բուրդ». արմատն է ասոր.* ܓܙ gaz *«բուրդը խուզել»* (Brockelm. Lex. syr. *52բ*), *եբր.* גָּזַז gzz *«բուրդ կտրել, իբր սուղի նշան մազերը խուզել, ծամերը կտրել», ասուր.* gizzu *«բուրդ խուզելը»,* gazazu *«կտրել, խուզել»,* bitgizzu *«գզրարի խանութ»* (Muss-Arnolt, Ass.-engl. Handwb. *214*), *արաբ.* جَزّ jazz *«բուրդ կտրել, խոտ հնձել»* (Համուս, Թրք. Թրգմ. Բ. *164*): *Այս բոլորը ցոյց են տալիս, որ բառը բնիկ սեմական է:—Հիւբշ. 302:*

Առաջին անգամ Schröder, Thesaur. *45 դրաւ եբրայեցերէնից: ՆՀԲ եբր.* կեզ, կիզա: Lagarde, Arm. Stud. § *479 գնում է ասորի ձևը: Հիւնք. պրս.* քիսագէ *«խողակ»:—Համմտ. նաև* գեզ, գզել, կիզն *բառերի տակ:*

ԳԻՒ.—Տե՛ս կիզն *«բուրդ»:*

ԳՋԼ *տե՛ս* Գէզ:

ՆՀԲ արմատն է գեզ, *լծ.* խզել: Էմինն, Ответъ Патканова, *Մոսկուա, 1874, էջ 24,* գեզ *բառի հետ:* Lagarde, Arm. St. § *479* զգաթ *բառին է կցում: Հիւնք.* զգաթ-*ից: Թիրեաքեան, Կարնամակ, ժանօթ. 41* գեզ, գիծ, կիծ, կիճ *ձևերի հետ:* Karst, *Յուշարձան, 419 և 428* խզել *բառի հետ՝ թաթար.* üz, öz, ös, os, jüz *«խորտակել»:* Petersson, Ar. u. Arm. Stud. *132 պրս.* gazīdan *«կծել»,* gaž-dum *«կարիճ», սանս.* vāhaka *«թռչնատուր մի տեսակ միջատ», լիթ.* vėžỹs, *լիթթ.* vėžis *«խեցգետին» բառերի հետ՝ հնխ.* ụeg'h *«խթել. խայթել, կճմթել» արմատից:* Petersson *ենթադրում է թէ* զգել *բառը փոխել է իր իմաստը՝ ազդեւլով* զգաթ *«բուրդ» բառից:*

ԳԻՒ.—Նախ. Պլ. գզել, *Տփ.* զգիլ, *Ալշ. Մշ. Զղ.* գ'բզել, *Ախց. երև. եբր. կր. Սեբ.* գ'բզել, *Զթ.* գ'ը'զիլ, *Ոզմ.* գ'ըգիլ, *Սլմ. Վն.* կ'բզել, *Սչ.* fզել, *Ռ. Տիգ.* fզել, *Աստ.* գ'զ'ել, *Հէր.* գիզել, *Ղրբ. Մկ.* կ'բզիլ, *Մրզ.* կ'իզել, *Գոր. Շմ.* կ'իզիլ, *Հմշ.* կզուշ, *Ագլ.* գ'բզիլ, գ'իձի'լ: *Նոր բառեր են՝* զգզգել, զգզգնակ, զբզգզուիլ, զգզգուած, զգզել, զգզնել, գզգուած, գզմաճ, գզուզ, գզուիլ, գզվռիլ, գզվռուիլ, գզօն գզօն *են: Արմատն ունին Ալշ.* գ'իգ, *Լ.* գիզ *«գզում, գզուածք, գզելու գործողութիւնը», օր. Այս բուրդը քանի՞ գիզ է. երկու օր է գիզ եմ անում: Տե՛ս նաև* կիզն *բառի տակ:*

ԳՋԵՒՆԼ *«իրեն քաշել, ճանկել ու քաշել». Վեցօր. 87. «Անկանիցի սերմն յերկիր. սկսանի այսուհետև Թուլանալ, պատառիլ, խիղթս արկանել, վակժոյժ լինել գերկրէն յոր եդաւ՝ գտեռնալ ձգել գնա առ իւր»: Ուրիշ վկայութիւն չկայ:*

նշբ գզել բառից։

ԳԶԻՐ, ի–ա հլ. «կնիւն, կողով կամ խոիր հիւսելու սէղ» Գնձ.։

Lidén, Arm. Stud. 71 հալ. žizlŭ, ռուս. žezlŭ, չեխ. žezl «գաւազան» բառերի հետ՝ իբր հնխ. ghig'h ձևից՝ -իր մասնիկով։ Սագրգեան, ՀԱ, 1909, 335 և Karst, Յուշարձան, 405 առմեր. gizi «ծաղկող եղէգ», ֆրք. xasər, hasər, «փսիաթ, խոիր»։ Petersson, Ar. u. Arm. Stud. 113 օսս. qäz «եղէգ» և պրս. gaz «արշին, 2. մոշավայրի» բառերի հետ հնխ. ghōg'h- արմատից։

*ԳԶԻՐ «դիւղի տանուտէրի երկրորդը». յետին ժամանակի բառ, որ գործածական չ արդի գաւառականների մէջ. մի քիչ աւելի հնից ունինք նս. պատմ. 13 «ի գիւղի ուրումն զտանուտէր գիւղին և զքահանայն և զհիւրընկալն՝ զոր գիր ասեն, արգելուին», Ձքր. սարկ. բ. 125. «Յետ երից ամաց նահատակեցաւ գիր Յակորն»։

= Պրս. گزیر gizir «գիւղապետ», ուր ծագումը և բուն իմաստը տե՛ս Վճիռ բառի տակ։ Սրանից են փոխառեալ նաև ասոր. ܓܙܝܪܐ gəzīrā, արար. جزير Jazīr, ատ. gizir, քրդ. گزێر kizir, ատրպատ. ֆրք. قيزيل qizil «գիր, գիւղապետի օգնականը»։— Հիւրշ. 264։

Զաքարիա սարկաւագի Պատմութեան հրատարակիչը արդէն մեկնում է «ֆիզիր. աւանապետ»։ Հիւրշ. ZDMG, 35 (1881), 657 դնում է պարսկերէնից։

ԳԻՒ.—Տփ. գգիր, Ալշ. Կր. Սեբ. գ'գիր, Մրղ. գ'իգիր են։ Նոր բառեր են գզրացու, գզրփախ։

ՓՈՒ.—վրաց. გზირი գզիրի «մունետիկ, դեսպան, պատգամաւոր» հայերէնից է փոխառեալ՝ առաջին վանկի ի ձայնաւորի բացակայութեան պատճառով։

ԳԶԻՐ «խոչ». որից գզրել «խոչել». երկուսն էլ ունի Բառ. երեմ. էջ 64—65. ո՛չ բառն է յայտնի և ո՛չ արուած բացատրութիւնը։ Բայց տե՛ս վարը ՀԶրել։

*ԳԶՄԱՋ, որ և գզմազիճ, գզմաւսա, գոզմազիճ, գոզմոս «մոշի պտուղ, fruit de tamarisc» Բժշ. ունի. միայն ՀԲուս. § 474։ Սրա սխալ ընթերցուածն է կաղմաշուն։

= Պրս. گزمازک gazmāzak «մոշալ ծառը», گزمازو gazmāzū «մոշալի պոզակ», گزماز gazmāzik «մոշալի պտուղ», արաբական արտասանութեամբ kazmāzak, kazmāzū, kazmāzik, զուտ արաբացեալ ձևով՝ جزماز jazmāzik կամ جزماق jazmāziq և جزمازج jazmāziJ նոյն նշ. (ԳԴ, Շթայնշնայդէր, WZKM, 11, 327 և 12, 331, Համառս. ֆրք. ֆրդմ. Ա. 381 և Գ. 110)։ Բոլորի արմատն է պրս. ز gaz «մոշայ», որից փոխառեալ է և հլ. գազ (տե՛ս այս բառը)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

ԳԶՐԵԼ «գործած յանցանքի վրայ մտածելով ափսոսալ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. ես. 369 «Իսկ եթէ մերթ խոշտանգեմք զմիտս և մերթ ծուլանամք, զի՞նչ ինչ ի գործոյն շահիցիմք. եւ զի՞նչ օգուտ իցէ ասեն զմտաւ ածել, բայց զի աւելի ևս տրամուիին շահիցիմք. զի ասա զմիտս ուսիցեմք և անդ զպատիժն կրցեմք...», «Ի միտս ունիցի զմեղան, և առէպ առէպ զուիայցէ (=գզրել) և զանձն խոշտանգիցէ»։—Այս բառը թերևս ակնարկել է ուղում Բառ. երեմ. 64—65, գրելով գգիր «խոչ», գզրել «խոչել»։

ԳԶՐՈՑ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, առանց վկայութեան) «անառուկ, արկղ, տուփ (արծաթէ, պղնձէ, փայտէ են)» Տիմոթ. կուզ, էջ 323. Սոկր. էջ 89. ՅՀ. կաթ. Պոմ. աղէքս. որից գզրոցիկ Արծր.։

Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. 64 ուղում է ուղղել *գզրոց և համեմատել յն. πλαγωτὶς «գանձանակ» բառի հետ։ ՆՀԲ գգիր «խոիրի սէղ» բառից, իբր սրանով հիւսուած անառուկ։

ԳԷԱՔ «ժամանակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 65։

ԳԷԳՂ «ողորմութիւն տեառն». ունի միայն Բառ. երեմ. էջ 65։

ԳԷԳՂԱԴՐԵԼ «վրիպիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 65, որ և էջ 62 դնում է գեղտրէ «վրիպէ» (ներկայ եզ. գ դէմք)։

ԳԷՋ «լուանի, արևի կամ ակնեղէնի վրայ երևցած արատ, սև բիծ, ճեղք» Շիր. Հրտր.

Պտկ. էջ 50, որից փոխաբերաբար՝ «կաս-կած, տարակոյս» Ոսկ. յհ. ա. 12 (Մի՛ ինչ գէզ առ սակաւիկ մի ի ներքս մնասցէ. այլ դիւրաւ մարթացէ զբազմաց միտս հածել), Եղիշ. այլակ. 218 (այս իմաստը չունի ՆՀԲ).—ածանցներն են՝ անգէզ «առանց գէզի կամ սպիի, անարատ, միապազաղ» Շիր. 50. 54. Վրք. շնորհ. 39. Դիոն. ած. Մագ., գիգակն «արևելեան ժամացոյցով գիշերվայ ժամը 8» (իբր Թէ «արևի աչքի գզուիլը՝ ճեղքուիլը, լոյսի մօտենալը» (ըստ Ս. վ. Նազարէթեանի, Պատկեր, 1893, 160)։ Այս արմատի միւս ձևերն են՝ 2. ԳԵՋ «պատառուածք» Վրդն. ծն. որից գեզուրիւն (և ո՛չ Թէ գիզուրիւն, որից հետևում է, Թէ արմատն է գեզ) «ադամանդի վրայ բիծ» Ագաթ., «քարի վրայ ճեղք, ճաթածի գիծ, ճաք» Խոր., գեզիւ «յետին մտքով» Կնիք հաւ. էջ 7.—3. ԳԻՋ. արմատ առանձին անգործածական, որից ածանցուած են՝ գզել «պատառոտել, ծուատել, մարմինը պատառ-պատառ անել, ճանկերով քերթել, կտրտել» Եփր. պհ. Անան. եկեղ. Պղատ. օրին. Սարգ. Յայսմ. արդի լեզուի մէջ «բուրդ դզել». այսպէս և բդգգեալ կամ բդագգեալ «գզգզուած հագուստներով» Սարգ. Կանոն., որից նաև անգիզ «չյօշոտուած» Սասն. 68։ Այստեղ են պատկանում նաև գզիլ «կռուիլ, վիճիլ» ԱՔ և գզեալ «ցնորած, աւիղդիւիղ խօսող» ԱՔ, որոնց հետ համմտ. գւռ. գզվտիլ Արբ. Եւդ. Պլ. «իրար հետ կռուիլ», գզգուած Երև. «բզկտուած. 2. ցնդած, խոֆած, զառամած», գզգնիլ «ցնդիլ, ծերութիւնից ցնորիլ»։ Արմատի կրկնաւորներն ունին զաւառականները՝ գրզգրզել և գզգել ձևերով (տե՛ս վերը գզել բառի տակ). վերջին գզգել ձևով հնից դտնում եմ հետևեալ վկայութիւնները. «Այնչափ հարին, մինչև ամենայն մարմինն գզգեցաւ» Յայսմ. մրտ. 5, «Գզգեցին զմարմին նորա» Յայսմ. փետ. 18, «Բոլոր մարմինն զապրուխեամբ գզգեալ հերձոտեցաւ» Վրք. իլար. 123։

ՆՀԲ համարում է գէզ արմատ գզելոյ, լծ. Թրք. kecmek «կտրել», արաբ. قطّ qaṭ՛ «կտրել»։ Թիրեաքեան, Կարնամակ, ծան. 41 գիծ, գիզ, կիծ, կիճ ձևերի հետ. իսկ Արիահայ բռ. 116 պրս. ڪز gaz «խածնել»։ Lidén, Arm. Stud. 70 համեմատում է հինւս. giǫgrar «քարայր», ն. խալ. gjögur «ժայռերի ճեղք՝ որտեղից ջրերն են հոսում, ժայռերի մէջ նեղ անցք», որանց ընդհանուր գերմանական ձևն է ghegh-ura. հայերէնը ծագում է հնխ. gheg՛h արմատից, ուր աւաջին gh ձայնը ըստ Meillet-ի օրէնքի (MSL 13, 243) չ դարձած չէ, այլ մնացել է գ՝ յաջորդ զ-ի պատճառաւ։ Karst, Յուշարձան, 418 Թիւր. bes, bet, bis, bič «կարել, ձևել» կամ kes «կրճատել», չադաթ. kesek, կրկիզ. kezü, ալթալ. kezek «մաս, բաժին, կտոր»։ Պատահական պէտք է համարել ասոր. ḲZ gāz «ոչխարի բուրդ խուզել»։

Գէթ. գրուած նաև գեթ «գոնէ» Ոսկ. մտթ. Ագաթ. «միայն» Ոսկ. յհ. բ. 6, «Թէ որ, միայն Թէ» Ոսկ. մ. ա. 3։

ՆՀԲ (ևեր բառի տակ) լծ. հյ. ևեր։ Տէրվ. Altarm. 99 և Նախալ. 119 հնխ. qha դերանունական արմատից. համմտ. սանս. qha, ha, յն. γε, գոթ. qa-, հյ. գոնէ, գէն<*գայն, այսպէս նաև գէր <*գաիր.—իր մասը ունի նաև ևեր բառը, իբր սանս. id «ինքն, միայն, լոկ»։ Հիւնք. կէտ բառից։ Bugge, KZ, 32, 7 նոյն ընդ ևեր։

Գէթ տե՛ս Գայթ։

ԳԷԹՍՈՒՐ «ձգեալ». ունի միայն Բառ. ռբեմ. էջ 65։

*ԳԷՒՄ «հագուստ կապուստ» Հաւաք. 20. «Ջորս տուն հագեստի էր, գէմ ու զրեհ»։ =Թրք. giyim «հագուստ»։—Աճ. Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատենագր. Բ. 140։

ԳԷՄ «հօ՛, իրօք, արդարև». հաստատական թարմատար շաղկապ, որ գործածւում է միջին հայերէնի մէջ, նախագասութեանց սկիզբը. համմտ. «Գէմ թագաւորք են լել սովոր» Կոստ. երզն. 136, «Այն վարդենուն գէմ չկայ գին» Թլկր. 35, «Գէմ դու մենակ չես» Թլկր. 39։

ԳԷՆ. կայ միայն գէ՛ն fn «աղաչում եմ, խնդրե՛մ, շնորհ արա, de grâce, je vous en

prie» *դարձուածի մէջ, որ մէկ անգամ ունի Եփր. Թգ. էջ 445 «Աւ ի հաձել զմիտան Յովսափատու. Գէն քո, ասէ, փարելի քո, մի՛ զայլ ինչ ասեր, այլ զճշմարիտն՝ որ արդարն է»։ Հմմտ. նաև արէն։*

Տէրվ. Altarm. *100 և Նախալ. 119 տե՛ս գէք։ Բառիս նշանակութիւնը ճըշտում է Նորայր, Հայկ. բառաքն. էջ 87։*

ԳէՇ, ո հլ. *(նաև ի, ուց) «դի, դիակ, շաղիղ» ՍԳր. Ոսկ. բ. տիմ., «բզիկ, բզկտուած մարմնի կտոր» (այս նշանակութեամբ ունինք միայն գէշ գէշ պատառիլ «բզիկ բզիկ՝ կտոր կտոր լինել» ոճը՝ Դան. ժդ. 41), որից լայնաբար «մի կտորած բանի կտոր, կտորտանք» Ճառընտ., որից գէշագէշ «բզիկ բզիկ եղած» Բ. մակ. ժե. 33, գազանագէշ «գազանաբեկ» Գ. Մակ. ղ. 24, ճոգեգէշ Կանոն. Մաշկ., գիշակեր Եղն. Վեցօր. 161. Ոսկ. նին., գիշախաձն Կոչ., գիշատել Փարպ. Խոր., գիշել «պատառոտել» Մխ. դտ. Մագ., գիշագէշ Մանդ. ևն, որոնցից ենթադրուած է սխալմամբ գիշ «դէշ, դի» ձևը՝ Եփր. աւետ.— Յետնաբար բառս առացել է «չոռի, վատ, դէշ» նշանակութիւնը՝ ինչ. Վրդն. ծն. Սիւն. քեր. 208. Թլկր. 41. Մխ. բժշ. 140. իմաստի զարգացման իրրև միջնորդ հմմտ. գիշաճոտ «դիակի հոտ ունեցող, ժանտահոտ» Մամիկ. Վասկ., գիշաճոտութիւն «ժանտահոտութիւն» Վասկ.։*

Բառիս համար մի նոր վկայութիւն ունի Մծբ. 384 «Եւ հազիւ մեծաւ աշխատութեամբ զերծանին ճիրանք նորա իրրև առիւծու, ի գիշէ իւրմէ». (ի հլ. բցտ. ի գիշէ. տպուած է ի գիլէ. ուղղում եմ ի գիշէ. բատ որում ասորի բնագիրը (հրատ. Graffin. 704) բատ համեմատութեան Վիեննայի միաբան Պ. Էսապալեանի (անձնական) ունի «ճիրանք նորա՝ որպէս առիւծու՝ (որ) ի վերայ որսին իւրոյ»)։ Գէշ «դիակ» իմաստից «գէշ, վատ» նշանակութեան անցման համար իրր գեղեցիկ միջնորդ է ծառայում Սվեդ. գ'իշ, որ նշանակում է «պիղծ, հոտած» և գործածւում է միայն շան կամ արծիւի միսը որակելու համար. այս օրինակով ասւում է նաև ճոռը գիշ է «գիշահոտ է», բայց առանց «վատ կամ տգեղ» իմաստի։

Ղաֆադարեան, Տեղևկ. ինստ. 2, 94 գնդ. vaēša *«փտիլ, ապականիլ» հբգ.* wesan ēn *«փտիլ, նեխիլ» բառերի հետ՝ կամ իրր բնիկ և կամ իրանական փոխառութիւն. իսկ գէշ «վատ» կապ չունի սրա հետ, այլ ծագում է գարշ բառից։*

Bötticher, Wurzelforschungen, *23, անս.* viš։—*Տէրվ.* Altarm. *29 անս.* ghas *«լափել, գիշատել» ևն։* Canini, Et. étym. *էջ 91 անս.* kaš *«ապականել» բառի հետ։ Թիրեաքեան, Պատկեր աշխրհ. գրակ. 194 պրս.* ;ʃ kež *կամ* ;ʃ kej *«թիւր»։ Հիւնք. կեշտ բառից։ Հիւբշ. 435 թէև շատ նման է ձևով, բայց կապ չունի, ասում է, լտ.* vescor *«անանիլ»,* vescus *«ուտող, նիհար, ճղոտած»։* Patrubány, SA, *1, 312, հանգ.* keselyü *«արծիւ» մեկնում է «գիշակեր», իրր հլ. գէշ բառից։* Karst, *Յուշարձ. 422* joẓel *բառի հետ։ Մառ,* ЗВО, *18, 167 և ՀԱ, 1921, 81, գէշ «յոռի» հանում է գարշ բառից։ (Նոյնը լեռու Ջնագլեան, ՀԱ, 1926, 489)։* Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 59 գնդ.* vaēma *«ծառի ճեղք», ռուս.* ваять *«քանդակել, դրուագել, կոփել», անս.* veçf *«ասեղ» բառերի հետ՝ հնխ.* ųoik'-ųo *ձևից։ Պատահական նմանութիւն ունին ավար.* guešāu *«գէշ, չար»,* gešabugu *«գէշ, վատ»։*

Գիմ.—Պլ. Տփ. գէշ, Ալշ. Ախց. Ակն. Երև. Զթ. Խրբ. Կր. Հճ. Մշ. Սեբ. Սչ. գ'էշ, Ոզմ. գ'ես, Ասլ. գ'է'շ, Համշ. կէշ, Ղրբ. Մկ. Մրզ. Սլմ. Վն. կ'էշ, Ննխ. Ռ. Տիգ. էշ, որոնք նշանակում են «չոռի, վատ» կամ «տգեղ, այլանդակ» և կամ «անբարոյական, բոզ»։ Նոր բառեր են՝ գէշնալ կամ գէշանալ, գէշրուկ, գէշութիւն, գիշագործ, գիշան, գիշոտութիւն «մէկի հետ գժտիլ»։—Բրքաիսս հայոց մէջ գտնում ենք Առն. գէշլէնմէէ «շուտով բարկանալ» (տե՛ս Արեւելք, 1888, նոյ" 8—9)։

Փոխ.—Խմերխևի բարբառով կեշի «գարշելի» (Մառ, Тексты и раз. VII, *էջ 82)։*

+ԳէՋ, ո հլ. *(յետնաբար ի–ա հլ. բատ ՆՀՒ, թէև առանց վկայութեան) «խոնաւութիւն, թացութիւն» Երեմ. խր. 18, «խոնաւ,*

բաց» Եփր. երշտ. 200. Փիլ. Արիստ. Նիւս. կապմ., «վաւաշոտ, ցանկասէր, անառակ» Փիլ. Նիւս. կապմ. Յճխ., «ականջի ազտ» Վրք. հց. Ա. 57, որից գիջութիւն «խոնաւութիւն, թացութիւն. 2. ցանկասիրութիւն, պըղծութիւն» ՍԳր., գիջագոյն «վազող (աչք)» Ոն. իմ. 17 կամ գիջակն Ոսկ. բ. կոր. Կոչ. 114, գիջագործ Կոչ. 404, գիջալից Մծբ., գիջին Խոր. Նեղոս., գիջանալ «ջրոտիլ (աչքը)» Եղիշ. Վրդ. ծն., «խոնաւանալ (հողի)» Ա-բիստ. աշխ., «անառակիլ» Խոր. Փարպ. գըրուած է գէն Վեցօր. 173, որից ունինք գէ-ճակուճ Կոչ., գիճագոյն, գիճական ԵՒն։

= Բնիկ հայ բառ՝ հնխ. g²hoidh-io- ձևից սրա հետ համմտ. հսլ. židŭkŭ «ջրոտ, թաց», židostĭ «խոնաւութիւն», սլով. židěk «հեղուկ, ջրալի, ճկուն, դիւրաթեք», խորվաթ. židak «հեղուկ», սերբ. žídak, žítka «հեղուկ, ջրալի, ճկուն», židína «ջրալիութիւն, անխիտութիւն (ապուրի, կաթի համար ասուած)», ռուս. жидкій «հեղուկ, ջրալի, ճկուն», жиже «աւելի հեղուկ, ջրալից», жижа «հիւթ, հոլգ», жидять «հեղուկ՝ ջրալի լինել, ջրիանալ», որոնք ծագում են հնխ. g²haidh- ձևից։

Տէրվ. Altarm. 24 և Նախալ. 106 լտ. uveo, uvidus, umor, յն. ὑγρός, սանս. ukš, ukšan, հլ. գաղջ, առոգ-ացնել, առոգել բառերի հետ հնխ. vāg «թրջել» արմատից։ Հինդ. գետ բառից։ Patrubány, SA, 1, 194 հսլ. voda «ջուր», հլ. գետ են բառերի հետ, որոնք ջ-ի պատճառաւ սխալ են։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lidén, Arm. Stud. § 51, որ շատ յաջող է գտնում և Meillet (անձնական)։

Գիմ.—Տփ. գէջ, Բլ. Հճ. Մշ. գ'էջ, Ղրբ. Մկ. կ'էճ «թաց»։ Նոր բառեր են՝ գէջ Ղզ. «շափազանց կեղտոտ» (հմմտ. և գէջ ականջաց «ականջից վազած կեղտը» Վրք. հց. Ա. 57), գէջոիլ «բորբոսնիլ, մգոտիլ» (գէջ-առնուլ), գիջկուտ «կեղտոտ»։

**ԳԷՍ, ո հլ. (յետնաբար կայ նաև ու, ի-ա հլ.) «երկայն մազ» ՍԳր., որից գիսակ Դատ. ժզ. 13=19. Ոսկ. մ. ա. 3. բ. 22, գիսաբուղխ, գիսագեղծ Ոսկ. հերոդ., գիսախուր Նար., գիսարձակ Կաղնկտ., գիսատր «երկար մազերով» Ա. Կոր. ժա. 14. Եղիշ., «ճրպնաւոր» Մշտ. ջհկ. Գնձ., «պոչով աստղ» Աբիստ. աշխ. Ղևոնդ., եօթնագիսեան Եղիշ. դտ., բաւագէս Փիլ. տես., ոսկեգիսակ Շիր., վերագիսել «նահանջել, ետ դառնալ» Տիմոթ. կուզ. էջ 325 (նորագիւտ բառ. յարմարցուած յն. ἀναχωρέω բառի վրայից. տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 100—101). գիսաստղ (նոր գրական լեզուի մէջ)։*

= Պհլ. gēs, պրս. گیس gēs, سو گیسو gōsū (արդի արտասանութեամբ gīs, gīsu) «կախուած մազեր, ծամ», աֆղան. gēsū «խոպոպիք», օսս. ɣēså, qīs «խոզի մազ», քրդ. گیسو gisu, کزی kezi «վարս, ծամ, խոպոպիք», զազա gəžək «գիսակ», գնդ. gaēsa «խոպոպիք» (Horn, § 950 և Bartholomae, 480)։ Իրանեան բառի ծագման մասին տե՛ս Lidén, IF, 19, 319, ուր ցեղակից են գրւում իոլ. gaoisid «ձիու մազ», յն. χαίτη «գէս»։ Pokorny, 1, 527, բոլորի նախաձևը դնում է ghaites «գէս»։—Ալլ է սանս. kēça «գէս», kēçara «բաշ» (որից գնչ. pkgա «գէս», pkgաշ «բաշ»)=լտ. caesariēs «գլխի մազ» Walde, 109։—Իրանեաններից փոխառեալ են նաև սասր. گیس gēs «մազ», կովկասեան լեզուներից՝ վրկ. կուպ. pիս, կուլտ. խիզ, խիւրկ. ղիզ «մազ, ծամ» հոմանիշները։—Հիւբշ. 127։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ իբր պրս. կիյսու։ ՆՀԲ սանս. քեսա, պրս. քեյսու, կիսու։ Peterm. 21 սանս. kēça։ Windisch. 7 սանս. kēça և լտ. caesaries, Էմին, Истор. Вардана էջ 66 ռուս. коса «մազ» բառի հետ, որ սակայն այլ ծագում ունի՝ ըստ Berneker, 580։ Karst, Յուշարձան, 404 սումեր. giš, guš, kiš «մազ»։

+ԳԷՏ, ի–ա, ի հլ. «գիտակ, գիտուն, գիտցող» Կոչ. Եւս. պտմ., «ծանօթ, հանչուր, բարեկամ» Եւս. պտմ., «կախարդ, հմայող, քաղդեայ» ՍԳր. Եփր. Թգ., «գնոստիկեան աղանդաւոր» Կոչ. 339, «գիտցուած, ծանօթ» Սկևռ. աղ., որից՝ գիտել «գիտենալ, իմանալ» ՍԳր. Եզն., «կարենալ, կարող լինել»

ՍԳր. Ոսկ. յհ. ա. 25, «համարել, կարծել» Ագաթ. Կիւրղ. ծն., «մերձաւորիլ, զուգաւորիլ» ՍԳր., գիտեճալ *«գիտենալ, ճանաչել» Պղատ. օրին. Արիստ. առաք. Նիւս. կազմ., «խառնակիլ, զուգաւորիլ» Նոննոս. Վրդն. օրին.*, գիտոտել *«լաւ գիտենալ» Սիւն. քեր. 213 (նորագիւտ բառ)*, գիտուն *ՍԳր. Ագաթ. Սերեր. Եփր. յես. Թգ. և Փիլիպ.*, գիտակ *ՍԳր. Եփր. ծն. Ագաթ. Կոչ.*, գիտաճարց *Մծբ.*, գիտութիւն *ՍԳր. Ագաթ. Կիւրղ. ծն.*, գիտնական *Փարպ. Պիտ.*, գիտաստուրիւն *«գիտութիւն» Իմ. իա. 16*, արուագէտ *Ա. կոր. ա. 10. ղ. 10*, անասնագէտ *Մանդ. Կանոն.*, մեռելագէտ *«մեռելի հետ խառնակող» Բառ. երեմ. էջ 213 (ձեռնի ԱԲ)*, երկնագէտ *Ոսկ. ես. 335*, խորագէտ *ՍԳր. Վեցօր.*, ոգէտ *ՍԳր.*, ոգիտանալ *Ագաթ.*, ոգիտանիկ *Կոչ.*, չգիտանիկ *Եղն.*, չգիտուն *Սիրեր.*, յանգէտս *ՍԳր. Ագաթ.*, զանգիտել *«վախենալ» ՍԳր.*, զանգիտանիկ *«երկիւղ» Սերեր.*, անզանգէտ *«անվախ» Աթան. էջ 556*: Նոր բառեր են՝ գիտակցաբար, գիտակցական, անգիտակցաբար, բնագիտութիւն, լեզուագիտութիւն, ձայնագիտութիւն, ձայնագրագէտ, լեզուագէտ, աշխարհագրագէտ, բևեռագէտ *են ևն*:

= *Բնիկ հայ բառ, որ կարող է գալ հնխ. *ĝ՛eid և *ĝ՛oid ձևից. այս երկուսից են ծագում նաև միւս հնդևրոպական ձևերը, ինչպէս ցոյց են տալիս յատկապէս յն.* οἶδα և εἰδω: *Այս արմատի նախնական նշանակութիւններն էին «տեսնել, գտնել», որից յետոյ էլ «գիտենալ, իմանալ», իրև արդիւնք տեսած լինելու Հայերէնի մէջ «տեսնել» իմաստը չէ՛ պահուած, իսկ «գտնել» իմաստի համար յատկացուած է գիտ, գիւտ ձևը, որ մինչև ծագումն ունի: Միւս լեզուներից համեմատելի ձևերն են՝ սանս.* वेद vêda- *«գիտեմ»*, vêda- *«Ս. Գիրք»*, vêtti *«գիտէ»*, विद -vid *(բարդութեաց ծայրին՝ ճիշտ հայերէնի պէս) «-գէտ, գիտցող»*, vidatha *«գիտուն, իմաստուն, ջերմեռանդ», գնդ.* vaēδa *«գիտեմ», յն.* foῖδα *«գիտեմ»*, εἰδω, εἶδον, ἴδε, ἴδοιμι, εἰδομαι *«տեսնել, նկատել, քննել», լտ.* video *«տեսնել», գոթ.* witan *«գիտենալ»*, witaida *«նկատել», հբգ.* wizzan, *գերմ.* wissen *«գիտենալ»*, weise *«իմաստուն», անգլ.* wit *«գիտենալ»*, *հսլ.* viděti *«տեսնել»*, věděti *«գիտենալ», ռուս.* ведать *«գիտենալ, ճանաչել»*, видеть *«տեսնել»*, вижу *«տեսնում եմ»*, ведьма *«վհուկ, գէտ», հպրուս.* waidima *«գիտութիւն», գնչ.* վացա *«գիտութիւն»*, վաթաշ *«գիտուն, կղեր»*, *հիւլ.* ro fetar *«գիտեմ»*, *հիսլ.* vitr *«իմաստուն», լիթ.* véizdmi *«նայել, դիտել» են* (Walde, *834*, Boisacq, *688*, Trautmann, *357—8*, Kluge, *533*, Pokorny, *1, 236—9*, Ernout-Meillet, *1062—3*). *Միւս ձևերը տե՛ս գիւտ արմատի տակ: —Հիւբշ. էջ 435:*

Նէբ *լծ. երր.* իատա՛, *յն.* իտե՛օ, ի՛տօ, *լտրմէ լտ.* video:—Peterm. *21 սանս.* vid:—Windisch. *7 սանս.* vid, *յն.* ἰδεῖν, *լատ.* videre: *Մորթմանն*, ZDMG, *26, 560 բևեռ.* uedadubi, *իսկ էջ 515 բևեռ.* vidini, *գերմ.* Wissen, *յն.* εἰδω, *հոլլանդ.* veten:—*Հինք. գիտել՝ յն. κοίτη «անկողին, զուգաւորութիւն» ձևից: Յ. Արշէզ, ՀԱ, 1896, 268 երր.* יָדַע *«գիտել»: Թիրեաքեան, Կարնամակ, ծանօթ. 127, 130 հյ. գետ «զուշակ» բառը բաժանելով միւսներից՝ դնում է պրս.* دید *հոմանիշից, որ գըտնում է գործածուած Կարնամակ, ժե. 1—3 և մանաւանդ ժե. 2՝ գետ ու գուշակ ձևով:* Глейе, Сборн. матер. Кавк. *31, 6 կիմր.* guibit *«գիտէ»:*

ԳԻՒ.—*Ննխ. Պլ.* գիդնալ *(<*գիտանալ *Փիլ. Փարպ. Մանդ.), բացասականը՝ Պլ.* չիյդէմ, *Ննխ.* չիդիմ, *Երև.* գիտէմ, *Տփ.* գի՛դիլ, գիդէ՛նալ, *Ախց. Կր. Սեբ.* գիդնալ, *Ագլ.* գի՛դիլ, *Ղրբ.* գի՛դալ, *Սչ.* գիդնալ, *Ռ.* ֆիդնալ, *Տիգ.* ֆիդնիլ, *Ոզմ.* գ՛ըտիմ, *ՋՔ.* գիդանօլ, գիդանոլ, *Ակն.* գիննալ, *Խրբ.* ֆիդնալ, ֆիննալ, *Ասլ.* գի՛նալ, *Ալշ. Մշ.* գինալ *(ունին ս՛արդ գ և ո՛չ թէ շնչող գ՛), Վն.* կիտնալ, *Մկ.* կ՛իտնալ, *Սլմ.* գինիլ, *Հճ.* գիննօլ, *Համշ.* կիդնուշ, *իսկ Ջղ. պահած է միայն ճեռց ֆդես «կարծես» դարձուածի մէջ:—Նոր բառեր են՝* գիտածուն, գիտցուն, գիտկան, գիտաց անել, գիտնական, գիտեաւոր, գիտոսիկ, գիտումութիւն, գաւառագիտուն, չգիտալուկ:

ՓՈՒ.—*Տ. վ. Պալեան, Բիւրակն, 1898, էջ*

712 հյ. անգէտ ձևից է համարում Կեսարիոյ թուրք և յոյն ժողովուրդի գործածած angəd բառը, որ նշանակում է «տխմար». օր. got! be hey angəd adam «գնա՛, ո՛վ տխմար մարդ»։ Ըստ իս կասկածելի է, որովհետև անգէտ բառը հայոց մօտ գործածական չէ։ Աւելի հաւանական է դնել անկուտ բառից, որ փոխաբերաբար Այն. Պլ. նշանակում է «անխելք, անմիտ» (տե՛ս իմ Գաւառական բառարանը, էջ 102)։

ԳԷՐ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վրկայութեան) «պարարտ, ճարպոտ» Եզեկ. ըդ. 16. Սղ. իա. 13. Յայտ. ժը. 14. Մծբ. 155. Երզն. մտթ. 466, «իւղահամ» Առաք. լծ. սահմ. 234, որից՝ գիրանալ Օր. բ. 15. Նէեմ. բ. 25 Եփր. Հռ. 30 (վատ իմաստով), գիրութիւն Փարպ. Խոր., գիրապարար Նար., գիրացուցանել Մաշկ., գիրացուրիւն «գիրութիւն» Մանդ. սիր. 22. առանց ամփոփման գէրացուցանել Մաշկ., գէրուրիւն Մաշկ. դրուած է գուեր Վստկ. կե. իբր գւռ. ձև։

ՆՀԲ յիշում է հունգ. գեօվէր, որին կը-ցում է գւռ. գուեր, Canini, Et. étym. 234 բէշուա cer։ Հինր. պրս. كِرْوِت kurūt «գէր, պարարտ»։ Ղափանց. ЗВО, 23, 354 ռուս. жиръ «ճարպ» բառի հետ՝ իբր բնիկ հայ։ Meillet (նամակ 21 ապր. 1927) կասկածելի է գտնում այս ստուգաբանութիւնը. սլ. i ենթադրում է *ei, իսկ հյ. է՝ *oi. ըստ որում գ թոյլ չի տալիս ghe ձևը. այսպիսով բառը բոլորովին առանձին է մնում։—Պատահակա՞ն նմանութիւն ունին իռլ. g'eſ,* գալլ. gwer «ճարպ»։

ԳԻՒ.—Նախ. գէր, Ախց. Կր. Ջղ. գ'էր, Սչ. գ'եր, Ջթ. գ'էր, գ'էյ, Ռ. Տիգ. ֆէր, Մրղ. կէրցիւցել «գիրացնել», Տփ. գիր, Հմշ. կիր «գէր», կիյցալ «գիրացաւ»։—Նոր բառեր են գէրջուր, գիրուց։ Նոյն բառից է նաև գէրհինգշաբթի՝ վարդանանց ասնի եղ. օրը, երբ կանայք լողանում են՝ գիրանալու նպատակով։

ԳԹԻԼ տե՛ս Գայթ։

[ԳԺԱՏ «մոմ»։

Բարկժատ կամ բարգժատ բառի սրխալ գրչութիւնն է։ ՆՀԲ Գաղիանոսի մէջ կարդալով «մաղթբար, գժատ», մաղթ համարում է յն. μάλθα «հալած մոմ» և գժատ բառն էլ միացնելով գւռ. կեատ «մոմի կտոր» ձևին, մեկնում է «մոմպատ»։ Այսպէս նաև ՋԲ (կասկածով) և ԱԲ։—Մակայն Նորայր, Արև. մամուլ. 1879, 60 և Հայկ. բառաք. 25 գտնելով բժշկարանների մէջ մաղթ «քաղբան» և բարկժատ «քաղբան» բառերը, հետևցնում է, թէ Գաղիանոսի վերի բառերն էլ պէտք է կարդալ «մաղթ. բարգժատ»։ Սրանով գժատ անգոյ բառը կը ջնջուի։—Այնու ամենայնիւ ԳԲ դնում է դեռ գրժատ, պրս. ֆիւժէտ, անծրուի կօշուած խէժ, sarcocole]։

ԳԺԴՄԻԼ կամ ԳԺԴՄՆԻԼ «նեղանալ, բարկանալ, զայրանալ» Ոսկ. յհ. ա. եղն. 16, «մէկի հետ խռովիլ, բէն ընել, սրդոդիլ» Ճառընտ. Օրբ. Հրտր. էմ. էջ 142, որ և դժգմիլ Եւագր. 88. Կոչ. 222. Ռ. մակ. դ. 37. Խոր. Յհ. կթ., դժգմնիլ Լմբ. ժլ. պտրգ. առակ. Արիստակ. նաւակ., որից՝ գժդմագոյն Եզն. 257 (ձեռագիրն ունի գշդմագոյն), գժդմնեցուցանել Երզն. մտթ., գժդմնուրիւն Նար. կամ գժդմուրիւն Փիլ., որոնց դէմ ունինք նաև դժգմուրիւն Եւագր. 77, դժգմագոյն Եւագր. 220։—Յայտնի չէ, թէ գժ– և դժ– ձևերից ո՛րն է հնագոյնը. Վարդանեան, ՀԱ, 1921, 244 ոսկեդարեան Եւագրի մէջ յաճախ գտնելով դժ–, այս ձևը համարում է ուղիղ, սակայն այս պատճառաբանութիւնը արժէք չունի բնաւ. Եւագրը ոսկեդարեան է, բայց մեզ հասած ձեռագիրը Ոսկեդարից չէ և փոփոխութիւնը տեղի ունեցած է յետնաբար՝ համաձայն գրչագրողի ըմբռնողութեան. այսպէս՝ ոսկեդարեան եզնիկի գժդմիլ ձևը, որ ձեռագրում այս ձևով է, Ջմիւռնիոյ տպագրութեան մէջ դարձած է դժգոնիլ, վենետկի տպագրութեան մէջ՝ դարձեալ գժդմիլ։ Ինձ թւում է, թէ հնագոյն ձևն է գժդմիլ և յետոյ՝ գրիչները դժմասնիկով կազմուած կարծելով բառը, դրել են դժգմիլ. սխալը գ և դ տառերի նմանութիւնից յառաջացած չէ, այլ անճիշտ ստուգաբանութիւնից։

ՆՀԲ տատանւում է խժադէմ, ժժգունիլ և դժկամակիլ ձևերի մէջ, Նաղբճեան,

Աբեղ., 1884 հոկտ" 17 smi=ժմիա, ժպիտ *արմատից։—Հինք.* ժմոիկ *բայից։* Nyberg, Hilfsb. *II, 72 ուղում է կապել գոյժ<իրան.* *gužd *«ողբալ» բառին։ Նշանակութիւնը թոյլ չի տալիս։*

Գժիմ *«դաժան, մարդու դժուարը գալու (խօսք)» Ոսկ. ես. 399. Գէ. ես. Վկ. արև. 153։*

Գժտել *«բարկացնել, նեղացնել, սիրտը ցաւացնել» Վրք. հց. Բ. 139, որից* գժտիլ *«խռովիլ, նեղանալ, հետը աւրուիլ» Եփր. համար. Վրք. հց., գժտութիւն Գծ. ժե. 39. Նար.,* գժտութեամբ հայիլ *«խէթիւ՝ խէթ աչքով նայիլ» ԱԲ։*

Հինք. ժտել *բառից։* Petersson, IF, *43 (1925), 72* gīj *արմատից, որ է լտ.* di-vido *«բաժանել» առն.* vidhyati *«ծակել»։*

Գի, *ո հլ. «մի տեսակ ծառ է.* Juniperus oxycedrus L *(ըստ Արթինեան, Ածաշունչի առնկերը, էջ 60),* juniperus macrocarpa S *(ըստ Տիրացուեան,* Contributo alla flora dell' Armenia, *էջ 30, ուր* juniperus oxycedrus *համարում է գրդի),* juniperus communis L *(ըստ* Анненковъ-*ի բուսարանական բառարանի, էջ 181), թրք.* արտըմ *(որ ըստ* Анненковъ *182 է* juniperus oxycedrus*)» Ես. խոտ. 19, Գ. թագ. զ. 31, 33, Ագաթ. Վեցօր. 92. արդի հայերէնում գործածական է գիհի ձևը՝ բառ. Երեմ. յաւել. 574։*

Յ. Արշէզ., Բազմ. 1899, 104=վրաց. ղվիա. *այս մասին աւելի ընդարձակ տե՛ս գիհի բառի տակ։—*Lidén, IF, *18, 494—8 նախաձևը դնելով* *viso- *(*veiso-,* *voiso-*) կամ* *vito- (*voito-*) *համեմատում է առաջին պարապալին առն.* vêṣta-tē *«ոլորուիլ, գալարուիլ», լիթ.* výs-t-yti *«բալուշել», առն.* vêṣ-ká-s *«խեղդելու չուան», հհիւս.* visk *«յարդի կապոց», նիսլ.* visk *«յարդէ խցան», շվէդ.* viska *«փոքր աւել», հբգ.* wisk *«յարդե խցան», չեխ.* vích *նոյն նշ., լհհ.* wiecha *«ծաղիկների ողկոյզ», սլով.* věchet *«խուրձ» են.—երկրորդ պարապալին առն.* váyati, *հսլ.* viti *«հիւսել», յն.* ἰτέα *«ուռի», լտ.* vītis *«խաղողի որթ», հրգ.* wīda, *հհիւս.* viðir, *գերմ.* Weide *են «ուռի»։*

Գիհ.—Ջթ. գ'է *«գիհի», Բն.* գի *«նոճի», Լ.* կէ'ճի, *Ղրբ.* կէ'նէ, *Ղրդ.* իգէ'նէ. *վերջին երեքը յառաջանում են* *գիհենի ձևից, որ կազմուած է նոյն գի բառից՝ բուսական ենի մասնիկով. համմտ.* տանճի—տանճենի *և* ընկուզի—ընկուզենի։

Փոխ.—Վրաց. ղվիա *«գիհի», թուշ.* ղվիճ *(*ղճ *«ծառ» բառով). ըստ* Анненковъ-*ի Բուսարանական բառարանի, էջ 181—2 (գրում է* rbia, ria, mbia, gywa*) նշանակում են* junīperus L *կամ* juniperus sabina L, *վրաց.* ჯიա *գիհա «գիհի ծառը» Զուբիանով[2] 321։*

Գիծ *«նետ կամ սէգ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Ոսկ. սղ.* գիգս ի վերայ դնել *«նետաձիգ՝ սէգընկէց լինել, յն.* ἐπιτιθέναι *յարձակեալք ի վերայ, դարանամուտ լեալք» ոճի մէջ (ըստ Ակինեան, ՀԱ, 1917, էջ 27. բայց էջ 18 ասում է, որ կարող է նաև կարդացուիլ* դիգ*)։ Այս անծանօթ բառը վարդանեան, ՀԱ, 1921, 245 ուղում է ուղղել* վիրգ *կամ* վիգ *(տե՛ս այս բառը)։*

Գիջակ *տե՛ս Գէջ։*

Գիթիւոր *տե՛ս Գէթ։*

***Գիժ** *«խենթ, խելագար». աւանդուած է միայն ուշ ժամանակից. ինչ. Ջրբ. սարկ. Բ. 48. Տաթև. հարց. 371. Դրնդ. 503, որից* գժամուն *Դրնդ. 503, գժուիլ «խենթենալ» Ջրբ. սարկ. Ա. 52 «Եւ ասէ եպիսկոպոսն. գժուեցա՞ր, Յակովբ»։ Նոր գրական լեզուի մէջ միայն արևելեան բարբառն է, որ ճանաչում է այս բառը. արևմտեան բարբառը չգիտէ, թէև գտնում է արևմտեան գաւառականներում։*

=Պրս. گیج *gēj, gīj «յիմար, ապուշ, տարակուսանալ», որից փոխառեալ են նաև քրդ.* giž, giži *«ապուշ, բժամիտ, շշմած», վրաց.* გიჟი გիժի *«խենթ». ხიგიჟე սիգիժե «յիմարութիւն», გაგიჟება գագիժեբա «խենթեցնել», გიჟობა գիժոբա «խենթութիւն», გიჟური գիժուրի «յիմարաբար», ոսմ.* giž *«գիժ, խենթ», ն. ասոր.* giž, gič *«խենթ», —Ա֊ն.*

Այս մեկնութիւնս տե՛ս Գաւառական բառարան, էջ 228։

Գիհ.—Գործածական է շատ վայրերում. *հնչ.* գիժ *Ագլ. Աժտ. Բդ. Երև. Խն. Ղրբ. Շմ. Տփ.*, գէժ *Ալշ. Մշ. Նբ. Վն.*—նոր բառեր են գժատուն, գժանոց, գժացորեն, գժութիւն, գրժիլ, գժկնալ, գժատուտ, գժուացնել, գիժխոտ, գժուիլ *կամ* գեժոիլ, գեժնիլ, գեժոացնել *են։*

+Գիլ, ի–ա *հլ.* «*քար*» *Ա. մակ. բ. 36. Մամիկ. էջ 27, 48 (յգ. գրծ.* գլօ *ձևով), որից* գլաչարդ «*քարկոծ*» *Զեննր. էջ 45. Մամիկ. Լաստ. առաջին և նախնական նշանակութիւնն է «գլտորիլ, գլորում», որից* ի գիլ գալ «*գլորիլ, գլտորիլ*» *Նար.*, ի գիլ հանել «*գլորել*» *Թլկր. 37*, գլաբաւալ «*բաւալգլոր*» *Լաստ.*, գրլել «*գլտորել*» *Առակ. իզ. 27. Փիլ. Պիտ.*, «*յաղթահարել, յաղթել, գերազանցել*» *Ոսկ. ես. մ. բ. 11. Փիլիպ. է. 8.* «*արագութեան մէջ գերազանցել, նրանից առաջ անցնիլ*» *Շիր. Հրտր. Պատկ. էջ 55*, գլեցուցանել «*խօսքով յաղթել, ըմբերանել*». *Օրբ. էջ 206 (նորագիւտ բառ)* «*Այսու բանիւք գլեցուցեալ զրաբան բերանս խոտորաթօս արանց և պապանձեցուցեալ գլեալս փառորակ և անձնահաճ մարդկան*» *(ձեռագիրներից մէկը և Հրտր. Շահն. բ. 25* գլեցուցեալ *բառի տեղ ունին* լռեցուցեալ, *որ նոյնի համանիշը կամ թարգմանութիւնն է).* գլումն «*յաղթութիւն*» *Պատմ. աղէքս.*, մշտագիլ «*միշտ գլորտկող*» *ԱԲ*։—*նոյն արմատից* –ան *մասնիկով՝* գլան *Արիստ. աշխ.* –որ *մասնիկով՝* գլոր «*գլորուիլը*» *Լաստ.*, գլորել *Մղ. ճժէ. 13. ժղ. դ. 10 Ագաթ. Ոսկ. յհ. ա. 17*, գլորական *Մծբ.*, գլորումն *ղկ. բ. 34 Ագաթ. նշն.*, բաւալագլոր *նաւում. դ. 3*, խաղագլոր *Ոսկ. Փիլիպ.*։ *Ժողովրդական և արդի գրական լեզուով* կլոր, կոլոր «*բոլորակ կամ գնդաձև*» *և նոր մասնիկով՝* գլտորել, գլտոր գլտոր գալ *են։*—Գիլ *բառի երկրորդ ձևն է գիղ ԱԲ, որից* գիղամիայ *«գիլ՝ բար ձգելով համայող?» Մանդ. իզ. մանաւանդ* գայբագիլ *կամ* գայբակոիլ՝ *բարդուած* գայբ *արմատի հետ (տե՛ս* գայբ*)։*

=*Բնիկ հայ բառ. ձայնդարձն է գել արմատի, որ տե՛ս վերը առանձին։ Նշանակութեան զարգացման համար հմմտ. յն. «գլանաձև քար» ռուս.* valúnъ «*կլորակ խիճ*», *որոնք նոյնպէս ծագում են հնխ.* wel- «*գլորել*» *արմատից* (Persson, Beitr, *540, որ տե՛ս* Pokorny, *1, 299*)։—*Հիւբշ. 435։*

Նհբ գլել «*գլորել*» *լծ. յն.* κυλίω «*գլորել*», κύλινδος «*ծռել, թեքել*», *երր.* גלל.—գլել «*յաղթահարել*» *դնում է գուլ «բութ» բառից, իսկ* գլան *լծ. յն.* κύλινδρος «*գլան*»։—Gosche, *24 փոխւգ.* γλούρεα «*ոսկէ, ոսկեայ*» *և* γλουρὸς «*ոսկի*» *բառերի հետ համեմատում է հլ.* գլորել, *սանս.* harit, *յն.* χλωρός «*կանաչ*»։ Lag. Gesam. abhand. *29* գիլ = *պրս.* gil «*կաւ*»։—*Նոյն,* Urgesch. *493* գլել=*հլ.* waliti, *յն.* εἰλύειν, *լտ.* volvere:—Justi, Zendsp. *267* գլել=*գնդ.* var «*գլորել, դարձնել*»? Lag. Arm. Stud. § *496* գլել «*յաղթել*» *ըստ Նհբ գուլ «բութ» բառից։ Թօփուզեան, Արծիւ վասպ. էջ 42 իբր է կցում* ոլոր, մոլոր, գլոր, խոլոր, բոլոր։ Canini, Et. étym. *133* գլ-որել=*հլ.* kelo «*անիւ*»։ *Տէրվ. Նախալ. 106 հլ.* ճոլովել, գալաբել, ոլորել, բոլորել, *յն.* εἰλύω, *լտ.* volvo, *գոթ.* valvjan *ձևերի հետ՝ հնխ.* var, varuvarv «*բաւալիլ*» *արմատից։ Յ. Աբեղ. Բազմ. 1897, 52* գիլ, գլոր, գլել, գալար՝ *հնխ.* gal, gul «*կլոր լինել*» *արմատից, որ նոյն է սեմական* gul *արմատի հետ. հմմտ. երր.* gāl, gīl «*շրջան առնուլ*», gālīl «*շրջանակ*», *յն.* κυλίνδω «*գլորել*», κύλλος «*կոր*» *են։ Հիւնք. յն.* κυλίω «*գլորել*»։ Meillet, MSL, *9, 144* գլել *դնում է* <*գուլել<*հնխ.* wōleye, *իբր սանս.* vārāyati, *հլ.* valiti։ *Հիւբշ. 127 մերժում է* Lagarde-*ի* գիլ =*պրս.* gil «*կաւ*» *մեկնութիւնը և էջ 435 ընդունելով* Meillet-*ի մեկնութիւնը, իրար է միացնում* գլել, գելուլ, գիլ, գեղ, *որոնց վրայ աւելացնում եմ նաև* գալար, գաղձ, *(գալթա)*-գղիլ։ *Սագըզեան, ՀԱ, 1909, 335 մեր* գլել *բառը մեկնելով իբր «ձևոք երկարացնել», կցում է սումեր.* gilim «*երկար*» *բառին։*

Pictet *բ. տպ. Ա. 152 սանս.* çila *«քար»* =*լտ.* silex *ձևերի հետ:*

ԳԻՒ.—*Ննխ.* գլօր, գուլօր, գլօրէլ, գուլօրէլ, գօլօրվէլ, *երև.* գլօրէլ, *Տփ.* գլօրիլ, *Մնկ.* գոլիգոլի, *Պլ.* գլօրէլ, գլդօրէլ, *Ալշ. Մշ. Զթ.* գ'լօրեւ, *Ալշ.* կլօր, *Սեբ.* գ'լօրէլ, *Տիգ.* գլ'օրէլ, *Ռ.* բլդօրիլ, *Խրբ.* գ'բլդրրիլ, գ'լան *«անիւ»*, *Ախց. Կր.* կլօրիլ, *Հմշ.* գլօրվիլ, *Սչ.* գօլօրեւ *«գլորել»*, *Ոգմ.* գ'յբլուրիլ, *Սլմ.* գ'բլդրրեւ, *Վն.* կլորեւ, *Մկ.* կ'բլիւրիլ, *Մրզ.* կիւլէօրէլ, *Զթ.* գ'բ`լբ`յիլ, գ'բ`լբ`րիլ, գ'բ`լդբ`յիլ, գ'բ`լդբ`րիլ, գ'բնդրբիլ, *Ասլ.* գ'բլդօրվէլ`, *Շմ.* կուլօլիլ *կամ* fուլօլիլ *«մէկին գետին տապալել, յաղթահարել»*, *Հճ.* գ'mլլmյէլ:—*Սրանց հետ համմտ. նաև* գիլ *Վն. «մի տեսակ կակուղ քար» (նիւէ չէ պրս.* گل gil *«կաւ»)*, գլան *Ղրբ. «քարերը գլորելով տանելու յատուկ փայտէ գլան»*, գլել *Հմշ. «տապալել»*, գլիլ *Հմշ. «սահիլ, վայր ընկնել»*, գլլալ *Շշ. «գլորուիլ»*, գլլել *Բն. «գլորիլ»*, *Ակն. «կոնծել»:* *Նոր բառեր են՝* գլեռան, գլմլկիլ, գլմլտկիլ, գլոր, գլլտոր գլտոր, գլորկոտուիլ, գլորս, գլորտիլ, գլորտլկիլ, գլուիլ, գլուկ, գլտռռել, կլորան, կլորիկ, կլորկեկ, կլոլ'լ, կլոլակ, կոլորաւուն, կոլորել, կոլոլել, կոլոլանիք, կոլոլուիլ: *Յատկապէս յիշելի է* կլոր *«սեխ», որի հին յիշատակութիւնն ունի Բառ. երեմ. էջ 283՝ սեխ բառի բացատրութեան մէջ և աւելի յետոյ՝ Պատմ. ԺՐ դարից (Դիւան Հայոց Պատմ. ժ. էջ 112՝ երեք անգամ):*

ՓՈԽ.—*Գւռ.* կոլոլ, գոլոլ *ձևերից փոխառեալ են քրդ.* گلیل gilīl, kirin *«գլտորցնել»*, gilīl bun *«գլտորիլ»*, کلول kilul *«թաւալում, գլորիլը»*, kilul kirin *«գլտորիլ, թաւալգլոր ընկնել»* (*սրանց հետ* Justi, Dict. kurde *կցում է պրս.* کلول gūlul, کلوله gūlule *«կծիկ», որոնք անյարմար են)*, glovar *«կլոր»* (*Ազաո. MSL, 16, 355):* *Ուռ.* kololak<կոլոլակ *ձևից:*

ԳԻՒ, ի, ի-ա, ո *հլ. (բոլորն էլ յետնաբար) «դիծ, խազ» Փիլ. ել. Արիստ. քանակ., «գիր, գրուածք» Խոր. Նար. Մագ., «սպի, հետք» Փիլ. քհ. Նար., «ուղիղ շարք, տող» Ժիլ. լիւս. Նար., որից՝* գծել *Ագաթ., գծած Փարպ.,* գծագրել *Կիւրղ. գնձ. Փիլ. այլաբ.,* նախագիծ *Սարգ. Մաշկ. Նար.,* նկարագիծ *Լծ. ածար.,* ուղղագիծ *Նիւս. բն. Փիլ. լիւս.,* անգծելի *Ա. Նան. պետր. Մագ. Նար.,* գրագիծ *ՅՀ. կթ. և այլն: Նոր բառեր են՝* գծագրիչ, գծատր, օրինագիծ *ևն:*

Թիրեաքեան, Կարնամակ, ծանօթ. 41 գեզ, զզել, գիծ, կիծ, կիճ *իրար է միացնում:* Karst, *Յուշարձ. 418 օսմ.* čizmek *«գծել»*, čiz-gi *«գիծ»:* Petersson, Ar. u. Arm. Stud. *59 հլ.* գիր, *գնդ.* vaēma- *«ժայռ, վէմ», հայ.* vajati *«քանդակել», սանս.* veçí *«ասել» բառերի հետ՝ հնխ.* ueí, uoí *«ճեղքել արմատից:*

ԳԻՒ.—*Ախց.* գ'իծ, *Սչ.* գ'իձ, *Ասլ.* գ'իձ, գ'իզգ, *Մրզ.* կ'իծ:

ԳԻՀ *տե՛ս* Գեհ:

ԳԻՀԻ *տե՛ս* Գի.—*Ճիշտ այս ձևով է Խոյ.* գ'իհի *«արտրճ»:*

ԳԻՂ *տե՛ս* Գիլ:

+**ԳԻՆ**, ո *հլ. (յետնաբար նաև ի հլ.) «մի բանի արժէքը» ՍԳր. Կիւրղ. եւ., «գնում» Ա. մակ. ժգ. 49. Գ. Թագ. ժգ. 28, «նաւի վարձ» Յովն. ա. 3, որից՝* գին հատանել, գին արկանել *«արժէքը որոշել» ՍԳր.,* գնոյ առնուլ *«ծախու առնել» Կող. դ. 5, Եփր. Համար.,* գինս տանել *կամ* խնդրել *«վճարքը պահանջել» Եզն.,* գնել *ՍԳր. Ոսկ. եփես.,* գնածոյ *Պղատ. օրին. Վրք. Հց.,* գանձագին առնել *«դրամով գնել» Ասող. Յայսմ.,* մեծագին *Մրկ. ժդ. 3. ՅՀ. ժբ. 3. Սեբեր.,* մեծագնի *ՍԳր.,* առագին *«ապրանքի նմոյշ, որ ցուցադրում են» Ոսկ. ես. 274,* առգնող *«վաճառականն» ես. իգ. 8.* ածգին *Ոսկ. մ. դ. 3, 8,* ածգնել *Ոսկ. ես. 419,* ծանրագին *Մտթ. իզ. 7. Վեցօր. եզն.,* մարդագին *Բ. մակ. ը. 11, 25, 34,* նորագին *Ոսկ. ա. տիմ.,* դիւրագին *Մանդ.,* անգին *«շատ թանկագին» Ոսկ. բ. կոր. «առանց փրկանքի» Պատմ. Ներս. Հյր. 70,* ձիրագին, խնկագին *«ձէթի՝ խունկի համար եկեղեցուն տրուած դրամ» (նորագիւտ բառ) Տաթև. ձմ. ճը.* գնուրդի *«դրամով առնուած» (չունի ԱԲ) Անսիզք 21. Նոր բառեր են՝* գնորդ, թանկագին, սակագին, գնաճատել, անգնաճատելի, գնաճատական, արժեգին, լուսագին, ճացագին, դասագին, գնում *ևն:*

= *Բնիկ հայ բառ՝ հնխ.* vēs-no- *ձևից. սրա* ves-no, vos-no *համազորներից են ծագում սանս.* vasna- «գին», vasnám «վարձը», vasnayāmi «սակարկել», *պհլ.* vahāk, *պրս.* بها bahā «գին», *յն.* ὦνος «գին», ὠνή «գնումն» (*լեսբ.* ὄννᾱ), ὠνέομαι «գնել», *գոթ.* ōnīn «ծախել», *լտ.* *vēnus (*պահուած է միայն հյց.* venum *և սր.* veno *ձևերով*) «վաճառ», vēnum dare «առալ ի վաճառ» *որից* vendere «վաճառել» (*ֆրանս.* vendre, *իտալ.* vendere, *սպան.* vender, *ռում.* vinde, *բոլորն էլ «ծախել»*), *կամիս.* uššaniya «ծախել» *և* waš «գնել», *որ ներկայացնում է պարզական արմատը՝ առանց* -no *մասնիկի* (Pokorny, *1, 311 և* Ernout-Meillet. *1044*)։ *Բառիս կրկին նշանակութիւնները նրանից են յառաջանում, որ վաճառումը հնագէս փոխանակութեամբ էր և վաճառողը միաժամանակ նաև գնող էր* (Walde, *818*, Boisacq, *1082*, Horn, § *242*)։—*Հիւբշ. 434։*

Windisch. *7 սանս.* guna՝ Lag. Urgesch. *442 սանս.* vaṇij «վաճառական», *լտ.* vendere, *իրև* ven-dere՝ *համաձայն հյ.* գին տալ *ոճին։ Հիւբշ.* KZ, *23, 24* առ-գին *բառը գնում է արգ արմատից, որ յայտնապէս սխալ է։ Տէրվ. Նախալ. 108,* Bugge, Beitr. *24* գին *մեկնում են վերի մեկնութեամբ։ Հիւնք.* քանի *բառից։—Յ. Դ. Մ., Պատմ. դրակ. 16 ճապոն.* ճին *բառի հետ։*

Գիմ.—Նախ. Տփ. (իսկ Պլ. միայն հին լեզուով) գին, *Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Հճ. Մշ. Ջղ. Սեբ. Սչ.* գ'ին, *Ագլ.* գ'ին, *Համշ. Շմ.* կին, *Մկ. Մրզ. Սլմ. Վն.* կ'ին, *Ռ. Տիգ.* ֆին, *Ոզմ.* գ'ի՛ն, *Զթ.* գէն։—*Նոր բառեր են* գնջ, գնց. գնծու, գնանց, գնաւոր, գնուկ, գնորդի։

Փոխ.—Գնչ. Kinava «գնել, ծախու առնել», *սպանական գնչ.* quinar «գնել». (Paspati *իղուր է համեմատում այս բառերը սանս.* krī «գնել» *ձևի հետ*)։

+ԳԻՆԴ, ի–ա *հլ. (յետնաբար նաև* ի *հլ.)* «ականջի օղ» *ՍԳր. Եփր. ծն. «մանեակ, օղամանեակ, շրջանակ» Փիլ. նխ. բ., որից* գրնդապաճոյճ «գինդերով կամ գնդանման զարդերով զարդարուած» (*նորագիւտ բառ*) *Անկ. գիրք հին կտ. Ա. էջ 171,* գնդանց «գինդ կամ գինդի օղակը» *Գնձ.,* գնդակալ «գինդի օղը» *Վրդն. ծն.,* գնդակ «շրջանակ, պսակաձև զարդ» *Կիւրղ. Թուց.* «ճիւղ, մանաւանդ խաղողի խիղը» *Մն. խթ. 11. Վեցօր. 92, 95. Կոչ. 152,* գնդաձև «ոլոր ոլոր, մանուածապատ» *Մաթս. դիոն.—դրուած է նաև* գինա։

=*Բնիկ հայ բառ. նախնական իմաստն է «բոլորաձև, ոլորակ, օղակի պէս կլոր, rond», որ տարբեր է գունդ «գնդաձև, ձմերուկի պէս կլոր, sphérique» բառից։ Ինչպէս կլոր աշխարհաբարի մէջ շփոթ կերպով նշանակում է թէ՛ «բոլորակ, rond» և թէ՛ «գնդաձև, sphérique», նոյնպէս և այստեղ կայ նման շփոթութիւն գինդ և գունդ բառերի գործածութեան մէջ. մանաւանդ որ այս երկուսը ածանցման մէջ հաւասարապէս տալիս են գնդ–, որով արմատը որոշել անկարելի է։ Գրնդակ «շրջանակ» կամ «խաղողի ծիլ», գնդաձև «ոլորապտոյտ» (օր. գնդաձև գնացք օձից) անշուշտ* sphérique *չեն և հետևաբար բխած են գինդ «բոլորակ» բառից։ Կարող են սակայն նաև շփոթմամբ գունդ բառից յառաջացած լինել։ Ինչ որ էլ լինի, գինդ բառի բուն իմաստն է «կլոր» և յետոյ միայն դարձել է «ականջի օղ», ճիշտ ինչպէս հյ.* օղ «կլորակ. 2. գինդ» *կամ գերմ.* Ring «բոլորակ, օղակ» *և յետոյ* Ohrring «ականջի գինդ»։ *Այս նշանակութեամբ հյ. գինդ ծագում է հնխ.* vendhā *ձևից, որի միւս ժառանգներն են հնհւս.* vinda, *հրգ.* wintan, *գերմ.* winden «ոլորել, դարձնել», *հրգ.* uuindinga «գինդ, կանացի զարդ», *նրգ.* Winde «բազկեղ», *հրգ.* Uuinton «խաղողի ծիլ» (*այս երկու բառերը նոյնանում են մեր* գնդակ *որթոյ ձևի հետ*). *ումբր.*—ueṇdo «դարձած», *սանս.* vandhúra «կառքի կողով» (Pokorny, *1, 261*)։ *Տե՛ս նաև վարը* գինձ, *որ նոյն արմատից է։*

ՆՀՔ սանս. կունտալա «գինդ, մատանի»։ *Հիւնք.* ֆիր *բառից է հանում։ Վերի մեկնութիւնը տուաւ* Lidén, Arm. Stud. *5—7։ Պատահական նմանութիւն ունին սանս.* gaṇḍa «ձիու սանձի վրայ իրև զարդ դրուած վարդ կամ կոճակ, կապ ևն», gaṇḍū «կապ, հանգոյց», *մոնգոլ.*

كندو kindū «կանացի մի տեսակ զարդ» (տե՛ս Մանզոլ-արաբ. բառ. ЗВО, 15, 116)։

Գիմ.—Ալշ. երև. Մշ. գ'ինդ (Ալշ. յգ. լինում է գ'ինդեր), Մկ. Սլմ. վն. կ'ինդ, Ոզմ. գ'է'նդ, իսկ Ջղ. միայն բարդութեան մէջ պահուած՝ անգռեագ'ինդ.—փոխաբերաբար գինդ Մկ. «ոչխարի վրի տակից կախուած երկու կտոր միս»։

+Գինի (-նւոյ, ւով, նաւ, ւոց, նաց, ւօք) «գինի» ՍԳր. Ագաթ. Եփր. Քգ. Մծբ. ածանցման մէջ մտնում է սովորաբար գինե- ձևով. ինչ. գինեակ Սեբեր. Ոսկ. ա. տիմ., գինեզէն Գ. մակ. ե. 1, 5. Ոսկ. մ. բ. 23, գինեհարիլ «հարբիլ» Ես. ժղ. 12, գինեմոլ Եզեկ. իգ. 41. Տիտ. բ. 3. Ոսկ. մ. բ. 23, գինեսէր Ա. տիմ. գ. 8, սակայն կայ նաև գին- ձևով. ինչ. գինըմպելիք Ոսկ. մ. բ. 23, գինըմպուք Ոսկ. մ. բ. 23, գինարբուք «խնջոյք» ՍԳր. գինաւէտ Ես. լզ. 17. նոր բառեր են՝ գինեպան, գինետուն, գինեգործ, գինեգործութիւն, գինեգործական, գինեվաճառութիւն են։

=Բնիկ հայ բառ. ծագում է նախաւոր *գէնի ձևից, որի մայրն է հնխ. voinio- սրա հետ համմտ. յն. οἶνος «գինի» (<ϝοῖνος, Հեսիք. γοῖνος, Թրակ γάνος), οἴνη (դոր. οἴνα) «որթ», οἰνάς, «որթ, գինի», հաթ. genš (š ուղղականի մասնիկ է) «գինի», ալբան. vēnɛ, թոսք. verɛ «գինի» (<*voinā), լատ. vīnum (<*voino-) «գինի», որից ռում. vinŭ, իտալ. սպան. vino, ֆրանս. vin. լատիներէնից փոխառեալ են գոթ. wein, հբգ. wīn, գերմ. Wein, անգլ. vine, հիւլ. fīn, կիմր. gwin,— գերմանականից փոխառեալ են հսլ. vino, ռուս. вино, որոնցից էլ՝ լիթ. vỹnas «գինի» և մորդվին. (ոչ-հնդևրոպական) vinā «գինի, օղի»։ Միևնոյն բառը գտնում է նաև սեմական լեզուներում. օր. հբր. יַיִן yain (< wain), արաբ. وَيْن wain, եթովպ. ወይን wein, ասորեստ. inu, սեմական նախալեզուի մէջ wainu «գինի» (Walde, 839, Boisacq, 691, Kluge, 523)։ —Գինի բառի ծագման և սրա հետ որթի նախնական հայրենիքի, ինչպէս և գինեգործութեան արհեստի սկզբնաւորութեան, զարգացման և տարածման վրայ շատ է վիճաբանուած։ Երկար քննութիւններ են կատարել Schröder, Hehn, Hommel, Kremer, Jensen ևն։ Սրանցից ոմանք համարում են, թէ գինին նախնաբար հնդևրոպացոցն էր և սեմականները նրանցից սովորեցին գինեգործութիւնը, ուստի և սեմական ձևերը փոխառութիւն են հնդևրոպացիներից։ Ըստ Lag. Arm. Stud. էջ 35 ծան. Կիպրոսից անցել է հրէից և սրանցից էլ արաբներին։ Ուրիշներ, ընդհակառակը, պընդում են թէ գինին նախապէս սեմական էր, որոնցից փոխառութեամբ անցաւ հնդևրոպացիներին։ Ճշտագոյնն այն է (ինչպէս Meillet, MSL, 15, 163 և ուրիշներ ընդունում են), որ գինին Միջերկրականի հին քաղաքակիրթ ժողովուրդի գիւտն ու սեպհականութիւնն է, որ յետոյ՝ մի կողմից փոխառութեամբ անցաւ սեմականներին և միւս կողմից՝ հարևան հնդևրոպացիներին (յոյն, հայ, ալբանացի) և սրանց միջոցով էլ հետզհետէ տարածուեց աւելի հեռուները (լատին, գերմանիա, կելտ, սլաւոն)։ Գերմանիա մտաւ Ա դարին՝ լատիններէն միջոցով. սրանից աւելի ուշ սլաւներին անցաւ Հայերի միջոցով տարածուեց Կովկասի մէջ.—(Pokorny, 1, 226, Ernout-Meillet, 1068)։—Հիւբշ. 434։

Առաջին ուղիղ համեմատութիւնները տուաւ Klaproth, Asia polygl. 106։ ՆՀԲ համեմատում է վրաց. ղվինո, յն. οἶνος, լտ. vinum ձևերի հետ։ Peterm. 25 դրնում է լտ. vinum, յն. οἶνος, հբր. יַיִן yain և արաբ. vain: — Windisch. 7 յոյն և լտ. ձևերի հետ։ Այսպէս նաև միւսները։ Տէրոյենց պատուելի, Երևակ, 1857, էջ 194—5 Ուայզմէն անգլիացի հեղինակի «Պատմութիւն գիտութեան լեզուաց» գրքի թարգմանութեան մէջ, ուր ասուած է, թէ գինեգործութիւնը նախնապէս վերաբերում էր սեմականներին և սրանց ձեռքով արևելքից արևմուտք է տարածուած, աւելացնում է այս ծանոթութիւնը թէ «խաղողի մշակութիւնը ըստ Ս. Գրոց սկսած է Հայաստանի մէջ, յԱկոռի, Նոյի ձեռքով. նախալեզուական բառը գինին է. ասիէ փոխ տուին հրեայք, և

աստնցմէ ալ տարածուեացաւ Եւրոպա»։ Lag. Arm. Stud. § *484 և էջ 170 չէ ընդունած յն. և լտ. բառերի համեմատութիւնը։ Գինի բառը կովկասեանների հետ են համեմատել* Tomaschek, Deutsche Litteraturz. *1883, էջ 1254,* Bugge, KZ, *32, 83,* Jensen, Hitt. u. Armen. *100, 130, 210 և* ZDMG, *48 (1894), էջ 465։ Վերջինը, ինչպէս և* Meillet *և ուրիշներ, կովկասեան ձևերը համարում են հայերէնից փոխառեալ։ Հիւնք. յն. χαινός «նոր» բառից։ Գինի բառի վրայ մի ղարմանալի կարծիք յայտնեց Յ. Արշէզ, ՀԱ, 1896, 267—270, որի համեմատ գինի բառը ծագում է գի ծառի անունից. այս էլ ակկադերէն* gi *«եղևնի կամ արմաւենի և կամ որթ?» բառից. -նի՝ ծառ նշանակող -ենի մասնիկն է։ Գիհի ծառից պատրաստում էին մի տեսակ օղի, որ յետոյ փոխանակուեց խաղողի գինիով. առաջինի անունը սակայն դրուեց ու պահուեց երկրորդի վրայ։ Այս յօդուածի առթիւ մի երկար բանավէճ Յ. Արշէզի և Հ. Գ. Մէնէվիշեանի միջև՝ տե՛ս ՀԱ, 1896, 289—292, Բազմ. 1897, 49—54 և 1899, 104 =ՀԱ, 1899, 83։* Bugge, Lyk. Stud. *1, 13 հայ բառը գտնում է Փոքր Ասիոյ* Οἰνοανδα *քաղաքի անուան մէջ։ Մառ,* О полож. абхаз. *էջ 41 հյ. գինի, վրաց. ղվինի, ափխազ.* аҕ́ *են համարում է բնիկ յաբեթական բառ, որի մնացորդն է այգի, ուր այ տեղական մասնիկ է։*

ԳԻՒ.—Նախ. Պլ. Տփ. գինի, *Ալշ. Ախց. Ասլ. Երև. Խրբ. Կր. Հճ. Մշ. Ջղ. Սեբ. Սչ.* գ'ինի, *Ագլ.* գ'ի'նի, *Ռ. Տիգ.* ինի, *Համշ. Ղրբ. Շմ.* կինի, *Մրզ. Սլմ. Վն.* կ'ինի, *Զթ.* գ'ինէ, *Մկ.* կ'ինը, *Ոզմ.* գ'էնէ։ *Նոր բառեր են՝* գինագոխ, գինախում, գինակ, գինահոտ, գինամած, գինաջուր, գինարբ, գինեբրուկ, գինուկ, գինով, գինովնալ *են։*

ՓՈԽ.—Վրաց. ղվինի, ղվինո, ուռո, *մինգր.* ղվինի, *լազ.* ղուինի, ղինի, *ինգիլ.* դիւնէյ, *սվան.* գվինէյ, ղվինալ. *Հմմտ. նաև Թուշ.* վն, վէն, *ուտ.* ֆի *(սեռ.* ֆինէի*), ափխազ.* agfʷy? *բոլորն էլ «գինի»։*

†ԳԻՆՁ, ո *հլ. «մի տեսակ բոյս և նրա հատիկները.* coriandrum» *եկ. ժզ. 14, 31. Թուց ժա. 7. որից* գինաճաա *ԱԲ,* գինաջուր *ԱԲ։*

=*Բնիկ հայ բառ, որ յառաջացած է* գինդ *«կլոր» բառից. այսպէս է կոչուած բոյսը՝ սերմի կլորիկ ձևից առնելով. այս նախնական նշանակութեան համար հմմտ. վրաց* ჩინჩი, *որ է «գինձ», բայց* ჩინჩხა-ბაվի *«գնդասեղ» (բառացի. «գինձի գլուխ»). Նոր-Ջուղայի բարբառով էլ գինձը կոչւում է* բոլորգինձ։—*Ամման ձևի համար հմմտ.* փոխինդ-փոխինձ, խեղդ-ճեղձ, պիղծ-պղտոր, խայծ-խայտ *են։—Ա՛ճ։*

Lag. Gesam. Abhd. *57 երր.* ד׳ gid *(ուղիղն է* gad*) «գինձ»։ Հիւնք.* կինճ *բառից։*

ԳԻՒ.—Ալշ. Խրբ. Մշ. գ'ինձ, *Ագլ.* գ'ի'նձ, *Ղրբ.* կինձ, *Սլմ. Վն.* կ'ինձ, *Տիգ.* ինձ, *Ոզմ.* գ'էնձ, *Ւրդ.* կ'ինձ, *ծինձ։—Վրացերէնից փոխառեալ է Տփ.* ինձ։—*Նոյն է և* գինձ *Ղբ. «մանր ալոճ»։*

ՓՈԽ.—Վրաց. ինձի *«գինձ», Ջօճժօն-თავი* ինձիս-բավի *«գնդասեղ (հմմտ. գւս.* գնձիկ *«գնդասեղ»), Ջօճժօն თշնლი* ինձիս *թեսլի «գինձի սերմը, հատիկը», Թուշ. Ջօճժ* ինձ *«գինձ»։*

†ԳԻՇԵՐ, ո *հլ. (երբեմն նաև ի-ա հլ. սեռ.* գիշերիճ *ունի կրկնագիր Ագաթ. Յուշարձան, էջ 126 բ) «գիշեր» ՍԳր., որից՝* գիշերի *«գիշերանց» ՍԳր. Եւս. քր.,* գիշերայն *«գիշերանց» ՍԳր.,* գիշերախառն *Բ. մակ. ժբ. 9. Գ. մակ. ե. 10,* գիշերական *ՍԳր.,* գիշերակերպ *կոչ.,* գիշերամարտ *Ագաթ.,* գիշերապահ *ՍԳր. Ոսկ. մ. գ. 31. Ագաթ.,* գիշերավար *«Արուեստակ» Յոր. Բ. 9. լը. 32. Կոչ.* միջագիշեր *ՅՀ. իմ. առ.,* մշտագիշեր *նար.։ Հազուագիւտ ձևեր են՝* գիշերաց *Ես. իզ. 9 (որից* գիշերեաց *ՅՀ. իմ. հկ.) և* գիշերոյն *Գ. Թագ. ը. 24 մակբայները։ Նոր բառեր են՝* գիշերազգեստ, գիշերօթիկ։

=*Բնիկ հայ բառ, որի ցեղակիցներն են յն. հոմեր.* ἔσπερος *«երեկոյ», τὰ* ἑσπέρα *«երեկոյեան ժամանակ», յետնաբար* ἑσ-

πέρα «երեկոյ», լա. vesper «երեկոյ», vespera «երեկոյ ժամանակ», ֆրանս. vêpres «երեկոյեան պաղթք», հիւլ. fescor, կիմբ. ucher, լիթ. vākaras «երեկոյ», vakarai «արեւմուտք», լեթթ. vakars «երեկոյ», հսլ. večerŭ, ռուս. вечеръ «երեկոյ», вечеря «ընթրիք», գերմ. Vesperbrot «իրիկնահաց, ընթրիք», փոխառութեամբ հունգ. vacsora «ընթրիք» (Walde, 827, Boisacq, 288, Trautmann, 348): Այս բառերին նախաձև են դրւում հնխ. vespero, veqero, առանց սակայն ձայնական տարբերութիւնները լիովին պարզելու: Հայերէնը, որ գալիս է հնագոյն *գեշեր ձևից, հայում է veqero նախաձևին, համմ. շուն, եշ.—Խոխարերէնն ունի. wşe ձևը, որի հետ նոյն է քուշ. yaşi «գիշեր» (Pokorny, 1, 15 և 311, Kluge, 510, Ernout-Meillet, 1054): —Հիւբշ. 435:

Հներից Վրդն. ծն. մեկնում է գեշ բառով. «Յորժամ գոյն գեշ և թուխ զգենուն օդ և երկիր, գիշեր կոչի»: Յայտմ. մրտ. 17 գեշ+իր կամ «երր. եւ զխաւարն կոչեաց գիշեր, որ է գեշ իր կամ գեշ երր, այս է մութն ու խաւար» Տաթև. Յմ. կզ. «գիշերն գարշ իր կոչի»: Նոյն, Հարց. 196 գիշեր՝ գի գարշանայ երր, որ է օդ: Քաղուածք ինչ Մեկն. արթծ. հանում է ֆշել բառից. «Որպէս թէ ի մտանել արեգականն՝ քիշ արկեալ ժողովին մարդ և անասունք և թռչունք. և գազանք յորջից քշեալք՝ եկանեն յորսս» (ըստ Մահ Մագիստ. Համբագիր չափածոյ, էջ 152): Նորերից ուղիղ մեկնեց նախ Klaproth, Asia polygl. էջ 99, որ համեմատում է հսլ. večer բառի հետ սրանց կցելով նաև իտալ. sera, լա. sero, օսա. achsar: Նէր «կիսեր, կէսն աւուր, լծ. թրք. gije, goje «գիշեր»: Böttlich. Wurzelforsch. 23 viš արմատից: Ուղիղ մեկնութիւնն ունի Müller, SWAW, 38, 576, որ կրկնում են Տէրվ. Altarm. 51, Նախալ. 108 են: Մահ մագիստր. (անգ) գնում է գորշ երր: Karst, Յուշարձան, 405 սումեր. giši «մթութիւն», gig «սուեր, գիշեր», 423 ալթալ. ket, keč «երթալ, հեռանալ», օսմ. gečen «անցեալ», geč «ուշ», չաղաթ. kïča «երեկոյ»: Պատահական նմանութիւն ունի չերքէզ. čeŝə «գիշեր»:—Հայ բառի հնդեւրոպական ծագման հակառակ է Brugmann, IF, 13, 158, որին համամիտ է նաև Boisacq, 289. սակայն այդ կասկածները իզուր են, ինչպէս ցոյց է տալիս վերջին անգամ Pedersen, KZ, 39, 393 և 404, որին համամիտ է նաև Walde, 827:

Գիւմ.—Ալշ. Մշ. գիշեր, Ախց. Ակն. կր. գիշէր, Սլմ. ֆիշեր. Ասլ. գիշէ՛ր, Վն. կիշեր, Խրբ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. ֆիշէր, Գոր. կիշէ՛ր, Սչ. գ'ըշէր, Զթ. ֆշեր, Տփ. գի՛շիր, Ոզմ. գ'իշիր, Հմշ. կիշիր, Մկ. կ'իշիր, Մրդ. ֆ'իշիր, Զթ. գ'իշիյ, գ'իշիր, Հճ. գ'իշէյ, շիյէգ, շէյս «այս գիշեր, գիշերս», Երև. Ղրբ. Մղր. Նախ. ֆշէր, Ագլ. Տիգ. ֆշիր:—Նոր բառեր են՝ գիշերագնայ, գիշերաբեփ, շերեփեց (=գիշերեփեաց), գիշերաց, գիշերի «կզաքիս», գիշերաճայ, մրճագիշեր. գիշերաճաց, գիշերճուկ են են:—Գաւառականների մէջ գիշեր բառը նշանակում է նաև «սև սաթ» (այսպէս Ալբս. Կ. Տփ.), այս իմաստը ձեռացած է գիշեր բառի «սև» առումից. համմ. գիշերադէմ «սևադէմ, սևերես» Մխ. առակ. (սրա վրայ տե՛ս Նորայր, Հայկ. բառաբ. էջ 15. նաև Հիւբշ. IF, 19, 477): Նոյն կազմութիւնն ունին նաև պրս. شب šaba և شبرنگ šabrang «է ազգ ինչ սեաւ և վճիտ քարի, որ ի ճախարակիին լինի որպէս սաթ». երկուսն էլ شب šab «գիշեր» բառից: Դարձեալ պրս. بیجاده bījāda, որ է «սաթ», նշանակում է նաև «գիշեր» (տե՛ս Будаговъ. Срав. слов. 1, 299): Այս գիշեր «սաթ» բառից է կազմուած Գիշերաձոր տեղական յատուկ անունը (Օրբ. բ. 236, Հիւբշ. Die altarm. Ortsnamen, Հյ. Թրգմ. էջ 332 և 431):

Փոխ.—Վրաց. ვიშერი գիշերի «սև սաթ» გიშრისფერი գիշերափեթի «հերիսայ» (Ջուբինով²), որ հյ. դւռ. գիշերեփեց ձևից է փոխառեալ:

ԳԻՇՏ «աբեղայի յատուկ մաշկեայ հագուստ կամ վերարկու» Լմբ. առ Լևոն, տպ. Վենետ. 1865. էջ 218, 240 (ոմկ.գրծ. գլոսվ),

որից գշոիլ «մաշկեղէն հագուստ հագնիլ, աբեղայ դառնալ» (նորագիւտ բառ) Արշ. վերջ. «ի Կարմեղոս լերինդ անապատացեալ ուղնեաւ գշոի»։

ՆՀԲ գիշտ բացատրում է «աբեղայի գդակ կամ հագուստ», ՋԲ միայն «հանգերձ ի մորթոյ կենդանեաց, մուշտակ»։ Ուղիղ է միայն «մաշկէ հագուստ» նշանակութիւնը, որովհետև Լամբրոնացու կրկին օրինակներումն էլ այս մասին է խօսքը։ Վերջին վկայութեան մէջ էլ ՆՀԲ գշոի կարծում է թէ գիշտ բառի սեռականն է։—Հացունի, Պատմ. տարազի, 418 գիշտ հանում է իշտել «յապաւել» բայից, իբրև թէ «կարճ հագուստ»։

ԳԻՐ, ո հլ. «տառ, 2. գրուածք, գրութիւն, 3. նամակ, 4. Ս. Գիրքը, Աստուածաշունչ, 5. որևէ գիրք, մատեան» ՍԳր. Եւս. քր. Ոսկ. մ. բ. 16. Եղն., որից՝ գրել «գիր գրել, 2. փորագրել, քանդակել» ՍԳր. «3. նկարել» Ոսկ. պօղ. բ. 467. «4. համարել, ենթադրել» Եղն. Ոսկ. ես. մ. բ. եբր. «5 վերագրել» Կիւրղ. թագ., գրիչ ՍԳր. Ագաթ. Կորիւն., գրագէտ Ես. իթ. 11. Եւս. քր. Ոսկ. ես., գրագիր Եւս. քր., գրակ «տառ» Կոչ., գրածն Ոսկ. ես., գրեան Ոսկ. մ. ա. ես. և Կոր., գրեանք Եւս. պատ., գրեթէ ՍԳր. Եղն., գրեղէն Ոսկ. ես., արագագիր Սղ. թատ. 2, մեհենագիրք Եւս. քր., որդեգիր ՍԳր, բնագիր Մանդ. Խոր., գեղագրել Նար., յառաջագիր Ագաթ., վարագագիր Բուզ., անգիր Յոր. խր. 11. Ոսկ. ա. Թես. Եւս. քր. Կոչ., նշանագիր Եբր. ե. 12. Եփր. Թգ. Եւս. քր. և պատ. Ագաթ. Կորիւն., համագրել Եւս. քր., ձեռագիր Կոչ. բ. 14. Ոսկ. Բուզ. Սերեր., երկաթագիր Մխ. ապար., տարագիր «աքսորական» Սգր. Սերեր. Եւս. քր. (յն. προ-γράφω բառից թարգմանաբար), գրչութիւն Խոր., գրապան «գրագարանապետ» (չունի ԱԲ) Առաք. պատ. 343, ևն են։ Նոր բառեր են՝ կենսագրութիւն, գարդագիր, տարեգիրք, լուսանցագրութիւն, սեպագիր, ամսագիր, աճստրագիր, արտագրութիւն, աղերսագիր, գրիչկարիչ (Riggs, էջ 15), բնկալագիր, բազմագիր, բևեռագիր, բոչնագիր, ապագիր, աճդարագիր, վաւերագիր, սղագրութիւն, սկզբնագիր, գրագիտական, գրադատական, գրադարան, գրադարանապետ, գրադարանապետութիւն, գրախանութ, գրականագէտ, գրականական, գրաճաշիւ, գրաճաշուական, գրաճաշ, գրասենեակ, գրասենեկային, գրավաճառ, գրավաճառանոց, գրավաճառութիւն, գրատուն, գրացուցակ, գրչագրական, գրչածայր, գրչակոթ, գրչահատ, գրչափոռն են։

= Բնիկ հայ բառ՝ հնխ. wer «պատռել, քերել, քերթել, ճանկռոտել» արմատի երկար wēr ձևից. ցեղակիցներն են պարզ wer կամ k. d, ei ածականներով աճած ձևի տակ՝ տանս. vraṇá- «վէրք, պատառոտածք», vṛścáti «պատռել, հերձել, ճեղքել», յն. ῥινός «կաշի, մորթ», ῥάκος (հոլ. βράκος) «կնդոտի, պատառոտած շոր», ῥακοῦν «պատառոտել», ῥίνη «խարտոց», ալբան. vorε «վէրք», հսլ. դատ. rana «վերք», ռուս. вередъ «պալար, վէրք», սլով. vręskniti «շատաչմամբ խորտակիլ, պայթիլ», գան. vraade, անգլսք. wrōtan, հիսլ. rōta, հրգ. ruossan «փորել» են։ Նշանակութեան զարգացման համար համմտ. յն. γράφω «ճանկռել, փորագրել, գրել, նկարել», որի համեմատ էլ հլ. քերել և քերականութիւն։ Մեր բառի հետ ճիշտ համեմատելի են գոթ. writs «գիծ», անգլսք. writ «գիր», wroett «փորագրութիւն, զարդարանք», writan, միգ. writen, որոնք բղխում են նոյն wer- արմատից՝ աճած t ածականով և նշանակում են «վիրաւորել, պատռել, փորագրել, նկարել, գրել» (Pokorny, 1, 286—7, Boisacq, 341, 833)։—Աճ.

Հները մեկնում էին ſերել բառով, ինչպէս է իսկ յն. γράφω «գրել», որի առաջին և հիմնական նշանակութիւնն է «քերել», բան որում հների գրութիւնը քարերի վրայ փորագրութիւն էր։ Այսպէս՝ Թր. քեր. էջ 4 «Գիր ասի, վասն զի իբր քերելով իմն գազափարի. բանզի գրելդ քերել ասիւր առ նախնեօքն»։ Երզն. քեր=Սիւն. քեր. 199 «Գիրդ է ի քերելոյ և ի գծելոյ»։ ՀՀԲ ևս հետևելով սրանց՝ համարում է ſերել բառից, Brosset, JAs. Paris 14(1834), 369—405 վրաց. վծեր, յն. γράφω «գրել»։ ՆՀԲ յն. վրաց. ծէրիլի, հլ. ծիր, գիծ, ſերումն,

իակ սանս. կիր է «ձայն, հնչումն»։ Peterm. *25, 37 սանս.* giri «լեռ», gir «խոսակցութիւն»։ Windisch. *7 յն.* γράφω «գրել»։ Ազգասէր Կալկաթայի, *1847, էջ 415 հայերէնը համարում է նախալեզուեան բառ, որից անգլ.* graphy «գրութիւն». Եբեր բառի համանութիւնից էլ հետևցնում է, որ նախապէս գիրը «քարի վրայ քերծելով» էր։ Lag. Urgesch. *975 յն.* γράφειν «գրել» բայի հետ։ Մորթմանն, ZDMG, *26, 527 լեռն.* çirsini, *յն.* γράφω, *լատ.* scribo, *գերմ.* graben «փորել», schreiben «գրել», հլ. քերծել=*գերմ.* kratzen։ Սողոմոն Մուրատեան, Մասիս, *1883, սեպտ. 26 յն.* γράφω, *լտ.* s-cir-bo (!), *գերմ.* gr.-ben, s-chr-eiben, *ֆրանս.* é-crire, *անգլ.* s-cribe։ Canini, Et. étym. *186 յն.* γράφω *և լտ.* scribo: Հիւնք. *յն.* γράφω, γράμμα *են*։ Patrubány, SA, *1, 189 հնխ.* ver «պահել, պահպանել» արմատից։ Նոյն, ՀԱ, *1906, 343 յն.* χραίνω «մի բանի հպիլ, քսուիլ»։—Ч'арая, Объ отнош. абхазск. яз. *էջ 48 ափխազ.* aγərà «գիր»? Коршъ, *Թրգմ. Հովիտ, 1914, 455 ֆիննն.* kirja «գիրք», kirje «նամակ» բառերի հետ։ Petersson, Ar. u. Armen. Stud. *58 հլ.* գիծ, *գնգ.* vaēma «վէմ», հլ. vajati «քանդակել», *սանս.* veçi «մանդ» բառերի հետ՝ *հնխ.* uei, ueoi «ճոպքել» արմատից, որից աճած ui-ro ձևն է ներկայացնում հլ. գիր։

Գիրք.—Ագլ. Ննխ. Պլ. (Հին լեզուով) Տփ. գիր, *Ալշ. Ախց. Ասլ. Երև. Խրբ. Կր. Մշ. Զթ. Սեբ.* գ'իր, *Սչ.* գ'ի'բր, *Գոր. Համշ. Ղրբ. Մկ. Շմ.* կիր, *Մրզ. Սլմ. Վն.* կ'իր, *Պլ. (Նոր լեզուով), Ռ. Տիգ.* բիր, *Ոզմ.* գ'ի'բ, *Հճ.* գ'իյ, *Զթ.* գ'էյ, գ'էր.—*Ննխ. Պլ. (Հին լեզուով)* գրէլ, *Ալշ. Մշ. Զթ. Սչ.* գ'րել, *Ախց. Կր. Սեբ.* գ'րէլ, *Ասլ.* գ'րէ'լ, *Պլ. (Նոր լեզուով) Ռ. Տիգ.* բրէլ, *Տփ.* գրիլ, *Երև.* գ'րիլ, *Ղրբ. Մկ.* կ'ըրիլ, *Զթ.* գ'ը'րիլ, գ'ը'յիլ, *Համշ.* կրուշ, *Հար.* գիրէլ, *Գոր.* կիրէլ, *Շմ.* կիրիլ, *Մրզ.* կ'իրէլ, *Ագլ.* գ'իրի'լ.—*Ննխ. Պլ. (Հին լեզուով)* գիրք, *Սչ.* գ'ի'բրք, *Մրզ.* կ'իրք', *Ննխ. Պլ. (Նոր լեզուով) Ռ. Տիգ.* բիրք, *Ոզմ.* գ'ի'բք *են*։—*Նոր բառեր են՝* գիրկապ, գիրկարդում, գրբաց, գրելչէք, գրման, գրող *(սրա Հին վկայութիւնն ունի Վստկ. 132. Շոյտ փակեա և ծեփեա, որ օդ չմտանէ. զի իւր գրօղն օդն է)*, գրողամաղ, գրողամայր, գրողամնայ, գրողերես, գրողտարուկ, գրոտել, գրուկ, գրուիլ, գրուր, գրքհար, գրօրէնք։

Փոխ.—Բոշայերէն գրխիկարել «գրել», որի մէջ խի-կար *բոշայական յաւելուածներ են։ Այս յաւելուածների համար հմմտ.* ծամխրկարիչ «ծամօն, մաղտաք», ծասխրկարիչ «ծածկել, խնամել», կարիր «կար, կարկատան», կարխրկարիչ «թել, մանած», կաշիչ, կաշիչ «ծխախոտ» *(յառաջացած* կաշել *բառից)։—Պատահական նմանութիւն ունի վրաց.* დაკრულვა «անէծք, նզովք», որ յիշեցնում է մեր —գրո՛ղ, գրո՛ղը տանի ևն—*ժողովրդական դարձուածները։*

Գիրգ «գիրուկ, փափուկ մեծացած» *Օր. իր. 54, 56. ես. խէ. 1. ա. սիմ, ե. 6. Ոսկ. ա. սիմ. «յոյր, գաւառկապորտ» Եզիշ. Կանոն. էջ 368, որից՝* գրգել «խնամք տանիլ, վրան գուրգուրալ, փայփայել» *Սիր. լ. 7, Բ. մակ. ժա. 25. Եզեկ. ժզ. 13,* գրգիլ *Մծբ. 128. Ածիր. ծն., գրգալ Ածիր. ծն. Կիւրղ. ծն., գրգեամ Ածիր. աւետ. 316,* գրգանք *Բ. մակ. ժգ. 24. Ածեմ. լա. 20,* գրգանալ «յօրանալ, փափկանալ» *Գր. սարկ. լուս.,* գրգարան «փափկութեան վայր, եղեմ» *Պիտ.,* գրգիչ *Ածիր. ծն.,* գրգութիւն *Օր. իր. 56. Գ. մակ. գ. 19,* անգիրգ «անհասատ» *Վրք. հց. Բ. 461,* գրգուանք «գրգանք, փափկութիւն» *ԱԲ (կազմուած ու մանրիկով. հմմտ.* ցց-ուիլ, դր-դուիլ)։

ՆշԲ գիրուկ *բառից։ Հիւնք.* գիրկ *բառից։*

Գիրկ, ի-ա *հլ. (մանաւանդ աննզաբար գործածուած)* «զոգ» *ՍԳր. Ագաթ., «մէկ գրքակաչափ» Գծ. իէ. 28. Եւս. քր., որից ոճերով* ունինք գիրկս առկանել «գրկել» *ՍԳր. Եւագր. Ոսկ. ես.,* ընդ գիրկս մտանել «ազիզը լարել» *ՍԳր,* գիրկ ընդ գիրկ խառնիլ *Վեցօր. Ոսկ. մ. ա. 13 կամ* գիրկ ընդ խառն լինել «գրկախառնուիլ» *Եւս. քր. գանազան ածանցումներով՝* գրկալիր *Երեմ. դ. 29,* գրկախառն *Ոսկ. մ. բ. 22 և բ. սիմ.* գրկախառնիլ *Ոսկ. բ. կոր. և հռ.,* գրկատարած *Ոսկ. ես. 205,* ընդգրկել

Առակ. իդ. 33. Ագաթ., իննագիրկ «*ինը գրկաչափ*» *Նոննոս.*, լիագիրկ *Ոսկ. ես.*, գիրկուձոց «*գիրկընդխառն*» *Քուչ. 73:*

Հիմնք. կրկէս *բառից է հանում:*

Գիմ.—Նախ. Պլ. գիրգ, գրգել, *Ախց. Երև. Կր.* գ'իրկ, *Ալշ. Ասլ. Խրբ. Մշ. Սեբ.* գ'իրգ, *Ռ. Տիգ.* ֆիրգ, *Սչ.* գ'ի'ըրգ *Մկ. Վն.* կ'իրկ, *Ղրբ.* գիւրգ', *Հճ.* գ'ըյգ, *Ոզմ.* գ'է rկ: *Նոր բառեր են՝* գրկաճոց, գրկափակ, գրկուռիկ:

Գիհի «*երկիր կամ այրաձև*». *ունի միայն Բառ. հերմ. էջ 66, որ մի տող ցած էլ գրում է* գիհէ *և* գզէ «*երկիր*»: *Այս բոլորը նոյն են՝ սխալ գրչութեամբ յառաջացած:—Ուղիղ ձևն է* գիւէ, *ուր ի իրար խառնուելով դարձել է* գիհ *և յետոյ էլ՝* գիհէ *գրուելով* գղէ՝ *կարդացուել է* գզէ:

Գիիղ *(որ և* գեւղ, գեաւղ, գեօղ *և գաւառական ձևով* գեղ*)*, *ի հլ. (նաև սեռ.* գեղջ· *բց.* գեղջէ, *յետնաբար դրծ.* գիւղօf*)* «*դիւղ*» *ՍԳր. Եղիշ. Փարպ.*, *որից՝* գեղաքաղաք *Մրկ. ա. 38*, *բաղաքագիւղ Ագաթ.*, *լեռնագիւղ Եփր. մն.*, գեւղեան *կամ* գիւղեան *Բուզ.*, գեղաստանեայք (գեօղաստեայք, գեօղաստայք) *Կաղնկտ.*, գեղօրէք *Մխ. դտ.*, գեղջեայ «*դիւղացի*» *Եփր. վկ. արև. 184. Վրք. հց. Ա. 19*, գեղջուկ *Խոր. Փիլ. Նար.*· գեղջաւագ *Կանոն.*, գեւղջացի «*դիւղացի*» *(նորագիւտ բառ) Վրք. Արեւրկիոսի (ՀԱ, 1910, էջ 373, տող 86)*, աճեցօղ *Ոսկ. ես. 385 են: Նոր գրականում բնդունուած ձևն է* գիւղ, *որից կազմուած են* գիւղացի, գիւղատնտես, գիւղատնտեսութիւն, գիւղատնտեսական, գիւղախումբ, գիւղաբնակար, գիւղական, գիւղարբնակ, *բայց նաև* գեղջկական, գեղջկուհի *են:*

*Նհբ (*գեղ *բառի տակ) լծ. ֆրք.* köy «*գիւղ*»: Gosche, *64 լտ.* vicus, *աանս.* vēça:—Justi, Zendsp. *281 աանս.* viç, *գնդ.* vīs:—Böttticher, Horae aram. *2 արամ.* גאילא gailā *բառի հետ համեմատում է հլ.* գիւղաքաղաք, *որ մերժում է* Lag. Arm. Stud. § *495: Տէրվ.* Altarm. *65 և Նախալ. 76* գիւղ<*գիսղ <*վիսղ· *իբր լտ.* villa<vicla<vicula, *որ* vicus «*գիւղ*» *բառի նուազականն է:* Canini, Et. étym. *145 իրքա.* ker «*գիւղ*»: *Հիմնք. պրս.* کل kul· «*գիւղ*», *Յ. Աբշէզ. ՀԱ. 1896, 267 լտ.* villa, Bugge, Lyk. Stud. *1, 38 և 79 լիւկ.* vedri «*քաղաք*» *բառի հետ:* Patrubány, SA, *1, 192 հնխ.* vevlos *ձևից է հանում, իբր հնխ.* velo, velu «*շրջապատել*» *արմատից:* Scheftelowitz, BB, *28, 297 սանս.* vṛjana, *պհլ.* varzišn, *պրս.* barzan, «*գիւղ, արուարձան*» *բառերի հետ կցում է հլ.* գեղջ: Pedersen, KZ, *40, էջ 198—9=Հայ. դր. լեզ. 191* ագանիլ «*իջևանիլ*» *բառի հետ. հայերէնի նախաձևն էր *ագել (ղ-լ մ.անիկ է, ինչ.* եաղ, երկիւղ*). հմմտ. լն.* ἀύω «*հանգչիլ, դադարիլ*», *որից* αὐλή, αὔλιον «*գաւիթ, բակ, ապարակ*» *(տե՛ս և տակը Փոխ):* Karst, *Յուշարձ. 418 օսմ.* aγəl «*փարախ*», *խաֆար.* eγil, auyl, aul «*ախոռ*», *չերեմ.* aul «*գիւղ*», *մոնգոլ.* ail «*գիւղակ*»: Charpentier, IF, *25, 252 հնխ.* vel «*պատել, փակել, շրջապատել*» *արմատի կրկնակ* vevlo- *ձևից. հմմտ. սանս.* vāta «*ցանկապատ*», *գերմ.* Wald, *սանս.* vavra «*փոս, խորք*» *են:* Oštir, Wörter u. Sachen *3, 205 հնխ.* ųik'-li *ձևից. հմմտ. լտ.* vīcus «*գիւղ*», *սանս.* viš- «*տուն*», *գոթ.* weihs «*գիւղ*», *հլ.* visi «*գեղ*», *ալբան.* vise «*տեղ, վայր*»:

Գիհ.—Ալշ. Հճ. Մշ. Սչ. գ'եղ, *Ագլ. Նախ.* գէղ· *Ախց. Ակն. Երև. Խրբ. Կր. Սեբ.* գ'էղ. *Զթ.* գ'եղ, գ'էղ «*Զէյթուն դիւղը*» *(բնդհանուրից դարձել է մասնաւոր անուն. բնդհանուրի համար գործածական է թրք.* köy*). Ասլ.* գ'եղ, *Հմշ.* կէղ, *Ոզմ.* գ'ղեղ, *Սլմ. Վն.* կ'եղ, *Մկ. Մրդ.* կէղ, *Պլ. Ռ.* էղ, *Տփ.* գիղ, *Տիգ.* ֆիղ: *Նոր բառեր են՝* գեղարդի, գեղախու, գեղաճաւաճ, գեղավրայ, գեղաւրիչք, գեղունաք, գեղամէջ, գեղաաեղ *են:*

Փոխ.— Pedersen, KZ, *40, 198—9=Հայ. դր. լեզ. 190—193 Հայերէնից փոխառեալ է համարում օսմ.* aγəl «*փարախ*», *կրկըզ.* aul, *Կազանի ԹԹր.* auəl, *Թարանչի* ēγil «*գոմ*», *կոյբալ.* āl, *եակուտ.* yal «*դրացի*»· *սրանց միջոցով էլ ռուս.* aul «*գիւղ, ամրոց*»· *սրանց միջոցով էլ ռուս.* aul «*գիւղ, աուան*», *մոնգոլ.* ail «*դրացի, դրացնու-*

թիւն, աւան», ailčin *«հիւթ»*, ailčilaxu *«հիւթ լինել».—բոլորի նախաիթրքական ձևն է* *agyl, որ փոխառնում է նախահայ.* *aguel *ձևից։*

***ԳԻՒՆԻՈՎՆ** *«մի տեսակ շատ փոքրիկ գորտ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Անան. գիտ. 8 «ծն գորտք որ կոչին գիւնիովնք, ճշմարտեն առաւել զժամանակս և այնպէս մանրիկք են՝ մինչ տղկունք կտեն զնոսա»։*

=Յն. γύρινος կամ γυρῖνος «գորտի շևրևփուկ» բառն է. հայերէնը կա՛մ աղաւաղեալ է և կամ յառաջանում է յն. մի ուրիշ երկրաբդական ձևից։—Աճ.

+ԳԻՒՏ, ի հլ. *«մի բանի գոնուիլը, գրտնուած բան, հնարք, շահ, վաստակ»* ՍԳր. Ագաթ. եփր. եւ., *«գտնուած, դիւրագիւտ»* երզն. քեր. Շնորհ. Բզմ., *«գտնող, գտիչ»* կաղնկտ. Լմբ. պտրդ., որից կազմուած են անգիւտ Ագաթ. Կորիւն. Բուզ., չճնաղագիւտ Ագաթ., չգիւտ Եւս. քր. ա., ճնարագիւտ Եզն. Սերեր., դիւրագիւտ Ոսկ. մ. ա. 1, յանկարծագիւտ Կորիւն., առգիւտ կամ բառգիւտ *«Բիւրոյիւն, յանցանք»* Կոչ. Ոսկ. բ. կոր. մ. բ. 15։—Արմատի երկրորդ ձևն է ԳԻՏ *«գիւտ»*, որ միայն յետնաբար գործածուած է առանձին (ինչպէս Համամ առկ.), իսկ հների մօտ գտնում ենք միայն ածանցման ժամանակ. *ինչ.* գտանել *(կտ. գտի, եգիտ)* ՍԳր. Եզն. Ոսկ. Փիլիպ., գտակ *«գտնող»* Եւս. քր., գտակաւ *«ճիշտ ու ճիշտ»* Եւս. քր. Սերեր. Եզն. Ոսկ. մ. և Եբր., բառ գտանել կամ առգտանել *«մի Բիւրոյիւն գտնել»* ՍԳր. *(Համմտ. յն. κατα-γιγνώσκω «նկատել. 2. կարծիք կազմել, դատել. 3. դատապարտել, նախատել»)*, բզբանգտանճ *«հնարովի սուտ բան»* Եզն. էջ 98 *(Համմտ. բանագտակ լինել «սուտ պատճառներ հնարել». տե՛ս և ՀԱ, 1914, 123 և 243)։*

=Բնիկ հայ բառ. պատկանում է հնխ. veid, void *արմատին, որի մէկ ձայնդարձն է։ Այս արմատը նշանակում էր «գիտենալ» և «գտնել». առաջին նշանակութեամբ ունինք հյ.* գէա, գիտել *(միւս ցեղակիցները տե՛ս գէա)*, իսկ երկրորդ նշանակութեամբ ունինք *հյ.* գիւտ, գիտ· գտանել, *որին համապատասխան են սանս.* vid *«գտնել», ներկ.* vindáti *«գտանէ», կտր.* ávidat *«եգիտ», գնդ.* vindaiti *«գտանէ», հիոլ.* finnaim *«գտանեմ»։—Հիւբշ. 437։*

Ուղիղ մեկնեցին նախ Peterm. *21,* Windisch *7, իրը սանս.* vid, vind։—*Հիւնք. գիտեմ բայից։—Զօրպահեան, Բազմ. 1908, 359 անգլ.* find: Karst, *Յուշարձ. 405 սումեր.* kid *«փնտռել»։*

Գ՛ Ղ.—*Ալշ.* գ՛ղնել, *Զթ.* գ՛դ՛նել, *Սեբ.* գ՛բդնել, *Նախ.* գղել, *Մշ. Պլ.* գղնալ, *Ախց. Կր.* գ՛անիլ, *Խրբ.* գ՛դնիլ, գ՛նեալ, *Ակն.* գ՛բնեիլ, *Սչ.* գ՛դնուլ, *Ագլ.* գիդմ՛նիլ, *Յղ.* ғrɒm՛նալ, *Շմ.* ғիɒmնալ, *Տփ.* գբնիլ, *Ռ.* ғդնէլ, *Երև.* ғբնբէլ, *Տիգ.* ғդնալ, *Ոզմ.* կրնդրնիլ, *Վն.* կրնդնել, *Մկ.* կրնդնիլ, *Հմշ.* կդնուշ, *Ասլ.* գ՛բ՛նալ, *Հճ.* գ՛բ՛նեիլ, *Սլմ.* գինել, *Մրզ.* գինելը։ *Նոր բառեր են՝* գտելուկ, գտնովի· գրտնողչէք, գտուկ, գտում, գտուճի, *իսկ* գիտ *Ակն. «ուտելեղէնների առատ ժամանակը, երբ ամէն բան առատ է գտնում»։*

⊙ԳԼԳԱԼ *«հեզիկ գետակի դղրդիւնը, հանդարտ հոսելու ձայնը»* Քուչ. 44 *(Զո՛ւր, գլգլալէն կուգաս)*, որից գլգլուճ *«կոկոռդ, առուոյցի կատրնների իրար զարնուելու ձայնը»* Վրդ. աո. 94, գալգալիւն *«խշրտոց»* ԶՔ *(իրը ամկ.)*, գլգլիւն *«գետի քշքշոց» (նոր բառ). ունինք և զտ.* կլկլալ, ғլғլալ *«բարակ վազող ջրի կամ երզի բնկրնկուն ձայն»։*

=Բնաձայն բառ, որ կազմուած է գլ ձայնի կրկնութեամբ· համմտ. նոյնպիսի բնաձայններից՝ արաբ. غلغل ɣalɣala, *քրդ.* غلغلين ɣulɣulin *«քամու մանչիւնը»,* غلغال galgal *«ապտակ, խռոակցութիւն» են. յիշենք յատկապէս Հաֆիզի հետևեալ տողը.* غلغل بلبل اربماندچه غم قلقل شيشه شواب بيار ɣulɣul-i bulbul ar námānd či ɣam! qulqul-i šīša-i šarāb biyār *«ի՛նչ ցաւ թէ չմնայ գլգլոցը սրխակի, գինու սրտակի կկլոցը բերս»։—Աճ.*

Նմ. գլիլ *«գլորիլ» բայից։* Petersson, Ar. u. Armen. Stud. *99 հնխ.* ghel, ghol *արմատից, համմտ. հհյս.* galan, gól *«երգել». հաթքս.* galan *«երգել, կանչել», անգլսք.* giellan *«բղաւել», հյգ.* galm, *մբգ.* galm *«ձայն, աղմուկ,*

ժխտ», չն. χελῶών «*ծիծեռնակ*», հմմ. glagolati «*խօսիլ*» են։

*ԳԼՈՍ «*է կենդանի մի, որ կոչի գլոս և հանապազ ի պահք է և ի քսան օրն ուտէ սակաւ մի խոտ և չար գազան է և ոչ անասուն. բայց հրամանաւն Աստուծոյ միս ոչ ուտէ, այլ հանապազ քնի և յոյժ դիրանայ*» Վրդն. առակ. *էջ 274*։

=Ասոր. ܓܠܘܣ glōs «*կապիկ*» բառն է, որ իր հերթին տառադարձուած է յն. χαλίας «*ընտանի կապիկ*» բառից (Brockelm. Lex. syr. *56 ա*)։

Ուղիղ մեկնեց Մառ, Վրդն. առ. *I. էջ 417*։

ԳԼՈՐԵԼ, *տե՛ս* Գիլ։

ԳԼՈՒԽ, ո հլ. (*յետին ձև է դրծ.* գլխօվ Գ. *թագ. ը. 1*) «*մարդու կամ անասունի գլուխ, 2. ծայր, սկիզբ կամ վերջ, 3. պետ, իշխան, գլխաւոր, 4. դրամագլուխ, մայր գումար, 5. գրքի գլուխ*» ՍԳր. Ոսկ. Ագաթ. Կոչ., որից՝ գլխագար *Ոսկ. ա. տիմ.*, գլխագեծ *Ոսկ. մ. բ. 23.* գլխադիր *եզեկ. ժզ. 18, 21*, գլխանի «*գլուխներ*» *Բուզ. ե. 4*, գլխապարտ *Դան. ա. 10. եզն. Ոսկ. ես.*, գլխատել *Մաթ. ժզ. 10. Ղկ. թ. 9. եւս. քր.*, գլխարկել «*գլուխը կախել*» *Եսթ. դ. 12. Վեցօր Ոսկ. փիլ. 497. Մծբ. եփր. նին.*, գլխաւոր ՍԳր. *Ոսկ. ես.*, գլխիքաց *Վեցօր.*, գլխովին «*ինքը. 2. բոլորովին*» ՍԳր. *Ագաթ. § 131. եփր. ա· կոր.* որ և ի գլխովին *կրկնագիր Ագաթ. էջ 54 բ, 12 ա, Բ. մակ. բ. 33. Հռ. ժզ. 2* (*բառիս հետ նոյն կազմութիւնն ունի վրաց.* თავდო *բալադի «ինքը», որ ծագում է* თავი *բառի «գլուխ» բառից. Մառ*, Грам. др.-арм. яз. *55*), գլխել «*կործանել*» *Լաբուբ. 31* (*ըստ Վարդանեան, ՀԱ, 1914, 118 ուղղելի խլել*), զգլխել «*գինովցնել*» *Ոսկ. բ. տիմ. գ.*, բազմագլուխ *Ոսկ. մաթ.*, երկգլխի *եւս. պտմ.*, բարձրիգլուխ *Յհ. բ. 13*, գահագլուխ *Մրկ. ժբ. 39. Ոսկ. մաթ.*, մերկագլուխ *Ոսկ. մ. բ. 9, յհ. ա. 1*, մարդագլուխ *եւս. քր.*, դարագլուխ *Ոսկ. ամբակ.*, զօրագլուխ ՍԳր, կուրագլուխ *Ոսկ. յհ. բ. 20. յոգնակի ձև է՝ զօրագլխեան եզիշ. դ. էջ 74*։ Նոր բառեր են՝ գլխաբաց, գլխագին, գլխածածկ, գլխապատառ, գլխատառ, գլխիկոր, գլխոսկր, գլխաւորաբար, գլխան «*քեֆալ ձուկը*», գլխարկաւոր, գլխարկավաճառ, գլխացաւագին. *Բաղադրգլուխ, իշագլուխ, հաստագլուխ, սևագլուխ, դրամագլուխ են*։

Շրէօդէր, Thesaur. *58 հայերէնիս փոխառեալ է համարում ոտս.* глава «*գլուխ*»։ Klaproth, As. polygl. *էջ 102, 127 և 321 ոտս.* golova, *Չեխէլ.* kolka, *Սրբին.* kolkja, *Կամչատկա.* kolč, *Սամոյեդ.* hollad, *Կիւբ. (Լեզգի)* killa: Diefenbach, Berl. Jahrb. *1843, էջ 448 կապ չի գտնում պրս.* ڪلّه kalla «*գլուխ*» *բառի հետ և լիշեցնում է հլ.* glava։ Lag. Symmicta, *336 նոյնպէս հլ.* glawa «*գլուխ*»։ Fick, BB, *1. 173 լիթ.* galvà, *հլ.* glava: *Հինդ. պրս.* ڪلاه kalāh «*գլխանոց*»։ Patrubány, SA, *1. 188 հնխ.* vel, velu *արմատից՝ ի մանրիկով. հմմտ. սանս.* val «*ծածկել*»։ Scheftelowitz, BB, *28 (1904) 157 և 29, 44 յն.* ὀφρύς «*բլուր, ցցանք, վիզ*» *բառի հետ է կցում, իսկ* KZ, *38 (1905), 264 հնխ.* vlōkha, *կասպիերէն* varchu «*գլուխ*»։ Meillet, JAs. *1911, 457 կցում է հլ.* glava, *ոտս.* голова, *լիթ.* galvà, *հպրուս.* gallū *բառերին*։ Karst, *Բուշրթ. 404 սամիեր.* gal, galu, gulu «*մեծ, բարձր, բարձրանալ, տէր, գլխաւորութիւն*»։ *Վերջին անգամ հլ.* glava *ձևի հետ համեմատութեան մասին խօսում են* Pedersen, KZ, *39, 252 և* Petersson, Ar. u. Armen. Stud. *80, 115*. Pedersen *հայերէն բառի մէջ ի դնում է մանրիկ, որով մայր ձևը լինում է հնխ.* ghōlū-kho։ *Այս մեկնաբանը չի ուզում ընդունել* Berneker, *324, իսկ* Trautmann, *77 ասում է թէ բալթեան ձևերի շեշտը ի նպաստ է ընդունելու հլ.* գլուխ=*հլ.* glava, *լիթ.* galvà, *լեթթ.* galva, *հպրուս.* gallū *համեմատութիւնը*։ *Հլ.* glawa *բառի հետ համեմատութեան հակառակ են* Berneker, *324*, Pokorny, *1, 538*։

Գիմ.—Տիփ. գլուխ *(մնկ.* գուխ*)*, *Երև. Մշ. Ջղ.* գ'լուխ, *Հճ.* գ'ը'լուխ, *Տիգ.* ֆլ'ուխ, *Սլ.* գ'լուխ, գ'լօխ, *Պլ.* գըլօխ *(մնկ.* գօլօխ*)*, *Ննխ.*

գլօխ, գօլօխ, գուլօխ, *Ալշ. Ակն. Ախց. Խրբ. Կր. Սեբ.* գ'լօխ, *Շմ. Սլմ.* կլօխ, *Ռ.* ֆլօխ, ֆուլուխ, *Ոզմ.* գ'ըլօխ, *Ղրբ.* կ'ըլօխ, կ'ըլեօխ, *Ասլ.* գ'լէօ'խ, *Մկ. Վն.* կ'ըլէօխ, *Համշ.* կլէօ'խ *(Համշէնի մահմետական Հայոց բարբառով կէլբխ՝ ըստ Մառ,* Матер. по Хемш. нар.арм. яз. *էջ 73—80), Մրզ.* կլօխ, կօլօխ, կուլօխ. *ՋԲ.*, գ'օլօխ, *Հւր.* գուլօխ, *Ագլ.* գ'ըլի'ւճ. *վերջինից ածանցմամբ՝* գ'ըլըվէ'ր *«գլխիվայր»*, գիւա'ցօլ *«գլխացաւ»*, գիւա'վիւր *«գլխաւոր»*, որոնց *մէջ* խ *կորած է՝ անցնելով* ճ-ից; *նոր բառեր են՝* գլխարաժիճ, գլխարարձ, գլխագործ, գլխալուայ, գլխակալ, գլխակեր, գլխաճաճ, գլխամեռ, գլխանի, գլխանց, գլխաշոր, գլխել, գլխուորիլ *են են։—Թրքախօս Հայերից ունինք թրք.* -lemek *բայակերտ մասնիկով՝* գըխելլէմէք *«գլխատել, իր մը կտրել»*, *որ Պէտէլեան (Արեւելք, 1888 նոյ. 8—9) դնում է* գլուխ *բառից։*

Փոխ.—Քրդ. جۆکە kəlōx *«գանկ» (այս բառը* Justi, Dict. kurde *համեմատում է պրս.* جۆکس kulūx *«հողի կոշտ» բառի հետ, որ յայտնապէս սխալ է։—Տեղական անուն է Կարնոյ թրք. բարբառով* Քար-գլուխ *«նիհախա դիւղին մէջ ապառաժի մը գլուխն, ուր հին գերեզման մը կայ և ուխտատեղի է բնակչաց» (Բևեռագիր, Բիւրակն, 1898, 627)։*

ԳԼՈՏՈՐ *տե՛ս* Գղթոր։

ԳՀԱՒ. *անյայտ բառ, որ մէկ անգամ ունի Բառ. Երեմ. էջ 219* յամր, աճագան *բառերի բացատրութեան մէջ. այսպէս՝* յամր. *անագան կամ գհալ»։*

ԳՁՈՒՁ *(գրուած նաև* գծուծ*) «անարդ, չընչին, նուաստ» Սիր. լր. 10. Ոսկ. «խոնարհ, համեստ» Եփր. Բ. տիմ. 254 (չունի ՆՀԲ), որից՝* գձձել *«նուաստացնել, խայտառակել» Եղն.,* գձձիլ *«խեղճանալ, անարդ մի բան դառնալ» Բ. մակ. ը. 35. Բուզ. Ագաթ. Եփր. պհ.,* գձձութիւն *Եփր. Թգ. 379. հս. 24. Ոսկ. հս. Փիլ.,* գձձասէր *Ասող. են։*

ՆՀԲ լծ. հյ. կծծի, *արաբ.* խէսխս, խէզէլէ։ *Հիւնք.* կծծի *բառից։ Մառ տե՛ս* կծիծ, կծծի *բառի տակ։ Պատահական նմանութիւն ունի վրաց.* ցժუժი *գնուձի «փոքր ողնի»։*

ԳԻՒ.—Ասլ. գ'ձիւձ, գ'ձիւզ։

ԳՂԱՒԿ. *անյայտ իմաստով բառ. մէկ անգամ ունի Պատմ. ազէքս. էջ 148 «Սպունգք ծիրանիք երեսուն և դղաւկք չիսուն»։ Աբ համապատասխանում է «տեսակ մը ձուկ», ԳԲ «կապոյտ գոյնով», իսկ Տաշեան, Ուսումն. ատոյն Կալիսթ. էջ 207 յն.* γλαῦξ *«բու»?*

Անշուշտ Աբ ուղում է կցել յն. γλαῦκος *«մի տեսակ գորշ-կապտագոյն ձուկ ծովային» բառի հետ. ԳԲ* γλαυκός *«պայծառ, փայլուն, կանաչաւուն, կապտաւուն են»։*

ԳՂԴԻՂ *«մի տեսակ բոյս» Բժշ. ըստ Հայրապատում § 497 «վայրի բակլայ, լտ.* cyamus *կամ* nelumbium*»։*

Շիրայնշնայդէրի հաւաքածոյի մէջ՝ WZKM, *11, 328 գտնում եմ արաբ.* جلجلان jiljilān? *«sesam, կնճիթ, սուսամ»։ Արդի դաւառականների մէջ էլ կայ* գլգլ, գլգիլ, կլկիլ *«կորնկի նման մի բոյս»։*

ԳՂՁԻԿ *կամ* ԳՂՁՈՒԿ, ո *հլ. անատոյգ բառ. մէկ անգամ ունի Փարպ. էջ 152 «Ո՛չ ևիէ նեսիւ կռուիմ, այլ զղղրկով պողեալ զրոլորս ցնդեմ»։ Բառիս ուղղականը պիտի լինի կա՛մ* գղզիկ *և կա՛մ* գղզուկ, *նշանակութիւնը (ըստ ՆՀԲ և ՋԲ) «նեսի ծայրը, կոթը» կամ «նեսի ծայրը՝ փետուրի վրայի ճեղքը, որ ազեղի լարին է անցնում»։*

ՆՀԲ յիշում է յն. γλωχίς *«նեսի կոթ»։ —Եթէ ուղղելի լինէր *գազկով, ուղղականը կարելի էր դնել* գազիկ *կամ* գազուկ *և համեմատել պրս.* گز gaz *«տեսակ ինչ անփետուր և անսլաք նեսի, որոյ միջին տեղին է առուար». որից արևվել. Թրք.* گز gez *«անփետուր, անսայր նետ»։*

ԳՂԹՈՐ *(գրուած նաև* գխթոր, գխտոր. *բուն ձևը յայտնի չէ) «վայրի կաղնու (*quercus lusitanica Lam.*) վրայի ուռեցքները, որոնցից լաւ ներկ կպատրաստուի· լտ.* galla turcica *Խոր. աշխ. 607. Վստկ. 114, 163. Մխ. դտ. էջ 326. Մխ. ապար., որից* գղտորաւիամ *կամ* գխտորաւիամ *«տտիպ, փոքրոքահամ» Վեցօր. էջ 101, 102։*

Գիհ.—Երև. գխաոր, *Ալշ. Մշ.* գ'խաոր, *Վն.* կ'ըխբ՚որ, *Ախց. Կր.* կխաոր, *Խրբ.* գ'խդ'օր, **Ղրբ.** կ'րխաոր, *Ակն.* գ'խդէօր, *Ագլ. Ոզմ.* գ'րխաոուր, *Մկ.* գ'րխբուր, *Սլմ.* կ բխաէօր, *Տփ.* կխաուր, *Տիգ.* խբուր, *ՋՓ.* գ'էօխդիւր, գ'էօխդիւյ:

**ԳՄԲԵԹ. ի–ա հլ. «չէնքի վրայի կիսագընդաձև մասը» Վեցօր. գրուած է նաև գմբէք. ուղիղ ձևը յայտնի չէ. ամենայն ձևեր են՝* գմպէք *Կիր. էջ 220,* գումբէք, կմբեք, կմպէտ, կմբէք, գումբեք *Անկ. գիրք նոր կտ. էջ 190,* գումբայր *Գիրք Բղ. 512,* գուբէդ *Օգոստ. բաջ. 17,* կումբէք *Արձ. 1342 Բ. (Վիմ. տար. 167), որից* գմբեքայարդ *կամ* գմբեքարդ *«գմբեթաձև» Վեցօր. էջ 15, 49,* գմբեքեայ *Անդ. ա. 4,* գմբեթաձև *ՅՀ. իմ. ևկ.,* երեքգմբեթակիր *Վեցօր. 166։ Սխալ գրչութեամբ* կմբեթաձև *Ագաթ.,* կմբեթեայ *Ոսկ. երր.,* կմբեթայարկ *Օրր.։*

=*Պհլ.* gumbaϑ, gmbat, *պրս.* گنبد kunbad, gunbad *«գմբէթ», որից փոխառեալ են նաև վրաց.* გუმბათი գումբաթի, *թրք.* کمبت kümbet.—*իրանական բառն էլ ծագում է ասոր.* ܩܒܬܐ qubbəθā *ձևից (=արաբ.* قبّة qubba, *Պլ. ոմկ.* խուպպէ*), որի բուն նշանակութիւնն է «կորացած». Համմ. ասոր.* ܩܒܝܒܐ qəbībā *«կորացած»։—Հիւրշ. 127։*

*Ուղիղ մեկնեց նախ Գ-ի։—*ՆէՒ *գնում է արաբ.* qubba, qubbat, *պրս.* kumbad, kumba (?), *իտալ.* cuppola, *արմատը համարում է* կումբ *(տե՛ս կմբեայ բառի մէջ)։* Böttlich. Arica, *75, 230,* Lag. Urgesch. *932. պրս.* gunbad։

Գիհ.—Ննխ. (բաղաբը) գմբէք, *Ախց.* գ'ըմբ'էք, *Հճ.* գ'ը՚մբ'եր, *Մկ.* Բըմբէք, *Ալշ.* գ'բՒմբէք, *Տփ.* գումբէք, *Մշ.* գ'ումբէքբ, *Ննխ. (գիւղերը)* գումբէք, *Երև.* Բումբեր, *Ոզմ.* Բումբեր, *Վն.* Բումբէք, *Սլմ.* գ'իումբոր, *Ջղ.* գօմբէք *(տեղական պարսկերէն)։*

Գմել *«պատկեցնել կամ բնացնել». անստոյգ բառ. մէկ անգամ ունի Եղիշ. դտ. «Նախ քմբրեցուցեալ զնա անապակաւ, անդէն և ի մէջ ծնգաց իւրոց գմել զնա՝ զբաջ և զարի հսկայն». նշանակում է «ննջեցոյց», ինչպէս ունի նաև Գաւտ. ժզ. 19։ Բայիս անոր զՆՀԲ և ՋԲ համարում են* գմել, գմելել, *բայց սրանց կատարեալի երրորդ դէմքը պիտի լինէր* գմեաց, գմելեաց. *վերոյիշեալ կտր.* գմել *ձևը ենթադրում է կա՛մ *գմելաենել և կամ աւելի լաւ *գմելուլ։ Բայց այս բոլոր ենթադրութիւնները կշնջուին, եթէ ի նկատի առնենք վենետիկի 1859-ի տպագրութիւնը, ուր էջ 192՝ վերոյիշեալ հատուածը ներկայացնում է բոլորովին ուրիշ մի բնթերցուած «Նախ քմբրեցուցեալ զնա անապակաւ և անդէն ի մէջ ծնգաց իւրոց գամեալ զնա՝ լքմամբ զբաջ և զարի հսկայն»։*

ՆՀԲ *մեկնում է չն.* ჯიჯაჭო *«քնացնել»։*

Գմել *«ջարդել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Բղ. էջ 237 «Ջօրէն լակոնացի վիմացն սահեալը լպրծին փայտատկան և լինիցին գմեալ իբրու պատգէն անդամահարեկ»։—Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 180։*

**ԳՄԻՐ «զօրաւոր, ուժեղ», մէկ անգամ գործածել է չեխին հեղինակներից Մարքին։*

=*Վրաց.* გმირი գմիրի *«քաջ, դիւցազն, հսկայ»,* გმირული գմիրուլի *«դիւցազնական», ասան.* გმირი գմիրի *«քաջ»։ Հայերէնը իբրև ուշ ժամանակ գործածուած և անսովոր մի ձև՝ փոխառեալ է վրացերէնից։ (Մատ. ՀԱ, 1921, 225 վրացի բառը բնիկ կովկասեան է համարում)։—Աճ։*

Գնալ *(գնացի, գնա՛)* «երթալ. 2. քայլել, մանդալ, պատիլ. 3. անցնիլ, երթալ (ջրի, կեանքի ընթացքի և ժամանակի համար ասուած)» *ՍԳր. Եկն. Ագաթ.,* որից գնացք, ի *Հլ.* «ընթացք, երթ, անցք, համբայ. 2. ջուրի հոսանք. 3. հեմելիք. 4. վարք, կենցաղ» *ՍԳր. Ոսկ. Եփես. Եզն. Նար. պտմ.,* զգնալ «երթևեկել, պատիլ» *ՍԳր. (կտ. զգնացաւ Դ. բագ. դ. 35)։ Ածանցման մէջ մտնում է բառս երեք ձևով.—1.* **Գնայ-**. *ինչ.* գնայուն *Եզն. Եփր. եւ.,* գնայական *Պիտ.,* առուգնայ *«առևանգութիւն, աղջիկ փախցնելը» Մխ. դտ. զզ., խելագնայ «խենթ» Յայտմ. փետր. 12 (նորագիւտ բառ).—2.* **Գնա-**. *ինչ.* անգնալի *Ոսկ. յհ. ա. 38, բ. 13,* յոգնագնալի *Ոսկ. յհ. բ. 27.—3.* **Գնաց-**. *որ ամէնից աւելի սովորական ձևն*

է. ինչ. գնացական Ա. Թագ. իե. 10. Ոսկ. մ. բ. 28, յհ. բ. 15. Նա. բր., գնացումն Կոչ., գնացուցիչ Եղն., առագաստնաց Եղն. Վեցօր., արդարագնացիկ Կոչ., բանագնաց Ա. մակ. բ. 33, բոկագնաց Ոսկ. եփես., անգնաց Ոսկ. ես., գաղտագնաց ծն. լա. 26, գետնագնաց Վեցօր., առևտրագնաց առնել Սերբ., դեսպանագնաց լինել Բուզ., խառնագնաց Եղեկ. ժբ. 10. Ոսկ. մ. ա. 23. Բուզ., կաշառագնաց Բ. մակ. ժ. 20, նաւագնաց Վեցօր.։

Müller, SWAW, *38, 575 և 42, 330,* Lag. Gesam. Abhd. *30 առնս.* gam *«երթալ» բառի հետ։* Justi, Zendsp. *127 էջ.* qgūal=գնդ. zgā *«երթալ, հոսիլ»։ Տէրվ. Նախալ. 76, 80 առնս.* gā, gam, յն. βα-, βαι-, βαίνω, լտ. venia, գոթ. qiman *«գալ»,* qam *«եկիր»,* gaggan *«գնալ»,* էջ. եկ, գալ ձևերի հետ հնխ. ga, gha *արմատից։ Հիւնք. յն.* ἐκνέομαι *«երթալ, գալ»,* κιυέομαι, κινοῦμαι *«շարժուիլ» և* κνήμη *«բարձք, սրունք» բառերից։ Յ. Աբրեղ, ՀԱ, 1896, 270 նոյն ընդ էջ. գալ, ակկադ. գին «գնալ, յղել»։* Pedersen, *Հայ գր. լեզ. 144 հալ.* gnati *«մղել, վարել» բառին կեղտակից։ Մագրգեան, ՀԱ, 1909, 335 առմամբ.* gin *«երթալ»,* gina *«գնա»։* Karst, *Յուշարձ. 404 առմամբ.* gin *«երթալ», 418* գալ *բայի հետ՝ թրք.* gelmek *«գալ»,* gezmek *«պատիլ, մանգալ»։*

Գիմ.—Հւր. Տփ. գնալ, *Ջղ.* գ'նալ, *Մղր.* գ'ի'նել, *Գոր. Շմ.* ֆինալ, *Ղրբ.* ֆինիլ, *Ագլ.* նէօլ.—*միանները գործածում են միայն երբալ բայի պակասաւոր ժամանակները լրացնելու համար. ինչ. Նխ.* գնացի, *Ալշ. Ախց. Երև. Կր. Մշ. Սեբ.* գ'նաց, *Ակն.* գ'նացի, գ'ացի, գ'ըցի, *Պլ.* գացի, գնաց, *Խրբ.* գ'ացի, *Հմշ.* կնաց, *Մկ. Վն.* կնmց, *Մրղ.* կ'իննmց, կրնաց, *Ռ.* fացի, *Տիգ.* fmցի, fնm, *Ռ.* fացալ *«գնաց» ևն։ Նոր բառեր են՝* գնան, գնամնիկ, գնացկան *ևն։*

*Փոխ.—*Բացագնաց *բառի վրայ տե՛ս* բանալ։

ԳՆԱԿ *«ամիսուի, հաւաք». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած առմարական մի հին գրուածքի մէջ՝ «եթէ ի չորրորդ օրն պրպմաստեղն գնակ տեսանես՝ զօրացն Պարսից մեծ շարժումն լինի. ապա թէ ճապաղ՝ Պարսից նուազութիւն և հայոց բարձրութիւն» (Հրտր. Գ. Տ. Մկրտչեան, Ա-նան. շիր. էջ 4)։ Շիրակացու վկայութիւնը ունի նաև ՆՀԲ (ճապաղ բառի տակ), ուր առկայն գնակ բառի տեղ գտնում ենք գնդաձև (Հաղորդեց Սո. Մալխասեան)։*

⊙ԳՆՁԵԼ *«խոզի ճուտի ձայն». ունին միայն ՋՔ և ԱՔ. նշանակում էր նաև «կակազել, թլուատի պէս խօսիլ, մաքուր չարտասանել» և այս իմաստից յառաջացաւ գնչու «թլուատ, թոթով, կակազ» Վրդն. ծն. Մագ. և Երզն. քեր. նոր գրականում «բոշայ, ցիգան, չինգանա» (իմաստի զարգացման համար հմմտ. ռուս.* Н М ЦЪ *«գերմանացի», որ կազմուած է* немой *«համր» բառից)։ Նոյն բառի դէմ գտնում եմ գնչուտ, գնչնոտ ձևերն էլ. հմմտ. «Ի լեզուատ և ի գնչնոտ և ի կակղոտ մարդկանէ» Յայտմ. մրտ. 14, «Ի գնչուտ և ի լեզուատ արանց» Տաթև. Հարց. 289.—ՋՔ ունի* գնչոտ։

=Բնաձայն բառ, որ կազմուած է գ ձայնից՝ և և չ ածանցիչներով. արմատի համար հմմտ. գոչել, գագաչել, իսկ ձևի համար հմմտ. շնչել, կնչել, ճնչել, բնչել ևն։—Ա՛ճ.

Տէրվ. Մասիս, 1881 դեկտ. 7 գնչու *բառի համար ասում է թէ թրք.* čingane *«գնչու» բառի հետ «անշուշտ նոյն ծագումն ունի»։ Վերի մեկնութիւնը տուած եմ նախ ՀԱ, 1899, 203—4։*

ԳՆՏԱՂ *տե՛ս* Գունդ։

ԳՇԿՈՒՐ *«աթար, չորացած թրիք» Վստկ. 30, 72, 76, որից* գշկուրմուխ *«աթարի ծուխը» Վստկ. 193,* գշկրճոտ *(քակոր հոտող, քակորի հոտ ունեցող) Վստկ.։*

Lag. Beitr. bakt. Lexicogr. *29 գնդ.* geuš *«կովի» սեռականից բարդուած. -կուր մնում է անծանօթ. բայց հմմտ. հյ.* fակոր։ *Ըստ Հիւբշ. 127 պատահական նմանութիւն ունին աֆղան.* γōšāk *«կովի քակոր», սանս.* gōçakrt- *«կովի աղբ»։*

Գիմ.—Խրբ. գ'շգուր *«աթար». նոյն բառն ունին նաև Ակն. Արբ. Բն. Երզ. Մլբ.։*

*Փոխ.—Ունինք քրդ. پشکول pəškul «ոչխարի կամ ուղտի ուղբ». որա դէմ կան հայ գաւառականներից Մշ. բ՛շկուլ «էշի թրքել», բ՛շկլել «էշի թրքել», Ալշ. բշկուլ, փշկուլ «էշի, ձիու, ոչխարի թրիք»։ Այս բառերը կարող են քրդերէնից փոխառեալ լինել. բայց աւելի հաւանական եմ կարծում այն, որ այս բառերը յառաջացած են վերոյիշեալ գշկուր ձևից տարանմանութեամբ, որից յետոյ էլ փոխառնալ է քրդերէնը։

*ԳՈՐԱՂԻՆ «սահման». ունի միայն Բառ. երեմ. էջ 69։

= Եբր. גְּבוּל կամ גְּבֻל gəbul «սահման», յդ. גְּבוּלִים gəbulim «սահմաններ»։—Ագ.

ԳՈՐԳԱՅ, որ և գուրգայ, գուրողայ, գոբողայ, գոբաղայ, ի հլ. «Սաղմոսների մէջ մի բաժանմունք. 2—3 կամ 4 տուն միասին մի գուբգայ են կազմում. մի գլուխ Սաղմոսը ունենում է միշտ 7 գուբգայ» Սաղմ. հյ. Փարպ. էջ 28, 105. Տես. սահ. 46. Վրդն. սղ. էջ 410. ՅՀ. իմ. նկ., որից գուրգայաբար (այլ ձ. գոբողաբար) «շուրջը բոլորած՝ հաւաքած» կղնկա. հրտ. էմ. էջ 39։

Հներից Տօնական մեկնում է. «Գոբողայն ժողով ասի. երեք երեք սաղմոս ի մի հաւաքեալ և յոլով իմաստս ի մի պարունակեալ՝ գորողա ասի»։ Բառ. երեմ. էջ 67 մեկնում է «փառք կամ ժողով իմաստից»։ Նշ՚ համարում է երբ. גְּבוּל gəbūl «սահման», կէպուչա «սահման նորա», կէպուլո «սահման իւր». իսկ Տօնականի համաձայն դնում է լտ. copula «լծակցութիւն»։—Ես կարծում եմ, որ անշուշտ ասորական փոխառութիւն է, ինչպէս ցոյց է տալիս բառի նկարագիրը և մանաւանդ -այ վերջաւորութիւնը. դժբախտաբար ասորերէնում չարմար մի ձև չգտայ. կայ ասոր. ܓܒܘܠܝܐ gəbūlyā «փոխարերական ոճ. 2. հնարք», gəbīltā ܓܒܝܠܬܐ «զանգուած, հայս. 2. արարչութիւն, արարած», բոլորն էլ ܓܒܠ gəbāl «առեղծել, ձևացնել, հաստատել» արմատից. բայց սրանք էլ իմաստով չարմար չեն։

ԳԻՒ.—Մշ. գ՚ուբ՚խա «Սաղմոսի գլուխ»։

ԳՈՒՆ «մլուկ, փայտաջիլ, խանաւալայ, բալղինջ, Թախտաբիթի». միջին հայերէն բառ, որ ունի նորայր, Բառ. ֆր. punaise։

ԳՈԳ, ո հլ. «գիրկ, ծոց. 2. ծովածոց, ծովախորշ. 3. առագաստի ուռած մասը» ՍԳր. Ոսկ. մ. ա. 23. Վեցօր. «4. երկրի ծոցը» Վրդն. սղ. «5. գոգաւոր, փոս» Մաշկ., որից՝ գոգ առնուլ «առագաստի ուռչիլը» Վեցօր. է., «պատը փոր տալով՝ փլչելու մօտ լինել» Արծր. 276, գոգել «փոս շինել, գոգածև վերածել, ուռեցնել» Ոսկ. ես. Շիր., «գրկել, պարփակել» Գ. Թագ. է. 23. Կոչ., բնգոգել «ամփոփել, պարունակել» Կոչ. գոգած «ծոց. խորշ» Եղեկ. խգ. 13, գոգանև Վեցօր., անգոգ «ողորկ, հարթ» Վեցօր., երկայնագոգ Խոր. ՅՀ. կթ., գոգնոց Մ. Մաշտ. 176 բ, 216 բ.—Նորակերտ բառ է գոգի «ռուս. сальфетка, անձեռոցիկ» իմաստով (Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. Սանկտպետ. 1788, էջ 78 և 214)։

Հիւնք. գող բառից։ Scheftelowitz, BB, 28 (1904), 152 և 29, 16, 43 կցում է յն. χέεια «խորշ» և լտ. fovea «փոս» բառերի հետ, որոնք թէև նշանակութեամբ համաձայն են, բայց ո՛չ ձևով. ապացոյցի էր նախաձայն ձ։ Lidén, Armen. Stud. § համեմատում է լիթ. gōgas «ձիու կռնակի բարձրութիւնը», շվէդ. gag, gagr «ետ ծռուած», իսլ. gaga «վիզը նաև ծռել» են, որոնք հանում է հնխ. g²hog²h, g²hēg²h- «ծռուած, կորացած» արմատից։ Karst, Յուշարձ. 402 սումխր. agub «երկնակամարք», 418 թաթար. kot, koy, kut, kuy «վարը, խոր, փոս», չաղաթ. kutuk, kuduk «հոր», օսմ. quyə «հոր, ջրհոր», qoyn, qoyun «ծոց»։ (Կան նաև թուշ. գագաօ «որովայն, փոր», գագդար «հաւաքել, պահպանել», արագա. կիկա, ավար. կեկե, անգի. կոկա, մոնգոլ. գոգու, գիպ. կիկի, անցուպ. կեյկ, կազիկումուկ կուկու, մանչու. խուխուն, թրք. gögüs, göks «կուրծք», բայց այս բոլորն էլ պատահական նմանութիւն միայն ունին)։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 340 տես. quj-aq «գիրկ» բառի հետ։

ԳՈՒ.—*Հճ. Մշ.* գ'ոգ', *Ալշ. Ջղ.* գ'ոմ, *Ննխ.* գօf, *Ախց. Ակն. Երև. Կր.* գ'օf, *Պլ.* գօf. fof, *Ռ.* fof, *Վն.կ* ûք', *Տփ.* գուf, *Սեբ.* գ'էօf, *Ասլ.* գ'էնf, *Հմշ.* կէօ'f, *Ոզմ.* գ'ɔէօք', *Կրբ.* կէօք', *Զթ.* գ'իւգ', *Ագլ.* գ'իւգ', *Մկ.* կ'իւք'։—*Նոր բառեր են՝* գոգաո, գոգաճ «գոգաւոր արտ»։

ՓՈԽ.—*Հյ.* գոգնոց *բառը փոխառեալ է Թուրքերէնի մէջ. տե՛ս Ծադիկ, 1891, էջ 89—90. գործածւում է օր. Զիլէի Թուրքերի բարբառով (տե՛ս Յուշարձ. էջ 327)։*

+ԳՈՂ «ասել». *արմատ մի հին, կորած բայի, որից մնում են միայն ապառնիի և հրամայականի մնացորդները (գո՛գ, գոգջի՛ր, գոգէ՛f, գոգցես, գոգցուք, գոգջիք, գոգցեն). ՄԳր. Մծբ. Ոսկ. Ես. (Ասիցեն, գոգցե՛ն), էջ 311. Բուզ. 209 (Ասացէք ցարքայ, գոգէ՛ք). Եփր. զևտ. բայց կայ նաև գոգելով «գոչելով» կիւրղ. Գնձ. բառիս հին նշանակութիւնը ջընջուելով՝ յետոյ դարձել է մակբայ.* գոգ, գոգցես, գոգցես բէ, գոգցես իմն «կարծես թէ» *Գաղ. բ. 11. Խոր. ՅՀ. իմ. առ. ՅՀ. կք. մակբայական գործածութիւն ունին.* գոգցես *գործածական է նաև արդի գրականում, ուր հետզհետէ չնչուելու վրայ է։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* vog^{w}h- *արմատից, որի միւս ժառանգորդներն են՝ լտ.* voveo «հանդիսաւորապէս խոստանալ, ուխտել, փափագիլ», votus «խոստում, ուխտ», սանս. vāghát- «ուխտաւոր, աղօթաւոր, զոհ խոստացող», զնդ. aog «ծանուցանել, ասել, խօսիլ», aogəδā «ասաց, խոսեցաւ», aoxta «ասուն», յն. εὔχομαι «աղօթել, ուխտել, խոստանալ, յայտարարել, ասել», εὐχή «ուխտ, աղօթք, մաղթանք», εὐχωλή «ուխտ, աղօթք, հպարտ խօսքեր, յաղթական երգ» (Walde, *858*, Boisacq, *300*, Pokorny, *1, 110*, Ernout-Meillet, *1092*)։ — *Յանապէն և զանգիբէրէն ձևերի նախաձևն է հնխ.* eveg^{w}h- *ձայնարձագ։*

ՆՀԲ ոգել, գոչել *բառերի հետ։—Տէրվ. Նախալ. 105 հյ.* գոչել, ճեգել, ճագագ, ոգել, *սանս. և զնդ.* vač, *լտ.* vocare, vox «*խօսիլ, ձայն*» *են ձևերի հետ հնխ.* vak *արմատից։* Bugge, KZ, *32, 34 և* IF, *1, 448* ոգել *բառի հետ՝ յն.* βοή «կոչ, գոչիւն», βοάω «գոչեմ», *սանս.* jóguve «հնչել, խօսիլ»։ *Հիւնք.* գոչել, կոչել *բայերի հետ։ Մառ,* Грам. др.-арм. *267 հանում է հնագոյն գու ձևից և դնում է իբր պրս.* گفتن guftan «*խօսիլ, ասել*»։ *Վերի մեկնութիւնը տուաւ* Meillet, *Բանաս. 1900, 109, նոյնը նաև* Brugmann, Kurze vgl. Aram:—Scheftelowitz, BB, *29, 14 նոյն է Տէրվիշեանի հետ։ Սարգիսեան, ՀԱ. 1909, 335 տումեր.* guz «*խօսիլ*», Karst, *Յուշարձ. 401, 405, 411 տումեր.* gu, gu-gu, gug «*ձայն, ասել, խօսիլ*», gude «*յայտարարել, ասել*», *քրդ.* gutin «*ասել, խօսիլ*», *416 մոնղոլ.* üge «*խոսք, բան*», *թունգուս.* ige «*ախտ*», *418 ույղուր.* ökmek, ögmek, *չագաթ.* ögümek, *օսմ.* öymek «*գովել*»։

ԳՈՂԵԼ «*ոգորիլ, կռուիլ*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 67։*

ԳՈՂԻ *(դւոյ,-գեաց)* «*բորոտ, ուրուկ*» *Կանոն, էջ 64, 65, 68, 70. Վրք. Հց. Ա. 708, Բ. 82 (մի քիչ յետոյ նոյնը* ուրուկ). *Յայտմ. Վրդն. պատմ. էջ 89. Աթան. էջ 435, որից՝* գողուրիւն «*բորոտութիւն*» *Լաստ. իգ. Վստկ. 85. Օրր. Հրար. էմ. էջ 254, Հեթ. պատմ.,* գողեցոց «*ուրկանոց*» *Կանոն. էջ 65, 68, 80. Մխ. դտ.,* գողենալ «*բորոտիլ*» *Լծ. նար.,* գողատուն «*ուրկանոց, բորոտների հիւանդանոց*» *Օրր. Հրար. էմ. էջ 179 (Եւ դնեն գոտատունս հանդէպ վանիցն և ժողովեալ ուրուկս բազումս անդ դարմանէին.—մի ձ. և Հրար. Շահն. Ա. 291 ունին* գողեատուն, *որ աւելի կանոնաւոր է),* գողեատան «*բորոտանոր. փխբ. սինկրոններ*» *Կղնկտ. Հրար. էմ. էջ 132, Շահն. Ա. 282, (բստ Ագաթ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 11). գրուած է նաև գօղի Կիր. էջ 183,* գոբեցոց *Տաթև. ձմ. ի,* գոբուրիւն *Տաթև. ձմ. իե։*

ՆՀԲ լծ. արաբ. ճիւտամ, ճիւզամ «*բորոտ*»։ Pictet, KZ, *5, 340 սանս.* kōṭha «*բորոտութիւն*»։ — *Զպիտիմ թէ ի՛նչ կապ ունին չագաթ.* ﻗﻮﺗﻮﺭ qotur «*բորոտութիւն*», *թրք.* ﻗﻮﺩﻮﺭ qudur- «*կատաղութիւն (շան ևն)*». *արևել. թրք.* qotur *(հլ. ամկ.* ղօբուր*) «բորոտած, քոռատ» են։*

ԳԻՒ.—*Մշ.* գ'օդ'ի «*բորոտ. 2. Քոյլ, անկարող. 3. տգէղ*», *Երև.* գ'օբի «*ծոյլ*», *Վն.* կ'օ-

սի. կօսի «վատ ցաւով բռնուած, անգամալոյծ, անպիտան, չնչին». նոյն բառը Ակն. Բլ. Աբր. «անգործ, ծոյլ թափառող»։—Նոր բառեր են՝ գոդեցուր, գոդեցուրուկ, գոդեցուկ, գոդացնալ, գոդացնել։

ԳՈՁ «մէզ, շեռ, ջրվաթ» Վստկ. 30, 42. Մխ. Բժշ. 10, որից՝ գոզել «միզել» Վստկ. 29, գոզբեւան «միզանոց» Վստկ. 194, գոզարգել «միզարգելութեան հիւանդութիւնը» Վստկ. 208, գոզգոզել «քիչ և ստէպ միզել» մհյ. բառ (ըստ Նորայր, Բառ. ֆր. 946 ա)։

Սագրկեան, ՀԱ, 1909, 335 և Karst, Յուշարձ. 404 սումեր. gaš, kaš «մէզ» բառի հետ.—Սագրկեան նաև թրք. kasanmak «անասուններին միզելը»։ Petersson, Ar. u. Arm. Stud. 93 արմատը դնում է գո (գ յաւաջորդած մեզ համանիշի նմանութեամբ), որ է հնխ. ɱoso- և կցում է հբգ. wasal «ջուր, գետ», waso «խոնաւ դետին», նորվ. vesl «ապրիւր», լեթթ. wasa «հոդի թացութիւն» բառերի հետ։—Պատահական նմանութիւն ունին ֆիննն. kuși, սիրյ. kudz, հիւս. օսայ. xos-jiŋg համանիշները (վերջինիս մէջ jiŋg «ջուր»). Շէֆթէլովից, KZ, 54, (1927), 241 կցում է սանս. vaha «հոսանք, յն. ὄχετος «ջրանցք», պրս. bazγ «աւազան», իսլ. fūal «մէզ» բառերին։ Առաջին երկուսը պատկանում են հնխ. weg'h «շարժել, քաշել, վարել» արմատին (Pokorny, 1, 249), որ ձևով համաձայն, բայց նշանակութեամբ տարբեր է, երկրորդը weg² «թաց» արմատին (Pokorny, 1, 248), որ նշանակութեամբ համաձայն, բայց ձևով տարբեր է և ընդհանրապէս բոլորը միասին մէկ արմատի չեն պատկանում։

Գիմ.—Ուշ. գ'ոգ, ննխ. Պլ. Ռ. գօզ, Ախց. Կր. Երև. գ'օզ, Սեբ. գ'էօզ, Շմ. կէօզ, Հմշ. կէօ'զ, Սլմ. ֆ'էօզ, Ղրբ. կիւզ, Ակն. գ'օս.—Նոր բառեր են՝ գոզլաճ, գոզկապ, գոզաճոռ, գոզոզաճոռ, գոզոռ, գոզոռել, գոզոռիլ։

ԳՈՁՐՈՒՄ «կատակ, կատակերգութիւն», որից գոզրումական «կատակերգական», ունի միայն Մագ. գամագռ. «Գոզրումական գոհհօրէն, քան որում ոգէ Հոմերոս»։ Սրա հետ նոյն է գոռոզէն «կատակ» Հին բռ.։ (Տե՛ս Նորայր, Բանասէր, 1900, 131)։

ԳՈՌԻ «պաշտումն, պաշտելը», գտնում է միայն ծառագորի «ծառապաշտ, ծառ պաշտող» բարդի մէջ, որ երկու անգամ գործածում է Կաղնկա. «Սատանայական ծառագորի մոլորութեամբ աղճատեալ ապգն այն. Բառնամ գկարծիսդ ի սրտից ձերոց և գծառագորի մոլորութիւնդ» (հրտր. Շահն. Ա. 371, 387 էմ. էջ 191, 201 որ ունի ծառայ գորի, ծառագորի)։—Տե՛ս Ագառ. Հայ նոր բառեր հին մատենագր. Ա. էջ 17—18։

ԳՈԼ «տաքութիւն» Ոսկ. ևս. «տօթ ժամանակ բարձրացած շոգի» Գնձ., որից՝ գոլախառն «տօթագին և միգամած» Եփր. դտ. 335. Վկ. արև. էջ 59. Գէ. ևս. Ճառընտ., գոլանալ «տաքանալ» Ոսկ. ևս., գոլոշի կամ գոլորշի (մասնիկի համար հմմտ. բոլորշի, լայնշի) Սիր. իբ. 30. լը. 29. Եզն. Եզիշ. Փիլ. որ և գոլոշիկ Տաթև. Հարց. 208, գոլոշանալ Բրս. արբեց., ջերմագոլ Ագաթ., գոլաւոր «տաք» Շիր. 66։

= Բնիկ հայ բառ՝ հնխ. wel- «գոգջ, տաք» արմատից, որի ժառանգներն են ածականով՝ լեթթ. vildau, vildyti «ջուրը գոլացնել», g, k ածականներով՝ անգսք. wealg, vloek, wlacu, նիսլ. valgr, մգ. wlak «գոլ» պարզ արմատը պահում է հլ. գոլ, որի աճած ձևն է գաղջ։ Այս արմատը բացի հայ, բալթիան և գերմանական ընտանիքներից ուրիշ տեղ չէ պահուած։

Ուղիղ մեկնեց Bugge, BB, 3, 121 (տե՛ս Pokorny, 1, 298, 302, 306)։ =Շէֆթէլովից, KZ, 53(1925), 257 և 269 դնում ալբան. valɛ, «տաքութիւն», մբգ. walm «տաքութիւն», հֆրիզ. walla «եփել», սանս. ulkā, úlmukam «հրդեհ» բառերի հետ, որոնք Pokorny դնում է ուրիշ արմատի տակ։

Canini, Et. étym. 4 կիմբ. gal «պայծառ», իսլ. gal «տաքութիւն» բառերի հետ։ Տէրվ. Մասիս, 1881 մայ. 6 ծագման նոյն է դնում ջեր բառի հետ։

Նոյն, Նախալ. 80 ջեր. գաղջ, սանս. ghar, *զնգ.* garəma, *պրս.* garm «տաք» *բառերի հետ հնխ.* ghar *արմատից։ Հիւնք. լտ.* calor «տաքութիւն»։ Scheftelowitz, BB, *29, 43 յն.* ἀλέα «շոգ», *գոթ.* wulan «տաքանալ», *հբգ.* walm «տաքութիւն», *սանս.* ulka «կրակ, հրթային օդերևոյթ» *բառերի հետ, որոնց վրայ* Petersson, Ar. u. Arm. Stud. *28 ուշադրութիւն է սանս.* úlmuka «խարոյկ»։ *Այս բառերը* Walde, *857 և 853,* Boisacq, *41 դնում են տարբեր արմատների տակ, ուստի և անյարմար է միացնել հայերէնի հետ։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Զթ. գ'ոլ, *Ախց. երև. խրբ. կր.* գ'օլ, *Սչ.* գ'օլ «պատուհանի տպակու, շղի կամ բաժակի վրայ նստած շոգին», *Պլ.* գօլ *(միայն պահուած ամպգոլ բառի մէջ), Տփ.* գոլ «գաղջ», *Ռ.* fօլ, *վն.* կ'ՙôլ, *Տիգ.* fուլ', *Սեբ.* գ'էօլ, *Հմշ.* կէօլ «վառ», *Ոզմ.* գ'ՙիւ, *Մկ.* կ'ՙիւլ «տաք գոլորշի»։ *Նոր բառեր են՝ ամպգոլ (հին վկայութիւնն ունի Քուչ. 46 ամպուգոլ ձևով),* գոլել «վառել», գոլուկ, գոլմ, աւեգոլ, գոլճալ, գոլիլ, գոլգլուկ։

ՓՈԽ.—Քրդ. kel «տաքութիւն, ջուրի պղպջակ», kal «տաք, ջերմ», kel čuin «ժայթքել, գեղուլ», کلی keli «արուի տենչացող կին, էրկան փափագող այրի կին, ջերևալ կով», کلین kelin «հռալ»։

ԳՈՀ «գոհունակ» Ագաթ. եզն. Ոսկ. ա. թես., որից՝ գոհանալ *ՍԳր,* գոհութիւն «շնորհակալութիւն, գոհունակութիւն» *ՍԳր,* «Հաղորդութիւն» *(Թրգմ. յունարէնից) Ոսկ. մ. ա. 25. Ագաթ.,* գոհացողութիւն *Սիր. ժէ. 25. լԹ. 20,* գոհաբանել *Շար. խոծր. Նար. կուս.,* ժգոհ *Ոսկ. մ. ա. 25. Եւագր. գրուած է նաև* ժգոհ *Ոսկ. Կող.,* ժգոհիլ *Փիլ. Յա. որդի, որոնք յետին տառադարձութեան արդիւնք են։ Նոր բառեր են՝* գոհունակ. գոհունակութիւն, անգոհունակ, ինքնագոհ, գոհացուցիչ, անգոհացուցիչ *են։*

Հիւնք. ագահ *բառից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 90 միացնում է* գովել *բառին։*

Նոյնպէս և Թիրեաքեան, Հայ-երան. ուսումն. էջ 151 ծան.։

ԳԻՒ.—Ախց. երև. Սեբ. գ'օճ, *Ակն.* գ'օյճ, *Ոզմ.* գ'օճաճալ, *Ալշ. Մշ.* գ'օյ, *Տիգ.* fօճmճmլ'. *Տփ.* գուճաճակ, *Զթ.* գ'օճօբր'ն, գ'ուճուբր'ն.—*իսկ Պլ.* չէշգուճալ, *Եւդ. Պլ.* չուշգուճալ, *խրբ.* չուշգ'օճաճ, *Ասլ.* չօշգ'ալ «դժգոհիլ, դանդատիլ, տրտնջալ» *ծագում են* դժգոհ *բառից՝ *չժգոհ ձևի միջնորդութեամբ։ Ակն.* չրշգօճալ, *Ախց.* չ'ըչ'գուճիլ «դժգոհիլ»։ *Գւռ.* չշգոճալ *ձևի նախնականն է* ժգոհալ, *որ երկու անգամ գործածում է Գիրք առաք. 433 բ (փոխանակ* դժգոհիլ *ձևի)։*

ԳՈՀԱՐ, ի–ա հլ. «ապնիւ քար, ակունք» կղնկա. Գնձ. Թղթ. դաշ. «պատուական, ընտիր» խոր. աշխ. Նար. տաղ. Գնձ. գրուած է նաև գօհար, գաւհար, գուհար *Կոստ. երգն. 158։ Սրանից ունինք* գոհար վարդ «մի տեսակ վարդ» *Նար. տաղ., որ նոյն ձևով և նշանակութեամբ կենդանի է դեռ Սեբ.—նոր գրականում շինուած բառեր են՝* գոհարեղէն, գոհարավաճառ, գոհարազարդ *են։*

=*Պհլ.* gōhar, *պրս.* گوهر gōhar «գոհար». *առաջին իմաստն է սակայն «տարր, խտութիւն, գոյացութիւն» և այս իմաստով կցւում է սանս.* gōtrá- «սեռ, ծագում» *բառին (տե՛ս* Horn, § *948)։ Պարսկերէնից փոխառեալ են նաև վրաց.* გოჰარი გոհարի «թանկագին քար» *(Ջուբինով, 323), արաբ.* جوهر Javhar, *յդ.* جواهر Javāhir, *քրդ.* Joher, Jevahir, *թրք.* Jevahir, *որից էլ բուլղար.* dživaer, *սերբ.* dževerlija, *նյն.* τζεβαΐρι «գոհար». *իսկ արաբականից է հլ. յետնաբար* ջոհար, *որ տե՛ս վերը առանձին։—Հիւրշ. 128։*

Ուղիղ մեկնից նախ ԳԴ, նոյն կըրկնում են ՆՀՐ, Böttich. Arica *74, 213,* Lag. Urgesch. *934 են։*

+ԳՈՂ, ո հլ. «դող» *ՍԳր, որից՝* գողանալ *ՍԳր. եզն., «վարպետութեամբ խաբել» Մն. իս. 20, 26. եղիշ., «վարպետութեամբ ծածկել, պատրուակել» Նանայ., «անհետացնել, վերացնել, չնչել» Սիր. ծն. Ոսկ. եղիշ., «քրքջնամու ձեռքից կտուով մի տեղ գրաւել» Սմբ. պատմ. 105,* գողակից *Ես. ա. 23,* գողութիւն *ՍԳր,* գողօճ *Մն. լ. 33. լտ. 39. Սիր. թգ.,*

գողունի *Տոբ. բ. 21. Առակ. Բ. 17. Մծբ. Եղն.*, գողաւիճ *Եփր. գող.*, գողացիկ *Ոսկ. մ. ա. 1*, գողուղի *Ա. մակ. ժ. 82*, գողումն *Ոսկ. ես. Եփր. եկ. Մծբ.*, գաղտագողի *ՍԳր. Ոսկ. մ. ա. 8*, յարդգող *Փիլ. Շիր. Պիտառ.*, ջրգողեալ *Ղկ. ժդ. 2. Ագաթ.*, մարդագող *Օր. իդ. 7.*—*այստեղ է պատկանում նաև* գողել «*ծածկել, թագցնել*» *Մծբ. վրք. հց. Մխ. աս. անծանօթ մասնիկով է* գողախէժ *Վրք. իգն. 151, որից* գողախիժարար «*գողի կերպով, հնարքով*» *Ղևոնդ, էջ 96 (մի ձ.* գողաիժարար, *ԱՔ ունի և* գողաղիժարար)։

= *Արտաքին նշաններից երևում է, որ բնիկ հայ բառ է· իր հետ անձուկ կերպով կապուած* գաղել «*ծածկել*» *և գւռ.* գեղել «*ծածկել, թագցրնել*» *բառերի հետ երևան է հանում* գող, գեղ, գաղ *ձևերը, որոնք մատնանիշ են անում հնխ.* vol, vel, vl *ձայնդարձները։ Հայերէն բառերը՝ իրար հետ կանոնաւոր համապատասխանութեամբ՝ աճած ենք գտնում նաև տ աճականով. այսպէս՝* գողտ- (*որից* գողտուկ), գաղտ *և* գեղտ (*տե՛ս վերը* գաղել *և* գաղտ *բառերի տակ*), *որոնք ցոյց են տալիս հնխ.* vold, veld, vld *ձևերը։—*«*Գող*» *և* «*գաղտնի*» *իմաստների առնչութեան համար հմմտ. գերմ.* stehlen «*գողանալ*» *և* verstohlen «*գաղտնի, ծածուկ*», *գոթ.* þiubs «*գող*» *և* þiubjō «*գաղտնի*», *գոթ.* hlifa «*գողանալ*» *և պրուս.* auklipts «*գաղտնի, ծածուկ*», *լտ.* fur «*գող*» *և* furtim «*ծածուկ*», *հսլ.* tatĭ «*գող*» *և* tai «*գաղտնի*», taiti «*ծածկել, կեղծել*»։—*Բայց հնխ.* vol, vold *են արմատները, որ այնպէս գեղեցիկ կանոնաւորութեամբ պահուած են հայերէնում, չեն գտնում միւս ցեղակից լեզուներում. այստեղ են պատկանում թերևս միայն լիթ.* wilt «*խաբել*», welts «*անուտի, փուճ*», *լիթ.* privilti «*խաբել*», viltis «*յոյս*» (*որ է «ինքնախաբէութիւն»*), veltuĭ «*անուտի, անպէտք*», *հպրուս.* prawilts «*խաբել, մատնել*», *որոնք յառաջանում են հնխ.* vel *արմատի աճած* velt *ձևից։ Լաս* Pokorny, *1, 298* նոյն vel- *արմատին են պատկանում նաև լտ.* vānus «*խոտոտիկ (երազի համար ասուած)*», *իռլ.* fell «*կեղծութիւն, խաբէութիւն*», *և* bh *աճականով՝* vele- *արմատաձևից՝ յն.* ἐλεφαίρω «*խաբել, պատրել*», *լիթ.* vilbinti «*հրապուրել*» (Boisacq, *243*)։

Նշի՛ր իրար է խառնում գաղտ, ղօղել, ղուղակել։ Bugge, Btrg. *38 համեմատում է գնդ.* gadha *և աֆղան.* ɣal «*գող, աւազակ*» *բառերի հետ։ Հիւնք.* քօղ *բառից։* Meillet, MSL, *9, 150* գող, գաղտ *համեմատում լիթ.* wilt «*խաբել*» *բառի հետ։ Հիւբշ. 431 աւելացնելով նաև վերի մէս եւրոպական ձևերը, միացնում է նրանք առնս.* vṛthā «*բուռ կամս, ձրի, անուտի, թէս*» *բառին և նշանակութեանց տարբերութեան պատճառով անտեղի է համարում։* Patrubány, SA, *1, 5 ֆրանս.* vol-eur, *լտ.* fur-are, in-vol-are: Scheftelowitz, BB, *29, 43, լտ.* volare «*թռչել*», velox «*արագ*», *ռուս.* vilatĭ «*վազվզել*» *բառերի հետ, ինչպէս որ ֆր.* voler *է «թռչել և գողանալ»,* Karst, *Ճուշտն. 414 մոնղոլ.* xulagai, *կալմ.* xulugai, *թանգուտ. մանչու.* xulxa «*գողութիւն*», *տրեխլ. մոնգոլ.* xulagu, *կալմ.* xulū, kulū «*գողանալ*», *418 ալթայ.* okri, oḳ-rin «*ծածուկ*», okrik «*գող*», *չաղաթ.* ogri «*գող*», ogrin «*ծածուկ*», *հակ.* vor «*գողնալ*», voru «*գող*» *են։ Պատահական են թուշ. դ՚ալօ են։*

Գիր.—Ալղ. Մշ. Զղ. Հճ. գ՚ող, *Նախ. Պլ.* գօղ, *Ախց. Ակն. Երև. Խրբ. Կր. Սչ.* գ՚օղ, *Ռ.* քօղ. *Վն.* կ՚ՙղ, կ՚ուղ, *Ղրբ.* կ՚օղ, կ՚էօղ, *Սեբ.* գ՚էօղ, *Ասլ.* գ՚էօ՚ղ, *Հմշ. Մկ. Շմ.* կ՚էօղ, *Տփ.* գուղ, *Ոզմ.* գ՚ՙուղ, *Տիգ.* ֆուղ, *Զթ.* գ՚իւղ, *Ագլ.* գ՚իւղ, *Մրղ.* կուէղ, *Սլմ.* կ՚ուէղ.—*բայական ձևից հետադրբրական են Երև.* գ՚օղանալ, *Զղ.* գ՚ողանալ, *Հճ.* գ՚օղնօլ, գ՚օղնել, *Ալղ. Մշ.* գ՚օղնալ, *Պլ. Նախ.* զօղնալ, *Ռ.* ֆօղնալ, *Ղրբ.* կ՚ուղա՚նալ, *Շմ.* կ՚էօղանալ, *Ասլ.* գ՚էօղանալ, *Տիգ.* ֆօղնմլ՚, *Զթ.* գ՚ուղնօլ, *Ագլ.* գ՚ղա՚նիլ *են։—Նոր բառեր են՝* գողնովի, գողգողի, գողեգող, գողկանի, գողձրի, գողկապ, գողնիկ, գողպատառակ, ձիագող *են։*

ԳՈՂԻ *կամ* ԳՈՂՏ «*մահիճ*» *Հին բռ. միայն վերջին ձևով ունի Բառ. երեմ. էջ 68։*

ԳՈՂՏՐ *«փափուկ և անուշ» Տիմոթ. կուզ, էջ 324. Սարկ. լս. Տօնակ. Վանակ. յոբ. Մխ. այրիվ. էջ 9, որից՝* **գողտրիկ** *Փիլ. Լծ. կոչ. խոսք. Վանակ. յոր. Տօնակ., գողտրաբար-բառ Թէոդոր. մայրագ., գողտրական Նար. 115.—գողտր բառը «լոյծ» նշանակութեամբ գործածում է երկու անգամ Տիմոթ. կուզ, էջ 324 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 82—83):*

Նշբ համեմատում է Ջղ. քողցր< քաղցր *ձևի հետ. Տէրվ. Պատկեր, 1891, № 14, էջ 331—4* քաղցր *բառի հետ հնխ.* svadu *ձևից, համմ. յն. ἡδύς, լտ.* suavis, *լիթ.* saldus. *Հայերէնի նախաձևն է *քաղպր:*

ԳՈՃԱՂՄ *«մի տեսակ ապնիւ քար.* ambro fossile *կամ* lapis- lazuri» *Եղ. իր. 19, լթ. 12. Եզնկ. իր, 13. Պատմ. ազբս. 155. Վրդն. եղ.:*

Ուղուրիկեան (տե՛ս ԳԲ, էջ 335 և 1405) հյ. կուզ, քրդ. կիւղ «կաուռ»+ պրս. չէշմ «աչք» բառերից, որով գոնագամ լինում է «կաուրի աչք» կոչուած քարը:

ԳՈՃԱՄՈՐՈՒՍ *տե՛ս Քօշ:*

ԳՈՃԱՆՔ, ԳՈՃԻ *տե՛ս Կոճան:*

***ԳՈՃԱՇՄ** *«կլոր պատուհան, ֆրանս.* œil-de-bœuf*», նորակիտ բառ, որ տնէ Նորայր, Բառ. ֆրանս. 867 բ (նշանակում է նաև* camomaille *«երիցուկ բոյսի մի տեսակը». տե՛ս անդ էջ 868 ա):*

—Պրս. گاوچشم gāvčašm *«տեսակ ինչ ծաղկան, որոյ մէջն է յոյժ կարմիր և արատաքոյր նորին սպիտակ» = արաբ. āqḥavān, որ է «երիցուկ» (տե՛ս պետրատեան). կազմուած է* گاو gāv *«եզ, կով» և* چشم čašm *«աչք» բառերից, որ համապատասխանելով ֆրանս.* œil-de-bœuf *բառին, տալիս է նաև սրա նշանակութիւնը, որ է «կլոր պատուհան»: — Ա.Ճ.*

ԳՈՃՄԱԿ, *որ և* գոճամակ, գաճամակ, գամճակ *«մի տեսակ բոյս». Բժշ. Գազիան.—բառ ե. Ուղուրիկեան, Մասիս, 1881 նոյ" 23 և Հրատ. § 312 „daphne gnidium", որ մի տեսակ դափնի է. Նորայր, Բառ. ֆր. 192 ա համարում է „camélée", Տիրացուեան,* Contributo alla flora dell' Armenia, § 87 „daphne oleoides Schreb."?

ԳՈՃՄԵՐ *«մի տեսակ ծաղիկ» Սալաձ. (ձեռագրական տարբերութիւններն են գօջմեր, գոչմէր, կոճմեր, կօշվէր). Հրատ. § 1466 նախ կարծում է* **կոճամիրուս** *բառի հետ նոյն. բայց յետոյ՝ համարելով յոգնակի, եզակին դնում է կոճեմ. Նորայր, Բանաս. 1901, 105 չի ընդունում նոյնացնել* **գոճամօրուխ** *բառի հետ:*

+ԳՈՄ, ո, ի–ա *հյ. (բց. ի գոմոց Ոսկ. ամբակ. ի գոմաց Նորագիւտ Ա. մնաց. ժէ 7) «փարախ, ախոռ» ՍԳր. Ոսկ. ամբակ. Խոր. փիլ. (հների մօտ նշանակում էր թէ՛ ոչխարի և թէ՛ տաւարի ախոռ, հիմայ աւում է տաւարի գոմ, ոչխարի փարախ, ձիու ախոռ). որից* **գոմամուտ** *լինել «ախոռը քաշուիլ տաւարի» Վեցօր. 186:*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ghomo- *ձևից, որ մեզ հետ պահում են դան.* gamme *«գոմ, ախոռ, ոչխարի փարախ», շվէդ.* gamma *«կովի մսուր», նորվ.* gamme *«ցիւ, կտուրի դուրս եկած մասը», նորվ.* gamme *«խրճիթ», հհիւս.* gammi *«ֆիննական խրճիթ», շվեյց.* gämmeli *«կով կամ յարդ պահելու մարագ ևն»:—Գերմանական ձևերը տալիս են* ghomo-n- *նախաձևը, որին համապատասխան է նաև հայերէնը (Pokorny, 1, 637):*

Նշբ լծ. յն. κώμη *«գիւղ» (տե՛ս շէն բառի տակ). ԳԴ հանում է պրս.* کام kām *«գոմ, փարախ» ձևից, որին հետևում է նաև Հիւնք.:—Հիւբշ.* Arm. Stud. *25 գոմ, գոս, գոյ բայի հետ հնխ.* vosmo- *ձևից, իբր առնս.* vasati *«բոյն, բնակարան» են:* Justi, Litt.-Blatt. *1883, էջ 66 մեկնում է* was *ձևը, և դնում է իբր. սիրոլ.* ġampe *«գիշերը կովը պահելու տեղ», քրդ.* guw *«փարախ»: Հիւբշ.* Arm. Gram. *էջ 436 մեկնում է իր մեկնութիւնը: Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Lidén, Arm. Stud. *14—16:* Justi, Kurd. gram. *103. վրաց. գոմի, քրդ.* gaua *«փարախ»:*

Գիտ.—Ալշ. Մշ. գ'ոմ, *Ախց. Խրբ. Կր. Սեբ*

երև. գ'օմ, Սլմ. Ջղ. Տփ. գօմ, *Հմշ.* կում *(ախոռի բոլոր տեսակներին յատուկ ընդհանուր անուն), Ոզմ.* գ'ում, *Ղրբ.* կում, կ'իւմ, *Գոր. Մկ.* կ'իւմ, *Շմ.* կէօմ:—*Նոր բառեր են՝* գոմաճոց, գոմատեղ, գոմատէր, գոմատուն, գոմել, գոմծակ, գոմտանճ:

ՓՈԽ.—Վրաց. გომი գոմի, გომური գոմուրի *«գոմ», Թուշ.* გომურ գոմուր *«գոմ», Քրդ.* ڕەز gom, guw, gaua *«ոչխարի փարախ», Թրք. գւս. Եւդ.* köm *«գոմ» (Բիւրակն, 1899, 314 և Յուշարձան, 330), ասորերէն. Թրք.* ڕەم qom *«ոչխարի փարախ, մահակապատեղ»* (Foy, Mitteil. des semin. für Orient. Spr. *1904*, Berlin, *էջ 217 և ՀԱ, 1911, 260):* Սրանց շարքը պետք է դնել նաև պրս. ڭاماڕا gumārā *«գոմ խաշանց և եզանց» (ԳԴ),* որ պարսկերէնում մեկնաբանուն չունի և մնում է իրրև անջատ բառ:

**ԳՈՄԷՋ, ո հլ. (որ և* գումէզ*) «կովի մէգ». մէկ անգամ միայն գործածուած է Եղիշ. Բ. էջ 40 «Զհոր առանց գոմիզոյ (այլ ձ. գումիզի) մի՛ լուացին» (Զրադաշտական կրօնի մէջ կովի մէգը սուրբ կամ սխտահանիչ էր, և հաւատացեալները նրանով էին լուանում իրենց ձեռքերը):—Սեռ.* գումիզի *ձևի վրայից սխալմամբ ենթադրուած է ուղղական* գումիզ *ՆՀԲ և ԱԲ, որ սակայն եթէ իրօք գոյութիւն ունեցած լինէր, պիտի տար սեռ. *գումզի և ո՛չ թէ* գումիզի:—*Ոմանք՝ ծանօթ չլինելով զրադաշտական սովորութեան և առաջնորդուելով Եղիշէի «ձհոր... մի՛ լուացին» բառերից, ենթադրել են թէ* գումէզ *մի տեսակ մաքրիչ խոտ է. այսպէս՝ Հին բռ. մեկնում է «օշնան, ճառախոտ», Ստ. Ոսկեքան համարում է «bubonium, կղմախ կամ* aster atticus, *աչուկ բոյսը» (ըստ ՀԲուս. § 516), նոյնը բնդունում է նաև Արթինեան, Ասեաբեր, 1913, էջ 688.—Մեկն. բառից Վարդան դրոց, Ջհո. Բ. 200* Bibl. nat. *«Գոմէզ խոտ է, զոր գիրք աճառ լուալեաց ասեն» (ըստ Արթինեան, Ասեաբեր, անդ):* Սրանք բոլորը սխալ են և առաջնորդում են մեզ այն տարօրինակ գաղափարին, որ իբր թէ քրիստոնեայ հայերը հատարակ ջրով միայն լուացում էին և օշնաներ արդիւնած էր մեզ, մինչդեռ պարսիկները պարզ ջրով չէին լուացւում, այլ միշտ և միայն օշնանով:

=*ՊՀլ.* gōmēz *«կովի մէգ», փարս.* gumiz, *պրս.* كميز gumīz, *սիվէնդ.* gimīz *«մէգ», դնդ.* gaomaēza *«կովի մէգ», որ բարդուած է դնդ.* gav- *«տաւար» և* maēz- *«միզել» բառերից (*Barthol. *483,* Horn, *էջ 278, § 95):—Հիւբշ. էջ 128:*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ. նոյնը յետոյ ՆՀԲ, Lag. Beitr. bktr. Lex. *29:—Հիւբշ. 128 աւելորդ տեղն է յիշում բեղուճ.* gvāmīš *«լուացքի մէջ գործածուած մի փոքր բոյս», հայերէն* գումէզ *«խոտի տեսակ» անգոյ բառի առթիւ:*

**ԳՈՄԻԵ, ո կամ ի–ա հլ. «գոմէշ» Օրին. ժղ. խոր. աշխ. Յայսմ. Վրք. հց. Բ. 420. Վրդն. ծն. Ոսկիփոր.:*

=*ՊՀլ.* gāvmēš *«գոմէշ», պրս.* گاومیش gāvmēš, گاموش gāmūš, *փարս.* gōmiš, *որոնք բուն նշանակում են «եզնախոյ», իբր դնդ. *gao-maēša, բարդուած* gao *«արջառ» և* maēša *«խոյ» բառերից՝ ՊՀլ.* gāvmēš *պիտի տար հյ. *գաւմէշ> *գօմէշ. ուստի պէտք է կարծել, որ կա՛մ հյ.* գոմէշ *ուղղելի է *գօմէշ և կամ թէ պՀլ.* gāvmēš *բառի դէմ կար նաև դւս. պՀլ. *gōmēš ձևը (համմտ. փարսին), որից ուղղակի հյ.* գոմէշ:—*Իրանեաններից փոխառեալ են նաև աֆղան.* gāvmēš, *բելուճ.* gvāmēš, gāmēš, *ասոր.* ܓܘܡܫܐ gōmīšā, *արաբ.* جاموس Jāmūs, *քրդ.* gaumiš, gameš, komiš, *վրաց.* გამეში գամեշի, კამბეში կամբեշի, კამბეჩი կամբեչի, *ոս.* gömiš, gʸamūš, *ինգ.* կամմէչ, *ախն.* կամբեզ, *մինգր.* կամբեչի, *լազ.* gomuš, Jamuši, *ափխ.* akanbaš, *չեչէն.* gamuš, *խեւս.* gāmuš, *ավար.* kamyš, garmuš, gamuš, *կար.* կալա. *անգ. կիւր.* ագուլ. gamiš, *տաբաս.* gamüš, gaymüš, *աուա.* jemiš, *դիդ.* gamuš, *չեկ. բուա.* gomüš, *Թուշ. օսս.* kambeč *ևն. ըստ այսմ ամբողջ Արևելքի մէջ տարածուած մի բառ է:—Հիւբշ. 128:*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ. նոյնը նաև Böttich. Horae aram. *27:* Rudimenta *36,* Lag. Urgesch. *750 ևն:*

ԳԻՒ.—Ննխ. Ջղ. Տփ. գօմէշ, *Ախց. Երև. Խրբ. Կր. Սեբ.* գ'օմէշ, *Ոզմ.* գ'ոմէշ, *Վն.* գ'էոմէշ, *ՋԲ. Մշ.* գ'ումէշ, *Դրբ.* կ'ո'ւմաշ, *Շմ.* գիւմուշ, *Մկ.* կ'իւմէշ, *Հւր.* գիւմէօշ, *Գոր.* կի'մուշ, *Ասլ.* գ'ամէշ, *Մրղ. Սլմ.* գ'ոմէշ, *Ալշ.* գ'մէշ (*յգ.* գ'մշաան, գ'մշտաանք *«գոմէշներ»*)։—*Նոր բառեր են՝* գոմշածաղիկ, գոմշակով, գոմշաձագ, գոմշասայլ, գոմշավազ, գոմշաեզ, գոմշագայլ, գոմշաբեռան, գոմշանոց, գոմշանակ, գոմշաքշի, գոմշեղի, գոմշաքար, գոմշեղէն, գոմշավարի, գոմշառած, գոմշաաէր, գոմէշկոտուկ, գոմշուճակաքիկ։

**ԳՈՄՈՐ «մի տեսակ չափ է. մէկ արդուս Շիր. 34. Համառ. նաև Փիլ. լին. 262. «Եւ քաթգ-մանի... գոմոր՝ չափ»։

=*Յն. γόμορ նոյն նշ., որ տառադարձուած է եբր.* עֹמֶר ‘ōmer *«արմտեաց չափ» բառից (տե՛ս* Sophocles, *էջ 336 ա). յունարէնից է նաև լտ.* gomor։

Ուղիղ մեկնեց նաև Աւգերեան, Բացատրր. չփ. և կշռ. 66. նոյնը նաև ՆՀԲ ևն։

+ԳՈՅ. *ի հլ. «էութիւն. եղած բան, գոյացութիւն. 2. Առատած. 3. Հարստութիւն, ինչք» Հռ. գ. 17. Բ. Կոր. բ. 11, 12. Եզն. Մծբ., «գոյութիւն, գոնուիլը» Եփր. Համաբ. 216, որից՝* գոյի, գոյիւ իւրով, գոյիւ չափ *«լրիւ, ամբողջապէս» Ոսկ. յհ. բ. 3. Ագաթ. Եզն. Մրկ. ժբ. 44,* գոյարար *Եզն.,* գոյապէս *Ոսկ. յհ. ա. 11,* գոյաւոր *«հարուստ» Ոսկ. յհ. բ. 31 և ևս.,* գոյաւորութիւն *Իմ. ժզ. 21. Ոսկ. մ. ա. 21,* գոյութիւն *Եզն. Մծբ., չգոյ Հռ. գ. 17. Բ. կոր. բ. 12. Եզն. Ոսկ. մ. ա. 6,* գոյափոխիլ *Մ. Մաշտ. էջ 177 բ., առ ի չգոյէ ՍԳր. Եփր. Բ. կոր. բայական ձևով ունինք* գոլ *(անորոշը) «գոնուիլ, լինել, գոյութիւն ունենալ» կիւրղ. Թգ. պահապատուր բայ, որից մնում են միայն* գոմ, գոս, գոյ, գոմմ, գոյմ, գոն, գոյր, գուցէ, գոլով *ձևերը. ոսկեդարեան մատենագրութեան մէջ սրանցից գործածական են միայն երրորդ դէմքերը, այն է՝* գոյ, գոն, գոյր, գուցէ. *միս դէմքերը նմանողութեամբ շինուած են յետնաբար և խիստ քիչ գործածական են. շաշկապի կարգ է անցած* գուցէ *«մի՛ գուցէ, չլինի որ» ՍԳր. «Թևրևս» նս. քր. յետնաբար ստեղծուած են նաև* գոյանալ, գոյացութիւն, գոյացողութիւն, գերագոյ, իմմնագոյ, իմմնագոյ *են. Տիմոթ. կուզ, էջ 195 ունի* գուութիւն *փխ.* գոյութիւն։—*Նոր բառեր են՝* գոյականաբար, գոյականակերտ, գոյականացուցիչ։

=*Բնիկ հայ բառ, որ պատկանում է հնխ.* ves- *արմատին. սրա բուն նշանակութիւնն է «մնալ, բնակիլ, տունուտեղ լինել», որից յառաջացել են սանս.* vásati *«բնակիլ, մնալ, գիշերել»,* vasati- *«բնակարան, բնակութիւն, բոյն»,* vastu- *«տեղ, վայր, բան, իր»,* գնդ. vañhaiti *«բնակում է»,* հպրս. ā-vahana- *«բնակատեղի»,* յն. ἕαται νύκτα *«գիշերել»,* գոթ. wisan *«մնալ, բնակիլ»,* հբգ. wist և հիսլ. vist *«բնակավայր»,* հիսլ. foss, feiss- *«մնալ, հանգիստ առնելը»,* կիմբ. ar-oṣ *«մնալ, ապասել»։ Հնխ.* ves *կազմուած է նախնական* au *«բնակիլ» արմատից՝* -es- *ածմամբ, իբր* aves, *կրճատ՝* ves (Walde, *829,* Boisacq, *16*)։ *Վերի նշանակութիւնները բնաւ համապատասխան չեն հայերէնին. բայց նոյն* ves *արմատը գերմանական լեզուների մէջ առացել է «լինել, գոլ լինել» նշանակութիւնը, որ ճիշտ համաձայն է մեր բառի նշանակութեան, այսպէս՝ գոթ.* wisan *«լինել»,* was *«էի»,* wists *«գոյութիւն, բնութիւն», հբգ.* wësan *«լինել, գոլ լինել, ներկայ լինել»,* wist *«էութիւն, գոյութիւն», գերմ.* war *«էի»,* gewesen *«եղած», անգլ.* was *«էր, կար» են։ Հնխ.* ves- *արմատը պահուած չէ մեր մէջ ներկայի ձևով, որ պիտի առար հյ.* *գեմ, *գես, *գի, *այլ միայն կատարեալի ձևով. հնխ.* vóse> *հյ.* գոյ- *և կամ բուա* Meillet, MSL, *19, 187 ներկայի* *vos *ձևից է. համառ. հիսլ.* foaid *«գիշերը միասին անց կացնել, քնել»* (Pokorny, *1, 307*)։—*Հիւբշ. 435։*

Peterm. *25, 35 սանս.* bhū, *յն.* φυ-, *լտ.* fu- *«լինել»։* Windisch. *47 սանս.* bhū:—Gosche, *64 սրանց վրայ ուշադրութիւն է նաև պրս.* بودن būdan *«լինել»։* Bopp, Abhd. d. Ak. d. w. zu Berlin, *1846, 318* գամ<vāmi, գոս<vāsi, գուցէ<bhū *ձևերից։* Müller, SWAW, *42, 251 հանում է* գամ= *սանս.* gam *բայից, ինչպէս եղանիլ գալիս է* ելանել *բայից։* Ascoli, KZ, *17, 145 հանում է վերի* vas *արմատից։*

Նոյնը կրկնում է Հիւբշ. ZDMG, *36 (1882)*, էջ *119* և Arm. Stud.: Canini, Et. étym. *234* գոլ *(լինել)* = *քէշուա լեզուով* go «լինել»։—Bugge, KZ, *32, 6—7* հակառակ է Հիւբշմանի մեկնութեան, առարկելով, որ հնխ. vēsō, vēseti *պիտի տային հյ.* *գեմ, *գես, *գէ. և գուցէ *բառից հետևցնելով, որ բայի նախաձևն է* *գոյմ, *գոյս, *գոյն *են, կցում է հնխ.* bheumi *ձևին, իբրև սանս.* bhū *են*։—Meillet, MSL, *8, 155* և Dial. indo-eur. *104 դնում է հնխ.* ves *արմատի կատարեալից՝ վերի ձևով։ Հիմնք.* կամ *բայից*։ Karst, *Յուշարձ. 418 թրք.* ol-maq «լինել» *բայի հետ*։

ԳՈՅԺ, ի *հյ. «վաս լուր, բօթ» ՍԳր. Բուզ. Եւս. քր., «ողբ, վայնասուն» Ես. կհ. 19. Գ. մակ. գ. 3=6, Փարպ., որից՝* գուժել *«լալ, հչել» ՍԳր. «լացի՝ կոծի ձայնը հնչել՝ բարձրանալ՝ լսելի լինել» ՍԳր,* գուժկան *«բօթաբեր» ՍԳր. «ողբացող, լացող» Ես. իր. 22. «գոյժ, գժբախտութիւն» Եղիշ.,* գուժումն *Ե-բեմ. լա. 15,* գուժիւն *Ոսկ. ա. տիմ.,* գուժաւոր *Բուզ.,* գուժիկ *«բօթաբեր» Փարպ. 125 (ՆՀՔ ունի, բայց ԱՔ չնչած է),* հրապարակագոյժ *Ոսկ. մ. բ. 10,* մահագոյժ *Նար.,* աշխարհագոյժ առնել *«ամէն տեղ յայտարարել» (լաւ բանի համար ասուած!) Ոսկ. մ. ա. 393։ Նոր գրականի մէջ* շարագոյժ, դառնագոյժ *են։*

Հիմնք. գուսանից *հանում է* գուժկան, *որից էլ կրճատուած* գոժ։ *Սագրեան, ՀԱ, 1909, 335* և Karst, *Յուշարձ. 405 սումխր.* gugʿi *«լուր» բառից։* Nyberg, Hilfsb. *2, 72* և *81 հանում է գնդ.* garəz *«ողբալ», պրս.* گله gila *«գանգատ», պհլ.* گیلو gilak *(գրուած իբր* girō*) «ողբ, լաց», պազ.* gila<*gilčak<*girzak< *grza-ka ձևերից, իբր թէ հյ.* գոյժ<*guž <*gurž, *որ* *guzd *ձևով գտնվում է նաև* զժգմճիլ *բայի մէջ։ (Անճիշտ է. ինչպես գնդ.* harək *տալիս է հյ.* արկ *և գնդ.* harəz *հյ.* արձ-ակ, *նոյնպես և գնդ.* garəz *պիտի տար* գարզ *կամ* գարձ*)։*

*ԳՈՅԻԲՈՒԱԿ *«մի տեսակ հնդկական խունկ է» Խոր. աշխ. (իսկ ՓՔ գրում է* գոյիբուսակ, *որ սխալ է).—Տիգրանեան, Բառ. բժշ. բոյսերի 14 համարում է «cubeba»։*

=Պհլ. փոխառութիւն. բառիս վերջին մասը՝ բուակ *<պհլ.* bōyāk, *պրս.* بوی bōya *«հոտ ունեցող, բուրող» բառն է. իսկ գոյի մնում է անծանօթ. նման կազմութիւն ունին* հրբուակ, նայիբուակ, գազերբուակ։

Ուղիղ մեկնից Պատկ. Арм. reorp. *81։*

*ԳՈՅՆ, ո, ի *հյ. «գոյն, երանգ, ներկ» ՍԳր. Եւս. քր., «դալուկ, դեղնցաւ» Օր. իր. 12. Նորագիւտ Բ. մնաց. ղ. 28, «կերպ, ձև, տեսակ» Եւս. քր., որից՝* գունել *«գոյն տալ, ներկել» Բ. մակ. բ. 30, «ձևացնել, կեղծել» Փիլ. լին. հոսր. պարգ.,* գունաւոր *Մծբ.,* գունաւորել *Ոսկ. մ. բ. 21,* գունատ *Ոսկ. երր.,* գունատութիւն *Ոսկ. մ. բ. 9,* գունեան *Խոր. ՅՀ. կք.,* գունեղ *Վրդն. դան. Ոսկ. դծ.,* գոյնագոյն *Եսթ. ա. 6. Գ. մակ. է. 11. Ագաթ.,* անգոյն *Ոսկ. երր.,* բազմագոյն *«շատ տեսակ» Կոչ.,* այնգունի *«այնպիսի» Ոսկ. սղ. (Նորագիւտ բառ),* բազմագունի *Եզեկ. ա. 4, 27. ը. 2. Փարպ.,* երկնագոյն *Ես. գ. 23. Եզեկ. ժզ. 10. Ագաթ.,* շառագոյն *Մն. իե. 25,* կապուտակագոյն *Ագաթ.,* կարմրագոյն *Ղևտ. ժգ. 43,* կանաչագոյն *Կոչ.,* տգոյն *«անգոյն» Ոսկ. երր. եփես. 631. Սարգ. յկ. դ. էջ 60 բ.,* տգունիլ *Եփր. պհ.,* գոյնգգոյն *(նոր գրականի մէջ) են։ Այստեղ են պատկանում նաև* գոյն *«երաժշտական մի խազ» ԱՔ,* գոյնիկ *«ԳԿ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (հմմտ. պրս.* رنگ rang *«գոյն» և Կովկասի թրք.* رنگی rangi *«մի տեսակ եղանակ») և* -գոյն՝ *իբրև սաստկական մասնիկ գործածուած ածականների վրայ. ինչ.* ճերագոյն, բացագոյն, նեղագոյն, խստագոյն, զօրագոյն, բնդարձակագոյն, խոնարհագոյն *են։ Կրճատուած է գոն ձևով՝* ո՛րգոն *«ինչպէս, իբր» բառի մէջ (գրուած նաև* որգովն*) Պիտ. Պորփ. Թր. քեր. որ կազմուած է ճիշտ պհլ.* čygwn>*պրս.* čigōn, *բուն «ի՛նչ գոյն» բառի պէս, որ յետոյ սղուելով եղել է* čiūn, čūn *«իբր, պէս»։ Վերջապէս այս արմատին են կցւում* գունակ, դժգոյն, հանգոյն, հանգունակ *բառերը, որոնք սակայն ո՛չ թէ հայերէնի մէջ կազմուած ձևեր են, այլ իրանեանից*

փոխառեալ պատրաստի ձևեր (սրանց վրայ տե՛ս առանձին)։

=Պհլ. gūn «գոյն, տեսակ», սոգդ. γwn «գոյն, եղանակ, ձև», պազենդ. gūn «գոյն», պրս. كون gūn «գոյն, երանգ», كوناكون gūnāgūn «գոյնզգոյն, երիվներանգ, պէսպէս, զանազան», զնդ. gaona- «կերպ, եղանակ, գոյն» (գտնւում է միայն բարդութեանց ծայրը, ինչ. zairigaona- «դեղնագոյն) (=պրս. زرگون zargūn), hamagaona- «նոյնագոյն»=պրս. هم‌گون hamgūn *id.*). (Horn, § *946*, Bartholomae, *482*)։ *Իրանեան բառի առաջին և նախնական նշանակութիւնն է «մազ, յատկապէս անասունների մազը. 2. մազի գոյն և յետոյ ընդհանրապէս գոյն. 3. տեսակ, ձև, եղանակ»։ Այս երեք յաջորդական նշանակութիւնները պահում է դեռ զանդկերէն* gaona-, *մասամբ նաև աֆղաներէն* γūna *որ նշանակում է «մազ. 2. գոյն»։ Իմաստի այս զարգացումը, որ ըմբռնելի է անասնապահ ժողովրդի կեանքի համար, գտնում ենք նաև (ըստ* Lidén, IF, *19, 317*) *ֆիններէն լեզուի մէջ, ուր* karva *ունի հիշատ նոյն նշանակութիւնները։—Հիւբշ. 128։*

Ուղիղ մեկնեց նախ ԳՂ։—ՆՀՐ սանս. guṇa։ Peterm. *25, 29, 33, 148 սանս.* guṇa, *արաբ.* laun, *պրս.* gūn: Bopp, II, *206—9* գոյն «երանգ»=*պրս.* gūna, *իսկ* -գոյն *մասնիկը=սանս.* guṇa «որակ, լաւութիւն»։ Karst, *Вопросъ. 428 թթր.* boj, bot «գոյն»։

ԳԻՒ.—Ննխ. Պլ. (հին լեզուով), Տփ. գուն, *Ալշ. Ախց. Կր. Մշ. Սեբ. Սչ.* գ'ուն, *Ոզմ.* գ'ւուն, *Համշ.* կուն. *Վն.* կ'ոն, *Մկ.* կ'իւն, *Ագթ.* գ'օն: *Նոր բառեր են՝* գունգունատիլ, գունեվան:

ՓՈԽ.—Վրաց. გვენი գվենի, გვონი գվինի, გუნი գունի «գալուկ, դեղնութիւն» *փոխառեալ է հյ.* գոյն «գալուկ» *բառից, ըստ որում այս նշանակութիւնը չկայ իրանական լեզուների մէջ։—Իսկ ուտ.* գոն, գոմ «գոյն» *կարող է թէ՛ հայերէնից լինել և թէ՛ պարսկերէնից։*

**ԳՈՅՇ (յատկապէս գոյշ թէ, գոյշ ուրեմ) «գո՛յշ, չլինի թէ, մի՛ գուցէ, գո՛յշ հղիր որ» եփր. թգ. Մծբ. 306. եփր. ա. Քես. 178 (գրուած է գոյշուրեայ, իմա՛ գոյշ ուրեմ), որից գուշացեալ «զգոյշ կեցած» Ոսկ. ես. և զ նախդիրով՝ զգոյշ, որի վրայ տե՛ս առանձին, յետնաբար գրուած է գուշ Քերդ. քեր. 177 = երզն. քեր. Ես. նշ.։ Նշանակութեանց զարգացման համար հմմտ. թրք.* saqən-maq «զգուշանալ, վտանգից խուսափիլ» և saqən «մի՛ գուցէ»։

=Բուն նշանակում է «լսի՛ր, ուշադրութի՛ւն արա» կամ «լսող, ուշադրութիւն անող» և իբր այն՝ փոխառեալ է իրանականից. հմմտ. պհլ. gōš, *պրս.* گوش gōš, *բելուճ.* gōš, *հպրս.* gauša, *զնդ.* gaoša- «ականջ», *զնդ.* guš, guoš «լսել, ականջ դնել» (Horn, § *943*, Bartholomae, *486*). *տե՛ս նաև գուշակ։—Հիւբշ. IF, 19, էջ 464։*

ՆՀՐ հանում է գուցէ բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ Հիւբշման, IF, 19, 464, հյ. թրգմ. ՀԱ, 1907, 185 աւ։ Միւսները տե՛ս զգոյշ բառի տակ։

**ԳՈՆԳ «մի տեսակ ուտելի արմատ է» Ես. քր. ա. 19. ուրիշ վկայութիւն չկայ։—Ուղղբիկեան (տե՛ս ԳՂ, էջ 337 և 1405) համարում է «կոնձեղ, ապտիլլէղիզ, որ է* souchet", *Նորայր. Բառ. ֆր. 93ա* arum? *և էջ 537ա* fève d' Egypte, lotus sacré:

=Յն. γόγγη, γόγγος «մի տեսակ արմատ», *որ ըստ* Sophocles, *335 գործածուած է միայն Եւսեբիոսի մօտ։—Հիւբշ. 345։*

Ուղիղ մեկնեց նախ Եւսեբիոսի Քրոնիկոնի հրատարակիչը, յետոյ ՆՀՐ։

**ԳՈՆԴԵՂ «շողգամ» Վրդն. ծն. ուրիշ տեղ չէ գործածուած. նոյն բառն է, որ Բառ. երեմ. յաւել. 566 գրում է գանդի «շաղգամ», 574 գանտի «շողգամ»։*

=Յն. γογγυλίς, γογγύλη «շողգամ», որից և *լ.* gongylis. *ծագում է* γογγύλος «կլոր» *բառից։—Հիւբշ. 345։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՐ։

**ԳՈՆԳԻԱՐԻՈՆ «Հռովմայեցոց կայսեր կողմից ժողովուրդին կամ զօրքին բաշխուած դրամ կամ ուտելեղէն» Ես. քր. բ. 180. ուրիշ տեղ չէ գործածուած։*

=Յն. γογγιάριον *կամ* κογγιάριον, *որ*

տառադարձուած է լտ. congiarium *բառից, այն է «մի չափ իւղ, դինի ևն, որ մագիստրատը կամ կայսրը իբր նուէր բաշխում էր զօրականներին կամ աղքատներին և որ յետոյ փոխանակուեց որոշ գումարով»* (Sophocles, *335, 671*). *Ծագում է լտ.* congius *«հեղուկների մի տեսակ չափ» բառից։—Հիւբշ. 345։*

Ուղիղ մեկնեց նախ Ն2Բ։

ԳՈՆԵԱ *(որ և* **գոնեայ, գոնէ***)* *«գէթ, առնուազն, հիւ որ չէ նէ» ՍԳր. Եղիշ. «թերևս, կարելի է որ» Կոչ. Եփր. Թգ. Ոսկ. յհ. ա. 1. արդի գրականի մէջ* **գոնեա** *ձևը գործածական է միայն արևելեան բարբառում. արևմտեան բարբառում ասում է միշտ* **գոնե**։

=Կորած մի բայի միակ մնացորդն է. համմտ. **գուցէ***. յիշեալ բայի ներկան է *գոնեմ, որի հրամայականը պիտի լինի* **գոնեա՛**։

Ն2Բ լծ. յն. καὶ ἄν, κἄν «հատատարապէս, նոյնպէս, գոնէ», καίτος «իրօք, թէև, սակայն»։ Տէրվ. Altarmen. *99 և Նախալ. 119 առնս.* gha, ha, *յն. γε-, գոթ.* ga-, *հյ.* գէր, գէն *ձևերի հետ հնխ.* gha *դերանունական արմատից։ Զուբինով, Բառ. վրաց.- Ֆրանս. մեր բառի հետ է համեմատում վրաց.* ղոնե *«ուժ, զօրութիւն, միջոց», բայց ո՛չ ձևով է յարմար և ո՛չ էլ նշանակութեամբ։—Հիւնք. յն* γοῦν *«գոնէ, գէթ»։*

ԳԻՒ.—Տե՛ս **գօնյա, ՀՆ. գ՛օ՛նէ**։

***ԳՈՆԹ** *«կոմս». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործ է ածում Օրբ. 323 «Եւ նստեալ սուլտանին շուրջ զքաղաքան, տայ ի գուրս զքաղաքն առաուածաննենգ և անիծեալ գոնթ մի փուռանգ, որ էր իշխան մեծի բաղարին»։*

=Ֆրանս. comte *«կոմս»։*

Ուղիղ մեկնեց Շահն. հրտր. Օրբ. բ. էջ 188։

ԳՈՆՋԱԿ *կամ* **ԳԱՆՋԱԿ** *(բուն ձևը անստոյգ է) «փոքր խոյ»? մէկ անգամ ունի Մագ. քեր. 239=Երզն. քեր. «խոյն, գոնչակ, վիդոն, դուար, մալ. այսօրիկ արականք ի վերայ հօտից ասացեալք են նշանակութեամբք»։ Ուրիշ տեղ չէ գործածուած։*

***ԳՈՆՉ** *«խեղանդամ կամ հաշմանդամ». մեկնուած է զանազան ձևերով. Բառ. երեմ. էջ 68 դնում է «գոթի, ուրուկ կամ անտաշ փայտ», էջ 327 կցում է քաղքենատ, կակազ, թոթով բառերին. Ն2Բ և ՋՔ մեկնում են իբր «խեղանդամ, բորոտ, գլուխը կեղտոտ՝ կունտ» Երզն. քեր., որից՝* **գոնջանալ** *«գոնջ դառնալ» Ագաթ. Ասող. գ. 8,* **գոնջուրիւն** *Կանոն., գոնջացեալ Ոսկ. Հռովմ. 165 (Եւ որպիսի՛ ինչ իցէ մարմին արբևլոյն. գոնջացեալ և լուծեալ). գրուած է նաև* **գունջ, գունշ, գոնճանալ**։

=Իրանական փոխառութիւն է համմտ. պրս. گنج gunj *«այն՝ որոյ ի ներքս երթիալ է կուրծքն, յորմէ և թիկն նորին սապատողնեալ է» (ԳԴ)։—Աճ.*

Ն2Բ (բառոտ բառի տակ) յիշում է վրաց. **գոնջի** *«բորոտ», որից առնելով՝ Հիւնք. վրաց.* **ճօնջի** *«բորոտութիւն»։ Մառ, ЗВО, 16, 151, Հայ. Թրգմ. Մկրտութիւն Հայոց, Վրաց... էջ 98 վրաց.* **գոնջի** *«տկար, թոյլ», գուր. աջար. իմեր.* **գոնջի** *«հիւանդ, թոյլ»։*

ԳԻՒ.—Սեբ. գ՛ոնջ՛-գ՛լուխ «գլուխը տձև ու այլանդակ կերպով մեծ, որի վրայ անհարթ ուռուցքներ էլ կան».—նոյն բառն է դարձեալ Ալշ. **գօնճօ** *«խոշոր գլուխ ունեցող» կամ նաև* **գոնչագլուխ, գոնչ, գոնչոյ** *(Երև. Շիր. Մշ.) «մեծ գլուխ ունեցող, մեծագլուխ, հաստագլուխ» Ամատունի, Հայ. բառ ու բան, էջ 148։—Վերջապէս միևնոյն բառն է Ջղ.* **գ՛ոնջ՛** *«ածուխի խոշոր կտոր՝ որ բուրաւ տակն են դնում», Պլ.* **գօնջ** *«որևէ բանից ջարդած խոշոր ու տձև կտոր»։ Այս զանազան առումների յառաջացման համար համմտ.* **անճոռնի***, որ գրաբարում նշանակում է «շատ մեծ», այժմ «տգեղ», անդամալոյծ, որ գրաբարում նշանակում է «խեղանդամ», Պօլսի արդի բարբառով «անշարժ լինելու չափ մեծ»։*

ՓՈՒՆ.—Վրաց. **ցონჯი** *գոնջի «урод հրէշ, ճիւաղ,* калека *խեղանդամ»,* **გაგონჯება** *գագոնջեբա «տկլանդակել, տձևացնել» (Զուբինով, 2 տպ. էջ 139, 328)։*

ԳՈՇ *կամ* **ԳՕՇ** *«քարձ, քօսա». մէկ անգամ գործածում է Կիր. տպ. 1865, էջ 114, Մխիթար Գոշի մականունը մեկնելու համար՝ «Այսպէս կոչէին զնա մականուամբ, զի հեղգագոյն եկին ալիք նորա»։ Ուրիշ վկայութիւն չկայ։*

ՆՀԲ լծ. գօս *«ձոր» և* fօշ *«այծ»: Մաս, Վրդ. առ. I, էջ 66* գոշ=պրս. کوسه kōsa=վրաց. ғոսա, *իրրև յարեխթական բառ. հմմտ. ասոր.* ܓܒܐ gbāxā *«ճաղատ»:* Karst, *Յուշարձ. 423 թրք.* köse *«քարձ»: Նոյնը նաև Թիրեաքեան, Բազմ. 1913, էջ 340:—Պատահական նմանութիւն ունի արաբ.* قُوش qūš *«կարճահասակ մարդ» (Կամուս, թրք. թրգմ. Բ. էջ 347):*

⊙ԳՈՂ *«բարձր ձայն, բղաւոց» Սիմ. առակ. 92 (չունի ԱԲ). այս պարզ արմատից են գոչել «բռռալ, բղաւել (մարդու, առիւծի, ինչպէս նաև ալիքների ձայնի համար առուած)» ՍԳր. Ոսկ. յհ. բ. 16,* գոչեցուցանել *Ես. ծա. 15,* գոչիւն *ՍԳր. Եզն.,* գոչումն *Մծ. դ. 10,* երկնագոչ *Մամբր.,* բարձրագոչ *Լմբ. Շնորհ.,* աճեղագոչ *Շար.,* հրապարակագոչ *Կանոն.,* մեծագոչ *ՅՀ. իմ. առ.,* յոգնագոչ *Գնձ.:*

=Բնաձայն բառ, որ կազմուած է արմատական գ ձայնից. չ ածանցականով. արմատի համար հմմտ. գնչել, գանչել, գռռնչել, գանգաչեցուցանել, *ձևի համար՝ հմմտ.* կոչել. *հմմտ. նաև վրաց.* გოჩგოჩაօ, ჭოჩ-ჭოჩაօ գոչգոչանի, ғոչғոչանի *«ջրի յորձանք»:—Ա՛ճ.*

ՆՀԲ հյ. կոչել *և առնս.* կուչ *«կարդալ, հնչել»:* Gosche, *64 առնս.* vač, vačana, *բհլուճ.* gwākh:—Böttich. ZDMG, *1850, 352 առնս.* guč:—Justi, Zendsp. *263. առնս և գնդ.* vač *«խօսիլ, կարդալ»: Պատկ.* Изслед. о сост. *7 առնս. և գնդ.* vač, *լտ.* voco:—*Հիւբշ.* KZ, *23, 33 լտ.* vocare:—*Տէրվ. Նախալ. 105 առնս. գնդ.* vač, *լտ.* vox *են ձևերի հետ միացնելով նաև հյ.* վանիկ, վանիգ, գոգցիս, գոգջիր, ճագագ *են, բոլորը հանում է հնխ.* vak *արմատից: Հիւնք.* զանգակ *բառից: Հիւբշ.* Arm. St. *12 և* Arm. Gram. *436 մանրամասն մէջ է բերում* vak *արմատի հետ ցեղակից ձևերը (այսպէս՝ առնս. և գնդ.* vač *«առնել, խօսիլ», յն.* ἔπος *«բառ, ճառ»,* εἰπεῖν *«առնել, խօսիլ»,* ὄψ *«ձայն»,* ὄσσα *«ձայն, կոչ», լտ.* vox *«ձայն»,* vocare *«կոչել», հբգ.* gi-wahannen *«լինել, լիշաուակել», գերմ.* er-wähnen *«լինել», պրուս.* wackītwei *«կանչել», wackis «կանչ, գոչիւն», հիւլ.* iarfaigid *«հարցնել», որոնց վրայ կարելի է այժմ աւելացնել թոխար.* wek *«ձայն»). բայց սրանց հետ կապակցութիւն չի ընդունում, ասելով թէ* գոչեմ *համաձայն չէ նշանակութեան կողմից,* կոչեմ *համաձայն չէ ձևի կողմից: Հիւբշմանին հակառակ է* Meillet, *որ իր բոլոր համեմատութեանց մէջ (MSL, 13, 244; 15, 263; 17, 285;* BSL, *25, 133; № 79,18;* Dial. i-eur. *110, եև) միշտ ընդունած է* գոչել<wok^{w}-ye-: *Ըստ իս իրաւացի չէ* գոչել *բառը բաժանել հալևրէնի 130 բնաձայն բառերի շարքից, որոնց մէջ միշտ տեսնում ենք չ ածանցականը: Այսպէսով* գոչել *բառի արմատը լինում է* գո- *և* wak *արմատի հետ համեմատելու ամէն միջոց վերանում է: Այս մեկնութիւնը ուել եմ նախ ՀԱ, 1899, 203 բ:*—Karst, *Յուշարձ. 426 թրք.* söz, *ուղուր.* üče *«խօսք, բառ», 428 թաթար.* bug, bugh, bog *«գոչել», 429 ուղուր. չաղաթ.* oķ *«ձայն»,* oķ-i-mak *«կանչել»:*

ԳԻՒ.—Ախց. խրբ. գ'օչալ *«ջրի խոխոջել». ուրիշ տեղեր պահուած է* գոռում–գոչում *ձևի մէջ, նոր բառեր են՝* գոչգոչալ, գոչան, գոչգոչան:

ԳՈՒ *«գոչիւն, բռռալու ձայն, բղաւոց» Մագ. «կռիւ, պատերազմ» Խոր. Ասող. Լաստ. «խրոխտ, սարսափելի» Բ. Քագ. ը. 10. Ղևոնդ. «բառ» Բառ. երեմ. էլ. 68, որից՝* գոռալ *«խիզախել, խրոխտալ, հպարտանալ, կռուիլ» Ա. մակ. ժա. 40. Եւս. քր. Ագաթ. Եզն. «մեծաբանել» Եղիշ. Ոսկ. մ. բ. 23, Երր. «գոչել (գետի, առիւծի, ցուլի համար ասուած)» Երզն. քեր. Վրդն. խրատ. Ոսկիփ.,* գոռական *Ոսկ. Ես.,* գոռութիւն *Իմ. ժա. 19. Եզն.,* գոռումն *Մագ.,* չարագոռ *ԱԲ:*

ՆՀԲ գոռ *(իր բոլոր նշանակութիւններով),* գոռալ *և* գոռոգ *դնում է նոյնարմատ:* Justi, Dict. kurde *մեր բառին*

է կցում սանս. ghar, ռուս. горетъ, քրդ. guri «զոհ, բոց», որոնք բնաւ հարաբերութիւն չունին։ Հիմնք. գոռոզ բառից. Jensen, Hitt. u. Arm. հմփ. gurás? «գոռ, մեծ» ձևով մի բառ է գրանում՝ իբր ածական թագաւորի և համեմատում է մեր բառի հետ։ Աճառ. ՀԱ, 1899, 204 համարում է բնաձայն, իբր գ արմատական ձայնից կազմուած. այսպիսի բնաձայններ գտնում ենք շատ ուրիշ լեզուներում, բայց հայերէնի մէջ գոռ բառը բնաձայն չէ. այլ՝ ինչպէս վերի վկայութիւններից երևում է, առաջին իմաստն է «խիզախ, հպարտ, ահաւոր» (այսպէս է ոսկեդարեան դրականութեան մէջ) և յետոյ միայն դարձել է բնաձայն՝ նշանակելով «գոչիւն, բղաւոց»։ Scheftelowitz, BB, 28, 310 սանս. gṛṣu «առոյգ, աշխոյժ» բառի հետ։ Գալանճեան, Արև. մամ. 1907, 935 համեմատում է թրք. gürlemek «որոտալ» բառի հետ։ Karst, Յուշարձ. 401, 405 սումեր. gur «ապմակել», 416 համմ. ռռնալ։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 340 թրք. gür-lemek, gürültü «գոռալ, գոռոց»։ Սանտալճեան, ՀԱ, 1913, 400 խալդ. kuri «կռիւ»։ Պատահական նմանութիւն ունի չալալ. gora «մեծ ապմուկ», gheroq «գոռալ», մալալ. geroh «մռնչել, խռկալ», guruh «որոտ», պրս. غُرّیدن ɣurridan (Շահն. Լ. 1190) «գոչել, գոռալ», քրդ. korin «մռնչել», սանս. ghora «սարսափելի, ահաւոր, գոռ, սոսկում», ghorā «գարհուրելի գիշեր, մթին», բոհեմ. goru «սոսկալի». յն. γαυρόω «հպարտացնել», γαυριάω «հպարտանալ», լատ. gor «բղաւել, հայհոյել»։

ԳԻՒ.—Ջղ. գ՛ոռալ, Պլ. գօռալ, Ալշ. Ախց. Երև. Մշ. Սեբ. գ՛օռալ, Սչ. գ՛օղ՛օռալ, Խրբ. գ՛օռալ, գ՛ուռալ, Ղրբ. կ՛օռալ, Ռ. fօռալ, Տփ. գօրալ, Գոր. կ՛օռռալ, Շմ. կ՛օռռօց տալ, կ՛օռկ՛օռալ, Ասլ. գ՛էօռալ, Ոզմ. գ՛ըռալ, Ագլ. գ՛ըռօօլ, Մկ. գ՛ըղգ՛ըռալ, Մրզ. գիւռռալ, Զթ. գ՛ըռդաղիլ, որոնք նշանակում են «բարձր բղաւել», բայց մանաւանդ «երկնքի որոտալը»։ Այս իմաստն առանալու համար թերևս նպաստած լինին թրք. gürlemek «որոտալ», կիրգիզ. kürgüra «որոտ»։—Նոր բառեր են՝ գոռացնել, գոռգոռալ, գոռգոռալ, գոռգոռոց, գոռգոռուկ, գոռոց, գոռուկ, գոռոց, գոռուրչոց են։

*ԳՈՌ «մահմետականի գերեզման». յետնաբար գործածուած բառ, ինչպես ունի Զքր. սարկ. Բ. 120. որից գոռել «մահմետականի դիակը թաղել» Զքր. սարկ. Բ. 120 (երկուսն էլ գրուած ο գրով)։

= Պրս. گور gōr «գերեզման»։—Աճ.

ԳԻՒ.—Ղրբ. գ՛օռ, Պլ. գօռէլ (այսպէս նաև Աբբ. Եւդ.—չգիտեմ սակայն թէ ո՞րտեղից է յառաջացած այս -էլ վերջաւորութիւնը)։

ԳՈՌԵԼ «սքողել կամ հարկանել». ունի միայն Բառ. երեմ. էջ 68։

ԳՈՌԵՆ «հնդկահաւ». միջին հայերէն բառ, որի վկայութիւնը տե՛ս Նորայր, Բառ. ֆրանս. էջ 403, dindon բառի տակ։

ԳԻՒ.—Ննխ. գօռէլ։

ԳՈՌԵԽ «իշամեղու, վայրի մեղու» Եգն. Վրք. հց. Վրք. և վկ. Բ. 10, 105. Ճառընտ. Վրդն. առ. 316. Յայտմ. դեկ. 15։ Գրուած է նաև գոռող Վրք. հց. Ա. 90, գոռոխ, գոռեղ, գոռեճ Ուռհ. ապ. էջմ. էջ 405.—Հին հոլովմամբ՝ ո հլ.։

Հիմնք. պրս. خرک xarak «ջորեակ» բառից։ Oštir, Wörter und Sachen 3, 205 ենթադրում է երկու հայերէն հոմանիշ բառ՝ *գոփ (<հնխ. ǥobhsā, գերմ. Wespe) և *սառեղ (<հնխ. k'ʃsel-, լտ. crabro, լիթ. szirszlỹs) և այս երկուսի գումարումից դնում է գոռեղ։ Petersson, Ar. u. Arm. Stud. 102 -եղ դնում է մասնիկ։

ԳԻՒ.—Մկ. գ՛օռէխ։

ԳՈՌՈՂ, ի, ի-ա հլ. «խրոխտ, հպարտ. 2. բռնակալ. 3. սատանայ. 4. թագաւոր, կայսր» Փիլ. Պիտ. Խոր. հոիփս. ՅՀ. իմ. առ. Նար., որից՝ գոռոզութիւն «ամբարտաւանութիւն» Ես. ժզ. 25. «բռնակալութիւն» Փիլ. Պղատ. օրին. Պորփ., գոռոզանալ Փարպ. Եղիշ. Կիւրղ. ղկ., գոռոզաբար Ոսկ. յհ. բ. 23. Կիւրղ. ղկ., գոռոզասաստ Ուխտ. հտ. Բ. էջ 51։

Ն.Հ.Բ հանում է գոռ արմատից, կամ (հպարտացնել բառի տակ) լծ. թրք. xoroz-lanmaq «աքլորանալ, այսինքն հպարտանալ» և կամ լծ. յն. γαῦρος «հպարտ» (պերճ բառի տակ):—Müller, Armen. VI հմ. grozĭnŭ «զարհուրելի»: Հիւնք. պրս՝ xorōs «աքլոր» բառից: Karst, Ծուշարձ. 405 սումեր. gurus «բարձր, սէր»: Թիրեաքեան, Աբրահամ բառ. 120 պհլ. khrusitan «գոչել», պրս. خروش xruš «յուզում»: Պատահական նմանութիւն ունի յն. κόρος «գոռոզութիւն»:

ԳԻՒՐ.—Ջղ. գ'nnoզ, Մշ. գ'onոզ, Ախց. Երև. կր. գ'oոoզ, Ռ. Տիգ. foոoզ, Տփ. զoroզ, Հճ. գ'oroզ, Ղրբ. Շմ. կoոզ, ՋԲ. գ'ուոէզ, Ննխ. գուոուզ:

ՓՈԽ.—Վրաց. გორობი գորոգի «գոռոզ, հպարտ», გორობობა գորոգորա «հպարտութիւն, գոռոզութիւն»:

ԳՈՌՈՋԻՆ «կտաւ». ունի միայն Բառ. Ե-րեմ. էջ 68. սրա աղաւաղումը պէտք է լինի էջ 69 գորոդ «մնկատ» (այսպէս նաև երկրորդ տպագրութեան մէջ), որի ի՛նչ լինելը յայտնի չէ:

⊙ԳՈՌՈՁ «բղաւոց, բարձր ձայն» Մարթին. որից գոռոչել «գոռալ, գոչել» Շապհ. էջ 54 (նորագիւտ բառ):

=Բնաձայն բառ, որ սաստկականն է գոչ, գոչել արմատի. հմմտ. բաչել-բառաչել, ճաչել-ճառաչել, շաչել-շառաչել և մանաւանդ կոչել-կոռոչ կամ կոռոչ. կազմուած է գ արմատից, ռ սաստկականով և չ ածանցիչով:—Աճ.

Այսպէս մեկնած եմ նախ ՀԱ, 1899, 204 բ. նոյնը նաև Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 50:

*ԳՈՍ «մեծ թմբուկ» Շնորհ. նես. (յդ. գոսեր). գրուած նաև foզ:

=Պրս. کوس kōs «մեծ թմբուկ», որ և իբրև արաբերէն բառ ունի Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 286. բայց անշուշտ իրանեան է, որովհետև կայ նաև նորագիւտ սոգդ. kws «թմբուկ»:—Հիւբշ. 264:

Առաջին անգամ ուղիղ մեկնեց Գ.:—Նրանից յետոյ են Ն.Հ.Բ, Հիւբշ. ZDMG, 35 (1881), էջ 663, Պատկ. Матер. I, 9:

*ԳՈՍԱԿ «քարձ, մօրուսի մազը չբուսնող». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. ճծէ «Մորուքն ոչ կարի երկայն և ոչ գոսակ, այլ չափաւոր»:

=Պրս. کوسه kōsa «քարձ», որից փոխառեալ են նաև արաբ. كوسج kusaǰ (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 433) և թրք. köse «քարձ»:—Հայերէնի մէջ գրիչը Բերևս կարծելով հյ. գou բառից՝ գրել է գոսակ, մինչդեռ ճիշտ ձևն է fոսակ, ինչպէս գտնում ենք մինչև այսօր Երև. Ղրբ.:—Աճ.

ԳԻՒՐ.—Երև. Ղրբ. fo'սակ:

ԳՈՎ, ի հլ. «գովեստ, ներբող, հռչակ, մեծ անուն» Փիլ. Պղատ. օրին, Նիւս. բն., որից՝ գովել ՍԳր, գովիլ «պարծենալ» ՍԳր, գովելի Բ. Թագ. ժդ. 25. Եզն., գովեստ ՍԳր, գովութիւն ՍԳր, գովասան Պղատ. օրին. Կմբ. պտրգ., ապագովել «վար զարնել, դարովել» Ոսկ. մտթ.=ապիգովել Վստկ. 90, 214. բազմագով Առ որս. Յճխ., գերագով Գնձ., մշանջենագով Սոկր., պատմագով Մամբր. ևն:

=Իրան. *gōv «գովել, գովեստ» ձևից, որ երևան են հանում նորագիւտ բուդդայական սոգդ. γωβ, γωβt «գովել» և քրիստոնեական սոգդ. γωβ- «գովել», γωβtγ «գովեստ» (կարդալ guw, guwt): Այս ձևերը կցւում են հպրս. gaub «ասել», պհլ. guftan, gōw «ասել, յիշատակել, պատմել, նկարագրել», gōvišn «ասելը, խօսակցութիւն, խօսք, բառ» gowišnōmand «բանականն», պրս. گفتن guftan «խօսիլ, ասել» (ներկ. گوی gōyam) բառերի հետ (Benveniste, BSL, № 93, էջ 70. Gram. sogd. II. 12, Horn, § 926): Ջալնաւորի ō երանդը ցոյց է տալիս պհլ. gōw. չկար միայն «գովել» նշանակութիւնը, որ գտնում ենք այժմ սոգդերէնում:—Աճ.

Ն.Հ.Բ թրք. چاو čav «հռչակ» բառի հետ: Cappelletti, Armenia, Թրգմ. Աբշալ. արբտ. 1842, 108 երր. գավադ «գովել»: Böttich. ZDMG, 1850, 352 սանս. ku, kavayāmi «երգել, գովել», kavi «գովող, երգող, բանաստեղծ»,

Müller, SWAW, *1862, 575 պրս.* جوی gōyam «ասեմ», *փարս.* gōyanț «խոսին», *հպրս.* gut: *Տէրվ. Մասիս, 1882 օգոստ" 30 հպրս.* gub *և պրս.* guftan «խօսիլ, ասել»: *Նոյն, Նախալ. 50, 81 սանս.* hu, *զնդ.* zu, *հալ.* zvati «հնչել» *բառերի հետ հնխ.* ghu «գոչել» *արմատից:* Bugge, KZ, *32, 36 գ յաւելուածով լտ.* ovare «ցնծալ», ovatio «գովեստ»: Meillet, MSL, *8, 280 հալ.* gověti «խնամել, զբաղուիլ», *լտ.* faveō «նպաստել»: *Հիւնք.* քաւել *բառից:* Patrubány, KZ, *37 (1904), էջ 428 նոյնպէս հալ.* gověti: Scheftelowitz, BB, *29, 16 սանս.* ghošati «ծանուցանել, կոչել», *զնդ.* gaoša, *յն.* πυθέσθαι «բացատրել, յայտարարել, ապացուցել», *հնխ.* g^{w}haus- *արմատից:* Pedersen, *Հայ. դր. լեզ. 90 միացնելով գոհ բառին՝ նախաձևը դնում է -ր- ձայնով, որ մի տեղ տուել է ն, միւս տեղ ւ. ստոր և մերժում է հալ.* gověti: Meillet, Dial. indo-eur. *73 դժուարանում է ընդունել հալ.* gověti: Karst, *Յուշարձ. 405 սումեր.* gu, gugu, gug «ձայն, ասել, խօսիլ», *418 ուգար.* ökmek, ögmek, *չաղաթ.* ögümek, *օսմ.* öymek «գովել, գովաբանել»:

Գիմ.—Ալշ. Մշ. Ջղ. Սչ. գ'օվել, *Ննխ. Պլ.* գովէլ, *Ախց. Կր. Սեբ.* գ'օվէլ, *Տփ.* գովիլ, *Խրբ.* գ'օվիլ, *Երև.* գ'օվալ, *Ռ.* fovէլ, *Տիգ.* fovիլ, *Աալ.* գ'էօվէ'լ, *Հճ.* գ'էվել, գ'իվել, *Զթ.* գ'ուվիլ, *Ողմ.* գ'ֈօվալ, *Մկ.* կ'էօվալ, *Մրզ. Սլմ. Վն.* կ'էօվալ, *Ագլ.* գ'ա'վիլ:—*Բրբախօս հայոց մէջ՝ Առն.* ղօվ «գովասանք, գովեստ» *և Թրք.* -lemek *բայակերտ մասնիկով՝* գովելլէմէք *(Արեւելք, 1888, նոյ" 8—9):*—*Նոր բառեր են՝* գովք, գովական, գովանք, գովուիլ, գովվախլ, գովվասան:

ԳՈՎՈՂԱԿ *կամ* ԳՈՎԱՂԱԿ «մի տեսակ խնկեղէն է» *Խոր. աշխ. (յիշուած կասիմոն բուսանունից յետոյ). Սուքրեանի տպագրութեան մէջ գտնում ենք* ղբվաղակ *ձևով, ՀԲուս. § 519 գրում է* դուաղակ. *բայց ճանաչում է նաև գուռ.* գովաղակ «մի տեսակ ակքան, carthamus», *ըստ Տիրացուեան,* Contributo § *567* cnicus benedictus L:

Պատկ. Խոր. աշխ. 1877, էջ 82 դնում է պրս. گلاک gūlak «արմատ էնկիատան ծառոյն. տես. հիլթիյթ քէօքի» *(ԴԴ),* radix silphii (vullers), «որ լինշում է նաև *Հիւբշ. 129, բայց շատ անապահով է համարում:*

ԳՈՐԴ «խալի, tapis» *Երզն. քեր. ուրիշ օրինակ չկայ. սրանից են կազմուած նոր գրականում* գորգավաճառ, գորգագործ, գորգագործարան:

Հիւնք. գործ *բառից:* Коршъ, *Բրգմ. Հովիտ, 1914, 455 ֆինն.* verka «կերպաս» *բառի հետ: Պատահական նմանութիւն ունի արաբ.* كرّ kurr «կապերտ» *(Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 96):*

ԳՈՐԳԱՍՏԻՆ «արարուչ կամ ճարտասան կամ աստուած». *այսպէս է մեկնում Բառ. եբեմ. էջ 69. նոյնը նաև բ. տպագրութեան մեջ. ի՛նչ լինելը յայտնի չէ:*

ԳՈՐԽ «քարակոյտ». *ունի միայն Քաջունի. հա. Գ. էջ 49, որից և Տիրոյեան, Հանրագրութ. էջ 367: Աղբիւրը անյայտ է:*

+ԳՈՐԾ, n *հլ. «գործ, աշխատանք, պաշտօն, բանուածք, վարք» ՍԳր. Եզն. Ոսկ. մ. ա. 21. Եւս. քր. Եփր. ծն., որից՝* գործել «բանիլ. 2. անել. 3. արտադրել, շինել. 4. ազդել, ներգործել. 5. հողը մշակել. 6. կատւ ևն հիւսել» *ՍԳր. Եզն. Ոսկ. ես.* գործած *ՍԳր,* գործակալ *Սգր,* գործակից *ՍԳր,* գործավար *ՍԳր,* գործատեաց *Առակ. ժթ. 15,* գործատուր *ՍԳր,* գործելի «գործող, անող» *ՍԳր. Եզն. Կոչ. «անելիք» Նիւս. բն. Փիլ. «ածուխ» Տաթև. ամ. 79, Անսիզք 39, Վստկ. Անկ. գիրք հին կտ. 315 (որից* գործելախառն «ածխախառն» *Վստկ. 117),* գործի *ՍԳր. Եզն.,* գործութիւն «գործողութիւն» *Եփր. Համար. 119,* գործօն *Դ. Թագ. ժբ. 14. Եզն.,* գործուն *Եփր. երր. և ել. Վեցօր.,* գործունեայ *ՍԳր. Ոսկ. Եզն.,* գիշագործ *Կոչ.,* բարեգործ *ՍԳր. Ագաթ.,* գաղտնագործ *Մծբ.,* գրածագործ *Կոչ.,* կաւագործ *Իմ. ժե. 7. Ոսկ. մ. բ. 14. Եփր. Թգ.,* ձեռագործ *ՍԳր,* երկաթագործ *Ագաթ.,* գործանակ «խանութ» *(չունի ԱԲ) Բառ. երեմ. էջ 238 են: Նոր գրականում*

կազմուած նոր բառեր են՝ ածխագործ, ածխագործութիւն, թիթեղագործ, ժամագործ, կաշեգործարան, գործադուլ, գործադուլաւոր, գործարանապետ, գործաւորուհի, աճգործարանաւոր, հանքագործ, գործադիր, գործադրութիւն, գործազուրկ, գործակատար, գործարանայիք, գործարանատէր, գործարանաւոր, գործելակերպ *են եւն:*

= *Բնիկ հայ բառ՝ հնխ.* vorg'- *արմատից, որա հետ հմմտ. յն.* ἔργον (<ϝέργον) «գործ», ἔρδω *(կար.* ἔοργα) «գործել, անել, կատարել, լրացնել», ἐργάζομαι «կաշխատիմ, կբանիմ», *հրգ.* werk, werah, *հսաքս.* werk, *հհիւս.* verk, *գերմ.* Werk «գործ, աշխատանք», wirkon «ազդել, գործել», *գոթ.* vaúrkjan «անել, գործել, ազդել», vaúrhts, vaurstv «գործ, երկ», *զնդ.* vərəzyeiti «գործում, անում, աշխատում է», varəza- «աշխատանք», *պհլ.* varz=*պրս.* ورز barz *կամ* ورز varz «դաշտային աշխատանք, մշակութիւն» *են: Ամէն բոլորը ծագում են հնխ.* verg'- *արմատից, որի երկրորդ ձայնդարձն է* vorg'- *որին պատկանում է նաև հայերէն բառը: Նոյն ձայնդարձը դանում ենք նաև արիշ լեզուներում մասամբ պահուած. ինչ. յն.* ὄργα-νον «գործիք», *գոր.* δαμι-ουργος «գործիչ», *սանսկ.* κάκο-ῦργος (<κακό-fοργος) «չարագործ», *կար.* ἔοργα «գործնեցի», *անգլ.* work «գործ, գործել» *են (*Boisacq, *271,* Walde, *821,* Horn, § *197,* Kluge, *527, 532,* Pokorny, *1, 290)։—Հիւբշ. 436։*

Ուղիղ մեկնեց նախ Lag. Urgesch. *375, որից յետոյ կրկնում են միւսները։ Հինք. համառօտուած յն.* γεωργία «երկրագործութիւն» *բառից։*

Գհհ.—Զղ. գ'ործ, *Ալշ. Մշ.* գ'որձ, *Ննխ.* գօրձ, *Ակն. Երև. Խրբ. Սչ.* գ'օրձ, *Ախց. կր.* գ'օրծ, *Պլ. Ռ. Տիգ.* գօրձ, *Հճ.* գ'օյձ, *Համշ.* կօյձուշ «հիւսել», *Վն.* կ'ՙուռծ, *Տփ.* գուռձ, գուռծկ, *Ողմ.* գ'ՙուռծ, *Զթ.* գ'ույձ, գ'իյձ, *Սեբ.* գ'էօրձ, *Ղրբ. Շմ. Սլմ.* կ'էօրծ, *Մկ.* կ'էօոծ, *Ասլ.* գ'էօ՝րձ, գ'էօ՝րզ, *Մրղ.* կուՙրծ, *Ագլ.* գօրծ «գործ», գ'ուոծ «ձեռագործ», գ'ա՛ոծիլ «ձեւծել, հիւսել»։ *Նոր բառեր են՝* գործարար, գործաւէր, գործգլուխ, գործելապան, գործելիոր, տափագործ, հորագործ *են։*

Փոխ.—Պատահական նմանութիւն ունին անշուշտ վրաց. գորջա, *Քուշ.* գորջադալար «աշխատիլ, յոգնիլ»։

ԳՈՐՇ *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «թխագոյնի և մոխրագոյնի միջև» Մն. լ. 92, որից՝* գորշախայտ *Մն. լ. 33, 39. լա. 10, 12,* գորշախարիւ *կամ* գորշախարուն *Եփր. աւետ., սևագորշ Երզն. քեր. գրուած նաև գող Դամասկ. Պղատ. տիմ. 143. Լծ. պրպմ. 539, 568. Ոսկիփ., որից* գոշասպիտակ *Վրդն. լս. 55։ Նոր գրականում ընդունուած է միայն* գորշ։

Տէրվ. Նախալ. 127. հնխ. kars-na *ձևից. համմտ. սանս.* krṣṇa «սև *կամ կապոյտ ագռաւ», krṣṇāyāmi «գորշանամ» են։* Petersson, Ar. u. Arm. St. *81 համեմատում է հրգ.* gris, *հոլլ.* grijs, *գերմ.* greis *համանիշների հետ, որոնց ծագումը անհայտ է ըստ* Kluge, *188 և որոնցից փոխառեալ են յետոյ ֆրանս.* gris, *իտալ.* griso, grigio «գորշ»։ *Ըստ* Petersson *գերմանական բառերը տալիս են հնխ.* ghr-ei-so, *հայերէնը հնխ.* ghor-s-։

* ԳՈՐՇԱՊԱՀԱՆԳ «ականջի օղ» *Եզնկ. ժղ. 12. Եփր. աւետ. 306. «գլխի մի տեսակ զարդ» Յուդթ. ժ. 4. գրուած է նաև* գոշապահանգ, գոշապարհանգ, գորշապարհանգ։

=*Իրանեան բարդութիւն է, որի առաջին մասն է պհլ.* gōš, *պրս.* گوش gūš, *հպրս.* gauša, *զնդ.* gaoša- «ականջ», *իսկ երկրորդը Քուի իրան.* *upahanga- «կախուած բան, ժապաւէն են»=*սանս.* upa+sanga «յաւելուած ծայր, հակում», *ճիշտ ինչպէս կայ պրս.* پاهنگ pāhang «ոտքի ապարանջան»։ *Նոյն է վրաց.* ჭოშელაკნი գոշպելակնի «ոսկի գինդ» *Ջուբ². 329, որ դժբախտաբար չի տալիս վկայութիւնը, որպէսզի իմանայինք թէ պարզապէս հայերէնից է տառադարձուած Ս. Գրքի թարգմանութեան ժամանակ, թէ անկախ փոխառութիւն է իրանեանից։ Վրացի բառը երկրորդ մասում թէև ազճաւուած, բայց առաջին մասում աւելի ուղիղ է քան հայերէնը և ճշտիւ համապատասխանում է պհլ.* gōš «ականջ» *բառին։—Հիւբշ. 129։*

Նշբ մեկնում է պրս. կիւղ *և հյ.* պահ-պանակ *բառերից։ Հիւբշ.* ZDMG, *35 (1881), 663 պրս.* gūš+?

ԳՈՐՈՁԷՆ *տե՛ս Գոզրում։*

ԳՈՐՈՎ, ո *հյ. «սէր, խանդաղատանք» Փիլ. Մանդ., որից՝* գորովալիր *Ոսկ. բ. կոր.,* գորովալի *Եփր. ծն.,* գորովել *Եփր. ղղջ. Պրղաա. օրին.,* գորովագին *Մանդ.,* գորովանք *Փիլ. իմաստ.,* դիւրուգորով *3հ. կթ.,* մաքրագորով *Սարկ. աղ.,* հոգիագորով *Յիշ. ոսկ. յհ.,* խաղցրագորով *(նորագիւտ բառ) Ոսկ. տար. տող 4,* մայրագորով *Ոսկիփ. ևն։*

Նշբ «խորովումն սրտի», սանս. գառուճեա։ *Տէրվ. Նախալ. 80 սանս.* har, *գերմ.* gern *«հաճելի», յն.* χαίρειν *«ուրախ լինել» ձևերի հետ հնխ.* ghar- *«սիրել» արմատից։— Հիւնք. էջ 207* կորով *<լտ.* vigor, *«յորմէ ի հակառակէն»* գորով, գորովիմ, *յորմէ* անգորոյն, անգորոն *և* որովայն. *բայց էջ 348 մոռանալով սրանք՝ դնում է նախ* որովայն, *յորմէ* գորով, *«յորմէ ի հակառակէն»* կորով, Karst, *Յուշարձան. 405 սումեր.* gur *«շորոմել»։ Տե՛ս և* գուրգուրալ։ *Պատահական է սանս.* karva *«սէր»։*

Գիմ.—Այս արմատից է գորովրել *վն. «սիրով ու գորովով համոզել»։*

+ԳՈՐՏ, ի, ո *հյ. (յետնաբար նաև* ու *հյ.) «գորտ անասունը» ՍԳր. Եղիշ. դտ. Լմբ. իմ. 3հ. իմ. պալ. Երզն. քեր. «ձիու կամ եզան լեզուի տակ թաղանթային ծալք»* barbillons *(Նորայր, Բառ. ֆր. 129 ա). «լեզուի տակ այտոյց, ֆրնս.* grenouillette» *(Նորայր, Բառ. ֆր. 616 ա), «ձիու ոտքի սմբակի մէջի կլոր մասը» Վստկ. 198. յետնաբար* *գորտն, *որից սեռ.* գորտան, *յգ.* գորտունք, գորտուն *Մխ. առ. Շնորհ. Թղթ. Երազ. (տե՛ս Նորայր, Կոր. Վրդ. 431)։*

= Հնխ. wordo- *ձևից, որի հետ նոյն են միայն լեթթ.* waŕde, *արևել. լեթթ.* vargle, *լիթ.* varlė *«գորտ». միւս լեզուների ընթացքում ենք դտնում իրար անհամապատասխան ձևեր, ինչ. յն.* βάτραχος, *լտ.* rana, *գերմ.* Frosch, *հբգ.* frosk *ևն. բառիս այլ-քան այլազան ձևեր առանալը բացատրում է գորտին վերագրուած համալական յատկութիւններով (տե՛ս* BSL, *№ 80, հտ. 26, էջ 58,* Walde, *641,* Boisacq, *116,* Kluge, *158,* Trautmann, *342,* Pokorny, *1, 698,* Ernout-Meillet, *812 (վերջինս համարում է բնաձայն բառ)։—Հիւբշ. 437։*

Klaproth, Asia polygl. *էջ 100 համեմատում է արաբ.* qyrr *բառի հետ։ Առաջին անգամ* Lag. Urgesch. *780 տուաւ ուղիղ մեկնութիւնը՝ կցելով նաև յն.* βάτραχος<βόρταχος *«գորտ»։ Նոյն.* Arm. Stud. § *519 ընդունում է նախորդները, բայց մերժում է յունարէնը։ Նմանապէս Հիւբշ.* Arm. Stud. *(կասկածով) առած է յոյնը, բայց չէ ընդունած* Arm. Gram.:—*Տէրվ.* Altarm. *89 սանս.* udra *«խեցգետին, կաղր», գնդ.* udra *«ջրշուն», յն.* ὕδρος *«ջրի օձ», հյ.* выдра *«կաղր» բառերին է կցում։* Müller, SWAW, *136 (1897), էջ 10 յն.* βάτραχος *և հբգ.* chrota *«գոդոշ»։ Հիւնք. 205 կոկորդ բառից, իսկ 216 խորդ բառից։*

Գիմ.—Մշ. գ'որդ, *Ախց. Երև. Կր.* գ'օրտ, *Խրբ.* գ'օրդ, *Ալշ.* գ'ոռդ, *Ռ.* forդ, *Սլմ.* կոռտ, *Վն.* կ'ոռտ, *Սեբ.* գ'էօրդ, *Աալ.* գ'էօրդ, գէօ՝ր*, *Մկ.* կ'էօռտ, *Ոզմ.* գ'ուրտ, *Տփ.* գուրդ, գուրդր, *Հմշ.* կույդ, *Զղ.* գ'ուրբրնուկ, *Գոր.* կ'օ'ռբնուկ, *Շմ.* կ'օռտնիկ, *Ղրբ.* կէ'րբնուկ, *Զթ.* գ'օյդօնօգ, *Գղ.* ֆո'ւնբռուկ, *Ագլ.* գ'ա'ռնուկ.—*Նոր բառեր են՝* գորտալեղ, գորտնակեր, գորտնբուրդ, գորտնգորգ, գորտնուկխռտ, գորտնռուն, գորտնցոյց, գորտնուր *են։*

Փոխ.—Ըստ Кипшидзе, Грам. мингр. *1914 էջ XX հայկէնից են փոխառեալ մինգր.* ցոճջօ գորդի, *թուշ,* ყვარტი ղ'վարտի *«գորտ և վրաց.* ბყვარი մղ'վարի *«գոդոշ»։*

***ԳՈՐՓՈՒՐԱՅ** *կամ* **ԳՈՐՓՈՒՐԱԼ,** ի *հյ. «բառակուսի ձեռնակ կտաւ, որ յատին եկեղեցու մէջ պատարագիչը փռում է սեղանի վրայ և նրա վրայ էլ դնում է սկիհը և սրբագործեալ նշխարը՝ առանց մաղդմայի». ու-*

նին միայն ՀՀՒ և ՋՒ. բառս գտնում եմ գործածուած կորփորայն ձևով՝ Երեմիայի բառգրքի յաւել. Գէորգ Դպրէ, էջ 550. գորփուրայ ձևով՝ Մ. Մաշտ. 243, գօրփօրալ, ֆօփօրալ. գորբորայ, ֆօրփօրալ, գօրբօրայ ձևերով՝ Պարգ. էջ 481, 482. տե՛ս նաև Քննասեր: Միասական բառարան, Օրաց. Ազգ. Հիւանդ. 1906, էջ 114 և իմ Հայ. նոր բառեր հյ. մատ. Բ. էջ 25:

=Լտ. corporalis, որ նշանակում է բուն «մարմնական» և եկեղեցական պաշտամունքի լեզուով ստացած է վերի նշանակութիւնը. որից նաև իտալ. corporale, ֆրանս. corporal: Հայոց մէջ թարգմանաբար շինուած է մարմնական, այն է Քրիստոսի մարմինը (նշխարը) իր վրայ ընդունող, բռնող:

Ուղիղ մեկնեց նախ ՀՀՒ:

*ԳՈՒԲ, ո հլ. (կայ նաև սեռ. ի, յետնաբար յգ. գրծ. գրոf) «հոր, փոս» ՍԳր. Բուզ. դ. ժղ. Ճառընտ., «մեղուի բոյր» Վեցօր., «ագուցայ, փողրակ» Պղատ. օրին. զ, որից՝ գրացի կամ գրեցի (տպ. գրենցի) «գուբի մէջ բնակող» (մակդիր Յովհաննէս Ճգնաւորի) վրք. հց. ժմ., կրագուր «կրի գուբ» Ճառընտ., զագրագուբ ԱՒ (չունի ՆՀԲ):

=Ասոր. ܓܘܒ gubb, ܓܘܒܐ gubbā «գուբ, փոս, ջրհոր, բանտ», արամ. גֻּב gōb, ն. ասոր. gubä «փոս, խրամ, խորութիւն», եբր. גֵּב gē' «փոս, գուբ, ջրամբարձ», սրբառ. جُبّ ǰubb «ջրհոր», ասուր. gubbu «ջրամբար»: Այս բոլորը միասին հաստատում են, որ բառը ընդհանուր սեմական է. բայց նոյնը գտնում ենք նաև հնդեւրոպական լեզուների մէջ. ինչպէս՝ սանս. kūpa «քարայր, խոռոչ, փոս», յն. κύπη «խոռոչ. նաւակ, գաւաթ», լտ. cupa, cuppa «կոնք, տաշտ, տակառ», լեհ. kubek «բաժակ», պրս. کوپ kūp «կուժ» են: Ոմանք կարծում են, որ այս հնդեւրոպական բառերը փոխառնալ են սեմականից. բայց ըստ նորագոյն քննութեանց՝ նմանութիւնը պատահական է: Հնդեւրոպական ձևերը կազմում են անջատ և անկախ մի խումբ, որ պատկանում է հնխ. qeup-, qeub- արմատին (տե՛ս Walde, 213—4, Boisacq, 536): Պարսկերէնից են փոխառեալ քրդ. کپ kup «հողէ մեծ ամանն, սրնակ. թրք. کپ köp «հողէ ամանն, թրք. کوپ kūp «թակոյկ. կարաս», որի միջոցով էլ սերբ. ćup, ćupa, բուլգար. kjup. նյն. κουπές, ալբան. kupę են: Բառիս վրայ ամենէն եկար համեմատութիւններ տե՛ս Marsel Cohen, BSL, № 81, էջ 91—93: — Հիւբշ. 302:

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ La Croze:—ՆՀԲ յծ. քաղդ. կուպ, կօպ, սանս. kūpa:—Peterm. 17 ասոր. gub. եբր. gub, յն. κύπη, սանս. kūpa: Diefenbach, Berl. Jahrb. f. Wiss. 1843, 448 պրս. և ասոր. ձևերի հետ: Müller, SWAW, 41, 11 չի պատկանում, ասում է, սանս. kūpa ձևին, որ պիտի տար հյ. կուպ, այլ արամերէնից փոխառութիւն է: Bugge, Lyk. Stud. 1. 80 հայերէնի հետ միասին ասորական փոխառութիւն է դնում լիւկ. xupa «գերեզմանն», որից էլ ավար. xob «գերեզմանն»: Karst, Բուշարձ. 400 ասուր. gubbu, 430 ափ և հովիտ բառերի հետ՝ թաթար. kab, kob, kov, kev «ուռիլ, կլոր, դատարկ»:

Գիհ.—Տփ. գուբ «ջրի գուբ», Մշ. գ'ուպ, Ալշ. գ'ոսի «փոս տեղ», Ախց. Կր. Ջղ. գ'ուսի «մի փակ և մութ տեղ», Պլ. գուսի նոյն նշ. Ննխ. ֆուսի «բաղանիքի աւազան», Խոյ. գ'օր «ախոռի մէջ փոս՝ ուր անասունների մէկն է հաւաքւում»:—Նոր բառեր են՝ գբել, գբիլ, գբջակ:

ՓՈՒ.—Հայերէնի միջոցով են կապադովկ. γοῦπα, κοῦπα «ջրհոր, գուբ, փոս» (Καρολίδης, Γλωσσ. συγ. էջ 89 և 153), վրաց. გუბი գուբի «փոս», გუბე գուբե «ճահիճ», დაგუბება դագուբեբա «թումբ շինել», დაგუბებული დագուբեբուլի «ջուրը թումբով արգիլել», ինգ. გუბ գուբ «ճահիճ, լիճ», թուշ. გუბ գուբ «կղզի», լազ. գուբի «աղբիւրի ծորակ, ջուրը վազելու խողովակը». վերջին իմաստին է համապատասխանում հյ. գուբ «փողրակ» Պղատ. օրին. զ. (տե՛ս Աճառ. Արրտ. 1911, 417):

ԳՈՒԲԱՅ «հողմ. ունի միայն Բառ. երեմ. էջ 69:

ԳՈՒԲՂԱՅ *տե՛ս* Գոբղայ։

ԳՈՒԳ «սրունք» ? անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. և վկ. Ա. 514 «(Պաւղոս առաքեալն էր) այր չափ հասակաւ, հերագանգուր, դուգք թերագոյնք, կարճ գէղ, ծաւի, մեծակն, յօնակից, ունչք երկայնագոյնք»։ Սրա դէմ յոյն օրինակն ունի «կարճ հասակաւ, ճաղատ գլխով, կորասրունգ, կորաբարձ, յօնակից, արծռունգն», ուր մեր բառի համապատասխանն է թւում «կորասրունգ»։—

Վարդի հրատարակիչը ուզում է ուղղել գուն։

ԳՈՒԳԱՋ «անկանոն զօրքի ամբոխ» Բուզ. դ. 7, 8. ուրիշ վկայութիւն չկայ։

ՆՀԲ յն. γίγας, լտ. gigas «հսկայ, վիթխարի» բառերի հետ համեմատելով՝ մեկնում է «ամբոխ զօրու կամ քաջաց և հսկայից»։—Գ. Փառնակ, Անահիտ, 1904, 26 աբբադ. guk «կռուիլ»։

ԳՈՒԳԻԼ, ԳՈՒՋԻԼ կամ ԿՈՒԳԻԼ «խոտ կամ ծաղիկ բժշկական» Բժշ. Սալամ.—ՀԲուս. § 1515 կուգիլ, իսկ § 526 գուգիլ դնում է իբր տարբեր բոյսեր, վերջինը մեկնելով իբր Իրբ. لجل güzel «գեղեցիկ» բառից։ Նոր այր, Բանաս. 1901, 105 թւում է միացնել երեքը իրար հետ։

ԳՈՒԳԻՆԻՃ «մի տեսակ անծանօթ բոյս է». Բժշ. ունի միայն ՀԲուս. § 524, որ թուի միացնել Խոհանոց բուսանուան հետ։

ԳՈՒՋ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Փիլ. լիւս. 142 «Հաւրալբդ հանդարտիկ հանդարտիկ գուզ գուզ երթալով և փորր մի առակաւ ի բաց թռուցեալք»։

ՆՀԲ մեկնում է «որպէս ռմկ. կուզ, խամպուր կամ կծկեալ՝ իբր ի գուես անկեալ, կամ կաղ ի կաղս, որպէս յն. γυιός «խեղ, հաշմանդամ»։

ԳՈՒՋԵԼ *տե՛ս* Գուգէլ։

ԳՈՒԹ, ո հլ. «կարեկցութիւն, գթութիւն. 2. սէր. 3. աղաչանք, պաղատանք» ՍԳր. Ագաթ. եւս. քր., որից՝ գթալ «խղճալ, ողորմիլ» ՍԳր. «փաւփագիլ» Լմբ. սղ., գթութիւն ՍԳր, գթալի Մծբ., գթած ՍԳր. Ագաթ., գթածագոյն Ոսկ. բ. Կոր., գթածագոյժ Կոչ. 361, բազմագութ Յհ. է. 11, գորովագութ Մանդ. Խոսր., բարեգութ Պիտ. Յճխ., մեծագութ Վեցօր., յանախագութ Ոսկ. ես. և մտթ. Սեբեր., յորդագութ Մծբ., անգութ Գ. մակ. ե. 26. Բ. տիմ. գ. 3. Ոսկ. բ· տիմ. են։ Նոր գրականում շինուած բառեր են՝ գթասիրտ, գթասրտութիւն, գթոտ, գթառատ, անգթորէն, գթաշարժուիլ են։

ՆՀԲ «խուր, խրումն և գալարումն աղէացս։ Հիւնք. խուր, խեր, քիր ընտանիքից։ Oštir, Wörter und Sachen 3, 205 հնխ. dhuopto-, իբր զնգ. dvaiša «ցաւ», անգլսք. dolian «խնդթենալ» կամ հնխ. ǫōk'to, իբր յն. ὀκτος «գութ» և կամ հնխ. ghuq-to, իբր լատ. prae-fica «հեղերամայրք»։—Պատահական նմանութիւն ունի սանս. kūt «ալրիլ, ցաւիլ, նեղուիլ»։

ԳՒՌ.—Ալշ. Ախց. Խրբ. Կր. Մշ. Սչ. գ'ուր (բայց Սչ. fբալ, Ալշ. նաև գ'ուրf), Ողմ. գ'ույբ, Մկ. fուր։

*ԳՈՒԹԱՅ «մեծ արօր» Ոսկիփ. որ և գրաբան ԱՒ. ներկայ բարբառների գործածած ձևն է գուբան կամ fուբան, արդի գրականը ընդունել է գուբան։

=Հարաւային կովկասեան լեզուներից փոխառեալ բառ է. համմտ. վրաց. გუთანი գութանի, մինգ. gutani, ինգուշ. gotanger, չեչէն. got'a, թուշ. gut'a, gutan, ուտ. pkoբան, կիւր. kkxūt'en, ավար. k'ot'an, kutan, օսս. gut'on, ավխազ. kotan, բոլորն էլ «արօր կամ գութան» նշանակութեամբ. փոխառեալ լինելը հաստատում է խոնարհ. kutan «ցանել», որ ցոյց է տալիս թէ բառը բնիկ է հիւսիսային կովկասեան լեզուներին։ Բնիկ հայերէն ձևն է արօր։— Ա.ճ.

Erckert, Die Sprachen der kauk. stammen, էջ 113 կովկասեան բառերը հայերէնից փոխառութիւն է դնում։ Սրան հակառակ՝ Հիւբշ. 398 կարծելով թէ հայերէն բառը մեր մատենագրութեան մէջ բնաւ գործածուած չէ (այս սխալը յառաջացած է անուշադրութեամբ, որովհետև բառը ՆՀԲ-ի յաւելուածումն է միայն յիշւում, հտ. Բ, էջ 1049 գ), նոր

ժամանակի փոխառութիւն է դնում վրացերէնից։ Սակայն IF Anz. *10, 43 սխալը ճանաչելով՝ որամադիր է բառը բնիկ հայերէն ընդունելու։— Մառ,* Крит. и мелкія ст. *էջ 3 վրացերէնի նախաձևը դնում է* *vedan, *որով կապում է սեմական լեզուներին. հմմտ. ասոր.* ܦܕܢܐ fadānā *«լուծ, արօր», արաբ.* فدان faddān *«լուծ եզանց»։— Պատահական նմանութիւն ունի սանս.* kūṭa *«արօրի խոփ»։* Pictet, *բ. տպ. հտ. Բ. էջ 120 բրդ.* kotan, *օսս.* guton *բառերի հետ միասին կցում է սանս.* kūṭa, kūṭaka *«արօր, խոփ» բառին։*

Գիւղ.—Տփ. գուբան, *Ախց. Երև. Կր.* գ'ուբան, *Ալշ. Մշ.* գ'ուռան, *Վն.* գ'իւբան, *Ղրբ. Մկ.* կիւբան, *Ոզմ.* գ'օբան, *Շմ.* ֆ'օբան, *Սլմ.* կիւռան։ *Նոր բառեր են՝* գուբանակապ, գուբանավար, գուբնիներկ, գուբանաձէր, գուբանացել, գուբանաւոր, գուբանել *կամ* գուբնել, գուբանատեղ, գուբնոց, գուբնաբերան։

Փոխ.—Քրդ. كوتان kotan, *Ատրպ. Թրք.* كوتان kotan, *գաս. Թրք. Եւդ.* kötan, *Ասն. (նաև տիգրացի հայոց և լոռեաց մէջ)* köten, *Ուրմիոյ ասոր.* ܟ݂ܘܬ݂ܐܢ k'üt'ān, *բոլորն էլ «գութան»։ Կան նաև Ատրպ. Թրք.* كوتانلامق kotanlamaq *«հերկել»,* قوتانلامق kotanlanmaq *«հերկուիլ»,* كچوتانچه kotančə *«հերկարժէք»* (Будаговъ, Срав. слов. *2, 141*)։— *Պատահական նմանութիւն ունի արևել. Թրք.* قوطان *և կամ* قوتان kutan *«ոչխարի փարախ, լուանի բակ» և նախորդների հետ կապ չունի։*

ԳՈՒԹԱՅԻ *«իմաստուն». ունի միայն Բառ. Բառ. երեմ. էջ 69։*

ԳՈՒԼ *«բութ, ոչ-սուր (դանակ). 2. բթամիտ» 3ս. որդի, Յայսմ. մրտ. 22. Տաթև. ձմ. ճիթ., որից* **գլիլ** *«բթանալ, գուլանալ», որ ՆՀԲ սխալմամբ շփոթում է* **գել** *«գերազանցել, յաղթահարել» բառի հետ. բայց սրա հետ դործ չունի. այսպէս՝ «Քար սուր և հարկանօղ ի համանման քարէ մաշի և սրութիւնն գլի» Կլիմաք.։ Այստեղ է պատկանում նաև* **գլանալ** *«թմրիլ, քնել» Փիլ. յովն. 583 (որ ՆՀԲ մեկնում է «բթանալ կամ խլանալ», իսկ ուղիղ մեկնութիւնը տալիս է ՋԲ), «վատիլ (անշուշտ աչքերի տկարութեան համար ասուած)» Բառ. երեմ. էջ 296։*

Petersson. KZ, *47, 287 յա.* hebes *«բութ» բառի հետ՝ հնխ.* ghobh-li *ձևից։*

Գիւղ.—Ալշ. Ախց. Խրբ. Կր. Հճ. Սեբ. Սչ. գ'ուլ, *Ննխ. Պլ.* գուլ, *Երև.* գ'ուլ, *Վն.* գ'իլ *և Մշ.* fol *(վերջինը ասեղի համար ասուած), Ռ.* խուլ *(շփոթելով* խուլ *«ականջը ծանր» բառի հետ, որ իմաստի որոշ նմանութիւն ունի)։*

Փոխ.—Կայ պրս. گوب gūb *«անգէտ և յիմար», որ բոլորովին առանձնացած մի բառ է և պարսկերէնով չի մեկնւում (չէ յիշում* Horn)։ *Որովհետև «բութ» և «բթամիտ» գաղափարների մէջ առաջինն ու նախնականը «բութ» է (հմմտ. սուր «հատուց», յետոյ «սրամիտ») և նախնական իմաստը չկայ պարսկերէնում և միայն հայերէնի մէջ գոյութիւն ունի, ուստի պէտք է կարծել, որ պարսկերէնը փոխառեալ է հայերէնից։—Պատահական նմանութիւն ունի սակայն արաբ.* كلّ kall *«դանակի կոնակը. 2. գուլ՝ բութ դանակ. 3. ծանրաշարժ, անպէտք մարդ» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 339)։*

***ԳՈՒԼԱՅ** *«սիրտ». ունի միայն Բառ. երեմ. էջ 69։*

=Վրաց. გული **գուլի** *«սիրտ»։—Ա.Հ.*

***ԳՈՒԼԲԱՅՇԱՔԱՐ** *«վարդի հետ խառնած շաքարեղէն կամ վարդի քաղցրաւենիք» Կոստ. երզն. 118, 122։*

=Պրս. گل بشکر gul-ba-šakar, *Թրք.* gülbešeker, *որ կազմուած է* gul *«վարդ» և* šakar *«շաքար» բառերից։—Ա.Հ.*

Տե՛ս իմ Թուրքերէնէ փոխառեալ բառեր, էջ 203. նոյնը յետոյ Նորայր, Կոստ. երզն. 193։

***ԳՈՒԼԻՍԱՊԱՀ** *«մի տեսակ ծաղիկ է» Սալաձ. ունի միայն ՀԲուս. § 527։*

=Պրս. گل صباح gul-i-ṣabāh *«ցայգածաղիկ. belle-nuit», որ բուն նշանակում է «վարդ առաւօտեան»։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

ԳՈՒԼՊԱՅ *տե՛ս Գուրպայ։*

*ԳՈՒՎՎԱՐԴ *«մի տեսակ վարդ» Սալաձ. ունի միայն ՀԲուս. § 523։*

=Պրս. گل gul «վարդ» և հյ. վարդ բառերից բարդուած։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

ԳՈՒՉ *տե՛ս կից։*

ԳՈՒՂՆ, ն *հլ. (-ան, -ամբ, -ունք) «հողի կոշտ, հողի խոշոր կտոր» Փիլ. ժ. բան. Վրդն. Թուոց. Վստկ. 27, 39. գրուած է նաև գուղցրն Վստկ., fուց Վստկ., կուճն Օրբել. Հրաբ. էմ. էջ 23, կուճճն Վրդն. սզ. ճխ. էջ 476, գուղն Վստկ.—(ՓԲ ունի նաև կուճն, n հլ. «դալարաւէտ վայր հովանացեալ ծառովք», որ անշուշտ թիւրիմացութեան արդիւնք է)։*

Հիւնք. պրս. کلیچه kulīča «ձոյլ, գուղձ» բառից։ Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 97 կարծես միացնում է կուղ բառի հետ։

ԳԻՒ.—ՋԲ. գ'օխձ', Խրր. գ'ուճցխ, Երև. կուճձղ (Պռօշեան, Սօս և Վարդիթեր, ա. տպ. էջ 40). բոլորն էլ նոյն նշ.—Յ. Ալլահվէրտեան, Ուլնիա կամ Ջէյթուն, էջ 182 ունի գուղձ ՋԲ. «գունտ, գնտակ ծոպաձև», ՆՀԲ (Հտ. Բ, էջ 1064 բ) կուճճնուտ «գուղձ», Բառ. երեմ. էջ 198 կուճճ «ճիմ»։ Նո՞յն են Համշ. կուճձ «կոյտ, դէզ», կուճճալ «հողի կոշտ, խմորի գունդ»։

ՓՈՒՒ.—Հայերէնի հետ կապ ունի վրաց. კუნძი კուճճի «ծառի կոճղ»։

ԳՈՒՃ *«ծունկի կոճը, ծալքը». անհոլով է և գործածւում է միայն ոճերով. ինչ. ի գուճս իջանել, ի գուճս կալ, ի գուճս աճկանիլ, ճարկանել «ծունկ չոքիլ» Յուդթ. դ. 10, գ. 14. Դ. Բագ. ը. Ոսկ. մ. ա. 25. Կիւրղ. գնաց. Բուզ., որից՝ գճիլ «ծնրադրել» Ոսկ. ճառք 907, Մխ. առակ. Մաշտ. Ոսկիփ., գճեցուցանել, գճկել «թեքել, կորացուցանել» (այս երկուսը ունի միայն ՀՀԲ) Սիրաք. լը. 33, գճկիլ «չոքիլ» Առաք. պտմ. 190, դիւրագուճ Սարգ. ա. պետր. գ. էջ 213. առանց սղման՝ գուճեալ Տաթև. ձմ. ճխ. բեղ մասնիկով՝ բեղգճիլ «չոքիլ» ՅԳ. կթ. Լծ. Եւագր. և դ ձայնի սովորական անկումով՝ բճգուճս «ծունկ չոքած» ԱՔ, բճկիճեալ «ծնրադրած» Թիւք. իբ. 23, 31, 34, Ոսկ. նին., բճգճել կամ բճկճել «յաղթել, նուաճել» ՍԳր.։*

Հիւնք. գուճ հանում է պրս. ջուգ «ուղտի գճիլը» բառից, իսկ բճկճել<բճկճնուլ-ից։

ԳԻՒ.—Մշ. գ'ջիլ «կէս մէջքից ծռիլ», Խրբ. գ'ջգիլ «գճել, ծռեցնել»։ Նոր ձևեր են՝ գբճկուիլ, գճուկ, գճկուկ, գճկցճել։

ԳՈՒՃ *«կծծի, ժլատ». երկու անգամ միայն գործածուած է Սիրաքի նոր Բրգմ.։*

ՆՀԲ նախորդի հետ նոյն է համարուած։

ԳՈՒՃՈՂ *կամ* ԳՈՒՃԱՄ *«մի տեսակ կենդանի». ունի միայն ԱՔ, իբր անստոյգ բառ։*

ԳՔ իրարից բաժանելով երկուսը՝ գուճող դնում է «կուղի նման տեսակ մը մսակեր կենդանի, էր կէօճէնի, putois, furet», իսկ գուճամ =պրս. گیژگ «կենդանի՝ ուրկէ մուշկ կարտադրի. sivet» (իմ՛ պրս. کچل kučal, որ պիտի տար հյ. կուճալ)։

ԳՈՒՄ *«խումբ». կայ միայն գում առնել «զօրքը հաւաքել, գումարել» ոճի մէջ՝ ՅԳ. կթ. ուր սակայն մի ուրիշ ձեռագիր ունի գումարտակ առնել։ Նոյն բառից կազմուած է համագումեան «համախմբեալ», որ մէկ անգամ ունի Նար. առաք. 432 «Զի թէև ստուգապէս մարդք ի տոհմայնոց համագումենից, այլ հրեշտակք հաւասատապէս՝ բացակայք կայից երկրակիր կրօնից» (Նորայր. Մասիս, 1882 ապրիլ 21, № 3165)։*

=Սխալ ենթադրուած է գումար բառից. իբր սրա արմատը։

Բառիս տատուգաբանութեան պատմութիւնը տե՛ս Գամպեռ։

ԳՈՒՄ *կամ* ԳՈՒՆ *(անստոյգ ձևով) «զրահ». նորագիւտ բառ, որ երեք անգամ գործածուած է Յայտնութեան նորագիւտ թարգմանութեան մէջ. այսպես՝ «եւ գուն? նոցա իբրև զգումս երկաթիս» (ձեռ. գուճ... զգունըս) Թ. 9, «Ունելով զգումս հրեղէնս» Թ. 17։ Սովորական թարգմանութեան մէջ ունինք զրահ. «Ունէին զրահս՝ իբրև զզրահս երկաթիս. Որք ունէին զրահս հրեղէնս»։*

Գտաւ ու մեկնեց Ֆ. Մուրատ, Յայտ. յովհ. էջ 193, որ և ուզում է միացնել ոսկի-կմբեայ բառի երկրորդ մասի հետ։

ԳՈՒՄԱԿ *«կառք կամ սայլ՝ իր ամբողջ*

կազմածով» Պիտառ. ուրիշ վկայութիւն չկայ։ Նորերս կեանքի կոչելով այս բառը յատկացրին ինքնաշարժական աբողին և հիմայ էլ գործ են ածում «կառատուն, garage» իմաստով։

ԳՈՒՄԱՆ «կարծիք, կասկած» Ագաթ. 247, 249, 255, 256, 258, 260—263 (բոլորն էլ գուման չէր «կասկած չկար, չէր սպասում, անսպասելի էր». ինչ. Տամ քեզ հենց աւետիս, որ քեզ գուման չէր). սրանից է կազմուած անգուման «անկասկած, անակընկալ կերպով» Կոստ. երզն. 135. «անհոգ, անտարբեր» Կոստ. երզն. 177. «վստահելի, անկասկածելի» Որոտ. աւետ. ոճով աստում է անգուման առնել «անկասկած անել, վստահացնել» Գիրք թղ. 173. Ուխտ. բ. 100, յանգուման (յանգումանից, յանգումանիս) «յանկարծակի չսպասուած տեղը» Օրբել. բ։

*= Պհլ. gumān, պրս. گمان gumān, պազենդ. guman, gumānī «կասկած, տարակոյս», agumān «անկասկած, անտարակոյս», համմտ. պրս. ناگمان na-gumān կամ بی گمان bī-gumān «անկրկրայ» (բայց «յանկարծ» նշանակութիւնը չունին)։ Բուն ծագումն է իրրև զնդ. *vi-manah «կասկած», vi- «դուրս» և manah «միտք» բառերից (Horn, § 932, Bartholomae, 1450)։—Հիւբշ. 98։*

Բառարանները չեն յիշում գուման բառը, բայց ունին անգուման։ Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԳԻՒ.—Ակն. Սլմ. անգուման «յանկարծ, չսպասուած տեղը»։

ԳՈՒՄԱՐ (ի, ի–ա հլ. քան ՆՀԲ) «խումբ, հաւաքումն» Ագաթ., որից՝ գումարել «հաւաքել, ժողովել» (օր. ամպերը հաւաքել՝ Ծն. թ. 14. կաթիլը՝ Դատ. դ. 13. մարդիկ Բ. մնաց. լբ. ս. գրքեր հաւաքել, ժողովածոյը կազմել՝ եւս. քր.). «մի քիւ մի թուի վրայ աւելացնել, թուերի համադումարը կազմել, տարեհաշիւ տեսնել» եւս. քր. «զօրք հաւաքելով կռուի պատրաստուիլ» Դ. թագ. ժե. 30. Ա. մակ. ղ. 12. եղիշ. «վրան ուղարկել (օր. սով՝ եղեկ. ե. 16. զօրք՝ Բուզ. Սեբ. 48. տե՛ս և Նորայր, Քննասէր 15), «զօրք հաւաքելով մէկին յանձնել» Ագաթ. Սեբ. 59, մէկին զօրաց հրամանատար կամ գաւառի կառավարիչ նշանակել» Սեբ., գումարիլ «հաւաքուիլ» ծն. ժդ. 3. լգ. 14, «զօրք հաւաքելով կռուի պատրաստուիլ» Բ. թագ. իգ. 9. Գ. թագ. ժղ. 16, «վրան կռուի երթալ» Գ. թագ. ժգ. 49, ժե. 10, «հետը կռուիլ» Ծն. լ. 8, «շշկլուիլ, շփոթուած մնալ» Մեսր. եր. վրք. հց. Ուտհ. 256, գումարութիւն Դ. թագ. ժե. 13. Ագաթ. Կորիւն. եւս. քր., բազմագումար Կղնկտ. Նար. առաք. Արծր., երկնագումար Մամբր. Խոր. հռիփ. Քննիկ., ճոգնագումար Անան. եկեղ. շփոթ գրչութեամբ է գումար դնել «գումարիլ» վրք. հց. Ա. 121 (Քիւրեա պէտք է կարդալ գումար դնել)։—Նշանակութեանց զարգացումը այսպէս է եղած։ Բառիս առաջին իմաստն է «հաւաքել», որ յետոյ բանակի համար առնուելով՝ գոյացած են «զօրք հաւաքել, կռուի պատրաստուիլ, կռուի երթալ, կռուիլ» նշանակութիւնները, կամ որ նոյնն է՝ «զօրքը կռուի ուղարկել, նրա հրամանատարութիւնը մէկին յանձնել, մէկին դիմաւոր կարգել». (համմտ. արաբ. اجماع ijmā' «գումարել, հաւաքել, պատրաստութիւն տեսնել, մէկի վրայ դիմել» Կամուս, բրբ. բրգմ. Բ. 560)։ Աւելի յետոյ՝ «հաւաքուիլ» նշանակութիւնից ձեացած է «ամփոփուիլ, կուչ գալ, կծկուիլ», որից և «խեղճանալ, անճարիլ, շշկլուած մնալ»։ Վերջին նշանակութեան համար ունինք հետեւեալ օրինակները՝ «Եւ թագաւորն գումարեալ պշուցեալ ընդ երկիր հայէր» Մեսր. եր., «Եւ յոյժ ամաչեցեալ... և գումարեալ՝ ո՛չ գիտէր թէ զի՛նչ պատասխանի արասցէ» վրք. հց. Ա. 537, «Ի փայլատակմանէ սաղաւարտացն և ի շաչել զրահացն և ի ճայթմանէ աղեղանցն եղեն գումարեալք ամենայն բազմութիւնք զօրացն այլազգեաց» Ուտհ. էջ 256, «Սով մեղաց գիս պատեր և ես եմ գումարեր» Տաղ. (Հրտր. Պալեան, Հայ աշուղներ, Ա. էջ 160)։ ՆՀԲ սրանց համար տալիս է «խոովիլ յանձին կամ ընդ անձին ոգորիլ ամօթով» նշանակութիւնը. բայց իս պէտք է պարզապէս թարգմանել «շշկլուիլ, անճրկիլ, շփոթուած մնալ», ինչպէս ցոյց է տալիս Ննխ. բարբառը (տե՛ս առակը ԳԻՒ)։

վերջապէս «հաւաքուիլ, ամփոփուիլ» իմաստից հեռու չէ «բնակիլ», ինչպէս գտնում ենք Զգօն, էջ 298 «Ո՞չ ապաքէն ահա առաւել ևս սիրէ վնոսա Աստուած և վհոգին իւր գումարեալ առ նոսա, որպէս և ասաց նոքէ բնակեցայց ի նոսա և գնացից ընդ նոսա» (այստեղ ասորին ունի «բնակիլ»):

=Իրանական փոխառութիւն է ապահովապէս. այս բանը հաստատւում է յատկապէս նրանով, որ բառիս արմատական գումարատակ ձևը անցեալ դերբայի զուտ իրանական վերջաւորութիւնն է կրում: Գումարել բառի իրանական ձևերն են՝ պհլ. պազենդ. gumārtan, gumārdan, պրս. گماشتن gumāštan (ներկ. گماء gumāram), բայց սրանք չունին հայերէնի առաջին և հիմնական «հաւաքել» նշանակութիւնը, այլ պահում են միայն վերջին «պաշտօն յանձնել, ուղարկել» նշանակութիւնները. այսպէս՝ պհլ. պազենդ. gumārtan, gumārdan «որոշել, նշանակել, կարգել, պաշտօն յանձնել», պրս. gumāštan, gumāram «արձակել, ուղարկել, պաշտօնի կանչել, պաշտօն հանձնել, փոխանորդ նշանակել» (Vullers, Zenker, ԳԴ), աֆղան. gumāṛal «նշանակել, յանձնել»: Իրանեան բառի առուգաբանութիւնը յայտնի չէ. թերևս փոխառեալ լինի առաւելէնից. համմ. gamaru «լրացնել, վերջացնել», gamaru «կատարեալ, լրիւ, ամբողջ», gimru «ամբողջը, ամբողջութիւն», gumūru, gummuru, gimirtu «ամբողջութիւն, գումարութիւն» (Muss-Arnolt, Ass. engl. Handw. 223—5): Նախաւոր իմաստը պահած կլինի առաւելէնը, միջինը՝ հայերէնը, վերջինը՝ իրանցին:—Հիւբշ. 130:

ՆՀԲ պրս. گیومپک «ջոկ» և շումար «համար, թիւ». իսկ շեղջ բառի առկ՝ լծ. ածկ. pīmk, լա. cumulus «շեղջ», յն. χῶμα, որ է «թումբ»: Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Spiegel, Litter. 392 և յետոյ Müller, SWAW, 1863, 233: Lag. Arm. Stud. § 522 չի ընդունում այս մեկնութիւնը, ասելով, որ պրս. gu պիտի տար հյ. վ: Սրա դէմ Հիւբշ. 130 նկատում է, որ հայ բառը փոխառեալ է Սասանեանց ժամանակ: Canini, Et. étym. 141 գումար=լա. summare: Bugge, KZ, 32, 36 գում, գումար կըցում է յն. ὁμός «նոյն», ὁμοῦ «միասին», ὁμόω «միացնել», ὅμιλος «հաւաքոյթ, բանակ» են բառերին, գ յաւելուածով: Müller, WZKM, 9, 295 վերի իրանեան ձևերին ավելացնում է հյ. gumĭno «կալ»? Պատմաճեան, Բիւր. 1899, 686 առաջ. գիմիր «լրացնել, վերջացնել» բառի հետ: Մեր մէջ ոմանք կարծած են թէ բառիս արմատն է գում, որից ածանցւած է գում-ար՝ ար մասնիկով. ինչ. մեծ-ար-ել, զարդ-ար-ել են. սրա դէմ է դրում Տիրվ. Մասիս № 3161 1882 թ. ապրիլ 16 (մանրամասն տե՛ս Գամպեռ): Karst, Ծուշարձ. 400 առաջ. gamru «կատարեալ, ամբողջ» gimru «համապատասխան», gammaru «ամբողջական», 423 չաղաթ. köb «շատ», օսմ. köpür «խումբ», gübre «դէզ», ալգար. komar «կծիկ»: Վարդանեան, ՀԱ, 1921, 245 Զգոնի գումարիլ «բնակիլ» նշանակութիւնը չկարենալով կցել միւսների հետ՝ այս ձևը համարում է բոլորովին անջատ բառ և հանում է առաջի բնաղրի عمر ʿəmar «բնակիլ» (=առաբ. عمر omr «կեանք») ձևից (առաջադրութիւնը չի թողնում սակայն անել մի ալապիսի ենթադրութիւն):—Պատահական նմանութիւն ունին արաբ. جمر jamra «մարդկանց խումբ», تجمير tajmīr «հաւաքել, դիզել», جمر jamr «մարդոց հաւաքոյթը», اجمار ijmār «հաւաքուիլ. 2. արագ քալլիլ. 3. ընդհանուր գումարը հաշուել», جمار jamār «համապատասխան, ամբողջ» (Համառ. թրք. թրգմ. Ա. 801—803):

ԳՒՄ.—Առաջին նշանակութիւնները կրած են ամէն տեղ. արևմտեան հայոց մէջ պպրոցների միջոցով վերակենդանացած է fումար, fումարիլ (բուսաբանական գործողութիւնը): Բանկապին մնացորդ է ննխ. գումարիլ «հոսի ամփոփուիլ, կուչ գալ նստիլը. 2. փխբ. (մարդոց համար) վտանգիլ, անհրկիլ, շղկուիլ»:

*ԳՈՒՄԱՐՏԱԿ, ի–ա հլ. «խումբ, բազմութիւն (զանազան բաների. ինչ. երամի, հօտի, պարգևների ևն)» Նար. յատկապէս «զօրքի բազմութիւն, բանակ, հակառ» Խոր. Փարպ. Կղնկտ. 3Հ. կԲ., «բազմախումբ, բազմագումար» Խոր. Թեոդոր. խշ., «վիպը կախելու մարգարտաշարք» Եղիշ. է. էջ 106. Կղնկտ. Նար. մծբ. 440. Բղ. դաշ., որից գումարտակ առնել «զօրք հաւաքել, վրան զօրք ուղարկել, կռուիլ» Ա. մակ. գ. 35, 39, գումարտակել 3Հ. կԲ. սրանց մէջ ակ-ը մասնիկ կարծուելով՝ կազմուած են գումարտ «ժողովուած» ԱԲ, գումարտական «համախումբ» Թէոդ. խշ., գումարտ լինել «համբորդութեամբ մի տեղ երթալ» Անան. գիտ. 20 սխալ ձևերը։

=Իրանեան ձևով անցեալ դերբայն է նախորդ գումարել բայի. և անշուշտ ո՛չ թէ հայոց մէջ ի կազմուած, այլ բոլորովին պատրաստ ձևով փոխառեալ է պահլաւերէնից.— այսպէս՝ պհլ. պազենդ. gumārtak, gumārdak. պրս. گماشتگی gumāšta: Բառիս առաջին և նախնական նշանակութիւնն էր ուրեմն «հաւաքուած», որ յետոյ նախորդ բառին նման զանազան եղանակաւորումներ կրեց։ Բայց, ինչպէս նախորդի մէջ, նոյնպէս և այստեղ իրանեան բառերը առաջին նշանակութիւնը կորցրած՝ պահում են միայն երկրորդական նշանակութիւնները. այսպէս՝ պհլ. պազենդ. gumārtak, gumārdak «կուտակալ», պրս. gumāšta «յանձնեալ, պատուիրեալ. 2. տեղապահ, տեղակալ, վերակացու իրողութեանց» (ԳԴ)։

Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 238 գումար բառից՝ տակ մասնիկով, որի համար երկրորդ օրինակ չունի։ ՆՀԲ գումարել բայից։ Այսպէս նաև Էմին, Քերակ. Մոսկ. 1846, 16, իբր գումարտակ։ Նոյնպէս ունին նաև ուրիշներ, որոնք տե՛ս Գամպեթ բառի տակ։ Առաջին անգամ Պատկանեան, Սեբէոս, 1879, էջ 199 ուզեց դնել պհլ. gumārtan «կազմել, շարել (զզօրս կամ այլ ինչ)» ձևից։ Տէրվ. Մասիս № 3161, 1882 թ. ապրիլ 16 պրս. gumāštah «ոստիկան, պաշտօնեայ»։ Հիւբշ. 130 միացրած է նախորդի հետ, առանց յիշելու իրանեան դերբայաձևերը։

ԳՈՒՄԷՋ տե՛ս Գամէզ։—Սրա հետ կապ չունի Հմշ. գումէզ «ախորի մէջտեղը փորուած առուն, ուր հաւաքւում է անասունների մէզը», ինչպէս սխալմամբ կարծել եմ Գաւառ. բառ. էջ 254. Համշէնցոց այս բառը կազմուած է անշուշտ կու և մէզ բառերից. համմտ. կուճարակ, կուագցի։

ԳՈՒՄԻՋ տե՛ս Ղմուզ։

*ԳՈՒՄԻՆ (անո. գումնին) «հասարակութիւն». նորագիւտ բառ, որ մի բանի անգամ գործածուած է կիլիկեան հայերէնում. այսպէս՝ «եւ թէ ճնուվեզ մեռնի անտիաթիկ, նայ մեր գործատորքն յիր իրքն ձեռնամուխ չլինին. ապայ դիրքն գումինն առնու ու այնէ դինչ սահմանն է» (Պարգևագիր Լևոն Բ-ի, 1288 թ. Հրատր. Սիսուան 388 ա), «Պարգևեցաք աստուածայ-հաստատ գումնին ճնվիզացն» (անդ՝ 387 ա), «Աւատար նաւ կամ աւտար գէմնի մարդ կամ բորզակ՝ չառնուն հետ իւրեանցն» (անդ՝ 364 ա)։

=Լտ. commune «հասարակութիւն, համայնք»։

Գտաւ ու մեկնեց Ալիշան, Սիսուան, 387 ա ծան. (բստ Բ. Ավդալբեգյան, Հովհ. Հովհաննիսյան, Երևան, 1934, էջ 9)։

ԳՈՒՆ կամ ԳՈՒՇՊ «ծերպ» Հին բռ.։

ԳՈՒՆ «ջանք, ճիգ, փոյթ», առանձին գործածուած չէ. դառնում է միայն գուն գործել, գուն դնել «ջանալ, փութալ, ջանք գործ դնել» ոճերի մէջ՝ Բ. մակ. ժդ. 41. Փիլիպ. բ. 30. Ագաթ. Վեցօր. կասկածելի եմ համարում գունաւոր «գուն գործող, ժիր, փոյթ», որ ունի մէկ անգամ Բուզ. դ. 8 «Զին էր մեծ հաստակաւ, և էր գունաւոր գնացօղ»։

=Քնիկ հայ բառ՝ հնխ. von- կամ vōn- ձևից, որ ven- «ջանալ» արմատի միջին ձայնդարձն է. ցեղակից ձևերը տե՛ս վան «վանել, վռնտել» բառի տակ, որ միևնոյն բառի իրանեանից փոխառեալ ձևն է (Pokorny. 1, 259)։

Ուղիղ մեկնեց Petersson, KZ, 47, 255, ՆՀԲ լծ. լտ. conor «փորձել, ջա-

նալ», հյ. չանալ և սանս. կուճա «ոյժ, զօրութիւն»։ Զուբինով համեմատում է վրաց. գոնի, թուշ. գոն «բանականութիւն, ծանօթութիւն»։ Հիւնք. fուն բառից։—Թիրեաքեան, Հայ-երան. ուսումն. էջ 141 պհլ. kūnišn «գործ» բառի հետ։ Petersson, KZ, 47, 255 սանս. vánati «ցանկալ, սիրել, շահել, ձեռք բերել», հիսլ. vinna «աշխատիլ, շահիլ, նուաճել», անգսք. winnan «կռուել, շահիլ», հբգ. winna «կռիւ», wān «յոյս» են բառերի հետ։

[Գուն. գործածուած է նորագիւտ կիզիծ Շապհոյ Բագրատունւոյ Պատմութեան մէջ, էջ 63 «Հեծի՛ր, որդեակ Դերէն, ինչի՞ գուն ես».—Հասարակ ձեռագրական սխալ է և պէտք է կարդալ fուն «քնած, քնացած»։ Համմտ. նոյն ձեռագրի մէջ այլուր գրուած գնար՝ փոխանակ fնար։

Սխալմամբ մեկնած եմ «զարմացած, շփոթուած, ապշած» և յիշած եմ այս առթիւ պրս. كنك gung «համր». տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 50]։

*ԳՈՒՆԱԿ, ի–ա հլ. «նման, պէս» Եւս. քր. Կիւրղ. ղկ. Խոր. Ճառընտ., «իրր» Արծր., «կերպ, տեսակ» Մծբ. Ոսկ. մ. բ. 2 և Կողոս. 591. Կիւրղ. ծն., որից՝ գուճակ գուճակ «այլ և այլ, զանազան, տեսակ տեսակ» Յուդիթ. ժե. 15. Ագաթ. Ոսկ. ես. և մ. բ. 19, 20, «զանազան կերպով, ձևով» Ոսկ. ա. տիմ. Կորիւն. որ և գուճակս գուճակս Ոսկ. մ. ա. 24. որից յետնաբար՝ գուճակաւորեալ Նար. յովէդ., գուճակեալ Ճառընտ., գուճակութիւն Նար. Անան. եկեղ., գուճագուճակ Արծր. ոսկեղաբեան ձևեր են այսգուճակ Եւս. քր., որգուճակ «ինչպէս» Եւս. քր. Ոսկ. յհ. բ. 21, երկգուճակ «երկու տեսակ» Ոսկ. ես., նոյնգուճակ Իմ. է. 3. Եզն. Ոսկ. Փիլիպ. Սերեր.։

= Պհլ. 𐭪𐭥𐭭 gōnak կամ gūnak «գոյն, կերպ, տեսակ», gōnak gōnak «տեսակ տեսակ, զանազան», հիւս. պհլ. (մանիքէական) 𐭪𐭥𐭭 (Salem. Manich. Stud. ZAH. 8, 63) gwng «եղանակ, կերպ», պազենդ. gūna «գոյն, տեսակ, կերպ, եղանակ», gūna gūna «տեսակ տեսակ», պրս. گونه gūna «կերպ, եղանակ, տարազ», gūnagūna «գոյնզգոյն, երփներանգ, պէսպէս, զանազան», աֆղան. ɣūna ևն։ Այս բոլոր իրանեան ձևերը ծագում են պհլ. gūn, պազենդ. gūn, պրս. گون gūn, գնդ. gaona- բառից, որից փոխառեալ է հայ. գոյն (տե՛ս այս բառը)։ Բայց հյ. գուճակ հայերէնի մէջ կապ չունի գոյն բառի հետ. ուրիշ խօսքով ակ վերջաւորութիւնը հայոց մէջ աւելացուած մասնիկ չէ, այլ ամբողջը պատրաստի փոխառեալ է ուղղակի իրանեանից։

ՆՀՔ դրած է գոյն բառից, ինչպէս համարում են առհասարակ ամէնքը։ Ուղիղ մեկնեց նախ Müller, SWAW, 38, 572 և յետոյ Lag. Gesam. Abhd. 27, Պատկ. Матер. I, 8։—Հիւբշ. Pers. Stud. էջ 95 իբր պրս. gūna, բայց Arm. Gr. 128 դնում է նոյնպէս գոյն բառ առակ, թէև վերի համեմատութիւններով։

*ԳՈՒՆԴ, ի, ի–ա հլ. «գնդաձև մարմին» Աբիւս. աշխ. Պղատ. օրին. Ճառընտ. Փարպ. Շիր., «երկնակամար, արևի կամ լուսնի գունտը» Փիլ. Շիր., «Հրագարանի գնդաձև մասը՝ որ է բուն լապտերը» Զքր. դ. 2, 3. Դան. է. 5, «ծովի խորութիւնը չափելու գործիք» Գծ. իէ. 28, «սայլի անիւ» Դէ. ես., «մարդու գլուխ» Վրք. և վկ. Ա, 21. 34 (տե՛ս ՀԱ, 1911, 553)։ Սրանից են՝ գնդակ Դան. ժդ. 26, Խոր., գնդել Եզն. Շիր. Նիւս. կազմ., գնդաձև Ոսկ. ես. փիլ., գնդուկ «բօռիլիկ, գնդիկ» Վահակ. 166, գունդխաղ «գնդակ խաղալը» ԱՔ։ Նոր գրականում կազմուած բառեր են՝ երկրագունդ, ձիւնագունդ, ձիւնագնդակ, գնդամուղ, գնդախաղ, գնդակաճարել, գնդակաճարութիւն, գնդասեղ, գնդացիր, fարեգնդակ, խաղագնդակ են։ Ինչպէս արմատը, նոյնպէս և ածանցները գրւում են նաև ո-ով՝ ըստ յետին տառադարձութեան. այսպէս՝ գունտ, գնտակ, գնտաձև են։ Իսկ «անիւ» նշանակութեամբ ունինք կունտն (սեռ. –տան) կամ կունտ Պիտ. Երզն. քեր. Դէ. ես., կունդ Սիւն. քեր. 209. Զքր. սարկ. Բ. 21, կունդն Լծ. սահմ. 284։ Շինծու բառ է գնտաղ ՓԲ «տեսակ մը քաղցրեղէն. տճկ. lokma»։

=պհլ. *gund «գունդ, գնդակ, գնդաձև» բառից, որ կորած է. սրանից են յառաջացած սակայն պհլ. gund, gundak, պրս. گنده gunda «հացի խմորի գունդ կամ ծեծած մսի գնտակ» (տե՛ս նաև մեր գաւառականները), գնդ. gunda- «հացի խմորի գունդ» (Horn, § 936, Bartholomae, 525)։ Նոյն բառից չէ՞ նաև պրս. غند γund=հյ. գունդ «խումբ, վաշտ», որի վրայ տե՛ս յաջորդը առանձին։— Հիւրշ. 130։

Նշմ. սանս. կուճաս։ Müller, SWAW, 42, 251 գնդ. guṇḍa բառի հետ է համեմատում, որ և թաթրմանում է «առաստաղիկն». մինչ Justi, Zendsp. 105 հասկանում է «հասակ»։ Lag. Arm. Stud. § 501 չի կարողանում որոշել թէ կապ ունի՞ սանս. guḍa, guḍikā «գնդակ, բռնանալիք»։ Չիւնք. հանում է գունդ «բանակ» բառից։ Karst, Յուշարձան, 423 ալթալ. kun, kund «կլոր»։

Գիւտ.—Նախ. Պլ. Տիգ. Տփ. գունդ, Ախց. կր. գ'ունա, Ալշ. Երև. Խրբ. Մշ. Ջղ. Սեբ. գ'ունդ, Շմ. կունդ, Զթ. գ'օնդ, գ'ոնդ, Ոզմ. կոնա, Ասլ. գիւնդ, գիւ*, Մկ. Մրզ. Սլմ. Վն. կ'իւնդ։ Այս բառերը ներկայանում են մեզ զանազան նշանակութիւններով. այսպէս՝ Վն. Տիգ. «գնդաձև», Երև. Զթ. Խլ. Խրբ. Կս. Մշ. Մրզ. Շիր. Շմ. Վն. Սեբ. «խմորի (կամ նաև կարագի) գունտ», Հմշ. «ընկոյզի ամբողջ դուրս եկած միջուկը», Պլ. «գնտաձև դիզած», կամ «խաշոր կտորով», Հմշ. Մշ. Ոզմ. Վն. «սայլի, ճախարակի, դուբանի և չաղացքի անիւ, մանաւանդ անիւի գունդ մասը, որի մէջ անցած է սռնին», Ալշ. կունդ, յգ. կընդեներ «սայլի ակ»։ Այս վերջինը գործածւում է նաև կ նախաձայնով. այսպէս՝ հին մատենագրութեան մէջ կունտ, կունտաւ, նոր բարբառներից Ոզմ. կօնտ։ Այս հանգամանքը կարող էր կարծել տալ թէ կունտ «անիւ» տարբեր բառ է. բայց հմմտ. գուռ. Բրբ. top (թօփ) «սայլի անիւ», որ բուն նշանակում է «գունդ, գնդաձև» և գործածական է նաև մի քանի հայ գաւառականների մէջ (օր. Ղրբ)։ Սրանցից դուրս ունինք նաև Ասլ. Պլ. գունդ և Ռ. ֆունդ «բթամիտ» նշանակութեամբ, որից յատկապէս գունդգլուխ «հաստագլուխ, բթամիտ»։ Բառիս հետ համաձայն է գալիս պրս. كند kund «բութ, գուլ, հաստ, ոչ-սուր (դանակի համար գործածուած). 2. կորովի, քաջ, զօրաւոր», որից փոխառեալ են չաղաթ. قوند qund «խոշոր, կոշտ, ծանր», օսմ. kund «ուժեղ, զօրաւոր», ույգուր. köndek «կոշտ, տձև», ալթայ. kund «կոշտ, ուժեղ, բիրտ» (տե՛ս Vámbery, Etym. Wört. էջ 97), արեվել. Բրբ. قوند kund «կոշտ, ծանր» (Pavet de Court. Dict. Turc- Or.)։ Պարսկերէն բառի հետ համեմատում է սանս. kaṇṭha- «գուլ» (Horn, § 868). և որովհետև Ասլ. Պլ. գունդ ձևը կարող է ծագած լինել նաև կունտ ձևից, ուստի կարելի է կարծել, որ կունտ փոխառեալ է պրս. kund բառից, իբրև բոլորովին տարբեր բառ՝ ծանօթ գունդ բառից։ Այս խնդիրը կարօտ է մեկնութեան։—Գունդ նշանակում է նաև «մահմետականների մարգարէն՝ Մահմետ» և այս իմաստով իբրև ծածկալեզու գործածական է Պօլսի բարբառում (անշուշտ գլխին կապած փաթթոցի ձևից առնուած). սրա հին վկայութիւններն ունին Շնորհ. նախս. էջ 59 (Թէ ոչ ուժով իւրոյ բազկին կամ զօրութեամբ իւր պիղծ կրնտին) և 1567 թուին կաֆա գրուած վկայաբանական մի գրուածք (Դարձեալ տարան տունն գրնտին, ուր սոխտաներն բնակէին). Նոր վկ. էջ 405։—Նոր բառեր են՝ գունդուկծիկ, գունդուկլոր, գունդուկ, գունդուլ, գունդուլուկ, գունդուկոլոշ, գնդալիւր, գետագազ, գետիկ, գետիշ, գետլել, գետլիկ, գետոց, գունդապուր.—ա>ծ ձայնափոխութեամբ ձևացած են՝ գնծիկ, գունծիկ, գունծուլ, գունծուլ։

Փոխ.—Վրաց. გუნდა գունդա «գնդաձև ամէն ինչ (ձիւն, խմոր ևն)», დაგუნდავება դագունդավերա «խմորը գնտել», ուտ. գիւնդո դէզ, «գուղձ», ն. սասր. kʻûndä «հողի գուղձ կամ անուի գունդը» (վրացի բառը Ջուբինով էլ դնում է հայերէնից)։

*ԳՈՒՆԴ, ի, ի-ա հլ. «խումբ, բազմութիւն (մեղուների, մարդոց, հրեշտակների), բայց մանաւանդ զինուորների խումբ, բանակ» ՍԳր. եղն. Ոսկ. Փիլիպ. (մի գնդի պարունակած զինուորների թուի համար հմմտ.

Յայտմ. մրտ. 9՝ Զինուրեալք ի միում գնդի, այսինքն ի միում հարիւրի և կամ այլ աւելի), «բանակաթեմ, զինուրական գաւառ»: Այս իմաստով գործածուած է մի քանի աշխարհագրական ձևերի մէջ. ինչ. «Աշխարհ տանուտիրական գնդին, կողմն Վասպուրականի գնդին, կողմանք Սեպհականի գնդին» Սեբ. էջ 33, 45, 116, 140. ՅՀ. կթ.: Այս արմատից են՝ գնդակ «մեղուների խումբ» Եփր. դաւ. 341. Եղիշ. դաւ. 188, գունդագունդ Եզեկ. իզ. 7. Յուդթ. ժե. 15. Բ. մակ.ժդ. 45. Եղիշ., գունդասպառ Արծր., հրեշտակագունդ Ագաթ., հաւազգունդ Յես. ժ. 42. Ագաթ. Եզն. Վեցօր., հեծելագունդ ՅՀ. կթ. Ասող., հախուռարագունդ Կորիւն. Փարպ., բազմագունդ Կիւրղ. ծն. Եղիշ., գազանագունդ Գնձ., գրեղակից Ոսկ. Ես. մ. ա. և բ. Կողոս., գնդապետ Երզն. քեր., երկգնդիլ «երկու խումբի բաժանուիլ» Գ. Թագ. ի. 27, յանախագունդ Ոսկ. Ես. Եւս. քր., զօրագունդ (նոր գրականի մէջ) ևն:

=Պհլ. gund «բանակ. գունդ», պրս. جند ǧund կամ جندة ǧunda «ժողով, գումար, խումբ, բազմութիւն», որոնցից փոխառնալ են նաև ասոր. guddā, մանդայ. gundā, արաբ. جند jund (յգ. جنود junūd) «բանակ, զօրագունդ»: Հայերէն բառը կապ չունի նախորդ գունդ «կլոր» բառի հետ, իբր սրանից ձևացած նմանութեամբ: Իմաստի այսպիսի զարգացում ցոյց է տալիս ռմկ. top «գնդակ, խաղագնդակ, գնդաձև, թնդանօթ, բոլոր, միահաղոյն, խումբ, ժողովուած»: Այսպիսի զարգացում կարող էր լինել նաև այստեղ, բայց այդ բանը տեղի ունեցած պիտի լինի իրանեանում և հայերը երկուսը իրարից իբրև բոլորովին անջատ բառեր փոխ են առել: Նոյն իսկ կարող է լինել, որ իրանեանում էլ այդ երկուսը բոլորովին անջատ բառեր լինին. Horn, § 805 այս երկրորդ բառը կցում է բատ Նէօլդէքէի՝ սանս. vṛndá- համանիշին:—Հիւբշ. 130:

Առհասարակ այս բառը միացրել են նախորդի հետ: S. Martin, Mémoires, 1, 28 և Müller, SWAW, 42, 251 արաբ. jund բառի հետ: Spiegel, Litter. 392 նաև ասոր. gud: Lag. Gesam. Abhd. 24 գնդ. vąθwa «խումբ, բազմութիւն»: Մորթմանն, ZDMG, 26, 590 բևեռ. umuvadiniçl=հյ. համագունդ: Հիւնք. պղակունդ բառից: Bugge, Lyk. Stud. 1, 62 լիւդ. xñtavata բառի մէջ է ուզում տեսնել, մեկնելով այս ձևը իբր «գնդապետ» (մերժում է ինքը 2, 16): Մ. Ս. Դաւիթ-Բեկ, Յուշարձ. 397 կրն. guntel, նոր պալլ. cynnull «հաւաքել», իտլ. comul «հաւաքում», լտ. cumulo «դիզել», հին բրբտ. contulet «հաւաքում»: Karst, Յուշարձ. 405 ռուսներ. gun «հաւաքում»:—Պատահական նմանութիւն ունին սանս. guṇitā, kāṇḍa «գունդ, խումբ»:—Հյ. գունդ «կլոր» և գունդ «վաշտ» բառերի բաժանումը դրաւ Հիւբշմանն:

ՓՈԽ.—Վրաց. გუნდი գունդի «գունդ, բանակ, բազմութիւն, մեղուների կամ թռչունների խումբ ևն» հայերէնից է: Իսկ ուտ. güudä «խումբ» ուղղակի իրանականից փոխառութիւն է:

ԳՈՒՆԴԱՀ «մի տեսակ հարկ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբ. էջ 242 «եւ արդ ոչ մերոց և ոչ ումեք չկայ իշխանութիւն և հաշիւ հետ այս շինուրէից («գիւղերի»), ո՛չ չարի, ո՛չ Տաճկաց հարկի, ո՛չ բերդաչարի, ո՛չ գունդգահի և ո՛չ այլ իրաց»:

ԳՈՒՆԴՈՒՆԱ տե՛ս Կանդանայ:

*ԳՈՒՆԴՍՏԱԳԼ (կամ գոնդստապլ) «արքունի սխոռապետ» Լմբ. տո Լևոն. Մխ. այրիվ. էջ 82, որ և գունդուստապլ Լմբ. տո Լև. 240. Անսիզք, 3, Սմբ. պատ., գօնդստապլ Սամ. անեց. շար. 147, գունուստապլ Անսիզք, էջ 93:

=Իտալ. contestabile, հֆրանս. conestable, ֆրանս. connétable, յն. κονταστάβλος, ասոր. ܩܘܢܛܘܣܛܒܠ qōntōstabl, որոնք ծագում են լտ. comes stabuli ձևից, որն է «կոմս սխոռոց»: Հայերէն ձևերից առաջինները հետևում են իտալականին, վերջինը հին ֆրանսերէնին:—Հիւբշ. 389:

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ:

*ԳՈՒՆԻ «պարտէզ, այգի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սասն. էջ 60 «Գամաղիէլ օրէնսուոյց, գուսան հոգևոր, գունի պտղալից»։ Լուսանցքի վրայ մեկնուած է «դրախտ» և այս իմաստին յարմար է գալիս «պտղալից» ածականը։ Բառ. երեմ. էջ 70 ունի գունի «դրախտ կամ ապաւէն», որ գտնում ենք նաև Մխիթար Աբբայի Յաւուկ անուանց բառարանում՝ էջ 68, այսպէս. «Գունեայ. սորա անուանականն (իմա՛ ուղղականը) է գունի «պարտէզ կամ ծածկոյթ կամ պատսպարան»։

=Երր. גַּן gan «պարտէզ, յատկապէս մրգաստան, և մանաւանդ պատսպարան», որ է աւսուր. ginū և արաբ. جَنَّة janat «դրախտ»։—Աճ.

ԳՈՒՆԻՆԱՏԱԿ «մի տեսակ բոյս, անձրուիթ, sarcocolla» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 530, որ § 112 արմատը համարում է *գունիծ. (կարելի է ենթագրել նաև *գունէծ)։

ԳՈՒՆՁ տե՛ս Գունջ։

ԳՈՒՆՏ տե՛ս Գունդ։

*ԳՈՒՆՑ կամ ԳՈՒՆՍ «կոմս» վահր. (ըստ ՆՀԲ). գրուած է նաև գունք (Brosset, JAs. Paris, 1861, էջ 320), գունտ վահր. էջ 193, գունդ Սմբ. պտմ. տպ. 1856, էջ 36= գոնդ հրտր. Շահն. էջ 108։

=Հֆրանս. cuens, նոր ֆրանս. comte, որ է լտ. comes «կոմս». փոխառեալ է Ռուբինեանց շրջանին։—Հիւբշ. 389։

ՆՀԲ իտալ. conte, ֆրանս. comte։—Brosset, անդ, ֆրանս. comte բառից։

ԳՈՒՇ «միակատուր փայտեայ տաշտ» Նչ. խնդ. Դրնդ. 483—4. յիշում է նաև Բառ. երեմ. էջ 138՝ իսկ բառի բացատրութեան մէջ. գրուած է գոչ Մագ. թղ. 88, որ անշուշտ պէտք չէ գրչագրական սխալ համարել, քանի որ նոր գաւառականների մէջ էլ ունինք գոչ ձևը։

Սագրեան, ՀԱ, 1909, 335 տումեր. ibgušur «վահան» բառի հետ։

ԳԻՒ.—Պ. գուշ, Ալշ. Ախց. Կր. Մշ. Սեբ. գ'ուշ, Հմշ. կուշ, Ռ. ֆուշ, Ղրբ. կիւշ, Ասլ. գ'իւշ, Խրբ. գ'օշ։ Նոր բառեր են՝ գոգբաս, գուշկուրիկ։

ՓՈՒ.—Կապադովկ. յն. kûši «ὄχεῖον, μέγα σκάφη, աման, մեծ տաշտ» Karolides, Γλωσσ. συγκρ. էջ 39, որ համեմատում է սանս. koša «ամէն տեսակի աման» բառի հետ։ Վրաց. გუში գուշի «11 1/2 ֆնտանոց չափ». այլ է վրաց. ჯოში կոշի «փայտէ կամ դդումէ ամանդ, որ կապւում է գլ. կօշ հոմանիշի հետ։

*ԳՈՒՇԱԿ «ապագան պատմող՝ առաջուց գուշակող» Նար., «մատնիչ» Բ. մակ. ժգ. 28. Ա. կոր. ժ. 28. Եփր. Ա. կոր. 70, «յայտարար նշան, յուշարար, ազդարար» Ագաթ. Ոսկ. մ. ա. 8, որից՝ գուշակել «մարգարէանալ» Նար., «նախազգուշացնել» Եղն., «յայտնել» Ղուկ. ի. 37, «լուր տալ, մատնել» ՅՀ. ժա. 56, գուշակաւար Եւս. քր. Ոսկ. մ. ա., գուշակութիւն Ա. Թագ. իբ. 6. Խոր. Շար. Նար., գարնանագուշակ Նար. առաք., նախագուշակ Ոսկ. յհ. բ. 7. ՅՀ. կթ., մանագուշակ Նար., յառաչագուշակ Ագաթ., կանխագուշակ Խոր.։ Նոր գրականի մէջ՝ բարեգուշակ, չարագուշակ. Թերևս սասակական ձև է գգուշակել Չեն. յուդ. (ՀԱ, 1921, 549), որ այլուստ անծանօթ նորագիւտ մի բառ է։

=Պհլ. gōšak, միջին պրս. ni-gōšāg, հպրս. *gaušaka, gōšaka- «լրտես, գաղտնի ասիկան», օսս. qūsäg, i-γosäg «ունկնդիր»։ Նոյնից է փոխառեալ նաև վրաց. გუშაგობა գուշագոբա «բերդի են պահպանութիւն առնել», გუშაგი գուշագի гарнизонъ, «բերդապահ», ხაგუშაგო սագուշագո «պահնորդական»։ Տե՛ս նաև Pokorny, 1, 569։ Այս բառերը ծագում են գնդ. gūš «լսել, ականջ դնել», gaoša- «ականջ», հպրս. gauša «ականջ», բելուճ. gōšaγ «լսել» արմատական ձևերից։ Իրանեանից փոխառեալ է նաև արաբ. guškla «լսող, ականջալուր, ունկնդիր»։ Այստեղ են պատկանում նաև հլ. գոյշ, գգոյշ՝ իբր «լո՛ւր, լսի՛ր, ուշադրութիւն արա՛» կամ «լսող, ուշադրութիւն անող»։—Հիւբշ. ZAPh, 2, 265։

ՆՀԲ «արմատն է ուշ, յորմէ և գոյշ՝ իբր գուցէ և զգոյշ»։ Lag. Urgesch 549

*ghuš արմատից։ Տէրվ. Altarm. 12 բանդագուշել բառի վերջի մասի հետ՝ միացնում է սանս. ghuš «բղաւել, յայտարարել» բառին։ Նոյն, Նախալ. 58 հնխ. ghus «հնչել, գոչել» ձևից. բուն նշանակում է «գոչել, լուր տալ» և պարզական ghu արմատը պահուած է գովել բառի մէջ։ Հիւնք. կիւս բառից։ Ա-լիշան, Հին հաւ. 391 հյ. գոյշ և զգոյշ բառերից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Հիւբշ. ZAPh, 2, 265, նոյնը նաև IF, 19, 464 (հայ թրգմ. ՀԱ, 1907, էջ 185 ա)։ Պհլ. գուշակ ձևին մի նոր վկայութիւն է գտնում Թիրեաքեան, Կարնամակ, ծան. 130՝ Գլ. ժե. 2, ուր պահլաւ բառը գրուած է գնշակ (փխ. գուշակ)։ Սագրգեան, ՀԱ, 1909, 335 սումեր. gugi «լուր»։

ԳՈՒՇԱԿ «նետաղեղի մասերից մէկն է». նորագիւտ բառ ,որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բար. 174 «Զգեաց զբերանն և էառ զլար աղեղանն և կտրեաց. նա փրթաւ և գուշակ աղեղանն և գայլուն ծծատակին և եսպան զգայլն»։

ԳՈՒՇԵԼ տե՛ս Գժշել։

ԳՈՒՇՊ «ծերպ» Հին բռ. որի տեղ Բառ. երեմ. էջ 69 ունի գուշ «ծերպ կամ խան». վերջին նշանակութեամբ պէտք է հասկանալ գուշ «տաշտ», որ տարբեր բառ է։

ԳՈՒՊԱՐ (ի, ի-ա հլ. ըստ ՆՀԲ) «ըմբշամարտութիւն, կռիւ, պատերազմ, վիճաբանութիւն» Պիտ. Փիլ. լին. Նար. կ. 153. Սրկ. քհ., «մի տեսակ օդերևոյթ» Բրս. ծն., որից՝ գուպարել կամ գուպարիլ «կռուիլ, մաքառիլ» Սիր. ժա. 9. Ոսկ ես. 155. Մծբ., գուպարած Եւս. պտմ. և քր., գուպարաղիր Փիլ. նխ. բ. 47, գուպարայարդ Գր. տղ., գուպարումն Պիտ., անգուպար «ըմբշամարտութեան մէջ անվարժ» Իրեն. հերձ. էջ 182։

Lag. Urgesch. 279 par արմատից. հմմտ. զնդ. vaŋhāpara «մի տեսակ շուն»։ Bugge, KZ, 32, 36 *som-bar նախաձևից, իբր som «համ, միասին» և par «հար, հարկանել, կռուիլ» բառերից կազմուած։ Սագրգեան, ՀԱ, 1909, 335 սումեր. gubru «զարնել, ծեծել»։— Karst, Ծուշարձ. 404 սումեր. gabri «մրցակից, հակառակիլ»։ Ուղուրիկեան (տե՛ս ԳՔ էջ 344 և 1405) պրս. fiuparɛ «ջոկ կենդանեաց» (իմա՛ کوپار kūpār):

*ԳՈՒՈԱՅ «սափրիչ, վարսավիրայ». նորագիւտ բառ, որ 3 անգամ գտնում եմ գործածուած Սոկր. 227, 228, 229 «Ի բաց հաներ և զթագաւորացն զնեբքինիս, զգառայս և զխոհակեր», «Իսկ զգառայս միոյն առ բազում լինել բաւական», «Զխոհակերս և զգառայսն հանել»։

=Յն. κουρεύς «սափրիչ» բառն է, որ թարգմանիչը տառադարձել է բնագրից. ըստ այսմ ձեռագրի զգառայս ձևը առ նւազն պէտք է ուղղել զգուռայս (ու>ա ձևի նմանութեան պատճառաւ շփոթուած)։

Ուղիղ մեկնեց Մ. Վ. Տէր-Մովսիսեան, Սոկրատի հրատարակութ. էջ 227։

*ԳՈՒՌՆ «բաղանիքի աւազան» Ոսկիփ. Պտմ. կիլ. 205, «հաց թրելու տաշտ» Վստկ. 172, «ջրի աւազան» Վստկ. 190. Առաք. լծ. սահմ. 540։

=Ասոր. ܓܘܪܢܐ gūrnā «urna, գոլլ. ջրաման» (Brockelm. 63 ա), որի հետ նոյն է արաբ. جرن Jurn «բաղանիքի աւազան կամ մէջը լուացուելու քարէ աւազան» (Համառօտ Թրք. թրգմ. Գ. 609)։— Աճ.

ԳՒՒ.—Ալշ. Ախց. Կր. Մշ. Սեբ. գ'ուռ, Խրբ. գ'ուռուն, Սլմ. կուռ, Ոզմ. գ'յօռ, Ասլ. գ'իւռ. սովորական է նաև ուրիշ շատ գաւառականների մէջ։ Այս գաւառականներում ստացել է զանազան նշանակութիւններ. ինչ. «աղբիւրի առջևի աւազանը, եալախ. abreuvoir, բաղնիքի աւազան, ախոռի մէջ անասունների ջուր խմելու աւազանը, խմորի տաշտ, շերամ պահելու յատուկ՝ կուվի ձրիքէ շինուած աման, շան լակաման, հնձան, ջրորդան, երկաթագործի քարէ աւազանը՝ որի մէջ հրաշէկ երկաթն է մխում»։

ՓՈԽ.—Քրդ. كور kur, كورين kurin «աղբիւրի աւազան, բաղանիքի դուռ, ձիերին ջուր խմացնելու աման», կիւր. kur «պնակ», Թրք. قرنا qurna (ռմկ. խուռնա) «բաղանիքի աւազան»։

*ԳՈՒՍԱՆ, ի-ա հլ. «երգեցիկ, երաժիշտ»

Բ. թագ. ժթ. 35. Ժող. բ. 8, «թմբուկ զարնող և երգող կնիկ» Լծ. փիլ., «միմոս, կատակերգու» Ոսկ. մտթ. Փիլիպ. որից գուսանական Եւս. քր. Ոսկ. եփես., գուսանամոլ Մանդ., գուսանութիւն Ոսկ. մ. բ. 12. Վեցօր., կատակագուսան Փիլ. ԵՒն։

=Պհլ. *gōsān ձևից, որ թէև առանդուած չէ, բայց կայ պրս. گوسان նշանաւոր մի երաժշտի անունը. 2. մի տեսակ երաժշտական եղանակ». սովորաբար այս բառը կարդացւում է kūsān կամ kōsān, որով նախաձայնը հայերէնին յարմար չի գալիս. բայց պարսկերէն ک տառը կարող է և կարդացուիլ g, որով կարելի է պարսիկ բառի բուն հնչումը դնել gōsān կամ gūsān, ինչպէս սրբագրում է նաև Stackelberg, ZDMG, 48, 495։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Գ.։ —Böttich. ZDMG, 1850, 352 առնս. gōša «ձայն», gōšaṇā «բարձրաձայն խօսիլ», դնդ. gaoša, պրս. gōš «ականջ» բառերի հետ։ Պատկանեան, Matep. I, 8 և Հիւնք. պրս. kūsān: Հիւբշ. 131 չի ընդունում վերի համեմատութիւնը՝ նախաձայնի տարբերութեան պատճառով։ Գէորգեան, Քոր. Քորէնացով, էջ 32 հանում է զոլապան բառից։

Գիտ.—Բլ. կայ միայն զօլ ու գուսան «դհօլզուռնա, դհօլ-նագարա, քէֆ, ուրախութիւն» անորոշ իմաստով. գուսան բառը առանձին չի գործածւում. թուի թէ նշանակում է «ձեռքի դափ, դմբլիկ» (Ս. Մովսիսեան, Նամակ 1927 թ. յունիս)։

Փոխ.—Վրաց. მგოსანი մգոսանի «երգող, երաժիշտ, սրնգահար, ողբասաց»։

ԳՈՒՍՆԱՆՐԱԽԱԼ «տերևաթափել». ունի միայն Բառ. երեմ. էջ 70։

ԳՈՒՏԻ «դդակ, գլխարկ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Հաւաքարան, էջ 19 «Եւ կամէին տեսանել զդեղեցիկ զարպաս, նախ զգլխոյ գուտին ի վեր առնին և ապա կարեն տեսանել զդանաղան դեղոցն և զպատկերագրութիւնս» (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 140)։

Գիտ.—Մկ. վն. կուտիկ «վարդապետի ու քահանայի գլխարկ՝ սև բուրդից հիւսուած. 2. գլուխը դնելու սաղաւարտ, գլխանոց»։

*ԳՈՒՐԳԱՍԱՐ «գայլագլուխ». մէկ անգամ միայն ունի Վրդ. պտմ. Վենետ. 1862, էջ 91, իբրև ածական Վախթանկի։

=Պրս. گرگسر *gūrgsar «գայլագլուխ», որ կազմուած է گرگ gurg «գայլ» և سر sar «գլուխ» բառերից։—Հիւբշ. 129։

Ուղիղ մեկնեց Հիւբշ. ուրիշ տեղ չէ յիշատակուած այս բառը։

⊙ԳՈՒՐԳՈՒՐ «աղաւնիի նման մի թռչուն է». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 421 «Ընկեալ հաւ մի, նստաւ ի վերայ ծառոյն, զոր ոմանք գուրգուր և ոմանք դառն կոչեն և ձայնեաց գո՛ւր գո՛ւր»։

=Ինաձայն բառ է, ինչպէս երևում է հենց բացատրութիւնից։—Ա՛ճ.

ԳՈՒՐԳՈՒՐԱԼ «սիրել, վրան խանդաղատիլ». նոր գրականին անցած ժողովրդական բառ, որ հին մատենագրութեան մէջ աւանդուած չէ։ Անշուշտ կրկնուած է *գուր արմատից (<*գոյր), որ պարզական ձևով պահում են ողջագուրել «ողջունել, բարևել» վրք. հց. (Ոսկեդարեան հատուածների մէջ. համմտ. Նորայր, Կոր. վրդ. 411), «փաթաթուելով համբուրել» Նար. Մագ., ողջագուրանք լմբ. առակ.։ Նոր բառեր են գուրգուրանք, -ալի։

Նշ. ողջագուրել մեկնում է Լծ. հյ. ագուռով ողջունել և յն. κύρι-ος «փաղաքշել, փայփայել»։ «Ազգասէր» (Կալկաթայի), 1846, հտ. Գ, № 58, էջ 50 ժանօթ. գուրգուրալ մեկնում է գուր արմատից, որ գտնում է գուռով բառի մէջ. ասում է թէ Ջուղայեցիք պահած են այս բառը գոր ձևով. օր. գոր արախայ, գոր տղայ: Karst, Յուշարձ. 405 գուրգուրալ և գուռով բառերի հետ համեմատում է սումեր. gur «փայփայել»։

Գիտ.—Տփ. գուրգուրալ, խրբ. Հզ. Սեբ. գ'ուրգ'ուրալ, Ջղ. գ'ուրգ'ուրել, երև. գուրգուրել կամ fուրfուրէլ:—Նոր ձև է գուրգուրացնել Շիր. «գգուել, փայփայել»։—Պարզ ար-

մա՞ն է արդեօք Ակն. գ'ուրալ, որ Մ. Ս. Դաբրիէլեան մեկնում է «կաթոգին հոգով և անխոնջ կերպով բան մը ընել» (ՀԱ, 1908, 282), իսկ Ճանիկեան «տատանիլ, դեղևիլ, ընելիք գործին վրայ երկար-բարակ խաղալ, չկարենալ վերջացնել»։

ՓՈԽ.—Ուտ. կուրկուր «սէր, գգուանք, փայփայանք», կուրկուրփեսուն «սիրել, գգուել, փայփայել», վրաց. მოკურკურება միկուրկուրեբա «փայփայել, խնամ տանիլ, դարպասել» საკურკურა սակուրկուրա «սիրային»։

*ԳՈՒՐՂ «լախտ» Կոստ. երզն. 131. յետին շրջանի բառ է։

=Պրս. ﮔﺮﺯ gurz «լախտ», որի ընդարձակ բացատրութիւնը տե՛ս վազր։

Ուղիղ մեկնեց Պոտուրեան, հրատր. Կոստ. երզն. 46։

ԳԻՒՐ.—Իրրև նոր փոխառութիւն պահուած է տեղ տեղ գուրզ ձևով, յատկապէս հէքեաթներում։ Նոյն բա՞ռն է արդեօք Երև. գուռն «քարտաշի մուրճ» (ըստ Արաքս, է. ա, էջ 98. չունի Ամատունին)։

ԳՈՒՐՇ «մեծ թմբուկ»? մէկ անգամ ունի Եփր. Թգ. էջ 450 «Խնդրեաց ձայնող, զի նա է գուրշ ուղտապանաց և կամ քնար՝ որպէս և հեբրայեցին ասէ»։ (Վիեննական թ. 229 ձեռագիրն ունի գուրսուղ տապանաց. տե՛ս ՀԱ, 1912, էջ 554, թ. 40)։

=Եփրեմի վերի հատուածը մեկնութիւնն է. Դ. Թագ. գ. 15 «արդ ա՛ծ առ իս սաղմոս աստց» խօսքի, ուր հյ. սաղմոսասաց (ֆր. joueur d'instruments) և Եփրեմի ձայնով բառի դէմ ասորի բնագիրն ունի ܢܩܘܫܐ naqūšā «բռժոժ, եկեղեցու կոչնակ» (որի հետ նոյն է արաբ. և պրս. ناقوس nāqūs «եկեղեցու կոչնակ»)։ Թերևս այս ասորի բառն է, որ հայ թարգմանիչը տատապարձրել է նկուղ, որ աղաւաղութեամբ եղել է գուրշ. ըստ այսմ պէտք է ուղղել վերի հատուածը՝ «խնդրեաց ձայնող, զի նա է նկուղ ուղտապանաց...»։

ՆշՌ «գուցե գոս, որ է թմբուկ մեծ». ուրեմն սխալ ընթերցուա՞ծ է համարում։ ՋՌ չունի այս բառը։ Վերի մեկնութիւնը տալիս է Վարդանեան, ՀԱ, 1914, 119 (Բառաքն. դիտ. Ռ. 33)։

*ԳՈՒՐԳԱՅ «չօրաթ» Մաշտ. 3կ. ղրիմ. նաև գրուած է գուլպա կամ գուլպայ Ոսկիփ. որից գուլպայարար ? 3կ. ղրիմ., գուրպարար «այն թռչունը, որն իւր թաթմանի ձևով բոյնը կախում է ծառի ճիւղերից» Տաղ. (ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 153). արդի գրականում ընդունուած է միայն գուլպայ ձևը։

=Ասոր. ܓܘܪܒܐ gurbā? որ փոխառեալ է պրս. ﮔﻮﺭﺏ gūrab կամ ﮔﻮﺭﺍﺏ gūrāb «գուլպայ» բառից. նոյնից են նաև արաբ. جورب jaurab կամ جراب jurāb, քրդ. gure, gora, gōrevī, թրք. چوراب čorab, որի միջոցով էլ սերբ. čorabi, čarape, ալբան. čarapat հոմանիշները։ Թէ հայերէն բառը փոխառեալ է ասորերէնից՝ ցոյց է տալիս բառի -այ վերջաւորութիւնը. պ յետին տատապարձութեան համեմատ է, որի դէմ արևելեան դրականը ճշտիւ ունի գուլբայ։—Հիւբշ. 302։

ՆՀՌ «բառ ոմկ. նոյն ընդ թրք. չորապ»։ Pictet, 2, 303 լիթ. kurpē «կօշիկ», լեհ. kurp «սօլ» և թերևս յն. κρηπίς «այր մարդու կօշիկ» են։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lag. Arm. Stud. § 528, իբր ասոր. gōrbā։

ԳԻՒՐ.—Խոջ. Մշ. գ'ուրբա, Ալշ. գուրբա, գուլբա, Ախց. Կր. գ'ուրպա, Ջղ. գուլբա, գուրբա, Տփ. գուլբա, գուլբէֆ, Երև. գիւլբա, Հմշ. կուրբա, Սլմ. կիւրպm, Ղրբ. գի՛ւլբm։—Նոր բառեր են՝ գուլպած, գուլպաւոր, գուլպաթել։

ԳՈՒՏ տե՛ս Կիր։

ԳՈՒՏՅԻ տե՛ս Գոյ։

ԳՋԻՐ «ծակիչ գործիք, բուրդուց». ունին միայն ՀՀՌ, ՋՌ և Նորայր, Բառ. ֆր. (vrille բառի տակ)։ Վերջին երկուսը դնում են իրրև նոր բառ, բայց թէ ո՛ր բարբառի մէջ է գոնում՝ յայտնի չէ։

Յայսմ. նոյ՝ 21 կայ այսպիսի մի հատուած. «Արկին զսուրբն Արբիպաս ի գուբն մինչև զգօտին. և տարան մանկունս ի դպրոցաց՝ որ երկաթի դրչօք ծակոտեցին զգազգաթն և ապա քարկոծեցին»։ Կարելի է ենթադրել, որ յիշեալ հատուածի գրչօք բառը որևէ ձեռագրում սխալ գրչութեամբ դարձած լինի

գչrof, *որից՝ ծակոտեցին բառի յարադրութեամբ՝ կարելի էր դիւրութեամբ հետևցնել անգոյ* գչիr «*ծակիչ*» *ձևը։ Հ. Ակինեան, որից խնդրած էի ստուգել այս բանը, յայտնում է (նամակ 1927 յունիս 23), որ էջմիածնի գրադարանի թ. 1506—1516 Յայսմաւուրքներում այսպիսի մի սխալ ընթերցուած չէ գրուած յիշեալ հատուածում։ Շատ կարևոր է քննել վէնետիկի ձեռագիրները։*

ԳՉԽԱՅ «*ծուռ ու մուռ ճիւղ*». *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Վստկ. 138 «Քանի կարես՝ ի շիտակ և ի կոկկեղև ճիւղ պատրաստեա, մի՛ ի գչխայն»։*

ԳՌԱՅ «*յանցաւորին տրուած մի տեսակ պատիժ*». *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 26 «Իսկ ի քաղաքական օրէնս՝ յայտնի են որք ի վաճառն յանցանեն, տուգանք և ծեծ և դայն և թուքն»։*

⊙ԳՌԳՌԱՂ «*ագռաւի հանած ձայները*» *Յկ. ղրիմ. «փորի հանած ղողոցը» Ոսկիփ.։*

=*Բնաձայն բառ, որ կրկնուած է արմատական* գռ *ձայնից. Համմտ. գռ.* կռկռալ, ֆրֆրալ, ճռճռալ, բորբռալ, տռտռալ, ղողրռալ, գոգռալ, չոչռալ *են. պարզական գռալ ձևը գործածական է արդի գաւառականներում՝ «ամպի որոտալ» նշանակութեամբ։— Աճ.*

ԳԻՒ.—Նոյն բնաձայնը գտնում ենք նաև Երև. Մշ. Շիր. Վն. Տփ. «ամպի, փորի, կրակի, կաւրի ձայն» նշանակութեամբ։ Նոր բառեր են՝ գոգռեցնել, գոգռան, գոգռոց, գոգրռուկ։

ԳՌԵՀ, ի–ա *հլ. (նաև ի հլ. ինչպէս ցոյց է տալիս սեռ.* գռեհից՝ *Եփր. Քագ. 408) «փողոց, հասարակաց ճամբայ» Սղ. ժե. 43. Ոսկ. յհ. վեցօր. 86. Փիլ. նխ. բ. 116. Ճառընտ. Բրս. պհ., որից՝* գռեհիկ «*ռամիկ, հասարակ դասակարգի մարդ, գեղջուկ*» *(ինչպէս կայ հիմայ փողոցային բառը) Գծ. ժէ. 5. Ոսկ. մ. ա. 20. Վրք. հց.,* գռեհօրէն «*ռամկաբար*» *Մագ.,* գռեհիք «*գռեհիկներ*» *Արծր. դ. 11,* գռեհկութիւն, գռեհկաբար *(նոր գրականի մէջ)։ Նոյնը գրուած է նաև* գռեհն «*ռամիկ, գռեհիկ*» *Արծր. դ. 5, 11,* գռոհ «*փողոց*» *Լմբ. սղ. ժե., գռեհ «աղբ, ցեխ» Բենիկ. որ և գռիհ Նար., գռեխ Առաք. պտմ. 233։*

*Նշ*Բ գայռ «*ցեխ*» *բառից, իբր գայռոտ ոտի։ Հինք. հանում է գռոհ բառից։ Թիրեաքեան, Բանաս. 1900, 315 պրս.* gurūh «*գրոհ*» *բառից։ Մաո, Батум, էջ 34 վրաց.* գլեխ, գլախակ «*յոռի*» *բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* قرحة qarḥa «*կեղ, հնացեալ վէրք*»։ *Ադոնց, Арм. вв. эп. Юст. էջ 436 վրաց.* գլեխի *բառի հետ ցեղակից է համարում։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. գ'ռէխ, *Վն.* գ'րեխ, *Մկ.* գ'րէխ, *Սլմ.* կիրեխ, *Մրդ.* կիրէխ, *որոնք բոլոր նշանակում են «վէրքի թարախ, շարաւ»։ Նոյն բառը ունին նաև Ազա. Ողմ. Ասլ. Խոյ. Շիր. իսկ Սլմ. կրկնութեամբ էլ կայ* կիրեխ-թարախ. *այս բառերը* գռեխ *և* գռեհ «*աղբ, ցեխ*» *ձևերի միջնորդութեամբ կարող են կապուել նախորդի հետ։*

ՓՈՒ.—Վրաց. გლეხი գլեխի «*գիւղացի, ռամիկ, շինական, գռեհիկ*» *(Համմտ. ի հասարակ և ի խոնարհ ազգէ՝ զոր ազգն Վրաց գլեխի ասեն. Առաք. պտմ. 78),* გლეხური գլեխուրի «*գեղջկական, ռամկական*», გლახა գլախա, გლახაკი գլախակի «*աղքատ, մուրացիկ, յոռի, վատ*». *(այս երկու ձևերի յարաբերութիւնը այն է, ինչ որ հլ.* գռեհ *և* գրոհաւ). *Թուշ.* გლეხ գլեխ «*գիւղացի, ռամիկ*»։

ԳՌԺԻ *կամ* ԿՌԺԻ «*բողկի նման մի տեսակ բոյս*» *Վրք. հց. Ա. 190 (ըստ Հիւս. § 532 լտ.* scorzonera, *ըստ Նորայր, Բառ. ֆրանս. էջ 1125 բ և Արթինեան, Տունկերը, էջ 36, ֆրանս.* salsifis noir, *որ և* scorsonère, *իրլ.* ugorzhina). *ըստ Նշ*Բ-*ի վկայութեան գոզի, տպագրի մէջ հին խմբ.* կոէզ, *նոր խմբ.* կոզի։

ԳԻՒ.—Ակն. գ'ոզի, *Մշ.* գոզիկ *(նոյնը նաև Ալշ. Խն. Բլ. Շիր. Ասլ. Կարս) «չոր տեղեր բուսնող և սինձի նման տարածուած թևերով դաշտային մի բոյս է. արմատը, որ շատ խոր չի իջնում, ունի գետնախնձորի նման կոճղէղ, որի սպիտակ միջուկը համեղ ուտելիք է (ըստ Ազգ. հանդ. ե. 20* scorzonera hispanica)։

*Գուճ, ի–ա *հլ. «մեծ կաոր աղ՝ որ դեռ լեսուած չէ» Կանոնք Ալաւկայ (ԺԲ դարից. տե՛ս Հացունի, Ճաշեր և խնճոյք, էջ 16). ուրիշ վկայութիւն չկայ։

=Պրս. گیرێ girīj «մասն ինչ, կոտորակ»։

Ուղիղ մեկնեց Ուղուրլիկեան, տե՛ս ԳԲ, էջ 345 և 1405։

ԳՒՒ.—Ղրբ. կոօճ նոյն նշ., որ գալիս է *գուռճ ձևից. երկուսի ձայնական համեմատութեան համար ի նկատի առնել կճիճ և կճուճ։

ԳՈՒԱՓ (սեռ. –ի) «ագահաբար ուտող» Գնձ. ուրիշ վկայութիւն չկայ. ՋԲ ջնջած է այս բառը։

ԳՒՒ.—Երև. գոլափել «ագահաբար ուտել» (Ամատունի, էջ 154)։

ԳՈՂԻԼ «կծկուիլ, շուարիլ մնալ» Ճառընտ. =Վրք. և վկ. Բ. 338. ուրիշ վկայութիւն չկայ. ԳԲ դրած է գոչիլ, Վարքի հրատարակիչը գնում է գոգիլ, թէև ձեռագիրն ունի գողիլ։ Համմտ. Մշ. գ'ըորխել «ծերութիւնից ցնդիլ, խոֆիլ»։

ԳՈՈՅԹ տե՛ս Դուոյթ։

ԳՈՈՒՂ «ոլորուն կամ դանգուր մազերով» Տաթև. հարց. 246. Տօնակ. Յայտմ. փետր. 17 (դանգուր, այս է գոուզ մազով). «Ակ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս., որից գոգաբուրդ «գոուզ բրդով (ոչխար)» Վստկ. 214։

Մ. Ս. Գաբրիէլեան, ՀԱ, 1908, էջ 286 –ուզ մասնիկով՝ գոռ բառի՞ց։ Պատահական նմանութիւն ունին գերմ. kraus «գոուզ», kraushaarig «գոուզահեր», որի ծագումը անլսելի է (տե՛ս Kluge, էջ 277) և պրս. کرس kuras, کورس kōras «գոուզ մազեր», որի ծագումը նոյնպէս անլսելի է։ Ղափանցեան, Տնդեկ. ինստ. 2, 113 հանում է կոխնջ բառից։

ԳՒՒ.—Հճ. գ'ռուզ, Վն. կոուզ, Ագլ. Ղրբ. կըորզնօտ, Ղզ. կըորժնուտ «գոուզ»։ Նոր բառեր են՝ գոզիկ, գոզի կուլակ, գոզնոտանալ, գոզնոտիլ, գոզնոտցնել, իսկ ՋԲ. գ'ուռուզ խէդիր (<գոուզ խոտեր) «ազատքեզ, persil, պետրուշկա»։ Հայ բառի հնագոյն ձևն են ներկայացնում Նբ. Ալմ. Վն. կոուճ «գանգուր, գոուզ (մազեր)». հին նձ>ղ ձայնափոխութեան համար համմտ. կորիզ և կողինձ։

ՓՈՒս.—Վրաց. გრუზა գրուզա կամ გრუზი գրուզի «գանգուր մազեր», քրդ. جۆرە muruz «շատ գոուզ մազերով այծ»?

ԳՈՒՈՒՉ «ընկուզի միջուկ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Շնորհ. առ. ծ. (տե՛ս Շնորհ. Բանք չափաւ, Վենետ. 1830, էջ 570). «Լսէ՛, եղբայր, քաջ կարևոր. Ա՛ռ քեզ նշան, ինքն է բոլոր. Նա եղ ունի, կեղևն ոսկոր, Կաուեա՛ և կեր զգրոուզն աղուոր» (հանելուկ ընկոյզի վրայ)։

ԳՈՒՈՒՉ. նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած 1233 թուի մի արձանագրութեան մէջ (Վիմ. տար. էջ 76) «Այլ ոչ ում աղման չկա հետ գոգին»։

ԳՏԱԿ տե՛ս Գդակ։

ԳՐԱԿՈՆՏԻԿՈՆ տե՛ս Գրակոնտիկոն։

ԳՐԱՀԱՄ «համեստ». ունի միայն Բառ. երեմ. էջ 70. նոյն բառը ՓԲ գրում է գրեամ «համեստ, պարկեշտ».—Համմտ. յաջորդ բառի ծանօթութիւնը։

ԳՐԱՀԱՆԳ «հեռէ լինել, ջանալ». մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. մ. բ. 16. էջ 608 «Որ չէ ընդ իս, ասէ, նա հակառակ իմ է. և որ ո՛չ ժողովէ ընդ իս՝ ցրուէ... Որ ո՛չ ընդ իս ժողովիցէ և ոչ ընդ իս իցէ, իմ գործակից լինել ո՛չ իցէ։ Եւ զի՞նչ ասացից գործակից. զի և գրահանգ ևս լինի՝ զիմ ժողովեալսն ցրուել»։

Բառ. երեմ. գրում է շատ զանազան ձևերով. էջ 71 գրեանգ «խեղ, հեաա, անհաւանց», էջ 81 դրեանկ «սառահակ» և էջ 74 դարահանկ «սրահանգ»։ Վերջին բառը նշանակում է «զօրաց պետ», բայց ԱԲ դնում է «սրիկայ», որ հիմնուած է կա՛մ սրանց համեմատութեան վրայ և կամ մի ուրիշ հին բառարանից է առնուած։ Համմտ. նաև նախորդ բառը։—ՀՀԲ գրում է գրահանգ կամ գրեանգ «խեղ, հեաա, անհաւանց».—ՆՀԲ և ՋԲ չունին։—ԱԲ մեկնում է գրահանգ լինել «հեռէ ըլլալ (ջանալ)», որ բաա իս ուղ-

դագոյն մեկնութիւնն է (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 257—258)։

*ԳՐԱՄԱՏԻԿՈՍ, ի–ա հլ. «քերականագէտ» գրագէտ Կոչ. 377 (երկիցս). Եւս. պտմ. էջ 427. այս ուղղագոյն գրչութիւնը յիշում է միայն ՀՀԲ, միւսները գիտեն զանազան աղաւաղեալ ձևերով. ինչ. գրամատիկոս Եւս. քր. Սերիր., գրամատրիկ Ոսկ. Ճառք 774. Եւս. պտմ. 173, գրամատոկոս Մագ. Թղ. 9, դրամատիկոս Ոսկ. լուս. տպ. Սոփերք Դ. 86 (տե՛ս և Բանասէր, 1900, էջ 121), որից գրամատոկութիւն «քերթողութիւն» Մագ.։

=Յն. γραμματικός «գրականագէտ, քերական, մատենագէտ», որ ծագում է γράμμα «գիր, գրութիւն, դիրք» բառից և այս էլ γράφω «քերել, փորագրել. 2. գրել, շարադրել» բայից։ Փոխառութեամբ անցել է բազմաթիւ լեզուների. ինչ. լ. grammaticus, ֆրանս. grammaire, ռուս. грамматика, անգլ. grammatic ևն։ Հայերէնի մէջ տառադարձութեամբ կազմուել է նախ գրամատիկոս ձևը. յետոյ՝ ժողովրդական ստուգաբանութեամբ՝ գիր և մարտիկ բառերից կազմուած կարծեօվ՝ ձևացել է գրամատրիկոս կամ գրամատիկ, իբրև թէ «գրքերի հետ մարտնչող»։—Հիւրշ. 345։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

*ԳՐԱՄԱՐ «ծանրութեան փոքրիկ մի չափ. 6 կերատ» Շիր. Հրտր. Պատկ. էջ 27. ունի միայն ՓԲ։

=Յն. γραμμάριον «$^1/_{24}$ ունկիի ծանրութիւն, որ է մէկ գրամ». ծագում է յն. γράμμα հոմանիշից, որ բուն նշանակում է «գիր», բայց ստացել է այս նշանակութիւնը՝ սխալ ստուգաբանութեամբ՝ լ. scripulum «գրամ» բառը յառաջացած կարծելով scribo «գրել» բայից։ Տարածուած է բոլոր լեզուների մէջ gram ձևով, ինչպէս և արդի հայերէնում՝ արևմտեան տառադարձութեամբ կրրամ. արևելեան տառադարձութեամբ գրամ ձևով։—Հիւրշ. 345։

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 67։

ԳՐԱՄԻԿ կամ ԳՐԱՄՓԻԿ «սան, հոգեզաւ՞կ». անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Թղթ. դաշ. 17 «Պսակիցի զորդիացեալն իմ զՅոսրով գրամփիկ (գրամիկն) իմ իմով պաւակաւս Կոստանդինեաւ»։

Թուի թէ կազմուած է յն. γράφω «գրել» (յատկապէս «իբր ժառանգորդ արձանագրել») բայից, բայց ճիշտ համապատասխան յն. բառը չունին ո՛չ Bailly և ո՛չ Sophocles։

*ԳՐԱՅԻԴԱՅ «պառաւ». մէկ անգամ ունի Ոսկ. Ճառք, էջ 170 «Զգրայիդայ արբեալ և խայտառակեալ մուծցես ի տուն քո». բառս չունի ՆՀԲ։

=Յն. γραῖδιον «փոքր պառաւ կին», որ նուազականն է γραῖς (որ և γραῦς) «ծեր, պառաւ» բառի։—Ա՛ճ.

Նախ Ոսկերերանի Ճառերի հրատարակիչը և յետոյ ԱՔ դնում են ծագմամբ յոյն։ Չեն յիշում ո՛չ Brockelmann, Die griech. Fremdwörter, հյ. թրգմ. Տաշեան, Վիեննա, 1894 և ո՛չ էլ Հիւբշմանն։

*ԳՐԱՊԱՆ, ի–ա հլ. «հագուստի վիզը. հագուստի եզրերը՝ վզի, լանջքի և թղանցքների վրայ» Բլ. իր. 32, լբ. 21. Սղ. ճլբ. 2, «ուսանող, վակաս» Փիլ. եղ. և Լծ. փիլ. որ և գրապանակ «քահանայապետի վակասը» Փիլ. եղ. յետնարար ունինք գրապան «գրպան, ջէբ» Վրդ. պտմ. տպ. Վեննտ. էջ 110, Սամ. անեց. էջ 79, գրապանակ «ջէբ» Յայսմ. և վերջապէս գրպան «ջէբ» Բժշ.։ Արդի գրականում ընդունուած է միայն գրպան «ջէբ», որից շինուած են՝ գրպանակ, ծոցագրպան, գրպանել, գրպանաւոր։—Ըստ իս նոյն բառն է նաև գրապանակ «հմայիակ, կախարդական գիր» Մտթ. իգ. 5, որի մասին տե՛ս մի քիչ ցածրում։

=Իրանեան փոխառութիւն է. համմտ. պհլ. grīvpān, պրս. گریبان girēbān կամ گریوان girēvān «հագուստի կամ շապիկի վիզը՝ որտեղից գլուխն են անցկացնում. փողպատ», աֆղան. girēvān, քրդ. grīvān «շապիկի վիզը». որոնք ծագում են գնդ. grīvā-=սանս. grīvā-, աֆղան. griva, grēva, պրս. گری girī «վիզ, պարանոց, ծոծրակ» բառից,

իբրև գնդ. *grīva-pāna «վիզը պահող, վրապան» (Bartholomae, 530, Horn, § 913)։ «Օձիք» նշանակութիւնը այնուհետև դարձել է «պրպան», ալսպէս՝ պրս. girībān «գեհաի պրպան», փարս. girībān կամ kissai-karfa «պրպան բարի գործոց»։ Իմաստի զարդացման համար համմ. արաբ. جيب jayb «օձիք, գեհաի վիզ, որ և նմանութեամբ՝ պրպան» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 99 և 100), Թրք. jeb «պրպան» (փոխառեալ արաբերէնից)։ Նկատենք, որ հները մեր իմաստով պրպան չունէին և նրանց համար իբրև պրպան էր ծառայում գօտու ծալքը։ Իրանեան բառից փոխառեալ են նաև արաբ. جِرِّبَان jirrubān, jurrubān «շապիկի վիզը», جُرَّاب jurrubān կամ جربان jurbān «շապիկի օձիք, սրի պատեան», جران jirāb «պարկ, որ ինչ աման, ամորձաց պարկ», جلبّان julubbān կամ جابان julbān «տուբի, դանակի, խարազանի են կաշէ պատեան կամ պարկ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 91, 95), լհհ. karman, խրվ. karmen, karmenac «մի տեսակ մուշտակ», ուկր. karman, karajman, ռուս. кармань «պրպան» (տրիշ բացատրութիւն սրանց համար տե՛ս Berneker, 490), վօթվ. kormana, ֆիննն. kormano, էստ. karman «պրպան»։—Հիւբշ. 132։

Ուղիղ մեկնից նախ ԳԴ. նոյնը Lag. Gesam. Abhd. 202 (ուր սխալմամբ գրուում է պրս. cliban-us), Arm. Stud. § 538 (ուր աւելանում է արաբ. բառը) և Հիւնք.։—Հիւբշման Arm. Gram. 132 գրապանակ «հմայեակ» բառը համարում է վերինից տարբեր և կազմուած գիր+պան+ակ, իբր «պահպանութեան գիր»։ Այս դէպքում գրապանակ պիտի նշանակէր «գիր պահող, գրի պահապան» և ո՛չ թէ «պահապան գիր»։ Ըստ իս գրապանակ նոյն բառն է նախորդի հետ և աւելի լաւ է պահում արմատի (grīvā) «վիզ» նշանակութիւնը։ Գրապանակը այն բանն է, որ կախում էին վզից ի պահպանութիւն։ Աբեղեան, Հայոց լեզ. տեսութ. 286 գիրք+պան, իբր «գիրք պահելու տեղ»։

ԳՐԱՍՏ, ու հլ. «հեծնելու կամ բեռան անասուն, մանաւանդ էշ» ՍԳր, «(ընդհանրապես) անասուն, կենդանի», եղն. «բթամիտ, իշագլուխ» Ոսկ. յհ. ա. 2, որից՝ գրաստական «անասնական» Ոսկիփ., գրաստավար «անասուն քշող» ԱՔ, ձիագրաստ, ջորեգրաստ (երկուսն էլ նորագիւտ բառեր. չունի ԱՔ) Անկան. գիրք առաք. 234։

Մորթմանն ZDMG. 1872, 581 բևեռ. kurra «գրաստ», գերմ. Ross և անգլ. horse «ձի» բառերի հետ։ Հիւնք. յն. σάκτρα «պարկ, քուրձ, բեռն գրաստու» բառից։ Patrubány, ՀՄ. 1908, 154 կցում է լտ. gradior «քալլել», գոթ. griþs «քալլ», հլ. gredą «գալ» են բառերին։

ՓՈԽ.—Գնչ. grast, greš, gias, gra «ձի», grái «ձի», grastní, grasni, grani «էգ ձի», grastoro «փոքր ձի», grastano mas «ձիու միս», grasteskoro «ձիավաճառ» (տե՛ս Paspati, որ այս բառերը հանում է սանս. gras «ուտել», անգլ. grass «խոտ» են բառերից), բոհեմ. graš «ձի», grašd «ախոռ», grašnel «քուռակ», grašni «էգ ձի» (տե՛ս Vaillant, Gram. des Bohémiens, Paris, 1868, էջ 106)։

ԳՐԱՍՏ. նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած 3Ե. կթ. 390—391 «եւ ապա զիտակար քարտին ի գրաստս խաչին սրբոյ կապեալ»։ Նշանակում է «խաչի մասերից մէկը, թևերս թևերը»։ Բայց կարող է լինել նաև յաջորդ գրաստ, որ և գրաստ բառը և այն ժամանակ նշանակում է «այն բոլոր կամ շապիկը, որ խաչի վրայ ձգուած կամ նրան հագցրած էին լինում» (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 115)։

ԳՐԱՏ. անստոյգ ձևով բառ, որ գրուած է նաև գրաստ, դրատ, դրաստ, դրաւտ (միշտ աննզական) «պատմուճան, վերարկու» Բ. Թագ. ժ. 4. Մխ. դատ. էջ 262. Բուզ. է. 6 (հին տպ. մադրաստ, էջ 208 դրաստ, էջ 209 դրատ). Կաղնկտ. (հրտր. էմ. էջ 138 դրաւտ. իսկ հրտր. Շահնազ. Ա. 292 գրատ). ԱՔ մեկնում է նաև «քղանցք» ըստ Կիւրղ. Թագ?

ՆՀԲ (գրատ բառի տակ) լծ. Թրք. էրrաfէ, խրղզ կամ (ղազնցf բառի տակ) յն. χράσπεδον «քղանցք»։— Պատկ.

հյուր. Բուզ. էջ 171, ծանօթ. 1 ուղղագոյն ձևը համարում է գրաա, որ կգայ է պրս. دارک բառին: Սա անշուշտ պրս. دارک kurād «հնոտի և մասնատեալ հանդերձ և կտեաւո», թրք. գուրաէ «անպէտք, հին ու մին մնացորդ բաներ» բառն է, որ սակայն ո՛չ նշանակութեամբ և ո՛չ էլ ձևով համաձայն է մեր բառին: Հացունի, Պատմ. տարազի, էջ 97 ճիշտ ձևը համարում է դրաստ և նոյն է դնում պրս. durust «ուղիղ» բառի հետ, իբր թէ «ուղիղ ստորոտով պատմուճան», իսկ էջ 120 դնում է գրաա և մեկնում է պրս. կիրաա «հին զգեստ մը», գուրաբ «կրկնոց կանանց» (իմա՛ قرات qurāt «շորի պատռած կտոր!»):

*ԳՐԱՒ, ի–ա հլ. (յետնաբար նաև ի, ու հլ.) «իբրև առհասարակ տրուած իրը» ՍԳր, «կանխավճար, ապացոյց, նշան, փրկանք, իրարու հետ բռնած գրագ» Վրք. հց. Մխ. դտ. Փիլ., որից՝ գրաւել «գրաւ առնել. 2 ձեռք ձգել, խլել, առնել, բռնել» ՍԳր. Եւս. քր. Ոսկ. գաղ., «վարձել» Նար. Վրք. հց., գրաւումն Պիտ., գրաւական Մն. լր. 17=20. Բուզ., գրաւահարկ Ագաթ., գրաւաբաի 3հ. կթ., դիմագրաւ «ախոյեան» Բ. մակ. ղ. 28. Խոր. 3հ. կթ., դիմագրաւել Ագաթ. Ոսկ. մ. ա. 17, միագրաւ ի. Սոկր. Ձէ: Նոր դրականում գրաւել նշանակում է նաև «մէկի սիրտը հրապուրել, սէրը շահիլ» և այս իմաստից են բխում գրաւիչ, գրաւչութիւն, առագրաւ:

=Պհլ. grav (գրուած grūbu) «գրաւ, փոխառուութիւն, գրաւական», gravakān «գրաւական», պրս. گرو girav «գրաւ, գրաւական, գրագ», كروگان giravgān «գրաւական», ڪاونگرو giravnāma «գրաւի՝ գաշանց թուղթ, գրաւաթուղթ», քրդ. گرێ gireu «գրաւ, գրաւական», այս բառերի բուն ծագումը յայտնի չէ, որովհետև կապ չունի պրս. giravīdan=պհլ. virōyītan «հաւատալ» և giriftan=պհլ. graftan, գնդ. հպրս. grab, սոգդ. g°raβ, սանս. grabh «բռնել» բառերի հետ:—Հիւբշ. 131:

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ, որ դնում է պրս. girav, բայց սրա հետ նաև սանս. grah «առնել», Böttticher, ZDMG, 1850, 352, Arica 83, 401 սանս. grabh, grah, գնդ. gerew, պրս. giriftan «բռնել»: Lag. Symmicta 340 գրաւ=պրս. girav. գրաւական=պրս. giravagān: Տէրվ. Altarm. 105 պրս. girav ձևից փոխառեալ, իսկ Նախալ. 54. 79 սանս. grabh, գնդ. garew, հպրս. garb, գոթ. greipan, հալ. grabiti «առնել, բռնել» ձևերի հետ՝ հնխ. garbh, gharbh արմատից: Ուղիղ են Թիւրեաքեան, Պատկ. աշխ. դրակ. Ա. 194 և Հիւնք.:—Հիւբշ. 131 վերի մեկնութիւնը դնելուց լեռոլ՝ ուզում է զանազանել (կասկածով) գրաւել «գրաւ առնել» և գրաւել «առնել, ձեռք բերել», վերջինը իբր բնիկ հալ կցելով սանս. grabh «առնել, բռնել», grâbha- «տիրապետութիւն, սեփականացնել», հալ. grabiti, պրս. giriftan «բռնել» են բառերի հետ: Յ. Աբեղ. ՀԱ, 1896, 267 և Բազմ. 1897, 52 յն. ἁρπαβών, աքքադ. garra «գրաւ», եբր. עֵרֶב ʿārab, լտ. arrha, arrhabo «գրաւ» բառերի հետ: Karst, Յուշարձան, 404 սումեր. g'arra «գրաւ», 405 kur «բռնել, գրաւել»:

ԳԻՒ.—Երև. Տփ. գրավ, Ջղ. գ'րավ, Ոզմ. գ'ըրավ, Սլմ. գ'ըրմվ, Տիգ. frmv, Մրղ. գիւրէօվ, Մկ. գ'ըրավս և այսպիսի ձևի միջնորդութեամբ Երև. Տփ. գրազ (=ի գրաւս):

ՓՈԽ.—Վրաց. გირაო գիրաօ «գրաւ». վերջաձայնի համար հմմտ. խաւ >վրաց. խաօ: Ոսս. girov «գրաւ» թուրքերենից է:

ԳՐԳԻՒ «հակառակութիւն, դրդում, կռիւ» Բ. մակ. դ. 30. Փարպ., որից՝ գրգռել «կռիւ կամ բարկութիւն յուզել» ՍԳր, գրգռութիւն ՍԳր, գրգռիչ եղն. Ոսկ. յհ. ա. 2, դիւրագրգռութիւն Մխ. դտ., դիւրագրգիռ Կղնկտ., չարագրգիռ Վրք. հց. ևն:

=Կրկնուած է անծանօթ *գիռ արմատից, իբր *գիռգիռ>*գիրգիռ>գրգիռ:

ՆՀՒ «իբր կրկնութիւն բառիս ճիռ. որպէս ամկ. խըռխըռ»:—Lag. Urgesch. 203 gar արմատից կրկնուած, հմմտ. սանս. Jāgar, յն. ἐγείρειν «արթնացնել, գրգռել»: Müller, SWAW, 38, 589, սանս. gṛ, Justi, Zendsp. 101 գնդ. սանս. gar

«հրգել. գովել», աֆղան. gharédal *«որոտալ», օսս.* ghar *«ձայն» բառերի հետ:* Canini, Et. étym. *էջ 12 սանս.* gara *«թոյն», թրք.* agrə *«ցաւ», հյ. խլել, խարխլել ևն բառերի հետ է կցում: Հիւնք. քրքուխ բառից: Սանուալճեան, Բազմ. 1904, էջ 499 լծ. քրքրել: Թիրեաքեան, Բազմ. 1913, 340 թրք.* girgir *«մարդամօտիկ», արմատը* gir *«մանել»:*

ԳՐԳԻ *«հին ու մին զգեստ, ցնցոտի, քուրջ» Ոսկ. մ. ա. 12. Բ. տիմ. էջ 210. Մանդ. Բրս. ողորմ., որից՝* գրգեակ *նոյն նշ. Յայտմ. ապր. 17. Սարգ. յկ. ղ. էջ 80. Ածաբ. աղքատ.—սրանցից՝* ր *նմանելով յաջորդ լ-ին՝ յառաջացել են* գլգեկ *Տաթև. ամ. 175, 704,* գլգայ *Պատմ. ԺԴ դարից (Դիւան Հայոց Պատմ. ժ. էջ 106),* գլգէն *«ցնցոտի» Օրբ. էջ 177 (Յաւուր միում դարձեալ աննեւոյթ լինէր և զգեցեալ մազեղէն խոշոր և գլգէնս պատառատունս՝ գնայր ի մեծ առաքինարանն երիցու վանից).—վերջապէս նոյն պէտք է լինի* գրջի, *ի-ա հյ. «քուրջ, քուրձ» (ըստ ՆՀԲ և ՋԲ) Ոսկ. երր. ժա. 504, որ Վարդանեան, ՀԱ, 1921, 346 պարզապէս ուղղում է* գրգի:

ԴԻՒ.—Երև. գլգիլ *«հագուստի մաշուիլ, կարտուիլ, քուրջ դառնալը»:*

ԳՐԳՄԻԿ *«ծերութիւնից կծկիլ՝ կարկամիլ». ունի միայն ՀՀԲ, առանց վկայութեան. մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայտմ. փետ. 14 «Տեսին և զհինաւուրց ծերն Սիմէօն՝ եկեալ ի տաճարն, որ ի վաղուց ժամանակաց գրգմեալ և կարկամեալ կայր անկեալ ի տան»: Նոյնը 1602 թ. մի յիշատակարանի մէջ՝ Դիւան ժ. էջ լա. «Դու գրգմած փուտ ալևոր»: Արմատը պիտի լինի *գրգիմ կամ *գրգում:*

ԳՐԳՈՒԱՂԵԼ *տե՛ս Գգուաղել:*

ԳՐԳՏԵԼ *«սառոյց ծամելու ձայն» Վրդն. առ. 94 (այլ ձ. կրկտել):*

⊙ **ԳՐԳՐԱԼ** *«հաւի կոկոռալ՝ կարկաչելը». ունին միայն ՋԲ և ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայտմ. փետր. 27 «Ետես զի հաւն գայր դրդրալով կենդանացեալ ձագերովն»:*

=*Բնաձայն բառ, կրկնուած* գր *արմատից, հմմտ.* գոգոալ:—*Աճ.*

⊙**ԳՐԴԱԼ** *«խոպի խանչելը» Ոսկ. ղկ.:*

=*Բնաձայն բառ, որ կազմուած է գ արմատական ձայնից՝ -ռդ ածանցականով. սրա հետ հմմտ.* բռնդիւն, դռնդիւն, դրնդիւն, ճռնդիւն, *չռիճդ, խռնտալ, որոնք կազմուած են* բ, դ, ճ, չ, խ *արմատական ձայներից՝* բռդ, ռնդ *կամ* ռնտ *ածանցականներով:—Աճ.*

ՆՀԲ և ԱԲ տալիս են նաև «ջուրի խոխոջալ» նշանակութիւնը՝ հետեւցնելով յաջորդ բառից: Հիւնք. դուրգն *բառից է հանում:—*

Իրրև բնաձայն մեկնել եմ նախ ՀԱ, 1899, 204:

ԳՐԴԱՆՔ. *«գետի հոսանք, յորձանք, պրուտաք» Եւս. քր. ա. 355:*

Թիրեաքեան, Արիահայ բռ. 125 պրս. گرد gird *«պտոյտ» բառից, որից ճըշտիւ պրս.* گرداب girdāb *«ջրի յորձանք»:—Այս մեկնութիւնը թէև շատ ճշմարտանման, բայց բոլորովին սուտ է, որովհետև պրս.* gird *բառի պհլ. ձևն է* vartak *(տե՛ս* Horn, *§ 901):*

ԳՐԵԱՅ *կամ* **ԳՐԷ** *(ԳՌԷ).* ի *հլ. «կռունկ թռչունը». մէկ անգամ միայն գործ է ածում Մագ. ժե. սեռական հոլովով. «Գեստրաս գրէից ես խորդապար». ըստ այմ բառիս ուղղականը յայտնի չէ և վերի ձևերը ենթադրական են միայն:*

ՆՀԲ «նոյն է ընդ ձայնիս կռունկ, *լա.* grus, *յն.* γεράνιος*»: Նոյնը կրկնում է Մէնէվիշեան, ՀԱ, 1911, 377:*

ԳՐԵՆ *կամ* **ԳՌԻՆ** *«գործիք՝ որով լուծողական են սրսկում փորը.* clystère*". միջին հյ. բառ (Նորայր, Բառ. ֆր. 550 բ), «սրսկելիք լուծողականը» (անդ, էջ 736 բ):*

ԳՐԹԵԼ *«սահեցնել, մոլորեցնել, խաբել» ԱԲ, որից՝* գրթիչ *«խաբող, խաբեբայ» Ոսկ. երրայ. ժա.,* գրթի *«մոլար, խաբեբայ» (կամ ըստ ԱԲ «սահեցնող, սահուն, սահելով») Արշ. վերջ.,* գրթի եարկանել *Ոսկ. Հռով. 165 կամ* գրթցել *«հրել, մշտել, կռնակով զարնել» Եզնկ. լդ. 21, Մծբ. 156. Ոսկ. յհ. ա. 2, էջ 78. Եփր. աւետ. 295,* գրթցող *«հղջիւրնեբովը զարնող (ոչխար, խոյ)» Նղիշ. առաք.*

353, գրթահարել ԱՔ «ջարդել, ջարդուրուրդ ընել», գրթախաղաց «մոլար, սահեցնող, պատիր, խաբէական» Ագաթ. յոջ. (ընդվայրակոշկոճ գրթախաղաց բարանցն և փայտից. այլ ձեռ. գրթաղ. նոյն բառն ունի նաև Կղնկտ. հրտր. Շահնազ. Ա. 372 գրթախաղաց ձեռվ, որ չունի էմին).—ՓԲ ունի և գրթանալ «ամեհանալ, կատաղիլ» ձևը, որ կասկածելի է թւում:

ՆՀԲ գրթաղ (իմա՛ գրթախաղաց) = պրս. ƒէրեիբեար, իսկ գրթցել «ի բառէս կորուիմ, թրք. սրթ, յորմէ ոմկ. կորթիլ»:

ԳՐԻՃԱԿ տե՛ս Հանդրիճ:

*ԳՐԻՒ, ի–ա հլ. «մի տեսակ չափ արմտիքի համար» ՍԳր. Շիր. Սփր. ատետ. 279, որից գրուաճ, ի–ա հլ. «մէկ կամ մի քանի գրիւ առնող աման կամ չափ» (մասնիկի համար հմմտ. չափան) Մաթ. ե. 15. Մրկ. գ. 21. Նար. լե. սխալմամբ հասկացուած է «մահիճ կամ ծածկոյթ» Բառ. երեմ. էջ 71, որից գրուաճող «խուսափող, փախչող, ծածկող» Մագ. թղ. 237 (ակնարկութեամբ Մաթ. ե. 15 և Մրկ. գ. 21 հատուածների). ՋԲ ունի և գրուաճ «գրուանի» ձևը, որ միւսները չգիտեն: Սխալ է գրուաճիկ, որ տե՛ս քուաճիկ:

= Պհլ. *grīw (grīb), որ թէև չէ ատենդուած, բայց նոյնն են հաստատում հայերէնի հետ՝ պրս. جریب girīb «մի տեսակ չափ» և նրանից փոխառեալ սաոր. جريب gərībā, տրար. جريب jarīb (համեմ. թրք. թրգմ. Ա. 90) համանիշները: Գրիւ բառի իրանական յոգնակի ձևն է գրուաճ<*գրիւաճ<պհլ. *grīwān: (Համմտ. նաև Marcel Cohen, BSL, № 81, էջ 101):—Հիւրշ. 131:

Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 67 գրիւ=պրս. ղարի (այս բառը անծանօթ է Գէորգ Դպրի բառարանին), իսկ էջ 70 գրուաճ դնում է գրիւ բառից: ՆՀԲ ասում է թէ «պրս. ղարի և կէվնիյզ՝ են այլևայլ չափք»: Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Lag. Gesamm. Abhd. 29:—Տէրվ. Altarm, 106. կապում է գրաւել, կողով, ծոդով, կաղապար են բառերին, իբրև «պարունակող»: Հինք. պրս. կէրի, իմա՛ كرى garī «արտավար, կանդուն (չափը), քոռ, աւազէ ժամացոյց»: Պատահական նմանութիւն ունի արաբ. غرائر ǧirāf «մի մեծ չափ էր» (Կամուս, թրք. թրգմ. հտ. Բ. էջ 819):

ՓՈՒԽ.—վրաց. გრიგი գրիվի «գրիւ»—կայ նաև վրաց. გირვანქა գիրվանք, թուշ. გირვანქ գիրվանք, չաղաթ. قيرانقه qirvanqa «մի ֆունտ», որ ամբողջը կովկասում տարածուած բառ է և առաջանում է իրանեան ձևից:

ԳՐՀԱՆԳ տե՛ս Գրահանգ:

ԳՐՃԱՒ «մի տեսակ բոյս». ունին ՀՀԲ և ՋԲ. վերջինը, որին հետևում է նաև ԱԲ, համարում է գոճմակ բուսանունի հետ նոյն. ՀԲուս. § 538 ըստ Շէհրիմանեանի համարում է „laureola daphnoides", որ դափնետեսակ մի թուփ է. հմմտ. նաև գոճմակ:

*ԳՐՈՀ, ի հլ. (գրուած նաև կրոհ, գրոխ) «ազգ, ցեղ, ժողովուրդ, ամբոխ, բազմութիւն, բանակ» ՅՀ. կթ. Արծր., «տան մէջ գրանուած կենդանիներն ու իրերը» Նխ. հլ., «ամոլ, ագգակից» Երզն. մաթ. 548, որից՝ գրոհ տալ կամ գոռհ տալ «ամբոխել դիմել, խուռն բազմութեամբ յարձակիլ» Եղիշ. գ. էջ 46. Փարպ. Երզն. մաթ., գրոհել (կամ գոռհել) Ագաթ., աղէաստագրոհիկ Օրբ. հկճռ. գ, վատագրոհութիւն տե՛ս վատգոհար. շփոթելով դոյզ բառի հետ, որ իմաստով նոյն է, գրոհ գրուած է նաև դոռհատալ Ոսկ. մ. բ. 5, 12 և ուրիշ դանազան սխալագիր ձևերով, որոնք տե՛ս դոյզ բառի տակ:

= Պհլ. grōh բառից. հմմտ. պհլ. kārvān grōhē «ամբոխ մի կարաւանի», պրս. ﮔﺮﻭﻫ gurōh «գունդ, բանակ, բազմութիւն, ամբոխ», քրդ. guruh, kuruh «մարդոց բազմութիւն», թրք. ժողովրդ. gürüf gürüf «գունդագունդ, մեծ բազմութեամբ»: Իրանեանից են նաև վրաց. გროვა գրովա «կոյտ, խումբ, բազմութիւն», გროვება գրովեբա «բազմութեամբ հաւաքուիլ», შეგროვება մեգրովեբա «հաւաքել», შეგროვება շեգրովեբա «հաւաքել, դիզել, հաւաքուիլ, կիտուիլ, խմբուիլ»:—Հիւրշ. 132:

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, որ սակայն գրոհ տալ ձևի հետ լծորդ է դնում յն.

χρύσ «լարձակիլ»։ Ուղիղ են մեկնում նաև Lag. Urgesch. 958, Müller, SWAW, 42, էջ 251 եև։

ԳՐՈՒԱԿ «զրույց». ունի միայն Բառ. երեմ. էջ 71. անստույգ բառ։ Նոյնը գտնում ենք նաև գործածուած Մագ. թղ. 237 «Անդրուատ գրուակ բոսոր անիրապէս ըմբռշխորեալ» (տե՛ս իմ յօդուածը ՀԱ, 1923, 247)։

ԳՐՈՒԱՀ «քրէական յանցաւոր». մէկ անգամ ունի Եղիշ. ը. էջ 143 «Յորժամ գրուահ եղեն նոքա յիրս արքունի և մահապարտ գտան»։

= Անշուշտ իրանեան փոխառութիւն է։

ԳՐՈՒԱՆ տե՛ս Գրիւ։

ԳՐՈՒԱՆԻԿ տե՛ս Թուանիկ։

ԳՐՈՒՃ «մանր մարախ» Նաւում. գ. 17. Փիլ. այլար. 176. Լաստ. ժա։

Հիւնք. էջ 125 գնում է պրս. կէրէ «գրուիճ, ժանգ, թրթուր, երևիլ են», որ սակայն կեղծ է. ԳԴ ունի պրս. گرا gara «ժանկ, փառ», իսկ Հիւնք. այս բառը «բոյսի ժանգ» հասկանալով՝ մնացեալն էլ իրանից է յարմարացնում։

ԳՐՊԱՆ տե՛ս Գրապա՛նի

ԳՐՋԼԻ տե՛ս Գրգլի։

***ԳՐՏԱԿ** «կլոր հաց» Վրք. հց. Ա. 271. Ճառընտ. Յայտմ. տպր. 10։

= Իրանեան փոխառութիւն է. համմտ. պրս. گرد girda «կլոր հաց», گردک girdak «մի տեսակ խմորեղէն», որից փոխառեալ են նաև աւար. grdg «իւղով անխմոր հաց», արաբ. جردقة jardaqa «կարկանդակ»։ Պրս. բառը ըստ Horn, § 901 ծագում է gird «կլոր» = սանս. vṛttá- «կլոր» բառից. հնագոյն ձևն է պհլ. vartak «կլոր կարկանդակ». իսկ ըստ Հիւբշ. Pers. Stud. 91, 137 հայերէնի հետ հնթադրում է պհլ. *girtak, հպրս. *grta-։—Հիւբշ. 132։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ։ Սրան անդէտ լինելով ՆՀՔ, կասկածում է գրաբառ բառի առաւելութեան վրայ և ասում է. «եթէ չիցէ շփոթեալ ի գրչաց ընդ գեղմակ»։ Ուղիղ մեկնեցին նաև Հիւբշ. ZDMG, 35 (1881), էջ 657 և Պատկանեան, Матер. I. 8։

ԳՐՏԱՊՈՂ «Հնդկաստանի մի կենդանի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած խոր. աշխ. հրտր. Սուքրեանի. էջ 44 «Ապա ընդդիբալոս, յորում գրտապող և մշկերէ չափով և ձևով չորքամատեան ուղոյ այծեման, բայց ի ժանեաց»։

= Արդիօք պրս. گرگ girda «կլորիկ» + پوز pūz, pōz «բերան» բառերից?—Ա՛ճ.

ԳՕՃԱԿ կամ **ԿՕՃԱԿ** «մի տեսակ ծաղիկ է». Սալաձ. ունի միայն ՀՌուս. § 540։

ԳՕՇԵԼ «պատառոտել, գիշատել» Ոսկ. շուշ. 650. Պիտ. 3՛. իմ. պալ. Վրք. հց. Ա. 123, «կեղեքել, տանջել, մորմոքեցնել» Նար. ժէ. էջ 37։—Նոյնը Բառ. երեմ. էջ 71 գրում է գոշել «խածնել» և էջ 69 գուշել «գիշատել», որից առել է նաև ՓՔ։

ՆՀՔ, ՋՔ և ԱՔ ծագումով և իմաստով խառնում են **ֆօշել** «վազել», **կօշել** «գոռալ» բառերի հետ, որոնք ստորեր են վերինից։—Հիւնք. գոշել բառից։

ԳՕՍ (ի հլ. ըստ ՆՀՔ. թէև առանց վկայութեան) «շոր (փայտ)» Ագաթ. Փիլ. լին., «չորացած, անպտուղ (ծառ)» Ոսկ. մաթ. եւագր. 336, «չորացած, քաշուած (ձեռք, ոտք)» Ոսկ. յհ. ա. 21, որից՝ **գօսանալ** ՍԳր. Ագաթ. Փարպ., **գօսացուցանել** Սիր. ժդ. 9. Ագաթ., **գօսագոյն** Պզատ. օրին., **գօսական** Երզն. ոտ. երկն., **գօսուիւն** Մագ., **զգօսացուցանել** Պզատ. տիմ., **կիսագօս** Սահմ. Երզն. լս. (Ներք. յորդ. 25)։

ՆՀՔ յիշում է պրս. խուշ (ուղում է ասել خشک xūšk «չոր»)։ Հիւնք. **սոսկալ** բառից։

ԳՕՏԻ (-ւոյ, -եաւ) «մէջքի գօտի, միջկապ» ՍԳր. Եղիշ., «երկնքի՝ աստղաբաշխական բաժանմունքները» խոր. Շիր. Փիլ. եև., «ծիածան, ծիրանի գօտի» Տօմար. Մարքին., «լեռնաշղթայ» խոր. բ. 8, «պալատի մէջ ճեմելիք» Ճառընտ. ածանցման մէջ մտնում է գօտի, գօտե-, գօտէ-, գօտև- և գօտել- ձևերով. այսպէս՝ գօտիածու Դ. Թագ. գ. 21, **գօտէմարտիլ** Ոսկ. յհ. ա. 31, **գօտեպինդ** խոր. Շնորհ. Թղթ., **գօտէկոիւ** Ոսկ. ի կոյան. Ջքր. կթ. Մագ., **գօտելոյծ** Լմբ. պարպ. Ջքր. սարկ. Ա. 28, **գօտևոր** Ոսկ. մ. ա. 10, **գօտևած** Ոսկ. ա. տիմ. բ, **բնգգօտել** «միասին կապել» ԱՔ,

համագօտի *Շիր.*, շրջագօտիլ *ճառընտ.*, խաչագօտի *Ոսկ. յհ. բ. 8*, գօտեկած *Վրք. հց.*, գօտելարձակ *Վստկ. 161 (վերջին երկուսի մէջ լուսանը պէտք չէ համարել գրչագրական սխալ, որովհետև նոյն ձայնը ունինք նաև գուռ. գօտելարձակ և գօտելակապ բառերի մէջ)։*

=Բարդուած է ըստ իս գաւ+տի *բառերից երկրորդն է տի «կապ», որ հնխ.* dē- *«կապել» արմատից է (տե՛ս տի) և գտնւում է նաև* սամեսի, կալոտի, ոոտէն, վզաա *(<վզտի), կամեսայ, բերաճսայ «բերանակապ արջառոց ի կասուլն, առ չուտելոյ զցորեանն» (Քաջունի, հտ. Գ. էջ 36), լամսա «չուանեայ կանիճ կոզովոց» (Քաջունի, հտ. Գ. 88) բառերի մէջ. անծանօթ է գաւ, որ պիտի նշանակէր «մէջք». համմտ. գուռ. մէջկապ «գօտի»։—Աճ.*

Böttich. Horae Aram. *42, 102* պհլ. kōstik *«գօտի» բառի հետ։* Lag. Gesam. Abhd. *210* փնտրում է *եբր.* פרגוד = պարեգօտ *բառի մէջ։ Տէրվ.* Altarm. *79 գոթ.* vasdī *«զգեստ», լն. գուռ.* γαστία<ϝεστία *«զգեստ» (ըստ Հեսիքիոսի)։* Canini, Et. ètym. *131* գոտի *և* ազուցաճել *կցում է պրս.* câtû *«ժապկոց»,* câdar *«վերարկու» բառերին (իմա՛* čātə, čādra): *Տէրվ. Նախալ. 107* զգեստ *և* զգեցուլ *ձևերի հետ սանս.* vas, *գոթ.* vasjan, *լատ.* vestire, *լն.* ἑσθέω *են։ Հիմնք. արաբ.* քավիս, քավս *«տղեկն, կամար, գօտի»։ Թիրեաքեան, Աբրահալ բառ. 126 փարս.* کشتی kuštī *«գօտի» բառից։ Պատահական նմանութիւն ունի արչ.* kotol *«գոտի»։*

Դիմ.—Ախց. կր. գ'օախ, *Ննխ. Պլ.* գօղի, *Ալշ. Խրբ. Մշ. Սեբ. Սչ.* գ'օղի, *Ռ.* ֆօղի, *Համշ.* կօղի, *Հճ.* գ'ուղի, *Ասլ.* գ'էօղի, *Ղրբ.* կէօ'տէ, *Զթ.* գ'ուղը'.—խ *ձայնով՝ Զղ.* գ'ոխտի, *Ագլ.* գ'ա'խտի *(ինչպէս ունինք* ևօթը>օխտը*).—*-իկ *մանրիկով՝ Տփ.* գօ'ղիկ, *Երև.* գ'օղիկ. *Շմ.* գէօղիգ'։— *Նոր բառեր են՝* գօտեկախ, գօտեռեղ, գօտկատեղ *(սրա հին վկայութիւնն ունի Օգոստ. բազ. 13՝ մինչև ի գոտկայ աւղըն),* գօտկածալ, գօտնափար, գօտկատոր, գօտկափայտ, գօտկակոխ, ոտագօտի, երկայնգօտի *«ժապաւեն» (=էնկ.* էրգանգուղի*). համմտ. յատկապէս* գօտելարձակ *Բլ. Զթ. և* գօտելկապ *Բս.։*

Դ

+ Դ. *երկրորդ դէմքի մերձաւոր առարկան նշանակող ցուցական յօդը, որից դա «այդ». հոլովւում է դա, դոռա, դմա, ի դմաճէ, դովաւ, դոֆա, դոցա, դոսա, ի դոցաճէ, դոfof.— գրւում է նաև դայ, դոռայ, դոցայ ևն։ Իբրև կազմիչ տարր մտնում է աւադիկ, դա աւադիկ, դոյն, այդ, այդր են ձևերի մէջ, որոնք բոլորն էլ հին են և բնաիր։*

=Հնխ. to- բնից է ձևացած այս բառը։ Նախալեզուում ընդհանուր և տարառում իմաստ ունէր. համմտ. սանս. tá-, tá-m, գնդ. tə-m, յն. τό-, τό-ν, հսլ. to- ևն։ Երբ հայերէնի մէջ կազմուեցաւ երեք դէմքերից իւրաքանչիւրի համար յատուկ ցուցական, երկրորդ դէմքի համար հնդեւրոպական նախալեզուի մէջ յատուկ բառ չգտնուելով, դիմեցին վերին ձևին, որ ընդհանուր իմաստ ունենալով և մանաւանդ երկրորդ դէմքի դերանունի հետ (դու) պատահական նմանութիւն ունենալով՝ շատ յարմար էր այս նոր պաշտօնին։ Այսպէսով ուրեմն հյ. դ, դա ներկայացնում է հնխ. to- և tu «դու» ձևերի մի տեսակ խառնուրդը։—Հիւբշ. 437։

Բառիս վրայ ընդարձակ մի քննութիւն ունի Meillet, MSL, 10, 241—271, մանաւանդ էջ 245 են։ Առանձին մի հատոր էլ ունի Pedersen, Հայ. ցուց. դեր.։— Bugge, Btr. u. Arm. 135 հայերէնին է կըցնում նաև եաթ. ta «այս»։

Գիհ.—Պլ. Ռ. դա, Ղրբ. Շմ. տա, Ագլ. դ◦, Ննխ. իդա, Ախց. կր. իտի, իտիկ ևն։

**ԴԱԲԴԱԲԱՅ «դափ կամ թմբուկ» Մխ. բժշ. էջ 70։*

=Պրս. دبدبه dabdaba «նոպարա» (ըստ ԳԴ)։—Աճ.

**ԴԱԲԻՐ (սեռ. դաբիրայ) «Սրբութիւն Սըրբոցի ներսի սենեակը, վայր աստուածխօսութիւնն» ՍԳր, որից դուրս ունինք՝ սեռ. դաբիրայի ձևով Անկ. գիրք հին կտ. էջ 214 և ածանցուած դաբիրայօրէն «դաբիրայի ձևով» Նար. խշ. 382։*

=Երր. דְּבִיר dəbir, dəwīr նոյն նշ.։ Բան իմաստն է «ետևը» և ցոյց է տալիս տաճարի յետևի սենեակը. ցեղակից է ըստ այմ արաբ. دبر d'abara «չեա երթալ» دبر dubur «յետոյք, նստոյ տեղի» բառերին։ Մեր բառը ծագում է երբայեցերէնից յն. δαβίρ տաճարաբաժինից՝ Ս. Գրքի թարգմանութեան միջոցով (Sophocles, 343). կայ նաև δαβεῖρ ընծեցուածք։—Հիւբշ. 345։

ՀՔ, ՆՀՔ, ՋՔ, ինչպէս նաև Müller, SWAW, 38, 576—7 դնում են երբայեցերէնից։ Lag. Arm. St. § 541 ցոյց է տալիս, որ յունարէնից է բառս՝ ա ձայնաւորի պատճառաւ. երբայեցին ունի ◦։

**ԴԱԲՐԱՆ «ցուլ համաստեղութեան գլխի 7 մեծ աստղերը (hyades), որոնց մեծագոյնը կոչւում է aldébaran». ունի միայն ԳԴ, Յիշում է նախ Քաջունի, հտ. Գ. էջ 52, որից առնում է ԳՔ. կրկին անգամ յիշուած է բառս առարան ձևի տակ. պէտք է միացնել երկուսը և առաջինը ջնջել։*

=Արաբ. دبران dabrān նոյն նշ. (կամաս, Բրք. թարգմ. Ա. 852). յօդով الدبران al-dabrān։—Աճ.

ԴԱԲՆԻ տե՛ս Դափնի։

ԴԱԲՐԵԻՈՎՄԻՆ տե՛ս Իբրամէն։

**ԴԱԳ «խաբէական, պատրոդական» Պետ. Փիլ. տաճ. 549, Սրկ. Հանգ., որից դագ դրնել (ումեք) «նենգութիւն անել, որպէսզի դնել» Ոսկ. Եփես. 323, դագել «անարգել»?*

Բառ. երեմ. 71 (պէտք է հասկանալ «նեն-դել»)։ Դագ *բառի այս ուղիղ իմաստի տեղ բառարանները տալիս են զանազան սխալ մեկնութիւններ. այսպէս՝ Բառ. երեմ. էջ 71 «քաղցր կամ նենգ կամ դէր» (ուղիղ է միայն «նենգ»), Լծ. փիլ. «աղոթք», ՀՀԲ «դա-ժան, դժնդակ, ժանտ, ընդ որում խօսել ոչ լինի», ՆՀԲ «հարկեցուցիչ, հրապուրիչ», ՋԲ «թախանձեցուցիչ», ԱԲ «շատ վրայ տուող»։ Մեր տուած մեկնութիւնը յայտնի կերպով երևում է մէջ բերուած վկայութիւններից. այսպէս՝ «Կինն ելոյծ զնա պատիր, աղու և դագ բանիւք» Փիլ. սամփս., «Դժոխախոհ, աղու և դագ բանիւք վարէր» Պիտ., «Դագ և աղու բանիւքն պատրանս» Սրկ. Հանգ.։ Բո-լորի մէջ էլ դագ ընկերացած է աղու բառին և պատրանքի հետ գործ ունի։ Նոյն բանը ցոյց է տալիս նաև դագ դնել «խաբել» ձևը։ Սխալ բացատրութիւնը յառաջացած է գւռ. դէմ «կո-պիտ, կոշտ, անհամբոյր, խեթիւ» բառից, որ բուռ այսմ գործ չունի այստեղ։*

*=Պհլ. *dag ձևից, որ հաստատում են պրս. ایذ daγā «կեղծիք, խաբէութիւն, ան-ուղղութիւն», daγā numōdan «կեղծել, խա-բել». սրանից փոխառեալ են թրք. ج dek «խաղ, խաբէութիւն», dek etmek «գլխուն խաղ խաղալ, խաբել»։—Ա՛ճ.*

ՆՀԲ լծ. տաք. դաժաճ կամ արաբ. թաճիզ «ձանձրացնել»։ Lag. Beitr. bktr. Lex. *25 գնդ. *dāγa ձևից, իբր* daž *արմատից=սանս.* dah, dagh *«այրել»։ Տէրվ. Մասիս, 1881 մայ" 8 հնխ.* dhagh *արմատից։ Հիւրշ.* Arm. St. *էջ 12 և* Arm. Gr. *437 նշանաւորութեանց տարբե-րութեան պատճառաւ չի ուզում կցել սանս.* dah *«այրել, վառել», պրս.* ژن daγ *«խարան», գոթ.* dags *«օր», լիթ.* degù, dègti *«այրել» բառերին, որոնք գալիս են հնխ.* dhegh *արմատից։ Մէ-նէվիշեան, ՀԱ, 1897, էջ 248 կրկնալ, թէ ընդունում է վերջին մեկնութիւնը և կցում է նաև հյ. *դեհ «այրել», որ պահուած է հրդեհ բառի մէջ։*—Scheftelowitz, BB, *28, 311 լիթ.* dagnŭ *«կառչիլ»,* dagis *«փուշ» բառերի հետ։* Oštir, Wörter u. Sachen, *3, 207 գնդ.* dav *«նեղել, ճնշել», հյ.* daviti *«սեղ-մել» են, իսկ* Btrg. Alarod. *5 միւլ.* daig *«կրակ»։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 340 թրք.* deke getirmek *«խաբել»։*

ԴԱԴԱՂ, ի–ա հյ. *(ընտիր հայերէնի մէջ միայն անեզական գործածութեամբ) «մեռել տանելու ճաղ» Գ. թագ. գ. 32, Ղուկ. է. 14, «մահճակալ կամ պատգարակ» Ճառընտ., «երկաթէ ճաղերով կասկարայ, որի վրայ մարդ էին տանջում» Յայսմ. (գրուած է նաև* դագեր*). որից՝* դագաղաւոր *«մեռելի ճաղը տանող» ԱԲ,* դագաղակիր *(նոր գրականի մէջ)։*

Մ. Մսերեան, Ճռաքաղ, 1861, էջ 331 ոտանաւորով մեկնում է՝ Դի մեռելոյն ի դագաղի, Իբր ի յարկել զոգեաս գաղի, Եւ որ ի մէնջն ասի դագաղ, Ճշմարտու-թեամբ է դիաքաղ։— Lag. Beitr. bktr. Lex. *25* daž, *սանս.* dah *«այրել» արմա-տից։ Տէրվ. Մասիս, 1881 մայ" 8 հնխ.* dagh *«այրել» արմատից. հետևցնելով բառիս «կասկարայ» նշանակութիւնից և հների մեռել այրելու սովորութիւնից։ Հինք. տճկ.* բաճկիյրէ *«պատգարակ»։*

ԳԻՒՒ.—երև. դագաղ, *Մշ. Ջղ.* դ՛ագ՛աղ, *Սլմ. տակաղ, Հճ.* դ՛ագ՛գ՛ոդ, *Խրբ.* գ՛ադ՛աղ, *Սեբ.* գ՛ադ՛ախ *(համաձայն հնագոյն հայերէնի անեզական գործածութեան).—նոյնը նաև Բրքախօս հայոց մէջ՝ Ալն.* գադաղ *(Բիւր. 1900, էջ 671 բ), Ասն.* գաբաղ *(Արեւելք, թ. 1888, նոյ" 8–9)։ Տե՛ս և Սաղիկ, 1891, էջ 89 և 90։*

ԴԱԳԻՆԻՃ *«վրացի կաւակ» (իմա՛ թրք.* qavaq *«բարտի»). ունի միայն Բառ. երեմ. յաւել. էջ 566։*

+ԴԱԴԱՐ, ո հյ. *«Հանգիստ» ՍԳր, «կանգ-նելու տեղ, յոգնութիւն առնելը» Եւս. քր., «վերջ, սպառիչը» ՅՀ. կթ., «բնակարան, մէջը կենալու տեղ, ինչ. տուն, գոմ, փարախ, բոյն, որջ են», ՍԳր. Խոր. ՅՀ. իմ. առ. (այս իմաստով անեզական է և մէկ անգամ հո-լովուած* դաղարոց *Մծբ.), որից՝* դաղարել *«Հանգչիլ, կանգ առնել, վերջացնել, իջևա-նիլ» ՍԳր. Եղիշ. Խոր.,* դաղարեցուցանել *ՍԳր. Ոսկ. յհ. ա. 27,* դաղարիկ *Կիւրղ. ծն.,* դաղարուն *«անշարժ կնցած» ԱԲ,* անդաղար

«անընդհատ, յարատև, միշտ» ՍԳր. Կորիւն. Ագաթ. Վեցօր. ևն։

=Կրկնականն է դար-ել արմատի, որ տե՛ս առանձին։

Lag. Urgesch. 208 հանդարա բառի հետ՝ հնխ. dhar արմատից։ Lag. Arm. Stud. § 544 մերժում է այս, որովհետև նոյն արմատի կրկնականը *dardhāra՝ պիտի տար հյ. *դրդար։—Տէրվ. Մասխս, 1881 ապր" 28 կցում է դանդաղ բառին. արմատը համարում է դար կամ դաղ, յծորդ դիլ, դուլ, դլալ ձևերին, իբր հնխ. dhar «կալ, կացուցանել, տևել, տանիլ, կրել»։ Meillet, MSL, 10, 280 համարում է դարիլ բայից կրկնական, ինչպէս ունի նաև Հիւնք.։ Հիւբշ. 463 կցում է հանդարա բառին։ Karst, Յուշարձան, 407 տումբր. tar «հաստատել»։

Գիւտ.—Սչ. դ՛ադ՛րել «հանդչիլ», Ակղ. Ախց. Խրբ. Կր. Մշ. Ոզմ. դ՛ադ՛րիլ, Զթ. դ՛ադ՛րլ կամ դ՛աւրլ «յոգնիլ», Տփ. դաբար տալ «հանգիստ առնել, վերջացնել», դաբրիլ «յոգնիլ», Երև. դ՛աբար, Պլ. բաբար տալ «դադրեցնել, հանգիստ առնել», Հմշ. տաբրուշ «յոգնիլը», Պլ. բաբրիլ, Ննխ. բաբռլ «յոգնիլ», Մկ. տտտմրիլ «հանգիստ մնալ», Մրղ. տտտմր, բայց դտդրէլ, Հճ. դ՛ադ՛օյ «դադար», Եւդ. դաւրիլ «հանդչիլ», Բր. դ՛աւռիլ «յոգնիլ», Սեբ. դ՛ադ՛ար, դ՛այյած «յոգնած», Ակն. դ՛այիլ։—Նոր բառեր են՝ դադրում, անդադրում, դադարաւճ, դադրական, դադրան «մի տեսակ թռչուն», դադրած Սչ. «ծոյլ»։—Զթ. բառս նշանակում է ո՛չ միայն «յոգնիլ», այլ և «յենուիլ, կոթնիլ», որով հանդիսանում է իրրև միջին օղակ դարել և սրա կրկնական դադարել ձևերի միջև։

ԴԱԴԻ «մի տեսակ մտցլցող սոխ» Բժշ., ունին միայն Հիւս. § 541 և Բառ. երեմ. յաւել. էջ 566։

Կայ արաբ. دادى dādī անծանօթ բոյսը, որ գտնում եմ Շեյխնշադէրի հատաբածոյի մէջ՝ WZKM, 12, 81։

ԴԱԺԱՆ, ի-ա հլ. (գրուած նաև դաժան) «լեղի, գառնահամ» Եղն. Ոսկ. Ես., «ծանր, դիշ, ժանտ (հոտ)» Ոսկ. յս. Վրք. Հց., «ժանեվի, յոգնեցնող» Ոսկ. յհ. ա. 33, «դժբնդակ, անողորմ, անգութ» Սեբեր. Բրս. պհ., որից՝ դաժանութիւն Օր. խթ. 18. Վեցօր. Եղիշ., դաժանիլ «դժկամակիլ» Ոսկ. յհ. ա. 31, դաժանագոյն Ոսկ. մ. ա. և ես., դաժանաբարոյ Աթ. անտ., դաժանու «դաժան» Աթ, չարադաժան Մանդ., փշադաժան Թէոդ. խշ.—դարժան ձևն ունին Զքր. կթ. Մխ. երեմ. Լմբ. ագ. Ճառընտ.։

=Պհլ. *dažan ձևից, որ կրած է. սրա դէմ ունինք պրս. دژ dažan, dužan, dižan, دژند dažand, dižand, دژم dižam, دژن dužn «թթմա, դաժանաբարոյ, ցասումնալի, ահարկու, արտում, տխուր, թաւշամեալ, խռշոմեալ»։—Հիւբշ. 132։

Ուղիղ մեկնից նախ Գ.Ի։—Lag. Beitr. bktr. Lex. 25 գնդ. daž=անս. dah «այրիլ» արմատից։ Նոյն Arm. Stud. § 547 գնում է ուղիղ մեկնաբանը։ Müller, SWAW 84 (1877), էջ 227 դաժանիլ գնում է նոյն բնդ աժանիլ և երկուսը միասին կցում է գնդ. daž, անս. dah բառերին։ Տէրվ. Altarm. 52 և Մասխս, 1881, մայ" 8 անս. dah «այրել», լիթ. dègti «այրել»՝ բառերի հետ՝ հնխ. dagh արմատից։ Հիւնք. էջ 143 պրս. տիժէմ ձևից։

Գիւտ.—Պլ. դաժան «դժնեայ, դաժանաբարոյ». գործածւում է միայն դաժան-տանիլ դարձուածի մէջ, որ ածական է և նշանակում է պարզապէս «դաժանաբարոյ»։

ԴԱԺԱՆՄԱՆ «Դամասկոսի սալոր». մէկ անգամ ունի Նիւս. երգ. «Ոչ ի դաժանմանս ինչ և կամ ի կաղնիս կամ ի նոյնպիսի պտղոցն վայելմունս լինելով»։—ՆՀԲ կասկածում է բառիս դրչութեան վրայ։

+ԴԱՀ կամ ԴԱՅՀ «մօր առաջին կաթը» Եփր. հլ. էջ 177. Վրդն. հլ. Բժշ.։

=Բնիկ հայ բառ. հնագոյն ձևն է դայլ, որից յառաջացել է դալ. մեկնութիւնը տե՛ս դի-ել բառի տակ։—Հիւբշ. 437։

Ուղիղ մեկնից նախ Böttich. ZDMG 1850, 352 կցելով dhē «պիտի» արմատին։ Նոյն, Arica, 65 և Lag. Urgesch. 307 կցում են դայեակ, դիել են ձևերին։ Հիւբշ. KZ, 23, 18 անս. dha

«ձձել»։ Ուղիղ է նաև Տէրվ. Նախալ. 88։

ԳԻՒՒ.—Նախ. Ջղ. Տփ. դալ, Ալշ. Ախց. Երև. Խոջ. Կր. Մշ. Սեբ. դ'ալ, Համշ. տալ, Ոզմ. դ'ոլ, Մկ. Վն. տոլ, (իսկ Բլ. դ'ալ «եփուած դալ»)։—Տարբեր է Ռ. բալ «անհամ, ջրալի (կաթ)», որ գալիս է գուռ. բալ «անիւղ, ամպակ» բառից և բուռ այսմ աստում է նաև բալ միս։—Նոր բառ է դալեճի «պանրի մակարդ»։

ՓՈԽ.—Patrubány, SA, 1, 3 մեղանից փոխառեալ է դնում Հունգ. tej, հին Հունգ. téj «կաթ»։—Նոյնպէս Գ. Փաունակ, Անահիտ, 1906, 233 մեղանից փոխառեալ է համարում ալբան. dhale «կաթից առնուած հեղուկ՝ վրայից հում սերը չքաշած»։

ԴԱԼ «մի տեսակ ձուկ». ունի միայն Սիւն. քեր. 208 (Երզն. քեր.) հոմանիշների մի շարքում։

ՆՀԲ սխալմամբ մեկնում է բառս «գալարագոյն ինչ կամ դեղին» և համեմատում իտալ. giallo «դեղին» բառի հետ։ ՋԲ «Թուի արմատ դալար և դալուկ բառից»։ Այս հիման վրայ Աճառ. Բազմ. 1898, էջ 370—1 կցում է դալար բառին և սրա հետ միասին հանում է հնխ. dhelարմատի dhl- ձայնդարձից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Մ. Աբեղեան (տե՛ս բիլ բառի տակ)։

ԴԱԼԱԿԻԼ «աշխատիլ, դատիլ, ձգնիլ» Վեցօր. 168, դալակել «աշխատութեամբ ճարել, հոգալ, ձեռք բերել, հայթայթել» Ոսկ. ա. տիմ. էջ 91 (այս վկայութիւնը չունի ՆՀԲ).—ՓԲ սխալմամբ գրում է դարլակել։

Բառիս երկրորդ վկայութեան գոյութիւնը ցոյց է տալիս, որ անտեղի է Նահապետեանի (Բազմ. 1908, 16) սրբագրութիւնը Վեցօրէից մէջ՝ շալակել փխ. դալակել։

ԴԱԼԱՊՐ «Թուր կամ կացին». յիշւում է հոմանիշների մի շարքի մէջ՝ մէկ անգամ Թր. քեր. 19 և երկու անգամ էլ· արիստ. 51 և 55 (միշտ միևնոյն շարքով) «փուղանուն, խազ, դալապր, մարտացու, վաղակաւոր, սուսեր, նրան»։ Նոյնը տարբեր շարքով ունի Տաթև. ձմ. Հաբ. «սուսեր, նրան, դալապր, մարտացու, վաղակաւոր»։ Ըստ Հին բռ. նըշանակում է «տապար», ինչպէս ունին լատինն ու վրացին. և այս բառն է, որ Բառ. Երեմ. 75 դարձել է դեղաւոր «տապար» (ոչ և ո վրիպակով շփոթելով իրար հետ)։—Այս բառից է դալապրել «կացինով ջարդել, կոտրել» Դաւ. քեր. 80 (նորագիւտ բառ, որի վրայ տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 105)։—Աւելի մանրամասն տե՛ս խաղ։

=Լտ. dolabra «մի տեսակ գործիք, որ ծառայում է իբր կացին, տապար կամ բրիչ՝ քար կոտրելու, փայտ կամ միս ջարդելու համար». ծագում dola «հարթել, կտրել, տաշել» բայից.—յունարէնի միջոցո՞վ անցած է հայերէնի. Sophocles չունի այս բառը միջին յունարէնի բառարանում։— Հիւբշ. 345։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։ Pictet, 2, 132 սանս. talawāri ևն։

ՓՈԽ.—Վրաց. დალაბრა դալաբրա «կացին, բրիչ» (Ջուբինովի 2-րդ տպագրութեան մէջ դրւում է «тупой, բութ»), որից գամոդալաբրվա «փորել, խոռոչել», շեմոդալաբրվա «փորել, կտրտել».—վրացին ինքնագրելի է հայերէնից՝ առաջին ա-ի պատճառաւ, որ լատիներէնում o է։

+ԴԱԼԱՐ, ո հլ. «խոտ, կանաչութիւն, բանջար» Դան. դ. 12. Առակ. ժզ. 12. Եփր. Թգ., «կանաչ, թարմ (խոտ, փայտ)» ՍԳր, «մատղաշ, թարմ, նոր (միս, ձուկ, հաց, խորտիկ, թուզ ևն)» Դատ. ժզ. 7. 8. Ոսկ. մ. գ. 17, Վեցօր. 133. Շիր. էջ 51. Մխ. Բժշ., որից՝ դալարի «խոտ, կանաչութիւն, բանջար» ՍԳր, դալարանալ «կանաչիլ, բողբոջիլ, ծլիլ» Թուց ժէ. 8, Յովել. բ. 22, «ուրախանալ, զարճանալ» Ջքր. կթ. Վրդն. ծն., դալարաւոր Կոչ. 344, դալարեցուցանել Եզեկ. ժէ. 24. Ագաթ., դալարուիլ Եզեկ. խէ. 12. Ագաթ., դալարուտ Եփր. Թգ. 423, դալարահեր Մծբ., մշտադալար (նոր գրականում), դալուկ «Ձ ձայնին պատկանող մի եզանակի անուն» Մանրուս. ևն։

=Բնիկ հայ բառ. կազմուած է դալ արմատից՝ -ար մասնիկով (Համմտ. արդ-ար, մնձար-ել) և դալուկ բառի հետ միասին ծագում է հնխ. dhel- արմատի dhl- ձայնդարձից. աւելի ընդարձակ տե՛ս դեղ բառի տակ։— Հիւբշ. 438 և IF Anz. 10, 45։

ՆՀԲ լծ. հայ. դալ, ասղ, ճիւղ, *Բրք.* dal «*ճիւղ*», *յն.* θάλλος «*ճիւղ, տերև*», *իտալ.* giallo «*դեղին*»։—Windisch. *11 առնս.* dala «*տերև*»։ Lag. Urgesch. *211* դեղին, դալուկն *բառերի հետ լտ.* fulvus «*դեղին, դեղնականաչ*»։ *Տէրվ. Մասիս, 1881 մայ" 6* դալար, դեղ, դեղին, դալուկն *բառերը գնում է* դալ *կամ* դաղ *ձևով մի արմատից։ Հիւնք.* լուրբ *բառից։ Վերի ձևով մեկնեց Աճառ. Բազմ. 1898, էջ 370—1։ Պատահական նմանութիւն ունի արև. Բրք.* ﻃﻠﻊ tala «*դալարավայր*»։

ԳԻՒՐ.—Ալշ. Ախց. Երև. Մշ. Ջղ. դ'ալար, *Ոզմ.* դ'ալար, *Մկ. Սլմ. Վն.* ադալար, *ՋՓ.* դ'ալօյ, դ'ալար, *Ասլ.* դ'ալար «*կանաչ, կանաչեղէն, խոտեղէն*», *Դվ.* ադալար «*կայտառ*».—*իսկ Ախ.* դալար, *Խրբ. Սեբ.* դ'ալար *Պլ.* դալար *(հին լեզուով) կամ* բալար *(նոր լեզուով), Ռ.* բալար *գործածական են միայն մի քանի ասութիւնից մէջ. ինչ. ձեռդ դալա՞ր, ձայնդ դալա՞ր։*

ԴԱԼԱՓԻԿ «*ահռելի, ահեղազդոյշ*». *անասոյղ բառ, որ մէկ անգամ ունի Գիւտ ԲղՓ. առ վաչէ՝ «բազմաձայն փողով, դալափիլ գոչմամբ»։*

ՆՀԲ առուգրաննելով բառս՝ մեկնում է. «դարափուլ կամ իբր փլուցիչ արտի, ահարեկ». իսկ ԱԲ պարզապէս «ահռելի».—ՋՓ չնչիլ է այս բառը։

+**ԴԱԼԱՓԿՆ** «*դեղնցայ, դեղնացաւութիւն, ictère*» *Ղևտ. իդ. 16. Գ. Թագ. ը. 37. Ամովս. դ. 9. Ը. մնաց. գ. 28. Հոլովուած է սեռ.* դալնըկան *(ուղ.* դալուկն*) Երեմ. լ. 6. որից՝* դալնկոտ *Եփր. մրգ. 349,* դալնկագոյն *ԱԲ,* դալկաւոր *ՋԲ. Նոր գրականում* դալկոտ, դալկութիւն, դալկահար, դալկահալ. *բոլորն էլ առանց ն-ի, որովհետև նոր գրականի ընդունած ձևն է* դալուկ։

=*Բնիկ հայ բառ. կազմուած է* դալ *արմատից՝ -ուկն մասնիկով (Համմտ.* աումուկն*) և* դալ–ար *բառի հետ միասին ծագում է հնխ.* dhel- *արմատի* dhl- *ձայնդարձից. աւելի ընդարձակ տե՛ս* դեղ *բառի տակ։—Աճ.*

ՋԲ դալ *արմատից։ Հիւնք.* դալար *բառից։ Վերի ձևով մեկնեց Աճառ. Բազմ. 1898, 370—1։ Յակոբեան, Բիւր. 1899, 600 պրս.* zar «*ծեր*» *բառից, նոյն ընդ* բալուկ։ *Ուղուրիկեան (տե՛ս ԳԲ էջ 352 և 1405) լծ. Բրք.* dalaq «*փայծաղ*»։

ՓՈԽ.—Վրաց. დანდალუკი დանդալուկի «*դալուկ, դեղնցաւ*», *որ գործածուած է Երեմ. լ. 6, այսինքն ճիշտ այն տեղը, ուր հայերէն Թարգմանութիւնն էլ ունի* դալուկն։

ԴԱԼՊՈՒՃԱԿ «*դեղձանիկ Թռչունը,* serin, *իսքէթէ*». *ունի միայն Նորայր, Բառ. Ֆր. 1137, իբրև Նորակերտ բառ։*

=*Կազմութեան համար հմմտ. ասպուճակ «մի տեսակ սոխակ»։*

ԴԱԿԻԿ «*մի տեսակ բոյսի սերմ,* corylus» *Բժշ. ունի միայն ՀՌուս. § 544։*

+**ԴԱԿՈՒ**, ի–ա *հլ. «ուրագ կամ կացին» Ոսկ. մ. ք. 27. Արծր. էջ 6. Ճառընտ. Սոկր. էջ 267 (տպ.* տակու, *Թէև անդ՝ Փ. Սոկր. ունի* դակու*). բառ ՆՀԲ գրուած է նաև* դակուր, *սակայն չունի վկայութիւն.—Կոյլաւ, Բառ. գերմ. 664 ա գնում է* դագուր «*խարտաղ*», *որ է «հիւանի քերիչ»։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* dhāg²- *արմատից. համմտ. յն.* θήγω (*դոր.* θᾱγω) «*սրել*», θηγάνη «*սրելու քար, յեսան*», θηγάνεον «*սուր, հատու*», *որոնց հետ համեմատելի են Թերևս լիթ.* dagỹs «*կածուկի նման փշփշուռ մի բոյս,* arctium lappa, klette, bardane, glouteron», *լեթթ.* dadsis *նոյն նշ. մ. լատ.* daga, dagga, daggarius «*դաշոյն*» *են, որոնց վրայ տե՛ս* Walde, *290 և* Boisacq, *343։* Pokorny, *1, 823 չի ընդունում մ. լատ.* daga *և ֆրանս.* dague, *գերմ.* Degen, *անգլ.* dagger *բառերի կապը հոյն ձևի հետ։ Կասկածական է նաև լիթ.* dagỹs։

ՆՀԲ լծ. պրս. دهره dahra «*յօտուց*»։ Pictet, *2, 129 գնում է* tagur *ձևից։ Ուղիղ մեկնեց* Lidén, Arm. Stud. *55։* Karst, *Յուշարձան, 419 թաթար.* tak, tek, *չաղաթ.* tog-, tokramak, *օսմ.* doγramak «*ջարդել, կտրտել*»։ Pictet *բ. ապ. Ը. 171 ո՛չ թէ* tagur *ձևից, այլ հլ. դակու գրում է* tagur *և կցում է առնս.* takšanī, *գնդ.* taša, *յն.* τοχός, *հրդ.* dehsa «*կացին*» *են բառերին։*

ԳԻՒ.—կայ դակուր Ակն. «մի տեսակ գործիք է, որի մի կողմը տապար է և միւս կողմը ուրագ»։—Նո՞յն է արդեօք նաև Երև. Իգդ. բագուջակ «մարգերի աւելորդ խոտերը հաւաքելու գործիք, քաղհանի ուրագ», որ նախ անցել է Թուրքերէնի և այստեղ jak նուագական մասնիկն առանալուց յետոյ՝ նոր ձևի տակ վերադարձել է հայերէնին։

ԴԱՀ *(գրուած նաև դախ) «հնանալով և կամ շատ մեծանալով կարծրացած, զարիւ» Վստկ. 43, 51, 200, «պատառ, որ այլ եւս ծնունդից դադարել է» Անտիգք 21, որից դահական «հին, հնադոյն, երիցադոյն» Ոսկիփ., դահանալ Վստկ. 51, դահուրիւն Վստկ.։*

Böttich, Arica, *69, 137, յն. ծատ; «թաւ, մազոտ», որ մերժում է* Lag. Arm. Stud. § *552։*

ԳԻՒ.—Կր. Սեր. դ'ահ, Ալշ. դ'այ, Մշ. դ'ա. Երև. Ջղ. դ'ախ, Մկ. Մրդ. Սլմ. Վն. տոխ, Զթ. դ'օհ, դ'ոհ, բացի սրանցից դահ բառը ունին նաև Դվ. Խն. Խ. Խոջ. Համշ. «հին, օթեկ, քարթու, ծեր (միս, անասուն, մարդ), տրնմընայ (աղջիկ) ևն», Ակն. «կարծր, կոշտ» նշանակութեամբ. նոյն իսկ Բրքախօս Այն. դահ «խաղողին այն հատիկները, որ շուտ են հասնում ու թառամում ողկոյզի վրայ»։

***ԴԱՀ** *«տասը». ունի միայն ՀՀԲ, որ ենթադրում է դահադրամ բառից. հայ մատենագրութեան մէջ գործածուած չէ։*

=Պհլ. dah, պրս. ﺩﻫ dah «տասը»։

***ԴԱՀԱԴՐԱՄ** *«տասը դրամանոց (գոհար)» Խոր. աշխ. 614։*

= Պրս. ﺩﻫ ﺩﺭﻡ dah dirəm «տասը դրամ»։ — Հիւբշ. 264։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ St. Martin, Mémoires, II, *392 և ՆՀԲ։*

ԴԱՀԱՄՆ, *ն հլ. (յգ. ուղ. -մունք, գրծ. -ամբք) «ընծայ, նուէր (մանաւանդ ուտելիքներով)» Բուզ իր. 2, Որ. ժբ. 11. Գ. մակ. գ. 11. Սերբ. 174, «կաշառք» Եփր. ա. տիմ. 239. այս բոլոր տեղերում գործածուած է միայն յգ. դահամունք, դահամամբք ձևով. եզակի *դահամն ձևը, որ դիւրաւ կարելի է ենթադրել, գործածուած չէ։*

*ՆՀԲ լծ. Բրբ. դահամ (իմա՛ արաբ. طعم ta'am «կերակուր», որ կարող էր թերևս յարմարիլ, եթէ նախաձայնը տարբեր չլինէր), երբ. լէխէմ, որ է «հաց և կերակուր».—*Lag. Urgesch. *602 առնս.* dāsamāna. *Նոյն,* Beitr. bktr. Lex. *17 ենթադրում է *դահել բայից, արմատը *դահ=դնգ.* dāθra-, *պրս. ﺩﺍﺭﺍ* dāra *«ձօն, նուէր»։ Հիւբշ. 133 մեկնում է այս առումդարաբերութեան հանգամանքները, հպրս. *dāθra=պհլ. *dahr պիտի տար հյ. *դարի>*դահ, որից բայը *դահել և սրա *դահօն ձևից էլ յգ. ած. դահամունք, ինչպէս ունինք պաշտել, պաշտօն, պաշտամունք։—Այս բոլորը տակաւին Հիւբշ. համարում է շատ անապահով։ — Թիրեաքեան, Արիահայ բառ. 128 պրս. ﺩﻳﻪ* dih *«տո՛ւր» բառից։*

***ԴԱՀԱՆԱԿ,** *յատկապէս ակն դահանակ «մի տեսակ ազնիւ քար՝ կանաչ ու դեղին գոյնով» Ոն. բ. 12. Տոբ. ժգ. 22. Փիլ. այլաբ. Վրդն. ծն. Տօնակ., որից վէմ դահանակեայ «մարմարիոնէ» նորագիւտ Ա. մնաց. իթ. 2.—գրուած է դահակն Մխ. այրիվ. էջ 5։*

*= Պհլ. *dahanak ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց նոյնը հաստատւում են պրս.* ﺩﻫﻧﻪ dahna, dahana, ﺩﻫﺎﻧﻪ dahāna, *քրդ.* دەن dana *«յատպիս», փոխառութեամբ ասոր.* ܕܗܢܐ dahnā *և արաբ.* ﺩﻫﻧﺞ dahanaj *«զմրուխտի նման մի տեսակ քար,* malachite*»։—Հիւբշ. 133։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Lag. Urgesch. *600։ Բառիս վրայ ընդարձակ խօսում է Երեմեան, Բազմ. 1899, էջ 200։*

***ԴԱՀԵԿԱՆ** *(սեռ. ի. ՆՀԲ դնում է ի–ա հլ. բայց այս բանը –կան մասնիկի պատճառաւ է. ապա թէ ոչ՝ վկայութեանց մէջ ունինք միայն սեռ. –ի. յետնաբար ի հլ.) «դրամի անուն է» (գրուած է զանազան յունարէն դրամների դէմ. ինչ. Ὀβραχιά, χρυσοῦς, δηνάριον, νόμισμα) ՍԳր. (արևմտեան գրականում այժմ=տահեկական դրուշի, որ է 20 սանտիմ=8 կոպէկ). որից դահեկանաւոր «դրամանենգ» Մխ. դտ.։ Հնագոյն ձևը թուում է *դարեհեկան, իմա՛ դարեհական, ինչպէս՝ ունի Պտմ. աղէքս. 114՝ բուն լաւագոյն ձեռագրի, մինչդեռ միւսներն ունին դահեկան։*

=Փոխառեալ է հպրս. մի ձևից, որ բուն նշանակում էր «Դարեհական, Դարեհի նշանով դրամ» և յետոյ՝ առ հասարակ «դրամ»։ Նոյնից փոխառեալ են նաև վրաց. დრაჰკანი դրահկանի, დიკანი դահկանի «ոսկի դրամ» Ջաբինով[2] 361, ասոր. ܕܪܝܟܢܐ darīkānā, ܕܪܝܟܘܢ darīkun, հբր. אדרכון adarkōn (Ա. մնաց. իմ. 7, Եզր. ը. 27), միջն. דרכון darkōn (յն. δαρεικός), բոլորն էլ նոյն նշանակութեամբ։

Առաջին անգամ Աւգերեան, Բյտր. չփ. և կշռ. էջ 71—74 մեկնեց պրս. dahyak ձևից, յիշելով նաև պրս. dahgānī։ Նշբ հյ. դեկաճ, դեճար և սրանց պրս. յն. և լտ. անուններըւ Պատկ. Անան. շիր. էջ 27 և История монголовъ, 1873, էջ 91 պրս. dahgānī։ Հիւնք. յն. δανάκη (իմա՛ δανείκη) «դրամ»։ Հիւրշ. 133 պրս. دهكان dahgān «տասանոց», دهكانی dahgānī «հին ժամանակները գործածուած մի տեսակ ոսկեայ դրամ». սրանք ծագում են պհլ. պրս. 𐭣 dah «տասը» բառից, ինչպէս լտ. denarius «դրամ» ծագում է deni «տասնեակ» բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ նախ Յակոբեան, Բանասս. 1900, 40. նոյնը լեռոյ պատճառաբանեալ ձևով՝ S., Բազմ. 1908, 358 և 450։—Մառ, Грам. др.-арм. яз. 44 հայ բառը համարում է ասոր. darīkūnā-ից։

*ԴԱՀԻԱԿ «տասանորդ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Արձ. 1266 թուից (Վիմ. տար. էջ 109). նոյնը դահեկ ձևով՝ Արձ. ԺԴ դարից, անդ, էջ 149 «Զջաղացանոյս ամենոյ դդամղէն և դդահեկ»։

=Պրս. دهیک dahyak «տասանորդ, տասից մէկը», կազմուած dah «տասը» և yak «մէկ» բառերից։—Աճ.

*ԴԱՀԻՃ, ի–ա հլ. «դահիճ» ՍԳր. «անդուք, բռնակալ» Բ. մակ. է. 8, 29. Վրք. հց. որից դահճապետ ՍԳր. եղիշ. Ճառընտ.։

=Պհլ. *dahič կամ սրան նման մի ձև է ենթադրում, որ հաստատւում է նաև ասոր. ܕܟܫܐ daxša «դահիճ, lictor» բառով.—սրա բացարձակ ձևը պէտք է լինի dəxeš, որ բնիկ սեմական չէ և իրանեան փոխառութիւն պիտի լինի։—Հիւրշ. 133։

Ըստ Lag. Urgesch. 599 յիշեցնում է յն. δήμιος «դահիճ» բառը։—Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lag. Gesam. Abhd. 31։ Էմին, Քևրակ. էջ 43 համարում է դահի արմատից՝ իբ մասնիկով։ Պատկանեան. Матер. II էջ 23 նոյնպէս dah արմատից՝ իբրև իրանեան բառ։ Հիւնք. դահլիճ բառից։

Գիմ.—երև. կր. դ՛ահիճ, Պլ. դահիջ, Սեբ. դ՛ահիջ, Խրբ. Մշ. դ՛ահիջ, Ռ. բահիջ, Ասլ. դ՛ահիջ, դ՛ահիժ, Մկ. տոխիճ, Ոզմ. դ՛մխէ՛ճ, Սլմ. տոյիջկ, որոնք բոլորն էլ գործածւում են իբր ածական և նշանակում են «անգութ, դաժան, չար բնութեամբ մարդ»։

*ԴԱՀԼԻՃ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «աւտան, մեծ սրահ» ՍԳր. եղիշ. Խոր. Ոսկիփ. գրուած է նաև դահիճ Խոր. գ. 55. դախիճ Արծր. Հրտր. Պատկ. էջ 95։

=Պհլ. dahlīč «սրահ», որ գալիս է հպրս. duvarθi. «դռան առաջ սիւնապարզ պատշգամ» բառից. սա էլ ծագած պիտի լինի duvar «դուռ» բառից, թէև θi մասնիկն այլուստ ծանօթ չէ (Bartholomae 766).—-rθ- > -hl- ձայնափոխութիւնը հարաւային պարսկերէնին յատուկ լինելով՝ dahlīč ձևն էլ հարաւային պարսկերէնին էր յատուկ. հարաւից փոխ առին հիւսիսայինները և այս տեղից էլ անցաւ հայոց. հմմտ. պրս. دهلیز dahlīz, dīhlīz «միջոց ընդ մէջ տանն և դրանն, որ թէ յարկեալ իցէ և թէ ոչ, նաև միջոցն երկուց դրանց»։ Պարսկերէնից են փոխառեալ նաև աֆղան. dahlīj, dahlīz «պատշգամ, սեամ», քրդ. دهلیز dehliz «շէնքի մուտքը», ասոր. ܕܗܠܝܙ dahlīz, արար. دهليز dahlīz «տան և դռան մէջտեղը» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 176)։—Հիւրշ. 133։

Ուղիղ մեկնից նախ Շրէօդեր, Thesaur. 47. նոյնը կրկնում են ՆՀԲ, Lag. Urgesch. 600, Հիւնք. են։ Վերի ձևով տե՛ս Meillet, MSL, 17, 246։

Փոխ. — Վրաց. დალიჯი դալիճի «գահ»

(ըստ Զաբինովի).—իսկ ըստ Մաո. Физіологъ (1904), էջ լզ. և Иппол. 63 դալիճի (դաճլիճի ձևից) «սրահ» (փոխառեալ հայերէնից):

*ԴԱՀՆԱԳՈՅՆ «կարմիրի գարնող դեղին գոյնով, սիսեռագոյն». գիտէ միայն ՓԲ. յաւել. չէ՛ գործածուած մեր հին մատենագրութեան մէջ:

=Բարդուած է դահիճ և գոյն բառերից. դահիճ փոխառեալ է արաբ. طحين ṭahīn «սուսամի իւղ» բառից. համմտ. արաբ. طحيني ahīnī «սուսամի իւղի գոյնով, դեղնամոխրագոյն», որ գործածական է օսմաներէնի մէջ և պօլսահայ բարբառում:—Ա՛ճ.

ԴԱՀՆԱՅ «մսագործի դանակ կամ կացին». ունի միայն ՋԲ և սրա հետևողութեամբ ԱԲ. գաւառականներում դահճայ նշանակում է «չնջոց» ևն. բայց կայ նաև դահրայ երև. «ծառերի աւելորդ ճիւղերը կտրատելու մեծ դանակ», որ է պրս. دهره dahra «յօտոց»:

Թիրեաքեան, Արիահայ բռ. 132 պրս. دهنه dahana կամ دهانه dahāna «դանակի ևն բերան»:

*ԴԱՀՈՒՃ «մի տեսակ թռչուն է. սալամբ, francolin». մէկ անգամ գործածուած է Մագ. բեր. 228=Երզն. բեր. հետևեալ ձևով. «Ոչ ունելով (յունաց) ճէ, յորջորջեն զճուռակն ծուռակ... և զորսոցն զդուռճն՝ դուռճ և զդահուճն դահուճ (կամ տահուճ)».—(ճուռակ և դուռճ թռչուններ են):—Նոյն բառը ունի Մխ. բժշ. էջ 51 տահուճ և էջ 21 տէհուճ ձևով:

=Արաբ. طيهوج ṭīhūj կամ تيهوج tīhūj, teyhūj, մի տեսակ թռչուն է, որ կամուս, թրք. թրգմ. Ա. 420 մեկնում է թրք. čilquš ə և համարում է պրս. تيهو tīhū համանիշից արտացոլում: Նոյն պրս. բառը ԴԴ համարում է թրք. čil, որ է «սալամբ, այն է մի տեսակ կաքաւ, серая куропатка» (ըստ Будаговъ 1, 506):

Նշ՛ մեկնում է «թուի սրս ի պէտս դահամանց կամ խորտկաց, և կամ առանձին անուն էրէոյ, յն. ծաւչ, որ է խորտիկ»: ՋԲ «մխս երէոց կամ խորտիկք»: Առաջին անգամ ԱԲ դնում է ուղիղ ձևով «սալամբ», իբրև բառ պրս.: Ուղիղ են մեկնում նաև նորայր, Բառ. Ֆրանս. francolin բառի տակ և վերջին անգամ Seidel, Մխ. բժշ. ծանոթ. 83: Lag. Urgesch. 597 գնգ. dahāka «վնասակար»: Ագանց, Արեևստ Դիոն. քեր. 228 պրս. արաբ. طاوس ṭavus, յն. ταῶς «սիրամարգ»:

ԴԱՂԱԿԵԱՆ «շաղակրատ», ունի միայն Բառ. երեմ. էջ 72. սրա հետ նոյն է դաղակի՝ մէկ անգամ գործածուած Մագ. գամագտ. դաղակեաց գիր ձևով, որ Հին բռ. մեկնում է «շաղակրատական գրուած»: Մէնէվիշեան, ՀԱ, 1911, 371 լաւագոյն է համարում դատ արկածեաց «վճիռ թշնամանաց» բնթերցուածը:

ԴԱՂԱՊԱՐ «մագր». այսպէս ունի Բառ. երեմ. 72. (նոյնը նաև երկրորդ տպագրութեան մէջ). ինչ լինելը յայտնի չէ:

ԴԱՂԱՅ. նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած անթուական մի արձանագրութեան մէջ՝ Վիմ. տար. 241 «Երկու կուղպակի կտերն. մէկն ի վերա կուղպակին է և մէկն իւրինն դիմաց, որ դաղայն է ներքև»:

+ԴԱՂՁՆ «մի տեսակ վայրի անանուխ. mentha viridis L» (Տիրաց. Contributo, § 415) Վեցօր. 186. Սկևռ. ապ. 132, որ և յետնաբար դաղձ Վստկ. 197. Բժշ. սրա տեսակներն են՝ առու ի դաղձ Մխ. բժշ., անջրդի դաղձ Բժշ., էգադաղձ և կարմիր ջրի դաղձ (տե՛ս ՀԲուս. § 546—9): Գրիչներից ոմանք շփոթած են բառս գաղձի հետ, որ բոլորովին տարբեր բոյս է:

=Բնիկ հայ բառ. ծագում է հնխ. dhel- արմատի dhl- ձայնդարձից՝ ձ աճականով. համմտ. գաղձ, գեղձ, դեղձ. տե՛ս դեղ բառի տակ:—Ա՛ճ.

Հիմնք. դեղձ բառից: Վերի մեկնութիւնը տուած եմ նախ Բազմ. 1898, էջ 370—1:

ԳԻՒՂ.—Ագլ. դաղձ, Մշ. Ջղ. դ'ախձ, Ախց. Երև. Կր. դ'ախց (Երև. նշանակում է թէ՛ «վայրի անանուխ» և թէ՛ «գայլուկ». այսինքն իրար է խառնած գաղձն և դաղձն). Ոզմ.

դ՛ոխց, *Մրղ.* դ՛ոխ, *Մկ. Շմ.* Վն. տոխց, *Տիգ.* բոխց, *Սլմ.* տոխց, տոոց, *Խրբ.* դ՛ուց, *Ղրբ.* ակ՛խսեր, *Ջթ.* դ՛էղձ՛ր՛ն՛գ (<*դաղձանակ*)։—*Ղրբ.* ակ՛խսեր կարող է գալ հին *դեղձն ձևից, որով կունենանք դաղձն բառի երկրորդ ձևը՝ աւելի մօտիկ առաջին արմատին։ Տե՛ս նաև դեղձաճ բառի տակ։ Նոր բառեր են՝ ցամաքադաղձ, ջրադաղձ, դաղձաճոց, դաղձալի։

*ԴԱՄ *«ցանց, ուռկան, թակարդ»* Վրք. Հց. *Բ. էջ 38. Ոսկիփ. ուրիշ օրինակ չկայ։*

=*Պրս.* دام dām *«որոգայթ, ականաւ (ընդհանրապէս)», որի հետ հմմտ. սանս.* dāma *«կապանք, կապ», գնջ.* damia *«բանտ»։—Հիւբշ. 133։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, գնելով պրս. տամ, տամեաք։ Böttich. ZDMG, *1850, 352,* Arica, *80, 320 սանս.* daman, *պրս.* dām: Lag. Urgesch. *943,* Müller, SWAW, *42, 251 պրս.* dām:

Գիմ.—Տփ. դամբ *«ձուկ բռնելու ուռկան կամ ցանց»։*

*ԴԱՄ *«երգի ձայնակցութիւն» բառ ՆՀԲ (առանց վկայութեան).—Հին բռ.=Բառ. երեմ. էջ 72 մեկնում են «ուժգնաձայն»։*

=*Պրս.* دم dam *«երգի ձայնակցութիւն, ձայն պահելը». ծագում է* دم dam *«շունչ» նախաւոր նշանակութիւնից. որից* دمکش damkaš *«երգակից, ձայնակից» (տե՛ս Աբրիկեան, Բառ. ածկ. էջ 435—6), մասնաւորապէս «փողահարի ձայնը պահողը, գուռ. դամֆաչ»։ Պարսկերէնից փոխառեալ է նաև թրք.* dem čekmek *«դէմ բռնել, երգի ձայնը պահել»։*

Ուղիղ մեկնեց Թիրեաքեան. Արիահայ բառ. էջ 131։

Գիմ.—երև. Տփ. դամ, *Սլմ.* դոմ, *Ախց.* դ՛ոմ, *Սեբ.* դէ՛մ, *Պլ.* դէմ. *վերջին երեքը միայն եկեղեցում տիրացուի ձայնակցութեան համար է գործածւում։*

*ԴԱՄԱՆ *«հարկ, տուրք». նորագիւտ բառ, որ աւանդում է Առաք. պտմ. 325՝ առնելով ՋԺ Թուին գրուած մի Յայսմաւուրքից. «Մրաեալ առաջի Թագաւորին, եւ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց. տուեալ ձեռագիր և մտեալ դաման առնուլ հարկս յամիրայէն Բազիշու և տալ կայսերն առ ի մբնալ երկրին ի խաղաղութեան»։ Նոյնը երկրորդ անգամ ունի Հաւաք. էջ 49 «Որ 15 զռուշ շահնի դաման տամք և զռուշ ու կէս էլ նաւիբին տամք և զայլս աւելի ցաւ կամ հարկ չի լինի սուրբ տանս»։*

=*Արաբ.* ضمان ḍamān *«հրաշխաւորութիւն, վնասուց հատուցում»։—Ա՛ճ.*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 141։

*ԴԱՄԱՐԻԼ *«շուարիլ, շլանալ» Ոսկ. մ. ա. 20, որից* դամարութիւն *«շուարիլը» Ա՛Բ։*

=*Ասոր.* ܕܡܪܐ dūmārā *«հիացում, ապշութիւն»,* ܕܡܝܪܐ dəmīrā *«սքանչելի, հրաշալի, ապշեցուցիչ»,* ܬܡܗ dāmartā *«trepidans, շփոթեալ»* (Brockelm. Lex. syr. *75*)։—*Ա՛ճ.*

*ՆՀԲ հանում է դամ *«որոգայթ» բառից։ ՋԲ համարում է անստոյգ բառ, որովհետև դամարիլ ձևը մէկ անգամ միայն գործածուած լինելով, կարելի է կարծել վրիպակ՝ փոխանակ գամարիլ։ Այս պատճառով շատ կարևոր է Ա՛Բ-ի առած դամարութիւն ձևը։ Տէրվ. Երկրագունա, 1883, 172 գնում է փխ. տամարիլ և կրցում է գերմ.* dämmerung *«արշալոյս, վերջալոյս», սանս.* tamra *«մութ, նսեմ»,* tamas *«մութ», թերևս նաև լտ.* temere *«յանդգնաբար (այսինքն՝ կուրօրէն)»։ Նոյնը նաև Նախալ. 83, ուր աւելացնում է հյ. բմրիլ, բմբիր, մութ, լիթ.* tamsà *ևն։*

ԴԱՄԱՐՃԱԿ, ի–ա *հլ. «ունկնդիրների բազմութիւն». մէկ անգամ ունի Վրք. ոսկ. 17 «Որպէս իմաստասէր խօսել և գործել և չըխորհել, և խօսել այդպէս ի մէջ դամարճակաց ժողովրդեանն», ուր ձեռ. ունի «ի մէջ դէմականջաց». բառ այսմ անստոյգ է բառս։*

ՆՀԲ «որպէս յն. ὄχλος *«ժողովուրդ», լտ.* turma *«գունդ»։ Հիւնք. ենթարկում բառից։*

+ԴԱՄԲԱՆ (ի–ա *հլ. բառ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «գերեզման» Թէոդոր. մայրագ. Նար. խշ. և մծբ., որից՝ դամբանական «գերեզմանական, ողբերգական» Մագ.*

Գր. աղ. Պղատ. օրին., դամբանագէջ (գրուած նաև դանբանագէջ) Ճառընտ., դամբանակ Ա.Բ, գետնադամբան «catacombes» (նոր գրականի մէջ).—նոյն արմատին է պատկանում նաև դամբարան «գերեզման» ՅՀ. կԲ. Մարթին. Սկևռ. լմբ., որից՝ դամբարանել «մեռելը թաղել», դամբարանիլ (կրաւ.) «թաղուիլ» Մարթին։

= Հնխ. dhmbh- «փորել» արմատից, որից յառաջացած են նաև յն. θάπτω (ἐτάφην) «մեռելը լուպարկաւորել, թաղել», ἄναπτος «անթաղ», τάφος «լուպարկաւորութիւն, թաղում, գերեզման», ταφή «պատանում, դամբարան», τάφρος «փոս»։ (Սրանց հետ գործ չունին յն. τύμβος, τυμβίον «դամբան», τυμβεύω «թաղել», τύμβευμα «գերեզման, դի, դիակ», որոնք կցւում են հլ. թումբ բառին), հպրուս. dambo «թաղելու տեղ» (տե՛ս Pokorny, 1, 852)։ Հլ. դամբան և դամբարան կազմուած են -ան, -արան մասնիկներով. վերջինը ծանօթ տեղական մասնիկն է, որով դամբարան բուն նշանակում է «թաղելու տեղ, գերեզման»։

Հիւնք. և Ալիշան, Հին հաւ. 417 յն. τύμβος «դամբան» բառից առնուած։ Patrubány, SA, 2, 266 յն. θάνατος «մահ», սանս. dhvāṃta, լտ. tenebrae, հրպ. dēmar «մութ» բառերի հետ։ Մանուալճ. Բազմ. 1904, 499 նոյն է դնում հլ. տապան բառի հետ։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lidén, Arm. Stud. 42—43, որ ընդունում է Boisacq, 334, բայց կասկածով է վերաբերւում Meillet, MSL, 16, 218, առարկելով թէ դամբան և դամբարան ոսկեդարից վկայուած չեն և յունարէն բառերին համապատասխան ուրիշ հնդեւրոպական ձևեր չկան այլ լեզուների մէջ։ Մաս, ЗВО, 20, 64—66 (=ՀԱ, 1911, 751) դամբարան բառը մեկնելով «ոսկորների տեղ», դամբ «ոսկոր» դնում է փոխառեալ ասոր. ʾ ţammā «ոսկոր» բառից. դամբարան կազմուած է ասոր. ʾ ʿ bīţ ţammā «ոսկորների տուն, գերեզման» բառի կազապարով. (բայց ասոր. ţ համաձայն չէ հլ. դ-ի հետ և մի կողմ է մնում դամբան)։

ԴԱՄՆԱ «գարուն, գարնանային ժամանակ. ver». գիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լա.-հյ. էջ 569 առ։

ԴԱՄՈՆ «մի տեսակ սալոր» Մխ. առ. Գաղիան. Ոսկիփ. վասկ. 122, 135, որից դամոնաչիր «չորացրած սալոր», դամոն(ա)ջուր «սալորի քամուք» Մխ. բժշ. 27. Բժշ. (չունի ՆՀԲ), դամոնի «սալորենի» Բժշ. գրուած է նաև դամոյն (ըստ ՀԲուս. § 551)։

Գիւմ.—Մշ. դ'ամոն, Ախց. դ'ամօն, Վն. տամոն, Ոզմ. դ'մուն, Մկ. տմուն, Հմշ. դ'օմ՚ուն, Հճ. դ'ամիհն.— Վերջինը փոխաբերաբար նշանակում է «դէշ, չար (մարդ)».— իսկ Սեբ. խուլ-դ'ամէօն, «բթամիտ»։— Յայտնի չէ, թէ նո՞յն ծագումն ունի գւտ. դամբուլ «մի տեսակ սալոր», որ ունին Ալէքս. Ագլ. Ղրբ. Ղրդ. Երև. Դվ. (սրանցից Ղրբ. տմմբիլ և Երև. դամբիլ ձևով)։ Այս բառը գտնում ենք նաև ավար. դամբուլի և ուտ. դամնուլ ձևով. (պատահական նմանութիւն ունի չաղաթ. دونبول dónbūl «դեռահասմամ խակ պտուղ»)։ Մեր բառը անշուշտ հին է և չի կարող փոխառութիւն համարուել, ինչպէս ցոյց է տալիս Ղրբ. ո նախաձայնը։

ԴԱՄՐԱՆԿԻ «կանացի մի զխազարդ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Այրիվ. 8ա. «Սա դամռանկի բում գլխի և սարասխի ճակատի»։

= Պարսկերէն է հնչում։

*ԴԱՅԵԱԿ, ի-ա հլ. «ծծմայր, առնտու» ՍԳր, «դաստիարակ, խնամակալ (մարդ)» ՍԳր. Բուզ. Եւս. քր., «անուցիչ» եղն., որից՝ դայեկել «անուցանել, պահել, խնամել, կրթել» Դիոն. եկեղ. Նանայ. Պիտ. (Մատ. խոր. էջ 452) (ձիու համար ասուած), դայեկորդի ՍԳր. խոր. Փարպ., դայեկութիւն Ագաթ. Եղիշ., դայեկատուն Գ. մակ. ա. 18, դայեկարար Գ. մակ. դ. 9. Կորիւն ևն։ Գրուած է դաճեակ՝ Ձեռ. Վիեննայի, թ. 229 (ՀԱ, 1912, 554), նաև Մոլութ. 262 բ։

= Պհլ. dāyak «դայեակ, առնտու», պրս. دایه dāya կամ دایی dāyī «դայեակ», քրդ. dāye žin «մանկաբարձուհի», աֆղան. dāyī, բելուճ. dāī «դայեակ»։ Հայերէնը իրանեան

փոխառութիւն է՝ ծայրի -եակ մասնիկի պատճառաւ։ Բնիկ հայերէն, ինչպես նաև միւս ցեղակից բառերի վրայ տե՛ս դիել բառի տակ։

Ուղիղ համեմատութ նախ ԳԴ, յետոյ ՆՀԲ։ La Croze, ձեռագիր աշխատ. տե՛ս Բազմավ. 1897, էջ 8 մարտական Դիովկ = Δηιόκης հատուկ անուան է կցում։ Böttich. ZDMG, *1850*, *306* և Arica. *65*, *55* սանս. dhāṭṛ, յն. τιθήνη, պրս. dāya: Lag. Urgesch. 306 և Müller, SWAW, *38*, *585*, *590* պրս. dāya: Հիւբշ. KZ, *23*, *18* սանս. dhā «ծծել» բառի հետ։ Տէրվ. Նախալ. *88* և Հիւնք. պարսկերէնից փոխառեալ են համարում։ Bartholomae, BB, *10*, *292* և Հիւբշ. Arm. Gram. *437* հլ. դիել, դալ, դիեցիկ են բառերի հետ միասին՝ գնում են բնիկ հայերէն բառերի շարքը։

ԳԻՒ.—Ննխ. դայէգ, Պլ. դայէգ, դաճէգ, Ալշ. Խրբ. Մշ. դ՚այէգ, Ախց. Կր. դ՚աճէկ, Ակն. Սեբ. դ՚աճէգ, Ռ. քայէգ. բոլորն էլ նշանակում են «մանկաբարձուհի»։

ԴԱՅԻՆ. նորագիւտ բառ, որ բացառական ձևով մէկ անգամ միայն գործածուած է Օրբել. էջ 261 «Ապա այսմ դատաստանի յոյժ հաճութեամբ հաւանեալ աթաբէկին և ամենայն բազմութեան ազատակոյտ իշխանացն՝ հրամայեցին ունել դխաչն անգային և անհամիմատ Լիպարտի և իւրոցն»։ Թէև բառիս ճիշտ իմաստը յայտնի չէ, բայց որովհետև յարադիր անհամիմատ բառը նշանակում է «առանց դատական պահանջի», ուստի նա էլ սրան մերձաւոր մի նշանակութիւն պիտի ունենայ։

Շահնազ. *Բ. 303* (հրտր. Օրբել.) մեկնում է «անբայիճն, առանձին սեպհականութիւն, ստացուած՝ յորում այլ ոք չունի մասն, եթէ չիցէ վրիպակ գրչի»։ Երեվի Շահնազարեան ուղում է հասկանալ ան+արաբ. تعيين ta'yīn «որոշել, նշանակել, կարգել, ոռճիկ», բայց թէ՛ դ ձայնը և թէ՛ նշանակութիւնը անյարմար են։ Կայ նաև արաբ. دين dayn «պարտք»։

ԴԱՅ, *տե՛ս* Դալ։

ԴԱՅԼԱՅԼ. *արմատ, որ առանձին գործածական է միայն արդի գրական լեզուի մէջ. հնից ունինք* դայլայլիկ *(կամ* դալալիկ, դալայլիկ, դէլէլիկ*) «գեղգեղումն, խաղուն ձայն, երգ» (անեզաբար գործածուած) Ան. որս. Մագ. և երգն. քեր. Ոսկ. գծ. Պզատ. օրին. 194, որից* դալալական *«խաղուն ձայնով» ԱԲ։*

=Կրկնուած է դայլ պարզական արմատից, որ թերևս բնաձայն է։—Ա.Հ.

*Նշ*Բ յիշում է պրս. դալաճ, դալաչ *«ձայն, հնչիւն»։ Հիմնք. պրս.* բէլէլ, *որ անծանօթ է Գէորգ Դպրին։ Վերի ձևով մեկնած եմ ՀԱ, 1899, 233։*

ԴԱՆ *«դանակ». մէկ անգամ գործածում է Օրբել. ժա. «Հաննալ ի թափուցն (պատեանից) զփոքրիկ զդան» (տե՛ս Նշ*Բ թափ բառի տակ. *իսկ հրտր. էմինի՝ էջ 31—32 և Շահնազ. Ա. էջ 86 ունին «զփոքրիկ դանակիկն»)։ Նշ*Բ մեկնում է բառս «դանակ կամ խթան», որին հետևում է նաև ԱԲ, իսկ ՋԲ մեկնում է «կտրոց»։ Որովհետև խօսքը էշի մասին է, ուստի Նշ*Բ ենթադրել է նաև «խթան» նշանակութիւնը, որ սակայն ուղիղ չէ։ Ուղիղ է միայն ՋԲ, իբրև «կտրոց, դանակ», ինչպես ցոյց է տալիս վրացերէնը։ Այս արմատից է կազմուած* ԴԱՆԱԿ, ի–ա հլ. *«կտրոց, դանակ» Վեցօր. 197. Բուզ. Ոսկ. մաթ. Կիւրղ. ծն., որից* դանակացիտ *«դանակով ճեղքուող» ԱԲ։*

*Նշ*Բ *«որպէս թէ* հատ հատ, դանէ դանէ*», որով ուզում է հանել պրս.* دانه dāna *«հատ, հատիկ» բառից.—Հիմնք. պրս.* թիւնիւ *«նուրբ թիթեղն երկաթոյ»։ (Այսպիսի ձև չգիտէ ԳԴ. կայ միայն* تنك tunuk *կամ* tanuk *«նուրբ կամ անօսր (կերպաս, ոստայն), ծանծաղ (ջուր)» և* تنكة tanaga *«թիթեղն երկաթեայ կամ պղնձի. թէնէքէ»). Patrubány, ՀԱ, 1910, 93 սանս.* dhārā *«կտրել, սրել» բառի հետ՝ իբր բնիկ հայ.։ Թիրեաքեան, Աբրահայ բառ. 132 պրս.* دهنه dahna *«սուր բերան»>դանեայ ձևի նուազականն է։ Պատահական նմանութիւն ունի սանս.* ṭaṅka *«դանակ»։*

ԳԻՒ.—Տփ. դա՛ճակ, Ախց. երև. Կր. Ջղ.

դ՚անակ, *Ննխ. Պլ.* դանագ, *Ալշ. Խրբ. Մշ. Սեբ. Սչ.* դ՚անագ, *Ասլ.* դ՚անագ, դ՚անայ, *Մկ.* տոնակ, *Ագլ.* դո՚նոկ, *Ոզմ.* դոնոկ, *Գոր.* տոնոկ, *Սլմ.* տոնոկ՚, *Շմ.* տոնոգ՚, *Տիգ.* բոնոգ, *Ռ.* բանագ, *Ղրբ. Մրղ.* ախնակ, *Հճ.* դ՚անօգ, *Զթ.* դ՚անօգ, դ՚անոգ, *Համշ.* տօնագ:— *Նոր բառեր են՝* դանակատուր, դանկիկ, դանկել, դանկտել, անդանակ, դանակակոթ, դանակամոթր, դանակարար, դանակագող, *մնկ.* դանդան:

Փոխ.—Վրաց. დანა դանա «դանակ, սուր», დანაკი դանակի «դանակ». *Ինգ.* դանայ «դանակ»:

*ԴԱՆԳ *կամ* ԴԱՆՆ, ի–ա *հլ. (յետնաբար ո հլ.)* «մի փոքր կշիռ, ¹/₄ դիրհամ» *Եփր. փես. 426. Շիր. էջ 27, Վրդն. եւ.*, «հների փոքրագոյն դրամը» *ՍԳր. Ոսկ. մ. բ. 12. Վրք. հց. ոճով ասում են* դանկի միոյ, երկուց *կամ* երից «մէկ փարանոց, կոպեկանոց, չնչին, դուդնաքեայ» *Եփր. աղ. և յղ. դող. Ոսկ. մ. բ. 12,* որից՝ դանգաշաճուրիւն «դրամ շահիլը» *Սարկ. բհ.*, դանգարժեայ «մէկ փարանոց» *Եփր. մրգ. 353,* երեմդանգեան «երեք կոպեկանոց, անարժէք (մարդ)» *Ոսկ. մ. դ. էջ 122,* դանգեկէս «կէս փարանոց» *ԱՔ*, վեցդանգեան «վեց դանգ կշռող կամ արժող» *Խոր. աշխ.*:

=*Պհլ.* dāng, *պրս.* دانگ dāng *կամ* dānk «չորրորդ մասն միոյ տիրհէմի, որ է չորս եղջերակորիզ. 2. չորրորդ մասն միոյ մսգալի, որ է վեց եղջերակորիզ», دانگانه dāngāna «խնջոյքին մասնակցելու համար իւրաքանչիւր անձի վճարած դրամը»: Սրանք ծագում են պհլ.* dānak, *պրս.* دانه dāna, *սանս.* dhānâ- «ցորենահատ» *բառից (նրա. Ղրբ.* դան): *Իրանեանից են փոխառեալ նոյնպէս ասոր.* دانقا dankā «դիրհէմի ¹/₆ մասը», ܬܢܓܐ tangā «պարսկական մի տեսակ դրամ», *արաբ.* دانق dāniq «¹/₆ դիրհէմ», *վրաց.* დანგი դանգի, *ուս.* բոնգա, *ռուս. ցախ.* բանգա «դրամ», *չաղաթ.* تنگه tenge «մի տեսակ արծաթ դրամ» (Horn, § 536):— *Հիւրշ. 134:*

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, բացատր. չի. 75, որից յետոյ ԳԴ և ՆՀԲ:— Böttich. ZDMG, *1850, 352.* Arica, *15,* Lag. Gesam. Abhd. *32 սանս.* dhānaka, *պրս.* dāng, *յն.* δανάκη, *որոնցից միայն պարսկերէնն է ընդունում* Lag. Arm. Stud. § *564: Հիւնք.* դանեկան *բառից համառօտուած:*

ԳԻՒ.—Երև. դանգ «¹/₃ կոպէկ»:

ՓՈԽ.—Կայ կապադովկ. τάγκε «մի տեսակ դրամ» (Καρολίδης, Γλωσσ. *էջ 99*), որ սակայն հայերէնից չէ, այլ չաղաթայից:

ԴԱՆԳԱՏԵԼ «ծանակել». *ունի միայն Բառ. երեմ. էջ 72,* որ *էջ 61* էլ գանգատել *բառ մեկնում է «խորշիլ, սքանչանալ, գեղաշրջել»:*

ԴԱՆԴ, ի *հլ.* «քանդրացնել մրուր հեղուկ նիւթոց». *ունի միայն ՓԲ. անառոյգ բառ:*

ԴԱՆԴԱՂ «ծանրաշարժ, թուլամորթ» *Նար. Լմբ. պարգ.*, որից դանդաղիլ *ՍԳր*, դանդաղագին *Կոչ. 240. Եւագր.*, դանդաղազոյն *Ոսկ. յհ. ա. 3. և մ. ա. 2.*, դանդաղական *Ոսկ. ես.*, դանդաղամած «քանձրամած» *Բ. մկ. ա. 20.* դանդաղկոտ *Ոսկ. յհ. Պղատ. օրին. Խոսր.*, անդանդաղ *Առակ. դ. 11. Ագաթ.: Նոր բառեր են՝* դանդաղաշարժ, դանդաղաբայլ, դանդաղկոտութիւն *են:*

=*Կրկնուած է* *դաղ *պարզ արմատից:* Böttlcher, ZDMG, *1850, 352.* Arica, *81, 357 սանս.* tandrālu «ծոյլ, դանդաղ»: *Տէրվ. Մասիս, 1881 ապր՚ 28* կրկնուած դար, դաղ *արմատից. համմ.* դիւ, դուլ, դլալ, *հնխ.* dhar «կացցայանել, կալ, անել, տանիլ, կրել», *լծ.* դադարել: Bugge, Btrg. *41 մերժում է սանս.* tandrālu, *որովհետև ծագում է* tandate *բայից: Հիւնք.* Տաճառաղոս *յատուկ անունից:* Meillet, MSL, *10, 279 իրար է կցում* դողալ, դղրդիլ, դղորդել, դրդուել, դանդաղիլ, *իբր կրկնական. համմ. սանս.* dardirat, dédiçat, *յն.* τανθαλύζω, τανθαλύζω «շարժել, դղրդել», τονθορύσσειν «դղրդալ», *լիթ.* drugỹs «ջերմն», *ռուս.* дрогнуть «ցնցուիլ», дрожать «դողալ», *լեհ.* drżec', *չնխ.* drhati, *լիթ.* drebù, drebėti «դողալ», որոնք բոլոր կրում են dh+ ձայնաւոր+r *արմատական տարրը: Իբրև կրկնաւոր խօսում է Աճառ. ՀԱ, 1899,*

233։ Պատահական նմանութիւն ունի ն. ասոր. tantalt'a (tantəl) «յապաղել, դործը ձդձգել»։

ԳԻՒ.—երև. դանդաղ, Ախց. խրբ. դ'անդ'ադ, Մշ. դ'անդ'ախ, Հճ. դ'անդ'ող, դ'անդ'օղ, որոնք նշանակում են «դանդաղ», իսկ Ոպմ. դ'ոնդ'ող «անխելք», Աժտ. քանքաղ «տխմար», Տփ. քանքախ «յոյր, հասասամարմին»։

ՓՈԽ.—Աղայեան, Աղբիւր, 1889, էջ 6 մեղանից փոխառնալ է դնում վրաց. დანდალო դանդալի, որ բատ Ջուբինով[2], էջ 396 նշանակում է «աստիճան» և փոխառնալ է հայերէնից!—կայ նաև վրաց. դատանալաբա «կըմկըմալ, տնտնալ, ապին անդին սլքտալ», մոանանալ «սլքտացող, ծանրաշարժ», բայց նախաձայնը անհամապատասխան է։

*ԴԱՆԴԱՆ, ի–ա հլ. «ատամ, ակռայ» Կաղնկա. (իբրու դանդանաց ցցնալ) հրտր. էմ. էջ 159, Շահնազ. Ա. 322։—Միւն. քեր. 209= Երզն. քեր. (դանտան) հոմանիշ է դնում հեւան «առջևի ատամները» բառին. իսկ Հին բո. մեկնում է «լինոք կամ ատամունք»։

= Պհլ. dandān, պրս. دندان dandān, քրդ. didān, բելուճ. dantān, օսս. dändäg, պնդ. ·dantānō (պահուած միայն vimitodantānō բարդի մէջ). սանս. dánta- «ատամ» (Horn, § 574). այս բոլորը նոյն ծագումն ունին, ինչ որ հլ. ատամն (տե՛ս անդ)։—Հիւբշ. 134։

ՆՀԲ «բառ պրս. տեհետան և սանս. տանդա, որ և լս. dens, dentis»։—Lag. Arm. Stud. § 571 պրս. dandān:

ԴԱՆԴԱՆԱԿ «դանդազկոտ». ունի միայն Բառ. երեմ. էջ 72։

*ԴԱՆԴԱՆԱԻԱՆ, ի–ա հլ. (ճառընտ. ի հլ.) «սանձ, եբասանակ» ՍԳր. (6 անգամ). Մծբ. Եփր. ծն. քս. 20. Բէռփիլ. պհ. Ճառընտ. Անան. Թղթ. 12. Պղատ. օրին. Սարկ. լս. 22. (գրուած է դանդանաւան Արծր. հրտր. Պատկ. էջ 297). որից դանդանաւանդակապ «սանձով կապուած» նար. առաք. էջ 429։

=Պհլ. *dandānband ենթադրեալ ձևից, որ կազմուած է պհլ. պրս. dandān «ատամ» + بند band «կապ» բառերից։—Հիւբշ. 134։

Ուղիղ մեկնեց Lag. Arm. Stud. § 572. Նոյնը նաև Տէրվ. Մասիս, 1882, օգ" 5, Լեղու, էջ 153, Նախալ. էջ 86։—Patrubány, ՀԱ, 1908, 152 կարդալով գանգաճաւանդ! կցում է գոթ. gaggan «երթալ» և bindan «կապել» բառերին։

ՓՈԽ.—վրաց. დანდალო դանդալի «սանձ» Դ. Բագ. ժթ. 28.—Ս.Գրքի Թարգմանութեան ժամանակ վրացի Թարգմանիչը հայերէն բնագրում գանելով դանդաճաւանդ բառը, տառադարձութեամբ պահել է, որ յետոյ ազգաւորելով՝ առացել է այս ձևը (տե՛ս Մառ, ЗВО, 13, 19)։

ԴԱՆԴԱՂ, ի հլ. «երերուկալը, ցնորք» Հին լծ. եւագր., որից՝ դանդաղել «հարբածի պէս այս ու այն կողմ երերալ, տատանիլ. 2. ցընդաբանել, յիմար յիմար խօսիլ» ՍԳր. Եզն. Եփր. եվ. էջ 183, Եփես, 147. Ոսկ. ա. տիմ., դանդաղուն Բուզ., դանդաղութիւն Ոսկ. ես. 276, դանդաղունք Եզն., դանդաղական Ոսկ. ես. ևն։

=կրկնաւոր է։

Տէրվ. Մասիս, 1881, մայ" 11 համարում է կրկնաւոր։ Հիւնք. դանդող բառից։ Աճառ. ՀԱ, 1899, 204 դա պարզ արմատից կրկնութեամբ և ածանցներով։

ԴԱՆԴԻՒՆ «գերեզմանի մութը կամ փառութիւն և կամ արհաւիրք». մէկ անգամ ունի Սարկ. քհ. «Դանդիւն և խաւարն ի ներքոյ (գերեզմանի) շրջի և բուրումն ժահահոտ ապականութեան (արտաքոյ)» (հրտր. Սոփերք, հտ. Գ. էջ 20)։ Նոյն բառն է դանթիւն, որ Բառ. երեմ. էջ 72 մեկնում է «դանթիան կամ մութն»։

Bugge, Btrg. 41 ցեղակից է դնում գնդ. tąṛa<*tamtra «մթամթիւն, խաւար» բառին։ Նոյնը կրկնում է Johansson, BB, 18 (1892), էջ 11, Beitr. z. gr. Sprachk. 132 և IF, 3(1894), էջ 213 հնխ. temes: temet հիման վրայ։ Ուղտրիկեան (տե՛ս ԳԲ, էջ 354 և 1405) պրս. تیر tīr «մթամթիւն»։

ԴԱՆԴՈՂ տե՛ս Դոնդող։

ԴԱՆԻԿ 'նուիճ, իլան եասաղի, dracuncu-

lus» Գաղիան. Կամրկ. ունին միայն Բառ. եբրմ. յաւել. 574 և ՀԲուս. § 553։

*ԴԱՆԻՇՄԱՆ «մահմեդական գիտուն, կարդացող, մոլլա», որ և գրուած դանիշմանդ, դանշման. Նոր վկ. էջ 137 (ԺԴ դարից) ևն։

= Պրս. دانشمند dānišmand «գիտուն»։— Ա՛ճ.

Տե՛ս Հայոց նոր վկաները, էջ 782։

ԴԱՆԿ տե՛ս Դանգ։

ԴԱՆԿԱՅ կամ ԴԱՆՔԱ «մի տեսակ դոհար» Նոր. աշխ. 6։4. չունին բառարանները։

ԴԱՆՏԱԿԷՍ «մի տեսակ մեծ շուն». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Կալիսթ. 125 «Եւ գտաք գազանս կապեալ առ դրունս նոցա՝ մեծամեծ իբրև զշունս՝ որ առ մեզ կոչին դանտակէս»։

= Անշուշտ յոյն-մակեդոնական փոխառութիւն է։

*ԴԱՆՓԻ «տաճար Ս. Երուսաղէմի. 2. տաճարական ասպետները». Կիլիկեան շրջանի բառ է. համմ. Սկևռ. պատ. 13 ևն։

=Հֆրանս. temple նոյն նշ. որ է լտ. templum «տաճար»։

Ուղիղ մեկնեց Karst, Կիլիկ. քերակ. էջ 30 ևն։

ԴԱՇԵՈՒՐԱՆ, ի–ա հլ. «տաշտ, կոնք, լական» Դատ. ե. 25. Անկ. գիրք հին կտ. Ա. էջ 183. գրուած է տաշտագուրան Նիւս. (բատ Հացունի, Ճաշեր, էջ 84) և ԱԲ։

Հինք. պրս. دوشه dōša «կաթ կթելու աման» և խուրան, խուրնա (իմ՛ իրք. qurna) «աւազան ջրոյ» բառերից կազմուած, Коршъ, Ирск. Мшак 1914, № 122 հպրս. *daxšava «այրուող նիւթ, կիզանուտ» + dhāna- «պահեստարան, -տարան»։ Հացունի, Ճաշեր 72 դաշխուրան <պրս. տաշա խուրան «ուտելոյ տաշտ», իսկ էջ 85 տաշտագուրան<պրս. տաշտ+ fիւրէ «գունդ» կամ fիւրազ «կուժ»։

ԴԱՇՆ, ն հլ.(-շին, -շամբ, -շինք, -շանց) «երկուսի միջև դրուած պայման, համաձայնութիւն», որ բառիս նախնական նշանակութիւնն է, ՍԳր. Փիլ. Խոր., «Հաւատոյ հանգանակ» Մաքս. եկեղ. Լմբ. պարգ., որից՝ դաշնակ «եղանակ, կերպ, պայման» Ոսկ. մ. բ. 28, դաշնաւոր ՍԳր. Եւս. քր. եղն., դաշնադիր Ասող. գ. 24, դաշնակից Յհ. իմ., դաշնաւոր Ջքր. սարկ. Բ. 34, դաշնաւոտ Հաւաք. 49 (նորագիւտ բառ)։— Նախնական «պայման, համաձայնութիւն» նշանակութիւնը յետին հեղինակների մօտ դարձած է նաև «խաղերի լաւ համաձայնութիւն, յարմարութիւն ձայնից արուեստականաց, ներդաշնակութիւն». այս իմաստով ունինք՝ դաշն Պղատ. օրին., դաշնակապէս Փիլ., դաշնակաւոր, դաշնակել, դաշնակումն, դաշնաւոր, ներդաշնակ ևն Փիլ. Լմբ. Նչ. քեր. Երզն. քեր. Պիտ. ևն։ Աւելի յետոյ՝ դաշն փոխաբերաբար ստացել է «մեղմով, մեղմիկ, հանդարտ, կամացուկ» նշանակութիւնը. այսպէս՝ Վրք. հց., որից դաշնաւորութիւն «մեղմելը, չափաւորելը» ՅՀ. կաթ.։ Այս արմատին է պատկանում նաև գագաթնադաշն «գագաթը անզարդ սաղաւարտ» Մաշտ.։ Նոր գրականին յատուկ բառեր են՝ դաշնակ կամ դաշնամուր (երաժշտական գործիք), դաշնակահար, ձեռնադաշնակ, բաղդադաշնակ, մելոդաշնակ, աներդաշնակ, դաշնակցութիւն, դաշնակցիլ, դաշնակցական, դաշնագիր, դաշնագրութիւն ևն։

= Գհլ. dašn համանիշից, որ ստանդուած է մէկ անգամ սխալագիր پاں pāšn դրչութեամբ և որ Nyberg, Hilfsbuch, 2. 173 մեկնում է „etwa Vertrag, Vereinbarung“։ Այս մեկնութիւնը ճշտիւ նոյն է հլ. դաշն «պայման, համաձայնութիւն» նշանակութեան հետ։ Nyberg ասում է թէ իր ընթերցումը ենթադրական է (meine Lesung ist hypothetisch), ասոր պղպում եմ փոքրիկ սարբերութեամբ پاشن dašn (ə վերանակ ՃՀ)։ Սրանց հետ նոյն է նաև վրաց. დაშნი դաշնի «соучастникъ, соумышленникъ, մասնակից խորհրդակից», որ փոխառեալ է իրանականից։— Ա՛ճ.

ԴԴ պրս. تاش -tāš և թրք. داش -daš «կից» նշանակութիւնը ստոյգ մասնիկի հետ։ Müller, SWAW, 42, 254 (և յետոյ WZKM, 8, 94—95) գնդ. dašina «աջ ձեռք»=յն. δεξιός, պհլ. ՚ՃՇ (մանիք. պհլ. דשן Salemann, Man. Stud.

ЗАН. *8, 69)* daš̌n, *պրս.* دشخ daxš̌ *«սկիզբ». Նշանակութեան զարգացման համար համմտ. արաբ.* يمين yamīn *«աջ ձեռք» և «երդում»։—Այս մեկնութիւնը ընդունած են* Justi, Zendsp. *150, Հիւբշ.* KZ, *23, 34, Մառ,* ЗВО, *5, 318։—Հիւբշ.* Arm. Gram. *134 մերժում է։ Հիմնք.* դաշն *(եղանակը)<*շաւիղ *բառից, իսկ* դաշն *«պայման»<արաբ.* šart *հոմանիշից։*

*ԴԱՇՆԱԿ *«փոքր դաշոյն» Փ. Սակր. ճէ. Սմբ. պատ. 89 (երկրորդ վկայութիւնը չունի ՆՀԲ)։*

=*Պհլ.* *dašnak *նմանադրեալ ձևից, որ մեզ աւանդուած չէ, բայց նոյնն են հաստատում պրս.* دشنه dašna *«դաշոյն» և իրանականից փոխառեալ ասոր.* ܕܫܢܐ dašnag *«երկսայրի դանակ», արաբ.* خشنه dašnaǰ *«դաշոյն», վրաց.* დაშნაკი dašnakʻi, დაშნაგი dašnagi *դաշնագի,* დაშნა dašna *դաշնա, լազ.* დაշნა *«սուր, դանակ»։—Հիւբշ. 134։*

ՀՀԲ համարում է դաշոյն բառի նախապատկանը։ Ուղիղ մեկնեց նախ Գ.Դ, յետոյ Lag. Urgesch. *1001,* Ges. Ab. *36։* Pictet, *բ. ապ. հա. Բ. էջ 287 պրս.* tiš *«թուր», սոս.* tesakъ *«թուր» բառերի հետ։*

ԴԱՇՆԱՆԵԼ *«վանել». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բառ. երևմ. էջ 296* վանել *բառի բացատրութեան մէջ՝ հետևեալ ձևով.—*վանել *«ընթադրել, դաշնանել, հալածել, փախցնել»։*

ԴԱՇՈՑՆ *«երկսայրի կարճ սուր» Յուդթ. ժգ. 8. ժե. 11. գրուած դարշոյն Եփր. գր. 345, որից դարշուճակալ «սուսերաւոր» Մծբ. 385։ Արդի գրականի մէջ գործածական է միայն առաջին ձևը, որից* դաշուճաճար։

ՆՀԲ պրս. dašna *«դաշոյն»։* Böttlich. Arica, *75, 219* daç *արմատից։* Lag. Proph. chald. *51, 6 հանում է դնդ.* dašina *«աջ» բառից, իբր թէ «աջ կողմից կախելու բան»։ Հիւնք. պրս.* dašna: *Սակայն չէ թէ ի՛նչ կապ ունի դաշնակ բառի հետ, մանաւանդ որ բառիս հնագոյն ձևը թուում է դարշոյն։*

ԴԱՇՏ, ի-ա հլ. (ի հլ. են գոյց տալիս՝ գրծ. դաշտիւ Ա. մակ. ժ. 78 և դաշտիւք Ա. մակ. գ. 40) «ընդարձակ և հարթ բացատ» ՍԳր. Ագաթ., «սեղեակի զարդարուն կամ ծաղկանկար յատակը» Ոսկ. Հռոմ. 114, որից՝ դաշտանալ «հարթուիլ, խոնարհիլ» Սղ. ճգ. 8. Ագաթ. Եղիշ., դաշտագետին Ա. մակ. գ. 40, դաշտական ՍԳր. Ագաթ., դաշտակողմն Յուդթ. ժե. 3. Եփր. ծն., դաշտանձև Ագաթ. Եփր. յես., դաշտամուխ լինել «դաշտ երթալ» Ա. մակ. ժգ. 5, դաշտային ՍԳր, դաշտավայր Դատ. ա. 9. Բ. Թագ. իգ. 31, դաշտատուր «վայրի» (օր. եղջերու դաշտատուր) Եփր. յոբ. ՀԱ, 1912, 671 (նորագիւտ բառ), դաշտել «կործանել, հողին հատասարեցնել» Եփր. Թգ. 405, դաշտիսօս «դատարկաբան» Մանդ. էջ 217 (նորագիւտ բառ. շինուած է բնդվայրաիսօս բառի նմանութեամբ), յեռնադաշտ Եղիշ., ձորադաշտակ ՅՀ. կաթ. ևն։

=*Պհլ.* *dašt *«անապատ, հարթավայր», սոդդ.* daxšt *նոյն նշ.* (Nyberg, Hilfsbuch, *2, 50), որոնց հետ նոյն են պազենդ.* dašt, *պրս.* دشت dašt, *քրդ.* dešt, desta, dest, *զազա* deište *«դաշտ». որանից՝ պհլ.* daštik *«դաշտային»=պրս.* دشتی daštī *«վայրի, վայրենի» (համմտ. պրր. դաշտաւոր հոմանիշը)։ Իրանականից փոխառեալ են նոյնպէս ասոր.* ܕܫܬܝܩ daštig *«դաշտային». ն. ասոր.* dištə *«դաշտ», արաբ.* دست dast *«դաշտ»։—Հիւբշ. 134։*

Ուղիղ մեկնեց նախ Շրէօդէր, Thesaur, *47, որից յետոյ* Klapr. As. polygl. *էջ 100 և Գ.Դ։ Նոյնը նաև ՆՀԲ,* Petermann, *22,* Böttich. Arica, *78, 291 ևն։* —Lag. Gesam. Abhd. *34 հլ. դաշտի կցում է պրս.* daštī, *պհլ.* daštik, *ասոր.* daštig *«վայրի» բառերին, որ և կրկնում է* Lag. Arm. Stud. § *570։ Հիւբշ.* Arm. Gram. *134 գոյց է տալիս, որ հլ. բառը դաշտ ձևի սեռականն է և պարսկականների հետ գործ չունի։* Nyberg *չհիշելով հլ. դաշտ ձևը, իրանեանից է դնում հլ. երաշտ<*ðašta *և սոդդ. ձևի վրայ հիմնուելով՝ մեկնում է* dag.

«ալրիել», daxša «հրդեհ» բառից՝ պհլ. dašt «ալրած, չորացած երկիր»:

ԳԻՒ.—Տփ. դաշա, Ալշ. Ախց. Երև. Կր. Մշ. դ'աշա, Սչ. դ'աշդ, Ոզմ. դ'mշա, Մկ. Մրդ. Սլմ. Վն. տmշա, Տիգ. բmշդ, իսկ Ագլ. Դէ'շտի՝ յատուկ անուն է (Ներքին Ագուլիս գիւղն է): Նոր բառեր են՝ դաշտակոտրիկ, դաշտաֆանդ, դաշտաւոր, դաշտամէջ, դաշտահաւ:

*ԴԱՇՏ «մի տեսակ երաժշտական խազ» ԱՔ. չունի ՆՀՔ, իսկ ՀՀՔ գրում է բաշտ:

=Հյ. տաշտ<պրս. تشت tašt «տաշտ» բառն է. ձևի նմանութիւնից առել է այս անունը: Վաստակոց գրքում յաճախ դաշտ գործածւում է իբր տաշտ. հմմտ. նաև պրս. تشتگر taštgar «է անուն երաժշտի մերոյ»: —Ա.Հ.

Peterm. Über die Musik der Armenier, ZDMG, *1851, 365—72* ուղղում է բաշտ և հանում է բաչել «հատաչել» բառից կապակցով:

*ԴԱՇՏԱՆ, ի, ի–ա հլ. «օրէնք կանանց» ՍԳր. Եփր. Երր. 215. «դաշտան ունեցող կին» ՍԳր, տուն դաշտանաց «արտաքնոց» Փարպ., դաշտանիկ «դաշտան ունեցող» Բարսղ. գ. 29. Բուզ., դաշտանութիւն «դաշտան» Եփր. փնտ. 422. Ոսկիփ.:

=Պհլ. daštān «դաշտանն», պազենա. daštān «դաշտանն», պրս. دشتان daštan «դաշտան ունեցող կին», որոնց հնագոյնն է վնդ. daxšta- «ընշան, որևէ մարմնաւոր պակասութեան արտաքին նշան, 2. դաշտանն», daxštavaiti- «դաշտան ունեցող»: Ստուգաբանութիւնը անծանօթ է (Horn, § 570, Bartholom. 676—7): Իրանեանից փոխառած են նաև քաղդ. דשתן daštān և վրաց. დაშტანი դաշտանի «արիւնբխութիւն, անառակութիւն», որ կարող է նաև հայերէնի միջոցով անցած լինել:—Հիւբշ. 135:

Ուղիղ մեկնեց նախ Գ.Դ. նոյնը նաև Lag. Urgesch. *632*, Gesam. Abhd. *35*: Տէրվ. Մասիս, *1881* մայիս *11*:—Իսկ Հիւնք. պրս. տիյսպաճա «հին դաշտան»:

ԴԱՇՏԿԱՐԱՆ «իշխանական մի սիրաղոս», որ գանագան աղաւաղեալ ձևերով առնդել են Ուխտ. հա. Բ. *57, 58, 64, 93, 95* և Գիրք Քղթոց (տե՛ս ցանկը):

Մառ, ЗВО, *17, 026* մեկնում է կարան «իշխող, կառավարիչ» Դաշտ գաւառի. ուրեմն կար կարան ձևով մի բառ, որ հանում է կարել բայից (ինչպէս իշխել—իշխան) և որից փոխառեալ է դնում վրաց. კარაճი կարաճի համանիշը՝ գործածուած Պիղատոսի անվաւերականում: Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 242 բուն ձևը դնում է դաշտկարան:

ԴԱՊԱՌ «ծոյլ, հեզդ, persegnis, piger, tardus». գիտէ միայն Ներսէսեանփիչ, Բառ լատ.-Հյ. էջ 9 ա, 396 ա, 402 բ և 533 բ. Նոյնը գտնում եմ Հաւնգարահայ բարբառում դապար «ծոյլ» ձևով, որից էլ դապրութիւն «ծուլութիւն». Հմմտ. «Դապար տղան ամէն մարդու դիմաց առելի է», «Դապրութիւնը ամէն չարութեան կցուածքն է» (Հայնակ և մաճառնակ այբուբենի Բուղթ, Վիեննա *1834*, էջ *12*, ուր համանիշ է դրուած հունգ. árest, árestség):

ԴԱՌԵԱԼ «կծուած, խայթուած». նորադիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սրճ. խորհ. էջ *375* «եղեալ գնա ի կաթողս քարանց, քարոզէր բանակին երբալեցւոց, եթէ եկայք ապրեցարուք սովու ի քիւնաւոր օձից դառնալոզ և խածեալոզ, բժշկեցէք զվէրս ձեր» (Հմմտ. Թիւք, իս. 9):—Նոյն է Ղրբ. Երև. դառած «կատղած» (արջ, շուն են), որ սակայն դառնալ բայի մի նոր իմաստն է ներկայացնում:

ԴԱՌՆ, ն հլ. (-ռին, -ռանց, -ռինց) «լեղի» ՍԳր. Եզն. Մծբ., «դժնդակ, անտանելի» ՍԳր. Ոսկ. մ. ա. *23*. Փարպ., «դառնիճ խոտոր» Փիլ. հլ., որից՝ դառնանալ «լեղինալ. 2. վշտանալ, զայրանալ» ՍԳր, դառնացուցանել ՍԳր, դառնացուցիչ Օր. լա. *27*. Եզեկ. բ. *3*, դառնացութիւն Եփր. Համաբ. *126*, դառնութիւն ՍԳր, դառնէնի «դառն պատուղ ունեցող» Վեցօր. *97*, դառնապէս ՍԳր, դառնաշունչ Ոսկ. Ես. և մ. բ. *6*. Եփր. Բգ. *401*, դառնադառն Ոսկ. յհ. ա. *9*, դառնաճոգի Եփր. Բգ. *401*, դառնաբեր Ագաթ. Կոչ., խաղողադառն Մծբ., դառնիճ «դառն, լեղի» Ագաթ. «խիստ լեղի

մի բոյս» (որ և դաոիճ) Ոսկ. Եբր. Փիլ. եվ. (հմմտ. յն. τυρβὸς «լեղի» և τυρὸς «դառնիճ. լեղի հազար»), դաոնագոյժ (նոր բառ) ևն։

Պատկանեան, Изсл. о сост. арм. яз. 22 համեմատում է քրդ. tāl «դառն» բառի հետ. (բայց այս բառը պրս. تلخ talx «դառն» ձևից ծագած լինելով՝ այստեղ դրծ չանի, ինչպէս նկատում է նաև Justi, Göttin. gel. Anz. 1866, 998)։ Canini, Et. étym. 27 պէլասկ. Ծére: Patrubány, SA, 2, 268 հնխ. denk «կծել» արմատից, իբր յն. δάκνω «խածնել» ևն։ Scheftelowitz, BB, 29, 20 սանս. tāra- «թափանցիկ, բարձրաձայն», պրս. تُرش turš «թթու» ևն։ Հիւնք. դառնալ բայից։ Այսպէս է մեկնում նաև Lidén, Arm. Stud. § 71, մանրամասն ցոյց տալով թէ ի՛նչպիսի շատ լեզուներում դառնալ նշանակող բայը առանում է «թթուել, կծուել» նշանակութիւնը։ Նոյնը գտնում ենք նաև արդի հայերէնում, օր. գինին դարձեր է «գինին թթուել է, քացախել է». բայց հին հյ. դառն բառը չանի «թթու, կծու» նշանակութիւնը։ Karst, Ռուշարձան, 419 թաթար. tur «ադր»։ Մառ, ИАН, 1912, 596 վրաց. մծարե, իմերել. ծարե «դառն»։

Գիհ.—Կր. Ջղ. դ՚առն, Երև. դ՚առր, Ալշ. Ախց. Մշ. դ՚առ, Տփ. դա՛րր, Մկ. Մրղ. Սլմ. Վն. առռն, Շմ. առռնր, Ոզմ. դ՚ռռ, Ագլ. դէօռնր «դառն», դռնմ՛նիլ «դառնանալ»։ Նոր բառեր են՝ դառնաժամ, դառնակռիճն, դառնաչուր, դառնիկ, դառնարիւն, դառննի, դառնիճուկ, դառնուշ։

Փոխ.—Գ. Փառնակ, Անահիտ, 1906, 233 հայերէնից փոխառնւած է դնում ալբան. dhere «լեղի»։

ԴԱՒՆԱՒ, տե՛ս Դաւթ։

ԴԱՒՈ, ու հլ. (յետնաբար նաև ի հլ.) «խումբ, կարգ, կարգաւորեալ բազմութիւն (մարդոց, անասունների, պիտոյքների, հրեշտակների են)» ՍԳր. Ագաթ. Կիւրղ. զկ., «կարգ, աստիճան» Փիլ. Շար., «եկեղեցում ժամերգութեան յաւուրս տեղը» ՅՀ. իմ. առ., «ուսուցչի սովորեցրածը» Կրպտ. ոտ., որից՝ դասադաս Բ. մակ. գ. 18. Ագաթ., դասասաց «ազգանուն» Կանոն. 175, դասալիճ Ոսկ. զկ. Պետ. Փիլ., դասակ ՍԳր. Ոսկ. մ. ա. և. Եփես., դասական «հետևակ զօրք» Ա. Թագ. ժե. 4, դասակարգ Ղուկ. ա. 5, դասաւորել Ոսկ. յհ. բ. 12, դասել Սահմ. Շար. Նար., դասատուն «դպրոց» Վրդ. աշխ., գեղեցկադասութիւն Նիւս. երգ. Փիլ., շարադասութիւն Փիլ. Նոնն., գերադասել Շնորհ. ա. յհ., նախադաս Եղիշ. մատն. Պետ.։ Նոր գրական բառեր են՝ դասարան, դասատու, դասատուութիւն, դասացուցակ, միդասեան, երկդասեան, դասարանցի, դասարանական, դասաբաշխութիւն, դասագիր, դասադուլ, դասախօս, դասախօսութիւն, դասախօսել, դասընկեր, դասընթաց, դասաւանդութիւն, դասաւանդել ևն։

Նշխ լծ. յն. τάσσω, τάξις, τάγμα «շարել, շարք», թրք. dizmek «դիզել», dizi «շարք», արաբ. درس dars «աշակերտի դաս»։ Peterm. 22 յն. τάξις։ Windisch. 11 յն. τασσειν։ Մորթմանն, ZDMG, 26, 544 բևեռ. tasizi «դասել», յն. τάσσω, τάζω։—Canini, Et. étym. 234 յն. τάξις և քէշուռ. taz: Հիւնք. յն. τάσσω են։ Bugge, Zyk. Stud. 1, 12 ազում է անանել Կապադովկիոյ Δασμένδα քաղաքի անուան մէջ։ Մ. Ա. Դարբինէլեան, Բազմ. 1903, 558 տասն բառից։ Դաւթեան-Բեկ, Ռուշարձ. 397 հլ. դեզ, ն. գալլ. das «դէզ», իտլ. dais, հրէրբառ. das «դէզ», գնդ. diz, սանս. dih «դէզ, շարք, ծալք»։ Հայդէթ, Արբար. 1915, 499 արաբ. درس dars «դաս» բառից։

Գիհ.—Տփ. դաս, Ալշ. Ախց. Ասլ. Երև. Խրբ. Կր. Մշ. Ջղ. Սեբ. դ՚աս, Շմ. դռս, Ոզմ. դ՚ռս, Ղրբ. Մկ. Մրղ. Սլմ. Վն. առս, Ննխ. Պլ. Հմշ. Ռ. բաս, Ագլ. դաս, դօս, Զթ. դ՚օս, դ՚ոս, Հճ. դ՚օս։ Բոլորն էլ «ժամու կամ դպրոցի դաս» նշանակութեամբ և անշուշտ դրական փոխառութիւն։ Անկախ ձևեր են՝ դատ Բլ. Մշ. «ամէկ հօր անից բաժանուած փոքր հղբայրները», դաս ու դրացի Ակն. «բոլոր դրացիները», դասակել, դասակուիլ «շարքը դասել, դասուիլ»,—և աւելի կարևոր Ագլ. դա՛րսիլ, Ղրբ. առ՛րսիլ, Տփ. դա՛ըսիլ, Սլմ. գառսել, Երև. դա՛ռսէլ «դիզել, շարել», դար-

սոսել «բոլորն էլ շարել», դարսողութիւն «կարգադրութիւն». այս բոլորը ցոյց են տալիս, որ բառիս հնագոյն ձևն է դարս, ինչպէս որ գտնում ենք իսկապէս Ղրդ. դարս «աշակերտի դաս»—Աստանայի Բրքահօս հայերը ունին դասընգել «դասընկեր».—կայ և Հզ. դասդլէք «ուխտադրուժ», նոյնը Խրբ. Ջրս. իբրև անիծական բառ, որ Բիւր. 1900, էջ 628ա մեկնւում է գրբ. դասալիք ձևից։

ՓՈԽ.—Վրաց. დახი դասի «խումբ, բազմութիւն, դասակարգ, ջոկատ, դաս (եկեղեցական, հրեշտակների), հատուած», დახობა դասերա «կարգաւորուիլ», დახ-დახად դասդասադ «կարգով, դաս դաս, մէկը միւսի ետևից», დახოსაგანი դասխասագանի «դինւոր» (սրանց համեմատ էլ Տփ. դաս նշանակում է նաև «խումբ»), ուտ. däs (ո՛չ das) «աշակերտի դաս. 2. շարք», däsnädäftär «դասագիրք», därz (դասել ձևից) «ցորենի տասը խուրձից կազմուած կոյտ»։ Ըստ Bugge, IF. 5, 168—180 = ՀՄ, 1895, էջ 229 հայից են նաև գոթ. ungatassans Ա. Թես. ե. 14, ungatassaba Բ. Թես. գ. 6, 11, որոնք հանապատասխանում են յն. ἀτάκτως, ἀτάκτως ձևերին (հմ. Թրգմ. զստահակս, ստահակութեամբ)։ Յոյն ձևերը բառացի նշանակում են «անդաս» և նրանց վրայից էլ շինուած են գոթական ձևերը՝ un բացասականով։

ԴԱՍԱՆ «կոխել», ունի միայն Բառ. երեմ. էջ 73։

ԴԱՍԱՊԻՆԻԱ. «դժուարաշնչութիւն». մէկ անգամ միայն գործածուած է Ծն. պատ. էջ 46 «Եւ գործեալ ի քանել ոտիցն, որ ասի ի յոյն տեղի արթափնիա և դասպինիա (ձևս. յասպինիա) և հնդկերէն նեղութեան զամենայն անդամս նորա»։ Յն. δύσπνοια հոմանիշն է (Ֆրանս. dyspnée), որ եւսեբեան ասորի թարգմանութեան մէջ տուած է ... dispœnia, սրանից էլ սխալմամբ առաջին տուր սեռականի մասնիկ կտրելով՝ անցել է հայերէնին։

Ուղիղ մեկնեցին Merx, The eccl. hist. of Euseb. XV և 40, և վերջինս, ՀՄ, 1914, 637, Բառաքննակ. գիտ. ե. 77։

*ԴԱՍՏ «ձեռք». մէկ անգամ ունի Օշին ստանաւարդ (տե՛ս Սմբ. պատ. հրատ. Շահն. էջ 159), որից կազմուած են դաստաձրել «ձեռքով ծրագրել՝ գրել» ԱԲ, դաստուրիւն (իմա՛ դաստատուրիւն) «ձեռնտուութիւն» ԱԲ, դաստաշարժ «ձեռքով շարժուած» Ուխտ. Ա. 12 (նորագիւտ բառ)։ Նոր գաւառականներից էլ ունինք դաստափ Ղզ. «ձեռքի ափը»։

=Պրս. دست dast, քրդ. dest, աֆղան. dast, lās, բելուճ. dast, պհլ. ד ס ת dast, հպրս. 𐎭𐎠𐎢𐎽 dasta-, գնդ. zasta-, բոլորն էլ «ձեռք» նշանակութեամբ։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ. միւսները չեն յիշում։

*ԴԱՍՏԱ «տրցակ, կապոց». Մին տարին երեք դաստա թուղթ վճարել էր ի նամակ գրելն, Վարք Թ. Մեծոփ. (ժԹ դ՞ր). Արրատ. 1913, էջ 743։

=Պրս. և Քրդ. دسته dasta «փունջ, կապոց, տրցակ», որ ծագում է պրս. دست dast «ձեռք» բառից, որից և փոխառեալ է արաբ. دسته dast «տրցակ, կապոց» (Կամուս, Քրդ. Քրդմ. Ա. էջ 302)։—Աճ.

*ԴԱՍՏԱԿ (ի–ա հլ. բառ ՆՀԲ, թէև առանց վկայութեան. յետնաբար գտնում եմ տեղ. դաստակաց Նար. կուս. 412) «ձեռքի և բազուկի մէջտեղի մասը» Ա. Թագ. ե. 4. Նար., «սուրի կոթ» Մագ. քեր. 246. Անկ. գիրք հին կտ. 191, «ձեռք» Սիմ. սպար. 80 (ոսկի նուագն ի դաստակին), «տրցակ, կապոց» մհյ. բառ (բառ Նորայր, Բառ. ֆր. 779 ա), որից՝ դաստակեղ Անյ. բարձր., երկայնադաստակ «երկար կոթով» Շիր. չփ. և կշռ. հմմտ. նաև տստակ։

=Պհլ. dastak «կոթ, բռնատեղ, տրցակ, մի բուռ լի», պրս. دسته dasta «կոթ, բռնատեղ, սուրի՝ դաշոյնի՝ դանակի՝ կացինի ևն կոթ», քրդ. deste «կոթ», հինդուստ. dustu «կոթ», գնչ. destó «կացինի են կոթ». բոլորն էլ ծագում են պհլ. պրս. dast «ձեռք» բառից։ Իրանեանից փոխառեալ են նաև արաբ. دستج dastaj և ասոր. ܕܣܬܩܐ dastaqā «կոթ»։—Հիւբշ. 135։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ.—ՆՀԲ պրս. անուն «ձեռն» և տեսքից «ձեռնիկ»։

Böttich. Horae aram. *29*, Rudim. *37, 74* ևն պրս. dasta, մասր. dastaq, արաբ. dastaǰ։ Նոյնը Justi, Zendsp. *124* գնդ. zaçta ձևի տակ։

*ԴԱՍՏԱԿԵՐՏ, ի, ի–ա հլ. «ձեռակերտ, շինուածք, շէնք, գիւղ, ագարակ» Առակ. իդ. 5. 27. եզեկ. լբ. 12. կոչ. 154. Ագաթ. եղիշ. խոր.։

=Հպրս. *dastakrta- «ձեռակերտ», պհլ. dastk(e)rt «տուն, գիւղ», Dast-kart «Խոսրով Նուշիրվանի գարդարած հռչակաւոր պալատը» (Blochet, Liste géogr. էջ 2), որոնք գալիս են dast «ձեռք» և krta «շինել» բառերից։— Միջին պրս. ձևն է dastagerd, որ աւանդուած է յն. Δασταγέρδ (Քէոփանէս) և արաբ. دستجرد Dastaǰird տառադարձութեամբ, իբր տեղի անուն. նպրս. دسگرد dasgara «տուն», որ և արաբ. دسكرة daskarat «գիւղ. 2. բերդի շրջակայ աւաններըը. 3. ապարանք» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 856)։—Հիւբշ. 135։

Առաջին անգամ Müller, SWAW 38, 576—7 մեկնելով «ձեռակերտ»՝ համեմատում է գնդ. zasta, պրս. dast բառերի հետ։ Lag. Beitr. baktr. Lex. 27, 41 աւելացնում է բառիս արաբ. daskarat տառադարձութիւններ։ Ընդարձակ գրում է բառիս վրայ Հիւբշ. ZDMG, 1876, 138—141 և համեմատում է պրս. dastkard ձևի հետ։ Տէրվ. Նախալ. 69 յիշում է յն. և արաբ. տառադարձութիւնները։

ԴԱՍՏԱԶԱՔ «ձեռի դաւազան», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրդն. առ. 114 «Մտեալ ի մարին՝ կարեաց դաստաչաք (այլ խմբ. կաղնի մահակաւ) և սկսեալ ի յոտից մինչ ի գլուխն ջարդեաց»։

=Արդեօք պրս. چوب دست dasta-čōb «ձեռնափայտ» բա՞ռն է՝ աղաւաղ գրչութեամբ։— Ա՛ճ.

ԴԱՍՏԱՊԱՆ «խմորեղէ՞ն». անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Փիլ. նխ. ա. 30 «Ո՞ւր են այսքանք խահից և աղդի աղդի հացատարատացն դաստապակք»։

ՆշՔ ուզում է հանել դաստ «ձեռք» բառից, «նրբէ չկայցէ սխալ գրչի»։

*ԴԱՍՏԱՊԱՆ (ի–ա հլ. ըստ նշՔ-ի, բայց կայ միայն սեռ. -ի) «սուրի կոթ, երախակալ» Բուզ. ե. 32. Նիւս. կուս.։

=Հպրս. *dastapāna- ձևից, որ կազմուած է dasta- «ձեռք»+pāna- «պահող» բառերից։ Այս բնդհանուր նշանակութիւնը չեղոյ սահացել է դանադան մասնաւոր առումներ, որոնցից մէկը հայերէն բառի նշանակութիւնն է, որ միտների մէջ կորել է։ Միտների մէջ գտնում ենք՝ պհլ. dastpanak «կրակի ունելի», պրս. دستبانه dastbāna կամ دستوان dastvān «ձեռնոց, թաթպան». սրանից տառադարձուած է արաբ. دستبان dastabān,— Հիւբշ. 135։

Ուղիղ մեկնեց Lag. Ges. Abhd. 23։

*ԴԱՍՏԱՊՐԻԿ «ձեռք լուալու ժամանակ կոնքի մէջ ջուր լցնելու կուժ, շռնիճ». գիտէ միայն ԱԲ. սրա հետ նոյն է դասպրիկ նոյն նշ., որ գործածուած է Կիլիկեան Թագաւորօրհնէքի մէջ. «Զգաշտիշոնն և զդասպրիկն, թէ ոսկի է և թէ արծաթի» (Հրտր. Սիսուան, էջ 475)։

=Պրս. دست dast+արաբ. ابريق ibriq (արդի Բրք. əbrəq, ումկ. եպրբխ) «ջրկիճ, շռնիճ», որով ամբողջը կլինի «առձեռն շռնիճ»։

Առաջին ձևը գիտէ միայն ԱԲ և մեկնում է «սեղանի անօթ»։ Ալիշան, Սիսուան, 475 յիշում է անցողակի Բրբ. լՀՀՆ–եբպրբգ։ Վերի ձևով մեկնում է Հացունի, Ճաշոց, էջ 85։

*ԴԱՍՏԱՌԱԿ, ի–ա հլ. «ջնջոց» Ոսկ. ա. տիմ. ժգ. «անձեռոց, ձեռքի սրբիչ» Եղիշ., «ոտքի սրբիչ» Խոսր. «վարշամակ, մարդու կտաւ» Մաշտ. Վրք. հց.։

=Պհլ. *dastārak ձևից, որ աւանդուած չէ, բայց նոյնը հաստատում են հայերէնի հետ՝ պրս. دستار dastār «թաշկինակ, քղամբոնք սրբելու շոր, գլխի փաթթոց», دستارچه dastārča «փոքր թաշկինակ», աֆղան. dastār «փաթթոց», քրդ. dastruk, desrók «թաշկինակ»։—Հիւբշ. 135։

ՆշՔ ուզում է մեկնել պրս. das։

«ձեռք» և հյ. առնուլ բառերից, թէև յիշում է նաև պրս. տէսթար: Ուղիղ մեկնեց Հիւբշ. ZDMG, *35 (1881)*, էջ 657։ Հինք. պրս. տէսթարչէ:

Գիմ.—Պլ. դաստառագ, թաստառագ. Ասլ. դ'աստառագ, դ'աստառայ, Խրբ. դաստրոռագ, որոնք նշանակում են «մասն վարտեաց որ զառականն ծածկէ»։ Այլ գաւառականներով ունինք Ախց. դ'աստրոռակ «խմորը ծածկելու, հաց փաթաթելու շոր», ՋՓ. «հարսի վրայի ծածկոցը»։

Փոխ.—Կեսարիոյ Բրք. բարբառով tasdar «տաշտի մէջ եղած խմորի վրայ ձգուած շորը».—այս բառը պարսկերէնից չէ, այլ ուղղակի մի որևէ հայ բարբառից, ինչպէս ցոյց է տալիս նշանակութեան տարբերութիւնը և մանաւանդ արևմտեան արտասանութեան համաձայն t և d։ —Justi, Dict. kurde մեղանից է դնում քրդ. دستوك dastruk «թաշկինակ», որ ընդունելի չէ, քանի որ այս նշանակութիւնը չկայ արդի հայ բարբառներում։

*ԴԱՍՏԱՌԶԱՅ «թաշկինակ, յատկապէս սկիհի ծածկոցը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 180 «Զսկին դաստարկ և զմաղդմայն ի դաստառչայ»։

-= Պրս. دستارچه dastārča «թաշկինակ»։— Ա.Ճ.

ԴԱՍՏԱՐԱԿ «ոսկորի ծուծը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. ոսկ. 297 «Եւ այլք՝ ի ջերմ հողմոյ և ի ցրտոյ, որ մոռանէր ի դաստարակ ոսկերացն նոցա, և չորացուցանէր զձեռն»։

*ԴԱՍՏԱՔԱՐ «ձեռագէտ, արուեստաւոր, վարպետ» Մխ. այրիվ. էջ 2 «Ներաստարացուցէ զանասնութիւն հոգւոյ իմոյ՝ առնելով զիս արուեստագէտ դաստաքար՝ որպէս և անդ զբանելիէ»։

=Պրս. دستكار dastkār, دستكارى dastkārī «ձեռագործ, ձեռարուեստ», dast «ձեռք» և kār «գործ» բառերից։

ԱՔ արդէն համարում է պարսկերէն։ Նոյնը Թիրեաքեան, Աբիհայ բռ. էջ 132։

*ԴԱՍՏԻԱՐԱԿ, ի–ա հլ. «տղոց վարպետ, ուսուցիչ և խնամակալ» Ա. կոր. դ. 15, Գաղ. դ. 24, 25, Բուզ., որից՝ դաստիարակել Կիւրղ. գկ. Պղատ. տիմ. 36ի., —դաստիարակեղէն (նորագիւտ բառ) Պարզ. 250, դաստիարակապէս Մաթս. դիոն., դաստիարակարան Նար., դաստիարակութիւն 36ի. Նար. խշ., դաստիարակչուհի, դաստիարակչական (նոր բառեր)։

-= Պհլ. *dastyārak ձեռից, որ աւանդաւած չէ. համմ. պրս. دستيار dastyār «օգնական, ձեռնտու». բոլորի մայրն է հպրս. *dastaðāra-, որ մեկնւում է իբր «ձեռնկալութ»։— Հիւբշ. 135։

ՆՀՔ պրս. տէսթկիյր «օգնական», որ ձևով յարմար չէ։ Ուղիղ մեկնեց նախ Գ. Տէօվլէթեանց, Դաստիարակ, 1873, էջ ա, նոյնը յետոյ Հիւբշ. ZDMG, *35 (1881)*, էջ 657, Տէրվ. Լեզու, *123*, Müller, WZKM, *8, 275*։—Հինք. պրս. տէսթկիր և տէսթեար:—Müller անդ և *10, 179*, Ալիշան, Հին հաւ. *353, 466*, Թիրեաքեան, Կարնամակ, ծան. *57* պհլ. dastūr «հոգևոր պետ» և պրս. دستور dastūr «փոխարքայ»։

*ԴԱՍՏԻՇՈՆ «մէջը ձեռք լուալու փոքրիկ կոնք». իբրև միջին հյ. բառ ունի Նորայր, Բառ. Ֆր. *736 բ* (lave-main). սրա հետ նոյն են դաշտիշոն «կոնք, լական» անդ՝ էջ *133 ա* (bassin) և ևմբ. թագաւորօրհնէքից մէջ (հրտ. Սիսուան, *475*, տե՛ս և Հացունի, ձաշեր, էջ *83*).—դաշտիշոյն „vas aquarium abluendo corpori deserviens“ Rivola, Բառ. հայոց, էջ *85*.—սխալ գրչութեամբ դաշտիլու «լանչալ» (իմա՛ դաշտիշու «լականչալ») Բառ. Երևմ. յաւել. Դէորգ Դպրէ, էջ *542*։

=Պրս. دست شوى dast-šūy «կոնք և ջրրկիճ լուացման ձեռաց», որ ծագում է das‘ «ձեռք» և šūy «լուալ» բառերից, ճիշտ ինչպէս ունինք քրդ. (որից փոխառեալ Բլ.) փիշով «մէջը ոտք լուալու կոնք» (պրս. pā «ոտք և šūy «լուալ» բառերից)։—Ա.Ճ.

Գիմ.—Ակն. (գիւղերը) դաշտրշուն, ՋՓ. դէօրդիշիւն «ոտք լուալու յատուկ քարաշեն խորութեամբ պղնձէ մեծ տաշտ, պարբը լէհէն», կրճատեամբ դաշուն կամ դաշօն Ակն. Արբ. Խրբ. Կիւր. Տ. «պղնձեն լայն, բոլորակ,

տափակ, եզերքները մէկ թիզ բարձրութեամբ, տակը բոլորովին հարթ կոնք՝ լոգնալու, լուացքի և խմորի համար»։

*ԴԱՍՏՄՈՒՉԱՏ «դրամական նուէր, pot-de-vin». ունի միայն Քաջունի, Հտ. Բ. էջ 400 և Գ. էջ 54։

=Պրս. دستمزد dast-muzd նոյն նշ.։—Աճ.

*ԴԱՍՏՐՈՒԹԻԻՆ «թոյլտուութիւն, autorisation» մէյ. բառ. ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 111 բ։ (Ըստ ԱԲ դաստուրիւն նշանակում է «ձեռնտուութիւն», ուրեմն դաստատուրիւն)։

=Պրս. دستور dastūr «արտօնութիւն»։—Աճ.

ԴԱՍՕՆ «խօսիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 73։

*ԴԱՏ, ի հլ. (բայց սեռ. դատու Եփր. Համաբ. 163) «դատաստան, իրաւունք» ՍԳր. Եփր. ծն. Ոսկ. մտթ. և բ. կոր., որից՝ դատել կամ դատիլ «դատ տեսնել. 2. դատապարտել, խայտառակել. 3. վիճիլ, դատի բռնուիլ» ՍԳր, «համարել» Լմբ. վերափոխ., «աշխատիլ, յոգնիլ» Վրք. հց. Շնորհ. եղես., հրով, սրով կամ ի հուր, ի սուր դատել «այրել, կոտորել» ՍԳր, դատակնիք Եղիշ. Պղատ. օրին., դատապարտել ՍԳր, դատապարտիչ Կոչ., դատավճիռ Ագաթ. Եփր. պհ., դատարան Պղատ. օրին., դատափետ Ոսկ. մ. ա. 16, դատափետել Երեմ. ժե. 10, դատիչ Ագաթ., դատկան «ժրաջան» Յկ. կր. 39, զրադատ Ագաթ. Բուզ., ստադատ Բուզ., աւելադատ Ոսկիփ., բռնադատել ՍԳր. Եզն. Կիւրղ. ծն., ապիդատ «մարքի դատմունք չունեցող» ԱԲ (այլ է ապիրատ, որ իրանական փոխառութիւն է), դատղութիւն Փարպ. Պիտ., բռնադատել, դատական, դատապաշտպան (նոր բառեր). տե՛ս և դատախազ, դատաստան, դատաւոր։

=Պհլ. dāt. պազենդ. dāδ, քրդ. ماڤدان. dād. պրս. داد dād «օրէնք, արդարութիւն, իրաւունք», հպրս. dāta- «օրէնք», գնդ. dāta- «օրէնք, կանոն», որոնք ծագում են իրան. dā «տալ, դնել» արմատից (Horn, § 518, Bartholomae, 726)։ Իրանականից փոխառեալ են նաև բարել. dāta, երր. ասիր. דָּת dāt «արքայական հրամանագիր, օրէնք», ասոր. ܕܳܬܳܐ datā «օրէնք», արևել. թրք. تات tāt «արդարութիւն»։—Հիւբշ. 136։

Ուղիղ մեկնեցին նախ Klaproth, Asia polygl. 101 և ԳԴ, հետոյ ՆՀԲ, Böttich. Rudimenta 12, Lag. Urg. 100, Müller, SWAW, 38, 573 եև, Մորթման, ZDMG. 26, 547 բեռ. dadaedini և էջ 692 dadaini համեմատում է մեր դատ=պրս. dād բառի հետ։

ԳԻՒ.—երև. դատ, Ալշ. Ախց. Կր. Մշ. դ՚ատ, Տփ. դադ, Ջղ. Սեբ. դ՚ադ, Մկ. Սլմ. ատատ, Մրղ. ատդ, Ռ. բադ (վերջինը, ինչպէս նաև Հմշ. նշանակում է «դատաւոր»)։—Բայական ձևը հիմնական «դատ վարել» իմաստով պահում են Ջղ. դ՚ադել, Հճ. դ՚ադել, բայց միւսները գիտեն միայն «շատ աշխատիլ, յոգնիլ» կամ «դրամ շահիլ, վաստկիլ» իմաստով, ինչ. Պլ. դադիլ, Ասլ. դ՚ադիլ, Հմշ. ատդուշ, Տփ. դադիլ, Սեբ. Ալշ. դ՚ադիլ ևն։ Նոր բառեր են՝ դատուկ, դատաճ, դատում, դատօճ, դատումատոր ևն։ Դատիլ «աշխատիլ» նշանակութեան զարգացման համաձայն է դալիս վրաց. გამხეცლობა գամսէցլորա «դատողութիւն. 2. աշխատանք, նեղութիւն»։

ՓՈԽ.—Ուտ. dad «դատաստան. 2. տանջանք. 3. վա՛յ, հաչա՛յ» թերևս ուղղակի իրանեանից լինի։

ԴԱՏԱԽԱԶ, ի–ա հլ. «դատ պահանջող, դատի մէջ ամբաստանող» Ես. խա. 11 ծդ. 17. Գծ. իե. 16. Փարպ., որից՝ դատախազութիւն Եւս. քր. Փարպ., դատախազ լինել Եղիշ. կամ դատախազել Նեղոս. Սրգ. Անկ. դիրք առաք. 226, դատախազանիլ ԱԲ։

=Իրանեան բարդութիւն է թուում, որի առաջին մասն է դատ, իսկ երկրորդ մասը՝ խազ անյայտ է (համմտ. նաև գիճեխազ, մատակախազ, իգախազութիւն)։

ՆՀԲ և Հիւնք. պրս. دادخواه dādxvāh «դատախազ» բառի հետ, որ կազմուած է dād «դատ» և xvāstan «ուզել» բառերից։ Հիւբշ. չունի։

ԳԻՒ.—Ունինք միայն երր. դէմը դ՚ադա-

խազ կայնիլ «պահանջկոտ լինել, առանց ձանձրանալու միշտ պահանջել» ոճր։

ԴԱՏԱԿՆԻ «ծանոակիլ կամ անարդիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 73։

*ԴԱՏԱՍՏԱՆ, ի-ա հլ. «դատ. 2. դատավճիռ. 3. դատապարտութիւն. 4. դատարան» ՍԳր. «5. օրէնք, իրաւունք» Սկևռ. ևս., որից՝ դատաստանական Փիլ. նխ., դատաստանագիրք Մխ. դտ., դատաստանաւոր եղիշ. ևրէց., դատաստանոց «դատարան» վրք. դիոն.։

= պհլ. 𐭣𐭠𐭲𐭠𐭮𐭲𐭠𐭭 dātastān, մանիք. պհլ. דאדיסתאן dādīstān (Salem. Manich. Stud. ЗАН. 8, 65), պազենդ. dāδastan, պրս. دادستان dādistān. բոլորն էլ «վճիռ, դատավճիռ», որոնք կազմուած են dāt «դատ» բառից՝ stān մասնիկով։ — Հիւբշ. 136։

Այս մեկնութիւնը առաջին անգամ յիշում է Spiegel. Gram. Huzv. 188—191։ Միւսները առհասարակ համարում են հայերէնի մէջ կազմուած դատ բառից՝ -աստան տեղական մասնիկով։ Բայց եթէ այսպէս լինէր, չպիտի ունենայինք «դատ, դատավճիռ, օրէնք են» նշանակութիւնները, այլ միայն «դատարան»։

ԳԻՒ.—Երև. Ղրբ. Ննխ. Շմ. Տփ. դատաստա՛ն, Ախց. Կր. դ՚ատաստան, Ալշ. Մշ. Ջղ. դ՚աղաստան, Ագլ. դաղաստա՛ն, դաղաստո՛ւն, Պլ. դաղադան (հին լեզուով), թաղադան (նոր լեզուով), Սչ. դ՚ադադո՛ան. Խրբ. Սևբ. դ՚ադասդան, ՋԲ. դ՚ադասդօն, դ՚ադասդոն, Ռ. թաղասդան, ՀՀ. դ՚ադաստոն, Ասլ. դ՚ադադա, Ոզմ. դ՚mտաստան, Մկ. Սլմ. վն. տmտmստան, Մրզ. տադmստան, Տիգ. բmդmսդmն, բոլորն էլ նշանակում են «հանդիրձեալ կենաց դատաստանը»։ Նոր բառեր են դատաստանագիր եղբայր կամ դատաստանեղբայր «մի տեսակ ոդի» (Տիւր. դիք)։

ՓՈԽ.—Աստանայի Բրբախօս հայոց, ինչպէս նաև յունաց և տաճկաց մէջ գործածական են dadasdan «դատ, դատաստան» և dadasdanja «իրաւունքով, արդարութեամբ» (-ja Բրբական մասնիկով)։

ԴԱՏԱՐԿ, ի-ա հլ. «պարապ, անգործ, փուճ» ՍԳր. եղն. ևս. քր., որից՝ դատարկաբան Կոչ., դատարկաժամ Ոսկ. յհ. ա. 3, դատարկածեռն Ել. իգ. 15. Ոսկ. մ. բ. 10, դատարկանալ ՍԳր, դատարկանձն Ա. տիմ. է. 14, դատարկապէս Ոսկ. յհ. ա. 3. Կոչ. 17, դատարկապորտ Տիտ. ա. 13. Եփր. բ. Քես., դատարկասուն Ագաթ. Կորիւն, դատարկացուցանել Ոսկ. բ. Քես. Եւագր., դատարկութիւն ՍԳր. ևս. քր.։ Նոր բառեր են՝ դատարկախօս, դատարկախօսութիւն, դատարկել են։

Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 312 «ի դատելոյ՝ այսինքն յաշխատելոյ արկնալ, բանելու ձուլցած կամ գործքէ (երկէ) դադրած»։ ՆշՔ ձուի մեկնել «դադարեալ յերկոց կամ յարգասեաց»։ Հիւնք. թատր բառից։

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. դ՚արտակ, Ոզմ. դ՚mրտակ, Տփ. դա՛րդակ, Մշ. դ՚արդակ, Ննխ. դարդագ, Սևբ. դ՚արագ, Ռ. բարդագ, Գոր. տmրտmկ, Սլմ. տmրտmկ, Շմ. տmրտmգ, Ասլ. դ՚արդագ, դ՚արդայ, Ալշ. դ՚ադդագ, Ջղ. դ՚ադդ՚ակ, դ՚ադդ՚ափ, Ագլ. դmոդmկ, Մկ. վն. տատտակ, Մրզ. տmոտmկ, Տիգ. բmրդmգ, Ղրբ. տէ՛րտակ, Ակն. դ՚արդագ, դ՚այդագ, Հմշ. տայդագ. այս բոլորը նշանակում են «դատարկ, պարապ» և ծագում են շրջմամբ՝ դարտակ ձևից (համմտ. կամուրջ—կարմունջ, կապերտ—կարպետ, փիփերդ—փիրփեդ)։ Նոյն բառը ուրիշ դաւառականներում փոխելով իր իմաստը, եղել է՝ ՋԲ. Ջղ. «եղեգ», Ատն. «մէջը պարապ եղէգ», ՋԲ. «եղէգից շինուած սրինգ», Ակն. Այն. Աբր. ՋԲ. Խրբ. (դ՚արդագ), Մրզ. ՍԲ. «ջուլհակի մասուրայ. փոքրիկ եղէգներ, որոնց վրայ թելացու մանած են փաթաթում՝ գործելու համար»։ Նոր բառեր են՝ դատարկել, դատարկուիլ, դատարկովի, դատարկուրախ։

ՓՈԽ.— Անգորայի Բրբախօս հայերը, Բուրքերն ու յոյները գործածում են terdek «դատարակ» (Բիւրակն, 1898, 789)։ Նմանապէս Ատանայի հայերը, Բուրքերն ու յոյները գործածում են derdek «մէջը պարապ եղէգ» (Արեւելք, 1888 նոյ՞9)։

*ԴԱՏԱՒՈՐ, ի-ա հլ. «դատաստան կտրող» և յայնաբար «իշխան, կառավարիչ» ՍԳր. եղն., որից՝ դատաւորաց «դատարան»

Ասկ. չ՚. բ. 14, դառատուրաց Պղատ. միտոմ., դառատուրութիւն Դան. բ. 2. գ. 1։

= Պհլ. dātavar կամ dātuvar (գրուած է dātūbar). մանիք. ܕܐܬܒܪ dātbr «դատաւոր» (ИАН, 1907, 539), պազենդ. dāvar, պրս. ܕܐܒ dādvar կամ ܕܐ dāvar «դատաւոր». սասանեան պահլաւերէնից տատադարձուած է յն. στρα-ցαδδαρ (յն. Ագաթ. հրտր. Lagarde, էջ 159), իբր *spāh-dað-war. Իրանեանից է փոխառեալ նաև արամ. דתבר dəðāwar «դատաւոր»։ Բոլորի արմատն է պհլ. dāt «դատ, իրաւունք»։— Հիւբշ. 136։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ, նոյնը Lag. Urgesch. 102 ևն։

Գիւր.—Ալշ. Մշ. Ջղ. դ՚ադավոր, Ախց. երև. կր. դ՚ադալօր, Ննխ. թադավօր, Սլմ. տատտվոր, Ագլ. դադավօ՚ր, Շմ. դաթօօր, Տփ. դադամէր, Հճ. դ՚ադավոյ, Մրզ. տադավրի՛ր, դադավրի՛ր, Սեբ. դ՚ադավէր. վերջինը միայն Ագուլեցոյ համար՝ իբրև «երկնաւոր դատաւոր»։— բուռ այամ պլ. գործածական է միայն էյեավօր—դադավօր ձևով։

*ԴԱՐ, ու հլ. «հարիւր կամ հազար և կամ անորոշ քանակ տարիների մի մեծ շրջան» ՍԳՐ. Ագաթ., «մէկ սերունդ, մի պորտ եփր. ծն. Նոր գրականում սովորաբար «100 տարի», գոյց Հին դար, Միջին դար, Նոր դար ասելով՝ հասկացւում են այդի մեծ շրջաններ.—որից՝ դարագրուխ Ասկ. ամբակ. նչ. նկնկ., եօթնդարեան վրդն. եր., վեցդարեան Ագաթ., դարագրութիւն Համամ. առկ. Նոր գրականում՝ դարապատում, դարաւոր (սխալ-մամբ անանր դարևոր), դարադարձ, դարաշրջան, ինդարեան, միջնադարեան, յետնադարեան, երկդարեան, ոսկեդար, ոսկեդարեան, դարավերջ, դարավերջին։

= Աստր. ʾʾ dār, յօգով ʾʾ dārā «դարք, ժամանակք», եբր. דור dōr «ցեղ, ազգ, սերունդ», արամ. דר dar, եթովպ. śār «դարաշրջան», աստր. dāru, dūru «տևողութիւն, յաւիտենականութիւն»։ Այս բոլորը ծագում են սեմական dvr «շրջան» արմատից. համմտ. եբր. דור dōr «շրջան», աստր. ʾʾ dārā «շրջանակ», արաբ. ﺩﻭﺭ davr «շրջան», ﺩﺍﺭ dāra «շրջանակ», աստր. dūru «պատ, պարիսպ» են։—Հիւբշ. 302։

Ուղիղ մեկնեց նախ Schröder. Thesaur. 45։—ՆՀՒ կապում է դար «բարձրաւանդակ» բառի հետ, առաջինը իբր «գլուխ ժամանակի», երկրորդը իբր «գլուխ տեղւոյ»։ Windisch. 11 սեմականից է դնում. Müller, SWAW, 41, 11 արամեերէնից։ Karolides, Γλωσ. σσγκρ. 99 կապադովկ. ταρός «ժամանակ» և աւանս. tar «վրայից անցնել»։ Հիւնք. արաբ. ﺩﻫﺮ dahr «դար, յաւիտեանք»։

Գիւր.—Անցնելով «ժամ, ժամանակ» իմաստից, որ պահուած է Զարեհաւանքում, վատ առումով դարձել է Ախն. Արբ. Ջղ. «փորձանք, պատահար»։

Փոխ.—Վրաց. დარი դարի «պարզ եղանակ, գեղեցիկ օդ», ავდარი ավդարի «վատ եղանակ», խոշ. დარ դար «գեղեցիկ օդ», ავ-დარ ավ-դար «վատ օդ».—կապադովկ. ταρός «ժամանակ» (համմտ. դար Զրս. «ժամանակ»), ταρζομαι «երկար ժամանակ տևել» (Karolides, Γλωσ. σσγκρ. 99)։

ԴԱՐ, ի հլ. «բարձրաւանդակ, գագիվայր և շեղ բարձրութիւն» ՍԳր. Ասկ. յհ. ա. 1, «Հրուանդան» Դաս. է. 23, որից՝ դարահոս Ասկ. մ. Եփես. տիմ. և ես. դարակ ՅՀ. կթ. 359, դարափն վրդ. առկ. Բրս. մրկ. 65, դարափոս Եղիշ. կամ դարուփոս Վանկ., դարափոր Վեցօր. Բուզ. Կիւրղ. Թղ., դարափուլ Վրդն. պտմ., դարափլակ ՅՀ. կթ. 205, դարավիճ ճառընտ.), դարոսն «լեռան սարորակ» (չունի ԱՒ) Սմբ. պտմ. 123, Անցնելով «գետի եզերքը՝ երկու կողմից բարձրացած թեք տեղ, բարձրութիւն» իմաստից (համմտ. Եղիշ. գ. էջ 58՝ Ցամուր տեղիս մայրեացն առ խուրտոյն դարիւքն լոմնաս գետոյ), առացել է բառս նաև «եզերք, ափ» նշանակութիւնը, ինչպէս պահուած է դարիս և դարիս ռէի մէջ, գետի գնացքի համար ասուած, իբր «եզերքներք քերելով» (տե՛ս Տաշեան, Ագաթ. էջ 69). համմտ. սրա հոմանիշ ռէր՝ Գայր (գետն Յորդանան) լի ափամբ և ափամբ առ հասարակ ծայրիւ իւրով (Նորագիւտ Ա. մնաց. ժբ. 15)։—

նոյն իմաստը ցոյց է տալիս նաև դարալիր «մինչև թումբերը՝ եզերքը լցուած (ջուր)» *Աբ.*—*Վերջապէս առացել է իբր ած.* «բարձր» *նշանակութիւնը, որից* դարաճակատ «լայն ճակատով» (*Յայսմ. յունիս 29 գրուած կամ տպուած* դրաճակատ)։ *Հմմտ. նաև* դարաւանդ։

ԳԴ պրս. ﻧﺎﺭ tār «դլուխ, գագաթ»։—*Նէք սրա հետ նաև նոյնպիսին՝* ﺗﺎﺭﻙ tārak: Windisch. *11 առն.* tr: Böttich. ZDMG, *1850, 352 և* Lag. Ges. Abhd. *34 առն.* dhara- «բլուր», dhāra «բարձրութիւն»։—*Տէրոյենց, Երևակ, 1857, 99 լս.* terra «երկիր, հող», *առն.* dara «խոռոչ»։ Justi, Dict. kurde *քրդ.* der «լեռնակող» *բառի հետ Հիւնք.* դար< *պրս.* թար. *իսկ* դարիւ *և* դարիւ< *պրս.* զարի զարի «հնծնելով»։—Bu ge, Lyk. Stud. *1, 9 առն.* dhārā «սայր, լեռան եզերք»։ Scheftelowitz, BB, *29, 20 հիպ.* ϑurs «հսկայ»։ *Յակոբեան, Բիւզանդիոն, թ. 743 ասոր.* բուրա, *արար.* ﺗﻮﺭ tūr, *երր.* גור «լեռ, ժայռ» *և հլ.* սար, ժայռ *բառերի հետ*։ Karst, *Յուշարձան, 408 սուին.* tur «բարձրութիւն»։—*Զգիտեմ թէ կապ ունի՞ պրս.* ﺩﺭ dar «է այն հարթ և դուրս տեղին, որ է ի միջոցս լերանց կամ սառրոտ լերինն»։ *Եթէ այո՛, հայերէնը փոխառեալ է պահլաւական ձևից։ Պատահական նմանութիւն ունի առն.* dhara «սար, լեռ», *որ ծագում է* dhar «կրել, ունենալ» *բայից* (Böhtlingk. *Առն. բառ. հտ. Գ. էջ 877*)։ *Իսկ առն.* dhāra «բարձրութիւն», *որ լիշում է* Lag. Ges. Abhd. *34 դոլութիւն չունի անդ՝ էջ 944։*

ԳՒՒ.—*Ալշ. նրև. Մշ. Սլ.* դ'ար «քիթ տեղ. pünte», *երր.* դ'ար «բարձրաւանդակ, բլուր» (*իբրև յատուկ անուն, ինչպէս նաև Սեբ.* Հողդար), *Մկ. Սլմ. վն.* umr «բարձր տեղ», *Ջթ.* դ'այ, դ'ար, դ'բ'յ «դաշտ». *ունինք նաև իբր ած. վն.* umr «բարձր». *օր. ճակատը դար. Հմմտ. Հնից* դարաճակատ։ *Ուրիշ տեղեր պահուած է մի քանի բարդութեանց մէջ. ինչ. Ախց. Կր.* դ'արիվար, դ'արիվէր, դ'արուսիօս, *Սեբ.* դ'արվար, դ'արվէր, *Պլ.* դարվար, դարվէր, *Սչ.* դ'արեիվար, դ'էրիվար «զառիվայր», դ'էրիվեր «զառիվեր», *Ջղ.* դ'արվեր, *երր.* դ'արուսիօս, *Հմշ.* տարիվիր, *Ասլ.* դ'արվէ'ր. դարվար, *Նխ.* դէրվէր, դէրվար, *Տիգ.* pmrvmr, pmrվիր, *Տփ.* դէվէր «դարիվայր», դիվիր «դարիվեր», դարիդուս «ներքև», *Հճ.* դ'այվեյ.—*Նոր բառեր են՝* դարուխոր, դարուդարաւի, դարաւակ, դարախաղ, դարիվան։

ՓՈԽ.—*Քրդ.* ﺩﺭ der «լեռնակող», *ուս.* dar «ժայռի կտրուածք, խորխորատ», dardar «պատի նմանութիւն ունեցող ապառաժ, խոշոր ջրուէժ»։

ԴԱՐ, ի *հլ.* «զոյգ, ջուխտ» *Կիւրղ. գանձ. Պզատ. օրին. 266. Սահմ. Փիլ., որից՝* դար և կոճատ «իրար չբռնող, հակասական» (*իբր «զոյգ և անզոյգ»*) *Գր. տղ. էջ 70. որ և դարակոճատ Փիլ. Վրդն. ծն. (Բառ. երեմ. էջ 74 սխալմամբ մեկնում է «հինդ»)։*

Հինք. պրս. ﺗﺮﻭﺥ tarōh «կոճատ» *բառից։*

ՓՈԽ.—*Վրաց.* დარი «նման, հաւասար, համեմատ, զոյգ». իմիսի դարի ա «իրար հաւասար են, զոյգ են», Քալաֆի, ռամլիսա դարի առ գվենախա «Քաղաք անզուգական յաշխարհի»։

ԴԱՐԱՔ «մի տեսակ թռչուն է». *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Տաղ. (Զեռ. էջմ. № 679, էջ 71 ա), բառ Ամառունի, Հայոց բառ ու բան, էջ 160 «Դարաբն գայր գետումն ի վար, Հանց լայն ու մեծ ինչ նաւ կուգար. Յանձն է հագել սպիտակ պայծառ, 'ւ ի կատուցն մեծ ճռիոն մի կար»։*

*ԴԱՐԱԿԵԼ «ճանապել կամ մաօք տեսանել կամ ուշադրաբար և դգաստութեամբ զննել և լիապէս իմանալ զիրն» *ՀՀԲ, «ճանապել» Բառ. երեմ. էջ 74, «ճանապեմ այնքա՛ն ներքագունիւ խուզմամբ և հետազօտմամբ, մինչ մնայ և ո՛չինչ չեննթակայումն ճանապելոջ, գաղեցեալ յիմոյս ճանապմանէ» (Վարդան Յունանեանի Ճառաբանութիւն յերկինս. տպ. 1671. տե՛ս 304 էջ բառացանկում)։ Սրա հետ նոյն է* ԴԱՐԱՆԱԿԵԼ, *որ մէկ անգամ ունի Վանակ. յոր. «Սկսանի դարանակել զբանս Յոբայ». ՆշՔ մեկնում է «դարանաւ բմբռնել, որսալ». ՋՔ «քննել զբանս, ի վեր բերել զգազանի իմաստս բանիցն»։*

=Իրանեան փոխառութիւն է. համմտ. զնդ. dar «ունել, բռնել», որի միւս առումներն են «հասկանալ, ըմբռնել, յիշողութեան մէջ ամուր պահել են» (տե՛ս Bartholomae, էջ 690 և 691)։ Այս արմատն է, որ տալիս է նաև հյ. դարան բառը (աւելի ընդարձակ տե՛ս անոր)։ —Ա՛Հ.

ՆՀԲ դարան բառից։

ԴԱՐԱԿԻՑ «փառակից կամ փառասէր». ունի միայն Բառ. երեմ. էջ 74. ուրեմն դար «փառք»?

*ԴԱՐԱՆ, ի–ա հյ. «պահարան» Եւս. քր. Եփր. մն. Արծր. գ. 5. յատկապէս ունինք մատենից դարան Եւս. քր. ա. բ., դարան կտակարանաց Եփր. մնաց., պատշաճ դարան «յարմար աման (նետի)» Արծր. գ. 5. բարդութեամբ՝ մատենադարան Եւս. քր., վիմադարան Նար. մծբ., պատկաղդարան (տե՛ս առանձին)։ Նոր բառեր են՝ գրադարան, գրադարանապետ, ճեշտադարան են։

=Պհլ. *daran կրած համանիշ ձևից, որի հետ համմտ. սանս. dhāraṇa, dhāruṇa «պահող, կրող, ունող», զնդ. dārəna «լեռ պահելու միջոց» (Bartholomae, 739), օսս. darän «ունող, կալող», որ պահուած է միայն kuxdarän «մատանի» և çirāɣdarän «աշտանակ» ձևերի մէջ (իբր «մատնակալ, մոմակալ»)։ Այս բոլորի արմատն է իրան. dar «ունենալ, կրել պարունակել». համմտ. հպրս. dar-, զնդ. dārayehi, dar-, պհլ. dāram, աֆղան. laral, օսս. darjn, պրս. ﺩﺍﺭﻡ dāram «ունիմ», սնս. dhar, dhārāyati (տե՛ս Horn, § 527, Bartholomae, 690)։—Հիւբշ. 136։

Աստւածաբանութեանց պատմութիւնը տե՛ս յաջորդ բառի տակ։

*ԴԱՐԱՆ, ի–ա հյ. «ծածուկ տեղ, ուր պահուելով՝ թշնամու վրայ անակնկալ յարձակում են գործում. 2. որոգայթ, թակարդ. 3. դաւաճանութիւն» ՍԳր, «առուծի որջ» Յայսմ., «ամբանալու տեղ» Նար., որից՝ դարանամուտ ՍԳր, դարանակալ ՍԳր. Ոսկ. յհ. բ. 85, դարանակալութիւն Յոր. խե. 3, դարանայոյզ Դ. թագ. գ. 10, դարանիլ Սղ. թ. ժ. ժգ. են. հողադարան Վրդն. եղ. յեսին ձև է դարանալ վանակ. յոր. (իբրև թէ դարանիլ)։

=Իրանական փոխառութիւն է, պհլ. *daran ձևից. համմտ. զնդ. darana «ամբութիւն, բնակութիւն, ապաստարան» (ըստ Bartholomae, 692—3), «ձոր, կիրճ» (ըստ Horn, § 560, որ և սրան է կցում պրս. ﺩﺭﻩ darra «ձոր, կիրճ»), dāuru-upa-darana «փայտակերտ հիւղակ» (Bartholomae, 739)։ Այս բոլորը ծագում են dar- արմատից. բայց այս ձևով կան իրանեան երեք տարբեր արմատներ. 1. dar- «ճեղքել», 2. dar- «հակել», 3. dar- «ունել, պահել» (Bartholomae, 689—690)։ Արդ՝ լիշնալ ձևերը սրանցից որի՞ն են պատկանում։ Bartholomae, 693 զնում է «ունել, պահել» արմատից, որով հյ. դարան «ծածուկ տեղ, թաքստոց» նոյնանում և միանում է ճիշտ նախորդ դարան «պահարան» բառի հետ, ինչպէս զնում են և մեր բառաբանները, և սրանց համեմատ էլ Հիւբշմանն։ Բայց կարելի էր նաև զնել առաջին արմատից (dar- ճեղքել), որով զնդ. darana- նոյնանում է սանս. dārana «փապար, խոռոչ, ծերպ» բառի հետ և հյ. դարան «թաքստոց» բառի նախնական իմաստն է լինում «լեռան մէջ ճեղք են», ինչպէս ցոյց է տալիս վրաց. դարանի «քարայր, ճեղք՝ ժայռի կամ հողի մէջ»։ Այսպէսով իրարից բաժանւում են հյ. դարան «պահարան»=սանս. dhāraṇa=զնդ. dārəna և հյ. դարան «թաքստոց» = սանս. dārana=զնդ. darana, առաջինը սանս. dhar =իրան. dar «ունել» արմատից, երկրորդը սանս. dar=իրան. dar «ճեղքել» արմատից. վերջինիս հետ համմտ. և սանս. dṛṇāti, dārayati, պհլ. daritan, պրս. dārridan, աֆղան. dāṛal, լիթ. dirù, յն. δέρω, հյ. տեռել, հնխ. der- «ճեղքել, պատռել»։ Իրանեան լեզուները զանազանութիւն չդնելով նախաձայն d և dh ձայնների միջև, երկու տարբեր բառերը ի հարկէ մէկ ձևի պիտի վերածուէին։ —Ա՛Հ.

Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 230 ան մասնիկով դար արմատից։ ՆՀԲ դարան «պահարան» մեկնում է «իբր դրարան», իսկ դարան «թաքստոց» համում է դարեալ դաղարիլ ձևից։ Böttich. ZDMG, 1850, 352 սանս. dhāraṇa։ Այտընեան, Քնն. քերակ. էջ 301 մասնիկ է դր-

նում -արան, որով արմատը լինում է դ (դնել բայից)։ Lag. Arm. Stud. § 584 դարան «պահարան» = պրս. dāštan «ունել», արմատը dā։ Տէրվ. Alt arm. 6 երկու նշանակութեամբ էլ տանս. dharana «ունող»։ Պատկ. խոր. աշխ. 1877, էջ 43 գնդ. darəna: Տէրվ. նախալ. 88 տանս. dhar, պրս. dāštan, հյ. պահել, տար ձևերի հետ՝ հնխ. dhar «կրել, տանիլ» արմատից։ Հիւբշ. 136 դարան «պահարան» մեկնում է վերի ձևով, իսկ դարան «թաքստոց» միացնում է նոյնին։ Հիւնք. հանում է դարել բայից։

ԳԻՒ.—Մշ. դ՛արան «թաքստոց, պահարան»։

ՓՈՒ.—Վրաց. დარაბი դարաբի «քարայրի ժայռի կամ հողի մէջ ճեղք», նաբարճլո սադարիւո, նաբարճո սադարնո, նաբարճոցաճո սադարճուվանի «ժայռի անդ՝ փարախ ոչխարների համար», დადარნება դադարնեբա «դարանակալել», დადარნებული դադարնեբուլի «դարանակալ», დარნეული դարնեուլի «դարան, դարանակալութիւն», დარნეულება դարնեուլեբա «դարան մտնելը»։ Ասա Մաա, Ипполь. 63 կայ նաև դարանի «պաշարում», დარნებული դարնեբուլի «դարանակալ», որոնք նոյնպէս հայկական փոխառեալ է համարում։

[ԴԱՐԱՆԱԿ «շրջանակ», ունի միայն Բուզանդ. երեմ. էջ 84, որ յաջորդ էջումն էլ գրում է դարոնակ՝ նոյն իմաստով։ Երկուսն էլ վերակազմելի են ա՛յնպէս է ուղղել պատմագիրը։ Դիմ. ալ վերակազմի ուրիշ օրինակ է՝ անդ էջ 78 դիսակ «թայտուց», որ էջ 271 գտնում է պիսակ «թաղարուց»։]

ԴԱՐԱՆԱԿԱԼ տե՛ս Դարակալ։

*ԴԱՐԱՊ «փողերանոց». միայն Բուզանդի, հմմ. Գ. էջ 54, որից առնելով Տիրոյեան, Հանրագրութ. էջ 373։

= Արաբ. ضرب ḍarb «դրամ կտրել» բայից։—Ա՛ճ.

*ԴԱՐԱՊԱՆ, ի–ա հ. «դռնապան» Ա. մնաց. իզ. 19. նորագիւտի մէջ գործածուած է շատ անգամ, ինչ. Բ. 17. 18, 21, 22, 24, ժզ. 38, իզ. 19 եև։

= Պհլ. darpān «դռնապան», պրս. دربان darbān, քրդ. derbān, հպրս. *duvara-pāna. կազմուած են dar, der, duvara- «դուռ և pān, bān, pāna «պահող, պահապան» բառերից։ Իրանեանից փոխառեալ են նոյնպէս լեհ. daraban, ռում. daraban, deреban, հունգ. durbancs:—Հիւբշ. 137։

Ուղիղ մեկնեց նախ նշի։ Pictet, 2, 249 տանս. dvār են։ Ուղիղ են նաև Lag. Gesam. Abhd. 188, Հիւնք. եև։

*ԴԱՐԱՊԱՍ (յետնաբար սեռ. ու, իւ, գրուած նաև դարեպաս, դարպաս «զարքունի կամ իշխանական դուռ, մեծ դուռ», յայնաբար «պալատ, ապարանք» Մագիկ., էջ 37։ Ագթր. գ. 12, Օրբել. հրատ. եմ. էջ 36, Ոսկղծ. 338, Մաթիւնս. Սամ. անեց. 113. փոխաբերաբար «ընծայ՝ նուէր, որ իբր դռան ազատ տրում է մեծաւորին կամ վանքերի մէջ փոխադիտ վարդապետին, իբր օթևանի կամաւոր վարձք» Տօնակ., որից՝ դարպաս տալ «ամեծաւորի առաջ ներկայանալու համար դարպասի նուէրը տալ», դարպաս առնել «մեծաւորի ընդունելութեան պատրաստուիլ» (արդի արևմտահայ գրական լեզուով դարպաս բնել կամ դարպասել «ամէկի հետ սիրահարութիւն անել», ֆր. faire la cour. ձևից թարգմանած), դարպասպան «զորպաշտ պահապան» Ոսկիփ., դարպասցի «պալատական» Շապհ. 32։

= Պհլ. անկանաթի մի ձևից, որի հետ նոյն են պրս. دروا darvā «բակի մեծ դուռ», دروازه darvāza «քաղաքի մեծ դուռ», دروان darvās «դռան նիշ, սղնակ», دربان darēvās «զրանդի դռան սղնակ, պահանդ. ցից», քրդ. دەرواز dervaze «մեծ դուռ»։ Գարսիկ բառը մեկնում է دار dar «դուռ» և պրս. باز =պազենդ. āwāz, պհլ. apaj, apāč «բաց» բառերից, բուց համ. նաև աւստր. tarbaṣu «պալատ», աւստր. تربصاتا tarbāṣātā «սանդ բակ», Իրանեանից փոխառեալ են նաև արաբ. دربس dirbās «դռան փղնակ», վրաց. დარბაზი դարբազի «պալատ, հիւրասենեակ»։ Հպրս. դարպասպան ձևի համապատասխանն է պրս. دربازبان darvāzbān «դարպասի պահապան, բակի գնդապետ»։ (Horn չէ գնում պրս. darvāza բառի սաու-

դարանութիւնը առանձին, բայց հիշում է § 163 bāz *«բաց» բառի տակ)։—Հիւբշ. 137։*

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Լիակատ. Վրք. սրբ. Ը. 39, յետոյ ԳԴ, ՆՀԲ, Lag. Arm. Stud. *§ 586։*

ԳԻՒ.—Ալշ. դmrբաս, *Ասլ. Մշ.* դարբաս. *Կր.* դ'արբաս, *Պլ.* դարբաս, բարբաս, *Ռ.* բարբաստ *են. առաջինը նշանակում է «մեծ դուռ», միւսները «վանքին տրուած դրամական նուէր», իսկ Այն. «առաջնորդարան, վիհարան»։ Նոր փոխառութիւններ են Տփ.* դա'րբազ *«հին ձևի մեծ տուն», Ղրբ.* դmrբmqm, *Ախց.* դ'mrբmqm, *Երև.* դարվազա *և այլն։*

ԴԱՐԱՊԵՏ, ի–ա *հլ. «դռնապան» Նորադ. ա. մնաց. ժե. 24. ժզ. 42, Կոչ. էջ 289, Մծբ. էջ 371, 391. Եփր. անընդ. 43. Թէոդոր. խչ. 163, որից՝* դարապետական *«դժոխքի դռնապանին պատկանող, սանգարամետական» Թէոդոր. խչ. 161։—Դարապետ բառը յետոյ գործածութիւնից ընկնելով՝ տեղ տեղ սխալմամբ գրուած է* դարաճապետ *և* կարապետ *(որանց սրբագրութիւնը տե՛ս Վարդանեան և Նորայր, ՀԱ, 1913, 296)։—Բառ. երեմ. էջ 74 մեկնում է «հարիւրապետ», հետևցնելով դար «հարիւր տարի» բառից! իր աղբիւրն է անշուշտ Փիլ. հլ. 500 «ԹՔէ զօրագլուխն ոչ իցէ ընդ նոսա, երկրորդ իշխանք և դարապետք և դասապետք լինելով՝ զերկրորդսն մատուցանեն պէտս»։*

*=Պհլ. *darpat «դռնապանապետ» ձևից, որ կազմուած է պհլ.* dar *=պրս.* dar *(որ է «դուռ») և պհլ.* pat *=պրս.* bad, bud *(որ է «պետ») բառերից։ Բարդութիւնը չի կարող հայոց մէջ տեղի ունեցած լինել, որովհետև հայերէնի մէջ անկախ դար «դուռ» բառը գոյութիւն չունի, այլ ամբողջը պատրաստ փոխառեալ է իրանեանից։—Ա.Հ.*

Lag. Arm. Stud. *§ 587 պրս.* dar *և հլ. պետ բառերից բարդուած։*

***ԴԱՐԱՊՂՊԵՂ,** *որ և* դարի պղպեղ *«երկայն պղպեղ,* piper longum*» Բժշ. Գաղիանո.*

=Պրս. دارپلپل dār-i-pilpil *«դարապղպեղ», որ կազմուած է պրս.* دار dār *«ծառ» և* پلپل pilpil *«պղպեղ» բառերից, իբր «պըղպեղի ծառ»։ Իրանեանից են նաև արաբ.* دارفلفل dārfilfil *և վրաց.* დარუპილპილი *դարուպիլպիլի։—Հիւբշ. 138։*

ՆՀԲ յիշում է պրս. բառը, առանց սակայն իբր լծորդ նշանակելու։ Ուղիղ մեկնեց նախ Lag. Gesam. Abhnd. *35։*

***ԴԱՐԱՍՏԱՆ, ի–ա** *հլ. «ծառաստան, պարտէզ» եզեկ. ԺԲ. 11. Եփր. եւ. Մարգ. յուդ. Բ. էջ 649. Նար. 115։*

*=Պհլ. *dāristān=պրս.* دارستان **dāristān «ծառաստան» կորած ձևից, որ կազմուած է պհլ.* dār, *պրս.* دار dār *«փայտ (ծառ)» և* stān *բառերից. համմ. պրս.* gulistān *«վարդանոց»,* diraxtistān *«ծառաստան» են։ Ածանցումը չի կարող հայերէնի մէջ կատարուած լինել, որովհետև հայերէնի մէջ չկայ դար «ծառ» բառը. այլ ամբողջը պատրաստ փոխառեալ է իրանեանից։—Հիւբշ. 137։*

ՆՀԲ պրս. տիրէխթան *«ծառեր»։* Windisch. *11 բառի առաջին մասը—դարա—համարում է սանս.* taru- *«ծառ»։—Ւերոպա, Վիեննա, 1850, էջ 15, ծան. ա. «ծառ=սանս.* taru *և պրս.* dār, *որ աւելի լաւ պահուած է դարաստան բառի մէջ»։ Ուղիղ մեկնեց* Lag. Arm. Stud. *§ 589։—Հիւնք. հանում է դրաստ բառից։*

ԳԻՒ.—Կայ միայն դարաստան ՍԲ., բայց նշանակում է «լեռներ կամ լեռնոտ տեղեր», ուստի պէտք է կապել դար «բարձունք, բլուր» բառի հետ։

ԴԱՐԱԻԱՆԴ, ի–ա *հլ. (գրուած նաև դարևանդ, սխալմամբ դարաճաւանդ) «գահաւանդ, դար, բարձրութիւն» Խոր. Բ. 39, «յոնքերի դուրս ցցուած մասը» Խոյ. Բ. 47, «առաստաղի գերաններըը» Երգ. ա. 16 և Նար. Երգ. 287 (այս վերջինն է, որ Հին գր. մեկնում է «սրահակք կամ ելք ի ձեղունն»)։*

=Կազմուած է դար «բարձրութիւն»+ւանդ բառերից, համմ. սարաւանդ, գահաւանդ, բարձրաւանդակ. *աւելի ընդարձակ տե՛ս այլ բառի տակ։*

*ՆՀԲ դար և անդր բառերից։—*Lag. Urgesch. *418 կցում է պրս.* darband *«փոքր» բառին, սակայն ինքը* Arm. Stud. *§ 590 մերժում է այս համեմա-*

տութիւնը և ընդունում միայն բառի վերջի մասը՝ -ւանդ =պրս. band: Հիմնք. դար բառից -ւանդ մասնիկով:

ԴԱՐԲԱՆԴ «կիրճ լերանց». ունի միայն ՋԲ:

=*Պրս.* بند darband *«նշանակէ զայն տեղին ի լերինս և յայլ տեղիս, ընդ որ նեղութեամբ լինի անցանելն. նաև անձուկ վայրքն ի սահմանածայր տեղիս, ուր սահման հատեալ է»: Այս նոյն բառն է և Դարբանդ քաղաքի անունը, որ է Ճորայ Պահակը:*

Ուղիղ մեկնեց նախ Müller, SWAW, *38, 576:*

+ԴԱՐԲԻՆ, ի–ա *հլ. «երկաթագործ» ՍԳր. Վեցօր. 197. Եփր. Բ. կոր. 113, «Դ2 ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս.: Բուն և հին իմաստն է «վարպետ, արհեստաւոր», ինչպէս ցոյց է տալիս* դարբին պղնձոյ *«պղնձագործ» Մն. դ. 21, որից՝* դարբնել *Ոսկ. մ. բ. 24,* դարբնութիւն *Եզն.,* դարբնոց *Վեցօր.* դարբնական *Փիլ.,* դարբնաբար *Խոր. արձր.,* դարբնիչ *Նոննոս.,* դարբնոցապետ *(նոր գրականի մէջ). առանձին հետաքրքրական ձև է* դարբնայր *«դարբիններ» Ճառընտ.:*

=*Հնխ.* dhabhro- *նախաձևից՝ -ին մասնիկով, հմմտ. լտ.* faber *«վարպետ, արհեստաւոր (երկաթագործ, պղնձագործ, հիւսն, քարտաշ են)», իր ած. «արուեստաւոր կերպով, վարպետօրէն, արուեստակերտ»,* fabrē *«ճարտարօրէն, վարպետ կերպով»,* fabrica *«արուեստ, արհեստ, գործատուն, արհեստանոց»,* fabrire *«պատրաստել, յօրինել»,* fabricare *«գործել, շինել, ձևակերպել». գոթ.* ga-daban *«յարմարիլ, պատշաճիլ, յարմարեցնել»,* ga-dōbs *«պատշաճ, յարմար», հիւս.* dafna *«ուժով, ամուր դառնալ», անգսք.* ge-dafan *«պատշաճ», ge-daeftan «կարգաւորել», լիթ.* dabinú *«դարդարել»,* darbiniñks *«մշակ, գործաւոր»,* daba *«կերպ, եղանակ, յատկութիւն»,* dabšnùs *«դեղեցիկ», հսլ.* doba *«յարմարութիւն»,* udobinŭ *«դիւրին»,* dobrŭ *«դեղեցիկ, լաւ»,* podobati *«պատշաճիլ»,* doblĭ *«ուժով»,* nă-do *«պէտք է». չեխ.* dobrý *«քաջ» են: Բոլորի պարզ արմատն է հնխ.* dhabh- *«յօրինել, դեղեցիկ կերպով յարմարել» (*Walde, *264,* Berneker, *203—5,* Trautmann, *42—3,* Pokorny, *1, 824,* Ernout-Meillet, *305):—Հիւբշ. 438:*

Տէրվ. Նախալ. 87 սանս. darbh *բառի հետ հնխ.* darbh *կամ* dharbh *«հիւսել, կապմել» արմատից: Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet, MSL. *8, 165: Հիմնք.* դափր *ճատաճել ձևից:*

Գիւմ.—Կր. Մշ. Ջղ. Սեբ. դ'արբ'իճ, *Երև.* դ'ա'րփիճ, *Ղրբ.* տա'րպիճ, *Ալշ.* դ'առպիճ, *Մկ. Սլմ. Վն.* տmրպիճ, *Ոզմ.* դ'mրպէճ, *Տփ.* դա'րփուճ:

ԴԱՐԳ «կարգ, շարք». նորագիւտ բառ, որ երեք անգամ միայն գործածուած է հին հայ մատենագրութեան մէջ. այսպէս՝ Ագաթ. 1909, էջ 6 «Վասն դի ի խնդիր եղեալ և խուզիւք ի մէջ բերեալ զդարգս դարգս պատմութեանն». Բուզ. էջ 58, 59 «Կատարեցաւ երրորդ դարգ քասն և մի պատմութեանց գպրութիւնք. կանոնք դարգք և դարգք պատմութեանց դրուցաց»: Այս բառը շատ հաղուագիւտ մի ձև լինելով՝ շուտով ջնջուել է հայ լեզուից և վերի վկայութեանց մէջ էլ փոխանակուել է կարգ, դարք *«դարեր» համահընչին բառերով: Ագաթանգեղոսի մէջ դեռ երեք ձեռագիր պահում են, մնացեալ բոլոր ձեռագիրները, ինչպէս նաև կրկնագիրը (Յուշարձան, էջ 76) դնում են* կարգ, *իսկ Բուզանդի բոլոր օրինակները ունին* դարք:

=*Ասոր.* ܓܪܓܐ gargā *«կարգ, աստիճան», արամ.* דרגא darəgā *«աստիճան». արմատն է երր.* דרג darg *և արար.* درج darj *«քալել, վերև բարձրանալ», որից արար.* درجة daraja *«աստիճան, առնդախ», աստր.* daraggu, durgu *«ճամբայ»:*

Գաւառ ու մեկնեց Վարդանեան, ՀԱ, 1913, 131, 1914, 120, Բառաբ. դիտ. Բ. էջ 35:

*ԴԱՐԴԻՃ *(յետնաբար ի–ա հլ.) «պատգարակ, մահճակալ». մէկ անգամ գործածուած է ոսկիդարեան մատենագրութեան մէջ՝ «Հրամայեաց բերել զարգիճս երկաթիս և բնկենուլ ի վերայ կայծականց հրոյ ի վայր զբերեսան» (ըստ Վարդանեան, ՀԱ, 1920, 453). այս օրինակը գործածուած է վկայաբանական մի պատառիկում, որ հրատարակեց Ա-*

կինեան, Աբեղ. էջ 47։ Զորս անգամ էլ գրտնում ենք չեռնաբար գործածուած. Յայտ. յունիս 6. Յայնժամ բերին դարպիճս երկաթի և կրակացուցին զայն որպէս զհուր և արկին զսուրբն ի վերայ զերեսն ի վայր. Վարք և վկ. Բ. էջ 314—5. Բերել դարպիճս երկաթիս... մինչև շոգանալ դարգճացն... առնուլ զնա ի դարգճացն։ Բարդութեամբ էլ ունինք դարգրճակալ «պատգարակի վրայ բարձուած (հիւանդ)» Կոչ. 382 (տպ. դարկճակալ), դարգճան (կամ դարկճան) «պատգարակի ձևով» Վանակ. ուրախ. «խոշոր հիւսուածով» Մովս. երզն.։

=Ասոր. ܕܪܓܘܫܬܐ dargūštā «պատգարակ, օրօրոց», արամ. דרגש dargaš «անկողին». այս բառերը բնիկ սեմական չեն. ուստի կարող են հայերէնի հետ փոխառեալ լինել իրանեանից։—Հիւրշ. 137։

ՆՀՌ և ՋՌ այս բառը դնում են դարգիճ ձևով, ինչպէս որ աւանդուած էլ է, բայց առանց վկայութեան և ենթադրելով միայն բարդութիւններից։ Հիւրշ. կարծելով, որ իրօք աւանդուած չէ բառը, այլ դարգճակալ և դարգճան բառերից միայն ենթադրուած է, մերժում է դարգիճ ձևը և հիմնուելով սորի ձևի վրայ՝ դնում է *դարգուճ։—ՆՀՌ մեկնում է լծ. բրբ. բարագ «սանտր»։ Ուղիղ մեկնեց Հիւրշ. ZDMG, 36 (1882), էջ 129։ Ըստ Մովսիսեան (նամակ 1933 մարտ) համմտ. քրդ. därguš «օրօրոց», որ ճշտիւ նոյն է սորի բառի հետ։

*ԴԱՐՊ (չեռին տառադարձութեամբ՝ տարտ ձևով) «ցաւ, վիշտ» Քուշ. 53. ռամիկ բառ, որ գործածական է նաև արդի բարբառներում, որից՝ դարդամահ «վշտամահ» Սամ. աննց. շար. 170։

=Պրս. درد dard «ցաւ, վիշտ»։

+ԴԱՐԵԼ «կանգ առնել, կենալ, մնալ» ՅՀ. կթ., որից դարումն «դադրիլը, կեցալը» Շիր. կրկնութեամբ դադար, որի վրայ տե՛ս առանձին։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. dher- արմատի dhr- ձայնդարձից. համմտ. սանս. dhārāyati «կկենալ, հաստատուն կմնալ», dhárman- «դադար, լենարան, օրէնք, սովորութիւն», հպրս. darayamiy «բռնել», զնդ. dārayeiti «առնել, պահել», պրս. dāram «առնեմ» (միւս իրանեան ձևերի վրայ տե՛ս դարան), յն. θρόω, θρήσασθαι «նստիլ», θρόνος «աթոռ, գահ», θρᾶνος «նստարան», լտ. firmus «հաստատուն», լիթ. derme «հաստատուած դաշինքը» են (Walde, 294, Boisacq, 349, Pokorny, 1, 857, Ernout-Meillet, 349)։

ՆՀՌ դար «բարձրութիւն» բառից, իբր «ի դարի ուրեք նստել»։ Նոյնը նաև Հիւնք.։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Meillet, MSL, 10, 280։ Տե՛ս նաև դադար բառի տակ։ Հիւրշման չէ յիշում, բայց էջ 463 կրկնական դադար կգտում է հանդարտ բառին։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 340 հյ. բառ, թրք. تار tar (բառլանմաք) և طورمق durmaq «կենալ» բառերի հետ? Պատահական նմանութիւն ունի սորտ. ܕܪ dar «բնակիլ, մնալ»։

ԳԻՒ.—Կայ միայն դար ու դադար երև. Մշ. «հանգստութիւն, հանդարտութիւն» (Ամատ. էջ 162)։

ԴԱՐԻԹԻՐԻՔ կամ ՏԱՐԻԹԻՐԻՔ. անծանօթ բառ, որ մէկ անգամ ունի Եղիշ. ը. «վազագոյն առաւօտուցն ի դարիթիրիք եկայք. զի վազիւ անդ մովսէսեան մովսէս առաւ յազէ». (այսպէս ունին տպ. Վենետ. 1859, էջ 141 և 1864, էջ 321. միւս տպագրութիւններից Վենետ. 1828, Պոլիս 1873 ունին ի դարիթիր. Թէոդոսիոյ տպ. ունի ի դարիթիր)։

Այս բառը չունի ՆՀՌ։ Առաջին անգամ յիշում է ՋՌ՝ դարիթեար, դարիթիար, դարիթիր ձևերով և մեկնում է «զառիվայր»։ ԱՌ գրում է դարիթիւրէ, տարիթիւրէ և մեկնում է «գուռն օրինաց», իրև պրս. բառ։ Անշուշտ հասկանում է պրս. دَرِ تُور dar-i tōr «գուռն օրինաց», Պատկ. Матер. I. 9 մերժելով այս՝ դնում է դարիթիր=պրս. دَرِ تِير dar-i tīr «porta potestatis իշխանութեան դուռը»։ Բառիս վրայ ընդարձակ քննութիւն ունի Բազմ. 1895, էջ 6—7 (=Միքայէլ Փորթուգալ փաշա, Եղիշէ, 439), որի ամփոփումը հետևեալն է—թիւրէ և կամ թէորէ մանդոլ-տաճկական

մի բառ է՝ ըստ Բուրհան-ի- Քաթիի (տպ. Պօլիս ւրդ., էջ 193), և ձինդիզխանի հաստատած կարգի ու օրենքի անունն է. (Մոնղոլները իրենց շէրիաթը կոչում են porw)։ *Այս բառը չի կարող լինել եղիշէի դրածը, որովհետև ե դարուն դեռ չկար։ Բացի սրանից՝ նախարարները ո՛չ թէ դատարան, այլ մոգպետի ատրուշանը պիտի երթային զոհաբերութեան համար։ Եղիշէի ձեռագիրների ընթերցուածը կերևայ թէ ո՛չ* դարիթիւէ *է և ո՛չ էլ* տարիթիւէ. *այլ* դարիթիր, դարիթիւ, դարիթիւ։ *Կայ պրս.* թարութիւր, թարի, թարիթէր *«մուխ, մխին, մխագոյն», իբր թէ ասուած լինէր «վառը մուխին եկէք»։ Բայց այս մեկնութիւնն էլ յարմար չէ, որովհետև անդ բառից հասկացւում է, որ խօսքը տեղի մասին է։ Եղիշէի բառը պէտք է սրբագրել* դարիմիւր *կամ ն բնկած՝* դարիմիր, *որ է պհլ.* dar-i-Mihr *«դուռն Միհրի». Համմ. փարս.* darime, *«մեծամեծ զոհաբերութեանց սրբավայրը, ատրուշան հրոյ կամ* Dari M.hr *դուռն կամ պալատ Միհրի» (*Darmesteter, Zend-Avesta, *էջ ծթ.)։— Պապիլ. Ազիատարեր, 1914, էջ 522 պրս.* دردر dar-i-darī *«Դուռն արքունի»։*

*ԴԱՐԻՃԱԿ *«ձուլելու կաղապար» Սանահն. Գհ. հա. լծ. պրպմ. 558. Տաթև. Հարց 82, 387։*

=Պհլ. *darīčak *Ննթագրեալ ձևից, որ կազմուած է* dar *«դուռ» բառից՝ -īčak նւագական մասնիկով և բուն նշանակում է «դռնակ», բայց նաև «կաղապար». Համմ. պրս.* دچدر darīča *«մեծ դռան վրայ շինուած դռնակ, պատուհան, կաղապար,* forma fundendi aurifabri *ոսկերչական ձուլիչ կաղապար»։ Այս բառից փոխառեալ են նաև արաբ.* دجرد daraja *և գւռ. թրք.* تجره tereje *«կաղապար»։—Հիւբշ. 137։*

ՆՀԲ յիշում է միայն ոմկ. դէրէճէկ։ *Ուղիղ մեկնեց Հիւբշ.* ZDMG, *35 (1881), 658 և* Pers. Stud. *էջ 227։*

Գիհ.—Նոյն բառն է երև. դրիչակ, *Ղրբ.* արիճակ *«երկու հարևան տների պատի միջև դաղտնի հաղորդակցութեան դռնակ կամ պատուհան». բայց պահում է միայն առաջին իմաստը. երկրորդ նշանակութիւնը չունի։*

ԴԱՐԻՃԵՆԻԿ, որ և դարիսեճ, դարսեճեկ, դարսեճեի, դարիսեճի *են «կինամոն բոյսը, նրա փայտը և ծեծած փոշին. դարչին» Ետր. աշխ. 616, Բժշ. Անկ. գիրք հին կտ. 14։*

=Պհլ. *dār-i-čēnīk *«կինամոն», որ բուն նշանակում է «Չինաստանի փայտ». պահլաւ բառը աւանդուած չէ, բայց կայ պրս.* دارچینی dār-i-čīnī *կամ* dārčīnī *«կինամոն», որից փոխառեալ են արաբ.* دارصینی dār-i-sīnī, *թլւռճ. աֆղան.* dār-čīnī, *քրդ.* dār-čīn, *թրք.* darčin, *գւռ.* tarčin, *վրաց.* დარჩინი, დარიჩინი, *թուշ.* დარიჩი, *սերբ.* darčin *են. հակառակ դիրքով է ասոր.* ܫܝܢܕܪܘܓ šīndarūg *«կինամոն»։ Հայերէն ձևերից առաջինը ուղղակի պահլաւերէնից է, իսկ միւսները արաբերէնից են։—Հիւբշ. 137։*

Ուղիղ մեկնեց նախ St. Martin, Mémoires, *2, 394. նոյնպէս նաև ՆՀԲ, Եւրոպա (Թերթ Վիեննայի), 1850, 15։*

ԴԱՐԻՆ *«սրբութիւն։ սրբոցն յաւիտենից», որի հետ նոյն են դիւրան «աւրբ», դիւրսան «սուրբ». բոլորն էլ ունի միայն Բառ. երեմ. էջ 74, 78, 79։*

ԴԱՐԻՆԱՃ *տե՛ս Դարունաջ։*

ԴԱՐԻՍԵՆԻ *«դափնի» Ամիրտ. կամ «ճիփնի» Բժշ. այսպէս ունի ՀԲուս. § 562։ Տարբեր է դարիսեճի, որ տե՛ս վերը դարիճենիկ։*

ԴԱՐԻՍՎԱՐ, որ և դալիսվար, տալիսֆար «մի տեսակ բոյս է, որ դանագան ձևերով է մեկնուած» Ամիրտ. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 564։

=Արաբ. طالسفر ṭālisfar *կամ* طاليسفر ṭālīsfar *«մի տեսակ բոյս», որ դտնում եմ Շիաների հաւատքածոյի մէջ,* WZKM, *12, 213։— Ա.Ճ.*

ԴԱՐԼԱԿԵԼ *տե՛ս Դալակիլ։*

ԴԱՐԿԵԼ *«շաղակրատել կամ (է)ամարտակոս կամ ամսար» (Թրք. միջնորդ). այսպէս ունի Բառ. երեմ. էջ 74, որի տակ էլ դարկելի «ժամանակելի». սրանց ի՛նչ լինելը յայտնի չէ։*

ԴԱՐՀԱՍՈՒՆԻՑ *«խոսասուլանոց յաւիտեանց». ունի միայն Բառ. երեմ. էջ 74։*

+ԴԱՐՁ, ի հլ. «գնացած տեղից յետ գալը. 2. մի վիճակից մի ուրիշ վիճակի անցնելը կամ փոխուելը» ՍԳր. Ոսկ. ես., որից՝ դարձուցանել ՍԳր. եղն., դարձեալ «նորից, կրկին, վերստին» ՍԳր, դարձագարձ Գ. մակ. ա. 11. Եւագր., դարձդարձիլ Սեբեր., դարձուած ՍԳր. Ագաթ. Կիւրղ. ծն., դարձրնքաց Կոչ. 409, անդարձ Յոր. ժզ. 21. Ոսկ. մտթ. և ես., գերեդարձ Բ. մակ. ժ. 1. ես. ժզ. 17, կապարճադարձոյց Մծբ., դիմադարձ Յուդթ. բ. 15. եսթ. թ. 1. Ոսկ. ես. մտթ. և Փիլիպ. Ագաթ., բնդդէմդարձուիւն Կոչ., դարձեակ «գերան» (նորագիւտ բառ) Նչ. եզեկ.—յետնաբար կազմուած են վերադարձ, ապաթարց (տե՛ս այս բառը), գրադարձ ևն; նոյն արմատի բայական ձևն էր նախապէս *դարձնալ, որից ձ կրճատուելով յառաջացաւ *դարնալ և ն-ի պատճառաւ r թաւանալով՝ դառնալ (կար. դարձայ, հրմ. դա՛րձ, դարձի՛ր) ՍԳր. Եփր. ծն. (սրա «շրջիլ, պտոյտ գալ, տնկ. dunmek» նշանակութիւնը դաւառական է և յատուկ արդի գրականին): Այս ձևափոխութեան համար համեմատել բառնալ< *բարնալ<*բարձնալ, որից՝ վերադառնալ Տօնակ. Լմբ. պարգ., դիւրադառնալի Շնորհ. առ. չար. անդրադառնալ (նոր բառ):—Թարձ «բացի» բառի վրայ տե՛ս բարց:

= Բնիկ հայ բառ՝ հնխ. dhʒg'h- արմատից. սրա հետ համմտ. անգղս. dreð, լատ. drocta «պարձնել, ոլորել, գալարել, թևով պնդել մանել», drēðure «ոլորուն, դողալով», drīðem «գառնալ, դողալ», pər-drēð «պտուտակով ամրացնել», dreð-ate «ոլորք», drāð-el'e «բադեզ, պատառուկ, գոան փալանք», drīð-me «սոսկում», այս յոլորը հանում են հնխ. dhreg'h արմատից, որի նախնական նշանակութիւնն է «պարձնել. ոլորել» (Pokorny, 1, 863):

ՆՀԲ մեզանից է գնում յատ. tornāre «դարձնել»: Böttich. Arica. 11. Wurzelforsch. 8 dhar, dhʒ արմատի հնդեւրոպական dharj ձևից: Riggs, Փերսակ. 1856, էջ 61 անգլ. turn համանիշի հետ: Հինգ. յատ. tornare: Patrubány, SA. 2, 269 յն. τρέχω «վազել», սանս. dhrāvati, հհիւս. draga «քաշել» բառերի հետ: Scheftelowitz, BB, 29, 21 հնխ. tər- արմատից. համմտ. հրգ. drāen, գերմ. drehen «դարձնել», յն. τερέω «ծակել», յատ. terebra «ծակիչ»: Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lidén, Arm. Stud. § 70, որ վերիններին հետ ազում է կապել նաև իրանեան darz «կարել» արմատը և հլ. դերձակ, դերձան, հանդերձ:—Karst. Յուշարձան 400 ամեայ. tāru «դառնալ»: Թիւնաքեան, Բազմ. 1913, 340 թրք. ترس ters, tars «հակառակ»: Petersson, Ar. u. Arm. Stud. 79 ընդունելով վերի մեկնութիւնը՝ աշխատում է աւելացնել նոր համապօր ձևեր:

Գիւմ.—Ննխ. Պլ. դառնալ, Ալշ. Ախց. Ակն. Երև. Խրբ. Կր. Մշ. Սեբ. Սչ. Զգ. դ'առնալ, Տփ. դարնալ, Զթ. դ'առնօլ, դ'առնոլ, Ռ. Տիգ. թառնալ, Ոզմ. դ'ոռնալ, Ագլ. գո'ռնիլ, Մկ. Մրզ. Սլմ. Վն. առռնալ, Գոր. առ'ռնոլ, Շմ. առռնիլ (բայց յէտ բռռ), Ասլ. դ'էռնալ, Ղրբ. տէ'ռնալ, Նխ. բռռնոլ, Հճ. դ'արնոլ, դ'այնոլ, Համշ. տառնուշ:—Թարձ ձևն են ցոյց տալիս Զգ. դ'առցնել, Պլ. դառցուցնել, Սլմ. տռոցիւցել:—Նոր բառեր են՝ դարձնկ, դարձկար, դարձմրակել, դարձուկ, դարձուճք, դարձաւար, դարձառուկ.—առանձնապէս կարևոր են անդառն Տիգ. «անդարձ», դառած Ղրբ. «կատղած», յետ դառ Ղրբ. «ե՛տ դարձիր», որոնք կրճատ դառ- ձևը արմատականի տեղ են գործածում:

Փոխ.—Թրք. գաս. S. tersig «դարձնկ, հեծան, գերան» (Բիւր. 1899, 798):

*ԴԱՐՄԱՆ, ո, ի հլ. «ճար, հարուկ, խնամք, հոգ, գնդ, ուսուիք, ապրուստ» ՍԳր. Եղն. Ոսկ. ես., որից՝ դարմանել ՍԳր, դարմանի: Վեցօր. Եղն., դարմանական Ոսկ. ես., դարմանաւոր Ագաթ., դարմանոց Բուզ., դարմանուիւն Ոսկ. ես., խաչնադարման Մն. խգ. 32, 34, բազմադարման Յճխ., խաչադարման Մծբ., անդարմանելի (նոր գրականի մէջ) ևն:

= Պհլ. درمان darmān «բժշկութիւն, դեղ», պրս. درمان darmān «ճար, հարուկ, դեղ», սանս. dharman- «բնաւրան, նեցուկ»: Պարսկերէնից փոխառեալ են նաև աֆղան. բելուճ. darmān, քրդ. darmān, ասոր. ܕܪܡܢܐ darmānā, թրք. derman, սերբ.

derman, *վրաց.* დარმანი, *ասլար.* darman, *ուս.* därman, *այսպէս նաև գրեթէ բոլոր կովկասեան լեզուների մէջ։ Իրանեան բառի արմատն է* dar<*հնխ.* dhar «պահել, պահպանել» (Horn, § *554*). *Համմ. նոյն արմատից ղնդ.* drva «առողջ», *պհլ.* dārūk, *պրս.* دارو dārū «դեղ, դարման» (Horn, § *523*), *որից ածանցներ են հյ.* դարան, դաբիլ (*տե՛ս այս բառերը*)։ *Հայերէն բառը բնիկ լինելու պարագային էլ պիտի ունենար վերի ձևը, բայց -ման մասնիկը և բառի նոր նշանակութիւնը՝ որ միայն իրանեաններին է յատուկ, ցոյց են տալիս, որ բառը փոխառեալ է։—Հիւրշ. 138։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, որ դնում է իբր պրս. տէրման, բայց սրա հետ յիշելով նաև թիւմար ձևը։ ՆՀԲ պրս. տարու, տէրման։ Պրս. darmān *ձևը գնում են նաև* Böttich. Rudim. *38,* ZDMG, *1850, 353 են։* Canini, Et. étym. *144 նոյն ընդ հյ. դեղ։*

ԳԻՒ.—Պահուած է «1. դեղ, ճար» և 2. «յարդ» իմաստով.—առաջին իմաստով են՝ երև. Տփ. դարման, *Ախց. Մշ. Ջղ.* դ'արման, *Ալշ. Մկ. Վն.* դրման, *Համշ.* դէրմօն, *իսկ երկրորդ իմաստով են՝ Նախ. Տփ.* դարման, *Ալշ. Ախց. երև. Կր. Մշ.* դ'արման, *Ոզմ.* դ'ɪրման, *Ագլ.* դմ'րմն, *Մկ.* տɪրման, *Գոր. Շմ. Սլմ.* տɪրմն, *Ղրբ.* տե'րման, *Մրզ.* տɪրմն, *Համշ.* տարմօն։ *Նկատելի է սրանց մէջ յատկապէս նախաձայնի տարբերութիւնը. «դեղ» իմաստով դ, իսկ «յարդ» իմաստով դ՝ կամ տ. սրանից հետևում է, որ դարման «դեղ» նոր փոխառութիւն է գաւառականներում, իսկ դարման «յարդ» բնիկ է։ Նոր բառեր են՝ դարմանագող «յարդագող, ծիր կաթին», դարմանանոց «յարդանոց», դարմանել «ձիին յարդ տալ»։ Բառի այս նշանակութեան հնագոյն վկայութիւնները հետևեալներն են. «Իբրև ոչ գտաւ խար երիվարաց զօրուն բազմութեան դարման կերակրոյ մինչև ի մէջգիշեր» Ագաթ. § 42 (*Meillet, JAs. *1910, 465* դարման կերակրոյ բառերը համարում է յետին միջարկութիւն, իբրև բացատրութիւն խար երիվարաց բառերի. յունարէնում այս միջարկութիւնը չկայ).—«ի խոտոյ է դարման չորքոտանեաց» Վեցօր. 83.—«Որ զարօտն արմտոջ նախ ինքեանք ուտէին... և զմնացեալն յինքեանց ղընդ գետինս հարեալ սրն զդարմանան... Բողուին հօտին» Նար. երգ. 330.—«Եւ զդարման երիվարացն, զոր ընկենոյր» Ուխտ. Ա. էջ 82։ Այս իմաստից է նաև դարմանոց «յարդանոց» Անկ. գիրք առաք. 125, 127։*

**ԴԱՐՇԻՇԱՆ, որ և դարշիշիան, տարշիշան «մի փշոտ բոյս է. լտ.* aspalathus» *Բժշ. (նկարագրութիւնը տե՛ս ՀԲուս. § 565)։*

=Արաբ. دارشيشعان dār šīš'ān «aspalath» *(տե՛ս Շթայնշնայդէրի հետաքրքրական մէջ՝* WZKM *12, 81 և Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 332)։—Աճ.*

**ԴԱՐՈՒՄ, ա հլ. «հարաւ, հարաւակողմ». մէկ անգամ գտնում եմ գործածուած նար. խչ. էջ 385 «ի կողմանն աջոյ կայից հիւսիսոյ... ունի զառաքեալսն տիրապատիւս և զևսաւորչին սուրբ դասանարանն. իսկ բատ հարաւոյ դիմաց դարումայ՝ զերբայեցի բնակեալ պատանին զմարտիրոսն Արդլմըսահ»։*

=Եբր. דרום dārōm *«հարաւ» բառն է. համմ. Եղկ. ի. 46 «Հասատատեա՛ զերեսս քո ի Թեմանն և հայեաց ի Դագովն (եբր. ի դարոմ «հարաւ»)։ Բառս յոյն թարգմանութեան մէջ տառադարձուած է Δαρωμας և իբր յատուկ անուն առնուելով՝ հասկացւում է «հարաւային Պաղեստին»։ Նարեկացին դիմել է բուն աղբիւրին և գործածում է բառը բուն «հարաւ» նշանակութեամբ, ինչպէս ունինք թեման «հարաւ»՝ փոխառեալ նոյնպէս եբրայեցերէնից։*

Նշ և Աբ չունին այս բառը՝ անշուշտ յատուկ անուն համարելով, ինչպէս կարծում է նաև Նարեկացու հրատարակիչը, որ յիշեալ բառը գլխատառով է գրում։ Ջբ իբր անատոլ. բառ նշանակում և մեկնում է «եզր, ծայր կամ ներքին սահման»։ Սրանից է առնում ՓԲ և համեմատում պրս. դարիւմ *(իմա՛ արաբ.* ظرف ẓarum) «թաթարական վրան քաղքէ»։ Lag. Arm. Stud. *§ 596 կարծում է Ս. Գրքի* דרום dārōm *(յն. տառադարձութեամբ* Δαρωμας) «հարաւ» բա-

որ։ վերի ձևով մեկնում է Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 145 և Բ. 287։

ԴԱՐՈՒՆԱՋ, գրուած նաև դարիճաճ, դարիճիճ, դրունաջ, դրունազ, դարունաճ, դարունճէճ, տարունաճ, դրունաճ «սպիտակ ճառագայթաձև ծաղիկներով մի տեսակ բոյս. լտ. doronicum, ֆրանս. doronic, թրք. չիմէճ օթու» Բժշ. (իսկ Տիրացուեան, Contributo § 177 համարում է Anemone armena Boiss.)։

=Արաբ. درونج darūnaj, որ արաբացեալ է պրս. درونه darūna կամ درونک darūnak ձևից. «բժշկական մի խոտ՝ որի արմատը կարիճի ձև ունի»։

Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Բառ. ֆրանս. (տե՛ս doronic բառը), յետոյ ՀԲուս. § 566։

ԴԱՐՊԱՍ *տե՛ս Դարապաս։*

ԴԱԻ, ո *հլ. (յետնաբար նաև ու հլ.) «խարդախութիւն, գարանակալութիւն, սպանութիւն» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 13. Փարպ., որից՝* դաւել *Երեմ. ժբ. 6. Փիլ., դիւրադաւ Ոսկ. ես., դաւանիք Պիտ. 34. կթ. Փիլ., դաւումն Փիլ., շարադաւ Պիտ.։ Նոր գրականի մէջ՝ դաւադիր, դաւադրութիւն, դաւադրական, ազգադաւ ևն. առանձին տե՛ս դաւաճան։*

=Այս բառի հետ համեմատւում են սանս. dabh «վնասել, դաւել, խաբել», dabhnoti «խաբում է», dabhati նոյն նշ., զնդ. dab «խաբել, ննջել», davaiti «խաբում է», dava «ննջ, յոռի», a-ծavi «անխաթ», daiwi «խաբէութիւն», օսս. dawun, dawün «գողանալ»։ Սրանց արմատը համարւում է հնխ. dhabh-, որ պիտի տար ուղղակի հյ. դաւ։ Այս պարագային հայերէն դաւ բնիկ է, բայց դաւ կարող էր նաև իրանեանից փոխառնւած լինել։ Թէև պարսկերէնում և պահլաւերէնում մի այսպիսի բառ չկայ, բայց կարող էր գոյութիւն ունեցած լինել հին պարսկերէնում dav ձևով, ինչպէս մատնանիշ են անում վերի իրանեան ձևերը։ Այսպէսով, հյ. դաւ բառի ծագումը (բնիկ թէ փոխառնւած) մնում է անորոշ։—Հիւբշ. 138, 438։*

Böttich. ZDMG, *1850, 353.* Arica, *76, 262*, Lag. Urgesch. *455 սանս.* dambha, *զնդ.* daiwi:—Müller, SWAW, *38, 577 և 586 սանս.* dabh-, *զնդ.* daiwiš, aδawiš:—Justi, Zendsp. *147 զնդ.* dab *բառի տակ՝ սնս. և օսս. ձևերը։ Հիմնք. դաւաճել բառից։* Oštir, Btrg. alarod. *5 սանս.* díp-sáti «վնասել»։ *Պատահական նմանութիւն ունի արաբ.* داو dav *կամ* داى day «խարդախութիւն անել, նենգել» (Կամուս, թրք. թրգմ. Գ. 808)։ Pokorny, *1, 851 հնխ. արմատը դնելով* dhebh-, *բնականաբար դաւ համարում է իրանեանից փոխառնւած (ա-ի պատճառով)։*

Փոխ. ուս. дав «կռիւ, պատերազմ»։

ԴԱԻԱԲ *«ուշիմ». ունի միայն Բառ. երեմ. էջ 75։*

=Արաբ. دوّاب davvāb *«անասուններ», որի եզակին է* دابّة dābba *«չորքոտանի կենդանի» (Կամուս, թրք. թրգմ. Ա. 162)։—Աճ.*

ԴԱԻԱՃԱՆ, ի–ա, *հլ. (յետնաբար նաև ի հլ.) «ննջգող, գարանակալ, խաբող» ՍԳր, որից՝* դաւանաճիք *«դաւ, խաբէութիւն» նխ. եւ. ճառընտ., դաւաճանել Եւ. գ. 22, դաւաճանութիւն ՍԳր. ևն։*

=Կազմուած է դաւ և ճան բառերից. առաջինը տե՛ս առանձին. երկրորդը գոնում ենք նաև ճակաճան, գինեճան, խրախճան բառերի մէջ. ծագումը անյայտ է։

ԴԱԻԱՆ, ի *հլ. «դաւանութիւն, հաւատք» Յհ. իմ. խոստ. 12, 16, 34. կթ. Ոսկիփ., որից՝* դաւանել *«մի հաւատք խոստովանիլ, հաստատել, վկայել, ընդունիլ» Երեմ. խդ. 25. Ա. տիմ. գ. 12. Եւս. քր., դաւանութիւն ՍԳր., դաւանարան «վկայարան» Նար. խչ. և մծբ., հայադաւան Գր. տղ., երկադաւան Շնորհ. թղթ., կիսադաւան Թէոդ. մայր., Էրիստոսադաւան Թղթ. դաշ. յետնաբար շինուած ձև է սուտադաւանոց «մղկիթ» (նորագիւտ բառ) Սամ. անեց. 137 (բստ մի ձեռ. միւսներն ունին սուտ աղօթանոց)։*

Հիմնք. հաւանիլ բառից։ Ալիշան, Հին հաւ. 11 հնդ. տէվաս, հյ. դև, դիմ։

Գիմ.—երբ. դ'ավանիլ, *ՀՓ.* դ'ավանըլ.

Մկ. տովմճաճք՛, *Սլմ.* տովմճոմճք՛, տովմճիւք՛:

ԴԱՒԱՐԱՅ, ի *հլ.* «*հուն, դողալ*» *Վեցօր. Ե. էջ 101. այսպէս նաև Լծ. վեցօր.*:

ՀՀՔ, ՆՀՔ, ՋՔ և ԱՔ գրում են սրա տեղ գավառս, *ինչպէս ունին Վեցօրէից սովորական օրինակները: Առաջին անգամ Նորայր, Հայկ. բառաք. էջ 6 և Բառ. ֆրանս.* (cornouiller *բառի տակ*) *ուղղում է* դաւառայ, *ինչպէս ունին Վեցօրէից երկու ընտիր ձեռագիր և Վեցօրէից լուծմունքը: (Սրա վրայ տե՛ս նաև ՀԲուս. § 558* դավառս *և ՀԱ, 1911, 302): ՆՀՔ ընդունելով* գավառս *ձևը՝ մեկնում է իբր «գագաթավարս», որովհետև յն.* κράνεια *«հուն» համանիշն էլ առուգաբանում է իբր «գագաթական»: Ուղուրիկեան (տե՛ս ԳՔ, էջ 364 և 1405) այս դաւառայ ձևն էլ համարում է սխալ գրչութիւն և ուզում է ուղղել սրս.* տագտաճէ *«հուն» բառի համեմատ:*

**ԴԱՒԻԻ *«դատ, վէճ, դատական պահանջ». նորագիւտ բառ, որ աւանդուած է միայն բացառական անդաւի «դատից՝ պահանջից ազատ» ձևով, Օրբել. էջ 360 «Գիւղն Ջուայ... զոր գնեալ է իմ յիմ եղբօրէն՝ Ջալալէն, ազատ յամենայն հարկաց և ի դիւանէ անդաւի և անհաշիւ յամենայն կողմանց, յեղբարց և յաւագաց»:*

=Արաբ. دعوى da'va *«դատ, պահանջ», որ այժմ էլ Կովկասի հայոց մէջ հնչում է դաւի:—Աճ.*

**ԴԱՒԻԿ *«դաշնագիր, մուրհակ». մէկ անգամ գործածուած է Կաղանկ. հրտր. էմ. էջ 152=հրտր. Շահն. Ա. 312 «Դնեն առ միմեանս խորհուրդս խաղաղականս... որոց կնքեալ ղգաւիկն՝ դարձան յիւրաքանչիւր տեղիս»:*

=Արաբ. تذكرة taḏkrā *«մուրհակ»:—Աճ.*

ՆՀՔ թրք. (իմա՛ արաբ.) تذكر taḏkır *«գրել», որ բնաւ կապ չունի վերի ձևով մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատեն. Ա. էջ 12:*

ԴԱՒՍԻՃԱՅ *«իշխանուհի». անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ղզիմ. դաշ. 17 «Ջինաղագել օրիորդն Հայոց Մեծաց, Խոսրովիդուխտ դաւսիճայն» (Շահն. էջ 94 գրում է տաւսիճայ):*

**ԴԱՓ *«թմբուկ». ունին միայն ՀՀՔ և ՋՔ.— հին մատենագրութեան մէջ առանձին գործածուած չէ, բայց ածանցմամբ ունինք դափել «թմբուկ զարնել» Արծր., դափիւն «աղմուկ, ժխոր, ցնծութիւն» Ոսկ. յհ. ա. 1, դափումն նոյն նշ. Մագ. յետնաբար կայ և առանձին գործածուած. ինչ. Նոր վկ. էջ 203՝ ժե դարից (Դափով և արապանով պարէին). Ջքր. սարկ. Ա. 74 (Դահուլօք և դափօք շրվշրվելով). Առաք. լծ. սահմ. 283, 615 (դաբ և գուսան):*

*=Պհլ. *daf բառից, որի հետ համմտ. պրս.* دف daf *«ձեռքի թմբուկ, դափ», որից փոխառեալ են նաև վրաց.* დაფი *դափի «դափ»,* დაფდაფი *դափդափի «թմբուկ», ուտ. դափ. թուշ. դափ, արաբ.* دفّ daff, *թրք. tef, քրդ.* دف dew, dəf, *հունգ. dob «թմբուկ»:— Հիւրշ. 138:*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ Հիւրշ. ZDMG, 35 (1881), 658: Հիւնք. չգիտէ դափ, որովհետև ՆՀՔ չունի. իսկ դափիւն, դափել հանում է յն. τύπος *«ոտնաձայն» բառից: Գազանճեան, Տարեց. Պապիկեան, 1905, 126 և Արև. մամ. 1907, 934—5 թրք.* depmek *«ծեծել» բառի հետ:*

ԳԻՒ.—Տփ. դափ. երև. Ջղ. դ'ափ, Գոր. տոփ, Ղրբ. տէփ, Ախց. դ'mփ, Ագլ. դէօփ, Մշ. դուփ. այս բոլորը նշանակում են «մի տեսակ շրջանակաձև նուագարան, որի մի կողմը բաց է, իսկ միւս երեսը մաշկով պատած, եղերքներն էլ հնչուն մետաղէ կլորակներ անցկացրած» (Ագլ. Ղրբ. Ջղ. բառս ստացած է նաև «հացը թոնիրի պատին խփելու բարձ» նշանակութիւնը և այս իմաստով է Բառ. երևմ. էջ 75 դափա «ռափաթայ կամ թմբուկ»):—Վերի ձևերից երանք, որ ունին դ՝ կամ տ նախաձայնը, ցոյց են տալիս, որ փոխառութիւնը շատ հին է. եթէ նոր լինէր՝ նրանց տեղ պիտի ունենայինք նախաձայն դ: Ընդհակառակը նոր ժամանակի փոխառութիւններ են Մշ. դուփ, Ոզմ. դոփ, Մկ. վն դիւփ, Պլ. բէֆ ևն:

*ԴԱՓՆԻ *(նույ, նեաւ), որ և գրուած է դարբնի, դափնէ, դափնիդ, դարբնիդ «մի տեսակ բոյս, կասլայ, laurus» Ագաթ. Վեցօր. 92. Փիլ. լին. Մագ. Նոնն. Ճառընտ. Յայտմ.—այլ ձևեր են՝ դարբնիա Անկ. գիրք նոր կտ. 238, դարնիդայ Ոսկ. Ճառք 879, դարբնիդեայ Անկ. գիրք նոր կտ. 251, 252, դափնիտեայ 265, դարբնդեմ 238.—որից դարնային Շնորհ. վիպ. նոր գրականում ընդունուած է միայն դափնի ձևը, որից դափնեվարդ «oléandre»։

=Յն. δάφνη, δάφνος «դափնի», δαφνίς, -ίδος «դափնու պատղը». այս բառի ծագումը յայտնի չէ՝ ըստ Boisacq, 168, Walde, 418 յոյն ձևերից δάφνη տալիս է հլ. դափնե, δαφνίς>դափնի, δαφνίδος>դափնիդ. իսկ մեր բ-ով գրուած ձևերը լեհին տառադարձութեան արդիւնք են։ Յունարէնից փոխառեալ են նաև վրաց. իմերել. დაფნი դափնի, թրք. ڈفنه defne, գռ. ڈفنه tefne (որից մհլ. pɨfɣɨn Վասակ. 174), նաև tafla, taflan, հալ. dafina, բուլգ. dafinŭ, սերբ. dafina, ալբան. dafin ևն։—Հիւբշ. էջ 345։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԴԱՓՈՆ «մահիճ կամ պատգարակ». ունի միայն Բառ. երեմ. 79 դնոր բառի բացատրութեան մէջ, որ տե՛ս վարը։

ԴԱՓՐ *(գրուած նաև դաբր, տափր, տաբր). գործածուած է միայն դափր հատանել ոճի մէջ՝ «ձիու՝ ոտքերով գետինը գարնել ու փորփորելը» Յոբ. լբ. 21. Մագ. կայ նաև դարբ հարկանել «հողը եղունդներով փորել» Լաստ.։*

Հիւնք. յն. ταφρεύω «փոս բանալ, խրամ փորել» և արաբ. ضرب ḍarb «գարնել»։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 թրք. دەرەنمك derenmek «խոխոել, հերեալ», təpər-da-maq «գոփել»։ Պատահական նմանութիւն ունին արաբ. ضبر ḍabr կամ ضفر ḍāfr «ցատկոտել» (Կաժաս, թրք. թրգմ. Բ. էջ 2, 5)։

ԴԳԱԼ *տե՛ս Տարգալ։*

ԴԳՈՒՆ «պնակ, լայն ափսէ», ունի միայն Բառ. երեմ. էջ 75, որ խառնակ ձևով գրում է. «Դգուան և խան և գոգում. պնակ», իսկ էջ 82 էլ «Դիուան. խան». երկու ձևերից ուղիղը կարծում եմ դգուան, իբրև աւելի հայեցի, իսկ գոգում, որ երկրորդ տպագրութեան մէջ եղել է պարզապէս գում, էջ 79 գրում և մեկնում է «դոգում, պնակ». սրանց մէջ էլ ուղիղը պէտք է համարել գոգում, իբր թրք. gügüm «պղնձե կուժ», որ կայ նաև գուգում ձևով։

ԴԴԱՒՓԱԼ «թագուհի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Արձ. ԺԴ դարից (Վիմ. տար. 142). «ի տէրութեան պարոն դդաւփալ Թամարին»։—Տե՛ս և դէդէպուլ։

=Վրաց. დედოფალი դեդոփալի «թագուհի»։—Աճ.

⊙ԴԻՒՆ *«ջրի են ձայն». ունի միայն ՀՀԲ, առանց վկայութեան, բայց սրա հետ միանում են՝ 2.* **Դգչել** *կամ դղչալ «աղբիւրի կարկաչելը» (գրուած նաև դղրչել, դղրշալ, դրդրչալ) Վրդն. ծն., որից՝ դղչումն (գրուած նաև դղրչումն, դրդրչումն) «ժխոր, աղաղակ» Ես. կթ. «աչքերի սիրալիր թարթումը» Փիլ. սամփս. 561, դղչիւն (գրուած նաև դղրչիւն, դրդրչիւն) ՆՀԲ և ԱԲ.—3.* **Դգնչել** *(գրուած դղրնչել, դրդրնչել) «աղբիւրի կարկաչել» Վրդն. ծն., որից դղնչումն (գրուած նաև դղրնչումն, դրդրնչումն) «աղմուկ, թնդիւն» Ածաբ. յայտ. «գետի ահագին խոխոջ» Օրբել.—4.* **Դճգչել** *«հնչել (ձորի, մարդու)» Վեցօր. 91. Փիլ. լին. 182, որից՝ դճղչեցուցանել «հնչեցնել» Պիտ., դճղչումն (գրուած նաև դրճդրչումն) «աղմուկ, ժխոր, թնդիւն» Ածաբ. յայտ. Անան. եկեղ. Ոսկիփ. «գետի ահագին խոխոջ» Խոր., դճղչիւն Անան. գիտ. 8.—5.* **Դճգճչել,** *որ բայական ձևով գործածուած չէ, բայց ունինք նրանից դճղնչումն (գրուած նաև դրճդրնչումբն) ՆՀԲ և ԱԲ։*

=Բոլորն էլ բնաձայն բառեր են, որոնք կազմուած են դ հիմնական ձայնից՝ կրկնութեամբ և ն, չ ածանցականներով։—Աճ.

Հիւնք. Հանում է դանդաղ բառից։ Վերի մեկնութիւնը տե՛ս ՀԱ, 1899, 204։

ԴԴՄԱՃ «մի տեսակ թուրքական կերակուր». մէկ անգամ ունի Պօղ. Տարօնեցի, Թուղթ առ Թէոփ. տպ. Պօլիս 1752 «Թուրքին դդմաճն լաւ է քան զայն պատարագն» (բատ Հացունի, Ճաշերը, էջ 116)։ Արդի գաւառականներում դդման նշանակում է 1. «գիւղա-

կան macaroni, որ լինում է տափակ ձևով. տճկ. էվրիշքէ» (Կր.). 2. «պահոց խմորեղէն մի կերակուր» (Ատն.). 3. «դետեղերքները բուսնող մի տեսակ բանջար, որի տերևները դդմի տերևների նման կլոր են, բայց կաղամբի գոյնով. այս տերևները խաշելով՝ մէջը դօլմա են փաթաթում. նման է asarum բոյսին (Ագգ. հանդ. ե. 20). tussilago farfara L» (ըստ Տիրացուեան, Contributo, § 548) (Բլ. Մշ.)։

= Թրք. تتماج tutmaj կամ جماوط judmaj «քառանկիւնի կտրուած մի տեսակ թեւլահաց և նրանով պատրաստուած ապուր» (Будаговъ, 1. 342), «pâte en forme de fils (թելահա՞յս)» (P. de Court.), որից փոխառեալ են նաև պրս. تتماج tutmāj, ռուս. tukmači, նկն. τὸ μάτσι «մի տեսակ կերակուր», քրդ. dutmaj «դդմած, macaroni» (տե՛ս Շուռ, Քրդերը Տաճկաց Հայաստ. Ա. 183)։—Հիւբշ. 264։

Թաղիադեան, Առաջնորդ մանկանց, էջ 9 առուգրաբանում է «առ, աճումն կամ հատիճ դդմոյ՝ ըստ ձևոյն առնալ»։ Ուղիղ մեկնեց Հիւբշման։

⊙ԴՈՆԶԵԼ տե՛ս Դդիւն։

ԴԴՇՈՒՏ կամ ԴԴԶՈՒՏ «շատախօս». անընտոյդ բառ. մէկ անգամ ունի Ոսկ. ա. տիմ. էջ 72 «Քանզի շատախօս դդշուտ է ազգն (կանանաց), վասն այնորիկ ամենայն իւիք ցածուցանէ»։—Ձեռագրում գրութիւնը անորոշ է. հրատարակիչներն ասում են թէ կարելի է կարդալ նաև շաղշուտ. ՆՀՔ և ՋՔ չեն յիշում բառս. ԱՔ կարդում է դդշուտ կամ դդչուտ. իսկ Նորայր, Հայկ. բառար. էջ 43 ուզում է կարդալ շաղաշուտ։

ԴԴՈՒԱՂԵԼ տե՛ս Գդուաղել։

ԴԴՈՒՄ, ո հլ. «դդում բոյսը» Եփր. փիլս. 420. Երաշտ. 205. Վրք. հց. Բ. 79, «մէջը փորուած դդում՝ իբր ջրաման» Վրք. հց. Բ. 381, որից՝ դդմենի Յովն. դ. 6, 7, 9, 10, դդմեայ «դդումից շինուած (ման)» Յայտմ., դդմոց «դդումի բոյսը» Վստկ. 154։

Lag. Arm. Stud. § 600 յիշում է գնչ. dudum, որ Pott, ZKM, 7, 152 կցել է երր. דודאים dūdāīm «atropa mandragora L» բուսանունին։—Հիւբշ. 138 հարցնում է թէ գնչու ձևն է ծագում հայերէնից, թէ հայերէնն ու գնչուերէնը միասին մի երրորդից, որ է պարսկերենից։—Հիւնք. պրս. تتم tutum «ապտոր»!

ԴԻՒ.—Ախց. խրբ. Կր. Մշ. Սեբ. դ'դ'ում, Ալշ. դ'ռում, երև. դ'ըբում, Համշ. պրբում, պրնբում, Ասլ. դ'բիւմ, Տիգ. բբում, Ռ. բուբում, Ոզմ. դ'ըդ'ում, Հճ. դ'ը'դ'դ'ում, ՋԹ. դոդ'օմ, դ'օդ'ում, Մկ. Սլմ. Վն. տուիւմ, Մրզ. տիւտիւմ, Ագլ. դրնդո'ւմ, Ջղ. դ'ընդում, Հին Ջղ. դրնդրմ։—Նոր բառեր են՝ դդմակ, դդմոց, դդմիլ, դդմեցնել։

ՓՈԽ.—Գնչ. dudúm «դդում», որից baró dudúm «մեծ դդում», asmaréngoro dudúm «մագլցող դդում, տճկ. աստմա քապաղը»։—Նոյն բառը ունին նաև դերմանական գնչուները (տե՛ս A. Paspati, Pott, ZKM, 7, 152 և Rud. v. Sowa, Wört. d. Dial. d. deutschen Zigeuner): Paspati գնչու բառը հանում է սանս. dundama «թմբուկ» բառից, իսկ Pott համեմատում է երր. dūdāīm բուսանունի հետ։

⊙ԴՈՉԵԼ տե՛ս Դդիւն։

ԴԵԳԱՂ «ծովային կենդանի է». մէկ անգամ ունի Վեցօր. էջ 141 «Ծնանին կենդանիս՝ որ անուանեալ կոչին դեգաղք և ջնջրիք և սեղակք»։—Գիտեն միայն ՋՔ և ԱՔ. իսկ Նորայր, Բառ. ֆր. 1168 ա և ԳԲ գրում են գաղ կամ դեգաղ. իբր ֆր. squale։

Նահապետեան, Բազմ. 1908, 13 ուղղում է դէդալ, որով անշուշտ հասկանում էն. δελφάλος «դրուագեալ» կամ «նշանաւոր մի ճարտարապետի անունը»։

ԴԵԳԱՆ կամ ԴԻԳԱՆ «եղէգի և սէգի տակ». վանակ. հրց. ունի միայն ՀՌուս. § 575։

ԴԵԳԵՐ «մի տեղ կենալ՝ անտնալ՝ դանդաղիլը» Ոսկ. գծ., որից դեգերիլ «մի տեղ մնալ, յապաղիլ, ժամանակ անցկացնել, մի բանով պարապիլ» Իմ. ղ. 15. Եղիշ. 34. կթ. Նար., «ի միասին նստիլ» Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. էջ 45 բ, որից էլ դեգերաճ Առակ. ժբ. 11. Փիլ. իմաստ. Աբծր., դեգերումն Փարպ. Փիլ. Պղատ. օրին. ոսկեգարեան ոճ է դեգերեալ նստիլ «մի տեղ նստելով պարապ ժամանակ անցկացնել» Ոսկ. մ. գ. էջ 135.

նոյնը սխալ դրչութեամբ դեգեալ *ճատիլ Ոսկ. մ. բ. 12, էջ 569 (ըստ սրբագրութեան Վարդանեանի, ՀԱ, 1921, 247, որ և հաստատում է Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 258)։ Նոր գրականում բառիս իմաստը փոխուելով եղել է «թափառիլ»։*

ԴԵԳՆԻ *«խաղողը ճմռելուց յետոյ մնացած ուելորդ թեփը». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ատ. 113ա՝ «Ողկոյզն ճմլեալ, պարզեալ գինին բերի ի ճաշակ բանական մարդկան, իսկ կըճհիան և դեգնին՝ կերակուր խողից»։—Կայ գւռ. դէգ «ուելած ադրը, անասունների թրիքը, տղրնկերք». Թուի թէ վերինն էլ միևնոյն բառն է՝ -նի յոգնակերտ մասնիկով, որ այսօր էլ Ղարաբաղի բարբառում շատ տարածական է։*

+ԴԵԳԵԻԼ *«ասղին անդին շարժիլ, երերալ (հարբածի պէս)» Բարուք. գ. 26. Ոսկ. յհ. ա. 1. Փիլ. Սարգ. յհ., որից՝* դեղևել *«շարժել, տատանել» Սիր. իթ. 24,* դեղևացուցանել *Փիլ.,* դեղևումն *Մխ. գռ. Վրդն. դան. Լմբ. առակ.,* դեղևկոտ *Լծ. Նար., մատենադեղ «մատները դողդոջուն, շուտ սխալուող, սխալագիր» (նորագիւտ բառ) Յիշատ. 1413 Թուից (Արարատ. 1913, 753)։*

=*կրկնուած է *դև պարզական արմատից, որ գալիս է հնխ.* dhev, dhū *«ուժգին շարժել» (յատկապէս ծխի և փոշու համար ասուած) ձևից. Համմ. սանս.* dhū, dhūnṓti, dhuvati *«ցնցել», աւեստակ.* dōdhavīti *«գօրեղ կերպով ցնցել, սարսել, այս ու այն կողմ տատանիլ, երերալ», պրս.* dūd *«ծուխ», յն.* θύω, θύνω *«յարձակիլ, վրան խոյանալ», θύελλα «մրրիկ», ալբան.* dej *«հարբեցնել», հալ. ծutĭ «փչել»,* dunem *«զարնել, բաղխել», լիթ.* dùja *«փոշի», հիալ.* θýia *«ցնցել» և ուրիշ բազմաթիւ ցեղակից ձևեր, որոնց վրայ տե՛ս* Walde, *324,* Boisacq, *356—7, 360,* Berneker, *236,* Trautmann, *62,* Pokorny, *1, 837։—Հիւբշ. 438։*

Նշէ դեհ «կողմ» բառից, իբր «դեհ դեհ շարժիլ»։ Ուղիղ մեկնեց նախ Lag. Urgesch. *175, որ դնում է հնխ. dhu արմատից կրկնուած, նոյնը ընդունում է նաև Տէրվ. Նախալ. 55.—* Bugge, KZ, *32, 38 աւելի է պարզաբանում միևնոյն մեկնութիւնը։—Հիմնք. թեթև բառից։*

ԴԵՁՀՈՒԿ *«մի տեսակ թռչուն է, որ ագռնեաց նահանգի մէջ է լինում» Խոր. աշխ. 607. ունի միայն ԱՔ։*

Ուղուրիկեան (ԳԲ, էջ 365 և 1405) «փասիան կամ սալամբ». Համմ. պրս. تزرو tazrū *«փասիան»,* تیهوش tīhuš *«սալամբ»։ Պատկ.* Arm. reorp. *45 պրս.* تزتك tuztuk *«փասիան»?*

ԴԵԺՊՈՒՀԻ *«գամբիկ, հայիկ, զոր բուծանեն յատպատանս ի ծնունդ յովանակաց.* poulinière», *միջին հյ. բառ. ունի Նորայր, Բառ. ֆր. էջ 972 բ. բայց էջ 1297 բ՝ իբրև վրիպակ ուղղում է զարմանի (Վատկ. 197)։*

*ԴԵԼՓԻՆ, ի–ա *հլ. (Եղն. ունի առանց սրղման դելփինաց) «ծովային մի մեծ ձուկ է» Եղն. Ածո որս. գրուած է նաև* դլփին *Վեցօր. 138, 141. Մագ. թղ. 215. Ածաբ. Նոր կիր.,* տլփին *Յայտմ.,* դելփիս, դլբին *Նեղոս 650,* թելփին, տլբին։—*Նոր գրականում ընդունուած ձևն է* դլփին։

=*Յն.* δελφίς *(սեռ.* δελφῖνος*),* δελφίν *«դելփին» (ծագում է* δελφύς *«արգանդ» բառից.* Boisacq, *174—5)։ Առաջին ձևից յառաջանում է* դելփիս, *միւսներից՝* դելփին. *մնացեալ բոլոր ձևերը յառաջացել են ն-ի սրղմամբ և նոր տատադարձութեամբ։ Ցունաբէնից փոխառեալ են նաև լտ.* delphinus, *գերմ. անգլ.* delphin, *հալ.* ծolŭfinŭ, *ռուս.* делфин, *մրդ.* talfīn, tēlfīn, *ֆրանս.* dauphin, *սերբ.* ծuplin, *խրվաթ.* ծupin, *պրս. արաբ.* دلفين dalfīn *ևն։—Հիւբշ. 345։*

Առաջին անգամ ԳԴ համեմատեց պրս. տէլֆին *բառի հետ։ Ուղիղ մեկնեց ՆՀՔ։*

ԴԵՆԵՆԱՆՔ *տե՛ս Դեղեխ։*

*ԴԵԿԱՆ *«մի տեսակ դրամ». «Ի՛ ներս չկայ մէկիկ դեկան» Շնորհ. առ. «Եւ դեկան ոսկի 30 հազար» Սմբ. պատ. 1856, էջ 17 (հրատ. Շահն. էջ 36). «Ետ Աշոտայ լու դեկան» Սամ. անեց. էջ 206. «Գնա՛, բե՛ր դեկան մի» Վրդն. առ. 33. ընդհանուր «դրամ» իմաստն ունի Անսիպք, էջ 75 «Փոխառուն ի սնիկ լինի և ուղևնայ զիր դեկանն»։*

=Դահեկան բառի կրճատ ժողովրդական ձևն է. միջին ասորիները ներկայացնում է վրաց. დაეკანი դաեկանի, որ փոխառնել է հյ. դահեկան բառից՝ ճ-ի սովորական սրդմամբ։—Համմտ. նաև ստակ, որ սղուած է սպիտակ հոմանիշից։—Ա՛ճ.

*ԴԵԿԱՆԻՈՆ «տասնապետ, ասիկան, նուիրակ» Մխ. դտ. էջ 266. գրուած նաև դեկիանուն Մխ. այբիվ. 4, տիկանիաւն Մխբ. դատ. 88 (իսկ հրար. Ղևոնեան, էջ 42՝ դեկանիոն)։

= Յն. δεκανίων «տասնապետ» (Du Cange 1, 276. չունին Bailly և Sophocles). ձևով յարմար չեն յն. δεκανός և լտ. decanus «տասնապետ. նուիրակ, շաթիր, բարապետ» ։ Կազմուած է δέκα «տասն» բառից։

Առաջին յարմարագոյն ձևը տալիս է Brockelmann, Ուս. հայ. փոխ. բառից, Բրգմ. Տաշեան, էջ 114.—միւս ձևերը դնում են ՆՀՔ և Հիւբշ. 345։

*ԴԵԿՏԵՄԲԵՐ «հռովմէական տարւայ վերջին ամիսը» Շիր. Տօնակ. ունին միայն ՀՀՔ և ՋՔ. չեն յիշած ՆՀՔ և ԱՔ։

=լտ. december հոմանիշից, որ ծագում է decem «տասը» բառից. քանի հռովմէական տարեցոյցի մէջ դեկտեմբերը տասներորդ ամիսն էր (մարտը լինելով առաջին ամիսը)։ Լատին բառը տարածուել է ամէն կողմ. համմտ. յն. δεκέμβριος, վրաց. დეკემბერი դեկեմբերի, ֆրանս. décembre, ռուս. декабрь են են։ Մեր ձևը կազմուած է սեպտեմբեր և հոկտեմբեր ամսանունների նմանութեամբ՝ *դեկեմբեր նախաւոր ձևից՝ տասնալով մի ուիլորդ ու։

Հիւբշ. 367 դնում է յունարէնից. բայց վերջաւորութիւնը ցոյց է տալիս լատինը։—Ամիսների անուան վրայ վիճաբանուած է Բազմ. 1897, էջ 138—141։

ԳԻՒ.—Գրականից փոխառնել են Մշ. դեզդէմբ՛եր, երև. դ՛էկտէմբէր, Նխ. Պլ. թէգդէմբէր են։

ՓՈԽ.—Ուս. dektember հոմանիշը մեղնից է փոխառեալ։

*ԴԵՇ «կողմ, դի» Մամիկ. էջ 26. Ուռհ. էջ 33. Պատ. աղէքս. Վստկ. յետնաբար գրուած է դիճ Օրբել. էջ 32։

=Պհլ. dēh ձևից փոխառնել. համմտ. պրս. دیه dih, ﺩﻳ dīh «գիւղ». պազենգ. deh «գիւղ», բևլուճ. dīh dēh «երկիր, աշխարհ», քրդ. ﻱ dau, զազ. dau, արևել. քրդ. diekeh «գիւղ», հինդուստ. dīh, գնչ. di, բաշալ. լեհ «գիւղ», լեհվավցի «գիւղացի» (համմտ. բաշալ. լասը «տասը»), որոնց բոլորի նախաձևերն են՝ գնդ. daṅhu-, daẖyu-, հպրս. 𐎭𐎠𐎲𐎢 dahyu-, ասեղ. dâsyu- «երկիր, նահանգ, գաւառ»։ Սրանց ծագումը անլսելա է (Horn, § 588, Bartholomae, 706)։ Նոյն արմատից են ծագում նաև ճժդեհ, դեհպետ, դեհկան, որոնց վրայ տե՛ս առանձին։—Հիւբշ. 139։

ԳԴ պրս. تاه tah, ﺗﺎﻩ tāh «տակը, ստորոտը» բառից։ ՆՀՔ պրս. դիճատիճ «յերկուց կողմանց» (իմ՛ dihadih «ճակատ առ ճակատ կռիւ», որ կազմուած է dih «զարկ, հարուածծ» բառից)։ Windisch. 21 համարում է ճժդեհ բառի արմատը։ Ուղիղ մեկնեց նախ Եւրոպա (Քերթ Վիեննայի), 1849, էջ 200, իրբ հպրս. դա՛հիա «նահանգ»։ Ուղիղ են նաև Böttich. Arica, 69, 137, Müller, SWAW, 44, 565, Justi, Zendsp. 145, Հիւնք. են։ Karst, Յուշարձան, 407, 411 ասմամբ. ti «կողմ, կող», քրդ. tim «կողմ»։

ԳԻՒ.—Երև. դ՛իճ, Զթ. դ՛ը՛ճ, Տիգ. բէճ, Վն. դեխ, Սլմ. թեխ, Մրղ. բէխ «դէպի», Ագլ. դի, Ակն. Խրբ. Կր. Սեբ. դ՛ի Պլ. դ՛ի, բի, Համշ. Ննխ. Ռ. բի, Ալշ. դեճ, Մշ. դ՛եճ, Տփ. բէճ.—առհասարակ պահուած են միայն ասդիճ, անդիճ, մէկդի, չորսդիճ, ո՞րդի են (նաև Խովրենի՝ բան Այտընեան, Քնն. քեր. 338) ձևերի մէջ, բայց առանձին գոյութիւն չունին. համմտ. Ակն. օճքի, օրդի «անդին», Ախց. ասդիճ, անքիճ, Համշ. խսրուս, ինքուս են. յոգնակի ձև է դճարէնէ Երև. «կողմերը, կողմերում»։ Նոր և կարևոր բառ է դեճվոխլ Մշկ. «պահվոխլ»։

ՓՈԽ.—Պօլսի տաճիկ բանտարկեալների ծածկաբեղուի մէջ շատ գործածական է antin «էսրար, հաշիշ, ծխելու ափիոն», որ հյ. անդիճ բառն է. հաշիշ ծխելը աստիճ արգիլուած լինելով՝ հեռացում կամ զգուշութիւն

գոյց տուղ անդի՞ն բառը առացել է այս նշանակութիւնը (տե՛ս Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, *1920, էջ 221*)։

ԴԵՀ «կիզումն, այրումն». արմատ առանձին անգործածական. գտնւում է միայն հրեղեն բառի մէջ, ի հլ. ել. իբ. *26. Ոսկ. ես. գղ. և ևիես.*, որից՝ հրեղէնական *Ագաթ.*, հրեղեալ *Բ. պետ. գ. 13*, հրեղինիչ *Ագաթ. ևն. քան այսմ* հրեղեն նշանակում է բուն «հրայրնացք»։

Հիւնք. հրդեհ հանում է պրս. آخُر xurda, յպ. xurdahā «ցնցուղք հրոյ» բառից՝ *Մէնէվիշէան, ՀԱ, 1897, 248* ա դեհ կգում է սանս. dah ձևին։ Patrubány, *ՀԱ, 1906, 341 և 1908, 153* հնխ. dheg^{ʷ}h արմատից. համմ. լիթ. degú «այրիլ», լտ. foveo «տաքացնել», սանս. dahāmi «այրել», թոխար. tsak «այրել». հայը նախապէս *հրդեգ ձևն ունէր, բայց մաճ բառի ազդեցութեամբ դարձաւ* հրդեհ։ *Մառ*, ИАН, *1918, 341* վրաց. ցեցխլի, *մինգր.* դաչխլի «կրակ» և հլ. ջահ *բառերի հետ*։

*ԴԵՀԿԱՆ «կուսակալ, դաւառապետ». առանձին աւանդուած չէ, այլ կայ միայն պահուած դեհկանութիւն «կուսակալութիւն» Բուզ. դ. 2 ածանցի մէջ։

=Պհլ. *dēhkān ձևից. համմ. պրս. دهکان dihgān, հինր dihkān «գիւղացի», քրդ. دوقان dūqān «գիւղացի», որոնք կազմուած են իրան. dēh *բառից (տե՛ս վերը* դեհ)։ *Իրանեանից են փոխառեալ նաև արաբ.* دهقان dihqān «գիւղացի ազնուական, վաճառական, բանուորների գլխաւորը, դաւառակի պետ, բնակալ մարդ», ասոր. ܕܗܩܢܐ dahqana «գիւղապետութիւն, հողաբաժանութեան և մշակութեան պաշտօնեութիւն», ասոր. ܕܗܩܢܐ dahqānā «գիւղապետ». *Հներից աւանդուած է* Ἀδειγάνες «Սելևկիոյ մագիստրատ» (*Պոլիբ. 5, 54*)։ *Տե՛ս և տակը* դեհպետ։—*Հիւբշ. 139։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ. *չհասկ* Lagarde, Urgesch. *598*, Justi, Zēndsp. *145, Տէրվ. Մասիս, 1882 յունիս 24, Հիւնք.*։

ԴԵՀՈՒԹԻՒՆ «նպաստ կամ նուաստ». այսպէս անորոշ կերպով ունի *Բառ. երեմ. էջ 75. Հմմտ.* նաև դեշխուպ։

ԴԵՀՊԵՏ «կուսակալ, իշխան աշխարհի» Եղիշ. Բ. էջ 26. գրուած է նաև դեհապետ, դեհեպետ *(Հին բռ.)*, որից աւդեղեհպետ «դժոխային անդունդների պետը, դև» (իբր *աւդրնդապեհպետ) Երզն. քհր. ուրիշ գործածութիւն և վկայութիւն չկայ։

=Պհլ. 𐭤𐭩𐭧𐭠𐭯𐭠𐭲 dēhəpat (WZKM, *25, 248*), *մանիք. պհլ.* 𐫀𐫁𐫂𐫄 dhbıd (Salemann, Manich. Stud. ЗАН, *8, 67*), *պազենդ.* dehvaδ, *փարսի* dahivad, *գնդ.* daŋhupaiti-, *որոնք կազմուած են* deh *և* pat *բառերից և նշանակում են «դաւառի կամ երկրի պետ» (տե՛ս նաև առանձին* դեհ *և* պետ *բառերը)։ Իրանեանից փոխառեալ է նոյնպէս արաբ.* دَهْفَاء dahūfaδīya «հնահանդապետութիւն»։—*Հիւբշ. 139։*

Ուղիղ մեկնեց նախ Böttich. ZDMG, *1850, 353. Նոյնը նաև* Böttich. Arica, *69, 137*, Lag. Urgesch. *597*, Justi, Zendsp. *146*, Bopp, Gram. comp. *4, 399, Տէրվ. Մասիս, 1882 յունիս 24 հն։ Իմաստի համար հմմտ. նաև Նորայր, Բառ. ֆր. 387։*

+ԴԵՂ, ո հլ. *(Ագաթ. ունի գրծ. դեղօք. յետնաբար նաև ի հլ.)*. առաջին և հիմնական նշանակութիւնն է «խոտ». այս իմաստով առանձին գործածուած չէ, այլ միշտ դալար բառի հետ՝ իբր «կանաչ խոտ». այսպէս՝ «Եւ խոտ նորա նուագեսցէ և դեղ դալար անդ մի՛ գացի» *Ես. ժե. 6.* «Լիզանիցէ արջառ զդեղ դալար ի դաշտի» *Թիւք իբ. 4.* «Նուագութիւն խոտոյ և ամենայն դալար դեղոյ լինի» *Ոսկ. ես. 163.* «Մի՛ ելցէ ի վերայ նորա ամենայն դեղ դալար» *Օր. իթ. 23.* «Ո՛չ գացի ի նմա դեղ դալար» *Ես. իէ. 10. (այս գործածութեան հետ հմմտ. խոտ դալար դարձուածը.* «Ամենայն խոտ դալար ի կերակուր» *Ած. ա. 30.* «Ժողովես զխոտ դալար» *Առակ. իէ. 25)*։ *Բառիս առանձին գործածութիւնը պահում են վրացին և գաւառականները (տե՛ս տակը)։—Խոտերը հին բժշկութեան մէջ կապմելով հիւանդութեանց գլխաւոր դարմանը՝ այս դեղ բառն էլ սկսաւ կամաց կամաց գործածուիլ «բժշկական խոտ» նշանակութեամբ. այս իմաստով գտնում ենք գործածուած Լաբուբ. էջ 5 և Իմ. ժդ. 11* «Զի ոչ դեղովք և արմա-

տովք բժշկիս դու, այլ բանիւ», «Ոչ դեղք և ոչ ապեղանիք բժշկեցին զնոսա»։—Այնուհետև ունելի ընդհանրանալով՝ սկսաւ նշանակել «ամէն տեսակ դարման, դեղ» ՍԳր. Եզն. Պիտ. Փիլ. և այս ընդհանրացումը պատճառ եղաւ, որ բառի նախկին նշանակութիւնը գործածութիւնից դադրի, ասպարէզը թողնելով խոտ հոմանիշին։ Նշանակութեանց այս զարգացումը տեղի է ունեցած ե դարից շատ առաջ։ Վրացերէն մդելո **მდელო** *«խոտ» բառը, որ հայերէնից է փոխառեալ, հակառակ վրացերենի սովորական վերջաձայն ի յանգին, ունի* **ո**, *որ ներկայացնում է հյ. բառի* **ո** *բունը (դեղ—դեղոյ). այս բանը ցոյց է տալիս թէ բառը փոխ է առնուած ա՛յն ժամանակ, երբ հայ լեզուն իր բունները դեռ կորցրած չէր. հետևաբար նաև «խոտ» նշանակութիւնը այս ժամանակից է։—Դ դարի վերջերում «խոտ» նշանակութիւնը կորաւ. և ահա դրա համար է, որ ե դարուն հարիւ նրա մնացորդներն ենք գրտնում, իսկ ե դարից յետոյ՝ բնաւ։ Բայց դեղ «դարման», ինչպէս ե դարուն, նոյնպէս և մինչև այսօր սովորական է։—Դեղ «դարման, ճար» նշանակութիւնը յառաջանալուց յետոյ՝ նոր փոխանցումներով ձևացան հետևեալ նոր նշանակութիւնները.— «Թոյն» (իբր վնասակար դեղ կամ խոտ) Բ. մակ. ժ. 13. Իմ. ա. 14. Փիլ. Պղատ. օրին., «յուռութ կամ կախարդանք» (իբրև միջոց բժշկութեան) Սղ. ծէ. 6. Ոսկ. կող. ը., «մարմինը օծելու անուշահոտ իւղեր» Պղատ. տիմ., «ներկ» լարուր. էջ 6, Ագաթ. Արիստ. աշխ. ՅՀ. կթ. 5, «աչքի քաշելու ծարիր» Յայտ. գ. 18, «թանաք, մելան» Բ. յհ. 12, գ. յհ. 13. Եղիշ. չրչր., «արեւթ, կպչան» (այս նշանակութիւնը չունին բառարանները). Տաթև ձմ. ճծղ (Հուրս վառի յերկաթէ և ի քարէ, յորժամ պատրաստ լինի դեղն)։—Նշանակութեանց այսպիսի զարգացում գտնում ենք նաև ուրիշ շատ լեզուներում. համմտ. վրաց. ծամալի «թունաւոր խոտ, դեղ, թոյն, ներկ», թուշ. ծոմալ «բժշկութիւն, դեղ, փոշի», արեվել. թրք. ot «խոտ, դեղ, լուծադեղ, թոյն, դալար փայտ», եաքուդ. otarmak «արածացնել, ճարակիլ, թունաւորել», մոնգոլ. otači «բժիշկ», չէրքէզ. wuçə «խոտ, դեղ», գերմ. Kraut «խոտ, դեղ, դարման», ռուս. трава «խոտ» և отрава «թոյն», սանսր. samā և ն. սանսր. darmana «դեղ, թոյն, ներկ» են։—Դեղ բառի այս զանազան առումներից են ածանցւում՝ դեղատու Սղ. ծէ. 6. Յայտ. իա. 8. Եփր. քրզ., դեղել «բժշկել» Մագ., «թունաւորել, կախարդել» Եղիշ. փիլ., «ներկել» Պղատ. օրին., դեղագիտութիւն «կախարդութիւն» Նոննոս., դեղագործ «դեղ շինող» Ոսկիփ., «թոյն պատրաստող» Փարպ., «ներկարար» Ոսկիփ., «ներկով նկարուած» Վրդն. աղ., դեղագործող «նկարիչ» Բանք իմ. 54, դեղոց «ներկանկար պատկեր» Հաւաք. 19, դեղախունկ Սերբր., դեղաճուկ Ոսկ. ևփես., դեղաթափ Մխսր. եր. Ճառընտ. Մեծոբ., անդեղեայ Ոսկ. փիլիպ. Սերբր. Բուզ. կամ անդղոյ Կոչ. 155 (գրուած նաև անթեղայ, անդեղէս Պիսիդ. Վեցօր.), մաղձաղեղ Եզն., մկնդեղ Բժշ., դեղուն «թունավորուած» (չունի ԱՔ) Պտմ. կիլ. 205, սևաղեղ Սերբր., գրաղեղ «մելան, թանաք» Վրք. հց., կարմրադեղ Փարպ., դառնադեղ Ոսկ. ապաշխ., թմբրադեղ Յայտմ., կապրնդեղ, հացադեղ, խաշնդեղ, ճակնդեղ բոյսերը։ Նոր գրականում՝ դեղագիր, դեղատոմս, դեղատուն, դեղավաճառ, դեղավաճառանոց, դեղատուփ, դեղափոշի են։—Դեղ բառի հետ ծագմամբ նոյն են՝—**Դալար** «խոտ, կանաչ, մատղաշ». կազմուած է դալ արմատից՝ **-ար** մասնիկով (տե՛ս և առանձին).—**Դալուկ** «դեղնացաւ», կազմուած է դալ արմատից՝ **ուկ** մասնիկով (տե՛ս և առանձին). նշանակութեան զարգացման համար համմտ. ռմկ. սարը «դեղին» և սարըլըք «դալուկ», ֆրանս. jaune «դեղին» և jaunisse «դալուկ» են.—**Դաղձ** «վայրի անանուխ». կազմուած է խոնարհ աստիճանի դալ ձայնդարձից, որ աճած է ձ ածականով, բաղաձայնի պատճառով և դառնալով ղ. «խոտ» նախնական նշանակութիւնը պահում է դեռ (տե՛ս և առանձին)։—**Դեղին** «դեղին գոյնը». կազմուած է դեղ արմատից՝ **-ին** մասնիկով. նշանակութեան զարգացման համար համմտ. դալար, դալուկ և յաջորդները (տե՛ս և առանձին).—**Դեղը** «դեղին». կազմուած է ածականով՝ դեղ արմատից (տե՛ս և առան-*

ձին).—**Դեղձ**, կազմուած դեղ արմատից՝ ձ ածականով. բուն նշանակութիւնն էր «դեղին», որ յետոյ կորաւ. դոյնի պատճառով այս բառը յատկացուեց ծանօթ պտուղին. հմմտ. պրս. شفترنگ šaftrang, որ նշանակում է բուն «դեղնադոյն», բայց գործածւում է դեղձ պտուղի համար. նոյնպէս شفتالو šaftalū «դեղձ», որ սոսկաբանօրէն նշանակում է «դեղին սալոր». գրեթէ նոյն բանն է նաև պրս. زردآلو zardālū «ծիրան», որ բուն նշանակում է «դեղնակարմիր սալոր» (տե՛ս և առանձին)։ Դեղձ բառի հին նշանակութիւնը յայտնի կերպով ցոյց է տալիս՝ **Դեղձաց** «դեղին», որ կազմուած է դեղ արմատից՝ ձ ածականով և -աց մասնիկով.—**Դեղձն** «վայրի անանուխ». գրականութեան մէջ գործածուած չէ և ենթադրւում է միայն Ղրբ. տէ՛խանը ձևից. կազմուած է դեղ արմատից ճիշտ այն ձևով՝ ինչպէս կազմուած է դաղձն բառը դալ արմատից (տե՛ս դաղձն բառի տակ).

=Բոլորն էլ բնիկ հայ բառեր են, որոնք հաւաքւում են դեղ և դալ արմատների շուրջը. սրանք էլ ծագում են հնխ. dhel- արմատից, որի ձայնդարձներն են dhol-, dhl-, հմմտ. յն. θάλλω «ծաղկիլ, կանաչիլ, տերեւներով ու պտուղներով զարդարուիլ (ծառ)», θαλλός «ընձիւղ, նոր ճիւղ», θαλερός «ծաղկած, դալար, թարմ, մատղաշ, ուժեղ», θάλος «ընձիւղ», θαλλία «ձիթենու ճիւղ», ἐυθηλής «բազմաճիւղ, աճուն», εὐ-θαλής կամ εὐ-θηλής «բերրի, աճուն», միլ. dell «ճպուռ» կորն. dele «ճպուռ, ճիւղ», բրբտ. délez «ճպուռ», հրգ. tolun «ողկոյզ», toldo և գերմ. dolde «գագաթ՝ վարս ծառոց», ալբան. dal' (կար. dola) «ընձիւղիլ» (Walde, 472, Boisacq, 332)։ Հնխ. dhel- կանոնաւորապէս տալիս է հյ. դեղ, հնխ. dhl-> հյ. դալ, իսկ հնխ. dhol- ձայնդարձը հայերէնի մէջ ներկայացուցիչ չունի. Pokorny, 1, 825։—Հիւբշ. 438։

Lag. Urgesch. 210 դեղ բառը պրս. darmān ձևի հետ միասին հանում է dhar արմատից։ Lag. Arm. Stud. § 605 մերժում է այս և բառի նախնական իմաստն է համարում «(բուժ)խոտ»։ Տէրվ. Մասիս, 1881 մայիս 6 դալար, դեղին, դալուկ բառերի հետ՝ դալ, դաղ արմատից։ Canini, Et. étym. 144 պրս. dārū «դեղ»։—Մառ, ՅՒՕ, 5, 319 դնդ. viša «թոյն» ձևի հետ։ Հիւնք. պրս. թէրէ «խաւարտ, բանջար»։ Հիւբշ. 438 դալար բառը մեկնում է յն. θαλερός են, իբրև դալ-ար. իմ առաջարկութեամբ ընդունեց նաև դեղ բառի մեկնութիւնը՝ IF, Anz. 10, 45։ Ամբողջ բնաւնիթի մեկնութիւնը վերի ձևով տուած եմ նախ Բազմ. 1898, էջ 370—371։

ԳՒՒ.—Պահուած է մի բանի նշանակութեամբ. այսպէս. «ճար, դարման» նշանակութեամբ են՝ Ալշ. Երև. Հճ. Մշ. Ոզմ. Ջղ. դ'եղ, Ագլ. դէղ, Ախց. Խբբ. Կր. Սեբ. դ'էղ, Սլմ. Վն. տեղ, Համշ. Ղրբ. Մկ. Մրզ. տէղ, Ասլ. դ'է՝ղ, Ռ. բէղ, Տփ. դիղ, Տիգ. բիղ.—«թոյն» նշանակութիւնն ունին Ալշ. Ղրբ. Ասլ. Մշ. Վն. Տփ., որից՝ Ակն. դ'էղիլ «թունաւորել», իսկ Մժ. տէխկ (իմա՛<դեղ f) «թոյն» և տէխկէլ «թունաւորել».—«խոտ» նշանակութիւնն ունին Մշ. Սս., որոնց մօտ դեղ նշանակում է «մի տեսակ դաշտային խոտեղէն բոյս, որ պանիրի մէջ են դնում՝ անուշ հոտ տալու համար» (վերջին երկու նշանակութեանց է յարում խնդեղն Ղրբ. «օշինդր», որ ծագած է *խնդադեղն ձևից և իմաստի զարգացման կողմից համեմատւում է մոլախինդ, խնդամոլի բառերին)։—«Աչքի ծարիր կամ երեսի շլար» նշանակութեամբ են Ակն. Մկ. Վն. Տփ.։—Սրանցից դուրս նոր իմաստներ են ցոյց տալիս՝ Զթ. դ'էղ «վառօդ», Նբ. Վն. «մածունի կամ պանիրի մակարդ, մէրան», Մշ. դ'էղել «կեղտոտել»։—Նոր բառեր են՝ դեղապէս, դեղաջուր, դեղդիր, դեղդղել, դեղբափ, դեղիկ, դեղկոծել, դեղմաշկ, դեղուկ, դեղրար, դեղռուճել։

ՓՈՒ.—Շատ հին փոխառութիւն է վրաց. მდელო մղելո «խոտ, դալարիք», որ պահում է հին հայերէնի բունը (դեղ, դեղոյ) և մեր բառի առաջին և նախնական նշանակութիւնը։ Նախաձայն մ վրացական սովորական յաւելուած է, ինչ. მგოხაო մգոսաո «գուսան»։ Կայ և վրաց. დელა դելա, որ բուս բրիոֆաւի բառարանի՝ անծանօթ մի բոյս է։—

նար փոխառութիւն է գւո. բրբ. تيغتاپ təγ-tap «խիստ ազդեցիկ միջոց, դարման» (< հյ. դեղրափ) (տե՛ս Յուշարձան 329 ա, հմմտ. նաև Բիւր. 1900, 670 ա)։—

ԴԵՂ «շիղջ» տե՛ս Թեղ։

ԴԵՂ «դաշտան». անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. պօղ. ա. 308 «Որ ի դեղան է, ասէ, պիղծ է» (յն. յանկողնի. լտ. ի դաշտանի)։

ԴԵՂԱՄՈՐ. անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մանդ. էջ 217, վատ ածականների մի ընդարձակ շարքի մէջ. «...ուռուցկոտ, դէզաւոր, դեղամոր, դեղխիչ, գոռոզ...».—Գ. Տէր-Մկրտչեանի հրատարակութեան ծառայող ձեռագիրների մէջ՝ Մանդ. սիր. 23 չկայ այս բառը։

ԴԵՂԱՆԻ. անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Եփր. պհ. «Զայրիս և զորբս կոչեա՛ ի տուն քո. լցո՛ զդեղանիս նոցա ի փշրանաց սեղանոյ քոյ»։—ՆՀԲ մեկնում է «մախաղ մուրոզաց և որ ինչ նման է նմին», ՋԲ «մախաղ կամ պարկ մուրոզաց», ԱԲ «մուրացկանի տոպրակ կամ հագուստի ծայր»։—Վերջինիս հետ նոյնանում է տեղաձի «քղանցք», որ գտնում եմ գաւառական բառերի մի ցանկում՝ Ամէնուն տարեցոյցը, 1909, էջ 323, դժբախտաբար առանց տեղը որոշելու։

+ԴԵՂԲ «դեղին». մէկ անգամ միայն ունի Շիր. «(Լոյս փոսուռայի) ո՛չ սպիտակ է և ոչ լուրթ, ոչ դեղբ և ոչ կարմրագոյն, այլ կանաչ իմն գոյն է»։—ՆՀԲ մեկնում է «եթէ չիցէ գրելի դեղին կամ դեղձան՝ անուն գունոյ իրիք». ՋԲ կասկածով, իսկ ԱԲ առանց կասկածի մեկնում է «դեղին»։ Ուղիղ է այս մեկնութիւնը, որովհետև վերի վկայութեան մէջ փոսուռայի բոլոր գոյները յիշուած են, բացի դեղինից։ Ուղիղ է նաև բառի ձևը, ինչպէս ցոյց է տալիս գաւառական դեղրել։ Բառիս գոյութեան նոր ապացոյց է դեղրագոյն «դեղնագոյն» նորագիւտ բառը, որ մէկ անգամ գրանում եմ գործածուած Խոր. աշխ. Հրատր. Սուքրեան, էջ 45 «Ջհալուախտնկն... երեք ազգ ասեն. մին կոչի (ն) ինդրէ որ է սևագոյն, լինի և դեղրագոյն»։

=Բնիկ հայ բառ. կազմուած է դեղ<հնխ. dhel- արմատից՝ բ աճականով. ասելի մանրամասն տե՛ս դեղ։—Աճ.

Այս մեկնութիւնը տուած եմ նախ Բազմ. 1898, 370—371։

ԳԻՒ.—Մշ. դ'էխբ'ել «շորի դեղնիլը կեղտից»։

ԴԵՂԵԽ «ջուրը շարժելով պղտորելը». արմատ առանձին անգործածական, որից ունինք հին և բնտիր մի բառ՝ դեղեխեալ «ծրփուն, շարժելով պղտորուած (ջուր)». մէկ անգամ գործածում է Վեցօր. գ. էջ 62 «Որ ի ներքո երկնից մնացին ջուրքն... պղտորեալք և դեղեխեալք են... և այսք չարք գան (տպ. գոն) հանգչին ի վերայ նոցա» (յն. ախտից յուզմամբք ծփեալ)։ Նոյն բառը ունի նաև Վրդն. ծն. «Ջուրքս որ առ մեզ են, դեղեխեալք են և դիւաբնակք»։ Վրդն. սղ. ճիւր. էջ 503 գրում է դեխեխեալ. «Կարծեցին ոմանք բանական զոլ զջուրն զայն և լուսափայլ, և ընդերքինս ջուր դեխեխեալ և դիւաբնակ»։ Այստեղ են պատկանում նաև դեղեխաճ «անհանդարտութիւն, տան մէջ խռովութիւն» Կոստ. երզն. 150 (ըստ ՆՀԲ նոյն վկայութիւնը կայ նաև դեխեխաճ գրչութեամբ՝ Ոսկիփ.), դեղեղ «դաւաճան, նենգաւոր» Բառ. երեմ. 76, դեղեխ «դաւաճան» ԱԲ, դեղեխիլ «կրքոտ՝ անհանդարտ բնաւորութիւն ունենալ» Վրք. հրց. (Որ սեաւ մազն յոլով է՝ սեաւ և պրնկնոտ լինի երեան... դեխեխի յոյժ և քինական լինի), դեղեխիչ «խռովարկու» Մանդ. էջ 217։ Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում վատ ածականների մի շարքում. «...ուռուցկոտ, դէզաւոր, դեղամոր, դեղեխիչ, գոռոզ...» (տպ. դեղոխիչ, իսկ նոյնը Մանդ. սիր. 23 գեզախիճ, այսպէս ուղղելի՝ ըստ Նորայր, Կոստ. Երզն. 194)։

ՆՀԲ իմանալով հանդերձ յն. համապատասխան բառը Վեցօրէից մէջ՝ դեղեխեալ մեկնում է «չարաչար դեղեալ», իբր թէ դեղեղեալ։ ՋԲ մեկնում է կասկածով «թունաւորեալ կամ ապականեալ, յուզեալ, պղտորեալ», որին հետևում է նաև ԱԲ, Աճառ. ՀԱ, 1899, 233 ուղիղ ձևը համարելով դեխեխաճ՝ կրկնուած է կարծում դեխ արմատից, բայց

այս բանը հաստատելու համար ապացոյց չկայ։ Ուղուրիկեան (տե՛ս ԳԲ, էջ 366 և 1405) ուղղում է դեղեղ, համեմատում է արաբ. دلال dallāl «մատնիչ», պրս. տեղէ «նենգութիւն» և Դալիլա (Սամփսոնին մատնող կինը) բառերի հետ և թարգմանում է դեղեղ «դաւաճան», դեղեխաճ «խարդախութիւն»։

+ԴԵՂԻՆ (սեռ. ի) «դեղնագոյն» Պզատ. սիմ. Սրգ. յկ. Արիստ. որակ. Վրդն. ծն., որից՝ դեղնութիւն Ոսկ. մ. բ. 9, դեղնագունիլ Ոսկ. յհ. բ. 32, դեղնագոյն Ոսկ. սղ., դեղնախունկ Կաղանկ. Մխ. դտ., դեղնատեռև Ոսկ. յա., դեղնիլ Մանդ. ևն։ Նոր բառեր են՝ դեղնակարմիր, դեղնականաչ, կարմրադեղին, դեղնորակ, դեղնամորթ, դեղնաշորթ ևն։

=Բնիկ հայ բառ. կազմուած է իճ մասնիկով դեղ <հնխ. dhel արմատից (աւելի մանրամասն տե՛ս դեղ)։ Նկատելի է որ այլևայլ լեզուների մէջ «դեղին» բառը նոյն է «կանաչ»-ի հետ և ծագում է «խոտ» բառից. համմտ. յն. χλόη «խոտ, դալարիք», որից χλωρός «կանաչ. 2. դեղնականաչ. 3. դեղին», լտ. holus «կանաչեղէն» և helvus «դեղնագոյն», սանս. hári- «դեղին, կանաչ»։—Աճ.

Lag. Urgesch. 211 դալար, դալուկն բառերի հետ լտ. fulvus «դեղին, դեղնականաչ»։ Տէրվ. Մասիս, 1881, մայիս 6՝ դալար, դեղ, դալուկն բառերի հետ դալ կամ դաղ արմատից։ Thomaschek, Deutsche Litteraturz. 1883, էջ 1254 ում. dāi «կանաչ» բառի հետ։ Հիւնք. դեղ բառից։ Patrubány, SA, 1, 213 լտ. flavus, իբր հնխ. dhlevnos ձևից։ Վերի ձևով մեկնեց Աճառ. Բազմ. 1898, 370—371։ Petersson, KZ, 47, 291 անգսք. ðeall «փայլուն», իսլ. dellrad «պայծառութիւն» բառերի հետ։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 97 <*ձեղին=սանս. желтый «դեղին»։

ԳԻՒՌ.—Երև., Ջղ. դ'եղին, Ագլ. Նախ. Պլ. դէղին, Ալշ. Ախց. Ակն. Խրբ. Կր. Հճ. Մշ. Սեբ. Սչ. դ'էղին, Ասլ. դ'է'ղին, Սլմ. Վն. տեղին, Գոր. Համշ. Մկ. Մրղ. Շմ. տէղին, Ռ. Տիգ. թէղին, Ղրբ. տէ'ղէն, Ջթ. դ'էղը'ն, Ոզմ. դ'էղէ'ն, Տփ. դի'դին։—Նոր բառեր են՝ դեղնաճաղիկ, դեղնաճող, դեղնաւուն, դեղնափորիկ, դեղնաֆոլ, դեղնուկ, դեղնաժիտ, դեղնակոթիլ, դեղնակոխ ևն։

ԴԵՂԽԻՉ տե՛ս Դեղեխ։

+ԴԵՂՉ «շէֆթալի» Վրք. հց. Բ. 422. Վստկ. 156, որից՝ դեղձենի «դեղձի ծառ» Վստկ. 156, կամ դեղձի Վստկ. 154. Մխ. առկ., կարմրադեղձ Ագաթ., դեղձուկ Մագ. և Երզն. քեր. բստ ԱԲ գրուած է նաև դեղջ։

=Բնիկ հայ բառ. նախապէս նշանակում էր «դեղին» (համմտ. տակը դեղձան) և ծագում է դեղ արմատից՝ ձ ածականով. աւելի բնգարձակ տե՛ս դեղ բառի տակ։—Աճ.

Canini, Et. étym. 182 դեղին բառից։ Հիւնք. դեղ, դեղին ձևից, իբրև «դեղին սալոր»։ Վերի ձևով մեկնեց Աճառ. Բազմ. 1898, 370—371։ Patrubány, ZA, 1908, 186 դեղին և դեղձան բառերի հետ։

ԳԻՒՌ.—Ալշ. Հճ. Մշ. դ'եխձ', Ագլ. դէղձ, Ջթ. դ'էղձ', Երև. դ'էխց, Տփ. դիխց։ Նոր բառ է դեղձաչիր «չորացրած դեղձ»։

+ԴԵՂՁԱՆ «դեղնագոյն, ոսկեգոյն, կարմիրի գարնող դեղին» Խոր. Ախտարք. Ոսկիփ., որից՝ դեղձանամազ Ոսկիփ., դեղձանաճիեր «դեղձան մազերով» Սասն. էջ 19 (նորագիւտ բառ. տպուած է դեղձնաճիեր), դեղձանիկ «կանարիա թռչուն» (նոր գրականի մէջ շինուած բառ)։

=Բնիկ հայ բառ, ծագում է դեղ<հնխ. dhel արմատից՝ ձ ածականով և ան մասնիկով. մանրամասն տե՛ս դեղ բառի տակ։—Աճ.

Հիւնք. դաղձ բառից՝ վերի ձևով մեկնեց Աճառ. Բազմ. 1898, 370—1։

ԳԻՒՌ.—Կայ միայն Ջթ. դ'էղձր'ը'ղ «դաղձ բոյսը», որի հետ համեմատելի են դեղձնիկ «ծորիրին» Կամրկ. (որ ՀԲուս. § 581 զուր է ուղում ուղղել դաղձնուկ) և Ջղ. դ'րխձ'ել «բորբոսնիլ, մղոտիլ» (ծագած հին *դեղձանիլ ձևից). այս բառերը գեղեցիկ կապ են դաղձ. դեղձ և դեղձան ձևերի միջև։

ԴԵՂՆԵՂԻ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Եզն. էջ 65 «Կիսոցն մորթքն պատապատրան մերկութեան մերոյ լինին և կիսոցն ճրագուն՝ դեղնեղի լինի»։ Մեկնւում է «ճրագու կամ դեղ նեղութեան իրիք»։ Վերջին մեկնու-

Քիւնը միայն ճիշտ համարելով Վարդանեան, ՀԱ., 1922, 576 կարդում է դեղ եեղի *(իբրև երկու բառ)։—«Ճրագու» նշանակութեան մասին մատածողները անշուշտ տեսնել են ուզեցել եղ բառը (դեղն-եղի), իբր* դեղիճ ե՞ղ=*թրք.* sarə yaɣ. *բայց ի՞նչ միտք ունի ասել թէ «ճրագուն ճրագու կլինի». բացի սրանից՝ եղ ձևը շատ յետին է. ուստի լաւագոյն պէտք է համարել* դեղ եեղի *կամ* եեղութեան։

ԴԵՂՏԱՅ. *անատոյգ բառ. մէկ անգամ ունի Սանահն. «Գլուխ դիւթիցն Սադայէլ... դեղտայն գլուխ դիւթիցն»։—Բառ. երեմ. էջ 76 մեկնում է «սատանայ», ՆՀԲ «դեղատու կամ տախտակ վհկութեան ի ձև Δ տէ՛լտա տատի յունաց». ՔՔ ջնջած է այս բառը. իսկ ԱՔ մեկնում է «դեղատու»։*

ԴԵՄԱՌ *տե՛ս Գեմառ։*

***ԴԵՄԱՐՔՈՍ** *«պետ կամ իշխան ժողովրդական, տրիբուն» Վրք. և վկ. Բ. 342. Յայտ. այս երկուսից դուրս ուրիշ վկայութիւն չկայ։*

=Յն. δημάρχος «ժողովրդապետ, տրիբուն». յառաջանում է δῆμος *«երկիր, ժողովուրդ» և* ἀρχός *«պետ» բառերի բարդութեամբ։—Հիւբշ. 346։*

Վարքի մէջ արդէն գրւում է. «Այր մի դեմարքոս իշխանութեամբ, որ թարգմանի ժողովրդապետ»։ Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

***ԴԵՄԵՍԼԻԿՈՍ** *(գրուած նաև* դիմէսլեկոս, դիմեսլիկոս, դեմեսլիկոս *(այստեղ ա կարդալ ս),* դեմեսկլոս*) «բիւզանդական մի պաշտօն կամ աստիճան» Մամիկ. էջ 56. Ասող. 170, 179, 186. Լաստ. Թ. Ուռհ. Սմբ. պտմ.—ԱՔ գրում է* դեմեսլեկոս *և մեկնում «հարկ ժողվող»։*

=Յն. δομέστικος «կայսերական թիկնապահ, Բիւզանդական կայսրութեան ժամանակ արևելեան բանակի զօրավարին տրուած տիտղոսը» (Sophocles, 392). Ծագում է լտ. domesticus *«առտնին, ընտանի, անձնական պահակազօրք» բառից. ըստ այսմ մեր բառի ուղղագոյն ձևն է* դեմեսլիկոս, *որի մէջ առաջին* ե *յառաջացել է երկրորդի նմանութեամբ։—Հիւբշ.*

Ինճիճեան, Հնախօս. Բ. 234 յն. դիմոս բառից, «որ է ժողովուրդք և հասարակաց. որպիսի է և հարկն արքունի»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Dulaurier, Chronique de Matthieu d' Edesse, Paris, *1858, էջ 37։ Նոյնը էմին,* Ист. Асохика *124, Մալխասեան, հրտր. Ասող. էջ 379 և վերջին անգամ Հիւբշ.* Strassburger Festschrift, *71։*

***ԴԵՄԵՍՈՍ** *«հասարակաց բաղանիք». մէկ անգամ ունի Շիր. հրտր. Պատկ. էջ 7. «Ջրաղանիսն մեծ... զոր դեմեսոսին կոչէին»։*

=Յն. δημόσιος «հասարակաց», որ գալիս է δῆμος *«ժողովուրդ» բառից. յունարէնումն էլ այս բառը նշանակում է «հասարակաց բաղանիք», զօրութեամբ միայն իմացուելով՝—* λουτρὸν կամ βαλανεῖον *«բաղանիք» բառը. այսպէս ունին Պոլիբիոս, 26, 10, 13, Հերոդիանոս, Պատմ. 1, 12, 10։—Հիւբշ. 346։*

Ուղիղ մեկնեց Պատկ. անդ։

***ԴԵՄԵՏԻՐ** *«երկրի աստուածուհին» Ոսկ. ես. կամ* դեմետր *(սեռ.-ի) «երկիր, հող» նար. Շնորհ. բարձր. Տօնակ. որից* դեմետրածին *«հողածին» Սկևռ. աղ.։*

=Յն. Δημήτηρ (սեռ. Δήμητρος) «երկրի աստուածուհին», բայց նաև իբրև հասարակ անուն նշանակում է «ցորեն, հաց»։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ԴԵՄԵՏՐԻՏՈՍ *«պատգամաւոր» (նորագիւտ բառ). մէկ անգամ ունի Մխ. դատ. էջ 267։*

Բառտամեան, անդ, հանում է լտ. dimitto *«ուղարկել, առաքել» բայից։*

***ԴԵՄՈՆ** *«բազմութիւն». մէկ անգամ ունի Մագ. գամագտ. գրուած է նաև* գէմաւն, դիպեմաւն *ևն։*

=Յն. δῆμος «ժողովուրդ, բազմութիւն» բառի հյց. δῆμον ձևից։

Նորայր, Բանաս. 1900, 131 առնում է գեմաւ բնթերցուածը և Հին բառարանի գեմաւ «գաւաթ» բառի հետ միացնելով՝ «գաւաթ»-ը կարդում է «գաւիթ» և մեկնում է գեմաւ «միջոց, մէջ»։ Վերի ձևով կարդաց ու մեկնեց Մէնէվիշեան, Գամագտ. էջ 26 և իր բնթերցուածը հաստատուեց մի նոր ձեռագրով՝ ՀԱ., 1912, 740։

***ԴԵՆ,** *ի հլ. «պարսկական կրօնը. 2. ա-*

դանդ, սուտ կրօն» եղիշ. ը. էջ 111, 123, 126, 138. խոր. Սկբ. 46. կղնկա. Ա. 138, որից՝ դենադարձ *Արծր.,* դենակորոյս *Ջենոբ. էջ 27. Օրբել. լթ. հրտր. էմ. էջ 159,* պարսկադեն *եղիշ. Պատմ. վր.։*

=*Պհլ.* dēn *կրօն, հաւատք», որի հետ նոյն են պազենդ.* dīn, *պրս.* دين dīn, *գնդ.* daēnā *«կրօն»։ Իրաննանից փոխառեալ են նաև ասոր.* dēn, *եբր. արամ.* דין dīn *«օրէնք», բրդ. թրք.* din, *չէրքէզ.* din, *սերբ.* din *են. բոլորն էլ «կրօն, հաւատք (մահմեդական կամ քրիստոնէական)»։ Համմ. նաև* դենպետ, դենիմազդեզն *բառերը։—Իրաննան բառի ծագումը հետևեալ ձևով է բացատրում.—կայ գնդ.* daena- *«կրօն» և* daēnā- *«ներքին էակ, հոգեղէն եսը, անձնականութիւն կամ հոգի».* Bartholomae, *662 և 665 այս երկուսը իրը առանձին բառ է համարում. այսպէս նաև* Horn, *որ առաջինից դնում է պրս.* دين dīn *«կրօն», իսկ երկրորդից պրս.* جان jān *«հոգի» (տե՛ս § 597 և § 413),* Geldner, BB, *15, 261 երկուսը միացնելով դնում է* dāy *«տեսնել» արմատից.* Jensen *(տե՛ս* Horn, *էջ 133 ծան.) փոխառեալ է համարում աստր.-բաբել.* dinu *«օրինք» բառից՝ նկատ.* den- *ձևի միջոցով, որի հետ* Autran, Sumér. et ind. *էջ 153 նոյն է դնում սոսկ.* di *«օրինք, արդարութիւն» բառը։—Հիւբշ. 139։*

Schröder, Thesaur. *45 եբր.* din *բառից փոխառեալ։ Ուղիղ մեկնից ՆՀՔ։—* Peterm. *20 արտբ.* dīn *յատի հետ։* Böttich. Horae aram. *44, 103 սեմականից փոխառեալ է համարում։* Lag. Urgesch. *309* dhyāi *արմատից է դնում հմ. դեն, գնդ.* daēna *և եբր.* dīn։ *Սրանց նման նաև միւսները։*

Դեննար, ի-ա հմ. «մի տեսակ դրամ» ՅԺ. ժբ. 5. Յայտ. դ. 6. Նար. ԺԷ. էջ 39. գրուած է նաև դինար Պղատ. օրին. 393. Վրք. հց. ուրիշ վկայութիւն չկայ։

=*Յն.* δηνάριον *համանիշից, որ փոխառեալ է լատ.* dēnārius *«տասանոց (դրամ և կշիռ)» բառից. այս էլ ծագում է* deni *«տասնեակ» բառից։ Յունարէնից փոխառեալ են նոյնպէս արաբ. պրս.* دينار dinār, *վրաց.* დინარი *դինարի, ֆրանս.* denier, *սպան.* dīnero, *պորտ.* dinheiro, *իտալ.* danaro, denaro, *ռում.* denariŭ, *հալ.* dinaro, *նպ.* denar, *սերբ.* dinar, *պհլ.* dēnār *«դէնար»* (Nyberg, Hilfsb. *1, 38 և 2, 55), մինչև ասոնց.* dīnāra *և թոխար. քուչ.* tinar։—*Հիւբշ. 346։*

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 74 պրս. տինար *ձևից։ ԳԴ պրս.* տիյնար, *բառ յն.։ ՆՀԲ բառ լտ.* տէնա՛րիուս, *յորմէ յն.* տինա՛րիոս։

Դեննակ *«տեղեակ». ունի միայն Բառ. հրեմ. էջ 76։*

*Դեննիմազդեզն *(սխալմամբ գրուած նաև* դենիմազդէն, դենիմազդէյ*) (պարսկական կամ մազդեզական կրօնը» եղիշ. է. էջ 102, ը. էջ 126։*

=*Պհլ.* dēn-i-mazdēsn *կամ* dēn-i-māzdēsnān, *որ է գնդ.* daēnā māzdayasniš *կամ* daēnā mazdayasnanąm *«մազդեզական կամ մազդեզանց կրօնը». (կազմուած* daēnā- *«կրօն» և* Mazdāh *«Արմազդ» բառերից)։—Հիւբշ. 139։*

*Դենպետ *«կրօնապետ, դենի պլուխ» եղիշ. արևմտեան գրականում գործածւում է այժմ Տաճկաց Շէյխ-ուլ-իսլամի համար։*

=*Պհլ. *dēnpat *ձևից, որ կազմուած է* dēn *«կրօն» և* pat *«պետ. պլխաւոր» բառերից, իրըև գնդ. *daēnāpaiti-, երկուսն էլ չեն աւանդուած իրանական գրականութեան մէջ։—Հիւբշ. 139։*

Ուղիղ մեկնից Հիւբշ. Pers. Stud. *123։*

Դեշ *«խելագար». ունի միայն Բառ. երեմ. էջ 76։*

Դեպան *«փեթա՞կ». անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Սամ. 60 «Գառաւոր արդար, դեսպան յԱստուծոյ, դեպան մեղրալից և դէոն կտակարանաց»։*

Գառաւ ու մեկնից նախ Ամառունի, Հայոց բառ ու բան, էջ 164 բ։

+Դեռ *«տակաւին, մինչև հիմայ» ՍԳր. Ագաթ. Ոսկ. յհ. ա. 2, «նոր միայն» Կոչ. Փարպ. Փիլ., «ժամանակ, տարիք» Լմբ. ժղ. ժբ. 1 (Բուի թէ ուղղելի է ախս), որից* դեռ ևս *«տակաւին» Մն. խթ. 27. Յուդթ. դ. 2, «քիչ մնաց որ» եղիշ., դեռ ընդ դեռ «դեռ նոր» ՅԺ. կթ. կամ դեռադեռ Պիտ. Փիլ., մինչդեռ ՍԳր, դե-*

ոաբողբոջ *Պիտ.*, դեռաբոյս *Խոր. Հոիփս.*, դեռահասատ *Խոր. Ոսկ. լս.*, դեռընթիր «ընտրակոչ» *Նիւս. Թէոդ.*, դեռաճիղմն *(նորագիւտ բառ) Գիրք Թղ. 200*, դեռահաս, դեռատի *(նոր գրականի մէջ)*։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* dher- *ձևից. համմտ. լիթ.* dár «դեռ, տակաւին». *ուրիշ լեզուի մէջ պահուած չէ։—Հիւբշ. 438։*

Böttich. ZDMG, *1850, 353 տանս.* taruṇa, *դնդ.* tauruna, *պրս.* تر tar «թարմ», *յն.* τέρην «մատղաշ», *որ ինքը* Lag. Arm. Stud. *էջ 171 չի ընգունած։* Karolides, Γλωσσ. σύγκρ. *99 սրանց վրայ ուշադրութիւն կ՚ընծայուի։ τερσῆτος «թարմ»։ Վերի ծանօթութիւնը տուաւ* Meillet, MSL, *9, 150։—Տես,* ИАН, *1912, 597 վրաց. ջեր, իմիլ. ջերխ «դեռ» բառերի հետ։*

Գիր.—ՋԹ. Մշ. դ՚էո, *Բլ.* դ՚էո «հինց նոր», դ՚բո «դեռ, տակաւին», *Ջղ.* դ՚առ, *Մշ.* դբո, *Ալշ.* դ՚բո, *Տիգ.* բբո, *Սլմ. Վն.* տէլ, *Մկ.* տոլ, *—Բրբ. համանիշի հետ կցուած ունինք Ալշ.* դ՚բոլո, *Շմ.* տէո-հոլո *(Ալշ. առանձին էլ ունի դ՚բո, բայց Շմ. առանձին հայերէն ձևը չի գործածում).—Նոր բառ է դեռօգ Ակն. «մի քիչ առաջ»։*

*ԴԵՍՊԱԿ, ի–ա *հլ.* «պատգարակ, գահաւորակ, արքունի հովանաւոր կառք» *Կորիւն. Ոսկ. փիլիպ. Սեբ. 27, 46, 47. Սեբեր. գ. 114 (տպ. դեսպան, այսպէս ուղղել ըստ Նորայր, Կորիւն վրդ. 182). Կղնկտ. Ա. 153, 154, 160, 161, Վրք. և վկ. Ա. 372։*

=*Պհլ.* *dēspak *ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց նոյնն է հաստատում հրէարէն* דִּיסְפָּק dīspaq «կառք», *որ յաճախ գործածուած է բաբելական Թալմուդի մէջ և իրանական ծագում ունի։—Հիւբշ. 140։*

Տէրվ. Մասիս, 1881, մայիս 8 օտար փոխառութիւն է համարում։ Հինք. դեսպան բառից։

*ԴԵՍՊԱՆ (ի–ա *հլ.* ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «երկու իշխանութեանց միջև պատգամաւոր կամ միջնորդ բանից» Ագաթ. Բուզ. Փարպ. Եղիշ., «2. պաշտօնեայ» Եւս. պատմ. 706 (բց. ի դեսպանից), որից՝* դեսպանագնաց լինել *Բուզ.*, դեսպանութիւն *Բուզ.*, պեղադեսպան *Եղիշ.։ Նոր գրականի մէջ՝* դեսպանական, դեսպանատուն, դեսպանաժողով, դեսպանախորհուրդ։

=*Պհլ.* dēspān *համանիշ բառից, որ թէև առանձին գործածութեամբ աւանդուած չէ, բայց պահուած է պհլ.* 𐭱𐭮𐭮𐭲𐭮𐭲𐭭 bagdēspān «արքայական աւրհանդակ» *բառի մէջ (*Stackelberg, WZKM, *17 (1903), 50)։ Նոյնն են հաստատում նաև իրանեանից փոխառեալ վրաց.* დეხპანი *դեսպան» (որ սակայն կարող է և հայերէնի միջոցով փոխառեալ լինել) և արաբ.* دسفان dusfān, *որ Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 759 ա՛յսպէս է մեկնում. «Դեսպանի նման մարդու են ասում՝ որ մէկի կողմից մի բան ուղելու համար ուղարկուում է. կամ թէ ինքնաբերաբար է գնում. մասնաւորապէս «կաւատ» է նշանակում. յոգնակին լինում է* دسافى dasāfī... *ասում են նաև* disfān *և այս պարագային յոգնակին լինում է* دسافين dasāfīn»։ *Կամուս այս բառերը գնում է* dsf *արմատի տակ, որից նաև ունի* دسفه > dusafa *կամ* دسفن dusfān «կաւատութիւն», دساف idsāf «կաւատութեամբ դրամ շահիլ, ապրիլ»։—*Հիւբշ. 140։*

Lag. Urgesch. *116 և* Btrg. baktr. Lex. *58 վերջի մասը համարում է ծանօթ –պան մասնիկը։* Lag. Arm. St. *§ 609 մեղնից է գնում արաբ.* dusfān։ *Տէրվ. Մասիս, 1881 մայիս 8 համարում է օտար բառ։ Հինք. իբր տեսպան՝ տեսանել բայից. համմտ. պրս.* տիտէպան, *Բրբ.* կէօզճի *և յն.* θεωροφύλαξ։

ԴԵՍՊՈՏԻԿՈՆ «տիրական կամ երիցականաւ» ածարնտ. ունին միայն ՀՀԲ և ՋԲ. մէկ անգամ գտնում եմ Սիսիան. (տպ. Սուիերը ժբ. 46) «Քառասնիցն անուանցն գիր բովանդակէ միահամուռ 318 ի սուրբ օրինակաց որ գտանիցի ճշդրիտ դեսպոտիկոն ըստ Յունաց»։

=*Յն.* δεσποτικόν «տիրական, միապետական, բռնապետական. 2. տիրական, որ է Յիսուսի Քրիստոսի»։

ՀՀԲ և ՋԲ համարում են յն.։

ԴԵՍՊՈՒՏ «տէր, իշխան. 2. երեց, քահանայ» ունի միայն ՋԲ, առանց վկայութեան։

=Յն. δεσπότης «տանուտէր, տէր, բռնակալ, սեպհականատէր. 2. եպիսկոպոսին և քահանային տրուած պատուանուն» (Sophocles, էջ 352 ա)։—Ա՛ճ.

Դեր, նախամասնիկ՝ «փոխանակ, տեղը. 2. սուտ, ներհակ, հակառակ» նշանակութեամբ, որից՝ դերաճուն Բր. Մագ. և Երզն. քեր., դերաfրիստոս «նեռն» ՅՀ. իմ. պալ. իգն. Նար., դերհատուցական Բր. քեր. Արծր., դերհիւսիսական «հակարջային» Արիստ. աշխատանձին գործածուած ունինք հնից դերայ «դերաքրիստոս կամ անարժան քահանայ» Շնորհ. Թղթ. և նոր լեզուի մէջ՝ դեր «մէկի տրած կամ աննկիք բանը» (rôle), որից՝ դերասան (արդէն դիտէ Վարդան Յունանեան, Ջեռբածութիւն, 1671, էջ 304), դերասանական, դերասանապետ, դերակատար, դերաբաժանում. նոյն արմատից են շինուած նաև դերբայ, դերակում և դերսար «քիթ ցամաքի երկայնակալ ի ծովու» ՓԲ (իբր դեր-սար (կիսալեռ»)։

Նշ՛ դերայ «որպէս և ամկ. տէրայ կոչի յոմանց երէցն, զի և տէր բառ պրս. է տաճար»։ (Առաջինն է Նախ. դէրա<տէրա, կրճատուած հյ. տէ՛ր բարա «Տէ՛ր հայր» ձևից, երկրորդը՝ արաբ. دير dayr «եկեղեցի»)։—Հիւնք. տէր բառից։ Աղայեան, Տարազ, 1899, էջ 152—4 դերայ կցելով Ղրբ. դէր «քահանայ» բառին՝ հանում է Տիր դիցանունից։

Դերամոնոց «սէր յաւիտենական». ունի միայն Բառ. երեմ. էջ 76։

*Դերանդերձապետ «խորհրդական Պարսից արքունի դռան» Եղիշ. գ. էջ 47 (մէկ ձեռագիր ունի սրա փոխարէն դարանապետ բնթերցուածը)։

=Մեկնութիւնը տե՛ս Անդերձապետ։

Դերանիկ տե՛ս Դերիկ։

Դերբաբաձոն «ամենից հայր». ունի միայն Բառ. երեմ. էջ 76։—ինչ լինելը յայտնի չէ։

Դերբոիկ. ի–ա հլ. «խորտուրորա տեղ, առապար» Սեբեր. 8. Եփր. օրին. էջ 266. Եղիշ. գ. էջ 92. ՅՀ. կթ. գրուած նաև դարբուկ Մծբ. 276։

Bugge, Lyk. Stud. 1, 73 Եւրէա կղզու Δέρφις լեռան անուան հետ, Scheftelowitz. BB, 29, 20 հհիւս. pjarir «անխմոր, հում, հասարակ», անգլսք. peorf «անխմոր», հրպ. derb, derp, հֆրիպ. derf «բուռն» բառերի հետ՝ հնխ. terbho- ձևից։ Այս մեթժելով Petersson, KZ, 47, 283, միացնում է հհիւս. djarfr, շվէդ. djärf «կարիճ», հաաքս. derbi «քաջ, ուժեղ, չար», հֆրիպ. derve «հասարակաց, ողղակի»։ Շատ աւելի նման է գերմ. derb «ուժեղ, կոշտ, կոպիտ, խիստ», բայց ինչպէս ցոյց է տալիս Kluge, 93, այս իմաստը փոխաբերական է և ծագում է «անխմոր, հում (հաց)» իմաստից։

Դերեի «աւերակ, խոպան տեղ» Ոսկ. ես. 394. Գէ. ես., «զուր, դատարկ, ունայն» Լմբ. սղ., որից՝ դերևս առնել, ի դերևս առնել, ի դերև առնել, ի դերև ճանել, ի դերև կացուցանել «ոչնչացնել, փճացնել, աւրել», ի դերև ելանել, դերև լինել «փճանալ, պարապ ելնել» ՅՀ. կթ., դերևանալ «խոպան՝ անբեր մնալ, պարապ դուրս գալ» Պիտ. Փիլ., դերևանք Պիտ., դերևեցուցանել Պիտ. Փիլ., դերևիլ, դերևումն Պիտ.։

Նշ՛ լծ. դեր, դերբո կ։ Տէրվ. Նախալ. 84՝ բառամիլ, դորսովել, երաշտ, լտ. terra ևն բառերի հետ հնխ. tars արմատից։ Հիւնք. տերև բառից։ Պատահական նմանութիւն ունին քրդ. ﺩﻳﺮﻭ direw, ﺩﻳﺮﻓﻴﻦ direvin, darav «պատիր, սուտ, ստախօսութիւն», որոնք գալիս են պրս. durū՛ ձևից։

*Դերի «վանք». պահուած է միայն արդի մի քանի գաւառականներում՝ ձևափոխուել նշանակութեամբ. այսպէս՝ «գիւղական տօնախմբութիւն, հանդէս՝ խաղերով ու պարերով, գեպի վանքերն ուխտագնացութեան կամ տօնական օրերի ժամանակ. տճկ. փանայիր» (Ախալցխա, Բաբերդ, Կարին, Սեբաստիա), «մի տեսակ պար» (Բիւրեանիա)։ Հնից ունինք նոյն բառից կազմուած և աւելի հարազատ իմաստով դերէն «որդի վանաց» կամ դերանիկ «ուխտական զաւակ» (երկուսն էլ

իբրև յատուկ անուն). «Գրիգոր՝ անուանեալն դերանիկ, որ Թարգմանի ուխտիւք խրնդրեալ ի Տեառնէ» Արծր. ե. 3. «Ու հայր նորա Սահակ կոչեաց մանկան անունն Դերէն, որ կոչի որդի վանաց» Շապհ. էջ 38։ Նոյնից է դարձնել դերինակ «ուխտագնացութիւն» Մշ.։

= Ասոր. ܕܰܝܪܳܐ daira «վանք», ܕܰܝܪܳܝܳܐ dairāyā «վանական», արմատը ܕܳܪ dar «մնալ, բնակիլ» (տե՛ս Brockelmann, Lex. syr. 69), որից փոխառեալ են նաև արաբ. دَيْر dayr «քրիստոնէական վանք կամ մենաստան» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 864), քրդ. der «եկեղեցի, վանք» (Adjarian, Recueil de mots kurdes, էջ 5)։

Դերանիկ բառը առուգաբանում են՝ ՆշՒ «տէրունի կամ համառօտեալն բառս անդրանիկ»։ Հիւնք. պրս. پیرهن «նոր պատուղ»։ Միսբան, Հրատր. Շապհ. կցում է ուղիղ կերպով գւռ. դերի ձևին։ Նոյնը կրկնում է Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 51։ Ուղիղ մեկնեց Ակինեան, ՀԱ, 1922, 614։ Պատահական նմանութիւն ունի ճապոն. テラ tera «տաճար»։

ՓՈԽ.—Գաւառական դերի ձևից փոխառեալ է Թրք. գւռ. Սեր. deri «տօնավաճառ», ինչ. Zile derisi «Զիլէի տօնավաճառ», Meyramane derisi «Մարիամ Աստուածածնի տօնավաճառ» (Գաբրիէեան, ՀԱ, 1924, 281)։

+ԴԵՐՁԱԿ, ի-ա հլ. «զգեստ կարող կամ կօշկակար» Ոսկ. Եփես. կայ և յետնաբար դերձիկ. համմտ. «Դերձակաց մատնոցս արկին ի մատունս նորա» Յայտմ. ապր. 4. կամ նաև դերզիկ Օգոստ. բաջ. 20։ Արդի գրականում գործածւում է միայն առաջին իմաստով և դերձակ ձևով, որից դերձակուհի, դերձակութիւն, դերձականոց նոր բառերը։

=Բառիս պարզ արմատն է դեր, որ գրանում ենք նաև դերձան և հանդերձ բառերի մէջ (տե՛ս այս բառերը)։ Խնդիր է թէ այս բառերը բնիկ հա՞յ են, թէ՞ իրանական փոխառութիւն։ Իրանեան լեզուներում ունինք՝ սղհ. darzik, պրս. درزی darzī, քրդ. derzi, terzi, darzî «դերձակ» (որոնցից փոխառեալ են ասոր. ܕܰܪܙܺܝ darzīqā և թրք. terzi «դերձակ»), պրս. درز darz, ոզյ. درزه darza «կար», ոզյ. درزن darzan «ասեղ», ոզյ. درزمان darzmān «ասեղին անցուած թել», քրդ. دزی dezi «բամբակեայ թել, դերձան», գնդ. darəz- «ամրացնել», handarəza «իրար կապուած տրցակ», օսս. dares «զգեստ»։—Հիւրշ. 140 իրանեան այս բառերը կցելով սանս. drh «ամրացնել, պնդել» արմատին, գտնում է, որ արմատի երկրորդական «կարել» նշանակութիւնը զուտ պարսկական է, հետևաբար նաև հայ բառերը պարզապէս փոխառութիւն են։ Այսպէս՝ դերձակ գալիս է պհլ. երկրորդական *darzak ձևից (պհլ. darzīk ձևի դէմ կարող ենք դնել արդի դաւառական դերձիկ բառը, որ աւելի հնից էլ աւանդուած է), դերձան գալիս է պհլ. *darzan ձևից, իսկ հանդերձ<պհլ. *handarz ձևից։ Սակայն սրանց փոխառեալ լինելու դէմ դժուարութիւն են յարուցանում հանդերձ բառի միւս նշանակութիւնները («պատրաստութիւն» և «միասին»), որոնք իրանեանում չկան և չեն կարող «կարել» գաղափարից յառաջացած լինել։ Պրս. -arz>հյ. -երձ ձայնափոխութիւնը նոյնպէս դժուարութիւն է հանում, որովհետև ուրիշ օրինակներում սրա տեղ գտնում ենք -արձ. համմտ. վարձ, անդարձ, մարձել, մարձիկ։ (Ունինք միայն անդերձապետ, որ ցոյց է տալիս -երձ ձևը, բայց այս էլ հանդերձ բառից ազդուած յետին մի ձև պէտք է լինի. համմտ. դերձանդարձապետ գրչութիւնը)։—Ահա այսպիսի պատճառաբանութիւններից դրդուած է, որ Lidén, Arm. Stud. էջ 103—4, հակառակ է փոխառութեան և վերի դերձակ, դերձան և հանդերձ բառերը բնիկ հայ է համարում։ Lidén-ի կարծիքով (որ ընդունում է նաև Walde, 310) իրանեան բառերը երկու տարբեր արմատներ են ներկայացնում. գնդ. darəz- «տրցակ կապել, ամրացնել», handarəza- «տրցակ», dərəzra- «հաստատուն», drazaite «հաստատ բռնել» կցւում են սանս. dṛḍhati «ամրացնել», dṛḍhá- «հաստատուն», լտ. fortis «ուժով, քաջ», հլատ. forctus «լաւ», լիթ. dìržas «փոկ», dìržti «կարծրա-

նալ», հալ. držati «բռնել», ռուս. держать «բռնել, պահել» բառերին և սրանց հետ միասին ծագում են հնխ. dherg'h- «ամրացնել» արմատից: (Այս արմատի dherēugh- ձևափոխությունից են լատ Walde՝ հիալ. driūgr «ւիքը, ուժեղ», driūgum «յոյժ», հշվեդ. drȳgher «մեծ, ուժեղ», հպրուս. drūktai «հաստատուն», լիթ. drúktos «հաստ, ուժեղ»): Միւս իրանեան ձևերը գալիս են հնխ. dherg'h «կարել» արմատից: Այս վերջինը համեմատում է ալբան. dreð- «դարձնել, ոլորել, գալարել, մանել» և հյ. դարձ «դառնալ» բառերի հետ, որոնք նոյնպէս ծագում են հնխ. dherg'h- արմատից: Լեզուների մէջ նկատելի է, որ «կարել» և «մանել» դաղափարները յաճախանում են «դառնալ» դաղափարից. համմ. յն. νέω, լտ. neo «մանել», յն. νῆμα «թել», հբդ. nāan «կարել», գերմ. Nadel «ասեղ», հալ. nitĭ «թել, գերձան» և հհիւս. snúa «գարձնել, ոլորել», միջլ. snīm «մանուած, գարձ», այսպէս նաև հյ. մանել «թել մանել», մանած «թել» և մանի գալ «պատիլ, դառնալ»: Հնխ. dherg'h «գարձնել» արմատը, որ ալբաներէնի մէջ տուաւ «գարձնել, ոլորել և մանել» նշանակութիւնները, իսկ իրանեանի մէջ «կարել» նշանակութիւնը, հայերէնի մէջ էլ երկու տարբեր ձայնգարձներով տուաւ դարձ «դառնալ» և դերձ «կարել» (տե՛ս նաև դարձ բառը), Pokorny, 1, 859:

Առաջին անգամ ԳԴ դնում է պրս. darzi բառից փոխառեալ: Պրս. և ասորի ձևերին են կցում Böttich. Horae aram 29, 40, Arica, 76, 250, Lag. Urgesch. 943, Տէրվ. Նախալ. 87 են, Հիւբշ. Arm. Stud. 26 վարանման մէջ է դերձակ, դերձան, բայց մանաւանդ նաև դերձ բառը բնիկ, թէ փոխառեալ բնդունելու համար, իսկ Arm. Gram. 140 համարում է փոխառեալ:

ԳԻՒ.—Տի. դէրցիկ, Երև. դ'էրցիկ, Ջղ. դ'ԷրզիկԱռաջին երկուսը տալիս են Յայսմաւուրքի դերձիկ ձևը, իսկ վերջինը՝ Օդոստինոսի դերզիկ ձևը: Նոր բառ է դերձակաձև Ղզ. «հագուստի չափն առնելը»:

ՓՈԽ.—Վրաց. ջ ჩ ი ჯ ი դերցիկի «դերձակ». ունի Գրիշաշվիլի, Զվելի քալաքիս բոհամա, էջ 238 (հաղորդեց Գ. Ասատուր). բառը փոխառեալ եմ համարում հայերէնից, իր ց ձայնի համար (փոխանակ զ). և որովհետև հին վրացերէնում չկայ (չունի Ջուբինով), վրացին յայտնի կերպով Տփխիսի հայ գւո. դէրցիկ ձևից է:

ԴԵՐՁԱՆ «կարելու թել» վրք. հց. Բ. 11. ունին միայն ՋՔ և ԱՔ (առաջինը հոլովում է դերձանի, երկրորդը՝ դերձնոյ), որից՝ դերձանիլ «մեղրի ծորը թելի նման երկարիլ» Վստկ. 196:

=Մեկնութիւնը տե՛ս դերձակ:

Առաջին անգամ Lag. Urgesch. 943 և Gesam. Abhd. 34 դերձան բառը կապծելով «ասեղ»՝ համեմատում է պրս. darzan բառի հետ: Նոյն համեմատութիւնը ունին նաև Տէրվ. Նախալ. 87 և Հիւնք.: Միւսները տե՛ս վերը Դերձակ:

ԳԻՒ.—Ախց. Խրբ. կր. Սեբ. դ'էրձ'ան, Ալշ. դ'էրձան, Մշ. դ'էրցան, Ննխ. դէրցան, բէրցան, Երև. դ'էոցան, Պլ. Ռ. բէրցան, Տիգ. բէրցոն, ՋԹ. դ'իյձ'օն, դ'իրձ'ոն, Հճ. դ'իյձ'օն, Համշ. բէյցօն, Ջղ. դ'ԷրզանԱսլ. դ'էլցա. վերջինը կազմուած է նմանութեամբ բել բառի. ասում է օր. բէլ՝ մը դ'էլցա. նոյն բէլ բառի բարդութեամբ ձևացած է Առն. բէլդրձանԼ «բարակ՝ մաշած չուան» (Արեւելք, 1888 նոյ. 8—9):

ԴԵՐՁԻԿ. անասոյգ բառ, որ Բառ. երեմ. էջ 76 մեկնում է «շիտիր կամ խոտ կամ փարաղուն, որ է ասան», սրանից առնելով ՀՀՔ և ՋՔ դնում են «շիտիրութիւն, խոտվութիւն, ազմուկ»:

ԴԵՐՆԴՈՄԻՆ «յանկարծուրեք». ունի միայն Բառ. երեմ. էջ 76, որի հետ համմ. նաև դունիմին «յանկարծօրէն» անդ, էջ 80:

ԴԵՐՍԱՐ տե՛ս Դեր:

ԴԵՐՎԵՐՆՕՂ «շնորհօղ». ունի միայն Բառ. երեմ. էջ 76:

*Դեի (սեռ. տր. դիւ, դիւաց) «հոգի» Պզդատ. տիմ., «բարի ոգի, հրեշտակ» Ոսկ. ես. Եղիշ. մանաւանդ «սատանայ, չար ոգի» ՍԳր, «բուրմ» (այս նշանակութիւնը տեսնում է Եազըճեան, Մասիս, 1885, էջ 1008 Չենոբի հետևեալ տեղում. «Պաշտօնեայք կուռցն ոզ-

բային չարաչար. ուր և դևքն կոծէին»). վերջապէս ՔՔ դնում է «կուռք» իմաստով: Այս բառից են՝ դիւաբախ Ագաթ., դիւագին Գ. մակ. ե. 25, դիւախանգարել Ոսկ. մ. ա. 18, դիւակամ Ագաթ., դիւահաղորդ Ոսկ. մ. գ. 11, դիւահար ՍԳր, դիւահարել Տոբ. գ. 8. Ագաթ. եգն., դիւափոխիլ «դևերը փախչիլ. խելքը գլուխը գալ» կանոն., դիւացամոյ Ագաթ. § 246 (հին տպ. դիւամոլ), դիւահալ «բարկանալ» Ոսկ. ես. և մ. ա. 8. Բուզ., դիւապաշտ եգն., դիւապետ «սատանաների պետաւորը» Ոսկ. բ. տիմ. 276 (չունի ՆՀԲ). դիւատուր Ոսկ. երր., աճդև եգն., չարադև եղիշ. Փիլ., բազմադև եղիշ. մատն., ծաներադիւութիւն Փիլ. ժ. բան., մեծադիւութիւն Փիլ. լին.—արմատի անփոփոխ ձևով բարդութիւնն է ներկայացնում դևպետ «դևերի պետը» ԱԲ: —Ինչպէս բարդութիւնները և դիւ, դիւաց սեռականները ցոյց են տալիս, բառի առաջին ձևն էր *դեւ, ուր յետոյ է ձայնը յաջորդ ւ-ի պատճառաւ դարձաւ ե (այսպէս Տէրվ. Մասիս, 1882 հոկտ" 29 և Աճառ. Բազմ. 1898, 223):

= Պհլ. dēv, գնդ. 𐬛𐬀𐬎𐬌𐬯𐬀 daēva-, պրս. دیو dēv «դև, չար ոգի, սատանայ», دیوانه dēvāna «լիմար, խենթ, դիւահար», քրդ. دێو dev, զազա. dau, déwi «դև, սատանայ», təblu «դիւահար», دینی dini «լիմարութիւն» (Horn, § 598): Իրանեանից փոխառեալ են նաև վրաց. დევი դեվի, սերբ. divi, նլն. ντίβι, ալբան. def, սորբ. dīvā, ն. սորբ. devā «սատանայ, դև»: Բառիս ծագման վրայ տե՛ս տիւ: Պարսկերէնից է փոխառեալ ուտ. gōv «դև. 2. անլոգիք. 3. սարդ»: Վերջին նշանակութեան համար համմ. գաղ. սատանայ «սարդ»:—Հիւբշ. 140:

Ուղիղ մեկնից նախ Klaproth, Asia polygl. 105, որ համեմատում է պրս. dīv և գերմ. teufel «դև» բառերի հետ: Ուղիղ մեկնեցին նաև ԳԴ, ՆՀԲ, Peterm. 20, 33, Windisch. 10, Gosche, 7, Böttlich. ZDMG, 1850, 353 եև: Կոստանեան, Հայոց հնէթ. կր. 1879, էջ 7 գնդ. daeva, հլ. դաւ, դաւել արմատից: Տէրվ. Մասիս. 1882 հոկտ. 29 ունի մի առանձին լօդուած «Դև և հրեշտակ» վերնագրով: Եազըճեան, Մասիս, 1885, էջ. 1008 դև «քուրմ» բառի հետ համեմատում է հնդ. dēva, ինչպէս կոչւում էին Հնդկաց հին քուրմերը:

ԳԻՒ.—Ողմ. Ջղ. դ'եվ, Նախ. Պլ. Վն. դէվ, Ղրբ. դէվ, տէվ, Ասլ. դ'է'վ, Ալշ. Ախց. Երև. ՋԹ. Կր. Խրբ. Հճ. Մշ. Սեբ. դ'էվ, Շմ. Սլմ. տէվ, Տիգ. թէվ, Տփ. դիվ. սովորաբար նշանակում են «հրէշի նման՝ առասպելական մի էակ».—իրարից զանազանում են Մկ. դէվ «հրէշը» և տէվ «սատանայ», Մրղ. դէվ «հրեշը», տէվ «սատանայ», որից տէվէնտար»: Նոր բառեր են՝ դիւադաղար, դիւահան, դիւոտ, դիւոտիլ, դիւունամ (Ակն. դ'իվունամ) «դևեր», դևաստան, դևատուն, դևաժառիլ:

ԴՋԻ «ձևի». երկու անգամ ունի Սիւն. բեր. 209, 241 = Երզն. բեր. իբրև համանիշ ձի բառի:

ՆՀԲ «նոյն ընդ բառիս ձի կամ ընդ պրս. դուէն» (իմա՛ պրս. تاوه tavsan, tōsan «վայրի ձի. 2. երիվար», բայց ասիլի յարմար պիտի լինէր պրս. تاوه tōsa «սնուցեալ կենդանի. թէ ձի իցէ և թէ այլ»):

ԴԻԴԻՊՈՒԻ, ի-ա հլ. «վրացի ազնուական». նորագիւտ բառ, որ քանիցս անգամ գործածում է Օրբել. «Եւ ի ժամ ճաշոյն առանձին նստել ի բազմականացն ի վերոյ քան զամենայն դէդէպուլ նախարարան» էջ 277. «կոչէ դկաթողիկոսն և զմեծամեծ դէդէպուլսն» էջ 278. «ի մեծամեծ դէդէպուլացն» էջ 280, 282. «ի մեծ դէդէպուլացն ոմն Բուրա անուն, որ էր գործակալ ամենայն տանն Աթաբեկին» էջ 291: Նոյն բառը գործածուած է նաև անդ, էջ 260, 276, 279, 283: Ուրիշ է դժուարին, որ տե՛ս առանձին:

=Վրաց. დიდებული դիդեբուլի «նշանաւոր. 2. ազնուական» (Ջուբինով 477):—Ա.Տ.

Շահնազ. հրտր. Օրբել. Բ. էջ 303 համարում է վրացերէն:

+ԴԷՋ «կոյտ, շեղջ» Սիրաք. լԹ. 22. Կանոն. Նար. խրատ. Վրդն. քրզ., որից՝ դէզադէզ Վեցօր., դիզադէզ Մծր. Ագաթ., դիզանիլ «կուտուիլ, դիզուիլ» ՍԳր. Ագաթ. Վեցօր.,

դիզուլ *Փիլ. լին. Շիր. էջ 44*, դիզել *Փարպ.*, դիզանել *Գ. Թագ. ժը. 33*, դիզանալ *Դան. գ. 47. Բ. մակ. է. 5*, դիզան «*դիզուած*» *Մագ. ոտ.*, բոցադէզ *Ագաթ.*, բազմադէզ *Վեցօր.*, բոլորադէզ *Նիւս. պհ. 170*, երկայնադէզ «*բարձրահասակ*» *Խոր.*, փրփրադէզ *Գնձ. Լաստ.*, հրադէզ *Ագաթ.*, մեծադէզ *Մծբ.* (*իսկ* դէզաւոր, *որ վատ ածականների մի շարքի մէջ յիշում է Մանդ. էջ 217* («...*ուռուցկոտ, դէզաւոր, դեղամոր...*» *են*), *ըստ Մանդ. սիր. 23 պէտք է կարդալ* դեղաւոր «*թունոտ*»)։

= *Բնիկ հայ բառ՝ հնխ.* dheig'h- *արմատից. համմտ. սանս.* dēhi- «*թումբ, պատնէշ, ամբարտակ*», déhmi (*վեդ.* degdhi) «*ծեփել*», *զնդ.* diz, daēzayeiti «*դիզել. կանգնեցնել, բարձրացնել*», uzdaēza- «*դէզ*», pairi-daēza- «*շրջապարիսպ*», uzdišta- «*դիզաւած, բարդուած*», *հպրս.* didā «*ամրոց*», *պրս.* diz, dēz «*բերդ, դղեակ*», *յն.* τεῖχος, τοῖχος «*պատ, պարիսպ*», *լտ.* fingo (fictum) «*կակուղ բանով օր. կաւով մի բան պատրաստել, ձեւակերպել, շինել*», figura «*ձեւ*», figulus «*բրուտ*», *օսկ.* feihúss «*պատեր, պարիսպներ*», *գոթ.* deigan «*շաղախել, թրիել*», *հնիւս.* deig, *անգլսք.* dáz, *հրգ. գերմ.* teig «*խմոր*», *հսաս.* děža «*խմորի տաշտ*», *լիթ.* dižti «*չարաչար ծեծել*», *թրակ.* -διτος, -διζα «*ամրոց*» *են։ Նոյն հնխ.* dheig'h- *արմատի շրջնալ ձևն է* g'heidh-, *որից կազմուած են հսլ.* zĭdati «*շինել, կառուցանել*», zidŭ «*պարիսպ*», *լիթ.* žėdzu «*ձեւակերպել, շինել*» *են* (Walde, *293*, Boisacq, *949*, Berneker, *198*, Trautmann, *367*, Pokorny, *1, 833*, Ernout-Meillet, *347*, Kluge, *488*). —*Հիւբշ. 439։*

Առաջին անգամ Lag. Urgesch. *633 սանս.* dih, *զնդ.* diz։ *Նոյնը* Lag. Gesam. Abhd. *31, 76*, Justi Zendsp. *156*, *Հիւբշ.* KZ., *23, 15, 18, 25, 34*։—Lag. Arm. Stud. § *630 համարում է իրանեան փոխառութիւն՝ զ-ի պատճառաւ՝ փխ. ձ։—Տէրվ. Նախալ. 87 վերի մեկնութեան պէս։—Դաւիթ-Բէկ, Յուշարձ. 397 նզալլ.* das, *իոլ.* dais, *հրրբտ.* das, desi «*դէզ*»։

Գիւտ.—*Նախ.* դէզ, *Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Սեբ.* դ'էզ, *Համշ. Մկ. Սլմ. Վն.* տեզ, *Սչ.* դ'է՛զ, դ'էզել, *Ասլ.* դ'է՛զ, *Ոզմ.* դ'եզ (*բայց* դ'էզիլ «*դիզել*»), դ'էյզ, դ'էյզիլ, *Զգ.* տիզ, *Ղրբ.* տիզ, տի՛զի, *Շմ.* տmզ։—*Ոճով աւտում է* դէզ դնել «*դիզել*», *որ գտնում ենք նաև հին լեզուի մէջ. համմտ. «Ընդին դէզս դէզս» Լմբ. ժր. մարգ. էջ 109 (Յովհ. Բ. 20).*—*Նոր բառեր են՝* դիզուկ, դիզպահ, դիզաչափ, դիզատէր, դիզափայտ, *իսկ* դիզանալ *նշ.* «*հպարտանալ, ամբարտաւանիլ*»։

ԴԷՀԱՄԷԹԱՐ «*մի անծանօթ պաշտօնի անուն*». *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Օրբել. 157* «*Ես Գրիգոր երէց ի Տաշուայ և Վարդ դէհամէթար վկայ եմք*»։

*ԴԷՄ, ի–ա *հլ.* (*յատկապէս անեզաբար գործածուած*) «*երես, կերպարանք*» *ՍԳր*, «*առարկայի ճակատը, առջևի կողմը, երեսը*» *ՍԳր. Վեցօր. Ոսկ.*, «*անձ, մարդ*» *Բր. քեր. Յհ. իմ. Երև.*, «*աչք, տեսութիւն*» *Ոսկ. յհ. ա. 1*, «*դէպի, դէմ*» *Ճառընտ. Տօնակ. Վանակ. յոբ.*, *որից այլևայլ ձևերով՝ ի դիմաց, ի դէմս «մէկի կողմից» Բ. Կոր. բ. 10. Ոսկ. հս. Փարպ. Եղիշ.*, դէմ յանդիման *ՍԳր*, դէմ ընդդէմ *ՍԳր*, դէմ առ դէմ *Լմբ. սղ.*, դէմ ի դէմ *Փիլ. լին.*, դէմ դնել «*դիմել, երթալ*» *Երեմ. խր. 17. Ղկ. Բ. 53*, գդէմ առնել *կամ ի դիմի ճարկանիլ «դէմ դնել» ՍԳր. բարդութեամբ և ածանցմամբ՝ դիմագրաւել Ագաթ. Ոսկ. մ. ա. 17*, դիմադարձ *Յուդթ. բ. 15. Եսթ. Բ. 1. Ագաթ. Ոսկ. հս.*, դիմակալ *ՍԳր*, դիմակաց *ՍԳր. Եզն.*, դիմել «*վրան երթալ, ուղղուիլ*» *ՍԳր*, «*ապաւինիլ*» *Եղիշ.*, դիմեցուցանել «*վարել, քշել*» *Եզն.*, բաէդէմ *Ոսկ. սղ. ծ.*, խոժոռադէմ *Իմ. ժէ. 4. Բուզ. Սեբեր.*, ապադէմ «*ագիդ*» *Երզն. քեր.*, բազմադիմի *Ագաթ. Ոսկ. հս. և մ*, երկդիմի *Ղևտ. ժթ. 19. Եւս. քր.*, ընդդէմ *ՍԳր. Ոսկ. Վեցօր.*, ընդդիմակաց *Թուղ ժ. 9. Եզն. Ոսկ. հս. Կորիւն*, յառաջադէմ *ՍԳր. Ագաթ. Կորիւն. Ոսկ. Վեցօր.*, յորդադէմ *Ա-*

գաթ., նախանձ–ընդդէմ *Ղևտ. ժբ. 18. Սիր. իգ. 9. Ոսկ.*, ներդիմել «*մի բան մեկնել, բացատրել*» *Ասող. Հրտր. Մալխ. 225. Մագ. գամագա. (ՀԱ, 1911, 376)*, դիմատիպ «*տեսութեան սահման կազմող առարկան*» (*նորագիւտ բառ*) *Տաթև. ամ. 72 (Աչքն տեսանէ մինչև ի դիմատիպ ինչ, որպէս զորմն կամ պլեառն կամ զերկինս և յայնկոյս ոչ անցանէ)*, բացադիմի *Եփր. մատ. Դ. 246 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 269)*։—*Նոր բառեր են՝* անդիմադրելի, դիմագիծ, դիմանկար *են*։—*Առանձին տե՛ս* դիմակ և յանդիմանել։

= *Պհլ.* 𐫔𐫇 dēm, *մանիք. պհլ.* 𐫛𐫇𐫔 dīm (Salemann, Man. Stud. ЗАН, *8, 67*), dēmak «*կերպարանք, ձև*». *լդ.* dēmagān (*իմա՛* dēmakān), *պրս.* دیم dīm, صدیمه dīma, *բելուճ. քրդ.* dēm, dīm «*դէմք, կերպարանք*», *զնդ.* daēman- «*աչք, հայեացք*», *աֆղան.* lēmą «*աչքի բիբ*» (Horn, § *596*, Bartholomae, *667*)։—*Բառիս վրայ աւելի ընդարձակ տե՛ս* դեա։—*Հիւբշ. 140։*

Ուղիղ մեկնեց նախ նէբ։ Böttich. ZDMG, *1850, 353* դեա, դեն *բառերի հետ վեդ.* dhī, *սանս.* dhyāi, *զնդ.* dōiθra «*աչք*», *պրս.* dīdan «*դիտել*»։ *Նոյն*, Arica, *70, 147 սրանց հետ նաև յն.* θεᾶσθαι *են։* Justi, Zendsp. *143 զնդ.* daēman, *որին կցում է նաև պրս.* dēm, *աֆղան.* lēmah: *Հիւբշ.* KZ, *23, 18* դեմ, դեա, դիտել *դնում է* dhī *արմատից։ Տէրվ. Նախալ. 89 պրս.* dīdan, *հլ.* դեա, *պրս.* dēm, dēma, *հլ.* դիմակ, *յն.* θέασμαι, *սանս.* dhī *ձևերի հետ հնխ.* dhī «*դիտել*» *արմատից։ Հիւբշ.* Arm. Stud. *27 տե՛ս վարը* դեա։ *Հիւնք. պրս.* տիյմ *և յն.* δέμας «*հասակ, ձև, մարմին*»։ *Մառ,* ИАН, *1918, 342—3 հլ.* դեպ *և վրաց.* մծիփե «*հասուն*»։

Գիհ.—Պլ. դէմ, *Ալշ. Ախց. Երև. Ջթ. Խրբ. Կր. Հճ. Մշ. Սեբ.* դ՚էմ, *Ոզմ.* դ՚եմ, *Մկ. Համշ. Վն. Սլմ.* տէմ, *Ռ. Տիգ.* թէմ, *Ասլ.* դ՚ըմ, դ՚ըմ, *կրկնութեամբ՝ Զղ.* դէմդէմ, *Տփ.* դէմուդէմ, *բոլորն էլ «դէմ, ընդդէմ» նշանակութեամբ. «դէմք, երես» նշանակութիւնը կորած է։ Ունինք նաև ննխ. Պլ.* դիմանալ, *Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Զղ. Սեբ. Սչ.* դ՚իմանալ, *Շմ.* տիմանալ, *Ջթ. Հճ.* դ՚իմանօլ, *Տփ.* դիմնալ, *Սլմ.* տիմնալ, *Ոզմ.* դ՚էմանալ, *Ռ.* թիմանալ, *Տիգ.* թիմմնալ, *Ասլ.* դ՚իմանալ, *Ղրբ.* տմա՛նալ, *Ագլ.* դրմա՛նիլ, *ննխ. Պլ.* դիմաց, *Սչ.* դ՚իմաց, *Համշ.* տիմաց, *Շմ.* բեատէմ *են։—Նոր բառեր են՝* դեմել, դեմենալ «*դիմաւորել*», դէմադէմ, դէմլուսուն, դէմուդարձ, դէմվրայ, դիմալոյս, դիման, դիմացել, դիմացկան, դիմաւոր, դիմաց տալ, դիմօրը *են։*

Դէն «*քու սիրոյդ համար, քո խաթիր համար*». *իբր մակբայ յիշում են հին քերականները.* «*Եւ շնորհակալուն. դէ՛ն, արքէ՛ն, գրուա՛տ*» *Բր. քեր. 32.* «*Դենն արքէն է (տպ. արդէն) և արքէնն ի սէր քո, որպէս թէ ասէ. արդէն ի սէր քո առնեմ զայս*» *Համամ. քեր. 273։*

Նշի հասկանում է «օ՛հ, կեցցէ՛, աֆէրի՛մ» իբր պրս. دن dan «*աղաղակ*», دانه dana «*ուրախութիւն, ուրախութեան աղաղակ*», دانی danī «*ուրախութիւն, զուարճութիւն*»։

ԴէՇՈՒԻՊ «*աստի*». *այսպէս ունի Բառ. ևբեմ. էջ 77. Համմտ.* դեհուպ։

ԴէՈՆ «*արկղ*». *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սասն. էջ 60* «*դեպան մեղրալից և դէոն կտակարանաց*» (*որ լուսանցքում մեկնուած է «արկղ»*). *այսպէս ունի նաև Բառ. երեմ. էջ 77։*

Դիպ, ի–ա *հլ.* «*պատահմունք, դիպուած*» *ՍԳր. Եւս. պտմ. Ոսկ. մ. բ. 16. Եփր. ա. տիմ. Ագաթ. Եղն. Մծբ.*, «*յարմար, պատշաճ*» *ՍԳր. Ոսկ. մ. ա. 23 և Ես. Կոչ. Եղն.*, «*դէպի, նրա կողմը*» *Եղն.*, որից՝ դէպ լինի «*կպպատահ*» *ՍԳր, ի դէպ, Ոսկ. յհ. բ. 6, ի դէպ է Գծ. ժբ. 14. Եւս. քր. Ոսկ. մ. բ. 12. Եղն.*, ի դէպ գալ *Բ. պետ. բ. 25*, ի դէպ ելանել «*յարմարիլ*» *Եղն. Սերբ.*, դէպևդէպ *կամ* դէպուդէպ *Ոսկ. յհ. ա. 24. Կոչ. 21*, դէպուդիպ *Գծ. ժղ. 11*, դիւրադէպ *Փիլ.*, *հլ.*, իճճադէպ *Ոսկ. Ես.*, յանկարծադէպ *Ոսկ.*, բարեդէպ *Մարգ. յհ.*, դիպուած «*յարմար, պատշաճ*» *Ա. մակ. գ. 46. ժա. 37. Բուզ. Սերբ.*, դիպան «*դէմք, առջե-*

վը» Կոստ. երգն. 140, դիպան ելանել կամ առ դիպան պատահել «դէմը՝ առաջը դուրս գալ» Բուզ., ընդ դիպան «առջևի կողմը, երեսը» (օր. արձանագրութեան) Սուտ- Սեբ. էջ 1 (ըստ ՀԱ, 1912, 347—8), դիպաւորութիւն Ոսկ. ա. տիմ., դիպիլ ՍԳր. Ոսկ. ես. Եւս. քր. և պտմ., դիպեցուցանել Եփր. օրին. և համաբ. Փարպ., դիպող Առակ. ժե. 23. Դան. ժդ. 15. Եւս. քր., դիպուած Ժող. բ. 14, 15, դիպուկ «յարմար, պատեհ» Մխ. Համդ. 122, հանդէպ ՍԳր. Եւս. քր. Եղն., հանդիպիլ ՍԳր, հանդիպութիւն Վեցօր., անդիդէպ (նորագիւտ բառ) «անպատեհ» Լծ. պրպմ. 623 ևն։—Տաբօրինակ մի ձև է եղջիւրահանդեպ Պղատ. օրին. 308 (այսպէս տպ. իսկ ըստ ՆՀԲ եղջիւրահանդիպեալ), որ թարգմանուած է բնագրի κεραοβόλος «կարծր, աննփնելի» բառից (տե՛ս բնագիրը, Platonis opera, Paris, 1883, հտ. Բ, էջ 419). յոյն բառը կազմուած է κέρας «եղջիւր» + βάλλω «նետել, արձակել». ուստի հանդիպեալ կամ հանդեալ կա՛մ սխալ թարգմանութիւն է և կա՛մ հայերէն մի նոր բառ՝ այդ նշանակութեամբ։

Böttlch, ZDMG, 1850, 333 և Lag. Urgesch. 929 դիպիլ = սանս. dīp։ Հիմնք. pi բառից։ Karst, Յուշարձան, 400 ասուր. tebu «յարձակող», tibū «յարձակիլ»։ Andreas, ЗАН. 8 (1908), 67 մանիք. պհլ. דיבג dībag «ճակատագիր, բախտ» բառի հետ է կցում։ Մառ, ИАН, 1918, 343 դեմ բառից։ Պատահական նմանութիւն ունի վրաց. ջმი դմի «մինչև, դեպի»։

ԳԻՒ.—Ննխ. Պլ. դէբի, Սչ. դ'է'բի, Տփ. դիբա, Շմ. տիբա, Ղրբ. դիբի՛, բրդի՛, Ջղ. դաբ. Ագլ. դի՛բի, դիբիմ՛, դրնի՛բմ՛, դինի՛բիմ (նիւթ այս վերջին երկուսը այստեղ են պատկանում), Ալշ. դ'էմի, Մշ. դ'էմ, Երև. դբա. բոլորն էլ նշանակում են «դէպի»։—Սրանք, ինչպէս և գրականի մէջ՝ դէպի կազմուած են դէպ բառից + յաջորդ գոյականի ի նախդիրը, ճիշտ ինչպէս բա՛ցի (իմա՛ բաց ՚ի). երկու դէպքումն էլ նախդիրը դարձել է արմատական։ Բայական ձևով ունինք Տփ. դիփչիլ, Խրբ. դիբիլ, Ագլ. Պլ. դբիլ, Սեբ. դ'բիլ, Ախց. Կր. դ'իպչէլ, Վն. տէպճել, Ոզմ. դ'էպճիլ, Մկ. տէպճալ, Սչ. Տիգ. բբբչիլ, Ռ. բփչիլ, Զթ. դը'բչը'լ, դիբճօլ, Պլ. դբպչիլ, Ակն. դ'իմճիլ, դ'բմճիլ, Մշ. դ'բբճել, Հմշ. տիբճուշ. այս բառերը նշանակում են «հպուիլ, քսուիլ, վնասել, դրդռել, կռուիլ, ըմբշամարտիլ, արևը ծագիլ, ապաստանիլ և այլն»։—Կարծում եմ այստեղ են պատկանում նաև Շմ. տիվէր «զառիվեր», Տփ. դէվէր «դարիվայր», դիվիր «դարիվեր» են ձևերը, և ո՛չ թէ դար արմատին (տե՛ս և անդ)։

*ԴԻՏ, ի-ա հլ. «դիտող, պահապան» ՍԳր. Վեցօր. Եփր. Թգ., «լրտես» Ա. մկ. ե. 38. Եղն. Ոսկ. գաղ., «նպատակ, նշանակ» Յոբ. ժզ. 3, «դիտանոց, բարձրաւանդակ» Ես. խա. 9. Ագաթ., որից՝ դէտակն ունել ՍԳր. Ագաթ. Կոչ. Ոսկ. բ. կոր., դիտել ՍԳր, դիտաւոց ՍԳր. Եւս. քր., դիտապետ «արքեպիսկոպոս» Բենիկ. Նար., դիտաւոր «դիտող» Ոսկ. ես., «բարձր դիրքով շրջապատի վրայ իշխող (լեռ)» Օրբել. 169 (Յարևմտից կողմանէդ սկսեալ ի մեծ դիտաւոր սարէդ Գազբոյլայ ջրաթափովն մինչ ի խոռին ճանապարհն), դիտաւորութիւն «մտադրութիւն, նպատակ» Ես. խա. 4. Բուզ. եղն. Սերեր., դիտակ «աչքի երևացող մի բան», յատկապէս «թզենու վրայ կախուած պտուղը՝ վազահաս թուզը» Ովս. թ. 10. Նաւ. դ .12. Ոսկ. ես., «դէմք, աչք» Յհ. կաթ. Նար., դիտակ տեղի «թատրոնի վերնայարկը, balcon» Մանդ. էջ 132 (չունի ՆՀԲ), ճարտարադէտ Մծբ., հրաշադէտ Զաք. գ. 8, դիւրադէտ Փիլ. ել., հաւադէտ «թռչնահմայ» Ղևտ. ժթ. 26. Ոսկ. ես., բազմադէտ Փիլ. նխ., գիշերադէտ «գիշերապահ» Լաստ., գեղեցկագիտակ Խոր. Յհ. կթ. ևն։ Նոր գրականին յատուկ են՝ ակնդէտ, դիտարան, մանրադէտ, հեռադիտակ, դիտաւորեալ, դիտմամբ ևն։

=Պհլ. *dēt բառից. սրա հետ համմտ. պհլ. dītan «տեսնել», հպրս. didiy «տես», դնդ. diδāiti «նայում՝ նկատում է», dōiθra- «աչք», vī-δaeta- «դէտ, դիտող», պրս. دیدن dīdan «տեսանել», دید dīd «տեսակ, լալտնի, ակներև», دیده dīda «աչք, դիտարան, դէտ, դիտող, տեսնուածք», دیدار dīdār «տեսու-

թիւն, աչք, դէմք, ակնարև, լալտնի», ان؛ دیدن dīdabān *«դիտապան», աֆղան.* līdal *«տեսնել, լրտեսել», բելուճ.* dīδ, dīδār *«հայուածք», քրդ.* dītin *«նշմարել, տեսնել, դտնել, հնարել», քրդ.* dūar *«հեռուից երևացող մի բան, լեռան գագաթ, երևութիւն» են։ Այս բոլորի արմատն է հնխ.* dhī- *«տեսնել, դիտել»։ Իրարից զանազանւում են հնխ.* dei-, deyā-, dī-, *«փայլիլ, երեվալ» (որի ժառանգներից է հյ. տիւ. մանրամասն տե՛ս այս բառը և* Pokorny, *1, 772—4) և հնխ.* dheyā-, dhī- *«տեսնել, դիտել», որի ժառանգներն են՝ սանս.* ádīdhēt *«դիտում էր»,* dhyā-ti *«խորհրդածել, մտածել» (այն է հոգու մէջ դիտել),* dhīrá- *«տեսնող, իմաստուն», յն.* σῆμα, *դոր.* σᾶμα (*dhyā-mn̥) *«նշան»,* σημαίνω *«նշանակեմ», ալբան.* diture *«իմաստութիւն», գոթ.* filudeisei *«խորամանկութիւն», լիթ.* dimst, ding *«թուալ, թուիլ», ինչպէս նաև յն.* θαῦμα *«զարմանալիք, հրաշք»,* θία *«դիտումն, թատերախաղ»* (Pokorny, *1, 831—832,* Boisacq, *861*)։—Հիւբշ. *141։*

Առաջին անգամ ԳԴ համեմատեց պրս. dīda=հյ. դիտակ։ Brosset, JAs. XIV *(1834), 383 են պրս.* dīdan, *յն.* ἔδειν, *լտ.* vidēre *«տեսնել» և վրաց.* վիցի *«գիտեմ»։* ՆՀՒ *և* Diefenbach, Berl. Jahrbl. *1843, 445 պրս.* dīdan *են։* Böttich. ZDMG, *1850, 353* դեմք *և դեն բառերի հետ սանս.* dhyāi, *գնդ.* dōiθra, *պրս.* dīdan։—Böttich. Arica, *70, 147 սրանց հետ նաև յն.* θεᾶσθαι *են։* Müller, SWAW, *42, 251 պրս.* dīdan։ Justi, Zendsp. *156 վերիններին հետ գնդ.* dī, did *«տեսնել» արմատի տակ։* Հիւբշ. KZ, *23, 18 են* dhī *արմատից։* Lag. Arm. Stud. § *634—6* դիտակ=*պրս.* dīda, դիտաւնց՝ *պհլ.* ān *յոգնակերտ մասնիկով կազմուած։ Տէրվ. Մասիս, 1881 մայ՛ 8* ճաճ- դես *և դեհ բառերի արմատը դիտում է դի,* դիս=*յն.* θέασμα, θεοπίζω։ *Նոյն, Նախալ. 89 հայ.* դեմք=*պրս.* dīm, դիմակ=*պրս.* dīma, դեհ, դիտել=*պրս.* dīdan, *յն.* θέασμα, *սանս.* dhī *ձևերը գնում է հնխ.* dhī *«դիտել» արմատից։* Հիւբշ. Arm. Stud. *27* դեմ, դեհ *թէև գնում է հայերէնի բնիկ բառերի շարքը, սակայն կարծում է, որ փոխառեալ լինին. իսկ* Arm. Gram. *141, դուռ իրանեան փոխառութիւն է համարում։*

ԴԻՒ.—*Նոր բառ է դիտեան Ղզ. «ռազմական դիտանոց»։*

ՓՈԽ.—Վրաց. ᲓᲘᲪᲝ դեոի *«լրտես, յառաջապահ դիտող խումբ, դէտ»։—Այս բառը կարող է լինել հայերէնից, բայց կարող է նաև ուղղակի իրանեանից լինել։*

ԴԺԱԿ *տե՛ս Դուժ։*

Böttich. ZDMG, *1850, 353,* Arica, *80, 322 և* Lag. Urgesch. *69 գնում են սանս.* durāka *ձևի հետ։*

ԴԺԱՐԱՆ *տե՛ս Դուժ։*

ԴԺԳՄԻԼ *տե՛ս Դժգմիլ։*

ԴԺԳՈՀ *տե՛ս Գոհ։*

*ԴԺԳՈՅՆ *«անգոյն, գոյնը դցած». պատահաբար միայն գործածուած չէ հին մատենագրութեան մէջ. սակայն նրա գոյութիւնն են հաստատում* դժգունել *ոսկ. Եբր., դժգունիլ լմբ. մատ. 93, դժգունութիւն Եւագր. բոլորն էլ յետնաբար գրուած ա-ով, որ յետին տառադարձութեամբ աստմնականի բրիտունն է՝ համապատասխան յաջորդ ծ ձայնին։ Նոր գրականում վերակազմուած է հին դժգոյն ձևը, բայց արևմտեան գրականը գրում է* աժգոյն, *իսկ արևելեանը՝ դժգոյն։*

=*Պհլ.* *dužgōn, *գնդ.* *dužgaona- *համանիշից, որ կազմուած է* duž *բացասականով՝* gōn=gaona >*գոյն բառից։—Հիւբշ. 141։*

*ԴԺԱՄՄ *«անգգամ, ժամու, դաժան» Մծբ. Եփր. գծ. 19 (գրուած դշխեն, դշխեմ), որից՝* դժխեմութիւն *(գրուած նաև* դժխիմութիւն, դժխմութիւն*) Մծբ. Բուզ. Եփր. թգ. 419։ Նոր գրականը դիտե միայն դժխեմ ձևը։*

=*Պհլ.* dušxēm *«վատ բնութիւն ունեցող», պազենդ.* dušxīm, *պրս.* دژخیم duž-xīm, dižxīm *«չարաբարոյ. 2. սպանող, դահիճ» (վերջին նշանակութիւնն ունի Շահն. Ը. 485). կազմուած են* duž *«չար, վատ» և* xīm *«բարք, բնութիւն» բառերից*

համմտ. պհլ. vat-xēm «վատաբարոյ» (Nyberg, Hilfsbuch, 2, 237)։—Հիւբշ. 141։

Ուղիղ մեկնեց նախ Գ-Դ, լեռոյ ՆՀԲ, Lag. Btrg. baktr. Lex. 42, Հիւնք.։

*Դժկամ «տհաճող, չուզող» ԱԲ, որից՝ դժկամակ «անախորժ, անհաճոյ» Ոսկ. յհ. ա. 1. Շնորհ. ընդհ. «շարասիրտ, դժնեայ» Փիլ. իմ. Մխ. երեմ., դժկամակ լինել «դառնանալ, դժուարիլ, նեղանալ» Բ. Քագ. ժԲ. 42 կամ դժկամակից լինել Ոսկ. երր., դժկամակություն Մծբ. Սարգ. Բ. յն., դժկամակել Վրք. հց. յետին ձև է դժկամայ «տհաճ» Սիմ. ապար. էջ 85։

=Պհլ. *duškām, որ առանձին չկայ, բայց պահուած է duškāmkartārīh բարդի մէջ, նոյն են նաև պազենդ. duškām «վատ սրամտդրուած», պրս. دژکام dižkām, دژکه dižkāma, دژاکام dižākāma «բարկացնալ և տհաւոր կամ երկիւղապին, չարաբարոյ դաժան», կազմուած են duž «վատ» և kām, kāma «կամք» բառերից։—Հիւբշ. 142, 163։ Windisch. 10 և Müller, SWAW. 38, 575 հայերէնով են մեկնում։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Lag. Arm. Stud. § 621, լեռոյ Հիւնք.։

*Դժկերպ «տգեղ». առանձին գործածուած չէ, բայց կայ պահուած դժկերպութիւն «տգեղութիւն, տձևութիւն» բառի մէջ, որ մէկ անգամ միայն ունի Փիլ. նխ. բ։

=Պհլ. *duškerp «տգեղ, տձև», զնդ. *duškəhrp-, որոնք սակայն աւանդուած չեն իրանեան գրականութեան մէջ. կազմուած են duš «վատ» և kəhrp-, kerp «մարմին, ձև» բառերից, համմտ. սրա հականիշը՝ զնդ. hukohrp- «բարեձև, գեղեցիկ»։—Հիւբշ. 142։

*Դժնդակ (ըստ ՆՀԲ ի-ա հլ. թէև առանց վկայութեան) «դժուար, անտանելի, գէշ, սաստիկ, չարաչար» Եսթ. ժգ. 4, 5. Ոսկ. յհ. բ. 24, եղիշ. Փիլ., որից՝ դժնդակագոյն Եւս. քր., դժնդակութիւն Առակ. իգ. 29. Ոսկ. ա. կոր., դժնդակաւթս Ոսկ. յհ. խէ, դժնդակալուր Պիտ., դժնդակապէս Փիլ. ևն։

=Պհլ. *dižandak ձևից, որի հետ համմտ. պրս. دژند dižand, dažund «դաժան, չարա-

բարոյ, ցասուցեալ». մեր բառը նախապէս *դժանդակ ձևն ունէր, որից ա-ի անկումով յառաջացաւ դժնդակ. համմտ. օժանդակ և օժընդակ։

Ուղիղ մեկնեց Հիւնք. էջ 143։ Թիրեաքեան, կարնամակ, ծան. 87 պահլաւ բնագրում ԺԱ 3 դշվադարեկ ձևը գտնելով՝ կարդում է դշնդարեկ (պհլ.՝ կարդացւում է թէ՛ վ և թէ՛ ն) և սրանից է հանում հյ. դժնդակ։

*Դժնեայ, ի հլ. «դժնդակ, դաժան, խիստ» եղն. եղիշ. խոր. ածանցման մէջ մտնում է դժն-, դժնէ, դժնեա- ձևերով. այսպես՝ դժնէութիւն Ոսկ. եփես. և հռ., դժնութիւն խոր. Գնձ., դժնէագոյն Ոսկ. յհ. բ. 22 (գրուած դժնեագոյն Բրս. հց.), դժնեաձայեաց խոր., դժնամիտ Փարպ., դժնեաբարեւ լաստ. ուրիշ մասնիկներով՝ դժնի Պզատ. օրին., դժնեակ կամ դրժնեակ «ժանտ» Անկ. գիրք առաք. 281, դժնիլ կամ դժնել «դժուարիլ, խոժոռիլ, դառնանալ» Ճառընտ. «դրժնել» Վրք. և վկ. Ա. 33, բուն ձևից ողնդժնեայ Ագաթ., չարադժնեայ Ճառընտ.։

=Արմատն է *դուժն, որ ծագում է պհլ. *dužn ձևից. համմտ. պրս. دژن dužn «սուր. և ասացեալ լինի սա յաճախ զօրութենէ բիւս իրաց». կազմուած են duž «վատ» արմատից՝ —Ա՛.

Windisch. 10 դժնել համեմատում է սանս. duçyami և հյ. դժ- ձևերի հետ։ Հիւնք. 144 դժնեայ հանում է դժնիկ բառից։

*Դժնիկ (սեռ. -ի) «մի տեսակ փուշ է. լտ. rhamnus» ՍԳր. «եղիտ» Ես. ծէ. 13, «դժնդակ, վատ» Յայսմ.։

=Պհլ. *dužnīk կամ *dužinīk ենթադրեալ ձևից, որի հետ համմտ. պրս. دژه dūža «է փուշ ինչ բոլորակ, որ կպչի ի հանդերձս և ի բուրդս ոչխարաց», دژنه dūžna «մեղու, մոծակի խայթոց, փղի կնճիթ», دژینه dūžīna կամ دژیزه dižīna «հերիւն, բիզ»։—Ա՛.

ՀՀԲ և ՆՀԲ դժնեայ տնկիկ։ Հիւնր. պրս. تیژیخ, տուժեն։

Գ-Ի.—Դժնիկ Նր. «չար մարդ», դժնկի Տս. «մի տեսակ բոյս է», Բն. «յունապիտ»։

*ԴԺՈՒԽ, ո հլ. *(անեզական դործածութեամբ) «դեհեն, տարտարոս» ՍԳր, «գերեզման» ՄՆ. լե. 34. խբ. 36. եզն., որից՝ դժոխական եզն. էջ 247 (չունի ՆՀԲ), դժոխաբնակ Թէոդ. խշ., դժոխապետ Ճառընտ., դժոխապետութիւն (նորագիւտ բառ) Պարդ. 261, դժոխանման (նոր գրականում).—փոխաբերաբար դժոխ (միայն եզակի և իբր ածական) «դաժան բարքով, անհամբոյր» Փիլ. բագն., բարդութեամբ՝ դժոխաբանել ՅՀ. իմ. երև., դժոխալուր Լաստ., դժոխերես Ոսկ. յհ. ա. 26, դժոխանալ «խժռոտիլ» Երզն. մտթ.—երկրորդ նշանակութիւնն է «դժուար, դժուարին», բայց այս նշանակութեամբ գտնում է միայն բարդութեանց մէջ. ինչ. դժոխահաւասանելի «դըժուարահասկանալի, խրթին» Շիր. հրտր. Պատկ. էջ 64, դժոխագնաց «դժուար երթալու» Ուխտ. Բ. 113 (նորագիւտ բառ), դժոխելանելի Խոր., դժոխերասան Բրս. Հայեաց., դժոխագիւտ Մագ., դժոխին «դժուարին» ԱՒ.—գրուած է նաև նուճադ (Բառ. երեմ. էջ 199) կամ նուճադխ (Ալիշան, Հին հաւ. էջ 423).

=Իրանեան փոխառութիւն է. համմտ. զնդ. daožahva, dužaŋhav «դժոխք», պհլ. dōšaxʷ, արձանագրութեանց մէջ dōšaxvi (կարդա՛ dōžaxᵛ, dōžax), պազենդ. dōžax, պրս. ژخ dōzax, աֆղան. dōɣax, քրդ. دۆژەخ dûžē, արևել. քրդ. duzax, քելհճ. dōzak, dōzē «դժոխք» (Horn, § 581). Բուն նշանակում է «վատ կայան» և ծագում է զնդ. duž «դժ-, վատ»+aŋhav «լինել, էութիւն, գոյութիւն, կեանք» բառերից (Bartholomae, 675, 756). Հալերէն ձևը ծագում է իրանեան *dužaxʷa ձևից, ուր a դարձել է o՝ յաջորդ ʷ ձայնի ազդեցութեամբ, որով բառը եղել է *dužoxʷa>*dužox>դժոխ. Սրա հետ համմտ. թուրֆանեան պհլ. dwšwx, որ պետք է կարդալ *dušox կամ *dōšox. առաջին ձևի հետ նոյնանում է հալերէնը, իսկ երկրորդի հետ վրաց. ჯოჯოხეთი ջոջոխեթի «դժոխք», որ նոյնպէս իրանեան փոխառութիւն է (համմտ. հլ. նուճադ, նուճադխք գըրչութիւնները). Վրաց. ջոջոխեթի գալիս է հնագոյն *დოჯოხეთի ձևից, որի արմատն է *დოჯოխ (-եթի տեղական մասնիկ է). Նախաուր առամնականի քմականի վերածուելու համար համմտ. վրաց. ჩხუპის «կրակ»< *ტხუპის, ինչպէս ցոյց են տալիս մինդ. dačxiri և լազ. թաշխիրի «կրակ». (Նոյն երևոյթը դտնում եմ նաև Ղզլարի հայոց մօտ՝ Զարջումանեան ազգանունան մէջ, փոխանակ Թարջումանեան, որ է «թարգմանեան»). Վրացի ձևից յառաջացած են թուշ. ջօջխեթա, չեչէն. ջուեմիխաթ «դժոխք».—Հիւբշ. 142—3.

Առաջին անգամ ուղիղ մեկնեց ԴԴ, լեռոյ ՆՀԲ.—Windisch. 10 դժոխ *առաւդարանում է դժ մասնիկով ոխ բառից.* Böttich. Arica, 80, 323 *պրս.* dūzax.— Müller, SWAW, 38, 575 *զնդ.* dužaka *են. Ձայնական բացատրութեան համար Հիւբշ. ենթադրում է, որ իրան.* dōžax՝ *ձայնաւորների տեղափոխութեամբ հաւելէնի մէջ դարձած լինի* dažox *և լեռոյ՝ բազմաթիւ դժ- մասնիկով սկսուող բառերի նմանութեամբ՝ դժոխ. Վերի ձևով մեկնեց* Meillet, MSL, 17, 249.

Դիմ.—Ալշ. Մշ. Հճ. դ'ժոխ, Ջղ. դ'ժոխկ, Սլմ. ժոխ, Ակլ. դժօխկ, Սչ. դ'ժօխ, Ախց. երև. կր. դ'ժօխկ, խրբ. դ'ժոխգ, Շմ. ժօխ, Վն. ժօ՛խ, Ղրբ. Մրղ. ժօխկ, Ռ. բժօխ, Պլ. բժօխգ, Ննխ. բուժօխ, բըժօխ, Մկ. ժժէօխ, Ասլ. դ'ժէօ՛խ, դ'ժէօ՛խ, Սեբ. դ'ժէօխգ, Տփ. դժուխկ, Ոզմ. դ'ժուխ, Զթ. դ'էօժէօխ:

*ԴԺՈՒԱՐ, ի–ա հլ. «ոչ դիւրին, դժար, ծանր» Եւս. պտմ. է. 20. Եփր. հռ., «լեռների մէջ դժուարանցանելի տեղեր» (անեզական և գոյականաբար գործածուած) խոր. Վրք. ոսկ. Նար., որից՝ դժուարին ՍԳր. Եւս. քր., դժուարաւ (դժուար բառի գործիականն է, մակբայաբար գործածուած) Մտթ. ժբ. 23. Ղուկ. ժբ. 24, դժուարանալ Ոսկ. բ. կոր. և յհ. ա. 16. 31, դժուարիլ Մծբ. 285 (տպ. դժբեալս ուղղել դժուարեալս՝ *ըստ* ՀԱ, 1914, 121), դժուարանք «տհաճութիւն» Ոսկ. յհ. ա. 23, դժուարութիւն Ոսկ. յհ. ա. 25, դժուարագիւտ Եւս. քր., դժուարալուր Վեցօր., դժուարամատոյց Բ. մակ. ժբ. 21. Ոսկ. մ. բ. 12, դժուարա-

պաճ *Սեբեր.*, դժուարալոյծ *Ոսկ. ես.*, դժուարամիտ *Մծբ. էջ 248, 284, 297, 370 (Համմտ. ՀԱ, 1914, 120)*, դժուարակամ «դժուարակամեցող», դժուարակիրթ «կնճռոտ, դժուարիմանալի», դժուարամարեկի «դժուար սրբուող» *(երեքն էլ նորագիւտ բառ) Ես. պրպմ. 721, 595, 711*, դժուարաֆնին *Ագաթ. ևն (բոլոր ածանցների թիւը ԱՒ-ի մէջ 204 է)*: Գաւառական ձևով է դժար *Սոկր. Վրք. հց. Դ. Կոստ. երզն. 82*, որից դժարիլ *Տիմոթ. կուզ. էջ 325*:

= պհլ. *dušvār «դժուար» բառից. համմտ. պհլ. dušxᵛār «դժուար», dušxᵛārīh «ճգնշում, նեղութիւն», պազենդ. dušvār «դժուար», պրս.* دشوار *dušvār,* دشخوار *dušxᵛār,* دشتخوار *dušṯxᵛār «դժուար»,* دشوارى *dušvārī «դժուարութիւն», քրդ. dišvar, dižvar, dizvar «խիստ, դժուար»*: Իրանեան ձևերի արմատն է *āθra- «ընթացք»*, որից *hu- «լաւ» և duš «վատ» բառերի բարդութեամբ կազմուած են *huāθra-*>պնդ. xᵛaθra-*>*պրս. xᵛār «դիւրին, հեշտ» և հպրս. *dušāθra-=պնդ. dužāθra- «դժուար», աւելի յետոյ՝ նոյն duš բառով բարդուելով կազմուեցան հպրս. *duš-šuvāθra>*dušuvaθra>պհլ. dušvār, իսկ xᵛār «դիւրին» բառի իբր բացառականը՝ պհլ. duš-xᵛār «դժուար»*: Հայերէնի մէջ dušvar ձևից ծագեցաւ դժուար, իսկ հպրս. *dušāθra- պնդ. dužāθra- ձևից՝ դժար, որ մինչև այսօր կենդանի է գաւառականների մէջ: Բայց գաւառականներն ունին նաև դիժար ձևը, որ ներկայացնում է duž մասնիկի պարսկական երկրորդական diž հնչումը:—Հիւբշ. 143*:

Ուղիղ մեկնեց նախ Գ.Դ. նոյնը յետոյ ՆՀՒ, Peterm. *61*, Böttlch. Arica, *83, 388*, Lag. Urgesch. *232*, Arm. Stud. § *623—4*, *Հիւնք. ևն*:

Գիւղ.—դժուար ձևը պահում են՝ *Ախց. Կր.* դ՚ժվար, *Ոզմ.* դ՚ժվmr, *Մկ.* ժժվmr.—դժար ձևն ունին՝ *Տփ.* դժար, *Երև. Ջղ.* դ՚ժար, *Գոր.* ժժmr, *Ակն. Խրբ. Սեբ. Ալշ.* դ՚իժար, *Ննխ.* դժար, դիժար, *Մրղ.* տիժար, *Հւր.* դիժmr *Շմ.* տիժար, *Ղրբ.* ժժէր, *ՋՓ.* դ՚իժոյ, դ՚իժոր, *Ագլ.* դժէօր:—*Երկու ձևերը միասին ունին՝ Մշ.* դ՚ժվար, դ՚ժար, *Սլմ.* դժվmr, ժժmr, *իսկ Տիգ. միայն* թժվmr *ձևը.—Սուչավայում բառս չընչուելով՝ գերմաներէնի ազդեցութեամբ փոխանակուած է ծանր բառով:—Նոր բառեր են՝* դժուարաճամբոյր, դժուարաւտամ, դժուարատեղ, դժուարճալ, դժրուկ:

ԴԺՊԱՐԻՇՏ «ամբարիշտ» Գր. սք. սահփ. սրա կրճատ ձևն է դժպաշտ, *որ առանձին գործածուած չէ, բայց նրանից է* դժպաշտութիւն *«ամբարշտութիւն» Կոչ. 160*:

=Կազմուած է դժ- *մասնիկով պարիշտ բառից. հմմտ.* ամբարիշտ. *ամբողջը պատրաստ փոխառեալ է պարսկերէնի՞ց թէ հայերէնի մէջ յօրինուած է, ինչպէս կարծում է—Հիւբշ. էջ 142*:

ԴԺՊԱՐՏ. առանձին չէ գործածուած. սրանից ունինք դժպարաեցուցանել *«չարաչար յաղթել», որ մէկ անգամ ունի Մծբ. ժթ.*:

=Փոխառեալ է հպրս. *duš-part ձևից, որ կազմուած է* duš *«վատ» և* part *«կռուիլ» բառերից, որից նաև* պարտել *«յաղթել»:—Բարդութիւնը չի կարող հայերէնի մէջ տեղի ունեցած լինել, որովհետև այս պարագային* դժպարտ *պիտի նշանակէր «անպարտ». հմմտ.* դժգոհ, դժբախտ:—*Աճ.*

*ԴԺՊԻՐՀ «ժպիրհ». Հաղուագիւտ հնութիւն, որ մէկ անգամ գործածուած է Գ. մակ. ե. 22. սրանից ը ձայնի անկումով՝ *դժպիճ, որ առանձին գործածուած չէ, բայց -ի, -ել և -ութիւն մասնիկներով տալիս է* դժպիճի *«անհաճոյ, ծանր, խիստ, դժնդակ» Իմ. բ. 12. Ես. գ. 10,* դժպիճել *«դժնեայ ձև առնել» Ոսկ. յհ. ա. 26,* դժպիճութիւն *Սեբեր. Մծբ. Յճխ. նոյն բառն է նաև* դժպահագոյն *«աղքատիկ» Փիլ. քհ. որ ՆՀՒ սրբագրում է* դժպիհագոյն.—*ՋՒ ունի նաև* դժպէճի *գրչութիւնը, որ այլուր չկայ:—Վերջապէս կայ* դժպահակ *«մտքի համար անյարմարանալի» Ադամ. 284, որ* դժպիճ *բառի վրայից յարմարեցրած մի ձև է*:

Տերվ. Altarm. *49* ժպիրճ *բառից* դրժպիրճ, *որից ր ընկած՝* դժպիճ, դժպիճ: *Հիւնք. պրս.* bih *«լաւ» բառից կամ համաոտուած* դժպատճճ *բառից:—Ե., Բիւր. 1900, 314 ա և Թիրեաքեան, Կարնամակ, ծան. 37* դժ *մասնիկով պրս.* بد bih *«լաւ, բարի» բառից (բոլորովին անճիշտ մեկնութիւն. պրս.* bih *բառի հին*

ձևն է պիէ. vēh, որ տալիս է հյ. վեճ. այնպէս որ դժպիի բառի հետ բնաւ գործ չունի)։

Դժրիել տե՛ս Դրուժ։

+Դի, ո հլ. «մեռելի մարմին, շաղիղ» ՍԳր. Կիւրղ. յես. Փարպ. ածանցման մէջ մտնում է երեք ձևով՝ 1. **դի-**, ինչ. դիտապատս Ես. լզ. 3 և դիբաւալ ՍԳր. Մանդ.—2. **դիա-**, ինչ. դիազարդ Մն. ծ. 2, դիազերծ Բ. մակ. ը. 27, դիաբաւալ ՍԳր. Փարպ., դիակալ Ոսկ. մտթ., դիակապուտ Կոչ., դիաճաճ Ոսկ. ա. տիմ.—3. **դիակ** (-կան, կունք, կանց) ՍԳր. Մծբ. Եփր., դիակնաճալ Փարպ. Եղիշ։—Նոր գրականին յատուկ բառեր են դիազնեութիւն, դիակառ։

= Բնիկ հալ բառ՝ հնխ. dhuĭ- արմատից. այս արմատը միւս լեզուների մէջ ներկայանում է հետևեալ ձևերով. 1. dhuĭ-to- ածած ձևով. համմտ. հիւլ. dĭth «աննկում, վերջ, մահ», նիւլ. dith «վնաս, աւերում, փճացում, կորուստ, ապականութիւն». 2. dhuĭ-no- ածած ձևով. համմտ. հ. անգլ. dwĭnan, dwān, անգլ. dwindle, հհիւս. duĭna «փճանալ, կորնչիլ, ապականիլ», հիւլ. duĭne և կիմր. dyn «մարդ» (բուն նշանակում է «մահկանացու»). թերևս և լտ. fūnus, fōnus «դի, մահ, մեռելի յուղարկաւորութիւն, թաղում». 3. dheu̯- կամ dhou̯- ձայնդարձով. համմտ. գոթ. diwans «մահկանացու», dauθs «մեռեալ», dauθus «մահ», dôjan «չարչարել», հրգ. tōt «մեռեալ», touwen «մեռնիլ», գերմ. tot «մեռած», tod «մահ». հհիւս. doyia «մեռնիլ», հոլլ. dood, անգլսք. dīaþ, անգլ. death «մահ», die «մեռնիլ», հալ. daviti «խեղդել, խեղդելով սպաննել», ռուս. давить «ճնշել, սեղմել. 2. խեղդել. 3. հարբուտահարել» են (Walde, *327*, Kluge, *490*, Berneker, *181*, Pokorny, *1, 829, 835, 841*)։

Peterm. *20* և Windisch. *11* սանս. dēha։ Մորթմանն, ZDMG, *26, 604* բևեռ. tikhuni «աւար» = դիակուն? Müller, Arm. VI. թ. 7 առաջին անգամ լինելով կցեց գոթ. div «մեռնիլ» են ձևերին, որ մերժում է Հիւբշ. *438*, առարկելով թէ սրանց արմատն է հնխ. dhev, որ չի կարող հյ. դի դառնալ։ Հիմնք. դի, դիք «աստուած» բառից։ Ալիշան, Հին հաւ. *422* դև և դիք բառերի հետ։ Bugge, Lyk. Stud. *2, 39* լիւկ. ti «դիակ» բառի հետ՝ հնխ. dhē «դնել» արմատից, իբր «հեղեալ ի գազաղ»։ Ուղիղ մեկնութիւնը վերի ձևով առաւ Lidén, Arm. Stud. *40*։ Karst, Ծուշարձ. *403* առաջ. dig, dīg «մեռնիլ»։

Գիւր.—Մշ. դ'իակ։

Փոխ.—Patrubány, SA, *1, 223* հայերէնից փոխառեալ է դնում հունգ. dög «դիակ», որ ի հարկէ պատահական նմանութիւն միայն ունի։

*Դիաթիկ «կտակ» Ասոր. դատ. *9*. Մխ. դատ. (էջ *407* ծան. մէկ ձեռ. ունի տիատիք, իբրև բացատրութիւն կտակ բառի, իսկ բնագրում միայն կտակ), «մանկութեան աւետարան» Սամ. անեց. *77* (տպ. դիաթէկ). գրուած է նաև տիաթիկ Սկեռ. պատ. *82*. Ասոր. դատ. *15*. Վրդն. աւետ. Բրս. մրկ. *16, 435*, որից անտիաթիկ «անկտակ» Անսիզք *21*։

=Յն. διαθήκη «կտակ. 2. հին կամ նոր կտակարան». գալիս է τίθημι «դնել» բայից՝ δια- մասնիկով և բուն նշանակում է «տրամադրութիւն, կարգադրութիւն»։ Սրանից է փոխառեալ նաև վրաց. დიათეკა դիաթիկա «կտակ»։—Հիւբշ. *346*։

Ուղիղ մեկնեց նախ Նշ։

*Դիավէկդիական, ի–ա հլ. «տրամաբանական, վիճաբանական». ունի միայն ՀՀ։ Վկայութիւնը գտնում եմ մէկ անգամ Գիրք առաք. *43* բ. «Այնչափ են նրբութիւն (ք) դիալեկդիական արուեստին, որ ոչ իմանայ մարդն թէ ուստի խաբեցնել լինի»։

=Յն. διαλεκτικός «վիճաբանական (որ է հարց ու պատասխանով վիճական ձև)». յունարէնի մասնիկը փոխանակուած է հոմանիշ հայերէն մասնիկով։

Ուղիղ մեկնեց ՀՀ։

*Դիալոկ (սեռ. ի), ունի միայն ՀՀ, ունի Գիրք առաք. *30* բ. «Ասէ Գրիգոր ի դիրս դիալոկին»։ Նոյն է՝

*Դիալոգոս «տրամախոսութիւն». մէկ անգամ ունի Յայսմ. իբր բառ յունարէն։

= Յն. διάλογος «տրամախոսութիւն», որ կազմուած է δια մասնիկով՝ λογος «խօսք» բառից. սրանից են փոխառեալ նաև լտ. dialogus, ֆրանս. dialogue ևն։—Հիւբշ. 346։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀՒ, յետոյ ՆՀՒ։

*ԴԻԱԿՈՆ «սարկաւագ» Կմբ. մատ. 84. Օրբել. իշ. հրատ. էմ. էջ 80։

= Յն. διάκονος «ծառայ, սպասաւոր. 2. սարկաւագ», որից փոխառեալ են նաև լտ. diaconus, ֆրանս. diacre «սարկաւագ» ևն։—Հիւբշ. 346։

Ուղիղ մեկնութեանը ծանօթ էր հներից Կմբ. մատ. էջ 34՝ «Վեցերորդ դաս եկեղեցւոյ՝ դիակոնք, որ Բարգմանին սպասաւորք, այսինքն սարկաւագունք»։ Ուղիղ մեկնեցին նորերից նախ ՀՀՒ և ՆՀՒ։

*ԴԻԱՊՕԼՈՒՍ «սատանայ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Երզն. մտթ. 276 «Որ ոչ միանայ ընդ իս հաւատովք՝ նա ինքն սատանայ է. և որ ոչ ժողովէ ընդ իս գործովք՝ ցրուէ նա ընդ դէս զանձն իւր. քանզի կոչի և սատանայ դիապօլուս, որ է ցրուեալ»։

= Լտ. diabolus, յն. διάβολος «սատանայ» բառն է, որ իրօք բուն նշանակում է «բաժանող, ցրուող, առելութիւն կամ նախանձ ներշնչող». ծագում է յն. δια-βάλλω բայից։—Ա՛ճ.

Գտաւ ու մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 171։

*ԴԻԱՍՊՐ «մի տեսակ ազնիւ կտորեղէն». ունի միայն Բառ. երեմ. էջ 53՝ բեհեզ բառի բացատրութեան մէջ։

= Յն. δίασπρος «պուտ, մաքուր սպիտակ» (ἄσπρος «սպիտակ» բառից). չկայ հին ու նոր յունարէնում. բայց պիտէ Sophocles, էջ 371. միջին հունարէնում թեթևս «սպիտակ բեհեզ» նշանակութիւնն ունէր։—Ա՛ճ.

*ԴԻԱՏՈՆ «թռիչ աստղ, աստւպ». մէկ անգամ ունի Արիստ. աշխ. էջ 613։

= Յն. διάττων, որ գալիս է յն. διάττω «ալս ու ալն կողմ վազել՝ խոյանալ» բայից և ալս էլ կազմուած է δια մասնիկով ἄττω «վրան վազել, յարձակիլ» բայից. աստղ է διάττων ἀστήρ «թռիչ աստղ»։—Հիւբշ. 346։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։

ԴԻԱՐ տե՛ս Սեղենդիար։

*ԴԻԱԻՂՈՆ «մի տեսակ ըմբշամարտութիւն հին յունաց մէջ». Եւս. քր. ա. 292 «ի դիաւղոնին և ի հիպզոնի, որ է ոսոխ ելանել դինակըրին մրցութեանն»։ Նոյն բառը սխալ գրչութեամբ եղել է դիողոն, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբ. հկճռ. Բ. էջ 8 «Սպառազինեալ հոգևոր զինուն՝ յանդուգն յարձակմամբ և յախուռն համարձակութեամբ առնում ոպղոն և դիողոն, և իջանեմ ի Քալպիովք, մենամարտեալ ընդ սատևերազէն ճակատու հերձուածողացն»։ Նոյն բառերն են, որ Բառ. երեմ. էջ 78 դնում է «դիդոն և ապղովն, սպանող լինել կամ ոսոխ զինու փորձութեամբ». և բոլորովին այլայլելով՝ դիոնողոպ «ոսոխ» (էջ 78)։

= Յն. διαύλος, -ον «ատադիոնը երկու անգամ վազելու խաղ է». կազմուած է δίς «երկիցս» և αὐλός «ատադիոն» բառերից։—Ա՛ճ.

*ԴԻԱՓՍԱՂՄԱՅ «միշտ». ունի միայն Բառ. երեմ. էջ 77։

= Յն. διάψαλμα բառն է անշուշտ. այս բառը ըստ Bailly, 499′′′ և Sophocles, 376 երաժշտական մի բառ է, որ համապատասխանում է հին եբրայեցոց סֶלָה selā ձևին և նշանակում է «արտասանական երգից լարային երաժշտութեան անցնելու միջոցը». գործածուած է օր. Սղ. Գ. 3, որ հայ Բարգմանութեան մէջ չկայ. (բազոքականների 1895 թ. գրաբար Բարգմանութեան մէջ գրուած է ևանգիստ)։ Յայտնի չէ սակայն թէ ի՛նչպէս այս երաժշտական բառը դարձել է երեմիայի մօտ «միշտ»։—Ա՛ճ.

ԴԻԲԱԳԱՂ «նիզակակից». ունի միայն Բառ. երեմ. էջ 77։

*ԴԻԴՐԱՔՄԱՅ (սեռ. ի) «երկդրամեան» ՍԳր. Եւս. քր. Շիր. Երզն. մտթ. 376. գրուած է դիդրամեան Պրպմ. 330 (ըստ Մանանդեան, Տեղեկագիր ինստիտուտի, 1, 11 Շիրակացու ժամանակ դիդրաքման հաւասար էր արդի 25 կոպէկին)։

= Յն. δίδραχμα, որ յոդնակին է δίδραχμον «երկդրամեան» բառի. այս էլ կազմուած է δίς «երկիցս» և δραχμή «դրամ» բառերից. յոյնից է փոխառեալ նաև լտ. didrachma, didrachmum։ —Հիւբշ. 346։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ։

+ԴԻԲԼ «ձիծ ուտել, մօր կաթը ծծել» ՍԳր. բուն արմատն է դի, որից նաև դիիլ «անանիլ» Եպիփ. Կոյան. Մխ. ապար., դիեցուցանել «ծիծ տալ» ՍԳր, դիանալ «անանիլ» Պրոկղ. առեփ. Գնձ. Վրք. Հց. Ճառընտ., դիեցիկ ՍԳր. կամ դիացիկ Եփր. Բգ. ՅՀ. կԲ. կամ դիեացիկ Ոսկ. Ճառք. էջ 457, դիասուն Նանայ. 112 կամ դիասնուեղ «կաթ դիելով սնուած» Բէրդ. մայր., կովադիաց Ղեւտ. ժա. 30. դիեցումն Խոր. ՅՀ. կԲ., սանդի (գրուած նաև սանդեայ, սանդեաց, սանդիայ, սանդիեայ, սանդիաց. սարդեայ, սարդեիայ Եփր. աւետ. 333) «կաթնկեր» ՍԳր, սանդիել Կալլիսթ.։ (Նոյն արմատին է պատկանում նաև դայլ կամ դալ «մօր առաջին կաթը», որ նոյնպէս բնիկ հայ է. բայց դայեակ իրանական փոխառութիւն է)։

= Բնիկ հայ բառ. համմտ. սանս. dhâyati «դիում է», dhâyas- «դիեցումն», dhēnú- «դիեցիկ», dhātrī- «դայեակ, մայր», dhāyú «ծծարաւի», dhēnā «կով», dádhi «թթու կաթ». գնգ. daenu- «մատակ», պրս. دای dāya «դայեակ», օսս. dāyun, dāin «դիել», քրդ. daîn «դայեակ, անուշիչ», dēlək «քաժ շուն», deîl «մատակ, քաժ», da, di, díla «մայր», պազդ daîke «մայր», déka «մեծ մայր», հինդուստ. dādi «մեծ մայր». գնչ. dāle, dai, dei «մայր», աֆղան. dāyī, բելուճ. dāī «դայեակ», յն. θῆσασται «դիել», θηλή «մօր ստինք, ստինօք պտուկ», θῆσθαι «կթել», θήιον «կաթ» θῆλυς «կանացի», θηλώ «դայեակ», θηλάζω «դիել, ծծել», γαλαθηνός «կաթնկեր», τιθήνη «առնտուր, դայեակ», լատ. fēlāre «դիել», fēmina «կին», fīlius «որդի», fīlia «աղջիկ», գոթ. daddjan «դիել», հբգ. tāan «դիել», tila «ստինք, ծիծ», հշվէդ. dīa «ծծել», հպրուս. dadan «կաթ», հալ. doją «դիել, ծծել», doilica «դայեակ», dėtę «որդի», ռուս. доить «կթել», дойная «կթ-

թան», доильница «կաթ կթող կին», дитя «որդի, տղայ», լեթթ. dēju «դիել», dēls «ուսար», dīle «կաթնկեր հորթ», լիթ. dėlė «տղրուկ», pirmdėlė «առաջին անգամ ձագ բերող», ալբան. dalë «թթու կաթ» (ճիշտ մեր դալ ձեի հետ համեմատելի), del'e «ոչխար», հիւլ. dilkr «գառն», հիւլ. dinim «դիեմ», dīth «ծծեց», dínu «գառ», del «ստինք» են (Walde, 280—1, Boisacq, 344—5, Berneker, 205—6, Trautmann, 51, Pokorny, 1, 829—831, Ernout-Meillet, 327 են)։ Այս ձեերը ենթադրում են հնխ. dhēi, dhē, dhəi, dhī արմատները, որոնց բոլորից էլ կարող է ածանցիլ հայերէնը։—Հիւբշ. 437։

ՆՀԲ սանդեայ բառի տակ լծ. է դնում յն. θηλάζω։ Առաջին անգամ Böttich. ZDMG, 1850, 353 և Lag. Urgesch. 306 դիել = սանս. dhē, յն. τιθήνη, հալ. doiti։—Հիւբշ. KZ, 23, 18 սանս. dhā «դիել», իսկ Arm. Stud. 26 մեկնում է մանրամասն։—Canini, Et. étym. 202 յն. θάομαι և հալ. dojti։ Հիւնք. յն. τιθήζω են։

ԴԻՋԱԿԻՐ «մրցութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 77։

*ԴԻԿԱՏՈՐ (կամ նաև դեկատոր), ի–ա հլ. այս բառը չորս անգամ ունի Եւս. քր. Ա. էջ 395—6, Բ, էջ 204, 206, որ և մեկնում է «դիկատորք, որ են ճարտարախօսք». սրանից առնելով և միևնոյն մեկնութեամբ Սամ. աննց. 40, ուղիղ ձեն է դիկատոռոր «հռովմայեցոց մէջ ժամանակաւոր իշխանապետ», ինչպէս ունի Մխ. այրիվ. էջ 51 (մէկ անգամ). «Ռամկապետքն, դիկատոռորքն, հիւպատքն մինչև ի Գայիոս Յուլիոս»։

= Յն. δικτάτωρ «հռովմայեցոց մէջ ժամանակաւոր իշխանապետ». փոխառեալ է լտ. dictator հոմանիշից, որ ծագում է dictare «ասել, խօսիլ, հրամայել, հառել, շարունակ խօսիլ» բայից և սրա համար է որ Եւսեբիոսի մօտ մեկնուած է «ճարտասան»։—Հիւբշ. 346։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԴԻՎԼԻՈՆ «ներսից փորը պատող մաշկը» Պետ. 466. Բր. քեր. (վերջինը իբր օրինակ նախայարաշեշտոլոր բառի)։

Անշուշտ յունարէն բառ է, բայց յոյն ձևը որոշ չէ։ ՆՀԲ ուղղում է դիկլիդոն և դնում է յն. δικλίς (սեռ. δικλίδος) «երկփեղկ, երկու փեղկ ունեցող (օր. դուռ)» բառից, որ այստեղ յարմար չէ։ Նոյնը յիշում է Հիւբշ. 346 կասկածով՝ առնելով ՆՀԲ-ից։—ԳԲ էջ 377 ուղղում է դիկլիտոն և մեկնում է «մարմնոյ երակաց կամ անօթոց և ուրիշ խողովակաց մէջ գտնուող ծալք, թաղանթ, որ հեղուկները կը վարեն այս ինչ ուղղութեամբ և և արգելք կըլլան նո զարնելուն. valvule»։

ԴԻԿՏԱՏՈՐ տե՛ս Դիկտատոր։

***ԴԻՄԱԿ**, ի–ա հլ. «կերպարանք, պատկեր կամ նկար» Ոսկ. պօղ. 910, 465. մատ. 10, 175, «աչք» Կոչ., «դիմակ, կեղծ երես» Ոսկ. պօղ. 299 (Զտեսանիցե՞ս զաղդի ապգի դիմակսն զոր դնեն երեսաց գուսանքն).—միւս օրինակները տե՛ս Տաշեան, Ուսումն դասական հայերէն լեզուի, էջ 519, ծան. 1.—վերջի իմաստով է նաև արդի գրականի մէջ, ուր ունինք դիմակաւոր, անդիմակ, դիմակահանդէս նոր բառերը։

=Պհլ. dēmak «կերպարանք, ձև», յոգն. dēmagān (իմա՛ dēmakān), պրս. دما dīma «դէմք, կերպարանք». միւսները տե՛ս դէմ բառի տակ. այս բառը հայերէնի մէջ կապմուած չէ, որովհետև –ակ նուազական մասնիկ չէ այստեղ, այլ ամբողջը պատրաստ իրանեանից է։—Ա՛ճ.

ԴԻՄԵԼ «զրպարտիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 78։

ԴԻՄԵՍԼԵԿՈՍ տե՛ս Դեմեսլիկոս։

***ԴԻՄԻՍՈՆ** «բանտ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Միխ. առ. 175 «Իսկ Վաղէս եա շինել յԱնտիոք դիմիսոն, որ է բանդ ուղղափառաց»։

=Ճն. ծղմծուղ, ա, օվ «պանականն», բայց և իբր գոյական գործածուած՝ նշանակում է «պետական բանտ» (տե՛ս Bailly, 458, 7)։—Ա՛ճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 177։

ԴԻՄՃԱՏ «խօսք». ունի միայն Բառ. երեմ. էջ 78 յոգ. գրծ. դիմճաւոք «խոսիւք» ձևով։

***ԴԻՄՈՍ** «դրամ, ինչք» Ոսկ. յհ. բ. 14 (էջ 662). Օրէնք հմռ կր., «հասարակաց կամ արքունի գանձարան» Մխ. դտ. Օրէնք քղ. բ. 4. Անսիզք 19, «հարկ, տուրք» Միխ. առ. 362, 399, որից՝ դիմոսատու «հարկատու (ժողովուրդ)» Մխ. դտ.։

=Յն. δημόσιος «հասարակաց գանձարան», δημόσια «հասարակաց ինչք», δημοσίᾳ «կառավարութեան ծախսով». բոլորն էլ գալիս են δῆμος «ժողովուրդ» բառից։ Տե՛ս նաև վերը դիմիսոն «բանտ», որ նոյն δημόσιος բառն է, որից փոխառեալ է նաև արար. دماس dīmās «բանտ»։—Հիւբշ. 346։

Ուղիղ մեկնեցին բառս նախ ՀՀԲ և ՆՀԲ։—Անսիզքի հրատարակիչը՝ էջ 19 դնում է յն. τῆμος։

***ԴԻՄՈՍԱԿԱՆ** «ժողովրդական, հասարակաց, արքունի» Վրք. և վկ. Ա. 160 (ոսկեդարեան). Վրք. ոսկ. Ոսկ. ճառք. 655, 706, 902. Ասոր. դատ. 20. Մխ. դտ.։

=Յն. δῆμος «ժողովուրդ» բառից՝ –ական մասնիկով, ինչպէս յն. δημόσιος «հասարակաց, ժողովրդական»։—Հիւբշ. 346։

***ԴԻՄՈՍ**, ի–ա հլ. «ռամիկ, հասարակ ժողովուրդ» Սոկր. էջ 172, 232, 589։

=Յն. δημότης «ժողովրդական», δημότα «հասարակ ժողովուրդ, ռամիկ»։—Ա՛ճ.

ՆՀԲ կարդում է դիմոս և կցում է նախորդ դիմոս բառին։ Նրան է հետևում նաև Հիւբշ. 346։

***ԴԻՆԴ** «բրինձ մաքրելու գործիք, որ ոտքով և կամ ջրով է շարժւում». յետին ժամանակի բառ, որ գործածական է այսօր Երև. Զթ. Ղրբ. Համշ. Մշ. Սվ. և Տիգ.—բստ Ղրբ. հնչւում է տենգ։ Բարբառային այս ձևը (տ նախաձայնով և ոչ դ), ինչպէս նաև բառի ընդարձակ տարածութիւնը, ցոյց են տալիս, որ փոխառութիւնը կատարուածից աւելի հին է. հնագոյն վկայութիւնը գտնում եմ Ես. պատմ. 28 «Ջրաղաց հինդ հարիւր. տինկ՝ որով զբրինձն ըզտեն՝ հինդ հարիւր»։ Նոյն բառից են դանկուար «դինգով բրինձ ծեծող» և դանկագործ «դինգ շինող», որ յիշուած են ԺԵ՛ դարու մի յիշատակարանում (Արրատ. 1903. էջ 562)։

=Պրս. دنگ dink «տափանն որով ի ձեռն ջրոյ վառօդ ծեծեն. նաև ցուցանէ զփայտան

զայն, որով ծեծեալ զչելքիւք՝ որիզ այսինքն բրինձ հանեն. 2. մամուլ ձիթոյ և շուշմայի, որ է մէնկենէ» (ԴԴ, Բառ. պրս. էջ 565)։ Նոյն բառից է նաև վրաց. დოճგი դինգի «կալսիր։ մեքենայի ձողը»։—Աճ.

Տե՛ս իմ Գաւառ. բառ. էջ 278։

ԴԻՐ.—երև. դինգ. Ղրբ. տէնգ՛, Տիգ. դրնգ ևն։

ԴԻՈՂՈՆ *տե՛ս Դիաւղոն։*

*ԴԻՈՊՏՈՒԱ *(սխալ գրչութեամբ դիոպտաա) «հին երկրաչափական մի գործիք» Նոր. աշխ. 587։*

=Յն. διοπτρα «բարձրութիւն և հեռաւորութիւն չափելու մի տեսակ գործիք. տրամադէտ, վիրաչափ». ծագում է ὁράω, ὄψομαι «տեսնել, դիտել» բայից՝ διᾰ- մասնիկով։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ, յաւել, Բ. էջ 1050։

ԴԻՈՒԱՆԴԻՒՄ *«հռովմէական մի ստասիճան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. և վկ. Բ. 79 «Հայրն իմ դիուանդիդիմ վախճանեցաւ ի մեծն Հռովմ»։*

=Անշուշտ աղաւաղուած գրչութեամբ յն. կամ լտ. մի բառ է։

*ԴԻՊԱԿ, ի–ա *հլ? «մետաքսեայ մի տեսակ ոսկեթել գործուածք և նրանով շինուած հագուստ» Ես. գ. 21, 24. եզեկ. իէ. 7. Կղնկտ. Ա. 321. Ղևոնդ 62. Ասող. 129, «դիպակից շինուած» Յայսմ., որից՝ դիպակագործ Ոսկ. Ես., դիպակազգեստ Վրք. հց., դիպակակիտուած նար.— Բառ. երեմ. 78 դիպակ մեկնում է «ծայր», որ ճիշտ այնպէս է՝ ինչպէս ճոր, որ մեր արևմտեան բարբառներում նշանակում է «ծայր», իսկ արևելեան բարբառներում «կերպասեղէն կամ այլ գործուածք»։*

=Պհլ. dēpāk «դիպակ», որ և պրս. دیبا dēbā, ارمن. դեբա dēba, օսեթ. dēbāh, աֆղան. dēbā, քրդ. dɪbā։ Իրանեանից փոխառեալ են նաև ասոր. ܕܝܒܓ dībagā «ոսկեթել հանդերձ», արաբ. دیباج dɪbāq կամ دیباج dɪbāǰ, վրաց. დიბა դիբա, սերբ. diba, diva, ռուս. diba, լեհ. dyba են համանիշ բառերը։ Իրանեան բառը Horn, § 591 առաջարկում է առնս. dīp «փայլիլ, ցոլալ» արմատով, բայց կասկածում է, որովհետև առնս. կրիտի մէջ նոյն արմատը ē ձայնաւորով աւանդուած չէ։—Հիւբշ. 143։

Առաջին անգամ Շրէօդեր, Thes. 47 պրս. (իմա՛ արաբ.) dɪbāǰ *ձևից փոխառեալ։ Ուղիղ մեկնեցին ԴԴ, ՆՀԲ, Böttich. ZDMG, 1850, 353, Arica, 88, 440, Lag. Urgesch. 928, Müller, SWAW, 38, 572 ևն։*

ԴԻՊԱՀ *«առժամեայ բանտ». առանձին գործածուած չէ, այլ միայն ներգոյական ձևովՙ ի դիպահոջ Մն. խբ. 16, Ոսկ. ես. Եղիշ. 36. կթ. (Ոսկ. ես. գրուած է ի դիպահուոջ), որից՝ դիպահաւար «բանտարկեալ» Ոսկ. երր.։*

ՆՀԲ «ղէպ պահ, դիպող տեղի պահեստի»։ Հիւնք. համարում է կազմուած դի և պահ բառերից. առաջինը՝ յն. διατήρησις «պահպանութիւն» բառի առաջին երկու տառերն են!

ԴԻՊԵՏ *«գոռող կամ հակառ». ունի միայն Բառ. երեմ. էջ 78։*

ԴԻՍԱՆ *«փայտատաշան». ունի միայն Բառ. երեմ. էջ 78։*

ԴԻՐ, ԴԻՐՔ *տե՛ս Դնել։*

ԴԻՐԴ *տե՛ս Դրդել։*

*ԴԻՐՏ *«մրուր», ունին միայն ՀՀԲ, ՋՔ և ՓՔ, յիշում է Բառ. երեմ. էջ 217՝ մրուր բառի բացատրութեան մէջ. ասելի հնից գտնում եմ՝ դուրտ Հայել. էջ 20, տուրտին Վստկ. 16, 19, 29, 30, 44, դրտին Ադամ. 115, 137, 207, 265։—Նորայր, Բառ. ֆրանս. (տե՛ս lie բառի տակ) յիշում է դրուրտ և դուրտին ձևերը. արդի արևմտեան գրականում ընդունուած է դիրտ ձևով։*

=Պրս. درد durd, տաճկ. ևս տասնութեամբ dürd «մրուր», որից փոխառեալ են նաև արաբ. دُرْدِى durdɪ, թրք. طورتى tortə, tortu «մրուր, դիրտ», վրաց. დურდო դուրդո «ջրի երեսի կեղտը», ն. ասոր. dürt' «դիրտ, մրուր», արևել. թրք. تورتا torta «հալած կարագի տակուցքը», քրդ. torte «դիրտ»։—Հիւբշ. 264։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ. նոյնը նաև Böttich. Arica, 75, 239, Müller, SWAW, 42, 250։ — Müller, Kuhns und Schleich. Btrg. 5, 383 կցում է ծիրտ բառին։

Դիի.—Մշ. դուրդ, *երև.* դաւդ, *Ղրբ.* դիւդ, *Ագլ.* դրդդ, դրդդի՛ *(—պրս.* دردی durdī *ձեից), Ջղ.* դիրդ. *նոր բառ է դիւրդաճամ:*

*Դիինան, ի–ա *հլ. «դահլիճ, արքունի սրահ, առեան» Ես. իր. 15. երեմ. լղ. 12. Կորիւն. «դպրոց» Գծ. ժթ. 9, «մատենադարան» Խոր., որից՝* դիւանապան *Կոչ.,* դիւանապետ *Նար.,* դիւանադպիր *Վրդն. սղ. Ճառընտ.,* դիւանատուն *(չունի ԱԲ) Տաթև. ձմ. լէ.,* դիւանագիր *Խոր.ւ—Դիւան բառը նշանակում է նաև «մի տեսակ հարկ», որին իբրև վկայութիւն ունինք Օրբել. 360 հետևեալ հատուածները. «Ազատ յամենայն հարկաց և ի դիւանէ անդատի և անհաշիւ յամենայն կոզմանց. եւ արդ՝ մի որ իշխեսցէ իշխանութիւն վարել ի վերայ այս շինոյս և կամ հարկ կամ դիւան կամ մալ կամ այլ ինչ դնել ի վերայ»:*

= *Պհլ.* dēvān *«արխիվ», պրս.* دیوان dīvān *«տուեան, դիւան, դատարան, խորհրդարան, ժողովածոյ գիրք բանաստեղծական երգոց և տաղից», քրդ.* دیوان dīvān *«Օսմանեան դատարան»: Իրանեան բառը փոխառութեամբ տարածուած է շատ հեռուները. այսպէս՝ ասոր.* ܕܝܘܢ dīvan *«օրինադիրք», վրաց.* დივანი, მდივანი *մդիվանի «դիւանական քարտուղար, դիւանադպիր», թուշ.* მდივა *մդիվա «քարտուղար», ավար.* դիվան. *«դատ», արևել. թրք.* دیوان divan *«նախարար, պաշտօնեայ», սերբ.* divana, *ռուս.* диванъ *«գահ, դիվան, բազմոց», լեհ.* dywan *«ծածկոց», ուկր.* dyvan *«գորգ», սպան.* divan, duan, *նյն.* ντιβάνι, *ֆրանս.* divan *«բազմոց», նաև ֆր.* douane *«մաքսատուն», սպան.* aduana, *իտալ.* dogana *«մաքսատուն» (ըստ* Marcel Devic, Dict. étym. Paris, *1876).—Թուրքիոյ միջոցով կիլիկեան շրջանին փոխառեալ էր տիվնցի, տիվանպայշի (<թրք.* divanbašə). *Անսիգք 39.— Հիւբշ. 143:*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ Lag. Urgesch. *21,* Ges. Abhd. *216 են:*

Դիի.—Ագլ. դիվուն, դիվունք. *այլուր ամէն տեղ* դիվան՝ *Թուրքերենից նոր փոխառութեամբ:*

Փոխ.—Ըստ Մատ, Инполь. *63 հայերէնից է փոխառեալ վրաց.* დოვნი դիվանի *«դատարան»:*

Դիիթ, ի–ա *հլ. (յետնաբար նաև ի հլ.) «վրհուկ, կախարդ» Բ. մնաց. լե. 19. Ոսկ. ես. Կոչ. 270, «դիւթական, կախարդական» Եփր. ծն., որից՝* դիւթել *ՍԳր. Կոչ. Եփր. գ. կոր. Եւս. պտմ.,* դիւթութիւն *ՍԳր. Ոսկ. ա. Թես. գ,* դիւթական *Իմ. ժէ. 7,* ալիւրադիւթ *Մխ. երեմ. վահր. յայտ.,* գարեդիւթ *Մխ. երեմ. Տօնակ.,* խաւռազադիւթ *Մանդ. էջ 197,* շաւադիւթ *Մանդ.,* դիւթիչ *(արդի գրականում):*

Հինք. հանում է դիտել բայից:—Ալիշան, Հին հաւ. էջ 377 հյ. դև, դիմ *և նիգիպտ. բոր «չաստուած» բառերի հետ:*

Դիիր, ի *հլ. «հարթ տեղ» Գ. թագ. ի 23, 25, «հարթ» (ած.) Մաշկ. լմբ. Վատկ., «դիւրին, հեշտ» Ոսկ. մ. ա. 23. Եւագր., «հանելի, ախորժելի» Եփր. գ. կոր., «անդորրութիւն, հանդիստ» Ա. թագ. ժզ. 16. Փիլիպ. բ. 19. Բուզ. Ոսկ. տիտ. և ես. Եփր. ա. կոր., «դիւրին կերպով» (մկ.) Ոսկ. մ. ա. 11 (նշանակութեանց զարգացման համար հմմտ. հեշտաճիմ, զուռ. հեշտ «դիւրին», հեշտուան «հարթ տեղ. 2. հանդիստ»): Այս արմատից են՝* դիւրանալ *«ախորժելի թուիլ, դիւր գալ» Ա. թագ. ժզ. 23. Սեբեր.,* դիւրաւ *Իմ. զ. 13. Առակ. ժղ. 6,* դիւրեաւ *Ագաթ.,* դիւրով *Եփր. Ոսկ. Հռոմ. 77, 90, 92. Փարպ.,* դիւրել *«հանդիստ տալ, հանգուցանել» ՍԳր, «ճամբան հարթել» Ես. իզ. 7,* դիւրացուցանել *Ոսկ. բ. կոր.,* դիւրիչ *Եզնկ. է. 26,* դիւրութիւն *Ել. ը. 15. Առակ. լ. 32. Ոսկ. մ. ա. 16. Ագաթ. Եւս. քր.,* դիւրին *«ո՛չ-դժուար, հեշտ» ՍԳր. Եփր. ա. կոր. Ոսկ. մ. ա. 1, «ախորժելի» Եփր. համաբ. Մխ. երեմ., «յօժար, դիւրապատրաստ» Ոսկ. կոր., «հարթ, ողորկ» Առակ. Բ. 20. Ես. խ. 4: Բազմաթիւ բարդութեանց մէջ, ինչ.* դիւրաբեկ *Իմ. ժե. 13. Ոսկ. Բ. տիմ.,* դիւրագին *«էժան» Մանդ.,* դիւրագործութիւն *(նորագիւտ բառ) Եփր. մատ. Դ. 202,* դիւրապատում *Կորիւն.,* դիւրաբաւ *Ոսկ. բ. կոր.,* դիւրասնուցող *«փափկակեաց» Վեցօր.,* դիւրայոյս *Կոչ.,* սրտիդիւր *(մէկ բառ) Եփր. փիլիպ. 159,* ընդդիւրութիւն *Պիտ.* կրկնադիւրութիւն *Եփր. աւետ.,* մտադիւր *ՍԳր. Եւս. քր. Ոսկ. մ. ա.*

2, անձնդիւր Ոսկ. փիլիպ. են են (սրանց Բիւր բառասկզբում ԱԲ-ի մէջ 292 հատ է)։ Գրուած է դեր Վեցօր. էջ 158. Եփր. փիլիպ. 159, դոյր Ուռհ., դուր Սարգ. յկ. և Արդի գրականում ընդունուած է դիւր ձևը, բայց արևելեան գրականը ընդունում է նաև դուր, ինչ. դիւր գալ կամ դուր գալ, դիւրեկան, բայց աւելի դուրեկան. սակայն դիւրին, դիւրաւ են և ո՛չ բնաւ դուրին են։ Նոր բառեր են՝ դիւրաբորբոք, դիւրագրգիռ, դիւրազգած, դիւրաթեք, դիւրահնչիւն, դիւրամատչելի, դիւրամարս, դիւրափշուր, դիւրընթեռնելի։—Արմատը ունինք նաև դուռ կամ դոյր ձևով, որ պահուած է միայն անդուռ, անդոյր (ընդոյր, անդոյռ) ոսկեդարեան բառի մէջ (տե՛ս առանձին)։

Lag. Urgesch. 172 հպ. dobrŭ «բարի»։ Մորթմանն ZDMG, 26, 492 բևռ. tiruni=դիւրել։ Caniui, Et. étym. 142 առնս. dur «դժուար» բառի հետ։ Մառ, ЗВО, 7, 74 մատդիւր բառի մէջ դիւր համարում է նոյն ընդ դիր (դնել), իբր մատդիր։ Հիւնք. յն. ἄνθρρον «դիտատիւ» ձևից։ Patrubány, SA, 1, 195 լատ. tūtus, առնս. tu, táuti «կարողութիւն, արժանիք ունենալ», tuvi «զօրեղ» Karst, Этюдъ, 419 թաթար. töz, tüz։ չուվաշ. türe «հարիւր»։

ԴԻՒ.—Տիւ. դուր, Ալշ. Ախց. Երև. Կր. Մշ. Սեբ. դ՚ուր, Ղրբ. առւր, Գոր. տիւր, ատր, Մկ. Սլմ. Վն. տիւր, առհասարակ դիւր գալ «ախորժելի լինել, հաճելի թուիլ» ոճի մէջ, բայց գործածական է նաև առանձին դուր «հարիւ, տափարակ» (միայն դաշտի համար ասուած)։ Նոր բառեր են՝ դիւրկոկորդ, դուրուրիկ, դուրեկան, անդուրեկան, անդուր, դուրելի, դուրիկ, դուրան, դուրել, դուրուկ «դաշտավայր» (Խրբ. և Ակն. արտասանում է դ՚օր. և վերջինի մէջ ունի «ճիշտ, ստոյգ» նշանակութիւնը, ճիշտ ինչպէս որ ուղղորդ «ուղիղ, շիտակ» դարձած է Նխն. խօրբ «ստոյգ, ճիշտ»)։

ՓՈԽ.—Մառի յաջող քննութեան համաձայն (ЗВО, 17, 302—3) հայերէնից փոխառեալ է վրաց. ᲓᲓᲝᲕᲠᲔ մդովրե «հանդարտ», ᲓᲓᲓᲓᲝᲕᲠᲔᲑᲐ մոմդովրեբա «մեղմել». վրացի բառը մի տեսակ չղթայ է հանդիսանում հյ. դիւր և դոյր ձևերի միջև, հաստատելով նրանց նոյնութիւնը. միևնոյն ժամանակ ցոյց է տալիս, որ հայերէնի հետ կապ չունին վրաց. ᲐᲓᲘᲝᲚᲝ ադվիլի «թեթև, դիւրին», ᲐᲓᲘᲝᲚᲝᲓ ադվիլիդ «դիւրութիւն», ᲐᲓᲘᲝᲚᲔᲑᲐ ադվիլեբա «դիւրացնել», ᲐᲐᲓᲘᲝᲚᲝ աադվիլի «դիւրին», ᲒᲐᲐᲓᲘᲝᲚᲔᲑᲐ գաադվիլեբա «օգնել, դիւրացնել, ափոփել»։—(Սրանց բոլորի արմատն է dvil, որ առանձին գործածուած չէ և որ հայերէն դիւր բառին է կցում Brosset, JAs. 14(1834), էջ 383 և.)։

+ԴԻՔ (սեռ. դից, հյց. դիս, գրծ. դիօք) «աստուած, կուռք» ՍԳր. Եզն. Մծբ. Եփր. բոլորն էլ գործածում են անեզաբար, մինչև անգամ մի՛ կուռք նշանակելու համար՝ Եւս. քր. ա. ունի դիցն այնմիկ, դից իրիք, որից կիսադիք Եւս. քր.։ Ածանցման մէջ մտնում է երկու ձևով՝ դից- և դիւց-, որոնք իրար են փոխանակում. այսպէս՝ դիցախելար կամ դիւցախելար Ագաթ., դիցապաշտ կամ դիւցապաշտ Ագաթ. Եզն. Եւս. քր., դիւցախառն Ագաթ. կամ դիցախառն Ճառընտ. դիցաւոր Եւս. պատմ. դիւցազն Եզն. Եւս. քր. կամ դիւցազնական Փիլ. առձիս. Ճառընտ. են։ (Հիւբշ. 439 ենթադրում է, որ դիւց- կազմուած է դից և դիւ- (դև բառի բունը) ձևերի խառնուրդով. այսպես. դիցապաշտ և դիւապաշտ ձևերից՝ դիւցապաշտ։ Նոր բառեր են՝ դիւցազնեւրգ, դիւցազնեւրգական, դիւցազնեւրգական, դիւցազնեւրգութիւն, դիւցազնեւրգուհի։

= Հնխ. dhēs, dhəs արմատից, որի միւս ժառանգներն են յն. θεός (<հնխ. dhvesos) «Աստուած», անս. dhis-ᵹyas (աստուածների վերագիր է), լտ. fānum (<fasnom) «սրբատեղի, աստուածներին նուիրուած տեղ», fēriae (հլտ. fesiae) «տօնական օր, կիրակի», fēstus «տօնական», օսկ. fiisnú «տաճար», օմբր. fesnafe, fesnere «ի տաճարի», փռիւգ. δεως «աստուած» (Walde, 271, Boisacq, 340, Pokorny, 1, 867, Ernout-Meillet, 327)։ Հայերէն դիք ծագում է հնխ. յգ. ուղ. dhēs-es ձևից։—Հիւբշ.։

ՀՀԲ դի «դիակ» բառից։ ՆՀԲ դև, դիոս կամ դիակուճ բառից։ Wind. 10—11 չգիտէ թէ դի «դիակ» բառի՞ց է, թէ դև= առնս. dēva ձևից։ Bopp, Gram comp. I

400 սանս. dēvá ձևի հետ։ Մորթման, ZDMG, 30, 413 բևեռ. Tiasba աստուածը մեկնում է հյ. դի + ասպ բառերից, իբր «աստուած ձիոց»։ Տէրվ. Altarm. 95 դև բառի հետ սանս. dyāus, div- «երկինք», լ. Ju-piter, diu, deus, իբր դի<*տիւ, որից սեռ. դիւց, պահուած միայն բարդութեանց սկիզբը։ Կոստանեան, Հայոց հեթ. կր. 1879, էջ 5 սանս. div «փայլիլ, շողալ» ձևից.—«դի նշանակում է լոյս, պայծառութիւն, շողք»։ Տէրվ. Մասիս, 1882 հոկտ. 29

ԴԻՔ բառի դ ձայնը թէև օրէնքի հակառակ է գտնում, բայց բացառութիւն համարելով՝ չի ընդունում որ օտար լինի. որովհետև իրանեաններր կուռք չունէին, իսկ յոյները այն ժամանակ դեռ մեզ հետ յարաբերութեան մտած չէին։ Նոյն, Նախալ. 87 կապելով div «փայլիլ» արմատին, ասում է թէ հայ լեզուն «աստուական օրինաց դէմ անաստուած է այդ բառին մէջ, կամ Հայը նոյն բառն այնպիսի ազգէ մը ստացած են, զոր մենք որոշել չենք կրնար». աւելի հաւանական է համարում առաջինը։ Հ. Ս. Եպրեմեանի ընթերցմամբ (Պատկեր, 1890, թ. 9, էջ 199) Շուլցի № 17 արձանագրութիւնը սկսում է Թիգուհեա բառով։ Հիւնք. պրս. dīk «պատուկ» բառից։ Müller, Arm. VI, թիւ 8 համեմատում է յն. θεός բառի հետ։ Հիւրշ. 438 կասկածով էր վերաբերւում այս մեկնութեան, բայց յետոյ նոր բացատրութեամբ ընդունեց՝ վերի ձևով, IF Anz. 10, 45։—Մատիկեան, ՀԱ, 1919, էջ 33 հաթ. ti-ia-u-wa-as «Աստուած»=deus բառի հետ։

ԴԻՔՏԻՈՆ տե՛ս Ընդիկտիոն։

***ԴԻՖԼԱ** «դափնեվարդ, ճիճի, oléandre» Բժշ., որ և գրուած է տլփա. ունի միայն Հիւս. § 591։

=Արաբ. دفلة dafla (տե՛ս Շիայինշնայդէրի հատաքածոյի մէջ՝ WZKM, 12, 82)։

Հիւս. հանում է արաբ. دفلى ձևից, որ այսպէս պէտք է ուղղել։

ԴԼԱԼ տե՛ս Դալ։

ԴԼՓԻՆ տե՛ս Դելփին։

ԴԵԽԵՆ «դժուարին, տաժանելի, վշտագին, տառապելի», ունի միայն Բառ. երեմ. էջ 79, որից և ՀՀԲ. բայց վերջինս գրում է դխխին։

ԴԿՈՒՂ «լորի» մէկ անգամ ունի Ագաթ. գրուած է նաև դկուղ, այլ ընթերցուած՝ դկուդ։

ՆՀԲ պրս. տէ՛ր։ Աճառ. SA, 1, 304 համեմատելով արաբ. دجر dujr, dujur հոմանիշի հետ (տե՛ս Կամուս, Բրք. Բրդմ. Ա. 853), ենթադրում է, որ ասորական փոխառութիւն լինի։ Բառիս նման է հնչում նաև պրս. تلژ tulk «լորի», բայց որովհետև ճշտիւ յայտնի չէ նոյն իսկ՝ թէ ի՛նչ էր հայերէն բառի բուն ձևը, ուստի չի կարելի նմանութեանց մասին վճիռ տալ։

***ԴՀՈՒՆԱՂՀՈՒՆԱՐ** (գրուած է նաև նուռնաղնուար) «մի տեսակ արաբական իւղ է» Խոր. աշխ. (տե՛ս նաև ախուռնա բառը)։

=Արար. دهن الحنّا duhn-ul-ḥinna «հինայի իւղ»։—Հիւրշ. 269։

ԴՂԱՑԻ «տղայ». այսպէս ունի միայն Բառ. երեմ. էջ 79։

ԴՂԵԱԿ (ի-ա հլ. ըստ ՆՀԲ, ինչպէս գտնում եմ յետնաբար Սարգ. յկ. ե, էջ 67 ա) «ամրոց, բերդ» Բ. մակ. դ.. 27. Ագաթ. Փարպ. Եղիշ. գրուած է նաև դղեկ՝ իբր ոմկ. (տե՛ս կրկնագիր Ագաթ. հրատ. Յուշարձան, էջ 118 ա, Եղիշ. ը. էջ 110, 111), որից դղեակապարիսպ Ղևոնդ., դղեկաձև ԱԲ.—ըստ նորայր, կորիւն վրդ. և Բրդմ. 298 նորագիւտ բարդ բառեր են՝ դղեակբերդ Ագաթ. Բ. մակ. դ. 27. Ուխտ. Ա. կր. 90, Արծր. 131, Ասող Գ. դ. 165, ժզ. 194 և դղեկքաղաք Եղիշէ։

Տէրվ. Նախալ. 87 պրս. ژ diz «դրդեակ», սանս. dih, զնդ. diz, հյ. դէզ, դիզել բառերի հետ՝ հնխ. digh արմատից։ Կապ ունի՞ պրս. دژ dūla «բարձր բլուր» (հին ժամանակ դղեակները բարձունքների վրայ էին շինում)։

ԴՂՈՐԴ «սարսիլը, ցնցում, շարժիլը» Փարպ. Խսիւք. յոբ. 122. գրուած նաև դղուրդ Մաթին. սեռ., դղրդի (ինչ. ձայն դղրդի «դղրդոցի ձայն») Ջենոբ. էջ 32, որից՝ դղորդել կամ դղրդել «ցնցել, սարսել, սասանեցնել, վա-

խեցնել, թնդացնել» Ոսկ. ես. և մ. ա. 7. Մաթ. իա. 10, դղրդալ *«թնդալ» Գնձ. ճառընտ.,* դղորդեցուցանել *ճառընտ. կամ* դղրդեցուցանել *Դտատ. ը. 12,* դղորդումն *«երկրաշարժ» (այս նշանակութիւնը չունին բառարանները) Լաբուբ. 21, 27 (վասն մեծի դղորդմանն՝ որ եղև ի ժամու խաչելութեանն նորա. Ահագին դղորդմունքն որ եղեն յայնմ ժամու), «առաքեալը» Եղիշ. դտ. Փարպ.,* դղրդիւն *Եւս. քր..* անդղորդելի *կամ* անդղրդելի *Նար.,* ուռնադղրդուռ *Ա՛ր: Նոր բառեր են՝ մեծադղորդ, ահագնադղորդ:*

ՆՀՔ դող բառից՝ իբր դող-ուրդ: Հիւնք.

դրդել *բայից:* Meillet, MSL, *10, 279 տե՛ս* դանդաղ:

ԳԻՒ.—Մշ. դ'խրդ'ալ *«յառակը, գետինը են շարժիլ», ըստ Պէտէեան, Արեւելք 1888 նոյ. 8—9 պահուած է նաև Առանային Բրբահօս հայոց մէջ* դղրդել *ձեւով:*

*ԴՄԱԿ *(ի-ա հլ. ըստ ՆՀԲ. Քէև առանց վկայութեան) «ոչխարի պոչ» Եւ. իբ. 22. Կանոն. 37. Մխ. առակ. Վստկ. 206, որից՝* դրմակեղ *«դմակի իւղ» Վստկ.,* գառնադմակ *կամ* գառնադմակիկ *«մի տեսակ բոյս» Բժշ. Վստկ. 149:*

= Պհլ. *dumak *հոմանիշից. այս ձեը աւանդուած չէ իրանեան գրականութեան մէջ, բայց կան նրա բազմաթիւ ցեղակիցները, ինչ. պնդ.* duma-, *պհլ.* dum, dumb, dumbak, dunbak, dunb, *պրս.* دم dum, دمّ dumm, دنب dunb, دنبه dunba, دنبال dunbāl, *բելուճ.* dunbag, *քրդ.* dunk, dūw, *աֆղան.* lam, *մինջ.* ləm, *օսս.* dumâg, dəmâg *«դմակ»* (Horn, § *573): Իրանեան բառերի նախաձևն է ըստ* Bartholomae, Stud. II. *101* *dhumbhma-: *Իրանեանից փոխառեալ են նաև ասոր.* ܕܘܢܒܐ dūnbā *«պոչ», վրաց.* დუმა დუმა *«դմակի իւղ»,* დუმი დუმი *«դմակաւոր ոչխար»:* Pokorny, *1, 816 իրանեան ձևերից է կգում հրգ.* zumpfo, *մրգ.* zumpf *«առնի». նախաձևը դնում է հնխ.* dumb- *(կամ* dumbh-?) *«առնի, պոչ» և թերևս նախապէս «գաւազան, վարոց»:—Հիւբշ. 144:*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Lag. Urgesch. *944,* Müller, SWAW, *42, 551, Հիւբշ.* KZ, *23, 403, Հիւնք.:*

ԴԻՒ.—Տփ. դմակ, *Ննխ.* դմագ, *Ախց. Երև. Կր. Ոզմ. Ջղ.* դ'մակ, *Ալշ. Խրբ. Մշ. Սեբ.* դ'մագ, *Վն.* տմակ, *Ռ.* թմագ *(այս վերջինը գործածւում է միայն «յետոյք» նշանակութեամբ՝ դմակս կեր հայհոյանքի մէջ). Ղրբ. Վն.* տմոկ, *Սլմ.* տմոկ', *Ագլ.* դմօկ, *Տիգ.* բըմմոգ, *Ասլ.* դ'ամագ, դ'ամայ, *Հճ.* դ'ը'մօգ, *Մրղ.* տիւմոկ', *Շմ.* տիւմոգ'.—*գաւառականների մէջ ստացել է մի քանի նոր նշանակութիւններ. ինչ. «յետոյք. 2. ականջի բլթակ. 3. դաբբնոցի սալի յետևի լայն մասը».—նոր բառեր են՝* դմակաւոր, անդմակ, դմակալի, դմակաջուր.—*Բրբահօս հայոց մէջ կայ Առն.* garn-dumbaq *«գառնադմակիկ» (բոյսը), որի երկրորդ մասը հյ. դմակ բառից ձևափոխուած է (Արեւելք, 1882 նոյ" 8—9):*

*ԴՄԻՇԿ *«սուսեր պողպատիկ Դամասկեան» միջին հյ. բառ (տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 338 բ). սրա հետ նոյն են՝ դմշխեայ «Դամասկեան պողպատից շինուած», Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածւում է Աբր. կրետ. 44 «Եւ ունին ի ձեռս իւրեանց միշտ նաճաղս (=պրս.* naǰak *«կացին») դմշխեայ երկաթէ՝ արծաթապատ կոթով». —*տմշխի *«պողպատիկ» Բառ. երեմ. էջ 272.—*դմըշխը *«of Damascus; of steel»* (Riggs, Vocabulary, *էջ 16):*

=Արաբ. دمشق Dimišq *«Դամասկոս քաղաքը» (որ է Շամ), որից* دمشقی dimišqī *«Դամասկոսեան, Դամասկոսի յատուկ (Բուր, շալ են)», յատկապէս նշանաւոր էին Դամասկոսի Բուրերը, որով և բառը անցաւ զանազան լեզուների, օր. ֆրանս.* damas *«ընտիր պողպատեայ Բուր»,* damasser *«պողպատը մխել դամասկեան ձևով»,* damassé *«դմշխեայ. մխեալ պողպատով». Համմ. նաև ֆրանս.* damasquiner, *գերմ.* damaszieren, *անգլ.* to damaskene *են:—Ա՛ճ.*

Այս մեկնութիւնը տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 127:

ԴԻՒ.—Ակն. Բն. դ'մշխի *«դիմացկան (շոր են). 2. ամրակազմ և դիմացկան (կին)», Մշկ. Ք. «ամառոցաշ», իսկ Մշ.* դմշխի *«մի տեսակ խաղող, մեծ հատերով, որ ցրտին լաւ է դի-*

մանում»։ Բոլորն էլ պողպատի դիմացկանութեան գաղափարից։

ԴՆԴԵՂ *տե՛ս Դոնդող։*

ԴՆԴԵՐ *«մկան». կամ միայն յգ.* **դնդերք.** **դնդերս** *«մկանունք» ձևով՝ Նիւս. բն.։*

ՆՀԲ յն. ἔντερα «ընդերք, ներքինք»։ Պատահական նմանութիւն ունին սանս. tantrī *«աղեղի լար»,* ḍiṇḍira *«լոք ձկան ոսկորը»։—ՓԲ բառիս եղակին դնում է* դունդր։

ԴՆԴԻՒՐ *տե՛ս Բնդեռն։*

ԴՆԴԻՒՆ *տե՛ս Թունդ։*

ԴՆԴՂԱՆՔ. *մէկ անգամ ունի Ոսկ. բ. տիմ. ա. էջ 168 «Մինչդեռ սկիզբն էր բարդութեանըն, մինչդեռ ամենայն ինչ եղծ ղեղծ էր, մինչդեռ կարի թշնամութիւնն էր, մինչդեռ յամենայն կողմանց դնդղանք (այլ ձ. դանդաղանք) էին».—ՆՀԲ և ՋԲ մեկնում են «ալիք, ծփանք. 2. վէճ, հակառակութիւն» և առաջին նշանակութեամբ ուզում են կցել գւս.* դնդղել, դնդղող *«ալիք» բառին։*

Հիւնք. դանդաղ բառից։

ԴՆԴՆՋԵԼ *տե՛ս Դդիւն։*

ԴՆԴՈՂ *տե՛ս Դոնդող։*

ԴՆԴՋԵԼ *տե՛ս Դդիւն։*

+ԴՆԵԼ. *առաջին և հիմնական նշանակութիւնն է «դնել», որից փոխաբերութեամբ յառաջացել են ուրիշ երկրորդական բազմաթիւ առումներ, ինչ. «համարել, ենթադրել, կարդել, անել, վերածել, տալ, հասցնել ևն». ոճով առում է դնել ի մտի «միտքը դնել», ունկն դնել «լսել, ականջ դնել», գիրս դնել «մատենագրել», դնել ի սրտի «խորհիլ», դնել զանձն «գետին փռել, սպանել» ևն։ Նոր և կարևոր մի նշանակութիւնն է «շինել, կառուցանել», որի համար հմմտ. «Դնեն գոդատունս հանդեպ վանիցն և ժողովեալ ուրուկս բազումս անդ դարմանէին» (Օրբել. 179). «Ճէնդ գՏեղ... զոր իմ թագաւորին Սմբատայ ինձ տուեալ էր և իմ ի կորդոյ շէն դրեալ» (Օրբել. 213) (այսինքն՝ խոպան տեղը գիւղ էր շինած. հմմտ. մի քիչ յետոյ՝ զոր իւր իսկ... ի կորդոյ շինեալ էր)։ Այս իմաստից է նաև որմնադիր. մինչև այսօր էլ Երևանի և Ղարաբաղի բարբառով ասում են պատ դնել «պատ շինել, պատ քաշել», դէզ դնել «խոտի դէզ շինել». այսպէս նաև պրս.* بنّا bannāh *«որմնադիր, որ ծագում է* nihādan *«դնել» բայից։—Բառի արմատն է *դի (հմմտ. եդի), որից և յօդակապով և -ել բայակերտ մասնիկով յառաջացել է դնել։ Միւս արմատաձևերն են՝ 2. Եգ, որ կազմուած է կատարեալ ժամանակի հնխ. ե-յատկութեամբ. գործածւում է յատկապէս կազմելու համար դնել բայի կատարեալը, ապառնին և անցեալ դերբայը (եդի, եդիր, եդ, եդամ, եդիք, եդիք, եդից, եդեալ). անկախ գործածութիւն ունի մի քանի յետին ածանցների մէջ, ինչ. եղած ծղն. եր., եղող Մեկն. ղևտ., եղուած ճառընտ.—3. Դիր կազմուած է *դի արմատից՝ -ր մասնիկով. հմմտ. լու, լուր—լի, լիր—տալ, տուր. յատկապէս գործածւում է դնել բայի հրամայականում, բայց նաև առանձին և մի խումբ ածանցների մէջ. այսպէս՝ դիր «դրուածք» Իմ. ժղ. 12. Սիր. լ. 18, «դիրք» Իմ. է. 19, 29, «գերեզման» Խոր. Փարպ., «օրէնք» Իսիւ. հերձ. 140, 143, 211 (ՀԱ, 1910, 284), «անգամ» Տաթև. ամ. 693. վրք. հց. Ա. 645, «կաղապար (օճառի)» Մաղաք. ար. 32, «բութ, առոգանութեան նշան» Գրչ. արիսա., «խաղի անուն» ԱԲ. դիր և տար առնել «ցրուել» Փարպ., դրական Խոսր., բանադրել Մխ. դա. Կանոն., բարեդիր Ջենոբ, գեղեցկադիր Ագաթ., հրեշտոսադիր Ագաթ. Կորիւն, գլխադիր Եզեկ. ժգ. 18. 21, դիմադրել Ոսկ. յհ. բ. 13, խոյրադիր Ագաթ., խաւարադիր Ագաթ., որոգայթադիր Ագաթ. Ոսկ. ա. տիմ., թշնամանադիր Առակ. խէ. 13, ունկնդիր ՍԳր. Եւս. քր., սայրադիր Սիր. լգ. 31, ենթադրել Փիլ. եր., ձեռնադրել Գծ. ժդ. 22. Բ. կոր. ը. 19. Ոսկ. յհ. բ. 40. հմմտ. նաև բնախիր։—Նոր բառեր են՝ որմնադիր, մեծադիր, փոխրադիր, պարտադիր, կէտադրութիւն, անհամադիր, բաղադրիչ, տարբաղադրութիւն ևն։*

= Բնիկ հայ բառ՝ հնխ. dhē- *«դնել» արմատից. միւս ժառանգներն են՝ սանս.* दधा dhā *«դնել»,* dádhāti *«դնում է»,* ádhāt *«եդ», գնդ.* daδāiti *«դնում է, անում է»,* dāt *«եդ», հպրս.* adada *«արար»,* ada *«գործեաց», յն.* τίθημι (θήσω, ἔθηκα) *«դնել, կարգի դնել, անել», կամիս.* di-ja-u-ua-ar *«դնե՛լ», լտ.* con-do *«հիմնել, հաստատել»,*

per-do «ջնջել, ոչնչացնել. կորցնել», crē--do «հաւատալ», facio «անել», գոթ. gadēþs, հբգ. tāt «գործ, իրողութիւն, եղելութիւն», tuon «գործել, անել», նրգ. that «գործ», thun «անել», անգլս. dón, հաաքս. dōn «անել», հսլ. dějǫ, dežda, děti «դնել», dějati «անել», ռուս. деять «անել. գործել», дело «գործ», одеть «հագցնել», լիթ. dėmi, dedù, děti, լեթթ. déju, dét «դնել», գալլ. dede «դրաւ» ևն ևն (Walde, *266*, Boissacq, *969*, Berneker, *192—3*, Trautmann, *47—8*, Kluge, *499*, Pokorny, *1, 826—9*, Ernout-Meillet, *267, 311*): Հնխ. dhē- *արմատը ունէր միայն կատարեալ ձև, իսկ ներկայի ձևերը կազմւում էին կրկնութեամբ. այսպէս՝ կատարեալի համար ունինք սանս.* ádhāt, հպրս. adā, յն. ἔθεμεν, հյ. եդ<հնխ. édhēt, *իսկ ներկայի համար սանս.* dadhāmi, յն. τίθημι. *միւս լեզուները կրկնաւոր ներկայի տեղ մի պարզ ձև դնելու համար յօրինեցին նոր ածանց ձևեր. այսպէս՝* -ye- *ածանցով՝ հսլ.* dějǫ *կամ լտ.* faciō *և կամ* -ne- *մասնիկով՝ հյ.* դնեմ: — Հիւրշ. *439*:

Առաջին անգամ Peterm. *20 սանս.* dhā, Windisch. *11 սանս.* dhā, յն. θάω, գնդ. dā: *Այսպէս և միւսները: Մորթման,* ZDMG, *26, 550, 691* դնել=բևռս. tini, aptini, ZDMG, *31, 413* դիր. դրիս=բևռս. tiruni: Bugge, Etr. u. Arm. *89 ետրուր.* ðes «դնեց»: Հիւնք. յն. τίθημι: Հայերէն ձևերի բացատրութեան վրայ տե՛ս յատկապէս Meillet, MSL, *16, 243 և 18, 26*: Karst, Յուշարձ. *424 թաֆթար.* tir «յենարան»: Սանտալճեան, ՀԱ, *1913, 401 խալդ.* dull = եդեալ: — Պատահական նմանութիւն ունի վրաց. დება դերբա «դնել»:

Գիմ.—Նախ. Պլ. դնէլ, Ալլ. Մշ. Ջղ. Սչ. դ'նել, Ախց. Երև. Կր. Սեբ. դ'նէլ, Ասլ. դ'նէ'լ, Հճ. դ'ը'նել, Տփ. դնիլ, Խրբ. Ոզմ. դ'նիլ, Զթ. դ'ը'նիլ, Սլմ. Վն. տնել, Գոր. Ղրբ. Մկ. տնիլ, Ռ. բնէլ, Տիգ. բնիլ, Հմշ. տնուշ, Հւր. դինէլ, Մրզ. տինէլ, Շմ. տինիլ, Ագլ. դրիլ:—Արմատը ցոյց է տալիս Շմ. հրմ. տի՛ «դիր»:—Գաւառականների մէջ ստացել է մի քանի նոր առումներ, ինչ. «դուրը փակել, ծեծել, զարնել, կեղծել, մերձաւորիլ, պատ շինել, հաւկիթ ածել». —դնել «փակել» իմաստի հնագոյն վկայութիւնն ունի Բուզ. Գ. *ժթ. (Եւ ոչ ոք իշխեաց բնաւ ... մտանել ի ներքս և ոչ ի դուրսն հուպ երթալ և դնել). աւելի յետոյ՝* Գնձ. «Եմուտ թագաւորն և եղաւ դուռն»:—*Այս նշանակութեանց համեմատ ունինք՝* դիր «փակ, անգամ, ձեռի մի տեսակ շափ, մշակութեան մի եղանակ», դիրք «կարգադրութիւն, պատշաճութիւն, խաղող ճմռելու մամուլ, ձէթ հանելու գործողութիւնը, փեթականոց» *(յատկապէս ուշադրութեան արժանի է Ջղ.* դ'իրք «դագաղ», *որ է գրբ.* դիրք «գերեզման»), դիրտր «դիր ձևով հերկող մշակ», դնան «ցանկասէր», դնովի «կեղծ», դրման, դրոտել, դրուկ, դրվուկ ևն:—Հետաքրքրական ձևեր են Շր. տէմէլ «նորից, դարձեալ» <դիր մ'էլ «անգամ մ'էլ», Ատն. մաղթրել «մեղադրել».—Ագլ. դրիլ նշանակում է նաև «հնթադրել». օր. դրիլ pm «հնթադրենք թէ», ճիշտ ինչպէս գրբ. դիցուք թէ:

Փոխ.—Քրդ. hastir «հայտդիր, մէջը խմոր դնելու տաշտ» (Շուտ, Քրդերը Տաճկաց Հայաստանում, *Ա. 102*):

ԴՆՈՐ «պատգարակ կամ մահիճ կամ դափոխ» (!)—*այսպէս ունի Բառ. երեմ. էջ 79*:

ԴՇՆՈՅ *(ի հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան)* «թագուհի» Սղ. *խդ. 10. Մտթ. ժթ. 42. Ղուկ. ժա. 31. Փիլ եւ., որից դշխոյութիւն Գնձ. գրուած է նաև դժխոյ Լաբուբ. 13. 14*:

Հիւնք. իշխան բառից: Սպրզեան, ՀԱ. *1909, 335 և* Karst, Յուշարձ. *408 սումեր.* tisg'u «իշխար աստուածուհին», *412 սումեր.* tišu «տիկին, աստուածուհի», քրդ. diš «մօրաքոյր»: Коршъ, Бюдж. Мщак *1914, թ. 122 պհլ. եննթագրեալ* *dixšway ձևից, որ կազմուած պիտի լինի սանս.* dyukša «երկնային»+vay «թռչուն» բառերից. *նշանակութեան զարդացման համար համմտ. պհլ.* humāyūn «օգոստափառ»<humāy «փիւնիկ» թռչունի անունից:

ԴՈՂԱՆ «արմատ». գիտէ միայն Քաջունի, *հտ. Գ. էջ 57 ա*:

Օրինակ առնելով այիշ բառի դէպքը (տե՛ս

յաւելուածում), կարծում եմ թէ սա էլ նման մի թիւրիմացութեան արդիւնք է։ Քաջունին երևի տեսել է մի տեղ Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառով թուտան խուրմա բառը, որ է «մի տեսակ արմաւ» (տե՛ս իմ Գւտ. բառ. էջ 388) կարդացել է դողան «խուրմա», որից u>n տառասխալով դուրս է բերել դողան «արմաւ»։

ԴՈԴԵԼ «նեղանգել, խարդախել». ունի միայն Բառ. երեմ. էջ 79, որից և ՀՀԲ։

*ԴՈՒՆ, ն հլ. (-խին, -խամբ) «ջաղացքի ձագար» Տաղ. ուրիշ վկայութիւն չկայ։

=Պրս. دول dōl «է այն փայտեղեն ձագարաձև ամանն, ի մէջ որոյ ցորեան եդեալ, որ հարմամբ լիք լիք փայտին շարժեցեալ՝ թափէ յաղօրին գցորեանն ընդ ծակ երկանաքարին». սրանից է փոխառեալ նաև արևել. Բրբ. دول dōl «դոխն. the tunnelshaped feeder of a mill» (տե՛ս R. P. Shaw. A sketch of the turky language. չունի Будаговъ)։ Պարսիկ բառը բուն նշանակում է «դոյլ» և ձևի նմանութեան պատճառով ստացել է այս երկրորդ նշանակութիւնը, ճիշտ ինչպէս ռուս՝ որ է «դոյլ», Մշոյ բարբառով նշանակում է «աղօրիքի ձագար, դոխն»։ Պրս. և Բրբ. ձևերը ցոյց են տալիս, որ հայերէնի նախնական ձևն է *դողն, ուր ղ՝ բառի վերջում գտնուելու պատճառով թաւանալով՝ դարձել է խ. ինչպէս ածուղ>ածուխ, գազաղ>գազախ, ասեղրն>գւտ. ասէխ։ Այս ենթադրութիւնը գործնականապէս ապացուցանում է Ղրբ. տէօղ (վերջաձայնը ղ=l և ո՛չ խ). «ջաղացքի մէջ ցորեն լցնելու ձագարաձև ամանի տակ գրուած կիսախողովակաձև մասը՝ ուր թափւում է ցորենը և ուր հաստատուած է չանչախը»։—Ա՛ճ.

ՆՀԲ դող բառի՞ց։ Վերի մեկնութիւնը տուած եմ նախ SA, 1, 303 և MSL, 20, 162։

Գ՚ԻՒ.—երև. դօխ, Ղրբ. տէօղ։

ԴՈՒՈՆ տե՛ս Տուղու։

ԴՈՂ, ի հլ. «դողալը, սարսուռ» (վախից կամ ցրտից) Ոսկ. եփես. և բ. կոր., «մի տեսակ երաժշտական խազ (𝅗𝅥)» Ոսկիփ., որից՝ դողալ ՍԳր. Ոսկ. մ. բ. 24. Ագաթ. Եփր. եէ., դողացուցանել Փարպ., դողացուցիչ Վեցօր., դողումն ՍԳր. Եփր. յիս. Եզն., զդողմամբ հարկանիլ Ագաթ. կամ զդողմանի հարկանիլ «դողալ, սարսափիլ» Լմբ. իմ., զդողմնի հարկանիլ Վրք. հց., զդողնի հարկանիլ Վրք. սեղբ., զդողանի հարկանիլ Ա. մակ. Բ. 24, մարմնադող Տօնակ., դողդողալ (նոր բառ). տե՛ս նաև դողդոջ և դոճդող։

ՆՀԲ (երիվուղ բառի տակ) լծ. յն. δειλία «վախկոտութիւն»։ Canini, Et. étym. 179 յն. ταρταρίζω «ցրտից դողալ»։ Տէրվ. Նախալ. 84. սանս. tras, զնդ. darəs, հպրս. tars, պրս. tarsīdan, լիթ. trišu, լատ. terrare, յն. τρεῖν ձևերի հետ հնխ. tars, tras «դողալ» արմատից։ Եաղըճեան, Արեւելք, 1884 թ. հոկտ. 17 tval արմատից։ Meillet, MSL, 10, 279 տե՛ս դանդող։ Գազանճեան, Տարեց. Պապիկեան, 1905, 125 և Արեւել. մամ. 1907, 934—5 Թրք. titremek «դողալ, սարսռալ» բառի հետ։ Pokorny, 1, 865 կցում է նորվ. և շվէդ. գւտ. dilla «շարժել, ճօճել, թևերը շարժելով քայլել», նորվ. գւտ. dalla, dulla «ամեր քայլերով գնալ», հոլլ. dallen «կամաց կամաց քայլել», անգլ. dally «ժամանակ վատնել, ձգձգել. յապաղիլ զուարճանալ», նորվ. dilte, dalte «ցատկրտելով գնալ» բառերին և բոլորի նախաձևը դնում է հնխ. dhel- «դողալ, մանր քայլերով քայլել»?

Գ՚ԻՒ.—Ալշ. Հճ. Մշ. Ջղ. դ՚ող, Ննխ. Պլ. դօղ, Ախց. Երև. Կր. դ՚օղ, Սլմ. տող, Մրղ. տօղ, Ռ. բօղ, Ակն. Սեբ. դ՚էօղ, Ասլ. դ՚էօ՚ղ, Գոր. Ղրբ. Մկ. Շմ. տէօղ, Հմշ. տէօ՚ղ, Ագլ. Տփ. դուղ, Ոզմ. դ՚ուղ, Տիգ. բուղ, Զթ. դ՚իւղ.—բայական ձևով՝ Ջղ. դ՚ողալ, Ննխ. Պլ. Տփ. դօղալ, Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. դ՚օղալ (Մշ. նշանակում է նաև «երերալ, շարժիլ»), Մրղ. Սլմ. տօղալ, Ռ. բօղալ, Տիգ. բօղալ, Հմշ. տօղուշ, Ասլ. դ՚էօղալ, Վն. տէօղալ, Ոզմ. դ՚ուղալ, Ագլ. դղղօլ։ Նոր բառեր են՝ դօղաճար, դողաղբիւր, դողացկան, դողդղալ (Պլ. Տփ. դօղդրղալ, Ագլ. դղղօլ, Գոր. Ղրբ. տրղտէօ՚ղալ, Զթ. դ՚ուղդ՚ուղօլ), դողդողալի, դողդողոց, դողիկ, դողկոտ, դողոցք, դողուկ, դողաաֆցոց, դողցուր են։

—ԴՈՂԴՈՋ կամ ԴՈՂԴՈՁ «երերուն, տատանող, դողդղացող» Սարգ. ա. պ. ժա. Ճառընտ., որից՝ դողդոջել Եփր. ծն. Ոսկ. յհ., դողդոջալ Լմբ. ժող. Ճառընտ., դողդոջուն Ոսկ. հս. Եփր. երր. 229, դողդոջուն Ոսկ. յհ. ա. 1, 2, դողդոջումն Վրդն. սղ. բոլորն էլ գրուած են ՔԷ ջ-ով և ՔԷ շ-ով, իսկ արդի գրական լեզուն (ՔԷ արևելեան և ՔԷ արևմտեան բարբառը) ընդունած է միայն ջ-ով գրութիւնը, որ հնագոյնն է. համմտ. բողբոջ:

=Կրկնուած է դող արմատից:—Ա՛ճ.

Տե՛ս ՀԱ, 1899, 234—5 և MSL, 20, 162:

*ԴՈՃ «խէժ արտադրող մի ծառ է». ասւում է միայն դոճի խէժ «լաք, նամակի կնքամոմ, laque» Բժշ. Հին բռ. որ և տօջ «լաք» Ամիրտ.—ՀՌուս. § 596 նոյն է համարում նաև «դոշ, որ է մուկի» ըստ Բժշկարանի:

=Պրս. ژوژ dōž, ოჟო dōža «լաք, gomme laque». պարսիկ բառի հին ձևը և ստուգաբանութիւնը յայտնի չէ:—Հիւրշ. 144:

Ուղիղ մեկնից Հիւրշ. ZDMG, 35 (1881), 664 և Pers. Stud. 227:

*ԴՈՄԵՏԻԿՈՍ «հաւատոյ ուսուցիչ, որք զարտաքնոցն աստուածաբանութիւնս ուսանին և եկեղեցականօրն վարժին». Մխ. դտ. էջ 270. ուրիշ վկայութիւն չկայ.—յիշում է միայն ԱՔ:

=Յն. δογματικός «հաւատոյ վարդապետութեան վերաբերեալ. 2. նրանք, որ հետևում են սկզբունքին և ո՛չ փորձարկութեան, սկզբունքապաշտ», որից փոխառեալ են նաև լտ. dogmaticus, ֆրանս. dogmatique ևն.—մեր բառը ըստ այսմ սխալ գրչութիւն է, որ և պէտք է ուղղել դոգմատիկոս:

Բաստամեան, անդ՝ հանում է լատիներէնից, Karst, Դատ. II, 80 յոյնից:

ԴՈՄՈՍ «այլակերպ կամ այլակալ». այսպէս ունի միայն Բառ. երեմ. էջ 80:

*ԴՈՅԴ «ծուխ». ունի միայն Բառ. երեմ. էջ 80:

=Պրս. دود dūd «ծուխ. 2. ընտանիք, տուն», պհլ. dūt «ծուխ»:—Ա՛ճ.

ԴՈՅԶՆ «քիչ, մի քիչ, պատիկ, չնչին, անշան (մէկը)» երեմ. թ. 2. Իմ. ժդ. 5. ժդ. 27. Եփր. դտ. Եւս. քր. Ոսկ. յհ. ա. 6. գրուած նաև դոյզ Ոսկ. մ. բ. էջ 458, որից՝ դուզնագիտ (գրուած և դոյզնագիտ) «սակաւագիտ» Բուզ. գ. 20, դուզնաբար Եփր. բ. կոր. 92. Եւս. պտմ., դուզնաֆեայ Կոչ. Եւս. պտմ.:

ՆէՔ որ և դուն, դոյն, պրս. دون dūn «ցած» և արաբ. جز juzi, juzvi «մի քիչ»: Böttich. ZDMG, 1850, 353 և Arica, 80, 324 սանս. tuccha: Հիւնք. ահմ! ֆիւզի:—Petersson. Ar. u. Armen. Stud. 65 լիթ. dauźti «բաշխել, ջարդել, մանրել» բառերի հետ dhoug'h-no- ձևից: Scheftelowitz, 54 (1927), 233 սանս. tohati «զարնել», ռուս. tuzikъ «փայտի կոճղ», հիւլ. tuagaim «կացինով զարնել» բառերի հետ:

*ԴՈՅԼ, ի, ո հլ. (երկուսն էլ յետնաբար) «ջուրի աման» Ես. ի. 15. ՅԿ. դ. 11. Իսիւք. Վանակ. Վրք. Հց. (վերջին երկուսում կան նաև դոլ, դօլ ընթերցուածները): Այս բառից է դուլել, որ գրուած է դուղել «հորից ջուր քաշել. 2. ըմպել, խմել». վերջին իմաստով ունի մէկ անգամ Տիմոթ. էջ 93 «Շնորհել Սամարուհեայն կենդանի ջուր, ուստի դուղելով նեմայ գոյր ոչ ևս ծարաւել (տպ. ծառայել)». (տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. կուզի մէջ, էջ 72). ըստ Տոմար Լևոնի, տպ. Վենետ. 1805, էջ 20 ծանօթ. գրուած է դուլել, որի դէմ յոյն բնագիրն էլ ունի ἀρυταμένη (էջ 21, տող 7), որ է յն. ἀρύω, ἀρύτω «ջուր քաշել հորից, դեպից ևն». համմտ. ἀρυτάνη «ջուր քաշելու աման, դոլ».—ըստ այս համեմատութեան դուլել կամ դուղել պիտի նշանակէր «ջուր քաշել», ինչպէս պահանջում է և ստուգաբանութիւնը, բայց գործածութեան տեղը պահանջում է «խմել»: Մենք դրինք երկու իմաստով էլ:

=Պհլ. dōl (գրուած dōr) «դոլ. 2. Ջրհոս կենդանակերպը» (առաջին նշանակութիւնը կորած է. կայ միայն երկրորդը), պրս. دول dōl «դոլլ», քրդ. دۆل dōl, delu «ջրի դոլլ»: Ըստ Noldeke իրանեան բառը փոխառեալ է ասորերէնից. համմտ. ասոր. ܕܘܠܐ daulā, եբր. דְּלִי dəlī, արամ. דול daul, արաբ. دلو dalv, ասուր. dalū, dūlu «դոլլ»: Մեր բառը ծագում է կա՛մ պարս-

կականից և կա՛մ սասրականից. բառի ձևը չի կարող ծագումը որոշել, որովհետև թէ՛ պհլ. dōl *և թէ՛ սասր.* daulā *(բացարձակ ձևը* daul*) կարող են տալ հյ. դոյլ. համմա. պրս.* nōš>*հյ.* ռնոյշ *և սասր.* zaugā>*հյ.* զոյգ: — *(վերը տե՛ս նաև* դոխն*)։ — Հիւրշ. 144, 302։*

Առաջին անգամ Ղեւոնդէր. Thes. *45 սասր.* daul *ձևից փոխառեալ։ Աւգերեան, Բցար. չփ. 78, ԳԴ,* Böttich. Arica, *76, 247,* Lag. Urgesch. *944,* Ges. Abhd. *31 պրս.* dōl*։ ՆՀՐ և Հիւնք. պրս.* տուլ *և արաբ.* ռեվլ *(բայց սիաղ բառի տակ ՆՀՐ լծ. երբ.* գալիլա*)։* Müller, WZKM. *8, 280 (=ՀԱ, 1894, 293) սասրիբէնից է համարում։ Էսգիթ, Աբրտ. 1915, 500 արար.* dalv, *հալ.* dolivi*։*

ԴԻՒ.—Պարսկերէնից նոր փոխառութիւն է. Զղ. դօլ «դոյլ».—նոր փոխառութիւններ են նմանապէս խրբ. դ՛օլ, Ասլ. դէօ՛լ (որ և դուլիկ Բ.) «դոյլի ձևով՝ մէջը պարապ դդում, որ գործածում են իբր ջուրի կամ դինիի աման, նաև լողալ սովորելու համար»։

+ԴՈՅՆ *«այդ նոյնը» (հոլովւում է դուրին, դմին, դովին, դովիմբ, դոմին, դոցին, դոցուց կամ դոցուն, դովիմբմ կամ դոմիմբմ) ՍԳր. Ագաթ. Եղիշ. Փարպ., որից՝ դոյնչափ «այդչափ» Եզն. Ոսկ. Ես., դոյնպէս «այդպէս» Խոր. ՅՀ. իմ. պատ., դոյնօրինակ «այդ ձևով» Եղիշ. Պիտ., դոյնգունակ ԱՔ, դոյնաձման «այդպիսի» (նոր գրականում)։*

*=Բնիկ հայ բառ. կազմուած է դա բունից՝ -ին մասնիկով. դա դերանունը երևան է գալիս այստեղ իր հնագոյն *դո ձևով. համմ. սանս.* ta-, *հալ.* to-, *գոթ.* ϑa-, *յն.* το-, *հնխ.* to-*. իսկ -ին մասնիկի համար համմ. աստէն (<աստէ-ին), ասասա-ին, ինճե-ին, ամենին, միանգամա-յն, նոյնժամա-յն, իսկո-յն են։ Թէև այս երկու տարրերը կազմում են մի ամբողջութիւն, բայց հոլովման ժամանակ երևան է գալիս նրանց անկախութիւնը. այսպէս՝ դոր-ին, դմ-ին, դով-ին են. բունը հոլովւած և մասնիկը կպած հոլովական ձևերին. համմ. ամենա-յն, ամենեմ-ին, ամենես-ին, ամենե-ին: Կազմութեան կողմից բառիս հետ նոյն են. սոյն և նոյն, որոնց վրայ տե՛ս առանձին։*

Յունականների վրայ մի ընդարձակ քննութիւն ունի Meillet, MSL, *10, 241—271. բառիս վրայ վերի մեկնութեամբ խօսուած է էջ 258։ Առանձին մի մենագրութիւն էլ ունի* Pedersen, *Հայ. յուն. դեր.։*

ԴՈՅՐ *տե՛ս Դիւր։*

+ԴՈՆ *«մի տեսակ հաց, պաքսիմատ». մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. դեկտ. 7. «եդ սեղան և ի ներքս 3 պաքսիմաթի և սկսան օրհնել զԱստուած և գոհացն ուտել. և կերեալ հայրն Անտոն զմի դոնն»։ Այս բառը չունին ՆՀՐ և ԱՔ. յիշում է միայն ՋՐ դոն ձևով, իսկ ՀՀՐ դոն դրչութեամբ (իբր թէ «թոն ձկան ձևով մի տեսակ հաց՝ որ յատուկ էր հդնաւորներին. պաքսիմատ»). բայց գրւում եմ Բառ. երեմ. էջ 270 պախսիմատ բառի բացատրութեան մէջ և Թորոսեան, Տետրակ համառօտ բառարանի, 1794, էջ 40, իբր «պաքսիմատ» նշանակութեամբ։ Այս երկու ցուցմունքներից երևում է, որ բառը այն ժամանակ կենդանի ժողովրդական բառ էր։ Այս բանը հաստատւում է նաև նրանով, որ նոյն բառի նուազական ձևը՝ դոնիկ՝ գործածական է մինչև այժմ էլ Բուլանըխի և Մշոյ բարբառում և նշանակում է «մէջ կանգուն երկարութեամբ և մի մատ հաստութեամբ մի տեսակ տափակ հաց՝ մէջտեղը ծակով» (տես իմ Գաւառական բառարանը, էջ 283—4. ունի Ամատունին էլ, Հայոց բառ ու բան, էջ 173 դօն (Ղազախ) և դօնիկ ձևերով)։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. dhon- *ձևից, որա ամենամօտիկ ժառանգները են լիթ.* dúona *«հաց» և լեթթ.* duõna *«հացի կտոր», որոնց նախաձևը* Trautmann, *58 դնում է* dõna- *«հաց»։ Երկրորդ գծի վրայ՝ որանց հետ համեմատւում՝ են սանս.* dhānās *«հացահատիկ, ցորեն»,* dhānyá- *«արմտիք», պհլ.* dān, *պրս.* دان dān *կամ* داه dāna *«հատիկ, հատ, ընդեղեն» (որից փոխառեալ են հյ. գւռ. դան «ցորենի հատիկ, ապուռ», վրաց. დანა դանա «հատիկ, հատ», արաբ.*

ջյն dānaj, քրդ. dāné, թրք. dane, tane), բելուճ. dān, dānag, աֆղան. dāne «հատիկ» (Horn, § 535)։ Ջանգկերէնում, ուր բառս պիտի ունենար *dānā- ձևը, պահուած է միայն dānō-karš- բարդի մէջ, որ նշանակում է «հատիկներ քաշող տանող (մի տեսակ մրջիւն)» (Bartholomae, 734)։ Երրորդ գծի վրայ՝ սրանց հետ համեմատւում են թևրևս լատ. fēlix «բերրի, պտղաբեր. 2. հարուստ. 3. երջանիկ», fēnus «հողից ստացուած բերքը», fēcundus «բերրի, արգասաւոր», fētus «բեղմնաւորուած, յղի», միւլ. indile «աճում, տաւար», հրեղէն. endlim «բերք», կիմր. ennill, ynnil «շահ, վաստակ, օգուտ», որոնց արմատն է հնխ. dhē- «բերրի, հողի արդիւնքը, վաստակ» (տե՛ս Walde, 280)։ Pokorny, 1, 831 լիթ. dúona «հաց» բաժանում է այս խմբից և դնում է dúoti «տալ» բայից։ Այսպես չէ տակաւին Trautmann, 58։ Ա.Մ.

ՀՀԲ դոն բառը գրելով թոն և բացատրելով «թոն ձկան նման հաց կամ պաքսիմատ», անշուշտ ուղում է հանել թոն բառից. բայց սրան հակառակ են նախ այն, որ բառը թէ՛ հնում և թէ՛ այժմ դոն ձևն ունի և երկրորդ՝ յն. θόννος «թոն ձուկ» բառը չունի «հաց» նշանակութիւնը ո՛չ Bailly-ի մօտ, ո՛չ Sophocles-ի մօտ և ո՛չ էլ նոր յունարէնում։

+ԴՈՆ «մի տեսակ ճարտարապետական զարդ է». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Ջրբ. սարկ. Դ. 13—14 (երկուսն էլ յոգնակի). «Սալաթոռքն փորածու նկար, թէ՛ չորս թևերն, թէ չորեքին փուղերն (=պրս. پوز pūz «շրջանակ բերանոյ, բերան կենդանեաց»), թէ ներքոյ գաւակին. իսկ զամենայն դոնսն տափակ և ի պարանոց կաթուղիկէին մեատասան սիւնք. եւ ի վերայ տասնեցն երկոտասան սիւն և ի վերայ սեանցըն գգտակն՝ դոնքն բոլոր»։—Զաքարիան շատ ընդարձակ նկարագրում է այստեղ Ցովհաննավանքի շինութիւնը։ Կարդալով այս նկարագրութիւնը մեր յայտնի ճարտարապետ ակադեմիկոս Ա. Թամանեանը գտաւ, որ չի-շնալ դոնը կարող է նշանակել սիւների միացումը վերևից, ինչ որ արդի ճարտարապետութեան մէջ կոչւում է արխիտրավ կամ արխիվօլտ։—Ուրեմն վերի դոնն է փոխար.։—Ա.Մ.

ԴՈՆԴՈՂ «թանձր և մածան նիւթ՝ փէլթէի նման» Երզն. խրատ. Կանոն. (գրուած է նաև դողող, դանդող). նոյն բառերն են դնդող «ներբուն, շարժուն» Ոսկ. եփես. 926, դնդեղ «կակուղ» ԱԲ, որից՝ դոնդողական (նոր բառ)։

=Կրկնականն է դող արմատի և բուն նշանակում է «դողդողացող»։—Ա.Մ.

Այս մեկնութիւնը տուած եմ նախ ՀԱ, 1899, 233 բ և 235 բ։

ԴԻՒ.—Մշ. դ'անդ'ախ և խրբ. դ'ընդ'ղուց «կակուղ միս». նոյն են նաև դնդղում կր. «կակուղ միս», դնդխտալ խրբ. «ներներալ, շարժիլ», դնդղկտալ Վն. «ներներալ, շարժիլ (դոնդողական բանների, դէր դմակի են), լուրի ծրփալ, վէտվէտիլ», դնդեղ, դնդող Վն. «ալիք, կոհակ», դնդեղ Բլ. «կակուղ միս», թևրևս նաև դնդխտիլ նոգ. «ապուշ դառնալ»։—ՆՀԲ ունի նաև ոմկ. դանդող ձևը։

*ԴՈՐԱԿ (ի-ա հլ. ըստ ՆՀԲ, տակաւին առանց վկայութեան. Ս. Գրքի վկայութեանց մէջ գտնում ենք միայն տեղ. դարակի, իսկ 84. իմաստ. տպ. Վենետ. էջ 112 ունի տեղ. դորակից, որից հետևում է ի հլ.) «մի տեսակ չափ է (ջուրի, իւղի, գինիի են)» ՍԳր. եղիշ. ը. էջ 112, որից՝ դորակաձև վեցօր. 166։

=Պհլ. dōrak, dōlak «բաժակ. պարունակութեան մի տեսակ չափ է», պրս. دوره dōra «ակահակ գինւոյ, սկաւառակ»։ Իրանեանից փոխառեալ են նոյնպէս ասոր. ܕܘܪܩܐ dauraqā «amphora ansata, աննկատուր մեծ ամանն», արաբ. دورق dauraq, յոգնակին dawārīq (տե՛ս Իրն-ի Բառտուտ, Ա. 319), վրաց. დოճა դոճա «հեղուկների մի չափ է, որ պարունակում է 30 շիշ կամ 54 ֆունտ», დოճაკი դոճակի «15 շիշ առնող հեղուկաչափ», დურაკი դուրակի «կաթ կթելու ամանն»։—Հիւբշ. 144։

Առաջին անգամ ուղիղ մեկնեց Աւգերեան, Բացատրութիւն չափուց և կշռոց, էջ 79, որ դնում է պրս. (իմա՛ արաբ.) աէրուզ։ ՆՀԲ «կայ պրս. տուրէ՝ իբր սկաւառակ և իբր. տորուղու «անօթ ո-

ղորկ և չափաւոր չափ»։ Lag. Gesam. Abhd *21. պրս.* dōra, *արաբ.* dauraq. *Հիւնք.* թորթլ *բայից։*

Գիհ.—Ջղ. դ'որակ, *երև.* դ'օրակ, *Ալշ.* դ'օրագ, *Ղրբ.* աէօրակ. *բոլորն էլ նշանակում են «ջրի փոքր կուժ, կուլայ, փարչ»։*

ԴՈՐՍՈՎԻԼ *«անօթութիւնից, քաղցից և ծարաւից մարիլ՝ նուաղիլ, նքողիլ» Բուզ. դ. 6. ուրիշ վկայութիւն չկայ։*

ՆՀԲ «լոյծ սովիլ»։ Տէրվ. Նախալ. 57 սանս. tarš, *յն.* τερσ-αίνω, *լատ.* torreo, *գոթ.* taursjan *և հլ.* թարշամիլ *ձևերի հետ հնխ.* tars *«չորանալ, ցամաքիլ» ալ մատիք։ Նագըճեան, Արևելք, 1884 հոկտ. 17* դոր=դժ, *սանս.* dur, dus+ սովիլ *բառերից, իբր «չարաչար, լոյծ սովիլ»։*

+ԴՈՒ *(յգ.* դաւ*) «դու» ՄԳր. ևն. գրուած է նաև* դուն *Տիմոթ. կուզ, էջ 97 (տե՛ս տակը գւռ.)։*

= Բնիկ հայ բառ, որի ցեղակից ձևերն են՝ սանս. त्वम् tvam, tuvám, *թոխար.* tu, *քուչ.* tuwe, *զնդ.* tūm, tvām, tū, tava, *հպրս.* tuvam, *պազ.* tō, tū, *պրս.* تو tū, *քրդ.* tu, *աֆղան.* ta, *օսս.* du, də, *յն. դոր.* τύ, *աւտս.* σύ, *հոմեր.* τεύνη, *լակ.* τεύνη, *բէոտ.* τοῦν, *ալբան.* ti, *լտ.* tū, *գոթ.* þu, *հրգ.* du, dū, *հպրտս.* toū, *հալ.* ty, *ռուս.* ты, *լիթ.* tù, *հիւլ.* tū, *կիմր.* ti *են ևն։ Այս բոլորը ծագում են հնխ.* tū, tū *ձևերից, որ հայերէնի մէջ ըստ օրինի պիտի տար* *թու.— մեր նախաձայնը անկանոն է այստեղ (տե՛ս* Pokorny, *1, 745,* Walde, *796,* Boisacq, *923,* Trautmann, *331,* Ernout-Meillet, *1018)։ —Հիւբշ. 440։*

Ուղիղ մեկնեց նախ Klaproth, Asia polygl. *1823, էջ 99 և 102։—ԳԴ համեմատեց պրս.* tu *ձևի հետ։ Այլևայլ լեզուների հետ ուղիղ համեմատում են ՆՀԲ,* Peterm. *20,* Windisch. *11,* Gosche, *67 ևն։ Հիւնք.* դու=*լտ.* tu *«դու» և* duo *«երկու», յն.* δύο, *պրս.* دو *«դու» և* دو *«երկու»։—*Karst, *Յուշարձան, 407 սումեր.* tì *«դու»։*

Գիհ.—Ալշ. Ախց. երև. Մշ. Ոզմ. Ջղ. դ'ու, *Նխճ. Պլ. Տփ.* դուն, *Ախց. Խրբ. Կր. Հճ. Մշ. Սեբ. Սչ.* դ'ուն, *Ռ. Տիգ.* քուն, *Ագլ.* դիւ, *Ղրբ.* տու, տուվ, *Մկ. Սլմ. Վն.* տիւ, *Ակն. Ասլ.* դ'իւն, *Համշ.* տուն, *Մրղ.* տիւն, *Զթ.* դ'օն, դ'ոն, *Շմ.* տիւ, տիւտիւ, տիւիկ, տիւիկտ, տիւիկիկտ, տիւիկիկիկտ.—*յոգնակիի ձևերից յիշենք Պլ.* դուխ, *Ակն.* դ'իւխ, *Համշ.* տուճ։

ԴՈՒԱՂԱԿ *տե՛ս Դուվողակ։*

ԴՈՒԱՐ *տե՛ս Տուար։*

ԴՈՒԱՐԵԼ *«հետևիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 80, որ սրա տակն էլ գրում է «դուարել և հօրան. ոչխարաց հոյլ»։*

***ԴՈՒԲԷՔ** *«ձիու ճակտին մազի ցցունք». Բժշ. գրաստու (հրտր. Բազմ. 1867, 357)։*

=Ֆրանս. toupet *նոյն նշ.։*

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Նորայր, Բառ. ֆր. 1225 բ։

ԴՈՒԴԱՅԼ. *անծանօթ մի գոյնի անուն է. նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած վրդն. առ. 300 «Համասփիւռ ծաղիկն արձակէ բազուկս ժբ և ունի ամէն մի գոյն մի ծաղիկ. դուդայլ, կապուտակ և ծիրանի և շուշան և այլն»։*

ԴՈՒԴԱՆ *«պատառակաև կամ թակարդապատ». ունի միայն Բառ. երեմ. էջ 80։*

ԴՈՒԴԱՔ *տե՛ս Թուքակ։*

ԴՈՒԴԻԼ *«թռչիլ, վերաթեւիլ. օդագնաց լինել». գիտէ միայն ՀՀԲ. բայց Բառ. երեմ. էջ 80 կայ դուռել «թաքչիլ» ձևով մի բառ, որ սրա հետ նոյն պիտի լինի և հետևաբար մէկը կամ միւսը վրիպակ։*

ԴՈՒԻԼ *«կուտել». ունի միայն Բառ. երեմ. էջ 80։*

***ԴՈՒԽ,** *ի հլ. «բարբարոս, վայրենի» Գ. մակ. է. 3. Կող. գ. 11. Ա. Կոր. ժդ. 11. Ոսկ. մ. բ. 8. Եւս. պտ. 459. սովորաբար գործածւում է խուժ հոմանիշի հետ, որի հետ բարդւում էլ է, ինչ.* խուժադուժ *ՄԳր. Ագաթ. Կորիւն. Ոսկ.,* խժդուժ *Եւս. պտմ.,* խժդժագոյն *Բ. մակ. ե. 22. հմմտ. նաև* դժակ *«բարբարոս, խժալուր» Սամ. անեց. 4 (այլ ձ.* դժական. *երկուսն էլ չունի ՆՀԲ, իսկ ՋԲ դնում է* դժակ, *ԱԲ* դժակ, դժական*), դժականութիւն ԱԲ. ըստ իս այստեղ է պատկանում նաև* դժաբան *«դժնեայ և ժանտ խօսող» Թէոդոր. մայր.։*

Սրանցից տարբեր է դժ-, որ իբր բացասական մասնիկ գործածւում է բառի սկիզբը:— Կայ նաև դժարան ձևով մի բառ Սոկր. եկեղ. պտմ. էջ 2 «Սկիզբն յորոց նոյն արասցուք ոչ ինչ (տպ. ոչինչ) պատմութեան դժարանւոյ հոգ տարեալք, այլ թէ զիարդ գտնեալ գրով ի պատմողացն».—յոյն բնագիրն ունի οὐ φράσεως ὄγκου φροντίζοντες (ո՛չ թէ ոճի ճոխութեան հոգ տանելով). տե՛ս Σωκρατους Σχολαστικου Εκκλησιαστικηιστορια, *տպ.* Oxford, *1893, էջ 1. ըստ այս համեմատութեան պէտք է ուղղել կա՛մ դժարաւ, կա՛մ աւելի լաւ դժարարաւ, որ է դժուարարաւ խրթին ոճով» Ոսկ. յհ. ա. 1:*

=Հայոց մօտիկ ապրող վայրենաբարոյ մի ցեղի կամ ժողովրդի անունն է. հմմտ. քրդական Dužiki *ցեղը: Շատ լեզուների մէջ սովորութիւն է վայրենաբարոյ ազգերի անունները իբրև ածական գործածել. այսպէս, հին հայերէնի մէջ* խուժ *(խուժաստանցոց անունից),* խաղտալուր *(խաղտեաց անունից),* կորճայ, կորճալեզու *(Կորճայք գաւառի անունից). նոր հայերէնի և բարբառների մէջ՝* բուրվ, բուրդ, լազ, զազա, տաճիկբերաւ, բոշա *ևն:—Ահ.*

Նշ՛ր դժնեայ բառից: Lag. Urgesch. *69 յն. ծնչ: Հիւնք. խուժ բառից: Թիրեաքեան, Արիահայ բռ. էջ 127 զնդ.* druj, *պհլ.* druj, *պրս.* druγ, *հյ. դաժան ևն ձևերի հետ:* Nyberg, Hilfsb. *2. 61 դժուար է դնում բաժանել դժ- նախամասնիկից, որ է պհլ.* duš *«չար, վատ»:*

Գիմ.—Սրա հետ նո՞յն է արդեօք Մշ. դ՛ուժ «մազերը տնկուած, ցցուած»:

+ԴՈՒԼ *(անհոլով) «դադար, հանգիստ» Բ. Թագ. ժէ. 8. Ողբ. բ. 18. Ես. իգ. Փարպ. փիլ. «2. ջանք, յորդոր, պատուէր» (այս իմաստով գործածւում է միշտ դուլ և պատուէր ձևով) Ոսկ. մ. գ. 6. Ես. քր. ա, որից՝* դլալ *կամ* դղալ *«հանգիստ առնել, դադրիլ» Բ. մակ. ժբ. 2. Եղիշ. ը. էջ 144,* անդուլ *«անդադար» Խոր. Արշ. 34. կթ. Արծր. (գրուած է նաև* անդոյլ *Մանդ. էջ 72),* անդուլութեամբ *«անդադար, չդադրած» Եղիշ.: Նոր գրականում գործածական են միայն* դուլ և դադար, անդուլ անդադար և բազմաթիւ նոր բառեր, ինչ. գործադուլ, գործադուլաւոր, դասադուլ, հացադուլ, ճաշադուլ, մսադուլ *ևն:*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. dhul- *արմատից. սրա հետ համա. իսլ.* dál *(սեռ.* dála*) «ժամանակ տալ, յետաձգում, դադար», նիսլ. գաէլ.* dáil *«ժամանակամիջոց, պայմանաժամ, վարկ»,* dáilich *«յետաձգել, ձգձգել, երկար մնալ», հհիւս.* duǫl *«դադար, հանգըստութիւն»,* duęlia *«դադարեցնել, կանգնիլ», հսաքս.* for-dwēlan, *հրգ.* gi-twēlan, twellen *«դադրիլ, դադար առնել». այս բոլորը ծագում են հնխ.* dhuol *նախաձևից:*

Տէրվ. Մասիս, 1881 ապր. 28 լծ. հյ. դադարել, դանդաղ, *որոնց բոլորի արմատն է հնխ.* dhar *«կալ, կացուցանել, ունել, տանիլ, կրել»:—Հիւնք.* բոյլ *բառից: Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Lidén, Arm. St. *էջ 21:*

Գիմ.—Կայ միայն Ալշ. դ՛ուլ ու դ՛ադ՛ար, *Սեբ.* դ՛ուլ-դ՛ադ՛ար, *Ասլ.* դ՛իլ-դ՛ադ՛ար, *Պլ.* բուլ-բաբար:

*ԴՈՒՆՏ *«դուստր, աղջիկը». գործածւում է միայն բարդութեանց երկրորդ մասում. օր. Խոսրովիդուխտ, Սահակադուխտ, Գորանդուխտ, Զարմանդուխտ, Զրուանդուխտ, Միհրանդուխտ, Շահանդուխտ, Որմզդուխտ, Սանդուխտ, Վարազդուխտ, Վարդանդուխտ, Քուպղիդուխտ ևն, բոլորն էլ իգական անուններ:*

=Պհլ. duxt, *պրս.* دخت duxt *(նաև* دختر duxtar*), քրդ.* duxt, *զնդ.* duγδar- *«աղջիկ, դուստր»: Ճիշտ նման հայերէնի՝ գործածւում են իգական յատուկ անուններ շինելու համար. ինչ. պհլ.* Artaxšatr-duxt, Mitrduxt, Narsēduxt, Anakduxt, *պրս.* Āzarmīduxt, Pērōzduxt, Nēvānduxt *ևն:—Բառիս ծագման վրայ տե՛ս դուստր, որ սրա բնիկ հայ ձևն է:—Հիւրշ. 144:*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ Նշ՛ր,

Peterm. *92 ևն:*

ԴՈՒԿ *տե՛ս Դուքս:*

ԴՈՒԿԱՆ *«գերան». ունի միայն ՋՔ, իբրև կասկածական բառ, որից ԱՒ՝ առանց կասկածականի. նոյնը գիտէ Բառ. երեմ. էջ 71*

դակոն «գերան» ձևով, որ էջ 79 դառնում է դոկան:

*ԴՈՒԿԵՆԱՐԻՈՍ «երկհարիւրապետ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Պոմ. ամաս. 64 «Պոսիդոնիոս դուկենարիոս ասէ». նոյնը Վրք. և վկ. Ա. 545 ունի դուկենառիոս ձևով:

= Բիւզ. յն. δουκηνάριος «փոխարքայ» (տե՛ս Sophocles, 394 բ), որ փոխառեալ է լա. ducenarius «երկու հարիւր զինուորների պետ» բառից. գրուած է նաև δουκεναρίος, δουκιναρίος — Ա՛ճ.

ԴՈՒԿԱԿ «սեխ». ունի միայն Բառ. երեմ. էջ 283՝ սեխ բառի բացատրութեան մէջ: Կենդանի է այժմ Երև. դուգուլ, դուգուլակ ձևով, որ նշանակում է «խիստ փոքրիկ ու դեռ խակ ձմերուկ»:

ԴՈՒԿՈՒ տե՛ս Տուղու:

*ԴՈՒՂԱՅ «մի տեսակ թանկագին կերպաս». անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Թղթ. դաշ. 17. «Զարդըս բազումս յականց և յապրշմեղինաց, գործ ճարտարաց անգիւտք և անգինք, դուղէս դազմատակաւս 120 բարձեալ ջորւոջ վաթսունից արքայականից»—Ըստ իս ուղղելի է դուռայ:—Ա՛ճ.

Շահնազ. անդ՝ էջ 94 համարում է «բառ թաթարաց, որ առ Թիւրքս վարի Թուղայ»:

*ԴՈՒՂԱՅ «ցցունք». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. էջ 57 յգ. դուղէս (իմա՛ դուղայս) «aigrette, ցցունք» ձևով (բայց չունի հտ. Ա. aigrette բառի տակ):

=Թրք. ǰoƫ tuγ «տեսակ մը թրքական դրօշ՝ որ է տէգի մը ծայրը անցուած ձիու պոչ. այս նշան հին առենն ի պատիւ կը տարուէր բաշաներու առջևէն».

(Արիկեան, Ընդ. բռ. տճկ.-հյ. 1892, էջ 388):—Ա՛ճ.

ԴՈՒՂԵԼ տե՛ս Դոլլ:

*ԴՈՒՄ «հարբուխ» Տաղ., որից՝ դմոտ «հարբուխ ունեցող» մհյ. բառ (Նորայր, Բառ. ֆրանս. էջ 207 բ):

= Թթր. ﻭﻤﺎﺦ tumav, Կազանի թթր. ﺗﻮﻣﺎﻭ tumav, չաղաթ. ﺩﻮﻣﺎﻭ dumaγu «հարբուխ» (Будаговъ, 1, 406 և 575), արևել. թրք. تیماو timao «հարբուխ» (R. B. Shaw, A sketch), որից կումուկ. tumau «հարբուխ» (Мохира, Кумыкско-русс. слов. Сборн. матер. Кавк. հտ. 17). թաթարականից է նաև ուս. t'əmov «հարբուխ»:—Ա՛ճ.

Այս մեկնութիւնը հրատարակած եմ նախ SA, 1, 303:

ԳԻՒ.—Ննխ. դումօվ «հարբուխ. 2. հարբուխից բռնուած (մարդ)», Շմ. թումով «հարբուխ»:

ԴՈՒՄԱՅ «բնակիլ կամ նմանութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 80:

ԴՈՒՆ «քիչ, սակաւիկ, հազուագիւտ» Ոսկ. ես. Փիլ., դուն ինչ «մի քիչ» Փիլ. ժ. բան. ՅՀ. իմ. առ., դուն ուրեմ «քիչ անգամ» Պորփ. լմբ. սղ., դուն ուրեմ երբեմ Սարգ. յկ. գրուած նաև դոյն Նար. խչ. ՅՀ. կթ. սրանից է ծագում նաև դոնիւ «մի քի՞չ» Կնիք հաւ. 328 (եւ յառնելն զջուրն գինի և յագեցուցանել դխումբս ժողովրդոցն դոնիւ հացիւքն: Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեն. Ա. էջ 89):

Նշբ պրս. ﺩﻭﻥ dūn «ցած, անարդ»: Հիւնք. հյ. առն բառից: Scheftelowitz, BB, 29, 46 լա. tenuis, հբգ. dunni, գերմ. dünn, յն. ταναός, անս. tonu «երկար, նեղ, բարակ» ձևերի հետ իբր բնիկ հայ: (Այս բառերի նախաձևն է ըստ Walde, էջ 772 հնխ. tenús, որ պիտի տար հյ. թան կամ *թին, բայց ոչ բնաւ դուն): Թիրեաքեան, Հայերան. ուսումն. էջ 61 պրս. ﺩﻭﻥ dun «ցած» բառի հետ: Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 64 ասս. rä-dowun, հիւս. գերմ. düven, «զարնել, բաղխել», յն. τύπτω «անդ» բառերի հետ հնխ. dhubh- արմատից, իբր dhubhno-> դուն: Պատահական են վրաց. დუნე դունե, დუნი դունի «թոյլ, ոչ ձիգ», დუნედ դունեդ «թուլաբար, ոչ ձիգ», დადუნება դադունեբա «թուլացնել», მოდუნება մոդունեբա «ձգուած մի բան թուլացնել»:

ԴՈՒՆ «կարճ սուսեր» ՋՔ կամ «դաշոյն» ԱԲ. չունի ՆՀԲ. Թուի թէ պէտք է կարդալ դան, որ տե՛ս

ԴՈՒՆ. ո հլ., որից՝ դունոյ հատիկ *«մի տեսակ բոյս. cyperus rotundus, ֆր. souchet odorant» (ըստ Նորայր. Բառ. ֆր. 1156 բ և ՀԲառս. § 602). «cyperus longus L» (ըստ Տիրացուեան. Contributo § 42), «լոբի» (ըստ ՋԲ և ԱԲ) Ւժշ.*—կայ դուն *Մշ. «մի տեսակ վնասակար խոտ, որ մօտ 3/4 արշ. խորութեամբ արմատներ է ձգում հողի մէջ, ունի կաւորակի (գնտիկ) մեծութեամբ ամուր հունդի պէս կորիզներ. մեծ վնաս է տալիս բամբակի արտին»:*

ԴՈՒՆԴՐ *տե՛ս* Դնդերք:

ԴՈՒՆԹԻՄԻՆ *տե՛ս* Դերնդամին:

ԴՈՒՆՁ *«քիթը, բերանը և ծնօտը միասին» Մաղաք. աբ. 6. Քուչ. 52, 73. ունին միայն ԱԲ և ՓԲ յաւել. (իսկ ՆՀԲ յիշում է իբր գաւառական բառ), որից դնչիկ Քուչ. 44, 50:*

=*Համմտ. վրաց.* ტუჩი *տուչի «շրթունք, մռութ, դունչ»:*

ԳԻՒ.—*Տփ.* դունչ, *Ախց. Երև. Ջղ. Սչ.* դ'ունչ, *Մշ.* դ'ունչ, *Համշ. Շմ.* տունչ, *ՀՁ. Ննխ. Ռ.* բունչ, *Ակն.* դ'իւնչ, *Ղրբ.* տիւնչ, *Ոզմ.* դ'օնչ, *ՋԲ.* դ'ը'նչ: Նոր բառեր են՝ դնչաման, դնչավար, դնչուց:

ԴՈՒՇԱՂԱՅ *«ցից, յենլի, կաղբկ» (որ է Բրբ. «ցից»). ունի միայն Գէորգ Դպրի Յաւել. երեմ. բառգրքի, էջ 543:*

ԴՈՒՒԱՅ «ասիական իշխանների լայն և հաստ հագուստը» Լմբ. առ Լև. տպ. Վենետ. 1865, էջ 239. Երզն. քեր.—ըստ իս այսպէս պէտք է ուղղել նաև Դաշանց Թղթի դուղայ ձևը, որ տե՛ս վերը:

=*Արաբ.* دُرَّاعَة durrā'a *«բրդեայ մի տեսակ հագուստ, այն է արաբական լայն ֆարաջան» (Կամուս, Բրբ. Բրգմ. Ռ. 570). Թուի Թէ սրանից ձևափոխուած է պրս.* دَجَّاجَة durrāja *«լօդիկ»:—Հիւբշ. 264:*

Հներից Մագ. քեր. 229=Երզն. քեր. արդէն գրում է. «Իսկ մեր ի Պարսից բազում ինչ ընտանեբար ուսեալ զգեստս, որպէս դուռայ և ռիտդէ»: ՆՀԲ սխալ է մեկնում «բառ ոմկ. դիւռէ, բէօռէ, ձև, կերպ զգեստուց»: Նոյնը կրկնում է Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 դնելով Բրբ. բէօռէ «ձև, կերպ»: Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Հիւբշ. ZDMG, 35(1881), էջ 658:

ԴՈՒՌԵԼ *«թաքչիլ», այս անստոյգ բառի վրայ տե՛ս* դռտել:

ԴՈՒՒԻՒԷՃ (գրուած նաև տուռւճ) «սալամբ թռչունը tetrao francolinus» *(ըստ* Russell, The natural history of Aleppo, *տպ.* London *1794, հտ. II. էջ 193. տե՛ս* Seidel, *Մխ. Հնդսպի. ծանօթ. 58). մեկ անգամ ունի Մագ. քեր. 228=Երզն. քեր. «Ոչ ունելով (յանաց) ճէ, յորջորջեն զճուռակն ծուռակ... և զորսոցն զդուէճն՝ դուէճ և զդահուճն՝ դահուճ»: Նոյն բառը ունի Մխ. բժշ. 11* տուռայն ձևով:

=*Արաբ.* دُرَّاج durrāj *«սալամբ» (Կամուսի Թրք. Թրգմ. Ա. 397), պրս.* دُرَّاج durrāj *(ըստ ԳԴ), որոնցից փոխառեալ են նաև չաղաթալ.* تُرَاج turaj *«մի տեսակ փոքր շահէն». Թրք.* turaj *«սալամբ», վրաց.* დურაჯი դուրաջի, დურეჯი դուրեջի, თურაჯი թուրաջի, თურეჯი թուրեջի *«лесная куропатка, անտառային կաքաւ» (Ջուբ². 484):*

ՆՀԲ հասկանում է բառս «հրէ», ուստի և համեմատում է յն. θήρ «վայրի կենդանի»: Այսպէս է հասկանում նաև ՋԲ (կասկածով): ԱԲ դնում է «սալամբ»: Վերի մեկնութիւնը տուաւ Նորայր, Բառ. ֆր. (տե՛ս francolin *բառի տակ):*

+*ԴՈՒՒՆ (դրան, դրանէ, դրամբ, դրունք, դրանց, դրունս, դրամբք) «դուռ» ՍԳր. Ոսկ. եւս. պտմ. «կիրճ, լեռների մէջ անցք (որ և կոչւում է պահակ) Եղիշ. Խոր. «պալատ» Ռ. մակ. դ. 28. Բուզ. Փարպ. «սպասաւոր» Փարպ. Վրք. Հց. Ա. 209. «գրքի գլուխ» Մհ. բառ (կազմուած հետևողութեամբ արաբերէնի, ուր* باب *bāb նշանակում է թէ՛ «դուռ» և թէ՛ «գրքի գլուխ»), որից՝ դռնապան Ռ. մակ. ժգ. 15, դռնապան ՍԳր. Փարպ., դռնապանութիւն Մ. մաշտ. 237 ա, դռնափակ Օր. գ. 5. Ա. Թագ. իգ. 7, դռնբաց, դռնբացեք Յայտմ., դռնաբաց Գնձ. Արծր., դռնակ Կաղանկտ. բազմագուռն Եփր. Հռ. 4, անդուռն Խոր. Պրպմ., նախադուռն Եզեկ. ը. 3, վերնադուռն Երեմ. ի. 2, 3, մայրադուռն*

Մարթին., դռանիկ «պալատական» *Խոր. գ. 37։*—*Բառիս երկրորդ ձևն է (ն-ից ազատ)* **դուռ**, *որ գործածւում է միայն անեզաբար՝* դուռ, դռաց, դուռս, դռօ֊ *ձևերով. սրանից են կազմուած՝ ի դուռս «դուրսը, արտաքս» ՍԳր. Փիլ.*, դռանդ *կամ* դռանդի *ՍԳր. (տե՛ս անդ բառի տակ)*, դռացի *(կազմուած է դռաց սեռականից՝ ի մասնիկով և ո՛չ թէ* -ցի *մասնիկով, ինչպէս ցոյց է տալիս սեռ.* դռացեաց *և ո՛չ* դռացւոց*) ՍԳր. Եզն. Եւս. քր. Կիւրղ. ծն.*, դռակից «դռացի, սահմանակից» *Փարպ. Փիլ. Պիտ.*, դռակցութիւն *Պիտ. Փիլ.*, դռացապաս *Ճառընտ.*, սրտադուռ *Արծր.*, ի դռուստ «դրսից» *Նեմես. բն. էջ 10. Պրպմ. 348. Մխ. դատ.*, ի դռումնի լինել «(դուրսը) ման գալ» *ԱԲ*, դռուցն «դուրսը» *Սմբ. պատ. տպ. 1865. էջ 73 (մասնիկի համար հմմտ.* առջև, յետև, վերև, ներքև, մինչև), դռուցինն «դրսինը» *Սմբ. պատ. 76։ Նոր գրականում՝* դուռս, դուրսը, դռուսէն, դռսից, դռսեցի, դռսեռել, դռսերևոյթ *ևն։*

— *Բնիկ հալ բառ՝ հնխ.* dhur- *ձևից. հմմտ. սանս.* धर् dvâr, *լգ.* duraḥ, *գնգ.* dvar-, *հնդ.* dwar, *գնչ.* udar, dar, vudar, dal, *հպրս.* duvarayā «*ի Դուռն*», *պրս.* در dar, *քրդ.* der, bar, *օսս.* dvar, *աֆղան.* var, *մինջ.* labra, *բոշալ.* pap, *պղ.* dar, *յն.* θύρα «դուռ, θυρών «նախասենեակ», *լտ.* foris «դուռ», forēs «հրկիզիզկ դուռ», forum «հրապարակ», *ալբան.* derε, *գոթ.* daúr, *հրգ.* tor, turi, *նրգ.* thür, *անգլ.* door, *լիթ.* dùrys, dvãras, *լիթթ.* duris, *հպրուս.* dauris, *հալ.* dvĭrĭ, *լգ.* dvĭri «դուռ», dvorŭ «բակ», *հչեխ.* drvi, *լհհ.* drzwi, *ռուս.* дверь «դուռ», дворъ «բակ», *հիւլ.* dorus, *հիսլ.* durr, *անգլսք.* duru, dor, *հսաքս.* dura «դուռ»։ *Հնդեւրոպական նախաձևն էր* dhwer-, *որի միջին ձայնդարձն էր* dhwor-, *իսկ խոնարհ. ձայնդարձը* dhur-։ *Հնխ.* dhwer- *գործածական էր միայն յոգնակի, իսկ թեքեւս երկակի թուով. եզակի չուներ. սրա համար է, որ հայերէնի մէջ էլ բառի բուն ժառանգը, որ է* դուրք (դուրս, դրաց, դրօք*) գործածական է միայն յոգնակի։ Աւելի յետոյ, ինչպէս ուրիշ լեզուների մէջ, նոյնպէս և հայերէնում, շինուեց եզակի ձևը (*դուռն, *որից յգ.* դրունք*). *տե՛ս* Meillet, MSL, *17, 14, աւելի ընդարձակ* Osthoff, SA, *2, 116—121. (հմմտ. նաև* Walde, *307*, Boisacq, *358*, Berneker, *241*, Trautmann, *63*, Horn, § *545*, Kluge, *499*, Pokorny, *1, 870*, Ernout-Meillet, *362*)։ — *Հայերէն բառի «պալատ» և «դուրս, արտաքս» նշանակութիւնները գտնում ենք նաև այլուր. այսպէս՝ պրս.* در dar «դուռ և Դուռն արքունիք», *հպրս.* duvarayā «*ի Դուռն արքունիք*», *ռուս.* дверь «դուռ» և дворецъ «պալատ», *արաբ.* باب bāb «դուռ» և Bāb-i-'ali «Բարձրագոյն Դուռ».—*Նոյնպէս՝ պրս.* dar «դուռ» և بدر badar «դուրս», *բոշալ.* pap «դուռ» և բարաի «դուրս», *յն.* θύρα «դուռ». θύραζεν «դրսից». θυραῖος «դրսեցի, պանդխտաց», *քրդ.* der «դուռ» և derva «դուրս», *լտ.* forēs «դուռ» և foris «դուրս», *ռուս.* на дворе «դուրս»։—*Հիւրշ. 440։*

Ուղիղ մեկնեց նախ Aculuthus, Obadias Armenus, Lipsiae, *1680, որ էջ 30 կցում է գերմ.* thür *հոմանիշին։ Ներանից լեսող են Աւետիքեան, Փերակ. 1815, էջ 315 (ցեղակից է դնում յունարէնի),* Klaproth, Asia polygl. *էջ 105, ԳԴ (համեմատում է պրս.* dar *բառի հետ). աւելի ուշ* ՆՀԲ, Peterm. *20, 30*, Windisch. *10 ևն։ Մորթմանն, Բևեռագր. Հայաստ. (թրգմ. Գ. Ապտուլլահ), էջ 48 բևեռ.* դուռ, *իսկ* ZDMG, *26, 543 բևեռ.* turida «*առ դռան*»։ Böttich. Rudimenta, *37, 75 և Հիւնք* դռնապան=*պրս.* darbān «*դռնապան*»։ *Գապանճեան, Տարեց. Պապիկեանի, 1905, 125 և Աբեղ. մատ. 1907, 934—5* դուրս<*դուսարա =*թրք.* təšarə «*դուրս*»։ Karst, *Յուշարձան, 408 ռումեր.* tur «*ներս մանել*»։

ԳԻՒ.—*Նախ. Պլ.* դուռ, *Տփ.* դուրբ, *Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Սեբ. Սչ. Զղ.* դ'ուռ, *Մրղ. Սլմ. Վն.* ռուռ, *Ռ.* բուռ, *Հճ.* դ'ուր, *Շմ.* ռուռնը, *Գոր.* սիռնը, *Ղրբ.* ռօ'ռնը, *Ասլ.* դ'իռ, *Ակն. Զթ. Ոզմ.* դ'օռ, *Տիգ.* բօռ, *Մկ.* ռէօռ. *այս բոլորը ներկայացնում են դուռն ձևը. իսկ Ադլ. Մղր.* դուրֆ *պահում է դեռ հին հնդեւրոպական վիճակը։—*Դուրս *բառի դէմ*

ունինք Պլ. դուրս, *Խրբ. Սչ.* դ'ուրս, *Ննխ. Մպր. Տփ. գուս, Ախց. Ջղ. Սեբ.* դ'ուս, *Ռ.* քուս, *Զթ.* դ'օյս, դ'ոյս, *Ագլ. Հւր.* դիւս, *Գոր. Ղրբ. Մրղ.* միւս:—*Նոր բառեր են՝* դուրքաց, դուրբանելայ, դուռսուրել, դուրսեցի, դուրսեցնակ, դրսօ, դռմէջ, դռնագլուխ, դռնակողմ, դրկից, դրսանց, դրսկոյս, դրսնաւար, դրսնոց, դռվերմ, դռնատակ *են:*

Փոխ.—Հայերէն գուռ. դոգոց *(հմմտ.* դոգոց վն. «*գուռը դոցելու փականք, կողպէք*») *ձևից փոխառնալ է Խրբ.* ՅՁՃ tərqāz «*սողնակ կամ նիգ*» *(Կամուս, Խրբ. Խրգմ. Գ. 37), որ* Будаговъ *1, 555 գրում է* ՅՁՃ dirqaz *կամ* tirqas: *Կայ նաև նոյն բառի բայական ձևը՝* tərqaslamaq «*դուռը ամուր մը գոցել*», *որ գործածական է Անգորայի Խուրբ և յոյն ժողովրդի մէջ (ըստ Ս. Մխիթարեան, Բիւր. 1898, էջ 789):*—Будаговъ՝ *անդ, Խրբ. բառը հանում է ԹՒր.* tiramak «*յենուլ, հաստատել*» *բայից, բայց այս ստուգաբանութիւնը յարմար չէ, որովհետև նախ նշանակութիւնը համապատասխան չէ և երկրորդ՝ չկայ* -qaz- *մասնիկը: Ուղիղ մեկնութիւնը տալիս է Մխիթարեան (անդ), որ Խրբ. բառը ենթադրում է հյ.* դրռգոց-ել *ձևից փոխառնալ: Այս փոխառութիւնը հաստատում եմ նրանով, որ այլուր (Տարէնտէի Խրքական բարբառով) ունինք* kös «*գոց*», köslemek «*գոցել*» *(ըստ Մ. Թուրեան, Բիւր. 1899, էջ 799). Հմմտ. Ննխ.* գոց «*դռան կողպէք*»:

+ԴՈՒՍՏՐ *(գստեր, -երք, -երաց կամ -երց)* «*աղջիկ զաւակ*» *ՍԳր. նմանութեամբ* դաեբՐ *fաղաfի «քաղաքի դիւղերը» Յես. ժե. 11. Բ. մն. ժզ. 19, որից՝* դաեբագիր *կամ* դաբագիր «*հոգեզաւակ առնուած աղջիկ*» *Մխ. ապար.,* դաբաեէր *ԱԲ,* դաբիկ *Վրք. Հց. Ճարընա.,* խոստովանադուստր *Ոսկիփ.,* արքայադուստր *(արդի գրականում):*

= *Ինիկ հայ բառ. ցեղակից հնդեվրոպական լեզուների մէջ գոնում ենք առնս.* दुहितृ duhitár-, *թոխար.* ckācar, *քաչ.* tkācer, *վնդ.* duγδar-, *հընդ.* dugədar-, *պրս.* دختر duxtar, دخت duxt, *քրդ.* duxt, ditt, *մինջ.* ləγdá, *աֆղան.* lur, *յն.* θυγάτηρ, *լիթ.* duktė̃, *գոթ.* daúhtar, *հրգ.* tohter, *անգլ.* daughter, *գերմ.* tochter, *հին.* दुहितृ *հոլ.* dŭšti, *հպրուս.* duckti, *ռուս.* дочь, *սեռ.* до́чери, *բուլգար.* dŭšter'á, *լեհ.* cora *են. հնդեվրոպականներից փոխառութեամբ նաև ֆին. վոտյ.* tytär, *էստ. վէպս.* tütar, *լիվ.* tüdär, *չերեմ.* adər, *մորդվին.* stir «*աղջիկ*»: *Հնխ. մայր ձևն էր* dhughətér- *և սրանից թեթևացած՝* dhughtr-, dhughdr-: *Երկու բառերի յարմարութեամբ և մյուս* -ter *յանգող ազգականական անուանների ազդեցութեամբ (հմմտ. հնխ.* pətér- «*հայր*», māter- «*մայր*» *են) յառաջ եկաւ նախնադոյն հյ. եզ. ուղ.* *dhuktér, *յգ.* *dhuktéres, *որից նախնի հյ. եզ. ուղ.* *դուստիր, *յգ.* *դուստերք, *որից հյ.* դուստր, դստերք:—*Առաջ ենթադրում էին թէ հնխ.* dhughətér- *ծագում է հնխ.* dhugh- «*կթել*» *արմատից և թէ «դուստր» նշանակում է բան «կաթ կթող». այժմ այս մեկնութիւնը ոչ ոք չի ընդունում. հմմտ.* Berneker, *243.* Trautmann, *62.* Boisacq, *355,* Horn, § *541,* Kluge, *490.* Bartholomae, *748,* Pokorny, *1, 868.—Հիւրշ. էջ 440:*

Հներից Առաքել Սիւնեցի բառախաղով ստուգաբանում է «գուբս տալ» բայից. այսպէս՝ Ադամ. էջ 138—9 «Դարձեալ ասեն գուստր նորին, զի գուբս երեսս գմարդն ի գրտխտին. այսպէս և այժմ ամենայն կին գմարդն հանէ կամաց Փրկչին» —Ուղիղ մեկնից նախ Klaproth, As. polyg. *էջ 105 և* Mémoires *1, 425, յետոյ ՆՀԲ,* Peterm. *20,* Windisch. *10 են: Էմին,* Ист. Асохика *1864, էջ 53 դ մասնիկով ուսաբր բառից կամ վերի ձևերի հետ:*

ԳԻՒ.—Սչ. դ'ուստր *(սեռ.* դ'բսդեր*) կամ* դ'ռուսդ *(սեռ.* դ'բրբսդեր*) «աղջիկ զաւակ». ուրիշ ամեն տեղ փոխանակուած է աղջիկ բառով. և այս հին հնդեվրոպական բառը, ինչպէս լատիներէնում, նոյնպէս և մեզ մօտ, գոյութիւնից դրկուած է. այնպէս որ հայերէնի մէջ «աղջիկ» մասնաւոր և ընդհանուր իմաստով միևնոյնն է (Հօրեղբոր աղջիկը. Մի աղջիկ տեսայ). ձիշտ ինչպէս ասում ենք՝* կին *և Մի ինչ որ կին. (գերմ.* Weib *և* Frau, Tochter *և* Mädchen*):*

ԴՈՒՐ, ո հլ. «հիւանի կտրուց» ես. խդ. 12, 13. եփր. նին. 114. Գէ. հս. էլ. արիստ. 20. վստկ. 70, 138. «համառօտագրութեան նշան, պատիւ» (յետիններէն մօտ), որէ դրածակ վրդն. ծն.։

Հինք. պրս. دورای durāy «խարտուց» բառի հետ։ Գաբրիէլեան, ՀԱ, 1910, 117 դիւր «հարթ» արմատից։

ԳԻՒ.—Ագլ. երև. դուր, Ալշ. Ախց. Ակն. խրբ. Մշ. Կր. Ջղ. Սեբ. դ'ուր, Ղրբ. Մկ. Մրզ. Շմ. Սլմ. Վն. տիւր, Ոզմ. դ'օր, Կալաջուղ (գիւղ Մարաղայի) տ̇օր։ Նոր բառ է դրբակ «փայտէ երկգլխի թակ՝ որով զարնում են դուրի գլխին»։

ԴՈՒՐ «հողի չա՞փ է». մէկ անգամ գանում եմ գործածուած Օրբել. 157 «Սահմանք Գաբատաւոյ այս են, որ յիւր ձեռնագրիդ գրած են. և Աղբնոյն շինին առաջև էր երիք գուր երկիր»։—Թերևս և նշանակում է «հարթ, տափարակ» և այն ժամանակ միանում է դիւր բառի հետ։

+**ԴՈՒՐԳՆ** (սեռ. դրգան, բց. դրգանէ) «բրուտի անիւ» Սիր. լը. 32. իմ. ժե. 7. երեմ. ժը. 3. Մխ. երեմ.։

=Բնիկ հայ բառ, որ ծագում է հնխ. dhrōgh- արմատից. համմտ. յն. τροχός «անիւ, բրուտի անիւ, դուրգն», հիռլ. droch «անիւ». այս երկու ձևերը ծագում են հնխ. dhrogho- նախաձևից, որ չի կարող տալ հյ. դուրգն։ Հայերէն ձևը բացատրելու համար պէտք է ընդունել թէ շրջուած է հնխ. dhrōgh- ձևից (երկար ձայնաւորով), որի վրայ ազդեցել է յետոյ հայկական և ածանցը. այսպէս՝ dhrōgh- > դրուգ>դուրգ>դուրգն։ (Բառիս ձևի համար ազդի ընդարձակ տե՛ս SA, 2, 122)։—Կարծում է, որ վերոյիշեալ ձևերի հետ պետք է կապել նաև յն. τρόχος «վազք. տապարէզդ», τρέχω, դոր. τράχω «վազել», τρόχις «աւրհանդակ», τροχίλος «ճախարակ. 2. մի տեսակ թռչուն», լիթ. drâst, լիթ. pa-droszti «վազել, արագ ընթանալ», գոթ. þragjan, անգլս. þrǽzan «վազել», հոլ. trūkŭ «վազք». նոլ. trčati «վազել», ռուս. дорога «ճամբայ», հիռլ. tricc «արագ», trēn «համարձակ, յանդուգն» են են, որոնք են-թադրել են տալիս հնխ. dhregh, threqh, treq են ձևերով և «վազել» նշանակութեամբ արմատները (Տե՛ս Pokorny, 1, 875, Berneker, 226. վերջինս նշանակութեան տարբերութեան պատճառաւ չի ընդունում կցել առս. дорога «ճամբայ» բառը, իսկ Pokorny չի յիշում այն)։—Հիւբշ. 440։

*Ուդիպ մեկնեց նախ ՆՀՔ, որ (աճիւ բառի տակ) լծորդ է դնում յն. τροχός ձևը։ Pictet, 2, 162 լս. torquao «շրջել, դարձնել» են։ Հիւնք. յն. τροχός։ Osthoff, SA, 2, 115 և 122 կարծում է, որ դուրգն տղղականը շինուած է յետնաբար *դրուգն. սեռ. դրգան ձևից նմանողութեամբ։ Աւելի երկար մի բացատրութիւն տե՛ս Pedersen, Հայ. դր. լեզ. էջ 21—22։ (Վերի համեմատութեանց վրայ տե՛ս Walde, 788, Boisacq, 983)։ Karst, Յուշարձան 414 ծիր բառի հետ՝ մոնգոլ. togorin «շուրջը», togori «դառնալ», թունգուզ-մանչ. toxoro «անիւ, շրջանակ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 145 պրս. ترکان turkān կամ ترک فلک turk-i-falak «մոլորակների ծիրը»։ Համմտ. նաև Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 79 ուր հնդեւրոպական արմատին տալիս է նաև «դառնալ, դարձնել» նշանակութիւնը և ըստ այսմ միացնում է նրան զանազան նոր բառեր։

ԳԻՒ.—Թւում է թէ նոյն բառն է Գնձ. տուրգ, որի բուն իմաստը ինձ յայտնի չէ.—«Շուռ էր տալիս անկանը ու տուրգը բռնեցնող փուռանը ու ճախարակը» (Մամիկոնեան, Հազարից մէկը, էջ 80)։

***ԴՈՒՐՁ** «խորշերի բաժանուած արկղ». միջին հյ. բառ, որ յիշում է Նորայր, Բառ. ֆրանս. 205 բ casse բառի տակ։

=Արաբ. درج durj «տուփ, որի մէջ կանայք մանր մունր բաներ են պահում» (Կամուսի Թրք. Թրգմ. Ա. 397), որ և պրս. durj «փոքրիկ աման, որի մէջ անուշահոտութիւն, ակներ կամ մարգարիտ են պահում» (ԳԴ)։—Ա՛ճ.

ԳԻՒ.—Ագլ. դրուն «պատի մէջ փորուած հառնկիւնաձև դարակ. հիւթել»։

ԴՈՒՐՃ «նորածին մանկան խանձարուր». իբր միջին հյ. բառ ունի միայն նորայր, Բառ. ֆրանս. 737 ա՝ layette բառի առակ, իբրև 3-րդ նշանակութիւն. բայց որովհետև նոյն բառի 2-րդ նշանակութիւնն է «արկղիկ փայտեղէն», ուստի կարծում եմ, որ սխալմամբ նշանակուած լինի, որով այս դուրճը չնչուելով՝ կը միանայ նախորդի հետ։

*ԴՈՒՔՍ (սեռ. դխի). «իշխան» վրք. հց. Լմբ. մատ. 545. Թէոփ. խ. մկ., «մահմետական կրօնի պետ, շէյխուլ-իսլամ» Զքր. սարկ. Բ. 102 (Նա բերել զդուբան՝ որ է շխիսլամ), որից՝ դխսութիւն Վրդն. պատմ. Ճառընտ., դրխսունի, դխսական ևն (նոր բառեր)։

= Յն. δούξ «դուքս» (Sophocles, 395 ա ձևի միջոցով լտ. dux «դուքս, առաջնորդ» բառից, որ ծագում է duco, ducere «առաջնորդել» բայից (Walde, 248)։ Բառիս նորագոյն ձևն է դուկ կամ ռուկ (տե՛ս այս վերջինը), որ ուղղակի հնրոպացիներից է փոխառնել կիլիկեան շրջանին։ Արդի գրականում վերանորոգուած է դուքս ձևը։—Հիւբշ. 346։

Ինճիճեան, Հնախ. Բ. 230 և ՆՀԲ դնում են լտ. dux։

ԴՈՓԵԼ «ոտքով գետինը զարնել, ծեծել, կաքաւել» Եզեկ. ղ. 11, իե. 6. Ոսկ. ա. տիմ. ժդ. և յհ. ա. 2, «կռանով սալին զարնել» Եզիշ. հրց. 51, «քարով դուռը բացիել՝ որպէսզի բանան» վրք. հց. Ա. 9, որից՝ դոփիւն Ոսկ. մ. ա. 17, դոփումն 3հ. կթ.։

= Բնաձայն բառ. հմմտ. ուտ. dôp՝ «պայթիւն, տրաքոց», dôp'sun «հրացանի պայթիւն», dôp'desun «հրացանը կրակել»։—Ա՛ճ.

Böttich. ZDMG, *1850, 353* և Arica, *88, 442* սանս. tup, յն. τύπτειν «զարնել, ծեծիլ»։ Lag. Urgesch. *450* հայ. topoti, ռուս. топотъ «ոտից դոփիւն»։ Müller, SWAW, *38, 579* սանս. tup, յն. τυπ-։ Հիւնք. դոփել բայից։

ԴՈՒՐ.—վն. թափ-դոփ «ոտքերի աղմկալի ձայն». կայ և դոփդոփել Ղզ. «կրեանների իրար զարնուելով՝ ձայներ հանելը»։

ԴՊԻՀ «վրացական պաշտօնէական մի աստիճան». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ դտնում եմ գործածուած Օրբել. էջ 260 «Հրամայեր քննել զբուպային և զմարծուան, զիւան դպէին»։

=Վրաց. ტბელი տբելի «Տբեթցի, Տբեթում բնակող» (Տբեթը վանք է Կղարջքում)։

Ուղիղ մեկնեց Լ. Մելիքսեթբէկ (Նամակ 12 մայ. 1933)։

*ԴՊԻՐ, ի–ա հլ. «դրագէտ, աւենադպիր, պաշտօնական թղթերը կարդացող պաշտօնեան, հրէից մէջ օրէնսգէտ մարդ» ՍԳր, «եկեղեցական պաշտօնէութեան մէջ տիրացուից վերև գտնուած աստիճանը» նար. գնձ. Շար. Կանոն., որից՝ դպրութիւն ՍԳր. Ծն. քր. Ագաթ. Եզն., դպրապետ ՍԳր, դպրաճոց Ոսկ. յհ. բ. 24, դպրոց Փարպ. Պիտ., դիւանադպիր Վրդն. սղ., աւենադպիր ԱՔ։ Նոր գրականի մէջ՝ դպրատուն, դպրոցատուր, դպրանոցատուր ևն։

= Պհլ. 𐭣𐭯𐭩𐭫 dipīr «քարտուղար, գրագիր», dipīrīh «գրչութիւն», dipīrān mehist «գպրապետ», մանդէական պհլ. dpyr, Թուրֆանի մանք. պհլ. דביר dbīr (Salem Manich. Stud. ZAH, *8, 65*), պազենդ. divērī (իմա՛ divīrī) «գրչութիւն», պրս. دبیر dabīr կամ dibīr «գրագիր», دبیرستان dabīristān կամ dibīristān և دبستان dabistān կամ dibistān «գպրոց, վարժատուն»։ Այս բոլորի արմատն է հպրս. dipi- «գրութիւն, արձանագրութիւն». որ բնիկ իրանեան չէ, այլ թերևս սեմական փոխառութիւն։ Հնագոյն ապրիւրներն են ելամ. tupi «արձանագրութիւն» և սումեր. dub «գրութեան տախտակ, tablette», որից փոխառնել է աքքադ. tuppu, duppu, dappu «տախտակ, գրուած բան, տեղեկութիւն, նամակ» (Muss-Arnolt, Ass. engl. Handwb. *262—3*) և որանից էլ արամ. דפא dappā, հպրս. dipi, սանս. dipi, lipi «գրութիւն» (տե՛ս MSL, *23, 214* ծան., Nyberg, Hilfsb. *2, 55*, Autran, Sumér. etind *153*)։ Այս արմատը իրանեանների մէջ ածելով -bar մասնիկով՝ առել է dipibar. հմմտ. պհլ. dpyvr գրչութիւնը, որ գտնում ենք մի հին փորագրութեան մէջ։ Նոյն իրանեան ձևից փոխառեալ են այնուհետև սանս. divira «գրպիր», divirapati «գպրապետ». պրակր. dipi-, lipi- «գրութիւն, գրուածք», արաբ. دبر dabr «գիր գրել» (Կամուս, թրք. թրգմ. Ա. *850*), թալմ. דביר dabīr, ք.-ֆ. debir

«հաշուակալ» (Bartholomae, 747, Horn, § 540)։—Հիւրշ. 145։

Ուղիղ մեկնեց նախ ԴԴ, յետոյ ՆՀՔ, Böttich. Rudimenta, 37, 65, Lag. Gesam. Abhd. 216 եև։ Մատ. ՅԲՕ, 25, 33 խալդ. dup բառի հետ։

ԳԻՒ.—Գրականից փոխառեալ ձևեր են միայն երև. տպիր, տպրօց, Մշ. դ՛բիր, Խրբ. դ՛ըբրօց, դ՛ըրբադուն, Ակն. դ՛բրօց, Մրզ. տրպըրի՛ր, Պլ. դորօց, դոբադուն (հին լեզուով), բբրօց (նոր լեզուով), բբիր «ժամու տիրացու», Սեբ. դ բբրէօց, Ասլ. դ՛բրբէօ՛ց, դ՛բրբէօ՛ս, դ՛բրբադիւն են։

*ԴՌԱԿՈՆ «վիշապ կամ մի տեսակ մեծ ձուկ, վիշապաձուկ». մէկ անգամ ունի Մագ. 213 «կէտք վեհ գոլով քան զփագրոս... և քան դդռակոնռռայն» (այլ ձ. զդռակոնայն)։ =Յն. δράκων «վիշապ. օձ, վիշապաձուկ (trachinus draco L)»—Հիւրշ. 347։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։

*ԴՌԱԿՈՆԱՌ «վիշապաձուկ». երկու անգամ ունի Մագ. Քղ. 213, 215՝ «կէտք վեհ գոլով քան զփագրոս... և քան զդռակոնռռայն» (այլ ձ. զդռակոնայն. տե՛ս նախորդ բառը). «Յիշատակեալ եմք զփագրոս և զովանայն և զդռակոնռռայն և զկէտն Յովնանու»—ՆՀՔ գրում է դռակոնառ, ինչպէս պահանջում է նաև յունարէնը—Բառիս երկրորդ նշանակութիւնն է «խայտաբղէտ, պիսակաւոր նկարուած», ինչպէս ունի մէկ անգամ Մագ. Քղ. 223 «Յամենայն ականց հանդերձ մատիտամամբ և դրակոնառիւ մանրթհալք» (այսպես է Կոստ. իսկ ՆՀՔ դռակոնառ)։ =Յն. δρακοντάριον. այս բառը, որ յիշում է Հիւրշման, գոյութիւն չունի ո՛չ Bailly-ի մօտ, ո՛չ Sophocles-ի մօտ և ո՛չ էլ նոր յունարէնի մէջ, δράκων «վիշապ, վիշապաձուկ» բառի մի ածանցն է. Հիւրշ. դնում է այս իմաստով, իսկ «նկարէն» իմաստի համար հմմտ. դրակոնդիկոն բառի տակ։—Հիւրշ. 347։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։

ԴՌԻՆՃ «մի անյայտ բոյս» Բժշ. ունի միայն Հրուս. § 603։

●ԴՌՆՁԵԼ «բնդացնել, ահագին դղրդոցով հնչեցնել» Փիլ. լին. 182, որից՝ դռնչեցուցանել «բնդացնել» նւս. քր. բ. 120, դռնչիլ «ահագին ղղրդոց հանել» Վեցօր. դ. էջ 48, դռնչիւն Մագ.։

=Բնաձայն բառ, որ կազմուած է դ պարզ ձայնից՝ ո սաստկականով և ն, չ ածանցիչներով. հմմտ. կռնչել, փռնչել, ճռնչել, մռընչել, զռնչել, ճռնչիւն, շռնչան, սռնչան, խռընչիւն, բոլորն էլ նոյնպիսի կազմութեամբ—Ա՛ճ.

Այս մեկնութիւնը առած եմ նախ ՀԱ. 1899, 204 ա։ Petersson, Ar. u. Arm. Stud. 76 կցում է յն. θόρυβος, τοπθορύζω, τοπθρύς, θρέομαι, θρόος, θροῦς, ὀρύλος, հին սաքս. drōm, անգլսք. dream, գոթ. drunjus, հսիսլ. drynja, նրգ. dröhnen, հրգ. treno, սանս. dhranati են բառերին, որոնք նշանակում են դանագան տեսակի ձայներ։

ԴՌՈՅԹ «խմբով յարձակում, գրոհ». սովորաբար գործածւում է դռոյթ տալ ձևով. ՅՀ. կԲ. գրուած է նաև դռուբ, դռոբ ՅՀ. կԲ. Արծր., որից բայական ձևով դռոբել Արծր. կայ նաև դռուդ Երզն. մաթ. յաճախ շփոթւում է գռոհ բառի հետ, որ և վերիններից պատճառութեամբ գրւում է դռոհ։

ՆՀՔ կերևայ թէ լաւագոյն ձևն է համարում դռուդ, որ դնում է «արմատ դրդիոյ»։ Lag. Btrg. bktr. Lex. 27 կցում է հնթհագրական դնգ. *draoδra, *draoδi, *draoδa ձևերին, որոնք ածանցում է dru «վազել» արմատից։ Նոյնպէս, Հայկ. բառաքն. էջ 9 հարազատ ընթերցուածը համարում է դռոյթ կամ դռոհ, որ ըստ Ս. Ալպրճեանի համեմատում է սանս. արու, դրու «ընթանալ, ճեպով ընթանալ», արուդա, դրուդա «ընթացք» բառերի հետ։ Տէրվ. Նախալ. 30, 89 դռոհ և դռոյթ կցում է սանս. dhvar, գնդ. dvar, պրս. davārīdan, յն. θόρνυμι ձևերին, իբր հնխ. dhvar, dhru «դիմել, թափուիլ» արմատից։ Պատահական նմանութիւն ունի սանս. druta «արագ»։

ԴՌՈՒՆ «ադաւնու նման մի թռչուն է». ունի միայն ԱԲ. մէկ անգամ դնում եմ գործածուած Տաթև. ամ. 421. վկայութիւնը տե՛ս Գուրգուր բառի տակ։

Գիհ.—*Ղրբ.* տրոոօն *(որ և* դոլօն *երև. Ղզ.) «աղաւնու նման մի թռչուն է»։*

*ԴՍՏԻԿՈՆ *(սեռ. ի) «տան յարկ» Գծ. ի. 9, թ. 37. Նար. էջ 178. Ճառընտ.* դստիկոնի յարկաց *Պիոն. հրտր.* WZKM, *28 (1914), 380,* դստիկոնիս *«պատշգամբ» Անկ. գիրք նոր կտ. էջ 5։*

=Յն. δίστεγον *«երկյարկանի կամ երկրորդ յարկ» բառն է, որ կազմուած է* δίς *«երկիցս» և* στέγη *«յարկ» բառերից. Հայերէնի մէջ առացել է բնդհանուր իմաստ։ Պէտք չէ կարծել թէ փոխառութիւնը կատարուած է Ս. Գրքի թարգմանութեան ժամանակ, որովհետև այն երկու վկայութեանց դէմ, ուր պատահում է այս բառը, յունարէն օրինակի մէջ գտնում ենք* ὑπερῷον *(Գծ. թ. 37) և* τριστέγου *(Գծ. ի. 9), բայց ո՛չ* δίστεγος*։ Փոխառութիւնը անշուշտ հին է, ինչպէս ցոյց է տալիս բառի տառադարձութիւնը.* δίστεγον *>* *դիստեգոն*, որից ձայնաւորների նմանութեամբ* *դիստիգոն և առաջին ձայնաւորի անկումով* *դստիգոն, անկանոն է միայն գ-ի տեղ կ։*

Աւգերեան, Լիակ. վրբ. սրբ. Զ. 569 յն. τριστέγος *«հոգեյարկ» բառից կազմուած։ ՆէՀ հանում է յն.* στέγος*-ից։*

Հիւնք. δίστεγος*-ից։*

*ԴՍՐՈՎ *«այպանումն, նախատանք» Նար., որից՝ դսրով առնել «նախատել» Ոսկ. երր. է, դսրով լինել «նախատանք կրել» Ոսկ. երր. դ, դսրովել «անարգել, թշնամանել» ՍԳր. կոչ. 30, 224. Եփր. ծն.,* դսրովանք *Կոչ. Ոսկ. ա. թես.,* դսրովիչ *Երեմ. ծա. 2,* դսրովութիւն *Եփր. ծն. Ոսկ. յհ. ա. 1. մ. ա. 22. Բուզ. կոչ. 42,* իմիճադսրով *Նար. գրուած է նաև* դրսով, դրսովել *ևն։*

=Պհլ. *dusrav *բառից, որ աւանդուած է* dusrub *դրչութեամբ և «վատահամբաւ, անպատիւ» նշանակութեամբ* (Nyberg, Hilfsbuch, *2, 61*). *Համմտ. պազենդ.* dusrav *(գրուած է* dusrūb*) «վատահամբաւ, անպատիւ», զնդ.* dāušsravā *«վատահամբաւ». Նախատիպ ձևն է զնդ.* *duš-srava-*, որ կազմուած է* duš *«դժ, վատ, զէշ» և* srav *«խօսիլ» բառերից (Համմտ. հայ.* slovo *«խօսք»). Ճիշտ ինչպէս սրանց հականիշը պազենդ. պհլ.* xusrav *(գրուած* xusrūb*) «բարեհամբաւ, լաւանուն»=սանս.* suçrávas- *«անուանի, հռչակաւոր»՝ կազմուած է* hu- (su-, xu-) *«լաւ» և* srav *«խօսիլ» բառերից (հայ. փոխառութեամբ* խոսրով *յատուկ անունը)։ Հայոն նախաձևն էր* *դուսրաւ>*դսրաւ, *որից գսրով և շրջեալ ձևով դրսով։—Հիւրշ. 145։*

ՆէՀ հլ. դուրս *և յն.* θύρασ*θρα «քաշքրշել»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ* Müller, Kuhns u. Schleich. Btrg. *5, 109, որին հակառակ է* Lag. Arm. Stud. *§ 663։ Տէրվ. Մասիս, 1881 մայիս 5 և Նախալ. 73 լսել և պարսաւել բառերի հետ սանս.* çru. *զնդ.* sru. *յն.* κλύω*, լտ.* cluere*, ալ.* sluti*, գոթ.* hliuma *«լսելիք», լիթ.* klausa *«հնութիւն», հրդ.* klōsen *ևն։ Հիւնք. յն.* θεασ*θρα։*

[ԴՐԱԺԵԼ *«պատել». ունի միայն Բառ. երեմ. էջ 81։ Ըստ իս սխալ գրչութեան արդիւնք է, որ պէտք է կարդալ* դրուժել *«պատրել», որով բառը կկցուի* դրուժ*,* դրուժան *արմատին։ Նոյնպիսի մի սխալի արդիւնք է նաև անդ՝ էջ 82* դրուել *«պատրել», որ դարձեալ պէտք է կարդալ* դրուժել *«պատրել»։]*

ԴՐԱՒԱՆՔ *«կապած բան՝ ազգ». իբր անբառոյգ բառ չիշում է միայն ԱՒ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. Ճառք 357 «Զպռոնկաց դէմն որ երէկ և եւանդ պայծառութեամբ փայլէին, այնպիսի բարեգործութեամբ յաւիտենական կեանքն յայնցանէ քան զամենայն պատուոյ խորշակարկամութիւնս ունելով զպղատգոյն երևեալ, իբրև ի սպանգոյ ումեքէ փոփոխեալ, ի վերայ շիւմն և դրախանքն ի բաց մաքրեալք» (Հրատարակիչը գնում է «թերևս գրահանքն»)։*

ԴՐԱՒՈՏ, ի–ա հլ. (յետնաբար ի հլ.) «ծառանող, պարէզպ» ՍԳր. Վրք. Հց. Վրդն. ծն., «Ադամի պարտէզը, Եդեմ» ՍԳր. եզն., «երկնային արքայութիւն» Ղկ. իգ. 43. Բ. կոր. ժբ. 4, որից՝ դրախտապաց *Փարպ.,* դրախտապան *«պարտիզպան» Եփր. ծն. քս. 31,* դրախտատունկ *Վրդն. յանթառ.,* դրախտաճուն *Պիտ.* դրախտաճալ *Արշ. Լծ. Կոչ. Յայտմ.։ Նոր բառեր են՝* դրախտաբնակ*,* դրախտաւայել*,* դրախտային*,* դրախտաճման *ևն.—Հին դա-*

*առաւկան մի ձև էր դրաստ «ծառաստան, պարտէզ» Պիտ. Փիլ. այլաբ. (գրուած դարաստ Բառ. հրհմ. էջ 74), որի վրայ աւելի ընդարձակ տե՛ս բախտ:

= Պհլ. պազենդ. 𐭤𐭫𐭥 1› draxt «ծառ», պրս. درخت diraxt «ծառ», բելուճ. dračk, drāč, քրդ. dɛrext «ծառ»: Իրանեանից է փոխառեալ նաև արամ. drḫṭ' «գերեզմանի առաջ շինուած պարսպէզ», որ գործածուած է Սարդիկէի լիւկերէն և արամերէն երկլեզուան արձանագրութեան մէջ (Meillet, REA, 7(1927), 315):—Հիւբշ. 145:

Հներից Վարդան, Մեկն. ծննդ. բ. 8 մեկնում է. «Դրախտ, որ է դիր աւտ մարդոյն և կամ դիւրխախտ ծառոց և կամ դրեալն Ադամ անդ ախտացաւ զառաջինն»: Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Շրէօդէր, Thesaur. 47, համեմատելով պրս. dirext բառի հետ: Ինճիճեան, Բեղան. Բիւզանդեան, 1820, էջ 210 դերև յախտից: Նոյն, Հնախ. Գ. 17 մեկնում է «տեղի անախտութեան»: Նշ դարաստան և պրս. տիրէխպան «ծառեր»: Lag. Urgesch. 636 դրաստ ձևի հետ՝ լիթ. daržas «պարտէզ» և պրս. diraxt «ծառ»՝ իբր drh «ճիւղ» արմատից: Մ. Մահրեանց, Ճռաքազ, 1859, 426—430 մէջ է բերում մինչև այն ժամանակ առաջարկուած ստուգաբանութիւնները, և ծաղրելով պրս. dirext ձևից հանել ուզողներին՝ մեկնում է «հդհմականն, ասեն, դրախտ՝ վայր երջանիկ էր և տարախտ», Müller, SWAW, 38, 577 առնս. dru: Նոյն, Kuhns u. Schleich. Btrg. 3, 87 պրս. diraxt:

ԳԻՒ.—Տփ. դրախտ, Ալշ. Ախց. երև. կր. Մշ. Զղ. դ'րախտ, Խրբ. Սեբ. դ'րախտ, Պլ. Ռ. բրախդ, Գոր. Ղրբ. Շմ. տրախտ, Ոզմ. դ'rmխտ, Մկ. Սլմ. Վն. տrmխտ, ՋԲ. դ'օրօխդ, բոլորն էլ «Ադամի դրախտը կամ երկնային արքայութիւն»:

ԴՐԱԿ «հասակ». այս անծանօթ բառը գըտնում եմ միայն Գէորգ Դպրի պարսկերէն բառարանում՝ էջ 39 ա, գատ բառի բացատրութեան մէջ:

*ԴՐԱԿՈՆԴԻԿՈՆ, ո հլ. (գրուած է նաև զանազան սխալագիր ձևերով. ինչ. դրոկոնդիկոն (Ռ<Դ), գրակոնտիկոն, գրագոնտիկոն) «ոսկու վրայ կիտուած, մինէ» Խոր. բ. 49. Մագ. թղ. 203, «խարելով փորագրութիւն» Պզատ. տիմ. 89, «շատաշարիւն, նուիճ խոտը (որձայի վրայ օձանման պուտ պուտ նշաններ ունեննալու պատճառաւ)» ՆՀԲ և ՋԲ (առանց վկայութեան), «սղնգնաբար, sardonyx» ZDMG, 40, 493:

= Յն. *δρακοντικόν բառն է, որ սակայն չկայ Bailly-ի հոյակապ բառարանի մէջ, ինչպէս նաև Sophocles-ի մոտ, բայց համմտ. δρακόντειος «վիշապանման», δρακοντίας «մի տեսակ ազնիւ քար», δρακόντιον «նուիճ խոտը», որոնցից փոխառեալ են լատ. dracunculus «նուիճ», draconitis, dracontia «վիշապաքար, որ ըստ հնոց գտնւում էր վիշապի գլխում», dracontium «նուիճ», dracunculus «փոքր վիշապ», torsade en or, ոսկեայ ոլորան զարդեր, ծոպ»:—Հիւբշ. 347:

ՆՀԲ գրակոնտիկոն ձևի տակ գրում է «բառ անյայտ ըստ ձայնին», բայց շտաշարիւն բառի տակ՝ յն. δρακόντιον բառի մօտ դնում է դրակոնտիոն: Brockelmann, Ուս. փոխ. բառից, Բրդմ. Տաշեան, էջ 99 վերի յն. բառերի հետ: Թոռնեան, ՀԱ, 1922, 597 յն. τραχυντικόν «քիթիւօրէն փորագրելով արծնուած», τραχύνω «անհարթ ընել, արծնել քիթիւօրէն փորագրելով» բայից: (Այսպիսի նշանակութիւն չգիտեն ո՛չ Bailly, էջ 1953, ո՛չ Sophocles, էջ 1088 և ոչ էլ նոր յունարէնը. չկայ նաև Pape-ի յն.-գերմ. երկհատոր բառարանում, 1888. հա. Բ. էջ 1136):

*ԴՐԱԿՈՆՏԻՍ «վիշապաձուկ, մի տեսակ օձանման ձուկ». մէկ անգամ ունի Վեցօր. 141 «եւ զարձեալ այլակերպ այլանշանք, որ անուանեալ կոչի դրակոնտէս (ձեռ. դրակոնատէս) և միւռենէս». ուրիշ վկայութիւն չկայ:

= Յն. δρἀκοντες, որ յոգնակին է δρἀκων «վիշապ. 2. վիշապաձուկ. trachinus draco L» բառից:—Հիւբշ. 347:

Ուղիղ մեկնից նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ:

*ԴՐԱՄ, ի, ո? հլ. «դիրհամ, երկու ունկի,

կէս սիտղ» եւ. լբ. 25. Տոբ. և. 29, «դրամ, ստակ, փող» Ղկ. ժե. 6. Եզն. Խոր. բ. 10, որից՝ դրամաժողով *Բ. մակ. ժա. 3,* դրամակշիռ *Անան. շիր. Ճառընտ.,* դրամակուռ *Մխ. դտ.,* դրամել *Վրք. Հց.,* դրամիկ *Օրբ. Հկճռ. ժբ. Անան. գիտ. 23,* երկդրամեան *ՍԳր,* չորեքդրամեան *Յոր. խր. 11,* կնճադրամ *Կանոն.,* խոստովանադրամ *Կիր. Երզն. խր.։ Նոր բառեր են՝* դրամագլուխ, դրամանենգ, դրամատուն, դրամարկղ, ոսկեդրամ, դրամատէր, դրամափոխութիւն, դրամագետ, դրամագիտութիւն, դրամաշորթ, դրամապաճակ *են։*

=*Պհլ.* dram, *պրս.* درم diram *«մի փոքրիկ կշիռ, դրամ. 2. դրամ, փող», քրդ.* dirāw *«փող»։ Իրանեան բառը փոխառեալ է յն. Ծραχμή բառից, որ նշանակում է «մի փոքր քաշ. 2. մի տեսակ դրամ, որ արժէր 6 օբոլ, մօտ 1 ֆրանկ». (անցել է* *draxm, *drahm *միջին ձևերից. համմ. արաբ.* درهم dirham).—*յոյն բառը բուն նշանակում է «բան, մի բան պարունակութիւնը (յատկապէս մետաղեայ դպիրների մի բառը)» և կցւում է* δράσσομαι *«բռնել, բռնով վերցնել» բային* (Boisacq, *198—9*)։—*Հիւրշ. 145։*

Հներից Անան. շիր. (Հրտր. Պատկ. էջ 28) դիտէր բառի ուղիղ ծագումը և ասում է. «դրամ բուս պարսկական լեզուին անուանեցաւ»։ Այլուր գտնում ենք համեմատուած մարդ *բառի հետ. «Անդրադարձելով (հակառակ կարդալով)* մարդ=դրամ *վերընդարձակի վերածանութեամբ» կամրջ. «դրամն օրինակ բնութեանս մեր, զի մարդ տառիւքն է անդրադարձութեամբ». Մխ. դտ.։ Ուղիղ մեկնեց նախ Շրէօդէր,* Thesaur. *47, յետոյ Ալդերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 79, ԳԴ, ՆՀԲ։*—Peterm. *68 արաբ.* dirham։ Windisch. *10 յն.* δραχμή։—Müller, SWAW, *38, 576 արաբ.* dirham։

ԳԻՒ.—Տիգ. prmd, *Զթ.* դ'բ'ոմ? *Շմ. տրէմ. միւսները զանազան օտար բառերով։*

ՓՈԽ.—Վրաց. დრამაჲ დრამայ *կամ* დრამი *«դրամ» (Մառ,* Тексты и разс. *IV յատկ. և VII էջ կդ. Համարում է հայերէնից փոխառեալ). ըստ Զուրինով², էջ 481 կայ նաև* დრამა *դրամա «մի տեսակ հին դրամ. 2. պտղի կոշուած տուրքը, որ էր 2½ փութ ալիւր»։*

ԴՐԱՆԴ, ԴՐԱՆԴԻ *տե՛ս Անդ։*

Հիւնք. յն Θύρετρον *«դուռ» բառից։* Pictet, *բ. տպ. հտ. Բ. էջ 327 կիմր.* trotlwy, *արմոր.* treuzou *բառերի հետ։*

ԴՐԱՆՋԵԼ *«ապատամբել, վտարանջել» Բառ. երեմ. էջ 81 և Հին բառ. (ունի միայն ՀՀԲ, իսկ ՆՀԲ յիշում է վտարանջիմ բայի տակ).—անստոյգ բառ։*

ԴՐԱՍԱՆԴ, ի–ա *հլ. «տօնի օր դռան վրայ կախուած ծաղկեայ զարդ» Լծ. ածար. ուրիշ վկայութիւն չկայ։*

Պատահական է քրդ. درازنیك derazink *կամ* ترازنیك terazink *«դռան սեմը, դռան փայտեայ զարգերը», որի հետ* Justi, Dict. kurde, *էջ 177 համեմատում է պրս.* dārābzīn, dārāfzīn *«լինարան, որ լինի լեզերս ասֆալտի, փոքր պատուհան, որ լինի ի վերայ դրանն», թրք.* درابزین derabzin, طرابزان tərabzan *«վանդակորմ, ճաղեր», իբր յն.* τραπέζιον *ձևից։*

ԴՐԱՍՊԱԿ *«բանակի բաժանմունքներից մէկն է». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Զենոբ, էջ 48 «Մինչև եւ արքայ ի դրասպակս զօրուն հիւսիսոյ»։*

=*Անշուշտ իրանեան փոխառութիւն է, բայց մայր ձևը անյայտ է (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 46)։*

ԴՐԱՍՏ *տե՛ս Դրախտ։*

*ԴՐԱՎԷՐՍ *«խաչի լայնքին դրուած փայտը, թևերը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բրս. մրկ. 348 «Վայնութիւն խաչին, որ է դրավէրսն, այսինքն թևք խաչին»։*

=*Ֆրանս.* traverse, *լտ.* traversus *«որևէ բանի լայնքին կամ խաւարնակ դրուած փայտ ևն». կազմուած է* trans *մասնիկով՝* verso *«դարձնել» բայից։—Ա.Մ.*

*ԴՐԱՔՄԱՅ *(գրուած նաև* դրաքմէ, դրազմէ*) «դրամ կշիռը և փողը» Անան. շիր. Հրտր. Պատկ. էջ 27, 33. Համմ. դիդրաքմայ «երկդրամեան», որից հայածև* երկադրաքմայ

կամ երկադրամեան (նորագիւտ բառ) Տիմոթ. կուլ. 289։

=Յն. δραχμή «կշիռ և դրամի անուն», որի ծագումը տե՛ս դրամ բառի տակ. սրանից են փոխառեալ նաև լտ. drachma, եբր. דַּרְכְּמוֹן darkemon. պհլ. dram, պրս. diram, արաբ. درهم dirham, վրաց. დრაჯმა դրաքմա կամ დრახმა դրախմա են. տարբեր տառադարձութեան արդիւնք է նաև հյ. տրխաճայ «25 դրամ (կշիռ)» վասիլ. 14։—Հիւբշ. 347։

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բցար. շփ. էջ 81, նոյնը յետոյ ՆՀԲ են։

ԴՐԳԱԼ տե՛ս Տարդալ։

ԴՐԳԱԻԵԼ «կակազել, լիռռալով խօսիլ». անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Ածաբ. մկրտ. «Մինչ դու ոչ է դրդաւել լեզուդ և ոչ ցամաքեալ, և ոչ տուժի»։ Աբ ջնջած է այս ձևը և փոխարէնը գրած է դրդուաղել։

ԴՐԴԵԼ «գրգռել, շարժել, մի բանի յորդորել, համոզել» Ոսկ. հս. և մ. Ագաթ. Եւս. քր., որից՝ դրդիլ «բազմութեամբ առաջ շարժուիլ» Կորիւն, էջ 13. Ագաթ. Թ. վկ. արև. (տե՛ս Նորայր, Կոր. վրդ. և թրգմ. էջ 100). Եղիշ. դ. էջ 74, դրդեցուցանել Ա. մնաց. իա. 1, դրդիչ եզն., դրդումն Փիլ. այլաբ., դրդապատճառ (նոր բառ). այս բառերի արմատն է քսո ԱԲ՝ դիրդ, որից ունի դիրդ լինել «դրդիլ, յորդորիլ», իսկ քսո ՆՀԲ և ՓԲ՝ դրուդ. համմ. Կոստ. երգն. 134՝ «Ծովն դրուրդ առնու սիրով» (շարժուում՝ ծփում է)։ Նոյն բայի աստկականն է ԴՐԴՈՒԵԼ «ուժգին շարժել, տեղից խախտել» Սղ. ՀԺէ. 13. Ագաթ. Փարպ. Խոր., դրդուիլ «այս ու այն կողմ շարժիլ, տատանիլ» Բարսղ. գ. 26, դրդուեցուցանել Եղիշ. Փիլ. այլաբ., դրդումն? Լմբ. սղ. գրուած է դդուել Պզատ. օրին. 86։ (Այս բառերն են, որ Բառ. եբեմ. էջ 79 և 81 իրար խառնելով՝ գրում է դրդել «կուտակել կամ ձայն հանել», դրդու «ջեռնալ, որ է սկիզբն վիճի», դդդուլ «ջեռնուլ, որ է սկիզբն աղաղակի». վերջին երկուսը իմա՛ դրդուել)։

ՆՀԲ դրդել համեմատում է թրք. dürt-mek «մշտել» բառի հետ, որ է թթր. تیرتمك tirtmek և որի նմանութիւնը պատահական է։ Lag. Urgesch. 176 դրդուել կցում է աֆղան. dŭrŏdawī «ճամբորդ» բառին։ Հիմնք. թրք. պիւրթմէք «մշտել» և պեօրթիւ «խըթան»։ Meillet տե՛ս դանդաղ բառի տակ։ Շահինեան, Բիւր. 1900, 341 և Գազանճեան, Արև. մամ. 1907, 934—5 և Karst, Յուշարձան, 419 թրք. պիւրթմէք։—Petersson, Ar. u. Arm. Stud. 77 ըստ Meillet-ի համարելով կրկնական՝ կցում է յն. τοιθορύσσειν «շարժել» բային, որի նախաձևը դնում է dhoidhor-u, իսկ հայունը dhidhrūu. տառանց կրկնութեան է լեթթ. druwis «տարտատ», druwetēs «վախենալ»։

Գիւր.—Համշ. դրդիլ «տեղից շարժիլ, երերալ»։

⊙ԴՐԴՆՋԻԻՆ տե՛ս Դրդջիւն։

ԴՐԴՈՒԱՁԵԼ տե՛ս Գդուաղել և Դրդաւել։

ԴՐԴՈՒԵԼ տե՛ս Դրդել։

⊙ԴՐԴՋԻԻՆ «պատաւիր ցնդական խօսքեր» եղն. նոյն նշանակութիւնն ունին նաև դըրդրնջիւն, Ոսկ. յհ. ած. դրդջումն ՋՔ։

=Բոլորն էլ բնաձայն են և ծագում են դ նախնական ձայնից կրկնութեամբ և ն, ջ ածանցիչներով։—Աճ.

Այս մեկնութիւնը տուած եմ նախ ՀԱ, 1899, 204։

ԴՐԵՄԽՈՂ «հոտած, ժահահոտ». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած հետևեալ տեղերում. «Մարդախոշոշ, շարաշշունջ, դրեմխող պիղծ բերանոյն». Անան. խոստ. 2. «Ի բաց տարեալ սրտհնացի ի մէնջ այսպիսի դրէմխոխ և ապիրատ խորհրդոց առարկուածք». Յհ. իմաստ. խոստ. 8։—Այս բառն է, որ Բառ. եբեմ. էջ 81 գրում է. «Դրեմ. խօխ կամ ժահահոտ»։

*ԴՐԵՇՏ «դժուար». ունի միայն Բառ. եբեմ. էջ 81։

=Պրս. دشت duršt «խիստ և խոշոր, մեծ, ահագին»։—Աճ.

ԴՐԻՃ (ներգ. ի դրճի) «համայական կծիկ, համլեակ» Կանոն. ուրիշ վկայութիւն չկայ. անստոյգ բառ է, որովհետև կարող է նաև «դագազ» իմաստով առնուիլ. տե՛ս բադրուր բառի տակ։

ԴՐԻՍ «դժուար». ունի միայն Բառ. երեմ. էջ 81։—Տե՛ս և դրնջալ։

*ԴՐԻՓԱՔՏԱՅ «փայտեայ վանդակապատ». մէկ անգամ ունի Փիլ. լին. 240 «Կաղնահարք ...որք զեղատս և զմայրս և զհամանմանս հատանեն և զայլս՝ յորոց արդեօք և դէպ լինիցի յանտառից նիւթոց կառուցանել ինչ, որ դրիփաքտայքն կոչին»։ Այս բանը սխալ հասկանալով Լծ. փիլ. մեկնում է իբր ծառի անուն. «Փիճի և սօսի և զեղատան, որ է սօնոպրինին, և դրիփաքտայքն, որ է վայրենի ծառոցն անուն»։

=Յն. δρύφακτον, δρύφακτα «փայտէ վանդակապատ, ցանկապատ» կազմուած է յն. δρῦς «փայտ, ծառ» բառից։

Բառ. երեմ. էջ 81 մեկնում է «վայրենեաց», որովհետև վերի մեկնութեան մէջ դրուած է «դրիփաքտայքն, որ է վայրենի...»։—ՆՀՒ մեկնում է «կաղնի վայրի և պատնէշ կրկտեալ յոստոց», իսկ ԱՒ միայն «ճղերէ շինուած պատ»։ Բառիս ծագումը ուղիղ մեկնեց ՆՀՒ։

⊙ԴՐՆԴԻԼ «ձիու ոտքերը գետին զարնելը». այս բայական ձևով գործածուած չէ, բայց ունինք սրանից դրնդիւն «ձիու ոտքերի դոփիւն» Միք. ա. 13։—ՀՀՒ արմատը ևս թաղրում է դրինդ։

=Բնաձայն բառ. կազմուած է դ պարզական ձայնից՝ ածանցիչներով. համմտ. ճոնդիւն, թրնդիւն, շռինդ։—Աճ.

Հիւնք. 215 դդուել բայից, իսկ էջ 262 անդունդ բառից է հանում։ Վերի մեկնութիւնը տուած եմ նախ ՀԱ, 1899, էջ 204 ք։

ԴՐՈՅԼ «գոնապան». մէկ անգամ միայն ունի Բրս. ողորմ.։

ՆՀՒ, որից էլ Հիւնք. հանում են յն. θυρωρός համանիշից։

ԴՐՈՅՍՔ «ծամակալ, գլխի մազերի կապ». ունի միայն ԱՒ։ վկայութիւնը անյայտ է։

=եթէ կիլիկեան շրջանի բառ է, կարող է լինել ֆրանս. trousse «կապ, տրցակ, կապոց» (ամէն տեսակ բաների, նաև մազի)։—Աճ.

ԴՐՈՇՄ, ի–ա? հլ. «կնիք, խարան, նշան» ՍԳր, «օրինակ, նշան» Յայտ., «մեռոնով օծում» Ագաթ. Մաշտ., «նամակի վրայ կնիք, ստորագրութիւն» Եւս. պտմ., որից՝ դրոշմել ՍԳր. Եւս. քր. և պտմ. Եղն. Ագաթ., դրոշմիչ Վեցօր., դրոշմարար Ոսկ. յհ. ա. 45, դրոշմատուրիւն Եւս. քր., անդրոշմ Սեբեր., դրոշմաճառ դրոշմ Վեցօր. 162 (լատադոյն ընթերցուածն է դրոշմած առ դրոշմ), խաչադրոշմ Անան. եկեղ., ձուլադրոշմ Շար., նկարադրոշմ «գիր, նշանագիր» Յերոն., նրշանադրոշմ Սեբեր.։ Նոր բառեր են՝ դրոշմաբուղթ, նամակադրոշմ, դրոշմանիշ։

Lag. Gesam. Abhd. 62, 13 դրօշակ բառի հետ. drafš արմատից, որ մերժում է Հիւբշ. 147։ Justi, Dict. kurde 181 բառիս հետ նոյն է գնում պրս. دروش durōš «է գործի իմն ի գործեաց արիւնառուացս», քրդ. دروو durūw «նրբշան, խարան, մարմնի վրայ մնացած հետք, դէմքի նմանութիւն»։ Canini, Et. étym. 89 պրս. darāyiš «գծել, դրոշմել»։ Հիւնք. դրօշել բայից։ Müller, WZKM, 10, 354 դրօշ «արձան» բառի հետ։ Scheftelowitz, BB 29, 67 պրս. duroš «խարան» բառից փոխառեալ. մ մասնիկ է։ Պատահական նմանութիւն ունի ասոր. رشما rūšmā «նշան»։ Justi, Kurd. gram. 94. քրդ. durūw գնում է հլ. դրոշմ բառից՝ շ-ի անկումով և մ>w ձայնափոխութեամբ։

ԳԻՒ.—Ղրբ. տրիւշմը «խողի ականջի վրայ կտրելով արուած նշան՝ հանաչելու համար (դամղա)», Ջղ. դ'ռօշմել «կնքելու ժամանակ մանուկը մեռոնով օծել», Եւդ. Պլ. (կատակի լեզուով) թռօշմէլ, Ասլ. դ'ռօշմէլ՝ «լաւ ծեծել, դանահարել».—Կայ և դրոշմ Ակն. «մարդու բնական կազմուածքը»։

ԴՐՈՎՔ «դրովք կամ խիստ». այսպէս ունի Բառ. երեմ. 81. ի՛նչ լինելը յայտնի չէ։

ԴՐՈՒԱԳ, ի–ա հլ. «սիւնագլխի, խորանի ևն զարդ» ՍԳր, «գրքի գլուխ, հաստուած, դպրութիւն» Փարպ. Խոր. (յեռնաբար գրուած է նաև դրուակ Խոսր. պարգ. 7, 25. Նար. էջ 93 ևն), որից՝ դրուագել «զարդերով պատել» ՍԳր. Եփր. եբր. էջ 216 (սխալ յարմարեցրած սրանից դրուագրել Լմբ. առեն.),

բազմադրուագեալ *նիւս. բն. կիւրղ. գնձ.*, իմիճադրուագեալ *Դիոն. ածայ.*։

Բառիս նշանակութեան համար հմմտ. Տաթև. ամ. 280 «Քանդակելն դրուագելն է»։ ՆՀՒ դիր, դրութիւն բառից։

Հիւնք. պրս. ﻛﻮﺭ durūgar «հիւան» բառից։

ԴՐՈՒԱՏ, ի–ա հլ. (յետնաբար ի հլ.) «գովեստ, գովասանք» Ոսկ. ա. Թես. գ. (գրծ. դրուատօք). Խոր., որից՝ դրուատիք (-ատց, -ատօք) Ագաթ. Ոսկ. մ. ա. 15. Փարպ., դրուատել Պիտ. Նանայ., դրուատաւիք Կիւրղ. ղկ., նախադրուատ Թէոդ. մայրագ., շնորհադրուատ Թէօդ. խչ., յոգնադրուատ Կիր., բազմադրուատ Նար. խչ.։

*= Հպրս. *druwatā- ձևից (Marquart, Յուշարձան, 292), որի հետ հմմտ. գնդ. drvatāt- (< druvatāt) «առողջութիւն». Նոյն բառը պարսկականում դարձել է drūt կամ drōt նշանակութեան նոր փոփոխութիւններով, այսպէս՝ պհլ. drūt, drōt «առողջութիւն, բարօրութիւն, բարև», drūtīk «քաղաքավար», pa-drūt «օրհնութիւն», պազենդ. drūδ «ողջոյն, խաղաղութիւն, բարօրութիւն», պրս. ﺩﺭﻭﺩ durōd «օրհնութիւն, բարեմաղթութիւն, ապօթք» (Horn, էջ 123), «առողջութիւն, բարօրութիւն, բարև, ապօթք, գովեստ, դրուատիք» (Zenker), «ողջոյն կամ խաղաղութիւն» (ԴԴ), ﺩﺭﻭﺩﻥ durōdan «գովել, ներբողել», padrūd «ողջոյն, մնաք բարով, հրաժեշտ».—բոլորի արմատն է գնդ. drva, հպրս. duruva- «առողջ» = սանս. dhruvá- «ամուր, հաստատ, մնայուն» (Bartholomae, էջ 782)։—Հիւբշ. 146։*

Ուղիղ մեկնեց նախ Պատկ. Матер. I. 9, որից յետոյ Müller, WZKM, 5, 352 և Հիւնք.։

ՓՈԽ.—Վրաց. დროება დրոեբա (տե՛ս Մատ, Հայ.-վրաց. յարաբերութ. էջ 41)։

ԴՐՈՒԱՐ «խոյ». ունի միայն Բառ. երեմ. էջ 82, հմմտ. անդրուար։

ԴՐՈՒԻ տե՛ս Դրդել և Դրոհ։

**ԴՐՈՒԻ «վնասակար մի դև». յիշում են Հին բն. և Բառ. երեմ. էջ 82։*

=Պհլ. փարս. drūj, գնդ. druj «կին դև է, չարութեան և անմաքրութեան դևը», ծագում է druj «խարել» արմատից և բուն նշանակում է «խաբող». յատկապէս երազախաբութիւն պատճառող չար ոգին է. հմմտ. հայ. սատանախաբութիւն «երազափորձութիւն»։

Բառիս վրայ խօսած են Ալիշան, Հին հաւատք, Վենետ. 1895, էջ 218 և Մ. Աբեղեան, Armenische Volksglaube, 1899, էջ 35։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Ալիշան (անդ), իբր գնդ. դրուխս, տերուն, բայց նաև դիր+ոյժ, որ է պրս. դիր «դևը», հլ. տիր «ոյժ», լտ. durus, ֆրանս. dur «խիստ», tirannus «բռնատուր» կամ դուժ «խուժդուժ»։

**ԴՐՈՒԻԺ «անընդունակութիւն, խարդախութիւն. 2. անընդոգ, խարդախ». այս իմաստներով նշանակում է ԱՔ, բայց մատենագրութեան մէջ առանձին չէ գործածուած, այլ բարդութեանց և ածանցմանց մէջ. այսպէս՝ ուխտադրուժ Երեմ. գ. 7, 10. Հռ. ա. 31. Ոսկ. Հռ. Փարպ., տիրադրուժ Եզն. Կորիւն. Բուզ., բարեդրուժ Ոսկ. Հռոմ. Բ. տիմ., դրժել (<*դրուժել) «խարել, դաւաճանել, ուխտը մերժել» Փիլ. լին. ՅՀ. կք., դրժողութիւն Խոր. ՅՀ. իմ. պատ., դրժութիւն Պիտ., դրժումն Փիլ., ղրդաւդրժել ՅՀ. կք., դաւադրժող ՅՀ. կք. գրուած է նաև շրջեալ –ժր– ձևով. ինչ. դժրել Փարպ., դժրաւիք Իգն. Նիւս. երգ., դժրութիւն Ոսկ. առնտ. դ. (իսկ Զգօնի դժրամիտ, դժրեալ ձևերը (էջ 284—5) ասորի բնագրին համաձայն պէտք է ուղղել դժուարամիտ, դժուարել՝ ըստ Վարդանեան, ՀԱ, 1914, 120)։—Նոր գրականում՝ երդմնադրուժ, խոստմնադրուժ ևն.—հմմտ. նաև դրուժ «դև», դրուժան և դրաժել բառերը։*

= Հպրս. duruž, duruj «առել», գնդ. družaiti «դրժում՝ խաբում է», miθrōdruj- «անհաւատարիմ, դրուժան», պհլ. druxtan «առել», պազենդ. družīdan «առել». mihirāndruž «ուխտադրուժ»։ Իրանեան արմատի երկրորդ ձևը ներկայացնում են հպրս. 𐎭𐎡𐎢𐎺 drauga-, գնդ. draoγa-, պհլ. drōγ, drōg, պրս. ﺩﺭﻭﻍ durōγ, քրդ. durūγ, աֆղան. darōγ, բելուճ. darōg, drōg «առուտ, առախօսութիւն». սրանցից փոխառութեամբ էլ բուգ. դուրուֆի, չէք. դուրուխի «առախօս» (Horn, § 557, Bartho-

lomae, 768)։ Այս բոլորը ծագում են հնխ. dhreugh- *արմատից, որի պարզականն է* dhreu-, *և որի ձայնդարձներն են* dhrou-, dhuṛ, dhru, dhuer-. *Համմ. սրանցից ծագած հետևյալ բառերը՝ սանս.* drúhyati «մեռանել, չանալ», *լատ.* fraus «խաբեբայություն, սխալ, թակարդ, ոճիր», *լիթ.* nu-draudus «դատապարտելի», *հին.* draugr, *իռլ.* aurdrach «տրտնական, խարբական տեսիլ», *հաթբ.* bidriogan, *հրպ.* triogan, *գերմ.* trügen «խաբել», *սանս.* dhrúti- «խարբեբություն», dhúrvati «խաբելով թակարդը դնել», dhūrtu- «խրտմանք, նենգաւոր», dhvará- «խարբական», dhvarā «սատանայ» են (Walde, *313—4*, Pokorny, *1, 874*)։—Հիւրշ. *146*։

ՆՀԲ հանում է դժ. դժուար *բառերից*։ Windisch. *10 հլ.* դժ- *և սանս.* duçyami։ *Ուղիղ մեկնեց նախ Եւրոպա, հանդէս Վիեննայի, 1849, էջ 200, իբր հպրս.* դիւրում։ *Այնուհետև գալիս են* Lag. Urgesch. *650*, Müller, SWAW, *42, 253՝ իբր սանս.* druh, *գնդ.* druj *են։ Տիրվ. Նախալ. 88 սանս.* druh, *գնդ.* druj, *հպրս.* duruj, *պրս.* durōγ, *հաթբ.* driogan *ձևերի հետ. հնխ.* drugh, dhrugh *արմատից։* Meillet, MSL, *7, 58* *ուզում է հայ բառը բնիկ համարել՝ նկատելով որ* դրուժան< *դրոյժան ներկայացնում է* dhreugh-, *իսկ* դրժել<*դրուժել՝ dhrugh- *ձայնդարձը։ Հիւնք.* դաշն *բառից։ Արմապաշտան, Արմէնիա՝ համեմատում է սանս.* dârjire «խոժռոտել դիմադրութիւն» *ձևի հետ։*

*ԴՐՈՒԹԱՆ «խաբեբայ, նենգաւոր, խարդախ» ճառընտ. (երկու անգամ)=Վրք. և վկ. Ա. 536. ուրիշ վկայութիւն չկայ։

=Հպրս. draužana-, draujana- «սատանայ» (Bartholomae, *769*), պհլ. 𐭣𐭫𐭩𐭦𐭭 drōžan «սատանայ», drōžanān «չարք, անարդարք», պազենդ. drōžan «սատօրինք», drōžangar «կեղծութիւն, խարդախութիւն», drōžanī նոյն նշ. *բոլորն էլ ծագում են իրանեան* druj *արմատից, որի վրայ տե՛ս նախորդը։ Ածանցումը տեղի է ունեցած իրանեանների մօտ և հայերը նոյն բառը պատրաստ ձևի տակ նրանցից փոխ են առել։—Հիւրշ. 146*։

Ուղիղ մեկնեց նախ Եւրոպա, 1849, էջ 200, իբր հպրս. դաուժանա «չարագործ»։

ԳԻՒ.—*Աս.* դ'րիւժա, *Սվ.* դրոջան «շատ անհանդարտ (տղայ)», *Եւդ.* դոջան, *Նխիջ.* ըոջան *(գիւղերում կայ և բոժանգ, Չալթը գիւղում՝ դոջան) «դաժանաբարոյ, անհամբոյր, կռուազէր», Մն. Պլ. Ռ. Սեբ.* դրոջան՝ *անյայտ նշանակութեամբ անարդական ածական, որ տրւում է մի՛միայն յոյներին (արևմտեան տատադարձութեամբ՝ տռճա՛ն հոռոմ, տրոճա՛ն շուն)։ Նոյն բառը՝ բուռ Ս. Մխիթարեան. Բիւր. 1898, 865 ունին նաև Անդրապի Բրբահոս հայերը՝ «խոշոր» նշանակութեամբ օր.* derjan gibi kedi «տռճանի պէս կատու». *Մխիթարեան աւելացնում է թէ «այս բառի ստանդութիւնը պակասում է»։*

ԴՐՈՒՆԱՉ *տե՛ս Դարինաճ։*

*ԴՐՈՒՆԴԱՐ «վաշտապետ». *Նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Սեբ. լբ. հրտր. Պատկ. էջ 116 «Եւ զորդի նորա զանդրանիկ, որում անունն էր Սմբատ, կարգեաց արքայ ի պատիւ հօր իւրոյ, տունալ նմա պիշխանութիւնն բնիկ տանուտէրութեանն տապետութեան, և արար զնա դրունգար զօրաց իւրոց»։*

=Ծն. δρουγγάριος «բիւզանդական զինուորական մի տաճման է. պետ վաշտի կամ մէկ δρουγγος-ի, որ պարունակում էր 1000-ից մինչև 3000 զինուոր (հետևակազօր)։ Փոխառեալ է լտ. drungarius *ձևից և սա էլ ծագում է լտ.* drungus «վաշտ, գունդ» *բառից։ Ծանօթներից է նաև հպ.* drongarь, drungarь (Berneker, *229*)։—Հիւրշ. *347*։

Բառս Սեբէոսի ձեռագրում և հին տպագրութեան մէջ դրունդար ձևն ունէր. առաջին անգամ վերի ձևով սրբագրեց ու մեկնեց Պատկանեան, հրտր. Սեբէոսի, էջ 202.—Նոյնը նաև Նորայր, Հայկ. բառարն. էջ 10։

ԴՐՈՒՍ «ես». *այսպէս ունի Բառ. երեմ. էջ 82 (նաև բ. տպ.)։ Թուի թէ կիսատ գրուած մի բառ է փխ. Գրուսիղայ «Փելիքս գառաւորի կնոջ անունը» Գծ. իդ. 24, որ յն. նշանակում է «ցօղով սրսկեալ» (տե՛ս Մխիթար Աբբայի Յառուկ անուանց բառարանը, էջ 74)։*

*ԴՐՈՒՏ *«ուղիղ, շիտակ». գործածական է արդի կովկասահայ բարբառներում. հնից ունինք տրուստ Սմբ. դատ. 160 (հրտր. Ղևոնտ. դրուստ), որից բայական ձևով դրստել «ուղղել, շտկել» (ունին Ակն. Բլ. երև. Լ. Ղրբ. Նբ. Տփ.), հնից՝ տրստիլ «շտկուիլ, մի բան հաստատուիլ» Աննսիզք, էջ 11։

= Պրս. درست durust «ողջ, ամբողջ, ուղիղ», պհլ. durust, բելուճ. drust, քրդ. durust «ճշմարիտ», որոնք ծագում են հպրս. drva-sti «առողջ մարմնով» բառից (տե՛ս Horn, § 551)։—Աճ.

ԴՐՍՈՎ տե՛ս Դրսով։

*ԴՐՕՇ, ռ, ի հլ. «դրօշակ» Բ. մակ. ժե. 21. Եղիշ. Փարպ., «դունդ, վաշտ» Բուզ. Ճառընտ., որից՝ դրօշակ (-ակ մասնիկով) «դրօշ» Մագ., դրօշակիր Ոսկ. գաղ. Մարքին. Ճառընտ. (գրուած է նաև դրովշակիր), խաչադրօշ Մամիկ. Արծր., աղաւնադրօշ Բուզ. դ. 3. նոր բառեր են՝ դրօշակակիր, դրօշակակալ, դրօշակաւոր, արծուեդրօշ, սպիտակադրօշ, դրօշահամբոյր ևն։

= Պհլ. drafš, գնդ. drafša-, պրս. درفش dirafš, օսս. tərəša «դրօշակ, որոնք կցւում են սանս. drapsá «դրօշակ», drāpi- «զգեստ, վերարկու». լիթ. drāpanos «սպիտակեղէն, կանացի տակի շոր», իտալ. drappo «կտաւ», drappello «դրօշակ», ֆրանս. drap «կտաւ», drapeau «դրօշակ» բառերին և յն. δράπω «կտրել», δρέπανον «մանգաղ» (>ալբան. drapën, թրք tərpan), մրգ. trābe «ծոպ», հհյուս. trefill «ցնցոտի», առս. գոթ. drapáts. սերբ. drápati, լհհ. drapac' «պատռել, քերել» բառերի հետ հանւում են հնխ. dre-p արմատից (Pokorny, 1, 801—2), որ աճած է der-, «պատռել» պրտղականից (>հյ. աեռ. աւելին տե՛ս այս բառի տակ)։ Իրանեանից են փոխառեալ նաև սոգդ. դրաշ։ dirafša, արար. درفس dirafs «դրօշակ» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 238)։—Հիւբշ. 147։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ, յետոյ Böttich. ZDMG, 1850, 353 և 363 (ուր յիշուած է նաև սանս. drāpi «զրահ» և ասոր. ձևը), նոյնը կրկնում են և միւսներ։ Մորթման, ZDMG, 26, 692 բևեռ. dirusi=դրօշ։ Բառիս վրայ ընդարձակ, բայց աւելորդ մի յօդուած ունի Ներսէսեան, Արևել. մամ. 1909. էջ 13—18։

ԴԻՒ.—Գործածւում են զանազան օտար ձևվեր. վրացերէնից փոխառեալ ձև է Տփ. դրոշա, որ գտնում ենք նաև Մխ. այրիվ. էջ 81 «Փոխէ ցաւ ի Քրիստոս՝ վասակ իշխանաց իշխանն և էառ զդրօշայն արդի նորա քաջն Պռօշ»։

ՓՈԽ.—Վրաց. დროშა դրոշա, დროშაჲ դրոշայ «դրօշակ», նադրոշ* սադրոշ, նադროშო սադրոշո «գաւառ», მედროშე մեդրոշե «դրօշակակիր», թուշ. დროშა դրոշա «դրօշակ». այս բոլորը փոխառեալ են հայերէնի միջոցով, ինչպէս ցոյց է տալիս ո ձայնը։—Հատ Մատ, ЗВО, 17, 025 կան նաև վրաց. დროჲო դրաոյո, დროჲი դրոյի, დროჲანი դրոյանի, დროუჲი դրաուի, «դրօշակ» ձևերը Պիղատոսի անվաւերականում, որոնք հայերէնից անցել են վրացերէնի՝ թարգմանութեան միջոցին։

ԴՐՕՇ, ի հլ. «կուռքի պատկեր, ա՛նձն» Սիրաք. լբ. 28. Պզատ, օրին., որից՝ դրօշել «փորել, քանդակել» ՍԳր. Եզն. Ոսկ. փիլիպ., դրօշագործութիւն «արձանագործութիւն» Եզրն., դրօշած Ոսկ. ևս., դրօշուած Գ. թագ. ղ. 18, 19, դրօշեալ «քանդակեալ պատկեր» ՍԳր, fառադրօշ նիւս. կազմ.։

ՆՀԲ դրով յօշել. պրս. tirāšīdan «քանդակել»։ Canini, Et. étym. 89 պրս. darāyiš «գրել, ապել»։ Հիւնք. պրս. tirāšīdan «թրաշել, ապել» բայից՝ Müller, WZKM, 10, 354 յն. δρέπτω «ճանկռտել, պատառտել» բայի հետ։ Աւելի լաւ և հաւանական է նոյն հեղինակի (անդ. էջ 353) տուած ծանօթութիւնը, որով ուզում է միացնել բառս նախորդի հետ, ասելով թէ դրօշակը հին ժամանակ ո՛չ թէ շորից էլ, այլ տարբեր տնասակի մի բանից, օրինակի համար բարձր ձողի վրայ հաստատուած մի քանդակ, արծիվ, վիշապ ևն։ Այսպէս է ընդունում նաև Հացունի, Հայ դրօշները, էջ 7։

ՓՈԽ.—Վրաց. დროში դրոշի «կուռք» (իսկ Ջուբ. 2, 483 դնում է დროშმი դրոշմի «կուռք»), թուշ. დროშ դրոշ «կուռք». սրանք

էլ անցել են վրացերէնի՝ հայերէնի միջոցով, ինչպես ցոյց է տալիս ո ձայնը։ Նկատելի է վրաց. დროშა դրոշա «դրօշակ» և დროშიо դրոշի «կուռք» բառերի մէջ վերջաձայն ձայնաւորի տարբերութիւնը։

*ԴՐՕՇԱԿ, ի–ա հլ. «զգեստի ծայրը, քղանցք» ՍԳր. Եփր. թգ. 352. գրուած է նաև դրուշակ Ճառընտ. (տարբեր է դրօշակ «դրօշ», որի վրայ տե՛ս վերը դրօշ)։

= Ձնդ. *drafšaka-, որ գործածուած է միայն drafšakavaiti բառի մէջ. այս բառը գործածուած է իբրև վերադիր՝ pusā- «պըռսակ, թաղ» բառի. ըստ Darmesteter նշանակում է «avec des bandelettes ruisselantes», ըստ Bartholomae, 772՝ «mit Bändern geschmückt», որ համապատասխանում է «ի վերջաւորս փողփողեալս» դարձուածին։ Ծագում է գնդ. drafša- «դրօշակ» բառից։

ՆՀՒ արաբ. պրս. քրազ «կերպ, ձև», ռիզէ «կտո՞ր», տիրազ «երկար» բառերի հետ։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lag. Ges. Abhd. 62, որ Հիւբշ. 147 հաստատապէս ընդունած չէ։ Հիւնք. դրօշ բառից։

ԳԻՒ.—Մրշ. դուրուշօգ «փոքրիկ լաթ, որ մանկիկների տակն են դնում, միզաշոր»։

ԴՔՆԵԱԼ «ի գլուխ եղեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 82։

ԴՕԴՕՇ տե՛ս Թոթոշ։

*ԴՕՍՏԱՔԱՆ «մեծ գաւաթ, կիզայ» Լծ. փիլ. (ըստ Հացունի). ունի միայն ԱՔ. գրուած է նաև տօգտօման Լմբ. առ Լև. տպ. Վենետ. 1865, էջ 241 (շունին բառարանները). տօստօման Կոստ. երզն. 174 (հրատարակիչը չհասկանալով տպում է տօստ օման), տօստօմանի Քուչ. 76, 78, տօստողանի Քուչ. 102, տօստօզայ Բառ. երեմ. էջ 313։

= Արևել. թրք. توستاقان tostaqan կամ նաև توستاغان tostaγan «շանթ» (Pavet de Courteille), նաև «փոքր փայտեայ գաւաթ», չաղաթայ. توستاقان tostaqan «բաժակ, գաւաթ, թաս», թթր. توستاغان tostaγan «մեծ գաւաթ» (Будаговъ 1, 281)։ Թաթարականից փոխառեալ են նաև վրաց. დოხტაქანი դոստաքանի «գինու մեծ գաւաթ» (Զուբիանով, 2-րդ. տպ. էջ 480)։ Հին ռուս. достоканъ «բաժակ», որից կազմուած է стака́нъ «բաժակ» (փոխանակ աւելի հին стока́нъ ձևի), досканецъ «արկղիկ», ղռ. до́скань «ծխատուփ» հին լհհ. dostuchan «բաժակ» (Berneker, 215)։ — Թուրքական բառն էլ իր հերթին ծագում է պրս. دوستکانی dōstkānī բառից, որ նշանակում է «լի գաւաթը, որ ի մէջ դինեբրուաց յալտնի և հաչախեալ է, զոր ի վախճանի խրախճանութեան ի սէր իրերաց ըմպելոյն» (իբր دست dōst «բարեկամ» բառից)։ — Բայց մեր բառը, ինչպէս նաև վերի սլաւական բառերը, փոխառեալ են թուրքականից, ինչպես ցոյց է տալիս վերջաւորութիւնը։—Ա.Ա.

Վերի մեկնութիւնը ինձնից է. յիշոյ տպուած իմ «Հետազրական արբագրութիւններ» աշխատութեան մէջ (Երևան, 1926), էջ 69։ Անկախաբար Հացունի, Ճաշներ, էջ 77 լծորդ պրս. ձևը։

ԳԻՒ.—Նոր փոխառութե՞մբ թէ հնից պահուած կայ Խրիմի բարբառում բօսարղան «պղնձէ թաս» (տե՛ս Տ. Նաւասարդեան, Հայ ժողովրդ. հէքիաթներ, հտ. է, էջ 71)։

*ԴՕՐԻՔՕ «նշանակէ զվտակն գետոյ կամ գուլխն, որ ընթանայ ընդ առուս». ունի միայն ՀՀԲ, իբր բառ յն.։ Վկայութիւնը գտնում եմ մէկ անգամ գործածուած Գիրք առաք. 623 բ. «Ասէ Սիրաք ԻԴ 41. Ես իբրև զգետ գոբիթքս, և իբրև զջրմուղ եղի ի դրախտին։ Գոբիթքան Թարգմանի դեղ ծննդեան»։ Սիրաքի յիշեալ տեղում մեր Թարգմանութիւնն ունի «Ես իբրև զջրմուղ եղի ի գետոյ և որպէս վտակ եղի ի դրախտէ»։ Յոյնը պահպանում է։

=Ծն. բնձէ «անձրևներից գոյացած հեղեղ կամ առուս». բայց ի՞նչ բան է դօ նախավանկը. չի կարող լինել շեղոք սեռի չօ յօղը, որովհետև բնձէ արական է։—Ա.Ա.

ՀՐԱՉՅԱ ՀԱԿՈԲԻ
ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ
ԱՐՄԱՏԱԿԱՆ
ԲԱՌԱՐԱՆ

Ա.
ՀԱՏՈՐ

Ա—Գ

Հրատարակչության խմբագիր՝ Լ. Լ. Ազոյան
Նկարիչ՝ Հ. Ն. Կարծակալյան
Տեխն. խմբագիր՝ Մ. Ա. Կափլանյան
Վերատեսուչ սրբագրիչներ՝ Խ. Գ. Ղարիբյան, Հ. Ա. Վարդանյան, Մ. Գ. Յավրյան
Հինոտիպիստներ՝ Հ. Հ. Կիրակոսյան, Ռ. Հ. Հակոբյան
Գրաշար-էջակապ՝ Գ. Ն. Նալբանդյան
Տպագրիչներ՝ Գ. Գալստյան, Ն. Քոչարյան

Պատվեր 356 Տպաքանակ 25000

Հանձնված է արտադրության 18/III 1970 թ.։
Ստորագրված է տպագրության 9/XI 1971 թ.։
Թուղթ՝ 84×108¹/₃₂։ Տպագր. 44,25=74,34 պայմ. մամուլի +1 ներդիր։
Հրատ. 75,3 մամուլ։
Գինը՝ 3 ռուբ.։
Երևանի համալսարանի հրատարակչություն։ Երևան, Աբովյան փող. № 52։

Երևանի պետական համալսարանի տպարան։ Երևան, Աբովյան փող. № 52։